Հր. Աճառյան

Հայերեն արմատական բառարան

II

ԵՐԵՎԱՆ

Père Y. PANOSSIAN
6, Bd Ch. - Zeytountzian
St-Jérôme - MARSEILLE (13e)

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՐ. ԱՃԱՌՅԱՆ

ՀԱՅԵՐԵՆ ԱՐՄԱՏԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ

Բ

ՀԱՏՈՐ

Ե–Կ

Père Y. PANOSSIAN
6, Bd Ch. - Zeytountzian
St-Jérôme - MARSEILLE (13e)

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ — 1973

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՄՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏԵՆԱՇԱՐ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ.
Մ. Գ. ՆԵՐՍԻՍՅԱՆ, Է. Բ. ԱՂԱՅԱՆ, Մ. Մ. ՄԿՐՅԱՆ, ԷՄ. Ա. ՊԻՎԱԶՅԱՆ

Հատորը հրատարակության է պատրաստել Երևանի պետական համալսարանի հայագիտական հետազոտությունների կենտրոնը:

Պատասխանատու խմբագիր՝ պրոֆ. Է. Բ. ԱՂԱՅԱՆ

Ա. 704—73
41, 0—7—1—5 77—78

© Երևանի համալսարանի հրատարակչություն, 1973 թ.

ГР. АЧАРЯН

ЭТИМОЛОГИЧЕСКИЙ КОРЕННОЙ СЛОВАРЬ АРМЯНСКОГО ЯЗЫКА

Том II

Издательство Ереванского университета
Ереван—1973

Ե

*ԵԱՄԱՆԻ «մի տեսակ սկաւտ է՝ կիսաթափանցիկ և մութ կարմիր գոյնով. ֆր. cornaline, ռուս. сердоликъ». յետին ժամանակի մի բառ է։

=Արաբ. يمنى yamani նոյն նշ.։

Ուղիղ մեկնեց Պատկ. Драгоцен. камни, էջ 32։

*ԵԱՇՄ «յասպիս քարը» Առաք. լծ. սահմ.։

=Արաբ. يشم yašm «յասպիս». աւելի մանրամասն տե՛ս յասպիս: Նոյն է և եասպ:

Ուղիղ մեկնեց Պատկ. Драгоцен. камни, էջ 34։

*ԵԱՍՊ «յասպիս քարը». յետին ժամանակի բառ։

=Արաբ. يسب yasb նոյն նշանակութ. նոյն է և եաշմ. աւելի մանրամասն տե՛ս յասպիս բառի տակ։

Ուղիղ մեկնեց Պատկ. Драгоцен. камни, էջ 31։

*ԵԱՒԼԵԼԻՍ «հրամանագիր, արտօնագիր». ունի Օրբել. էջ 301 և 314 «Եւ գրեն եաւլելիս, որ էր հրաման, զոր մեք սիգել կոչեմք. եւ նորա մեծապէս պատուով ընկալեալ զնա, յաջժ հաճեցաւ և հրամայեաց գրել նմա ըստ իւրեանց օրինին եաւլելիս, և հաստատեաց զամենայն եկեղեցիս և զաշխարհն և զեպիսկոպոսունան ի տէր Սահիանոս»։ Նոյն բառ գտնում ենք աւելի ձևով՝ Վարդանի պատմութեան մէջ (Վենետ. էջ 158, հրատ. էմ. էջ 208). «Առաջի օրն զբո խօսքդ լմնեցի, աւելիս եմ տուել գրել». կայ և խաւլախ ձևով՝ Մաղաք. աբ. 17. Վիմ. տար. 222։

=Թրք. يرليغ yerliγ «հրովարտակ», որ յառաջանում է يار yar «լուր, յայտարարութիւն» բառից (Будаговъ, II, 323)։ Թաթարականից փոխառեալ են նաև ռուս. ярлыкъ «պիտակ, étiquette», լհհ. jarlyk «գրաւոր թոյլտուութիւն, վկայական, արտօնագիր» (Berneker, էջ 446)։

Ուղիղ մեկնութիւնը տուաւ նախ Պատկ. հրատ. Մաղաք. աբ. էջ 63։

*ԵԱՐԻՃՓԵԿՐԱՅ «բժշկական մի պատրաստութիւն» (կազմութիւնը տե՛ս Seidel, § 104) Մխ. բժ. 118։

=Արաբ. ايارج فيقرا ayariǰ-i-fiqra, որ փոխառեալ է յն. ἰερὰ πικρά ձևից (Գաղիանոս), պրս. ایارا ayāra ձևի միջոցով։ Հեթացին ունի նոյն բառը այլևայլ այարիճի ֆայդարաճ, հապի հայեարիճ ձևերով։

Ուղիղ մեկնեց Seidel, Մխ. հնր. § 257 և § 324։

ԵԱՓԵԱՐ «անծանօթ մի բոյս, որի տերևը աչքի ցաւի դեղ է». ունի միայն ՀԲուս. § 3311։

ԵԲԱՐ «լրացեալ հնութիւն». ունի միայն Բառ. երեմ. էջ 82։

*ԵԲԵՆՈՍ (սեռ. ի) «կարծր ու սև մի փայտ է. տճկ. աբանօզ» Պորփ. տալում է նաև աբաեոս (ՆՀՔ յիշում է այս ձևը երեոս բառի տակ), ապաեոս Մին. Համդ. 56, ոպենիազ (ի հլ). ՅՀ. կթ. 131.—որից երենեայ կամ երենենայ «երենոս փայտից շինուած» Պտմ. ապէքս. էջ 2։

=Յն. ἔβενος «երենոս», որից ἐβένινος կամ ἐβέννινος «երենեայ կամ երեննեայ»։ Սրա հետ նոյն է եբր. הבנים hābnīm «երենոս»։ Երկուսն էլ փոխառեալ են եգիպտ. hbin, hbnj հոմանիշից (Boisacq, 211)։ Նոյն բառը փոխառութեամբ տարածուած է նաև շատ հեռու. այսպէս՝ ասոր. ابنوسا abnūsā, լտ. ebenus, ֆրանս. ébène, անգլ. ebon, գերմ. ebenholz, պրս. آبنوس abanos, թրք. ابانوز abanoz և սրանց միջոցով քրդ. abanos, avanos, սերբ. abanos, eban, evanis, սպան. abenúz, նյն.

ձլպանոճչ են՝ Հայ ձևերից առաջինը յունական առատարձուքիւնն է, աբաճոս ևն՝ պարսկականի։—Հիւբշ. 347։

ՀՀՔ ոպճիազ բառի համար ասում է «Թուի եբր. ոպճիմ»։ ԳԴ եբեռոս համեմատում է պրս. ձևի հետ՝ Ո՛չ ՆՀՔ, ո՛չ ՋՔ և ո՛չ էլ ԱՔ նշանակում են յն. ծագումը, թէև համեմատելի ձևերը գիտեն։

ԵՒՐՃԱՂ «վերարկու կամ պարեգօտ մոնղոնի» Վրք. հց. Ա, 250. ուրիշ վկայութիւն չկայ։

ՆՀՔ լծ. աղաբողոն, ՋՔ համարում է «բառ այլազգական» և անշուշտ ուղում է հասկանալ թրք. یاپونجی yapunja, արևել. թրք. یاپونجی yapunji «անձրևի և ցուրտի դէմ պաշտպանուելու յատուկ մազեղէն մի տեսակ հատ վերարկու»։ Այս բառը շատ տարածուած է Արևելքի ժողովուրդների մէջ, բայց ո՛չ ձևով բոլորովին նոյն է մեր երիճաղի հետ և ոչ էլ յարմարում է «կրօնաւորի վերարկու» նշանակութեան։ Թիրեաքեան, Բազմ. 1913, 340 դնում է թրք. եաբրնճաք ձևով, որ աւելի յարմար է, բայց բառարաններում չի գտնում. չգիտէ նաև Будаговъ, II, էջ 320։

*ԵԳՈՒՄԵՆՈՍ «առաջնորդ». ունի միայն Բառ. երեմ. էջ 82։

=Յն. ἡγεμονεύς, ἡγεμόνιος «առաջնորդ»։—Տե՛ս և հեգեմոն։—Ա՛ճ.

ԵԴ տե՛ս Դնել։

*ԵԴԵՄ, ա հլ. (իբր յատուկ անուն համարուելով այսպէս հոլովուած) «Ադամի դրախտը» ՍԳր, որից՝ եդեմեան Փարպ. Նար., եդեմարուղխ ՅՀ. իմ. եկեղ., եդեմային Թէոփ. խ. մկ., եդեմատունկ Գնձ., եդեմածին Ջքր. կք. ևն։

=Յն. Ἐδέμ «դրախտ» բառից, որ տառադարձուած է եբր. עֵדֶן ʿēden հոմանիշից։ Եբրայեցի բառը ծագում է עָדַן ʿdn= արաբ. غدن ɣadan «ախորժելի կեանք, հաճոյք» արմատից և սրա համար է որ առէպ Ս. Գրքի մէջ գրւում է դրախտ փափկութեան։ Հայերէն ձևը եբրայականից չէ, այլ յունարէնից տառադարձուած է Ս. Գրքի թարգմանութեան ժամանակ։ Յունարէնից փոխառեալ է նաև ռուս. эдемъ, իսկ ֆրանս. éden, գերմ. Eden, անգլ. eden ևն գալիս են եբրայեցերէնից։ Տե՛ս նաև ադեն, ադիճ բառի տակ։—Հիւբշ. 300։

Հններից Տաթև. ամ. 108 մեկնում է «եդեմն՝ փափկութիւն և ցնծութիւն թարգմանի»։ ՆՀՔ եբր.-ից։

ԵԴՍԵԻԴԱ «քահանայ», ունի միայն Բառ. երեմ. էջ 83։

*ԻՋ, ո հլ. «մէկ, միակ» Պիտ. Պորփ. Թբ. քեր. Տիմոթ. կուզ. էջ 213, 256. ոսկեդարեան գրականութեան մէջ ամենևին գոյութիւն չունի. կայ միայն յետին յունաբան հեղինակների մօտ՝ իբրև համապատասխան յն. εἷς ձևին. համարւում է արական, որի իգականն է մի և չեզոքը՝ մու. համա. եզ Տէր, մու հաւատ և մի մկրտութիւն= εἷς κύριος, μία πίστις, ἓν βάπτισμα (Տիմոթ. կուզ. էջ 213 և 256)։ Այս բառից են կազմուած՝ եզ ան-գամ «մի անգամ» Պիտ., եզ առ մու «մէկ-մէկի» Թր. քեր., եզերուդ «առաջին» Լծ. պրպմ. 566, 628, եզակի Փիլ. լին. Սարկ. քհ., եզակ «միակ» Փիլ. լին. Սահմ. Գր. տզ. ևմ., եզական Մամբր. Պիտ., եզարան «միաբան» Շար., եզարար Քհր. քերթ. Մագ., եզախմբիլ «համախմբիլ» Պիտ. եզանի, յաճեզանի «մէկ ձիաւոր, մէկ նաւակ» Պերբիարմ., եզանալ «հաւաքուիլ» Շար. ևն։

=Հիւսիսային կովկասեան լեզուախմբից փոխառեալ մի ձև է. համմտ. չերքէզ. zə «մէկ», կաբարդին. zzə «մէկ», yizako «միակ, եզակի». Հայաստանի հիւսիսային մի նահանգի օտարասեռ հայ ժողովրդեան լեզուի մէջ գտնուելով նոյն բառը՝ յունաբան հեղինակները վերցրին այն և օգտագործեցին իրենց նորահնար քերականութեան մէջ։—Ա՛ճ.

ՆՀՔ սանս. էka, պրս. եէք, դաղմ. եաիճ։ Peterm. 23, 35, 151 և Windisch. 29 սանս. ēka «մէկ»։ Capelletti, Armenia, թրգմ. Արշալ. արրտ. 1842, 108 յն. εἷς ձևից է դնում։ Յովնանեան, Քննութ. մարդկ. լեզուի, Վիեննա 1857, էջ 64 պրս. yak, յն. εἷς են ձևերի հետ։ Տէրվ. Երկրագունտ, Ա, էջ 16, Լե-

զու, 1887, էջ 101, 166, Նախալ. էջ 131 համարում է բաղկացած ե+զ մասերից, և մեկնում է՝ ե<է <այ, որ պահուած է նաև գերմ. ai-na, լտ. ū-nus, սանս. ē-ka, գնդ. aeva ևն ձևերի սկիզբը, իսկ զ՝ զօրացուցիչ մասնիկն է, որ համապատասխանում է յն. γε, սանս. ha, հսլ. že, գերմ. ge մասնիկներին։—Հիւնք. հանում է յն. εἷς ձևից։ Նոյն համեմատութիւնն ունի նաև Pedersen, Յուշ. դեր. էջ 38, իսկ Հայ. դր. լեզ. էջ 129 դնում է հնխ. sem-gho, հմմտ. լտ. singuli, յն ἕγγυα «մէկ», Patrubány, ՀԱ, 1903, 382 հնխ. արական sems «մէկ» ձևից աճած է դնում ghe=յն. γε մասնիկով։ Karst, Յուշարձան, էջ 402, 109 սոմխ. aš, giš «մէկ, միակ»։ Թիրեաքեան, Արիահայ բռ. 147 պրս. ایک yaz-dah «տասնամէկ» բառի մէջ թաքնուած է համարում (բայց այս բառը *yak-az-dah է, ինչպէս որ յետոյ էլ աւում է du-az-dah «12») ևն։

+ԵԶՆ, ն հ. (-զին, -զանց) «եզ» ՍԳր, «ցուլ կենդանակերպը» Եզն., որից՝ եզնաձոց «դոմ» Ոսկ. մ. բ. 27, եզնալուծ Սիր. իգ. 10, եզնակ «փոքր եզ» Եպիփ. ծն., «ոսկի բղեզ» Գաղիան. Մխ. առակ., եզնախոյ Պատմ. աղէքս. եզնող «հօտաղ, մշակ, երկրագործ, հերկող» Վեցօր. էջ 129 (ըստ սրբագրութեան Հ. Ա. Վարդանեանի, ՀԱ, 1911, 302 չունի ՆՀԲ), որ յետնաբար եղել է եզող Նար. էջ 138 (Աւետիքեան, Մեկն. Նարեկի, Վենետ. 1859, էջ 281 հասկանում է «միաւորող, կապող լծոց, մանկալ», իբր եզ «մէկ» բառից). նոյն արմատից է նաև եզնիկ յատուկ անունը։

=Բնիկ հայ բառ՝ հնխ. eg'h- ձևից, որ աճած է հայկական ն մասնիկով. միւս լեզուներից ունինք միայն սանս. ahí, գնդ. azi «երեք տարեկան կով», իռլ. ag «կով», ag allaid «եղջերու» (իբր «վայրի եզ»). (Pokorny, I, 38, Pedersen, Kelt. Gram. I, 97):

Հներից Տաթև. հարց. 220 հանում է եզ բառից։ Klaproth, Asia polygl. 103 լէզգի os, գերմ. Ochs «եզ»։ Peterm. 35 սանս. ukšan «ցուլ» բառի հետ։ Böttich. ZDMG. 1850, 354 սանս. ahī ձևի հետ, բայց նաև ukšan, գնդ. vāc-ša:—Bopp, Gram. comp. I, 398 սանս. ukšan, գոթ. auhsin, հբգ. ohsin, գերմ. Ochs «եզ» ընտանիքի հետ (բայց այս համեմատութեան մէջ բացի ե-ից ուրիշ նման բան չկայ, որովհետև ո՛չ u տալիս է ե և ո՛չ էլ kš լինում է զ)։—Justi, Zendsp. 60 նորից է դնում սանս. uk-šan, գնդ. uxšan, Müller, SWAW, 78, 425 գնդ. azi «կով»՝ ե մասնիկով։ Այս մեկնութիւնը մերժում է Lag. Arm. Stud. § 680։ Tomaschek, Deutsche Litteraturzeit, 1883, էջ 1254 և Bugge, KZ, 32, 83 համարում են կովկասեան փոխառութիւն. հմմտ. թուշ. ase, չեչէն. ēsi, սեռ. ēsiñ «հորթ», ուտ. uz «եզ», uzur «եզներ», կայ. դիդ. uns, us, is, արճ. az «եզ», տարաս. unza, ավար. oc, կիւր. jac, կազիկում. nic, հիւրկան. unc, լեզգ. os, is, վոտյ. aš, սիրյ. üš, օսույակ. ūges, ասիխազ. ac^{w} ևն ևն։ Այս բոլորը մերժելով Meillet, MSL, 10, 278, վերկանգնում է Lagarde-ի և Müller-ի նախկին մեկնութիւնը, սանս. ahí և գնդ. azi, որոնք ձայնական տեսակէտով էլ ուղիղ է գտնում։ Հիւրշ. IF, Anz. 10, 47 չի ընդունում այս մեկնութիւնը, պատճառաբանելով թէ սանս. ձևը անսաոյգ է, իսկ գնդ. բառը իբրև վերադիր է գործածուած «կով» բառին՝ «կաթնատու» կամ ուրիշ մերձաւոր մի նշանակութեամբ։ Iensen, Hitt. u. Arm. 80, 109 հաթ. sin=հյ. եզին։ Հայ ժողովրդական մի առուգաբանութիւն է յիշում Յ. Մ. Տատուխեան, Արևելք, 1888 ապրիլ 27, որի համեմատ՝ Աստուած, իբր թէ Ադամի անկումից յետոյ մի հրեշտակ ուղարկեց, որ նրան հողագործութիւն սովորեցնէ. երբ հրեշտակը խորհում էր թէ կենդանիներից ո՛րին է լծելու արօրին, նրանցից մին «է՛ս, է՛ս» աղաղակեց, և անունը մնաց «եզ»։ Հիւնք. զեւուլ բայից։ Patrubány, SA, 1, 188 իբր «բեռնաբարձ»՝ թերևս կցելի յն. ὄχ-ος «բեռնաւորումն» բառին, հնխ. eg'hos կամ og'hos ձևից, իսկ KZ,

13, 124 և ՀԱ, 1903, 151 յն. ὄσχος «ճիւղ». կհլ. azg «ճիւղ», սանս. adga «գաւազան» բառերի հետ. համմտ. յն. ὀσχος «ճիւղ և հորթ»։ Karst, Յուշարձան, էջ 405 սումեր. isi «կով»։ Մառ, ՀԱ, 1921, 81 բասկ. edi «եզ»։ Պատահական նմանութիւն ունի չաղաթայ. ⱨ uz «ցուլ»։ Justi, Kurd. Gram. 114 դրել է գնդ. azi բառի հետ։

Գիմ.—Վն. յեզ, Ջղ. ⱨեզ, Ախց. երև երբ. կր. Մշ. Մրղ. Ննխ. Սլմ. Սչ. Սեբ. Տիգ. յէզ, Ասլ. յէ՛զ (սեռ. էզա), Դոր. Ղրբ. Շմ. յէ՛զը, Ագլ. Մժ. ի՛զը, Հմշ. յիզ (սեռ. էզո-ը, յգ. էզնիհ), Տփ. յի՛զր, Մկ. Ոզմ. իզ։ Պլ. գործածւում է կով բառը յատկապէս որոշելու համար ասում են մանչ կով։ Նոր բառեր են՝ եզանճակտիկ, եզնաշոիկ, եզբնկալ, եզնագին, եզնաչխ, եզնասայլ, եզնավար, եզնեղէն, եզնաբած, եզնացու, եզնախար են։

Փոխ.—Pedersen, Հայ. դր. լեզ. 188 սանս. ukša, գոթ. auhsa, կիմր. ych են ձևերի համեմատութեամբ դնում է հնխ. uqsō. և ենթադրում է, որ այս բառը առել է հյ. *ուցն «եզն» ձևով մի բառ, որ յետոյ մեր մէջ կորել է. բայց նոյն *ուցն բառից փոխառնել են կովկասեան ձևերը (տե՛ս վերը)։ Հնագոյն uqsō-ից էլ ծագում են թրք. öküz, հաքուղ. oγus, մոնղոլ. üker, բուրեատ. uker, uxer, uxur, թունգուզ. ukur «եզ» բառերը։

+ԵԶՐ, r հլ. (եզեր, եզերբ, եզերբ, ոսց, rof, եզերբֆ) «ծայր (զգեստի, շորի, ձորի, քաղաքի են), ափ (ծովի, գետի), սահման, վերջ, աւարտ» ՍԳր. Ոսկ. ես. Փարպ., «նախադասութեան ծայրի բառը (ըստ տրամաբանութեան)» Մխ. ապար., որից՝ գետեզր Թուց իր. 5, Եւս. քր. Փարպ. ծովեզր ՍԳր, Եւս. քր., ծովեզերեայ ՍԳր, աճեզր Ոսկ. մտթ., եզրածիրանի Ես. գ. 22, եզերիլ Փիլ. այլաբ. =եզրիլ «ծովից ցամաք դուրս գալ» Տաթև. ձմ. լգ. խա., եզրակացութիւն Սահմ. Անյ. պորփ. Մագ., ափ-եզերբ (համմտ. ափ-կին) ՍԳր. Կոչ., ափեզերախօս Ագաթ., ափեզերական Ագաթ. Եղիշ., սաեզերել (մհյ. բառ) «տունը՝ տեղը ձգել, երթալ, հեռանալ» Անսիզք 13 են։ —ՀՀՒ և ՋՒ ունին նաև եզերա բառը, որի նշանակութիւնն է «եզր, ծայր» և յարմարեցրած է սրանից (համմտ. ոլոր>ոլորտ, բոլոր>բոլորտիք). չկայ ՆՀԲ-ի մէջ։

=Բնիկ հայ բառ. համմտ. լիթ. eže, լեթթ. eža, հպրուս. asy «անտառի եզերք, երկու արտերի միջի սահմանը». այս բառերին են կցւում նաև հպ. jazŭ «ջրանցք», ռուս. язъ, հռուս. ězŭ, գռ. езъ «ձուկ բռնելու աւազան», ուկր. jaz, jiz «թումբ», բուլգար. jaz «ջրաբղխ», չեխ. jez և լեհ. jaz «ջրի թումբ», սերբ-խրվ. jâz «ջաղացքի նաւ, ջրաւտար խողովակ» (Trautmann, 73, Berneker, 277. վերջինս չի յիշում հայերէն ձևը)։ Սրանցից դուրս է մնում յն. ὀχετός «խողովակ, փողրակ», որ պատկանում է հնխ. *ueg'h «վարել, տանիլ» արմատին (Boisacq, 735)։ Բառիս վրայ տե՛ս Meillet, BSL, № 86, էջ 38—40, ուր նախաձևը գրւում է հնխ. eg'h-(r մասնիկով)։—Հիւրշ. IF Anz. 10, 47։

Lag. Urgesch. 983 լիթ. eže ձևի հետ, որով առաջին ուղիղ մեկնիչը ինքն է։ Lag. Btrg. baktr. Lex. 24 գնդ. azra, որ անստոյգ մի բառ է. Justi, ինչպէս և Bartholomae, 229 մեկնում են «որս»։ Հիւնք. պրս. զհի «եզր» բառից։ Վերի ձևով մեկնեց Meillet, MSZ, 10, 282։ Սագրզեան, ՀԱ, 1909, 356 սումեր. uzar «եզերք, ափն», Karst, Յուշարձան, 400 ասուր. išru «սահման իշխանութեան», uşurtu, eşurtu «սահման, վերջ», 405 սումեր. izhar, gishar «սահման, եզերք», 408 uzar «ափն, եզերք»։ Մառ, ЗВО, 25, 318 նոյն ընդ ծայր։ Պատահական նմանութիւն ունի արևել. թրք. ازن azin «եզր, շրթունք», Scheftelowitz, KZ, 54(1927), 240 միացնում է ռուս. uzgъ «եզր», յն. ἔσχατος «ամենադրսինը, վերջինը», ὄχθη «եզր» բառերին։

Գիմ.—Ջղ. Վն. յեզր, Ոզմ. յիզր, Ջթ. իզիր, իզիյ, Հճ. իզեյ, Սվեդ. իզզիր, իզզիրֆ, Մրղ. Սլմ. յէրզ, Երև. յէրզր։—Ակն. գ'էդրզէր «կեանքը»։—Նոր բառեր են՝ եզրաւան, եզրանց, առուեզեր, առուեզերուկ, թոնրեզեր, ջրեզեր, եզրկան, եզրուկող.—այստեղ է

պատկանում նաև եզնակ «հորի եզերքը դրուած կլոր ծակ քար, margelle, տճկ. պիլէզիկ» (Նորայր, Բառ. ֆր. և Բառ. երեմ. էջ 83), որ պետք է հասկանալ իբր *եզրնակ և ո՛չ թէ «եզան ակն կամ աչք»:

եզրեղի «դափնի». կայ միայն եզրեղոյ պտուղ «դափնու պտուղը» Բժշ. Ամիրտ. Գաղիան:

Արթինեան, Աստուածաշունչի տունկերը, էջ 150 նոյն է համարում եբր. אזרה ezrāḥ, որ բստ Gesenius (1910, էջ 21 բ) նշանակում է «բնիկ, տեղացի» և Սդ. լէ. 35 գործածուած է անմշակ, ինքնաբոյս տունկի համար. իսկ ըստ Արթինեանի՝ նոր մեկնիչների կողմից համարուած է «դափնի, laurier» և անգլիական թարգմանութեան մէջ էլ դրուած է «bay-tree»:

եզրիկ, անծանօթ մի բոյս է. որից կայ միայն եզրկան ծաղիկ Բժշ. ունի միայն Ալիշան, Հռուս. § 622:

*եթեր, ա, ի–ա հլ. «երկնքի վարի մասը, ամպերից վեր եղած օդի խաւը» Վեցօր. էջ 20 (սեռ. եթերայ), 48, 50, 57 (սեռ. եթերաց. սակայն որովհետև յոգնակի չէ, ուստի կարդա՛ եթերայ), 172 (սեռ. եթերաց), Եղիշ. Հրց. 57. Արիստ. աշխ. Պղատ. տիմ. Շիր. (Հրատր. Պատկ. էջ 47), Կիւրղ. ղկ. (արդի գրականում «օդից դուրս եղած տարածութիւնը և այդ տարածութիւնը լցնող անյայտ նիւթը. 2. մի տեսակ քիմիական մարմին»), որից՝ եթերական էր ընդ եղբ. 47. Աթան. Բենիկ. Տոմար., եթերաճեմ Նար. յովէդ., եթերային Արիստ. աշխ. Մաքս. դիոն., եթերեան Գնձ., եթերրնթաց Գնձ., եթերամած ԱՒ են:

=Յն. αἰθήρ, սեռ. αἰθέρος «օդի վերին խաւը, օդ, երկինք, երկնակամար». ծագում է αἴθω «այրել, վառել» բայից (Boisacq, 23), կաղապարուելով *ᾱ̓ϊθ̱ρ «օդ, այեր» բառի վրայից (ըստ Meillet, BSZ, № 79, էջ 10), և թէև շատ սովորական է փիլիսոփայական լեզուի մէջ, բայց չէ մտած խօսակցական լեզուի մէջ՝ իբրև արուեստական բառ: Նոր Կտակարանը, որ ունի յաճախ ἀήρ, չգիտէ բնաւ αἰθήρ: Յունարէնից փոխառեալ են նաև լտ. aether, վրաց. ეთერი եթերի, գերմ. aether, ֆրանս. éther, ռուս. эфиръ են:—Հիւբշ. 347:

Ուղիղ մեկնութեան ծանօթ էր հներից Անան. գիտ. 39 «Զոր յոյնք եթերն կոչեն և քաղդէացիքն հուր թաղկեալ»: Սրանից առնելով Հ. երզնկացին, «Յաղագս երկնային զարդուց» ոտանաւորի մէջ, էջ 27, գրում է. «Զոր և եթեր զսա կարդացին ազգն յունական և հուր թաղկեալ այնք որ լեզուաւ քաղդէական»: Նորերից ուղիղ մեկնեց նախ ՀՀԲ, յետոյ ՆՀԲ, վերջինս լծորդ է դնում նաև հյ. ամար (տե՛ս առվի):

+եթէ «երբոր, թէ որ. 2. թէ՛, է՛լ (թէ՛ այս և թէ՛ միւսը). 3. միթէ, արդեօք, գուցէ. 4. թէ, որ (տեսաւ որ...)» ՍԳր. եզն. Ոսկ. ևն. հնադոյն գրչութիւնն էր եթե:

=Բնիկ հայ բառ. մեկնութիւնը տե՛ս Թէ:

Peterm. 20, 35 սանս. yathā: Եւրոպա, 1849, էջ 200 հպրս. եաթիա, եաթա: Müller, SWAW, 42, 252 պհլ. at, զնդ. yēiδi, հպրս. yadiy, սնս. yadi: Justi, Zendsp. 243 սանս. yathā, հպրս. yatha, զնդ. yatha, պրս. tā են: Հիւնք. յն. εἴτε, դորիակ. αἴτε:

Գիւմ.—Զթ. էրը (հիմայ անգործածական է): Միւսները թէ ձևից:

*եթիւն կամ եթիւն (սեռ. եթիայց, եթիւաց) «հողամաղ կամ ձկնկուլ թռչունը» Փիլ. տեսակ. էջ 21, Նխ. բ. 91, լին. 31. գրուած է նաև էթիա Հին բռ., եթւայ Լծ. փիլ.—սխալ է մեկնում Բառ. երեմ. էջ 106, որից էլ ՓԲ «էթիայ, գազան ծովային, անյագ յուտելն և ի խառնակելն»:

=Յն. αἴθυια «հողամաղ թռչունը, mouette, larus marinus L», որ դռնում է Փիլոնի յոյն բնագրում. լատին թարգմանութիւնն ունի fulica «foulque, փարփա՞ր»:—Հիւբշ. 347:

Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ:

+եթիւ «գեղով». այսպէս ունի Բառ. երեմ. էջ 84.—ըստ իս պէտք է կարդալ գէզով, այն է «կասկածով, տարակուսիւ» (ուղ. գէզ «կասկած, տարակոյս». տե՛ս այս բառը), ո-

րով երիւ կդառնայ «թէական, տարակուսական» և կկապուի երէ արմատին։

+**ել**, ի հլ. «ներսից դուրս գալը» ՍԳր, «վեր բարձրանալը» Փիլ. լին., «անցք, ընթացք, ճամբայ» ՍԳր, «վերջ, լրումն, աւարտ» ՍԳր, «մի գործի վախճանը» Եղիշ., «յաջող վախճան» ՍԳր, «արևի ծագումը ևն» ՍԳր. Փարպ., «արևելեան կողմը» Խոր. աշխ., «ծորում, բխում» Նար., «կղկղանք» Մխ. ապար., «նստոյ տեղի, յետոյք» ՋՔ, «մորքի վրայի ծակտիքները» Վեցօր. էջ 175 (տպուած է խելք, ուղղելի ելի՝ ըստ Ս. Վ. Նազարէթեանի ձեռագրի. տե՛ս Պատկեր, 1893, էջ 284), «հեռանալ, հրաժարուիլը» Վրք. հց., «ծախք» Տոբ. ա. 23, որից՝ ելանել (կտ. ելի, հրմ. ե՛լ) «դուրս գալ. 2. ծագիլ, բղխիլ, յառաջ գալ. 3. վեր բարձրանալ. 4. հեծնել, նստիլ (ձի, նաւ). 5. վիճակուիլ, յարմար գալ. 6. անունը տարածուիլ, հռչակուիլ. 7. այնպէս լինել, գրանուիլ» ՍԳր, ելևել առնել «ջանալ իրար դէբազանցել» ծն. իմ. 23. Բուզ. կամ ելևելս առնել Փարպ., ելևէջ Ագաթ., ելամուտ ՍԳր, ելամուտ «դուռ» Եզեկ. խը. 30. ելանելի «սանդուխ» Եզեկ. խ. 31, ելոդ Դ. Թագ. ժա. 9. Ջքր. ը. 9, ելուստ «բոյսի աճում» Փիլ. քհ., աճել Փիլ. Եղիշ., խաչելեալ ՍԳր, խաչելութիւն Եզն., յորդելակ Քհր. քերթ., դժուարելանելի Տօնակ. Մխ. առակ., վերելակ «ձի (կամ նաւ) հեծած անձը» Պիտ. Փիլ., վերելք Նար., ելուն «դուրս ցցուած» Ագաթ. 125, ելակէտ, ելարաձ (նոր գրականի մէջ) ևն։ Ջանազան նախդիրներով առանում է նորանոր ձևեր և նշանակութիւններ. այսպէս՝ 2. Ջ նախդիրով կլինի **գելաճել** «չափից անց կենալ» Ոսկ. յհ. ա. 12.—3. ընդ նախդիրով՝ **բնդել** «հետը ելած-նստած, հետը մեծացած, ծանօթ, սովոր» Ագաթ., բնդելանիլ «հետը մեծանալով վարժուիլ, կրթուիլ» Եւս. պտմ. Ոսկ., «ջանալ, փորձել» Գծ. թ. 26, բնդելացուցանել Սիր. իբ. 17. Եզն., բնդելուցանել Բ. մակ. ժ. 15. Ոսկ. մ. ա. 17, բնդելնուլ Ոսկ. մ. ա. և բ., բնդելակից Կորիւն, աւրնդել Գ. մակ. դ. 6. Կոչ., մարդրնդել Ագաթ., ձեռնրնդել Փիլ. այս բոլորը գրուած նաև բնեալ ձեւով որ հիմայ միակ գործածականն է։—4. **ելացել** բայի անցողականն է ելուզանել (փոխանակ ասելու *ելուցանել. Հմմտ. փլուզանել, բնկլուզանել) «դուրս հանել, մէջտեղ հանել» (արմատը ելոյզ)։ Ոսկեդարեան գրականութեան մէջ պահուած չէ այս բառը, բայց կայ յետնաբար ելուզանել «արտաբերել (ձայնը)» Բր. քհր. (Ձայնաւորք ասին, վասն զի ձայնս յինքեանց անպակաս ելուզանեն)։ Նոյն ելոյզ «հանել» արմատից է կազմուած ծխեելոյզ Հին բռ. և նոր գրականում շնչելոյզ «շնչահան, օդանցք»։—5. **ելուզանել** բայի երկրորդ նշանակութիւնն է «ընձիւղել, ծլիլ», ինչպէս գտնում ենք ելուզումն «ընձիւղումն» Պիտ. բառի մէջ։—6. նոյն բայի երրորդ նշանակութիւնն է «գողանալ, կողոպտել» (հմմտ. հանել և յիճիճ հանել «գրաւել, խլել, կորզել»). որից մարդելոյզ «մարդագող» Ա. տիմ. ա. 10, որ ապացուցանում է ելուզանել բայի ոսկեդարեան գոյութիւնը. սրանից է նաև ելուզակ (կամ եղուզակ, յելոզակ, յեղուզակ) «աւազակ» Խոր. Պիտ., յելուզակ կութիւն Վեցօր. 185, յելուզակաբար «աւազակի պէս» Խոր., նախելուզակ Շնորհ. վիպ.։—7. Նոյն ելուզանել բայից բնդ նախդիրով կազմուած է **բնդելուզանել**՝ որի առաջին նշանակութիւնն է «խուզարկեալ երևան հանել»։ Այս նշանակութեամբ գտնում ենք գործածուած Արծր. բ. 6 (Հրտր. Պատկ. էջ 113) «Յերկիւղ կասկածանաց եղեալ՝ թէ իցէ ընդելուզեալ Տաճկաց՝ գտեալ զպահեստ գանձին՝ ծախիցեն զզօրութիւն նորա»։ Յայտնի չէ ի՛նչ փոխաբերութեամբ՝ այնուհետև բնդելուզանել ստացել է «իրար անց կացնել, յետուլ, հիւսել» ՍԳր. Ոսկ. Մաթ. և ա. տիմ. «խօսքը զարդարել, պճնել» Ոսկ. ես. նշանակութիւնները, որից՝ բնդելուզուած Ել. իբ. 17, բնդելուզումն Պիտ. փիլ.։

=Բնիկ հայ բառ՝ հնխ. el «հլնել, բարձրանալ, աճիլ» արմատից. այս արմատի պարզ կամ աճած elu-, eleu-ձևերից կամ նաև dh$^{e}/_{o}$ աճականով ձևից են՝ յն. ἐλεύθω, ἤλυθον, ἦλθον, ἐλθέ, ἔλθω, ἔλθοιμι, ἐλθών, ἐλθεῖν, εἰλήλουθα, ἐλήλυθα, ἐλήλυμεν, ἐλεύσομαι, *որոնք կազմում են «գալ» բայի գանագան ժամանակները. նաև* προσ-ήλυτος *«վերաբնակիչ»*, ἐπ-ήλυτος *«հկող հասնող»*, ἔπ-ηλυς *«հկուր օտարական»*, կրետ. ἐπελεῦσαι *«բերել»* (իբրև

անցողական «գալ տալ»), արմ. κατενθοντας. *կոր.* ηνθς *(որոնց մէջ* λθ *վերածուել է* νθ*), սանս.* rṓdhati *«բարձրանալ, աճիլ», գնդ.* raoδaiti *«աճում է», գոթ.* liuδan *«աճիլ»* (Walde 426, Boisacq 242)։ *Հայերէնի մէջ* ելանեմ *ծագում է* el- *պարզ արմատից, իսկ* ելուզանեմ՝ elu- *աճականից։ Այս արմատին են կցւում նաև գալլ.* el *«թող երթալ», լտ.* amb -ulō *«շրջիլ»,* ex-ul *կամ* exs-ul *«տարագիր,» աքսորական»,* alacer *«աշխոյժ», ըստ* Meillet, Dict. etym. lat. 41։

A. Acoluthus, Obadias armenus, Lipsiae, 1680, *էջ 51* «procul dubio ab ebr. עלה derivatum est» *(անկասկած եբր.* ʿālā *բառից ածանցուած է),* Peterm. 29, 259 *եբր.* עלה ʿālah, *ասր.* ʾalā *«վեր բարձրանալ»։* Müller, SWAW, *42, 257 նոյն ընդ* եղանիլ= *գնդ.* ərə. *համմտ. պրս.* šudan *«երթալ» և «լինել»։ Տէրվ. նախալ. 62* յառնել *և* երթալ *ձևերի հետ՝ սանս.* ɣṓmi, *յն.* ὄρνυμι, *լատ.* orior, *հհիւս.* arna, *որոնք հնխ.* ar *արմատից է գնում։* Bugge, KZ, *32, 53 յն.* τέλλω, τέλλομαι *«հիմնել, բարձրանալ»,* τέλλειν, τέλλεσθαι *«ծագիլ աստեղց»,* ἀνα-τολή *«արևելք»,* τέλος *«վերջ, ծայր»,* τέλη *«ելք, ծախք» բառերի հետ միացնելով՝ հանում է հնխ.* qel, k²ĕlo- *արմատից՝ նախաձայնի յապաւումով։* Bartholomae *սանս.* iyarti *«շարժման մէջ դնել», գերմ.* eilen *«աճապարել, փութալ», հբգ.* īlen։ *Հիւբշ. 441 յիշում և մերժում է վերջին երկու մեկնութիւնները։ Միևնոյն տեղում* Meillet-ի *բերանն է դնում մի նոր համեմատութիւն. յն.* πέλω, πέλομαι *«շարժիլ»,* περιπλόμενος *«շրջապատեալ, գերազանցեալ», սանս.* čar *«շարժիլ» հնխ.* k²élō *արմատից։ Բայց* Meillet *չունի մի այսպիսի մեկնութիւն։ Ակնարկուած տեղը* (MSL, *7, 162, ինչպէս նաև 10, 282*) *նոյն* πέλομαι *բառը համեմատուած է* եղանիլ *բայի հետ։ (Հիւբշ. սխալուել է անշուշտ* 1 *կարդալով* l)։— *Հիմնք.* եղանիլ *բայից։* Pedersen, *Հայ. դր. լեզ. 144 յն.* ἐλαύνω *«յառաջ մղել»=* ելանել, ἐλεύσομαι *«պիտի գամ» =հյ.* ելուզանել։ *(Ըստ այսմ առաջին ուղիղ մեկնիչը պէտք է հաշուել* Pedersen)։ Scheftelowitz, BB, *28, 300* ելուզանել= *սանս.* rohayati *«աճեցնել»,* ruh *«ճիւղ» ևն։* Karst, *Յուշարձան, էջ 399 ասուր.* elu *«վեր բարձրանալ»,* elenu *«վերին», 405 սումեր.* il *«բարձրացնել», 407 սումեր.* sil *«վեր հանել»,* zil, śil *«մեծ, վեհ», 419 ալթայ.* al, ol, ul, il *«բարձր, բարձրանալ», ույղուր.* uluk *«մեծ»,* ulkamak *«բարձրանալ», չաղաթ.* olgaymak *«աճիլ» ևն։ Վերի ձևով մեկնեց բառս* Meillet, BSL, *№ 79, էջ 7։* Pokorny, 1, 155-6 *մերժելով այս բոլորը՝ ըստ նում է հնխ.* elā-*«վարել, շարժել, երթալ» արմատը, որից սանս.* iy -ar-ti *«շարժել», յն.* ἰάλλω *«ուղարկել», հյ.* ելանել, ելանիլ, *յն.* ἐλάω *«վարել»,* ἐλαύνω *«վարել, քշել», կելտ.* elwyf, *կորն.* yllyf *«գնում եմ», անգսք.* lanu *«նեղ ճանապարհ», հոլլ.* lann *«ճեմելիք» կն։ Շէֆթէլովից,* KZ, 53 (1925), *էջ* 268 ելուզանել *գնում է=սանս.* rukša *«ծառ»,* rohati *«աճումն», որ* Pokorny, *2, 416 գնում է* ledh- *«աճիլ, բարձրանալ» արմատի տակ։*

Գիմ.—*վն.* էլեել, *մշ.* ֆէլեել, *սչ.* յէլէլ, *Ախց. կր. Նոխ. Ռ. Սեբ.* էլլէլ *(կտր. Նոխ.* էլլա, *միւսները* էլա*), Ասլ. Խրբ. Պլ.* ելլալ, *Ակն.* էլլիլ, *Հմշ.* էլլուշ, *Տիգ.* էլլ'մլ, *Մկ.* իլճիլ, *Զթ.* իլլիլ, *Սվեդ.* իլճիլ, *Ոգմ.* ըլճիլ, *Սլմ.* ըլել, *Մրզ.* ըլէլ, *Հճ.* իճճել.—*Կովկասահայ բարբառներում առհասարակ ուրիշ դարձուածներով է բացատրում. ինչ.* դուրս գալ, վերև բարձրանալ *ևն. սակայն հայ իլլել Ղրբ., ըլշիլ Երև. «հիուսելով վեր բարձրանալը, զեղուլ (հեղուկի, կերակուրի)», ճելճել Երև. «հեծնել», Ջղ.* վիրճել, *Շմ.* վէլլիլ, *ՀՋղ.* վիլլիլ *«վեր բարձրանալ, հեծնել (ձի ևն)»։ Նոր բառեր են՝ ել «զառիվեր», ելման «յորդ», ելուարի «ե՛լ և արի՛» (իբր ձայնարկութիւն է գործածւում), ելուկ «բողբոջ», ելվեր «զառիվեր», ելփուր «շնչահեղձութիւն», ելտեղ, ելցքնել, ելիվեր։*

*ԵԼԱԿ կամ ԵԼԱԳ «խմորուկ, մորի պտուղը, ոճկ. չիլենկ. ռուս. клубника. ֆրանս. fraise» Ստեփ. լեհ. արդի գրականի մէջ (արևմտեան բարբառ) գործածական է միայն ելակ ձևով, որից ելակենի «ելակի բոյս»։

=Թրք. (Կազանի, Կիրգիզ և Տոբոլսկի) چلاق yilak, որ ընդհանուր անուն է ելակի, մորի, արքայամորի և նման պտուղների. սրա համապատասխանն է թրք. جيلاك jilak, ոճկ. چيلك cilek, ոմկ. չիլենգ, որ է «ելակ» (Будаговъ, 2, 362)։—Աճ.

Patrubány, ՀԱ, 1908, 313 ելաճել բայից. մեզանից է փոխառնել ոճկ. չիլէկ։ Պատահական նմանութիւն ունի վրաց. ულლი ուլի «վայրի ելակ, մորի»։

Գիր.—Ննխ. էլաճ, ճէլաճ «վայրի ելակ» (գործածական է բառս միայն գիւղերում)։

*ԵԼԱՍԱՐ չղջիկ. ունի միայն Բառ. երեմ. էջ 84, որից էլ՝ ՀՀԲ, ՋԲ և ՓԲ յաճել.—ո՛չ մէկի մէջ չկայ վկայութիւն։

=Թրք. يرسه yerase կամ yerasa «չղջիկ»։—Աճ.

*ԵԼԵԿՏՐԻՈՆ, ի, ի–ա հլ. «դեղին սաթ» Վեցօր. 101. գրուած է նաև շատ դանագան ձևվերով. այսպէս՝ ելեկտրոն, ելեկտոռն, ելեկտոիոն, ելեմտոիոն, ելէմտոիոն, էլէմտոիոն, էլէմարիոն, իլեմտոռն, իլիմտոիոն, իղիկտրիոն, ղեկտոռոն Վեցօր. 101. Արիստ. աշխ. Պղատ. տիմ. 158. Դիոն. ածայ. Նար. խչ. 398 (Բառ. երեմ. էջ 132 գրում է լեկտոռն և մեկնում է «ոսկեպղինձ, դեղին պրղինձ», որ սխալ է). սրանից ելեկտռեղէն կամ իլեմտռեղէն «սաթից» Դիոն. ածայ. նոր գրականում ելեկտրականութիւն նշանակում է ծանօթ բնական ուժը՝ որ յառաջանում է գլխաւորապէս շփումով (այս ուժը առաջին անգամ սաթի միջոցով երևան հանուելով՝ ստացաւ իր անունը, որ նշանակում է բուն «սաթականութիւն»)։ Նոր բառեր են՝ ելեկտրական, ելեկտրաճալ, ելեկտրականաճաճալ, ելեկտրականացնել, ելեկտրացում, ելեկտրաշափ, ելեկտրաբուժութիւն, ելեկտրաշարժ, ելեկտրահարշ են։

=Յն. ἤλεκτρον «սաթ», որից նաև լտ. electrum, ֆրանս. électricité «ելեկտրականութիւն» են են։ Յոյն բառի առաջին նշանակութիւնն է «ոսկու և արծաթի խառնուրդ» և կցւում է ἠλέκτωρ «փայլուն, 2. արեգակ» բառին (Boisacq, 319):—Հիւբշ. 347։

Ուղիղ մեկնեցին նախ ՀՀԲ և ՆՀԲ։

Գիր.—Կայ միայն ղեկտոռ Կր. «սաթ»։

*ԵԼԵՓԱՆԴԱԿԱՆ, գրուած նաև եղեփանդական, եղեփանդեան, եղափանդական «մի տեսակ բորոտութիւն». բուն նշանակութիւնն է «փղական». Խոր. բ. 8. Վրք. սեղբ. տպ. Վենետ. էջ 28, 36, 38. տպ. Էջմ. 722, 737, 742։

=Յն. ἐλέφας (սեռ. ἐλέφαντος) «փիղ» բառից՝ հլ. –ական և –եան մասնիկներով, իբր թրգմ. յն. ἐλεφαντίασις «մի տեսակ բորոտութիւն», ἐλεφαντιακός «ելեփանդական» են ձևերի. սրանից է փոխառնել նաև elephantiasis եւրոպական գիտական բառ։—Հիւբշ. 348։

Ուղիղ մեկնեցին նախ ՀՀԲ, ՆՀԲ։

ԵԼԻԴՈՐՈՍ «մի տեսակ օձ». նորագիտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Մոլութ. 384 բ. «նմանի օձին, որ կոչի ելիդորոս, զորմէ ասէ Իղիդորոս, թէ ելանէ ծուխ և ժահահոտութիւն ի վայրէն ընդ որ սողայ»։

ԵԼԻՈՆ, ի–ա հլ. «ընտանիքը, կինը, որդիները ու աղգականները». ունի միայն ՀՀԲ՝ առանց վկայութեան, որ և համարում է «բառ այլազգական»։

ԵԼԻՍՏ–ՈՒԹԻՒՆ «յունական իշխանական մի աստիճան». անստոյգ բառ, որ մէկ անգամ գտնում են գործածուած Կղնկտ. Հրտր. Շահն. Ա. էջ 300 «եւ տայր բերել պատերկութեան և հիւպատութեան և ապահիւպարքոսութեան և սարատեւութեան և ելիստութեան 1200 արանց պատիւ», խնդրական բառը չունի Հրտր. էմ. էջ 143. անշուշտ նոյն է եղուստր բառի հետ, որ տե՛ս։

Աճառ. Հայ. նոր բառեր հին մատեն. էջ 12 ուղում է կապել կասկածով յն. ὕλη «հեծելազօրքի գունդ» բառի հետ. համմտ. ὑλάρχης «հեծելազօրքի գնդապետ»։

*ելիք «ոլորապտույտ փայլակ». մէկ անգամ ունի Արիստ. աշխ. էջ 613։

=Յն. ἑλικίας նոյն նշ. յառաջանում է ἕλιξ «խղնջաձև» բառից։—Հիւրշ. 347։

Ուղիղ մեկնեց նախ ՆՀՌ։

ելմոնի «անուանի». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գործածում է Սասն. 60 «երամ երամ թռուցող ի վեր ելմունի բնաւից»։—Լուսանցքում մեկնուած է «անուանի»։—Համմտ. նաև ելմոնի և եղմոնայ։

ելոմոնի «բան կամ հաւատարմութիւն». ունի միայն Բառ. երեմ. էջ 84. տե՛ս նաև ելմունի և եղմոնայ։

*ելովա կամ ելովէ, ելոյի, ելոյէ «Աստուած». Ոսկ. եփես. 937—8. ունի միայն ԱՒ, իբր բառ. երր.։

=երր. אֱלוֹהַ eloha «Աստուած», որի հետ նոյն է նաև արաբ. الله Allah. մեր ձեվերը յառաջացած են երրայական բառի յն. ἐλωαί, ἐλωέ, ἐλωΐ տառադարձութիւններից (Sophocles, 452)։—Աճ.

+ելոիջակ տե՛ս ել։

ՀՀՌ ելանել բայից, ՆՀՌ յուզակ ուղտ կամ ելից։ Հիւնք. ելուզանել բայից։

+ելոինդն (սեռ. ելնդան) «պալար, ուռնկք» Մխ. բժշ. Մարթին. ՆՀՌ ունի ելուընդն, եղուընդն, որոնց ռամկականը համարում է ելուընդ Վասկ. 164 (սեռ. ելնդի), 217 (սեռ. ելնդաց). ՋՌ գիտէ միայն ելուընդ, եղուընդ, և չի ճանաչում հնաձև ելնդան սեռականը. ԱՌ ունի ելուընդն, ելուընդ, բայց նաև ելուն վրք. հց. Ռ. 446, որ ՆՀՌ իբրև վրիպակ է յիշում։

=Կազմուած է ելանել բայից՝ -ուընդ մասնիկով. համմտ. ծնանել>ծնուընդ, սնանել>սնուընդ և սերել>սերուընդ. բայց այս պարագային պէտք է ենթադրել, որ բառի ուղիղ ձևն է ելուընդ, սեռ. *ելնդեան, յետնաբար՝ ելնդոյ (ինչպէս ունինք ծննդեան, սննդեան, սերնդեան, կամ ծնդոց, սնդոց, սերնդոց). իսկ ելուընդն և սեռ. ելնդան գոյութիւն չունին և յարմարեալ են միայն ՆՀՌ-ից. (վրք. հց. կայ գեղուընդն, բայց ն յօդ է)։ Նշանակութեան զարգացման համար համմտ. ելուսա և ելխ բառերը, որոնք ըստ ԱՌ նշանակում են նաև «ուռեցք»։

ՆՀՌ ելեալ ուղղ։ Հիւնք. յն. ἐλαία «ձիթապտուղ» բառից, Pedersen, Հայ. դր. լեզ. 145 մեկնում է վերի ձևով։

*ելչի «պատգամաւոր, դեսպան». Յիշատ. ՋՇԳ =1304 թուից (հրտր. Շոզակաթ, էջ 36)։

=Թրր. ایلچی ilči, թրք. elči «դեսպան»։

+եկ, ի-ա հլ. (յետնաբար ի հլ.) «գալ, գալուստ» Բուզ. Փարպ., «եկուր մարդ, դրսեցի, պանդուխտ» ՍԳր, «եկամուտ, հաս» վրք. հց. գործածւում է մանաւանդ գամ բայի դանազան ժամանակները կազմելու համար. այսպէս՝ կտ. եկի, ապառ. եկից, հրմ. ե՛կ, դերբ. եկեալ։ Այս արմատից են ծագում եկամուտ ՍԳր. Մծբ. Եւս. քր. Եզն. Կիւրղ. ծն., եկակոչ Սիր. խր. 11, Ոսկ. մ. ր. 8, եկոյսն Ճառընտ., դեռնկ «նոր եկած» վրք. հց. իւրեննկ «ինքնին եկած» Ա. մակ. ե. 19. Ոսկ. ես. 151, նորեկ Եւագր. Կոչ., երթևեկ ՍԳր. վեցօր., նախեկող Մաշկ., ուղեկեալ Փարպ., չնկ «անբերրութիւն» Տաթև. ամ. 285 (չունի ԱՌ), ապեկ բոռն կամ բոռնեայ «թոռան թոռը, առնը» (իբր Թէ «յետոյ եկած») Մխ. դտ. (ունի ԱՌ, բայց նաև ՆՀՌ, հտ. Ռ, էջ 1045, ապապապ բառի տակ)։ Այս արմատից են նաև զեկուցանել, իրազեկ են, որոնց վրայ տե՛ս զգալ։—Նոյն արմատի երկրորդ ձևն է **եկն**, որ գործածւում է միայն իբր գամ բայի կտր. եղ. դ. դէմքր։

=Ինիկ հայ բառ՝ հնխ. g²em- «երթալ, գալ» արմատից. համմտ. սանս. gámati, gačchati «երթալ», gatá-«գնացած»,ágan «եկն» gántu- «ճամբայ», գնդ. jamaiti, ǰasaiti «գնում է», լտ. venio «գալ», գոթ. qiman, հրգ. quëman, koman, գերմ. kommen, անգլ. come, հիսլ. koma, անգլսք. cuman «գալ», միսլ. bēim «քայլ», յն. βαίνω «երթալ», βάσκε «գնա՛»։ Հնխ. g²em- արմատը ունէր նաև երկրորդ g²ā- ձևը, ինչպէս ցոյց են տալիս սանս. ágām, «գնացի», յն. ἔβην, դոր. ἔβαν «գնացի», βῆμα «քայլ», լեթթ. gāju «գնացի», galwa «անցք», ալբան. ngā «վազել», թոխար. kakmu, քուչ. kekamu «եկած», լիթ. gemù, gimti «ծնուիլ (<աշ-

խարհ գալ)» (Walde, 815, Boisacq, 112, Trautmann, 76, Pokorny, 1, 675, Ernout-Meillet, 1042, Kluge, 271)։ *Հայերէն ձևերից առաջինը (եկ) գալիս է երկրորդական* g²ā- *ձևից, իսկ երկրորդը (եկն)՝ առաջին ռնգայնաւոր* g²em- *ձևից. հրամ. եկայք ձևի մէջ դեռ պահուած է* g²ā- *արմատի ա ձայնը։ Կատարեալ եկի. եկն ևն ձևերը միավանկ լինելով՝ բոլոր դէմքերի մէջ էլ բուռ օրինի պահել են հնխ. e- նախայաւելուածը (համմտ. եղի, եղիր, եղ ևն), որ յետոյ միւս ժամանակներին է անցել և վերջապէս արմատական է համարուել—Հիւբշ. 441։*

Bopp, Gram. comp. III, *39 տանս.* ágās=*յն.* ἔβης =*հյ.* **եկիր**. *էջ 205՝* **եկն**=*գոթ.* qvam, *տանս.* gam, *ուր* n =m: *Տէրվ. Նախալ. 77* կա<ga, gam *արմատի հնագոյն կրճատ* կն-կ *կրկնականից հանում է եկ։—Հիւնք. յն.* ἥκω *ձևից։*

Գիր.—Պահւում է կատարեալի, հրամայականի և անցեալ դերբայի մէջ. ինչ. Ախց. Երև. Կր. Մշ. Վն. էկա, *Շմ.* էկա *կամ* յէկա, յէկավ, *Ջղ.* յեկա, *Ռ.* էգա, էգո՛ւ, *Խրբ. Սեբ.* էգա, *Պլ.* էգա, էգո՛ւ *կամ* էգուր, էգած, էգէր է, *Ննխ.* էգա (էգի՛ր, էգիցէ՛), *Ղրբ.* յէ՛կէ, յէ՛կէր, յէ՛կը <եկն, յէ՛կ, յէ՛կած, յէ՛կալ ա. *Մրղ. Սլմ.* էկամ, *Տիգ.* էգm, էգո՛, *Մկ.* իկը, *Հճ.* իգի, իգո՛, *Հմշ.* էգուշ *«գալ», Ագլ.* ա՛կիբ[1], ա՛կալ, *ՋԹ.* այգո՛, այգո՛ *«է՛կ, արի».—ոմանք էլ եկող ասելու փոխարէն գործածում են գ'ալող։—Նոր բառեր են՝* եկ *«իջմորում»,* եկաճալ, եկայիճ, եկուճ, աճեկ, ցլեկ *(ցուլի եկած).—Առն.* բաւօվգիր *«բարով եկիր»։*

Փոխ.—Ուտ. էգալ *«եկեալ, եկած»։*

ԵԿԱՁՆԵԼ *«որոշել». ունի միայն Բառ. եբեմ. էջ 84։*

ԵԿԱԻՈՐ *«ծղի, բազուկ». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Մխ. բժշ. 69 «Ապա թէ գլխացաւութիւն խիստ լինի, զերկու զեկաւորսն՝ որ է ծղին՝ կապէ»։ (Այս մասին տե՛ս նաև* Seidel, *§ 190, որ Գաղիանոսի մօտ էլ գտնում է ծայրերի կապումով գլխացաւի դարմանման եղանակը)։*

***ԵԿԵՂԵՑԻ** *(-ւոյ, -եաց, -եաւ) «ժողովուրդ» Բ. մնաց. ժ. 3 (առուած է հրեաների բազմութեան համար. եկն Յերոբովամ և ամենայն եկեղեցին Իսրայէլի առ արքայ Ռոբովամ). «Հաւատացեալների հաւաքոյթ, ժողովուրդ, տաճար» ՍԳր. Կոչ. եկն., «մարդոց ժողով» Պղատ. սոկր. Եւթիխռ., որից՝* **եկեղեցական** *Ագաթ. Սեբեր.,* **եկեղեցանալ** *«հաւաքուիլ, խմբուիլ» ՍԳր,* **եկեղեցացուցանել** *«ժողովուրդը մի տեղ հաւաքել» ՍԳբ, «տաճարի վերածել» Եղիշ. յես.,* **եկեղեցաշէն** *«եկեղեցին շինող բարերարը» Մ. Մաշտ. 156ա,* **եկեղեցպան, եկեղեցեպան** *Յայտմ. նախեկեղեցի Բուզ. ևն։*

=Յն. ἐκκλησία *«հաւաքոյթ ժողովուրդի, պինւորների, յետնաբար՝ հաւատացեալների. 2. հաւաքատեղի, յետնաբար՝ եկեղեցի», ἐκκλησιάζω «ժողովի հրաւիրել, ժողով կազմել, խորհրդակցութեան ներկայ լինել», ἐκκλησιαστικός «եկեղեցական, կրօնաւոր». ծագում է* καλέω *«կոչել», ἐκ-καλέω «դուրս կանչել» բայից. և սրա համար է որ հայերէնում երբեմն թարգմանուած է կոչումն, կանչառաւ։ Քրիստոնէութեան տարածման հետ՝ փոխառութեամբ անցել է բազմաթիւ լեզուների. այսպէս՝ լտ.* ecclesia, *ֆրանս.* église, *գոթ.* aikklēsjō, *իտալ.* chiesa, *վրաց.* ეკლესია ეկლեսիա, *թրք. պրս.* كليسا kilīsa, kilīse, *չեչէն.* k'ils, *արաբ.* كنيسة kanīsa *(Կամուս, թրք. թրգմ. Բ. 285) ևն։—Բացառութիւն են կազմում դերմանական և սլաւական լեզուները, որոնք փոխ են առել յն.* κυριακόν *«տէրունի» բառը։ Այս բառի ժողովրդական ձևը* κυρικόν *գործածական էր Դ դարում, յունաց մօտ, «եկեղեցի» նշանակութեամբ, բայց շուտով չնչուեց։ Արիոսական գոթացոց ձեռքով այդ բառը փոխ առնուելով Դ դարում, գարձաւ գոթ.* *kyrikō *և ե դարից սկսեալ թափանցեց ամբողջ Գերմանիա։ Դրանից յառաջացան հին ստ. գերմ.* kirika, *անգլսք.* cirice, *հրդ.* chirihha, *գերմ.* Kirche, *անգլ.* church *ևն։ Գերմաններից փոխ առին սլաւները, որով ձեւացան հսլ.* crūky, *ռուս.* церковь, *բուլգար.* cŭrkov, cérkva, *լեհ.* cerkiew *ևն (Kluge, 256, Berneker, 132):—Հայերէնի մէջ բառի* -եցի *վերջավորութիւ-*

նը հայկական յարմարացում է և ո՛չ թէ յունարէնի հարազատ ստուգաբանութիւն։— Հիւրշ. 347։

Հներից ունինք հետևեալ մեկնութիւնները. «եկեղեցի կոչեցեալ է անուն բարութեան, զի ամենեքին կոչեցեալ են և միանգամայն ժողովին». Կոչ.։—«Լ ւսար զանուն եկեղեցոյն, ուսի՛ր և զաւանդ թարգմանութեան. եկեղեսիայ (ըստ յն. ստուգաբանութեան) կոչումն անուանի». Եղիշ. յես.,—«եկեղեցի յերբայեցւոցն առ մեզ ժողով թարգմանի». Յհ. իմաստ. (տպ. Վենետ. էջ 143)։—«եկեղեցիդ՝ ըստ երբայեցւոցն՝ ժողովոյ բազմութիւն ասի». Մագ. թղ. 224։—«եկեղեցին յերբայեցւոցն ի մերս՝ ժողովուրդ թարգմանի». Շնորհ. բնդհ. տպ. Երուսաղէմ, էջ 269։—«եկեղեցի... առ ստուգաբանելն այսպէ՛ս իմասցի. եկեալ, լցեալ և ակաղձեալ». Յհ. երզնկ. Արրտ. 1914, էջ 922։—«Համանունաբար սոցա կոչի եկեղեցի՝ իբր ժողովարան». Լմբ. մատ. էջ 120։ —«եկեղեցի, այսինքն ղոր կամիս՝ լիցի». Տաթև, Հարց. 614.—«եկլէսիայն՝ որ է եկեղեցին». Սմբ. դատ. էջ 56։—Նորերից ուղիղ մեկնութիւնը տուին նախ Schröder, Thesaur. 47, յետոյ ՆՀԲ, Peterm. 23 եև։—Ժողովրդական և յարմարեալ ստուգաբանութիւն է և՛կ եղիցի (արի՝ որ ուղածդ կատարուի)։—Fink, KZ, 43(1910), էջ 328—30 –ևցի վերջաւորութիւնը բացատրելու համար ենթադրում է թէ բառը ապգուած է եկեղեցաց գաւառի անունից, ուր կար մի նշանաւոր մեհեան։

ԳԻՒ.—Սլմ. յեկեղեցի, Մկ. եկեղեցը՛, Խրբ. Պլ. Ռ. Տփ. էգեղեցի, Երև. Ախց. Սչ. յեգեղեցի, Լ. ագեղեցի, Մշ. եղեգեցի, ՋԲ. գ՛եղիցէ, ՀՁ. եղեցի կէնալ «երկրպագել» (Թերզեան, Ամէն. տարեց. 1924, 197), Ագլ. կղէ՛ցի, Ղրդ. գըղէ՛ցէ, Մժ. գէխցի, Շմ. յեղեցի, Հւր. յեղեցիճ, Գոր. յեղէ՛ցի, յէ՛խծի, Ղրբ. յէ՛խցե, յէ՛խծէ.—Rivola, Բառ. հայոց, 1633, էջ 104 դնում է եղէկեցի ձևը, որ արդարանում է Մշ. եղեգեցի ձևով.—Ակն. ունինք էգզեսագագ, որ մի սրբավայրի անունն է (իբր *եկեղեցեակ)։

ՓՈԽ.—Ուտ. գերգեց «եկեղեցի» անշուշտ հյ. եկեղեցի բառի մի ձևափոխութիւնն է։

ԵԿԵՍԻԿԷՆ «երկունք, ծննդեան ցաւ». մէկ անգամ ունի Մագ. գամագտ. «Եւ ասիւ եկն քեզ եկեսիկէն, սակայն ոչ հասեկնեսցիս». (այսինքն՝ Եւ այժմ հասին քեզ երկունք, բայց ո՛չ ծնցիս)։ Նոյն են նաև **ԵՐԿԻՍԱԱՆ** «երկնեաց» Հին բռ. և **ԵԿԻԿԵԱՆ** «երկնեաց» Բառ. երեմ. էջ 84։ (Այսպէս Նորայր, Բանաս. 1900, 131)։

ԵԿԹԱՓԻՍՏԵԼ «հանել կամ տիրել կամ մրատայոյզ կամ զարհուրե(ա)լ». ունի միայն Բառ. երեմ. էջ 84։

ԵԿԻՏ «ծածուկ». ունի միայն Բառ. երեմ. էջ 84։—

ԵԿՂԱԼԷ. անստոյգ բառ, որ մէկ անգամ ունի Մխ. բժշ. էջ 10 «Մարզանկուշն և Թուրինճն. եկղալէ (այսպէս ձեռ. իսկ տպ. եղիալէ), օգտակար է օդնութեամբն Աստուծոյ»։

Seidel, Մխ. հեր. § 57 համարում է պրս. یگانه yagana «միակ, միայն» բառից աղաւաղ գրչութիւն։

***ԵԿՂԵՍԻԱՍՏԷՍ** (գրուած նաև եկկլեսիաստէս, եկկլէսիաստես, եկլեսիաստէս) «քարոզիչ վարդապետ» Նխ. ժող. «Սողոմոն իմաստունի գիրքը՝ որ կոչւում է նաև ժողովող» Ժող. ա. 1. Կոչ. 70. Եղն. էջ 189, «Սողոմոնի երգ երգոցը» Կոչ. 283, «Սողոմոն իմաստունին տրուած տիտղոսը կամ ծածկանունը» Ժող. է. 28, «Ս. Մեսրոպին տրուած տիտղոսը» (Յունաց մէջ) Սամն. էջ 57։

=Յն. ἐκκλησιαστής «հաւաքոյթի կամ ժողովի մէջ խօսող առենաբան, քարոզիչ. 2. ժողովողի գիրքը». ծագում է ἐκκλησία «ժողով» բառից. նոյնից փոխառեալ են նաև լատ. ecclesiastes, ֆրանս. ecclésiaste եև։—Հիւրշ. 347։

Ուղիղ մեկնութիւնը գիտեն հներից՝ Նխ. ժող. «Ասի ժողովողդ և եկլեսիաստէս, որ է եկեղեցական», կամ Լմբ. մատ. էջ 120. «Եւ գիրք ժողովողին եկղեսիաստէս կոչի, որ է ժողովող»։—Նորերից ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ։

*ԵԿՂԵՍԻԱՍՏԻԿՈՍ *(գրուած նաև եկլեսիաստիկոս, եկլէսիաստիկոս, եկկլեսիաստիկոս, եկղեսիաստիկոս)* «եկեղեցական մի տիտղոս, որ յոյները տուել են Ս. Մեսրոբին» *Խոր. գ. 57. (Հմմտ. նաև* ԵԿՂԵՍԻԱՍՏԻԿՈՆ *բառի վերջին նշանակութիւնը)։*

=*Յն.* ἐκκλησιαστικός «անդամ սուրբ եկեղեցւոյ», *որից փոխառեալ է նաև լտ.* ecclesiasticus։—*Հիւբշ. 348։*

Ուղիղ մեկնեց նախ ՆՀՔ։

ԵԿՔԱՆ *տե՛ս* Ակքան։

+ԵՂ «եղած՝ գոյացած բան» *Տաղ., որից՝* եղանիլ *(կտ.* եղէ*)* «գոյանալ, գոյութիւն ըստանալ, լինել» *ՍԳր. Եղն.,* աեղ «ինքնագոյ» *Եղիշ. Փիլ.* իեմեեղ *Պիտ.,* եղումն «լինելը, գոյութիւն» *Օրբել. ը. (չունի* ՆՀՔ*),* եղական «ստեղծուած» *Կիւրղ. գնձ. Խոսր. պարպ.,* եղանակ «կերպ, ձև» *Կիւրղ. գնձ. Սահմ., «երդի նուագ» Պղատ. օրին., «տարւայ չորրորդ մասը կամ օդի վիճակ» Խոր. ՅՀ.կՔ.,* եղելութիւն *Շիր. Արշ.,* եղուտ *Անյ. պորփ.,* մակեղուտ *Անյ. պորփ.,* եղոցել *Անյ. պերիարմ.,* եղանակաւորութիւն *(նոր գրականի մէջ) են։*

=*Բնիկ հայ բառ՝ հնխ.* gᵘel- *արմատից. ատելի ընդարձակ մեկնութիւնը տե՛ս յեղ։*

Müller, SWAW, *42, 257 նոյն ընդ* եղանել, *գնդ.* ərə, *հմմտ. պրս.* šudan «երթալ» և «լինել»։ *Տէրվ.* Altarm. 26 լինել *բառի հետ՝ =յն.* γεν-, γί-γν-ομαι, γίν-ομαι «լինել», *լտ.* gen; gigno, genui «ծնիլ» *են։* Canini, Et. étym. 109 *սանս.* g'an «լինել»։ Bugge, Btrg. 30 *յն.* βάλλω, βελόνη, βέλεμνα, *արկադ.* ζέλλω = βάλλω *ձևերի հետ հնխ.* gel- *կամ* gl- *արմատից. նշանակութեան զարգացման իբրև օրինակ մէջ է բերում յն.* ἐκ-βάλλω «արտադրել»։ *Նոյն մեկնութիւնը կրկնում է* IF, *1, 439 և* եղ- < *հնխ.* gele- *ձևը գտնում է յն.* ἐκατηβελέτης «իր նետերը հեռուն արձակող», βέλεμνον «նետ» *բառերի մէջ։ Ուղիղ մեկնութիւնը տուաւ* Meillet, MSL, 7, *162 և 10, 282՝ համեմատելով յն.* πελομαι *բառի հետ։ Հինք.* եղծանել *բառից։* Patrubány, SA, I, 222 եղանակ *բառին է կցում հունգ.* ónek «երգ»։ Scheftelowitz, BB, *29, 48 սանս.* sarati «հոսիլ», *յն.* ἔλος «ճահիճ», *հպրուս.* salus «առուս», *հսլ.* sŭlati «ուղարկել» *բառերի հետ։* Pedersen, *Հայ. դր. լեզ. 144* ելանել *բայից, իբր յն.* ἐλαύνω «յառաջ մղել»։ Pokorny, *1, 155—6, տե՛ս վերը* ել, ելանել։

ԳԻՒՐ.—Ալշ. Մշ. էղնել, *Կր.* էղնիլ, *Տիգ.* եղնալ «լինել». *միւսները ունին միայն լինել բայի կատարեալի, հրամայականի և դերբայի մէջ. ինչ. Պլ.* էղա, էղար, էղավ, էղի՛ր, էղած, էղէր է. *Ախց. Ակն. Կր. Համշ. Նոխ. Պլ. Ռ. Սեբ.* էղա, *Հճ.* էղօ, *Նոխ.* էղիլ է, *Մշ.* աղիլ է.—ղ-ի *փոխարէն լ ունին՝ Տփ.* էլա, *Երև.* էլավ, *Մկ. Վն.* էլm, *Շմ.* իլm, *Մրղ.* յէլամ, *Ղրբ.* ի՛lm, ի՛lmր, ի՛lmվ, ի՛lmծ, ի՛lmլ m *են։—Նոր բառեր են՝* եղայ «տարր. նիւթ», եղէն «էութիւնը», եղուկ «եղած»։ -լինել- եղնիլ *բայի գաւառական ձևերի ուսումնասիրութիւնը տե՛ս Մաքսուդեան, Արբա. 1915, էջ 247—253։*

ԵՂԱԳ *տե՛ս* Աղագ։

ԵՂԱՄ կամ ԷՂԱՄ «տաճարի մուտքի առաջ գտնուած սրահը, porche, Vorhalle». *մէկ անգամ ունի Բ. մնաց. գ. 4, որ կիւրղ. թագ. մեկնում է «եղամն է տախտակամածքն»։*

=*Եբր.* אילם ailam *նոյն նշ., որ յոյն թարգմանութեան մէջ տառադարձուած է* αἴλάμ *(լտ.* aelam, *վրաց.* ელამი ելամի*). և սրանից էլ տառադարձուած է հայերէնը, թէև ուրիշ տեղ (ինչ. Գ. թագ. գ. 3) թարգմանուած է կամարակապ։*

Ուղիղ մեկնեցին ՀՀՔ և ՆՀՔ։

ԵՂԱՄԱՅ *տե՛ս* Աղիմայ։

ԵՂԱՄԱՅՐ, ի *հլ. «կառակերգութիւն կամ առասպելական երգ» Ոսկ. Նխերգ. ունի միայն ՀՀՔ, իբր տարբեր բառ՝ եղերամայր ձևից։*

+ԵՂԱՆ, ի–ա *հլ. «երկրագործական մի գործիք է. երկմատ կամ երեք մատով հոսիլ» Ստեփ. լեհ.։*

=*Բնիկ հայ բառ, կազմուած* -ան *մասնիկով՝ եղ կամ յեղ «դարձնել, շրջել, փոխել,*

(<հնխ. qᵘel-) արմատից։ Եղանը այն գործիքն է, որով խոտը տեղափոխում են կամ կալը շրջում (միւս երեսը դարձնում)։ Բառի կազմութիւնը գեղեցիկ կերպով մատնանիշ են անում գւռ. եղել «կալը եղանով միւս երեսը դարձնել» (Ղզ. Ղրբ.), «արտը իրար վրայ երկու անգամ վարել, որպէսզի հողը շուռ գայ և արևի տակ լաւ այրի» (Բբ. Ախք.), յեղել «նոյն նշ.» (Բլ.), եղանեաղ «կալը եղանով եղնելը» (Ղզ.), եղօլի (Ղրբ. յըղօ՛լի) «եղան, հոսելի», յեղ (Բլ.) «կրկնակի հերկ կամ վար»։ Այս բոլորը ցույց են տալիս նախ՝ որ բառի արմատն է (յ)եղ, մասնիկն է -ան և երկրորդ՝ որ արմատի բուն նշանակութիւնն է «դարձնել»։ Յեղ և (եղանա)-եղ պահում են արմատի անկախ գործածութիւնը. եղօլի կազմուած է տարբեր մասնիկով՝ ճիշտ ինչպէս հոս–ելի։ Աւելի ընդարձակ տե՛ս յեղ։— ԱՀ.

Bugge, Btrg. 30 յն. βελόνη «ասեղ» բառի հետ՝ հնխ. gelϑnā ձևից։ Johansson, BB, 18(1892), էջ 19 յն. βελόνη։ Petersson, Ar. u. Arm. Stud. 53 սխալմամբ գրում է եղակ և կցում է եղիճ բառին, որի մեկնութիւնը տե՛ս տակը։

ԴԻՒ.—Ախց. Դոր. Երև. յէղան, Խոյ. Կր. եղան «երկմատ հոսելի»,—Ղրբ. յըղօ՛լի։

ԵՂԱՆԱԿ
ԵՂԱՆԻԿ
} տե՛ս եղ։

*ԵՂԱՏ «եղևին». մէկ անգամ ունի Փիլ. լին. 240. նոյնը ելատ ձևով ունի Պոմ. աղէքս. էջ 68։

=Յն. ἐλάτη «եղևին», որից նաև վրաց. ალატი ալատի կամ ელატი ելատի նոյն նշ. —Հիւրշ. 347։

Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ։

ԵՂԱՐ «մէկի կինը, жена, wife, weib». երկու անգամ գործածում է Պիտ. ուրիշ վկայութիւն չկայ։

ՆՀԲ մեկնում է «կին եղեալ առն»։ Bugge, Lyk. Stud. I, 77 դնում է հին *elarā ձևից, որ գտնում է լիւկ. lada «կին» բառի մէջ։

ԵՂԱՐ «ողբ, կոծ» ունի միայն ՀՀԲ. սրանից են կազմուած եղարամայր «ողբ երգող կին» Ոսկ. երր. և փիլիպ. Պիտ. յետնաբար արմատը դարձել է *եղեր, որից շինուած են՝ եղերամայր «ողբասաց կին» Ոսկ. յհ. ա. 1. Բենիկ. Լաստ., եղերական «ողբալի» Թէոդ. խշ. Նար. Սկևռ. աղ., եղերերգութիւն «ողբական երգ» Նար.։ Նոր գրականում կազմուած են եղերերգակ, եղերերգական, եղերերգու, եղերերգ, երբեմն էլ կրճատմամբ ասում են եղերգութիւն։

ՆՀԲ (եղերական բառի տակ) լծ. հյ. եղեռն, եղերք, յն ἐλεγεία «եղերերգութիւն»։ Հինք. յն. ἔλεος «կարեկցութիւն»։ Meillet, Յուշարձան, 211 եղերգ համարում է կրկնական և յառաջացած *երերգ նախաւոր ձևից. Բայց այսպիսի բառ գոյութիւն չունի։ Մառ, ИАН, 1915, 851 հյ. եղէգն և վրաց. լելի «եղէգ» բառերի հետ, իսկ էջ 950 վրաց. ղրիալի «լաց»։ Միւսները տե՛ս եղեռն։

+ԵՂԲԱՅՐ (-բօր, -բարբ, -բարց, -բարբք) «եղբայր» ՍԳր. փոխաբերաբար՝ «արհանառու, ազգական» ՍԳր. Կիւրղ. ծն., «կրօնաւոր» Վրք. հց., «ընկեր, կցորդ» Յոր. լ. 29, որից՝ եղբայրութիւն ՍԳր., եղբայրասէր Բ. մակ. ժե. 14. ա. պետ. դ. 8, եղբայրաբիւր Եփր. եւ., եղբայրասպան Իմ. ժ. 3, եղբայրաւեաց Ոսկ. մ. ա. 16, եղբօրորդի ՍԳր., մօրեղբայր ՍԳր., մօրեղբօրորդի Պզատ. օրին, արբայեղբայր Ոսկ. գծ., հարսնեղբայր Ոսկ. եփես. տեառնեղբայր Մանդ. ժողովեղբայր Եփր. Քուռց, էջ 241, նոր բառեր են՝ մօրեղբայր, եղբայրազիր, եղբայրազուրկ, եղբայրակից, եղբայրակցական են։

=Բնիկ հայ բառ՝ հնխ. bhrātēr կամ bhrā́tōr ձևից, որ ընդհանրապէս բոլոր բոլոր լեզուների մէջ էլ պահուած է. համմտ. սանս. भ्रातर् bhrâtar-, զնդ. bratar, հպրս. 𐎠𐎼𐎫𐎹 bratā, պհլ. brātar, brāt, պրս. برادر birādar, վախի vrüt, մինջ. vərây, եաղգ. vrōd, քրդ. barā, brey, brīder, աֆղան. wror, օսս. arwāde, erwāde «եղբայր», arwād «ազգական», բելուճ. brāt, գնչ. pral, plal, բոշա. փալ, Թախար. pracar, քուչ. procer, յն. φράτωρ, φράτηρ «մասնակից եղբայրութեան (φρατρία)», յուն. φρήτηρ

«եղբայր», ալբան. vtā, *լատ.* frater, *իտալ.* fratello, *ռում.* frate, *ֆրանս.* frére, *գոթ.* brōθar, *հբգ.* bruoder, *գերմ.* Bruder, *հոլլ.* broeder, *անգլ.* brother, *հսլ.* bratrŭ, bratŭ, *ռուս.* братъ, *պոլաբ.* brot, *հպրուս.* brote, brāti, *լիթ.* broter-ēlis, brólis *և լեթթ.* brālis *«եղբայրիկ», հիռլ.* bráthir, *կիմր.* brodyr (Walde, 313, Boisacq, 1036, Berneker, 82, Trautmann, 36, Horn, § 192): *Բառս փոխառութեամբ անցել է նաև ոչ հնդեւրոպական լեզուների. այսպէս՝ հ.ալաւականից փոխառեալ է հունգ.* barat *«բարեկամ» և ռուսերէնից փոխառեալ են մորդվին. և նակուտ.* brat *«եղբայր». այս երկու լեզուների մէջ «եղբայր» նշանակող բառ գոյութիւն չունէր, այլ կային միայն «մեծ եղբայր» և «փոքր եղբայր» նշանակող առանձին բառեր: Հայ. ուղ.* եղբայր, *սեռ.* եղբօր *<*եղբաւր *ծագում են հնխ. ուղ.* bhrā́tōr *կամ* bhrā́ter, *սեռ.* bhratrós *ձևերից. միջին ձևերն են *բրայր >*բղայր > *ղբայր > եղբայր. Համմ.* աղբիւր *<հնխ.* bhrēvr̥ (Pokorny, 2, 193, Ernout- Meillet, 370):—*Հիւբշ. 441:*

Ուղիղ մեկնից նախ Peterm. 33:—Windisch. *18 յն.* ἀλφαίνω, *իբր «անուցիչ» կամ* ἀδελφός *«եղբայր»:* Diefenbach, Annales de Critiques scientifiques, 1843, 447 *և սրանից* Bopp, Gr. comp. I, 398 *սս.* arwade:—Böttich. Arica 64, 42 *ուղիղ է մեկնում:* Lag. Urgesch. 860 *համեմատում է սս.* arwade *բառի հետ և մերժում է ամէն կապակցութիւն սանս.* bhrātr *ձևի հետ:* Müller, SWAW, *35, 191—9 և 38, 578 են ուղիղ է մեկնում:* Ascoli, KZ, *17, 136 հին իրանեան* braδre *ձևից: Մորթմանն,* ZDMG, 26, 601 *բևեռ.* hukabura, *որ սրբագրում է* albura=եղբայր: *Եազըճեան, Արեւելք, 1884 Հոկտ. 17* եղ- *համարում է սեմական* al *յօդը, իսկ* -բայր = *սանս.* bhrātar: *Տէրվ. Նախալ. 96, 126, 161 ուղիղ է մեկնում և հին ձևը համարում է *բղայր: Հիւնք.* աղբիւր *բառից: Մառ,* ЗВО, *25, 304 վրաց.* մեգոբար *«բարեկամ»:*

Գիմ.—Զթ. էխբ'mr, էխբ'mյ, *Ակն. Ասլ. Պլ. Սեբ.* ախբար, *Սչ.* ախբ'ար, *Ագլ. Ախց. Կր. Ննխ.* ախպար, *Ռ.* ախպար, *Խրբ.* mխբ'mr, *Ալշ. Երև. Ղրբ. Մկ. Մշ. Շմ. Զղ. Սլմ. Վն. Տփ.* ախպէր, *Տիգ.* ախփէր, *Գոր. Մրղ.* ախպըէր, *Ոզմ.* ախբեր, *Հմշ.* ախբէր *(ստացականով* ախբէյս*),* Հճ. ախբ'այ, *սեռ.* ախբ'էյ. *—բացի Զեյթունից՝ միւսները բոլոր ծագում են *աղբայր ձևից, որ կարող է երկու ձևով մեկնուիլ. նախ՝ հին հայ. *աղբայր անկախ մի ձևից (ժամանակակից զրաբարի, իբրև նրա գաւառական մի ձևը), որի մէջ ե-ի տեղ գրուած է համապօր ա յաւելուածը (համմ.* աղբիւր, աղագ=եղագ*). երկրորդ՝* եղբայր *ձևից, որի մէջ բառասկզբի ե՝ հետևելով յաջորդ ձայնաւորին՝ յետնաբար վերածուած է ա-ի: Աղբայր ձևի հնագոյն վկայութիւնը հասնում է մինչև ԺԲ դար. Համմ.* աղբայր *Սմբ. դատ. 142.* աղբաց *կամ* աղբանց արիւն *«եղբարց արիւն կոչուած ծաղիկը» Մխ. բժշ. աւելի ուշ՝* աղբար *Կոստ. երզն. 157 են:—Նոր գաւառական բառեր են՝* աղբրակին, աղբրամեռ, աղբրաճուռ, աղբրաճ, աղբրացու, աղբրաճի, աղբրօճի, աղբօրկուտ, ողջուճաղբէր, գերաճաղբէր, ճարսճաղբէր, փեսաղբէր, կոքաղբէր *են: Գաւառական փաղաքշական ձևեր են՝* արար, արարիկ, արօ, ապեր, ապի, ապիճ, բարար, ափար, ափեր, ափի, ափու, ափօ, ափուճ, պապեր, *որոնք նախնական «եղբայր» նշանակութիւնից անցել են «մեծ եղբայր, հայր, հօրեղբայր» նշանակութեանց և վերջապէս դարձել են մեծերին տալու պատուանուն:*

ԵՂԵՄՆ, ն *հլ. (սեռ.* եղեման, *դրբ.* եղեմամբ*) «եղեամ» ՍԳր., որից՝* եղեմճախառն *Եփր. քգ. 376,* եղեմճախար *Ագաթ.* եղեմճարկու *Խոր.,* եղեմճապատ *Թէոփ. խ. մկ. Մաշտ.,* եղեմճածիճ *Պարգ. 251. Մ. մաշտ. 212 բ. ճշ. 198 բ. գաւառական ձև է* եղեմճ *Յճխ. էջ 74, Վրդն. ծն.:*

Հիւնք. յն. ἥλιος *«արև» բառից:—*Bugge, Btrg. *30 հին ձևը համարում է *եղեւամճ, որ կազմուած է դնում -մճ մասնիկով՝ *եղեա- <հնխ.* geleva- *արմատականից. համմ. լտ.* gelu *«սառնամանիք». հհիւս.* kala *«սառիլ»,* kaldr

«ցուրտ» ևն. պատահական է կիւրին. elivu$_n$ «ցրտիլ»։ Patrubány, *ՀԱ, 1905, 318 յն.* ἐλεῖν, ἐλέσθαι «առնել, ձեռք առնել», հիւլ. sellaim «առնել», իբր թէ «վնասել»։

ԳԻՒ.—Առհասարակ գործածւում է բրք. բառը (ղրավ, խոպոպի, qəraɣə). նոր բառ է եղմակալել Ղզ. «եղեամով պատուիլ»։—Հմշ. եղիմ «տանիքներից կախուած սառոյցի երկար լուլայ»։

**ԵՂԵՐՈՐՈՍ (գրուած նաև եղրորոս, ղերերոս, ղերորոս, երորոս, երուրոս) «մի տեսակ բոյս. վրացի կոճ.* helleborus» *Վեցօր. 88, 89. Վրդն. ծն. Բժշ.—Հյց.* զեղերորոն *ձևով ունի Ոսկ. ը. տիմ. էջ 237.—Նոյն բառը Բառ. երեմ. էջ 85 գրում է* եղդորոս *և մեկնում է «ցմախ», իրօք էլ ցմախտակ՝ ապիտակ վրացի կոճն է։*

=ՅՆ. ἐλλέβορος *կամ* ἑλλέβορος, *Հյց.* ἐλλέβορον, *որից լտ.* helleborus, *ֆրանս.* ellébore, *անգլ.* hellebore *ևն, նոյն նշանակութեամբ։ Նոյն բառի ծագումը անյայտ է. տե՛ս* Boisacq, *244։—Հիւբշ. 348։*

Ուղիղ մեկնեցին նախ ՀՀՒ և ՆՀՒ։

ԵՂԵՂՍ *«ազօթս». այսպէս ունի Բառ. երեմ. էջ 85։*

ԵՂԵՆԳ *«յաւիտենական». պիտէ միայն Բառ. երեմ. էջ 85։—Կարծեմ թէ Ս. Գրքում գործածուած* եղեագ *յատուկ անունն է (Ա. մնաց. է. 21), որ թարգմանւում է «Աստուծոյ յաւիտենականութիւն». (տե՛ս Մխ. Աբբայի Յատուկ անուանց բառարանը, էջ 81)։*

ԵՂԵՆԴԻԱՐ *տե՛ս Սեղենդիար։*

ԵՂԵՈՆ, ն *Հլ. (սեռ.* եղեոան, *յգ. Հյց.* եղերբս. *ՆՀՒ դնում է նաև սեռ.* եղերան, *յգ.* եղերք *կամ* եղերուիմ, *բայց առանց վկայութեան) «փորձանք, չարիք» (նոր գրականի մէջ «ոճիր») Ամովս. գ. 10. Ը. մակ. դ. 5. Եզն. Ոսկ. ես. և երբ. Եւս. քր., որից՝* եղեոնաւոր *Գ. մակ. ե. 19. 21. ղ. 21,* եղեոնագործ *Նար. Երզն. ազօթ.,* եղեոնական *Նար. Սկևռ. ազօթ.,* եղեոնաճամ *«դառնահամ» Ճառընտ.,* եղեոնադառ *(նոր գրականի մէջ),* մեծեղեոն *Կոչ.։*

Հների մէջ նոյն է համարուած եղեր *«ողբ» բառի հետ. Համմտ. Լծ. Նար. «եղերական գործ, չարագործ, որ լալոյ արժանի գործ գործէ», «եղեռնականք. լալոյ արժանի գործ»։ Այսպէս նաև ՆՀՒ, որ լծորդ է դնում* եղեոն *և* եղեր, *յն.* ἔλεγος *«սուգի երգ»։* Böttich. Arica, *34, 21 իրար է միացնում* եղեոն, եղերերգակ, եղերամայր, *յն.* ἔλυμος *«մի տեսակ սրինգ, կորեկ», որոնք մերժում է* Lag. Arm. Stud. *§ 689: Հիւնք.* եղեր *«լաց» բառից։—*Bugge, Btrg. 30 եղեոն, եղեր *և* եղուկ *դնում է հնխ.* gel- *արմատից. համմտ. հբգ.* quelan *«ցաւագնիլ», անգլսք.* cwelan *«մեռնիլ», հբգ.* quellan *«չարչարել, սպանել», հպրուս.* gallan *«մահ», հսլ.* žalĭ *«ցաւ» ևն։*

**ԵՂԵՍՊԱՆ «մի տեսակ բոյս է. ֆր.* sauge, *բրք. ատա չայր, լտ.* salvia caespitosa Montb. et Auch». *(ըստ Տիրացուեան,* Contributo, *§ 429). ունին միայն Տիգրանեան, Բառ. բժշ. բոյսերի 13, Նորայր Բառ. ֆր. 1119 բ և ՀՒրուս. § 634։*

=ՅՆ. ἐλελίσφακον *Համանիշից յարմարեալ է նոր գրականում. այս բառը կազմուած է* ἐλελίζω *«պտտուիլ» և* σφάκος *«եղեսպակ,* sauge» *բառերից. նրանից է փոխառեալ արաբ.* السفاقن al-alisfaqin, *որից տատարարձուած է հյ. ալիսֆաղին Ամիրտ.։*

Ուղիղ մեկնեց ՀՒրուս. անդ։

ԵՂԵՐ, ԵՂԵՐԱՄԱՅՐ *տե՛ս* եղար։

ԵՂԵՐԴ, ի–ա, ո *Հլ. կամ* ԵՂԵՐԴՆ, ն *Հլ. (–դան, դանց), և –ակ նուազականով՝* եղերդնակ *կամ* եղերդակ *(գրուած նաև* եղդակ, ճիղերդակ, լեղերդակ, լերդակն *(Բառ. երեմ. յաւել. 575). նախաւերջին ձևը յիշում է միայն ՀՒրուս. § 903. նախաձայնի համար համմտ.* եղիճ *և* լեղիճ*) «ճարճատուկ բոյսը, վայրի հազար, դառնիճ, ասորեակ, տճկ.* ճիճեփպա, *ֆր.* chicorée, *լտ.* cichorium intybus L *(ըստ Տիրացուեան,* Contributo, *§ 568)» Գաղիան. Մխ. բժշ. Վասակ. 167, 174 (Տիգրանեան, Բառ. բժշ. բոյսերի, էջ 15 համարում է* taraxacus*)։*

Տե՛ս եղեոն։

*ԳԻՒ.—*Ենվրաակ *Պրտ. (ժողովրդական աստղաբաշխութեամբ կապուած լեղի բառի հետ՝ բոյսի դառնութեան պատճառաւ)։*

Փոխ.—Վրաց. ალერდი ալերդի *«առւոյտ, դալար կանաչ խոտ»։*

† **եվեհին** *«մայրիի նման մի ծառ է. լա* abies, *ֆրանս.* sapin» *Մն. խա. 15. Կիւրղ. ծն. այս առաջին և հիմնական նշանակութիւնից՝ նմանութեամբ կամ շփոթմամբ անցել է այնուհետև նշանակելու ուրիշ այլևայլ բոյսեր. այսպէս՝ «Լիբանանու մայրի, ֆր.* cèdre» *(որից* եղևնեայ, եղևնափայտ*), «կաղամախ» Նար. Կա. «լոբի» Բժշ. «օշինդրի նման խոտեղէն մի բոյս, մի տեսակ բարձուննակ, որ իբր ճճեսպան է գործածւում.* semen-contra, *որ և* artemisia santonica *(իսկ Տիրացուեան,* Contributo, *§ 547 համարում է* artemisia absinthium L*)» Բժշ. Գաղիան. Մխ. բժշ. 133 (վերջին իմաստը ձեւացած է արաբերէնից թարգմանաբար համմտ. արաբ.* شيح *šīh «եղևին,* sapin*» և* شيح تركى *šīh-I turki «*artemisia santonica*»,* شيح رومى *šīh-I armanī)։ Նշբ տարբեր բոյսեր համարելով վերջին երկուսը՝ գրում է. «եղև-իս «ազգ ինչ ափսինդի կամ օշինդրի, չհէրմէնի» և եղևին «գնդածաղիկ,* artemisia*». մինչդեռ Բժշկարանը յատկապէս շեշտում է թէ «ինքն նման է օշնդրի, բայց չէ օշինդր» (Հբուս. § 642, տե՛ս և* Seidel, *Մխ. հեր. § 366)։—Բառարանները մեկնում են նաև «մի տեսակ ցախաւել» և սրան իբր վկայութիւն են յիշում Լծ. Նար., որ մեկնելով հեղինակի եղևին կոչած ծառը, ասում է. «եղևին ցախ է ծանծաղարմատ, այսինքն սաղ է տակն. եղևին ասի. յայգիան բուսանի. աւելի կապեն զինքն». սակայն սրանից չի հետևում թէ եղևին աւել է, այլ թէ ծառ է, որի փայտից աւելի կոթ են շինում (աւելի կապեն և ո՛չ թէ աւել կապեն)։—Հբուս. § 641 գտնում է նաև* եղևան, *ճճեսպան բոյսը, որ ուզում է ուղղել* եղրևան*, մինչդեռ ակներև է, որ պետք է կարդալ* եղևին «artemisia santonica»։—*Վերի արմատից են ծագում* եղևնի, *որից* եղևնեայ *«մայրի ծառից» ՍԳր,* եղևնափայտ *ՍԳր.,* եղևնափայտեայ *ՍԳր.։*

=*Բնիկ հայ բառ, որի հետ համեմատւում են չեխ.* jalovec, *լեհ.* jałowiec, *ուկր.* jalovéć, *ռուս.* яловецъ *«դիհի», ինչպէս նաև լեհ.* jałowaty, *ն. սորբ.* jaloven′c *են։ Սլաւական բառերի առաջին շարքը ծագում է* *jalovĭcĭ *ձևից, որ կազմուած է* jalov- *արմատից՝ ծանօթ* -ĭcĭ *մասնիկով։ Երկրորդ շարքի մէջ մասնիկը փոխուում է։ Արմատը* jalov-՝ *տալիս է հնխ.* ōleu̯- *կամ* ēleu̯-*, որի մէկ ձայնդարձը ներկայացնում է հայ.* եղև-իս*, կազմուած իս մասնիկով՝* *եղև-< հնխ.* eleu̯- *արմատից* (Pokorny, I, 152. Berneker, 272, 453)։

Նշբ եբր. אלין elōn *«կաղնի»։* Lag. Urgesch. *818 յն.* ἐλάτη *«եղևին»։* Pictet, Orig. indoeur, 1, 234 *և աւելի ընդարձակ* Bugge, Btrg. *37 հսլ.* jela*, չեխ.* jedla*, պրուս.* addle*, լիթ.* ẽgle*, լեթթ.* egle*, բրբտ.* aedlen *կամ* édlen *«եղևին», յն.* ἐλάτη *«եղևին». այս վերջինը հնխ.* edlṇtā *ձևից. հյ.* եղևին *դնում է* *եղաւին նախաձևից, ուր* d *ձայնը ընկած է, իսկ* ին *<հնխ.* -meno *մասնիկն է։—Հիւրշ. 442 շատ անապատ-հով է գտնում այս մեկնութիւնը։—Հինք. յունական* Ἐλένη *յատուկ անունից։ Ուղիղ մեկնութիւնը տուաւ* Liden, IF, *18, 491—3, որ ընդունում են նաև* Trautmann, *69 (իբրև =լիթ.* ẽglius*, լեթթ.* paegle *«դիհի») և* Berneker, 272. *բայց այս վերջինը՝ էջ 444 նախամեծար է համարում սլաւական բառերը դնել* jalov *«ամուլ» արմատից. համմտ. ռուս.* ялый, яловый *«անպտուղ»,* яловица *«չբեր կով»,* яловина *«կորդ հող» են։ Եղևին բառի նշանակութեանց ճշտումի համար տե՛ս Արթինեան, Աստուածաշունչի տունկերը, էջ 135—140։*

Գիհ.—Ըստ Ամատունի, Հայոց բառ ու բան, էջ 175 կայ միայն եղևին *(Սիփան) «կարճ բնով, փափուկ, հոտաւետ, դառն խոտ, որ ախորժանօք ուտում են անասունները։ Ունի իւր ճիւղերի վրայ ողկուզաձև մանր պտուղներ»։*

եղէգ *(սեռ.* եղեգի, եղիգի*, զրծ.* եղեգով, եղիգով*) «եղերդ, դառնիճ,* chicorée» *Բլ. ժբ. 8 Բուց Թ. 11, Եփր. եր.։*

Հիմնք. լեղի բառից։ Կապ ունի՞ յաջորդ եղէգն կամ հոմանիշ եղեւդն բառի հետ։

ԵՂԷԳՆ, ն *հլ. (սեռ. եղեգան, յգ. -գունք, գրծ.—գամբ) «եղէգ, ղամիշ» ՍԳր., «եղեգէ շինուած գրիչ» Եփր. գտ., «ձող» Յայտ. ժա. 1, «չափ, կանգուն» Յայտ. իա. 15, «բոյսի ցօղուն, ծղօտ» ՍԳր., «մի տեսակ խունկ» Ել. լ. 23. Երգ. դ. 10, որից՝* եղեգնեայ *ՍԳր.,* եղեգնաբեակ *Ագաթ. Փարպ.,* եղեգնախառն *Կոչ. 322,* եղեգնուտ *Վրք. Հց.,* եղեգնիկ *Խոր. ա. 30 (Վիպասանական երգի մէջ),* խունկեղէգն *Ել. լ. 23. Երգ. դ. 14. Ոսկ. ես. կամ* եղեգնախունկ *Նար.,* եղեգնախուիւ *Նար.,* չաֆարեղէգ *(նոր գրականի մէջ).—սխալման արդիւնք պէտք է կարծել Բռ. երեմ. էջ 85* եղեգոտ *«ճռաքաղ»։*

Böttich. Arica, 34, 21 *յն.* ἔλεγος *«սուգի երգ, եղերերգութիւն»։ Մերժում է* Lag. Arm. Stud. § 691: Pictet, 2, *161 յն.* ἡλακάτη *«եղեգի ցօղուն, իլ»։* Fröhde, BB, 7 (1883), 118 *յն.* ἔλεγος, *սանս.* ṛc։ *Հիմնք. յն.* ἔλεγχος *«յանդիմանութիւն, կշտամբանք»,* Müller, WZKM, 11, 206 *յն.* λειχήν *«քարաքոս, մամուռ»։* Մառ, ИАН, *1915, էջ 851 վրաց. լեղի «եղէգ» ևն։ Պատահական նմանութիւն ունին յն.* λύγος *«ցօղուն, ուռի», լիթ.* lùgnas *«ճկուն», լտ.* lignum *«փայտ»։*

ԳԻՒ.—Մկ. եղէ՛, *Ոզմ.* յեղէ՛ *.—իսկ Համշ. ունի «ջուլհակի գարտակ, մասուրա» իմաստով։*

ԵՂԷՆՄՈՎԹ, ԵՂԷՆՈՎԹ *«ևս». ունի միայն Բառ. երեմ. էջ 85։*

ԵՂԷՋ *«գետին, որ քրտինքի նման ջուր է թորում». նորագիւտ բառ, որ երկու անգամ գտնում եմ գործածուած Վիմ. տար. 223 անթուական մի արձանագրութեան մէջ՝ «Ետու զիմ դանձագին հողերն, զԳերմատու տրնաւփնիքն, առաջի եղէգն, Գինեկոյ ճանապարհն, միջի եղէգն...». իմաստը ճշտում է տր.* եղէգ *վերի նշանակութեամբ։ Ըստ հաղորդագրութեան Ս. Մովսիսեանի (նամակ 1928 օգոստ. 23) նոյն է Բլ.* աղէգ *«գետափ, ծովափ», որից* աղբգաշ *«աղէգում փորուած փոսիկ, ուր ջուրը քրտինքի նման սուզուելով՝ աղբիւր է յառաջացնում»։*

ԵՂԻ *«հասնելու մօտ՝ կաթնահամ ցորեն» Նխ. գետ. Սմբ. դատ. 61. Բժշ. Տաթև. հարց. 357. որից* եղի խաճձեալ *«աղանձ» Նխ. գետ.։*

Հիմնք. եղիճ բառից։

ԳԻՒ.—Երզ. ըղի, *Երև.* ձէղի, *Ղրբ.* ձէ՛ղէ, *Մկ.* էղա, *Սլմ.* յէղա. *Նուազական մասնիկով՝ Ալշ. Մշ.* էղիկ *(նոյնը նաև Բլ. Մշկ.)։*

ԵՂԻԿԱՏՈՆ *«տէրունական». ունի միայն Բառ. երեմ. էջ 85։*

ԵՂԻՃ *«մի տեսակ փշաբոյս է. Բրբ.* ըղըղան, *ֆր.* ortie, *ռուս.* крапива, *գւռ.* կճաճ, խճի, *լտ.* urtica dioica L *(Տիրացուեան,* Contributo, § 85*)» Յոր. լա. 40. Ագաթ. Ոսկ. ես. 417, որից՝* եղճի սերմն *«մի տեսակ բաղեղ» Գաղիան.,* եղիճկի տակ *«խուպազի, որ է մոլոշ» Բժշ.,* եղիճնմայր, լսենեղիճ *(նոր բառեր)* «lamium striatum S.» *Տիրաց.* Contrib. § *456. ամէկաձև գրուած է* աղիճ, աղիջ, աղիճճ, աղիճջ, աղիջիկ, եղիճիկ, եղեճուկ, եղիճջ։*—Յետնաբար նշանակում է նաև «ծովային մի տեսակ խեցեմորթ» Գաղիան. այս իմաստով յարմարուած է յունարէնից, ուր ունինք κνίδη «եղիճ փուշը. 2. ծովային մի խեցեմորթ. ֆրանս.* ortie de mer*», բայց հմմտ. նաև* եղինջ *Ղրդ. «խղունջ (մէջը պարունակուած կենդանին)»։—Ըստ այմ այստեղ է պատկանում* աղիճ՝ *մեկնուած «կնիդոս» (իմա՛ κνίδη) Գաղիան. (որ Հին. § 57 համարում է լտ.* cnidium, *ֆրանս.* cusson, *գոճմակ բոյսը. բայց հմմտ. Նորայր, ՀԱ, 1921, 615) նոյնպէս այստեղից է ծագում* մոլոշ (mauve, *տճկ.* էպէմ կիւմէճի, *լտ.* malva, *Ղրբ.* փիփէրք*) բոյսի անունը, որ խառնամսան ձևերով գրում է՝* աղճկտակ, աղջկտակ, աղճկուտակ, աղճտակ, աղջկի տակ, աղճկտաճ, աղճկուտատ, աղջիկտակ, աղջկուտակ, աղէճկիտակ, եղճճկտուկ, եղիճկըտուկ, եղիճկտուտ, եղճճկտակ, եղիճճկտակ *և որոնց մէջ ուղղադոյն ձևն է* եղիճկի տակ.*—Նոյն բառը Մխ. բժշ. 96 գտնում եմ գործածուած* աղճկուտատի *ձևով (մօլօխ՝ որ է խուպազէ ազդ մի, որ է ցանծոյ և տանու աղճկուտատի). այս բանը ցոյց է տալիս, որ յիշեալ ձևերի հետ նոյն են նաև* կուտատուկ

(կատաեակ, կուտակուտ, կուտաւտուկ, կատատուկ, կուտատակ) *«մոլոշ» Գաղիան.*, կուտակեայ բանջար *Պտմ. աղէքս. (տե՛ս ՀԲուս. § 1528), որ գաւառականներումն էլ պահուած է. հմմտ. Ագլ.* կատ՛ախ, *Մժ.* կատ՛ուտու *«մոլոշ»։—Տե՛ս և* կուտատուկ, *իսկ մըշկան եղիճ տե՛ս* Լեղինջ։

Հինք. պրս. انجیرا anǰīra *«եղիճ» բառից։* Patrubány, *ՀԱ, 1908, 278 անդլսք.* älan *«այրել» բայի հետ։ Մառ,* ИАН, *1912, 832 վրաց. ջինճարի և լազ. դինկիջի «եղիճ» բառերի հետ։* Petersson, Ar. u. Arm. Stud. *էջ 53 հնխ.* sel-no- *«կճող» ձևից. արմատը* sel-, *որից նաև սանս.* saṭā *«դէս, բաշ», իռլ.* sart *«դեզմըն», լեթթ.* scherwe *«հատու կաշի» ևն։*

ԳԻՒ.—Մկ. էղէճ, *Հճ.* էղիջ, *Համշ. Մշ.* էղինջ, *Վն.* յեղինջ, *Խրբ.* յէղինջ, էղինջ, *ՋԲ.* աղը՛ջ, *Ագլ. Երև. Շմ. Տփ.* աղինջ, *Ասլ.* լէղիջ, լէղիժ, *Սչ.* լէղիջ, *Ղրգ.* խաղինջ։ *Նոր բառեր են՝* եղէճիկ, եղիճնոց, եղճել *«խայթել», Սչ.* լէղիջել *«եղիճով ձեռքերը արիւնել» (ռումանական սովորութիւն, որ Զատկի օրն են կատարում)։*

ԵՂԻՄՈՆ *«բարձր արարեալ». ունի միայն Բառ. երեմ. էջ 86։*

— **ԵՂԻՆՋ** *«փիլաւ». այս բառը մանկութեանս ժամանակ գործածական էր Պօլսում՝ իբրև գրական բառ. օր. տպուած եմ գտնում Արևելք, 1890, մայիս 22 մի ճաշացուցակի մէջ. յիշել եմ իմ Թուրքերէնէ փոխառեալ բառերի մէջ (փլաւ բառի դէմ, էջ 351), որից առնելով Ամատունին, Հայոց բառ ու բան, էջ 175, աւելացնում է իր կողմից «հին բառ»։ =Կարծեմ թէ կազմուած է Պօլսի հայկաբանների ձեռքով եղ և բրինձ բառերից, որի համար էլ իբր օրինակ կարող է ծառայած լինել գր. եղինձել «եղիպտացորենը խորովել»։ Հմմտ. Վրդ. առ. 253 «Սիրաս իղով բրինձ կուզէ» (որի դէմ այլ ձ. փիլաֆ)։—Ձ.*

ԵՂԻՇՈՅ *«փափուկ, ոզորկ». անստոյգ բառ. մէկ անգամ ունի Նար. տաղ. 465 «Զեռացն եղիշոյ համարակապ կապէր. ատիճաղ պատիճաղ, ստղի խտղի երգով». ՆՀԲ չունի. այսպէս է մեկնում ՋԲ, որից նաև ԱԲ։*

ԵՂԻՏԱՄՆ. *ունի միայն Գաղիան. իբր հոմանիշ յն. դագոգիբաս կամ դադոդիբաս բառին։ ՆՀԲ և սրանից ԱԲ՝ յիշեալ յն. բառով հասկանում են λαγοθήρας «նապաստակ որսացող (արծիւ)», իսկ ՀԲուս. § 658 կա՛մ այսպէս և կամ լտ.* lagochilus *«մի տեսակ խոտեղէն բոյս»։*

ԵՂՕ *«առձև, անշուք, խանգարուած» Ոսկ. բ. տիմ. ա., «շինծու» Պզատ. օրին., «վատ, պակասաւոր» Ոսկիփ. «հերքում» Պիտ., ա-բից՝* եղծանել *(կար.* եղծի, *հրմ.* եղծ*) «աւրել, փճացնել. ջնջել, ապականել, քանդել» ՍԳր., «սասծը հերքել» Պիտ. կամ* եղծել *Ոսկ. գաղ.* եղծնուլ *Լծ. կոչ.,* եղծուած *Ոսկ. մ. բ. 27,* եղծանելի *ՍԳր.,* եղծագործ *«ապականիչ» Նար. քր. Ոսկ. մ. ա. 19,* եղծագործել *Ոսկ. մ. բ. 9,* եղծական *Ոսկ. եփես.,* աեղծ *ՍԳր.,* աեղծական *Ագաթ. Ոսկ. եփես.,* դիւրեղծ *Համամ. առակ.* առեղծանել *«քանդել, քակել հանելուկը լուծել» ՍԳր. Սեբեր.,* առեղծուլ *Նար. քր.,* առեղծուած *«երազի մեկնութիւն» Վեցօր., «հանելուկ, առասպելաբանութիւն» Ողբ. բ. 4.—Ջ նախդիրով՝* **գեղծ** *«ապականել, դէշ, աւրուած, անհոգ» Ոսկ. մ. ա. 23. Եփր. պհ. Նար. քր. Բուզ., «թուլութիւն, անհոգութիւն» Փարպ.,* որից՝ եղծ գեղծ *Ոսկ. բ. տիմ. ա.,* գեղծանել *(կա.* գեղծի, *հրմ.* գե՛ղծ*) «ապականել, ջնջել, աւրել» Յոր. լ. 16,* գեղծել *Ա. կոր. Թ. 18. Եղն. Ոսկ. մ. ա. 23, բ. 25,* գեղծչիլ *Սեբեր. Ոսկ. յհ. ա. 25,* գեղծեցուցանել *Նար. քր.,* գեղծուցանել *Դան. բ. 9. Ոսկ. մ. բ. 8, 18,* գեղծմտութիւն *Նարգր.,* չնորհագեղծ *Լմբ. Հանգ.,* հայրագեղծ *Նխ. բ. Թղ.,* մարմնագեղծ *Կանոն.,* ծայրագեղծ *«շատ տկար» Բրս. արբ.,* գեղծում, գեղծարար *(նոր գրականի մէջ)։*

Ինճիճեան, Եղան. բիւզ. 1824, էջ 211 իբր առեղծել=հաստեղծել *բայի բացատականը. «իբր պակասեալ յեղելութենէ կամ ի հաստատութենէ»։* Windisch. 17 *յն.* ἀλγέω *«ցաւիլ, տառապիլ»։ Հինք. առիւծ բառից* առեղծուած, *որից* եղծանել, *որից էլ* **գեղծանել և ստեղծանել**։ *Շէֆթ.* BB, *28, 309 սանս.* ruǰati **«խորտակել»** *և 29, 49 սանս.* loga: ***Մառ,*** ИАН, *1914, 359 վրաց. խրծմա հոմա-*

նիշի հետ։ (կապ չունի բառս լուծանել ձևի հետ, որովհետև սրա արմատն է լայծ կամ կրճատ *լուծ, իսկ վերինների արմատն է եղծ)։

ԵՂԿ «գաղջ, տաքուկ, գոլ» Վրք. Հց. Ա. 569, որից՝ եղկագոյն «աւելի գաղջ» Արիստ. աշխ., եղկացուցանել «գաղջ դարձնել» Շար., եղկութիւն «գաղջութիւն» Մագ., կիսեղկ Մխ. բժշ. 98, կիսայեղկ Մխ. բժշ. 55.—Բառիս երկրորդ ձևն է լկիլ, որի վրայ տե՛ս առանձին։

ՆՀՒ (նոյնը նաև Թիրեաբեան, Բզմ. 1913, 340) լծ. թրք. ըլըխ «գաղջ», ըլըճաք «բաւական գաղջ»։ (Սրանք, ինչպէս նաև գերմ. lau «գաղջ» պատահական և այն՝ ո՛չ-ամբողջական նմանութիւն միայն ունին, որովհետև պակասում է նրանց մէջ արմատական կ)։ Գերմանական ձևը հնագոյն *hlâo ձևից է ծագում (բաս Kluge, 294) և պատկանում է հնխ. k'elē- արմատին, որից և լտ. calco «տաքանալ», հիսլ. hlȳr «գոլ» են (Walde, 112):—Հիւնք. ճեղկ բառից։

Գ.ԻՒ.—Երկու ձևով էլ ներկայանում է։ Առաջինը վերի եղկ ձևն է, որ պահում են Սլմ. յէխկ՝, վն. յեխ՝, Ոզմ. յէխ՝, Մկ. էխ՝, Սեբ. յէղգիգ, Կր. էղկումէղկ, Ախց. յէղկումէղկ. Նոր բառեր են՝ եղկացնել Արբ. «մի քիչ տաքացնել, պաղը կոտրել», եղկիլ Արբ. «ջուրի կամ որևիցէ հեղուկի մի քիչ տաքանալը», եղկուկ Արբ. «գոլ, կրակի կամ արևի առաջ մի քիչ տաքացած ջուր կամ ուրիշ մի հեղուկ», եղկիկ Խրբ. «տաքուկ (օր, օդ)»։—Երկրորդ ձևից ունինք լկիլ Եւդ. «գաղջանալ, տաքանալ», Ակն. Բբ. Խն. Կր. Ջն. Ռ. վն. «ձիւնի, սառույցի կամ սառած կերակուրի տաքանալով հալուել սկսելը, սառած մարմնի տաքանալը»։

ԵՂԿԱՅ «լրութիւն». ունի միայն Բառ. Երեմ. էջ 86։

*ԵՂԿԻԱՆՈՍ «անսառոյց մի թռչուն է». Նորագիւտ բառ, որ բաս Ամատ. Հայ բառ ու բան էջ 175 մէկ անգամ ունի Տաղ. ձեռ. էջմ. № 679 էջ 71 բ. «Եղկիանոս բաղուկ մի կայր, Սիրանավիզ կանաչկափայ, Դէմ արևուն վիզը փայլայր, Որպէս գոսկի ծիրանկապայր»։ =Յն. ἀλκυών բառն է, որ սովորաբար գառնում է հյ. աղկիոն. բայց ունի բազմայիւ սխալ գրչութիւններ. տե՛ս անդ։—Աճ.

ԵՂՋԱՆԱԼ «աղաչել պաղատիլ» Ոսկ. ա. տիմ. որից բնդ նախդիրով բնդեղձաձել (կամ բնդեղձաձի՞լ) «աղաչել, թախանձապին պաղատիլ» Ոսկ. մ. բ. 27. երկուսն էլ գործածուած են մի մի անգամ և ուրիշ օրինակ չկայ։

ՆՀՒ, ՋՒ և Հիւնք. հանում են իղձ բառից։

ԵՂՄ «մեղմ». արմատ առանձին անգործածական որից եղմիկ «մեղմուկ» Բառ. Երեմ. էջ 86։

Գ.ԻՒ.—Սչ. յէղմ «գաղջ, գոլ»։

ԵՂՄՈՆԱՅ «ուսումնասէր». ունի միայն Բառ. երեմ. էջ 86. Համմ. եղմուճի, եղմոնի։

*ԵՂՄՈՆԻ, որ առում է նաև եղմոճի փեղմոճի, փեղմոճի եղմոճի, փելոճի եղմոճի, փելմոճի եղմոճի «այս ինչ, այն ինչ» Դ. թագ. գ. 8. Ա. թագ. իա. 22։

=Երր. אלמני almonī, פלניאלמני pəlonī, almonī, פלמוני palmōni, այն է արաբ. فلان fulān «այս ինչ, այն ինչ», որից թրք. filan, filan falan, ժող. փլան փստան —մեր բառը գալիս է յն. ἐλμωνί տառագարձութիւնից (Sophocles, 452):

Ուղիղ մեկնեց նախ ՀՀՒ, յետոյ ՆՀՒ, +ԵՂՆ, և հլ. (-զին, -զինք, -զանց) «էգ եղջերու» ՍԳր., որից՝ եղնուտն «եղնիկի ոտք» (գրուած նաև եղո՞տն) Եփր. եկ., եղնորթ «եղնիկի ձագ» (իբրև հորթը) Եւագր. Նոր գրականում գործածւում է միայն եղնիկ ձևով։

=Բնիկ հայ բառ՝ հնխ. élno- ձևից. Համմ. լիթ. élnis «հիւսիսային եղջերու», élnė, álnė «եղն», լեթթ. alnis «հիւսիսային եղջերու», հպրուս. alne «անասուն» (իմա՛ «եղջերու»), հսլ. jeleni «եղջերու», ռուս. елень, олень «եղջերու», еленица «եղնիկ», կիմր. elain «եղնիկ», յն. ἔλλός «եղնիկ, եղնորթ», ἔλαφος (<հնխ. elǫbhos) «եղջերու», հիսլ. elit «ուլ».—բալթիկ-սլաւական լեզուներից փոխառեալ են մրգ. elend, գերմ. Elen, Elennthier, Elendthier, ֆրանս. élan «հիւսիսային եղջերու»։—Հնխ. élno- կազմուած է el-

արմատից՝ n- մասնիկով, բայց սրա փոխարէն k- մասնիկը ցոյց են տալիս լտ. alcē, alcēs, *յն.* ἄλκη, *հիսլ.* elgr, *հբգ.* ëlho, elaho, *միջգ.* elh, elch, *գերմ.* Elch, *անգսք.* eolh, *անգլ.* elk, *բոլորն էլ «հիւսիսային եղջերու». հմմտ. նաև ռուս.* losī, *չեխ.* los, *լհհ.* lós՛ *«հիւսիսային եղջերու», սանս.* ṛçyas *«եղնիկ», ասիր.* rus *«վայրի ոչխար»* (Walde, 24, Boisacq, 245, Trautmann, 68, Berneker, 264, Pokorny, I, 154, Kluge, 116, Ernout-Meillet, 31՝ *լտ.* alcē *«եղջերու» իբր գերմանական բառ)։—Հիւբշ. 442։*

ՆՀԲ երր. איל ayāl, אילים ayālīm *«եղջերու», ռուս.* елень։ *(Ուղիղ է այս վերջին համեմատութիւնը)։ Ուղիղ են նաև* Böttich. Arica, 89, 451, Lag. Urgesch. 749։—*Տէրվ. Մասիս, 1881 մայ՚՚ 5 յն.* ἔλλος *ձևի հետ։ Հիւնք. յն.* Ἐλένη *յատուկ անունից։ Սագրգեան, ՀԱ 1909, 335 և* Karst, *Յուշարձ. 402 սումեր.* alim, alin *«եղնիկ»։* Patrubány, IF, 32, 329 *լիթ.* lenkiù *«ծռել» բառի հետ։ Պատահական նմանութիւն ունի արաբ.* أيّل ayyil *«եղնիկ» (Կամուս, Թրք. Թրգ. Գ. 135)։*

ԳԻՒ.—Գոր. յէ՛ղնը, *Ախց. Կր.* էղնիկ, *Ակն. Ռ.* էղնիգ, *Սեբ.* յէղնիգ, *Ոզմ.* յէղնէ՛կ. *վերջինը նշանակում է «նորատի, մանկամարդ». այսպէս նաև Վն.—նոր բառ է եղնար Զրս. «էգ եղնիկ»։*

+ԵՂՈՒԿ *«աւա՛ղ, ափսոս, վա՛յ» Ոսկ. Եփես., «ողորմելի, խեղճ, թշուառ» ՍԳր. Ոսկ. մաթ.,* եղկութիւն *«թշուառութիւն» Եզն.,* եղկելի *Եզեկ. ե. 15. Եզիշ.,* եղկել *«վայ տալ» Կիւրղ. գնձ.,* եղկաճ *Փիլ. լին.,* եղուկել *(առանց սղումի) «թշուառացնել» Յայսմ. ևն։*

=*Բնիկ հայ բառ՝ հնխ.* leug- *արմատից. հմմտ. լտ.* lūgeo *«լալ, սգալ, ցաւիլ, հեծել»,* luctus *«ցաւ, վիշտ, սուգ», յն.* λευγαλέος *«եղկելի, ողորմելի, թշուառ»,* λυγρός *«տրխուր, թշուառ», սանս.* rṓga-, ruj̄ā *«ցաւ, հիւանդութիւն, հարուածծ», որոնց կցւում են նաև լիթ.* lúžti *«կոտրիլ, սիրտը կոտրիլ»,* lūžis *«հարուածծ», լեթթ.* lauʃīt *«սիրտը կոտրել», ռուս.* лузнуть *«զարնել, բաղխել», հբգ.* loh, *գերմ.* loch *«ծակ», հիսլ.* lucht *«մասն ևն։ Այս բոլորը երևան են հանում հնխ.* leug[1], leug[2] *արմատները* (Walde, 445, Boisacq, 571, Kluge 308)։ *Հնխ.* leug- *արմատի բուն նշանակութիւնն է «կոտրել, ջարդել, բաղխել». երկրորդական «սգալ, ողբալ» իմաստը յառաջանում է սուգի և կոծի ժամանակ կուրծքը ծեծելու, օձիք պատռելու ևն սովորութիւնից. եղուկ գալիս է արմատի* lug[2] *սաորին ձայնդարձից* (Pokorny, *2, 412*, Ernout-Meillet, 537)։

Հիւնք. եղկ *«գաղջ» բառից։* Bugge, Btrg. 30 եղեռն *և* եղեր *բառերին ցեղակից է դնում։ Ուղիղ մեկնեց* Scheftelowitz, BB, 28, 308։

ԳԻՒ.—Առանձին ի՛րքախօս հայոց մէջ խօսել բացագանչութիւն գործածւում է yəɣung meɣa *«եղուկ մեղա՛յ» դարձուածը, որ գրական լեզուից հին փոխառութիւն է (Արևելք, 1888, նոյ. 8—9)։*

+ԵՂՈՒՆԳՆ, ն *հլ.* (եղնգան, -գամբ, -գունճ, -գանց) *(գրուած նաև* եղունկն, եղենգունճ, *իբր ոմկ.* բղունկն, բղընկունճ, ղնգունճ, դունգրն *Ոսկ. ճառք 827, դանկ Անկ. գիրք նոր կտ. 393) «եղունգ» ՍԳր. Եւս. պտմ. Փարպ., «բանդակագործի գրիչ» Երեմ. ժէ. 1, «քերիչ» Շառրնտ., «եղնգնաքար» ՍԳր. «մի տեսակ խունկ» Ել. լ. 34։ Վերջիններս թարգմանաբար յն.* ὄνυξ *բառից, որ նշանակում է «եղունգ, երկաթէ ճանկ կամ քերիչ, եղնգնաքար և նոյն խունկը»։ Այս բառից են՝* եղնգնաբեւան *(նախաձայնի յապաւումով՝ ղնգնաբեւան) Եփր. վկ. արև.,* եղնգնաբար *«մի տեսակ աղնիւ քար» (սխալմամբ գրուած նաև* եղեգնաբար, եղենգնաբար*) Եզեկ. իը. 13. Յայտ. իա. 20,* եղնգնեայ *«նոյն քարը» Տօնակ.,* լայնեղունգն *Անյ. պորփ. Սահմ.,* սաղեղունգն *«մի տեսակ քար է» Բրս. ընչեղ.։*

=*Բնիկ հայ բառ, որի միւս հնդևրոպական ցեղակիցներն են՝ սանս.* नख nakhá-, *պհլ. պրս.* ناخن nāxun, *քրդ.* neinuk. *աֆղան.* nūk, *բելուճ.* nākun, nāhun, *հինդուստ.* naxūn, *գնչ.* nati, nai, *յն.* ὄνυξ, ὄνυχος, *լտ.* unguis, ungula, *հբգ.* nagal, *գերմ.* Nagel, *անգսք.* noezel, *հհիւս.* nagl, *անգլ.* nail. *հպրուս.* nagutis, *լիթ.* nagútis, nāgas, na-

gà, լեթթ. nags, հսլ. nogŭtĭ, ռուս. ноготь, հիռլ. ingen, միռլ. inga, կիմր. eguin, կօրն. ewin, բրբտ. ivin, բոլորն էլ «եղունգ»։ Հաւաքական ձևից են հպրուս. nage, հսլ. noga, չեխ. noha, ռուս. нога, որոնք նշանակում են «ոտք» (Walde, 851, Boisacq, 705, Trautmann, 192, Horn § 1016): Շատ դժուար է այս յայտնապէս ցեղակից բառերը ձայնական տեսակէտով իրար միացնել և հնդեւրոպական նախաձևը երևան հանել։ Բալթիկ-սլաւական ձևերը տալիս են naga և nagut, գերմանական լեզուները հնխ. noghlo- կամ nokhlo- (Kluge, 344), Boisacq դրնում է ընդհանուր $^{e}/_{o}$ nagh, $^{e}/_{o}$ nogh ձևերը— վերջինը յատկապէս արիական լեզուների համար։ Աւելի դժուար է մեկնել հայերէնը, որի ամէնից մերձաւոր ձևերն են լատինն ու գերմանական ձևերը. առաջինը իր u ձայնաւորով, միւսները իրենց երբեակ համապատասխան բազաձայններով (n, g, l): Հայերէնի մէջ անշուշտ նախաձայն ե յաւելուած է՝ ղ-ի պատճառաւ, իսկ վերջաձայն ն՝ մասնիկ է. որով արմատական մասը մնում է *ղուգ <*lung: Այս է հնագոյն հայերէն ձևը (Pokorny, 1, 180—2, Ernout-Meillet, 1083):

Առաջին անգամ Klaproth, Asia polygl. 103 համեմատեց լտ. ungues, ungula և գաէլ. jonga ձևերի հետ։ Peterm. 25 սանս. ձևի հետ։ Lag. Arm. Stud. § 694 վարանում է միացնելու վերի այլևայլ ձևերին։ — Տէրվ. Երկրագունտ, 1883, 171 և Նախալ. 83, 90 համեմատում է վերի բառերի հետ՝ նախահայ ձևը դնելով *նուգղ: Եազըճեան, Արևելք, 1884, նոյ. 16 լատ. ungulus: Հիւնք. էջ 25՝ լտ. unguis-ից։ Bugge, Btrg. 34—35 դնելով l յաւելուած, և մասնիկ և ղ տեղափոխուած՝ նախաձևը համարում է *նուգղ, որ կապում է լտ. ungulus ձևին։ — Հիւբշ. իր քերականութեան մէջ մինչև անգամ նշանակած չէ վերի մեկնութիւնը։ Meillet, Rev. crit. 1897, 388, Բրգմ. Բազմ. 1898, 120 և MSL, 10, 280 կազմուած է համարում Grammont-ի օրէնքի համաձայն (Dissimilation cons. էջ 71). նախահայ ձևն էր *nong^{w}h, ուրից տարանմանութեամբ *ղուգ>եղունգ (անձնական)։ Սրա վրայ խօսում է Osthoff, SA, 2, 114: Դարձեալ Osthoff, Etymologische Parerga, 1, 280 և 294 մեկնում է եղ-ունգն բարդուած եղ «եղջիւր» բառով, որով բուն բառը լինում է *ունգն «եղունգ», Scheftelowitz, BB, 28, 306 հսլ. rąka, լիթ. ranka, լեթթ. rōka «ձեռք» բառերին է կցում։

ԳԻՒՒ.—Ջղ. յեղունգ, Սլմ. յէղունգ, Վն. յեղունգ՝, Ախց. Կր. էղունկ, Ագլ. Համշ. եղունճ, Մկ. եղունգ՝. Ակն. Խրբ. Մշ. Սեբ. Տիգ. ըղունգ, Հճ. ողունգ, Ռ. ըղունգ, ուղունգ. Ոգմ. յէղօնճ՝, Զթ. Ննխ. Սչ. օղունգ, Ալշ. Երև. Տփ. ղունգ, Ասլ. ողիւնճ, ողիւ՝, Շմ. յղինգ՝, ըղինգ, Գոր. ղէ՛նգըլ, Ղրբ. ղէնգ՝, ղէ՛յնը:—Իսկ Սլմ. մի յէղունգ նշանակում է «մի քիչ, պատառիկ ինչ»։

ԵՂՈՒԶ «արգելք». ունի միայն ԱԲ. մէկ անգամ գտնում եմ գործածուած Ոսկ. եփես. 819 «եթէ փոս ինչ փորեալ իցէ և եղեգամբ և հողով ծածկեալ և ի վերոյ երկիրն հաստատուն թուիցի աշացն, ո՞չ ապաքէն ոտինն գործ իցէ որոնել և ճանաչել եթէ տեղի տայցէ՞ և եթէ ոչ, ունիցի՞ եղուշ ինչ, եթէ ոչ ունիցի»։

ԳԻՒ.—Նո՞յն է արդեօք եղուշ Ալշ. Բգ. Բլ. «քարացած ձիւն, որի վրայից կարելի է երթալ առանց բնաւ խրուելու»։

ԵՂՈՒՍՏ «իշխանական մի աստիճան», նորագիւտ անծանօթ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Ալամանի 636 թ. արձանագրութեան մէջ՝ «Ես Գրիգոր Եղուստր և Մարիամ իմ կին շինեցաք զսուրբ եկեղեցիս վասն մեր հոգւոց» (Վիմ. տար. էջ 1)։— Անշուշտ սրա հետ նոյն է ելիստուրիւն, որ տե՛ս։

*ԵՂՈՒՐՈՍ «կատու» Գաղիան. (մեկնում է կուզ, որ հին հայերէն լեզուով նշանակում է «կատու»)։

=Յն. αἴλουρος «կատու», որ կազմուած է αἰόλος «շարժուն» և οὐρά «պոչ» բառերից և բուն նշանակում է «պոչ շարժող»։

Գաղիանոսի ձեռագրում սխալմամբ գրուած է հոսն մի բառ՝ «եղուրոտկուց»

*և անմիջապէս յետոյ պրուած է «զինջաբակ, զինջուփր»։ Բաւ. երեմ. յաւել. 567 և ՀԲուս. § 708 երկրորդը հասկանալով «զենճէֆիլ» և համարելով առաջինի մեկնութիւնը՝ ստեղծում են եղուրոտ կուզ «կոճապղպեղ» անգոյ բառը։ Նորայր, ՀԱ, 1921, 232 ցոյց տալով մեծ թիւրիմացութիւնը՝ մեկնում է վերի ձևով։

*ԵՂՈՓԻՆ «եղջերու». նորագիւտ բառ, որ իբրև օտար ձև մէկ անգամ գտնում եմ գործածուած Ոսկ. պօղ. ս. 306 «Քան զեղջերու չիք ինչ պիղծ և վասն այնորիկ ասեն կոչի եղոփին, զի զօձ ուտէ. բանզի եղջերուի անուն հոռոմերէն օձահալած կոչի»։ (ՆՀԲ ունի այս վկայութիւնը օձաճաշած բառի տակ և գրում է եղոփոն ձևով)։

=Յն. ἐλαφίνης «մատաղ եղջերու»։

Ուղիղ մեկնեց Ստ. Մալխասեան (անձնական)։ Ոսկեբերանի հրատարակիչը, անդ՝ ծան. յն. ἔλαφις, հյց. ἔλαφον «եղջերու» բառից սխալ տառադարձուած։

ԵՂՋԻՒՐ (հնագոյն ձևն է ԵՂՋՆԻՐ), ր հլ. (-ջեր, -ջերէ, -ջերով, -ջերաւ, -ջերը, -ջերաց, -ջերց, յետնաբար՝ -ջերիւ, -ջիւրիւ, -ջիւրով ևն) «կոտոշ, պոզ» ՍԳր. Փարպ., «եղջիւրէ սրուակ, շիշ. 2. մի տեսակ անկիւնազարդ, 3. ուժ, զօրութիւն, յանձնապատուութիւն (երրայական ոճով). 4. այծեղջիւր պտուղը, տճկ. քէչի պույնուղի» ՍԳր., որից՝ եղջերու (մասնիկի համար հմմտ. մեղու. կազմութեան համար հմմտ. լտ. cervos, հպրուս. ragingis, հբգ. hiruz, գերմ. hirsch, որոնք բոլոր նշանակում են «եղջերու», բայց առաջաբանօրէն «եղջիւրաւոր», համեմատ այն սովորութեան, որով վայրենիները իրենց անասուններին բուն անունով չէին կոչում. տե՛ս MSL, 18, 262) «արու եղն» ՍԳր., եղջերաւոր Դան. ը. 6, եղջերեայ ՍԳր., եղջերիկ «պնդերես, եղջիւրի պէս պինդ երեսով» եզեկ. ը. 4, «մի տեսակ օձ» Նչ. եզեկ., եղջերուաքաղ «քիմեռ, chimaera, եղջերուից և քաղ (այծ) անասունից կազմուած խառնուրդ» Սահմ., եղջերցել «խեթիկել, հարու տալ» Փիլ. այլաբ., միեղջերու ՍԳր., բոլորն էլ կազմուած են եղջեր- բունով. իսկ եղջիւր ձևը բնաւ է գալիս միայն բառավերջում. ինչ. մաճիկեղջիւր վէցօր. Շիր. 51, 53, ոճգեղջիւր խոր. աշխ. Վանակ. հց., այծեղջիւր Շիր. Փիլ. եւ., միեղջիւր Լմբ. պարզ. բայց յետին հեղինակները շատ անգամ բարդութեանց առաջին մասումն էլ դնում են. ինչ. եղջիւրաւոր, եղջիւրաբոյս, եղջիւրաճաճանդիպեալ են, որոնք խորթ ձևեր են ոսկեդարեան ճաշակի համար։ Պարզ ձեռագրական սխալ է եղջենի փխ. եղջերենի եղիշ. երէց, որ յիշում են ՆՀԲ, ՋԲ և ԱԲ։

Klaproth, Asia polygl. 102 վօթյ. čur, սիբյ. և պերմ. sior, մորդվին. sjura և պրս. suru համանիշների հետ։ Տէրվ. Մասիս, 1881, մայ" 5 բաժանելով եղ+ջերու, առաջին մասը համեմատում է յն. ἔλαφος «եղջերու» բառի հետ։ Հինք. աղբիւր բառից։ Osthoff, Etym. Parerga, I, 278 և 293 ենթադրում է հնխ. el «եղջիւր» բառը, որից հանում է հայ. եղ-ունգն, եղ-ջիւր, հիւլ. il «ներքանը», մրգ. ele, el «ձեռքի կամ ոտքի կոշտ» ևն։ Scheftelowitz, BB, 29 (1905), 17 -իւր մասնիկով *եղջ արմատից, որ դնում է հնխ. roghi ձևից. հմմտ. հպրուս. ragis, լիթ. rãgas, հսլ. rogŭ «եղջիւր»։—Մառ, Сред. передвиж. 26 կազմուած եղն=ռուս. олень և լտ. -ջերու=լտ. cervus «եղջերու» բառերից։

Գիւմ.—Ակն. աղջիր, խրբ. աղջ'իր, Ջթ. աղջ'էր կամ աղջ'էյ «եղջիւր, կոտոշ», իսկ Հճ. էլջ'իյ, Սչ. յէլջիուր «այծեղջիւր պտուղը»։

ԵՂՄՈՎԹԻ «ողորմութիւն». ունի միայն Բաւ. երեմ. էջ 87, որ և էջ 89 գրում է եսիովք։

ԵՂՏԻՒՐ (հին ձևն է եղտեւր), ր հլ. (յգ. սեռ. եղտերաց, յետնաբար եղտիւրաց) «ջրաորթի մարգ, ճահիճ» Ես. լե. 7. Ոսկ. մ. ա. 2. Ոսկ. գծ. նիւս. երգ. Սրգ. յուդ. գրուած է նաև աղտիւր Ես. լե. 7 (ինչ ինչ ձեռագիրներում)։

ՀՀԲ աղտ բառից։ Հինք. եղջիւր բառից։ Buge, Btrg. 35 ցեղակից է դնում

յն. ἄρδω «թրջել, ոռոգել» և սանս. ardrā- «խոնաւ, թաց» բառերին, իրր թե եղաեր <*երաեր <*erdevʒ, որ կարելի է համեմատել ἄρδω ձևի հետ։ Հիւբշ. էջ 415 ընդունում է կասկածով և մտածում է, որ հյ. եղիւր բառի մէջ ե կարող է ղ-ի պատճառով աւելացուած լինել, որով արմատը կլինի *ղաեր <*ռաեր < *drevʒ (համմտ. աղիւր <*bhrevʒ) և պրանով հեռանում է ἄρδω ձևից։ Երբ բառը ունինք թէ՛ եղիւր և թէ՛ աղիւր ձևով՝ անտարակոյս է, որ ե յաւելուած է։ Scheftelowitz, BB, 29, 28 աղտ բառից, Petersson, KZ, 47, 250—252 մերժելով Bugge-ի մեկնութիւնը՝ կգում է յն. πλάδος «թացութիւն», πλαδαρός «խոնաւ, թաց» բառերին, իրրև հնխ. *plḍ-, որից աղտ «կեղտ» և -իւր մասնիկով աղտիւր կամ եղտիւր։

ԵՂԻՒԻ «եգիպտական անուշահոտ ուռի, salix egyptiaca» (ըստ Նորայր, Բառ. ֆր. 1119 բ և ՀՔուս. § 666) կամ «salix caprea L» (ըստ Seidel, Մխ. հեր. § 184) Յայսմ. Վստկ. 115. Բժշ. գրուած է նաև եղրդուտի ծառ, որի իւղն է եղերդի ձէթ (իմա՛ եղրդնի ձէթ) Մխ. հեր. էջ 67. գաւառականների մէջ ունինք եղրդի Մշ. «մի տեսակ անտառային ծառ» և եղվրդի Ալշ. որ ՆՀՌ մեկնում է «ծառ նման ատուոյ՝ յանջրդիս բուսեալ, յորոց ոստոց կաղամեն կողովս և ցախ աւել և վարոց եղանց»։ (Այս վերջին եղվրդին Ա. Ուղուրլեան, Մասիս, 1881, նոյ" 24 համարում է Betula alba L, ֆրանս. bouleau blanc, տճկ. քայրն ագաճը. սրանից են հանում մեղրամոմի նման մի հիւթ և գուցէ անունն էլ (եղ-վրդի) սրանից առնուած լինի)։

*ԵՂՐԻՒԱՆԻ «կապտաւուն փունջ փունջ ծաղիկներով մի տեսակ ծառ է. ֆր. lilas, տճկ. լեյլաղ. լտ. syringa vulgaris L) ըստ Տիրացուեան, Contributo, § 349). իրրև միջին հյ. բառ ունի Նորայր, Բառ. ֆր. 749 բ. (Ատրպատականի հայերը սխալմամբ այս ծառը կոչում են յասմիկ! ըստ որում տեղացի թուրքերը անուանում են նոյնը եասամանի)։ Բառիս նուազական ձևն է եղրուանիկ, որ նոր գրողներն են յարմարել, իրր «syringa» ծաղիկը (Արեւելք, 1890, տպր. 27, վ. 3. Յակոբեան)։

=Պրս. ارغوان arγavan, ارغوانی arγām, նոր հնչմամբ erγevan, erγevani, նոյն նշ.— նոյնից փոխառեալ են նաև վրաց. არღავანი արղավանի «շառագոյն կարմիր», սերբ. jergóvan, սլով. orgován, հունգ. orgovány-ta «եղրևանի» (Berneker, 454):—Աճ.

Գիւմ.—Սեբ. յէրղըվանի, խր. Ննխ. բոզըվան։

+ԵՄ. էական բայ. խոնարհւում է՝ ներկ. եմ, ես, է, եմք, էք, են, անկ. էի, էիր, էր, էաք, էիք, էին. հրամ. ե՛ր, երո՛ւք (ինչ. ո՛ղջ եր, ո՛ղջ երուք), սաոր. իցեմ (աներևոյթ՝ ել «լինել», ո հլ. Փիլ. Մագ. և սաոր. անկ. իցէի՝ բաս յունարան և լատինարան պարոցների) ՍԳր. են, որից ձևացած են—է որ, են որ, է զի, էր զի, իցէ թէ, իցիւ թէ և գոյականաբար՝ է, ի հլ. «էակ, գոյութիւն ունեցող» ՍԳր., որից ՈՐ էն «Աստուած» ՍԳր. եղն. (տաղաչափութեան համար համաոսուած րեն և կամ րէն. տե՛ս այս բառը), էակ Շար. Նար., էական Ագաթ. եղն., էանալ Ագաթ. եղն., էութիւն Սերեր. եղն. Ագաթ., էապէս Փիլ., աեէ «այն որ գոյութիւն չունի» Պիտ. փիլ., աեէութիւն Պիտ., չէ, ի հլ. «անգոյ մի էակ» եղն. Սերեր. կոչ. Ոսկ. (յետնարար ոչէ), չէական եղն. չէութիւն Եւագր., չէր «որ գոյութիւն չուներ, նա, որ անգոյ էր» եղն. (համմտ. Ջէրն չէին վասն չէին յաշտ առնէր. եղն. էջ 131). չէզոք (այժմ գրւում է և չեզոք) Փիլ., նախ Պիտ. Դիոն. ածայ.։

=Բնիկ հայ բառ՝ հնխ. es «լինել. գոյութիւն ունենալ» արմատից, որի ներկայ եզակի երեք դէմքերն էին՝ ésmi>եմ, éssi>ես, ésti>է. ցեղակից լեզուներից համմտ. ա դէմքի համար՝ սանս. अस्मि ásmi, զնդ. ahmi, հպրս. 𐎠𐎼𐎹 = 𐎠𐎼 𐎹 ➢ amiy, պրս. am, յն. εἰμί, լեսբ. ἔμμι, լտ. sum, հիսլ. em, անգսք. eom, հիսլ. am. գոթ. im, անգլ. am, լիթ. esmi, հպրուս. asmai, հսլ. jesmi, ալբան. jam.—երկրորդ դէմքի համար՝ սանս. असि asi, յն. հոմեր. ἐσσί, լտ. ess, es, լիթ. esi, հպրուս. assai, հսլ. jesi, զնդ. ahi, ալբան. jë, պրս. ī.—երրորդ դեմքի համար՝ սանս. अस्ति ásti, հպրս. astiy, զնդ. as-

ti, յն. ἐστί, հսլ. jestĭ, պհլ. պրս. քե-լուճ. ast, լտ. est, հպրուս. ast, գոթ. գերմ. ist, լիթ. êsti, հիռլ. անպլ. is, ֆր. e(st) և իռլ. é. վերջին երկուսը, ինչպես նաև արդի խօսակցական պրս. e հասել են մեր ասութեանին (Walde, 755, Boisacq, 226, Berneker, 266, Trautmann, 71, Horn, § 107, Pokorny, 1, 160, Ernout-Meillet, 959—60):— *Հիւրշ. 442։*

Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ *(պրս. էմ, իյմ), յետոյ* Windisch. 20, Lag. Urgesch. 565 *եւն։* Jensen, Hitt. u. Arm. *էջ 87, 99, 131,* ZDMG, 449. *ՀԱ,* 1904, *272 հաթ.* mi, imi *«եմ»։*

ԳԻՒ.—Պահուած է ամէն տեղ՝ ա. դէմքը էմ, իմ, իմ, ամ, *բ. դէմքը* էս, ըս, իս, աս *և գ. դէմքը* է, ը, ի, ա *ձեւերով։*

ԵՄԱԿ *«ձոր» Յես. է. 24, 26. Նար. խ. էջ 105 (որ կ՛ած. Նար. խ. մեկնում է «ծոց»). գրուած է էմակ ձեւով՝ Սասն. էջ 60. ուրիշ վկայութիւն չկայ։*

=Եբր. עֵמֶק ʾemāq, ʾēmeq *«ձոր», որ բնիկ սեմական արմատ է և նշանակում է «խորութիւն, խոր». Համմտ. արաբ.* عمق ʿamaq, ʿumq *«ձոր», ասոր.* ܥܡܩܐ umqā *«խորութիւն, ձոր». մեր բառը ծագում է յն.* ἐμάκ *տառադարձութիւնից։ (Յն. արդի օրինակներն ունին* Ἐμεκαχώρ *իբր յատուկ անուն, որի դէմ հայը դնում է* **եմակ Ա.**ովրայ. *յայտնի է որ մեր թարգմանիչների ձեռքը գտնուած ձեռագիրը պիտի ունենար անջատ* ἐμάκ **ձևը)։**

Ուղիղ մեկնեց ՆՀԲ։ Lidén, Arm. Stud. 18 *բնիկ հայ համարելով՝ արմատը դնում է* եմ *<հնխ.* yem- *«ծածկել». Համմտ. հիռլ.* do-em-im, *լիթթ.* jum-ju *«ծածկել, կտուրը ծածկել»։*

*ԳԻՒ.—*ՆՀԲ *(հտ. Բ. էջ 1065 բ) դնում է դւո.* **յեմակ** *«եմակ լերին կամ միջին վայրը նորին ի զառ ի վայրին»։—Եբրայական հազուադէպ մի բառի գոյութիւնը հայ գաւառականների մէջ անըմբռնելի է։*

ԵՄԱՏԻՏԻՍ *«արիւնաքար, կարմրաքար,* hématite, sanguine» *Պատմ. աղէքս. 5. չունին բառարանները. յիշում է միայն Նորայր, Բառ. ֆրանս. 636 բ։*

=Յն. αἱματίτης *նոյն նշ. ծագում է* αἷμα *«արիւն» բառից. տե՛ս նաև մատիտումն, մատիտ։—Հիւրշ. 348։*

Ուղիղ մեկնեց նախ Տաշեան, Ուսումն. ստոյն Կալիսթ. էջ 207։

ԵՄԻՓՈՐՈՆ, *ի–ա հլ. «եպիսկոպոսական խաչազարդ ուրար» (գրուած նաև* եմափորոն, եմափորտ, էմիփորոն, եմիփոռոն, եմփորտ, եմոփորտ, եմեփոր, եմափոր, ոմոփորոն, ոնիփորոն, ոնոփորոն, աւմաւֆաւորոն*) Լմբ. մատ. էջ 82, 86. Վրք. հց. Գնձ. Յայտմ. Մխ. դտ. Օրբ. իգ. կե (էջ 314), Մաշտ. Կիլիկ. ամէնից ուղիղ ձևն է* ոմոփորոն, *բայց արդի գրականում գործածական է միայն* եմիփորոն. *կայ նաև յայնափորոն։*

=Յն. ὠμοφόριον *նոյն նշ. ծագում է յն.* ὠμοφορέω *«ուսի վրայ կրել» բայից (*ὦμος *«ուս»+*φορέω *«կրել»). որից նաև վրաց.* ომოფორი ամափորի։—Հիւրշ. 517։

Հներից Մաշտ. Կիլիկ. առուգրանում է «Ոմոփորոնն՝ ուսոյ զգեստ թարգմանի. զի օմոսն՝ ուսք է և փորօնն՝ զգեստ»։ Նորերից ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ։

ԵՄՄԱՆՈՒ *«եղեալ յումեքէ». ունի միայն Բռ. երեմ. էջ 87։*

ԵՄՊՈՒԻՈՆ *«ծովեզերեայ առևտրական շուկայ». Նորագիւտ բառ, որ երկու անգամ գործածուած է Խոր. աշխ. Հրատր. Սուրբեանի, էջ 22, 28. «եմպոռնիոս բազումս, այսինքն քաղաքս ծովեզերեայս, վաճառատեղիս.—Եւ այլ բազում եմպոռիոնս, այսինքն գեղաքաղաքս ծովեզերայս, յորոց է Տրապիզոն»։*

=Յն. ἐμπόριον *նոյն. նշ.*

Ուղիղ մեկնեց Սուրբեան, անդ, էջ 30։

ԵՄՓԱՍ *«աղդուաբանութիւն». մէկ անգամ ունի Պրոկղ. (Իմացական տեսակաց անձն զկնի և երկրորդ ներկացուցանէ զօրինակ և զեմփաս նախատապին)։ Նորագիւտ բառ։*

=Յն. ἔμφασις, *որից և ֆրանս.* emphase:

Գտաւ ու մեկնեց Տաշեան, Մատ. մանր ուսումն. հտ. Ա. էջ 39։

+ԵՆԹ *«տակը». առանձին չի գործածւում. այլ՝ իբրև համապատասխան յն.* ὑπο- *(լտ.* sub-*) մասնիկի՝ գտնում է մի խումբ յետոսկեզարեան բառերի սկիզբը, որոնք թարգմանաբար կազմուած են յունարէնից. այսպէս՝*

ենթադրել=յն. ὑπο-τίθημι, ենթածել=ὑπ-άγω, ենթամնալ=յն. ὑπο-μένω, ենթասեռնայ=ὑπο-σελήνιακός, ենթակայ=ὑπό-στασις ևն, *բոլորն էլ յետին ինչպես՝ Եղիշ. դտ. Պիտ. Պորփ. Սահմ. Թէոդ. խչ. փիլ. ևն։—Գրուած է նաև* բնթ. *հին.* բնթադրել, բնթադրութիւն, բնթակայ, բնթակայութիւն *ևն։ (Սրանցից մէ՛կը միայն՝* բնթադրել՝ *վկայուած է ոսկեդարից. «Ընթադրեալ առ ոտն հարին զմեծ քահանայութեան զԱստուծոյ զպատիւն». Բուզ. Գ. 15. բայց ըստ Նորայր, Կոր. վրդ. 461 այս էլ ուղղելի է* բնթաբրեալ, *ըստ իս* բնդաբրեալ *«ընդ աթուր հարեալ»։—Յետնաբար Լմբ. մատ. 545 ունի* բնթադրիչ *«ոտքի տակ առնող»)։*

=Յունարան հնդինակների ձեռքով յարմարեցուած է բնդ *նախդիրից. ըստ այսմ* բնթ– *ձևը բռնում է երկուսի միջին տեղը։ Տե՛ս* բնդ։

Այսպէս մեկնեց նախ ՆՀՒ, յետոյ Peterm. 57, *Հիւրշ.* KZ, 23, 36, *Հիւնք. ևն։* Pedersen, *Հայ. դր. լեզ. 49 անս.* atha, *յն. ἔνθα ձևերի հետ կապակցով։* Meillet, MSZ, 16, 317 *կապ չունի, առում է, հպրս.* aθiy, *գոթ. և հ. սաքս.* und, *հ. անգլ. օճ ևն բառերի հետ։*

ԵՆՃԵՒՆ. *անատոյգ բառ, առանց վկայութեան. Հին. բռ. մեկնում է «եննգաւոր, խարդախ» Բառ. երեմ. էջ 88 «եննգաւոր կամ սատանայ». սրանից է շինուած* եննեռնաշէն *բարդ բառը, որ մէկ անգամ գործածուած է Անան. եկեղ. «Կարծրագոյն գտար առ ի տապալումն աւերածոյ եննեռնաշէնն տաճարաց»։ ՆՀՒ մեկնում է «խարդախ շինեալ և կամ կամարաշէն», իսկ ՋՒ «խարդախութեամբ կամ ամբարշտութեամբ շինեալ և կամ խարխուլ»։ Համմտ. Նաև* զեննեռեալ *«սպառազինեալ» ԱՒ։*

ՆՀՒ համեմատում է յն. γυρός, լտ. curvus *«կոր» բառերի հետ։*

ԵՆՈՎ *«մոռանալով» այսպէս ունի Բառ. երեմ. էջ 88, ի՛նչ լինելը յայտնի չէ։*

**ԵՆՔԵՂԷՍ (գրուած նաև* եմբեղեէս, եմբեղիէս, եմբեղիս, էմբեղիս*) «օձաձուկ». մէկ անգամ ունի Վեցօր. էջ 141 «Դրակոնաէս և միւոնէս և ենքեղէէս, որ ի սիկս գետոց և [ի] յատակս ծովակաց ի խորս տեղիս լինին»։—Իբրև լուսանցագրութիւն գրուած է Պիսիդ. վեցօր. տող 1030 «Ո՞վ ուսուցանէ զաւակս առնել օձաձկանն (որ կոչի* էմբեղիս*), անարգանդ գոլով, առանց սերման... կողաւմայր լինի ծովայինն»։ Սրանից առնելով Վրդն. ծն. գրում է. «Զուկն անքիլոս (այլ ձ. աֆիլոս, աեֆիլոս), որ կոչի կողամայր...»։ Այս ձևի վրայ տե՛ս առանձին։*

=Յն. ἔγχελυς, յդ. ուղ. ἐγχέλεις, հյգ. ἐγχέλυες «օձաձուկ», որից փոխառեալ է նաև արաբ. انقليس anqlīs *«օձաձուկ» (Կամուս, Բրք. Բրգմ. Բ. 278)։—Հիւրշ. 348։*

Ուղիղ մեկնեց նախ ՀՀՒ, յետոյ ՆՀՒ։

**ԵՆՔԻՐ «անձեռոց, ձեռքի սրբիչ» Վրք. հց. Բ. էջ 614 (այլ խմբ.* վարշամակ*). ուրիշ վկայութիւն չկայ։*

=Յն. ἐγχείριον «անձեռոց». գալիս է χείρ *«ձեռք» բառից։—Հիւրշ. 348։*

Ուղիղ մեկնեց նախ ՆՀՒ։

ԵՇՏՈՏԻ *«թևզանիք». նորագիւտ բառ. մէկ անգամ յիշում է Բառ. երեմ. էջ 218 (տե՛ս և* ազդիր *բառի տակ)։*

ԵՉ *«հագուստի երեսը,* superficies vestis*». դիտէ միայն Ներսէսովիչ, Բառ. լտ.-հյ. 524 ա։*

**ԵՊԱՐԽՈՍ կամ ԵՊԱՐՔՈՍ (ի–ա հլ. ըստ ՆՀՒ, թէև առանց վկայութեան) «փոխարքայ, կուսակալ». առաջին ձևը ունի միայն Վրք. հց. իսկ երկրորդը աւելի սովորական է. Վրք. հց. Ոսկ յհ. ա. 37. գործածւում է նաև արդի գրականի մէջ՝ նշանակելու համար Տաճկաց կամ Պարսից Սպարապամբ։ Որից* եպարխոսական *Յայսմ., եպարխոսութիւն Լմբ. պտրգ. Վրք. հց. Յայսմ.—տե՛ս նաև* հիւպարխոս։

=Յն. ἔπαρχος «գլխաւոր, հրամանատար. 2. գաւառի կամ նահանգի կառավարիչ. 3. փոխհիւպատոս. 4. քաղաքապետ». գալիս է յն. ἐπί «վրայ» + ἄρχω «առաջնորդել, իշխել» բառերից։ Յունարէնից են փոխառեալ նաև վրաց. ეპარხოსი *եպարխոսի «շրջանի կառավարիչ», ռուս.* епархъ *«թեմակալ, վիճակաւոր եպիսկոպոս»։—Հիւրշ. 348։*

Ուղիղ մեկնեց նախ ՀՀԲ, յետոյ ՆՀԲ։

*ԵՊԱՐՔԻ «նահանգ». նորագիւտ բառ, որ գործածուած է մի քանի անգամ ՅՀ. կք. էջ 88, Վրդ. պատ. 59, Սոկր. 369։

=Յն. ἐπαρχία «գաւառ, առանձին կառավարուած նահանգ» (հմմտ. նախորդ բառը). սրանից են փոխառեալ նաև վրաց. ეპარხოა եպարխիա և ռուս. епархія «թեմ. վիճակ»։—Ա՛ճ.

Գտաւ ու մեկնեց Աճառ. Հայ. նոր բառեր հին մատ. Ա. 107։

ԵՊԵԱԿ, ի–ա հլ. «անկողին». ունի միայն ՀՀԲ, առանց վկայութեան. նոյն բառն է որ Բառ. երեմ. էջ 88 ունի եպրիակ «անկողին» և էջ 91 երեակ «անկողին» ձևերով։

*ԵՊԵՆԷՍ «կրակի դիմացող մի տեսակ խեցեմորթ», որ և էպիենէս. Մխ. առ. Վրդն հլ. Վրք. հց.։ Նոյն է և պիճ, որ տե՛ս առանձին։

=Յն. αἰ πίννα ձևից, յօդը միասին առնելով. աւելի բնագրական տե՛ս Պիճ։—Ա՛ճ.

ԵՊԵՐ «նախատանք, պարսաւ, ամօթանք. վար զարնելը» Ոսկ. ա կոր. որից եպերել «նախատել, մեղադրել, վար զարնել» Ագաթ. Եփր. հլ. էջ 149, 168, եպերելի Եզն., եպերական Խոսրովիկ., եպերաճ Եփր. հլ. էջ 191, Թգ. 431. Վեցօր. 68. եպերումն Նանայ., աենեպեր Ճառընտ., աենեպերելի Յայսմ. գրուած է նաև այպերաճ Նար. երգ. 358. Տօնակ. ապերաճ ՋԲ, ԱԲ։

ՆՀԲ լծ. ընդ այպն, Բրք. (իմա՛ արբ.) عيب ʿayb «ամօթ», որից այպերաճ և սրանից էլ եպերաճ։ Հիւնք. յն. ἐπίῤῥησις «եպերանք»։

ՓՈՒԽ. — Վրաց. եպերաճո «եպերանք» (տե՛ս Մառ, Հայ-վրաց. յարաբերութ. էջ 41)։ Ջունի Ջուբինով², էջ 491։

*ԵՊԻԴԵՄԵԼ «շինել, կերտել, կառուցանել». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գործածում է Մագ. Թղ. 236 «Որոնեմ որցեալ կերտեալ ճեմարանիս եպիդեմեալ»։

=Յն. ἐπιδέμω «կառուցանել, շինել» բառն է, որ իբր համանիշ կցուել է կերտեալ բառին։—Ա՛ճ.

Գտաւ ու մեկնեց Աճառ. Հայ. նոր բառեր հին մատ. Բ. 181։

*ԵՊԻԴԻՄԻԱԿԱՆ «համաճարակ հիւանդութեանց վերաբերեալ». նորագիւտ բառ, որ հինդ անգամ գտնում եմ գործածուած Մագ. Թղ. «եթէ այսպէս վաղ ուրեմն նախասականն զայս յիւրումն եպիդիմիական մատենին, որ առ երազօքն է, ճուաղանցն իմաստասիրէ» (էջ 68), «Դեղովք տածել ի բժշկացդ, զի որպէս նախասականն զրէ յիւրում եպիդիմական մատենին» (էջ 98), «Ընթերցցիս զմատեանն երրորդ Գաղիանոսի՝ ի չորրորդում տաւի յիւրում եպիդիմական տիմին տրամաբանութեան, որ ի սակս կազմութեան մարդոյ» (էջ 112. այլ ձ. եպիդմական. նոյնը հրատարակուած է նաև ՀԱ, 1892, էջ 167 ա, ուր բառիս ընթերցուածն է եպիդեմական), «Ընդելուզեալ հիւանդս աստիճանի տիմիական յիմումն եպիդիմիական մակամատածութենէ» (էջ 125), «Քանզի ի ջերմինան, զորս ցուցանէ նախասականն յիւրում եպիդիմականն տրամաբանութեանն, սակ զնա գիտէ» (էջ 135)։

=Յն. ἐπιδημία «համաճարակ» բառն է, որ կազմուած է ἐπί «վրայ» + δῆμος «ժողովուրդ, երկիր» բառերից, որից փոխառեալ են նաև ֆր. épidémie, ռուս. эпидемія են։—Ա՛ճ.

Գտաւ ու մեկնեց Աճառ. Հայ նոր բառեր հին մատ. Բ. 181—2։

*ԵՊԻԿԼԻՆՏ (սխալմամբ գրուած նաև եպիկլիա) «մի տեսակ երկրաշարժ» Արիստ. աշխ. ուրիշ անգամ չէ գործածուած այս բառը։

=Յն. ἐπικλίντης «մի տեսակ երկրաշարժ, որ հողը սուր անկիւնով տեղափոխում է». գալիս է κλίνω «ծռել, հակել» բայից և սրա համար թարգմանուած է խոնարհեցուցիչ.—Բառ երեմ. էջ 88 գրում է եպիլիտ «խոնարհեցուցիչ», որ յիշեալ բառն է։—Հիւրշ. 348։

Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ։

*ԵՊԻՄԱՆԻԿՈՍ «պատարագչի բազպանը» Լմբ. պտրգ. սխալմամբ գրուած է եպիմատիկոս, եպիմիոտիկոս Լմբ. մատ. 148. այս վերջին ձևը ունի նաև Բառ. երեմ. էջ 88։

=Յն. ἐπιμανίκιον կամ ἐπιμάνικον, որ կազմուած է յն. ἐπί «վրայ» և լտ. manica «թեղանիք» բառերից. (այս բառը չունին

Bailly և Sophocles յիշում է Hefele, Btrg. z. Kirchengeschichte, II, 222):—*Հիւբշ. 348։*

Ուղիղ մեկնեց նախ ՀՀԲ, յետոյ ՆՀԲ։

ԵՊԻՍԿՈՊՈՍ, ի, ի–ա հլ. (յգ. –ուճ) «եկեղեցու առաջնորդը» Ա. սիմ. գ. 2. Տիտ. ա. 7. Ոսկ. փիլիպ. Եփր. ա. սիմ. 242. Ագաթ. գրուած է նաև եպիսկապոս Արձ. է դարից՝ Շողակաթ, 174 (այսպէս է գրում միշտ Տիմոթ. կուզ), եպիսկիվպոս Մանդ. Շողակաթ, էջ 135 (երեք անգամ), որից եպիսկոպոսութիւն Ա. սիմ. գ. 1. Ագաթ., եպիսկոպոսական Փիլիպ. ա. 1. Բուզ., եպիսկոպոսանոց Բուզ., եպիսկոպոսապետ Խոր., յառաջեպիսկոպոս Բուզ., եպիսկոպոսարան Ճառընտ., չեպիսկոպոս Բուզ. առանձին տե՛ս արհեպիսկոպոս, ռոբեպիսկոպոս։

=Յն. ἐπίσκοπος «եպիսկոպոս». բուն նշանակում է «պահապան, տեսուչ, վերատեսուչ, լրտես» և կազմուած է ἐπί «վրայ» և σκοπέω «դիտել» բառերից. սրա համար թարգմանուած է նաև հյ. վերադիտող Փոտ. Մագ. Լաստ., մակադիտող Թէոդ. Մայրագ. էջ 155։ Յոյն բառը փոխառութեամբ անցել է բազմաթիւ լեզուների. ինչ. լատ. episcopus, իտալ. vescovo, ֆրանս. évêque, սպան. bispo, գոթ. aipiskaûpus, հբգ. piscof, դերմ. bischof, անգլ. bishop, հսլ. episkupŭ, piskupŭ, չհ. սերբ. biskup, ալբան. upešk, նսլ. škof, հին շվ. bisp, ռուս. епископъ, վրաց. ეპისკოპოზი եպիսկոպոզի, թրք. piskopos, հունդ. püsköp, լափ. bispa, ֆինն. pispa, püspa, նոյնը պիտի լինի նաև արաբ. اسقف asqaf, հակառակ Կամուս, թրք. թրգմ. Բ. 779 արուած սուտգաբանութեան։—Հիւբշ. 348։

Հներից ունինք հետեւեալ մեկնութիւնները. «Եպիսկոպոսութիւն կոչի, որ թարգմանի տեսչութիւն, վասն ամենեցուն տեսուչ լինելոյ» Ոսկ. ա. սիմ. էջ 78, «Եպիսկոպոսք՝ որ թարգմանին այցելութք կամ տեսուչք». Լմբ. մատ. էջ 83, «Եպիսկոպոսն անուն ի հելլենացի լեզու է. իսկ առ մեզ այցելու թարգմանի» Լմբ. մատ. 137, «Եպիսկոպոսն որ թարգմանի տեսուչ», Յհ. արձիշ. 20, «Ընդհանուր ասի կաթուղիկոսն և տեսուչ՝ եպիսկոպոսն» Տաթև. ամ. 52։—Նորերից ուղիղ մեկնեց նախ Schröder, Thesaur. *47, 382, յետոյ ՀՀԲ, ՆՀԲ են։*

Գիւմ.—Ջղ. յեպիսկոպոս, յեպիսկապոս, Վն. յեպիսկոպոս, իպիսկօպօս, Մլմ. յեպիսկապոս, Ագլ. Աթց. յէպիսկօպօս, Ալշ. յէրիսկաբոս, Երև. յէրիսկաբոս, Կր. էպիսկօպօս, Ռ. էրիսկօրօս, Պլ. (հին լեզուով) էրիսգաբոս, (նոր լեզուով) յէրիսգօրօս, Խրբ. յէրիսգաբոս, յէրիսգօրօս, Մշ. յէրիսկօրօս, Նոր. Սեբ. յէրիսգօրօս, Դրբ. յէրիսկո՛բուս, Ոզմ. յէպիսկապուս, Մշ. իպիսկոբոս. Զթ. էրիսգիւրիս, Ասլ. էրիսգէօրէօ՛ս, Մկ. իպիսկօպուս, Շմ. յեկիսպակօս, Մրզ. յեպրսկապը՛ս։ Մաղրական իմաստ է ստացել Ակն. «չափազանց գինով»։

Փոխ.—ուս. yepiskopos *նոյն նշ. փոխառեալ է հայերէնից՝ նախաձայնի պատճառաւ։*

ԵՊԻՏՐՈՊՈՍ (ի–ա հլ. բստ ՆՀԲ, թէև առանց վկայութեան) «հոգաբարձու, խնամակալ» Մխ. դտ. Օրէնք. Լմբ. օր. 19, 39 (գրուած եպիտրայպօս)։

=Յն. ἐπίτροπος «անուցիչ, խնամակալ». ծագում է ἐπί «վրայ» և τρέπω «ուղղել, վարել» բառերից։—Հիւբշ. 349։

Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ։

+ԵՌ «եռալը, եփուիլը, եփ» Մարբին. Մին. Համդ. 61, «խմորուելով պղպջալը» Վասակ., «հոման բան» Տաթև. ամ. 698, «եռացած, խիստ տաք, եփուն» Ճառընտ., «մարմաջ, բոր գալը» Ճառընտ., որից՝ եռալ «եփուիլ. 2. վառուիլ (հոգին, եռանդը), 3. որդերը, վէրքերը վրան վխտալ» ՍԳր. Ագաթ., «սիրով միանալ, զօդիլ» ՅՀ. իմ. առ. էջ 23 (որք միանգամ հաղորդք եմք միմեանց... և սիրով առ իրեարս եռացեալք), եռանդն «եռալ, եփուիլը. 2. ալիքների յուզմունքը, 3. որդերի վխտալը. 4. ներքին յուզմունք, խանդ» ՍԳր. Ագաթ. Բուզ. Եզն., «կրակի վառուիլը» Եփր. Համաբ. 112, եռանդնացեալ «ատրաշէկ, աստիկ վառ, կիզիչ (երկաթ, կրակ)» Անկ. գիրք հին կտ. Ա. էջ 174, 179 (չունի ՆՀԲ), եռանդնաթափ Եւագր. 76, եռանդնալից Եւս. պտմ., եռանդնոտ Կոչ., եռանդումն Եփր. դատ. Ագաթ. Կորիւն.

նաս. պամ., տապեռանդն *Եփր. դտ. 335*, սրտեռանդն *Նար. երգ.*, որդեռաց *Նխ. բ. մկ. Եփր.*, կրկնեռաց *Նար.*, ջերմեռանդն *Ագաթ. Սեբեր. (կայ և ջերմեռանդ ախտ ԷՓիմ. 50)*, եռորական «*եռման, շատ տաք*» *Մագ. թղ. 79. սխալ գրչութեամբ է* երf «*շան մի տեսակ ցաւ կամ քոս*» *Վստկ.։— նոյն արմատից* զ *նախդիրով կազմուած է* **գեռալ** «*սաստիկ եռալ, վխտալ, յուզուիլ (գօրքի, ջուրի, որդերի, ցանկութեան համար ասուած ևն)*» *ՍԳր. Վեցօր. Եփր. թգ. և ել. Ագաթ.*, *որից՝* գեռացուցանել *Եփր. ծն.*, գեռնուլ «*եփ գալ (ջուրի)*» *Վրք. հց. Ա. 258 (չունի ՆՀԲ)*, գեռուն «*եփուն, խիստ տաք*» *Փիլ. ել.*, «*սողուն, ճճի, միջատ*» *ՍԳր. Եգն. (համմտ. յն.* ἕρπω «*շարժիլ, երերալ*» *և սրանից* ἑρπετόν «*սողուն, գեռուն*», *լտ.* repo, repto «*գեռալ*» *և* reptile «*սողուն, գեռուն*»)։—*Դարձեալ նոյն արմատից* ճ *սաստկականով՝* **հեռ** «*նախանձ, ոխ, կռիւ*» *ՍԳր. (տե՛ս վարը)։*

=*Բնիկ հայ բառ՝ հնխ.* ers- *արմատից. համ. սանս.* irasyáti «*կատաղիլ, զայրանալ*», irasyā «*չարասրտութիւն, ոխ*», irṣyā «*նախանձ*», *զնդ.* arəšyant- «*նախանձոտ*», ərəši «*նախանձ*», *պրս.* arašk *կամ* rašk «*նախանձ*», *յն. հոմեր.* ἀρωή «*անէծք*», Ἄρης «*կռուի աստուածը, Արէս*», ἀρή «*բռնութիւն*», ἐπ-ήρεια «*անիրաւութիւն, չարագործութիւն*», *լատ.* erro «*թափառիլ, սլքտկալ, շարժիլ (մոլորակների), սխալիլ*», error «*ընթացք, շարժում (օր. գետի, մոլորակի)*», *գոթ.* airzeis, *հրդ.* irri, *գերմ.* irren «*սխալիլ*», *հ. սաքս.* irrian «*խանգարել*», irri «*բարկացած, կռուարար*», *անգսք.* eorre, yrre «*բարկացած*», eorsian, yrsian «*չարը կամենալ*», *լեթթ.* erīgs «*զայրացած, ցաւալի*», erestība «*զայրոյթ*», *փռիւգ.* ἀρμὰν «*կռիւ*» (Walde, 258, Boisacq, 76, Kluge, 230): *Այս բառերը բաժանւում են երկու խումբի. առաջին խումբը՝ որի մէջ մտնում են արիական, յոյն, լեթթ. անգսք. փռիւգ. ձևերը և հ. սաքս.* irri, *ցոյց են տալիս «կռիւ, բարկութիւն, ոխ, նախանձ» նշանակութիւնը, իսկ երկրորդ խումբը՝ որի մէջ մտնում են լտ. գոթ. ձևերը և հ. սաքս.* irrian, *ցոյց են տալիս «շարժիլ, երերալ, սասանիլ, սխալիլ» նշանակութիւնը։ Երկու խումբերը նախապէս երկու տարբեր արմատների ծնունդ էին համարւում, բայց հիմայ, և յատկապէս գերմանագէտների կողմից, համարւում են մէկ արմատ։ Միութեան կապը հաստատւում է օր. անգսք.* ierre, *որ նշանակում է թէ «զայրացած» և թէ «սխալուած, մոլորուած»։ Իբր նոյնպիսի ապացոյց է ծառայում նաև հայերէնը (ըստ* Lidén, Arm. Stud. *էջ 83—85)*, *ուր* եռալ *և* գեռալ՝ *միացնում են իրենց մէջ «շարժիլ, երերալ, հոգեպէս բորբոքուիլ, դրդռուիլ» նշանակութիւնները։ Ըստ* Lidén-*ի այստեղ է պատկանում նաև* հեռ, *որ ճիշտ արիական բառերի իմաստն ունի։ Ղարաբաղի բարբառում* եռալ *բառը հեռալ ձևն ունի, ինչ որ ապացուցանում է* եռ *և* հեռ *արմատների նոյնութիւնը։ Հայերէնի մէջ* եռալ *ունի նաև «եփուիլ» նիւթական նշանակութիւնը, որ միւս լեզուներում չկայ և որ բուում է թէ նոյնպէս նախնական է (համմտ.* այրիլ *և* զայրանալ*)։* (Pokorny, 1, 150):

Ինճիճեան, Հնախ. Գ. 22 գեռուն *համարում է բնաձայն։ ՆՀԲ (տուիալ բառի տակ)* եռալ=*լծ. յն.* ἐράω «*տուիալ*»։ *Էմին, Հայ հեթ. կրօն, թրգմ. Յոյս. 1875, 347 և* Ист. Асохика, *էջ 276 արմատը դնում է* ար, *որից նաև* երկիւղ, երկիր, արեվ, այրել, or, երդ։ *Տէրվ. Նախալ. 106 գոթ.* varmjan «*տաքացնել*», vulan «*եռալ*», *լիթ.* virti «*եփել*», *յն.* ἀλέα «*տապ*», *սանս.* ulkā «*հրդեհ*», *լատ.* vulcanus «*հրոյ դիք*» *և հ.* վառել, վառ *ձևերի հետ՝ հնխ.* var «*վառել, եռալ*» *արմատից։* Canini, Et. étym. 26 *իսլ.* yria «*փայլիլ*», *պելասգ.* ure «*հրդեհ*», *լտ.* uro «*այրել*»։ Müller, Arm. VI. *թ. 9 սանս.* arš, *յն.* ἄρσην «*արու*» *բառերի հետ։* Bugge, KZ, 32, 66 *սանս.* rūrá «*կիզիչ*», *լիթ.* virti «*եփել*», *հսլ.* vrěti «*եռալ*»։ *Հիւնք.* եռալ=*յն.* ἐρῶ, *իսկ* գեռալ= ζέω։—Meillet, MSL, 8, 165 գեռուն *բառը թէև* եռ *արմատից է դնում, բայց այս* եռ *արմատը համարում է (տարբեր* եռալ «*եփիլ*» *ձևից) հնխ.* serp «*սողալ*» *արմատից. համմտ. լտ.* serpens: *Այս կարծիքը այժմ ինքն*

էլ չի ընդունում (անձնական)։ Scheitelowitz, BB, 29, 33 *և* 55 *ռուս.* преть *«քրտնիլ, պղպջալ, խմորիլ, եփիլ, այրիլ», լիթ.* pirke *«հացի փուռ», յն.* πίμπρημι *«այրել»։ Վերի մեկնութիւնը ռուս.* Lidén, Arm. Stud. *էջ 83—85։ Սագրգեան, ՀԱ, 1909, 336* գեռալ *=սումեր.* zir *«օձ»։* Karst, *Յուշարձ. 408* եռալ *=սումեր.* ur *«տաքութիւն, այրել, կրակ», 409* գեռուն *=սումեր.* zir *«օձ»։* Meillet, MSL, 23, 254 *դարձեալ կցում է սանս.* sárpati, *լտ.* serpo *և յն.* ἕρπω *բառերին, որոնց արմատն է* serp- *և որովհետև հայերէնը չունի* p, *ուստի* p *աճական է. պարզ արմատն է* ser-, *որից վեդ.* sisarti, ásarat *«յառաջանալ գնալ, հոսիլ» և* s *աճականով էլ՝* ser -s, *որից հյ.* եռալ *(նոյնը* Ernout-Meillet, 890—891. *ընդունում է լտ.* erro *=գոթ.* airzeis, *բայց չի ընդունում սանս.* irasyáti. *իսկ* Pokorny, 2, 502 *դնում է* serp- *«սողալ» իբր պարզ արմատ)։*

Գիմ.—Վն. յեռալ, *Երև. Սլմ.* յէռալ, *Ախց. Ոզմ.* յէռալ *«ջուրի եռալ. մարմնի մարմաջել, քոր գալ», Ակն. Մկ. Մշ.* էռալ, *Ալշ.* եռալ *«եփիլ, մարմաջել», Մրդ.* յէռռալ, յառռալ, *Ախց.* ձէռ գ՛ալ *և Ալշ.* յէռ ձիգ՛ալ *«մարմաջել», Տփ.* յիւր գալ *«եռ գալ», Կր. Սչ.* յէռմ *«մարմնի մարմաջ, քոր», Ննխ.* էռմ, *Խրբ.* ռռմ *«քոր», Տիգ.* եռալ, *Պլ.* էռալ *«ջրի եփուիլը», էռմ «մարմաջ»։—Շշփոթելու համար* եռալ *բայի կրկին նշանակութիւնները՝ բարբառներից մի քանիսի մէջ յառաջացել է տարբերացում. առաջին* եռալ *«եփուիլ» նշանակութեան համար պահուած է նախնական ձևը, իսկ երկրորդական «քոր գալ» նշանակութեան համար կազմուած է կեռալ ձևը։ Սրա նախաձայնը ուրիշ բան չէ, եթե ոչ սահմանականի կ նախամասնիկը, որ իր ծագումը կորցնելուց յետոյ՝ իբր անբաժան մաս համարուելով՝ կպել է բառին։ (Խոնարհւում է կը կեռա, կը կեռար, կեռաց ևն)։ Համմ. Ախց. Կր.* կեռալ, *Խրբ. Ննխ. Պլ. Սլ.* գէռալ, *Ասլ.* գէ՛ռալ, *Սեբ.* գռռալ *(այս բարբառում* եռալ *«եփուիլ» բառը ջնջուած է), Հճ.* գէռօլ, *որոնք բոլոր նշանակում են «քոր գալ, մարմաջիլ»։ Նոյն երևոյթը տեղի է ունեցած նաև Ջեյթունի բարբառում՝* աղրնձիլ *բառի վրայ։ Այս բառն էլ իր առաջին իմաստից դուրս ստացած լինելով «մարմնի եռալ, քոր գալ» իմաստը, առաջին նշանակութեան համար պահում է իր իսկական ձևը, իսկ երկրորդ նշանակութեան համար ասելացնում է կրկնակ կ մասնիկը. այսպէս՝* աղրնձիցօվ *«աղանձուեց», բայց գօ-*գաղրնձիլ *«քոր գալ»։ Հետաքրքրական է նկատել, որ գաւառականներում* եռ *«ջուրի եփ գալը» նշանակութիւնը կորած լինելով՝* եռ *«քոր, մարմաջ» բառի վրայ կ յաւելուածը տեղի չէ ունեցած, որովհետև այս պարագային շփոթութեան վախ չկար. այսպէս՝ Խրբ. Ննխ. Պլ. Սչ. իսկ Ասլ.* գէ՛ռ *հետևել է* գէ՛ռալ *բային։—Ձեռալ ձևից ունինք* զէռ էլլել *«գլորիլ» Խոջ.։—Հեռ արմատը ցոյց են տալիս Շմ.* հեռ կ՛ըլ *«եփուիլ», Ղրբ.* հէռ գ՛ալ *«եռալ, եփուիլ. 2. կսկծալ, սաստիկ ցաւիլ», հէ՛ռալ «ցաւիլ, կսկծալ. 2. կարեկցիլ, խղճալ», հէռ «ցաւ», հէ՛ռման «եռման, եփ, խիստ տաք», հռա՛ցած «թանապուր» (իմա՛ եռացած)։—Նոր բառեր են՝* եռալ *Երև. «շարժիլ, երթալ» (օր. Խեցգետինը ծուռ է եռում), «շարժիլ, երերալ» (օր. Սկի սիրտը չի տալի տեղիցը եռայ. Նոյնը համմտ. Ջքր. տարկ. Ա 59՝ Իսկ մանուկն բնաւ ո՛չ խօսէր և ո՛չ եռայր. կարծեցին թէ սպանեալ է).—* եռ–եփ ելլել, եռկծալ, եռնիւթ, եռման, եռս *«զայրոյթ» (այս պարագային այլ է Խրբ.* հէրս*), եռուերտալ «շարժիլ, երերալ», եռջրուիլ, եռցաւ, եռցնել (նաև «իրար ղօղել», համմտ. վերը* եռալ *«սիրով միանալ, ղօղիլ»),* եռ, եռոտ, եռտար, եռոր *ևն։*

ԵՒԱՆԴ *(սեռ.-ի) «երէկ չէ՝ նախորդ օրը» ՄԳր. Փարպ., որից՝* եռանդեան *«նախորդ օրուայ» Մագ. Ճառընտ. ունինք նաև յ նախդիրով՝* յեռանդ, յեռանդեան *Վրք. Հց., յեռանդուստ «նախորդ օրուանից» Եփր. Ել. էջ 140 (չունի ՆՀԲ)։*

ՀՀԲ և ՆՀԲ հանում են եռ *«երեք» և անդ բառերից (երիւք աւուրբք անդր կամ յերիկէ և անդր)։ Այսպիսի կազմութեան համար կարելի էր համեմատել յն.* τρίτη ἡμέρα, *լտ.* nudius tertius *«նախորդ օրը, եռանդ» և հյ.* վաղ–

աեդ *«վաղը չէ՝ միւս օր» (վաղիւ+աեդ բառերից)։ Բայց հին հայերէնի մէջ կարելի՞ էր եռ ձևը սպասել. եռ «երեք» բառով բարդուած բոլոր բառերը յետոսկեդարեան շրջանին են պատկանում։— Հիւնք. լտ.* heri *«երէկ» բառից։*

ԳԻՒ.—Վն. յեռաեդ «մի քանի օր առաջ», Սլմ. յէռաեդ, Մկ. եէռաեդ, Մրղ. յառաեդ, սեռ. յառատվա «նախորդ օրը»։

ԵՒԱՆԴԻՆ *տե՛ս Ան։*

ԵՒԱՆԴ *«սահման». նորագիւտ բառ, որ երկու անգամ գտնում եմ գործածուած արձանագրութեանց մէջ. «Զ կկուաշէն իւր եռանդեամբ» (Արձ. 1230 թ. Վիմ. տար. 73), «Կարմիրքարն իւր ամէն եռանդովն» (Արձ. 1239 թ. Վիմ. տար. 81)։*

*ԳԻՒ.—*եռաեդ *Ղզ. «սարերի վրայ գրանուած երկու արտերի սահմանը կազմող թումբը», Ղբ. «լեռնալանջերի վրայ հողի բնական թումբ.* terrasse»։

ԵՒԱՓԱ *տե՛ս Ռափայ։*

ԵՒԵՍՏԻԿՈՍ *տե՛ս Հերետիկոս։*

***ԵՒԻԼԻՍ**, *որ և* եռեւս, երեւս, երեփս *«քահանայ, երէց» Գևոնդ. Լմբ. պտրդ. յոգնակին՝* երեփսուիմ *Լմբ. մատ. 83. գրուած նաև* երիփսուիմ, *որից ՀՀԲ սխալմամբ ենթադրում է* երիփսուն. *բայց կայ* եռիսուն *Մխ. գտ. Հրտ. Բաստ. 255։*

=Յն. ἱερεύς *«քահանայ». ծագում է* ἱερός *«նուիրական, սուրբ, աստուածային» բառից։*

Ուղիղ մեկնութեան ծանօթ էր հներից Լմբ. մատ. 83 «Հինգերորդ դաս աստիճանի եկեղեցւոյ երեփսունք և պապասք, որ թարգմանին քահանայք և երիցունք»։ Նորերից ուղիղ մեկնեց նախ ՀՀԲ, յետոյ ՆՀԲ։

***ԵՒՄՈՍ** *կամ* ԵՐՄՈՍ, ի, ի-ա *հլ. «բանահիւսութիւն, տաղ, երգ» վրք. հց. Ա. 421—3, 535—6։ Ուրիշ օրինակ չկայ։*

=Յն. εἰρμός *կամ* εἱρμός *«կապակցութիւն, կարգ, շարք», յատկապէս հռետորական արուեստի մէջ գործածուած բառ, որից և լտ.* hirmos. *աւելի յետոյ ստացել է «երգի կամ օրհնութեան առաջին տունը» նշանակութիւնը (այսպէս յունական ծիսարանի կամ Մաշտոցի մէջ, ըստ* Sophocles, 426)։ *—Հիւրշ. 349։*

Ուղիղ մեկնեց նախ ՀՀԲ, յետոյ ՆՀԲ։

+ԵՍ *(հոլովւում է իմ, ինձ, զիս, յինէն, ինև, մեծ, մեր, մեզ, զմեզ, ի մէնջ, մեւք, որից* մեօք. *—կրկնագիր Ագաթ. ունի նաև զինեաւ փխ. զինև. տե՛ս ՀԱ, 1913, 16.—յետնաբար կայ բցո. յիսաեն Ագաթ. 226) «հս» ՍԳր. ևն։ Հին լեզուի մէջ այս բառից ածանցներ չկան. բայց նոր գրականը ունի* եսական, եսասէր, եսասիրութիւն, եսապաշտ, եսամոլ, եսամոլութիւն։

=Բնիկ հայ բառ՝ հնխ. eg'o *ձևից, համմտ. սանս.* अहम् ahám, *զնդ.* azəm, *սոգդ.* azo, *հպրս.* 𐎠𐎢𐎶 adam, *յն.* ἐγώ *գտ.* ἐγών, *լատ.* ego, *հիսլ.* ek, *գոթ.* ik, *անգսք.* ic', *հրգ.* ih, ihha, *գերմ.* ich, *անգ.* I, *հսլ.* azŭ, jazŭ, *բուլգար.* az, *հռուս.* азъ, *ռուս.* я, *լիթ.* ėsz, ász, *լեթթ.* es, *հպրուս.* es, as, *քրդ.* ez, *կամիս.* uk, ug *«հս»* (Walde, 251, Boisacq, 214, Berneker, 35, Kluge, 228, Trautmann, 72, Pokorny, 1, 115—6, Ernout-Meillet, 284)։ *Այս բառի մէջ է միայն, որ հնխ.* g' *դարձել է հյ. ս։—Հիւրշ. 442։*

Առաջին անգամ Klaproth. Asia polygl. 102 *սլ.* aš, *օսս.* as, jes, *քրդ.* as, *զնդ.* esom, *լեթթ. լիվ.* ös։ *ՆՀԲ համեմատում է ռուս.* аз, *նա ձևերի հետ։ Ուղիղ են մեկնում* Paterm. *167,* Windisch. 19, Böttich. ZDMG, *1850, 354 ևն։ Մորթման,* ZDMG, *26,* 525 *բևեռ.* iezi=ես, *վանեան բևեռադրերի* ies=ես *ձևի վրայ նաև ՀԱ, 1896, 268 և Բազմ. 1897, 53։* Meillet, MSL, 7, 164 *համարում է թէ մեր բառի նախնական ձևն է *եձ, որ բաղաձայնի մօտ դարձել է ես և յետոյ ընդհանրացել է։* Jensen, ZDMG, 48, 449 *ևն գտնում է հաթեան ձայնաւոր +z+ձայնաւոր ձևով մի բառ, իսկ* Hitt. u. Arm. *էջ 98, 130 դնում է հաթ.* '-s'։ *Հիւնք. հանում է եզ «մէկ» բառից։ Սանտալճեան,* L'idiome *16 իմ=բևեռ.*mi: Karst, *Յուշարձ. 405 սումեր.* iz, giz *«հս»։ Մառ,* ЗВО. *25, 18 մերժում է խալդ.* 𒅆𒍑 i-e-še *«հս» ձևի համեմատութիւնը, որ*

ընդունում են ոմանք։ Մառ, Яз. и лит. I, 244 վրաց. ese *«սա», սիխագ.* sa *«նա» են։*

ԳԻՒ.—Ակն. Պլ. էս, *Ասլ.* է՝ս, *Խրբ.* էս, յէս, *Վն.* յես, *Ջղ.* ֆես. *Ալշ. Ախց. Սրև. Կր. Հճ. Ղրբ. Մշ. Ննխ. Ռ. Սեբ. Սլմ. Սչ. Տիգ.* յէս, *Համշ.* յէս, յիս, *Ագլ. Զթ. Մկ. Մղր. Ոգմ.* իս, *Մրզ. Տփ.* յիս, *Շմ.* յէս *(սակայն նաև փաղաքշական և կրկնակ փաղաքշական ձևերով՝* եսիկս, եսիկիկս, եսիկիկիկս*)։*

ՓՈԽ.—Հայ բոշայերէն յէս *«նա», գիս «դիս» (ըստ* Finck, Die Sprache der arm. Zigeuner, ЗАН, *1907, էջ 111 և 121)։*

ԵՍՆ *«դարան կամ լուրթիւն կամ աղբիւր». ունի միայն Բառ. երեմ. էջ 89։*

***ԵՍԿՈՊՕՏԻՐԱՅ** *«պալատական մի պաշտօնեայ». մէկ անգամ ունի Մխ. դտ. 263 «Հինգերորդ (դաս պալատական պաշտօնեից) եսկոպօտիրայն, որք լինին մեծահասակք և ունին վահանս կմբրաւորս» (այլ ձև.* եոկոպոտորեայն, եսկոպոսիրայն*), որից Մխ. այրիվ. էջ 4՝* էսկապիտորայի *և Սմբ. դատ. 87* էսկոպոտորայն *ձևով։*

=Յն. ἐξκουβίτωρ, *յգ.* ἐξκουβίτορες *«պալատական կայսերական պահակ» (Sophocles, 484), որ փոխառեալ է լտ.* excubitor *«պահապան, պահակ» բառից և սա էլ ծագում է լտ.* ex+cubu *«հսկել, պահպանութիւն անել» (*cubo *«պառկիլ») ձևից։*

Ուղիղ մեկնեց Karst, *Դաառատ. I, էջ 76։ Աճառ. Հայ. նոր բառեր հին մատ. Ա. 59 դնում է յն.* εὐσχοπώτερος *«լաւ նշանառու» բառից, որ ըստ այսմ պատահական նմանութիւն միայն ունի։*

ԵՍՓՈՒԼ *«արտաքս». ունի միայն Բառ. երեմ. էջ 90։*

ԵՏ, ԵՏ ԸՆԴ ԵՏ, ԵՏ ՉԵՏԵ *տե՛ս Հետ։*

***ԵՏԵԿՆԻԼ** *«ծնիլ». ունի միայն Մագ. դամագ. «Սակայն ոչ ետեկնեսցիս». Հին բռ.= Բառ. երեմ. էջ 90 ունին* եաիկէն *«ծնաւ»։*

=Յն. ἔτεκε(ν) *«ծնաւ» Մտթ. Ա. 24,* τίκτω *«ծնանիլ» բայից։*

Ուղիղ մեկնեց Նորայր, Բանաստ. 1900 132։

ԵՏԼ *տե՛ս Տեղի։*

ԵՏՐ *«աղբիկ կամ բոզ». ունի միայն Բառ. երեմ. էջ 90։*

ԵՏՐՈՆԻՆ *«ընկեր կամ պատուակից». ունի միայն Բառ. երեմ. էջ 90։*

ԵՐԱԴ *տե՛ս Արագ։*

ԵՐԱԳԱՉ, ի *հլ. (յգ. նաև* երազագանճ *Եզն. էջ 107) «երէ կամ ուրիշ կենդանի բռնելու ցանց» Ագաթ. Եզն. Փարպ. Կիւրղ. Թգ. Պիտ. (գրուած է նաև* արագազ *Պիտ.)։*

ՀՀԲ առաջին մասում մեկնում է «խրախոյս, քաջալերութիւն», բայց երկրորդ մասում ուղղում է։ ՆՀԲ լծ. յն. ἄρκυς *«որսի ցանց», լտ.* rete, *իտալ.* rezza:—Bugge, Btrg. *39 նշանակութեամբ նոյն ընդ յն.* ἄρκυς, *ձևով յն.* ἀρχύη *«սարդ»։ Գալեմքեարեան՝ Եզնիկի* երազագանճ *ձևը ուզում է կարդալ* երէ-գազան, *քանի որ* երազագ *բառի դէմ իբր յգ. սպասելի էր միայն* երազագ. *այս մասին բանաւէճ՝ իր և ե. նպս. Դուրեանի միջև՝ տե՛ս Մասիս, 1900, № 26, 28, 30։ Հացունի, Դաստ. 410 կցում է* երգազ *բառին, որ դժբախտաբար երբայեցերէն է և տարբեր բառ է։*

ԵՐԱԶ, ո *հլ. (յետնաբար կայ գրծ.* երազիւ*) «երազ, քնում տեսիլ» ՍԳր. Ոսկ. մ. ա. 1, որից՝* երազական *Ոսկ. ես.,* երազանան *ՍԳր.,* երազատես *Ծն. լէ. 19. Միք. գ. 7, նրազացոյց Սերբր. Ագաթ.,* երազբնդհան *Ագաթ.,* երազիլ *ՍԳր.,* յերազանալ, յերազիլ *«երազի մէջ երևալ» ՍԳր. Սերբր. են։*

ՆՀԲ երևալ բայի՞ց։ Բագրատունի, Քերակ. զարգ. 1496 –ազ վերջայանգը համարում է մասնիկ։ Տէրվ. Altarm. *75, Նախալ. 86 սանս.* darçana *«երազ»,* darça *«երես, տեսիլ», յն. δέρκομαι, գոթ.* tarhjan *և հյ.* տեսանել *և երես բառերի հետ հնխ.* darç *«տեսնել» արմատից։ Պատկ.* Матер. I. *15 պրս.* rāz *«գաղտնիք»։* Lag. *Ցն. Ագաթ. էջ 139 չի ընդունում իբր բնիկ հայ, բայց սրանից է դնում ասոր. ;ז ? ārz «գաղտնիք»։ Ն(ազարէթեան), Բազմ. 1897, 67 ծան.* երազմոյն, երազբնդհան *են ձևերը մեկնում է զնդ.* azer *«հուր, փայլակ, կայծակ», բառով։* Bugge, KZ. 32, 39

յն. ὄναρθάνω, կտր. ἔδραθον «քնել» բառի հետ, իբր հնխ. dradh- արմատից. նշանակութեանց տարբերութեան համար հմմտ. սանս. svapna «քուն, երազ»։ Նոյն IF, 1, 456 դնում է հնխ. dṛdh- արմատից։ Հիւրշ. 147 յիշում և մերժում է պրս. ‹ rāz «գաղտնիք», նշանակութեան տարբերութեան պատճառով։ Հիւնք. երես բառից։ Patrubány, Բանաս. 1902, 313 նոյն է Տէրվիշեանի հետ։ Թիրեաքեան, Արիահայ բռ. 79 «երևիլ բառն է»։

ԳԻՒ.—երև. Մկ. Մրղ. Սլմ. Վն. Տփ. էրազ. Մշ. յէրազ, Ոզմ. Սչ. յէրազ (բայց Սչ. էրնել «երազել»), Ալշ. Ախց. էրած, Սեբ. ֊էրած, Ակն. Խրբ. Ննխ. Պլ. Ռ. էրած, Ասլ. էրած, էրազ, Տիգ. էրmն, Ագլ. Ղրբ. Շմ. Ջղ. արազ, Ջթ. իյօզ, իյօձ, իրոզ, իրոձ, Հճ. իյօզ, Հմշ. ներազ, սեռ. նեյզի։—Նոր բառեր են՝ երազախոխ, երազաճար, երազգիրք, երազի, երազնուվեր, երազուիլ։

ՓՈԽ.—Ուտ. araz «երազ», arazaksun «երազ տեսնիլ», arazakal «երազատես»։

ԵՐԱԶԳԱՅ, ի հլ. անստոյգ նշանակութեամբ բառ. երկու անգամ ունի Նար. տաղ. 479 «Մինն յէից զարմից յերազգայից, համագոյ շաւիղ ոտիցընթաց... ի խաչ բարձրանալ դիտին առ հայր համբարձումն, ամբարձ յերամից յերազգայից վերասլացիկ զարմացմամբ»։ Թւում է թէ արմատը գտնւում է նաև երազգաւոր տեղական յատուկ անուան մէջ։

ՆՀԲ յիշում է երազգայից կամ յերազգայից (ուղ.) ձևով և կապելով յն. ἱερός «նուիրական, սրբազան» բառին, մեկնում է «սրբազան, սրբերգենի, երևքսրբեան»։ Վերի ձևով ունի Աճառ. Հայ. նոր բառեր հին մատ. Ա. էջ 146։ Հ. Գր. Սարգսեան, Բազմ. 1927, 106 իբր «երեք ազգ (իմա անձ) ունեցող»։ Ինչո՞ւ այս դէպքում եր- և ոչ երր կամ եռ։

ԵՐԱԺԻՇՏ (յետնաբար ի, ի-ա հլ.) «երգիչ և կամ նուագող» Փիլ. լին. «նուագ. երաժըշտութիւն» Սիր. իբ. 16. լե. 4, որից՝ երաժըշտական Սիր. լե. 8. Յայտ. ժը. 22. եղիշ., երաժշտապետ ՄՀԿ. կթ. արմաւ. Ճառընտ., երաժշտակ Փիլ. լիւս. Սահմ., աներաժիշտ Փիլ. երաժշտասէր «երաժշտութիւն սիրող» (և ո՛չ թէ «երաժիշտ սիրող) (նոր բառ)։

Հիւնք. պրս. ֆէրաշթու «ծիծառ» բառից։ Աճառ. Բանաս. 1899, 252 -իշտ դնում է մասնիկ (հմմտ. ճաժիշտ) և արմատը երաժ-, որ կգում է երգ բառին՝ գ և ժ ձայնների փոխանակութեամբ. հմմտ. ոյժ և առույգ, տուգաճ և տուժել, արգ և արժել, բագ և բաժին։ Nyberg, Hilfsb. 2, 191 իրան. *raji-šta ձևից, որի հետ կապում է սանս. rajyate «գրաւուիլ, հրապուրիլ, սիրահարուիլ», պհլ. ranjak, պրս. ‹ ranj «ցաւ». սրբանց հետ նաև հյ. երախտիք, ապերախտ, պատարագ։ Նշանակութիւնը անյարմար է և չի թոյլ տալիս այս միացումները։

ԵՐԱԽ (ի-ա հլ. լսատ ՆՀԲ, թէև առանց վկայութեան) «բերան» Ա. մակ. Բ. 55. Ոսկ. հս, որից՝ խատերախ «անսանձ (ձի)» Սարգ. ա. պ. Լմբ. մատ. էջ 329, «խեհ, անհնու (մարդ)» Ագաթ. Եփր. ազ., բռտերախ Ոսկ. յղ. սգ., փափկերախ Պրպմ. Մեկն. զև., փրփրերախ ՅՀ. իմ. պալ., երախաճիճ «բերան կամ շրթունք» Մագ. Թղ. 136, երախակալ «սուրի կոթ» Դատ. գ. 22, երախածգութիւն «սանձով ձիու բերանը թօթուելը» Պիտ., երախճան «անասունի սանձ» Նիւս. երգ., կարծրերախ Նար.։

Canini, Et. étym. 171 նոյն արմատից՝ որից երգ=սանս. arka։ Հիւնք. յն. ἀράχνη «սարդի ոստայն» բառից։ Scheftelowitz, BB, 29, 67 փոխառեալ է պրս. ‹ rux «այտ» =պհլ. *rax բառից, որ ըստ Andreas =սանս. srakva «բերան, երախ» բառն է։ Patrubány, ՀԱ, 1908, 152 «գոյող» նախանշանակութեամբ՝ կգում է արգել բառին. հմմտ. նաև գերմ. Rachen «երախ, կոկորդ»։ (Յիշեալ գերմաներէն բառի աւելի հին ձևերն են հբգ. rahho, անգլսք. hraca, բայց այս բոլորի ծագումը անյայտ է՝ ըստ Kluge, 383։—Մեր բառին նման է հնչում նաև պրս. ‹ rax «պատառուածք, ճեղքուածք, բացուածք», բայց սրա ծագումն էլ անյայտ է)։ Ny-

berg, Hilfsb. 2, 46 կասկածով պիտի dahān (գաղափարագրով գրուած פומה pummeh) <*ðafān, *zafan, գնդ. zafar կամ zafan, պրս. دهان dahān կամ zafar «բերան»։

ԳԻՒ.—Ղրբ. ռէխ, որխ, Երև. Շմ. բոէխ, Հւր. բոաէխ. նոյն բառը գիտեն նաև Ագլ. Գնձ. Դվ. Լ. Ղզ. Ղրդ. յատկապէս գործածուում է «անասունի բերան» նշանակութեամբ, բայց նախատեսբար նաև մարդոց համար։ (Այս ձևի աւելի հին գործածութիւնն ունի Ջքր. սարկ. Բ. 69, 120 ռեխ, սեռ. ռխի, բց. ռխէ ձևերով)։—Նոր բառեր են՝ ռեխալի, ռեխակալ (կամ բոկալ), ռեխակալել, ռեխահարուստ, ռեխել, ռեխաւոր։

ԵՐԱԽ «քահանայական հանդերձի պճըղնաւոր սպիտակ շապիկը». Լմբ. Բգրօր. (Հրատ. Սիսուան). ունի միայն Հացունի, Պատմ. տարազի, էջ 246։

ԵՐԱԽԱՅ «անկնունք, քրիստոնէական մըկըրտութիւն դեռ չստացած, չմկրտուած» Ոսկ. մ. ա. 19, 23. եզն. «նորածին կամ դեռ անխոս մանկիկ» Ճառընտ. Մանդ. էջ 95, «տղայամիտ, անմիտ» Սերեր.—Հիմնական նշանակութիւնը առաջինն է. երախայութիւնը կապ չունէր տարիքի հետ. կային չափահաս երախաներ և մկրտութիւնը կատարում էր չափահասութեան ժամանակ. յետոյ, երբ սովորութիւն դարձաւ մկրտութիւնը կատարել մանուկ ժամանակ, երախայ բառն էլ ստացաւ «մանկիկ» նշանակութիւնը, որից էլ յառաջացաւ վերջապես «տղայամիտ» նշանակութիւնը (հմմտ. Մալխասեան, Մշակ, 1913, № 103)։ Սրա լաւագոյն ապացոյցը տալիս է վրք. սեղբ. 733 «Սրբոյն Սեղբեստրոսի եղեալ զաջ իւր ի վերայ գլխոյ թագաւորին, օրհնեաց զնա և արարեալ երեխայ՝ գնաց» (յետոյ մըկրտելու համար)։ Սրանից՝ երախայական Մխ. ապար., երախայացեալ կամբջ., երախայացուցանել «մկրտել» կամբջ. Շնորհ. Թղթ., երախայապէս «անկնունք մարդու պէս» Կանոն. 156, երախայամիտ (նոր ըրականի մէջ). գրուած է նաև երեխայ (երկրորդ ձայնաւորը նմանեցնելով առաջինին). որից երեխայութիւն ՅՀ. իմ. աւտ. Կանոն. ևն։

=Կայ պիտի ראך raxīk կամ rahīk=մանիք. רהיג raxīg «տղայ, մանչ, ծառայ» (ИАН, 1912, 48), որ սակայն չի ծածկում հայերէն ձևը։ Ուստի ենթադրում եմ, որ կար ասոր. *raxā ձևը, որից փոխառեալ են մի կողմից հյ. երախայ և միւս կողմից պիտի. raxīk ձևերը։—Ա.Մ.

ՆշՀ թուի թէ ուզում է հանել երախ բառից, ինչպէս երևում է «կաթնկեր, որ չունի բերան խօսելոյ» բացատրութիւնից։ Թոփուզեան, Արծիւ Վասպ. էջ 41 «Երկնել և երկեալ յա՛խ յաւա՛ղ, և երերիլ յաշխարհի»։ Հիւնք. եբր. ռակայ «յիմար, անմիտ» բառից։ Յակոբեան, Բանաս. 1900, 41 եբր. ירה yerax, ասոր. ܝܪܟܐ yarxā, արաբ. ارّخ arraxa, ورّخ varraxa, ասուր. arḫu «ամիս» բառից։ Patrubány, ՀԱ, 1908, 152 երախ «բերան» բառից։ Meillet հաւանական է գտնում վերի մեկնութիւնս (անձնական)։

ԳԻՒ.—Ոզմ. յէրախա, Ալշ. Մշ. Տփ. էրէխա, Հջղ. Հւր. Շմ. արախա, Երև. բրէ՛խա, Ջղ. ջարախա, Ղրբ. բրա՛խա, Մղր. բրա՛խէ, Գոր. ռա՛խա, Ագլ. բրխօ՛, Հճ. էյէխօ։—Նոր բառեր են՝ երախասէր, երեխամայր, երեխավարի, երեխասէր, երեխեկ, երեխութիւն «մի տեսակ մահացու հիւանդութիւն»։

+ԵՐԱԽԱՅՐԻ (հնագոյն գործածւում էր առնեզաբար. սեռ. -րեաց, դրծ. -րեօք) «առաջին պտուղ, կանուխ հասած բերք» Եզնիկ. խե. 6, ի. 40, բ. օր. ժր. 1. Փիլ. քհ. յետնաբար՝ եզակի գործածութեամբ ունի Յայտմ. գրուած է նաև երեխայրի Դիոն. գ. 38, որից նախերախայրիք Փիլ. քհ.։

=Բարդուած է երա- «նախկին, առաջին, նախ» +խայրի «պտուղ» բառերից. եր-, երա- նոյն է առ «առջևը» բառի հետ և իբր բնիկ հայ կցւում է սանս. purás, յն. πρίν, լտ. per, pro, prae, հլտ. pri «առաջ» (որից primus, prior «առաջին») բառերին (տե՛ս նաև հյ. երի, գւռ. հերի). հնխ. pr->հյ. եր- ձայնափոխութեան համար հմմտ. լտ. priscus=հյ. երէց. իսկ եր=առ փոխանակութեան համար հմմտ. երասանակ=առասան, երկուան էլ իրանեանից փոխառեալ։ Ըստ այ-

արմ հլ. երախայրի կազմուած է ճիշտ այնպէս, ինչպես լտ. praeceptus *«նախապէս բռնուած»,* praecerpo *«առաջուց քաղած»,* praecerptus *«նախաճաշակ» են։—Ա.Ճ.*

ՀՀԲ մեկնում է եր «նախ, առաջին» +խայրի «պտուղ»։ Հիւնք. յն. ἔαρ «գարուն, նոր» +պրս. (իմ՛ արաբ.) خير xayr *«բարիք, բերք» բառերից բարդուած։ Վերի մեկնութիւնս հրատարակուած է նախ* MSL 20, 163:

ԵՐԱԽԱՆ, *ի–ա հլ. «խումբ, դաս (կերակուր ուտողների, բազմական)» Մրկ. ղ. 39, Եփր. աւետ. 303. Անկ. դիրք առաք. 403, «խնջոյք, կերուխում» Եղիշ. ը. էջ 156. ՅՀ. կՔ. Սահմ., «որ և է խումբ (հրեշտակների, դինուորների, փղերի են)» Փիլ. լիւս. Նար. Մագ. թղ. 185, որից՝* **երախանիլ** *«մէկտեղ կերակուր ուտելու նստիլ» Պղատ. օրին.։—Նոյն բառը ունի դարձեալ «ճամբու հանգրուան, իջևան, քարվանսարայ» նշանակութիւնը, որ գտնում եմ մէկ անգամ գործածուած Ոսկ. մ. ա. 1, էջ 15 «Այլ ոմն ծեր անցեալ ընդ բազում աշխարհս, և զերախանացն և զվտաւանացն համարս և զքաղաքաց կայանս և զկերպարանս և զնաւահանգստաց և զվաճառաց, բազում հաւաստեաւ և ճշգրիտ պատմէ».—յոյն բնագիրն ունի* Ἀλλ' ὁ μὲν γεγγραικὼς καὶ πολλὴν ἐπελθὼν γῆν, καὶ σταδίων ἀριθμὸν, καὶ πόλεων θέσεις..., *ուր* στάδιον *(600 հունական քայլի տարածութիւն) առնելով իբրև վաստաւն, առանց համազօրի է մնում երախան, և կարող է միայն «իջևան» իմաստով առնուիլ (տե՛ս իմ Հայ. նոր բառեր հին մատ. Բ. էջ 259)։*

Հիւնք. դնում է խրախ, խրախանիք բառից և կամ բարդուած երի և խան բառերից, իբր «սեղանակից»։

ԵՐԱԽՃԱՆ *տե՛ս Ծրախ։*

ԵՐԱԽՏ. *արմատ առանձին անգործածական, որից կազմուած են՝* **երախտիք** *«բարիք, բարերարութիւն» ՍԳր., «բարի՝ վարձքի արժանի գործ» Ա. պետ. բ. 30,* **երախտագործ** *Ոսկ. մ. ա. 6,* **երախտակորոյս** *Վեցօր. Ոսկ. յհ. ա. 1,* **երախտաճաւոյցք** *Կոչ.,* **երախտպարգև** *Բուզ.,* **երախտաւոր** *ՍԳր.,* **երախտառու** *Ոսկ. մ. բ. 8.* **ապերախտ** *(ի հլ.) Խոր. Մագ.,* **բազմերախտ** *Երզն.,* **աներախտի** *Լաստ. ժ. են։ Իմաստի փոքրիկ նրբութեամբ կազմուած են՝* **երախտել** *«արած երախտիքը երեսին տալ» Լմբ. մատ. 410. Կանոն. էջ 479. Վրդն. սղ.,* **երախտանք** *«երախտիքը երեսովը տալը» Լմբ. պտրգ. և վերջապէս արմատական ձևով* **երախտ** *«երախտանք» Լմբ. պտրգ.։ Նոր բառեր են՝* **երախտագէտ, երախտագիտութիւն, երախտագիտական, երախտապարտ, երախտաճանաչ** *են։*

*=Թերևս փոխառեալ լինի պհլ. *raxt հոմանիշ ձևից, որ աւանդուած չէ. համմտ. սանս.* rakti- *«սէր, յարում, կցում».* rakta- *«անձնուէր, յարեալ»։—Հիւբշ. 510 և* IF, Anz. 8, 48:

Հիւնք. **երաշխ, երաշխաւոր** *ձևից։—Վերի մեկնութիւնը տուաւ* Müller, SWAW, *88 (1877), էջ 12 և* WZKM, *հտ. 5, էջ 6։* Nyberg, Hilfsb. 2, 191 *իրան. *raxti ձևից, որին կցում է սանս.* rakta- *«կիրք, հրապոյր» են (տե՛ս վերը* **երաժիշտ***)։*

ԳԻՒ.—ԶՔ. **իրիխտել** *«աղաչել» (Թերևս <երախտել՝ իբր երախտիքը յիշեցնելով խնդրել)։*

***ԵՐԱԿ,** *ի–ա հլ. «արեան ճամբաները» Յոր. ժէ. 11. եգն. նմանութեամբ՝ «ջիղ, դեմի ճիւղ կամ ուրիշ բանների երակաձև գծեր» Ովս. ժգ. 15. Ոսկ. յհ. ա. 35. Փիլ. են, որից՝* **երակաճառ** *Անյ. պորփ. Կլիմաք.,* **երակածն** *Յս. որդի.,* **շնչերակ** *Նիւս. բն.* **Շիր.** **լուսերակ** *Նիւս. բն.,* **միզերակ** *Բռ. ստ. լեհ.,* **փողերակ** *Նիւս. բն.,* **երակառու** *«արիւն առնող բժիշկ» (չունի ԱՔ) Տաթև. ամ. 319. Նոր բառեր են* **բազկերակ, զարկերակ:**

*=Պհլ. *rak «երակ» ձևից, որի նորագոյն վիճակն է* rag, *պրս.* رگ rag, *քրդ.* rek, reh, rah, rē, *բոլորն էլ «երակ». իրանեանից փոխառեալ է Թերևս նաև արաբ.* عِرْق ʿirg *«երակ»։—Հիւբշ. 147։*

Ուղիղ մեկնեց նախ ԳԴ։—ՆՀՔ «իբր առուակ»։ Ուղիղ մեկնութիւնն ունին նաև Böttich. Arica, *68, 118,* Lag. Urgesch. 726, Müller, SWAW, *42, 257, Հիւնք. են։*

ԳԻՒ.—Ոզմ. յէրակ, *Ալշ.* **երև.** *Մկ. Մշ. Շտ. Սլմ. Վն.* **էրակ:**

ԵՐԱԿԱՆ. *անստոյգ բառ մէկ անգամ ունի*

Շնորհ. տաղ. խ. մկ. «Կային աննուազ, բայց ի միոյ երական անձին»։—ՆՀԲ մեկնում է «կա՛մ է ճեռական, օտարացեալ, և կամ լաւ ևս՝ ընթերցի՛ր եղերական, թշուառ»։—Տե՛ս և **երանալ**:

ԵՐԱԿՕՓ *«զարդեղէ՞ն է». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Ոսկ. եփես. 894 «Չտեննչալ յոսկւոյ և ի մարդարտոյ գինդս յականջս, մի՛ ծամակալս ի ծամս, և տեռակալս և թաղհարս ի գլուխս, մի՛ ապարանջանս ի ձեռս և քեռս ի պարանոցս, մի՛ երակօթս յառագաստս և մի՛ հանդերձս ոսկեհուռս»։*

ԵՐԱՀ *կամ* **ԵՐԱՀԻԿ** *«փառաւորուած, պատիւ գտած կամ ուրախ». մէկ անգամ ունի Եղիշ. գ. էջ 64 «Առատաձեռն պարգեւօք երահիկք (կամ երահք) լինէին ի նմանէ»։ Սրանից է ծում* **ռահատեսել** *«ի բացուստ հիացեալ», որ ունի միայն Բառ. երեմ. էջ 315։*

ՆՀԲ պրս. ֆեռահ, ֆէրախ։ Փորթուգալ փաշա, Եղիշէ, 315 արաբ. رَاهِيْ rahī *«անդորր, խաղաղ (կեանք), շարունակ կերպով տրուած (պարէն)»։ Պատահական նմանութիւն ունի արաբ.* رَاح rāh *«ուրախութիւն» (Будаговъ, 1, 586)։ Ակինեան, Եղիշ. վրդ. Ա. 237 կարդում է* **երահիկ** *և հասկանում է «իրանցի»! Այս դէպքում ի՞նչ միտք ունի ասել «Առատաձեռն պարգեւօք երահիկք լինէին ի նմանէ»։*

ԵՐԱՄ** *(ի, ի–ա, ո հլ. բոլորն էլ յետին. ոսկեդարեան հոլովումը պիտի լինէր ի–ա?) «բազմութիւն, խումբ (մարդոց, կենդանիների, ձկների են)» Ագաթ. Նա. պատ., որից՝* **երամ** **երամ** *«խմբերով, խումբ խումբ» Գ. մակ. գ. 12. Վեցօր. 139,* **երամական** *«իշխանի հետևորդները, շքախումբ» Գոր. և շմ. էջ 32. Եփր. վկ. արև. 187,* **երամակ** *«անասունների խումբ». ՍԳր. (գրուած է արամակ Տիմոթ. կուզ, էջ 286 և Կնիք հաւ. 172,* **երմակ** *Մխ. դտ.),* **երամուիճ** *«խմբով» Նա. կ. 8=երամաիճ** *Կոչ. 425,* **երամանալ** *«հաւաքուիլ, խմբուիլ» Ագաթ.,* **երամախմբեալ** *(չունի ՆՀԲ) Պարսկանոն շար. էջ 113, խոզերամակ Շ. հրեշտ., ուղտերամակ ՍԳր., երամակից Վեցօր. 163, ազատերամ Պիտ., բազմերամ Լմբ. սղ., մանրերամակ Վեց. 141, շներամ Մագ. թղ. 165, խուռներամակ Նար. տաղ. ծն. Տաղ., համերամ Ճառընտ.—ոտանաւորների համար յատկապէս սղուած մի ձև է* **րամ**, *ի հլ. «երամ, խումբ» Գնձ. Շար. ժմ. 46, որից էլ՝* **րամայն** *«երամովին» Տաղ. յհ. եղբ. հեթ.,* **րամապետ**, **րապետ** *«երամապետ» Գնձ. Շնորհ. տաղ., րամել «հաւաքել» Շնորհ. յիշ. Տաղ. Շար., րամօրէն Շնորհ. տաղ., րամեալ «ժողովուած» Շար։—Նոյն բառն է նաև* **ռամ** *(ռամիկ), որի վրայ տե՛ս առանձին։—Բոլորովին նոր առում ունի* **երամակ** *«ոջիլ», որ մէկ անգամ գտնում են գործածուած Նար. 177 «Անիծք անկերպաւորք և երամակք ոմանք քրտնածինք զազրաթորմիք կսկծեցուցիչք և մարմաջոզականք». որի անցման աստիճանն էլ ներկայացնում է Սեկունդոս (հրտր. Տաշեան, Մատեն. մանր ուսումն. Ա. էջ 233) «Քանզի ի նոսա զեռունք խաղան և ի քեզ ճճիք և երամակք ոջլաց»։ (Բառիս այս առման մասին տե՛ս իմ Հայ. նոր բառեր հին մատեն. Ա. էջ 147 և Բ. էջ 288)։*

*=Պհլ. *rama «հօտ, խումբ», ramak «երամակ», պազենդ. rama, պրս.* رَم ram, رمه rama *«երամ, խումբ, հօտ», քրդ.* رەوی rewou *«ձիանոց, haras». rewuji «ձիանոցի պահապան», rava gurg «գայլերի ոհմակ»։ Պարսկականից փոխառեալ են նաև աֆղան. ramma, բելուճ. ramag, ասոր.* ܪܡܟܐ ramxā *«հօտ», եբր.* רַמּוֹן rammāx *«ջորի», արաբ.* رَمَق ramaq *«ոչխարի և այծի հօտ», վրաց. რემაკი რեմակի «էշերի խումբ», მერამე մերամե կամ* **მერემე** **մերեմե** *«կուտպան, табунщикъ», չեչէն. riema «ձիերի երամակ», կիւր. rama՝, խինն. rama «հօտ»։ Իրանեան բառերը ծագում են* ram *«հանգչիլ» արմատից. համմտ. զնդ. ram «հանգչիլ», rēman- «հանգիստ», սանս. rámute, rāmayati, պհլ. rāmišn, ramēnītan, պրս.* رام rām *և* آرام ārām *«հանգիստ» (Horn, § 620)։—Հիւրշ. 147։*

Ուղիղ մեկնեց նախ ԳԴ, յետոյ ՆՀԲ, Lag. Urgesch. 473, Müller, SWAW, 38, 573 են։

ԳԻՒ.—Վն. էրամ «մարդոց խումբ, ժողովրդի բազմութիւնը», Մկ. էրամ «թռչուննե-

րի երամ», Ալշ. ազգ ու էրամ «ամբողջ գերդաստանը». Եւդ. Ննխ. Սեբ. էրամ «գներեզմանատան մէջ իւրաքանչիւր ընտանիքի մեռելներին յատկացուած թաղամաս, թաղ», Ննխ. էրամէ դուս «տարօրինակ», Ղրբ. ըրա՛մակ ըղնել «մարդու կարգ անցնիլ, կարգի մտնել»։

ԵՐԱՄԱՂ *կամ* **ԵՐԱՄԱՂԻ.** *անծանօթ և անստոյգ բառ, որ մէկ անգամ ունի Նար. տագ. 472. «Կերպ երամաղին և ցուցանի շուք... մէտ տաղերամին ձայնաստեղծեալ երաւյական տղայք»։ ՆՀԲ մեկնում է «թևերս՝ երամ տղայոց որպէս քնար բազմաղի», ԱԲ «տղոց բազմութիւն»։*

ԵՐԱՅ *տե՛ս Երէ։*

ԵՐԱՆ. *արմատ առանձին անգործածական, որից երաճել «երջանիկ և բարեբախտ համարել» ՍԳր., երանութիւն «մեծ երջանկութիւն» ՍԳր., «ինչք, ապրանք» Եփր. օրին., երանի՞, երանի՞ թէ ՍԳր., երանախառն Ոսկ. մ. ա. 19, երանելի «երջանիկ. 2. լուսահոգի, հոգևոյս» ՍԳր., Եւս. պտմ., երանուհի Իգնատ. Թղ. 114. Որոտ. աւետ., բազմերան Եւս. քր., յոգներանեան Սիսիան. Ոսկ. լս., երանիկ «երջանիկ» Վեցօր. 85 (մհյ. երնիկ «երանի՛» Վրդ. առ. 30, երնեկ Կոստ. երզն. էջ 88, յէյնէկ Քուչ. 44)։*

=կազմուած է պարզական եր արմատից՝ ան մասնիկով. այս նոյն արմատը՝ ջ ածականով՝ ցոյց է տալիս երջ-ան-իկ. համմտ. գոլ-գաղջ և շուռ գալ-շուրջ։—Աճ.

Böttich. ZDMG, 1850, 354, Arica, 81, 359. Lag. Urgesch. 188 երանեալ *կցում է սանս.* raṇ *«ուրախանալ»,* raṇya *«սիրուն, շնորհալի» բառերին։ Մորթման,* ZDMG, *31, 417 խալդեան բևեռ.* Airain *աստուածուհու անուան է կապում, իբր «աստուածուհի երանութեան, երջանկութեան»։—Տէրվ.* Altarm. *85 իրար է կցում հյ. երանի, երջանիկ, պրս.* ایرانی īrānī *«իրանցի, պարսկաստանցի», սանս.* ran *«ուրախանալ, բերկրիլ», զնդ.* airya- *սանս.* arya *«արիական» ևն։ Նոյն. Նախալ. 101 հնդ.* ran, *յն.* ἔραμαι *«սիրել»,* ἔρος *«սէր» և հյ. երջանիկ ձևերի հետ՝ հնխ.* ra, ran *«հաճիլ, հեշտանալ, սիրել» արմատից։ Հիւնք. Բրք. էրէն «արգոյ, մեծարոյ, պատուական»։* Patrubány, SA *1, 310 փոխառեալ է համարում յն.* ἔρανος *«բնկերական խնջոյք, նպաստ, օգնութիւն» բառից։*

ԳԻՒ.—Շմ. Սչ. յէրանի, *Ոպմ.* յէրանիկ, *վն.* էրանէկ, *երև.* երանէկ, էրնակ, *Ռ.* էրանի, *Մկ.* էրանը՛, *Ախց.* յէրանի, էրնէկ, *Խրբ. Պլ.* էրանի, էրնէգ, *Մշ.* էրնեկ, *Ննխ.* էրանի, էրնէգ *(հինը* էյնէգ*), Տփ.* էրանի, էրնէկ, էրնէգ, էնեկ, *Սլմ.* երնէկ՛, *Ակն. Սեբ.* էրնէգ, *Ալշ.* էրնէնք, *Տիգ.* էրնիգ, *Ասլ.* էրնէ՛, *Հճ.* էյանի, *Զթ.* իյանի, իրանի, *Զգ.* իրնէկ, *Ղրբ.* բնէ՛րակ, ճնէ՛րակ, նէ՛րակ, *Գոր.* ինէրակ, *Ագլ.* բրա՛յնակ, բրո՛նակ։

***ԵՐԱՆ,** *ի-ա հլ. (սովորաբար անհգական գործածութեամբ) «մէջքից մինչև բարձրը» ՍԳր. Եզն. Եփր. ծն. Կիւրղ. ծն., որից՝* յերանացն յապաւել *«կրաել, ներքինացնել» Օրբ. Հրտր. Էմինի, էջ 285 (չունի ՆՀԲ). այս սճի մէջ* երանք *ստանում է «ամորձիք» նշանակութիւնը, ինչպէս որ իրօք էլ ունինք Վրդ. առկ. 40* արանք, արանգ, ի յարանգս իմ *(այլ ձ. ի ձուրդ)։ Եզակի գործածութեամբ ունի Բուզ. ե. 43 (տպ. 1889, էջ 261)* երան բարձի *«ծնկնագլուխ»։ Տարբեր է* երան *Մագ. Հրատ. ՀԱ, 1892, 167 «յոքնական և նրբագոյն եբանօք շարապատեալ» (սառամոքսի համար է ասում։ Ուղղելի է* երակօք*?)։*

=Պհլ. rān, *պրս.* ران rān, *զնդ.* rānа-, *քրդ. բելուճ.* rān, *աֆղան.* vrūn *«բարձք, սրունք», որից զնդ.* rānapāno, *պհլ.* rānpān *«սոնապան» (*Horn, § 605, Barholomae, *1523)։—Հիւբշ. 148։*

ՆՀԲ **երևելի, երի, երիկամունք, երասան, առակաւք** *բառերի հետ։ Ուղիղ մեկնեց նախ* Böttich. Arica, 72, 180, *յետոյ* Wurzelforsch, 41, Lag. Urg. *712,* Müller, SWAW, *42, 257 ևն։*

ԵՐԱՆ *«պարան». նորագիւտ բառ, որ երկու անգամ ունի Ներսէսովիչ, Բառ. լտ. հյ. էջ 305 ա (*linea serta, *պարան, երան) և էջ 305 բ* (linum tortum, *պարան, երան, չուան). բայց էջ 465 բ գրում է «պարան, երկան»։*

ԵՐԱՆ «բարակ քամի» Ոսկ. յհ. մկ. և հերդ. 618. (գրուած էրան ձևով՝ ըստ յետին արտասանութեան). «քամին անձնաւորող դևը» (չունի ՆՀԲ) Հերձ. 141 (Աւդիանոսք... պատուեն զօդս և զպտուղս... զԱստուած ոչ յիշեն, այլ զհողմ և զտոհմականս, և դիւր ումեմն զոհ մատուցանեն՝ երան և Տոհմական կոչեցեալ անուն), որից երևել «կալը հոսել բարակ քամիով» Վստկ. 29, 172։

ՆՀԲ լծ. յն. αὔρα «այեր», լտ. aura (տե՛ս Յաւելուածը)։ Պատահական նմանութիւն ունի սանս. ṛnuyāt, հնխ. ṛnu «շարժել» արմատից։

ԳԻՒ.—խոջ. Մկ. Մշ. Սլմ. Վն. էրան այսպէս և ուրիշ բարբառներում էրան ասել, էրան տալ, էրնել ձևերով. Ննխ. (գիւղերում) էյնել «հոսել ցորենը՝ յարդից մաքրելու համար».—նոր ձևափոխութեամբ երևել Բդ. «մի բան տակնուվրայ անել»։

ԵՐԱՆԱԼ «հեռանալ». մեկ անգամ ունի Փարպեցին. «փախեան, երացան, ամաչեցին»։ Անստոյգ բառ։

*ԵՐԱՆԴ, ո, ի–ա հլ. «գոյն, ներկ» Դաւտ. ե. 30. եզն., որից՝ երանգ երանգ «գոյնզգոյն» Ջքր. կթ., երանգաներևութիւն Փիլ., երանգել Լմբ. աղ., բազմերանգ կամ բազմերանկ Պիտ. Շնորհ. հրեշտ., երփներանգ Երզն. լուս., կարմրերանգ Գնձ. Նար., խրթներանգ Երզն. մտթ. 502։ Արդի գրականում երանգ գործածւում է «նուրբ տարբերութիւն, nuance) իմաստով։

=ՊՀլ. *rang «գոյն» բառից (Nyberg, Hilfsbuch, 1, 51 և 2, 191). Նոյն են պազենդ. rang, պրս. رنگ rang, քրդ. reng, renk, աֆղան. բելուճ. rang, սանս. ran´ga-, բոլորն էլ «գոյն» նշանակութեամբ (Horn, § 623): Պարսիկն ունի նաև arang, ranj հոմանիշ ձևերը։ Իրանեանից են փոխառեալ արևել. թրք. reng, rang «գոյն, երևոյթ, տեսակ», սերբ. renk, renǰák «գոյն»։—Հիւբշ. 148։

Ուղիղ մեկնեց նախ ԳԴ որ դնում է պրս. արէնկ ձևի հետ։ Böttich. ZDMG, 1850, 354, Arica, 78, 289 են համեմատում են սանս. պրս. են ձևերի հետ։ Հիւնք. =ԳԴ։

*ԵՐԱՇԽ «աշխ՛ատ». մէկ անգամ ունի Մագ. թղ. 51 «ի ձի երաշխ արինադոյն հեծեալ».—ուրիշ տեղ չէ գործածուած։

=Պրս. رخش raxš «խառն գոյնով, ինչպէս ճերմակով կարմիր ևն. 2. աշխէտ, կարմրերանգ ձի. 3. անուն հռչակաւոր երիվարի քաջին Րիւսթէմայ. 4. երիվար ձի». բուն իմաստն է «փայլուն, փայլ» և կցւում է գնդ. raoxšna, սանս. rukša-«փայլուն» բառերի հետ՝ հյ. լոյս արմատին (Horn, § 610)։ Իրանեանից է նաև վրաց. რახხი რախխ «бурая лошадь, աշխէտ ձի»։—Հիւբշ. 148։

Ուղիղ մեկնեց Պատկ. Матер. 1. էջ 15։ Պատահական նմանութիւն ունին արամ. rikšā, եբր. רכש rekeš «ձի, նժոյգ»։

*ԵՐԱՇԽ «գրաւական» Ճառընտ., որից՝ երաշխիք «գրաւական կամ երաշխաւորութիւն» Պզատ. օրին., յերաշխի առնուլ «մէկին երաշխաւոր լինել» ՍԳր., «ընդունիլ, մօտն առնել պահել» ՍԳր., երաշխաւոր «ուրիշի համար պատասխանատու» ՍԳր. Ոսկ. մ. ա. 23. Եւս. քր., երաշխաւորել Եւս. քր. Ա. 184 (որ վարդանեան, ՀԱ, 1922, 577 յետին է համարում), երաշխաւորութիւն ՍԳր., յերաշխել Իրեն. հերձ. 120. գրուած է նաև երեշխաւոր, երեշխաւոր Յայսմ. (ստէպ). Նոր բառեր են՝ ճամբաշխ, ճամբաշխաբար, ճամբաշխութիւն ևն։

=ՊՀլ. *raxš ձևից. այս բառը աւանդուած չէ ո՛չ մի իրանական լեզուում, բայց նրա գոյութիւնը հաստատում է սանս. रक्ष rakš (rakšati, rakšyatē) «պահել, պաշտպանել, ազատել», रक्षाणा rakšana «պահպանութիւն, պաշտպանութիւն», रक्षा rakšā նոյն նշ. रक्षितृ rakšitár «պաշտպան, պահապան». այս բառը հին պարսկերէնում պիտի ունենար *raxša- ձևը։ Նրա ցեղակիցներն են այլուսա յն. ἀλέξω «պաշտպանել, հեռացնել», ἀλκή «ուժ, պաշտպանութիւն», անգլսք. ealgian «պաշտպանել», հնխ. aleq- արմատից (Walde, 56, Boisacq, 43)։—Աւելի հեռաւոր ցեղակիցների մասին տե՛ս անդ։

*Տէրվ. Նախալ. 63 համարում է հնագոյն *երակս «պաշտպանութիւն» ձևից և համեմատելով յն. ἀλέξειν և սանս.* rakš *բառերի հետ՝ դնում է հնխ.* raḳs *արմատից։ Մառ,* ЗВО, *5, 318 գնդ.* dašina *և պհլ.* dašn *«աջ» բառերին ցեղակից, Հիւնք. Երաշտ բառից։ Վերի ձևով է մեկնում* Коршъ, *Բրգմ. Մշակ, 1914, թ. 122։*

Գիւմ.—Մշ. Երաշխավոր, *Պլ.* յԵրէշխավոր, *Ոզմ.* յԷրըշխավուր *(գրականից փոխառեալ)։*

ԵՐԱՇԵԼԻՊ *«հարուածից կապտած տեղը» Սիր. իր. 21, «վիժտ, չարչարանք» Ոսկ. մտթ. և հռովմ. 419, 422, «վշտակիր, չարչարուած» Տաղ.։*

ՆշՒ Երաշխ *բառից։* Коршъ, *Բրգմ. Մշակ, 1914, № 122 գնդ.* xšvaēva *«արագընթաց», պհլ.* šēpāk, *պրս.* šēbā *«օձ, իժ» ձևերի հետ իրանեան փոխ.։*

***ԵՐԱՇՏ,** *ի, ո, ու հլ. (բոլորն էլ յետնադար) «չորութիւն, անձրևի պակասութիւն» Խոր. Կաղանկտ. Նիւս. բն., «չոր, չորային» Սիր. լբ. 26, «չոր, ցամաք (հող)» Վստկ., «անթաց, չոռոգուած» Ոսկ. ես., որից՝* Երաշտութիւն *«չորութիւն» ՍԳր. «ծարաւ, պապակ» Ոսկ. յհ. ա. 45,* Երաշտաճար *Թէոփ. խ. մկ.,* Երաշտանալ *«չորանալ» Եղիշ. Խոր.,* Երաշտաճաւ *«մի տեսակ թռչուն» Վանակ. հց. գրուած է նաև* Երեշտ, Երեշտութիւն *Վրդն. լուս. Ճառընտ։*

*=Պհլ. *rašt «ցամաք, չոր» բառից, որ առանդուած չէ, բայց կայ պրս.* رشت rašt *«very dry, շատ չոր» (չգիտէ ԳԴ), որի երկրորդ փոխաբերական նշանակութիւնն է «հող, ցամաք երկիր» (այս իմաստը դիտէ ԳԴ), նկատելի է, որ «երկիր, հող» նշանակող բառերը ծագում են «չոր» նշանակող բառերից. այսպէս՝ լտ.* terra *«երկիր, հող» գալիս է հնխ.* ters- *«չորանալ» արմատից. հիւլ.* tīr *«երկիր» գալիս է* tīr *«չոր» բառից. հյ. ցամաք «հող» ծագում է նախաւոր «չոր» նշանակութիւնից են։ Բայց հայերենի մէջ էլ* Երաշտ *ունեցել է «հող» նշանակութիւնը, ինչպէս ցոյց է տալիս Ղրբ.* բրըշտա՛վրէտ<Երաշտաճոտ *«անձրևը նոր սկսած ժամանակ՝ հողի հոտը»։—Աճ.*

ՆշՒ իտալ. asciutto *և հյ.* աշտուճ։ *Տէրվ.* Altarm. *75 և Նախալ. 57, 67, 84*

հյ. **բարշամիլ, դուռսվել, դերև,** *սանս.* tarš *«ծարաւիլ, պապակիլ», յն.* τερσαίνω, *լտ.* torreo<torseo *«չորացնել»,* terra *«ցամաք, երկիր», գոթ.* thaursjan *«ծարաւիլ» ձևերի հետ հնխ.* tars *«չորանալ, ցամաքիլ» արմատից. ըստ այսմ* Երաշտ <*բրաշ-տ։ *Նոյնն ունի նաև* Bugge, Btrg. *13, որ հայ բառը հանում է հնխ.* tṛsti- *նախաձևից, իբր սանս.* tṛšyati *«ծարաւում է», զնդ.* taršna *«ծարաւ», յն.* τρασιά *«չորացում», անգսք.* dyrst, *գերմ.* durst, *հիւրլ.* tart *«ծարաւ», լտ.* torreo։—*Հիւբշ. 442 անապահով է համարում այս մեկնութիւնը, որովհետև կասկածելի է, որ միևնոյն հնխ.* tṛs- *արմատը տայ մի կողմից* tṛš- >tarš->traś->Երաշ-, *և միւս կողմից* tṛš->tars->բառամիլ։ *Պատկանեան,* Матер. *1, 15 պրս.* rašt *«չոր» և Հիւնք. պրս.* rašt *«հող», որով առաջին ուղիղ մեկնիչները սրանք են լինում։* Grammont MSL, *20, 216 իրև բնիկ հայ՝ կցում է լիթ.* tróksztu *«ծարաւիլ» բառին. ձայնական յարաբերութեանց համար հմմտ.* վեշտասան։ Nyberg, *տե՛ս դաշտ բառի տակ։*

Գիւմ.—Ղրբ. առաշտ *«երաշտ», չորութիւն», որից* բրըշտա՛վրէտ *«երաշտահոտ, հողի հոտը՝ անձրևը նոր սկսած ժամանակ»։*

***ԵՐԱՍԱՆ,** *ի–ա հլ. «սանձ» Նար. կգ. 161, որից՝* Երասանակ *«սանձ» Նաւ. բ. 3. Ամբ. գ. 1. Բուզ. «ղեկ» Պիտ. Ճառընտ.,* Երասանակակալ *(գրուած նաև* Երեսանակակալ, Երեսանակակալ, Երասանակրնկալ, Երասխանակրնկալ՝ *Տիմոթ. կուզ. էջ 257) «կառավար» Ոսկ. յհ. ա. 31, բ. 12 կամ* կրճատ՝ Երասանակալ *(գրուած նաև* Երասնակալ*) Նար.,* Երասանակել *Փիլ. լին.,* աներասանակ *«անսանձ» Սեբեր.,* աներասան *Պրպմ. Նար.,* աներասանակաբար *«յանդգնօրէն» Պրպմ. էջ 181 ա,* քնդարձակերասանակ *Ոսկ. մ. բ. 26,* կիրթերասան *Առ որս.,* դիւրերասան *«հլու» Նիւս. երգ. Նեղոս.,* դր-

ժոխեռասան *Բրս. Հայեաց. Առ որս.*, դժոխերասանակ *Բրս. ծն.*, դժուարեռասան *Ոսկ. յհ. ա. 35*, խստեռասան *Փիլ. լին.*—*արմատի երկրորդ ձայնաւորը առաջինի նմանողութեամբ դարձել է ե, որով ունինք՝ երեսանակ Կալիսթ. 165. Խոսրովիկ.*, անեռեսանակ *Ըղիշ.*, ճամբեռսանակ *Ոսկ. մ. ա. 15.*—*այստեղ են պատկանում նաև եռասանել կամ յեռասանել «երկար ժամանակ ձի հեծնելուց դիշանալ» Կանոն. 10, 94, Մաշկ.*, եռասան կամ յեռասան «*ձիով երկար ժամանակ ընդհանալուց դիշացում*» *ԱԲ*։—*Այս արմատին են կապւում դարձեալ՝ առասան, ապարասան, որոնց վրայ տե՛ս առանձին։*

=*Փոխառեալ է իրանեան* rasan *ձևից. սրա վրայ տե՛ս մանրամասն* առասան։—*Հիւբշ. 148։*

ՀՀԲ երես բառից։ ՆՀԲ պրս. էրսան, էրսիւն, *հյ.* առասանեայ *կապ...։*—Böttich. ZDMG, *1850, 354 սանս.* raçmi, raçana: *նոյն.* Arica, *75, 222 նաև պրս.* rašma: Lag. Ges. Abhd. *17 արաբ.* rasan՝ *որ պարսկերէնից է փոխառեալ։ Պատկ.* Извлед. о сост. арм. яз. *էջ 26 պրս.* rasan: *Տէրվ.* Altarm. *91 և Նախալ. 82 պրս.* rasan=եռասան, *իսկ* առասան <*առ-ասան, *իբրև բնիկ հայ՝ յն.* ἀγχόνη, *զնդ.* aγana *ևն։ Հիւնք. ապար.* ռէսէն: *Մառ,* Яфет. сбор. *1, 51 յաբեթական* ras «*ձի*» *արմատից։*

*ԵՌԱՍՏ, ի, ու *հլ. «դաս, կարգ, խումբ. ժողով, ատեան» Պիտ. 36. կք. 35. Ղևոնդ է, էջ 20, «ժողով, զրուցատեղ, հրապարակ, հոյլ, հոծ, խուռն» Հին բռ., որից՝ ծաղրեռարուստ Պիտ. տպ. 1843, էջ 581, ծաղրեռաստ լինել «բազմութեան առջև ծաղր լինել» ՋԲ. — ՓԲ ունի նաև (ըստ Հին բռ.)* առաստ «*հրապարակ*»։

=*Պհլ.* *rast, *որ հաստատում է պրս.* راست rast «*դաս, խումբ*», *որից էլ* راستا rasta «*վաճառատեղի, ուր լինի տուրևառութիւն. 2. արահետ կամ արքունի ճանապարհ. 3. դաս կամ շարիշար կարգումն*». *Նոյնի արաբացեալ ձևն է* رزداق razdaq «*դաս կամ կարգ. զոր օրինակ մարդիկ առնթեր իրերաց կացեալք. և ծառք կարգաւ շարիշար տնկեալք. որ և յայլ նման իրս ի գործ ածի*»։

Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ, որից յետոյ Պատկ. Матер. I, *15 և Հիւնք.* —Bugge, Beitr. 30—31 -ստ *մասնիկով* ger *կամ* gr *արմատից. հմմտ. յն.* ἀγείρω «*հաւաքել*», ἀγορά «*շուկայ, հաւաքոյթ*», *սանս.* grâma «*գիւղ*»։ Müller, WZKM, *8, 273 պհլ.* ارش *և պրս.* ارش arš(?) «*խումբ մարդկանց*»։ Patrubány, *ՀԱ, 1908, էջ 25 հրգ.* rasta «*դադար*», *հիւլ.* arus «*բնակարան*» *բառերի հետ՝ իբրև բնիկ հայ։*

+ԵՐԱՍՏԱՆ, ի–ա *հլ. «յետոյք, նստոյ տեղի. 2. թանչր, յետոյքի վրայ վէրքեր. 3. կակուղ նստարան՝ թանչով բռնուածների համար» Ա. Թագ. ե. և գ. Եփր. Թգ. 365 (միշտ անեղական). յետնաբար եղակի գործածութեամբ՝ Փիլ. լին. 83։*

=*Բնիկ հայ բառ, որ կազմուած է ան մասնիկով* *եռաստ *արմատից. այս էլ ծագում է հնխ.* rʒk'to *ձևից. համմտ. յն.* πρωκτός «*սրբան*» *(Հիւբշ. 443,* Brugmann, Grdr. I² *477,* Boisacq, *819).*—*Հիւբշ. յոյն բառին միացնում է նաև սանս.* prṣṭhā- «*կռնակ, գագաթ, լեռան գլուխ*», *որի հետ նոյն են զնդ.* paršti-, *պհլ.* pušt, *պրս.* پشت pušt «*թիկունք, կռնակ*», *աֆղան.* pušt «*կող*», *հոլլ.* vorst, *անգսք. հրգ. գերմ.* first «*կատարի գլուխը՝ գագաթը*», *որից էլ փոխառութեամբ հֆրանս.* freste *և պրովանս.* frest «*տան գլուխը*» (Walde, *էջ 574, 605,* Kluge, *142). այս բառերի ծագումը* Walde *դնում է հնխ.* pʒ- *(համմտ. հյ.* երի, առ, *լտ.* per, *գերմ.* for-, vor-, *յն.* παρ *ևն)* +sta «*կանգնել*» *արմատներից* (Pokorny, *2, 89)։*—*Հիւբշ. 443։*

ՆՀԲ (երանի բառի տակ) և Բագրատունի, Քերակ. զարգ. 1495 դնում են -աստան *մասնիկով՝ եր արմատից, որ գտնում են* երի, երիկամուն *ևն բառերի մէջ։ Հիւնք. պրս.* iskandar اسکندر «*երանք*» *բառից՝ տառերի տեղափոխութեամբ։ Ուղիղ մեկնութիւնը տուաւ* Bugge, Btrg. 12;—Patrubány, *ՀԱ,*

1908, 25 Հանում է **երաստ** *«նիստ» բառից (իմա՛* **երաստ** *«խումբ»)։*

ԵՐԱՍՏՈՅ *տե՛ս Արաստոյ։*

— **ԵՐԲ** *«ո՞ր ժամանակ» ՍԳր., «երբեմն, մերթ» Ոսկ. յհ. ա. 19, «քանի որ, որովհետև» Բրս. մրկ. Լմբ. պտրգ. «երբոր, ո՛ր ժամանակ որ» Նեղոս. (Հնագոյն հայերէնում այսպիսի անկանոն գործածութեան հետքեր՝ փոխանակ յոռժամ, իբրև՝ տե՛ս Այտնեան, Քնն. քեր. 68). յետնաբար հոլովուած է ի կամ եայ հոլովմունքով՝ իբր դոյական՝ «ժամանակ, աստեն» նշանակութեամբ. այսպէս՝* երբին *Արիստ. աստրոգ., զերբն Փիլ. այլաբ., երբի Նար., յերբաց՞ ևիսկ «երբի՞ց ի վեր, ո՞ր ժամանակից ի վեր» Անկ. դիրք հին կտ. Ա. էջ 114։—Սրանից են ծագում* առ ե՞ւր *«ե՞րբ» Ել. ր. 9, ցե՞րբ, յե՞րբ «մինչև ե՞րբ» ՍԳր. Կոչ., ե՞րբ իցէ զի «ե՞րբ կլինի որ» Սղ. խ. 6. 3որ. է. 4. Եղիշ., երբեմն ՍԳր., էր երբեմն Ժմ., յերբեմն երբեմն ժամանակս «մերթ ընդ մերթ» Լմբ. պտրգ. երբէք, կամ ուղղագոյն դրչութեամբ՝ երբեք ՍԳր. Եզն. Սերբր., երբեք երբեք Վեցօր. Եզն., երբեք ուրեք Սերբր., ոչ երբեք ՍԳր., երբեմնի, երբեմնակի (նոր գրականի մէջ)։*

=Նոյն է իբր բառի հետ՝ որ տե՛ս։

Տէրվ. Altarm. *3—4 համարում է կազմուած* եր+բ *մասերից.* եր=*գոթ.* air *«նախ, նախապէս, կանխագոյն»,* air-is *«կանխագոյն», իսկ* բ=*լատ.* -bi *(ինչ.* u-bi*), յն. -φι (ինչ.* βίηφι*) և հյ.* բ *գործիականի մասնիկը։ Մառ, զնդ.* yedhi*, հպրս.* yadiy *«երբ» բառերի հետ։ Հիւնք.* իբր *բառից։* Müller, WZKM, *6, 265 (և նոյնը* SWAW, *136 (1817), էջ 31) համեմատում է յն.* ὄφρα *«մինչդեռ, մինչև, ցորչափ» բառի հետ. յունարէնը կազմուած է* ὀ*<հնխ.* yo- *և* φρα *<հնխ.* bhra *ձևերից, ինչպէս յն.* τό-φρα *կազմուած է* το- *<հնխ.* to- *և* φρα *<հնխ.* bhra *ձևերից. ըստ այսմ էլ հյ.* երբ *<* **երբ** *<* **e-bhra** *կազմուած է* e*<հնխ.* k²e *և* bhra*=յն.* φρα *ձևերից։ Հիւշ. 443 խիստ անհաւանական է համարում այս մեկնութիւնը։—Մառ,* Грам. др. арм. яз. *293* ե*=* ի՞ *«ի՞նչ» արմատից՝ սեռականի* ր *և գործիականի* բ *մասնիկով։*

Գիւռ.—Մշ. խրբ. յէր՛, *Ալշ. Զղ.* ֆեփ, *Վն.* յեփ, *Ախց. Երև. Կր. Հճ. Ննխ. Պլ. Ռ. Սեբ. Սլմ. Սչ. Տիգ.* յէփ. *Ասլ.* յէ՝փ, յէ՝*, *Ակն.* էփ. *Համշ. Մրզ. Տփ.* յիփ, *Ագլ.* իր, ի՛բor, *Զթ.* իփ, *Մղ.* ճիր, *Ոզմ.* ճիր՛, *Մկ.* ճիփ, *Ղրբ.* յիր, ճիր, ճիրի՛, ճի՛բըվրէր, ճի՛բիվor, *Շմ.* ճէփ, *Գոր.* ճէփ, ճէ՛փվրէր.—*Համմտ. միջ. հյ.* եփ *Անսիզր, էջ 19, 59։*

ԵՐԲՈՒՄ, n *հլ. «անասունի կուրծքի միսը. դօշ» ՍԳր. Վստկ. 198, 222։*

ՆՀՔ երի բուծեալ։ Böttich. ZDMG, *1850, 354 և* Arica, *72, 173 սանս.* arbuda *«թէթև ուռեցք»։*

+**ԵՐԳ,** n *հլ. «երգ. խաղ. 2. քերթուած, բանաստեղծութիւն. 3. նուագարան» ՍԳր., որից՝* յերգ արկանել *«վրան ծաղրական երգ յօրինել» Ոսկ. մ. ա. Եփես. և ևս., երգել ՍԳր., երգեցիկ ՍԳր., Եւս. քր. Ոսկ. մ. ա. 17, երգահան Եւս. քր., երգիչ ՍԳր. Ագաթ., երգայարդար Եւս. քր., երգեցող ՍԳր, եղերգութիւն Նար., ճնարերգ Յայտ. ժր. 22, ողբերգակ Փիլ. Պիտ., ճագներգութիւն Խոր. Պղատ. տիմ., կատակերգակ Պիտ. Շիր. քրոն., ճակերգ Մծբ., նախերգան Պղատ. օրին., օրճներգու Յճխ. Առ որս. նոր բառեր են՝* բատերգակ, բատերգութիւն, երգախառն, դիւցազներգութիւն *են։*

+*Բնիկ հայ բառ. Համմտ. սանս.*  arká *«երգ, նուագ», ſk (սեռ.* rčás*) «ոտանաւոր, քերթուած»,*  arč, arčati *«գովեստ է երգում, բարևում, պատուում»։ Այս արմատը ուրիշ լեզուներում պահուած չէ, որովհետև կապ չունին լտ.* loquor *«խօսիլ», յն.* λάσκω, ἔλεκτον, λέλεγκα *«խօսիլ, գոչել» են (տե՛ս* Walde, *440)։* Pokorny, *1, 147 նախաձևը գնում է հնխ.* erk- *«ճառագայթել, պայծառ հնչել», ըստ որում սանս.* arká, ṛ'k *«երգ, նուագ» բառերի առաջին նշանակութիւններն են «ճառագայթ, փայլակի ցոլքը, արեգակ, կրակ»։—Հիւբշ. 443։*

Այս մեկնութիւնը տուաւ առաջին անգամ Böttich. ZDMG, *1850. 354։ Նոյնը նաև* Arica, 53, 26, Lag. Urgesch. 332, *որ կցեց նաև Բրակ.* σιδ-άλκης *բառի*

երկրորդ մասը։ Տէրվ. Նախալ. 63 կասկածով սանս. arč *«մռնչել, գոչել, երդել», յն.* λάσκω *«հնչել, երգել, խօսիլ», լատ.* loqui *«խօսիլ», հսլ.* rekti *«խօսիլ» ձևերի հետ հնխ.* ark, rak *արմատից։ Հիմնք. երկ բառից։* Patrubány, SA, *1, 18 վօգուլ.* erʒem ērʒä *«երգուած երգ» ձևի համար ասում է թէ յիշեցնում է հյ.* **երգ** *բառը. իսկ* SA, *1, 224 հայերէնից փոխառեալ է դնում հունգ.* rege *«հին երգ»,* regél *«մի հին երգ երգել»։ Մառ,* ИАН, *1915, 852 սվան.* **երծի** *«եղէգ» բառի հետ։ Պատահական նմանութիւն ունի վրաց.* რეკა rɛka *«ձայն, բաղխիւն»։*

ԳԻՒՒ.—Խրբ. **յէրգ**՛, *Ջղ.* **յերֆ**, *Ագլ. Ալշ. Ախց. Երև. Կր. Հմշ. Շմ. Պլ. Ռ. Սեբ.* **յէրֆ**, *Մրզ. Ոզմ.* **յերֆ**՛, *Ասլ.* **յէ՛ր***, *որոնք անշուշտ գրական փոխառութիւն են։*

ԵՐԳԱՐ** *(գրուած նաև* **արգար, արգոր), ա հլ. երկու անգամ գործածուած է Ս. Գրքում՝ «Նատիս առ երգարաւդ այդուիկ» Ա. Թագ. ի. 19, «Եւ յարեաւ Դաւիթ յարգարայն» Ա. Թագ. ի. 41.—այս բառը մեկնելով Կիւրղ. Թգ. ասում է. «Յարեաւ յարգարայն (կամ յարգոբայն). կա՛մ ի Թիսոյ ինչ, որոյ անունն այնպէս էր և ոչ Թարգմանեցին, կամ ի դարափորէ՝ ուր Թաքուցեալն էր»։ Իսկ Բառ. Երեմ. էջ 35 և 91* **արգաբայ, արգոր, երգար** *մեկնում է «վէմ, քարաժայռ, քարուկ»։*

=Սբր. բնագրի սխալ հասկացողութեան արդիւնք է. բնագիրը առաջին դէպքում ունի «եզէլի քար», երկրորդ դէպքում «հարաւի կողմից». յոյն Թարգմանութեան մէջ՝ յայտնի չէ ի՛նչ Թիւրիմացութեամբ այս բառերը տառադարձուած են Ἐργὰβ, Ἀργὰβ*, որից էլ հյ.* **երգար**։—*Աճ.*

ԵՐԳԵՀՈՆ *տե՛ս* **Երգիոն**։

=Սբր. բառի յն. Ἐργὰζ *տառադարձութիւնից. աւելի ընդարձակ տե՛ս անդ։—Աճ.*

ԵՐԵԳՆԶՈՆ *տե՛ս* **Երգիոն**։

ԵՐԳԵԻԵԼ *«անօգուտ». ունի միայն Բառ. Երեմ. էջ 91։*

+ԵՐԳԻՄԱՆԵԼ *(-գիծի, արմատն է* ***երգէծ***) «պատառել, ճեղքել, պայթեցնել, ճաքեցնել» Սիր. եւ. էջ 187 և օրին. էջ 276. Փիլ. լին. Երզն. մաթ. 172 (երգիծանելն՝ պատառեալ լսի), «գծել. նշան անել» Լմբ. իմաստ., «կծել, նախատել, ծաղրել» Խոսր. պտրգ. Նար. Լմբ., որից՝* **երգիծանիչ** *Լմբ. առ.,* **երգիծումն** *«պատառումն» Եզեկ. լ. 16. Մծբ.,* **երգիծուցանել** *(կամ* **երգիծեցուցանել***) «պայթեցնել, պատռել» Մաթ. և. 6. Ոսկ. փիլիպ. մաթ.—Ա՛ր ունի նաև* **ներգիծանել** *«երգիծանել» և* **ներգիծանիլ** *«սաստիկ ցաւ ղգալ», որոնց վկայութիւնը գտնում են Վրք. հց. Ա. 25 և Աթան. էջ 545։—Նոր բառեր են՝* **երգիծանիչ, երգիծաբան, երգիծական, երգիծաբանական, երգիծաբանութիւն.** *այս բոլորի մէջ գտնում ենք «զաւեշտ» իմաստը, որ հնում չկայ։*

=Բնիկ հայ բառ՝ հնխ. wrēg՛- *արմատից. համմտ. յն.* ῥήγνυμι *(կտր.* ἐρρωγά*,* ἐρράγην*) «պատռել, խորտակել, պայթեցնել». հոմեր.* ῥώξ*,* ῥωγός *«ճեղք», լեսբ.* ϝρᾶξις *«պատառուածք», հսլ.* rĕžą*,* razŭ*, լհն.* rzeżę*,* rzezí*, ռուս.* резать*,* режу *«կտրել, գննուլ», չեխ.* ráz *և ռուս.* разъ *«հարուած, անգամ»,* образъ *«պատկեր, կերպ, ձև», լիթ.* rėžiu*,* ráižau*,* rėžti *«ճեղքել, կտրել, ձևել»,* rúožas *«գիծ» ևն.—հնխ. արմատը ունէր* wrēg՛-*,* wrōg՛-*,* wrəg՛- *ձայնդարձները, որոնք հաւասարապէս պահուած են յունարէնի և սլաւականի մէջ.—հայերէնը պահում է միայն առաջին աստիճանը.* wrēg՛> * գրէծ*, շրջմամբ *րգէծ, սովորական* b *յաւելուածով *երգէծ, որից* **երգիծանել** (Boisacq, *840,* Trautmann, *245,* Pokorny, *1, 319*)։—*Հիւրշ.* IF, Anz. 10. 47?

Հիմնք. իբր **երգածեննեմ***, այսինքն՝ «երգով ծանակեմ՝ խայտառակեմ»։ Ուղիղ մեկնութիւնը տուաւ նախ* Meillet, MSL, *10, 281։* Scheftelowitz, BB, 23, 295 *լիթ.* grėžiu *«ճեղքել»,* griėžu *«ձեւվել, կտրել» բառերի հետ։*

***ԵՐԳԻՈՆ, ի, ի-ա** *հլ. «մի տեսակ նուագարան» Մամբր. ղզր. Վրդն. երգ. գրւում է նաև* **երգեհոն** *Թղթ. դաշ. Գնձ. Մարթին. Մխ. ապար. Մաշտ. Ջահկ.* **երգևոն** *Մխ. այրիվ. էջ 51,* **դաւոն** *Թղթ. դաշ. 17,* **որղան, որղէն, որգէն** *Տօնակ.,* **որկաւոն** *Պիտիդ. վեցօր. տող 930։ Նոր գրականում գործածւում է միայն* **երգեհոն** *ձևը։*

=Յն. ὄργανον «նուագարան». բուն նշանակում է «գործիք» և ծագում է ἔργον «գործ» բառից. յունարէնից են փոխառեալ նաև լտ. organum, ֆրանս. orgue, պրս. արաբ. ارغانون ar anūn, ռուս. органъ, վրաց. ორღანო ორგანո *են։ Յոյն բառի հարազատ տառադարձութիւնն էր* ոργանոն *(համմտ. որ-կանոն ձևը), որ յետոյ երգ բառից ազ-դուելով՝ տուաւ* երգեհոն, երգիոն *ձևերը։ Իսկ* ղանոն *արաբական ձևից է։*

Առաջին անգամ ԳԴ դնում է պրս. էր-ղէնուն *ձևից փոխառեալ։ ՆՀԲ տալիս է ուղիղ մեկնութիւնը։*

ԵՐԳՈՒՆԻԼ *«դեղեցկանալ». ունի միայն Բառ. երեմ. էջ 91։*

ԵՐԴ, ո *հլ. «տանիքի յուսամուտ, երդիք» Եզն. Ագաթ. Եղիշ., «տուն, տնտր, տնեցիք» Բլ. ժբ. 3. Ագաթ. Բուզ. դ. 55, որից՝* երդա-կից *«տնկից» Բլ. գ. 22,* երդաշէն *«տնա-բար» Ոսկ. ես. ես.,* երդահամար *«տների թիւը, ծխահաշիւ» Չենոբ.,* երդումարդ *«տըն-տր» ՅՀ. կթ. 113. Վրդն. պտմ. Կանոն.* եր-դատր *«տնեցիք, տուն» ԱԲ։*

Pictet, *2, 244 իսլ.* art *«տուն»։ Էմին, Հայ հեթ. կրօնը, Հայ Թրգմ. Յոյս, 1875, 347 և* Ист. Асохика, *276 համե-մատում է անգլ.* hearth *«վառարան» բառի հետ.* ar, եր *արմատը գտնում է նաև* երկինք, երկիր, այրել, արեգ, or, ե-րակ *բառերի մէջ։ Հիւնք. (ինչպէս նաև Թիրեաքեան, Բազմ. 1913, 340) Թրք.* yu-rd *«տեղ, վայր»։* Bugge, IF, *1, 443 սանս.* grhá-, *զնդ.* geredha- *բառերի հետ հա-մեմատելով՝ հայը դնում է *գերդ- նա-խաձևից։ Պատահական նմանութիւն ու-նին գերմ.* herd, *հ. սաքս.* hērth, *անգլ.* hearth, *հոլլ.* haard *«վառարան, տուն, երդ» և հյ.* երտ *«խանձող», որովհետև գերմանական բառերը ծագում են հնխ.* qer- *«վառել» արմատից (տե՛ս* Waide *130,* Kluge 215)։ *Պատահական նմա-նութիւն ունի լտ.* atrium *«հռովմէական տան գլխաւոր սենեակը, որի կտրի մէջ-տեղում գտնւում էր երդիքը». համապա-տասխանում է* ater- *«մուր» բառից ածանցուած (եթէ սակայն եաորուսկէրեն չէ),* Ernout-Meillet, 80։

Գիհ.—Մշ. ɨէրդ՝իկ, *Սեբ.* ɨէրդ՝իգ, *Ախց. կր.* էրթիՙ, *Ալշ.* յէրտիկ, *Զղ.* յերթիկ, *Վն.* էրտիս. *Խոր.* էրթի՛. *Ասմ.* էրթիս. *Մոռ.* էր-տիս, էրծիս, *Տփ.* է՛րթիկ, ճիրթ, ճի՛րթիկ. *Ոզմ.* ճէրտէս, *Երև.* ճէ՛որթիկ, *Գոր.* ճէրթ, *Ղրբ.* ճիւրթ, *Մկ.* ճիւռտիւս, *բոլորն էլ ծագում են* երդ, երդիմ, *հյց.* երդիս *ձևերից։ Նոր բառեր են՝* աճերդիմ, երդիրճակ, երդմուխ, երդիս-կալ, երդկակալ, երդկակոն, երդկառակ.— *շատ սղուած մի ձև է Ագլ.* բրբոճոկ *«երդիքի ծակը», որ յառաջանում է* երդիրճակ *ձևից։*

Փոխ.—Վրաց. ერდო երդո *«տնափակ տանիք կամ կտուր, նաև տախտակամած», մինգր.* ეხთობა երթորա *«աւան, գիւղախումբ»։*

+**ԵՐԴՈՒՄՆ** *(սեռ. -դման) «երդում» ՍԳր. Բուզ., «անձին նզովք» ՍԳր., որից՝* երդնուլ *(կար.* երդուայ, *հրմ.* երդուի՛ր, *դերբ.* երդու-եալ*) ՍԳր. Եզն.,* երդումնել *Ոսկ. մ. գ. 25,* երդմնեցուցանել *ՍԳր.,* երդմնեցուցչութիւն *Մ Մաշտ. 238—9,* երդմնի *«երդում» Բ. մակ. ժգ. 23. Մծբ. Եփր. երր. «ուխտադիր» Ա. մակ. է. 15. Նար. բր.,* երդմնատուրիւն *Իմ. ժգ. 25,* ստերդումն *ՍԳր., Եփր. պհ.,* երդմնագանց *Մխ. երեմ.,* երդմնակեր *Մանդ.,* երդուիլ *Վրք. հց.,* շատերդումն *Սիրաք. իգ. 12. իէ. 15,* երդմնադրուժ *(նոր գրականի մէջ) են։ Հայ բառերի բուն արմատն է *երդու, ինչպէս ցոյց են տալիս* երդուայ, երդուի՛ր, երդուեալ *ձևե-րը, ինչպէս նաև յետին* երդուիլ *և գուռ.* եր-դուրնալ *ձևերը։ Ըստ այսմ* երդնուլ *ծագում է հնագոյն *երդուընուլ բայից և* երդումն՝ *հնա-գոյն *երդուումն ձևից։*

=*Բնիկ հայ բառ՝ հնխ.* ertu- *արմատից. համմտ. օսս.* ard, art *«երդում, ուխտ» և թեր-ևս նաև հլ.* rotŭ, rota *«ուխտ»,* rotiti sę *«երդնուլ»։ —Հիւբշ. 443 և* IF, Anz. 10, 45։

Առաջին անգամ Böttich. Arica, *78, 295 համեմատեց օսս. ձևերի հետ։* Pic-tet, *2, 452 և* Müller SWAW, *66, 271 աւելացնում են սլաւական ձևերը։ Հիմնք. երիզ բառից։ —Սլաւական ձևերը* Meil-let, MSL, *9, 142 համեմատում է սանս.* vrata *«պատուէր, կամք, կարգադրու-թիւն, ուխտ, խոստում» և զնդ.* urvata-

«վարդապետութիւն, օրէնք, պատուէր» բառերի հետ։ Հիւբշ. IF, Anz. *10, 45 չի ընդունում այս համեմատութիւնը. ուրիշներ ընդունում են և* Walde, *820 նոյն սլաւական ձևերը դնում է լտ.* verbum *«բառ» բառի տակ՝հբգ.* wort, *գոթ.* waúrd. *հպրուս.* wirds *«բառ», լիթ.* vařdas *«անուն», լեթթ.* vàrds *«բառ, մականուն», յն. ῥῆτωρ «հռետոր» են ձևերի հետ, իբր հնխ.* wer-dh *«խօսիլ» արմատից։ Այս պարագային հարկ է լինում յիշեալ սլաւական բառերը բաժանել հայերէնից և պահել միայն երգումն=օսս.* ard, art *համեմատութիւնը։*—Pedersen, *Հայ. դր. լեզ. 38, որ նոյնպէս ընդունում է հսլ.* rota=*սանս.* vratá- *համեմատութիւնը, հայ բառը դնում է հնխ.* dhru *արմատից. հմմտ. սանս.* dhruvá *«ամուր, որոշ», լտ.* firmus *«հաստատուն», լիթ.* dermė *«պայմանագրութիւն» են* (Walde *294—5)։ Մառ,* Грам. др. арм. яз. *էջ 243 հանում է դև բառից, իբրև թէ* եր+դիւ՝ *«Աստուծով,* per Jovem*»։* Karst, *Յուշարձան, 419 թրք.* and *«երդում»։*

Գիմ.—*Սչ.* յէրդ՛ում, *Մշ. Սեր.* յէրդ՛ում, *Ախց. Խրբ. Պլ. Ռ. Տիգ.* էրթում, *Կր.* էրթումմ, *Ալշ.* յէրտում, *Սլմ.* էրթիմ, էօրթիմ, *Ակն. Ասլ.* էրթիմ, *Վն.* էտիմ, *Ննխ.* էրթում, Լշ-թում, *Ագլ.* ե՛օդիմ, *Մրզ.* էօրթիմ, *Տփ.* օրթում, *Երև.* օրթում, *Ոզմ.* ինէտում, *Մկ.* ինէտիմ, *Շմ.* վէրթում, *Ջղ.* վոդ՛ում, *Հճ.* ույդ՛ում, *Համշ.* էշթվում եմ, էշթվօնք, *Գոր.* ի՛րթիմն, *Ղրբ.* ի՛րթումնը, ի՛րթիմնը, *Զթ.* ույդ՛օմ, ուդ՛ում, իյդ՛օմ.—*բայական ձևն է՝ Մշ.* ւերդ՛վընալ, *Ալշ.* ւէրտվընալ, *Սեր.* յերդ՛վրընալ, *Պլ.* էրթվրընալ, *Մկ.* ինէտվընալ, *Ոզմ.* ինէրթվանալ, *Սլմ.* էօրթիվել, *Սչ.* էրթընալ, *Խրբ.* երթումնալ, *Ախց.* էրթըմնալ, *Համշ.* էշթվրընալ, *Ջղ.* վոդ՛ըմվել, *Զթ.* օյդ՛վօնալ, օդ՛վօնալ։—*Նոր բառեր են՝* երդումնիք, երդումաճառ, երդումճաճառ, երդումակոտոր, երդուտրիլ։

ԵՐԵԱՑ *«ծառ». ունի միայն Բառ. երեմ, 91։*

ԵՐԵՉԿԱՆ *«ամսի 11-րդ օրը». ունի միայն Քաջունի, Բ. 101 և Գ. 64, որ մեկնում է «կեանք դաշտի»։*

+ԵՐԵԿ *«երեկոյ, իրիկուն» Յոր. է. 4, «արևմուտք» Փիլ. լին., «գիշերաւար» Պիսիդ. (գրուած նաև երեակ Լաստ. Վրք. Հց.), որից՝* ըստ երեկս, յերեկս, առ երեկս *ՍԳր.,* երեկաճալ *(գրուած նաև* երիկաճալ, երիկանիլ*) «գիշերը մի տեղ մնալ, գիշերել» Գ. մակ է. 12. Ոսկ. բ. կոր. «մինչև երեկոյ մնալ» Ես. ե. 11,* երեկոյ, ի հլ. *«իրիկուն» ՍԳր., Վեցօր. (գրուած նաև* երիկուն *Ղևտ. զ. 20. Ոսկ. մ. բ. 10,* երեկուն *Վեցօր. էջ 65. Ոսկ. Ճառք 471. Եղիշ. ը. էջ 115. 34.. իմ. Փիլ. Կղնկտ. Հրտր. էմ. էջ 55 (=Հրտր. Շահն. էջ 168* յերեկոյն*),* երեկոյն *Մաշկ.),* երեկոյաճալ *Մրկ. ժա. 11,* երեկոյի, երեկոյին *ՍԳր.,* երեկոր *Ոսկ. Հռոմ. 165,* երեկորեայ *ՍԳր.,* երեկորի *Երեմ. գ. 4. Եփր. ա. տիմ. Ոսկ. բ. տիմ. բ.,* երեկորին *ՍԳր.,* երեկորենայ *«արևմտեան» Վեցօր.,* երեկօրք *«գիշերը մնալը» Ագաթ.,* երեկօրոց *«անկողին» Կոչ. 18 (ըստ Վարդանեան, ՀԱ, 1922, 578),* երեկոյր *(նոր բառ),* երեկօրի *Վեցօր.,* ցերեկ *(կամ* ցերեակ*) «առաւօտից մինչև երեկոյ եղած մասը» (հմմտ.* ցայգ *«գիշեր, գիշերուանից մինչև առաւօտ եղած մասը») Սգր. Եզն.,* ցերեկութիւն *Կոչ. 262. Ոսկ. մաթ. և ա. տիմ. (ոամկաձև գրուած է* ցորեկ *Սիրեր.),* ցերեկոյր *(նոր բառ) են։*

=*Բնիկ հայ բառ՝ հնխ.* rēg²os *ձևից. հմմտ. սանս.* रजस् rā́jas- *«մթութիւն, մութ, մշուշ, ծուխ, շոգի»,* रजनी rajani *«գիշեր». գոթ.* riqis *«խաւար, մթութիւն», հիսլ.* rokkr *«մթութիւն, վերջալոյս», յն.* ἔρεβος *«աստրերկրեայ աշխարհի՝ դժոխքի խաւարը» ,* ἐρεβεννός, ἐρεμνός *«մութ, մթին, խաւարին»* (Boisacq, 273, Pokorny, 2, 367)։ —*Հիւբշ. 443։*

Առաջին անգամ Böttich. Arica, 78, 289, Wurzelf. 23 *և* Lag. Urgesch. 370 *համեմատեց սանս. և գոթ. բառերի հետ։ Նոյնը կրկնում է* Müller, SWAW, 42, 257:—*Հիւբշ.* KZ, *23, 32 աւելացնում է նաև յն.* ἔρεβος*։ Տէրվ.* Altarm. 68 *սանս.* rajas: *Նոյն, Նախալ. 102 վերի ձևերի և հլ.* ներկել, երկիճ, երկիր *բառերի հետ՝ հնխ.* rag *«ներկել, գունաւորել» արմատից։ Հինք. երկիւղ բառից։*

Մաո, ЗВО, 5, 319 և 13, 0121 յոյն ձևը կցելով եբրայ. ערב 'ereb *«երեկոյ» բառին՝ իբրև սեմական մէկ կողմ է դնում և հայերէն բառի հին ձևը համարելով եբեակ, արմատը դնում է rь (ե յաւելուածով և ակ մասնիկով), որ միացնում է պրս.* دی dī *«երէկ» բառին։* Karst, *Յուշարձան, 402 սումեր.* dirig: *Գիմ.—Ակն. Ռ.* իրիգու, իրիգուն, *Ախց. Կր. Վն.* իրիկուն, *Սլմ.* իրկուն, *Հմշ.* իռիգուն, *Երև.* բրիգուն, *Տփ.* իրիգուն *«երեկ երեկոյ», իրիգնապահ «երեկոյ», Պլ.* իրիգուն, իրիգուն, *Խրբ. Նախ. Սչ. Տիգ.* իրգուն, *Ալշ. Մշ.* ի֊իրգուն, *Ասլ.* իրգիւն, *ՋԹ.* իրգոն, իյգօն, *Սեր.* ի֊իրիգուն, *Հճ.* իյիգուն, *Մկ.* հիրիկուն, *Ղրբ.* բրի՛գիւ, *Գոր. Շմ.* իւրի՛գիւն, *Հւր.* հիւրիկիւն, *Ջղ.* ի֊արակու, *Հջղ.* հարակու, հիրիկու, *Ղրդ.* բրա՛կու, *Մրղ.* իրվանչաղ *(իմա՛* իրիկվան+չաղ, *որ է Բրբ.* چاغ čaγ *«ժամանակ»), Ոզմ.* հէրկօն։—*Կրճատ ձևով ասում են Պլ.* բարիրգուն, *Առանայի Բրբախօս հայերը՝* բարիրգուն, *Տփ.* բարիգուն *«բարի երեկոյ»։—Նոր բառեր են՝* իրիկնադէմ, իրիկնազանգ, իրիկնաժամ, իրիկնակիր, իրիկնահաց, իրիկնահով, իրիկնապահ, իրիկվնակ, իրիկնութիւն *և այլն։*

ԵՐԵԿԻՆՔ *«մի տեսակ բոյս է». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գործածել է Բարոյախօսը=*Физіологъ, *հրտր. Մաո,* Тексты, VI, *1904, էջ 5 և 56։*

=Յն. ἐρεχίνη *ձևից, որ գործածուած է Բարոյախօսի բնագրում՝ համապատասխան տեղը և որ Մաո թարգմանում է «ռուս.* верескъ» *բառով։ Ո՛չ* Bailly, *ո՛չ* Sophocles *և ոչ էլ նոր յունարէնի բառարանը չգիտեն այսպիսի մի ձև. բայց կայ* ἐρείκη *կամ* ἐρίκη, *որ* Bailly *մեկնում է «մի տեսակ մացառ,* sorte de bruyére, *լտ.* erica arborea L». Анненковъ-*ի բուսաբանական բառարանն էլ, էջ 78, ճանաչում է* Calluna vulgaris Salisb. *բոյսը, որ առաջ կոչւում էր* erica vulgaris, *և է ռուս.* верескъ, *ֆր.* bruyére commune, *գերմ.* gemeine Besenheide *են։—Ահ.*

ԵՐԵՄՆ-ՈՒԹԻՆ *«երերքի և կենսամթերքների առատութիւն». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Ալաթ յիշ. 15 «Արար բազում խաղաղութիւն և յաջողումն մարդկային, էրէմնութիւն և էժնութիւն, ամենևին անգողութիւն»։*

***ԵՐԵՄՈՒԿ** *«ալիւր վարսակոյ, գարւոյ, ցորենոյ խոշոր աղացեալ». իբր միջին հյ. բառ ունի նորայր, Բառ. ֆր. 621 բ* (gruau).— *Կոյլաւ, Բռ. գերմ. էջ 374 ա մեկնում է «ձաւար». նոյն բառը գիտէ նաև ՆՀԲ (գուռ. բառերի յաւելուածում)* **երմուկ, իրմուկ** *ձևով՝ «ալիւր խոշոր և սևագոյն». այլուր գտել եմ «ցորենի թեփ» նշանակութեամբ։*

=Թրք. ايرميك irmik *«կորկոտի շատ մանրը» (իբրև ռուսական* манная крупа). *Բուրք բառը չունի* Будаговъ, *բայց սովորական է օսմաններէնի մէջ (աղաւաղեալ ձևով իմրիհ, որից էլ իմրիհ ճէլվասի). և Թուի թէ ծագում է* ايرمك iri *«խոշոր» արմատից։—Ահ.*

Այս մեկնութիւնը տուած եմ նախ իմ Գաւառական բառարանի մէջ, ա տպ. էջ 311։

+**ԵՐԵՍ**, ի–ա *հլ. (առհասարակ գործածւում է անեզաբար. այսպէս Ս. Գրքի 781 վրկայութեանց մէջ ո՛չ մի հատ չկայ եզակի. եզակի ունինք միայն մի քանի ոճերի մէջ. ինչ. ինձ երե՛ս առա Ոսկ. ա. Թես.,* գալ յերեսդ **ես** *Ոսկ. մ. բ. 10 և յետնաբար) «դէմք, կերպարանք» և փոխաբերաբար «մակերևոյթ, անձ, աչք, երեսպաշտութիւն, կեղծաւորութիւն, դիտաւորութիւն, նպատակ են» ՍԳր. Եզն. Ագաթ. Ոսկ. եփր. Թգ., որից՝* **բացերեսութիւն** *«համարձակութիւն» Ոսկ. ես. և յհ. բ. 42,* **դժոխերես** *Ոսկ. յհ. ա. 26,* **խորշոմերես** *Եփր. Թգ.,* **կարմրերես** *(նորագիւտ բառ) Անկ. գիրք առաք. 45,* **երեսաւոր** *Խոր. ՅՀ. կթ.,* **երեսաւորեալ** *Անկ. գիրք հին կտ. 244 (տպ.* **երեֆաւորեալ**), **երեսալ** *(կամ* **երեսաճալ**) *«նայիլ» Տիմոթ. կուզ, էջ 236 (առաքօրէն թարգմանուած յն.* ὄψομαι *«տեսնել» բայից. համմտ.* πρός-ωπον *«երես»),* **գեղերեսել** *նար.,* **երեսագիր** *«հասցէ» Վրդն. օրին.,* **երեսապաշտ** *«կեղծաւոր» Մ. Մաշտ. 337 ա.* **երեսպաշտութիւն** *Մխ. ապար.,* **երեսփոխան** *Մխ. դտ. (կազմուած է երես և փոխան բառերից. համմտ. Ուռհ. էջ 244՝ Զքեռին իր դնեն*

իւր երեսաց փոխան), երեսանակ (*որ և* երեսնակ) «*մի տեսակ բոյս*. eupatorium, *ֆրանս*. eupatoire» (*ըստ Տիրաց*. Contributo § *221* «poterium sanguisorba L») *Բժշ*. (*բուն նշանակում է «երեսից ընկած». Համմտ. իր հոմանիշը՝ «անիծած ծաղիկ»*)։

=*Բնիկ հայ բառ՝ հնխ*. prepsā *ձևից, որ աճած է* prep-> երևիլ *արմատից*. ps>u *ձայնափոխութեան յայտնի օրինակ է* pseudo>սուտ։ *Աւելի ընդարձակ տե՛ս* երևիլ (Pokorny, 2, 89)։

*Նշ*Բ (*այժմ բառի տակ*) երևիլ *բայից*։ *Տէրվ*. Altarm. *75, Մասխ, 1881 մայ*" *8, Նախալ. 67, 86 սանս*. darç «*տեսնել, նայիլ*», darça «*երես, տեսիլ*» *զնդ*. darəs «*տեսնել*», *յն*. δέρκομαι, *գոթ*. tarhjan *ձևերի հետ՝ հնխ*. darç *արմատից, իբր նախահայ* *տրես։ Karolides *տե՛ս* երևիլ *բառի տակ։ Մառ*, ЗВО, *6, 318 պհլ*. dasak «*երեւոյթ*» *և պրս*. دیس dīs «*նմանութիւն*» *բառերին ցեղակից է դնում*։ Bugge, KZ, *32, 39 հիւլ*. drech «*դէմք*», *կիմր*. dryc «*կերպարանք*», *սանս*. dṛç «*տեսնել, նկատել*» *ձևերին է կցում. սպասելի էր հյ*. *երաս։ *Նոյն* IF, *1, 456 հնխ*. dṛḱ- *նախաձևից։—Հիւնք*. երիզ *կամ* երէզ *բառից*։ Patrubány, SA, *1, 213* երևիլ *բայից։ Ուղիղ մեկնութիւնը տուաւ* Osthoff, Parerga, *234 և* SA, *2, 53, որ ընդունում են նաև* Pedersen, *Նպաստ, 9 և* Meillet, Esquisse, 18: Scheftelowitz, BB, *29, 35 փոխառեալ իրան*. *ādēsa *ձևից. համմտ. զնդ*. daēsa- «*տեսիլք*», *պրս*. dis «*նման*»։ Karst, *Յուշարձ. 406 սումեր*. ra «*երկու*» *բառից*։

Գիւր.—*Սչ*. էրես, *Ալշ*. *Մշ*. յէրես, *Ախց*. *Ակն*. *Երև*. *Խրբ*. *Կր*. *Ննխ*. *Պլ*. *Ռ*. *Սեբ*. էրես, *Տփ*. է՛րէս «*երես, դէմք*», է՛րէսկ «*զգեստի, վերմակի ևն երես*», *Ասլ*. երէ՛ս, *Տիգ*. էրիս, *Հմշ*. էրիս, *սեռ*. էյսի (*ըստ Մառ*, Материалы по Хемшинскому наречию арм. яз. էէսէ «*երեսը*»), *Սլմ*. *Վն*. իրես, *Զղ*. յիրես, *Գոր*. *Ղրբ*. *Հւր*. *Շմ*. իրէս, *Հճ*. իյէս, *Ագլ*. *Մկ*. *Ոզմ*. *Մրզ*. իրիս, *Զթ*. իրիս, իյիս.—*Բրբախօս հայերից Ատն*. ըրէս «*երես*» (*Արեւելք, 1888 նոյ*" *8—9*)։ *Նոր բառեր են՝* աներես, երեսախառը, երեսածեծանք (*ունի արդէն Առաք. պտմ. 79*), երեսաթել, երեսաճց, երեսաւարք, երեսան, երեսաճոց, երեսապինդ, երեսատել, երեսատեղ, երեսարանք, երեսպաց «balcon, *պատշգամբ*» (*այս իմաստով վկայուած է 1591 թուից՝ Դիւան ժ. էջ 38*), երեսպացուկ, երեսել, երեսիբեռ, երեսդէմ, երեսլար, երեսբանք, երեսլուայ, երեսածածկան, երեսկունկ, երեսուել, երեսուորիլ, երեսպարզ, երեսսրբիչ, երեսսրբիկ (*գործածուած է արդէն 1788 թուին՝ Կ. Սարաֆեան, Բանալի դիտութեան, Մանկպետեր. էջ 53*), երեսսես, երեսպաճառ, երեսչուր, երեսսեսուկ. երեսմաղ, երեսմօղ։

Փոխ.—Patrubány, SA, *1, 222 մեզանից փոխառեալ է դնում հունգ*. arc «*երես, դէմք, ճակատ*», *ինչ որ բոլորովին անհաւանական է*։

+ԵՐԵՍՈՒՆ, ի *հլ*. «*30*» *ՍԳր*. *եւս*. *քր*., *որից* երեսնամի *եփր*. *ծն*., երեսնեմեան *եւս*. *քր*., երեսներորդ *ՍԳր*., երեսներորդ *եւս*. *քր*., երեսնիցս *Փիլ*., երեսնաւոր *Մաթ*. *ժգ*. *8*, երեսնամեակ (*նոր գրականի մէջ*) *ևն*։

=*Բնիկ հայ բառ՝ հնխ*. trīḱomtə *ձևից. համմտ. սանս*. त्रिंशत् triṁçát-, *զնդ*. θrisat-, *թոխար*. taryāk, *քուչ*. dharyāka, *յն*. τριάκοντα, *լտ*. triginta, *հիւլ*. tricha, *բրբտ*. tregont, *գերմ*. dreissig, *հբգ*. drīzug, *գոթ*. þreis tigjus, *լիթ*. trỹs dẽšimys, *հալ*. trī deṣeti *ևն (գերմանականի և բալթիկ-սլաւականի մէջ նորահնար մի կազմութեամբ, որի մասին աւելի ընդարձակ խօսիլ թողնում ենք համեմատական քերականութեան)։—Հիւբշ*. *444, 491*։

*Նշ*Բ երիցս տասն։ Peterm. 157 *երեսուն *ձևից։* Windisch. *30 ևն ունին ուղիղ մեկնութիւնը։ Հիւնք*. երեք *բառից*։ Bugge, Lykische Stud. *1, 46 լիկ*. trisñni «*30*» *բառի հետ*։

Գիւր.—*երև*. յէռէսուն, *վն*. յեռուսն, *Սչ*. *Հճ*. էրսուն, *Ախց*. *Զթ*. *Կր*. *Հմշ*. *Ննխ*. *Պլ*. *Ռ*. *Տիգ*. էռսուն, *Մրզ*. *Սլմ*. յէռսուն, *Ալշ*. *Մշ*. յէռսուն, *Մկ*. եէռսուն, *Ոզմ*. եէռսօն. *Ղրբ*. ըրէ՛սուն, *Գոր*. ըրէ՛սսուն, *Շմ*. իրէսուն, յառասուն, *Զղ*. առասուն, յարասուն, *Ագլ*. առաս-

սուն, *Տփ.* յարաւսուն, յարսուն, *Հոր.* յարսուն, *Խրբ.* մոսուն, *Սեբ.* մոսուն, ֆմոսուն, *Ակն.* էոսիւն, *Ասլ.* ե՝ոսիւն,—*արագ համարելու միջոցին երև. Ախց. Արբ. համառօտելով գործածում են* ե՝ո>յէո:

+ԵՐԵՐ *«տատանում, շարժում» Երեմ. դ. 24. Սիր. իզ. 10 (երկուսն էլ ներգ. յեռերի ձևով), «երերեալ, տատաննեալ» Մծբ. Սիր. ծն., Երերիլ Մն. դ. 12, 14, Սիր. ծն., Երերումն Ագաթ. Սիր. ծն., Երերագին Փարպ., Երերուն Մծբ. սխալմամբ գրուած է Երր Լմբ. ազ. և իմ.:*

=*Բնիկ հայ բառ՝ կրկնուած եր արմատից, որ պարզական ձևի տակ պահուած է գո.* երկծալ *և երուերտալ հոմանիշների մէջ: Հնխ. պարզ արմատն է* ter-, *որ պահուած է մի-այն սանս.* तरति tarala *«վախից դողալով» բառի մէջ: Այնուհետև* ter- *պարզական արմատը դանագան աճականներով աճելով՝ դարձել է* teres, terem, terep *և կրճատ* tres, trem, trep *են: Այս ձևերից յառաջանում են հետևեալ բառերը՝—1.* tres- *ձևից՝ սանս.* trásati *«դողալ»,* trastás *«դողդոջուն», դնդ.* tərəsaiti *«վախենալ»,* tarštan *«վախկոտ», հպրս.* tarsatiy *«վախենալ», պհլ.* tarsītan, *պրս.* ترسیدن tarsīdan, *բրդ.* tərsin, *աֆղան.* tarhēdal, *օսս.* t'arsun, *բելուճ.* trusag *«վախենալ»* (Horn, *§ 384*), *յն.* τρέω *«վախենալ, դողալ, սոսկալ»,* ἔτρεσεν *«վախեց»,* τρηρός, τρήρων *«վախկոտ»,* ἄτρεστος *«անվախ», լտ.* terreo *«վախեցնել»,* terror *«սարսափ», միռլ.* tarrach *«վախկոտ», հսլ.* tręsą *«ցնցել»,* tręsą sę *«դողալ, ցնցուիլ», ռուս.* трясти *«ցնցել, տատանել, երերացնել, շարժել»,* трасеный *«երերալ»,* трусъ *«շարժ, երկրաշարժ, մըրրիկ, փոթորիկ, երկչոտ, վախկոտ»,* трусить *«վախենալ», սերբ.* trūs *«երկրաշարժ», լիթ.* triszú *«դողալ», լեթթ.* trisas *«դող»,* trisêt *«դողալ, երերալ». —2.* trem- *ձևից՝ յն.* τρέμω *«դողալ»,* τρομεῖν *«դողալ»,* ταρμύσσω *«սարսափեցնել»,* τρόμος *«դող»,* ἀτρέμας *«անշարժ, հանդարտ, կամաց»,* ἀτρεμής *«անդորր, խաղաղ»,* τρομερός *«վախից դողացող, սոսկալի», լտ.* tremo *«դողալ»,* tremor *«դող»,* tremulus *«դողդոջ», լիթ.* trimú, trimaũ, trimti *«ցրտից դողալ», լեթթ.* tremju, tremt *«հալածել, փախցնել»,* tramš *«վախկոտ (ձի)», գոթ.* ϑramstei *«մորեխ», հ. սաքս.* thrimman *«ցատկել», ալբան.* tremp, trem *«վախենալ», ուկր.* tramt'ity *«երերալ, դողալ».— 3.* trep- *ձևից՝ հսլ.* trepetati *«դողալ», լտ.* trepido *«վախից և կամ աճապարանքից աստին անդին երթալ գալ, արտորալ»,* trepidus *«վախէն ու աճապարանքէն արտորացող, անհանգիստ», ֆրբաններ.* intrépide *«աներկիւղ», հսաքս.* thrabōn *«վեր վեր ցատկոտել», լիթ.* trepti *«ուրախութիւնից ոտքերը գետին դարնել», ռուս.* торопеть *«շփոթուիլ, վախենալ»,* торопить *«շտապեցնել»,* торопкий *«վախկոտ. շտապող» են* (Walde, 776, 789, Boisacg, *էջ 980, 982, 943, 984*, Trautmann. 329, Pokorny, 1, 760, Ernout-Meillet 1011):—*Հայերէն ներծագում է* tres- *ձևից և նրա հետ ունի ճիշտ ա՛յն ձայնական փոխյարաբերութիւնը, ինչ որ* երէ *<հնխ.* treies:

Տէրվ. Նախալ. 103 գոթ. reiran, *սանս.* lelāya *ձևերի հետ՝ հնխ.* ri *«երերալ» արմատից:* Bugge, Btrg. *13 մերժում է գոթ.* reiron *«դողալ»,* reiro *«դող» ձևերը և տալիս է ուղիղ մեկնութիւնը՝ իբր հնխ.* tres *արմատից, միայն թէ նախաձևը դնում է *tresri և ո՛չ թէ կրկնուած* tres *արմատից: Հիւբշ. 443 անապահով է համարում այս մեկնութիւնը, որովհետև հայ բառի արմատն է եր:—Հիւնք.* erro *«թափառիլ» բայից:* Patrubány, *ՀԱ, 1908, 85 հնխ.* per- *«զարնել» արմատից, որի ժառանգները տե՛ս* ճար-: Karst, *Յուշարձան, 406 սումեր.* ra *«երկու», 427 ալթայ.* tiril *«դողալ»:*

ԳԻՒ.—Ախց. խրբ. Մկ. Մշ. Ննխ. Պլ. Ռ. Սչ. էրէալ, *Տիգ.* էրէոլ, *Ակն. Սեբ.* էրբալ, *Ասլ.* էրբոլ, *Տփ.* երէմա՛նի գալ, *Զթ.* իրաոլ, իյալօլ, *Հճ.* իյայօլ, *Սլմ.* էօրէօրալ: *Նոր բառեր են՝* երեմանի *«թշուառ»,* երեռկալ, երերցնել, երկծալ *(Վն.),* երուերտալ *(Զթ.) «երերալ, շարժիլ»:—Վերջին երկուսը կազմուած են անկախաբար՝ եր *պարզական արմատից՝ նոր մասնիկներով:*

Փոխ.—Bugge, IF, *5, 168—80, Թրգմ. ՀՍ., 1895, էջ 259* կասկածով ենթադրում է որ դոթ. reiran «*երերալ, շարժիլ, դողալ*» փոխառեալ է հայերէնից։

+ԵՐԵԻ. *արմատ առանձին անդորձածական, որից կազմուած են՝* երևիլ «*երևնալ, տեսնուիլ*», *փխբ.* «*ծագիլ, բուսնիլ, յառաջ գալ, գտնուիլ, ներկայ լինիլ, կարծուիլ, թուիլ*» *ՍԳր. Վեցօր. եզն.*, երևակ «*Ջոհալ մոլորակը,* Saturnus» *Շիր. Արիստ. աշխ.* «*երեւոյթ, տեսք*» *Ջենոբ. Նիւս. երգ.*, «*երագ, ցերնորք*» *Կլիմաք.* «*երեւելի, նշանաւոր*» *Պղատ. օրին.*, երևոյթ *ՍԳր. Ոսկ. Կոչ.*, «*նշանաւոր*» *Բուզ. գ. 10, 13.* «*խայտառակ*» *Եզեկ. ե. 15. Ագաթ.*, աներևոյթ *ՍԳր. Ագաթ. Սիոնր. եզն.*, երևելի «*աչքի երևացող*» *ՍԳր.* «*Քաւիանցիկ*» (*շոր ևն*) *Ես. գ. 22* (=*յն.* διαφανῆ), յերևան գալ *Վրք. հց.*, յերևանի «*երևելի, նշանաւոր*» *Վրդն. պատ. էջ 153, 154*, բացերև *Ոսկ. մտթ.*, ակներև *Ոսկ. յհ. ա. 11*, յայտներևակ *Պիտ.*, յանկարծերևեաց *Վեցօր. 121*, յեսաներևակի *Փիլ.*, սակաւ երևեաց *Վեցօր. 126*, գիտերևիլ *Մաքս. եկեղ.*, մակերևոյթ *Արիստ. քանակ.*։ *Նոր գրականի մէջ՝* երևակայական, աներևակայելի, օդերևոյթ, կրկներևոյթ, դրսերևոյթ, մակերևութային *են*։

=*Բնիկ հայ բառ՝ հնխ.* prep- *արմատից, որի միւս ժառանգներն են՝ յն.* πρέπω «*երկաւել, աչքի ընկնել, նշանաւոր հանդիսանալ, թուիլ, կարծուիլ, կերպարանքը կամ երևոյթն ունենալ*», πρέπει «*պատշաճ է*»,— πρεπής «*երևելի*», հբգ. furben «*մաքրել, ալել (աչքի երևցնել, շուք ու կերպարանք տալ)*», մբգ. vürbe «*մաքրում, թոիշ ասող*», հիռլ. richt «*ձև*», կիմր. rhith «*եղանակ, կերպ, երևոյթ, նմանութիւն, սաղմ*» (*հնխ.* prp-tu-s *ձևից*). *Հին գերմաներէնից փոխառեալ է ֆրանս.* fourbir «*մաքրել, յղկել, փայլեցնել (օր. զէնքերը)*»։ *Նոյն արմատին է պատկանում նաև հյ.* երես (*երես *ձևից*), *որ տե՛ս առանձին տե՛ս նաև* ճարթ *բառի տակ* (Walde, 134, Boisacq, *էջ 8, 10*, Pokorny, *2, 89*)։—*Հիւբշ. 444*։

Նշ՝ երես *բառի՞ց*։ Windisch. *30* արև *բառի հետ՝ սանս.* svar:—Gosche 48 *նոյնպէս* արև *բառի հետ, իսկ էջ 74* ար *արմատից*։—Böttich. Arica, *70, 150* և Lag. Urgesch. *187 պրս.* rū «*դէմք*» *բառի հետ։ Տէրվ.* Attarm. *72* ուրուակաճ *բառի հետ՝ սանս.* rūpa «*արտաքին երեւոյթ, պատկեր, գոյն ևն*», rūpay «*երևիլ երևացնել*»։ Καρλίδης, Γλωσσ. συγκρ. *էջ 81 յն.* ὁρῶ «*տեսնել*», *կապադովկ.* γρεύω «*տեսնել*», *Հեսիք.* βῶρος «*աչք*», *լտ.* vereor «*պատկառիլ*» *են բառերի հետ։ Մառ,* ՅԲՕ, *5, 319 պնդ.* dī, *պրս.* dīdan «*տեսնել*»։ *Հիւնք.* ար և *բառից*։ Tomaschek, Die alten Thraker, II, *էջ 54—5 սանս.* ravi «*արև*»։ *Ուղիղ մեկնութիւնը տուաւ* Meillet, MSL, *7, 165, որ Հիւբշ. 444 ընդունում է ա՛յն պայմանով միայն՝ որ յոյն բառի նախաձևը եղած լինի* prep- *և ո՛չ թէ* k²rep- (*այժմ արդէն գիտուններըը յոյն բառի նախաձևը դնում են* prep-*և բոլորովին մերժում են* k²rep-, *որին պատկանում են լտ.* corpus, *պնդ.* kərəfš *հյ. կերպ են. տե՛ս յատկապէս* Walde, *էջ 194*)։ Bugge, KZ, *32, 66* երփրն *բառից*։ Patrubány, SA, *1, 210* ար և =*սանս.* ravi *բառի հետ*։

Գիմ.—Ալշ. Ախց. Երև. Մկ. Մշ. Պլ. Ռ. Վն. Տփ. էրվալ, *Համշ.* էրվնուշ, *Սլմ.* էրվալ, էրվալ, *Կր. Ննխ. Սչ.* էրվնցալ, *Տիգ.* էրվնցուլ, *Մրզ.* երավալ, *Սեբ.* երբվալ, *Ակն.* էրբվալ, երվալ, *Խրբ.* էրվալ. *Ջղ.* արեվալ, յարեվալ, *Շմ.* իրէվիլ, *Ասլ.* էրվրնցալ, *Ոզմ.* ճէրվրնցալ, *Գոր.* րէ՛վալ, *Ղրբ.* րվալ, *Հճ.* իյվը՛նօլ, *Զթ.* օրվօնօլ, օյվօնօլ, *Ագլ.* րվէօլ.—*նոր բառեր են* երևական, աներևուն, երևութաբան, երևին տալ։

ԵՐԵԻ *«երգ». ունի միայն Բառ. երևմ. էջ 91։*

ԵՐԵԻԻԼ *«բոյսերի մի հիւանդութիւն է. քոս, ժանգ կամ ոջիլ» Ովս. ե. 7. Յովէլ. ա. 4. Եփր. ել. էջ 151 (որ մեկնում է «գալուկրն»), Լծ. Նար. (որ մեկնում է «ժանկ, գալուկն անկենդան»)։*

Նշ՝ ԵՐԵՔ *«արմատն թուի երբ»։—Հիւնք. յն.* ἐτυσίβη *հոմանիշից։*

ԵՐԵՓՍ *տե՛ս Եռիէս։*

+ԵՐԵՔ *(հոլովւում է միայն յոգնակի. երից, երիս, երիւք) «3» ՍԳր. են. ածանցման մէջ մտնում է հետևեալ ձևերով. 1.* ԵՐԵՔ-.

ինչ. **երեքամեայ** *նւս. քր.*, **երեկին** *ՍԳր.*, **երեկնեմ** *Գ. թագ. ժը. 34. Ա. թագ. ի. 20. նւս. քր.*, **երեկուսի** *Սեբեր.*, **երեքտասան** *Գ. թագ. է. 1*, **երեքհարիւր** *ՍԳր. կամ* **երեքարիւր** *Բ. թագ. իդ. 18. նւս. քր.*, **երեքորեայ** *Ել. ը. 27. Կոչ.*, **երեքակ** *«մէկ երրորդ, 1/3» (չունի ԱԲ) Անսիզք 83,* **երեքլեզուեան** *(նոր գրականի մէջ) ևն։ Այս պարագային, ինչպէս տեսնւում է մէջբերուած օրինակներից, յօդակապ չի դրւում։ Յօդակապ ունին մէկ-երկու յետին բառեր. այսպէս՝* **երեքարգեան** *Կաղանկտ.*, **երեքլուսեան** *Վրդ. ել.*, **երեքայարկ** *Աբան.*, **երեքայարմար**, **երեքապայծառ** *ԱԲ. որոնց դէմ ո՛չ միայն ոսկեդարեան, այլ նաև նուազ յետին մատենագրութեան մէջ գտնում ենք առանց յօդակապի ձևեր. ինչ.* **երեքգեան** *նւս. քր.*, **երեքպայծառեան** *Խոր. վրդվ.։ Հետևելով յունական ոճին՝ մի խումբ յետնադարեան բառերի մէջ՝* **երեք** *կազմում է դերադրական. օր.* **երեքպայծառ** *«շատ պայծառ, ամենապայծառ» Ածաբ. Նոր կիր.=յն.* τριλαμπές, **երեքսրբեան** *«ամենասուրբ» Բննիկ.=յն.* τρις-άγιος, **երեքքշուառեան** *«շատ թշուառ» Մաքս. ի դիոն.=յն.* τρισ-άθλιος,, **երեքիւնեան** *«շատ թունոտ» Ուխտ. ա. 26. ինչպէս ունինք նաև երիցս «խիստ, կարի, յոյժ» Փիլ. ՅՀ. կթ. =յն* τρίς *«չափազանց, յոյժ»։—2.* **Երեք-**. *դնւում է միայն* **երեքնուկ** *բուսանուան («*trifolium rubens L» *ըստ* **Արթինեան**, *Տունկերը Ա. էջ 7—12 և* **Տիրացուեան**, Contributo *§ 242) և* **երեքնակի** *Փարպ. Խսիւք. մակբայի մէջ. վերջինը ՆՀԲ համարում է* **երեքնակի** *ձևից Համառօտուած։—3.* **Երի-**, *որից՝* **երիցս** *(կամ* **երիցս անգամ***)* **«երեք անգամ»** *ՍԳր.*, **երիր** *«երրորդ» Բ. թագ. ժը. 2. Մրկ. ը. 31*, **երորդ** *(<*երերորդ) ՍԳր.*, **երորդութիւն** *նւագր.։—4.* **Երե-** *որից՝* **երեքին**, **երեքեան** *ՍԳր.*, **երեամ**, **երեմք**, **երեմեան**, **երեմեճի** *«երեք տարուայ» ՍԳր. Ոսկ.*, **երերիւր** *«300»*, **երեւոր** *«երրորդ մասը» Շիր.*, **երեակ** *Արծր. այս բառերը յառաջացած են* **երի-** *ձևից. այսպէս՝* ***երի-ամեան**, ***երի-աւոր**, ***երի-(ճ)արիւր** *(իա>ե)։—5.* **Երե-**. *երևան է գալիս մի խումբ յետին ձևերի մէջ, ինչ.* **երերգեալ** *Նար.*, **երերեքեակ** *Արծր.*, **երրակի** *Շար.*, **երրեակ** *Շար. ևն. ձևացած է երիր բառից սղմամբ. կայ և երրի Ոսկ. եփես. 813 (եթէ չէ վրիպակ)։—6.* **Երա-**. *կազմուած է* **երե-** *ձևից՝ կրկնակ* **ր** *վերածելով* **ռ** *(հմմտ.* **աաոր>աաոռ***). գտնւում է միայն յետին ածանցների մէջ, ինչ.* **եռայարկ** *Խոր. Փիլ.*, **եռանկեան** *«երեք անկունք ունեցող (աման)» Մաշ. թղ. 49*, **եռավանկ** *Փիլ.* **եռանկիւն** *Պղատ.*, **եռաժանի** *Շիր. առանձին ևռ ձևն էլ կայ գործածուած Նանայ. Շ. բարձր. նոր գրականի մէջ ունինք զանազան ածանցներ, ինչ.* **եռաթի**, **եռակայմ**, **եռաճառոտ**, **եռապատկել**, **եռանկիւնաչափութիւն**, **եռապետ**, **եռապետութիւն**, **եռապետական**, **եռաստիճան**, **եռատամ** *(ա)*, **եռատառ** *և այլն։*

=Բնիկ հայ բառ՝ հնխ. tréyes *ձևից, որ արականի յատուկ էր (իգականը լինելով* tisres, *չեզոքը* trī, triyə*). Հմմտ. սանս.* त्रय tráyas, *զնդ.* θrāyō, *հիւս. պհլ.* ẖrē, *հիւս.-արևմ. պհլ. (մանիքէական գրուածներում)* hry, *զազա* hirye, *դուժիկի* hire, *պրս.* se, *թոխար.* trai, tarya, tri, *յն.* τρεῖς, *լատ.* trēs, tria, *ֆրանս.* trois, *ռում.* tri, *իտալ.* tre, *գոթ.* θreis, θrija, *հբգ.* dri, *գերմ.* drei, *հիսլ.* tri, *հին հիւս.* þrir, *անգլ.* three, *հալ.* trĭje, trije, tri, *հպրուս.* tris, *ռուս.* три, *լիթ.* trỹs, *լիթթ.* trĩs, *ալբան.* tre, tri *ևն (*Walde 790, Boisacq 981, Trautmann *327)։ Հյ.* **երե** *ծագում է հնխ.* tréyes *ձևից,* **երիս** *<հնխ.* trins *(հմմտ. սանս.* trīn, *գոթ.* θrins*),* **դրժ.** **երիւ**, *հմմտ. սանս.* tribhis.*—Հյ.* **երե-** *և* **երի-** *բուների տարբերութիւնը գտնում ենք նաև միւս ցեղակիցների մէջ. հմմտ. սանս.* tráyas, *յն.* τρεῖς, *գոթ.* τρέες, *հնխ.* trei>*հյ.* **երե-**, *սանս.* त्रिषु trišú, *յն.* τρισί, *հնխ.* tri-> *հայ.* **երի-** (Pokorny, 1, 753, Ernout-Meillet, 1013)։—*Հիւբշ. 444։*

Peterm. *152 դնում է* եզ *«մէկ» բառից. իբր թէ* եզ>ես>եր, *որի վրայ աւելանալով յոգնակիի* **ր** *մասնիկը՝* **երր**, *իսկ* **ե** *մասնիկով էլ՝* **երե**: Windisch. *31 համեմատում է յն.* ἀρι- *կամ* ἐρι- *սկսող բարդերը. ինչ.* ἀρίδακρυς *«յորդ լացողը»,* ἀρίθμός *«թիւ» ևն։ Առաջին անդամ* Böttich. Arica, 61, *4 տուեց ուղիղ*

մեկնութիւնը։ Bopp, Gram. comp. *2, 220 մեկնում է* tri *ձևից՝ նախաձայն* t-*ի անկումով*։ Müller, SWAW, *35, 191—9 նախահայ ձևը համարում է* ԵՐՐ՝ *ուր և յաւելուած է, իսկ* r <t, *որով* ԵՐՐ < ert ≪ erti < etri, *համմտ. գնդ.* Θrī, *օսս.* ԱՐՊԱ «*երեք*»։ *Բառիս վրայ խօսած են նաև Տէրվ.* Altarm. *75, Նախալ. 67, 132, Մասիս, 1881 մայ" 8 և ընդարձակ՝ Երկրագունտ Ա. էջ 43—44, Լեզու Ա. էջ 173,* Meillet MSL *18, 250 եև*։ Bugge, Etr. u. Arm. 120 *եարուսկ.* eslz=*հյ.* Ե-ՐԻՑՍ *և* Lyk. Stud. *63 լիւկ.* tris=ԵՐԻՑ։ *Հիմնք.* ԵՐԷՑ *բառից*։ Karst, *Յուշարձ. 406, 409 սումեր.* er «*երկու*» *և* as «*մէկ*» *բառերից բարդուած*։ *Մառ,* Яз. и. лит. I, *240 բասկ.* hirur «*3*» *և վրաց.* sami «*3*»։

Գիմ.—Ասղ. Մշ. Սչ. ԻՐԵՔ, *Զղ.* ՙԻՐԵՔ, *Սլմ. վն.* ԻՐԵՔ՝, *Ախց. Ակն. Երև. Կր. Համշ. Ղրբ. Շմ. Պլ. Ռ. Սեբ. Տիգ.* ԻՐՒՔ, *Խրբ.* ԻՐԵՔ՝, *Ասլ.* ԻՐՒՔ՝Ք, ԻՐՒՔ՝*, *Զթ.* ԻՐԻՔ, ԻՅԻՔ, *Ագլ. Մկ. Մղր. Ոգմ.* ԻՐԻՔ՝, *Մրդ.* ԻՐԻՔ՝, ԻՐՒՅՑ, *Տփ.* ՅԻ՛ՐԻՔ, *Ննխ.* ԻՐՒՔ, *ԺՂԿ, Անտ.* ՐՐՔ, *Հճ.* ԺԵՔ։—*Նոր բառեր են՝* ԵՐԵՔԱՉՔ, ԵՐԵՔԱՆՑ, ԵՐԵՔՈՒԱԿ, ԵՐԵՔՈՒԱՔԱՆԻ, ԵՐԵՔՈՐԻԿ, ԵՐԵՔՔՍԱՆ «*վաթսուն*»։

ԵՐԷ *կամ* ԷՐԷ, ո *հլ.* «*որսի վայրի կենդանի*» *ՄԳր. Եզն. էջ 99 (տպ. առ Երես. այսպէս ուղղել ըստ Նորայր, Քննասէր, 9). Խոր. Մագ.* «*կենդանի էակ (ինչպէս և մարդն է)*» *Ոսկ. մթթ. ա. 17 (էջ 270), տիմ. ա. 13. յորդ. էջ 112 (տպուած է* ԵՐՐ Է. *ըստ Նորայր, Հայկական բառաքնն. 44 ուղղել* ԵՐԷ). *գրուած է նաև* ԵՐԱՅ *Յայսմ. յնվ. 28 (ունի միայն ՀՀՒ). այրէ Վրդն. ծն. յոգնակի՝* ԵՐՈՒՔ «*երէկներ*» *Յայսմ.։ Նոյն բառն է նաև Շնորհ. եգես. տող 950՝* «*կամ զերթ առիւծ գոչէ առակ, փախչին* ԵՐԱՅՔՆ *առհասարակ*»։ *Այս բառից են՝* ԵՐԷՎԱՅՐԻ *ՄԳր. Յայսմ., Էաջէրէ Խոր., ՚ի-կերէ էլ. արիստ. (Հրտր. Մանանդեան), էջ 50, գրուած* ՚ՉԻԿԵՐԻԱ *Մագ. քեր. 239, 240,* ՚ԻՐԵՔԵՐԷ *Խոր. աշխ. 615,* ԵՐԷՈՐՍ *կամ* ԵՐԷՍՈՐՍ *Մեսր. եր., էրէխնդիր «որսորդ» (ունի Կ. Սարաֆեանի Բանալի գիտութ. Սանկպետերբ. 1788, էջ 50)։*

ՆՀՒ *(գազան բառի տակ) լծ. լատ.* fera «*գազան*»։ Tomašek, SWAW, *1893, 66, Բրգմ. ՀԱ, 1894, 18 գնդ.* Θrāya «*անհգաստու, անունդ*» *բառի ձևն ունի. համմտ. սանս.* trā=*գնդ.* Θrā «*պահպանել, անուցանել*»։—*Հիմնք. երեք բառից*։ Bittner M., WZKM, *14 (1900), 370 եթովպ.* ՀԼՔ: arwē «*գազան, վայրի անասուն*», *ասոր.* ܐܪܝܐ aryā *և եբր.* אֲרִי arī «*առիւծ*»։ *Սագըզեան, ՀԱ, 1909, էջ 335 և* Karst, *Յուշարձ. 403 սումեր.* bar, barra «*հղնիկ*»։ *Ն. Ադոնց, Արուեստ. Դիոն քեր. 239 հյ.* ՚ՉԻԿԵՐԷ *(որ* ՚ՉԻԿ *և* ԵՐԷ *բառերից է) հանում է պրս.* شکاری šikārī «*որսորդ*» *բառից, որ ո՛չ նշանակութեամբ է յարմար և ոչ ձևով (պիտի տար *՚ՉԿԱՐԻԿ)։*

Գիմ.—Մկ. Մշ. վն. գործածում են ԵՐՈՒՔ-ԹՈՂՈՒՔ, ԵՐՈՒՔ-ԹՈՂՈՒՔ «*բոլոր թռչունները*» *կրկնականը, որի մէջ* ԵՐՈՒՔ *(հնչւում է* Է-ՐՈՒՔ*) Յայսմաւուրքի յոգնակին է՝ երէ բառից։*

ԵՐԷՋ, ի–ա *հլ.* «*քարոտ, կոշտ, խոպան*» *Փիլ. այլաբ. 116. Պիտ., «քարքարուտ տեղ, ապառաժուտք» Մխ. ապար. Մագ., որից՝* ԵՐԻՁՈՒՏ *ՅՀ. կթ. Պիտ. սրանից է կազմուած նաև* ԵՐԻՁԱՎԷՄ «*ապառաժ քարեր*». *Նորագիւտ բառ, որ գտնում եմ գործածուած Այրիվ. 21բ. աղաւաղեալ ձևով. «Փոխեցան ի գլուխ դաշտակին, ի մէջ Իրիգա վիմացն՝ առ եզերբ գետոյ»։*

ՆՀՒ *իտալ.* rezzo, *պրս.* ՋԷՐՈՒՏ *(իմա՛* ՚ՉՀՀ zarūd «*անապատ*»)։—*Հիմնք.* ԵՐԻՁ *բառից*։ Müller, WZKM, 11, 204 *պրս.* ریز rēz «*փշուր*» *բառից փոխառեալ. համմտ.* ریزه rēza «*մանրուք, փշուր*», rēza rēza «*կտոր կտոր, մաս մաս*», rēzaxōr «*փշրանակեր*». *բառս հնագոյն պէտք է որ ունենար նաև «աւազ» նշանակութիւնն էլ. համմտ. պրս.* ریگ rēk «*աւազ*», *որով ձևացաւ. հյ.* ԵՐԷԿ «*աւազ*», ԵՐԻՁՈՒՏ «*աւազուտ*»։ *Նոյն, էջ 293 համեմատում է պրս.* ریگ rēk «*աւազ*». *հսլ.* rēka «*գետ*», *գնդ.* rič, *պրս.* ریختن rēxtan «*թափել*» *բառերի հետ։*

ԵՐԷԹ. *արմատ առանձին անգործածական, որից կազմուած են՝* երեթն առեալ *«հալած մաշած, ապականեալ» Կեչառ. 190,* երեբռեալ *նոյն նշ. Խոսր. 252,* երիբացեալ *«ծիւրած և դժգոյն, խեղճ ու կրակ» Ոսկ. ես. 205, մտթ. Փիլիպ. Եբր. Մանդ. Փարպ. Կանոն. էջ 50 (որ և* երիճացեալ *Մանդ.)։ Անորոշ իմաստով են յետնաբար՝ Յայսմ. օգ. 29 «կապուտացան դէմքն և երիթացան շրթունք նորա» (ցաւից ու սարսափից). Սարգ. յկ. դ. էջ 60 բ «Շրթունք սեաւք և երիթացեալք» (բարկացած մարդու համար է ասում)։*

ՆՀԲ արմատի նշանակութիւնը կամայաբար դնում է «պատառուածք», որպէս զի համեմատէ Բրք. yərtəq *«պատառած» բառի հետ։*

+ **ԵՐԻԿ** *(սեռ.* երեկի *կամ* երիկի*) «երէկվա օրը» ՍԳր. Ոսկ. կոչ. Մծբ. Սերեր., որից՝* **երիկեան** *«երէկուայ» (գրուած նաև* իրիկեան*) Մամբր. Առ որս. Զքր. կթ.,* երիկածին *«նորածին» Պրպմ. Խոսրովիկ. արմատը գրւում է նաև* երեկ*, որով շփոթւում է* երեկ *«երեկոյ» բառի հետ։*

=*Նոյն է* **երեկ** *«երեկոյ» բառի հետ. շատ լեզուների մէջ «երէկ» և «վաղը» գաղափարները ծագում են «երեկոյ» և «առաւօտ» բառերից համմտ. հալ.* večerŭ *«երեկոյ» և* vĭčera *«երէկ», ռուս.* вечеръ *«երեկոյ» և* вчерá *«երէկ», գերմ.* Morgen *«առաւօտ» և* morgen *«վաղը», ասուր.* mušu *«գիշեր» և* mūšamma *«երէկ»* (Muss Arnolt, Assyr. Handwb. 2, *598), արաբ.* ṣabāh *«առաւօտ» և Բրք.* sabah *«վաղը», օսմ.* dün *«երէկ» և ԲՔր.* tun *«գիշեր», նոյն իսկ Տիգ. իրիգուն նշանակում է «երէկ երեկոյ» և ո՛չ թէ պարզապէս «երեկոյ»։*

Klaproth, Asia polygl. *101 լտ.* heri: *ՆՀԲ «որոյ* երեկոյն *էանց կամ էրէկ, այսինքն արդէն եկն. իտալ.* hieri, jeri*»։ Հիմնք. երեկ բառից և կամ լտ.* heri: *Այսպէսով ուղիղ մեկնութիւնը տուաւ նախ ՆՀԲ։* Nyberg, Hilfsbuch, *2, 50 պհլ.* dēk=պրս. دی dē *«երէկ» բառից, իբր *ðek. համմտ.* երաշտ։

ԳԻՒ.—Ախց. Երև. Կր. Վն. էրէկ*, Մշ. Զղ.* յերէկ*, Ակն. Խրբ. Հմշ. Ննխ. Պլ. Ռ. Սչ. Տիգ. Տփ.* էրէգ*, Ալշ. Սեբ.* յէրէգ*, Սլմ.* յէրէկ՝*, Ասլ.* էրէգ*,* էրէլ*, Ոզմ. Մկ.* ճէրէկ*, Մրզ.* յէրէկ՝*,* յէրէյ*, Ղրբ.* յէ՛րէգ՝ յէրէգի*,* յրկէ՛*, Ագլ.* յրկէ՛*, Զթ.* իրէգ*,* իյէգ*, Զզ.* ըրկէ*, Գոր.* է՛րակ*, Շմ.* mrmգ՛*, Հւր.* ճէրէկի*, Հճ.* իյէգ։

+ **ԵՐԻՑ** *(-ու, -ուէ, -ամբ, -ուիմ, -աից. յետնաբար նաև* -oյ*, -աւ. յգ.* երիցուներ*, -ուենաց Կանոն. էջ 126)) «աւագ, մեծ. 2. քահանայ» ՍԳր. Եւս. քր. Վեցօր., որից՝* երիցագոյն *Յոբ. ժե. 10. Եւս. քր.,* երիցակից *Ա. պետ. ե. 1.,* երիցանալ *Վրդն. ծն.,* երիցանի *«տէրտէրներ» Փարպ.,* երիցապետ *Բուզ.,* երիցուքիւն *Սպր.,* երիցուկ *«բոյս է.* anthemis tinctoria L*» (Ըստ Տիրացուեան,* Contributo, *§ 540) Բժշ. Գաղիան., հաւանէրէց «Յամադա» Դատ. ժդ. 20,* աւագերէց *Կանոն. (բառախաղով գրուած աւագուրէց Դրնդ. 62),* բարձերէց *Ղուկ. ի. 46. Բուզ. գ. 9,* ձեռներէց *ՍԳր., գեղջերէց «գիւղապետ» Ոսկ. պօղ. ա. 197,* գաւերէց *Ա. եզր. ե. 63. Ագաթ. Ոսկ. մտթ., շերէց «անարժան քահանայ» Բուզ. առանց փուխոխման ունինք՝* երէցուքիւն *Ոսկ. երբ. իդ.,* երեցաւուրց *«տարիքով» Եփր. Համար. 20,* երէցեղբայր *Կանոն. գրուած է նաև* էրէց*,* իրից*,* իրիցագոյն*,* իրիցուկ*,* իրիցուքիւն *ևն։*

=*Բնիկ հայ բառ՝ հնխ.* preisk'hu- *ձևից. սրա հետ համմտ. յն.* πρέσβυς *«ծեր»,* πρέσβεις *«նախնիք, աւագանի, պատուիրակներ և դեսպաններ»,* πρεσβεία *«անդրանկութեան իրաւունք»,* πρεσβεῖον *«առանձնաշնորհութիւն», համեր.* πρέσβα *«ակնածելի»,* πρεσβύτερος *«ծերագոյն, երիցագոյն», կրետ.* πρεῖσγυς*,* πρεῖγυς*, դորտ.* πρείγονα *«ծերագոյն», թեսալ.* πρεῖσβυς *«երէց»* (Boisacq, 811), *լատ.* priscus *«հնաւանդ, վաղեմի»,* pristinus *«հին, վաղեմի»* (Walde, 612, Pokorny, 2, 33, Ernout-Meillet, 772)։ *Յոյն ձևերը նախատիպն է հնխ.* preis-g^{2}u-, pres-g^{2}u-*, լատինինը՝ հնխ.* preis-ko. *բայց բոլորն էլ զանազան մասնիկներով աճած են նախնական և պարզական հնխ.* pri *«առաջին» արմատից։—Հայերէն բառի հնագոյն նշանակութիւնն է «անդրանիկ, մեծ». իսկ «քահանայ»*

նշանակութիւնը ձեւացած է քրիստոնէութեան ժամանակ՝ թարգմանաբար յունարէնից, ուր ունինք նոյնպէս πρεσβύτερος «ծերագոյն. 2. քահանայ» (Meillet, Rev. crit. *1896, էջ 423*), որից ֆրանս. prêtre «քահանայ», և կամ ասորերէնից՝ ուր ունինք ܩܫ qaš «ծերանալ» և ܩܫܝܫܐ qašā «քահանայ», ܩܫܝܫܐ qašīša «ծերագոյն. 2. քահանայ», որից էլ թրք. كشيش kešiš «տէրտէր». Համմտ. նաև արաբ. شيخ šayx «ծեր. 2. մահմեդական կրօնաւոր, շէյխ». նոյնպէս նաև վրաց. ხუცես-ხo խուցեսի «մեծ կամ երէց. 2. քահանայ» (*Մառ, ИАН, 1914, 361*)։—Հիւբշ. 444։

Առաջին անգամ Schröder, Thes. 47 դնում է յն. ἱερεύς «սրբազան, երէց, քահանայ» բառից փոխառեալ։ Նոյն բառի հետ են կցում նաև ՆՀՒ, Peterm. 23 և Հիւնք։—Lag. Arm. Stud. § 722 չի ընդունում այս մեկնութիւնը, առարկելով թէ յոյն σ արմատական չէ։ Ուղիղ մեկնութիւնը տուաւ նախ Bugge, Btrg. 12, որ ընդունեցին Bartholomae, Studien, II 8, 39, 52, Müller. WZKM, 5, 267 Meillet, MSL, 8, 296 և ն։—Jensen դնում է հաթ. razs ձևը, որ ուզում է կապել երէց բառի հետ, մի չէ «հովիւ». վերջին պարագային նոյնանում է արածել բառի հետ։ Գաղանճեան, Բիւրակն, 1899, 313 և Արևել. մամուլ, 1902, 75 ե յաւելուածով արաբ. رأس rais «գլխաւոր» բառի հետ։ Բիւրակն, անդ, խմբ. ծան. 2 համեմատում է յն. ἱερνα (?) բառի հետ։

Դիմ.—Ոգմ. յէրէց «նորընծայ քահանայ», *Այր. Մկ. Մշ. Տփ.* էրէց (*Տփ. յոգ.* իրիցնիր), *Հմշ.* էրէց, *սեռ.* իրիցու, *Զթ.* իրէց, իյէց։—*Նոր բառեր են՝* երէցկին (*Ախց. կր.* իրիցկին, *Զթ.* իրիցգին, *Ակն. Ասլ. Խրր. Պլ. Ռ. Սեբ.* իրիսգին, *Մշ.* իրիցգ՚ին, *Ագլ.* ըրցմ՚կին), երեցվոխ, երէցվոխան, տաներէց (*Ախց.* տաներէց, *Պլ. Սեբ.* դաներէց), երիցանուկ, երիցատուն, երիցացու։—*Սրանցից* երէցկին՝ *նոր առումով նշանակում է տեղ տեղ «ընկոյզի ամբողջական միջուկ». այս բառն ունին նաև էնկիւրիի Բրբախօս հայերը՝* irisgin *ձևով և կրկին նշանակութեամբ։*

Փոխ.—Քրդ. ایریس eîris, هریس hiris *կամ* هیریس heîris «քահանայ» (Justi). *իսկ Ս. Գրքի քրդ. թարգմանութեան մէջ դրուած է ուղղակի* երէց. *ինչ. Գծ. ժա. 30՝ ժը երէցանոա պը քիյանտոնէ (առաքեալ առ երիցունսն)։*

+ԵՐՔ, *ի հլ. «գնացք, երթալը» Ոսկ. մ. բ. 1, որից՝* երթալ *ՍԳր. կամ* երթանալ *Գ. թագ. ժգ. 9. բ. մակ. Բ. 25. Մծբ. Եփր. եւ. էջ 183, թգ. էջ 401 և աւետ. 282, 303.* երևեկ *ՍԳր. վեցօր. Ոսկ. մտթ. բ. 2,* երթող «գնացող» *Դատ. ի. 10,* երևեկս առնել *Բուզ. դ. 14, 54,* երևեկել *նդն.,* երթումն *նար.* ողջերթ *(նոր դրականում),* սերմներթութիւն *Վրդն. Ղեւտ. կանոն.*—երթալ *բայը ցոյց է տալիս նաև հետզհետէ յաւելում. ինչ. «Օր ըստ օրէ երթաս և զժգունիս» (աշխ. երթալով կդժգունիս կամ քանի կերթաս կդժգունիս) Եփր. թգ. 398, «Տունն Դաւթի երթայր և զօրանայր և տունն Սաւուղայ երթայր և տկարանայր» Բ. թագ. գ. 1, նոյն ոճը կայ նաև պրս.* ڕەفتن rafta-rafta *կամ թրք.* gitdikje «գնալով, երթալով. կամ հետզհետէ»։

=Բնիկ հայ *բառ հնխ.* erth *արմատից. այս արմատի* erdh- *ձևն է ցոյց տալիս յն.* ἔρχομαι «գալ», *որ ըստ* Wackernagel, Dehnungsgesetz, *3, ներկայացնում է հնագոյն* ἐρθ-σκο-μαι *ձևը. (սակայն* Walde, *547 և* Boisacq, *287 չեն ընդունում և նախաձևը համարում են* *ἐρ-σκο-μαι =սանս. ṛčchátī «հանդիպիլ, հասնիլ», պրս.* رسد rasad «հասնիլ»). *յն.* ἔρχομαι *բառը* Pokorny, *1, 137 դնում է* er-sk'o *նախաձևից, որ է հնխ.* er- «շարժիլ» *արմատից՝* sk'o *ներկայաձևով։ Յոյն բառի վրայ առանձին մի յօդուած ունի* Meillet, MSL *23, 249—258 (հայերէնի վրայ յատկապէս էջ 255), ուր պահելով և հաստատելով* երթ=ἔρχομαι *կապակցութիւնը, յոյն բառը մեկնում է* ἐρ-χο-μαι *կազմուած χ ածականով, բայց ոչ թէ* er- «ենթադրել» *արմատից, այլ* ser-«երթալ, շարժիլ», *որից նաև* ἔρπω, *որ «գնալ» նշանակութեամբ ունի արդէն Հոմերոս։ Համմտ. նաև ալբան.* erdha «եկայ», *որ փոխառեալ* vin' «գալ» *բայի կատարեալն է։—Հիւբշ.* IF, Anz. *10, 47։*

ՆՀԲ *լծ. լտ.* itio, iter *«երթ, ճամբայ»*։ Böttich. ZDMG, *1850, 354 և* Arica, *88, 437 սանս.* ṛti *«ուղի, ճամբայ, երթ»*։ Müller, SWAW, *42, 252 գնդ.* irīᵑ *«մեռնիլ», որի նախնական նշանակութիւնը համարում է «մեկնիլ»։ Նոյն, էջ 329, յն.* ἐλθ-εῖν *«գալ»։ Տէրվ. Նախալ. 62* t-ով *աճած՝* ar *արմատից. համմտ. սանս.* ṛnōmi, *յն.* ὄρνυμι, *լատ.* orior, *հյ.* յառնեմ, ելանեմ: *Հիմնք. երդ բառից։ Ուղիղ մեկնութիւնը տուաւ* Meillet, MSL, 10, 276—7: Patrubány, SA, *1, 189 համեմատում է գերմ.* treten *«դիպչիլ, մօտենալ, երթալ, դիմել» են։* Karst, *Յուշարձան, 400 ասուր.* âru *«մեկնիլ»,* urtu *«սովորութիւն», 402 սումեր.* ara, eri *«երթալ»,* ara, garan *«ճամբայ», 406 սումեր.* ra, radu *«երթալ», 419 թաթար.* yor, yur, yür, *ույգուր.* yorimak, *ալթայ.* vor *«երթալ»։* Charpentier, IF, *25, 244 սանս.* sárpati, *յն.* ἕρπω, *լտ.* serpo *«սողալ» բառերի հետ՝* -to- *մասնիկով, իբր հնխ.* serpto->**երբ**:

Գիւտ.—Ալշ. Ախց. Խրբ. Կր. Մկ. Պլ. Սեբ. Սչ. էրբալ, *Ոզմ.* յէրբալ, *վն. Տիգ.* էրբոլ, *Մշ.* էրդ՛ալ, *Զթ.* իրբոլ, իյբօլ, *Ննխ.* էրբալ, էշբալ, *Երև. Ռ.* էբալ, *Մրղ. Սլմ.* էբոլ, *Հճ.* իշաօլ, *Համշ.* էշդուշ:—*Ունինք նաև Ակն. Տփ.* էհալ, *Պրտ.* իյալ, *Ասլ.* իալ՝ *նոյն նշանակութեամբ, որոնք Տէրվ. Լևոն, 1887, 91 հնխ.* i *«երթալ» արմատից է հանում. համմտ. լտ.* ire, eo, *սանս.* ēti, imás, *գնդ.* aeiti, *հպրս.* aitiy, *յն.* εἶσι, *լիթ.* eĩti *են «երթալ»* (Walde, *255)։—Էնկիւրիի Բրբախօս հայերը պահած են բառս՝ հետևեալ ասացուածքում.* zərzərən gertas deyil *«էլ բաւական է» (բառացի «շարունակ կերթաս չէ՞»). տե՛ս Մխիթարեան, Բիւր. 1898, 789։*

ԵՐԹԱԿ *«համառաբած». ունի միայն Բառ. երեմ. էջ 93։*

ԵՐԹԱՍ *«մեռելների աստուածացեալ հոգին». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գրտնում են գործածուած Մոլութ. 451 բ. վկայութիւնը տե՛ս մանէս:*

ԵՐԺ ? *գործիական եռժիւ ձևով ունի միայն Բառ. երեմ. էջ 92 և մեկնում է «դերդիւ կամ համամայիւ». վերջինը նշանակում է «աղաւնարօտ բոյսը»։*

+**ԵՐԻ** *(-ւոյ, -եաց) «կենդանու առջևի ոտների վերի մասը, լանջակողմը, երբուժ» ՍԳր. (գրուած էրի Կանոն. էջ 54), որից՝* **առ երի** *«մօտը, կողքին, քովը» (որ և յերի) Խոր. աշխ.,* **առ երի ընթանալ** *«զուգընթանալ, համապատասխան լինել» նաև. քր. նշանակութեան տարբերութեան համար համմտ. կողմ «ամարմնի կողերը» և գուռ. կողմը, կողմին «քովը»։*

=*Բնիկ հայ բառ՝ հնխ.* perə *«առջևը» ձևից. այս արմատն է որ իր* per, pro, pri *և այլ բաղմաթիւ ձևերով ու ձայնդարձներով ծնունդ է տալիս ժառանգ լեզուների մէջ հարիւրաւոր բառերի. յիշենք դրանցից մի քանի կարևորները և ձևով կամ նշանակութեամբ մեզ մերձաւորները.—սանս.* purás *«առջևը»,* prá- *«առաջ»,* prātár *«կանուխ, առաւօտուն»,* prathamas *«առաջին»,* pratarám *«աւելի յառաջ», գնդ.* fratəma *«առաջին»,* fratara *«նախորդ»,* paurva *«առջևը, առաջին». հպրս.* paruva *«առաջնագոյն, կանխագոյն», յն.* πρίν *«առաջ, նախապէս»,* πρό *«առջևը, նախապէս, կանխաւ»,* πρόσω *«յառաջ»,* πρό *«կողքին, առ երի, դէպի»,* πρόμος *«առաջնակարգ»,* πρών *«հողի յառաջակարկառ մաս»,* πρῶτος *«առաջին»,* πρότερος *«առաջնագոյն»,* πρότεροι πόδες *«առաջի ոտները»,* πρώρα, πρύμνη *«նաւի յառաջակողմը, ցռուկ». պրմ-*νόν σκέλος *«սրունքի վերի մասը»,* πρωΐ *«կանուխ, առաւօտը կանուխ»,* πρωέ-καρπος *«երկախայրիք»,* πρῶος *«վաղահաս (պտուղ)»,* πρώϊμος *«կանուխ եկող, վաղահաս»,* πρέσβυς *«անդրանիկ», լտ.* pro *«առաջ»,* primus *«առաջին»,* prior *«առաջնագոյն»,* prandium *«նախաճաշ»,* pridem *«վաղուց»,* prīdie *«նոանդ»,* prima *«սկիզբ»,* primo *«նախ»,* priscus *«վաղնջական, նախնի»,* prius *«աւելի շուտ, առաջուց».* prae *«առջևը»,* հրգ. fruc, *գերմ.* frühe *«առաւոտ կանուխ», գոթ.* faúra *«առաջ»,* fruma *«առաջին». fram-alders «առաջիքուռ», անգսք.* forma *«առաջին», հսաքս.* formo *«առաջին», լիթ.* prō *«առջևը»,* prōpernai *«երկու տարի առաջ»,* pirmos

«առաջին», pry- «առջևը, քովը», prý-butis «տան առջևի մասը», ալբան. iparɛ «առաջին», հալ. pŭvŭ «առաջին», pradědŭ «նախապապ», ռուս. первый «առաջին», при «առ, ի» ևն ևն (տե՛ս Walde, 574 և այլուր)։ Հայերէնի մէջ նոյն հնդևրոպական արմատին են պատկանում առ, երա(խայրի), երէց, հեռի, հերու, որոնց իւրաքանչիւրը տե՛ս առանձին։—Ա.Ճ.

Հիմնք. հեռի բառից։ Ինսէն, *ՀԱ, 1904,* 183 և 274 հաթ. r, ar, ri «թև, ձեռք»։ Karst, *Յուշարձան, 402* սումեր. arik «ոտք, խարիսխ», հյ. արահետ, *403* bar «կողմ», *408* ur «կող», gur «կողմ»։ Meillet, Dict. étym. st. 70 կցում է յերիւրել, արմուկն, առնել են բառերին։ Վերի մեկնութիւնը հրատարակած եմ նախ MSL, *20, էջ 163*։

ԳԻՒ.—երև. էրի, Ղրբ. Մրղ. եէ՛րի, Սլմ. նէրի. նոր բառեր են. երամէջ «անասունի երկու երինների գլուխը» (Լ. Ղզ.) նրա՛բար (<երաբար) Ղրբ. «թիկունքի ոսկորը»։

ԵՐԻԱՍ «մրտին տակն» Մխ. բժշ. էջ 145 (ունի միայն ՀԲուս. § 671). «երիաս, որ է մրտին տակն».—գործածութեան ձևից յայտնի է որ օտար է։

=Յն. ἰρή + արար. أس as «մրտենի», այն է ἱερὸ-μυρτος կամ μυρσίνη ἀγρία (Դիոսկորեայ)=արար. آس بَرِّيّ ās-i barrī «վայրի մրտենի, ruscus aculeatus L»։

Այսպէս է մեկնում Seidel, Մխ. բժշ. § 395։

ԵՐԻՂ, ո հլ. «երկար և նեղ կտաւի շերտ՝ իբր կապ» Բրս. գոհ., որից՝ երիզապինդ *ՅՀ. ժա. 44*, երիզապնդեալ Մամբր., երիզապընդեայ Նար. բայց երիզ նշանակում էր նաև «բարակ ազնիւ կտաւ, որ ծանրագին գահոյքների երեսն էին քաշում». այս իմաստով առանձին չկայ գործածուած, բայց սրանից է կազմուած երիզապատ «վրան կամ երեսը բարակ կտաւ քաշած» Առակ. ե. *16* Ոսկ. ե-փես. Մծբ.։—Նոր գրականում երիզ նշանակում է «մի տեսակ շատ նեղ ժապաւէն՝ որ հագուստի եղերքն են կարում»։—երիզ բառը հին մատենագրութեան մէջ արմատական ձևով աւանդուած չէ. ունինք միայն վերոյիշեալ ածանցները և մէկ անգամ էլ գրծ. երիզովք ձևը. բնական է որ հայերէնի ձայնափոխութեան օրէնքների համաձայն՝ սրանցից պետք էր ենթադրել *երէզ ուղղականը, ինչպէս ունի ՋԲ. բայց ՆՀԲ անուշադրութեամբ դրած է *երիզ, և այս սխալը բառարանների միջոցով ամէն տեղ տարածուած է։

Հիմնք. պրս. ras «չուան», raza «ապաւանդակ» բառերից։ Աճառ. MSL, *20, 160* կցում է լտ. rīca «գլխաշոր», լիթ. riszú. riszti «կապել», ryszỹs «կապ», լեթթ. risu, rist, հպրուս. rēist «կապել» են բառերին, որոնց նախաձևը Walde, *652* դնում է հնխ. wreikā (նախաձայն w-ի համար համմտ. անգլսք. wrīon, կիմր. gwregys «գօտի», կորն. grugus «գօտի»). Հայերէնի համար Աճառ. ենթադրում է հնխ. wreig'ha. բայց wr >եր ձայնափոխութիւնը կասկածելի է։ Պատահական նմանութիւն ունի արար. حَرَز ḥaraḍ, ḥaraz «հագուստի եղերքը կարուած երիզ» Կամուս. Բրք. Բրգմ. *Բ. 417*։

ԵՐԻԹ (ի–ա հլ. ըստ ՆՀԲ, թէև առանց վրկայութեան) «փայտ ճեղքելու մեծ սեպ» Վստկ. *146, 156.* Մխ. առակ. (գրուած է ոմկ. իրիք)։ Գրեթէ նոյն նշանակութիւնն ունի նաև Վեցօր. ե. էջ *97* երիք, որ ՆՀԲ գրում է երիք ուռ «պատուաստի ճիւղ՝ որ պատուաստելիք տեղն են անցկացնում. պատրոյս». բայց մի նոր և ընտիր ձեռագրի համաձայն պէտք է պարզապէս կարդալ երիք։ («Յորժամ վարիցեն առ արմատովքն երիթ պարարտ ի բևեկն փայտէ և վարիցի ուռն և մտանիցէ ի սիրտ ծառոցն». տե՛ս Պատկեր, 1893, *61* և *ՀԱ, 1911, 302*)։

Հիմնք. հանում է երիզ բառից։ Շահինեան, Բիւր. *1900, 341* կցում է Բրք. yərt-maq «պատռել» բայից։ Ղափանցեան, Տեղեկ. ինստիտ. *2, 86* կցում է շերտ և ճերճ բառերին։

ԳԻՒ.—ԱՒ ունի իրիք ձևը՝ իբր ոմկ.։

ԵՐԻԹԱՄԱՅՏԱԼ. անստոյգ բառ. մէկ անգամ ունի Գ. մակ. ե. *28* «եւ մինչդեռ յայնմ յաղէտս տարակուսի և ի շտապ տագնապի երիթամածեալ կային»։ ՆՀԲ մեկնում է

«կա՛մ է երիթացեալ, իբր չուառացեալ, չոքացեալ և կամ պատեալ պաշարեալ ի ըսպառ», ՋՔ մեկնում է «պնդեալ որպէս վերիթ կամ զսեպ». ԱԲ «հալած մաշած, ազտուտ, սևցած, խեղճ»։ (Յունարէնը այս ամբողջ կտորը չունի. համար 50.—Սանկտպետերբ. 1817 թուի հրատարակութեան մէջ յիշեալ բառը կարդում ենք ի բաւ մածեալ)։

ԵՐԻԺՆԱԿ *տե՛ս Երեսնակ։*

ԵՐԻԿԱՄՆ *«պոլոճիկ» Երզն. մթտ. 403 (երկու անգամ). այս նորագիւտ վկայութիւնը չունենալով՝ բառարանները չգիտեն եզ. երիկամն ձևը, այլ միայն յգ. երիկամունք (սեռ. -մանց), որ սովորական է հին մատենագրութեան մէջ. ՍԳր., լայնաբար՝ «սիրտ, սրտի գաղտնիք» ՍԳր., փոխաբերաբար՝ «պարարտութիւն» Օրին. լբ. 14. գրուած երիկամունն Կանոնք սահ. 131, որ սակայն կանոն. էջ 54 (նոյն վկայութեան մէջ) դառնում է երիկամունք։*

Տէրվ. Մասիս, 1881 մայիս 11 թերևս **երի** *բառից։ Հիւնք. յերի կայ իմն։* Karst, *Յուշարձան 408 հյ. երի բառի հետ՝ սումներ.* ur *«կողեր»,* gur *«կողմ»։ Մառ,* ИАН, *1915, 771 համեմատում է վրաց. თორკმელი* **թիրկմելի** *հոմանիշի հետ։ (Հայ. բառի նախաձևն է *երկամ, որ կարող է աւելի հին *թրկամ ձևից յառաջացած լինել. այս պարագային հայն ու վրացին իրար յատկապէս նման են դուրս գալիս)։*

Գիւռ.—Ագլ. **բրկա՛մունք**, *Մկ.* **իրկամ**, *Զթ.* **իրգամ, իյգամ**, *Համշ.* **իլիգամօն**, *Սեբ.* **իլիգամ**, *Ասլ.* **իլիգամ**, *Ակն.* **իլիգամունք, իլիգամ**։

ԵՐԻՄՈՍ *«զբաղումն». ունի միայն Բառ. երեմ. էջ 32։*

ԵՐԻՆՋ, ո, ու *հլ. «էգ հորթ» ՍԳր., եփր. երր. 217. կոչ. 263, յայնաբար՝ «կով» Մն. խա. 2=27. Ա. թագ. ղ. 7=14, նմանութեամբ «Հարս» Գաս. ժդ. 18. Փիլ. տամփս.։*

Հիւնք. պրս. **էննիրէ** *«փուշ, եղիճ» բառից։* Scheftelowitz, BB, *28 (1904), 297 և 29 (1905), 25 իբր բնիկ հայ՝ հնխ.* treng' *ձևից. համմտ. ալբաներէն* dren7 *«եղնիկ», որ ծագում է *trenzæ. ձևից. համմտ. ալբան.* droe *«վախ» <*trauja, գերմ. *0raujan:* Patrubány, *Հև, 1908, 152 կցում է հբգ.* hrind, *մբգ.* rint, *նբգ.* Rind *«եզ» բառերի հետ։ (Բայց այս բառերը ըստ* Kluge, *396 ծագելով հնխ.* k'era- *«եղջիւր» բառից, չեն կարող ձայնապես միանալ մեզ հետ)։* Petersson, KZ, *47, 257 յն.* ἔρυξι; *«բուժ, ուլ», լիթ.* éras, érýtis, érúkas, érytúkas *«գառնուկ», լեթթ.* jērs, *Հպրուս.* eristian *«գառնուկ», սերբ.* jarina *«գառան գեղմ», հսլ.* jarĭcĭ *«բուժ», լատ.* ariēs, -etis *«խոյ» բառերի հետ՝ իբրև բնիկ հայ։ Պատահական նմանութիւն ունի սոգդ.* rynčkh *(կարդա՛ ren̆cak) «տղայ, փոքրիկ»։*

Գիւռ.—Ալշ. Ախց. Երև. կր. Համշ. Մկ. Մշ. Ննխ. Սլմ. **էրինջ**, *Ջղ.* **յերինջ**, *Շմ.* **յէրինջ**, *Գոր. Մժ.* **ևէրինջ**, *Ոզմ.* **յէրևնջ'**, *Ղրբ.* **ևէ՛րէնջ**, *Ագլ.* **մ՛րինջ**. *այս բոլորը նշանակում են «երկամեայ էգ հորթ», բայց Երև. փոխաբերաբար նշանակում է նաև «երեք տարեկան որթի մատ, որ առանձին տնկում են»։ Համմտ.* **որբ**։

Փոխ.—Հայերէնից է փոխառնել մինգր. **որիջի, որինջի** *«տաւար»,* **որջի** *«կով» (տե՛ս* Кипшидзе, Грам. и слов. мингр. яз. СПет. *1914, էջ 294).—Մառ,* ИАН, *1912, էջ 934 ընդհակառակը հայերէնն է դնում փոխառութիւն, որ կրկնում է և* Кипшидзе, *անդ։ Բայց այդ ճիշտ կլիներ միայն այն դեպքում, երբ այդ բառը ուրիշ կովկասեան մի որևէ լեզուի մէջ էլ գոյութիւն ունեցած լինէր։*

ԵՐԻՍ *«ժողանոցս», այսպէս ունի Բառ. երեմ. էջ 92։*

***ԵՐԻՍԹԱՎ** *«իշխան» Վրդ. պտմ. տպ. վենետ. էջ 127, հրտր. էմինի, էջ 166. նոյնը* **երիսպաւ** *Առաք. պտմ. 500,* **յերիսպաւ** *Ես. պտմ. 55։*

=Վրաց. **ერისთავი** **էրիսթաւի** *«զօրագլուխ», որ կազմուած է* **ერი** **էրի** *«մարդիկ, զօրք» և* **თავი** **թաւի** *«գլուխ» բառերից (Ջուր.[2] 495)։*

Ուղիղ մեկնեց Ալիշան, հրտր. Վրդ. պտմ. էջ 107։

ԵՐԻՎԱՐ *կամ* **ԵՐԻՒԱՐ**, ի–ա, *հլ. «լաւ ձի» ՍԳր., որից՝* **երիվարիկ** *«հեծնելու և վարելու*

յարմար» (փիղի համար ասուած) Ա. մակ. գ. 30, երիվարաշաւ Սիբեր., երիվարել «ձիավարել» Գեննադ. Ոսկիփ., երիվարութիւն «պատերազմ վարելը» ԱԲ, երիվարութիւն «ձի քշելը» Սոկր., չորեքերիվարեան Պիսիդ.։

Ինճիճեան, Հնախօս. Գ. 20 և Capelletti, Armenia, Բրգմ. Արշլ. արտա. 1842, Թիւ 108 «յերի վարող, կռնակը առնող տանող»։ ՆՀԲ պրս. رهوار rahvār «բաջրնթաց ձի»։ Klaproth, Mémoires, I, 437 սանս. arwa «արագ»։ Diefenbach, Berl. Jahrb. 1843, էջ 446 պրս. iswar (?): Windisch. 19 սանս. arvan, զնդ. aurvataspa:—Gosche, 48 զնդ. āurvat «ընթացիկ», սանս. arb, զնդ. āurv, պրս. rav, raftan «երթալ»։ Böttticher, ZDMG, 1850, 354 և Arica, 65, 63 ասոր. arvan, սանս. arvan:—Justi, Zendsp. 5 զնդ. aurva ի «արագ»։ Մորթման, ZDMG, 26, 591 բևեռ. iruiriagan: Հիւնք.=ՆՀԲ։ Patrubány, SA, 1, 209 սանս. arva «արագ», բայց ազդուած հյ. երիս (3) բառից. իսկ MSL, 15, 136 հնխ. réip արմատից՝ ար մասնիկով. համմտ. յն. ἐρείπω «տապալել»։ (Այս անմիտ ստուգաբանութիւնը կրկնում է դժբախտաբար Walde, 654 և կցում լտ. ripa «եզերք» բառին)։ Մառ, Сред. передвиж. 22 յն. elefas «փիղ» բառի հետ։

***ԵՐԻՏԱՍԱՐԴ**, ի-ա հլ. «պատանիի և չափահասի մէջտեղը» ՍԳր., որից՝ երիտասարդական Բ. տիմ. բ. 22, երտասարդանալ Յոր. լգ. 25, երտասարդանոց Բ. մակ. գ. 12, երիտասարդութիւն Խոր. Պղատ. օրին. ևն։

=Պհլ. *rētaksard «երիտասարդական տարիքով» բառից, որ գրականութեան մէջ աւանդուած չէ. կազմուած է պհլ. rētak «երիտասարդ, պատանի» և sard «տարի» բառերից, որոնք գործածուած են պահլաւական գրականութեան մէջ և որոնց հետ նոյն են պազենդ. rēdak «տղայ, պատանի», պրս. رده rēdak «անմօրուս երիտասարդ» և զնդ. sarəda-, պրս. سال sāl «տարի»։— Հիւբշ. 148։

Հներից Տաթև. ձմ. խա. մեկնում է «երիտասարդ, որ է երեք տասն ամք»։ Սրանից առնելով ՀՀԲ «յերիս տասն է արդ» և Ինճիճ. Հնախ. Գ. 24 «երից տասանց մարդ»։ Նոյնը նաև Մսեր Մսեբեանց, Ճռաքաղ, 1861, 331 ոտանաւորով՝ «Քեզ չէ արժան կոչումն առնուլ երիտասարդ, եթէ ամաց երից տասանց իցես ո՛չ՝ մարդ»։ Նոյնը դարձեալ ոտանաւորով՝ Թօփուզեան, Արծիւ վասպ. էջ 44։ Ուղիղ մեկնութիւնը մտածեց առաջին անգամ Lag. Btrg. bktr. Lex. 5, որ բառի վերջին մասը դնում է պհլ. sard «տարի»։ Տէրվ. Altarm. 46, Նախալ. 70, Մասիս, 1881 մայիս 8՝ վերջինիս պէս։ Հիւնք. աւսարդ բառից կամ յն. ἔρως=ἔρρωτι «սէր, տարփանք», ἐρατῶ «մուսայ տռփական նուագաց» և կամ ἔαρ «գարուն»։ Վերի ձևով ուղիղ մեկնեց Հիւբշ. Pers. Stud. էջ 244։ Scheftelowitz, BB, 29, 67 երի-տասան+սարդ «30 տարեկան»։

+**ԵՐԻՒՐ** «բարեյարմար, պատշաճաւոր» Երզն. այբուբ., «ուղիղ, հարթ, դիւր» Փիլ. լին. 71, որից՝ երիւրած «յարմարուած» Լմբ. իմ., երիւրել «յօրինել, շինել», Լմբ. իմ. «արտարբերել (ձայն)» Սահմ. «դաստիարակել, կրթել», Շիր. աւելի գործածական է յ նախդիրով՝ յերիւրել «յօրինել, ուղղել, կոկել» Ագաթ. Ոսկ. մ. ա. և ես., որից՝ յերիւրումն Նար. Լմբ. պտրգ. հակառակն է ըստ նախդիրով՝ ըստերիւրել «խոտորել, ուղիղ ճանապարհից շեղել» Եզն. Յհխ. Լմբ. իմ. կամ ստերիւրել «թիւրել, մոլորեցնել, խոտորեցնել» Ովս. բ. 14, ստերիւրիլ Իմ. գ. 24. Ոսկ. մ. ա. 25. Վեցօր. 190 (տպ. ստերիրեալ), ստերիւրումն Նիւս. բն., անստերիւր «անխոտոր, անթերի» Յհ. իմ. եկ. Նար. Շար։— Տե՛ս նաև երուր։

=Բնիկ հայ բառ՝ հնխ. er- արմատից, որ ծանօթ ar- «շինել, պատշաճօրէն՝ արուեստով յօրինել» արմատի բարձր ձայնդարձն է. այսպէսով երիւր-յերիւրել միանում է յարել, առնել ևն բառերին։ Մանրամասն տե՛ս յար։

Աւգերեան, Հրատ. Փիլ. ծան. Բրբ. yüriš, պրս. reviš «գնացք» բառերի հետ։ ՆՀԲ (յերիւրել բառի տակ) իր ընդ իր յարել։ Böttich. ZDMG, 1850, 354 և

Arica, *88, 437* հնխ. ar *արմատից։ Տէրվ. Նախալ. 62* հյ. առնել, յարել, յարգարել, յն. ἀραρίσκω **ձևերի հետ՝** հնխ. ar *արմատից։ Հիւնք.* յն. ἄρτρα, ἀραρίσκω *ձևից։ Աճառ. ՀԱ, 1899, 206* բ *համարում է կրկնուած* *եր *արմատից, որ երկրորդ անգամի մէջ ձայնաւորի փոփոխութեամբ դարձել է իր։ Վերի համեմատութիւնը տուել էին* Böttich. *Տէրվ. և մինչև անգամ Հիւնք., բայց ոչ պատճառաբանելով եղանակով։ Վերի ձևով ուղիղ մեկնեց* Meillet, Dict. étym. lt. *էջ 70։*

***ԵՐԿ,** ո *հլ. (հների մօտ անեզական) «գործ, աշխատանք» Յոբ. բ. 9. Եզեկ. իգ. 29, որից* **ունինք երկս արկանել** *«ճգնիլ, ջանալ, աշխատիլ» Բուզ.,* **երկախառնիլ** *Կորիւն,* **երկասէր** *«աշխատասէր» Պիտ.,* **երկասիրութիւն** *Պիտ. վիլ.։*

=Փոխառեալ է կորած իրանեան մի ձևից, որի ներկայացուցիչներն են սոգդ. 'rk «գործ, պարտականութիւն», մանիք. պհլ. ارق arq, *եաղնոբի* ark *«գործ» (ИАН, 1907, 538 և* Gauthiot, Gram. sogd. *54), պհլ.* ʾrk *«գործ, աշխատանք», գւռ. մինջանի* arkirim, *յիդղա* órkum *և եաղնոբի* oerk *«գործ» (*Bailey, JKAS, *1930, էջ 18)։—Ա՛ճ.*

ՆՀԲ լծ. յն. ἔργον «գործ» և պրս. (իմա՛ արաբ.) عرق ʿaraq *«քրտինք»։—* Windisch. *8, 29 յն.* ἔργον *(Յոյն բառիս նմանութիւնը պատահական է. իբրև փոխառեալ պիտի տար* *երգոն *կամ առառաւելն* *երգ, *իսկ իբրև բնիկ՝ տալիս է գոր. տե՛ս այս բառը)։* Bugge, Btrg. *15 սանս.* gurú- *«ծանր», յն.* βαρύς, *լտ.* gravis **ձևերի հետ՝** *դնում է* *erv, *gerv նախաձևից, ինչպէս ունինք* **երկան** ≪grāvan: Pedersen, Kelt. Gram. *1, 71 (տե՛ս* Pokorny *2, 529) համեմատում է գերմ.* sorge *«հոգ, խնամք», հիւս.* serg *«հիւանդութիւն» ևն ընտանիքի հետ։*

ԵՐԿԱՁՆԵԼ, *«պաշտեալ». ունի միայն Բառ. երեմ. էջ 93։*

ԵՐԿԱՔ, ո *հլ. (յետնաբար նաև ի–ա հլ.) «երկաթ. 2. երկաթէ գործիք. 3. կապանք, շղթայ» ՍԳր., որից՝* **երկաթագամ** *Ագաթ.,* **երկաթագործ** *Ագաթ.,* **երկաթագործի** *Եփր. եչ.,* **երկաթակապ** *Գ. մակ. դ. 8,* **երկաթահատ** *Ոսկ. մ. բ. 18,* **երկաթապատ** *Դան. դ. 12, 20,* **երկաթեղէն** *ՍԳր.,* **երկաթի** *ՍԳր.,* **աներկաթ** *Իմ. ժէ. 15. նոր գրականում՝* **երկաթեայ, երկաթուղի, երկաթուղային, երկաթավահան** *ևն։*

Schrader, Sprachvergleich. und Urgeschichte, Jena, *1890, էջ 294* **ոսկի և պղինձ** *բառերի պէս՝ համարում է կովկասեան լեզուներից փոխառեալ. համմտ. վրաց.* რკინა **რკինա, յօճա կինա** *«երկաթ», լազ.* erkina *«երկաթ»,* kina *«դանակ», իմերել.* kina *«երկաթ, երկաթէ զէնք, կացին», մինգր.* rkina, *ինգիլ.* kinay, *ագ.* ruɣ, *տաբ.* ruɣ, roɣel *«երկաթ»։ Շրադէր կարծում է թէ* **երկար** *բառի մէջ մասնիկ է* **-ար՝** *որ առնուած է* **արծար** *բառից։—Երկաթ բառին մերձաւոր ձևեր ունին նաև ուգրօ-ֆիննական լեզուները, որոնց մասին* A. Ahlquist, Die Kulturwörter der westfinnischen Sprachen, Helsingfors, 1875. *էջ 67, 70 գրում է. «Մինչդեռ բոլոր արեւելեան ֆիննական լեզուները մի ընդհանուր բառ ունին այս մետաղի համար, որ չի կարող փոխառութիւն լինել, արեւմտեան ֆիննական լեզուները իրենց բառը փոխ են առած Բալթիկի եզերքը գտնուած հնդեւրոպական լեզուներից։ Ա՛յն է հետաքրքրականը, որ ֆիննները երբ այս ծովի մօտակայ երկիրներն եկան, դեռ չէին հասած այն զարգացման՝ որը երկաթի մշակութիւնն է ենթադրում և նրա գործածութիւնն է տալիս։ Խոհուն և գիտուն մի քննիչ ասում է. երկաթի գիւտը դարագլուխ է նշանակում քաղաքակրթութեան պատմութեան մէջ։ Երկաթը՝ արծաթի, ոսկու և պղնձի պէս մաքուր չի գտնւում. երկաթահանք գտնելու համար խուզարկել պէտք է. և գուտ մետաղը գտել հանելու սկզբունքը պարզ և դիւրին չէ։ Նոր-Զելանդայի մէջ, որ երկաթով հարուստ է, եւրոպացոց գալուստից առաջ ո՛չ մէկը չգիտէր երկաթի գործածութիւնը»* (Max

Müller, Vorlesungen über die Wissenschaft der Sprache, *հտ.* II, *էջ 219*)։... *Արևելեան ֆինների «երկաթ» բառը, բացառութեամբ հունգ.* vas-*ի, մի է և ընդհանուր. վօգ.* ker, kier, *օստյակ.* karti, karta, *վօտյ.* kort, *սիրյ. և պերմ.* kört, *չերեմ.* kirtni, *որոնց կարելի է կցել նաև մորդվ.* kšine, kšni: *Այս բառի ծագումն ու համեմատութիւնը չենք կարող այժմ որոշել, որովհետև մեր ծանօթութիւնը այս արևելեան ֆիննական լեզուների վրայ շատ քիչ է։ Բայց այս բառը ընդհանուր լինի թէ չլինի, սա՛ միայն յայտնի է՝ որ ծագած է արևմտեան ֆիննների իրենց արևելեան ցեղակիցներից բաժանուելուց յետոյ, որովհետև արևմտեան ֆիննների մօտ գոյութիւն չունի»*։—N. Anderson, Studien zur Vergl. der ugrofinn. und indogerm. Sprachen, Dorpat, *1891, էջ 296—312 աշխատում է հաստատել թէ բոլոր ֆիններն էլ միևնոյն բառն ունին առհասարակ հունգ.* kard *«սուր, թուր» որանց է պատկանում ըստ* Donner, *Համմտ. բառ. ուգրօ-ֆիննական լեզուների,* Helsingfors, *1874—6*։—*Երկաթ բառին կովկասեան ծագում են տալիս նաև* Tomaschek, Deutsche Litt. 1890, *էջ 197 և* Bugge, *որ նախապէս* (Btrg. *էջ 14*) *համարելով *երվաթ նախաձևից՝ համեմատում էր պերմ.* erz, *հրգ.* erizzi, arıız *«արոյր» բառերի հետ. բայց յետոյ* (KZ *32, 54 և 83*) *այս կարծիքից հրաժարելով՝ համարում է կովկասեան փոխառութիւն,* Schrader-*ի և* Tomaschek-*ի յիշած ձևերի վրայ ուշադրութիւն նաև կիւրին.* raq *«երկաթ», դրծ.* raqu, raqíní, *ներգ.* raqá, raqína, *սոսվա- վոգուլ.* ärgin, *չերեմիս* vörgēn′e, *վօտյ.* irgon, *սիրյ.* ürgön *«պղինձ»,* horgany *«ցինկ»*։—*Հիւնք. յն.* ἐργάτις *«մշակ, աշխատաւոր, գործաւոր» բառից է հանում*։—*Մառ,* ИАН, *1911, 137—145 լազ.* erkina, ekina, ikina, *վրաց.* ჩკინა რკինა, ჯინა კინა *են դնում է յաբեթ.* hkn *արմատից, որին կցում է եբր.* העינה həṣīna, *արաբ.* خصين xaṣîn, *ասուր.* haṣṣînu, *ասոր.* haṣṣīnu, *եթովպ.* haṣîn *«երկաթ, սուր լինել». նաև նախաձայնի անկումով կայէն արմատը, արաբ.* ڤان qān *«դարբնել»,* ڤين qayn *«դարբին». եբր.* רקע rq' *«ծեծել, տրորել, ճզմել»,* רקיע rāqī'a *«երկնակամար», որով նաև հյ.* երկինք, *լազ.* երկինաչխա *«երեքշաբթի (օր երկնից)». Մառ չի ընդունում սրանց կցել հյ. երկար բառը, այլ հանում է *շկար ձևից. համմտ. սվան.* լիշկադի *«դարբնել», կադա «կացին», լազ.* ճկադ *«դամել» են*։ —Oštir, Btrg. alarod. *22 հյ.* երկար *կցում է տաբասարան* roghel *բառի հետ*։—Ipsen IF *39(1921), 235* երկար *և արծար համարում է փորր-ասիական ծագումից։*

Գիտ.—Ալշ. Ախց. երև. Կր. Մկ. Մրզ. Սլմ. վն. Տփ. էրկաթ, *խրբ. Համշ. Մշ. Ննխ. Ռ. Սեբ.* էրգաթ. *Ոգմ.* յէրկաթ, *Սչ.* յէրգաթ, *Ասլ.* երգաթ, էրգա՞, *Տիգ.* էրգութ, *Ագլ. Ղրբ. Շմ. Զղ. արկաթ. Զթ.* իյգօթ, իրգոթ, *Հճ.* իյգօթ.—*Նոր բառեր են՝* երկաթաուտ, երկաթաչուր, երկաթակեռիկ, թուրերկաթ *(Ագլ. արտասանվում է* թուռա՛կաթ, *ուր* ր *ընկել է)։*

Փոխ.—Հայերէն խաչերկաթ *«Յոնների բնաբանը դրուած խաչաձև երկաթը» գուռ. բառից փոխառեալ են կնսարիոյ Թրք. և յն.* xečirget, *Նոգ. Թրք. գուռ.* خچركت xäčürget, *արաբ. գուռ. Սղերդի* xačorget *նոյն նշ. (տե՛ս Բիւր. 1898, 712, 1899, 116 և Յուշարձան, 330տ)։ Հայերէնից են նոյնպէս ռուս.* кочерга *«փուռի կամ հնոցի կրակը խառնելու երկաթեայ կեռ», ուկր.* kočérha, kučúrha, *լեհ.* koczarga, *գուռ.* koczerka, kaczerka, koczerga, koczerha, koszor, kosior *և Սպիտակ ռուսէրէնի միջոցով լիթ.* kaczárga *նոյն նշ.—այս բառերի ծագումը* Berneker, Slawisches etymologisches Wörterbuch, *էջ 536 համարում է մութ և Թերևս օսար փոխառութիւն։ Փոխառուն է հայերէնը կա՛մ ուղղակի և կա՛մ Թերևս Թաթարների միջոցով։ Յատկապէս նըկատելի է որ հյ. բառի կ ձայնը վերոյիշեալների մէջ ներկայանում է Թէ՛ k և Թէ նորագոյն (արևմտեան)* g *հնչումով։ —Արդեօք*

հայերէնի՞ց է առնուած նաև կապադովկ. յն. ngáthi «*հալոցից դուրս եկած մաքուր փայլուն երկաթ*» (*որ թուրքերը* polát *են կոչում և որից պատրաստում են հրահան, դանակ, սուր են*). Καρολίδης, Γλωττ. σογαρ. *էջ 199—200 սրա աւելի հին ձևը համարում է* *ագκάθι *և հանում է սանս.* anj «*փայլիլ*» *արմատից:*

+ԵՐԿԱՅՆ (*յեռնաբար ի հլ.*) «*երկայն, երկար*» *ՍԳր. Ոսկ. յհ. ա. 1. Կոչ., որից՝* **երկայնաբազուկ** *Եւս. քր.,* **երկայնաբան** *Ոսկ. յհ. ա. 13. Եւագր.,* **երկայնագոյն** *Ր. մակ. ժբ. 36. Իմ. ժբ. 24,* **երկայնակեաց** *ՍԳր. Ոսկ. Ես.,* **երկայնաճոգի** *Եւագր.,* **երկայնածիգ** *Ոսկ. մաթ. և ես. Վեցօր. Եւս. քր.,* **երկայնամիտ** *ՍԳր.,* **երկայնել** *ՍԳր. Եզն.,* **երկայնութիւն** *ՍԳր. Ոսկ. յհ. ա. 25,* **ընդերկայնամիտ** *Եփր. ա. կոր. և ա. Թես. գրուած է* **երկեայն** *Կնիք հաւ. էջ 4:*

=*Բնիկ հայ բառ. պարզ արմատն է* **երկ-**, *որի վրայ աւելացել է* **-այն** *մասնիկը. Համմ.* **մի-այն, ուճ-այն, միանգամ-այն, զեանապարճ-այն** *են. նոյն արմատից* **-ար** *մասնիկով կազմուած է* **երկ-ար**. *Համմ.* **մեծ-ար-ել,** *են: Բոլորի արմատն է հնխ.* dewə, *որի ձայնդարձներն են* dowə, dwā, dū. *այս արմատից զանազան մասնիկներով յառաջանում են յն.* δῆρόν, *հոմեր* δηϝ-, δῆρός, δῆν, *դոր.* δάν, *հոմեր.* δῆν, δηϝά, δαΐν, δηόν *(0 աստիճանով) «երկար ժամանակ, երկարատև, վաղուց, շատոնց», երկար* ō *ձայնդարձով՝ հսլ.* davě «*էր երբեմն*», dovlnŭ «*հին, հնուց*», *ռուս.* даве «*երեկ, քիչ առաջ*», давно «*վաղուց*», *սլով.* davi «*քիչ առաջ, այս առաւօտ*», *լեհ.* dávno «*վաղուց*», *ուկր.* dáviky «*այս առաւօտ*», *լատ.* dūdum «*ի վաղուց հետէ, շատոնց*», dūro «*տևել, տոկալ, դիմանալ*» (*սորին ձայնդարձով՝* dū *ձևից*): *Համեմատութեանց վրայ աւելացնել կամիս.* tuwa «*հեռու*», tuwaz (a) «*հեռուից*», tuwalaš «*հեռաւոր*» (Benveniste, BSL, *հա. 33, № 99, էջ 142. տե՛ս և* Pokorny, *1, 779,* Ernout-Meillet, *275*): *Հիւլ.* doe «*կամաց*», *Թերևս նաև գերմ.* zaudern «*վարանիլ, ձգձգել, ժամանակ անցկացնել*» (*տե՛ս* Walde, 245, Boisacq, 183, Berneker, 181): *Ըստ ոմանց՝ հնխ.* dw *տալիս է հյ.* երկ- (*համմ.* **երկու, երկնչել**), *ուստի և հնխ.* dwāro- *տալիս է հայ.* **երկար**, ro-*ի փոխարէն ընդային մասնիկով՝* **երկայն** (*իբր յն.* δῆρ-). *միևնոյն ժամանակ* dewə *ձևից* **տևել** *և* dowə *ձևից* **տոկալ**: *Այսպէս ուրեմն հնխ. երկամանկ արմատների և ձայնդարձի օրէնքների համաձայն նոյն ծագումն ունին և նոյն արմատից են բխում հյ.* **երկայն, երկար, տևել** *և* **տոկալ** *բառերը:*

Windisch. *29* **երկու** *բառից:* Böttich. ZDMG, 1850, 354, Arica, *82, 380, սանս.* dīrgha, *զնդ.* darəγa, *լիթ.* ilgas «*երկար*»: *Տէրվ.* Altarm. *75* **երկայն** *և* **երկար** *համեմատում է այս բառերի և յն.* δολιχός. *հսլ.* dlŭgŭ, *պրս.* dirāz «*երկար*» *ձևերի հետ: Նոյն, Նախալ. 78 սանս.* jar «*ժողովել*», grāma «*ժողով*», *յն.* ἀ-γείρω «*ժողովել*», ἀ-γορά «*ժողով*», *հյ.* **կար, կարել, կարուակ, կարկել, կարկամ, կարկառել, կարկառ** *ձևերի հետ՝ Թերևս հնխ.* gar «*մօտեցնել, գիշել, ժողովել, ամփոփել, կուտել*» *արմատից. հնագոյն ձևերը համարում է* *կեր-նի>**երկայն**, *կեր-կար, կրար>**երկար**:* Meillet, MSL, *9, 150* **երկայն** *և* **երկար** *կցում է կասկածով լիթ.* erdvas «*ընդարձակ, լայն*» *բառին: Հիւբշ. 445 յիշում է անդողակին:* Bugge, KZ, *32, 84* **երկայն** *և* **երկար** *հանելով* **երկ** *արմատից՝ դնում է կովկասեան փոխառութիւն. համմ. կիւրին.* yärg՝ «*երկար*»: *Հիւնք.* **երկինք** *բառից հանում է* **երկայն**, **երկիր** *բառից* **երկար**: Scheftelowitz, BB, 28, 308 *անգսք.* raecean, *հբդ.* reichen, *անգլ.* reach «*հասնիլ, ժամանել*» *և յն.* ὀρεγνύομαι «*երկարիլ*»: Karst, *Յուշարձան, 427* **երկայն**=*թաթար.* keñ «*լայն*», *428* **երկար**=*թաթար.* ker, er «*լայն*»: *Մառ,* ЗВО, *1925, 803 և 811* **երկայն** *և* **երկար** =*վրաց.* գրձելի *և եբր.* ĕārōk: *Ղափանցեան, Տեղեկ. ինստիտ. 2, 107 իրար է խառնում լտ.* rex «*թագաւոր*», *սանս.* raçmi «*ճառագայթ, սանձ*», *պրս.* rasan «*թոկ*», rag «*չիղ, երակ*» *և հյ. առիւծ,* **երկայն** *ու* **երկար**:

Միտքը պարզ չի հասկացւում։ Ուղիղ մեկնութիւնը տուաւ Meillet, REA, *4, էջ 1—4։*

Գիւր.—Ախց. կր. Ղրբ. էրկան, *Շմ.* յէրկան, *Խրբ. Նախ. Պլ. Ռ. Տիգ.* էրգան, *Սեբ.* ֊էրգան, *Ասլ.* էրգա, *Մշ.* յէրգան, *Գոր.* է՛րկ՝մն, *Սլմ. վն.* էրկէն, *Մրզ.* էրկ՝էն, *Երև. Տփ.* էրգէն. *Հմշ.* էրգէն, էրգը՛ն, *Մկ. Ոզմ.* ձէրկէն, *Ալշ. Մշ.* յէրգէն, *Զթ.* իյգոն, իրգոն, *Հճ.* իյգոն։ —*Նոր բառեր են՝* երկայնալուծ, երկայնականջ, երկայնապոչ, երկայնաւոր, երկայնաւուն, երկայնկեկ *են.—Անգորայի Թրքախօս հայերն ունին* էրկան-կուտի *(իմա՛* երկայնգօտի*) «ծիածան» (Բիւր. 1898, 789)։*

+ ԵՐԿԱՆ *(սեռ.* ի, *յետնաբար* ի, ի-ա *հլ.) «ջաղացք, ջաղացքի քար» ՍԳր., Կոչ., որից՝* երկանաբար *Ղուկ. ժե. 2,* երկանադաց *«ցաղացպան» Անկ. գիրք հին կտ. Ա. 164,* երկանաբեկ *Վկ. արև. 70։*

=Բնիկ հայ բառ հնխ. g²rāwanā- *ձևից, որի մէջ* -awa- *տալով* ա՝ *ձևացել է հյ.* *կրան->երկան. *համմտ. սանս.* ग्रावन् grāvan *«օձման հանելու քարը. 2. քար», գոթ.* quairnus, *հբգ.* quirn, *մբգ.* kurn, kürne, *հիսլ.* brō *(սեռ.* brōn), *հհիւս.* kvern, *կիմր.* breuan, *կորն.* brou, *անգսք.* cweorn, *բրբտ.* breo, *լիթ.* girnos. girna, *լեթթ.* dzirnus, *հպրուս.* girnoywis, *հսլ.* žrŭny, *ռուս.* жерновъ, *ուկր.* žórna, *որոնք բոլոր նշանակում են «երկանաքար կամ ձեռքի աղօրիք, ձեռնաղաց». արմատը դրւում է հնխ.* g^{w}era- *«ճմռել, տրորել» (*Walde, 344, Pokorny, I, 685, Trautmann, *89)։—Հիւբշ. 444—5։*

Մառ, ЗВО, *5, 319 դնդ.* asman *«քար» բառի հետ, ճիշտ ինչպէս պրս.* asmān *=հյ.* երկին։ *Ուղիղ մեկնութիւնը տուաւ* Bugge, Beitr. *15, որ հնխ. ձևը դնում է* gérəwon-, *գոթ. և ալ. ձևերը համում է երկակի սեռ.* gr̥(wə)néus, gr̥néus *նախաձևերից, սանս. և լտ. ձևերը ներգ.* grōwéni *նախաձևից, իսկ հայը դնում է* *երւան < *գերւան *ձևից։* Meillet, MSL, *8, 159—160 մի երկար բացատրութեան մէջ՝ որ հիմայ բոլորովին մերժում է (անձնական), բոլոր վերի բառերի նախաձևը դնում է* g^{e}erwnā- *վերի ձևով ունի* MSL, *15, 354։ Հինք. յն.* ἐργάνη *«ժիր, գործունեայ»։ Պատահական նմանութիւն ունին ռուս.* rux, *ագ.* rax, *տաբաս.* rag *«երկան», վրաց.* რკმა *«մաքրել, կամնել»։*

Գիւր.—Ալշ. Ախց. Երև. կր. Մրզ. Սլմ. էրկաճ, *Մկ. վն.* էրկաճ[1], *Խրբ. Մշ. Ռ. Սեբ. Տիգ.* էրգաճ, *Ոզմ.* յէրկաճ[1], *Հմշ.* էրգօճ, *Ագլ.* ա՛րկաճ, *Գոր. Ղրբ. Շմ. Զթ.* արկաճ, *Հճ.* իյգօճ, *Զթ.* իրգօճffor, իյգօճffoյ։

+ ԵՐԿԱՐ (ի-ա *հլ. ըստ ՆՀԲ, թէև առանց վկայութեան. յետնաբար կայ* երկարիւ, երկարաց *էլ. արիստ. 121, 122) «երկար (թէ՛ ըստ ժամանակի տևողութեան և թէ՛ ըստ տարածութեան)» Ողբ. է. 20. Եփր. Ես., որից՝* երկարաձիգ *Վեցօր.,* ընդերկար *ՍԳր. Ածաթ.,* ընդերկարել *Եփր. ա. կոր.,* ընդերկարութիւն *Առակ. գ. 2,* յերկար *Բ. Թագ. է. 19,* յերկարագոյն *Գ. մակ. ե. 9. Ա Մնաց. ժե. 17,* յերկարել *ՍԳր. Ոսկ. մ. ա. 10. Ես. քր.,* երկարել *Փարպ.,* երկարաւոր *(նոր բառ)։*

=Բնիկ հայ բառ՝ հնխ. dwāro- *ձևից. ընդարձակ մեկնութիւնը տե՛ս* երկայն։

Ուղիղ մեկնեց Meillet, REA, *4, էջ 1—4. միւսները տե՛ս* երկայն։

Գիւր.—Երև. Ռ. Տփ. երգար. *իսկ Զթ.* ֆեռկար *կամ* յեռկար *«հեռու» .—Նոր բառեր են՝* երկարականջ, երկարապոչ, երկարաւուն, երկարուկ, երկարացնել։—*Հաշտարխան՝* երկար *«հեռու»։*

Փոխ.—Պատահական նմանութիւն միայն ունին և հայերէնից փոխառեալ չեն կայ. ergay *«խոշոր, մեծ», խիւր.* irk'al, ink'ali, *ակ.* xerɣal *«երկար»։*

ԵՐԿԱՔԱՆՉԻԻՐ *տե՛ս Իւրաքանչիւր։*

—ԵՐԿԵԻԱՆ (ի-ա *հլ. ըստ ՆՀԲ թէև առանց վկայութեան) «կասկած, վախ, տարակոյս» Ոսկ. Եփես. մ. ա. 25 և բ. 26, 11. Սեբեր. փիլ. «հիւանդութեան մնացորդ հետքը, շոշորթ» Ոսկ. մ. ա. 25 (համմտ. Նորայր, Բառ. ֆր.* levain), *որից՝* երկևաճուրիւն *«կասկած» Նար.,* աներկևան *Յուդ. 24. Ագաթ.,* աներկևաճուրիւն *Նար. Երզն. մտթ.։*

=Ծագում է *երկիւաւան *նախաձևից, որ կազմուած է* երկու *և* ճաւան *բառերից, իբր թէ «յերկուս միտս հաւան»։ Զևի կողմից*

համմտ. երկերիւր<*երկի-հարիւր *«երկու հարիւր»*, *իսկ իմաստի համար համմտ.* յերկուաճալ, երկբայ, երկմիտ, *բայց մանաւանդ* աներկմտաւառ:

Նշ՛ր երկուա՞նք *բառից: Հինք.* երկու *բառից: Վերի ձևով մեկնեց* Meillet, MSL, *11, 394. Նոյնը նաև Մ. Վ. Մաքսուդեան, Շողակաթ, էջ 145:*

ԵՐԿԻՆ, ի *հլ. (յաճախաբար նաև* ի-ա *հլ.) գործածական է մանաւանդ անեզաբար.— Ագր. Եզն. Կիւրղ. ղկ., որից՝* երկնաբեր *Ագաթ. Եզն.,* երկնաբերաձոյլս *Ագաթ.,* երկնագէտ *Ոսկ. ես.* երկնագոյն *Ես. գ. 23. Եզեկ. ժզ. 10. Ագաթ.,* երկնակեաց *Ագաթ.,* երկնաճայեաց *Վեցօր.,* երկնաճիար *«կայծակնահար» Կոչ.,* երկնաւոր *Ագր. Սերբր.,* յերկնուստ *Եզիշ. Խոր.,* միջերկնեայ *Խոր. աշխ.,* երկնասլաց *(նոր գրականում) ևն:*

Հներից Յովհ. Երզնկացի մեկնում է «Զի երկինքն երկու իրք *է՝ հուր և օդ, և երկիրս* երկու իրք *է՝ հող և ջուր». (տե՛ս էմին,* Ист. Вардана, *էջ 17): Այսպէս նաև Յայտմ. մրտ. 17. «երկին՝* երկու ինչ, *օդ և հուր. և երկիր՝ երկու իր, հող և ջուր»: Նոյնը դարձեալ Տաթև. Հարց. 714. «երկինք, որ է* երկուք, *հուր և օդ»: Նորերից Նշ՛ր վերին, խորան *կամ վրան բառերի հետ:* Windisch. 30 *անս.* svarga *«երկին» և յն.* ἀργὸς *«սպիտակ, փայլուն»: Գ. Կ. (Արշալ. արրտ. 1843, թիւ 130)* երկու ինիճ *կամ* երկուինիճ *(երկու բառի յոգնակին), նշանակել ուղիղով Արևն ու Լուսինը, և կամ Մութն ու Լոյսը:* Bopp, Abhd. d. Ak. d. Wiss. zu Berlin. 1846. *էջ 290 և* Gram. Comp. II, *413 անս.* svarga: Gosche *74, 229 անս.* arka *«արեգակ»:* Böttich. Rudimenta, *9 յն.* Ἀργός *յատուկ անուան հետ. արմատը* raǰ. *համմտ. ռուս.* яркій *«պարզ, փայլուն»:* Lag. Urgesch. *794 լիթ.* Perkúnas *և անս.* Parǰanya- *աստուածը:* Müller, SWAW *41, 11 եբր.* רקיע rāqī'ā *«երկնակամար» բառից փոխառեալ էմին, Հայ հեթ. կր. թրգմ. Յոյս, 1875, 346 և* Ист. Асохика *276 հանում է* եռ-կինք *բառերից. եռ «եռացող, սաստիկ տաք» և կին «կին կամ կեանք». որով* երկինք *նշանակում է բուն «տեղ՝ ուր կեանքը եռում կամ եփւում է». այս* եր, ար *արմատն ունին նաև* արև, արեգ, երկիր, եռալ, երդ, այրել, օր: *Տէրվ.* Altarm. *68* երկու *կամ* երկնչել *և կամ* երկիր, երեկոյ *բառերի հետ: Նոյն, Նախալ. 102* երկիր, երեկոյ, ներկել, եռալ, արծաթ *են ձևերի հետ՝ հնխ.* arg *«շողալ» արմատից: Մառ* ЗВО *5, 319 գնդ.* asman *հոմանիշի հետ՝ ինչպէս* երկաթ=*գնդ.* asman: Bugge, Btrg. 14 *կապում է յն.* οὐρανός, *դոր.* ὤρανός, *եւոլ.* ὤρανός *«երկինն» ձևերին. եթէ յոյնի նախաձևն է *ὀρϝανός, հայը գալիս է *erwin *ձևից. իսկ եթէ ըստ* Torp՝ *յոյնի նախաձևն է *ὀϝρανός, հայը գալիս է *ewrin≫*erwin *ձևից:* Fick, II, *40 անս.* arka *«ճառագայթ, արեգակ», միւլ.* erc *«երկին» և լատ.* arguatus *«գալընկոտ» բառերի հետ: Հիւբշ. 445 մերժում է իւլ.* erc *և անս.* Parǰánya- *համեմատութիւնները: Հինք.* երկուինք *բառից:* Scheftelowitz, BB, *28(1904), 19 անս.* raǰas *հյ.* երեկոյ *են բառերի հետ, իսկ էջ 309* երկայն, երկար *բառերի հետ. համմտ. վեդ.* prath *«երկարիլ» և* pṛthivi *«երկիր»:* Pedersen, Նպաստ, *5 իւլ.* grian *«արեգակ» բառի հետ:* Глейе, Сборн. мат. Кавказа, *31, 6 իւլ.* erc *հոմանիշի հետ: Մառ,* ИАН, *1911, 142* երկին *բառը գտնում է նաև լազ.* երկինա-չխա, եկինա-չխա, իկինա-չխա *«երեքշաբթի» բառերի մէջ, որոնք մեկնում է իբր «երկնից օր». բոլորը միասին հանում է «երկաթ» գաղափարից (տե՛ս* երկար): Karst, *Յուշարձ. 402 սումեր.* dingir, *բասկ.* ingur *«շրջանակ»:*

Գիմ.—Ալշ. Կր. էրկինճ, *Ախց.* յէրկինճ, *Մկ. Սլմ. Վն.* էրկինճ՛, *Ագլ.* ե՛րգինճ, յէ՛րգինճ, *Համշ. Ննխ. Ռ. Տիգ.* էրգինճ, *Զղ.* յերգինճ, *Երև. Սչ.* յէրգինճ, *Մշ. Սեբ.* ǯէրգինճ, *Պլ.* էրգինճ *(հին լեզուով),* յէրգինճ *(նոր լեզուով), Գոր.* յէ՛րգինճ, *Խրբ.* էրգինճ՛, *Ղրբ. Մրզ.* յէրգ՚ինճ՛, *Ասլ.* էրգինճ, էրգի*, *Տփ.*

յի՛րգիճ, *Ոզմ.* յէրկէ՛ճի՛, *Անտ.* յրգէ՛ճ, *Հճ.* իյգիճ, *Զթ.* իյգէճ, իրգէճ:—Երկճաւոր բառը դարձել է՝ *Սչ.* յէրգճավօր, *Ոզմ.* յէրգճաուր, *Տփ.* յիրգճաուր, *Պլ.* էյճավօր:

ԵՐԿԻՐ, ի–ա *հլ.* (*այ նաև գրծ. երկրիւ կիւրղի ղկ.*) «երկիր, ամբողջ աշխարհը. 2. երկրի մէկ մասը, գաւառ. 3. գետին, հող. 4. երկրի բնակիչները, մարդիկ» *ՍԳր. Ոսկ. մաթ. ա.* վերջին նշանակութիւնից յառաջացած է «մարդիկ, օտար մարդիկ» *Վրդն. պատ. էջ 158 (չունի ՆՀԲ), որից՝* երկիր պագանել *ՍԳր. կամ միացած՝* երկրպագել *Նեհմ. բ. 6, թ. 6. Եզր. ա. բ. 17. Եփր. արար. 124. Լաբուբ. 25. Ագաթ.,* երկրպագիլ *Եւս. պատ. ե. իը. 409. Ա. գ. 25, Լաբուբ. 20. 23 են (տե՛ս Նորայր, Կոր. վրդ. 408),* երկրպագելի *Պրպտ. 260 բ,* երկրաւոր *ՍԳր.,* երկրաբիր «հող փորող» *Ոսկ. փիլիպ.,* երկրաբուղխ *Ագաթ.,* երկրագործ *Ա. մնաց. իէ. 26,* երկրածին *Առակ. բ. 18, թ. 18. Կորիւն. Եւս. քր.,* երկրական *Եզն. Ոսկ. ա. տիմ.,* երկրակեաց *Ագաթ.,* երկրաչափ *Զքր. բ. 1. Վեցօր.,* երկրմայր «մի տեսակ սողուն կամ նաև բոյս» *Բժշ.,* երկրեալ «գետնի վրայ պառկեցրած» *Կղնկտ. Հրտր. էմ. էջ 40 (Նորագիւտ բառ),* սառերկրեայ *Նոնն.,* երկրատես «կէսօրուայ ժամը՝ երբ արևը հասնում է միջօրէականի վրայ» *(Նորագիւտ բառ),* միջերկրեայ *Խոր. Պիտ. նոր գրականում՝* երկրաբան, երկրաբանութիւն, երկրագունդ *են:*

Հներից Յովհ. Երզնկացի մեկնում է երկու իրմ *(տե՛ս* երկին *բառի տակ), Յայսմ. մարտ 17 և 19 ստուգաբանում է* երկու իր, *կամ* երկու կրող, *և կամ* եր-կի՛ր *բառից. «երկիր՝* երկու իր, *հող և ջուր: Ասի երկիր վասն 4 պատճառաց. նախ զի երկու երկնից ծայր ունի. երկայն զարևելս և զարևմուտս և երկու ի լայն՝ զհիւսիս և զհարաւ: Եւ դարձեալ երկիր ասի, զի կրական է, որ կրէ յինքեան զջուրն համատարած և զորս գոյանայ ի ջրոյ և ի հողոյ. և դարձեալ մեռանին և ի հողոյ պարտակին... և դարձեալ յերկիր կրին և կորնչին: Եւ չորրորդ պատճառն այս է երկիր ասելոյն, զի միշտ յերերմանի և ի տատանման կան երկրայինքս, ի մէջ նեղութեանց և վըշտաց և փորձանաց. ըստ որում և առէ Պօղոս, թէ երկի՛ր և կա՛ց ի կասկածի, զուցե անկանիցիս: Որպէս և աշխարհ ասելն այլ զնոյն նշանակէ, որ աշխար և սուգ է»:—Նոյն մեկնութիւնը տալիս է նաև Տաթև. Հարց. 210 և ձմ. ճժ. «Զորս են նշանակութիւնք երկրի ըստ կոչման. նախ կոչի երկիր՝ իբր թէ երկու իր, այսինքն հող և ջուր... երկրորդ կոչի երկիր՝ զի երկիցս երկու ծայր ունի, այսինքն երկայն և լայն, որ է յարևելից յարևմուտս և ի հիւսիսոյ ի հարաւ... երրորդ կոչի երկիր՝ զի կրէ զջուր ի մէջ իւր և յեղերս և ի վերայ երեսաց իւրոց... չորրորդ կոչի երկիր՝ զի երկիրս յերերման և ի տատանման է և հանապազ փոփոխի և այլայլի»:—Նորերից Ստեփ. Ագոնց, Ճարտաս. 96* եր կրող: Klaproth, Asia polygl. *էջ 100* Քրք. yer *և գերմ.* Erde «հող, գետին» *ՆՀԲ «լծ. և վայր, ի վայր, ուր յն.* γῆ, *լտ.* terra, *երր.* երց, *Քրք.* եր «գետին», գարա «ցամաք» վերածին առ *հյ.* երկիր, *որպէս և կամիցի ոք ստուգաբանել»: Գ. Կ., Արշալ. արրտ. 1843, թ. 130* երկու իր, *իբր հող ու ջուր, կամ քար ու հող, և կամ ծով ու ցամաք:* Windisch. *30 «*ճերկել *բառի հետ է կապւում և գործ չունի յն.* ἀργός *և լտ.* argilla «կաւ» *բառերի հետ»:* Lag. Reliqq. gr. *43 ասուր.* عقر ʿaqr «հող, կալուածք» *բառի* عقرير ʿaqrīr *ձևից:* Müller, SWAW, *41, 11 ասոր.* ܐܪܩܐ arqā *բառից փոխառեալ: Մահր Մագիստրոս, Համբագիր չափածոյ, էջ 118* եր կրէ *կամ* երկու իր: *Էմին, Հայ. հեթ. կրօնը, Քրգմ. Յոյս, 1875, 347 և* Ист. Асохика, *276 դնում է* եր–կիր *ձևից, իբր «իր մէջ եռալ և կամ սաստիկ տաքութիւն կրող». ար,* եր *արմատն ունին նաև* երկիճ, եռալ, աւև, այրել, երդ, *or: Տէրվ.* Altarm. *68 կապ չի գտնում արաբ.* ارض arḍ *և երր.* ereṣ *ձևերի հետ, և կցում է սանս.* raǰas «մութ, գիշեր, փոշի, երկիր»: *Նոյն, Նախալ. 102 տե՛ս* երկին: *Մառ,* ЗВО, *5,*

319 պհլ. zamik. պրս. zamīn հոմանիշների հետ՝ Bugge, Btrg. 14 *erweri- նախաձևից. համմտ. յն. ἄρουρα «արտ, դաշտ», լտ. arvum, հլտ. arvae:— Fick II 41 կիմր. erw, հբգ. ero «երկիր», որ մերժում է Հիւբշ. 445։ Հիւնք. երկուեմ բառից՝ Scheftelowitz, տե՛ս երկին: ենսէն, ՀԱ, 1904, 184 հաթ. rkatr: Pedersen, Նպաստ, 5 սանս. urvara ձևի հետ՝ Patrubány, ՀԱ, 1908, 85 երկ+ +կիր, ընդունելով էր(կ)<հնխ. perg «հարուած» (տե՛ս ճար, ոռոճ), իսկ կիր «կրել, ընդունել». որով երկիր լինում է «որոտն ընդունող», ինչպէս երկինք «որոտացող»։ Յ. Գ. Մ., Պտմ. գրակ. 15 երր. ուիֆրա: Karst, Յուշարձան, 405 բառիս երկրորդ մասը համարում է սումեր. kur «երկիր, լեռ». բայց էջ 419՝ ՔՔր. er, jer «երկիր» և kara «ցամաք, վերջի մասը փոփոխուելով երկին բառի համեմատ։ կիմր. erw, հբգ. ero «երկիր», յն. ἔρα, գոթ. airda, հհիւս. jǫrð միով. ert «երկիր» համեմատութիւնները, որ առաջարկել էր Fick, 2-րդ, 41 և որ մերժում է Հիւբշ. 445, նորից է պընդում Pedersen, KZ, 38, 197 (կազմուած *երկ-<հնխ. *erw- ձևից՝ նմանութեամբ կրկին բառի)։ կրկնում են Pokorny, 1, 142 և 79 հնխ. er- «երկիր» ձևի տակ, Boisacq, 270, ինչպէս նաև Müller. Vergl. ind.-sem. Vörtb. 1911, էջ 68։ Վերջինս հնխ. er, աճեալ նով ert (>գերմ. Erde), կցում է սեմ. >արաբ. ʿarḍa «երկիր» բառին։

ԳԻՒՒ.—Ալշ. Մկ. էրկիր, Ախց. Մրզ. Սլմ. յէրկիր, Խրբ. Ռ. էրգիր, Մշ. ֆերգիր, Ագլ. Գոր. Երև. Ղրբ. Սչ. յէրգիր, Ոզմ. յէրկէ՛ր, Տփ. յի՛րգիր, ՋՓ. իյգիյ, իրգիր, ՀՃ. իյգիյ.— գաւառականների մէջ ունի նաև այլ նշանակութիւններ. ինչ. Մշ. Ռ. Վն. «հայրենիք», Ակն. «ամէն մարդ, հասարակութիւն», Համշ. «օտար տեղ», Ակն. Առ. Բգ. Եւդ. Կս. Համշ. Սվ. (որ և երկրի ՋՓ. կմշ. Մրշ.) «օտար կամ անծանօթ մարդ». (ըստ Գազանճեան, Եւդոկիոյ գաւբրբ. էջ 101 այս առումը յառաջացած է Թուրքերէնից, ուր يابى el նշանակում է ՔՀ՝ «երկիր» և ՔՀ «օտար». համմտ. Будаговъ, I, էջ 203—4. բայց այս բանը անշուշտ բաւական հին է. համմտ. վկյը երկիր «օտար մարդ» Վրդն. պտմ. էջ 158), Շտ. Նկիր և երկիճ՝ «ամէն մարդ, բոլորը», Լհ. կայ երկրցնակ «հայերէն (այսինքն հայրենիքի լեզու)»։

ԵՐԿԻՒՂ տե՛ս երկնչել։

+ԵՐԿՆ, ն հլ. (-կան, -կամբ, կունք, -կանց) «աղաբերքի ցաւ» ՍԳր. Եփր. ա. ՔԽս. 182, «տառապանք ցաւ, տագնապ, վախ, նկիւղ» Եզ. ժե. 14. Սղ. ժէ. 5, որից՝ երկնել «աղաբերքի ցաւ քաշել» ՍԳր. «ցաւագնիլ, վշտանալ. կարօտով սպասել» Հռ. ը. 22. Ամբ. գ. 10. «նիւթել, մեքենայել» Սղ. է. 15. Ոսկ. յհ. Բ. 18, երկնիլ «հառաչել, ցավագնիլ» Ոսկ. Ճառք 772. Հռովմ. 65, երկնչիլ «ծնող» Նար., երկնակից «վշտակից» Շնորհ. երկաշարութիւն «երկանց ծնունդ» (նորագիւտ բառ) Տիմոթ. կուզ, էջ 192։

=Մեկնութիւնը տե՛ս երկնչել։

ՆՀՔ երկ «գործ» բառից՝ Windisch. 30 լտ. circulus «շրջան» բառի հետ, որ մերժում է Lag. Arm. Stud. § 735։ Ուղիղ մեկնեց նախ Տէրվ. Նախալ. 83, 103, որ անցողակի կապում է երկիւղ. երկնչել բառերի հետ՝—Մառ, ՅՀՕ, 5, 318 զնդ. θwya «սարսափ»։ Հիւնք. երկու բառից՝ Bugge, Btrg. 15 երկ «գործ» բառի հետ է կցում՝ Սագրեան, ՀԱ, 1909, 335 և Karst, Յուշարձան, 406 սումեր. rak «սահիլ, դաւակ բերել», 423 ույգ. er, ալթայ. erü, եակուտ. äräi «ցաւ»՝ Pedersen, Kelt. gram. 1, 71 երկ «գործ» և երկնչիլ բառերի հետ գերմ. Sorge «խնամք, հոգս» ընտանիքի հետ (տե՛ս Pokorny, 2, 529)։

+ԵՐԿՆՁԻԼ «վախենալ» ՍԳր. Ոսկ. ա. Կոր., որից երկնչոտ «վախկոտ» Մամբր. Ես. Կոչ., երկնչոտութիւն «վախկոտութիւն» Կիւրղ. ղկ. Դամասկ. Մաշկ. երևան է դալիս նաև հետևյալ ձևերով.—2. Երկ-, որից՝ երկնչիլ բայի զանազան ժամանակները, ինչպէս՝ կտ. երկեայ, հրմ. երկի՛ր, երկերուք, դերբ. երկուցեալ են,— երկեցուցանել «վախացնել» Նեեմ. գ. 14. Բ. եզր. ժ. 3. Փարպ. կամ եր-

կուցաննել «վախացնել» նար. լմբ. իմ. և նաւում. Յայսմ.—3. **Երկ-չ-ոտ** «վախկոտ» իմ. ժէ. 10. Բ. մն. ժդ. 7, երկչոտիլ վրք. հց., երկչոտութիւն Փիլ. Մամբր. Արշ.—4. **Երկ-իւղ** (դրուած նաև երկեղ, երկեղ, երկիղ) «վախ» ՍԳր. Ոսկ. ես. եղն., որից՝ երկիւղած ՍԳր. Ոսկ. Բ. կոր. Բուզ. երկիւղածագոյն Եւագր., երկիւղուկ Բուզ., երկեղուկս արկանել Խոսր. Առակ., երկեղուտ վրք. հց., աներկիւղ ՍԳր. Ագաթ. ևն.—5. **Երկն** «վախ, սարսափ, տագնապ» Եղ. ժե. 14. Սղ. ժե. 5. «ցաւ և յատկապէս՝ ողաբերքի ցաւ» ՍԳր. (տե՛ս վերը առանձին)։

=Բնիկ հայ բառ՝ հնխ. dwi «վախեցնել» արմատից. հմմտ. յն. δέος (<δίϝος) «վախ», δει-δ-ω (<δϝει-δω) «վախենալ», δίος (<δϝιος) «վախենում էր», δεινός «սոսկալի», δειλός «երկչոտ», զնդ. 𐬛𐬀𐬎𐬎𐬀 dvaēδa «սպառնալիք», լատ. (-ro- մասնիկով աճած) dīrus «սոսկալի, սարսափելի, անբարեյաջող», իռլ. dōel «սարսափ», արմատը s-ով աճած՝ սանս. द्विषति dviṣáti «ատել, թշնամութիւն կամ չարիք հասցնել», द्वेष dvēṣa «հակառակութիւն, ատելութիւն», զնդ. 𐬛𐬁𐬎𐬎𐬁 tbaēša «չարչարանք, տանջանք, dvaēš-, tbaēš- «ատել, մէկին նեղել», պհլ. bēš «ցաւ, դժբախտութիւն» (Walde, 234, Boisacq, 169, Horn, էջ 270)։ Հյ. երկ- և հնխ. dwi արմատների ձայնական համեմատութիւնը ճշտիւ նոյնն է՝ ինչ որ երկու և dwō: Մեր ձևերի մէջ պարզական արմատն է երկ-, որից ն, չ, ղ ածանցիչներով և -իւղ,-ոտ մասնիկներով յառաջացած են երկն, երկչոտ, երկնչել, երկիւղ: Նշանակութեանց կողմից ամենահարուստը հայերէնն է, որովհետև ո՛չ միայն «երկիւղ, վախ, սարսափ» նշանակութիւնն է պահում, այլ և «ցաւ» նշանակութիւնը, որ իրանեանների մէջ միայն կայ՝ երկուեմ=պհլ. bēš (Pokorny, 1, 817, Ernout-Meillet, 260):

ՆՀԲ երկիւղ բառին լծորդ է դնում երկեան, երկուաճ: Windisch. 29 երկու բառից է հանում, ինչպէս որ գերմ. Zwei-fel «կասկած, տարակուսանք» գալիս է zwei «երկու» բառից: Տէրվ. Altarm. 68 տուաւ նախ ուղիղ մեկնութիւնը: Սակայն Նախալ. 83 սրանից հրաժարած՝ սանս. tarj, յն. τάρβος, ταρβέω «սոսկալ», անգսք. thracian ձևերի հետ՝ հանում է հնխ. targ արմատից և կամ սանս. rēj, յն. ἐλελίζω «ցաւից պոռալ» բառերի հետ՝ հնխ. rig արմատից: Մառ, ЗВО, 5, 319 զնդ. thwaēša «երկիւղ» բառի հետ: Bugge, Btrg. 16 երկն բառի հետ կցում է երկ «գործ» բառին: Meillet, MSL, 8, 235 Վինդիշմանի մեկնութեան համաձայն՝ համեմատում է լիթ. bijaũs, սանս. bháyati «երկընչիլ», որոնք կցում է գոթ. bai, գերմ. beide «երկոքեան» ձևերին: Հիւնք. երկու բառից երկն և սրանից էլ երկիւղ: Հիւրշ. 445 կասկածելի է դտնում Meillet-ի մեկնութիւնը, և իրօք էլ Meillet, MSL, 11, 394 հրաժարած այս մեկնութիւնից և համաձայն Տէրվիշեանի, բայց անկախաբար, տալիս է վերի ուղիղ մեկնութիւնը: Pedersen, Հայ. դր. լեզ. 104 գոթ. faurhtjan «վախենալ» բառի հետ, արմատը դնելով *perg: Meillet, MSL, 15, 354 մերժում է այս և իր մեկնութիւնն է հաստատում: Karst, Յուշարձ. 406 հյ. երկու բառի հետ սումեր. ra «երկու», խակ 425 թաթար. korku «երկիւղ»: Մառ, ИАН, 1912, 599 լազ. ჭkuir, մինգր. ჭkuirի «երկիւղ» բառերի հետ ցեղակից: Ղափանցեան, ЗВО, 23, 353 զնդ. əzəγant- «ահաւոր», Pedersen, տե՛ս երկն բառի տակ։

Գիր.—Սլմ. յէրկուղ, Ջղ. յերգուղ, Երև. յէրգուղ, Մշ. չէրգուղ, Ոզմ. յէրկօղ, Տփ. յի՛րգուղ:

+ԵՐԿՈՒ (անեզական. հյց. երկուս, սեռ. տրակ. երկուց, գրծ. երկուս) «2» ՍԳր. Եւս. քր. Եփր. եւ. Ոսկ. ա. տիմ., որից՝ երկուորեայ «երկու օրուայ» Եփր. պհ., երկուորիս ՍԳր. Եւս. քր., երկուօրեակ ՅՀ. ժա. ի. իա., երկուաճ «կասկած» Ոսկ. յհ. ա. 34, բնդ երկուիլ Պղատ. օրին., յերկուանալ Գ. մակ. ե. 23. Մաթ. իը. 17. կոչ. եղն., յերկուական «կասկածելի» եղն., յերկուումն «կասկած»

Փիլ., երկուաւոր *«երկուսից բաղկացած» Լծ. պրպմ. 788 ևն.—երևան է գալիս նաև հետևյալ ձևերով.—2.* **Երկո-**, *որից՝* երկոտասան *«տասներկու» ՍԳր.*, երկոբին *կամ* երկոբեան *ՍԳր. (հյց.* երկոսին, *բայց սրա դէմ Սիր. խ. 20, 21* երկուսին), երկոտասներեակ *«դուժին» (նոր բառ).—3.* **Երկի-**. *այս ձևը յայտնապէս երեւան է գալիս* երկեամ *«երկու տարի» ՍԳր. Ոսկ. մ. բ. 8. Նւս. քր.*, երկերիւր *«երկու հարիւր» ՍԳր. Նղիշ.*, երկեակ *Փիլ. 34. իմ. երև.*, երկեան *«երկբայանք» Ոսկ. մ. և Եփես. Սնբեր. բառերի մէջ, որոնք գալիս են նախաւուր* *երկի-ամ, *երկի-ճարիւր, *երկի-ակ. *երկի-ճաւան *ձևերից։ Անկախ և առանձին գործածուած գտնում եմ մէկ անգամ Ոսկ. փիլ. 347 «Մի՛ միայն մի օր և մի՛ ժերկի կամ ժերիր, այլ ամենայն ժամանակս».* բայց այլուր նոյնը երկոի. *ինչ. Ոսկ. փիլիպ. 380, 439. կող., 537. Եփես. 813, 895, որոնց վրայ տե՛ս* տի *(ըստ այսմ ուղղել* երկոի*).—4.* **Երկ-**, *որից՝* երկարմատեան *Եզն.*, երկդիմի *Ղևտ. ժթ. 19. Նւս. քր.*, երկապաշտ *Ոսկ.*, երկակնաց *«երկակենցաղ» Նւս. քր. Ա. 21 (հմմտ. ՀԱ, 1905, 17 և 1914, 122)*, երկբան *Ագաթ. Եւագր.*, երկմտութիւն *ՍԳր. Եզն. Նւս. պտմ.*, երկիցս *ՍԳր.*, երկրորդ *ՍԳր. Եզն.*, երկատեսակել *«երկու տեսակի վերածել» Պրպմ. 299ա*, երկագոյ *«երկու տեսակ գոյացութիւն ունեցող» Լծ. պրպմ. 537.—Նոր գրականում՝* երկանիւ, երկասփիւռ, երկբարբառային, երկդասեան, երկդիմութիւն, երկզուգարի, երկբնաւրանք, երկլեզուեան, երկկայմ, երկճաւոր, երկճարիւրամեակ, երկյարկանի, երկսապատ, երկտող, երկտողիկ *ևն։ Կայ նաև առանձին* երկ *«երկու» Մագ.*, որից երկիր *«երկրորդ» Փիլ. Լին. Բր. քեր.։ վերի բառերից սմանք կարող են յառաջացած լինել* եր-կի- *ձևից. յատկապէս բաղաձայնով սկսող բառերի բարդութեան մէջ. օր.* երկբան<*եր-կիբան? *Բայց ա-ով սկսվող բառերի, ինչպէս նաև ա յօդակապով ձևացած բարդերի մէջ՝ արմատն է անշուշտ* երկ-, *ինչ.* երկապաշտ = երկ-ա-պաշտ *(որովհետև* երկի- *ձևից պիտի ունենայինք* *երկեպաշտ *ևն)։*

=*Բնիկ հայ բառ՝ հնխ.* dwo, dwōu *ձևից, որ յատուկ էր տրականին (իգականը լինելով* dwai *և չեզոքը* dwoi*). ժառանգորդ լեզուների մէջ պահուած է հետևեալ ձևերով.—սանս.* द्व dvá, द्वा dvā, द्वौ dvāú, द्वि dvi, *բուխար.* wī, wi, *բոշայ.* լվի, *զնդ.* 𐬛𐬀𐬯𐬎 dva, *հ. պրս.* duvitīya- *«երկրորդ», պազենդ.* do, *պրս.* دو dū, *աֆղան.* dva, *քրդ.* du, *զազա* di, du, *բելուճ.* do, du. *օսս.* duvâ, *միջց.* lo, *յն.* δύω, *լատ.* duo, *հիռլ.* dāu, dā, dī, *հիսլ.* tveir, tvau, *անգլ.* two, *լիթ.* du, *գոթ.* twaī, twa, *հբգ.* zwēne, zwō, zwei, *գերմ.* zwei, *հսլ.* dva, dŭva, *ալբան.* dü, di *ևն* (Walde 247, Boisacq 205, Berneker 247, Trautmann 64)։ *Այս բոլորի մէջ ամէնից աւելի ձևափոխեալը հայն է, այնքան, որ հնդեւրոպական կերպարանքը բոլորովին անճանաչելի է դարձած։ Բայց ըստ որում հայերէնի բոլոր թուականները բացառութեամբ են հնդեւրոպականով, ըստ այսմ պէտք է որ երկու բառն էլ բացառութեան վերի ձևերով։ Հայերէնի մէջ երկու հին երկակի թուի մնացորդներից է. իր ընկերներից մի եզակի, երեք և չորս յոգնակի լինելով՝ այս էլ բնականօրէն երկակի մի-այն կարող էր լինել։ Երկակի թուի նշանն է* -ու. *արմատական* երկ-<dv- *ձայնափոխութեան իբրև օրինակ ունինք նաև* երկ-իպ, երկ-այն, երկ-ար. *այս բոլորի մէջ ե աւելացուած է իբր յենարան, որով երկու բառի բուն ձևը կլինի* րկ, *որ շրջուած գտնում ենք նաև կր՝ կին բառի մէջ (հմմտ.* երեք-կին, չորեք-կին *են)։—Այս* րկ *ձևի մէջ* ր *ծագում է* d *ձայնի կակղած* ð *ձևից (հմմտ.* ապարանք <հպրս. apadāna*), իսկ* կ *ծագում է* w *ձայնից՝ անշուշտ անցնելով* գ-ից *(հմմտ.* արեգ< *rev*)։ Նկատելի է, որ բոլոր սկիւթական լեզուներում* d *դարձած է* ð, *որով ունինք սոգդ.* ðw' *«երկու» և* ðs *«տասը» (MSL, 17, 158). հմմտ. նաև բոշայ.* լվի *«երկու», լասը «տասը», որոնց մէջ* d *դարձել է* լ՝ *անցնելով* r-ից *կամ նրան մերձաւոր մի ձայնից։ Հայերէնի հնդեւրոպականութեան ապացոյցներից մէկն էլ այն է, որ նրա երկրորդական ձևերը՝* երկի-

և երկու, գոնում են իրենց նմանները միայն քոյր լեզուներում. հմմտ. սանս. dviḥ, յն. δίς, լտ. bis, հիսլ. tvis-var «երկիցս», սանս. dvi-pāt, յն. δι-πους, լտ. bi-pēs «երկոտանի» և լտ. duŏdecim «երկոտասան», վեդ. dvaká- «երկ-երկու», յն. δυο-καί-δεκα «երկոտասան» են (Pokorny, 1, 817, Ernout-Meillet, 278): (Այս ձևերի քննության համար տե՛ս մասնաւորապէս Meillet, MSL, *11, 394*; *12, 227* և *431*; *15, 353*; *18, 250*; Gauthiot, La fin de mot, էջ *76—7*):

Klaproth, Asia polygl. *197* կգում է վրաց. ori, սվան. jeru, մինգր. žiri հոմանիշներին: Peterm. *151* եզ «մեկ» բառից՝ կու երկակի մասնիկով: Windisch. *30* կրկին բառի հետ=լատ. circum «շուրջ»:—Bopp, Abhnd. d. Ak. d. Wiss. zu Berlin *1846, 290* նախաւոր *երգու ձևից, ուր գ<v: Նոյն, Gram. comp. II *46* հանում է նախաւոր *edvu ձևից, որի մէջ r<d, կ<v. հմմտ. բահիթի rua, մալայ. և նոր զելանդ. dūa «երկու». իսկ էջ *219* ու համարում է երկակիի նշան: Müller, SWAW, *35, 191—9* չի ընդունում այս մեկնութիւնը և մեր ձևը համարում է վրաց. ori, սվան. ieru ձևերից փոխառութիւն: Մորթման, ZDMG, *26, 515* նոյնպէս դնելով *edvu ձևից, համեմատում է բևեռ. divizi: Տէրվ. Altarm. 68 dvāu ձևից՝ և յաւելուածով: Հիւբշ. ZDMG, *30*, էջ *774—9* անընդունելի է գոնում այս: Müller, SWAW, *88(1877)*, էջ *13* երկու բառի նշանակութիւնը համարում է «զոյգ» և կգում է լիթ. su-renku, su-rinkti «հաւաքել» բառերին: Տէրվ. Երկրագունա, Ա, *18—20*, Լեզու, *169* ընդարձակօրէն և Նախալ. *131* նախաձևը դնում է կր (ինչպէս ունինք կր-կին), որից շրջմամբ րկ, և ե յաւելուածով՝ երկ- երկակիի նշանով՝ երկու. կր ձևի մէջ կ<d և r<v: Bugge, Btrg. *42* եր՝ մասը համարում է երեք բառի նմանութեամբ յաւելուած, որով արմատը լինում է կու, որ գոնում է նաև կուղ և կրկին< *կուր-կին բառերի մէջ. *կու<twu <dwo կամ dvōu: Այս մեկնութիւնը շատ հոյլ է համարում Brugmann, Grdr. II, *469*: Նոյնը պնդում է Bugge, Etr. u. Arm. 121 և IF, *1, 457* էր-կու դնելով dṷō և (եր)-կիր <*dṷiteros:—Meillet, MSL, *8, 160* հանում է Bugge-ի պաշտպանութեան, իբր ապացոյց բերելով fn=սանս. tvād ձևը: Հիւբշ. *445* անապահով է գոնում այս մեկնութիւնը: Հինք. երկ «գործ» բառից է հանում: Patrubány, SA, *1, 197* լատ. tergum «կոնակ» բառի հետ: Gauthiot, BSL, *13, 10* վերի մեկնութեամբ: Karst, Յուշարձան *406, 409* սումեր. ra «երկու»+հին հայ. *կու<հնխ. dvo ձևերից:

Գիւ.—Ջղ. յերկու, Ախց. երև. կր. Ղրբ. Մի. Մղր. Շմ. Սլմ. վն. Տփ. էրկու, Ալշ. Խրբ. Հմշ. Մշ. Ննխ. Պլ. Ռ. Սեբ. Սչ. Պլ. Տիգ. էրգու, Ասլ. էրգիւ, էրգիւ*, Ոզմ. յէրկօ, Ագլ. ւրկիւ, Անտ. բրգ՝էօ, Հւր. յարկու, Զթ. իրգու, իյգու, Հճ. էյգու, Մրղ. օրկու (բայց էօրֆիշպուր «երկուշաբթի»): Հոլովման մէջ արեմտեան բարբառները գործածում են երկուի բունը, իսկ արեւելեանները՝ երկուս. Ռոտոսթօ ունի հաւասարապէս երկուան էլ:—Նոր բառեր են՝ երկուհոգիս, երկնոգիս «յղի», երկնոգասանալ «յղիանալ» (որի համար հմմտ. «յղիքն յերկուս ոգիս են» Զքր. կթ. այսպէս նաև վրաց. ორხულობა ორսուլի, որ է «յղի», բուն «երկու հոգի»), երկուաչքանի, երկուբերեանի, երկուերեսանի, երկումատնի, երկումտանի, երկուոտնանի, երկուռնխանի, երկուսաբոնիկ, երկուսանոց =երկուհնոց, երկուտակ, երկուցնել են: Էնկիւրիի Թրքախօս հայերը ունին eršapdə «երկուշաբթի» (տե՛ս Բիւր. *1898, 789*):

Փոխ.—Հայերէնից է փոխառեալ վրաց. რკემალი երկեմալի «մի տարեկանից մեծ արու ոչխար» (Բառարան Սաբա Սուլխան Օրբելիանի, ԺՀ դար), «խոյ» (Ադուէսագիրք, հրատ. Պենոելաշվիլի, ԺՀ դար), որ ըստ Շանիձեի երկու+ամ բառերից է՝ վրաց. -ի մասնիկով (Հաղորդագրութիւն Իլիա Աբուլաձէի՝ Թիֆլիսից):

ԵՐԿՊԱՏԱԿԱՆ. անստոյգ բաո. մէկ անգամ ունի Ագաթ. *1909*, էջ *11* «Համբերութեամբ

բագում և ազգի ազգի փորձութեանց և կապանաւոր վշտաց մենակրիւ մենամարտիկ երկպատակական բռնութեան... յաղթութեամբ տարեալ»։ ՆՀՔ մեկնում է «կա՛մ է որպէս երկպատիկ և կամ յերկուց կողմանց պատող, պատեալ»։ Ջունի ՋԲ։

*ԵՐՄՈՒ. նորագիւտ բառ, որ երկու անգամ գտնում եմ գործածուած Շիր. էջ 69 և 72 հետևեալ ձևով. «Երիր կենդանատեսակ է նկատրին, արական. երկտարրական, մարդակերպ. տուն Փայլածուին, երմու բարձրութեան՝ ոչ ուրուք նուազութեան. ոչ ուրուք եռանգիւնի» (էջ 69)։ Այսպէս է Պատկանեանի հրատարակութեան մէջ, որ սխալ կէտադրութեան պատճառով բոլորովին անհասկանալի է։ Համեմատելով (անդ՝ էջ 68—73) միւս կենդանակերպների առթիւ դրուած բացատրութեան հետ, սխալ ձևերը և կէտադրութիւնը կարելի է ուղղել հետևեալ ձևով. «...տուն Փայլածուին (երմու), բարձրութիւն՝ ոչ ուրուք. նուազութիւն՝ ոչ ուրուք. եռանգիւնի»։ — Խնդրական բառը երկրորդ անգամ գործածուած է էջ 72 վերագլխութեան (ամփոփում) մէջ, այսպէս. «Եւ բնակարանք են ծոյի և կարճի՝ հրատ, արէս. ցուլն՝ լուսաբերի, ափրոդիտեայ. երկաւորեակն և կուսանակն՝ Փայլածուի երմու»։ Այս հատուածն էլ պէտք է ուղղել հետևեալ ձևով. «Եւ բնակարանք են ծոյի և կարճի՝ Հրատ (Արէս). ցուլն՝ լուսաբերի (Ափրոդիտեայ). երկաւորեակն և կուսանակն՝ Փայլածուի (Երմու)»։ Ինչպէս տեսնում է՝ փակագծի մէջ դրուած բառերը կենդանակերպների յունարէն թարգմանութիւնն են, որ հեղինակը կցում է հայերէնին՝ իբրև գիտական բառ։ Սրանով պարզում է նաև թէ երմու անծանօթ ձևը Փայլածուի հոմանիշն է, ուստի և

=յն. ἐρμῆς բառի սեռականն է։ Այս բառը սովորաբար գառնում է հյ. Հերմէս (ինչպէս Գծ. ժդ. 11, Փիլ. Արիստ. աշխ.), բայց այստեղ յունարէն թաւ շեշտը յապաւուելով՝ ըստ յետին հնչման եղել է երմէս, սեռ. երմու։— Աճ.

—ԵՐՆՋՆԱԿ կամ ԵՐՆՋԱԿ (գրուած նաև երնջայ, երնջան, երննճակ, երինճաճ, երինճակ) «մի տեսակ ուտելի փուշ. eryngium campestre L» (ըստ Արթինեան, Տունկերը, էջ 45. և Տիրացուեան, Contributo § 297) Բժշ. Գազիան., որից՝ իգաերնջնեան կամ իգաերնջայ բոյսը՝ ՀԲուս. § 684, 848. սրանց հետ նոյն է նաև երիժճակ Բժշ., որ Շէհրիմանեան միւսներից տարբեր կարծելով՝ գրնում է «agrimonia Eupatoria L» (Տիրացուեան, Contributo, § 219), ՀԲուս. § 672 «երեսնա՞կ». բայց ինչպէս Արթինեան, անդ՝ էջ 47—48 և Նորայր, ՀԱ, 1922, 388 ցոյց են տալիս, միևնոյն երնջնակն է. համմտ. Վանի բարբառի կրկին ձևերը։

=Հյ. երինջ բառից է. համմտ. նոյն բոյսի թրք. անունը՝ buγa tikeni, որ բառացի նշանակում է «ցուլի փուշ», կամ հյ. հոմանիշը՝ ըղտու խնձոր, և մանաւանդ մինդր. գիճին ջոն ջղո «երնջակ» (կազմուած «հորթ» բառից՝ ըստ Մառ, ИАН, 1912, 832)։ Ըստ այսմ բառի ուղղագոյն ձևերն են երնջակ կամ երնջնակ, իսկ միւսները սրանցից յառաջացած՝ յետին փոփոխութիւններով։— Աճ.

Ալիշան, Հին հաւատք, էջ 77, ՀԲուս. § 683 և Հիւնք. նման են գտնում հոմանիշ լտ. eryngium. ֆրանս. érynge, յն. ἠρύγγιον ձևերը։ Այս բոլորը պատահական են։

ԳԻՒ.—կր. Մշ. վն. (գիւղերը) էրընջնակ, Ալշ. էրնջնագ, Մկ. էրընջնոկ, Ոզմ. յէրընջնոկ, Երև. էրընջնուկ, էրընջաճուկ, Սլմ. էրժնակ, վն. (քաղաքը) էրժճոկ.—իսկ Ախց. երնջակ նշանակում է «սարդ», ըստ Ամատ. Հայոց բառ ու բան, 149։

ՓՈԽ.—Թրք. yerinje «երնջնակ» (տե՛ս Պօղոսեան, Տաճկ. բառարան) անշուշտ հայերէն է, գաւառական մի ձևից փոխառեալ։

*ԵՐՇԻԿ «աղած, պղպեղով ու զանազան համեմներով համեմած և ոչխարի աղիքների մէջ լցրած ու չորացրած ծեծած միս. տճկ. sucuk, ռուս. армянская колбаса (որ է «հայկական երշիկ»). հնից աւանդուած չէ, բայց այս ձևով գործածական է արևմտեան գրական հայերէնի մէջ։

=Թրք. փոխառութիւն է. համմտ. գւռ. Թրք. կեսարիոյ՝ erišgi (Բիւր. 1898, 712), գւռ.

թրք. Առանայի՝ irišgink *(Արևելք, 1888 նոյ" 8—9)։*

Ուղիղ մեկնեց ՆՀԲ, հտ. Բ. 1062։

ԳԻՒ.—Ննխ. Սվ. էրէշգիգ, Առն. իրիշգիճ։

ՓՈԽ.—Անշուշտ հայերէնից չէ, այլ շրջապատի թուրքերէնից է փոխառեալ կապադովկ. յն. χερίσκι հոմանիշը. (Թրքախօս յունաց մէջ ἐρισκί), որ Karolides, Γλωσσ. σογκρ. 221 *համեմատում է սանս.* hira «փորոտիք», *յն.* χοῖδη «աղիք», *լտ.* haru-spex «աղեհմայ», hariolus ««գուշակ», hira «աղիք, փորոտիք» *բառերի հետ։ Սրանք ո՛չ մի կապ չունին երշիկի հետ, որ թուրքական ծագում ունի։*

*[*ԵՐՈՅՔ *«ճանապարհ կամ ուղի». ունին միայն ՀՀԲ և Բառ. երեմ. էջ 94։ Սխալ բառ, որ յառաջացած է հետևեալ ձևով.—Փիլ. լին. ա. 99 ունի «ի ձեռն առաքինութեանց, որ առ Աստուածն ածէ ճանապարհ, գտանի և բնդարձակի, եղեալ ամենայն երիւր»։ Այս անծանօթ բառը մեկնել ուզելով լծ. փիլ. գրում է. «էրիւրն՝ արձակ ճանապարհ ասէ». ՆՀԲ էլ ուղում է սրբագրել իւր։ Բայց թէ՛ մին և թէ՛ միւսը սխալ է, որովհետև երիւր՝ իբրև երիւրել բայի արմատը՝ նշանակում է պարզապէս ակոզ, հարթ, դիւր» (իբրև ածական). Լծ. փիլ. շարժել է միայն ենթադրաբար, որից էլ յարմարուած է վերի բառը։]—Աճ.*

ԵՐՈՒ *կամ* ԵՐԻՒ ? *անստոյգ նորագիւտ բառ, որ յդ. սեռ. երուաց ձևով գտնում եմ մէկ անգամ գործածուած Վկ. արև. էջ 54= Սոփերք, Ի. էջ 103 «Եւ զարիւնն ձեր, որ ներկեաւ և չոգաւ, և ոչ երրն երուաց՝ որ է անկողին նորա, կարէ լուանալ և սրբել զպատնումն ձեր, որով սևացաւ և եմուտ ի հող, և ոչ որդն կենդանի՝ որ է հանդերձ նորա, կարէ սպիտակացուցանել»։—Բառգիրք Երեմիայ (ա. տպ. էջ 91. բ. տպ. էջ 126) ունի* երեաց *«ծառ», որ ապահովաբար այս բառն է։ Ըստ այսմ* երր երուաց *նշանակում է «ծառի որդ»։ Բայց ո՞րքան ստոյգ է Երեմիայի մեկնութիւնը։ Նկատենք միայն, որ* երրն երուաց *և որդն կենդանի մերձաւորապէս հոմանիշ դարձուածներ են, ինչպես նաև ամբողջ երկու նախադասութիւնները։ (Տե՛ս իմ Հայ. նոր բառեր հին մատեն. Բ. էջ 6)։*

ԵՐՈՒՆԴԵՂ *«ծծումբ». ունի միայն ԳԲ, որի աղբիւրն է Քաջունի, Գ, 68, որ սակայն չի յիշում* souffre *բառի տակ։*

*ԵՐՊԱՏՈՒՐ *«մի տեսակ բոյս. սոճի, լտ.* peucedanum» *Բժշ. ունի միայն ՀԲուս. § 689։*

=Արաբ. يربطور yarbatūr, *որ ըստ Բէյթարի Անդալուզիոյ մէջ գործածական բառ էր։ Սակայն կամուս չգիտէ այսպիսի մի ձև։*

Այսպէս մեկնեց ՀԲուս. անդ։

—ԵՐՋԱՆԻԿ, *ի–ա հլ. «բախտաւորուած» վեցօր. ե. (Թէև ՆՀԲ բառիս համար ոսկեդարեան վկայութիւն չի տալիս, բայց ունինք մի գեղեցիկ վկայութիւն. «Փափկակեաց, բարեկեցիկ, դիւրասնունդ, երանիկ, երջանիկ, չարայօժար և մեղասէր» վեցօր. ե. տե՛ս ՆՀԲ* երանիկ *բառի տակ). սրանից՝* երջանկանալ *Երեմ. ժբ. 1,* բարերջանիկ *Սահմ. Խոր. Վրդ.,* նախերջանիկ *Պիտ.,* գերերջանիկ *Լաստ.,* բազմերջանիկ *Ճ. իմ. երև.,* երջանկաւէտ *Պիտ. Զքր. կթ.,* երջանկայիշատակ, ապերջանիկ *(նոր բառեր) ևն։*

=Ծագում է եր *արմատից ջ մասնիկով, տե՛ս* երանի։

Ուղիղ մեկնեց Տէրվ. որ տե՛ս երանի *բառի տակ։* Karst, Gram. Kilik. *էջ 132 արմատը համարում է* երջ *և համեմատում է* վերջ, կիլիկ. յերջև *բառերի հետ։ Այս մեկնութիւնը մերժում է Հիւբշ.* IF, Anz. *12, էջ 58։* Scheftelowitz, BB, *29, 31 սանս.* ɟddhi *«երջանկութիւն» բառին ցեղակից։*

ԵՐՍԱՆԿ *«երեսը բաց՝ փայտեայ ոտնամանի. տճկ. նալըն, լալըն». ունի միայն ԳԲ. մանկութեանս ժամանակ գործածական էր Պօլսոյ ուսումնականների շրջանում։ Ծագումը և աղբիւրը անյայտ է։—Արդեօք* երեսա՞նկ։

ԵՐՐ *«փառութիւն, ապականութիւն, նախութիւն» Ոսկ. ես., «որդ» Յոբ. ժե. 14, իա. 26, իե. 6. նոյն նաև Սփր. վկ. արև. էջ 54 «Եւ զարիւնն ձեր, որ ներկեաւ և չոգաւ, և ոչ երրն երուաց (?)՝ որ է անկողին նորա, կարէ լուանալ և սրբել զպատնումնն ձեր»։ (Բառիս վրայ տե՛ս և* երու)։

*Նշ*Ꭰ Եռալ *բառից կամ լծ. թրք.* frin *«թարախ» (տե՛ս* թարախ *բառի տակ)։ Հիւնք. կրկնում է նոյնները։ Գ. Փառնակ, Անահիտ, 1906, 233 մեզանից փոխառեալ է դնում ալբան.* err *«մթութիւն»։*

ԵՐԱՆԱԼ *«միանալ». ունի միայն Բառ. երեմ. էջ 94։*

ԵՐՓՆ *(յեանաքար ի հլ.) «գոյն, երանգ» Ոսկ. յհ. ա. 13. Վեցօր., որից՝* երփն երփն *«գոյնզգոյն» ՍԳր. Մծբ. Ոսկ. յհ. ա. 11,* երփնագոյն *Մծբ.,* երփնաներկ *Մծբ.,* գեղերփնել *Նար. խշ.,* երփներանգ *Երզն. լուս.,* լուսերփն *Արիստակ.,* ծիրաներփնիլ *Խոր. վրդվռ. 84. իմ. եկեղ. գրուած է* ներփն ներփն *Անկ. դիրք նոր կտ. 207։*

Հիւնք. երբ *բառից։* Bugge, KZ, *32, 66 համարում է բնիկ հայ և համեմատում է սանս.* rūpá- *«ձև, պատկեր, գեղեցկութիւն»,* várpa *«պատկեր» բառերի հետ։* Pedersen, *Հայ. դր. լեզ. 50 համեմատում է յն.* ἔρφος *«մորթ» բառի հետ. նշանակութեան տարբերութեան համար յիշում է յն.* χρῶμα *«մորթ. 2. գոյն».* χροιά *«մորթ. 2. գոյն», լտ.* color *«գոյն», սակայն նախապէս «մորթ»։* Scheftelowitz, BB, *29, 35* արփ, երևիլ *բառերի հետ՝ հնխ.* prepso, *յն.* πρέπω։ Petersson, Fran filol. föreningen, i Zund. språkl uppsatser *4-րդ 140,* ZUÂ *1916, 33* արփի *բառի հետ միասին կը-ցում է սանս.* sāranga *«խայտաբղետ», լիթ.* sârts *«կարմրադէմ», շվէդ.* sarf *«մի տեսակ ձուկ», գերմ.* Rothâuge *«կարմրակն» են բառերին՝ հնխ.* ser, sor *«կարմիր» արմատից (տե՛ս* Pokorny, *2, 499)։*

ԵՐՔ *տե՛ս* Եռալ։

+ԵԻ *«ու, նաև, ևս, էլ», կրկնութեամբ՝ «թէ՛ ...թէ՛...» ՍԳր. Եղն. են, որից՝* ևեք *«միայն», ևս «նաև, է՛լ», և ևս «ա՛յլ ևս», ևս* ևանգևս *«առաւել քան զառաւել», բոլորն էլ ոսկեդարեան։ Հին և ընտիր են նոյնպէս և* արդ, արդ ևս, արդարև, է և, ոչ ևս, չև, չև ևս, և ոչ, և ոչ ևս, ուր և, թէև, թէպէտև, և եթէ, մինչև, մինչչև, թերևս, դեռ ևս, մինչ չև ևս, իբրև, իբրև ոչ, իբրև ոչ ևս, զևս (ևս բան զևս *ձևի մէջ) են։*

=Բնիկ հայ բառ՝ հնխ. épi *«նաև, ևս» ձե. վից. համմտ. սանս.* अपि api *«նաև, դեռ ևս, էլ, մօտը», հպրս.* apiy, *զնդ.* aipi *«հենց, ըստ, մօտը, միջոցին», յն.* ἐπί *«վրայ, սրա վրայ», թոխար.* pi *«նաև», ալբան.* épesa *«վրայի, վերևի», գոթ.* iftuma *«յաջորդական»* (Walde, 532, 605, Boisacq, 264)։ *Հայերէնի հետ յատկապէս նման են գալիս յն.* ἐπί τοῦτῳ=*հյ. ևս և թոխար.* pi, *որ Բուականների մէջ ծառայում է իբր կցորդ՝ ճիշտ ինչպէս հայ. իննևտասն, բառևիննն են ձևերի մէջ։ Սոյն հնխ.* épi *ձևի ձայնդարձներն են* opi *(միջին աստիճան) և* pi *(ստորին աստիճան), որոնց վրայ տե՛ս ու և ըստ (*Pokorny, 1, *122)։—Հիւրշ. 445։*

*Նշ*Ꭰ *արմատն է ւ, յորմէ ոմկ.* ու, վի, վ, իւ, *սանս.* եվա։ Peterm. *33 երր.* ٦ va *և արաբ.* ﻭ va *շաղկապների հետ. իսկ էջ 170 և շաղկապի հետ նոյն է դընում ինչ որ և դերանուն, ճիշտ ինչպէս երր. և արաբ.* hva *դերանունները գալիս են* va *շաղկապից։* Spiegel, BVS, *4, 173 այս և դերանունը շաղկապից անկախ համարելով՝ համ! մատում է զնդ.* ava *ձևի հետ։* Lag. Urgesch. *61 և.* Btrg. bktr. Lex. *5 սանս.* api, *զնդ.* aiwi *ձևերի հետ։* Justi, Zendsp. 8 *զնդ.* aēva, *հպրս.* aiva, *զազա* yau, *օսս.* yeue, yu *«մէկ», իսկ էջ 62 սանս. զնդ.* uta, *պհլ. պրս.* ū *են։ Մորթման,* ZDMG, *26, 533 բևեռ.* eha *և 591 բևեռ.* iu *բառերի հետ։ Հիւնք. արաբ.* վէ, ու, իւ։ Karst, *Յուշարձ. 403 սումեր.* bi *«և, միասին, հետ»։ Ուղիղ մեկնութիւնը տուաւ նախ Հիւրշ.* ZDMG, *35 (1881), 654 մերժելով զնդ.* aiβi *համեմատութիւնը և դնելով* aipi, *սանս.* api, *յն.* ἐπί *են։*

Գիւտ.—Սչ. յէւ. միասները ունին ու ձևը։ Գրականից փոխառութեամբ կազմուած ձևեր են՝ և աճել Ղրբ. «ժամերգութիւնը շուտով՝ հապճեպով վերջացնել», և ու եչ Տփ. «խնդրի հանգամանքները»։

ԵԻ *«օտար». այս բառը մեռնակ գործածուած չէ. բայց գտնում եմ Բառ. երեմ. էջ 94*

յիշուած երկու բարդերի սկիզբը, որոնք են՝ եւագգած «օտարահանգերձ», եւակոչ «օտարբակոչ»։

եի «անէծք». գիտէ միայն Բառ. երեմ. էջ 95 գրծ. եւիք ձեւով, որից էլ բարդութեամբ՝ եւակոչ «անիծասաց» էջ 94։

եիգի «իրրև դու». ունի միայն Բառ. երեմ. էջ 94. ի՛նչ լինելը յայտնի չէ։

եիեթ կամ իբր երկու բառ եի եթ «միայն, լոկ, սոսկ» ՍԳր. Մծբ. գրուած է նաև ևեթ «միայն» Սարկ. քհ.։

=կազմուած է և շաղկապով՝ եր անծանօթ բառից. սրա համար է, որ ՀՀր և ՆՀր նշանակում են նաև առանձին եր ձևը, որ սակայն այսպէս առանձին գործածուած չէ։

ՆՀր «ի բառից» և, եթէ. յծ. գէր կամ գեր»։ Lag. Arm. Stud. § 740 գնդ. aiwiθyō «դուրս, հեռո՛ւ»։—Տէրվ. տե՛ս գէր բառի տակ։ Հիւնք. և թէ։ Pedersen, Ցուց. գեր. 60 և եթէ ձևից։

Գիր.—Պահուած է Տփ. մի քանի ձևերի մէջ. ինչ. ճիմիսկեվէտ «հենց հիմայ»։

եիոցթ «նշանակ». ունի միայն Բառ. երեմ. էջ 95, որի հետ կցելի է էոյթ «զրոյց», անդ, էջ 107։

եի-ՈիթիԻն «գոյք, ինչք, հարստութիւն». երկու անգամ ունի վրք. հց. մէկ անգամ էլ գտնում եմ գործածուած Սմբ. դատ. 213 «Բայց են այլք որ ոչ արտ և ոչ այլ իրք բնաւ չունին և եւթեամբ կու ապրին». (Karst թարգմանում է «թափառաշրջիկ կեանքով»)։—Սակր. 227 էութիւն։

ՆՀր «կա՛մ ընթերցիր որպէս հյ. էութիւն, կա՛մ իմա՛ որպէս ածանցեալ ի յն. εὖ «լաւ», այսինքն «լաւութիւն»։ Lag. Urgesch. 61 գնում է և շաղկապից։

+եիՍ «նաև, էլ» ՍԳր. Ոսկ., «է՛լ աւելի» Եւս. քր. Ոսկ. ես. և մաթ. ՍԳր., որից՝ ևս ևաև գաև, և ևս, ևս առաւել, թերևս, միւս (<մեւս<մի ևս)։

=եւ բառից u մասնիկով։

ՆՀր և սա, և այս։ Peterm. և շաղկապից u մասնիկով։ Müller, WZKM, 10, 356 վերջին u ձայնը մեկնում է իբր յն. καί «և» բառի հետ նոյն, որով ևս ձևը հաւասարազօր է լինում սանս. ari ča, յն. τε καί, լտ. at-que ձևերին։ Հիւբշ. 487 մերժում է այս մեկնութիւնը։ Pedersen, Ցուց. գեր. 56 և այս։

Գիր.—Գրականից սարքուած ձև է և ածել երև. «գողանալ, գաղտնի վերցնել»։

*եիՏՈիկԱրՏՈՐ «ինքնակալ» (կայսրին տրուած տիտղոսը). նորագիւտ բառ, որ երեք անգամ գտնում եմ գործածուած Միխ. աս. 143, 193 և 249։

=Յն. αὐτοκράτωρ. նոյն նշ. կազմուած է αὐτός «ինքն» և κρατέω «իշխել, տիրապետել» բառերից։—Աճ.

Տե՛ս իմ Հայ. նոր բառեր հին մատ. Ա. էջ 178։

*եիՐԱկիկԼՈՆ կամ որ նոյն է՝ եւրակիկլովն «արևելեան քամի՝ հիւսիսախառն պտուտակած». Գծ. իէ. 14. ուրիշ տեղ չէ գործածուած։

=Յունարէնից փոխառեալ բառ է՝ Ս. Գրքի թարգմանութեան ժամանակ տառադարձուած. յոյն բնագիրը նոյն տեղում ունի εὐροκλύδων բառը, որ անցել է նաև լատին թարգմանութեան՝ euroclydon ձևով. նշանակում է «հիւսիսային արևելեան փոթորկալի քամի» և կազմուած է εὖρος «արևելեան-հարաւային-արևելեան քամի» և κλύδων «յուզմունք, շփոթութիւն» բառերից. բայց կասկածելի է համարում և նրա դէմ ունինք նաև εὐρακύλων, εὐρακύδων ձևերը։ Այնպէս որ կարող ենք ենթադրել, թէ հայոց գործածած օրինակում գրուած լինէր εὐράκυκλον ձևը՝ կազմուած նոյն εὖρος բառից + κύκλος «շրջան». վերջինն է, որ հիմայ եղել է ցիկլոն, cyclone։—Աճ.

ՆՀր և Հիւբշ. 349 գնում են յն. εὐροκλύδων և εὐρακύλων ձևերից, որոնք սակայն չեն ծածկում մեր բառը։ Տե՛ս նաև Տաշեան, ՀԱ, 1925, 67։

*եիՐՈՆՈՏՈՍ «դէպի արևելք թեքուղ հարաւային քամի» Արիստ. աշխ. Տաթև. հարց. էջ 206. գրուած է եւրաճօտոս Առաք. կենդ. էջ 70. ուրիշ վկայութիւն չկայ։

=Յն. εὐρόνοτος «հարաւ-հարաւային արևելեան քամի». ծագում է εὖρος և νότος բառերից։—Հիւբշ. 349։

Ուղիղ մեկնեց նախ ՆՀր։

*ԵՒՐՈՍ, ի–ա հլ. «արևելեան քամի» Ա-բրիստ. աշխ. Առաք. կենդ. էջ 70. Տաքև. հարց. էջ 205. ուրիշ տեղ չէ գործածուած։

=3ն. εὖρος «հարաւ-արևելեան քամի»։—Հիւրշ. 349։

Ուղիղ մեկնեց նախ ՆՀՒ։

*ԵՒՐՈՍԻՂԱՍ «մի տեսակ արևելեան քամի». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Առաք. կենդ. էջ 70 «Արևելեայցն (անուանք հողմոց) եւրոսիղաս, ապելիոդ և կեկիաս»։

=Անշուշտ յունարէնից փոխառեալ բառ, որի առաջին մասն է εὖρος «հարաւ-հարաւ-արևելեան քամի», իսկ երկրորդը՝ սիղաս չգիտէն ո՛չ Bailly և ո՛չ Sophocles:—Աճ.

ԵՒՓԻԲՈՒՈՆ, ունի միայն Բառ.երեմ. 95, որ գրում է «Եւփի. բռոն. յաղագս որբոյ»։ Պէտք է ուղղել «Եւթիփռոն. յաղագս սրբոյ է» և իմանալ Պղատոնի Εὐθύφρων անուն դործը, որ հայերէնի է թարգմանուած Գր. Մագիստրոսի ձեռքով և կոչւում է «Պղատոնի յԵւթիփռոն կամ յաղագս սրբոյ»։

=3ն. εὐθύ-φρον, որ է բուն «ուղղամիտ»։—Աճ.

+ԵՓ (ո հլ. ըստ ՆՀՒ, բայց առանց վկայութեան) «եփուածք, եփելը» վրք. հց., որից՝ եփել «եփել» ՍԳր. «կերածը մարսել» Մխ. բժշ., եփոյ «ապուր» Դ. թագ. դ. 38=40, եփոց «կերակուր» Մանդ., եփեցական Նար., եփիչ Սիր. եղ., դժուարեփեաց «դժուարամարս» ԱՒ, խաղողեփեաց Վեցօր., կիսեփեաց Ես. ծա. 10, հացեփեաց Ա. թագ. ը. 13, վաղեփեաց Ոսկ. մ. ա. 11, բաջեփ Պտմ. աղէքս., բազմեփեաց Նար., իւղեփեաց Ա. մնաց. Բ. 30. Բ. մնաց. ժզ. 14. Նոր բառեր են՝ եփարան «ստամոքս» (Վարդան Յունանեան, Քերթածութիւն յերկինս, 1671, էջ 306), աճեփ, արճեփ են։

=Բնիկ հայ բառ, հնխ. sephs արմատից, որից յառաջանում են նաև յն. ἔψα «եփել, խաշել», ἑφθός «եփուածք».—կարելի էր կարծել, թէ նոյն արմատի -ο- ձայնդարձից են յն. ὀπτός «խորոված, եփած», ὀπτάω «խորովել, տապակել, եփել», ὀπτάνιον «խոհանոց», ὀπτανός «խորովածք», և ὄψον «հացի հետ ուտելու բան, միս կամ ձուկ», ὀψάριον «ձկնով կերակուր», նյն. ψάρι «ձուկ». բայց լատագոյն է համարուում բաժանել սրանք նախորդներից, ըստ որում ὀπτός են ձևերի արմատն է ὀπ-, իսկ ὄψον են ծագում են ψαίω «փշրել» արմատից (տե՛ս Boisacq, 304, 708, 737. իսկ հայերէնի նախաձևի համար տե՛ս Meillet, MSL, 21, 187), Pokorny, 1, 124 (ճշտիւ համեմատում է յն. ἔψω, բայց նախաձևը դնում է հնխ. eps -, eph - «եփել»՝ փոխանակ seph-, այս դէպքում յն. է անբացատրելի է մնում)։—Հիւրշ. 446։

Ուղիղ մեկնեց նախ ՆՀՒ, որ համեմատում է յն. ἔψα, ἔφτης ձևերի հետ. ԹԷև **ապուր** բառի տակ կցում է պրս. էպա «ապուր» բառին։ Diefenbach, Berl. Jahrb. *1843, 449* յն. πέπτειν, ἔψειν և պրս. puxtan «եփել» բառերի հետ։ Böttich. Arica, *33* յն. ἔψειν, սանս. sap: Müller, SWAW, *42, 252* յն. ὀπ-τάω ὀπ-τέω։ Pictet, *2, 257* դնում է նախահայ *pepel ձևից՝ իբր սանս. pač «եփել»։ Lag. Arm. Stud. § 743 «չգիտեմ, ասում է, յն. πέσσειν, ὀπτᾶν, սեմական فى afi «եփել» ձևերի առնչութիւնը»։ Canini, Et. étym. *107* պրս. āf «արև», մալայ. âpi «կրակ» բառերի հետ։ Տէրվիշ. Նախալ. *46, 91* սանս. զնդ. pač, յն. πέσσω լատ. coquo, հսլ. peštǔ ձևերի հետ *pak արմատից. մեր բառը իբրև *pa պարզականի *փեփ>*ֆեփ>եփ կրկնականից։ Հիմնք. յն. ἔψω։ Հայ. և հնխ. ձևերի յարաբերութեան վրայ տե՛ս Osthoff, SA, *2, 51*։ Սանտալճեան, ՀԱ, *1913, 401* խալդ. yabi «եփեսցեն» և յն. ἔψω։ Պատահական նմանութիւն ունին սասր. ﻉ efā «եփել», սասուր. epû, եբր. אפה āfā «եփել», եգիպ. 'apa «խորովուն», արաբ. مِيفَه mīfa «վառարան» են։

ԳԻՒՒ.—Երև. Մրղ. Պլ. Ռ. էփ, Ալշ. Ախց. Կր. Ննխ. Սեբ. Տիգ. յէփ, Ասլ. յէ՝փ, Ագլ. Ղրբ. իփ, Տփ. յիփ.– բայական ձևով՝ Ալշ. Սլմ. էփել, Զղ. յեփել, Սչ. յէփել, Ախց. Գոր. Երև. Կր. Մրղ. Ննխ. Պլ. Ռ. Սեբ. էփել, Ասլ. էփէ՛լ, Մշ.էբ՛էլ, Հմշ. էփուշ, Խրբ. Տիգ. Տփ. էփիլ, Շմ. ճէփիլ, Հճ. վն. իփել, Ագլ. Զթ. Ղրբ. Մկ. Ոզմ. իփիլ։—Նոր բառեր են՝ եփած «փորձա-

ռու», եփ-բափ, եփեել, եփման, եփուաե, եփոց, եփուկ, եփուն, եփօճ ևն։

*ԵՓԵՆԻ «մի տեսակ թռչուն». մէկ անգամ ունի Վեցօր. ը. էջ 170 «Մես ևս թռչուն, որ անուանեալ կոչի եփենէ, առնու զընկեցեալ ձագն արծուոյն՝ ժողովէ առ ինքն և սնուցանէ»։ Ուրիշ օրինակ չկայ։

=Յն. ἡ φήνη «մի տեսակ արծիւ, ոսկրաբեկ, ոսկրակուլ, orfraie»։ Այս բառը տառադարձութեամբ պիտի տար հյ. փեհէ, բայց թարգմանիչը սխալմամբ յօդը միասին առնելով՝ տառադարձրել է եփենէ։—Հիւբշ. 349։

Ուղիղ մեկնեց նախ ՆՀՌ։

ԵՓԵՆՈՍ, ի–ա հլ. անստոյգ բառ. ՀՀՌ մեկնում է «բռնոսոս, վայրի ցուլ», ՆՀՌ և ԱՌ չունին, իսկ ՋՌ համարում է «բռնոս կամ եպեհէս»։

*ԵՓՈՒԴ կամ ԵՓՈՒՏ «առանց թեզանիքի մի տեսակ կարճ վերարկու՝ որ ղևտական քահանաներն էին հագնում շապկի ու բաճկոնի վրայից և ուսերի վրայ՝ ճարմանդներով կապում» ՍԴր. Ելագր. 185. որ և եպուդ «սուրբ սեղանի ծածկոցը» Միխ. ասոր. էջ 546, որից եփուտաւոր «շուրջառակիր» Վկ. արև. 102. Շնորհ. նդես. Ճառընտ.։

=Եբր. אֵפוֹד ēfōd «եփուդ. հրեայ քահանաների նոյն զգեստը». հասած է մեզ յն. ἐφούδ (որ և ἐφώδ) տառադարձութեան միջոցով։—Հիւբշ. 349։

Ուղիղ մեկնեցին նախ ՀՀՌ և ՆՀՌ։

*ԵՓՐՈՍԻՆԱՅ «ուրախութիւն». ունի միայն Բառ. երեմ. էջ 95։

=Յն. εὐφροσύνη նոյն նշ.—Աճ.

ԵՓՓԱԹԱ «բացուի՛ր». իբր օտար բառ գործածուած է մէկ անգամ Մրկ. է. 34 «Հայեցաւ յերկինս, յոգւոց եհան և ասէ Եփփաթա, որ է «բացի՛ր». սրանից է կազմուած եփփաթաձայն, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Վրդ. աննց. 21 «Ի մատունսդ հիփփաթաձայն, առ գիրկդ գգուասէր...» (համմտ. Մրկ. է. 33 «Արկ զմատունս իւր ընդ ականջս նորա...»)։

=Եբր. פְּתַח fth «բանալ» բայի կրաւ. հրամ. ձևն է, որ Ս. Գրքի թարգմանութեան ժամանակ յոյն տառադարձութեան (ἐφφαθά) վրայից անցել է հայերէնի։

*ԵՔԹԵՐԱՆ կամ ԵՔԹԻԵՐԱՆ «ձկնակեր, ձկնորսական» Նեհմ. ժբ. 38. սխալմամբ գրուած է նեհթիւրբան Նեհմ. գ. 3. երկուսն էլ գործածուած իբրև յատուկ անուն՝ Երուսաղէմի մի դռան համար։

=Յն. ἰχθυηρός, յգ. ἰχθυηρά «ձկնակեր», որ գալիս է ἰχθύς «ձուկ» բառից. Ս. Գրքի ժամանակ տառադարձուած յունարէնից։—Հիւբշ. 349։

Ուղիղ մեկնեց նախ ՆՀՌ։

*ԵՔԻՆԷԻՍ «մի տեսակ փոքր ձուկ է. նաւակալ» Վեցօր. 153 («Զկնիկն մի փոքրիկ՝ որ անունանեալ կոչի եքինէիս, որոյ այսպէս թարգմանի անուն իւր՝ նաւակալ). Յովհ. վնկ.։

=Յն. ἐχενηΐς «նաւակալ. մի տեսակ ձուկ, որ իբր թէ նաւերը բռնում է»։—Հիւբշ. 349։

Ուղիղ մեկնեց նախ ՆՀՌ։

*ԵՔԻՆՈՍ կամ ԵՔԵՆԷՍ «ծովային ոզնի» Վեցօր. 150 (չորս անգամ). Վանակ. հց.։

=Յն. ἐχῖνος «ոզնի (ծովային կամ ցամաքային)»։—Հիւբշ. 349։

Ուղիղ մեկնեցին նախ ՀՀՌ և ՆՀՌ։

*ԵՔՍԿԵՓՏՈՐՈՍ «նօտար կամ համարակալ». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գրտնում եմ գործածուած Վրք. և վկ. Ա. 442։

=Յն. ἐξκέπτωρ,—ορος ձևի միջոցով լ. ատ. exceptor համանիշից (տե՛ս Sophocles, 484)։—Աճ.

Վարքի հրատարակիչը գնում է ուղղակի լատինից։

*ԵՔՍՈԴԻՈՆ, ի–ա հլ. «թաղման հանդէս, յուղարկաւորութիւն». նորագիւտ բառ, որ չորս անգամ գտնում եմ գործածուած Սոկր. եկեղ. պատմ. էջ 114, 237, 390, 489 (Թագաւորականումն եքսոդիոնի արժանաւորիւր. Ջմարմինն Կոստանդիոսի թագաւորաբար պատուեալ եքսոդիոն արար. Ջեքսոդիոնին օրինաւորութիւն լցնալ. Մարմինն Թէոդոսի կարծեցեալով էքսոդոնաւն բերեալ որդին պատուէր Արկադիոս.—յն. բնագիրն ունի սրանց դէմ κηδεία «յուղարկաւորել», κηδεία «յուղարկաւորութիւն»)։

=Յն. ἐξόδιον «մահ. 2. թաղման յուղարկաւորութեան հանդէս» (Sophocles, 485). բուն նշանակութիւնն է «ելք»։—Աճ.

*ԵՔՍՈՐԻ *տե՛ս Աքսոր։*

*ԵՕԹԱՆԱՍՈՒՆ, ի *հլ. «70» ՍԳր. ևս. քր. գրուած է նաև* եւրաճասուն *(որ հնագոյն ձևն է), իւրաճասուն Ոսկ. ես. 317, 375, 377, 391, 468, եփր. եկ. էջ 135, Բուզ. 233, Օրին. 283, Ա. կոր. 79,* ուրաճասուն *«70» նշանակութեամբ և ոչ «80» Ոսկ. ես. 283 (Աւուրք կենաց մերոց ուրճանասուն ամ և եթէ ես զօրութեամբ՝ ուրճսուն ամ), օխրաճասուն Ուխտ. Ա. էջ 16, 19, 20, որից՝* եօրաճասնեկին *Մն. դ. 20. Մտթ. ժբ. 22. Մծբ.,* եօրաճասնեմի *Կիւրղ. ծն.,* եօրաճասներորդ *Ջար. ա. 12,* եօրաճասնամեայ, եօրաճասնամեակ *(նոր բառեր) ևն։*

=Բնիկ հայ բառ. ցեղակիցներն ունին յն. ἑβδομήκοντα, *լատ.* septuaginta *(ւիխ. *septumaginta* Walde 701), *սանս.* सप्तति saptati, *զնդ.* haptāiti, *պրս.* هفتاد haftād, *թոխար.* ṣuktánka, *լիթ.* septynios, *հսլ.* sedĭmů, *գոթ.* sibun tēhund, *հբգ.* sibunzo *ևն, որոնց զանազան ձևի կազմութեան վրայ տե՛ս Քերականութեան մէջ։*

Առհասարակ մեկնած են հյ. եօթն *բառով կամ նաև վերի ձևերով։*

ԳԻՒ.—Մկ. յօթմնոսուն, *Մշ.* յօտանասուն, *Սլ.* օխրանասուն, *Երև. Շմ. Սլմ. Զղ. Տփ.* օխտանասուն, *Ագլ. Գոր.* օխտանա՛սուն, *Ղրբ.* օխտրնա՛սուն, ուխտրնա՛սուն, *Մրղ.* օխտանացցուն. *միւսները գործածում են թուրքերէն* yetmiš *ձևը։*

+ԵՕԹՆ, և *հլ.* (եօթան, -թանց, -թամբ, -թամբք, *յետնաբար ի հլ. ինչ.* եօթնի, -նից, -նիւ *կամ* եօթեան, եօթեանք, եօթեամբք) *«7» ՍԳր. գրուած է նաև* եաւթն, եւթն՝ *որոնք հնագոյն ձևերն են, իւրն (օր. վկ. գէ. 49 ի յէւթն)՝ որ յետին գաւառական մի ձև է և եւթ (Կրկնագիր Ագաթ. տպ. Յուշարձան էջ 67 ա)՝ որ աշխարհաբարի սկզբնաւորութիւնն է ցոյց տալիս։—Ածանցման մէջ մտնում է երեք ձևուվ. 1.* Եօթան-, *ինչ.* եօթանեիին *կամ* եօթանեեան *ՍԳր, եօթանեկի Յս. որդի.—2.* Եօթնի-, *որից՝* եօթնեմեան *«եօթնամեան» (<*եօթնի-ամեան) Դատ. գ. 25,* եօթնեակ *<*եօթնի-ակ ՅՀ. իմ. առ.—3.* Եօթն-, *ինչպէս ունին ածանցների ամենամեծ մասը. օր.* եօթներորդ *ՍԳր., եօթնեիին Մրկ. ժբ. 22, 23, եօթնեասան ՍԳր., եօթնեան Սեբեր., եօթնածին Երեմ. ժե. 9, եօթնաձոր Ես. ժբ. 15, եօթնապսակ Մ. մաշտ. 278 բ, եօթնօրեայ Մ. մաշտ. 586—98 ևն։*

=Բնիկ հայ բառ՝ հնխ. septṃ *ձևից. հմմտ. սանս.* सप्त saptá, *զնդ.* hapta, *պրս.* هفت haft, *սոգդ.* ßt, *քրդ.* heft, *աֆղան.* ōwa, awa, *օսս.* aft, awd, *թոխար.* ṣpadh, *քուչ.* ṣukdh, ṣuk, *յն.* ἑπτά, *լատ.* septem, *ֆրանս.* sept, *իտալ.* sette, *ռում.* ṣepte, *գոթ. հբգ.* sibun, *գերմ.* sieben, *անգլսք.* seofon, *անգլ.* seven, *հիռլ.* secht. *կիմր.* seith, *լիթ.* septyni, *լեթթ.* septīni, *հսլ.* sedmĭ, *ռուս.* семь, *ալբան.* ŝtatë *«եօթը», հպրուս.* septmas *«եօթերորդ», կամիս.* šiptamiya *«եօթներորդ» ևն։ Ըստ Ֆիննագէտների՝ հնդևրոպականներից են փոխառեալ վոգ.* sät, sāt, *օսթյ.* ɫāþət', *հունգար.* hēt *«եօթն»։ (Տե՛ս* Walde, 700, Boisacq, 269, Trautmann, 257, Horn, § 1098, Pokopny, 2, 487, Ernout-Meillet, 885):—*Հիւրշ. 445։*

Առաջին անգամ ուղիղ մեկնեց բառս Klaproth, Asia polygl. *էջ 107։ ԳԴ համեմատեց պրս.* haft *ձևի հետ։ Զանազան հնդևրոպական ձևերի հետ ուղիղ համեմատութիւններ ունին ՆՀՒ,* Peterm. 20, Windisch. *26 ևն։ Ընդարձակ խօսում է բառիս ծագման վրայ Տէրվիշեան, Երկրագունտ, Ա. 48 և Հեղու, Ա. 177։*

ԳԻՒ.—Ասրբ. Հճ. յօթը, *Աղշ. Մկ. Մշ. Ոգմ. Վն.* յօթ, *Տիգ.* յո՛ppէ, *Անտ.* յէօոթը(yöuot'ə), *ԶՓ.* յէօթը, *Ռ.* օխթը, *Ախց. Երև. Կր. Զղ. Սլմ. Տփ.* օ՛խտը, *Գոր. Ղրբ. Ննխ.* օխտը, *Շմ.* օխտ, *Մրղ.* օ՛խտա, *Սլ.* 'օխդ'ը *(բայց* օխտում *«եօթերորդ»), Ակն. Հմշ. Պլ. Սեբ.* օ՛խդը, *Ասլ.* էօ՝խդը, *Ագլ.* է՛խտը, *Հւր.* յէ՛խտը։—*Նոր բառեր են՝* եօթնաւուն, եօթնաչք, եօթնց=եօթանց, եօթնգլխանի, եօթնեղբարք, եօթնէից, եօթնուկնանի, եօթնռաֆանի *ևն։*

ՓՈԽ.—Patrubány, SA, *1, 4 հայերէնից փոխառեալ է համարում հունգար.* hét *«եօթը», որ թէև իրօք ըստ Ֆիննագէտների հընդևրոպական լեզուներից է փոխառեալ, բայց հայերէնից դնել շատ անատոյգ է։*

Զ

Զ. *նախդիր՝ որ կցւում է բառասկիզբը հայցական, պատմական և պարառական հոլովները կազմելու ժամանակ, բայց մանաւանդ գործածւում է իբրև սաստկական և կամ զօրացուցիչ. համմտ.* զանցանել, զեղծանել, զաշացու *«կոյր»* (աչ *բառից*), զականել *«լաւ դիտել»* (ակն *բառից*), զաճի եարկանել, զահանդիլ, զարհուրիլ *(համմտ.* արճ, աճ, արճաւիր), զահոմիլ *«պատշաճիլ»* (ճոմ *ձևից*), զաղփաղփուն, զանխուլ, զոռածիլ *կամ* զ-առ-ած-անել, զառամ *(իբր* զ-առ-ամ*) «տարիքոտ, ծերացած, ցնդած»*, զառանցել, զառաջասուն, զառաջաւոր, զառաջեայք, զառաջեաւ, զառաջել, զառաջինն, զառիվայր, զառիվեր, զառիքարի, զատանել, զատ *(իբր* զ-ճատ-անել*)*, զատչիլ, զատուցանել, զարամուր (<զյարամուր), զարգանալ, զարդ, զարդարել, զարդիս (արգ, արդ, յարդարել, արդի), զ-արբնուլ, զարբմնի, զարբխում (արբուն), զարկ, զարկանել (զճարկանել), զարմանալ, զարմ, զարտուղի (արմ, արմանալ, արտուղի), զգածել (ճագածել, առիգած), զգեներ, զգեստ(ագանել, ճագուստ), զգետնել, զգլխել, զգնալ, զգալ, զգայուն, զգացում, անզգամ զգաստ, զգօն, զգացուցանել *(գալ բայից. համմտ.* զ-եկ-ուցանել, զեկոյց, իրազեկ, իրազգած), զօդել, զօդուած, զփախչիլ, զտեղել, զետեղել, զարգելուլ, զչարիլ, զուլամբիլ *«վզի վրայ գլորիլ»* (ուլն *բառից*), զեղծանել, զեղծ, զեղուլ (զճեղուլ), զեռալ, զեռուն, զինչ, զինչպէտ *(համմտ.* ումպէտ), զիջանիլ, զլեռնայն, զկծել, զկնի (կինի), զնեա (ճեա, յեա), զմէ՞ (ի՞մ), զմտաւ ածել, զճանապարճայն, զճստուցանել, զով, զովանալ (ճով, ճովանալ) *են են։— Սրա հետ նոյնէ և նախամասնիկը, որ զ-ի ստացած ձևն է՝ խուլ բաղաձայնների մօտ. համմտ.* սթափիլ, սճօղել, ստածել, սփոել *են. տե՛ս նաև* ս։

=Իր շատ ճոխ գործածութիւնից դատելով՝ պէտք է լինի բնիկ հայ։ Բայց որովհետև զ ձայնով սկսող հայերէն բառերը կա՛մ փոխառութիւն են և կամ դեռ մեկնուած չեն, ուստի յայտնի չէ թէ ի՛նչ պիտի լինէր սրա հնխ. ձևը։ Սակայն որովհետև հնխ. g'h *երկու ձայնաւորի միջև տալիս է հայերէն* զ *և բառի սկզբում տալիս է հյ.* ձ, *իսկ* ձ *դառնում է բաղաձայնի մօտ* զ, *ուստի կարելի է ենթադրել՝ որ* զ *ձևն էլ ծագել է հնխ.* g'h-*ից (այսպէս դարձած նախ բաղաձայնով սկսող բառերի մօտ և յետոյ ընդհանրացած)։ Այս մեծածումով կարելի է մեր բառի հետ համեմատութեան առնել հսլ.* za *մասնիկը, որի գործածութեան եղանակը մերին շատ է մօտենում. այսպէս՝* za n je= զ-ի. jętŭ ją za rąką *=կալաւ զձեռանէ նորա.* za utra=*զառաւօտու.—հսլ.* za *սեռականով ցոյց է տալիս ժամանակ և գործողութեան պատճառը (տե՛ս* Miklosich, Vergl. Gram. IV, *էջ 527 են), հայցականով՝ գործողութեան տևողութիւնը (անդ, էջ 410 են), գործիականով՝ «ետևը» (համմտ. հյ.* զերիս աւուրս, զնեա, զկնի *են)։ Թերևս սլաւական* za *բառին կցելու է նաև արևել. լիթ.* ažu, *լեթթ.* uz *«վրայ», aiz «ետևը, պատճառաւ, յայնկոյս»։ Իսկ գոթ.* ga- *մասնիկը (ինչ.* ga-laubjan=*գերմ.* glauben *«հաւատալ») սրանցից բաժանելով՝ կըցում են սովորաբար լտ.* com, cum, *հին.* com, cum, con, *կիմր.* cyf, *գալլ.* com *«ընդ, հետ» ձևերին. հնխ.* kom *(տե՛ս* Walde, *էջ 180)։*

Windisch. *40 գոթ.* at, *հբգ.* az *կամ գոթ.* du, *հբգ.* zi, *նբգ.* zu, *այն է սանս.* adhi, ati, *լատ.* ad, *բայց մանաւանդ պրս.* az *բացառականի մասնիկը,* Lag. Urgesch. *72 զնդ.* uz: *Այսպէս նաև* Spiegel, Huzw. Gram. *94։* Justi *սանս.*

sača? Müller, SWAW, *44, 555* պհլ. քրդ. -ghan *մասնիկի հետ։ Բառիս վրայ ընդարձակ խօսած և վերի ձևով մեկնած է* Meillet, MSL, *9, 52—55։ Հիւբշ. 446, կարելի, բայց ոչ ապահով է գտնում այս մեկնութիւնը, որովհետև նշանակութեանց տարբերութիւնները աւելի մեծ են, քան նոյնութիւնները, և երկրորդ՝ որ հյ. նախատառ զ ձայնի ծագումը անբաւական է ընդհանրապէս։ Աւելի մանրամասն խօսում է Հիւբշ.* Armeniaca, IF, *19, 457—480, Թրգմ. ՀԱ, 1907, 183—7, որ քննելով բոլոր զ-ով սկսող հայերէն բառերը, հաստատում է, որ սրանք կա՛մ փոխառութիւն են և կամ՝ եթէ փոխառութեամբ մեկնուած չեն, մթին են մնում։* Pedersen, *Հայ. դր. լեզ. 158—161 ձեվացած է դնում բառ նախդիրից՝ ա-ի անկումով և ս վերածուելով զ-ի։*

ԳԻՒՐ.—*Առհասարակ կորած է. բայց մնում է դեռ Ալաշկերտի, Մուշի, Տիգրանակերտի, Սիւրիոյ և Սուչավայի բարբառներում՝ իբրև հայցականի մասնիկ. միւսները պահում են մի՛միայն մասնաւոր պարագաներում. ինչպէս՝* Պլ. իենք զիենք, տեղը զտեղօ, Ղրր. զիբաւ տալ *«վերան փաթաթել» ևն։*

ՁԱՁԻՐ, ի-ա *հլ. (յետնաբար նաև ի հլ.) «զգուելի, գարշելի, վատ, գէշ, պիղծ» Մն. խա. 19—21. Ես. պտմ. Եփր. պհ., որից՝* զազրագոյն *Մն. խա. 19,* զազրագործութիւն *Եւագր.,* զազրալի *Փարպ,* զազրաձայն *Եփր. բ. տիմ. 252,* զազրանալ *«զգուելի դառնալ» Ոսկ. յհ. բ. 38, «զզուիլ, դանիլ» Ագաթ. Եփր. ծն.,* զազրալ *«դանիլ» Եփր. համաբ. 129. որ և* զազրիլ *Սարգ. ա. յհ. և. էջ 694,* զազրացուցանել *Ժող. ժ .1. Յոբ. Թ. 31. Եփր. Թգ. 400,* զազրատեսիլ *Ոսկ. բ. կոր.,* զազրոտի *Գ. Թագ. ժա. 33,* զազրութիւն *Յոբ. բ. 9. և. 5. Եփես. և. 4 ևն։*

*Նշ*Բ ցած իր։ *Հինք.* զգուիլ *բառից (բայց այս բառը հին հայերենում նշանակում է «հարստահարել»)։*

***ՁԱԽՄԵԼ** *«խոցել, վիրաւորել». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Կոստ. երզն. 177 «Գաղտուկ նետերով զախմեաս»։*

=Պրս. زخم zaxm *«խոց և վէրք, որ լինի ի պինուց պատերազմի»։—Աճ.*

ՁԱՄԱՆ *«տկար, խեղճ, դուզնաքեայ, տըխեղծ» Ես. խա. 14. Եփր. դտ. Վրդն. ծն. և Լ.։*

*ՀՀ*Բ *աւելացնում է նաև «զաւակ, ծրնունդ, փոքրիկ մանուկ, տղայ» նշանակութիւնները, որ սխալ է։—Նհ*Բ *լծ. ազազուն։ Հինք. զաւակ բառից։*

ՁԱԿԱՄԱՆԵԼ *«տաժել, սնուցանել, բուծանել». ունի միայն ՀՀ*Բ։

ՁԱԿԱԿ. *նորագիւտ անծանօթ բառ, որ մէկ անգամ գործածում է Ոսկ. մ. բ. 1, էջ 417 «Եւ այսպիսի օրինակօք լի են գիրք և աշխարհիս կեանք։ Զի և պոռնիկք և իգացեալք խնուն զբերանս զակակաց, որք զչարիս անշարժ համբաւեն և սատանայի հարկատուք են»։*

Ոսկեբերանի հրատարակիչն ասում է թէ ձեռագրի մէջ գրուած էր զ ակակաց և կարծում է, որ թերևս ուղղելի է զանդկաց, որովհետև յոյն բնագիրը ունի «մանիքեացւոց»։

ՁԱԿԱՆԵԼ *տե՛ս Ակն։*

ՁԱԿԱՑԻԼ *«խենթի պէս մի բանի յետևից ընկնել, մոլիլ, բարկութիւնից կատաղիլ» Բուզ. ե. լէ. Խոր. Ա. ա. Նար. էջ 46, 119. Երզն. մտթ. 172. ՀՀ*Բ *ունի նաև սխալ գատակիլ գրչութիւնը՝ ըստ Բառ. երեմ. էջ 98։*

*Նհ*Բ զակաձել *բայից։ Տէրվ. Նախալ. 109 և Լեզու էջ 90* ձակիլ *բայի զ-ով աճած սաստկականը, իբր զ-ձակ-ատ-իլ։ Հինք. ակատ քարի անունից։* Meillet, MSL, 16, 126 զ-ձակիլ?

ՁԱԿՈՒՆԻ *«աւանք հողմոց». այսպէս ունի Բառ. երեմ. էջ 96։*

—**ՁԱՀԱՆԴԻԼ** *տե՛ս ԱՀ։*

***ՁԱՀՔԵՐ** *«մի տեսակ դեղ» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 691։*

=Արաբ. سعتر sa'tar *«ծորթրին»։*

Ուղիղ մեկնեց ՀԲուս. անդ։

***ՁԱՀՈՄԻԼ** *տե՛ս Հոմ, Համ։*

***ՁԱՀՐԱՅ** *«վայրի մեխակ. լտ.* baccharis» *Բժշ. ունի միայն ՀԲուս. § 692։*

=Արաբ. زهر zahra, *որ նշանակում է*

պարզապէս «ծաղիկ» (Կամուս, Թրք. Թրգմ. Ա. 882)։

Ուղիղ մեկնեց ՀԲուս. անդ։

ՋԱՂԱԼ «նենգ, խարեբայ». Նորագիւտ բառ. որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Վրդն. առ. 131։

Կայ պրս. لَعل dayal «կեղծ», որ այժմ էլ գործածական է Կովկասի հայոց բարբառներում դաղալ ձեւով և «խարդախ, նենգ» իմաստով. արդեօք վերինն էլ նոյն բա՞ռն է և պէտք է ուղղել դաղա՞լ։

ՋԱՂԱՊ «աղումազ». գիտէ միայն ԳԲ։

***ՋԱՂԱՌ**, ի–ա հլ. «մեծ շուն». Նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Վասակ. 222։

=Թրք. ژغر zaγar «որսի շուն» (Будаговъ, 1, 605)։—Աճ.

ԳԻՒ.—Մշ. զաղար «որսի փոքրիկ շուն»։

ՋԱՂԱՏ «նշանակ գաւառական, որ կոչի դիծ յերկայնն ծայրեալ և լայնն մակերևութիւն մարմին». այսպէս ունի Բառ. երեմ. էջ 96։

ՋԱՂՓԱՂՓՈՒՆ տե՛ս Աղիփ։

***ՋԱՄԲԵՂ** կամ **ՋԱՄԲԵՂԱՅ** «վեղար, կընդուղ». Յայսմ. դեկ. 16 «Տեսեալ յանուրջս զերանելին Սպիրիդոն՝ եպիսկոպոսութեան զգեստիւն և գդակ զամբեղեայ ի գլուխ նորա և գաւազան արմաւենի ի ձեռինն իւրում»։ (Տպագրի մէջ գաւակ զամբեղեայ, ձեռ. գդակ զամբեղայ, այլ օր. միայն զամբեղ)։

=Գործածութիւնից երևում է, որ զամբիւղ բառն է, որից զամբեղայ կամ զամբեղեայ «պրտուից՝ խսիրից շինուած», երանելին գլխին դրել էր «խսիրէ գդակ» և կամ որ նոյնն է՝ մի «զամբիւղ», ճիշտ ինչպէս ձեռքին էլ ունէր «արմաւենի գաւազան»։

Նշբ «որպէս թէ զամբիւղեայ, այսինքն պրտուեայ». իսկ Իդակ բառի տակ՝ լծ. զոմփ։

ՋԱՄԲԻԿ «էգ ձի» Երզն. քեր. ուրիշ վկայութիւն չկայ։

***ՋԱՄԲԻՂ** կամ **ՋԱՄԲԻԳ** (ի, ո հլ. ըստ Նշբ, բայց առանց վկայութեան) «ուռիէ, պրտուէ կամ արմաւենու տերևներից հիւսուած կողով» ՍԳր. Վրք. հց. Երզն. մտթ. գրուած է նաև զամբեղ, զամբիլ։ Նոր գրականում ընդունուած է միայն զամբիւղ ձեւը։ Նոյն բառից է նաև զամբիւղ ծաղիկ «մի տեսակ ծաղիկ. Թրք. զէմպիլ չիչէյի» Սալաձ. (ըստ Նորայր, Բառաս. 1901, 109)։

=Պրս. زنبيل zanbīl, որ և زنبير zanbīr «կողով, զամբիւղ». պարսկերէնից են փոխառեալ նաև ասոր. ܙܒܝܠܐ zebīlā (Brockelmann, 89 ա), արաբ. زنبيل zanbīl, յգ. zanābil, վրաց. ზამბილი զամբիլի, Թրք. زمبيل zembil, քրդ. zambil, սերբ. zembilj, բուլգար. zimbil, բոլորն էլ «զամբիւղ»։ Պարսիկ բառն էլ փոխառեալ է ասուր. zabbīlu «մի բան տանելու անօթ» բառից, որ ծագում է ասուր. zabalu «բերել, տանիլ, բարձրացնել, գովաբանել» արմատից (Muss -Arnolt, Ass. engl. Handwb. 273—4)։—Հիւբշ. 148։

Ուղիղ մեկնեց նախ Աւգերեան, Բացատր. չփ. և կշռ. էջ 84. նոյնը և ԳԴ, ՆՀԲ։—Böttich. Rudimenta, 40, 95 զամբեր ձևի դէմ դնում է սանս. saṃputaka, պրս. zanbīl, ասոր. zabīl: Ուղիղ են Böttich. Arica, 75, 225, Lag. Ges. Abhd. 41, Urgesch. 982 ևն։

ԳԻՒ.—Նբ. զամբեղ «ձէթ քամելու կողով». ըստ Ամատ. Հայոց բառ ու բան, էջ 185 կայ նաև զամբիւղ երև. «ծաղիկը»։

***ՋԱՄԲՈՒՌ** «վայրի մեղու, իշամեղու, պիծակ» Վասակ. 191. ուրիշ վկայութիւն չկայ։

=Պրս. زنبور zanbūr «դեղին կրէտ, իշամեղու», որից փոխառեալ են նաև արաբ. زنبور zanbūr, zunbūr, زنبار zanbār նոյնանիշ ձևերը։—Հիւբշ. 264։

Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ։

ՋԱՄԲՈՒՌ կամ **ՋԱՄՊՈՒՌ** «մի տեսակ խոտ է. վաղամեռուկ, ձիաձորիկն» ԲԺշ. ունի միայն ՀԲուս. § 694. (ըստ Արթինեան, Ամէնուն տարեցոյցը, 1914, 163 origanum, ըստ Տիրացուեան, Contributo, § 419 thymus serpyllum L)։

Արթինեան, Տունկերը, էջ 60 դնում է յն. Θύμβρα «ձորիկ» հոմանիշից, բայց այս ձևը յարմար չէ։ Ձևով յարմար, բայց նշանակութեամբ նոյն չեն արաբ. زنبور zanbūr «չինարի նման մի տեսակ ծառ կամ քաղցր թուզ», زنبار zanbār, زنبر zanbar «նոյն տեսակ թուզը» (տե՛ս Կամուս, Թրք. Թրգմ. Ա. 880)։

Գիւր.—Բիւթ. Չն. Մշ. զամբուր «*մի տեսակ ծոխրին*». *Թուխ Թէ նոյն է նաև* զամբուրթ *ԲԲ.* «*մի տեսակ բոյս, որ աղցան են անում*»։

ՉԱՄՊ «*լեռների վրայ դիզուած ձիւն*» *Սալաձ. ունի միայն ՀԲուս. § 695, որ մեկնում է «ծաղիկ մը կամ լեռներու վրայի ձիւնը». Նորայր, բանաս. 1901, 100 ընդունում է միայն վերջինը, որ հաստատում են նաև՝*

Գիւր.—Խոջ. Ղզ. զամբ «*ձորի մէջ կամ լեռան վրայ հաւաքուած ձիւնի դէզ*», *Ալշ. Մշ.* ամբուզամբ «*փոփոխական օդ*»։

ՉԱՅՍԱՅՍԻ «*վախենալ*». *Նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Տիմոթ. կուզ. էջ 16 «Յայտնի այսուհետև Տէրն և մատնելով ոչ դայսայսեաց ի մահուանէն, այլ յաւէտ մերկացաւ առ նա և հալածէր փախուցեալ զօձն». (տե՛ս իմ Հայ. նոր բառեր Տիմոթ. Կուզի մէջ. էջ 73)։ Այս նոյն բառն է, որ գրում է Բառ. երեմ. էջ 96՝ զայսել «զանգիտել, ափշիլ, յիմարիլ»։*

+ՉԱՅՐԱՆԱԼ *տե՛ս Այրել։*

Müller, SWAW, *84(1877), էջ 227 սանս.* ghar, haras «*ցասում*» *բառի հետ՝ Թիրեաքեան, Արիահայ բառ. 31 այրել բառից, իսկ էջ 155* սայր<սար= *պրս.* سر sar «*գագաթ*» *բառից!*

*ՉԱՆ «*կերպ, եղանակ, ձև, տեսակ*». առանձին գործածուած չէ և կայ միայն մի խումբ բարդութեանց մէջ, որոնց ամենամեծ մասը յետին է, այսպէս՝* սրբազան, այլազան, գեղազան, բազմազան, նի՛զան, ո՛րզան «*ի՛նչպէս*», բաղազան, բաղազանալ «*հետը միացած, կից*» (*Կղնկտ. Հրատր. Էմինի, էջ 238*), գերազան, զարմազան, զանազանութիւն *են Փարպ. ՅՀ. կթ. Սոկր. Գնձ. Նար.*, մարգազան (*նորագիւտ բառ*) *Ստ. ժմ. 490*, գեղազանամ «*վայելչական*» (*չունի ՆՀԲ*) *Մագ. Թղ. 236, 238 (հմմտ. Մէնէվիշեան, Գամագտ. էջ 21)*, զանազանակերպութիւն (*նոր գրականի մէջ*) *են։ Հին վկայութեամբ ունինք* զանազան *Ագաթ. (այսպէս՝* զանազան գեղեցկութիւն *Ագաթ. § 162), Բուզ. Գ. 20*, զարմանազան *Ա. եզր. ա. 10*, զարմազանական *Ոսկ. Եփես.*, աստուածազան *Եփր. պհ. Սեբեր. էջ 199*, նուաշազան *Ոսկ. ես։ (Վարդանեան, ՀԱ, 1913, 562* աստուածազան *ձևը Սեբեր. էջ 199 ուղղում է* աստուածական, *ինչպէս նաև* զարմանազան *բառը Սքանչելագործի ի ծն. Քրիստոսի ճառում ուղղել է* զարմանական. *սրանից հետևցնում է նաև թէ Ա. եզր. ա. 10 (Մեծապէս և ամենայն վայելչութեամբ* զարմանազան *պատրաստեցին զգաւիկն) հատուածի մէջ* զարմանազան *բառը մի հասարակ լուսանցագրութիւն է, որ յետոյ բնագրի մէջ է մուծուել. և առհասարակ* -զան *բառով կազմուած բարդերը յետին ներմուծութիւններ են. ոսկեդարեան է միայն* զանազան *կրկնաւորը)։*

=*Հպրս.* zana- «*կերպ, տեսակ*» *որից բարդուած են հպրս.* paruzana-, paruvzana-, vispazana- «*բազմազան, զանազան*», *սոգդ.* zanak «*տեսակ*», znkznk'n=zanak-zanakān «*զանազան, բազմաձև*»։ *Իրանեանից փոխառեալ են նաև ասոր.* ܙܢܐ zanā, *արամ.* זנא zənā, *եբր.* זן zan «*կերպ, եղանակ, ձև*»։ *Հայերէնի մէջ ունինք նաև* գեղազանակ *և* զանազանակ *բառերը, որոնք ևթէ հայերէնի մէջ* -ակ *մասնիկով կազմուած չեն, ենթադրում են **զանակ *բառը, որ կարող է փոխառեալ լինել պհլ. **zanak *ձևից։—Հիւբշ. 148—9։*

ՆՀԲ յծ. ազն, ազգ, կէն, գոյն, *պրս.* سان sān «*պէս, կերպ*»։ Lag. Urgesch. *982 և* Reliqq. gr. *28 պրս.* zan *և ասոր.* zan: *Այս անգոյ ձևերը մերժում է* Lag. Arm. St. § 749: *Տէրվ.* Altarm. *35* ազն *բառի հետ։ Հինք. կցում է* ծան, ծանօթ, ծանակել *բառերին։*

Գիւր.—Շմ. զանազան, *Տփ.* զանէզան «*գեղեցիկ*». *օր. «Տե՛ս ի՛նչ զանազան ձուկ է»։*

ՉԱՆԱԼՈՒԹ *տե՛ս Անալութ։*

*ՉԱՆԱԽ «*դատարկաբանութիւն*». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գործածել է Կոստ. երզն. էջ 151 «Թէ ընդ ինք մարդ զրուցէ զերդ հրեշտակ, նայ սրտովն զանախ է, ծաղր ու կատակ»։*

=*Պրս.* زنخ zanax «*դատարկաբանութիւն*»։—*Աճ.*

Կոստ. երզնկացու հրատարակիչը՝ Պատուրեան, անդ, էջ 47 մեկնում է «զատոտա, կեղտոտա», իբր արաբ. զանախ

*«իւղոտած, աւրուած, աղտոտ»։ (Կամուսի Բրք. Թրգմ. Ա. 543 դիտէ جنج zanax «իւղը աւրուիլ, փճանալ, հոտիլ», جنج zanx «հոտած իւղ», որոնք յարմար չեն վերի վկայութեան)։

*ՁԱՆԱԽ «սպիտակ շուշան» Գազիան. ունի միայն Բառ. երեմ. յաւել. 574, որ մեկնում է «սպիտակ սուսամ»։—Բրք. սուսամ է «կնճիթ», բայց այստեղ անշուշտ պէտք է հասկանալ սուսան, որով վերի բառն էլ ուղղել իբր Բրք. زنبق zanbaq (ռմկ. զամպախ) «շուշան». Համմտ. «Զամպախն սպիտակ սուսանն է» Ամիրտ. (ըստ ՀԲուս. էջ 494)։

ՁԱՆԱԿ «կտոր, մաս, հատ» Բուզ.102. Ճառընտ. Վրք. բրս. ամէն տեղ էլ գործածուած է ոսկու կամ արծաթի կտորի համար։

Նահապետեան, Բազմ. 1906, 398 ուղղում է Բուզանդի մէջ նշանակ, բայց առանց նկատի առնելու, որ նոյն բառը գործածուած է նաև Ճառընտրում։ Գ—Մ., Բազմավէպ, 1917, էջ 6—8 ուղղում է ֆանակ, որին դէմ է Վարդանեան, ՀԱ, 1921, 249, որովհետև ֆանակ բառը ոսկեդարեան չէ։

*ՁԱՆԱՊ «Վիշապ համաստեղութեան պոչը» Վրդն. սղ. ճգ. էջ 344 և պտմ. տպ. Վենետ. էջ 137, Հրատր. Էմինի, էջ 180։

=Արաբ. ذنب ðanab կամ zanab «պոչ, պոչ», որից ðanab-i-tinnīn «Վիշապ համաստեղութեան պոչը». ըստ այսմ վերի բառը նոր տառադարձութեամբ է։—Հիւբշ. 264։

Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ, յետոյ Հիւբշ. ZDMG, 35 (1881), 659։

ՁԱՆԳԱՅԻՆ. *անստոյգ նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Վրք. և վկ. Ա. 615 «Նանրութեան նմանեալ են կեանք քո և պայծառութիւն քո ունայնութեամբ իջանէ ի դժոխս. և զարմանամք թէ դիա՞րդ այնքան ունայրութեամբ իջանէ ի դժոխս զանգածեալք (այլ ձ. զգածեալք), մարտ եղեալ ընդդէմ անպարտելի զօրութեան...»։

*ՁԱՆԳԱԿ (ի—ա հլ. ըստ ՆՀԲ, բայց առանց վկայութեան) «զանգակ կամ բժժոժ (մեծը և կամ փոքրը)» ՍԳր, որից՝ զանգակաձի «զանգակներ» Մագ. մեծ են, էջ 20 զանգակագանչ Նարեկ., զանգակաձայն Եղիշ. Ղրկր. և խաչհլ., զանգակատուն Յիշատ., զանգակեալ «բժժոժներով զարդարուած» Արծր. գրում է նաև կ տառով՝ զանկակ, զանկակաձայն են։ Բուն արմատն է զանգ, որ ունի Վահր. գրուած զանկ ձևով. սրանից զանգիկ կամ զանկիկ «մակալեզու, պզտիկ լեզու, լեզուակ, voile de palais» Ոսկիփ.։ Արդի գրականում արևվելեան բարբառը գործածում է զանգ, իսկ արևմտեան բարբառը՝ զանգակ։—Նոր բառեր են՝ զանգահարութիւն, զանգակաձև, զանգակածաղիկ (ըստ Տիրացուեան, Contributo, § 508 campanula crispa Lam. ծաղիկը)։

=ՊՀլ. *zang ձևից, որ աւանդուած չէ. բայց նոյնն են հատատառում պրս. زنگ zang, زنگاله zangala, zangula, زنگل zangul, زنگوله zangūla, زنگلاله zangulāla «զանգակ, բժժոժ, փոքր զանգակ». սրանցից փոխառեալ են նաև ասոր. ʾzgʾ zaggā «զանգակ», ʾzng zangā «հնչիւն», քրդ. zenk, zengil, zangel, zangil «բժժոժ», zengeluk «կոկորդ, կոկորդի ոսկոր» (հմմտ. վերը զանկիկ «մակալեզու»), ուս. զոնգ, օսս. žangarak, վրաց. ზანგალაკი զանգալակի «բժժոժ» են։—Հիւբշ. 149։

Ուղիղ մեկնեց նախ ԳԴ։ Böttich. ZDMG, 1850, 354 առնս. çaṃkha: նոյն, Arica, 75, 235 պրս. zang: Lag. Urgesch. 980 պրս. zangula: նոյն, Gesam. Abhd. 41 պրս. zang, žang, zangula, ասոր. zag են։ Patrubány, ՀԱ, 1908, 342 զ նախդիրով անկանիլ բայից։

ԳԻՒ.—Ախց. Կր. զանկ, Ալշ. Երև. Խրբ. Մշ. Ջղ. զանգ, Գոր. Շմ. Ռ. Տիգ. զանգ, Մրղ. զանգ՝, Ագլ. Տփ. զա՛նգակ, Սչ. զանգագ՝, Պլ. զանգագ, Ղրբ. զո՛նգ՝ակ՝ զոնգ՝, Սլմ. զանգ՝մկ՝, Մկ. Ոզմ. Վն. զոնկակ, Հմշ. զօնգագ։—Գործածւում է զանգակ նաև իբր ած. «քաղցրահնչիւն» նշանակութեամբ (ինչ. զանգակ ձայն. զանգակ աղբիւր). Երև. կայ զանգակ ծաղիկը (ըստ Պոլշեան, Սկիզբն երկանց, էջ 53)։—Նոր բառեր են զանգաթել, զանգաձայն։—Նոր փոխառութիւն է զանգուլակ (Ղրբ. զնգօ՛լակ), իբր պրս. zangulak «բժժոժ»։

ՁԱՆԳԱՆԵԼ. ՁԱՆԳԵԼ տե՛ս Անկանել։

Lidén, IF, *44, 191 դերմ.* feucht, *հբգ.* fuhti *«թաց», սանս.* panka *«ցեխ, ճահիճ» բառերի հետ. Հայերենը մեկնում է իբր գ-հանգ:*

+**ՁԱՆԳԻՏ**, *որից* **զանգիտել** *«վախենալ». տե՛ս Գէտ:*

Lag. Urgesch. *404* **հանգէտ** *բառից* uz *մասնիկով: Թիրեաքեան, Արիահայ բռ. 157 սանս.* çank *«վախենալ»:*

ՁԱՆՁՈՒԻԼ *տե՛ս Խուլ:*

***ՁԱՆԿԱՊԱՆ** *կամ* **ՁԱՆԳԱՊԱՆ**, *ի-ա հլ. «առնապան, ծնկները ծածկող կամ պատող մեծ գուլպայ կամ զրահ» Դան. գ. 21. Կղնկտ. Արծր., որից* **զանգապանակ**՝ *նոյն նշ. Սեբ. հրտր. Պատկ. էջ 63 (նորագիւտ բառ): Նոր գրականի մէջ աւելի սովորական է* **զանկապան**, *թէև բառիս ուղիղ ձևն է* **զանգապան**:

=*Ղնդ.* *zangōpāna- *կամ պհլ.* *zangpān *«առնապան» ձևից. այս բառերը թէև աւանդուած չեն իրանեան գրականութեան մէջ, բայց սովորական են նրանց կազմիչ մասերը, այն է՝ ղնդ.* zanga- =*պհլ.* zang *«սրունք» (=սանս.* jaṅgha- *«ոլոր», օսս.* zängä *«ոլորի ետևը») և ղնդ.* pāna- =*պհլ.* -pān=*պրս.* بان -ban *«պահող». Համմ.* **թարպան, առնապան, դաստապան** *ևն. կայ նաև վերջի մասի հայերէն թարգմանութեամբ՝* **զանգապան** *Արծր. 132:—Իրանեանից փոխառեալ են նաև արաբ.* زنجبيل zunjub, زنجبان zanǰuban, zunǰubān *«գօտի»* زنجبة zanǰabat *«փոքրիկ բարձի նման մի ծրար է, որ արաբ կանայք յետոյքի վրայ են կապում, որպէսզի մեծ երևայ. որովհետև արաբների մէջ յետոյքը մեծ կանայք շատ յարգի են» (ըստ Համուս Թրք. Թրգմ. Ա. 156):—Հիւբշ. 149:*

ՆՀՌ որպէս ծնկապան: Lag. Urgesch. 718 տուաւ նախ ուղիղ մեկնութիւնը, որից յետոյ Lag. Gesam. Abhd. *24, Պատկ. հրտր. Սեբ. էջ 199: Հիւնք.* **զահգակ** *բառից է հանում:*

ԳԻՒ.—Նոյն արմատից, բայց տարբեր բառ է **զանգալ** *երև. «առնապան». Համմ. նաև Ղրբ.* **զինգ, զինգէր** *(յգ.) «տաւարի ոտներ՝ խաշի համար»:*

***ՁԱՆՃԱՊԻԼ** *«կոճապղպեղ». որ և* **զնճպիլ** *Բժշ.* **զնճուպիլ** *Առաք. յծ. սահմ. 468:*

=*Արաբ.* زنجبيل zanǰabīl, *թրք. պրս.* zenǰefil زنجفيل, *նյն.* ζιγγίβερις, ζαντεπήλ, ζεντεπήλ, *լտ.* zingiberi *ևն, բոլորը «կոճապղպեղ». բուն ծագումը տե՛ս* **անգրուեղ**:

Ուղիղ մեկնեց նախ ՀԲուս. § 697:

ՁԱՆՁԱՆՆԵԼ *տե՛ս Անց:*

ՁԱՇԱԻԱԿ. *անստոյգ բառ, որ մէկ անգամ Բառ. երեմ. էջ 201 դնում է մախազ բառի բացատրութեան մէջ, այսպէս. «անյայտ կամ զաշաւակ կամ զազիր կամ սով». ըստ այսմ զաշաւակ Բուի քէ նշանակում է «անյայտ» և կամ «զազիր», ինչպէս է նաև մախիզ բառը, որ տե՛ս:*

ՁԱՁԱՂԵԼ *տե՛ս Աչք:*

ՁԱՁԱՅՈՒ *տե՛ս Աչք:*

ՁԱՊԱՐԱԿ *տե՛ս Սպարակ:*

***ՁԱՊԱՐՃԱՏ** *«բիւրեղ» (յետին ժամանակի բառ):*

=*Պրս.* زبرجد zabarǰad *«է անուն գոհարեայ քարի միոջ, որ ըստ դունոյն է կապտաշորթ»:*

Ուղիղ մեկնեց Պատկ. Драг. камни, *էջ 25:*

ՁԱՌԱՃԱՆԵԼ *տե՛ս Ածել:*

ՁԱՌԱՄ *տե՛ս Ամ:*

ԳԴ պրս. زرمان zarmān *«ծեր, զառամեալ»: Հիւնք. բառամիլ բառից: Յակոբեան, Բիւր. 1899, 600 պրս.* zarmān: *Թիրեաքեան, Արիահայ բառ. էջ 32 պհլ.* zarman, *իսկ էջ 157 պրս.* zar *«ծեր»+հյ.* ամ *«տարի» բառերից:*

ՁԱՌԱՆՑԵԼ *տե՛ս Անց:*

***ՁԱՌԱՍԽԱՆԱՅ** *«զինարան». Նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Միխ. առ. 485 «Առին զամենայն ծանրութիւն ոռճկացն նոցա և զառատխանայս նոցա և կոչեցեալն զնետսն և զաղեղունս և զնիզակն և զվրանս նոցա և զամենայն սպասուցն»:*

=*Պրս.* زادخانه zaradxāna *նոյն նշ. տե՛ս* **զրահ** *բառի տակ:*

Աճառ. Հայ. նոր բառեր հին մատեան. Ա. էջ 175 մեկնում է բարդուած պրս. خانه *«տուն,-արան» բառով: Հ. Գր.*

Սարգսեան, Բազմ. 1927, էջ 180 մեկնում է հյ. առատ *բառով, իբր «առատ կերակրի տուն, ամբար»!*

***ՋԱՌՆԿ** *«ոսկու կամ արծաթի բարակ թերթ, որ իբր զարդ կպցնում են. տճկ.* վարազ», *որից* զառեկել *«զառեկով պատել». երկուսն էլ գիտէ միայն ՀՀԲ, իբր Հին Քհրաականներից. իսկ ՋԲ համարում է յետին և կամ նոր բառ.—* Riggs, *էջ 23 ունի* զառնկուն «gilt, *ոսկեզօծ»։*

=Պրս. زر zar *«ոսկի» բառից. համմտ. վարը* զառիկ։

Justi, Zendsp. *118 գնդ.* zairi *«դեղին», սանս.* hari, *պրս.* zar *«ոսկի» ևն։*

***ՋԱՌԻԿ** *«մկնդեղ,* arsenicum*» խոր. աշխ. 608. Գաղիան. Ոսկիփ. Վրթ. քերթ. գրուած է* զառիճայ *Բառ. երեմ. էջ 98։*

=Իրաններեն փոխառութիւն է. համմտ. պրս. زرنی zarnī, هرزه zarna, *որից փոխառեալ են ասոր.* زرنیخا zarnīka (Brockelmann, *99 բ), արաբ.* زرنیق zarnīq, زرنیخ zarnīx, *թրք.* زرنیق zərnəq, *աղաւ.* zərnəx, *չաղաթ.* زرنیک zirnek, *քրդ.* زرنیک zernīk *ևն, բոլորն էլ «մկնդեղ» նշանակութեամբ։ Իրաններենից է փոխառեալ նաև յն.* ἀρσενικόν, *որ արդէն Արիստոտել յիշում է և որ ժողովրդական ըստուգաբանութեամբ մօտեցրած է* ἀρσενικός *կամ* ἀρρενικός *«արու, արականը» բառին (տե՛ս* Schrader, Reallexicon, *Հիւբշ.* IF, 19, 457 *և* Boisacq, *83). յունարէնից էլ փոխառեալ են լտ.* arsenicum, *ֆրանս.* arsénic *ևն։ Փոխառեալ բառերը երևան են հանում միջին պրս. **zarnīk *ձևը, որի աւելի հինն էր հպրս. **zarniya-, *կազմուած* zar- *«դեղին» արմատից. համմտ. գնդ.* zaranya- *«ոսկի. ոսկեայ»,* zairi- *«դեղին, ոսկեգոյն», պրս.* zar, zarr *«ոսկի»,* zarrīn *«ոսկեղէն». որով* զառիկ *բուն նշանակում է «ոսկեգոյն դեղին»։ Հայերէն բառը ծագած է երկրորդական **zarrik *ձևից, որ յառաջացած է անշուշտ պրս. **zarnīk-*ից, n բաղաձայնը նախորդ r-ի հետ նոյնացնելով։—Հիւբշ. 149։*

Ուղիղ մեկնութիւնը տուաւ նախ Böttich. Horae aram. *33, 58,* Rudimenta 41, 106,Lag. Arm. Stud. *§ 757 ևն։—* Justi, Zendsp. *118 գնդ.* zairi *«դեղին» սանս.* hari, *պրս.* zar *«ոսկի» ևն։*

***ՋԱՌԻՆԱՅ** *«զառիկ, մկնդեղ», ունի միայն Բառ. երեմ. էջ 98, որից առնում են ՓԲ և ԳԲ։ Ունի նաև նորայր, Բառ. ֆր.* orpiment *բառի տակ։*

=Պրս. هرزه zarna *կամ* زرنی zarnī *«զառիկ, մկնդեղ». սրանց վրայ աւելի ընդարձակ տե՛ս* զառիկ։—*Աճ.*

***ՋԱՌՆԱՐ** *«մի տեսակ բոյս. Թերևս* flacurtia cataphracta*» Բժշ. ունի միայն Հրուս. § 698։*

=Արաբ. زرنب zarnab. *տե՛ս Կամուսի Բրք. Բրգմ. Ա. 154, որի տուած նկարագրութիւնը ճիշտ նոյն է Հայբուսակի նկարագրութեան հետ։*

Ուղիղ մեկնեց Հրուս. անդ։

***ՋԱՌՆԱԻՈՒԼՈՏ** *«մետաքսահիւս կերպաս». մէկ անգամ ունի Եզեկ. ժզ. 13 «Եւ հանդերձ քո բեհեզ և զառնաւուխտ և ճաճանչաւուխտ». (այլ Բրգմ. Սիր. աւետ. 306՝ Զհանդերձս քո բեհեզս և զզարդս քո սնդուս զառնաւուխտ և ճաճանաւուխտ). սրանից առնելով էլ Վրդն. ծն. ունի «պատմուճան զառնաւուխտ Բենիամինի»։ Ուրիշ վկայութիւն չկայ։*

=Իրաններեն փոխառութիւն է և բուն նշանակում է «ոսկեհիւս». կազմուած է զառն *և* ւուխտ *բառերից. առաջինն է պրս.* زر zarr *«ոսկի», հին ձևը *zarn (տե՛ս Հիւբշման,* Pers. Stud. *259). երկրորդն է պրս.* bāft *«հիւսեալ» <*vafta-<*ufta-<*ubda-. (հայերէնի մէջ հնագոյն* ft *դառնում է* ւխտ. *համմտ. պրս.* hazäraft>*հյ.* Հազարաւուխտ, *եաւթն >* օխտը, *աւձ>*Ղրբ. օ՛խծը։ *Ըստ այսմ* զառնաւուխտ *նոյն է պրս.* zarbaft, zarrbaft, zarbāft, zarbāf *«ոսկեհիւս հանդերձ» բառի հետ։—Հիւբշ. 149։*

*Նշ*Բ *անցողակի յիշում է պրս.* զէրպէֆտ։ *Վերի ձևով մեկնեց նախ Հիւբշ.* ZDMG, *35 (1881) 658 և* Pers. Stud. *էջ 187, 259, Թիրեաքեան, Արիահայ բռ. 158 պրս.* زرآویخت zar-āvīxt *«ոսկի կախուած»։*

***ՋԱՌՔԱՇ** *«ոսկեթելով ասեղնագործուած» Վրդն. սղ. խդ. էջ 161 «Ագանին թագուհիք հանդերձ զառքաշ առ ստորոտովք, խայտա-*

նկար և ազգի ազգի գունովք և նկարուք»։ Այս կտորը դրուած է իբրև մեկնութիւն Սղ. խդ. 14 համարի (Ամենայն փառք դստեր թագաւորի ի ներքոյ, ի վերջաւորս ոսկեհուռս զարդարեալ և պաճուճեալ), ուր զառհաշ անշուշտ դրուած է ոսկեհուռն բառի համար։ Բառիս մի նոր վկայութիւնը գտնում եմ Այրիվ. 8 ա. «Զառքաշ խիլայ վերն յարկի, բեհեզ հաջաղ պարիսակի»։

=Պրս. شكرز zarkaš «ոսկեթելով հիւսուած կերպաս կամ զգեստ», որից փոխառեալ է նաև վրաց. ზარქაზი zarkazi «ոսկէ կամ արծաթէ թել. ոսկեհուռն կերպաս մետաքսեայ»։ Պարսիկ բառը կազմուած է zar «ոսկի» և kaš- «քաշած» բառերից։— Հիւբշ. 150։

Որովհետև բառը հայկական հոլով է, ուստի ՆՀՒ դնում է զառհաշ կամ առհաշ. իբր թէ առ նախդիրով կազմուած՝ հաշել բայից. յիշում է նաև պրս. zer «ոսկի»։ Բայց հանդերձ գոյականը առաջ դրուելուց յայտնի է որ զ նախդիր չէ. բացի սրանից, պրս. և վրաց. ձևերը կասկած չեն թողնում, որ բառի բուն ձևն է զառհաշ, որի մօտ դրուած «առ առորոտուվք, ի վերջաւորս» բառերն էլ այնպես լաւ յարմարում են յիշեալ «առեղնագործ» իմաստին։ Ուղիղ մեկնութիւնը վերի ձևով տուաւ Հիւբշ. ZDMG, 35 (1881), 658։

ՉԱՏ տե՛ս Հատ։

=Կազմուած է զ նախդիրով՝ հատ արմատից։

Ուղիղ մեկնեց նախ ՆՀՒ։ Հիւնք. զօդ բառից է հանում։ Թիրեաքեան, Կարնամակ, ծան. 31 պհլ. ջատբար «անջատ» ձևից. իսկ Արիւհայ բո. 158 պրս. جدا juda «զատ» բառից. վերջապէս՝ անդ, էջ 233 հատանել բայից։

ԳԻՒ.—Սլմ. վն. զատ «հեռու», Ողմ. զատ «հեռու», զատիլ «զատել», Մկ. զատն «հեռու», Մրղ. զատէլ, Պլ. Ռ. Սեբ. զադ, զադէլ, Խրբ. Տիգ. զադ, Ասլ. զադ, զա*, զադէ՝լ, ՀԹ. իզօդ, իզոդ, իզադիլ, Հճ. զօդ, իզօդ։ Նոր բառեր են՝ զատանց, զատամանց, զատու, զատուց, զատանալ, զատացնել, զատնեզատ, զատուիլ, զատատուն։—Բառս շատերի մօտ կորած է՝ փոխարէնն գործածուելով ջոկ (Երև. Ախց.), դուրս (Սչ.)։

ՉԱՏԻԿ, ի–ա Հլ. «զենումն. զոհ» Ոսկ. Ի–փես. 701, որից զարգանալով՝ «Հրէից պատեքը. 2. Քրիստոնէից Յարութեան տօնը» ՍԳր. Կոչ. 280 (յգ. սեռ. զատկաց). Եգն. լայնաբար՝ «տօն, հանդէս» Փարպ. Մանդ. «մահմետականների տօնը» Յայսմ. յնվ. 30, որից՝ զատկաշաբաթ Ջրր. կթ., զատկատամար Մարթին., զատկանալ Մարթին. Հեթում ատ., կրկնազատիկ Տօնակ., զատկական (նոր բառ) ևն։

Հներից Անան. Շիրակացի (հրատ. Պատկանեան, էջ 22) մեկնում է. «Անուանի զատիկ Տեառն, այսինքն զատուցեալ յամենայն հեթանոսականաց և հրէականաց տօնից»։ Ճառընտիրն ունի. «Զատիկն ըստ եբրայեցւոցն (պասեհ) անցարան. իսկ ըստ Հայոց լեզուիս՝ ազատութիւն ի չարշարանաց»։ Այսպէս և Տաթև. ձմ. ճխբ. «Զատիկն ազատութիւն թարգմանի», Բրս. մրկ. 348 «Զատիկն թարգմանի անցք»։ Ըստ այսմ ՀՀՒ զատումն բառից. Աւետիքեան, Մեկն. Թղ. Պօղ. Գ. 288 «ի զատանելոյ առեալ, բացատրի զատումն և ելումն իսրայէլացւոց յեգիպտոսէ»։ ՆՀՒ զատումն կամ ազատութիւն, որ և վրաց. զատիկի։ Տէրվ. Նախալ. 80 գանել, գեռուլ, պրս. zadan, հպրս. jan, սանս. han ձևերի հետ՝ հնխ. gha, ghan «զարնել, վիրաւորել» արմատից. ըստ այսմ զատիկ բուն նշանակում է «զենումն»։ Հիւնք. պրս. zadagī, zadiš «զենումն, հարուած, սատակումն»։ Ալիշան, Հին հաւ. էջ 315 վրաց. զադեն, եդիպտ. Սադի, հնդ. Սադի աստուածների և յն. Զեթէս, հյ. Սաթենիկ անունների հետ. յիշում է նաև Զատիկ «չաստուած արդարութեան յԱրեւելս»։ Կուրտիկեան, Մասիս, թ. 130 սանս. սfատ «ուտել», արաբ. զատ «պաշար» բառերի հետ։ Քննասէր, Օրաց. Հիւանդանոցի, 1905, էջ 340 հին հեթանոսական մի տօն է համարում, որ գիշերահաւասարին, այն է եղանակների

զատուելու ժամանակ էր պատահում, որով և պատշաճապէս զուգորդուեց Հրէից պասեքին։ Մուշեղ Եպս. (Գաւառի տարեցոյցը, 1911, էջ 55) հնդ. Սատի աստուծոյ և հյ. ազատ բառի հետ։ Հ. Ն. Անդրիկեան, Բազմ. 1907, 107 բուն նշանակութիւնը դնում է «զոհի անասուն» և կցում է գւռ. զատ «կերակուր» բառին։

Գիմ.—Ախց. կր. Մկ. Ջղ. զաւիկ, երև. Մշ. Տփ. զաղիկ, Ալշ. Համշ. Ննխ. Պլ. Ռ. Սեբ. Սչ. զադիգ, Խրբ. զաւիգ՝, Գոր. Ոզմ. Վն. զաւիկ, Ագլ. Մրղ. Շմ. Սլմ. զաւիկ՝, Ասլ. զադիգ, զադիյ, Հճ. Տիգ. զադիգ, Ղրբ. Մժ. զէտէգ՝, Զթ. զադր՛գ։—*Նշանակում է նաև ծանօթ միջատը։ Նոր բառեր են՝* ծառազաւիկ, զաւկաոեխ, զաւկաղէմ, զաւկուրիւն, զաւկուվիլ, զաւկշէֆ։

Փոխ.—Վրաց. ზატიკი զաւիկի *կամ* ზადიკი զադիկի «ոճն, Զաւիկ, Զաւակի քառասունք» Գործ. ժբ. 4, ზატიკობა զաւիկորա *կամ* ზადიკობა զադիկորա «ոճն ոճնել», քրդ. ژاژک zadik «Զաւիկ, Յարութեան ոճնր»։

ՁԱՐԱԶՈՒԻՔ «մի տեսակ ծաղիկ». Նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած միջնադարեան մի տաղում. «Սըփռին գիւմպիւլն ու մէնէվշէն, զարազուք, մուրտ ու շուշան» (Նոր ժող. Գ. 13, հանուած 1682 թ. գրուած մի տաղարանից)։

ՁԱՐԱՄՈՒՐ *տե՛ս* Արամուր։

*ՁԱՐԳԱՆԱԼ *տե՛ս* Արգ։

=*Ջ նախդիրով կազմուած է* արգ *արմատից։*

ՆՀԲ «արմատն է արգոյ, յարգի, յառաջ և աճ»։ *Այս բառի վրայ չեն խօսած ո՛չ* Lagarde *և ո՛չ Հիւբշման։ Վերջինս* IF, 19, 457—480, *Թրգմ. ՀԱ. 1907, 186 դնում է ծագումն անյայտ բառերի շարքը։* Patrubány, *ՀԱ, 1907, 186 ծանօթ. զ և առ նախդիրներով՝ գա-ևալ=գալ բայից։* Pedersen, Philologische Wochenschrift, *1907, № 1, ՀԱ, 1907, 95 բ «անշուշտ պարսիկ խմբին կը վերաբերի» ասելով՝ կցում է* արգաւառ, արգաւանդ, արգոյ *բառերին։ Ղափանցեան տե՛ս* արգասիք *բառի տակ։*

+ՁԱՐԴ *տե՛ս* Արդ։

=*Կազմուած է զ մասնիկով արդ արմատից։*

Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ. միւսները տե՛ս արդ բառի պատմութեան մէջ։

Գիմ.—Ալշ. Ջղ. Սչ. զարդ՛արել, Մշ. զարդ՛ըրել, Կր. զարդ՛ըրէլ, Ախց. զարբարէլ, Մկ. զուրաուրաւիֆ՝, Ոզմ. զուրդ՛ուրմնիֆ՝, Վն. զուրաուրմնիֆ՝, Տփ. զարբըրիլ, Տիգ. զուրբըրէլ, Ագլ. զըռդում՛րիլ, Գոր. երև. Ղրբ. զրբա՛րէլ, Սլմ. զուրբրել, զմնբրել, Մրղ. զուռբի՛րէլ, Հճ. զայդ՛այէլ, Զթ. ջայդ՛ըյիլ, ջարդ՛ըրիլ։—*Նոր բառեր են՝* զարդուման, զարդուուկ, զարդափչած, զարդուտրիլ, *և կրկնութեամբ՝* զար-զարդարաւիֆ, զարուիլ-զարդարուիլ։

Փոխ.—Ուտ. zärt'är «զարդարուած». ինչ. gabunen zärt'är gög «աստեղազարդ երկինք»։

ՁԱՐԵՀ «ծովային անծանօթ մի խոտ է» Ամիրտ. ունին միայն ԱՒ և ՀԲուս. § 699 (ըստ Ուղուրիկեան տե՛ս ԳՒ, էջ 457 և 1405) «լօսի տեսակ. Թուի varech, sargasse, fucus, guemon»։

=*Արաբ.* زرح zarḥ «զարհ խոտը». այս բառը չունի Կամուս, բայց գիտէ սրա արմատը زرح zarḥ «հետացնել, մի բան մի կողմ նետել» նշանակութեամբ. հմմտ. նոյն խոտի համար Պէյթարի տուած բացատրութիւնը՝ թէ «ծովն ի խորէն դուրս կը նետէ զայս»։

Ուղիղ մեկնեց ՀԲուս. անդ։

ՁԱՐՁՈՐՄԻ «արեամ լցեալ». այսպէս ունի միայն Բառգիրք Երեմիայ Մեղրեցւոյ. էջ 98։

ՁԱՐԹ «բացի, զատ» Անսիզք. 47. որ և ունինք զարթել Անսիզք 45 և զարդել Վստկ. 27 ձեւերով. ճիշտ ինչպէս ունինք աճց, աճցել, թոդ, թոդել «բացի»։

Գիմ.—Զարթ Զթ., զարտ Ակն., զարբեէ, զարբեի երև. Լ. Շլ. Տփ.։

ՁԱՐԹՆՈՒԻ *տե՛ս* Արթ։

*ՁԱՐԻՐ «դեղին կոճ բոյսը» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 700։

=*Պրս.* زرير zarīr «դեղին կոճ»։—Աճ.

+ՁԱՐԿ *տե՛ս* Հար։

=*Կազմուած է զ մասնիկով՝ հար արմատի կ-ով աճած հարկ ձևից։*

Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ։

Գիւր.—Մշ. զարկել, *Սլմ.* զարկել, *Մրղ.* զարկել, *Մկ.* զարկիլ, զանգիլ, *Ոզմ.* զարկիլ, *Սլղ.* զարգել, *Տիգ.* զարգիլ, *Սչ.* զարնել, *Ախց. Կր. Ննխ. Պլ. Ռ. Սեբ.* զարնել (*Հրմ.* զա՛րկ, զարգ, *Ռ.* զարֆ), *Աղ.* զարնէ՛լ, *Վն.* զանել, *կա.* զարկի, *Խրբ.* զէնիլ, *կա.* զարգի, *Համշ.* զայնուշ, *կա.* զարգի:—*Նոր բառեր են՝* զարնուիլ, զարկուիլ, զարկուկ, զարկմաճ, զարկիաշ, տկզար «*տիկ զարնող, այն է՝ տիկ փշող*», *իսկ Ղրբ.* զարկն ընգնել «*ուժից վեր բանների ձեռնարկել, վատահութեամբ գործել*»:

—ՁԱՐՀՈՒՐԻԼ «*սարսափիլ*»:

=*Կազմուած է պարզական* արն «*վախ*» *արմատից՝ զ սաստկականով և կրկնութեամբ.—ընդարձակ տե՛ս* աճ:—*Աճ.*

ՆՀՔ, Հիւնք. և Հիւրշ. IF, *19, 457—480, Թրգմ. ՀԱ, 1907, 185 դնում են* արհաւիր *բառից:*

+ՁԱՐՄ «*ցեղ*» *ևն:*

=*Կազմուած է զ մասնիկով՝* արմ *բառից. ընդարձակ տե՛ս* արմ *բառի տակ:*

ՆՀՔ լծ. սերմն և արմ: Windisch. 21 *սանս.* harma «*տուն*»: Müller, SWAW, 38, 580 *սանս.* harmya: Justi, Zendsp. *123 կասկածով զնդ.* zarəmaya «*կանաչագոյն*» *բառի հետ: Տէրվ.* Altarm. 91 սերմն *բառի հետ, որ տե՛ս վարը առանձին: Հիւնք.* սերմն և *լտ.* germen: Jensen, Hitt. u. Arm. *118 հաթ.* Τροκοζαρμας *դիցանուան և նման անունների երկրորդ մասի հետ:* Patrubány, *ՀԱ, 1906, 57* արմ *բառի հետ հնխ.* sero «*հոսիլ*» *արմատից: Պատահական նմանութիւն ունի արաբ.* زرم zarm «*ծնկիլ*» (*Կամուս, Թրք. Թրգմ. Գ. 473*):

Գիւր.—Մշ. Տփ. զարմ (*միայն շան* զա՛րմ *նախատական բացատրութեան մէջ գործածական են երկուսն էլ*). *Սլմ.* զարմ. *Աբ.* զարբ:

ՁԱՐՄԱՆԱԼ *տե՛ս Արմանալ:*

*ՁԱՐՈՒ «*հերձի ծառը*». *ունի միայն ՀԲուս. § 701:*

=*Արաբ.* زرو zirv «*հերձի*». *սխալմամբ կարելի է նաև կարդալ* ziru, zaru. *Կամուս, Թրք. Թրգմ. Գ. 860 յատկապէս շեշտում է թէ սխալ է կարդալ* zurv, zarv:

Ուղիղ մեկնեց ՀԲուս. § 1684:

*ՁԱՐՈՒՐ «*խնձոր, ալոճ*»? *ունի միայն ՀԲուս. § 702, բայց առանց յիշելու թէ ո՛ւր է գործածուած և ի՛նչ նշանակութեամբ:*

=*Արաբ.* زعرور za'rūr «*ալոճ*» (*տե՛ս Կամուս, Թրք. Թրգմ. Ա. 876*).

Այս արաբ բառով մեկնում է ՀԲուս. անդ, բայց տալիս է նրան «ընտանի խնձոր, վայրի խնձոր և ալոճ» նշանակութիւնները, որոնցից մի՛միայն վերջինը գիտէ Կամուս:

*ՁԱՐՏԱԳՈՅՆ կամ ՁԱՐՏԱԳՈՒՆ «*նիրկի համար գործածուած մի տեսակ դեղին ծաղիկ կամ քրքում*» *Բժշ.—իբրև անձնական յատուկ անուն էլ գործածուած է 1155 Թուի մի արձանագրութեան մէջ (Վիմ. տար. էջ 30):*

=*Պրս.* زردگون zardgōn «*դեղնագոյն, դեղներանգ*», *որ կազմուած է պրս.* زرد zard «*դեղին*» և گون gōn «*գոյն*» *բառերից. իրանեան հին ձևերը պիտի լինէին պհլ.* *zartgōn, զնդ.* *zairitagaona-: *Վերիններից տարբեր է պրս.* zaryūn «*դեղնագոյն, խաշխաշ*», *որ համառօտուած է* بزرگون abargōn *բառից:—Հիւրշ. 150:*

Ուղիղ մեկնեց նախ ՆՀՔ, յետոյ էլ Հիւրշ. ZDMG, *35(1881), 658:*

ՁԱՐՏԱԿ «*մախաղ անկար, որ է պարկ*». *ունի միայն Բառ. երեմ. էջ 99:*

*ՁԱՐՏԱԿ «*դեղնագոյն*». *նորագիւտ բառ, որ մէկ անգամ գործածուած է Յայտնութեան հին թարգմանութեան մէջ. «Ահա ձի զարտակ» Յայտ. Զ. 8: Սրա հետ նոյն է* զերդակ «*դեղին*», *որ գործածուած է Խոր. աշխ. տպ. Վենետ. 1881, էջ 46.* զերդակ ձիով «*դեղնագոյն ձիով*» (*ըստ Նորայր, տե՛ս Ց. Մուրատի Յայտ. յովհ. էջ շժթ*):

=*Պհլ.* *zartak, *պրս.* زردک zardak և زرد zarda, *սոգդ.* zērtāk «*դեղին, դեղնագոյն*». *իրանեանից փոխառեալ է նաև վրաց.* ზერდაგი զերդագի «*буланая лошадь, դեղնաշագրիք ձի*»: *Պհլ.* zaptak *բառը աւանդուած է «ձուի դեղնուց» նշանակութեամբ* (Nyberg, Hilfsb. *1, 48 և 2, 254*). *արմատն է զնդ.* zairita-, *պհլ.* zart, *պրս.* زرد zard «*դեղին*»:

Գտաւ ու մեկնեց Ֆ. Մուրատ, ի Յայտ. յովհ. էջ 165. նոյնը նաև Տաշեան ՀՆ, 1906, 78։

ՁԱՐՏՈՒՂԻ *տե՛ս Ուղիւ։*

***ՁԱՐՐԻՆՏԻՐԱԽՏ** *«թուրինջի ծառ» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 703։*

=պրս. زرّين درخت zarrīn-diraxt *(տե՛ս Շիայնշնայդերի հաւաքածոյի մէջ՝* WZKM, *12, 90), որ կազմուած է պրս.* zarrīn *«ոսկեգոյն» և* diraxt *«ծառ» բառերից և նշանակում է բուն «ոսկեգոյն ծառ»։*

Ուղիղ մեկնութիւնը մտածած է նաև ՀԲուս. անդ։

ՁԱՐՕՇ *(գրուած նաև* զարոշ*) «լերդախոտ կոչուած բոյսը.* teucrium, chamedrys*» Բժշ. Գաղիան. (ըստ ՀԲուս. § 704 և § 906. Տիրացուեան,* Contributo, *§ 468 և § 470). կոչւում է նաև կենաւար, գետնի կաղնի, տճկ. գըսսուերգ մաճմուտ, ֆրանս.* germandrée *(Նորայր, Բառ. ֆրանս. էջ 597 ա)։—Ուրիշ է գուռ. զարոշ «մի տեսակ թռչուն»։*

ՁԱԻԱԿ, ի–ա *հլ. «որդի, ծնունդ, ցեղ, սերունդ» ՍԳր. (հնագոյն իմաստն էր «սերունդ, ցեղ՝ առանց սեռի խտրութեան. բայց յետոյ սահմանափակուեց առաջին սերունդի համար՝ նոյնպէս առանց սեռի խտրութեան, ինչպէս ցոյց է տալիս գուռ. զաւակաւուն «արգանդ» բառը. հմմտ. Մալխասեան, Մշակ 1913. № 103), որից՝* զաւակաբար *Փարպ.,* զաւակագործել *Փիլ. լին.,* անզաւակ *ՍԳր. Եփր. ծն.,* անզաւակել, անզաւակեցուցանել *ՍԳր.,* անզաւակութիւն *ՍԳր. Ոսկ. ես. Եփր. Եբր.,* բարեզաւակութիւն *Փիլ. ել.,* շահազաւակ *Ագաթ.* բազմազաւակ *Դէ. ես. Նար. գնձ. եկեղ.,* մեծազաւակ *«տոհմակից, ազգակից» Փիլ. Խոր.,* նոյնազաւակ *Խոր.։*

Klaproth. Asia polygl. *102* աֆղան. suai, *օսս.* sewellom: Müller, SWAW, *38, 580 սանս.* yava, *պրս.* ǰaw, *յն.* ζέα *«դարի, ցորեն» բառերի հետ։* Pictet, 2, 361 *սանս.* sava, sūnu, *յն.* υἱός *«որդի»։* Justi, Zendsp. *117 զնդ.* ǰu *«ապրիլ», աֆղան.* zavāk *«կեանք»։* Lag. Arm. Stud. *§ 766 յիշում է հյ. ճաւակ բառը։* Bopp, Gram. comp. *1, 14 սանս.* çāva-ka *«ձագ»,* çvi *«աճիլ» արմատից։ Տէր-վիշ.* Altarm. *53—55, նախալ. 100* յաւելով, յաւէտ, լուծ, լոկ ևն ձևերի հետ՝ *հնխ.* yu, yug *արմատից։ Մառ,* ЗВО, *5, 319 գնդ.* ząθwa *ձևի հետ՝ իբր *զաճուակ։ Հիւնք. յն.* σπέρμα *«սերմ, սերունդ» բառից։* Jensen, ZDMG, *48, 458 և* Hitt. u. Arm. *94 հաթ.* spai, spa, sw, swi *=*zapai *ևն։* Patrubány, SA, *1, 210 պրս. **zava-ka *ձևից. հմմտ. սանս.* hava-na *«զոհ», զնդ.* zao-tar *«քահանայ»։ Ղափանցեան,* ЗВО, *23, 351 վրաց.* զվեվա *«ծնիլ»։*

Գիւռ.—Ագլ. Մշ. Շմ. Ջղ. Կր. Տփ. զավակ, *Սչ.* զաւագ, *Ալշ. Երև. Խրբ. Նախ. Պլ. Ռ. Սեբ.* զավագ, *Ասլ.* զավագ, զավայ, *Մկ.* զովակ, *Սլմ.* զովմկ՝, *Ոզմ.* զովմակ, *Մրղ.* զովմկ՝, զովմյ, *Տիգ.* զովմագ, *Զթ.* զավօգ, զավոգ, *Հճ.* զավօգ*—նոր բառ է զաւակաւուն «արգանդ»։*

[Ձաւել «սպառել կամ հրաժարիլ». ունի միայն Բառ. երեմ. էջ 99. բայց անշուշտ սխալ է և պետք է կարդալ զրաւել, *ճիշտ ինչպէս որ էջ 104 ունի* զրաւել *«սպառել կամ հրաժարիլ»։ Ուզում է մեկնել* զրաւել *ի կենաց «մեռնիլ» դարձուածը։—Ա.Ճ.]*

ՁԱԻԵԼԱՅ *«ամեհի կամ տրմուղ կամ լծընկէց». ունի միայն Բառ. երեմ. էջ 99։*

ՁԱԻԵՇՏ *«կատակ, երգիծանք», արմատ, որ առանձին աւանդուած չէ. սրանից կայ միայն զաւեշտարար «կատակերգու» Հին բռ. նոր գրականի մէջ ո՛չ միայն կենդանացած է զաւեշտ արմատը, այլ և նոյն արմատից կազմուած են մի քանի նոր բառեր, ինչ.* զաւեշտական, զաւեշտաբան, զաւեշտաբանական, զաւեշտախօս, զաւեշտաբերք։

Հիւնք. ճաւասի բառից։

ՁԱԻԵԱՆ *տե՛ս Ճօշան։*

ՁԱՓԻ *տե՛ս Ղափեփ։*

***ՁԱՓՐԱՆ,** *գրուած նաև* զաւրան, զաֆրան *«քրքում» Վրդն. ծն. և մեկն. երգ. Վասակ. 91. Մխ. բժշ. 44. Յայսմ. մրտ. 19,* զափարան *Անկ. գիրք հին. կտ. 14։*

=Արաբ. زعفران za'faran *«քրքում», որ միջնաւորութեամբ տարածուած է նաև Ասիոյ և Եւրոպայի բազմաթիւ լեզուների մէջ. ինչ. իրք.* صفران safran, *ռմկ.* zafran, *քրդ.* za-

firan, *վրաց.* ზაფრანი զափրանի, *թուշ.* **զափրան**, *ռուս.* шафранъ, *հսերբ.* šafran, šavran, *նսերբ.* zaferan, zoforan, zapran, *լհհ.* szafran *իտլ.* zafferano, *սպան.* zafran, azafrano, *ֆրանս. գերմ.* safran, *հֆրանս.* safleur, zaflor, *պորտ.* açafrão, *անգլ.* saffron, *մբգ.* safrān, *ռում.* šofran, *նյն.* σαφράνι *ևն ևն։—Հիւբշ. 279։*

Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ։

—**ՋԲԱՂ.** *արմատ առանձին անգործածական, որից կազմուած են՝* զբաղիլ *«պարապիլ, մի բանի հետամուտ լինել, նրան յարիլ» ՍԳր. Ոսկ. մ. բ. 8. որ և* զբաղնուլ *Ղուկ. ժբ. 29. Եզն.,* բնդզբաղիլ *Լմբ. ժղ.,* զբաղանիք *Ա. կոր. է. 33,* զբաղասէր *Ոսկ. յհ. ա. 1,* զբաղկոտ *Լմբ. սղ.,* բազմազբաղ *Արշ. Յայսմ.,* անզբաղապէս *«իսկոյն» Ագաթ. Բուզ. Եփր. խոստ. ևն. վրիպակով գրուած է նաև* սբաղիլ *ևն։*

=Կազմուած է զ մասնիկով բաղ *արմատից (տե՛ս առանձին), որից նաև* բաղեղն *«պատատուկ» բոյսը. իմաստի զարգացման և այս բառերի յարաբերութեան համար հմմտ. պատաղիլ «զբաղիլ» և պատաղիճ «բաղեղ բոյսը»—Աճ.*

Lag. Urgesch. 490 *սանս.* bal:—

Հիւնք. **զբօսանիք** *բառից։*

Զբաւայեղծ *«զատեղծուած». ունի միայն Բառ. երեմ. էջ 99. Հայցական հոլով է և ուղղականն է բաղայեղծ, որ նոյնպէս ունի Բառ. երեմ. էջ 46 և մեկնում է «ստայեղծ»։ Համեմատութիւնից երևում է, որ առաջինն էլ պէտք է ուղղել «առեղծուած»։*

ՋԲՕՍ. *արմատ առանձին անգործածական, որից՝* զբօսանալ, զբօսանիլ *կամ* զբօսնուլ *«մի զուարճալի բանով ժամանակ անցկացնել» Մն. իդ. 63. Ոսկ. ես. 173 (զբուսեալ). Եփր. ծն. էջ 31 «մխոքը մի բանի տալով ցրուիլ, մտքով զբաղուիլ» Ոսկ. մ. բ.,* զբօսանիք *«զուարճութիւն» Բ. մկ. դ. 46. Դատ. ա. 15. Խոր., «խօսակցութեամբ ժամանց» Գ. թագ. ժբ. 27. Փիլ. լին., «դատարկ բաներով ժամանակ կորցնելը կամ հոգ, մտածմունք, մտմտուք» ՍԳր. Ոսկ. մ. ա. 22, «տագնապ» Եփր. գծ. 39,* զբօսացուցանել *ՍԳր.* զբօսուցանել *Ոսկ. մտթ. ա. 16. Բուզ. Վեցօր.* զբօսուցիկ *Ոսկ. ես.,* անզբօս *«մտմտուքներից ազատ» Յճխ. բրս. հց.,* բռնազբօսիլ *«բռնի յափշտակուիլ» Կանոն.,* բռնազբօսել *«բռնադատել, վրան բռնանալ» Ոսկ. ժզ. 26. Սերբր.,* բռնազբօսիկ *Ոսկ. մ. ա. 15,* բռնազբօսութիւն *«բռնադատութիւն, հարստահարութիւն» Ագաթ. Կոչ. Սերբր. Ոսկ. ա. կոր.,* մեծազբօս *«բազմաթիւ մտմտուքներ ունեցող» Ոսկ. փիլ. լին. ևն։ Այս բոլորը գրուած են նաև* զբուս-, սբօս- *և* սբուս- *ձևերով։ Նոր գրականի մէջ ընդունել ենք միայն* զբօս- *ձևը, որից էլ նոր բառեր՝* զբօսաշրջիկ, զբօսավայր, զբօսարան, զբօսալի *ևն։*

Հներից Լմբ. ժր. մրգր. էջ 124 (որ է յովն. Բ. 5) մեկնում է «Զբօսանք՝ մեր սովոր եմք զբաղիլն կոչել մաաց կամ զղջալարանացն»։ ՆՀԲ (անզբօս բառի տակ) լծ. յն. ἀπερίσπαστος *«որի միտքը ցրուած չէ»։ Հիւնք. յն.* πάσιον *«արբեցութիւն» բառից։ Թիրեաքեան, Պատկեր Ա. 194 համեմատում է պրս.* سپوزیدن sipōzēdan *«մի բան բռնութեամբ մի բանի մէջ խոթել, գամ զարնել, գետինը ցից խրել, դանակը փորը խոթել ևն»,* سپوزکار sipōzkār *«զանցառութեամբ կամ ուրիշ մի պատճառով գործը ուշացնող, ձգձգող». սրբանց աւելի հին ձևերն են պհլ.* spoǰ *«յապաղում»,* spoxtan spōǰēt *«հանել, դուրս հանել, հեռացնել», պաղենդ.* spōža *«մէկ կողմ դնել, հանել, մերժել, արհամարհել», որոնցից փոխառեալ է հյ.* սպուժել *«յապաղել, անտնալ, անհոգ գտնուիլ». հետևաբար այլևս* զբօսգործ *չունի այստեղ։ Նոյն, Կարնամակ ծան. 31 նոյն ընդ* սպուժել *=պրս.* sipoz:

—**ՋԳԱԼ** *(զգացի, զգա՛) «իմանալ, հասկանալ, խելքը գլուխը գալ, ուշաբերիլ, զգաստանալ» (գրուած նաև* սգալ, բսգալ*) ՍԳր. Եզն. Ոսկ. ա. Թես. ես. և մ. Եփր. Բ. տիմ. «լուր առնել, տեղեկանալ» Բուզ. Դ. խա, իբ, իդ, խգ. ե. լև. Բ. մկ. բ. 7. Թ. 1, ժբ. 21. ժզ. 20 (ըստ Նորայր, Կոր. վրդ. էջ 348), որից՝* զգալի *Փիլ.. Խոր. վրդվռ.,* զգալապէս *Փիլ.*

նխ., զգայաւոր «իմացական, մտաւոր» Կոչ., զգայուն Ոսկ. ես. վեցօր. եղն. Կոչ., զգացուցանել ՍԳր. Եւս. քր., զգացումն Սկևռ. լմբ., յանզգայիլ Ել. լբ. 18. Ոսկ. մ. ա. 6, զգաստ ՍԳր. Եւս. քր. Եփր. ծն. Լաբուբ. 40 (գրուած սգաստ), անզգաստ Ոսկ. մ. ա. 13, յանզգաստս վեցօր., յանզգաստուց Փարպ., զգաստական Ոսկ. ես. և մտթ., զգաստանալ Ոսկ. մ. ա. 15, զգօն եղն. Ոսկ., զգօնութիւն ՍԳր. Կոչ. Ոսկ. մ. բ. 8, զգօնանալ եղն. Ոսկ., զգօնաբարոյ Ոսկ. ես. էջ 2 (տե՛ս ՀԱ, 1911, 501), անզգամ ՍԳր. Ագաթ., անզգամիլ ՍԳր. եղն. Եւագր., անզգայ ՍԳր. վեցօր. եղն., բարեզգայ Մաշկ. յետին և սխալ ձևեր են անզգած Մագ. (փոխանակ ասելու անզգաց), անզգաբար, անզգապէս ԱԲ։ Նոր բառեր են՝ զգալիօրէն, անզգալաբար, անզգալիօրէն, զգայազուրկ, զգայացուցանել են։

=կազմուած է զ նախդիրով՝ գալ բայից, հմմտ. գալ ի միտս, ի խելս, ի գիտութիւն են ոճերը, յատկապէս՝ անձին զգալ=աշխ. ինքզինքին գալ, խելքի գալ։—Զգալ բայի հին կատարեալն էր *զեկի (գամ բայի եկի կատարեալից), որից կազմուած են՝ զեկուցանել (իբր անցողական) «լուր տալ, իմացնել, պատմել» ՍԳր. Կորիւն., իրազեկ «տեղեակ, լուրը իմացած» Գծ. իս. 21, 24 (ինչպէս ունինք իրազգաց հոմանիշը՝ Ագաթ., զգացուցանել «լուր տալ» ՍԳր. Եւս. քր.), ճաշազեկ Փիլ. լին. շատ յետնաբար զեկ «գիտութիւն, ծանուցում» Աբր. կրետ. 93։ Նոր գրականի մէջ՝ զեկոյց, զեկուցել, զեկուցագիր են։ Նախաւոր *զեկի կատարեալը այնուհետև կորչելով՝ փոխանակուեց նորակազմ զգացի ձևով։ Գալ բայի կոր. գացի ձևը նշմարելի չէր այլ ևս հայ ականջներին։—Հիւրշ. IF, 19, 469:

Ուղիղ մեկնութիւնը տուաւ նախ ՆՀԲ։—Lag. Urgesch. 94 gā արմատից, հմմտ. գերմ. er-fahren կամ աւելի լաւ՝ լտ. ex-periri, նման կազմութեամբ։ ՓԲ արմատը համարում է զեկ, որից շինուած է զգալ, իբր ՓԷ *զեկալ։ Հիւնք. զգալ, զգեցուլ (իրենց ածանցներով) դնում է զգ արմատից, որ գալիս է զեկ ձևից (ինչ. իրազեկ), իսկ զեկ հանում է պրս. զիկ, արաբ. զին «աստղաբաշխութիւն» բառից։ Ուղիղ մեկնութիւնը վերի ձևով տուաւ Հիւրշ. JF, 19, 469—472, հայ. թրգմ. ՀԱ, 1907, 248—9։—Patrubány, ՀԱ, 1907, 249 մեկնում է ըստգալ։ Karst, Յուշարձան, 407 զգօն բառին է կցում սումեր. sigal «ուշադրութիւն»։ Պատահական նմանութիւն ունին հյ. զգաստ և լտ. castus հոմանիշները։ ԳԻՒ.—Անշուշտ գրական փոխառութիւններ են՝ Ագլ. անըզգամ, Ջղ. անըսգ'ամ, Ախց. երև. Մշ. Տփ. անբսկամ, Սչ. անբսամ, Սլմ. անբսկ'ոմ, Զթ. անբսգ,օմ, անբսգ'ոմ, Խրբ. բսգ'ասդ, Շմ. սկալ «զգալ», Առանայի թըրքախօս հայոց մէջ՝ սգարաեմ «զգացում», Սղերդի արաբախօս հայոց մէջ՝ անսմամ (Բիւր. 1899, 116)։ Նո՞յն է արդեօք նաև զգալ Ջն. «շատ լիքը լինել» (ինչ. նաւը բեռան տակ կզգար)։

ՋԳԱՄԻԿ (-ծայ, -ծիր, -ծեալ) «հագնիլ» Ոսկ. ես. 180. փոխաբերաբար՝ «անձի մէջ կրել, համակուիլ (որևէ զգացումով կամ յատկութեամբ)» Գ. մակ. է. 3. Ներ. ե. 2. Յոբ. իբ. 12. իթ. 5. Մեքեր., զգածումն «հագնիլը» Ես. իբ. 12, զգածնուլ «համակուիլ, ըզբաղուիլ» Ոսկ. մ. ա. 15 և ա. տիմ., զգածուցանել «համակել» Փիլ. այլաբ., մբազգած Ոսկ. մ. գ. 4, խաւարազգած Ագաթ. Ոսկ. մ. ա. 20, խորհրդազգած Դիոն. եկեղ. Շնորհ. սգազգած Վեցօր., սևազգած Ոսկ. ես.—յետին գրիչները սրա հետ շփոթելով զգալ բայը՝ գրում են անզգած (իմա՛ անզգաց) Մագ., իրազգած (իմա՛ իրազգաց) Խոր. Փարպ. ՅՀ. կթ.—արդի գրականում չկայ զգածիլ «հագնիլ» նշանակութիւնը. կայ միայն զգածուիլ «յուզուիլ, համակուիլ», որից բոլորովին տարբեր է զգացուիլ «զգալի լինել»։ Այսպէս արևմտեան գրականի մէջ։ Իսկ արևելեան գրականը այս երկուսն էլ շփոթելով իրար հետ (իմաստի մերձաւորութեան պատճառաւ), գործածում է միայն զգացուիլ «զգալի լինել. 2. զգածուիլ»։

=կազմուած է զ մասնիկով գած արմատից, որ առանձին անգործածական է. բայց յայտնի երևում է նաև առիգած «ղենջակ, գոգնոց» բառի մէջ. (առի- թերևս նոյն է՝ ինչ որ առ, երի, երա- և նշանակում է «առ-

ջևը». իմաստի զարգացման համար հմմտ. պրս. پیشگیر pīš-gīr *«անձեռոց», կազմուած* pīš *«առջևը» բառից)։—Ա՛ճ.*

Նշ՛ի հագածիլ բառի հե՞տ։ Patrubány, *ՀԱ, 1907, 186* գամ *բայից է հանում։ Հիմնք. դնում է զգալ և ածել ձևերից։* Scheftelowitz, KZ, *5 (1927), 249* հսլ. vęzati *«կապել», հիսլ.* figim *«հիւսել», հբգ.* wichuli *«փաթաթուած բան», լտ.* velum *«առագաստ, քող»,* vexillum *«դրօշ» բառերի հետ հնխ.* vog'- *արմատից։ Այս բառերը* Pokorny, 1, 247 *(այսպէս նաև* Meillet, Dict. étym. lt. *1040) դնում է հնխ.* veg- *«հիւսել, կապել» արմատի տակ, բայի հսլ.* vęzati, *որ հանում է հնխ.* ang'h ->*հյ.* աճնուկ *«նեղ» արմատից (*Pokorny, *1, 62)։*

ՋԳԱՅՈՒ *տե՛ս Գայու։*

ՋԳԱՍՏ *տե՛ս Զգալ։*

Թիրեաքեան, Արիահայ բռ. 160 հանում է զգեստ բառից!

+ՋԳԵՆՈՒԻ *(զգեցայ, -ցի՛ր, -ցեալ) «հագնիլ» ՍԳր. եփր. ծն. Սեբեր., որից՝* զգեցուցանել *«հագցնել» ՍԳր.,* զգեստ *«հագուստ» ՍԳր.,* զգեստ ոսիճ *«կօշիկը սոնապանով միասին» (ըստ Հացունի, Պատմ. տարազի, էջ 84) Խոր. Բ. ծա.,* զգեստող *«զգեստները հագցնող արքայական պաշտօնեայ» Վրդն. պատմ. Հրատ. էմինի, էջ 45 (նորագիւտ բառ),* բարեզգեաց *ՅՀ. կթ.,* կարճազգեստ *Մծբ.,* զրահազգեստ *Խոր.,* խաւարազգեստ *Սեբեր.,* կաճաչազգեստ *Ագաթ.,* նուռազգեստ *Մծբ.,* բոցազգեստ *Ճառընտ.,* գառնազգեստ *Նեղոս. Ոսկիփ.,* տերևազգեստ *Ագաթ.,* աստուածազգեաց *Ագաթ.,* դիւազգեցիկ *Փարպ.,* զգեստակալ *(նոր բառ) ևն. գրուած ունինք նաև* սգեստ, սգենուլ *ևն։*

=Բնիկ հայ բառ՝ հնխ. ves *արմատից. հմմտ. սանս.* वस् vas *«զգեստ հագնիլ, վրան մի ծածկոց ձգել»,* वस्त्र vastra- *«հագուստ, զգեստ»,* वस्मत् vásman *«ծածկոց», գնդ.* vanh *(գ դէմքը՝* vastē*) «հագուիլ, հագնիլ»,* 𐬬𐬀𐬯𐬎𐬀 vastra- *«զգեստ», յոխար.* vastsi *«զգեստ», յն.* ἕννυμαι (<*fεσ-νυ-μαι) *«հագուիլ»,* εἷμαι *ևոլ.* fémma, *դոր.* fēmma *«զգեստ»,* εἶμαι (<*fεσμαι) *«հագուած եմ»,* ἕσσαι (<*fεσ-σαι) *«հագուած ես»,* ἕσθος *«զգեստ»,* ἑσθής *«զգեստաւորում, հագուստ»,* γέστρα *«զգեստաւորում», լտ.* vestis *«զգեստ, զգեցում»,* vestio *«հագնիլ, հագցնել», գոթ.* vasti *«զգեստ»,* vasjan *«հագուիլ» հբգ.* werjan *«զգեստաւորել», մբգ.* wester *«մրկըրտութեան շապիկ», հիսլ.* verja, *անգսք.* werian *«հագցնել», ալբան.* veš *«հագցնել»,* višem *«հագուիլ», քուչ.* yäššītar (-sk *մասնիկով) «հագնուած», կամխ.* waš, weš *«հագնուիլ» (*Walde, *830,* Boisacq, 257, Pokorny, 1, 309, Ernout-Meillet, *1056)։—Հնխ.* ves *պարզական արմատ չէ, այլ աճած է* eu *«հագնիլ» արմատից, իբրև* u̯-es. *հմմտ. հյ.* ագանիլ, *լտ.* ex-uo, ind-uo, *լիթ.* aviú, *հսլ.* ob-ują *ևն (տե՛ս* ագանիլ *արմատի տակ)։—Հնխ.* ves *առած է հայերէնի մէջ (*s*-ի անկումով)* *գ, բայական վերջաւորութեամբ* *գեցուլ, -սա *մասնիկով՝* *գեսա *(հմմտ.* հագուստ, գալուստ, զգաստ*), որոնք զ նախդիրով զօրանալով՝ դարձել են* զգենուլ, զգեստ*։ Աննախդիր ձևերը պահուած են մինչև այսօր գաւառականներում. ինչպէս՝ Ղրբ. Ղզ. կէնալ «հագնիլ», կէց տալ «հագցնել», կէ՛ց «հագուի՛ր», Շմ. կէցիլ, կէցվիլ «հագուիլ» (իմա՛* գենալ, գեցուիլ, գե՛ց*), Ալշ. Խ. Մշ. Նբ.* գ՛նստ *«զգեստ»—Հիւբշ. 446։*

Նշ՛ի զգեստ՝ *լծ. յն.* սfեմ, σχῆμα, habitus:—Peterm. 25 զգեստ=*լտ.* vestis, *յն.* ἑσθος*։ —*Diefenbach, Berl. Jahrb. *1843, 445 լտ.* vestis, *սանս.* vastra *և պրս.* gisī? Böttich. ZDMG, 1850, 355 *«զգեստ դալիս է զգենուլ բայից, ինչպէս իմաստ՝ իմանալ բայից»։* Lag. Urgesch. *612* ագուցանել, առագաստ, զգեստ, զգենուլ *դնում է* vas *արմատից։ Տէրվ.* Altarm. *80, Նախալ. 22, 58, 107 վերի ձևով։ Հիմնք.* զգենուլ, զգեստ *տե՛ս* զգալ*։* Karst, *Յուշարձան, 407 սումեր.* sig, sik *«հագուստ»։*

ԳԻՒ.—Սլ. սգեսգ, *Շմ.* սկէստ *և Զթ.* ըսգի՛ց *նշանակում են միայն «եկեղեցական զգեստ». Ագլ.* ըսկ՝ոճիլ *«հագնիլ». միւսները տե՛ս վերը։*

***ՋԳՈՅՇ** *«ուշադիր, անձնպահ, աչքաբաց,*

երկիւղած» Առակ. իբ. 29. Խոսր. Լմբ. առկ. և պտրգ. «ապահով անվտանգ» Փիլ. յովն., որից՝ ի զգուշի առնել «ապահովել, պահել, պահպանել» Կոչ. 308, զգոյշ լինել *կամ* զգոյշ կալ *ՍԳր.,* զգուշագոյն Ղևտ. *ժե. 31. Կորիւն,* զգուշալի *Փիլ. գ. 1. Ոսկ. յհ. ա. 15,* զգուշանալ *ՍԳր. Ոսկ. երր.,* զգուշաւոր *ՍԳր.,* զգուշեաւ *Փիլ.,* անզգոյշ *Ոսկ. երր.,* բազմազգուշալի *Կանոն.,* հանապազազգոյշ *Փարպ. ևն։*

=*Կազմուած է զ նախդիրով՝ գոյշ բառից. տե՛ս անդ։—Հիւբշ.* IF, *19, 464։*

ՆշՒ «որ ուշ ունի զգաստութեամբ»։ ՓՒ «անող զգեկ» (իրա-զեկ ևն). ուրեմն ուզում է հանել զգալ բայից. Lag. Urgesch. *549* qhuš *արմատից։* Müller, Kuhns u. Schleichers Btrg. *5, 138,* Lag. Btrg. bktr. Lex. *29, 37, Հիւբշ.* KZ, *23, 16 զնդ.* *uzgaoša *«ականջները ցցած՝ ունկած» ձևից։* Müller, SWAW, 38, 577 *պրս.* gōš, *զնդ.* gaoša *«ականջ» բառից։ Պատկ. Փորձ, Բ. 1880 մարտ ընդունում է* *uzgaoša *մեկնութիւնը։ Տէրվ. Նախալ. 119, Լեզու, 1887, 91 իբար է կցում գոյշ, գոյշ քէ, գուշակել, զգուշանալ բառերը։ Հինք. զգալ և ուշ բառերից։* Meillet, Rev. crit. *Բ. 1896, էջ 423 զ մասնիկ է համարում։ Հիւբշ. 150 դնում է զնդ.* *uzgaoša-? վերի մեկնութիւնը տալիս է Հիւբշ.* IF, *19, 464, Հյ. թրգմ. ՀԱ, 1907, 185ա և* ZAPh *2, 265։* Karst, *Յուշարձ. 407 սումեր,* šakušša, šagkušša *«խոհեմ»։*

ԳԻՒ.—Ոգմ. սկուշ, *Ջղ.* ըսգ'ուշ, *Պլ.* ուսգուշ։

ՋԳՕՆ *տե՛ս Ջգալ։*

Թիրեաքեան, Արիահայ բռ. էջ 160 զգեցուլ *բառից.*

ՋԵԱՆ «վնաս» Եղիշ. գ. էջ 48. Լմբ. ող. ուրիշ վկայութիւն չկայ. բայց այս բառից են կազմուած զեանաւար *«վնասակար» Վստկ.,* զեանալ *«առուտուրի մէջ վնասուած, անանկ» Վրդ. առ. 249,* զէնիլ *«վնասուիլ» Քուչ. 85. Հմմտ. նաև* զեանակար *և* վզեան։

=*Պհլ.* ziyān, *պրս.* زیان ziyān, *զնդ.* zyāna, *բոլորն էլ «զեան, վնաս»։ Իրանեանից են փոխառեալ նաև թալմ.* זיינא zīyanā, *մանդ.* זאינא zāyinā, *քրդ. աֆղան.* ziyān, *բելուճ.* ziyānī *օսս.* zián, žián, *ուտ.* zyān, *ուկրաին.* izjan, *ռուս.* изъянъ (Berneker, *440*),—*իրանեան ձևերի արմատը էնդ.* zyā, *հպրս.* diyā *«վնասել», որ կցւում է սանս.* ज्या jyā *«ճնշել, ընկճել, նուաճել, կեղեքել» արմատին* (Bartholomae, *1700*). *Հմմտ. յատկապէս սանս.* ज्याना jyāna *«ճնշում, սեղմում»* (Horn, § 679)։—*Հիւբշ. 150։*

Ուղիղ մեկնութիւնը տուաւ նախ Գ. նոյնը յետոյ Lag. Gesam. Abhnd. *44 ևն։*

ԳԻՒ.—Սչ. զեն, *Ռ.* զէն, *Պլ.* զէն *(հին լեզուով), իսկ նոր լեզուով, ինչպէս և այլուր, նոր փոխառութեամբ թուրքերէնից՝ զիյան։—Նոր բառ է Սեբ.* անզէն *«անվնաս»։*

ՋԵՐՈՒՊ *տե՛ս Բէհղեբուղ։*

ՋԵՒ *տե՛ս Զի։*

ՋԵԼԻԽԱ *տե՛ս Սալիխա։*

ՋԵԿՈՇԱՆ *«զան(ո) գուաժարար». այսպէս ունի միայն Բառ. երեմ. էջ 100. Թերևս հայցական հոլովով է և պէտք է հասկանալ (ուղղական հոլովով)* եկոժան *«անգուաժարար, ջուլհակ»։*

ՋԵԿՈՒՅԱՆԵԼ *տե՛ս Զգալ։*

Աղբալեան, ՀԱ, 1926, 398 եկ բառի պատմական հոլովն է։

ՋԵՀԵՏ «մահմեդական կրօնաւոր» Շնորհ. հանել. որ և զեհիդ նոյն նշ. Միխ. աս. 334, որից զեհեռաժողով «մոլլաների հաւաքումն» Ասող. էջ 189. բոլորն էլ նորագիւտ բառեր։

=*Արաբ.* زهيد zahīd, زاهد zāhid *«ժուժկալ, ճգնաւոր, առաքինի, կրօնաւոր», որոնք գալիս են* زهد zuhd *«ժուժկալութիւն, ճգնաւորական կենցաղ» արմատից։*

Այսպէս ուղղեց և մեկնեց Նորայր, Հանդ. գր. և պատմ. Բ. էջ 321—2։

ՋԵՂԱ *«խախուտ, անհաստատ, սահուն» Առակ. է. 6. Ոսկ. եփես. և յհ. ա. 10, «շրոայլ, ցոփ, անառակ» Սիր. իա. 18. Ոսկ. ես. 430, որից՝* զեղխագործութիւն *Եզն.,* զեղխութիւն *Ա. պետ. դ. 4. Եփես. ե. 18,* զեղխել *Յուդ. 11. Ոսկ. ա. կոր. և մատթ.,* զեղխանալ *Եզն.,* անզեղխ *Պետ.,* զեղխաբարոյութիւն *«որկրամոլութիւն» Կանոն. 27 ևն. գրուած են*

նաև զեղ-, զեխ- ձևերով. վերջինը ուղղագոյնն է. համմտ. բաղխել և բախել.—յետին ձև է զիղխ:

ՆՀԲ զելեալ ըստ չափ կամ զեղեալ կամ սահեալ... լծ. և սեղեխ: Հիւնք. սեղեխ բառից:

ՁԵՂՄ տե՛ս Եղծ:

ՆՀԲ եղծանել, ճեղծուցանել և ճեղճուլ բառերի հետ:

+ՁԵՂՈՒԿ տե՛ս Հեղ:

=Ձ նախդիրով կազմուած է ճեղուլ ձևից, որի վրայ շնդարձակ տե՛ս անդ:

Մորթման, ZDMG, 31, 434 բևեռ. zildi ձևի հետ:

ՁԵՂՁԵԼ «ծածկել, պահել, թաքցնել, բուն միտքը մթութեան մէջ պահել» Ոսկ. մ. բ. 1, 8. Սերիր., «խօսքը համառօտ կերպով ասել անցնիլ» Ոսկ. յհ. ա. 3, «կրճատել» Բ. մակ. Բ. 29. արդի լեզուի մէջ այս վերջի իմաստն է՝ որ գործածական է, յատկապէս դրամական գործառնութեանց համար. այժմ կայ նաև զեղչ արմատը. ոմանք սխալմամբ գրում են զեղջ, շփոթելով յաջորդ բառի հետ, որ տարբեր արմատ է:

ՆՀԲ լծ. արաբ. زلّ zill և թաթար. čoγa «սուուերը»: Հիւնք. ողջ բառից:

ՁԵՂՁ (ի հլ. ըստ ՆՀԲ, թէև առանց վկայութեան) «յանցանքի վրայ ցաւիլը, ապաշաւ» Դ. թագ. գ. 27. Եփր. դաս., «խեղճ, խղճալի, ցաւալի» Ոսկ. Բ. կոր. (գրուած է նաև զիղջ), որից՝ զղջանալ ՍԳր. Բուզ., զեղջանալ Եփր. երր. 210, զղջալ Ոսկ. Բ. կոր., զղջացուցանել Ա. թագ. իդ. 6. Եփր. ծն. և աւետ., զղջումն Առակ. ժդ. 15. ի. 25, աճզեղջ Հռ. բ. 5. ժա. 29 ևն: (Meillet, Altarmenisches Elementarbuch, էջ 20 հնագոյն ձևը համարում է զիղջ):

Հիւնք. աղցf բառից:

Գիւտ.—խրբ. զբխջ՛ալ, Ախց. Ոզմ. Ռ. Սլմ. Սչ. Տիգ. զբխչալ, երև. զղճալ, Մշ. զխճալ, Մկ. զղճալ:—Նոր նշանակութեամբ են կր. զէխճի գալ «գթալ, կարեկցիլ, խղճալ», Ղրբ. զխճալ, Շմ. զէխեր գալ, զէխերվիլ «զգուիլ», Տփ. զիխճ «զէշ, չար, տգեղ».—Էնկիւրիի Թրքախօս հայերը գիտեն zəxcum suyu «արցունք» (բուն նշանակում է «զղջման ջուր», տճկ. su «ջուր» բառից. Բիւր. 1898, էջ 789): Նոյն բա՞ռն է արդեօք նաև՝

ՁԵՂՋ «ահարկու». ունի միայն Բառ. երեմ. էջ 100:

ՁԵՂՑ տե՛ս Ձեղց:

[ՁԵՄԵՂ կամ ՁԵՄՈՒՂ «հաստատուն, ամուր, ապահով». գործածուած է միայն երկու տեղ՝ Ոսկ. մ. ա. 20, էջ 331 (Եթէ ցանկանայցես ևս ընչից, անդր փոխեա՛, ուր մարթիցի զեմուղ յամուր բերդին պահել, ուր չիցէ ինչ որ գամագիտ կարիցեն լինել) և Ոսկ. ա. տիմ. էջ 122 (Յոգիս սերմանես, ուստի ոչ ոք ինչ կարիցէ առնուլ, այլ պինդ ունին և զեմեղ պահեն բազում հաւատոյ և մեծամեծ փութով):

=երկաթագիր Մ և Տ տառերի նմանութիւնից յառաջացած գրչութիւններ են, որ պետք է ուղղել զեռեղ. համմտ. «Պահել զեռեղ և անարատ» Ոսկ. երր. դ. էջ 478, «Մինչ այս ամենք և զեռեղ պահեսցի կարգ» Պիտ. էջ 387: «Ամենայնիւ զեռեղ պահէ» Պիտ. էջ 562: Բացի սրանցից նոյն իսկ նախորդ երկու հատուածներում լաւագոյն ձեռագրերն ունին զեռեղ: Տե՛ս և յաջորդ բառը:

ՆՀԲ թէև նշանակում է զեմեղ և զեմուղ ձևերը, բայց զեռեղ բառի տակ յայտնապէս գրում է թէ վրիպակ է: Այս սրբագրութեան ուշադրութիւն չդարձնելով ՋԲ, ՓԲ և ԱԲ իրրև ուղիղ ձև նշանակում են զեմեղ, զեմուղ, անշուշտ հետևելով Բառ. երեմ. էջ 100, որ ունի զեմեղ «ամբողջ»: Առաջին անգամ Նորայր, Հայկակ. բառաքն. էջ 16—17 ուղղեց ու բացատրեց բառը վերի ձևով]:

[ՁԵՄԵՂԵԼ. մէկ անգամ ունի եղն. էջ 125 «Եթէ առ տկարութեան չզեմեղիցէ, ապա ոչ այժմ թագաւորել է նմա». (ձեռ. չզմեղիցէ, բայց տողամիջում աւելացրած ե, որով չզեմեղիցէ).—ՆՀԲ մեկնում է «խնայել, ի գութ շարժիլ, կարեկից լինել», ՋԲ «ապահովել, ազատել ի վտանգէ», ԱԲ «մեղքնալ, գութ շարժիլ, վտանգէ ազատել», Հիւնք. «վնասել, վշտացնել»: Ըստ Նորայր, Հայկ. բառաք. էջ 16 պէտք է ուղղել զեռեղել «հաստատուն, անվտանգ, ամբողջ պահել»: Սխալը յառաջացած է երկաթագիր Մ և Տ գրերի նմանու-

թիւնից։ Այսպիսի մի սխալ դռնում ենք նաև Ոսկ. մաթ. Ա. ժե. էջ 229 «Շուրջ գայլեաս տոկոսիս ժողովել, զփոխոցն զվաշիս գետեղել, վաճառացն նիւթս յաճախել», ուր լուսանցքում իբր մեկնութիւն դրուած է գեմեղել։ Նշանակութեան համար հմմտ. Փիլ. լին. բ. ծդ. էջ 134 «Քանզի անզետեղեալ են և անհաստատք և դողդոջուք մեր կամքս». հմմտ. նախորդ գեմեղ բառը։

ՆՀՔ մեղմ բառից։ Հիւնք. յն. զմելիճն, զմիղիճն բառից։]

***Չեն** *«զոհ». մէկ անգամ ունի Մծբ. 27 ըստ մէկ ձեռագրի (որ Վարդանեան, ՀԱ, 1914, 124 ասորի բնագրի և միւս հայ ձեռագրների համեմատ ուղղում է եզն), որից՝* **չենուլ** *«անասունը կտրել, մորթել, զոհել» ՍԳր., չենումն Ղեւտ. ժե. 5. Սղ. խգ. 22,* **չենիլ** *«մատաղացու» ՍԳր.,* **չենագործութիւն** *Փիլ. իմաստն.,* **չենածոյ** *Կանոն.,* **չենարան** *Խոր. Փիլ. բագն.,* **չենել** *Անան. յհ. մկ. Վրք. հց.,* **անչեն** *Փիլ. եւ.,* **անչենիլի** *Ածաբ. ծն.,* **գառնաչեն** *Անյ. բրձր. Թէոդ. խշ.,* **մարդաչեն** *Ոսկ. եփես.,* **մշտաչեն** *ԱՔ,* **ճայչեն** *«հայամորթ» Տաթև. տճկ.։*

*=Փոխառեալ է իրան. *zyān կամ *ziyān հոմանիշ մի ձևից, որ չէ աւանդուած, բայց նոյնն է հաստատում նորագիւտ սոգդ.* ōzyān *«զոհ»* (Gauthiot, Gram. sogd. *էջ 72). հմմտ. զնդ.* zyāna*=պհլ.* ziyān*>հյ.* **զեան** *«վնաս», գւռ. և բարդութեանց մէջ՝* **զեն-**. *ինչ.* **զեանաւար** *են։—Աճ.*

ՆՀՔ (պատուճակ բառի տակ) լծ. հբր. **ձօճ** *և հյ.* **ձօճ**: Böttich. ZDMG, 1850, 354 *սանս.* han, *պրս.* zadan *«մորթել, զարնել, զենուլ»։* Lag. Urgesch. 446,Müller, SWAW, *42, 253 և 48, 425,* Justi, Zendsp. *114 սանս.* han, *զնդ.* zan, ǰan, *պրս.* zadan: Bopp, Gram. comp. *III, 106 սանս.* hánmi: *Տէրվ. Նախալ. 80* **գան, գաեել, գաաիկ,** *սանս.* han, *հպրս.* jan, *պրս.* zan, zadan *ձևերի հետ՝ հնխ.* ghan *արմատից։* Canini, Et. étym. *91 յն. ծնօա։ Հիւրշ.* Arm. Stud. *30 անյարմար է գտնում թէ՛ իրանեան փոխառութիւն և թէ՛ բնիկ հայ համարելու, իսկ* Arm. Gram. *446 ուղղակի մերժում է համեմատել նախորդների հետ, որովհետև հնխ.* g²hen- *չէր կարող տալ հյ.* **զեն**, *մանաւանդ որ որնդականի մօտ* e *դառնում է* i. *ըստ օրինի* g²hen- *պիտի լիներ հյ.* *գին, *ինչպէս որ նոյն արմատի* g²hn- *ձայնդարձից ունինք հյ.* **գան**: *Հիւնք. պրս.* zadan, zan: Pedersen, *Հայ. դր. լեզ. 130* **ճենուլ** *«հիւսել» ձևին է կցում՝ իբրև զ մասնիկով։*

ԳԻՒ.—ՋԹ. **զէնիլ**, *Վն.* **զինել**, *Մկ. Ոզմ.* **զէնիլ** *«մորթել» (Ոզմ. միայն ծածկալեզուի մէջ), Սվ.* **զէնիլ** *«մորթուած եզան կամ կովի միս՝ որով ապուխտ են շինում».—Խրբ. կայ* **զէնիլ** *«զարնել», որ թուի թէ* **զենուլ** *և* **զարնել** *բառերի միացումից է յառաջացած։*

***Չենակար** *«վնասակար» Վրդն. ծն. ուրիշ վկայութիւն չկայ։*

=Պհլ. ziyānkār, *պրս.* زیانکار ziyānkār *«վնասակար». կազմուած* ziyān *«վնաս» և* kār *«գործող, անող» բառերից։—Հիւրշ. 150։*

Ուղիղ մեկնեց նախ ՆՀՔ։

Չենոճռենալ. *անստոյգ բառ. մէկ անգամ ունի Ժմ. յն. «խաչին զօրութեամբ զենոճռեալք». ՆՀՔ մեկնում է «զօրացեալ, զօտևորեալ», իսկ ԱՔ կարդում է* **զէնճեռեալ** *և մեկնում է «սպառազինեալ»։*

ՆՀՔ համարում է «թերևս յունախառն բարդութեամբ, որպէս Ζωγρέα *«գերի բռնել», Ζωννυμαι «գօտևորիլ, կռուի պատրաստուիլ»։ ԱՔ հանում է* **զէնճ** *բառից, ինչպէս երևում է* **զէնճեռեալ** *գրչութիւնից։*

Չեռալ, Չեռուին *տե՛ս Ծռալ։*

Չեռանգ *«մեռաղի կղկղանք, խարամ, scorie». գիտէ միայն Ներսէսովիչ, Բառ. լտ. —Հյ. էջ 484առ։*

Չեսեխին *«որ էրն». ունի միայն Բառ. երեմ. էջ 101։*

Չեսուբէս *«արաբացի գայլ», ունի միայն ԱՔ. ըստ ԳՔ «կենդանի մը, գիւղապէ, daman?» Բառիս վկայութիւնն ունի Խոր. աշխ. հրտր. Սուքեանի, էջ 21 «Լինի յաշխարհն այն և զեսուբէս գաղանն, որպէս զոչխար խարտեշ, և յոյժ սիրելի ձկանց, երկակենցաղ գոլով, զժողովեալ առ ինքն ձկունսն ուտէ յորժամ լողայ ի ջուրն»։ Այս նկարագրու-*

թիւնից երևում է, որ սխալ է դնել «արաբացի գայլ», ինչպէս ունին ԱԲ և Սուքրեան՝ անդ, որ գրում է թէ «գեսուբէս զազանն կարծէ լինել ըստ ոմանց ի մերոց պատմագրաց՝ գայլն արաբացի»։

Կամուսի Թրք. Թրգմ. չունի նման բառ։

ՋԵՏ *«վարդապետ». ունի միայն Բառ. երեմ. էջ 101։*

ՋԵՏԵՂԵԼ *տե՛ս Տեղ։*

ՋԵՏՈՒՆՔ *«օրէնք». ունի միայն Բառ. երեմ. էջ 101։*

ՋԵՏՎԱՋԵՂ. *անասոյզ և խանգարուած ձև. մէկ անգամ ունի Լաստ. ա. «Եւ զեռվազեղ առեալ զառնայր ի վերայ Բագրեւանդայ». (այլ ձ. ունի և վազ առեալ)։ ՆՀԲ և ԱԲ մեկնում են «արշաւանք, վազք»։*

ՋԵՐԴ, ՋԵՐԹ *տե՛ս Ջի։*

ՋԵՐԴԵԻԵԼ *կամ* **ՋԵՐԹԵԻԵԼ** *«թողնել անցնիլ, զանց անել, չհոգալ». երկու անգամ միայն ունի ՅՀ. կթ. էջ 194, 197. անասոյզ բառ։*

ՋԵՐԴՈՒՄԱԾ *«գինու քաղցուի երեսի փրփուրը՝ աղտը» (նորագիւտ բառ). Վստկ. 97 «Եւ տես զայն զուխր՝ որ է ղերդուածն՝ ի վերայ գինւոյն երեսացն կենայ»։*

ՋԵՐԵՀԻ *«ընթերակաց, մերձակաց». ունի միայն Բառ. երեմ. էջ 111 ընթերակաց բառին իբրև բացատրութիւն։*

[ՋԵՐԻԿՈՒԹԻԻՆ. *մէկ անգամ ունի Արծր. Գ. 2. «խոստորել ի գաղտնիս զոգի սրբոյն ըզզրահեալն Հոգւոյն սրբոյ զերիկութեամբ»։*

=Սխալ գրչութիւն է. պէտք է ուղղել վերեկութեամբ. հմմտ. «Կուսութեամբ յղութիւն կրել՝ Հոգւոյն սրբոյ վերեկութեամբն» Կիւրղ. ղկ. «Հոգւոյն վերեկութեամբ» Նանայ. մեկն. յհ. սրանց մէջ վերեկութիւն *նշանակում է «ի վերայ կամ ի վերուստ եկաւորութիւն Հոգւոյն սրբոյ»։ Արծրունու ձեռագիրներից մէկը արդէն ունի* վերիկութեամբ, *իսկ Հրտր. Պատկ. էջ 129 ունի* վերեկութեամբ։

ՆՀԲ մեկնում է «զուգէ զրաՒաւորութիւն, սպառազինութիւն. կամ զառիկութիւն, իբր օծումն զառիկաւ»։ ՋԲ չունի բառս։ ԱԲ մեկնում է «զրահ հագնիլը»։ Ուղիղ մեկնութիւնը տուաւ Նորայր, Հայկ. բառաքն. էջ 86։]

+ՋԵՐԾ *«ազատ, ապահով անվտանգ» Խոր. գ. 20, 67. Մեսր. եր., «ազատութիւն, արձակում» ՅՀ. կթ., որից՝* **զերծանիլ** *«ազատիլ, պրծնիլ, ձեռքից փախչիլ» ՍԳր. Նւս. քր. Ոսկ. մ. բ. 8,* **զերծանել** *«փրկել, ազատել» Մխբ. գ. 2. Ոսկ. եփես. Կոչ. Եզն., զերծուլ ՍԳր., զերծուցանել ՍԳր. Ոսկ. մ. բ. 9,* **զերծուցիչ** *Ոսկ. մ. բ. 25. Եզն. Կիւրղ. ծն. մորթազերծ Եզն., առագազերծ Ոսկ. ա. տիմ., դիազերծ Բ. մակ. ը. 27, դիւրազերծ Պիտ., անզերծանելի Պիտ. Արծր., մեհենազերծ «մեհեան կողոպտող» Փիլ., սեղանազերծ «սեղան կողոպտող» Բ. մակ. դ. 42 ևն։*

*=Բնիկ հայ բառ. կազմուած է զ մասնիկով՝ *երծ արմատից, որ հայերէնի մէջ պարզ ձևով գործածուած չէ. հմմտ. սանս.* 𑀲𑀰𑁆 *sṛj,* 𑀲𑀭𑁆 *sarj «արձակել, ազատել, ձեռքից բաց թողնել, նետել, դուրս դնել, թափել», գնդ.* harəz *«արձակել, թողնել», պհլ.* hirz, *պրս.* هشتن hištan *«արձակել». բոլորի արմատն է հնխ.* serg′, srg′. *իրանեաններից փոխառութեամբ նոյն արմատից ունինք նաև հյ. արձակ և ապա-հարզան բառերը, որ տե՛ս առանձին։—Հիւբշ. 446։*

Առաջին անգամ ուղիղ մեկնեց Lag. Urgesch. *381՝ համեմատելով սանս.* srj *և գնդ.* uz-harez *ձևերի հետ։ Մորթմանն,* ZDMG, *26, էջ 517 բևեռ.* is-zari *համարում է «զոհ զերծանելոյ», այսինքն «հաշտութեան»։ Տէրվ. Լեզու, 1887, 18* **զգերծուլ** *կամ* **զբերծուլ** *ձևից է հանում։ Հիւնք.* **գերծուլ** *բայից։ Տե՛ս նաև* արձակել *բառի տակ։* Pokorny, *2, 508 դնում է հնխ.* selg′-, *որի ժառանգներն է համարում սանս.* srj-, *գնդ.* harəz *«արձակել» ձևերից դուրս նաև հիւս.* selg *«որս», մբգ.* selken *«կաթկթիլ», անգլսք.* solcen *«ծոյլ, հեղգ» ևն։ Մերժում է հյ.* **զերծ** *բառի համեմատութիւնը։—Եթէ արմատը դրուի* selg-, *բնականաբար կարելի չէ այլ ևս կցել հյ.* **զերծ** *(ր-ի պատճառաւ՝ փոխանակ ղ)։ Բայց ի՞նչ կապ կայ «արձակել» և «որս» կամ «ծոյլ» բառերի միջև։ Պէտք է բաժանել կելտական և գերմանական խմբերը արիականից, որ միանալով հայերէնի*

հետ՝ պիտի տայ հնխ. serg՛- արմատը։

Գիւր.— Ունինք միայն զերծնուլ Համշ. «պատրաստ լինել, պատրաստութիւնները տեսնել վերջացնել»։

*ՋԵՐՏԱՅ «կզաքիս, martre», ունի միայն Գբ, առանց վկայութեան. անշուշտ շատ յետին ժամանակի բառ։

=Թրք. ozdav zerdave կամ ezdav zerdeva «կզաքիս, куница» (Будаговъ, 1. 605)։—Աճ.

ՋԵՐՏՈՒԿ «ուրնք». ունի միայն Բառ. երեմ. էջ 101։

*ՋԵՒԻԱ «մահմետական կրօնաւորների վանք» Նոր վկ. էջ 144 (ԺԴ դարից) «Ջվանք Ս. Նշանին կողոպտեաց... և պիղծ շեխեր ի վանքն բնակեցոյց և արար զեիա»։

=Արաբ. زاوية zāvia «կրօնաւորի խուց, դարվիշների վանք»։—Աճ.

Տե՛ս իմ Նոր վկայք, էջ 783. ցանկի մէջ։

*ՋԵՒԻԱԴԱՐ «սենեկապետ» Նոր վկ. էջ 326 (ԺԵ դարից) «Մեծարեալ էր և կացուցեալ զէվիադար հօրն իւրոյ Հասան փաշայհին»։

=Պրս. زاویه‌دار zāviadār «սենեկապետ, դարվիշների վանքի մեծաւոր»։—Աճ.

Տե՛ս Նոր վկայք, էջ 783 ցանկը։

*ՋԵՓԻՒՌ, ի հլ. «արևմտեան քամի» Աբիւտ. աշխ. էջ 611, 612. Տաթև. Հարց. 205. Առաք. կենդ. էջ 70. դրուած նաև զեփիւռոս Խոր. աշխ. էջ 591, զեփիւռոս Սոկր. 512։ Ուրիշ վկայութիւն չկայ։ Արդի գրականում ընդունուած է միայն զեփիւռ ձևը՝ «մեղմաշունչ քամի» նշանակութեամբ, ինչպէս է նաև արդի եւրոպական լեզուների մէջ։

=Յն. Ζέφυρος «արևմտեան քամի», սովորաբար «կատաղի կամ անձրևային քամի», երբեմն նաև «մեղմաշունչ սիւք». ծագում է հաւանաբար Ζόφος «մթութիւն, խաւար, արևմուտք» բառից. յունարէնից են փոխառեալ նաև լատ. zephyrus, ֆրանս. zéphyr, zéphire, zéphyre, գերմ. Zephyr, ռուս. зефиръ, վրաց. ზეფიროსი զեփիրոսի ևն։—Հիւբշ. 349։

Ուղիղ մեկնեց նախ ՆՀՒ։

ՋՋՈՒԵԼ «արհամարհել, նախատել, չարչարել, հրապարակահարել» ՍԳր. Ոսկ. դկ. Եղիշ. «դանիլ, դարշիլ» Պետր. սիմ. կուս., որից՝ զզուանք «հարստահարութիւն, նեղութիւն» Եղիշ. Նար. «դարշիլը, նողկանք» Նար. Մաշկ. Մխ. երեմ., զզուիչ «նեղող, չարչարող, հարստահարիչ» Լմբ. առակ. Գր. տղ. եմ., զըզուելի (նոր բառ)։ «Հարստահարել. 2. գարշիլ» իմաստների յարաբերութեան համար համմտ. ուս. zivir «զզուանք. 2. տանջանք»։—Նոր գրականում, ինչպէս նաև գաւառականների մէջ, հին «հարստահարել» իմաստը բոլորովին չնջուելով՝ մնում է միայն «դանիլ, դարշիլ» նշանակութիւնը։

Տէրվ. Նախալ. 81 հյ. զգուել, ճզռվել, գռվել, ձայն, սանս. hu, գնդ. zu, հալ. zvatū ձևերի հետ՝ հնխ. ghu «գոչել» արմատից։ Հիւնք. զռվռոել բայից։ Patrubány, ՀԱ, 1907, 186 համեմատում է հյ. ճ-զով։

ԳԻՒ.—Ջղ. Ա. զըզվել, Ախց. Երև. զըզվէլ, Ագլ. զըզվիլ, Հճ. զը՝զվել, Մշ. զըզվալ, Մկ. Ոզմ. Վն. զըզվալ, Սլմ. զըզվալ, զըվզալ, Սլզ. Նբ. զըվզալ, բոլորն էլ «դանիլ, գարշիլ», իսկ Ակն. սավալ «զզուիլ, դանիլ. 2. դողալ»։—Տես և՝

ՓՈԽ.—Վրաց. ზიზღი ზიზღება զիզղերա «դանիլ», ზიზღი զիզղի «զզուանք, գարշանք, նողկանք», որից փոխառեալ է Տփ. զիզղը գալ, զըզվիլ «գարշիլ, դանիլ, զըզուիլ»։

ՋԷՖ «վերնագիր», ունի միայն Բառ. երեմ. էջ 101։

*ՋԷԼՕՏԷ «մախացող, նախանձաւոր». ունի միայն Բառ. երեմ. էջ 101։

=Յն. ζηλωτής «նախանձելի», ζηλωτός «նախանձաւոր»։—Աճ.

*ՋԷՆ, ու հլ. (սեռ. զինու. յետնաբար նաև ի, ի-ա հլ.) «զէնք, զրահ» ՍԳր. Բուզ. Եփր. Թուղ. Ոսկ. մտթ. ա. 13, որից՝ զէնընկէց (առանց փոփոխման) Ա. մակ. ե. 43. Խոր. Արծր., զինեալ Հռ. է. 23. Փարպ. Սեբ., զինուոր ՍԳր. (հնագոյն *զէնու-ուր ձևից, ուր ու ձայնաւորի պատճառաւ աւելորդ էր ա յօդակապը, ըստ Meillet, MSL, 18, 251. սխալ է Patrubány, SA, 1, 213, որ զինուոր համարում է ժողովրդական ձև, փխ. զինաւոր),

զինուրական *Կորիւն*, զինուրակից *Փիլիպ. բ. 25. Փիլիմ. 2*, զինուրիլ *ՍԳր.*, զինակիր *ՍԳր. Եւս. քր.*, զինապետ *Նորագիւտ ա. մբնաց. ժ. 5*, անգէն *Ոսկ. ես.*, գերանդագէն *Բ. մակ. ժգ. 2.* մեկնակագէն *ՍԳր.*, ձիագէնք *Պիտ.*, մենագիներալ *Բ. Թագ. իբ. 30*, ոսկիագէն *Բ. մկ. ժա. 8*, պատենագէն *Ա. մկ.գ. 39. Բուզ.*, գաղտագէն *Մխ. դտ.*, ապագէն «անզէն» *Պիտ. Նար. Լմբ. սղ.*, զինահարիլ *Կիւրղ. գկ. Թէոդ. մայրագ.*, անգինահար *Թէոդ. մայրագ. հետաքրքրական է մանաւանդ* գինեզէն «հարբած, գինով» *Գ. մակ. ե. 1, 5. Ոսկ. մ. բ. 23։* —*Նոր բառեր են՝* զինավանաւո, զինարաւ, զինավարժութիւն, զինուրակոչութիւն, զինուրագրութիւն, զինակոչ, զինագործարան *են։*

=*Պհլ.* 𐭦𐭩𐭭 zēn, *պազենդ.* zīn, *զնդ.* zaēna «*զէնք*», *որոնց հետ նոյն են պհլ.* azēnavar «*անզէն*», *zēnāvar «*զինուած*», *զնդ.* zayan «*զիննալ*», zayōtəma «*սպառազէն*», zaya «*կամ և կազմած, կռուոդի զէնքերը*» (Bartholamae, *էջ 1650, 1666*), *սանս.* हि hi, हिनोति hinōti, *դերբ.* हित hitá «*արձակել, նետել, քշել*», हेति hēti «*արձակելու բան, նետ, սլաք և ընդհանրապէս զէնք*», *աւելի հեռաւոր համեմատութիւնները տե՛ս գայիսոն բառի տակ* (Walde, 331): *Իրանեանից փոխառեալ են նաև ասոր.* ܙ, zaināʾ, *ն. ասոր.* zeinā «*զէնք*»։—*Հիւբշ. էջ 151։*

Klaproth, Asia polygl. *106 պրս.* sena «*սրով զարնել*»։ *ՆՀԲ գեան բառից. ըստ երր. գինա՝ է զէն և վահան (իմա՛* אָזֵן āzen, *որ է «զէնք»)։* Böttich. ZDMG, 1850, 354, Arica, 76, 245, Lag. Urgesch. *981 սանս.* jayana «*հեծելազօրքի զէնք*». Spiegel, Litter. *467 և* Huzw. Gram. 190. Justi, Zendsp. 119 *զնդ.* zaēna: *Պրս.* zīn *բառի հետ համեմատած են* Böttich. Horae aram. 44, 105, Lag. Urgesch. 981, Spiegel, Huzw. Gram. *189—191. սակայն այս բառը «համեհաս» նշանակութիւնն ունենալով՝ բնաւ կապ չունի մեր բառի հետ։ Մորթման,* ZDMG, *26, 512 և 31, 418* զէն *բառի հետ է կապում բևեռ.* Zinuarĝi *ձևը։ Հիւնք.* զենուլ «*մորթել*» *բայից։* Brunnhofer, BB, 26 (1901), 106 *նոյն է համարում նաև վեդ.* sina «*զէնք*», *իբր իրանական ծագումից, Բ. Խալաթեան, ՀԱ, 1902, էջ 309 ասոր.* zainā «*զէնք*», *որ սակայն բուա* Lag. Gesam. Abhd. 43 *պարսկերէնից է փոխառեալ։*

Գիր.—երև. զէնէ։

ԶԷՆՃԵՌԵԱԼ *տե՛ս* Զենոճառեալ։

ԶԷՐԱՅ «*նուէր կամ յառաջին*», *ունի միայն Բառ. երեմ. էջ 101։*

+ԶԻ «*որովհետև, 2. որպէս զի. 3. որ, այնքան որ, մինչև իսկ. 4. թէ, որ. 5. որ (իբր յարաբերական), որ մարդը կամ որ բանը որ. 6. ինչո՞ւ համար, ի՞նչ պատճառաւ. 7. ի՞նչ, ի՞նչպէս. 8. ո՛վ, որքա՞ն, ի՞նչքան*» *ՍԳր. Ոսկ. Եզն. Եփր. Թգ.*, *որից՝* զի և, և զի, մինչ զի, է զի, զի՞ է զի, համզի, փոխանակ զի, որպէս զի, զի թէ, իբրև զի, իբր զի, վասն զի, զիարդ, *բոլորն էլ հին և ընտիր. վերջինից են կազմուած* զիարդապէս «*ըստ պատահման*» *Ոսկ. մ .ա. 6*, զիարդապէս *Բրս. ծն. նոյնից համառօտուած է* զերդ, զերբ *Շնորհ. եդես. և յս. որդի. Երզն. այբ. Մագ. ոտ. (որ արդի գրական լեզուն չընդունում է միայն բանաստեղծութեան մէջ) և աւելի կրճատ՝* զեդ կամ զետ *լծ. փիլ. յետին է* զիկէն «*ինչպէս*» *Փիլ. այլաբ.։*

=*Կազմուած է զ նախդիրով* *ի արմատից, որի ծագման վրայ տե՛ս առանձին։—Հիւբշ. 450։*

ԳԴ համեմատում է պրս. زیرا zīrā «*որովհետև*» *բառի հետ։* Peterm. *22 սանս.* hi, *զնդ.* zi «*որովհետև, իրօք են*»։ *Նոյնն ունի նաև* Windisch. 21, Böttich. ZDMG, *1850, էջ 354*, Arica, *80, 325*, Müller, SWAW, *38, 580*, Justi, Zendsp. *125 բ,Տէրվ. Լեզու, 1887, 115, Հիւբշ.* Arm. St. *էջ 12։* Καρολίδης, Γλωσσ. συγκ. *82 կապադովկ.* zair, zári, *պրս.* zira, *յն. γάρ համանիշների հետ։ Վերի մեկնութիւնը տուաւ նախ* Meillet, MSL, *9, 53։ Հիւնք.* զի՞, զի՞նչ *գնում է պրս.* či, az či «*ի՞նչ, ինչի՞ց*», զի՛=*պրս.* զի՛ն, զէի՛, *իսկ* զերդ *հանում է երդում բառից։*

Գիր.—Զբ. զէնդ «*քան, քան թէ*» *թերևս յառաջացած լինի* զերդ *բառից։—Հնգ.* զէ «*որովհետև*» *կարող է լինել վերի* զի *ձևից,*

բայց աւելի կարծում եմ, որ կրճատուած լինի պրս. գէրէ ձևից։

*ՓՈՒԽ.—Ջուբինով հյ. զի բառից է դնում վրաց. ձի «զի, որպէս զի, եթե». բայց ձայնական տարբերութիւնը թոյլ չի տալիս։

ՋԻԳԱՅ «անտառ». ունի միայն Բառ. երեմ. էջ 101։

ՋԻԳՆ «մի տեսակ ձուկ» ԱԲ, «սեղակաց դասէն աճառուտ ձկանց սեռ, վագերաձկանց և շանաձկանց շատ մօտ, որուն գլուխը մուրճի ձև ունի. ֆրանս. marteau» ԳԲ. նոյնը նաև Նորայր, Բառ. ֆր. էջ 787 բ. մէկ անգամ գտնում եմ գործածուած Վեցօր. էջ 153 «Որ անուանեալ կոչի քսիփիէ, պրիոնէ և շնչրիք և կեփաղը և զիգն իցեն ահագինքն և ահարկուքն» (ձեռ. զի դնիցեն)։

*ՋԻՆ «շատ բարձր ձայն, dessus, Discant» Երզն. քեր. Ոսկիփ. առում էր նաև *զիր, որի փոխարէն գրուած է ժիր Լծ. սահմ. 274 (վերկայութիւնը տե՛ս բանդ)։

=Պրս. زیر zir և սրանից փոխառեալ Թրք. زیل zil հոմանիշից. հնագոյն հայերէն ձևն է *զիր, յետոյ թուրքական ազդեցութեամբ դարձած զիլ. (տարբեր են պրս. زیر zīr «սուր ձայն» և زیر zēr «տակը». համմտ. աֆղան. zēr «տակը», zīr «զիլ» Հիւբշ. Pers. Stud. էջ 71)։ Պարսկականից են նաև արաբ. زیر zīr «զիլ, կիթառի բարակ թելը, իբր հակառակ բամբի», վրաց. ზილი ზիլի, աֆղան. zīr, ẓīr (Horn, Grdr. էջ 258, № 680)։—Հիւբշ. 265։

ՆՀԲ համարում է «բառ այլազգական»։ Հիւբշ. ZDMG, 36, 129 և 46, 259 դնում է նոր պարսկերէնից։ Kraelitz-Greifenhorst, ՀԱ, 1911, էջ 262 հայ բառը ըստ Հիւբշ. պարսկերէնից փոխառեալ դնելուց յետոյ, հայերէնից փոխառեալ է դնում Թրք. zil «ծնծղայ»։ (Բայց հայերէնի մէջ չկայ այսպիսի նշանակութիւն)։

ԳԻՒՐ.—Սովորական է զիլ ձևը՝ վերի նշանակութեամբ, որից և զլել, զլոց։ Նոր իմաստ է զիլ «ամուր, պինդ, կուշտ» երև. ըստ Ամատ. Հայոց բառ ու բան, էջ 187։

*ՋԻԼԻ «առորին քան զխալի». ունի միայն Քաջունի, հտ. Գ. էջ 71, այս վկայութեամբ. «Զիլեօք զյատական ծածկեցին» (տեղը չէ նշանակուած)։

=Պրս. زیلی zīli «է տեսակ իմն կապեստի, որ լինի սուսար և կարծր զոր յաճախ տարածանեն շինականք»։—Ահ.

*ՋԻԿ «մի բանի եղերքի շրջանակը, զի՞». մէկ անգամ ունի Վրդն. եւ. իբրև բացատրութիւն՝ Ս. Գրքի ծնօտ հոմանիշ բառի. մի քանի անգամ էլ գտնում եմ Տաթևացու մօտ՝ այսպէս. «Եւ բարձր էր տապանակն և ունէր զիկ յափունսն և էր ի Սրբութիւն Սրբոցն... Իսկ զիկն՝ որ կայր եղեալ ի շուրթն՝ որ էր ծնօտն, նշանակէ զսուաղ և զբարակ կեանս քահանային, որ հարկաւորօքն միայն շատանայ, որպէս ձևացուցանէ քահանայն զայն ի հեր գլխոյն, զի որպէս զիկ մի և պսակ թողու ի հերս գլխոյն իւրոյ» Տաթև. ձմ. ճիր. «Եւ ծնօտ՝ որ է զիկն բոլորեալ» Տաթև. ամ. 475 և հարց. էջ 344։

=Արաբ. زیق zīq «շապիկի վզի եղերքը», որ բատ Կամուս, Թրք. Թրդմ. Բ. 923 փոխառեալ է պրս. زیه zih հոմանիշից։—Հիւբշ. 265։

ՆՀԲ պրս. zih «փողպատ, եղերք» և եբր. זֵר zēr «եղերքի զարդ»։

ՋԻԿՕՂ «նկատող». ունի միայն Բառ. երեմ. էջ 101, որի հետ նոյնէ էջ 100 զեկօղ «նիկարացօղ»!

*ՋԻՆԱՀԱՐ. գործածւում է իբր ողոքական բացագանչութիւն՝ յետին դարերի տաղաչափութեանց մէջ, «ողորմի՛ր, խնայի՛ր ինձ, քե՛զ եմ ապաւինում» նշանակութեամբ. այսպէս՝ «Անձն իմ ցաւագար, ի քեզ զինահար, լե՛ր բուժիչ յարմար. Հոգիս ի քեզ զինահար, բարեխօսեա՛ անդադար. Ողորմ արտասուօք ձայնէր, զինահա՛ր, հասի՛ր գերելոյս մատամբ Ղազարու» Գնձ. Ոսկիփ. գրուած է զեհեհար Քուչ. 96, զեհէհար Յայսմ. մայ. 11։

=Պրս. زینهار zinhār «անձնատուր լինելը. 2. ուխտ և դաշինք. 3. ահ և երկիւղ. 4. գանգատ. 5. զգուշութիւն, զգո՛յշ եղիր. 6. ափսոս, աւա՛ղ». նոյնը պհլ. zīnhār (ծագման մասին տե՛ս Horn, § 527)։ Ծագում է իրան. *zīvan-hār <*jīvana- hara «կեանքի պահպանութիւն» ձևից (Nyberg, Hilfsb. 2, 256)։ Իրանեանից է փոխառեալ նաև վրաց. (ու բացասականով) უზენაარო ուզենաարո «անողորմ, անգութ»։ —Ահ.

ՆՀԲ և ՋԲ սխալ են հասկանում բառիս

նշանակութիւնը կ՚դնում են «զէնքով վիրաւորուած»։ ԱՒ ուղղելով սխալը՝ մեկնում է «ողորմէ՛, խնայէ՛», իբր «բառ պրս.»։

ՁԻՆԴԱԿԱՊԵՏ *(որ և զրնդակապետ, զինգկապետ, զնդկապետ)* «պարսկական զօրապետական մի աստիճան» Բուզ. էջ 159. ունին միայն ՋԲ և ԱԲ, իսկ ՆՀԲ չէ յիշած՝ համարելով յաւուկ անուն։

=Անշուշտ պհլ. *zindākpat ձևից է. սակայն այս բառը ո՛չ աւանդուած է իրանական գրականութեան մէջ, ո՛չ էլ կարող է աստւածարանօրէն մեկնուիլ։

St. Martin (Lebeau, *III*, 285) և Spiegel (Eran. Alterth. III, 643) իբր «փրկապետ»՝ պրս. ذند žanda «փրկ» ձևից։ ԱԲ համարում է բառ յունարէն։ Պատկանեան, Изслед. о сост. арм. яз. *1864, 20* և JAs. *1866, 177* համարում է զնդ. zantupaiti «խմբակցութեան պետ» =պհլ. zandpat: Lag. Arm. Stud. § *789* մեկնում է իբր «Զանդիկների պետ»։ Հիւրշ. *41* համարում է «Zaindīk-ների պետ», սակայն այս բառով հասկանալով zandīk «մանիքեցի» բառից տարբեր մի բան։

ՁԻՆԶ *տե՛ս* Ինչ։

ՁԻՆՁՈՍՏԵԼ «զինչ արգել». ունի միայն Բառ. երեմ. էջ *101*.—*Ի՛նչ լինելը յայտնի չէ։*

***ՁԻՆՁԱՐԱԿ** «ժանգառ, verdet» Գաղիան.։

=Արաբ. زنجار zanǰar, որ է պրս. زنگار žagār «ժանգառ». (չունի Կամուս, Բրք. Բրգմ. Ա. *880*)։

Սխալմամբ նուիրագործուած է զինչուփրի հետ, որ տե՛ս։ Ուղիղ մեկնեց Նորայր, ՀԱ, 1926, 67։

***ՁԻՆՁՈՒՓՐ** «(խրուկ), կինաբարիս կոչուած կարմիր ներկը. cinabre» Գաղիան.։

=Արաբ. زنجفر zanǰafr կամ zunǰufr *(բստ Կամուս, Բրք. Բրգմ. Ա. 880). Բրք.* zinǰifre, *որ է պրս.* شنگرف šingarf *նոյն նշ.։*

ՀԲուս. § 708 համարում է զանճպիլ «կոճապղպեղ»։ Ուղիղ մեկնեց Նորայր, Բառ. ֆր. 245 ա և ՀԱ, 1921, 232։

***ՁԻՈՒ** «եբրայական ամսանուն». մէկ անգամ ունի Գ. Թագ. զ. *37*։

=Եբր. זיו ziv «հին Քանանացոց երկրորդ ամիսը, որ համապատասխանում է մօտաւորապէս լատինական մայիս ամսուան». մեր բառը փոխառեալ է Ս. Գրքի Թարգմանութեան ժամանակ՝ յն. ζιούθ (այլ ձ. ζειούθ) տառադարձութիւնից (Cophocles, 556)։—Աճ.

ՁԻՍ, ի–ա հլ. *(յաճախ նաև ի, ո հլ.)* «նստոյ տեղից մինչև ծունկը եղած մասը» ՍԳր. Փիլ. Խոր., «նաւի նստարան», Նար., որից՝ զատափոկ «կաշիէ վարտիք» Վրդն. դան. դ. էջ *252*, զատիկ «փոքր գիստ». ԱԲ, զատոսկր *(նոր բառ).—բստ* ՆՀԲ կայ նաև ոմկ. յգ. զատուի ձևը (Վստկ.), *ինչպէս ունինք* աչուի, նուուի *են, բայց բստ իս այս բառը պէտք է կարդալ* զոտուի «ոտքերը»։

ՆՀԲ յծ. նիստ։ *Ըստ* Meillet *(անձնական) այս երկու բառերը իրար կապելու համար՝ կարելի էր ենթադրել հնխ.* sed- «նստիլ» արմատից կրկնութեամբ sizdo-> *hizdo և հայերէնի մէջ զ մասնիկով էլ՝ գիստ։

[**ՁԻՏԱԿ** «մի տեսակ բոյս». Բժշ. ունի միայն Քաջունի, հտ. Գ. էջ *71*. պէտք է ուղղել գիւտակ. *տե՛ս* գիւ]։

ՁԻՏԱՒ «կեղծ աբեղայ, սուտ կամ կեղպարանեալ աբեղայ». նորագիւտ բառ, որ չորս անգամ ունի Սմբ. դատ. էջ *68, 76, 99, 102*։ (Karst, Դատաստ. հտ. *II*, էջ *91*)։

[**ՁԻՏԱՒՈՒԹԻՒՆ** «վիճաբանութիւն, հերքում, հակաճառութիւն». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Օրբ. հկճ. ժա. էջ *168* «Սա (Տիմոթէոս Կուզ) արար գիտաւորութիւնքն ընդդէմ Լևոնի»։—*Ըստ իս պէտք է ուղղել* պիտաւորութիւն]։

ՁԻՐ «մի տեսակ բոյս, որի հունդը գործածւում է իբր քնաբեր դեղ» Բժշ., որից գիրտակ Բժշ. երկուսն էլ ունի միայն ՀԲուս. § *709*։

ՀԲուս. անդ յիշում է արար. **գիր** «փրսխեցնող սոխ, bulbe vomitique» *և պրս.* زیر zīra «չամանի հունդ»։

ՁԻՐԱՐԵԼ *տե՛ս* Իրեար։

***ՁԻՐԿ** «զրկուած, անմասն, անբաժին» Լմբ. սղ., որից՝ անգիրկ Խոսր. Ոսկիփ. Սկեւռ. պատ. *43*, զգայազիրկ Նար., զրկել «անմասն թողուլ, նեղել, հարստահարել» ՍԳր, զրկիչ

են. ժ. 20. Ոսկ. մ. գ. 25, զրկումն Ծն. իզ. 20, զրկաճ Խոր., զրկահարաճ Պիտ., զմիմեանսզրկութիւն Բուզ. ևն. ռամիկ ձև է զուրկ Օրբ. (որից հայրենազուրկ Մարաթ.), որ միակ ընդունուածն է նոր գրականում և որից շինուած են՝ աշազուրկ, եղբայրազուրկ, բնշազուրկ, կամազուրկ, պատուազուրկ, հողազուրկ ևն նոր բառերը։

=Ասոր. ܨܪܝܩ sriqā «զուր, ունայն», ܨܪܩ sraq «կողոպտել, spoliavit», ܣܘܪܩܐ sūraqā «կամաւոր աղքատութիւն» (Brockelm. 240). այս բառերը բնիկ սեմական են և կցւում են արաբ. سرق srq «գողանալ» արմատին։ —Ա.Ճ։

Հիւնք. ուրուկ «բորոտ» բառից։ Սըրմագաշեան (Արմէնիա) կցում է ռում. zârghit «խելագար» բառի հետ։

Գիր.—Մշ. Սլմ. զրկել, Ախց. Գոր. Կր. Ղրբ. զրկել, Ագլ. Մկ. Շմ. Ոզմ. զրկիլ, Ալշ. Ջղ. զրգել, Երև. Ննխ. Սեբ. զրգել, Խրբ. Տփ. զրգիլ, Տիգ. զրգվիլ, Հճ. զր՝յգել.—արմատական ձևով է Խրբ. զրիգ՝ «խնդճ, թշուառ».—նոր բառեր են՝ զրկուկ «հարստահարուած», զրկանել, զրկաուիլ «հարստահարել, հարըստահարուիլ», զրկուպիրկ լինել «մեռնիլ, մահանալ»։—Թրքախօս հայոց մէջ ունինք զրկել, զրնկել, զրինճ օլմամ Առն. «զրկուիլ» (Արևելք, 1888 նոյ. 8—9)։

**ՁԻՐՊԱՃ «մի տեսակ կերակուր, որ շատ անգամ հիւանդին պատուիրում է» Մխ. բժշ. էջ 112, 113 ևն։*

=Արաբ. چربج zīrbāj, որ փոխառնալ է պրս. برزبج zīrbā, اوزبج zīrvā ձևից և նշանակում է «մի տեսակ կերակուր»։—Ա.Ճ.

Ուղիղ մեկնեց նախ Աճառ. որից անկախաբար Seidel. § 304, ուր տե՛ս նաև նոյն կերակուրի պատրաստութեան զանազան եղանակները։

ՁԻՒԳԻՆ *տե՛ս Ձուկ։*

**ՁԻՒԳՈՍՏԱՏ (գրուած նաև զիւգաստատ, զոյգոստատ) «զինուորների ոռճիկը կշռող պաշտօնեայ». մէկ անգամ ունի Խոր. բ. 60 «Ընդ այն ժամանակս առաքեաց (Աղբիանոս) զօր ծանր զկողմամբք Ասորեստանեաց, և մերոյն Արտաշիսի հրամայեաց երթալ ի Պարսս հանդերձ իւրովք զիւգոստատօք, զոյոյ զհետ քարտուղարութեամբ լեալ այս այր»։*

=Յն. ζυγοστάτης «կշիռների վրայ հրամայող պաշտօնեայ», որից փոխառնալ է նաև լտ. zygostata, zygostates՝ նոյն նշանակութեամբ։ Յոյն բառը կազմուած է ζυγός «լուծ, զոյգ, կշռի ձող» և ἵστημι «կենալ» բառերից։ Հայերէն ուղիղ տառադարձութիւնն է զիւգոստատ. բայց գրիչները կա՛մ նոյն յն. բառի առուգաբանութիւնից ազդուելով և կամ պարզապէս հյ. զոյգ բառի հետ շփոթելով՝ գրել են զոյգոստատ, որ բառարանների նախամեծար ձևն է։

ՀՀՒ մեկնում է «վերակացու ի վերայ մեծամեծաց պաշտօնից և գործոց արքունականաց և կամ ընդհանրական դատաւոր քննութեան կշռոց և չափուց, որ հայի և քննէ զկշիռս, զի մի՛ նենգութիւն ինչ սպրդիցի ի նոսա»։ ՆՀԲ մեկնում է. «բառ անյայտ. թուի զոյգ ոստանիկաց, կամ զոյգ ոստուցեալ ի գործ պատերազմի. այսինքն նիզակակից՝ հեծեալ, ասպետ, ազատորեայր, համհարզ, համահարզ... ըստ յն. ζευγίτης, այսինքն լծուոր, ամոլք, առ աթենացիս էր կարգ գասու զօրականաց զկնի ասպետաց»։ Նոյնն ունի նաև ՋԲ։—Բագրատունի, Քնբրակ. զաղղ. 1821, էջ 99 և Հայկ Պիւզանդ Ջ. 743 համարում է «aide de camp»։ Հիւնք. գնում է «պատերազմակից»։ Lag. Btrg. bktr. Lex. 19 բառիս վերջի մասը հանում է պրս. ustād «վարպետ» բառից։ Ուղիղ մեկնութիւնը տուել է նախ Ստ. Կամենիացի, որից առնելով Նորայր, Հայկակ. բառաքնն. էջ 113։ Հիւբշ. 215 մերժում է Lagarde-ի մեկնութիւնը և անցողակի յիշում է Նորայրինը։

ՁԻՒՇ *«խլուրդ» Հին բռ. և Բառ. երեմ. էջ 102, որոնցից էլ առել է ՓԲ. իսկ ՆՀԲ յիշում է զոլ բառի տակ։*

**ՁԻՓԱԿԱՆ «խաւարային». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Եւագր. 78 «Զգոյշ լինիջիր դու ի զիփական խորհրդոց անտի», ուր յոյն բնագիրն ունի բառ Սարդիսեանի՝ ζοφερούς. այս բառը նը-*

շանակում է «խաւար, մթին», որով և ճշդում է հայերէն բառի իմաստը և աղբիւրը։ Նոյն բառն է խաթարեալ ձեւով և նշանակութեամբ՝ գիփափական «փառասէր». ունի միայն Բառ. երեմ. էջ 102։ J. Muyldermans (Louvain. Բելգիա) յայտնում է (նամակ 1931 մայ. 30), որ Եւագրի փարիզեան № 1056 ձեռագրում, էջ 52, տող 4 կայ ζιφαίους ընթերցուածը, փոխանակ ζοφεροὺς։ Այս ձեւը ճիշտ համաձայն լինելով հյ. գիտական, հաստատում է մեր բառի ծագումը և ենթադրել է տալիս, որ հայ թարգմանիչն էլ նոյնպիսի մի ընթերցուած է ունեցել իր գործածած օրինակում։ Յոյն բառից փոխառեալ եմ գնում ՄՃԿ. գիֆիր «սաստիկ մութ», որ գործածվում է նաև Պօլսի հայ բարբառում (գիֆիր մութ է)։

ՁԼԱՆԱԼ (ձլացայ, -ցի՛ր, -ցեալ) «զրկել, խնայելով տալ, ուրանալ, մերժել, վոնտել» ՍԳր. Ոսկ. յհ. ա. 1, 6, 8. Եւս. պատմ. Եփր. ծն., որից՝ ձլացողութիւն «ապերախտութիւն» վեցօր. 200, ձլացումն Փարպ., ձլացող «ուրացեալ» (օր. գունդ ձլացողաց «ուրացեալների գունդը» Եփր. յոբ. ՀԱ, 1912, 673), ձլացութիւն Եփր. յոբ. ՀԱ, 1912, 669։

ՆՀԲ արաբ. զիլ, զուլմ «զրկանք, հարըստահարութիւն» կամ հյ. ծոյլ բառից։ Հիւնք. ժլատ բառից։

ՁԼԱՔԱՐԲ «մի տեսակ չհշաքար՝ որով մագաղաթ են կոկում». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Տաթև. ձմ. ճծէ. «ի Սիկիլիա կղզին հուրն բղխի իբրև ղաղբիւր և զծանր քարն այրէ և թեթևացուցանէ իբրև զյարդ. և ձլաքարին՝ որով զմագաղաթն սրբեն՝ յայն քարէն է ասեն».— եթէ չէ հյց. և կամ եթէ պէտք չէ կարդալ ձլաfարդ՝ դ յօդով, որով բուն ձեւը կլինի ձլաfար, իբրև fար բառի մէկ բարդութիւնը։

*ՁԼՂԻԼ «ոտքը սահիլ». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Առաք. պատմ. 460. կայ նաև արդի մի շարք գաւառականների մէջ՝ ձլխուիլ, ձլխտուիլ, սլխուիլ, սլխկուիլ, սլխկիլ, սլխտալ, սլկուիլ, սլֆուիլ, սլկճիլ, սլլուիլ ձեւերով (տե՛ս իմ Գաւառական բառարանը)։

=Արաբ. زلق zalaq «տքը սահիլ, սլրխկուիլ», zalq «ոտքը սահեցնել, մէկին ընդջել՝ ցած գլորել» (Կամուս, Թրք. Թրգմ. Բ. 920—1)։ Մեր բառի ղ, խ, խկ, կ, f ձեւերը ներկայացնում են արաբ. q տառի զանազան արտասանութիւնները։—Ա՛ճ.

Պատահական նմանութիւն ունին հսլ. slizŭkŭ «սահուն», ռուս. скользить «սահիլ», արաբ. زلخ zalx «ոտք սահելու լպրծուն տեղ» (Կամուս, Թրք Թրգմ. Ա. 543), եբր. זהל zxl «սողալ, սահիլ, լպրծիլ»։

ՁԼՈՒԹԵԼԻ. անստոյգ բառ. մէկ անգամ ունի ՅՀ. գառն. «Անվախճան որդանց... զազրագործ զչար ժանեաց նոցա զգլուխելին նոցա». (ուրիշ ձեռ. ունի զգուխելիս. Աբ գտնում է նաև զլեխեալ ձևը). ՆՀԲ մեկնում է «չարաչար խածուած», Աբ հանում է լեխիլ «թուլանալ, լխկիլ» բայից։ ՋԲ չունի։

ՁԿԵՈՒ (գրուած նաև ըզկեո, սգեո, սկեո, զղեո, զղեար) «մի տեսակ պտուղ է. մուշմուլա, mespilus, néfle» Գազիան. Տաթև. ձմ. ձգ.—արևմտեան գրականը վերի ձևերից ընդունում է ղղեար, արևելեան գրականը՝ զկեո, որ և գաւառականների ցոյց տուած ձևն է։

=Նման են հնչում արաբ. زعرور za'rūr «ալոճ» (ըստ Կամուս, Թրք. Թրգմ. Ա. 876) կամ «զկեռ» (ըստ Pott, ZKM, 1850, 105). այս վերջինը տալիս է արաբ. zaror, zarora, anzarola, zaurour, azarola, zarurum ձևերը, որոնցից փոխառեալ է գնում յն. ζαρούριον, ζαρόρ «զկեռ». Համմտ. նաև թաթար. azγul, արևել. Քրք. ezqil, äzqil, լազ. skilimuntri, skirmuti, վրաց. სხმარტელა սրխմարտելա և ზღმარტლი զղմարտլի, ზმარტლი զմարտլի, որոնք բոլորը նշանակում են «զրկեռ»։ Այս բառերի յարաբերութիւնը ճշտել չեմ կարող։—Ա՛ճ.

Մառ, ИАН, 1915, 828 համեմատում է կովկասեան ձևերի հետ՝ իբր յաբեթական բառ։

ԳԻՒ.—Ագլ. զրկէ՛ոնը, Գոր. Ղրբ. զրկըէո, զրկըո (մնկ. գի՛կի), Տփ. զկիր, Խոջ. զղէր, Համշ. զղիո. (ծառը՝ Ղրդ. զկէոնի, Համշ. զղէնի). նոր բառեր են զկոաջուր, զկոթթու, զկոի, զկոմածուն, զկոուտ։

ՁԿՈՒԻԼ տե՛ս Կիծ։

ՋԿՆԻ *տե՛ս Կին-ք։*

ՋԿՐԿՏԱՆՔ. *անսովոր բառ. մէկ անգամ ունի Փիլ. նախ. բ. (տպ. Վենետ. 1822, էջ 106). «Քանզի ահա զանցեալք շուայտեալք փափկութեամբ և զկրկտանօք՝ այն որ ի խրախուճիսն անուշաբոյր հոտք զանազանք են»։— Աւգերեան այս հատուածը թարգմանում է այսպէս. «Excessus enim crapularum, exquisitorumque conviviorum suppetit, tum fragrantia odoris diversi generis», ուր զկրկտանք բառի վրայից լռութեամբ է անցնում. ՆՀԲ մեկնում է «իբր ձգտանք, ղգայումն, կերածը վեր տալը» (գւռ. զկռտոց)։ Սակայն այս իմաստը յարմար չէ տեղին և տպտռելի է «կերուխում, խրախճան, վայելք» կամ նման նշանակութիւն։*

ՋՀԵՏ *տե՛ս Հետ։*

ՋՂԱԼ *տե՛ս Ջղալ։*

ՋՂԵՒԱՐ *տե՛ս Ջկեւռ։*

ՋՄԱՑ *«դժուարաշնչութիւն, asthme» Գաղիան. ունի միայն Նորայր, Բառ. ֆր. 100 բ։*

ՋՄԱՅԻ *արմատ առանձին անգործածական, որից կազմուած են՝ զմայլիլ «կուշտ ու կուռ ուտել, խմել, լիանալ» Ովս. ժգ. 6. Ածաթ. յետնաբար «հիանալ, սքանչանալ» վրք. հց., զմայլական «յագեցուցիչ» Մագ. վրք. հց., զմայլանալ «յափրանալ, լաւ կըշտանալ» Ոսկ. երր. գ., զմայլեցուցանել «առատօրէն կերցնել ու խմցնել» Երեմ. լա. 14, զմայլութիւն «ուտել, վայելել, յագուրդ» Ոսկ. երր. ժգ., գրուած է զմայղութիւն Տիմոթ. կուզ, էջ 265։ Նոր գրականում գործածական է միայն երկրորդ «հիանալ» նշանակութեամբ, որի համեմատ շինուած են զմայլելի, հոգեզմայլ, գեղազմայլ են։*

Տէրվ. Altarm. 49 և նախալ. 52 համեմատելով սանս. smi «ժպտիլ», անգլ. smile, լտ. mirus «զմայլելի, հիանալի», mirari «զմայլիլ», հբգ. smieren. smielen «ժպտալ», յն. μειδάω «ծիծաղիլ», հյ. ժպտիլ, ժմտիլ, վայելել ձևերի հետ, այս բոլորը միասին հանում է հնխ. smi արմատից։ Գազանճեան, Արև. մամ. 1902, 76 դնում է զ մասնիկով՝ կազմուած մայլ արմատից, որ գտնում ենք գաւառականների մէջ։

Գիւմ.—Ունինք մայլիլ Եւդ. վն., պայլիլ Սվ., մայլ մնալ Տփ., մայլվորիլ Եւդ. «սքանչանալ, զմայլիլ, ափիբերան մնալ». մի քիչ աւելի հնից մայլիլ Նոր վկ. էջ 565 (1755 թուից)։ Սակայն եթէ այս բոլորը գալիս են մայլիլ ձևից, ինչո՞ւ ըստ օրինի չեն դարձած մալիլ կամ մելիլ (համմտ. բայլել>բալել, էլել)։ Այս պատճառով կարծում եմ, որ սրանք փոխառեալ են արաբ. مائل māil բառից, որ թուրքերէնում ունի «սքանչանալ» նշանակութիւնը (տե՛ս իմ Թուրքերէնէ փոխառեալ բառերը, էջ 227, ուր ունինք պլ. մայիլ ըլլալ, վն. մայիլ մնալ, մէնիլ տալ, ննխ. Ղրբ. մայիլ ձևերը)։

ՋՄԱՍՏ *«ջրգողութիւն» Վստկ. 169. նորագիւտ բառ. «Ակռացաւի օգտէ (սխտորն), ջրմաստի, արծուենաց օգտէ». նոյնը նաև Բժշ. «Ջմաստ և սսկայ (=թրք. səsqa) խոթիսդան է» (արաբ. istisqa «ջրգողութիւն»). Հրատ. Բազմ. 1917, 102։*

ՋՄԲԱՂ *(գրուած նաև զրմբաղ) «հոգ, մտատանջութիւն, շուարում» Եզեկ. է. 7, 10, Նար. ծն. 141. Ես. նշ. որից զմբաղիլ «մտածմունքի մէջ ընկնել, ցնորիլ» Ոսկ. ննշ. Եփր. աղ. քատ. Մագ. մեծ են. էջ 77. իբրև ռմկ. «ըղձոյանալ» Մխ. բժշ. այսպէս նաև զմբաղ Նար. ծն. ըստ ՀՀԲ և ՋԲ ունի «վայելք, հրճուանք, բերկրութիւն» նշանակութիւնը, մինչդեռ ըստ ՆՀԲ նշանակում է «փոքր՝ չնչին հոգ»։*

ՆՀԲ կապում է զբաղիլ բառի հետ։ Böttich. ZDMG, 1850, 354, Arica, 80, 327 սանս. jrmbhaka (իմա՛ ཛྲྀམྦྷཀ «ուրուական»)։ Lag. Urgesch. 973 սանս. jṛmbh արմատից։ Հիւնք. զբաղում բառից։ Patruba´ny, ՀԱ, 1907, 186 ծան. զ և ըստ նախդիրներով բաղ բառից։

ՋՄԲՈՒԻ *տե՛ս Սմբուլ։*

ՋՄԲՐԻԼ *տե՛ս Ջմբրիլ։*

*ՋՄԵԼԻՆ, ի–ա *հլ. «գրիչ տաշելու փոքր դանակ» Երեմ. լզ. 23. գործածուած է գրծ. զմելիճաւ ձևով, որի դէմ այլ ձեռ. ունի զմիլճաւ (այն է ուղ. *զմիլիճ ձևից)։ Նոյն բառի տեղ Մխ. երեմ. գրում է զմիղճաւ, որ ենթադրում է ուղ. *զմիղիճ։ Ուրիշ օրինակ չկայ։ Կենդանի է բառս արեւմտեան գրականի մէջ (արեւելեանը չունի. փոխարէնը գործածում*

է գրչաճաա) զմելի ձևով (սովորական հնչումըն է զըմելի). բայց ոմանք գործածում են զմելին ձևը։ (Բառ. երեմ. ա. տպ. 212, բ. տպ. 304 և յաւել. 553 դնում է մելին, միլն, պրծ. միլնաւ ձևերը, որոնք բոլոր սխալ են)։

=Յն. σμιλίον (σμιλίν) բառից, որ նուազականն է σμίλη «կտրոց, արձանագործի մկրատ, վիրաբոյժի նշտրակ, կօշկակարի դանակ, այգեպանի յատոց, զմելի» բառի (ծագում է հնխ. smi «տաշել» արմատից. Boisacq, 885). ըստ այսմ ուղղագոյն տառադարձութիւնն է զմիլին։ Յոյնից է փոխառեալ նաև ասորի ܙܡܠܝܐ zəmelyā «զմելի, զրշահատ» (Brock. 96 ա)։—Հիւբշ. 349։

Ուղիղ մեկնութիւնը տուաւ նախ ՆՀԲ, նոյնը յետոյ Տէրվ. Altarm. 49 ևն։ Մ. Գ. Թիրեաքեան, Մասիս, 1880 հոկտ" 31 պահանջում է կարդալ ըզմելի և ո՛չ թէ զըմելի։

ՁՄԼ՞ տե՛ս Իւ։

*ՁՄԻՒՆԻՍ «անծանօթ մի անասունի անունն է». մէկ անգամ ունի Մխ. առակ. հգ. «Ձմիւռնեան (=զմիւռնիացին) զոմն ի խեցեմորթիցն ի տուն իւր կոչէր...»։

=Յն. σμύραινα, որ և μύραινα, μύραινα «մի տեսակ շատակեր ձուկ է. ֆրանս. muréne»։ —Ա.Ճ.

ՆՀԲ մեկնում է յն. μῦρος, μύρηνος ձուկը և կամ լտ. murex միջատը։ ՋԲ սրանցից առաջինն է ընդունում, ԱԲ՝ վերջինը։

ՁՄՇԵԱԼ տե՛ս Միծ։

*ՁՄՈՒՒՍ, ի-ա, ո հլ. «մի տեսակ անուշահոտ խունկ կամ իւղ» Սգր. «կնդրուկի ծառ» Կոչ. 404 (Ձի բոյն շինէ իւր ի լիբան փայտէ և ի զմուռս փայտէ). ածանցման մէջ մըտնում է երեք ձևով. 1. **Ձմռս-**, ինչ. զմռսաբեր Նիւս. երգ., զմռսալիր Նար., զմռսալից Երգ. ը, զմռսել Մրկ. ժե. 23.—2. **Ձմռճ-**, ինչ. զմռճաբեր Խոր. աշխ., զմռճախունկ Գաղիան., զմռճենի Եզ. լ. 23. Երգ. դ. 6.—3. **Ձմռ-**, ինչ. զմռել Եղիշ. Թագմ. վրք. Հց. Անկ. դիրք առաք. 56, 187 (գրուած զմրռեաց), զմռալից Գնձ., զմռաճալ Եփր. Համաբ. 30, զմռաբեր Խոր. աշխ. 598. ըստ այսմ արմատը ունի երեք ձև՝ զմուռս, զմուռճ, զմուռ. վերջինը գործածական է արդի գրականում՝ «կնքամոմ» նշանակութեամբ։ Սրանցից դուրս կայ նաև մուռ ձևը՝ Բժշ. Վստ. 100, 106, 206։

=Յն. σμύρνα, σμύρρα, μύρρα «զմուռս». նոյն են նաև լտ. myrrha, անգլ. myrrh, ֆրանս. գերմ. myrrhe, ռուս. мирра, смирна, ռում. smirnă, գոթ. smyrn, վրաց. მური մուռի, որոնց բոլորի նախնական աղբիւրը սեմականն է. համմտ. եբր. מור կամ מר mōr, ասուր. murru, ասոր. ܡܘܪܐ mūra, արամ. mōrā, արաբ. مر murr. բոլորն էլ նշանակում են «զմուռս, balsamodendron myrrha» և գալիս են սեմական mar «դառն» արմատից։ Հայ ձևի մայրն է յունարէնը, ինչպէս ցոյց է տալիս նախաձայնը, որ սեմականների մէջ պակասում է և աւելացուած է յունաց մէջ՝ ժողովրդական առուգաբանութեամբ միացնելով բառը՝ σμύρον «սպեղանի, օծանելիք» բառի հետ (Boisacq, 652)։ Յատկապէս զմուռն ծագում է σμύρνα ձևից, զմուռ < σμύρρα ձևից (υ >ու ձայնափոխութեան համար համմտ. մատուռն), իսկ զմուռս ձևը դժուարութիւն է հանում։—Հիւբշ. 393։

Վերի զանազան ձևերի հետ համեմատեց նախ ՆՀԲ։—Lag. Arm. Stud. § 785 յն. Ζμύρνα, Մ. Գ. Թիրեաքեան, Մասիս, 1880 հոկտ" 31 ըստ յունարէնի պահանջում է կարդալ ըզմուռս և ո՛չ թէ զըմուռս։—Հիւբշ. շատ գործածական զմուռս ձևը չկարողանալով մեկնել՝ բառդ դնում է անծանօթ ծագումից։

ԳԻՒ.—Մշ. զմուռ, զմուռս, Խրբ. զըմուռ, Երև. զմուռ, զմբուրբ (ըստ Ամատունի, Հայոց բառ ու բան, էջ 189), Տփ. զմբուռ «կարմիր կնքամոմ», Նխճ. ձումուռ «մի տեսակ խունկ»։

ՓՈԽ.—Վրաց. ზუმბური զումբուրի «կնքամոմ» (կայ նաև ზმური զմուռի, მური մուռի ըստ Մաո, Иппол. էջ 59), ზუმური զումիրի «անուշահոտ ձիւթ կամ ռետին», քրդ. ژوم zumur «կնքամոմ». Աւետարանի թարգմանութեան մէջ տառադարձուած է զմուռ՝ Յովհ. ժթ. 39 «Սատ լըդըրան զմուռ» (Զմուռս իբրև լաւերս հարիւր)։

*ՁՄՌՆԻՏ, արմատ առանձին անգործածական, որից կազմուած է զմռնիտեան քար «մի տեսակ կարծր քար, որի փոշին գործա-

ծում են իբրև մաշիչ կամ յղկիչ. տճկ. զըմփարա» վանակ. յոր։

=Յն. σμύρις (σμύριδος)՝ նոյն փոշին է. որից σμυρίτης λίθος «զմռնիտեան քար».— յոյնից փոխառեալ են նաև լտ. smyris, ֆր. émeri նոյն նշ.—յոյն բառը Boisacq, էջ 886 դնում է հնխ. smer «քսել, զօծանել» արմատից, որին պատկանում են գոթ. smairþr, հհիւս. smiǫr, անգսք. smeoru, հրգ. smero «ճարպ», լիթ. smarsas, smarsté «ճննճ» են, որոնք թէև ունի Walde 478, բայց նրանց չի միացնում յն. σμύρις բառը։ Այս պարագային պէտք է յիշել եբր. שמיר šāmīr, ասոր. ܫܡܝܪܐ šamīrā «ադամանդ. 2. զմրուխտ» (Brockelm. 380)։—Հիւբշ. 349։

Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ։

ՁՄՐԻԼ, կամ ՁՄՐՐԻԼ *«թմրիլ, ընդարմանալ, արբեցութիւնից յիմարիլ, խայտառակուիլ» էր ընդ եղբ. 48. Փիլ. տեսակ. Մամբր. բ. տպ. էջ 14, Ոսկ. յհ. ա. 3. «պապանձիլ» ի գիրս խոսր. 113. Լմբ. սղ. «ձիուց հարուած սառանալ» Եփր. փիս. 420. «գլուխը պտտուիլ» ԱԲ. որից* **զմրեցուցանել** *«թմրեցնել» ԱԲ. գրուած է զըմպրեալ Սարկ. սղ. էջ 121։*

*=Բնիկ հայ բառ հնխ. mēr- արմատից՝ զ նախդիրով. ցեղակիցներից համմտ. սանս. mūrčhati «կաթը շաղուիլ, ապշիլ, շշմիլ, թմրիլ, փայտ կտրիլ», murtà- «շշմած, թմրած, նաև շաղուած՝ մածնած կաթ», պհլ. vēmār= =պրս. بیمار bīmār «հիւանդ» (*vyai-māra), پژمردن pazmurdan (որ և palmurdan), անց. դերբ. pažmurda «թառամած (ծաղիկ, բոյս), ախուր, տրտում, այլայլած կերպարանքով, հիւանդոտ (մարդ)» (*patiš-mar). յն. βρότος «մածնած արիւն» (Pokorny 2, 280, Horn § 313, Nyberg, Hilfsbuch 2, 239, Boisacq 135)։*

Տէրվ. Լեզու 1887, էջ 148—9 հնխ. smi արմատի smir ձևից. համմտ. լտ. mirror «զարմանալ», հրգ. smieren։—Հիւնք. թուրմ արմատից դնում է թմրիլ և զմրիլ։ Pedersen, Հայ. դր. լեզ. 158 զ-մբրիմ՝ կազմուած զ նախդիրով՝ թմբրիմ բայից, բ ձայնի անկումով։

Ուղիղ մեկնեց Scheftelowitz, KZ, 53 (1925), 260։

ԳԻՒՒ.—Չգիտեմ թէ նոյն արմատի՞ն էն պատկանում գուռ. զմռիլ «չեփած մսի փակ ամանի կամ պահարանի մէջ դրուելով՝ նեխիլ և հոտիլը», գեղիներ զմռիլ «ցրտից պընդիլ, մնալ քարացած», զնգռիլ Մշ. «սառտիկ թմբրիլ, գլուխը դառնալ, բնդարմանալ» (Ա-մատունի, Հայոց բառ ու բան, էջ 189 բ)։

ՓՈԽ.—վրաց. ზმორება զմոռեբա «յաճախ յօրանջելով հանդերձ մարմնի անզգամների ձգձգուիլը, ճապկոիլ, մանաւանդ ցրտահարութիւնից յետոյ»։

***ՁՄՐՈՒԽՏ** *«զմրուխտ քարը» Գր. տղ. ևէմ. յետին ռամկական ձև, որի հինն է* **զմրուխտ** *(տե՛ս անդ)։*

=Թրք. زمرد zümrüd, գուռ. zümrüt, zumrut «զմրուխտ»։—Աճ.

Տե՛ս իմ Թուրքերենէ փոխառեալ բառեր, էջ 92։

***ՁՄՐՈՒԽՍ, ի-ա, ո** *հլ. «մի տեսակ ազնիւ քար՝ կանաչազոյն» ՍԳր. որից* **զմրխտի** *ԱԲ.* **զմրխտեայ** *Պատմ. աղէքս. Տօնակ։*

*=Փոխառեալ բառ, որի բնկերներն են յն. σμάραγδος, ζμάραγδος, μάραγδος, պրս. زمرد zumurrud, պհլ. uzmuburt?, արաբ. زبرجد zabarjad, սանս. marakata, պրակր. maragada, չին. molokiat'o, բոլորն էլ «զմրուխտ» նշանակութեամբ։ Բոլորի աղբիւրը սեմականն է համարւում. համմտ. բաբել. barraktu, եբր. ברקת bāreqet, bārqat, փունիկ. baraqt, ասոր. ܒܪܩܐ bārqā (Brockelm. 46) հոմանիշները, որոնք ծագում են brq «փայլիլ, փայլուն» արմատից (այսպէս A. Weber, Indische Skizzen 88, M. Bréal MSL 10, 66, Halévy BSL 10, 18 են)։ Յոյն ձևը յառաջացել է հնդկականից. այսպէս μάραγδος պրակր. maragada ձևից, իսկ σμάραγδος պրակր. açmā maragadō «քարն զմրուխտ» ձևից՝ իբրև *σμαμάραγδος (տե՛ս Boisacq 609)։ Յոյնից են ձևացել լտ. smaragdus, ասոր. ܙܡܪܓܕܐ zmaragdā (Brockelmann 96), գերմ. Smaragd (Kluge, 455), ռուս. смарагдъ, ֆրանս. émeraude, անգլ. emerald, վրաց. զամարաղ'դա, սամարաղ'դի, սամարագդո, են։ Պարսկականից են ձևացել արաբ. زمرد zumurrud, քրդ. zumrud, թրք. zümrüt, ռուս. изумрудъ*

(Berneker 441): *Հայերէնը գանում է յն. և պրս. ձևերի միջև. նախաւոր ձևն է *զումուրուխտ, որ շատ իս ծագած պէտք է լինի պհլ. գւռ. *zumurruft ձևից (հմմտ. զառնաւուխտ), —Հիւբշ. 151:*

Առաջին անգամ ԳԴ համեմատեց պրս. zumurrud *ձևի հետ: Այլևայլ լեզուների հետ կցում են ՆՀԲ,* Lag. Arm. Stud.

ՓՈԽ.—Հայերէնից են փոխառնալ վրաց. **ზურმუხტი** *զումուխտի և թուշ.* **ზურმუხტ** *զումուխտ «զմրուխտ»:*

ՉՆԴԱԼ *(կամ* **զընդալ***) «խնայել, վրան դողալ, գթալ» եղն. Սերբեր. Ոսկ. մաթ. հռովմ. 284. Վրք. և վկ. Ա. 534 Փիլ. (Վեննա. 1892, էջ 128), «սիրտը թունդ եղել, տագնապիլ» Նար. ժզ. էջ 36. որից* **զընդացումն** *«սրտադող» Պիտ:*

ՆՀԲ **թընդալ** *բառից:* Böttich. ZDMG 1850, 354, Arica 72, 176, Lag. Urgesch. 390 *սանս.* čhad=črand, čhandu *«պաշտպան»:*

***ՉՆԴԱՆ, ի–ա** *հլ. (գրուած նաև զընդան, գնտան՝ ը-ով կամ ա-ով) «բանտ» (նոր դրականում «աստրերկրեայ մութ բանտ») Եղիշ. է, էջ 107. Նար. էջ 36, 236, Վրդն. ծն. որից* **զընդանարգել** *«բանտարկեալ» Երզն. քեր.* **զընդանել** *«բանտարկել» Կաղկանտ. Հրտր. էմ. էջ 91. Շապհ. 71.* **զընդանաւոր** *«բանտարկեալ» (գրուած զընդաւոր) Ոսկիփ:*

=Պհլ. 𐭦𐭭𐭣𐭠𐭭 z(i)ndān, zēndan *«բանտ»,* zēndānpān *«բանտապան», պրս.* زندان zindān *«բանտ»: Բառիս ծագումը անստոյգ է. Horn § 671 դնում է զնդ. *zaēnadāna ձևից, իրր թէ նախնական նշանակութիւնը լինէր «զինարան»: Իրանեանից են փոխառնալ նաև քրդ.* زندان zindān, *զազա* zeindān, *թրք.* zəndan, *սերբ.* zendan, zindan, zondan *«զնդան», օսս.* zindon *«դըժոխք», ասոր.* ܙܢܕܝܩ zendānīq *«բանտապետ»* (Brockelm. 97 a):—*Հիւբշ. 151:*

Ուղիղ մեկնեց նախ ԳԴ, յետոյ Böttich. Horae aram. 33, 56, Rudim. 41, 105;—Böttich. ZDMG 1850, 354, Arica 72, 176, Lag. Urgesch. 391 *դնում են սանս.* čhad *արմատից:* Müller SWAW *38, 580 սանս.* jantu, *զնդ.* zantu *«ընկերութիւն»:* Justi, Zendsp. *120 ը սրանց հետ նաև մարական* Ἀριζάντοι, *լիւկ.* Xanthus *յատուկ անուններըը. Հայերէնը համարում է պարսկերէնից փոխառեալ:*

ԳԻՒ.—Առհասարակ գործածւում է **զընդան** *ձևով, որ կարող է նաև նոր փոխառութիւն լինել թուրքերէնից. բայց ունինք նաև Համշ.* **զընդօն, Ջթ. զօնդօն, զօնդոն.** *փոխաբերաբար նշանակում է «մութ տեղ», և առւում է օր. Պլ. մութ–զընդան, Ղրբ. մրէն–զընդան են:*

ՉՆԻՆ *(գրուած նաև* **զընին***, սխալմամբ* **զնին՝** *շփոթելով* **զնել** *բառի հետ. այժմ էլ ոմանք շարունակում են այս սխալը, որովհետև բառը հնչւում է* **զընին***) «քննութիւն, որոնում, դիտել, տեսնելը» Բ. մակ. ե. 26. Ծն. լդ. 1. Ելիր. Թգ. Ոսկ. յհ. ա. 26. Վեցօր. Ւրից* **զընել** *Դատ. ժզ. 26. Նաւում. գ. 1.* **զընելի** *Ոսկ. ես.* **զընական** *Սերբեր.* **զընարան** *Մխ. դտ.* **զընումն** *Փիլ.* **զընութիւն** *Մծբ.* **անզընին** *Վեցօր.* **ճրաչազընին** *Նար. խչ. Նոր բառեր են* **անդամազընին, անդամազընութիւն, դիազընութիւն, խոշազընին, մանրազընին, զընողական են:*

ՆՀԲ համարում է **ընին, ընել** *բառի սաստկականը, իբր զինին, և ի ձայնի անկումով՝* **զնին:** Lag. Urgesch. *51* **ընել** *բառի հետ* nī *արմատից: Տէրվ. Մասիս 1881 յուլիս 4, Հնդու 1887, էջ 18, Նախալ. 50, 71 մեկնում է ՆՀԲ-ի ձևով: Հիւնք. զանազան բառից:* Pedersen, *Հայ. դր. լեզ. 158 ունի նոյնպէս ՆՀԲ-ի ձևով:* Karst, *Յուշարձան 429 թաթար.* kün, gün, kön, čün, čin, sin, *չաղաթ.* sin, sinanlamak, *օսման.* sinamak, čintürmek, *ալթայ.* čene *«փորձել»: Մ. Ս. Գաբրիէլեան, Հայք 1892, թ. 1, էջ 4ա հանում է* **զարնել>զանել** *բայից, իբր թէ «ակռային զարնելով քննել»:*

ԳԻՒ.—Շմ. **զնիլ** *(գործածւում է* **ընել** *բառի հետ):*

***ՉՆՋԻԼ** *«շղթայ» Տաթև. ձմ. ճը (քանիցս). որ և* **զնիլ** *Վրք. հց:*

=Թրք. زنجیل zenjil *«շղթայ», որ փոխառեալ է պրս.* زنجیر zenjir, zanjīr, zinjīr *համանիշից, որից նաև բելուճ.* zanjīr, zamzīl, *քրդ.* zənjīl *«շղթայ»: Պարսիկ բառի ծագումը անյայտ է:*

*ՆՀԲ և ՋԲ տճկ. զինելի ձևից են դրնում։ Հիւրշ. ZDMG 35 (1881). 659 և Arm. Gram. 265 դնում է նպրս. zanjīr ձևից, թուրք ձևին անծանօթ լինելու պատճառով։

*ՁՈԴԻԱԿՈՍ «երկնքի կենդանակերպների համարը» Շիր. գրուած է նաև զօդիակոս, ծոդիակոս, ծօղիակոս. վերջինը էֆիմ. 34։

=Յն. ζῳδιακός «կենդանակերպների համարը», որից փոխառեալ են նաև լտ. zodiacus, ֆրանս. zodiaque, ռուս. зодіакъ ևն. յոյն բառը ծագում է ζῴδιον «կենդանակերպ» բառից և սա էլ ζωή «կեանք» բառից։— Հիւրշ. 350։

Ուղիղ մեկնից նախ ՆՀԲ։

ՁՈՁԱՏԵԼ. առանձին չգործածուած և անյայտ նշանակութեամբ բառ, որից ունինք զոզատող «Ակ ձայնին պատկանող մի եղանակի անուն» Մանրուս. (տե՛ս Ամատունի, Հայոց բառ ու բան, էջ 190)։

ՁՈՀ, ի հլ. «բոյսի մէջտեղի հաստ ծիլը». նորագիւտ բառ՝ որ գտնում եմ գործածուած Մագ. թղ. 95 «Ջհազարդ սակս բազմաթերթութեան և յոգնարեղուն մանրագոյն մասնըկաց, որ ի ներքոյ թերթից տերևոյն տոտրակայեալ ընձիւղեալ զոհիցն, որ ի նմա պատշաճեալ հուպ ի միմեանս յարամանեալ»։ Փոխաբերաբար «աշտանակի բունը՝ որ պատուանդանի վրայ է հաստատուած». այս իմաստով էլ գտնում եմ գործածուած Տաթև. ձմ. ճիր. «Աշտանակն... երեք յատկութիւն ունի. նախ՝ որ ոտքն լայն լինի՝ որ հաստատ պահե. երկրորդ՝ որ զոհն բարձր լինի. երրորդ ճրագն ոսկի էր...»։ Սրանից է կազմուած զոխոյ (գրուած զօխօ) «մի տեսակ կաթնոտ բոյս, որի տերևները սպանախի և բազուկի տերևներին են նման» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 730 և յաւել. էջ 677, Նորայր ՀԱ. 1924, 548։

Տե՛ս իմ Հայ. նոր բառեր հին մատեն. Բ. էջ 182։

Գիւմ.—Ագլ. երև. Ղրբ. զօխ կամ զէօխ «բոյսի ցօղունը կամ միջին հաստ ծիլը», բայց մասնաւորապէս երև. զօխ «սիրեղ կոչուած բոյսը»։

ՓՈԽ.—Ուտ. zox «բոյսի ծիլ, շիւ»։

*ՁՈՀ, ի հլ. «ողջակէզ, մատաղ» ՍԳր. եփր. թգ. որից զոհել ՍԳր. Եզն. զոհեալ «կուռքերին զոհուած միս» ՍԳր. զոհանոց ՍԳր. զոհարան ՍԳր. Ագաթ. զոհատուր Ղևտ. իդ. 9. եփր. եբր. 212. պատարագազոհ եփր. հռ. 9. մարդազոհ Նխ. հրեմ. կենդանազոհութիւն Նիւս. երգ, փոխաբերաբար բազոհ առնել Ճառընտ. նոր գրականի մէջ՝ ձիազոհ, զոհաբերել, զոհաբերութիւն, անձնազոհ, անձնազոհութիւն, զոհողութիւն ևն։ Բառիս հին ձևն էր *զոռհ, որի թանկագին մնացորդն է զորհասէր «զոհ սիրող» Սոկր. եկեղ. պտմ. Գ. 20 (էջ 265)։

=Պհլ. zōhr «զոհ» բառից.այս բառը աւանդուած է իրանեան գրականութեան մէջ՝ «օրհնեալ ջուր» նշանակութեամբ. այսպէս նաև պազենդ. zōr «օրհնեալ ջուր», զնդ. zaoθrā- «զոհաբերութեան համար պատրաստուած ըմպելիքը», հպրս. *zauθrā-, բայց սրանց բուն ժողովրդական նշանակութիւնը պիտի լինի «զոհ» (համմտ. սանս. hōtrā- «զոհ, զոհաբերութիւն»), որ յետոյ գրադաշտական կամ պարսկական դինի մէջ ստացաւ վերի նշանակութիւնը։ Իրանեան բառերի արմատն է հնխ. gheu-, որից ունինք բնիկ հյ. ձօն և ձև (ավելի ընդարձակ տե՛ս այս բառերի տակ)։ Իրանեանից են փոխառեալ նոյնպէս ասոր. ܙܘܪܒܐ zauθrā «դևերին ձօնուած հաց», վրաց. ზორვა ზორվა «զոհ, զոհաբերութիւն, զոհել», ხაზორავი սազորավի, ხაზორაველი սազորավելի «զոհական, բագին, կռատուն, խորան, սեղան»։ —Հիւրշ. 151։

Klaproth, Asia polygl. էջ 103 արաբ. seh'yjeh, արմատը syh' «արևին դնել»։ ՆՀԲ յիշում է միայն եբր. זֶבַח zewaḥ, zebaḥ «զոհ»։ Նոյն համեմատութիւնն ունին նաև Peterm. 259 և Riggs, Քերակ. 1856, էջ 60։ Ուղիղ մեկնից նախ Lag. Urgesch. 1117, որից յետոյ Müller SWAW 38, 580, Pictet 2, 703, Justi Zendsp. 120 ևն։—Սէր 1862, թ. 24, էջ 182 «սեմական զոպի բառն է, որ Պարսից կամ Ասորոց միջոցաւ անցած է մեզի»։ Դարագաշեան, Քննակ. պատմ. 44, 51 պրս. (Աժի)տահագա և Ջոհակ անուն-

ների հետ։ Տէրվ. Նախալ. 81 վերի ձևով։ Հիւնք. յն. Ζωάγρια «փրկանք, մատաղ»։ Ալիշան, Հին հաւ. 376 գոթ. sauá «զոհ», 452 արաբ. զահայա, հբր. զէվախ, գնդ. զաօբրա։

*ՁՈՀԱԼ (գրուած յեռնաբար զօհալ) «երևակ մոլորակը» Շիր. Երզն. Երկն. է. Տոմար։

=Արաբ. زحل zuḥal «երևակ». ծագում է zḥl «քաշուիլ, հեռանալ» արմատից. այսպէս է կոչւում մոլորակը՝ հեռու և մեկուսացած դիրքի պատճառով (Կամուսի Բրբ. Բրգմ. Դ. 232). սրանից է փոխառեալ նաև հնլով. zugelĭ։—Հիւբշ. 265։

Ուղիղ մեկնեց նախ ՀՀԲ և յետոյ ՆՀԲ, Հիւբշ. ZDMG 35(1881), էջ 659։

*ՁՈՀՐԱՅ (գրուած նաև զոհրա) «Արուսեակ մոլորակը» Շիր. Տոմար. Բ'կր. 34. որ և զօրհա Կոստ. Երզն. 176, զօհրէ Երզն. Երկն. է։

=Արաբ. زهرة zuhra «Արուսեակ», որից նաև հնլով. vsugra. բուն նշանակում է «լուսատպիտակ». այսպէս է կոչուած Արուսեակը իր մաքուր սպիտակափայլ պայծառութեան համար (Կամուս, Բրբ. Բրգմ. Ա. էջ 883)։—Հիւբշ. 265։

Ուղիղ մեկնեց նախ ՀՀԲ, յետոյ ՆՀԲ և Հիւբշ. ZDMG 35(1881), էջ 659։

ՁՈՂ «ծոծրակ, cervix». դիտէ միայն Ներսէսովիչ, Բառ. լտ.-հյ. էջ 73 բ։—Բայց թևբևս պէտք է հասկանալ զոխ «բոյսի ծիլ», որովհետև լտ. cervix նշանակում է նաև «բուն, ցօղուն»։

*ՁՈՂԱԼ (որ և զղալ) «հոյն, չում (ծառը և պտուղը), լտ. cornus» Բժշ. որից զողալեճի «հունի ծառը» ՀԲուս. § 716։

=Թաթար. zoγal, արևել. Բրբ. zoγal, բրգ. زغال zugal. ուս. zogal «հուն», zokγala-xod «հունի» (ուս. xod «ծառ»), լեզգ. գուո'ւլի, Բրբ. գուռ. Եւդ. زوغال zoγal (Բիւր. 1899, 314. Յուշարձան 329), ն. ասոր. zoγal «հուն»։

ՆՀԲ անցողակի յիշում է «այլազգ. զէղալ»: Justi, Dict. Kurde, մեղանից փոխառեալ է դնում քրդ. բառը՝ թաթար ձևվին անծանօթ լինելու պատճառաւ։ Այսպէս նաև Գազանճեան (Բիւր. և Յուշարձան, անդ) Բրբ. գուռ. բառը։

Գ'Ի՛Ր.—Շմ. զօղալ։

ՁՈՂՈՔԻԿ «անյագաբար ուտել, կշտանալ ցյադ, փորը խճողել». մէկ անգամ ունի Սեբեր. թ. «Այլ միանգամայն որ զողոքիցի և քաղցնուցու, և արբենայցէ և ծարաւիցէ, նա է որ արդարև յաւիտենից փրկութեամբն յագեսցի». (տպ. Վենետ. 1830, էջ 164)։

ՆՀԲ նշանակում է իբրև անսոյզ բառ՝ կասկածելով նախ նշանակութեան և երկրորդ ձևի համար, որովհետև վերի հատուածում nr բառը կարող է ո՛չ թէ յարաբերական լինել, այլ յաջորդ բառի մասը լինել. այս պատճառով էլ գրում է զողոքիլ կամ nրզողոքիլ: ՋԲ դնում է միայն առաջին ձևը և անշուշտ իրաւամբ։ ԱԲ ջնջել է այս բառը. պատճառը յայտնի չէ։

ՁՈՃՏԵԼ. բառ անսոյզ, որ առանձին չէ գործածուած. սրանից է կազմուած զոճտող կամ զօճտող «ԳՁ ձայնին պատկանող մի եղանակի անուն». Մանրուս. (բստ Ամատունի, Հայոց բառ ու բան, էջ 190)։

*ՁՈՄ, ո հլ. «նաւակամուրջ» Սեբ. էջ 31, 32, 95. Ղևոնդ դ. էջ 13, Ասող. 122. Արծր. Հրտր. Պատկ. էջ 95. որից զոմախաւսակ «կամրջանման» ԱԲ։

=Յն. ζεῦγλα «նաւակամուրջ», որ ծագում է ζεύγνυμι «լծել, կցել, միացնել» բառից։—Հիւբշ. 350։

Ուղիղ մեկնեց նախ Պատկ. Հրտր. Խոր. աշխ. 1877, էջ 55, Սեբէոս, 1879, էջ 32։

ՁՈՄՁՈՄԱՅ «այս ջուր». ունի միայն Բո. երեմ. էջ 103։

*ՁՈՅԳ, ի, ի–ա հլ. «կրկին, երկու, ջուխտ» Փիլ. Եզիշ. խաչել. «Հաւասար, համեմատ, նման, նոյնչափ» ՍԳր. «երկիցք կշիռ» Ղևոնդ. ժթ. 35—36. «ամոլք, լուծք, կրկնակ» ՍԳր. «հաւասարապէս» Եզն. Ոսկ. ես. և Բ. կոր. որից զուգել «միացնել, յարել, կցել, յօրինել, հաւասարել» ՍԳր. Վեցօր. զուգանալ «միանալ» Կորիւն. զուգագոյն Ոսկ. ես. զուգական Կորիւն. Ոսկ. մտթ. և ես. զուգականութիւն Ոսկ. մտթ. Ագաթ. զուգան «լծակից» Կորիւն. զուգաց «միասին կողք կողքի, զոյգ զոյգ» Ոսկ. յհ. բ. 38, 39. զոյգք «գրքի կազմի վրայ

կոճակ» Արձ. 1234 թ. (Վիմ. տար. XVII). զուգուբիւն Վեցօր. զուգօրութիւն «գիշերահաւասար» Փիլ. անզոյգ Ոսկ. Բ. կոր. Սնբեր. միազոյգ Եփր. Ա. կոր. 52. Ոսկ. յհ. բ. 10. անզուգական Ոսկ. ես. Ագաթ. համազոյգ Պիտ. հանճարազոյգ Գնձ. (տե՛ս և վայելզուկ)։—Նոր բառեր են՝ զուգաճեռ (Հաւասար հեռաւորութեամբ), զուգաճեռական, զուգաճեռականդիմ, զուգաճեռաբար, զուգադիպութիւն, զուգորդել, զուգորդութիւն, զուգաթի, երկզուգաթի, զուգաձի, զուգաբան են։

=Ասոր. ܙܘܓܐ, zaugā «զոյգ, կրկնակ, նման» բառից փոխառեալ (թէև ասոր. au> հյ. ոյ ձայնափոխութիւնը դժուարութիւն է յարուցանում). ն.ասոր. zögä «զոյգ»,—ասորի բառն էլ փոխառեալ է յն. ζεῦγος «լուծ, զոյգ» բառից, որ ծագում է հնխ. yug'o- ձեւից. սրանից է նաև հյ. լուծ. այնպէս որ վերջին հաշուով լուծ և զոյգ միևնոյն բառերն են։ Ասորիներէնից փոխառեալ են նաև արաբ. زوج zauǰ «զոյգ, ջուխտ, զուգակից. 2. այր, ամուսին», ڒوجة zauja «կին, ամուսին», زوج وفرد zauǰ va fard «զոյգ ու տարտ»։—Հիւրշ. 303։

Առաջին անգամ Աւգերեան, Բացատր. չփ. և կշռ. էջ 87 կցից յն. ζυγός բառին։ Այնուհետև ՆՀՒ լծ. յն. ζυγός, ζεῦγος, լտ. jugum, պրս. (իմա՛ արաբ.) գէվճ, վրաց. զօղագ: Peterm. 22, 33 յն. ζεῦγος, սանս. yuga: Böttich. ZDMG 1850, 355 սանս. yuga: Այսպէս նաև միւսներդ։ Lag. Arm. Stud. § 793 շիշտում է ասորի ձևը։ Տէրվ. Altarm. 53, 55, Նախալ. 100, 48 լուծ, ջոկ, սանս. yuga, լտ. jugum, գնդ. yuj, յն. ζεύγνυμι, ζυγόν են ձևերի հետ՝ հնխ. yu, yug արմատից՝ իբր բնիկ հայ։ Հիւնք. յն. ζεῦγος, արաբ. գէվճ: Karst, Յուշարձան 424 զ մասնիկով ոյգ բառից. համմտ. Թաթար. оқ «նման»։

ԳԻՒՒ.—Խրբ. զօգ՛, ՀՓ. զբ՛ք «զոյգ, ջուխտ». —Նոյնից են Ջղ. զուգ՛վել, Ալշ. զուխվել, Մշ. սուխվիլ, Պլ. սխվիլ, Սեբ. սխվիլ, Տփ. զուխվիլ «զարդարուիլ», Ախց. զուխէլ, Տփ. զուխիլ «զարդարել», Մշ. սուխել «շինել», Տփ. զուխս, Ղգ. զիխս «զարդարանք». (այսպէս նաև Երև. Ղրբ. Նխճ. զուխս «զարդարանք», Երև. Ղգ. Ղրբ. Նխճ. Շմ. զուխվիլ «զարդարուիլ», Խրբ. Վն. սուխել «շինել, կառուցանել», և վերջապէս՝ զուխակ Սվ. «գողտրիկ, կոկիկ». սուխել «մորթուած հաւեղէնների փորոտիքը մաքրել»)։ Գաւառականների այս նոր նշանակութեանց հետ համմտ. հին լեզւի մէջ՝ զուգել «յօդել, յարմարել, յօրինել, բնդելուզանիլ», մէյ. զուգել «շինել, պատրաստել». (Թուրքն անհոգացեալ և առհասարակ կրակ էին վառեալ, սկսան ապուր զուգել. Ուռհ. 157. Սրբ զազնիւ զուգեալն (ձուկ) ուտէին. Վրք. հց. Բ. 306). մէյ. սալազոյգ «սալա զուգող, կողով շինող».—իսկ «շինել» և «զարդարել» իմաստների յարաբերութեան համար համմտ. Ջղ. շինուիլ «պատրաստուիլ, զարդարուիլ, պճնուիլ»։

ՓԻՒՒ.—Վրաց. ზოგი զոգի «ոմն, մի ուրիշը». (զօգ-ման զոգի բուա դա զոգ-ման զոգի «ոմն այսպէս ասէր, ոմն այնպէս»), ზოგად զոգադ «միասին, բնդհանրապէս, ზოგი զոգի «կէսը» Ղուկ. ԺԲ. 8. ზოგორე զոգորե «մի մասը, մի քիչ, մասամբ», საზოგადო սազոգադո «հասարակաց, բնդհանուր», საზოგადოება սազոգադոբա «բնկերութիւն», Թուշ. საზოგადო սազոգադո «բնդհանրապէս, առհասարակ», քրդ. ژۆک zok, zuq «զոյգ, ջուխտ»։

ՁՈՅԳՈՍՏԱՏ տե՛ս Զիւգոստատ։

*ՁՈՊԱՅ, ի հլ. «ծովբրինի նման մի բոյս է. hyssopus (Տիրացուեան, Contributo § 442). 2. զոպայի տրցակ, հեղուկ մի բան սրսկելու մշտիկ» ՍԳր. Ոսկ. ես. Եւս. պտմ. 114. Կոչ. 29, 269. գրուած նաև զովպայ Մագ. Թղ. 118, զոպա Եղիշ. միանձ. 160. զուփա, զուֆ, զուֆա վասկ. 91. զուֆայ Մխ. բժշ. 34. որից՝ զուփայի շարապ Մխ. բժշ. 54։ Նախաձայնը նախդիր կարծուելով՝ դարձել է ոպայ. «Խօսեցաւ զմայրից Լիբանանու մինչև ցոպային որ ելանէ յորմն» (Առաք. 610 բ). այսպէս և Գիրք մոլութ. մի անգամ. համմտ. «Մինչև ցզոպային որ յորմն ելանէ» Գ. Թգ. դ. 33։

=Ասոր. ܙܘܦܐ, zōpā «զոպայ», որ բնիկ սեմական բառ է և գտնւում է նաև միւս սեմական լեզուների մէջ. համմտ. ասուր. zūpu, եբր. אֵזוֹב ēzōb, արամ. zōpā, արաբ. زوفى zōfa, եթովպ. azab, բոլորն էլ նոյն նշանակութեամբ։ Սեմականներից փոխա-

ունալ են նաև յն. ὕσσωπος, *լատ.* hyssopus, *ֆրանս.* hysope, *գերմ.* ysop *հոմանիշները։ Հայերէնի յատնագարեան ձևերը ծագում են արաբերէնից, որից ձևափոխուած է նաև թրք.* ظوفا zofa *(Կամուս, թրք. թրգմ. Բ. 773)։— Հիւբշ. 303։*

ՆՀՔ (որից նաև Հիւնք.) յիշում է երր. ēzōb: Peterm. *22, 38 գնում է երր. և յն. ձևերը։* Lag. Arm. Stud. § 794 *աստերէնից։*

ՓՈԽ.—Անցած է Ս. Գրքի քրդ. թարգմանութեան մէջ՝ զօպա ձևով։ «Պը աւ ու հէրիէ սօո ու պը զօպայէ» (ջրով և բրդով կարմրով և զոպայիւ). երր. թ. 19։

ԶՈՎ *տե՛ս Հով։*

Canini, Et. étym. *117 պրս.* جوان jivān *«երիտասարդ» բառին է կցում։*

***ԶՈՎՈՂ** *(գրուած նաև* զովօղ, զուողՂ*), ի–ա հլ. «ընկեր, գործակից» ՍԳր. Ոսկ. եփես. Սիրեր. Եւս. պտմ. 452. Մծբ. եփր յես. էջ 315. որից* զովողակից *«ընկերակից» նգն.* զովողութիւն *Ղևտ. ղ. 2. Ոսկ. մ. գ. 6.* զովողիլ *«մասնակից լինել, գողանալ» Ստեփ. լհհ. այս վերջին իմաստն է ցոյց տալիս նաև* զովող *«կին՝ որ զայլ կնոջ այր խլէ կամ սեղեխ առնէ» Հին բռ. նշանակում է նաև «եղնորդ համաստեղութիւնը,* bouvier *(տե՛ս Ալիշան, Հին հաւ. 126)։*

*=Արմատն է **զով *«ընկերութիւն, գործակցութիւն», որի բայական **զովել *կորած ձևի ներկայ դերբայն է* զովող.*—այս ձևի և ածանցումների համար համմտ. յաչող, յաչողիլ, յաչողութիւն, արմատը՝ աչ։—Այս **զով *ձևը բուռ իս ունի կովկասեան ծագում. համմտ. վրաց.* ზავი զավի *«համաձայնութիւն, դաշնակցութիւն, հաշտութիւն»,* ზავება զավեբա *«համաձայնեցնել, հաշտեցնել»,* მოზავე մոզավե *«խաղաղ, հաշտ»,* მოზავება մոզավեբա *«հաշտեցնել, համաձայնեցնել»։—Աճ.*

ՆՀՔ պրս. սէիպ, սաիբպ: Böttich. ZDMG *1850, 355 ենթադրելով արմատը **զուել՝ *միացնում է սանս.* yu *«միացնել», զնդ.* yaoiti *«հաւաքում, միութիւն» բառերին։ Տէրվ.* Altarm. *53 և Նախալ. 100 հնխ.* yu, yug *արմատից։ Հիւնք.* զոյգ *բառից։*

ԶՈՐԱՔԵԼ *«մի բան ո՛չ իբր ականատես, այլ ենթադրաբար պատմել». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Գիրք Թղ. 197 «Թեպէտ և զլուրս ի նմա զանազանեալ տեղեկացաք և թէ ըստ կարծեացս զորաքեցէ, աստուածվայելուչ խոստովանութիւնք. Թո՛ղ յաշակերտելոց բանին, բայց յօտարոտաց եղեալք, ո՞ւմ ոչ սրտալիր ուրախութիւն ծիւքի»։ (Տե՛ս իմ Հայ. նոր բառեր հին մատ. Բ. էջ 243)։*

ԶՈՐԵԿ *տե՛ս Սորեկ։*

ԶՈՐԱՍԱՌՈՅ. *անասոյզ նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Բնկ. ճշմ. էջ 41 «Զարծաթասէրս, զկեղծաւորս, զզորասոյս, զիւրասէրս...»—անդլ. թրգմ. էջ 104 գրուած է «*undiscerning *անմտացի, անխոհեմ»։*

ԶՈՒԱՐԱԿ, ի–ա *հլ. «մեծացած հորթ, փոքրը եզ» ՍԳր. «Ցուլ կենդանակերպը» Տոմար. որից* զուարակազլուխ *«գլագլուխ» Պտմ. աղէքս. Մագ. Մխ. գտ.* զուարակազեննութիւն *Պտմ. աղէքս.* զուարակափիղ *Պտմ. աղէքս. բուն արմատը **զուար, *ինչպէս ցոյց են տալիս վրացին (տե՛ս տակը ՓՈԽ.) և հյ.* զուարափակ *«արջառի փարախ.» Ագաթ։*

=կայ ասոր. ܙܘܪܥܐ ezwārxā *«ցուլ», որի հետ կցւում է արաբ.* زبرخ zbrx, *որ արամերէն մի բառի տառադարձութիւնն է միայն։ Ասորի բառը բնիկ չէ և չի գտնւում ուրիշ սեմական լեզուների մէջ. ուստի հաւանաբար փոխառեալ է հայերէնից և կամ թերևս երկուսը միասին փոխառեալ են իրանեանից։ Սակայն մինչև այժմ իրանեանի մէջ սրանց համապատասխան մի ձև չէ՛ գտնուած։ (Պրս.* زاور zāvar *«հեծանելի կենդանի, որպէս ձի, ջորի, էշ, ուղտ և նմանք» ո՛չ ձևով է յարմար և ո՛չ նշանակութեամբ)։ —Հիւբշ. 303։*

ՆՀՔ լծ. երր. ֆար, դor, *հյ.* դուար, *վրաց.* զուարակի: Böttich. Rudimenta 32 *և* Arica *51 ասոր.* ezwarax *և յն.* ζόμβρος *(չունին* Bailly *և* Sophocles): Lag. Ges. Abhd. *12 միայն ասորի ձևը։* Lag. Arm. Stud. § 796 *մերժում է յն. ձևը։ Հիւնք. աւազ բառից։ Բ. Խալաթեանց ՀԱ 1908, 87 իբր սեմական բառ. համմտ. երր և արաբ.* ثور ϑavr *«եզն»։*

Karst, *Յուշարձան 403 հյ.* դուար և սումներ. dapara «հզ»։—Ֆնտզեան ՀԱ. *1926, 488* զուարաւիակ մեկնում է պհլ. zbar «հզր» անստոյգ բառով։ Սրան հակառակ է Ադոնց ՀԱ. *1927, 404* և մեկնում է վերապահութեամբ՝ հյ. զուար< զնդ. uz «վեր»+vāra «պատ»։

ՓՈԽ.—Վրաց. ზვარაკი զվարակի կամ ზუარაკი զուարակի «մատաղ ցուլ», აზავური ազավների «արջառ», ზვარა զվարա «մատաղացու եղջիւրաւոր անասուն». Թերևս նաև ասոր. ezwarxā:

ՁՈՒԱՐԹ «ուրախ, խնդումներես» ՍԳր. ուրից զուարթանալ «ուրախանալ» ՍԳր. «աճիլ, զօրանալ, արծարծիլ» Առակ. իգ. 20. Բ. մակ. ժ. 24. «արթուն մնալ, զգաստ լինել, տքնիլ» Ա. պետ. ա. 13. զուարթութիւն «բերկրութիւն» ՍԳր. «ժրութիւն, մտքի արթնութիւն» Դան. է. 11, 14. Եւս. պտմ. բ. 16. զուարթուն «արթուն, զգաստ. ժիր» ՍԳր. «հրեշտակ» ՍԳր. (այս իմաստը յառաջացած է ասորերէնից թարգմանաբար՝ ըստ Մառ. Иппол. 56. համմտ. ասոր. ʿīr «արթուն, ուշադիր» և ʿirā «հրեշտակ» Brockelm. 249). զուարթագին Մն. խթ. 12. Ղուկ. ը. 15. զուարթածաղիկ Բ. մակ. գ. 23. զուարթակից Ագաթ. զուարթամիտ Գծ. ժա. 24. զուարթաչար «չարութեան մէջ աչքաբաց» Մծբ. յարազուարթ Ոսկիփ. սաղարթազուարթ Մաշտ։

Brosset JAs. *1834, 383* լծ. ընդ զուարճ։ ՆՀԲ ուզում է կապել արքուն, զուարճ և վարդ բառերի հետ։ Տէրվ. տե՛ս արք արմատի տակ։ Հիւնք. զարթնուլ բայից։

ԳԻՒ.—երև. կր. Մշ. Շմ. Տփ. զվարթ, Մկ. Ոզմ. Սլմ. զվmրթ։

—ՁՈՒԱՐՃ «ուրախ» վրք. Հց. Մաքս. ի դիոն. «ուրախութեամբ» Շնորհ. յիշ. առակ. որից զուարճանալ «զբօսնիլ, ուրախութիւն անել, ուրախանալ. 2. ուռճանալ, կանաչիլ, ծլիլ, ծաղկիլ» ՍԳր. զուարճացուցանել Ժող. ժա. 9. Եփես. ա. 6. զուարճութիւն Սոփ. գ. 17. զուարճախառն Նար. պաղազուարճ Ոսկ. հս. բարեզուարճ Թէոդ. կոյսն. բազմազուարճ ՅՀ. կթ. ճոգեզուարճ Կղնկտ. ՅՀ. կթ. մշտազուարճ Ոսկ. յհ. ա. 31. յարազուարճ Փիլ. Պիտ. զուարճագեղ Ճղ. 231 բ։

=Նոյն է նախորդի հետ. համմտ. լուրթ և լուրջ։

Այսպէս են դնում ՆՀԲ, Տէրվիշ. Նախալ. 70 (տե՛ս նաև արքուն), Հիւնք. են։

ԳԻՒ.—Ոզմ. զվարճանալ։

ՁՈՒԲՆ. անստոյգ նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Սասն. 60 «Զուրա՝ լի մանանայիւ առաքինութեամբ և պիտութեամբ»։—Թերևս նշանակի «արկղ»։

Ամատունի, Հայոց բառ ու բան, էջ 191 գրում է զուրա և միացնում Հին բառարանի զուրա «ոսկի» բառի հետ (տե՛ս անդ)։ Բայց զուրա «ոսկի» նշանակութեան յարմար չի գալիս «լի մանանայիւ»։

ՁՈՒԲԱՅ «սուգ». ունի միայն Բառ. երեմ. էջ 103։

ՁՈՒԶ «հաստատ կամ նախապարգև». ունի միայն Բառ. երեմ. էջ 104։

*ՁՈՒՁԱՅ «մի տեսակ արծաթ դրամ» Ղևոնդ. իբ, էջ 127, խա, էջ 167. Ասող. էջ 134. երկուսն էլ յգ. զուզայ կամ զուզէֆ, հյց. զուզէս ձևով։

=Ասոր. ʾzūza «դրամի անուն» (Brockelm. 92), ն. ասոր. züizä, züizi «դրամ, փող», համմտ. նաև բաբել. zūzu: Նոյն է նաև թալմ. זוזא zūzā «արծաթէ մի փոքր դրամ». բառիս սկզբնականն է աքքադ. zūzu «կէս». հասկացւում է «կէս սիկղ, սիկղի կէսը», որից պհլ. zuzu «կէս սիկղ, դրահմի» (MSL 23, 196). արմատը դրւում է ասուր. zāzu «բաժանել» (Muss -Arnolt, Ass. engl. Handwb. 276):

Զուր է կասկածում ՆՀԲ, որ *ուզայ ձևից հայցական լինի։—Էմին, Ист. Асохика 99 համարում է ասորական դրամ։ Կ. Վ. Շահնազարեան, Ղևոնդի պտմ. Ֆրանս. հրատ. էջ 124, 127 և հայ. հրատ. էջ 232 ասորի ձևի հետ է համեմատում։

ՓՈԽ.—Վրաց. ზუზა զուզա «երկու դրահմի»։

*ՁՈՒԻՐԱԿ (ի–ա հլ. ըստ ՆՀԲ, թէև առանց վկայութեան) «մի տեսակ բոյս է. լտ. origanum» (Տիրացուեան, Contributo § 417) Փիլ. լիւս. 144. Գաղիան. բժշ։

=Անշուշտ իրանեան փոխառութիւն է, ինչ-

այէս ցոյց է տալիս -ակ վերջաւորութիւնը. այս իրանեան ձևի հետ նոյն է սասր. زعتر, zabūrā *(նաև* zanbūrā *և* zambūrā*)* «thymum» *(այս երկու բոյսերն էլ պատկանում են շրթնազդիների բնտանիքին և շատ նըմանն են. յաճախ շփոթում են իրար հետ)* Brockelm. *էջ 90։—Աճ.*

Պատահական նմանութիւն ունի սրսր. زفرى zufrā «կապնդեղ, livèche» *(տես Շթայնշնայդէրի հատաքածոն* WZKM *12, 91)։*

Գիր.—ՆՀԲ, ՋԲ և ԱԲ գնում են զուրիկ ձևվը, որ յիշում է նաև ՀԲուս. § 725, իբր «սամբի նման խոտ մը»։

ԶՈՒԼԱՄԲԻԼ *տե՛ս Ուլն։*

[**ԶՈՒԿ**, *մէկ անգամ ունի Վրք. հց. Բ. 212. «Կայր անդ ինձ մի որդւովք, որ և դիէր մանուկն ընդ նոսա զուկն.» այլ խմբ. «Դիանայր ի սահանց նորա ընդ մանկունս նորա», որից երևում է՝ որ պէտք է հասկանալ* **զոյգ** *«միասին»։*

ՆՀԲ մեկնում է «ձիծ և կամ զոյգ ընդ նոսա»։ ՋԲ և ԱԲ գնում են «կենդանիի սաինք»։ Այս իմաստը հիշտ կարծելով Böttich. ZDMG *1850, 355 և* Arica *72, 172 համեմատում է սանս.* čučuka *«ծիծ» բառի հետ։]*

***ԶՈՒԿԱԿ** *«փողոց». նորագիւտ բառ՝ որ մի քանի անգամ գտնում եմ գործածուած ուշ ժամանակի արձանագրութեանց մէջ. ինչ. «Բոլոր տներ Հատեցոնց զուկակին» (Անիի Բ. 1215 արձ. Վիմ. տար. էջ 59) «Զկուղպակն՝ որ ի վերա ծռազուկակին է» (Խծկօնից 1221 Թ. արձ. Վիմ. տար. 63), «Գնեցի կուղպակ ի ծռազուկակին» (Արձ. 1266 Թ. Վիմ. տար. 109)։*

=Արաբ. زقاق zuqāq *«փողոց», որից Թրք.* صوقاق soqaq, *աղաւ. սօխախ «փողոց»։—Աճ.*

ԶՈՒԿԻ *կամ* **ԶՈՒԿ** *«սև խունկ, ստաշխ», որից չոր զուկի «չամշախունկ» Մխ. բժշ. էջ 119.* **զուկի ձէթ** *«չամշախունկի իւղ», զուկին կամ զիւգին «մի տեսակ խունկ» Բժշ. խոր. աշխ. էջ 600 (այլ ձ.* **զիւզգին***)։*

=Չգիտեմ թէ հայերէնի հետ ի՛նչ կապ ունին վրաց. **ზუგია** **զուգիա** *«սահիրաքս, անուշահոտ ձիւթ», յն.* ζυγία *«carpinus betulus, բոխի ծառը, грабъ» և* ζυγίς *«serpolet sauvage, վայրի թիւմ, thymus serpyllum»։*

Պատկ. Арм. reorp. *30 յիշում է վերի յունարէն ձևերը։*

***ԶՈՒՆԱՐ** *«զօտի». գործածուած է միայն մէկ անգամ Սիր. գծ. 33 «Դնէին զդաստառակն կամ զգունարն [կամ զգօտին] ի վերայ անձանց և անդէն ողջանային ի ցաւոց».— սրանից է առնում նաև Սկևռ. գծ.=Ոսկ. գծ. 338. յայտնի չէ միայն թէ բառը յետին ներմուծո՞ւմ է, թէ բնիկ ոսկեդարեան։ Առաջին պարագային փոխառեալ է՝*

=Արաբ. زنّار zunnār *«զօտի» բառից. սրա հետ համմտ. սրս.* zunnār *«զօտի», վրաց.* **ზონარი** **զոնարի** *և Թուշ.* **ზონარ** **զոնար** *«կապ, թել, չուան, մետաքսեայ ժապաւէն», քրդ.* zenar *«փորուրար», սասր.* زونارا zōnārā, *լտ.* zonula, *որոնք բոլոր փոխառեալ են յն.* ζωνάριον *«զօտեակ» բառից. (*ζώνη *«զօտի» բառի նուազականն է)։ Իսկ եթէ ոսկեդարեան է բառը, այդ պարագային փոխառեալ է սասրերէնից, որի հետ սակայն համաձայն չէ՝ իր -այ վերջաւորութեան պատճառաւ։—Հիւբշ. 265։*

ՆՀԲ և Հիւնք. գնում են յունարէնից։ Հիւբշ. ZDMG 35(1881), 659 *արաբերէնից։* Bartholomae BB 17, 100 *յունարէնից։ Վարդանեան ՀԱ 1922, 407 սասրերէնից։*

***ԶՈՒՐՈՒՏ** *«մի տեսակ կորեկ.* sorghum vulgare» *Ամիրտ. ունի միայն ՀԲուս. § 723։*

=Արաբ. ذرة ḍurra *կամ* zurra *(տե՛ս Շթայնշնայդէրի հատաքածոյի մէջ՝* WZKM 12, 84). *սրանից է փոխառեալ նաև ֆրանս.* dourah, dourra:

Ուղիղ մեկնեց նախ Նորայր, Բռ. ֆրանս. էջ 1155 ա. յետոյ նոյնը Ալիշան, ՀԲուս. անդ։

ԶՈՒՍՊ *«զսպուած, իրեն ճնշելով՝ վատ բանից հետու պահած» Սիր.պտ. «անջատ (տեղ)» Արծր. «ամփոփ» Վանակ. 198. որ և* **զիսպ** *«զսպում, սանձահարութիւն» Մագ. Բղ. 243. որից* **զսպել** *«ամփոփել, սեղմել, կծկել» Ոսկ. ես. Եւս. պտմ. «ամփոփել (մե-*

ոաժի մարմինը), թաղել» Սիր. լր. 16. Պատ. սկզբ. Վենետ. էջ 5. նոր գրականի մէջ աճզուսպ, գազաճազուսպ, զսպաճակ, զսպաճակաւոր են։

Տէրվ. Altarm. *38 սանս.* gušphita *«կապուած, հանգոյց եղած, իրար անցկացրած»,* guph, gumph *«հանգուցել, կապել, իրար անցկացնել»։ Հինք. ազբն բառից։*

ԳԻՒ.—Մշ. զսպել *(օր. բերանդ զսպէ'). Ակն.* սբսրիլ, *որից* սբսբուգ *«կոկիկ (հանդերձ, հագուստ)»։*

ՁՈՒՍՊ *«յունապ» Բժշ. ունին միայն ՀԲուս. § 724 և Նորայր, Բառ. ֆր. 720 բ. (սխալ են Տիրացուեան § 426 և Լուսինեանի Բառ. ֆր. որոնք գնում են* zizyphora *(մի տեսակ ծոթրին), յայտնապէս շփոթելով* zizyphus *«յունապ» բառի հետ)։*

ՀԲուս. անդ՝ նմանաձայն է գտնում zizyphus *«յունապ» բառը։*

ՁՈՒՏ, ո *հլ. «մաքուր, անխառն» Գ. Թգ. գ. 21. է, 49, 50. Ագաթ. որից* գտել *«հալեցնելով մաքրել (մետաղը). 2. մաքրել, սրբել» Յոր. իր. 25. Ողբ. դ. 7. Ոսկ. ես. Ագաթ. եզն.* գտել և ջինջ ունել զգեստ *«սրբել և մաքուր պահել զէնքը» Եփր. բ. 318, 309.* գտիչ *Ագաթ.* գտուրիւն *Եփր. հլ. մաքրագործել Թէոդ. կուս. նոր գրականի մէջ* գտարան, գտարիւն *են։*

ՆՀՌ լծ. Թրք. սատէ *և հյ.* յատակ։ Müller, Kuhns u. Schleich. Btrg. 5, 137 *պրս.* zidūdan *«արծնել»։* Canini, Et. étym. *15 սանս.* çudh *«մաքուր, պայծառ» և արաբ.* quds *«սուրբ»։ Հինք. պրս.* գիւտուտէն, սատ, *Թրք.* սատէ։

ԳԻՒ.—Ախց. Երև. Մշ. զուտ, *Սեբ. և Տիգ.* զուդ, *(բայական ձևով՝ Տիգ.* զդէլ), *Ալշ.* զուդր.—*իսկ Հնգ.* զուտր *նշ. «միշտ, շարունակ»։*

*ՁՈՒՐ *«փուճ, պարապ» Ել. իգ. 7. Գ. Թգ. բ. 31. եզն. «պարապ տեղը» (որ և* իզուր*) ՍԳր. Կիւրղ. Թգ. Ոսկ. Եբր. որից* զրաբանել *Երեմ. իգ. 16. Կոչ.* զրադատ *Ագաթ. Բուզ.* զրախնդիր *Ա. Թագ. իգ. 21.* զրախոհուրդ *Գ. մակ. գ. 9.* զրախօս *Տիտ. ա. 11. Ես. բ. 19.* զրապարծ *Ոսկ. մ. ա. 20.* զրաջան *Ոսկ. մ. բ. 27. Եփր. պհ.* զրպարտել *ՍԳր. Ոսկ. ես. ստազրաճճ «զրպարտութիւն» (նորագիւտ բառ) Տաթև. ամ. 245. առանց սղման՝ զուրավատակ Ագաթ.—նոյն արմատին է պատկանում* զրել *«մերժել, դրժել ուխտը)» Կանոն. էջ 146, եթէ չէ վրիպակ՝ փխ. ջրել (տե՛ս իմ Հայ. նոր բառեր հին մատ. Բ. 160)։*

=*Պհլ.* 𐭩𐭦𐭥 zūr, *մանիք. պհլ.* 𐭦𐭢𐭥 z'ur (Salemann, Mänich. Stud. ЗАН 8, 80), *պազենդ.* zur, *պրս.* زور zūr *«սուտ, ստախօսութիւն», զնդ.* 𐬵𐬎𐬭 zura- *«զուր», հպրս.* zūra *«անիրաւութիւն», որոնցից են զնդ.* zuro-jata *«զրամահ», հպրս.* zūrakara- *«անիրաւութիւն անող», պհլ.* zūr-zat *«զրամահ»,* zūr-gukāsīh *«սուտ վկայութիւն» (համմտ. հյ. զրադատ վկայ), պրս.* زورگوی zūr-gōy *«ստախօս»* (Horn § 674, Bartholomae *1697—8)։ Իրանեան ձևերի հետ նոյն են սանս.* 𑀳𑁆𑀯𑀸𑀭 hvàrati *«ծուռ ճամբայ բռնել, նպատակից շեղիլ, մոլորեցնել, խաբել», հալ.* zŭlŭ, *սերբ.* zão, *լեհ.* zły, *ռուս.* зло *«չար, չարութիւն». լիթ.* iżulnús *«թեք, ծուռ, շեղ»,* zvaĩns *«երկու կողմ տարուբերուելով»* (Trautmann *372—3)։ Բացի արիականից ու բալթիկ-սլաւականից՝ այս բառը ուրիշ տեղ պահուած չէ։ Իրանեանից փոխառեալ է նաև արաբ.* زور zūr *«սուտ խօսք, ունայն, սին», փոխաբերաբար և յայնաբար «քրիստոնէից պատիկը կամ Հրէից պատկերը, կուռք, չաստուած» (Կամուս, Թրք. Բրգմ. Ա. 881)։—Հիւբշ. 151։*

ՆՀՌ լծ. Հյ. աւ–ուր, *իբր անտեղի, և* ուր, ձիր, ձոր։ Böttich. ZDMG, *1850, 355 սանս.* jur, jurṇi *«հնանալ, փճանալ»։ Ուղիղ մեկնութիւնը տուաւ նախ* Lag. Ges. Abhd. *184 իբր պրս.* zūr. *Նոյնը յետոյ Պատկ.* Matep. II *2, Հիւբշ.* ZDMG *46, 329 (Թրգմ. ՀԱ 1892, 355)։ Հինք. ուր բառից։ Մատ.* Яз. и лит. I *272 բասկ.* guzur *«սուտ», վրց.* սիցուուն *«սուտ»։*

ԳԻՒ.—Ալշ. Ախց. Ագլ. Երև. Կր. Մշ. Նխճ. Սեբ. Տփ. զուր, *Ղրբ. Շմ. Ջղ.* իզուր, *Սչ.* զուրի *«իզուր տեղը, ձրի», Սլմ.* գիւր, *իսկ Կիւր.* զուր *«զրպարտութիւն, բամբասանք»։ Նոր բառ է* զրաբախտ *Եւդ. «դժբախտ»։*

ՁՈՒՐԱՅ *«ոսկի». ունի միայն Բառ. Երեմ.*

էջ 104. նոյնը նաև Ամատունի, Հայոց բառ ու բան, էջ 191, առնելով Հին ձեռագիր բառարանից։

*ՋՈՒՐԱՓԷ կամ ՋՈՒՐԱՓԱՅ «ընձուղտ» Միխ. ասոր. հրտր. եէմ. էջ 378 (տպուած է զօրափէ). գրուած է զուրաֆայ Յայսմ. սեպ. 23։

=Արաբ. زرافة zurāfa «ընձուղտ» բառից, որ և ښرنافا, šurnāfā, سرنافا surnāfā (ըստ Կամուս, Թրք. Թրգմ. Բ. 771 ծագում է արաբ. زرف zarf «աւելանալ» արմատից՝ վիզը միւս անասուններից շատ աւելի երկար լինելու պատճառաւ)։ Արաբերենից են փոխառեալ նաև ասոր. ܙܪܢܦܐ zarnāpā, Թրք. زورنپ zurnapa, Ֆրանս. giraffe, գերմ. Giraffe, իտալ. giraffa, սպան. պորտ. girafa, անգլ. girafe, Հսպան. azorafa, հֆրանս. girafle, ռուս. жирафъ «ընձուղտ»։—Հիւրշ. 265։

Ուղիղ մեկնեց նախ ՀՀՒ. բայց ՀՀՒ Հայցական կարծելով բառը՝ ենթադրում է և ուղ. ուրաֆայ ձևը։ Lag. Arm. Stud. § 800 դնում է արաբ. և ասոր. ձևերը։

ՋՈՒՐԿ տե՛ս Ջիրկ։

ՋՈՒՐՊԱՓ «մի տեսակ ուռի» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 726։

ՋՈՒՖՐ «մեղրի կամ խաղողի քաղցուի եբեսին հաւաքուած փրփուրը՝ կեղտը» (նորապիտ բառ) Վասակ. 97, 126. (եւ տես դայն զուֆր՝ որ է գերդուածն՝ ի վերայ գինւոյն եբեսացն կենայ). որից զբֆրաղել «մեղրի կեղտերը մաքրել» Վասակ. 196։

ՋՈՓԱԼ «վշտացնել, ցաւիլ, ափսոսալ» Ոսկ. մաթ. յհ. ա. 8. «լալ, տառապիլ, ցաւագնիլ» Ոսկ. ես. 369. Փիլ. «ցրտից դողալ» Նար. իբ. էջ 72. «վախից դողալ» Մաշկ. «սարսափիլ, զարհուրիլ» Անան. եկեղ. «կրքից դողալ» Փիլ. գրուած է նաև զոփել Սկևռ. լմբ. (տպ. Սոփերք ժե. 44), զոփիլ «նեղուիլ» Մագ. զամագտ. և Թղ. 237։

ՆՀՒ զով կամ ծփալ բառից։

ՋՈՓԱՅ. նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Մեծոփ. 102 «ԻմասատուԹիւն որդւոյն նորա Խանումայ մեծ է քան զիմաստուԹիւն գուիայ Սքանդարին»։ Թուի նախատաճկան ծագման։

ՋՈՔԱՆՉ (սեռ.-ի) «մէկի կնոջը մայրը» ՍԳր. եւս. քր։

Տէրվ. Altarm. 36 զոհանչ, հեռի և ներհիռի կապում է յն. γονή հյ. կին ևն բառերի հետ։ Հինք. սհանչ, սհանչելի բառից։ Գ. փառնակ։ Անահիտ 1903, 131 սանս. սվաչանա «ազգական»։

ԳԻՒ.—Ռ. Սեբ. զօհանչ, Խրբ. Մրդ. Պլ. զօհանչ, զօճհանչ, Ախց. Կր. Սլմ. զօճհանչ, Մշ. զօկանչ, Տիգ. զօճmանչ, Մկ. Վն. զէօհանչ, Ոզմ. զիւճmանչ, Ասլ. զաքաչ, զաքաշ, Ալշ. զօնկաճ, Համշ. զօօնչ, Տփ. զօ՛նճաճ,—Աժտ. Երև. զանճաչ, Շմ. զանճօչ, Ջղ. զանճուչ, Գոր. զէ՛նճէօչ, Մղր. զէ՛նճիւչ, Ղրբ. կոչ, Ագլ. զա՛նճուչ, յա՛նճուճ, զա՛նճուճ, յա՛նզէ՛մճուչ,—իսկ ՋԹ. ՀՃ. Մրշ. առանձին զոհանչ բառը կորցնելով՝ Թրք. qayn-ana «զոքանչ» և qayn-ata «աներ» բառերի կազմութեան համեմատ՝ շինել են ՋԹ. զրբչմmr «զոքանչ», զրբչբor «աներ», Մրշ. բզիչbor «աներ», ՀՃ. իրիչմoյ «զոքանչ», իրիչbor «աներ»։—Գաւառականների մէջ նոր կազմուած բառեր են զոհանչատես, զոհանչացու, զոհանչներ, զոհանչփներբիկ։

ՋՋԱՐԻՆ տե՛ս Ջար։

ՋՊՍԹԱՆ տե՛ս Սպաստան։

⊙ՋՌԱԼ «իշու խանչելը». յեռնաբար միայն գործածուած, ինչպէս Վրդն. առ. 175. որից զռոց, զռնչալ, զռնչիւն։

=Բնաձայն բառ. համմտ. Թրք. zər-la-maq, ն. ասոր. zarzart'a, քրդ. zerin հոմանիշ բնաձայն բառերը։—Աճ.

Այս մեկնութիւնս տե՛ս ՀԱ 1899, 204։ — Գազանճեան. Տարեց. Պապիկեանի 1905, 126 և Արև. մամ. 1907, 934—5, Թէրեաքեան, Բազմ. 1913, 341 ազգակից են դնում Թրք. զռամաճ բառի հետ։

ԳԻՒ.—Անփոփոխ պահուած է ամէն տեղ. նոր բառեր են՝ զռան, զռզռալ, զռզռան, զռզռոց, զռզռուն, զռիկ զռիկ անել, զռռալ, զռռան, զռռոց։

ՋՌՃԻ «մի տեսակ ծառ» Պտմ. վր. ուրիշ վկայութիւն չկայ։ (Լուսինեան, Բառ. ֆր. համարում է ֆրանս. tek, որ է լտ. tectonia grandis)։

ՋՍՏԳԵԼՈՒԿ. *մէկ անգամ ունի Ոսկ. մ. ա. 23 «Ձերախասյս արտաքոյ պահեմք, ո՛չ եթէ դժկարութիւն ինչ խորհրդոյն՝ զոր կատարեմք, զատգելուցումք, այլ զի բազումք չև նս են հասեալ ի կատարեալն»։—ՆՀԲ մեկնում է «ստգտանել», ՔԲ «խոտել, արհամարհել», ԱԲ «մեղադրել կամ ծածկել, գոցել»։*

ՋՍՏԻՆ *տե՛ս Ստին։*

***ՋՐԱՀ,** *ի հլ. (գործածւում է անեզական ձևով) «զրահ» ՍԳր. Բուդ. Եփր. եվ. (գրուած է նաև զրայ, զրեայ Եփր. թգ. 447, զրեան, զրեն Անսիզք 31, Բևկր. 47, 53). որից* **զրահիկ** *«արիանալ» Եղիշ. Բ. էջ 32.* **զրահապատ** *Ոսկ. մտթ. գ. 16.* **զրահավոր** *Մծբ.* **զրահաւոր** *Ա. մակ. գ. 39. յետնաբար* **զրեհակիր** *Վրք. Հց.* **զրեհիկ** *ՅՀ. կթ. էջ 151 են։*

=Պհլ. zrāh, zrāī, zrād, zrēh, *պազենդ.* zrəh, *պրս.* zirih, *զնդ.* zrāδa-, *որոնք բոլոր նշանակում են «զրահ». սրանց նախնական ծագումը անյայտ է* (Horn *§ 660,* Bartholomae *1703)։ Իրանեան ձևերը ցոյց են տալիս, որ հայերէնի մէջ* **զրահ, զրայ** *և* **զրեհ** *գրչագրական խաթարումներ չեն, այլ իւրաքանչիւրը ներկայացնում է առանձին իրանեան մի ձև. այսպէս՝* **զրահ**>zrāh, **զրայ**<zrāī, **զրեհ**<zreh: *Իրանեանից են փոխառեալ նաև ասոր.* zardā, zirādā, *արամ.* zərād, *աֆղան.* zira, *բելուճ.* zirih, *քրդ.* zirî, zirx, zirk, *արևել. թրք.* zirγ, *օսմ.* zərh, zərx, *օսս.* zγar, *արաբ.* zarad *(Կամուս, թրք. թրգմ. Ա. 615), վրաց.* **ზარადი** **զարադի** *«անձնապաշտպան մետաղացանց զրահ» (Ջուբինով[2] 513, Մաո.* Витязь въ барс. шкуре *էջ 477),* **მუზარადი** *մուզարադի «գինեալ»* (Brosset JAs. *1834, 383)։ Այստեղ է պատկանում նաև պրս.* zaradxāna *«զրահների պահեստանոց», որ յիշում է* Horn *§ 660, իբրև արաբ. փոխառութիւն, որ սակայն չգիտէ կամուս՝ անդ։ Նոյն բառից են վրաց.* **ზარადხანა** **զարադխանա** *(Ջուբ.[2] 513) և հյ.* **զառատխոնայ** *Միխ. առ. 485, որ բառարանիս Ա. հատորում (էջ 502) սխալմամբ գրել եմ առատխանայ և թերի եմ մեկնել։—Հիւբշ. 152։*

Ուղիղ մեկնեց նախ ԳԴ։—ՆՀԲ թրք. **զըրխ, զիրհ, զիրիհ,** *եբր.* **շիրեօն, շիրեան**: Brosset JAs. *1834, 383 են վրաց.* **մուզարադի** *ձևի հետ։ Ուղիղ են մեկնում նաև* Böttich. Horae aram. 33, 57, Rudim. 41, 107, Spiegel, Gersdorfs repertorium 1851, 233, Lag. Urgesch. 1005, Müller SWAW 42, 253 *են։ Էսգէթ, Արրտ. 1915, 499 արաբ.* silāḥ سلاح *«զէնք» կամ աւելի լաւ* زرّ zar' *«ոյժ, կորով»։*

ԳԻՒ.—Մկ. **զրէխ** *«զրահ», որ ներկայացնում է հին* **զրեհ** *ձևը։—Այս բառի՞ց է արդեօք. Ղրբ.* **զրէհվիլ** *«զուգուիլ-զարդարուիլ» օր. «Սարքուած-զրեհուած ման էր գամ»։*

ՓՈԽ.— Ըստ Մառ, Վրդ. առ. I, էջ 57 Ադամակապրքի թարգմանութեան ժամանակ հայերենից է տառադարձուած արաբ. زرx zrx:

ՋՐԱՀԱԿ. *անստոյգ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Մագ. թգ. էջ 224 «Եւ զանազան հանդերձիւք երևելի մետաքսաց և ոսկեհուռ արտակիտեալ զզրահական (տաճարին) ծածկեալ»։—Մի ձեռ. ունի* **սրահակ,** *որ իմաստով շատ յարմար է տեղին. բայց յայտնի չէ ինչո՛ւ հրատարակիչը ընտրում է* **զրահակ** *ընթերցուածը։— Երկրորդ մի ձեռագիր էլ* **զրահակ** *բառին իբրև բացատրութիւն դնում է «պարապ տեղիքն ուր պատկեր չկայր»! (տե՛ս իմ Հայ. նոր բառեր հին մատ. Բ. 183)։*

ՋՐԱՀԱՆ *«բլուր, դէզ, կարկառ». գործածուած է միայն յդ. հյց.* **զրահանս** *ձևով՝ Դ. թագ. ժ. 8 (Դիք զնոսա երկուս զրահանս արտաքոյ քաղաքիս) և մէկ անգամ էլ* **զրահեանսն** *ձևով՝ Մծբ. 242 (Արար զնահատակութիւն քաջութեան ծնօտիսն իշոյ և կուտեաց զմեծակոյտ զրահեանսն յայլազգեաց անտի. =ասոր. Կուտեաց կոյտս ի փղշտացւոց)։*

ՆՀԲ **զրահ** *բառից։ Հինք. պրս.* ziraγānk *«քարքարուտ տեղ»։ Աճառ.* MSL *15, 242 պրս.* زاغزر zarāγan, كنغزر zarāγang, zirāγank, *որ և* ژاغزر žarāγan, كنغژر žarāγank *«աւազուտ, քարքարուտ կարծր գետին»*

բառերի հետ, որոնք սակայն ո՛չ ձևով են յարմար և ո՛չ նշանակութեամբ։ Աւելի յարմար է թուում գնդ. zbarah «բլուր» (Bartholomae 1699):

ՁՐԱՆ *«վերջ, վերջանալը» Ոսկ. ևս. մաթ. կող. եւս. քր. «կեանքի վերջը, մահ» Արծր. որից* **զրաւել** *«վերջացնել (մի բան)» Սամ. եր. «սպանել (մէկին)» ՅՀ. կթ.* **զրաւիլ** *«վերջանալ» Ճառընտ. «մեռնիլ» Լաստ.* **զրաւամաճ** *լինել ՅՀ. կթ.* **զրաւարար** *«սպանող» ՅՀ. կթ.* **զրաւեցուցանել** *«ազատել» Պիտ. եղբայրազրաւ «եղբայրասպան» ՅՀ. կթ.* **երազազրաւելի** *ՅՀ. իմ. առ.* **անզրաւ** *Փարպ.* **անզրաւական** *Ագաթ.* **հանճարազրաւ** *«անխելք» Նար.* **չարազրաւ** *Կղնկա.։*

ՆՀԲ (ծիր բառի տակ) դնում է **ծիր** *բառից։* Böttich. ZDMG *1850, 355 առնս.* **ջրդմ** *çaravya «նպատակ»։ Այվազեան, Ուղղագր. էջ 37* **զուր** *բառից։* Müller WZKM *9, 292 յն.* **χρόνος** *«ժամանակ»* = zrwan: *Հիւնք.* **զրահ** *բառից։ ԳԻՒ.—Մկ.* **զրավս կարալ** *«շատ վախեցայ»։*

ՁՐԵՀԻՆ *«հրաժշտական՝ մի խազ է». ունի միայն ԱԲ։*

***ՁՐԵՒԱՆԴ** *«մի տեսակ բոյս է. սղանդն, լտ.* aristolochia» *Մխ. բժշ. (էջ 145 գրուած է* **զրուանդ**)։

= *Պրս. և արաբ.* زراوند zarāvand *«զրեւանդ» (Կամուս, Թրք. Թրգմ. Ա. 615. բոյսի նկարագրութիւնը և դործածութիւնը տե՛ս* Seidel *Մխ. հնր. § 394)։ Սրանցից փոխառեալ է նաև վրաց.* **ზარავანდი** **զարավանդի**, *որ Ջուբինով² 513 մեկնում է «ոուս.* кирказонъ *կամ* пхиновникъ» *(երկուսն էլ ըստ* Анненковъ-*ի բուսաբանական բառարանի «aristolochia clematitis L»)։—Հիւբշ.* IF *19, 458։*

Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ, յետոյ ՀԲուս. § 728։

***ՁՐԻՇԿ** *(որ և* **զրեշկ**) *«ծոր, կոծոխուր,* berberis *բոյսը». ունի միայն ՀԲուս. § 729։*

= *Պրս.* زرشک zirišk *«ծոր», որից փոխառեալ են նաև արաբ.* سرشم sirišk *(տե՛ս Շէյխնշնայդէրի հատաքածոյի մէջ՝* WZKM *12, 204) և ասոր.* ز ر ش ق z r š k (Brockelmann, Lex. syr. *100 բ)։— Հիւբշ. 265։*

Ուղիղ մեկնեց նախ Böttich. Rudimenta 41, 108, *նոյնը նաև* Arica *73, 195,* Lag. Urgesch. 837:

ԳԻՒ.—Երև. **զիրիշֆ** *(ըստ Ամատունի, Հայոց բառ ու բան, էջ 187)։*

***ՁՐՄԲԱՏ** *(գրուած նաև* **զրնպատ**, **զրումպատ**, **զուրումբատ**, **զուրբատ**, **զռբատ**) *«մի տեսակ բժշկական բոյս.* curcuma zerumbat» *Բժշ. ունի միայն ՀԲուս. § 727։*

= *Պրս.* زرنبات zarnabāt *(տե՛ս Աբիկեան, Բառարան տճկ. հայ. գաղ. էջ 498 ա. չունի ԳԴ), որ ծագած պէտք է լինի պրս.* زر zar *«ոսկի» և արաբ.* نبات nabāt *«բոյս» բառերից, իբր «ոսկեբոյս»։ Նոյնից փոխառեալ է արաբ.* زرنباد z r n b ā d, *որ գիտէ Շէյխնշնայդէր* WZKM *12, 90, բայց չունի Կամուս, Թրք. Թրգմ. Ա. 615։*

Ուղիղ մեկնեց Նորայր, Բառ. Ֆր. 1292 ա։

ՁՐՈՅՑ *(յետնաբար ի-ա հլ.) «խօսք, տաբաձայնութիւն, խօսակցութեան առարկայ, լուր. հին պատմութիւն» ԱԳր. եւս. քր. Եփր. Քգ. «բան , գործ. իր» Մծբ. 240. Մխ. բժշ. 37 (վկայութիւնները տես բալ). որից* **զրուցել** *«աւանդաբար պատմել» Խոր. «խօսակցիլ» Մագ. «բացատրել» Մագ. քեր.* **զրուցարար** *«լուր տանող պատմող» Մամիկ.* **զրուցարան** *Խոր.* **զրուցատրութիւն** *Պիտ. Խոր.* **զրուցատական** *(արդի գրականի մէջ),* **բարեզրոյց** *Ոսկիփ.* **աուազրոյց** *(նորագիւտ բառ) Անկ. գիրք առաք. 101։*

Böttich. ZDMG *1850, 355 առնս.* çruti *«լսել»։ Հիւնք. պրս.* **սիւռուշ** *«քաղցրաձայնութիւն»։ Մատ.* ЗВО, *5, 216, Թրգմ. Ամատն. ուղեւորութ. էջ 8, ծան. 3 պհլ.* srūdan *«երգել», պրս.* سرود surūd *«երգ»։* Patrubány SA *1, 211 հնխ.* g´hirousk- *ձևից. հմմտ. յն.* γῆρυς *«ձայն», հիռլ.* gair *«գոչիւն, ձայն»։ Նոյն* SA *2, 156 q նախդիրով և* skh *աճականով* ru- *արմատից. հմմտ. գոթ.* rūna *«գաղտնիք», լիթ.* runat *«խօսիլ», յն.* ἐρεύγω *«դիտել, լրտեսել»։* Karst,

Յուշարձան 407 սումեր. sur «արտասանել»։ Ադբալեան ՀԱ 1926, 398 իր «բան» բառի պատմական հոլովն է!

ԳԻՒ.—Ագղ. Մշ. զրուցել, Ոզմ. զրուցիլ, Ջղ. զրուց տալ, Վն. զրիւցել, Մկ. զրիւցիլ, Երև. զրիցել, Սչ. զուրուցել, Ննխ. զուրուցէլ, Սեբ. զուրուցէլ, զուրցէլ, Խրբ. զուռուցիլ, Պլ. Ր. զուրցել, Ախց. Կր. զրցիլ, Արբ. զուրուցել, Մրզ. զուրցալ, Սլմ. զուռցալ, Ասլ. զիւրիւցէ՛լ, Տիգ. զրուցէ, Գոր. Զրբ. Շմ. զիւրիւց, Զթ. զըյըցէ, զըրըցէ, Հճ. զէյից. բոլորն էլ նշանակում են «ասել, խօսիլ, խօսակցիլ, խօսակցութիւն», միայն Ննխ. «թռչունի երգիլ. 2. հիւանդի զառանցել»։—Նոր բառեր են զրուցեցնել, զրուցբնկեր, զրուցկաե։

ՋՕԳ *տե՛ս* Յօղ։

ՋՕՆԱՃԱՒ «զենք ու զրահ» Շապհ. էջ 50, 62, 63 (երկու անգամ. գրուած նաև զանաճառ, զաւնոյճառ), որից զօնաճառել «զինաւորուիլ» Շապհ. 59, զօնաճառեցուցանել «զէնք ու զրահ հագցնել» Շապհ. 60. բոլորն էլ ուրիշ տեղ չգործածուած նորագիւտ բառեր։

=Վերջին մասն է անշուշտ աճառ «ձիու զարդ, սպաս, հանդերձանք». բայց անծանօթ է զօն-։—Ա՛ճ.

Տե՛ս իմ Հայ. նոր բառեր հին մատ. Բ. 52—53։

ՋՕՇ (յեռնաբար գրուած զոշ) «վատ, ղէշ, անպարկեշտ» Լմբ. աղ. որից զօշոտ «անառակ» Կանոն. էջ 156, էլ. արիստ. 142. Հին բռ. (աւելի որոշ իմաստով «սրկրամոլ, բռնանախիղճ» Կանոն. էջ 156, 162=Գիրք թղ. 227, 230). զօշոտաւարք «անառակութիւն» Համամ. առկ. զօշաճաղ «արծաթասէր» (ըստ յն. «ամօթաշահ») Տիտ. ա. 8. Ա. տիմ. գ. 8. զօշաճաղութիւն Ա. Թգ. ը. 3. Ա. պետ. ե. 2. Եփր. տիտ. 259, 261. զօշաստացութիւն Լծ. կոչ. զօշութիւն Արծր. զօշոտել Սարգ. յկ. բ. անշուշտ այստեղ է պատկանում նաև զօշոտէ «ոչ կարէ» Մագ. գամագտ.—սխալ ձև է ոշոտութիւն Համամ. առկ. (իբր թէ զօշոտութիւն *բառը գ-ով հայցական լինէր)։*

ՆՀԲ պրս. شش zišt «տգեղ, ազտեղի»։ Lag. Urgesch. 981, Beitr. bktr. Lex. 18 պրս. zišt և ղնդ. zōišnu-: Lag. Arm. Stud. § 810 պրս. زوش zōš «դժնաբարոյ, խստասիրտ, ցասկոտ, բարկացկոտ»։ [Այս իրանեան բառերը թէև շատ մօտիկ են հնչում հայերէնին, բայց մի քիչ աւելի խոր քննութիւնը ցոյց է տալիս՝ որ մեզ հետ կապ չունին։ Նախ բոլորովին մի կողմ պէտք է թողնել պրս. zišt, որովհետև սրա հին ձևն է պհլ. zišt «տգեղ», ղնդ. ǰīštayamna- «անարգ» (տե՛ս Horn § 662), որով հայերէնում պիտի ունենայինք *գիշտ։ Աւելի յարմար է պրս. zōš. սրա հետ նոյն է հյ. զոշ, որ սակայն յետին գրչութիւն է. հնագոյն ձևն է զօշ<զաւշ, որ պահանջում է պրս. *zafš։ Պրս. բառը առհասարակ համեմատւում է ղնդ. zōišnu- ձևի հետ. սակայն այս համեմատութիւնը շատ անստոյգ է, որովհետև ղնդ. բառի իմաստը անյայտ է. Justi մեկնում է «անմաքուր», Bradke KZ 28, 297 և Bartholomae BB 15, 11 դնում են կասկածով «աւերաշէկ», իսկ Geldner KZ 30, 524 «դողդոջուն». վերջին անգամ Bartholomae, Altir. Wört. 1692 «սարսափահար, ցրտից սարսռալով» համմտ. Horn § 676։] Տէրվ. Altarmen. 39 վաղ-հուշ և ֆն-հուշ բառերի -հուշ մասի հետ՝ սանս. ǰus «սիրել, ախորժիլ» ևն։ Նոյն, Մասիս 1881 մայիս 8 և Նախալ. 105 ա՛ւշ թէ, վա-ւաշ բառերի հետ հնխ. vaç, vansk «բաղձալ» արմատից. համմտ. սանս. vaç, vāṅkš, ղնդ. vas, յն. ἐκών «յօժարակամ», գերմ. Wunsch «իղձ». Հայ բառն է իբր զ-աւշ՝ զ սաստկականով։ Հիւնք. պրս. گزج։

ՋՕՒՆԱԽ «նկարիչ». նորագիւտ բառ՝ որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Օրբել. էջ 187. «Այս Յակոբ եւս ածել նկարիչս և զաւռախս, որ է պատկերագործ, ի հեռուստ աշխարհէ, ֆռանկ ազգաւ»։ Նոյնից կազմուած ունինք զառախագործ «նկարիչ, պատկերահան» Տաթև. ոսկիփ. 70 (Մի զառախագործն կարող է մի գեղեցիկ պատկեր առնել և մի դարշ, մի սեաւ և մի սպիտակ)։ Վերջին բառից երևում է՝ որ զառախ կամ զօռախ նշանակում է նաև «պատկեր»։

=Բւում է թէ ձևացած է պրս. زرزج

zar-varaγ «ոսկեթերթ թուղթ՝ որով դրքերի կազմը և այլ բաներ են զրուագում» բառից. (ծագում է պրս. zar «ոսկի» և արաբ. varaq «թերթ» բառից, որ հիմա էլ գործածական է մեր մէջ վառաղ կամ վառախ ձևով)։—Աճ.

ԶՕՏ «քննութիւն, պրպտում». առանձին անգործածական արմատ, որից ունինք հետազօտել «հետաքննել, հետախուզել» Դաս. ժր. 2. Սիր. ժր. 5. Սևբեր. հետազօտութիւն Դաս. ի. 16. հետազօտիչ Տօնակ. այս բառն է անշուշտ՝ որ Բառ. երեմ. գնում է էջ 105 զօտօղ «հետևող», էջ 104 զուտուղ «հետեւող», էջ 101 զևտօղ «զհետ երթող» և թերևս էջ 105 զօտեալ «զատեալ կամ հատեալ»։

ՆՀԲ (հետազօտել բառի տակ) լծ. հյ. ժտել և յն. ζητέω «փնտռել, խնդրել, ուզել»։ Տէրվ. Լեզու, թ. 1887, էջ 99 արմատը համարում է օտ<աւտ՝ որ աճած է զ սաստկականով և նոյն է հետ, ռսխ բառերի հետ. որով հետազօտել նշանակում է բուն «զհետ երթալ զհետոց»։ Հինք. հետազօտել<յն. ἐτάζω «քննել, ստուգել»։

ԶՕՏՈՒԿ «մի տեսակ բոյս. symphytum». միակ միայն Կոյլավ, Բառ. գերմ. էջ 262 բ.—յայտնի չէ թէ ինչ աղբիւրից է։

*ԶՕՐ, ու, ա հլ. (հզակիում գլխաւորապէս գործածւում է ու հլ. յոգնակիում ա հլ. բայց շատ անգամ կայ յգ. սեռ. զօրուց, մէկ անգամ եզ. գրծ. զօրաւ Դան. ժա. 13. սակայն ո՛չ բնաւ զօրի, յետնաբար կայ ո հլ. գրծ. զօրով, զօրովք) «ուժ, զօրութիւն» Բ. մակ. ժդ. 45. Դան. ժա. 13. «զօրք, զինուորների խումբ» ՍԳր. Բուզ. որից զօրանալ «ուժեղանալ, սաստկանալ» ՍԳր. զօրութիւն «ուժ, ազդեցութիւն, ներգործութիւն, զօրք, հրաշք, հրեշտակները» ՍԳր. զօրացուցանել ՍԳր. Եղն. զօրագլուխ ՍԳր. զօրագոյն ՍԳր. Եղն. զօրաժողով ՍԳր. Բուզ. Եւս. քր. Կոչ. զօրական ՍԳր. Կիւրղ. Թգ. զօրանիստ Բուզ. զօրավիգն Սգր. Եւս. քր. զօրավար ՍԳր. զօրաւոր ՍԳր. զօրեղ Բ. մակ. ժե. 17. զօրել Ես. ծ. 2. Եզն. անզօր ՍԳր. Ոսկ. Եզն. մեծազօր Գ. մակ. ե. 7. վեցօր. Ոսկ. Եզն. Կոչ. Ագաթ. Եւս. քր. բազմազօր Բուզ. Կոչ. հեծելազօր ՍԳր. Եւս. քր. զօրագուն «զինակից» Եւագր. 99։ Նոր գրականի մէջ զօրաբանակ, զօրագունդ, զօրախումբ, զօրակոչ, զօրաճանդէս, զօրաճեմաճաուար, զօրանոց, զօրանց, զօրաշարք, զօրապետական, զօրապետութիւն են. տես և ճզօր։

=Իրանեան փոխառութիւն է հմմտ. զնդ. zāvarə «ուժ, զօրութիւն», հպրս. *zavar-? պհլ. պազենդ. ՀՀ zōr «ուժ, զօրութիւն», պրս. زور zōr «ուժ, զօրութիւն, կարողութիւն, բռնութիւն», zōrāvar «ուժեղ, զօրաւոր»։ Այս բառի բուն ծագումը անյայտ է. բայց հմմտ. զնդ. zavah «ոյժ, զօրութիւն», ինչ. zavarə aojasča «զորութիւն և ուժ» (Horn §674 bis և Bartholomae 1689):—Մեր բառը ենթադրում է *zawr ձևը, որ պրանըւում է հին պրս. *zavar- և պհլ. zōr ձևերի միջև։—Իրանեան բառը փոխառութեամբ տարածուած է նաև Հնդկաստան, Կովկաս և մինչև Բալքանները. օր. քրդ. աֆղան. բլուճ. zōr «ուժ, զօրութիւն», զազա zōr «ուժեղ», հինդուստ. zor «ուժ, կորով, կարողութիւն», zorawur «զօրաւոր», գնչ. zor «ուժ, կարողութիւն», zoralo «զօրաւոր», ռում. զor «ուժ», թուշ. ზორა զօրա «զօրաւոր», արևել. թրք. կամ չաղաթայ. zor «ուժ, բռնութիւն, զօրեղ, զօրաւոր», zorlamaq «ստիպել, մի բան բռնի անել, բռնադատել», օսմ. zor «դժուար, բռնութիւն», zorlu «բռնի, խիստ», բուլգար, zor, ալբան. čorre, corro, միջին ռում. zore, նյն. ζώρα, ζώρι, արաբ. زور zūr «ուժ, բռնութիւն, խելք, իմաստութիւն» (Կամուս, թրք. թրգմ. Ա. 881)։—Հիւբշ. 152։

Առաջին անգամ ուղիղ մեկնեց Գ.։—ՆՀԲ դնում է թրք. զօն (իմա՛ պրս. zōr), զառպ (իմա՛ արաբ. ضرب ḍarb), չէրի (իմա՛ թեր. čeri «զինուոր»։—Եւրոպա, թերթ Վիեննայի, 1849, 200 հպրս. զաւար, զուր: Böttticher, Arica 77, 272 պրս. zōr. զնդ. zāvarə, սանս. jūrṇi: Այսպէս նաև միւսները։ Մ. Փորթուգալ, եղիշէ 116 սանս. suura, asuura, զնդ. aŋuura (մազդա): Karst, Յուշարձան 407 սումեր. sur «ուժ, զօրութիւն, զօրեղ»։

Գ.Հ.—Ագլ. Ալշ. Ախց. Մշ. Ննխ. Պլ. Ջղ. Տփ. զօրէ «զօրութիւն» (օր. Աչքիս զօրքը

պակսեր է. Զօրքի՛դ մեռնիմ, Ս. Սարգիս). Ջղ. զօրել, Երև. Պլ. զօրէլ «կարողանալ, ձեռընհաս լինել, ուժը հասնիլ», Տփ. զօրուիին, զօրիդ, զօրացնիլ, Սեբ. զօրավէր (ած. Ս. Ածածնի), Երև. Սչ. զօրութիւն, Շմ. զօրութուն, Սեբ. զօրութիւն, Ոզմ. զօրութին, Ախց. զօրութեն, Զթ. զօրութը՝ն.—Սլմ. զանազանում է զէօրի՝ «դինւոր» և զէօրս «զօրութիւն»:—Նոր բառեր են զօրնդեղ, զօրաուն, զօրխոյ «զօրաւոր»: Նոր փոխառեալ ձևեր են զօռ «բռնութիւն», զօռով «բռնի» են, որոնք բոլոր բարբառներում էլ կան:

ՓՈԽ.—Հայերէնից են փոխառեալ վրաց. ზორვარი զորվարի «զօրավար», արաբ. ﺯﺭﺍﺭﺓ zirvāra, յդ. ﺯﺍﺭﺍﻭﺍﺭﺓ zarāvara, որ կամուս, Թրք. Թրգմ. Ա. 875 մեկնում է «յունական բանակի սպարապետ». պէտք է հասկանալ մեր զօրավար բառը, որ թերևս յունաց մէջ էլ գործածական էր. կամ թէ արաբները լսել են այն հայազգի զինուորներից՝ որոնք հայ զօրավարների հրամանատարութեան տակ Յունաց կայսրութեան արևելեան բանակաթեմն էին կազմում: Կամուսի պրս. Թարգմանութեան մէջ՝ էջ 322 նոյն բառը սխալ է գրուած ﺯﺍﺯﺍﺭﺍ zarāzara, փոխանակ ﺯﺍﺭﺍﻭﺍﺭﺓ zarāvara: Ուտ. zärävär մի սրբատեղիի անունն է. իսկ zor «ուժ, զօրք»:

ՁՕՐԵՆ «զրահ», ունի միայն Բառ. երեմ. էջ 105:

Է

ԷԳ *(յհտնաբար ի, ի–ա հլ.)* «էգ» ՍԳր. *(յհտնաբար գրուած նաև իգ Պղատ. օրին.), որից* իգական *Օրին. դ. 16. Ագաթ. եղն.* իգութիւն *Բ. մկ. է. 21. եղն.* իգաբար *կիւրղ. թագ.* իգասէր *Գ. թգ. ժա. 1. եղն. Ոսկ. մ. բ. 23.* իգացեալ *Ա. կոր. գ. 10.* իգախառնութիւն *նւս. քր.* ոռնէգ *կոչ. ևն։*

Brosset JAs. *1832, 530 հլ.* իգական *ձևից է դնում վրաց.* igacai, igracai, igrica «մարտ ամիսը», «որ շատ յարմար է, ասում է, նշանակութեան կողմից»։ *Նոյն,* JAs *1834, 245 ուղղելով նախորդը՝ մեկնում է «ծնունդ գառանց»։*—Lag. Urgesch. *940 կցում է յն.* γυναιϰ *բառի* -αιϰ- *մասին։* Bugge, Etr. u. Arm. *34 նոր.* sec, sex, šec, šex «աղջիկ» *բառին է կցում և երկուսը միասին հանելով հնխ.* séighi- *ձևից, նոյն է դնում հիւլ.* séig «կաթ» *բառի հետ։—Հիւնք. այծ բառից։* Patrubány *ՀԱ 1906, 344 հնխ.* ei, oi «երթալ» *արմատից՝* gh *աճականով. համմտ. յն.* θĭχομαι «կերթամ», θίχνέω «կերթամ», *լիթ.* eigá «գնացք»։ *Սագըզեան ՀԱ 1909, 335 սումեր.* rak «իգականի նշան, ծնիլ, առեղծել»։ Petersson, Ar. u. Arm. Stud. *137 սանս.* sévate «բնակիլ, այցելել, ծառայել, վայելել ևն», *ինչպէս և սանս.* çevá- «սիրելի, արժանաւոր», *լտ.* civis «քաղաքացի», *հբգ.* hiwa, *լեթթ.* sëwa «կին» *ևն։*

Գիւմ.—Մշ. էգ՛, *Ալշ. Ախց. Գոր. երև. կր. Համշ. Զղ. Սեբ.* էֆ, *Ղրբ. Մկ. Սլմ. վն.* էֆ՝, *Ոզմ.* յէֆ՝, *Ագլ.* ագ՝.—*նոր նշանակութեամբ են էգ հաց «մի տեսակ հաց՝ որ նոր-տարուն են պատրաստում», էգ վն. «գոմէշի մատակը»։*

ԷԹՐԷՆՃ *տե՛ս Թուրինջ։*

***ԷԼ, ԷԼՈՀԻՄ** *«Աստուած» կիւրղ. ծն. (յիշում է իբր եբր. բառ)։*

=*Եբր.* אל el *«Աստուած», յգ.* אלים elim, אלהים elohim *«աստուածներ». նոյնից փոխառեալ է նաև արաբ.* إيل il *«Աստուած», որ կամուս, Քրք. Թրգմ. Գ. 137 համարում է ասորերէն։ Մեր բառը չն.* Է'λωέ, Է'λωείμ *ձևի՞ց է։*

Ուղիղ մեկնեց նախ ՆՀՔ։

***ԷԼԻ ԷԼԻ** *(գրուած նաև* էղի էղի*) «Աստուա՛ծ իմ, Աստուա՛ծ իմ» Մաթ. իէ. 46. Մրկ. ժե. 34 (գործածուած են զուտ օտարալեզու մի նախադասութեան մէջ.* էլի էլի, լա՞մա սաբաֆթանի, *որ Թարգմանի՝ Աստուած իմ, Աստուած իմ, ընդէ՞ր Թողեր զիս). սրանից էլ առնելով՝ Գնձ. Շնորհ. տապ. Գառն. 29, 40, 57, 83։*

=*Եբր.* אלי eli *«Աստուած իմ» բառը փոխանցուած է մեզ չն.* ἠλί *կամ* ἐλωΐ *ձևի միջոցով (Sophocles 452), որի համար էլ մեր ձեռագիրներից շատերն ունին էլոի ընթերցուածը։*

Ուղիղ մեկնեց նախ ՆՀՔ։

***ԷԼԻՈՍ** *«արեգակ». առանձին չէ գործածուած. որից* էլիոսական *«արեգակնային». նոթագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Մագ. Թղ. 16։*

=*Յն.* ἥλιος *«արեգակ»։—Աճ.*

Տե՛ս իմ Հայ. նոր բառեր հին մատեան. Բ. 184։

***ԷԼՉԻ** *«դեսպան» Մաղաք. ար. էջ 29։*

=*Թրք.* چلچی elči *կամ* ايلچی ilči *«դեսպան», որի հետ նոյն է մանչ.* ايلچين elčin *«դեսպան»։—Աճ.*

ԷՂՆԱ *«որ էրն». ունի միայն Բառ. երեմ. էջ 106։*

ՀԷՄՔ *«դռան վրայ ծակ՝ ուր խրում են բանալին՝ դուռը բանալու համար». անստոյգ բառ, որ մէկ անգամ ունի Վրք. եւագր. ի հին լծ. «Զբանալիսն կորոյս զհկեղեցւոյն և կրն-*

քեալ զէմս փակացն յանուն Քրիստոսի, և ձեռն արկեալ՝ ինքնին բացան նմա»։ Նոյնը ունի և Վրք. հց. Ա. 321, ուր յիշեալ էմք ձեվը դարձած է ղէմք. «և կնքեալ զդէմս փակացն յանուն Քրիստոսի»։ Եւագրի նոր հրատարակութեան մէջ՝ էջ 7, յիշեալ բառն է զդէմս, առանց ձեռագրական տարբերութեան։ Սրանցից հետևում է՝ որ յիշեալ բառը պարզ ձեռագրական վրիպակ է և պէտք է ջնջել բառարաններից։]

*ԷՆԿՈՄԻՈՆ *«ներբողեան, գովեստ»*, *մէկ անգամ ունի Բուզ. դ. 4 (Ասէին նմա էնկոմիա, որ ասի թէ Հոդի սուրբ հանգեաւ ի սա). ուրիշ վկայութիւն չկայ։*

=*Յն.* ἐγκώμιον, ւմ *«ներբողեան»*, *որից փոխառեալ է նաև լտ.* encomium:

Ուղիղ մեկնեց ՆՀԲ։

*ԷՆՉԵՆԻԱՅ *«վերանորոգութիւն կամ պայծառութիւն». ունի միայն Բառ. երեմ. էջ 106։*

=*Լտ.* encaenia *«արքագործութիւն կամ օրհնութիւն եկեղեցւոյ,* dédicace d'un temple» *(լատին բառը կարդացուած է իտալական արտասանութեամբ)։—Ա՛ճ.*

+ԷՇ, ո, ու *հլ. «էշ անասունը» ՍԳր. եզն. Եփր. Եւ. «պարիսպ քանդող պատերազմական մեքենայ» (կոչւում է նաև խոյ) Խոր. Պատ. աղէքս. «բնարի թելերի յենարանը» Ոսկիփ. «երկու ասաղեր խեցգետնի համաստեղութեան մէջ» (Թրգմ. յն. οἱ ὄνοι) Ա. նան. գիտ. 7(երիք անգամ). որից* իշակէս *«ջորի» Վեցօր. 142. կիսէշ «ջորի» Սահմ. Մագ. (իբր Թրգմ. յն.* ἡμίονος *հոմանիշ բառից).* իշամարուկ *Սերեր.* իշանդամ *Եզեկ. իգ. 20.* իշավայր *Ոսկ. մ. ա. 15. յհ. ա. 3. եզն. ցոէշ Ոսկիփ.* իշավար *Ոսկ. մ. գ. 5, 6. Վեցօր.* իշացուլ *եզն. Ոսկ. մ. գ. 6. Եւս. քր.* էշայծեամն *Խոր. Հաւաքական ձևեր են իշեար Միս. խշ. (Հրտր. Բազմ. 1911, 263 բ).* իշան *Փարպ. Շիր. յետին գւռ. յոգնակի է* իշուան *Յայսմ. մայ. 6։*

=*Բնիկ հայ բառ՝ որ ծագում է հնխ.* ek'wo- *«ձի» բառից. սրա միւս ժառանգներն են սանս.* अश्व áśva-, *զնդ.* aspa, *հպրս.* asa, *պհլ.* asp, *պրս.* اسب asb, *քրդ.* hasp, *աֆղան.* ās, āspa, *օսս.* äfsä, yäfs, *բելուճ.* aps, haps (Horn *§ 77), թոխար.* yuk, *քուչ.* yakwe, *յն.* ἵππος (<ἴσπος), *գւռ.* ἵκκος, *լտ.* equus, *հֆր.* ive, *զոթ.* aihwa, *հրգ.* ehu, *հլիթ.* ešva, *լիթ.* ašvá, *հիռլ.* ech, *գալլ.* epo-, *կիմր.* kyrn. ep, *անգսք.* eoh, *հիսլ.* jör, *որոնք բոլոր նշանակում են «ձի». կան նաև սանս.* açvatará-, *պրս.* astar *«ջորի», լտ.* eques *«հեծեալ» են ձևերը* (Walde *257,* Trautmann 72, Boisacq 380, Pokorny 1, 113, Ernout-Meillet 295): *Հայերէնի մէջ հնխ.* k'w *դարձել է շ, ճիշտ ինչպէս ունինք հնխ.* k'wōn>*հյ. շուն ձևը. իսկ* e>*ե դարձել է է՝ յաջորդ շ-ի պատճառաւ (համմտ. Աճառ.* MSL 15, 243):

Klaproth, As. polygl. *էջ 100 լտ.* asinus, *անգլ.* ass, *թրք.* ešek *հոմանիշների հետ։* Peterm. *22, 35 լտ.* asinus *«էշ»։ Այսպէս նաև* Bopp, Gram. comp. II 37:—Pictet *1, 355 և Մորթման* ZDMG, *թ. 1870, էջ 80 կցում են թրք.* ešek *բառին։* Müller SWAW *66, 271 չի ընդունում համեմատել յն.* ὄνος *ձևի հետ, այլ դնում է զնդ.* iš *«ցանկալ» արմատից, իբր* aēša- *«ցանկասէր, վաւաշոտ»։ Պատկ. Փորձ 1880 մարտ, էջ 91 լտ.* asinus: *Բառիս վրայ ընդարձակ խօսում է Տէրվ. Երկրագունտ 1884, էջ 99—100 և կցում է լտ.* asinus, *յն.* ὄνος *են խմբին։* Jensen, Hitt. u. Arm. *62, 77, 106, 210 գտնում է հաթ.* in... *ձևը, որի վրայ հիմնուելով՝ էշ բառի նախաձևը համարում է* ēnsu? *իսկ ՀՍ. 1904, 183 հաթ.* áiš, iš *«էշ»։ Հիւնք. թրք.* իշ, իշէֆ: *Ուղիղ մեկնեց նախ* Patrubány SA *2, 157 և ՀՍ. 1906, 367, որից անկախաբար և պատճառաբանեալ ձևով՝* Pedersen KZ *38, 197, 205 և 39, 404, նպաստ մը՝ էջ 6, Հայ. դր. լեզ. § 60։ Սրան ի հաստատութիւն է Աճառ.* MSL *15, 243։ Հակառակ են* Walde *65 և* Lidén, *Յուշարձան 385. առաջինը որևէ պատճառաբանութիւն չի մէջ բերում, երկրորդը* k'w>*շ ձայնափոխութեան կողմնակից չլինելով՝ ընդունում է որ կարող է էշ՝ հնխ.* ék'wio- *ձևից լինել,*

սակայն այս համեմատութիւնն էլ սխալ է համարում, որովհետև «ոչ-ցեղակից շատ լեզուների մէջ կան նոյն հնչումով բառեր». (այս մասին աւելի ընդարձակ տե՛ս տակը ՓՈՒԽ.)։ Սագըզեան ՀԱ 1909, 335 և Karst, *Յուշարձան 402 սումեր.* anšu «էշ»։ Pictet *բ. տպ Ա. 440 ո՛չ մի կապ չի գտնում* asinus *բառի հետ, կցում է թրք.* ešek *բառին և ծագումը դնում է սանս.* açvaka «ձիուկ» *ձևից։*

ԳՒՒՒ.—Ագլ. Աղշ. Ախց. Ակն. Գոր. Երև. Զթ. Խրբ. Կր. Հճ. Համշ. Ղրբ. Մկ. Մշ. Մրզ. Նախ. Ջղ. Ռ. Սեբ. Սլմ. Վն Տիգ. Տփ. էշ, Շմ. էշշ (սեռ. էշշի), Ոզմ. յէշ, Պլ. էշ, էշէգ (վերջին ձևը փոխառեալ է թուրքերէնից), Սչ. յատուկ տարբերութիւն է դնում էշ «էշ անասունը» և էշէգ «իշագլուխ. բթամիտ» բառերի մէջ. Ասլ. էշէգ, էշէյ (թուրքերէնից փոխառեալ)։ Նոր բառեր են էշխոտուկ, էշոտն, իշոտնուկ, իշկաթնուկ, իշախառաձշ, իշաուոյտ, իշաճոց, իշավարի, իշատէր, իշենի, իշխաղող, իշուկ են։

ՓՈՒԽ.—Pedersen KZ 40, 192 *և* ZDMG *57 (1903), էջ 561 հյ. էշ դնելով հնդեւրոպական ծագումից՝ մեզնից փոխառեալ է համարում թրք.* ešek «էշ» *(յատկապէս իշական ժողովրդական ձևից, որ ունի արդէն Տօնակ). բառը չեռոյ տարածուել է մեւս թուրքական լեզուների և բարբառների մէջ. ինչ. արևել. թրք.* ešak, *չաղաթայ.* išek, *կիրգիզ.* esek «էշ». *Թուրքերէնի միջոցով էլ փոխառեալ են լազ.* ešeγi «էշ», *սերբ.* êšek, *ռուս.* ишакъ «ջորի» (Berneker *438, որ և ընդունում է թէ թրք.-թաթարական բառերը հայերէնից են փոխառեալ)։—Թուրք բառի ծագման մասին թուրքագէտների էլ կարծիքը լսելու համար՝ դիմեցի* Poppe-*ի (Լենինգրադ), որ տուեց հետևեալ բացատրութիւնը.—թրք.* ešek *բառի հետ կցւում է մոնղոլ.* eljigen «էշ», *որ կազմուած է* elji *արմատից՝* gen *մասնիկով. այս մասնիկը յատուկ է բոլոր անասուններին. համմտ. մոնղոլ.* temegen «ուղտ» = *թրք.* deve «ուղտ»։ *Մոնղոլ.* eljigen *ձևից l ձայնը ընկնելով և j բաց օրինի դառնալով ույղուր. š, մոնղոլ.* eljigen *դարձել է ույղուր.* ešek «էշ»։ *(Նըկատելի է սակայն՝ որ առաջին ձևի մէջ* gen *մասնիկը ամբողջապէս պահպանում է, իսկ երկրորդի մէջ պահուած է նախաձայնը, այն էլ դարձած* k)։—*Նոյն «էշ» բառի համար եւրոպական լեզուներն էլ ունին մի հատիկ համապատասխան բառ. բոլորի մայրն է յն.* ὄνος<ὄσνος *և լտ.* asinus «էշ», *որից* asinu «էգ էշ», asellus «իշուկ», asella «էգ իշուկ», asellulus «փոքրիկ իշուկ».—*լտ.* asinus *բառից են ձևացել հֆրանս.* asne, *ֆրանս.* âne, *ռում.* asin, *իտալ.* asino, *սպան.* asno,—*հֆրանս.* asne *ձևից՝ հիսլ.* asne.—*լտ. նուազական* asinus *ձևից ծագում են գոթ.* asilus, *անգսք.* e(o)sol, *հսաքս.* հրգ. esil, *հոլլ.* ezel, *մբգ.* esel, *գերմ.* Esel (Kluge *124).*—*գերմանականից են փոխառեալ հսլ.* osĭlŭ, *հսլ.* osel, *ռուս.* осёлъ, *լիթ.* ãsilas, *հպրուս.* asilis, *սերբ.* vosol. *լհհ.* osiel (Trautmann *14).*—*լտ.* asinus *ձևից են նոյնպէս միւլ.* assan, *կիմր.* asun, *որոնցից՝ անգլսք.* assa, *անգլ.* ass, *և վերջապէս ռուսերէնից է մորդվին.* ašjol: *Այս բոլորի ծագումը նախապէս սեմական էր համարւում. համմտ. փիւնիկ. եբր.* אתון ātôn, *արաբ.* اتان atān, *արամ.* ʾtʾ atān, *ասուր.* atānu, *սումեր* anšu «էշ», *սեմական նախալեզուի մէջ* atānu, *որից յն.* ὄτνος>ὄσνος>ὄνος *և լտ.* asinus: *Սրանց էր կցւում նաև հայերէնը։ Սեմական ծագման հակառակ գտնուեց առաջին անգամ* Lag. Arm. Stud. *§ 817. այնուհետև բացուեց ընդարձակ մի բանավէճ, որին մասնակցեցին* Meyer IF *1, 319—320 են,* Schrader, Sprachvergl. und Urgesch³. *159,* Reallex. *205—6, 533,*Hehn, Kultur. pflanzen und Haustiere⁶ *134,* Stolz IF 13, 96 *են, և աւելի ընդարձակ* Brugmann IF 22, *197—202 են։ Այս բոլորի վերջին եզրակացութիւնն այն է՝ որ յն.* ὄνος *և լտ.* asinus *փոխառեալ են փոքր-ասիական մի լեզուից՝ թերևս բրակ-իլլիւրիական միջնորդութեամբ* (Walde 64—65, Boisacq 705). *սրանց հետ նոյն է յն.* ἴννος «փոքր ջորի» *(իբր* ἰσνος *<փոքր-ասիական išno ձևից), որից էլ փոխառեալ է լտ.* hinnus «ջորի» (Boisacq *377).*—*Որովհետև հյ. էշ ծագում է հնխ.* ek՛-

wo- ձևից, ուսաի կարելի է ընդունել՝ որ ա֊յն փոքր-ասիական լեզուն՝ որից փոխառնալ են յն. և լտ. ձևերը, հայերէնն է, որով հայոց էշը դառնում է այդ բոլորի մայրը։—Ինչպէս Pedersen, Հայ. դր. լեզ. էջ 177 նկատել է, Հայաստանի մէջ էշն ու ջորին շատ ընդարձակ գործածութիւն ունէին՝ երկրի լեռնոտութեան պատճառաւ։ Իշաբուծութեան զարգացման իբր ապացոյց է ծառայում էշի ընտանիքին վերաբերեալ բառերի առատութիւնը հայերէնի մէջ. այսպէս՝ ցիռ, ջորի, մրտրուկ, իշայր, իշավայր, մուդ։ Աւելացնենք նաև այն՝ որ Հայաստանի նահանգներից մէկը (Մոկք), իր երեք գաւառները էշի անունով է կոչել. (այսպէս՝ Իշայր, Միւս իշայր, Իշոց գաւառ)։

ԷՋ, ի հլ.«իջնելը» Կորիւն. «գրքի երես» Սրեմ. լգ. 23. որից ելնէջ Ագաթ. վայրէջ Առեփ. սիւն. էջմիածին (իբրև. տեղական յատուկ անուն), աճէջ Կոչ. իջանել «իջնել» ՍԳր. Վեցօր. Սերեր. Եւս. պոմ. «մեղմանալ, հանդարտիլ» Բ. մակ. թ. 11. «իջեանիլ, օթեվանիլ» Եւս. պոմ. ա. 12. «սերունդէ սերունդ յաջորդել» Խոր. արծր. իջուցանել ՍԳր. Ագաթ. լոյսիջոյց Բուզ. ջրէջք Մխ. աս. վայրէջք Նար. ազ. իջավան (որ գրուած է նաև իջեվան, իջեան, իջաւան) ՍԳր. Ոսկ. խորէջ «սուզակ, տալղձ» Տաթև. ձմ. ճժ. Կաղանկա. իջաւար «հիւր». Իմ. ե. 15. էջ «գրքի երես» բառից են երկիջեան, վեցիջեան Լմբ. պարգ. էջաճամար (նոր բառ).—զ նախդիրով՝ զիջանել, զիջանիլ «իջնել, մեղմանալ, հանդարտիլ» ՍԳր. Ոսկ. երր. և ես. Կոչ. զիջագոյն Ղեւմ. ժգ. 25. զիջական Ոսկ. յհ. բ. 34 ևն։

Հինք. հանում է ձի բառից։ Pedersen, Հայ. դր. լեզ. 146 և Scheftelowitz BB 28, 311 յն. οἴχομαι «երթալ, մեկնիլ», լիթ. eigà «գնալը» բառերի հետ են կապում։ Karst, Յուշարձան 405 սումեր. izsu «արևմուտ», 429 ԲԲր. չաղաթայ. ikmak «վայր իջնել», ikin «վայր իջած»։

ԳԻՒ.—Ոգմ. իջ՛նիլ, Ալշ. ǯիջ՛նալ, Մշ. ǯիճնել, Սեբ. իչնէլ. Ախց. Կր. իչնիլ, Համշ. իչնուշ, իճնա, Տիգ. իչնալ, Նոխ. իճնէլ, ըճնէլ, Հճ. իչնել, Պլ. Ռ. իչնալ (կար. իճնա), իճչեցուճէլ, Ասլ. իչնալ, Զթ. իչնօլ, իչնոլ, Սչ. ըճչնել, ըճչեցնել (3 վանկով), Մկ. իճնիլ, Վն. էճնել, Սլմ. էշնել, Խրբ. էշնալ, Մրղ. էշնէլ, Ակն. Սըվեդ. իշնիլ։—Կուգեաի մէջ (Մօտկան) դարձել է իշվիլ և նշանակում է «երթալ», որովհետև տեղը լեռնային լինելով՝ երթալը իջնել է (Արևելք 1898 նոյ՞ 19). Համմտ. «Այր մի իջանէր յԵրուսաղեմէ յերիքով» Ղկ. ժ. 30։—Ում ճիւղի բարբառների մէջ չկայ այս բառը. նոյն գաղափարը բացատրում է ցած գալ, վէր գալ ձևերով։—Նոր բառեր են էջք «մարելու վրայ եղող կրակ», էջ կամ էջի գինի «ինքնաթամ գինի», իջվայր, իջուկ, իջուածք «կաթուած» (հին վկայութիւնն ունի Բրս. մրկ. 223 «Որպէս իջուածքն զմարմինն վնասանն, այսպէս և հեշտութիւնն ի հոգին իջեալ՝ վնասէ զհոգին»)։

ՓՈԽ.—Վրաց. ეჯი էջի «իջեան, կայարան», ეჯობა էջոբա «մի տեղ իջեւանելը».—բաս Մաո, Вступительныя и закл. строфы ...Шоты, էջ 20 և Груз. поэма Витязь въ барс. шкуре, էջ 444։

ԷՐ, ԷՐՈՒՄ տե՛ս Ի։

ԳԻՒ.—Դվ. հէ՞ր, Մրղ. հէ՞ր, հէ՞յր, Աստ. հէ՞ր։ Բոլորն էլ «ինչո՞»։

ԷՐԱՆ տե՛ս Երան։

ԷՐԶԻՈՒՍ «մատուռակ» Գաղիան. ունի միայն Բառ. երեմ. յաւել. 574։

ԷՐԻ տե՛ս Երէ։

ԷՐԻՒՐ տե՛ս Երոյր։

*ԷՓԻՄԵՐՏԷ «տօմարական մի գրուածք է, որի մէջ կան աստեղագիտական ծանօթութիւններ, սուտ դուշակութիւններ, երազների մեկնութիւն ևն, և մինչև այսօր էլ գործածական է տգէտ տէրտէրների և պառաւների ձեռքում»։—Առաջին կազմողն է Սարգիս արքեպս. Սառաֆեան, Պօլսեցի։ Գրուած է նաև էփիրմեռէս, էփիրմերտէս (Տաշեան, Յուցակ, էջ 473)։

=Յն. ἐφημερίς,-ίδος, -ίδες «առօրեայ տեղեկագիր» որից նաև Ֆրանս. éphéméride «էփիմերտէ». յոյն բառը կազմուած է ἐπί «վրայ» և ἡμέρα «օր» բառերից։—Ա՛ճ.

ԳԻՒ.—Ղրբ. յէփէմվէրդի (ժողովրդական սուտգարանութեամբ այսպէս ձևափոխուած, իբր թէ եփրեմ և վերդի (հմմտ. Ալլահվէրդի,

խուղավէրդի, Շահվէրդի, Թաւվէրդի ևն) անուններից), Սեր. արտմէրդէն։

ԷՔԼԻԼՄԷԼԻՔ *տե՛ս* Աքլիլմէլիք։

*ԷՔՍԱՐԽՈՍ «պետաւոր, իշխան». մէկ անգամ գործածել է Ասող. էջ 101 «Ջվարթազդատ պատրիկ էքսարխոս որ էր Երկրորդ Թագաւորին»։

=Յն. ἔξαρχος «երդի կամ պարի պետ». (ἄρχω «սկսել, կառավարել» բայից). այնուհետև ընդհանրանալով բառը՝ նշանակեց «1. Թեմական եպիսկոպոս. 2. վանքերի վերահսկիչ. 3. ժողովի կառավարիչ». Բիւզանդեանց ժամանակ այս անունն էին կրում Իտալիոյ և Ափրիկէի փոխարքաները՝ որոնք նշանակւում էին կայսեր կողմից։—Սրանից են փոխառեալ ֆր. exarque, վրաց. ეჯხარხოსი եքսարխոսի և այս բառն է, որ դարձել է ռուս. экзархъ «Վրաստանի եկեղեցական պետը»։

*Ուղիղ մեկնեց նախ Ինճիճեան, Հնախ. Բ. էջ 234։

*ԷՔՍՓԼՈՐԱՏՈՐԷՍ «լրտես, պատուիրակ». ունի միայն Պատ. աղէքս. Վենետ. 1842, էջ 2, 15 —«Որք առ հռովմայեցիսն կոչին էքսփլորատորէս և առ Հայս՝ լրտեսք»։

=Յն. ἐξπλωράτορες «լրտեսներ, խուզարկուներ» (Sophocles 488), որ իր կարգին փոխառեալ է լտ. exploratores բառից. այս էլ ծագում է ex-plorare «խուզարկել, հետախուզել» բայից։ Նոյնից է ֆրանս. explorateur «երկրախոյզ»։—Հիւբշ. 350։

Ալէքսանդրի Պատմութեան մէջ արդէն յիշուած է բառս իբր յատիներէն։ Նորերից ուղիղ մեկնեցին նախ Տաշեան, Ուսումն. ստոյն Կալիսթ. էջ 207 և յետոյ Brockelmann, Die gr. Fremdwörter im Arm. Քրտմ. Տաշեան, Ուս. փոխ. բառից, էջ 115։

Ր

ՐԳԻՍ *«մի տեսակ հիւանդութիւն է». նորագիւտ բառ, որ մի անգամ գտնում եմ գործածուած էֆիմ. էջ 156 «Ըստ բժշկաց՝ ո՛չ է պարտ շատ ուտել, այլ չափաւոր. զի յայսմանէ վերկմ ընծայի, և որ շատ ուտէ և ի ցերեկն քնի՝ ըղիս կու լինի»։*

ՐԳՈՒԻԼ *«ձեռքը երկարել». նորագիւտ բառ, որ մի անգամ գտնում եմ գործածուած յեսին մի տաղի մէջ. «Ձեռքն ըղեց Հոխիսխմէն թէ գործէ ինքն շարութիւն... յիշեց չԱստուած... ձեռքն տարաւ, գանձն բռնեց». (հրատ. Զօպանեան, Հայ էջեր, էջ 10).— նոյն է՝*

ԳԻՒ.—Ակն. ըղել «երկարել» (Ձեռքը ինձ ըղեց) կամ «խոթել, խրել» (Մատը ջրի մէջ ըղեց)։

ՐՄԲԱՆ, ՐՄԲԵԼ *տե՛ս Ումպ։*

ՐՄԲԻՇ, ի–ա *հլ. «գօտեմարտող, փահլևան» Փիլ. Պիտ. Նար. 265. որից* **ըմբըշական** *Ոսկ. մ. ա. 1,3.* **ըմբշամարտ** *Ագաթ. Ոսկ. մաթ. բ. 8, Ա. տիմ. և երր. եւս. քր.* **ըմբշամարտիկ** *Ոսկ. պօղ. Ա. 249 (հմմտ. Վարդանեան, Բառաք. պիտ. Բ. 45), խոր. Ե. ղիշ. միանձ. գրուած է նաև* **ըմբշական** *(փխ. ըմբշական),* **ըմպիշ, ըմպշամարտել** *Աբր. կրետ. էջ 45. արևելեան գրականում յաճախ գրում են ըմբիշ։*

ՆՀԲ լծ. յն. πύξ, այսինքն «բռնցի, մուրճացի»։

ՐՄԲՈՄ *«գոյ կամ լինի». ունի միայն Բառ. երեմ. էջ 108։*

ՐՄԲՈՅՆ *«պատճառ». գիտէ միայն Բառ. երեմ. էջ 109։*

ՐՄԲՈՆ *(ի հլ. ըստ ՆՀԲ, թէև առանց վկայութեան) «յարմար, պատշաճ», Փարպ. Սահմ. որից* **ըմբոն է** *«անկ է, պատշաճ՝ յարմար է» Եւս. քր. «թերևս, կարելի է, անշուշտ» Ոսկ. Բ. տիմ. 193.* **աներմբոն** *«անպատեհ» Մագ. թղ. 212. Սարկ. հնդ. և մարդեղ.* **աներմբոնութիւն** *«անպատեհութիւն» Եւս. քր.։*

ՆՀԲ իբր հատարուն... պրս. հէմպիւն։

ՐՄԲՈՇԵՆԵԼ *տե՛ս Բոշխնել։*

ՐՄԲՈՇԵՈՐԵԱՆ *«լիուլի վայելուչ». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գործածում է Մագ. թղ. 237 և որ կապելով նախորդ* **ըմբոշխնել** *բայի հետ կարելի է այսպէս բացատրել (ըստ Ա.Հատ. ՀԱ. 1923, 248)։*

ՐՄԲՈՍՏ *«ապաստամբ, խեռ, անհնազանդ» Սկևռ. աղ. որից* **ըմբոստանալ** *«անհնազանդ գտնուիլ, ապստամբիլ» Ա. Թագ. իե. 10. Ոսկ. յհ. բ. 26 և հա.։ Նոր գրականում՝* **ըմբոստութիւն, ըմբոստացում** *ևն։*

ՀՀԲ ընդ մասնիկով ոստնուլ բայից։ Նոյն մեկնութիւնը տալիս է ՆՀԲ, համեմատելով յն. ἀνα-πηδάω «վեր ցատկել», որ ծագում է πηδάω «ցատկել» բայից. (բայց յն. ἀνα-πηδάω չի նշանակում «ըմբոստանալ, ապստամբիլ»)։ Էմին, Քերակ. 1846, էջ 38 ըմբ մասնիկով ոստնուլ բայից։ Հիւնք, ոստնուլ բայից։

ՐՄԲՌՆԱԳ *«նոյեմբերի 24-ը, երբ հօտերը փարախ են քաշում ձմեռելու համար» Տօմար. Յայտ. նոյ" 23. որ և* **բռնամագ** *Ա՞։*

Ալիշան, Հին հաւ. 131 հնագոյն ձևը դնում է **բռամագ, բռումագ** *«քաղդէական մի տօն, որ 5 տարին մի անգամ է պատահում» և կցում է հնդ.* peronmal *«վիշնու Աստուած» բառի հետ։ Գաբ. Բառ. լտ.* hibernalis *«ձմեռնային» բառից. այս աստուգաբանութիւնը ուղիղ է երևում (հայերէնի մէջ կարող էր բառը ըմբռնել ձևին կցուելով՝ այսպիսի ձևափոխութիւն ստանալ), բայց դժբախտաբար միջնորդ յունարէն ձևը պակասում է։*

ԸՄՆԵԼ *«յաղթել, յաղթահարել, նուաճել». ունին միայն Բառ. երեմ. էջ 109 և ՀՀԲ՝ առանց վկայութեան։*

ԸՄՊԱՀԿԵԼ *տե՛ս Պահակ։*

ԸՄՊԵԼ *տե՛ս Ումպ։*

ԸՄՊԻԻԼ *«այրիլ, վառուիլ». առանձին գործածուած չէ. բայց ունինք սրանից* դիւրըմպելի *«դիւրավառ, շուտ բորբոքուղ՝ այրուղ» նորագիւտ բառը՝ որ մէկ անգամ գործածուած եմ գտնում Ոսկ. ա. 23, էջ 240 ա. «Եւ զոր օրինակ փուշքն առելիք են մաշկաց և դիւրըմպելիք հրոյ, նոյնպէս և իրք աշխարհիս առաջի Աստուծոյ»։*

ԸՄՓՈՐՏԵԼ *«ուռճացնել». Նորագիւտ բառ, որ մէկ անգամ գործածել է Ոսկ. կողոս. 601 «Զամենայն մարմինն ջրգողեալ առրոմեցուցեալ և զերեսս և զամենայն իսկ ըմփորտեալ և զոտս ևս մեծամեծ քան զզերանս ոռնացուցանել և զընդերսն փչեցուցանել» (յն. ἐπὶ τὸν τῶν ὑδρωπικῶν ἀνθρώπων ὀγκόω «ուռցնել» բառն է կրկնուած)։ Սրա հետ համմտ. նաև Ոսկ. Բ. տիմ. 242 «Անտի ըմփորոտի(ա)լ ցաւն գայցե հասանիցէ և ի նա»։ Սրանց հետ նոյն է* ըմփորտել *«փոխարկել», որ ունի միայն Բառ. երեմ. էջ 109, որ և էջ 111 դարձնում է* բղփորկել։

ԸՆ *տե՛ս Ընդ։*

ԸՆԴԱՅ *«ժովային առասպելական մի հրէշ» Ոսկ. մտթ. բ. 15 (որ գրուած է յունական Ἐρινύς աստուածուհու դէմ, որ ներկայացնում էր կատարի վրիժառութիւնը)։*

ՆՀԲ *«իբր գեր* բնկղմեալ *կամ* բնկղուզեալ*»։ Ալիշան, Հին հաւ. էջ 60 և Հիւնք.* բնկղմիլ *բայից։*

+ԸՆԴ. *ընդարձակ գործածութիւն ունեցող նախդիր, որ զանազան հոլովներով զանազան նշանակութիւններ է ստանում. ինչ. սեռականով՝ «փոխանակ, տեղը», հզ., տրականով՝ «հետը, միասին», բացառականով՝ «առ, ի, մօտից, քովէն», գործիականով՝ «տակը», հայցականով՝ «դէպի, առ» կամ «տեղ և ժամանակ ցոյց տուղ», յգ. հայցականով՝ «հետը, միասին» նոյնը կրկնութեամբ՝ «մէջտեղը, միանգամայն»։ Կան նաև բազմաթիւ ոճեր ու դարձուածներ, որոնց վրայ տե՛ս ՆՀԲ, հտ. Ա. էջ 764—765։ Իբրև նախամասնիկ կցւում է բազմաթիւ բառերի սկիզբը, որ ներկայանում է հետևեալ չորս ձևերով. 1.* **Ընդ**, *որ ամէնից աւելի սովորական ձևն է, գտնում է յատկապէս ձայնաւորով սկսող բառերի սկիզբը. ինչ.* ընդարձակ *ՍԳր. ընդարձակել ՍԳր. Եւս. պտմ. ընդարբոյս Իմ. ժբ. 10. 3կ. ա. 21.* ընդակից *«բնակակից, բնտանի» Նիւս. կուս. Նար.* ընդարմանալ *Բ. մակ. գ. 24.* ընդաւազել *Եղիշ. Կաղանկտ.* ընդգեղձանիլ *Ոսկ. Բ. տիմ. ա.* ընդգնիլ *3Հ. կթ. լծ. եւագր.* ընդզոգել *Կոչ.* ընդգրկել *Առակ. իդ. 33. Ագաթ.* ընդդէմ *ՍԳր. Ոսկ. վեցօր. Կորիւն,* ընդդիմակաց *Բուզ ժ. 9. Եզն. Ոսկ. Ես. Կորիւն.* ընդդիմանալ *ՍԳր.* ընդդիմասուէր *Ագաթ.* ընդել *«ժանօթ, բնտանի» (իբր «միասին եւած նստած») Ագաթ.* ընդելական *Ոսկ. մտթ. ա. 1. Ագաթ.* ընդելակից *Կորիւն.* ընդելանիլ *կամ* ընդելնուլ *Գծ. թ. 26. Եւս. պտմ. Ոսկ. Կոչ.* ընդելուզանիլ *ՍԳր. Ոսկ.* ընդելուցանել *ՍԳր. Ոսկ.* ընդէ՞ր *ՍԳր. Եզն.* ընդխառնել *Գ. թագ. ի. 29.* ընդհաւատ *Եզն.* ընդհատ *Ոսկ. Բուզ. Եւս. քր.* ընդհարկանիլ *ՍԳր.* ընդմիջել *Եւս. պտմ. Կոչ. ՍԳր.* ընդմտանիլ *Իմ. է. 24. Եփես. բ. 2. Սեբեր.* ընդմտատար *Առակ. ժզ. 10.* ընդոծին *ՍԳր.* ընդողնիլ *«ժուլանալ, անհոգ նստիլ» Ոսկ. Ա. տիմ.* ընդոստ *Ոսկ.* ընդոստուցանիլ *ՍԳր.* ընդուլնել *Փիլ.* ընդուեայց *ՍԳր.* ընդուեել *ՍԳր.* ընդվզիլ *ՍԳր.* ընդվայր *Եզն. Եւագր. Ագաթ. ևն։ (Ինչպէս տեսնում է, այս բառերից մի քանիսի մէջ* ընդ *առացել է նաև ա յօդակապը. միւսները առհասարակ առանց յօդակապի են.* ընդոծին *բառը ունի* ո *յօդակապը)։—2.* **Ընց.** *ձևացած է* դ *ձայնի կակղելովը՝ նախաւոր ե-ի մօտ. համմտ. բանդ կամ բանտ, անդի կամ անտի են գրչութիւնները. սրանից են կազմուած՝* բնտաբոյս *3կ. ա. 21. Իմ. ժբ. 10.* բնտասուն *ՍԳր.* բնտել *ՍԳր.* բնտոծին *Ոսկ.* բնտուստ *Ոսկ. ևն. այս բոլորի աւելի հարազատ ձևերն են* բնդ-*ով գրչութիւնները։—3.* **Ընճ**—*.կազմուած է* ղ *ձայնի անկումով՝ յաջորդական բաղաձայնի մօտ. քան այսմ* բն- *գործածւում է միայն բաղաձայնով սկսող բառերի մօտ. օր.* բնկեր *(իբրև* ընդ-կեր*) ՍԳր. Բուզ. Սեբեր. Եզն.* բնկլնուլ, բնկլուզանել *ՍԳր.* բնկնել *(գրուած*

նաև բնգնել) *ՄԳր.* բնկողնիլ *Ոսկ. Երր.* բնկողմանիլ *Նիւս. Նար. Փիլ.* (*գրուած է* բնդկողմանիլ *Եղիշ. այլակ. 54*). բնկրկիլ *ՄԳր.* բնձեռել *Յճխ. Փիլ. Նար.* բնկապճիլ, «*կապուիլ, կաշկանդուիլ*» *Բուզ.* բնկալուչ «*նշանած, փեսայ*» *Ոսկ. ևս. և մ. ա. այս օրէնքը շատ դեղեցիկ կերպով երևան է գալիս բնդունել բայի մէջ, որ թէև* բնդ *նախդիրով է կազմուած, բայց կատարեալի և հրամայականի մէջ ստանում է* բն-, *որովհետև սրանց մէջ բունը բաղաձայնով է սկսում* (բնկալայ, բնկա՛լ)։ *Վերի բառերից ոմանք գործածւում են նաև* բնդ *նախդիրով. ինչ.* բնդգնել, բնդկողմնեալ, բնդկրկել, բնդձեռել *են։ Այս* բնձևը *իրրև նախդիր՝ առանձին էլ է գործածուած յեանաբար՝ տրականի, բացառականի և ներգոյականի համար. այսպէս՝ Ասկ* բն ցնոսա. Ընն մարմնոջ. Ընն տում «*ի տանէ*» *և սրդմամբ՝ ն՚ոգուջ են. այսպիսի ձևեր ունին յունաբան հեղինակները, ինչ. Արիստ. Հակակ. Անյ. պերիարմ. են։—4.* Ըմ-. *դառնում է միայն շրթնականով սկսող բառերի սկիզբը. բան այսմ ձևացած է* բնդ *նախդիրից՝ դ-ի անկումով և ն ձայնը վերածելով մ-ի՝ յաջորդ շրթնականի պատճառաւ. այսպէս՝* ըմբռնել *ՄԳր. Եզն. Կոչ.* ըմբեռել *Կոչ.* ըմբեռանել (*գրուած նաև* ընբեռանել, բնդբեռանել) *Տիտ. ա. 11.* ըմպաճկել *Փիլ. Պիտ.* ըմբոշխնել (<*բնդ-բոշխնել) *Ոսկ. Մծբ. Եփր. Թգ. են.—5. Սրանցից դուրս կայ նաև* **ԵՃԹ** «*տակը*» *նախամասնիկը. նշանակում է նաև «երկրորդական». որից կազմուած են արդի դրականում՝* ենթադրական, ենթադրաբար, ենթասպայ, ենթաբարբառ *են. աւելի ընդարձակ տե՛ս առանձին։*

=*Բնիկ հայ բառ՝ հնխ.* *anti *ձևից, որ ներգոյականն է* *ant- «*երես, ճակատ, առաջակողմ*» *բառի։ Հայերէնի զանազան նշանակութեանց համար համմտ. ցեղակից ձևերից՝ սանս.* 𑀅𑀦𑁆𑀢𑀺 ánti «*դէմ, ընդ առաջ*», 𑀅𑀥𑀺 ádhi «*վրայ, մօտ, դէպի, բարձրից*», 𑀅𑀥𑀲 adhas «*տակը*». (*Համմտ. հյ.* ընդ *գործիականով*), 𑀅𑀥𑀭 adhara «*տակինը*», 𑀅𑀥𑀫 adhamá «*ամենատակինը*», *զնդ.* aδarō «*տակինը*». *յն.* ἀντί «*փոխարէն, փոխանակ, դէմը*», ἄντιος «*առջևի, դիմացի*», ἀντιάω «*հանդիպիլ*», ἐναντίος «*դէմի, հակառակորդ*», *լտ.* ante «*նախ, դէմ*», anterior «*կանխագոյն*», anticus «*առջևի*», antiquos «*հին, վաղեմի*», infra «*տակը, տորև*», inferus «*տակինը*», *գոթ.* and «*երկարութեանը, վրայ, վրայից*», und «*փոխարէն*», undar «*տակը*», *հրգ.* unt, *նրգ.* ant-, ent- (*իբր նախամասնիկ*), *հլիթ.* anta «*վրայ, դէպի*», *լիթ.* añt «*վրայ*» (*նաև իբր բայական նախամասնիկ*), *անգլսք.* and, ond, *ծնրհիսլ.* and *են* (*տե՛ս* Walde 47, 385, Boisacq 64, Trautm. 10, Pokorny, 1, 59, 65, 323), *որոնց վրայ* Karolides (Γλωσσ. σχ. 68) *աւելացնում է նաև կապադովկ.* ἀντί, ἀνδί «*ինչպէս*»։ *Հայերէնին համապատասխանող դարձուածներ են հետևեալները. յն.* ὀφθαλμὸν ἀντὶ ὀφθαλμοῦ καὶ ὀδόντα ἀντὶ ὀδόντος = =*ակն* բնդ *ական և տոտմն* բնդ *տոտման. գոթ.* tundu und tundau *տոտմն* բնդ *տոտման. Մտթ. ե. 38.* and all gawi=բնդ *ամենայն կողմանս. Ղուկ. ա. 14.* and allans stadins=բնդ *ամենայն տեղիս. Ղուկ. դ. 37. յն.* ἀντὶ ἐμοῦ καὶ σοῦ=բնդ *իմ և* բնդ *քո. Մտթ. ժէ. 27. այսպէս նաև գոթական բայերի սկիզբը. ինչ.* and-niman, *որ ճիշտ համապատասխանում է հյ.* բնդունիլ *բային։— Հնխ.* anti *ձևի դէմ հայերէն սպասելի էր* *անդ, *որ իբր նախամասնիկ գործածուելու պատճառաւ շեշտից զրկուելով դարձել է* բնդ, *ճիշտ ինչպէս ոչ դարձել է չ, կամ այժմ<այս ժամ։*

Աւետիքեան, Մեկն. Թղ. Պօղ. Գ. էջ 321 համեմատում է յն. ἀντί· ՆՀԲ *լծ. յն.* ἀντί, ἀντ᾽, ἀνθ᾽, Peterm. 57 բնդ=ենք, *էջ 255* անդ *բառից, էջ 264* բմ- *և* բն- =*յն.* ἐν, *լտ.* in: Windisch. 40 *գոթ.* and, *հրգ.* ent: Lag. Urgesch. 14 բնդ=*յն.* ἀντί, *էջ 25* բմ-, բն-=*սանս.* anu: Spiegel, Huzw. Gram. 143 *պհլ.* and, *փարսի* añdā: Müller SWAW 42, 251 *և* Justi, Zendsp. 16 *զնդ.* antarə, *պրս.* andar «*մէջ*»։ *Հիւբշ.* KZ 23, 36

բեղ, եեք=հւր. andhara: *Տէրվիշ. Նախալ. 118. Հյ. յ անդիմաճ, սանս.* anti, *յն. ἀντί, գոթ.* and *ձևերի հետ՝ հնխ.* anti *«դիմաց, առաջը»:* Bugge, Etrusk. u. Arm. 43 *յն. ἀντί:* Meillet MSL 7, *էջ 164—5* բեղ *և բառ գնում է հնագոյն* ինդ *և ուստ ձևերից. Համմ. ի վերուստ, երկնուստ, իբր հնխ.* entos *(յն. ἐντός) և* utstos (*ud +*-tos) *ձևերից՝ նոյն,* MSL 9, *էջ 155—7 մերժելով այս՝ կցում է վերի բառերին, իբր *ինդ նախաւոր ձևից: Հիւրշ. 447 այս բոլոր մեկնութիւնները անապահով է գտնում և բնդունում է միայն* բեղ *«տակը» <հնխ.* endhes, *սանս.* adhás, *գոթ.* undar: *Հիւնք.* տուն *բառից:* Meillet MSL 12, 429 *մեկնում է վերի ձևով: Բառիս վրայ մանրակրկիտ մի քննութիւն ունի* Finck KZ 39, 501—538, *ուր հարիւրաւոր օրինակներով հաշուում է բառիս զանազան նշանակութիւնները, իսկ էջ 538 հաւատացում է* Meillet-*ի մեկնութիւնը՝ հակառակ Հիւրշմանին:*

Գիմ.—Անկախ գոյութիւնը կորցրել է ամենուրեք. կայ միայն մի քանի բառի մէջ ծածկուած. այսպէս՝ բեղոր *կամ* ինդոր *(տնդ տեղ նաև* բեղբր, բեղբր or, *Ակն.* ինդէor*) «ինչպէս» (այս իմաստով Սրբ. Աստ. Ջմ. Խրբ. Հնգ. Ջրս. Պլ.)—բուն նշանակում էր «ո՞ր տեղով, ո՞ւսկից». իմաստի զարգացման համար Համմ. Ոսկ. յհ. ա. 2, էջ 32 «Զարմանա՞մ ուստի ընդ որ եկեալ ի նոյն բանս թաւալեալ գտանիմ» (տե՛ս և Մասեաց Աղաւնի 1863, էջ 12 և Այտնեան, Քնն. քեր. էջ 127).—Ջթ. Կս. Մրղ.* ինդոմն, *Հնգ.* ինդան *(<ընդ այն) «այնպէս», Ջթ. Կս. Մրղ.* ինդոmս, *Հնգ.* ինդաս *(<ընդ այս) «այսպէս», Կս.* ինդէդ *(<ընդ այդ) «դրանց պէս», Ջթ.* ինդիյօզ *(<ընդ երազ) «երազի մէջ», Ջթ. Մրղ.* ինդիրզոց *(<միջ. հյ. ընդ իրիկացիճ՝ ըստ Նորայր, Բառ. ֆրանս. էջ 1149 բ) «երեկոյեան դէմ», Ջթ.* էնդոmլ խուսըլ *(<ընդ այլ խօսել) «զառանցել». (Համմ. Թլկր. 30՝ ևս Յովհաննէս Թուլկուրանցի, զօրն ի բուն ընդ այլ կասես). աւելի հաւատարիմ Ակն.* բեղալը խօսիլ *և մէկ բառով՝ Աբր.* անդլել *(<ընդ այլել): Այս բոլորի մէջ ընդ նախդիրը կորցնելով իր ինգային մասը՝ կարող է մնալ պարզապէս դ. այսպէս են Ջղ.* դոր *«ինչպէս» (<ընդ որ), Վն.* դո՞ր *«ո՞ւր», Մրղ.* դո՞ւր *«ո՞ւր», Ջղ.* դո՞րն *և նախաձայնը ո-ի պատճառով թաւանալով՝ Ղրբ.* թօռն *«ուր», դէն «այնտեղ» (ինգան «անդին, ընդ այն» ձևը գիտէ Դրնդ. 182),* դէս *«այստեղ»,* դէդ *«այդտեղ» (ծագում են ընդ այն, ընդ այս, ընդ այդ հնագոյն ձևերից. Համմ. Այտնեան, Քնն. քեր. էջ 215): Նոյն ընդ նախդիրով են կազմուած նաև Ղրբ.* տի՛ւրիւր տալ *«շարժել»,* տի՛ւրիւր կ՚ալ *«երերալ», Շմ.* տիւրիւն տալ *«շարժել»,* տիւրիւն կ՚ալ, *Ջղ.* դիրուր տալ, դիրուր գալ. *Գնձ.* տուրուր կալ. *Մրղ.* տիրար *կամ* իրար տալ, *որոնք՝ ինչպէս վերջին ձևը յայտնի կերպով ցոյց է տալիս, յառաջանում են ընդ իրեար տալ, ընդ իրեար գալ դարձուածներից:—Ընդ նախդիրի անկախ գործածութեան օրինակ են՝ Ջթ.* ինդ իրիսիդ *«բուդէմդ. քո առաջ» Մրկ. ժե. 4.* էնդ ձիզ լուրջ *«յառաջագոյն քան զձեզ» Մրկ. ժզ. 7 (տե՛ս Աւետ. ըստ Մարկոսի՝ Զեյթունի գր. Պօլիս 1913):*

ԸՆԴԱՅԵԼ *«որոշել կամ վարել (ապ. վաստել) ըստ ինքեան». ունի միայն Բառ. երեմ. էջ 109.—կարծեմ զնդալ բայն է՝ որ վրիպակով մտել է այս ձևի տակ:*

=Պրս. թրք. تالان talan «աւար, աւարում», որ թաթար. talamaq «գողանալ, կողոպտել» բայից է՝ ըստ Будаговъ 1, 336 և 728։

ԹԱԼԱՍ կամ ԹԱԼԱՍՄԵՂ. մէկ անգամ գործածուած ենք գտնում հոմանիշների մի շարքում. «Մաքի, որոջ, այծ, թալասմեղ, և են այսորիկ իգական... իսկ չէզոքն՝ ալոջ և բուծ». Մագ. քեր. 241 և Երզն. քեր։ Բառիս նշանակութիւնը՝ իբրև «էգ ոչխար կամ այծ», ստոյգ է. բայց անստոյգ է ձևը, որովհետև ձեռագիրներն ունին «թալաս, մեղ» կամ «թալաս և մեղ» (իբրև երկու անջատ բառ).—Առոնցի հրատարակութիւնը գիտէ մի՛միայն թալասմեղ։

ՆՀՒ «կենդանի թաղասմաւոր, որ է մալեալ, իբր իգացուցեալ» լծ. յն. θῆλεια «էգ», θλάσμα «ջարդուածք»։—կարող է ձևացած լինել թաղասմաւոր ձևից՝ փոխանակելով -աւոր-ը -եղ վերջաւորութեամբ, որ միևնոյնն է. համմտ զօրաւոր=զօրեղ։

*ԹԱԼԱՏՈՅ «ծով». նորագիւտ բառ՝ որ մէկ անգամ ունի Մագ. Ղղ. 202 «ի թալատայ արտակիտեալ ստորիջացն ի խորս» («լուղորդները ծովի խորերից որսացին»—մարգարիտների համար է ասում)։

=Յն. θάλαττα (աւտտ.) «ծով»։

Գտաւ ու մեկնեց Մէնէվիշեան, Գամագտ. էջ 47։

ԹԱԼԹԱԼ «արտաւար, լծվար, օրավար». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Վստկ. 9 «Յամէն թալթալ՝ որ է լծվար մի՝ փորեն ութ մշակ»։

ԹԱԼԽԱՅ (սեռ.-ի) «բարակ թել». մէկ անգամ ունի Երզն. մաթ. ժթ. 24 (էջ 412) «Պարտին զանձինս մաշել ըստ օրինակի թալխայի, որպէս զի ի ծակ ասղանն անցանէ»։

ՆՀՒ պրս. تلك talk «ոսկեզօծիկ, վարսախ»։

*ԹԱԼՈՒԹԱՅ «Միջերկրական ծովում գործածական մի տեսակ միակայմ նաւ՝ եռանկիւնի առագաստներով. tartane». ունի միայն Նորայր, Բառ. ֆր. 1196 ա, իբրև միջին հյ. բառ։

=Արաբ. թարաթա՝ նոյն նշ. սրանից թերևս նաև ֆրանս. tartane, իտալ. tartana նոյն նշ։

Ուղիղ մեկնեց Նորայր՝ անդ, բայց արաբ. թարաթա ձևը ես չգտայ Կամուսի ծովածաւալ բառարանում։

*ԹԱԼՊԻՈՒ «աշտարակ». նորագիւտ բառ, որ գործածուած է երկու անգամ հայ գրականութեան մէջ. «Թուղթ երկնառաք, թևապատրեալ հոգւով, թալպիաւթեան աշտարակ» Սաան. էջ 61. «Իջանեմ ի թալպիովք, մենամարտեալ ընդ սատերազէն ճակատու հերձուածողացն» Որբ. հկճտ. Բ. էջ 8.—ըստ Ամատունի. Հայոց բառ ու բան 202 ա կայ թալկիովք ձևով էջմիածնի № 420 ձեռագիր բառարանում, էջ 237 բ, «մարտկոց կամ աշտարակ» նշանակութեամբ։

=Եբր. תַּלְפִּיּוֹת talpiyōt «ամրոց» բառից փոխառեալ։—Ա.Ճ.

*ԹԱԽ «կասք, քասպ, մի տեսակ արմատ» Ամիրտ. ունի միայն ՀԲուս. § 756։

=Պրս. تال tāl «հնդկական խոշոր արմատենի». ըստ այսմ մեր բառն էլ պէտք է կարդալ թաղ։

Ուղիղ մեկնեց Նորայր ՀԱ. 1923, 496։ Պատահական նմանութեին ունին պրս. ژێ tāx *կամ* ژێ tāγ *«անպտուղ լեռնային մի տեսակ ծառ, որի փայտը ընտիր վառելիք է» և արաբ.* ژّ taxx *«շիրիկի քամուք, քուսպ»։*

ԹԱԽԱՆՁ *(գրուած նաև* թախանձ, թաղանձ*)*, ի *հլ. «ձանձրացնելու աստիճան աղաչանք, պաղատանք» Եւս. քր. Ոսկ. կող. «տխրութիւն, նեղութիւն» Եփր. Թգ. Արշ. Ճառընտ, որից* թախանձել *«ձանձրացնել» ՍԹր. Ոսկ. Ես. և մ. գ. 3. «նեղուիլ, կարօտիլ» Ոսկ. երր.* թախանձելի *«տաղտկալի» Ոսկ. մ. ա. 15.* թախանձեցուցանել *«ձանձրացնել» Դատ. ժզ. 16.* թախանձութիւն *«թախանձանք» Ոսկ. Ա. տիմ. «նեղութիւն, դժկամակութիւն» Սեբեր.* թախանձալից *«թախծալից» Փարպ.* ոգեթախանձ *Մարաթ.* բազմաթախանձ *«մարդ նեղացնող» Ոսկ. Ա. տիմ. (անստոյգ է ՋՔ-ի* թախանձ *«օժիտ» ձևը)։ Բառիս կրկին նշանակութեանց համար հմմտ. ֆրանս.* ennui *«ձանձրոյթ. 2. մեծ նեղութիւն, ցաւ, տառապանք»։*

Հիմնք. նախանձ *բառից։*

Գիմ.—Ախց. թախանձիլ։

***ԹԱԽԹ** *«գահ, գահոյք» Կոստ. երզն. էջ 130 (Ջիողու ինք սուլտան, ոչ փատիշահ ի թախթ). յատկապէս՝* թախթ ի զառ *«ոսկի գահ» էջ 131. գրուած է* թախտ *Վրդ. պտմ. հրտր. էմինի, էջ 212 և* թաղտ *Գնձ. տպ. Վենետ. էջ 46. «Ի Գառնի, հուպ առ զարմանալի թաղտն Տրդատայ»։—Վերջին երկուսը յատին յաւելուած են. Վարդանի վէնետկեան հրատարակութիւնը ունի նոյն տեղը՝ էջ 161 գաճոյ։*

=Պրս. تخت taxt *«գահ, գահոյք», որի վրայ աւելի ընդարձակ տես* տախտ։—

***ԹԱԽԹԸԴ** *«թուղթ դրեալ կամ գրելի». մէկ անգամ ունի Գնձ. հոգ. «Թախթըդ լուսային (Ս. կոյս), զրող Սուրբ հոգին, զբանն ի քոյդ մարմին»։*

=Արաբ. تختة taxtīṭ, taxṭaṭ *«գծումն, գրութիւն»։*

Ուղիղ մեկնեց ՆՀԲ։

ԹԱԽԻՄ, ի *հլ. «կսկիծ, ցաւ, տրտմութիւն» Եփր. Թգ. 442. «տրտմական, նեղիչ» Ոսկ. յհ. ա. 2. որից* թախծիլ *«տրտմիլ, տխրիլ» ՍԹր. Եզն.* թախծութիւն *Բ. մակ. դ. 16.* թախծալից *Եզն.* թախծեցուցանել *Եփր. մն. 482.* ծանրաթախիծ *Կորիւն. Բուզ.* յոգնաթախիծ *Նար. Վրդ. պտմ.* թախծոտ *(արդի դրականում). գրուած է նաև* թաղծիլ, թաղձիլ, *որոնցից ևնթադրուած է* թաղձ *կամ* թախծ *(փխ.* թախիծ*) Շիր։*

ՆՀԲ լծ. թախանձիլ *և* մաղձոտիլ։

Հիմնք. դաճիճ *բառից։*

***ԹԱԽՏԱՆ** *«աւարտում, թալան». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Խլաթ. յիշ. 2 «մեկն արար առ և թախտան մինչև յերկիրն Հայաստան», որից էլ* թաղթնել *«աւարել, կողոպտել», որ ունի Սմբ. պտմ. էջ 82* թալճել *բառի փոխարէն՝ Մոսկուայի տպագրութիւնը։*

=Պրս. تاختن taxtan *«ասպատակել»,* تاختنى tāxtanī *«ասպատակութիւն»։—Ա.Ճ. Խալաթեան, անդ՝ ծան. համարում է պրս. բառ։*

+ **ԹԱԿ**, ի–ա *հլ. «ծայրը կունտ գլխով փայտ՝ ցից զարնելու համար. թօխմախ» Բռ. ստեփ. լեհ. այսպէս է ընդունուած նաև նոր գրականում, բայց հնագոյն ձևն է* թակն *Բուզ. դ. 3։—Սրանից են ծագում* թակակոփ *(այլ ձևս.* թակնակուռի*) Վրդն. ծն.* թակաղ *«կոշնակի թակ, փայտէ ուռ» Լծ. նար. ղբ. (–աղ մասնիկի համար հմմտ. կենց–աղ, կախ–աղ–ան, խաղող–աղ–ատանիք, յաշ–աղ–իլ, յապաղիլ ևն),* թակաղակ *«կոշնակի փոքր թակ» Գր. տղ. եէմ. նմանութեամբ նաև «սիւնագլուխ, խոյակ» Մագ. Թղ. 221 և խշ. 82. Օրբ. երկու իմաստով էլ գրուած է նաև* թակաղաղ *Ագաթ. Օրբ. հրտր. էմ. էջ 164. Վրդն. յս. 77. մէկ անգամ էլ գտնում եմ* թակեղն *«գաւազան, թակ. մահակ» Անկ. գիրք առաք. 98 (Հրեշտակք թակեղամբ ծեծէին զերեսս նոցա.—որին իբր համապատասխան՝ մի քիչ յետոյ առում է՝ Հրեշտակն ծեծէր հրեղէն գաւազանաւ զգլուխս նոցա)։—Ըստ Թորամանեանի (անձնական)* թակաղակ *նշանակում էր նախ «մխիս ծեծելու յատուկ կոճ», որից փխբ. «սիւնագլխի ամենավերի խորանարդ քարը». ճիշտ այսպէս է նաև ֆրանս.*

tailloir, *որ ունի սոյն երկու նշանակութիւնները։*

=*Բնիկ հայ բառ՝ հնխ.* teg- *արմատից. համ. լտ.* tignum «շինութեան փայտ, գերան». *նոյն արմատի հնխ.* steg, stog *ձևերից են ծագում հբգ.* stehho, *մբգ.* steche «կոպալ, գաւազան, ցից», *հիսլ.* stiaki «ցից, ձող», stiaka «զարնել, հրել» (*համմ. գւռ.* **թակել**), *հշվէդ.*staki «ձող», *լեթթ.*stega, stegs «փայտ, ձող», *անգսք.* staca «ցից», *ռուս.* стожарь «ձող», *նսլով.* stožánje «դռան սիւն» *ևն։* (Pokorny 2, 622, Trautmann 285): (Ernout-Meillet 997 *լտ.* tignum *դնում է* teks-«փայտի վրայ աշխատիլ, տաշել» *արմատից և ո՛չ թէ* teg-, steg-՝ *ինչպէս ընդունում են* Walde *և* Pokorny. *Նաև* Trautmann *չի յիշում լտ.* tignum *իր համեմատութեանց մէջ)։*

Նշթ **թակաղակ** *մեկնում է «իբրու* **թագ**. *թրք.* **թաffիա** «գդակ» *կամ* **թակ**»։ *Տէրվ.* Altarm. 41 **թեկն, թէկն, թիկուճ** *ձևերի հետ՝ կցում է գոթ.* stigqan, stagq «բախել, խփել», bi-stugq «բաղխիւն», *սանսր.* tuñja «հարուած, բախիւն» *բառերին։ Ուղիղ մեկնութիւնը տուաւ* Liden IF *18, 498—500, որ ընդունած է նաև* Walde 779: Oštir, Btrg. alarod. 5 *սանս.* tašti «տաշուած» *բառի հետ։ Թիրեաքեան, Բազմ. 1913, 340 թրք.* degenek «գաւազան»։ *Պատահական նմանութիւն ունի եբր.* תקע tq' «զարնել»։

Գիմ.—Գոր. երև. Ղրբ. Մշ. **թակ**, *Ալշ. Խրբ.* **թագ**, *Մկ. Ոզմ. Սլմ. Վն.* **օթակ**, *Ագլ.* **բօկ**, *որոնք նշանակում են «թակ, տճկ. թօխմախ». բայց մասնաւոր առումներով ունինք Աբբ. Բիւթ. Տիգ. «լուացքի տոփան», Կր. «բուրդ ծեծելու գլանաձև փայտ», երև. «միս կամ լուացք ծեծելու փայտ», Ղրբ. «թուխ թափելու երկար ձող», Ագլ. Գնձ. երև. Ղրբ. «ծեծ»։ Նոր բառեր են* **թակել** *(Ագլ. Գնձ. Գոր. Լճ. Ղզ. Ղրբ. Ղրդ. Շլ. Շմ. Ջղ. Ռ. Սեբ. Տփ.) «ծեծել» (այս իմաստի համար համմ. հիսլ.* stiaka «զարնել, հրել». *հին վրկայութիւնն ունի Բառ. երեմ. էջ 114),* **թակիչ, թակիկ, թակլկոռել, թակովի, թակոտել, սխտորթակի, կլոլակթակի** *ևն։*

Փոխ.—Բոշ. **թագոտել** «zerschlagen, չափաշար ծեծել» (Finck, Die Sprache der arm. Zigeuner ЗАН *1907, էջ 123)։*

***ԹԱԿԱԼԱԿ** *«լատին սարկաւագի շապիկ.* dalmatique» *Մաշտ. ջահկ։*

=*Պրս.* تاگالا tagālā «կարճ հանդերձ» *(ԳԴ էջ 114, 686), չաղաթայ. և թթր.* دكه *կամ* تكه tekele, *նաև* دكى *կամ* دگى degele «մի տեսակ կարճ վերնազգեստ, որ կարող է նաև ոսկիով կարուած լինել» (*Будаговъ *1, 562), որից էլ վրաց.* **თაგალა** **բագալա** «կարճ մուշտակ, душегрея, шубка на вате, опушенная мехомъ» *(Ջուբինով[2] 534)։ Իմաստի ձևափոխութեան համար համմ. պրս.* كرتك kurta «կարճ զգեստ, կոռտիկ», *որ եղել է հյ. կոռտիկ «արեղայի վերարկու»։—Ա.Ճ.*

Գիմ.—Նջ. **բագալա** «հին տարազի կանանց այն երկար հագուստը՝ որ միւս շորերի վրայից էին հագնում», *Ագլ.* **բայլա** «կանացի մի հագուստ է, որ Ղրբ. **արխալուղ** է կոչւում» *(Սարգսեան, Ագուլ. բարբ. Բ. 54)։*

ԹԱԿԱՐԴ *կամ* **ԹԱԿԱՐԹ**, *ի–ա հլ. (յետնաբար նաև ի հլ.) «որոգայթ, ցանց» ՍԳր. «վանդակ» Փիլ. 36մ. որից* **թակարդապատ** *կոչ. 11.* **թակարդապատեալ** *նխ. գծ. Կորիւն.* **թակարդադիր** *Գնձ.* **թակարդել** *ՅՀ. Իմ. պաւլ.* **թակարդափակել** *ՅՀ. կթ։*

Նշթ **թակ** *կամ* **կարթ** *բառից։ Հիւնք. պրս.* تگر tagar «սարդի ոստայն»։ Liden IF *18,500 համարում է* **-արդ** *մասնիկով կազմուած՝* **թակն** *բառից. (համմ.* **մակ–արդ**)։ *Թիրեաքեան, Բազմ. 1913, 340 դագ «որոգայթ» բառից։*

ԹԱԿՆ. *անծանօթ մի անասուն է. Պերիարմ.. Անյ. երզն. քեր. (ըստ ԳԲ «սկիւռ»)։*

Մաո ИАН *1920, 141 և* Яз. и лит. *I, 233 վրաց.* **თაგუ** **բագու**, *մինգ.* tuki, *բասկ.* šagu, *որոնք բոլոր նշանակում են «մուկ»։*

***ԹԱԿՈՅԿ**, *ի–ա հլ. (յետին է գրծ.* **թակուկով** *Լմբ. մատ. էջ 71) «ջուրի կամ գինու մեծ աման» (արևմտեան գրականում համարւում է «ջրի կարաս հողէ, տճկ. քիւփ») ՍԳր. Ոսկ. մ. գ. 4. «աշտանակի վրայ* **թակոյկի** *ձևով զարդ» Փիլ. ել. սխալմամբ գրուած է նաև* **թակոյճ** *Նար. երգ. 342 և վերջածայնը իբրև*

յոգնակիի նշան առնելով՝ հոլովուած է բա-կոյս, բակոյից (ըստ ՆՀԲ), մինչև անգամ ածանցուած բակոյաբուղխ եղիշ. չրչր. 271. (այսպէս ունին ՆՀԲ և ԱԲ, բայց տպագրում դտնում ենք բակոյկարուղխ ձևով)։

=Պհլ. takōk «մսի աման» (ըստ Darmesteter, Zend-Avesta III, 121), պրս. تکوک takōk «անասունի ձևով շինուած ոսկեղէն կամ արծաթեղէն մեծ ըմպանակ՝ դինի խմելու համար», որից էլ փոխառութեամբ վրաց. ტაკუკი տակուկի «ոսկի կամ արծաթ թաս». (Զուբինով[2] 1213 սխալմամբ դնում է հայերէնից)։—Հիւբշ. 153։

Առաջին անգամ Աւգերեան, Բացատր. չփ. և կշռ. էջ 86 համեմատեց պրս. բառի հետ. նոյնը նաև ՆՀԲ, որ ընդունում են Lak. Arm. Stud. § 838, Հիւնք. են։ Karst, Յուշարձան 403 սումեր. dug «աման, սափոր»։

ԹԱՀԻԻ. անասոյզ բառ. մէկ անգամ ունի Մխ. բժշ. 22 «Յորժամ թահրի մարդն և ոտն ի քարն դիպի»։—Seidel § 84 կարդում է սահի. ասելի լաւ եմ համարում կցել դաճրիլ ձևին՝ որ Զէյթունի բարբառով նշանակում է «յոգնիլ»։

1ԹԱՂ (ի հլ. ըստ ՆՀԲ, թէև առանց վկայութեան) «մի քաղաքի մասերը, արուարձաններըը» Փարպ. Վրդն. աղ. որից բաղնուդ «նոյն թաղում բնակող» Ոսկ. եփես. 832 (չունի ՆՀԲ). արդի գրականում ունինք սրանից կազմուած բազմաթիւ բառեր. ինչ. թաղական, բաղեկից, բաղեցի, բազմաբաղ, բաղամաս, բաղայիճ, բաղապետ, բաղապետութիւն, բաղապետական են։

Scheftelowitz BB 29, 22 բաղար! և բաղել. առնս. tala «դաշտ», հսլ. tĭlo «յատակ», հպրուս. talus «տախտակամած», լտ. tellus «հող» են բառերի հետ։ Նոյնը ընդունում կամ յիշում են նաև Walde 767 և Petersson KZ 47 259։

Գիւտ.—Ալշ. երև. Մշ. Ոզմ. Ռ. Սլմ. Վն. Տփ. բաղ, Տիգ. բաղ, Զթ. բօղ, բոդ.—Նոր բառեր են բաղամէջ, բաղաւոր.—այստեղ է պատկանում նաև բաղ «գերեզմանատան մէջ իւրաքանչիւր ընտանիքի մեռելներին յատկացուած հողամասը», որ պատահաբար նման է հնչում բաղել-բաղ (5) արմատի հետ։

Փոխ.—Քրդ. ژن tag «թաղ, quartier d' une ville». օր. li taga felane «Հայոց թաղերում», ուտ. բաղ «թաղ, թաղամաս»։

2ԹԱՂ «խիտ, կուռ, սեղմ, ճխտուած». առանձին անգործածական արմատ, որից ածանցուել են բաղուն «խիտ, կուռ (օդ, երկինք)» Վեցօր. էջ 34, 57. Ոսկ. մտթ. Շիր. էջ 35. Վրդն. ծն. կրկնութեամբ բաբաղուն «շատ լցուած, լիուլի, խիտ» (յն. ճնշեալ) եփր. համաբ. 237. Ղուկ. ղ. 38։

ՆՀԲ բաբաղուն բառին լծ. է դնում ոմկ. ախած, բրգր. սրգր։ Տէրվ. Մասիս 1881 մայիս 8 բաբաղուն դնում է կրկնուած բաղ արմատից։ Հիւնք. բաղել բայից։ Scheftelowitz BB 29, 66 յն. τελέειν «լրացնել» բառին ցեղակից։ Petersson, Ar. u. Arm. St. 29 սանս. tilvila «բերրի», լիթ. telas, լիթթ. telsch, հսլ. tele «հորթ» բառերի հետ։

Փոխ?.—Վրաց. თელა թելա, თელვა թելվա «թաղիքը լմնել, կակղացնել, ոտքերով տրորել». այս նշանակութեանց համար համմտ. տակը 3ԹԱՂ «թաղիք, քէչէ»։

—ԹԱՂ (ի–ա հլ. ըստ ՆՀԲ, թէև առանց վկայութեան) «կաճ, թաղիք, քէչէ» Արծր. հրտր. Պտկ. էջ 28. որից թաղի (–ուոյ, ղեաւ) խոր. գ. 9 (գրծ. թաղաւ). Ասող. Վրդն. (այլ ձ. բաղիւ, բաղաւ). թաղեայ «թաղիքից շինուած» Վրդն. պտմ. Մաղաք. աբ. Մարթին. թաղիանալ «թաղիքի պէս լինել» Վրդն. ղևտ. յետնաբար կայ բաղիւ «քէչէ», որից բաղիս, բց. բաղսէ Յայսմ. մարտ 12 (տպ. բախղէ. մի ուրիշ ձեռագրի մէջ՝ նոյն տեղը տեսել եմ բաղսէ)։

=Նոյն է նախորդ 2ԹԱՂ «խիտ, կուռ», արմատի հետ. համմտ. նշանակութեան զարգացման համար՝ յն. πῖλημα «լմած բուրդ. 2. թաղիքէ գլխարկ. 3. որևէ ճմռած սեղմուած բան (խտացած օդ ևն)», πιλέω «բուրդ լմել, թաղիք շինել. 2. ճմռել, տրորել, 3. խըտացնել, սեղմ ու կուռ վիճակի վերածել (օր. ամպերը, շոգին)»։—Թաղիք պատրաստելու համար բուրդը թրջելով՝ գլանաձև մի փայտի վրայ ոլորում են և յետոյ ոտքերով երկար

ժամանակ զարնում, հարում ու գետնի վրայ գլորում են, որպէս զի կաորները իրար կպչին միանան։ Ըստ այսմ յառաջացած են վերոյիշեալ բառերը։—Աճ.

Գիմ.—Ալշ. Մշ. Տփ. **բաղիֆ**, *Սլմ.* **բաղիֆ՝**, *սեռ.* **բախկի**, *Մկ. Վն.* **բաղիս**, *Ոզմ.* **բաղէ՝ս** «*թաղիք*»։ *Նոր բառեր են՝* **բաղխադիր** *լ.* «*թաղիք շինող գործատեր*», **բաղխադրութիւն** *լ.* «*թաղիք շինելու արհեստը*»։ *Նոյն բառն է նաև* **բաղիֆ** *Արբ.* «*որոճացող կենդանիների փորոտիքների մասերից մէկն է*»։

Փհմ.—Խինն. **բալա**, **տալա** «*կաճ, թաղիք*», *վրաց.* **თალა բալա**, **თალაია բալախա**, **თალიხა բալիխա** «*բրդէ պարկ*», *Թրք. գւռ.* telis «*քուրձ, տոպրակ*», *Թուշ.* **თაილზი բաիլզի** «*պայուսակ*», *պրս.* **تلا** tala, **تلیسه** talīsa «*տոպրակ, քուրձ*» (*գրւում է նաև* **تکیسه** takīsa), *սասր.* **ܛܠܝܣܐ** talīsā «*տոպրակ*», *կիրգիզ.* **تالس** talis «*պայուսակ*» (Будаговъ *1, 337*), *արաբ.* **تلیسه** talīsa «*տոպրակ, արմաւի տերևով հիւսուած մի տեսակ նեղաբերան սրուականման զամբիւղիկ, գրքի պայուսակ*» (*Կամուս, Թրք. Թրգմ. Բ. 220*)։ *Այս բառերից ո՛չ մէկը չի կարող մեկնուիլ վրացերէն, սասրերէն, արաբերէն կամ պարսկերէն արմատներով. անբացատրելի է մանաւանդ* tala *և* talisa *ձևերի յարաբերութիւնը, որ սակայն հյ.* **բաղ**, **բաղիֆ** *և հյց.* **բաղիս** *ձևերով շատ լաւ պարզւում է։ Աւելացնենք սակայն նաև այն՝ որ փոխառեալ ձևերից ոմանք ուղղակի հայերէնից չեն, այլ պարսկերէնի միջոցաւ։ Այսպէս սասր.* talīsā *ըստ* Brockelm. Lex. syr. *398 պարսկերէնից է փոխառեալ. նոյնպէս պիտի լինին նաև արաբ. և կիրգիզ. ձևերը, ինչպէս և գւռ. Թրք.* telis:—*Պրս.* **تکیسه** takīsa *ձևն էլ, եթէ միայն գրական ճամբով է յայտնի, սխալ գրչութիւն է փխ.* **تلیسه** talīsa. *իսկ եթէ իրօք գոյութիւն ունի ժողովրդական լեզուի մէջ, ներկայացնում է հյ. ղ-ի յետին հնչումը։—Թէ «թաղիք» նշանակող մի բառ կարող էր յետոյ «տոպրակ» նշանակութիւնն ստանալ՝ ցոյց է տալիս հյ. Ղուրձ «հաստ կտոր. 2. տոպրակ»։*

—₄ԹԱՂ «զինուորի սաղաւարտ» Ոշղ. (Զեռ. Վիեննայի Մխիթ. № 6, էջ 392. բառս չունին ՆՀԲ և ԱԲ). Հնից չէ վկայուած, բայց սրան են կցւում՝ **թաղաթափ** «*գլխաբաց, մերկ գլխով*» *Ոսկ. պօղ. Ա. 835 («Եթէ թաղաթափ տեսանիցես զնաժիշտն, քեզ Քշնամանս համարիս զիրսն. իսկ յորժամ քեզէն մերկանաս, զայն չհամարի՞ս ինչ վնաս». բառս չունի ՆՀԲ. յիշում է միայն ԱԲ՝ իբր անստոյգ բառ. յոյն բնագրի «գլուխը մերկ» ձևը պարզում է իմաստը),* **թաղաճար** «*կանացի գլխարկի վրայի զարդարուն դնդասեղները*» (*ըստ Հացունի, Պատմ. տարազի, էջ 128*) *Ոսկ. պօղ. Ա. 894 («Մի՛ ծամակալս ի ծամս, մի՛ տեռակալս և թաղահարս ի գլուխս, մի՛ ապարանջանս ի ձեռս». ՆՀԲ դնում է* **թաղիար**, *ԱԲ նաև* **բաղիալ**, *ինչպէս ունին երկու ձեռ.),* **թաղագործ** «*գլխարկ կարող, խոյրարար*» *Ոսկ. պօղ. Ա. 848 («Աղէ՛ ասա, եթէ դերձակն և թաղագործն զինչ ինչ՝ որ չիցէ պատշաճ նոցա արուեստին ստանայցեն կամ գործի ինչ կամ օրինակ». յն.* σκυτοτόμος «*կաշեհատ*». *Մեր օրինակում գրուած է* **բաւագործ**, **բազագործ**. *այսպէս սրբագրել ըստ Վարդանեան ՀԱ 1914, 320), որոնց հետ կցւում է նաև* **թաղակ** «*թաղիքէ սաղաւարտ կամ գլխարկ*» *Բռ. ստեփ. լեհ։*

=Նոյն է **թաղ** «*կաճ, թաղիք, քէչէ*» *բառի հետ. այսպիսի գլխարկները հին Հայոց մէջ պատրաստւում էին թաղիքից, ինչպէս հիմայ էլ քրդական քոլոզները և վրացի գեղջուկների լայնեզր գլխարկները. նիւթից առնելով կազմուած է նաև առարկայի անունը. Համմտ.* յն. πῖλος, πίλημα «*թաղիք. 2. թաղիքէ գլխարկ*»։

Ոշղ. անդ՝ **բիբեղ, թաղիֆ** *կամ* **թաղել** *բառերի հետ. Համմտ. իր բացատրութիւնը. Սաղաւարտ ի բիբղաճէ կամ ի կաճէ արարեալ, որով գլուխ զինաւորին թաղի, այսինքն ծածկի։ ՆՀԲ* **թաղակ** *հանում է* **թաղիֆ** *բառից։ Նոյնը Տէրվ.* Altarm. *41 կցում է* **թաղել**, **առաստաղ** *ևն ձևերին. տես* **թաղանք**։—**Թաղ, թաղաճար, թաղաթափ** *և* **թաղագործ** *բառերի կապակցութեան և իմաստի ճշտութեան մասին խօսում է Վարդանեան ՀԱ 1914, 320 և Բառաք դիտ. Բ. 46։ Հացունի, Պատմ. տարազի, էջ 128 պրս.* **تا**

գեայ «գդակ»։ Պատահական նմանութիւն ունի յն. θολία «լայնեղր կոնաձև կանացի գլխարկ»։

Գիւր.—Նոյն բառն է Ակն. թախիզ «թաղեայ գլխարկ». նոյնը նաև Արբ։

₅ԹԱՂ. արմատ առանձին անգործածական, որից ածանցուած են՝ թաղել «հողի տակ ծածկել» ՍԳր. թաղակից «միասին թաղուած» Կոչ. թաղելութիւն «թաղում» Ոսկ. մ. գ. 27. թաղումն Երեմ. իր. 19. թաղմանական Բո. առեփ. լեհ. անթաղ Ես. քր. Ոսկ. Ես. անթաղումն վրք. հց. դիաթաղ վրք. հց. ձիւնաթաղ Ագաթ. պատանոցաթաղ Ես. լ. 28. տղայաթաղ, ֆահանայաթաղ Մաշտ։ Յայտնի չէ թէ բառիս բուն և առաջին նշանակութիւնը «փորե՞լ» է թէ «ծածկել», վերջինի կողմն է այն՝ որ բառը յաճախ գործածուած է պարզապէս «ծածկիլ, պահել» նշանակութեամբ, համմտ. Եփր. յոր. (հրտ. ՀԱ. 1912, 671) «Թաղեցէք և թագուցէք զորոգայթս ձեր».—Երեմ. ժգ. 7 «Փորեցի և առի զսփածանելին ի տեղւոչէ անտի, ուր թաղեցի զնա (այլ ձեռ. թաւուցի)». և այլն. համմտ. նաև պտ. թաղաղոցմ աճել «ծածկել, պահել»։

Haug GGA 1854, 254 լատ. tegere, գերմ. decken «ծածկել»։ Müller, Armen. VI յն. στέλλω «յարդարել», περι-στέλλω «փաթաթել» ձևերի հետ։ Հիւնք. թաթախել բայից։ Տէրվ. Altarm. 41 թաղակ, թագ, առաստաղ են ձևերի հետ՝ կցում է պրս. tāj, յն. στέγω, լիթ. stegti, stogas «ծածկել, ծածք, տանիք» են բառերին՝ իբր հնխ. stag արմատից։ Patrubány SA I, 211 հսլ. tają, taiti «ծածկել, թաքուցանել» բառի հետ. հայերէնի մէջ ղ մասնիկ է։ Ս. վ. Պարոնեան, Բանաս. 1900, 172 գնդ. թաղամաս «վրան մեռնել չորացնելու բարձրադիր տեղ»։ Այսպէս նաև Փորթուգալ փաշա, եղիշէ 142, 148 գնդ. տախմա, պրս. տախմ, տախմա։ Scheftelowitz BB 29, 22 տե՛ս թաղ (1), որ ընդունում է նաև Walde 767։

Գիւր.—Աղջ. Հճ. Մշ. Ջղ. Սչ. Սլմ. թաղել, Ախց. երև. Կր. Մրղ. Ղրբ. Ննխ. Պլ. Ռ. Սեբ. թաղէլ, Ասլ. թաղէ՛լ, Ագլ. Գոր. Ջթ. Խրբ. Շմ. Ոզմ. Տփ. թաղիլ, Համշ. թաղուշ, Տիգ. թղէլ.—Նոր բառեր են թաղ «1. խաղողի որթի թաղած ճիւղերը. 2. ճիւղ. 3. ձմերուկի, սեխի կամ վարունգի թևը. 4. լոբիի նման բոյսերի՝ գետնի կամ թումբի վրայ փռուած ամբողջ տունկը», թաղամեռ, թաղատեղ, թաղաղոցմ աճել «ծածկել, պահել», թաղլաղորել, թաղլաղորուիլ «պահվտիլ», թաղլուն, թաղման, թաղմանչէք, թաղմելայ, թաղոտել, թաղուոր, թաղումտար, թաղմահակի։

ԹԱՂԱԹԱՓ
ԹԱՂԱԿ } տե՛ս ₄ԹԱՂ։

ԹԱՂԱԹԵԱԼ «արևի ծագումից յետոյ տասներորդ ժամը». ունին միայն ՀՀԲ և ՓԲ։

Նաղարէթեան, Պատկեր 1893, էջ 159 թաղ «փողոց» բառից («Թևրևս պահապանները փողոցէ փողոց շրջելով կը ձայնէին) և կամ թաղ «կանացի քօղ» բառից (իբր մթութեան առաջին աստիճանը)։

ԹԱՂԱՂՈՒ «շրէշ խոտը» (կամ թաղաքո՞ւ) Բժշ. ունի միայն ՀԲուս. § 757. Նոյն բառն է՝ որ Բառ. հրեմ. էջ 114 և 336 գրում է. «Թաղաղուն և օշին (կարդա՛ օղին) շրէժն է». «Օղին և թաղաղուն՝ շրէզ»։

*ԹԱՂԱՆԴԱՍՏ «ակրկարհա բոյսը. pyrethrum balsamita W (ըստ Տիրացուեան, Contributo § 545)» Ամիրա. ունի միայն ՀԲուս. § 758։

=Արաբ. تاغندست tāγundast կամ تيقندست tīqandast «ակրրկարհա» (տե՛ս Շթայնշնայդէրի հաւաքածոյի մէջ՝ WZKM 11, 323)։

Ուղիղ մեկնեց ՀԲուս. անդ։

ԹԱՂԱՆԹ (գրուած նաև թաղանդ) ո և ի–ա հլ. «բարակ մաշկ. 2. քաղիրթը պատող ճարպը» ՍԳր. Ոսկ. Ա. տիմ. «ծովային բոյս» Կոչ. 269 (սեռ. թաղանթաց). որից թաղանթագեղ Վեցօր. 172. թաղանթազարդ Վեցօր. 166. թաղանթապատեալ Ճշ. թաղանթաթև «մաշկաթև» ԱԲ. թաղանթիլ «բարակ մաշկ կապել» ԱԲ. թաղանդեայ «մաշկ կապած» ԱԲ. թանձրաթաղանթ Փարպ. լուսաթաղանթ Խոր. վրդ. ծովաթաղանթ Կոչ. հրաթաղանթ Անան. եկեղ։

Տէրվ. Altarm. 41 **բաղել, բաղակ, բազ, առստաղ** *են ձևերի հետ՝ կցում է պրս.* tāǰ «**բազ**», *յն.* στέγω, *լիթ.* stegti, stogas «*ծածկել, ծածք, տանիք*» *են բառերին՝ իբր հնխ.* stag *արմատից։*

ԹԱՂԱՍՄԱԻՈՐ *կամ* **ԹԱՂԱՄՍԱԻՈՐ** «*կըռուած (անասուն)*» *Ղևտ. իբ. 24* «*Զթաղամսաւորն և զմալիասն և զթածաւարոտն և զհատեալն*» (θλαδίαν («*ներքինին*») καὶ ἐκτεθλιμμένον καὶ ἐκτομίαν καὶ ἐπεστασμένον). *—Թերևս նոյն լինի բառիս հետ՝* **բալասմեղ**, *մին կազմուած* **-աւոր** *մասնիկով, միսը՝ սրա հոմանիշ* **-եղ** *մասնիկով. ինչպէս՝* **զօրաւոր** *և* **զօրեղ**։*—Բուն արմատն է ուրիմն* **բաղասմ-***կամ* **բաղամս-**։

*Հներից Վարդան բարբ. սխալ է հասկանում բառը և մեկնում է «Զթաղամսաւորն, որ հասուցանել թաղիացնել լինի ուրեք միսն և խառնեալ ընդ կաշին և չքերթուի».—ուզում է ասել «***թաղիՙ** *դարձած միս»։ Այսպէս նաև Տաթև. հարց. 371 «Թաղամսաւորն, որ թաղիացնել է միսն ի կաշին և չքերթուի»։ Հին բռ. դնում է «թաղամսաւոր, ջրջրկոտ». այսպէս նաև Բառ. երեմ. էջ 115 «ջրջրկոտ կամ փոշտանկ»։—ՆՀՔ (***բալասմեղ** *բառի տակ) յն.* θλάσμα. *այսպէս նաև Հիւնք. յն.* θλάσμα «*մալեղն, ճմլեղն*» *և* θλαστὸς «*ներքինացնել ճմլելով*»։*—ՋՔ «ներքինացնել ջաղխմամբ և բաղմամբ երկուորեակս ի միսն»։*

***ԹԱՂԱՐ** *(ի-ա հլ. ըստ ՆՀՔ, թէև առանց վկայութեան) «խեցեղէն գոգաւոր կամ կոնքաձև աման՝ մէջը թրջոց դնելու» Վրք. հց. Ա. 573. Վստկ. 103, 126, 136, 185 (գրուած նաև* **թեղար**). «*Հարկ, տուրք*» *Կիր. էջ 218, Մաղաք. աբ. 8, 10, 16. Անիի արձանագրութեանց մէջ էլ յաճախ յիշուած է* **եգիե թաղար, կալի թաղար** *են. մէկ բառով էլ* **կալաթաղար** «*կալի տուրք*» *Վիմ. տար. 226.—արևմտեան գրականում այժմ գործածւում է բառս «ծաղկաման» նշանակութեամբ։*

=*Ջաղաթ.* تاغار taγar «*պնակ, պնակաձև աման*», تقار taqar, تقاو taqau «*աման, պարկ, ծածկոց*» (*ըստ* Vambery, Čagatai-sche Sprachstudien), تاغار taγar «*պարկ՝ որ Թուրքեստանում առնում է 4 փութ, իսկ Անդրկովկասում մինչև 30 փութ ցորեն, պարի են*» (*ըստ* Будаговъ *2, 397*), *արևել. թրք.* تاغار taγar «*պարկ, քուրձ*» (R. P. Shaw, A Sketch of the turki language), «*երկաշեայ պայուսակ*» (Будаговъ *1, 361*), تاغار taγar «*մեծ բաժակ, մի տեսակ երկար և քիչ լայն պարկ*» (*ըստ* P. de Courteil. Dict. Turc-oriental), *օսմ.* طغار daγar «*մախաղ. պայուսակ*», طغارجق daγarǰəq «*փոքր մախաղ, հովուի մախաղ*» (*Մ. Աբիկեան, Բռ. տճկ. հյ. գաղ.—այս բառը ԺԶ դարուն հնչում էր* **տաւարճուղ**, *ինչպէս ունի Դրնդ. 24). Թրք. գռ. «հօշկակարների այն ամանը՝ որի մէջ կաշի են թրջում», ուս.* **պաղար** «*20 փութ ցորենի քաշ*»։ *Այս բոլորի մայրն է պրս.* تاغار taγar «*սափոր, կուժ*», *որից փոխառեալ էր հին ժամանակ հայ.* **տակառ**, *աւելի յետոյ արաբ.* تيغار tayγār «*լական*» (*Կամուս, Թրք. Թրգմ. Ա. 870*) *և աւելի ուշ վերոյիշեալ թաթարական ձևերը։ Սրանցից էլ փոխառեալ են հյ.* **պաղար**, *քրդ.* تاغل taγar «*վառարան, մանղալ*», *վրաց.* თაღარი **պաղարի** «*կուժ. 2. մի տեսակ չափ՝ 6¾ փթանոց*», *բուլգար.* tagar, *ռուս.* тагаръ, *ալբան.* taghar, *նյն.* ταγάρι «*կողով կամ ճամբորդական պայուսակ*», *միջին լտ.* tagara «*լուսիտանացոց յատուկ մի տեսակ աման*» *են։—Պաղարը նախապէս ամանն էր, յետոյ նշանակեց «առնուած հարկի չափը» և աւելի յետոյ ընդհանրանալով առաջաւ ընդհանրապէս «հարկ» նշանակութիւնը, ինչպէս որ պարսկերէնի մէջ էլ դարձաւ «հոհիկ, թոշակ»։*

Ուղիղ մեկնեց նախ Աւգերեան, Բացատր. չփ. և կշռ. էջ 86։ Հիւբշ. 251 ընդունում է **տակառ** *բառի հետ։—*Scheftelowitz BB 29, 22 *իբրև բնիկ հյ. կցում է* **բաղ, բաղել** *լատ.* tellus «*հող*» *են բառերին, որ ընդունում է նաև* Walde 767: *Տե՛ս նաև Աճառ. Հայ. նոր բառեր հին մատ. Ա. էջ 74՝ վերի ձևով։*

Գիր.—*Ջղ.* **բաղար** «*խմորի տաշտ*», *Սլմ.* **բաղար** «*ներկի կարաս*», *Ախց. կր. «Բոնքի կրակամանը, մանղալ, քուրսի», երև.* **բա-**

դար «10 լիտրանոց չափ», Ալշ. Մշ. բաղար «հողէ մանղալ», Շլ. Շմ. Տփ. բաղար «հատեղէնների չափ», Խրբ. բաղար «ցեխից շինուած լական», Ակն. բաղան «ծաղկաման» (ըստ Մաքսուտեանի), Այն. Առն. Ռ. բաղար կամ ՋԲ. բաղօր «հօշկակարի աման՝ կաշի թրջելու համար». ՀՃ. բաղօյ «հողէ գուռ՝ որ իբր ջրաման է գործածւում». կայ նաև Տիգ. բաղմր ձևր։

Թաղերգիչ «կատակերգակ». մէկ անգամ ունի Սանահն.=Ոսկիփ. «Պիսիդոս Կորնթացի հարց ընդ Թուղիոս թաղերգիչ. Ձի՞նչ մարմին. —Պատասխանի. Գործի ոգւոյ առ կենցաղս»։—

=կազմուած է բաղ բառից, իբր «փողոցի երգիչ» և է իբր թարգմանութիւն յն. κωμῳδός «կատակերգակ», κωμῳδία «կատակերգութիւն» բառի, որ կազմուած է նոյնպէս յն. κώμη «աւան, գիւղ, թաղ» և ᾠδή «երգ» բառերից (Boisacq 544)։—Աճ.

ՆՀԲ մեկնում է «ողբերգակ». (այս նշանակութեամբ կարելի էր հանել **բաղել** բառից՝ իբր «թաղման՝ մեռելի երգիչ»)։ Ուղիղ է ՋԲ, որ գնում է «կատակերգակ». ըստ այմ էլ Նորայր, Բառ. ֆր. էջ 260 comédie «կատակերգութիւն, թաղերգութիւն» և էջ 261 comique «կատակերգակ, թաղերգիչ»։

ԹԱՂԹ «ձուի բարակ փառը». նորագիւտ բառ՝ որ երկու անգամ գտնում եմ գործածուած Յայտմ. մարտ 18 «Որպէս զայն մկղբնատեսակ փառ ձուին, որ յոմանց բաղթ ասի... զբարակ թաղթն օդոյն, սպիտակուցն ջրոյն» (նման է)։

ԳԻՒ.—Երև. Բլ. Մշ. Վն. **բախտիկ** «ձու՝ որ դեռ հասած, կճեպ կապած չէ՝ հաւի տկարութեան կամ հիւանդութեան պատճառով»։

ԹԱՂԹ կամ ԹԱՂԹԻԿ (գրուած նաև **բախթ, բախտիկ**) «մի տեսակ բոյս. լտ. atriplex hortensis L. ֆր. arroche, որ և հյ. բայլ, յն. ἀτράφαξις, արաբ. qaṭf, պրս. sarmaj, թրք. qara pazə» Մխ. առկ. Մխ. բժշ. (վկայութիւնները տե՛ս Նորայր, Բառ. ֆր. 91 ա arroche բառի տակ). կայ նաև **բաղբենի** «մի տեսակ ծա՞ռ» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 760։

ՆՀԲ «բալէթ, բիւլիւտ, բիւլա, իբր ուռոյցք»։ Սովորաբար համարւում էր «լտ. cyclamen բոյսը». Նորայր՝ անդ, մեկնեց «arroche»։ Վերջին անգամ Seidel Մխ. հեր. § 39 մերժում է cyclamen, որովհետև սրա բոլոր տեսակներն էլ սաստիկ թունաւոր են, և ընդունում է «arroche»։

ԳԻՒ.—Նոյն է Ակն. Ասլ. Նբ. Ք. **բախտիկ** «ծմելի՝ սպանախի նման մի բոյս». (տե՛ս իմ Գաւ. բառ. էջ 346)։

ԹԱՂԻ. անյայտ իմաստով. ունի Բժշ. հետևեալ հատուածում. «Կարմիր թաղի տապկէ ջրով, օծնէ նօդով (=նաւթով) և խարկէ ըզդուրս նկածն». ՀԲուս. § 761.—Թուի թէ բադիիճ է։

[**ԹԱՂԻԿ** «կանկառ». այսպէս ունին ՆՀԲ, ԱԲ և ՀԲուս. § 762 և յաւել. իբր առնուած Գազիանոսից։—Նորայր ՀԱ 1922, 392 ցոյց է տալիս՝ որ Գազիանոսի վկայութիւնը հետևեալ ձևով է. «Ականթաղիկէ. կառն». սրանով պէտք է հասկանալ «յն. ἄκαντα λευκή, կառն» (որ է «սպիտակափուշ»)։ ՆՀԲ են սխալագիր մի ձեռագրում կարդալով «Ական. բաղիկ է կառն», հնարել են յիշեալ **բաղիկ** բառը՝ որ գոյութիւն չունի։]

ԹԱՂԻՄ «վիրաւորեալ». ունի միայն Բռ. երեմ. էջ 115։

—**ԹԱՂԻ.** արմատ առանձին անգործածական, որից կազմուած են՝ **բաղկեալ** «խըտացած (ամպ, գոլորշի, կրակ, հող)» Պզատ. սիմ. Արիստ. աշխ. Շիր. 35. «կծկուած (մորթ)» Փիլ. եկ. և լիւս. «կուռ, խիտ (խոտ)» Վրդն. ծն. «լմած, թաղիք շինած» Պզատ. օրին. 304. «Քնշկուած (մազ)» Մանդ. **բաղկացեալ** Պզատ. տիմ. **բաղկավարս** «խճճուած քնշկուած մազերով» Մագ. Թղ. 147 (տպ. բաղկվարս). **բաղկումն** Փիլ. նխ. բ. 101. Աբիստ. աշխ.—ԱԲ ունի նաև **բաղխիլ** գրչութիւնը։

=կազմուած է **բաղ** «խիտ. 2. կաճ, թաղիք» բառից՝ կ ածականով. հմմտ. **բաղ** բառի տակ յիշուած յն. ձևերը։—Աճ.

Հներից Երզնկացին նուր **բաղկեալ** համարում է քաղաէարէն. «Զոր և եթէր զսա կարդացին ազգն յունական և հայր

թաղկեալ այնք՝ որ լեզուաւ քաղդէական». Երզն. երկն. ոտ. էջ 27։—ՀՀԲ թաղկիլ *մեկնում է «նիւթել, մանել, թել ոլորել, փոխարկել, յեղաշրջել, փոփոխել». (այս նշանակութիւնները սխալ են)։ Զուբինով (ա. տպ.) հյ.* թաղկ *բառի դէմ հանում է վրաց.* թալխի *fվա «սև քար», սակայն այսպիսի հյ. բառ չկայ։— Հիւնք.* թաղկիլ *հանում է* յաղկիլ *բայից՝ վերի ձևով մեկնեց Աճառ. (անտիպ). նոյնը անկախաբար* Petersson, Ar. u. Arm. Stud. 29:

Գիւտ.—«մագերը թնջկիլ» իմաստով ունինք Ալշ. Մշ. թախկել, *Երև. Լ. Նբ. Վն.* թախկիլ, *Տփ.* թախկիլ, *Մկ.* թախիլ։—*Նոր բառեր են* թաղկիճ տալ, թաղկուճ, *Ագլ. շրջմամբ* թա՛խճուկ.—*արմատական ձևը ունի Զթ.* թաղիկ *«թնջկուած մազ, թնջուկ», թէև բայական ձևն է Զթ. և Սլմ.* թախկել։

ԹԱՂՀԱՐ *տե՛ս* Թաղ։

Նշ՝ր թաղար *բառից, որ սակայն յետին փոխառութիւն լինելով սրա հետ գործ չունի։*

ԹԱՂՏ *կամ* **ԹԱԽՏ** *«գահ». Թաղտն Տրդատայ. կիր. 46.—Թախտն Տրդատայ. Վրդն. աշխ. (Ագրարատ 365)։*

=Պրս. تخت taxt *«գահ» բառն է, որի պհլ. ձևից հնագոյն փոխառեալ էր հյ.* տախտ *(տես այս բառը)։*

Բառարանիս մէջ **տախտ** *բառի տակ գրել եմ տես* թաղտ, *բայց մոռացել եմ յիշել այս բառը. Թերացումս և վերի տեղեկութիւնը յայտնեց Ր. Աւդալբէգեան, 1935 ապր. 18։*

ԹԱՄ *«թշնամի». ունի միայն ՀԲ, իբրև անստոյգ բառ. սրանից առնելով կրկնում են ԱԲ և ՓԲ յաւել։*

***ԹԱՄԱՇԱՅ** *«հանդէս, տեսարան». մէկ անգամ ունի Մխ. դտ. Հրտր. Բաստամեան, էջ 266 (չունին բառարանները)։*

=Պրս. تماشا tamāšā *«զբօսանք, տեսարան»։*

Ուղիղ մեկնեց Բաստամեան, անդ։

ԹԱՄԱՐԻՄ *«օրհնութիւն». ունի միայն Բառ. երեմ. էջ 115։*

ԹԱՄԲ, ի–ա *հլ. «համեմ» Ոսկ. մ. գ. 6. Բուզ. (գրուած է* թամպ *Զքր. սարկ. Ա. 17). «կենդանու ազդրը» Ա. Թագ. Բ. 24. Եզն. որից* թամբել *«համեմել» Մխ. դտ. Ուռհ. Կաղանկտ. «սանձել» Ճառընտ.* թամբաճարել *Բրս. մրկ.—բառիս երկու նշանակութեանց համար* Lidén, Arm. Stud. *էջ 44 համեմատում է հյ. բարձ և բարձք ձևերը և նախնական նշանակութիւնը համարում է «բարձր, ազդրը»։*

Տէրվ. Altarm. *41* թումբ, թմբիր, ըմբրիլ, սաամբակ *ևն ձևերին է կցում։ Հիւնք. ամպ բառից է հանում։* Lidén, Arm. Stud. *44 իբրև բնիկ հայ՝ կցում է հիսլ.* pamb *«ուռած, ակռած, յղի», հսլ.* tętiva *«լար», նորվ.* temba *«լցնել, խըցկել», լիթ.* tempiú *«հիւսել», լտ.* tempus *«ժամանակ» են բառերին, որ կրկնում են նաև* Walde *769 և* Persson IF 35, 208:

Գիւտ.—Սչ. թամբ, թամք, *Ալշ. Գոր. Երև. Ղրբ. Տփ.* թամք. *Մկ. Վն.* թամ[ի]. *վերջիններիս մէջ* թամք *(այս ձևով ունի արդէն Առաք. պտմ. 82) ծագում է* թամբ *յոգնակի ձևից՝ բ-ի անկումով. բոլորն էլ նշանակում են «համեմ». կորած է «ազդր» նշանակութիւնը։—Գաւառականների մէջ նոր կազմուած իմաստներ են՝ Խոջ. «լեռան գագաթի վրայ հարթ տեղ», Մշ. «սայլի ամբողջ կազմածը՝ բացի սռնից և անիւներից»։—Նոյն բառն է նաև գռ.* թաւ *«վէգի մէջքը, այն է ուռած մասը», որից էլ ունինք՝*

Փոխ.—Վրաց. თაფი *թաւի «վէգի մէջքը, ռուս.* жохъ, спинка у альчика». *(Զուբինով[2] 554, որ նոյնպէս համարում է հայերենից փոխառեալ)։*

ԹԱՄԲԱՍ *(գրուած նաև* բմբաս*) «ցնցոտի, քուրջ». ունի միայն Հին բռ. =Բառ. երեմ. էջ 115. որից* թամբաւեակ *Եփր. Թգ. 433. Բարուք. գ. 32. գրուած* թամբաւակ *Անկ. գիրք հին կտ. էջ 335.* թամբաւոց *Ոսկ. յհ. ա. 2 (էջ 44). երկուսն էլ նշանակում են «քուրջ, ցնցոտի, անարգ զգեստ»։*

Նշ՝ր «անարգ հանդերձ որպէս թամբ արկեալ *զանձամբ, կամ ծածկոյթ մինչև ի թամբն, այսինքն յազդերս... որպէս և* բէմպէ *է «հեյպէ»,* բէմպէլիք *«կէս կամ*

ամբողջ բևեռ գրաստու»։ Հացունի, Պատմ. տարազի 147 թամբ-հատ-նակ, *«թամբից կամ ազդերաց վրայ կտրուած՝ շատ կարճ հանդերձ»։*

ԹԱՄԲՈՒԿ *տե՛ս Թմբուկ։*

***ԹԱՄՈՒԶ** «մի տեսակ ծաղիկ է. adonis, տէմի դիւրէ». Նորերից յարմարեալ բառ է. Համմ. Յակոբեան, Արեւելք 1890 տար՛ 21.*

=Եբր. תַּמּוּז Tammūz *«տարեական և փիւնիկեան աստուածութիւն», որ համապատասխանում էր յն.* Adonis-*ին. և քանի որում նոյն ծաղիկը կոչուել է* adonis, *մերոնք էլ անուանել են* թամուզ։—*Աճ.*

ԹԱՄՊԱՐ *«բառակուսի վերնահանդերձ ատ հինան,* ricinum». *ունի միայն Քաջունի, Հատ. Բ. 519 և Գ. 76։*

ԹԱՅԻ *«մի տեսակ բոյս է» Գաղիան. Բժշ. բառ. § 764 «լտ.* atriplex, pes anserinus *կամ փրփրեմ, հոտոմ սպանախ», բառ Նորայր, Բառ. ֆր. 91 (տե՛ս անդ նաև բառիս վկայութիւնները) «ֆրանս.* arroche», *բառ Տիրաց.* Contributo § 105 *«լտ.* atriplex hastatum L»։

Patrubány *ՀԱ 1908, 246 լտ.* tālla *«ցուպ». Հալ.* talija *«դալար ոստ» ևն։*

ԹԱՅՐԱԹՈՆ *«ազգական, խնամի» Ոսկ. մ. բ. 10. եփր. Թու. էջ 241. գրուած նաև* բարաթոն *Վեցօր. ե. 85։*

Եաղբճեան, Արեւելք 1884 հոկտ. 17 ասում է թէ կապ չունի սանս. դաղր *«հաստող, նեցուկ, տան գլխաւորը, հայր» բառի հետ, այլ ծագում է սանս.* դաղրա *«այդր, անդր»,* դաղրադեա՛ *«նա որ անդ է, մերձակայ» ձևից։ Հիւնք. յն.* τε ἀτώδης *«զարմանալի, սքանչելի»։*

+ԹԱՆ *(ի հլ. բառ ՆՀԲ, թէև առանց վկայութեան) «ապուր» ՍԳր. Ոսկ. մ. գ. 17. որից* բանիկ *«խղճուկ ապուր» Եփր. պհ. Մանդ. Վրք. հց. Ա. 214.* բանեփեաց *Վրդն. պատմ. Չիակաթ Ծն. իե. 30.* ոսպնաբան *Վրք. հց. Ճառընտ. Լմբ. իմ.* խառնաբան *Բռ. առեփ. լհհ. նաև* բանահա՞տ *«բանից կտրուած, բան չուտող» Եփր. պհ. Մանդ. Օրբ. գաւառականների մէջ* բան *նշանակում է «կաթի մնացորդը՝ կարագը հանելուց յետոյ» և այս իմաստն են ցոյց տալիս հնից՝* բանուտ *«բերանը բանով կեղտոտած» Լծ. կոչ.* չորբան *(չունի ԱՔ) Տաթև. ձմ. կգ. և թերևս* բանահատ։

*=Բնիկ հայ բառ. ծագում է *բա <հնխ.* tā *«հալիլ, լուծուիլ» արմատից, որից նաև* բանալ *«թրջել». բառ այժմ բան նշանակում է բուն «թաց ուտելիք». Համմ. գւռ.* բայան *«ընդհանուր անուն կաթնեղէն բաների. ինչ. սեր, մածուն, կարագ, բան ևն. 2. հացի հետ ուտելու որևէ մի բան, խաթրխ»։ Աւելի ընդարձակ տես* բանալ։—*Աճ.*

Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ, յետոյ Տէր-Վիշ. Նախալ. 45 և 128, որոնք միացրին բանալ *բառին։* Karolides, Γλωσσ. σύγκρ. 99 *կապադովկ.* táni *«մածնաթան», յն.* θῆσθαι. θηλάζω. *սանս.* dhayami, *հրգ.* dadhi *«մածուն», պրս.* duγ *«մածնաթան» բառերի հետ։ Վերի մեկնութիւնը տուաւ Աճառ. MSL 20, 161։*

ԳԻՒ.—Ալշ. Ախց. Արբ. Գոր. երև. Հն. Խոյ. Խրբ. Կյ. Կս. Ղրբ. Մկ. Մշ. Մրղ. Կր. Ննխ. Շմ. Պր. Սեբ. Սլմ. Վն. Տփ. բան, *Ասլ.* բան, բա, *Տիգ.* բոն, *ՀՃ. Համշ.* բօն, *բոլորն էլ «կաթի կամ մածնի թան» նշանակութեամբ. իսկ Ակն. Ոզմ.* բան *«ապուր», Ջղ.* բան *և Ագլ.* բուն *«մածուն»։ Նոր բառեր են* բանաբանջար, բանագող, բանաբաթախ, բանաբբու, բանալի, բանապուր, բանաջուր, բանխիւս, բանխաշ, բանէշխ *կամ* բանիշխ, բանխաշ, բազկբան, մածնաբան *են։*

ՓՈՒ.—Կապադովկ. táni *«մածնաթան» (Karolides անդ), լազ.* բանի *«մածնաթան», Իվաբանա «թան շինելու աման», քրդ.* چورتان cortan *«քրդական կակուղ պանիր» (?) բառ* Justi, Dict. Kurde, *էջ 133,—էնկիւրիի Թրքախօս հայոց բարբառով* čörten *«չորթան» (Բիւր. 1898, 865), Սղերդի արաբախօս քրիստոնէից բարբառով* šrtan *«չորթան» (Բիւր. 1899, էջ 116), Թրք. գւռ.* پسکوتن päsküten *«բազկթան, բազուկով խառն թանապուր» (Յուշարձան 329 ա)։*

***ԹԱՆԱԳ** *(բառ ՆՀԲ ի հլ. թէև առանց վկայութեան) «երկաթի անագապատ թիթեղ» Լմբ. ժող. է. ուրիշ վկայութիւն չկայ։*

=Պրս. تنكه tanaga *«երկաթի կամ պղնձի բարակ թիթեղ». (նշանակում է նաև «տափակ ու բարակ անխմոր հաց»). ծագում է*

պրս. تنك tanuk, tunuk «անօսր, բարակ» բառից (=սանս. तनु tanu, तनक tanuka, յն. ταvυ, ταναὸς, լտ. tenuis, գերմ. dünn, ռուս. тонкій «բարակ, նուրբ»)։ Պարսկերէնից են փոխառեալ նաև թրք. تنكه teneke, արևել. թրք. تنكه teneke (ըստ P. de Court. Dict. turk-oriental), تونوكا tunuka (ըստ R. B. Shaw, A Sketch), չաղաթ. تونكه tüneke (ըստ Vambery, Čagataische Sprachstudien), իսկ թուրքերէնի միջոցով քրդ. تنكه tenuké, tanéka, նյն. τενεκές, ալբան. tenecé, սերբ. tenec'et, tanec'a, tenec'e, ռում. tinike «թիթեղ» ևն։

Ուղիղ մեկնեց ՆՀՐ։

+ ԹԱՆԱԼ (կար. բացի, հրմ. բա՛ց) «թրջել» ՍԳր. Ոսկ. Եփես. որից բանուիլ «թրջուիլ» Վստկ. 20, 213. բաց Մեկն. զևտ. Կանոն. բացանալ Կանոն. բացուրիւն Նար. բացուցանել Մամիկ. անբաց Խոր. Հռիփ. Լմբ. սղ. Յս. որդի. Նիւս. արտասուաբաց «արցունքով թրջուած» (նորագիւտ բառ) Պարսկանոն շար. էջ 164. նոյն արմատին են պատկանում նաև բաճ «ապուր» (տե՛ս այս բառը), բաճչ «փորհարուրիւն» (տե՛ս այս բառը), բօճ ի հլ. «տեղատարափ անձրև» Փիլ. յովն. 580. Պիտ. բօճըճկկեցի Վեցօր. 124=Շիր. հրտր. Պատկ. էջ 57, բօճուտ «անձրևոտ» Փիլ. լին. 12 (գալիս է պարզական *բա արմատից՝ -օճ մասնիկով. այսպէս՝ *բաուճ>բաուճ>բօճ, համմտ.ձօճ բառը)։

=Բնիկ հայ բառ՝ հնխ. tā- «հալիլ, լուծուիլ» արմատից, որ միւս լեզուների մէջ երևան է գալիս tāu, tāi, tuī, ինչպէս նաև bh, k ածականներով աճած tābh, tāk ձևերով. համմտ. սանս. tōyam «ջուր», օսս. thayun «հալիլ», յն. τήκω, դոր. τάκω «հալիլ», ταχερός «կակուղ, հալուկ», լատ. tabeo «հալել», tabesco «հալիլ, լուծուիլ», tabum «պակասեցնել արիւն, թոյն», tabes «թարախ», հսլ. tajǫ, tajati «հալիլ», talŭ «հալած, հղուկ», tina «ցեխ», ռուս. таять «հալիլ, լուծուիլ», тина «ցեխ», հբգ. douwen, dewen, dōan «հալիլ, լկիլ», հիռլ. tām, հհիւս. ϑa «ձիւնը հալուած գետին», հիսլ. ϑeyja «հալիլ», անգսք. ϑāwan «հալիլ սկսիլ», ϑān «թաց, խոնաւ, ջրալի», ϑīnan «խոնաւանալ», ϑwāenan «ոռոգել», ϑwīnan «կակղիլ, փափկիլ» (Walde 759, Boisacq 965, 970, Trautmann 312, 323, Pokorny 1, 701, Ernout-Meillet 968)։ Հայերէնի մէջ նոյն արմատը երևան է գալիս նաև tān-ձևով, որից յառաջացած են բան և բանշ. առաջինի համար ձևի կողմից համմտ. հսաքսոն. ϑān «խոնաւ, թաց, ջրոտ», երկրորդի համար իմաստի կողմից համմտ. յն. τῆκος «բանշ, փորլուծութիւն», կիմր. tail «կղկղանք», բրբր. teil «աղբ». հսլ. tina «ցեխ»։

ՆՀՐ լծ. լտ. tin'go «թրջել, նորկել»։ Canini, Et. étym. 78 օսս. don «ջուր, գետ», գնդ. dānu «գետ»։ Տէրվ. Նախալ. 45 բանալ և ընբանալ գնում է tak «ընբանալ, բանալ» արմատի պարզական ta- ձևից. համմտ. յն. ταχίς «ընթացիկ, արագ», τάκειν. τήκειν «հոսիլ»։ Հիւնք. բանաւ բառից։ Ուղիղ մեկնութիւնը տուաւ Meillet MSL 9, 154: Վերջին անդամ վերի ձևով Աճառ. MSL 20, 160, Թիրեաքեան, Արիահայ բռ. 167 պրս. تازه tāza «թարմ» բառից է հանում։

ԳԻՒՌ.—Ալշ. Ախց. երև. կր. Համշ. Մշ. Մրդ. Խրբ. Պլ. Ննխ. Ղրբ. Ոզմ. Ռ. Սեբ. Սլմ. Սչ. Վն. Տփ. բաց, Ասլ. բաց, բաս, Տիգ. բոց, Զթ. բօց, բոց, Հճ. բօց, որից էլ Վն. բացել «թրջել», Տփ. բացվիլ «թրջուիլ». նոր բառեր են բացան, բացանոռւն, բացիկ, բացկոտ, բացոռալ, բացմանալ։—Կերևի թէ այստեղ է պատկանում նաև գռ. բէն «խոնաւութիւն, թացութիւն» Բբ. Մն. Բլ. Կ. որից բէն առնել Բբ. «ցօղոռտ խոտեր շատ ուտելուց անասունների հիւանդանալը», բէն իջնել Կ. «կանաչ խոտերի վրայ ցօղ նստելը», բենոռտ Բբ. «խոնաւ», բենոռթիւն Բբ. «խոնաւութիւնից թրջուիլ», բենոիլ Բլ. «խոնաւութիւն ստանալ», բենոռուկ Բլ. «խոնաւացած», բէնութիւն Բլ. «խոնաւութիւն, թացութիւն». ատելի հնից ունինք առէն և բէն ձևով. «Ցօղ է հասարակ շաղն, որ առէն ևս ասի» էֆիմ. էջ 237. «Ձմեռն էր և բէն» (յիշատակարան 1473 թուից, տե՛ս Տաշեան, Յուց. էջ 448 բ)։ Եթէ

իրօք թէն=տէն *կապ ունի* բանալ *արմատի հետ, այդ դէպքում հայերէնից է փոխառեալ։*

Փոխ.—Վրաց. ტენი տենի *«խոնաւութիւն»,* ტენიანი տենիանի *«խոնաւ»,* ტენიჯია տենիջիա *«մի տեսակ ճճի,* кавсякъ» *(Զուբինով[2] 1218)։*

ԹԱՆԱՔ (սեռ. ի, *ըստ ՆՀԲ-ի* ի–ա *հլ. բայց առանց վկայութեան) «թանաք, մելան» Սերբեր. Ճառընտ. Ուռհ. Մխ. ապար. որից* բանաքաման, բանաքոտ, բանաքոտել *(նոր բառեր). այս բոլոր ձևերը այժմ գործածական են միայն արևելեան գրականում, իսկ արևմտեան գրականը գործածում է յունարէնից փոխ.* մելան *և* կաղամար։

ՋԲ համարում է արաբերէն, բայց արաբերէնում այսպիսի բառ գոյութիւն չունի։ ՀՀԲ և Տէրվ. Altarmen. *էջ 5* բանալ *բայից։ Հիւնք. յն.* δόναξ *«եղեգ գրիչ»։*

ԳԻՒ.—Ագլ. Երև. Մրզ. Սչ. Տփ. բանաՙ, *Մկ.* բանաՙ, *Սլմ. Վն.* բոնոՙ, *Ագլ. Շմ. Ջղ.* բանակ, *Գոր. Ղրբ.* բոնոկ.*—Ներսէսովիչ, Բառ. լտ. հյ. էջ 48ա* բանաՙ *բառի մօտ ունի նաև* թէնէքէ *ձևը՝ որ պէտք է լինի լեհահայ գաւառական մի ձև։*

Փոխ.—Ուտ. t'anak *«թանաք»,* t'anakum leker *«թանաքամանը»։*

***ԹԱՆԳ** *«թամբակալ, դրասաններն թամբի գօտին» Բռ. առեփ. լեհ. (երկու վկայութիւն միայն ունի)։*

=Պրս. تنگ tang *«թամբակալ՝ զոր առնեն վասն ամուր ունելոյ նորա զթամբն ի վերայ ձիոյ». սրանից է փոխառեալ արաբ.* تنج ṭanj *«թամբակալ»։ Պրս. բառի բուն իմաստն է «անձուկ, նեղ», փոխաբերաբար և լայնաբար «նեղութիւն, բարկութիւն. 2. լեռան կիրճ. 3. իւղ հանելու մամուլ. 4. բեռան մի հակր» և վերջապէս «թամբակալ». տե՛ս և* բանկ։*—Հիւրշ. 265։*

Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ, որից յետոյ Lag. Arm. Stud. § 840։

ԹԱՆԳ *«մեծագին» տե՛ս* Թանկ։

***ԹԱՆԳԱՐ** *ի–ա հլ. «վաճառական» Սիր. խր. 5 (սեռ.* բանկարաց*). Արծր. Հրտր. Պատկ. էջ 99. Վրդ. պտմ. լդ. «պանդոկապետ. գինեպան» Սիր. իգ. 28. որից* բանգարական *«վաճառականական, թանկագին» Ագաթ. բառս գրուած է նաև* բանկար *Սիր. խր. 5,* բանկանգար *(ուղղելի է* բանգար*) Սեր. Հրտր. Պատկ. էջ 104, 203։—(Հին բռ. մեկնում է «ճշդողք կամ ճգնողք». ինչ որ սխալ է։ Բառ. երեմ. ևս էջ 115* բանկար *«ճգնօղ»)։*

=Ասոր. ܬܓܪܐ taggārā, *մանդայ.* taṇgarā, *արաբ.* تاجر tājir, *յգ.* تُجّار tujjar, *ասորբեռտ.* tamkāru, tamgāru. *այս բոլորը նշանակում են «վաճառական»։—Հիւրշ. 303։*

ՆՀԲ յիշում է միայն արաբ. բանիր, *յգ.* բիւնար*։ Էմին.* Ист. Вардана, *էջ 103 պրս.* tuvāngar *«ուժեղ, զօրեղ» բառից։ Ուղիղ մեկնութիւնը տուաւ նախ* Lag. Armen. Stud. § 841*։ (Ըստ* Jensen՝ *փոխառութիւնը վերագրում է հաթիեան շրջանին)։ Պատկ. հրտր. Սեր. էջ 203 մեկնում է* բանկանգար*=պրս.* توانگر tuvāngar *«հարուստ», իսկ* բանգար*=պրս.* تانگر tāngar *«սափրիչ»։*

ԹԱՆԳՈՒՅԶԵԼ *«ամօթից կամ վախից քաշուիլ, փախչիլ» (ըստ ՆՀԲ) կամ «աշտեղ, ակնածիլ» (ըստ ՋԲ). Յոբ. ժգ. 8 (յն.* ἢ ὑποστελεῖσθε *վախից կամ ակնածանքից քաշուիլ). Ոսկ. յհ. բ. 27, էջ 794 (խորշանօք և թանդուզելով)։ (Բառ. երեմ. էջ 115 մեկնում է «շաղաբանել, ջօրանալ, պատճառել»)։*

Տէրվ. Altarm. *106 և Նախալ. 113 կցում է սանս.* staj, *յն.* στέγω, *լիթ.* stegti, *լտ.* tegere, *հյ.* թաքնուլ, թաքչիլ *են ձևերի հետ՝ իբր հնխ.* stag *«ծածկել, պահել» արմատից։ Թիրեաքեան, Արիահայ բռ. 166 պրս.* tan *«մարմին»+* گریز girīz *«փախուստ» բառերից։*

[ԹԱՆԹ *«նուրբ թաղանթ կամ թափանցիկ թերթ». մէկ անգամ ունի Անան. նին. «Մարգարէն ընդ թանթ ապակւոյ ընդ աչս կիտին տեսանէր զմեծամեծ գործս Աստուծոյ». ուրիշ վկայութիւն չկայ։ Անշուշտ* թաղանթ *բառի սխալ գրչութիւնն է, ինչպէս ունի նաև Հ. Մարգիսեանի հրատարակութիւնը՝ Անան. Բրգ. էջ 6 ծան։*

ՆՀԲ համեմատելով պրս. تنته tanta *«սարդի ոստայն» բառի հետ՝ հասկա-*

նում է բանք «ոստայն սարդի, պատգուած, ձգուած, վարագոյր են»։]

ԹԱՆԻ անստոյգ նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Տաթև. ամ. 233 «նոքա՝ որ մտադիւրութեամբ ունկն դնեն չարախօսաց, այնպէս է՝ որպէս թանլիք տան նոցա՝ որ աւելի միս ուտեն. զի թէ դժկամակութիւն առնէին, ոչ իշխէին չարախօսել»։— Թուի թէ նշանակում է «հացկատակ»։

***ԹԱՆԿ** կամ **ԹԱՆԴ** «մեծագին, սուղ» Տաթև. ամ. ճբ. ամ. 109, Ուտհ. (առ Ստ. լեհ.) «ծանրաշարժ» Ռուս. ստեփ. լեհ. որից **բանկութիւն** «թանկ լինելը» Շիր. հացաբանգութիւն Մխ. այրիվ. 84. **բանգարան** «գանձարան» Յհ. կթ.—նոր գրականում արևելեան բարբառը միայն գործածում է **բանկ** կամ **բանգ** «մեծարժէք», որից **բանկանալ, բանկացնել, բանկութիւն, բանկարժէք, բանկնոց** կամ **բանկանոց**, բայց արևմտեան բարբառն էլ ունի **բանգարան, բանգարանապետ, բանգարանական** (միշտ գրուած գ-ով, թէև **բանկագին** գրում է կ-ով)։

=Պհլ. 𐭲𐭠𐭭𐭪 tang «նեղ», մանիք. պհլ. תנג tang (Salemann 3AH 8, 128), պրս. تنگ tang, քրդ. tenk, բելուճ. tank. աֆղան. tang, գնչ. tang, tank, հինդուստ. tung, բոլորն էլ «նեղ» նշանակութեամբ։ Բայց այս նախնական նշանակութիւնը յետոյ ձևափոխուելով դարձաւ նաև «քիչ, հազուագիւտ», որից էլ «թանկ». այսպիսի իմաստ են պարզում պրս. tang-reš «սակաւամօրուս, քարց», tang-dast «չքաւոր» (բառացի «սակաւաձեռն»), tang-yāb «հազուագիւտ, սակաւագիւտ», tang-sāl «երաշտ, չորային տարի» (գւռ. **բանկութեան տարի**), իսկ պրս. تنگی tangī «նեղութիւն, անձկութիւն» բառը «սով, թանկութիւն» իմաստով գործածում է Շահն. թ. 21 همان بود تنگی بود اندر جهان hamān būd ki tangi būd andar jihān «Եւ եղաւ որ սով լինի աշխարհում». Համմտ. նաև հյ. **սուղ** «կարճ, նեղ» և գւռ. «թանկագին, մեծագին», **սղել** «դինը բարձրանալ, թանկանալ»։—Պրս. բառի բուն ծագումը տե՛ս **բանձր** բառի տակ (Horn § 398)։

Ուղիղ մեկնեց նախ Տ! Martin, *անշ. նշ.*։—Հինք. հյ. **դանգ** կամ պրս. **թէնկ** բառից. «կալչի որ որպէս և կամի»։ Patrubány SA 1, 197 *իբ.* tenkú «բաւականանալ», SA 2, 13 *պրս.* teng:

Գիւր.—*Ախց. Կր.* **բանկ**, *Ալշ. Գոր. Երև. Մշ. Մրղ. Ռ. Ննխ. Շմ. Ջղ. Ոմ. Սլմ. Սչ. Տփ.* **բանգ**, *Մկ. Վն.* **բանգ՝**, *Ղրբ.* **բանգ՝**, **բոնգ՝**, *Ոզմ.* **բանգ՝**, *Համշ.* **բօնգ**, *Ագլ.* **բունգ** (*որից* **բրնգա՛նիլ** «թանկանալ»)։

***ԹԱՆԿԱ** «մի տեսակ փոքր դրամ, ստակ», **բրնգա՛նիլ** «թանկանալ»)։

=Արևել. Թրք. تنكه tanka «մի տեսակ արծաթեայ դրամ» (ըստ P. de Courteille, Dict. turk -or. *արժէր մօտ 76 սանթիմ. ըստ* Будаговъ *1, 381 այսօր էլ գործածական է Միջին Ասիոյ մէջ. Խիվայում արժէ 15 կոպ.*). —սրանից է նաև պրս. تنگه tanga «մի տեսակ պղնձեայ կամ ոսկեայ դրամ», որ S! Martin, Mémoires II 392 *մոնգոլերէնից ծագած է համարում*։—*Հիւբշ. էջ 266*։

Ուղիղ մեկնեց նախ Տ! Martin, *անշ. նշ.* դնում է **դանկ** բառից։

ԹԱՆԿԱՆԴԱՐ *տե՛ս* **Թանգար**։

ԹԱՆԿՈՒՅԻ «անկար, փորանկեալ» (պատմուճանի համար ասուած). *մէկ անգամ ունի Գնձ. աբգարու.* «Եւ գպատմուճանն թանկուզի՝ առաքեցեր որդւոյն կուսի»։

+**ԹԱՆՉՐ** (-ձու, -ձունք. -րոյք *Վեցօր. 97, յեռնաբար* -րու (*ինչ. Նար. էջ 227*), -րոյ, -րունք) «թաւ, հաստ, ստուար» Գ. մակ. ե. 6. *Վեցօր. Ոսկ. ես. Ագաթ.* որից **բոնձրանալ** *Ժող. ժբ. 5. Ոսկ. երր. Ագաթ.* «խստանալ» *ՍԳր.* **բանձրագոյն եղն.** *Ոսկ. յհ. ա. և բ.* **բանձրալեզու եզեկ. գ. 6. բանձրախիտ** *Իմ. ժէ. 12. Ոսկ. ես.* **բանձրախուռն** *Բուզ. Ագաթ.* **բանձրամած** *Ոսկ. ես. և Ա. Թես. Թ.* **բանձրամայրի** *Կոչ. 219.* **բանձրամարմին** *եղն.* **բանձրամիտ** *Ոսկ. ես. և մ. բ.* **բանձրայատակ** *Ագաթ.* **բանձրութիւն** *ՍԳր. ևն*։

=*Բնիկ հայ բառ, որի ցեղակիցներն են սանս.* तञ्च tañč तनक्ति tanákti «պնդել, ամրացնել, սեղմել, մածնուլ, թանձրացնել», պրս. تنجیدن tanjīdan «փոտին պինդ քաշելով ամրացնել», تنگ tang «նեղ» (միւս իրանեան հոմանիշ ձևերը տե՛ս **բանկ** բառի տակ), գնդ. 𐬙𐬀𐬵𐬐𐬀 taxma- (< *tŋkmo-ից) «քաջ, ուժեղ, գօրեղ». tąšyâ

«զօրեղագոյն», tančišta- «ամենազօրեղ», լիթ. tankus «թանձր, խիտ. 2. յաճախ», գոթ. ga-þeihan, գերմ. gedeihen «աճիլ, զարգանալ», մրգ. dīhte, գերմ. dicht (<*terkto- ձևից) «թանձր, խիտ» անգլ. tight «պինդ, հաստատուն, սերտ», իսլ. técht «մածեալ, թանձրացած», co-técim «մածնուլ», հհիւս. þéttr «խիտ» են (Trautmann 313, Kluge 94, Pokorny 1, 725, 727): Այս բառերը երևան են հանում հնխ. tṇkú-, որ հայերէնի մէջ պիտի տար *թանգր. իսկ մեր թանձր բառը ծագում է հնխ. tṇg'hú- ձևից:— Հիւբշ. 448:

Peterm. 62 լծ. հյ. ծանր: Պատկ. Изслед. էջ 42 լտ. densus «խիտ» բառի հետ ուղիղ մեկնութիւնը տուաւ նախ Müller SWAW 42, էջ 252՝ համեմատելով գնդ. tančišta ձևի հետ: Նոյնը նաև Justi, Zendsp. 131 և Հիւբշ. KZ 23, 29: Bugge KZ 32 (1893), 69 մերժում է այս մեկնութիւնը՝ թ և ձ ձայնների անյարմարութեան պատճառաւ: Հիւնք. լտ. densus ձևից: Bartholomae BB 17 (1891), էջ 92 թանձր մերժում է կցել լիթ. tankus բառին, և միացնում է գնդ. taxmō բառին: (Նոր քննութեանց համաձայն լիթ. tánkus և գնդ. taxma- նոյն են. տե՛ս Trautmann 313): Մառ, Грам. др. арм. яз. էջ 32 հայերէն բառի հին ձևը համարում է *թանր, ուր յետոյ ներմուծուելով ձ՝ եղել է թանձր: Scheftelowitz BB 28, 307 և 29, 18 հսլ. tęžĭkŭ «ծանր», հիսլ. þungr «ծանր», հիոլ. 'daingen «հաստատ, պինդ» բառերի հետ՝ հնխ. tənghyu- ձևից:

Գիւռ.—Ալշ. Գոր. Երև. Ղրբ. Մկ. Մշ. Ոզմ. Ջղ. Վն. թա՛ՆԹր, Ախց. Կր. թաՆԹր, Տիգ. թա՛ՆԹրո, Ննխ. (գիւղերում) թա՛ՆԹրո, թաՆդրո «հաստ», Ագլ. թո՛ւՆԹր, Համշ. թօՆԹր «հաստ, կոպիտ», Զթ. թօ՛ՆԹր, թոՆԹր, Սչ. դ'ռա՛ՆԹր, Սեբ. թաւրզր, Խրբ. Ռ. թարզ, Ակն. թօրզ, թօրզր, Ասլ. թէ՛օրզր, Պլ. (միայն հնչրի մօտ) թարզր, Հճ. թօր:

+ԹԱՆՁ, ի հլ. «փորհարութիւն, փորհարինք» Օր. իր. 27. Գծ. իր. 8. Եփր. Թգ. 365. որից թանչակալ Եւս. քր. բ. 37. Անան. ժմնկ. 26:

=Բնիկ հայ բառ՝ հնխ. tā-n «հալիլ, լուծուիլ» արմատից՝ չ մասնիկով. աւելի ընդարձակ տե՛ս թանալ:—Աճ.

Նշխ լծ. Թրք. սաՆԹր «խիթք»: Հիւնք. պրս. գլՆԹել, Թրք. սաՆԹր «խիթք»: Վերի ձևով մեկնեց Աճառ. MSL 20, 161: Թիրեաքեան, Արիահայ բռ. 166 պրս. تخیدن tanǰīdan «շաղուել, գալարել, փաթաթել»:

⊙ԹԱՆՁԵԼ «յօրանջելիս գանազան ձայներ հանել» Ոսկ. Եփր:

=Բնաձայն բառ՝ պարզական թ արմատից. աւելի ընդարձակ տե՛ս թաչել:—Աճ.

Գիւռ.—Ղրբ. թանչիլ, թՆչէլ «հևալ». Նոր բառեր են՝ թանչիկ գալ Դվ., թանչոց տալ Ղրբ., թանչին տալ Ղրբ. Ջղ., թանչոց ընկնել Ղրբ. «ուժասպառ հևալ (յոգնութիւնից, շունչը կտրելուց են)». կրկնականն է թՆչրնչել Ղրբ:

*ԹԱՆՆՈՒԻ «չնաշխարհիկ, մեծագին». Նոր բացիւտ բառ, որ գտնում եմ գործածուած Վրդն. առ. 311:

=Պրս. خسوسی tansux «նշանակէ զայնպիսի իր, որ իցէ յոյժ սակաւագիւտ և անՆման, և կարի պատուական և անհանգէտ». արաբացած ձևն է تسوق tansūq. տե՛ս և թէնսուխ:—Աճ.

ԹաՆԹԻԵ, ո հլ. «մի տեսակ չորթանապուր. տճկ. թարխանա». ունի միայն Փր. աւանդուած չէ հին մատենագրութեան մէջ. շինուած է նոր հեղինակների ձեռքով՝ թան «մածնաթան» բառից:

ԹԱՆՑ տե՛ս Անց:

*ԹԱՇԱՆՈՒՃ «ջղաձգութիւն». միջին հյ. բժշկական բառ, ինչպէս ունի Մխ. բժշ. 12 և 142 «Իւր երակն ի թաշանուճի նման լինի. Ջղերոյն յիրար գալն և թաշանիշն (կարդա՛ թաշանիչ) և սfpայն»:

=Արաբ. تشنج tašannuǰ «ջղաձգութիւն»:—

Ուղիղ մեկնեց Seidel, հրտր. Մխ. հեր. § 63:

ԹԱՇԿԻՆԱԿ, ի–ա հլ. «քրտինքը սրբելու շոր» Գծ. ժթ. 12. Կոչ. 389. 412. Լմբ. ատիպ.

աստում է նաև **բարշիճակ** *Հին բռ. Մխ. ապար. (որ ՆՀԲ համարում է ռամիկ ձև). արդի գրականում ընդունուած է միայն* **բաշկինակ** *ձևը և նշանակում է «քիթ սրբելու շոր» Ղարաբաղում գանազանում է* **ձեռի բաշկինակ** *(քիթ սրբելու համար) և* **գլխի բաշկինակ** *(Թիֆլիսի տարազով կանանց գլխին կապելու համար). վերջինիս հետ հմմտ. «Բաշկինակաւն զոր ընդ գլուխն իւր էր ածեալ». Բուզ. 225։*

*Հներից Յայտմ. օգ. 16 համարում է ասորի բառ. «Հայք զաստառակ ասեն, յոյնք մանդիլ, ասորիք բաշկինակ և հրեայք վարշամակ»։—ՀՀԲ շինում է *բաշկէն ձևը, որի նուագականն է դրնում* **բաշկինակ**։ *ԳԴ պրս.* دژک dažak, dižak *«բաշկինակ» բառի հետ։ Նոյնը նաև ՆՀԲ և Հիւնք։—*Müller WZKM 10, 354 *հնխ.* tarš *արմատից (հմմտ. սանս.* tarṣ *«չորանալ»,* tarṣayāmi *«չորացնել», յն.* τέρσομαι *«չորանալ», լտ.* torreo*) շինում է հպրս.* *taršikaina *«չորացուցիչ», որ պիտի տար պհլ.* *tašikēnak *և սրանից էլ հյ.* **բաշկինակ**։ *Հիւրշ. 512 անհաւանական է համարում։*

ԹԱՇՏ *տե՛ս Դաշտ (խազը)։*

●**ԹԱՋԵԼ** *«շուտ շուտ թուխակի նման արտասանել» (աղօթքի համար ասուած) Մծբ. ուրիշ վկայութիւն չկայ։ Նոյն արմատին են պատկանում նաև՝* **բաճչել** *«նոր արթնացած ժամանակ յօրանջելիս զանազան ձայներ հանել» Ոսկ. ա. տիմ. ժգ. Եփր. խր. էջ 225.* **բառաչ** *«հառաչանք, ախ քաշելը» Լմբ. սղ. որից* **բառաչել** *«հեծել» Բրս. մրկ. 372. Լմբ. սղ.* **բառաչումն** *Նար. էջ 245. Նիւս. երգ.* **բառաչանք** *Լմբ. սղ.* **բառաճչ** *«ողբումն, հառաչանք» Նար. էջ 53, 75. Լմբ. սղ.* **բառաճչել** *«հառաչել, ախ քաշել» Սեբեր. 196. Մաշկ. «յօրանջելու ժամանակ ախ քաշել» Ոսկ. ա. տիմ. ժդ. «զկռտալ» Մանդ. Կանոն. էջ 49.* **բառաճչաճ** *Լմբ. սղ.* **բառաճչակուլ** *Ուռ. 343։*

=Բոլորն էլ բնաձայն բառեր են և կազմուած են p *պարզ ձայնից,* n *սաստկականով և* ճ, չ *ածանցիչներով։—Աճ.*

Հիւնք. հանում է կառաչ բառից։ Վերի ձևով մեկնեց Աճառ. ՀԱ 1899, 203—4.

[ԹԱՊՈՒԹ. *մէկ անգամ ունի Կանոն. «Առեալ դնի ի դրճի, այլ և կապէն ի բազուկս և ի պարանոցս մանկանց». այս հատուածի ի դրճի բառի տեղ ուրիշ ձեռագրեր ունին ի թապուր։ Բառս չունի ՆՀԲ առանձին, բայց յիշում է դրճի բառի տակ և ասում է գրչի համար «զի թերևս ընթեռնոյր ի դարգճի». (այսինքն թէ ի դրճի բառը ի դարգճի էր կարդում)։ Սրանից հետևում է, որ ՆՀԲ* **թապուր** *բառը հասկանում էր «դագաղ»։ Ջբ դնելով «թապուր տե՛ս դրճճ» և դրճի բառն էլ մեկնելով «տուփ բժժանաց», ուրեմն* **թապուտ** *հասկանում է «տուփ բժժանաց»։ Աբ էլ* **թապուր** *և դրճի միացնում է և որովհետև դրճի մեկնում է «կծիկ հմայական», ուստի այսպէս է հասկանում նաև* **թապուր** *բառը։ Սխալ են* **թապուր** *բառին տրուած այս երկու նշանակութիւնները («տուփ բժժանաց» և «կծիկ հմայական»). և պէտք է ընդունել միայն* **թապուր** *«դագաղ»։—Բացատրութիւնը տե՛ս* **թափուտ**։]

+**ԹԱՌ** *(գրուած նաև* **դառ**) *«հաւի կամ թռչունների թառելու, հանգչելու, ինչպէս և պտուղ կախելու յատուկ ձող» Վստկ. 132, 134. որից* **բառիլ** *«թռչունների կամ հաւերի մի տեղ իջնել կանգնելը». այս ձևը հին մատենագրութեան մէջ աւանդուած չէ և գտնւում է միայն ներկայ գրականում և գաւառականներում։ Կայ նաև միջ. հյ. գրականութեան մէջ՝ բատ Նորայր, Բառ. ֆր. 171 բ. այսպէս նաև 1757 թուի մէկ յիշատակարանում (Հրտր. Դիւան, հտ. Ժ. 196)։ Գաւառականների մէջ կան նաև հետևեալ բառերը և դարձուածները.* **բառ լինել** *«թառիլ. 2. մարդոց մի բարձր տեղ ելնել նստելը»,* **բառ տալ** *«բարձր տեղից կախել. 2. աչքը վրան յառել»,* **բառահառ լինել** *«թառից ցած իջնել»,* **բառեզնել** *«մի բարձր տեղից ցած ընկնել»,* **բառելոյն** *«մի բարձր տեղ հաստատուած հաւանոց»,* **բառ-բառ** *«վեր բարձրացած կամարաձև (յօնքեր)»,* **բառիկ** *«փոքր թառ»։*

=Բնիկ հայ բառ՝ հնխ. tars *կամ* trs- *արմատից. հմմտ. յն.* τερσός, τερρός *«վրան բան փռելով չորացնելու կազմած»,* τρασιά, ταρσιά *«պտուղ, թուզ, պանիր ևն չորացնե-*

լու յատուկ ջերմոց», հրգ. darra, նբգ. darre «պատուղ չորացնելու ջերմոց», նորվ. tarre «Malz չորացնելու ձողաշարք», շվէդ. tarre «բաղանիսում թաց շորերը չորացնելու կազմած, առիքի տակ շինուած՝ ձողէ կամ տախտակէ կազմած՝ ուտելիղէններ պահելու, շոր կախելու համար» են։ Այս բոլոր բառերը ծագում են հնխ. trs- արմատից, որ բուն նշանակում է «չորանալ» և որից ծագած են հյ. բառամ և բարշամ ձևերը (աւելի ընդարձակ տե՛ս բառամ բառի տակ)։ Թառ բառը ներկայացնում է պարզ արմատը հայերէնի մէջ, մինչդեռ բառամ և բարշամ աճած ձևեր են։

Նշմ հանում է դարել դաղարել բայից։ Justi, Zendsp. *153* գնդ. dāuru «փայտի կտոր», սանս. dâru, պրս. dār «ծառ» ձևերի դէմ դնում է հյ. դառ, բառ, իսկ նոյնը, Dict. Kurde քրդ. ئار tar «պատգարակ, բարամբոնք» բառի հետ համեմատում է հյ. բառ և վրաց. ṭarի «կոթ»։ Karst, Յուշարձան *407* սումեր. tar «հատատել, զետեղել»։ Ուղիղ մեկնութիւնը տուաւ Lidén, Arm. Stud. *էջ 45—46* (որ ընդունում է նաև Walde 786): *Թիրեաքեան, Բազմ. 1913, 340* կցում է Թրք. բառ բառի հետ՝ որ եթէ իրօք գոյութիւն ունի, հայերէնից փոխառեալ պէտք է լինի։

ԳԻՒՂ.—Ալշ. Ախց. Ասլ. Գոր. Ագլ. Երև. Էր. Կր. Համշ. Ղրբ. Մկ. Մշ. Նախ. Շմ. Ոզմ. Պլ. Ջղ. Ռ. Սեբ. Սչ. Վն. Տիգ. Տփ. բառ, Ալմ. բառ, Հճ. bor. բոլորն էլ նշանակում են «հատի համար հատատուած ձող».—բայց Ջղ. նշանակում է նաև «պատի վրայ հատատուած տախտակեայ բարձր դարակ, բռաֆ», Երև. «դառիվեր, բարձր տեղ»։ Առաջինը կարծում եմ թէ բառ բառի մի նոր առումն է, իսկ երկրորդը պէտք է փոխառեալ դնել պրս. تار tār, تارک tārak «դագաթ, ծայր» բառից։

ՓՈՒՒ.—Վրաց. თარო բառո «դարակ, полка, поставецъ», ճիշտ նոյն իմաստով՝ ինչ որ Ջղ. բառ. ուս. t'är «հաւի թառ», t'ärar çesun «հաւի թառելը»։

=Բնիկ հայ բառ, որի հետ համմտ. հսլ. stigno «զատոսկր», նսլ. stégno «բարձք», ռուս. стегно «զիստ, բարձք», լիթ. steigara «անդամ, յօդ, մարմնի յօդակապ», կելտ. *toigʷes, որից հիռլ. tóeb, tóib, նիռլ. taobh, կիմր. կորն. բրտն. tu «կողմ»։ Հայերէն ձևը կարող է գալ հաւասարապէս հնխ. toigno, teigno, stoigno, steigno ձևերից։ Նշանակութեանց տարբերութեան համար համմտ. լտ. armus «ուս, թիկունք, անասունների բարձք» և հիռլ. írmá «անասունների առջևի ոտքը», հյ. առմուկ. տե՛ս նաև վարը՝ մէջք, համակ, բուշ բառերի տակ։ (Տե՛ս Pokorny 2, 614, որ ընդունում է Lidén-ի մեկնութիւնը (s)teig 2 «ուս, թև» արմատի տակ)։

Schröder, Thes. 46 արաբ. تكا takā ձևից փոխառեալ է դնում։ Klaproth, Asia polygl. 1823, էջ 104 օսս. tiünč: ՆՀԲ լծ. լտ. tergum «կռնակ»։ Մսեր մագիստրոս, Ճոռաքաղ 1861, էջ 316 իբր թիակումք: Տէրվ. Altarm. 41, 88 և նախալ. 54, 113 թակ, թակաղ ձևերի հետ՝ հնխ. stag «հրել» արմատից. համմտ. լատ. tango «դպչիլ», գոթ. stiggan «հրել», սանս. tunja «խփել, հրել»։ Հիւնք. պրս. թէֆիէ «նեցուկ, յենարան»։ Ուղիղ մեկնութիւնը տուաւ Lidén, Arm. Stud. 31:

Գիհ.—Ալշ. Մշ. Տփ. թիկուճ, *Մկ.* թիկուճ՝ *«կռնակ»*, *Սլմ.* թիկուճ *«հագուստի կռնակը»*, *Ղրբ.* թե՛գ՝իւճ *«կռնակ»*, *Խրբ. Սեբ.* թիգուճ *երկու նշանակութեամբ էլ գործածական. ինչ.* թիգուճս կցաւի *«ուսերս ցաւում են»*, թէվ-թիգուճ *«օգնական, օգնութիւն»*: *Նոր ձևեր են՝ Երև. Տփ.* թինգր տալ, *Ղրբ.* թէյնը տալ *«յենուիլ, կռթնիլ»* (<թիկն տալ), *Շմ.* թիգ՝նոմէչ *«թիկնամէջ»*, *ինչպէս նաև* թիկնել *Երև. Վն.*, թիկուճախառն *Երև.*, ճաստաթիկուճ *Նբ*:

Թեկոնիկ *տե՛ս Թևէ*:

*Թեկոնիզմ *«համբերութիւն». ունի միայն Բառ. երևմ. էջ 117*:

=*Ասոր.* ܬܩܠܐ teqlā *կամ* ܬܩܝܦܐ tequie *«բեռ, ծանրութիւն»*, *որ նոյն է ինչ որ եբր.* תְּקֹל t'ql *«կշռել»*, *արաբ.* ثقل ṯql *«ծանրութիւն, բեռ»*, ثقلت ṯiqlat *«ծանրութիւն, նեղութիւն»*:—*Աճ.*

Թեղ *«դէզ, շեղջ, կոյտ»* (*գրուած նաև* դեղ, դէղ) *Սիր. լբ. 22. Նար. խրատ. Պատմ. ԺՀ դարից (Հրտր. Դիւան ժ. էջ 109)*:

Նշ՛ր պրս. տէլ՝ *որ գոյութիւն չունի*: Justi, Dict. Kurde, *էջ 104 քրդ.* ڵێ te-leh *«ծեծուած և կուտուած ցորենն» բառի հետ (Քրդ. այս բառը պէտք է կցել պրս.* ڵ tal *«կոյտ, շեղջ» բառի հետ. Համմ. Շահնամէ ԺԳ. տող 1517.* میان تل خستگان اندرون mēyān-i tal-i xastagān andarūn *«վիրաւորների կոյտի մէջ»*: *Պարսիկ բառիս ծագումը անյայտ է, եթէ չէ փոխառեալ արաբ.* تلّ tall *«բլուր» բառից)*: Ղափանցեան, *Տեղեկ. գիտ. ինստիտ. Բ. 82 սեմ.* թիլ *«բլուր» բառի հետ*:

Գիհ.—Ալշ. Մշ. Ոզմ. Սլմ. Վն. թեղ, *Երև. Խոյ. Մկ.* թէղ *«կամնած, բայց դեռ չարդր չմաքրած ցորենի դէզ». (Խոյ.* թէղ է կոչւում *նաև մանելու պատրաստ մաքուր բրդի դէզը)*: *Նոյնից ունինք* թեղ տալ *«չարդը կալի մէջտեղը հաւաքել»*, թեղը հանել *Բիւթ. «հրնել»*, թեղել *«կամնած ցորենը դիզել»*:

Թեղթ *«թէյ, չայ». այս բառը գիտէ միայն Կ. Սարաֆեան, Բանալի գիտութեան, Սանկտպետերբ. 1788, էջ 53. որ և էջ 238 գրում է* թեղտ:

+Թեղի *(որ և* թեղեայ *ծառ) «պաղի, կընձնի, լտ.* ulmus, *ֆրանս.* orme, *տճկ.* qaraağaç, ղարաղաչ *» (Արթինեան, Ածաշնչի տունկերը, էջ 141) Գաղիան. Բժշ. Յայտմ.— սրա հետ նո՞յն են արդեօք* թեղիտակ *«սպիտակ տուղտ» Վստկ. էջ 206 և* թեղանի տակ *«անծանօթ մի բոյս» Բժշ. (ըստ ՀԲուս. § 780)*:

=*Բնիկ հայ բառ՝ հնխ.* tel- *ձևից, բուսանուանական ի մասնիկով: Սրա հետ նոյն են լտ.* tilia *(յառաջացած *teliā ձևից) և միոլ.* teile *«թմբի, լորի»* (Walde 779, Boisacq 821): *Նոյն լտ. բառից է փոխառեալ յն.* τιλιαι *«բարտի»*:—*Այս բառին շատ նման է հնչում յն.* πτελέα *«կնձնի» (նպիդար.* πελέα*), որի նախաձայն* πτ *անորոշ է և դժուարութիւն է յարուցանում: Առհասարակ բնդունուած է բաժանել լտ. *teliā ձևից (որով և հյ.* թեղի *ձևից) և միացնել լտ.* populus *«բարտի, կաղամախի» (որից միլտ.* papulus, *գերմ.* pappel, *անգլ.* poplar, *ֆր.* peuplier, *իտալ.* pioppo, *հսլ.* kopolĭ, *լիթ.* tāpalas), *հբգ.* fëlwa, fëlawa *«ուռի», օսս.* färwe *«aune, erle, ольха, լաստենի» բառերին* (Walde 600, Boisacq 820, Kluge 360):—*Աճ.*

Bugge KZ 32, 39 *ցեղակից է համարում յն.* πτελέα *հոմանիշին*: Brockelmann, *Ուս. փոխ. բառից (Թրգմ. Տաշեան), էջ 100 փոխառեալ է համարում նոյն յն. բառից*: *Հիւբշ. 375, 449 մերժում է յոյն բառի ցեղակցութիւնը, բայց փոխառեալ էլ չի դնում: (Ուստի սխալւում են* Walde 779 *և* Boisacq 821, *որոնք ասում են թէ Հիւբշ. (անդ) հայ բառը յունարէնից փոխառեալ է համարում)*: Pedersen, *Հայ. դր. լեզ. 16 բնդունում է* Bugge-*ի մեկնութիւնը*:

Գիհ.—Վն. թեղի, *Համշ. Մշ.* թէղի, *Երև.* թէղի, թէղէնի, *Ղրբ.* թէ՛ղէ, *Ղրդ.* թղի՛ *«թեղի», որից էլ շնթեղի Ղրդ. «թեղիի կարճ տեսակը»*:—*Ունինք նաև* թեղի *կամ* թեղենի *Ջթ. «վայրի կարճ ծառ, որի արմատի կեղևը թրջելով ծեծում են և ալիւրի հետ խառնելով եփելուց յետոյ՝ նոր դուրս եկած պալարների վրայ են դնում, որպէսզի շուտ հասնին և կամ պատուին» (տես Ալլահվէրտեան Յ., Ուղնիա կամ Ջէյթուն, էջ 186)*:—

ՓՈԽ.—վրաց. თელა **թելա** *(որ և* ტელი *տելի). «թեղի, կնձնի», თელამუში* **թելամուշի** *կամ* თელაღუმა **թելաղումա** *«կնձնիձ», բուշ.* თელ **թել** *«թեղի»։*

ԹԵՂՕՇ *«մի տեսակ վայրի ծառ» (ըստ Արթինեան, Ածաշունչի տունկերը, էջ 82—93՝ մայրի,* pinus*) Ես. խդ. 14. Բ. մնաց. բ. 8։*

Հինք. Դեղոս քրմական անտառի անունից։ Ուղուրիկեան (տե՛ս Գաբ. բառ. էջ 516 և 1405) համարում է թեղիի մի տեսակը և հետևաբար **թեղի** *բառից։*

ԳԻՒ.—Կայ միայն Ղրբ. **թեղո՛ւշի** *«լեռնային մի տեսակ ծառ»։*

ԹԻՄ** *կամ* **ԹԻՄ** *(սեռ.* **թեմի, գրծ.* **թիմով***, յգ. դրծ.* **թեմօք***) «եպիսկոպոսի առաջնորդական վիճակը կամ դաւառը» Օրբել. Ուռհ. Ձքր. ծործ. Վրդն. աշխ. «նահանգ, երկիր, թագաւորութիւն» Սամ. անեց. 105. որից* **թեմաբերդ** *«բերդաքաղաք» Ուռհ. 80. Նոր գրականում ընդունուած է միայն* **թեմ***, որից կազմուած են* **թեմական***,* **թեմական***,* **անթեմ***,* **թեմականցի***,* **թեմականաւարտ**։

=Յն. θέμα *«գաւառ, շրջանակ», որ ծագում է* θε- *«դնել, զետեղել» արմատից և բուն նշանակում է «դիրք, դրութիւն»։—Հիւբշ. 350։*

Ուղիղ մեկնեց նախ St Martin, Mémoires II. 470։*—ՆՀՔ յիշում է միայն յն.* θῆμα *«դիր, դրութիւն»։ Հինք. յն.* θῆμος *«կողմ, մարզ, վիճակ, թեմ»։*

ԳԻՒ.—Սլմ. **թեմ***, Մշ.* **թէմ***, ՋԲ.* **թիմ***. կայ և ուրիշ տեղեր* **թէմ** *ձևով՝ իբրև գրական փոխառութիւն.—Նոր բառ է* **թեմել** *Մշ. «թեմը հովուել»։*

ՓՈԽ.—Վրաց. մինգր. իննգիլ. თემი **թեմի***, սվան.* თემ **թեմ** *«գաւառ, ժողովուրդ», վրաց.* ხალხო საթემო *«գաւառական, թեմական». պնչ.* tem *«մարդիկ, բազմութիւն»։ Կովկասեան ձևերը հայերէնի միջոցով են՝ վերջատառի պատճառաւ, ուղղակի յունարէնից լինելու դէպքում սպասելի էր աւելի* ***թեմա**։ *Գնչ. ձևը չի կարող ծագած լինել պրս.* tan *«մարմին, անձ» բառից, ինչպէս կարծում է* Paspati*, նշանակութեանց տարբերութեան պատճառաւ։—Հայերէնից է կազմուած նաև Ս. Գրքի քրդ. թարգմանութեան մէջ* **թէմ***. ինչ. «նա՛ լը սէր թէման պը հիւքմ քըրընէ» (Մի՛ իբրև տիրելով վիճակացն). Ա. պետ. ե. 3։ Ուտ.* t'em *«թեմ»,* t'emakan *«թեմական»։*

***ԹԵՄԱՆ**, ա *հլ. գործածուած է Ս. Գրքի մէջ՝ իբրև տեղի յատուկ անուն. բայց յետնարար ունինք իբրև հասարակ անուն, «միջօրէ. 2. հարաւ. 3. հարաւային քամի» նշանակութեամբ. վկայութիւնները հետևեալներն են. —«Թեման թարգմանի միջօրեայ». Ճառընտ. «Որպէս ի փշմանէ երբեմն ի բերանոյ գոլորշի գիշմանային նշանակեալ, և ցրտայինն գհիւսիսայինն» Մագ. թղ. 111 (նաև հրտր. ՀԱ 1892 էջ 166 բ). «Յանկարծօրէն ի թեմանայ պատուհիդէս Հիւիւսոսիս առաքիւր» Մագ. թղ. 70. «Հազիւ հազ հասցէ պատասխանի թղթոյն թեմանայ» Մագ. թղ. 121. «Ունելով զդարձ դիտելոյ դիմացն ի թեման, որ ըստ ոմանց լեզուաց միջօրեայ կարդացեալ, որպես ըստ երրայականին՝ հարաւ համբաւեալ» Նար. խշ. 371։—Իբրև պարզ բացատրութիւն՝ ունինք հետևեալները. «Եւ թեմանն թարգմանեալ կոչի հարաւ» Կոչ. 219. «Եւ թարգմանի թեման՝ հարաւ». Կիւրղ. պատմ. էջ 71. «Թեմանն՝ հարաւ թարգմանի» Լմբ. ժբ մարգ. 63 (Ամովս .ա. 12). «Թեմանն և նագեբն հարաւ ասի» Նխ. եզեկ։*

=Եբր. תֵּימָן *tēmān «հարաւ. 2. հարաւային քամի». ծագում է* יָמִין *yāmin «աջ» բառից և նշանակում է բուն «աջակողմեան». փոխառեալ է անշուշտ յն. θαυμάν տառադարձութիւնից, որից նաև վրաց.* თემანი **թեմանի** *«հարաւ»։—Աճ.*

Նշ Ք դնում է արաբ. تَيْمَنٌ *«հարաւ». ՋՔ և ԱՔ համարում են երբ. բառ։*

ԹԵՄԱՉԻ *«մի տեսակ թաթարական զօրք կամ զօրաբանակ» Մաղաք. աբ. 29 «Մեք եկաք այս հօթն դումանայ գլուխքս Աստուծոյ և ձեր ուժով և գհին հնծելն՝ գթեմաչիքն հանաք աստի և դնացաք առաք զտաճկաց քաղաքն գՊաղտատ»։*

Արդեօք պրս. تیماج *tīmāj «նետի նըպատակ» բառի՞ցն է, իբր «աղեղնաւոր զօրք»։*

ԹԵՄԵՐԴԻՄԻ *«յայտնի». ունի միայն Բառ. երեմ. էջ 117, որի հետ նոյն է* **թեեռդիմիա** *«յայտնեալ» էջ 120։*

ԹԵՊԵԿ «կապիկ». ունի միայն ԱՐ, որ և տալիս է բերեկ ընթերցուածը. մի անգամ միայն գտնում եմ գործածուած Ոսկ. ճառք 789 «Թեպեկի վասն էր երկիր պապանէին» (յոյն բնագիրն ունի «կապկի», որով և ճըշտւում է բառիս իմաստը):—Կերևի թէ սրա հետ նոյն է **բոբէկ** «գիշատիչ մի անասուն», որ նոյնպէս մի անգամ գործածուած է Մխ. առակ. ճժա.—«Բորէկ թախանձէր զոզնի, թէ զորդիդ քո սան առից... մերկացո՛ զնա, զի դիւրին իցէ ի գգուել. և իբրև ետ զնա, սկսաւ ուտել»: (Այս բառը ՆՀՐ գրում է **բորէկ**, ԱՐ **բորեկ**, ՓՐ **բուփէկ**):

ՆՀՐ **բորէկ** մեկնում է «գուցէ կատու կամ ընտանի նապաստակ ևն, որպէս և իտալ. toppo է մուկն»:—ԱՐ **բորեկ** մեկնում է «թերևս թեպեկ», որ է «մի տեսակ կապիկ»:—Կայ նաև Բրք. և արևել. Բրք. شبك šebek, որ Աբիկեան բառարանը (Պօլիս, 1892) մեկնում է «երկայնատուն կապիկ», իսկ Будаговъ II, 406 «павіанъ կոչուած կապիկը»:

ԹԵՌ «չոփայէ կամ բրդէ թել». ունին միայն ՀՀՐ, ՋՐ (իբր գաւառական բառ) և ԱՐ. նոյնը **բեռն** «նուասա թել» Բառ. երեմ. է 118, որից **ասեղնաբեռնաւոր** «թեռով կարած» ԱՐ:

Pictet II 175 պրս. tīr, ītra «թել» բառի հետ: Müller WZKM 5(1891), 186 **թել** բառի հետ միասին կգում է պրս. تار tār «առէջ. 2. մետաքսեայ թել. 3. նուագարանի լար», և սանս. tantra «թել» բառերին. բայց սրանք ձևով չարմար չեն մեր բառին: Karolides, Γλωσσ. σσγχρ. էջ 99 կգում է կապակովկ. τερέζι «առէջ» բառին. (սակայն այս էլ Բրք. تیریز tiriz ձևից լինելով՝ չունի կապակցութիւն մեր բառի հետ):

Գ-ին. ՋԹ. Համշ. **բէռ**, Խրբ. **բոռ** «բրդէ թել». նոյնպէս է նաև Հճ. Ջն. Սեբ. Տ. Տր. Մրշ. այլուր, ինչպէս Ալշ. Սլմ. **բեռ**, Ոզմ. Վն. **բեռ**, երև. Կր. **բէռ** «պարկ, չուվալ». այս նշանակութեամբ գիտեն նաև Ասպ. Մկ. և քրդ. t'er՛:

ԹԵՍԱԼ «catananche ծաղիկը». ունի միայն Քաջունի, հա. Գ. էջ 78, բայց չի յիշում հա. Ա. 398 catananche բառի տակ:

ԹԵՍԱՂ «ժողով» և **ԹԵՍԵԼ** «ժողովել». ունի միայն Բառ. երեմ. էջ 118:

***ԹԵՍՄՈՓՈՐՈՆ** «տաճար». նորագիւտ բառ. որ մէկ անգամ գործածուած է Բանք իմ. ըստ Ջեռ. Վիեննայի Մխիթ. 29 fol. 217 ա «Թէանով Պիւթագորեան հարցնալ՝ քանօրեայ կին յառնէ մաքուր ի թեսմոփորոնն իջանէ ասաց. Յիւրմէն՝ նոյնժամայն. յօտարէն՝ և ոչ երբեք»: Նոյնը գտնում եմ նաև երկրորդ անգամ գործածուած Մագ. Թղ. 204 շատ ազատ զրչութիւններով. այսպէս՝ **թեսմայ փառոնացն, թեսմայփորացն, թեսմայփառնացն** (տե՛ս իմ Հյ. նոր բառեր հին մատ. Բ. 184): Այս բառը գիտէ նաև Բառ. երեմ. էջ 118 **թեսմոփորոն** «արքունի կամ եկեղեցի», որ սակայն յետոյ աղաւաղելով գարձնում է շաբեմիսփորոն «արքունի կամ եկեղեցի» էջ 241, **թերմոբորոս** «արքունի եկեղեցի» էջ 119:

= Յն. Θεσμοφόριον կամ Θεσμοφορεῖον «տաճար Դեմետրեայ դիցուհւոյ որ երկրագործութիւնը սովորեցրեց մարդոց և ամուսնութեան օրէնքը հաստատեց». ծագում է θεσμός «օրէնք» և φέρω «բերել» բառերից: Բանք. իմ. բնագիր նոյն տեղում ունի εἰς τὸ Θεσμοφορεῖον, որ թարգմանիչը պարզապէս տառադարձել է:

Գտաւ ու մեկնեց Տաշեան, Das Leben und die Sentenzen des Phil. Secundus. Wien 1895, էջ 27=Մատեն. մանր ուսումն. հա. Ա. էջ 217:

ԹԵՍՈՒԻՐ «սեղեակ կամ տաճար». ունի միայն Բառ. երեմ. էջ 118:

ԹԵՏԱՆ «հաճութիւն». ունի միայն Բառ. երեմ. էջ 118:

***ԹԵՏԻՒՐ** «միջոց, հնար, ճար» Վստկ. 175. (Արժան համարեցաք նախ առաջին այն ծառոյն թէատիր դնել՝ որք թափեն զծաղիկն և ապականեն զպտուղն). նոյն բառն է նաև **թպաիր** «հիւանդի դարմանում» Մխ. բժշ. 128. «խորհուրդ» Միխ. աս. 525. **թատպիր** «ճար, միջոց» Կոստ. երզն. էջ 84 (Դարձիր ի յետ նայէ ու գիտ խելօք թատպիր). **բրատպիր** «դատական խորհրդական՝ որ օգնում

է ամբաստանեալին՝ գտնելու միջոցներ, պաշտպանելու համար իր անձը՝ դատարանի առաջ» Անսիզք 27. բէպտիր «պատրաստութիւն» «Կռունկ» հանրածանօթ երգի մէջ (Ա-շունն է մօտեցեր, գնալու ևս թէպտիր). ո-րից բտպրել «պատրաստել», բտպրվիլ «պատրաստութիւն տեսնել, պատրաստուիլ» Անսիզք 23։

=Արաբ. تَدْبِير tedbīr «հնարք, միջոց, ճար»։

Ուղիղ մեկնեց նախ Անսիզքի հրատարակիչը, էջ 22. նոյնը վերջին անգամ Seidel, *Մխ. հնր. § 174*։

+ԹԵՐ (սեռ. -ի) «կողմ» եղն. Կիւրղ. Թուոց. Գիրք Թղ. 462. որից բերապետութիւն «կուսակալութիւն» Ոսկիփ. բերանցակ լինել «կողմնակից՝ պաշտպան լինել» Իրեն. հերձ. 27 (ՀԱ 1910, 302). բերածու «մէկի կողմը բռնող, կուսակից» (նորագիւտ բառ) Անկ. գիրք առաք. 238. բերենալ «հեռանալ, օտարանալ» Եփր. համար. 244.—երևան է գալիս նաև հետևեալ նշանակութիւններով. 2. «կողք, կուշտը», որից յափսիբերս (տե՛ս ափ բառի տակ). ընդ մասնիկով՝ ընբեր (փխ. ընդբեր) «քովը, կողքին» և առ նախդիրով՝ առբնբեր, «քովը, կողքին» (տե՛ս և առանձին ընբեր ձևը). համմտ. ֆրանս. côté «կողմ» côte «կող» և à côté «կողքին».—3. «պակասաւոր, քիչ» (իբր թէ «կողմնակի»). այս իմաստով առանձին գործածուած չէ, բայց շատ սովորական է ածանցման մէջ. այսպէս՝ բերագոյն «պակասագոյն, աւելի թերի» Վեցօր. անբերութիւն «ամբողջութիւն» Եւագր. բերալից Գ. մակ. դ. 5. բերակատար Իմ. գ. 16. դ. 5. եղն. Ոսկ. բերահատատ ՍԳր. Կոչ. բերահատատիլ Իմ. ա. 2. Կոչ. Ոսկ. Բ. կոր. բերանալ եղն. բերավարժ Եւս. պտմ. Բուզ. բերամամեալ «կիսով չափ պատճանից հանած (սուր)» Բ. Թագ. ի. 8. բերևս «գոյէ, կարելի է, մասամբ միայն հատանական» ՍԳր. Ոսկ. բերի «պակասաւոր» եղիշ. (եղնիկի բերի բառը՝ էջ 210, Նորայր, Հայկ. բառաք. 39 ուղղում է բեր). նոր գրականի մէջ՝ բերուս, բերակիրք, բերակղզի ևն.—նշանակութեան զարգացման համար համմտ. իռլ. leth «կողմ», որ բարդութեանց մէջ նշանակում է «մի քիչ, կիսովին, մասամբ». ինչ. leath-bhocht «մի քիչ աղքատ», leath-fhocal «ակնարկութիւն, կէս բերան ասուած խօսք» (ըստ Pedersen, Ztschr. էջ 57)։—Զարմանալի մի ձև է բերիւս «արդէն». «Բերիւս Կիւզիկոսի անուանեալ եպիսկոպոս» (Որ արդէն Կիւզիկոսի եպիսկոպոս էր կանչուած). Սոկր. 664։

=Բնիկ հայ բառ՝ հնխ. pter- արմատից. աւելի ընդարձակ մեկնութիւնը տե՛ս բիռ արմատի տակ։—Ա՛ճ.

ՆՀԲ Թրք. բէրէֆ, բէրաֆ (իմա՛ արաբ. ṭaraf «կողմ»)։ Տէրվ. Նախալ. 83, որից անկախաբար Meillet MSL 10, 281 համեմատում են սանս. -tarman-, յն. τέρμων, τέρμα «ծայր, սահման», լտ. termo, termen, terminus «սահման», սանս. tirás, զնդ. tarō, լտ. trans «յայնկոյս», հիսլ. ϑrǫm «եզր», հրգ. drum «ծայր» բառերի հետ, հայերէնի «կողմ» նշանակութիւնը յառաջացած համարելով «վերջին ծայրը» իմաստից։ (Հիւբշ. Armen. Gram. յիշած անգամ չէ այս մեկնութիւնը բայց յետոյ IF Anz. 10, 47 յիշում է կասկածով)։ Հինք. դեր բառից բեր, դերև բառից բերեւս։ Վերի մեկնութիւնս հրատարակուած է նախ MSL 20, 161։

ԳԻՒ.—Երեք նշանակութեամբ էլ պահուած է. առաջին «կողմ» իմաստով ունինք Անկ. Արբ. Պլ. Խրբ. Սեբ. Ռ. Տիգ. բէր. Ասլ. բէ՛ր, միայն բեր եղլել «մէկի կողմը բռնել, նրան պաշտպան կանգնել» ոճի մէջ. ունինք նաև Մշ. բեր, բէրէն «մէկի կողմը, կողմից», Ալշ. բէրեն «կողմից», Մկ. բէրէն «փոխարէն».—երկրորդ «քովը, կողքին» իմաստից են ծագում՝ բերապառեկ Նբ. «սայլի երկու կողքի փայտերը», բերացից Նբ. «սայլի առաջից ու ետևից՝ կոպերի ծայրերին գամուած սեպերը», բերի Կր. Մշ. «սայլի կողքի առաջին գերանը».—երրորդ «թերի» իմաստից են կազմուած՝ բերախօս, բերատ, բերենալ, բերերես, բերեփ, բերժամ, բերխաշ, բերխարով, բերհատել, բերհար, բերհատաք, բերմաշ, բերմագ, բերքամ.—նոյն բերխոր,

բերխորով ձևերից են՝ Նախ. բերխօր, Ագլ. բլխօվ, Դրբ. բրնբխա՛րավ:

Փոխ.—Լազ. բէրէ «կողմ», իրիմ բէրէ «ամէն կողմ», չուխիեբ բէրէ «մեր կողմը» (տե՛ս Աճառ. Արրատ. 1911, 417). Քրք. գուռ. կր. termaš «թերմաշ» (Բիւր. 1898, 627):

ԹԵՐ, ո հլ. «դրամի տոկոսը». Նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Մծբ. 391 «եւ չար ծառայն որ զարծաթ թաժուցանէ ի գալ այնորիկ որ եւ նմա՝ համարէ ընդ նմա զվարձս թերովքն հանդերձ»: Ասորի բնագիրը (հրատ. Craffin, էջ 717) ունի ըստ համեմատութեան վիճնայի միաբան Պ. Էսապալեանի (անձնական) «եւ համարէ ընդ նմա զտոկոս»— rehītā «fenus, usura տոկոս, վաշխ»: Նոյն ասորի բառը գործածուած է նաև Մտթ. իե. 27, ուր հայ թարգմանութիւնն ունի տոկոսեօք հանդերձ, ինչպէս վերը բերուվից հանդերձ:—Աւելի վստահութեան համար մի երկրորդ վկայութեան պէտք կայ:

[**ԹԵՐԱԹ** «գործի». ունի միայն Բառ. երեմ. էջ 118:—Ուղղել բերաթ, որ տե՛ս:]

ԹԵՐԱԿՈՒՆ «ալևոր». ունի միայն Բառ. երեմ. էջ 118:

ԹԵՐԱՄ «պիութիւն» ունի միայն Բառ. երեմ. էջ 118:

***ԹԵՐԱՓ** կամ **ԹԵՐԱՓԻՄ** «տան մէջ պահելու կուռք» ՍԳր. —սխալմամբ մեկնուած է հետևեալ ձևերով. «Թերափին տօն է... կարծեցեալ տօնդ ուրախութեան, զոր Թերափն կոչեն» Կիւրղ. Թգ. «Թերափն է բոլորակ հանդերձ ծածկոյթ տապանակին. և զայս գործի համայութեան առնէին և քաւութիւն թարգմանի. այլ և Թերափն՝ իղձք ասէ և Թերափիմք՝ տօնահմայք» Տաթև. Հարց. էջ 425. «Թերափ, փրկեալ կամ իղձ. ըստ եբրայեցւոց գործ ի հմայից. [սրանից էլ յառաջացել է բերաթ «գործի» անգոյ բառը, որ տե՛ս վերը]. և ծածկիչ հանդերձ տապանակին. կամ տիպ. կամ կուռ. կամ բժկութիւն.—բերափիմս. տօնահմայս.—բերափիս. տօնատեղի.—բերափ. հաճութիւն.—տէրաֆիմ. բազին». Բառ. երեմ. էջ 118 և 310:

=*Եբր.* תְּרָפִים tərāfim «մարդանման կերպարանքով տնային կուռք, որ տան բախտաւորութիւն էր բերում և որից պատգամ էին հարցնում». գործածւում է թէ՛ յոգնակի և թէ եզակի. բայց ձևով յոգնակի լինելով, հայերեն են թարգմանել են եզ. բերափ. մեր բառը անշուշտ ուղղակի եբրայականից չէ, այլ մի օտար տառադարձութիւնից յառաջացած.—ասորին ունի ܬܪܦܝܡ tarafīm (Brock. Lex. syr. 404 ա), յոյնը θεραφίν (Sophocles 580 ա), որոնք չունին մեր բառի ճիշտ պատկերը: Ենթադրել պէտք է՝ որ մեր թարգմանիչները իրենց առաջ ունէին յն. *θεραφίμ վարիանտը (Ս. Գրքի արդի օրինակներում այսպիսի ձև չի գտնում. Tischendorf-ի հրատարակութեան մէջ կայ միայն θεραφειν վարիանտը):

Ուղիղ մեկնեցին ՀՀԲ և ՆՀԲ:

ԹԵՐԵԻՍ *տե՛ս* **Թեր:**

ԹԵՐԵՔ «եթէ երբեք». ունի միայն Մագ. դամագա. (Թերեք պիրոզակութիւն տրտհիցես). որից և Հին բռ:

+**ԹԵՐԹ**, ի հլ. «ծաղկի, բոյսի, տերևի, թղթի, որևէ բարակ թիթեղի թերթ» Փիլ. եւ. Մագ. Վրք. հց. Նխ. եւ. որից **թերթեալ** «փրթթած, կանաչած» Գնձ. **եթեր** կամ **յեթեր** «բազմաթերթ» Ոսկիփ. երկթերթի Խոր. բազմաթերթութիւն Մագ. **թերթել**, **թերթօն**՝ նոր գրականում. (վերջինը ֆրանս. feuilleton բառի վրայից կազապարուած):

=Բնիկ հայ բառ. կազմուած է **թ** մասնիկով՝ պարզական **թեր** ձևից, որ թէև հնից աւանդուած չէ, բայց մինչև այսօր էլ շատ գործածական է մի խումբ գաւառականների մէջ: Աւելի ընդարձակ մեկնութիւնը տե՛ս **թիռ** բառի տակ:—Աճ.

ՀՀԲ **թար** *բառից: ՆՀԲ լծ.* **թուղթ**, **ըրբրռուն**, **թուչական**: Bugge KZ 32, 40 **թև**, **թուչիլ**, **թիթեռն** ձևերի հետ՝ կցում է յն. πτερόν «փետուր, թև», πτέρυξ «փետուր» բառերին: Հիւբշ. 449 մերժում է առանց պատճառաբանութեան: Հիւնք. **թիթեղն** *բառից: Վերի մեկնութիւնս հրատարակուած է նախ* MSL 20, 161: *Որից անտեղեակ* Petersson KZ 47, 252 հնխ. sterp- ձևից, համմտ. լտ. stirps «ծառի բուն», լիթ. stirpaũ, stirpstú, stiřpti «ծլիլ, աճիլ, մեծանալ»:

Գիհ.—Ալշ. թերթ *(ծաղկի), երև.* թէրթ *(թղթի), խրբ.* թէրթ *«տերև կաղամբի ևն».—այլուր պահուած է արմատական* թեր *ձևը. այսպէս՝ Ջղ.* թեր *«ծաղկի թերթ և ընդհանուր անուն թարմ ուտելի կանաչների. կանաչի», երև.* թէր *«ծաղկի թերթ, բողկի և այլ կանաչիների տերև», Ղրբ.* թէր *«ծաղկի թերթ, սրխատորի, սոխի, ճակնդեղի ևն տերև»,* թէր տալ *«շերամի առջև թթի տերևներ թափել»,* թէր ցցել *«նոր տերև ձլել», Ախց.* թէր *«ծաղկի, թղթի և խմորի թերթ», Եւդ. Սեբ.* թէր *«խմորեղէնի բարակ թերթ», Համշ. Տր.* թիր *«տերև» (ընդհանուր անուն). որից կազմուած են* -թերան *Մղ. «թերթեր ունեցող» (օր.* հինգթերան ծաղիկ*).* տկաթեր *Ղրբ. (<*տակաթեր*) «ճակնդեղի տերև»,* պխկաթեր *Ղրբ. (<*բողկաթեր*) «բողկի տերև»,* թերթերուկ, թերթերուտ *Ղրբ. «մի տեսակ խմորեղէն՝ թերթերով». (սրա հին վկայութիւնն ունի Բառ. երեմ. էջ 330* թերթուտ *«քաքար»),* թերտել *Ախց. Տր. «ճիւղի վրայի տերևները փրցնել՝ պոկել» (<*թերատել*),* թերուճ-բաղարջ *«թերթերով բաղարջ», ևն։—*Թերթ *ձևից են* թերթ *Ղրբ. «շան լեզու» (ձևի պատճառաւ կոչուած այսպէս),* թերթել *«շան լիզելը»,* թերթիկ *խրբ. «ականջի բլթակ»։—Կայ նաև* *թել *ձևը, որից կազմուած են* թելքաց *Ննխ. «թերթ թերթ բացուած մի տեսակ կարկանդակ»,* բխկա՛թիլ *Ագլ. «բողկի տերև» (=Ղրբ.* պխկա՛թէր*)։*

Փոխ.—Թրք. tert *«խմորեղէնի բարակ թերթերը». ասում են միայն* paklava terti *«փախլավայի թերթ». վերջին բառնամեակում և մասամբ միայն մտած է Պոլսի թուրք անուշարարների լեզուի մէջ՝ գաւառացի հայ խոհարարներից փոխ առնելով։ (Ստուդել եմ տեղի վրայ 1910 թուին)։*

+ Թերի *տե՛ս Թեր։*

*Թերիանկ *«դեղթափ» եզն. այս ուղղագոյն ձևի դէմ կան նաև* թիրակէ *(ըստ ՆՀԲ* թերակէ*) Յճխ. էջ 29.* թիւրակէ *Բուզ. և. խ. Կանոն. Նար. մծբ. 449. Երզն. մտթ. 307. Վրդն. ծն.* բրակէ *Պտմ. ներս. 23.* բրակէս *Վստկ. 8, 131.* բրեակէսի *Վստկ. 131.* բուրիախ *Վստկ. էջ 8.* բրիախ *Յայտմ. մրտ. 22.* բրիար *Տաթև. ձմ. ճժդ (երիցս)։*

=Յն. Θηριακή «անդեղայ, դեղթափ», որ ծագում է Θηρίον «գազան» բառից և նշանակում է բուն «գազանական».—յոյնից փոխառեալ են լտ. theriaca, *հֆրանս.* triacle, *ֆրանս.* thériaque, *գերմ.* Theriak, *սպան.* atriaca, *լհհ.* tyrjaka, *ռուս.* терiáкъ, *ասոր.* ܬܪܝܩܐ teryaqē, *պրս. թրք.* تریاك tiryāk, *արաբ.* تریاق tiryāq *ևն։ Պրս. բառը երկու իմաստով է. առաջին իմաստն է «մի տեսակ դեղթափ, որ կազմւում է ծովային սոխի, ղմուռսի, կինամոնի, քրքումի, ափիոնի, մեղրի, գինիի, բևեկնի և իժի մսի խառնուրդով» (*Будаговъ *1, 353). սրա համար է որ Եզնիկ, էջ 63 գրում է. «Ջի՞նչ չար քան զօձ կայցէ, և ի նմանէ թերիակէ. և ի սպանող դեղոց, որք ի նենգութենէ մարդկան կազմեցան, չև հասուցեալ և անդէն բուժէ»։—Երկրորդ իմաստն է «ափիոն». այս իմաստով և այս ձևից են մեր էլ յետնադարեան ձևերը։—Հիւբշ. 350։*

Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ։

*Թերմոն *(սեռ. ի) «տաքացրած գինի. գերմ.* Glühwein*» Ճառընտ.=Վրք. և վկ. Ա. 267. վկ. գէ. 22. Յայտմ. տպր. 23 (*Թերմոն *եփել. այս է գինին քաջ եռացնել և տպա ըմպել). ուրիշ վկայութիւն չկայ։*

=Յն. Θερμόν *«տաք, ջերմ». գործածւում է նաև ըմպելիքների համար և գոյականը զօրութեամբ իմանալով՝ ունեցել է նաև վերի նշանակութիւնը։—Հիւբշ. 350։*

Ուղիղ մեկնեց նախ Աւգերեան, Լիակատար վարք սրբոց, Ջ. 215, ծանօթ. 10։ Նոյնը յետոյ ՆՀԲ։

Գիհ.—երև. թէրմուն *«մի տեսակ ըմպելիք՝ որ պատրաստում են գինին եփելով զանազան քաղցրեղէններով կամ ուտելով, մեղրով ու պղպեղով»։*

Փոխ.—Վրաց. თერმონი *թերմոնի «շաքարախառն տաք ջուր», լազ.* թերմոնի *«խաղողի հիւթով շինուած մի տեսակ քաղցրաւենիք». բայց այս բառերը կարող են նաև ուղղակի յունարէնից լինել։*

Թերոինակ *«հանճարեղ կամ հոգևոր». ունի միայն Բառ. երեմ. էջ 118. միևնոյն բառի տեղ գրուած է էջ 108* էրուճակ *«իմաս-*

տուն կամ հզօր», էջ 130 իրուցօղ «իմաստուն»։

ԹԵՐՈՒԻՍ *«վերատեսութիւն կամ ուրախութիւն», ունի միայն Բառ. երեմ. էջ 119։*

ԹԵԻ, ո հլ. *(գրծ. թեօ ունին Ղեւտ. ա. 16 և Հռ. բ. 12. յետնաբար սովորական է) «Թռչունի թև. ձկան լողակ, մարդու բազուկ, նաւի զեկ» ՍԳր. փոխաբերութեամբ՝ «հովանաւորութիւն» ՍԳր. և հողմոց «քամու թռիչ» ՍԳր. եւ երկրի «երկրի ծայրերը» Յոբ. լզ. 13. և բանակի «բանակի գլխաւոր բաժանմունքները» ՍԳր. (այս իմաստի համար խօսել են Նորայր, Կորիւն վրդ. էջ 364 և* Meillet MSL 18, 348 *և ցոյց են տալիս՝ որ նոյն բացատրութիւնը գտնում է նաև ասորերէնում և լատիներէնում. մեր բառը կարող է սրանից թարգմանուած լինել, բայց կարող է նաև անկախաբար ձևացած լինել. համմտ. ճկ.* qol aγasə *«բանակի մէկ թևի հրամանատար»). և գառագղի «գառագեղի դուռը» Ճառընտ. և տաճարի «տաճարի աշտարակը» Յայտմ. ոճով ունինք՝ և արկանել «պաշտպաննել» Եւագր. և ի և հարեալ «կից, շարունակեալ» Ոսկ. մ. գ. 16. որից* **թեակ** *«բազուկ, թև» Մծբ. «վրանի փեղկ» Ոսկ. մ. գ. 26. (Վարդանեան ՀԱ 1921, 404 կարծում է որ սրանց մէջ թեակ նշանակում է «ցանց»). թեակից Կոչ. էջ 404. թեակոխել «ջանալ, դիմել, ձգտիլ» ՍԳր. «մտածել, մտորել» Ոսկ. ես. 286. Մծբ. եփր. ծն. «կըրթուիլ» Ոսկ. պօղ. (ի նա կրթեսցուք, ի նոյն թեակոխեսցուք. տե՛ս Թոռնեան, Հատընտ. Վիեննա 1866. հտ. Ա. էջ 176). «ուսումնասիրել» Մագ. թղ. 113 (գրուած թեակոխել, թեախողել, թեախոշիլ տե՛ս իմ Հյ. նոր բառեր հին մատ. Բ. 184).* **թեակուռ, թեամուխ** *Ա. գաթ.* **թեակցիլ** *Եզեկ. ա. 9.* **թեաճաճել** *Վեցօր. 161.* **թեարկել** *Ագաթ.* **թեել** *«թռչիլ» Վեցօր. ը. Ճառընտ. Օրբել. էջ 274 (Առ անթիւ բազմութեան իամայէլացւոցն՝ Լիպարտեան զօրքն ոչինչ երևէին, այլ իբր ջրոուս կամ գինաքաղս թևէին առ նոցա.—այստեղ թեել կա՛մ պէտք է ուղղել թուէին, ինչպէս ունի ՆՀԲ-ի գործածած օրինակը [տե՛ս ջրոու բառի տակ], և կամ պէտք է համարել մի նոր բառ՝ «շրջիլ, մօտերը պտտիլ» նշանակութեամբ). թեևակ «թիակ» Ոսկ. ղկ. առագաթև Ագաթ. լայնաթև Ոսկ. ես. մաշկաթև Վեցօր. մեծաթև Եզեկ.ժե. 3. երկթեւան Ծս. քր. թեթևաթև Ոսկ. յհ. ա. 22. թեացել «թեևրովը հարուածել» (թռչունների համար ասուած. համմտ. աճացել) Վրք. հց. Ա. 91. թեևալ «քաջալերուիլ» (ճիշտ ինչպէս այժմ ունինք թև առնել) Արծր. հրտր. Պատկ. էջ 14 (Որո՞վ օրինակաւ թեևացեալ քաջալերեցաւ). երեքթեւան Խոր. ևն։*

Հիմնք. էջ 108 փետուր բառից և էջ 284 թի բառից։ Bugge *տե՛ս* թերթ *բառի տակ։ Հիւբշ. 449 չի ընդունում։* Patrubány SA 1, *էջ 314 և ՀԱ 1908, 153 հյ.* *թևուկ *ձևից փոխառեալ է դնում* Բրք. tavuk *(բայց հին ձևն է* taγuq!*) և հունգ.* tyúk *«հաւ»։* Jensen *ՀԱ 1904, 183 հաթ.* tpa? *ձևից։* Karst, *Յուշարձան 415 մոնգոլ.* dabi-debi, *ճապոն.* tobi, Բրք. dai *«թռչիլ»։*

Գիտ.—Ջղ. թեվ *(թռչունի).* թեֆկ *(շորի), Հճ. Մշ. Սլմ. Վն.* թեվ, *Սլղ.* թեվ *(մարմնի),* թեֆ *(շորի), Ախց. Երև. Կր. Սեբ.* թէվ, *Մշ.* թեֆ, *սեռ.* թեվի *«զգեստի թև» (մարդու թևը կոչւում է ձ'եռ), Գոր. Ղրբ.* թէվ *«թռչունի թև» (մարդունը կոչւում է կո՛ռնը), Խրբ. Նախ. Պլ. Ռ.* թէվ, *Ասլ.* թէ՝վ, *Ագլ. Ջթ. Համշ. Մկ. Մրղ. Ոզմ. Տիգ.* թիվ, *Տփ.* թիվ *(մարմնի),* թիվ *(շորի), Շմ.* թէֆ *և Ագլ.* թիֆ, թիփ *«հագուստի թև» (մարդունը Շմ. կրնը)։ Նոր բառեր են* թեաթափ, թեաճարել, թեանի, թեվանցուկ, թեաւորուիլ, եւ *«խաղողի կոտրակ»,* թեխաղ, թելող, թելաք, թեբնկեր, թեթիակ, թեմաշ *են։—Թև բառի նոր գաւառական առումները տե՛ս իմ Գւռ. բառ. էջ 360։ Սրանց մէջ յիշելու արժանի է թև Լ. Ղրբ. «ոչխարների հօտի դիշերային բացօթեայ մակաղատեղում պահապան շան համար նշանակուած տեղը», և դնել Լ. Ղրբ. «մակաղատեղում շան համար տեղ նշանակել». այս իմաստի հետ Մ. Նաւասարդեան, Մուրճ 1894, 443 համեմատում է վրաց.* ფეხა թեվա (ვითვე վաթեվ, ვითე վաթիե) *«անքուն մնալ և հսկել հիւանդի մօտ կամ աղօթքի համար» (Ջուբին.² 555), որ սակայն վրացերէնով չի մեկնւում.—կապ չունի սե-*

բանց հետ վրաց. თეი- թեի «աննշանաեննակ», որի վրայ տե՛ս թեէ:

Թեի *«մի տեսակ փախեցուցիչ դեղ». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Կալիսթ. 174 «Դարձուցեալ («փըսխել») կամեցեալ զկարի շատ գինին՝ խընդրեաց թև, քանզի սովոր էր այսպէս առնել և Յուղղոս շաղախեալ դեղովն մատոյց նմա»:*

**Թեհելիև «փոթորիկ» Արիստ. աշխ. 612. ուրիշ վկայութիւն չկայ:*

=Յն. θύελλα «փոթորիկ, պտուտկող քամի». ծագում է θύω «յանկարծակի յարձակիլ» բայից:—Հիւբշ. 350:

Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ:

**Թեհէ. մէկ անգամ գործածուած է Գ. Թգ. ժդ. 28 «Բառնային զայն սուրհանդակքն և յեցուցանէին զնոսա ի թևէ սուրհանդակացըն». այս բառը հները մեկնում էին զանազան ձևով. այսպէս՝ Կիւրղ. Թգ. գրում է* թեկուէ *և հասկանում է «անկիւն պարսպին, ուր դգեղարդան կանգնէին». Նչ. եզեկ. գրում է* թէէ *և մեկնում է «կոզակ»:*

=Եբր. אֵ tā *բառն է, որ և* תֵּאֵ tāe, תָּאוּ taāu, תָּאיו tāav, תָּאִים tāim, *և նշանակում է «սննեակ». սրանից են փոխառեալ արամ.* תְּוָא tāve, תְּוָן tāvān, ܬܘܢܐ tavāna, ܬܘܢܝܐ tavvāna. *յոյն թարգմանութեան մէջ տառադարձուած է* θεέ, *յգ.* θεείμ *Գ. Թագ. ժդ. 28, Եզեկ. խ. 7—12 (Sophocles 571), որից էլ վրաց.* თეი- թեի *կամ* თეი թեի *(Ջուրինով² 555—6) «սննեակ, աննշաննեակ»: Հայերէն թարգմանութեան մէջ Գ. Թագ ժդ. 28 տառադարձուած է* թեէ, *բայց Եզեկիէլի մէջ թարգմանուած է միշտ կոզակ: Այս պատճառով է որ Նչ. եզեկ. գրում է* թէէ *(իբր յն.* θεέ*) և մեկնում է «կոզակ»:*

Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ:

Թեփ, ո *հլ. «մաշկաձև կեղևանք ցորենի» Բարուք. ղ. 42. Եփր. Գ. կոր. 122. Մանդ. «ձկան թեփը» ՍԳր. Կոչ. 39. «մարգու մարմրնի և գլխի թեփ» (գաւառականներէն և նոր գրականի մէջ). որից* թեփամորք *Վեցօր. 138.* թեփուկ *«մարմնի ճերմակ քոս» Ղևտ. ժդ. 39.* թեփոտ *Վրդ. ծն.* թեփոտեալ *Բրս. Թղթ.* թեփակեր *Դատմ. սհմ. էջ 26:*

Հինք. փետել բառի՞ց:

Գիհ.—Ալշ. Հճ. Մշ. Ջղ. Սլմ. Վն. թեփ, *Սչ.* թեփ *(ցորենի),* թէփուգ *(գլխի). Նախ.* թէփ *(ցորենի),* թէփուգ *(գլխի). Ախց. Գոր. Երև. Խրբ. Կր. Ղրբ. Շմ. Պլ. Ռ. Սեբ.* թէփ, *Ասլ.* թէ՝փ, *Ագլ. Զթ. Համշ. Մկ. Մրղ. Տիգ. Տփ.* թիփ, *Ղզմ.* թիփ *(ցորենի).* թէփor, թէփօկ *(ձկան).—Նոր բառեր են՝* թեփոտիլ, թեփակալել, թեփահանել, թեփնել, թեփաճ, թեփուկ:

Փոխ.—Վրաց. თებო թեբո *«գլխի թեփ». (բուն վրացական բառն է* ჭეռტლი fხrtli. *հայերէնից փոխառեալ լինելու ապացոյց է այն՝ որ բառս բոլորովին առանձին մնացած մի ձև է և ո՛չ մի ածանց չունի. վերջաձայն -n (փխ. -ի) ներկայացնում է հայերէնի* ո *բունը):—Թերևս հյ.* թեփուկ *ձևից է տճկ.* كپك kepek *«ցորենի թեփ» (նախաձայն* k *յառաջացած վերջաձայնի նմանութեամբ).* Будаговъ *չունի այս բառը, որից երևում է որ ընդհանուր ալթայական բառ չէ: Սակայն Բրբ.-Թթր.* كبك kebek *ձևն ունի արդէն Իբն-ի Բառուտա, հտ. Բ. էջ 392 (գրուած է* b, *իմա* p, *որովհետև արաբերէն լեզուում չկայ* p *ձայնը):*

+ **Թեքնել** *(գրուած նաև* թեկել*) «կռանելով կոկել, շինել, սրել», նմանութեամբ «կրթել, դաստիարակել». այսպէս՝* թեխել զգեստանդի *Ա. Թագ. ժդ. 20.* թեխաց հիւսն զգործի իւր *Ես. խդ. 12. Ջլեզու սրել և թեխել Ոսկ. մ. բ. 26. Ջիւր աշակերտսն թեխել եղն. որից նեռաթեխ «նորակերտ» Ագաթ. եղիշ. յետնաբար ստացել է «ծռել, դարձնել» նշանակութիւնը. ինչ.* Թեխաց զեռասանակ *Պատմ. աղէքս. որից կրկնութեամբ՝* թեխմեխել *«ծռմռել (աչքը)» Առաք. պատմ. 317. Նոր գրականում* թեխել *նշանակում է միայն «ճկել, ծռել», որից* թեխ *«ծուռ»,* թեխում, թեխական, դիւրաթեխ, թեխուիլ, թեխուիլն:

=Բնիկ հայ բառ՝ հնխ. tek *արմատից: Այս բառի դէմ միւս լեզուներից ունինք՝ յն.* τέκτων *«հիւսն, գործաւոր»,* τεχνάω *«ճարտարապետել, արուեստագործել»,* τέχνη *«ճարտարարուեստ», լտ.* texo *«հիւսել, շինել, կանդնել (նաև, փայտակոյտ, բոյն ևն), կարգաւորել, կարգադրել, յարմարեցնել», սանս.*

𐎠𐎿𐎰𐎹𐎼 tákšati «կարել, տաշել, արուեստով յօրինել, կառուցանել», 𐎠𐎿𐎱𐎢 táštar- «վարպետ, հիւսն, ատաղձագործ, կառք շինող», 𐎠𐎿𐎰𐎹𐎽 tákšan «հիւսն», զնդ. taš «տաշելով շինել», tašan- «սահղծիչ, յօրինիչ, արարիչ», taša «կացին» = պրս. تشی taš «ուրագ», հբգ. dehsa, dehsala «կացին», մբգ. dehsen «կանեփ ջարդել», հսլ. tesati «տաշել», tesů «գերան», tesla «կացին», ռուս. тесать, тешу «տաշել, հարթել», тесъ «սղոցած տախտակ», լիթ. tašýti, լեթթ. tešu, tėsu «տաշել, փայտի վրայ աշխատիլ», միուլ. tāl «կացին» են (Walde, էջ 778, Boisacq 950, Trautmann 320): Արմատի նախնական նշանակութիւնն էր «ձեռքով կամ գործիքով որևէ բան շինել». այս ընդհանուր իմաստը ցոյց են տալիս հյ. թեթել և յն. τέχνη, որ ամէն տեսակ արհեստի համար էլ գործածական է. մինչդեռ միւս լեզուները իմաստը մասնաւորել են փայտակերտութեան վրայ:—Այս բառերի հնդեւրոպական նախաձևն էր tek՛, որ պիտի տար հյ. *թես-: Բայց ինչպէս երեւում է, նախալեզուում կային մի քանի նմանահնչիւն արմատներ՝ մերձաւոր նշանակութեամբ. այսպէս՝ հնխ. tuq «հիւսել, գործել» և tek «հիւսել» արմատները: Առաջինից ունինք հսլ. tūkati «գործել», սլով. tčém, չեխ. tku, ռուս. ткать «ոստայնանկել», ткачъ «ջուլհակ», ткань «գործուածք», հպրուս. tuckoris «ջուլհակ»: Նոյն արմատը նաև «բաղխել, հրել» իմաստով սլաւական և գերմանական լեզուների մէջ և «քար տաշել» իմաստով՝ յունարէնում. ինչ. յն. τύκος «քարտաշի մուրճ», τυκίζω «քար տաշել» (Traut. 331, Boisacq 989): Երկրորդ tek արմատից են՝ օսս. taxun (ուր x գալիս է k-ից) «հիւսել», հհիւս. þáttr «թել, պատրոյգ», գերմ. docht, dacht, հբգ. tâht, շվեյց. dǣgel, dohe «պատրոյգ» (Kluge 97).—գերմանական արմատաձևն է þēh, þēg:—Կատարուել են այս նմանահնչիւն բառերի մէջ փոխանակութիւններ. հայերէնում tek՛ փոխանակուել է tek արմատով, ինչպէս որ լատիներէնում «տաշել» իմաստի տեղ եկել է «հիւսել»:—Իրանական taš ձևից է փոխառեալ հյ. տաշել, որով տաշել և թեթել միևնոյն բառերն են: Pokorny 1, 716—7 դնում է երկու տարբեր արմատ, հնխ. teq- «հիւսել» և tek՛o- «փայտի վրայ աշխատիլ». տե՛ս և Ernout-Meillet 996.

ՆՀԲ չծ. ծեթել, թակել, ճակել:—Տէրվ. Altarm. 36 և նախալ. 102, 113 յն. στίζω, στίγω «զարնել, սրել», լատ. stinguo «մարել, չնջել», սանս. tij, tējati «սրել», ինչպէս նաև սառգել, տէգ են ձևերի հետ հնխ. stag, stig «խայթել, սրել» արմատից: Պատկ. Изслед. էջ 14 կապում է ծեթել ձևին: Վերի մեկնութիւնը տուաւ նախ Meillet MSL 8, 289, որ Հիւրշ. մինչև անգամ չի յիշատակում: (Meillet ևս չի յիշում իր աւելի նոր աշխատութեանց մէջ, ինչպէս Introduction 1922, էջ 344): Հիւնք. յն. θήγω «սրել» բայից: Scheftelowitz BB 29, 22 գերմ. þēh, նբգ. docht, հհիւս. þāttr ձևերի հետ: Pedersen, Հայ. դր. լեզ. էջ 103 ցեղակից սանս. taviti «զօրաւոր է» ձևին կամ փոխառեալ յն. θήγω «սրել» բայից: Petersson, Ar. u. Arm. Stud. 67 օսս. tasun «ծռել» և լիթ. tištas «մի տեսակ աման» կցում է մեր բառին:

Գիւմ.—Զղ. թեփվել «ծռուիլ», Սրև. Ղրբ. թէֆ «ծուռ», Սրև. Ղպ. թէ՛ֆէլ, Տփ. փի՛ֆիլ «ծռել», Սլմ. թիւվել «հակիլ, ծռիլ»:—

+Թէ «եթէ. 2. որ, զի, թէ. 3. մի՞թէ, արդեօք. 4. վասն զի, որպես զի». որից կազմուած են զի թէ, թէ ոչ, ապա թէ, ապա թէ ոչ, իբր թէ, թէև, թէ և, մի՞թէ, թեպէտ, թէպէտ և, բայց թէ, այսինքն թէ կրկնութեամբ թեթուֆ «կարծիք» (տե՛ս այս բառը առանձին).—Նոյնպէս և յաւելուածով՝ եթէ, եթէ ոչ, ապա եթէ ոչ, իբր ոչ եթէ են, բոլորն էլ հին և ընտիր (տե՛ս նաև եթէ բառը). նոր գրականում շինուած ձևեր են՝ թէական, թէութիւն, թէկուզ «մինչև իսկ» (իբր «եթէ կուզէ». գործածական է միայն արևելեան գրականում): Հին գրչութեամբ այս բառերը գրւում էին թե, եթե են, յետոյ փոխուեցան թէ, եթէ (համմտ. ՀԱ 1913, 11).—թէ և եթէ բառերի

հին գործածութեան ձևի մասին տե՛ս Այտնեան, Քնն. քերակ. էջ 68։

=*Բնիկ հայ բառ՝ հնխ.* te *ձևից. համմտ. հսաքս.* the, *անգսք.* ðē *(շեշտեալ) և* ðe *(անշեշտ), լիթ.* te *և* -t (be-t, už-io-t *ձևերի մէջ). համմտ. բառիս համապատասխան գործածութիւնը հայերէնում և հին սաքսոներէնում. «Պա՞րտ է հարկս տալ կայսեր թէ ոչ»* =is it reht the nis?—**Թէ** *և* **եթէ** *բառերի նախաձայն յաւելուածի համար համմտ. յն.* κεῖνος *և* ἐκεῖνος *ձևերի տարբերութիւնը։—*

Peterm. *35 պրս.* tā *«թէ»։* Justi, Zndsp. 243 *սանս.* yathā, *զնդ.* yaθa, *պրս.* tā, *ուտ.* the, *գնչ.* te: Bopp, Gram. comp. IV. *385 սանս.* yatā, *պրս.* tā.—*Հիւնք. դնում է* թէ *համառօտուած* եթէ-*ից, իսկ* եթէ=*յն.* εἴτε, *դոր.* αἴτε։ *Վէբրի մեկնութիւնը տուաւ* Meillet MSL *9, 154, ծան. 1 (նոյնը աւելի ուշ* MSL 23, 142*), որ Հիւրշ. 449 անապահով է համարում, նախաւոր ձևը դնելով* եթէ *և ո՛չ* թէ, *համմտ. չ՝ համառօտուած ոչ ձևից։ Պատահական նմանութիւն ունի յն.* -τὲ *«և», որ ծագում է հնխ.* q^{w}e *ձևից։* Pokorny 1, 742 *հանում է հնխ.* to-, tā- *դերանունական բներից, իբր սանս.* tád, tát, tám, *յն.* τό, τόν, τήν, *հյ.* այդ, դա, դոյն, *գերմ.* der, die, das *ևն։*

*Գիմ.—*Նրև. Հճ. Համշ. Ոզմ. Ջղ. Վն. Տփ. **թէ**, Զթ. **թէ**, **թը**, Ագլ. Ալշ. Սեբ. **թm**, Գոր. Ղրբ. **թա**, Ախց. Ակն. Ասլ. Կր. Մկ. Մշ. **թը**, Խրբ. Պրտ. **դը**.—*Համշէնի բարբառում ծառայում է իբր հարցական մասնիկ. ինչպէս՝* գնա՞ց **թէ**։

*Փոխ.—*Գնչ. te *«եթէ», ուտ.* **թէ** *«թէ, եթէ»,* **թէպա**, **թէ ակար** *«թէև, եթէ, թէպէտև»։*

***ԹԷԱՏՐԻԿՈՆ** *«դերասանուհի». Նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Սոկր. էջ 334 «Տեսեալ անդ կին մի թէատրիկոն»։ Նոյնը ունի և վրք. Հց. Բ. 480, որ սակայն գրում է* **թէատրոնիկոն**. *(տպուած է գլխատառ՝ իբր յատուկ անուն կարծելով)։*

=*Յն.* θεατρικόν *«թատերական, թատրոնական». Սոկրատի յոյն բնագրում՝ համապատասխան տեղը դրուած է* γυναῖ κα θεατρικὴν *(տե՛ս* Σωκρατους Σχολαστ. εκκ. ἱστορια. Oxford *1893, էջ 194), որ եզ. իգ. հյց. հոլով ածական է. հայ թարգմանը դրէլ է* **թէատրիկոն**՝ *որ չէզոք ձևն է։ Սարքուած ձև է* **թէատրոնիկոն**, *որի համապատասխանը չգիտեն ո՛չ* Bailly *և ոչ* Sophocles:—*Ա՛ճ.*

ԹԷԱՏՐՈՆ *տե՛ս Թատր։*

***ԹԷՁ** *«շուտ». յետին ժամանակի բառ է. համմտ. Մթ. պատ. 29, 43. Կոստ. երգն. 87, 96, 130 և 127. գործածական է այժմ էլ մեր բարբառներում. Նախ. ունի* շուտ մը թեզ *«իսկոյն» որի հետ նոյն է ճիշտ՝ Կոստ. երգն. 130 «Շուտով թէզ հողոյն առնէ գիրենք հաւանն»։*

=*Պրս.* تیز tīz *«շեշտ և սուր». նշանակում է նաև «արագ». համմտ.* tīz-gam *«արագընթաց»,* tīz-bāl *«արաթիև, արագաթռիչ»,* tīz-gard *«շուտ դարձող». և այս առումից է յառաջացած թրք.* tez *«շուտ»։—Ա՛ճ.*

Տե՛ս իմ Թուրքերէնէ փոխառեալ բառերը, էջ 122։

ԹԷՂ *«թել, թելերի շարք». մէկ անգամ միայն գործածուած է Ոսկ. ես. էջ 10 «Իբրև թէղք մի արձակեալ, դարձեալ անդրէն դառնայ՝ տալ խրատ Հրէից». օրինակում գրուած է —*թէղ f *մի.—յոյն բնագրում «սիրայ, այսինքն շղթայ», ըստ ծանօթագրութեան հրատարակչի։ Վերջաձայն* f *արմատական է և ոչ թէ յոգնակիի նշան, ինչպէս ցոյց է տալիս յարադիր մի։*

***ԹԷՅ** *«չայ» (բոյսի տերևները և նրանցից պատրաստուած ըմպելիքը). նոր բառ է, որից կազմուած են* **թէյաման թէյասեղան, թէյարան, թէյատուն, թէյավաճառ, թէյավաճառանոց, թէյենի, թէյիճ** *(քիմիական մարմինը), ոմանք գործածում են նաև* **թէյել** *«թէյ խմել»։*

=*Ծագում է չինարէն* 茶 *բառից. այս գաղափարանշանը հին չինարէնում կարդացւում էր* thou. *նոր չինարէնում հիւսիսային բարբառները կարդում են* ča, *հարաւայինները* thou. *այն ազգերը՝ որոնք հիւսիսային Չինաստանից են ստացել թէյը, գործածում են հիւսիսային չինարէնի* ča *ձևը, իսկ այն ազգերը՝ որոնք հարաւային Չինաստանից են*

առացել, գործածում են հարաւային չինարէնի thou *ձևը։ Այսպէս՝ հիւսիսային չինարէնից են փոխառեալ ճապոն.* 茶 *cha «թէյ». չաղաթ. կամ արևել. թրք.* چای *çay, եաքութ. և թունգուզ. çai, թրք. çay, պլհ.* چای *çāyi, որոնցից էլ ռուս.* чай, *լհհ.* czaj, *օսթյաք. šai, նաև հյ.* չայ, *որ ըստ ՀԲուս. § 2451 գործածուած է ԺԷ գարի վերջերը գրուած մի չժշկարանում։ Հարաւային չինարէնից է փոխառեալ մալայերէն* ڤيه *tēh, որի միջոցով յառաջացել են բոլոր եւրոպական ձևերը. ինչ. անգլ.* tea, *իտալ.* te, *ֆր.* thé, *գերմ.* thee, *նյն.* τέϊον *և սրանցից էլ հյ.* թէյ։—*Աճ.*

ԳԻՒ.—Գրական ձև է համարւում թէյ *և ո՛չ մի բարբառի մէջ գոյութիւն չունի. բարբառները գործածում են թրք. պրս. ռուս.* չայ *ձևը՝ նոր փոխառութեամբ։*

ԹԷՆ *տե՛ս* Թանալ։

*ԹԷՆՍՈՒԽ *«է անուշահոտ բաղադրութիւն ինչ». գիտէ միայն ՓԲ, առանց վկայութեան։*

=*Օսմ.* خوشه tensux *«անուշահոտ ծխանելի.* pastille du Sérail». *(տե՛ս Մ. Աբիկեան, Բառ. տճկ. Պօլիս 1888, էջ 282), համմտ. նաև* թաճսուխ։—*Աճ.*

*ԹԻԶ *«ճնճղուկ». նորագիւտ բառ՝ որ մէկ անգամ ունի Վրդ. առ. 332։*

=*Պրս.* تیژ tīž *կամ* تژ tež *«passeris species parva, մի տեսակ մանր ճնճղուկ»* (Vullers), تژ taz *«է անուն թռչնոյ միոջ փոքու» (ԳԴ)։*

Գտաւ ու մեկնեց Մատ, Վրդն. առ. հտ. I, էջ 69։

ԹԷՍԱՐԱՄ *«մեծութիւն». ունի միայն Բո. երեմ. էջ 119։*

ԹԹՈՒԻ *(ըստ ՆՀԲ ո հյ. բայց առանց վկայութեան) «ՖՖուհամ» Մագ. Փիլ. նխ. Համամ. առ. (գրուած նաև* ppnu*). որից* ppnuեի *«ՖՖու պտուղ տուղ (ծառ)» Վեցօր. 97.* ppnuարար *Պտմ. աղէք.* ppnuարեր *երգն. լուս.* ppnuագոյն *Պզատ. տիմ. և օրին. Վահր. երբ.* ppnuեցուցանել *Սարգ. ա. պ.* ppnuիկ *Մագ. ՃՂ. 138.* ppnuուիւն *Մխ. առ. որ և* ppnuիւն *(անշուշտ սխալ գրչութիւն) Վեցօր. Ոսկիփ.* ppnuց *(նորագիւտ բառ) «խմոր ՖՖուեցնելու տեղ» Տարօն. Ա. § 96, էջ 197,* ppnuկ, ppnuուտ *(նորակերտ քիմիական բառեր)։*

=*Կազմուած է* -ու *մասնիկով՝ ճիշտ ինչպէս* աղու, կծու, ճաշու, ազդու *են. պարզական արմատը՝ որ առանձին գործածուած չէ, պիտի լինէր **ppp *կամ **pnup:—*Աճ.*

Հիւնք. pnup *պտուղի անունից։*

ԳԻՒ.—Ալշ. Ախց. երև. Խրբ. Կր. Համշ. Մկ. Մշ. Ջղ. Սեբ. Սչ. Տփ. ppnu, *Ննխ. Շմ. Պլ. Ռ.* pnupnu, *Տիգ.* ppppnu, *Հճ.* pmpnu, *Զթ.* popnu, *Ասլ. Սլմ. Վն.* ppիu, *Մրզ.* pիupիu, *Ագլ. Գոր. Ղրբ. Ոզմ.* ppo.*—ածանցներից նշանակելի են Սչ.* ppֆել, *Ասլ.* pը*վիլ, Գոր.* ppppվել, *Հւր.* pnupnuյել, *Ղրբ.* pppnuաշ, *Գոր.* ppppվա՛շ, *Շմ.* pnupվաշ։ *Նոր բառեր են* ppխմոր, ppnuան, ppnuաճnuա, ppnuեղէն, ppnuեշաղ, ppnuրուխ, ppnuուպ *են։—Ծրքախօս հայոց մէջ կայ Ատն.* ppվել օլմաք *«խմորի ՖՖուիլը» (Արևելք, 1888, նոյ. 8—9)։*

ՓՈԽ.—Սղերդի արաբախօս քրիստոնեաները հայերէնից են փոխ առել čortətu *«շողգամի կամ կաղամբի ՖՖու, ՃուրՃի» (Բիւր. 1899, 116), որ Մշոյ* չnrppnu *բառն է։—Անշուշտ կապ ունին հայերէնի հետ հար. օսս.* tuag *«ՖՖու», լակ.* pnupnu *«քացախ», վրաց.* ოუოუბო pnupnupo *«բոյս՝ որի տերևները փոշիացնելով՝ քացախի տեղ գործածում են» (Զուբ.² 570 դնում է «աղտոր, ամաղ»)։*

ԹԹՈՒԿԻՉ *տե՛ս* ԹՐԹՆՋՈՒԿ։

+ԹԻ, ո *հյ. «նաւ վարելու կամ հող ՃաթելուՃի» Սղ. ձ. 7. որից* թիակ ի–ա *հյ. «նաւի ԹԻ» Ագաթ. 3Հ. կթ. Ոսկիփ. «հողագործի ԹԻ» Ճառընտ. (գրուած է վրիպակով՝ դիակ. տե՛ս ՆՀԲ յաւել.).* թիաւոր *ԱԲ. Նոր բառեր են՝* թիավարել, զուգաթի, եռաթի, երկզուգաթի, թիարան, թիապարտ, ճրաթի *են։*

=*Բնիկ հայ հառ՝ հնխ.* ptio- *ձևից, որ մընում է նաև յունարէնի մէջ՝ հոմեր.* πτύον, *առտ.* πτέον *«երնելու ԹԻ, հեծանոց, հոսելի» իմաստով. ուրիշ լեզուի մէջ այս արմատը չէ պահուած։ Հայերէնը չի կարող փոխառեալ լինել յունարէնից՝ նշանակութեան նուրբ տարբերութեան պատճառաւ։ Հայերէնի մէջ «նաւի ԹԻ» և «հողի ԹԻ» նշանակութեանց զարգացումը ճիշտ այն է՝ ինչ որ հյ.* greba

«թիավարել» և «հոգ փորել»։ (Սլաւականի այս երկու առումները ոմանք տարբեր բառեր են համարում, ինչպէս անում է Berneker 347. հակառակն է հաստատում այժմ Meillet BSL № 85, էջ XIIII. հայերէնը գալիս է նոյնը կրկին հաստատելու)։—Ա՛ճ.

Վերի մեկնութիւնս հրատարակած եմ նախ MSL 20, 161—2։ Յոյն բառը առհասարակ համեմատում են հրդ. fowen, մրդ. voewen «մաղել», սանս. pávana-m «մաղ» բառերի հետ, բայց այս համեմատութիւնը ճիշտ չէ, որովհետև նախաձայն πτ- չի համապատասխանում՝ ըստ Boisacq էջ 824։

ԳԻՒ.—Ախց. Ասլ. Գոր. երև. Կր. Հճ. Համշ. Սեբ. Տփ. թի, Խրբ. Ջղ. թին (սեռ. Խրբ. թիու, Ջղ. թնի), Նախ. թի, թիեը, թիյը, Ալշ. Մկ. Մշ. Մրդ. Շմ. Ոզմ. Սլմ. Վն. թիյակ, Ղրբ. թէ, Ջթ. թը՝, Ագլ. թայն։ —Նոր իմաստներ և նոր բառեր են՝ երև. թի «կռնակի թիաձև ոսկորը», թիակ Ջթ. «կռնակ», թիակում «ապուխտի մի ամբողջական կտոր», թիափէն «կոթը կոտրած փայտե թի», թևթիակ Ոզմ. «թիկունք, կռնակ»։

ՓՈԽ.—Քրդ. تەوا ئاگیری tev-a agiri «հրաթի», որ բարդուած է քրդ. agir «կրակ» և հյ. թի (>tev) բառերից։

*ԹԻԱԿՈՍ «խումբ». նորագիւտ բառ՝ որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Սոկր. էջ 277 «եւ միւսն ևս այն յիմաստասիրացն թիակոս»։

=Յն. θίασος «խումբ, ամբոխ» բառից տառադարձուած, որ գործածուած է բնագրի համապատասխան տեղը—(καὶ ὁ ἄλλος τῶν φιλοσόφων θίασος. տե՛ս Σωκρ. Σχολ. Σκκλ. Ιστ. տպ. Oxford 1893, էջ 165)։—Ըստ այսմ մեր բառը վրիպակ է փխ. թիասոս։

Ուղիղ մեկնեց նախ Մ. Վ. Տէր-Մովսիսեան, Սոկրատի Հրատարակութեան մէջ, էջ 277։

ԹԻՋ, ի–ա հլ. «լիաբաց ձեռքի վրայ բոյթ մատի ծայրից մինչև ճկոյթի ծայրը եղած տարածութիւնը (մօտ 24 սանտիմետր) կամ ըստ երկրաչափների՝ ուղուկ, չորս մատնաչափ» ՍԳր. Կիւրղ. գնձ.—արդի լեզուի մէջ էլ ընդունուած է թիզ «բթամատից մինչև ճկոյթը» և ֆիլ «բթամատից մինչև ցուցամատը՝ որ է մօտ 18 սանտիմետր». (այսպէս է նաև Խոջ. որ պահում է յիշեալ երկու բառերն էլ)։ —Բայց եզնիկի մէջ՝ էջ 214 կարդում ենք. «Ո՛չ աւելի զթիզն քան զբիլն գտանեմք», որից երևում է որ թիզը քիլից փոքր (կամ հաւասա՞ր) է։ Սրան համապատասխան է գալիս Ղրբ. կէղ (=ֆիլ), որ նշանակում է «թիզ, բթամատից մինչև ճկոյթը»։—Թիզ բառից ունինք թզեան «մէկ թիզ երկարութեամբ» Կիւրղ. գտ. Ոսկ. Հերոդ. թզաչափ Յայտմ. թզաչափաբար Անյ. պորփ. թզուկ «խիստ կարճահասակ, գաճաճ» Ոսկ. ա. տիմ. էջ 155, Խոր. աշխ. վրք. Հց. թզաճասակ «թզուկ» ԱՓ. երեխթզեան Եւս. քր. իննթզեան Երզն. լս։

Աւգերեան, Բացատր. չփ. և կշռ. էջ 87, յետոյ ԳԴ, համեմատում են պրս. دست dist «թիզ». (այս բառի նախաձևը պիտի լինի կա՛մ զնդ. dišti «տասը մատնաչափ» և կամ պրս. دست dast «ձեռք». երկուսն էլ անչարմար են ձայնական տեսակէտով)։ Հինք. թուզ բառից Petersson, Ar. u. Arm. Stud. 133—4 նկատելով որ զանազան լեզուների մէջ «թիզ, տարածել և կտաւ գործել» բառերը նոյն ծագումն ունին (համմտ. գերմ. Spanne «թիզ», spinen «գործել», spannen «լարել, տարածել», հսլ. pędī «թիզ», pĕna «լարել», լիթ. pinú «հիւսել»), ուստի հետևցնում է, որ հյ. թիզ և թեզան նոյնարմատ են և ծագում են հնխ. teg'h- «լարել, տարածել» արմատից, որի գոյութիւնը սակայն այլուստ չի կարողանում հաստատել։ (Այս պարագային համեմատելի էր հնխ. tek «հիւսել», որի վրայ ընդարձակ տե՛ս **թեքել**)։

ԳԻՒ.—Ագլ. Ախց. Ասլ. երև. Խոջ. Խրբ. Կր. Հճ. Համշ. Մշ. Մրդ. Ջղ. Ռ. Սեբ. Սլմ. Սլ. Վն. Տիգ. Տփ. թիզ, Ոզմ. թէ՛զ, Ջթ. թը՛զ, զարմանալի ձև է Արբ. թիլ «բթամատից մինչև ցուցամատը», որ անշուշտ թիզ և ֆիլ բառերի խաչաձևման արդիւնքն է։ —Նոր բառեր են թզանոց, թզիկ «կարճ», թզել «թիզով չափել»։

+**ԹԻԹԵՂՆ**, ե հլ. (թիթղաե, թիթղուեմ) «բարակ թերթ ոսկիի կամ մի ուրիշ մետաղի»

ՍԳր. «ցուցանակ, գրուած տախտակ» Անկ. գիրք հին կտ. 58. գրուած է նաև թեթեղն *ՋԲ։ —Որից* թիթեղնակապ *«թիթեղներով յարմարեցրած» ԱԲ.* թիթեղեայ, թիթեղագործ, թիթեղաձման, թիթեղապատ *են (արդի գրականի մէջ)։*

=Բնիկ հայ բառ՝ հնխ. pter *արմատից. մանրամասն մեկնութիւնը տե՛ս* թիռ *արմատի տակ։—Ա.Ճ.*

Bugge KZ 32, 40 *դնում է հնխ.* ptalo- *նախաձևից. համմտ. յն.* πέταλον *«թիթեղ». հայը կրկնուած է. և յատկուած է, իսկ* a *գարձել է ե՝ յաջորդ ղ-ի պատճառով։ Հիւբշ. 449 չի ընդունում այս մեկնութիւնը։ Հիմնք. բուղբ բառից՝ Աճառ. ՀԱ 1899, 232* թեղ *արմատից կրկնուած, իբր *թեղ-թեղ-և>*թեթեղն։ Այնուհետև տուած են վերի մեկնութիւնը՝* MSL 20, 161: Petersson KZ 47, 259 *անս.* tala- *«հարթավայր», հսլ.* tĭlo *«յատակ», լիթ.* tiles *«նաւակի յատակի տախտակները», յն.* τηλία *«նարտ», հիռլ.* talam *«հող», կիմր. կօրն.* tal, *բրբտ.* tal *«ճակատ» ևն։*

+ԹԻԹԵՒՆ, ն *հլ. (թիթոան, -ոանց, -ոունք) «թիթեռնիկ». ունին միայն ՀՀՔ, ՋՔ և ԱԲ. յոգնակիի համար ունինք նաև* թիթուեմ *Մխ. առակ. ճկ. որ ենթադրում է երկրորդական *թիթեղն ձևը. գտնում է գաւառականների մէջ և Բառ. երեմ. էջ 119. նոր գրականում* թիթեռ, *որից* թիթեռնիկ, թիթեռնաձև, թիթեռնազգի։

=Բնիկ հայ բառ՝ հնխ. pter- *արմատից. ընդարձակ մեկնութիւնը տե՛ս* թիռ։

Bugge KZ 32, 40 *տուաւ ուղիղ մեկնութիւնը, իբր կրկնական բառ (թի-թեռ-ն) միացնելով յն.* πτερύν *«թև, փետուր»,* πτέρυξ *«թև» ձևերին։ Այս մեկնութիւնը չի ընդունում Հիւբշ. 449. ընդհակառակը նոր հիմունքներով հաստատում է Աճառ.* MSL 20, 161: Meillet, Altarm. Elementarb. *43 համարում է կրկնական և միացնում է* թրռեմ *բային։* Pictet, *բ. տպ. Ա. 664 համարում է կրկնաւոր և բնաձայն, ինչպէս է նաև հինդուստ.* titrē *համանիշը։*

ԴԻՒ.—Երև. Համշ. թիթէռ, *Ագլ.* ըբըm՛ռնիկ՝, *Ոզմ.* ըբըբռնէ՛կ, *Ալշ.* թիտռոնեկ, *վն.* ըռոբըռոնէկ, *խրբ.* ըռոբըռուգ, *Գոր. Ղրբ.* ըբըբռմա՛ղէ.—*երկրորդական *թիթեղն ձևը պահում են ՋԲ.* թիթէխ, *Ջն.* ըթէղ, *Ակն.* ըբթէխ, *Մշ.* թիտըղնիկ *(սրա հետ համմտ.* Rivola, *Բառ. հայոց 1633, էջ 135 յիշուած* թիթխնիկ *ձևը), Տիգ.* բէբէղիկ *«թիթեռնիկ» և Նորայրի (Բառ. ֆրանս.* douve *բառի տակ) յիշած* թիթեղ, թիթղենկ *բառը, որ նշանակում է «անթև որդ՝ որ գոյանում է ոչխարի սրտի կամ լեարդի մէջ՝ երևնուկ շատ ուտելուց»։—Առանձին ու անկախ ձև է Մկ.* ըբխըբմուրիկ *«թիթեռնիկ»։ Նոր իմաստ ունի* ըբթեռնիկ *Առն. «Թեթեւամիտ մարդ» (Արեւելք 1888 նոյ" 8—9), նոր բառ է* թիթեռնաճաճան լինել *Ղրբ. «շերամի թիթեռների դուրս գալը բոժոժից՝ սերմ ածելու համար»։—(Ղրբ.* ըբբրմա՛ղէ *«թիթեռնիկ» ձևը անշուշտ ժողովրդական բարդութիւն է՝* թիթեռ *և* մաղել *բառերից. համմտ. Ղրբ.* ալրմա՛ղէ, *Երև.* ալըրմա՛ղիկ, *Կր.* ալրմաղ *հոմանիշները՝ որոնք ուղղակի կազմուած են ալիւր և մաղել բառերից։ Այսպէս է կոչուած թիթեռնիկը՝ թևերի վրայ գտնուած ալիւրանման բարակ փոշու պատճառով։)*

**ԹԻԹՈՒՄ «աղտոր» Բժշ. ունի միայն Հրուս. § 824, որ սխալ է գրում* բրռում։

=Պրս. تتم tutum *«աղտոր, սումախ»։*

Ուղիղ մեկնեց Նորայր ՀԱ 1924, էջ 549։

**Թիլ, ի—ա հլ. «բլուր, հողաբլուր». յետին ժամանակի բառ, որ մի քանի անգամ ունին Մխ. ասոր, Սամ. աննց. և Մխ. այրիվ. այսպէս. «Սա (Շամիրամ) արար զհողակոյտ բլուրսդ, զոր կոչեն Թիլս» (Մխ. ասոր. տպ. Երուսաղէմ, էջ 35). «Շամիրամ շինեաց բլեր բլուր ի հողոյ կուտեալ ամրոց. բայց մնք զդաք պատճառ բլացացդ...» (պատմում է Թէ Աստուծոյ հրամանով մեհեանները կործանուեցան, կուռքերը գետնի տակ անցան և նրանց վրայ բլուրներ ձևացան). մինչև ցայսօր դեք կախարդք առ բլուղ գործելով զարուեստս իւրեանց։ (Այսպէս ըստ ՆՀԲ-ի օրինակի. Երուսաղէմի տիպը՝ էջ 35 շատ*

տարբեր է և ունի թիլս, բլացդ, բլօֆդ ձևերը, փոխանակ ռամկական բլեր, բլացացդ! առ բլովդ հոլովների). «Շամիրամ կին Նինոսի շինեաց բլեր, բլուր ի հողոյ կուտեալ ամրոց. բայց այլք վասն բլեռոյդ ասեն թէ... զկախարդութիւնսն առ բլօֆն առնեն» Սամ. անեց. 16.—«Շինեաց Շամիրամ... և արար հողաբլուրս ի վերայ նոցա, զոր թիլս անուանեն» Մխ. այրիվ. 46։

=Արաբ. تَلّ tall «բլուր, հողաբլուր», յգ. تلال tilāl «բլուրներ». բնիկ սեմական բառ է. համմա. եբր. תֵּל tēl, ասոր. ܬܠܐ telā, արամ. תלא tilla, խպտ. tal, ասուր. tīlu, tillu «բլուր».—սեմականից փոխառեալ են պրս. tal «կոյտ, դէզ», քրդ. til «բլրակի գագաթ»։—Աճ.

Նշ Ր չունենալով Անեցին և Այրիվանեցին, ո՛չ էլ Միխ. ասորու առաջին օրինակը և սխալելով սրա դևէ, կախարդ են բառերից, ինչպէս և բլամեր, ալրամեր «կախարդանք, յուռութք» բառերի պատահական նմանութիւնից, առեղծում է անգոյ բլեր, ոյ կամ բիլ, բլոյ և բլացի, ցաց ձևերը՝ «թրբլրսմ, յուռութք» նշանակութեամբ։ Այսպէս է նաև ՋՐ։—Իսկ ԱՐ թէև ունի բիլ «հողաբլուր» նշանակութիւնը, բայց կրկնում է նաև նշՐ-ի բիլ, բլացի ձևերը։ Սրանցից դուրս նշՐ և ՋՐ դնում են բիլ «աւան, գիւղ», հանելով թիլ տեղական յատուկ անունից։ԱՐ իրաւամբ ջնջած է այս։ Ազաբէգեան, Բիւզ. 1903, № 1943 դնում է «շիրիմ, տապան». վերջին անգամ Վարդանեան ՀԱ 1921, 640 ասոր. tēlā ձևից։ վերի մեկնութիւնը Արմատական բառարանիս ձեռագրից առնելով հրատարակեց Աճեմեան ՀԱ 1922, 592։

ԹիլԱ3 «մի տեսակ թանկագին քար». նորագիւտ բառ. երկու անգամ գտնում եմ գործածուած էֆիմ. 249։

*Թիմսա՛հ «կոկորդիլոս». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Վասիկ. 72՝ կոկորդիլոս բառին իբրև բացատրութիւն. «Ա՛ռ զջորեկին մորթին կամ զկոկորդիլոսին՝ որ է թիմսահն».—սրանից երևում է՝ որ նոյն ժամանակի լեզուի մէջ թիմսահ աւելի հանրածանօթ բառ էր, քան կոկոդրիլոս. եթէ սակայն չկայ այստեղ արաբերէն թարգմանութեան կատարեալ հետևողութիւն։

=Արաբ. تمساح timsāh նոյն նշ.—Աճ.

Թին «խաղողի կուտ» Բուզ գ. 4. Վրդն. անդ. Անյ. վերլծ. արխատ. որից թնաձուտ «խաղողի մի հատիկ կուտ» Ոսկ. ա. թես. էջ 446. թնիճ «նոյն նշ.» Տիմոթ. կուզ, էջ 324, 325 (երկուսն էլ նորագիւտ. չունի նշՐ. տե՛ս իմ Հայ. նոր բառեր Տիմոթ. Կուզի մէջ, էջ 74—76)։ Նոյն բառն է Բառ. հրեմ. էջ 120 թնիշ (շ-ով!) «հատ կամ որթն որ ի հողոյ ելանէ»։

Հինք. էջ 353 արար. تين tīn «թուզ» բառից։ Petersson KZ 47, 281 յն. στία, στῖος «խիճ», գոթ. stains «քար», լտ. stīria «կաթիլ», յն. στίλη «կաթիլ», հսլ. tělo «մարմին» են բառերի հետ՝ հնխ. ti-no- ձևից։

Թինդ տե՛ս Թունդ։

Թինոս. արմատ առանձին անգործածական, որից թինոսիկ «իմաստուն, փիլիսոփայ» Հին բռ.=Բառ. հրեմ. էջ 119. թինոսեան «փիլիսոփայ» Մագ. գամագռ. ուրիշ վկայութիւն չկայ։

Գտաւ ու մեկնեց Մէնէվիշեան ՀԱ 1911. 375։

Թիղ «գունդ?» նորագիւտ բառ, որ մէկ անգամ ունի Մխծուխ. 86 «եկն նստաւ ի վերայ նորա ի Սալմասա ճակատ առ ճակատ և թիղ առ թիղ». (Շահնազարեան, անդ՝ մեկնում է «գունդ առ գունդ»)։

+Թիր «թռիչ, թռչիլը» կամ «սաստիկ փափագ» Օրբել. հների մէջ առանձին գործածուած չէ. սակայն սրանից են կազմուած բռեայ, բռի՛ր, բռուցեալ բայաձևերը, նաև բարձրաբիր Արծր. յարաբռեալ Շար. հրբիր (նոր գրականի մէջ), կրկնութեամբ՝ բռպռռալ «թռչկոտիլ» Մխ. այրիվ. էջ 9 (տպուած է բռպաաալով). բայց աւելի սովորական են՝ ն և չ յօդակապերով՝ բռանիլ «թռիլ» Առակ. իզ. 2. Խոսր. բռնուլ Կիւրղ. Խոսր. բռչիլ ՍԳր. Եփր. ծն. բռչուն ՍԳր. Եւս. քր. Վեցօր. Ոսկ. բռչան Վեցօր. 167. բռիչ Երգ. ր. 6. Ոսկ. ես. «աստղ» (որ և բռիչ աստղ) Արիստ.

աշխ. Երզն. մաթ. Տոմար. երկնաթռիչ Փարպ. ֆաչաթռիչ Մծբ. երկրաթռիչ Վանակ. յոթ. երազաթռիչ Յճխ. թռչնագիր, թռչնարուծութիւն (նոր գրականի մէջ)։—Այս արմատի հետ միանում են նաև հետևեալ ձևերը.— **բրթռել** «թռչկոտելով երթալ» (կաքաւի համար ասուած) Սեբեր. թռթռել «մայր թռչունի թռվռալը ձագերի շուրջը» Լաստ. ժ. թռթռալ «սրտի թփռտալը» Փիլ. այլաբ. բրթռուռն «լոյսի ճօճիլ կամ ծածանիլը» Առ որս. բրբրական «սրընթաց» (կառքի համար ասուած) Սեբեր. բրբռակ «շուտ դարձող, ճարտարախօս (լեզու)» Կոչ. 47, որոնք բոլորն էլ բիռ կամ աղուած թիր ձևի կրկնականներն են.— **թիթեռն** «թիթեռնիկ» (տե՛ս վերը առանձին), որ կազմուած է բիռ արմատի *թեռ ձայնդարձից կրկնութեամբ, իբր *թէթեռն>թիթեռն. կրկնութիւնը աւելի յայտնի կերպով ցոյց են տալիս գաւառականներից վն. թռթռնէկ և խրբ. թռթռուգ (իբր թռթռնիկ, թռթռուկ). բայ այսմ թիթեռն բուն նշանակում է «թռչկոտող»։—**Թեր.** այս բառի առաջին նշանակութիւնն էր «թռչունի թև, փետուր», որ թռչելու գաղափարի հետ անձուկ կերպով կապուած է. իմաստի ընդարձակմամբ կամ փոխաբերութեամբ այնուհետև բառս ստացաւ «տերև, կողք, կողմ, թևերի» նշանակութիւնները.—**բեր** «փետուր» նշանակութիւնը պահուած չէ հայերէնի մէջ (ունի միայն յոյնը). **բեր** «տերև» մնում է միայն գաւառականներում (տե՛ս **բերբ** բառի տակ), իսկ **բեր**՝ մնացեալ նշանակութիւններով աւանդուած է ոսկեդարեան գրականութեան մէջ (տե՛ս վերը **բեր** բառը առանձին). նշանակութեան զարգացման ճիշտ այս պատկերն է ցոյց տալիս սանս. pákša- «թռչունի թև, ուս, և կողմ, կէս». համմտ. նաև Բրբ. qol «թև, մարդու բազուկ», որ Ղարաբաղի բարբառի մէջ դարձել է ղօլ «կողմ», էս ղօլը «այս կողմը», էն ղօլը «այն կողմը», մէժղօլ «մէջը» (իբր մէջ+ղօլ), ֆաժղօլ «վարը» (իբր ֆաշ+ղօլ), տիւզղօլ «դուրսը» (իբր դուրս+ղօլ) են. համմտ. նաև Շտ. վըր թիվին իշկել «աշքի պոչով նայիլ, այսինքն՝ թևի կամ ուսի վրայով կողմնակի հայեացք ձրգել»։—**Թերբ** (տե՛ս նաև առանձին) կազմուած է վերի **բեր** արմատից՝ բ մասնիկով. բոլոր նշանակութիւններն էլ բխում են փոխաբերութեամբ նախաւոր «փետուր» իմաստից։—**Թիթեղն** որ «մետաղի բարակ թերթ» նշանակութեամբ կցւում է **բերբ** բառի հետ, իսկ «թիթեռնիկ» նշանակութեամբ (տե՛ս **թիթեռն** բառի տակ) կցւում է **թիթեռն** բառի հետ։ Երկու նշանակութեամբ էլ կրկնական է և ծագում է **բիռ** արմատի **բիղ** կամ **բեղ** ձայնդարձից, իբր *թէթեղն>թիթեղն։—Ըստ այսմ արմատը ներկայանում է հայերէնի մէջ **բիռ**, **բիր**, **բեռ**, **բեր**, **բեղ** ձևերով՝ պարզ կամ կրկնուած և կամ **բ** աճականով աճած։

ԹՐԹՐԱԿ *«ճարտարախօս» տե՛ս Թիու։* Petersson LUA 1916, 90 (*առ* Pokorny *1,744) հնխ.* tor-*«բարձրաձայն» արմատից, որի ժառանգները տե՛ս* ընթեռնուլ *բառի տակ։*

ԹՐԹՐՈՑ *«մեղուների պարս». անծանօթ բառս գիտէ միայն Նորայր, Բառ. ֆր. 921 ա։*

ԹՐԻԱՆԻ *«արմաւ կամ փիւնիկ թռչունը». նորագիւտ բառ՝ որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Միխ. ասմ. 67 «Ձի՛զ է ամաչելն՝ պաշտողացդ զթռչունն Թրիանէ, որ է արմաւն»։ Այս բառն է որ ԱՔ գրում է* թռանի *«թռչուն մը»։ Բառիս* թռանի *գրչութեան համար վկայութիւն ունինք Անկ. գիրք հին կտ. 232 «եւ դուք ամաչէք պաշտելով զԹռանէ թռչունն»։*

ԹՐԻՔ, ի–ա *հլ. (յետնաբար) «աղբ, կղկղանք (մարդու)» Ոսկ. ա. տիմ. էջ 114. «եղին քակոր» Սամ. աննց. 87. «իշի աղբ» Վրդն. պտմ. 122. Վստկ. որից* թրաժողով *«Թրիք հաւաքող» Սամ. աննց. 87. Վրդն. պտմ.* թրաճալ *Ոսկ. ա. տիմ. էջ 114.* թրած *Փարպ.* թրացեալ *Փիլ. լիւս. 134 (այս և* թրաճալ *գործածուած են մարսուող կերակուրների համար).* թրել *Վրդ. առ. 122։*

=Նման է հնչում հնդեւրոպական լեզուախմբին պատկանող զանազան լեզուների այլևայլ բառերի հետ. այսպէս՝ 1) հսլ. driskati, dristati, *ռուս. գռ.* дристъ, дрисня *«փորլուծութիւն», փռուս. գռ.* kozodrýst *«այծի քակոր», փխբ. «ձնծաղիկ», բուլգար.* drisůk, *սլ.* drîsk, *չեխ.* drist, *լեհ.* drzysta *«փորլուծութիւն», որոնց հետ միանում են հիսլ.* drīta, *հանգլ.* drītan, *սա. գերմ.* drīten, *անգլ.* dirt, *հոլլ.* dreet *«կղկղանք, կղկղել, աղբ». սլաւական խմբի նախաձևն է* *drisk-, *drist-, *որ տալիս է հնխ.* dhreid-sq-, dhreid-(s)t- (Berneker, *էջ 224), —2) լիթ.* tridé, trëda *«փորլուծութիւն»,* trẽdžu, trẽstI *«լուծում ունենալ», որոնք հայում են* *treid- *նախաձևին* (Berneker, *անդ).—3) հհիւս.* ðrekkr, *մրգ.* drec, -ckes, *գերմ.* dreck, *դան.* drack, *շվէդ,* dräck *«աղբ, կղկղանք», կիմր.* troeth *«լուացքաջուր, մէզ», յուն. ատտ.* τρώξ, τρυγός *«իւղի և գինու դիրտ, մրուր»?* τάργανον *«փչացած գինի», στεργάνος «աղբ», որոնք տալիս են հնխ.* stereg'-, tereg', treg'-, *որից վերջաձայնի փոփոխութեամբ՝ 4) լատ.* stercus *«կղկղանք, աղբ, խարամ»,* sterquilinium, sterculinum *«աղբակոյտ», լիթ.* tersziú, teřszti *«ապականել, մարգերը տիղմով լցնել»,* triszimas *«արտերը պարարտացնելու աղբ»,* triszti *«արտերը աղբով պարարտացնել», որոնց էլ նախաձևն է* sterk'-, terk'- *և* trek'-, *5) վերջապէս սրանց ընգային ձևն են ներկայացնում կիմր.* trwnc *«մէզ, դիրտ, մրուր» բրբտ.* stroñk *«մարդու կղկղանք», լիթ.* trąsza *«տիղմ»,* tręsztù *«փչանալ, ապականիլ»* (Boisacq 943, Walde 737, Kluge 101, Pokorny 2, 641)*: Բայց այս ձևերից ո՛չ մէկը չի կարող տալ հյ.* թրիք, *որ պահանջում է հնխ.* trēk²- *ձևը։—Ա՛ճ.*

ՆՀԲ գերմ. dreck, *լտ.* stercus, *թրք.* ters, *յն.* κόπρος, *ռմկ.* gübre, ǰibre: *Տէրվ.* Altarm. *14 լտ.* stercus<ster-

quus, յն. στεργάνος, գերմ. dreck, սանս. karīša, apa-skara ևն։ Հիմնք. բրծել բայից. նոյն է դնում նաև «գերմ. բրիֆ» !! Liden, Arm. Stud. 109 հանում է *բիր արմատից՝ f մասնիկով և համեմատում է այն բառերի հետ՝ որոնք յիշուած են բանալ բառի տակ. յիշենք յատկապէս յն. τῖλος «փորի լուծ», կիմր. tail, հրգ. theisk, deisk «քակոր, աղբ»։ Karst, Յուշարձ. 419. ՖՓր. ter, tir «անմաքուր», չուվաշ. tiris, օսմ. teres «անմաքուր»։

ԳԻՒ.—Ալշ. Ախց. երև. կր. Մշ. Ջղ. Ռ. Տփ. բրիֆ, Ասլ. բրիֆ, բրի*, Տիգ. բրրիֆ, Մկ. Սլմ. բրիֆ', Սեբ. բրիգ, Մրզ. Շմ. բիրիֆ', Ոզմ. բրէ'ֆ', Գոր. բրէֆ, Ղրբ. բրէֆ', Զթ. բը'յաֆ, բըրըֆ, Հճ. բայյիֆ.—նոր բառեր են բրաչ, բրաթաթախ, բրաւնոտ, բրաման, բրաշի, բրեչ, բրոտ, բրոտեչ։

*ԹՐՄՈՒՍ (գրուած նաև բրմուզ, վրիպակով՝ բրմուղ, բրամուղ) «մի տեսակ բակլայ, lupinus sativus՝ Բժշ. Վստկ. 22, 32. նոյնը բոռմ ձևով ունի Բռ. երեմ. յաւել. 567։

=Արաբ. تورمس turmus, tarmus, turmis, ասոր. ܬܘܪܡܣܐ tūrməsa, Ֆրգ. türmüs, վրաց. თერმოა թերմիա, თერმუზი թերմուզի, თორმაზა բորմազա. բոլորի մայրն է յն. θέρμος, որ գործածուած է արդէն Թէոփրաստի բուսաբանութեան մէջ (Ն. Ք. Գ դար). բոլորն էլ նոյն նշ.—Հիւբշ. 267։

Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ, յետոյ Հիւբշ. ZDMG 35(1881), 659։

ԹՐՈՂԱԿ «թշուառ». ունի միայն Մագ. գամագտ. բռղակութիւն ածանցի մէջ (այլ ձ. բռակողութիւն, բռղականութիւն)։

ԹՐՈՒ «անշահ, անպիտան, անօգուտ». դիտէ միայն ՀՀԲ, որ թերևս ենթադրութեամբ է շինած յաջորդ բռուշայ ձևից։

⊙ԹՐՈՒՆԴ. արմատ անգործածական, որից կազմուած են բռնդիւն «շշնկոց, աղմուկ» ՍԲ. անբռունդ «անշշուկ, լուռ» Փիլ. նխ. բ. էջ 69. Լծ. փիլ. (իսկ Բառ. երեմ. էջ 20 մեկնում է «անզգայ»)։

=Բնաձայն բառ։—Աճ.

ԹՐՈՒՉԱՅ (սեռ. -ի). անստոյգ բառ. մէկ անգամ գործածուած է Եղիշ. ը. էջ 127 «Ո՞ չիմաստուն վաճառականաց զպատուական մարգարիտն փոխանակիցէ ընդ անարգ թըռուշայի».—գործածութեան տեղից յայտնի է որ պիտի նշանակէ «կեղծ մարգարիտ, թրք. սրշա»։ Ունի նաև Քաջունի հտ. 2. 58։

Բառարանները մեկնում են զանազան ձևերով. այսպէս՝ Հին բռ. «բռոշակ կամ բռուշակ. անարգ կամ անգէտ, և կարթ. կամ բռուանշա, անպիտան»։—Բառ. երեմ. էջ 122 բռուանշայ «անպիտան» և բռուշակ «անարգ»։—ՀՀԲ չունի բռուշայ, այլ սրա փոխարէն բռու՝ որ տես առանձին։—ՆՀԲ. «թուի դռօշ, պրս. տիրէֆշ, իբր փերթ կտաւոյ... որպէս և տիւրիյշէ՝ է ազգ թաշկինակի»։—ՋՔ «փերթ կտաւոյ, քուրջ. կամ տաշեղ և կամ ուլունք»։—ԱՔ «քուրջ, ուլունք, որ և իցէ չնչին՝ հասարակ բան».—իսկ ՀՀԲ-ի հաւատարիմ հետևորդ ՓՔ՝ անգիտութեամբ նշանակել է թէ՛ բռու և թէ՛ բռուշայ ձևերը։—Հիմնք. ուղիղ է հասկանում «սուտ, շինծու մարգարիտ», բայց սխալ է մեկնում իբրև պրս. durri šāh «թագաւորական մարգարիտ», ծաղրական մտքով (durr արաբերէն բառ է, ուստի մեզ հետ գործ չունի)։ ԳՔ էջ 534 ունի բռուշայ «քուրջ, ուլունք, որևիցէ չնչին հասարակ բան», իսկ էջ 397 ղըռուշայ «աղամանդի նմանող բազադրութիւն, սրշայ, strass» իբրև գաւառական բառ, վերջինը շատ հետաքրքրական պիտի լինէր, բայց կարծեմ սխալման արդիւնք է։ Փորթուգալ փաշա, Եղիշէ 421 պազենդ. տարեօշ, յգ. տարեօ՛շա՛ «աղքատ, տնանկ»։—Բոլորովին տարբեր է երև. բռիշա «կտոր, մաս», որ փոխառեալ է պրս. تراشه tirāša «տաշեղ» բառից։

*ԹՐՊՈՒՏ «մի տեսակ բոյս է. լտ. turbith (սպիտակը կոչւում է globularia alypum)» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 828. նոյնը Բռ. երեմ. յաւել. 574 Գազիանոսից առնելով գրում է «թոյրպիթ, որ է թոպութն»։

=Արաբ. تربد turbid, turbiḍ (Շթայնշնայդէրի հաւաքածոյի մէջ՝ տե՛ս WZKM

II, 323), որ ծագում է սանս. तृपु tripuṭa բառից (բուն նշանակում է «եռանկիւնի», բայց փխբ. «convolvulus, turpethum կամ փոքր հիլ»՝ հունդերի եռանկիւն ձևից առնելով. Böhtlingk, Sans. Wört, III, էջ 436), որից էլ հինդուստ. tarbud, ստ. յն. τουρπούτ, նյն. τουρπέθ (ըստ Seidel, Մխ. հեր. § 105 Ipomoea turpethum R., որ Հնդկաստան, Խորասան և Ջաւայից մինչև Ովկիանիա տարածուած բժշկական մի բոյս է)։—Հիւբշ. էջ 279։

Ուղիղ մեկնեց նախ Նորայր, Բս. Ֆրանս. էջ 1251 բ։

*ԹՕՉ «կալի մանրուք, փոշի, մղեղ» Յայսմ.

=Թրք. ﻃﻮﺯ toz «փոշի»։

Ուղիղ մեկնեց ՆՀՒ։

—ԹՕԹԱՓԵԼ տե՛ս Թափ։

ԹՕԹԵԼ տե՛ս Թաւ։

—ԹՕԹՈՎ «մի ակնթարթ» Տօմար. սրա բայական ձևն էր *ԹՕՐՈՎԵԼ՝ որ ԹՕՐԱՓԵԼ բառի երկրորդ ձևն է և ունի նրա բոլոր նշանակութիւնները. բայց մատենագրութեան մէջ պահուած է միայն վերի իմաստով (հմմտ. ականաւ ԹՕՐԱՓԵԼ). միւս հիմնական նշանակութիւնները, ինչպէս նաև բայական ձևերը գրտնում ենք գաւառականներում։

ԳԻՒ.—Ալշ. ԹՕՐԻԼ, Մշ. ԹՕՐՎԵԼ, Պլ. Ռ. Սեբ. ԹՕՐՎԷԼ, Խրբ. Տիգ. ԹՕՐՎԻԼ, Ննխ. ԹՕՐՎԷԼ, ԹՕՐԷԼ «գլուխը շարժել», Սչ. ԹՕՐՓԵԼ «շարժել», ԶՓ. ԹՈՒՐՎԻԼ, Ասլ. ԹԷՕ*ՎԷ՝Լ, Սվ. ԹՕՐՐՆՎԻԼ, Հճ. ԹԷՐՎԵԼ, հմմտ. Կովկասեան գաւառականներով թափ տալ.—Նոյն ԹՕՐԱՓԵԼ բառի տարբեր մէկ ձևն է Վն. թախթփել «թափել», Նբ. Վն. «թօթուել (օր. ծառը կամ գորգը ևն)», Ոզմ. ԹՐխԹՐփիլ, իբր «թօթափել» (ւ >խ. ինչպէս եաւրն>օխտր, աւն>օ՛խնը). իսկ Տփ. մինչև այժմ անաղարտ պահում է ական-ԹՕՐԱՓԵԼԻ էլավ «ի սպառ անհետացաւ» դարձուածը։—Թրքախօս հայերի մէջ կայ Ատն. ԹՐՎԷԼԼԷՄԷՖ «թօթուել»՝ կազմուած թրք. -le-mek բայակերտ մասնիկով (Արևելք 1808, նոյ" 8—9)։—Նոր բառեր են՝ ԹՕՐՎՈՒՖ, ԹՕՐՎՈՒԼ, ԹՕՐՎԱՉՐԻԿ, ԹՕՐՎՈՒՆԵԼ, ԹՕՐՎՈՒՈՒՖ։

[ԹՕՆ «վաւաշոտ». ունի միայն ՀՀՒ.—կեղծ բառ՝ որ հանել է Թօնու կոնկողեոոս ասորեստանեան թագաւորի անունից!!]

+ԹՕՆ տե՛ս Թանալ։

=Բնիկ հայ բառ՝ հնխ. tā «հալիլ, լուծուիլ» արմատից, որի վրայ ընդարձակ տե՛ս ԹԱՆԱԼ։—Աճ.

ՆՀՒ լծ. ԹԱՆԱԼ։ Karst, Յուշարձան 403 սումեր. dim, tim, tum «հոսիլ, հոսանք»։ Canini, Et.étym. էջ 78 օսս. don «ջուր, գետ», գնդ. dānu «գետ»։ Ուղիղ մեկնեց նախ Petersson KZ 47(1916), 275—6, որ դնում է հնխ. tā արմատից, բայց համարում է աճած ta-p ձևից, -ni- մասնիկով իբր հնխ. təp-ni-, ճիշտ ինչպէս սորբ. toń «խոր ճահիճ», ռուս. ТОНЯ «ուռկան գցելու տեղ», ЗАТОНЪ «ծովախորշ»։ Վերի ձևով նախորդից անկախաբար Աճառ. MSL 20, 161։

ԳԻՒ.—Ախց. Ախք. ԹՕՆ «անձրև», որից էլ ԹՕՆԱՅԻՆ Ախք. կ. «անձրևային», ԹՕՆԵԼ Բբ. «անձրևել», ԹՕՆԹՈՒՐ Սեբ. «անձրևոտ եղանակ»։

ՓՈԽ.—Սղերդի արաբախօս քրիստոնեաններն ունին tanten, որ Ս. Ն. (Բիւր. 1899, 116) մեկնում է «ԹՕՆԲՐՆԱԼ, ձիւնել». այս վերջին ԹՕՆԹՆԱԼ ձևը գաւառական մի բառ է՝ կազմուած ԹՕՆ բառից, որից էլ փոխառեալ է յիշեալ արաբերէն գաւառականը։

*ԹՕՆԻ «տխմար, ապուշ». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Վրդ. առ. 257։

=Պրս. ﺗﻮﻧﻰ tūnī «գող. 2. հեռացեալ և տարակացեալ. 3. է այն ոք՝ որոյ ուստն ո՛չ է յայտ թէ յորմէ՛ գաւառէ իցէ. և զարմն՝ թէ յորմէ՛ ցեղէ իցէ»։ Այս նշանակութիւնները թէև բոլորովին նոյն չեն մերի հետ, բայց յայտնի է որ նման ժողովրդական նախատական ածականները տեղից տեղ շատ փոփոխութեան են ենթարկւում իմաստի կողմից։—Աճ.

ԳԻՒ.—Նոյն է Ղրբ. բի՛ւնի «ապուշ տրխմար, անճարակ, խեղճ ու կրակ»,—այս բառը թէև համարւում է բիւնի «յարութիւն» յատուկ անունից ձևացած (տե՛ս իմ Գաւառ. բռ. էջ 366), բայց այս նմանութիւնը պատահական է և կամ ժողովրդական ստուգաբանութեամբ ա՛յսպէս յարմարեցրած. համմտ. պլ. ծծկ. վարդան «վատ տեսակի ապրանք» (յարմարեցրած վար բան ձևից)։

ՓՈԽ.—Ղրբ. բի՛ւնի բառը հայերէնից փոխառութեամբ գործածական է նուխիի շրջանի թուրքերի մէջ՝ իբրև նախատական անուն՝ հայերի համար. ինչ. tüni gʸälär «անշնորհք հայը գալիս է». (տե՛ս Քամալեան, Գալօ Ախօ և Խաչան, 1906, էջ 30)։

ԹՕՇ *«թոյլ, արձակ, լայն (զգեստի և կօշիկի համար ասուած)» Մարթին, որից* **թօշկոշիկ** *«կօշիկը ոտքին թոյլ, լխլխ» ԱՒ։*

=Նոյն է զնդ. taoš- «ազատ, պարապ, արձակ լինել» բառի հետ, որ կցւում է սանս. tuccʰyá «պարապ» բառին. այս իրանեան ձևի դէմ ունինք պրս. تهی tih, تهی tihī «պարապ», պհլ. tuhīk «պարապ», բելուճ. tusag «թողուած՝ լքուած լինել, հանգիլ, մարիլ», որոնք չեն կարող տալ հյ. թօշ։ Սակայն իրանեան բարբառների մէջ կան նաև š-ով ձևեր՝ համապատասխան զենդականին. այսպէս՝ վախի tošam «արձակել, բաց թողնել», աֆղան. taš «դատարկ, պարապ» և նոյն իսկ պհլ. tōšēnītan ձևը (տե՛ս Bartholomae 624, Horn § 404)։ Եթէ հյ. ձևը կարդանք թոշ, կարող է համապատասխան իրանեան մի բարբառից փոխառեալ լինել։—Ա՛ճ.

ԹՕՇԿԱՆԱԼ *«հոտիլ, նեխիլ, ցաւով և ապականութեամբ հարկանիլ» Նար. ունի միայն 22Բ. նոյն բառը ՓԲ գրում է* **թոշ կանալ** *ձևով՝ հանելով Բառ. երեմ. էջ 121* **թոշկացեալ** *«հոտեալ» ձևից։*

*Petersson, Ar. u. Arm. Stud. էջ 55—56 հանում է *թօշուկ «հոտած» ձևից, արմատը դնում է* **թօշ**, *և* **թօշնիլ** *բայի հետ միասին կցում է սանս.* **toç** *«հոսիլ, թրջուիլ» անստոյգ բառին։*

ԹՕՇՆԻԼ *«թուլանալ, ուժից ընկնել (մարդոց համար ասուած)». մէկ անգամ ունի Դաան. ժզ. 19 «Սկսաւ (Սամփսոն) թօշնիլ և մեկնեցաւ ի նմանէ զօրութիւն նորա».—սրա հետ նոյն է՝ «վատթարիլի և թօշնիլի և ձերբակալ լինիլի» (Բշնամին). Ոսկ. եփես. 923, —սրա հետևութեամբ էլ «Թօշնի խարխլի և լինի վատթարագոյն իբրև զմանուկ մի տղայ» Սարգ. բ. յհ. էջ 611.—Նոյն է դարձեալ Տաթև. հարց. 424 «Ջթօշումն անարգութեան» (Սամփսոնի համար է ասում)։ Արդի գրականի մէջ* **թօշնիլ** *գործածւում է «թառամիլ, թարշամիլ» նշանակութեամբ (ծաղիկների համար ասուած), որի վրայ տե՛ս տակը ԳԻՒ։*

Հիւնք. պրս. تشنه **tašna** *«ծարաւի» բառից՝ Թիրեաքեան, Արիահայ բռ. 169 պրս. تشنه* **taš** *«տօթ, տապ» բառից՝ Petersson, Ar. u. Arm. Stud. 55—56* **թօշկանալ** *բառի հետ միասին կցում է սանս.* **toç**- *«հոսիլ, թրջիլ» արմատին և բոլորը միասին համարում է հնխ.* **tā**- *(տե՛ս* **թանալ**) *արմատի աճականը։—Ղափանցեան, Տեղեկ. ինստիտ. 2, 94 զնդ.* **taoš**-, *որի վրայ տե՛ս վերը* **թօշ**։

*ԳԻՒ.—***թօշնիլ** *«ուժից ընկնել» ձևի հետ նոյն է Ղրբ.* **բշնել** *«թառամիլ, թօշնիլ, գոյնը նետել», որ միայն մարդոց համար է գործածւում։—Տարբեր է սակայն գւռ.* **թօշմիլ** *«թառամիլ» (միայն ծաղկի համար գործածուած), որ յառաջանում է* **թոռշոմիլ** *բառից. համմտ. միջին աստիճանների շարքով՝* **թօռշըմել** *Ալշ.—***թոշոմիլ** *Մանդ.—***թոշմել** *կամ* **թօշմիլ** *Վասպ.—***թօշմիլ** *Կր., թօշմաիլ Սվ.—***բր՝շմիլ** *ՋԲ։—Իսկ գրական* **թօշնիլ** *ձևը (ն-ով և ոչ մ-ով) պէտք է կարծել թէ կազմուած է երկուսի խառնուրդով, որի պատճառն է նշանակութեանց պատահական նմանութիւնը։*

ԹՕՊ *«վտիտ, ճղճած, տկար» (պտուղների համար ասուած) Վահր. յայտ. «Մաոք և մանաւանդ Ղենի, արտաքոյ սահմանաւոր*

ժամանակի նախկին ընձիւղեալ պտուղքն սին և թուլ լինին».—այսպէս ունի ՆՀԲ. իսկ տպագրի մէջ (էջ 31) գրուած է «սին և թուփուր»։ Այստեղ թուլ սխալ գրչութիւն է որ պէտք է կարդալ թաւլ =թօպ, ինչպէս մի քանի անգամ ունի Վստկ. այսպէս՝ էջ 38, 191, 212 թաւլ և էջ 215՝ թօպ, բոլորն էլ Թուղի կամ Թղենու համար ասուած՝ իբր ածական։

ՆՀԲ ունի միայն թուլ «ճղաձև» ձևը։ ՀԲուս. § 3317 գիտէ թաւլ «արու վայրի Թղենի, պապա ինձիրի», որ սխալ է։ Երկուսը միացնելով ուղիղ մեկնեց վերի ձևով Նորայր ՀԱ 1921, 232։

ԹՕՍԵԼ, *տե՛ս Թազել։*

***ԹՕՓԱՂԱԽ** *«մի տեսակ բոյս է.* cyperus rotundus, souchet odorant» *Վստկ. 114. ունի միայն ՀԲուս. § 830. իբր օտար բառ չիշում է նաև Ամիրտ. «Սաւտ, որ է կիպեռիան, որ է Թրք. բառով թօփալախան». (տե՛ս ՀԲուս. § 602)։*

=Թրք. topaləq *«մի տեսակ բոյս է,* пахучій тростникъ, cyperus *(ըստ* Будаговъ *1, 385 ա)։—Ա՛ճ.*

ժ

*ԺԱԺ «խոհ». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գործածուած է Վեցօրէից մի քանի ընտիր օրինակների մէջ. «Մինչդեռ զժաժն ժողովէր Պաւղոս» (ուր միւս օրինակները դրնում են խոհ)։—Թերևս նոյն բառի յոգնակին է ժժան կամ ժրժան «վառելու բաներ, խոհ», որ մէկ անգամ ունի Ասող. գ. 22։

=Պրս. ﻫﯾﺰ žāž «է նա անուն խոտոյ իրիք, որ է յոյժ փշալի, զոր ուղտն ո՛րչափ և ծաւքիցէ վասն անհամութեան նորին՝ ոչ կարէ կլանել»։ Սա ծանօթ գազն է կամ նման մի փշաբոյս, որ մինչև հիմայ Պարսկաստանում և Հայաստանում գործածւում է իբրև ընտիր կպչան։ Եթէ հայ բառը հին է, կարող ենք ենթադրել պհլ. *žāž ձևը, իսկ եթէ Վեցօրէից մէջ յետոյ ներմուծուած մի բառ է, գալիս է ուղղակի պարսկերէնից—Աճ.

Հին բռ. մեկնում է ժած «խծուծ». նոյնպէս է նաև Բառ. երեմ. էջ 123 (ըստ որում Ալշ. ժժան «կանեփի խծուծ»)։—Վերի «խոհ» նշանակութիւնը և բառիս հին վկայութիւնը երևան հանեց Նորայր, Հայկ. բառաքնն. էջ 66։ Նոյնը տես նաև Վարդանեան ՀԱ 1911, 304։ Բառիս մեկնութիւնը տուաւ նախ Աճառ. (անտիպ), որից անկախաբար Թիրեաքեան, Արիահայ բռ. էջ 169։

Գիւռ.—Վն. ժած, մանաւանդ կրկնութեամբ՝ ժած-ժեխ, ժար-ժեխ «խոհ, փայտի կտորատանք, տերև ևն՝ կրակ վառելու համար»։—Նոյն բառն է և ժախ-ժռախ Ուդ. «անպետ կահ-կարասիք», որ և Սեբ. «կահ-կարասիք»։ (Սկզբնական ձևն է եղել *ժած-ժռախ, ուր առաջին եզրի վերջաձայն ժ ազդեցութեամբ երկրորդ եզրի վերջաձայն խ-ից՝ դարձել է նոյնպէս խ։—Տան կահկարասիներին անարգական անուններ տալը՝ փոխադրութեան դժուարութիւններն ի նկատի ունենալով, անսովոր երևոյթ չէ լեզուների մէջ)։

ԺԱԺ «խակ, տհաս». նորագիւտ բառ՝ որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Տաթև., ամ. 605 «Տարաժամ պտուղ ծառոյն, որ ժաժ կոչեմք, փուքով թափի ի ծառոյն և անպիտան է կերակրոյ կամ բուսանելոյ և նախատինք է ծառոյն»։ Նոյն բառն է որ Բառ. երեմ. էջ 123 մեկնում է «ժաժ, խժուկ, որ է խակ»։

Գիւռ.—Ղրբ. ժեժ «խակ, տհաս (պտուղ). 2. թարմ (կաթ, ձու). 3. նորածին (մանուկ)»։

ԺԱԺԽԻ, տե՛ս Ժողխ։

ԺԱԺՄՈՒԿ տե՛ս Շարժմակ։

ԺԱԽ տե՛ս ժահ։

ԺԱԽ, որից ժախուկ (գրուած նաև ժաղուկ, ժաժուկ) «մի տեսակ բոյս է, վայրի բողկ, լտ. apios, raphanus silvestris» Բժշ։

Գիւռ.—Ալշ. Ախց. Կր. Մշ. ժախ, Ոզմ. ժmխ «բոխի, տճկ. չաշուր». իսկ Արր. «մորենի».—Նո՞յն է արդեօք նաև Ղզ. ժախո, Ղրբ. ժէխո «որևէ լեռնային անպետք բոյս»։

*ԺԱՀ, ու հլ. (յետնաբար նաև ի հլ.) «աղտեղութիւն, գարշահոտութիւն, գարշ և զզիր մի բան» Եւս. պտմ. Արծր. 3ճխ. Բժշ. Տօնակ, որից ժահադիմութիւն «տգեղ տեսք» Խոր. ժահահոտ «վատ հոտ ունեցող». Նիւս. բն. և կուս. Սարգ. յկ. «վատ հոտ» Եւս. պտմ. ժահահոտութիւն Պիտ. 3ճխ. ժահատեսակ Երզն. մաթ. 231. ժահահամ Շիր. 42։

=Պհլ. *žah ձևից, որ մեր իմաստով աւանդուած չէ. այս արմատի բուն նշանակութիւնը եղել է «հոսիլ, թորիլ, բղխիլ, վազել». հմմտ. պրս. ﺯﻫﯾﺪﻥ zahēdan «բղխիլ, թորիլ (ջրոյ յաղթերէ)», ﺯﻫﻥ zahan «գետ», ﺯﻫﺎﺏ zahāb «թորումն ջրոյ, աղբերակն», ﺯﻫﺎﻧﯾﺪﻥ zahānēdan «բղխեցնել»։ Այս բառը յետոյ աղտեղի բաների հոսման համար էլ առնուելով՝ վատ նշանակութիւն ստացաւ (հմմտ. հյ. կղկղել և կղկղանք, թորել և արտաթորու-

թիւն). որով կազմուեցան 𐬰𐬀𐬵 zahō «ականջից հոսած կեղտը, սուկ», 𐬰𐬀 zah «մարդու սաղմը», 𐬰𐬀𐬵 𐬀𐬵 zahī rōy «պինդերես, ժահադէմ».—ըստ այսմ էլ հյ. ժաճ: (Աղտեղի հեղուկների հոսման իմաստով գործածուած եմ գտնում նաև հայերէնի մէջ. հմմտ. Ամենայն ժահ աւելորդացն արտաքս հոսի ընդ քիթն և ընդ աչսն. Բժշ.):—Աճ.

Այս մեկնութիւնը հրատարակած եմ նախ MSL 15, 242: Թիրեաքեան, Արիա-հայ բռ. 170 համառօտուած ժաճիր բառից:

ԳԻՒՒ.—Ալղ. Մշ. ժեխ, Երև. ժէխ, Բլ. Վն. ժախիճ «աւելուց գոյացած աղբը» (ՆՀԲ գիտէ նաև ժախ). որից ժեխնոց «աղբանոց. 2. աղբը հաւաքելու թի, ֆառաշ, խաքանդազ», ժեխոտիլ Ակն. «խոնաւութիւնից են նեխուիլ, ապականիլ», կրկնութեամբ՝ Սեբ. ախփ-ժախփ «աւլուք» (որի մէջ առաջին եզրի վերջաձայնի ազդեցութեամբ՝ ժախ բառի վրայ աւելացել է փ ձայնը):—Շփոթուելով յաջորդ բառի հետ՝ տեղտեղ ժաճ դարձել է ժաճիր, պահելով սակայն նախնական «արտաթորութիւն» նշանակութիւնը. այսպէս՝ Ախց. ժաճիր, Երև. ժաճիրը, Շմ. ժոճիր «շարաւ, թարախ, վահր», Ոզմ. ժոճիր «երեխայի կղկղանք», Սլմ. ժոճիր «մեծի կղկղանք», Մշ. ժար «ծըխախոտի կեղտը, զիֆիր, կորկ. 2. երեխայի կղկղանք»:

*ԺԱՀՐ «թոյն». մի մի անգամ ունին Մագ. և Տաթև. ամ. 516. գրուած է ժաճռ ձևով և «թոյն» նշանակութեամբ՝ էֆիմ. 288:—Բառ. երեմ. էջ 123, ինչպէս և ՀՀԲ ժաճիր մեկնում են «յոյժ աղտեղի, գարշ և նեխեալ հեղուկ ինչ, որպիսի է կղկղանքն մարդոյ ևն». այս նշանակութիւնը պատկանում է նախորդ ժաճ բառին:

=Պհլ. պազենդ. zahr (իմա՛ žahr), պրս. 𐬰𐬀𐬵 zahr, քրդ. žāhr, žāir, žār, աֆղան. բելուճ. zahr «թոյն», որոնց նախնականն է զնդ. *jaθra- =սանս. *hatra- «սպանիչ (դեղ)», արմատը զնդ. ja-, gan-, սանս. hān «զարնել, սպանել»: Իրանեանից են փոխառնել նաև ասոր. 𐡆𐡗𐡓 zahrā. Թրք. zehir, ուշ ժամանակի հյ. փոխառութեամբ զաճր «թոյն» (Կոստ. երզն. 154):—Հիւբշ. 156:

ՆՀԲ լծ. Թրք. զեհր: Lag. Urgesch. 594 և Ges. Abhd. 41, 21 jas արմատից, պրս. zahr: Վերի ձևով մեկնեց Հիւբշ. ZDMG 38(1884), էջ 423:

ԳԻՒ.—Մկ. ժոճիր, Ոզմ. Շտ. ժոճիրի, Մշ. ժար «թոյն».—ուրիշ իմաստներով տես վերը ժաճ:

*ԺԱՄ. ընդարձակ մշակութիւն կրած բառ է, ներկայանում է հետևեալ ձևերով և նշանակութիւններով. 1. ժամ, ու հլ. (բացի սեռականից՝ միւսները նաև ի–ա հլ.) «մի ժամ, օրուայ $^1/_{24}$ մասը» ՍԳր. Վեցօր. Ոսկ. «որոշուած ժամանակ» ՍԳր. Եղիշ. «իւրաքանչիւր կենդանակերպի 1800-երորդ մասը՝ որով աստղաբաշխներն ու ախտարարէտները մարդու բախտն են որոշում» Վեցօր. Շիր. «կարգաւորութիւն ժամուց ի պաշտամունս եկեղեցւոյ. ժամասացութիւն» Սեբ. էջ 29. ՅՀ. կթ. Մաշտ. այս իմաստներից ածանցուած են ժամաբաշխ Վեցօր. ժամադէտ Շիր. ժամադիր Գ. մակ. գ. 14. Վեցօր. Կորիւն. Բուզ. Ագաթ. ժամադրել Ագաթ. ժամադրութիւն ՍԳր. ժամակալ Բ. մակ. ժբ. 7. Բուզ. ժամալար Ոսկ. յհ. ա. 3. ժամապահ Վեցօր. ժամակոչ ՃՂ. 198 բ. յայնժամ ՍԳր. Ոսկ. ցայնժամ Նեեմ. գ. 1. յորժամ ՍԳր. Ոսկ. եզն. առժամայն Սգր. Ոսկ. Կորիւն. Կոչ. նոյնժամայն ՍԳր. սօրաժամ Բ. Թգ. դ. 5. Եւս. պտմ. գիշերաժամ Յայտմ. տարաժամ ՍԳր. Ոսկ. եզն. դատարկաժամ Ոսկ. յհ. ա. 3. բարեժամ Ագր. որս. մաճառաժամ Ճառընտ. ապաժամեան «մատաղատի» Լաստ. իա. նոր բառեր են առժամապէս, ժամանց, ժամագործ ևն. (իսկ այժմ բառի վրայ տե՛ս առանձին):—Ժամ բառի «եկեղեցական ժամասացութիւն» նշանակութիւնից է ծագած ռմկ. ժամ «եկեղեցի», որին նպաստել են նաև ժամագիրք Ժմ. Յիշատ. ժամակարգութիւն ՅՀ. իմ. ՅՀ. կթ. ժամաճար ՅՀ. իմ. եկեղ. ժամամուտ Տօնացոյց. Յիշատ. են բառերը: Սրանք ծագած են ժամ «ժամանակ» նշանակութիւնից. բայց յատկապէս եկեղեցական գործերում գործածուելու պատճառաւ՝ միացել են «եկեղեցի» գաղափարին: Այսպէս՝ օրինակ ժամաճար՝ որ նշանակում է «ժամը՝ ժամանակը զարնող», գործածուելով յատկապէս «եկեղեցու ժամը

զարնող» նշանակութեամբ, մտածուած է թէ ժամ նշանակում է «եկեղեցի»։ Նոյնը իմանալ նաև միւսների համար։ Բացի սրանից՝ մինչև այժմ էլ յետամնաց տեղերում ժամանակը որոշւում է մասնաւորապէս եկեղեցու արարողութեամբ. ասում են օրինակ՝ «Դեռ ժամէն չկան, դեռ ժամը չզարկաւ, ժամուն այս չափ մնաց» են, որոնց մէջ «եկեղեցի» և «ժամանակ» գաղափարները զոյգ են ընթանում։ (Այս մասին տե՛ս նաև առեաձ)։ Մինչև անգամ մահմեդականների եզանի համար կայ գործածուած ժամ ձևը՝ Գիրք թղ. էջ 526 «Հանին գիս ի մնարայն՝ տալ զառաջին ժամըն մեր»։—ժամ «եկեղեցի» իմաստից են կազմուած ժամատուն Լաստ. ժամատեղի Գնձ. Ուռհ. ժամանոց «փոքրիկ անօթք գինւոյ և ջրոյ ի սպաս ժամու պատարագի» Մաշտ. Կանոն. ժամասացութիւն, ժամասէր, ժամասիրութիւն (նոր բառեր)։—Սակայն ժամ «եկեղեցի» նշանակութեան հետ կապ չունին խորան ժամու նորագիւտ Ա. մնաց. իա 29 և նորագիւտ Բ. մնաց. ա. 3, 5, 66 (որոնց դէմ միւս թարգմանութիւնը ունի միայն խորան, կամ խորան վկայութեան Եփր. Հտ. Ա. էջ 195, 293, 424, 477, Մծբ. էջ 345 և վրան ժամու Բ. մակ. բ. 4. Եբր. բ. 5. Եփր. Հտ. Ա. էջ 152, 206, 221, 360, 477, 480, Դ. էջ 214, 215, 216, Վեցօր. էջ 10, 23, Կոչ. 34, 358, որոնք նշանակում են «Մովսէսի վկայութեան խորանը», և, ինչպէս Մատ, Иппол. 55 և Վարդանեան ՀԱ 1913, 132 ցոյց են տալիս, թարգմանօրէն կազմուած են ասոր. مشكن زبنا meškan zbanā «առժամանակեայ վրան» ձևից. Հմմտ. Մծբ. էջ 260 «Կոչեցաւ սա վրան ժամու, զի փոքր ժամանակ պաշտեցաւ»։—2. **ժամաճ** «փութկոտ, ժամանակին պատրաստ» Ոսկ. մ. բ. 26, որից ժամաճ առնել «հասցնել» Սղ. ի. 4. Մծբ. ժամաճել «հասնիլ» ՍԳր. Ոսկ. «առաջ հասնիլ, կանխել» ՍԳր. «ժամանակ ունենալ, բաւել» ՍԳր. Ագաթ. Վեցօր. ժամաճեցուցանել եզն. կանխաժամաճ Սամ. երէց. ապաժամաճ «յետնեալ, խեղճ» Սիր. ժա. 12. ժգ. 5. Ոսկ. մ. ա. 3, 18, 23. ապաժամաճութիւն Ոսկ. մ. ա. 23. ապաժամաճեալ «ի պարտութիւն մատնեալ, վատթարեալ» Եւս. պտմ. էջ 249 (նորագիւտ բառ, որ դուռ Հ. Ա. Վարդանեան ՀԱ 1913, 559). բարեժամաճութիւն Բրս. պհ. ևն։—3. **ժամաճակ**, ի–ա հլ. «առեն, վախտ» (բայց նաև՝ տարի, դարաշրջան, հասակ, օրհաս, կեանք, տարուայ եղանակ, յարմար առիթ են) ՍԳր. Վեցօր. Ոսկ. որից ժամաճակագիր Բուզ. ժամաճակիկ եզն. Եւս. քր. ժամաճակաչափ Ագաթ. ժամաճակեան եզն. Ոսկ. Եփր. ծն. Ագաթ. ժամաճակել ՍԳր. առժամաճակեայ Ոսկ. պաղ. Փարպ. բազմաժամաճակեայ Իմ. բ. 10 Յոբ. լբ. 9. Ոսկ. ես. Եւս. քր. երկայնժամաճակեան Ոսկ. մ. ա. 11. փոխրժամաճակեան Եփր. աւետ. 263, 302 (չունի ՆՀԲ). տօրաժամաճակ Եփր. Թղ. առժամաճակապէս, ժամաճակատրապէս, ժամաճակամիջոց են (նոր բառեր)։—4. **ժուամ** «անգամ, հեղ»՝ որ ժամ բառի յետին ձևափոխութիւնն է (ա դարձած ու՝ ռնգականի մօտ). սրա հնագոյն գործածութիւնը գտնում ենք Շնորհ. առակ. որից ժամ ժամուն «պատշաճ ժամանակ, յարմար առեն» Գնձ.—նշանակութեան զարգացման համար հմմտ. ժամ «անգամ, հեղ». «եկեր երեք ժամ հաց» Ոսկիփ։—Յայտնի չէ թէ ի՛նչ կապ ունի սրա հետ **ժուկ** «ժամանակ», որ սովորական է արդի բարբառներում և որի հնագոյն վկայութիւնն ունի Շապհ. 46։

=ՊՀլ. (Հիւս. արևմտ. բարբառով) žamān, zamānak, մանիք. ژمنۏ žmnv «ժամանակ» ИАН 1907, 541, պհլ. ژمان zamān, zamānak, պազենդ. zamān, zamāna, սոգդ. žamanū «ժամանակ», պրս. زمان zamān, زمانه zamāna «ժամանակ», որոնցից փոխառեալ են քրդ. թրք. zeman «ժամանակ, դար, պատեհ ժամանակ» են։ Նոյն բառերը գտնում ենք նաև սեմական լեզուների մէջ. այսպէս՝ արաբ. زمن zaman, زمان zamān, եբր. זְמַן zəmān, արամ. zəmān, zəman, ասոր. ܙܡܢ zman, եթովպ. zaman: Յայտնի չէ թէ ի՛նչ է այս երկու լեզուախմբերի կապը։—Nöldeke, Mandäische Gram. 152 սեմական ձևերը փոխառեալ է դնում հպրս. zrvan, zrvāna «ժամանակ, դար» բառից. ընդհակառակը Zimmern, Die Keilinschriften und das Alte Testament 650 համարում է ասուր. simānu «ժամանակ» ձևից ծագած։ Սակայն

ի՛նչ որ էլ լինի սրանց ծագումը, հյ. ժամանակ *գալիս է պհլ.* žamānak *ձևից և* ժաման՝ *պհլ.* žamān *ձևից. (սեմական ձևերից փոխառութեան պարագային՝ հյ. բառերը պիտի ունենային զ և ո՛չ ժ՝ որ պահլաւ է)։ Գալով* ժամ *բառին, այս էլ հայկական կառուցուածք է. ժաման բառի մէջ ան մասնիկ է կարծուել, որով և յարմարեցրած է արմատական ժամ ձևը։*

Ուղիղ մեկնեց նախ Աւետիքեան, Քերակ. 1815, էջ 315, որ ցեղակից է դնում տճկ. (իմա՛ պրս.) զեման *բառին*։ Klaproth, Asia polygl. *էջ 106 և Գ Նոյնպէս պրս.* zamān *բառի հետ*։ Brosset JAs. 1834, 383 *են երր.* יוֹם yōm «օր», *վրաց.* ժամ, խան, *պրս.* zamān: *Նշիր լծ. արաբ. պրս. թրք.* զաման, զեմն, զէմանէ, *վրաց.* ժա՛մի: Peterm. *22 պրս.* žamān (?) *արաբ.* zamān, *քազդ.* zəmān: Windisch. *21 սանս.* yāma (triyāma *բառի մէջ*) *համեմատում է մեր* ժամ *բառի հետ*։ Bopp. Abhd. d. Ak. d. Wiss. zu Berlin, 1846, 329 ժամ *և* ժամանակ = *պրս.* zamān, *սնս.* yāmmi «դիշեր»։ *Նոյն,* Gram. comp. I, 417 *սանս.* yāma «օրուայ $^1/_8$ *մասը, 3 ժամու պահ»,* Müller SW. AW 38, 575 *և 44, 565 սանս.* yāma: Böttich. Arica 77, 285, Lag. Urgesch. 872 *են պրս.* zamān: Canini, Et. étym. 199 ժամ *դնում է ամ բառից։ Հիւնք. արաբերէնից է հանում։ Հիւբշ. 156 թէև* ժամանակ *դնում է պհլ.* zamānāk *ձևից, բայց անորոշ է դնում* ժամանակ, ժամանել, ժամ *և* ամանակ *բառերի կապը։ (Սրանցից* ամանակ *տե՛ս իր տեղը, իսկ* ժամ *և* ժաման *տե՛ս վերը՝ մեր տուած մեկնութիւնը)։* Patrubány SA *1, 311* ժամ *հանում է* ժամանակ *բառից.* -աև *կարծուած է բայական յօդ։ Նոյնը ՀԱ 1908, 152 իբր բնիկ հայ կցում է հյ.* ձըմեռն, *լտ.* hiems *են բառերին, իբրև «ձըմեռ ժամանակ»։* Pedersen, *Հայ. դր. լեզ. 161 բոլորովին մերժելով փոխառութեան հանգամանքը, համարում է սոմ բառից կազմուած՝ զ, ի նախդիրներով։* Ч'арая, Объ отнош. абхазск. яз. *էջ 46 մեր բառը գտնում է ափխազ.* ašež «առաւօտ» *բառի վերջածայնի մէջ։ Հ. Գր. Սարգսեան, Բազմ. 1927, 181 արաբ.* جامي jami' «մզկիթ» *բառից (անհեթեթ մեկնութիւն)։*

*Դիմ.—*ժամ «ժամ, սահաթ» *բառն ունի Ակն.* ժամ, *սեռ.* ժմու. *իսկ «հկեղեցի» նշանակութեամբ ունին Ալշ. Ախց. Ասլ. Գոր. Երև. Խրբ. Կր. Ղրբ. Մշ. Մրղ. Ննխ. Շմ. Պլ. Ջղ. Ռ. Սեբ. Սլմ. Սչ. Տփ.* ժամ, *Մկ. Ոզմ. Վն. Տիգ.* ժոմ, *Համշ.* ժօմ, *Հճ.* իժօմ, *Զթ.* իժօմ, իժոմ, *Ցղ.* ժէօմ, *Ագլ.* ժոմ։—«ժամանակ, անգամ» *նշանակութեամբ ունինք Ագլ. Ալշ. Ախց. Երև. Ննխ. Պլ. Ռ. Սեբ. Տիգ.* ժոմ, *Ակն.* ժոմ, ժիմ, *Ասլ.* ժիմ, *Գոր. Ղրբ.* ժէմ։—ժամանակ *բառը դիտեն (գրականից փոխառութե՞մբ) Ախց. Երև. Շմ. Ջղ. Սլմ. Տփ.* ժամանակ. *Ակն. Մշ. Սչ.* ժամանագ *(Ակն. սեռ.* ժամնգու*), Ագլ. Ղրբ.* ժամ՛նակ, *Ասլ.* ժամանայ, *Զթ. Հճ.* ժամանօգ, *Մկ.* ժոմոնակ։—*Նոր բառեր են՝* ժամաժամ, ժամահաց, ժամաշապիկ, ժամասէր, ժամատեղ, ժամատուն, ժամատուր, ժամամար, ժամբակ, ժամզարկոց, ժամհար, ժամուց, ժմնել, ժմնցնել, անժում, իժում *են.—*ժամակոչ «ժամ կանչող» *բառը դարձել է նախ* ժամկոչ, *յետոյ ժողովրդական ստուգաբանութեամբ (իբր թէ ժամի դուռը գոցելու իմաստով)՝* ժամգոց. *նոյնը Սչ. դարձրել է* ժանգօչ։

*Փոխ.—*ժամ *բառը հայկական կազմութիւն լինելով՝ մեզանից են փոխառեալ հետևեալ բառերը.—Թուշ.* žam «ժամ», *մինգ.* ցəმი ժամի «ժամ, ժամանակ», *վրաց.* ցəმი ժամի «ժամանակ, ժամացոյց, ճօճանակ, ժամանց, երջանկութիւն», ցეცəმნე մեժամնե «ժամագործ», ცəმად ժամադ «էր երբեմն, ժամանակաւ», ամ-ცəმად ամ-ժամադ «այժմ», ცəმადი ժամադի «ժամանակաւոր», ცəმად ცəმად ժամադ ժամադ «ընդ ժամանակս ժամանակս, երբեմն երբեմն», ცəმითი-ცəმად ժամիթի-ժամադ «մերթ ընդ մերթ», უცəმო ուժամո «անժամանակ», ხცəმო սաժամո «ժամացոյց», ცəმი ժամի, ცəმობა ժամոբա «ժանտամահ, մահտարաժամ», მეცəმეობა մեժամեոբա «հողը ժամանակաւորապէս վարձող անձ», მოცəმება մոժամեբա

«պայմանաժամի լրացում»։ «եկեղեցի» նշանակութիւնը պահել են յատկապէս վրաց. ჟამნე ժամնե «պաշտօնակարգութեան ժամանակ կարդալ ժամագիրքը», ჟამօხ-წარვა ժամիս-ծարվա «պատարագ, արարողութիւն», ჟამნ-გულანი ժամն-գուլանի «երգարան, շարականն», ჟამი ժամի, ჟამნ-კანონი ժամն-կանոնի «ժամագիրք», მოჟამნე մոժամնե «փոխասաց», საჟამნე սաժամնե «ժամագիրք»։ Այսպէս է նաև գնչ. žam «մաղթանք, բարեմաղթութիւն»։ Օտարախօս հայերը պահած են այս բառը. ինչ. Արմաւիրի չերքեզահայերը žam, Սղերդի արաբախօս քրիստոնեաները žam, «պատարագ» (Բիւր. 1899, 116), էնկիւրիի թրքախօս հայերը՝ jam «եկեղեցի», jamaser «ժամասեր», jamgos «ժամկոչ», jamos «ժամուց», axšam žamə «իրիկուայ մօտ խմելը» (Բիւր. 1898, 789, 865)։ Սրանց միջոցով էլ բառս անցել է նաև օտարներին. այսպէս՝ էնկիւրիի թուրքերն ու յոյներն էլ ունին axšam žamə, եւդ. թրք. գւռ. ճամկէչ zämgöč «ժամկոչ» (Յուշարձան 330 ա), Տ. թրք. գւռ. ženkos «ժամկոչ» (Բիւր. 1899, 798). Նոյն իսկ Պօլսի մէջ օտարները, մասնաւորապէս հայոց հետ խօսակցութեան ժամանակ, գործածում են ժամ «եկեղեցի» բառը՝ թուրքերը žam, յոյները jam ձեւով։ Ուտ. ժամուկալ «ժամասաց», ժամհար «ժամհար», իսկ zamanag «ժամանակ» ուղղակի իրանեանից է։

[ԺԱՄԱԿ. սխալ գրուած բառ, որ երկու անգամ գործածում է Տիմոթ. կուզ, էջ 143 և 192, որոնք Ս. Բարսեղի Հոգւոյն Սրբոյ ճառից առնուած մի հատուած են ներկայացնում. «Եւ ցամաքայինք կենդանեացն և բոյսք և աստեղք և օդք և ժամակք և պճնեալ ամենայնիս զարդարումն»։ Սրա դէմ յոյն օրինակն ունի ὥραι. այսպէս՝ καὶ ἀήρ, καὶ ὥραι, καὶ ἡ ποικίλη τοῦ παντός... (Migne, Patr. gr. 32, էջ 100)։ Յոյն բառը նշանակում է «ժամանակ, ժամանակաշրջան», ինչպէս հասկացել է նաև լատին թարգմանիչը. «nec aer, nec anni tempora (եղանակ տարւոյ), nec multiplex universi ornatus»։ Ըստ այսմ պէտք է ընդունիլ որ հայերէն ժամակ բառը նոյնպէս նշանակում է «ժամանակ»։ Սակայն Կնիք հաւ. 349 փոխ առնելով Տիմոթէոսի յիշեալ հատուածը՝ նոյն տեղում գրում է ժամանակ. որից հետևում է թէ արդի ձեռագրի ժամակ ձևն էլ սխալ գրչութիւն է, որ պէտք է կարդալ ժամանակ։ Սխալը յառաջացած է ըստ ե. եպս. Դուրեանի (անձնական) ձեռագիրների ժմկ համառօտագրութիւնից։ Այսպիսի սխալի մի ուրիշ օրինակ գրանում եմ ես էլ Ոսկերերանի Յովհաննու մեկնութեան մէջ (տպ. Պօլիս 1717, հտ. Բ. գլ. 12, էջ 626 բ) «Ի ժամակս հնձոցն՝ ուր բազում Քուհսցի տապն, ոչ ի տան նստիմք, այլ և ի գետհս ճեպով ընթանամք»։ Այստեղ ժամակ բառը պարզապէս պէտք է կարդալ ժամանակ։ Նմանապէս Շապհ. 38 կայ ժամակ սխալագրութիւնը՝ փխ. ժամանակ. «Տէ՛ր, ընկալ զմանուկս զայս ի գրկաց իմոց, որպէս զՍամուէլ ի հին ժամակին». (տե՛ս իմ Հայ. նոր բառեր հին մատ. Բ. 56)։

ժամակ նորագիւտ բառը երևան հանեց առաջին անգամ Աճառ. Հայ. նոր բառեր Տիմոթ. Կուզի մէջ, էջ 76, բայց առանց մեկնելու։ Ա. Ջամինեան (անդ) ուզում է կարդալ ժժմակ։ Վարդանեան ՀԱ. 1913, 297 գտնելով յունարէն համապատասխան բնագիրը՝ հաստատում է որ ժժմակ սրբագրութիւնը ուղիղ չէ. և որովհետև յն. ὥρα նշանակում է նաև «գեղ, վայելչութիւն», կարծում է որ հայ թարգմանիչը այս իմաստով է առել բառը, որով ժամակ լինում է «զարդ, գեղեցկութիւն»։ Վարդանեան գնում է նաև երկու նոր վկայութիւնը (Անդ պիտոյ է ոսկին և մարգարիտն ընդելուզեալ, անդ հանդերձքն պաճուճեալք, անդէն զարդուցն ոայք և ժամանակ մեներանաց, անդ սեթևեթել և անդէն պերևեթել. Ոսկ. տիմոթ. Ա. էջ 66. Առ օգուտ տեսողացս զժամուցն ցուցանէր հօրն և զտնօրէնութիւնն պատմէր. Իրեն. հերձ. էջ 73), որոնց մէջ ստորագծեալ բառերը ուղղում է ժամակ «զարդ, գեղեցկութիւն»։ ե. եպս. Դուրեան, Տաճար 1911, 234 ընդհակառակը համարում է թարգմանչի սխալը, իբր թէ յն. ὥρα «գեղ» հասկա-

ցած է ὥρα «ժամ»։ (Այս վերջին ենթադրութեան համար կարող եմ ուելացնել Պամ. աղեքս. 99 այն հատուածը, ուր Դարեհի հագուստը նկարագրելով՝ ասում է. «էր յղկեալ կազմ կերպարանացն ձև և ի միջի ժամանակին անցեալք»)։—Թիրեաքեան ՀԱ 1914, 56 ընդունելով ժամակ «պաճուճանք», կցում է պհլ. jāmak, պրս. جامه jāma «հագուստ» բառին, ինչ որ ընդունելի չէ, որովհետև ժ-ի դէմ պահանջւում է z կամ ž և ո՛չ թէ j, որ տալիս է ջ։]

ԺԱՄԱՃԱՀԵԼ «դիւրախօսել». ունի միայն Բառ. երեմ. էջ 123։

ԺԱՄԱՆ «պարապ կամ հրապարակ». ունի միայն Բառ. երեմ. 123։

ԺԱՄԱՐՈՒՆԱԿ «յիրաւի, արդարև». մէկ անգամ ունի Մագ. գամագռ. (Նորագիւտ բառ. տե՛ս Նորայր, Բանաս. 1900, 128 և Մէնէվիշեան, Գր. Մագիստրոսի Գամագռտականի ամբողջական լուծում, էջ 24). նոյնը Բառ. երեմ. էջ 123 մեկնում է «անժամանակ»։

ԺԱՄՈԽԱՍԷՐ «ունայնասէր». ունի միայն Բառ. երեմ. էջ 123. արմատը ենթադրւում է ժամոխ «ունայն», որի հետ համմտ. ժաման «պարապ»։

ԺԱՅԹՔԵԼ (գրուած նաև ժայտեել) «կերածը դուրս տալ, փսխել, փսխ. անդուն բերանով խօսիլ» Ոսկ. գծ. 381. Նար. 165. երզ. մաթ. որից ժայթքումն «փսխում» Ճառընտ. արդի գրականում՝ ժայթքել «սաստկութեամբ դուրս պոռթկացնել».—Էֆիմ. 288 ունի ժայթ «օձի կամ այլ թունաւոր անասունի խայթածի ուռեցքը»։

Հինք. լտ. jastus, jacio, jactatio, jaculatio «նետել, ցնցել ևն»։

ԺԱՅՈՒ (ի հլ. ըստ ՆՀԲ, բայց առանց վկայութեան) «ապառաժ, սեպացեալ մեծ քար» Ա. թագ. ժզ. 5 (երկու անգամ). որից **ֆառաժայո** Ա. թագ. ժզ. 4. Փարպ. ՅՀ. կԲ. դժուառաժայո ՅՀ. կԲ. ժայռոտ (նոր գրականի մէջ). բառս ունեցած է նաև «առաւմ» նշանակութիւնը, որից ժայռաւոր «առաւմնաւոր» (աշտարակի համար ասուած) Խոր. գ. 59. (հալուէի համար ասուած) Վրդն. ծն. **ժօռատ** «առաւմները թափած, ակռապլիկ» Արիստ. Անյ. (այ -օ ձայնափոխութեան համար համմտ. ըստ Հիւբշ. IF Anz. 12, 50 հյ. հայր—հօր)։ Արմատը գրուած է նաև ժեռ, ժիռ, ի հլ. Պիտ. որից չորեքժոի Շնորհ. առ. **ֆառաժեռ** ՅՀ. կԲ. 358, 388. ժեռատրի «մի տեսակ խունկ» Լծ. Նար. ժա։—երկու նշանակութիւններից հնագոյնն է «առաւմ». համմտ. ուրիշ լեզուներից՝ սանս. danta «առաւմ», բայց նաև «լեռ», լտ. dens petrae, յն. ὀδούς πέτρας «քարաժայռ», բուն «քարաւառամն», արաբ. ضرس ḍars «առաւմն. 2. կոշտ և անհարթ բլուր» (Կամուսի թրք. թրգմ. Բ. 253), ասոր. ܫܢܐ šənantā «առաւմ. 2. ժայռ. 3. լեռ»։ Klaproth, As. polygl. 100 ժայռ.=արաբ. aijir, **ֆառաժայռ**=պրս. خاره xāra+պհլ. jerera ՆՀԲ յիշում է պրս. զրոս, զռուս, թրք. տիշ «առաւմն»։ Հինք. համառօտուած ապառաժ բառից։ Յակոբեան, Բիւզանդիոն № 743 հյ. սար, դար, ասոր. ܛܘܪܐ ṭur, հբր. *ցուր «լեռ, ժայռ» բառերի հետ։ Patrubány ՀԱ 1908, 213 հնխ. g'hēi «դառարկ լինել» արմատից։

ԳԻՒ.—Ալշ. Մշ. ժեռ-ֆար, երև. վն. Նախ. (վերջինը Կովկասից փոխառութեամբ) ժեռֆար, Ախց. ժառ։

***ԺԱՆԳ** (գրուած նաև ժանկ), ո հլ. «մետաղի վրայի ժանգը» Եզեկ. իդ. 6=12, Ոսկ. յհ. ա. 29. «քարի մամուռ» Ագաթ. «երևիլ, բոյսի մի տեսակ հիւանդութիւն» Գ. թագ. ը. 37. Սղ. հէ. 46. «կերցաւ, քաղցկեղ» Սարգ. Ճառընտ. «թոյն, ապականիչ մահադեղ» Եւագր Ոսկ. յհ. ա. 15. Կոչ. Ագաթ. որից ժանգաբեր Կոչ. ժանգախառն Կոչ. ժանգակեր Սիր. իթ. 13. Ագաթ. ժանգահար 3կ. ե. 3. ժանգաւոր Կոչ. 154. ժանգոտիլ Սիր. իթ. 13. Ոսկ. մ. բ. 22. ժանգել «ժանգով պատել» Տաթև. ամ. 312. ժանգեալ «ժանգոտած» (չունի ԱԲ) Տաթև. ձմ. կհ, կԲ (երկիցս). անժանգ Տօնակ. Վրդն. դան. երկաթաժանգ ԱԲ. ժանգատ «երևիլով վնասուած (բոյս)» Ագաթ. ևն։

=Պհլ. *žang ձևից, որ աւանդուած չէ. բայց կան պրս. زنج žang, زنگ zang «ժանգ», زنگه žanga «ցորենի վատ հիւանդութիւն, ժանգ», բելուճ. zang «ժանգ», քրդ. ženk «ժանգ», ženk girtin «ժանգոտիլ».

իրանեանից փոխառնւալ են նաև արև. բրք. كنج zang, *ն. ասոր* ǰäng «ժանգ»—*Հիւբշ. էջ 156։*

Ուղիղ մեկնեց նախ ԳԴ. նոյնը յետոյ ՆՀՒ, Pott ZKM 4, 266, Lag. Urgesch. Arm. 594, Gesam. Abhd. 42 *են։*

ԳԻՒ.—Ախց. Կր. ժանկ, Ալշ. Ակն. Երև. Խրբ. Մշ. Ջղ. Տփ. ժանգ, Տիգ. ժոնգ, Ագլ. Մկ. Շմ. Սլմ. Վն. ժոնգ՝, Ոզմ. ժոն՚գ՝, Զթ. ժոնգ, ժէնգ, Համշ. ժօնգ, Հճ. ժօնգ՛.—գաւառականների մէջ բառս նշանակում է նաև «ցորենի ժանդ, դէմքի բծուածութիւն, զայրոյթ», որից էլ ժանգուժունգ, ժանգուժէն առնել, ժանգոտիլ, ժանգը վէր ածել, ժանգժրնգալ, ժանգի, ժանգիլ.—այստեղ է պատկանում նաև Հզ. ժան կամ ժուն «մի տեսակ մահացու հիւանդութիւն» (համմա. Հյ. ժանգ «քաղցկեղ»)։

ՓՈՒ.—Վրաց. ჟანგი ժանգի «ժանդ», ჟანგება ժանգնբա «ժանգոտիլ», ჟანგიანი ժանգիանի «ժանգոտ», დაჟანგება դաժանգնբա, შეჟანგება չեժանգնբա «ժանգոտիլ», *Քուշ.* žang «ժանդ», *լազ.* žangeri «ժանգոտ», mžangi, ǰangi *և վրաց.* ჯანგი ջանգի «ժանդ». *այս վերջիններների մէջ նախաձայն ժ դարձել է ջ. համմա. Զթ.* ջանգորդիլ<ժանգոտիլ։ *Ուտ.* žänq՝ «ժանդ»։

*ԺԱՆԳԱՌ *(դրուած նաև* ժանկառ*) «պղինձի ժանդ» Գաղիան. «այս ժանդից պատրաստուած մի տեսակ կանաչ ներկ» Վրթ. քերթ. որից* ժանգառագոյն կղնկռ. *հրատ. էմ. էջ 172. այս բառը՝ որ ՆՀՒ չէ յիշում, ցոյց է տալիս արմատի հնութիւնը։ (Ուրիշ է ժանգառ «ապականուած, որդնահար», որ տե՛ս ժանգ բառի տակ, իբր* ժանգ+առ)։

=*Պհլ.* žangār *ձևից, որ կազմուած է անշուշտ* žang «ժանդ» *բառից. այս բառը աւանդուած չէ պահլաւ գրականութեան մէջ, բայց նոյնն են հաստատում պրս.* زنگار žangār, زنگ zangār «ժանգ. 2. ժանգառի ներկը», جنگار ǰangār «ժանգառ». *սրանից են փոխառնւալ նաև բրք.* ǰengʸar, *բելուճ.* zangāl, *ասոր.* ܙܢܓܪܐ zangarā, *արար.* زنجار zinǰār, *հֆրանս.* zingar, ziniar, asingar, *վրաց.* ჟანგარო ժանգարո «ժանգառ»։—*Հիւբշ. 156։*

Ուղիղ մեկնեց նախ ԳԴ, յետոյ ՆՀՒ, Laq. Ges. Abhd. 42: *Գազանճեան, Բիւր. 1899, 312* ժանգ *բառից՝ -առի մասնիկով։ Յակոբեան, անդ՝ 599 պրս.* زنگاری žangārī «*Մանի հերեսիովատպետի գիրքը. 2. Աստուած*», *որից էլ հյ.* ժանգառի Աստուած *բացատրութիւնը։*

ԳԻՒ.—Տիգ. ժանգառ, *Ախց. Մկ. Ոզմ.* ժոնգ՚ոո, *Տփ.* ժանգառա, *Մշ.* ժանգառի *և նոր փոխառութեամբ՝ Շմ.* ջոնգ՚ոռի, *որոնք նշանակում են «ժանգառ ներկը, կապտականաչ գոյնը».—երգման մէջ գործածւում է* ժանգառի՛ Աստուած, *իբր «կապո՛յտ երկինք»։—Երև.* ժանգառ *նշանակում է «մութը ընկնելը»։—*ժանգ *և* ժանգառ *ձևերի խառնուրդն են ներկայացնում Նախ.* ժանգո, *Պլ.* ժաղոր, ժաղոռ, ժաղոռ, ժաղր, ժաղո, ժագո, ժաղո *«ժանգ», ժաղոռօա, ժաղոօղ «ժանգառ», Սեր.* ժաո *«ժանգ» (սակայն ժէնգոռի «կապտականաչ»), Ռ.* ժաղո, ժաող *«ժանգ», ժաղոօղիլ, ժաղօղ-իլ «ժանգոտիլ», Զթ.* ժէնգոիւղ *«ժանգոտ», ջանգորդիլ «ժանգոտիլ», Ասլ.* ժայռ *«ժահր, աղտեղութիւն, ժանգ, ժանգառ»։*

ԺԱՆԻ *«գազանի սուր առամ». սովորաբար անեզական է (-ենաց, -ենօք). ՍԳր. Ոսկ. մ. ա. 4. եզակի գործածութեամբ ունի Շնորհ. յս. որդի. սրանից են կազմուած՝* ժանեղ *Տօնակ.* ժանեոր *Սարգ. ա. պ. Վրդն. ծն.* ժանէհետ *«ժանիքի հետք՝ նշան» ԱԲ.* ժանաքուակ *Շիր.* բռնաժանի *Պատմ. ազնքս. Թէոփիլ. պհ.* երեֆժանի *«երեք ճիւղով, երեքարձէն» Ա. Թագ. բ. 13. Եփր. Թգ. 359.* երեֆժանեայ *Յայսմ.* եռաժանի *Շիր.* քառաժանի *Շիր.* չարաժանի *Եփր. աղ. 249. Մանգ.* ժանեկռառ առնել *«ժանիքներով կոտորել» Վրդն. այգեկ. 85.* ժայռաոր *(այսպէ՛ս) Մագ. նոր գրականի մէջ էլ* ժանեակ՝ *որ յարմարեցրած է ֆրանս.* dentelle *հոմանիշից Բարդմանաբար։*

ՆՀՒ դնում է պրս. ժէնէ, զանի *(որոնք գոյութիւն չունին),* տէնտան, շանէ *«սանտր և հեծանոց»։* Müller SWAW 42, 253 *հսլ.* zębŭ, *յն.* γαμφαί *«անասունի ծնօտ»։ Հիւնք. պրս.* شنگ šang *«փղի կնճիթ»։*

ԳԻՒ.—Կր. Սեր. ժանիք՝ *որոնք գործածա-

կան են միայն «ժանիքը լարել (բիթը կախել), շան ժանիք, շան ժանիք կնմանի» դարձուածների մէջ.—նոյնպէս նաև Արբ. Պլ. Ռ. ժանիւ, Ասլ. ժանիւ, ժանի* «զէմքի դառնութիւն, խոժոռութիւն, բիթը կախելը», որոնք գործածւում են հետևեալ ձևերով միայն. ժանիքը կախել, ժանիւ բնել «խոժոռիլ, դէմքը թթուեցնել», ժանիքը բացուիլ «խոժոռութիւնը անցնիլ, ուրախ դէմք ստանալ», ժանիքոտ «խոժոռ, թթուած դէմքով»: Արմատն ունի Ղզ. ժէն «ակռայ, ատամ», յդ. ժէնէր, որի հետ համմտ. Մագ. ժայնատր:

*ԺԱՆՈՒԱՐ, ի–ա հլ. «գահաւորակ» Բուզ. հրտր. Պատկ. էջ 100 ժանուտ՝ սխալ գրուած փխ. ժանուարաւ, էջ 159 ժանուարս, էջ 163 ժանուարօք. ուրիշ օրինակ չկայ: Յետին ժամանակից ունինք Ձրր. սարկ. Բ. 128, 139 «Տարեալ մուծին ի ժանուարն. եւ ի մտանել նորա ի ժանուարն, որ է քաճուայ (=պրս. کاجاوه kajāva «ուղտաբարձ պատգարակ»):

=Պհլ. žanvar ձևից, որ աւանդուած չէ. բայց կայ պրս. زنبر žanbar, زنبر zanbar «մի տեսակ պատգարակ, genus ferculi vel feretri» (Vullers), «զչորս փայտս քառակուսի կապեալ, զմէջ նորին հիւսեն չուանաւ, կամ կապեն ի նմա զմասն ինչ գորգի, այսինքն կապերտի, և կամ զմասն ինչ մորթոյ և այնու տանին և կրեն այսր անդր զաղիւս, զցեխ և զաթար» (ԳԴ). բառիս հին պրս. ձևն էր *žani-wara-=զնդ. *žaini-bara- (տե՛ս Հիւբշ. Pers. Stud. 123 և 182). իմաստի փոփոխութեան համար համմտ. տճկ. tejgere, որ յատուկ է թէ՛ մարդու և թէ՛ իրեղէններու—Հիւբշ. 156:

ՀՀՒ նշանակած է արդէն ժանաւար. ժանուար ձևերը. ՆՀՒ միայն ժանու, որ սխալ է. ՋՒ ժանու, ժանուար, ժանվար, իսկ ԱՒ ժանու, ժանաւար, ժանուար: Տէրվիշ. Մասիս 1881 մայ՞ 8 ուղիղ է համարում ժանու ձևը և սրանից ածանցուած է դնում ժանուար: Ուղիղ մեկնութիւնը տուաւ Հիւբշ. ZDMG 36 (1882), 134 և յետոյ Պատկ. հրտր. Բուզանդի 1883, էջ 163, իբր պրս. zanbar «գահաւորակ կանանց»: Մէնէվիշեան WZKM 3 (1889), 64 դնում է պրս. زن zan «կին»+վարել բառերից: Հինք. ուղիղ մեկնութիւնը դիտենալով հանդերձ՝ դնում է լտ. Juvenalis «յորնաղ» յատուկ անունից:

*ԺԱՆՏ, ի, ի–ա հլ. «դաժան, անգութ, խիստ չար, գէշ» ՍԳր. «վատ տեսակի, զզվելի» Ոսկ. Եզն. Երեմ. իդ. 3. «ժանտախտ» Բուզ. Ոսկ. մ. ա. 4. որից ժանտագործ ՍԳր. Ագաթ. Կորիւն. ժանտաթզենի Ղուկ. ժԲ. 4. ժանտութիւն ՍԳր. Ոսկ. յհ. բ. 17. Սեբեր. ժանտակէն Եւս. պատմ. ժանտափուշ Ագաթ. ժանտահոտ Եզն. Ոսկ. յհ. բ. 27. ժանտամահ Սեբեր. ժանտախտ Ոսկ. յհ. բ. 11. ամաժանդ «տգետութիւն, կղկղանք» Փիլ. լին. 83, 196. կրկնութեամբ՝ ժանտաժոտ Բ. մակ. ժԱ. 5 ևն: Այս բոլորը գրւում են նաև ժանդ ձևով. արդի գրականի մէջ ընդունուած է միայն ժանտ ձևը:

=Իրան. *žant բարբառային անծանօթ ձևից: Սրա հետ համմտ. զնդ. gainti-, պհլ. gand «ժանտահոտութիւն, վատ հոտ», սոգդ. γantāk «վատ, յոռի, գէշ», γnsy «հոտած», որոնք ծագում են հնագոյն *gonti ձևից. համմտ. սանս. gandhá- «հոտ»: Բայց հնխ. արմատական o՝ ածականների մէջ պիտի ստանար e ձևը. որով յիշեալ իրանեան *gonti- «ժանտ հոտ» գոյականի դէմ պիտի ունենայինք նաև *gento- «ժանտահոտ» ածականը, որ պիտի տար պրս.*jant, žant: Ահա այսպիսի բարբառային ձևից՝ որ աւանդուած չէ իրանեան լեզուների մէջ, փոխառեալ է հյ. ժանտ: Առաջին և նախնական նշանակութիւնը (որ է «հոտ») ունի սանսկրիտը. նոյնը իրանեաններուն մօտ դարձել է «վատ հոտ». միջին տեղը բռնում է հայերէնը, իսկ վերջին ծայրն է սոգդ. «գէշ, վատ»:

Հներից էմբ. առկ. ստուգաբանում է ժանգ բառով. «Այս է ժանդն, որ ստուգաբանի ժանգ. զի որպէս ի ժանդն չգոյ ինչ պիտանի, նոյնպէս և նա ստաբացեալ է յամենայն բարւոյ» (հրտր. Max. էջ 344): Հինք. դաժան բառից: Stackelberg ZDMG 54 (1900), էջ 106 պրս. žanda բառի հետ, որ բստ Ֆիրդուսիի՝ նշանակում է «տգեղ, անճոռնի» և շատ անգամ գործածուած է փղին

իրրև ածական. այնուհետև նշանակից «ցնցոտի». հայերէնը պահում է հնագոյն իմաստը։ Վերի մեկնութիւնը տուաւ Meillet MSL *17, 248 և մանաւանդ* REA *2, 4։ Թիրեաքեան, Արիահայ բռ. 128 պրս.* dažand *ձևից սղուած։*

Գիմ.—Կայ **ժանեռոմ** *վն. «դէմքի դառնութիւն, թթուածութիւն», որ թուի թէ* **ժանգ, ժանիմ** *և* **ժանտ** *բառերի խառնուրդից է ձևացած։*

Փոխ.—Չգիտեմ թէ կապ ունի՞ն վրաց. **ჟანტო** **ժանտի** *«խոնաւութիւն, թացութիւն», քրդ.* ژان žan *«ժանտախտ, ժանտամահ, ծննդականի երկանց ցաւ»,* žan ketiiê *«ժանտախտ ծագեցաւ»,* ewe žin žan dikešine *«այս կինը երկանց մէջ է»,* žān-a sära *«ցըլխացաւ». (այս բառերը* Justi, Dict. Kurde *էջ 229 դնում է փոխառեալ հյ. ժանտ բառից)։*

ԺԱՆՐ *«ընձախոտ,* aconit *բոյսը». ունի միայն Քաջունի, Գ. 84, բայց չկայ բուն բառարանում (Ա. 26)* aconit *բառի տակ։*

ԺԱՊԱԻԻՆ *«զգեստի եզերքի կարը, երիզը» Յոր. լ. 18. դրուած է գրծ. ժապաւինեաւ Ել. լԹ. 30 (որ ենթադրում է ուղղական ժապաւինի ձևը?)—որից ժապաւինել «եղերքը ժապաւէն կարել» Բուզ. «ակունքի եզերքը ոսկի քաշել» Ել. լԹ. 6։*

ՆշԲ մեկնում է «ծոպ յապաւէն ծայրից»։ Հիւնք. ապաւէն բառից։

ԺԱՌԱՆԳ, ի–ա *հ. «այն անձը՝ որին է ընկնում մէկի հարստութիւնը» ՍԳր. «ժառանգութիւն» Սերբր. «եկեղեցական, կղեր» Շնորհ. Թղթ. որից* **ժառանգել** *ՍԳր. Ագաթ.* **ժառանգեցուցանել** *ՍԳր. Ագաթ.* **ժառանգութիւն** *ՍԳր.* **ժառանգակից** *ՍԳր.* **ժառանգաւոր** *«ժառանգ» ՍԳր. Ագաթ. «կղերիկոս, կրօնաւոր» ՅՃխ. ՅԳ. կԹ. (ըստ յն. κλῆρος «վիճակ, ժառանգութիւն, իւրաքանչիւր եկեղեցու բաժին ընկած տեղը, եկեղեցականութիւն»).* **անժառանգ** *Եսա. քր. Ոսկ. ես.* **բազաժառանգ** *Նար. Տօնակ.* **գեհենաժառանգ** *Անան. եկեղ.* **երկնաժառանգ** *Նար. Մծբ.* **ժառանգական, ժառանգականութիւն** *(նոր բառեր)։*

Հիւնք. **առևանգել** *բառից։* Patrubány *ՀԱ 1908, 213 հնխ.* g'hēi *«զատարկ լինել»+հյ. անգանիլ։* Pictet, *բ. տպ. ժ. 114 առնս.* hārin *«առնող»,* լտ. heradirem *«ժառանգութիւն», յն.* χήρα *«ծնողազուրկ, այրի» ևն բառերի հետ։*

ԳիՒ.—Գոթ. երև. Մշ. **ժառանգ, Զղ. Սչ. ժառանգ՛, Ալշ. Ախց. Կր. Սեբ. ժառանգ, Ագլ. Ղրբ. Մկ. Սլմ. ժոռոնգ՛, Ոգմ. ժոռանգ՛ն, Նխ. ժառանգել։**

ԺԱՌԱՃՆՈՐՀ *«պարգևատու». ունի միայն Բառ. երեմ. էջ 124.—ուրեմն արմատը* **ժառ** *«պարգև»?*

ԺԱՌԱՏ *«մագնիս քարը» ՀՀԲ, ՆՀԲ (տե՛ս մագնիտ բառի տակ). Էֆիմ. 247 (երկաթաքաշն կամ ժառատն, որ մագնէտ և մղլադուզ քար ևս ասի)։ Իսկ Բառ. երեմ. էջ 124* **ժառատ** *«անդամանդ» (որ անշուշտ դարձեալ «մագնիս» իմաստով է)։*

ԺԵՇՏ *տե՛ս Հրաժ-ար-իլ։*

ԺԵՐԺԱՐՇՕՂ *«անշարժական». այս տարօրինակ բառը դիտէ միայն Բառ. երեմ. էջ 124։*

***ԺԷՏ.** *անյայտ նշանակութեամբ և առանձին անգործածական արմատ, որից կազմուած են հետևեալ բառերը.* **ախտաժէտ** *կամ* **ախտաժետ** *ՍԳր.* **ախտաժետութիւն** *Մանդ.* **դիւաժետեալ** *Տիմոթ. կուզ, էջ 220, 294 կամ* **դևաժատեալ** *Կնիք հաւ. էջ 181.* **լուսաժէտ** *«լուսնոտ» Տիմոթ. կուզ. էջ 221.* **նենգաժէտ** *կամ* **նենգաժոտ** *Լմբ. Իգն. Երզն. մոթ. 258. Գնձ. որ և* **նենգժոտ** *Ուռհ. էջ 401* **որկորաժէտութիւն** *կամ* **որկորաժետութիւն** *Պիտ. փիլ Նոնն.* **որովայնաժետութիւն** *Ոսկ. յհ. ա. 44։*

=Պհլ. žatan, zatan *«զարնել, հարուածել, սպանել», զնդ.* ǰan, *պրս.* زدن zadan *«զարնել»* (Nyberg, Hilfsbuch *2, 258)։ ենթադրելի է* **ախտաժետ** *իբր զնդ.* *axti-ǰatya-, *ինչպէս ունինք* pati>պետ. *ըստ այսմ* **ախտաժետ** *նշանակում է բուն «ախտահար», դիւաժետ «դիւահար», լուսնաժետ «լուսնահար», միւսները (նենգաժետ ևն) կազմուած նման ձևով։—Ա.Մ.*

ՆշԲ (նենգաժէտ բառի տակ) հյ. **ժառ** *և յն. ζητέω «խնդրել» բառերի հետ։ Գ. Փառնակ, Անահիտ 1903, 103 և Տարազ 1903, 262 պհլ.* **ժառանի**, *պրս.* zadan *«զարնել»։*

*ԺԺԱՆ (գրուած նաև ժըժան) «վառելիք, խոխ» Ասող. գ. 22։

=Պհլ. *žāzān կամ պրս. ژاژن žažān, որ ژاژ žāž «գազ, փուշ» բառի յոգնակին է։ Տե՛ս և ժաժ։—Աճ.

Նորայր, Բառաքնն. էջ 66 դրաւ ժաժ բառից։

ԳԻՒ.—Ալշ. Մշ. Վն. ժժան, Մկ. ժժոն «դիսախոխ (մազեր). Թափած-թափթփած բաներ, խոխ ևն», Ոզմ. Վն. ժժվանիճ[1] «խառնուած թափթփած բիլ ու դերձան, խոխ», որից ժժնել «խճճել, խառնակել», ժժնիլ, ժժնուիլ «խառնակուիլ», ժժնուկ «խճճուած, խառնակ»։

⊙ԺԺՄԱԿ «ճճի, միջատ». ունին միայն ՆՀՒ և ԱՒ, առանց վկայութիւնը դնելու. գրուած է ժիժմակ Լաստ. խա. Ոսկիփ. Վրդն. սղ. ժժակ Արծր. ա. 3. որոնց հետ նոյն են ժիժմունիճ Վրք. հց. Բ. 20. Ոսկիփ. ժժմանիճ «միջատներ» Վրդ. այգեկ. էջ 92. Յայսմ. մրտ. 21 (Գորտք և ժժմանք, մկունք և զեռունք). որ և ժժմուճ «ճճիներ, միջատներ» Վստկ. (գործածուած է 5 անգամ՝ հետեւեալ ձեւով. Կերիչքըն և վնասակար ժժմունքն ի կեղեւն կու բռնակին (էջ 64). Ջիփլին ոսկրն թրջեն և ջրովրն զսերմ մնշեն և գինքն ևս ի ներք խառնեն և շփեն և միաւորեն ընդ սերմանցն և ցանեն, նա պահէ զնոյն սերմն յամենայն կերչաց և ժժմանց (էջ 19). Յաղագս ոջլի և այլ ազգ մանր ժժմանց՝ որք հարկանեն զրտունկն (էջ 76). Զնաւ ժժմունքն (տպ. ժժմուքըն) չմերձենան. Զժժմունսն սպանանէ (էջ 76). ժժմուճ «միջատ» գիտէ և Վրդն. առ. 193. որից ժժմային «ժժմակներին յատուկ» Վստկ. 49. ժժմատեսակ «որդերի պէս վրխոտացող» (մեղքերի համար ասուած) Առաք. լծ. սահմ. 357.—նկատելի է որ «միջատ, ճճի» նշանակող բառերը յետոյ սահանում են «երևակայական էակ, ուրուական» նշանակութիւնը (յատկապէս մանուկներին վախեցնելու համար). Համմտ. բոլոյ Մր., բոլոլաճ Վն., բոզոլայ Տփ., բորոխ Դվ. Ջղ., բոբոլ Ալբս. Շիր., բոբո երև. Իգդ. Բղ. Նբ. «մտացածին էակ, ուրուական» (=բոբոզ Գնձ. «միջատ», բոլոյ Մր. «միջատ». վրաց. ბობოლი բոբոլի «մեծ որդ», լազ. boboli «միջատ»), պուճուկ, ալապուճուկ Պլ. «ուրուական» (=ատկ. بوجك böjek «միջատ»). պոդոճ Նխմ. «ուրուական» (=գուռ. պոդոճ «միջատ»), պլ։ Պլ. «ուրուական» (=պի Նխմ. «մորմ»), պոլ և արջապլո Վն. «ուրուական» (=գուռ. պլո, պոլո «միջատ»).—ըստ այսմ էլ ժժմուճ «միջատ» բառը առացել է յետոյ «ցնորական տեսիլ, աչքին երևացած բաներ» իմաստը. Համմտ. Վրդն. սղ. ճգ. էջ 344, որ մեկնելով Սղ. ճգ. 25 (Այս ծով մեծ և անդորր. ի սմա են սողունք, որոց ո՛չ գոյ թիւ, գազանք մեծամեծք և մանունք) հատուածը, գրում է. «Ծով դարձեալ ասեն զոր երկրորդ աշխարհ կոչեն զմարդիկ. սողունք՝ ժիժմունք խորհրդոցն, գազանք մեծամեծք և մանունք, մեծ՝ ցասումըն, փոքր՝ ցանկութիւնն». այսպէս նաև Տաթև. ամ. էջ 120 «երագն այլ ընդ այլոյ ժիժմունք են և ժանդատեսութիւն»։ Նոյնը դարձեալ Ադամ. էջ 213 «Եւ ընդ ցելուլ վարագուրին՝ մեր վարագոյր մտաց լուծցին, անմիջապար դիտել զբարին, առանց ժժմանց մարմնականին»։

=Բնաձայն բառ. Համմտ. ժիժի «ճպուռ», գուռ. ճոճո «ճպուռ. 2. ճռճռոց, ճռնչիւն». այս տեսակէտով առանձին ուշադրութեան արժանի է ժիժմաճ «խժլտոց» Նիւս. կազմ. (ըստ ՆՀՒ)։

Ինճիճեան, Հնախ. Գ. 22 ժ բնաձայնից։ Սագըզեան ՀԱ. 1909, 336 սումեր. zizi «որդ»։ Հիւնք. Հանում է ճճի բառից։ Բառիս իմաստի վրայ տե՛ս Աճառ. Հայ. նոր բառեր հին մատ. Բ. 148։

ԳԻՒ.—Մշ. ժժմուճ «մանր որդեր. 2. սատանայական երևոյթներ», Երև. «ճճի, միջատ», Նբ. «սատանաների խումբ», Խն. «հիւանդի աչքին երևացող խառնաբնդոր երեւոյթներ», Բլ. Մշ. Նբ. «խառնիճաղանճ խաժամուժ ամբոխ», Ակն. «մանր մունր իրեր (խաղալիք, ուտելիք ևն)», Բլ. «մանր միջատների խումբ»։ Նոյն է նաև Արբ. ժժվանիճ բաւիլ «նորահարսներին յատուկ ջղային հիւանդութիւն, մղձաւանջ, որ է սոսկալի երազներ տեսնելով՝ ահ ու սարսափի մատնուիլ» (Համմտ. Մշ. ժժմուճ բաւիլ վրան «Ախտարք շատ կարդալուց մտքով շարունակ դիւային տեսիլներ տեսնել»)։

⊙ԺԻԺԻ «ճպուռ» Վրդն. առ. 19։

=Բնաձայն բառ է. համմտ. վերը ժժմակ և գուռ. ճուճո «ճպուռ»։—Աճ.

Գիւռ.—Պահում են ժիժի ձևով՝ Ակն. Ասլ. Բն. Խրբ. Չն. Զրս., իժիժի Մէրտ. «ճպուռ»։

*ԺԻԺՔ «անծանօթ մի բոյս. մկնսո՞խ» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 837։

=Պրս. زیز zīz «մկնսոխ»։—Աճ.

Գիւռ.—Կայ ժիժմ Խ. Սլմ. «դաղձ վնասակար բոյսը, cuscute»։

ԺԻՎԱԻՊ «անստոյգ մի բոյս է» Վստկ. էջ 210 «Պարտ է ծնած կովուցն ժիլաւոյ կամ այլ ազդ հնդունք տալ» չն. բնագիրը մէկի տեղ ունի երկու բառ. μηδική (medica, նռատերեւուկ) և χύτισος (որ է հաւամրգի, լտ. cytisus). ՀԲուս. § 838 ժիլաւոյ բառին համանիշ է համարում վերջինը։

*ԺԻՊԱԿ, ի–ա հլ. «անդիկ» Վրդն. պտմ. էջ 4, գան. գ. էջ 249. Ոսկիփ. Մխ. այրիվ. էջ 10. Առաք. լծ. սահմ. 555, որ և զիպակ էֆիմ. 253 (երկիցս)։

=Արաբ. زِبَق zībaq «անդիկ», որ փոխառնալ է պրս. ژیوه žīva կամ جیوه jīva համանիշից. սրանցից են փոխառնալ նաև Բրբ. jiva, ասոր. ﻗﺒﻖ zībaq, քրդ. zive, juvə, zibak', բուլգ. živak, ալբան. žive, սերբ. živa, հիբրանս. zaibac, zaibach են համանիշները։—Հիւրշ. 267։

Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ, յետոյ Lag. Btrg. bktr. Lex. 8։

Գիւռ.—Մկ. Զղ. ժիպակ, Մշ. ժիբագ, Ալշ. ժիվա (նոր փոխառութիւն) «անդիկ». Թուի Թէ նոյն է ժիպակ վն. «դեղնած, հիւանդոտ (մարդ)»։

ԺԻՏ «հետաքրքիր, հետամուտ, յանդուգն, լիրբ» Ոսկ. ա. Թես. և Բ. կոր. Սամ. երէց. ո՛րից ժտել «պաղատիլ, առանց ձանձրանալու՝ երևսը պնդած աղաչել» Սղ. լղ. 4. «յանդըգնիլ» Ոսկ. մ. ա. գ. 37. Օրին. ժբ. 17. ժգ. 5. «ի վերայ հասանել, լաւ հասկանալ» Մագ. գամագտ. ժտիլ ՍԳր. Ոսկ. եզն. եւս. քր. ժտեցուցանել եզն. ժտազոյն Ոսկ. մ. բ. 10. ժտուրիւն Ղկ. ժա. 8. Ոսկ. ես. անժտելի ԱՔ. սխալմամբ գրուած է ժխտիլ վեցօր. Ոսկ. մտթ., որ պէտք է ուղղել ժտիլ։

ՆՀԲ լծ. յն. ζητέω «խնդրել»։ Հիւրշ. KZ 23, 22 գնդ. jad «խնդրել, թախանձել»? Հիւնք. Շմեռդ մոգի անունից և յն. ζητέω։ Մէնէվիշեան ՀԱ. 1911, 376 յն. ζητέω որ ունի մեր ժտել բառի երեք նշանակութիւնները։ Ղափանցեան ՅԲՕ 23, 354 գնդ. gad «խնդրել» բառի հետ հնխ. gʷhed արմատից։

*ԺԻՐ, ի–ա հլ. «աշխոյժ, եռանդուն, փութկոտ» ՍԳր. Ագաթ. որից ժռանալ ՍԳր. Ոսկ. մ. ա. 2. ժռել «քաջանալ» Թէոփ. խ. մկ. Լմբ. պարգ. ժռագլուխ ՍԳր. Մծբ. Ոսկ. մ. ա. 20 և Բ. կոր. Կոչ. ժռագոյն Ոսկ. Բ. կոր. ժռանաւ (որ և խաչանաւ) «մի տեսակ թռչուն է» Ածպիփ. բարոյ. ժռանձնական Շիր. ժռութիւն Ոսկ. մ. ա. 15. Կոչ. խաչաժիր ձառընտ. շուտաժիր Նար. խչ. ժռաչանութիւն (նոր բառ), կրկնութեամբ և առանց սղման՝ ժիռաժիր Բ. մկ. դ. 12 ևն։

=Պհլ. *žīr ձևից, որ Թէև աւանդուած չէ, բայց նոյնն են հաստատում զնդ. jira- «կենսունակ, արագ, աշխոյժ», սնս. jirá- «աշխոյժ, գործունեայ, ժիր», պրս. زیرک zīrak «մտացի, շոյտ և ժիր», آژیر āžīr կամ ازیر āzīr «մտացի, ժուժկալ», աֆղան. ژر žir «արթուն, ժիր», քրդ. ژیر žêr «ճարպիկ, ճարտար, եռանդուն, խնամոտ, քաջ, կարող» (Horn § 681), որոնք ծագում են զնդ. gay- ևն «կեալ, ապրիլ» արմատից. ան՛ս կեալ (Barthol. էջ 610)։—Հիւրշ. 156։

Առաջին անգամ Lag. Btrg. bktr. Lex. 31 գնդ. jira ձևի հետ։ Պատկ. Изслед. 1864, էջ 21 աֆղան. žir: Հիւրշ. KZ 23, 22 սանս. jīra, 388 գնդ. jira: Lag. Arm. Stud. § 882 պրս. āžīr: Հիւրշ. Arm. Stud. էջ 12 մեկնել է վերի ձևով։ Canini, Et. étymol. 142 սանս. gʼr «տկար» բառի հետ։ Հիւնք. պրս. ժիյր, ազիր, ջիր, ջիյրէ։

Գիւռ.—Ալշ. Ախց. Ասլ. Երև. Կր. Մշ. Շմ. Պլ. Զղ. Սեբ. Տիգ. ժիր «ժրաջան», Ախց. Մկ. Սլմ. Վն. ժիր «առողջ». գաւառականների մէջ ստացել է նաև ուրիշ նշանակութիւններ. օր. Մկ. «կենդանի, ողջ», Խրբ. «պինդ, կարծր», Չրս. «բարձրաձայն», Խլ. «շուտ շուտ, յաճախ», Խրբ. «գաղտնապահ»։ Նոր բառեր են

ժրալ «արտորալ», ժրացնել «բժշկել», ժրել, ժրիլ, ժրժրալ «լաւանալ, ապաքինիլ, կազդուրուիլ», երեսը ժրել «երեսը պնդացնել», ժրպնդել «զօտեպնդիլ», ժրպնդնալ «եռանդուն լինել», ժրպնդուկ «լաւ հագնուած»։ Այստեղ է պատկանում նաև խոջ. Համշ. իժիր «միշտ, յաճախ», Ասլ. Ուղ. Ջն. Պլ. ամէն ի ժիր «միշտ, ամէն անգամ», որի հնագոյն գործածութեան իբրև օրինակ ունինք «Երակն ի ժիր խաղայ» (իմա՛ «երագ երագ») Մխ. բժշ։

*ԺԻՐԱԿ «մի տեսակ բոյս է, որ յիշուած է չամանի հետ» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 839. (իսկ Բառ. երեմ. յաւել. 567 ժիրակ մեկնում է «խիյարշէմպէ», որի համար տե՛ս կակղիրակ)։

=Պհլ. *žīrak ձևից. համմտ. պրս. ﻳﺮﻩ zīra կամ ﺟﻴﺮﻩ žīra, պհլ. zūrak (սխալ դրչութեամբ), սանս. jīraka- «չաման» (տե՛ս Horn § 682):—Պրս. zīra, որ Կովկասումն էլ սովորական է, Պօլսի և Փոքր-Ասիոյ չամանը չէ՛, այլ նրա նման մի բոյս է։—Աճ.

ՀԲուս. ուզում է դասել կակղիրակ բառի մէջ։

ԺԻՐԱՔԱՂ «անծանօթ մի բոյս է». Ախտարք. ունի միայն ՀԲուս. § 840։

ՀԲուս. կցած է նախորդին։

ԺԼԱՏ, ի հլ.? «ագահ, կծծի» Սիր. լդ. 23. Ոսկ. յհ. ա. 7. որից ժլատել Սիր. լդ. 20. Եփր. Թգ. 442, 450. ժլատեալ Բուզ. ժլատութիւն Եզն. Մծբ. Ոսկ. յհ. բ (առէպ). որ և գրուած՝ շլատ, շլատիլ, շլատութիւն Եփր. զղջ. և Թգ. 371. Անյ. պորփ։

ՆՀԲ լծ. հյ. զլացօղ. յն. ζηλωτής «նախանձայոյզ» (ծագում է ζῆλος արմատից)։ Տէրվ. Altarm. 40 և նախալ. 79 սնս. gardh, հսլ. žlĭdatŭ, գոթ. grēdus «քաղց» ձևերի հետ՝ հնխ. gardh կամ ghardh «ցանկալ» արմատից։ Հիւնք. յն. ζηλωτής։

ԳԻՒ.—Ախց. Երև. ժլատ։

ԺԽՈՐ «խառնաձայն աղմուկ, շփոթ ձայն» Ոսկ. մ. բ. 12. «խառնակ, շփոթ» Փիլ. բագն. Ճառընտ. որից ժխոր կալնուլ «խնկէը գլխից գնալ» Ոսկիփ. ժխորել Ոսկ. մ. գ. ժխորիլ «արիւնը պղտորիլ» Մխ. բժշ. 22. ժխորումն Ոսկիփ. Ճառընտ. գրուած է ժղորել Ճառընտ. Անկ. գիրք առաք. 336. սաստկական ձևն է ժխորաել կամ ժխաորել Բառ. երեմ. էջ 124։

Հիւնք. պրս. šīγār կամ šīγār «աղաղակ»։ Коршъ, Բրգմ. Մշակ, թ. 1914, № 123 զնդ. γžar-, սանս. kšar- «գրուել, հոսիլ», պրս. šūr «աղմուկ»։ Թիրեաքեան, Արիահայ բռ. 170 պրս. ﻏﻴﮋ žaγār և ﻏﻴﮋﻩ žaγara «բարձր ձայն, դոչիւն, աղաղակ» (ըստ Բուրհանի)։ Պատահական նմանութիւն ունին վրաց. ժղավիլի «աղաղակ», շեժղրենա «հնչել, աղմկել, ժխորել», ժղերա «ձայն», դաո ժղրնա «հանել մի խռպոտ ձայն»։

ԺԽՏԵԼ «ուրանալ, մերժել» Մն. ժբ. 15. Ղևտ. ղ. 3. «ապերախտ դառնալ, բարիքը մոռանալ» Ոսկ. յհ. ա. 9. 3հ. կթ. որից ժխտիլ «կեղծել, ձևացնել» Վրք. հց. ժխտութիւն «ապերախտութիւն» Ոսկ. յհ. ա. 8. Կոչ. 135. Նոր բառեր են ժխտում, ժխտական «բացասական» ևն։

Հիւնք. ուխտել բառից։

ԺԿՌԻԼ «շփոթիլ, շշկլուիլ, շուարիլ». Նորագիւտ բառ՝ որ մէկ անգամ գտնում եմ գործածուած լծ. Նար. իե. «Դեգերեալ. լծ. ժրկռեալ և շիւարեալ»։

*ԺՂՈՒԻ «զբօսանք, զբաղմունք» (նորագիւտ բառ), որից ունինք ի ժղուլ լինել «զբաղիլ» Տաթև. 3մ. լդ (Մի՛այն է դէտն, զի թէ բազումք լինին, ի ժղուլ լինին և խափանի հայելն). ժղլիլ «զբօսնուլ» (չունի ԱՔ) լծ. նար. ծե. (Հրճուանք ժղլանք, զոր ժղլեցայ լերկրի). ժղլանի «մանր մունր գիտելիք, զբօսանք» ԱՔ. «խօսակցութիւն, խօսվռտուք» վարդան վարդապետի Քերականի մեկնութեան մէջ (տե՛ս Ադոնց, Արուեստ Դիոն. Քեր. էջ LX, ըստ նկատողութեան Ն. Ա.-ի՝ Գործ, 1917, № 2, էջ 120)։

=Արաբ. شغل šuγl «զբաղմունք», որից maššūγūl «զբաղեալ». նոյնից քրդ. մժուլ, մժուլի «խօսակցութեամբ զբաղիլ»։ Իրրև ուշ ժամանակի փոխառութիւն, արաբ. ج γ կարող էր տալ հյ. ղ, որի մօտ էլ խուլ շ կարող էր վերածուիլ բրթռուն ժ։

Ուղիղ մեկնեց Ս. Մովսիսեան (Նամակ 1928 դեկտ. 9)։

Գիւռ.—Խն. Մշ. ժղուլ «խօսք, զրոյց, խօսակցութիւն», Ալշ. Խն. Մշ. Նբ. Վն. ժղլել «զբաղիլ, խօսակցելով ժամանակ անց կացնել», որից Մշ. ժղլտուն «այն տեղը, ուր հաւաքւում են խօսակցելով ժամանակ անցկացնելու համար»։

[ԺՄԵՐԵՍ, *մէկ անգամ ունի Եփր. Թգ. 456 «ի նմին ժամու պատուն ժմերես մատուցեալ սնացուցանէր զմացառս աչացն առ բրօքն ծարրօքն»,—հատարակ ձեռագրական մի վրիպակ է, որ միւս ձեռագրերի համաձայն ուղղւում է* խորշոմերես *(տե՛ս ՀԱ. 1912, 554, թիւ 44)։*

ՆՀԲ առանց խորութեան դնում է թէ՛ ժմերես *և թէ՛* խորշոմերես՝ *միևնոյն վրկայութեամբ։ ՋՔ ջնջել է երկուսն էլ։ ԱԲ մեկնում է* ժմերես *«երևսը կոնճմատած, կամ ծիծաղերես»։ Հիւնք. մեկնում է «լիրբ, անամօթ, ժպիրհ երեսօք» և ըստ այսմ հանում է* ժմերեսել *բառից։*]

ԺՄԵՐՏ *«լիրբ, յանդուգն» (չունի ՆՀԲ). մէկ անգամ գործածում է Ոսկ. եփես. 834 «Այլ չար է, ասեն, ազգն, ժմերտ, լիրբ և անամօթ». որից* ժմերտեալ *«յանդգնեալ» եզն։*

Տէրվ. Altarm. *49 կապում է ժպիտ բառին։ Հիւնք. Շմերդ մոգի անունից։*

ԺՄԻՏ *տե՛ս ժպիտ։*

ԺՄԻՐԱԿ *«մի տեսակ բոյս է. լտ.* cassia fistula» *Գաղիան։*

ԺՄՊԻՏՐԱՄ *«ի հասառաուղջ կամ ի յայտնի». ունի միայն Բառ. երեմ. էջ 124. Հմմտ. ի տրամի «հասառաուղջ կամ յատակի» անդ, էջ 130.—բառիս վերջի մասն է* տրամ *«ամուր, պինդ». բայց ի՞նչ է ժմպ-։*

ԺՆԿԻՒ «basilinde». *դիտէ միայն Քաջունի, հտ. Գ. էջ 84. բայց բառարանում չկայ* basilinde.

ԺՈՒՆ *կամ* **ԺՈՒՂ** *«մի տեսակ բոյս է. հաղարջ,* rubus idaeus, *ֆրէնկ իւզիմի». Բժշ. կոչւում է նաև* ժողուենի վատկ. *էջ 212 (որ է* rhamnus libanotica Bois. *ըստ Տիրացուեան,* Contributo § 299)։

Գիւռ.—Հմշ. ժօխ «մորի պտուղը». ըստ ՆՀԲ կայ և ժոխուր «խաղող շառագոյն քան սեաւ, խոշոր և փոքր մի երկայն հատիւք, խիտ և մեծողկոյզ». ըստ Հիւս. § 843 ժոխուռ «ժոխի կամ կիռասի և ելակի նման վայրի պտուղներ».—ՆՀԲ-ի յիշածն է խոջ. ժոխուր, որ դիտէ և Կոյլաւ., Բռ. գերմ. 1202ա՝ իբր գերմ. Riesling *«մի տեսակ խաղող».—Հմմտ. նաև Արբ. ժախ «մորենի»։*

ԺՈՂԽ *«նեխած, լխկած, հոտած» (գործածական է նոր գրականում (արևմտեան բարբառ) միայն ձուի համար). որից* ժողխիլ *«լխկիլ, հոտիլ, ապականիլ» Ոսկ. մ. ա. 15. Նար. հգ. էջ 188.—Բռ. երեմ. էջ 124 դնում է* ժոխեալ *«հարեալ կամ տրամեալ», նոյն էջում նաև* ժղխեալ *«հարեալ կամ տրորեալ», իսկ էջ 123* ժաշխեալ *«հարեալ կամ տրորեալ»։—վերջինիս մէջ անշուշտ շ վրիպակ է, փոխանակ ղ. թէև բառաշարքը ցոյց է տալիս նոյնպէս շ։ Սրանից ազդուելով ՓՒ դնում է* ժաժխիլ *«հոտիլ, ժողխիլ, լխկիլ», որ նոյնպէս սխալ է։*

Հիւնք. ժողովել *բայից։ Պատահական նմանութիւն ունի թրք.* جلق jəlq *(ամկ.* jəlx*) «հոտած ձու»։*

ԺՈՂՈՎ, ո *հլ. «հաւաքում, հաւաքոյթ (մարդոց, անասունների և իրերի)» ՍԳր. Ոսկ. Եւս. պատ. և քր. Ագաթ. Կոչ. «աղմուկ, կռիւ» ՍԳր. «եկեղեցի» Կոչ. Ոսկ. յհ. ա. 1. «կրօնական միաբանութիւն» Վրք. Հց. «տօնախմբութիւն» Ոսկ. մ. ա. 2. «ժողովարան» Գծ. ժե. 21. «ամփոփ. կծկուած» Նիւս. բն. որից* ժողովել *ՍԳր. եզն. Ագաթ. վեցօր. Եւս. պատ.* ժողովուրդ *ՍԳր. Կոչ. չժողովուրդ ա. պետ. բ. 10.* ժողովրդանոց *Ղկ. է. 5. ժգ. 10.* ժողովարան *Ագաթ. Ոսկ.* ժողովեղ *Գծ. ժբ. 7.* ժողուրիւն *Լծ. պրպմ. էջ 720.* բազմաժողով *Ողբ. ա. 1. Ագաթ. Եւս. պտ. Մծբ.* զօրաժողով *ՍԳր. Բուզ. Կոչ. Եւս. քր.* դրամաժողով *Բ. մակ. ժա. 3.* ֆաղաքաժողով *Գ. մակ.գ. 1.* ընշաժողով *Բրս. ապաշխ.* բրաժողով *Վրդն. պտմ. Սամ. եր.* յոգնաժողով *Պիտ. Նոր բառեր են* ժողովակ *«ապօրինի ժողով»,* ժողովրդականացնել, ժողովրդականութիւն *են։ Ոսկեդարեան բարդութիւն է* ժանտաժող *«ժանտութեամբ լի (գրուածք)» Գիրք Թղ. էջ 7, որ ենթադրում է թէ բառի արմատն է *ժող. բայց Վարդանեան, ՀԱ. 1921, 24 յոյն բնագրի համեմատութեամբ ուղղում է բառս* ժանտաժուռս։

ՆՀԲ լծ. յոլով, ծով: Lag. Urgesch. 1057 *պրս.* zulf «*մազեր*», *սանս.* jaṭā: Müller SWAW 41, 12 *փոխառեալ արամ.* זרבא zrbā «*բազմութիւն, ամբոխ*» *բառից, որ ըստ* Laq. Arm. Stud. § 883 *սխալ ընթերցուած է: Տէրվ.* Altarm. 106 *կապում է* կողով, գերիել, գաղափար *բառերի հետ: Սողոմոն Ֆր. 3. Մուրատեան, Մասիս 1883 սեպտ" 24 արմատը համարում է* ժող, *բայց առանց ապացոյցի: Հիւնք.* զովող *բառից:* Pedersen, *Նպատ. էջ 23* յոլով *բառից՝* գ *մասնիկով. ըստ իրեն՝* գ+յ *տալիս է* ժ: *Աղ.* Основ. табл. *9 համեմատում է եբր.* חרף xrf «*պտուղ քաղել*», חרף xōref «*աշուն*», *արաբ.* خريف xarīf «*աշուն*», *վրաց.* ցուրեվա «*պտուղ քաղել*» *բառերի հետ. որանց արմատն է սեմականն* xrp՝ *յարիթմական* ցրվ. *հայերէնը ներկայացնում է* žrv, yrb, yrv *արմատները. առաջինից է* *ժոռով>ժողով, *երկրորդի հետ համմտ. եբր.* רב rōb «*խումբ, ամբոխ, մեծութիւն*», *իսկ երրորդից է* յոլով: *Նոյն* ЗВО *22, 74 եւմ.* šarappa «*ժողովեցան*», *վրաց.* կրեբայ «*ժողովել*», կրեփայ «*քաղել*», *լազ.* okorobu «*հաւաքել*»:

ԳԻՒՒ.—Ալշ. Մշ. Սլմ. վն. ժօղվել, *Ախց. Կր. Ննխ. Պլ. Ռ. Սեբ.* ժօղվէլ, *Ակն. Խրբ. Մկ. Ոզմ. Տիգ.* ժօղվիլ, *Ասլ.* ժէօղվէ՛լ, *Հմշ.* ժօղվուշ, *ՋԲ.* ժէօղէօվ֊.—*հետաքրքրական ձև է նորամուտ Պլ.* ժօղվօխ *«ժողով»:—Վ ձայնը կորցրած են Մրզ.* ժօղէլ, *Ննխ.* ժօղօղէլ, ժօղօղանֆ, ժօղօղվիլ, *թէև Մրզ.* ժօղօվըրբ, ժօղօվըʰրբ *պահում է:—Կովկասահայ բարբառներում չնչուած է բառս և գործածւում է հաւաքել:—*ժողվել *բառի գրչութեան վրայ խօսած է Մասեաց Աղաւնի, 1863, էջ 79, որ* ժողուել *համարում է սխալ գրութիւն և ցոյց է տալիս թէ ուղիղն է* ժողվել:—*Նոր բառեր են՝* ժողովֆարար, ժողվածուրիկ, ժողվուիլ, ժողվըռաել, ժողվռաել, ժողվռաուիլ, ժողվռռաուիլ, ժողվրբուիլ, ժողնռաել, ժողնկուիլ, ժողնուիլ, ժողվռմնի, ժողվռաւ֊ *են:*

ՓՈԽ.—Անցուած է Ս. Գրքի բրդ. Բարգմանութեան մէջ. «Քօ մալա էքէ լը ժողովարանէ զmլըգի պու» (Որոյ ապարանքն էին մերձի ժողովեաղն) Գծ. ժր. 7: Ուտ. žoğov *«ժողով»,* žoğovaran *«ժողովարան»,* žoğovurt, *«ժողովուրդ»:*

**ԺՈՅԺ «տոկալու՝ համբերելու ուժ, կարողութիւն» վրք. հց. ձառընտ. Հների մէջ ունինք միայն ոճով ժոյժ ունել «համբերել, տոկալ» ՍԳր. Սերեր. Ոսկ. Մաթ. Եւս. քր. որից ժուժալ եղն. Ոսկ. մ. ա. 22. Ագաթ. ժուժել Տոբ. ժա. 13. Սերեր. ժուժկալ ՍԳր. Եւս. պատ. Սերեր. Բուզ. Ոսկ. ա. թես. ժուժկալել ՍԳր. Վեցօր. եղն. անժոյժ ՍԳր. Ագաթ. անժուժիլ Եփր. Բ. կոր. 110. դժուարաժուժալի Փիլ. իմաստ. Պիտ.* պարաժոյժ *(կարդա* սարաժոյժ?) *«տկար, անզօր, չդիմացող» Եփր. վկ. արև. 17. տե՛ս նաև* ապաժոյժ.—*գրուած է ժուժ ունել Կոչ. 305.—ժողովրդական սիրուն մի բառ է երևում չեմժուժուկ «վատուժ, տկար» նորագիւտը՝ որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Բառ. երեմ. էջ 297* վատուժ *բառի բացատրութեան մէջ: (Թէ միայն պէտք չէ կարդալ չիմ ժուժուկ. տպագիրը անորոշ է):*

=Կազմուած է ոյժ փոխառեալ բառից՝ գ զօրացուցիչ նախդիրով, որ յետոյ՝ բառավերջի ժ-ի ազդեցութեամբ դարձել է ժ. այս է պատճառը՝ որ հին հայերէնի մէջ ժոյժ չի գործածւում առանձին, այլ ասւում է միայն ժոյժ ունել՝ իբր զոյժ ունել: Աննախադեր ձևով ունինք ուժել «տոկալ, դիմանալ» Եփր. աւետ. Խոհք:

> *ՆՀԲ «ոյժ տոկալոյ»: Հիւնք. հանում է ոյժ բառից: Տէրվ.* Altarm. *53, 55* յոգնել, յօժար, յոյժ *ևն ձևերի հետ հնխ.* yug «*կապել, կցել*» *արմատից: Վերի մեկնութիւնը տուաւ* Meillet, *Բանասէր 1900 թ., էջ 105:*

ԺՈՒԱՅԹԵԼ. անսովոտ բառ. մէկ անգամ ունի ՅՀ. իմ. պալ. էջ 38 «Տղայոցն արեամբ զանգեալ ալևր, զանօրէնն ժուայթելով զօրէնս, անդր ևս քան զխոզին գտանին զանբզգայ ծննդակերութիւն»:—ՀՀԲ գրում է ժուայբել, *միւսները* ժուայթել. *ՆՀԲ մեկնում է «շուայտել, և կամ ժայթքել առ չարաչար ուտելոյ», ՋԲ «շուայտիլ, չարաչար ուտել», ԱԲ «դուրս վաթել, փսխել»:*

ԺՈՒԼԱԿ «ազգ ինչ յոյր արտուտի, ֆրանս. mauviette». ունի նորայր. Բռ. ֆրանս. էջ 792 բ. իբր նորակերտ բառ, բայց յայտնի չէ ըէ ի՛նչ աղբիւրից է և ի՛նչպէս է կազմուած։

ԺՈՒՄ տե՛ս Ժամ։

ԳԻՒ.—Յատկապէս յիշատակելի են Ղրբ. ժէմ և Աւտ. յում. միւս ձևերը տե՛ս ժամ բառի տակ։

ԺՈՒՌ «ազոխ, խակ խաղող» Բժշ. «տհաս, խակ» Ոսկիփ. որից ժուռուժուռ մեռանիլ «վաղամեռիկ լինել» Ոսկիփ. ժուռիւն լծ. նար. ժուռտ «ազոխ» Մխ. հեր. 123։—ՆՀԲ ունի նաև ժիռ բառը, ի հլ. որ մեկնում է «կա՛մ է ճիռ ողկուզոյ և կամ այգի ժայռոտ, որ և յոմանց ժուռ ասի»։ Սրանից առնելով ԱԲ ժիռ «ձիռ», երկուսի մէջ էլ սխալ է բառը՝ թէ՛ ձևով և թէ նշանակութեամբ։ Այս ձևը հանուած է Ոսկիփորի հետևեալ հատուածից. «Թէ համբերես և ոչ շտապես, ի ժրոէն հալուա զուգես», ուր ի ժրոէն պէտք է հասկանալ «ազոխից, խակ խաղողից» (ժուռ բառի բացառականը). որի համար հմմտ. Քրք. ժողովրդական առածը՝ sabr əlan qoruqdan helva olur—«համբերութեամբ ազոխը հրուշակ կը դառնայ». (ակնարկելով ազոխից խաղողը, խաղողից ռուպը և ռուպից պատրաստուած հրուշակը)։

ԳԻՒ.—Ալշ. Երև. Խն. Մշ. Զղ. Վն. ժուռ, Ոզմ. ժօռ, Մկ. ժօռ, Տփ. ժուրը.—գաւառականների մէջ ժուռ ներկայանում է զանազան իմաստներով. այսպէս՝ Ալշ. Խն. Մշ. Զղ. Վն. «խակ, տհաս», Վն. «կիսահաս, չզարգացած», Լ. «ԹՔու», Երև. Լ. Զղ. «ազոխ, խակ խաղող», Տփ. «անտառային խաղող», Խոտ. «խաղող» (ըստ որում Խոտրջուրի մէջ խաղողը միշտ ԹՔու է), Համշ. «ողկոյզ», Տփ. «ԹՔու ապուր», Վն. «ԹՔու դէմքով, խոժոռադէմ». որից ժուռջուր «ազոխի ջուր», ժուռկուճով «խակակուռ», ժուռ-մուռ «տհաս», ժուռենի «մի տեսակ ԹՔու խաղող», ժոչոր «ԹՔի վրայ չորացած ազոխ»։

ՓՈԽ.—Լազ. žari «ԹՔու»։

ԺՈՒՌ «պտոյտ» տե՛ս Շուրջ։

ԺՊԻՏ «քամիծաղ» Կանոն. որից ժպտիլ «կէս ծիծաղիլ» Սիր. իս. 23. Նար. Լմբ. Վրք. հց. ժպտումն Խոր. Արծր. ժպտական Գնձ. անժպիտ Իմ. ժե. 4. սրա հետ նոյն է ժմիտ ԱԲ, որից ժմտիլ Փիլ. իմաստ. Ճառընտ. Պտմ. աղէքս. բաւեժմիտ Արծր. ունինք նաև ժմըտիլ Կնիք հաւ. էջ 307. նոր բառեր են ժպտալից, ժպտուն են։

Տէրվ. Altarm. 49 և Նախալ. 51, 115 գմայլիլ բառի հետ՝ հնխ. smi, smid արմատից. հմմտ. յն. μειδάω, լիթ. smaidit, սանս. smi, անգլ. smile են։—Հիւնք. միտ բառից հանում է ժմտիլ, իսկ ժպիրն բառից ժպտիլ։

ԳԻՒ.—Երև. ժըպըրտել, Մկ. Սլմ. Տփ. ժըմտալ, Ալշ. ժմղալ, Կիւր. ժմնիլ։

ԺՊԻՐՀ, ի–ա հլ. «յանդուգն, լիրբ» ՍԳր. Նար. պտմ. Վեցօր. Եփր. ել. էջ 180. Հռ. էջ 14. որից ժպրճիլ «համարձակիլ, յանդգնիլ» Յուդ. 9. Վեցօր. էջ 51. «սարսափիլ» Մամիկ. էջ 46. ժպրճութիւն ՍԳր. Ոսկ. Նար. պտմ. Կոչ. ժպրճիւրեա «լիրբ ու աններես կերպարանքով» Կղնկտ. (ժանտատեսիլ ժպրհերես լայնադէմ անհուն բազմութեանն)։

Տէրվ. Altarm. 49 կցում է ժմիռտ բառին։ Հիւնք. հանում է շպար բառից։ Թիրեաքեան, Արիահայ բռ. 170 պհլ. šapīr «գերիվեր, քաջ, ընտիր, խիզախ, աններես»։

ԺՌՊՂՈՒ «գեղեցկաձայն մի թռչուն է». նորագիւտ բառ՝ որ մէկ անգամ գործածուած է էջմ. № 679 ձեռ. Տաղարանի մէջ, էջ 72 ա. «Ժրոպղուն ձայնիկն գայր, Ջեղ զերգեհոն որ կու ցնծայր. Գաբրիէլի փողոյն նման, որ մեռելոցն ձայն կուտայր» (ըստ Ամատ. Հայոց բառ ու բան, էջ 231 ա)։—Բառը սեռական հոլով է. ուղղականը անյայտ է։

ԺՔԹԻԼ տե՛ս Շքթիլ։

ԺՕՌԱՏ տե՛ս Ժայռ։

Մառ ЗВО 5, 317 արմատը ժօռ=գնդ. dañtan «առամ»։

Ի

+Ի *«մի բան». արմատ առանձին անգործածական, որի հոլովեալ ձևերն են՝ սեռ. է՞ր «որի՞, ինչո՞ւ» (որից ընդ-է՞ր, էրո՞ւմ), տր. ի՞մ «ինչո՞ւ, ի՞նչ բանի», հյց. զի՞ «ինչու», բց. յիմէ՞, առ իմէ՞, զմէ՞ «ինչի՞ց», գրծ. ի՞ւ «ինչո՞վ, ի՞նչ բանով»։ Այս արմատից -ի, մն, նչ, -ր ածանցիչներով կազմուած են *իի, իմն, իմն, իւր, որոնց, ինչպէս նաև նրանց զանազան ածանցների վրայ տե՛ս իւրաքանչիւրը առանձին։—(Ենից ունինք նաև աւի «աներ, ոչինչ» բառը. «Յանչաւ և յանի քննութիւնն անկանիմք». Վեցօր. էջ 17. այս բառը, եթէ ուղիղ ձև է, թանկագին մնացորդ է ի արմատից, աև- բացառականով։ Բայց Վեցօրէից այն օրինակը՝ որի վրայ կատարուած է վենետկի 1830 թուի տպագրութիւնը, շատ աղճատուած և սխալագիր մի օրինակ է. ուստի և աևի բառի գոյութիւնն էլ շատ կասկածելի)։*

=Բնիկ հայ բառ՝ որ ծագում է հնխ. qui- հարցական դերանունից. համմտ. միւս ժառանգներից՝ սանս. čid, kim «ի՞նչ, ինչո՞ւ», գնդ. ciš «ո՞վ, ոմն ոք», հպրս. ciy, յն. τίς, չէզ. ti, թնս. kis «ո՞վ, ո՛րը, ի՞նչ բան», լտ. quis «ով», quid «ինչ», օսկ. pis, pid, umbr. pirí, pife, իռլ. cid «ինչ», հին բ. գերմ. hwio, գոթ. haiwa, անգլսք. hú, անգլ. how, գերմ. wie «ի՞նչպէս», հսլ. čĭto, ռուս. ч-то «ինչ», ուկր. ny-č, չեխ. ni-č, լեհ. ni-c «ոչինչ» են (Walde 636 ,Boisacq 972, Berneker 164, Kluge 529, Pokorny 1, 522, Ernout-Meillet 806): Հայերէնի մէջ հնխ. qu նախաձայնը՝ և շնչին անցնելուց յետոյ՝ ընկած է։ Միջին ձևը պահում են հի՛մ՝ իմ. յի՞մ, ինչպէս նաև հի-բար, հի-զան են յետոսկեդարեան ձևերը։—Հիւբշ. 450?

Բագրատունի, Քերակ. զարդ. էջ 74 ի-մն, ի-մ (համմտ. ռմկ. մրն) դնում է ի արմատից։ Bopp, Gram. comp. II 381 *կցում է սնս.* ki *ձևին, իբր նախաձայն* k *ընկած։* Bugge, Btrg. 28—29 *հնխ.* k²it *ձևից դարձած* git *և* g-*ի անկումով ի։ Վերի մեկնութիւնը տուաւ* Meillet MSL *7, 162 և 10, 282, հաստատելով այն օրէնքը՝ որ բառասկզբի* k² (q²) *հայերէնում ճ ձևն առնելուց յետոյ՝ ընկնում է։ Հիւբշ. 450 չի ընդունում այս օրէնքը, որովհետև ունինք հնխ.* k²etvores>*հյ. չորք. սակայն ի նկատի ունենալով հյ. ի<հնխ.* k²i-, ու(ր)<k²u-, ո<k²o- *համեմատութիւնները, տրամադիր է ընդունելու որ հնխ.* k² *ընկնում է* o, u, i *ձայնաւորների մօտ միայն։* Meillet-*ի յաւելուածական բացատրութիւնները տե՛ս* ZAPh *1, 148։ Մմն Բանասէր, Բազմ. 1897, 591 ի ձայնից դնում է* զի, ինչ, զինչ, իմիմն, իւր, իմն, իմ, *սրբանցից իւրաքանչիւրի վրայ երկար խօսելով։* Bugge, Lyk. Stud. *1, 58 և 66 վերի ձևերին է կցում նաև լիւդ.* ti-, tike-:

+Ի. *նախդիր ներգոյականի, նախդիր հայցականի և բացառականի. ինչ. ի Բաղտ-ի, ի Բաղամ, ի Բաղամէ. ձայնաւորի մօտ դառնում է յ (երկուսն էլ հնչմամբ նախապէս նոյն էին). ինչ, յանուան, յանուն, յանուանէ.—մտնում է նաև բազմաթիւ ոճերի մէջ. բուն նշանակութիւնն է «մէջ»։*

=Բնիկ հայ բառ, որ հաւասարապէս կարող է գալ հնխ. in *կամ* en *ձևից, վերջաձայն* n-*ի անկումով. համմտ. յն.* ἐν, εἰς, *կրետ.* ιν, *հլտ.* en, *լտ.* in, *գոթ. անգլսք. հբգ.* in, *գերմ. անգ. հոլլ.* in, *հիսլ.* in, *կիմր.* en, in, yn-, *ալբան.* in, *հպրուս.* en, *լեթթ.* ē, *լիթ.* ĩ, *հիսլ.* ī, *շվէդ. դան.* i, *բոլորն էլ «մէջ» նշանակութեամբ (միայն ալբանացին «մինչև»). վերջին լեզուները ճիշտ ու ճիշտ հայերէնի աստիճանին հասած.—հնխ.* on *ձևից են դուրս գալիս՝ հսլ. ѣn, vѣn>vъ, ռուս.* въ, во,

ВН-, *հին.* v, ve, vn *«մէջ, ի»* (Walde 381, Trautmann 69, Boisacq 249, Kluge 229, Pokorny 1, 125, Ernout-Meillet 457):

Ուղիղ մեկնեց նախ Windisch. 39:— Lag. Urgesch. 57 *սանս.* api, *յն.* ἐπί, *«վրայ», որոնք դարձել են նախ* ի, *յնոյ՝* ի: Meillet MSL *10, 141, յն.* ἐξ *լա.* ex, *հսլ.* jis, *լիթ.* iss, *հպրուս.* is՝ *որոնք բացառականի նախդիր են:* Bugge, Lyk. Stud. *2, 75 կցում է լիւկ.* i- *«մէջ»:*

ԳԻՒՂ.—Պահուած է միայն մի քանի դարձուածների մէջ. ինչպէս՝ Պլ. մութն ի լուսուն, մրսի վրայ (<մուրս ի վրայ), երեսն ի վար, պատն ի վեր, Ալշ. սարն ի վեր, դ'էմ ի տուն, Ղրբ. փրսրվէր (բերանս ի վայր), կլխրվէր (գլխիվայր), կլխրյեր (գլխիվեր), պռռրտիւս (բուրդ ի դուրս), Զթ. իտուն «նորահարսի առաջին այցելութիւնը դեպի ծնողների տունը» են: Ամէնից ճոխ գործածութիւնն ունի Սիւրիոյ բարբառը. ինչ. ի գէղէյնեա «ի գետին», ի փուրցուենա «ի փորձանս» (տ. իմ Հայ բարբառագիտութ. էջ 213): Գաւառականներին հետևելով՝ նոր գրական լեզուն էլ պահում է մի քանի բարդութեանց և դարձուածների մէջ.—այստեղ ունինք նաև դէ՛պի, բա՛ցի, որոնք ծագում են դէպ 'ի..., բաց 'ի... ձևերից. այս պատճառաւ էլ հնամոլները դեռ գրում են դեպ ի, բաց ի, նախդիրը անջատ պահելով: (Յաջորդ բառի նախդիրը՝ նախորդ նախադրութեան հետ կցուելու իրրև գեղեցիկ օրինակ է ծառայում Շմ. ղայրազ «բացի», որ կազմուած է արաբ. غير ɣayr «բաց, ուրիշը» և պարս. جز az (բացառականի մասնիկ նախադաս) ձևերի զուգադրումից):

ԻԱԹՈՒՄ *«պատրանք». ունի միայն Բառ. երեմ. էջ 125:*

[**ԻԱԼՍ** *«ի բնակս». ունի միայն Բռ. երեմ. էջ 125.—երկուսն էլ յզ. նախդրիւ հյց. հոլով լինելով՝ ուղ. պէտք է դնել ալ՛ «բնակը», որ գիտէ նաև Բռ. երեմ. էջ 7 «Ալը. որջք կամ խորդք (իմա՛ խորբ) կամ անկիւնք կամ ձորք». այս է ալ-ի «խորք, խորունկ տեղ», որ տե՛ս վերը:]

**ԻԱՄ «իջևանի պահապան». նորագիւտ բառ, որ մէկ անգամ ունի Մաղաք. ար. 33. Յամէն չէն գեղէ մեկանաւոր հանէին... և առնուանեաց գնոսա իամս և առաքէր գնոսա ամէն աւեր տեղիան առնել շինուիւն և ամենեին հարկ ոչ տալ, բայց միայն հաց և թան ճանապարհորդ տալիս»:*

=Թիր. يام yam *«սուրհանդակ, փոստի կայարան, փոստի ձի». այս բառն էլ ծագում է չին.* 馬日 馬 yi má *«ձիերի փոստ,* peste aux chevaux*» բառից, խօսակցական լեզուով* yem, *որից փոխառեալ են նոյնպէս պրս.* يام yām *«ձի սուրհանդակի»,* يامچى yāmči *«սուրհանդակ,* курьеръ, гонецъ*»,* يامچيك yāmǰik *«սուրհանդակ», ռուս.* ямъ *«փոստի կայարան»,* ямскóй *«փոստային»,* ямщикъ *«սայլորդ, սայլավար, փոստի ձիերը քշող ձիապան» (հիմայ «կառապան»), որից էլ բհլոռուս.* jamščik *և լեհ. գռ.* jamszczyk, jemszczuk *(տե՛ս* Pauthier, Le livre de Marco Polo, Paris 1865, *հտ.* I, *էջ 335 ծան. ԳԴ էջ 45 բ,* Будаговъ II 341, Berneker 444):

Ուղիղ մեկնեց Պատկ. հրատ. Մաղաք. ար. էջ 64:

ԻԱՄԻ *«հանճար». ունի միայն Բառ. երեմ. էջ 125:*

ԻԱԻԱՆ, *տե՛ս* Աւան *«թալանչի»:*

ԻԲԱԼԻ *«ողբալի». ունին միայն Հին բռ.= Բռ. երեմ. էջ 125. մէկ անգամ գործածում է Մագ. դամագռ. (տե՛ս Մէնէվիշեան Հմ. 1911, 384):*

ԻԲԱՆԻ *«կոխան». ունի միայն Բառ. երեմ. էջ 125, որի հետ նոյն է* իէբաճէ *«կոխան գաւ՛է»! էջ 127:*

**ԻԲԻԻ «մի տեսակ թռչուն». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Փիլ. ժ. բան. էջ 244 «Բայց բազում և այլ կենդանիս, շունս, կուզս, դայլս և թռչունս՝ իբիւս, բազէս»: Նոյն բառն է՝ որ Բռ. երեմ. էջ 125 գրում է «իբաիիս. հաւ է. կարապն կամ արծուի»:*

=Յն. ἶβις, *սեռ.* ἴβιδος *«քաջահաւ թռչունը» (որ եգիպտացիք պաշտում էին), լտ.* ibis, *ֆրանս.* ibis:—**Աճ.**

—**ԻԲՐ** *«որպէս, ինչպէս, պէս» եզն. կռչ. «երբոր, երբ» Մծբ. հարցականով* ի՞բր *«ի՞նչ-*

պէս, ի՞նչպէս կլինի որ» Եզն. որից իբր եթէ, իբր այն թէ Նար. Մագ. իբրև «պէս, նման» ՍԳր. «երբոր» Ագաթ. Եւս. պատ. «թէև, մինչդեռ» (վերջին իմաստը չգիտեն բառարանները. բայց համմտ. Եփր. Համաբ. 36. Տէր մեր ասաց ոմանց թէ չեմ դատաւոր, իբրու դատաւոր էր նա. և ոմանց ասէ՝ չեմ բարեբար, իբրու բարեբար էր նա.—էջ 222՝ Զի մի՛ յանուսցէ զքեզ ի սեղանոյ անտի իւրմէ՝ իբրու քաղցեալ իցես դու). իբրև զի թէ Կոչ. իբրև զի ՍԳր. իբրև թէ Բ. կոր. ժա. 21. իբրև ոչ եթէ ՍԳր. իբր ոչ եթէ Եզն. Կոչ. իբրու Ագաթ. Վեցօր. Եւս. պատ. ևն։

=Նոյն է երբ բառի, -բար «պէս» մասնիկի և բարի «բնաւորութիւն, որպիսութիւն» գոյականի հետ. նշանակութեան տարբերութեան համար համմտ. ֆրանս. comme il arrivait..., թրք. geldiyi gibi, աշխ. գա՛լուն պէս «անմիջապէս (կամ հենց) որ եկաւ» ևն։— Bugge KZ 32, 32 ևն թարգմում է՝ որ իբր կազմուած է ի «ի՛նչ» +բար «բարք, եղանակ» բառերից, շեշտը լինելով առաջին վանկի վրայ (համմտ. ո՛րբան, ի՛նչպէս ևն), յաջորդ վանկի ա ձայնաւորը կորաւ, ճիշտ ինչպէս ա՛յժմ<ա՛յսժամ բառի մէջ։

Brosset JAs. 1834, 369 ևն համեմատում է սանս. iva և վրաց. երբի ձևի հետ։ Justi, Dict. Kurde, էջ 30 հյ. իբրև բառի հետ է համեմատում քրդ. iwer «որ և իցէ որ, մէկը». (այս բառը մերի հետ յարաբերութիւն չունի)։ Հիւնք. 60 յն. ὅπερ «ինչպէս», էջ 112 պրս. vār, vāre «պէս, նման»։ Meillet MSL 8, 281 և 9, 53 իբ հարցականի իւ գործիականից՝ r մասնիկով։ Մառ, Грам. др. арм. 294 մեկնում է Bugge-ի ձևով կամ կազմուած իբ «ի՞նչ» հարցականից+բ գործիականի մասնիկից +rև, rու ձևից՝ որ գործիականն է *rե բառի. այս վերջինը գտնում ենք նաև վրացերէնում՝ rի ձևով, որից կազմուած են ևսրև «այսպէսով», եգրե «այնպէս», վիդրե «երբ»։ Պատահական նմանութիւն ունի հալ. iwar «իբր» (Sommer, Hethitisches 2, 16), որ կցւում է սանս. iva «պէս, իբր» բառին։

Գիւմ.—Ննխ. իփր թէ։

Փոխ.—Վրաց. ებრ ևբր, ებრივ ևբրիվ «նման, պէս», მოხ-ებრ միս-ևբր «նման նմա». ածականների ժայրին՝ ებრი ևբրի, ებური ևբուրի, ებრივი ևբրիվի, მებრივი մեբրիվի նշանակում են «նման, իբր, պէս». օր. ანგელოსებრი անգելոսեբրի, ანგელოსებრივი անգելոսեբրիվի «հրեշտականման» (համմտ. հյ. -բար, -աբար մասնիկը՝ որ իբր բառի հետ նոյն է)։ Այս գործածութիւնն ունի նաև მებრ մեբր «նման», օր. წეხია მებრ ძեսամեբր «ըստ ձիսի», ძիսաբար»։ Ունինք և უებრო ուեբրո, უებრიო ուեբրի, უბარი ուբարի «աննման», უბაროგა ուբարոբա «կերազանցութիւն», უებარი ուեբարի, უებრო ուեբրո «աննման, անբաղդատելի» (ու բացասական մասնիկով կազմուած)։—Այս բոլորի մէջ վրաց. -ივ- -իվ- հյ. և ձևից է, որ և ունենալով հնդևրոպական ծագում, ցոյց է տալիս՝ թէ փոխառութիւնը հայերէնից վրացերէն է և ո՛չ թէ վրացերէնից հայերէն։—Bugge IF 3, 168—180 (Թրգմ. ՀԱ. 1895, 260) կարծում է թէ հայերէնից է փոխառնալ նաև գոթ. -ba մակբայակերտը. ինչ. ungatassaba <անդասաբար. azētaba<ազատաբար ևն։

*ԻԲՐԱՄԷՆ (սեռ. -ու) «Մնացորդաց վիրը». այս անունը գործածում է Եփրեմ իր մեկնութեանց մէջ (տե՛ս Եփր. մնաց. 463, 465, 495 և ՀԱ. 1912, 546)։

=Ասոր. ܕܒܪܝ ܝܡܝܢ dibre-yōmīn, որ է երբ. דברי הימים dibre-hayāmīm, և բուն նշանակում է «բան կամ վարումն աւուրց»։ Հայերէն բառը ըստ այսմ պէտք է ուղղել դբրամէն կամ դիբրամէն, ինչպէս որ ունինք այլուր՝ դամբրէովմին ՀԱ. 1912, 546 ծան., դաբրեհովմին, դարաւամիճայն ձևրոն, այլափոխուած՝ աճախադպրիամեն Եւս. պատ. 471, դիբլեճայամի Բռ. երեմ. էջ 77, դարոյէ ոմին Բռ. երեմ. էջ 71։

Ուղիղ մեկնեց Վարդանեան ՀԱ. 1912, 546, 1913, 623 և 1920, 403։

ԻԴԱՍԿՈ «մի տեսակ չար դև» Ախտարք (ըստ Ալիշան, Հին հաւ. 215)։

*ԻԹԼԱՅ, ի հլ. «ձև, կերպարան, տեսակ, գաղափար». ունի միայն ՀՀԲ, առանց վկայութեան։

=Յն. ἰδέα «արտաքին երևոյթ, ձև, նկարագիր, գաղափար», որից փոխառեալ են նաև լտ. idea, ֆրանս. idée ևն։

ՀՀԲ դնում է «բառ յունական»։

*ԻԹԻՍԱՐ «մի տեսակ բոյս. sainfoin». ունի նորայր, Բառ. ֆր. 1111 բ։

=Յն. ἡδύσαρον նոյն. նշ. (Քաջունի, Հա. Բ. էջ 550 և Ժ. էջ 59 գրում է եղիսար)։

Ուղիղ մեկնեց Ստ. Մալխասեան (անձնական)։

*ԻԹՈՍ «ձև, կերպարանք, երևոյթ», իբրև յունական իմաստասիրական եզր՝ երեք անգամ գործածում է Եզն. այսպիսի բացատրութեամբ. «Պղատոնեանքն (եդին) Աստուած և հիւլ և իդաս, որ առաջինն նիւթ է և երկրորդն՝ առանձինն ինչ ուրուր։ Պղատոն՝ որ Աստուածն և հիւլ և իդոս զնէ էութեամբ, ցուցանէ թէ կերպարանաց արարիչ է Աստուած... նոյնպէս հիւլն և իդոսն, որ է առանձինն ինչ ուրուր» (էջ 204, 224)։

=Յն. εἶδος «մարմնի արտաքին ձևը», որ ըստ յունական փիլիսոփայութեան՝ հակակայն է նիւթ (ὕλη, ὑλή) բառի։ Եզնիկի «առանձինն ինչ ուրուր» բացատրութիւնից լ. բևում է՝ որ ինքը շփոթում է այս բառը յն. ἴδιος «յատուկ, սեպհական, որ առանձինն մէկին է պատկանում» բառի հետ։—Հիւբշ. 350։

Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ։

*ԻԹՈՍ «ըստ հռովմէական տոմարի՝ մարտ, մայիս, յուլիս և հոկտեմբեր ամիսների 15-ը կամ միւս ամիսների 13-ը». Տոմար. Թղթ.

=Յն. *εἴδος կամ *ἴδος ձևից, որոնց յոգնակին է εἰδοί, ἴδοι նոյն նշ. փոխառնուած է լտ. idus հոմանիշից, որից նաև ֆրանս. les ides, գերմ. die Iden ևն։—Հիւբշ. 350։

Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ։

ԻԹՈՐՈՍ «մի տեսակ կենդանի». նորագիւտ բառ՝ որ գտնում եմ երկու անգամ գործածուած Տաթև. ամ. 214 «Կենդանին որ կոչի իդորոս՝ որ թշնամի է կոկորդիլոսին, շաղկապի ընդ խոտոյ, և կոկորդիլոսն ուտելով զիւրն, կլանէ զիդորոսն և թունիւք նորա սատակի»։

ԻԶԱՐԻՂԱՅ տե՛ս Ազարիղի։

ԻԿԱՅԱՂ «փրկութիւն». ունի միայն Բառ. երեմ. էջ 126։

*ԻԿԱՍԱՔ «լուսին». ունի միայն Բառ. երեմ. էջ 126։

ԻԿՏՈՒՐԻ «պատառեալ». ունի միայն Բառգիրք Երեմիայ Մեղրեցւոյ, էջ 127։

ԻԿՐՈՒԹ «մորթ». ունի միայն Բառ. երեմ. էջ 127։

ԻԿՓԻԼԻ «թողչէ». ունի միայն Բառ. երեմ. էջ 127։

+ԻԺ, ի հլ. «մի տեսակ վտանգաւոր օձ» ՍԳր. Վեցօր. 151, 196. «իժի նման չար» Եփր. աւետ. որից իժակուրիւն Վեցօր. 192. իժացեալ Ճառընտ. իժաթոյն 34. կթ. իժանց «իժ շատ եղած տեղ» Վրդ. առ. 232. իժաթաւակ Շիր. իժաբաւոյ, Պիտ. գրուած է նաև իւժ՝ ըստ ԱԲ։

=Բնիկ հայ բառ՝ հնխ. ēg²hi- ձևից։—Մեր բառի ցեղակիցներն են սանս. áhi-, զնդ. aži-, պհլ. až, մինջ. ylž, յն. ἔχις, ὄφις, ἔχιδνα հոմանիշները, որոնք ծագում են հնխ. eg²hi-, og²hi- ձևերից։ Սրանց դէմ հայերէնի մէջ սպասւում էր *եգ կամ *եջ, *ոգ կամ *ոջ, թերևս նաև *եժ, *ոժ, բայց ո՛չ իժ։ Հյ. իժ կարող է գալ հնխ. ēg²hi- ձևից. չի կարող լինել իրանական փոխառութիւն, որովհետև այս պարագային ունենալու էինք *աժ, ինչպէս որ ունինք էլ Աժդահակ<պհլ. Ažidahak, զնդ. aži dahāka: Հնդ. eg²hi- ձևի այս սահմանափակ տարածման և զանազանակերպութեան պատճառը, ըստ Meillet, Interdictions de Vocabulaire, էջ 13, այն է՝ որ «օձ» նշանակող բառերը ենթարկուած էին tabou ի. և ըստ այսմ իւրաքանչիւր շրջան իրեն յատուկ բառն ունի. ընդհանուր տարածուած մի ձև գոյութիւն չունի. համմտ. բացի վերի իժ խումբից, նաև 2. հյ. օձ, լտ. anguis, հպրուս. angis, լիթ. angis, հսլ. ǫžĭ, ռուս. ужъ, լեհ. wąż, լեթթ. ùodze, միոլ. (esc)-ung «օձ (աձուկ)», հբգ. unc, յն. ἄβεις (Հեսիքիոս)

«օձ» (տե՛ս Walde 42, Boisacq 302, 732, Trautm. 8).—3. լատ. natrix, գոթ. nadrs, իռլ. nathir, գերմ. natter.—նաև զանազան վերադիրներով, ինչ. 4. սանս. sarpá-, լատ. serpens, յն. ἑρπετόν, ալբան. g'arpɛr (սողացող).—5. հսլ. zmĭjĭ, zmija, ռուս. змея (հողային, ցամաքային).—6. սանս. uraga (փորի վրայ սողացող).—7. լիթ. zaltỹs (կանաչ).—8. հսլ. gadŭ, լեհ. žadny (գարշելի).—9. սանս. nāgá- (մերկամարմին?), տե՛ս Pokorny 1, 63—65։—Հիւբշ. 450։

Ինճիճեան, Հնախ. Գ. 22 ժ բնաձայնից։ Ուղիղ մեկնեց նախ Lag. Urgesch. 779: Նոյնը յետոյ Müller SWAW 38, 575:—Pictet KZ 6, 186 ռուս. užŭ «օձ»։ Նոյն, Orig. I. 499 նոյն է համարում իժ և օձ բառերը։ Հիւբշ. KZ 23, 23, 26, 29 աւելացնում է նաև լիթ. angis, լտ. anguis, յն. ὄφις, հյ. օձ։ Տէրվ. Altarm. 90 վերի ձևերին է կցում նաև լտ. anguis, լիթ. angis, հսլ. užĭ, հբգ. unc և հյ. օձ. իր կարծիքով իժ գալիս է նախաւոր *աճժ ձևից. այսպէս՝ *աճժ>*այժ>*էժ>իժ.- է ձայնը պահած է դեռ մողէզ (այն է մող-, պրս. mār «օձ», զնդ. mairya «մահացու, սպանիչ» +էժ)։ Նոյն, Նախալ. 60 «օձին յծորդ է իժ... բայց աս վերջինն օտար է Թերևս»։ Հիւնք. սանս. և զնդ. ձևերից։ Bartholomae, Studien II 34 դնում է իրանական փոխառութիւն։

ԳԻՒ.—Ալշ. իժ «թունաւոր (օձ)», Սեբ. իժ «չարասիրտ մարդ»։

Իլ, ո հլ. «թել մանելու գործիք» Առակ. լա. 19. ռամկական ձևն է իլիկ, ո, ի-ա հլ. Ոսկիփ. Յայսմ. Գնձ. կանոն.—ՆՀԲ հետևցնելով լուսանցագրութիւններից՝ կարծում է որ կայ նաև լոյ ձևը։—Նորակերտ բառ է իլենի «evonymus latifolius բոյսը» (տ. Տիրաց. Contributo § 302), իբր Թրգմ. Թրբ. Համանիշ iy aɣaǰə բառի, որ ծագում է iy «իլ» բառից։

Հիւնք. յն. ἠλακάτη «իլ, աղեկաւոր» բառից է հանում։—Lidén, Arm. Stud. էջ 130 նկատի առնելով յն. σφόνδυλος «ողնաշար» և «իլի տակի գունտը», լտ. verticillus «իլ» և vertebra «ողնաշար» բառերը, ենթադրում է որ իլ նախապէս նշանակում էր «ողնաշար» և ըստ այսմ՝ ողն, ուլն բառերի հետ միասին դնում է հնխ. ole- «ծռել, դարձնել» արմատից (տե՛ս նոյն բառերը)։ Boisacq 318 ծան. կրկնում է Lidén-ի կարծիքը։ Karst, Յուշարձան 423 ՊՊր. il, yil «փակել, կապել», օսմ. ilmek «կապ, հանգոյց», ilik «ծուծ»։

ԳԻՒ.—Գոր. երև. Մկ. Ջղ. վն. Տփ. իլիկ, Մրղ. Սլմ. իլիկ՝, Ննխ. Պլ. Ռ. Սեբ. Սչ. Մշ. իլիգ, Զրբ. ի՛լիգ՝, Խրբ. իլի՛, Ասլ. իլիգ, իլիյ, Ագլ. է՛լիկ՝, Ողմ. էլէ՛կ.—Նոր բառեր են իլկամէջ, իլկատուն.—այս արմատից եմ հաւմարում նաև Զրբ. լըպո՛ւտիկ կամ ըլըպո՛ւտիկ տալ «շարունակ ման գալ, պտտուիլ» (իբր *իլապուտիկ, իլի պէս պտոյտ գալ)։

Փոխ.—Ջաղաթ. ileng «իլ», որ ըստ Будаговъ 2, 365 չունի համապատասխան ուրիշ թաթարական ձևեր։

*Իլ «գիճուիթիւն, յն. ὄλεθρος». ունի միայն Քաջունի, հտ. Գ. էջ 85։

*ԻԼՈԻԼ «երրայական վեցերորդ ամիսը» Նէեմ. գ. Եւս. պտմ. 603. Շիր. Յայսմ. սեպտ. 1։

=Ասոր. ܐܝܠܘܠ ilūl, որ ընդհանուր է նաև միւս սեմական լեզուների մէջ. ինչ. եբր. אֱלוּל əlūl, արաբ. ايلول aylūl, eylūl, iylūl, ասուր. elūlu, ulūlu «իլուլ ամիսը», յունարէն տառադարձութեամբ Ս. Գրքի նոյն հատուածի մէջ գրուած է ἐλούλ.—Հիւբշ. 304։

ՋՔ դնում է Բառ. եբր։ Ուղիղ մեկնեց Lag. Arm. Stud. § 887:

ԻԿԱԹԱՐԹԱՅ «մեծամեծ». ունի միայն Բռ. երեմ. էջ 127։

ԻԿԱԹՄ «բազում». ունի միայն Բռ. երեմ. էջ 127։

ԻԿԱՄՆՈՋՈՒՆՋ «յաւետախօս կամ վայրապիօս». ունի միայն Բռ. երեմ. էջ 127։

ԻԿԱՊԼԻ «ի նեղի». ունի միայն Բռ. երեմ. էջ 127։

*ԻԿՈՆ, ի հլ. «Յունաց եկեղեցական պատկեր». Օրբ. Հկճռ. ժբ. էջ 178. (Յամենայն սեղան բարձեալ էր խաչին պայծառութիւն և իկոնիւք զարդարեալ)։ Նոյն բառն է որ Եա-

խաձայնի անկումով դարձած է կոն Ոսկիփ. կաւն, սեռ. կաւնի՝ երկու անգամ Օրբ. հրտր. էմ. էջ 211, գրծ. կաւնիւ՝ անդ, էջ 333 (նշ-նը ՆՀԲ սխալմամբ կցում է նոն բառին)։

=Յն. εἰκών, միջին յն. εἰκόνα «սուրբի նկար» (արմատը ϝεικ- «նմանութիւն, պատկեր», ըստ Boisacq 222). *յունարէնից են փոխառեալ նաև հսլ.* ikona, *ռուս.* икóна, *լեհ. չեխ.* ikon *նոյն նշ.* (Berneker 424): *—Հիւրշ. 359։*

Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ (որ գիտէ միայն կոն ձևը)։

ԻԿՈՆՈՄՈՍ *«տնտես, տնօրէն, մատակարար, ծախսարար». ունի միայն Բս. երեմ. էջ 127. զանազան սխալագիր գրչութեամբ գրուած է՝* եգոնոմոս *(այլ ձ.* եգոմոնոս*) Օրբ. հրտր. էմ. էջ 52,* էգոնոմոս *անդ՝ էջ 96, 177 (այս վկայութեանց մէջ բառս գործածուած է «վանահայր» նշանակութեամբ),* իկոնոմոս *Հին բռ.* կոնոմոս *վրք. հց. Բ. 31, 240. Անկ. դիրք նոր կտ. 391, 408,* կոնոմ *վրք. հց. Բ. 400։*

=Յն. οἰκονόμος *«տնտես», որ կազմուած է* οἶκος *«տուն» և* νέμω *«բաշխել, կառավարել» բառերից. յունից են փոխառեալ նաև լտ.* oeconomus, *ֆրանս.* économe, *ռուս.* э́кономъ *են։—Հիւրշ. 359։*

Ուղիղ մեկնեցին նախ ՀՀԲ, Աւետիքեան, Մեկն. Թղթ. Պօղոսի Ա 554, Բ 391 և ՆՀԲ։

ԻԿՈՍԱԷԴՈՆ *«քսանանիստ» (երկրաչափական մարմինը) Նեմես. էջ 64, 65։*

=Յն. εἰκοσάεδρον *«քսանանիստ», որ կազմուած է* εἴκοτι *«քսան» և* ἕδρα *«նըստարան, նիստ» բառերից. յունարէնից են փոխառեալ նաև լտ.* icosaëdrum, *ֆրանս.* icosaèdre *են նոյն նշ.—Հիւրշ. 350։*

Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ։

ԻԿՏԻՇ *«խառնածին ձի» Անսիզք 63 (ենթէ ոք կորսնէ տաճիկ ձի, կամ իկտիշ, կամ ջորի կամ այլ ազգ գրաստ)։*

=Պրս. شدگ igdiš *«նշանակէ զայնպիսի ծնունդ, որ իցէ ծնեալ յայլևայլ սերմանց, որպէս այն որ իցէ ծնեալ ի հնդիկ հօրէ և ի հոռոմ մօրէ կոչի իկտիշ. և յայսմանէ առեալ նաև այն ձին, որոյ մի կողմն արէպի է և միւսն ռումի՝ առի իկտիշ» (ԳԴ)։ Իբն-ի Բատուտա 2, 372 յգ.* شدگا akādīš *ձևով ունի՝ նոյն նշանակութեամբ.* تعرف عصر بالاكاديش *«կոչւում է Մսրում* akādīš*»։—Ա՛ճ.*

*Անսիզքի հրատարակիչը՝ էջ 62 թարգմանում է «*hongre, *կրտած ձի» և կցում է թրք.* igdij *ճոմաճիշին։*

ԻՂԶ, *ի հլ. «փափագ, բաղձանք» Պիտ. Ընդիշ. Խոր. «աղօթք» Արիստ. աշխ. «հմայող, վհուկ, կախարդ» Ա. Թագ. ղ. 2. Միք. գ. 7. Դան. բ. 27. Եւս. քր. որից* իղձ լինել *«սաստիկ փափագիլ» Եղիշ.* ղձիկ լինել *ԱԲ.* ղձալ, ղձաճաղ *«փափագիլ, աղօթել» Եբր. գ. 11. Գծ. իէ. 29. Ոսկ. ես. «հմայել» Եզեկ. ժգ. 23, իբ. 28.* ղձապատում *«կախարդ, վհուկ» Ձաք. ժ. 2. Երեմ. կթ. Թ.* ղձական *«կախարդական» Ոսկ. ես.* ղձուբիւն *«փափագ» Նար. Մշկ. «հմայութիւն» Սգր.* ղձակերտ *«սրբազան, պատուական» Հռ. ժհ. 16. Նախիղձիկ Եւս. քր. նախաձայնի յապաւումով ունինք նաև* ղձալ, ղձաճաղ, ղձալի, ղձուբիւն, ղձումբն *են դրչութիւնները՝ զանազան ձեռագրերում։*

Տէրվ. Նախալ. 60 հյ. բաղձ, *լատ.* egeo *«կարօտիլ», յն.* ἰχανᾶν, *սնս.* īh *ձեւերի հետ՝ հնխ.* agh, igh *արմատից։ Հիւնք.* աղցf *բառից։* Patrubány *ՀՄ 1906, 344 յն.* ἀλάω *«մղել», լտ.* aiacer *«շուտ», գոթ.* aljan, *գերմ.* eilen *«շտապել» բառերի հետ։* Karst. *Յուշարձան 419 ԹԹր.* dilek *«իղձ», 427* til, dil *«լեզու, բառ»։* Petersson, Ar. u. Arm. Stud. 129 *դնում է արմատը* *իղ-, *որ կցում է սանս.* isáti *«փափագիլ»,* ičchâ *«փափագ», հբգ.* eisca *«պահանջ» բառերին և նախաձևը համարում է հնխ.* is-lo-. *կամ միացնում է յն.* ἀχθή *«կարօտ»,* ἠχθηνες *«աղքատ»,* ἠχάω *«մուրալ», գնդ.* āzi- *«ագահութեան դեվը», պրս.* āz *«ագահութիւն», սանս.* ihate *«փափագիլ» բառերին և արմատը դնում է հնխ.* īg'h, *որ պիտի տար հյ.* *իձ.—*երկու դէպքում էլ (*իղ- *կամ* իձ-*) ազդուելով գեղձ բառից՝ դարձել են* իղձ։—*Մառ* ИАН *1914, 363 վրայ. մղձելի «քահանայ» բառի հետ։*

*Գիհ.—Նո՛յն է արդէօք իղձոտվիլ Դրբ. «մեկի դէմ նեղանալ, բարկանալ»։

*ԻՄԱԼԱԿԵԱԼ «կակուղ». Նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Մագ. թղ. 236 (Զկարծոտ և իմալակեալ ողորկատեսիլ ապակատարազ)։

=Յն. μαλακός «կակուղ, մեղմ, հաճելի, քնքոյշ»։—Ա՛ճ.

*Այս մեկնութիւնս հրատարակուած է նախ Հյ. նոր բառեր հին մատ. Բ. 186։

ԻՄԱԿԱԴՈՅՆ «երկրագոյն». ունի միայն Բառ. երեմ. էջ 127. որից հետևում է իմակ «երկիր»։

ԻՄԱՆԱԼ (իմացայ, իմա՛) «հասկանալ, մտքով ըմբռնել» ՍԳր. «խորհրդածել, իմաստասիրել» Հռ. ա. 20. «զգալ» Եզն. «մտածել, մտքով գտնել» Յոր. ա. 5. «համարել, ենթադրել» Եզն. «հնարել, նիւթել, ձարտարել» Ոսկ. մտթ. երեմ. ի. 11 բ. մն. բ. 14. որից իմանալի Ագաթ. եղիշ. իմանող Նիւս. երգ. անիմանալի Ոսկ. յհ. բ. 4. Շար. Նար. դժուարիմանալի Շնորհ. թղ. ածանցման մէջ երևան է գալիս նաև հետևեալ ձևերով. **իմաս** (կազմուած -աս մասնիկով. հմմտ. զգաստ, գալուստ ևն), ի հլ. Փարպ. խոր. որից իմաստագոյն Ոսկ. մ. ա. 15. իմաստակիր Ագաթ. իմաստակ Պիտ. Փիլ. Մագ. իմաստապէս Ոսկ. յհ. ա. 18. իմաստասէր Առակ. իթ. 13. Նւս. քր. իմաստասիրել Ոսկ. յհ. ա. 40, 41. բ. 14, իմաստասիրութիւն Ոսկ. յհ. բ. 22. իմաստաւոր Եւագր. Ոսկ. գղ. իմաստութիւն ՍԳր. իմաստուն ՍԳր. Ագաթ. Ոսկ. Եզն. իմաստնագոյն ՍԳր. Ոսկ. իմաստնարար Եզն. իմաստնանալ ՍԳր. Ոսկ. իմաստունի Իգն. թղ. 110, 114. անիմաստ Եփես. ե. 15. գ. մակ. գ. 12. Ագաթ. Ոսկ. մ. բ. 23. Եւագր. «անհնազանդ, սանձի չհկող», Ոսկ. եբր. 564. յանիմաստս Բուզ. դ. 11. չարիմաստ Մծբ. բանիմաստ Ագաթ. ևն.—**իմաց** Վրք. Հց. Դիոն. Ոսկիփ. որից իմացուցանել ՍԳր. իմացումն Ոսկ. յհ. ա. 21. իմացութիւն Սիր. իբ. 29. Ոսկ. յհ. ա. 25. իմացուած Եւագր. իմացողութիւն Եւագր. դժուարիմաց Բ. պետ. գ. 16. կիւրղ. թգ. անիմաց Ագաթ. խորհիմաց Ագաթ. յառաջիմաց Կորիւն. նորիմաց Ագաթ. չարիմաց Ոսկ. մ. բ. 2. Փարպ. լաւիմաց Եւս. քր. իմացումնակի (նորագիւտ բառ) կնիք հաւ. էջ 267.—**իմայ**, որից անիմայ Ոսկ. յհ. ա. 22. Դիոն. եկ. Բէտր. մայրագ. (միջ. հյ. անյիմայ Կոստ. երգն. 90, 91. 94, 101). երկիմայ (նորագիւտ բառ) Սոկր. 192, տպ. երկմաիցն, իբր յն. δι:χονοούντων «կրկնակի խորհողացն»։

Հներից Առաք. լծ. սահմ. 354 իմաստուն մեկնում է «իմաստից տուն»։—Իմանալ բայը Bötticher ZDMG 1850, 355, Arica 37, 33, Lag. Urgesch. 436 կըցում են սանս. man արմատին։ Lag. Btrg. baktr. Lex. 46 նախաձայն ի դնում է զնդ. aipi- մասնիկի հետ նոյն։ էմին, Հայ հեթ. կր. (Բրդ. 1875 Յոյս Արմաշի, էջ 291) և Ист. Асохика 262 իմաստ ցեղակից է դնում զնդ. մազդա արմատին։ Տէրվ. Altarm. էջ 93 մերժելով էմինի մեկնութիւնը, ի դնում է =զնդ. ā նախամասնիկը, -մա- =զնդ. mā, որով իմա- լինում է=զնդ. āmā «սովորիլ»։ Canini, Et. étym. 190 իմաստ- սանս. mēdha «մտածմունք»։ Պարոնեան, Երկրագունտ 1885, 490 կրկնում է էմինի մեկնութիւնը։ Տէրվ. Նախալ. 98 հյ. միտ, սանս. զնդ. հպրս. man, յն. μάντις, μέμονα, լտ. memini, mens, գոթ. ga-mun-an, գերմ. meinen ձևերի հետ հնխ. ma, man «մտածել, կարծել» արմատից։ Meillet MSL 8, 280 հմմտ. հրգ. manōm, լիթ. j-manaũ. Հայ բառը դնում է իբրև ի-մանալ։ Հիւնք. միտիլ բառից իմանալ, իսկ Աւամազդ բառից իմաստ, իմաստուն։ Pedersen KZ 38, 350 լտ. memini, լիթ. isz-manaũ «հասկանալ»։ Շէֆթէլովից BB 29, 46 լտ. im-itari «նմանիլ» և imago «պատկեր» բառերի հետ, որ մերժում է Walde 15։ Յ. Գ. Մ., Պատմ. զրակ, 16 իմաստ =սանս. իմազդ։ Patrubány, Յուշարձան 324 լտ. emo, emi և լիթ. emiau «առնել» բառերի հետ, որով իմանալ-ու բուն նշանակութիւնն է «առնել». հմմտ. լտ. capo, հյ. բռնել, ըմբռնել։ Պատահական նմանութիւն ունի ճապոն.

Ի = imi «իմաստ»։ Pedersen, Kelt. gram. 2, 513 *(չեմ տեսած)* դնում է լտ. emo, emi, mu, հիզ. ar-fo-emat *բառերի հետ հնխ.* em- *արմատից* (Pokorny *1, 124). բոլորն էլ նշանակում են «առնել» (այսպէս էր նաև* Patrubány, *Յուշարձան 324)։*

Գիւ.—Ախց. Ասլ. Երև. Կր. Ղրբ. Ննխ. Ոզմ. Պլ. Ռ. Սեբ. Սլմ. Սչ. Տփ. իմանալ, *Մկ.* իմոնալ, *ՋՖ.* իմաևօլ, իմանոլ, *Ջղ.* ɨիմանալ, *Հջղ.* ևիմանալ, *Խրբ.* իմնալ, *Վն. Տիգ.* իմնոլ, *Սլղ. Մշ.* ɨիմնալ, *Ագլ.* յըմա՛նիլ, *Շմ.* իմանալ, մանալ, *Մրղ.* իմոլ.—*արևմտահայ բարբառներում նշանակում է «լսել», արևմտահայերի մէջ «հասկանալ, ըմբռնել, գիտենալ» Սր.* իմանալ *«քնից արթնանալ», Մշ.* ɨիմաց *«քնից արթնացած».—արդի խօսակցութեան մէջ կրճատուելով եղած է՝ Դվ.* մանալ *(օր. չէմ մանա «չեմ իմանում»), Սլմ.* նալ *(օր. չես նալի «չգիտես»), Մրղ.* սիննում *«ես ի՞նչ իմանամ», Երև.* յէսի՞մ *«չգիտեմ, ես ի՞նչ իմանամ»։—Նոր բառեր են՝ աճիմայ «դեռ ոչինչ չիմացող փոքր մանուկ», իմացուկ «զգաստ, արթնամիտ»։*

***ԻՄԱՐՄԻՆԻ** *(սեռ. -ի) «վիճակ, բախտ, ճակատագիր» Ոսկ. մտթ. Սեբեր. 135, 164. գրուած է նաև* իմարմին *Ոսկ. մ. գ. էջ 34, Եփես. 805.* իմարմէն *Ոսկ. ա. տիմ. էջ 10։—Ոսկեբերանի մէջ արդէն գործածուած է իր օտար բառ. «Ջննումդան ասեմ և զիմարմէնն, զոր հայերէն ճակատագիր և բախտն ասեն»։*

=Յն. εἱμαρμένη *«ճակատագրի ձեռքով որոշուած բախտը». դերբայաձևն է* εἱμαρμαι *«ճակատագրուիլ, բախտն ունենալ» բայի, որ ծագում է* μέρος *«բաժին, մաս» բառից* (Boissacq 621)։ *Յոյն բառից են փոխառեալ նաև ասոր.* ܐܡܪܡܝܢܐ amarmīnā, *վրաց.* იმარმენი իմարմենի, მარმენიო մարմենիո *«ճակատագիր»։—Հիւբշ. 518։*

Ուղիղ մեկնեց նախ Ոսկեբերանի հրատարակիչը, Վեննետ. 1826, հտ. Գ. էջ 34, յետոյ ՆՀԲ։

***ԻՄԵՌԻԱԿԱՆ** *«ամենօրեայ, ամէն օր բըռնող (ջերմ)» Մագ. թղ. 58, 135։*

=Յն. ἡμερία *«օր» բառից՝ հյ. -ական մասնիկով։—Աճ.*

ԻՄԷՆ *«այս». ունի միայն Բառ. երեմ. էջ 128։*

***ԻՄԻՈՂԵԱ՛** *«կիսակատար». ունի միայն Բառ. երեմ. էջ 128։*

=Յն. ἡμιόλια *«մի թիւ՝ որ մի ուրիշ թուի մէկ և կէս անգամն է» (ինչ. 9:6, 3:2, 1½:1 ևն). նոյնը լտ. կոչում է* sesquialter, *որից էլ ֆրանս.* sesquialtére.—*ծագում է* ἡμι- *«կէս» + ὅλος «ամբողջ» բառերից։—Աճ.*

+ԻՄՆ *«մի բան, մը». հոլովուած ձևերից կայ միայն բց. յիմեմնէ. միւս հոլովները փոխ է առնում իբ հարցականից. որից իմն իմն Եզն. Եւս. քր. Ագաթ. իմնապէս «մի կերպով» Արիստ. առինչ. իմնէ նոյն նշ. Փիլիպ. դ. 10։*

*=Կազմուած է *ի<հնխ. k²i- հարցականից՝ -մն մասնիկով. համմտ.* ոմն։

Windisch. 38 ի+մն, *վերջին մն մասը մեկնելով* մի, մէն *«մարդ» կամ* n:an *«մարդ» բառով։* Meillet MSL 10, *207 ոմն բառի նմանութեամբ շինուած ի հարցականից։ Տե՛ս նաև Բազմ. 1897, 591։ Հիւնք.* հիմն *կամ յն.* ὁμὲν։ *Տառ,* Грам. чан. *էջ 79 լազ. և վրաց. մ ձայնի հետ՝ որ իբրև յաւելուած գրում է վանազան բառերի վրայ։*

Իմովսանճ *«իմ տկար կարողութեամբ, ձեռքիցս եկած չափով» Հռ. ս. 15. Ոսկ. Հռ. և նխ. գծ. սրա նմանութեամբ նոր գրականում շինուած են* մերովսանճ, ձերովսանճ, իւրովսանճ։

=Կազմուած է իմով *(իմ բառի գործիականը)+*ս+անճ *մասնիկներով. սրան իբրև ապացոյց համմտ.* իւրեանցանճ. *«Կախեալ իջուցին զանդամալոյծն առ Յիսուս իւրեանցանն հաւատովք» (Յոչ. եօթն կաթողիկեայ Թղթոց)։*

Ուղիղ մեկնեց Աւետիքեան, Մեկն. Թղ. Պօղոսի, Վեննետ. 1806, հտ. Ա. էջ 27։ (Տալիս է նաև իւրեանցցանճ ձևը, որ այլուստ ծանօթ չէ ինձ)։

ԻՄՐԻԱԿԱՆ *«նորա, նրա, անոր». մէկ անգամ ունի Մագ. գամագտ. դ. «Մեզ մակառ իմրիականն մունչ» (մեզ յայտնի է նրա ասածը)։ Կազմուած է* -ական *մասնիկով՝ *իմրի «ինքը» բառից։*

ԻՆԳՐԻ *«մի տեսակ հալուէ» Խոր. աշխ. 615. գրուած է իճկրէ Վրդն. ծն։*

Պատկ. Խոր. աշխ. 1877, էջ 82 նոյն է դնում պրս. اگر agar *կամ* ایگر īgar (Vullers), *յն. ἄκορον և սանս.* agaru.—*վերջինս* Böhtlingck Sans.—Wört. I. 24 *դնում է* अगरु agaru «amyris agallocha», *որ և* aguru, *զուռ.* aghil *«հալուէ» (բուն նշանակում է «ոչ-ծանր»), որից էլ փոխառեալ է յն.* ἀγάλλοχον *(ս.* Boisacq 5). *ուրիշ բառ է* ἄκορον, *իսկ պրս. ձևի ծագումը յայտնի չէ։*

+ԻՆՁ, ու *հլ. «վագրի նման մի գազան է» ՍԳր. Վեցօր. (գրուած է նաև իճձ, իւճձ Գիրք Թղ. 231,* ուճձ, ուճ *Վրդ. առ. 3.* ուճձ *Շնորհ. առակ. 75. տր.* ըճձաճն *Տաճև. ձմ. հև.). որից* ըճձնճի *Կանոն.* ըճձուղտ *Խոր. աշխ.* ուղտիճձ *Շիր. քրոն.* ըճձախտա *Բժշ. վերջիններիս կազմուած են յունարէնից թարգմանարար. այսպէս՝* καμηλο+πάρδαλις *«ընձուղտ» (իբր «ուղտ+ինձ». Համմտ. նաև պրս.* uštur, gav, palang *«ուղտ- եզ- ինձ») և* παρδαλίαγγες *«ընձախտա». Համմտ. նաև ֆրանս.* aconit tue-loup, *արաբ.* xanik-ul-namr, *թրք.* qaplan-otə, *բոլորն էլ նոյնպիսի կազմութեամբ.—այս անունն է ստացել խոտը ա՛յն պատճառով՝ որ նրանով սպանում էին գայլ և ուրիշ վայրի գազաններ. ինչպէս ունինք* մկնդեղ, *տճկ.* səčan-otə.—*տարբեր բառ է* անձխոտ, *որ տես առանձին։ Նոր բառեր են* ըճձաուիճ, ըճձնճատր։

=*Բնիկ հայ բառ՝ հնխ.* sing'ha- *ձևից, որի երկրորդ ժառանգն է սանս.* सिंह siha *«առիւծ»։ Ուրիշ լեզուի մէջ պահուած չէ բառս (*Pokorny 2, 508):—*Հիւբշ. 450։*

Böttich. Rudimenta *43, 126 ասոր.* ʾōz, *պրս.* yōz, *սանս.* vyōda *ձևերի հետ, որոնք սակայն մեր յովազ բառն են ներկայացնում։* Müller SWAW *64, 453 հին իրանեան* *hinza *ձևից, որ է սանս.* siṃha: *Հիւբշ.* KZ *23, 25 39, 392 սանս. ձևին է կցում։* Lag. Arm. Stud. § 889 *չի ընդունում այս մեկնութիւնը, ասելով թէ Հայաստանում առիւծ չկայ։ Տէրվ. Նախալ. 81 սանս. բառի հետ։ Հինք. յն.* ὄς *«վարազ» բառից։ Մառ,* Сред. передвиж. *էջ 8 կապում է յն. λεοντ- բառի վերջին կէսի հետ։*

+ԻՆՆ *(իննունք կամ իննունք, իննունց, իննուք կամ իննամբք) «9» ՍԳր. Եւս. քր. Ոսկ. (յետնաբար կայ սեռ.* իճան *էլ. արիստ. 115, 121, 126. ներգ.* յիճանն *Սոկր. 397. կամ ի սեռ.* իճանն *Սոկր. 433). որից* իննամսեայ *Ոսկ. մ. ա. 8.* իննեւրորդ *ՍԳր. Եւս. քր.* իննատասն, իննուտասն, իննեւիճան, իննեւարիւր *են, բոլորն էլ հին և ընտիր. նոր բառ է* իննամեակ։

=*Բնիկ հայ բառ, որի ցեղակիցներն են՝ սանս.* náva, *հպրս. և զնդ.* nava, *պրս.* نُه nuh, *քրդ.* neh, nūh, *աֆղան. բելուճ.* nuh, *զազա* nau, *դումիկ* niu, *Բոխար.* ñu, *յն.* ἐννέα (ἐννεϝα), *որից էլ գնչ.* enia, injâ, ena, engja, nja, *լտ.* novem *(իտալ.* nove, *ֆրանս.* neuf, *սպան.* nueve, *ռում.* noue), *գոթ. հրգ.* niun, *գերմ.* neun, *հսաքս.* nigun, *հոլլ.* negen, *անգսք.* nigon, *անգլ.* nine, *իռլ.* nöi n-, *հսլ.* devętĭ, *ռուս.* девять, *լհհ.* dziewięć, *լիթ.* devyni, *լեթթ.* devini, *ալբան.* nəndə *են, որոնք բոլոր նշանակում են «ինը»։ Յիշեալ բոլոր ձևերն էլ ունին նախաձայն* n-, *միայն հայերէնն ու յունարէնը այդ* n-*ից առաջ դրնում են մի ձայնաւոր. (բալթիկ-սլաւական լեզուների* d *նախաձայնը յառաջացած պէտք է լինի «տասը» բառի ազդեցութեամբ, ճիշտ ինչպէս որ պրս.* nuh *(փխ.* nu) *ստացել է վերջաձայն* h՝ *յաջորդ* dah *«10» բառի ազդեցութեամբ)։ Ըստ այսմ բառի նախաձևերը դրւում են հնխ.* eneu̯n̥, énu̯n̥, néu̯n̥. *Հայերէնը դալիս է երկրորդ ձևից, u̯-ի կորուստով և* e *ձայնը վերածելով* i՝ *յաջորդ ոնգականի պատճառաւ։* Meillet BSL *№ 81, էջ 132 չի ընդունում՝ որ այս նախաձայն* e, *թէ՛ հայերէնի և թէ՛ յունարէնի մէջ նախնական=հնդեւրոպական լինի, այլ համարում է նոր յաւելուած։—Ոմանք հնդեւրոպագէտներ կարծում են՝ որ հնխ.* néu̯n̥ *«9» բառը հնխ.* névo- *«նոր» բառի ածանցն է։ Հնդեւրոպական թուարկութիւնը հնագոյն ժամանակ քառեակներով էր. և դրա համար էլ հնխ.* okˊtōu *«ութը» բառը արկակի է, որից յետոյ գալիս էր նոր քառեակ,*

որ է 9... (Walde 525, Boisacq 254, Trautmann 198, Berneker 189, Kluge 348, Horn § 1056, Pokorny 1, 128, Ernout-Meillet 647):—*Հիւբշ. 450։*

Ուղիղ մեկնեց նախ Klaproth, Asia polygl. 107.—Peterm. 37, 155 *համեմատում է յն.* ἐννέα *բառի հետ, վերջին* εα *մասը բնկած համարելով հայերէնի մէջ։* Windisch. 31 *հայերէնի և յունարէնի նախաձայնը յաւելուած է համարում։ Ուղիղ համեմատութիւններ ունին նաև* Böttich. ZDMG 1850, 355, Arica 62, Müller SWAW *35, 199, Տէրվ. Երկբագունք Ա. 49, Լիդու. 178, Նախալ. 91, 132,* Bopp, Gram. comp. II 230, Meillet MSL 8, 303—304 *են։* Bugge, Etr. u. Arm. *էջ 121 նոր.* nurðzi *մեկնում է* =իննեւոտդ-իցս, *իսկ* Lyk. St. *1, 49 լիկ.* nuñ=իննն, իննւմ։

Գիմ.—Զթ. խրբ. Հճ. Ննխ. Պլ. Ռ. Սեբ. Սչ. Տփ. ի՛նը, *Ախց. Գոր. Երև. Կր. Համշ. Ղրբ. Շմ. Զղ.* ի՛ննը, *Մրզ. Սլմ.* ի՛ննm, *Տիգ.* ի՛ննէ, *Սլղ. Մկ. Մշ. Վն.* ին, *Ասլ.* ի՛նը՛, վի՛ն՝ը, *Ոզմ.* է՛ն, *Անտ.* է՛ննը, *Ագլ.* ա՛յնը.—*Նոր բառեր են* իննաչէ, իննոց, ընննաոց, իննում, իննուվեց։

+ԻՆՆՍՈՒՆ, ի *հլ. «90» Եզեկ. խա. 12. Ա եզր ը. 66. Բ. մակ. ը. 11. որից* իննսնամեայ *Սն. ժէ. 17.* իննսնամեան *Բ. մակ. գ. 24.* իննընսնեմեան *Կիւրղ. ծն.* իննսներորդ *Սհկ. կթ. արմ. են. կայ նաև* ընննսունամեայ *Վրք. հց։*

=*Բնիկ հայ բառ. միւս հնդևրոպական ցեղակիցներն ունին՝ սանս.* navati, *թոխար.* ñumka, ñuñka, *գնդ.* navaití, *պհլ.* navat, *ւարս.* nawaţ, *պրս.* نو navad, *աֆղան.* nevī, navē, *բելուճ.* navai, *քրդ.* nud (Horn § 1049), *յն.* ἐνενήκοντα, *հոմեր.* ἐννήκοντα (Boisacq 252), *լտ.* nonaginta (*սպան.* noventa, *ռոմ.* noueđeci, *իտալ.* novanta), *ռուս.* девяносто, *բուլգ.* devendesét, *չեխ.* devadesát (Berneker 189), *լիթ.* devýnios, *գոթ.* niun tēhund, *հբգ.* niunzo, *գերմ.* neuunzig, *անգլ.* ninety *են, որոնք դժուար է միաբանել իրար հետ։ Հայերէնի ամենամօտիկ ձևն է հոմեր.* ἐννήκοντα։

Ուղիղ մեկնեց Böttich. Arica 62, 19 *են։*

Գիմ.—Ախց. Երև. Զղ. իննբսուն, *Ագլ.* իննա՛սուն, *Գոր.* իննա՛սուն, *Ղրբ.* իննա՛սուն, ընննա՛սուն, *Շմ. Սլմ.* իննանասուն, *Մրզ.* իննանացցուն, իննոնացցուն, *Տփ.* իննսուն, իննանասուն, *Հնդ. Սչ.* նրսուն, *Մկ. Մշ.* իննուն. *միւսները (ինչպէս կր. Պլ. Ռ. Զթ. Ննխ. Վն. Խրբ. Համշ.) գործածում են թրք.* doqsan >դօխսան ձևը։

+ԻՆՉ «*մի բան, բան*» *ՍԳր. Ոսկ. Եզն. Եւս. քր. ընտիր մատենագրութեան մէջ սովորաբար անհոլով է. բայց մի քանի տեղ կայ հոլովական ձևով. այսպէս՝* ընչի, յընչէ, ընչիւ, ընչից *Եւս. պտմ. դ. 7. ե. 1. Մծբ. ժ, Եփր. ծն., յոգ. այդպիսի ինչս բազումս «շատ այդպիսի բաներ» Յոր. ժզ. 2 են. որից* ոչ ինչ, աո ի՞նչ, ինչ ինչ, այն ինչ, զի՞նչ, զ՞ինչ ինչ *են.* աինչ «*որ մի բան չէ*» *Ագաթ.* աոինչ *Փիլ.* աոինչուհակ *Բր. բեր.* ինչպիսի *Նիւս. կազմ.* ինչպիսութիւն *Ոսկ. հռ.* աոընչութիւն, աոընչուհի, աոինչուհակ *Արիստ.* զինչուզինչ *Ոսկ. մտթ. ա. 19.* զինչպէս *Կոչ. 304.* զինչպիսի *Փարպ. խոր.* զինչպիսութիւն *Ագաթ.* զինչ օրինակ *Կոչ.* ոչինչ *ՍԳր. Եզն.* ոչնչանալ *Արշ.* ոչնչաբեայ *Հին բռ.* ոչինչ *բառից համառոտուած՝* չինչ *Կոչ.* չնչիկ *Եզն.* չնչին *ՍԳր. Եզն. Կոչ.* չնչինագոյն *Ոսկ. եբր.—իբր գոյական ունինք* ինչ, ի *հլ. (մանաւանդ անեզաբար գործածուած) «հարստութիւն, գոյք» ՍԳր. Եզն. Ոսկ. որից* աինչ «*առանց գոյքի*» *Ոսկ. մ. բ. 20* ընչաթափ *Ոսկ. ես. մտթ.* ընչաթափել *Սիր. ժզ. 8.* ընչաշատ *Վեցօր.* ընչասէր *Ոսկ. յհ. բ. 40.* ընչասիրութիւն *Եզն.* ընչաւէտ *Ոսկ. Վեցօր.* ընչահագց *Ագաթ.* ընչեղ *Մանդ.* ընչուկ «*խեղճուկ գոյք*» *Լաստ. ժթ.* ընչընչուկ «*քիչ և անարժէք մի բան*» *Պետր. սիւն. 16.* աներնչաստացիչ *Կոչ. 34.* ոչնչական, ընչազուրկ (*նոր բառեր*) *են։*

=*Կազմուած է* *i<*հնխ.* k²i- *հարցականից՝* -նչ *մասնիկով. աւելի ընդարձակ տե՛ս* ի։—*Հիւբշ. 450։*

ԳԴ պրս. աճչի=*հյ.* այն ինչ։ Peterm. 179 ի՞ *արմատից։* Wind. 38 ի *հարցականից՝* čit *կամ* svit *մասնիկով։* Bopp, Gram. comp. II 382 *սանս.* kiñčit- *ձև-*

ւի կատրներն է տեսնում։ Բազբատունի, Քերակ. զարգաց. էջ 71 մեկնում է զինչ <զի+ինչ։ Տէրվիշ. Altarm. *3 և Նախալ. 119* ինչ, զինչ, մինչ, ոչ *բառերի վերջաձայն չ ձայնը նոյն է դնում իւրաքանչիւր բառի հաճ և չ, ինչպէս և* հաճ, որհաճ, հաճի, հաճակ *բառերի* հաճ *մասի,* ոհ, ուրուհ, ումեհ *անորոշների* հ *ձայնի և չ ժխտականի հետ. բոլորն էլ ծագած հնխ.* ka «որ» *յարաբերականից։ Հիւնք.* կնիհ *բառից* ինչ, *պրս.* či, az či *ձևից* զի՞, *որից էլ* զինչ. *իսկ* զի՞=*պրս.* zi՞, զնի՞, *և* զի «քանզի»=*պրս.* či։ Meillet MSL 7, 162 ճիշտ ու ճիշտ նոյն է գտնում սանս. kimčit *ձևի հետ. իսկ* MSL 13, 244 չ *ձայնը համեմատում է լատ.* quia, *յն. յգ. չէզ. .ɔɔα, ἄττα ձևերի հետ։ Նոյնպիսի մեկնութիւն ունի նաև Բազմ. 1897, 591։* Patrubány SA 1, 211 *հնխ.* eno (*սանս.* ana) +k²e. Karst, *Յուշարձան 409* ինչ *մեկնում է* ին=*սումեր.* ēna «մինչև»+չ «մինչև», *իսկ 413 թրք.* -enja, -inje *դերբայական մասնիկի հետ։ Թիրեաքեան, Հայ-երան. ուսումն. էջ 98 պրս.* în čī «սա զի՞» *ձևից։*

ԳԻՒ.—Ալշ. Ախց. Երև. Խրբ. Կր. Հճ. Մկ. Մշ. Ննխ. Ոզմ. Պլ. Ջղ. Ռ. Սեբ. Սլմ. Սչ. Վն. Տիգ. Տփ. ինչ, *Ասլ. Մրղ.* ինչ, իչ, *Գոր. Ղրբ. Մղր. Հւր. Շմ.* ինչ, *Ագլ.* ուչ, *ՋՓ.* իւչ. *այս վերջինը գործածւում է «ո՛ր» նշանակութեամբ. ինչ.* ouo չիւյս գուվիյէն ի՛ւչը ըսբանիցիհ «*այս չորս կովերից ո՛րը մորթեցիք*». *իսկ ՋՓ.* չիյ, չիրֆ *համառօտուած է* ի՞նչ իրֆ «*ի՞նչ բան*» *ձևից, ինչպէս Ջղ.* չումա՞ր, չո՞ւմ *կրճատուած է* ինչո՞ւ *համար ձևից։ Այս բառից է նաև արդի գրականի, ինչպէս նաև բարբառների* ինչո՞ւ «*վասն է՞ր*» *ձևը. (տե. նաև* ընչո՞ւ, ինչի՞, ինչի՞, *Ալշ.* յընչի՞), *որից հին գրական ոճով* ինչու nr «*որովհետև*».—*ի՛նչ բառի սեռականն է. համմտ. պրս.* چی či «*ի՞նչ*» *և սեռ. տր.* چیرا čira «*ինչո՞ւ*», *թրք.* ne «*ինչ*» *և տր.* neye «*ինչո՞ւ*։ *Հին գրականութեան մէջ ընչո՞ւ ձևը գտնում ենք Լմբ. պտրգ։ Նոր բառեր են՝* ի՛նչանկ, ինչաց, ինչացու, ինչաւոց, ինչեխ *կամ* ինչղ (<ինչցեղ), ինչենի, ինչիկ, ինչնորէն, ինչուկին, ինչտափ, ինցօ, չոց (<ինչոց), չոցրոր «*ինչպէս որ*»։—*Բացառական «ո՛չ»նշանակութիւնն է ստացել Ննխ.*ինչ(*միշտ կրկնութեամբ. օր.* ի՛նչ ես, ի՛նչ դու «*ո՛չ ես, ո՛չ դու*»)։ *Այս նշանակութիւնը ձեւացած է ժողովրդական սխալ ստուգաբանութեամբ՝ թարգմանաբար թուրքերէնից.—թուրքերէնի մէջ գործածական է երկու տեսակ* ne. *մին՝* ne «*ինչ*» (*թուրք ծագմամբ*) *և միւսը՝* ne «*ոչ*» (*պարսիկ ծագմամբ*)։ *Ժողովուրդը կարծել է թէ այս երկու տարբեր բառերը միևնոյն բաներն են և ըստ այսմ հյ. ի՞նչ բառին էլ տուել է «ո՛չ» նշանակութիւնը։—Գւռ.* ինչխ, ինչեխ, ինչղ (<*ի՛նչ ցեղ*) *ձևերի ծագման համար համմտ. Մաղաք. աբ. 26 «Եհարց Հուլաւունն պհալիֆայն թէ ի՞նչ ցեղ կաս» (իմա՛ «ի՞նչպէս ես»)։*

ԻՆՑՈՒՆ «*ի ծխտանի կամ ի խաշդանի*» *Բռ. երեմ. էջ 128, իտուն «խաշտանի» էջ 130. այս բոլորի ինչ լինելը յայտնի չէ։*

ԻՆՔՆ (*ինքեան կամ ընքեան, ինքեամբ, ինքեանք, ինքեանց*) «*ինքը*» *ՍԳր. Եզն. Վեցօր. զանազան դարձուածներով և ոճերով՝* ըստ ինքեան, այսինքն, ինքն ըստ ինքեան, ինքն ատ-ինքն. ինքն յինքն, ինքն իսկ *ևն. որից* ինքնին *ՍԳր. Բուզ. Եւս. պտմ. Ագաթ.* ինքնեակ *Ղևտ. իե. 5, 11. դ. Թագ. ժԹ. 29.* ինքնեկ *Ա. մակ. ե. 19.* ինքնաճեղել «*բռնադատել*» *Եփր. մատ. բ. 221.* ինքնակալ *Ագաթ.* ինքնաբուղխ *Վեցօր.* ինքնակամ *ՍԳր. Ոսկ.* ինքնակաց *Ոսկ. ես. Սեբեր. Եզն.* ինքնամատոյց *Կոչ.* ինքնատես *Ագաթ. Կորիւն.* ինքնիշխան *Կոչ.* յինքնամարշումն *Եփր. դտ. ևն. (Աբ ունի 231 ածանց՝* ինքն *բառով)։ Յետին գրչութեամբ* ինք *ձևն ունին Խոսրովիկ, Արծր. Լմբ. Նչ. կան նաև* ընքնագիր, ընքնի *Եփր. Համաբ. 115 ևն գրչութիւնները, նոր բառեր են* ինքնաբերաբար, ինքնագոհ, ինքնակամօրէն, ինքնակենսագրութիւն, ինքնապաշտպանութիւն, ինքնավարութիւն, ինքնավստահ, ինքնուսուցիչ, ինքնօգնութիւն *ևն։*

Windisch. 34, Lag. Urgesch. 46, Müller SWAW 41, 155. Bopp, Gp. comp. II 293, *Տէրվ.* Altarm. 63 *և Նախալ. 22 ևն մեկնում են բառս՝* ին-f-ն. *արմատական մասը կազմում է* f, *որի հետ*

համմտ. սանս. sva, *գնդ.* hva, xva, *հպրս.* uvā, *յն.* ĕ, fέo, foι, fε, *լտ.* sui, sibi, se, *գոթ.* seina, sis, sik, *գերմ.* sein, sich, *հսլ.* sę, sebě, *լիթ.* sāvo, *ալբան.* vetε, <*հնխ.* seu̯o-, su̯o-, su̯o- (Boisacq 208, Walde 754).—Bopp *նախաւոր ին- մասը կցում է սանս.* ana- *ձևին. Տէրվ.* Altarm. ին-=այն, *որ նոյն է սանս.* i-dam, ay-am *ձևերի* i, ay *մասերի հետ*; Karolides Γλωσ. συγκρ. 120 *կասպադովկ.* κικιοῦ, κιτιαρὸ *«ինքը, նա» բառերի հետ*; *Հիւնք.* կնիք *բառից հանում է* նիզ *և* իմն: Meillet MSL *9, 372 բառը վերլուծում է* իմ-ն, *որի մէջ* իմ *նոյն է համարում* ևո-յն *բառի վերջի մասի և հնդիկ-իրանական* im-, am- *մասնիկների հետ. անծանօթ է մնում* -ն: *Բազմ. 1897, 591 համարում է* ի *դերանուանական արմատից՝* ն *մասնիկով և* ն *յօդով*: *Մառ,* Грам. др. арм. *152 արմատն է* ի, *որից է և* իւ: Patrubány, Örmény tanulmányok (Budapest 1884) *և* SA *1, 197 իրև իրն է քշում* Bopp-*ի մեկնութիւնը*: Pedersen, *Ծուց. գեր. 41—44* իմ-ն-ն, *ուր* իմ *և* ն *նոյն է* ամենեն *բառի* -ն *մասնիկի հետ, իսկ* ն= *սանս.* ča, *լտ.* que, *որով* իմենին *կամ* իմեն *ըստ* իմեան *բառերի մէջ նոյն մասնիկը 3 և 4 անգամ կրկնուած է լինում*;—Karst, *Ծուշարձան 413 թրք.* kendu *«ինքը»*:

ԳԻՒ.—Ախց. Գոր. Երև. Զթ. Խրբ. Կր. Համշ. Ննխ. Պլ. Սեբ. Սչ. Տփ. իմեր, *Ալշ.* ֆիմ, *Զղ.* ֆիմեր, *Ագլ. Ղրբ.* իմե՛ր, *Հճ. Մշ. Տիգ.* իմ, *Մկ. Վն.* իմե՛, *Շմ.* ի՛մե՛ի.—*Հյգ.* զիմեն *ձևից են կազմւում Պլ.* իմերզիմեր, *Ակն.* իմերզիմեր, իֆզիմեր, *Շմ.* իզի՛մե՛ի, *Ռ.* զիմ, *Սլմ.* զիմե՛, *Ասլ.* բզիմ, բզի*, *Ոզմ.* զէ՛մ, *Մրղ.* զի՛մm, *որոնցից Ռ. Ասլ. Սլմ. Մրղ. և Ոզմ. գործածւում են նաև իբր ուղղական. ինչ. Ռ.* զիմ էգավ *«ինքը եկաւ»*, զիմեր ձէձէ՛ *«ծնծի՛ր նրան»*: Իմենեկ *բառի վրայ տե՛ս* ան-կանել:

ԻՇԱԲԱՐԿԻ *«յարշուանի կամ յարժանանի». ա յապէս ունի Բառ. երեմ. էջ 128. ինչ լինելը յայտնի չէ:*

*ԻՇԽԱՆ, ի-ա *հլ. «իշխող, տէր, մեծ, զօրաւոր» ՍԳր. Կոչ.* իշխանական *Ագաթ. Վեցօր. Եփր. ծն. Ոսկ. յհ. բ. 3.* իշխանաբար *Ոսկ. յհ. ա. 18.* իշխանակին *Կորիւն.* իշխանութիւն *ՍԳր.* անիշխանութիւն *Ոսկ. երր. Եւս. քր.* անձնիշխան *Ա. եզր. դ. 8. Ագաթ. եզն.* իմենիշխան *Ագաթ. Կոչ.* նոմիշխան *Խոր.* սակաւիշխանական *Փիլ.* անիշխանական, իշխանավայել *(նոր բառեր)*:

=*Իրան.* xšāna- *ձևից. համմտ. սոգդ.* 'γšwn *(կարդա՛* axšāvan) *«թագաւոր»=բուդ. սոգդ.* 'γšywn *(կարդա՛* axšēvan). *Հայերէնը այս* axšāvan *ձևից կրճատուած չէ, այլ ենթադրում է* *xšāna, *որի յարաբերութիւնը նոյն է, ինչ որ գնդ.* -pāna, -pāvan: *Ըստ այսմ բաժանում ենք իշխել բայից, որ է* xšayami: -ի *յաւելուածը š-ի կամ s-ի մօտ հիւս. պահլաւական է* (Benvenist REA IX (1929), *էջ 8)*:

Սոուգարանութեանց պատմութիւնը տե՛ս իշխել բառի տակ:

*ԻՇԽԵԼ *«տիրել, տիրապետել. 2. զօրել, կարենալ. 3. համարձակիլ» ՍԳր. եզն. որից* իշխեցուցանել *Մծբ. Եփր. Թգ.*:

=*Իրան.* xši- *«իշխել» ձևից փոխառեալ. համմտ. գնդ.* xši- *«իշխել, տիրել, զօրել, կարենալ»,* xšaya- *«զօրեղ, կարող, իշխան, իշխանութիւն», հպրս.* xšāyaθiya- *«թագաւոր»,* xšaθra- *«պետութիւն», սոգդ.* xšēvan *«թագաւոր»* (Gauthiot, Gr. sogd. 97), °xšyāy *«հրամայել, տիրապետել», մանիք.* xšāwn, xšīwn *«իշխան, թագաւոր» (ИАН 1907, 542—3), պհլ. պրս.* šāh *«թագաւոր». որոնց հետ նոյն են սանս.* kši, kšáyati *«տիրել, ունենալ, տէր լինել»,* kšatrá- *«իշխանութիւն», յն.* κτάομαι *«ձեռք բերել, ստանալ»,* κτῆμα *«ինչք, սեպհականութիւն»,* κτήνεα *«ինչք, հարստութիւն, հօտ, տաւար կամ ոչխար», հնխ.* qthē (Boisacq 523—4, Walde 680, Pokorny 1, 504): *Նոյն իրանական բառերի հետ կարելի է այժմ համեմատել հաթ.* išḫa- *«տէր»* (Hrozný, Die Sprache der Hethiter, *էջ 226)*: *Հայերէնում իրանեան* xš *դարձել է բուն օրինի շխ (համմտ.* վաշխ<*պհլ.* vaxš, բոշխանել<baoxšna-, երաշխ<raxš, բաշխել<baxš *են). բայց ո-*

*բովհետև հայերէնի մէջ շխ- ձայնախումբով սկսող բառ չկայ, ուստի աւելացել է է նախաձայնը. (հմմտ. աշխարհ<xšaϑra-, աշխէտ <*xšaita-, որոնց մէջ յաւելուածն է ա. բայց այստեղ դրուած է ե՝ որ ա-ի համազօրն է (հմմտ. արագ-երագ) և յաջորդ ջ-ի պատճառաւ դարձել է է. ինչպէս ունինք էշ <*եղ<*ek'vo), այսպէսով ուրեմն հայերէն բառի նախաձևն է *էշխել, որ յետոյ հայ ձայնաբանութեան օրէնքների համաձայն դարձել է իշխել:*

ՆՀՔ յն. ἰσχύω «զօրանալ» բառի հետ՝ Klaproth, Memoires I *439* իշխան= *սանս.* iša: *Ուղիղ համեմատութիւնը տուաւ նախ* Müller SWAW 42, 255, *սակայն առանց ձայնական բացատրութեանց: Մորթման* ZDMG 26, 619 *բևեռ.* ismi *«իշխել»: Հիւրշ.* KZ *23, 17 գնում է* Müller-*ի մեկնութիւնը, բայց* Arm. Gram. *չէ իսկ յիշում: Հինք. արաբ.* شيخ šeyx *կամ պրս.* شاه šāh. *Բ. Խալաթեանց, Բանասէր. 1902, 166 աւուր.* šaknu *«քաղաքապետ» բառից՝ Սկսնակ բանասէր (Բանասէր. 1903, 109) ասուր.* sakan *«իշխան»:* Jensen *ՀԱ 1904, 271 հաթ.* iš *«մեծ» բառի հետ՝* Patrubány *ՀԱ 1905, 253 գնում է զնդ.* xša *ձևից՝ որի վրայ աւելացել է* en>*հյ. ի նախդիրը. հայերէնից է ազդուած հունգ.* ispán *«ոստիկան»: Բ. Խալաթեանց, Լումայ 1907, № 1, էջ 79 զնդ.* xši *ձևից շերջուա՞ծ: Վերի ձայնական բացատրութիւններով իրանական ծագումը հաստատեց Աճառ.* MSL 15, 243: Karst, *Յուշարձան 405 սումեր.* isse *«իշխան», 419 ալթայ.* хан *«իշխան»:* Коршъ, *Բրգմ. Մշակ 1914, № 122 զնդ.* xšay- *«իշխել» արմատից՝* awi- *նախամասնիկով, որ տուել է հյ. ի-: Մատիկեան, ՀԱ 1919, 32 հաթ.* išḫaš *«տէր»: Մառ,* ИАН *1920, 139 և* Яз. и Лит. I *232 բասկ.* ešku *«ձեռք», սվան.* šia *«ձեռք», յն.* ἰσχύς *«զօրութիւն», սվան.* ešxu *«մէկ», լտ.* rex *«թագաւոր» բառերի հետ: Պատահական նմանութիւն ունի ասոր.* ܫܝܫܢܐ šīxānā *«համարձակ, յանդուգն, լիրբ»:*

ԳԻՒ.—Ագլ. Աւշ. Ախց. Երև. Խրբ. Կր. Մշ. Ոզմ. Պլ. Սլմ. Տփ. իշխան, *Ննխ.* իշխան *(գիւղերում՝* ըշխան*), Տիգ.* իշխոն, *Զթ.* իշխօն. իշխոն *«մեծաւոր, իշխանաւոր, հարուստ մարդ, հոգաբարձու», Երև.* ի՛շխան *«Սևանի նշանաւոր ձուկը», Արտ.* իշխան *«մի տեսակ սալոր», Գոր. Ղրբ.* ի՛շխան, ի՛խշան *(արական յատուկ անուն), Սչ.* իշխել, *Ոզմ.* իշխիլ, *Աւշ. Մշ.* իշխընալ, *Տիգ.* իշխընիլ, *Սլմ.* ըխշել, *Վն.* կիշխել, *Շտ.* կխշալ *«համարձակիլ», Ննխ.* շխել *«պրաւել, տէր դառնալ»:*

ՓՈԽ.—Մեզնից է փոխառնել կիրգիզ. iš-хап *«իշխան ձուկը», որ* Будаговъ *1, 197 բնիկ կարծելով գրում է իբր երկու բառ* ايشى خان iš xan *«форель крупная»:*

**ԻՇԽՈՒՆ (որ և շղուն) «թթուաշ բոյս է, ուտելի, գաթծիլ» Բժշ. ունին միայն ՀՀՔ և ՀԲուս. § 875:*

=Պրս. اشخون išxūn *«խաւարծիլ բոյսը», Թրք.* اشغون išxun *«մի տեսակ պատուղ բոյս է» (Կամուս, Թրք. Թրգմ. Գ. 310):— Աճ.*

ԳԻՒ.—Ակն. Զթ. Զրս. իշխուն *«խաւարծիլ», Մշկ. «որթատունկի ճիւղերը», Այն. «որթի և նման բոյսերի վրայի մատղաշ ընձիւղները», Համշ.* իշգին *«տունկերի կամ բոյսերի նորածիլ զոխը», Խրբ.* իշխին *«ստեպղին, գաղար», նո՞յն է նաև Սեբ.* աշխէն *«ուղտափուշ»:*

ԻՇՂԱՐ *«մի տեսակ գիշակեր անասուն, փորսուղ,* blaireau*». ունին միայն Նորայր, Բառ. ֆր. 151 բ (իբրև նոր բառ), ԳԲ և Կոյլաւ, Բառ. գերմ. էջ 400 ա:*

ԻՇՏԻԼ *տե՛ս Խշտիլ:*

**ԻՇՏՄՈՒՂ «ջայլամ». մէկ անգամ ունի Վանակ. յոր. 309 «Ջայլամն ոմանք զիշտըրմուղն անուանեն». մի անգամ էլ գործածում է Տաթև. Հարց. 365 «Ջայլամն որ է ըշտրտուրմուղն». բայց այս երկու վկայութիւններն էլ այնպէս են՝ որ ցոյց են տալիս թէ իշտրմուղ աւելի սովորական ձև էր, քան ջայլամ: Ըստ այսմ ունինք և Տաղ. Զեռ. էջմ. № 679, էջ 72 ա (ըստ Համատունի, Հայոց բառ ու բան, էջ 234 բ), սեռ. իշտրմղու ձևով. «Իշտրմղուն թևերն կայր, ըղտու կոզռի*

նման լինար, զիր ձուն կախեն ամէն տաճար, յիւր ծիրան ալմաս երկաթն կար»:

=Պրս. غرمشش ušturmurγ, որ և غرمشش šuturmurγ «ջայլամ». կազմուած է šutur «ուղտ» և murγ «թռչուն» բառերից, և աստւգաբանօրէն նշանակում է «ուղտահաւ», ճիշտ ինչպէս է թրք. deve qušə دوه قوشی (ոմկ. տէվէ խուշի) հոմանիշը: Պարսկերէնից է փոխառեալ նաև ասոր. ܐܫܬܘܪܡܘܪܓ ešturmurg «ջայլամ»:—Հիւրշ. 157:

ՀՀԲ մեկնում է էշ և տրմուղ բառերից, իբր թէ «էշ ապուշ»: Ուղիղ մեկնեց նաև ՆՀԲ, յետոյ էլ Lag. Ges. Abhd. 19:

ԻՈՆԻԱՍ «աղաչանք առ Տէր». ունի միայն Բառ. երեմ. էջ 128:

ԻՈԱՆԻՈՍ տե՛ս Պին:

***ԻՊԻՍ** կամ **ԻՐՊԼԻՋ** «բելիար». ունի միայն Բառ. երեմ. էջ 129 և 131:

=Արաբ. ابليس iblīs «դև, սատանայ»:—Աճ.

***ԻՊՊԷ** «ձիրննթացի հրապարակ, ձիարձակարան» Վրք. հց. Ա. 703. ուրիշ օրինակ չըկայ. ոորից իպպացի Վրք. հց. նոյն հատուածում:

=Յն. ἱππεία «ձիրննթացք». ծագում է ἵππος «ձի» բառից:

Ուղիղ մեկնեց ՆՀԲ:

***ԻՊՊՈՍ** «աստղի անուն էր» Խոր. աշխ. 586 (այլ ձ. պպոս). չունին բառարանները. «Զկանարոս աստղ՝ որ է իպպոս՝ ի նոցանէ երեւեալ»:

=Յն. ἵππος բառն է, որ բնագրից տառադարձել է Թարգմանը. (τὸν Κάνωβον ἀστέρα, ὅς τις ἐκεῖ λέγεται ἵππος). բուն նշանակութիւնն է «ձի»:

Ուղիղ մեկնեց Պատկ. Арм. геогр. էջ 4:

ԻՋԱՆԵԼ տե՛ս էջ:

ԻՋՈՒԱՆ. ձևով և նշանակութեամբ անստոյգ բառ, որ գտնում եմ գործածուած Կանոն. էջ 185 «Զայն քահանայն, որ զայս առնէ, ժողովուրդն իբրև զհայր տեսանեն և իբրև զքրիստոս թեթև պահեն ի չարէ. իջուան չտան, յամենայն արդեանց պտուղ տան, վաստակացն օգնեն, զմատաղենիան տան և խաչահամբոյր»:—Հասարակօրէն դառնալով՝ կարելի էր դնել իջուան «նեղութիւն», որով իջուան չտան «նեղութիւն չեն տալ»: Կարելի չէ մտածել՝ իջևան բառի մասին, որովհետև տեղը պահանջում է ընդհակառակը իջևան տան: Բայց կարելի է մտածել նաև՝ որ ի այստեղ նախդիր է. որով բառը կդառնայ ջուան. և ի ջուան տալ ոճը կլինի բոլորովին անստոյգ: (Տե՛ս Աճառեան, Հայ. նոր բառեր հին մատ. Բ. 161):

***ԻՌԻՈՆ** «մի տեսակ բանաստեղծական չափ է յունաց մէջ». նորագիւտ բառ, որ մէկ անգամ ունի Սոկր. 513 «Ել ինքնատես պատերազմին եղեալ ի չորրորդ գիրսն իռիոն չափովն զեղեալսն պատմեաց»:

=Յն. ἡρωϊκόν «դիւցազնական չափ, hexamètre dactylique catalectique»: Սոկրատի բնագիրն ունի այստեղ ἡρωϊκῷ և անշուշտ այս բառն է՝ որ այլայլուելով ստացել է այս ձևը:—Աճ.

***ԻՌՐԷԿՈՒԼԱՐԻՍ** «ոչ-կանոնական». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Գիրք մոլութ. էջ 468 բ. «Այնպիսի սպաննումն ո՛չ է մեղք և ոչ առնէ իռռէկուլարիս»:

=Լտ. irregularis «ոչ-կանոնական»:—Աճ.

ԻՍԱՐԻՄ «ողորմութիւն». ունի միայն Բռ. երեմ. էջ 129, որի հետ նոյն են իսաւոն, իկաւոն «ողորմելի» էջ 127, 129:

***ԻՍԲՈԼԱՅԻԹԻ** կամ **ՍԲՈԼԱՅԻՏԻ** «կեցցե՛ս, շատ ապրիս». մէկ անգամ ունի Մաշտ. կիւրիկ:

=Յն. εἰς πολλὰ ἔτη «շատ տարիների՛ (բարեմաղթութիւն)», որ և կրճատ ձևով՝ σπολλάτη «շնորհակալ եմ».—յունարէնից են փոխառեալ նաև ռուս. исполать, գռ. спалать, ուկր. spolát, բուլգար. cpoláj, spoláj-ti «շնորհակալ եմ» (Berneker 434):

Ուղիղ մեկնեց ՆՀԲ:

ԻՍԲՕՍԷԹ «այր գաղտնի». ունի միայն Բառ. երեմ. էջ 129:

***ԻՍԵՄՈՎԹ** «աւերակ». ունի միայն Բռ. երեմ. էջ 129:

=Եբր. יְשִׁימוֹת yəšīmōth «աւերում, աւերածութիւն» բառն է, որ անշուշտ յունական տառադարձութեան վրայից անցել է հա-

յերէնի. այդպէս է ցոյց տալիս երբ. ש Š-ի դէմ ս ձայնը։—Աճ.

*ԻՍԹՄԻԱ «յունական ազոնական մի խաղ». մէկ անգամ ունի Եւս. քր. էջ 291՝ ներդ. յիսթմիուջ ձևով. «Միղոն... յաղթեաց յողոմպիոջն վեցիցս, ի պիւթիոջն վեցիցս, յիսթմիուջն տասնիցս, ի նեմեոջն իննիցս»։ Նոյն բառը գրուած է նաև ուղ. իսթիմի բ. 118, իսթմի բ. 194. որից իսթմիական (տպ. եսթեմիական) շոճի Վրք. և վկ. Ա. 609։

=Յն. τὰ ἴσθμια «Կորնթոսի պարանոցում կատարուած հանդիսաւոր խաղեր». ἰσθμός «նեղուց, պարանոց» բառից, որի համար էլ թարգմանաբար ունինք հյ. ըստ նեղցին Փիլ. լիւս. 153։

Նորագիւտ բառս յիշում ու մեկնում է Մէնէվիշեան ՀԱ 1897, 246 ա։

ԻՍԼԻՄ. անյայտ նշանակութեամբ նորագիւտ բառ, որ գործածուած է հետևեալ հատուածներում.—«Այլ ևս չծորեցուցանէ զպըտուղն, որքան իսլիմ տայ և ի շահ ածէ զբերն աղեկ» Վստկ. 146. «Կշռեա զհացն. տես թէ զառաջին կշիռն յաւելուածով իսլիմի տեղ պահէ՝ այն լաւ է». Վստկ. 31. «Արկ. զհողն դարձեալ ի վերայ փոսոյն և տես թէ փոսն կրկին զիւր հողն իսլիմ առնո՞ւ» Վստկ. էջ 54։

Վաստակոց գրոց հրատարակիչը մեկնում է «իսլիմ. բառ արաբ. ամբողջ. իսլիմ տալ՝ աճեցուցանել, հասուցանել զպտուղ»։

*ԻՍԽԱԴԱՍ «չոր թուզ». նորագիւտ բառ, որ երկու անգամ գործածուած եմ գտնում Վրք. իլար. (Սուիներք ԻԲ 73) «Իսկ կերակուր հնգետասան խախադաս, որ է չոր թուզ». «Հինգետասան. խախադայս միայն» անդ՝ էջ 78։

=Յն. ἰσχάς, յգ. ἰσχάδος, հյց. ἰσχάδας «չոր թուզ»։—Աճ.

Այսպէս մեկնեց Աճառ. Հայ. նոր բառեր հին մատ. Ա. էջ 211։

+ԻՍԿ (յետնաբար ի կամ նաև ո հլ.) «էութիւն, բուն գոյացութիւն» Նար. Սարկ. լմբ. «էական, բուն, հարազատ» Կոչ. Վեցօր. «յատուկ անուն (քերականական)» Թրակ. երզն. և Նչ. քեր. որից իսկ «սակայն, բայց. 2. ապա ուրեմն, արդ. 3. է՛լ, արդէ՛ն, իրօք էլ, բնապէս (յետադաս գրուած). 4. է նաև թարմատար» (հին և ընտիր). արդէն իսկ, իսկ եթէ, իսկ թէ, իսկ արդ, իսկ և իսկ, բնաւ իսկ ՄԳր. իսկական Ագաթ. իսկակցութիւն Ոսկ. յհ. ա. 6. իսկոյն, իսկոյն իսկ «անմիջապէս» (համմտ. իսկ և իսկ, արդի գրականում՝ իսկոյն ևեթ) Խոր. 34. կթ. (գրուած իսկւոյն Անկ. գիրք հին կտ. 359). իսկութիւն Կոչ. Վեցօր. ևն։

=Ընդունելի պէտք է համարել հսլ. istŭ, jistŭ «ճշմարիտ, իրական» բառի հետ համեմատութիւնը, որ տալիս է Meillet և որ կրկրնում է Lewy KZ 52 (1924), 310. ըստ որում հաստատւում է որ հնխ. stw ձայնախումբը տալիս է հյ. սկ. համմտ. ոսկր.>ostw-er: Աւելին տե՛ս ստոյգ և ոսկր։

ՆՀՐ լծ. յն. οὐσία «գոյացութիւն», լտ. essentia: Տէրվ. Altarm. 64 և Նախալ. 75, 122 հնխ. sva ձևից, որի ցեղակիցները տե՛ս իճճ. ըստ Տէրվ. sv պահուած է այստեղ սկ ձևով։ Meillet MSL 8, 296 և 14, 23 դնում է հին *istwo- ձևից, իբր հսլ. jistŭ, jistovŭ «ճշմարիտ, իրական», սանս. natyám «ճշմարիտ, իրաւ», sat «էակ, գոյութիւն», յն. ἐτεός «ուղիղ, ճշմարիտ, ճիշտ». այս բոլորը ծագում են էական բայի es- արմատից. հայերէնի մէջ ի սկզբնաձայնը յաւելուած է, ինչպէս է նաև սլաւոնականում և յն. ἰσθι «լե՛ր» հրամայականում։ Նոյնը այլ ձևով տալիս է MSL 22, 62 (տե՛ս ստոյգ)։ Հիմնք. իսկ (գյ.) յն. σκιά «շուք» բառից, իսկ (շղ.) սկսանիմ բայից, Դափանցեան, Տեղեկ. ինստ. 2, 90 գերմ. eigen:

ԳԻՒ.—Ալշ. Ախց. երև. Ղրբ. Նախ. Շմ. իսկ «բոլորովին նոյն, ճիշտ ու ճիշտ», Ագլ. երև. Համշ. Ղրբ. Մշ. Մրղ. Ջղ. Սլմ. Վն. Տփ. իսկի, սկի, Ալշ. ըսկի, Տիգ. ըզգի, Մղ. հըսկի «բնաւ, ամենևին». սրա հնագոյն գործածութիւնը ունի Գանձարանը։

ԻՍԿԻՆՈՍ «սուրբ». ունի միայն Բառ. երեմ. էջ 129։

*ԻՍՕՆ (գրուած է իսաւն, իմա՛ իսոն) «բնագիր, նախագիծ կամ համանման օրինակ կտակագրի» Մխ. դտ. «Հաւատոյ հանգանակ» Գիրք թղ. 509։

=ՅՆ. ἴσον «վաւերագրի պատճէնը կամ ընդօրինակութիւնը», բուն նշանակութիւնն է «հաւասար»։—Հիւրշ. 351։

Առաջին անգամ ուղիղ մեկնեց ՆՀԲ, որ սակայն լծորդ է դնում նաև թրք. էշ «նման, ընկեր»։

+ԻՐ, ի–ա հլ. «բան, մի բան» ՍԳր. որից իրազէտ ՍԳր. Ագաթ. Ոսկ. ես. իրազգած Ագաթ. իրազեկ Գծ. իա. 21, 24. յեռնաբար իրողութիւն, իրոցել «իրագործել», յիրարկել «ի գործ դնել», իրածել «խորհիլ» (միայն Մագ. գամագա.), իրել «խորհրդածել» Հին բռ. իրեննդ «իրեն փիլիսոփայ կարծող, փիլիսոփայ ձևացնող» Մագ. գամագա. (տե՛ս ՀԱ 1911, 375. Թրգմ. յն. բառիս՝ πραγματέυομαι «մի բանով զբաղիլ՝ առանց լինելու»), իրականութիւն, իրապաշտ, իրապաշտական (նոր բառեր) ևն։ Իր բառի գործիական հոլովն է՝ իրավ, յգ. իրօք՝ որ ստացել է մակբայական գործածութիւն՝ «արդեամբ, գործով, հաւաստեաւ» նշանակութեամբ. օր. «Իրօք բարկացուցեր և բանիւք հաշտեցուսցես» Ոսկ. սղ. ժ. (Հակադրուած են իրար հետ՝ խօսք և գործ)։ Գործը համարելով իրականութիւն կամ ճշմարտութիւն, բառը ստացել է յետոյ «արդարացի, ստուգիւ» նշանակութիւնը. ինչ. «Եթէ անիրաւաբար թըշնամանեաց... իսկ եթէ իրաւ, ևս առաւել լուռ լինել արժան է» Ոսկ. յհ. բ. 37. «Որպէս իրաւ իսկ Քրիստի ինձ խորհել զայս վասն ձեր» Փիլիպ. ա. 7. «Իրա՛ւ է, ասաց ցիս, Եթէ յաղջկունդ իմ յարեաց» Հռութ. բ. 21. «Արդար ասէիր, իրաւ ասէիր» Փարպ։ Այս իրաւ գործիական ձևը իբր գոյական առնուելով՝ «իրաւունք, դատաստան, արդարութիւն» նշանակութեամբ, համարուել է ուղղական, որով կազմուել են միւս հոլովները. այսպէս՝ «Աճել յիրաւն և յարժանն» Եզն. «Իրաւ արա ինձ, Աստուա՛ծ» Սղ. «Յիշեցուցանել զիրաւն և զմարդասիրելն» Խոր. բ. 7. Նաև յիրաւի (ներգոյական հոլով) «իրօք, ճշմարիտ է որ» ՍԳր. ևն։ Իրաւ իբր ուղ. գոյական ըմբռնուելուց յետոյ՝ տուել է նորանոր ածանցներ. ինչ. իրաւունք ՍԳր. Ւ։զն. Սերբր. իրաւացի Ես. ժղ. 17. Սերբր. իրաւարար Ա. Թագ. իգ. 16. իրաւագէտ Յոբ. ժզ. 20. Եզն. իրաւագիտութիւն Առակ. ժզ. 23. իրաւախոհ Եզն. Ոսկ. անիրաւ ՍԳր. յանիրաւի Ա. պետ. բ. 19. անիրաւել Սղ. ճժբ. 78. Նոր բառեր են՝ իրաւազուրկ, իրաւազրկութիւն, իրաւաբանական, իրավաւաբանօրէն, իրաւագիտական ևն։

=Կազմուած է ի<հնխ. $k^{e}i$- դերանուանական արմատից՝ r մասնիկով, ճիշտ ինչպէս n արմատից ունինք nr։ Տե՛ս նաև ի։

ՆՀԲ լծ. լտ. jus, juris, *արաբ.* շէրի, իոս, *իսկ* իրաւ *դնում է* իր *բառից։* Peterm. 179 ի *արմատից դնում է* իր և ինչ։ Justi, Zendsp. 255 *սանս. և գնդ.* rāi «փայլ» *բառի հետ։ Մորթման* ZDMG 26, 528 *բևեռ.* irribi «իրաւ, իրաւունք»։ *Հինք.* իրան *բառից* իր, *որից* իրաւ. *իսկ* իրաւունք *հանում է* օրէնք *բառից։* Bugge KZ 32, 8 *հնխ.* es «դու ես, լինել» *ձևից՝ r մասնիկով։* Pedersen, *Յուց. դեր. 37 կցում է* իւր *դերանուան. համմտ.* իր–եար։ Gauthiot, MSL 15, 226 *համեմատում է լիթ.* yrà, *լեթ.* ir «է» *(էական բայի երրորդ դէմքը) ձևերի հետ, հնթադրելով որ նախապէս նշանակում էին «իրողութիւն, իրականութիւն, դէպք» և յետոյ ուգրօ-ֆիննական լեզուների աղդեցութեամբ և օրինակով՝ դարձան էական բայ։*

ԳԻՒ.—Խառնուելով իմ բառի հետ՝ եղել է իրմ, *որի վրայ տե՛ս* իմ։

ԻՐԱՅՕՆ «տեսիլ». *ունի միայն Բառ. երեմ. կղ 130։*

ԻՐԱՆ, ի–ա հլ. *(յետնաբար նաև* –ունք, –անց, –ամբք*) «մարմնի վերի մասը ամբողջովին՝ առանց գլուխը հետ առնելու» Ղևտ. իգ. 12. Սղ. ճլա. 5. որից* անիրան «անմարմին, անկերպարան, դեռ չձևակերպուած» Եզն. սեղմիրան *(նոր բառ)։—*ՔՒ *դնում է նաև* իրանունք «քունք», *որի վկայութիւնը գտնում եմ Ոսկ. մտթ. «Յորժամ քունն յաչացն հատանիցի և իրանունքն ընդոստ ընդոստ խաղայցեն» (Բոռնեան, Հատընտ. 1891, էջ 84)։*

=Նախահայ *էրան ձևից։

ՆՀԲ երանք, երի, երբուծ *ձևերի հետ։ Հինք.* երան *բառից։* Pedersen, *Յուց. դեր. 37* իր<իւր *դերանուան հետ. համմտ.* nr–եար, nr–ոյայն։

ԻՐԱՐ *տե՛ս Իրեար։*

+ԻՐԱԻ *տե՛ս Իր։*

Ուղիղ մեկնեց նախ Աւետիքեան, Քերակ. 1815, 261, որ դնում է իր բառի գործիականից։

ԳԻՒ.—Ասլ. երև. Կր. Մշ. Պլ. Ռ. Սեբ. իրավ, Ոզմ. էրավ, Հճ. իյօվ «ճշմարիտ». նոր բառեր են իրացնել, իրացնել, իրա՛տրայ, իրատվ։

ԻՐԲԻՆՈՍ *«փիլիսոփայ». ունի միայն Բառ. երեմ. էջ 130։*

ԻՐԵՆԱՐ, ի–ա *հլ. (զիրեար, յիրեար, իրեաց, իրեօք, զիրեարս, յիրեարս) «իրար, մէկ-մէկի, մէկզմէկ» Ես. լդ. 15. Եղն. (գրուած է սեռ. էրիրաց Շապհ. 80). որից համառօտուած է իրար՝ որ ունին Շիր. Պղատ. տիմ Բէռի. խ. մկ. Լմբ. ժզ. Նշ. եգեկ. այս ձևից է գիրարել «իրար անցնել, աղմուկ՝ ժխոր հանել» Սոկր. 168. Գր. տղ.։*

*ՆՀԲ իր (իբր իր ընդ իրի) կամ իր բառից։ Տէրվ. Մասիս 1881 մայ" 11 իր բառի կրկնաւորն է։ Հիւնք. իր բառից։ Մառ. Грам. др.-арм. 157 և ЗВО 22, 57 կրկնուած է bar, իմա՛ ar «մէկ» բառից. հմմտ. վրաց. երթի, մինգրր. արթի, լազ. ar «մէկ». որով իրեար նշանակում է բուն «մէկմէկի, մէկզմէկ»։ Pedersen, Ծուց. դեր. 36 bar մասնիկով (ինչ. ոr-bar) *իր <*sēuro>իր բառից։ Karst, Ծուշարձան 403 սումեր. barra «իրեար»։*

ԳԻՒ.—Ախց. Ասլ. երև. Կր. Համշ. Պլ. Ռ. Սեբ. Սլմ. Տփ. իրար, Ալշ. Մշ. յիրար, Մկ. զիրար, Ջղ. ֆիրար, ֆիրուր, Ագլ. յի՛րիր, Ղրբ. իւ՛րիր, Ոզմ. ճոր։—Նոր բառեր են իրարաճցում, իրարել, իրարոց։—Ընդ իրեար ձևից կազմուած ոճեր են՝ դիրար տալ Մրղ., դիրուր գալ, տալ, Ջղ., տի՛ւրիր գալ, տալ Ղրբ., տիւրիւն գալ, տալ Շմ., դուրուր գալ Գնձ., դիւրիր գիլ Ագլ., տրիւն տալ Նխ., դուրու գալ. Ղրդ. «շարժել, շարժուիլ».—սրանց մէջ նախաձայն ը– մասի անկման համար հմմտ. ընդ բառի տակ յիշուած ձևերը, ինչպէս նաև անկողին>կողին, ընկոյզ>կուզ, ընկեր>գեր. իսկ իմաստի զարգացման համար հմմտ. Մրղ. իրար տալ «շարժել», Ագ. Մրղ. իրար գալ «շարժուիլ», Ջբ. իրարցնել «շարժել» (գլուխ կիրարցնէ «գլուխ է շարժում»)։—(Յիշեալ ձևերի արմատը՝ Մամիկոնեան, Հապարից մէկը, էջ 237 համարում է դոբր, որի հականիշն է դնում անդորր։ Նոյնպէս Տաթև. ձմ. կա. մատնանիշ է անում երեր արմատը. այսպէս՝ ճմլելն այն է՝ որ զկուրծան անչա՛փ յերերաց առն (կովի պտուկների համար է ասում)։ Բայց թէ՛ մին և թէ՛ միւս սխալ են, երկրորդը նոյն իսկ տպագրական սխալի արդիւնք՝ փոխանակ յիրերաց առն)։

ՓՈԽ.—Հայ-բոշայերէն իրար-բաշղա «միասին» (Finck, Die Sprache der arm. Zigeuner ЗАН 1907, 111). *բառացի նշանակում է «իրար-գլխի» (Թրք. baš «գլուխ», Ներգ. bašda)։

*ԻՐԵՆԱՐՔԱՅ *«հաշտարար դատաւոր». նորագիւտ բառ՝ որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Վրք. և վկ. Բ. 236 «Պատահեաց անդ Հերովդէս իրենարքայ»։*

=Յն. εἰρηνάρχης նոյն նշ. կազմուած է εἰρήνη «հաշտութիւն» և ἀρχός «պետ» բառից, որ հայերէնի մէջ փոխանակուել է հոմանիշ և համահնչիւն արեայ բառով։—Ահ.

*ԻՐԻՍ *(սեռ. իրիսի) «ծիրածան, ծիրանի գոտի» Արիստ. աշխ. որ և իռիս Անան. նար. իրիտէ, իրիդէս «ծիրածաններ» Արիստ. աշխ.։*

=Յն. ἶρις, սեռ. ἴριδος «ծիրածան, ծիրանի գոտի»։—Հիւրշ. 351։

Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ։

ԻՐՍ ԽՏՆԵԱԼ *«խաշնեալ». այսպէս ունի Բառ. երեմ. էջ 131. ի՛նչ լինելը չէ՛ յայտնի։*

*ԻՒՋԷՐԼԻԿ *«փեղենայ խոտը» Վստկ. 168. ունի միայն ՀԲուս. § 876։*

=Թրք. üzerlik «փեղենայ, rue»։ Ուղիղ մեկնեց ՀԲուս.

ԳԻՒ.—Ղրբ. զմ՛ռնիկ, երև. ուզա՛րլիկ։

*ԻՒՂ, ո *հլ. «եղ, ընդհանուր առմամբ՝ պարարտութիւն, մասնաւորապէս՝ ձէթ, կարագ, եկեղեցական միւռոն» ՍԳր. Ոսկ. որից ունինք՝ ծառ իւղոյ «մի տեսակ ծառ. eleagnus angustifolius L» (ըստ Արքինեան, Ածաշունչի տունկերը, էջ 158) Ես. խա. 19. իւղագործ ՍԳր. իւղաթուրմ Գ. մակ. դ. 6. իւղեալ Ոսկ. ես. իւղիկ Ոսկ. ա. տիմ. ժդ. իւղեփեաց*

ՍԳր. ևն։ Գրուած է նաև եւղ կամ եղ. վերջինը գաւառական մի ձև է, որի հոլովական ձևերն են՝ սեռ. եղու Շնորհ. առ միք. պտր. (տե՛ս Շնորհ. ընդհ. տպ. Եմ. 162), բց. յեղոյն Կոստ. երգն. 79, որից եղագլխուբիւն *Վահր. յար.* եղամաճ *Եղիշ. երէց.* եղարկել *«օծել» Լմբ. պտրգ.* եղենի *«ձիթենի» Վստկ։ Նոր բառեր են* իւղաճերկ, իւղաճկար, իւղաճկարիչ *ևն։* Եղեցան *«իւղ սրսկելու գործիք». ունի Արծր. Հրտր. Պատկ. էջ 257 (ըստ Թորչեան,* Mitteilungen des Seminars für Orient Spr. Berlin *1904, էջ 145)։*

=Փոխառեալ է Միջերկրեան կորած մի լեզուից, որից են նաև յն. ἔλαιον *«իւղ»,* ἐλαία *«ձիթենի» (հին ձևերն են* ἔλαιϝον, ἐλαίϝα*). յունարէնից են ծագում լտ.* oleum, olivum *«իւղ»,* olea, oliva *«ձիթենի». և սրանցից՝ ուղղակի կամ անուղղակի փոխառութեամբ՝ հֆրանս.* oil, *ֆրանս.* huile, *իտալ.* olio, *սպան.* oleo, *ռում.* olej, *գոթ.* alēw, *հբգ.* olei, oli, *հոլլ.* olie, *անգլսք.* ele, *գերմ.* öl, *անգլ.* oli, *հսլ.* oleǰ, *ռուս.* eleň, *սերբ.* olaj, *չեխ. լեհ.* olej, *լիթ.* alėjus, *հին կիմր.* oleu, *ալբան.* uli, *հունգար.* olaj *են համանիշները* (Walde 538, Boisacq 237, Berneker 264, Kluge 355)։—*Հիւբշ. 393։*

ՆՀՌ թրք. yaγ, *յն.* ἔλαιον, *լատ.* oleum *ձևերի հետ։ Այս յն. և լտ. բառերի հետ են գնում նաև* Peterm. 29, 39, Windisch, 17, Lag. Urgesch. 907։ *Իսկ* Müller SWAW 41, 10 *և* Bugge, Btrg. 16 *գնում են ուղղակի փոխառեալ յունարէնից։ Մորթման* ZDMG *24, 80 են գնդակից! է գնում թրք.* yaγ *բառին։* Bugge, Etrusk. u. Arm. *94 ետր.* elealieθi = իւղալի։ *Հինք. յն.* ὄγρος *«թոյլ, կակուղ» բառից։ Սանսուալճ.* L'idiome *14 բևեռ.* ûlini: *Պատահական նմանութիւն ունի հնխ.* selp *«իւղ, պարարտութիւն», որ կարող էր տալ ճիշտ հյ. եղ. հմմտ. յն.* ἔλπος *«իւղ», կիպր.* ἔλφος *«կարագ», սանս.* sarpi- *«մաքուր կարագ», անգլսք.* sealf, *հբգ.* salba *«սպեղանի»* (Boisacq 246, Kluge 406)։

ԳԻՒ.—Ալշ. Մշ. եղ, *Ագլ. Ակն. Զթ. Մկ.* էղ, *Սլմ. Վն.* յեղ, *Ախց. Գոր. Երև. Խրբ. Կր. Հճ. Համշ. Ղրբ. Մրղ. Նխճ. Շմ. Ոզմ. Պլ. Ռ. Սեբ.* յէղ, *Սչ.* յէխ, *սեռ.* յէղի, *Ասլ.* յէ՝ղ, *Տփ.* յիղ, *Տիգ.* յըղ։—*այս բոլորը գալիս են եղ ձևից. իսկ բուն իւղ ձևի ներկայացուցիչն է Զղ.* ուղ։ *—Նոր բառեր են* եղով, եղուիլ, եղտես, եղօշնակ, եղաթաթախ, եղալաւաշ, եղակալել, եղաձու, եղամաճ, եղաշոռ, եղաստոց, եղեղէն, եղոտիլ *ևն։—Հետաքրքրական բառ է* իւղաճալ, եղաճալ *«մէջը իւղ հալեցնելու փոքր ամանն», որ ձայնական փոփոխութիւններով գարձել է* եղճալ *երև. Բբ., էխալ Ակն. Սեբ., ուխալ Բլ. Խն. Մշ.—այս վերջինների մէջ խ ներկայացնում է ղն (տե՛ս Լումայ 1898, Բ գիրք, էջ 147) և ըստ այսմ պատահական նմանութիւն ունի մեր բառի հետ սանս.* ukhā *«պատուկ, սանդ»։*

ՓՈԽ.—Գւռ. եղ (yeγ) *ձևը փոխառութեամբ մտած է գրեթէ բոլոր թաթարական լեզուների մէջ. բայց որովհետև թաթարականում ղ ձայնը ծանր բաղաձայն* (saqīl) *է համարւում և չի կարող հետևաբար e ձայնաւորի մօտ գտնուիլ, այլ* a *(հմմտ. օսմ.* aγlamaq *«լալ»,* aγəl *«փարախ»,* yaγmur *«անձրև»,* yaγəɾ *«կեղ»,* yaγəz *«գորշագոյն»,* ayaγəm *«ոտքս» ևն), ուստի գւռ.* yeγ *ձևը դարձել է* yaγ, *այսպէս՝ ունինք օսմ.* غ ياγ yaγ *«իւղ, ճարպ»,* غلى ياγlə *կամ* غلو ياγlu *«իւղոտ, պարարտ, կեղտոտ»,* غجى ياγjə *«իւղավաճառ, իւղարար»,* غلامق ياγlamaq *«իւղոտել, իւղել»,* غلق ياγləq *«թաշկինակ» (նախնաբար «կերակրի ճենճը սրբելու շոր». օսմ. այս բառից փոխառութեամբ ձևացած են Պլ. յաղլըխ, յալլըխ, Սչ. Ռմ. լալխ, Ղրբ. յա՛լլուխ, յա՛լլըխ «թաշկինակ»).* يغلنمق ياγlanmaq *«իւղոտուիլ»,* يغى چ ič yaγə *կամ* يغى طوق ḍoṅ yaγə *«ճրագուս»,* يغى تره tere yaγə *«կարագ» են (տե՛ս Մ. Աբրիկեան, Ընդարձակ բառ. տճկ. հայ. դաղ. Պօլիս 1888), արևել. թրք.* غ ياγ yaγ *«ճարպ, կարագ, իւղ»,* يغچامور ياγčamur *«տաք հաց, որ կարագով շաղախում և քաղցր դինիով ուտում են» (հմմտ. գւռ.* եմուռ, եղաճմուռ*),* يغمق ياγəqmaq *«դիրանալ»,* يغلاغو ياγlaγu *«սպեղանի»,* سو يغى su-yaγə *«սև կարագ» (տե՛ս* Pü de Courteille Dict.

turk-orient. Paris 1870), *Կաշգարի և Եարխանդի բարբառով՝* ياغ yaγ «ճարպ, իւղ», ياغلانماق yaγlanmaq «դիրանալ», ياغلاماق yaγlamaq «իւղոտել», ياغليق yaγləq «իւղ սրբելու շոր» (*տե՛ս* R. B. Shaw, A Sketch of the turki language as spoken in eastern Turkistan, Kâshghar and Yarkand, Calcutta 1880), *չաղաթ.* ياق կամ ياغ yaγ «իւղ, ճարպ», ياغليك yaγlik «ճաշից յետոյ ձեռք սրբելու թաշկինակ» (*տե՛ս* Vambery, Čagataische Sprachstudien, Leipzig 1867). *ույղուր.* ياخ yax, *կիրգիզ.* جاو jau (*այս լեզուի մէջ բառասկզբի* y *դառնում է միշտ* j. *ինչ. պրս.* yabān «աւերակ, անշէն» և yār «բարեկամ, սիրելի»>*կիրգիզ.* جابان jaban, جار jar), *ալթայ.* yū, *կարագաս* dyaz, *կոյբալ.* tyak, *սոյոթ.* tyax, *կանդակով* tyag, *նաքուդ.* aga «իւղ, ճարպ»: (*Պատահական նմանութիւն ունի չին.* 油 yu² «իւղ, պարարտութիւն, կարագ»):—*Այս բոլոր բառերը ժԹ դարուն՝ թաթարական տիրապետութեան ժամանակ՝ անցել են թաթարներին: Հայերը կարագի պատրաստութեան համար առանձին մի ձև ունին. փոխանակ կաթից կամ սերից հանելու կարագը, ձեռնով կամ խնոցիով մածունից են հանում: Թաթարները Հայաստանի մէջ սովորելով հայերից կարագի պատրաստութեան այս եղանակը, տարին և տարածեցին Թաթարիստանում, նիւթի հետ բառն էլ փոխ առնելով: Իւղի բնիկ թաթարական բառերն են՝ թաթար.* šalγan, *կոյբալ-կարագաս.* salgan, *արևել. Քրք.* tosum, *մոնգոլ.* ᠲᠣᠰᠤᠨ tosun «կարագ, իւղ», *եակուտ.* səa կամ sāl, *չուվաշ.* sju, *չաղաթ.* may «իւղ, ճարպ», maylik «իւղոտ», maylamaq «կեղտոտել», *ույղուր.* mayunmaq «կեղտոտիլ», *խըրղըզ.* mayluq «թաշկինակ, անձեռոց», *հունգար.* vay «կարագ» են: Vambery (Etymologisches Wörterbuch der Turko-tatarischen Sprachen, Leipz. 1878) *հայերէն ձևին ծանօթ չլինելով՝ չէ կարողացել ուղիղ մեկնութիւն տալ յիշեալ թաթարական ձևերին.—էջ 109, № 120* jag, ag *դրել է իբրև բնիկ բառ, իսկ էջ 213, № 231 դրել է* maj, jagh *արմատը և այս երկուսը ուղում է իբար կապել հունգար.* vaj «կարագ» *բառի միջնորդութեամբ, առանց մտածելու թէ* may *և* yaγ *ձևերը միևնոյն լեզուի մէջ և միևնոյն ժամանակ գոնում են կողք կողքի և հետևաբար չեն կարող իրարից յառաջացած լինել:—Օսմանեան թուրքերէնից փոխ առնուած լինելով՝ անուղղակի միջանից են փոխառնել սերբ.* jag «իւղ, ճարպ», jaglęk «թաշկինակ», *քրդ.* ژاو yaγ «կարագ», kereyaγi «կարագ-եղ», *լազ.* yaγi «իւղ», *վրաց.* იაღლუ *իաղլու «մի տեսակ խմորեղէն, аладья»,* იაღლაჳი *իաղլավաշի «իւղով ու խմորով շինուած խառնուրդ՝ որ վէրքի վրայ են գնում կամ ուտեցքի» (հյ. իւղալաւաշ ձևից):—Սակայն ուղղակի հյ. իւղ ձևից է վրաց.* ითლი *իուղի «իւղ» (բառ Մառ,* Тексты и разск. IV *յաւել.):*

***ԻՊՈԴԻԱԿՈՆ** «կիսատարկաւագ» *լմբ. պարզ. ուրիշ տեղ չէ գործածուած:*

=*Յն.* ὑποδιάκονος *նոյն նշ., որ գալիս է* ὑπό «ենթ-» *և* διάκονος «սարկաւագ» *բառերից:—Հիւբշ. 351:*

Ուղիղ մեկնեցին նախ ՀՀԲ և ՆՀԲ:

+**ԻՐ**, ո *հլ.* «իրենը, իրեն յատուկ եղածը» (*տառացական դերանուն*) *ՍԳր.* իր, իւրեան (*իւրեամբ, իւրև, իւրեաւ, իւրեանք, իւրեանց, -եամբք*) «իրեն» (*էական դերանուն*) *ՍԳր. Բուզ. որից* իւրովի *կամ* իւրովին *Ես. խդ. 15. Եզն. Ոսկ. ես.* իւրոյն *Եւս. քր.* իւրեանցակուտ *Բուզ.* իւրեանցայինք *Ոսկ. յհ. բ. 23.* իւրակայան *Ագաթ.* իւրակից *Բուզ.* իւրային *Եբր. դ. 10. Կորիւն. Ագաթ.* զիւրովին երբալ «անձնասպանել» *ՍԳր.* չիւր «օտար» *Ոսկ. ես. 279 (չունի ՆՀԲ),* իւրայատուկ *(նոր բառ) են:*

=*Բնիկ հայ բառ, որ ծագում է հնխ.* sewe- *ձևից՝ r մասնիկով (համմտ.* ir, ur*). միւս ցեղակիցները ներկայացնում են հետևեալ ձևերը. զնդ.* hava- «սեփական, իրեն յատուկ», *յն.* ἑός ἑέ, εἷν, *լտ.* sovos>suus «իւր», *օսկ.* suveís, *լիթ.* sāvo «իւր»: *Սրանց հետ կար նաև հնխ.*swo-, swe- *ձևը, որի ժառանգները են՝ սանս.* svá-, *զնդ.* hva-, xva-, *հպրս.* uva-, *յն.* ὅς, *կրետ.* fós, *հիւլ.* fēin, fadēin, *սանս.* svayám, *ալբան.* vetɛ, *գոթ.* swēs, *հրգ.* swās, *հպրուս.* swais, *հսլ.* svojь, *ռուս.* свой՝ «իւր, իրեն յատուկ, սեփական, ինքը,

նոյն» նշանակութիւններով։ Վերջապէս ամենահարց ձևերն էին հնխ. se-, so-, որոնք տուել են յն. հոմեր. ἕ οἷ, լատ. se, umbr. se-so, գոթ. sik, հբգ. sih, գերմ. sich, հպրուս. sebbei, հսլ. sebé, ռուս. -ся «ինքը, իրեն» են (Walde 754, Boisacq 208, Trautmann 251, Pokorny 2, 455, Ernout-Meillet 956)։ Հնխ. sewe- ունել է նախ հյ. եւ, ր մասնիկով՝ *եւր, որ անշեշտ լինելու պատճառաւ ունէի տիպարանալով՝ դարձել է իր։ Այստեղ գործ չունի հնագոյն հայերէնի եւ>իւ ձայնափոխութեան օրէնքը (ինչ. ալեւր>ալիւր, եղ>իւղ), որովհետև ամենահին ձեռագրերի մէջ էլ ամենևին գոյութիւն չունի *եւր գրչութիւն՝ փոխանակ իր։—Հիւբշ. 451։

Peterm. 170 յն. οὗ, լտ. sui ձևերի հետ։ Müller, Benfeys Orient u. Occident 2, 576 (նաև SWAW 84 (1877), 228), որից Justi, Zendsp. 32 զնդ. ava «նա, այն» (հպրս. ava, պհլ. ō, փարս. ōi, պրս. ﻭ ō, քրդ. au, օսս. ui) ձևի հետ։ Մորթման ZDMG 26, 540 բևեռ. huri, անգլ. his, her, 592 բևեռ. iur։ Նոյն, Բևեռագիրք Հայաստ. թրգմ. Գ. Ապտուլլահ, Պօլիս, 1872, բևեռ. ուրիի։ Տէրվ. Altarm. 64 և Նախալ. 122 ուզիղ է մեկնում։ Նոյն, Մասիս 1881 մայ" 11 զնդ. hva, սանս. sva, իբր նախնական *նիւր ձևից։ Justi, Dict. Kurde էջ 297 ա քրդ. wir «այստեղ», wir-da այստեղում» ձևերին է կցում հյ. իր, իրեան, իւրև։ Հինք. նիւր բառից։ Բազմ. 1897, 591 ի դերանուանական արմատից։ Bugge, Lyk. Stud. 1. 18 Λιϰιμνίνιος Ἰούρασις յատուկ անունը, էջ 1, 72 լիկ. Ἴασος և նախայն. Ἰάων, Ἰάων ևն։ Jensen ZU. 1904, 271 հաթ. pa «իւր»։ Վերի ձևով մեկնեցին Meillet, Esquisse էջ 24, Pedersen, Ծուց. դեր. էջ 35, Lidén, Arm. Stud. էջ 135, բայց մանաւանդ Meillet JAs. 1904, 497: Osthoff, Parerga I 291 յն. αὐτός «նոյն» են բնաւանիթի հետ։ Osthoff, Parerga 291 են հնխ. ēs-ōr, որ է «լինելը, գոյութիւն» իբր թէ «անձն, ինքն», ինչպէս յն. αὐτός, αὖς, սանս. ásu-, զնդ. anhu են։

ԳԻՒ.—Սլմ. իւր, Մրղ. իւր, իր, Գար. Ղրբ. Շմ. իւրոն, Ագլ. յ'իրոն, յի'ւրոն, Ակն. Ո. Սեբ. Տիգ. իր, Զթ. իր, իյ, Երև. իրա, Հճ. իյ, Սչ. իրեն, Պլ. Սեբ. իր, իրէն, Ախց. Խրբ. Կր. Սեբ. իրէն, Ասլ. իրա, Տփ. իր, իրաե, Ննխ. իր, իրէն, ժէն, Սլզ. Մկ. Մշ. Ոզմ. Վն. ուր, Ջղ. ւուր, Համշ. ուր, ույ։ Նոր բառեր են իրական «ազգականները», իրաւոր «մերձաւոր», իրենիւր «ինքնիրեն», գիրաւ ածել, գիրաւ անցնիլ, գիրաւ ունել, գիրաւ տալ, գիւրով տալ «փոխել, ծածկել, ծածկուիլ»։

ԻԻՐԱՏԱԿԱՆ. անստոյգ բառ. գործածուած է Մագ. թղ. 236՝ մի շատ մութ ոտանաւորի մէջ. «Բաբայական պայքար պարսիւ իրատական աճապարեալ»։

ԻԻՐԱՔԱՆՉԻԻՐ (ոսկեդարեան անհոլով, յետնաբար n հլ.) «ամէն մէկը» ՍԳր. Ագաթ. սրա մէջ իր դերանուն համարելով՝ իրր -քանչիւր արմատից՝ յետնաբար շինուած է երկամանչիւր «երկուսն էլ» Փիլ. Նիւս. Յճխ. իրր համապատասխան յն. ἑκάτερος ձևի։ Չափի համար կրճատուած ձևով ունինք իրաքանչ Ագաթ. 254։

ՆՀՔ քանչ=լծ. պրս. kas «անձ» և յն. ἕκαστος։ Peterm. 182 իւրք անձնիւր։ Տէրվ. Altarm. 2, 3, Նախալ. 119 և Մասիս 1881 յուլ. 4՝ իր «իր»+քան-չ= լտ. cunque, գոթ. huanhun, լտ. quisque «իւրաքանչիւր», quam «քան»։ Մառ ЗВО 5, 316 զնդ. kasčid ձևից է դնում -քանչիւր։ Patrubány SA 1, 209 իր-ա-քանչ-իր, այսինքն «թէ՛ իւրքն և թէ՛ ոչ իւրքն»։ Meillet, Altarm. Elementarbuch էջ 65 և Rev. ét. arm. I. 13, մեկնում է «sein eher als nicht sein», «sien plutôt que non sien», այսինքն «իւր քան ոչ իւր»։

+ԻՔ «մի քան, իմն ինչ» Անյ. վերլ. արիստ, «գոյացութիւն, որ ինչ է» Պերիարմ. «է, կայ, գոյ» Պերիարմ. Անյ. պերիարմ։ Ոսկեդարեան հայերէնում ուղ.-հյց. հոլովաձևը գործածուած չէ. բայց ունինք միւս հոլովները. ինչ. սեռ. իրիք, տր. իմիք, բց. յիմեէ, գրծ. իւիք. զարմանալի մի ձև է՝ իմիքի, որ գտնում եմ մէկ անգամ Սիր. խա. 19 «Արդ պատկառեցէք ի վերայ իմիքի բանիւս իմոյ»

(Հրատ. Վենետ. 1860). այլ խմբ. «Սակայն պատկառեցարո՛ւք յայսցանէ՝ որք յառաջ գան ի բերանոյ իմմէ» (այսպէ՛ս տպ. Սանկտպետերբուրգ 1817). յոյնն ունի τοιγαροῦν ἐντράπητε ἐπὶ τῷ ῥήματί μου («ի վերայ բանիդ իմոց»)։—Իբ բառի բացասականն է չիբ «չկայ» (իբրև բայ գործածուած) ՍԳր. Ոսկ. «Ձիննելը, չգոնուիլը, պակասութիւն» (օր. ի քաղց և ի ծարաւ, առ չքի հացի և ջրոյ) Եփր. Բ. կոր. 111. որից չիբ լինել «անհետ՝ աներեւոյթ լինել» եւս. քր. Կոչ. չբաճալ Եփր. Թգ. Կոչ. չբաստան Ասող. չբացուցանել Կոչ. չբաւոր «աղքատ» Ա. կոր. ժա. 22. Բուզ. Ագաթ. չբոսի եղն. Բուզ. Կոչ. չբոսիլ Ագաթ. ի չբմեղրս Ոսկ. մ. բ. 2. ի չբմեղիկս Խոր. ևն։

=Կազմուած է *ի<հնխ. k²i- դերանուանական արմատից՝ f մասնիկով, ճիշտ ինչպէս ունինք nf՝ n արմատից՝ f մասնիկով.—nf յատուկ է շնչաւորներին, իբ՝ անշունչներին։ Տե՛ս նաև ի բառի տակ։—Հիւբշ. 450։

Տէրվ. Altarm. 3 և Նախալ. 119 բառի վերջաձայն f՝ նոյն է դնում անս. զնդ. ka, ča, յն. πο, τε, լտ. qui, que, գոթ. hvas, h, ինչպէս նաև հյ. nf, nւրuf, nմbf, fան, fանի ևն ձևերի f, fա մասի հետ, իբր հնխ. ka «որ» արմատից։ Ուղիղ մեկնեց վերի ձևով Meillet MSL 8, 281 և 10, 270, ուր բառս համարւում է չեզոք սեռի միակ հետքը հայերէնի մէջ։ Ուղիղ է նաև Բազմ. 1897, 591։ Karst, Յուշարձան 409 սումեր. ig, nig անորոշ դերանուան հետ։

Գիբ.—Գործածւում է մոռացուած մի բանի անունը տալու փոխարէն, իբր թէ «բանը, այն ինչը». այսպէս՝ Ախց. Ակն. Արբ. Երև. Եւդ. Կր. Համշ. Մն. Մրշ. Ննխ. Ջղ. Սեբ. Սվ. իբ, իբը, Սլմ. իճի¹, Ակն. իբ, իճբ, Ալշ. Մշ. իրբ, Մկ. իրի¹, Պլ. իբ, իրբ, իբը, իրբը (հին լեզուով), իճբ, իճիբը (նոր լեզուով), Խրբ. իրբ, իրբը, Զթ. չի՞րբ, չի՞յբ «ի՞նչ, ի՞նչ բան» (<ի՞նչ իրբ).—այս բոլորի մէջ իբ և իր-բ «բաներ» բառերը իրար են խառնուած։—Նոյն բառից են Աժտ. Ջղ. իբմին, Տփ. իբմին, իմբին, Ագլ. է՛ճմոն, է՛խմոն, է՛մոն «մի բան» (ինչպէս ունինք Տփ. օբմին «մէկը». այս ձևերի մասին տե՛ս և Աղբալեան ՀԱ. 1926, էջ 400—401)։—Սչ. Ռմ. ի՛մբնա «ո՛չ մի բան, ոչինչ». այս բառը բուն նշանակում է «իբ մրն ալ, մի բան էլ» (դրական), բայց թուրքերէնի ազդեցութեամբ ստացել է բացասական նշանակութիւն. համմտ. թրք. bir šey «մի բան» (դրական), որից ժողովրդ. bišey «ո՛չ մի բան, ոչինչ», ինչպէս և Պլ. բա՛ն մրն ալ «ոչինչ» (օրին. ի՞նչ կայ.—բա՛ն մրն ալ. որ է՝ բան մրն ալ չկայ)։—Աւելի սովորական ձև է չիբ, որ պահուած է մանաւանդ անէծքների մէջ. օր. Պլ. չիբը շաբաշիբը գա՛ս։

ԻՔԻՄ. անյայտ բառ, որ ունի ներսեսովիչ, Բառ. լտ.-հյ. էջ 203 բ. (faux, իքիմ, շրթուն, -թան). սոյն լտ. բառը նշանակում է «կոկորդ, անցք, փողրակ, ակունք ևն»։

ԻՔՆՄԱՅ «յայտնի ինչ». ունի միայն Բռ. Երեմ. էջ 131։

Լ

*ԼԱԲԱՐՈՆ «Մեծն Կոստանդիանոսի կայսերական դրօշը՝ որի վրայ մի խաչ և Յիսուս Քրիստոսի անուան սկզբնատառերն էին նկարուած». ունի միայն ԱՔ. մէկ անգամ դրուում եմ գործածուած Ոսկ. ա. տիմ. էջ 25՝ իբր օտար բառ. «Ջնշանս արքունի կրեն ի պատերազմի, մանաւանդ զոր լաբարոնն կոչեն Հռոմք»։ Նոյն բառը գիտէ Բռ. երեմ. էջ 191 դարձեալ «նշանակ» ձևով։

=Լտ. labarum՝ նոյն նշ. մեզ հասել է յն. λάβαρον տատապարձութեան միջոցով. որ և λάβωρον, λάβουρον (Sophocles, էջ 702 ա)։ —Աճ.

ԱՔ դնում է լտ։

*ԼԱԲԻՒՐԻՆԹՈՍ, սեռ. -ի (գրուած նաև լարիւրինքոս, զարիւրինքոս, լամբիւրինքոս, զարիւրինք, զամբիւրինքոս, լամբրինք. իսկ նոր գրականի մէջ ընդունուած ձևն է միայն լարիւրինքոս) «բաւիղ» Առ որս. Նոնն. 22։

=Յն. λαβύρινθος «բաւիղ», որից փոխառեալ են նաև լտ. labyrinthus, գերմ. Labyrinth, ֆրանս. labyrinthe ևն.—յոյն բառը փոխառեալ էին կարծում եգիպտ. lope-rohunit ձևից. (այսպէս էր կոչւում Եգիպտոսի մէջ Մերիսեան լճի մօտ շինուած հռչակաւոր լաբիւրինթոսը). բայց այժմ համարւում է փոխառեալ կարիական կամ լիւդիական լեզուից և նշանակում է «պալատ λάβρυς-ի, որ է կացինի» (լիւդիական կամ կարիական բառ ըստ Պլուտարքոսի. տե՛ս Boisacq 548)։—Հիւբշ. էջ 351։

Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ։

*ԼԱԲԼԱՔ «բաղեղ» Մխ. բժշ. 67. յեռնաբար գրուած լապլապ Ամիրտ. բժշ. ունի միայն Հրուս. § 887։

=Արաբ. لبلاب lablāb «բաղեղ»։—Աճ.

Ուղիղ մեկնեց նախ Աճառ. (անտիպ), յետոյ Seidel, Հրտր. Մխ. Հեր. § 178։

ԼԱԲՈՍ «միեղջերու. թարգմանի օձահալած». ունի միայն Բառ. երեմ. էջ 131։

*ԼԱԳ. արմատ առանձին անգործածական, որից կազմուած է լագութիւն «թուլամորթութիւն, անառակութիւն» Կանոն։—ՀՀԲ ունի նաև լագուցանել, որ թէև Ա. Հատորում մեկնում է «ծածկել, թաքուցանել», բայց Առձեռնում դնում է «բղճախոհ ընել. 2. ծածկել, պահել». (ըստ վերջին նշանակութեան տե՛ս լաճուցնալ)։ Նոյն բառերն են նաև Բառ. երեմ. էջ 131 լագորդել «լծոտել կամ մաշացնել (?) կամ մաշել» և լագրտն «մանչացեալ կամ անօտնալ (?) կամ մաշեալ»։

=Յն. λαγνεία «անառակութիւն», λαγνεύω «անառակիլ, լրբանալ», λάγνος «անառակ» են։—Աճ.

Առաջին անգամ ԱՔ դրաւ յն։

*ԼԱԳՐԻԱՅ «պաշտամունք». նորագիւտ բառ, որ երկու անգամ գործածուած եմ գտնում Գիրք մոլութ. 451 ա և բ, 452 ա. «Պարտ է պաշտել զնա սպասաւորութեամբ իմն տարբոշնալ յամենեցունց. և այս կոչի լագրիայ, այսինքն պաշտօն աստուածային. Այս է պաշտօնն այն, որ կոչի լագրիայ»։

=Լտ. latria «պաշտամունք», որ փոխառեալ է յն. λατρεία «ծառայութիւն. 2. պաշտամունք» բառից. այս էլ ծագում է λατρεύω «ծառայել» բայից։—Աճ.

ԼԱՁԱՆԻ «փոքրահասակ և խիստ կաւտղի մի գազան է». ունի միայն ՀՀԲ՝ առանց վկայութեան։ Վկայութիւնը գտնում եմ մէկ անգամ գործածուած Գիրք առաք. 553 ա. «Առիւծն... երկնչի ի փոքր կենդանւոյն ումեմնէ, որ կոչի լազանի, յորոյ զազանութենէ ոչ ոք կենդանի է անհոժ»։

*ԼԱՁՈՒԱՐԹ (որ և լաժուարդ, լաժուրդ, լաջուարդ, լաջվարդ, լաճվարդ, լազվարդ) «գոճազամ քարը և նրանով պատրաստուած ընտիր կապոյտ ներկ» Ոսկիփ. Բժշ. Վրդն. աշխ.

վրթ. քերթ. Լմբ. յայտ. կէ. (ընդարձակ նկարագրութիւնը տե՛ս Seidel, Հրատ. Մխ. հեր. § 384.—Հյ. կոչւում է պարաիզաքար՝ ըստ Բժշ. և Ամիրտ. որոնց վկայութիւնը տե՛ս Նոթայր, Բառ. ֆր. 733 բ)։

=Պրս. لاژورد lāžvard «գոճազմ քարը». այս քարը յատուկ է Պարսկաստանի, ուր գլխաւոր հանքերը գտնւում են Բադախշանում. այստեղից տարածուել է արևելք և արևմուտք, նախ մտնելով Հնդկաստան, եղել է lājavarta, rājāvarta, յետոյ անցել է արաբներին և նրանց միջոցով մտել է բազմաթիւ լեզուների մէջ. այսպէս՝ արաբ. لاجورد lājvard կամ لازورد lāzvard «գոճազմ», lājvardī «երկնագոյն կապուտակ», թրք. lajiverd «լուրթ գոյն, մանիշակագոյն», քրդ. lajverd «կապտագոյն», ատ. լատ. lazulum, lazurius, lazur «գոճազմ», azurrum, azura, azolum «լաջուարթ գոյներ», ատ. յն. λαζούριον, նյն. λαζούριος, λαζουβερδί, իտալ. lapislazzolo «գոճազմ», azurro «երկնագոյն», ֆրանս. lapis-lazuli «գոճազմ», azur «կապտագոյն», սպան. պորտ. azul «կապտագոյն», գերմ. Lasur, ռուս. лазурь «գոճազմ և բաց կապոյտ ներկ» ևն։—Հիւրշ. 267։

Ուղիղ մեկնեց նախ ՆՀՐ, յետոյ Պատկ. Драгоцен. камни, էջ 43 և Lag. Arm. St. § 900։

*Լ.Ա.Թ «շոր, զգեստի՝ շորի կտորը». Վստկ. 85 (Պարտ է հալածով մտանել, որ քիրտն ի լաթն արգելանի և չկաթէ ի խաղողն) Քուչ. էջ 57. (Տեսի լաթեր լուացած, ի յան լաթերուն մէջէն լուացած շապիկ մ՚էր փուած). որից մոմլաթ «մոմշոր, մուշամբա» Առաք. պտմ. 138. լաթակազմ (նոր բառ)։

=Պրս. لت lat «մաս, կտոր. 2. կտաւեղէն, կտորեղէն», որի հետ նոյն է սանս. lāta «զգեստ, շոր», իրանեանից են փոխառեալ արև. թրք. لتّه latta «շորի կտոր, մի տեսակ չիթ», չաղաթ. latta «քուրջ, հին ու մաշած շոր», ոստ. լաթ նոյն նշ.։ Սրանցից են փոխառեալ, ըստ իս, նաև ռուս. лата «շորի կտոր», латань «հնացած՝ մաշուած շոր, ցնցոտի», лáтать «կարկատել», ուկր. látka «քուրջ», չեխ. látati «կարկատել», látka «կերպասեղէն, կտորեղէն», լեհ. laty «ցրնցոտի». (այս բառերը Berneker 693 սխալմամբ համարում է բնիկ սլաւական, և սրա համար է որ հնդեվրոպական այլ լեզուների մէջ ցեղակից ձևեր չի գտնում)։—Ա՛ճ.

ԳԻՒ.—Ակն. խրբ. Ննխ. Պլ. Սչ. վն. լաթ, Հճ. լօթ «քուրջ», լադ՚դէյ «հագուստ» (իբր եզակի գործածուած), Սեբ. լաթ, Ղրբ. լաՙթ, Ղզ. լաննի «պատառոտուած շոր»։

*Լ.Ա.Լ կամ Ղ.Ա.Ղ «մի տեսակ պատուական քար և բաց կարմիր գեղեցիկ պայծառ գոյն» Մարթին. Գնձ. Երզն. քեր։

=Պրս. لال lāl, «մեղեսիկ քարը և լալ գոյնը», որից փոխառեալ են նաև արաբ. لعل la'l, քրդ. lal, ռուս. лалъ նոյն նշ. և սերբ. läl «կարմիր» (Berneker 687):—Հիւրշ. 267։

Ուղիղ մեկնեց նախ ՆՀՐ (տե՛ս զաղ բառի տակ), յետոյ Պատկ. Драгоц. камни 72, Lag. Arm. Stud. § 903։

+Լ.Ա.Լ «արտասուել, լաց լինել» ՍԳր. որից լալական Մարկ. ե. 38. լալեղ Դատ. բ. 1. լալիւն ՍԳր. լալիք ՍԳր. լալուրիւն Ա. մակ. ա. 28. լալումն Ցուդթ. է. 18. լալուտ (չունի ՆՀՐ) «լալագին» Պտմ. տէր. յոակ. 213, լալօնք Դատ. բ. 5. Բ. Թագ. ե. 23, 24. Ոսկ. յհ. բ. 16. լաց. Պզատ. օրին. լացուցանել Սարգ. յկ. բ. և ա. պ. սիրուն փոխաբերութիւն է լացուր «ծառից վազած հոյզը» Բառ. երեմ. էջ 485։

=Բնիկ հայ բառ՝ հնխ. plā- արմատից, որի առաջին նշանակութիւնն էր «զարնել, ծեծել», որից «կուրծքը ծեծել, կոծել» և յետոյ «լալ». արմատի պարզական ձևը պահուած է միայն հայերէնի մէջ, միւս ցեղակիցները ունին աճական ձևը՝ plāg, plāq, թէ՛ առաջին և թէ երկրորդական նշանակութիւններով. համմտ. յն. πλάζω «զարնել, ծեծել», πλήγνυμι «զարնել». πλήσσω «ծեծել, զարնել, վիրաւորել», դոր. πλαγά «հարուածծ», լատ. plango «զարնել, ձեռքերով կուրծքը բաղխել, բարձրաձայն ողբալ, կոծել», գոթ. flōkan «ողբալ», անգլսք. flócan «ծեծել, ձեռքերով բաղխել», հրգ. fluohhōn, գերմ. fluchen, հոլլ. vloeken «անիծել», լիթ. plakù «ծեծել, ճպոտներով հարուածել», հսլ. plačą, plakati «լալ, կոծել, ողբալ», սերբ. plàcêm «լալ», սլով. plákatise «ողբալ, լալ», ռուս.

плачу, плакать «լալ», միլ. lēn «ողբ, ցաւագին ճիչ», lēssaim «ուժգին ծեծել» են (տ. Walde 588, Boisacq 789, 796, Trautmann 222, Kluge 148, Pokorny 2, 91, Ernout-Meillet 738):—Աճ.

Շրէօդէր, Thesaur. 45 քաղդ. ילל ill (ասոր. ailel, արաբ. valvala) «ողբալ, կոծել» բառից փոխառեալ, Peterm. 29 լատ. flere և եբր. ילל ill: Windisch. 17 լատ. lamentari «ողբալ»: Lag. Urgesch. 1008 լտ. plorare «լալ»: Հիւբշ. KZ 23, 35 lā արմատից, որ չի ընդունում Lag. Arm. Stud. § 904: Տէրվ. Մասիս 1881 մայիս 6 թիւրև լատ. lamentum: Նոյն, Նախալ. 101 սանս. rā, լատ. lātrare, հսլ. lajati, գոթ. laian «հաչել» ձևերի հետ՝ հնխ. ra արմատից. լալական են ձևերը համարում է կրկնական: Bugge, Beitr. 8 յն. κλαίω «լալ» բառի հետ՝ իբր հնխ. klāwyō ձևից. այս ձևը տուել է նախ հյ. *լաւամ, որից *լաամ>լամ: Հիւնք. լուանալ բայից: Հիւբշ. 451 յիշում է լտ. lā-mentum «ողբ», լիթ. lóju, lóti, լեթթ. lāt, հսլ. lajǫ, lajati, սանս. rā, rā́yati «հաչել շան» բառերը (որոնց կցւում են նաև յն. λαίειν, λαίμεναι «ձայն հանել, հնչել, խօսիլ», լտ. latrare «հաչել», ալբան. l'eh «հաչել», գոթ. lailōun «նախատեցին», միլ. līim «դատապարտել»), բայց նշանակութեանց պատճառով չի ընդունում: (Հիւբշմանի անուան վերագրելով և իբր հաստատ! ընդունում են Berneker 687, Boisacq 550, Walde 410, Traut. 148): Մառ, Грам. др. арм. 261 ռուս. плачу «լալ» և յն. κλάζω «պոռալ, ողբալ» բառերի հետ. հայ բառի արմատն է ո՛չ թէ լա, այլ լաց: (Բայց յիշեալ երկուսը բոլորովին տարբեր արմատների են պատկանում. առաջինն է plāg արմատից (Walde 588), երկրորդն է klag արմատից (Walde 166):—Scheftelowitz BB 29, 34 լատ. plorare, գերմ. flennen «լալ» բառերի հետ: Վերի մեկնութեանս՝ որ անտիպ է, համամիտ է նաև Meillet (անձնական): Պատահական նմանութիւն ունի վրաց. լալվա «անհամաձայնութիւն, վէճ, կռիւ»:

Գիւտ.—Ախց. Ակն. Ասլ. Խրբ. Կր. Մշ. Ննխ. Պլ. Ռ. Սեբ. Սչ. Ջղ. լալ, Տփ. լալ, լաց, ըլիլ, Երև. լաց ըլել, Մկ. Մրղ. Ոզմ. Սլմ. Վն. լոլ, Ալշ. ɨլալ, Տիգ. իլոլ, Շմ. լոց իլիլ, Գոր. Ղրբ. լոց իճիլ, Հճ. լօլ, Զթ. լօլ, լոլ, Հմշ. լաց ընուշ, Ագլ. լէօլ, լէօց: Նոր բառեր են լալաձայն, լալաչէ կամ լացաչէ, լալակրճիլ, լալակխճիլ, լալիճ, լալելիճ, լալխոճել (Հմմտ. Մթ. պտմ. 90 լալախառն, տպ. Մոսկ. էջ 77 լալխառն), լալխփել, լալուռ, լացկան, լալկան, լալման, լալկոտ, լացճ, լացախեղդ, լացակալել, լացակճիլ, լացակումիլ, լացատրաճ են:

*ԼԱԼԱ «կակաչ» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 879:

=Պրս. لالا lāla «կակաչ», որից նաև թրք. lale նոյն նշ:

ՀԲուս. դրաւ թրք:

ԼԱԼԱԶԱՐ «մի տեսակ ծաղիկ» Սալաձ. որից էլ ՀԲուս. § 880:—Այս բառը ՆՀԲ յաւել. գուռ. բառից, էջ 1062 գ մեկնում է «բոյս վնասակար՝ի պարարտ վայրս. որոյ սերմն է արբեցուցիչ, և ծփիչ խելաց իբրև օր մի»: Նոյնը Հ. Պաւղոս Մեհերեան (ըստ Նորայր, Բանաս. 1901, 111) մեկնում է «բոյս ինչ վնասակար, որ բուսանի ի պարարտ տեղիս. ունի ի ծայրս ոստոց քառանկիւն գնտաձև սակաւ երկայն, զորոյ սերմն արկեալ ի ջուր արբուցանեն մարդոյ, արբենայ և կատարեալ յիմարանայ. բայց ոչ տեւէ բազում ժամանակ յիմարութիւնն, այլ 24 ժամս կամ աւելի պակաս»: Ըստ Ամատունի, Հայոց բառ ու բան, էջ 238 կենդանի է այս բառը Երևան, Սիւրմալու, Շիրակ և նշանակում է «կակաչ. խիստ կարմիր ու գեղեցիկ ծաղիկ»: Բայց արդեօք առաջին երկուսը վերջինիս հետ նո՞յն են:

Ամատունի, անդ, համարում է բառը պրս. բայց պրս. lālazār նշանակում է «տեղի կակաչաւէտ». (այսպէս է կոչւում օր. Թեհրանում՝ արքայարնակ փողոցը):

ԼԱԼԱԻԱՐԹԻԻՆ «պապակումն» Մագ. Թղ. էջ 86. բայը են Թադրւում է լալաւարթել «պապակել, մկկալ այծի». (տե՛ս իմ Հայ. նոր բառեր հին մատ. Բ. 172, 186):

*ԼԱԼԻՍ *մեծաքսէ բարակ կտոր». Դրնդ. 106 (եւ մէկ մէկ բարակ լալիս փակեղ դրլխոյ դնելով առաջի նոցա պարգեւս)։*

=Պրս. لالاس lālas «է տեսակ իմն մեծաքսեայ կերպասու, զոր ըստ մեծի մասին առնեն կարմրագոյն, որ յոյժ պատուական լինի»։—Աճ.

ԼԱԼՕՆՔ *«տանձ» Բառ. երեմ. յաւել. 567. որի հետ նոյն են ղաղօնիճ «տանձիք» Բռ. երեմ. էջ 191, լալօս «տանձիք» անդ, էջ 131. ուրիշ տեղ չէ յիշատակուած։*

=Հյ. լալօնիճ «լաց, ողբ» բառն է, որ թիւրիմացութեամբ հասել է այս նշանակութեան։ Եբրայական Ս. Գրքի մէջ Դատ. բ. 1, 5 կայ בֹּכִים Bokim *տեղական անունը, որ հայերէնի մէջ ըստ սուղաբանութեան թարգմանուած է Լալեաղ կամ Լալօնիճ. «Եվ հրեշտակ Տեառն ի Գաղգաղայի Լալեաղն... ամբարձին ժողովուրդքն ըղձայնս իւրեանց և լացին, և վասն այնորիկ կոչեցաւ անուն տեղւոյն այնորիկ Լալօնիճ»։ (Այսպէս է նաև յոյնը, ուր նոյն տեղը գտնում ենք Κλαυθμῶνα, Κλαυθμῶνες, որ է «լալու տեղ.—բայց բողոքականների թարգմանութեանց մէջ պահուած է բնիկ ձևը. այսպէս՝ հյ. տպ. Պօլիս 1906՝ Բոխիմ, անգլ. տպ. New-York 1894, Bochim): Միևնոյն վայրը աւելի յետոյ՝ եբրայական բնագրում կոչուած է* בָּכָאִים Bəkāim, *որ նշանակում է «թթենի», այնտեղ գտնուած բազմաթիւ թթենիների պատճառաւ։ Այսպէս են՝ Բ. Թագ. է. 23, 24 և Ա. Մնաց. ժդ, 14, 15։ Ըստ այսմ էլ աշխ. Թրգմ. «թթենիների կողմից նորանց վերայ գնա՛. թթենիների դլխին». անգլ.* mulberry trees: *Հայերէնի մէջ՝ հետեւելով յունարէնի, նախ պահուած է Լալօնիճ ձևը. «Մի՛ ելաներ ընդդէմ նոցա, դարձիր ի նոցանէն և եկեսցես ի թեւէ նոցա մօտ ի Լալօնեն. և եղիցի յորժամ լսիցես զձայն շարժման անտառին Լալօնից» (Բ. Թագ. ե. 23, 24. —յն. κλαυθμῶνος). բայց յետոյ թթենին սխալ թարգմանուելով՝ եղած է «տանձի». «Ո՛չ երթիցես դիմի նոցա, դարձի՛ր ի նոցանէ և թողցես զնոսա մերձ ի տանձիան. և եղիցի ի լսել քո զձայն շարժման ծայրից տանձեացն» (Ա. Մնաց. ժդ. 14, 15.—յն. ἀπίων)։—Այս երկու հատուածները իրար դէմ դնելով՝ մի բառագիր էլ Լալօնիճը հասկացել է «տանձի»։—Աճ.]*

**ԼԱԽԼԱԽ կամ ԼԱԽԼԱԽԱՅ՝ անծանօթ մի բոյս, որի խաշուն Մխ. հեր. էջ 44 և 97 պատիրում է դնել մաղձի լուծումով հիւանդների սենեակում՝ վարդի և ուրիշ տերևների հետ, և կամ նրանով զօծել նրանց մարմինը։ Ունի միայն ՀԲուս. 882։*

=Պրս. لخلخ laxlaxa «է անուշահոտ բաղադրութիւն ինչ, առ ի փարատել զնեխութիւնն օդոյ»։—Աճ.

Ուղիղ մեկնեց նախ Աճառ. (անտիպ)։ Նոյնը Նորայր ՀԱ 1921, էջ 233 և Seidel, Մխ. հեր. 1908, § 135 և 280։

ԼԱԽՈՒՐ *«կարոս բոյսը». լտ.* apium nodiflorum *(ըստ Տիրացուեան,* Contributo *§ 282) Նոնն. էջ 81 (Լախուրն խոտ է պարտիզական անուշահոտ և անուշահամ, որ յունարէն սեղինա (=յն. σέλινον «ազաւաքեղ,* persil, *պետրուշկա, մաղդանոս») անուանի). Գաղիան. Ածար. կիպր. գրուած է նաև Նեխուր, Նիախուր, Նիախօր Բժշ. Նէախօր Բառ. երեմ. յաւել. 570. որից* **Ձիալախուր** *կամ* **Ձիախուր** *(Թրգմ. յն. ἱπποσέλινον բառի, լտ.* hiphoselinum) *Գաղիան. սիւրալախուր կամ սիրալախուր «ասորական լախուր» Գաղիան. Բժշ.—Ձայնական տարբերութեան համար հմմտ. նապաստակ>գւռ. լապտակ։*

Գիմ.—Երև. **Նէխուէ**։

Փոխ.—Վրաց. **Ճօռճօրօ** *նիախուրի, Թուշ.* **Ճօռճօր** *նիախուր «լախուր»։*

ԼԱԽՏ «մահակ, կոպալ, ծեծի փոկ» Յայսմ. յնվ. 31, Կեչառ. աղէքս. Գնձ. Ուռհ. Պտրգ. էջ 642. յետնաբար գրուած նաև* **լախտ *Զքր. սարկ. Բ. 97։*

=Պրս. تخت laxt «մահակ, կոպալ»։—Հիւբշ. 157։

Ուղիղ մեկնեց նախ Klaproth, Asia pol. 102: Böttich. ZDMG 1850, 355, 104 *և* Arica 80, 328 *սանս.* laguḍa *«մահակ, կոպալ»։* Lag. Arm. Stud. *§* 905 *պարսկերէնի հետ։*

Գիմ.—Երև. Գոր. Ղզ. Ղրբ. **լախտ** *«ծայրին կապարեայ գնդակ կապուած խարազան», Երև.* **լա՛խտի** *«կտաւեայ գօտիէ պինդ ոլո-*

բած պարան», փխբ. Ղրբ. «ձկան փորի կրունճիկը. 2. փիփերդի փռուած թերթերը», որից Ղրբ. ագին լախտ անել «պոչը ոլորել (շան)», Տփ. լախտ, Ալշ. Երև. Ղրբ. լախտի «լախտով իրար ծեծելու խաղ»:

ՓՈԽ.—Վրաց. ლახტი լախտի «լախտ» ենթադրելի է ուղղակի պարսկերէնից, բստ որում հայերէնը յետին ժամանակի բառ է:

+ԼԱԿ «շան կամ ուրիշ անասունի ջրալի ուտելիք». գաւառական բառ, որ հին մատենագրութեան մէջ աւանդուած չէ. սակայն այս արմատից են՝ լակել «շան պէս լիզելով ուտել» Եղիշ. դտ. էջ 179, 180. Փիլ. լիւս. 150. Կիւրղ. Ել. Ոսկիփ. լակոտալ «սաստիկ լափել» Փիլ. տեսակ. էջ 21. շնլակ, կատուլակ «շնից՝ կատուից լակուած մի բան» Մովս. Երզնկ. (բստ Հացունի, Ճաշեր, էջ 466):

=Բնիկ հայ բառ. ցեղակից լեզուներից ունինք լիթ. lakù, լեթթ. laku, lakt «շան կամ կատուի լակել», հսլ. lokati, ločą «լիզել», սերբ. lòkati, ռուս локать «լակել», լհհ. lokam «ագահօրէն լափել», թերևս նաև ալբան. l'ak «ործկալ»: Այս ձևերը տալիս են հնխ. lak արմատը (տե՛ս Trautmann 149, Berneker 727, Pokorny 2, 380), որ պիտի դառնար հյ. *լաւ: Անկանոնութիւնը կարելի է վերագրել բնաձայնութեան, բստ որում նման հնչիւններով բառեր դանում ենք նաև ուրիշ բնաձայնիչների պատկանող լեզուների մէջ. հմմտ. վրաց. ლოკვა լոկա, ლოკნა լոկնա, გა-ლაკვა գա-լակա «լիզել», թուշ. ლოკადდარ լոկադդար «լափել, լակել», սվան. ლოკ լոկ, ლოლოკე լիլոկե «լիզել», արաբ. لعق la'qa և لحق laḥq «լակել, լիզել» (Կամուս, Բրբ. Բրդմ. Գ. 50, 111), եբր. לקק laqq «լիզել, շան լակելը» են:

Schröder, Thesaur. 46 ասոր. (եբր. արաբ.) לקק laqq «լիզել, լակել» բառից փոխառեալ: Peterm. 74 լծ. լափել և լիզել: Diefenbach, Berlin. Jahdb. 1843, էջ 444 սեմ. لق laqq արմատի հետ: Տէրվ. Նախալ. 101 հնխ. ra «հաջել, արհամարհել» արմատից, որի վրայ տե՛ս լալ: Patrubány ՀՄ. 1906, 344 առաջին անգամ տուաւ վերի ուղիղ մեկնութիւնը, որից անկախաբար նաև Meillet MSL 15, 357 և 16, 241—2:

ԳԻՒՌ.—Արմատական ձևն ունին Ալշ. Ախց. Շմ. Ոզմ. լակ են. բայական ձևով ունինք Սլմ. Վն. լակել, լկել, Երև. Գոր. Ղրբ. լակէլ, Ագլ. Մկ. Շմ. Տփ. լակիլ, Հճ. Մշ. լագել, Ասլ. Ննխ. լագել, Զթ. լագիլ, Պլ. լագել, լգել, Համշ. լագուշ, Ախց. Կր. Մրզ. լկել, Զղ. լկել, Ալշ. լգել, Ռ. Տիգ. լգել, Սեբ. լգալ.—Նոր բառեր են լակամած, լակացնել, լակիլակի:—Ուրիշ է լակ «ժողով»:

*ԼԱԿԱՆ, ի–ա հլ. «կոնք» (գրուած նաև լեկան, ղեկան, լկան) Կաստ. Վրք. հց. Ա. էջ 495. Պտմ. աղէքս. էջ 1, 2. Վստկ. 80. որից լականադէտ «լականով հմայող» Պտմ. աղէքս. ղեկանադիւրութիւն Պտմ. աղէքս. էջ 2:

=Յն. λεκάνη «կոնք», որի հետ նոյն են սումեր. laḫan gidda «լայն (կամ ծանր) աման», ասուր. laḫannu, laḫnu, ասոր. لحنا laqna, արաբ. لقن laqan և պրս. لكن lakan, lagan.—Այս բառերի փոխյարաբերութիւնը ճշտուած չէ. ոմանք յոյն բառը համարում են հնդևրոպական և կցում են լտ. lanx, lancis «ափսէ», յն. λέκος, λεκίς «պնակ» են բառերին (Walde 412, Boisacq 568). աւելի հաւանական է այն՝ որ յոյնը փոխառեալ է սումերականից, որից են նաև սեմական միւս ձևերը և պարսկերէնը: Հայերէնի մէջ լեկան, ղեկան ծագում են յունարէնից, իսկ լական՝ պարսկերէնից: Պարսկերէնից են նաև վրաց. ლაკანი լականի, Բրբ. legen, leyen, lehen, քրդ. legen, գնչ. leken, lokani, և Բուրքերէնի միջոցով էլ ռուս. легинъ, лахань, лоханъ, փոքր ռուս. łochána, լհհ. lachan′, բուլգ. legén, lehén, lihén, ալբան. l'ɛg′én, l'ɛjén, ռում. ligheán են (Berneker 685 և 699):—Հիւբշ. 157, 351:

Առաջին անգամ Աւգերեան, Բզտ. չփ. և կշռ. էջ 88 դրաւ յունարէնից: Նոյնը յետոյ ՆՀԲ: Մսեր. Ճռաքաղ 1861, 346 լակելոյ աման: Lag. Arm. St. § 901 յիշում է յն. և պրս. ձևերը, իսկ Հիւբշ. 157 և 351, 512 բոլորն էլ ուղղակի յունարէնից է համարում: Տե՛ս նաև Pictet 2, 281, բ. տպ. Բ. 362 պրս. lagān, յն.

λάγηνος «շիշ», լտ. lagena ևն բառերի հետ, որոնց ծագումը անյայտ է համարում։

ԳԻՒ.—Ախց. լոկոճ, Ալշ. Երև. Մշ. Ննխ. Ջղ. լագան, Ղրբ. Սլմ. լոգ՚ոճ, Պլ. լէհեճ (նոր փոխառութեամբ Թուրքերէնից) ևն։

ԼԱԿԻՇ (սեռ. -ի) «բանակ, ճակատ, բանակի պատնէշ» Բուզ. որ և դակիշ Բուզ. Փարպ. Եղիշ. դ. էջ 74. Կղնկտ. դաշիկ Արծր. Հրտր. Պատկ. էջ 84։

ՆՀԲ պրս. لشکر laškar «բանակ», لشکرگاه laškargāh «բանակատեղի» բառերի հետ, որոնք համաձայն չեն ձևով։ Բ. Խալաթեանց ՀԱ. 1902, 398 ասուր. rakāsu «պատնէշ» բառի հետ։

*ԼԱԿՈՏ «շան ձագ» Մարթին. Վստկ. 221—2. Տաթև. ամ. 230. յոգնակին՝ լակոտաճի Վստկ. 221, լակոտումք Սամ. աննց. շար. 172։

=Կովկասեան լեզուներից փոխառեալ ձև. համմտ. վրաց. ლეკვი լեկվի «շան լակոտ, առիւծի կորիւն» (Ջուբինով[2] 647), լազ. լակի, լաճի, լաճի «շուն», լակոտի «շան ձագ».—Հայերէնը փոխառեալ համարելու պատճառն այն է՝ որ արմատը լակ՝ գտնւում է միայն կովկասեաններում։—Աճ.

ՀՀԲ լակել բառից՝ իբր լակող։ Պատկ. Матер. для арм. слов. I. 9, 10 Ատրպ. Թրք. لکته lekte «շան լակոտ» բառից փոխառութիւն։ (Նոյնը ընդունում է և Հիւբշ. 267)։—Ըստ Будаговъ 2, 191 այս բառը արտասանւում է läkätä, նշանակում է «լակոտ. 2. տխմար», և բացի Ատրպատականից ուրիշ Թրքական լեզուի մէջ չկայ։—Այս բառն է՝ որ առնել է գր. լաֆաթայ ձևը, և կասկածելի է որ միևնոյնը նաև լակոտ ձևը առած լինի։—Մառ ЗВО 19, 072 իբրև յարեթիական բառ՝ կցում է վերի կովկասեան ձևերին.—at դնում է իգականի վերջաւորութիւն։ (Այժմ աւելացնում և նրանց է կցում նաև սումեր. lū «առիւծ», ափխազ. la «շուն». տե՛ս Сред. передвиж. էջ 10)։ Վերի մեկնութիւնս հրատարակուած է նախ Արրտ. 1910, 449 և 1911, 418։ Սագրդեան ՀԱ. 1909, 335 և Karst, Zwischarčan, էջ 406 սումեր. lik «շուն»։

ԳԻՒ.—Ջղ. Սլմ. լակոտ, Ախց. Երև. Կր. Շմ. լակօտ, Ալշ. Մշ. լագոդ, Ննխ. Պլ. Ռ. լագօդ, ՀՃ. լոգոդ, Գոր. Ղրբ. Մկ. Տփ. լակուտ, Մրղ. լակուխտ, Տիգ. լոգուդ, Համշ. Սեբ. լագէօդ, Ասլ. լագէօ՚դ, լագէօ՚՛.—Նոր բառեր են լակոտաճան, լակոտատել, լակոտակախ, լակոտ-լուկուտ (կրկնական), Ղրբ. կոշական ձև է՝ լա՛կու, ա՛ լակու։

*ԼԱՂԱՊ «տիտղոս, պատուանուն». Նորագիւտ բառ, որ մէկ անգամ գործածում է Վրդն. պտմ. տպ. Վենետ. էջ 94 «Առաքէ նմա ընծայս և ալամ և լաղաբ՝ Ամինադլ և սուլտան կոչէ զնա». (Էմին՝ էջ 127, իբր յատուկ անուն՝ գրում է Լալապ)։

=Արաբ. لقب laqab «մականուն»։

Ուղիղ մեկնեց նախ Ալիշան, հրտ. Վրդ. պտմ. էջ 94։

ԳԻՒ.—Նոր փոխառութեամբ Թուրքերէնից՝ լաղապ «մականուն»։

ԼԱՂԱՐԻԿՈՆ «լիտր (չափը)» Շիր. ունի միայն Աւգերեան, Բցտր. չփ. և կշռ. էջ 88։

=Անշուշտ նոյն է մաղարիկոն բառի հետ, որ տե՛ս։

*ԼԱՂՄ «ականի». Նորագիւտ բառ, որ մէկ անգամ գործածում է Անկ. գիրք հին կտ. էջ 339։

=Թրք. لغم laγəm «ական»։

Տե՛ս իմ Թուրքերէնէ փոխառ. բառեր. էջ 150 և Հայ. նոր բառեր հին մատ. Բ. 227։ Ուղիղ մեկնեց նախ Անկանոն գրոց հրատարակիչը։

ԼԱՂՆԻՏ «կաղնեղան բոյսը». դիտէ միայն ՀԲուս. § 3320։

ԼԱՃ «ուստր, մանչ, տղայ» Ոսկիփ. «սպասաւուր, laquais» միջ. հյ. բառ (ըստ Նորայր, Բռ. ֆր. 733 բ)։

=Կայ նաև շրջակայ զանազան լեզուների մէջ. այսպէս՝ իմերել. լա՛ճի «մանչ, տղայ», քրդ. ج laǰ, զազա lāj, դուժիկի lajik, և համանատանդ եթովպական ամհարիկ լեզուով ልጅ: lǝj «որդի» (տե՛ս MSL 23. 80): Բայց թէ ո՛րն է այս բոլորի աղբիւրը և ի՛նչ կապ ունին իրար հետ՝ չէ՛ յայտնի։—Աճ.

Տէրվ. Մասիս 1881 մայ" 25՝ ի պատասխան ոմն Պարոյրի՝ որ հյ. լաճ և անգլ. lad «մանչ, տղայ» բառերի նմանութիւնը տեսնելով՝ նրանց մեկնութիւնը խնդրած էր, յայտնում է թէ երկուսն էլ նոր բառեր են և չեն կարող համեմատուիլ իրար հետ։

ԳԻՒՒ.—Մկ. Մրղ. Վն. լաճ, Մշ. Ննխ. լաջ, Սեբ. լաչ (միայն թուրքի տղայոց համար է գործածւում), Ասլ. լաչ, լաժ. գործածւում է նաև ուրիշ գաւառականներում. ինչ. Ասպ. Բզ. Երև. Խ. Խզ. Խլ. Խն. Խրբ. Սլմ.—Նոր բառեր են՝ լաճաճակ «տղի պէս, արիաբար», լաճիկ «տղեկ», լաճպլուզ «կտրիճ տղայ», լա՛ճօ «ա՛յ տղայ»։—Բոլորովին ուրիշ է պրս. ﺞﺍ lāj *«էգ անասուն, մասնաւորապէս՝ էգ շուն, քաժ»։*

ԼԱՄԱԶՈՒ *«մի տեսակ ծառի անուն». ունին միայն ԱՔ և ԳՔ. (չգիտէ ՀԲուս.)—ԳՔ մեկնում է «մեծ ծառ՝ կեղևը հանուած և իւղով օծուած, որուն վերևը դրուած բանները վրան ելլող հասնողին կըլլային. mât de cocagne». մէկ անգամ գտնում եմ գործածուած Մագ. Բզ. 220՝ այսպիսի բացատրութեամբ. «Կամիմ քեզ և ի մերոյն Պարթևաց, զոր լամազուն անուանեն, այսինքն մանկան ծառ կամ պատանեաց, զոր ի հանդիսի մերկամարտիցըն ցցեալ զարդարեն յոքնական կարասեաց գանձու և որք յատադին եւթանցն յաղթէ, պարգեօք պսակեալ նմա և զայն ձիր ընձեռեն»։ Տե՛ս նաև սխալագիր չամաչու։*

=Վկայութիւնից երևում է որ պրս. է։

Կայ պրս. ﻟﺎﻡ lām *«զարդ, զարդարանք» +* ﭼﻮﺏ čūb *«փայտ, կտրած ծառ», բայց յարմար չէ, որովհետև ըստ վերոյիշեալ վկայութեան՝ բառը նշանակում էր «մանուկի կամ պատանիի ծառ»։*

ԼԱՄԲ *«օղակ՝ որի միջից անցկացնելով ձողը՝ բեռն են վերցնում» Ել. իե. 27. Վրդն. Ել. որից լամբաւոր կամ լամպաւոր «օղակաւոր» (նորագիւտ բառ) նորագիւտ Բ. մնաց. ե. 8—9. լամբել «վրան առնել, բառնալ, շալակել» Կոչ. 10. լամբիլ «տարածուիլ, ամէն կողմ բռնել, գրաւել» Կոչ. 173. օղալամբ Ել. է. 5. Նոր գրականում լամբակ «կոճակամայր, կոճակը անցկացնելու ծակը»։*

ՆՀԲ յն. λαβή «ունելիք բառնալիք», λαμβάνω «առնել, բառնալ» ձևերի հետ։ Böttich. ZDMG *1850, 355,* Arica 21. *57 տանս.* lambhā *«մի տեսակ ցանկապատ», յն. λαβεῖν և հնխ.* labh *արմատը։* Lag. Arm. Stud. *§ 906 յիշում է պրս.* lanba *«որ և իցէ կոլոր բան»։* Scheftelowitz BB *29, 38* լամբել *= տանս.* lambhana *«առանալ, ձեռք բերել»։* Petersson KZ *47, 270 հնխ.* ɰlṃbhi *ձևից որ գնում է հնխ.* ɰel- *«դառնալ» արմատից. ցեղակից ձևերը տե՛ս* գել-ուլ։ *Հ. Գր. Սարգսեան, Բազմ. 1927, 180 տառադարձուած յն. λαμβάνω ձևից, որ ՆՀԲ-ի կարծիքն է։ Պատահական նմանութիւն ունին վրաց.* ლუმბა *«պայտ» և* ლამბი *լամբի «հաստ լարթ? (տե՛ս տակը)։*

ԳԻՒՒ.—Նոյն են՝ լամբակ Սլմ., լամբայ Ալշ. (հնչւում է լամպա), լամբոկ Ակն. Բն. լամբօճ Ակն. «յատուկ գործած թել կամ պարան՝ որ ամանի կանթերից անցկացնելով կամ կուժի բերնին կապելով՝ ուսն են առնում. 2. կոճակամայր», լամբօճ Զթ. «գըլխարկի կապը՝ որ ծնօտի տակից բոլորւում է»։ Սրանց հետ նոյն է լամդաճ Ագ. (ՀԲէ չբկայ վրիպակ) «ոլորած կեմ՝ որ կապում են մեծ քթոցին, հեշտութեամբ շալակելու համար» (Գ. սրկ. Յովսէփեան, Փշրանքներ 122)։—Վերջին «կապ, թել, պարան, կեմ» իմաստները անմիջապէս կցում են բառը վրաց. ლამბი *լամբի «հաստ թել, լար,* memuba» *բառի հետ։*

***ԼԱՄԲԱՏ-Ք** *«օդի մէջ երևցած ջուհանման լոյսեր» Արիստ. աշխ. ուրիշ վկայութիւն չունինք։*

=Յն. λαμπάδες *նոյն նշ. որից նաև լտ.* lampades. *յոգնակին է* λαμπάς *«ջահ» բառի և ծագում է* λάμπω *«փայլիլ, ցոլալ» բայից։— Հիւրշ. 351։*

Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ։

***ԼԱՄԲԱՐ** *(կամ նաև լամպար, դամբար, դամպար), ի-ա հլ. «ջահ, ճրագ, լոյս, բոց» ՍԳր. որից դամբարել «ջահաւորել, լուսազարդել» Ագաթ. դամբարումն Շար. Տաղ.*

ղամբարափայլ *ՅՀ. կԲ.* ղամբարարոց *Մագ. ևն:*

=*Յն.* λαμπάς, *սեռ.* λαμπάδος «*ջահ, ճրագ, կանթեղ*». *Ծագում է* λάμπω «*փայլիլ, ցոլալ*» *բայից.—յոյն բառը փոխառութեամբ տարածուած է ամէն կողմ. հմմտ. լտ.* lampas, *ֆրանս.* lampe, *իտալ.* lampa, *գերմ.* lampe, *հունգ.* lámpás, *հսլ.* lamŭbada, *լեհ.* lampa, lampka, *ռուս.* лампада, лампа (*տե՛ս* Berneker 689), *ռուման.* lampaš, *ալբան.* lampad, *թրք.* lampa, *ամհ.* lamba *ևն: Յոյն բառի ուղիղ տառադարձութիւնը պիտի լինէր հյ.* լամպադ *կամ* ղամպադ, *և նախորդ մ-ի պատճառով՝* լամբադ *կամ* ղամբադ. *սակայն* δ>բ *տառադարձութիւնը ցոյց է տալիս՝ ըստ* Meillet MSL 17, 248, *որ յոյն բառը անցել է մեզ՝ հիւս. պհլ.* *lampaδ *ձևի միջոցով:—Հիւրշ. 351:*

ՀՀԲ «բառ այլազգական»: Աւետիքեան, Քերակ. 1815, էջ 314 և ՆՀԲ յն. λαμπάς *ձևից: Հիւրշ.* ZDMG 36(1882), 133 *յն.* λαμπάδες:

ԳԻՒ.—Ք. ղամբարուն «*հրաբորբոք*». *օր. Սիրտս ղամբարուն կայրի:*

ՓՈԽ.—վրաց. ლამბარი *կամ* ლამპარი՝ *ր-ի պատճառով փոխառնւալ է հայերէնից:*

ԼԱՄՈՒԿ «*տղայ, որդի*». *Պոմ. ԺԲ դարից (հրտր. Դիւան Ժ. էջ 143): Սովորական է արդի գաւառականներում. ինչ. Բիւթ. Բլ. Բղ. Երև. Խն. Խրբ. Մշ. Սլմ. Սս. Վն., բայց միայն «քրդի կամ տաճկի տղայ» իմաստով:*

=*Քրդ.* լաւք «*որդեակ*» *բառի հայացրած ձևն է, այս էլ նուազականն է քրդ.* լաւ «*որդի*» *բառի:*

Ուղիղ մեկնեց Ս. Մովսիսեան (նամակ 1933 մարտ). բայց ւ>մ ձայնափոխութեան համար մի յարմար օրինակ աւելի համոզիչ պիտի գտնէր սոյն մեկնութիւնը:

+ԼԱՅՆ (ի *հլ. ըստ ՆՀԲ, թէև առանց վկայութեան*) «*լայն*» *Նխեմ. Բ. 19, Յոբ. ա. 9, Եզեկ. իդ. 32, Ագաթ. որից* լայնագոյնս *Կոչ.* լայնսրթև *Ոսկ. ես.* լայնալիճ *Իմ. ե. 22.* լայնապարիսպ *Կանոն. 156.* լայնաձալ *Օր. լբ. 15.* լայնաճիստ *Վեցօր.* լայնել *ՍԳր.* լայնշէն *Վեցօր. 175.* մեծալայնութիւն *Փիլ. նոր բառեր են՝* լայնեզր, ընդլայնել, ընդլայնում, լայնասիրտ, լայնարձակ, լայնացում *և այլն:*

=*Բնիկ հայ բառ՝ հնխ.* plātno- *ձևից, որ կազմուած է* plāt- *արմատից՝* -no- *մասնիկով. ցեղակից լեզուներից հմմտ. սանս.* pṛthú «*լայն, ընդարձակ*», práthatē «*կընդլայնի*», práthas-«*լայնութիւն*», *զնդ.* fraθah-«*լայնութիւն*», pərəθu- «*լայն*», *յն.* πλατύς «*լայն*», πλάτος «*լայնութիւն*», *լիթ.* platùs, *լեթթ.* plats, plašs «*լայն*», *իռլ.* lethaim «*տարածել*», lethan «*լայն*», *կիմր.* llydan «*լայն*», llêd «*լայնութիւն*», lledu «*տարածել*», *գալլ.* litano, *հբրտ.* litan, *նբրտ.* ledan «*լայն*» *են, որոնցից մի մասը ունին պարզ արմատը, ոմանք էլ կազմուած են մեր բառի պէս՝* -no- *մասնիկով: Նոյն արմատին պատկանող հետաքրքրական ձևերից են նաև սանս.* pṛthivī «*երկիր*». *յն.* Πλάταια «*քաղաք Բէոտիոյ*», *անգսք.* folde, *հսաքս.* folda, *նորվ.* flade, *հհիւս.* fold, *անգլ.* field, *հոլլ.* veld, *գերմ.* Feld «*դաշտ, երկիր, հող*» *(որից էլ փոխառեալ ֆիննն.* pelto), *գալլ.* Litau «*ցամաքային Բրուտանիա*» *են բառերը* (Walde 589, Boisacq 792, Trautmann *225*, Kluge 136, Pokorny 2, 99):—*Հիւրշ. 451:*

Առաջին անգամ Peterm. 29 *համեմատեց յն. և սանս. ձևերի հետ:* Müller SWAW 42, 257 *յն.* πλατύς: *Սրանց համեմատ են նաև միւսները:* Lag. Btrg. baktr. Lex. 70, 33 *արմատը համարում է* լ *կամ* լա, *որի վրայ աւելացել է* -այն *մասնիկը, ինչպէս ունայն: Հիւնք. յն.* λεχάνη «*կոնք*» *բառից:* Bugge, Lyk. Stud. 1, 14 *լիւդ.* λάβρυς «*կացին*» *բառը մեկնում է հյ.* լայնաբերան *ձևով:* Ostnoff S/. 2, 130 *քննում է* Meillet-*ի կարծիքը այն մասին՝ թէ* լայն *բառի իսկականն է* *լայ *և նմանողութեամբ երկայն բառի՝ ստացել է յետոյ այս ձևը.* Scheftelowitz BB *29, 24 լատ.* plānus, *գալլ.* lanon, *լիթ.* plōnas «*հարթ*» *բառերի հետ:* Karst, *Յուշարձան 427 թթր.* keń, eń, *թրք.* eń «*լայնք*»: Lidén, Göteborg högskolas arsskrift 1933, *էջ 44 գտնելով որ հնխ.* plthú- *պիտի տար հյ.*

*հապք և ո՛չ լայն, բառս կցում է լտ. lātus համանիշին և սրա հետ միասին հանում է հնխ. stlā- to- ձևից (արմատը stel- «փռել, տարածել»). այս ձևից ըստացւում է *լայ, -ին մասնիկով *լային և ի-ի անկումով լայն:

ԳԻՒ.—Ախց. կր. Ննխ. Պլ. Ռ. Սեբ. Սչ. լաե, Ասլ. լաե, լա, Հճ. Հւր. Զթ. Խրբ. լոե, Ոգմ. լեե, Գոր. Երև. Ալշ. Դրբ. Մկ. Մրզ. Մշ. Շմ. Ջղ. Սլմ. Վն. Տիգ. Տփ. լէե, Համշ. լ՚ե, լըե, Ագլ. լիե, հին թաւրիզեցիների բարբառով՝ շրջմամբ ել:—Նոր բառեր են լայնաբերան, լայնաճակ, լայնալայնաճալ, լայնկեկ, լայնուածմ, լայնռեխ, լայնուսատր, լայնսիրտ, լայնմ, լայնմս, լայնս, լայնմուխլ ևն:

*ԼԱՅՔԱ (կամ նաև լաքայ, լաքա, դաքայ) «մի տեսակ կարմիր ներկ կամ այդ ներկով ներկուած կարմիր կաշի» Խոր. բ. 47 (Քանզի պատուեալ է առ Ալանս մորթ կարմիր, լայքա շատ և ոսկի բազում առեալ ի վարձանս, առնու զտիկին օրիորդն Սաթինիկ. այս է (յերգս) ոսկէօզ շիկափոկ պարանն). Վրթ. քներթ. (Կարմիր մորթոյ... փղին ոսկերաց կամ զաքային, որ յերկրէ բարբարոսացն հկեալ է ի վաճառս):

=Պրս. لاکا lakā «կարմիր սեկ. 2. մորթ իմն, որ յոյժ կակուղ է և գեղեցիկ յօրինեալ. 3. սեկ. 4. կարմիր կաւ (ներկի համար)». որից արաբ. لاکا lakā «լուք ներկով ներկուած կարմիր մորթ» (Կամուս, Թրք. Թրգմ. Գ. 112). Նո՛յն է պրս. لك lak կամ لاك lāk «է սա իր իմն որ ի ցրտութենէ օդոյն որպէս շաղ տեղայ ի վերայ տերևոց ծառոց և սառուցեալ պաղի. և է սա յատուկ աշխարհին Հինտիսթանու. զոր ժողովեալ և ծեծալ և եռացուցեալ, ներկանեն այնու զմետաքս և զհանդերձեղէնս, որոյ գոյնն հաստատ է և անելանելի. զորոյ զվճիտ ջուրն ի գործ ածեն նկարիչք և պատկերահանք ի նկարակերտութիւնս»: Վերջինիս ծագումը հնդկական է. համմ. սանս. लाक्षा lākšā, պալի lākhā, մալաբարի lakka, որ պրս. lāk և արաբ. لك lakk ձևերի միջնորդութեամբ անցել է նաև Եւրոպա. այսպէս՝ իտալ. lacca «կնքամոմ», սպան. պորտ. lacre «կնքամոմ», գերմ. Lack, ֆրանս. gomme-laque, Թրք. لوك lök, նորագոյն փոխառութեամբ հյ. լուֆ, լոֆ, լօֆ (տե՛ս առանձին):

Բառս մեկնուած է ըստ ՀՀԲ «քար պատուական կամ գոհար ակն», ըստ ՆՀԲ և ԱԲ «բաց կարմիր գոյնով հողային ներկ մը», ըստ ՋԲ «կարմիր ներկ ինչ գեղեցիկ կամ ագնիւ խէժ ինչ Հընդկաց», ըստ Նորայր, Բառ. ֆր. 733 բ «գոճի խէժ, Հնդկական ռետին, laque». —Վիսթօնեանք, Թրգմ. Խոր. էջ 164 դրնում են իբր պրս. և արաբ. բառ՝ «խէժ կամ կարմիր ներկ» նշանակութեամբ: ՆՀԲ յիշում է լաֆա, լէօֆ «է գոյն բացագոյն կարմիր»: Հիւրշ. ZDMG 35 (1881), 659 և Arm. Gram. 157 պրս. lāk ներկը, կասկած յայտնելով «լայֆա ներկ» նշանակութեան վրայ: Ա. Ստեփանէ, Թրգմ. Խոր. ծան. 376 ռուս. лайка «շան կաշի պատրաստել»: Ուղղագոյն մեկնութիւնը տուաւ ուրեմն Հիւնք. որ համեմատում է պրս. լէֆա «կարմիր սեկ»: Գ՚Ի մեկնում է «հարիւր հազար օսկի դրամ (lack)» և սրանով հասկանում է պրս. لك lak «հարիւր հազար». համմտ. խոբենացու մօտ լայֆա շատ. բայց այս իմաստով առնելու համար՝ նախ, անտեղի է շատ բառը, իսկ երկրորդ՝ պրս. լաքը թիւ է և ո՛չ դրամ. ուստի առ առաւելն պէտք էր ասել շատ լաֆ ոսկի և ո՛չ թէ լայֆա շատ և ոսկի. երրորդ՝ պրս. լաֆ չի կարող տալ հյ. լայֆա կամ լաֆայ:

ԼԱՆՋ, ի–ա հ. (անհզական գործածութեամբ) «կուրծք» ՍԳր. որից լանջագեղ Բրեմ. բ. 32. լանջակից Ոսկ. ա. տիմ. ժէ. լանջապան 3Հ. կԹ. լանջապան Պտմ. աղէքս. լանջապանակ 3Հ. կԹ. լանջանոց Փիլ. բաջալանջ Փիլ. լայնալանջ ճառընտ. ինչպէս արդի գրականի՝ նոյնպէս նաև հին հայերէնի մէջ ունէր նաև «լեռան կող» նշանակութիւնը, որից էլ լանջակոդմն Փարպ:

=Թերևս իբր բնիկ հայ համեմատուի հիսլ. lunga, անգլսք. lungen, հբգ. lungūn, գերմ. lunge, անգլ. lunges, հոլլ. long, ռուս. лёгкія բառերի հետ, որոնք նշանակում են «թոք»: Այս բառերի հնխ. ձևն է lenghu-՝ որ բուն նշանակում է «թեթև» և անգայնաւոր

ձևն է հնխ. leghu- «թեթև» բառի. համմտ. լտ. levis, հսլ. ligŭkŭ, ալբան. l'eh, լիթ. lengvùs, լեթթ. liegs, գոթ. leihts, հբգ. līhti, հհիւս. lettr ևն. (միւս ձևերը տե՛ս առագ բառի տակ՝ որ ծագմամբ նոյն է նախորդների հետ և իրանեանից փոխառութեամբ հասած է մեզ)։ Այսպէս է կոչուած թոքը՝ իբրև մարմնի ամէնից աւելի թեթև մասը։ Աւելի ընդարձակ տե՛ս pnf բառի տակ (Walde 424, Boisacq 239, Berneker 753, Trautmann 158, Kluge 300, 312, Pokorny 2, 427)։ Հայերէն լանջ կարող է գալ հնխ. lŋg²hi- ձևից։

Böttich. Arica 72, 170 հսլ. lokanya, յն. πλεύμων, լտ. pulmo, լիթ. plauczei, ռուս. legkoe բառերի հետ։ Lag. Urgesch. 694 լիթ. lankas «բոլորակաձև», lanka, lenke «երկու լեռների միջև մարդ» (իբր հյ. լեռան լանջ)։ Müller, Kuhns u. Schleich. Beitr. 3, 255 յն. σπλάγχνον «փայծաղ» բառի հետ։ Նոյն, SWAW 88(1877), էջ 12 յն. σπλάγχνον «փայծաղ», հիսլ. lunga «թոք» և սանս. hlīhán «փայծաղ» բառերի հետ։ Lag. Arm. Stud. § 908 չի ընդունում հբգ. hlanca: Տէրվ. Altarm. 84 և Նախալ. 49 հնխ. lagh «անկեալ դնել» արմատից։ Վերի մեկնութիւնը տուաւ Meillet MSL 8, 165, որ Հիւբշ. 451 չի ընդունում՝ «թոք» և «կուրծք» նշանակութեանց տարբերութեան պատճառաւ։ Հինք. դենջակ բառից։ Leskien, Bildung der Nomina im Lit. էջ 285 իրարից բաժանելով լանջ «կուրծք» և լանջ «լեռնակող» բառերը, վերջինը կցում է լիթ. slinkis «զառիվայր» բառի հետ։ Pedersen, Հայ. դր. լեզ. 47 յն. σπλάγχνα? Petersson, Ar. u. Arm. Stud. էջ 116—120 կցում է մի կողմից lunga, lungen ևն խմբին և միւս կողմից հհիւս. lend, հբգ. lentin, մբգ. lende, գերմ. Lende, հսլ. lędvija, լատ. lumbus «մէջք» բառերին. կարծում է որ հայ. լանջ բառը ձևացած է այս երկու տարբեր բառերի խառնուրդից։ H. Sköld ՀԱ 1927, 792 վեդ. randhra «խոռոչ» և յն. λανθάνω «թաքնուիլ» բառերի հետ։

Գիհ.—երև. խրբ. Ղրբ. լանջ «լեռան լանջը». (բայց կայ նաև «կուրծք, գոգ» նշանակութեամբ օր. երև. երեխիդ լանջդ վերցրու)։ Նոր բառեր են լեռ-լանջ խրբ. Զրս. «լեռներ», լանջիվայր Ղրբ. լանջվայր Շլ. «լեռան զառիվայրը», լանջիվեր Ղրբ. լանջվեր Շլ. «լեռան զառիվերը», լանջնուդուրս Ղզ. «լեռան ցածից վեր», լանջնուվայր Ղզ. «լեռան բարձրիցը ցած», լանջիկ-լանջիկ, լանջիկ-մանջիկ Շիր. «կամացուկ, գողունի քայլերով» (կատուի համար ասուած)։—Rivola, Բառ. հայոց 1633, էջ 159 ունի լնջանք «լանջ»։

*ԼԱՇԿԱՐ, ի-ա հլ. «զօրք, բանակ» Եղիշ. ը. էջ 111. Զքր. սարկ. Ա. 50. ուրիշ օրինակ չկայ. այս նոյն բառը Բառ. հրեմ. էջ 192 ղրնում է դաշկար «առամրութիւն»։

=Պհլ. *laškar, որից պրս. لشکر laškar «բանակ, գունդ զինուրաց». սրանից են փոխառեալ նաև վրաց. ლაშკარი լաշկարի, լաշքարի, լասքարի, քրդ. leškir, laškir, արաբ. عسكر 'askar «զօրք, զինուր»։—Հիւբշ. 157։

Ուղիղ մեկնեց նախ ՆՀՐ. յետոյ Lag. Btrg. baktr. Lex. 75:

ԼԱՇԿԱՒ «անգղ» (թռչունը). պիտէ միայն ԳԲ։

*ԼԱՋԱԿ «շոր՝ որով կանայք գլուխն ու ծնօտըն են ծածկում». հնից աւանդուած չէ, բայց կայ յետնաբար. ինչպէս՝ Զքր. սարկ. Բ. 88. սրանից է լաչկիկ Քուչ. 61. (Զլաչկիկն ծուլ ու մուլ կապեր, զկէս ճակտին թողեր է ի բաց)։

=Պրս. لچك lačak «քօղ, պատառ դիպոյ, որոյ ծայրն իջէ ոսկեթել և նկարակերտ, զոր կանայք փաթթութեն ի գլուխս իւրեանց». ծագում է պրս. لچ lač «այտ» բառից։ Պարսկերէնից են փոխառեալ նաև արևել. թրք. لاچاك lačak «լաչակ», չաղաթ. لچك leček «պատակ ծաղկանց հարսին», քրդ. lāčik, ուտ. lačän, լակ. lačok, վրաց. ლეჩაქი լեչաքի, ն. ասոր. läčik't'o «լաչակ»։ (Մեր բառը այժմ գրւում է լաչակ)։—Աճ.

Այս մեկնութիւնս հրատարակուած է նախ Գաւառ. բառ. էջ 411։

Գիհ.—երև. լաչակ, Ախց. լուչոկ, Տփ. լէշաֆ (այս վերջինը «չիթքիլա» նշանակու-

թեամբ), Մշ. լաճիկ, Ալշ. լաճի, Ղրբ. լէշակ, ըստ Riv. լաշայ *են։—Սեբաստիոյ բարբառով* լուշագ *նշանակում է «անառակ կին»։— Նոր բառեր են* լաշակացու, լաշակաւոր, լաշակաւորուիլ։

Փոխ.—Ուտ. läcägʸ *«լաշակ»։*

ԼԱՊ *«բաղցու. 2. սերկևիլի կուտ». ունի միայն ԳԲ։*

ԼԱՊԱՆԱԼ *«ուռանիլ». ունի միայն Բռ. ե-բեմ. էջ 131։*

ԼԱՊԱՏ *«անմարդ կամ անամուր». գիտէ միայն Բառ. երեմ. էջ 131։*

***ԼԱՊԱՍԱՆ** *«մանանեխ» Բժշ. յիշում է միայն ՀԲուս. § 3321։*

=*Արաբ.* لبسان labsān *(չունի կամուս), յն.* λαψάνη, λαιψάνη «charlock sinapis arvensis, *մանանեխ»* (Sophocles 705), *լատ.* lapsana, lapsanium *«մի տեսակ վայրի կաղամբ»* (Quicherat, Dict. lt.-fr. *1913, էջ 748), ֆրանս.* lampsane:

Ուղիղ մեկնեց ՀԲուս։

***ԼԱՊՏԵՐ, ի–ա** *հլ. «ճրագ, կանթեղ, ջահ» ՍԳր. որից* լապտերակալ *Ոսկ. ղղր.* լապտերավառ *(նոր բառ). գրուած է նաև* դապտեր *ՅՀ. իմ։*

=*Յն.* λαμπτήρ *«ջահ, կանթեղ, ճրագ» բառն է, որ ծագում է* λάμπω *«փայլիլ, ցոլալ» բայից. յոյնից է փոխառեալ լտ.* lampter. *Նոյն բառը կայ նաև մանիքէական պահլաւերէնում, որի միջոցով էլ բառը անցել է հայերէնի. համմտ.* լամբար։

Նշխ դրաւ ուղղակի յունարէնից. Böttich. Horae aram. 39, 86 *ասոր.* naptîr *ձևից։ Նոյն,* Rudimenta 47, 160 *ասորի բառի հետ* dīp *արմատից։* Lag. Arm. Stud. § 910 *և Հիւբշ. 351 դնում են ուղղակի յունարէնից։ Պահլաւերէնի միջնորդութեամբ* Meillet MSL *17, 248։*

Գիւտ.—Մշ. լարդեր։

ԼԱՋՈՒԱՐԴ *տե՛ս* լազուարթ։

+**ԼԱՍ, ի** *հլ. (յետնաբար նաև ի–ա հլ.) «մի տեսակ տափակ նաւ» ՍԳր. Նար. «նաւի ողնաշար» Նար. «մահճի տախտակ» Վրք. Հց. Ա. 287. որից* լաստափայտ *«նաւ, նոյի տապանը» Իմ. ժդ. 6. Եփր. Համաբ. 251.* լաստել *«պատրաստել, կարդաւորել, կազմել» Երեմ. գ. 23. «մի երկիր բռնել, այնտեղ տարածուիլ» Բրս. մրկ. 212. Ոսկ. կողոս. 636. «գրաւել, տիրել մի երկրի» Ոսկ. յհ. ա. 1. Սեբ. էջ 31.* լաստիլ *«բռնակալել, մի տեղ հաստատուիլ» Սեբ. 80.* լաստակոտոր առնել *«կազմուածքը քայքայել» Վեցօր. ը. 166.* պատուաստալաստ *«իրար կցկցած» Նար. առաք. 429.* լաստենի *«մի տեսակ ծառ.* alnus orientalis Desn» *(ըստ Տիրացուեան,* Contributo § 78*) Բռ. ստեփ. լհ. Նոր բառեր են* ակալաստ, լաստակ *«շինք շինելու ժամանակ կազմուած ժամանակաւոր փայտակերտ վերելակ. իսքելէ» (Կոյլաւ, Բառ. գերմ. էջ 25 բ, 1214 բ)։*

=*Բնիկ հայ բառ՝ հնխ.* lazdā- *ձևից համմտ. լիթ.* lazdà *(գւտ.* lazà*) «փայտի կտոր, գաւազան, ընտանի կաղնիի թուփ»,* lazdìnis *«հաստ կոճղ», լեթթ.* lazda, lagzda, legzda *«ընտանի կաղնիի թուփ», հպրուս.* laxde *(<*lagzde*) «արքայակաղնի»* (Trautm. 153, Pokorny *2, 442 և 387)։ Մեր բառի առաջին և նախնական նշանակութիւնն էր «փայտ, կոճղ», որից հետզհետէ զարգացան «լաստ, կազմել» են իմաստները։—Նշանակութեան զարգացման համար համմտ. յն.* δόρυ *«փայտի կտոր, կոճղ. 2. նաւի տախտակ. 3. նաւ», անգլ.* raft *«լաստ»,* rafter *«գերան», ֆրանս.* charpenter, *հ֊իտ.* timbra *«շինել, կազմել»։*

Նշխ լաստ՝ լծ. Թրք. tbrwapt *«առագաստ», իսկ* լաստել՝ *լծ. հյ.* պատրաստել, *պրս.* ārāstan*։—* Pictet, Orig. ind. 2, 183 *իռլ.* lestar *«բաժակ», կիմր.* llestr, *բրբտ.* lestr *«նաւակ»։* Lag. Arm. Stud. § 911 *պրս.* last *«ամուր, հաստատուն, գեղեցիկ, բարի»՝ յատկապէս* լաստել *բառի համար։ Հիւնք. Թրք.* sal *«լաստ»։* Scheftelowitz BB *29, 32 հրգ.* latta, *գերմ.* latte *«գերան», իռլ.* slat *«ձող», մրգ.* lade *«տախտակ»։* Patrubány SA *2, 159 հնխ.* pleu̯- *«հոսիլ, լողալ» արմատից։ Ուղիղ մեկնեց* Lidén IF *18 (1905—6), 487, որ կրկնում է* Lewy KZ 40 (1906), 422 *(մերժելի է միայն լտ.* larix *բառի համեմատութիւ-*

նը, որին հակառակ են նաև Walde 414 և Boisacq 203 ծան.)։

Փոխ.—*Վրաց.* ლახტი լաստի «ճիւղերից շինուած ցանկ» (որից էլ Ղզ. լաստի «ուռիից կամ դանդաղ ճպռտներից հիւսուած դուռ»), ლახტიჯანი լաստիջանի «ճիւղերից հիւսած մեծ կողով»։

*ԼԱՏԱՆ «cistus cyprius *բոյսի անուշահոտ խէժը՝ որ ծխելու համար է գործածւում»* *Խոր. աշխ. 603. Մաշտ. ջահկ. տե՛ս նաև* ղանդանոն։

=*Պրս. արաբ.* لادن lādan *հոմանիշից, որից փոխառեալ են նաև յն.* λάδανον, λήδανον, *լտ.* ladanum, *վրաց.* ლადანი լադանա, *ռուս.* ладанъ, *ֆրանս.* ladan, *բրք.* laden *են* (Berneker 682):—*Հիւրշ. 351։*

Ուղիղ համեմատից նախ նշ՛ի։ Հիւրշ. դնում է իբր լատիներէնից փոխառութիւն։ Բառիս վրայ ընդարձակ խօսում է Seidel, *Մխ. հեր. § 279։*

ԼԱՏՐԱՏԵԼ *«բամբասել» ? մեկ անգամ ունի Մծբ. 385 (Ատեն սրտիւ և լատրատեն շրթամբք)։*

Նշ՛ի միացնում է լտ. latro *«հաջել» բառին։ Նոյնը կրկնում է* Brockelmann, *Ուս. փոխ. բառից, էջ 115, բայց որովհետև հայերէն բառը ձևով նման չէ լատիներէնին, ուստի կարծում է թէ առել բառի հետ մի բառախաղ է յարմարեցրած։ Հիւրշ. 351 (կասկածով) դնում է լտ.* latro *«հաջել»,* latratus *«հաջոց, կշտամբանք» բառից փոխառեալ։ Բայց այս բոլոր մեկնութիւնները սխալ են, որովհետև 1) հյ. լատրատել չի նշանակում «հաջել» և նշ՛ի միայն հնարած է այսպիսի իմաստ՝ բուն լատիներէնի. 2) ձևով նման չէ լատինականին. 3) Մծբնացին չէր կարող բնաւ ունենալ լատինական փոխառեալ մի բառ։*

+**ԼԱՐ**, ի, ի-ա, ո *հլ. «առասան» ՍԳր. «որմնադրի ուղղալար» Ագաթ. «մղոն, ասպարէզ» Պտմ. աղէքս. «որոգայթ, թակարդ» Նար. վրք. Հց. «նուագարանի թել, աղի» Երզն. քեր. Լմբ. պարզ. «նուագարան» Մխ. բժշ. 19. «պարանոցի ջիղերը» Փիլ. որից* լարել *«ձգտել (աղեղի լարը, պոչը են)» ՍԳր. «թակարդ սարել» Շնորհ. Լմբ.* լարաթաթիճ *ՍԳր.* լարագիր *Ճառընտ.* լարախաղաց *(նոր բառ),* լարախաղացութիւն *Սահմ.* լարախեղդ *Գնձ.* լարախիլ *«պաճուճապատանք խաղացնող» Արիստ. աշխ.* լարաձիգ *Ոսկ. ապաշխ.* լարաշափ *Լմբ. անգ. նեռալար պարսպաց Տեսիլ դան. էջ 117. բազմալար Երզն. քեր. բանդրալար Նոննոս 22. կարմրալար Նար. յովէդ.* լարան *«թել» (չունի ՍԲ) Առաք. պտմ. 371.* լարթափ *«լարը թուլացած՝ կախուած (աղեղ)» Տաղ. ժող. (Պալեան, Հայ աշուղներ Ա. էջ 16). նոր բառեր են* ուղղալար, տրամալար, տրումալար *(բնարի համար ասուած) են։*

=*Ուղիղ պէտք է համարել* Lidén-*ի մեկնութիւնը (իբր հնխ.* wlərə-*), որ ընդունում են նաև* Pokorny *1, 304 և* Meillet, Dict. étym. lt. 533:

Աւգերեան, Բացատր. չփ. և կշռ. էջ 88 յն. λῦρα *«քնար» բառի հետ։ Հիւնք. մոլար բառից։* Lidén, Arm. Stud. *էջ 100 համարում է բնիկ հայ բառ հնխ.* wlərə- *ձևից, որի* wlero-, wlōro- *ձայնագարձները են ներկայացնում՝ լտ.* lōrum *«փոկ, գօտի, խարազան», յն.* εὐλῆρα, *դոր.* αὔλῆρα, ὕβλῆρα *«սանձ».—բոլորի պարզական արմատն է հնխ.* wel· *«ոլորել, մանել» -ro- մասնիկով, որի ածանցները տե՛ս գել բառի տակ. յիշենք այստեղ յիշեալ պարզական արմատից ծագած և վերիններին հոմանիշ մի քանի ձևեր. այսպէս՝ ռուս.* волоть, волокно *«թել, մազմզուք», լիթ.* valgs *«լար», լիթ.* váltis *«ցանց, ուռկան» են։ Այս մեկնութիւնը ընդունում են* Walde 441, Boisacg 295, Petersson KZ 47, 270. *բայց կասկածելի է, ըստ որում* w *ձայնի անկման օրէնքը l-ից առաջ՝ ապացուցուած չէ։ Սպասելի էր *գլար փխ.* լար։

Գիւտ.—Ալշ. Ախց. Ասլ. երև. Խրբ. Կր. Մշ. Զղ. Ռ. Սեբ. Տփ. լար, *Մկ. Ոզմ. Սլմ. Վն. Տիգ.* lɪr, *Մրղ.* lɪn, *Զթ.* lor, lar, *այս բոլորը նշանակում են «ճախարակի կամ աղեղի լար». կայ նաև Ղրբ.* լար *«լարուածք».—Մշ.* լարել *«շարել» (իսկ շարել նշանակում է «թել վրայ անց կացնել»).—նոր բառեր են* լարծեծ, լարմաճ, լար գնալ, լարաճ, լարաւոել,

լարնթել, լարօղակ, լարուկ, միալար «միօրինակ, միայար» (որի հին վկայութիւնն ունի Լծ. պրպմ. 748 միալարի).—Բրբախօս հայոց մէջ կայ լարել օլմաճ «չուանը լարուիլ, ձգուիլ» (Արևելք 1888 թ. նոյ. 8—9):

Փոխ.—Վրաց. ლარო լարո «լար, առաստան, թակարդ», ლარი լարի «մետաքսէ կտաւոր, նուագարանի լար, աղեղի լար», შვეულობ ლარი շվեուլիս լարի «ուղղալար»:

—ԼԱՐ «մի տեսակ օձ» Վրդն. օրին. Հին բռ. Տաթև. հարց. 386:

=Նախորդ լար «թել» բառից է. այսպէս է կոչուած նոյն օձը՝ իր բարակութեան պատճառաւ:

Գիւղ.—Պահուած է Զեյթունի բարբառում լարօձ բարդի մէջ՝ նոյն նշ:

*ԼԱՐԵԿ «մի տեսակ ծառ. կեչի՞» Ստ. ոչք. ունի միայն ՀԲուս. § 890:

=Լտ. larix նոյն նշ:

Ուղիղ մեկնեց ՀԲուս:

+ԼԱԻ, ի–ա հլ. «լաւ, աղէկ. 2. շահաւէտ, օգտակար. 3. ազնուական» ՍԳր. Ագաթ. Փարպ. որից լաւագոյն ՍԳր. Կոչ. Կիւրղ. Թգ. լաւախօս Սիր. գ. 5. լաւացուցանել Ոսկ. ես. Եփր. Թգ. լաւխմաց Եւս. քր. լաւութիւն Եբր. ե. 7. Եզն. անլաւ Փարպ. բարելաւ Պիտ. բաջալաւութիւն Փիլ. լաւատեղեակ, բարելաւել (նոր բառեր) ևն:

=Բնիկ հայ բառ, որ կարելի է համեմատել կա՛մ յն. λώϊος «լաւ, շահաւէտ» բառի հետ և կամ լիթ. lãbas «լաւ» բառի հետ:—Առաջինի ցեղակիցներն են յն. λωΐων (<*λωϝίων), համեր. λωΐτερον «լաւագոյն», λώϊστος «ամենալաւ, ընտրելագոյն». սրանց հետ համեմատելի այլալեզու բառերի և նրանց նախաձևերի մասին զանազան ենթադրութիւններ՝ տե՛ս Walde 674, Boisacq 594:—Երկրորդի ցեղակիցներն են հպրուս. labs «ինչք, հարստութիւն», լիթ. lãbas «հարստութիւն», lõbis «հարստութիւն», հպրուս. labs, լեթթ. labs, լիթ. lãbas «լաւ», labaĩ «յոյժ, շատ», սանս. lábhatē, lambhatē, rábhatē «բռնել, հասնիլ, ձեռք բերել», lābha-s «ձեռք բերածը, շահ, օգուտ», յն. λάφῡρον «աւար, կողոպուտ», ἁρφι-λαφής «մեծ, ուժեղ, ընդարձակ» (բառացի «շուրջը բռնող»), լտ. rabiēs «կատաղութիւն», rabio «կատաղիլ», սանս. rábhas «հզօրութիւն». rabhasá-s «բուռն, հզօր, վայրենի», որոնք ծագում են հնխ. (s)labh- արմատից, վերջիններըս՝ rabh- արմատից (Walde 638, Boisacq 561, Trautmann 148):—Հիւրշ. 451:

Klaproth, Asia polygl. 101 վալերէն llawn, լեթթ. և լիվ. labs: ՆՀԲ լծ. յն. εὖ, Բրբ. eyi, yek, արար. ā'la «լաւ»: Böttich. Arica 21, 57 աֆղան. lōy «ազնուական», սանս. lābha «շահ, օգուտ», լիթ. lãbas «լաւ»: Lag. Urgesch. 456 լիթ. lãbas ձևի հետ labh արմատից: Բագրատունի, Քերակ. զարդ. յաւել. էջ 11 յն. λωίων և λῴων բառերի հետ: Lag. Armen. Stud. § 912 λῳων, λῳστος ձևերի դրականն է համարում:—Bugge, Etr. u. Arm. 27 ետրուսկ. lavtn մեկնում է հյ. լաւ տուն «ազնուական ընտանիք», էջ 51 ետր. larθ =լաւ առնդ և էջ 52 ետր. lar=լաւ այր: Հիւնք. արար. էվլա «լաւագոյն»: Müller SWAW 136 (1897), էջ 25 յն. λωίων: Պատահական նմանութիւն ունի արաբ. ءَلا la't «գնդեցիկ և պարկեշտ կին» (Կամուս, Բրբ. Բրգմ. Բ. 667):

Գիւղ.—Ալշ. Ախց. Երև. Կր. Մշ. Ոզմ. Սլմ. Տփ. լավ, Դոր. Ղրբ. Շմ. Տիգ. Հւր. լով, Զղ. լէվ.—բայական ձևով միայն պահուած են՝ Համշ. լավնուշ «առողջանալ», Սչ. լավնալ, լաֆցնել (վէրքի համար ասուած).—միւսներըս գործածում են աղէկ բառը.—նոր բառեր են լաւամարդի, լաւաշել, լաւսր դնել:

*ԼԱԻԱՆԴ «անկանոն զինւոր» ? Պատմ. ժթ դարից (Դիւան, հտ. ժ. էջ 129, 137, 149):

=Պրս. لَوند lavand «այր որ գնայ ըստ կամս անձին իւրոյ և որպէս պիտի անձին իւրում, այնպէս կեայ և կենցաղավարի. 2. այր պղերգ և ճակաճան. 3. բոզ կին. 4. այր անգործ» (ԳԴ), «вольный, поступающій самовольно; бродяга, распутный» (Будаговъ II 193), որից նյն. λεβέντης «ծովային կամաւոր զինւոր. 2. քաջ. 3. կողոպտիչ. 4. ճարպիկ՝ ժիր մարդ», λεβεντιά «քաջութիւն. 2. լրբութիւն, զեղխութիւն», Բրբ. le-

vend «անկանոն զինուոր. 2. թափառաշրջիկ. 3. քաջ», ռում. levent «կամաւոր զինուոր. կողոպտիչ», բուլգար. levent, leven «ուժեղ մարդ», սերբ. lévēnta «թուրք ծովային զինուոր, քաջ», փռուս. lévénec՛ «խոշորակազմ մի մարդ» (Berneker 704):—Աճ.

Գիր.—Տփ. լէվանդ «թոկից փախած, սրիկայ», Կր. լովոնդ «ծոյլ» (առածական առացուած է՝ ճիվանդ չէ, լովոնդ է). Նախ. լէվէնդ «ամուրի, չամուսնացած մարդ»:

ԼԱԻԱՌՆ տե՛ս Շաւառն:

ԼԱԻԻՏ «փոքր ունելի արհեստաւորաց. զրաճա». ունին միայն Նորայր, Բառ. ֆր. 943 բ, 944 ա և ԳԲ:

*ԼԱԻՐԱ. (սեռ. -յի) «վանք» Վրք. հց. Ա. էջ 517, 704 (գրուած նաև լօռայ, լռռա, լօռա). ուրիշ տեղ չէ գործածուած:

=Յն. λαύρα, որ հին յն. նշանակում է «փողոց, նեղ ճամբայ, փակ շուկայ, ական, կոյուղի», միջին յն. «վանքերի խուցերի շարք» (Sophocles 707), նոր յն. «վանք». այս իմաստից էլ փոխառնալ է հյ. լաւռա, ինչպէս նաև ֆրանս. laure «վանք յոյն կրօնաւորաց», հսլ. lavra, ռուս. лавра, սերբ. lâvra «վանք» (Berneker 696):—Հիւրշ. 352, Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ;—Pictet 2, 244 անգլսք. lār, հրգ. gilāri, երս. larach «բնակութիւն» բառերի հետ:

+ԼԱՓ (սեռ. -ի) «շան կերակուր» Մանդ. «երեխայի փափուկ ուտելիք» Մարթին. որից լափել «լակել, լեզուով խմել, լիզելով ուտել, 2. ուտել, ոչնչացնել, սպառել» ՍԳր. Մծբ. 149, 151. լափումն Նոնն. լափլեզ Մագ. Բզ. 228. լափլիզել կամ լապլիզել Փիլ. տես. էջ 21. լափլիզող Նար. լափառել «չարաչար լափել՝ կեղեքել» Փիլ. տես. 21:

=Բնիկ հայ բառ՝ հնխ. laph- «լիզել» արմատից. համմտ. յն. λαφύσσω «ագահաբար ուտել (անասուններին, յատկապէս շան), պիշատակել, ուտել սպառել (կրակի)», ալբան. l'ap «լակել (շան և կատուի)», թերևս նաև ռուս. զուռ. lopati «լափել, պիշատակել», lopa «որկրամոլ»: Նոյն արմատի հնխ. lab ձևից են գալիս լտ. lambo, յն. λάπτω, հրգ. laffan, անգլ. lap, անգսք. lapian, իսլ. lepia, ֆրանս. laper «շան լակել», հրգ. lęffil, գերմ. Löffel, հպրուս. lapinis «գդալ», բուլգար. lẽpam «լափել, կուլ տալ», սերբ. lâptati «շան պապակիլ, հևալ», läbati «շան կամ կատուի պէս լակել», չեխ. lábati «խմել», s- յաւելուածով գերմ. schlampfen «խպշտել» են (Walde 409, Boisacq 561, Berneker 726, 690, 681, Kluge 309, Pokorny 2, 383):—Հիւրշ. 451:

ՆՀԲ յն. λάπτω, լտ. lambo, երր. laqaq:—Peterm. 74 լտ. lambo: Müller SWAW 42(1863), 252 և Հիւրշ. KZ 23, 35 յն. λάπτω, Riggs, Քերակ. էջ 61 անգլ. lap բառի հետ: Հնխ. արմատների դանագան ձևերի և նրանց հետ հայերէնի յարաբերութեան վրայ տե՛ս Bartholomae BB 10, 289 (յն. λάφυσσειν, հրգ. laffan են), 17, 120, Meillet MSL 10, 278 և 16, 239—242, Osthoff SA 2. 50: Թիրեաքեան, Արիահայ բռ. 173 պրս. لب lab «եզր, շրթունք» բառից. Մառ, Тексты I, էջ 90 լափել և կլափ դնում է յարեթ. klp արմատից. համմտ. վրաց. klapva «կլանել»:

Գիր.—երև. լ. Ջղ. լափ «շան կամ ուրիշ կենդանիների տրուած ջրոտ ուտելիք», լ. «խմորի գունդ՝ որ տալիս են դոմէշներին՝ ուտելու», Ախց. «կովին տրուած լոյծ ուտելիք», Ղրբ. լէփ «շան ուտելիք», բայական ձևով՝ Մշ. լափել, Ախց. Սեբ. լափէլ, Ասլ. լափէ՛լ, վն. լոփել, Գոր. լո՛փէլ, Մկ. Շմ. լոփիլ, Հճ. լոփ՛ը՛ել, Ղրբ. լէ՛փիլ, Սլմ. լըփիլ, Մրզ. լփրել, Տիգ. լփփել.—Նոր բառեր են՝ լափլըփել, լափակեր, լափակոլոլ, լափոտել, լափլըփոտել, լափխոտել են:

Փոխ.—Հայերէնից են վրաց. ლაფი լափի «ջրոտ ցեխ» (որից էլ Տփ. լափ՝ նոյն նշ.), եալաֆցաւօ սալափավի «թէփով ու ջրով պատրաստած խիւս՝ որ կենդանիներին են տալիս ուտելու», ն. սասր. läp'i «լափել».—Թերևս նաև թրք. لپا lapa «խիւս» (յատկապէս բրինձով պատրաստուած շիլա), չաղաթ لپا lapa «արգանակ», քրդ. lape «վերքի վրայ դնելու խիւս, cataplasme» (նոյնը նաև թրք.).—իբրև բնաձայն՝ պատահական նմանութիւն ունին արաբ. لفّ laff «մի քանի բան իրար խառնելով ուտել, տգեղ ու

անշնորհք կերպով ուտել», սաստկականը՝ لفلف laflafa *«չափազանց շատ ուտել» (Կամուս, Թրք. Թրգմ. Բ. էջ 842—3)։*

ԼԱՓՐԻ *«սրափուշ» Գաղիան. ունի միայն ՀԲուս. § 3322։*

ԴԻՒ.—Ղրբ. լափոխ «մի տեսակ վայրի Թուփ է», Վն. լափաո «մի տեսակ փշոտ Թուփ՝ որ տալիս է կարմիր պտուղ»։

ԼԱՔՈՒՑԵԱԼ, *«Թաքուցեալ». ունի միայն Բառ. երեմ. էջ 132, որի հետ նոյն է Թուում էջ 134 լուխցնել «Թաքուցանել».—տե՛ս նաև լագ։*

***ԼԱՔՈՒՓԱՔ** *«աղեղնաւորք և պարսաւորք». իբրև գիւղական բառ յիշում է Բռ. երեմ. էջ 331 երբ. ֆերեթին և ոփելեթին բառերի բացատրութեան մէջ, հետևեալ ձևով։ «Քեւրեթին. և ոփելեթին. աղեղնաւորք և պարսաւորք. ըստ երբայեցւոց։ Եվ ըստ հայումս. լաֆուփաֆ. ըստ գեղջացանի»։*

=Պրս. لك وپك lakupak *=*pլՀնափույ *«կարի արշաւամամբ շրջագայումն»։—Ա՛ճ.*

ԼԵԱՌՆ, ն *հլ. (լերին, -ոնէ, -րամբ, -րինք, -րանց. յետնաբար՝ յգ.* լեռունս *Անկ. գիրք հին կտ. 301) «լեռ, սար» ՍԳր. ածանցման մէջ երևան է գալիս սովորաբար աղեաւ լեռ–ձևով. ինչ.* լեռնաբեռն *Եզն.* լեռնական *ՍԳր. Ագաթ.* լեռնակեաց *Կորիւն.* լեռնակողմն *ՍԳր.* լեռնաձև *Եզն. Ագաթ.* լեռնային *ՍԳր.* լեռնասէր *Վեցօր.* լեռնոտն *Յուդիթ. գ. 9, է. 9.* լեռնանալ *«ամառանոցի համար լեռը բարձրանալ» (այս նշանակութիւնը չունի ԱԲ) Զքր. սարկ. Բ. 129. բայց ունինք նաև առանց սրղման՝* լեռնական *Բուզ.* լեռնանալ *Ագաթ.—սեռ.* լերին *ձևից է* լերինաբինդ *Նար. տաղ. իսկ* լերանց *ձևից՝* լերանցամէջ *Վեցօր.—նոր բառեր են* լեռնաշղթայ, լեռնոտ *են։*

Peterm. 29, 30, 42 *սանս.* giri *հոմանիշի հետ։* Gosche *34 սանս.* giri, *զնդ.* gairi, *հպրս.* Ἀρταγῆραι*։* Böttich. ZDMG 1850, 355 *սանս. և զնդ. ձևերը։* Müller SWAW 38, 588 *նաև աֆղան.* غر ɣar*: Տէրվիշ.* Altarm. 26 *և Մասիս 1881 մայ" 6 սանս. և զնդ. ձևերի հետ նաև հբ.* gora *«լեռ»։* Bugge, Beitr. 8 *լտ.* clivus *«բլուր», հհիւս.* hlaiva, *գոթ.* hlaiw, *անգսք.* hlāw, *հբգ.* hlēo *«գերեզման», յն.* κλιτύς *«բլուր», իռլ.* slīab *«սար», լիթ.* szlaĩtas *«լեռան լանջ, դար» են ձևերի հետ. հայը դնում է հնխ.* k'leivar- *ձևից՝ և յաւելուածով (Համմտ.* Bartholomae, Stud. II *27 ծան)։ Մառ, Արաքս 1890 Ա. 111 մերժելով այս՝ հյ.* վեր *և* գեր- *ձևերի հետ միասին կցում է զնդ.* gairi *բառին։ Հիւբշ. 451 անապատով է համարում* Bugge*-ի մեկնութիւնը։ Հիւնք. լեառն ուղղականը տեառն բառից, իսկ լերին և միւս հոլովները՝ լինիմ բայի հրամայականից։ Յ. Գ. Մ., Պատմ. գրակ. 15 երբ.* հար *«սար» բառի հետ։* Глейе, Сбор. мат. Кавк. *31, 5 յն.* λέπας *«ժայռ» բառի հետ. վերջաւորութիւնը համարում է մասնիկ, ինչ.* ամ–առն, ձմ–եռն*։* Scheftelowitz BB 28, 292 *և 29, 59 գոթ.* hleiƀra *«վրան»=հբգ.* leitara*:* Walde 170 *և* Boisacq 471 *գնում են* Bugge*-ի մեկնութիւնը,* Walde 171 *նաև վերջինը։ Պատահական նմանութիւն ունին խունսագ.* mer, *աւար. ջար. անցուգ.* mēr, *սամոյ.* mari, *մոկշա* mar *«սար»։*

ԴԻՒ.—Ալշ. Մշ. լեռ, *Ակն. Զթ. Պլ. Ռ. Մշ. Տիգ.* լէռ, *Հճ.* լէր, *Ասլ. Խրբ. Սեբ.* լmռ. *միւսները գործածում են* սար *հոմանիշը.—Սեբ.* լէռ *կայ միայն «պինդ քար» իմաստով։—Նոր բառեր են* լեռլանջ, լեռուոր, լեռնցի, լեռնախնձոր*։*

+ԼԵՌԱՐԴ, ի, ո, *հլ. (յետնաբար) «լերդ» ՍԳր. որից* լեռդաբեկիլ *«լեղին պատռիլ» Եփր. վկ. արև.* լեռդաբեկել *«լեղին պատռել» Ոսկ. Բ. կոր.* լեռդաքոյթ *«լերդի ծայրը» ՍԳր.* լեռդախոտ *«մի տեսակ բոյս է.* teucrium multicaule Mont. -Auch*». (ըստ Տիրացուեան,* Contributo § 468*) Բժշ.* լեռդակողմն *Առակ. է. 23.* լեռդահմայ *Եզեկ. իա. 21.* լեռդացաւ *Եփր. մրգ. 349.* լեռդոռակ *Մագ. թղ. 216. մեծալեառդ Ոսկիփ. գաւառական ձև է* լեռդ *նոնն։*

=Բնիկ հայ բառ, որի նախաձևը որոշել դժուար է։ Յեղակից լեզուներն ունին սրա ղէմ հետևեալ ձևերը. սանս. पक्त् yákṛt *(սեռ.* yaknás*), զնդ.* yākarə*, պհլ.* jakar*, պրս.* جگر jigar*, քրդ.* jiger*,* jerk*, աֆղան.* jigar*, բելուճ.* jagar*, oսս.* iger*,* igâr*, յն.*

ἧπαρ, *սեռ.* ἥπατος, *լտ.* jecur, *լիթ.* jāknos (*գւռ.* ēknos), *լեթթ.* aknis, *հպրուս.* lagnos,—*հիսլ.* lifr, *անգսք.* lifer, *անգլ.* liver, *հբգ.* lebara, *գերմ.* Leber «*լեարդ*»։ *Սրանցից առաջին 13 լեզուաձևերը ծագում են հնխ.* yēk²ṛt, yek²nés (r/n *բունով*) *ձևից. իսկ մնացեալ 5 ձևերը տարբեր են* (Walde 375, Trautmann 106, Boisacq 326, Berneker 423, Kluge 297, Horn § 425, Pokorny 1, 205, Berneker 424)։ *Սլաւական լեզուների մէջ նոյն բառը առացել է «ձկնկիթ» նշանակութիւնը. այսպէս՝ ռուս.* икрá, *հսլ.* ikra, *պոլաբ.* jákra, *չեխ.* jikra *են։ Հայերէնի համար Հիւբշ.* Arm. Stud. *32, 120 գնում է* *lipart *նախաձևը,* Joh. Schmidt KZ 25, 23 *և* Pluralbild. *էջ 199* *lyēk²rt, Pedersen *Հայ. դր. լեզ. 31* *lek²ṛt- *նախաձևը։ Իսկ* Zupitza, Die Germanisihen Gutturale 1896, *էջ 12 յիշեալ հինգ լեզուաձևերը հայերէնի հետ միասին հանում է հնխ.* liperos, lipəros «*պարարտ, Հարպոտ*» (*համմտ. յն.* λιπαρός «*պարարտ*») *բառից։ Նախալեզուի մէջ այս բառը իբրև բնական վերադիր գործածւում էր միշտ* *yēk²rt *բառի հետ. այնքան որ վերջապէս գոյականը յապաւուելով՝* *liperos *ածականը բռնեց նրա տեղը, ճիշտ ինչպէս լտ.* jecur ficātum *տուաւ իտալ.* fegato «*լեարդ*»։ *Սակայն հայերէնի մէջ ածականն էլ ապրելով գոյականից, նրա վերջաւորութիւնը իր վրայ առաւ—Հիւբշ. 452։*

Նախ Peterm. 20, 29, 42 *կցնց սանս.* yakṛt *բառին։ Նոյնը յետոյ* Böttich. ZDMG *1850, 355,* Arica 72, 174, Lag. Urgesch. 704. *Տէրվիշ.* Altarm. 54, *Մասիս 1881 ապր" 30,* Bopp, Gram. comp. 1, 61 *են։—Հիւնք. լեարդ գնում է նեարդ բառից, իսկ լերդաբոյր=հայ. լերդ+պրս.* پوێ pōt «*լեարդ*»։

Գիւռ.—Ալշ. Մշ. լերբ, Տփ. լիրբ «լեարդ», Խրբ. Վն. լէրբ «բաց պայծառ կարմիր» (օր. լէրբ կարմիր շապիկ). Ախց. Կր. Պլ. լէրբ, Ագլ. լէդդ, Երև. Մկ. Սեբ. լէռբ, Շմ. լէրբ, Ոզմ. լիրբ, Դրբ. լարբ, Ննխ. լէրբ, լեշբ, որոնք նշանակում են «քարացած պազած արիւն» կամ գործածւում են լերդը պատռիլ, լերդը կտրուիլ «սաստիկ վախենալ» ոճերի մէջ։ Նոր բառեր են՝ լերդիլ (Սլմ. լարբվել «արիւնը լերդանալ»), լերդակալել, լերդապատառ, լերդաճաշ, լերդծիծաղ են։

Փոխ.—Pedersen, *Հայ. դր. լեզ. 32 մեզանից փոխառեալ է դնում կիւր.* läq, *յդ.* läqer «*լեարդ*». *փոխառութիւնը կատարուած է այն ժամանակ, երբ հայերէնը գրկուած չէր դեռ* k² *ձայնից։*

ԼԵԳԷՈՎՆ (սեռ. -ի, կրկ. Ագաթ. սեռ. լիգոնի՝ Յուշարձ. էջ 129 բ. յետին է բց. ի լեգէովճացն Եփր. ծն. ք. 13) «Հռովմէական զինուորական բանակ՝ 6000 կամ 6666 անձից բաղկացած. 2. փխբ. կուռ բազմութիւն» Կոչ. ՃՀ. կթ. Արծր. Շնորհ. «մի հատ հռովմայեցի զինուոր» Բուզ. 239. «մի տեսակ չար դև» Մրկ. ե. 9, 15. Ղուկ. ը. 30. Վրք. իլար. 88—9, 95. Ձեն. յուդ. 4. ճշ. 198 բ. Սարգ. ա. ՃՀ. զ. էջ 564. գրուած է նաև լէգէոն, լեգեոն, լիգեոն «դևը» Ոսկ. ևս. 352. լեգէոն «մէկ հատ զինուոր» Բուզ. 239. լեգէովն «բանակը» Բուզ. 206—7, 239, լեգեհոն Անկ. գիրք նոր կտ. 167, Յայտմ. մրտ. 16. որից լեգէոնախումբ նար. խչ. լեգէոնական Գնձ. լեգէոնաչար Բննիկ. (Սոփերք ԻԱ 108), լեգէոնեան երգն. մտթ. որ և լէգէհոնեան Անկ. գիրք նոր կտ. 36։

=Յն. λεγεών համանիշից, որ փոխառեալ է լտ. legio, *սեռ.* legionis *բառից. (արմատը* lego «*հաւաքել*»). *Նոյն լտ. բառից փոխառեալ են նաև գոթ.* laigaiōn, *գերմ.* Legion, *ֆրանս.* légion, *ռուս.* легіонъ *են, լտ.* legio «*լեգէոն*» *նշանակում է բուն «ընտրութիւն» (և ո՛չ թէ ծագում է* lego «*հաւաքել*» *բայից)։ Այսպէս է կոչուել լեգէոնը, որովհետև լեգէոնի զինուորները ընտրութեամբ էին և կամ որովհետև նախապէս իւրաքանչիւր լեգէոնական իրաւունք ունէր իրեն համար մի զինակից ընկեր ընտրելու* (Ernout-Meillet 507)։ *—Հիւբշ. 352։*

Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ։

Գիւռ.—Ունինք լեգեոն Ախք. «առասպելական հրէշային մի ձուկ, որ ովկիանոսն է բնակւում» (Ջաւախքի բուսմունք, էջ 45). 2. է. «առասպելական օձ, որ երկրագունդն է շրջապատում» (Ագգ. հանդ. ժ. 198)։

+ԼԵՋՈՒ, ի–ա *հլ. (յետնաբար նաև* ո *հլ.)*

«լեզու. փխբ. բարբառ, ազգ, մի բանի ծայրը» ՍԳր. Ագաթ. եկն. որից լեզուային Ոսկ. մ. բ. 5. լեզուանի ՍԳր. լեզուանութիւն վեցօր. լեզուատ Դևտ. իր. 22. լեզուակ Նիւս. բն. լեզուագար 3հ. կթ. լեզուագարիլ «շաղփաղփել» Սոկր. 200 (գրուած է լեզուագրիլ, յոյն բնագիրն ունի φλυαρεῖτε «շաղփաղփել, ցնդաբանել». նոյն բառը գործածել է նաև Բռ. երեմ. էջ 193՝ վերջին տող, բայց տպուած է վրիպակով՝ լեզուարգիլ). միալեզու Ագաթ. բազմալեզու Գնձ. բոցալեզու Եզն. գառնալեզու Մխ. բժշ. ծաւրալեզու Ել. դ. 10. եզեկ. գ. 5. ճամալեզու Ծւս. քր. եզնալեզու Բժշ. թանձրալեզու Եզեկ. դ. 6. երկլեզու Ոսկ. յհ. ա. 23. նոր բառեր են՝ լեզուաբան, լեզուաբանութիւն, լեզուաբանական, լեզուագէտ, լեզուագիտութիւն, լեզուագիտական, երեքլեզուեան են:

=Բնիկ հայ բառ՝ որի հնխ. ձևը շատ այլայլուած է բոլոր լեզուների մէջ էլ. համմտ. առնս. जिह्वा jihvā, զնդ. hizva, hizu, հպրս. hizū? (Bartholomae 1815), hizbāna? (MSL 19, 58), պհլ. uzvān, պրս. زبان zabān, քրդ. azmān, զազա zuān, աֆղան. žiba, բելուճ. zuvān, օսս. äwzág (Horn § 650), հլատ. dingua, լատ. lingua, իտալ. lingua, ֆրանս. langue, սպան. lengua, ռում. limbă, գոթ. tuggō, անգլ. tongue, հսաքս. tunga, հրգ. zunga, գերմ. Zunge, հիսլ. tenga, կիմր. tafod, կորն. tavot, բրբտ. teaut, teod, իռլ. ligur, հսլ. yęzykŭ, լեհ. język, ռուս. языкъ, չակավ. zajik (շրջուած jazik, ձևից), հպրուս. insuwis, լիթ. lẽžùvis, բոլորն էլ «լեզու»: Այս բոլորի նախաձևն էր հնխ. dn̥g'hṷā, dn̥g'hū, որ ժողովրդական առուգաբանութեամբ կապակցուելով «լիզել» (հնխ. leig'h-) բառի հետ՝ կրել է նրա ազդեցութիւնը և ուելի կամ պակաս չափով փոփոխուել: Դեռ պատմական շրջանում հին լտ. dingua ազդուելով lingo «լիզել» բայից՝ դարձաւ lingua. նոյնպէս նաև լիթ. *ižùvis ազդուելով lëziù «լիզել» բայից, եղաւ lẽžúvis. —իռլ. ligur այնքան է փոփոխուած՝ որ հնխ. dn̥g'hṷā ձևից ո՛չ մի բան մնացած չէ: Հայերէնի մէջ էլ՝ հնխ. dn̥g'hū՝ որ պիտի տար տաճնու, ազդուելով լեզուլ, լիզուլ բայերից՝ վերջապէս դարձել է լեզու, գւտ. լիզու (Walde 433, Trautmann 104, Berneker 270, Pokorny 1, 792, Ernout-Meillet 524):—Առանձին է մբնում յն. γλῶσσα (Boisacq 152):—Հիւբշ. 452: Schröder, Thesaur. 45 եբր. לשון lāšōn «լեզու» բառից փոխառնալ: Klaproth, Asia polygl. 107 արաբ. lisān, եբր. lašon, յն. γλῶσσα: Նշ՞ւ յծ. եբր. lašōn, քաղդ. lišān, արաբ. lisān «լեզու», luγat «բառ», յն. γλῶσσα, լտ. lingua:—Peterm. 22, 29, 35, 82 թէև յիշում է եբր. բառը, բայց դնում է նաև հնդևրոպական ցեղակիցները և հանում է լիզել բայից: Windisch. 17, 21 թէ՛ սնս. գնդ. լտ. ձևերն է յիշում և թէ՛ հանում է լիզել բայից: Այսպէս են նաև Böttich. ZDMG 1850, 355: Müller SWAW 38, 580, Տէրվ. Նախալ. 103 և Լեզու 1887, 117:—Diefenbach, Berl. Jahrb. 1843, 444 և E. Kuhn KZ 17, 233 համեմատում են լիթ. ձևի հետ: Bugge, Lyk. Stud. 1, 27 գտնում է Λεσβος կղզու անուան մէջ: Էսդէթ, Արբտ. 1915, 499 արաբ. lisān «լեզու» բառից: Թիրեաքեան, Արիահայ բռ. 174 պհլ. listan, պրս. لستن listan «մանրել» բայից:

ԳԻՒՒ.—Ողմ. լեզօ, խրր. Մշ. Պլ. Տիգ. լէզու, Ռ. լէզու, լուզու, Աալ. Մկ. Սլմ. Վն. լէզի, Ննխ. լիզու, լիւզի, լուզու, Ալշ. Ախց. Երև. Կր. Համշ. Հճ. Ջղ. Սչ. Տփ. լիզու, Զթ. լիզօ, լիզո, Սեբ. լզու, Մրդ. լէօզի, Ագլ. Գոր. Հւր. Շմ. լիւզի, Ղրբ. լի՛ւզու, լի՛ւզի (Meillet MSL 8, 164 գւտ. լիզու ձևը համարում է հնագոյն քան լեզու, իսկ Pedersen Հայ. դր. լեզ. 136 լեզուլ ձևից դնում է լեզու, իսկ լիզուլ ձևից լիզու): Նոր բառեր են՝ անլեզու, լեզուաթակ, լեզուակոխ, լեզուախոտ, լեզուակապիլ, լեզուակոիւ, լեզուանիկ, լեզուաճիք:

ԼԵԶՈՒԻԼ *տե՛ս* Լէզուիլ:

ԼԵԹԻԼ «թուլանալ, թմրիլ, վհատիլ», որից լեթեալ «թոյլ, տկար, վհատ» Լմբ. սղ. Շնորհ. ա. յհ.—(Նվագր. էջ 38 ունի ոգւոցն լեթելոց ի խորհրդոց աճուի, ուր ըստ համեմատութեան Սարգիսեանի՝ յոյնն ունի πεποιωμένης, որ

բառ Sophocles *302 նշանակում է «to be endowed with quality որակյալ լինել»։ Այս իմաստը յարմար չէ մեր բառին. և որովհետև բառի իմաստը այլուստ ճշտուած է, ուստի եւագրինը պէտք է համարել կա՛մ թարգմանչի սխալ և կամ ապատ թարգմանութիւն)։*

ՆՀԲ դնում է յն. λήθη «մոռացօնք», λησθργία «ուշաթափութիւն, քնափութիւն»։ Աբ համարում է ուղղակի յունարէնից փոխառեալ, բայց յոյնը չունի այսպիսի նշանակութիւն։

ԳԻՒ.—կայ լեթուիլ՝ զանազան նշանակութեամբ, այսպէս՝ Ալբս. երև. «շատ ուտելուց գդուիլ», Ղրբ. «երես առնել, լրբանալ. 2. վէրքը շարունակ բանիլ և բնաւ չփակուիլ»։— Տփ. լեթած «լրբացած»։—Արդեօք այս բառերը վերինի հետ կապ ունի՞ն։

**ԼԵԼԱՓՍ «ներքևից վերև պտտվող քամի՝ թաթաո» Արիստ. աշխ. ուրիշ վկայութիւն չկայ։*

=Յն. λαῖλαψ նոյն նշ.—Հիւրշ. 352։

Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ։

ԼԵԼԵՋԱԿ *տե՛ս Լեղակ։*

ԼԵԼԻՔ *«չղջիկ, vespertilio». գիտէ միայն Ներսէսովիչ, Բառ. լտ.-հյ. 573 ա։*

Կայ արաբ. ليل layl «արօս թռչունը» (Կամուս, Թրք. Թրգմ. Գ. էջ 344)=պրս. لیلك lîlak թռչունը?

ԳԻՒ.—Նո՞յն է Ղրբ. լէլակ «մի տեսակ բազէ՝ որ որս չի անում»։

ԼԵՆԵԼ *«ջարդել, փշրել». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Յայսմ. դեկ. 20 «Խիստ զանիւ բրածեծ արարին զնոսա և ի համարձակ պատասխանելն՝ քարշեցին ի վերայ քարանց, մինչ զի լեխեցան ամենայն անդամքն ոսկերացն»։*

Ս. Մովսիսեան (Նամակ 1928 դեկտ. 9) համարում է բառ քրդ. հմմտ. լէխըսաբն «զարնել», հրմ. լէխէ՛ «զա՛րկ». խոնարհւում է ներկ. լէ դրխըմ, լէ դրխի, լէ դրխէ, կտր. լէ խըսատ են, որից երևում է որ լէ «նրան» դերանունով է կազմուած։—Այս դիտողութիւնը շատ կարևոր մի հարց է յարուցանում։ Ըստ որում բառը ստուգաբանւում է քրդերէնով, ուստի բուն քրդերէն է և հայերէնը փոխառեալ։ Բայց Յայսմաւուրքի գրութեան ժամանակ (երէ յիշեալ հատուածը հին է), կարո՞ղ էր քրդերէնը բառեր տալ հայերէնին։ Միևնոյն ժամանակ՝ նկատելով որ բառը գտնւում է նաև վրացերէնում՝ ლახვა լախվա «ծեծել» ձևով, պէտք է ենթադրել թէ քրդերէնն է փոխառեալ հայերէնից և յետոյ ժողովրդական ստուգաբանութեամբ համարուած է լէ դերանունից։ Կարող է նաև բոլորովին պատահական լինել։

ԳԻՒ.—Վն. լէխել «ջարդել, փշրել, մանրել. 2. սաստիկ ծեծել», որից լեխուիլ «ջարդուիլ, փշրուիլ, սաստիկ ծեծ ուտել», լեխտել «ծեծելով կամ քարով զարնելով մանր մանր ջարդել, փշրտել», լեխտուիլ «կտոր կտոր լինել, ջարդուիլ», Բաբալեխ Նբ. Վն. «քարով ջարդած», լեխլեխ (Rivola) «ջարդուած, մանրուած»։

ՓՈՒ.—Վրաց. ლახვა «бить, колотить, топтать, ծեծել, թակել, կոխտել».—երէ միայն թէ՛ հայը և թէ վրացին խալդեաններից չեն։

**ԼԵԿԱՔ «պապական նուիրակ» Գիրք Թղ. էջ 503. Սմբ. պտմ. տպ. Փարիզի. էջ 94, տպ. Մոսկ. էջ 81. Սկևռ. պտմ. էջ 8—11, 19—20, 22, 25, 27, 31, 32, 34, 38, 43, 45 եև. (գրուած նաև լիկաբ)։*

=Լտ. legatus «դեսպան, պատգամաւոր, պապական նուիրակ», Ֆրանս. légat:

Հներից ուղիղ մեկնեց նախ Մխ. սկևռ. էջ 7 «եկն ի կողմանցն յիտալիոյ և ի Հայրապետէն Հռովմայ լիկաթ ըստ լատինացւոց բարբառոյ, որ թարգմանի ի լեզուս մեր դեսպան, բայց ներգործութեան նուիրակ»։ Նորերից տե՛ս M. Grammont MSL 20, 255, որից յետոյ Աճառ. Հայ. նոր բառեր հին մտ. Բ. էջ 245։

ԼԵԿԱՆ *տե՛ս Լական։*

ԼԵԿՈՒՐ *«ամուր, սեղմ». նորագիւտ բառ՝ որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Ուռհ. 137 «Փոխանակ լեկուր գրեհացն, զոր քաջքն զգենուին, նոքա զծոցն հանդերձիցն լայն և երկար արարին»։*

Վրաց. ლეკური լեկուրի նշանակում է «լեկզիական»։

ԼԵԿՐՈՏ *«մի տեսակ դիւահար՝ որ միշտ ու-*

գում է պարել». նորագիւտ բառ՝ որ մէկ անգամ ունի Կիր. ապ. Վենետիկ, էջ 183 «Եւ լեկրոտք, որ երթային առ նա, ասէր թէ խաղացէք առաջի իմ և պարեցէք. և նոքա առնէին զայս յօժարութեամբ, քանզի այս ազգ դիւաց ախորժեն զխաղ և զպար» (տպ. Մոսկուա, էջ 193 լեկրոդ)։—Այս հիւանդութիւնը ծանօթ է նաև հիմայ Ղարաբաղում և կոչւում է հղլացավ (=խաղալացաւ)։

Ալիշան, հրտր. Կիր. էջ 183 մեկնում է «ոտնաառեալ կամ պատագրոս»։ Վերի ձևով մեկնեց Աճառ. Հայ. նոր բառեր հին մատ. Ա. էջ 75։

**ԼԵՇԵՖ «ծածկոց». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Վստկ. 20. «Զցորեանն մնշեա այնու երեք չորս հետ, որ ազէկ թանուի սերմն և լեհեֆով ծածկեա»։*

=Արաբ. لحاف lihāf «ծածկուելու կամ փաթաթուելու բան, ինչպէս՝ վերմակ, սաւան ևն» (Կամուս, Թրք. Թրգմ. Բ. 840). սրանից են փոխառեալ քրդ. lehif, lihaf, բելուճ. laihaph, ուտ. laifa, նոր ասոր. ܠܚܝܦܐ lxīfā, գնչ. lik'ev «ծածկոց»։—Աճ.

Այս մեկնութիւնս հրատարակած եմ նախ Գէտ. բառ. էջ 419։

ԳԻՒ.—Կենդանի է շատ բարբառներում «վերմակ» նշանակութեամբ. ինչ. Տր. Տփ. լեհէք, Երև. Ղրբ. Ջղ. լհէք, Վն. լհէֆ.—արտերէնի մէջ էլ՝ ըստ Կամուսի, աւելի սովորական է «վերմակ» նշանակութիւնը։

**ԼԵՀԼԻ «ձիու վրայի ծածկոց՝ եւրոպական ձևով. ֆրանս. housse de cheval» (նորագիւտ բառ). Սմբ. գունդ. Լմբ. առ լև. 1865, էջ 240 (գործիական լեհլով ձևով)։*

=Մրգ. līlach, līlachen, գերմ. Leilachen, Leilaken, հնագոյն ձևը lîn-lahhan «սաւան», որ կազմուած է lîn-lein «վուշ» բառից (Kluge 301):

Գտաւ ու մեկնեց բառս Brosset JAs. 1861, 320:

ԳԻՒ.—Սեբ. լէիլի «ակումբ մաշկեայ, մինդար»։

ԼԵՂ «պաղլեղ, շիբ» Մխ. Հեր. 73. Գաղիան. Բժշ. Արիստ. գրչ. սրանից են կազմուած սեւալեղ «արջասպ», պաղլեղ, շալեղ կամ շապլեղ, պաղ շալեղ, տաճիկ լեղ:

ՆՀԲ համարում է «ծարիր». ուղիղ բացատրութիւնը տուաւ Նորայր, Բառ. ֆր. 49 ա, ուր և տե՛ս բառիս վկայութիւնները։

ԳԻՒ.—Ասղ. շրլեղ «պաղլեղ», Ղրբ. լղել «թելը ներկելուց առաջ եփած շմաթի մէջ դնել՝ ուր ձգուած է նաև պաղլեղ»։

**ԼԵՂԱԿ, ի–ա հլ. «մի տեսակ կապոյտ ներկանիւթ. 2. նոյնը արտադրող բոյսը» Գաղիան. Վստկ. 203. Բժշ. որից լեղկի հուռճա Բժշ. (իբրև թրգմ. արաբ. حبّ النيل habb-al-nīl «convolvulus Nil» բառի, որ տարբեր բոյս է. տե՛ս Կամուս, Թրք. Թրգմ. Գ. 370).—Կամրկապցին սխալ կարդալով Գաղիանոսի ձեռագիրը՝ գրում է լելեղակ, որ նոր վրիպակով ՀԲուս. § 896 շինում է լելեզակ «եղիճ» (տե՛ս Նորայր ՀԱ. 1922, 396)։*

*=Պհլ. *lēlak բառից՝ Ինչպէս բոյսի և ներկանիւթի, նոյնպէս և բառիս ծագումը հրնդիկ է. համմտ. սանս. नील nīla, հինդուստ. نيل nīl «կապոյտ. 2. լեղակ», ليل līl «լեղակ», գնչ. nilé, nili. «կապոյտ».—սրանցից փոխառեալ են պրս. نيل nel «լեղակ», ناله nēla կամ نيلى nēlī «կապոյտ գոյն». պարսկերէնից փոխառեալ են արաբ. نيل nīl «լեղակ (բոյսը)», نيلج nīlaǰ «լեղակ (նիւթը)», որոնք անցնելով Եւրոպա, տուել են սպան. añil, añir, պորտ. anil, հին ֆրանս. anil «լեղակաբոյս», որից aniline քիմիական մարմինը։ Հայ բառը ծագում է պհլ. *lēlak ձևից, որի պրս. ناله *lēla ձևից են յառաջացած վրաց. ლოლა լիլա և նոր յն. λουλάκι «լեղակ»։—Հիւբշ.*

Ուղիղ մեկնեց նախ Հիւբշ. ZDMG 35 (1881), 660, որ մոռացել է յիշել Arm. Gram.

ԳԻՒ.—Ջղ. լեղակ, Ագլ. Ախց. Գոր. Երև. կր. Ղրբ. Շմ. լէղակ, Ասղ. Ննխ. լէղագ, Տփ. լի՛ղակ, Զթ. լէղօգ, լէղոգ, Մկ. Սլմ. լօղակ, Մշ. լօղագ:—Նոր բառեր են լեղակաջուր, լեղակշրել, լեղկապոյտ:

**ԼԵՂԱՆԳ «կերակուր մը՝ կարգ կարգ շինած». ունի միայն ԱԲ։*

=Պրս. لالنگ lālang «նշանակէ զայն սակաւ կերակուրն, զոր բառնան ի սեղանի զկնի ուտելոյն. 2. և այլուր ասի՝ թէ է կերա-

կուրն այն, որ լինի վասն կերակրելոյ զհաւասարակութիւնն. 3. իսկ ըստ մեկնելոյ Շահիի բանաստեղծին՝ նշանակէ քաքար, Թրք. պիշի. և է սա հոչակեալ իմն ի մէջ Թուրքաց, զոր ի մէջ իւղոյ ի տապակի եփեալ ի գիշերս ոճնից իւրեանց, բաշխեն վասն հոգւոց մեռելոց. զոր տիպլէ ևս կոչեն։ Եւ գիտելի է զի Թուրքական բառս լալաճղի՝ է աղաւաղեալ ի բառէն lālang» (ԳԴ)։ Հայերէնին յարմար է երրորդ նշանակութիւնը (քաքար, պէօրէք), որի հետ նոյն են Թրք. ăăiɣɣ lalanga «իւղի մէջ եփուած ջրոտ խմոր» (Աբիկեան, Բառ. տճ. էջ 497), վրաց. ლელენგო լելենգո «իւղի մէջ տապակած կլոր խմորեղէն» (Ջուբ.² 647)։— Ա.Ճ.

Վերի մեկնութիւնս հրատարակուած է նախ MSL 15, 242: Պատահական նմանութիւն ունի յն. λάγανον «թերթերով կարկանդակ»։

ԼԵՂԻ *(-ղւոյ, -ղեաւ) «լեարդի լեղին» ՍԳր. Ագաթ. «դառն» Ոսկիփ. գրուած է նաև ղեղի (այսպէս օր. կրկնագիր Ագաթ. Յուշարձ. էջ 107, Եփր. դևտ. էջ 214), լեղ՝ որ բուն արմատական ձևն է, և որից կազմուած են լեղաճամ Կոչ. 260 (տպ. լեղեճամ), լեղախառն Մծբ. լեղութիւն Ոսկիփ. վսակ. նաև ղեղաման «լեղիի պարկը» Կալիսթ. 172. ղեղատոր Ցճխ. առաջին ձևից է մեծալեղի Ոսկիփ։*

Peterm. *29 լտ.* fel, bilis, *համմտ. յն.* χόλος «լեղի, մաղձ»։ *Տէրվ.* Altarm. 26 *հգերմ.* gallan-, *դերմ.* Galle, *հսլ.* žlŭtĭ, *փարս.* zāra, *յն.* χόλος, χολή, *լտ.* fel, fellis *ձևերի հետ։ Հիւնք. յն.* γλυκύς «քաղցր, նշանակէ և երբեմն լեղի»։ Patrubány *ՀԱ 1908, 246 լտ.* lascīvus «թօլ, խենթուկ, աշխոյժ» *բառի հետ։*

ԳԻՒ.—Վն. լեղի, *Ջղ.* լեղին, *Ոզմ.* լէղէ՛, *Ագլ. Ալշ. Ախց. Ակն. Գոր. Երև. Խրբ. Կր. ՀՃ. Համշ. Մշ. Նախ. Պլ. Ռ. Սլմ. Սչ. Տիգ.* լէղի, *ՋԹ.* լէղը՝, *Ասլ.* լէ՝ղի, *Սեբ.* լոդի, *Տփ.* լի՛ղի, *Շմ.* լըղի, *Մրզ.* լէօղիւ, լեղու, *Մկ.* լէղը, *Ղրբ.* լըղէ՛. *բոլորն էլ ունին թէ՛ «լեղապարկ, մաղձ» և թէ «դառն» նշանակութիւնները. միայն Խրբ. տարբերում է լէղի «դառն» (ած.) և լէղուցք «լեղի» (գոյ.), Շմ.* լըղի *(գոյ.) և աղու-լըղի (ած.), Տիգ.* լէղի *(ած.) և* լէղոգ *(գոյ.), Ղրբ.* լղէ *(գոյ.) և* աղու *(ած.)։ Նոր բառեր են* լեղաճամ, լեղապատառ, լեղակըտուր, լեղաճալ, լեղուաճալ, լեղամամ, լեղիմարխ, լեղնտրուկ, լեղուխլ, լեղվոքայ, անլեղի, *յատկապէս յիշելի է* լեղին Սվ. «լեղապարկ»։

*ԼԵՂԻՆՋ «լեղակ», *որից մշկաձ* լեղինջ, *յետոյ սխալմամբ դարձած մշկաձ* եղին Գաղիան.

=*Արաբ.* lilanǰ, līlaǰ, *որ է պրս.* līlang «լեղակ». *աւելի ընդարձակ տե՛ս* լեղակ։

Ուղիղ մեկնեց Նորայր ՀԱ 1922, 397։ Բայց յիշեալ արաբ. և պրս. բառերը չգտայ Կամուսի և Գէորգ Դպրի բառարաններում։

ԼԵՂՈՒԻ «ջրի մէջ հարելով հալեցնել, ջրով հարել». *ունին միայն ՋՔ և ԱԲ, իբր գւո. բառ։*

ԼԵՂՏ «դիրտ, մրուր, աղտ, կեղտ». *գիտէ միայն Տիրոյեան, Հանրագրութ. 418։*

ԼԵՆԴԱՆԱԼ. *անստոյգ նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Ոսկ. ը. յիշ. խրթնաբան մի հատուածի մէջ. «Ալացմամբ սարսափելեաւ սօսինաթագ սաւառնելոցն քառիցն հակակայից ընդլծակցութեամբըն ներշրջանապատոյտ պակուցմամբ ահեղատպոյ գնդին երկիւք եռակեան թևօքն պարածածկութիւ ի թնդմանէ առ նոսայն բնբաքամ գիտնականութեամբն եղեալ. և լենդացեալ պարիսն պակչելեաւ յոլորտս ցանկասփիւռ տափականութեամբն բազմաբերձն ձօնիւք աշացն»։*

ԼԵՇԿ *(գրուած նաև* լեաշկ, լաշկ) «խաւար թափած, մաշուած, լերկ» *Ոսկ. ա. տիմ. ը. Եփր. երբ. որից* լեշկամաշկ *կամ* լաշկամաշկ *երբ. ժա. 37. Եփր. երբ. 227. Բուզ. գ. 15.* լեշկիլ «մաշիլ, ձարձրիլ (ղգեստի)» *Ոսկ. փիլիպ. Բ.* լեշկեայ «մորթէ ղգեստ, մուշտակ» *ԱԲ. կայ նաև* լեշկատ «առատմները թափո՞ծ» *Աղթամ. (Հրտր. Կոստ. էջ 118)։*

ՆՀԲ «որպէս թէ լեսեալ, լծ. իտալ. liscio «ողորկ»։ Lag. Arm. Stud. § 919 *պրս.* لشك lašk «կտոր, մաս», *որից* لشك لشك laška laška «կտոր կտոր, մաս մաս»։ *Հիւբշ. 157 չի ընդունում՝*

նշանակութեան տարբերութեան պատճառաւ։ Մառ, ИАН 1911, 144 նոյն ընդ լերկ (2 գարձած r), լազ. lostoni «ոդորկ, հարթ», որոնց վրայ Яз. и. лит. I 270 ուելացնում է բասկ. legun «սահուն, հարթ», leratzen «հարթել»։ Ղափանցեան ЗВО 23, 357 յառաջացած լերկ բառից. ինչպէս է կարկաո>կաշկաո: Petersson, Arische u. Arm. Stud. 91 կ մասնիկով լես-ուլ բայից. իբր հնխ. lek̑ṷo->լեշ-կ (տե՛ս լեսուլ)։ Պատահական նմանութիւն ունին հբդ. loski, գերմ. lösche, լեհ. հնխ. leš «մի տեսակ բարակ կարմիր կաշի» (Berneker 702), արար. لقش laqš «շատ հնացած չոր տիկ» (Կամուս, Բրբ. Բրգմ. Բ. 350)։

Գիհ.—Ալշ. լըշկ «մխ՝ որի մէջ ծամ ու ջիզ շատ կայ»,—Rivola, Բառ. հայոց 1633, էջ 154 լաշմխս «նիհար ու ջղոտ մխ», Ջղ. լեմբշ «նիհար անիւղ մխ».—նաև Երև. լէշ «հորթի տիկ՝ մէջը կուպր չքսած, որով քաղցու են կրում», Վն. լակաշ «հին, մաշած ու պատռած կօշիկ».—առաջին երեքը կարելի է կցել լեշկ բառի հետ. բայց վերջին երկուսը թուում է թէ ծագում են արաբ. laqš ձևից։

Լ.ԵՊԵՇՏԻ «լպիրշ, լիրբ, աներես» նոնն. էջ 72 «Այր ոմն Թերսիտէս, որ էր կաղ և խեղ աչօք, կորովի և լեպեշտի, լերկ և սրագլուխ և յառաջաթօս» (այլ ձ. լպեշտի, ղեպեշտի)։ Ուրիշ օրինակ չկայ։

*Լ.ԵՊԻԹՈՔԱՂԱՈՍ «պղնձի փշրանք» Բժշ. (որ ականջի մէջ ածած մսի իբր դեղ է առաջարկում)։

=Յն. λεπιδόχαλκος նոյն նշ։

Բժշկարանում իրարից անջատ գրուած լինելով լեպեդիս, ֆաղկու, ՀԲուս. § 904 դնում է լեպեդիս «նուաղուկ բոյսը»= լտ. lepidium ? և § 3126 ֆաղկու «անծանօթ մի բոյս»։ Վերի ձևով ճշտեց ու մեկնեց Նորայր ՀԱ. 1921, 233 և 1926, էջ 69։

*Լ.ԵՊՈՒ «բորոտութիւն». առանձին գործածուած չէ. սրանից ունինք լեպռոս «բորոտ». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Լծ. նար. ձէ. «Զբորոտն ասէ՝ որ կէտ կէտ լինի. նա՛ զոր պիսակոտ և լեպռոտ ասեն»։

=Յն. λέπρα «բորոտութիւն», որից և ֆրանս. lépre, լտ. lepra, անգլ. leprosy են։— Ա.Ճ.

+Լ.ԵՍ, որից լեսուլ (կտ. լեսի, հրմ. լե՛ս) «մանրել, փշրել, փոշի դարձնել» Բուց. ժա. 8, Բ. Քագ. իբ. 43. Մագ. «ճզմել» Վրք. հց. լեսած «ծեծած, մանրած» Ա.Բ. լեսան «վրան բան լոսելու քար» Առաք. պտմ. 457. այս արմատի ձայնդարձն է լոս, որ հնից աւանդուած չէ, այլ կայ միայն յետնաբար. ինչ. լոսել «մի կարծր նիւթ ծեծելով փոշիացնել» Առաք. պտմ. 454. Բառ. երեմ. 287. լոսիլ «փշրուիլ, կտոր կտոր լինել» Սմբ. պտմ. էջ 77։

=Բնիկ հայ բառ՝ հնխ. qlek̑-, qlok̑- արմատից, որ է qleik̑- «ցաւացնելու չափ սեղմել, ճնշել, ճզմել»։ Ժառանգները պահում են միայն հնդիկ և բալթիկ-սլաւեական լեզուների մէջ. համմ. սանս. kliç-, kliçnā́ti «տանջել, չարչարել, նեղել, ճնշել», kliçyate «նեղուիլ, ցաւիլ», kléça- «ցաւ, նեղութիւն», są-kliç- «չարչարել, նեղել, ճզմելով ջարդել, ճմլել», լիթ. klišė «խեցգետնի ճանկեր», հսլ. klěšta «ունելիք, աքցան», klěštiti «ճնշել, սեղմել», sъ-klěštatisę «չարչարուիլ», ռուս. klešnja «խեցգետնի ճանկեր»,klestitь «սեղմել, ճընշել», չեխ. s -klesnouti «սեղմել (շրթունքները, ատամները), ատամներով բզկտել», ուկր. klišči «աքցան», լեհ. kleśnić «կռել, կողոպտել», ռուս. գւո. клести «սեղմել, (Trautmann 137, Berneker 516—7, Pokorker 516—7, Pokorny 1, 492)։— Ա.Ճ.

Lag. Urgesch. 1010 լտ. lacerare «խորտակել, պատռել ևն»։ Նոյն, Arm. Stud. § 920 ուելացնում է նաև յն. λακερός, λακίς «պատառուածք, պատռած կտոր», բայց երկուսի էլ նոյնութիւնը մերժում է։ Հիմնք. յն. λεαίνω «լեսուլ», λέανσις «լեսուլն»։ Թիրեաքեան, Արիահայ բռ. 174 պհլ. listan, պրս. listan «լիզել, մանրել»։ Petersson, Ar. u. Arm. Stud. 91 հսլ. և ռուս. листъ «տերև, թերթ», լիթ. laĩszkas «տերև, թերթ», հպրուս. laĩskas «գիրք»,— սանս. liçáti, riçáti «քաշել, խլել, խորտակել»,

lestu- «դուզձ», օսս. list «տաշեղ», listäg «նուրբ, բարակ» բառերի հետ. բոլորի արմատը դնում է հնխ. leik'- «փրցնել, ճեղքել», որի lek'- ձայնդարձից հյ. լես-ուլ: Վերի համեմատություններից առաջին խումբը սոսյդ է (Berneker 724, Trautmann 148). երկրորդ խումբը առաջարկել է Pedersen IF 5, 79, սակայն չէ ընդունուած, որովհետև նրանց նախաձևը ենթադրելի է և ձայնով (համմտ. Berneker անդ). սրանով լեսուլ բառի կապն էլ չնչւում է, որովհետև «թերթ» և «լեսուլ» կապակցելի գաղափարներ չեն:

ԳԻՒ.—Ակն. լոսիլ «մանրել, փշրել», Ջղ. լիսել «յղկել, հարթել», Մշ. լոսել «դերանդի են սրել, գլուխը սանտրել», Խրբ. լօսէլ «բիրով ծեծել?—Նոր բառեր են լոսուիլ Զրբ. «մաշիլ, գործածուելով երեսի խաւը երթալ, բարակնալ», լոսուէ Բիւթ. Ջն. «մանրուանք, փշրուած կտորներ», աղուլոս, աղլոց «ջարդուփշուր».—տե՛ս և յետաձ՝ որ այս արմատի հետ խառնուելով՝ տեղ տեղ դարձել է լեսաձ:

ՓՈՒԽ.—Վրաց. ლეხვა լեսվա «սրել, փրչրել, լեսուլ, փոշի դարձնել, յղկել, հարթել, փայլեցնել», ხალეხავი սալեսավի «յեսաձ կամ կոկիչ քար՝ գոյներին միապաղաղ ձև տալու համար», მოლეხა մոլեսա «սրել, փոշի դարձնել»:

ԼԵՍՈՒԻՐ տե՛ս Կղեսուր:

ԼԵՏԱՆԻԱ տե՛ս Լիտանիա:

ԼԵՐԴԵԱԼ «լքեալ կամ ձանձրացեալ». ունի միայն Բառ. երեմ. էջ 132:

+ԼԵՐԿ (յետնաբար ի հլ.) «անմազ» Ծն. իէ. 11. «խուլ կամ անթրթիռ բաղաձայն, ինչպէս են պ, կ, տ, ծ, ճ» Երզն. և Թր. բեր. (այս իմաստով գրուած է նաև դերկ). որից լերկամորթ Վեցօր. 138. լերկութիւն Փիլ. այլար. լերկանալ Միսայէլ խչ. լերկամարմին Նար. լերկել «կողոպտել, մաշկը հանել» (նորագիւտ բառ) Աթան. էջ 562, Վրք. հց. Ա. 39, Գրուած է լեկ Ադամ. էջ 139 (Մարդն ծաղկի մօրուաց մազով, բայց կինն լեկ է երեսով):

=Մեկնութիւնը տե՛ս ողորկ, որի հետ նոյն է, իբր բնիկ հայ բառ:

ՆՀԲ լեշկ բառի հետ: Հիմնք. լե՛ր հրամայականի՞ց, թէ ապալեր բառից: Ուղիղ մեկնութիւնը տուաւ Lidén: Մառ տե՛ս լեշկ բառի տակ: Petersson, Ar. u. Arm. Stud. 87 թէև ընդունում է Lidén-ի մեկնութիւնը, բայց առաջարկում է և մի ուրիշ մեկնութիւն. այն է յն. λοιμός «մերկ», ἀπολόγιατος «մերկացում», λορός «պատիճ», լտ. legumen «բանջարեղէն», ալբան. l'akur «մերկ» են, բոլորն էլ հնխ. lag^{w} արմատից:

ԳԻՒ.—Ալշ. լերկ (կաշիի կամ սարի՝ լեռան համար ասուած).—ըստ որում լերկ բառը՝ ր ձայնի անկմամբ զարձած է նաև լեկ, ուստի նոյն են համարում գւռ. լեկ Ալշ. Խոջ. Խ. Վն. «ոշխարի բարակ և լերկ մորթ՝ կաշի». իմաստի զարդացման համար համմտ. ալբան. l'akur «մերկ» և l'kur «կաշի»:

*ԼԵՒԻԱԹԱՆ (սեռ. այ կամ ի–ա հլ.) «ծովային վիշապ, մեծ դազան կամ կէտ» Սարկ. քհ. (Սոփերք հտ. Գ. էջ 49), Անան. Թրգ. 5—6. Լմբ. ժբ. մրգ. էջ 142 (ամբակ. ա. 14), Նար. Մխ. առակ. Վրդն. ծն. և սղ. պտմ. էջ 4 (գրծ. լեւիաթանաւ). գրուած է նաև ղեւիաթան Նար. մծբ. 446:

=Եբր. לִוְיָתָן livyaṯān «առասպելական էակ. օձ կամ կոկորդիլոս, ծովային մեծ գազան». ծագում է lvḥ «հիւսել, ոլորել, գալարել» արմատից (օձի գալարների համար այսպէս կոչուած): Ս. Գրքի թարգմանութեամբ անցած է այլևայլ լեզուների. ինչ. յն. λευιαθάν, լտ. ֆրանս. անգլ. leviathan ևն:

Ըստ ՆՀԲ բառ եբր:

ԼԵՓ «շեղ, զառիվայր». գործածուած է միայն Բ. մակ. ժգ. «Եւ դուռն առ ի շեղ ի ներբսակողմն ի մոխիր անդր առ լեփ շինեալ» (ձեռ. ընթերց. առ լեգ, առ լեր):

ՀՀԲ մեկնում է լեփ «կորուստ, մահ», Bugge KZ 32, 84 համարում է կովկասեաններից փոխառութիւն. համմտ. աւար. labál «զառիվայր», labdá, labái «զառիվայրի վրայ»: Թիրեաքեան, Աբրահայ բռ. 173 պրս. لب lab «շրթունք, եզերք» բառից:

+ԼԵՑ. արմատ առանձին անդործածական. որից լիզել Գ. Թագ. իբ. 38. Ես. խթ. 23. Միք. է. 17. լիզուլ Յուդթ. է. 4. ճառընտ. լիզանել

Թուց իբ. 4. լիզաջինջ առնել *նւս. պտմ. ժ. 8. ՅՀ. կթ.* սրանց նախաւոր ձևերն են *լէզել, *լէզուլ, *լէզաճել, *լէզաջինջ. *բուն արմատը՝* լեզ *գտնւում է նորակերտ պճակալեզ բառի մէջ։ Արմատի երկրորդ ձևն է* **լեզ**, *որից կազմուած են* լեզուլ *Ղկ. ժզ. 21. Մծբ. Խոր. և Թեղևս* առլեզ, յարալեզ *բառերը։ (Հիւբշման կարծում է որ այս ձևը* լեզու *բառի վրայից կազմուած նոր ձև է. համմտ. մանաւանդ* լեզվել *տարօրինակ ձևը՝ որ ունի Յայսմ. Հոկ. 11)։*

=*Բնիկ հայ բառ՝ հնխ.* leig'h- *(աւորին ձայնդարձը* lig'h-) *արմատից. համմտ. սանս.* lih, lihati, léḍhi, rih, rihanti, réḍhi, *զնդ.* raez-, riz-, *պհլ.* lištan, *պրս.* لشتن lištan, *նեբկ.* لیسم lēsam, *յն.* λείχω, λιχνεύω, *լատ.* lingo, *գոթ.* bi-laigōn, *անգլսք.* liccian, *հբգ.* lecchōn, *գերմ.* leckon, *անգլ.* lick *(գերմանականից փոխառութեամբ իտալ.* leccare, *ֆրանս.* lécher), *հսլ.* lizati, liž ǫ, *ռուս.* лизать, *լիթ.* lēszti, lēžiu, *լեթ.* làizu, *հիւլ.* ligim, *կիմր.* llyaw, *բրբտ.* leat *են, բոլորն էլ «լիզել» նշանակութեամբ (*Walde 432, Boisacq 568, Berneker 726, Trautmann 155, Kluge 297, Horn § 954, Pokorny 2, 400, Ernout-Meillet 523)։ *Արմատը կայ նաև* s *յաւելուածով. համմտ. հիսլ.* sleikia *«լիզել», մբգ.* slecken, *գերմ.* schlecken *«ուտելու մէջ բծախնդրութիւն անել» են։ Հյ.* լեզ *ծագում է հնխ.* leig'h *(>յն.* λείχω*) ձևից, իսկ ածանցական* լիզանել *բայի* -ան- *յօդը գտնում ենք յն.* λιχ-ν-εύω *ձևի մէջ. այսպէս նաև լտ.* lingo, linxi։—*Հիւբշ. 452։*

Ուղիղ մեկնութիւնը տուաւ նախ ՆՀԲ, յետոյ Peterm. 23, 37 *(իսկ էջ 74 համեմատում է և լակել),* Böttich. ZDMG 1850, 355, Müller SWAW 38, 580, *Պատկ. Փորձ 1880 մարտ, էջ 87, Տէրվ. Նախալ. 103 են։ Հիւնք.* լեզու *բառից։ Արմատի զանազան ձևերի վրայ ընդարձակ խօսում է* Meillet MSL *16, 239—242։ Պատահական նմանութիւն ունի արաբ.* لحس lahs *«լիզել» (Կամուս, Բ. 288)։*

Գիւռ.—Ալշ. Հճ. Մշ. Ջղ. լիզել, *Ախց. Երև. Կր.* լիզէլ, *Զթ. Շմ. Ոզմ.* լիզիլ, *Համշ.* լիզուշ, *Սլմ. Սչ.* լզել, *Մրղ. Ննխ. Պլ. Ռ. Սեբ.* լզէլ, *Տիգ.* լըզէլ, *Ասլ.* լզ՛լ, *Ակն. Խրբ. Տփ.* լզիլ, *Մկ.* լէզիլ, *Ագլ.* լէ՛զիլ, լէ՛յզիլ, *Գոր. Ղրբ.* լի՛ւզիլ։ *Նոր ձևեր են* լիզ տալ *Ղզ.,* լիւզ տալ *Ղրբ.* «լիզել», լիզլիզատել, լիզմիզել, լզվռտել, լզվտել, լզվտուիլ, լզվռտկել, *որոնք սաստկական կամ յաճախական ձևեր են։—Նոյն արմատից է երևում նաև Պլ.* լէզ *«ջուրը երկար մնալուց յառաջացած լորձնային նիւթ»։*

Փոխ.—Վրաց. ლეზვი լեզվի «թուք, շողիք»։

***ԼԷՆՕՏՕՖՕՆՈՍ** *«մի տեսակ կենդանի», նոթագիտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Գիրք առաք. էջ 553 ա. «Առիւծքն... երկնչի ի կենդանւոյն ինչ, որ կոչի լէնօտօֆօնոս, զորոյ մազն եթէ կլանիցէ առիւծքն նոյն ժամայն մեռանի»։ Պէտք է ուղղել* լէօնտօֆօնոս. *իբր*

=*յն.* λεοντο-φόνος *«մի տեսակ ճճի, որ թունաւորում է առիւծն» (բուն նշանակութիւնն է «առիւծասպան»։—Աճ.*

+**Լի**, n *հլ. «լցուած» ՍԳր. «անպակաս, լրիւ, ամբողջ» Հռութ. ա. 21. Ա. մակ. ժբ. 9. որից* լի կատարեալ *Սղ. հբ. 10. Եւս. պտմ.* լի առնել *«լցնել» Գ. մակ. զ. 15. Ագաթ.* լիաբերան *Եփր. ա. Թգ.* լիաձիգ *Սղ. ի). 9. Ոսկ. ես.* լիագիրկ *Ոսկ. ես.* լիակատար *Եւագր.* լիամագիլ *Եզեկ. ժէ. 3.* լինլի *Կոչ. Եւս. պտմ.* լիուլի *Եփր. կող. Ոսկ. Եւս. պտմ.* լիութիւն *ՍԳր.* լիանալ *(որից գւռ.* լենալ*) ՅՀ. իմ. եկեղ.* լիացուցանել *(որից գւռ.* լեցնել*) Ոսկ. յհ. ա. 26.* ննգալի *Մծբ.* պաստառալի *Մծբ.* պտղալի *Եփր. ծն.* գանալի *Ճառընտ.* դառնալի *Մծբ. ՅՀ. կթ.* թիւնալի *Ճառընտ. այստեղ է պատկանում նաև* լման *«ամբողջ, ի լի» Մեծոփ. Օսնաց. Տաթև. ամ. 318 գաւառական ձևը, որից ածանցուած է* լմնել *«կատարել, գործադրել» Վրդն. պտմ. տպ. Վեննետ. էջ 158 (=էմ. էջ 208)։ Նոր բառեր են* լիագօր, լիագօրագիր, լիագօրութիւն, լիագօրել, լիաբոշակ, լիաբոմ, լիայոյս, լիաշոգի, լիասիրտ, սրկածալի, արհաւրալի *են։ Արմատը ներկայանում է նաև հետևեալ ձևերով.—* **լճուլ** *«լցնել» ՍԳր. Ոսկ. կոչ.=փխ.* *լինուլ, **լից**, *որից* լցուցանել *ՍԳր.* լցիչ *Վեցօր.* հացալից *Երեմ. խդ. 17. Ղկ. ժե. 17.* ջրալից *Ես. ծբ. 11.*

թեռալից Գ. մակ. դ. 5. գիջալից Մծբ. գանալից Բ. մակ. դ. 38. Ագաթ. Ոսկ. մ. ա. 9. Սեբեր. եռանդնալից Եւս. պտմ. թարախալից Ոսկ. մ. բ. 3. խոտալից Ոսկ. ես. ծխալից Եփր. եվ. կարգալից Ոսկ. ես. թշնամանալից Իմ. ժէ. 7. ժանգալից Մծբ. բովանդակալից (նոր բակերտ).—լիր, ի հլ. «լրումն, բովանդակութիւն» Սղ. խգ. 1. Երեմ. բ. 16. Ոսկ. յհ. բ. 34. որից լիր առկանել «խրամը՝ փոսը՝ ձորը լցնելով բարձրացնել» Եւս. քր. ա. 175. Կիր. էջ 50. լրութիւն «ամբողջութիւն» ՍԳր. «յագուրդ. առատօրէն ուտելով կշտանալը» Առակ. իդ. 15. Կող. բ. 23. «աւարառումն» Եզեկ. ե. 2. «համօրէն բազմութիւն» Ոսկ. յհ. ա. 13. լրումն ՍԳր. լրանալ Բրս. մրկ. լրիւ ՍԳր. Ոսկ. ծայրալիր Եզիշ. բեռանալիր Ես. ք. 12. Եզեկ. իա. 22. Կորիւն. բռնալիր Մրկ. է. 3. ծորալիր Ես. լ. 28. պաստառալիր Առակ. է. 16. այստեղ է պատկանում նաև ֆարիճս լրի (տե՛ս իմ Հայ. նոր բառեր մնաց. գրոց մէջ, էջ 15)։

=Բնիկ հայ բառ՝ հնխ. plē- արմատից. համմտ. սանս. prā, píparti, pṛṇáti, pṛṇoti «լցնել, յագեցնել, ճոխացնել, լիացնել», pūrṇá-, prāṇa- «լի», հպրս. paru- «շատ», գնդ. par «լցնել», pərəna «լի», pouru- «շատ», frāna «լրութիւն», պհլ. պրս. քրդ. աֆղան. բելուճ. پر pur, զազա pîru «լի», հինդուստ. pūra «լի», գնչ. perdo «լի», perava «լցնել», բոշա por, p'or «լի», յն. πλήρης «լի», πίμ-πλημι «լնուլ» (կտր. πλῆσε), πληρόω «լցնել, լրացնել», πλέως «լի», τολυς «շատ», հոմեր. πλεῖος «լի», լտ. plēnus «լի», plēri-que «մեծամասնութիւնը», pleo «լցնել», ex-plē-nu-nt «լնուն», հիռլ. il «շատ», lia «շատերը», lān «լի», līnaim «լնում», lour «բաւական», կիմր. llwyr «ամբողջ, բոլորովին», llawer «շատ», հիսլ. fleiri «շատ», գոթ. հրգ. filu «շատ», գերմ. füllen «լցնել», viel «շատ», voll «լի», լիթ. pilnas, pilus «լի», հպրուս. pilnan «բոլորովին», հսլ. plŭnŭ, ռուս. полно, полный «լի», ալբան. pl'ot «լի» ևն (Walde 592, Boisacq 783, 795, Trautmann 218, Horn § 294 ևն, Pokorny 2, 63—65, Ernout-Meillet 743): Այս բոլորի հնխ. արմատները էին pel, pol, pl, երկավանկ pelē-, plē- «լցնել, լնուլ»։ Մեր բառը ծագում է ստորին ձայնդարձի plēyo- ձևից (>հոմեր. πλεῖος «լի»), p նախաձայնի սովորական անկումով, որ տեղի է ունեցել նաև ուրիշ լեզուներում. ինչ. հիռլ. il, lia, līnaim, կիմր. llwyr, ինչպէս նաև սպան. lleno «լի», llenar «լնուլ», որոնք ճիշտ մեր աստիճանին են հասած։ Մասնիկների կողմից հայ բառերին համապատասխան են յն. πλήρης, լտ. plērus, կիմր. llwyr=հյ. լիր, գնդ. pərəna, սանս. prāṇā-, լտ. plīnus=հյ. լնուլ են։ Հնխ. միւս արմատաձևերի ածանցներն են հայերէնի մէջ՝ յի, յոյվ, ճոյլ. տե՛ս նաև ճեղուլ, ճալել, ողողել։—Հիւրշ. 452։

Առաջին ուղիղ համեմատութիւնները տուաւ ՆՀՔ, յետոյ Peterm. 29, Windisch. 17, Gosche 68, 141, Böttich. ZDMG 1850, 355, 108, Arica 81, 361, Lag. Urgesch. 268—9, Müller SWAW 38, 589, Justi Zendsp. 193, Տէրվ. Մասիս 1881 մայ" 5 և Նախալ. 92 ևն։ Մորթման ZDMG 26, 492 բևեռ. liab, lie, 502 liue «լի»։ Հիւնք. յի բառից։

Գիր.—Ագլ. լի, վն. իլիճ (հին ի լի ձևից, նախդիրի ձուլմամբ), Ալշ. Մշ. լիգ, Ախց. Գոր. Երև. Կր. Համշ. Տփ. լիքը, Զղ. լիճն, Սլմ. լի, լիճ՛ը, Սչ. լիճը, Մրզ. լի՛ճ՛m, Մկ. լիկ, Շմ. լի՛գ՛ի, Ոզմ. լէգն, Ղրբ. լի՛գը, լի՛յնը, Ննխ. Պլ. իլիճ, Սեբ. իլլիճ, Զթ. իլլէճը, Տիգ. ըլլիճ. (այս բոլորը ձևացած են լի արմատից՝ f կամ ճն, ճ ածանցիչների յաւելմամբ, իբր լիճ, լիճն, լիճ, որոնցից՝ f ձայնը կակղելով յառաջացած են միւս ձևերը. ոմանք էլ ունին թէ՛ նախդիրը և թէ ածանցիչները միասին)։ -Լիանալ ձևից է կազմուած Պլ. լէճալ (իա>է) և ի նախդիրով՝ Սեբ. իլլէճալ «լցուիլ»։ —Լից արմատականից են յառաջանում Սլմ. վն. լցել, Մրզ. լցէլ, Մկ. լցիլ, Ագլ. լցցիլ, Զթ. լը՛ցվը՛լ, Սչ. լըցրճել, Ակն. լըցրճիլ, Զղ. լըցցրճե՛լ, Գոր. Ղրբ. լըսնել, Շմ. լիւցիւճիլ, Պլ. լէցուճէլ, Ռ. լէցրճել, Հճ. լոցճել, Խրբ. լէցրճիլ, Ասլ. լէցրճէ՛լ (վերջին հինգ ձևերը ազդուած լինալ բայի ձայնաւորից).—լիճ ձևից են Տփ. լճցնիլ, Մշ. լճծուն, Ննխ. իլիճճցնել։—Ուրիշ բայա-

ձևեր են Ախց. կր. Սեբ. լլել, Համշ. լլուշ, Արբ. լլալ, Ալշ. լլեել, Ալշ. Բլ. Մշ. ֆլլնալ, Ննխ. լնել, բլել, ոլել, Սվ. բլլոլ (<բլնոլ<ի լբնոլ), Տիգ. բլլել (կտ. լցցի), Հճ. նր՝նոլ (<լնոլ):—Նոր բառեր են Պլ. Ռ. լման «ամբողջ», Սչ. լման «ճշմարիտ», լմանութիւն «իրաւունք»։ (Կազմուած է լի արմատից՝ -ման մասնիկով. պէտք չէ շփոթել նման բառի հետ), Խրբ. Պլ. լէցուցգ, լէցուն, Ռ. լէցուցգ, Ակն. լէցիւն, Ասլ. լէցիւցգ, լէցիւ՞. (-ուցկ մասնիկի համար հմմտ. խոռուցկ). Ասլ. Պլ. լըմբնցրնել, լըմբննալ, Սչ. լըմբնցրնել (3 վանկ), Ոզմ. Սչ. լըմբնալ (<լման ձևից), բլոդ Սվ., լցկուն, լցուկ, լցման, լըցմուն, լ'ցուիլ, լ'ցոտել, լիցք (Սչ. լիցգ՝ «տոլմա»), լիցուելից, փոլից։

ԼԻԱԿՏԷ. *նորագիւտ անստոյգ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Լծ. կոչ. էջ 177 «Իսկ առաքելոյն գերեք Թուոյդ խորհուրդ, յորժամ առ Կողոսացիսն գլխակէտ յաղօթս առնէր ասելով, զձեր շունչ և հոգի և միտք անարատ պահեսցէ ի գալուստ Տեառնն».—արդեօք յատուկ անո՞ւն է. Կողոսացոց Թղթում չկայ յիշուած «շունչ, հոգի և միտք»։*

ԼԻԲԱՆՈՆ «մի տեսակ կնդրուկ՝ որ լիբանոս ծառի խէժն է». Նէեմ. ժդ. 5, 9. երկուան էլ եզ. հյց. (տային զմաննայն և զլիբանոն). գրուած է նաև լէբանան, լիբանօն, լիբանան Վրք. և վկ. Ա. 657։

=Յն. λίβανον ձևից տառադարձուած, որ եզ. հայցականն է λίβανος հոմանիշի. այս բառն էլ փոխառեալ է եբր. לבונה lᵊbōnā «խունկ» բառից. հմմտ. արաբ. لبان lubān «խունկ», ասոր. ܠܒܘܢܬܐ lbūntā, ասուր. lubānu, (սեմական արմատն է lbn «սպիտակ»)։—Հիւբշ. 352։

ՀՀԲ և ՆՀԲ դրին եբր։

ԼԻԲԱՆՈՍ «կնդրուկի ծառ» Ովս. ժդ. 6. Մխ. խշ. (Բազմ. 1911, 261 բ), որ և լիբան Կոչ. 404 (Զի բոյն շինէ իւր ի լիբան փայտէ և ի գմուռս փայտէ). լիբանան Վրք. և վկ. Բ. 120։

=Յն. λίβανος, որ ծագում է եբր. לבנון lᵊbānōn հոմանիշից. այս բառը բուն նշանակում է «սպիտակ» և Լիբանան լեռան անունն է. որից յետոյ անցել է նշանակելու նոյն լեռան վրայ աճող խնկաբեր ծառը.—յոյնից է փոխառեալ նաև հալ. ռուս. ливанъ «կնդրուկ». Հմմտ. վերը լիբանոն։—Հիւբշ. 352։

ՀՀԲ և ՆՀԲ դնում են եբրայեցերէնից։

ԼԻԲԱՆՈՎԻՏ կամ ԼԻԲԱՆՈՎՏԱՆ «մի տեսակ անուշահոտ բոյս» Ամիրտ. ունի միայն ՀԲուս. § 911. զարմանալի է որ Բառ. երեմ. ևս յիշում է այս բառը՝ երկրորդ ձևով և «անդինճան» նշանակութեամբ (էջ 132). իմմ անգուտաե։

=Յն. λιβανωτίς «խնկենի, libanotis, romarin», λιβανωτός (հյց. λιβανωτόν «լիբանոս ծառի խունկը». կազմուած է λίβανο բառից (տե՛ս նախորդները)։

Ուղիղ մեկնեց ՀԲուս։

ԼԻԲԱՆՈՎՏՈՆ «խնկամանն». նորագիւտ բառ, որ երկու անգամ գործածում է Նորագիւտ Յայտ. ը. 3, 5։

=Յն. λιβανωτός բառի հայցականից տառադարձուած. նշանակում է «կնդրուկի ծառ. կնդրկենի, խնկենի. 2. կնդրուկ. 3. խնկամանն»։

Գտաւ ու մեկնեց նորագիւտ բառս Ֆ. Մուրատ, Յայտ. յովհ. էջ 184։

ԼԻԲԵՒՆԵԱՅ (այլ ընթերց. լիբեռնայ) «մի տեսակ նաւ» Պտմ. աղէքս. 34. ուրիշ վկայութիւն չկայ։

=Յն. λίβερνα, որ յոգնակին է λίβερνον = λίβυρνον բառի. նշանակում է «մի տեսակ թեթեւակազմ արագասահ նաւ» (Sophocles, էջ 714). նոյն է նաև լտ. liburna, liburnica, ֆրանս. liburne նոյն նշ. ծագում են Լիբուրնացոց ազգի անունից, որոնց յատուկ էր սոյն նաւը։ (Լիբուրնիա գաւառը գտնւում էր Իսարիոյ և Դալմացիոյ միջև)։—Հիւբշ. 353։

Ըստ ՋԲ և ԱԲ բառ չէ։—Ուղիղ հմմտ. մատութիւնը տուաւ նախ Տաշեան. Ուսումն. ստոյն Կալիսթենեայ, էջ 207։

ԼԻԲԻՏՈՆ (գրուած նաև դեբիտոն. վրիպակ է լիբիմն, որ յառաջացած է երկաթագիր մ և տ տառերի նմանութիւնից) «նախնի մեռածներին յատուկ մի տեսակ վերարկու» Վրք. հց. Ա. 232, 714—5, Բ. 63, 78, 464, 484, ուրիշ օրինակ չկայ։

=Յն. λεβίτων «χολόβιον, colobium, an outer garment without sleeves, *անթև վերարկու*» (Sophocles 707). *որից փոխառեալ է նաև Ֆրանս.* lebéton, lébéton, lébétonaizo «*մի տեսակ անթև վերարկու՝ որ կրում էին Թեբէի ճգնաւորները*» (*տե՛ս Բեշըրէլի Ֆրանս. բառարանը*): *Ըստ* Sophocles *յոյն բառը սեմական ծագում ունի. համմտ. եբր.* לבוש ləbūš «*հագուստ, զգեստ*»:

ՀՀԲ և ՆՀԲ համարում են «բառ այլազգական»: ՆՀԲ դնում է արաբ. libās, libāče «*զգեստ*», *իտալ.* livrea (=*ֆրանս.* livrée) «*ծառաների պաշտօնական զգեստ*», *կամ Լիբէական ձևով, բուռ Ամբրիկեցւոց: Վերի մեկնութիւնը տուաւ Նորայր, Հայկ. բառաքն. էջ 17:*

*ԼԻԲՈՓԻՆԻԿ «*մի տեսակ բամի*» Արիստ. աշխ. էջ 612. յիշում են միայն ԱԲ և Հիւբշ:*

=Յն. λιβοφοίνιξ «*հարաւ-հարաւային-արևմտեան քամի*»:—*Հիւբշ. 353:*

ԼԻԳՈՅՆ. *անստոյգ բառ. մէկ անգամ գրտնում եմ գործածուած Եւագր. 10 «Սոնակ լիգոյն (այլ ձ. լիգոն) ասի և նշանակելի է՝ զի մարդոյն նմանութիւն յառաջանայ ամենայն բանական բնութիւնս»:*

Հրատարակիչը՝ Սարգիսեան համեմատելով բնագրի հետ՝ դնում է ἤλεκτρον «սաթ». սակայն այս միակ բառով ոչինչ չի պարզուում: Համմտ. նաև սոնակ, *որ ըստ ԱԲ նշանակում է հենց «ելեկտրոն, սաթ»:*

***ԼԻԳՈՆ** «պսակ» ? նորագիւտ բառ, որ մէկ անգամ գործածուած եմ գտնում Մագ. թղ. 204 մի մութ հատուածի մէջ. «Որք զկնի նահանջն լիգոնի ակիւտրափաւտեացն սփողեն»:*

=Յն. λύγος «*ուռիէ պսակ*»:—*Աճ.*

Մանրամասն քննութիւնը հատուածիս տե՛ս իմ Հայ. նոր բառեր հին մատ. Բ. 186, 206:

ԼԻԳՐՈՆ «*փայլ, ցոլք*»? *նորագիւտ բառ, որ լիգրոնաւոր ածանցի մէջ մէկ անգամ գրտնում եմ գործածուած միջնադարեան մի տաղում. «Մարգարիտ, շափեղա, ա՛յ լիգրոնաւոր, արեգակն և հրագն լուսին ծիածան» (Նոր ժող. Գ. 55, մի տաղարանից՝ գրուած 1682 թուին):*

***ԼԻԶԻՈՆ** «ճորտ» Վրք. շնորհ. ևն:*

=Յն. λίζιον, *որի վրայ աւելի ընդարձակ տե՛ս* լիճ:

***ԼԻԹ** «քար, մի բարբնկէց» Պիտատ. ուրիշ վկայութիւն չկայ:*

=Յն. λίθος «*քար*»:

Ուղիղ մեկնեց ՆՀԲ:

***ԼԻԹԱՆԻԱ** «յոյն կամ լատին եկեղեցու մէջ աւուր պատշաճի աղօթք». նորագիւտ բառ, որ երկու անգամ գտնում եմ գործածուած Տաթև. Հարց. 89 և Ոսկիփ. 474 «Այլ ի լիթանիայս (Ոսկիփ. լիթանիայս) ձեր՝ ասի, Քրիստոս, անօթդ աստուածութեան, ողորմեա՛»: Մէկ անգամ էլ ունի լատիներէնից թարգմանուած Պարզ. 460 լետանիա ձևով. «Ի շարաթ օրն Ջատկին մեծի ասեն զլետանիայն»: Բառիս գործածութեան չորրորդ վկայութիւնը գտնում եմ Գիրք առաք. 427 բ. «Լիթանիայն ասի աղօթք»:*

=Յն. λιτανεία «*աղօթք, մաղթանք*», *որից փոխառեալ է նաև լտ.* litania. *բուն արմատն է յն. λιτή «աղօթք, աղաչանք», λιτεύειν «թախանձագին խնդրել»:—Աճ.*

ԼԻԼՈՒՓԱՐ *տե՛ս Նունուֆար:*

+**ԼԻԿ** «*լիճ, աւազան*» Պտմ. աղէքս. *էջ 141 (երկիցս), 142, 143 (երկիցս), որից* լկանև «*լճանալ*». Պտմ. աղէքս. 139. *ուրիշ տեղ չէ գործածուած:*

=*Բնիկ հայ բառ՝ հնխ.* lig- *կամ* leig- *ձևից. սրա հետ համմտ. լիթ.* lūgas, lūgas, *յգ.* lūgai «*ճահիճ*», liūgýnas «*ճախճախուտ*», liūgus «*ճահճային*», *հպրուս.* Lūgelgen (*տեղի անուն*), *լեթթ.* Ludza (<*հնխ.* lugjā) (*գետի անուն*), *հսլ.* luža, *սլով.* lúža, *հին չեխ.* lúže, *ռուս.* лужа, *իլլիր.* lugas, luga, *ալբան.* le'gatε, *բոլորն էլ «ճօր, ճահիճ», հնխ.* lugjā, lougjā, lūga- *ձևերից* (Trautmann 163, Berneker 748): *Ուրիշ լեզուների մէջ պահուած չէ բառս: Համեմատուած բառերին* Pokorny 2, 414 *կգում է նաև յն.* λυγαῖος «*մթին*», ἠλύγη «*մթութիւն, խաւար*», *որոնց ծագումը սակայն* Boisacq 322, 589 *անյայտ է համարում.* Pokorny *արմատը դնում է հնխ.* leuq- «*սևագոյն. 2. ճահիճ*», *որ պիտի տար հյ.* *լոյկ: *Ըստ այսմ մեր տուած*

մեկնութիւնը պահելու համար ստիպուած ենք ենթադրել հնխ. leug- *ձևի հետ ներքին փոփոխութեամբ* leig- *(որից* lig-*). հմմտ.* sleib- *և* sleub- *(տե՛ս լիրբ բառի տակ)։—Աճ.*

Լիկդինոս *(ուղիղ տառադարձութեամբ* ղիգդինոս*) «լիդդոս կամ պարոսեան աղնիւ ու փայլուն մարմարով շինուած» Պատմ. աղէքս. էջ 5. ուրիշ օրինակ չկայ։*

=Յն. λύγδινος նոյն նշ. կազմուած է λύγδος «ճերմակ մարմարիոն» բառից։—Հիւբշ. 352։

Ուղիղ մեկնեց նախ ՆՀՔ։

Լիկիթիոն *«տիկնիկ, խոձիկ, պաճուճապատանք,* marionnette*». միջին հյ. բառ, որ հիշում է միայն Նորայր, Բառ. ֆր. 785 ա։*

Լիկն, *սեռ. լկան. անստոյգ ձևով բառ, որ սեռ. լկան ձևով մէկ անգամ գործածում է Ոսկ. ես. 264 «Տեսանե՞ս դի բոլորակ իմն է երկիր... մի՛ ըստ արտաքնոց փիլիսոփայից առասպելացն պատրիցիմք, որք գառագղի և կարկնի և սկտեղ և լկան և այլ ինչ այսպիսեաց սովոր են նմանեցուցանել զերկիր»։ Թուի նշանակել «մանր դրամ, իբր մասն լումայի» և այս իմաստով իբր նորագիւտ բառ մէկ անգամ գտնում եմ գործածուած Վրք. հց. Ա. 706 «Հայրն Դանիէլ հիւանդացաւ և պէտք եղեն նմա իրս ինչ լկան միոյ լումայից. և վասն զի ոչ ուստեք կայր զի գնեսցէ...» (այլ խմբ. Հարկ եղև նմա պէտս ինչ և ոչ ունէր զի գնեսցէ)։*

ՆՀՔ ուղղականը ենթադրում է լիկն «լակա՞ն». իսկ ՋՔ կցելով վերի լիկ «լիճ» բառի հետ՝ իբրև սրա երկրորդ նշանակութիւնը, դնում է «կոնք»։

Լիկնոն *«կտակով թողնուած բան, հրիտակ», որ և լիդատ Մխ. դտ. Օրէնք կայս։*

=Յն. λιγᾶτον «հրիտակ» (Sophocles 712) ձևի միջնորդութեամբ փոխառեալ է լատ. legatum *բառից։—Հիւբշ. 352։*

ՆՀՔ, ՋՔ և ԱՔ դնում են լատ. բառից։

Լիճ, *ի–ա հլ. (յետնաբար նաև ի հլ.) «ադնուշ կամ նաև աղի ջրի փոքր ծովակ» Ել. է. 19. Ա. մակ. բ. 33 նմանութեամբ* լիճ հոյ *«դժոխք» Յայտ. ժբ. 20. ի. 14, 15. իա. 8.* լիճ լուսոյ *«աչք» Նար.* լիճ աղեղան *«աղեղի գոգաւոր մասը՝ բացուածքը» Եմես. 225, Արծր. Հրտր. Պտկ. էջ 240. որից* լճակ *Ոսկ. մ. բ. 8. յհ. ա. 1.* լճածով *Եփր. ծն. էջ 5.* լճամէջ *Նոնն.* լճափն *Ոսկիփ.* լճեզր *Ճառընտ.* լայնալիճ *Իմ. ե. 22. Խոր.* ծովալիճ *Եւս. քր. Ոսկ. մ. բ. 12.* սառնալիճ *Գնձ։*

=Թուի թէ նոյն է լիկ «լիճ, աւազան» բառի հետ. այս նոյնութիւնը կարող է հաստատուիլ, երբ ապացուցուի թէ հնխ. gl- *տալիս է հյ. ճ։—Աճ.*

Klaproth, Asia polygl. 105 *լատ.* lacus: *—ՆՀՔ լծ. լտ.* lacus *«լիճ», արաբ.* لُجّ luǧǧ, لُجَّة lujja *«ծովամէջ»։* Müller SWAW 42, 257 plu- *արմատից։ Պատկ.* Изслед. *(ֆր. Քրգմ.* JAs. 1870, II *էջ 181) կցում է լտ.* lacus *բառին։* Müller, Armen. VI *լտ.* lacus, *կելտ.* loch *«լիճ»։ Էմին, Մովս. Խոր. և Հայոց հին վէպերը, Թիֆլիս 1886, էջ 44* լայնալիճ *մեկնում է «լճի պէս լայն», որ յայտնապէս սխալ է։ Հիւնք.=ՆՀՔ։* Patrubány *ՀԱ 1906, 367 լտ.* lacus, *հիռլ.* loch, *կիմր.* lagen, *բրբտ.* laguenn, *անգսք.* lagu, *հիսլ.* lǫgr *«լիճ, ծովակ» խմբի հետ՝ իբրև բնիկ հայ։—Այս համեմատութիւնը թէև փորձիչ, բայց անստոյգ է, ըստ որում հնխ. ձևն է* laq- (Walde 406, Boisacq 552 *յն.* λάκκος, Berneker 730 *հսլ.* loky), *որ պիտի տար հյ.* լաք–։ Patrubány *ՀԱ 1908, 313 լտ.* lixa *«ջուր» բառի հետ։* Lidén IF 44, *192 անգլ.* latrh *«ճահիճ», իսլ.* lókr *«առու» բառերի հետ։ Պատահական նմանութիւն ունի չեչէն.* ličar *«լողալ, լոգնալ»։*

ԳԻՒ.—Ախց. Մկ. լիճ, *Սեբ.* լիջ, *Ոզմ.* լէ՝ճ. *—Սրև.* լիճ աճել *«ցեխի կամ խմորի մէջ փոս բանալ՝ ջուր աւելացնելու համար».—Նոյն բառերն են լիճ Ակն. «ջրի, ցեխի և քարերի խառնուրդ՝ որ հեղեղից է յառաջանում. 2. նօսր խմորի և քաղցուի խառնուրդ». (այս վերջին նշանակութեամբ է լիճ Վստկ. 220).* լիճք *«40 մանկանց տօնի օրը և նրանց յիշատակին՝ կոնքի մէջ լուսավառութիւն»,* լճել *Ջք. «հեղուկ բանի մէջ խառնել ու շաղուել»։*

Փոխ.—Քրդ. لیژ lic *«աւազան, ջրշեղջ»*, bassin, réservoir (Justi, Dict. Kurde, *էջ 383*)։

**Լիճ *«ճորտ, աւատական իշխանութեան մի աստիճան՝ որ ենթարկւում է պարոնին» Բ. Բղ. ման. առ շնորհ. (տե՛ս Շնորհ. ընդհ. տպ. Եէմ. էջ 155), Անսիզք 3, 9. Սմբ. պատ. էջ 104. որից* լեռւթիւն *«ճորտութիւն» Անսիզք 9. անլիճ «որ ճորտ չէ» Անսիզք 27. գրուած է նաև* լեն *Համբ. առ լև. 1865, էջ 240. դարձեալ նոյն բառն է* լիգիոն *«ճորտ» Վրք. շնորհ. Սոփերք ԺԴ. էջ 76. Ա. Բղ. ման. առ շնորհ. (տե՛ս Շնորհ. ընդհ. տպ. Եէմ. էջ 144. միևնոյն անձի համար մի անգամ լիճ է գրուած և մի անգամ լիգիոն)։*

=Հ. ֆրանս. lige *«պարոնին հաւատարիմ ենթակայ աւատական աստիճանաւոր»*, որից ligence, ligeauté *«աւատ, վասալութիւն». Ծագում է լտ.* ligium *ձևից, որի յետին յոյն տառադարձութիւնն է* λίζιον *և սրանից էլ հյ.* լիգիոն։—*Հիւբշ. 391։*

Ուղիղ մեկնեց նախ էմին, Переводы (1865), *էջ 180, յետոյ Ալիշան, Շնորհ. և պրգյ. էջ 419, որից յետոյ Նորայր, Բառ. ֆրանս. 748 բ։ Սոփերքի հրատարակիչը (հտ. ԺԴ, ծան. 11) համարում է ըստ «յունական ձայնին՝ լուծիչ, այսինքն մեկնիչ և լուծիչ խնդրոց բանից», ինչ որ սխալ է։*

Լիմ *«հալած ձիւթ». Նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Դրնդ. էջ 385 «Ջմեռեալն ի մէջ լմի պահէին և զանկնիք տղայն բերէին ի Պուղտան» (Նիկոլի ժամանակ).—բառի ձևը անստոյգ է. կարող է և լինել *լում։*

**Լիմոն *«լիմոն» Բժշ. Վստկ. գրուած է նաև լիմաւն, լեմոն *(ըստ Բառ. երեմ. յաւել. 567* լէիմօն*). որից լիմոնի «ծառը» Վստկ. 42, 154. այժմ աւելի ընտիր ձև է համարւում (գոնէ արևմտեան գրականում)* լեմոն, լեմոնի. *Նոր բառեր են,* լեմոնաջուր, լեմոնագոյն։

=Յն. λιμόνι, λειμόνιον, λεμόνι, որ տառածուած է բազմաթիւ լեզուների մէջ. ինչպէս՝ ֆրանս. սպան. limon, *գերմ. իտալ.* limone, *անգլ.* lemon, *ռուս.* лимонъ, *հունգ.* lémonya, *պորտ.* limão, *վրաց.* ლიმონი լիմոնի, *թրք.* limon, ilimon, *թուշ.* լիմո, *քրդ.* limō, *մինչև անգամ չին.* 檸檬 ninmon. *բոլորի աղբիւրն է պրս.* لیمون līmūn *և արաբ.* laimūn (Berneker 722, Kluge 306)։—*Հիւբշ. 352։*

Ուղիղ մեկնեց նախ Նշ։

Գիր.—Ասղ. Մշ. Ջղ. լիմոն, *Ախց. Երև. Կր. Ննխ.* լիմօն, *Ոզմ.* լիմուն, *Գոր.* լէ՛մուն, *Ղրբ.* լէ՛մուն, լի՛մօն, *Տիգ.* լէյմուն, *Պլ. Ռ.* լիմօն, *Ասլ.* լիմ՚ն *ևն։*

**Լիմոնիոն *«խոշոր թրթնջուկ» Ամիրտ. ունի միայն ՀԲուս. § 916։*

=Յն. λειμώνιον «մի տեսակ պուտ (բոյս)», լտ. limonium *«վայրի ճակնդեղ»։—Ա.Ճ.*

ՀԲուս. § 425 մեկնում է իբրև լտ. limonion *(այսպէս!) «խոշոր թրթնջուկ»?*

**Լիմպոս *«նախաքրիստոնէական արդարների և այժմ անկնունք մեռնող մանկանց հոգիների օթևանը» Տաթև. Հարց. 504, 506. Մխ. ապար. գրուած է* լինպօս *Լծ. պրպմ. 663 (եւ տե՛ս դի ասէ աւերեաց զդժոխս, և ո՛չ միայն զլինպօսն, որպէս ասեն ազգքն լատինացւոց)։—ՀՀԲ գրում է ուղիղ տառադարձութեամբ* լիմբոս։

=Միջ. լատ. limbus, *որից փոխառեալ են նաև գերմ.* Limbus, *իտալ.* limbo, *ֆրանս.* limbes *նոյն նշ.—լատին բառի նախնական նշանակութիւնն է «ծայր, եզերք»։—Հիւբշ. 352։*

ՀՀԲ «է բառ յն. և Թարգմանի շաւտակուլ, անյագ, խաւար» (իմա՛ միջ. յն. λιμβός «շաւտակեր, անյագ» Sophocles 715)։ ՆշԲ «լտ. limbus, *իբր քղանցք և գօտի, որպէս և* lumbus *է մէջք. վարի նմանութեամբ»։*

**Լինգիրոն *«մի տեսակ պատուական քար, սաթ կամ եղնգնաքար». գրուած է շատ բազմազան ձևերով. այսպէս՝* դինգիրոն, դիւնգիրոն, լինգրիոն, լիգիրիոն, լիգիրոն, լիգրիոն, լիւգրիոն *Ջենոբ, էջ 33. Տօնակ. Վրդն. եւ Նշ. եզեկ.* լիւգիրոն *Մխ. այրիվ. էջ 5. «սուտակ որ է լիգրոնն» Տաթև. Հարց. 348։*

=Յն. λυγκούριον, λυγγούριον, λιγκούριον, λιγγούριον, λιγούριον, *որից լտ.* lyncyrium. *Նոյն քարն է. բուն նշանակում է «յովազի*

մէզ» և ծագում է λύζξ *«յովազ» և* οὖρέω *«միզել» բառերից։—Հիւբշ. 352։*

Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ։

ԼԻՆԳՆԱՍ *«անծանօթ մի գազան». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած հոր. աշխ. հրտր. Սուքրեանի, էջ 19.—վկայութիւնը տե՛ս* կենոռոս։

=*Անշուշտ օտար բառ է, բայց աղաւաղուած։*

+**ԼԻՆԴ**, ի–ա *հլ. «առասպելների միսը» Ագաթ. Նիւս. երգ. և կազմ. Սկևռ. լմբ. երգն. մոթ. 139. Համամ առկ. գրուած է նաև* լինա *և կրկին յոգնակիով՝* լնդեր *կամ* լնտեր *(ինչպէս ունինք* տղեր, երեխէր*), որից ՀՀԲ և Հիւնք. ննթադրում են սխալմամբ եզ. լինար ձևը։*

=*Բնիկ հայ բառ՝ հնխ.* lendh- *ձևից. սրա հետ համմտ. հհիւս.* lend, *յգ.* lendir *«մէջք, ցայլք», հբգ.* lenti, *գերմ.* Lende *«մէջք», նորվ.* lund *«երանք, մէջք», անգսք.* lenden, *հիսլ.* lend *«մէջք»,* lunder *«երանք, զիստ»,* lund *«երիկամունքների տակ՝ ողնաշարի վրայ գտնուած փափուկ միսը», գոթական* *landjō *ձևից փոխառութեամբ՝ ֆինն.* lantio *«մէջք», լտ.* lumbus, lumbi *«մէջք, երիկամունք, կռնակ», հսլ.* lędvija *«երիկամունք, մէջք», սլով.* lędvije *«երիկամունք»,* lédeja *«բոմբ, ոլորի փափուկ մսերը», սերբ.* léđa *«կռնակ, մէջք», լեհ.* lędzwie *«մէջք», ռուս.* лядвея *«ազդր, բարձք, զիստ» ևն։ Այս բոլորը ներկայացնում են միևնոյն արմատի գանազան աստիճանի ձայնդարձները. այսպէս՝ գերմանական ընտանիքը ներկայացնում է* lind, land-, lund- *աստիճանները, լատինը* *londhus *ձևից է, սլաւականը հնխ.* lendhui *ձևից, հայերէնը* lendh- *ձևից, թէև կարող է լինել նաև* lindh- (Walde 446, Berneker 706, Trautmann 157, Kluge 302, Pokorny 2, 438, Ernout-Meillet 537)։ *Մեզ համար դժուարութիւն է յարուցանում միայն նշանակութեան տարբերութիւնը, որ սակայն կհարթուի, եթէ մեկնինք նախնական և ընդհանուր «փափուկ միս» իմաստից, ինչպէս ցոյց են տալիս վերի բառերից մի քանիսը։ Բացի սրանից, մարմնի անդամների անունները յաճախ են փոխում իրենց տեղերը։—Ա.Մ.*

Հիւնք. ընդեր *բառից հանում է* լընդեր, լինար։ *Պատահական նմանութիւն ունի արաբ.* لحم lat՝ *«քիմք, շրթունքի մաշկը, ատամի արմատ» (Կամուս, Բրք. Բրգմ. Բ. 666)։*

Գ.Ի.Ո.—Ալշ. Երև. Խրբ. Մկ. Պլ. Ռ. Սեբ. Սլմ. վն. լինդ, *Ասլ.* լինդ, լի*, *Մրզ.* լինդիր, *Մկ.* լրինդ. *Ջթ.* լը՝նդ. լը՝նդ֊, *Ախց. Կր. Ղրբ. Շմ.* լընդէր֊, *Տիգ.* լնդիր, *Ոզմ.* լնդիր, լանդիր, *Ագլ.* լընդ, *Ննխ.* լնդէռ֊, լռդէնք, լընդռէնք, ընդռէնք, լրզդրռէնք, *Ջղ.* ժենդ։

ԼԻՆԻԼ *«լինել, ըլլալ». երկրորդաբար նշանակում է նաև «առեղծուիլ, ծնիլ, սերիլ, ծագիլ, բնակիլ, մի տեղ գտնուիլ, պատահիլ ևն» Սգր. Եզն. Կոչ. Ոսկ. յետնաբար դարձել է լինենալ Ագաթ. 121. 206. որից* լինելոց *«ապագայ» Ամովս. գ. 10. Կոչ. Ոսկ. յհ. ա. 2.* լինելութիւն *Փիլ. Պիտ.* լինումն *Ոսկ. յհ. բ. 15.* զուգալինել *Նիւս. սքանչ.* լինոցել *Պերիարմ։ Արմատիս միւս ձևերն են՝* լի֊, *որից ապառնի* լիցի, *անց. դերբ.* լիեալ, *որից* լեալ. —**լեր** *(իբր հրամայական), որից* լերո՛ւք *«եղէ՛ք»,* լե՛ր *«օն, շո՛ւտ արա» ԱԲ.* բաջալեր *«խրախոյս» Կոչ. «խրախուսական» Բ. մակ. ը. 21,* բաջալերել *ՍԳր.* բաջալերիչ *Ագաթ. Կորիւն. Եփր. ա. թես.* բաջալերութիւն *Ագաթ. ևն։*

=*Նախաւոր ձևն է* *լէնիլ, *որից անց. դերբ.* *լէեալ>լիեալ, լեալ, r *մասնիկով* *լէր>լեր *(ինչպէս ունինք* դիր, տուր*)։*

ՆՀԲ լծ. հյ. եղանիլ *և յն.* γίνομαι *«լինել»։ Նոյն յն. ձևի հետ նաև* Windisch. 47:—Böttich. Wurzelforschungen, *էջ 42 սանս.* laya, *եթովպ.* halo, *խալտ.* el *ձևերի հետ՝ նախաւոր* l *արմատից։* Müller SWAW 42, 257 *յն.* πέλομαι *«շարժիլ, լինել»։ Տէրվիշ.* Altarm. 26 *յն.* γεν-, γίγνομαι, γίνομαι, *լատ.* gen-, gigno, genui *ևն։ Նոյն, Մասիս 1881 մայ" 5 ծնանիլ բառի հետ նոյն է դնում։* Bugge, Beitr. 7—8 *համեմատում է յն.* κλίνω, *լատ.* clinare, *հբգ.* hlinēn, *լիթ.* szlėjù, *սանս.* çri-, çráyati *«յենուիլ, կռթնիլ»,* çráyate *«մի տեղ գտնուիլ,*

*երթալ» ևն. հայ բառի էլ նախնական նշանակությունը. դնում է «մի տեղում դանուիլ». նաև իրր արմատակից լեռան բառի, որ տե՛ս վերը։—Այս մեկնությունը մերժում է Հիւրշ. 451։ Հիւնք. և Patrubány SA 1, 209 լի բառից։ Շէֆթէլովից BB 29, 48 սանս. riṇīte «վազել»։ Pedersen KZ 36, 341 և Հայ. դր. լեզ. 17 ալբան. kle «էր», իբր հնխ. ql- արմատից։

ԳԻՒ.—Ակն. լճիլ, գոլլի, Վն. էլճել (կտ. էլm), Ջղ. յելճել, Մկ. իլճիլ, Ցղ. էլճալ, Ոզմ. բլճիլ, Ռ. բլճալ, բլլալ, Ախց. խրբ. Կր. բլլիլ, Պլ. Սեբ. բլլալ, Հմշ. բլլուշ, Ասլ. բլ՛լ՛ալ, Երև. բլել, Սլմ. բլել, Մրղ. բլել, Տփ. բլիլ, բլում է, կուլի, ելիլ է, չէ ելի, Ագլ. է՛լիլ, Սչ. բլալ, Ննխ. բլալ, լալ, Շմ. իլիլ, իլm, Հւր. իճել, Դոր. Ղրբ. իճիլ, Ջթ. ըճ՛լ։—ԵՒր արմատը պահած է միայն Ջղ. վոռդ՛ալէլնեմ<ուրդալերէնեմ «որդեծնութիւն» բառի մէջ, Հճ. նոյ «լինիլ» (ըստ Թէրզեան, Ամէն. տարեց. 1924, էջ 198)։

*ԼԻՊԱՐԵԱՆ «հրաշունչ քամի». մէկ անգամ ունի քամիների վրայ խօսող յետին մի գրութիւն. «Լիպարեան, որ հուր շնչէ ի Սանդարամետէ» (տե՛ս Ալիշան, Հին հաւատք, էջ 67)։

=Յն. Λιπάρα հրաբխային կղզու անունից, որ դտնւում է Սիկիլիոյ հիւսիսային կողմը։

Ուղիղ մեկնեց Ալիշան, անդ։

*ԼԻՊԻՐԻԱՅ «ազգ ջերման՝ որով ախտացեալն տապանայ յոյժ ի ներքուստ» Մխ. հեր. 88.—ունի Նորայր. Բառ. ֆր. 751 ա (lipyrie) լիպիրայ ձևով՝ իբրև մհյ. բառ։

=Յն. λιπυρία, որ և λειπυρία «մի տեսակ ջերմ, fièvre intermittente». սղևալ է *'λειποπυρία ձևից (λείπω թողնել, լքանել + πῦρ հուր, տաքութիւն)։ Յունարէն բառից է և արաբ. ليفوريا līfūryā:

Ուղիղ մեկնեց Seidel, Մխ. հեր. էջ 113։

ԼԻՍԵՒՆ, ն հլ. (սեռ. լիսեան, լսեան, յգ. լիսեունք, լսեունք) «սրունքի՝ ոտքի՝ ողնաշարի ոսկոր» Պզատ. տիմ. 150. Յայտմ. դեկտ. 23. Վրդն. պտմ. էջ 9. Մխ. ասոր. Ճառընտ. «իլի ծայրի օղակը» Բռ. ստեփ. լեհ. «սեռն, անուի առանցքը» իբր ռմկ։ (Վերջին նշանակութիւնը՝ որ ՆՀԲ և ՋԲ նշանակում են իբրև գտ. բառ, կասկածելի է։ Ունինք երև. լիսօո «կառքի առանցք», բայց այս բառը անշուշտ ռուս. peccopa ձևն է, որ իր հերթին փոխառեալ է ֆրանս. ressort հոմանիշից)։ Այս բառից է լիսեռնաձև (նորագիւտ բառ) Տաթև. հարց. 243 (ողնաշարի համար է ասում)։

ՆՀԲ դնում է սեռն բառից, իբր նրա հոմանիշը։ Lidén, Arm. Stud. էջ 131 իլ և սեռն «առանցք» բառերից կազմուած է համարում. նշանակութեան զարգացման համար հմմտ. իտալ. fuso «իլիկ», fusolo «սրունքի ոսկոր», fuso dell' asse «առնի մէկ մասը», ռում. fus «իլիկ և առնի», ալբան. bošt «իլիկ և առնի», նրպ. spindel «իլիկ և առանցք, առնի»։

ԳԻՒ.—Ալշ. Մշ. Ջղ. լիսեռ, երև. կր. Շմ. լիսէռ, Հմշ. լիսէր, խրբ. լիսուռ, խտջ. նիսէռ. նշանակում են ճախարակի մասերից մէկը. (Երև. «ճախարակի իլիկի գլխի կլոր կաշին», խրբ. «շրջանակաձև փայտ՝ որ գտնւում է ճախարակի ականջի կողքին՝ ճաղի վերի մասի վրայ և ծառայում է թևլը բռնելու», Հմշ. «մատմանք իլիկի տակ անցկացրած կապարէ կամ ծանր փայտէ կոնաձև ծանրոցը, որ ծառայում է ոլորումը պիւրացնելու»)։ Նոր բառեր են լիսեռնիկ Նր. «սամիքի վրայի կլոր երկաթը», Բլ. «ծնկան գլխի ոսկորը. rotule», Բլ. «զանազան բաներ բարձրացնելու կամ իջեցնելու գործիք», լիսեռենի Ղրբ. «մի տեսակ սափրակ ընտիր խնձոր և նրա ծառը», լիսեռկեան Տր. «մի տեսակ ընտիր սափրակ տանձ. տճկ. տէյիրմէն արմուտի» (Ագոնց, Աշխարհ. Ասիա, Ա. հտ. էջ 382)։

*ԼԻՎՐ «մի տեսակ դրամ, որ Ասորիքի ֆրանկների մօտ էլ գործածական էր» Անսիգք 61։

=Ֆրանս. livre «հին եւրոպական դրամ է, որ յետոյ փոխանակուեց ֆրանկով»։

Ուղիղ մեկնեց նախ Անսիգքի հրատարակիչը, էջ 60։

*ԼԻՏՐ, r հլ. (լտեր, լտերց) «մի տեսակ չափ է» (ըստ Շիր. 12 ունկի էր, որ համաձայն

քննութեան Մանանդեանի, Տեղեկ. ինստիտ. Բ. էջ 30՝ հաւասար է 326 գրամի. այժմ Հայաստանում լիտրը 6 տաճկական օխա կամ 12 ռուսական ֆունկա է) ՅՀ. ժբ. 3. ժԲ. 39. Ոսկ. ես. Մագ.—առաջին երկու վկայութիւնները հաստատապէս ցոյց են տալիս, որ լիտրը իրօք հին ժամանակ փոքր չափ էր. երբ Մարիամ մի «լիտր» նարդոս է վերցնում Յիսուսի ոտքերը օծելու համար կամ Նիկոդեմոսը 100 «լիտր» զմուռս է վերցնում Յիսուսի մարմինը զմռսելու համար, անշուշտ խօսքը փոքր չափերի մասին է։ Աւելի յետոյ լիտրը դարձաւ մեծ չափ. և Բրս. մրկ. 381 գնում է լիտրը իբրև «հայկական մեծ չափ», յիշեցնելով միևնոյն ժամանակ թէ լիտրը ըստ հռչէից է «սիկղ, չորս դրամի ծանրութիւն»։ Գրուած է նաև դիտ. որից լտրանոց Ջքր. տարկ. Բ. 140։

*=Յն. λίτρα «12 ունկիի ծանրութիւն. 2. մի փոքր դրամ». համարւում է փոխառեալ միջերկրեան *lɪθrā ձևից, որ միւս կողմից էլ առած է լտ. libra «կշիռ. 2. ֆունտ»։ Այս երկու բառերը այնուհետև տարածուեցան ամէն կողմ. ինչ. ֆրանս. litre, իտալ. litra, իրք. litra, վրաց. litra, հսլ. ռուս. литра, գերմ. liter, լհհ. չեխ. litr ևն.—մյն. λίβρα, հսլ. livra, ֆրանս. livre ևն.* (Walde 428, Boisacq 585, Berneker 725):—*Հիւրշ. 352։*

Հներից Անան. շիր. (հրտր. Պատկ. էջ 28) մեկնում է «ըստ հռովմայեցոց լեզուի հարթութիւն». (ակնարկում է լտ. libra «հաւասարակշռութիւն, մակերես» բառը)։ Ուղիղ մեկնեց նախ Աւգերեան, Բցտր. չփ. և կշռ. էջ 89, յետոյ ՆՀԲ ևն։

Գիտ.—Երև. Տիգ. Տփ. լիդր, Համշ. լիդրը, Ախց. լիտո, Խրբ. Հճ. Սեբ. լիր.—Խլ. դիտր, Ջղ. դիդր, Ալշ. Մշ. խիդր, Վն. կիտր։

Փոխ.—Հայերէն Աւետարանի վրայից մրսած է քրդ. Բարգմանութեան մէջ՝ Յովհ. ժբ. 3. Ղըր քի պը փրս պուհա խալիս ռունա նարտէնե սոննա (առեալ լիտր մի իւղոյ նարդեան ազնուի մեծագնոյ)։ Այսպէս և Յովհ. ժԲ. 39. Սար լըդըրան զմուռ (զմուռս իբրև լտերս հարիւր)։

+ԼԻՐՔ (ի հլ. ըստ ՆՀԲ, թէև առանց վկայութեան) «անամօթ, լպիրշ» ՍԳր. Եղիշ. որից լրբիլ Ոսկ. յհ. ք. 1, մ. ք. 27, Մծբ. լրբութիւն Երեմ. խթ. 16. Ոսկ. յհ. ա. 40. լրբենի Առակ. է. 13. Սիր. իգ. 6. լրբախօս Ոսկ. ես. լրբաբանութիւն Ուխտ. ք. 88 լրբաբանական (ըստ յն. ուղղելի լրբական) Ոսկ. մ. ա. 1. լրբագոյն Ոսկ. յհ. ք. 3, 12, 26. լրբական Փարպ։

*=Բնիկ հայ բառ՝ հնխ. slibr- ձևից։ Այս բառի պարզական արմատն է slei- (կամ նաև lei-) «լպրծիլ, սահիլ»։ Ինչպես երևում է յն. λεῖος «յիղկ, հարթ» (<*lei-ue), լտ. lēvis «յիղկ, ողորկ, լերկ» (հնխ. leiu̯is) ձևերից։ Արմատը այնուհետև ստանալով զանազան աճականներ՝ արտադրեց շատ բազմաթիւ բառեր.—այսպէս օրինակ -b- աճականով (այն է հնխ. slei-b- ձևից)՝ յն. ὀλιβρός «սահուն, լպրծուն», հրգ. slīfan «սահիլ, յղկել, սրել», slëffar «սահուն», մրգ. slipfen «սահիլ», slipfig «սահուն», գերմ. schleifen «քաշել, սահիլ, յղկել», schleppen «քաշ տալ», պրուս. Schleife «սահնակ», հիսլ. sleipr «լպրծուն». անգսք. tóslipan «կորնչիլ», հիսլ. slemun (<*slibno-) «լպրծուն», միսլ. slīpaim (<*slibno-) «շփել, յղկել», հկիմր. limnint «քերծել», կիմր. llyfn (<*slibnos) «հարթ, ողորկ», llyfr cār «սայլի այն մասը՝ որ հողին է քաւում» ևն։ Արմատի ձայնաւորը փոխելով՝ այն է հնխ. sleu-b- ձևից՝ անգսք. slúpan «սահիլ», գոթ. sliupan, հրգ. sliofan «սահիլ, սողոսկիլ», լտ. lūbricus «սահուն, լպրծուն, յիղկ, անհաստատ, մեղկ, անառակ» ևն։— dh- աճականով՝ (այն է հնխ. slei-dh- կամ sli-dh- ձևից) յն. ὀλισθάνω «սահիլ», ὀλισθηρός «լպրծուն», ὄλισθος «լպրծոտ տեղ», հրգ. slito, գերմ. schlitten, հհիւս. sleði, մ. անգլ. slede «սահնակ», անգսք. slidan «սահիլ», slidor «յիղկ, ողորկ, լպրծուն», լիթ. slidùs «ողորկ, յիղկ, սահուն», slýsti «սահիլ», լեթթ. slids «հարթ», slidas «սահելու կօշիկ, patin», հսլ. ռուս. следъ «հետք».—m- աճականով (հնխ. slei-m- ձևից)՝ յն. λειμών «թաց ու խոնաւ տեղ, մարգագետին», λιμήν «նաւահանգիստ» (որից իրք. ليمان liman նոյն նշ.= ռմկ. իլիման), λίμνη «ճահիճ», լտ. limus «ցեխ», մբգ. slīm «լպրծուն, ցեխ, մա-*

ղաս, խուխ», հբգ. slīmen *«ողորկել, յղկել»*, անգլսք. slīm *«լպրծուն, ցեխ»*, գերմ. Schleim *«թուք, մաղաս, խուխ»*, յն. λείμαξ = լտ. limax և ռուս. слимакъ *«շողուկ, խըխունջ»*, լտ. līma (>իտալ. lima>ռմկ. լիմա) *«խարտոց»*.— n- ածականով (հնխ. slei-n- *ձևից)*՝ հսլ. slina, ռուս. слина *«թուք»*, լեթթ. sliēnas *«թուք»* և այլ բազմաթիւ ձևեր (Walde 427, 430, 441, Trautm. 269, Boisacq 564—7, 697, Berneker 717): *Հայերէնի մէջ* հնխ. slibr- *տուած է նախ* լիպր, *որից շրջմամբ* *լպիր և ա, ծ և շ ածականներով՝* լպրտել, լպիրծ, լպիրշ.—*նոյն* *լիպր *ձևից՝ տարբեր շրջմամբ է* լիբ, *որի մէջ պ դարձել է բ, որովհետև* -րպ- *խումբը սովորական չէ հայերէնի ձայնաբանութեան մէջ։ (Ի հարկին կարելի է ենթադրել հնխ.* slibh-ro-, *որից ուղղակի հյ.* լիբ, *ինչպէս ունին հնխ.* k'ubh-ro->սանս. çubhrá-=հյ. սուրբ*)։ Իմաստի զարգացման համար համմտ. լատ.* lubricus *«սահուն, լպրծուն. 2. անառակ, մեղկ»*, ֆրանս. lubrique *«գեղխ, անառակ»*, հյ. լպրծիլ *«սահիլ. 2. լրբանալ»*, վն. լպզտուկ *«սահուն, լպրծուն. 2. լիրբ, աներես»*, լպստալ *«սահիլ»*>լպստած *«աներես»* և նմաններ։ *Տե՛ս* Pokorny 2, 710, 391, Ernout-Meillet 534։—*Ա.Ճ.*

Հիւնք. լտ. liber *«ազատ»*, նաև մակդիր Բաքոսի, liberalia *«բաքոսական տօն»*։ *Վերի մեկնութեանս համամիտ է նաև* Meillet: *Պատահական նմանութիւն ունին յն.* λιρός *«անամօթ»*, *սրա.* *լյ՝ lūr *«լիրբ»*։

Գիւղ.—Ագլ. լիրբ, լիրփ, *Ախց. Կր. Մկ. Սլմ. Տիգ. Տփ.* լիրփ, *Սչ.* լի՛ըրբ՛, *Երև.* լիրփ, *Ղրբ. Ննխ. Շմ.* լէրփ, *Ալշ. Մշ. Ջղ.* լեռփ։

Փոխ.—Վրաց. լիրբի, լիրփի, լիբրի, լիրծի *«անամօթ»*, լիրփոբա, լիրծոբա, գալիրփերա *«անամօթիլ»*, սիլիրբե, սիլիրփե *«անամօթութիւն»*։

Լիցն *(միայն անեզաբար գործածուած) «վէգ, կոճ» Ոսկ. մ. բ. 22, երր. էջ 539. եփես. 923. «խաղալու քուէ, զառ» «Վեցօր. ը. 178 (այս նշանակութիւնը չի ընդունում Ջ.Բ)։*

Նշ. լեռլ *բայից, իբրև «ոսկր որ լեռլ զմիջոց սրունից և ոտից»։ Հիւնք. պրս.* լիւ։ *Հացունի Դաստ. 279 համարում է «մէջը կապար լցուած խաղալու վէգ» և դնում է* լի, լից *արմատից. մինչև այժմ էլ Շիրակում կոչւում է* լիցք. *հետևաբար մարմնի բնական վէգը չէ, այլ արուեստական խաղալիքը։*

Լիհանօտոս *«արևմուտք թեքուող հարաւային քամի» Արիստ. աշխ. Տաթև. հարց. 206. նոյն է* լիբանօտոս *Առաք. կենդ. էջ 70, որ ուղիղ տառադարձութեամբ է։ Ուրիշ վկայութիւն չկայ։*

=Յն. λιβόνοτος *նոյն նշ. կազմուած է* λίψ *«հարաւային արևմտեան քամի» և* νότος *«հարաւ» բառերից։—Հիւբշ. 353։*

Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ։

Լիփս *(սեռ.* լիփսի*) «հարաւ-արևմտեան քամի» Արիստ. աշխ. Տաթև. հարց. 205. գրուած է* լիբս *Առաք. կենդ. էջ 70, որ ուղիղ տառադարձութիւնն է յաջորդ լտ. ձևի։*

=Յն. λίψ *«հարաւային արևմտեան քամի», որից փոխառեալ է և լտ.* libs.—*Հիւբշ. 353։*

Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ։

+Լիք, *արմատ՝ որ առանձին գործածւում է իբրև լրանալ բայի կոր. հզ. գ դէմքը և հրամ. (*լիք *«ձգեց, թողեց»*, լի՛ք *«ձգէ, թո՛ղ»*). *որից* լրանալ *«ձգել, երեսի վրայ թողնել, երեսէ հանել, աչքից գցել, չընդունիլ այլ ևս» ՍԳր. եփր. Բագ.* լրանիլ *ՍԳր.* լրանալ *Մծբ.* լրել *Կոչ.* լրեցուցանել *եփր. ծն. և թես.* լրուցանել *ՍԳր.* լրանուս *Կիւրղ. ղկ.* լրումն *երեմ. խն. 4. Ագաթ. դասալիք Ոսկ. ղկ. Փիլ. Պիտ.* բող լիք լինել *եփր. մն։*

=Բնիկ հայ բառ՝ հնխ. liq *արմատից.— համմտ. սանս.* rič, riṇákti, riñčánti *«թողնել, պարպել, արձակել, ոչնչանալ»*, riktá- *«աղաւտ, պարապ»*, գնդ. irinaxti *«լքում է»*, յն. λείπω, λιμπάνω *«թողնել, լքանել»*, λοιπός *«աւելորդ մնացածը»*, լտ. linquo, līqui, -lictum *«թողնել, լքել, լքանիլ, թուլանալ, վհատիլ»*, գոթ. leihian, հբգ. līhan, գերմ. leihen *«փոխ տալ»*, լիթ. lėkù, lìkti *«թողնել, յետ գցել, մնալ»*, հպրուս. po-līnka *«մնում է»*, հսլ. otŭ-lěkŭ *«մնացորդ»*, ռուս. գո. отлечить-ся *«յետ մնալ»*, լեթթ. liks *«ինչ որ պէտք եղածից աւելի է, շատ, բազմաթիւ, ա-*

ելորդ, կեղծ, անզոյգ, կենա», որոնց համեմատութեամբ էլ՝ *ռուս.* лишный *«աւելորդ»*, лишне *«չափազանց»*, лишь *«հազիւ, միայն»*, лишекъ *«աւելորդ մնացածը»*. с-лишкомъ *«շատ աւելի, չափազանց»* ևն։ Հետաքրքրական գործածութիւն ունի *լիթ.* -lika *«աւելորդ, մնացածը»*, որ մտել է *11—19* թուականների կազմութեան մէջ. *ինչ.* vẽnúlika *«11» (այսինքն՝ 10-ից յետոյ ևս 1 մնացած)*, tvýlika *«12»*, trýlika *«13»*, keturiólika *«14»* ևն. որոնց հետ ճիշտ նոյն են հրդ. einlif, *գերմ.* elf, *անգլ.* eleven, *հհիւս.* ellifu *«11»*, *հրդ.* zwelif, *գերմ.* zwölf, *անգլ.* twelve, *հհիւս.* tolf *«12»*։ (Walde 433, Trautmann 155, Boisacq 556, Berneker 710, 718, Kluge 116, 300, Pokorny 2, 396, Ernout-Meillet 525)։ *Հայերէնում պահուած է թէ՛ պարզ* (liq>լիֆ, ելիֆ = ἔλιπε) *և թէ՛ ընդայնաւոր* (լքանել = linquo, λιμπάνω) *արմատը։—Հիւրշ. 455։*

Ուղիղ մեկնեց նախ ՆՀՒ (թէև մէջ է խառնում նաև լտ. lanquеo, liquesco). *յետոյ* Windisch. 9, 17, Böttich. ZDMG 1850, 56 *(որ մերժում է* Lag. Arm. Stud. § 950), *Հիւրշ.* KZ *23, 30, 35 և 406, Տէրվ.* Altarm. 8 *և Նախալ. 103 ևն։ Հիւնք.* լկամ *բառից։* Patrubány *ՀԱ 1906, 73 մեզանից է դնում հունգ.* lököm *«թափել, արձակել»։*

ԳԻՒ.—Ղզ. լքանալ *«թուլանալ, ցաւից ընկճուիլ»,—նո՞յն են նաև երև. Ղզ. Շլ.* լքլքալ *«սիրտը դող ընկնել՝* լքլքոց *«դող, երկիւղ»։*

+ԼՈՒԻԿ *«նեղութիւն, չարչարանք» Ոսկ. հոռվմ. 315 (չունի ՆՀՒ), որից* լկել *«չարչարել, նեղել, տանջել» ՍԳր. Ոսկ. ես. և յհ. բ. 12. «բռնաբարել» ՍԳր.* լկաճք *«չարչարանք, նեղութիւն» ՍԳր. եզն. եփր. վկ. առևել.* լկիչ *«չարչարող» Ոսկ. ես. և մ. ա. 24.* լկոց *«բոզանոց» Շնորհ. առ. 65.* լկութիւն *«չարչարանք» Գ. մակ. ղ. 19. է. 3. Ոսկ. ես. երր. Ագաթ. չարալուկ երեմ. իգ. 9. եւս. քր. Ոսկ. մ. ա. 2. վեցօր. 170. Մծբ.* դիւալլուկ *նար.* բֆալլուկ *Յայսմ.* սովալլուկ *Սարգ. Ճառընտ։*

=Բնիկ հայ բառ՝ հնխ. lel- *արմատից, որի առաջին իմաստն էր «շարժել, ցնցել». Համմտ. լիթ.* leliúoju, leliúoti *«օրօրել, ճոճել», լեթթ.* leluoju, leluôt *«օրօրոցի մէջ մանկան օրօրել, նանիկ ասել», ռուս.* лелѣять *«դրդռւել, փայփայել», ուկրաին.* tel'ijaty *«ճոճել, օրօրել, գգուել», բուլգար.* lél'am *«օրօրել»,* lelčjka *«օրօրոց», սերբ.* lêliam *«շարժուիլ, տատանիլ», հչեխ.* leleju *«յուզուիլ», հլեհ.* lelejanie *«ծովի ծփանք», սանս.* lēláyati *«ճոճուիլ, տատանիլ, դողալ»,* lālayati *«գգուել, փայփայել»,* lálati *«պարապ բաներով զբաղիլ, կատակել, խաղալ»* (Trautm. 156, Berneker *699*)։ *Հայերէնի մէջ հնխ. արմատը պահուած է երկու ձևով. հնխ.* lel, *որ տուած է հյ.* լիլ–, ուկ *մասնիկի յաւելումով* *լիլուկ, որից էլ* լուկ։ *Նախնական «շարժել» իմաստը պահում են դեռ գաւառականները։* Pokorny 2, 377 *համեմատուած բառերը դնում է* lā-, lē- *բնաձայն արմատի տակ։—Տե՛ս և* լող։—*Աճ. Աճառ. ՀԱ 1899, 206 կրկնուած է դրնում լու, լուկ արմատից, ինչ որ սխալ է։ Հիւնք.* լքանել *բայից։*

ԳԻՒ.—վն. լելալ *«շարժիլ, երերալ» (օր. վնասուած առաջը),* ւլկալ, լլլկվիլ *«շարժիլ, երերալ, այս ու այն կողմ ընկնիլ», Կր.* ւլկել *«չարչարել», Մկ.* ւլկիլ *«չարչարել», Ախց.* ւլկել *«տրորել», Ալշ.* ւլգել *«ցնցել, թափահարել», Մշ.* ւլգել *«մանկան օրօրել. 2. քնած մարդուն ցնցել ու շարժել՝ որպէսզի արթնանայ», Ոզմ.* ւլկիլ, լալկիլ *«հրել հրմշտկել», Մրղ.* լիլիկել *և խրբ.* ւլգիլ *«օրօրել մանկան օրրանում», Ղզ.* ւլկիլ *«մարմինը շատ քորելուց՝ միսը քերթուելով արիւն դուրս գալը», ևն.* ւլկիլ *«շատ բան շալկուորիլ»։*

ԼԽՏԵԼ *«քարը տաշել». յետին հյ. նորադիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Առաք. պտմ. 235 «Եւ ամենայն շինուածք այսօրիկ, միայն պարիսպն ի հողոյ եղև շինեալ. իսկ այլքն ամենեքեան լիտեալ քարիւ և թրծեալ աղիւսով և կրով և բոով շինեցան գեղեցիկ և վայելուչ յօրինուածով»։*

ԳԻՒ.—Բ. լխտել *«տաշելուց առաջ մեծ կտորները զարնել հանել, նրանից յետոյ կռանով աւելի մանր տաշելու համար» (հաղորդեց Ս. Մովսիսեան՝ նամակ 1933 մարտ)։*

ԼԾԿՈՂ *«սողեալ կամ ոտն առեալ». գիտէ միայն Բառ. երեմ. էջ 133։*

***ԼԿԱՄ**, ի–ա հլ. (գրուած նաև լմակ, լիկեամ ՋԲ) «սանձ» Բրս. մրկ. 125, 336. Տաթև. ամ. 455. որից* **լկամել** *«բերնին սանձ դնել» (չունի ԱԲ) Թլկր. 51.* **լկամարար** *«սանձ շինող» Ոսկիփ. աճկամ «անսանձ» ԱԲ։*

=Պրս. ligām *«սանձ» բառից, որից փոխառեալ են նաև ասոր.* legamā, *արաբ.* lijām, *քրդ.* leǰam, ligab, laγaf, laγav, *վրաց.* ლაგამი լագամի, ლაგაბი լագաբի, *թուշ. ինգիլ.* լագամ, *մինգ. լազ.* լագամի, *սվան.* լագ՝ամ, *բոլորն էլ «սանձ», երկրորդաբար նաև «չուան» նշանակութեամբ։* Müller WZKM 10, 181 *կարծում է որ բուն ծագումն է լտ.* ligamen *«կապ, փոկ, չուան»։ Սակայն հայ. բառը անշուշտ պարսկերէնից է՝ նշանակութեան նուիրութեան պատճառով։—Հիւրշ. 267։*

Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ, յետոյ Հիւրշ. ZDMG 35 (1881), 660:

Գիւռ.—Տփ. Ջղ. լգամ *«սանձի այն մասը՝ որ բերնի մէջ է մնում», Ագլ.* լի՛գ՝մն, լի՛գ՝մն, *Մկ.* լգամ *«սանձ». Շտ.* լգամ *«ոստայնի սանտրի երկու ծայրերը կապելու թել».—Նո՞յն են ննխ.* լգամ *«շրթունքի երկու անկիւնները դոյացած վէրք»,* լկամիլ *Ակն. «ախորժակը փակուիլ»։*

+ԼԿԻԼ *«սառոյցի կակղիլ՝ հալիլ սկսելը» ԱԲ. որից* **լկուրիւն** *«սառոյցի հալիլ սկսիլը, ջրջրկիլը» ՀՀԲ. նոյն է նաև* **լճնուլ** *«սառոյցի հալիլը» Նար. երգ. «Սառեալ մեղօք՝ ո՛չ լրնուն ջերմութեամբ արեգականն»։*

=Բնիկ հայ բառ՝ հնխ. leg- *«կաթկթիլ, ծորիլ, կամաց կամաց հոսիլ արմատից (հյ.* **լկիլ** *՝ արմատը լիկ կամ լուկ<հնխ.* lēg- *կամ* lōg): *Ցեղակիցներից յիշատակելի են հիւս.* legaim *«լուծուիլ, հալուիլ», կիմր.* llaith *«խոնաւ, թաց»,* dad-leithio *«հալիլ, հալեցնել», բրբտ.* leiz (*lekto) *«խոնաւ», հիւս.* leka, *անգսք.* hlec, *գերմ.* lecken *«ամանից ջուրը կամ հեղուկը դուրս ծորիլ», անգսք.* leccan *«ոռոգել, թրջել», մսգ.* lecken *«թորել, քամել, մզել», մբգ.* lecken *«թրջել», հիսլ.* lōkr *«կամաց հոսող վտակ», նորվ.* lokr *նաև «ճահճի ջուր» ևն* (Pokorny 2, 422—3)։ *Այս արմատը բացի կելտականից ու գերմանականից՝ ուրիշ տեղ պահուած չէ։—Ա՛ճ.*

Նշ՛ Բ չունի **լկիլ** *և* **լկուրիւն** *ձևերը, իսկ* **լճնուլ** *մեկնում է «լքանիլ, լուծանիլ, հալիլ, լկիլ», լծ. լտ.* liquesco *«հեղուկանալ»։*

Գիւռ.—կր. **լկիլ**, *Ալշ.* **լգել**, *Պլ.* **լգիլ** *«սառած բանի հալիլ սկսելը»։ Տե՛ս և* **եղկ**։

ԼԿՆԻԼ *«լրբանալ, լպրշիլ, համարձակիլ, լրբարար յանդգնիլ» Յոբ. ժե. 12. Մծբ. 248. Ոսկ. բ. տիմ. 210, տիտ. 330. Կոչ. 107. Ըղիշ. գ. էջ 66. որից* **լկնուրիւն** *«լրբութիւն» Ոսկ. փիլ. 459. Մաշկ.—Նոյն բառն է նաև* **լկնիլ** *«յարձակիլ» Բուզ. 191. «Ապա ի Դարանաղեաց գաւառին լկնեալ յարձակեցաւ Մուշեղն». իմաստի համար հմմտ. վարը գու։*

Բառ. երեմ. էջ 133 **լկնիլ** *մեկնում է «պշնուլ»։ Նշ՛ Բ, որից էլ Հիւնք., կցում են յն.* λαγνεύω *«զեղխիլ, լրբանալ»։ Այս բառը համեմատուած է սանս.* lañǰikā *«բոզ» բառի հետ* (Walde 421), *այնպես որ չի կարող կցուիլ հայերէնի հետ. բաս որում իբրև բնիկ կապալէինք *լծնիլ, իբրև փոխառեալ՝ *լագնիլ։ Բուզանդի վկայութեան մէջ Հ. Գ. Նահապետեան, Բազմ. 1906, 499 լրկենալ ուղղում է դիմեալ կամ գինեալ, որ մերժում է Աճառ. ՀԱ 1921, 123 և դնում է «յարձակիլ», վկայութեան կոչելով՝*

Գիւռ.—Ալշ. **լճնել** *«յարձակիլ», վրաձ* **լճնել** *«վրան յարձակիլ». նոյնը Սր. «վրան վազել»։*

ԼԿՏԻ *(–տյ, –եաց, յետնաբար ի–ա հլ). «անառակ, լիրբ» Յոբ. իդ. 5. Սիր. լ. 8. Բարուք. ղ. 8. Ոսկ. յհ. բ. 9, 14, 15. որից* **լկտալ** *Ոսկ. կոդ.* **լկտաճալ** *Ոսկ. եբր.* **լկտեճալ** *Ոսկ. մ. բ. 24. եբր. ժէ.* **լկտաճ** *Ագաթ.* **լկտիլ** *եղն.* **լրկտեցուցանել** *Ոսկ. կոդ. և ես.* **լկտուրիւն** *Առակ. ժբ. 24. Ոսկ. մ. ա. 6. յհ. բ. 15, 16. ես. պտմ.* **լկտէզարդ** *Ոսկ. ես. ևն։*

Հիւնք. լիկաիճոս քարի անունից։

Գիւռ.—Ախց. **լկտի**, *երև.* **լկըտի**, *Մշ.* **լգդի**. *Բրբախօս հայոց մէջ՝* **լղտի** *Առն. «լկտի» (Ա. լևոնք 1888 նոյ. 8—9). որից* **լկտուիլ** *եւդ.*

«լկտի և անբարոյական արարքների մէջ գտնուիլ»։

*ԼԿՏԻ «գահաւորակ, դեսպակ» Ոսկ. երր. իր. 552 (գրծ. լկտովf) և եփես. 893 (գրուած է ի լկտիս նստիս, պէտք է ուղղել ի լկտիս նստի. տե՛ս ՀԱ. 1911, 175). բցտ. հոլով է ի դիկտկէն Ոսկր. 432 (բնագրում «ի կառացըն»). նոյնի աղաւաղեալն է Բառ. երեմ. էջ 193՝ դիդրիկ «գահաւորակ»։

=Յն. λεκτίς, λεκτίκιον «գահաւորակ, պատգարակ» բառից, երկուսն էլ փոխառեալ են լտ. lectus «անկողին», lectica «գահաւորակ» բառերից. սրանք էլ ծագում են լտ. leg- «պառկիլ» արմատից, որի ցեղակիցներն են յն. λέκτο «պառկիլ» (-λέγω). գերմ. liegen, ռուս. лежать «պառկիլ» են (Walde 419, Boisacq 574, Berneker 705): Ըստ այսմ Ոսկրատի ի դիկտկէն ձևի ուղղականն է *դեկաիկ, որ աւելի համապատասխան է յն. λεκτίκιον ձևին։—Հիւրշ. 353։

Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ։

ԼՒՐՄԻԼ «լարծիլ, սահելով ի բաց գերծիլ, փրծանիլ ի ձեռաց». անստոյգ բառ. ունին միայն Բառ. երեմ. 135 և ՀՀԲ. թերևս արդիւնք սխալ ընթերցման՝ փխ. լարծիլ, և կամ թերևս կ և պ ձայնների փոխանակութեամբ, ինչպէս ունինք գւռ. լկատել=լպատել «լիզել»։

ԼՂՊՈՐ «փետուրները թափուելով՝ մորթը մերկացած» Բար. 150 (այլ խմբ. մերկ)։

ԳԻՒ.—Կայ լղպոր, լխպոր, լխմոր «կակուղ, փափուկ (միրգ, ճուտ, եղջերուի ձագ են)»։—Այս բառերի հետ համմտ. լղրիլ Ջն. «շատ հասունանալ (պտղի)», լխպլիկ Ակն. «շատ հասունացած (թութ)», լխպիկ Ակն. Պլ. «շատ թրջուելով կակղած», որոնցից երևում է որ բոլորի արմատն է լխպ-, լղպ-, լղմ- և թէ -որ մասնիկ է, ինչ. պղտոր, ճատոր, բեկոր բառերի մէջ։

ԼՄԱԿ տե՛ս Լկամ։

ԼՄԱՆ տե՛ս Լի։

ԼՄԵԼ «ճմրել շաղուել, կոխել, կակղացնել» Իմ. ժե. 7 (կաւը), Արծր. Հրտր. Պատկ. էջ 28 (թաղիքը). պարզ արմատն է լում՝ ինչպէս ցոյց է տալիս դիւրալում «դիւրաւ լմելու, կակուղ, փափուկ» Բրս. հց. որից նաև լմել «կոխոտոյ, ոտքին կոխան անել» Սիրաք. բ. 19 (ըստ ՀՀԲ), լմուքիւն «անյագ ուտել, փորը կոխել» Անյ. հց. իմ. լմլմել կամ լոմլոմել «բերնում լմել, ծամծմել, այս ու այն կողմ գցել, ծոմոկել» Մխ. ապար. լոլոմել, լալոմել (=լօլոմել) «ծամելով ուտել» Ագամ. 316, 258. լմշտել «կոխել, հարթել» (ըստ Հին բռ.), թերևս նաև «շարժել, օրօրել», որից լմշտոց «փորր տղու օրօրոց» Հին բռ.=Բառ. երեմ. էջ 133։

Brosset JAs. 1834, 383 են վրաց. ლბილი լրիլի «կակուղ» բառի հետ։ Հիմնք. մալել բայից։ Petersson, Ar. u. Arm. Stud. 103 մերժում է կցել հսլ. lomiti, ռուս. ломать, հպրուս. limtwei «կոտրել», իռլ. laime «կացին», հիսլ. lemia «զարնել, բաղխել», հբգ. lam «կաղ» են (Berneker 731, Walde 412) իմբի հետ, որոնք թէև ձևով նոյն են, բայց նշանակութեամբ տարբեր են. այլ միացնում է սանս. vlīnāti «ճմռել», գնդ. urvinyant- «վայր գցել», անգսք. flītan «կոուել» են բառերին, իբր gli- արմատից՝ մ մասնիկով։

ԳԻՒ.—Ալշ. Մշ. Նբ. Ջղ. լմել, Ախց. լմէլ, Ոզմ. լմիլ «ճմռել, տրորել, յատկապէս թաղիք պատրաստելու համար». նոյն արմատից են նաև լմիկ «խիւս», լմուիլ Տր. «շորը սասպիկ թրջուիլ», լմլմել Վն., լմլմիլ Ոզմ., լմլմացնել Վն., լոմլոմել Սվ., լամլմել Ղրբ., լոմլոմել Ււդ., լոմշտել Սվ., լոլմել Ննխ., լամլամել Ղզ. Շլ. «անատամ մարդու ծամծմելը», լմլմեցնել Տփ. «խօսքը ծամծմել, պարզ ու յստակ չարտասանել», լմկել Վն. «կատակով հետը խաղալով չարչարել»։

ԼՆԴԻԼ «կաթը խնոցիով հարել, խնոցել» Եսփիփ. ծն. որից լեզած «խնոցիով հարած» ԱԲ։

ԳԻՒ.—Եւդ. լեդիլ «արգանակը սառչելով մածնուլ՝ թանձրանալ».—կայ նաև լեռուտ Ակն. «կերակրի ամանների լուացած կեղտոտ ջուրը», լեռտած Սվ. «հոտած, նեխած» (հեղուկ նիւթերի համար)։

ԼՈԲԱՀ «խաղողի նման պտուղ է» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 3323։

ԼՈԲԻ տե՛ս Լովիա։

ԼՈԴ «նուաստ, անշուք, խեղճ». գտնւում է

միայն լոգոտիլ «անշքանալ» ձևի մէջ, որ ունի Փէշտիմալճեան բառարան, յաւելուած:— Անատոլիզ բառ:

ԼՈԳԱԼԻ «մարգախոտ» (որ է լօշտակ). ունի միայն Բառ. երեմ. յաւել. 567:

+ԼՈԳԱՆԱԼ «լուացուիլ, ջրի մէջ լոգնալ» Փիլ. Պտմ. աղէքս. 3Հ. իմ. «ոտոգուիլ» (տունկի) Լմբ. որից լոգացուցանել Բուզ. և. 7. լոգումն Ոսկ. յհ. բ. 15. լոգուրիւն Կանոն. լոգարան Պտմ. աղէքս. Անան. եկեղ. լոգանի Փիլ. Պտմ. աղէքս.—գրուած է նաև լոկանալ, լողկանալ Սամ. անեց. շար. 157:

=Բնիկ հայ բառ՝ հնխ. lov- արմատից. սրա հետ համմտ. յն. λούω (<λόϝω), λοΐέω, հոմեր. λόω (<λόϝω) «լուալ, լուացուիլ, լոգանալ», λουτρόν «բաղանիք», լատ. lavo< lovo «լուալ, լոգանալ» (որից ֆրանս. laver, իտալ. lavare «լուանալ»), գալլ. lautro «բաղանիք», հ. իռլ. lōathar, lōthur «ջրաման, ջրանցք», բրտ. louazr «գուռ, ջրի աւազան», իռլ. lōchasair «անձրև», կիմր. gw-law, կօրն. glau «անձրև», հիսլ. laug «տաք լոգանք», հրգ. louga, գերմ. Lauge, անգսք. lēah, անգլ. lie, lye «լուացքի մոխրաջուր».— արմատի ստորին ձայնդարձի (lu) աճած ձևն է luk, որից հրգ. luhhen «լուալ» (Walde 418, Boisacq 587, Kluge 295, Pokorny 2, 441, Ernout-Meillet 503):—Հիւբշ. 452:

Աւգերեան, Բցար. չփ. և կշռ. էջ 92 լոգարան բառը կցում է յն. λεκάνη «լեկան» ձևի հետ: Ուղիղ մեկնից նախ Հիւբշ. KZ 23, 35:—Հիմնք. լոկ բառից է հանում:—Սագըղեան ՀԱ 1909, 334 հլ. լողալ, թրք. yəqamaq «լուալ», սումեր. lag' «լուալ» ևն: Karst, Յուշարձ. էջ 406 սումեր. lag', lag'lag' «լուալ, մաքրել, մաքուր, ճերմակ», lug' «մաքուր, լուացուած»: Թիրեաքեան, Արիահայ բռ. 175 պրս. ﺷﻮﻱ šūy «մերկ» բառից:

Գիմ.—Խրբ. լօգնալ, Սեբ. լօգ'նալ, Տիգ. լ'օգնմլ', Հճ. լիգնօլ, լիկնօլ, Ակն. լօյնալ, Ասլ. լէօյնալ. միւսների մէջ լողալ, լողանալ բայի հետ շփոթուելով՝ կա՛մ դարձած է երկուսի դումարը (այսպէս՝ Ալշ. Մշ. լօղգրնալ, Վն. լօխկնալ, Մկ. լէօղկմնալ, Ոզմ. լօղ'անալ) և կամ ստացած է նրա միջին ղ ձայնը՝ իմաստի տարբերութեան համար բայական ձևն էլ փոխելով. այսպէս՝ Ախց. լօղանալ «լոգնալ, լուացուիլ» և լօղ տալ «լողալ». Շմ. լղանալ «լոգնալ» և լըղ տալ «լողալ». Խոջ. լեղացվէլ «լոգնալ» և լղօրդ՝ տալ «լողալ». Տփ. լօղնալ «լոգնալ» և լօղ տալ «լողալ» ևն:

*ԼՈԳՈՐ «կաշիէ թուշուն՝ վարուժնակ որսալու համար, ֆրանս. leurre». ունի միայն Նոր բայր, Բառ. ֆր. 742 բ, իբր նոր բառ. նոյնը գիտեն Լուսինեան և Կոյլաւ, Բառ. գերմ. էջ 598ա:

=Իտալ. logoro, որ ըստ Littré-ի բառարանի նշանակում է ֆրանս. leurre:

Այսպէս մեկնեց Ստ. Մալխասեան (անձնական):

ԼՈԿ, ո հլ. «սոսկ, միակ, պարզ» Ղուկ. իգ. 12. Կոչ. 26, 56 (գրծ. լոկով), 106 (գրծ. լոկովի), Կիւրղ. և Եփր. Թգ. Ոսկ. յհ. ա. 9—11. «գուրկ, մերկացեալ, թափուր» Ոսկ. մտթ. և ես. Կող. գ. «միայն, սեթ» Ա. մակ. բ. 37. որից լոկ or «լուր օր» Շնորհ. Թղթ. լոկ ի լոկոյ Եփր. Թգ. 421. լոկաբար Եփր. Թգ. լոկիլ «գրկուիլ, թափուր մնալ» Եւս. պտմ. 108. լոկատր «չքաւոր» Ոսկ. պօղ. ա. 339. լոկութիւն «չքաւորութիւն» Եւս. պտմ. գրուած է նաև լուկ «հագիւ» Զենոբ. էջ 13, լուխ «իսկոյն սեթ» Նոր վկ. էջ 342—3, լօխ Քուչ. 44, 45:

Հիմնք. պրս. ﺷﻮﻱ luč «մերկ» բառից՝ պատահական նմանութիւն ունի յն. ὀλίγος «քիչ, փոքր», որի ցեղակիցն է հյ. աղճատ:

Գիմ.—Մշ. Զղ. լոկ, Ախց. լօկ, Ալշ. լոգ, Նախ. լօգ «միայն, ցամաք» (գործածւում է միայն հետևեալ դարձուածներով. Լոկ թեյ խմեց (առանց հացի). Լոկ ջուր ևն).—Ալշ. լոգ, Սեբ. լէօգ «անժուր, առանց իւղի (միս, ապուր ևն)». Վն. լոկ «թանի երեսի աննիւթ ջուրը. 2. մերկ». որից Խոջ. Հմշ. լօգօր «հենց հիմայ, մի քիչ առաջ միայն, հազիւ թէ».— Ակնայ բարբառում դարձել է բայերի վերջը կցուող թարմաւոր մասնիկ. ինչ. Ուշը կմնամ լի՛ւկ (արտասանւում է լիւգ). նոյնը Մշ. լուկ: Երև. լօխ «առանց հացի և ուրիշ ուտելիքի». օրինակ լօխ չայ:

ՓՈԽ.—Գնչ. loko «թեթև», lak, loko «քիչ,

սակաւ» (Paspati), loko «կամաց, քիչ», lokoro «մի քիչ, կամացուկ» (Vaillant).—այս բառերը Paspati կցում է սանս. laghu «թեթեւ», սլ. legok «թեթեւ», բուլգար. lek «թեթեւ» բառերին։

*ԼՈԿՈՆ, ի, ի–ա հլ. «վուշից, կիրից և իւղից շինուած մածուցիկ նիւթ՝ որով զանազան կոտրած ամաններ են կպցնում. կոծիկ». ունին միայն ՀՀԲ, ԳԴ. այսպէս նաև Թորոսեան, Տետրակ համառօտ բառարանի, Նախիջևան 1794, էջ 34 (լէօքիւն կպչոտն՝ որ է լոկոն). որից լոկոնել «լոկոնով կպցնել» ՀՀԲ։

=Արաբ. luqun, որից նաև Բրք. لكن lükün, lökün «է սա իր ինչ, զոր բամբակաւ և իւղով կտաւատի և կրով կազմեալ ծեծեն, և այնու զփողրակս ջրոց ամրացուցանել հաստատեն և պնդեն» (ԳԴ պրս. پنبه‌کهیر բառի տակ). «մի տեսակ անթափանց կոծիկ՝ որ գործածւում է աղբիւրների և լոգարանների շինութեան մէջ» (Будаговъ II, 192)։—Արաբ. բառը չունի Կամուս. գիտէ ԳԴ։—Աճ.

ԳԻՒՒ.—Մշ. լոգ, լօգոն նոյն նշ. (կայ նաև երև. Ղզ. ըստ Ամատունի, Հայոց բառ ու բան, էջ 256), Արբ. լէօֆ, ննխ. լօգ «ձէթով ու գաճով պատրաստուած խիւս՝ պատուհանի ապակիները շրջանակին ամրացնելու համար»։ Որից լոկել Բբ. «կոտրած ամանները կպցնել լոկով», լոկեող Բբ. «մի տեսակ մուքկարմիր կապտագոյն հող՝ որով կպցնում են կոտրած հողէ ամանները»։ Անշուշտ տարբեր չէ լոկոնել Մլկ. «լղճել, կեղտոտել, ապականել», կրաւ. լոկոնուիլ «ապականուիլ», որ պիտե նաև Վարդան Յունանեան, Ջեռքածութիւն, 1671, էջ 311։

1+ԼՈՂ «լողալու գործողութիւնը». ընդարձակ զարգացում ստացած արմատ է, որ երևում է լող, լոյղ, լիւղ, և սրանցից ածանցուած լօղ, լուղ, լեղ ձևերով, որոնք գրուելով նաև նախաձայն ղ-ով՝ տալիս են ղող, ղոյղ, ղիւղ, ղօղ, ղուղ, ղեղ ձևերը (ընդամէնը 12 ձև). այսպէս՝ լող Ոսկ. յհ. բ. 41, Եփր. Թգ. 456. Վեցօր. 161. լոյղ Ոսկ. մ. ա. 7. Վրդն. ծն. Արծր. լիւղ Ոսկ. Ա. կոր. Ագաթ. Կլիմաք. Խոր. լուղ Խոր. Կղնկտ. ղոյղ Եփր. Թգ. ածանցմամբ՝ լողալ Տօնակ. լողել Անյ. պորփ. լողիլ ՆՀԲ. լուղիլ Վեցօր. Կոչ. լուղել Գծ. իէ. 43. Կլիմաք. Նոնն. լուղալ Վեցօր. լիւղալ Եփր. ծն. քս. 18. լիւղել Կլիմաք. լեղալ Կլիմաք. Աբիստ. աշխ. լօղալ ՆՀԲ. ղուղիլ Ոսկ. մ. ա. 7. Բ. տիմ. Բուզ. ղուղել, Փիլ. ղօղիլ Յոբ. ժա. 12. Վեցօր. ղօղալ Սերբր. 108. ղիւղալ Մխ. պտ. (այս բոլորը երեք բայական լծորդութեամբ՝ -ել, -իլ, -ալ). լողակ «ձուկ կամ ջրային որևէ կենդանի» Կոչ. լողորդ Ոսկ. խչ. լուղորդ Եզն. լուղակ Իմ. ժԲ. 18 (սրա մի վրիպակ գրչութիւն է ձուղակ «ջրային» Բառ. երեմ. էջ 191). լուղական Ագաթ. Վեցօր. ղողակ Յճխ. ղուղակ Վեցօր. Մագ. ղուղան «լոգարան կամ բաղանիք» Բառ. երեմ. 193. ղօղակ Վեցօր. ղօղորդ Պիտառ. լեղորդ Ուռհ. էջ 315 ևն։ Նոր գրականի ընդունած ձևն է միայն լողալ, բայց լուղորդ։

Böttich. ZDMG 1850, 355 և Arica 88, 443 plu արմատից։ Այվազովսքի, Յղ. հնչման, էջ 8 ողողել բայից։ Հիւնք. լոգանալ բայից։— Bugge, Btrg. 11 սանս. plu-, plávate «լողալ» բառին է կցում, իբր հնխ. pléwo-> *լեռղ>լող։ Սագրզեան ՀԱ 1909, 334 հյ. լոգանալ, Թրք. yəqamaq և սումեր. lağ «լուալ» են։

ԳԻՒՒ.—Ալշ. խրբ. ննխ. Պլ. Ռ. Մշ. Սեբ. Վն. լօղալ, Տիգ. լ'օղալ, Սչ. լեղ տալ, Դոր. Երև. Ղրբ. լղա'նալ, Ագլ. լղա'նիլ, Տփ. լիղնալ, լիղ տալ, Ագլ. լուղիլ, Ջղ. լուղանալ, Ոզմ. լ'ուղ, լ'յուղալ, Ասլ. Մկ. լէօղալ, Զթ. լէօղ էնիլ, լուղիլ, Շմ. լըղ տալ «լողալ», լղանալ «լոգնալ», Սլմ. լողնալ «լոգալ», լօխս տալ «լողալ», Մրղ. լօղնալ «լոգնալ», լօղ տալ «լողալ», Ախց. Կր. լօղանալ «լոգնալ», լօղ տալ «լողալ»։ Սրանց մասին տե՛ս և լոգանալ։—Նոր բառեր են լողան, լողուր, լողցնել, լողցնուիլ, զորտալող, թևնլող են։ Կրկնական ձևեր են լոլող Դվ. «լուացուիլը, լոգանք» (մանկական բառ) և լոլոդ նշ. «վարդավառին իրար վրայ ջուր ցանելու սովորութիւնը»։

2+ԼՈՂ «գլան». այս պարզաւոյն ձևի տակ հին հայերէնում գործածուած չէ. բայց կայ մէյ. լող «տանիք հարթելու գլան» Վստկ. 189 (Զամանն զերդ լող ի միջոցին գլորեա). նոյն արմատից են ծագում լողել «գլանաձև քարով հարթել, ողորկել (տանիքը, կալը)»

Վստկ. 189. ղօղել «լողքարով հարթել» երգէն. քեր. ղուղան «գլան» Վեցօր. 181։

=Լող, ղօղ, ղուղ ձևերի կատարեալ համապատասխանութիւնը նախորդ լող «լողալ» արմատի ձևերի հետ՝ ցոյց է տալիս որ երկու արմատներն էլ նոյն են. ընդհանուր իմաստն է «գլորիլ, սահիլ, շարժիլ». հմմտ. այս իմաստներով արդի գաւառականների մէջ՝ լողլողալ Շտ. «անդադար շարժիլ» (Սնդիկը ձեռքիս մէջ կլողլողայ) և լողալ Սլմ. (նաև Rivola) «սահիլ, սառոյցի վրայից սահիլ սայլաքիլ»։ Հմմտ. նաև «լոզալ» իմաստի ղարդացման համար՝ հետևեալ զարձուածները. Ուղը, փայտը և բոլոր թեթև մարմինները լողում են ջրի երեսին. Նաւը լողում էր ալիքների վրայով են։—Գաւառականների մէջ լող երևում է նաև լոյ ձևով և «գլանաձև, խողովակաձև, կլոր» նշանակութեամբ, ինչպէս ունինք գլան, գլորիլ և կլոր՝ միևնոյն գիլ արմատից։ Այսպէս են՝ լոյ, լոյոզ Ղրբ. «սրինգի պէս խողովակաձև և մէջը պարապ», լոյակ Ղրբ. «ոլորի խողովակաձև ոսկորը, օրորոցի միզախողովակ», լոյոկ Ջն. «կլոր, գնդաձև, գունդ, հրացանի գնդակ», լոյիկ «տոմատ, պամիդոր, կլոր հացիկ», լոյ, լոյեր Ջղ. «ամորձիք» (հմմտ. պլորներ). լոյաճ Ղրբ. «խողովակաձև ոլորած հաց» են։ Այս լոյ «գլանաձև» բառն էլ լող «գլան» ձևի միջոցով կապւում է լեալ «շարժիլ» և լոյկ բառերին, որով և բոլորն էլ ածանցուած են լինում հնխ. lel «շարժել, ցնցել» արմատից (lol ձայնդարձ)։—Աճ.

ՆշՀբ ղուղան կգում է գլան և յն. κύλινδρος հոմանիշներին։ Նահապետեան, Բազմ. 1908, էջ 18 սրբագրում է սեղան?

ԳԻՒ.—Լող Ակն. «գլան, որևէ գլանաձև բան», լող Այն. Առն. Արբ. Եւդ. Զթ. Խն. Խրբ. Սեբ. Մրշ. Ք. «տանիք հարթելու խոշոր քարէ գլան», որից լողքար, լողաճ, լողել, լողիչ, լողկոթ, լողփայտ, լողտուր են։

ՓՈԽ.—Առանայի և կեսարիոյ Թուրքերն ու յոյները ունին loγ «լողքար», loγlamaq «լողքարով տանիքը հարթել» (Արևելք 1888 նոյ" 8—9, Բիւր. 1898, 712), Ակն. Թրք. loγ «լողքար», loγgot «լողկոթ», Տ. Թրք. loγ «լողքար» (Բիւր. 1899, 798)։

*ԼՈՂՈՒԻԱՍ «ծախուած ապրանքի գինը» (չունի ԱՒ) Անսիզք 83, Սմբ. դատ. 52 (գրուած նաև լաղաւուիաս)։

=Նյն. λογάριασις «գումար, հաշիւ», λογάριον «գումար, ապրանք, դրամ», λογαριάζειν «հաշիւ տեսնել»։

Ուղիղ մեկնութիւնը տուաւ Անսիզքի հրատարակիչը, էջ 83։

ԼՈՄԼՈՄԵԼ տե՛ս Լմել։

+ԼՈՅՏ «հալուկ, հեղկային, հալհլուկ, չրջրկոտ, կակուղ» եզն. Վեցօր. 165. Մծբ. Փարպ. որից լուծանել «քանդել, արձակել». գործածւում է նաև բազմաթիվ երկրորդական իմաստներով. ինչ. մեղքերից արձակել, հանելուկ լուծել, պասը՝ ծոմը բաց անել, երդումը՝ կանոնը աւրել, մարմինը քայքայել, սառը կակղեցնել, հալեցնել. կրաւորականով՝ մի տեղ իջնել, գիշերել, պաշտօնից վտարուիլ, մեռնիլ են. իմաստի զարգացման համար հմմտ. արաբ. حلّ hall «լուծել, քանդել, իջևանիլ, գիշերել» (Կամուս, Թրք. Թրգմ. Գ. 180) ՍԳր. եզն. Ոսկ. լուծումն կոչ. Վեցօր. լուծութիւն «հեղուկ վիճակը» Վեցօր. «Թուլութիւն» Եւս. պտմ. «հաւատքի մէջ տկարութիւն» Եփր. յոբ. ՀԱ 1912, 671. լուծանիմ «վրնաս» Փիլ. անլոյծ Իմ. ժէ. 16. դժուարալոյծ Ոսկ. հս. գօտելոյծ Լմբ. պտրգ. անդամալոյծ ՍԳր. դիւրալոյծ Եփր. աւետ. անլուծակի «անքակտելի կերպով» Կնիք հաւ. 26. լուծողական, լուծարէ, անլուծելի (նոր բառեր) են։

=Բնիկ հայ բառ՝ հնխ. leu- կամ lou- արմատից՝ որ աճել է մեր մէջ -g^{e}/$_{o}$ մասնիկով.—արմատի պարզ ձևը ցոյց են տալիս յն. λύω «լուծել, արձակել, հալեցնել, վերլուծել», λύσις «լուծումն», λύτρον «փրկանք», սանս. lunáti «կտրել հեռացնել», lavi- «մանգաղ», lūna- «կտրած», լտ. luō «վճարել, հատուցանել», re-luō «լուծել», so-lvo «լուծել, բաժանել», luēs «լուծոյթ, անմաքուր հեղուկ, հալած ձիւն են», իռլ. lun «ոչխար» (կտրելու բուրդն ի նկատի ունենալով), անգլսք. álynnan «արձակել», գոթ. luna «փրկանք».—Նոյն արմատից՝ -s- աճականով՝ գոթ. lausjan «արձակել, ազատել», fra-

liusan «կորցնել», laus «ունայն», հհիւս. lauss «ազատ, թոյլ, տկար», հբգ. far-liosan «կորցնել», lōs «ազատ, զերծ», lōsjan, lōsōn «արձակել, ազատել», զերմ. lösen «լուծել», los «ազատ, որ չունի», անգլսք. léas «ազատ, զերծ», անգլ. loose «արձակել, քանդել, բանալ», -less «զերծ, որ չունի» ևն (Boisacq 593, Walde 447, Kluge 310, 507, Pokorny 2, 407, Ernout-Meillet 538):

Նշի առաջին անգամ տուաւ ուղիղ մեկնութիւնը՝ լծորդ դնելով յն. λύω, λύτος, λύσις *և լտ.* solvo, solutus *ձևերը*: Windisch. 17 *յն.* λύω, ἐλεύθ-ερος, *լտ.* liber, *գոթ.* liusan, laus «ազատ»: Böttich. ZDMG 1850, 355 *և* Arica 81, 362 *տանս.* pluta = լոյծ: Müller SWAW 38, 578 *տանս.* ruj: — *Հիւբշ.* KZ 23, 395 *կապում է նոյն տանսկրիտ բառին, հայը հանելով եւրոպական* lug *ձևից*: *Տէրվ. Նախալ. 103 տանս.* ruj, *լատ.* lugere «սգալ» *ձևերի հետ՝ հնխ.* rug «բեկանել, վշտացնել» *արմատից*: Meillet MSL 7, 57 *յն.* λύγος «ճկուն, մատղաշ ճիւղ», λυγόω, λυγίζω «ճկել, ծռել, կորացնել ևն», *լիթ.* lùgnas «ճկուն»: (*Նոյնը հաստատում է* Boisacq 589 *ծան. լատ.* luxus «պաշտօնից վտարեալ» *ձևի միջոցով*): *Հիւբշ. 454 չի ընդունում այս մեկնութիւնը՝ նշանակութեան տարբերութեան պատճառաւ, մերժում է նաև յն.* λύω «լուծել» *համեմատութիւնը՝ ձևի անհամաձայնութեան պատճառաւ*: *Հինք. ծոյլ բառից կամ յն.* λύω, λύσω: Meillet, De indeur. rdmen, *էջ 24 լիթ.* láužiu «կոտրել», *հբգ.* liohhan «քաշել փրցընել», *լատ.* lugeo «լալ, սգալ» ևն *ընտանիքին է կցում, որ մերժում է Հիւբշ.* IF Anz. 10, 45՝ *նշանակութեան տարբերութեան պատճառաւ*: Pedersen *Հայ. դր. լեզ. 44 գոթ.* lukan «փակել»: Patrubány, Monde Orient. 2, 220 *և ՀԱ 1908, 274 տանս.* klidyati, *յն.* πλάδος «խոնաւութիւն», *հանգլ.* hlaud «մէզ» ևն: *Վերջին անգամ* Meillet BSL № 79, *էջ 4 տուաւ վերի մեկնութիւնը*:

Գիմ.—Ջղ. լուծել, *Ախց. երև.* լուծկ (*փորի համար*).—*Թրքախօս հայոց մէջ կայ* լուծել օլմամ «*ջուրի մէջ հալիլ*» *Առն. (Արևելք 1888 նոյ. 8—9)*:

+ԼՈՅՍ, ո *հլ.* «*լոյս*» *ՍԳր. Ագաթ. Կոչ. ոբից* լոյսիջոյց «*վերևից պատուհան*» *Բուզ. ե. 5 (առանց սղման).* լուսաբեր *Կոչ. Ագաթ. Կոբիւն.* «*պատուհան*» *Վրդն. պտմ.* «*Արուսեակ*» *Շիր. Պզատ. օրին.* լուսազարդ *Ոսկ. յհ. ա. 43.* լուսակալ «*աշտանակ*» *Ել. լհ. 17* լուսակերպ *Եւագր.* լուսամուտ *Եզնկ. խր. 10.* լուսանայ *ՍԳր.* լուսատու *Եզն. Կոչ.* լուսարան «*մկրտարան, եկեղեցի, յն.* φωτιστήριον» *Բուզ. էջ 106 (հմմտ. Վարդանեան ՀԱ 1914, 321).* լուսաւոր *ՍԳր. Ագաթ. Եզն.* լուսաւորիչ *Յոբ. լա. 23. Ագաթ. (որից նորակերտ* լուսաւորչական, լուսաւորչաղաւաս, լուսաւորչաւանդ, լուսաւորչահիմն *բառերը)*, լուսածել «*կոյր աչքը բժշկել*» *Տիմոթ. կուզ, էջ 257.* յորդալոյս *Վեցօր. իճճնալոյս Ճառընտ. մըշտալոյս ՅՀ. իմ. եկեղ.* լուսատարփեան (*նորագիւտ բառ*) *Մխ. անեց. 46.* լուսացու «*եկեղեցական տուրք՝ մոմ վառելու համար*» (*չունի ԱԲ*) *Տաթև. հարց. 684 (այժմ կոչւում է* լուսագին) *ևն.*—**լուսին** «*լուսնակ, լուսնկայ*» *ՍԳր. եղն.* «*լուսնային ամիս*» *Վրդն. պտմ. տպ. Վենետ. էջ 156 = հրատր. էմ. էջ 204.* «*պայտ*» (*կիսալուսնի նման ձևից առնելով*) *Լաստ. բ. Շապհ. 82. որից* լուսնակայ «*լուսին եղած գիշեր*» (*հմմտ.* պարզկայ) *եղն. Շիր. էջ 51 (որք ի լուսնակային ննջեն՝ խոնաւութիւն լինի ի գլուխս նոցա).* լուսնակ «*լուսին եղած գիշեր*» *Շիր. էջ 51 (քերևս ուղղելի* լուսնակայ). լուսնապաշտ *եղն.* լուսնոտ «*լուսնի հիւանդութիւն ունեցող*» (*հմմտ. յն.* σεληνιαζόμενος, *լտ.* lunaticus) *Մտթ. դ. 24. եղն.* լուսնոտիլ *Մտթ. ժէ. 14.* լուսնեակ *Ոսկ. մ. գ. 4.* լուսնաւոր *Նար. քր.* լուսնել «*պայտել*» *Վրդն. առակ. 132.* ենթալուսնեայ *Անյ. պորփ.* միջնալուսին *Սիր. լթ. 16.*— **լուսրճ** (*յոգ.* լուսուճ) «*աչքի վրայ իջած կեղև՝ որ տեսողութիւնը խանգարում է*» *ՍԳր. (այսպէս է կոչուած գոյնի պատճառաւ. հմմտ. յն.* λεύκωμα, *լատ.* albugo *հոմանիշները). որից* լսնագոյն «*սպիտակ*» *Նիւս. երգ.* լսնանձև *Վրդն. երգ.* լսնանալ *Ղևտ. եփր. ծն. էջ 3.*

լսենցուցանել *Յովհ. ա. 7.* լսիլ *կմբ. ժբ. մարգ. էջ 105 (յովհ. ա. 7).* հաւալուսն «մի տեսակ թռչուն է» *ՍԳր. վեցօր. էջ 172—173. —Հիւրշ. 453* բառիս յգ. լուսուիմ ձևը իրաւամբ ուղղում է լուսիմ, բայց կայ նաև հոմանիշ լոյսն *(ըստ ԱՔ)*, որից կարող էր կանոնաւորապէս յառաջանալ լուսուիմ ձևը):— *Տե՛ս և* ԼՈՅՏ:

=*Բնիկ հայ բառ՝ հնխ.* louk'o- *ձևից. սրա հետ համմտ. սանս.* ruč, rōčate «երևիլ, փայլիլ», rōka- «լուսաւոր», ručí- «լոյս», rúkmān «փայլուն», rukšá- «փայլուն», rúçant «փայլուն, պայծառ», rukmá- «ոսկի», loká- «բաց տեղ, աշխարհ» lokate «դիտել», lōčana- «աչք», զնդ. raočah- «լոյս, փայլ», raoxšna- «փայլուն, պայծառ», հպրս. raučah- «լոյս, օր», պհլ. rōč «օր» *(որից փոխառեալ հյ.* ոռճական), ոսկի «օրապահիկ»), ročan «լուսամուտ», rōšan, rošnak «լուսաւոր» *(որից փոխառեալ հյ.* ոռճական), պրս. rōz «օր», rošan «լուսաւոր», քրդ. ruž, աֆղան. vraj, բելուճ. rōč «օր, արեգակ» (Horn § 629—631), բոշա. rոշ «կրակ, ճրագ», կամիս. luk «լուսաւորել, վառել», յն. λευκός «փայլուն, լուսաւոր, պայծառ, սպիտակ», λεύκη «սպիտակ բարտի, բորոտութիւն, քոս», λεῦκος «սպիտակ մի ձուկ է», λευκάς «սպիտակ, փայլուն», λυκόφως, ἀμφι-λύκη «արշալոյս» (*λύκος «լոյս» բառից), λεύσσω «նայիլ, դիտել», λεῦσσον «եղևնի սպիտակ միջուկը», λεύκωμα «աչքի փառ, լուսն», λύχνος «սպիտակ մարմարիոն», լատ. lux «լոյս», lūceo «լուսաւորել, փայլիլ», lumen (<*leuksmen) «լոյս», luna (<*loucsnā) «լուսին», lucerna «ճրագ», lucus=հլտ. loucom «սրբազան անտառ», lucubro «գիշերը լոյսով աշխատիլ, տքնել, հսկել», հիռլ. lóche «փայլակ», luach-te «ատրաշէկ», luachair «փայլակ», luaichtide «փայլուն», lōn, lūan «լոյս, լուսին», կիմր. llug «լոյս», lluched «փայլակ», հիսլ. loge «բոց», lios «լոյս», liómi «փայլ», Loki «կրակի աստուածը», կորն. luhet «փայլակ», անգսք. léoht «լոյս», līeg «բոց», lioxan «լուսաւորել», léoma «փայլ», lixan «փայլիլ, ցոլալ», անգլ. light «լոյս», lighten «փայլատակել», գոթ. liuhaþ «լոյս», lauhatjan «լուսաւորել», lauhmuni «փայլակ», հբգ. liocht «լոյս», loug «բոց», liehsen «պայծառ, վճիտ, փայլուն», lohazzán «բոցավառիլ», գերմ. Licht «լոյս», leuchten «փայլիլ», հպրուս. lauxnos «համաստեղք», laukīt «փնտռել», լեթթ. lūkât «դիտել», լիթ. laũkas «ճակտի վրայ սպիտակ նշան ունեցող. 2. բացատ, դաշտ», láukiu «սպասել», հսլ. luči «լոյս», luča «ճառագայթ», luna «լուսին», lysù «ճաղատ», ռուս. лучъ «լոյս», луча «շող», лысый «ճաղատ», луна «լուսին» ևն ևն: Այս բոլորը ծագում են հնխ. leuq, louq, luq *կամ սրանց զուգահեռ* leuk', luk' *արմատներից և նրանց* -s-*ով աճած ձևերից* (Walde 442, 446, 444, Boisacq 572—3, Trautmann 151—2, Berneker 742—3, 745, 752, Kluge 305, Pokorny 2, 408—12, Ernout-Meillet 543 ևն): Հայերէնի մէջ լոյս ծագում է հնխ. louk'o- *ձևից,* լուսին<հնխ. louk'eno- *և* լուսն<հնխ. luk'on:—*Հիւրշ. 453:*

Ուղիղ մեկնեց նախ Աւետիքեան, Քերակ. 1815, էջ 315, որ ցեղակից է դնում լտ. lux *բառին:* Klaproth, Asia polygl. 109 լոյս=*լտ.* lux *և գան.* lius, լուսին= *պրս.* luchān: *Նշէ լտ.* lux, *յն.* φῶς, *ռուս.* луч *«ճառագայթ».* Peterm. 29 *լտ.* lux: Windisch. 17, 19, 25 *լտ.* lux, *սանս.* rōč, lōka: Böttich. ZDMG, 1850, 355, Arica 85, 409 *և* Lag. Urgesch. 337 լոյս *և* լուսին *դնում են* ruč *արմատի տակ, որից յն.* λευκός, *լտ.* luna: *Մահր, Ճոաքաղ 1861, էջ 346* լուսին<*ի լուսոյ սին:* Müller SWAW 42, 256 *և* 44, 567, *որից էլ* Justi, Zendsp. 251 *զնդ.* raočō, raočanh, *պրս.* rōz *են, էմին, Հայ հեթ. կր. թրգմ. Յոյս 1875, 293 և* Ист. Асохика *273 լտ.* lux, lucere, luciana, *ռուս.* лучъ, *եսր.* losna, *աստր.* sin «լուսին»: Lag. Symmicta 305 *զնդ.* raoxša, *պրս.* rōšan *բառն է և կապ չունի լտ.* lux, *պրս.* rōz, *զնդ.* raočaiih *ձևերի հետ: Տէրվ.* Altarm. 50 *և Նախալ. 103 ուղիղ է մեկնում: Մորթմանն* ZDMG 26, 502 *բևեռ.* luzi «լուսին»: Bugge, Etr. u. Arm. *էջ 4 եսր.* lusxnei «լուսին» *կցում*

է մեր լուսնկայ բառին։ Պասմաճեան, Մասիս 1893, 251 լուսին = արքազ. sin, իրր տուրանեան բառ։ Ալիշան, Հին հաւ. էջ 103 լուսին = եաբ. լոսնա։ Հիւնք. լտ. lux «լոյս», sol «արև» և յն. ἥλιος «արեգակ»։ Patrubány ՀՄ. 1908, 152 ճապաղուսն մեկնում է հնխ. avo-k'luk'en «թռչունի ձայն», իսկ Սագրեան ՀՄ. 1909, 335 սումեր. šaluššа-ĝu «հմուտ լուսն»։ Կուրտիկեան (տե՛ս Յ. Գ. Մ., Պատմ. դրակ. էջ 17) լուսին = պրս. لوخشن luxan «լուսին»։

Գիւտ.—Ալշ. Ախց. Կր. Հճ. Համշ. Մշ. Ննխ. Պլ. Ջղ. Ռ. Սեբ. Սչ. Տփ. լուս, Տիգ. լ'ուս, Սլմ. լուչս, Ոզմ. լ'յուս, Մրզ. լուխս (Կալաջուղ լէօս), Ագլ. Ասլ. Գոր. Դրբ. Մկ. Շմ. լիւս, Ակն. լէօս, լիւս, Երև. Հճ. Հւր. լիս, Խրբ. լօս, Վն. լ՞ս, Զթ. լր՝ս.—Հճ. Ննխ. լուսին, Ագլ. լի՛սին, Սչ. լուսին, լուսնիգա, Ջղ. լուսնակ, Ախց. լուսնակ, լուսնյակ, Ալշ. լուսնագ, Մկ. Վն. լիւսնակ, Սլմ. լիւսնակ, լէօսնակ, Ոզմ. լ՞օսնակ, Տփ. լուսնիակ (ոճով ասում են լուսին-լուսին «ուշ ուշ»), Մշ. լուսնյագ, Սեբ. լուսինգա, Դրբ. լիւսնրգ՝m, Գոր. լիւսրնգ՝m, Պլ. լուսունգա, լուսնգա, Խրբ. լուսունգա, Ակն. Ասլ. լիւսիւնգա, Զթ. լուսունգօ, լուսունգո, Շմ. լիւսնաիակ։ (Սրանց մէջ լուսնկայ ձևացած է հին հյ. լուսնակայ բառից՝ իմաստի այնպիսի փոփոխութեամբ, ինչպէս է առև գրբ. «արեգակի լոյսը», աշխ. «արեգակ»։ Ննխ. դանագանում է դեռ լուսին «լուսին» և լուսինգա, լուսնինգա, լուսլինգա, լուստնգա «լուսնկայ գիշեր»)։—Լուսն բառը պահում են Խրբ. Մշկ. լուսավօր, Տփ. լուսաւորված «աչքի վրայ փառ իջնելով կուրացած», Ննխ. Տփ. լուսաւորուիլ «կուրանալ»։—Նոր բառեր են լուսաբաց, լուսադէմ, լուսահոգի, լուսադրիւր, լուսաճեի, լուսասող, լուսմբքի, լուսնաճող, լուսնտեղի, լուստուն, լուսփլիլ են։—Առանձին թրքախօս հայերը ունին բարիլիս «բարի լոյս», մուսաբար «լուսարար», լուսավորիչ «լուսաւորիչ» (Արևելք 1888, նոյ. 8—9)։ Հճ. լուսին (ըստ Թէրզեան, Ամէն. տաբեց. 1924, էջ 197) և Սվեդ. լուսէնե՝ պահում են «պայտ» նշանակութիւնը։

+Լոյս «անարգանք, թշնամանք» Փիլ. ժ. բան. էջ 243. որից լուտալ Սիր. փես. 422. Փիլ. Պիտ. 36. կթ. որ և լուտանալ Սարգ. յկ. դ. էջ 58 բ. լուտալի Պիտ. լուտական «նախատական» Երզն. մաթ. 128 և քեր. լուտանիք Պիտ. 36. կթ. կայ և *լուտակել ձևը՝ որից ունինք լուտակող «նախատող, հայհոյող» (Նոյնպիսի բերան և զաղրաբան խօսողաց մարդկան լուտակողացն. Ոսկ. Ճառք 439)։

=Բնիկ հայ բառ՝ հնխ. loud- արմատից, որի loid- «լուտալ, նախատել» ձևից են յառաջանում յն. λίζει, λίζουσι (Հեսիքիոս) «խաղալ, զուարճանալ, կատակել», λοιδορέω «նախատել, այպանել, յանդիմանել», λοίδορος «նախատանք, նախատող, նախատալից» (որոնց մէջ -ορ- մասնիկ է), լտ. lūdo «խաղալ, զուարճանալ, խնդալ, կատակել, ծաղրել, կեղծել, lūdius «խեղկատակ», lūdus «խաղ, զուարճալիք, կատակ, ծաղր», հին ձևր. loidos (իմաստի զարդացման համար համմտ. մրգ. schimpf «կատակ, ժամանց» և նոր գերմ. «լուտանք»). միոլ. lāidhim «յանդիմանել». կելտ. *lisso- «նախատել» (Boisacq 586, Walde 444, Pokorny 2, 402, Ernout-Meillet 536):—Աճ.

Նշխ (որից նաև Հիւնք.) յն. λοιδορέω և λοιδορία ձևերի հետ արդէն համեմատել էր Վերի ձևով մեկնեց Աճառ. (անտիպ), որին համամիտ է նաև Meillet (անձնական)։ Lidén IF 44, 191 հաջակ. luttil, հանգլ. lýtel, հրգ. luzzil, liuzil «փոքր, աննշան»։

+Լոյծ «կրակ կամ ճրագ վառել». արմատ՝ որ իբրև առանձին բառ գործածական է միայն իրր լուցանել բայի կոր. եզ. գ. դէմքը և իբր հրամայական. որից լուցանել «վառել» ՄԳր. լուցկի «վառելիք նիւթ» Մծբ. (նոր գրականում իմաստը փոխուած). լուցուն «վառած, լուցեալ» (շունի ԱԲ) Իրեն. հերձ. 125. լուցումն նար. ճրագալոյց Մծբ. Գնձ. կրակալոյց Կղնկտ. ջահալուցութիւն Ածաբ. մկրտ. լուցափայտ «լուցկի» (նոր բառ)։

+Բնիկ հայ բառ. պատկանում է հնխ. louk'- արմատին, որի ուղիղ ժառանգն է հյ. լոյս. սրան ցեղակից ձևերը տե՛ս լոյս բառի տակ.—լոյց ծագում է նոյն արմատի s-ով աճած louk's ձևից (համմտ. վեց <հնխ. sve-

k's), *որ գտնւում է նաև օտար լեզուների մէջ։ Նշանակութեան տարբերութեան համար հմմտ. զնդ.* aiwi-raočayeiti *և պրս.* afrōzad *«լուցանէ»՝ նոյն* louk' *«լոյս» արմատից։— Հիւբշ. 455։*

ՆՀՒ մեկնում է «վառել լուսով»։ Müller SWAW 41, 5 *(որից և* Justi, Zendsp. 257*) կցում է վերի զնդ. և պրս. ձևերի հետ։ Տէրվ.* Altarm. 50 *սանս.* rukša, *զնդ.* raoxšna, *Հպրս.* Ῥωξ-άνη, *անգսք.* liox-an, *հրգ.* lichsen, *հ. պրուս.* laux-nos *ձևերի հետ։ Նոյն, Նախալ. 103 լոյս և սրա ազգական ձևերի հետ՝ հնխ.* ruk, ruks *արմատից։ Հիւբշ.* Arm. St. 33 *կասկածով դնում է լոյս բառին իբր արմատակից. բայց չկայ, ասում է,* luk's *արմատն ուրիշ լեզուներում. սանս.* rukša, *պրուս.* lauxnos *կազմուած են* -sa, sna *մասնիկներով։ Հիւնք. լոյս բառից։* Bugge, Etr. u. Arm. *էջ 93 նոր.* luθ (sci) *«պատրոյգ» կցում է հյ. լուցկի բառին։*

ԳԻՒՐ.—Հմշ. լուցուշ «վառել, բռնկցնել», լուցան «վառած», լուսե(իլ) «վառիլ» (որից նոր. լուցա են)։ Ուրիշ տեղ այս արմատը չէ՛ պահուած։

**ԼՈՉ «հիւանդի տաքութիւն կամ պապակ». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Մխ. բժշ. 90 «Իւր այրեցն և սառչելն և լոչն և ծարաւն այլ շատ լինի քան իյար տեառատէօսն (ջերմն)»։*

=Արաբ. لَوْع lavʿ *«մի բան բերնումը այս ու այն կողմ շարժել, լոմլոմել» (տաքութեան ժամանակ հիւանդը լեզուն շարունակ լոմլոմում է). տե՛ս Կամուս, Քրք. Քրգմ. Ա. 437։*

Ուղիղ մեկնեց Seidel, *Հրատ. Մխ. հեր. § 261։*

ԼՈՍԻ *«մի տեսակ ծովային ձուկ.* saumon*» ունի միայն Նորայր, Բառ. Ֆր. 1120ա (որից էլ ԳԲ) իբրև մհյ. բառ։*

**ԼՈՎԻԱՍ «լորի» Մխ. առակ. Մխ. բժշ. գրուած է նաև լուվիաս Բժշ. լուպիա, լուպիաս, լուպիայ, լովիաս Բժշ. Ամիրտ. լովէսա Բառ. երեմ. յաւել. 575. նոր գրականում ընդունուած է՝ արևմտեան բարբառով լուբիա, արևելեան բարբառով լորի։*

=Արաբ. لوبيا lūbiyā, *պրս.* lūbiyā, luviya *«լորի», որոնցից փոխառեալ են նաև արևել. Քրք.* lobya, *քրդ.* lobia, lupék, *լազ.* lobya, *վրաց.* ლობიო **լորիո**, *Թուշ.* **լորիվ** *համանիշները։ Հայ բառը ծագում է արաբ. և պրս. ձևերից. սրանք էլ ծագում են արամ.* לוביא lubiyā *=* *ասոր.* ܠܘܒܝܐ lūbyā *«լորի» բառից. իսկ բոլորի մայրն է յն.* λοβός *«բլթակ (ականջի, լեարդի). 2. ընդեղէնների պատեանը, ինչ. լորիի, բակլայի, սիսեռի են». նշանակութեան զարգացման համար հմմտ. հյ.* պատիճ *«ընդեղէնների պատեան», իսկ Նխ. «կանաչ լորի, սլիկ»։— Հիւբշ. 267։*

ՆՀՒ յն. λοβός *բառից։ Ուղիղ մեկնութիւնը տուաւ Հիւբշ.* ZDMG 35(1881), 660: Pictet *բ. տպ. Ա. 356 նախնականը դնում է սանս.* lobhya, *որից փոխառեալ են պրս.* lūbya, *հյ. լուբիա, արաբ.* lubiyā:

ԳԻՒՐ.—Զղ. լուբյա, Ագլ. Ալշ. Երև. Ղրբ. Ալմ. Տփ. լօբի, Խոջ. լօբա, Մրզ. լօբը՛, Շմ. լօբի, լօբյm, Ախց. Կր. լօբյա, լօբլա, Նխ. լօբյա, յօբյա, Զթ. լբվիյօս, լբվիյոս, Խրբ. լօվիգ՝, լօյլաս, Ակն. լօվյաս, լօյվաս, լօլվաս, Երզ. Կր. լօրիգ, Համշ. լօրգէ, լօրգյա.—նոր բառեր են լորախաշու, լորաճաշ, լորեսպաս, լորուտ, լորաճատիկ, լորատեղ։

ԼՈՏԻԿԱՐԵԼ. *անյայտ բառ, որ Բառ. երեմ. էջ 192 գործածում է իբրև բացատրութիւն դամբան բառի, որ նոյնպէս անծանօթ է։*

ԼՈՐ *(ի հլ. բստ ՆՀՒ, թէև առանց վկայութեան) «մի տեսակ թռչուն. տճկ. պըլտըրճին» Վեցօր. 89. Լաստ. որից* լորամարգ *կամ* լորամարգի՝ *նոյն նշ. ՍԳր. Եփր. եկ. էջ 169.* լորաճոց *«թռչունի վանդակ» Պոմ. աղէքս. էջ 168 (ՆՀՒ և ՋՒ բստ յն. բնագրի ուղղում են այսպէս. իսկ ձեռագիրները վրիպակով գրում են լարաճոց. ԱՒ ունի միայն վերջին ձևը)։*

=Թերևս բնիկ հայ բառ հնխ. lor-*ձևից, որի ժառանգն է նաև յն. λάρος «մի տեսակ ծովային գիշակեր թռչուն» (սրանից փոխառեալ լտ.* larus *նոյն նշ.), որ և* λαρίς, -ίδος*։ Հաւանաբար բոլորն էլ բնաձայն են և կապ ունին յն.* λῆρος *«դատարկաբանութիւն»,* λῆρεῖν *«դէլ տալ»,* λῃρώδης *«ցնդաբանող»,*

սանս. rā́yati, լտ. lātrāre, ալբան. l'eh, հսլ. lajati, լիթ. lóti, լիթ. lát, ռուս. лаять «հաչել», գոթ. lailōun «անարգել», միսլ. līim «գառապարտել» են (բուն արմատը հնխ. lā(i)-,lə-, lo-) բառերի հետ։

Ինճիճեան, Հնախաս. Գ. 21 մեկնում է «ի լօռս կամ ի գիճին տեղիս բնակօղ», իսկ էջ 22 բնաձայն բառ՝ ՆՀԲ լոռամարգի մեկնում է «լոր մարգաց»։ Pictet KZ 6, 192, Origines ind. *1, 496* պրս. lāruh *և գերմ.* Lerche *«արտոյտ» բառերի հետ, որ մերժում է* Lag. Arm. St. § 934: *Վերի մեկնութիւնը տուաւ* Lidén, Arm. Stud. 50, *որ ընդունում է* Boisacq *558։ Մառ.* ЗВО *22, 45 վրաց. ծղ'երի, մինդ. ճղ'որի համանիշների հետ։ Պատահական նմանութիւն ունին պրս.* لارون laron, لارودا lārōda, لارد lārada, larda, لارا lārōra *«լորամարգի», գերմ.* Lerche, *անգլ.* lark, *հոլլ.* leuwerik, *հշվէդ.* laerikia, *հբգ.* lêrahha *«արտոյտ», որոնք ծագում են գերմ.* *lê-wrahha *նախաձևից* (Kluke 303):

ԳԻՒ.—Ալշ. Մշ. լոր, *վն.* լո՛ր, *Ախց. երև. կր.* լօր, *Խրբ.* լօո, *Տփ.* լուր, *Ողմ.* լ՝յուր, *Մկ.* լիւր, *Սլմ.* լուէր, *Շմ.* ճլէօր։

ՓՈԽ.—Քրդ. لور lur *«լորամարգի,* caille» (Justi, Dict. Kurde, *էջ 382*). *ուրիշ է Քրդ.* لوری lori *«արևելեան հնդկական կարմիր թութակ» (տե՛ս* Gustav Meyer, Türkische Studien SWAW 1893, 128):

ԼՈՐՁՆ, ն *հլ. (-ձիճ, -ձամբ, -ձունճ, -ձանց) «թուր, շողիք» Ա. Թագ. իա. 13, Ոսկ. արբեց. էջ 125 (տպ. լոռձ. այսպէս ուղղել ըստ Նորայր, Հայկ. բառաք. էջ 32). Վանակ. յոբ. «խլինք» Ոսկիփ. յետնաբար* լոռձ, ո *հլ. Վանակ. յոբ.* լոռձիք *Տաճև. ամ. 234. որից* լոռձնայիճ, լոռձնատեսակ, լոռձնատեսակութիւն *նիւս. բն.* լոռձնաթաղանք *(նոր բառ).—տե՛ս նաև* լոռտու։

Հիմնք. ջոլիր բառից։

ՓՈԽ.—Վրաց. ლორწო **լորձո** *«լորձնային նիւթ՝ որ ձկների մարմինն է պատում».* დალორწოებული **դալորձոեբուլի** *«շատ թրջած, խիստ եղած»,* დალორტება **դալորտեբա** *«թրջիլ»։*

ԼՈՐՃԵԼ *«թթուից ատամն առնել» Մխ. առ։*

ԼՈՐՈՒՍ, ի–ա *հլ. անստոյգ բառ. մէկ անգամ գործածուած է տեղ.* լոռատաց ձևով՝ *Վեցօր. էջ 66 «Զի ձայնք երգչացն պէսպէս նուագովք գեղգեղեալք և բարբառք լորատացըն տեղի ապականութեան և աղտեղութեան յիշատակին ի միտս նոցա»։ Այս բառը չունի ՆՀԲ. իսկ ՋՔ (իբր անստոյգ բառ) և ԱՔ մեկնում են «անհամեստ երգ, անամօթ՝ բաց երգ»։ Տեղ.* լոռատաց *ձևից կարելի է ենթադրել ուղ. թէ՛* *լոռուատ *և թէ՛* *լորիատ. բուն ձևը անյայտ է։ Նշանակութիւնն էլ ըստ ինս «երգիչ» է, և ո՛չ թէ «երգ». որով համազօր ձևեր են դառնում «ձայնք երգչացն և բարբառք լորըատացն»։*

ԼՈՐՏ *«ծոյլ, թոյլ, հիզդ, դանդաղ». երկու անդամ ունի Ոսկ. պօղ. Ա. 926, Բ. 434. որից* լորտնեալ *«թուլացած, յոգնած, վաստակաբեկ» Պիտ. 472. նոյնից է բուում նաև* լոռտաբար *«պիտակաբար» Բառ. երևմ. էջ 135։*

ՆՀԲ լծ. հյ. լորտու *«օձ», յն.* λοβός *«ծռած, դէպի առջև հակուած,* λοβόω *«ծռիլ» Հիմնք. լտ.* lurdus *«ծանր, դանդաղ». (բայց այսպիսի լտ. բառ չկայ, կայ ֆրանս.* lourd *«ծանր», որ յառաջանում է լտ.* luridus *«դժգոյն, դեղին» բառից)։*

ԳԻՒ.—Մշ. լորտ *«ծոյլ». իսկ Սեբ.* լորդմանան *«յոյր և դանդաղ կին» յառաջացած է անշուշտ* Մանան *անունով մի կնոջ անունից (Գարիկեան, Կոշնակ 1922 թ. էջ 561)։*

—**ԼՈՐՏՈՒ** *«մի տեսակ անվնաս օձ» Կիւրղ. Ղևտ. Խոր. Պտմ. աղէքս. 40. Կեչառ. աղէքս։ Նոյն բառն է* լուրտ *«իժ» Սահփ. լեհ։*

=Բուն նշանակում է «լորձունքոտ, շողիքոտ, լպրծուն» և ծագում է *լորտ *առանձին անգործածական արմատից, որի հետ նոյն է* լորձն. *հմմտ.* խեղդել *և* ճեղձնուլ, յորդ *և* յորձաճիճ. *երկու արմատաձևերն էլ պահում է վրացին (տե՛ս վերը* լորձն *բառի տակ)։ Այս մեկնութիւնը աւելի են հաստատում գաւառականները, որոնց մէջ գտնում ենք* լորտու *Ակն. Կյ. Հմշ. և* լորտնուկ *Խոջ. «շողուկ, կարմրաւուն, առանց պատեանի մի տեսակ խղունջ». նշանակութեան համար հմմտ. տճկ.* sümüklü *«խխունջ», որ բուն նշանակում է*

«խլինքոտ»։ Գուռ. լորանուկ ձևից հրևում է որ արմատն է լորան (=լոռն) և ՔԷ լորաու բառի մէջ ու մասնիկ է։—Աճ.

Նշէ մեկնելով լորաու «դանդաղ օձ», ուզում է հանել լորա «ծոյլ» բառից։ Գաբրիէլեան ՀԱ 1909, 223 ոլոր+տուն բառերից՝ իբր «կլորիկ տուն ունեցող (խղունջ)»։

ԳԻՒ.—Ղզ. Տիփ. լօրտուկ «մի տեսակ անվնաս օձ», Բլ. լօրտիկ «թռչող օձ մ'է» (տ. Ազգ. հանդ. ե. 25). միւսները տե՛ս վերը։

ՓՈՒ.—Վրաց. ლორტუკი լորտուկի «ужъ, ջրի օձ», որի հետ նոյն է նաև վրաց. ლორტუკი ղորտուկի (Զուրինով² 1365) «ջրի օձ». երկրորդի մէջ նախաձայնը սխալ է գրուած (ლ փխ. ლ), որ նշան է ՔԷ բառը սովորականն չէ վրացերէնի մէջ։

+ԼՈՐՑ «ջղերի քաշուիլը, անդամների կծկուիլը». մէկ անդամ ունի Պզատ. տիմ. 164 (յգ. լորցի ձևով). ուրիշ վկայութիւն չկայ։

=Բնիկ հայ բառ՝ հնխ. lord- արմատից. համմտ. յն. λορδός «առջև ծռուած, մարմնի վերի մասից կորացած, գոգաւոր», λόρδωσις «ծռվիլ, յետևից կամ մէջտեղից ծռուած ողնաշար», մբգ. lörz, lurz «ձախ», գերմ. lorz, lurz «ձախ» (նախապէս «ծուռ»), մբգ. lürzen «խաբել» (ընդհ. գերմ. *lerta, lurta), հայերէնը աճած lord-sk'-o ձևն ունի, ինչպէս է նաև գաէլ. loirc «խեղ ոտք», lorcach, lurc-ach «կաղ»։ Արմատի հիմնական և առաջին նշանակութիւնն է «ծուռ, ծռած, թիւր» (Pokorny 2, 439):

Այս մեկնութիւնը տուաւ Lidén, Arm. Stud. 46, որ ընդունում է նաև Boisacq 587:

+ԼՈՒ, ո հլ. «լու միջատ» Ա Թագ. իդ. 11. Նեղն. «մի տեսակ ծովային ձուկ» Վստկ. 79. որից լուադեղ, լուախօտ «մի տեսակ բոյս. pulicaria dysenterica Fl. Wett». (ըստ Տիրացուեան, Contributo § 523) Բժշ. լուիճ կամ լվիճ Վստկ. 173. լուանճ (յգ). «լուեր» Առաք. լծ. սահմ. 518։

=Բնիկ հայ բառ. ցեղակից լեզուների մէջ գտնում ենք հետևեալ ձևերը. սանս. प्लुषि plusi- «մի տեսակ վնասակար միջատ», աֆղան. vraža, սոգդ. 'βš'h, յն. ψύλλα, ψύλλος, լատ. pūlex, հսլ. blъ̑cha, ռուս. блоха, բուլգար. bъ̑lhá, լեհ. pchła, սերբ. bùha, լիթ. blusà, լեթթ. blusa, ալբան. pl'ešt «լու». սրանց ընդհանուր նախաձևը դրւում է bhlusā, որ հնխ. blus, bsul, pusl ձևերն ստանալով՝ տուել է վերի զանազան բառերը. իրանեանները գալիս են brušā նախաձևից. շըրջելալ bhlusā>bhsulā>psulā ձևից է յն. ψύλλα. —հրգ. floh, մբգ. vlôch, գերմ. Floh, անգլսք. flēah, անգլ. flea, հոլլ. vloo, հիսլ. flō (ընդհանուր գերմանական նախաձևը flauh-) ձևաւորուած են գոթ. ƒliuhan, հրգ. fliohan «թռչիլ, փախչիլ» բայի վրայից.—համմտ. եբր. פַּרְעֹשׁ par'oš=արաբ. برغوث burγud «լու», ծագած «ցատկել» արմատից։ Նոյնպիսի մի խառնուրդ է ներկայացնում լտ. pulex (որից իտալ. pulce, ֆրանս. puce, սպան. pulga), հնխ. psul- արմատից։ (Walde 622, Boisacq 1078, Berneker 62, Trautmann 35, Kluge 147, Ernout-Meillet 784 (չէ յիշած Pokorny). մի առանձին քննութիւն բառիս վրայ ունի Meillet MSL 22, 142—3): —Հյ. լու գալիս է հնխ. plusos նախաձևից. համմտ. ճու < հնխ. snusos:—Հաւանաբար հնդեւրոպական մի լեզուից է փոխառեալ Թրք. پیره pire «լու»։—Հիւրշ. 453։

Böttich. Arica 67, 87 լիթ. ռուս. և գերմ. ձևերի հետ, որոնց Lag. Urgesch. 785 աւելացրեց լտ. pulex, եբր. par'eš, արաբ. burγut, ասոր. ܦܘܪܛܐ pūrta'nā, ասուր. puršu'u «լու»։ Պատկ. Изслед. էջ 23 գերմ. Floh բառի հետ։ Հիւրշ. KZ 23, 35 հսլ. լիթ. աֆղան. և լտ. ձևերի հետ։ Տէրվ. Մասիս 1881 մայիս 6 գերմ. Floh և լտ. pulex: Հիւնք. ոլ բառից շրջուած։ Bugge, Beitr, 11 հայերէնի միրձաւորագոյն ձևը համարում է սանս. plúšis:

ԳԻՒ.—Ախց. Ալշ. երև. կր. Հճ. Համշ. Մշ. Ջղ. Սեբ. Տփ. լու (յգ. Տփ. լվա'ճիր), Նախ. լու (յգ. լուճէր), Խրբ. լուն (յգ. լուճէր, սեռ. լվան), Տիգ. լը'ու, Ասլ. Ղրբ. Մկ. Մղր. Մրզ. Շմ. Պրտ. Սլմ. Վն. լիւ, Ագլ. լիւ, լիվ, Զթ. լօ, Ոզմ. լ'օ: Նոր բառեր են լուռա, լուաֆաֆ, լուածաղիկ, լուակարկուտ, լուակոխ, լուա-

հաճ, լուակ. *(վերջինը Ջն. նշանակում է «տունկի ոչիլ. տունկերի վրայ դնելուց սև ու շատ մանր՝ վնասակար մի ճճի». այս նույն բառն է՝ որ Ամատունի, Հայոց բառ. ու բան, էջ 257 գտնում է մի հին ձեռագիր տաղարանի մէջ և համարում է «կենդանի անատոյգ». —Լուակն փոքր էր և անկար Ջթուղն ծակէր ու ի ներս կենայր. երբ ուղտն սպորէր, ապին վերնայր, Մանէր ի յոռն որ չիմանայր)։*

ԼՈՒ *տե՛ս Լսել։*

ԼՈՒԱԿ. *անծանօթ մի բոյսի պտուղը կամ հունտը. Բժշ. ունի միայն ՀԲուս. § 929։*

+ԼՈՒԱՆԱԼ *(լուացի, լուա՛) «լուալ, ջրով մաքրել» ՍԳր. փոխաբերաբար «նախատել» Առակ. լ. 20. Ոսկ. մ. ա. 9 (հմմտ. աշխ. ապկ մը լուացի «նախատեցի»). ածանցման մէջ երևան է գալիս լուա-, լուայ, լուաց արմատաձևերով. այսպէս՝ լուալիք «բաղանիք» Երգ. դ. 2. ղ. 5. դ. Թագ. ժ. 27. Եփր. աւետ. լուանալի «բորակ, լուացուելու նիւթ» Պղատ. սիմ. Եղիշ. Հյր. «լուացք անող» Մագ. դ. 2. «բաղանիք» Ճառընտ. Խոր. լուարան «աւազան» Դիոն. եկեղ. Մաքս. լուացումն Ագաթ. Ոսկ. յհ. ա. 17. լուացք Եփր. Համաբ. 105. անլուայ ՍԳր. լուացիկ Մծբ. լուացարար Վրք. Հց. լուացարարուհի (նոր բառ). անլուաց Փիլ. խաչալուայ Մաշտ. Կանոն. ոտնալուայ Մաշտ. ոտնալուաց Փիլ. լուացուիլ «մէջը բան լուացած կեղտոտ ջուր» (չունի ԱԲ) Առաք. պտմ. 346։*

=Բնիկ հայ բառ՝ հնխ. plu- *արմատից, որ* pleu- *արմատի տարբերն ձայնդարձն է. հմմտ. սանս.* plávatē *«նաւել, լողալ»,* ā-plu *«լոգնալ, լուացուիլ»,* plúti *«հեղեղում», յն.* πλύνω *«լուալ»,* πλυτός *«լուացուած»,* πλυνός *«լուացաման»,* πλυντήρ *«լուացարար»,* πλύσις *«լուացում»,* πλύμα *«կեղտոտ ջուր»,* πλέϝω *«նաւել, լողալ», լտ.* pluo *«անձրևել»,* per-plovere *«բոլորովին թրջուիլ», լիթ.* pláuti *«ողողել», լեթթ.* plauschu *«լուալ», սլ.* plovą *«հոսիլ, նաւել», հսլ.* plavĭ *«նաւ», ռուս.* плавать *«լողալ, նաւել», հբգ.* flouwen, flewen *«լուալ», հիսլ.* flaumr *«հեղեղ», բուլղ.* plew *«նաւ» (տե՛ս* Walde 594, Boisacq 797, Trautmann 223—4).—*Նոյն արմատը իրանական լեզուների մէջ երևում է* r *ձայնով. ինչ. զնդ.* frav- *«լողալ, հոսիլ», եազդ.* fəraw- *«առատ ջրով լուալ»* (JAs. 1916, 255): Pokorny 2, 94 *հյ. լուանալ գնում է վերոյիշեալ ձևերի հետ հնխ.* pleu- *(ստորին ձայնդարձը* plu-*) արմատի տակ, որ համապատասխանում է* pel- *«հեղուլ» պարզականից աճած ձև։ Իսկ* Meillet *(*Dict. étym. Jt. 745*) լտ.* pluo, *յն.* πλύνω *ևն ձևերի հետ յիշում է հյ. հեղուլ և ողողել, բայց չի յիշում լուանալ։— Հիւրշ. 454?*

ՆՀԲ լծ. յն. λούω *և լտ.* lavo *«լուալ»։* Peterm. 29 *լտ.* lavo, *սանս.* plu, *յն.* πλύνω*։ Նոյն է նաև* Windisch. 17*։—Միայն* plu *արմատի հետ են կապում* Gosche 68, 141, Böttich. ZDMG 1850, 355, Arica 88, 443, Müller SWAW 38, 589 *և 42, 330։ Թէ՛* plu *և թէ* luere, lavo *ձևվերի հետ է միացնում նորից* Lag. Urgesch. 180: *Հիւրշ.* KZ 23, 35 *կցում է միայն յն.* πλύνω *ձևին։ Տէրվ. Նախալ. 101 նոյն ընդ լոգանալ և լտ.* lavo: *Հիւնք. յն.* λούω*։ Վերջին անգամ Հիւրշ.* Arm. Gr. 454 *միացնում է կա՛մ վերիններուն հետ (*plu- *արմատից) և կամ լոգանալ բայի հետ, իբր *luva- ձևից. հմմտ. յն.* λόε (<λόϝε) *և* λόϝον, λόεσεν, λοετρόν *«բաղանիք», լտ.* lavere, lautus *և* lavāre, lavācrum: *Մատիկեան ՀԱ 1919, 32 հաթ.* la-a-ḫu-u-wa-ar *(որ է* lāḫuwār*) հոմանիշի հետ։*

ԳԻՒ.—Տես. Ղրբ. Նախ. Շմ. Ջղ. Սչ. Տփ. լուանալ, *Գոր. Մկ.* լվանալ, *Տիգ.* լ'վանալ', *Ագլ.* լվա՛նիլ, *Հւր.* լիւվանալ, *Համշ.* լօվրնուշ, *Ռ.* վլանալ, վլալ, *Ալշ.* լվալ, վլալ, *Սլմ.* լվալ, *Վն.* լվալ, վլալ, *Մրղ.* լիվալ, լիվասկ, *Ախց. Ասլ. Խրբ. Կր. Մշ. Պլ. Սեբ.* վլալ, *Ոգմ.* վլալ, *Ջթ.* վօլօլ, վօլալ, *Հճ.* վալօլ, *Տրև. մնկ.* վալէլ: *Հմմտ. նաև Համշ.* օլվա, օճվա *«անլուայ»։ Նոր բառեր են՝* լուանոցակ, լուացգին, լուացողակ, լուացուիլ *(Պլ.* վլասվիլ*),* երեսլուայ, լուացուկ, լուացվոխլ, լուացվոռիլ, լուացփոխ, լուացհաշուր, լուացհաչուր *են։*

ՓՈԽ.—Պատահական նմանութիւն ունին և հայերէնից փոխառեալ չեն վրաց. գավլեբա, մովլեբա *«լուալ» (արմատը վլ), յատկապէս «բերանը ողողել»։*

ԼՈՒԲԻԱ *տե՛ս Լովիաս։*

ԼՈՒԻՃ *տե՛ս Լու։*

+**ԼՈՒՅ**, ո *հլ. (յետնաբար նաև ի, ի-ա հլ. գրծ. լծիւ, լծաւ, լծօ) «եզան վզի լուծը» ՍԳր. փոխաբերաբար «որևէ ծանրութիւն, հպատակութիւն» ՍԳր. Ագաթ. Եփր. գաղ. «վարող մի զոյգ եզ» ՍԳր. «կշիռքի թևը՝ որից նժարներն են կախւում, կշիռ» Յոբ. գ. 2. «Կշիռ կենդանակերպը» Ջքր. կթ. «զոյգ, ջուխտ» Վստկ. 9. «նաւի երկու կողերը» Նար. իէ (տե՛ս Նորայր, Բառ. ֆր. 311ա* couple). *որից եզնալուծ Սիր. խգ. 10. ծանրալուծ Մամբր. միալուծ 3Հ. իմ. աւտ. պաղալուծ Եփր. Քուռց, էջ 239. լծակ ՍԳր. Սևբեր. լծել ՍԳր. Եզն. Սևբեր. լծակից Փիլիպ. գ. 3. բ. Կոր. գ. 14. Եփր. Փիլիպ. Եզն. լծակուի Ոսկ. հբր. լծակցութիւն Եզն. լծնաբարձ Մծբ. 373. լծընդդէմ Եւագր. լծընկեց Ովս. գ. 16. լծկան Առաք. պատ. լծորդ Նար. Մագ. լուծլիլ «ուղեղի զոյգ երակները» (հմմտ. ամոլ-ա-ջիլ) Ոսկիփ. լծորդատառ (նոր բառ) ևն։*

=*Բնիկ հայ բառ՝ հնխ.* yugó- *ձևից. սրա ժառանգներն են՝ սանս.* युग yugá- *«լուծ, զոյգ», պրս.* یُغ juγ *կամ* یوغ yōγ *(որից փոխառեալ է արևել. թրք.* یوغ yoγ *«լուծ»), քրդ.* jūk, *բելուճ.* joγ (Horn § 423), *յն.* ζυγόν, *բէովտ.* δύγον *«լուծ»,* ζυγός *«լուծ, կըշիռ», լատ.* jugum *(ռում.* jug, *սպան.* yugo, *իտալ.* giogo, *ֆրանս.* joug), *կիմր.* iau, *կօրըն.* iou, *հհիւս.* ok, *անգսք.* geoc, *անգլ.* yoke, *գոթ.* juk, *հբգ.* juh, joh. *գերմ.* Joch, *հոլլ.* juk *(գերմանականից փոխառեալ ֆինն.* jukko), *լիթ.* jùngas, *հսլ.* igo, *ռուս.* иго, *չեխ.* jho, *գնչ.* žuga, *լեթթ.* jûgs, *բոլորն էլ «լուծ» նշանակութեամբ։ Այս բոլորի արմատն է հնխ.* yeug- *«կապել, կցել», որ աճած է հնխ.* yeue- *«կապել» պարզականից և ունի նաև ընգային ձև. հմմտ. սանս.* yāúti, yuvá-ti, yunákti *«կապել, լծել»,* yuktá- *=զնդ.* yuxta- *«լծեալ»,* yaoǰ, yuǰ- *«լծել», յն.* ζεύγνυμι *«լծել»,* ζευκτός *«զոյգ»,* ζεῦγος *«լուծ, զոյգ», լտ.* jungo *«կապել»,* junctio *«կապումն», լիթ.* jùngiu *«լուծին կապել»,* jáutis *«եզ», լեթթ.* jūtis *«յոդ», կամիս.* yugan *և թոխար.* muk *«լուծ» ևն. (*Feist, Kultur. Ausbreitung... Berlin 1913, *էջ 151). (տե՛ս* Pokorny 1, 201, Ernout-Meillet 478, Walde 397, Boisacq 307, Berneker 421, Trautmann 109, Kluge 233)։—*Հիւբշ. 454։*

Ուղիղ մեկնութիւնը տուաւ նախ Windisch. *17, որ սակայն մոռացում է կապել նաև լտ.* ligare *«կապել» բառի հետ։ Ուղիղ են մեկնում* Böttich. Arica 79. 314, Lag. Urgesch. 368, *Հիւբշ.* KZ 23, 32 *ևն. Հիմնք. լուծանել բայից։* Bugge, KZ 32, 8—9 *հայերէնի | նախաձայնը բացատրում է լուծանել բայի հետ յաճախակի գործածութիւնից իբր ազդուած։*

Գիր.—Ախց. կր. Սլմ. Տփ. լուծ, Մշ. լուծ, Սլղ. Երև. Հմշ. Ննխ. Սեբ. լուծ, Խրբ. լուծ, Ագլ. Գոր. Ղրբ. Մկ. Շմ. Վն. լիւծ (Ղրբ. նշանակում է նաև «կշիռքի թևը»), Ասլ. լիւծ, լիւզ, Ոզմ. լօծ, Զթ. լօծ, լոծ.—Վն. լծել, Գոր. Ղրբ. լծէլ, Ագլ. Ոզմ. Տփ. լծիլ, Սչ. լծել, Ննխ. լծէլ, Ասլ. լծե՛լ, Խրբ. լծիլ, Հմշ. լծուշ, Զթ. լը՛ծիլ, Շմ. լիծիլ.—նոր բառեր են լծաշափ, լծան, լծափայտ, լծկան, լծուկ, լծուր, լծվար, աւլուծ, աւլծկան ևն։

Փոխ.—Վրաց ლუწი *լուծի,* ლუწა *լուծա, Քուշ. լուծ «զոյգ թիւ» ծագում են հյ. լուծ «զոյգ» բառից որ գիտեն Վստկ. այս նշանակութեան զարգացման համար հմմտ. սանս.* युग yugá- *«լուծ և զոյգ», թրք.* چفت çift *«եզան լուծ և զոյգ, ջուխտ» ևն։*

ԼՈՒՈՒԱՏԻ *«Հայկ համաստեղութիւնը.* Orion». *ունի միայն ԱԲ։*

=*Կազմուած է վերի լուծ բառից, որ ի մէջ այլոց նշանակում է նաև «Կշիռ համաստեղութիւնը» (Հայկը գաւառականներում ճանաչւում է* Կշիռ *բառով). այժմ էլ Բուլանըխում լուծ է կոչւում «համաստեղութիւն մը, որուն վրայ կ՚որոշեն երկու աստղ՝ իբր ամոլ, երկու աստղ՝ հորիկ, 1 մաճկալ, 1 հօտաղ, 1 հացւոր և 1 գայլ, որ հացւորին վրայ կը յարձակի՝ բերած հացը խլելու համար»։—Անծանօթ է մնում բառիս* -ատի *մասը։*

ԼՈՒԿԱՄ. *անստոյգ բառ, որ մէկ անգամ գործածում է Անսիզք 63 «Պարոնայք, իսայ գրաստս իմ է ու կորուսի. լուկամ փրթաւ. ու հիմայ գտայ զինքս հետ իսա մարդոյս»։—Անսիզքի հրատարակիչը թարգմանում է «լկամը՝ սանձը փրթաւ», բայց ինքն էլ կասկածելով իր*

բացատրութեան վրայ։ Կերևայ թէ լուկամ *նշանակում է «յանկարծ, պատահմամբ», որովհետև փրթիլ այստեղ «փախչիլ, կորչիլ» նշանակութիւնն ունի։ Թերևս լուկ և ամ ձևերի գումարն է։*

ԼՈՒԿՈՒԱՆ *«վայրի գազարի հունտ» Հին բռ. ունի միայն ՀԲուս. § 934։*

ԼՈՒԿԱՊ *կամ* **ԼՈՒԱՊ** *«հիւթ հանեալ ի սերմանց և ի պտղոց և թանձրացուցեալ» Մխ. բժշ. էջ 19, 29 ևն. ունի միայն ՋԲ, որից առնում է և ՓԲ.—նոյն բառը ԳԲ մեկնում է «փակչուն բնութեամբ գոյացութիւն՝ որ բոյսերու մէջ տարածուած կը գտնուի. 2. թանձր և փակչուն հեղուկ՝ որ կ'ստացուի ջուրի մէջ խէժ մը հալեցնելով.* mucilage»։

Ըստ ՋԲ փոխառեալ է արաբերենից, բայց Կամուսի մէջ չգտայ նման բառ։

***ԼՈՒՄԱՅ**, *ի հլ. «մանր դրամ է» Մրկ. ժբ. 42. Ղուկ. իա. 2. Ես. քր. գրուած է նաև լոմայ Ոսկ. յհ. բ. 10. Անկ. գիրք նոր կտ. 108. Եղիշ. տիբ. 339. որից* լումայափող *3հ. բ. 14. որ և* լումափող *Երզն. մտթ. 230 կամ* լոմափող *Երզն. մտթ. 447.* լումայական *Արշ.* լումափող *Ոսկիփ։*

=Ասոր. ܠܘܡܐ lumā *«փող, դրամ»* (Broskelm. Lex. syr. 173), *որ ծագած է հնագոյն *nūmā ձևից և այս էլ փոխառեալ է լտ. *nūmus, nummus «դրամ, փող» բառից. (կապւում է յն. νόμισμος «օրինական», νόμος «օրէնք, կարգ, սովորութիւն» բառին՝ բտ* Walde 529)։ *Լատին բառի մէջ՝ նախաձայն n տարանմանութեամբ* m-*ի՝ դարձել է l. այս ձայնափոխութիւնը կատարուած է ասորերէնի մէջ. բայց իր նմանն ունի հյ. գռ. նման >լման ձևի մէջ։ Համմտ. նաև արաբ.* نُمَى numā *«լումայ, դրամ», որ Կամուս, Թրք. Թրգմ. Գ. 943 յունարէնից փոխառեալ է դնում.— Հիւբշ. 304։*

Աւգերեան, Բցատր. չփ. և կշռ. էջ 93 յն. λεπτόν «նշխարք, կոտորք» ձևից։ ՆՀԲ լծ. լտ. nummus, nummulus, obolus *և յն.* ὀβολός։ *—Ուղիղ մեկնեց նախ* Lag. Arm. Stud. § 930: *Հիմնք. արաբ. համել «աշխար, գառն» բառից։*

***ԼՈՒՊՆԻ** *«չոր զուկի», լուպնա կամ լուպնի «չոր զուկիի ծառ» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 935։*

=Արաբ. لبنى lubnī *նոյն ծառը. տե՛ս Կամուս, Թրք. Թրգմ. Գ. 699։—Ա՛Ճ.*

+ԼՈՒՐ, *ի–ա հլ. «անխօս, լռած, սուս» ՍԳր. Ագաթ. Վեցօր. որից* լուռ լուռ *Առակ. ժը. 18. Եւագր.* լուռ մուռ *Ոսկ. Ճառ ապշխ. էջ 47 (տե՛ս և մուռ).* լռել *«լուռ մնալ, չխօսիլ. 2. հանդարտիլ, դադրիլ, կենալ, կանգ առնել» ՍԳր. Եւս. պտմ.* լռելեայն *ՍԳր. Ոսկ. ես.* լռասէր *Եւագր.* լռութիւն *ՍԳր. Ոսկ. յհ. ա. 1. Եւս. պտմ.* լռեցուցանել *ՍԳր.* լուռն *Վեցօր. 63.* լռիկ *Ա. մակ. ժա. 5. Ողբ. գ. 28.* լռակացութիւն *«լուռ մնալը (նորագիւտ բառ) ՃՂ. 199 ա ևն։*

=Բնիկ հայ բառ. նշանակում էր նախապէս «լսող, միտ դնող, ականջ դնող, հլու» և պատկանում է լու, լուր արմատին (տե՛ս լսել բառի տակ), իբր հնխ. k'lus-ri-: *Նշանակութեան նոյնպիսի զարգացում ներկայացնում են գոթ.* hliuþ *«լսել, ուշադրութիւն, լռութիւն», նրգ.* höre doch! *«լսի՛ր» կամ նաև «լռի՛ր»,* aufhören *«դադարիլ, կանգ առնել, վերջացնել», հիսլ.* hljoð *«լսել, լռիկ»,* hljōðr *«լուռ, լռիկ»։—Հիւբշ. 454։*

Canini, Et. ětym. 142 *դէլ.* lûr *«ադղակ»։ Հիւնք. լռել հանում է լսել բայից. իսկ լուռ մուռ կրկնականի վերջին մասը կցում է մրմռալ բային։ Վերի մեկնութիւնը տուին* A. Torp *և* Bugge KZ 32, 9: *Հիւբշ.* Arm. Gram. 454 *կասկածով էր վերաբերւում, սակայն յետոյ իբր աւտյդ ընդունեց (անձնական)։*

ԳԻՒ.—Ածց. լուռ ու մունճ, *Տփ.* լուռ. *որից հբր.* լռանք *«համբերութիւն», ՋԲ.* լր՝ոիլ *«լռել». նոր բառեր են անլռոտի «շատախօս», լռուիլ, լռկուիլ «պապանձիլ»։*

+ԼՈՒՍԱՆ *«քաւթար (անաստուածը)». գրագէտների ձեռքով նոր գրականի մէջ տարածուած բառ է. հին մատենագրութեան մէջ գործածուած է միայն մէկ անգամ՝ յոգ. ուղ.* լուսանումք *ձևով. «լուսանումք և ինձք և վագերք» Պտմ. աղեքս. 142 (համապատասխան յն. λύγξ, լտ.* lynx *«լուսան» բառին).— ագէտ գրիչներ տալիս են նաև* լոյսանումք, լուսանիւք *ընթերցուածները.—ՆՀԲ եզ. ուղ.*

ձևը դնում է լուսաւուն կամ լոյսաւուն, ուժ-լացնելով նաև «թերևս գրելի էր լուսակուճ». ըստ այսմ էլ ԱԲ լուսաւուճ, լուսակուճ, լուսակն.—Հիւբշ. 454 դնում է լուսաւուն կամ լուսաւն.—ուղիղ է միայն վերջինը, ինչպէս ցոյց են տալիս գաւառականները (տե՛ս տակը) և ինչպէս ենթադրած պէտք է լինին մեր հայկաբանները, քանի որ յօդի սովորական ադումով ձևացրել են աշխարհաբարի լուսան բառը։

=Բնիկ հայ բառ՝ հնխ. louk'- «լոյս» արմատից. (այսպէս է կոչուած այդ անասունը՝ իր լուսափայլ աչքերի համար). համմտ. յն. λύγξ (սեռ. λυγκός), որից լտ. lynx (ֆրանս. և անգլ. lunx, իտալ. lince), հրգ. luhs, գերմ. Luchs, անգսք. lox, հոլլ. los, շվէտ. lō, լիթ. lúszis, լեթթ. lūsa, lúsis, հպրուս. luysis, հսլ. rysĭ, նսլ. ris, ռուս. рысь, միսլ. lug, բոլորն էլ «լուսան»։ Սրանց մէջ արմատը ածել է զանազան ածականներով. այսպէս՝ դերմանականում s-ով՝ *luk's, յունարէնում n-ով՝ *luk'n-, որից շրջուած է *lunk'- և սրանից էլ λύγξ. հայերէնի մէջ էլ *louk'- արմատի վրայ եկել ուիլացել է ան մասնիկը և ն յօդը (Walde 442, Boisacq 590, Trautmann 164, Kluge 311):—Հիւբշ. 454։

Տէրվ. Altarm. 50 և Նախալ. 103 դրնում է լուսանն՝ լոյս բառից։ Վերի մեկնութիւնը տուաւ Müller, Armen. II, էջ 3։

ԳԻՒ.—Ղրբ. լի՛ւսէմներ «կղաքիս», որ գալիս է հին *լուսեմն ձևից և այս էլ *լուսամն կամ լուսա՞նն նախաձևից.—Ղզ. լիսամ «կղաքիս» (ըստ Ամատ. Հայ. բառ ու բան, էջ 249), նաև «առասպելական գազան, շատ ճարպիկ, սպիտակ գոյնով, մարդու կոկորդը ծակելով սպանում է»։

ԼՈՒՍԻՆ տե՛ս Լոյս։

ԼՈՒՍՆ տե՛ս Լոյս։

ԼՈՒՍՆԱԲԱՑ «կոճապղպեղ» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 3324։

ԼՈՒՍՏԵՐ. անյայտ նշանակութեամբ նորատիւտ բառ՝ որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Տաթև. ամ. 711 «Պէտս ունի վարժից կրթութեան իմաստից դեգերել կամ իսկութեան նոցին հետևիլ, զօրէն լուսատեր նիւթից ի նմանոյն զնոյն ընդունիլ»։

ԼՈՒՏ. գտնում է միայն մօտ բառի կրկնական մօտալուտ ձևի մէջ. Գ. մակ. ե. 4 (սխալ գրուած մօտաշուտ). Ագաթ. առանձին բա՞ռ է, թէ մոտ=մաուտ բառի ձևափոխեալ կրկրկընութիւնը։

ԼՈՒՏԱԼ տե՛ս Լոյտ։

*ԼՈՒՏԱՍ (կամ նաև լոտաս, լաւտաս, լոտաս) «մի տեսակ աւիրիկեան բոյս՝ որ ուտողը հայրենիքը մոռանում է! (այս է մի տեսակ ախորժահամ յունապ, որի համար համմտ. Le Maout, Botanique, էջ 230. Le jujubier lotos croît en abondance sur les côtes d'Afrique et dans l'île de Zerbi, l'ancien pays des Lotophages; c'est son fruit, dont la saveur agréable faisait oublier leur patrie aux voyageurs qui en avaient mangé) հոր. աշխ. 597. «առուտյա» Ամիրտ. «նունուֆար» Ամիրտ.—Հնագոյն ձևն էր ղովտոս՝ որ Նոննոսի մէջ սխալմամբ գրուած է պղովտոս (էջ 59), որից առնելով Տօնապատճառը՝ գրում է պրաւնբոս և Յովհ. Երզնկացին՝ պրոտոս։

=Յն. λωτός, որ նշանակում է մեր բառի նման՝ զանազան բոյսեր. այսպէս՝ «ձիերին տալու մի տեսակ խոտ. trifolium melilotus, lotus corniculatus, առուտյա (տե՛ս Տիրատյունան, Contributo § 246).—2. chamnus lotus կամ zizyphus lotus, յունապ. 3. եգիպտական լոտուս, նունուֆար, nymphaea lotus, nymphaea nelumba, nelumbium speciosum. 4. բռնչնի, լոտուենի, celtis australis, չէրէմպիճ. 5. իտալական լոտուս, diospyros lotus». յոյն ձևից փոխառեալ են և լտ. latus, արաբ. lutus.— յունարէն բառի բուն ծագումը՝ ըստ Boisacq 595 սեմական է. համմտ. եբր. lōṭ:—

Լուտաս բառը ուղիղ մեկնեցին նախ ՆՀԲ և ՋԲ, յետոյ ՀԲուս. § 940։—ՀԲուս. § 2617 իբր առանձին բոյս գիտէ պրոտոս և պրոնբոս, որ կցում է լտ. protius և plotia բառերին։ Այս բառերի վրայ մի ընտիր քննութիւն ունի Նորայր ՀՍ. 1923, 164, ուր և ցոյց է տալիս, որ այս բոլորը

սխալ գրչութիւններ են փխ. լուաս։

ԼՈՒՐ տե՛ս Լսել։

Canini, Et. étym. 142 յն. λύρα «քնար» բառի հետ։

ԼՈՒՐ «լոկ, միայն, միայն թէ» Կոչ. 108. Վրդն. պտմ. էջ 158, Վստկ. 131. Շնորհ. առակ. 85, Ուռհայեցի՝ էջ 135, 225, 234, 371, 421. «հասարակ, պարզ, սոսկական» Վրդ. պտմ. էջ 158 (լուր արեղայ). որից լուր օր «գործի օր, ո՛չ տօնական՝ հասարակ օր» Խոսր. Մաշտ. ջահկ. Մխ. ապար։

Նորագիւտ բառիս մասին խօսում է Աճառ. Հայ. նոր բառեր հին մտ. հտ. Ա. էջ 107—9։

ԼՈՒՐԹ, նոյն է ընդ՝

—ԼՈՒՐՋ, ի–ա հլ. նշանակութեան կողմից ընդարձակ զարգացում կրած մի բառ է։ Առաջին և հիմնական նշանակութիւնն է «պայծառ, բաց, ոչ-մութ, ոչ-խիտ, նուրբ» (օդի, լոյսի, գոյնի և յատկապէս՝ կապոյտ գոյնի բացութեան համար գործածուած). որից լրբանալ «բացուիլ, մթութիւնը պարզուիլ» Վեցօր. էջ 115 (Օդն պղտորեալ և յուզեալ ոչ յատակեսցի և գոյնն մթագոյն ոչ լրթասցի.— որից առնելով Շիր. էջ 56՝ Օդն պղտորեալ և յուզեալ՝ ոչ յատակիցի և գոյնն մթագոյն՝ ոչ լրթասցի). լրճատեսիլ (լոյս) Արծր. լրալոյս (օդ) Վրդն. ծն. լրթագոյն «անգոյատ, բաց, անօսր» Վեցօր. Բ. էջ 29. (Օդոյ անօսր և լրթագոյնս է բնութիւն). լրջակապուտակ «բաց կապոյտ գոյնով» Վրդն. աշխ. այս առումից է նաև արշալուրջ «առաւօտեան դէմ մութի փարատիլը, լոյսի բացուիլը», որ յետոյ դարձել է արշալոյս՝ որ տե՛ս առանձին. (դրեթէ նոյնպէս է կազմուած նաև արաբ. صحر sahar «արշալոյս», որ ծագում է «գոյն՝ որի մէջ սպիտակը սևից զօրեղ է» նախանշանակութիւնից (Կամուս, թրք. թրգմ. Ա. 887).—

2. «պայծառ, ուրախ, զուարթ, պարզերես» Նար. լգ. 26 (մտցէ լուրջ երեսօք). որից լրջացուցանել «զուարթացնել, պայծառացնել» Սիր. է. 26. լրջամտաճէ Սեբեր. կամ լրջմտութիւն «ուրախութիւն» Հռ. ժբ. 8. Ոսկ. մտթ. Փարպ. լրջմիտ Ոսկ. ես.—

3. «պայծառ մտքով, արթուն մտքով, սթափ կամ զգօն» Փիլ. (աշօք լուրջ և ըզգաստ). այս է մեր արդի գրականի «ծանրագլուխ, sérieux» նշանակութիւնը. որից լրջամիտ Ոսկ. յհ. ա. 21. բ. 1. աչալուրջ Ոսկ. աշալրջութիւն Ոսկ. Կոչ.—

4. «արթուն, սթափ (հարբեցութիւնից)» Ոսկ. մ. ա. 15. յհ. ա. 21. որից լրջանալ «գինուց սթափուիլ» Ոսկ. յհ. բ. 1.

5. «արթուն, զարթնած, չքնած». որից ի լրջէ, ի լրջեաց կամ ի լրջուց «ցերեկը՝ արթուն եղած ժամանակը» Ոսկ. ա. տիմ. ժդ. եւագր. նգն.

6. կապոյտ գոյնի բացութեան համար գործածուելուց յետոյ՝ բառը անցաւ նշանակելու նոյն իսկ «բաց կապոյտ գոյնը». և այս իմաստով ունինք լուրթ Շիր. էջ 50 և լուրջ Պզատ. տիմ. 143 (Կապուտք ընդ սպիտակի խառնեալ՝ ղլուրջն). Ոսկիփ. երգն. քեր. Գաղիան. Վրք. հց.

7. լուրթ է ըստ ոմանց նաև «մութ, սև, խուխ». այսպէս ունի ՀՀԲ (անցնելով «մութ կապոյտ» նշանակութիւնից). որից լրթութիւն «աչքի մթագնութիւն» Բժշ.

ՆՀԲ արմատը դնում է ուրջ, որի հակառակն է համարում աւուրջ (տե՛ս վերջ բառի տակ)։ Տէրվ. Նախալ. 70, 103 լուրթ և լուրջ դնում է հնխ. ruk արմատից՝ նոյն ընդ լոյս, լուցանել. r ձայնը եկամուտ է։ Հիւնք. լուրթ<luridus «դժգոյն» բառից, իսկ լուրջ <լսել բառից։ Մարքվարթ REA 8(1928), 211 սրբան է կցում եպիրական լորτός «ջրաման, բաժակ», համարելով ապակեայ։

ԳԻՒ.—Մշ. լուրջ «մի տեսակ կապոյտ լեռնակագոյն կտաւ է, որ գործում են Հալէբում. Իրք. զալ». Տփ. լրջանալ «մարմինը կապտիլ (ծեծից, կծելուց են)». կայ և լրջուց Ակն. «արթուն ժամանակը»։

ՓՈՒԽ.—Վրաց. ლურჯი լուրջի «կապոյտ», მოლურჯო մոլուրջո «կապուտակ, մի քիչ կապոյտ», დალურჯება դալուրջեբա «կապուտակ գոյն առանալ, կապտիլ», մինգր. լուրժի, ինգիլ. լուրժ, սվան. յուրջ «կապոյտ»։

ԼՈՒՐՏ տե՛ս Լորտու։

ԼՈՒՑԱՆԵԼ տե՛ս Լոյս։

*ԼՈՒՔ «ըմպելի բժշկական մեղմացուցիչ».

մհյ. բառ. ունի միայն Նորայր, Բառ. ֆր. 758 ա։

=Արաբ. لعوق luʿūq նույն նշ. (տե՛ս Մ. Աբիկեան, Բառ. տճկ.-հյ. Պօլիս 1892, էջ 500), որից փոխառեալ է նաև ֆրանս. looch, lok:

Ուղիղ մեկնեց Նորայր, անդ։

ԼՈՒՔ *(կամ նաև լաք, լէօք) «դոճի խէժ, լայքա կոչուած ներկանիւթը.* gummi laccae» *Մխ. բժշ. 77. Ամիրա. (ունի միայն ՀԲուս. § 942). գրուած է նաև լօք «նոյն խէժը» Վնկն. վրդ. Մխ. բժշ. 145 (ունի միայն ՀԲուս. § 954, որ իբրև տարբեր բառ է յիշում)։*

=Արաբ. لك luk, *որի հետ նոյն են ն. արաբ.* laika, *պրս.* لاک lak, *թրք.* ليك lök, *միջ. յուն.* λάκκα, *սանս.* लाक्षा lākša, *հինդ.* lákh «դոճի խէժ». *այս բոլորի մասին աւելի ընդարձակ տե՛ս լայքա բառի տակ։*

Ուղիղ մեկնեց Seidel, *հրատ. Մխ. հեր. § 217։*

ԼՈՒՖ *«նուիկ խոտը» Ամիրա. ունի միայն ՀԲուս. § 943 և § 2221։*

=Արաբ. لوف luf *«նուիկ», որի աւելի երկար բացատրութիւնը տե՛ս Կամուս, թրք. Թրգմ. Բ. 844։*

Ուղիղ մեկնեց ՀԲուս։

ԼՈՒՖԱԿ *(կամ լուպակ) «անծանօթ մի բոյս է» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 943։*

ՀԲուս. յիշում է արաբ. لبخ labax *«պերսէի ծառը»։*

ԼՈՒՖԱՀ *«թմրեցուցիչ խոտի տակ մը» Կամրկ. ունի միայն ՀԲուս. § 943։*

=Արաբ. لفاح luffāh *«ձևով պատինջանի նման, հոտաւէտ և քաղցրահամ մի բոյս. Թերևս և շամամ» (Կամուս, թրք. Թրգմ. Ա. 515). որից և լտ. ֆրանս.* luffa *«մի տեսակ դդում»։—Աճ.*

ՀԲուս. անդ մեկնում է արաբ. լուֆա «քօշմօրուք»։

ԼՈՔ *«մելանաձուկ, սեպիա» Անան. դիտ. 22, 28. Սիւն. քեր. 208.—ԱՔ և ՋՔ դնում են և լուֆ ձևով։*

Վերջին վկայութեան մէջ ՆՀԲ լոֆ բառը սխալմամբ մեկնում է «կարմիր». նոյն սխալը կրկնում է և Աճառ. Հայ. նոր բառեր հին մատ. Բ. 106։ Ընդարձակ տե՛ս այս մասին բիլ բառի տակ։

Գիհ.—Կովկասում յայտնի է լոֆ, լոֆօ ձուկը, որ մեծաքերան, անթեփ, համեղ մի ձուկ է և դուրս է գալիս Կուրից, Երասխից, Մեծամօրից և Սևջրից.—Մշ. լոֆ, լօֆօ:

Փոխ.—Վրաց. ლოქო ლոֆո *«ռուս. сомъ կոչուած ձուկը» (բատ Ջուբ². էջ 653. բուն վրացերէնն է* ღლავი ղլավի)։

ԼՈՔԱՆՔ *(տպ. լոգանք) «արհամարհանք կամ բամբասանք». ունի միայն Բառ. երեմ. էջ 133 (արդեօք ուղղելի լուտա՞նք)։*

+ԼՊԻՐՄ *«սահուն, սահող, դիւրասահ» Նկն. «դայթակղիչ» Վրդն. սղ. Շնորհ. յկ. լթ. որից* **լպրծել** *կամ* **լպրծիլ** *«սահիլ» Աթ. բրս. սղ. Մագ. «լրբանալ» Ոսկ. պօղ. բ. էջ 514 (լպրծեցար անամօթեցար և երեսք կնոջ պոռնկի եղեն քո. լպրծեցայք անամօթեցայք).* **լպրծագոյն** *Փիլ. նխ.* **լպրծուտ** *Մագ.* **լպրծուտ** *Փիլ.* **լպրծուկ** *Մխ. ապար.* **լպրծուն** *(նոր բառ), ռտճալպիրծ Նար. էջ 247.—ՀՀԲ ունի նաև* **լպրտիլ, լպրտուն** *ձևերը՝ որոնք դաւառականների մէջ միայն կան։*

=Բնիկ հայ բառ, որ կազմուած է հնխ. slibr *ձևից՝ ծ ածականով. աւելի ընդարձակ տե՛ս լիրբ։—Աճ.*

ՆՀԲ, որից նաև Հիւնք. լտ. lubricus *«սահուն»։ Վերի մեկնութիւնս՝ որ անտիպ է, ընդունում է նաև* Meillet *(անձնական)։*

Գիհ.—Ագլ. **լպռտիլ** *«սահիլ», Ոզմ.* **լպըզտըրալ**, *Մկ.* **լփսբրալ**, *Վն.* **լպզտրալ, լպզտալ, լպզրալ**, *Խ.* **լպստալ**, *Ախց. (շրջմամբ)* **պլըստէլ** *«սահիլ», Տփ.* **լպստած** *«լիրբ», Ղրբ.* **լըպըռտէլ, լպռտ լպռտ** *«լպրծուն», լպռտօկ «շողուն, կողինջ, սիմիւքլիս»։—Սրանցից* **լպրծիլ** *և* **լպռտել** *հնխ.* slibr- *արմատի հին եւճականներն են. իսկ միւսները կազմուած են տ սաստկականով, իբր *լպրծտել, որից շրջմամբ *լպծտրել կամ *լպծրտել, բաղաձայնի մօտ ծ դառնալով զ՝ լպզտրալ, բաղաձայնների անկումով լպզրալ, լպզտալ, և խուլ տ ձայնի մօտ զ-ի տեղ ս-ով՝ լպստալ։*

Փոխ.—Հնագոյն կորած հայերէն ձևերից են վրաց. ლოპი լիպի *«լպիրծ, սահուն»,* ლოპრი լոպրի *«փրփուր, շողիք»։*

+ԼՊԻՐՇ *«լիրբ, անամօթ, լկտի» Ոսկ. ես.*

որից լպրշիլ «լրբանալ» Ոսկ. եբր. և մ. բ. 10. լպրշութիւն Ոսկ. մ. բ. 10 և ես. լպրշական Ոսկ. ես. լպրշաւիլ Ոսկ. մ. ա. 3 գրուած է նաև ղպրշաբար Տիմոթ. կուզ, էջ 82։

=Բնիկ հայ բառ. կազմուած է նախորդի նման հնխ. slibr- արմատից՝ շ աճականով։— Աճականի համար հմմտ. լայնշի, բոլորշի, գալորշի. իսկ բառի կազմութեան, ինչպէս նաև նշանակութեան զարդացման համար տե՛ս լիրբ։—Աճ.

Հինք. լիրբ և ժպիրճ բառերից։ Վերի մեկնութիւնս, որ անտիպ է, ընդունում է նաև Meillet (անձնական)։

*ԼՊՈԻՏ «աղեղով բամբակ գզող». ունի միայն ԱԲ։

+Արաբ. لبد lbd արմատից, որի ածանցները տե՛ս Կամուս, Թրք. Թրգմ. Ա. 685. սրանից են արաբ. لباد libād «թաղիք պատրաստող», փոխառութեամբ՝ պրս. ilbād «լպուտ, բամբակ գզող», քրդ. libod «բուրդ գզելու աղեղ, բուրդ գզող կամ ծախող»։—Աճ.

ԳԻՒ.—Ալշ. Բլ. Մշ. Ոզմ. լբուդ «բուրդ կամ բամբակ գզող, գզրար. տճկ. հալաճ»։

Լ.ՊՏԵԼ «աղաղակել կամ ի բաց ղերծիլ». ունի միայն Բառ. երեմ. էջ 135. հմմտ. Մշ. լբդել «տեղից շարժել»։

Լ.ՊՐԼԻՆ «լոպին». այսպէս ունի Բառ. երեմ. էջ 135. ի՛նչ լինելը յայտնի չէ։

+ԼՍԵԼ «իմանալ, լուրն առնել, մտիկ բնել, միտ դնել, հնազանդիլ» ՍԳր. Ոսկ. Եւս. պատմ. «հոտ առնել» Ոսկ. յհ. բ. 16, էջ 686 ա (զհոտ նախոյն լուանալ էր.—այս իմաստի համար հմմտ. ռուս. слышать «լսել. 2. հոտ առնել»). որից լսելի ՍԳր. լսելիք «ականջ» Բ. կոր. ժբ. 17. «ունկնդրութիւն» Ոսկ. յհ. ա. 1. լսեցուցանել Մծբ. լսողութիւն Ոսկ. յհ. ա. 20. Փարպ. լսելութիւն Պիտ. թերալսել Բրս. արբեց. լսու «հնազանդ» Տիմոթ. կուզ, էջ 161. լսարանական, լսարանցի (նոր բառեր) են։ Նոյն բայի արմատական միւս ձևերն են՝ լու. որից ոճով աւտում է՝ լու առնել «լսել տալ» երեմ. ծ. 2. լու լինել «լսուիլ» ՍԳր. լու ի լու «լսելով, լսելի լինելով» ՍԳր. Ոսկ. մ. բ. 10. սրանից լսել բայի մի քանի ժամանակները. ինչ. յոր. լուայ, լուար են, ապ. լուայց, հրմ. լուարուք, անց. դերբ. լուեալ. (սրանք արդի հայերենում ջնջուած են և լսել ձևը տարածուած է ընդհանուր. միջին դարից ունինք արդէն լսեաց>լսեց Նար. երգ. 359. Լմբ. ժբ. մարգ. էջ 149 (ամբ. գ. 2).—այս արմատից են՝ լուացանել «լսել տալ» երեմ. իգ. 22. Ծրգ. բ. 14 (հրմ. լուա՛, ըստ նորագիւտ օրինակի. սովորականն ունի լսելի արա՛). լուական «լսելու բան» Իրեն. հերձ. 71 (չունի ԱԲ). ճլու Առակ. իա. 28. ճլուական Ոսկ. մ. ա. 5. ճլուականութիւն Ոսկ. մ. բ. 5, էջ 458 (չունի ՆՀԲ). չճլութիւն Ագաթ. չլուելոյն առնել Բուզ. անլու «անհնազանդ» կոչ. անլուութիւն Մարգ. —լուր. որից լսել բայի հրամայական եզ. բ. դէմքը՝ լո՛ւր «լսի՛ր». իբր գլ. լուր, ո հլ. «լսելու գործողութիւնը. 2. լսողութիւն. 3. համբաւ. 4. քարոզութիւն. 5. ձայն, հնչիւն. 6. հնազանդութիւն» ՍԳր. Ոսկ. Ագաթ. Վեցօր. բ. էջ 37. Եփր. եկ. որից անլուր կոչ. Ոսկ. Ագաթ. լրանս ՍԳր. Եզն. կամ լրուանս Եփր. ծն. էջ 110. և Թուց. լրանսել ՍԳր. Եզն. որ և լրուանսել Եփր. յես. էջ 302. լրանսութիւն Եփր. յես. ականջալուր Ոսկ. ես. և մ. ա. 3. երազալուր Փարպ. դիւրալուր Ագաթ. Ոսկ. յհ. ա. 38. դժուարալուր Վեցօր. չլուր «չլսուած բան» Ոսկ. ես. 292. լրաբեր, լրատար, լրատու, լրագիր, լրագրական, լրագրապետ, լրագրավաճառ, լրագրող, լրագրել (նոր բառեր) են. —լուռ. որի վրայ տե՛ս առանձին։

=Բնիկ հայ բառ՝ հնխ. k'leu- «լսել» արմատից. համմտ. սանս. श्रु çru «լսել», श्रुत çrutá- «լուսալ», श्रुति çrúti- «ականջ, լուր, տեղեկութիւն», श्रुष् çruš «լսել», çrôšati «լսել», शृणोति çṛṇóti «լսել», श्रुधि çrudhi «լսի՛ր», զնդ. sru «լսել», srūta- «լուսալ», sruš «լսել», sraoša «հլութիւն», քուչ. kloçäm «լսել», klautso «ականջ», պհլ. srūtan «արտասանել», պրս. surūd «երգ», سرودن surūdan «երգել, խօսիլ» (Horn § 735), յն. κλέω «փառաբանել, պարծիլ, կոչել, անուանել», κλέος «փառք», κλύω «լսել», κλυτός «անուանի», լատ. clueo, cluo «հռչակուիլ, անունը դուրս գալ», in-clutus «անուանի», գոթ. hliuma «ականջ», hliuƀ «ուշադրութիւն, լսելը, լսութիւն», հբգ. hlosēn «ականջ դնել», hlūt «բարձրաձայն, լսելի

ձայնով», hliodar «ձայն, աղմուկ», նրգ. lauschen «լրտեսել», գռ. losen «ականջ դնել», laut «բարձրաձայն» (Kluge 295), հին. clunim «լսեմ», cloth «փառք», clu «հրաշակ», cloor «լսեմ», կիմր. clywed, կորն. clewaf և բրբտ. klêvout «լսել», հիսլ. hljōð «լսողություն, լուություն, ձայն», hlust «ականջ», hlusta «ականջ դնել, հնազանդել», անգլ. listen «լսել», հսլ. sluti, slovą «կոչիլ, անուանի լինել», slava «փառք», slovo «բառ», slyšati «լսել», sluchŭ «լսողություն», ռուս. слушать «լսել, անսալ, հնազանդել», слышать «լսել», слухъ «լսելիք, ձայն, համբաւ», լիթ. klùsti, klausýti «հնազանդել, հլու լինել», լեթթ. sludinat «յայտարարել», klausīt «լսել», հպրուս. klausiton «խնդրածը լսել», ալբան. k'uhem «կոչիմ», g'uan', k'uan' «անուանեմ», մեսապ. klohi «լսի'ր» են (Walde 171, Boisacq 467—9, Trautmann 307—8, Pokorny *1, 494*, Ernout-Meillet, 193): *Բոլորի հնխ. պարզական արմատն է* k'leu- «լսել», որի սոորին ասոիճանի ձայնդարձն է k'lu-. *այս արմատը չունենալով ներկայ ժամանակ, զանազան լեզուներ աշխատել են նոր աճումներով ձևացնել իրենց ներկայաբունները: Ամէնից աւելի տարածուածն է* s *աճականով՝* k'leus-, k'lus- *ձևը (սրանց վրայ տե՛ս* Meillet MSL 15, 336—9): *Հայերէնում ունինք* k'lu- *արմատից՝* լու, *որ մեր հիմնական ձևն է. աճականներն են՝ հնխ.* klus-> **լուս- (որից *լուսել>լսել), հնխ.* k'lusr-> լուս, k'lur->լուր:—*Հիւբշ. 453:*

Klaproth, Asia polygl. 102 *ռուս.* slyšə, *անգլ.* listen, *գերմ.* lausche *ձևերի հետ:* Peterm. 29. *յն.* κλύω: Windisch. 17 *յն.* κλύω, *հրգ.* hlosen, *անգլ.* listen: Gosche 68 *սնս.* çru, *յն.* κλύω: Böttich. Arica 86, *411* լուր=*յն.* κλέος: Müller SWAW 38, 576 *և 589 սանս.* çru, *յն.* κλυ-, *հրգ.* hloson: Justi, Zendsp. *301 գնդ.* sru, sruš *արմատների տակ: Տէրվ. Մասիս 1881 մայիս 5 համեմատելով վերի ձևերի հետ՝ ասում է թէ հյ. լսել կարող էր համարուիլ շրջուած *սլել ձևից, «սակայն այս եզրաբանութիւնը ուղիղ չէ. ս սահմանատառ է»: Նոյն, Նախալ. 56 աճած ս սահմանատառով, իսկ էջ 73՝ տեղափոխուած *սլել ձևից? Հիւբշ.* Arm. Stud. *33 կասկածելի է գտնում վերի մեկնութիւնը, սպասելով հյ. լու ձևի տեղ ալու. իսկ -ս համարում է ներկայակերտ մասնիկ:* Bugge, Btrg. *1, 7 ապացուցանելով, թէ հնխ. k'l- տալիս է հյ. լ, հաստատեց վերի մեկնութիւնը: Մառ, Արաքս 1890 Ա. 111 գնդ.* guš, *պրս.* guš «ականջ» *բառերի հետ:* Meillet MSL 8, 295; 10, 278; 15, 338 *և* Rev. crit. *Թրգմ. Բազմ. 1898, 120 խօսում է ս աճականի վրայ: Հինք. լսել դնում է յն. γλώσσα «լեզու» բառից, իսկ լու, լուր հանում է լի, լիր ձևերից:*

ԳԻՒ.—Տարածուած և ընդհանրացած է ներկայի ձևը. այսպէս՝ Ալշ. Մշ. Ջղ. Սլմ. Սչ. լսել, Ախց. Երև. Կր. Ննխ. Պլ. Ռ. Սեբ. լսէլ, Ասլ. լսէ՝լ, Ագլ. Խրբ. Մկ. Ոզմ. Տփ. լսիլ, Հմշ. լսուշ, Զթ. լը՝սիլ, Մրզ. Տիգ. լսսէլ, Հւր. լիսէլ, Շմ. լիսիլ, Հճ. լոսել:—Լու արմատը պահում է Ղրբ. լիւ «լսի՛ր, թո՛ղ, կա՛ց». ինչ. լի՛ւ կաց. լի՛ւ ասեմ «կա՛ց, ասեմ».—լու բառի այս գործածութեան հետ գրեթէ նոյնանում է լո՛ւռ «լսի՛ր» նշանակութիւնը:—Նոր բառեր են լրսաև, լսուրթ աենել, լսուկ, լսուռ, լսցնել:

ԼՍԵԼ *«թողնուլ». ունի միայն Բառ. երեմ. էջ 135:*

ԼՐՏԻԿ *«պատուհից տարբեր մի աման է, որի մէջ դեղ են եփում» Մխ. բժշ. 146 (նորագիւտ բառ):*

Seidel, *Հրտր. Մխ. հեր. § 406 ուղղում է պտիկ! «պատուհ»:*

ԼՔՍՈՒՒ *«աչառութիւն, կողմնապահութիւն». նորագիւտ բառ, որ գրծ. լքսոով ձևով գործածում է Սմբ. դատ. 31, 53 (այլ ձեռ. լքսոոով). Karst, Սմբ. դտ. Թարգմանում է «Parteibegünstigung»:*

***ԼՕԴԻԿ** *(սեռ. -ի) «վերարկու» Ա. Թագ. ժբ. 4, իդ. 6, 12. Եփր. քն. 212: Կարծեմ նոյն է և լութակ, լօթակ՝ որ յիշում է Բառ. երեմ. էջ 98 և 99՝ զառանիւ արկանելի բառի բացատրութեան մէջ: Տես նաև օդիկ Բուզ. զ. 8, որ թերևս ուղղելի է լօդիկ:*

=Բառիս հետ համմտ. յտ. lōdix, *սեռ.* lodicis *«վերմակ», lōdīcula «վերմակիկ», որ*

Walde 439 համարում է հիւսիսային (Թերևս կելտական) բառ և կցում է հբգ. lodo, ludo, մբգ. lode, գերմ. Loden «հաստ կտաւ», հբգ. ludilo «մի տեսակ կտաւ», հսաքս. lotho, հֆրիզ. lotha, անգսք. loδa «վերարկու, ծածկոց», հիսլ. loδe «հոպիա վերարկու» բառերի հետ։ Սրանք ազգակից են և ծագում են հհիւս. loδenn «թաւ, մազոտ, կոշտ» բառից (Kluge 309)։ Գերմանականից են փոխառեալ ռուս. луда «վերարկու», луданъ՝ «Դամասկեան կտաւ», ուկր. лúдуна «հագուստի պարագաներ», չեխ. lúda «ծածկոց» (Berneker 743)։ Թէ ի՛նչ ճամբով այս հիւսիսային բառը հասել է մեզ՝ յայտնի չէ։

La Croze (ըստ Lag. Arm. Stud. § 951) համեմատեց լտ. lōdīc- ձևի հետ։ Pictet 2, 298 սանս. lāta, լտ. lodix, իոլ. lothar բառերի հետ։ Հիւնք. յն. λῶδος, λώδιον «թեթև հագուստ»։

ԳԻՒ.—Ամատունի, Հայոց բառ ու բան, էջ 255 նոյն է համարում Մշ. լոդ «վերնազգեստ, կրկնոց» (Գրոց բրոց 170)։

լոշ «բարակ թերթանման հաց». ունի միայն ՀՀԲ. հին մատենագրութեան մէջ գործածուած չէ. հնագոյն յիշատակութիւնը գտնում եմ Տաթև. հարց. 357 (Շոթն՝ թանձր լոշ եփեալ), որից էլ Բառ. երեմ. էջ 249՝ շօք բառի բացատրութեան մէջ (տպ. վրիպակ՝ շոշ). բայց անշուշտ աւելի հին էր, որովհետև Վստկ. և Բժշ. ունին լոշտակ բառը՝ որ սրանից է ծագում։ Գործածական է արդի գաւառականներում լոշ և լաւաշ ձևերով, որոնցից աւելի նախնականն է լաւաշ, ամփոփուած լաւշ>լոշ։

=Արևելքում բաւական տարածուած մի բառ է. համմտ. պրս. لواش lavaš, քրդ. levaš, Ատրպ. թրք. لواش lavaš, վրաց. ლავაში լավաշի «լաւաշ հաց», Կազանի թթր. لواش lavaš «մի տեսակ խմորեղէն»։ Յայտնի չէ սակայն թէ այս բոլորից ո՛րն է նախնականը. հայերէ՞նը թէ պարսկերէնը։ Դիտելի է միայն որ լաւաշ հացը՝ ինչպէս Երևանում նոյնպէս և Պարսկաստանում, համարւում է հայկական հաց (թուրքերի և պարսիկների հացը սանգակն է). Թևհրանում լաւաշը կոչւում է nūn-i armanī «հայկական հաց»։—Աճ.

ԳԻՒ.—Լաւաշ ձևը գիտեն Ախց. Աբր. Բն. Երև. Եւդ. ՋԹ. Կր. Համշ. Ղրբ. Սեբ.—լոշ ձևը՝ Աստ. Ալշ. Բլ. Երև. Իգդ. Լ. Խզ. Խրբ. Ղրբ. Մշ. Նբ. Ննխ. Շիր. Շմ. Շտ. Ռ. Սլմ. Վն. Տփ. Մրզ. (վերջինը «կաթով թխած հաց» իմաստով).—նոր բառեր են լաւաշայ «պատեղ», լաւաշթխի «տեփ», լոշագաթայ, լոշմաշ.—նոյն են նաև լոշ լոշ Ախբ. Ննխ. «լայն լայն» (ականջի համար ասուած), լոշել Վն. «ականջը ամուր քաշել», լոշականջ Լ. «մի տեսակ բոյս»։

ՓՈԽ.—Վրաց. ოღლავაში իաղլավաշի «իւղով ու խմորով շինուած խառնուրդ՝ որ վէրքի վրայ են դնում կամ ուտեցքի» (Հյ. գւս. իւղալաւաշ ձևից)։ Ոսս. լավաշ «լաւաշ հաց»։

—լոշ «թաղի կամ արանց ծաղիկ կոչուած բոյսը» Բժշ. Գաղիան. Վստկ. 207. սխալմամբ գրուած շաւշ, շոշ, շաւաշ (ՀԲուս. § 2293, 2381). որից լոշտակ կամ լոշտակ, լոշթակ «մանրագոր, bryania alba կոչուած մարդանման բոյսը» Բժշ. Վստկ. 207 կամ «ճերմակ որթ, որթի պատատուկ» ՆՀԲ. (նոյնը Բառ. երեմ. էջ 135 մեկնում է «օձի դարաւաշ»)։

=նոյն է նախորդ լոշ «հաց» բառի հետ. համմտ. նոյն բոյսի թուրքերէն անուննները՝ domuz etmeyi և yer somuni, որոնք բառացի նշանակում են «խոզի հաց», «գետնի հաց». հայերէնումն էլ արդէն նոյն բոյսը կոչուած է նաև խոզի հաց (տե՛ս ՀԲուս. § 759)։—Աճ.

ԳԻՒ.—Կր. լոշտակ, Մշ. լոշտագ, Վն. լոշտրակ, Ղրբ. լաշտրակ.—իսկ Ալշ. լոշտակ նշանակում է «լայն» (բերանի կամ շորի համար գործածուած)։

ՓՈԽ.—Թրբ. գւս. Թորթումի լէշտէկ «լոշտակ» (տե՛ս Շիրակ 1905, 425)։

լոր. որ և լոռ, լոռ «մամուռ» Ագաթ. Վրք. հց. Բ. 132. որից լոռաբոյս կղնկտ. լոռամարգ «մամռապատ մարգ» Ես. ժԹ. 6. լոռասեռմ Լեհ. լոռաւէտ Խոր. բ. 6։ Այս բառը լոռն (գրժ. լոռամբ) ձևով ունի Խրվկ. քռս. ՀԱ 1904, 313 ա. «Պետրոս լոռամբք վճարէր զպէտսն»։

ԳԻՒ.—Խոջ. լօռ «թաց տեղեր աճող մի տեսակ խոտ», որից լօռուտ «լօռ շատ բուսած տեղ»։

Խ

*ԽԱՔ *«կաթի փոխառութիւն՝ որոշեալ չափով կամ ամանով». որից ի խաբ տալ (գրուած նաև խապ, խափ) «կաթ փոխ տալ» Վրդն. առ. 238—9։

=Թրք. قاب qab «աման» բառից՝ որ ամկ. արտասանութեամբ հնչում է խաբ. (այսպէս նաև վրաց. ყაბი ղ՛արի «աւխէ»). իմաստի զարգացման համար հմմտ. գրբ. յանօթ տալ «փոխ տալ» Ոսկ. մ. գ. 24՝ անօթ «աման» բառից։

Ուղիղ մեկնեց նախ ՆՀՔ, որից առնեղով Մաո, Վրդն. առ. I, էջ 55։

ԳԻՒ.—Ախց. խապ, Սեբ. խափ. այսպէս և ուրիշ շատ գաւառականներում, ինչպէս Ալքս. Ախք. Ակն. Բբ. Կիւր. Կյ. Համշ. Ննխ. Շիր. Ջն. նոր բառեր են՝ խաբուր, խարկից, խարուխաս, խաբխաչ։

ԽԱՔ, ի հլ. «խաբէութիւն, սխալանք» Ոսկ. ես. Մանդ. որից խաբ գործել «ննջգութեամբ դարան լարել» նւս. քր. ա. 241, 345. ընդ խաբս «սխալմամբ» ծն. խգ. 12. Ոսկ. մ. բ. 5. Ոսկ. ես. 72 (տպ. ընդ խափս). խաբել «խաբել. 2. ծաղրել» ՍԳր. Ծն. խաբանիմ Դ. Թագ. ժ. 19. Յուդթ. թ. 15. խաբեայ «դաւաճան» Եփր. Գ. կոր. Ոսկ. գաղ. «խաբէական, կեղծ» Ոսկ. ա. տիմ. 160. խաբերայ ես. գ. 4. Ոսկ. երր. (գրուած է խաբերեայ Նիւր. Բ. Թես. Ոսկ. կողոս), խաբեութիւն (արմատը *խաբեայ) ՍԳր. խարկանիմ Ոսկ. ես. և կող. խարկիլ Փիլ. լին. խարկոտ Իրեն. 10. խարուկ Վեցօր. 184. խարուսիկ Կոչ. 135. խարողիկ Կոչ. անխաբ «ամուր, անառիկ» Բ. մակ. գ. 12. առագախարիկ Ոսկ. ես. մտախար Տիտ. ա. 11. Ոսկ. մ. բ. 12. Բուզ. ճարտարախար վանակ. հց. որսորդախար Վեցօր. 163. զրահխար Գնձ. դիւահխար Գե. ես. դիւրախարող Մանդ. ևն։

=Բառիս հետ շատ նման են հնչում արաբ. خبّ xabb «խաբեբայ», xibb «խարեբայ լինել», خبيث taxbīb «խաբել խաբխաբել» (տե՛ս Կամուս, թրք. Թրգմ. Ա. 115—6). բայց այս բառերը պատահական պէտք է համարել, ցորչափ գտնուած չեն ասորերէնի մէջ։ Այսպէս նաև պրս. خب xab «խարդախութիւն, մեղմեխանք», որի ծագումը անյայտ է։— Հիւրշ. 267։

Առաջին անգամ Շրէօդէր, Thes. 46 արաբ. xabb ձևից։ Պատկ. Mamep. I. 10 պրս. xab: Canini, Et. étym, 127 սանս. kapaṭ'a «խարէութիւն»։ Մառ ЗВО 7, 73 դնդ. dab, dav «խաբել» բառից։ Հիւնք. պրս. խէպ, արաբ. խապպուզ: Patrubány SA 1, 312 հունգ. kábit «թմրեցնել, շշմեցնել» բառի հետ։ Մառ ЗВО 22, 45 վրաց. ցրիեբի «խաբուսիկ» բառի հետ. արմատը ցր: Lewy KZ 52 (1924), 310 հսլ. chabiti «ապականել, փճացնել» բառի հետ, որի ծագումը անյայտ է համարում Berneker 380—381:

ԳԻՒ.—Ջղ. խաբ՛ել, Խրբ. Ոզմ. խաբ՛իլ, Ագլ. խաբ՛իլ, վն. Ալշ. Մշ. խապել, Մկ. խապիլ, Հճ. Սլմ. Սչ. խափել, Ախց. Երև. Կր. Ննխ. Պլ. Ռ. Սեբ. Տիգ. խափէլ, Մրզ. խափրէլ, Զթ. Գոր. Ղրբ. Շմ. Տփ. խափիլ, Համշ. խավուշ, Ասլ. ղաբ՛է՛լ:— Ունինք նաև Ասլ. Խրբ. խաբ՛էր՛ա, Պլ. Շմ. Սչ. խափէփա, Ոզմ. խապրբ՛աւ «խաբեբայ», Տփ. խափս ընկնել «խաբիլ յերազի»։ Նոր բառեր են՝ խաբաճ, առախաբաճ, խաբես-խուբես, խաբլուկ, խաբլուբիւճ, խաբլաճնճուղ, խաբլապուզիկ, խաբլրել, խաբլբռռել, խաբխբել, խաբխբռռել, խաբռռել, խաբխբուկ, խաբ-խաբխռռուկ. խաբով, խաբնով, խաբսով, խաբս տալ, խաբըս ընկնել, խաբշիկ։

ՓՈԽ.—Քրդ. خبه xabe «խաբէութիւն», خپاندن xapandin «խաբել, խարդաւա-

նել», خپخپک xapxapuk «խարուսիկ», خپک xapuk «խարող, խաբեբայ», خپیان xapiyan «խարուիլ», խարխարօք «պատրանք» Մրկ. դ. 19, պր խափիներն «մոլորեցուցանիցեն» Մաթ. իդ. 5.—Սղերդի արաբախօս քրիստոնէից բարբառով՝ xapen «խարնել», xapisox «խաբեցող»։

ԽԱՐԱՐԱՁ «ուրախութիւն». ունի միայն Բառ. երեմ. էջ 135։

ԽԱԴ «մի տեսակ թուր». մէկ անգամ ունի Թրակ. քեր. 19 և երկու անգամ էլ. արիստ. 51, 55 հոմանիշների մի անփոփոխ շարքի մէջ. «փաղանուն. խադ, դալապր, մարտացու, վազակաւոր, սուսեր, նրան»։ Բուն նշանակութիւնը երևան են հանում նախ Անանուն քեր. 144, որ համապատասխան տեղը խադ բառի դէմ գնում է խարբ (տե՛ս Ադոնց, Աբուհսա Դիոն. քեր. CLXXI) և երկրորդ էլիասի յունարէն բնագիրը՝ որ ունի առաջին վկայութեան մէջ ξίφος ἄορ μάχαιρα φάσγανον σπάθη, իսկ երկրորդ վկայութեան մէջ ξίφος μάχαιρα σπάθη ἄορ. (բնագրում հայերէնի համապատասխան ձևերը թուով պակաս են և շարքով էլ տարբերւում են իրարից. բայց դա նշանակութիւն չունի, քանի որ բոլորն էլ հոմանիշ են.—մեր փնտռած խադ բառի դէմ երկուսի մէջ էլ գտնում ենք յն. ξίφος «սուր»)։

ՆՀԲ «որպէս խարբի կամ թրը. խատաէրէ»։ Կարելի է յիշել եբր. חַד ḥad «հատու, սուր (ած.)»։

ԽԱԴ «isatis». ունի միայն Քաջունի, հտ. Գ. էջ 94. բուն բառարանում կայ isatis երկու իմաստով. «1. լեղակատու մի բոյս. 2. մի տեսակ կենդանի, լրջաղուէս»։ Հայերէնը սրանցից ո՞րն է։

*ԽԱՋ «քար». առանձին չէ գործածուած, բայց սրանից է բարդուած գայլախազ (այլուր գայլաքար). տե՛ս առանձին։

=Պհլ. *xāz «քար» բառից, որ հաստատում է պրս. خاز xāz «մի տեսակ քար»։

Ուղիղ մեկնեց Հիւնք. էջ 19։

*ԽԱՋ (ի հլ. բստ ՆՀԲ, բայց առանց վկայութեան) «դիծ, դիր, ձայնագրական նշան, սիւնի կամ ձեռքի ակօսաձև գծերը, նետի վարի ծայրի ճեղքը» Մագ. ԼԵՀ. որից խազել «դծել» Մարթին. «մարմինը ճղել, ճեղքել» Յայտմ. Մխ. այրիվ. էջ 71. խազած «գիծ» Մարթին։

=Կովկասեան լեզուներից փոխառեալ բառ է. համմտ. վրաց. ხაზი խազի «գիծ, շարք», ხაზვა խազվա «գիծ քաշել, գծագրել», მხაზველი մխազվելի «գծագրիչ», დახაზვა դախազվա «գծեր, քաշել, կանոնաւորել, յատակագիծ պատրաստել», დახაზულობა դախազուլորա «յատակագիծ, պատկեր», მოხაზვა մոխազվա «գծել, յատակագիծ շինել», მოხაზულობა մոխազուլորա «յատակագիծ, պատկեր», ուսի խազ «գիծ», խազզափսուն, խազրեսուն «գծել», կիւր. խազ «ճեղքել», լազ. խազ (կտր. դորխազինի, ապո. բխազինամինոն) «գծել»։—Աճ.

Schröder, Thesaur. 46 արար. خَزَلَ xazala «delineare «գծել, ուրուագծել»։

ՆՀԲ արար. خَطّ xatt «գիծ»։

Գիւմ.—Ախց. Ակն. Գոր. Երև. Խն. Մկ. Մրզ. Շմ. Ոզմ. Ջղ. Սլմ. Վն. Տփ. խազ, Մշ. խազ, ղազ, Ղրբ. խmզ, Ագլ. խoզ «գիծ».—Ակն. Խրբ. Ջն. Սեբ. խազ «գլխին սանտրած մազերի միջև բաց արած ճեղքը, արդակ, raie», Ակն. «տախտակամածի կամ դռան վրայ տախտակների մէջտեղերը մնացած ճեղքերը»։ Նոր բառեր են խազեխազ, խազիչ, խազխզել, խազմզել, խազմզռել, խզրզել, խզմզել, խզմզռել, օրօրոցախազ։

ՓՈԽ.—Քրդ. خاز xaz «գիծ»։

+ԽԱՋ. արմատ առանձին անգործածական, որ «մոլեալ, մոլեգին ցանկացող» նշանակութեամբ գտնում է հետևեալ բառերի մէջ. իգախազութիւն «իգամոլութիւն» Փիլ. իմաստ. գինեխազութիւն «գինեմոլութիւն կամ արբեցութիւն» Փիլ. մատակախազ «ճակատան» երեմ. ե. 8. այս վերջին բառը ուղելով մեկնել Մխ. երեմ. առանձին գործածում է խազ բառը և հասկանում է «վազք, խանձք, որ է սովորք». (Զիք մատակախազք եղեն. ո՛չ մի ոք, այլ ամենեքին ի կին ընկերի իւրոյ խազ, կամ վազք կամ խանձք, որ է սովորք)։ —Տարբեր կազմութիւն ունի դատա-

խազ, *որ ամբողջապէս իրանեան փոխառութիւն է. տե՛ս նոյն բառը։*

=Նոյն է հյ. խանձ բառի հետ, որից խանճիլ *«մոլիլ, մոլեգնաբար ցանկալ», մարդախանձ, գիշախանձ են. բառավերջի ձն դարձել է այստեղ զ (հմմտ. այս մասին իմ յօդուածը՝ ՀԱ 1905, 346)։*

ՆՀԲ չծ. Բրք. qezmaq *«ջերանիլ», արաբ.* խուսլէր, խրասլ, խույ *«մոլութիւն, ունակութիւն»։ Ուղիղ մեկնութիւնը տուաւ* Pedersen, *Հայ. դր. լեզ. 128։ Սագրզեան ՀԱ 1909, 335 և* Karst, *Յուշարձան, 405 սումեր.* kazda, *Բրք.* kəzgən *«ջերեալ»։*

ԳԻՒ.—Ջն. խազիլ *«նախանձից ճաքիլ, կատաղիլ»։*

ԽԱԶ *«տհաս, խակ». ունին միայն Բառ. եր. էջ 136, ՀՀԲ, ՋԲ և ԱԲ, առանց վկայութեան. որից* խազաճաղ *«խակակութ» ՀՀԲ (տե՛ս նաև* խաժ*)։*

ԳԻՒ.—Ագլ. խօզ *(<*խազ*) «խակ, տհաս». որից* խազաճոլ, խազուակտուր *«խակակութ»։*

ԽԱԶԱԼ *«մի տեսակ ծաղիկ» Սալաձ. ունին միայն ՀԲուս. § 958 և Նորայր, Բանաս. 1901, էջ 112։*

Բառամաջեան, անդ՝ ծան. համարում է արաբ. ճաճզալ *«մի տեսակ դդում» բառի ռամիկ ձևը. բայց այս բառը ո՛չ ձևով է նման և ոչ նշանակութեամբ։*

***ԽԱԶԱՄ** *«մեխակ» Բժշ. (ՀԲուս. § 3326)։*

=Արաբ. خزامى xuzama *(Կամուս, Բրք. Բրգմ. Գ. 441). տե՛ս և* ճուսամ։*—Աճ.*

ԽԱԶԻԱՆ *«պահապան կամ դահիճ».—անըստույգ նշանակութեամբ նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած նոր վկ. էջ 57 (ԺԲ դարից). «Խազիանն այն՝ որ պըտռնալ ունէր զաջոյ ձեռն նորա, հարկանէ դանակաւ զձախ կուշտ նորա»։*

***ԽԱԶԻՐԱՆ** *«գազի փուշ,* astragalus*». գիտէ միայն Քաջունի, Հտ. Գ. էջ 94 և հտ. Ա. էջ 185։*

=Արաբ. خيزران xayzurān *«փշոտ մի բոյս է.* ruscus aculatus *կամ* murca silvestris*» (Կամուս, Բրք. Բրգմ. Ա. 838)։—Աճ.*

ԽԱԶԱՄ *(ի հլ. ըստ ՆՀԲ, բայց առանց վկայութեան) «կռիւ, պատերազմ, վէճ, պայքար» Եոր. Բրս. հց. Համամ առկ. որից* խազմագործ *Եւս. քր. ա. 72.* խազմարար *Ոսկ. ես. 355 և երր.* խազմառու *«կռուարար» Մանդ.* խազմութիւն *Պիտ.* խազմիկ *«մարտիկ, կռուող», գրծ.* խազմկօֆ *(ձեռ.* խազկօֆ*) Ասող. Գ. ժգ. (այսպէ՛ս ուղղելի ըստ սրբագրութեան Մալխասեանի)։*

Հիւնք. արաբ. خشم xaṣm *«ոսոխ, դատախազ» բառի հետ՝ Այիշան, Հին հաւ. 345 իրան.* խազամ *«չար ոգի»։ Հիւբշ. 233 կապ չունի, ասում է,* ռազմ *բառի հետ՝ Սանտալճեան,* L'idiome 16 *բևեռ.* zāsi: *Ակինեան, ՀԱ 1930, 497 ինձ է վերագրում Ասող.* խազկօֆ *ձևի սրբագրութիւնը, որ Մալխասեանին է պատկանում։ Ինքը համաձայն չէ և պնդում է խազկան, որ կազմուած է համարում -կան մասնիկով խազ արմատից (հմմտ. ժիննխազութիւն), իբր «մոլեկան». սրա հետ նոյն է կարծում* խազիան *բառը։*

ԽԱԶՄՈՒԶ, ո *հլ. «քաղցու, դեռ չմորուած նոր գինի, մաճառ, շիրա» Կոչ. 378. Նփլ. գծ. էջ 13 (*խզմուզ *ձևով)։*

ՀՀԲ խազ *«խակ» և* մուզ *«մզում» բառերից՝ Սանտալճեան,* L'idiome 14 *բևեռ.* mutus, *լտ.* mustum, *գերմ.* Most *«խազմուզ» բառերի հետ։*

ԽԱԶՈՒԻՐ *«զոպայ, վայրի ծոթրին» Հին բռ. «զոպայ, ծոթրին կամ բոյս գալարուոյ» Բռ. երեմ. էջ 136. որոնցից առնելով ունին միայն ՀՀԲ և ՀԲուս. § 961։*

Վերջինս նոյնացնում է արաբ. խայզուրան *«*ruscus aculatus*» բոյսի հետ։*

ԽԱԹԱՐ *«քակել, քանդել, աւրել, փճացնել, ապականել» Ա. մակ. դ. 38. Եւս. քր. Ոսկ. մ. ա. 15։*

ՆՀԲ չծ. Բրք. էէտէր *(իմա՛ արաբ.* كدر kadar *«վնաս») և յն.* καθαιρέω *«իջեցնել, տապալել, յաղթահարել ևն»։ Հիւնք.* խոտորիլ *բայից՝* Bugge IF 1, 447 *գոթ.* skaþjan, *հհիւս.* skaðe, *հբգ.* scado, *գերմ.* schaden *«վնասել», յն.* ἀ-σκηθής *«ամբողջ, անվնաս» բառերի հետ՝ իբր բնիկ հայ։ Այս բառերի արմատն է հնխ.* skath (Kluge, *էջ 411.*

նոյն մեկնութիւնը կրկնում է Boisacq 88): Patrubány ՀԱ 1903, 151 կցում է այս միևնոյն բառերին և ենթադրում է հնխ. skath արմատի հետ նաև khath ձևը, որից դնում է հայերէնը։—Scheftelowitz BB 28, 312 հսլ. kotora, իռլ. cath «կռիւ», գերմ. hader «կռիւ, վէճ» բառերի հետ։ Պատահական նմանութիւն ունին արաբ. خطر xaṭar «վնաս, վտանգ», مخاطرة muxāṭara «փորձանք, վտանգ», եբր. הִתַּר xtr «ծակել, ճեղքել», նաև արաբ. قذارة qaḍāra «ապականիլ»։

ԽԱԹԵԼ «նուագիլ, թուլանալ», ունի միայն Բառ. երեմ. էջ 136, որից և ՓԲ (յաւելուած), առանց վկայութեան։

***ԽԱԹՈՒՆ** «տիկին կամ թագուհին խազապրաց» Խոր. աշխ. «իշխանուհի, տիկին» Մաղաք. ար. 10. Օրբել. հրտր. էմ. էջ 266։

= Թաթարական բառ է. համմտ. արևել. թրք. خاتون xatun «ազնուական տիկին», չաղաթ. خاتون xatun կամ خوتون xutun «կին (Frau) կամ մեկի կինը (Weib)», اتون atun «կանանոցի առաջին կինը» կամ «ուսուցչուհի, վարժուհի», եաքութ. xotun, xatən «տիրուհի, տանտիկին», xotuoi «աղջիկ», ույղուր. قاتون qatun, ալթայ. xadəm, չինական թրք. xotun, մոնգոլ. xatun, օսման. قادين qadən «տիկին, կին»։ Թաթարականից փոխառեալ են նաև պրս. خاتون xātūn «տիկին», اتون ātūn «ուսուցչուհի», քրդ. خاتون xatun «տիրուհի», վրաց. ხათუნი խարունի «տիկին», սպան. hatun, բուլգար. kadr'na, սերբ. kàduna «թրքուհի» են (Berneker 466): Ըստ Salemann ИАН 1913, էջ 1131 այս թաթարական բառն էլ փոխառեալ է սոգդ. حوتاينه ẖūtāina «թագուհի» բառից, կամ ըստ Gauthiot, Gram. sogd. 121, սոգդ. xwatēnī «թագուհի» բառից՝ որ xvatāw «թագաւոր» բառի իգականն է։ Այս վերջինը կազմուած է ըստ Meillet MSL 17, 109—12 յն. αὐτοκράτωρ ձևի վրայից՝ իրան. xva- «ինքը» և tav- «զօրել կարողանալ» բառերից, իբրև «ինքնակալ»։—Հիւբշ. 159։

ԳԻՒ.—Գործածական է Ախց. երև. Մկ. Պլ. Ջղ. Սեբ. խաթուն «տիկին, ազնուական կին» նշանակութեամբ. նաև Պլ. «զգօն, պարկեշտ, ծանրագլուխ (կին)», Ալշ. Մշ. խատուն (իբրև պատուանուն կանանց), երև. վն. «աչքի բիբ», Զթ. «տիկնիկ, կուկլա», խոջ. «հօրեղբօրկին», որից խաթունիկ, խաթունանոկ «խաթունի պէս, ծանրաբարոյ», խաթունմայր Ակն. «սկեսրոջ ներքը», խաթամա վն. Տիգ. «մեծ մայր», խաթունմա Նկ. «տիկին», խաթմա Սվ. «զոքանչ», խաթունակ «Տիրամօր նուիրուած սուրբ ջուր»։

ԽԱԺ «հասու, թաւ» (ձայնի և դրի հնչման համար ասուած) Թր. քեր. 59. Մագ. Երգն. և Նչ. քեր. փոխաբերաբար նշանակում էր նաև «կոպիտ», որից կրկնութեամբ խաժամուժ «հասարակ, գռեհիկ ամբոխ» ՅՀ. է. 48. Եփր. ևիևս. 147. Փիլիպ. 164. խաժաբանել «տգիտութեամբ՝ խակութեամբ խօսիլ» (իմա՛ կոպտութեամբ, գռեհկաբար) ԱՒ. խաժութիւն «տհասութիւն. տխմարութիւն, խակութիւն» Արծր. հրտր. Պատկ. էջ 232 (ունի խաժուրիւն ճասակի). Թերևս նաև խաժմատ «մատնեմատ» Կոյլաւ, Բառ. գերմ. 1203 ա (աղբիւրը անյայտ)։

ՆՀՌ խաժամուժ մեկնում է խած բառով։ Հիմնք. պրս. խէլալուշ, խէլավուշ «ժխոր»։ Գազանճեան, Արևել. մամ. 1902, 77 խած բառից կրկնուած՝ մ յաւելուածով։

ԽԱԺ «կապտականաչ գոյնով» (աչքի, ձիթապտուղի համար ասուած) Շնորհ. առ. 116. Վստկ. 42. Կեչառ. Հին քեր. որից խաժագոյն Տօնակ. խաժակն «խած աչքերով» Անյ. պորփ. Պոմ. աղէքս. խաժակնութիւն Պորփ. Անյ. պորփ։

ԳԻՒ.—Ոգմ. վն. խաժ, Խրբ. Սլմ. խոմժ. Նոր և հոմանիշ բառեր են Ախց. կր. խաժիկ, Սեբ. խաժուժիգ, Ալշ. Մշ. խաժուռած. կայ նաև խժուժ, խաժուկ, խաժուկաչվի.—Նոյն է դարձեալ Խրբ. խաժ «աչքի վրայ իջած փառ», որից խաժկտալ «աչքը շաղուիլ, մուր տեսնել»։

ԽԱԺՈՒԱԿ «մի տեսակ գարնանային ծաղիկ է» Սալաձ. ունի միայն ՀՌուս. § 963։—Կայ Մշ. խաժըմ «մի տեսակ բոյս, երկար

ցօղունով, որ կտուրների վրայ են փռում». բայց անշուշտ տարբեր բառ է։

ԽԱԺՈՒԺ *«մի տեսակ աման է»? Նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Օգոստ. բաջ. 21 «Աստուածածնին տաճարս այն տունն է, որ սրբուհի կոյսն մէջն կացել այ, իւր միածին որդին մէջն պահել այ և մեծացուցել. դեռ ամանն և գաւաթնին կայ և խաժուժ ամանն, որ Քրիստոսոյ կերակուր է տուել սրբուհի կոյսն»։*

***ԽԱԼ** *«մարմնի վրայ բնական նիշ. ծին. տճ. պէնկ». ունին միայն ԱՔ և ՓՔ յաւել.*

=Պրս. خال *xāl նոյն նշ. որից են նաև քրդ.* خاڵ *xāl, վրաց.* ხალი *խալի՝ նոյն նշանակութեամբ։*

Ուղիղ մեկնեց նախ Աճառ. (անտիպ), յետոյ Թիրեաքեան, Արիահայ բռ. 177։

ԳԻՒՒ.—Ագլ. Ալշ. Ախց. Երև. ՋԹ. Խրբ. Կր. Մկ. Մշ. Մրղ. Շմ. Ոզմ. Ջղ. Սլմ. Վն. Տփ. խալ՝ նոյն նշ. աւելի ընդհանուր իմաստով ունինք Խզ. «նշան» (խալ դնել «նշան դնել, որպէս զի միտքը մնայ»), Ղրբ. «խաղաթղթի նշանը՝ տեսակը», Նբ. «նարտախաղի մէջ միաւորը, եէքը». նաև Ղրբ. խալ ընկնել «պատուղը մի կողմից փտիլ սկսիլ. 2. զգեստի վրայ մի քիչ տեղ կեղտոտուիլ, բիծ ունենալ». նոր բառեր են՝ խալաւոր, խալխալ, խալխալոտ։

ԽԱԼԱՄ *«անասունի չորացած դանկ» Դ. Բագ. զ. 25. Յոբ. խ. 26. Բարուք զ. 69. Վստկ. 130. որից խալամովին «գլուխն էլ հետը միասին» Պտմ. աղէքս. 8. անխալամ Խոր. գ. 37 (սխալ գրչութիւն է անխալատ. տե՛ս Նորայր, Հայկ. բառաք. էջ 14 և Ս. Ստեփանէ, Խոր. աշխ. Բրգմ. ծան. 638). գրուած է նաև ճալամ։*

ԳԴ պրս. kalam *«կաղամբ» բառից։ ՆՀԲ յն.* κεφαλή *«գլուխ» և* ϝαλα՛μι *«դի, կմախք»? Հիւնք. յն.* κάλαμον *«եղէգ» բառից։* Bugge IF *1, 447 անգլ.* skull *«գանկ», միջ. անգլ.* sculle, scolle, *սկովտ.* skull, skoll *«շերեփ», Թերևս նաև հլ. խել-ի բառերի հետ՝ իբրև բնիկ հայ։ Շէֆթէլովից* BB *28, 312 սանս.* khalati *«ճաղատ» բառի հետ։ Այս բառը* Zupitza KZ 37, 389 *(=*Walde 117) *միացնում է հլ.* golu *«մերկ», լատ.* calvus, *հբգ.* kalo, *գերմ.* kahl *«ճաղատ» բառերի հետ։* Pedersen *Հայ. դր. լեզ. 132 -ամ մասնիկով* խել(f) *բառից։* Hrozný *ՀԱ 1924, 454 հաթ.* halanta *«գլուխ» բառի հետ։*

ԳԻՒՒ.—Ակն. խալամ «ցորենի հասկ» կապ չունի վերի բառի հետ, որովհետև Ալշ. խալամ «ցորենի կամ եղէգի ծղօտ» ձևի վրայով կգտնում է յն. κάλαμος «եղեգ» բառին։

ԽԱԼԱՄ *«ոլոր». ունի միայն Քաջունի, Գ. 94 բառ վստկ։*

ԽԱԼԱՅ *«մի տեսակ հարկ» (ըստ Թ. Աւդալբէգեան, Տեղեկ. ինստիտ. 1, 77—78 «ակցիզ, գինու, խաղողի և այգու վրայ դրուած հարկ»). նորագիւտ բառ՝ որ գտնում ենք գործածուած ԺԱ—ԺԴ դարի մի քանի արձանագրութեանց մէջ. «Ազատ ի խալաչ և ի գեղջէ յամենայն հասուց» (Արձ. 1036 թ. Վիմ. տարեգ. էջ 20). «Թողի պիմ հայրենիք գեղիս զԹալնոյ գինոյ խալէն» (Արձ. 1267 թ. Վիմ. տար. էջ 111). «Ազատեցի... այգիքն . . . ի խալալ (կարդա՛ ի խալաչ) և երրորդ հարկէ» (Արձ. 1273 թ. Վիմ. տար. 116), «Գինոյ և խաղողի խալէն» (Արձ. 1288 թ. Վիմ. տարեգ. էջ 130)։*

Աւդալբէգեան, անդ, համարում է նոյն բնդ խալան։

***ԽԱԼԱՆ** *«մի տեսակ թաթարական հարկ» Մաղաք. աբ. 11, 16, 20 ևն. Արձ. 1295 թ. (տե՛ս Վիմ. տար. 137)։*

=Թաթար. (ալթայ.) قالان qalan, *զապան. բաշկիր.* ҡыла qila, ҡула qula, *տուրպ.* قالان qalan, قلان qəlan *«տուրք, հարկ, նուէր, թոշակ», ԹԹր.* قالم qaləm, قالن qaləп, قالنق qaləng *«գլխագին. այն գումարը՝ որ վճռան տալիս է աղջկայ հօրը» (*Будаговъ, II. *էջ 21, 23), վրաց.* qalani *նոյն նշ.։—*

Ուղիղ մեկնեց Պատկ. հրտր. Մաղաք. աբ. էջ 64։

ԳԻՒՒ.—Ալշ. Բլ. Մշ. Սս. խալան, *Վն.* կալան, *Բզ.* ղալա *«վճռայի վճարած գլխագինը». որից* խալանկոտուր։

ԽԱԼԱՆԵԼ *«պոռնկիլ». ունի միայն Բառ. Լբեմ. էջ 136։*

***ԽԱԼԱԶՈՒՐԻ** *«մի տեսակ թուր». մէկ անգամ ունի Սմբ. դատ. 88 (հրտր. Ղլտճեան, էջ 42՝ խալաչուրի)։*

=Պրս. قلاچوری qalačūrī *«կեռ դամասկեան թուր»։*

Ուղիղ մեկնեց Karst, *Դատաստ. I, 88 և II, 77։*

***ԽԱԼԱՆՋ** *(կամ խալաճճ) «մի տեսակ բոյս. լտ.* erica arborea L» *(ըստ Տիրացուեան,* Contributo § 341), *տճկ. սիսիւրկէ* ερու *«աւել շինելու խոտ» (ըստ Յակոբեան, Արեւելք 1890 ապր. 27) Ամիրտ. ունին միայն ՀՀԲ և ՀԲուս. § 965։*

=Արաբ. خلنج xalanj *«մի տեսակ մացառաձին բոյս» (Կամուս, Բրք. Բրգմ. Ա. 394 համարում է պրս.* خلنگ xalang *«երկգոյն» բառից փոխառեալ).* Steinschneider WZKM 11, 18 *մեկնում է «bruyère»։*

Ուղիղ մեկնեց ՀԲուս. անդ։

***ԽԱԼԱՊԱՅ** *«կռիւ, շփոթութիւն» Անսիզք, էջ 31, 39, 61, 81. Սմբ. դատ. 8, 48, որից աւելի հնախալապայ «առանց կռուի» Սմբ. դատ. 52. խալապարար «կռուարար» Սմբ. դատ. 52։*

=Արաբ. غلبة γalaba *«բռնութիւն, յաղթութիւն, տիրապետութիւն», որից Բրք.* غلبه‌لیك γalebelik *(ռմկ. խալապալըխ) «բազմութիւն, ամբոխ»։*

Ուղիղ մեկնեց Karst, *Դատաստ. I, էջ 124։*

***ԽԱԼԱՏ** *«սխալ, վրիպակ» Գիրք Թղ. 504—6. Վստկ. 41. «յանցանք» Սմբ. դատ. 38. որ և ղալատ (գրուած ղաղատ) Կոստ. երզն. 158. որից անղալատ Կոստ. երզն. 159. Շնորհ. առ. (կաթողիկոսն էր անղալատ). խալտիլ կամ ղալտիլ «սխալիլ» Տաղ. Լմբ. խալատիլ Կանոն. էջ 185. խլատիլ Կանոն. էջ 184. ղալատիլ Ադամ. 294։*

=Արաբ. غلط γalaṭ *«սխալ, թերութիւն, սխալիլ»։—Հիւբշ. 267։*

ՆՀԲ արաբ. Բրք. խալդ էթմէք։ Ուղիղ են մեկնում Ալիշան, Վստկ. էջ 246 և Հիւբշ. ZDMG *35(1881), էջ 660։*

ԽԱԼԱՐ *կամ* **ԽԱՏԱՐ** *«մի տեսակ արաբական ծաղիկ» Խոր. աշխ. 612. ուրիշ տեղ գործածուած չէ։*

Պատկ. Խոր. աշխ. 1877, էջ 57 արաբ. خلندر xalandar *«մի տեսակ դուբրակ», որ ո՛չ ձեւով է նման և ոչ նշանակութեամբ։ ՀԲուս. § 966 արաբ.* خلر xalar *«ոսպի նման մի ընդեղէն» (տե՛ս Կամուս, Բրք. Բրգմ. Ա. էջ 844), որ թէև նման է ձեւով, բայց ո՛չ նշանակութեամբ։ Այսպէս նաև պրս.* خلر xalar *«ոլոռն»։*

ԽԱԼԱՐԱԿԱՅՔ. *անստոյգ բառ, որ մէկ անգամ գործածել է Գնձ. «Ի ներբսագոյն կամարին խալարակայք ճախարակեայք ի սփիւռս խայրիցն» (հրտր. Զօպանեան, Հայ էչեր, էջ 72)։ ՆՀԲ մեկնում է «խոյակ, ախաւեղագէս և կամ շղթայագործ զարդ ի կախ», ՋՔ «ծաղկաձև զարդք ի վերայ կամարաց կամ խոյակաց», ԱՔ «սեան գլուխ՝ պէսպէս զարդերով և կախած զարդեր»։*

ՆՀԲ յն. χαλάζα «շղթայ» կամ χαλαρός «թոյլ» բառից։ ՋՔ թուի հանել խալար ծաղկի անունից։

ԽԱԼԱՐԻԿ, *ի–ա հլ. «մանկական խաղալիք է». ունի միայն ԱՔ. երկու անգամ գրտնում իմ գործածուած Ոսկ. երր. 539 «Զոր օրինակ և զմանր մանկտուոյ յորժամ տեսանիցեմք թէ խալարկաց (տպ. խալարկայ)ի ցանկանան, աճապարեմք թաքուցանեմք դխալարիկսն կամ զգունդսն կամ զլիցս կամ զյոյգս...»։*

Հացունի, Դաստիարակութ. 274 յն. χαλάρα *«շղթայ» կամ* χαλαρός; *«թոյլ, փափուկ» բառերի հետ։*

***ԽԱԼԲԱԼԵԼ** *տե՛ս Խարբալ։*

***ԽԱԼԷ** *«ազգ ինչ հին նաւու. ֆր.* galée». *մհյ. բառ. ունի միայն Նորայր, Բառ. ֆր. էջ 583 բ։*

=Նոյն է ինչ որ միջ. յն. γαλέα (Sophocles 323). *միջ. լտ.* galea, *իտալ.* galea, *անգլ.* galley *«ցոկանաւ», իտալերէնից փոխառութեամբ Բրք.* قالیون qalyon *«պատերազմական նաւ»։ Մեր բառը անշուշտ նոյնի արաբ. տառադարձութիւնից է. արաբերէն ձևը գրւում էր ج տառով՝ որ համապատասխանում է յն. γ-ին և կարող է դառնալ հյ. ղ կամ խ։ Կամուսի մէջ կարելի չեղաւ ինձ գտնել սոյն արաբ. բառը։—Աճ.*

ԽԱԼԻ *«մի տեսակ արաբական ծաղիկ է» Խոր. աշխ. 612. գրուած է նաև հալի (տե՛ս ՀԲուս. § 1589), այլ ձեռ. գրում է «խաղա, որ է մշկեղ» (իմա՛ մուշկի իւղ.), տե՛ս* խաղա:

Պատկ. Арм. reorp. *56 պրս.* هال hāl *կամ* هيل hīl «cardamomum minus»:

***ԽԱԼԻԱՅ** *«կալաքար». ունի միայն ՋԲ, որից էլ ՓԲ յաւել:*

=Արաբ. قلي qali *տե՛ս* Steinschneider WZKM 12, 325), قليه qalia *(Աբիկեան, Բռ. տճկ. հյ. 1892, էջ 456), Բրբ.* قاليه qalya *«կալաքար»* (Будаговъ *II. 25*):—*Ա՛Ճ.*

***ԽԱԼԻՁՈՆ, ի-ա** *հլ. «խղունջ» Ոսկիփ. Բրս. մրկ. 338 (գրծ. խալիզոնաւ):*

=Արաբ. خلزون ḫalazūn *(օսմանեան արտասանութեամբ* halezon*) «խղունջ» (Կամուս, Բրբ. Բրդմ. Գ. 619). բուն ծագման մասին տե՛ս* խղունջն:

ՆՀԲ սխալ հասկանալով բառիս վկայութիւնը, մեկնում է «միջամէջ սեռեակը արքունեաց կամ խխունջ»: Բայց յետոյ յաւելուածի մէջ ուղղում է և մեկնում «որպէս արաբ. հալէզուն, խխունջ»: Ուղիղ է մեկնում նաև ՋԲ: Ըստ այսմ սրխալ է ԱԲ, որ դնում է «խխունջ. 2. խըխընջաձև մէջէմէջ շէնք»:

ԳԻՒ.—ՀՃ. խալիզոն *«խղունջ», ՋԲ.* խէօլիւզիւն *«խղունջ, մողէս»:*

ԽԱԼԻԿ *«բազկի ոսկր արմկան և ուսին մէջտեղ.* humérus*». ունի միայն ԳԲ, որի աղբիւրն է Քաջունի, հտ. Գ. էջ 94:*

ԽԱԼԻՃ կամ ԽԱԼԻՆՃ *«մի տեսակ ծաղիկ» Սալաձ. ունի միայն ՀԲուս. § 969. հմմտ.* խալաճն:

***ԽԱԼԻՓԱՅ** *«արաբների ամիրապետը» Վրդ. պտմ. Կիր. որ և* խալիֆայ *Վրք. շնորհ. 25, 26, 28. Սամ. անեց. 102. Մխ. այրիվ. էջ 74:*

=Արաբ. خليفة xalīfa *«ամիրապետ». բուն իմաստն է «յաջորդ (Մահմեդի)». նոյն բառից փոխառեալ են նաև սպան. պորտ. իտալ.* califa, *ֆրանս.* califa, *գերմ.* Chalif *են:—Հիւբշ. էջ 267:*

Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ:

***ԽԱԼԽԱԼ կամ ԽԱԼԽԱԼԱՅ** *«ապարանջան» Հին բռ. Ոսկիփ. Վրդ. առկ. 134:*

=Պրս. خلخال xalxāl *«ոտքի ապարանջան», որից նաև քրդ.* خلخال xəlxal, xərxal, *արաբ.* خلخال xalxāl *(Կամուս, Բրբ. Բրդմ. Գ. 200) նոյն նշ:—Ա՛Ճ.*

Այս մեկնութիւնս հրատարակուած է նախ ՀԱ 1899, 205:

ԳԻՒ.—Մկ. Վն. խալխալ *«երախայից համար արծաթեայ փոքրիկ օղակներ. 2. փոքրիկ բոժոժներով ոտքի մանեակ, որ գիւղացի կանայք, մանաւանդ քրդուհիներն են գործածում» (նաև Շտ.), Ախց.* խալխալ *«թևի ապարանջան», Մշ.* խալխալ *«ոտքի ապարանջան»:*

***ԽԱԼԿԻՆ** *«կաթսայ». հների մէջ անգործածական է. կայ միայն յետնաբար. ինչ. Քուչ. 56 (Սրտիկս է խալկին եղեր, զօրն զբռ զուսան (վիշտ) կու հիէ). յիշում է Բառ. հբեմ. էջ 152. կենդանի է նոր բարբառներում, ինչպէս՝ Ակն. Ասլ. Առ. Բգ. Երզ. Եւդ. Խտջ. Կմշ. Կս. Կր. Ննխ. Ռ. Սեբ. (խալգին ձեով), Սչ. Սվ. որից կազմուած նոր բառեր են՝* խալկնձագ, խալկնձուկ, խալկծուկ, խալկըճուկ, անխալկին:

=Յն. χαλκίον *«պղնձէ աման, կաթսայ», որ ծագում է* χαλκός *«պղինձ» բառից, ճիշտ ինչպէս որ հյ. պղինձ նշանակում է նաև «կաթսայ»: Յոյնից փոխառեալ է նաև արաբերէն* خلقين *«պղնձէ աման, կաթսայ», մեր բառն էլ թերևս սրա միջոցով է:*

Ուղիղ մեկնեց նախ Հիւնք: Որքա՜ն տգիտական է Թիրեաքեան, Արիահայ բռ. 177 դնելով իբրև պրս. خوالگير xᵛālgīr *«կերակուրի աման»:*

ԽԱԼՈԿ *«մի տեսակ արաբական ծաղիկ է». գիտէ միայն Խոր. աշխ. 612, որ Պատկանեանի հրատարակութեան մէջ (1877, էջ 57) ունի* խալոկ, խալսկ, խախակ *ընթերցուածները: Սրանցից ՀՀԲ ընտրում է* խախակ *գրչութիւնը, ՆՀԲ, ՋԲ և ԱԲ* խալոկ, *ՀԲուս. § 970* խախակ*: Մի ուրիշ ձեռ. էլ գրում է «խապուկ, որ է բրբմեղ» (իմա՛ բրբումի իւղ). տե՛ս այս բառը առանձին:*

Ըստ ՀԲուս. § 10 Ասար բժշկապետը խորհեացու այս բառը մեկնում է «ազատդրախտ», որ ընդունել է և Լուսինեան բառարանը (azadirachte ազատդրախտ, ազատենի, խախակ)։ ԱԲ խալոկ մեկնում է «Արաբիայի ծաղիկ մը», իսկ Բրմմեղ «ծաղիկ մը, խալոկ»։ Պատկ. Խոր. աշխ. էջ 57 համարում է պրս. خالومَا xalumā «մի տեսակ դեղ»։ Ուղուրլիկեան, Մասիս 1881 նոյ. 25 հետևելով ԱԲ-ի՝ Բրմմեղ դնում է «curcuma longa», իսկ խալոկ=արաբ. խալիտի–մէնուն նոյն նշ.։

ԽԱԼՎԱՐ *«մի տեսակ չափ է» (հիմայ հաւասար է 30 փութի կամ 100 լիտրի, որ է մօտ 370 օխա). հին յիշատակութիւնն ունի Սրմ. 1661 թուից (Վիմ. տար. 188)։*

=Պրս. خروار xarvār «իշաբեռ» (կազմուած xar «էշ» և bār «բեռ» բառերից). աւելի յիստոյ քաշի քանակը բարձրացել է. r>l արդիւնք է տարանմանութեան։—Ա.Ճ.

ԽԱԼԽԱԼ *«մաղ» Ոսկիփ. որից խախալել «մաղել» Սեր. իէ. 5 (սխալ է սխախալել ընթերցուածը). խախալամիտ «մոռացկօտ» Տաղ։*

ՆՀԲ համարում է նոյն ընդ խարբալ «մաղ»։

ԳԻՒ.—Երև. Շմ. Գոր. Ղրբ. Տփ. խախալ «մաղ», որից խախալտակել «մանրամասն որոնել»։

ՓՈԽ?—Վրաց. ხახალი խախալի «կողով»։

ԽԱԼԽԱԿ *տե՛ս Խալոկ։*

⊙**ԽԱԼԽԱՆՋԵԼ** *«այլանդակ ձայներ հանել». ունի միայն ԱԲ. մէկ անգամ գտնում եմ գործածուած Պատմ. աղէքս. 125 «Պապաջհաց խախանջելով» (այծանման վայրենի հնդիկի համար է ասում)։*

=Բնաձայն բառ, որ կազմուած է խ ձայնից՝ կրկնութեամբ և ն, ջ յօդակապերով. Համմտ. խախաչ, խախաճ, խանչել ևն։—Ա.Ճ.

⊙**ԽԱԼԽԱՆՔ** *«բարձրաձայն ծիծաղ, քահքահ» Եփր. Խրատ. (մէկ անգամ միայն գործածուած). որից Սահփ. լհհ. շինել է խախալ «բարձրաձայն ծիծաղիլ»։*

=Բնաձայն բառ, որ գտնում է նաև ուրիշ ցեղակից լեզուներում. Համմտ. սանս. kakkati, kakkhati, khakkhati, յն. καχάζω, κακχάζω, καγχάζω, καγχαλάω «բարձրաձայն խնդալ», καγχασμός «քահքահ», լտ. cachinno «բարձրաձայն ծիծաղիլ», cachinnus «խախանք», հսլ. chochotati «բարձր ծիծաղիլ», ռուս. хохотать «բարձրաձայն ծիծաղիլ», хохотъ «խախանք», չեխ. chochtati «բարձր ծիծաղիլ», հբգ. huoh «ծաղր», huonōn «ծաղրել, վրան խնդալ», kichazzen, kachazzen, մբգ. kachen, kachzen, գերմ. kichern, լիթ. kiknóti «բմծաղրել», միռլ. cāinim «նախատել» (Walde 104, Berneker 393, Boisacq 396, 423, 1115, Kluge 253, Pokorny 1, 336 (qhaqha արմատի տակ), Ernout-Meillet 120): Այս բոլորը իրար հետ և հայերէնն էլ նրանց հետ՝ կարող են լինել հնխ. ծագումից, ինչպէս ընդունում են Bugge և Meillet, բայց կարող են նաև լինել անկախ բնաձայն բառեր, ինչպէս ընդունում է՝—Հիւբշ. 455։

Böttich. ZDMG 1850, 356 սանս. ghagh: Bugge, Btrg. 19, որից յիստոյ Meillet MSL 8, 294 վերիններին ցեղակից՝ բնիկ հայ բառ։ Մերժում է Հիւբշ. 455, համարելով բոլորն էլ բնաձայն։

⊙**ԽԱԼԽԱՂ** *«բերանը ջուրով կամ որևէ դեղով ողողելը. gargara» Մխ. բժշ. 98. որ և խաղաղ Բժշ։*

=Բնաձայն բառ, որ կազմուած է խ ձայնից՝ կրկնութեամբ և ղ կամ ջ ածանցակաւոր. Համմտ. խախանջել։—Ա.Ճ.

Այս մեկնութիւնս հրատարակուած է նախ ՀԱ 1899, 204 բ։

ԽԱԼԽԱՅ *(ի հլ. բառ ՆՀԲ, թէև առանց վկայութեան. յետնաբար գտնում եմ ի–ա հլ. ևեռ. խախացաց Վասակ. 220) «պանրի մակարդ» Եփր. վկ. արև. (Սուփերք Ի 120). Եփր. համաբ. 85, 252. Կնիք հաւ. էջ 353. Բրս. մրկ. 450. Սանահն. Շնորհ. որից խախացել «մակարդել» Բրս. մրկ. 450. Վասկ. 220. խախացոց «որոճող անասունների ստամոքսը» Օրին. իը. 13. Փիլ. քհ. էջ 196. գրու-*

ած նաև խախցոց, խապցոց (իբր ռմկ.) Գաղիան. ներկայ գրականի մէջ նշանակում է «կիսամարս ուտելիքի ձևացրած խիւսը՝ ստամոքսի մէջ»։

Հիմնք. խօսիլ բայից։

ԳԻՒ.—Այս բա՞ռն է Բրքախօս հայերից Ատն. խախաչ «խախաց» (ըստ Պէտէքեան, Արևելք 1888 նոյ. 8—9)։

ԽԱԽԻՆ «խորտիկ կամ մանր». ունի միայն Բառ. երեմ. էջ 136. իսկապէս խարկած դմակի կտորտանքն է, որ այժմ էլ գաւառականների մէջ կենդանի է հետևեալ ձևերով. Պլ. խաւխրնձի, Սեբ. խաւխրզի,—որ և խաւխրզին Ակն. Սվ., խոռխոզին Երև., խաւխզի Ախք. Ննխ., խոռազ Ագլ., խրզիւզիւ Գնձ., խզուզ Ագլ., խոռխոզիկ Նբ., խաւխիզայ Վն., խախիզայ Վն., խաւխնձին Ասլ., խզդուռդ Խրբ., խաւխնձիկ Պլ.—սրանց հետ նոյն է նաև վրաց. ხოხოზიკო խոխոզիկի «оттопки сальные, наваръ»։

ԽԱԽՈՒՏ «խարխուլ, անհաստատ» Իմ. դ. 3. Ոսկ. յհ. ա. 11. բ. 22. «գաղթ, փախուստ» Ոսկ. մ. ա. 8. որից անխախուտ Ագաթ. Եզն. խախտել ՍԳր. Ոսկ. ես. Եզն. խախտումն «քակտումն» Պիտ. «տեղից հանելը» Ճառընտ. այս վերջիններն սղուած ձևեր են. բայց յեանաբար ենթադրուել է թէ արմատն է խախտ «խախուտ, քանդուած» Արձ. 1292 թ. (Վիմ. տար. 135), որից անխախտ Օրբել. Ոսկիփ. (նաև արդի գրականի մէջ)։

Bugge IF 1, 447 իբր բնիկ հայ համեմատում է հհիւս. skaka «ցնցել», անգսք. scacan «ուժգին ցնցել», հիռլ. scāich, srāig «անցնիլ», cumscugud «փուիսխմունք», cumscaigtha «շարժում» բառերի հետ։ Հիմնք. խակտել բայից։

ԳԻՒ.—Ախց. կր. Մշ. Սլմ. Վն. Տփ. խախուտ, Ալշ. Երև. Խրբ. Համշ. Պլ. Ռ. Սեբ. խախուտ, Ննխ. խախուտ (բայը՝ խախտել), Ոզմ. խախօտ, Տիգ. խոխուտ, Ասլ. խախիւտ. խախի*, Ատն. խարխուտ։

ՓՈԽ.—Բրք. գւռ. Կես. xaxəd «խախուտ», xaxədlamaq «խախտիլ, փլփլկիլ». օր. bu ev xaxədlaməš «այս տունը խախտուել՝ հնացել է» (Բիւր. 1898, 712). Բրք. գւռ. Նոգ. S. خاخيد xaxəd «խախուտ» (Յուշարձ. 330 և Բիւր. 1899, 798). գւռ. Բրք. և յն. Ատն. xarxud «խախուտ» (Արևելք 1888 նոյ. 8—9)։—Պատահական նմանութիւն ունի ուտ. խախա «կոտրած»։ Պատահական ծամել»=քրդ. xāin (Horn § 469), յն. χαχτῶ «ώθῶ βιαίως ուժգին հրել», որ յիշում է Karolides, Γλωσσ. συγκρ. 198, ըստ որում նոյն բառը ունի նաև σαχτῶ ձևը։— Մ՛չ թէ փոխառութիւն, այլ համամայր ծագում են ենթադրում վրաց. ხახუტი խախուտի «փրփրուն», დახახუტება դախախուտեբա «փխրիլ», დახახუტებული դախախուտեբուլի «ծակծկլած»։

+ԽԱՆ. արմատ առանձին անգործածական. երևում է խածանել բայի կտր. եզ. գ դէմքում և հրամայականի մէջ. որից խածանել «խածնել, կծել, խայթել, խոթել» Միք. գ. 5. Օր. ը. 15. Ոսկ. յհ. բ. 4. հաս և խած առնել «անյագաբար ուտել» Նեղոս 676. խածանումն Պրպմ. 47. խածուած նար. խածատել Գաղ. է. 15. Ոսկ. յհ. բ. 2. անխած «առանց խայթուելու» Եւագր. 337. խածաւաճ Եւս. պտմ. օձախած Գնձ. Հաւանաբար նաև խածի «կտնատք, թռչունի առաջին ստամոքսը» Վեցօր. 174 (սխալ գրչութեամբ՝ էջ 89 խամճի. այս մասին տե՛ս ՀԱ 1911, 301), որից խածեակ «փոքր խածի, ճպուռի փորի մաշկեղէն պարկը» Վեցօր. 174 (այս բառը ՀՀՌ հասկանում է «ճպուռի խայթոցը»)։

=Բնիկ հայ բառ՝ հնխ. khād- արմատից. հմմտ. սանս. khādati «ծամել, կծել», khāda- «կեր», պրս. خاييدن xāyīdan «ուտել, ծամել»=քրդ. xāin (Horn § 469), յն. κνώδων «որսի մահակի ծայրի երկաթէ ատամնեըը, սուր, դանակ», κνώδαξ «ծխնի» (բուն «ատամ»), κνώδαλον «վայրի անասուն» (Boisacq 478), լիթ. kándu, kąsti «խածնել, կծել», լեթթ. kuôžu, kuôdu (Trautmann 116), ալբան. ha «ուտել», հսլ. kusati, ռուս. кусать «կծել», кусаться «խայթել, կծել», за-куска «աղանդեր», кусокъ «մի կտոր», բուլգար. къ́sam «խլել, փրցնել», къ́sък «կտոր», սերբ. kúsati «լսփել», չեխ. kousati «կծել», լեհ. kęsy «ժանիք», ձայնդարձով՝

հալ. čęstī, *ռուս.* часть «*մաս*», у-часть «*բախտ, վիճակ*», с-частье «*երջանկութիւն*», *լեհ.* częś'c' «*մաս*», որից էլ *ռուս.* причастить-ся «*հաղորդուիլ*» են (Berneker 155, 601, Pokorny I, 341):

Տէրվ. Altarm. 29 *և նախալ. 38, 111* խաճատալ, խայթոց, ճախաճի, *յն.* χαϑάλλω «*խայթել*», *սանս.* khād «*ծամել, ուտել, լափել*», khaduka «*չար, նախանձոտ*», khādana «*ատամ, կերակուր*» *բառերի հետ՝ հնխ.* skad, skand «*կծել, ուտել*» *արմատից։*—Bugge KZ 32, 46 *և* IF 1, 450 *սանս.* khād *արմատի հետ, որ ընդունում են նաև* Petersson, Ar. u. Arm. Stud. 89, Grammont MSL 20, 232: Scheftelowitz BB 28, 312 *սանս.* skhadate «*ճնդրել*», khādati «*ծամել*», *յն.* σχάζω «*ճնդրել*» *ձևերի հետ։ Հիւնք. և Թիրեաքեան, Կարնամակ ծան. 88 պրս.* gazīdan «*խածնել*», *Մառ, Грам. др.-арм. 42 խայծ արմատից է հանում։* Karst, *Յուշարձան 415 մոնգոլ. կալմուկ.* xadza, *բուրիատ.* xadzaxaza, *Թունգուզ.* kadza, *ճապոն.* kadziri «*խածնել*»։ *Պատահական նմանութիւն ունի լազ.* xvat «*ատամներով կտրել, կրծել*»։

Գիւռ.—*Ախց. Կր.* խածէլ, *Ալշ.* խածել, *Մշ. Սչ.* խածնել, *Ննխ.* խածնէլ, խազնէլ, *Զթ.* խածնիլ, խազնիլ, *Համշ.* խածուշ, *Տիգ.* խոնծնիլ, *Հճ.* խազնել, *Պլ. Ռ. Սեբ.* խազնէլ (*կտր.* խածի), *Ակն. Խրբ.* խազնիլ, *Ասլ.* խազնէ՝լ։—*Նոր բառեր են* խածլան, խածան, խածուկ, խածվռտել, խածխծել, խածկտել *են։*

ԽԱՅԱԲՐԻԼ «*փճացնել*». *Նորագիւտ բառ, որ մէկ անգամ ունի Վստկ. 23. (խատխալ կամ տուիծախտ) ինքն հետ հնտանացն լինի և խածաբրէ բոյսն, ևս առաւել զբակլայն։*—*Սրա հետ նոյն են* խածփրիլ «*փճանալ*» *Սմբ. դատ. 165,* խացփրել «*մի բան ծուռ կերպով մեկնել. քաշկշուք բացատրութիւններ տալ*» *Վրդ. աւետ., որ միևնոյն է թէ «բառի իմաստը փճացնել». արդէն նորայր,* Բառ. *ֆր.* gâter (*նաև Կոյլաւ, Բառ. գերմ.* auswintern) *բառի տակ՝ մհյ.* խացփրել *գործածում է բոյսերի ապականութեան իմաստով, իսկ* torchonner *բառի տակ՝ «յոռի գործէ։» Հնագոյն ձևն է անշուշտ* խածաբրել, *միջին ձայնաւորի անկումով՝* խածբրել, *որ յետոյ դարձել է* խացփրել։

Գիւռ.—*Խասպրել Խոջ. «առանց ամբողջութեան վնասելու մի բանից մի մաս խլել, պոկել հանել». օր. կացինով դուրը խասպրել, գայլը ոչխարը խասպրեց։*

ԽԱՅԵՒԱԹ «*արաբական սովորութիւն, որով նորընտիր իշխաններին շղթայի էին զարնում և ծեծում, իբրև թէ թագաւորին հնազանդ լինելը ցոյց տալու համար*»։ *Նորագիւտ բառ, որ մէկ անգամ գործածուած ենք գտնում Վրդ. պտմ. 102 «Եւ ապա գայ ի խալիֆային դեսպան և արկանէ օղ ոսկի ի պարանոց նորա և 12 վարոց ի մի կապեալ հարկանէ զնա խածեալ արարեալ, որպէս թէ այնչափ հնազանդ է իւրում առաջնորդին». (Համմտ. նաև Միխ. ատ. էջ 419, ուր նկարագրուած է նոյն սովորութիւնը)։*

Ալիշան, Հրտր. Վրդ. պտմ. մեկնում է «խածեալսյն արարեալ, ծանակեալ կամ խաճիլեթ ըստ արարաց» (ամօթանք)։ Հ. Գր. Սարգսեան, Բազմ. 1927, 16 արար. գասավէր «*անգթութիւն*» (*իմա՛* قساوت qasāvat «*կարծրութիւն. 2. անձկութիւն. 3. վիշտ, հոդ*»), *որ յարմար չէ առնուազն s-ի պատճառաւ և ոչ ș=ծ։*

ԽԱՅԻ «*մի տեսակ ծառ*». *ունին մխայն ԱՐ և ՀԲուս. § 972։*

ՀԲուս. կասկածում է որ հացի բառի խանգարուած ձևը լինի. սակայն որովհետև ըստ Նորայր ՀԱ 1923, 157 հացի *և* խածի *միասին գործածուած են կողք կողքի («Յաղագս ծառոց» անունով դրուածքի մէջ), ուստի չեն կարող նոյն բառը լինել։*

ԽԱՅԻ «*կտնաոք*» *տե՛ս* խածւ։

ԽԱՅԻԹԱՅ (*ի հլ. ըստ ՆՀԲ, թէև առանց վկայութեան*) «*ոռճիկ, թոշակ*» *Ղևոնդ իա, էջ 113. Վրդ. պտմ. էջ 74։*

ՆՀԲ «որպէս արաբ. գրսդ. ազատդ»։

ԽԱԿ, *ի–ա հլ. «տհաս (պտուղ). անխելամուտ, անվարժ, անփորձ (մարդ), անկիրթ, անառակ, անգութ (յն. ոճով)» Ոսկ. գաղ, Թես. ես. մ. յհ. ա. և Ա. կոր. որից*

խակագոյն *Ոսկ. յհ. բ. 16.* խակագոծ *Ոսկ. մ. ա. 10.* խակագոծութիւն *Եւս. քր.* խակակուր *Նլ. իէ. 20. Ղեւտ. իդ. 2. Յոբ. ժե. 33.* խակութիւն *Ագաթ. Ոսկ. գաղ. և երր.* «անդորմութիւն» *Բ. մակ. ժբ. 5. Կոչ. 25 և Վրդ. պատմ. տպ. Վենետ. էջ 46 (որ էմինի հրատարակութեան մէջ, էջ 66 գրուած է ճակառակութիւն), «ապստամբութիւն» Ոսկ. բ. տիմ.ա.* խակամիտ *Լաստ. ևն։*

Հիւնք. խաղող *բառից։* Karst, *Յուշարձ. 427 ՔՔր.* ak, ek, ag, až, ac «*քոյն, դառն, քքու, խակ*»։

ԳԻՒ.—Գոր. Ղրք. Տփ. խակ, *Ալշ. Երև. Մշ. Ոզմ. Սեբ. Սչ.* խագ, *Խրբ. Տիգ.* խmq, *ՋՔ.* խoգ, խոգ, *Հճ.* խoգ. *Ախց. Կր.* ղակ, *Հմշ.* ղագ.—*իսկ Ասլ.* խագ, խայ՝ *գործ է ածւում միայն մարդոց համար։ Նոր բառեր են* խակկռատար, խակաճոյշ, խակլագուտ, խակկոխի, խակոր-մակոր «*տհաս-մհաս*»։

ԽԱՀ *տե՛ս* Խոհ։

ԽԱՀԱՆՈՑ «*ճարտարապետ*». *դիտէ միայն Բառ. երեմ. էջ 136։*

*ԽԱՀՈՒԻ «*սուրճ*». *Նոր փոխառեալ բառ. ունի միայն ՓՔ՝* խաւիվէ *ձևով, որից էլ* խաւիվէագործ *և* խաւիվէավաճառ, *երկուսն էլ ՓՔ. —նոյն* խաւիվէ *ձևն ունի նաև Կ. Սարաֆեանի Բանալի գիտութ. Պետերբ. 1788, էջ 110. —իսկ ՀՌուս. § 1799 գրում է* դաւիվէ՝ *բստ Բժշկարանի։*

=*Արաբ.* قهوة qahva «*սուրճ*», *որից փոխառեալ են նաև թրք.* kahve, *լտ.* cafaeum, *յն.* καφέϊον, καφενές, *գերմ.* Kaffee (Kluge 235), *հոլլ.* koffie, *անգլ.* coffee, *իտալ.* caffe, *ֆրանս.* café, *ռուս.* кофе, *լհհ.* kawa (Berneker 468) *ևն, մինչև անգամ չին.* 加非 ká-fei'։ *Բոյսի գիտական անունն է* coffea arabica: *Կան գիտուններ, որոնք պնդում են թէ բառս Ափրիկեան* Caffa *երկրի անունից է, ուր, ինչպէս և առհասարակ հասարակածային Ափրիկէի մէջ՝ սրճենին աճում է վայրի վիճակում և անտառներ է կազմում։ Այստեղից Եթովպիոյ վրայով անցել է Արաբիա, որտեղից էլ տարած-ուել է ամէն կողմ (Տաշեան ՀԱ 1925, էջ 177)։*

Ուղիղ մեկնեց Աւետիքեան, Քերակ. 1815, էջ 314։

ԳԻՒ.—Տփ. ղ՛ավա, *Ախց. Սեբ.* qmյֆm, *պլ.* խախվէ *ևն։ Արևմտեան գրականում գործածական է միայն* խաւիւէ *ձևով, արեւելեան գրականում* կոֆէ։

ԽԱՀՐԻԼ «*այրիլ, կերակուրը այրելով աւրել*» *Վրք. հց. Բ. 116. փխբ.* «*փճացնել, եղծանել, վանել*» *Վրք. հց. Ա. 524. Բ. 135, 167.* «*երկիրը քանդել*» *Պատմ. ԺԲ դարից (Հրտր. Դիւան, ժ. էջ 428, 431)։*

ՆՀԲ «*դխահս աւերել*»։ *Թիրեաքեան, Արիահայ բռ. 178 նոյնպէս իբր* խահ+ աւերել «*կերակուրը փճացնել*»։

ԽԱՂ, ո *հլ. (յետնարար նաև ու, ի հլ.) «երախայի, լարախաղացի, ծաղրածուի են խաղ, ծաղր, կատակ» ՍԳր. Ոսկ. մաթ. և յհ. ա. 1. Եփր. բ. տիմ. Մծբ. Կոչ. «Թատրոն» Առ որս. «երաժշտական մի ձայնանիշ» ԱԲ. որից* խաղ առնել «*ծաղրել*» *ՍԳր. Կոչ.* խաղալ «*խաղ խաղալ, ծաղրել, ծիծաղի առարկայ դարձնել, ուրախութիւնից խայտալ, ցընծալ, շարժիլ, երթալ, վազել, արշաւել*» *ՍԳր. Վեցօր. Եզն. Ագաթ. Սեբեր.* խաղալիկ «*պարող*» *ՍԳր.* «*մանկական խաղալիք. խաղալու բան*» *ՍԳր. Ոսկ. յհ. բ. 25. Եզն.* «*ափը թևին միացնող յօդը՝ դաստակի սկիզբը*» *Տաթև. հարց. 241.* խաղալիճ «*մարմնի յօդերը, խաղերը*» *ՍԳր. (այս նշանակութեան համար հմմտ. թրք.* oynamaq «*խաղալ*» *և* oynaq «*յօդակապ*»). «*խաղ*» *Պղատ. օրին.* խաղարար «*պարող, կաքաւող, խաղացող*» *Շապհ. 40.* խաղագլոր *Ոսկ. փիլիպ.* խաղակատակ *Բուզ.* խաղաց «*երթալը, վազելը*» *Եւս. քր. Եզն. Վեցօր.* «*վազուն*» *Վեցօր. եւ. 17. Սեբեր.* խաղացուցանել *ՍԳր.* խաղացական *Եզն.* առագախաղաց *Վեցօր.* երագախաղաց *Մծբ.* ծաներախաղաց *Վեցօր.* չխաղոյք *Ոսկ. երր.* բազմախաղ *Ոսկ. ննջ.* զօրախաղաց *Պատմ. աղէքս.* բատերախաղք *Ոսկիփ.* լարախաղացութիւն *Սահմ.* խաղիչ «*կողմնացոյցի սլաքը*» (*չունի ԱԲ*) *Առաք. պատմ. 458. Նոր բառեր են* խաղագնդակ, խաղաթուղթ, բղթախաղ, խաղամոլ, խաղասրահ, խաղատոմս, խաղարկութիւն, նաւատախաղ *ևն։*

ՆՀԲ *հայերէնից է դնում յն.* խալի՛ճա, խալխմօ՛ս «*ազգ ինչ խաղու*»։ Peterm. *27, 34 պրս.* bāxtan «*խաղալ,*

ցատկել»։ Böttich. Arica 8 *սանս.* kal *«շարժել»։ Այվազովսքի, Յաղագս հընչման, էջ 15 նոյն ընդ ծաղր, յն.* γελοῖος։ *Տէրվ.* Altarm. *28, Նախալ. 112 սանս.* khal *կամ* skhal *«դեղձիլ, ճօճիլ, երերալ»,* skhalita *«կեցած, մնացած, պակաս», յն.* σκαίρω *«ցատկել, պարել» ձևերի հետ հնխ.* skar *«դեղձիլ, շարժիլ, երթալ, կենալ» արմատից.—այստեղ է պատկանում նաև խաղ «կեցած ջուր»։* Müller, Armen. VI *յն.* κέλευθος *և լիթ.* kelias *«ճանապարհ», յն.* κέλις *«արշաւակի» բառերի հետ։* Canini, Et. étym. 187 *յն.* καχάζω, *լտ.* cachinnus *«բարձրաձայն ծիծաղ»։* Bugge, Beitr. *19 յն.* σκαίρω *«ցատկել, պարել», մրդ.* scharz *«ցատկտելը»,* scherzen *«կայթել» բառերի հետ։ Նոյն,* KZ 32, 41 *մերժելով սրանք՝ դնում է յն.* ἅλλομαι *«աշքը շարժել, սիրտը թրթռալ», լտ.* salio *«ցատկել, կայտռել», սանս.* sárati *«հոսիլ», համմտ. նաև սանս.* sáras *«լիճ, ծով» =*խաղ *«ճահիճ»։ Հիւնք.* խաղաղուիւն *բառից է հանում։* Patrubány SA 1, 194 *յն.* κέλομαι, *լատ.* colo, *լիթ.* keliu, kélti *«բարձրացնել, կրել» են։* Karst, *Յուշարձան 401, 404 սումեր.* q'al *«հոսիլ, շտապել, գահավիժիլ» են։*

Գիմ.—Ալշ. Ախց. Ասլ. Խրբ. Կր. Հմշ. Մկ. Մշ. Մրզ. Ննխ. Ոզմ. Պլ. Ջղ. Ռ. Սեբ. Սլմ. Սչ. Վն. խաղ, *Գոր. Ղրբ. Տփ.* խաղ, ճաղ, *Տիգ.* խոդ, *Զթ.* խօղ, խոդ, *Հճ.* խօղ, *Ագլ. Երև. Շմ.* ճաղ։ *Գաւառականներում* խաղ *բառը նշանակում է նաև «երգ» (բայց միայն աշխարհական երգ), որի համար աւելի հնից ունինք* խաղ *«երգ» Առաք. պատմ. 64. Է՛լ աւելի հին է* խաղտեար *(ուրիշ է* խազտեար*) «երգարան» Յիշատ. երգ. ժմ. համմտ. նաև* խաղ, վերնախաղ (ʌ) ներքնախաղ (vv) *ձայնանիշների անուննները։—Գւռ.* խաղ *(Ակն. Ասլ. Պլ.* խախգ*) «խայտառակ» ձևի համար համմտ. Ոսկիփ. «Խաղք և խայտառակ կացուցանէ զսատանայ ապաշխարութիւնն». (սխալ է գրել* խախկ, խախ, *ինչպէս ցոյց է տալիս և Մաս. աղաւ. 1863, 202)։ Նոր բառեր են* խաղախնդում, խաղահան, խաղամէջ, խաղատեղ, խաղացք, խաղացուածք, խաղընկեր, խաղլեղ, խաղկլիկ, խաղկատալ, խաղոց, խաղոռել, խաղոսրիւն, խաղալացաւ, խաղալացաւօտ, խաղոհիճ, խաղտուն *են։*

ԽԱՂ, ի *հլ. «ճահիճ, ծանծաղ՝ կանգնած ջուր» ՍԳր. Ոսկ. ես. Թերևս նոյն բառն է, ինչ որ նախորդը, թէև բոլորը տարբեր են։*

Ստուգաբանութեանց պատմութիւնը տե՛ս նախորդ բառի տակ։

*ԽԱՂԱ *«մուշկի իւղ». այսպէս դիտէ Խոր. աշխ. 612 ձեռագիրներից մէկը. «խաղա, որ է մշկեղ». միւսները ունին* խալի, ճալի՝ *իբրև Արաբիոյ ծաղկի անուն։*

=Թրք. قالیه qalya *«մշկոյ բեշկ» (տե՛ս Աբիկեան, Ընդ. բառ. տաճկ. հայ. Պօլիս 1892, էջ 442 ա. չունի* Будаговъ*)։—Աճ.*

Տե՛ս նաև խաղուկ *բառի տակ։*

ԽԱՂԱԽ *«նաւակ, նաւ». ունի միայն Հին բռ. անստոյգ բառ. ա՛յս է որ Բռ. երեմ. էջ 136 գրում է* խաղաղ *«նաւ» և հարցնում է. «Թէ խաղաղն նաւ է, խաղաղորդն ճոն ընդէ՞ր է և զիա՞րդ ոչ նաւորդ»։*

Նշբ դնում է «բառայլազգական. Էլէմ, գայըգ, գալեօն են»։ Սրանցից միայն առաջինն է՝ որ կարող է համեմատուիլ մեր բառի հետ. այսպէս՝ պրս. کلک kalak, *Թրք.* kelek, *քրդ.* kalek, kelek *«տիկերով կազմուած նաւ, տկաւասա», որ հին ժամանակ գործածական էր Հայոց մէջ և մինչև հիմայ էլ է Տիգրիսի վրայ։ Բայց այս ձևերը չեն յարմարում մեր բառի հետ։*

ԽԱՂԱԽ *«կաշի, մորթ». արմատ՝ որ առանձին գործածուած չէ, բայց սրանից են խաղախուղ «կաշեգործ» Գծ. թ. 43, ժ. 6, 32. Ս.ո. որս. թ,* խաղախուղարան *«կաշեգործարան» (նոր գրականի մէջ)։*

Հիւնք. հանում է խաղող *բառից։*

ԽԱՂԱՄԵԼ *«խածնել». ունի միայն Բառ. երեմ. էջ 137։*

ԽԱՂԱՂ *«հանդարտ, հանգիստ» Ես. ը. 6. Ոսկ. ա. տիմ. ժդ. որից* խաղաղանալ *ՍԳր. Ագաթ.* խաղաղիլ *ՍԳր. Եւս. քր. Ոսկ. յհ. ա. 28. մ. բ. 23.* խաղաղագոյն *Գ. մակ. գ. 17.* խաղաղական *ՍԳր.* խաղաղակոյտ *Մծբ. Կոչ. 388.* խաղաղարար *ՍԳր. Ոսկ. յհ. բ. 36.*

խաղաղիկ *Եզն.* խաղաղութիւն *ՍԳր.* հետա-խաղաղ *Բ. մկ. ա. 19. Մծբ.* հողմախաղաղ *Ագաթ.*

ՆՀԲ լծ. յն. γαλήνως «խաղաղ»: Տէրվ. Altarm. *28 և Նախալ. 112 համարում է կրկնուած խաղ բառից, որ նոյն է դնում խաղ «ճահիճ», խաղալ «շարժիլ» ևն ձևերի հետ:* Müller, Armen. VI *յն. κηλέω «խաղաղացնել» բայի հետ:—Հիւնք. յն. γαλήνως «խաղաղ»: Աճառ. ՀՄ 1899, 233 համարում է նոյնպէս կըրկնական:*

ԳԻՒ.—Ալշ. Ախց. Խրբ. Մշ. Մրղ. Ոզմ. Սեբ. Սչ. խաղաղ, *Տիգ.* խաղղղ, *Երև. Տփ.* հաղաղ:—*Պլ. կայ միայն* խաղաղգիլ «հանդարտիլ»: *Առանձնապէս կարևոր են* խաղա-կանջ *(իմա՛* խաղաղականջ*)* «հանդարտ, հանգիստ, անվրդով», խաղուել, խաղուեցնել *Սվ.,* խաղուիլ *Ակն. (փխ.* խաղաղուիլ *ևն). Համմտ.* խաղվեցնել «խաղաղել, հանգստացնել» *Քուչ. 75:*

ԽԱՂԱՄՈՒՆ «տխուր, տխմար, տրտում» *Բառ. երեմ. էջ 137, «տխուր» ՀՀԲ,* որից խաղամծիլ «խոժոռիլ» *Բառ. երեմ. 137, «տխրիլ» ՀՀԲ:*

ԽԱՂԱՊԱՏԻԼ «լալով փաթաթուիլ, պաղատիլ, լալով աղերսել» *Ոսկ. մ. բ. էջ 435. Սիր. ապաշխ. 194. Եղիշ. գ. էջ 50. ՅՀ. կք* որից խաղապատանք «աղերսանք, լաց, կոծ» *Փիլ. իմաստ. 100:*

=*Անշուշտ կազմուած է* խաղ *և պատիլ բառերից. բայց ինչպէ՞ս պէտք է մեկնել* խաղ «լաց» *ձևը:*

ԽԱՂԱՋ *տե՛ս* Խախաջ:

ԽԱՂԱՋՈՒՆ «մեծատուն». *ունի միայն Բառ. երեմ. էջ 137:*

ԽԱՂԱՎԱՔ «մի տեսակ անծանօթ բոյս է» *Բժշ. ունի միայն ՀԲուս. § 974:*

— **ԽԱՂԱՏԻԼ** «մոլորիլ, գայթակղիլ». *Նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Սոկր. 581 «Մի՛ խաղատիր, ասէր, ո՛վ Թագաւոր, այլ...», որի դէմ փորր Սոկր. ունի «մի՛ անգիտանար»:*

=*Յոյն բնագիրը համապատասխան տեղն ունի μὴ παίζου (տե՛ս* Σωκράτους Σχολαστικου Ἐκκλησ. Ἱστορια, Oxford 1893, *էջ 289). այս բառը բիւզանդական յունարէնում նշանակում է «to seduce, մոլորիլ, հրապուրուիլ»* (Sophocles 831), *բայց ըստ որում հին յունարէնում նշանակում է «խաղալ, զուարճանալ» ևն, թարգմանիչն էլ հայ.* խաղ *բառից յօրինել է* խաղատիլ:—*Աճ.*

ԽԱՂԱՒԱՐՏ, ի–ա *հլ. «պալար, ուռեցք» Սլ. Բ. 9. 10. Եղիշ. հրց. 54. Փիլ. ՅՀ. կք. 198. «քաղցկեղ» Գաղիան.* դրուած է նաև խադուարտ, *որից* խաղուարտեցուցանել *«ուռեցքներ յառաջ բերել» Սարգ. յկ. ր. (էջ 146): Այս միևնոյն բառն է՝ որ գործածուած է Յայսմ. մայ. 3* խաւարտիլ *ձևով և «մորթը այրուելով փապարիլ, բշտիլ» նշանակութեամբ. «Արկին զնա ի յեռացեալ ջրով կաթսայ... և նա առեալ երկու ափովն ջուր և արկ ի ձեռն դաստուրին, և առժամայն խաւարտեցան և բերբեցան ձեռք դաստուրին»:*

ՆՀԲ մեկնում է «խոյլ աւարտեալ կամ վերտեալ»: Հիւնք. սաղաւարտ *բառից:*

ԽԱՂԲ, ԽԱՂԲԱԿԵԼ *տե՛ս* Հաղբ:

ԽԱՂԽԱՂ «ծովի խութք, խարակ». *ունի միայն ՓԲ՝ առանց վկայութեան: Անստոյգ բառ:*

ԽԱՂԽԱՄ, ի–ա *հլ. «վանդակի ճաղերը» վեցօր. 198, որից* խաղխամեայ «վանդակահիւս» *Պատմ. աղէքս. 22:*

ՆՀԲ խաղ խաղ *ձևերից: Աճառ. Արարատ 1911, 420 կրկնուած համարելով* խաղ *արմատից, համեմատում է լազ.* oxile «կամուրջի ճաղերը» *բառի հետ:*

ԽԱՂՃ. *արմատ առանձին անգործածական, որից կազմուած են* խաղճուկ «կռճիկ» *Տիմոթ. կուզ, էջ 324,* խաղճախուղճ *(կըրկնուած ձևով) «կռճիկ» Ոսկ. ա. Թես. էջ 447. Նիւս. կազմ. Գաղիան.* խաղճմուկ *կամ* խողճմուկ? «մկանունք» *Նիւս. կազմ.* խաղճեալի «թերամարս կամ անմարս» *Նիւս. կազմ:*

ՆՀԲ խաղճախուղճ *հանում է* խիճ *բառից, իբր* խիճուխուճ, խիճ *և* խոչ: *Բոլորը միասին վերի ձևով բացատրեց Աճառ. Հայ. նոր բառեր Տիմոթ. Կուզի մէջ, էջ 77:*

ԽԱՂՈՂ *(եզ. սեռ. -ոյ, յդ. սեռ. -ացց)* «խաղող» *ՍԳր. Կոչ. որից* խաղողաղաւճ

Մծբ. խաղողեփեաց *«մի տեսակ միջատ»* Վեցօր. *162.* խաղողաբեր *Ոսկ. յհ. մկ. Արծր.* խաղողենի *Ոսկիփ.* խաղողիկ *«մանր խաղող»* Գաղիան. *«լեզուակ, մակալիզու»* (*հետևողութեամբ յունարէնի*) Գաղիան. շնախաղող *«մի տեսակ վայրի պտուղ»* Վստկ. *բժշ.* (*ճիշտ նոյն կազմութիւնն ունին պրս.* سگ‌انگور sag-angūr *և լազ.* ջողոր-ղ'ուրձենի *«շնախաղող»*)։

ՆՀԲ օղ *որ խաղայ* (Թաղիադեան, *Առաջն. մանկանց, էջ 68 «յողի իւրում խաղ(ացնող կամ սողալով աճող»։* Lag. Arm. Stud. *§ 960 յիշում է խպտ.* aloli *«խաղող», որի համար ասում է՝ թէ այնքան նման է հայերէնին, որ մին միւսի մայրը պէտք է որ լինի։ Հիմք կազուղ *բառից։ 3. Արշէդ ՀԱ 1896, 270 և Բազմ. 1897, 50 հին եգիպտ.* արէր *«խաղող»,* ուարէր *«որթ», խպտ.* ալօլի, ճալօլի *«խաղող», սանս.* ճալա, ճալալա *«գինի» (սրանց մասին տե՛ս և գինի բառի տակ)։* Patrubány SA *1, 198 սանս.* kalilās *«լի» բառի հետ։ Մառ* ИАН *1915, 940 մինգ. վրաց. լազ.* ղ'ուրձենի *«խաղող» բառի հետ ցեղակից։*

Գիւռ.—Մշ. խաղող, *Մկ. Ոզմ.* խաղուղ, *Գոր. Ղրբ. Տփ.* խա՛ղուղ, ճա՛ղուղ, *Ալշ.* ճաղող, *Ախց.* ճաղօղ, *Ագլ. Շմ.* ճաղուղ, *ՀԹ.* խողիւղ, խող, *Սեբ.* ճաղէօղ, *ՀՃ. ՋՂ. Սլմ. Վն.* խավող, *Խրբ. Կր. Պլ. Ռ.* խավօղ, *Այն.* խավօխ *(Բիւր. 1900, 671), Սչ.* խավօխ', *Տիգ.* խոմվուխ, *Ակն.* խավօղ, խավէղ, *Մրղ.* խավ͡ուէղ, խավրէղ, *Սրև. Պրտ. Ննխ.* ճավօղ, *Հմշ.* ճավէօղ, *Ասլ.* ճավէ՛օղ։—*Շատ հետաքրքրական ձև է Ղրբ. սեռ.* խըղվին *«խաղողին»։—Նոր բառեր են* խաղողագող, խաղողաձառ, խաղողամաղ, խաղողօրհնէք *(>* *Մրղ.* խավ͡ուէխնէք[1])։

ԽԱՂՈՒԱՐՏ, *որ և* խաղվարտ, խաղարտ *«դեղին վարունգի հունտը» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 983. իսկ ՆՀԲ յիշում է* խաղաւարտ *բառի տակ «խիար, խիարի հունտ» նշանակութեամբ։*

**ԽԱՂՈՒԿ *«քրքումի իւղ». այսպէս ունի Խոր. աշխ. 612 ձեռագիրներից մէկը. (խալուկ, որ է քրքմեղ). միւսները ունին* խալոկ, խալսկ, խախակ *ընթերցուածները, որոնցից լաւագոյնն է համարում* խալոկ՝ *«Արաբական մի տեսակ ծաղիկ» նշանակութեամբ։*

=*Արաբ.* خلوق xulūq *կամ* خلاق xilāq *«մի տեսակ անուշահոտութիւն, որ յատուկ է արաբներին և որի բաղադրութեան մեծագոյն մասը քրքում է» (ըստ բացատրութեան Կամուսի Թրք. Թրգմ. Բ. 898)։—Աճ.*

Խոր. աշխ. յիշեալ տեղում գրուած է այսպէս. «Արաբիա... իւղք անոյշք ի նմա և ծաղիկք վեշտասան». հետևում է 16 անուն, որոնց մէջ են խալի *և* խալոկ *անունները։ Այս երկուսի տեղ մի ձեռագիր ունի «խաղա, որ է մշկեղ», «խաղուկ, որ է քրքմեղ»։ Երկու ձևերն էլ ստոյգ են, ըստ որում համապատասխանում են ճշտիւ Թրք.* قالیه qalya *«բեշկ մշկոյ» և արաբ.* خلوق xuluq *«քրքումով անուշահոտութիւն» բառերին։ Յայտնի չէ միայն՝ թէ այս չորս ձևերից որո՛նք են հարազատ.* խալի *և* խալո՞կ, *թէ* խաղա *և* խաղուկ։ *Դժբախտաբար բնագրի «իւղք անոյշք ի նմա և ծաղիկք վեշտասան» բառերից չի՛ հասկացւում թէ վեշտասանը պատկանում է միայն ծաղիկների՞ն, թէ նաև իւղերին։ Յիշուած 16 անունների մի մասը իսկապէս ծաղիկ է (ինչ. վարդ, մանուշակ, յասմիկ), մի մասը ծաղիկ և իւղ միանգամայն (ինչ. բալասան), միւսները անյայտ։ Եթէ հարազատ ձևերն են* խալի *և* խալոկ, *ինչպէս ընդունած են բանասէրները, սրանք կմնան իբրև հայերէն անծանօթ բառեր, «Արաբիայի ծաղիկ» նշանակութեամբ, իսկ* խաղա *և* խաղուկ, *թէև ստոյգ իբրև բառ, բայց բնագրի մէջ յետնաբար ներմուծուած՝ ուսումնական մի ձեռագրողի կողմից։ Հակառակ պարագային* խալի *և* խալոկ *պիտի ջրնջուին՝ իբրև անգոյ բառ։*

ԽԱՂՊԱՊ *կամ* ԽԱՂՊԱՏ *«ափիոն» Հին բռ. յիշում է միայն ՀԲուս. § 982 և § 2976* խաղպապ *ձևով, իսկ § 261* խաղպատ *ձևով։ Ո՛րն է ստոյգ՝ յայտնի չէ։*

*ԽԱՂՏ «կոշտ, կոպիտ». առանձին անգործածական արմատ, որից կազմուած են խաղտալեզու Սարգ. բ. պետր. ա. էջ 401. խաղտալուր Ոսկ. բ. տիմ. 208 (սխալ գրչութեամբ է խախտալուր ճառընտ.) և խաղտախուղտ (կրկնուած) Պտմ. սահ. 11 (չունի ՆՀԲ). բոլորն էլ նշանակում են «թանձրախօս, կոշտ ու կոպիտ բարբառով խօսող»։

=Մագում է խաղտեաց ազգի անունից. համմտ. դուժ բառի տակ ասուածները։

Ուղիղ մեկնեց Ե. եպս. Դուրեան՝ 1910 թուին (անձնական)։ Նոյնը յետոյ Ակինեան և Մատիկեան ՀԱ. 1914, 708։

ԽԱՂՏ «փշուր փշուր»? անստոյգ նշանակութեամբ նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Ագէբանդրի կաֆանների մէջ. «Եւ ջախջախեաց զոսկերն ի խաղտ, զխաբող մոգին անարգահատ». (տե՛ս Աղթամ. հրտր. Կոստ. 113)։

ԽԱՂՏԵԼ «յօդել, կցել» Հին բռ. որից խառնախաղտել «իրար խառնել, կցկցել» Կոչ. 23 «Ո՛չ եթէ ըստ ծննդեան և ոչ ըստ խառնախաղտել աստեղաց, որպէս զրաբանեն ոմանք, կեամբ մեր» (տպ. խառնախաղտեղ. ի՛ երի ձևով ունի ՆՀԲ)։ Նոյն բառից է և խաղտախառնիճ նորագիւտ բառը, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Եւագր. 40 «Զգոյշ լինիցի խորհրդոցն իբրև նշանակիցէ զի վերայ հասանելն նոցա (դիւաց) և թուլութեանցն հայիցի և զխաղտախառնան (այլ ձ. խաղտաճառան) նշանակիցի և զժամանակսըն».—ըստ համեմատութեան Սարգիսեանի յն. բնագիրն ունի μετεμπλοκάς, որ Sophocles 753 մեկնում է «complication, խառնակութիւն, կնճռոտութիւն»՝ առնելով Եւագրից։

ԽԱՂՏԻ «խորամանկութիւն». նորագիւտ բառ՝ որ մէկ անգամ գտնում են գործածուած Մագ. թղ. 229 «Յայսպիսի խաղտիս ծպտեալ և ի ծերպս անձաւին մուծանէր»։ (Տե՛ս իմ Հայ. նոր բառեր հին մտ. Բ. 186)։

ԽԱՃ կամ ԽԱԺ «անծանօթ մի բոյս է» Սալաձ. ունի միայն ՀԲուս. § 984։

ԽԱՃԱՐ «վայրի արմաւ. լտ. phoenix sylvestris». ունի միայն ՀԲուս. § 985, բայց յայտնի չէ թէ հի՞ն բառ է, թէ նոր գաւառական։

*ԽԱՄ «անփորձ, անվարժ» Ոսկ. երր. փիլիպ. 396 և մ. գ. էջ 54, բ. տիմ. էջ 193. Ուխտ. բ. 106. «կեղծ, շինծու (ակունք)» Կոստ. երգն. 82. Վրդն. Տօնակ, որից խամանալ Ոսկ. փիլ. 436. խամուրիւն «անվարժութիւն» Ոսկ. փիլիպ. Պիտ. երգն. քեր. ի խամուց «յանգէտս, չգիտեննալով» Կիւրղ. ծն. (որովհետև խօսքը դինու համար է, ուստի և ՆՀԲ մեկնում է «դեռ չհասած, դեռ չեփուած». իսկ Թոռնեան, Հաւաքնտիր 1891, էջ 316 և Տաշեան, Ուսումն դաս. հայերէնի 614 դնում են վերի ձևով. ունինք նաև պրս. خام xām «մի տեսակ գինի», բայց մեր բառի մակբայական գործածութիւնը ցոյց է տալիս՝ որ սրա հետ կապ չունի)։

=Պհլ. *xām բառից, որ թէև չէ գործածուած, բայց հաստատւում է պրս. خام xām «հում, տհաս, անփորձ» բառով. սրա հետ նոյն են քրդ. xām, xāw, օսս. xóm, աֆղան. ōm, ūm, բելուճ. hāmag, սանս. āmá ևն. համապատասխան բնիկ հայ. ձևն է հում (տե՛ս Horn § 463)։ Պարսիկ բառից փոխառեալ է թրք. xam «խակ», որ մտած է մեր բոլոր գաւառականների մէջ։—Հիւբշ. 157։

Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ, յետոյ Müller SWAW 42, 255, Lag. Ges. Abhd. 13:

*ԽԱՄԱԼՕՆ կամ ՀԱՄԱԼՈՒՆ «մի տեսակ բոյս. լտ. chamaeleon» Բժշ. ունի միայն Հայբուսակ § 987 և 1610։

=Արաբ. خمالیون կամ خامالیون xămālyun, որ ծագում է յն. χαμαιλέων հոմանիշից. (սրա բուն իմաստն է «գետնառիւծ» և նոյն է ֆամելոն անասունի անուան հետ. այսպէս է կոչուած բոյսը՝ տերևների յարափոփոխ գոյնի պատճառաւ). տե՛ս Steinschneider-ի հաւաքածոյի մէջ՝ WZKM 12, 232։—Ա՛ճ.

ՀԲուս. դնում է յունարէնից։

*ԽԱՄԱՀԻ «մի տեսակ քար է. hématite, н. крововикъ». ունի միայն Պատկ. Драгоцен. камни, էջ 38։

=Պրս. خماهن xumāhan «է ազգ ինչ քարի, կարմիր որպէս զկինաբառիս»։

Ուղիղ մեկնեց Պատկ. անդ։

***ԽԱՄԱՃԻԿ** «տիկնիկ, կուկլա, պաճուճապատանք, խոժիկ,* marionnette». *իբր մհյ. բառ ունի միայն Նորայր։ Բառ. ֆր. 785 ա։ Նոյնը Քուչ. 84 ունի դիմաճիճ ձևով. «Ջնա մասխարա դնէ, թքանէ զէտ դիմաճիճ»։*

=Թթր. quma «մի կնոջ ամուսնու միւս կանայքը», *տճկ.* quma «ներ» *բառն է +Թրք.* -jik *նուազական մասնիկով։ Արմատի վրայ աւելի ընդարձակ տե՛ս դումայ։—Ա՛ճ.*

Գիմ.—Խր. Ննխ. խումաջիգ, *Սչ.* խամաջիգ, *Տիգ.* խոմմջուգ, *Սեբ.* խմջուգ «տիկնիկ»։

ԽԱՄԱՐ «գիտուն». *ունի միայն Բառ. երեմ. էջ 137։*

ԽԱՄԲԱՅ, *որից* **խամբայութիւն**. *անստոյգ բառ. մէկ անգամ գործածուած է Մանդ. իզ, էջ 199 «(Աւուրցն) եղծումն և յափշտակութիւն (տպ. յարդարումն) ի խամբայութենէ անձրևաց լինին և ի տօթոյ արեգական»։ ՆՀՐ մեկնում է «թուի գուգընթացութիւն և կամ շատութիւն կամ չափաւորութիւն»։*

ՆՀՐ առաջին իմաստով համեմատում է պրս. hampā «համընթաց», *որ սակայն պիտի տար հյ.* համփայ-։

ԽԱՄԲԵՐՔ «կզակ, ծնօտ». *գործածուած է հետևեալ տեղերում. «Ջախջախեցաւ խամբերք նորա» (մէկ ձ. ջախջախեաց զխամբերքն. երկու ձ. կոտորեաց զկզակն. այլ խմբ. զատամունք) Վրդ. առ. 56. «Կիցս եհան զօրութեամբ և եհար զնա ի խամբերն և ջախջախեաց». (այլ ձ. զխամբեկ նորա. այլ խմբ. զխամբէք կզակ). Վրդ. առ. 118. «Ծ զխամբէքն և զփողքն ձիոյն». Վստկ. 205. Նոյնը* **խամբեբք** *ձևով ունի Վարք Ս. Գէորգայ, էջ 50. «Բացեալ զբերան նորա և եդեալ ուր ատինս նորա և զխամբեբքսն պընդեցին ուժգին մամլովքն»։ Յայտնի չէ թէ այս չորս ձևերից ո՛րն է ուղիղը. բայց յգ. հյց.* **զխամբեբքսն** *և եզակի ջախջախեցաւ ձևերից երևում է որ վերջաձայն* f *յոգնակիի նշան չէ, այլ արմատական։*

Նորայր, Բառ. ֆր. հասկանում է բառս «ganache, *ստորին կզակ»։* Peeters, Anal. Boll. *հտ. 28 (1909), էջ 268* **խամբեբք** *թարգմանում է «ստինք» և կարծում է թէ կազմուած է* **ծիծ** *և* **խամ**? *բառերից։ Վարդանեան ՀԱ 1910, 369 ա մեկնում է «ծնօտ» և միացնում է նախորդին։*

***ԽԱՄՈՒԹ** «կաշին՝ որով ձիերն են լծւում և կառքի ղեկին կապւում», որից* **խամբաւոր** *«կաշիով կառքի ղեկին կապուած (ձի)», երկուսն էլ ունի միայն Ա՛Բ։*

=Թթր. قاموت *կամ* **ხომ** qamut «ձիի լուծը. կիսաշրջանակաձև փայտ՝ որ կառքին լծուած ձիու վիզն են անցկացնում». Նոյն է նաև կումուկ.* xamutlar *(յգ.* lar *մասնիկով միասին)։ Այս բառը փոխառեալ է սլաւականից, ուր ունինք հալ.* chomutĭ, *ռուս.* хомутъ, *ուկր.* chomút, *բուլգ.* homút, hamút, homót, *սերբ.* hömut, *չեխ.* chomout, *լեհ.* chomąt *ձևերը։ Բայց սլաւական բնատնիքն էլ փոխառեալ է գերմանականից, հմմտ. մբգ.* hamen, *անգլ.* hame, *հոլլ.* haam, *որոնք իբրև հնդևրոպական բառ կցւում են յն.* κνημίς «բերանակապ կեամ» *բառին։ Աւելի ուշ՝ ԺԲ դարում՝ սլաւականից յետ են փոխառեալ մբգ.* komat, *գերմ.* kumt, kummet, *ինչպէս նաև լիթ.* kamañtai, *բոլորն էլ նոյն նշ.* (Berneker *383 և 395,* Kluge *200 և 285,* Pokorny *1, 388*)։—*Ա՛ճ.*

Գիմ.—Ալշ. Ննխ. Սչ. խամուր, *Սեբ.* համուղ։

***ԽԱՄՈՒՐ** «բառամիլը, թօշնիլը, աւրուիլ փճանալը». արմատ առանձին անգործածական, որից* **խամրիլ** *Վեցօր. 84, 85. Ոսկ. ա. տիմ. բ և մ. բ. 8.* **խամրացուցանել** *Ոսկ. մ. բ. 25.* **առագախամուր** «չուտ թառամող» *Վեցօր. 84.* **վաղախամուր** *Եւագր. 366.* **դիւրախամուր** *Երզն. մտթ. 165. յետնաբար և սխալմամբ՝* **խամրաճալ** *ձևից ենթադրելով* ***խամր** արմատը՝ շինուած է* **անխամր** «անթառամ» *Մագ. (փոխանակ* **անխամուր**)։

=Փոխառեալ է կովկասեան լեզուներից. հմմտ. վրաց. ხმელი **խմելի** «չոր», **გამხმარი** **գամխմարի** «չորացած, օթեկ, քարթու» *են, որոնց պարզ արմատն է* xm- «չորանալ». *ճիշտ ինչպէս հյ.* **թառամիլ** *և* **թարշամ** *ծագում են հնխ.* trs «չորանալ», արմատից։—*Ա՛ճ.*

ՆՀԲ լծ. յամր *և* ճամր: *Հինք.* ամուր *բառից:* Karst, *Յուշարձան 427 ՔՔր.* yab, yav, yam *«նիհար, գէշ»:*

+ԽԱՅԹ *«խայթոց, խթան» Բ. կոր. ժբ. 7. որից* խայթել *«խայթոցով կծել» Ամովս. Թ. 3.* խայթաճար *«մի տեսակ փուշ» Ագաթ.* խայթոց *«կիճ» ՍԳր. Մծբ. «խայթուածք» Ոսկ. յհ. ա. 26. Յայտ. Թ. 5.* խայթողութիւն *Ոսկ. ես.* կարճախայթոց *Վրդն. եղ.* շարախայթոց *Բրս. բարկ. Վրդն. եղ. սրա հետ հմմտ. նաև* խեր, խէր, խիր, խոր, խուր, խօր, *որոնք նոյն արմատի զանազան ձայնդարձներն են:*

=*Բնիկ հայ բառ՝ հնխ.* khait *արմատից. հմմտ. սանս.* khidáti *«հրել, ճնշել, պատռել, խլել»,* khédayati *«նեղել, յոգնեցնել»,* khéda *«մուրճ, թակ», լտ.* caedo *«կտրել, զարնել, ծեծել, փորել, փորագրել, խոտ հնձել, անտառ ջարդել, սպանել, խողխողել, դուռ բաղխել, կուրծքը ծեծել, գանահարել»,* caia *«գաւազան»,* caio *«մտրակել, ծեծել»,* caedes *«հարուած, ջարդ»,* caelum *«դուր» են, որոնց արմատն է *qaid- կամ *qhaid- «զարնել»: Այս արմատը աճած է հնխ.* qai- *պարզականից, որ պահում են գերմ.* heie *«թակ, փայտէ մուրճ»,* heien *«զարնել, խթել, հրել»* (Walde *106*, Pokorny 2, 538, Ernout-Meillet *125*): *Վերիններից մէջ աճականն է* d, *հայերէնի մէջ* t:

Տէրվ. Altarm. *28—30* խածանել *բառի հետ նոյն արմատից (տե՛ս* խած*): Նոյն, Նախալ. 68* խիր, խրել, *սանս.* knath, *յն.* κεντέω *ձևերի հետ՝ հնխ.* kant, knat *«զարնել, հրել, խայթել» արմատից: Մորթման* ZDMG *26, 688 բևեռ.* khaitian: *Հինք. և Թիրեաքեան, կարնամակ, ծն. 88* խածանել *բայից: Ուղիղ մեկնեց* Scheftelowitz BB 28, 312, *որ համեմատեց լտ.* caedo *ձևի հետ: Ղափանցեան, Տեղեկ. ինստիտ. 2, 87 շէք արմատից:*

Գիւմ.—Հճ. Սլմ. Վն. խէրել, *Ախց. Կր. Մրղ. Տիգ.* խէրէլ, *Զթ.* խէրիլ, *Ոզմ.* խէյէրիլ, *Խրբ.* խոդ՛իլ, *Ալշ. Մշ.* խէտել *«խայթել», իսկ Մկ.* խէրիլ *«չարչարել»:*

+ԽԱՅԾ. *Նշանակութեան կողմից ընդարձակ զարգացում կրած մի բառ է. բուն և առաջին նշանակութիւնն է՝ 1. «պիտակ, ամբողջութեան վրայ տարբեր գոյնով մի բիծ», որից ունինք մհյ.* խայծ *«բծբծուտ, բծերով հեղուռուռած» Անսիզք 85. ի* խայծ լինել *«պռուղը կարմրելու սկսիլ» Վստկ. 155.* խայծուռ *«պիտակուռ» Ոսկ. տիտ.* խայծուռիլ *Մեկն. ղևտ.* խայծիլ *«խաղողի հասունանալով գոյն ստանալ սկսիլը, սև ու կարմիր բծեր առնել» Ամովս. Թ. 13.* խայծուած *«խաղողի կարմրիլը» Թուղց ժգ. 21.* նոռախայծ *Յայտմ.* պղղախայծ *Ովս. ժգ. 9. որից էլ հետզհետէ զարգանալով՝* խայծեցուցանել *«հասունացնել» Լմբ. սղ. նաև գուռ.* խայծ *ՁԹ. «առաջին անգամ հասած պռուղը, նուբար», խայծողիկ Ալշ. «մի տեսակ միջատ,* staphylis*» (հմմտ. ծիրանեհասուկ միջատը),* խէծ *բնկնել կամ* խէծել *երև. «պռուղը հասնիլ սկսիլ».—2. «չորս կողմը պատող սպիների մէջ մարդուր մնացած մի կտոր տեղ՝ մարմնի վրայ» Բուզ. և. 44. Եղիշ. ը.—3. սրանից էլ փոխաբերաբար բխում է սակաւութեան, նուազութեան գաղափարը, որից ունինք գուռ.* խայծ *(Հմշ.* խած *մը) «մի քիչ, փոքր ինչ». ինչ.* խած *մը հող.—4. «պատառ», որից Կր.* խազ *«մի պատառ (միս, ահալ, խորոված են)», երկուսի միջին տեղն է բռնում Ալշ.* խէծ *«արտում անվար մնացած մի կտոր հող».—5. «մսի փոքր կտոր, որ իբր ձկան կեր՝ կարթի ծայրն են անց կացնում» Բրս. մրկ. որ և* խէծ *Տաթև. ամ. 70 (երկիցս). որից* խայծկեր *«խայծ ուտող» Վրդն. սղ. ճժէ. էչ 389 (իբր զմեղու խածկերք՝ որ զայլոյ վաստակս ծծեն. տպ.* խածկեր. *ՆՀԲ դնում է* խայծկեր*):*

=*Բնիկ հայ բառ՝ հնխ.* khaid- *արմատից, որի վրայ ավելի ընդարձակ տե՛ս* խայտ:—*Աճ.*

ՆՀԲ խանճ, խանձ *բառի հետ: Տէրվիշ.* Altarm. *29 և Նախալ. էչ 111* խայծ *«ձըկան կեր» բառը* խածի *և* խածանել *ձեւերի հետ=սանս.* khād *«ծամել» են, իսկ* խայծիլ*=սանս.* čand *«փայլիլ». լտ.* candere *և հյ.* շանք: *Հինք.* խածանել *բայից* խայծ, *իսկ Մառ.* Грам.

др.-арм. *42* խայծ-ից խածանել: Scheftelowitz BB *28, 312* և *29, 55* նոյն ընդ խածանել, *անս.* khādya *են:*

+ **ԽԱՅԾԱՂ** *«աղանձ». կայ միայն գաւառականների մէջ՝ խածաղ, խէծաղ ձևերով և «աղանձած ցորեն» նշանակութեամբ. որից էլ խայծղել «աղանձել, բովել (ցորեն, սուրճ, սիսեռ են)»:*

=Բնիկ հայ բառ՝ հնխ. khaid- *արմատից. մասնիկի համար համմ.* խանդ-աղ-ատաճիկ, կեն-ց-աղ, կախ-աղ-ան, յ-ապ-աղ-իլ *են. աւելի ընդարձակ տե՛ս* խայտ: — *Ա՛ճ.*

Գիմ.—Ախց. խէծաղ, *Մշ.* խէձաղ, *Սբ.* խածաղ *«աղանձ»:—Սեբ.* խածղել *«բովել, աղանձել».—Սեբ.* խածղիլ *«հունձքը հասնելով կարմրիլ»:*

ԽԱՅԾՂԱՆ *տե՛ս* խայտաղան:

+ **ԽԱՅՏ** *«խաւտուտիկ, պիսակաւոր» Ծն. լ. 33. որից* խայտուց *«պիսակաւոր նշաններ» Երմ. ժգ. 23.* խայտացուցանել *«պիսակաւոր գարձնել» Պզատ. տիմ.* խայտաբղէտ *Փիլ. ել. Նիւս. երգ.* խայտաբղետութիւն *(գրուած* խայտապղետութիւն*) «բորոտութիւնից յառաջացած պիսակ» Ոսկ. Հռոմ. 361.* խայտախարիւ *ՍԳր. Եփր. ծն. էջ 95.* խայտանկար *Վրդն. սղ.* խայտապիսակ *Զքր. կթ. խչ. Եփր. աւետ.* գոբշախայտ *ՍԳր.* գեղեցկախայտուց *Խոր. աշխ.* կաւմրախայտ *Մագ.* խայտումատ *Շնորհ. առ. 60.* խայտապատառ *Շնորհ. առ. 81.* խայտութիւն *Լամատ.* խայտել *«նկարել» Վստկ. 73.* խայտակն *«աչքի մէջ՝ սպիտակուցի վրայ բիծ կամ նշան ունեցողը» Խոր. Ա. 11.* խայտաճամուկ *(նոր բառ)*: Խայտ նշանակում է նաև պարզապէս *«նշան»* և այս իմաստից են՝ խայտուած *Միխ. առ. Օրբել. Մաշտ. ջահկ.* խայտատակ *«նշաւակ ծաղրի, առականաց նշան» ՍԳր.* խայտատակամաճ *Ագաթ.* խայտատակաճիկ *ՍԳր. Ոսկ. Ագաթ. Կոչ.* խայտատակել *ՍԳր. Եզն.—գրուած նաև* խայտատակել *Անան. ժմնկ. 72:*

=Բնիկ հայ բառ՝ հնխ. khaid- *արմատից. համմ. սանս.* kētú- *«լոյս, պայծառութիւն, ճառագայթ, բոց, ջահ, երևոյթ, օդերևոյթ, ճանաչելու մի նշան, պատկեր»,* čitrá- *«փայլուն»,* զնդ. čiθra- *«փայլուն, պայծառ», լտ.* caelum *«երկինք»?,* caesius *«ճաղար (աչք)»,* caesullae *«ճաղարաչուխ», հիսլ.* heitr *«տաք»,* heiδ *«պայծառ երկինք»,* heiðr *«պայծառ», հհիւս.* hiti *«տաքութիւն»,* hitna *«տաքանալ», հբգ.* heitar *«պայծառ»,* heiz *«տաք», գերմ.* heiss *«տաք»,* heizen *«տաքացնել»,* heiter *«պայծառ, ուրախ», գոթ.* heitō *«ջերմուտեանդ», լիթ.* kaitaū, kaistù, kaĩsti *«տաքանալ»,* kaĩtinti *«տաքացնել»,* kaitulỹs *«քրտինք»,* kaiĩtrùs *«տաքութիւն տուող»,* kaitra *«կիզիչ տաքութիւն, խարոյկ»,* skaidrùs, skáistas, skaistùs *«փայլուն, պայծառ», լեթթ.* skaidrs *«պայծառ»,* kàistu, kàišu, kàist *«այրել»,* kaisls *«ուրախութեան մէջ խայտացող» են (*Walde *107, 110,* Trautmann *113,* Kluge *212,* Pokorny *1, 327,* Berneker 122): *Այս բոլորի հնխ. արմատն է* (s)qait-, (s)qaid-, *որի նշանակութիւնն է «լոյս, փայլիլ, երևալ, տաք, այրել»: Հայերէնի մէջ սրան համապատասխան ունինք նախ* խայտ, *որից* խայտալ, տ–ծ *ձայների փոխանակութեամբ՝* խայծ, *որից* խայծաղ: *Նշանակութեան կողմից՝* խայտ *համապատասխանում է սանս. «նշան, երևոյթ» իմաստներին,* խայտալ = *գերմ.* heiter *«ուրախ», լեթթ.* kaisls *«ուրախութեան մէջ խայտացող»,* խայծաղ *«աղանձ, խարկած ցորեն» = լեթթ.* kàist *«այրել» են:—Ա՛ճ.*

Նշ՛ր, Պատկ. Изслед. *էջ 15 և* Bugge KZ *32, 47,* IF *1, 450 իրար հետ լծորդ են դնում* խայծ *և* խայտ: *Տէրվ.* Altarm. *27* խայտ, խայտալ, խայտուցք, խայտառակ *համեմատում է սանս.* skand, *լտ.* scando *«վեր վազել, վեր բարձրանալ» ձևերի հետ: Մորթման* ZDMG *26, 588 բեեռ.* khaitiani = *հայ.* խայտ: Scheftelowitz BB *29, 31* խայտ *և* խայծ = *հնխ.* khaidyo-:

Գիմ.—Մշ. խէդ *«խաղողի խայծ» (օր. խաղող խէդ ընկեր է),* խէդել *«խաղողի խայծիլ, հասունանալու մօտ կարմրիլ», Շիր.* խէտ, *Չթ.* խոդ *«խաւտուտիկ, գոյնզգոյն»,—նոր բառեր են՝* խայտիւ *Սվ. «խայտուցք»,* խայտիլ *Սվ. «վրան գոյնզգոյն գարդեր շինել»,* խատխատած *Վն. «նախշուն»,* խատուտ *Ակն.* խատուտիկ *Ակն. (=Ախց.* խատուտիկ, *Սեբ.*

խադուդիզ), խատուլիկ *Տր.* «գոյնզգոյն, սիրուն», խեռուկշուաճիկ *ՋԹ.* «նարօտ»։

ՓՈԽ.—Ուս. xaytarak «խայտառակ»։

+ԽԱՅՏ «ուրախութիւն, ցնծութիւն». արմատ առանձին անգործածական, որից խայտալ «ցնծալ, կայտռել» *ՍԳր. Ոսկ. մ. բ. 25.* խայտանք «ցնծութիւն, հրճուանք» *Բրս. գոհ.* խայտալից *Մաշտ.* խայտախնդութիւն *Տօնակ.* լացախայտալ *Նեղոս.* խայտամաճ «գժուելով մեռնող» *Կղնկտ. Հրտր. էմ. էջ 130.* խայտումն *Եղիշ. մկրտ. գրուած է նաև ճայտալ։*

=*Բնիկ հայ բառ՝ հնխ.* khaid- *արմատից, որի վրայ ընդարձակ տե՛ս* խայտ։—*Աճ.*

Տէրվ. տե՛ս խայծ։ *Հիւնք.* գայթ, գութ, կայտռել *են ձևերի հետ։ Դաւիանցեան, Տեղեկ. գիտ. ինստիտուտի, 2, 96 վրաց.* խլտոմա «ցատկռտել» *բառի հետ։*

ԽԱՅՏ, ի *հլ.* շէնքի վերարկեալ անստոյգ նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Գանձարանում. վկայութիւնը *տե՛ս* խալարակայի *բառի տակ։*

ԽԱՅՏԱՂԱՆ «դեղ». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած *Տիմոթ. կուզ, էջ 281* «Մի՞ խայտաղան ոչ է ի Գաղաադ և կամ բժիշկ ո՞չ է անդ». *(Համմ. Երեմ. ը. 22* «Միթէ դեղ ո՞չ գոյզէ ի Գաղաադ կամ բժիշկ ո՞չ կայցէ անդ»)։ Բուն իմաստն է «ռետին, խէժ» (իբրև վէրքի բալասան և կամ սպեղանի). և այս իմաստով կապւում է *մհյ.* խայծդան *բառի հետ, որ նշանակում է «մի տեսակ ձիւթ կամ խեժ» Վստկ. 146, 197, 210, 217.* «կտաւատի թանձր ձէթ» *Վստկ. 223. (ԳԴ՝ Վստկ. 246 համարում է «goudron, խաթրան», ինչպէս ընդունում են նաև նոր բառարանները)։ Սրանից է խայծելաճի ծառ «տճկ. դաթրան աղաճի» ըստ Սեբ. (Հիւս. § 990 և էջ 678.—արդեօք ուղղելի խայծդաճի՞)։ Երկուսի միջին ձևն ունի Հին բռ.* խատղան «որպէս ռետին, դեղ վիրի կամ կաւրան, գաթրան կամ մաղթ, մալէզ» *(տե՛ս ՆՀԲ յաւել.)* կամ *Բառ. երեմ. էջ 137* խայտխան՝ նոյն նշ։ Ըստ այսմ խայծդան *բառի էլ հին ձևն է* *խայծաղան<խայտաղան։

ՆՀԲ կասկածով խայծդան *մեկնում է «խանձած լաթ՝ որ վէրքի վրայ են կապում». բայց սրան բոլորովին հակառակ է Վստկ. 197, որ յայտնի կերպով ասում է թէ «ռատինէճդ ի Ռուսու ծովեզերէն ելանէ. դերդ խայծդան է»։*

ԽԱՅՏԱՌԱԿ *տե՛ս* խայտ։

ԳԻՒՐ.—Ոզմ. Մրզ. խայտառակ. *Վն.* խախ։-խայտառակ, *Ննխ.* խայտառագ, *ՋԹ.* խայդառոգ։

ԽԱՅՐԱԼԻ «գոհութիւն». *ունի միայն Բառ. երեմ. էջ 137։*

ԽԱՅՐԻ *(-րւոյ, -րեաց)* «բերք, պտուղ՝ իբրև ընծայ մատուցանելու» *Պիտ. Նիւս. երդ. Բէրդ. խչ.* «առաջին պտուղ, նուրբար» *Տիմոթ. կուզ, էջ 78, 103, 231, 235. Կնիք հաւ. էջ 360.* որից Երախայրիք *ՍԳր.* աՆխայրի «անպտուղ, ապերախտ» *Սարկ. տոմ.* դառնախայրի *ՋԹ.* խայրաբեր «պտղաբեր» *ՀՀԹ.* նախախայրիք *(նոր գրականում)։*

Հիւնք. հին պրս. խիր *(!) և Բրք. (իմա՛ արաբ.)* խայըր «բարի»։

ԽԱՆ, ի. հլ. «ափսէ, սինի» ՍԳր. որից խանակիր «գլխի վրայ սեղանով կամ սինիով բան տանող» *Նիւս. կազմ. գրուած* խոն «սեղան» *Բառ. երեմ. էջ 144։*

=*Պհլ.* *xuān «սեղան» ձևից, որ հաստատւում են պրս.* خوان xuān *(նոր հնչումով* xān *և* xōn*) «սեղան», քրդ.* kān «սեղան պատրաստելու», *աֆղան.* xvān, *բելուճ.* v'ān «սկաւառակ, ափսէ». այս ձևերը ըստ Galdner, Studien *1, 17 և* Horn, Grdr. *էջ 116 ծագում են զնդ.* xvaini- «գորգ, ծածկոց, ծածկոյթ» *բառից։ Հայերէնում նոյն բառը ներկայանում է նաև* խօն, խուն *ձևերով, որոնցից կազմուած են* խօնասէր, խունաւագութիւն *(տե՛ս այս բառերը)։—Աճ.*

Աւգերեան, Բցտր. չփ. և կշռ. էջ 94 յն. χανοῦν «սակառ» *բառից։ ՆՀԲ սրա հետ նաև լտ.* canistrum, *հյ.* սան, *Բրք.* սինի, սաճան, *Եբր.* սալ, *Բրք.* սէլէ։ *Հիւնք.* χανοῦν։ *Ուղիղ մեկնեց նախ Աճառ. (անտիպ), որից անկախաբար Թիրեաքեան, Արիահայ բռ. 178 (գրում է* خان xān, *որ սխալ է)։*

ԳԻՒՐ.—Լ. Ղզ. խան «ցորենի մի տեսակ չափ է», *Խոջ.* խան «հաց թրելու տաշտ». *Ագլ.* խուն «սեղան»։

*ԽԱՆ «իջևան, օթևան» Խոր. Բ. 46։

=Պհլ. xān «քարվանսարա», պրս. خان xān «տուն, իջևան, կայարան». Արևելքում շատ տարածուած մի բառ է։ Horn § 465 հանում է khan- «փորել» արմատից։—Հիւբշ. 158։

Ուղիղ մեկնից նախ ՆՀՌ։

ԽԱՆ «իշխան» տե՛ս Ղան։

ԽԱՆ. անստոյգ բառ. գտնւում է հետևեալ տեղերում. «Իբև զխան ինչ զանց արարեալ անարգագոյն» Ածաբ. մկրտ. «խան կարել, որ զկարուակէ նշանակէ» Երզն. և Նշ. քեր։—ՆՀՌ մեկնում է «փշրանք, նշխարեալ կոտոր, և կոտորակ կամ կապերտ ինչ»։ Առաջին վկայութեան համար ասում է նաև թէ «կարծի դրեալ և խրան, իբր ոմկ. խրընքը, գըրընքը, կտորտանք»։ ՋՌ մեկնում է խան «փըշրանք (հացի)»։

ԽԱՆԱՌԱՐ «մեծ տուն»? նորագիւտ բառ, որ 4 անգամ գործածուած եմ գտնում ԺԴ և ԺԴ դարի արձանագրութեանց մէջ. «Փնդուկն ի քաղաքիս, հայրենի բաղնիսն ու միլն ի մոդանիս, խանապարն կուղպակնովն ու կամարակապ փնդուկն...». «Պապենց խանաբարն չորս դանգն» (Արձ. 1215 թ. Վիմ. տար. 59). «ի խանապարին ներքի դեհն 2 հուճրա» (Արձ. 1274 թ. Վիմ. տար. էջ 117). «ի գտակմէջ կարոցի խանապրի դռանն դիմաց» (Արձ. 1348 թ. Վիմ. տար. 169)։

ԽԱՆԱԹ. նշանակութեամբ անյայտ բառ. մէկ անգամ գործածուած է Ոսկ. մ. թ. 28. «Զգնայր ուրեք հետի, զի մի՛ ի խանաթ անկեալ՝ զհետ երթայցեն. այլ ի նաւ մտանէ»։ Յոյն բնագրի մէջ կայ միայն «զի մի՛ հետեւեսցին», որով հայ թարգմանչի յաւելուածը անհասկանալի է մնում։ ՆՀՌ մեկնում է «հետք, ճանապարհ ցամաքի, կամ փոյթ, խայրէթ, ջանք», ԱՌ «ճամբայ կամ միատեղ երթալը». ՋՌ չունի։

*ԽԱՆԱԶԻՐԱՆ «խոզք հիւանդութիւնը». գիտէ միայն Քաջունի, հտ. Գ. էջ 95 բ։

=Արաբ. خنازير xanāzīr «խոզեր», որ خنزير xinzīr «խոզ» բառի յոգնակին է։—Աճ.

ԽԱՆԳԱՐ (գրուած նաև խանկար) «շփոթութիւն, խռովութիւն, կռիւ» Ոսկ. մ. գ. 6. Բուզ. «աւերեալ, եղծուած» Ոսկ. մ. ա. 11. որից խանգարել «եղծել, ապականել» Ժգ. է. 14. Գ. Թագ. ժը. 18. Ոսկ. մ. ա. 15, բ. 8. միջին հյ. խանգրել «թշնամուն յաղթել» Սամ. անեց. 128. խանգրիլ «յաղթուիլ» Անսիզք 61. խանգարիչ Գ. Թագ. ժը. 17. խանգարումն Դիոն. երկն. 36խ. դիւախանգարիլ «այսահարիլ» Ոսկ. մ. ա. 18. անխանգար Փիլ. լին։

Աճառ. Նորք 1925, № 5, էջ 393 յիշում է կամիս. xūnik «վնասել, աւրել»։

ԴԻՌ.—Երև. խանգարէլ, ՋԹ. խանգ'արիլ, Ոզմ. խանգ'ըրիլ «խանգարել», Ռ. խանգըրէլ «խառնշտորել, տակնուվրայ անել», Մշկ. Ք. խանգար «չեփած, չհասած, հում կամ խակ», Մշ. խանգար «մթագնած, մըրիկ սկսելու մօտ (երկինք)».—Նոյն բառն է Ախց. Կր. Խրր. խանգռիլ, Ալշ. Մշ. խանգրիլ, Պլ. խանգղրուիլ, խպղռիլ, խաղռիլ, ՋԹ. խանգղրըլ, Ռ. խաղռիլ, Ակն. Սեբ. խաղռիլ «գոյնը այնպէս աւրուիլ՝ որ լուացուելով չմաքրուի».—սրանից էլ փոխաբերաբար՝ Նախ. «բնութիւնը վատանալ», Եւդ. «հիւանդութիւնից կատարելապէս չապաքինիլ, հետքը վրան մընալ»։—Թրքախօս հայերից՝ Ասն. խանգրէլ օլմաք «շորը կրակից մրկիլ» (Արևելք 1888 նոյ. 8—9) որի հետ նոյն է և Բառ. երեմ. 204 մանիր «խանգարեալ»։

+ԽԱՆԴ, ի, ո հլ. «սրտի ուժգին բերմունք սիրով, գութով, նախանձով և ուրիշ կիրքով» Խոր. Ձքր. կԹ. որից խանդ առնել «յանդիմանել» Ոսկ. երր. խանդակաթ Երգ. բ. 5. խանդալ «նախանձիլ, նախանձից այրիլ» Ոսկ. մ. և երր. խանդաձ «նախանձ» Ոսկ. յհ. բ. 27. խանդագուցանել Օրբել. խանդութիւն Ոսկ. մ. գ. 14. խանդել «նեղել, խռովել, չարչրկել» Բրս. սղ. խանդի առնել «տրտմեցնել» ԱՌ. խանդեղութիւն «գրգռեալ չափազանցութիւն» Սոկր. եկեղ. պտմ. էջ 11 (նորագիւտ բառ). խանդավառ, խանդավառութիւն, խանդոտ, խանդոտիլ, խանդոտութիւն (նոր բառեր)։ Արմատի տարբեր գրչութիւնն է **խաճ**. որից խանտ «խանձեալ ի մեղս, գարշելի, խայտառակ» Ոսկ. երր. էջ 514. խանտալ «նախանձով վառիլ» Ոսկ. մ. ա. 7. բ. 9. 14. խանտաձ «նախանձ» Փիլ. «բորբոքումն ցանկութեան» Հին. խանտաւորու-

բիւն «նախանձ», Ոսկ. մ. գ. 25. Սեբեր. խանտածութիւն «նախանձ» ԱԲ. խանտացուցիչ «նախանձելի» Անկ. Գիրք. Հին կտ. 189։—Այս արմատից է բխում -ադ մասնիկով **խանդադ-** (Հմմտ. կնց-ադ, յաշ-ադ-իլ, յապ-ադ-իլ, կախ-ադ-ան), որից խանդադակաթ «խանդակաթ» Ոսկ. եփես. խանդադանիւ «գորով» Շնորհ. ոտ. բարձր. խանդադական Վրք. հց. և եթէ սոյգ է՝ խանդադեալ «նեղեալ, կարօտեալ» Բառ. հբեմ. էջ 138.—սրա վրայ ածականալով -ատ մասնիկը՝ **խանդադաց** (Հմմտ. խարշ-ատ-ել, ճր-ատ), առանձին գործածուած գիտէ ԱԲ՝ «գորովական, գորովալից» նշանակութեամբ, որից խանդադատիլ «սիրտը գորովիլ» Եզ. բ. 6. Գ. մակ. ե. 27. «Թախանձել, պաղատիլ» Մանդ. Մամբր. խանդադատութիւն Բուզ. խանդադատագին Մանդ. խանդադատանիւ Խոր. Պիտ. Մանդ. չխանդադատանիւ Եփր. խոստ. ևն։ Այս նոյն արմատի հետ զուգորդ է **խանձ** (նաև գրուած խանճ) «այրուած բանի հոտ» Ոսկ. ես. «Հրդեհ» Սմբ. դատ. 173 «բռնկցնելու նիւթ, խանձելիք» Վրդն. դան. ժր. էջ 279. Սամ. անեց. 125. «ձուկ բռնելու խայծ» Կոչ. 214. Եւագր. որից էլ խանձիլ «սաստիկ փափագիլ, մոլիլ, վատ սովորութիւն՝ ունակութիւն անել» Ոսկ. ա. տիմ. Եւագր. «տուփիլ» ՅՀ. իմ. էջ 27. Կանոն. էջ 140. խանձել «այրել» Ագաթ. Կորիւն. «գաղել, խարանել» Կանոն. էջ 68. խանձական «մոլեալ, իրարու տափացած» Կանոն. էջ 65. խանձեցուցանել «իրեն քաշել, մոլիլ տալ» Օր. իր. 21. «հրապուրել, որսալ» Մագ. թղ. 206, 123. խանձոց «ձկան խայծ» Եղիշ. տիր. 335, 338. գիշախանձ Կոչ. 107. առիւնախանձ Եղիշ. Պիտ. մարդախանձ Եզեկ. ժթ. 3, 6, Բուզ. նրախանձ Ոսկիփ. (դ—ձ կամ տ—ծ յարաբերութեան համար Հմմտ. խեղդել—հեղձնուկ, խայծ—խայտ, պիղծ—պղտոր ևն)։ Բառ. հբեմ. էջ 138 գիտէ և խանձել «սովորիլ», խանձ «սովոր», էջ 146 խոանձեալ «սովորեալ»։ Նոյն խանձ արմատից յառաջացած ձևեր են՝ **խանճառ** «կրակի կայծ» (Նորագիւտ բառ) Վստկ. 13 (Տեսանես զկրակն իբրև զխանձառ մարգարտապէս հեղուիլ). «ածուխի կտոր» Մագ. թղ. 70 (Հմմտ. գուռ. խանգար «ածուխի կտոր, մճիր»).—**խանճառ** «այրած» ԱԲ. որից խանճառել «այրել, տոչորել» Բ. մակ. գ. 11. Դան. գ. 94.—**խանճող** «կիսայրեաց փայտ, երտ» ՍԳր. եփր. թգ. 434. «Հրաբուխի լաւա» Արիստ. աշխ. էլ. արիստ. 16. որից խանճողանալ Վրդն. լս. 61. խանճողիլ «այրիլ» Շար։—**խանճիր** «խանձի հոտ, մուխ, մուր» Ոսկ. եփես. 859 (չունի ՆՀԲ), որից խանճրաճոտ Ագաթ. խանճրաճոտեալ Վստկ. խանճրաճամ, խանճրաճամութիւն Վստկ։—Վերջապէս այստեղ է պատկանում նաև **խազ** «մոլեալ», որի վրայ տես առանձին։

=Բնիկ հայ բառ՝ հնխ. khŗd կամ qŗd- արմատից, որի հիմնական նշանակութիւնն է «վառել, բորբոքել, փայլիլ». Հմմտ. սանս. čand-, çčand- «լուսաւորել», čandrá- «լուսաւոր, փայլուն, լուսին», čandana- «ճանդան փայտը», յն. κάνδαρος «ածուխ», ալբան. hanə, hənə «լուսին», լտ. candeo «փայլիլ, սպիտակ պայծառութեամբ ցոլալ, այրիլ, վառիլ, կրակի կարմիր գոյնն առանալ, բարկութեամբ բորբոքիլ», candela «ջահ» (>կանթեղ), candor «պայծառ սպիտակութիւն, փայլ, գեղեցկութիւն, կիզիչ տաքութիւն, ոճի պայծառութիւն, անմեղութիւն, առաքինութիւն, ազնուութիւն», candidus «սպիտակ, պայծառ, գեղեցիկ, վճիտ, մաքուր, բարեբարոյ, անկեղծ», candidatus «որ սպիտակ է հագնուած, թեկնածու, կանդիդատ (այսպէս կոչուած իրենց հագած սպիտակ հագուստի պատճառաւ)», candidatio «լուացարարութիւն», candidarius pistor «սպիտակ հաց թխող հացթուխ», ac-cendo «վառել, այրել, լուսաւորել, բոցավառել, առանդը գրգռել», incendo «այրել, փայլեցնել, գրգռել, դրդել, զայրացնել, վշտացնել, խունկ ծխել, մի որևէ փափագով՝ ցանկութեամբ վառուիլ, խանդավառուիլ, կատաղի կրքով բորբոքել», incendium «հրդեհ», կիմր. cann «սպիտակ», cynneu «վառել», բրըտ. cann «լրացեալ լուսին», condud, connud «վառելափայտ», որոնք տալիս են հնխ. qend-, sqend- արմատը (Walde 121, Boisacq 405, Pokorny 1, 352, Ernout-Meillet 138): Հայերէնի մէջ վերջաձայն դ և ձ՝

նախորդ ընգականի պատճառով են։ Մեր բառերի հետ իմաստով բոլորովին նոյնանում են լտ. candeo, incendo. յատկապէս համմտ. խանդել «նեղել, չարչարել»=լտ. incendo «վշտացնել», խանձ «հրդեհ»=լտ. incendium «հրդեհ», խանձող «կիսավառ փայտ»=բրըտ. condud «վառելափայտ», խանձառ «ածուխի կտոր»=յն. κάνδαρος «ածուխ», որ մինչև մասնիկը նոյն է հայերէնի հետ։—

ՆՀԲ խանդ և խանձ լծորդ է դնում։ Böttich. ZDMG 1850, 356 և Arica 80, 336 սանս. kānti, յն. κονδάς, χάρις = հյ. խանդ։ Տէրվ. Altarm. 29 և Նախալ. 111 գիլա-խանձ, խանճոտալ կամ խանդալ կցում է խածանել բառին՝ որ տես. իսկ խանձել, խանձել, խանձառել, խանձոդ՝ սանս. čand, sčand «վառիլ», čandana- «լուսին», յն. κάνδαρος «ածուխ», լտ. incendo, candere են ձևերի հետ հնխ. skad, skand «վառել, այրել» արմատից։ (Վերի ձևով մեկնութիւնը իմն է, բայց առաջին ուղիղ մեկնիչն է Տէրվ.)։ Հիւնք. խանձ հանում է նախանձ-ից, իսկ խանդ, խանդալ, խանդաղատիլ, խանճոտալ հանում է խնդալ բառից։ Bugge KZ 32, 42 խանդ կցում է հսլ. choštą, chŭtěti «ուզել», լեհ. chęć «փափագ», ռուս. хотить «ուզել» բառերի հետ. իսկ խանձ կցում է գերմ. sengen. անգլ. singe «այրել» բառերին. խանձառանամ են բառերի r-ի դէմ՝ շատ պատշաճ է գտնում նորվեգ. sengra «խանձրահոտիլ»։ Meillet MSL 9, 153 և 10, 140 ընդունում է յիշեալ մեկնութիւնը՝ աւելացնելով նաև խինդ, խնդալ, խնդիր բառերը։ Հիւբշ. IF Anz. 10, 47 ընդունում է խանդ=հսլ. xŭtěti համեմատութիւնը։ Մ. Ս. Դաւիթ-Բէկ, Յուշարձ. 397 խանդ և խինդ ձևերի հետ է կցում իսլ. sant «փափագ», հբրըտ. aruanta, արմորիկ. c'hoant «տենչանք, իղձ»։ Pedersen KZ 38, 388 և 40, 178 ընդունում է Meillet-ի մեկնութիւնը։ Berneker 399 հերքում և չի ընդունում, որովհետև սլաւական ձևերի արմատն է chot-, chŭt-, առանց ընգականի. իսկ լեհերէնի և այլ սլաւական լեզուների մէջ երևան եկած ընգային chęt- ձևը չհաւոյ յառաջացած երևոյթ է։ Petersson, Ar. u. Arm. Stud. 110 խանձ միացնում է յն. κάχρυς «աղանձ» բառին։

*ԽԱՆԴԱԿ (ի–ա հլ. ըստ ՆՀԲ, թէև առանց վկայութեան) «խրամ, փոս (յատկապէս պարիսպների առաջ փորուած փոսը)» Ասող. 179. Նշ. եղեկ. Վրք. և վկ. Ա. 346. Ուռհ. 62, 159. Մարթին. որից խանդակել «փոս, խրամ շինել» Մարթին. ոամկաբար խէնտէկ Վասկ. 10, որից խէնտէկել Վասկ. 136։

=Արաբ. خندق xandaq «խրամ, փոս», որից փոխառեալ են նաև դնչ. handako, բրբ. hendek «փոս, խրամ», արաբերէն բառն էլ ծագում է պրս. kanda>ֆանդակ «փորուած» բառից և ըստ կամուս, բրբ. բրգմ. Բ. 898՝ յատկապէս պարիսպների շուրջը փորուած խրամն է։—Հիւբշ. 267։

Ուղիղ մեկնից նախ ՆՀԲ, որից յետոյ Lag. Gesam. Abhd. 298։

ԽԱՆԴԱԿ «խանագործ». ունի միայն Բռ. երեմ. էջ 138. իմա «սեղան շինո՞ղ»։

ԽԱՆԴԱԿԵԼ «կռել». ունի միայն Բառ. երեմ. էջ 137։

ԽԱՆԴԱՂ «անծանօթ մի բոյս է» Կամրկ. ունի միայն ՀԲուս. § 991. թերևս նոյն է Մշ. խանտոխ բուսանուան հետ։

+**ԽԱՆԴԱՂԱՏԻԼ** տե՛ս խանդ։

***ԽԱՆԴԱՐԵԿ** կամ **ԽԱՆԴԱՐԻԱ** «մի տեսակ բոյս. լտ. cichorium intybus, վայրի եղերդակ» Բժշ. Ամիրտ. ունի միայն ՀԲուս. § 992։

=Անշուշտ փոխառեալ բառ է և նոյն է արաբ. قنطارون qanṭārūn կամ قنطاريون qanṭāriyūn «տերեփուկ, ֆր. centauré, լտ. centaurea serotina Bor.» բառի հետ։ Այս վերջինը՝ ըստ Տիրացուեան, Contributo § 559 պատկանում է ճիշտ նոյն տեսակին (compositae բաղադրեալը), ինչ որ cichorium intybus L (Տիրացուեան, § 568)։—Աճ.

ԽԱՆԴՈՒՄԱՆԴ տե՛ս Ադամանդ։

***ԽԱՆԹԱՐ** կամ **ՂԱՆԹԱՐ** «կենդինար, մի տեսակ քաշ է» Վրք. հց. Ա. 223. ունի միայն ԱԲ։

=Արաբ. قنطار qanṭār, որի Թուրքական արտասանութիւնն է ղantar «կենդինար». արար. բառը ծագում է յն. κεντηνάριον այս էլ լտ. centenarium ձևից, որ բուն նշանակում է «հարիւրանոց». հին փոխառութեամբ յունարէնից ունինք կենդինար. տե՛ս այս բառը. հմմտ. նաև խանսար:—Աճ.

*ԽԱՆԹԻՓԱՐ «զուիրակի ցեղից մի տեսակ բոյս. դեղուկ, կրետաբոյս, լտ. dictamnus creticus» Գաղիան։

=Քաթարերէն բառ է, ինչպէս վկայում են հները. այսպէս՝ «Այս խոտին Թաթարն խանդէբար ասէ» Ամիրտ. Թաթարն խանդէպար ըրի (Զեռ. Պարիզի մատ. թ. 245, էջ 147—172)։—Աճ.

Բառիս մասին ընդարձակ բանասիրական տեղեկութիւններ ունի Վ. Թորգոմեան, Կոչնակ 1922, էջ 20—21, ուր և հարց է տրւում թէ արդեօք կապ ունի՞ խանդ, խիճ բառերի հետ (Այս պարագային կարելի էր մայր ձևը համարել պրս. xandabar «խնդաքեր, ծիծաղ բերող», բայց այսպիսի բառ չունի ԳԴ, ինչպէս որ Թաթարական բառարաններում մէջ էլ չկայ վերոյիշեալ ԹԹր. խանդեպար օրին)։ Նոյն բառի մասին մի լուրջ յօդուած ունի նաև Արթինեան, անդ, էջ 587—8։

ԽԱՆԹՈՒՌ «ծոպ». մէկ անգամ ունի Մաշտ. ջահկ. ուրիշ վկայութիւն չկայ։

+ԽԱՆՁ տե՛ս խանդ։

ԳԻՒՂ.—Ալշ. խանձել, երև. Ննխ. Պլ. Ռ. խանձել, Ախց. Կր. խանձէլ, Սեբ. խանձէլ, Խրբ. Շմ. Վն. Տփ. խանձիլ, Ագլ. խա՛նձիլ, Սալ. խանձէ՛լ, խանձիլ, Տիգ. խոնձէլ, Գոր. Ղրբ. խոնձիլ, Ջղ. խնձել, Ակն. խանձիլ, խօնձիլ, Համշ. խօնձուշ, Թրքախօս Հայերից՝ Առն. խանձէլ օլմամ «բուրդը կամ մետաքսը կրակից մրկիլ» (Արևելք 1888, նոյ. 8—9)։—խանձիր ձևից են գալիս՝ Մշ. Սլմ. խանձրել, Մրղ. խանձրէլ, Մկ. խանձրիլ «բուրդ, մազ են մրկիլ», Խրբ. խանձրմիլ, Տփ. խրնձրահա՛մի, Ոզմ. խանձրմխամ, Սլմ. խանձրխամ, Ագլ. խնձրմ՛նում, Ղրբ. խնձրնո՛նամ, Տփ. խնձրահուտ, Գոր. խնձրմո՛հօտ, Շմ. խրնձրմահօտ, Դվ. խնձրվիլ, Բբ. խանձրնմիլ։—Ալշ. խանձուր «այրած շոր՝ որ վէրքի վրայ են դնում՝ իբրև սպեղանի»,—խանձող ձևից են գալիս՝ խանձողակոթ, խանձողամայր, խանձողատ (վերջինը -ատ մասնիկով, ճիշտ ինչպէս ունինք խանդողատ)։ Նոր բառեր են խանձիլ «մրկած շոր», խանձման, խանձմնձորել, խանձոխորով, կամ կրճատ՝ խնձմանձել, խնձմնձահոտ, խնձմնձորել, խնձմնձորիկ։

ՓՈԽ.—Վրաց ხანძარი խանձարի «լեռան՝ մացառուտի մէջ հրդեհ» (հմմտ. հյ. խանձատ «կայծ»). քրդ. خزرک xəzruk «խանձի հոտ» (ըստ Justi, Dict. Kurde էջ 155), Թրք. գւռ. Կր. xanzar «խանձ, խանձ» (Բիւր. 1898, 627)։

ԽԱՆՁԱԼ «պանծալ, պարծիլ, մեծաբանել». ունի միայն ՀՀԲ, որի հետ նոյն է խանծալ «պանծալ» Բառ. երևմ. 138։

*ԽԱՆՁԱՐՈՒԻ, ո հլ. «մանկիկի բալուլ» ՍԳր. Ադաթ. որից խանձարրել Ոսկ. ծն. Բննիկ. Պղատ. օրին. խանձարրապատ Ձեր. կթ. ծն. Գնձ. Բննիկ. Պրպմ. խանձարրապատիլ ՅՀ. իմ. երև. խանձարրատր Եփր. տնրնդ. 38։

=Ասոր. ܥܙܘܪܐ ʿazrūrā «խանձարուր», որ ծագում է ܥܙܪ ʿəzīr «փաթաթել» արմատից։—Հիւբշ. 517։

Ուղիղ մեկնեց նախ Lag. Götting. Nachrichten (ՀԱ 1889, 159), որ կասկածելի էր գտնում Հիւբշ. Arm. Gram. 517, բայց յետոյ IF Գ, էջ 478 (Թրգմ. ՀԱ 1907, 251) ընդունեց։ Հիմնք. խանձ, խանձիլ բառից։

*ԽԱՆՈՒԹ, ի հլ. (գրուած նաև հանուր Ոսկ. ես. 419) «կրպակ, մթերանոց» Նար. պատմ. Ոսկ. փիլ. և ես. 419. և մ. բ. Ադաթ. «մթերուած բան, դէզ» Ղև. լէ. 155. որից խանութապան Ոսկիփ. Շնորհ.=խանութպան Ձեր. սարկ. Բ. 31. խանութայի Յայտմ. փոխաբերութեամբ ասւում է՝ խանութի պէսց «ծովի խորագոյն խորշերը» Բէլող. կուս։

=Ասոր. ܚܢܘܬܐ xānūθā «խանութ», որից փոխառեալ է նաև արաբ. حانوت ḫānūt նոյն նշ.—Հիւբշ. 304։

Նախ ՆՀԲ դրաւ արաբերէնից։—Lag. Psalterii versio memphitica 155 ասոր.

xānūϑ, լտ. canaba, *որից էլ գերմ.* Kneipe *«հասարակ գինետուն»։* Karolides, Γλ. σσγχρ. *100 հայերէնը փոխառեալ է դնում կապադովկ.* χανοῦτε *«քարուանշի մուրճ» բառից! որ հանում է առնս.* han *«զարնել, սպանել» արմատից։*

Գիմ.—Ալշ. Ախց. Երև. Զթ. Խրբ. Կր. Հճ. Պլ. Ռ. Սեբ. Սչ. խաճուր, *Ոզմ.* խաճօր, *Ասլ.* խըճիւր, խըճիւ*, *Ննխ.* խաճուր, խաճր *(Զալթըր գիւղում* խամուր!), *Հմշ.* խօճուր.—*նոր բառեր են* խաճուրաաէր, խաճուրշէմ, խաճուրուր։

⊙ԽԱՆԶԵԼ *«պռռալ, զռալ» Յոբ. ղ. 5. Ագաթ. Ոսկ. եփես. 806. որից* խանչիւն *Սիր. դտ. էջ 333.* խանչռումն *Մագ. Վրդն. ծն. առաջին «պռռալ, բղաւել, գռռալ» իմաստից յառաջացած է «հպարտանալ, փքուիլ, ամբարտաւանիլ» նշանակութիւնը. այսպէս՝* խանչանալ *«հպարտանալ» Նիւս. երգ. Իրեն. հերձ. 156.* գեռախանչ *«ամբարտաւան» Փիլ. Կալիսթ. 174. Վանակ. յոբ.* խանչումն *«փքուիլը, ուռիլը» Նիւս. կազմ. Փիլ. (նաև «յղութեան ուռեցքը՞» Ոսկ. ածած. տպ. Ոսկ. պօղ. բ. 631). Հմմտ.* խնջել՝ *նոյնպիսի կըրկին նշանակութիւններով.—նորագիւտ բառ է՝* խանչաձայնել *Արիստիդ. 20։*

=Բնաձայն բառ, որ ն և չ յօդակապերով ձևացած է իւ պարզ ձայնից. հմմտ. խնչել, խխնջել, խոխոջել *են։—Աճ.*

Այվազեան, Ուղղագր. էջ 43 լծ. հյ.

կանչել։ *Հիւնք. գոչել բայից։ Վերի մեկնութիւնս հրատր. ՀԱ. 1899, 203բ։*

Գիմ.—Ալշ. խանչել *«կանչել, կոչել», Բլ.* խանչ *«գոչիւն, ցաւի աղաղակ»* խանչել *«կանչել», Տր. «սիրտը կսկծացնել», Ղրբ.* խանչխանչ գալ, խրնչրխա՛րավ, խնչխանչել *«սաստիկ լալ, կողկողել», նաև* խանչուփո՛թոթ *Գնձ. «այրիլ, մորմոքիլ»։ Ըստ Ամատունի, Հայոց բառ ու բան, էջ 265՝* խանչել *երև. «օձի և կարիճի խայթելը. 2. կծու խօսքերով վիրաւորել»։*

*ԽԱՆՍԱՐ *«կենդինար» Վրք. Հց։*

=Արաբ. قنصار qansar *«կենդինար» (Կամուս, թրք. Բրդմ. Բ. 89). սրա աւելի տարաձուած ձևն է* قنطار qanṭar, *որի վրայ աւելի ընդարձակ տե՛ս* խանթար։—*Աճ.*

ՆՀԲ խանթար *բառի ռամկական ձևն է կարծում։*

*ԽԱՆՏԱԼԱՅ *«մլուկ, փայտոջիլ» Բժշ.*

=Թթր. Yılancı qandala *«մլուկ» (*Будаговъ *2, 66), որից փոխառեալ են նաև կումիկ.* kandala, *չիչեն.* gandluy, *ղափս.* kandelay *«մլուկ»։—Աճ.*

Գիմ.—Ննխ. խանդալա։

ԽԱՆՏԱԽՈՒՇ *«մի տեսակ անստոյգ բոյս է» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 3328։—Նոյն համարի տակ ՀԲուս. ունի նաև* **խաճտուշ** *անստոյգ բոյսը. արդեօք այս երկուսը նոյն չե՞ն. հմմտ. Մշոյ բարբառով* խաճտող, խաճտոխ, խաճտուկ, խաճտիտող, խաճդիտակ, *որոնք զանազան բուսանուններ են. ղ և շ տառաձևերի շփոթութեամբ կարող էր խաճտող բառը հեշտութեամբ խաճտուշ դառնալ։*

ԽԱՆՓՈՒԼ *«հրէական հագուստի վրայ քղանցքից կախուած մի մաս». նորագիւտ բառ՝ որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Բրս. մրկ. 199 «կայնեն, ասէ, զդրապանակս և երկայնեն զքղանցս հանդերձիցդեն։ Եւ զի՞նչ են սոքա. զի տեսէք մոռանային զԱստուծոյ երախտիսն, ասաց դրել ի գիրս փորունս զսքանչելիսն և կախել զքազկացն, որպէս այժմ բազում կանայք աւետարանակս կախեն զպարանոցաց։ Նոյն է և քղանցքն։ Զի որպէս բազումք չուանով կապեն զմատն, զի յայն հայեցեալ՝ յիշեսցեն գորմէ չոգանն, նոյնպէս և Աստուած՝ իբրև մանկտուց՝ հրամայեաց շուրջ զստորոտովն խանփուլն կախել, զի յայն հայեցեալ՝ յիշեսցեն, թէ զքառասուն ամ յանապատին ո՛չ մաշեցան հանդերձք մեր, այլ և աճեցին ըստ հասակին. և կոչէին զայն՝ քղանցք»։*

ԽԱՇ *տե՛ս* խարշ։

ԽԱՇ *«խոռն, մի տեսակ վայրի դաղձ, mentha pulegium L» Գաղիան. (ՀԲուս. ունի նաև* խաշդն *ձևը)։*

Գիմ.—Նո՞յն է արդեօք Մշ. խաշմ *«մի տեսակ վայրի բանջար, որ պաներն մէջ են դնում»։*

ՆՀԲ խաշ *համարում է «լուտդեղ կամ* խաշնդեղ*». վերի ձևով են դնում*

Նորայր, Բառ. ֆր. 937 բ և ՀԲուս։ Պատահական նմանութիւն ունի պրս. خاش xāš *«չիւղ»։*

ԽԱՇԱՐ. *նշանակութեամբ անստոյգ բառ. մէկ անգամ գործածում է Բուզ. Դ. 8 «եւ ետ Հրաման թագաւորն զօրավարին հանել խաշար յաշխարհէն բագում և բերել զվայրենի կաղին մայրեաց և տնկել»։ ՆՀԲ մեկնում է «խարձ, յն. χάραξ, տունկ ի պէտս ցանգոյ կամ պատնէշի, ցից են», ՋԲ «տնկելի շառաւիղ ծառոյ կամ ցից», ԱԲ «խարձ, թուփ՝ ցանգ շինելու ցից». ՀԲուս. § 998 «Թուփ թէ խարձի կամ ցախի տեսակ է»։ Այս բոլորը ի նկատի ունին անշուշտ Արդ. Խոջ. խաշար՝ որ նշանակում է «բարակ ձող՝ որ մտցնող բոյսերի կողքին են տնկում, որպէս զի վրան փաթաթուին ու բարձրանան». սրա հետ էլ նոյն են վրաց. ხაშარი խաշարի «նեցուկ, ցից», լազ. խաշարի «կաշի քաշելու գաւազան» (Արրա. 1911, 420)։ Այսպէսով վերի հատուածի միտքն այն է լինում, որ թագաւորը հրամայել է «ծառերի ձողեր կտրել և բերել տնկել»։—Բայց հատուածը այնպէս է կազմուած (հանել խաշար յաշխարհէն և բերել զվայրենի կաղին), որ յայտնի երևում է թէ խօսքը ո՛չ թէ ձողերի մասին է, այլ «մարդկանց բազմութեան, հասարակ գիւղացի մշակների»։ Այսպէս է հասկանում նաև Մառ, ЗВО 20, 116 և մեկնում է «խումբ, ամբոխ»։—Տես և խոշոր։*

ԽԱՇԸՐ *«դերի կամ պատանդ», նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Յիշատ. 1401 Թուից (հրատ. Դիւան ժ. էջ 15). «Տէր Զաքարէն խաշըր տարաւ (Նարեկ աղօթագիրքը), ես Սիմէօն վարդապետս 30 թանկայ տուի ու թափեցի»։*

***ԽԱՇԽԱՇ** *«մեկոն.* papaver, *ռ.* макъ» *Մխ. առակ. Բժշ. Վստկ. 96, 165. (գրուած է և խաժխաժ, ինչպէս յիշում է ՀԲուս. § 962, որ և հաստատւում է արդի գաւառական ձևերով).—իբրև խաշխաշի տեսակներ յիշուած են խաշխաշի զապտի «փրփրոտ խաշխաշ, pavot écumeux» Ամիրտ. (=ՀԲուս. § 1002) և խաշխաշ նարիվիա «վայրի խաշխա՞շ» Ամիրտ. (=ՀԲուս. § 1003)։*

=Պրս. خشخاش xašxāš, *որից փոխառեալ են նաև արաբ.* xašxāš *(Կամուս, Թրք. Թրգմ. Բ. 327), Թրք. քրդ.* xašxaš, *վրաց.* ხაშხაში *խաշխաշի, բոլորն էլ նոյն նշ։ Ըստ* Pictet *1, 295 պրս. բառը ծագում է սանս.* खस्खस khaskhasa *համանիշից (Böhtlingk 2, 609)։—Խաշխաշի զապտի ձևի համապատասխանն է արաբ.* خشخاش زبدی xašxaš-i zabdī *(տե՛ս* Steinschneider WZKM *12, 16 հաւաքածոյքը)։—Հիւբշ. 267։*

Ուղիղ մեկնից նախ Böttich. Arica 74, *201, յետոյ* Lag. Urgesch. *832 են։*

ԳԻՒ.—Ալշ. Ախց. Ասլ. Գոր. Երև. Ղրբ. Շմ. Պլ. Սեբ. Տփ. **խաշխաշ**, *Մշ.* **խաշխժուգ**, *Ոզմ. Ջղ.* **խաժխաժ**, *Սլմ.* **խոժխոժ**.—*Նոր բառեր են* **խաշխաշ** *Ախք. «կարմրազարդ», խաշխաշաֆար Ղրբ. «խաշխաշը տրորելու քար»։*

ԽԱՇԽԱՇԵԼ *«եղծ զեղծ ինչ գործել». ունի միայն Բառ. Երեմ. էջ 138։*

ԽԱՇՆ, ն *հլ. (-շին, -շինք, -շանց) «ոչխարի և կամ այծի հօտ» ՍԳր. Ագաթ. որից* **խաշնադարման** *Մն. խգ. 32, 34.* **խաշնասիրութիւն** *Մծբ.* **խաշնարած** *Մն. դ. 20.* **խաշնարուն** *Մծբ.* **խաշնաւէտ** *Վեցօր.* **խաշնդեղ** *Բժշ.* **խաշնտես** *«հովիւ» նորագիւտ Բ. մնաց. ժդ. 15.* **խաշնաճաւ** *(նոր գրականի մէջ) են։*

Հիւնք. հանում է իշխան բառից։ Pedersen*-ի մեկնութիւնը ընդարձակ տե՛ս խոյ բառի տակ։* Patrubány *ՀԱ. 1910, 93 հնխ.* seqā *«կտրել»+*k'éuo *«ուխլ» արմատներից։*

+ԽԱՉ, ի *հլ. «մահապարտներին վրան կախելու փայտ, որ եղաւ յետոյ նշան Քրիստոնէութեան, փխբ. վիշտ, չարչարանք» ՍԳր. եփր. եվր. Ել. Կիւրղ. ծն. ևն. որից* **խաչական** *Բուզ. Ագաթ.* **խաչակիր** *Ագաթ. Կորիւն.* **խաչակից** *Հռ. գ. 6. Ագաթ.* **խաչել** *ՍԳր. Ագաթ.* **խաչելութիւն** *եզն.* **խաչամաճ** *Ոսկ. յհ. ա. 9.* **խաչաճաճու** *Ագաթ.* **խաչափայտ** *Ա. պետր. բ. 24. Կիւրղ. Ել.* **խաչապատ** *«եկեղեցպան» Սեբ. 82 (նորագիւտ բառ),* **խաչխ** *«քառուղի» Վրդ. առ. 124. առանց յօդակապի՝* **խաչճաճու** *Եփր. Երր.* **խաչկրօճ** *Մագ.* **խաչվերաց** *Խոսր.*

ևն.—նոր գրականի մէջ ունինք խաչարձան, խաչքար ևն. գրուած է նաև խէչ (ըստ Մառ ЗВО 20, 15)՝ 1281 թուի մի արձանագրութեան մէջ, խայչ՝ Անիի ԺԲ—ԺԳ դարի մի արձանագրութեան մէջ (Մառ, Христ. Вост. I (1912), էջ 238) և Օձունի ԺԳ դարի մի արձանագրութեան մէջ (Աշխ. Քալանթար, Христ. Вост. II (1913), էջ 151)։ Նախապէս նշանակում էր «փայտ, ցից», իմաստի նոյնպիսի զարգացում են կրած և յն. σταυρός «ցից. 2. մահապարտի ցից. 3. խաչ», σκόλοψ «սրածայր փայտ, ցից, յիսունաքար՝ խաչ», պրս. دار darū «ծառ, փայտ», մանրքէական գրուածներում «խաչ», որից էլ بدارکردن ba-dār kardan «խաչել», ասոր. ܩܘܣܐ qausā «ծառ, փայտ, խաչ» գոթ. kal-ga, հանդ. gealga և հհիւս. galgi «կախաղան, խաչ»=արևմտ. հհիւս. gelgja «կոճղ, գերան», հանգլ. rōd «խաչ»=անգլ. rod «ճիպոտ, գաւազան», արևմտ. հհիւս. róða «խաչ» և «ձող»։ Ըստ այսմ հյ. խաչ կապւում է խոշ. խէչ «փայտ, ցից» բառերի հետ և նրանց ձայնդարձն է։

=Ինիկ հայ բառ՝ հնխ. khet- «փայտ» արմատից, որ պահում է միայն պրս. خادا xāda «ճիւղ ծառոյ, որ իցէ բուսեալ երկայն և ուղիղ. 2. երկայն փայտն նաւավարաց, որով վարեն զնաւն. 3. երկայն փայտն, յորոյ ծայրըն ունի հաստատեալ՝ աւելն. 4. երկայն փայտն կախաղանին» (չունի Horn)։ Պրս. բառը գալիս է khāt ձևից (պրս. x<հնխ. kh ձայնափոխութեան համար համմտ. xāyīdan «ուտել»=սանս. khād, պրս. xāra «քար»=սանս. khara- «կարծր» ևն)։ Հայերէնն խաչ ենթադրում է հնխ. khaty- և իր ձայնդարձներով դնում է khet- արմատը։

Ուղիղ մեկնեց նախ ՆՀՔ։ Lag. Arm. Stud. § 968 պրս. xāǰ, որ սակայն՝ բառ Հիւրշ. 158՝ փոխառեալ է հայերէնից։ Հինք. խեց բառից։ Müller WZKM 7(1893), 380 կասկածով երբ. עץ ʿēṣ «ծառ, կոճղ» բառի հետ։ Patrubány ՀՈ. 1908, 275 լտ. secāre «կտրել» բային ցեղակից։ Մառ ЗВО 20 (1911), 113—6 իբր յաբեթական կցում է երբ. עץ ʿēṣ «ծառ, փայտ», արաբ. عصا áṣā «գաւազան», եթովպ. ዕፅ ʿəṣ, արամ. אע ā՝ կամ ʾā, ʾaq, վրաց. ხე խե «ծառ», խեշ-ա-կալի «կեռ փայտ», ხეჩა խ'եչա «փայտ կոտրել», լազ. խաչկեթի, խաչարի «խեչակ» և հյ. խեշ բառերի հետ։ Ջնտզեան, ՀՈ. 1926, 95 ասոր. խուղշ «սուրբ» բառից. (բայց խուղշ չէ, այլ ըստ Brockelm. Lex. syr. 313 բ ܩܘܕܫܐ qūdšā)։ Աղբալեան ՀՈ. 1926, 266 մերժում է այս մեկնութիւնը և բառը միացնում է գոթ. խէչ, խէչակ, խըչմար ձևերին։ Վերի ձևով ստուգաբանեց Lidén ՀՈ. 1927, 766, բայց միայն խաչ ձևով։ Անուշադիր է դնուած խեչ, խէչ և խոչ ձայնդարձների վրայ։

Գիմ.—Ախց. Գոր. Երև. Խրբ. Կր. Հճ. Համշ. Կրբ. Մկ. Ննխ. Շմ. Ոզմ. Պլ. Ջղ. Ռ. Սեբ. Սչ. Վն. խաչ, Ասլ. խաչ, խաչ, Տփ. խաչ «խաչ», խէչ «Ս. պատկեր», ԶԹ. Մրղ. Սլմ. Տիգ. խաչ (սեռ. ԶԹ. խէչի), Այն. խէչ (Բիւր. 1900, 671), Ալշ. Մշ. խաճ, Ագլ. խօչ.—Համշ. խաչ նշանակում է նաև «եկեղեցի», Ակն. ԶԹ. «աստղի մի անուն», Ախց. Երև. «խաղաթղթի մէջ ✝ նշանը»։ Նոր բառեր են անխաչ, խաչագող, խաչալեմ, խաչաճամբոյր, խաչասող, խաչաւոր, խաչդուռ, խաչեղբայր, խաչբուռ, խաչերկաթ, խաչկապ, խաչմերուկ, խաչնել, խաչփակ, խաչփուճջ, խաչլու (=Սչ. խաչլու) «կնքահայր», խաչլումայր (=խաչլումար) «կնքամայր» ևն։

Փոխ.—Պհլ. 𐭧𐭥𐭩 (Müller WZKM 7, 380), պրս. خاج xāǰ կամ خاچ xāč «խաչ», خاچ اشوران xāčašūrān «խաչապուաչ» (Մառ ЗВО 20, 15), ուս. խաչ, խաչնայ «խաչ» խաչահեսուն «մկրտել», խաչահեցի «մկրտութիւն», խաչբաբա «կնքահայր», խաչնաիու «կնքամայր», ավար. խանճ «խաչ», քրդ. خاچ xač «խաչ», ՔՔր. (Կիրգիզ. և Կազանի) قاچ qač, قچی qači «խաչ» (Будаговъ 1, 524), թրք. خاچ xač կամ حاچ hač «խաչ», خاچواری xačvari «խաչաձև», خاچ ایتمك xač itmek «կնքել», خاچلامق xačlamaq «խաչել», որից خاچلامش xač-

lanmaš «խաչեցնալ» (Будаговъ անդ), գուռ. թրք. Եւդ. خچوك xečüg «խաչուկ, գիւղական տների առիքներին խաչաձև դրուած գերան», خچورکت xečürget «խաչերկաթ» (միւսների, ինչպէս և ռուս. кочергá և այլ ոլաւական ձևերի մասին տե՛ս երկար բառի տակ), արաբ. գուռ. Սղերդի xač «խաչ», xačkuk «մետաքսից բանուած նարօտ կամ պատկ, որ քահանան փետի կրծքի վրայ է կապում խաչաձև» (Բիւր. 1899, 116), վրաց. ხეჩახჩეჩი խեչախպերի «խաչեղբայր» (Զուբինով[2], էջ 1741)։ Ուտ. խաչկալ «խաչկալ», խաչվար «խաչվառ», խաչվարաշալ «խաչվառակիր», խաչփարազ «խաչապաշտ», խաչաֆրեփսուն «խաչօրհնէք».—իսկ խաչտեսուն «մկրտել» են բառերը հատանաբար ծագած են ուտ. խաչ «լոյս» բառից և կապ չունին խաչի հետ։

ԽԱՉԵՆԵԱԿ (կամ խաչեճակ) «ինչ որ անծանօթ արու չորքոտանի». յիշուած է հոմանիշների մի շարքի մէջ՝ հետևեալ ձևով. «Աբականքն, որպիսի՝ եզն, եղջերու, խաչենեակ, խոյ և այլ այսպիսիք», Մագ. քեր. 240 և երգն. քեր։

*ԽԱՉԱՂ «հացագործ» Վրդն. առակ. 200. Միխ. առ. էջ 80 (տպուած է սխալմամբ խապաղ)։

=Արաբ. خبّاز xabbāz «հացագործ», որ ծագում է خبز xubz «հաց» բառից. սրանից են փոխառեալ նաև վրաց. ხაბაზი խաբազի, քրդ. xabbaz, xabbas «հացագործ»։—Հիւրշ. 268։

Ուղիղ մեկնեց նախ ՆՀՒ։

ԽԱՉԱԼԱՆ «անծանօթ մի բոյս է» Կամրկպ. ունի միայն ՀԲուս. § 1005։

ԽԱՉՈՒՆ «կամար». մէկ անգամ գործածուած է խապուճայարկ բարդի մէջ. «Ամրոց բազմակամարակապ և խապունայարկ» Մարեին. առանձին պահուած է Զարեանճագի դաւառականում խապուն ձևով և «կամար, խամարակապ? նշանակութեամբ. համմտ. Հայկունի, Մօքոս, էջ 12 և 19 հետևեալ հատուածները. «Քար որ ձգեցիր, կէս սահաթ կը զնկրտայ, ինչպէս խապուն եղած տեղը կը ձենոտի։ Շուտով մի շինեց ջրի վրայ խապուն շենք մի... չինած կամարին գլուխն մի մեծ օդա շինեց»։ (Հայկունի չէ յիշած բառիս նշանակութիւնը, բայց վերջին ստորագծեալ բառից իմացւում է՝ որ նշանակում է «կամար»)։

ՆՀՒ խապունայարկ մեկնում է «գմբեթայարկ կամ նման գմբեթի փոսան»։

ԽԱՊՏԵԼ «այրել». գիտէ միայն Բառ. Երեմ. էջ 138։

*ԽԱՌ կամ ԽԱՐ «փուշ կամ փշոտ թուփ». որից խառի պտուղ «փշոտ թփերի պտուղ, ինչպէս ծոր, շնխաղող են» Գաղիան։

=Պրս. خار xār, պհլ. xār «փուշ»։—Հիւրշ. 269։

Ուղիղ մեկնեց նախ ՆՀՒ (բայց դնում է նաև լծ. հյ. կառ), յետոյ Պատկ. Матер. I. 10։

ԽԱՌ «ոլորում, ոլորք». արմատ առանձին անգործածական. երևան է գալիս հետևեալ բառերի մէջ.—խառամանել կամ խառմանել «մանել, հիւսել» Վրդն. սղ. ճժր (էջ 401 տպ. խառնամանեալ). խառան «չուան» Ագաթ. Ոսկ. բ. տիմ. 209. խառանել «չուանով կապել» Ոսկ. մ. ա. 20. բ. 26. խառանաձիգ «չուանով քաշած» Գ. մակ. գ. 7. խառխառոտ «գալարաձև, ոլորուն (սիւն)» Երզն. ժ. խոր. էջ 9 ա (չունի ՆՀՒ). խառնել «անասունի գլուխը ոլորելով փրցնել» Ղևտ. ա. 15. է. 8. խառատել «ոլորելով՝ քաշկռտելով փրցնել, ծամծմել» Ոսկ. գծ. 62. Տօնակ. խառատումն Յհ. կթ. 265. խառեալ «միջատ», որ և միջախառ «միջատ». երկուսն էլ Վեցօր. էջ 175 (տպագրում խառնեալք, միջախառն, այսպէս ուղղել ըստ Ս. Վ. Նազարէթեանի ձեռագրի. տե՛ս Պատկեր 1893, էջ 284)։

ՆՀՒ կար բառի հե՞տ։ Justi, Zendsp. 79 գնդ. kar «կտրել», պրս. kirnidan: Հիւնք. էջ 65՝ յառել բայից։ Karst, Յուշարձան 401, 404 սումեր. g'ar «շրջանակաձև, շրջափակ, կապել, շղթայ, դօտի»։ Թիրեաքեան, Արիահայ բռ. 179 պրս. خار xār «փուշ» բառից։

ԳԻՒ.—Բլ. Մշ. խառան, ՋԹ. խառըն «չուանով փայտ՝ որ անասունների վզին են կապում»։

*ԽԱՌԹՈՒԹ կամ ԽԱՐԹՈՒԹ «մի տեսակ

սև թութ» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 1014 և յաւել։

=Պրս. خرتوت xartut *«է տեսակ իմն թթոյ, որ յոյժ վտիտ և անհամ լինի» (իբրև* xar *«էշ»+*tūt *«թութ» բառերից, որով* xartūt *բուն «իշաթութ»). սրանից է փոխառնալ նաև վրաց.* ხართუთა խարթութա *«սև թութ»։—Աճ.*

Ուղիղ մեկնեց նախ Աճառ. (անտիպ), նոյնը յետոյ անկախաբար Նորայր ՀԱ 1924, 550։

Գիւմ.—Երև. խա՛ռթուր, *Տփ.* խա՛րթուր, *Ղրբ.* խառթօր *«մի տեսակ խոշոր և ընտիր թութ»։*

ԽԱՒՌՆ, *ի հլ. «խառնուած, բաղադրեալ, ո՛չ պարզ» Դան. բ. 43. 36. ժթ. 39. եգն. Ագաթ. «հասարակ, սովորական, պարզ» Ոսկ. յհ. ա. 11, 12. «խառնակ, պիղծ» Հռ. ժգ. 13. «միասին, իրար հետ» ՍԳր. Եւս. քր. «զուգաւորութիւն» (անեզական գործածութեամբ) Կոչ. Ոսկ. կող. և մթ. Սերբ. Կիւրղ. ծն. Ագաթ. եգն. (իմաստի զարգացման համար հմմտ. արաբ.* خلاّ xilāt *«խառնուիլ. 2. անասունների զուգաւորութիւն» Կամուս, Բրբ. Բրգմ. Բ. էջ 469). որից* խառնել *«իրարու խառնել, բաղադրել. 2. դինի լցնել. 3. միացնել. 4. իրար կցել. 5. մխել, վարել, առաջ քշել. 6. սիրով միանալ. 7. բանակներն իրար ընդհարուիլ» ՍԳր. Ոսկ. Բուզ. եգն. Ագաթ.* խառնելիք *«թակոյկ» Ել. իդ. 6. Առակ. Բ. 3. «Հրաբուխի բերան» Արիստ. աշխ. Նոնն. «զևկի չուաներ» Գծ. իէ. 40.* խառնաբանջար *Եւս. պտմ.* խառնագնաց *եզևկ. ժը. 10. Ոսկ. Բուզ.* խառնախուժ *Եւագր.* խառնակ *ՍԳր.* խառնակել *ՍԳր.* խառնակեաց *Եւագր.* խառնաղաղջ *ՍԳր. Վեցօր. Ոսկ. Կորիւն.* խառնիճ *«ամբոխ» Մխ. այրիվ. 41.* խառնամառն *Կոչ.* խառնարան *Առակ. Բ. 2.* խառնուած. *եգն. Վեցօր.* գիրկընդխառն *Եւս. քր.* ընդխառնել *Գ. Թագ. ի. 29.* երկախառնել *Կորիւն.* ոգեխառնել *Ա. եզր. դ. 21.* դիւցախառն *Ագաթ.* գիշերախառն *ՍԳր. են (–խառն ձևով բարդութեանց ամբողջ ցանկը տե՛ս ՀԱ 1924, 350—59). Նոր բառեր են* խառնակիչ, խառնակչութիւն, խառնակեցութիւն, խառնաշփոր, խառնաշփոթութիւն *են։—Արմատիս երկրորդ ձևն է (իբրև նրա ձայնդարձը)* **խուռն**, *ն հլ. (սեռ.* խռան*) «ամբոխ, խառն բազմութիւն» Դ. Թագ. է. 17. Եւս. քր. «շատութիւն» Բ. մակ. բ. 25. «խիտ» Ագաթ. «խռնեալ ամբոխով» Մրկ. ղ. 33. որից* խըռնել *ՍԳր. Ոսկ.* խուռնըռնալ *Ոսկ. յհ. ա. 1.* խառնիխուռն *Իմ. ժղ. 25. եգն. Սերբ. Եւս. քր.* բազմախուռն *Ագաթ. Կորիւն.* բանձրախուռն, *Ագաթ. Բուզ.* միախուռն *Երեմ. ա. 15. ի. 10.* ի խուռն ի խուռն *Ոսկ. մ. բ. 6 են։*

ՆշՔ յն. χεραννόω *և Բրբ.* qarəšdərmaq *«խառնել»։* Windisch. 8 *յն.* χεράννυμι; Böttich. ZDMG *1850, 356,* Arica 45, 20, Lag. Urgesch. 252 *սանս.* kṛ, *յն.* χερᾶν, χεράννυμι, κιρνάναι *«խառնել»։* Müller, Kuhns u. Schleich. Beitr. *5, 256* խուռն=*լիթ.* krūvà *«կոյտ, բազմութեամբ»,* kruvóms *«բազմութեամբ, խուռն», որ կրկնում է նաև* Bugge KZ 19, 420: Lag. Arm. Stud. *§ 971* խառնել *բառի դէմ կասկածով դնում է պրս.* xarman *«կալ»։ Պատկ.* Изслед. *էջ 9 սանս.* kar *և յն.* κίρνημι*։ Նոյնը նաև* Bopp, *Համմտ. քերակ. Գ. 105։* Justi, Dict. Kurde *էջ 339 քրդ.* kilan *«ողողել, ցօղուել» ձևի դէմ դնում է սանս.* kṛ *և հյ.* խառնել: Thomaschek SWAW 1893, 63, *Բրգմ. ՀԱ* 1894, 19 *հյ.* խառնաբան *ձևի հետ համեմատում է Թրակ.* χαρναβῶν *անունը։ Հինք. Բրբ.* qarəšdərmaq *(սրա հինն է արևել. Բրբ.* قرماق qar-maq *«խառնել»)։* Patrubány SA *1, 195 յն.* χεράννυμι, *իսկ ՀԱ 1908, 314 հնխ.* kheyā *«խօսիլ» արմատից։*

Գիւմ.—Ալշ. Մշ. Զղ. Սլմ. Սչ. Վն. խառնել, *Ախց. Գոր. Երև. Կր. Ղրբ. Մրղ. Ննխ. Պլ. Ռ. Սեր. Տիգ.* խառնէլ, *Ասլ.* խառնէ՝լ, *Զթ. Խրբ. Մկ. Շմ. Ոզմ.* խառնիլ, *Հմշ.* խառնուշ, *Հճ.* խարնել, *Տփ.* խա՛րնիլ, *Ագլ.* հա՛ռնիլ.—*Նոր բառեր են՝* խառնիչ, բոնիրխառնի, խառնրխտել, խառնշտել, խառշտկել, խառնշտկել, խռնշտռռել, խառնռտել, խառնտել, խառուիմ, ուռխախառն, խառուիմատ, սիրտխառնուիմ *են։ Թրքախօս հայոց մէջ՝ Բրբ.* lemek *բայակերտ մասնիկով աճած՝* խառնէլլէմէք *«խառնել» Առն. (Արևելք 1883 նոյ՛ 8—9)։*

ՓՈԽ.—Ատանայի Թուրքերն ու յոյները տեղացի հայերից փոխ առնելով ունին xarnič *«հերիսայ և խառնելու Թիանման մի գործիք, խառնիչ» (Արևելք 1888, նոյ" 8—9)։*

ԽԱՌՆԻՃ, ի–ա *հլ. «մի տեսակ մանր մորեխ» Սղ. ժդ. 34. Վրդն սղ. Նար. 176. Արծր. (ըստ Հայբուսակ § 1015 նշանակում է նաև «մարուխ», այս բանը յառաջացած է անշուշտ* մառախ *և* մառուխ *բառերի նմանութիւնից շփոթուելով)։*

Հիւնք. էջ 323 պրս. xōranda *«ուտող» բառից (համմտ. հյ.* ուտիճ*), իսկ էջ 114 պրս.* xarak *«մի տեսակ մորեխ»։*

***ԽԱՌՆՈՒՊ** *«այծեղջիւր պտուղը» Բժշ. ունի միայն Հիւս. § 1018 և* Rivola, *Բառ. հայոց 1633, էջ 105։*

=Արաբ. خَرْنُوب xarnūb *նոյն նշ։*

Ուղիղ մեկնեց Հիւս. անդ։

⊙ԽԱՌՆՉԵԼ *«իշու զոալը» Վրդն. առ. էջ 175. «արջի ձայն հանելը» Ա՚Ր. որ և* խառանշել *«զոալ» Վրդ. առ. 17։*

=Բնաձայն բառ, որ գալիս է խ ձայնից, ո գործածութիւնով և ն, շ յօդակապերով. համմտ. խանչել *«զոալ»։—Աճ.*

ԳԻՒ.—Սրև. խառանչէլ *«ցաւից ու կսկիծից աղեկտուր ձայնով բղաւել», Ղզ. Շմ.* խռանչիլ *«զոալ»։*

ԽԱՌՈՒՂ. *անստոյգ բառ. մէկ անգամ ունի Լմբ. ժբ. մարգ. էջ 19 (ովս. գ. 1). «Կտաւըս չամչեղէնս... բայց Եբրայեցին խառուղ խաղողոյ ասէ, այսինքն խորշակահար»։ Ակնարկուած հատուածի մէջ Եբրայեցին ունի* אֶשְׁשֵׁי ʾəšīšē, עֲנָבִים ʿənāʾīm *«կարկանդակ խաղողոյ» (այսինքն՝ խաղողի հիւթով պատրաստուած մի խմորեղէն)։ Եթէ հետևինք Եբրայականին, խառուղ բառի իմաստը կլինի «կարկանդակ», բայց եթէ նկատի առնենք Լամբրոնացու բացատրութիւնը, ինչպէս պէտք է, կնշանակէ «խորշակահար»։ Ըստ այսմ էլ Բառ. երեմ. 140 դնում է* խառուխ *և* խառուկ *«խորշակահար»։*

ՆՀԲ մեկնում է «խարհալ պտուղ, չորացեալ և իրրու չամիչ եղեալ» կամ «եփոյ ի խաղողոյ, որպէս ռուփ, խիւս, կտաւ», որով ուզում է հանել խարեղ *բայից։ ՋԲ «չամիչ կամ քաղցրաւենի ի չորացեալ հիւթոյ խաղողոյ, որպիսի է կտաւ չամչեղէն»։ Պատահական նմանութիւն ունի եբր.* חָרוּל xārūl *«փշոտ Թուփ, մացառ, եղիճ»։*

***ԽԱՍԱՊ** *«Թոք». նորագիւտ բառ, որ երկու անգամ գտնում եմ գործածուած հետևեալ հատուածներում. «Կաղամբդ Թոքացաւի և ամենայն ցաւոց որ ի խառապն լինի ընծայեալ՝ օգտէ» Վստկ. 162. «Խառապն և ճրագուն». Սմբ. դատ. 60։*

=Արաբ. قصب qaṣab *«շնչափող, Թոքերի ցնցուղները» (Կամուս, Բրբ. Բրգմ. Ա. 232)։—Աճ.*

Ըստ Վաստակոց գրոց հրատարակչի «բառ արաբ.»։

ԳԻՒ.—Հճ. խասոր *«Թոք, լեարդ» (ըստ որում Բրբ.* جگر jiger *(=պրս.) նշանակում է Թէ՛ Թոք և Թէ՛ լեարդ. այս երկուսը գոյներով միայն զանազանւում են)։*

***ԽԱՍԱՊԱՐԻՐԻ** *«շաւառ եղէգն» Վստկ. էջ 109։*

=Արաբ. قصب الضريرة qaṣab-ul-ḍarīra *«սփանց եղէգ»։*

Ուղիղ մեկնեց Վաստակոց գրոց հրատարակիչը, էջ 246։

***ԽԱՍՍ** *«հեղուկների մի տեսակ չափ» Վստկ. 50 «Լծվար մի այգին գճ ճառայ (կարաս) գինի կու տայ և ճառայն է խգ խաստ»։*

=Արաբ. قسط qisṭ *(բայց կարելի է կարդալ նաև* qasṭ*) «մի տեսակ չափ է, որ* صاع ṣāʿ *կոչուած չափի կէսն է. սրանով երբեմն աբդաստ են առնում» (Կամուս, Բրբ. Բրգմ. Բ. 503)։—Աճ.*

Վաստակոց գրոց հրատարակիչը, էջ 14 համարում է յն. Խեստ բառի արաբ. տառադարձութիւնից։

***ԽԱՍՍ** *«պահանջքի գումարի մնացորդը» Անսիզք 71 (Թէ վարձվորն չվճարէ ի լման ի տանն ի տէրն, նա կարէ գրաւկնել համարձակ զվարձվորն և գիր վարձուն զխաստն վճարուիլ). «վճարը ուշացրած օրերի փոխարէն տրուած գումարը» Սմբ. դատ. 151. «վնասի փոխարէն վճարած գումարը» Սմբ. դատ. 203։*

=Արաբ. قسط qist «բաժին, մաս, սեփական բաժին, մասնակի վճարում». տճկ. աստում է يوم قسط «qəst el-yelem, «մի պաշտօնեայի բացակայած օրերի ամսավճարը վերջել». վերջին նշանակութիւնը չգիտէ Կամուս, Բրք. Թրմ. Բ. 503, բայց ունին Պետրոս Զէքի Օսմ. բառարան և Արիկեան, Ընդ. բառ. տճկ.-Հյ. 1892, էջ 452։

Ուղիղ մեկնեց Ս. Մովսիսեան (նամակ 1933 մարտ)։

ԽԱՍՐՏԻ «յօժարաբար, մտադրութեամբ, ուսումնաբար, studio». դիտէ միայն Ներսէսովիչ, Բառ. լտ.-Հյ. էջ 512 բ։

=Թուի թէ վրիպակ է և պէտք է կարդալ խասսի=արաբ. قصدى qaṣdī «դիտմամբ, մտադրութեամբ»։—Աճ.

*ԽԱՏ «զարդ, զարդանկար». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած 1215 թ. մի արձանագրութեան մէջ. «Պատկերագործ խատերով զարդարեալ ոսկով և արծաթով». (տ. Վիմ. տար. էջ 58)։ Նոյն է խաջ. խատկել «նախշել», վն. խատխրտած «նախշուն, զարդարուն»։

=Վրաց. ხატი խատի «պատկեր, նկար»։—Աճ.

ԽԱՏԱՏ «անծանօթ մի բոյս է» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 1019։

Կայ արաբ. خادعة الرجال xād'atur-rijāl «փշատ» (տես Steinschneider-ի հաւաքածոն, WZKM 11, 18)։

ԽԱՏԱՐ տե՛ս Խալար։

ԽԱՏԽԱՒ «առիւծախոտ, orobanche» Վստկ. էջ 23. ունի միայն ՀԲուս. § 1020։

ԽԱՏՂԱՆ տե՛ս Խայտաղան։

+ԽԱՐ «այրել, դաղել». արմատ առանձին անգործածական, որից խարեի «տաղել, այրել, կիզուլ» Ա. տիմ. դ. 2. Ոսկ. ես. և գազ. Եփր. թգ. 434. Բուզ. Եւս. պտմ. եղեմնախար «եղեամով այրուած» Ագաթ. խարակել Բուզ. Ոսկ. մ. գ. 4 ? խարակիչ Ագաթ. խարան «երկաթով դաղած, վէրք» Ել. իա. 25. Եւագր. Ոսկ. յհ. ա. 37. Եւս. պտմ. խարոյկ «կրակ» ՍԳր. խարուկել Պիսիդ. Վեցօր. տող 164. խարուկածին Իմ. ժէ 5 ևն։ Արմատիս միւս ձևերն են խոր- (առանձին անգործածական), որից -ով մասնիկով՝ խորով (տե՛ս այս բառը) և խարշ-ել՝ աճած շ աճականով (տե՛ս առանձին)։

=Բնիկ հայ բառ՝ հնխ. qer-, qor-, qṛ- «այրել» արմատից, որի միւս ժառանգներն են—վեդ. kūḍayati «խանձել»=սանս. kuṇḍayati «այրել» (<աճած qṛ-d ձևից), յն. κέραμος «բրուտի կաւ, թրծած սման, կրծմինաթ, աղիւս», κεραμεύς «բրուտ» (աճած -m աճականով, իբր հնխ. qerəmos), լտ. cremo «այրել», carbo (<*car-dhō) «ածուխ», հբգ. herd, անգսք. heorð, անգլ. hearth, հսաքս. herth, հոլլ. haard «վառարան, օջախ», գոթ. haúri «ածուխ», հիսլ. hyrr «կրակ», հսլ. kuriti, ռուս. курить «ծխել», ուկր. kúrevo «կրակը հրահրել», նսլով. kuriti «տաքացնել», հսլ. krada «օջախ», լեհ. trzon «օջախ», լիթ. kùrti «տաքացնել», kūrénti «շարունակ տաքացնել», kársztas «տաք», karštis «տաքութիւն», kùrstyti «հրահրել», լիթթ. karsts «կիզիչ տաք», karsėt «կրակ վառել, տաքացնել», kurstit «տաքացնել» ևն (Walde 129, 199, Boisacq 394, 436, Berneker 651, Trautmann 145, Kluge 215, Pokorny I, 418, Ernout-Meillet 220)։ Հայերէնի մէջ հնխ. qor- տալիս է խոր-ով, qṛ-> խար-, իսկ qer- ձևը պահուած չէ.— խարշել բառի շ աճականի համար համմտ. մի կողմից հյ. լպիր-շ, և միւս կողմից լիթ. kárszтas «տաք»։—Աճ.

ՆՀՐ խարել, որպէս թէ այրելով խորբել, լծ. յն. καίω, խարակել=լծ. յն. καυματίζω, Բրք. qavur-maq, խարոյկ՝ արմատն է խարել կամ նուր, խարան=լծ. յն. χαρακτήρ (վերջինս գծագիր բառի տակ)։—Lag. Urgesch. 950—1 և Beitr. bk. Lex. 26 խարոյկ հանում է խարել բայից, իսկ խարել=սանս. khara «կիզիչ տաք»։ Տէրվ. Altarm. 28 և Նախալ. 112 վերի բառերը, ինչպէս նաև խարուսել, խարշել, խորշակ դնում է հնխ. skar «այրել» արմատից. համմտ. սանս. kšā «այրել», kšāra «կծու», kšāma «չոր, ցամաք», çar «փոխիլ», çrā «խորովիլ», յն. ξηρός «չոր» ևն։ Հինք. խարոյկ=արաբ. حريق ḥarīq «հրդեհ»։ Patrubány SA 1, 194 խոր-

rովել=աշխ. caru «կաթսայ, պտուկ», հհիւս. hverr «պտուկ, թաս», իսկ ՀԱ 1910, 93 խոր բառի հետ՝ հնխ. seqā «կտրել» արմատից։ Karst, Յուշարձան 427 խարել, խարոյկ, խարշել=ՔՔր. yar «փայլիլ, այրել, բոցավառիլ»։ Թիրեաքեան, Բազմ. 1913, 341 խարկել =Քրք. qavur-maq «խորովել»։ Scheftelowitz BB 29, 68 դնում է երր. ḫārā «այրել» ևն ձևերից փոխառեալ։ Զափանցեան, Արարատ 1917, 217 խորովել կցում է վրաց. խուրվեբա «տաքութիւն» բառին։ Petersson KZ 47, 278 և Ar. u. Arm. Stud. 43 խորովել և խարշել մեկնում է վերի ձևով (չի յիշում խարել)։ Պատահական նմանութիւն ունին ասոր. ܟܐܪܐ xaurā «հանգած մոխիր», ܟܪܟ xarek «այրել», ܟܘܪܟܐ xurākā «հրդեհ», արաբ. حرّ ḫarr «ջերմութիւն», حريق ḫarīq «հրդեհ», ասուր. arâru «այրել», երր. הָרָה ḫārā «այրել, վառել», הַרְחֹר ḫarḫur «այրուածն, ջերմ», הֲרָרִים ḫarārīm «կիզիչ տաքից այրած հող»։

*ԴԻՒ.—Մշ. խարել «մարմնի մասերը իրար քսուելով հարուիլ», Երև. խարակել «հողէ ամանը այրելով չնարակել», Ղրբ. խա՛րակ «չնարակում», խրա՛կել «չնարակել», Ալշ. խարգել, Պլ. խարգել, Խրբ. խարգիլ, Տիգ. խmրգել «խորովել, այրել, բովել», Ակն. խարգիլ «այրել, մրկել», ՋԹ. խաղգիլ «դալար փայտը թեթևակի այրել», Սլմ. խարաւել, Մկ. խարաւիլ «այրելով չնարակել»։

ՓՈՒ.—Վրաց. ხრაკვა խրակվա «կարագի մէջ տապակել», ხრაკი խրակի «խանձրամհամ կերակուր», დახრაკვა դախրակվա, შეხრაკვა շեխրակվա «խորովել», მოხრაკვა մոխրակվա «խորովել, տապակել», ხურვება խուրվեբա «տաքացնել, կրակի մէջ կարմրացնել, ջերմութիւն, եռանդ», გამოხურვება գամոխուրվեբա «կրակով կարմրացնել» (այս բառերի արմատն է խրակ, խուրվ=հյ. խարակ, խարկել, խորով), լազ. խրակ (կար. դիխրակու) «խորովել»։—Պատահական են կիրգիզ. قارمق qarəmak «տորաշէկ երկաթով խարել» (Будаговъ 1, 13). քրդ. خرۆز xeruz «խարոյկ» (որ Justi, Dict. Kurde 155 մեզանից է դնում), Թրք. قاورمق qavurmaq «խորովել», հիւս. օսմ. kavrəm «եփած», kavarləm, kavərləm «եփել» ևն։

*ԽԱՐ «անասուններին տալիք կեր» Ագաթ. 42. ուրիշ վկայութիւն չկայ. նոր գրականի մէջ համարւում է «չոր խոտ»։

=Պհլ. xʷār, պրս. خوار xʷār «կեր, ուտելիք», պհլ. xʷartan, պրս. خوردن xōrdan «ուտել», զնդ. xʷar, xʷaraiti «ուտել». Նշանակութեան զարգացման համար հմմտ. գւռ. կեր, ձիուն կեր տալ, տճկ. yemek «ուտել» և yem «հաւի, ձիու ևն կեր», որից էլ yemlik «մսուր»։

Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ. նոյնը յետոյ Meillet JAs. 1910, 465:—Patrubány IF 14, 57 նոյնը ընդ խոր! Պատահական են թւում կովկասեան լեզուներից ալվար. xer, xir, xrrer, խունսագ. xer, անցուկ. xer, կայ, ակ. խիւր. k'ar, ագ. k'är, որոնք բոլոր նշանակում են «չոր խոտ»։

ԽԱՐ «փուշ» տե՛ս Խառ։

ԽԱՐԱԲԱԹԱՆ. անստոյգ բառ. մէկ անգամ գործածել է Ոսկիփ. «Թէ այնպէս վայրապար է եկեղեցւոյ խորհուրդ, ապա ի մին խարաբաթան աւելի ծախք են կերակրոյ և հանդերձի յոլով, քան յայլ և յայլ եկեղեցիս»։—Տես և խարբանդակ բառի տակ դրուած վկայութիւնը։

ՆՀԲ մեկնում է «թերևս անպիտան թան (պրս. خراب xarāb «աւերեալ» բառից) կամ անպիտան իջևան». կայ և պրս. xarābāt «գինետուն կամ կրպակ գինեվաճառի»։ ԱԲ մեկնում է «գինետուն», իբր պրս. փոխառութիւն։ ՋԹ չի յիշում։ Թիրեաքեան, Արիահայ բռ. 139 արաբ. պրս. خرابستان xarabistān «աւերակ»։

ԽԱՐԱԲՈՒՋ «հիւանի քերիչ, ռանդա». մէկ անգամ գործածուած է Բարուք. գ. 7 «Այլ նոցա լեզուքն քերեալ են ի հիւսանց խարաբուզս» (յն. միայն «ի հիւսանէ»)։

Ըստ ՆՀԲ նշանակում է «մամուլ կամ քերիչ հիւսանց», իսկ ըստ ՋԹ «քերիչ հիւսանց», որ ճիշտ է, ինչպէս հաստատում է՝

Գիհ.—Սիփան խարաբուզ «շերեփի և գդալի մէջը փորելու գործիք, կռտոց» (*Ամատունի, Հայոց բառ. ու բան, էջ 375 բ*)։

*ԽԱՐԱԳՈՒԼ *«մի տեսակ մանր մորեխ, խառնիճ, ջրեակ» Ղևտ. ժա. 22. ուրիշ վկայութիւն չկայ։

=*Ասոր.* ܚܪܓܠܐ xargəlā, xargālā, *նոր ասոր.* ܟܪܓܘܠ xargūl, *հբր.* חרגל xargōl, *արաբ.* حرجل ḥarǰal *«մորեխ»*, حرجلة ḥarǰalat *«մորեխների խումբ»*, *սումեր.* irgilum *«մի տեսակ մորեխ»* (Autran, Sumér et ind. 156). *արաբերէնից է փոխառեալ պրս.* خرجل xarǰal *«մի տեսակ անթև մորեխ»*, *որ ըստ այսմ պէտք է ուղղել* حرجل ḥarǰal: *Ասորի բառը գործածուած է ճիշտ Ղևտ. ժա. 22 հատուածի մէջ, ուստի և Ս. Գրքի թարգմանութեան ժամանակ տառադարձութեամբ անցել է հայերէնի։ Բուն արմատն է սեմ.* xgl, *աճած* xrgl *«ցատկել, քառարշաւ վազել (ձիու, մորեխի)»։—Հիւրշ. 304։*

Նշբ յիշում է պրս. խայէֆ, խարէֆ, խառէֆ *«ջրեակ»։ Վերի մեկնութիւնը տուաւ նախ* Lag. Arm. Stud. § 972; Bugge IF *1, 448 իբր բնիկ հայ կցում է յն.* ὀκερῴβολος *ձևի հետ։ Հիմնբ.* ա-րագիլ *բառից կամ երբ.* xargōl-*ից։*

ԽԱՐԱԶ. *անասունց բառ. սրանից ունինք միայն* խարազիմաց *անծանօթ բառը, որ մէկ անգամ գործածել է Մանդ. էջ 217 «Թիւնաւոր, օձաբիմ, խարազիմաց, ամենակեղծ ևն». Համանիշների շարքը ցոյց է տալիս՝ որ վատ իմաստով մի ածական է։*

Նշբ և Ջբ չունին։ Աբ դնում է «ոխ պահող», իբր Թրք. բառ։ Ուզում է ակնարկել արաբ. ضرّ ḍaraz *«նպատակ, դիտաւորութիւն, առելութիւն, ոխ». բայց ինչպէս արաբ., նոյնպէս մանաւանդ Թրք. մի բառ չէր կարող գոյութիւն ունենալ Մանդակունու ժամանակ։*

ԽԱՐԱԶԱՅ, ի հլ. «է նիւթ ինչ իբրև զքար՝ որ գոյանայ ի մէջ լեռւոյ ոմանց սակաւուց եզանց և ունի զմեծութիւն կաղին պտղոյ, զոր ի գործ ածեն ի բաղում իրս». ունին միայն Նշբ և Բառ. երեմ. էջ 139, առանց վկայութ.—(Նիւթի համար հմմտ. մանչուր. ԽԱԶԱՅ isoxon' «безоаръ, желтый камень находимый въ желудкъ быковъ и употребляемый какъ всеисцеляющее лекарство *եզների ստամոքսում գտնուած դեղին քար, որ գործածւում է իբր ամենաբոյժ դեղ»* (Захаровъ, *Մանչուր. բառ. էջ 101 ա*)։

=*Պրս.* خزر xaraza՝ *նոյն նշ. կոչւում է նաև* گاو زهر gāv-zahra *«եզան լեղի»։—Ա.Ճ։*

Գիհ.—Ննխ. խարազա, *Ախց.* խարզան։

ԽԱՐԱԶԱՆ, ի–ա հլ. «մորակ» Յհ. բ. 15. Երզն. քեր. Նոնն. որից խարազանահալած *Սկևռ. աղ.* խարազանել *Նխ. ևս. Ջքր. կբ. գրուած* ճարազանիլ *«խարազանուիլ» (կրաւորական) Կնիք հաւ. էջ 347։*

=*Միջին պրս.* *xarāzan, *գնդ.* *xarāzana- *ձևից, որ նշանակում է «էշ քշող, էշ քշելու գործիք». կազմուած է* xar *«էշ» և* az, aj *«քշել, վարել» բառերից. հմմտ.* գաւազան *«եզ քշելու գործիք», որ ճիշտ նոյն կազմութիւնն ունի։—Հիւրշ. 158։*

Այսպէս են իմացել նաև հներից Մագ. քեր. 229 (տե՛ս գաւազան *բառի տակ), Վանակ. հց. Երզն. քեր. «խարազան, որ է վարիչ իշոյ. խարազան՝ իշավար ասի պարսիկ լեզուով»։ Նշբ պրս.* խէրէֆ *«ծեծելու բիր»։ Ուղիղ մեկնեց* Lag. Urgesch. *951, որից յետոյ* Lag. Ges. Abhd. 299, 22, Müller SWAW 66, 271, *Տէրվ. Մասիս 1882 ապրիլ 26, Պատկ. Փորձ 1880 մարտ, էջ 84 և Հիւնբ։*

Գիհ.—Երև. խարազան, *Մրզ.* խmրmզան, *Մկ.* խmրmզmն, *Վն.* խարէզան *(քաղաքում* խmրիզmն*), Մլմ.* խmրէզան, *Ոգմ.* խարբզmն, *Ալշ. Ասպ. Մշ.* խարզան. *նշանակում են «տաւար, եզ կամ գոմէշ քշելու կաշեայ խարազան. 2. դուբանը լուծին միացնող շղթան. 3. դուբանի առջևի հաստ գերանը». նոր բառեր են* խարզնկոթ, խարզնտուն, խարզնտր։

Փոխ.—Մեզանից է փոխառեալ ն. ասոր. xäräzän *«եզ ու գոմէշ քշելու խարազան» և ո՛չ թէ պարսկերէնից. նախ՝ որովհետև այս բառը պարսկերէնում պահուած չէ և երկրորդ՝ որ բառը իրանականում «էշ քշելու*

գործիք» է նշանակում և ո՛չ եղ ու գոմէշ, ինչպէս հայն ու ասորին են։

ԽԱՐԱՁՆ *«խոշոր, թանձր նիւթից շոր, բուրձ, ցնցոտի» Սիր. պհ. Վրք. Հց. Իգնատ. 214. էջ 103. որից* **խարազնագոյն** *«գռեհկագոյն» Պիտ.* **խարազնագգեաց** *«բուրձ հագած» Յհ. կթ. Շար.* **խարազնագգեստ** *«բուրձ հագած» Ագաթ. Խոր.* **խարագնատ** *Մաշտ։*

ՆՀԲ լծ. լտ. grossus, crassus, *իրք.* դրլէզ, *իսո։*

***ԽԱՐԱԿ** *«ապառաժ, կարծր քար» Վեցօր. 144. «Յիսուսի գերեզմանի քարերը» Եղիշ. յար. 307. որից* **խարական** *Վեցօր. 194։*

*=Պհլ. *xārāk «ժայռ», որ թէև աւանդուած չէ, բայց նոյնն է հաստատում պրս.* خارا xara *«է տեսակ իմն յոյժ ամուր և խիստ քարի»։ (Պրս. բառը կցւում է սանս.* khara- *«կարծր, կոշտ, սուր», յն.* κάρχαρος *«սուր, կծող» բառերին. տե՛ս* Horn § 461 *և* Boisacq *էջ 417)։—Հիւբշ. 158։*

ՆՀԲ պրս. **խառա** *և իրք.* qaya *«քար»։ Հիւբշ.* ZDMG *35(1881), 660 պրս.* خارا xāra *(որ և* خاره xāra *ձևի հետ)։* Bugge IF *1, 447 իրը բնիկ հայ կցում է գերմ.* skarja, *հ. հիւս.* sker *«ծովի խութ» բառերի հետ։ Պատահական նմանութիւն ունի թուշ.* **խէր** *«քար»։* Pictet, *բ. տպ. Ա. 151 պրս.* xarā *«քար» բառի հետ։*

ԽԱՐԱԿՏԵԼ *«ծեծել». գիտէ միայն Բառ. երեմ. էջ 139։*

ԽԱՐԱՀԱՐ *«արեգական մայր կոչուած բոյսը» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 1022։*

***ԽԱՐԱՃ** *«գլխահարկ» Մեծոբ. Մխ. անեց. էջ 47, Վրդն. պտմ. 132. Սամ. անեց. շար. 165. Արձ. 1231 թ. (Վիմ. տար. 74)։*

=Արաբ. خراج xarāǰ *«գլխահարկ». սրա հետ նոյն է դնում* Patrubány SA *1, 3 հունգար.* harács *«հարկ, տուրք»։—Հիւբշ. 268։*

Ուղիղ մեկնեց նախ Ալիշան, Հրտր. Վրդ. պտմ. էջ 132, ծանօթ։

ԽԱՐԱՄ *«Հալեպի մետաղների մանրուքը՝ կեղտը» Վանակ. յոբ. իը (առ ՀԵՀ.)։*

ՆՀԲ իրք. qərəntə *«կոտրտուք»։* Bugge IF *1, 447 իրը բնիկ հայ՝ յն.* σκωρία *«մետաղի կեղտ» բառի հետ։*

ԽԱՐԱՄԱՋ *կամ* **ԽԱՐԱՄԱՋԱՆ** *«լեռնային թաւրնջակ. լտ.* primula montana» *Բժշ. ունին միայն ՀՀԲ և ՀԲուս. § 1023։*

***ԽԱՐԱՄԱՆԻ** *(-նւոյ, -նեաց) «դև, սատանայ» Ոսկ. մ. ք. 18. Եղն. Եղիշ. «մի տեսակ չար օձ» Ոսկ. եփես. 833. Սիր. Թուղց, էջ 234, դատ. 333, պհ. 181, Վկ. արև. էջ 69. Վրդն. լս. 62. Վանակ. յոբ. Սարգ. յկ. ե. էջ 75. գրուած է նաև* **խարամայեի, խարամաե, հարամաեի** *Զգոն 370, իրրև ածական՝* **հրամանի** *«դէշ, դաժան» Արծր. ա. 1. գ. 21 (հրամանի բարուք)։*

=Ասոր. ܚܪܡܢܐ xarmānā, ܚܪܡܢ xarmān *«օձ» բառն է, որ բատ* Brockelm. Lex. syr. *124 ա պատկանում է* ܚܪܡ xəpam *«արգիլել, ապօրինի համարել, նուիրագործել»,* ܚܪܡܐ xarmā *«պիղծ» արմատին։ Բառը մեր մէջ ժողովրդական աստւգաբանութեամբ միացուելով զրադաշտական դևի Ահրիման չար աստուծու հետ (պհլ.* Ahraman, Ahrman), *ստացաւ սրա էլ նշանակութիւնները։—Հիւբշ. 26։*

Հներից Եղնիկ գրում է. «Աւ ի յարևէ զարեգակնատեաւնչիկան արկանելոյ, ուստի և զանունն իսկ խարամանոյ առ». (սրանից հետևցնում է Ադոնց, Բազմ. 1926, 12 ծան. թէ Եղնիկ խարամանի բառը աստւգաբանում է պրս. khvār *«արև» բառով)։ ՀՀԲ հանում է* **խարել** *«այրել» բառից։ ՆՀԲ* **Առիմն**-*ից։ Ուղիղ մեկնութիւնը տուաւ* Lag. Arm. Stud. *§ 1254։ Բառի ձևի մասին տե՛ս Վարդանեան ՀԱ. 1922, 586։*

ԽԱՐԱՍ *«մի տեսակ հունդ է» Բժշ. կամ «մի տեսակ անծանօթ պտո՞ւղ» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 1024։*

ԽԱՐԱՍՏԻԼ *«մորթը բոլորովին կարծրանալ». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գըտնում եմ գործածուած Խոր. աշխ. հրտր. Սուքրեան, 44 «Եւ ասեն անդ վայրենի ազգ մարդկան, կաշիացեալ խարատեալ, որ նեաւ ոչ խոցին»։*

ԽԱՐԱՓ *«գուբ, խորխորատ, որոգայթ»? մէկ անգամ ունի Եղն. էջ 111 «ի նոյն խարափ անկեալ և աղանդոցն, զոր ինամին իրրև զորոմն ի մէջ ցորենոյ սերմանեաց»։*

Իբրև անստոյգ բառ ունի ՋՒ, որից և ԱՒ և ՓՒ։ Ա. Ջամինեան (անձնական) սրբագրում է խարխափ. նոյնը Գալեմքեարեան. իսկ Mariès, *Եզնիկ, էջ 180* խարակ?

**ԽԱՐԱՔ «արմատ» Բժշ. ունի միայն Հայրուսակ § 1025։

=Պրս. خرک xarak «չոր արմատ»։—Աճ.

Հրուս. յիշում է խարիճ *«ծուռ, տճկ. Թրապուզան խուրմասի». բայց այս երկուսը տարբեր բոյսեր են։

*ԽԱՐԲ, ի հլ. «սուր, թուր» Փիլ. լին. 432. Անան. քեր. 144. Իրեն. հերձ. 120. Հին բառ

=Ասոր. ܚܪܒܐ xarbā «սուր, թուր» բառից, որի ցեղակիցներն են եբր. חֶרֶב xereb «սուր, թուր», արաբ. حربة ḫarba «կռուի գործիք, նիզակ». ծագում են սեմական חרב xrb, արաբ. حرب ḫarb «կռուիլ, պատերազմիլ» կամ حُرَّبٌ ḫarraba «սրել» արմատից։—Հիւրշ. 304։

ՆշԲ (վաղակատար բառի տակ) եբր. խէրպ։ Pictet II 134 *սանս.* kṛpānī, *լտ.* scalprum «սուր գործիք, մկրատ, մանգաղ, նշտարակ» են։ *Տէրվ.* Altarm. 29 *անգսք.* skarpr, *հբգ.* scarph, *գերմ.* Scharf, *լատ.* scalpere, *յն.* σκορπίζω, *սանս.* kṛpāna «թուր» բառերի հետ իբրև բնիկ հայ։ Lag. Arm. Stud. § 975 *եբր.* xereb, *որի հետ նոյն է դնում յն.* ἄρπη «մանգաղ» (հիմայ այս համեմատութիւնը սխալ է համարւում. *յն.* ἄρπη միացւում է *լտ.* sarpo «յօտել», *հսլ.* srŭpŭ, *ռուս.* серпъ, *լեթթ.* sirpe, *հիւլ.* serr «մանգաղ», *հբգ.* sarf, *գերմ.* Scharf «սուր» են բառերին. Boisacq 81, Walde 679)։

*ԽԱՐԲ «ագահ և անյագ՝ ուտել-խմելու մէջ» Մաղաք. աբ. 24 (Վասն խարբ և անյագ ըմպելոյն իւրեանց.—այսպէս ունի տպ. եմ. էջ 37. իսկ Պատկ. ունի խարաբ!). «մարմնաւոր ցանկութեան մէջ» Մխ. բժշ. 108 (Այնոց որ գինի շատ խմեն և այնոց որ ի մերձաւորութիւն խարբ լինին). «լիրբ, անառակ, խառնակեցիկ» Մագ. թղ. 212—213 (Ջիս համալուծ առնես որդւոյդ խեղկեալ խարբի։ Ի խարբի որդւոյդ ի գանգատ դնա՛), որից խարբութիւն «ագահութիւն ընչից, ընչաքաղցութիւն, զօշաքաղութիւն» Վասակ. էջ 6 (Զսղալանացն տուգանս ըստ իւրաքանչիւր յանցանացն չափով դնել, որ ոչ վասն աւելութեան պակասեցուցէ և խարբութեան աղագաւ առաւելուցու ի տուգանաց յափրշտակութիւն)։

=Վրաց. ხარბი խարբի «ագահ, անկուշտ», որից გახარბება գախարբեբա «ագահութեան վարժուիլ», დახარბება դախարբեբա «մէկին ագահ դարձնել»։ Հայերէն բառը փոխառեալ է վրացերէնից և ո՛չ հակառակը, որովհետև ուշ ժամանակ միայն գործածուած անսովոր մի բառ է։—Աճ.

ՆշԲ մեկնում է «կարծի նոյն ընդ խարբանդակ, *ուսօղ, խմօղ, եթէ չիցէ յատուկ անուն»։ ՋՒ դնում է «անիրաւ, անզգամ, խառնակեցիկ»։ ԱՒ միացնում է այս երկուսը։ (Բայց թէ՛ ՋՒ և թէ ԱՒ խարբութիւն մեկնում են «անիրաւութիւն, անառակութիւն»)։ Մառ.* Грам. др.-арм. яз. էջ 265 *ծանօթ չլինելով հյ.* խարբ *բառին, վրաց.* ხარბი խարբի *դնում է հյ.* արբ, արբեալ *բառից փոխառեալ (տե՛ս* Արբ)։ *Կոստանեան, հրտր. Մագ. թղ. էջ 337 բ ցանկում համարում է յատուկ անուն, սեռ.* խարբի, *ուղ.* խարիբ *ձևից։ Սրա դէմ է խօսում Աճառ. Հայ. նոր բառեր հին մատ. Բ. 187—190 և համեմատում է արաբ.* خرب xarba «կրօնի և ազգութեան դէմ խռովութիւն հանող. 2. թերութիւն, պակասութիւն», خرب xarb «գողանալ» (Կամուս, *Բրբ. Բրգմ. Ա. 118*)։ *Այս բառերի նմանութիւնը պատահական է, ինչպէս նաև նոր ասոր.* xirbā «դէշ, յոռի, անպիտան»։ *Հ. Գր. Սարգսեան, Բազմ. 1927, 243 դնում է արաբ.* خراب xarāb «փճացած, աւեր» *բառից։*

ԽԱՐԲ «վրացի կոճ» *տե՛ս* Խարբախ։

*ԽԱՐԲԱԼ «մաղ». *առանձին չէ գործածուած. բայց սրանից են* խարբալել «մաղել», *փխբ.* «տակնուվրայ անել, վտանգել, փորձել» *Ղկ. իբ. 31. Եզն. 181. Բրս. մրկ. Մագ. Երզն. մտթ.* «մի սուտ գլորել» *Վրք. հց. Ա. 698.* խարբալիլ «վնասուիլ, կարկամիլ, ան-

դամալոյծ դառնալ» Միխ. համդ. 86. «սատանայից փորձուիլ» Վրք. հց. Բ. 443. խարբալումն «փորձութիւն» Վրք. հց. խա.—ր վերածուելով լ-ի՝ խալբալել «շփոթել, միտքը տակնուվրայ անել» Ագաթ. էջ 315, խալբալիլ «շփոթուիլ» Ագաթ. 31. խալբալում այնել «շփոթեցնել, խանգարել» Սմբ. դատ. 124. երկու ձևով է խարբալեալ (այլ ձ. խալբալեալ) Ագաթ. 59։

=Ասոր. ܚܙܠܐ ʿarbālā «մաղ», ܚܙܠ ʿarbel «մաղել», արամ. עַרְבְּלָא ʿarbālā արաբ. غربال ġirbāl «մաղ». սրանցից են փոխառեալ նաև արևել. Բրբ. غلبر ġalbir «մի տեսակ կոշտ մաղ», Բրբ. قلبور qalbur «մաղ», قلبورلامق qalburlamaq «մաղել», ռմկ. խալպուր, խալպուրլամիշ ըննել։—Հիւբշ. 304։

Վարդան Յունանեան, Քերածութիւն 1671, էջ 313 խարբալ մեկնում է «ոլորապատոյտ ճանապարհ», որից խարբալել «մոլորեցնել»։—Schröder, Thesaur. 47 Բրբ. և պրս. ձևերը դնելով՝ ենթադրում է որ հին պարթևական բառ լինի։ ՆՀԲ Բրբ. պրս. արաբ. ձևերի հետ նաև լտ. cribellum «մաղ»։ Lag. Arm. Stud. § 976 դնում է նաև արամ. և թալմ. ձևերը, որոնցից անբաժան է համարում լտ. cribrum «մաղ»։ Նոյնը նաև Müller WZKM 7, 381, որ ասորի բառը լտ. cribellum ձևից փոխառութիւն է կարծում։ Հինք. չաղաթայ. դարպալ։

Գիհ.—Այս բառից է Ղրբ. խրլրփա՛լվել «ուշաթափուիլ, ուշքը դնալ, նուաղելով վայր ընկնել» (Աճառ. Հայ. նոր բառեր հին մատ. Բ. 150). իմաստի զարդացման համար համմտ. գուռ. խելմամաղ լինել «ուշքից գնալ» (մաղ բառից)։

***ԽԱՐԲԱԽ**, որ և խարպախ, խարբակ «վրացի կոճ, helleborus» Բժշ. Մխ. բժշ. 125. Վստկ. 19, 81, 223. ունին միայն ՋԲ և ՀԲուս. § 1027։*

=Արաբ. خربق xarbaq- նոյն նշ. բոյսի ընդարձակ նկարագրութիւնը տե՛ս Կամուս, Բրբ. Թրգմ. Բ. 891 և Seidel, Հրտր. Մխ. բժշ. § 345։ Սրանից տարբեր բոյս է արաբ. خرفق xarfaq, որ մեկնւում է «սպիտակ մանանեխ» (տե՛ս Կամուս, անդ՝ էջ 892)։—Հիւբշ. էջ 268։

Ուղիղ մեկնեց նախ Lag. Arm. Stud. § 977։—ՀԲուս. § 1026 յիշում է նաև խարբ բոյսը Վստակոց գրքից. Նոբայր ՀԱ 1922, էջ 397 հաստատում է, որ այստեղ էլ գրուած է խարբախ և ո՛չ թէ խարբ։

***ԽԱՐԲԱՆԴԱԿ.** անասոյզ նշանակութեամբ բառ, որ մէկ անգամ գործածում է Ոսկիփ. «Թէ ամենայն խաշաձև խաշ է, ապա ամէն հացի բրդել ի գինի՝ հաղորդ է. ապա մին խարբանգակն աւելի հաղորդի Քրիստոսի, քան գհինդ կամ գվեց կրօնաւոր, զի շատ կարէ ուտել և ըմպել»։ ՆՀԲ և ՋԲ մեկնում են ենթադրաբար «շուայտօղ ի գինետունս, արբշիռ». կարելի է նաև հասկանալ «իշավար» կամ սրան մօտիկ նշանակութեամբ մի բան, ինչպէս ցոյց են տալիս՝*

*=պհլ. *xarbandak, պրս. خربنده xarbanda, որից էլ ասոր. ܚܪܒܢܕܩܐ xarbandaqā կամ ܟܪܒܢܕܩܐ karbandāqā, բրդ. کربنده karbenda «իշավար». ծագում են իրան. xar «էշ» և bandak «ծառայ» բառերից։ Հայերէնի աւելի նոր ձևն է խարուանդայ, որ տե՛ս առանձին։—Հիւբշ. 158։*

ՆՀԲ պրս. xarābātī «գինեմոլ» բառի հետ։ Վերի մեկնութիւնը տուաւ Lag. Ges. Abhd. 61 և Arm. Stud. § 978։ Թիրեաքեան, Արիահայ բռ. 189 պրս. خوار xār «ուտել» և պհլ. bandak «ծառայ» բառերից։

ԽԱՐԲԶԱԿ *տե՛ս Խարպիզակ։*

***ԽԱՐԲՈՒԶ** «էշայծեամ» Օր. ժդ. 5. ուրիշ վկայութիւն չկայ։*

=Պհլ. xarbuz «էշայծեամ». բառիս պրս. ձևը աւանդուած չէ։ Կազմուած է պհլ. xar= պրս. خر xar=զնդ. xara- «էշ» և պհլ. buz= պրս. بز buz=զնդ. būza- «այծ, բուծ» բառերից, ճիշտ ինչպէս է հյ. էշայծեամն։ Իրանեանից է փոխառեալ նաև վրաց. ხარა-ბუზი խարաբուզի «եղնիկ, էշայծեամ»։—Հիւբշ. էջ 159։

Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ, յետոյ Հիւբշ. KZ 23, 403 և Lag. Arm. Stud. § 979։

Հիմնք. պրս. խար «էշ» և բուգիճ «կապիկ» կամ թրք. պուզաղը «հորթ» բառերից։

ԽԱՐԲՈՒԽ *տե՛ս Հարբուխ։*

ԽԱՐԴԱԽ, ի–ա *հլ. «խաբեբայ, նենգաւոր» Կոչ. Փարպ. Փիլ. որից* **խարդախել** *«նենգել» Բ. Մնաց. իգ. 13. Ա. Թագ. ժբ. 25. Եւս. քր.* **խարդախութիւն** *ՍԳր. Ոսկ. մ. բ. 21, Եւս. քր. Կոչ.* **խարդախանալ** *Եփր. ծն.* **խարդախիչ** *Եփր. ծն.* **խարդախալի** *«խարդախութեամբ լի» (չունի ԱՔ) Յայտմ. դեկ. 17.* **անխարդախ** *Ա. պետ. բ. 2. Եւս. քր. ևն։*

ՆՀՔ այլազգ. **դատտար, էլլաշ, խատտա**: Böttich. Arica 19, 46, Lag. Ges. Abhd. *200, 25 յն. κάρδοκες «պարսկական բանակում մի տեսակ սպառազէն մարտիկներ»։ Մերժում է* Lag. Arm. Stud. § 980: *Հիմնք. կախարդ բառից։ Մառ* ИАН 1920, 127 **խարդ** *արմատից, որից և* **կա–խարդ**:

Գիմ.—Գոր. Ղրբ. **խա՛րդախ**, *Ջղ.* **խարդ՛ախ**, *Ախց. Երև. Կր. Մկ. Ոզմ. Պլ.* **խարբախ**, *Սլմ.* **խառբախ**:

ԽԱՐԴԱԻԱՆ. *արմատ առանձին անգործածական. գիտէ միայն Բառ. երեմ. էջ 139 «կեղծաւոր, պռոնիկ, լկիշ» նշանակութեամբ. որից* **խարդաւանել** *«խաբելով վայր գցել, գլորել» Լմբ. Նար. Շար. «նենգութեամբ սպանել» ՅՀ. կթ. «խարելով պղծել, կուսութիւնը խախտել» Եւս. քր. ա. 233, Ոսկ. մ. բ. 622.* **խարդաւանութիւն** *«կուսապղծութիւն» Եւս. քր. Սեբեր. «նենգ, խարէութիւն» ՅՀ. կթ. Լմբ.* **խարդաւանակ** *«դաւաճանութիւն» Ներ. Ա. 13, 30.* **խարդաւանիլ** *Պիտ. Նար. Մագ. կայ նաև* **խարդաւուրիւն** *«խարէութիւն» Իրեն. հերձ. էջ 208։*

ՆՀՔ **խարդախ** *և* **դաւ** *բառերից։ Հիմնք. էջ 246* **դաւանել** *բայից։ Թիրեաքեան, Արիահայ բռ. 138 պրս.* خور xōr «ուտել»+**դաւ**, *այն է «կերած հացի դէմ դաւաճանող, իբր տճկ. նաճիէօր»։*

ԽԱՐԵԼ *«այրել» տե՛ս* **խար**։

ԽԱՐԵԼ *«խաբել, մոլորեցնել, գլխէ հանել» Եփր. յոբ. (Հրտր. ՀԱ 1912, 672), որից* **խարանիք** *«խարկանք» Եփր. յոբ. (անդ),* **խարող** *«խաբող, պատրող» Փարպ. տպ. 1904, էջ 167—168 (վնաս մեծ արար նա ի բանակս մեր. զի թէ միայն էր, չէին յոյժ մեծ խարանիք նորա. այլ մեզ այն չար է, զի ըզբազումսն խարէ. Որ ձեր խարող հացկատակաց ջոկն էր)։*

Նորագիւտ բառս գտաւ ու մեկնեց Աճառ. Հայ. նոր բառեր հին մատեան. Ա. էջ 43—45։

***ԽԱՐԵԼ** *«քորել». նորագիւտ բառ. գտնում եմ յիշուած մէկ անգամ Բառ. երեմ. էջ 333 հետեւեալ ձեւով. «քորել, քերել կամ ճանկել կամ խարել»։ Հայերէնի մէջ խարել ծանօթ է իբրև «դաղել», բայց որովհետեւ այս իմաստը չի յարմարում* **բերել** *բառին, ուստի պէտք է կարծել որ լինի նրան համանիշ մի ձեւ, իբր՝*

=*պրս.* خاریدن xārīdan *«քորել»։—Աճ.*

***ԽԱՐՋԱՀԱՐԱ** *«մի տեսակ թունաւոր բոյս է. laurier-rose, oléandre, թրք. զըխըմ, հյ. ճիճեղ, դափնեվարդ» Բժշ. ունի միայն ՀՌուս. § 1028։*

=*Պրս.* خرزهره xarzahra *«է տեսակ իմն ծառոյ, որոյ տերեւն լինի երկայն նման տերեւոյ ուռւոյ, բայց թանձր քան զնա. զոր թէ ուտեն անասունք՝ առ ժամայն սատակին. որ կոչի (թրք.)* **աղու աղաճի**». *կազմուած է* خر xar- «էշ» և زهره zahra «թոյն» *բառերից. համմտ. սրանց համանիշ տանս.* açvaghna, *իտալ.* amazza-cavallo, amazza-asino, *որոնք նշանակում են բուն «ձիասպան, իշասպան»։—Սրա տերեւների թոյնն է, որ կոչւում է* زهر زقّوم zahr-i zaqqum—**զաճր–զըխկում**: *(Ըստ Ղուրանի այս նոյն ծառն է՝ որ աճում է և զժոխքում)։ —Աճ.*

Վերի մեկնութիւնը տուաւ նախ Աճառ. (անտիպ). նոյնը անկախաբար Նորայր, ՀԱ. 1924, 550։

ԽԱՐԹ *«կրօնաւորի փիլոն». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գործածել է Մխիթար Ապարանցի (1410 թ.).—«Արարին երկայն խարթ, թեպէտ նոյն ձեւովն, այլ միայն թուխ գունով և երկայնագոյն». (Հացունի, Պատմ. տարազի, էջ 338)։*

ԽԱՐԻ *«մի տեսակ բոյս է, որի արմատից*

պատրաստում են կարմիր ներկոյր. հաւաժիպակ, լտ. anchusa» *Բժշ. Բն. ստեփ. լեհ. որից* շէկխարի, *որ և* շեկխարի, շիկխարի, շիխար «*ներկոյր*» *Մծբ. ժղ. (առ լեհ.)։*

ՆՀԲ Գաղիանոսի մէջ գտնելով «անկիւդա (կամ անկիւրա*). խարի» բացատրութիւնը, նոյն չն. բառը հասկացել է* ἄγχουσα «*խարիսխ. 2. ամօթոյք*»*, որով մեր խարի բառն էլ մեկնում է «արուիթիւն մարդոյ, առնի անդամ»։ Զգուշաւոր ՋԲ չունի այս բառը։ ԱԲ հետևում է ՆՀԲ-ի։ Նորայր, Հայկ. բառաքնն. էջ 117 ցոյց տուեց՝ որ Գաղիանոսի յիշած չն. բառը պէտք է հասկանալ* ἄγχουσα, *որով խարի բառին տրուած «առնի» նշանակութիւնը ջնջից և մեկնից վերի ձևով։* Bugge KZ *32, 9 անտեղեակ սրանից՝ համեմատում է խարի «առնի» բառը պրս.* خار xār «*փուշ*» *բառի հետ, ենթադրելով որ պրս.* xār *ունեցած է նաև «առնի» նշանակութիւնը, որից փոխառեալ են ալբան.* kār, karə, *գնչ.* kar «*առնի*»։

ԽԱՐԻՍԽ, *ի–ա հլ. (յետնաբար նաև ի հլ.) «պատուանդան, յատակ (սիւնի, աւազանի, դռան)» ՍԳր. «ցած բեմ» Ր. մնաց. ղ. 13. «նաւի երկաթ» ՍԳր. Ոսկ. երր. «սրունք, ոտք» Նար. որից* խարըսխաձև *Ագաթ. վերնախարիսխ Երեմ. ծբ. 18. խարսխել Խոր. կարծրախարիսխ Նար. խչ. հաստախարիսխ Նար. խչ. յետին գաւառական ձև է* սարիսխ *Սոկր. 66. Պիտիդ. Պտմ. վր. էջ 61, 79. Տօնակ. Վրդն. պտմ. 11. (հմմտ. սուն, դրաստ, բաստ փոխանակ խուն, դրախտ, բախտ)։*

ՆՀԲ վրաց. խարիսխի։ *Հիւնք.* խօսել *բայից։* Bugge KZ 32, 10 *–իսխ համապրում է մասնիկ. հմմտ.* խորիսխ։ Patrubány *ՀԱ 1903, էջ 220 նոյն ընդ* խորիսխ։

ՓՈՒՆ.—վրաց. ხარისხი խարիսխի «*աստիճան*»*,* ხარისხოვანი խարիսխուվանի «*արժանաւոր, աստիճանաւոր*»*,* მეხარისხი մեխարիսխի «*դասական*»*,* აღხარისხული աղխարիսխուլի «*աստիճանաւոր*»։

ԽԱՐԻՒ «*պիսակ*»*. արմատ առանձին անդորձածական. երևան է դալիս միայն* խայտախարիւ *կամ* խայտախարի *(գրուած նաև* խայտախայրիւ, խայտախարոյ*) Ծն. լ. 32, լա. 10, 12. Եփր. ծն. Շ. բարձր. Վրդն. լս. 55. Հ. կիլ. Տօնակ. գորշախարիւ կամ գորշախարու Եփր. աւետ. ձևերի մէջ։*

ՆՀԲ խայտախարիւ *մեկնում է «մխտոյն խայտիւք խարնալ»։*

ԽԱՐԽԱԼԵԼ «*խախտել, աւրել, աւերել*» *Ոսկ. մ. ա. 9, 16. յհ. ա. 28, բ. 10, Փիլիպ. Կիւրղ. ծն.* խարխալանք «*գայթումն*» *Ոսկ. մ. ա. 24.* խարխարել «*քանդել, խախտել*» *Սերբ. Ոսկ. մ. և ես. «վէրքը բերելով պատռել» Սիր. իէ. 28.* խարխարիչ *Պիտ.* խարխարումն *Մամբր.* խարխարուն «*խախուտ, խարխուլ*» *Ոսկ. հռ.* անխարխար «*հաստատուն*» *Նչն. նգ.*խարխար առնել «*երկաթէ ձողով քանդել*» *Պտմ. աղէքս. Խոր.* խարխուլ *Ոսկ. յհ. ա. 11. Ագաթ. կամ* խարխուր *Ոսկ. ա. տիմ. էջ 93. բ. տիմ. էջ 218 (չունի ՆՀԲ).* խարխլիլ *Սարգ.* խարխլեալ *Վրք. ոսկ. —սրանցից դուրս կայ նաև* խարխիլ ձևը՝ *հետևեալ չորս օրինակի մէջ. «խարխիլ և հալիլ ի նմանութիւն սարդի ոստայնից» Ոսկ. մ. ա. 1. «Գեղոյն ցանկութիւն օր քան զօր խարխիլ» Ոսկ. ա. տիմ. էջ 39 (չունի ՆՀԲ). «Բաղումք խակ այնուհետև խարխեցին պիրան» Ոսկ. պօղ. Ա. 462. «Մեղքն բարութեամբքն իմն սովոր են աճել և ցաւովք և վշտօք խարխիլ» Ոսկ. ես. էջ 345։*

=Կրկնուած է պարզական խար *արմատից. առաջին ձևն է* խարխար*, բաղաձայնի փոփոխութեամբ՝* խարխալ*, երկրորդ հզրի մէջ ձայնաւորը փոխելով՝* խարխուր*, ձայնաւորի և բաղաձայնի փոփոխութեամբ միանգամայն՝* խարխուլ։—*Աճ.*

ՆՀԲ խարխալել «*խառնելով հալել կամ խլել զխարիսխն*»*.* խարխարել «*լծ. լտ.* carpo, carmino, discerpo»*։ Տէրվ.* Altarm. 28 *սանս.* khal, skhal, skhalita «*վարանիլ, դեղևիլ, ճօճիլ, տատանիլ*»*։* Canini, Et. étym. *12 սանս.* gara «*թոյն*» *և թրք.* aγrə «*ցաւ*» *բառերի հետ։ Վերի ձևով մեկնեց Աճառ. ՀԱ 1899, 205 և 234։ Թիրեաքեան, Արիահայ բռ. 179 բոլորն էլ պրս.* خار xār «*բորել*» *արմատից։*

ԳԻՒՒ.—Մշ. խլխլել «*խախտիլ, փլփլկիլ*»*.*

նոյն է նաև խրխլակ Ջն. «խարխուլ, փլփըլած»։

ԽԱՐԽԱՇՏԵԼ, կամ ԽԱՐԱՇՏԵԼ «աչքը մարմըրցնել». ունին միայն ՀՀՌ և ՓՌ.—այս նոյն խարխշաել բայը գիտէ նաև Բառ. երեմ. էջ 139, բայց սխալմամբ տող փոխցնելով՝ դէմը դնում է խարիսխ գոյականի բացատրութիւնը։

ԽԱՐԽԱՓ «կոյրի պէս ձեռքով այս ու այն կողմ շօշափելը». գործածւում է միայն նախդիրով՝ առ խարխափ, առ խարխափս, բնդ խարխափս Կոչ. 11, Ոսկ. յհ. ա. 9, Բուզ. որից խարխափել ՄԳր. Ոսկ. եփես. (գրուած խարխաբել Ջէնոր, էջ 10), «տերևների այս ու այն կողմ շարժուիլը» Ղևտ. իզ. 36. խարխափումն Դամասկ. խարխափանք Նար։

=Կազմուած է կա՛մ կրկնութեամբ պարզական *խափ արմատից և կամ -ափ մասնիկով՝ *խարխ անծանօթ արմատից.—Համմտ. շարշափիւն, բարբափ, գարգափ, սարսափ, կարկափիլ։—Աճ.

ՆՀՌ լծ. խարխել, խարխուլ, խաւար, ափ. շօշափ։ Peterm. 260 լծ. խարշափ։ Հիւնք. խուլ բառից։ Իբրև կրկնական է մեկնում վերի ձևով Աճառ. ՀԱ 1899, 233—5։

ԽԱՐԽԵԼ, տե՛ս խարխալել։

*ԽԱՐԽԻԱՐ «իշկոյ վարունգ» Բժշ. ունի միայն ՀՌուս. § 1030։

=Պրս. خر xar «էշ» և خیار xiyār «վարունգ» բառերից կազմուած, ինչպէս և հյ. իշավարունգ։

Ուղիղ մեկնեց ՀՌուս։

ԽԱՐԽՃՈՒԿ «պաճուճապատանք, խոծիկ, տիկնիկ». նորագիւտ բառ՝ որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Բրս. մրկ. 458 «Թէ դխարխճուկն կամ զայլ ինչ ի խաղալիկացն առնուցու որ, դառնանան (մանկունք) և աքսորեն յերկիր»։

⊙ԽԱՐԽՆՃԵԼ (իմա՛ խարխնջել) «զռալ» Ոսկիփ. (զուր տեղը ՆՀՌ դնում է նաև «քրտուիլ» իմաստը)։

=Բնաձայն բառ. կազմուած է խ պարզ ձայնից, կրկնութեամբ և ն, չ ածանցիչներով. ձևի համար համմտ. բարբանջել, արմատի համար համմտ. խանչել, խառնչել, խխրնջել, խրխնջել։—Աճ.

ԽԱՐԽՈՒԻԼ, տե՛ս խարխալել։

ԽԱՐՀԱՆ «արուարձա՞ն». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած 1291 Թ. մի արձանագրութեան մէջ. «Զգեղն Մեծոփ իւր մզրայիւքն և խարհանիւք և քրդագեղովն». (Վիմ. տար. 133)։

ԽԱՐՉ, ի հլ. (կայ նաև խարձուիմ, -ձանց) «եղեգնուտ, շամբ» Բուզ. 118. Փիլ. լիւս. 129. Իմաստ. 69. Պտմ. աղէքս. 125. Մարթին. Վրդ. առ. 193. Վստկ. 78. նոյն է և խարշ «եղեգնաշամբ» Բառ. երեմ. 140։

ՆՀՌ (խից բառի տակ) լծ. յն. χάραξ «ցից»։ Հիւնք. խրաց բառից։ ՀՌուս. § 1034 անդլ. furzy «մացառուտ»։

ԳԻՒ.—ՀՌուս. § 1034 յիշում է խարձի խոչ. «անպտուղ ծառեր, մանաւանդ անոնք՝ որոնց կը փաթթուի որթն»։—Նուպարեան, Բառ. ֆրանս. էջ 469 իբրև գտ. բառ գիտէ խարձ «կանաչագեղ գուղձ հողի, gazons», բայց կարծեմ թիւրիմացութեան արդիւնք է։

ԽԱՐՃԻ «անծանօթ բոյս, զոր յիշէ հին բժշկարանն՝ բաղշտակի հետ ի դեղս՝ երեսի և աչաց գոյն տալու». ունի միայն ՀՌուս. § 1035։

Նորայր ՀԱ 1923, 349 ուղում է նոյնացնել ճարաճ բառի հետ։ Տարբեր է երև. խարջի՝ որ խաղողի մի տեսակն է։

ԽԱՐՄԵՆԱՅ «սուտ, կեղծ» (գոհարի համար ասուած). մէկ անգամ ունի Ոսկ. բ. տիմ. էջ 232 «Երկու ակունք ի միոջ վայրի կային, մին խարմհայ, և մինն պատուական և մեծագնի». յիշում է միայն ԱՔ. չգիտէ ՆՀՌ։

+ԽԱՐՇ. արմատ առանձին անգործածական, որից խարշել «այրել, վառել» ՄԳր. «ջրի մէջ եփել, խաշել» Վրք. Հց. «սիրտը մաշիլ» ի գիրս Եսայ. «գութից սիրտը այրիլ՝ կտրտուիլ» Վրդն. եւ. Վրք. Հց. խարշումն Փիլ. տես. աղեխարշ Բրս. մրկ. աղեխարշեալ Լաստ. տապախարշ ՅՀ. կք. ոտքախարշ Վրք. Հց. աճխարշ Վրք. Հց. երկնախարշ Տօնակ. երկրախարշ ԱՔ. -ատ մասնիկով՝ խարշատել «խորովել, չարաչար այրել» Եւս. քր. Մանդ. «ծարաւից պապակիլ» Վրք. Հց. «գութով մորմոքիլ» Լմբ. մատ. 40, 531. խարշա-

տումն վանակ. յոբ. Լմբ. իմ. խարշապատիլ «արևից այրիլ» Վրք. հց. -ր-ի անկումով խաշ «մորթի վրայ փոքր բշտիկ» Գաղիան. (ըստ Նորայր, Բառ. ֆր. phlycténe. Համմտ. գւռ. Ѣrտիճխաշ «քրտինքից յառաջացած բշտիկներ»). որից խաշել Արծր. խաշոյ, խաշու «արգանակ» Մագ. Նչ. եզնկ. Մխ. բժշ. խաշմիս «խաշած միս» Վստկ. 221 ևն։

=Բնիկ հայ բառ, աճած է շ ածանցով՝ պարզական խար արմատից. բնդարձակ տե՛ս խար «դաղել, այրել»։

ՆՀԲ լծ. հաշիլ։ Տէրվ. տես խար բառի տակ։ Karst, Յուշարձ. 427 խարել, խարույկ բառերի հետ թաթար. yar «փայլիլ, այրել, բոցավառել»։ Թիրեաքեան, Բազմ. 1913, 341 Քրք. xaš-lamaq «խաշել» բայից։ Petersson KZ 47, 278 ուղիղ է մեկնում՝ համեմատելով լիթ. kápsztas ևն բառերի հետ և կցելով խորովել բայինն։ Pictet, բ. տպ. Բ. 405 սանս. kasāya, պրս. kask, ռուս. kaša հոմանիշների հետ է կցում հյ. խաշու «արգանակ»։—

ԳԻՒ.—Ալշ. Մշ. Զղ. Սչ. Վն. խաշել, Ախց. Գոր. Երև. Կր. Ղրբ. Ննխ. Պլ. Ռ. Սեբ. խաշել, Ասլ. խաշէ՛լ, Ագլ. Ակն. Խրբ. Մկ. Շմ. Ոզմ. խաշիլ, Հմշ. խաշուշ, Սլմ. խոշել, Մրղ. Տիգ. խոշէլ, Հճ. խէշիլ, Զթ. խէշիլ։—Նոր ձևեր են խաշ (Ախց. Սեբ. Երև. Տփ. ևն) «ոչխարի կամ տաւարի ստամոքսով են պատրաստած ապուր» (աւելի հին գործածութիւնն ունի Էֆիմ. 150), խաշաճաշ, խաշիլ, խաշլել, խաշլով, խաշխշիլ, խաշապաճ, խաշխուշ, խաշմայր, խաշոցք, խաշվռտել, խաշուխջուր, խաշուխփայտ ևն։—Ուրիշ է խաշ «թթխմոր», որ փոխառեալ է վրաց. ճաՇი խաշի հոմանիշից։

ՓՈՒ.—Վրաց. ხარშვა խարշվա «խաշիլ», დახარშვა դախարշվա «շատ խաշել», გამოხარშუა գամոխարշուա «եփելով կամ խաշելով հիւթը հանել», ხარშო խարշո «հացաթան», მეხარშე մեխարշե կամ մეხაშე մեխաշե «խոհարար», ნახარში նախարշի, მოხარშული մոխարշուլի «խարշեալ, եփուած», მოხარშვა մոխարշվա «ջրի մէջ եփել, կերակուր պատրաստել», ճաՇი խաշի «ոչխարի ստամոքսով ապուր, խաշ», նաճաՇე սախաշե «վարնոց ճաշարան», ինգ. մոխարշուայ, մինգ. խաշուա «խաշել», քրդ. خاشاندن xašandin «հռացնել, խաշել», خاشە xaše «եփած», خاشیل xašil «մի տեսակ արգանակ». Քրք. գւռ. S. xašil «մանածը խաշիլ անել» (Բիւր. 1899, 798), خشیل xašil կամ حشیل hašil «ալիւրի լոյծ խմոր՝ մանածը մէջը թաթախելով ամրացնելու համար» (Կամուս, Քրք. Քրգմ. Բ. 855 և 904), գւռ. Քրք. Երև. xašo «մրգերը եփելով և մէջը շաքար ածելացնելով պատրաստած խաշու» (=տճկ. xošaf, որ է պրս. xōš «անուշ, բաղցր»+āb, āv «ջուր»), օսմ. և ատր. Քրք. خاشلامق xašlamaq «խաշել», آشلامە xašlama «խաշու». կապադովկ. յն. χασὸω «խաշել» (Karolides, Γλωσ. σογχρ. 101). բայց պատահական նմանութիւն ունին օսքյ. xāšəm, xōšəm «եփած, տաք», xašəmtem «տաքանալ», xāšlem «տաքացնել, եփել»։ Ոստ. խաշիլ «ալիւրով և իւղով շինուած մի տեսակ կերակուր»։

ԽԱՐՇԱՓ «տերևների խշրտոց» Նեղոս 659. որից խարշափել «սօսափել» Ոսկ. մ. բ. 8. խարշափումն Մեկն. զետ. խարշափուն «խշշրտացող» Յոր. լ. 4 (բանջարի համար աւտած. տե՛ս աղիմայ). գրուած է խաշափ Նեղոս 710։

Peterm. 260 լծ. խարխափ։ Պատահական նմանութիւն ունի արաբ. خشف xaršaf «կանկար բոյսը» (Կամուս, Քրք. Քրգմ. Բ. 739)։

*ԽԱՐՇՈՒԿ «վայրի մանանեխ». ունի միայն ՀՌուս. § 955 (ազբիւրը անստոյգ).—Տիրացուեան, Contributo § 569 համարում է «lapsana communis L»։

=Արաբ خرشوف xaršūq (որ և حرشف ḥaršaf?) «կանկառ». տե՛ս Շպաչնշայդէրի հաւաքածոն՝ WZKM 12, 9 և 16. ցանկում այս արաբ բառը յաջորդում է ճիշտ خردل xardal «մանանեխ» բառին և այս պատճառով էլ շփոթութիւն է յառաջացել բառի իմաստի մէջ։—Աճ.

ԽԱՐՈՅԿ տե՛ս խար։

ԽԱՐՈՒ *«թշուառ». արմատ առանձին անդորձածական, որից ունինք* խարուածք *«թշուառութիւն, աղէտ, վնաս» Ոսկ. մ. ա. 5.* խարուեալ *«թշուառ, եղկելի» Ոսկ. մ. ե. 23 և փիլիպ. ժա, էջ 352 (վերջինիս մէջ այլ ձ.* խառուեալ*). կիւրղ. թգ.* խարուիլ *«խեղճանալ, չարչարուիլ» Ոսկ. պօղ. Ա. 36 (տպ.* ճարուիլ*, երկու ձևով էլ դնում է ԱԲ. իսկ ըստ Վարդանեան ՀԱ 1914, 326 ուղղել* խարուիլ*). այստեղ է պատկանում նաև* խրուակ *«աղքատ» Բառ. երեմ. էջ 147, որից առնելով ՓԲ՝ վրիպակով գրում է* խրուատ *«աղքատ, չքաւոր». ըստ այսմ այս բառերը պէտք է կարդալ* խարուակ*:*

Նշ՛Բ խարուեալ*=լծ. պրս.* խար, խոր *«թշուառ, անարգ», թրք.* fիրլի *«աղտոտ», իսկ* խարուաճ՝ *ի խարելոյ կամ ի* fարուակաև*: Տէրվ. տե՛ս* խարել *բառի տակ: Թիրեաքեան ՀԱ 1914, 58 պհլ.* xvār *և պրս.* خوار x^{v}ār *«անարգ, թշուառ» բառերի հետ. (բայց սրանք յարմար չեն մեր բառին, որովհետև պհլ. բառի նշանակութիւնն է «թեթև» և միայն նոր պարսկերէնի մէջ եղած է «անարգ, հեգ») (տե՛ս* Horn *§ 496): Nyberg, Hilfsbuch 2, 43 իրան.* xāδ- *արմատից, որից ունինք միայն զնդ.* vi-xaδ *«ջարդել»* (Bartholomae Altir. Wört. *531): Նշանակութիւնը յարմար չէ:*

***ԽԱՐՈՒԱՆԴԱՅ** *«ջորեպան կամ իշավար». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Ուռհ. 427 «Ունելով ընդ իւր մարդս հազար, ընդ ձիաւոր, ընդ ծլուկ, ընդ* խարուանդայ*, ընդ հետևակ»:*

=Պրս. خربنده xarbanda *«ջորեպան». կազմուած է* xar *«էշ» և* banda *«ծառայ» բառերից և նշանակում է բուն «էշի ծառայ»: Հին հայ ձևն է* խարբանդակ*, որ տե՛ս:—Ա՛Ճ.*

Հրատարակուած է նախ իմ Հայ. նոր բառեր հին մատ. Ա. էջ 191:

ԽԱՐՈՒԻՐԵԱՆ *«մութ, իմաստը ծածկուած, խրթին» Սեբեր. 83 (Որ ինչ յայտնի է՝ աւետարան է, և որ ինչ* խարուրեալ՝ *մարգարէութիւն). այստեղ* խարուրեալ *իբր հականիշն է յայտնի բառի. իմաստի զարգացմամբ դարձել է «մթնատեսիլ, տգեղ» Ոսկ. եփես. 830 (Քան զամենայն ծագիկ խամրեալք առաւել խարուրեալք. ուր յն. համապատասխանն է* ἀειδής *«տգեղ, զազրատեսիլ»). իմաստի նոյն զարգացումն է ներկայացնում հյ.* խըրիճ *«անհասկանալի. 2. տգեղ»: Բառիս պարզ արմատը պիտի լինի* խարոյր*:*

Նշ՛Բ «որպէս խարեալ խարուկեալ*»: Մ. Ս. Գաբրիէլեան ՀԱ 1908, 281* խաւար *և տխուր բառերին է կապում: Թիրեաքեան ՀԱ 1914, 58 թերևս ուղղելի* խաւարեալ*: Կապ չունի գւռ.* խարուրիլ *«կաթի երեսը սեր կապել. 2. խմորը ճաթռտիլ»:*

ԽԱՐՊԱՀ *տե՛ս Խարբախ:*

***ԽԱՐՊԻՉԱԿ** *կամ* **ԽԱՐԲՉԱԿ** *«սեխ» Մխ. Բժշ. 119. Տաթև. ամ. 597.—Հրուս. § 1038:*

=Պհլ. xarbūzak*, պրս.* خربزه xarbūza *կամ* خربوزه xarbuza *«ձմերուկ». պհլ. բառը ծագում է* xar *«էշ» և* būzak *«վարունգ» բառերից, որով բուն նշանակում է «էշի վարունգ» (տե՛ս* Horn *§ 474): Իրանեանից են փոխառեալ վրաց.* ხარბუზაკი *խարբուզակի կամ* ხარპუზაკი *խարպուզակի, թրք.* قارپز qarpuz *և սրա միջոցով էլ սերբ.* kàrpuza*, լհհ.* garbuz, harbuz, arbuz*, ռուս.* арбузъ*, բոլորն էլ «ձմերուկ» նշանակութեամբ* (Berneker 491)*:—Հիւբշ. 159:*

ԳԻՒ.—Հին Ջղ. խարբզակ*, Տփ.* խարբուզակ*, Ագլ.* ճրբբզէօ՛կ*, Հւր.* խmբիրձmկ*, բոլորն էլ «սեխ»:*

ԽԱՐՍԻ *տե՛ս Հարուստ:*

ԽԱՐՏ, ի հյ. «խարտաճի փշրտուք» Ճհ. կթ. որից* խարտել *«խարտոցով մաշել, փըշրել». Եղ. լբ. 20. Առակ. իէ. 17. Սեբեր. 97. Կոչ. 109.* խարտաճոյ *«խարտելով շինուած» Ագաթ.* խարտոց *Փարպ.* խարտուխ *«խարտուած փոշին» (չունի ԱԲ) Առաք. պտմ. էջ 459 (տպ.* խարդուխ*):*

=Ասոր. ܟܪܛ xraṭ *«մէջից կտրել, ձեռվ, քերել, փորել», եբր.* חֶרֶט ḥereṭ *«փայտ տաշելու դուր, փորագրելու դրիչ (քանդակագործի)», արաբ.* خرط xarṭ *«ճախարակով յղկել»,* خرّاط xarrāṭ *«խառատ, հիւսն»:—Ա՛Ճ.*

Հիմնք. պրս. fեարտիւ *«խարտոցեալ, մանրեալ իր»:* Justi, Dict. Kurde 148

սրա հետ է միացնում քրդ. خارە xare «ciselé, *մկրատուած կտորտանք»։ Թիրեաքեան, Արիահայ բռ. 180 պրս.* خرده xurda «*մանր*» *բառից։ Պատահական նմանութիւն ունի տասր.* جرة gərat̰ «*քանդակել*»։ Petersson IF 43 (1925), 75 *հնխ.* khṛd- *արմատից. հմմտ. սանս.* khard «*կծել*», *որի պարզականն է* kher- «*քերել*»։

ԳԻՒ.—Ախց. կր. Ղրբ. խարտել, *երև.* խա՛րդել, *Ալշ. Մշ. Ջղ. Սլմ.* խառտել, *Գոր.* խա՛ռտել, *Սեբ.* խաղդել, *Մկ.* խառտիլ, *Խրբ.* խաղդիլ, *Տիգ.* խռդել, *Ագլ.* խա՛ռթիլ, *Վն.* խառտել, խառտոցել, *Մրղ.* խարռուի՛ց, խարռուի՛ցել, խարռուցել, *Տփ.* խարռուց, խարռուիս, *Ակն.* խաղդէօց։ *Այստեղ են պատկանում նաև* խարա, խարռոց «*յեսան, սրելու քար*», խարտել «*խօսքով վիրաւորել*», խարտաճարել «*դեշ ակնարկով վիրաւորել, չարշարել*», խարտ «*մեղուի, կարիճի են խայթոց*».—«*սրել*» *իմաստի համար հմմտ. Եւագր. էջ 107 «խարտեացեն զայն և առաւել ևս սրբեացեն» (ուր* խարտել *բայի համապատասխանն է յն.* ἀκόνωντες «*սրել*»)։

ՓՈԽ.—Վրաց. ხარტი խարտի «*կացին սրելու յեսան*»։

*ԽԱՐՏԱԼ «*մանանեխ*» *Բժշ. վտկ. 168. ունի միայն ՀԲուս.*

=*Արաբ.* خردل xardal, *որից Թրք.* حردال hardal «*մանանեխ*»։

Ուղիղ մեկնեց ՀԲուս. § 1966։

*ԽԱՐՏԱՓԻԼԱԿ, *որ և* խարտաւիլակ, խարտաֆիլակ, *ի–ա հլ.* «*կրօնաւոր ձեռնադրուող անձի օժանդակը*» *Մ. Մաշտ. 237, 240, 242. ունին միայն ՀՀԲ և ՋԲ։*

=*Յն.* χαρτοφύλαξ «*դիւանադպիր, դպրապետ, դիւանապան*». *կազմուած է* χάρτης «*թուղթ*» *և* φύλαξ «*պահապան*» *բառերից և նշանակում է բուն «թղթապահ»։*

Ուղիղ մեկնեց նախ ՀՀԲ, յետոյ ՆՀԲ (բղբապահ բառի տակ)։

ԽԱՐՏԵԱՁ *(սեռ.* -աձի) «*շէկ, դեղնակարմիր*» *Ղևտ. ժգ. 36. Ա. Թագ. ԺԴ. 42. Եւս. քր. Ոսկ. կող. (նոր գրականում համարւում է շագանակագոյնի և շէկի մէջտեղը). գրուած է նաև* խարտեշ, խարտէշ, ճարտեաշ *(Եպիփ. կիպր.). ածանցման մէջ երևում է* խարտեշ- *կամ* խարտիշ- *ձևով. հներից ունինք* խարտեշանալ *Ղևտ. ժգ. 30, 32.* խարտեշագեղ *Երզն. քեր.* խարտեշագոյն *Ջքր. կթ. Տօնակ.* խարտեշամուրուս *Յայսմ.* խարտեշութիւն *Դամասկ. բայց յետին ոմկ.* խարտիշուկ *Շնորհ. առակ. և արդի գրականում՝* խարտիշագոյն, խարտիշագեղ *են։*

ԽԱՐՏԵԼ, *անստոյգ բառ, որ մէկ անգամ գործածում է Սմբ. պտմ. 98 «Աւերեցին զքաղաքս և զգեօղս նոցա զառարկ թողին ի կումշէ և խայտառակ խարտեալ զնոսա» (տպ. Մոսկ. ունի* խրատեալ)։

ԽԱՐՏԻՆԱ *«մի տեսակ բոյս.* erinus? *Բժշ. ունի միայն ՀԲուս. § 1039։*

ԽԱՐՏՈՒՐԱՐ *տե՛ս Քարտուղար։*

ԽԱՑԱԿ «*արատաւոր, վրան պուտ պուտ բծեր ունեցող*». *նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Առաք. պտմ. 464 «Մարգարտին խացակն ու դեղինն ի տարէն եղանակէն է»։ Նոյն բառը ունի Ներսէսովիչ, Բառ. լտ.-հյ. 561 բ «հիւանդ, տրկար,* valetudinarius» *նշանակութեամբ։ Սրանից է կազմուած* խացկութիւն «*մի տեսակ մահացու յօդացաւ, որ և տապար ցաւ*» *Դրնդ. 355 և 378, որոնց մէջ տալիս է նաև նոյն հիւանդութեան նկարագիրը։*

ԳԻՒ.—Այս բառը պահել են խացակ *ձևով՝ Ակն. Արբ. Եւդ. Խր. Շհ. Սեբ. «բժախն, աչքիը ցաւում», 2. Ակն. «խոցոտ (պտուղ)». 3. Ջղ.* (Rivola) «*հիւանդոտ, վատառողջ*». *որ և Մշ.* խածակ «*հիւանդոտ. 2. աչքերը ցաւոտ. 3. կոտրած, ճաթած (ման)*», *որանից բայական ձևով* խասկիլ *Եւդ. «հիւանդութիւնից յետոյ նիհար և վատառողջ մնալ. կատարելապէս չապաքինիլ»։*

ԽԱՑԱԿԵԼ «*ծախսել, սպառել, պակասեցնել*», *նորագիւտ բառ, որ երկու անգամ գործածուած է միջին մեսրոպեան երկաթագիր մագաղաթեայ մի պահպանակի վրայ, որ թւում է թէ Ոսկեբերանի գործերից մի պատառիկ է, ոսկեզարեան թարգմանութեամբ. «Քանզի ոչ ոք ի ձէնջ այնուհետև դիւրաւ ճացակիցէ ինչ յոսկւոյն՝ կերակրել զքաղցեալսն. ուր և ինքն իսկ ընդ նեղ և տառապանաւք կամիցի կեալ և ոչ անտի ինչ խա-*

ցակել, *վհա՞րդ զայդան անտի կերակրիցէ»։ (Այնուհետև ձեզանից ոչ ոք դիւրութեամբ իր ոսկիների մի մասը չպիտի ծախսէ՝ կերակրելու համար սովածներին. երբ ինքը իրեն համար նախընտրում է նեղ ապրել և ոսկուց չծախսել, ուրիշներին ի՞նչպէս պիտի կերակրէ)։ Երկու ընթերցուածներից նախընտրելի է խացակել, որովհետև այս բառը ձեռագրում ընկած է տողի սկիզբը և ամբողջութեամբ գրուած է. իսկ հացակել ընկած է տողի ծայրը և տողադարձուած (այսպէս՝ հաց-ակել)։ Այս պարագային գրիչը կարող էր շփոթել հաց բառի հետ։

Նորագիւտ բառս գտաւ ու մեկնեց Շաւարշ ծ. վ. Սահակեան, ՀԱ. 1913, 54—60։

ԽԱՑՓՐԵԼ, *տե՛ս* *Խածաբրել։*

ԽԱՑՓՑԻ «հատ նիւթից շինուած հագուստ». *ունի միայն ԱԲ. վկայութիւնը յայտնի չէ։*

ԽԱԻ, n *հլ.* «բարդ, շերտ». *որից* խաւ ի խաւ, խաւ ի խաւոյ «շերտ շերտ իրար վրայ բարդուած» Վեցօր. 97, 165. խաւել «կարդ կարդ, վրայէ վրայ, բարդ բարդ (կերակրի համար ասուած)» ԱԲ. խաւամառս «կարտոն, մուխավա» (նոր գրականի մէջ)։ *Արդեօք սրա հետ նո՞յն է՝*

ԽԱԻ (*յետնաբար* n, ու *հլ.*) «աղուամազ, կերպասի վրայի բարակ թաւութիւնը, պտուղի վրայի բարակ աղուամազը» Շնորհ. առ. Բժշ. խաւուռ (*նոր գրականի մէջ*)։

=*Բառիս հետ նոյն է ուտ.* խա «բուրդ», *որից* խալու «բրդոտ» *ևն։*

ՆշԲ արամատ խաւար *բառի, յծ. թրք.* qat «յարկ» *և* xav, hav, *յորմէ* xavlu, havlə: *Հիւնք. պրս.* xaf «պատատանք, ծրարք, ծալք հանդերձից»։

Գիր.—Ախց. Երև. Կր. Ղրբ. Մրղ. Ննխ. Պլ. Ռ. Սեբ. Տիգ. Տփ. խավ, *Ագլ. Շմ.* խօվ, *Մշ.* խաֆ «կերպասի խաւ»։

Փոխ.—Վրաց. ხაო խաո «բուրդի խաւ», **ხავოანი** խավոիանի, **ხაოანი** խաոիանի «խաւուռ, թաւ», *թրք.* خاو xav «թաւութիւն ասուեաց, աղուամազ», خاولو xavlu (*ռմկ.* havlu) «թաւուռ. 2. մի տեսակ բրդոտ երեսսրբիչ. 3. ղենջակ», *սերբ. բուլգ. (Թուրքերէնի միջոցով)* havlija «խաւուռ, թաւ, բրդոտ», *ուտ.* խա «բուրդ»։

ԽԱԻ, n *հլ.* «բարակ սպիտակ հրիպ, որ կրօնաւորների կնդուղի եղրն էր պատում» *Վրք. Հց. Մաշտ. Տաթև. ամ. 442—3 (Առանց խաւոյ, որ է սպիտակ ծիրն)։*

Նորագիւտ բառ, որ երևան հանեց Հացունի, Պատմ. տարազի, էջ 426 և 430։ ՆՀԲ գիտէ առաջին երկու վկայութիւնները, բայց հասկանում է «բրդի խաւ»։

***ԽԱԻԱՂԱՆ** «հիւանդի այն վիճակը, երբ տաքութիւնը ներս տալով մահ է պատճառում» (*ըստ հին բժշկութեան*). *նորագիւտ բառ, որ մի անգամ գործածում է Մխ. բժշ. 78* խավաղան *ձևով (այլ ձ.* դաֆաղան, խափական, խափանակ)։

=*Արաբ.* خفقان xafaqān «սրտի բաբախումը» (>*ռմկ.* աֆախան). *որից տառադարձած է լտ.* cafacan:

Ուղիղ մեկնեց Seidel *Մխ. հեր. էջ 189, § 221։*

ԽԱԻԱՆԲԱՐ *կամ* **ԽԱՇԱՆԲԱՐ** «լուլակ». *ունի միայն Բառ. երեմ. էջ 138 և 140. մին կամ միւսը սխալ է։*

***ԽԱԻԱՆԴ** «տիկին». *նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Օրբել. էջ 308 «Նա առնոյր իւր կին զխաւանդն Նախջաւանու զԵսուգանն. առեալ էր և միւս կին զԳոնցայն և ունէր ի նմանէ գաւակ մի»։*

=*Պրս.* خانواده xanvāda «տիկին, տանտիկին» *բառից՝* n *բաղաձայնի տեղափոխութեամբ։—Ա.Ճ.*

Թէ՛ Շահնազարեանի և թէ էմինի հրատարակութեան մէջ խաւանդ *յատուկ անուն է համարուած։ Բայց խօսքի ընթացքը ցոյց է տալիս որ այսպէս չէ. իշխանի առած կնոջ անունն է Եսուգան և հետևաբար* խաւանդ *պէտք է լինի հասարակ անուն։ Վերի ձևով կլինի «առնոյր իւր կին զտիկինն Նախջաւանու՝ զԵսուգանն»։ Մի ձեռագիր ունի «առնոյր իւր կին զխաւանդն և զնախջաւանու զԵսոգանն»։ Այս ձևի տակ* խաւանդը *չի կարող հասարակ անուն լինել և իշխանը կունենայ երեք կին. բայց միւս*

բառը, ինչպէս և զնախչաւանու զեսգաեն անյարմար ձևը, ցոյց են տալիս որ ձեռագրի տարբերակը ուղիղ չէ։

ԽԱԻԱՆՆԵԱԼ *«վկայեալ». ունի միայն Բառ. երեմ. էջ 140։*

***ԽԱԻԱՐ.** ի–ա հլ. «մուխ, մխուխիւն» ՍԳր. Ագաթ. Ոսկ. յհ. ա. 4. Վեցօր. եզն. որից* խաւարիլ *ՍԳր. Վեցօր.* խաւարին *ՍԳր. եզն.* խաւարայինն *Սղ. ժէ. 12. Իմ. ժէ. 17. եզն. (բոլորն էլ իբրև ոչ-ոսկեդարեան՝ ուղղելի* խաւարին՝ *ըստ Վարդանեան ՀԱ 1922, 474),* խաւարաբանդարգել *Սերեր. էջ 38.* խաւարագգած *Ագաթ. Ոսկ. մ. ա. 20.* խավարակեաց *Վեցօր. 172.* խաւարասէր *Վեցօր. 172.* խաւարուտ *Ա. եզր. դ. 24. Ոսկ. յհ. ա. 6.* խաւարչուտ *Ագաթ. եզն.* խաւարչտական *Ագաթ.* խաւարչային *Բ. պետ. ա. 19. Ոսկ. յհ. բ. 23.* անխաւար *Ագաթ.* խաւարամածնալ *(չունի ՆՀԲ) Ոսկ. բ. տիմ. 192 ևն։*

=Պազենդ. xvāwar, *պրս.* خاور xāvar, *պհլ.* x^{u}āpar, *համմտ. նաև պհլ.* 𐭧𐭥𐭫𐭥𐭲𐭥𐭫𐭠𐭭 x^{u}arvarān, 𐭧𐭥𐭫𐭥𐭲𐭥𐭫𐭠𐭭 xorbarān, *մանիք. պհլ.* גּוֹרפּראן xōrparān (Salemann, ЗАН *8, 92). բոլորն էլ նշանակում են «արևմուտք». պարսիկ բառը կարող էր ունենալ նաև «մուխ, խաւար» նշանակութիւնը. նշանակութեան զարգացման համար համմտ. արաբ.* مغرب maγrəb *«արևմուտք», որից խարբերդի բարբառով մղար «մուխ, խաւար»։ Թէև Հիւբշման, էջ 159 դժուար է գտնում այսպիսի հին և շատ գործածական մի բառ պարսկերէնից դնել փոխառեալ, բայց եթէ ընդունինք խաւարը իբրև կրօնական գաղափարի արտայայտութիւն, փոխառութիւնը այլ ևս տարօրինակ չի թուիլ։—Հիւբշ. էջ 159։*

ՆՀԲ խաւ *«թաւութիւն» արմատից։* Lag. Urgesch. 955 *և* Spiegel BVS *5, 400 պրս.* xāvar *բառի հետ։ Տէրվ.* Altarm. *30 սանս.* kšap *«գիշեր», զնդ.* xšap *«գիշեր», պրս.* شب šab, *յն.* ψέφ-ας, κνέφας *«մթութիւն»,* σκέπω *«ծածկել» բառերի հետ։ Թիրեաքեան, Պատկեր աշխ. գրակ. Ա 195 (յետոյ ՀԱ 1914, 58) և Հիւնք. պրս.* խավէր։ *Հ. Ա. Բագրատունի, Հայկ Դիւցազն, էջ* 619 *և Քերակ. զարգաց. 1408 իրար է կցում յն.* χάος *«քաոս», հյ.* խաւ *և* խաւար։ *Հիւբշ. 305 յիշում է ըստ Նէօլդէքէի ասոր.* ܚܒܪܐ xabbārā *«մթութիւն», որ սակայն հյ. պիտի տար *խաճբար։* Patrubány *ՀԱ 1908, 275 և* LF *14. 57 հնխ.* skeu *«ծածկել» արմատից, ինչպէս և լտ.* obscurus։ *Թիրեաքեան, Արիահայ բռ. 49 պրս.* خواب xāb *«քուն» բառից՝ –ար մասնիկով։ Պատահական նմանութիւն ունին սանս.* kavara *«մուխ, խաւար, մթութիւն», գնչ.* kivar *«երեկոյ»։*

ԳԻՒՒ.—Ալշ. Ախց. Գոր. երև. Խրբ. Կր. Ղրբ. Մկ. Մշ. Շմ. Ոզմ. Պլ. Սլմ. Սչ. Սեբ. Վն. Տփ. խավար, *ՀՃ.* խավօյ, *իսկ Ասլ.* խավար *«Աւազ Ուր. գիշեր». —Մրզ.* խավարում, *Պլ.* խավարում, խավարման *ֆիշէր «Աւազ Ուր. երեկոյ».—բայական ձևերից յիշենք Խրբ. Պլ. Շմ. Ռ.* խավարիլ, *Սչ. Վն.* խավարել, *Ագլ.* խավա՛րիլ, *Տփ.* խա՛վրիլ, *Գոր. Ղրբ.* խավա՛րէլ։ *Նոր բառեր են* խաւարակալել, ափախաւար։

—**ԽԱԻԱՐՕԻ** *«որթի փափուկ, կակուղ և մատղաշ ծիլ». համմտ. «Ինքեանք փափուկք և պէսպէս դարմանօք օր ըստ օրէ ևս քան զևս իբրև զխաւարծի փափկանայինն». Ոսկ. հփնս. էջ 814. «Կանգնեցան կապին (յորթն) արմատք և ստունկք, կողր և տերևք, խաւարծի և ծաղիկք, բաժակ, ողկոյզ, գնդակ, պատառիճ» Վեցօր. 94։ Սրա հետ պէտք է նոյն դնել* խաւարծիլ *(որ և գրուած է* խավարծիլ, խաւրծիլ, խօրծիլ, խործովիլ, խործուիլ, խործիլ, խորձուիլ, խրձուիլ*) «գաթծիլ, խաշնդեղ, rheum ribes Gron». (տե՛ս Տիրացուեան, Contributo § 100) Գաղիան. «որթի մատղաշ ծիլ» Վասակ. 60. «վայրի վարունգ» լեհ.* խաւարտ, ի, ի–ա *հլ. «կանաչեղէն, ուտելի բանջար» Կոչ. 116. Եսապ. 7. Վրք. Հց. Ա. 200. Մագ. Թղ. 96 (գեազարդ* խաւարտ, *այսինքն «հազար կոչուած բանջարեղէնը»), «վարունգ, կազամբ» Բժշ. «խիար կամ խաւարծիլ» Հին բռ. որից* խաւարտածին *«խոտ ուտելով մեծացած» Մագ. Թղ. 88։ Սրանցից չենք կարող բաժանել նաև վիպասանական «Տենչայր Սաթենիկ տիկին տենչանս զարտախոյր խաւարտ և զտից խաւարծի*

ի բարձից Արգաւանայ» հատուածի մէջ (հոր. Ա. 29) խաւարտ և խաւարծի *բառերը՝ որոնք ըստ իս* արտախոյր և տից *գոյականների ածականներն են (տե՛ս իմ յօդուածը ՀԱ 1908, 124)։*

=Բոլորն էլ ծագում են խաւ *«աղտամազ» ձևից.* խաւարծի *կազմուած է* -ածրի *կամ* -արծի *մասնիկով. հմմտ.* բաւարծի, աղ-արծի *կամ* աղ-ածրի։—խաւարածի *բառի հետ նոյն է* խաւարտ *(ծ=տ. հմմտ.* խայտ—խայծ, խեղդ—ճեղճ, արծ—արտ, պիղծ—պըղտոր *են)։ Իսկ* խաւարծիլ՝ խաւարծի *բառի հաւատական ձևն է, որ ծիլ բառի նմանութեամբ ստացել է աւելորդ լ ձայնը։* Խաւարծի *և* խաւարտ *նախնապար նշանակում էին «բաւտա, մազոտ, բրդոտ, աղտամազոտ» և էին պարզ ածական. յետոյ իբր գոյական՝ յատկացուեցան «բաւ՝ բրդոտ ծիլ՝ ընձիւղ և բանջար» նշանակութեանց և ի վերջոյ մասնաւորապէս «որթի ծիլ, խաշնդեղ կամ ուրիշ բանջար», որանց երեսի բաւութեան պատճառով։ Այս են հաստատում վիպասանական երգի* խաւարծի *և* խաւարտ *բառերը՝ որոնք դեռ ածական են՝ «բաւտա, բրդոտ, մազոտ» նշանակութեամբ (ըստ այսմ* արտախոյր *և տից բաւ տերևներով բոյսեր պէտք է լինին), ինչպէս նաև մեզանից փոխառեալ կովկասեան ձևերը՝ որ տե՛ս վարը (բաւիշ կամ անթառամ ծաղիկ նշանակութեամբ)։—Աճ.*

Այս բառերի վրայ տրուած զանազան մեկնութիւններ տես արտախոյր *բառի տակ։ ՆՀԲ* խաւարծի *նոյն ընդ* խաւարտ։ Bugge IF *1, 450* խաւարտ *բառից հանում է* խաւարծի։ *Հիմնք.* սաղարթ-*ից* խաւարտ, *որից* խաւարծի, *որից* աղարծի *և* բաւարծի, *որից էլ* բաւ։ *Վերի ձևով մեկնել եմ ՀԱ 1908, 124։*

ԳԻՒ.—Ոզմ. խավառծէ՛լ, *Վն.* խավրռծիլ, *Մկ.* խոմվրռծիլ, *Ալշ. Մշ.* խավրռնիլ, *Խրբ.* խավրռնիլ *«խաւրծիլ բոյսը», իսկ Հճ.* խավիռնիլ *«խաղողի որթի մատղաշ ծիլ»։ (Խրբ. «գաղա՞ր»)։*

ՓՈՒ.—Վրաց. ხავერდი խավերդի *«բաւիշ», բայց նաև «անթառամ ծաղիկ, ռուս.* бархатникъ, *լտ.* amarantus», ხავარტა խավարտա *«մամուռ», մինգր.* խավերդի, խավիդի *«բաւիշ, անթառամ ծաղիկ», թուշ.* խավերդ, *սվան.* խավերդի, խավեդ, *չէրքէզ.* ախովերդ *«բաւիշ»։*

ԽԱԻԱՐՏ *տե՛ս* խաւարծի։

ԽԱԻԱՐՏԻԼ *տե՛ս* խաղաւարտ։

ԽԱԻԵԱԿ *«փոքր սափոր, խեցեղէն աման». մէկ անգամ ունի Ոսկ. ես. 52 «Ուր գործիցեն տասն լուծք եղանց, եղիցի անդ խաւեակ մի». առնուած է Ես. ե. 10 հատուածից. «Ջի ուր գործիցեն տասն լուծք եղանց, եղիցի անդ սափոր մի»։*

ՆՀԲ յծ. թրք. qavanoz *«փարչ»։ Շէֆթէլովից* BB *29, 69 ասուր.* xabu *«պրտուկ» բառից փոխառեալ։ Աճառ. ՀԱ 1909, 160 թևրևս կաւ բառից կազմուած, իս և կ ձայնների յաջորդութեամբ։ Հացունի, ճաշեր 103 ուզում է կարդալ կաւեակ, ըստ որում յն. բնագիրն ունի* κεράμιον, *որ է «կաւեղէն»։*

*ԽԱԻԻՄ *«ալիւրով պատրաստուած՝ խիւսի նման մի կերակուր». ունին միայն ՀՀԲ և ՋԲ. գաւառական բառ է, բայց ձևը ցոյց է տալիս, որ հին է. իրօք էլ մէկ անգամ գրտնում եմ գործածուած Վստկ. 213 «Գարէ աւիւր և մուստաս և հոտոմ ձէթ խաւիծ արա՛»։*

=Ասոր. ḥəwīṣā *«մի տեսակ խմորեղէն». առաջին նշանակութիւնն է «թանձր»* (Brockelm. Lex. syr. *102 ա*). *բառիս հետ նոյն է արաբ.* xabīṣ *«արմաւով և իւղով կամ թէ ալիւրով և մեղրով պատրաստուած մի տեսակ հրուշակ». ծագում է* xabṣ *«մի բան մի ուրիշ բանի մէջ լցնելով խառնել» արմատից, որից նաև ունինք* xabṣ *«խաւիծ եփել»,* maxbaṣa *«խաւիծը խառնելու և դարձնելու յատուկ շերեփ»,* taxbīṣ, taxabbuṣ, ixtibāṣ *«խաւիծ պատրաստել» (տե՛ս Կամուս, թրք. Բրգմ. Բ. 371)։ Արաբերէնից են փոխառեալ նաև քրդ.* xabis *«խաւիծ», xabisa šekeri «անուշեղէն»։—Աճ.*

ՆՀԲ դնում է խիւս *բառից (տե՛ս այս բառը)։*

ԳԻՒ.—Ախց. Դվ. երև. *Լ. Կր. Ղրբ. Վն. Տփ.* խավիծ, *Ալշ. Ակն. ՋԲ. Հմշ. Նախ. Պլ. Մշ. Սեբ.* խաւիծ, *Մրղ.* խաւիծ, *Ռ.* ճավիծ. *Նոր բառեր են* խաւծարար, խաւիծխարան։

ՓՈԽ.—վ.բաց. ხავი̊ *խավիծի «կարագով պատրաստուած մի տեսակ խմորեղէն»։*

ԽԱՒԻՐ *«դրախտ կամ բուրաստան» Հին բռ. Բառ. երեմ. էջ 140. նոյնպէս Կ. Սարաֆեանի Բանալի գիտութ. Պետերբ. 1788, էջ 103 ունի «պօստան կամ խաւիղ.* огородъ». *իսկ ԱԲ դնում է «պարտէզ կամ պարտիզի մէջ լաբիրինթոս»։ Անստոյգ բառ։*

ԱԲ-ի բացատրութիւնը թերևս բաւիղ բառն է ակնարկում։

ԽԱՒԻՈՂ *տե՛ս խուխ։*

ԽԱՓ *«որոգայթի մէջ բռնուիլը» Ոսկ. ես. «արգելք, խափանում» Նչ. եզեկ. որից ի խափ անկանիլ «որոգայթի մէջ բռնուիլ» Բուզ. և. 38. խափան «արգելք, ընդհատում» ՍԳր. Ագաթ. Ոսկ. յհ. ա. 2, 10. «դադարկ, ամայի, պարապ» Ոսկ. յհ. ա. 43. Կոչ. խափանած ել. իա. 19. Ա. մակ. ժբ. 31.* խափանածոյ *Ոսկ. յհ. ա. 10.* խափանել *«արգելք լինել, դադարեցնել» ՍԳր.* խափանիչ *«արգելող» Ա. մնաց. բ. 7. Ոսկ. մ. ա. 13* խափանութիւն *Սեբեր.* խափնուլ *«աչքը փակուիլ, տեսութիւնը կորցնել, կուրանալ» Ոսկ. մ. փիլիպ. «դադարիլ, վերջանալ» Ոսկ. եբր.* խափչիլ *«մարիլ, հանգիլ» Վեցօր. 57 (տես յափչիլ), Անյ. հց. իմ.* խափուցանել *«փակել (աչքը), դոցել, մարել, հանգցնել (կրակը, ճրագը)» Ոսկ. մ. ես. Եղն.* անխափան *ՍԳր. Կոչ. Ագաթ.* խափանաւոր *(նոր բառ). իսկ ՋԲ* խափական լինել *«սիրտը թնդալ, բաբախել» գործ չունի այստեղ և նոյն է խաւադան բառի հետ (տե՛ս անդ)։* Խափարմատի *ձայնդարձն է խուփն. սրանց պէտք է կցել նաև թերևս* կափ *(տե՛ս այս բառերը)։*

ՆՀԲ լծ. թրք. qapa-maq *«փակել» լտ.* capto, *հյ.* խաբել: *Տէրվ. Նախալ. 111* խափ, խափանել, խափնուլ, խուփն *դրնում է հնխ.* skap *«ծածկել, փակել» արմատից. համմտ. յն.* σκέπω *«ծածկել», սանս.* kšap, *գնդ.* xšap, *պրս.* šab *«գիշեր» և հայ. շապիկ (իբր ծածկոյթ)։ Մորթմանն* ZDMG *24, 80 ևն թրք.* qapa-maq *«փակել»։ Հիմնք. թրք.* qapaq *համանիշից է դնում խուփ, որից խփել, խափանել, խափանիլ, խափուցանել և կափուցանել: Pedersen* IF *5, 64 ծան. լտ.* habēre, *գոթ.* haban *«ունենալ» բառերի հետ, որ ընդունում է նաև Հիւբշ.* IF Anz. *10, 47. (Հայ բառի բուն իմաստն է «փակել, ծածկել», ուստի չգիտեմ թէ ի՛նչ կապ կարող են ունենալ այս բառերը)։ Նոյն, Հայ. դր. լհգ. 147. յն. χάβος «երախճան»? և* KZ *38, էջ 388 հսլ.* chopiti *«կծել», լհհ.* chapac *«բռնել», հսլ.* ochąpiti *«պարունակել, պարփակել»։ (Այս մեկնութիւնները մերժում է* Berneker 396): Karst, *Յուշարձ. էջ 427 ՔՔր.* yap, yab, yam *«ծածկել» բառի հետ։ Մարտիրոսեան ՀԱ. 1924, 458 խուփ=հաթ.* xup'raš *«ամանի խուփ»։ Պատահական նմանութիւն ունին արաբ.* خفّ xaff, *եբր.* כפה xff *«ծածկել»,* כפה xuffā *«ծածկոյթ, ծածկոց»։*

ԴԻՒ.—Այն. խափան *«կողովի բերանը փակելու համար դրուած կտաւ կամ օրթի ճիւղ ևն», Խն. «տօն օր, զատիկ», Ղզ.* խափան մնալ *«գործը խանգարուիլ», Առն. «առունը կործանուիլ», բայական ձևով՝ ՋԲ. Խրբ. Հճ. Ոզմ. Ռ.* խափանիլ, *Ախց. Երև. Կր. Սեբ. Ննխ. Պլ.* խափանէլ, *Տփ.* խափանիլ, *Տիգ.* խոփոմնիլ, *Ալշ. Մշ.* խապանել, *Շմ.* խափանվէլ, *Սլմ.* խոփոմվել.—*բայց պէտք է զանազանել* խափանել, խափանիլ *«չարը արգելուիլ» (օրհնէնքներում միայն գործածական), «գործը խանգարուիլ ևն», և* խափանիլ *«երեսի վրայ գլորիլ, գետին տապալիլ», ինչպէս գիտեն Պլ. Ռ. ևն։ Վերջինը ձևացած է թրք.* qapanmaq *համանիշից. համմտ. ոմկ.* խափանմիշ ըլլալ *(օր. էրէսի վրա խափանմիշ էղավ) և կապ չունի առաջինի հետ։*

ՓՈԽ.—Ուտ. խափանբեսուն *«խափանել», խափանբաքսուն «խափանուիլ»։*

***ԽԱՓԱՆՔ** *«Կշիռ համաստեղութիւնը» Տումար. (ըստ Ալիշ. Հին հաւ. էջ 129)։ Նորագիւտ բառ։*

=Արևել. թրք. قپان qapan *«մեծ կշիռ»։ Բառս այժմ էլ գործածական է Կովկասում ղափան ձևով։—Աճ.*

ԽԱՓԱՐ *«թաւ, թանձր». առանձին չէ գործածուած, բայց սրանից ունինք* խափարա-

ձայն «հաստ ձայնով» Երզն. քեր. խափարական «թաւ, հաստ» Վրդն. ծն. (երկուսն էլ գործածուած են եգիպտացոց հնչումը որակելու համար).—իսկ Վրդն. պտմ. տպ. Վենետիկ, էջ 12 և հրտր. Էմինի, էջ 19 նոյն բառը գրուած է խարափանձայն:

ՆՀԲ լծ. խափչիկ, խփտի կամ հնչիւն խաֆ տառի և կամ Թրք. խապա «թանձր»:

*ԽԱՓԻԹ կամ ԽԱԲՈՏ «երեսնակ ծաղիկը» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 1044:

=Արաբ. غافِث γāfit «երեսնակ». այս բառը չունի Կամուս. բայց կայ Շթայնշնայդերի հաւաքածոյի մէջ՝ WZKM 12, 223:

Ուղիղ մեկնեց ՀԲուս. § 175:

*ԽԱՓՇԻԿ «եթովպացի, հնդիկ» Վրք. հց. (գրուած է նաև խարշիկ. արդի լեզուն գիտէ միայն խափշիկ «սեամորթ» նշանակութեամբ). հմմտ. նաև ճարաշի:

=ՊՀլ. *xabašīk հոմանիշից. հմմտ. արաբ. պրս. حبشی ḥabašī «եթովպացի» (յունական ձեւաւորմամբ Աբիսսինիա բառն է). բառիս պահլաւական ծագման ապացոյց է -իկ վերջաւորութիւնը (հմմտ. ճնդիկ, խուժիկ, պարսիկ). հայերէնում միջին ա ընկնելով՝ բառը դարձաւ նախ խարշիկ, ուր ր ձայնը յաջորդական շ-ի մօտ փ-ի վերածուելով՝ ձևացաւ խափշիկ:—Հիւրշ. 159:

ՆՀԲ ռմկ. հապէշ, որ իրօք նոյն բառն է՝ Müller SWAW 42, 253 արաբ. ḥabašī, որ չի ընդունում Lag. Arm. Stud. § 983: Lag. Gr. Agath. 152 համեմատում է Հեսիքիոսի καμψικίζειν բառի հետ:

*ԽԱՓՂՈՒՐ «ոչխարի հարկ». մէկ անգամ ունի Կիր. 218 «Այլ և միւս ընդ այլ բազումս նոր եղաւ (հարկ) յԱրդունէն՝ մալի և խափշուրի» (հրտր. Մոսկ. փախչուր); Նոյն բառն է ղփչուր Մաղաք. ար. 10 «Կալ ընդ հրամանաւ մեր և տալ մեզ տղղու և մալ և թաղար և ղփչուր»: Աղաւաղեալ ձևով գրուած (կամ տպուած) է ղսփչուն (ս կարդա՛ ա)՝ Անիի անթուական մի արձանագրութեան մէջ (Վիմ. տարբ. 221) «Ջթաղաո, զհեծել, զղրսփըչուն»:

=Թրք. قوبجور qubjur «անասնահարկ», որ է մոնղոլ. قوبجور qobjur կամ قوپچور qupčur «անասունների արօտատեղի. 2. անասունների կամ արօտատեղիների վրայ դրուած հարկ» (Quatremère, Hist. des Mong., հտ. I, էջ 256, Будаговъ 2, 68): Ըստ այսմ ուղիղ ձևն է ղփչուր կամ խուփչուր:

Ալիշան, հրտր. Կիր. 218 մեկնում է «անասնահա՞րկ» և այս առթիւ յիշում է Թրք. ғունչուր «անասունների հարիւրից մէկը՝ որ իբրև հարկ էր տրւում»; Ուղիղ մեկնեց Պատկ. հրտր. Մաղաք. ար. էջ 63:

ԳԻՒ.—Ալշ. խամչուր «ոչխարի հարկ». կայ և խամչուռ «ոչխարի հարկ» (Նոր հատանք, 1913, 792):

*ԽԱՔԱՆ, ա հլ. (իբր յատուկ անուն համարելով) «թագաւոր, սուլթան» Խոր. պտմ. և աշխ. Մխ. այրիվ. էջ 64. Սեբ. (հրտր. Պատկ.) էջ 36, 66, 68, 69 (հաղորդեց Թ. Աւդալբեգեան):

=ՊՀլ. *xākan, պրս. خاقان xāqān «թագաւոր», որ փոխառեալ է Թրք. خاقان xāqān «կայսր, թագաւոր», արեւել. Թրք. خاقان xāqan «շահնշահ, մանաւանդ Չինաց թագաւորը» բառից. որանից են տառադարձուած նաև արաբ. خاقان xāqān, յն. χαγᾶνος «Աւարների, Հոնների և Թուրքերի խանը» (Sophocles 1158), մ. լատ. caganus. chaganus, chacanus «Աւարների իշխանը», հպ. chaganŭ, ռուս. каганъ «խազարների թագաւորը» (Berneker 468) ևն.—Հիւրշ. 159:

Ամէնից առաջ Վիստոնեաննները՝ Թրգմ. Խոր. էջ 356 դնում են բառ Սուիտասի χαγανος, ὁ Σκυθων βασιλευς: ՆՀԲ «բառ պրս. որ և խան»: Ուղիղ մեկնեց Lag. Arm. Stud. § 984:

ԽԲԱՐԴԵԱՅ, գրուած նաև խմբարդեայ «տուփ, խնկաման, խնկարան». մէկ անգամ ունի Ա. եզր. բ. 13 «Խմբարդեայք արծաթիք քսան և ինն, և ափսէք ոսկիք՝ երեսուն». ուրիշ վկայութիւն չկայ:

ՀՀԲ խուփ բառից? ՆՀԲ լծ. եբր.

ֆաֆ. *թրք.* ֆապ «աման». լաւ ևս (գրեւի) խփարդեայ:

—խեթ «զարնել». այս արմատից են գալիս խեթել «զարնել, խթել, հրել, մի կողմ քշել» եփր. ծն. առխեթել (գրուած նաև առխըրթել, առուեթել) «նաւը առաջ քշել, հրել» Գծ. իա. 7. խեթումն «խղճի խայթ» նար. իմաստի փոփոխութեամբ ունինք՝ խեթ (գրուած նաև խէթ) «ծուռ նայուածք, ոխ» երգ. ա. 5. խոր. «ծուռ՝ ցաւոտ՝ շիլ աչք» Նոնն. Ոսկիփ. Սարգ. խեթագին «ծուռ նայելով» Գնձ. խեթաւոր «չար աչքի ենթած» Բ-ոլիփ. եկեղ. խեթալ «դէշ նայիլ, չարանալ» վրք. հց. նար. խեթի «ծուռ աչքով» վրք. հց. «ծուռ ընթացքով» Արծր. արմատը կ-ով աճած՝ խեթկել «զարնել, խթել, խայթել, եղջիւրներով հարուածել» ՍԳր. եզն. խեթկիչ «զարնող, խայթող» նար. Սարգ. ա. պետր. գ (էջ 292). խեթկումն Բրս. մրկ. անխեթկելի վրդն. յա. 71. (իսկ խեթկալ «խղճի խայթից զարնուած» Բրս. մրկ. կազմուած է խեթ +կալ բառերից):

=Նոյն է խայր արմատի հետ:—Աճ.

Նշբ յիշում է յն. ὠθέω, թրք. էօթէյէ սիւմէյէ «մերժել, ի բաց վարել»: Տե՛ս նաև խեր, խիր: Scheftelowitz BB 28, 311 անգաք. hatōn «հալածել», գոթ. hatis «ատելութիւն» են: Ղափանցեան, Տեղեկ. ինստիտ. 2, 91 վրաց. ցդա «ջանք» բառի հետ:

Դիմ.—Տե՛ս խէթ, խայր, խոր, խիր արմատների տակ:

Փոխ.—վրաց. ხეთქა խեթքա «ճեղքել, խորտակել, բաժանել, զարնել, վայր նետել», დახეთქა դախեթքա «ճեղքել, ծերպ բանալ», დახეთქება դախեթքեբա, წახეთქება ծախեթքեբա «տապալել, գետին գլորել», გახეთქა գախեթքա «ճեղքել», მიმოხეთქება միմոխեթքեբա «այս ու այն կողմ նետել» են:

Խել, ի–ա հլ. (անհզաբար գործածուած) «ղլխի ուղեղը» Ագաթ. «միտք, բանականութիւն, հանճար» եւս. պատմ. Ոսկ. եփես. «հնարք, վարպետութիւն» եփր. ծն. էջ 106. «կամուրջի գլուխը» Ագաթ. վրդն. պատմ. «նաւի ղեկի կողմը» Մրկ. դ. 38. «նաւի նըստարանները» Գ. մակ. դ. 8. «տան կտուրը» Անկ. դիրք նոր կտ. էջ 152. որից խելս խառնել «ճարտարութեամբ հնարել» Գ. մակ. դ. 15. Ոսկ. գաղ. եփես. տիմ. խելօք «հնարով, հնարիմաց» ՍԳր. խելագար Ոսկ. յհ. ա. 17. խելամուտ ՍԳր. Ագաթ. եզն. խելացնոր Ագաթ. խելայեղ Վկ. արև. խելացի Փարպ. խելար Ագաթ. (որ և խելատար. այժմ գրւում է խելառ). դիւցախելար Ագաթ. յոջ. անխելութիւն Դամասկ. բազմախել Օրբել. կամրջախելի Ճառընտ. մանկախել Յայտմ. խելահաս, խելակորոյս (նոր բառեր):

Նշբ յծ. թրք. իլիմ «ծուծ» և հյ. խլիճ, գլուխ: Հիւնք. պրս. خاله xala «դեկ» բառից Patrubány SA 1, 194 լատ. colo, լիթ. kelias, kelys «ճամբայ», յն. κέλομαι, սանս. čárati «գնում է»:

Գիմ.—Ալշ. Հճ. Մշ. Ջղ. Սչ. խելի, Սլմ. Վն. խելի¹, Ախց. Ակն. Գոր. Երև. Խրբ. Կր. Ղրբ. Ննխ. Շմ. Պլ. Ռ. Սեբ. խէլի, Ասլ. խէ՝լի, խէ՝լ*, Մրղ. խէլի¹, Ագլ. Զթ. Հմշ. Ոզմ. Տիգ. Տփ. խիլի, Մկ. խիլի¹. նոր բառեր են անխելի, խելօք, խելհել, խելհաւոր, խելփիլ, խելոբաի, խելոհլ, խելոուկ են:

Փոխ.—Բոշայ. խլավ «խելք, միտք» (Finck, Die spr. der arm. Zigeuner ЗАН 1907, էջ 57, որ դնում է հյ. խելի բառից):—Հայերէն խելի բառից են դնում նաև բոշայ. խելմելավ «անխելք, յիմար» (Finck, Jour of Gyps. soc. էջ 48), վրաց. ხელი խելի «խենթ, յիմար» (Ջուբինով), բայց ըստ իս գործ չունին նրա հետ և ծագում են հյ. խեղ բառից (տե՛ս այս բառի տակ): Հակառակ իմաստի նմանութեան՝ խելի բառի հետ գործ չունի նաև վրաց. ხელობა խելոբա «արուեստ, ճարտարութիւն», որ ծագում է վրաց. ხელი խելի «ձեռք» բառից:

Խել «հեզ». ունի միայն Բառ. երեմ. էջ 140. ի՛նչ լինելը յայտնի չէ:

Խելփիմաց «հևք, դժուարաշնչութիւն, dyspnée» Բժշ. (Բազմ. 1917, 102). նորագիւտ բառ:

Խեկ «շուար». ունի միայն Բառ. երեմ. էջ 140 (ա. տպ. շուար, բ. տպ. շուար):

Խեկբեկ տե՛ս խեղ:

+ԽԵՂ, ի–ա *հլ.* «*հաշմ, պակասաւոր, մէկ ոտքով կաղ*» *ՍԳր. Ոսկ. յհ. ա. 21.* «*ցաւոտ (աչք)*» *Վանակ. յոբ.* «*պիղծ, գարշ, գազիր*» *Ոսկ. կող. Փիլ. Պիտ. (այս նշանակութեամբ գրուած նաև խիղ Փիլ. էջ 197). որից* խեղութիւն *Ղեւտ. իբ. 25. իդ. 20. Ագաթ. Ոսկ.* խեղել *Ղեւտ. իդ. 19. Ոսկ. ես. և մ.* խեղաթիւր *Իմ. ժգ. 13 (փայտի կտորի համար ասուած՝* «*ծռտռումուռ*»*), Փիլիպ. բ. 15 (բարոյական իմաստով՝* «*ծուռ բարքով*»*).* խեղախեռ *Ոսկ. յհ. ա. 38. Ճառք 674.* խեղանդամ *Մանդ.* խեղաճիկ *Փարպ.* խեղակատակ *Ոսկ. եփես. ժե. կամ* խեղկատակ *Սարգ.* խեղկատակել *Ոսկ.* խեղկատակութիւն *Եփես. ե. 4. Կող. գ. 8. Ոսկ. կողոս.* խեղաճցեալ «*զառանցեալ*» *Բառ. երեմ. էջ 140. այստեղ է պատկանում նաև* խեկրեկ «*ծռտռումուռ, կաղալով*»*, կազմուած* խեղ *և բեկ բառերից, իբր *խեղրեկ, յետոյ դարձած* խեկրեկ*. մէկ անգամ ունի Փարպ. էջ 102* «*Տեսեալ... զի երթայր խեկ-բեկս յընթացի*»*. սրանից՝ կ աճականով՝* խեղկ–*, որից* խեղկիլ «*շարաշար խեղուիլ*» *Մագ. թղ. 133, 204. Պզատ. օրին. 17.* խեղկութիւն *Մագ.* անխեղկեալ *Մագ. թղ. 22, 136, 164։*

=*Բնիկ հայ բառ՝ հնխ.* sqel- «*ծռել, կոթացնել, շեղել*»*, բարոյական առումով* «*շեղել, բարքը ապականել*» *արմատից։ Այս արմատի միւս ժառանգներն են՝ յն.* σκολιός «*շեղ, ծռտռումուռ, մէկ կողմ դարձած (գլուխ, ոտք են)*»*,* σκαληνός «*ծուռ, շեղ, կաղ*»*,* σκελίς «*հեւևի ոտքը*»*,* σκέλος «*սրունք*»*, լտ.* scelus «*յանցանք, չարագործութիւն, ոճիր*»*,* անգսք. sceolh*, հիսլ.* skjalgr*, հրդ.* scëlah «*ծուռ, շեղ*»*, գերմ.* scheel, schel «*շիլ, աչքը ծուռ*»*.—արմատի* qol- *ձևից են՝ յն.* κελλόν «*ծուռ, շեղ*»*,* κυλλός «*ծուռ (ձեռք), ծռտռումուռ, տձև*»*,* κυλλαίνω «*ծռել*»*,* κυλλο-ποδίων «*ոտքերը ծուռ*» (Boisacq 873, 533, Walde 685, Kluge 416, Pokorny 2, 598)*։ Հայերէնի մէջ նոյն արմատը (տակաւին լաւ չպարզաբանուած ձայնաբանական օրէնքներով) տուել է մի կողմից* խեղ *և միւս կողմից* շեղ*, որի ձայնդարձներն են* շաղ *և* շիլ *(տե՛ս այս բառերը). Համմտ.* խայտ*,* խայծ *<հնխ.* (s)qaid-*,* (s)qait-*։ Տե՛ս նաև* կեղ *և* կաղ *բառերը։*

Հներից Ոսկ. կող. Թարգմանողը տալիս է խեղկատակ *բառի մեկնութիւնը.* «*խեղկատակութիւն ճանապարհ է մեղաց. զի եթէ անունն խեղ է, ինքն որպիսի՞ ինչ*»*։* Նշէք խեղ՝ *լծ. հյ.* կաղ*,* տգեղ*, յն.* κύλλος (միակողմանի *բառի տակ) և թրք.* գոլագ*,* չոլագ*։* Windisch. *8, 17 յն.* χωλός «*կաղ*» *բառի հետ։* Bugge IF *1, 447 տուաւ վերի մեկնութիւնը։—Հիւնք. յն.* κολοβός «*խեղ*»*։* Karst, *Յուշարձան 426 թրք.* sol «*ձախ*»*, չաղաթ.* solok*,* čolak «*կաղ*»*։ Ղափանցեան, Տեղեկ. ինստիտ. 2, 89 հյ. շեղ բառից։ Շէֆթէլովից* KZ *53 (1925), 251 և 253 առնս.* khila «*թերի, պակասաւոր*»*,* khalati «*ճաղատ*» *և յն.* χωλός «*կաղ*» *բառերի հետ։*

Գիր.—Այս արմատին են պատկանում Ակն. խեղէնալ*, Խոջ.* խէղնալ «*երես առնել. շփանալ*»*, ինչպէս նաև* խեղկատալ *Զրս.* «*անհամ կատակներ անել*»*,* խեղկատացնել *Զրս.* «*երես տալ, շփացնել*»*,* խեղուիլ *Զթ.* «*բիթը բերանը ծռմռելով ծաղրել, անագ տալ*»*,* խեղուանիճ «*իբր ծաղր շրթունքը դուրս երկարելը*»*,* խեղուկ *Զրս.* «*շփացած*»*։*

Փոխ.—Վրաց. ხელი *խելի* «*խենթ*»*,* ხელობა *խելոբա* «*խենթութիւն, չիմարութիւն*»*,* ხელოკი *խելոկի* «*չիմար*»*. բոշայ. խելմել (տե՛ս խել–ի բառի տակ)։* Խեղ *բառը այսպիսի իմաստ ունէր նաև հայերէնի մէջ. համմտ.* «*Չխեղութիւն մտացն ուղղէ*» *Սարգ. ա. պ. արդի գաւառականներից* խելիսօլ *Մշ.* «*խենթուկ*»*. իմաստի զարգացման համար համմտ. Վն.* ծուռ «*խենթ*»*։*

ԽԵՂԱԿԱՆ «*հաստատուն կամ դիմաւոր*»*. ունի միայն Բառ. երեմ. էջ 140։*

ԽԵՂՔ *(գրուած նաև* խիղք*)* «*ծիլ, ընձիւղ կամ արմատի մազմզուքը*» *Վեցօր. որից* խիղք արկանել «*արմատի թելեր արձակելը*»*. Վեցօր. 87. նմանութեամբ* «*յարիլ, մի բանի կցուիլ*» *Ոսկ. յհ. ա. 5.* խիղք արկանել *(կամ առնուլ)* զծնկօք «*երկու ձեռքերի մատները իրար անց կացնել և ծունկը բռնելով՝*

նստիլ տխուր մտածել» Թէոփ. խ. մկ. ճառընտ. Վրք. և վկ. Բ. 512. որ և խեղր արկանել *կամ առնուլ Մաշկ. Ղևոնդ. ժա. էջ 38.* խեղրիլ *(գրուած նաև* խեխրիլ. *իսկ ՋԲ ունի* խեխիլ*) «յարիլ, փարիլ, կապուիլ» Ոսկ ես. 308։*

Հիւնք. աղբ բառից։ Գաբ. բառ. արաբ. խէլպ *«ճանկ»։*

ԽԵՂԴ, ի *հլ. «խեղդում և խեղդելու չուան» ՍԳր. եղն. Ոսկ. նաս. քր. որից* խեղդել *ՍԳր.* խեղդուլ *Մագ.* խեղդամահ *խոր. Պիտ. 34. կթ.* խեղդաճ *«խեղդելու չուան» Փիլ. Մանդ.* խեղդարկեալ *«խեղդուած» Ոսկ. մ. ա. 23, էջ 376.* խեղդելիք *ճառընտ.* խեղդումն *նար. նայբախեղդ Ոսկ. մ. բ. 8. ձիւնախեղդ Մխսր. եր. բխախեղդ խոսր. լաբախեղդ Գնձ. կըրկնութեամբ* խեղդղդիլ *Առաք. պատ. 504։ Արմատը ունինք նաև գրուած* խիղդ *ձևով՝ «խեղդելու չուան» Եփր. Համար։ Համմտ. նաև ներձ։*

Böttich. Arica 44, 18, Lag. Urgesch. 1083, Ges. Abhd. 275. 21 Hipponax-ի *աւանդած* Κανδαύλης *թագաւորի անունն է կցում հյ.* խեղդօղ, *ռուս.* kudĭ *«չար ոգի»,* kudeli *«իլ»։ Հիւնք.* խեղդել *հանում է ներձնուլ ձևից։* Bugge IF 1, 450 խեղդել *և ներձնուլ հանում է հնխ.* *skr̥t-is *ձևից. Համմտ. սանս.* crtáti *«կապել»։* Karst, *Յուշարձ. 427 թաթար.* il, yil, ol, ul *«կապել, փակել», ալթայ.* yele *«չուան» են։ Մառ,* ИАН *1914. 359 վրաց.* ղուշղրա, ղշղրա *«խեղդել»։* Justi, Kurd. gram. *230 քրդ.* xindakim *«խեղդեմ», արաբ.* خنق xanq, *պրս.* خناک xunāk *«բկուռոյցք» բառերի հետ։*

Գիւր.—Ջղ. խեխղ'ել, *Սլմ. Վն.* խեխտել, *Ոզմ.* խեխտիլ, *Ակն.* խէխդիլ, *Խրբ.* խէխղ'իլ, *Սլշ. Մշ.* խէխտել, *Ախց. Կր. Ղրբ. Մրղ.* խէխտէլ, *Գոր. Մկ. Շմ.* խեխտիլ, *Տիգ.* խէխթիլ *Ագլ.* ձէ'ղդիլ, *Երև.* ձէխտէլ, *Տփ.* խի'խտիլ, *Հճ.* խոխղ'ել.—*ձայնաւորի յապաւումով՝ Պլ. Սեբ.* խրխղել, *Ասլ.* խրխղէ'լ, *Խրբ.* խրխղ'իլ, *ՋԲ.* խր'խղ'իլ, *Համշ.* խրխղուշ, *Ննխ.* խրխրէլ, խրխտել, *Սչ.* խրխ'թել, *Ռ.* խրխրէլ։ *Նոր բառեր են* խեղդալոխ, խեղդաշուն, խեղդելաճաղ *(Ղրբ.* բխարլըմ'ճաղ*),* խեղդըլկիլ, խեղդխտիլ, խեղդխտուրել, խեղդոտել, խեղդուկ, գայլխեղդ, իւղհալխեղդիկ *են։*

ԽԵՂԴ *«տրտում», որից* խեղդումն *«տրտմութիւն». երկուսն էլ ունի միայն Բառ. երեմ. 140։*

ԽԵՂԵՓ *«մի ամբողջի կէսը» Ոսկ. կող. էջ 667. Բրս. մրկ. 65. Երզն. մաթ. 226. «մաղերի երկուսի բաժանուած հիւսքերից ամէն մէկը» նար. տաղ. 465. «Դշ ձայնին պատկանող մի եղանակի անուն» Մանրուս. (տե՛ս Ամատունի, Հայոց բառ ու բան, էջ 273 բ). որից* խեցխեղեփ *«նշանախեց, փոքրիկ անչքան տաս» Յերզն. Մանդ. [ՀՀԲ* խեղեփ *մեկնում է «ճիրան, մագիլ», ԱԲ դիտէ նաև* խեղեփ *«ջուխտակը, երկուորեակ», որի հետ նոյն է* խղեփ *«երկուորեակ» Բառ. երեմ. էջ 141]։*

Գիւր.—Գնձ. խէղէփ *«կնքակրի մէջ ձգելու համար ծեծած ընկոյզ» (Ամատունի, Հայոց, բառ ու բան, էջ 273 բ), Երև.* ձէղէփ, *Մղ.* ձէղէփ, ձէղափ *«ընկոյզի միջուկ», որից* ձեղափ աճել *«ընկոյզի միջուկը դուրս հանել» Բ. խոլօփ «ընկոյզի ամբողջական միջուկը»։ Երև. ձէղէփ բառի մէջ* խ>ճ *ձայնափոխութիւնը ճիշտ այն է՝ ինչ որ* խաղ>ճաղ, խաղող>ճաւող, խաղաղ>ճաղաղ, խեղդել>>ճեղդել *բառերի մէջ. բոլորն էլ ղ-ից առաջ տարանմանութեամբ։*

ԽԵՂՃ *տե՛ս հիղճ։*

ԽԵՃԵՊ *«պատեան, կեղև» Երզն. երկն. գ. վտակ. 21. «ձուի կեղև» Շիր. էջ 38. Տաթև. ամ. կ. Հարց. 181. «ընկոյզի կեղև» Վրդն. երգ. որից* խեճեպային *«փայտե կեղև ունեցող (պտուղ)» Վստկ. 136. 152. սրա հետ նոյն է (նախաձայն* խ *վերածուած* կ) **կեճեպ** *«ձուի կեղև» Յայսմ. մրտ. 18 (Որպէս կեճեպ ձուին... զհուրն կեճեպին նման). ե-ի անկումով՝* **կճեպ** *«պտուղի, ձուի կեղև» գաւ. բառ. արդեօք սրանց շրջեալ ձևն է* փեճեկ, փեճոկ, փոճոկ՝ *որ տե՛ս առանձին։*

=Բառիս հետ յայտնապէս նոյն են վրաց. ხეჭბი խեճբի *«շագանակի կեղև, պատեան», ჟუჩუბო* ճուչուբո *«կեղև, քէվ», լազ.* խեճեպա *«կաղինի կամ ընկոյզի կեղև», մինգր.* ხეპჭო խեպճո *«ձուի կճեպ» (*Беридзе, Груз.

глосс. по имерск. и рач᾽инск. говорамъ *1912, էջ 69*). *բայց կարելի չէ որոշել թէ ո՛րը որից է փոխառեալ։—Աճ.*

Հիմնք. կոճ *բառից* կոճոպել *և սրանից էլ* փոճոկ։ *Աճառ. ՀԱ 1909, 159* խեճեպ-*ից* կճեպ, *շրջմամբ* փեճոկ։ Беридзе *անդ, մինգր.* խեպճո=*հյ.* խեճեպ։ Petersson, Ar. u. Arm. Stud. 123 *յն.* σχέδη «տախտակ», *սանսկ.* skhadate «ճեղքել» *բառերի հետ հնխ.* (s)khed- *արմատից։*

Գիւր.—Գործածական է զանազան ձևերով, որոնք կարող ենք դասաւորել հետևեալ եղանակով.—1. խեճեպ՝ *որից Մշ.* խէչէր, *ՋԹ.* խէշիր, *Ագլ.* խճիպ *և Հճ.* դոչեփ.—*2.* կճեպ՝ *որից Ջղ.* կճեպ, *Երև.* կճէպ, *Սլմ.* կիճեփ, *Մրղ.* կիճէփ, *Տփ.* կճիպ, *Համշ. Ննխ. Ռ.* գըչէր, *Սեբ.* գչեր, գէչէր, *Ալշ.* կէչեր. *(բայական ձևով Սլմ.* կիշպել, *Մրղ.* կիշպէլ, *Համշ.* գըչվուշ).—*3.* կպէճ՝ *որից Ախց. Կր.* կպէճ, *Տփ.* կպիճ.—*4.* պճեկ՝ *որից Շմ.* պիճոգ՛.—*5.* ֆշե՝ *որից Ղրբ.* ֆշեվ, *Ագլ.* ֆշիվ։ *Առանձին ձևեր են* *ֆշեփ *(որից Ղրբ.* ֆշփել «կեղևել»), *Ղրբ.* խծիպ, *Երև. Ղզ.* խրճեպ, խռճեպ, *Երև.* կլճեպ։ *Կան բարբառներ, որոնք միաժամանակ երկու ձև ունին. յատկապէս յիշենք Ագլ.* խճիպ «պտուղի կեղև» *և* ֆշիվ «ծառի կեղև»։ *Նկատելի է որ բառիս հոմանիշ կեղև ձևն էլ մեր արդի բարբառներում այսքան զանազան կերպարանքներ է ստացած և տարակոյս չկայ՝ որ* կեղև (կլեպ) *և* խեճեպ *իրար վրայ փոփոխակի ազդած և զանազան խաչաձևումներ են յառաջ բերած։ Այսպիսիների մէջ նկատելի է յատկապէս Երև.* կլճեպ, *որ* կլեպ *և* կճեպ *ձևերի դումարն է։—Անշուշտ այստեղ են պատկանում նաև* խեճոոռ *Ախց. Բլ. Մշ.* «ծուի կեղև» *և* կէչոո *Ալշ.* «ծուի, ընկուզի կեղև», *որոնց վերջաւորութեան ծագումը անյայտ է։—Վերջապէս ունինք գուռ.* պեճկել, ճեպկել, փեճկել «փետել», *որոնք թերևս* պճկել «կեղևել» *ձևի միջոցով կապուին վերոյիշեալ* կճեպ, փեճոկ *բառերին։ (Աւելի հին է կեճեւել «փետռել» Բառ. երեմ. էջ 273)։—Համմտ. նաև* խեճէճ *Երև.* «ընկոյզի կամ բամբակի կեղև» *(Ամատունի, Հայոց բառ ու բան, էջ 273 բ)։*

Խննէճ *(գրուած նաև* խեճեչ, խէճեչ) «թուլամորթ, մեղկ, կնաւոր» *Պիտ. փիլ.* «գոփ, զեղխ, զազիր» *Վրք. Հց. Ա. 546, որից* խեճեչաճալ *Ոսկ. յհ. ա. 21, բ. 14.* խեճեչացուցանել *Եփր. յհ. մկ. 133. Փիլ. Կղնկտ.* խեճեչութիւն *Ոսկ. յհ. բ. 5. Պիտ.* խեճեչագոյն *Պիտ.* խեճեչիլ *Նար։*

Նշխ վրաց. խէճէչի։ *Հիմնք. պրս.* خشنی xušnī «պոռնիկ կին» *բառից։*

Գիւր.—Ախց. Կր. խէճէչ «թափթփած, շլրխուռի (կին)»։

Փոխ.—Վրաց. ხეჭეშა խեճեչա *կամ* ხეჭეში խեճեչի «վատ, անպէտք, նեխած, գէշ», ხიხეჭეშე սիխեճեչե «չարութիւն, չարամտութիւն», თჳალხეჭეში թուալ-խեճեչի «չարակրն, նախանձոտ»։

Խննթ *կամ* **խննդ** «յիմար, անմիտ, փախուկ» *Պիտաւռ. որից* խեննթական «յիմարական» *Նար. յովէդ։*

Մասեաց աղաւ. 1863, 202 ուղիղ ձևը համարում է խենթ, *բայց ստուգաբանում է* խինդ *բառով, իբր «շատ խընդացող»։ Այսպէս է նաև Հիմնք։* Patrubány SA 1, 191 *լատ.* cantare «երգել, կախարդական բաներ ասել». խենթ *բառի բուն իմաստը դնում է «կախարդ»։ Ղափանցեան, Տեղեկ. ինստիտ. 2, 88 հյ. շեթ «խեննթ» և վրաց.* խեთեթա «յիմարացնել»։

Գիւր.—Մշ. խենթ, *Խրբ. Պլ. Ռ. Սեբ. Տիգ.* խէնթ, *ՋԹ.* խինթ, *Ասլ.* խընթ։ *Այս բառն ունին նաև «կ» ճիւղին պատկանող ուրիշ բարբառներ. սակայն չի գտնւում «ոմ» ճիւղի բարբառներում։ Նոր բառեր են* խենթացոց, խենթուլիկ, խենթեճալ, խենթուկ *են։*

Խեշ «դիւրին». *ունի միայն ՓԲ.—անստոյգ բառ։*

Խեշակ «աղնիւ ձի». *ունի միայն ԱԲ. մէկ անգամ գտնում եմ գործածուած Մագ. քեր. էջ 241 «Ձեզոքն՝ որպիսի քուռակ, բաշահատ, մատաղաձի, խեշակ, դզի, բոշոյ, անդրավար, փալանիկ»։ Ըստ իս պէտք է նշանակէ «քուռակ», ինչպէս են յիշուած հոմանիշներից շատերը։*

խեշերանք *«բևկորներ, մնացորդներ» ՅՀ. իմ. պալ. ուրիշ վկայութիւն չկայ։*

=Թուի թէ նոյն է խոշոր բառի հետ, որ տե՛ս։

Նախ ԳԴ և յետոյ Հիւնք. դրին պրս. xušāra *«փշրանք» բառից։*

խեշ *«խաղողի չորացած կուտ». մէկ անգամ ունի Կղնկտ. «Զչոր խեշ խաղողոյ տայր անձանց թշուառականացն ազալ և ուտել»—(հրտր. էմ. էջ 129, Շահն. Ա. 278, Շահնազարեան Բ. 94 ակնարկում է խիշ)։*

Շահնազարեան Բ. 94 ակնարկում է գուռ. չեշ բառը, բայց չի համարձակում ուղղել։ ԱԲ մեկնում է «խաղողի չէշ». Հայապատումը դնում է վերի ձևով, որ ընդունում է նաև Աճառ. Հայ. նոր բառեր հին մատ. Ա. էջ 15։

խեշափուկ *(որ և խաչափառ, խեչեփար, խաչեփար, խեչիփար, խիչիփար) «ծովի կամ գետի խեցգետին» Ոսկիփ. վրդն. առ. 37. Մխ. բժշ. 43, 55։ Վստկ. 74. Սանահն. որ և ունինք խէշ ձևով՝ Մագ. թղ. 214։*

=Կազմուած է խէշ «կողքը, քովը» և փառ «թև» բառերից. առաջինը տե՛ս վարը առանձին. երկրորդն է գուռ. փառ, փեռ «ջաղացքի անիւի թևերը»<պրս. پر par *նոյն նշ.—այսպէս է կոչուած խեչափառը՝ իր երկու կողքի չորս զոյգ թևերի պատճառով։—Աճ։*

ՆշԲ «որպէս թէ խեցեալ պատեհիւ»։

ԳԻՒ.—Երև Կր. խաչափառ, Ալշ. Մշ. խաչուփառ, Խրբ. խաչէրփարդ։

խեր, ի հլ. *«ապստամբ, ստահակ, անառանձ» Օր. իս. 18, 20. Նիւս. կուս. վրք. Ոսկ. «խոժոռ, թիւր, խէթ» Լմբ. առակ. «հեռ, նախանձ, ոխ, հակառակութիւն» Ոսկ. Ա կոր. Մանդ. 36խ. վրք. հց. որից* **խեռել** *«ստահակիլ, ըմբոստանալ» Գ. մակ. բ. 14. Ոսկ. մ. ա. 6. (գրուած կայ խոել ԱԲ). խեռնել «նեղանալ, բարկանալ» Ոսկ. եբր. գ. խեռալ «նեղանալ, բարկանալ» վրք. հց. Սկևռ. աղ. 140. «վրան իրաւունք բանեցնել, խլել ուզել» Ուռհ. հրտր. էմ. էջ 242.* **խեռութիւն** *Օր. Բ. 7.* **խեռաբարոյ** *Ոսկ. յհ. ա. 25. Մխ. դտ. Վրդն. առակ. 71.* **աճխեռ** *«անխռովարար, հանդարտ» Փիլ. իմաստն. աճխեռութիւն «հլութիւն» Փիլ. յովն.* **դժոխախեռ** *Պիտ.* **խեղախեռ** *Ոսկ. յհ. ա. 38. ճառք 674.* **խեղախեռութիւն** *Ոսկ. յհ. ա. 35.* **ճենգախեռ** *Եպիփ. ծն.* **խեռայիւն** *«անսանձ, խօսք չլսող» Ագամ. 137.* **խեռական** *«անսանձ» Կանոն. 66 (տե՛ս իմ Հայ. նոր բառեր հին մատ. Բ. 162)։*

=Թէև «ոխ, նախանձ» նշանակութեամբ նոյնանում է ճեռ բառի հետ, բայց այս նշանակութիւնը յետին շփոթութեան արդիւնք է, որ կայ նաև արդի բարբառներում։ Հնագոյն օրինակներում այս նշանակութեամբ **խեռ**՝ *պէտք է փոխել ճեռ. Համմտ. օրինակի համար՝ դժոխախեռ և դժոխաճեռ՝ երկուսն էլ Պիտ։ Բառիս իսկական նշանակութիւնն է «բմբոստ», որ բոլորովին տարբեր է ճեռ «նախանձ, ոխ, հակառակութիւն» բառից.—Աճ.*

ՆշԲ համարում է «արմատ ձայնիցս **խռով**, **խռովութիւն**, *յծ.* **գրգիռ**, **ճեռ**, *ռմկ.* **խրոխրո**, **խօռ**, **խոլոռ**, *Թրք.* **ճօռ**. *որպէս* **ճեռ**, *յն.* **է՛ռիս»**։ *Պատկ.* Матер. I. *10 պրս.* خير xīr, خيرة xīra *«բիրտ և կռուարար»։* Bugge IF 1, 446 *լիթ.* skeĭsas *«շեղ, շիլ», իռլ.* cearr *«անյաջող, ձախորդ», հպրուս.* kirsa *«ի վերայ», հսլ.* črěsŭ *«յայնկոյս», լատ.* cerro, ceritus *«խելագար»։ Հիւբշ.* IF Anz. 10, 47 *մերժում է՝ նշանակութեան տարբերութեան պատճառով. այսպէս նաև* Walde 155, Boisacq 213, Berneker 149: *Պատահական նմանութիւն ունի ասոր.* سزحا xar'ā *«խորամանկ»։*

ԳԻՒ.—Վն. **խեռ** *«ոխ, քէն, սրդողիլը, մէկի դէմ նեղանալը». խէռնակ «քէն անող, խռով, քինախնդիր, հակառակ բնութեամբ», Ջղ.* **խեռ** *«խոժոռ», Ալշ. Մշ.* **խեռն** *«նախանձոտ», Սեբ.* **խէռալ** *«նախանձիլ, ամուսնու վրայ խանդոտիլ»։ Սրանցից Վն. և Ջղ. կարող են յառաջացած լինել ճեռ բառից, որովհետև այս երկու բարբառներում ճ դառնում է խ. բայց Ալշ. Մշ. Սեբ. ներկայացնում են հին* **խեռ** *ձևը։*

խեռիկ *«շակակուլ կամ վայրի գազար» Բժշ. ունի միայն ՀՌուս. § 3329։*

*ԽԵՐ, ո հլ. «բարիք» Ագամ. 130։ =Արաբ. خير xayr «բարիք»։—Աճ. Տե՛ս իմ Հայ. նոր բառեր հին մատեն. Բ. էջ 150։

ԽԵՐ «մի տեսակ կաթնեղէն ուտելիք». մէկ անգամ ունի Մանդ. էջ 210=Գիրք թղ. 239 =Մանդ. սիր. 13 ուտեաց ուտելեղէնների մի շարքի մէջ,—«իւղ, ձու, ձուկն, պանիր, կոգի, կաղտի, բաժին, շճուկ, կաթն, խեր (այլ ձ. խէր) և ձկանմորէ». (Շողակաթ՝ էջ 127 հեր ձկան, մորէ)։ ՀՀԲ մեկնում է «եփոց գայլոց», այսինքն «եփած գալ», ՋԲ «կեբակուր ի գալէ», ՆՀԲ (գաւառական բառերի շարքում) «եփոց կաթին», ԱԲ «տեսակ մը մածուն»։

ԳԻՒ.—Այս խեր բառն ունին Աբր. Բն. Ներ. Տիգ. «գալ, առաջին կաթ» նշանակութեամբ. իսկ Խրբ. «մածնի քամուրից յառաջ եկած քաղցր մի հիւթ»։

ՓՈԽ.—Քրդ. خرێ xiri «գալ»։

ԽԵՐԴՈՒՆԵԼ «նորոգել». ունի միայն Բառ. երեմ. էջ 141։

ԽԵՐԵԻԷՇ, ի–ա հլ. (գրուած նաև խերեւէշտ) «լումայ» Ոսկ. բ. տիմ. 199 (բանիցս). յհ. բ. 33 (էջ 859) և հռ. իա. Սկևռ. աղ. 185. Սասն. էջ 15. Տօնակ. «բարակ թերթ կամ կտոր», որից խերևէշս խերևէշս անօսրել «մանր մանր ջարդել» Վեցօր. 166 (չունի ՆՀԲ. գիտեն միայն ՋԲ և ԱԲ)։ Նոյն բառն է նաև ճարէժ «լումայ» Ոսկ. վասն գալստեանն Քրի ճառի մէջ (տպ. Ոսկ. պօղ. Բ. էջ 921). «Միայն երկու հարէյս, այսինքն երկու դանկ արծաթոյ»։

Հիւնք. խեշերաճ բառից։

ԽԵՐՇԵԻՏԱՆՔ կամ ՀԵՐՇԱՏԱՆՔ. անսովոր բառ. մէկ անգամ գործածել է Ագաթ. «Աշխատէին (շինողք աշտարակին) իբրու պարշար խերշևտանաց չարութեան գաւակաց ազգացն զկնի իւրեանց եկելոցն թողուլ խնդրէին»։ ՆՀԲ մեկնում է «մնացորդ կամ յիշատակ», ՋԲ «խեշերանք», ԱԲ «խեշերանք, կտոր բաներ, մնացորդք»։

ԽԵՅ «հողէ աման» ժմ. յն. «խեցեմորթի կամ կրեայի պատեան» Վրք. հց. որից խեցագործ «բրուտ» Կոչ. Արծր. խեցաճման Վեցօր. խեցակոյտ, խեցակարկառ Ագաթ. խեցատ «խեցիի կտոր» Վստկ. 40. Կոստ. երզն. էջ 158. խեցգետին Վեցօր. խեցգետի Արծր. խեցբեկ «կցկտուր, կտորատած» (լեզուի համար է ասում) Ոսկ. մ. ա. 2. խեցբեկագոյն «խժալուր, անհարթ» Կորիւն. Ագաթ. խեցբեկոր նոյն նշ. 34. կթ. Պատմ. սահ. 29.—խեց բառից –ի մասնիկով կազմուած է խեցի «թրծուած կաւ. 2. բրուտի աման» ՍԳր. «խեցեմորթի պատեան» Նիւս. բն. Մխ. առակ. «խեցեղէն» Վրդն. պատմ. Երզն. քեր. «կոկորդիլո՞ս» Վրք. հց. սրանից էն կազմուած խեցեկոյտ Եւս. քր. խեցեայ Վրդն. պատմ. խեցեղէն ՍԳր. Վեցօր. Եւս. քր. խեցեմորթ Վեցօր. խեցեցուցանել «խեցիի պէս չորացնել, կարծրացնել» Եփր. մրգ. 360. Ոսկ. ես. 467. պղնձախեցի Նոնն.—խեցի նշանակում է նաև «կտոր, բեկոր». Համմտ. «Զտաքտակն Մովսէս խորտակեաց ի բեկորք նոցա ոչ կցեցան և խեցիք նոցա իրրև զխեցիան մարմնոյ ոչ յօդեցան». Եփր. Համաբ։ Նոյն նշանակութիւնն ունի նաև խեց, որից կազմուած են գրախեց Իգնատ. ղկ. 318. նշանախեց Մատթ. ե. 8. Ղուկ. ժզ. 17. (գրուած նաև նշանախեղց ԱԲ). խեցխեղեփ «փոքր տաո» Յերոն. Մանդ։

Հիւնք. խից բառից։ Մատ, O полож. абхаз. էջ 30 ափխազ. akəç ակց «կաւ» բառի հետ։ Թիրեաբեան, Արիահայ բռ. 180 պրս. خشت xišt «աղիւս»։ Petersson, Ar. u. Armen. Stud. 123 խոց և խեճեպ բառերի հետ հնխ. khedsk'- արմատից. Համմտ. յն. σχέδη «տախտակ», սանս. skhadate «ճեղքել» են։ Պատահական նմանութիւն ունին սասր. ḫaśī, արամ. חסף ḥasaf, արաբ. خزف xazaf, ասուր. ḫaṣbu, որոնք նշանակում են «խեցիէ աման»։

ԳԻՒ.—Ջղ. խեցիկ, Ալշ. Մշ. Մկ. խէցիկ, Ոզմ. խեցէյկ, Ագլ. խա՛ցիկ՝, որ և Երև. Ղրբ. Խոջ. Կր. Տփ. խէցատ, Մշ. խէսատ «կոտրած խեցեղէն աման՝ կուժ, որ դեռ իրրև աման գործածւում է». Համմտ. նաև խացակ բառի տակ։

ՓՈԽ.—Վրաց. ჯვცი կեցի «կաւ, ցեխ, բրուտի կաւ» (Դան. բ. 25). 2. «հաց եփե-

լու յատուկ կաւէ ամանն. 3. «կրեայի և նմանների խեցին». սրա հետ համմտ. նաև ափխազ. akəç «կաւ». (այս օրինակները ցոյց են տալիս խ և կ ձայների լծորդութիւնը, որի վրայ տե՛ս Աճառ. ՀԱ 1909, 160)։

խեի «յիմար, խենթ». գործածական է արդի մի խումբ գաւառականներում. ինչպէս՝ Ալշ. Ախց. Ակն. Այն. Առն. Արբ. Երև. Եւդ. Ջթ. Խն. Խոջ. Խրբ. Կս. Մլթ. Մշ. Մրշ. Մրտ. Ննխ. Ջն. Սեբ. Սչ. Վն. Տիգ. Տր. Տփ. Ք. աւելի հնից ունինք հետևեալ օրինակները. Վասրն խել ու պիղծ այրկան։ Սմբ. դատ. 118. Եև է զի զիւր ապրանսն ցրուէ. Տաթև. ձմ. ձգ. Յիմար և խև է նա գոված. Կոստ. երզն. 75. Եմ յիմար դարձել ու խև. Կոստ. երզն. 91. Խիստ խև ու անյիմայ. Կոստ. երզն. 101. Փառք Աստուծոյ կենդանւոյն և բարձրելոյն յաւիտեան, զի այս ցեղ խևս զարմանալի պատասխան առնէ. բայց ինձ թէ չէ՛ դա խև, այլ խելօք է. Փահլ. էջ 71։ Սրանից ունինք նաև խենալ «գժուիլ», խեցնել «գժուեցնել», խեւուկ, խեւուլիկ, խեւուրուկ, խելանկ, խեարար, խեանոց գաւառական բառերը։

Patrubány SA 1, 191 լս. cavus «պարապ» բառին է կցում. իսկ IF 14, 58 նոյն ընդ խաւար։

ԴԻՒ.—Ունինք խէվ ձևով, նոյն իսկ Մշ. խեվ։

ՓՈԽ.—Քրդ. xiv, xiu, xevik «պարզամիտ, ապուշ մարդ» (Justi, Dict. Kurde, էջ 168)։

խեփ. առանձին անգործածական արմատ, որից կազմուած են խեփանալ «կարծրանալ, պնդանալ», խեփացուցանել «ոսկորէի կճեպի նման կարծրացնել». երկուսն էլ նորադիւտ բառ, որ գտնում եմ գործածուած Պիսիդեայ Վեցօրէից մէջ. «Զոր ոչ խեփացուցին հնդկականքն սուզանք յն. οὓς οὐκ ἀποστράκωσαν Ἰνδικοὶ σάλοι (տող 480). Բեթհագնի, սակայն խեփացեալս «էժան, բայց կարծրացած» (տող 483)։ Խեփացեալ քարինան (տող 1919)»։ Նոյն խեփ արմատից -որ մասնիկով կազմուած է խեփոր, ի-ա հլ. «խեցեմորթի պատեանը» Վանակ. հց. փոխաբերաբար՝ խօսքի համար առուած. Վրդն. երգ. մասնիկի համար համմտ. հատ-որ, բեկոր, իմաստի համար համմտ. խեցի և խեցեցուցանել «կարծրացնել»։

Նշէ խեփոր մեկնում է «որպէս թէ խփան կամ կափարիչ»։

խՁել տե՛ս խուզ։

խՁՈՒՉ տե՛ս խծուծ։

խՁՐԱԿ «մի տեսակ ծաղի՞կ» Հն. բո. ունի միայն ՀՒտս. § 1050, որի հետ նոյն է խրզռաձ «ծաղիկ» Բառ. երեմ. էջ 141. մին կամ միւսը սխալ է։

խՁՐԱՏ. անատոյդ նորադիւտ բառ, որ մէկ անգամ ունի Իրեն. հերձ. 110. «Մարդիկ ոչ էն, այլ սաղախենթոր քարուկ խզրատք» (լտ. homines non sint sed muta animalia «համր անասուն»)։

Ռուշքա մեկնում է «խիղարով սղոցուած», բայց անյարմար է (տե՛ս Վարդանեան ՀԱ 1910, 302)։

+խէթ, ի հլ. «խղճի խայթ» Ոսկ. յհ. ա. Բուզ. Եւս. պտմ. Եփր. Հռ. 30. զևտ. և Ա. կոր. «փորի ցաւ, խիթ» Օր. իր. 22. «կասկած, վախ» Եփր. ծն. 89. «ծուռ նայուածք, ոխ,ատելութիւն» Երզ. ա. 5. Մտթ. է. 23. «վտանգ, արգելք, խոչընդոտ» Ոսկ. փիլիպ. և Բ. կոր. Ագաթ. Վեցօր .որից խէր աչի «ցաւոտ աչք» Եփր. յոբ. (ՀԱ 1912, 668), Սարգ. ա. պետ. ժբ. էջ 396. (գրուած խէդ աչօք Նոնն. 70). անխէթ «աներկիւղ, անվտանգ» Ոսկ. հս. մտթ. և յհ. Ագաթ. բոնխէթի «բորնցի հրել զարնել» Ոսկ. մ. ա. 23. խիթալ «հոգս անել, վախենալ, մտատանջուիլ» Յոբ. գ. 25. Մծբ. «ծուռ կամ վատ աչքով նայիլ» Նխ. ծն. «ցաւիլ, սգալ» Մամիկ. էջ 10. խիթացուցանել «խիղճը խայթել» Շիր. խիթել՝ նոյն նշ. Եփր. բ. Թագ. և առեղ։

=Բնիկ հայ բառ. ներկայացնում է խայթ բառի մի ձայնդարձը. տե՛ս անդ։

Նշէ խայթ և խիթ բառերի հե՞տ։—Տէրվ. Altarm. 28—30 սանս. khid «ճրնշել, կոխել, ճզմել», յն. χέντρον «խրթան»։ Հիւնք., ինչպէս նաև Թիրեաքեան, Կարնամակ ծան. 88 խածանել բայից։ Scheftelowitz BB 28, 291 սանս. kheda «ճնշում»։

ԴԻՒ.—Զղ. խէր «ոխ, վրէժ», խեր «խեթիւ, խոժոռ (նայուածք)», Գոր. Երև. Ղրբ.

խէթ, խէթը, *Ախց. Սլմ. Շմ.* խէթ խէթ, *Տփ.* խիթ խիթ *«խեթիւ, խոժոռ (նայուածք)».— Նոր բառեր են Ղզ.* խէթումէթ, խէթմէթել, *Շլ.* խէթմէթաուել, *Տփ.* խի՛թիլ *«խեթիւ նայիլ»։*

խէժ *«ծառերից հոսած մածուցիկ նիւթը». արդի գրականի ընդունած ձևն է. հնից ունինք* խիժ *Խոր. աշխ. Վստկ. 197. Գաղիան.* խէժ *Բժշ.* խեժ *Յայսմ. որից* գազիխէժ *Բժշ.* խէժուկ *«մի տեսակ բոյս» ՀԲուս. § 1051. ըստ ՆՀԲ գրուած է նաև* խէզ։

Brosset, JAs. *1834, 369—405 իրար լծորդ է դնում* խէժ, խոյզ, հոյզ։ *Հիւնք. խից բառից։ Թիրեաքեան, Բազմ. 1913, 341 ՓրՔ. ընե, ղրե ձևի հետ, որ բառաբաններում չեմ գտած։ Շանիձէ* ЗВО *22, 356 ինդիլ.* խիզ *«այծի ճարպ» բառի հետ։ Մառ* ИАН *1917, 324 ավար. փիժ «ձիւթ»։*

ԳԻՒ.—Ալշ. Ոզմ. Ս. խէժ, *ՋՓ.* խեժ, *Խրբ. Մկ. Մրղ. Մշ. Սլմ. Վն.* խիժ, *Ասլ.* խէջ, խէժ, *Շմ. Խրժեր. Ռ.* խէջ, *Ջղ.* ղիժ։

ՓՈԽ.—Կապադովկ. κέτζι *«խէժ»* (Karolides, Γλ. συγκρ. *էջ 102)։*

խէլ *«կողմ». անսովոյթ բառ՝ որ մէկ անգամ գործածում է Կիր. էջ 87 «էին յարևելս երկու եղբարք... որ հաստուածեալ ի քրդաց, ի բարբիրական խէլէն» (Հրատր. Մոսկ. էջ 94* խելէն)։

Աս. Շահնազարեանց, Շողակաթ, էջ 68 քրդ. խել *«իջևանատեղի, գաւառամաս, երկիր»։ Տե՛ս նաև Աճառ. Հայ. նոր բառեր հին մատ. Ա. էջ 77։*

+**խէշ** *կամ* **խեշ** *«նեցուկ, յենարան, ձող՝ որի վրայ յենւում են բոյսերը» Նեղոս. 658. որից* խեշակ *«նեցուկ» միջ. հյ. բառ. «խաղողի որթի յենարան» Մոլուխ. 36 բ. (գրված* խէշակ*). (ունին Նորայր, Բառ. ֆր.* rame *և Բառ. երեմ. էջ 215)։*

=Նոյն է խաշ *և* խոշ *բառերի հետ, որոնք սրա ձայնդարձներն են (ծագումը տե՛ս* խաշ*)։*

Հիւնք. հանում է խեց *բառից։*

ԳԻՒ.—Ագլ. և Հնխ. խէշ *(ըստ Աղբալեան, ՀԱ 1926, 266), որից Ղրբ.* խէ՛շակ, *Երև.* խշմար *« Y ձևով երկճիւղ փայտ, որ իբր յենարան դնում են ծառերի ու թփերի տակ և կուսմ շերամատան չորս անկիւնները»։*

ՓՈԽ.—Վրաց. ხეჩაკალი խեչ-ա-կալի *«ծայրը կեռ փայտ, որ իբր խեչակ ծառայում է զանազան բոյսերի, յատկապէս լոբիի համար», որ և լազ.* ხაჩკეტი խաչկետի *«խեչակ» (տե՛ս Մառ* ЗВО *20, 116). գուռ. Քրք.* hača *«խեչակ», որ յետ դառնալով տուել է Երև.* հա՛չա *«ծառերի տակ դնելու խեչակ. 2. գոմերի և մարագների կաուրի մոյթ. 3. երկճղի (միրուք ևն)»։*

խէչ *«մի տեսակ խեցեմորթ» Մագ. տե՛ս* խեչափառ։

խէչ *«կողքին, քովը» Անսիզք 81. Սմբ. դատ. 120. Վստկ. 79. 208 (Եւ թէ գկանեփի կանաչ ցախն ի խէչդ պահես, մնջեխ ի քեզ չմերձենայ. Դիր խէչ տոշքերանին). Քուչ. 83 (Այն մարդուն ի խէչ մի՛ նստիր)։ Այս բառից է կազմուած* խեչափառ*, որ տե՛ս առանձին։*

ՆՀԲ մեկնում է «յետին կողմն կամ կողմն մի... մարթ է իմանալ և ճէպ «քսակ զգեստու»։ Սրան է հետևում ԱԲ և իբրև տարբեր բառեր նշանակում է խեչ *կամ* խէչ *«հագուստի գրպանը»,* խէչ *«ետի դին»։ ՋՓ չունի։ ՆՀԲ անշուշտ ի նկատի ունեցած կլինի ոմկ.* խըչ< *ՔրՔ.* ڇڀ qəč *«ետևը, գաւակ» բառը։ Բառիս ճիշտ նշանակութիւնը ցոյց են տալիս՝*

ԳԻՒ.—Ալշ. խեչ, *Մշ.* խէչ *«քովը, կողքին». Նոյն բառը գիտեն նաև Բլ. ՋՓ. Խրբ. Կս. Կր. Հզ. Մրշ. Նփ. ՍՓ. Սվ. Վն. որից* խէչխէչի *կամ* խէչէխէչ *«կողք կողքի, քովէ քով», Խրբ.* խէչ *«քովը»։*

***խէրանդէճ** *«բարեմիտ, բարեխորհուրդ». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Վրդն. առ. 331։*

=Արաբ. خير xayr *«բարիք»+պրս.* اندیچه andāča *«խորհուրդ» բառերից. վերջինիս վրայ մանրամասն տե՛ս* անդաճել։— *Աճ.*

***խէրպոնէ** *«փոքր կակուլայ, հիլ,* petit cardamome» *Ամիրտ. ունի միայն ՀԲուս. § 3330։*

=Պրս. خیربویا xīrbūyā, *որ է արաբ.*

خیربوا xīrbavva «կակուլայի նմանող մի հունդ՝ որ բառագիրները փոքր կակուլայ են կոչում» (Կամուս, Թրք. Թրգմ. Ա. 850)։

Ուղիղ մեկնեց նախ ՀԲուս. անդ, յետոյ Նորայր ՀԱ. 1924, 551։

ԽԹԱՆԱԼ տե՛ս խիտ։

ԽԹԵԼ տե՛ս խիթ։

ԽԹՈՒԻՍ «մի տեսակ բոյս». ունի միայն Ալիշան, ՀԲուս. § 1052։

*ԽԻԱՐ, որից նաև նուազական մասնիկով՝ խիարիկ, խիաուկ «վարունգ. 2. կիտրոն. 3. վարնգաձև մի տեսակ պալար» Շնորհ. առ. 53. Գաղիան. Վատկ. 167, 168. Յայսմ. սեպ. 23. Բժշ.։

=Պրս. خیار xiyār «վարունգ» որից նաև Թրք. xəyar կամ həyar «վարունգ», xəyarjəq «մի տեսակ ուտելիք»։ Հիւրշ. 268։

ՆշԲ դնում է բառ ոմկ։

*ԽԻԱՐՇԱՄԲԱՐ «կասիա, fructus cassiae fistulae L» Բժշ. որ և խիարշամպ Մխ. բժշ. ունի միայն ՀԲուս. § 1055։ Հիանալի գեղեցկութեամբ մի բոյս է, որ և այս պատճառով կոչւում է հնգ. rajataru «ծառերի թագաւոր», մալայ. kajoe raja «արքայափայտ» (ըստ Seidel, Մխ. հեր. § 123)։

=Արաբ. خیارشنبر xiyāršanbar «կասիա» ձևից. բուն անունն է պրս. خیارچنبر xiyārčanbar (կազմուած է čanbar «շրջանակ» բառից). այսպէս է կոչուել բոյսը՝ պտուղների գլանաձև լինելու պատճառաւ. արաբ. դարձել է xiyaršanbar, ըստ որում արաբերէնը č ձայնը չունի և օտար լեզուների նոյն ձայնը վերածում է š։

Ուղիղ մեկնեց նախ ՀԲուս. § 1330։

ԽԻԶԱԽ «համարձակ, յանդուգն, վստահ» Երզն. Մաթ. ուռ. որից խիզախել «համարձակիլ, վստահութիւն ունենալ, յանդգնիլ» Ոսկ. մ. ա. 19, բ. 25, 26 «խրոխտալ» եզն. Եղիշ. խիզախեցուցանել Ոսկ. հս. խիզախական Փարպ. խիզախումն Մագ. խիզախակ (իմա՛ խիզախիզախ) Մագ. խիզախօրէն (նոր բառ)։

ՆշԲ լծ. վստահ, պրս. kustāx։—Հիմնբ. խօսիլ բայից։ Petersson, Ar. u. Armen. Stud. 130 օսս. xīzin, xezun, պհլ. āxēzīt, պրս. zēzad «բարձրանալ» բառերի հետ՝ իբր բնիկ հայ։

*ԽԻԶԱՆ «պանդուխտ». մէկ անգամ ունի այս նշանակութեամբ՝ Ճառընտ. «Որպէս ի տաղաւարի եմք ի մարմնի բնակեալք, և ի խիզանի եմք բնակեալ յայս կեանքս»։ Նոյն իմաստով է երևում նաև Սասն. 26 «Յօտարըս և յանկայունս, ի խիզանս և յանիրաւս»։ Արևելեան քաղաքավարական ոճով ստացել է յետոյ «կին, աղջիկ» նշանակութիւնը, ինչպէս գտնում ենք արդի գաւառականներում և որի աւելի հին գործածութիւնն ունի Դրնդ. էջ 27։

=Վրաց. ხიზანი խիզանի «թշնամու յարձակման կամ հիւանդութեան պատճառով մի տեղից փախչելով մի ուրիշ տեղ ապաստանած մարդ», որից էլ ունինք Տփ. խիզան «մէկի մօտ ժամանակաւորապէս բնակուող անձ» (օր. Սա նրա խիզանն է)։ Այս իմաստից էլ հեշտութեամբ անցել է «կին, աղջիկ, ընտանիք» իմաստին։—Բայց արդեօք վերի վրաց. բառն էլ փոխառեալ չէ՞ պրս. خیزان xīzān «վեր կացող (իմա փախչող)» բառից (ներկայ դերբայ՝ خیزیدن xīzīdan «վեր կենալ» բայից)։—Աճ.

ՆշԲ մեկնում է «անշուք տուն և ընտանիք» և համեմատում է պրս. խազան «ձմերոց, տուն ձմերան» բառի հետ։ ՋՔ մեկնում է «հիւղ կամ վրան», ԱՔ «խեղճ տնակ, և ընտանիք, տաղաւ»։ Աճառ. Գւռ. բառ. էջ 468 բ քրդ. qlz'an «աղջիկներ» բառից է հանում, որ Թրք. قیز qəz «աղջիկ» բառի յոգնակին է։ Բայց այս մեկնութիւնը՝ որ արուած է գւռ. խիզան «կին, երախայ, գերդաստան» բառին, անյարմար է հնագոյն «պանդուխտ» նշանակութեան պատճառով։ Պատահական նմանութիւն ունին Թրք. և քրդ. خزان xəzān «աղքատիկ, թշուառ»։

ԳԻՒ.—Դվ. երև. լ. Ղրբ. Շմ. Ջղ. խիզան, որից էլ խիզանատէր, խիզանամայր, խիզանատուն։—Սրանց մէջ խիզան նշանակում է «աղջիկ զաւակ, ընտանիք, գերդաստան». «ընտանիք» իմաստով է և Թումա Մեծոփեցի, էջ 81 «Եւ ամենայն զօրքն և խիզան ան-

կան ի ձեռն Ջաղաթայինն» (Ամատ. Հայոց բառ ու բան, էջ 278)։

ԽԻՉԱՐ «մէծ սղոց» Ոսկիփ. Յայսմ. դեկտ. 14, մարտ 16, ապր՞ 4. որից խիզարել «սղոցել» Գնձ։

Կապ ունի՞ պրս. ارّه arra «սղոց» բառի հետ։

ԳԻՒ.—Մշ. խիզար, Ալշ. Ախց. Ակն. Երև. Խրբ. Կր. Սեբ. խզար, Մկ. Սլմ. Վն. խիզմր, Տիգ. խզմր, Ոզմ. խէ՝զար, Մրդ. խոզմր, Հմշ. խզար։

ՓՈԽ.—Լազ. խիզարի, քրդ. خزار xəzar «մեծ սղոց»։

+ԽԻԹ, ո հլ. «ցաւ (փորի կամ ոտքի)» Բ. մակ. Բ. 5. Սիր. լդ. 23. Ոսկ. մ. բ. 18. «վէրք» Ճառընտ. «ցաւ կամ հիւանդութիւն» Անկ. վիրք հին կտ. 91. «լեռների մէջ խոր տեղ, քարանձաւ» ԱՔ «ծովի մէջ ժայռ» Ոսկ. մ. բ. 15. Եփես. 808. «կոկորդիլոս» Վրք. հց. Բ. 257. Սարգ։ Վերջին նշանակութիւնները կազմուած են փոխաբերաբար. ժայռը կամ քարը ոտք զարնելու տեղն է, իբրև խոչընդոտ, ճանապարհի արգելք. հմմտ. խէք «խղճի խայթ, ցաւ, վտանգ, խոչընդոտ» և խուր «խոչընդոտ, ծովի մէջ ցցուած ժայռ». իսկ «կոկորդիլոս» նշանակութիւնը ածանցւում է «քար, ժայռ» գաղափարից. հմմտ. խեցի «թրծած կաւ. 2. խեցեմորթի պատեան. 3. կոկորդիլոս», խոյր «կոկորդիլոս» և խուր «խոչընդոտ. 2. ծովի մէջ ցցուած ժայռ». հմմտ. «խոյթ մի, որ է խեցի ծովու» Վրք. հց. Բ. 261 (այլ խմբ. կոկորդիլոս).—արդէն կոկորդիլոս <յն. κροκόδιλος ձևն էլ բուն նշանակում է «քարերի որդ» (տե՛ս անդ)։ Այս արմատից են ածանցուած խթել «խայթել, կծկել, մշտել, բոթել» ՍԳր. Ոսկ. յհ. ա. 29. «դրդռել, դրդել» Սմբ. պատմ. 48 (Իսկ Դաւիթ խթէր մարդկանցն և նոյն ժամն սպանին զծովիղն). կաշառ խթել «կաշառք կերցնել» Եղիշ. խթիլ «մի տեղ խոթուիլ, մի ծակի մէջ ապաստանիլ» Վեցօր. խթան «խթելու գործիք» ՍԳր. Կոչ. «խթիկող, քացի տուող» Մագ. խթանել (նոր գրականում), խթալ «խթիւ նայիլ» Մամիկ. առխթել «նաւր առաջ քշել» Գծ. իա. 7. Ոսկ. գծ. գաղտախթել «ծածուկ կաշառել» ՅՀ. կթ. ոտընխրբի «ոտքը կամաց կամաց առաջ դնելով» Ոսկ. կողոս. 585, եփես. 746, ծակախիթ «մի ծակ մտած» Ագաթ. Կորիւն. ծառախիթ Ագաթ. իե. և ամրախիթ Ա. մակ. ա. 56 (ըստ սրբագրութեան Նորայրի, Հայկ. բառաքն. էջ 58—59 և Կոր. վրդ. էջ 121). կողախիթ «կողքը ցաւացնող» Մագ. թղ. 58։ Այստեղ է պատկանում նաև խթիլ «մի բան ուտել, ճաշակել առաջին անգամ». «ի բան կամ ի պանիր կամ յիւղ խթիլ» Օրբ. հրտր. էմ. էջ 117. «խթիլ յեղ և ի պանիր» Օրբ. էջ 335։ «Կամք մինչև յերեկոյն և ապա խթիմք բաց ի մսոյ» Օրբել. հկճռ. է. էջ 109. «Չխթիելով միս և կամ ի գինի» Դրնդ. 87. որ և խրնիլ կամ խրնուլ. «Ոչ ընդարձակեցուցեալ և խրթնեալ նաւակատեօք». «Ջամենայն տէրունական ուտիից վիճիլն խթնուլ յերեկոյն» Մխ. ապար. որից և խրումն «նաւակատիք» Տոմար. Կանոն։ Այս արմատից է նորագիւտ բառս խիրամայրի Յովսիմ. 23 (այլ. ընթ. խերմորի, խեխմորի). Հմմտ. ծառախիթ։

=Նոյն է խայթ արմատի հետ, որին կապւում է իբրև ձայնդարձ։

ՆՀԲ խիթ՝ լծ. իտալ. gotta և գռ. կոթթալ կամ կնել։ Տէրվ. Altarm. 28—30 խէք ևն ձևերի հետ սանս. khid «ճնշել, կոխել, ճզմիլ», յն. κέντρον «խթան»։ Նոյնը, Նախալ. 68 խթել և խայթ բառերի հետ՝ սանս. knath, յն. κεντέω, իբր հնխ. kant, knat «զարնել, հրել, խայթել» արմատից։ Հիւնք., ինչպէս նաև Թիրեաքեան, Կարնամակ, ծան. 88 խածանել բայից։ Պատահական նմանութիւն ունի արաբ. ختّ xatt «նիզակով խթել» (Կամուս, Թրք. Թրգմ. Ա. 301)։—խթել «ուտել» և խրում բառերը ՆՀԲ մեկնում է վերի ձեւով։ Հիւնք. հանում է ասոր. խթօմ, ճրթօմ, արաբ. խիթամ, խաթմ «վերջ, վերջին» ձևերից։ Նոյնը նաև Գազանճեան և Բիւր. 1899, էջ 313։

ԳԻՒ.—Խն. խիթ «կողի՝ կշտի ցաւ», Տփ. խիթ «փորի ցաւ», Լ. խիթ «մէջքի մրսելուց յառաջացած հիւանդութիւն», Գոր. Ղրբ. խթան «խից ևն գոցելու գործիք», Վն. խթել

«խոթել, ճխտել», Ղրբ. խթիլ «մի բան առաջին անգամ ուտել», Երև. խթխթել «ասեղ ևն խոթել շարունակ», Մրզ. խութ՝թել «շատ ուտել», Ալշ. խդել «բոթել, մշտել», Այն. խրբնել, Սվ. խրճել, խրմել «նաւակատիք անել», Երև. Նբ. Վն. խրվել «խրուիլ», Ախց. Այն. Արբ. Եւդ. Ղրբ. Մրշ. Ննխ. Պլ. Վն. խրում, խուրում և էնկ. ճրբրմ (Բիւր. 1898, 865) «նաւակատիք (զաւակի կամ ծննդեան), Ոզմ. խրիլ «մեկին մշտել, բոթել»:

ՓՈՒԽ.—Վրաց. ხვოჭი խվիչի «մողէս, կոկորդիլոս» (<Հյ. խիրճ կամ խուրճ, խոյր). բոշայերէն խաբել «ուտել, վայելել», խաբելիճ «ուտելիք, կերակուր»: (Այս բառը Finck, Die Stellung des Armenisch-Zigeunerischen im Kreise der verwandten Mundarten, էջ 14 կգում է պրակրիտ khāï բառին):

Խիլ «փնտռտուք, որոնում, խուզարկութիւն» Եւս. պատ. որից խիլ արկանել «մանրակրկիտ զննել, որոնել, քարուքանդ կամ տակնուվրայ անելով խուզարկել» Եւս. պատ. 156. խլել «կորզել, պոկել. տեղից հանել, քանդել» ՍԳր. Կոչ. Ագաթ. Եփր. Բուզ. խլիչ Ագաթ. խլխլել «պատճառներ փնտռտել» Ոսկ. յհ. ա. 3. «տնտնալ, դանդաղիլ» Ոսկ. ես. 388 (երկիցս), խլխլական «ողորմելի» Ոսկ. ես. 340. խլումն Եփր. Թգ. խլոցք «խլումն, յափշտակութիւն» (չունի ԱԲ) Անսիզր 27. արմատախիլ Ոսկ. յհ. ա. 38, բ. 8, 9. արմատախլել Մծր. բիկնախիլ «մեջքը բերթուած» Տօնակ. Տաթև. ձմ. ճե. լարախիլ «խամաճիկ՝ տիկնիկ խաղացնող» Արիստ. աշխ. դժուարախիլ Ոսկ. յհ. ա. 29. տաշտախիլ Եղիշ. տակախիլ «արմատախիլ» Մարբին. փշախիլ Ոսկ. յհ. ա. 1. նոյն է նաև գլխլել «ամբողջովին խլել», որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Ոսկ. ճառք, էջ 144. «Որ ի խորոչն արմատն է՝ ի վեր գլխլել ախորժիմ»:

ՆՀԲ արաբ. فيل, فيْر: Canini. Et. étym. 12 սանս. gara «թոյն» և թրք. aγrə «ցաւ» բառերի հետ: Հիմնք. խուլ բառից: Karst, Յուշարձան 400 ասուր. ḫalāku «խլել»: Ղափանցեան, Տեղեկ. ինստիտ. 2, 91 վրաց. ցլա: Պատահական նմանութիւն ունին արաբ. قلع qal' «խլել, փրցնել», վրաց. ախլնչա «խլել, կտրելով կամ պոկելով բաժանել», միխլա «իրարու բաղխել», գախլելեբա «բարկացնել», խլա «իրար զարնել»:

ԳԻՒՂ.—Ալշ. Մշ. Զղ. Սլմ. Սչ. Վն. խլել, Ախց. Երև. Կր. Մրզ. Ննխ. Ռ. Սեբ. խլէլ, Ղրբ. Մկ. Ոզմ. Տփ. խլիլ, Զթ. խը՝լիլ, Ղրբ. Դոր. խլիլ, խըլլիլ, Հճ. խոլլել.—Նոր բառեր են խլխլոտել, խլոց, խլփշտել, խլապժել, խլշտել, խլխլտել:—Համշ. խլլուշ:

Խիճաւիրաւ (եղ. կամ յոգ.) «հոտած թուք, խուխ կամ ուրիշ ապականութիւն» Ոսկ. մ. բ. 17, 19. ուրիշ օրինակ չկայ. բայց նոյն բառի այլափոխեալ գրչութիւնն եմ համարում նխիխաւար Փիլ. նխ. բ. 115 «Քանզի յաչս կուտեալ նխիխաւար և աղբախուղբ և աղբոց բազմութիւն». ուր նխի խաւար ձեի չն. Համապատասխանն է φρυτός «աղբ, կեղտ ևն»:

ՆՀԲ խուխ աւրած կամ խիղ:

Խիճ «մեղադրանք, ամգամանք». արմատ առանձին անգործածական. գտնում ենք միայն խճբիճ «ամգամանք» և խճաբար «մեղադրելի» ՀԲ բառերի մէջ: Տես և խիղճ:

*Խիկաւր «իմաստուն, իմաստակ» Շնորհ. առակ. Կոստ. երդն. 80, 142. Ոսկիփ. Արբ. կրետ. 61. Յայտմ. հոկ" 24 (Ոտիքն արագ և խելօքն խիկար). Տաղ. հրտ. Զօպանեան, Հայ էջեր 26 (Դու խիստ խիկար ես):

=Խիկար իմաստունի անունն է՝ հաւաստակ անուան վերածուած. բնաձևն է արաբ. حيقار Ḥīqār, Ḥaiqār. ասոր. Axikar, որոնցից փոխառեալ են նաև եբրովպ. xekar, յն. Ἀχεικάρ, Ἀχίχαρος, սլ. Akyrios, լտ. Achicarus, Achior.—Հիւրշ. 268:

Ուղիղ մեկնեց նախ Müller WZKM 8, 281 (Թրգմ. ՀԱ 1894, 294): Համմտ. մասնաւորապէս Հ. Յ. Տաշեանի «Խիկար և իր իմաստութիւնն» աշխատութիւնը, էջ 112:

Խիղ տե՛ս Խեղ:

Խիղ
Խիղբ } տե՛ս Խեղբ:

խիզՔ «շատ, մի խումբ, բազմաթիւ» Արծր. բ. 6. ուրիշ վկայութիւն չկայ։

խիզՔ տե՛ս յաջորդը։

խիզճ, ի հլ. «խղճմտանք, խղճի ցաւ» ՍԳր. Ոսկ. մ. ա. 16 և յհ. ա. 12. «շար» Ոսկ. ես. և յհ. ա. 45. որից խիղճ մտաց «խղճմըտանք» ՍԳր. Ոսկ. յհ. ա. 13. Եփր. Թգ. խրղճել «խիղճ աննել, քաշուիլ» ՍԳր. Եւս. պտմ. Եղն. Սերեր. խղճալ «տարակուսելով չհտ քաշուիլ» Եղն. «կարեկցիլ, վրան խղճալ» Ոսկ. յհ. բ. 3. խղճական «յանցաւոր» Ոսկ. «խրղճալի» Գնձ. խղճամիտ Սիր. ե. 9. խղճմըտանք վրդն. լս. Երզն. մտթ. խղճալի Սարգ. անխիղճ ՍԳր. Ոսկ. ես. Եւս. պտմ. նոր գրականի մէջ անխղճօրէն, անխղճմտանք, խրղճաճարութիւն են։ Գրուած է նաև խեղճ «խղճմտանք» Սերեր. Ոսկ. ես. Եփր. Ոսկ. մ. գ. 4. «սրտի ցաւ» Եփր. համար. «թշուառ, ողորմելի, խղճալի» Վրք. հց. որից խեղճմիտ Եփր. երր. 220. խեղճմտութիւն Մաշկ։ Բառիս երկրորդ ձևն է խիղձ «խղճմտանք, խիղճ» Լծ. նար. որ և գրուած է խիճ (իմա՛ խիղճ) Ոսկ. մ. բ. 23, էջ 695 (տպ. թախիճ). Ձևի համար հմմտ. ճկոյր և ձկոյր։

ՆՀԲ մեկնում է «խիճ իմն կծանօղ, խէր կամ խայթ»։ Հիւնք. իղձ բառից. Ղափանցեան, Տեղեկ. ինստիտ. 2, 89 գիղջ բառից։

ԳԻՒ.—Ոզմ. խեղճ, Սլմ. Վն. խեխճ, Ախց. Գոր. Կր. Ղրբ. Մկ. խէղճ, Ագլ. Երև. Մրզ. խէխճ, Ջղ. խեղջ, Խրբ. Ննխ. Պլ. Ռ. խէղջ, Տփ. խիխճ, Ասլ. խե՛ղջ, խէ՛ղժ, Տիգ. խիղջ, Երև. ճէղջ, որոնք բոլոր նշանակում են «խեղճ, թշուառ»։ «խիղճ, խղճմտանք» նշանակութիւնն ունին Ախց. Կր. խիղճ, Սլմ. խեխճ, Գոր. Ղրբ. Մկ. խէղճ, Ագլ. Մշ. Պլ. Ռ. Տիգ. խիղջ, Երև. խիխճ, բայց կայ նաև խեղճ գալ «խղճալ» ոճը (Գնձ. Երև. Ղրբ. Շմ. Պլ.)։—Սակայն «խիղճ» նշանակութեան համար յատկապէս խիղճ մտաց ձևից կազմուած է խղճմտանք > Ախց. խղճմտանք, Մկ. խղճմտանք[1], Սլմ. խեխճմբտանք, Մրզ. խէխճմբտանք, Երև. խրխչմտանք, Ջղ. խրղչ՛մբտանք, Շմ. խրխճմբդանք, Ագլ. Տիգ. խրղչմդանք, Պլ. խրղչմբդանք, խչմդանք, խրժմբդանք, Ննխ. խրջմբդանք, խրժմբդանք, Մշ. խրխ՛ջմդանք, Ագլ. Գոր. Ղրբ. խրժմբտանք, Խրբ. Ռ. Սեբ. խրժմբդանք, Ասլ. խրժմբդանք, խրժմբդա՛, Զթ. խրղջմբտանք, խրղջմբդոնք, Հճ. խmղջմբդոնք, Կր. խճմբտանք, Տփ. խճմբտանք, խրխճմտանք, խրճպբտանք։—Նոր բառեր են խեղճաբեր, խեղճուկ, խեղճկեկ, խղճահարուիլ, խղճմտանքաւոր, անխղճմտանք։—Թրքախօս հայերից ունինք էնկ. խժմտանք «խղճմտանք», խրղճաւոր «երկմիտ, խղճահար» (Բիւր. 1898, 789)։

ՓՈԽ.—Լահճերէն (արդի Ազուանից բարբառներից մին) խեղճ «թշուառ» (տե՛ս Բարխուդարեանց, Ազուանից երկիր և դրացիք, էջ 92)։

խիճ (յեռնաբար ի հլ.) «քարի մանրուք, քարի մանր կտորտանք, կոպիճ» ՍԳր. Յհ. իմ. ևկեղ. որից խճամբ Սիր. իբ. 21. խճամած Նչ. եզեկ. խճել «կրի մէջ խիճ խառնել՝ ծեփելու համար» Երզն. մտթ. 462. Տօնակ. խճեայ ճառընտ. մաճառախիճ Յոբ. ը. 17. Կոչ. 245 (տպ. մաճրախիճ)։ Նոր գրականի մէջ ունինք խճուղի։

Զուբինով, Dict. Géorg. համեմատում է վրաց. կաժի «գայլախազ, հրահան» բառի հետ։ Հիւնք. հանում է ցեխ բառից։ Հ. Ս. Երեմեան, Բազմ. 1900, էջ 8 կցում է գերմ. Kies «խիճ» բառին։ Աճառ. ՀԱ 1909. 160 խ և կ ձայնների լծորդութեամբ միացնում է կիճ, կուճ «մարմարիոն» բառին։ Մառ, ИАН, 1917, 316 հյ. կիճ, ավար. գամած «քար» են բառերի հետ։ Ղափանցեան, Տեղեկ. ինստիտ. 2, 104 վրաց. խվիճջի և կենճի հոմանիշների հետ։ Պատահական նմանութիւն ունի փռիւգ. γίσσα «քար»։

ԳԻՒ.—Ախց. Երև. Մկ. Տփ. խիճ, Ագլ. Մշ. խիջ, Տիգ. խիշ, Ոզմ. խէ՛ճ. Նոր բառեր են՝ խճակ Ջն. և խճակուտ Ջն. «քարոտ քարքարոտ կարծր գետին, որ դժուարութեամբ է փորւում».—կրկնական է Կր. խիճուճիճ։

ՓՈԽ.—Վրաց. ხიჯი խիճի, ხვიჯი խըվիճի «խիճ», քրդ. خیز xīz «աւազուտ», գւռ. Բրբ. Ակն. xij, xəj «մանր քարեր»։

*ԽԻՄՈՒԱԿԱՒ «մի տեսակ կաւճային ըս-

պիտակ կամ կարմիր հող, որ հին Աթէնքում լողացողները, լուացարարները և սափրիչները իրրև օճառ էին գործածում» Բժշ. «խիմուլակաւ. ինքա ի բուռն ի մօտ լինի, լըրջդոյն տրամ հող». ունի միայն Նորայր, Բառ. ֆր. 245 ա։

=Յն. Κιμωλία γῆ, որից և լտ. cimōlia creta, *ֆրանս.* cimolée *նոյն նշ. այսպէս է կոչուած այս կաւը Կիւկլատեան Կիմոլոս կղզուց անունից, որտեղից արտահանւում էր։ Յն. k ձայնի դէմ խ՝ ցոյց է տալիս որ բառը արաբերէն առաւադարձութեան միջոցով անցել է մեզ։—Աճ.*

խին *«պարարտութիւն, կաթի իւղը». Հնից աւանդուած չէ, բայց սրանից է խնոցի, որ տե՛ս առանձին։*

*+***խինդ** *(սեռ.-ի) «ուրախութիւն» Փարպ. որից* **խնդալ** *«ուրախանալ» ՄԳր. «ողջո՛յն, ո՛ղջ լեր» (նամակների մէջ գործածուած) Ագաթ. Խոր. բազում խնդալ ասել «մնաք բարով ասել, հրաժեշտ տալ» Փիլ. խնդալ «միաբանիլ» Փիլ. նախ. 57 և Իրեն. ցոյցք 3 (ըստ Վարդանեան ՀԱ 1921, էջ 454).* **խնդացուցանել** *Մծբ. Ոսկ. յհ. ա. 2.* **խնդալից** *Յոր. գ. 22, իթ. 22. Ագաթ.* **խնդաւէտ** *Բուզ. չարախնդաց, չարախնդութիւն (նոր գրականին յատուկ բառեր)։ Այստեղ են պատկանում նաև* **խնդակոր** *Ոսկ. ես. 424.* **խնդամոլ** *Սիր. աւետ.* **խնդամոլի** *Նար. քր. մոլախինդ կամ մոլեխինդ Խոր. Նիւս. ՅՀ. կթ. Համանիշները՝ որոնք նշանակում են «լտ.* conium maculatum L*» Բունաւոր խոտը (Տիրացուեան,* Contributo *§ 287). աւում է նաև պարզապէս* **խինդ***՝ ըստ ՀԲուս. § 1057։ Յետին նշանակութեամբ* **խնդալ** *դարձել է «ծիծաղիլ» և այս իմաստով գոնում ենք Վրք. Հց. ը։— Բառիս երկրորդ ձևն է *խինձ, որից -իդ մասնիկով կազմուած է* **խնձիդ***, յետին գրչութեամբ* **խնճիդ***, որի վրայ տես առանձին։*

=Ինիկ հայ բառ՝ հնխ. khendh- *արմատից, որ պահուած է նաև իրանական լեզուների մէջ. համմտ. պհլ.* xandītan *«խնդալ»,* xandak *«ժպիտ», պրս.* خنده xanda *«ծիծաղ, ծաղր»,* خندیدن xandīdan *«խնդալ»,* خندان xandān *«ուրախ», սոգդ.* xandant *«ծիծաղում են», քրդ.* kenin *«ծիծաղիլ»,* ken *«ծիծաղ»,* beken *«ուրախ», բլուճ.* kandag *«խնդալը»* (Horn *§ 494*)։ *Հայ բառը չի կարող իրանական փոխառութիւն լինել՝ նախ նշանակութեան և երկրորդ՝ և a ձայնաւորների տարբերութեան պատճառով։ Հնխ.* khendh- *նախաձևը ենթադրւում է միայն հայերէնի միջոցաւ, ուր e դարձած է Ց. ի՝ յաջորդ ռնգականի պատճառաւ։—Հիւբշ.* IF Anz. *10, 48։*

ՆՀԲ պրս. **խանտէ, խանտիտէն**։ Spiegel, Comm. I. *319 զնդ.* xañdrakara *«բարեկամական» բառի հետ։—*Müller SWAW 42, 255 *(սխալմամբ գրելով* **խանդալ***) կցում է պրս.* xandīdan *ձևին։* Canini, Et. etym. *142 սանս.* khindāmi *«վշտացնել» բայի հետ։* Meillet MSL *9, 153* **խնդիր** *և* **խանդ** *բառերի հետ Ց.* chošte, chuteti *«ուզել», լհ.* chęć *«փափագ» ձևերին է կցում։ Նոյնը ընդունում է* Pedersen KZ *38, 388 և 40, 178։ (Մերժում են* Waide 270 *և* Berneker *399)։ Թիրեաքեան, Պատկեր աշխ. գրակ. 195 և Հիւնք. պրս.* **խէնտէ, խէնտան, խէնտիյատէն** *բառերից։ Ուղիղ մեկնութիւնը վերի ձևով տուաւ Հիւբշ.* IF Anz. *10, 48։ Մ. Ս. Դաւիթ-Բէկ, 397* **խանդ** *բառին հետ՝ իմ.* sant *«փափագ», հրրբտ.* aruanta, *արմ.* c'hoant *«տենչ, իղձ»։* Karst, *Յուշարձան 399 աստր.* ḫâdu *«ուրախանալ»,* ḫidûtu *«ուրախութիւն»։ Մառ,* ИАН *1914, 1238 վրաց.* ხარება **խարեբա**, *յն. χαρά, պրս.* xändä, *աստր.* xədī *համանիշների հետ։*

ԳԻՒ.—Մկ. Զղ. Ս̌չ. Տփ. **խնդալ** *«ուրախանալ», Սրև.* **խնդալ** *«ուրախանալ», Ակն. Ասլ. Խրբ. Ննխ. Պլ. Ռ. Սեբ.* **խնդալ**, *Ախց. Կր.* **խնտալ**, *Հճ.* **խնդ՛օլ**, *Զթ.* **խօնդօլ, խօնդոլ**, *Համշ.* **խրնդուշ** *«ծիծաղիլ», Մշ.* **խնդ՛ալ**, *Ալշ.* **խնդաճալ**, *Ոզմ. Տիգ.* **խնդոլ**, *Հւր.* **խինդոլ** *«ուրախանալ»։ Նոր բառեր են* **անխնդաց, խնդացք, խնդամոլիկ, խնդիկ խնդիկ անել, խնդլիկ, խնդլոզ, խնդխնդալ, խնդոց, խրնդուածք, խնդուկ, խնդում, խնդումերես, խրնդումկեկ, խնդուք, խնդվտուք, խնդմնդալ, խնդմնդան, խնդվտուն, խնդեղն** *«օշինդր» (<*խնդադեղն, համմտ. մոլախինդ, խնդամոլի)։*

խինՁ *(ներգ. ի խնձի)* «գոգ, ծալք, խորշ, անկիւն, ծոց» Բուզ. 148. Պատ. աղէքս. 170. Նիւս. բն. երգն. մտթ. 403.—Նորայր, Բառ. ֆր. 605 բ մեկնում է «նեղ անցք ի մէջ երկուց լերանց».—ՆՀԲ առաջին նշանակութեան վրայ աւելացնում է «2. խեց կամ խեշիր, իբր ծայր՝ մատն կամ կոտոր և կերուք իրաց. 3. գրախեց» (առանց վկայութեան). (ԱԲ չէ դրած այս վերջին նշանակութիւնը)։ Առաջին նշանակութեան հետ նոյն է «հագուստի առաջակողմը կամ գոգնոցը վեր բռնելով ձևացրած փոսը». այս գեղեցիկ նշանակութիւնը մէկ անգամ գտնում եմ գործածուած Կղնկտ. հրտր. էմինի, էջ 58 «Նաև բարեսէր և յոյժ հաւատացեալ թագուհին պիտինձ մատուցեալ թագաւորական զգեստու՝ ի հողոյն կրէր փութապէս». Համմտ. նաև Փիլ. տես. 20։ Գրուած է նաև խինձ «արգանդի ներքին խորշերը» Տաթև. հարց. 785։

խինՁ «մի տեսակ բոյս. tragopogon pratensis L» *(ըստ Արթինեան, Տունկերը, էջ 35). որից* խենձեղինոյ տակ Բժշ. ունի միայն ՀԲուս. § 1058։

Գիւմ.—Գնձ. Շշ. Սլմ. Վն. խինձ։

*[***խինՇԱ.** *նորագիւտ անստոյգ բառ, որ երկու անգամ գտնում եմ գործածուած 1275 թուի մի արձանագրութեան մէջ (Վիմ. տար. էջ 149). «Ինչ զկնեղեցիս լմնեցին խիշայ կու տայաք սպիտակի, այն խիշային փոխան զԱղազար բղխձնցին տվաք»։ Ուղղել խլայ, որ տե՛ս։]*

խիՇՏ, ի–ա հլ. «անկողին» Լծ. Կոչ. Նար. *որից* խշտի *կամ մանաւանդ անեզաբար* խշտիւ «անարդ՝ խեղճ անկողին, գաղանի որջ» ՍԳր. Ոսկ. եփես. ժգ. խշտեակ Ոսկ. ա. տիմ. եղիշ. ը. էջ 113. գետնախշտեայ Մծբ. հողախշտի Նար. Ածխ. Մաշտ. 658. ստորախշտեցուցանել «իջեցնել, հանդարտեցնել» Տիմոթ. կուզ, էջ 31, իբր ստրկական թրգմ. յն. κατα-κοιμάω հոմանիշի (տե՛ս իմ Հայ. նոր բառեր Տիմոթ. կուզի մէջ, էջ 99). այստեղ է պատկանում նաև խշտել «հանգուցանել, օթեցուցանել, հիւրընկալել», որ գիտէ միայն ՓԲ։

ՆՀԲ խշտի բառի տակ թւում է հանել խիստ բառից, իսկ նիշել բառի տակ՝ յն. κοιτάζομαι «ննջել» ձևի հետ լծորդէ դնում։ Սագըզեան ՀՄ. 1909, 336 և Karst, Յուշարձան 407 հյ. հաշտել «սրբել մայր մտնել» սումեր. kuš «պառկիլ», šuu «արևը մայր մտնել» ձևերի հետ։ Թիրեաքեան, Արիահայ բռ. 181 պրս. خشخ xišt «աղիւս» բառից, իբր թէ «չոր գետնի վրայ պառկած»։

***խիՇՏ** «տէգ, նիզակ». նորագիւտ բառ, որ մէկ քանի անգամ գործածուած եմ գտնում յետնաբար. ինչ. Շապհ. էջ 61 (Զդեց այրն այլազգի զխիշտն իւր... ի վերայ խշտին). Մխ. դատ. էջ 263 (տես իմ Հայ. նոր բառեր հին մատ. Ա. էջ 60). «Ջոսկի տէգան ունին, այսինքն՝ ջոսկով կազմած խիշտս». տե՛ս նաև Տաթև. ամ. 286, Վրք. և վկ. Ա. 648. Մխ. դատ. 87։ Այս արմատից ունինք խշտաւոր «նիզակաւոր» Վանակ. հց։

=Պրս. خشخ xišt «նիզակ, աշտէ», որից էլ վրաց. ხიშტი խիշտի «երկար սուր». բառիս ծագման վրայ ընդարձակ տե՛ս Աշտեայ։—Հիւբշ. 159։

Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ (խշտաւոր բառի տակ), որ կցում է նաև լտ. hasta: Lag. Arm. Stud. § 994 պրս. xišt: Աշտեայ և պրս. xišt բառերի յարաբերութեան վրայ խօսում է Հիւբշ. 510։

Գիւմ.—Այս արմատից են կազմուած խըշտիկ Մշ. «փայտի ծայրին անցկացրած սուր երկաթ», խշտեկ Նր. «սուին», խշտել Ղրբ. «մշտել, բոթել, հրել», Պլ. «չարչարել, նեղել», Շմ. «շուլալել, հարևանցի կարել», Տփ. «վատնել, մսխել», խշտի տալ Ղրբ. «մշտել», խշրել Վն. «միսը ասեղ, փուշ ևն խրել», խշրուիլ Վն. «միսը ասեղ, փուշ ևն խրուիլ», խշրիկ Վն. «էշ քշելու խթան»։

խիՊԱՐ «արմնադրութեան մէջ գործածուած մանր քարեր, որ պատի վրայ խոշոր քարերի մէջերքին մնացած մանր ծակերը լցնելու են ծառայում. blocage». միջին հյ. բառ. որի վկայութիւնը տե՛ս Նորայր, Բառ. ֆր. 154 բ։

Բառս ունի միայն ԱԲ, որ մեկնում է «թերևս շաղախ, շաղուած հող և կիր». վերի իմաստը դնում եմ ըստ գաւառականի, ինչպէս ունի նաև Նորայր։

Դիմ.—*Ախց. կր.* խիպար, *Ալշ. երև.* խիբար:

Փոխ.—*Թրք. գուռ. կր.* xibar *նոյն նշ.*:

***խիպիլիկ**, ի–ա *հլ.* «*մի տեսակ գիշերաչին երևակայական ոգի, մղձաւանջ,* cauchemar» *Գառն. էջ 49 (Պահպանեա՛ զիս ի կարծեաց ցնորից... ի բռնութենէն Բելիաբայ, ի սաստից սատանայի, ի ծանրութենէ խիպիլիկաց). որ և* խպլիկ *Բժշ. (Վասն խպլիկ ցաւոյն. կան ոմանք որ երբ ի քուն լինին, հանց թվի թէ իրք մի ի վերան նստաւ, և թէ ճիչէ՝ ձայնն ի դուրս չգայ և խօսիլ չկարէ, և ահաւոր թվի և երկնչի.—Քապռսն. խպլիկ ցաւն է)*:

=*Բուն և նախնական նշանակութիւնն է «թիթեռնիկ», ինչպէս ցոյց են տալիս դաւառականները. այս նշանակութեամբ փոխառեալ է ԹՊր.* käbäläk, *Թրք.* kebelek, kelebek, kepenek «*թիթեռնիկ*» *բառից։ Հայերէնի մէջ երևակայական էակներից շատերի անունը ծագած է «միջատ» նշանակող բառերից. համմտ. Պլ.* պուճուկ *կամ* ալապուճուկ <*տճկ.* بوجك böjek «*միջատ*» *բառից, Ննխ.* պողոճ <*գուռ.* պողոճ «*միջատ*» *բառից, Պլ.* պիւ <*Ննխ.* պի «*մորմ*» *բառից, Վն.* պոլօ *և* սուջապլօ <*Վն.* պլօ, պոլօ «*միջատ*» *բառից, նոյնպէս ժժմուճ Խն. «երևակայական ոգի»* =*երև. «միջատ»։ Այսպէս էլ «թիթեռնիկ» նշանակութիւնից ստացուած է «մղձաւանջ» նշանակութիւնը, «գուցէ նմանութիւն մը երևակայելով մղձաւանջին և թիթեռնիկին մէջ» (ըստ Մասեաց Աղաւնի, 1863, էջ 302)։—Աճ.*

ՆՀՔ (կուռ բառի տակ) կցում է երր. խէպլ «*անուտիք*» (*իմա* הבל hebel «*շունչ հոգմոց, շունչ, ոչինչ. ոչնչութիւն*»)։ *Մառ, Վրդն. առ. 1. 251 ասոր.* ܚܒܠ xabala «*վնասաբեր, բանսարկու, սատանայ*» *բառից։ Սագըղեան ՀԱ. 1909, 335 և* Karst, *Յուշարձան 404 սումեր.* gipilu «*մղձաւանջ*»։ *Վերի ձևով մեկնեց Աճառ. Հայ. գուռ. բառ. էջ 491։ Պատահական նմանութիւն ունին վրաց.* ხიბლვა *խիբլվա «դիւթել, կախարդել»,* ხიბლი *խիբլի «կախարդանք, խորամանկութիւն»։*

Դիմ.—*Պահուած է Ախց. կր.* խրպըլիկ, *Ջղ.* խիպիլակ, *Ալշ.* խիբիլիգ, *Խոջ.* խիփիլիգ, *կր.* խուլիկ, *ՋԹ. Համշ. Մշ. Ննխ. Պլ. Ռ.* խըբըլիգ, *Ննխ. (դիւղերը)* խրբըլիճ *ձևերով. նշանակութիւններն էլ շատ զանազան են. այսպէս՝ Ախց. ԼՀ. Խր. Կղզ. Հնգ. Ննխ. Տր. «թիթեռնիկ», Ակն. Ատ. Բլ. Բզ. Խոջ. Մլթ. Մն. Մշ. Նբ. Պլ. Սվ. Վն. «մղձաւանջ և մղձաւանջի ոգին», ՋԹ. «պտտուող քամի, սատանի քամի, փոթորիկ», Բլ. «ճարպիկ, կարճահասակ ու սատանայ մարդ», Վն. «մանր ու վտիտ մարդ», Սեբ. «մի տեսակ հիւանդութիւն», Արբ. Պլ. Ռ. «մանկական ձևեր ունեցող, խօսքի, գործի և վարմունքի մէջ անտեղի ու թեթեւամիտ ձևեր ու շարժումներ անող», Խրբ. «փոփոխամիտ, անհանդարտ», ՋԹ. «չարաճճի», Կր. Ջղ. «փոթրիկ ու սիրուն», Ննխ. «սիրուն աղջիկ», Ատ. «տիկնիկ, կուկլայ», Համշ. «երեքնուկ խոտը»։ Այս բոլոր նշանակութիւնները ծագում են առաջինից փոխաբերաբար. համմտ. յն. ψυχή «հոգի, մեռելների ոգին, թիթեռնիկ (իբրև խորհրդանշան հոգիների անմահութեան), մի տեսակ բոյս, որ է* aster tripolium L». *միւսները խպլիկին վերագրուած յատկութիւններն են. բայց համմտ. նաև* թիթեռնիկ *Ատն. «Թեթեւամիտ» (տե՛ս իմ Գուռ. բռ. էջ 491).—Բառ. երեմ. էջ 198* խպլիկ *մեկնում է «ճիւաղ»։*

***խիսմ** *«դատի մէջ մէկի հակառակորդը,* adversaire» *(չունի ԱԲ). Անսիզք, էջ 21, 23, 25, 27, 29, 33, 59. Սմբ. դատ. 124։*

=*Արաբ.* خصم xasm *կամ* خصيم xasīm «*թշնամի, հակառակորդ, ոսոխ*»։—*Աճ.*

խիս, ի, ի–ա *հլ.* «*կարծր, ամուր, պինդ, դժուարին, ծանր, դաժան, բուռն*» *ՍԳր. Եւս. պտմ. Սեբեր. եղն. Մծբ. եփր. եվ. Կոչ. յետնաբար և արդի դրականի ու գաւառականների մէջ «յոյժ, շատ» նշանակութեամբ. հնագոյն օրինակն ունի Մամիկ. էջ 48 «խիստ վաստակեցաւ Սմբատ յաւուրն յայնմիկ». աշխ. և գուռ.* **խիստ բարի, խիստ գեղեցիկ, խիստ ճերմակ**: *Նշանակութեան զարգացման համար համմտ. պրս.* سخت saxt *և Թրք.* پك pek, *որոնք նշանակում են «խիստ, կարծր, պինդ», բայց ածականների*

վրայ դրուելով նշանակում են «յոյժ, շատ». ինչ. պրս. saxt suxt *«խիստ թոյլ», թրք.* pek eyi *«շատ լաւ»,* pek güzel *«շատ գեղեցիկ»։ (Այս համեմատութիւնը տե՛ս նաև Մասեաց աղաւնի 1863, էջ 202)։ Գաւառականներում էլ ունինք պինդ իբր դերադրական մասնիկ. ինչ. պինդ աղէկ «ամենալաւ», պինդ մեծը «ամենամեծը» (այսպէս Բզ. Համշ. Սլգ. Սվ.)։—Խիստ արմատից ծագած ձևեր են խստութիւն Սպր. Ագաթ. Վեցօր. Եղն. Ոսկ. խստանալ ՍԳր. Վեցօր. Եղն. Բուզ. խստագոյն ՍԳր. Բուզ. Կոչ. խստանձայն Վեցօր. խստաբերութիւն Ագաթ. խստաշունչ Վեցօր. Բուզ. խստասիրտ ՍԳր. խստերախ Ագաթ. խստիւ Ա. Թագ. ի. 7, 10. խստաբար «որձաքար» Մծբ. ռամկաբար խստել «զօրանալ, սաստկանալ» (չունի ԱԲ). ինչ. «Այնչափ խստեց սովն» Սմբ. պատ. 88. խստապահանջ, անխստապահանջ (նոր բառեր)։

ԳԴ և Հիւնք. պրս. saxt *«խիստ, կարծր, կարի, յոյժ»* հոմանիշից։ Scheftelowitz. BB *29, 32* կցում է խիտ <*khid- *ձևին, իբր թէ հնխ.* khidto> *խիստ։* Meillet, Dial. indo-eur. *էջ 57* հյ. խիտ *բառի հետ սնս.* khidáti *«պատառել, սեղմել»*?—Karst, *Յուշարձան 405 սումեր.* kešda *«սահմանափա՞կ»։ Թիրեաքեան, Արիահայ բռ. 180 պրս.* خست xust *«վշտացնել, չարչարել»։*

ԳԻՒ.—*Ախց. երև. Կր. Մշ. Ննխ. Ջղ. Տփ.* խիստ, *Տիգ.* խիսդ *«շատ, կարի». Թերևս նաև Զթ.* խինց, խրնց *«կարի, յոյժ»։ Նոր բառեր են խստիլ Սվ. «սաստկանալ», խստել Խրբ. «վռնտել», խստասէր Զթ. «շատ սիրածը»։—Ղրբ.* խէ՛շատ *«խիստ շատ»։*

ՓՈՒ.—*Վրաց.* ხიხტი խիստի, ხიშტი խիշտի, ხუხტი խուստի, ხვეხტი խվեստի *«կոշտ, յամառ» (Օր. իբ. 18), որից* ხიხვეხტე սիխվեստե *«լրբութիւն, յանդգնութիւն»։*

ԽԻՏ *(ի հլ. ըստ ՆՀԲ, բայց առանց վկայութեան) «հոծ, կուռ, կողք կողքի լիուլի սեղմուած» Եզեկ. լա. 3. Պիտ. Խոր. «յաճախ, ստէպ» Նիւս. բն. Փիլ. որից* խիտ առ խիտ *Ա. մկ. ժբ. 28. Եղիշ.* խիտ ընդ խիտ *«ստէպ ստէպ» Լմբ. Վրք. Հց.* խտութիւն *Փիլ. Պիտ. Նիւս. բն.* խտանալ *Եղիշ. Պիտ. Արծր. (գրուած* խթացեալ *Եղիշ. այլակ. էջ 227).* խտացուցանել *«շատացնել» Խոր. Սամ. եր.* խտաբար *Բրս. Թղթ.* բանձրախիտ *Իմ. ժէ. 12. Ոսկ. ես.* տերևախիտ *Ղևտ. իգ. 30* բազմախիտ *Եփր. Թգ.* ոստախիտ *Սիր. ժգ. 19. Ոսկ. կողոս.* բաւախիտ *Երզն. լս.* անտառախիտ *ՍԳր. Եզն. Կոչ.* խտաչափ *(նոր բառ), առանց սղման՝* խիտամայրի, խիտատարբ *ԱԲ։*

Հ. Ն. Անդրիկեան, *Բազմ. 1905, 512* համարում է նոյն բառի կրկնակը։ Meillet, Dial. indo-eur. *էջ 57 սանս.* khidáti *«պատառել, սեղմել»*?

ԽԻՐ *«մի տեսակ զարդեղէ՞ն է».* անստոյգ բառ, որ մէկ անգամ գործածում է Բառ. երեմ. *էջ 246՝ շինի՛ բառի բացատրութեան ժամանակ. այսպէս՝ «շինք. խիր կամ թիկնակիք կանաց» (իմա՛ շինգդ «խիր կամ թիկնագիք կանանց»)։*

***ԽԻՐ** *«ճերմակ մանուշակ». ունին միայն ՋԲ, ՓԲ, ԱԲ և ՀԲուս. § 1059. որ և* խիրի *«մեխակ» Մխ. բժշ. (ունին միայն Հիւբշ. և ՀԲուս. § 1060). որից* խիրու ձէր *«մեխակի իւղ» Մխ. բժշ։*

=*Պրս. և արաբ.* خير xīr *կամ* خيرى xīrī *«մի տեսակ ծաղիկ, որ ունի դեղին, կարմիր և ճերմակ տեսակները.* cheiranthus cheiri, Goldlack *կամ շահպրակ» (ըստ* Steinschneider WZKM *12, 20). սրանից է պրս.* rōγan-i-xērī *«խիրու ձէթ»,* Lacköl*»,—պհլ.* xeri, *սասր.* صزيگ kīrīg. *կոչւում է նաև պրս.* خرو xirū *«է ծաղիկ իմն կարմիր», որ արաբանալով լինում է* xiruj։—*Հիւբշ. 268։*

Ուղիղ մեկնից նախ Lag. Ges. Abhd. *60, 30, նոյնը նաև* Lag. Arm. Stud. *§ 987, ՀԲուս. § 1059—60։ Իմաստի ճշտման համար տե՛ս* Seidel, *Մխ. հեր. § 54 և 56։*

***ԽԻՐՈՒ** *կամ* **ԽԻՐ** *«բևեկնի ծառը». մէկ անգամ ունի Ամիրտ.* խիրու ծառ ձևով՝ *իբր համապատասխան արաբ.* كمكام kamkām *բոյսի, որ համարւում է «մի տեսակ բևեկնի» (տե՛ս Կամուս, Թրք. Թրզմ. Գ. էջ 553)։*

=*Արաբերէնից փոխառեալ բառ է.* Steinschneider-*ի հաւաքածոյի մէջ (*WZKM *12, 333) նոյն* kamkām *բառի դէմ գտնում եմ*

ورض ǰəmə şamγ-el-ǰiru? «դիրո՞ւմ խէժ».— երկու ձևերից (ورض ǰiru կամ خرز xiru) մին կամ միւսը սխալ ընթերցուած է։—Ա՛ճ.

ԽԻՐՏ «խրտնած, վախեցած» Ոսկ. փիլիպ. որից խիրտ ի խիրտս «երկբայելով, վախվըխելով» Ոսկ. պատր. ա. էջ 388. խիրտ խիրտ լինել Ոսկ. անդ, էջ 387. խիրտ ի խիրտս մատչիլ Ոսկ. կող. 1, էջ 529. Ձայնաւորների համաձօտագրութեամբ գրուած խռխռտ լինել Եփր. փիլիպ. 157 (տես Հ. Ա. Վարդանեան ՀԱ 1913, 300). խրտուցանել «վախացնել» Սիր. իր. 25. Ոսկ. մ. ա. 4. Եզն. խրտչիլ Ոսկ. մ. բ. 11 և ես. խրտնուլ Սեբեր. խրտուիլ «թռչուններին վախեցնելու համար պարտէզներում շինուած սուտ մարդ» Ես. ԺԹ. 17. Ողբ. գ. 5. Եւագր. խրտուիլակ (չունի ԱՔ) Տաթև. ամ. կգ. խրչան (ռամիկ ձև՝ փոխանակ խրտչան) «խրտնող» Վստկ. 198. խրտուցյց «խրտնող» (չունի ԱՔ) Տաթև. ամ. 299։

Peterm. 259 լծորդ է դնում ճարբունուլ, շրտնուլ և խրտնուլ: Տէրվ. Altarm. 28 յն. σκορδ-ινοῦ-μαι «ծամածռել, անդամները շարժել, այս ու այն կողմ նետուիլ», հսլ. skarądovati «վախենալ»։ Նոյն, Նախալ. 51 հնխ. skard արմատից, որի պարզական skar ձևից է համարում յն. ἀ-σκαίρω «թռթռալ»։ Հիւնք. խոշ բառից։ Scheftelowitz BB 28, 312 նոյն ընդ խէք, խիթալ: Պատահական նմանութիւն ունի եբր. הרד ḥrd «դողալ, վախենալ»։

ԳԻՒ.—Տիգ. խրդիլ, Ալշ. խռդել, Ախց. Կր. Տփ. խրտնիլ, Վն. խռտնել, Մկ. Ոզմ. խրտրնիլ, Սրև. խրդրնել, Մշ. խռդնել, Զղ. խրտդ'րնել, Ագլ. Շմ. խրոբնիլ, Գոր. Ղրբ. խրոբնել, Հճ. խոռդօլ, Զթ. խօռդօլ, խօռդուլ, Հմշ. խրյդուշ, Սլմ. խռնել, Մրղ. խռնել, Մկ. խռռալ (այս վերջինը միայն քնում յանկարծ վախենալով վեր թռնել), Խրբ. խոգալ: Նոր բառեր են խրտան, խրտիչ «խրտուիլակ. 2. շրթունքների վրայ վախից յառաջացած վէրք», խրտնկոտ, խրտուկ, խրտնոտիլ, խրտատնարել, խրտզտուկ:

ՓՈԽ.—Հայերէնի՞ց է արդիօք թրք. خرچین xərčən, աղաւ. xərčəl «անընտել, անմարդամօտիկ, մարդկանցից փախչող» բառը, որ թուրքերէնի մէջ մեկնութիւն չունի։

ԽԻՑ «տակառի ծակը կամ շիշի բերանը փակող բան». այս իմաստով գործածական է միայն արդի գրականում. հնից ունինք ոճով խից արկանել «փակել» Եզեկ. իա. 32. լա. 15. Ղևոնդ. այս արմատից են խցումն Ոսկ. յհ. բ. 28. խցանել Ոսկ. յհ. բ. խցել Մեսր. եր. Մագ. խցական Գնձ. խնուլ «փակել» (կոր. խցի, հրմ. խի՛ց) ՍԳր. Եզն. զուգախնուլ «լաւ փակել» (յունարան ոճով) Պզատ. տիմ. ունկճախից Նար. 128. Լմբ. խցկուկ «խցան, пробка» (Կ. Սարաֆեան, Բանալի դիտութ. Սանկտպետ. 1788, էջ 59) նոր բառեր են խցան, խցիան, խցաւան: Տե՛ս նաև խծկել:

Հիւնք. հանում է խոց բառից։ Patrubány SA 2, 242 նոյն է դնում խուղ և խուց բառերի հետ։ Karst, Յուշարձան 426 գոցել բառի հետ ՔՔր. sus, süs «կենալ, մնալ»։

ԳԻՒ.—Առհասարակ խցկել ձևից են, որի վրայ տե՛ս խծկել.—նոր բառ է խցրնուիլ Սվ. «խցուիլ, պապանձիլ, ախորժակը փակուիլ»։

ԽԻՒ «սարեակ». ունի միայն ԱՔ, առանց վկայութեան։ Այս բառն է որ Ամատունի, Հայոց բառ ու բան, էջ 279 գրում է խիւն (սխալմամբ յօդը միասին առնելով), իբր «թռչուն անստոյգ», որի համար տալիս է Տաղարանի հետևեալ վկայութիւնը. «Խիւն ի մորին մասխարանայր, ի ծառէ ծառ կու պորտրկայր, գետ ուլ պռոչէր, զեղ տղայ կուլար, ամէն մարդու բանիւ լինայր»։

ԳԻՒ.—Զթ. խիվ «խառուտիկ գոյնով մի թռչուն է»։

ԽԻՒՍ, ո հլ. (յետնաբար նաև ի հլ). «ալիւրով կամ ուրիշ նիւթով պատրաստուած լոյծ ուտելիք» Բ. Թագ. ժգ. Ովս. ը. 7. Լմբ. մատ. 489. Տօնակ. «գետ նոր ծլած ցորենի մէջի հիւթը» Վկ. արև. էջ 26 (Սոփերք ի. 76). «եւ ոչ հասկոյն խիւս առեալ համարձակ և պընդեալ... եւ խորշակահար հողմն արևելեայ և զմեծ մասն հասկոյն ազազեցոյց առանց խիւսոյ»։

Karst, Յուշարձան 408 հոյզ բառի

հետ կցում է սումեր. uzu «ճարպ, միս» բառին։

ԳԻՒ.—Ագղ. Ախց. Բլ. Կր. Համշ. Խոջ. Մշ. Ննխ. Սեբ. Վն. խուս, Արբ. Խրբ. խիս. Նոր բառեր են խիւսել Համշ. «խիւս շինել», Խոջ. «ալիւրի կամ շաքարի փոշին ջրի մէջ խառնել», խիւսուշ «ալիւրով, ջրով ու իւղով պատրաստուած մի տեսակ կերակուր» Համշ., բաճխիւս Հզ. Վն. բաճիւս Խոջ. «թթու խաւիծ»։

խիփԱԿ «մի աստղի անուն է» Շիր. էջ 73. գրուած է նաև խուակ ԱՒ և Հին հաւատք, էջ 127։

***խլԱԼ** կամ **խիլԱԼ** «մի տեսակ բոյս է. burium bulbocastanum». այս բառը յիշում է Ամիրտ. իբր Թուրքերէն, որից առնում է և ՀԲուս. § 1062։

=Պրս. خلال xilāl, որ ԳԴ բացատրում է հետևեալ ձևով «է խոտ իմն անուշահոտ, որ լինի բոլորակ, զոր ի չորանալն ի գործ ածեն որպէս քշփորիկ, քանզի բուռս խիլալ ըստ արապաց նշանակէ քշփորիկ»։—Աճ.

***խլԱՅ** կամ **խիլԱՅ** (ըստ ՆՀԲ ի հլ. բայց առանց վկայութեան) «ազնիւ և ծանրագին զգեստ, որ սովորաբար թագաւորը կամ իշխանն է պարգև տալիս, կանանց բարակ շղարշ» Երզ. ե. 7. Նիւս. և Վրդն. Երզ. Փիլ. Գնձ. գրուած է նաև դիլայ Երզն. քեր. յիշ. Կոստ. Երզն. 99. խլդար Առաք. պտմ. 25. վրիպակով՝ խիշայ Արձ. 1275 Թ. (Վխմ. տար. 149)՝ ըստ սրբագրութեան Ր. Աւդալբէգեանի, Տեղեկ. ինստիտ. բ. էջ 52. այս բառից են խլատեռ «կանանց բարակ քօղ» Ոսկ. ես. 37. խլայել կամ խիլայել «մի զգեստ նուէր տալով պատուաստիրել և մեծարել» Մխ. այրիվ. էջ 10. Օրբ. հրտր. էմ. էջ 291, 310. Վրդն. պտմ. Ադամ. 130. որ և խիլաթել Պզնձ. 6, 55. Փոնց. 81. խլաթել «խալաթով պատուել» Մեծոփ. 20։

=Ասոր. ܟܠܬ xil'ā ձևից, որ թէև առանդուած չէ, սակայն համ. արաբ. خلعة xil'at, որից փոխառեալ են նաև քրդ. xelat «վերարկու», xalāt «նուէր», զազա. xalat «իբրև պարգև տրուած թանկագին շոր», թրք. xalat, ռուս. халатъ, լեհ. chałat, chylat «գիշերը կամ սենեակում հագնելու վերարկու» (Berneker 383):

Առաջին անգամ Sᵗ Martin, Mémoires s. l'Arm. II, էջ 257 դրաւ արաբերէնից։ Նոյնը նաև ԳԴ և ՆՀԲ (վերջինս պատմուճան բառի տակ կցում է նաև յն. χλαῖνα «վերարկու»)։ Lag. Arm. Stud. § 988 հիմնուելով ՆՀԲ-ի վրայ՝ դնում է ասոր. xil'ā ձևից, բայց մերժում է, որովհետև ասորի ձևը չէ աւանդուած։ Հիւբշ. չէ իսկ յիշում այս մեկնութիւնը։ Petersson, KZ 47, 282. հյ. խուղ բառի հետ միասին կցում է սանս. khola- «սաղաւարտ, գդակ», ռուս. chata «հիւղ, հիւղակ» են ձևերին։

ԳԻՒ.—Ագղ. խալաք «իբրև նուէր տրուած թանկագին զգեստ կամ շալ», Մշ. խալըթել «մի թանկագին նուէր տալ», Սչ. հալաթ «սենեակի մէջ հագնելու բարակ և երկար զգեստ».—այս բառերը նոր փոխառութիւններ են։

ՓՈԽ.—Վրաց. ხლა խլա «սուգի ժամանակ գլուխը կապելու սև թաշկինակ»։ Ուտ. խիլm «նորածնի ծնօղների կողմից կնքահօր ուղարկուած նուէրը»։

խլԵԼ տե՛ս խիլ։

խլԵԼ «անծանօթ մի բոյս». ունի միայն ՀԲուս. § 1063, առնելով քիմիական մի դերքից։

***խլԵՓ** (սեռ. -ի) «անուշահոտ ուռենի. salyx aegyptiaca կամ salice odorosa» Մխ. բժշ. 67. Բժշ. (չունի ՆՀԲ). որ և խլէֆ Վստկ. 174, խլաֆ Ամիրտ.

=Արաբ. خلاف xilāf «անուշահոտ ուռենի» (տե՛ս Կամուս, Թրք. Թրգմ. Բ. էջ 756). ն. ասոր. xelap'a «մի տեսակ ուռի»։ Արաբերէնից է նոյնպէս վարազի խլաֆ «ուռու տերև» <արաբ. ورق varaq «տերև»+xilāf բառերից, որ ՀԲուս. § 2868 սխալմամբ գրում է վարազի խլաֆ և համարում է առանձին բոյս։

Նախ Ա. Ուղուրլիկեան, Մասիս 1880, յունիս 24 խլեփ համարում է «եգիպտոսի գալաֆ ըսուած ուռիի տեսակը»։ Սրան պատասխանելով Նորայր, անդ, յուլ" 4 ընդունում է այս մեկնութիւնը։

Ուղիղ մեկնութիւնը վերի ձևով տուաւ Նորայր, Բառ. ֆրանս. էջ 1119 բ և յետոյ Seidel, *Մխ. հեր. § 185։*

խլէՋ *«մողէս». իբրև միջին հյ. բառ ունի Նորայր, Բառ. ֆր. 744 բ. Տաղարանից վկայութիւն է տալիս Ամատունի, Հայոց բառ ու բան. էջ 280. որից* **խլէզագի** *«մի տեսակ խոտ» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 1065։*

Ղափանցեան, Տեղեկ. ինստիտ. 2, 109 իրաւ է միացնում չաղաթ. kelās *«մողէս», ալթայ.* keleski *«մողէս», օսս.* xelagä *«օձ», սանս.* khel *«վխտալ», վրաց.* խվլիվի, խվլիկի *«մողէս», լազ.* xalali *«մողէս», բոլորի արմատը դնելով իսկ «գնալ», որից* **խլվլալ, խլպըտալ, խլրտալ, խղուրըտիւն,** *նաև* **խղունջ, խլուրդ, խիրդ.** *հայերէնից փոխառեալ են ասոր. և արաբ.* xlezona, halazun:— *Պատահական նմանութիւն ունի չաղաթ.* كلاس kelas *«մի տեսակ մողէս» (*Будаговъ *2, 132)։ Տե՛ս և* **խուղր**։

ԳԻՒ.—Երև. Կր. Հմշ. Մշ. Ննխ. Ռ. Ջղ. Տփ. **խլէզ**, *Ղրբ. Շմ.* **խլէ՛զը**, *Ագլ.* **խլայզ, խլազ.** *այս ձևերը նշանակում են «խլէզ, մողէս». իսկ Բիւթ. Եւդ. Սեբ. Օրդ.* **խլէզ** *«շղունկ կամ խղունջ», Կր. Ննխ. Պլ.* **խլէզ** *«տըկար, կարճահասակ, չնչին, անարժէք մէկը». շրջուած ձև է* լղէզ (Rivola) «cochlea, limax», *իսկ* **մողէս** *և* **խլէզ** *բառերի խաչաձևմամբ յառաջացած ձևեր են Խրբ.* **մգլէզ,** *Ննխ.* **մոխլէզ,** *Մշկ. Քղ.* **մգրլդրէզ** *«մողէս», Տիգ.* **մգլէզ** *«խխունջ»։—*Խլէզ *ձևը գիտէ արդէն 1788 թուին Կ. Սարաֆեան, Բանալի գիտութ. Սանկտպետ. էջ 60.—Ղրբ. Շմ.* **խլէ՛զ**ը *ձևը (<*խլէզճ) և Օրդուի «խխունջ» նշանակութիւնը կապում են բառս ասոր.* xlēzōnā *«խխունջ» բառի հետ, որի վրայ տե՛ս* **խղունջ**։

***խլէՄՍ** *«բաժին». ունի միայն Բառ. հրեմ. էջ 141։*

=Յն. χλίμα *«երկրամաս» (>հյ.* **կլիմայ**) *բառն է, որ նշանակում է բուն «բաժանում». վերի ձևը յառաջացած է արաբ. տառադարձութիւնից, ուր յն. χ >արաբ.* ق q, *որ տալիս է նաև հյ.* խ։—*Աճ.*

խլիկ *«տկար, ճղճիմ, անզօր», նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Անան. գիտ. 8 «Հաւիկ մի խլիկ, որ ի փոքր շնչմանէ շարժի»։*

խլիկ *(աննզաբար գործածուած) «քթից վազած հեղուկը» ԱԲ (առանց վկայութեան). աւելի սովորական է* **խլիճ,** *յգ.* **խլիճք** *(-ճ հլ. համմտ. գրծ.* **խլամբ**) *նոյն նշ. Ոսկ. ճառք, էջ 459. Փիլ. այլաբ. էջ 108. «անկերպարան սաղմ» Սմբ. դատ. էջ 129. որ և* **խլնիք** *Ոսկիփ։*

ԳԴ դրաւ պրս. **խիլմ** *«խլլինք» բառի հետ։ ՆՀԲ* **խիղ** *«պիղծ» բառի՞ց։ Հիւնք. =ԳԴ։ Ղափանցեան, Տեղեկ. ինստիտ. 2, 91 վրաց.* **գինգլի**։ *Թուի թէ պատահական նմանութիւն ունին պրս.* خيل xīl, خل xil, خلّه xulla, خلم xlim *«խլինք» և* خلنى xulnī *«խլնքոտ», որոնց ծագումը անյայտ է (չունի* Horn)։

ԳԻՒ.—Ալշ. Երև. Մշ. Ննխ. Ջղ. Սչ. Տիգ. Տփ. **խլիճ,** *Ագլ. Մկ. Շմ. Սլմ.* **խլիճ**ի, *Ջթ.* **խր՝լր՝ճ,** *Ռ.* **խնլիճ, խլլիճ,** *Սեբ.* **խլլիճ,** *Ախց. Հմշ.* **խրնլիճ,** *Կր. Պլ.* **խլլիճ,** *Խրբ.* **խլլիճ**ի։ *Ասլ.* **խլլիճ, խրլլի՛,** *Դոր.* **խլէճ,** *Ղրբ.* **խրլեյճ**ի՛ *Ոզմ.* **խլճ՝յ**ի՛, *Հճ.* **խոլլիճ,** *Մրզ.* **խիլիճ**ի։ *որից ունինք* **խլճոտ** *Խոջ. շրջմամբ* **խճլոտ** *Եւդ. Կր., բաղաձայնների նմանութեամբ* **խլլոտ** *Ակն. Առն. Արբ. Կիւր. Մրս. Պլ. Տր. Ք., արմատից նոր կազմութեամբ* **խլճոտ** *Ագլ. Ալշ. Երև. Ղրբ. Նբ. Տիգ. Շմ. Տփ., առանց սղման* **խլիճոտ** *Բլ. Ննխ. Սչ. վն.,* **խլլիճոտ** *Պլ.։*

խլինդ *«բոյսի տակի սոխը, կոճղէղ». գիտէ միայն Կոյլաւ, Բառ. զերմ. էջ 942 ա. ուրին իբր հոմանիշ Նորայր, Բառ. ֆր.* tubercule *ունի* **խլունկ** *(իբրև նոր բառ)։*

խլիՐՏ *«շարժիլ, տեղից հերիալը». արմատ առանձին անգործածական, որից կազմուած են* **անխլիրտ** *«անշարժ» Փիլ. նխ. բ. 86. «անմշակ (հող)» Եփր. ծն. էջ 11.* **խլրտիլ** *ՍԳր. Ոսկ. ես. և յհ. ա. 11.* **խլրտալ** *կամ* **խլրտաճալ** *Յոբ. խա. 14. Եփր. Համաբ. 108. Մագ. թղ. 89. Լմբ.* **խլրտել** *«շարժել, մարմնի ցանկութիւնը գրգռել» Եւագր. 246.* **խլրտացուցանել** *Մագ.* **խլրտական** *Նիւս. բն. էջ 101.* **խլրտումն** *Եւս. պտմ. Վեցօր։*

Հիմնք. հանում է խրել բայից։ Թիրեաքեան, Բազմ. 1913, 341 թրք. qeməlda-maq *«երերալ, շարժիլ»։ Ղափանցեան, Տեղեկ. ինստ. 2, 111 տե՛ս* խլէզ։

Գիւղ.—Մշ. խլրդալ *«շարժիլ»։*

***ԽԼՈՒՐԴ**, ի *հլ. «գետնի մուկ, կոյր մուկ, դաշտամուկ» Ղևտ. մա. 30. Առծր. ա. 2. կամ նաև* խլիրդն, և *հլ.* (-դան, -դանց) *Մեսր. եր. Շնորհ. եղես. Սարգ. ա. յհ. գ. էջ 654 (սեռ.* խլրդան *ձևով). որից* խլրդենի *(գրուած նաև* ելրդենի*) «խլուրդի նման սև, գարշ, ծածկամիտ, թաքուն» Եղիշ. մատն. 261. Առծր. բ. 5, գ. 2.* խլրդնի *կամ* խլիրդն *«խորամանկ, ծածկամիտ» ԱՔ. փոխաբերութեամբ* խլիրդն *կամ* խլրդնի *(տպ.* խլրդենի*) «քաղցկեղ հիւանդութիւնը» Մծբ. 137, 138, 139. (Հմմտ. խոլխեցգեաճի Համանիշը). նոր բառ է* խլրդային *«ծածուկ՝ թաքուն կատարուած»։*

=Ասորերէնից փոխառեալ բառ. Հմմտ. ասոր. ܚܘܠܕܐ xūldā *«խլուրդ», որի հետ նոյն են արաբ.* خلد xulud *«խլուրդ» (Կամուս, Թրք. Թրգմ. Ա. 604), եբր.* חֹלֶד xoleð *«խլուրդ»։ Այս ձևերը չեն կարող տալ հյ.* խլուրդ, *որի մէջ* ր *ձայնի համապատասխանը չկայ։ Մեր բառը յառաջացած է ասորի գաւառական մի ձևից, որ աւանդուած չէ, բայց որի գոյութեան իրրև ապացոյց կարող է ծառայել ասոր.* ܚܲܠܕܘܼܕܵܐ xaldūdā *«դաշտային մուկ»* (Brock. Lex. syr. *497 ա*) *երկրորդական ձևը։—Աճ.*

Նշ. խլիրդն *«քաղցկեղ» հանում է* խլուրդ *և* խլրտել *ձևերից։* Böttich. Arica *8, 9* խլիրդն *=սնս.* kulīra, *որ մերժում է* Lag. Arm. Stud. *§ 989։—*Lag. Urgesch. *752* խլուրդ *համեմատում է հսլ.* krŭtorŭiia, *լիթ.* kurmis *բառերի հետ։* Bugge, Etr. u. Arm. *էջ 114* խուլ *բառից՝* -ուրդ *մասնիկով։* Müller WZKM *8, 281 (Հայ. Թրգմ. ՀԱ. 1894, 294) համեմատում է պրս.* خلد xuld? *բառի հետ, որ փոխառեալ է արաբերէնից, ինչպէս ցոյց է տալիս արամ.* ܚܘܠܕܐ xuldā *«խլուրդ» բառը.* Müller *հարցնում է թէ արդեօք սեմական ձևերը ընդհակառակը պրս.* خلد *բառից առնուած չե՞ն, որ ինչպէս հյ.* խլուրդ *ցոյց է տալիս, նախապէս էր* xluld<xruld *(հմմտ. հսլ.* krŭtŭ, *ռուս.* кротъ, *բուլգ.* krŭt, *լեհ.* kret *«խլուրդ» Trautm. 144)։ Այս մեկնութիւնը չի ընդունում Հիւրըշման 305։ Հինք. խլիրդ և խլուրդ համնում է խլրտիլ բայից։ Ղափանցեան տե՛ս* խլէզ։ *Պատահական նմանութիւն ունի լպ. խուխուլի համանիշը։*

Գիւղ.—խրբ. խլուրդ՛, *Մշ.* ֆօն-խլուրդ՛, *Սեբ.* խլուրբ, *Կր.* ֆօն-խլուրբ, *Ասլ.* խլէօրբիգ, խլէօրբի՛, *Ջթ.* խօլօյդ՛, խօլօրդ՛, *որոնք նշանակում են «խլուրդ». իսկ Ախց.* խլուրբ *«մողէս», Արբ. «փայտէ փականք», Ակն. «խոյլ կոչուած հիւանդութիւնը»։*

⊙ԽԽՆՋԵԼ *(գրուած նաև* խրխրնջել, խըղխրնջել*) «ձիու ձայն հանելը» Երեմ. բ. 6, 16. «մարդու բարձրաձայն բղաւելը» Նս. ժ. 10. Ոսկ. ես. 407. որից* խխնջական *Պորփ.* խխնջականութիւն *Դամասկ.* խխնջիւն *«ձիու ձայն» Ամովս. գ. 7. «բարձր ձայնով ծիծաղ» Առծր. այս ձևերը գրուած են նաև* խրխրնջական, խղխնջիւն *ևն։*

=Բնաձայն բառ, որի պարզ արմատն է խ *ձայնը՝ կրկնուած և աճած ն և ջ ածանցիչներով. հմմտ.* խնչել, խնջել, խնջխնջել, *առանց ն-ի՝* խոխոջել *ևն.—նման բնաձայն կազմութիւն ունի նաև վրաց.* ხვიხვინი *խվիխվինի «խրխնջել ձիու»։ Տե՛ս և* խրխինջ։ *—Աճ.*

Այս մեկնութիւնս հրատարակուած է նախ ՀԱ. 1899, 204 բ։

ԽԽՆՋԻՒՆ *տե՛ս* խղունջ։

ԽԽՈՒՄՆ. *անսովոր բառ. մէկ անգամ ունի Կլիմաք. «Բժշկեալ ցամաքեցուցանէ զայտումն և զխխումն»։ ՆՀԲ մեկնում է «ընթերցի՛ր կամ իմա՛* խայթումն»։ *Ունինք Պլ.* խխիլ *«մէջը ասեղ խոթելու պէս ցաւ զգալ». այս իմաստը շատ յարմար է վերի վկայութեան։*

ԽՄԲԻՆ, ի, ի–ա *հլ. «մանրազնին քննութիւն» Եւս. պատմ. 115, 318. Լծ. ածաբ. Լմբ. Հանդ. Տօնակ. «մեղադրանք, աննշան մի բանի համար յանցանք գտնելը» Եւագր. Ոսկ.*

գծ. 108. 3ՃԽ. էջ 85. Փիլ. որից ունինք խրծրրծել «մանր կրկտել և մի յանցանք ջանալ գտնել» Եւս. պտմ. Ոսկ. գաղ. և մ. Սևբեր. Կիւրղ. ծն. խծրծաճ (արդի դրականի մէջ միայն)։ Ըստ Մանանդ. Խորենացւոյ առեղծ. լուծումը, էջ 107 խծրծաճ բառը գործածուած է Կալիսթ. 90։

=Բարդուած է խիծ և բիծ հոմանիշներից (տե՛ս այս երկու բառերը), հմմտ. «խոովեցաւ անդ այս բիծ մեծ» Եւս. պտմ. է. 3 (խնդիր, քննութիւն). բիծ դնել, բիծս կարկատել, բրծել «մի մեղադրանք գտնել, ստոգանել» ևն։

ՆՀԲ մեկնում է «խիծ՝ այսինքն խիղճ կամ տխեղծութիւն բծի»։ Հիւնք. բիծ բառից։

ԽՄԻՊ «մի տեսակ կար՝ ոլորելով և ամփովելով կտորը». կենդանի է միայն գաւառականներում, հնից ունինք խծպիլ «ինք իր մէջ ամփոփուիլ, պարուրիլ» Ոսկ. ես. և ճառաք. էջ 416 (մի մի անգամ)։—ՀՀԲ գրում է խնիր, խնքել։

ԳԻՒ.—Ջղ. խրծրպել, Մկ. խծպիլ, Ագլ. խրծրպիլ, Ոզմ. խծէպ, Ալշ. Մշ. Սչ. խնիր, խնքել, Ննխ. Պլ. Ռ. Տիգ. խնիր, խնրել, ՋԲ. խր՝նբիլ, Մրղ. խծապ, Երև. խուծապ, Սլմ. խսպել։

—ԽՄԿԵԼ «խճողելով լցնել (փորը)» Ոսկ. մ. բ. 19. «մի ծակ թխմել, ճխտել, փակել» Վստկ. 52, 81. որից խծկուիլ Վստկ. նոյնը գրուած է նաև խցկել «ծակերը ճխտելով փակել», որից խցկիլ Մագ. թղ. 164. խցկումբն ՋԲ։

=Ծագում է խնուլ, խից արմատից՝ կ ածականով, որի համար հմմտ. ճար և ճարկանել. ըստ այսմ նախնական ձևն է խցկել, ուր ց ձայնը հետևելով յաջորդ կ-ին՝ վերածուել է պարզ խուլի։

ՆՀԲ և Հիւնք. խծուծ բառից։ Karst, Յուշարձան 426 խից, խցել բառերի հետ թիւր. sus, süs «կենալ, մնալ»։

ԳԻՒ.—Գործածական է թէ՛ խցկել և թէ խծկել ձևով. այսպէս՝ Երև. խցկէլ, Տփ. խցկիլ, Շմ. խծկիլ, Մշ. խնգել, Ղրբ. խզկէլ, Տիգ. խզգէլ, Պլ. խրցգէլ, խրզգէլ, Խրբ. խրնզիլ.—նոր բառեր են Խրբ. խնիգ, Ղրբ. խրզկան, Տփ. խցկան «կուժի բերանը փակելու շոր», նաև խցկոց Մշ. «երդիքը ծածկելու հին շոր»։

*ԽՄՈՒԻ (ո հլ. ըստ ՆՀԲ, թէև առանց վրկայութեան) «գզած վուշի կամ սանտրած կանեփի թաւիթիւրը» Դատ. ժհ. 14. Սիր. իա. 10. Վրդն. լս. 60. Վստկ. 182։ Սրա հետ նոյն է խզուզ «կալի մնացորդ, ցորենի աւելորդ մասերը». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Կիր. էջ 193 «Իսկ եթէ ոք և որ ի ձեռն հաստատութեան է յօժար առ ի քաղել, ամառան խղուզին հանդիպիլ սիրելի է և թէ հասկի» (տե՛ս Աճառ. Հայ. նոր բառեր հին մատ. Ա. էջ 76)։ Առաջին ձևից է խծծել «մարմինը կտրտել, պատառոտել». նորագիւտ բառ՝ որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Նոր վկ. էջ 511 (ժէ դար). «Տարեալ ի մի ոտիցն կախեցին զնա, սուսերօք և զինուք խրծրծէին զնա, հարկանէին քարիւ և փայտիւ նմա»։

=Կովկասեաններից փոխառեալ բառ է. պարզ արմատը (խիծ) պահում է վրացին. հմմտ. վրաց. ხვწა խվեծա «թելը մաքրել, բերիչով հարթել», ხვწი խվեծի «մկրատով կտրտած կտորտանք»—Աճ.

Հիւնք. հանում է խցան բառից։

ԳԻՒ.—Նոյն բառերն են խծուծ Ղզ., խզուզ Ալշ. Խրբ. Մշ. Ասպ. Վն. Շիր. «կալի մնացորդ», խզզել Կր. «ձեռքով բուրդ բանալ, դզել», խզզուիլ Ալքս. «բրդկուիլ, ձարձրիլ», —Ամատունի, Հայոց բառ ու բան, էջ 276 ունի նաև խզուռ «կալի մնացորդ», խզզիւն «գերանի վրայից հանուած կեղև»։

ԽՂԱԹ «կին, մէկի կինը». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած 1313 Բուին գրուած մի ձեռագրի յիշատակարանում (հրտր. ՀԱ 1923, էջ 70) «Ծնողաց իմոց Պետրոս քահանայի և մօր իմոյ Տիկնացի և խղաթին իմոյ Մարիամի և զաւակին իմոյ...»։

ԽՂԽԱՅԹ կամ ԽԽԱՅԹ, ի հլ. «վէրքի ուռեցք» Ոսկ. Հռովմ. 319. «վէրքի թարախ» 3Հ. կթ. «խոտի փտած հիւթը, արտաթորութիւն, որդ» Նար. մծբ. 450. «փխր. հպարտութեան փուքը» Ոսկ. Հռովմ. 320, 397. «կեղծիք, խարդախութիւն» Ոսկ. Բ. կոր. որից խղխայթիլ կամ խխայթիլ «թարախոտիլ» Եւս. ա. 6. Սարգ. յկ. դ. էջ 40. 3Հ. կթ.

խղխայթել «թշնամութիւնը ծածկել» Առակ. իզ. 26. (որ լմբ. սխալմամբ մեկնում է «քրքրել, գրգռել»). խղխայթումն «թարախաուիլը» Ոսկ. Հռոմ. 386. բազմախղխայթ կամ բազմախխայթ Ոսկիփ. Ճառընտ։

ՆՀԲ խիղ «գարշ, զազիր» բառից։ Հիւնք. խայթ բառից։

ԽՂԽԹԵԼ «յարիլ, սրտանց մի բանի կպիլ». մէկ անգամ ունի Վեցօր. ը. էջ 173 «Միշտ հանապազ անուտի իմաստութեան աշխարհիս խղխթեն»։

Նահապետեան, Բազմ. 1908, 16 սըրբագրում է կղկաբիլ։

ԽՂՈՒԸՐՏԻՒՆ «ամբոխի խառնակ ձայն, աղմուկ, ժխոր» Եւս. քր. ա. 52. գրուած է նաև խլուրտիւն Ոսկ. ը. տիմ. 208, խլվրտիւն Արծր. (հրատր. Պատկ. էջ 23 խլրտիւն), խլդուրտիւն Արշ. խուլդուրտիւն «աղաւնիների կոկորդային ձայներ» ԱԲ. խլուրտիւն ԱԲ։

ՆՀԲ հանում է խլրտալ «շարժիլ, երերալ» բայից։ Թիրեաքեան, Բազմ. 1913, էջ 341 վերջինիս հետ կցում է Թրք. qəməl-da-maq «երերալ» բայինն։ Ղափանցեան, տե՛ս խլէզ։

ԽՂՈՒՆՋՆ, ի–ա հլ. «մի տեսակ ծովային խեցեմորթ՝ որ տալիս է ծիրանի ներկը. concha» Վեցօր. 152. (գործածուած է սեռ. խղունջեաց ձևով, որով ուղղականը պիտի լինէր *խղունջուն կամ *խղոյնջն. բայց բոլոր բառարաններն էլ դնում են վերի ձևով). գրուած է նաև ուրիշ զանազան ձևերով. ինչպէս՝ խղրնջոյն (խղնջոյն) Բրս. ընչեղ. խրխրնջիւն կամ խրխնջիւն Երզն. լս. և մտթ. 591. Մխ. առակ. խխրնջուն (խխնջուն) Բրս. մրկ. խղնջուն ՆՀԲ. սեռ. խխնջիւնեաց Բրս. մկ. էջ 338. խխնջուն ՋԲ. խնջուն ՋԲ. խնճուղ Վրք. սեղբ. 781. խոնջայլ կամ խորնջող Գաղիան. Բժշ. այս բոլորի մէջից արդի գրական լեզուն ընտրել է խղունջ (կամ նաև խխունջ) ձևը և յատկացրած է միայն նոյն խեցեմորթի հասարակ տեսակին. Ֆրանս. colimaçon, որից խխնջաձև նորակերտ բառը։ (Տե՛ս նաև կողինջ)։

=Նման են հնչում հրէական արամ. חלזון xalazōn, ասոր. ܚܠܙܘܢܐ xalazōnā կամ ܟ ܠ ܙ ܘ ܢ ܐ xlīzonā, արաբ. حلزون ḫalazūn, որոնք միևնոյն նշանակութիւնն ունին մեր բառի հետ։—Բայց այս բառերի ծագումը անծանօթ է. ձևը ցոյց է տալիս՝ որ բնիկ սեմական չեն։ Müller WZKM 2, 285 ուզում է հանել յն. ἀλίζωος «ծովակեաց, ծովի մէջ բնակող» բառի ռամկական ἀλίζωον ձևից. բայց այս կարծիքն էլ ընդունած չէ։ Ըստ այսմ անորոշ է նաև հայերէն բառիս ծագումը։ Թերևս բոլորը միասին փոխ են առնուած մի անծանօթ լեզուից, և յատկապես ա՛յն ազգից՝ որ առաջին անգամ խեցեմորթից ծիրանի ներկը պատրաստելու արհեստը գտաւ։

ՆՀԲ խլիճ և ունչ բառերից է հանում՝ հետևելով Թրք. sümüklu «խխունջ» (բուն նշանակում է «խլնքոտ») բառի կազմութեան։ Վերի սեմական ձևերի հետ համեմատից Հիւբշ. ZDMG 36 (1882), 130. բայց նմանութիւնը մերժեց ինքը (տե՛ս Հիւբշ. Սեմ. փոխ. բառեր, № 42)։ Սակայն Müller WZKM 8, 285 (հմ. Թրգմ. ՀԱ 1894, 295) ընդունում է։ Վերջին անգամ մերժում է Հիւբշ. Arm. Gram. 305: Հիւնք. դնում է խնջել բայից։ Ղափանցեան, տե՛ս խլէզ։

ՓՈԽ.—Վրաց. ღვინჯოლა դվինճիլա կամ ღურინჯოლა ղուրինճիլա «օրոճիկ, մի տեսակ խխունջ» փոխառեալ է թուի հայ. խոնջայլ կամ խոնչող ձևից։—Կայ նաև ուս. միլղոնջ «խղունջ», որի հետ համեմատելի է գւռ. կոխլանճ։

ԽՃԲԱԽԻԼ «շփոթիլ». ունի միայն Բառ. հբեմ. էջ 141, որից էլ ՓԲ, առանց վկայութեան։

ԽՃԵԼ «ճխտել, թխել, կռել, իրար վրայ լցնել» (ասուած է որովայնի համար) Եւագր. 378. Մաշկ. սրա սաստկականն է խճճել նոյն նշ. Կանոն. ՅԿ. գռն. խճող «կուռ լցուած, թխած» Փիլ. ել. էջ 532. Նիւս. կազմ. խճողել «թխել, խիտ և հոծ լցնել» (փորի, մարդոց բազմութեան, հողի համար ասուած) Ոսկ. ես. եփր. թգ. 430 և պհ. (գրուած նաև խոճողել Լաստ. խճղել եփր. փես. 407). խճողութիւն Սկևռ. աղ. խճուղ «երշիկ» Բժշ. նոր գրականում խճողակ «տոլմա», որ ար-

պէն յիշուած է Թորոսեանի Տետրակ համառօտ բառարանի աշխատութեան մէջ, Նախիջեան 1794, էջ 77։

Նշի նոյն դնելով խեճել «շաղախի մէջ խիճ խառնել» բառի հետ՝ հանում է խիճ «քարի կտորտանք» ձևից։

Գիւմ.—վն. խճել «ճխտել, խոթել, ձեռքը կամ աչքը կոխել». օր. աչքը խճել «աչքը խոթել, յայտնի կերպով ցոյց տալ».—Թերևս նոյն է նաև խճելուկ Մն. «խռիւ, վառելու չոր խոտ, մացառ և կամ փայտի կտորտանք՝ որ կրակի մէջ են ճխտում»։

խճիլ, «կուրանալ». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Մոլութ. 403 ա. «եւ Սամփսոնի խճեցան աչքն, քանզի վասն սիրոյն Դալիլայ՝ կորոյս զխոհեմութիւնն և զիմաստն, յայտնելով նմա զտեղի ուժեղութեան իւրոյ, վասն որոյ և կուրացաւ»։

խմիլ, տե՛ս Հումիլ։

***խմոր**, ո հլ. «թթխմոր, խմոր» ՍԳր. Մծբ. Ոսկ. յհ. բ. 6. որից խմորել, խմորիլ ՍԳր. խմորեալ Ել. ժբ. 15. լգ. 25. խմորուն ՍԳր. խմորոտ Նխ. ել. խմորաբաղ «խմորով գիւթութիւն անող» (նորագիւտ բառ. տե՛ս Ալիշան, Հին հաւ. 379), խմորաճոց (չունի ԱՒ) «խմոր պատրաստելու տեղ» Տաթև. էջ 197. անխմոր ՍԳր. ՅՀ. իմ. նմանութեամբ խմորուկ «նվակ պտուղը» (այսպէս կոչուած իր փափկութեան համար) ԱՒ և ՀՒուս. § 1069. Թերևս նաև խմրախոտ կամ խմրխոտ «աճալ» Բժշ. կամ «anthoxanthum» (գաւառական բարբառների մէջ) ըստ ՀՒուս. § 1070. խմորատիպ (նոր բառ)։

=Կազմուած է -որ մասնիկով խում պարզ արմատից. ա՛յս են հաստատում անխում «անխմոր, բաղարջ» և խմեալ «խմորուած» նորագիւտ բառերը՝ որոնք գործածուած են նորագիւտ Ա. մնաց. իգ. 29 «եւ ի վերայ հացին՝ որ առաջի դնեն, և ի վերայ նաշհին պատարագացն, և ի վերայ յանխումն մանգառան և ի վերայ խմեալ տապակելոցն»։ Հյ. խում «խմորուիլը» փոխառեալ է ասոր. ܚܡܐ xma՝ «թթուիլ, խմորուիլ» արմատից. յատկապէս նորագիւտ խմեալ ձևի համապատասխանն է ասոր. ܚܡܝܪ xəmī՝ իսկ անխում՝ ասոր. ܠܐ ܚܡܝܪ lā xəmī՝։ Ատորայեան բառը քնիկ սեմական է և ընդհանուր է նաև միւս սեմական լեզուներին. համմտ. հրէական արամ. חמע xm՝ «թթուիլ», հբր. חמץ xmṣ «թթուիլ», xōmēṣ «քացախ», արաբ. ḫamṣ «թթուիլ», եգիպտ. խպտ. ḫemṣe «քացախ»։

Նախ Schröder, Thesaur. 45 փոխառեալ դրաւ հբր. חמר xmr ձևից, որ աւանդուած չէ։ Müller SWAW 41, 12 և WZKM 8, 284 արամ. ḫəmirā «խմոր» բառից փոխառեալ է դնում։ Այս մեկնութիւնը ընդունում է Հիւբշ. 305, թէև սպասում է հյ. *խմիր կամ *խամիր ձևը։ Հայերէնի ո ձայնը մեկնելու համար M. Bittner WZKM 13 (1899), էջ 296 խմոր բառը Թրք. xamur ձևից փոխառեալ է համարում! կամ հայերէնից անցած Թուրքերէնի։ Այս ենթադրութեան անհեթեթութիւնը ցոյց տուաւ R. Gauthiot, Բանասէր 1899, 325։ Առաջին անգամ Աճառ. Հայ. նորագիւտ բառեր մնաց. գրոց մէջ, էջ 9 անխում և խմեալ նորագիւտ բառերը երևան հանելով՝ ենթադրեց որ խմոր բառի արմատն է խում, որ նոյն է խում, խմել «ըմպէլ» բառի հետ և հետևաբար խմոր գործ չունի ասոր. xəṛi ձևով։ Մառ. Христ. Вост. 2(1913), 132 հիմնուելով սրա վրայ՝ մեկնեց վերի ձևով։ Մառ, Христ. Восм. 2(1913), 148 վրաց. ցոմի «թթխմոր», ն. վրաց. «խմոր», սվան. մրխիմա «թթու», խվիմրխմի «թթուիլ», խվիմխրմե «գինուց սթափիլ», լիմխրմե «խմորել, մակարդել», նամխրմի «թթխմոր» բառերի հետ՝ իրրև յարեթական արմատէ։ Ղափանցեան, Տեղեկ. ինստիտ. 2, 91 վրաց. ցոմի «խմոր»։

Գիւմ.—Ալշ. Մշ. Ջղ. Սլմ. վն. խմոր, Ախց. Գոր. Երև. Խրբ. Կր. Ղրբ. Շմ. Պլ. Ռ. Սչ. խմor, Ննխ. խմor, խումor, Սեբ. խմէor, Ասլ. խմէ՝or, Ագլ. Մկ. Ոզմ. Մղր. Տիգ. Տփ. խմուր, Հւր. խումor, Հճ. խր՝մոյ, Մրզ. խրմբիր, Զթ. խէօմիւյ, խէօմիւր։ Նոր բառեր են

խմորակեր, խմորեղէն, խմորակալել, խմորեուցի *եմ*։

Փոխ.—*Հայերէնից են փոխառեալ բոշայերէն նմօր «խմոր»* (Finck, Die Sprache der arm. Zigeuner ЗАН 1907, *էջ* 118), *գնչ.* k'oméŕ *(իմա՛* <k'emor), *Հարաւային Ռուսաստանի գնչ.* xumer *«խմոր»։ Պատահական նմանութիւն ունին ասոր.* ܚܡܝܪܐ xəmīrā, *որից արաբ.* خمير xamīr, *խալտ.* šemêr, *թրք.* خمر *կամ* خامور xamur. *ոմկ.* hamur, *քրդ.* hewir, avir, hewin, hawin *և Թուրքերէնի միջոցով էլ սերբ.* hamur, amur, *բոլորն էլ «խմոր»։ (Այս սեմական բառերը հանւում են* xmr *«պճպճալ (ջուրը, գինին)» արմատից. որից նաև եբր.* המר xemer, *արաբ.* خمر xamr, *արամ.* המרא xamrā, *ասոր.* ܚܡܪܐ xamrā *«գինի», խալտ.* amre *«հացագործ»։ Սակայն այս* xmr *արմատն էլ կարող է պարզական երկձայն* xm *արմատից աճած լինել, ինչպէս և վերի* xm' *արմատը. սրանով բոլոր ձևերն էլ կմիանան իրար հետ)։*

ԽՆԱՄ, ո *հլ. «հոգատարութիւն, հոգացողութիւն, ջանադրութիւն» ՍԳր. որից* խնամով *Մն. գ. 5. Առակ. ժգ. 24.* խնամել *Ա մակ. ժգ. 14. Ոսկ. յհ. բ. 10, 39.* խնամոտ *Բ. մակ. ժգ. 37. Ոսկ.* անխնամ *Բ. մակ. ե. 5. Ոսկ. բ. տիմ. ա.* խնամարկել *Մն. խդ. 21.* խնամատարութիւն *Ոսկ. յհ. բ. 24, 26, 30.* խնամակալ *ՍԳր. եզն. Ոսկ. Ագաթ.* խնամագուրկ *Մծբ.* խնամած *Ոսկ. ես.* բարեխնամութիւն *Ոսկ. յհ. ա. 37.* բազմախնամ *ՃՀ. գառն.* ժողովրդախնամ *Փիլ. նխ. բ.* նախախնամութիւն *Փիլ.* վերնախնամ *Ոսկ. յհ. ա. 33. այստեղ է պատկանում նաև* խնամի *«ամուսնութեամբ ազգական դարձած» Խոր. բ. 8 կամ* խնամուն *Վրդն. ղևտ. որից* խնամութիւն *ՍԳր. Ոսկ.* խնամեճալ *Խոր.* խնամեխօս *Արշ. Ոսկիփ.* խնամիաբար, խնամիական *(նոր բառեր) են։ Իմաստի զարգացման համար համմտ.* բարեկամ, *որ ժողովրդական լեզուի մէջ ունի «ազգական» նշանակութիւնը, և յատկապէս յն.* κηδεμών *«խնամող, հսկող և պաշտպան. 2. խնամի, խնամութեամբ ազգական դարձած»։*

Պատկ. Изслед. *էջ 6 լծորդ է դնում* խնայել *բառի հետ, համմտ.* անգգամ և ան-զգայ։ *Հիմնք. նոյնպէս* խնայել *բայից։* Paturubány SA *2, 242 նոյն է դրնում* խուղ, խուց *բառերի հետ։* Pedersen, *Հայ. դր. լեզ. էջ 80* խնայել *բառի հետ միասին կցում է լտ.* cōnor *«ջանալ, փորձել» բառին,* խնամ *և* խնայ *ձևերին համապատասխան դնելով* conāmei, cōnātus։—*Այս մեկնութիւնը մերժում է* Walde, *էջ 187։*

Գիտ.—*Ագլ. Ալշ. Ախց. Ասլ. Գոր. Երև. Խրբ. Կր. Հճ. Մշ. Ննխ. Շմ. Պլ. Ջղ. Ռ. Սեբ. Սլմ. Սչ. Վն. Տիգ. Տփ.* խնամի, Ղրբ. խնա՛մրէ, *Ոզմ.* խնամէ՛, *Ջթ. Մկ. Մրզ.* խնամը՛, *Հմշ.* խնօմի։ *Նոր բառեր են* խնամաբոռ, խընամակաձ, խնամապատիւ, խնամաճառս, խնամապաչ, խնամամար, խնամեճառկ, խընամառում *են։—Սղմամբ լինում է* խնա՛մ *«ա՛յ խնամի»։*

Փոխ.—*Գնչ.* խընամի, *ն. ասոր.* xənami *«խնամի», քրդ.* خانمیان xanemiyān *«ազգականներ» (յոգնակիի մասնիկով), թրք. այլևայլ բարբառներով* hənamə *«խնամի», որի համեմատ է և էնկիւրիի թրքախօս հայոց բարբառով* hənamə *«խնամի»,* hənamos *«խնամախօս» (Բիւր. 1898 թ., էջ 865)։*

ԽՆԱՅ. *արմատ առանձին անգործածական. ոճով միայն ասւում է* խնայ առնել *«խնայել» Սիր. իգ. 3. Բուզ. գ. 20. (Վրդն. սղ. «Մի յուսահատեսցի յարարչական և ի ծնողական խնայոցն Աստուծոյ» հատուածում անկախաբար և իրրև գոյական գործածուած* խնայոցն *ընթերցուածը պիտի ուղղել* խնամոցն*)։ Որից* խնայել *«գթալ մեղքանալ, պատիժը ներել» ՍԳր. Ոսկ. Սերեր. «զգուշանալ, խընամքով պահել, կծծիութեամբ պահել, չուզել ծախսել» ՍԳր. Վեցօր. Կոչ. Ոսկ.* խնայեամ *(հրմ. մի՛* խնայեար*) Առակ. իգ. 13, իդ. 11, Ես. ծդ. 2,* խնայեցուցանել *Ես. պտմ.* խնայութիւն *Իմ. ժբ. 18, Եփր. ծն.* խնայումբն *Ես. պտմ.* խնայկոտ *«ժլատ» Իրեն. հերձ. 141.* անխնայ *ՍԳր. Բուզ.* անխնայութիւն *Բուզ. սղմամբ* անխնապէս *ԱՔ. նոր գրականում՝* խնայողութիւն, խնայողական, խնայողաբար։ *Բառիս հնագոյն ձևն է* աճխայել *«գթալ, խնայել» ՍԳր. Եփր. եկ. 200.*

որ և անխայեամ *Ես. ծդ. 2. Եփր. ծն. որից* անխայեցուցանել *Եւս. պտմ. Եփր. ծն։ Իսկ* անխայել *«չխնայել» Բուզ. Ե. 20,* անխայութիւն *«չխնայելը» Կողոս. բ. 23.* անխայաբար *«առանց խնայելու» Կղնկտ. Հրտր. Էմինի, էջ 178 պէտք է ուղղել* անխնայել, անխնայութիւն, անխնայաբար. *Համմ. «Անխնայութեամբ դաւէին զօտարս և զընտանիս իւրեանց». Բուզ. դ. 59։*

ՆՀԲ «որպէս թէ խուն, *այսինքն նուազ առնել»։ Պատկ.* Изслед. *էջ 6 լծորդ է դնում* խնամ *բառի հետ. Համմ.* անգգամ *և* անգգայ։ *Հիւնք. ենայել բայից։* Patrubány SA *2, 242 նոյն ընդ* խուղ, խուց։ Pedersen *տես* խնամ *բառի տակ։ Պատահական նմանութիւն ունի Թրք.* قوی qəy-maq *(ռմկ. խըյմիշ ըռել) «չխնայել»։*

ԳԻՒ.—Ագլ. Մշ. Ջղ. վն. խնայել, *Ախց. Կր. Սեբ. Տիգ.* խնայէլ, *Պլ.* խնաէլ, *Շմ.* խնայիլ, *Մկ. Ոզմ.* խնաիլ, *Երև.* խնաւիլ, *Ագլ. Ակն.* խնաւիլ, *Տփ.* խնայիլ, խնաւիլ, խնախիլ *(վերջինս «նախանձիլ» իմաստով)։ Նոր ձև է* անխնայել *«առանց խնայելու, անխնայ»։*

ԽՆԳԱՐԱԿԱՆ, *նորագիւտ բառ՝ անստոյգ նշանակութեամբ. մէկ անգամ գտնում եմ գործածուած Շիր. 67 «Առիւծն (կենդանակերպը) բրջօղ է և հողմին, մեծակն է, խրնգարական և գոռող»։*

ԽՆԴԱԿ *տե՛ս* Խոնդատ։

ԽՆԴԱԿԵԼ *«նեղել». ունի միայն Բառ. հբեմ. էջ 142 (բ. տպ.* խնգակել*)։*

ԽՆԴԲՈՒՆԴ *«փայտի վրայի անհարթութիւնները» Իմ. ժգ. 14. «անհարթ, խորտուբորտ» Ոսկ. յհ. ա. 9. առաջին վկայութեան մէջ գրուած է նաև անջատ* խուն դ բունդս։ *Կարելի թէ պէտք չէ սրանից բաժանել* խընդրածակ *կամ* խնդրուծակ scissura parietis *«պատի ծերպ», որ դիտէ միայն Ներսէսովիչ, Բառ. լտ.-հյ. էջ 483 բ։*

=Կրկնուած է խուն դ *արմատից (*բունդ *Թարմատար). ըստ այսմ նախնականն է* խուն դ–բուն դ. *Համմ. գւռ.* խնճիշ–բնճիշ, խժի–բժի, խլէ–փլէ։

ԽՆԴԻ *«շրէշ բոյսը» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 1074։*

ԽՆԴԻՐ, ո *հլ. «փնտռտուք, որոնում. 2. վէճի նիւթ, հարցուփորձ, քննութիւն. 3. պահանջ. 4. աղաչանք, աղերս. 5. աղաչած բանը» ՍԳր. Կոչ. Ագաթ. Սեբեր. Բուզ. որից* խնդրել *ՍԳր. Եփր. ծն.* խնդրակ *ՍԳր. Կոչ.* խնդրական *Ագաթ. Ոսկ.* խնդրութիւն *Եփր. Թագ.* խնդրուած *ՍԳր. վրէժխնդիր ՍԳր. Կիւրղ. ծն. լրախնդիր Ա. Թագ. իզ. 21.* իմաստախնդիր *կամ* իմաստնախնդիր *Փարպ.* զուգախնդիր *Պիտ.* համառօտախնդիր *Սեբեր.* մամոնախնդիր *Փարպ.* մարդախնդիր *Սեբեր.* պատճառախնդիր *Եղն.* ջրխնդիր *Մծբ. Նոր գրականի մէջ՝* արկածախնդիր, բծախնդիր, խնդրագիր, խնդրագիրք, խնդրամատոյց, խնդրատու, խնդրարկու *են։* Խնդրել *«փնտռել» և «աղաչել» նշանակութեանց յարաբերութեան համար Համմ.* յուգել *«փնտռել» և* աշխ. ուզել։

Meillet MSL 9, 153 խինդ *և* խանդ *ձևերի հետ հմլ.* chošta, chŭtěti *«ուզել» և լհհ.* chęć *«փափագ» բառերին է կրցնում։ Հիւնք. հանում է* ընտիր *բառից։* Pedersen KZ *38, 388, 40, 178* ընդունում է Meillet-ի *մեկնութիւնը, իսկ Հայ. դր. լեզ. 138* խինդ *բառից՝* -իր *մասնիկով։ Մերժում է* Walde, *էջ 270։*

ԳԻՒ.—Մշ. Սչ. խնդ'րել, *Ագլ.* խնդ'րվել, *Ջղ. Սլմ.* խնբրել, *Ախց. Երև. Կր. Ննխ. Տիգ.* խնբրէլ, *Ագլ. Շմ. Ոզմ. Տփ.* խնբրիլ, *ԶՓ.* խը'նդ'րիլ, *Խրբ.* խնդ'իրի։ *այս բոլորը յառաջացած են գրական ձամբով։ Միակ հարազատ ձևն է Մղ.* խնդիլ *«ուզել». ինչ.* Շէտ ըմ խընդիս *«Շատ եմ ուզում, շատ եմ ցանկանում»։—Խրիմի և Լեհահայոց* խնդրուիլ *«աղաչել» կրաւորական ձևի ծագումը Մասեաց աղաւնի 1864, էջ 29 բացատրում է Թրք.* yalvar olmaq *ձևի աղդեցութեամբ՝ որի բուն նշանակութիւնն է «աղաչանք լինել», ինչպէս որ Պլ. օժանդակը Թարգմանելով ասում է* յալվար ըլլալ *«աղաչել»։ Նոր բառեր են* խնդիրագործ, խնդրաբան, խնդրկու։

ԽՆԻ *«մի տեսակ վնասակար միջատ». տե՛ս Ալիշան, Հին հաւ. էջ 155։*

ԽՆՁԱՆ *«ցօղուն, ոճ չև ատոքացեալ». մէկ անգամ ունի Շնորհ. եղեսւ։*

ՆՀԲ յաւել. «Թերևս ի խինձ *բառէ»։*

+ԽՆՁԻՂ, *ի հլ. «մեծ ուրախութիւն, հըրճուանք» Նար. որից* խնձղալ *Ոսկ. ա. տիմ.*

ը. խնձղալից *Պիտ.* խնձղաւնք *Պիտ.* խնձուղ «լիրք լիրք ծիծաղօղ, անամօթ կին կամ լիրք ուրախութիւն» *Պիտ. (ըստ Առեփ. լեհ.).*— *Բառ. երեմ. էջ 142* ունի նաև խնձուռոր «բերկրեալ», որից *ՓՒ* խնձռաւոր «ուրախալից, ղուարթ, բերկրեալ»։

=*Բնիկ հայ բառ. կազմուած է* -իղ *մասնիկով՝ պարզական* *խինձ *(հմմտ.* խնձռաւոր*) արմատից, որի նախաւոր ձևն է* խինձ. *այս էլ նոյն է հյ.* խինդ <*հնխ.* khendh *արմատի հետ, որի վրայ տե՛ս առանձին։—Աճ.*

Հիւնք. ծնծղայ բառից։

ԽՆՁՈՐ *(յեռնաբար* ի, n *հլ.) «խնձոր պտուղը» Երգ. ը. 5, է. 8. «մանրագործի պրտուղը» Ծն. լ. 14. «ալոճ» Բժշ. «այտ, երեսի ուռած մասը» Նիւս. երգ. «գմբեթի վրայ՝ խաչի տակի գունդը» Օգոստ. բաջ. 17. ըրից* կարմրախնձոր *Ագաթ.* ոսկեխնձոր *ԱՒ.* խնձորի *Երգ. ը. 3, ը. 5. Պիտ. Փիլ. Մխ. առակ.* խրնձորենի *Պատմ. աղեքս. Վրդն. երգ.* խնձորաբեր *Ոսկ լս.* խնձորակոյս *Գաղիան.* խնձորիկ *Մագ. և Երզն. քեր.* գետնախնձոր «երիցուկ ծաղիկը, camomille» *Գաղիան. (Նոր առումով նշանակում է «patate, կարտոֆիլ, pomme de terre». տե՛ս Նորայր, Հայկ. բառարն. էջ 112). գրուած է նաև* խնձոր *ևն։*

ՆՀՒ «որպէս թէ խնկածոր *կամ* խաւնձելի՝ *նախանձելի, Ագաթայ պտուղ կարծեցեալ»։ Թաղիադեան, Առաջն. մանկ. 127 «խնդութիւն ծնողաց»։* Böttich. Rudimenta *41, 109 և* Lag. Urgesch. *821 արամ.* xazzūr: *Հիւնք. արաբ.* խրնգիր *«խոզ» անասունի անունից։* Patrubány SA *1, 194 ՀՀիւս.* hanga, *գերմ.* hangen, *գոթ.* hāhan *«կախել, կախուիլ» ձևերի հետ հնխ.* kheng'ho- *արմատից, իբրև* kheng'ho-ro *«կախեալ»։ Նոյն, ՀԱ 1908, 152* խինձ *«գոգ, ծոց» բառի հետ՝ պտուղի կլորութեան համար այսպէս կոչուած։ Մառ* ИАН *1913, 318 և* Яф. сборн. *2, 152* ձ *և* որ *յոգնակերտ մասնիկներով, ինչպէս են և* տանձ, սալոր *(արմատն է ուրեմն* խն-*): Oštir, Btrg. alarodisch. 51 Հսլ.* gruša, *կուլապի* himče *ևն։*

ԳԻՒ.—Ալշ. Մշ. Զղ. խնձոր, *Վն.* խնձոր, *Երև. Խրբ. Պլ. Ռ.* խնձօր, *Ախց. Կր.* խնձօր, *Մշ.* խնձօր, խնձր՛ր, *Ոզմ. Տիգ. Տփ.* խնձուր, *Նխճ.* խուճձօր, *Ագլ. Մկ.* խնձիւր, *Գոր. Ղրբ. Սեբ. Սլմ.* խնձէօր, *Ասլ.* խնձէօ՝ր, *Զթ.* խէօնձիւյ, խէօնձիւր, *Շմ.* խուճձէօր, *Հւր.* խիւնձէօր, *Հճ.* խը՝նձոյ, *Մրզ.* խուխնձիւր:—*Նոր բառեր են* խնձորախոտ, խնձորաչիր, խնձորաճոտ, խնձորոտիճ, խնձորուկ, խնձորտուճ, խնձորուոր, խնձորճաղի, խնձորճենի, ծառխնձորի, ֆոլախնձորի *են։—Համշ.* խրնձիւր *կամ* խրնձէօյ։

Փոխ.—Կայ ասոր. ܟܙܘܪܐ xazzūrā, *արամ.* חזור xazzūr *«խնձոր». սրանց նախաձևն է* *xanzūrā, xanzūr. բնիկ ասորական չեն, որովհետև չեն գտնւում ուրիշ սեմական լեզուների մէջ, ուստի փոխառեալ են հայերէնից։ Այսպէս են ընդունում* Lag. Arm. Stud. *§ 993 և Հիւբշ. 305։—Կովկասեան լեզուներն էլ ունին մեր բառին մասամբ նմանող ձևեր, բայց որովհետև նմանութիւնը կատարեալ չէ, ուստի համարում ենք պատահական. այսպէս՝ վար.* խինչ, խինզ, *կաբ.* ճինչէ, ճինզէ, *կայ.* ինցէ, էնչ, ինչ, ճինցի, *ակու.* էնչ, ինց, *խիւր.* ինց, *անդ.* ինցի, *ուտ.* էշ, *կիւր.* իչ, *չեչէն.* ազ *ևն, բոլորն էլ «խնձոր» նշանակութեամբ։ Հմմտ.* Patrubány SA *2, 32։—Տե՛ս և* ճազոր, ճազորաճ *բառը։*

ԽՆՁՈՂԵԼ *«ուրախանալ, հրճուիլ». մէկ անգամ ունի Ոսկ. ա. տիմ. «Միթէ ի հարսանի՞ս խնձողիցես».—այստեղ մի լաւագոյն ձեռագիր ունի* խնծոյալ. *ուստի յայտնի չէ թէ* խնձողել *սոո՞յգ ձև է, թէ խանգարեալ ընթերցուած։*

ԽՆՁՈՒՂ *տե՛ս* Խղունջն։

Խնոցի *«կարագ հանելու գործիք» Ոսկիփ. որից* խնոցեաւր *«խնոցի հարող (կին)» Կանոն. էջ 116։*

=*Արմատն է* խին *«պարարտութիւն, յատկապէս կաթի իւղը», որ թէև չէ աւանդուած հնից, բայց պահուած է մի քանի գաւառականների մէջ. այսպէս՝ Ղրբ. խէն «կաթի պարարտութիւնը» (օր. Կովը խէն չունի. Էս կաթնումը խէն չկայ). Երև.* խին *«կերակրին համ տալու մասերը, իւղ, պարարտութիւն, հիւթ», Ագլ. խայն «պահոց ապուրների մէջ*

խառնելու համար ծեծած ընկոյզ», մանաւանդ Գնձ. խիճ «իւղի նշան՝ որ առաջին անգամ երևում է խնոցու մէջ»։ Սրանից են կազմուած նաև խիճալի *կամ* խնալի *«պարարտ (կաթ). 2. լաւ կաթնատու (կով)»,* անխիճ *«անհամ, անհիւթ, անժուռ» (բառիս ունելի հին յիշատակութիւնն ունի Բառ. երեմ. էջ 115),* խնախաշու *«կերակրին համ տուող մասերը, նիւթը»,* խնատու *«իւղոտ, հիւթալի (կաթ)»,* խնուկ, խնօք *«իւղալի, սերալի (կաթ)»,* խնօքանալ *«կաթը սերալի դառնալ»։—Աճ.*

ՆՀՔ խնուլ *«փակել» բայից։*

ԳԻՒ.—Ախց. երև. խրբ. կր. Համշ. Սեբ. Տփ. խնօցի, *Ռ.* խնօց, *Շմ.* խնէցի, *Գոր. Ագլ.* խնո՛ցի, *Ղրբ.* խնէ՛ցրէ.—*նոր բառեր են* խնոցաբան, խնոցիկ, խնոցեան, խնոցեար։

ՓՈՒ.—Ոտ. խնօցի։

ԽՆՈՒԻ *տե՛ս խիճ։*

⊙ԽՆՋԵԼ *«խոզի խորդալը» Ագաթ. որից ունինք* խնչափող *«խռչակ, խռչափող» ԱՔ.* խնջել *«քիթը մաքրել» միջին հյ. բառ (Նորայր, Բառ. ֆր.* moucher*), «իբր արհամարհական նշան՝ քիթը վեր անել» Կիր. պատմ. էջ 5.* խնջիւն *Մագ. Թղ. 47 (չունի ՆՀՔ),* խնջխնջել *«ձիու խրխնջել» ՋՔ։*

=Բնաձայն բառեր են. կազմուած են պարզ խ ձայնից՝ և, շ, ջ ածանցիչներով և կրկնութեամբ. Համմտ. խաչնել, խոխոջել, խրխնջել, խխնջել. *վերջինս նոյն արմատից կրճատ կրկնութիւն է—Աճ.*

ՆՀՔ արաբ. խնզիր *«խոզ» բառի հետ է համեմատում։ Հինուբ.* խխնջել *բայից է հանում։ Վերի մեկնութիւնս հրատարակուած է նախ ՀԱ 1899, էջ 203—4։ Պատահական նմանութիւն ունի ավար.* ճ՛ուճնէր *«խլխնք»։*

ԳԻՒ.—Խրբ. խնջ՛իլ, *Ջղ. Սլմ. Վն.* խնչել, *Ախց. երև. կր. Ղրբ. Ննխ. Ռ. Տիգ.* խնչէլ, *Ագլ. Գոր. Մկ. Ոզմ.* խնչիլ, *Պլ.* խնչէլ, խմչէլ, *Շմ.* խնչիլ, խնչ աճիլ, *Ասլ.* խնչէ՛լ, *Հճ.* խը՛նչել, *ՋՔ.* խը՛նչիլ, *Համշ.* խնչուշ, *Ալշ. Մշ.* խրնճել, *Պլ.* խնչէլ, խմչէլ, *Տփ.* խնչիլ, խլնչիլ, *Սչ.* խմչել, *Սեբ.* խմչէլ, *Մրղ.* խիճչէլ. *այս բոլորը նշանակում են «քիթը սրբել», ինչպէս ընդունուած է նաև արդի դրականում։ Համմտ. նաև Տփ.* դնջօ *«խլնքոտ», Մշ.* խրնճխրնճել *«ձիու խրխնջել»։*

ՓՈՒ.—Սղերդի արաբախօս քրիստոնեաները ունին xənče *«խնջել» (Բիւր. 1899, 116), Թրք. գուռ. Կր. և S.* xənč etmek *«քիթը խրնչել» (Բիւր. 1898, 627 և 1899, 798)։*

ԽՆՋՈՅ, ի *հլ. (գրուած նաև* խնճոյ*) «ուրախութեան սեղան, կոչունք, խրախճանք» Գ. մակ. գ. 22. Ագաթ. «հանդիսականների բազմութիւն» Ագաթ. Փիլ. Պատ. աղեքս. բառս առհասարակ անեզական է, բայց Փիլ. և Պատ. աղէքս. ունին նաև եզակի գործածութեան օրինակներ.—որից* բազմախնճոյ *Պիտ.* խնճոյական *կամ* խնջուական *ԱՔ։*

ՆՀՔ սրանից է հանում ոմկ. խնճախրճճ *(որ է Թրք.* qənjaqənj *«խառնամբոխ»)։ Հիմնք. պրս.* خوانچه *խօնչէ «փոքր սեղան» ձևից։ Մառ* ИАН *1914, 1238 խնդալ ձևի հետ, որ տե՛ս։*

ԽՆՋՈՐ *«խառնակ». ունի միայն Բառ. երեմ. էջ 124 ժխոր բառի բացատրութեան մէջ։*

***ԽՆՏՈՒՉ** *«շնջրի, ջրշուն» երզն. քեր. ուրիշ վկայութիւն չկայ։*

=Արաբ. قندز qunduz *«կուղր». աղաւ. Թրք. և ոմկ. հայ արտասանութեամբ* xunduz։

Ուղիղ մեկնեց նախ ՆՀՔ։

ԽՇԵԼ, *«դադարիլ». ունի միայն Բառ. երեմ. էջ 142։*

ԽՇԽՓԵԼ *«սփոփել, հոգալ». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Բառ. երեմ. էջ 174՝ ճայթայրել բառի բացատրութեան մէջ. որից հետևում է թէ այն ժամանակ կենդանի ժողովրդական բառ էր։*

***ԽՇԿԻԼ** *«չորանալ, տաքից այրիլ». յետին հայերէն բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Առաք. պատ. 309 «Իսկ բժըշկին անհմուտ գոլով՝ յոլովագոյն ի գործ Լարկ ղչերմ դեղն ի մարմին նորա, յորմէ պատճառէ չորացեալ խշկեցաւ ամենայն մասունք ներսին փորոտեաց նորա. քանզի ուժգին ջերմութիւն դեղոյն այրեաց զմասունս ներքին անդամոց նորա»։ Սրա ներգործականն է* խշկել *«պակասեցնել», որ գտնում եմ գործածուած Տաթև. ձմ. իդ. «Զապաշխարութիւնս մեր՝ որ կշռորդ է, (առ-*

տանայ) կամի խշկել, որ ի հրնշտակաց նմանութենէն պակաս առնումք... զի այն որ գնէ ինչ կշռով՝ կամի զի քարն ծանր լինի, որ առաւել առնու ի կումաշէն»։

=Պրս. خشک xušk «չոր» բառից, որ մինչև այժմ էլ գործածական է Ագլ. խէշկ ձևով։ Պարսկերեն բառի սրա ցեղակիցներն են քրդ. ešk, hüšk, աֆղան. vuč, օսս. xuck, բելուճ. hušaγ, պհլ. xušk, գնդ. huška, հպրս. uška «չոր» (Horn § 489):—Աճ.

Գիր.—Պահուած է զանազան իմաստներով. այսպէս՝ խշկիլ Ագլ. «չորանալ», Երև. Ղրբ. «ծաղիկը բառամիլ, առանց կոճակ կապելու թափուիլ», Երև. Ղրբ. «սմքիլ, իջնել, ցածանալ, տափակիլ» (օր. դէզը այրուեց խշկեց), փխբ. «քանդուիլ, ոչնչանալ», Գնձ. «իջնել, հանդարտիլ» (բարկութիւնը), Ալբս. Ախք. «նատիլ» (նախատաւար), որ և խժկիլ Ղրբ. «ուռեցքը իջնել»։

—ԽՇՈՒՐ *տե՛ս* Խոշոր, Խոժոռ։

ԽՇՏԱՒՈՐ *տե՛ս* Խիշտ։

ԽՇՏԻՔ *տե՛ս* Խիշտ։

ԽՇՏՐԵԼ «արհամարհել». գործածուած է հետևեալ տեղերում. 1. «Թէպէ խշտրելոցն չհինիցիմք գեր ի վերոյ, զո՞ր համարձակութիւն ունիցիմք մտանել ի հայրենի տունն» Ոսկ. պօղ. ա. էջ 923.—2. «Յոյժ վատահ լինել յիւր զօրութիւն և խշրտել զպատերազմողացն տկարութիւնն» Ոսկ. ես. էջ 334.—3. «Սա է մարդ՝ որ առաջին խշտրեաց զմահ» Եւս. համս. (ՀԱ 1921, 294)։—4. «Առ ոտն հարկանէ և արհամարհէ և խշտրէ զարհաւիրս մահու...» Սերբր. էջ 169 (ձեռ. իշտրէ. բայց կնիք հաւ. 335 նոյն վկայութիւնը օրինակում է խշտրէ ձևով).—5. «Յանարգէ միոջէ և ի խշտրելոյ» Ոսկ. բ. տիմ. (Մեկն. պօղ. Ա. էջ 268).—6. «Զարմանամ ընդ երիս մանկունսն, զի չխշտրեցին զհնոցն և ընդդէմ կացին բռնաւորին» Ոսկ. մտթ. Ա. 518.—7. «Ո՞չ սա է որդի հիւսան և ամենայն ուրեք ջանային խշտրել գնա» (ըստ սրբագրութեան Վարդանեանի՝ ՀԱ 1921, 408)։

Նախապէս երկրորդ և չորրորդ վկայութիւնները միայն ծանօթ լինելով՝ բառիս ընթերցուածը անստոյգ էր։ ՆշԲ գնում է առանձին առանձին իշտրել կամ խշտրել «արհամարհել», խշտրել «որպէս պատճառել՝ առթել ուժգնութեամբ»։ Աւելի լաւ է ՋԲ, որ իբրև կասկածելի բառ գնում է իշտրել կամ խըշտրել «քամահել», և իբրև ստոյգ խըշտրել «անգոսնել»։ Առաջին անգամ Նորայր, Հայկ. բառաք. 53 Ոսկեբերանի միւս օրինակներով հաստատեց խըշտրել «արհամարհել» և ջնջեց իշտրել ձևը։ Նոյնը վերջին անգամ հաստատում է Վարդանեան ՀԱ 1913, 298 և ՀԱ 1921, 408 նոր օրինակներն աւելացնելով, որոնց վրայ աւելացնում եմ ես էլ Սերբրիանոսի վկայութեան ուղիղ ընթերցուածը Կնիք հաւատոյ մէջ։

ԽՇՐԻԿ «աղտոր, թութիա» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 1091։

ԽՈՋ, ի, ի–ա հլ. «խոզ անասունը» ՍԳր. Ոսկ. մ. բ. 3. Ագաթ. «մի ասպղի անուն է» Շիր. 73. որից խոզանալ Ոսկ. մ. բ. 3. խոզացեալ Ագաթ. խոզուրիւն Ոսկ. մ. ա. 23. խոզեան Ղկ. ը. 33. խոզենի ՍԳր. Փարպ. խոզամիտ Ոսկ. մտթ. խոզագնաց Ագաթ. խոզարած ՍԳր. խոզուկ «փոքր ոզնի» Գաղիան. խոզատանձ Գաղիան. խոզպի «խոզի եղ» Վստկ. 168. խոզմ «պարանոցի գեղձերի այտում, scrofule» Բժշ. (միջին հյ. բառ՝ ըստ Նորայր, Բառ. ֆր. 438 բ). Համմտ. ռուս. свинья «խոզ» և «վզի ուռեցք» (որ նորերը թարգմանել են խոզուկ), արաբ. da-al-xanāzīr: *Այստեղ պիտի աւելացնել նաև* Բառ. երեմ. էջ 142 խոզիտ (կամ խոզիա?) «գարշ» (տիպն անորոշ է)։

Հներից Վրդն. ծն. հանում է խուզել բայից. «խոզն՝ ի խուզողութենէն»։ Այսպէս նաև Տաթև. հարց. էջ 220։ Klaproth, Asia polyg. 354 Bhagalpur-ի լեզուով kîs, *էջ 105 բրբտ.* guis, *յն.* ὗς «խոզ»։ Ինճիճեան, Հնախ. Գ. 22 *ի բնաձայնից։* Peterm. 22, 27, 38 *յն.* üs, *լտ.* sus, *պրս.* خوک xōk *հոմանիշների հետ։*— Böttich. Arica 66, 74 *պրս.* xōk *և օսս.* xuy: Lag. Urgesch. 821, Pictet 1, 370, Lag. Beitr. baktr. Lex. 15 *պրս.* xōk «խոզ»։ *Մ. Մահր, Ճռաքաղ 1861, 346 հետևելով Վարդանին՝ հա-*

նում է խուզել բայից։ Պատկ. Изслед. էջ 9 պրս. xōk և քրդ. xoz հոմանիշների հետ։ Բառիս վրայ խօսում է նաև Տէրվ. Երկրագունտ 1884, էջ 54—55։ Հիւնք. բոզ բառից։ Հիւբշ. 160 ասում է թէ ո՛չ իրր բնիկ և ո՛չ իրր փոխառեալ կարող է կազուիլ պրս. xūk «խոզ» բառի հետ։ Patrubány SA 1, 190 փոխառեալ է դնում պհլ. xūk «խոզ» բառից, որի վերջաձայնը ազդուել է հայ. եզն բառից։ Նոյն, ՀԱ 1908, էջ 275 սանս. khyā «խօսիլ, պատմել» բառի հետ։ Մատ ЗВО 19, 0158 հյ. կիճճ, վրաց. ղոռի, լազ. մինգր. ղեչի հոմանիշների հետ յաբեթական արմատէ։ Karst, Յուշարձան 405 տումեր. kiš «խոզ» բառի հետ։ Պատահական նմանութիւն ունի չէրքէզ. ąqo «խոզ»։ Pictet, բ. տպ. Ա. 460 գնդ. hu, պրս. xūk, յն. σῦς են բառերի հետ, իսկ էջ 464 պրս. kās «արու խոզ»։

ԳԻՒՒ.—Ալշ. Հճ. Մշ. Զղ. Սլմ. Վն. խոզ (սեռ. Վն. խուզու), Ախց. Գոր. Երև. Կր. Խրբ. Ննխ. Շմ. Պլ. Ռ. Սչ. խօզ, Ագլ. Մկ. Ոզմ. Տիգ. Տփ. խուզ, Մրզ. խուʰզ, Համշ. Ղրբ. Սեբ. խէօզ, Ասլ. խէօ՝զ, Զթ. խիւզ։ Նոր բառեր են խոզաբուծ, խոզագի, խոզախոզի, խոզամորթ աճել, խոզակաշի, խոզակեր, խոզակոխ, խոզամագ, խոզանոց, խոզապան, խոզապատկուկ, խոզարան, խոզկաղնի։

ՓՈԽ.—Զազա ǰ̇ xoz «խոզ» (Հիւբշ. էջ 160 դնում է փոխառեալ հայերէնից. պրս. չէն է xūk, գնգ. hū, քրդ. xü, օսս. xui (Horn § 510), որոնք ցոյց են տալիս՝ որ արմատն է xū, իսկ k վերջաւորութիւն կամ մասնիկ է)։

ԽՈՉ, ի հլ. «կամուրջի երկաթէ կապերը» Պատմ. աղէքս. 90=Կեչառ. աղէքս։ Ուրիշ վկայութիւն չկայ։

ՆՀԲ համեմատում է պրս. խուզէ (որ անյայտ է) և հլ. խեց, ճեց «անուի շրջանակ»։ Պատահական նմանութիւն ունի չէչէն. huoz «տակառի շրջանակ»։

*ԽՈՉԱԿ (ի–ա հլ. ըստ ՆՀԲ, թէև առանց վկայութեան) «նոճիի, սօսիի և նման ծառերի պտուղը» Մխ. առակ. «բամբակի գլուխը» Բառ. երեմ. էջ 165։

=Թրք. قوزاق qozaq «շոճիի խոզակ», قوزه qoza «շերամի խոզակ, բոժոժ, ընկոյզ», قوزالاق qozalaq «նոճիի խոզակ», որ ծագում է պրս. غوز γōza (կամ غوژ γōža) «բամբակի կամ նոճիի խոզակ» ձեվից. ունինք նաև պրս. گوز gōza «բամբակի, խաշխաշի, ապրշումի խոզակ», քրդ. koze «շերամի բոժոժ». պարսկերէնից է արաբացեալ جوز javzaq «բամբակի խոզակ» (տե՛ս Կամուս, Թրք. Թրգմ. Բ. էջ 878)։

Նախ Schröder, Thesaur. 46 դրելով գոզակ՝ կցում է արաբ. javzaq և լտ. qossipium բառերին։ ԳԴ դնում է պրս. ղուզ։—ՆՀԲ «նոյն ընդ ոմկ. գօզալագ... թերևս ճարակ խոզաց կամ ընկուզաձև»։ Lag. Arm. Stud. § 506 պրս. gōza բառի պհլ. ձևից։ ՀԲուս. § 1442 հիմնուելով Շէօդէրի վրայ՝ դնում է առանձին կոզակ բոյսը՝ որ յայտնապէս սխալ է։ Հիւնք. պրս. ֆիուզէ «բժոժ»։

ԳԻՒՒ.—Երև. ղօզա, Սեբ. ղօզախ, Ոզմ. կոզակ «բամբակի խոզակ» (նոր փոխառութեամբ Թուրքերէնից)։

ԽՈՉԱԿ (բաբանի) տե՛ս Կոզակ։

ԽՈՉԱՆ (ըստ ՆՀԲ ի–ա հլ., թէև առանց վկայութեան) «հնձուած հասկերի մնացորդ ծղօտները» Նս. ժէ. 6=Ոսկ. ես. 167. Լաստ. ժգ. Մխ. դտ. որից խոզանացեալ Ագաթ. խոզանեալ Ոսկ. ես. խոզանատ Ագաթ. (բոլորն էլ խոզանի պէս ցցուած մազերի համար ասուած). Նոր գրականում խոզանակ, խոզանակաձև։

ՀՀԲ և ՆՀԲ խուզել «կտրել» բայից։ Հիւնք. պրս. խուզ (?) և խուշէ «հասկ»։

ԳԻՒՒ.—Պահուած է Ալշ. Երև. Խրբ. Կր. Ղրբ. Մշ. Նբ. Սեբ. Սլմ. Վն. Տիգ. խոզան ձևով և զանազան նշանակութեամբ. այսպէս «1. խոզան, ծղօտ. 2. հնձուած և դեռ չմշակուած արտ. 3. քաղհանք չանելուց՝ խոտերն իրար խառնուած մնացած. 4. երկու տարի անմշակ մնացած վարելահող».—Նոյնը նաև Մղ. «բամբակի արտի առաջին վարը, երբ ժէժէրը հաւաքում ու մաքրում են»։ Նոր բառ է խոզանատեղ։

Փոխ.—Թրք. զու. կր. xozan *«խոզան» (Բիւր. 1898, էջ 627)։*

***Խոզար** «բոյս դալարիկ». ունի միայն Բառ. երեմ. էջ 142, որից և ՓԲ. սրանի՞ց է շինուած* խոզրաա *«իբր չունօղ զխոզար, մըրդուզ, անարգ, խոտան». դիտէ միայն ՓԲ՝ առանց վկայութեան։*

=Արաբ. خضر xazra *«կանաչ»,* خضرت xuzrat *«կանաչութիւն»,* خضارت xuzārat *«դալարիք»։—Աճ.*

Խոզիզ *«ճագար կամ դիշերագնաց». ունի միայն Բառ. երեմ. էջ 142։*

Խոզոխ *«ուրար». նորագիւտ բառ՝ որ մէկ անգամ գործածուած է Մաշտոցի Քահանայաթաղի մէջ (տե՛ս* Conybeare, Rituale Armenorum, Oxford *1905, էջ 534)։ Կոնիբեր (անդ) մեկնում է բառս «ուսի վրայ ձգուած զգեստ», որ ասելի լաւ ճշտում է Վարդանեան ՀԱ. 1910, 370՝ դնելով «ուրար»։ Սրանով բառս նոյնանում է ԱԲ-ի խողոխ «ուրար» անստոյգ բառի հետ։ Հացունի, Պատմ. տարազի, էջ 303 գրում է խողոխի։*

Խոթ *«աղկիոն կամ ծովեզերեայ արտոյտ» Գազիան. Բռ. ստ. լեհ. որից* խոթական ա-ատուրֆ *«նոյն թռչունի երևալու ժամանակները» Մխ. պատմ. առ Ստ. լեհ. (տե՛ս Նորայր, Բառ. ֆր. էջ 41)։*

*+***Խոթ.** *արմատ առանձին անգործածական. ունինք միայն ի խոթէ հայել «ծուռ՝ խեթիւ նայիլ» Վրդն. երգ. որից խոթել «խայթել, խթել» Վրդ. պատմ. էջ 122 (ձեռ.* խոթմոթել՝ *որ նոյն բայի կրկնականն է). խոթիշ. խոթող «խայթող» Բրս. մրկ. ընխոթել Դիոն. երկն. նխոթել Եւս. պատմ. 503. Պիսիդ. Վեցօր. տող 504 (ուր յն. համապատասխան բառն է «մորակել»). մոթխոթել (իբրև կրկնական. հմմտ.* խոթմոթել*) Փիլ. լին. 328.* խոթոտել *«ծուռ նայիլ» Եփր. ծն. էջ 91.* խոթոտեալ *«հնացած, երեսից ընկած, արհամարհուած» Եփր. հռ. 16։*

=Բնիկ հայ բառ. նոյն է խայթ *արմատի հետ, որին կապւում է իբր ձայնդարձ։ Տե՛ս* խայթ։

ՆշՔ կցում է խեթ *և* խայթ *բառերին։ Տէրվ.* Altarm. 28—30 *միացնում է սանս.* skund *«դուրս ցատկել», անգսք.* skuta *«դուրս ցատկել»,* skuti *«ցցուած ժայռ» են բառերի հետ։ Հիւնք. և Թիբեաբեան, Կարնամակ ծան. 88* խածանել *բայից։*

ԳԻՒ.—Սչ. խօթել*, Ախց. Կր. Նախ. Պլ. Ռ. Տիգ. Սեբ.* խօթէլ*, Մկ. Տփ.* խօփիլ*, Ասլ.* խէօքէ՛լ*, Համշ.* խօթուշ*, Ալշ. Մշ.* խօտել*, Մրղ.* խուփէլ *(որ բացի «խոթել» նշանակութիւնից՝ ունի նաև «շատ ուտել» նշանակութիւնը. այն է խթել). իսկ Զթ.* խէթիլ *«խոթել, մխել» կապւում է խայթել բային։*

*—***Խոժոռ** *«կոշտ, անհարթ» Վեցօր. 97. «դաժան, դժնեայ դէմքով» Սիր. իմ. 31. Մանդ. Սարգ. Ոսկիփ. որից* խոժոռադէմ *Իմ. ժէ. 4. Բուզ. դ. 7. Սեբեր.* խոժոռիլ *Ա. Թագ. իթ. 4. Մրկ. ժ. 22. Ոսկ. մ. բ. 28.* խոժոռագեղ *Խոր.* խոժոռութիւն *Փիլ. ՅՀ. կթ. այս բառից եմ համարում նաև* խոսոռոտ *«անհարթ» Բռ. երեմ. էջ 144, որ պէտք է ուղղել* խոժոռոտ։

=Նոյն է խոշոր *«մեծ, խոշոր» և «կոշտ, կոպիտ, անհեթեթ, անհարթ» բառի հետ (տե՛ս այս բառը)։ Արդի գրականի մէջ գտնագտնւում են* խոշոր *«մեծ» և* խոժոռ *«դժնեայ». բայց հին հայերէնում երկուսը յատկապէս իրար են փոխանակում. հմմտ.* խոշոր *Սոկր. 499 (ի սկզբանէ երևեալ որոց բուռ էկեղեցւոյն խոշոր, յամենեցուն ի նոցանէ առեալ լինէր. յն.* τραχύς *որ է «խստասրտանջ»).* խոշորիլ *(նորագիւտ բառ) «մէկից խռովիլ, քէն անել» Առաք. պատմ. էջ 163. այսպէս նաև Երև. Ղրբ. Ջղ. Շմ. գաւառականի բառերը՝ որոնք ձևով պատկանում են առաջինին, բայց նշանակութեամբ երկրորդին (տե՛ս տակը)։ Իմաստի նոյնպիսի զարգացում ներկայացնում է և պրս.* درشت durušt *«խիստ, կոպիտ» և «խոշոր, մեծ»։*

ՆշՔ խոշոր *բառից։ Հիւնք.* ախորժ։

ԳԻՒ.—Երև. խո՛ժոռ*, Ջղ.* խուժոռ*, Ղրբ.* խո՛ւժուռ*, երեքն էլ նշանակում են «խոշոր», յատկապէս «խոշոր հատիկներ ձևացած». ինչպէս՝* խոժոռ ալազ*, մէջբր* խոժոռ խոժոռ դուրս է տուել *են. Շմ.* խոժոր *«խուժոր «մեծ, խոշոր», Տփ.* խոժոր *«խոշոր», այսպէս նաև Բառ. երեմ. էջ 143* խոժոռ *«բէտ կամ խոշոր».—սակայն միևնոյն ժամանակ Երև.*

խո՛ժոռ «խէթիւ (նայելու համար ասուած)», Մշ. Մշ. խօժոռ, Շմ. խժօրած «խոժոռ (աչք)», ԶՓ. խրժռռիլ «խոժոռիլ» (տե՛ս Ա. ւեա. ըստ Մարկոսի, Զէյթունի գւռ. գլուխ ժ, հմ. 22)։

ԽՈԼ տե՛ս Խոյլ։

ԽՈԼՆԵԼ «ցրուել, վանել». մէկ անգամ ունի Ոսկ. փիլիպ. 452 «Սպասաւորաց բաղմութիւն, որ այսր անդր զռամիկն ի հրապարական խոլիցեն»։ Այս վկայութեան վրայ աւելացնում եմ հետեւեալները. «Այսր անդր զմարդիկն ի փողոցացն խոլիցեն» Ոսկ. ա տիմ. 93.—«Զռամիկն ի հրապարակացն խոլէին» Ոսկ. կող. 599.—«Այսր անդր զռամիկան խոլիցեն» Ոսկ. եփես. 800։

Patrubány SA *1, 194* լիթ. kalkálti «զարնել», հսլ. kolja «հարուածել» բառերի հետ։

ԳԻՒ.—Երև. խօլել, կրկնութեամբ Երև. խօլ-խօլել, Զզ. խօլխօլել «մի փայտ մի ծակի մէջ խրելով այս ու այն կողմ շարժել ու ֆնտռտակել»։

ԽՈԼՈՋՄԻԿ «ծարիր տրորելու յեսան». նորագիւտ բառ՝ որ երկու անգամ գտնում եմ գործածուած Մխ. բժշ. 76, 77 «Ա՛ռ Ասպահանի ծարիր քար և ի վերայ խոլոզմիկի շիւէ և տրորէ այս ջրովս... և ի վերայ խոլոզմիկին կաթեցո՛»։ Բառիս համար մի երրորդ վկայութիւն էլ գտնում եմ Խոր. աշխ. հրտր. Սուքրեան, էջ 43 «Ի նոսա լինի խոլոզմի քարն»։

Seidel, *Մխ. հեր. § 216* նոյն է դրնում յն. ὀλιζικος «փոքր սանդ» բառի հետ։

ԳԻՒ.—Ղզ. խօ՛լօզ, խլօ՛զիկ «գետի մէջ ջրերից մաշուած ու հարթուած սպիտակ նեղ ու երկար քար, որ իբր յեսան են գործածում».—Նոյն է նաև խոլոզ Լ. Ղզ. «երկանքի տակի քարի մէջտեղում անկուած փայտը, և նման իրեր» (ըստ Ամատունի, Հայոց բառ ու բան, էջ 287)։

ՓՈԽ.—Բառիս հետ նոյն է վրաց. ხოლაზნა խոլազնա «брусокъ для точки, սրոց». բայց ով որից է առած։

ԽՈԼՈՐ «խոժոռ, խէթիւ (նայուածքի համար է ասւում)» Ոսկիփ. Անկ. գիրք Հին կտ. *329.* Վրդն. առ. *81.* գրուած է նաև խոլոռ (այսպէ՛ս ունի Վրդ. առ. *81* մի ձեռ.), խոլոռ խոլոռ Բանք աղ. *180.* որից խոլորել «խէթիւ նայիլ» Ոսկ. Ճառք *831*։

ՆՀԲ համարում է խոժոռ բառի ռամկականը։ Բօփուզեան, Արծիւ վասպ. էջ *42* կցում է ոլոր, գլոր, բոլոր բառերին։

ԳԻՒ.—Մշ. խօլոր, Կր. խօլօր, Ննխ. Պլ. խօլոր-մօլօր «խէթիւ», Ոզմ. խօլ՚ուռ «խոժոռ, խէթիւ», Ռ. խօլօրցնել, Խրբ. խօլըրդիլ, Զզ. խուլոր տալ «աչքերը խոլորել».—Բրբախօս հայերից Առն. խլօր խլօր բաժմաք «խոլոր խոլոր նայիլ» (Արեւելք 1888 նոյ. 8—9)։—Նոյն բայի սաստկականն է խոլրկաալ Վն. «ծուռ ծուռ, խոլոր խոլոր նայիլ», Ակն. «նուաղման ժամանակ աչքերը դառնալ»։—Սվ. խոյլել «խոլորիլ» կարող է ծագած լինել նոյն բայից, իբրև խոլորել>խոլրել>*խորլել>խոյլել։

ԽՈՒԼՈՐՁՆ (սեռ.—ձան) «մի տեսակ բոյս» Նար. տաղ. *473—4.* որ և խոլորձ Մխ. առ. (ըստ Տիրացուեան, Contributo § *64* Orchis, իսկ ըստ § *260* vicia)։

ԳԻՒ.—Պահուած է խոլորձ Խրբ. Համշ. և խոլորս Մշ. Ասպ. Շիր. ձևերով. ըստ Ագդ Հանդ. *6. 21* vicia cracca։

*ԽՈՒՆ «դեղձ». Նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Վրդ. բար. *110*՝ այսպէս՝ «Խոխիկաի ձիթով ի ճրագն վառէ». իմա՛ խոխի կամ «դեղձի կորիզի»։

=Արաբ. خوخ xauxa «դեղձ», յդ. خوخ xaux (Կամուս, Բրբ. Բրգմ. Ա. *539*), որ և ասոր. ܚܘܚܐ xaxa «սալոր», ܚܘܫܐ xōxa «սալորենի»։—Ա՛ճ.

ԳԻՒ.—Մշ. խախ կամ խոխ «դեղձ», որի հետ նոյն են խոխ Մկ. Ռշտ. Վն. «դեղձ», Մշկ. Ք. «մի տեսակ խոշոր ու կլոր սալոր». որից խոխի Վն. խոխենի Մշ. «դեղձի ծառ»։

ԽՈՒՆ տե՛ս Խոհ և Խուխ։

ԽՈՒՆԱԴՐԱԿԱՆ. անստոյգ բառ, որ մէկ անգամ ունի Արծր. ա. 2 «ի բիւրս ամաց և դարս խոխադրականս և այլաձևս»։ ՆՀԲ, ՋԲ և ԱԲ մեկնում են «մտացածին, յօդեալ, շինծու, սուտ»։

ՆՀԲ կցում է խոխոտել բառին, որ տե՛ս առանձին։

ԽՈՒԽԱՆ «մէկի դէմ ոխ պահել». մէկ անդամ գործածել է Կլիմաք. «Մի՛ խոխար ընդ մեզ, քա՛ղցր»։

ՆՀՔ կցում է ոխալ բառին։

ԳԻՒՐ.—Պահուած է խոխալ ձևով և զանազան իմաստներով. այսպէս՝ Տ. «մէկի դէմ քեն՝ ոխ պահել, նախանձաբեկ ոգի տածել», Մն. «չարանալով խնայել, յաչազկոտ կերպով ղլանալ», Ակն. «մի բան իրեն անհաճոյ թուալով վշտանալ՝ նեղանալ»։

ԽՈՒԽԵԼ «անհնազանդ դանուիլ, անսասանել». անստոյգ բառ. մէկ անգամ ունի միայն երգն. խրատ. «Աստուծոյ հրամանին և ուխտին խոխոզք են»։

ՆՀՔ մեկնում է «իրր խոխոտելով կամ պատճառս հնարելով ատունդանօդ. կամ խոռօղ կամ թևրևս գրելի կոխօղ»։ ՋՔ չունի այս բառը։

ԽՈՒԽՄ, որից և խոխմիկ «անվթար, անփորձ». ունի միայն Բառ. երեմ. էջ 143։

ԽՈՒԽՈՂ «ահաւոր, խրոխտ». մէկ անգամ գործածում է Պտմ. աղէքս. 22 «Խրխնջեաց (ձին) ո՛չ որպէս յարն՝ ահագին և խոխոզ, այլ քաղցր, կամակ և գողտրիկ»։

ՆՀՔ և Աճառ. ՀԱ. 1909, 159 լծորդ են դնում կոկոզ բառին։

*ԽՈՒԽՈՒՄ, ի–ա հլ. (անեզաբար գործածուած) «թփոտ ձոր» Ոսկ. մ. բ. 3. եփես. 874. «նեղ ծործոր և առուամէջ, հոսանքի անցած տեղը» ՅՀ. կՔ. 308. Արծր. «դժուար տեղեր» Ոսկ. եփես. 874 (յանհնարին և յանբաւ խոխոման անկանի բանն «խօսքը դժուար տեղերն է ընկնում, պատասխան տալ անհնարին է»). գրուած է խոնում Բառ. երեմ. էջ 143. որից խոռոխոխում ԱՔ. բայական գործածութեամբ խոխոմել «ոռոգել, լաւ ջրել (ծառերը)» Թէոդ. կուս. (գրուած է խողոմել, խոխել Բառ. երեմ. էջ 143). խոխոմեալ (գրուած է խողոմեան կամ խողոմեալ) «ջրառատ» Թէոդ. կուս.—ճիշտ չէ խոխոմածիգ «երկար ծործոր» Խոր. ա. 11. «Գետն Երասխ ...անցանէ ընդ խոխոմածիգս և նեղս», ուր շաղկապով միացած և նեղս ցոյց է տալիս՝ որ ուղիղն է խոխոմս ձիգս և նեղս։

=Կովկասեանների փոխառեալ բառ է. ընդարձակ տե՛ս խում արմատի տակ։—Աճ

ՆՀՔ խմել բայից կամ ոմկ. խխում։ Հիմնք. խմել բայից։

⊙ԽՈՒԽՈՋ, ի հլ. «ջրի հանած շառաչալից ձայնը» ՅՀ. կՔ. որից խոխոջել Ագաթ. ՅՀ. կՔ. խոխոջիւն Վրք. հց. երկրորդ իմաստն է «փորլուծութիւն», ինչպէս ունի խոխոջանք Մանդ։ Սրա հետ նոյն են նաև խողխոջ, որից խողխոջանիլ «ջրի հոսիլ՝ խոխոջալը» Կոչ. խողխոջանք «ջրերի հոսանք» Վեցօր. գ. էջ 55, «փորլուծութիւն» Ոսկ. մ. գ. 17. Մանդ. ի վեր խողխոջել «գկռտալ» Փիլ. լին. բ. 25. խոխոնջ, որից խոխոնջիւն «ջրի շառաչ» Վրք. հց. խողխոնջ, որից խողխոնջել «բարձրաձայն ծիծաղիլ» Արծր։

=Բնաձայն բառ. կազմուած է պարզ խ ձայնից կրկնութեամբ և ն, ջ ածանցիչներով. խողխոջ և խողխոնջ առաջիններուն ղօրացեալ ձևերն են. համմտ. խախանջել, խաճչել, խրնչել ևն։ Հայերէնի պէս բնաձայն է նաև ուտ. խօխօ «ջրի կարկաջ», խօխօիսուն «ջրի կարկաջել»։—Աճ.

Այս մեկնութիւնս հրատարակուած է նախ ՀԱ. 1899, 204 բ։

ԽՈՒԽՈՒՏԻԿ «յանդգնիլ, համարձակիլ». գործածուած է միայն հետևեալ տեղերում. «Եւ ո՞վ այն իցէ կարող՝ որ զխորս անդնդոց ծովուն քննել խոխոտիցի». Ագաթ. § 6 (երկու ձեռ. ունին խոխոտիցի, մէկը խոտիցի, տպուած է խռոխատիցի). «Եւ խոխոտի (ձեռ. խոխատի, տպ. խռոխատի, յն. τυραννεῖ «գոռոզանայ կամ բռնակալէ») զմեղադրութիւնն ևս այնպիսի մոլեռանդ ծաղր չհամարիլ». Ոսկ. մ. դ. 8. «Մի՛ ոք զնոյն անցս չարչարանաց և զձաղանս և զձաղկանս խոխոտիցի կրել որպէս և նոքայն». ՅՀ. կՔ. էջ 199. «Կայր փոքր մի ի վերայ հառաձի միջոյն և խոխոտէր խօսել». ՅՀ. կՔ. էջ 312.—բայը մի անգամ էլ գործածուած է «յօդել, կցկցել, սարքել» նշանակութեամբ. այսպէս «Ջճարակ հրոյ բանս բամբասանաց զսրբոյ կաթողիկոսէն խոխոտեալ յօդէին». ՅՀ. կՔ. էջ 186։

ՆՀՔ խոխոտել մեկնում է «խորհելով յօդել, կցկցել մտօք, հնարիլ, ջանալ»։ ՋՔ դնում է «խորհելով յօդել, նիւթել ի միտս, մտաբերել, կամիլ, ջանալ»։ Նոյ-

նըն է նաև ԱԲ։—Ագաթանգեղոսի վկայութեան մէջ այս բառի փոխարէն հին տիպն ունէր **խոտիցի**. *Նորայր, Հայկ. բառաքնն. էջ 57 Յուշ. կթ.-ի վկայութեանց համաձայն սրբագրեց* **խոխոտիցի**. *այսպէս նաև Ոսկերերանի* **խոխոտի** *ձևը։ Ագաթանգեղոսի նոր հրատարակիչները երկու լաւ ձեռագրի մէջ ունենալով հանդերձ* **խոխոտիցի** *ընթերցուածը, ուշադրութեան չեն առած Նորայրի սրբագրութիւնը։ Նորայր, Յուշարձան, էջ 171 պնդում է իր սրբագրութեան վրայ։ Որովհետև* **խոխոտիլ** *նշանակում է ըստ ՆՀԲ «յօդել, կցկցել», մինչդեռ Ագաթանգեղոսի վկայութեան մէջ իմաստը պահանջում է «յանդգնիլ», ուստի Աճառ. ՀԱ 1913, 18 մերժում է Նորայրի* **խոխոտիցի** *սրբագրութիւնը և սրա փոխարէն դնում է կրկնագիր Ագաթանգեղոսի խոտիլ ձևը՝ իբրև նորագիւտ բառ՝ «յանդգնիլ, համարձակիլ» նշանակութեամբ։ Վերջապէս Վարդանեան ՀԱ 1913, 299 և 1921, 408 ցոյց է տալիս՝ որ ՆՀԲ-ի տուած բացատրութիւնը անկատար է, թէ* **խոխոտիցի** *նշանակում է աւելի «յանդգնիլ» և հետևաբար ուղիղ է Նորայրի սրբագրութիւնը։*

ԽՈՒԽՈՒՄՈՒՆ *«ընկուզաս». ունի միայն Բառ. երեմ. էջ 143. ի՛նչ լինելը յայտնի չէ։*

ԽՈԿ, ի–ա *հլ. «խորհուրդ, մտածութիւն, յիշողութիւն» Ոսկ. մ. բ. 18, 28. «մտածող, հանճարեղ, բանագաւտ» Եղիշ. մատն. 241. Երզն. քեր. որից* **խոկումն** *Նխ. ժղ. Սահմ. Մագ.* **խոկասէր** *ԱԲ.* **նախախոկումն** *Ճառընտ.* **խոկալ** *«մտածել, խորհիլ» ՍԳր. նշանակում է նաև «կարդալ». Համմտ. Վրք. հց. Բ. 512 «Տո՛ւր նմա գրկունս զի խոկասցի»։ Նոյն բայը գտնում ենք նաև Առակ. բ. 7 «Ջճշմարտութիւն խոկասցէ կոկորդ իմ», ուր* **խոկալ** *պիտի նշանակէր «խօսիլ», ինչպէս ունի և անգլ. թարգմանութիւնը.* my mouth shall speak truth. *—բնագիրն ունի* הגה hāga *«մտածել. 2. խօսիլ». բայց որովհետև յունարէնն ունի* μελετήσει *«հոգ տանիլ», ուստի և հայերէնն էլ պէտք է հասկանալ «մտածել» իմաստով և ո՛չ թէ «խօսիլ»։*

ՆՀԲ լծ. **խոն**, **խորն** *և լտ.* coquo *«եփել», իբր «հնարել, մեքենայել»։— Տէրվ.* Altarm. *103 և Նախալ. 72 առնս.* çank *«երկմտիլ, հոգս քաշել», լտ.* conctari *«յամելի», գոթ.* hâhjan *«երկբայիլ» ձևերի հետ հնխ.* çak *«տատամսիլ, տարակուսիլ, խորհիլ» ձևից։ Հիւնք.* **խոն** *բառից։ Անդրիկեան, Բազմ. 1905, 512* **նոգ** *բառից։ Քիւրկեան, Բազմ. 1910, 153* **նոգ, նոգի**, *ջանիմ, ուր բառերի հետ* **ոգ>ոյժ** *արմատից։* Karst, *Յուշարձան, էջ 416 մոնգոլ.* ojun, əin, *բուրյաթ.* oi, oin, *կալմուկ.* onik *«միտք», թունգուզ.* oitji *«իմաստուն», 419 ույղուր.* ok *«միտք», 428 ԹԹր.* ok, og, ong, ōj *«միտք», 430 ԹԹր.* ķok *«փչել»։*

ԳԻՒ.—Նոյն է Զղ. **խոկալ**, *Երև. Ղրբ.* **խօ՛կալ** *«գանիլ, ղղուիլ». երկուսի միջին իմաստն է ներկայացնում Զքր. սարկ. Ա. 33, որ գործածում է «քաշուիլ, ամաչելուց հետու կենալ» նշանակութեամբ. «Բազումք ցանկան տեսանել զերես Թագաւորի և ոչ կարեն. և դու տեսանես և խոկա՞ս»։*

ԽՈՒԿԵԼ *«լլկել կամ հալածել կամ յար անդր առնել». ունի միայն Բառ. երեմ. էջ 143, որի հետ համմտ. նաև* **անդ՝ խոկացութիւն** *«փուփոխումն»։*

ԽՈՀ *տե՛ս* **խորհ**։

ԽՈՀ** *(ըստ ՆՀԲ ի հլ. բայց վկայութեանց մէջ կայ միայն սեռ.* **ի) «կերակուր, խորտիկ» Մագ. որից* **խոհակեր** *«կերակուր եփող» ՍԳր. Ոսկ. եփես. և յհ. ա. 2.* **խոհակերել** *Ողբ. բ. 25. Ոսկ. եփես. ժղ.* **խոհակերոց** *Եզեկ. խզ. 23. Եփր. աւետ.* **խոհակերութիւն** *Ոսկ. մ. բ. էջ 705.* **խոհկերութիւն** *Փարպ.* **խոհեակ** *Ոսկիփ.* **խոհանոց** *Վրք. հց.* **խոհավաճառ** *Պղատ. օրին.* **խոհապետ** *«խոհարարապետ» (նորագիւտ բառ) Անկ. գիրք հին կտ. Ա. էջ 141.* **խոհագործ** *Գր. հր. Զքր. սարկ. Ա. 35.—***խոհակեր** *«խոհարար» բառը նշանակում է նաև «դահիճ». այսպէս ունին Եփր. մատ. դ. էջ 109, Վրք. հց. որից* **խոհակերապետ** *«դահճապետ» Նչ. եզեկ. բայց այս առումները զուտ հետևողութիւն են ասորերէնի, ուր «խոհարար» բառը նշանակում է նաև*

«դաստառ» և «դահիճ» (տե՛ս Հ. Գ. Նահապետեան, Բազմ. 1926, 75 և Աճառ. Հայ. նոր բառեր հին մատ. Բ. 271)։—Նոր բառեր են խոհարարապետ, խոհարարարուհի, խոհարարութիւն, խոհարարական: Բառս ունի նաև հետևեալ ձևերը. **խոխ** «կերակուր» Ճառընտ., որից խոխկեր «կերակուր եփող, խոհարար» Ճառընտ.—**խաի**, ի հլ. «կերակուր» Փիլ. նխ. ա. 30. Խոսր. 145. Պիտ. Նիւս. կազմ. որից խաիարար Ոսկ. յհ. ա. 30. Մագ. լմբ. խաիարարութիւն լմբ. Խոսր. վրք. հց. Շնորհ. խաիամոխ Եղիշ. ը. էջ 156. Փիլ. խաիակերութիւն Փիլ. խաիագործել Նոնն. Սարկ. խաիագործութիւն Նոնն. բազմախաի Ոսկիփ. համախաի Փիլ.—**խախ**՝ որից խախամոխ Եղիշ. ամոխախ կամ ամողխախ «աննդակից, համախոհ ընկեր» Սեբեր. 22. Ոսկ. մ. ա. 16. Գազ. և Սբր. 467. (պէտք է մեկնել իբր ամ-ո-խաի, այն է համա-խաի.—ամ՝ փոխանակ համ, խիստ քիչ անգամ գործածուած է. ինչպէս ամ-փոփ, ամ-բառնալ):

=Իրանեան *xvarh- ձևից. այս բառը հյ. տուել է *խարհ և *խորհ, որոնց միջից r ձայնը ընկնելով՝ խաի և խոհ (համմտ. գնդ. Vərəθraγna->վահագն). և յետին գրչութեամբ (կամ գաւառական հնչմամբ)՝ խախ և խոխ:—Իրանեան *xvarh- ձևը կարող է ծագիլ թէ՛ հպրս. *uvarθra- =գնդ. *xvarəθra- ձևից և թէ՛ հպրս. *uvarθa=գնդ. xvarəθa- ձևից: Առաջին երեքը աւանդուած չեն, բայց իրօք վերջինը կայ և նշանակում է «կերակուր» (Bartholomae 1868—9)։ Հին պհլ. *xvarh դարձել է յետնագոյն պահլ. *xvalh և այս ձևն է որ գտնում ենք պրս. خوال xvāl «կերակուր», خوالی xvālī «կերակուր», خوالگر xvālgar «խոհարար» բառերի մէջ: (Այս ձևերի մասին տե՛ս նաև Gouthiot MSL 20, 6)։ Ըստ այսմ հյ. խոհակեր և պրս. xvālgar միևնոյն բառերն են և միևնոյն ծագումն ունին։—Հիւբշ. 160։

Նշէ լծ. լտ. coquo և գերմ. kochen «եփել»։ Peterm. 27 և 38 պրս. puxtan «եփել» և լտ. coquus «խոհարար»։ Böttich. ZDMG 1850, 356 և Arica 80, 329 խաի=սանս. ghasi: Pictet 2, 257 լտ. coquere և սանս. pāc «եփել»։ Ուղիղ մեկնութիւնը առաջարկում է Lag. Btrg. bktr. Lex. 39 խոհ դնելով =գնդ. *xarəθra և պրս. xwardan «ուտել». իսկ խոհակեր =պրս. xwāləgar? Հիմնք. բոլորն էլ խակ բառից է հանում։

Խոհանոց. անստոյգ բառ, որ մէկ անգամ գործածել է Վրք. քերթ. «Մթաւորական ուսմանց խոհոցք, որք շրջինն յաղջամուղջ խաւար»։—Նշբ մեկնում է «խոհերք կամ ալք խոհերաց. եթէ չիցէ գրելի խոհուոք, այսինքն խոհիոզ»։ Ջբ չէ իսկ յիշած. իսկ Աբ մեկնում է «ալք կամ մթին խորշք մտաց կամ խոհերք»։

Խոհամանալ «գահավիժիլ, վայր պլորիլ». մէկ անգամ ունի Արծր. հրտր. Պատկ. էջ 254. «Ուր Արտաւազդն Արտաշիսեան քարափվիժեալ խոհամանայր ի կոշտն (կամ ի կաւշտրն) կոհակին»։

Նշբ մեկնում է «որպէս ամանալ ի խոհոմս, խարդաւանիլ». իսկ Աբ «պլորիլ վերեն ի վար խոր տեղը». Ջբ չունի։

Խոհեմ տե՛ս Խորհ։

Bittner WZKM 14 (1900), 162 ասոր. ܟܗܝܡ xāxem «իմաստուն» բառից է հանում. Թիրեաքեան, Ատրպատ. էջ 6, 31, ՀԱ. 1914, 246 պհլ. խո «լաւ»+հիյմ, պրս. xīm «բարք» բառերից, իբրև «բարեբարոյ», որի հակառակն է duž-xīm>դժխեմ։

Փոխ.—Patrubány SA 1, 5 հայերէնից փոխառեալ է դնում Բուդապեշտի հրեական ժարգօնով בָּכָם xohem «խոհեմ, զգոյշ»։ Բայց այստեղ կան մի քանի սխալներ. בָּכָם բառը չի՛ կարդացւում xohem, այլ xākam (կամ նոր արտասանութեամբ xokom), երկրորդ՝ xākām ժարգօն չէ, այլ հին եբրայեցերէն և պատկանում է ընդհանուր սեմական hkm արմատին (արաբ. حكم ḥikm, արամ. ܚܟܡ xkm). և երրորդ՝ չի՛ նշանակում «խոհեմ, զգոյշ», այլ «ուսեալ, գիտուն, իմաստուն, հանճարեղ»։ Այս բոլորից հետևում է՝ որ յիշեալ եբր. բառը ամենևին դործ չունի հայերէնի հետ։

Խոհեր, ի-ա հլ. (գրուած նաև խոխեր, խո-

ճեպ) «տիղմ, հոտած ցեխ» Կոչ. 100, 101, 106, 118. Ոսկ. յհ. ա. 2. Խոր. բ. 24 «դանդիռ, գերեզմանի մութը» Եփր. վկ. արև. 20, 48? «գարշելի, գազրելի բան» Խոր. Հռիփ. 3Հ. իմ. Նար. որից խոճեռական Կոչ. 124. Սեբեր. խոճերիմաց Համամ առ.—Նոյն խոճեր բառը մէկ անգամ էլ գտնում եմ գործածուած «անդունդ, վիհ» նշանակութեամբ, ի–ա հլ. «Առ որ կայն ևս բարձրութիւն կասեալ, ոչ իջանել համարձակին առ տեսիլս խոհերաց խելագարեալք ցնորիւք».—յն. πρὸς τὴν ὄψιν τῶν χασμάτων ἰλιγγιῶντες, ար խոճեր բառի համապատասխանն է χάσμα «վիհ, անդունդ» (Փիլ. նխ. Բ. էջ 65)։

Հինք. հանում է գոճար բառից։ Թիրեաքեան, Արիահայ բռ. 182 զնդ. hixra, պազենդ. hihir, պհլ. hēhīr «գարշելիք» ձևերից։

ԽՈՂԽՈՂԵԼ «մորթել, փողոտել, չարաչար սպանել» Ա. մակ. Բ. 61, Բ. մակ. դ. 34. գրուած է նաև խոխողել Կնիք հաւ. էջ 346, 362. խոխոճել Յիշատ. Արրտ. 1915, 73. որից խողխողումն Եզեկ. Խոր. 3Հ. կԲ. խողխողիչ Պիտ. 3Հ. իմ. սրախողխող Պիտ. Նահնայ. Արծր. սրախողխողել Ուռհ. բազմախողխող Խոր. 3Հ. կԲ. կիսախողխող Խոր. Պատմ. աղէքս. ճորախողխող Ոսկ. մ. բ. 23, էջ 690 (ձեռ. խոխով զճորա)։

=կրկնուած է պարզական *խող «սպանել» արմատից։

ՆՀԲ «ի ձայնէ զենման արդեօք առեալ, որ և ոմկ. խրխ ըճել»։

ԽՈՂԽՈՋԵԼ, ԽՈՂԽՈՆՋԵԼ տե՛ս Խոխոջ։

ԽՈՂՈԽ տե՛ս Խողոխ։

ԽՈՂՈՎԱԿ, ի–ա հլ. (գրուած նաև խողովակի, խողուակ, խուղակ) «փողրակ, ջրի համ ուրիշ մի հեղուկի նեղ անցք» Եզեկ. խ. 40. Եզն. Մխ. դտ. Մաշտ. Պղատ. Բրս. արբ. «մի աստղի անուն» Շիր. հրտր. Պատկ. էջ 73. խողովակաձև (նոր գրականի մէջ).—ըստ Աւետ. Հին հաւ. 127, 129 աստղի անունը գրուած է նաև խոլովակ, ճոլովակ. իսկ Բառ. հբեմ. էջ 143 ունի խողով «փողրակ, խողուակ», իբր թէ սրա նուազականը լինէր խողովակ ձևը։

Թիրեաքեան ՀԱ 1912, 288 նոյն ընդ փողոտակ, փողովակ։

ԳԻՒ.—Նոյն բառերն են խովակ Սվ. «պատերի ստորոտը բացուած ջրի շաւտ նեղ անցք», խվլակ Հին Ջղ. «պատի ստորոտը բացուած ծակ՝ որից ջուրը ներս է հոսում»։

ԽՈՃԻՃ տե՛ս Խուճիճ։

ԽՈՃԿՈՐ, ի–ա հլ. «խոզի ձագ» Նար. քր. ա. 387—8. գրուած նաև խոչխոր Մանդ. (հրտր. Շողակաթ, էջ 126). Մարթին. խոճոր Վրք. հց. Բ. 262. որից նուազական՝ խոճորակ Թր. քեր. գրուած է նաև խոչխորակ, խոճխորակ, խոչկորակ Գիրք առաք. 558—9 (երկու անգամ)։ Շատ հետաքրքրական է խոզխորակ գրչութիւնը, որ սակայն տպագրական սխալ է թւում (տե՛ս ՆՀԲ այրիկ բառը). կայ և ճոզխուրակ Բառ. երեմ. էջ 185։ Այստեղ է պատկանում նաև խոճկորակ (կամ նաև խոճիկ?) «փրփրեմ, անմխուկ, pourpier, դանդուռ» Գազիան. իմաստի զարգացման համար համմտ. իտալ. porcellana և հին ֆր. pourcelaine, որոնք նշանակում են «փրփրեմ», բայց բուն իմաստն է «խոզի ձագ».—սխալ գրուած ձև է կոճկորակ ՀԲուս. § 1467։

=Կազմուած է *խոճ «խոզ»+կոր «ձագ» բառերից. առաջինը փոխառեալ է կովկասեան լեզուներից. համմտ. լազ. ղեջի «վարազ», մինգր. ղեջի «խոզ» և վրաց. ղորի «խոզ». (վերջինիս և առաջիններուն ձայնական առնչութեան համար համմտ. վրաց. ձիրի=մինգր. ջինջի «արմատ», վրաց. ճմարի=լազ. ոմոջի, մինգր. ոմոճջի «ամուսին», վրաց. ցվարի=մինգ. ցուճջի «ցօղ», վրաց. ծերի=լազ. ջաջի, մինգր. ճաճջի «ճանճ»). Հայերէնին ծնունդ տուող ձևը պիտի լինէր *ղոջի կամ *ղոճի, ուր ղ դարձել է խ, ըստ որում հին հայերէնում ղ ձայնը գոյութիւն չունէր։—Երկրորդ մասի վրայ (կոր) տե՛ս կորիւճ։—Աճ.

ՆՀԲ մեկնում է իբր խոզի ոուոակ կամ կորիւճ։ Հինք. կորիւճ խոզի։ Թիրեաքեան, Կոչնակ 1919, Բ. 6 խոճ =խոզ+կոր «ձագ», որ է ոուո, ոոո կամ ոուոակ։—Խոճկորակ բուսանունի վրայ (որ Տիրացուեան, Contributo § 548 ըստ

Ալիշանի համարում է սխալմամբ tussilago farfara L), *մանրամասն տե՛ս Նորայր, ՀԱ. 1921, 336 և 1923, 52։— Աճառ. ՀԱ. 1909, 160* մեկնում է վերի ձևով խոճ+կոր, *բայց ընդհակառակը կովկասեաններն է դնում փոխառեալ հայերէնից։*

Խոճոճ *«մոռածմունք» Հին բռ. որից* խոճոճել *«մոմոտալ, մոռածմունքի մէջ ընկնել, մտքով որոճալ» Փարպ. ծէ. ուրիշ վկայութիւն չկայ.—Բառ. երեմ. էջ 143* դնում է նաև խոճոպ ձևով՝ *որ մեկնում է «խորհուրդ կամ փորձանք մտաց»։*

ՆՀԲ լծ. հյ. խոկալ, *լտ.* cogitare, *Թրք.* ճկճկլէմէք *«հնդել»?—Տէրվ.* Altarm. 104 խոկալ *ձևի հետ՝ իբրև սանս.* çank *«հոգս անել, վարանիլ, երկբայիլ»։*

Խոմամբիլ *տե՛ս* Խումար։

Խոյ, ի, ո *հլ. (մէկ անգամ յգ. դրծ.* խոյօգ *Ս. Գրքի մէջ) «անմալ արու ոչխար» ՍԳր. նմանութեամբ «խոյի աստեղատունը» եզն. Պիտ. Շիր. «մի տեսակ պատերազմական մեքենայ» Բ. մկ. ժբ. 15 (ուր գրուած է նաև* ճոյ)։ *Սրանից* խոյակ *«սիւնագլուխ» ՍԳր. Ագաթ. «նման մի զարդ դռան կամ վարագոյրի վրայ» ՍԳր.* խոյակաւոր *ճառընտ.* խոյօղ *«ճարմանդ, մի տեսակ զարդ (խոյաձև օղ)» ՍԳր.* խոյանալ *«յարձակիլ, խոյի պէս վրայ վազել» Օր. իր. 49. Ագաթ. Մծբ.* եզնախոյ *«եզան և խոյի նման մռայածին մի կենդանի» Պոմ. աղէքս.* խոյեաձ *կամ* խոյանիճ *«խոյեր» Մխ. ապար.* խոյամիթ *կամ* խուամիթ *«մեծ կամ ոչխարի նման քիթ ունեցող» ԱՒ.* խոյեղջիւր *«խոյի եղջիւր ունեցող» ԱՒ։*

ՆՀԲ (ոչխար բառի տակ) լծ. Թրք. qoyun *«ոչխար»։ Մորթման* ZDMG *26, 563 իրաւ է կցում բևեռ.* huzi, *հյ.* խոյ, ոչ-խար, *Թրք.* qoč *«խոյ» և* quzu *«գառն»։ Պատկ. Փորձ 1880 մարտ, էջ 94 արևել. Թրք. և չաղաթ.* قوی qoy *«ոչխար»։ Տէրվ.* Altarm. *104* խոյանալ *համեմատում է զնդ.* su *«արագել» ձևի հետ։ Մասեաց աղաւնի 1864, էջ 29* խոյ *բառը* xoy *հնչել համարում է ռամիկ և պահանջում է* ճոյ, գոյ, հաճոյ *են ձևերի համեմատ կարդալ* խo։ *Հիւնք.* խոճ *«կերակուր» բառից։* Jensen IF Anz. 14, 51 *հաթ.* x, xa (=xoji)։ Pedersen *տե՛ս տակը ՓՈԽ։*—Karst, *Յուշարձան 419 և 427 Թրք.* qoy, qoč, qoyun, *Մարտիրոսեան ՀԱ. 1926, 374* խոյանալ=*կամիս.* ḫuij -a-mi *«խոյանալ, վազել» բառի հետ։*

ԳԻՒ.—Ամէն տեղ ջնջուելով՝ փոխանակուել է Թրք. قوچ qoč *(խոչ, ղոչ) հոմանիշով. պահում են միայն Մկ. Ոգմ.* խու *«խոյ», որից ածանցուած է* խոնձագ *Սս. «երկամեայ արու ոչխար» (իբրև* խոյ-ձագ*)։*

ՓՈԽ.—Lag. Urgesch. *734 համարում է Թէ Թալմուդի մէջ մտած Թրր.* כוי kōy *օտարազգի բառը հայերէնից է։ Նոյնը կրկրնում են նաև* Lag. Arm. Stud. *§ 1002 և Հիւբշ. 305։*—Pedersen KZ 40, 200, ZDMG *57(1903), էջ 561 և Հայ. դր. լեզ. էջ 179—185 մի ընդարձակ քննութիւն ունի բառիս փոխառեալ ձևերի վրայ։* Pedersen *նախ հայ բառը համեմատելով իվ.* cit, cetnait *«ոչխար» բառի հետ՝ հանում է հնխ.* qhoti *ձևից։* Խոյ *անցել է Թուրք լեզուներին՝ ուղ.* *koji *և հյց.* *kojin *ձևերով. առաջինից յառաջացած է Օրխանեան արձանագրութեան* koi *«ոչխար» բառը, իսկ երկրորդից՝ օսմ.* qoyun *«ոչխար», որից էլ մոնղոլ.* xoni, xonin, *մանչու.* honin, *Թունգուզ.* koŋin. *(Будаговъ 2, 97 դնում է մոնղոլ.* xoy *«ոչխար»)։ Հնխ.* qhoti *ձևի մօտ կար նաև* qhotiu *ձևը, որից յառաջացաւ հյ.* *խոչ, *որ յետոյ կորաւ։ Այս* *խոչ *բառից են փոխառեալ օսմ.* qoč *«խոյ», որից էլ մոնգոլ.* xuca, *մանչու.* kôča, *Թունգուզ.* kuca: *Հայ.* *խոչ *առանալով և յօդը և սրա առաջ չ ձայնը կակղելով՝ ձևացաւ* խաչն<*խաչն. *իսկ* խ *և* ար *մասնիկներով* *խոչխար>*հոչխար>*ոչխար։ *Կորած* *խոչխար *ձևից են փոխառեալ չաղաթայ.* kočkar *և արևել. Թրք.* قوچقار qočqar *«խոյ»։ Կովկասեաններից աւար.* kui, *կազիկում.* ku *«ոչխար» (աւելացնենք նաև կումուկ.* koi *«մաքի») կա՛մ ուղղակի հայերէնից են և կամ Թուրքերէնի միջնորդութեամբ։ —Ըստ իս մատնանշուած բառերի մեծագոյն մասը պատահական նմանութիւն միայն ու-*

նխ. հյ. ոչխար բառը կովկասեանններից փոխառեալ լինելով՝ ինքնին ջնջւում են սրա վրայ հիմնուած ենթադրութիւնները և qoč-qar ևն ձևերի փոխառութեան տեսութիւնը։ Թրք. qoyun «ոչխար» բառի համար էլ համմտ. չին. 羊羊 kao'-yang² որ է «գառնուկ»։

ԽՈՅԶ, ի հլ. «փնտռտուք, որոնում, զննութիւն» Ագաթ. Ոսկ. Սեբեր. որից խուզել «որոնել, փնտռել, պրպտել» ՍԳր. Ոսկ. Սեբեր. «արծարծել, գրգռել» Մեսր. եր. Նար. խուզակ Ոսկ. մ. բ. 7. խուզական Սեբեր. խուզարկ Ոսկ. երր. ժա. խուզարկու Դաս. ե. 14. խուզումն Ոսկ. յհ. բ. 39. հետախոյզ Պզատ. փիլ. մաներախոյզ Նար. մաներախուզիւ Խոր. դատարկախոյզ Սամ. եր. բազմախոյզ Ոսկ. հռ. և ա. կոր. ընդվայրախոյզ Ոսկ. ես. ժամաճակախոյզ Օրբել. իրախոյզ Պիտ. լեռնախոյզ Փարպ. խուզախնդիր Լծ. պրպմ. 627. նոր գրականի մէջ խուզարկել, խուզարկիչ. խուզարկութիւն, հետախուզութիւն ևն։

ՆՀԲ լծ. յն. ἐξέτασις, լտ. quaestio, inquisitio:—Brosset JAs. 1834, *369—405* լծ. խեժ, խոյզ, ճոյզ։ Հիւնք. յոյզ բառից։ Karst, Յուշարձ. էջ *428* ՔՔր. is, ez, az «հետք, որոնում», *430* ՔՔր. köz, göz «տեսնել, փնտռել»։

+**ԽՈՅԹ** «կոկորդիլոս» տե՛ս Խուէ։

ԽՈՅԻ «զոպայ բոյսը» Բժշ. ունի միայն ՀԲուս. § *1111*։

+**ԽՈՅԼ** (ի հլ. բստ ՆՀԲ, բայց առանց վկայութեան) «ուռեցք, պալար, խաղաւարտ» Շիր. Ստեփ. լեհ. գրւում է նաև խոլ, որից խոլային «ուռած» Մխ. բժշ. և խոլխնցգետի «խնցգետնի վէրքը» Վրք. Հց. Բ. *446*. այս արմատից է կազմուած նաև խուլիկ «մի տեսակ ժանտախտ» Սամ. աննց. *104*. սխալմամբ (և այլ տառերը բոլորգիր գրութեան մէջ շատ մօտիկ գրուելով) կարդացուած և գրուած է խովիկ, որ իբր նորագիւտ բառ մէկ անգամ գտնում եմ գործածուած Ուռհ. էջ *46* «Զկնի այնր բարկութեան՝ անկանէր ցաւ յերկիր, որ անուանեալ կոչի խովիկ, և անցոյց զբազում գաւառս և երթեալ հասանէր մինչև ի Սեբաստիա. և ցաւն այն երևէր յայտնապէս ի մարմինն և ի գառնութենէն ո՛չ ժամանէին խոստովանութեան և հաղորդութեան»։ Թէ այս բառը պէտք է կարդալ խուլիկ, հաստատում է Սմբ. պտմ. *44*, որ նոյն ժանտախտը նկարագրելով՝ գրում է. «Զհետ այն բարկութեանն ցաւ անկանէր՝ որ անուանէր խոյլիկ. և երևէր յայտնապէս ի մարմինն. և ի գառնութենէն ո՛չ ժամանէր (հիւանդն) հասանել հաղորդութեան, այլ առժամայն խեղդէր ցաւն զմարդ և զանասուն»։ Ժանտախտով վարակուած հիւանդի բոլոր աւշային գեղձերը ուռչում են, որից էլ հիւանդութիւնը կոչուել է խուլիկ. ուստի խովիկ ձևը ջնջելու է, թէև Գ-ի իբր գաւառական բառ ունի խովիկ «ժանտախտ», որ թիւրիմացութեան արդիւնք է (տե՛ս իմ Հայ. նոր բառեր հին մատ. Ա *191*, Բ *296*)։ Ունի նաև Քաչունի, հտ. *2*. էջ *101*, որ պէտք է ջնջել։

=Բնիկ հայ բառ. ցեղակից լեզուները ներկայացնում են հետևեալ ձևերը. յն. κήλη, ատտ. κᾶλη «ուռեցք, փուշտանկ, գոմէշի սապատը», κηλήτης, ատտ. καλήτης «փուշտանկաւոր», κηλάς «հնդկական մի թռչուն՝ ահագին խածիով, leptoptilus argala L», հհիւս. haull, անգսք. hēala, հբգ. hōla, հսլ. kyla «փուշտանկ», ռուս. кила, սերբ. kīla «փուշտանկ, ծառի վրայ խոյլ», որոնց միացնում են նաև լտ. culus «յետոյք», ֆր. cul, իռլ. cūl, կիմր. cil, բրբտ. kîl «կռնակ, թիկունք», սանս. kūla «վերջապահ». և սլաւականից փոխառութեամբ լիթ. kuilà, լեթթ. k'ila, հպրուս. cuylis, ռում. chilâ «փուշտանկ»։ Սրանց նախաձևը գրում է qwā-(ə)lā- «ուռեցք, խոյլ», սլաւականինը qaul-, յունարէնինը kāwel-, kəwel-, kəul-. kūl-. Հայերէնի համար կարող ենք դնել qhel- նախաձևը (Ernout-Meillet 231, Boisacq 448, Berneker 677, Pokorny 1, 333):—Ա.Ճ.

Հիւնք. խոյր բառից։ Karst, Յուշարձան *404* գլուխ բառի հետ՝ սումեր. gal, galu, gulu «մեծ, բարձրացնել, գլխաւոր»։ Petersson KZ *47*, *277* ռուս. шулята «ամորձիք», սանս. khola- «մրջնոց դէզ», լիթ. kūlỹs «խուրձ» բառերի հետ՝ հնխ. qholio- ձևից։

*ԳԻՒ.—Ապլ. խույլ «ուռեցք», Ախց. Երև. Կր. Հմշ. Մրզ. Ննխ. Շմ. Պլ. Ջղ. Սեբ. Ալմ. Տփ. խուլ և Ակն. Խրբ. խօլ «գեղձ», Գոր. Ղրբ. խիլ «անհարթ, խորտուբորդ, դարուփոս», որից խուլուքոյքն «անհարթ, ծուռումուռ», խլխլոտ «վրան խուլեր, գեղձեր ունեցող (միս), անհարթ, մաղմզուքներով լի (թել)», խլխլոտիլ «մարմնի վրայ խուլեր դուրս գալ», բալուխուլ «աղիքների մօտ խլխլոտ մասեր՝ որ խորովելով ուտում են», Ղպ. խիլ «ծառերի վրայ զոյացած ուռեցք», խլխլոտ «ուռեցքներով ծածկուած (ծառ)», Առն. Հճ. խիլ «մսի մէջ գոնուած խուլերը»։

ՓՈԽ.—Ն. ասոր. xul «գեղձ, խոլլ. 2. գեղձախտ, золотуха» (Калашевъ, Айсорско-Русск. слов.)։

ԽՈՅՍ. արմատ առանձին անգործածական. ձեով աւում է խոյս տալ «փախչիլ». ՍԳր. Ագաթ. խոյս առնուլ Մամիկ. որից խուսել «փախչիլ» ՍԳր. խուսափիլ ՍԳր. Եզն. Ոսկ. ես. Սերբր. (երկուսը միասին գործածուած խուսէ խուսափէ Ոսկ. եփես. 925). խուսափանիմ Եզնկ. ժէ. 21. խուսափուկ Վեցօր. 184. լեռնախոյս «լեռը փախած (աւազակ)» Փարպ. կրկնութեամբ խուսխուսել Սերբր. 186. նոր գրականի մէջ խուսափուկ, խուսափողական, անխուսափելի, անխուսափելիօրէն են։

Նշ Բ խուսել մեկնում է «ի մի կոյս մեկնիլ», իսկ խուսափիլ «խոյս տալ ապ յափոյ կամ խարխափելով կամ ճապաղելով»։ Հիւնք. խոյզ բառից։ Bugge IF 1, 447 հնխ. skéuko- ձևից. հմմտ. գերմ. scheu, մրզ. schiech, հրզ. *scioh, անգլսք. scéoh «երկչոտ» են։ Karst, Յուշարձան 408 սումեր. uš «հետապնդել, վանել» ussa «հետևիլ»։ Ղափանցեան, Ինստիտ. տեղեկ. 2, 95 հանում է խուրշիլ բայից։

*ԽՈՅՐ, ի հլ. «արևելեան թագ, պսակ, փաթթոց (թագաւորի, իշխանի և քահանայի)» ՍԳր. Լաբուբ. 31. որից խոյրագիր Ադաթ. խոյրագործ Մագ. խոյրաճանդակ (նրբագիւտ բառ) Լաբուբ. 32. խոյրակերպ Ուռպ. խե. խոյրարար Խոր. ապախուրել «գլուխը բանալ» Ղեւտ. ժ. 6, իա. 10. իսկ արտախոյր. արտախուրակ, արտախուրել են բառերի վրայ տե՛ս առանձին։—Ինչպէս տեսնում է, ածանցների մեծ մասի մէջ ոյ>ու ամփոփման օրէնքը չէ՛ գործադրուած։

=Հիւս. պհլ. *xōδ ձևից, որի հետ նոյն են զնդ. xaoδa- «սաղաւարտ», հպրս. xauda- «գլխարկ», պրս. خوی xōi «սաղաւարտ», աֆղան. xōl, օսս. xodä, xūd «գլխարկ, գդակ, խոյր» (Horn § 512), միջ. xūlá «գդակ»։ Իբրև պարթևական իշխանական տոհմին յատուկ մի առարկայ՝ փոխառեալ է նաև ուրիշ լեզուների մէջ. ինչ. ասոր. ܟܘܕܐ xauda «խոյր», արաբ. خوذ xūδa «սաղաւարտ» (Կամուս, Բրբ. Բրգմ. Ա. 726) և նոյն իսկ գւռ. պրս. خود xōd «սաղաւարտ», որ գործածում է Ֆիրդուսի՝ փոխանակ բնիկ պրս. خوی xōi ձևի։ Իրանեան բառը կցւում է լտ. cūdo «թաղիքէ սաղաւարտ» բառին և բոլորը միասին ծագում են հնխ. sqeu- «ծածկել» արմատից (Walde 207, Meillet MSL 18, 64):—Հիւրշ. 160։

Նշ Բ լծ. արաբ. և պրս. fiirap, խօրէ, խօյ, խօրտ, որոնց մէջ առոյգ է միայն վերջընթեր բառը։ Böttich. Arica 19, 48 խօսելով յն. κίδαρις հոմանիշի մասին, հաւանական է գտնում որ հյ. յ=t, իսկ եբր. כתר keṭer գնում է Արևելքից փոխառեալ բառ։ Lag. Ges. Abhd. 207, 29 յն. κυρ-βασία «պարսկական խոյր»։ Ուղիղ մեկնեցին միևնոյն ժամանակ Müller SWAW 84 (1877), էջ 217 և Տէրվիշ. Altarm. 75—76, որոնք համեմատում են հպրս xauda կամ զնդ. xaoδa և պրս. xōd: Canini, Et. étym. 200 յն. κάρα «գլուխ» բառի հետ. իսկ τιάρα փոխառեալ է հայերէնից կամ փռիւգերէնից։

ՓՈԽ.—Վրաց. ხვიო խվիրի կամ ხოიო խոիրի «պսակ, խոյր» (Երեմ. ծբ. 18) փոխառեալ է հայերէնից, ինչպէս ցոյց է տալիս վերջաձայն ր՝ փոխանակ d:

ԽՈՆԱՍՏԱՆ «Պարսից թագաւորական պալատը կամ տեհանը» Եզիշ. բ. էջ 32 (ներգ. ի խոնաստանի). ունին միայն ՋԲ, ՓԲ և ԱԲ։

ՋԲ դնում է բառ պարսկերէն։ ԱԲ մեկնում է «օրհնեալ», իբր պրս., որով

անշուշտ հասկանում է պրս. خشتان xunistan *«օթևնեալ»։* Lag. Arm. Stud. *§ 1004 դրաւ պրս.* خان xān *«իշխան»+* stān *ձևերից, իբրև* خانستان xānistān *«իշխանների տեղը»։ Հիւբշ. 160 դնում է *պհլ.* xvānastān, *առանց այլ բացատրութեան։ (Անտարակոյս է որ բառս փոխառեալ է պահլաւերէնից, բայց չիշեալ պհլ. անյայտ ձևը ոչինչ չի ասում)։ Փորթուգալ փաշա, Եղիշէ 241 պրս.* خشتان xunistān *«երջանիկ, որ հաւանօրէն արքայական ապարանից անունն էր»։ Թիրեաքեան, Արիահայ բռ. 182 պրս. պհլ.* خاف xan=ᵓxāna *«տուն» բառից։*

ԽՈՆԱՐՀ, ի–ա *հլ. (յետնաբար նաև ի հլ.) «ցած, վար, տակը. 2. ծնրադրեալ, կորացեալ. 3. համեստ, հեզ, հլու. 4. յետին, նուաստ, աղքատ» ՍԳր. Ագաթ. Ոսկ. Մծբ. որից ի խոնարհ «ցած, դէպի ներքև» ՍԳր. Սեբեր. Ոսկ. ես. և յհ. ա. 44. բ. 1.* **խոնարհիլ** *ՍԳր. Ագաթ.* **խոնարհեցուցանել** *ՍԳր. Ոսկ.* **խոնարհութիւն** *ՍԳր. Ագաթ. Ոսկ. մ. բ. 11.* **խոնարհաբար** *Ոսկ. յհ. ա. 39, բ. 3, 24.* **խոնարհագնաց** *Վեցօր.* **խոնարհագոյն** *ՍԳր. Եզն. Ագաթ. Մծբ. Ոսկ.* **խոնարհամիտ** *Ոսկ. յհ. բ. 27. Մծբ.* **խոնարհաճակ** *Վեցօր. նախախոնարհ Մանդ. գրուած է* **խոնճաճ** *Տիմոթ. կուղ, էջ 116։*

Հներից Համամ. քեր. 268 **խոնաւ** *բառի հետ միասին հանում է* **խոն** *(?) նախդիրից։ ՆՀԲ լծ. Թրք. (իմա՛ պրս.)* kanār *«եզր» բառից։* Müller SWAW 42, 255 Vendidad XIX 18 *և I 35—36 յիշուած* xnaŋ̊aiti- *(արմատը քան* Justi, Zendsp. 91 xnaŋ̊- *«խոնարհիլ, պաշտել»)* ձևից դնում է *xnaŋ̊ra, *որից էլ հանում է հյ.* **խոնարհ**։ *Այս մեկնութիւնը ընդունում է* Justi *(անդ), մերժում է* Lag. Arm. Stud. *§ 1005։ (Այժմ* Bartholomae 533 xnaŋ̊aiti- *դնում է իգական մի պարիկի յատուկ անուն, անյայտ առուգաբանութեամբ և թերևս ոչ-իրանական բառ)։ Տէրվ. Նախալ. 71* **խուն, խոտ**, *հբգ.* hauen *«կոտորել, կտրել»,* heu *«խոտ», գոթ.* huns *«խոնարհ, խուն», հսկ.* kovatī *«կտրել» ձևերի հետ հնխ.* ku, kun, kud *«կտրել, կոտրել» արմատներից։—Հիւնք.* **խոռան** *բառից։ Ղափանցեան* 3BO *23, 360 իրան.* *xvan-aθrā? *ձևից։* Nyberg Hilfsbuch *2, 133—134 դնում է իրան.* *avana -arθa *«ցածր տեղ»>**onārh>*xonarh. *առաջին մասը կազմուած է իբր* *ava -na *(համմա. սանս.* avani *«գետի յատակը, երկիր»), որի հետ նոյնն է տարբեր մասնիկով* *avara-> *or> *հյ.* **խոռ** *(համմա. զնդ.* avarə, aora *«ցած, վայր»)։ Նոյն տարրերով են կազմուած պհլ.* xorsand *«գոհունակ, համեստ» և պրս.* خرسند xursand *«սակաւապետ», իբր* xōr+sand *(=սանս.* čhanda *«փափագ, կամք»)։*

Գիմ.—Ջղ. Վն. **խոնար**, *Ալշ. Ախց. Երև. Խրբ. Կր. Մշ. Ննխ. Պլ. Սեբ. Սչ.* **խօնար**, *Տիգ.* **խօնmր**, *Տփ.* **խօ'նար, խո'նար**, *Շմ. Ոզմ.* **խունար**, *Զթ.* **խունոյն, խունորն, Սլմ. խոնարխ, Մրղ. խօնարխ, խօնարհ։**

Փոխ.—Կարո՞ղ է գնչ. k'arno *«խոնարհ» փոխառեալ լինել հայերէնից.* k' *կարող է փոխանակել խ ձայնը.—*Paspati *այս բառը հանում է յն.* χάμαι *«հող» բառից, որ շատ անյարմար է։*

ԽՈՆԱՒ *(յետնաբար ո, ի հլ. ՆՀԲ դնում է նաև ու հլ. բայց առանց վկայութեան) «նամ, ջրոտ, թաց» Կոչ. «թացութիւն» Եղիշ. խոր. որից* **խոնաւութիւն** *Յոր. բ. 16. Եզեկ. է. 17.* **խոնաւանալ** *Վեցօր.* **խոնաւական** *Եզն. Ոսկ. մտթ.* **խոնաւալից** *Եփր. թգ.* **խոնաւակերտ** *Վեցօր. 147.* **խոնաւայոյզ** *Վեցօր. 115.* **օդախոնաւ** *նար.* **խոնաւաշափ** *(նոր բառ). գրուած է նաև* **հոնաւ, հոնաւալ**։

Հներից Համամ. քեր. 268 **խոնարհ** *բառի հետ միասին հանում է* **խոն** *(?) նախդիրից։ Հիւնք. պրս.* خوناب xūnāb *«արցունք» բառից (որ բուն նշանակում է «արեւնաջուր»)։ Թիրեաքեան, Արիահայ բռ. 183 պրս.* خنک xunuk *«ցուրտ, պաղ, սառն» բառից։ Պատահական նմանութիւն ունին քրդ.* **հոնըք** *«զով» Ղուկ. ժզ. 24 և* xunāw *«ցօղ», որ*

Justi, Dict. Kurde *166* պրս. xūnāba «արտասուք, արիւն-արցունք» բառից է հանում։

Գիր.—Մշ. խօնաւուտեն «խոնաւութիւն», խոնաւ *Մկ.* «անձրև». «Աշուն էր, երկինք ամպեր էր, խոնաւ էր գալու» (*Ժղ. երգ. Աճէմեան, Մաղկ. 64*)

ԽՈՆՃ «կապ, խրաց». *գիտէ միայն Տիրոյեան, Հանրագրութ. 434։*

Արդեօք շփոթուած չէ՞ թրք. qonǰ, *Պլ. ռմկ.* խօնճ «կօշիկի ճիտք կամ վիզ» *բառի հետ։*

ԽՈՆՋ «վայր, ցած». *մէկ անգամ միայն գործածել է Եւս. պտմ. 166 «Որք միանգամ էին յեօթն և ի տասնամենից և ի խոնջ»։ (Ն2Ր գրում է* խոնճ. *տպուած է* խոնջ)։—*Ա՛ր այս նշանակութեան վրայ աւելացնում է նաև «մէջը» նշանակութիւնը, որի համար անշուշտ որևէ աղբիւր ունի իր առջև. բայց այդ աղբիւրը անյայտ է։—Ջ՛ր բնաւ չէ յիշում այս բառը։*

Ն2Ր հանում է խունջ, *այն է պրս.* خنک kunǰ «անկիւն» *բառից։* Karst, *Յուշարձան 428 ՓՓր.* öz, üz «ներքին»։ *Պատահական նմանութիւն ունի թրք.* چونج qonǰ *(ռմկ. խօնճ) «կօշիկի ճիտքը՝ վիզը»։*

ԽՈՆՋ «յոգնած» *Յուդթ. ժգ. 2. «յոգնութիւն» 3Հ. կթ. 222. որից* խոնջիլ «յոգնիլ» *Սիր. զ. 20. Ագաթ.* խոնջութիւն «աշխատանք, աշխատասիրութիւն» *Ոսկ. եփես. բ.* խոնջական *Պիտ. փիլ.* խոնջանք *Մագ.* խոնջալատակ *Վրք. հց.* խոնջումն *Մագ.* անխոնջ *Պիտ. փիլ.* ճգնախոնջ *Ոսկ. համբ.* Բռնախոսնջ ճառընտ. *գրուած է նաև* խոնճիլ։

Տէրվ. Նախալ. 72 յն. κονέω, κάμνω *ձևերի հետ հնխ.* çan, çam «խոնջիլ» *արմատից. Հայերէնում ջ մասնիկ է, ինչպէս մէջ։ Հիւնք.* խնջոյք *բառից։* Karst, *Յուշարձան 425* յոգն *բառի՞ց է հանում, թէ ունջ բառից։ Ղափանցեան, Տեղեկ. ինստիտ. 2, 89 միևնոյն.* šur «յոգնիլ» *բառի հետ։*

Գիր.—Աբր. Խրբ. Մն. խօնջէնալ. *Տիգ.* խօնջէնիլ «յոգնիլ»։

ԽՈՆՋԱՆ «վարտիքի կապը» *Վրդն. դան. (ունի գրծ.* խոնջանով *ձևով). այս յոգնակին է եղիշ. էջ 17* խոնջանուն*ք. գրուած է նաև* խոնճան *Ոսկիփ։*

Ն2Ր «որպէս թէ ծայրք ղենջակի»։ *Հիւնք. պրս.* խունջէ *(որի ի՛նչ լինելը յայտնի չէ)։*

Գիր.—Ջղ. Սլմ. խոնջան, *Դոր. Երև. Խրբ. Ղրբ. Մշ. Մրղ. Շմ. Ռ. Սեբ. Տփ.* խօնջան, *Մկ. Ոզմ. Վն. Տիգ.* խօնջմն, *Ալշ.* խունջան, *Հճ.* խունջօն, *Զթ.* խունջօն, խունջոն, *Ասլ.* խըջը, *Ագլ.* խի՛նջմն։—*Նոր բառեր են* խոնջանդառն, խոնջանացիչ, խոնջանզործի։

Փոխ.—Վրաց. ხონჯარი խոնջարի, ხვანჯარი խվանջարի «խոնջան», ხვანჯი խվանջի «կապ»։ *(Վերջինս մտածել է տալիս թէ արմատն է* *խոնջ «կապ» *և թէ հայերէնը ածանցուած է կովկասեան մի ձևից)։—Ըստ Արամ Գնդունիի գործածական է բառս նաև Հաճինի թուրքերի մէջ* xunǰan *ձևով։*

ԽՈՆՆՈՒՆԴ. *անսովոր բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Գիրք Թղ. 167 «Թևպէտ և ծառայք արքայից արքայի եմք, զհաւասար զերուսաղէմի ունիմք և կալցուք։ Զի թէ ցայժմ խոնսունդ էին Տեարք, այժմ որչափ ևս առաւել երանելի եմք, որք յարքայից արքայի ծառայութեան հասեալ եմք»։ Անշուշտ պահլաւերէն բառ է, իմաստը անյայտ. համմ. Ուիտանէս, հտ. Բ. պլ. խէ, էջ 76—77։*

ԽՈՆՐԿՅԻ. *անսովոր նշանակութեամբ բառ, որ երկու անգամ գործածում է Անսիգք, էջ 5 և 57 «Յաղագս սովորական և խոնըրկցի իրանեղոյ և անսիգնոյ՝ զոր սահմանած էր յԱնտիոք և յերկիրն։ Յաղագս այլևս սովորական և խոնըրկցի անսիգնոյ և բլայթնոյ և իրաւանեղոյ, որ սովորութեամբ ի գարպասն լինի»։ —Թուի թէ նշանակում է «սովորական, հասարակ, գործածական»։*

ԽՈՇ. *անծանօթ բառ՝ որ իբր բացատրութիւն մատ նոյնպէս անծանօթ բառի՝ տալիս է Բառ. երեմ. էջ 205։*

***ԽՈՇԱԿ** «դատարկ հասկ». *մէկ անգամ գործածում է Դանիէլ ասորի, Մեկն. լե սաղմոսի.—«Իբրև զժանգ ցորենոյ և իբրև գխոշակ անդաստանաց, այնպէս գուիի հասկ հոգւոյն». ունի միայն ՀՌուս. § 1113։*

=Պլ. xošak «հասկ» *բառից, որի հետ*

նոյն են պրս. خوشه xoša «ողկոյզ թէ խաղողոյ և թէ արմաւոյ. 2. հասկ ցորենոյ, գարւոյ և այլոց արմտեաց», خوشای xošāy «ողկոյզ, հասկ», քրդ. ūši, vašī, աֆղան. vaẓai, բելուճ. hošag, որոնք նոյնպէս նշանակում են «հասկ» (Horn § 489)։ Բոլորն էլ ծագում են պհլ. պրս. xušk, Հպրս. uška, զնդ. huška- «չոր» բառից.—ակ վերջաւորութիւնը ցոյց է տալիս որ փոխառութիւնը հին է։ Հայ. և իրանեան բառերը թէև նշանակութեամբ փոքր ինչ տարբեր են (մին դատարկ, միւսը ամբողջ հասկ), բայց այդ երկուսի մէջ մի տեսակ կապ է հաստատում Սամդիի Գուլստանի յառաջաբանի հետևեալ հատուածը.

هركه مزرع خود بخورد ع وزن
وقت خرمنش خوشه باید چید
Har ki mazrū'i xūd bixorad xavīd,
Vaqt-i xarman-aš xōša bāyad čīd.

Ով որ ցանքն ուտէ հղի ժամանակ,
Հասկ կհաւաքէ կալի ժամանակ.

ուր «հասկ» (xōša) ասելով հասկացւում է «քաղելու ժամանակ գետին թափուած հասկերը՝ որ աղքատներն են հաւաքում արտերից»։—Աճ.

ԳԻՒ.—Ղրբ. խո՛շակ «տկար մնացած, լաւ մէջ չկապած, չաճած (ցորեն, գարի, կաղին ևն)»։

ԽՈՇՈՇ «մարդասպան» Արծր. Հրտր. Պատկ. էջ 227. որից խոշոշել «չարչարելով սպանել» Պիտ. Մագ. մարդախոշոշ Բ. մակ. բ. 23. Ոսկ. մտթ. ևենգախոշոշ ևւագր. 78. աստուածախոշոշ Տօնակ. հայրախոշոշ ԱՒ։

Հիւնք. էջ 82 հանում է յօշյօշ բառից։

ԽՈՇՈՏ «չոր խոտ, խոիւ» Ոսկ. ես. 119 և Դէ. ես. գրուած նաև խորշոտ Ոսկ. ճառք, էջ 86 «Եւ ապա ի խորշոտոյն ելեալ իժ՝ բուռն հարկանէր զձեռանէ նորա»։

ՆշՒ հանում է խոշիւն բառից։ Պատահական նմանութիւն ունին պրս. xāšak, xāsāk, xāša, xāšuxaš xarsa «չոր խոտ, խոիւ»։

ԽՈՇՈՐ, ի հլ. «կոշտ, անհարթ, խորտուբորտ, հաստ» Պղատ. Նիւս. Փիլ. Պիտ. «թանձր, կոպիտ, հպտ (զգեստ)» Ոսկ. Բ. կոր. «թաւ, կոշտ, հաստ (ձայն)» Սարգ. Սահմ. Պրպմ. 238. «խիստ ճղնակաս, (կեանք)» Տաթև. ձմ. ժզ. «ցուրտ, սառն» Տիմոթ. էջ 324 (տե՛ս իմ Հայ. նոր բառեր Տիմոթ. Կուզի մէջ, էջ 82), որից խոշորագոյն Կորիւն. Ոսկ. Ագաթ. խոշորավար Եւագր. խոշորեցուցանել Ոսկ. Ա. կոր. խոշորութիւն Ոսկ. յհ. ա. 3, Բ. կոր. ժզ. Վեցօր. 97. յետնաբար «սխալ», համմտ. Վրդն. սղ. յոչ. (Ամն կրկին էր գրած, սրբեցին. զխոշորութիւն եօթանասունսն «Տարին երկու անգամ էր գրած, սխալը ուղղեցին»).—անխոշոր «որ կոպիտ չէ» ԱՒ. խոշորշի (մասնիկի համար համմտ. լայնշի, բոլորշի) Փիլ. իմաստ. էջ 94 (նորագիւտ բառ).—խոշոր՝ գրուած է նաև խաշար Փիլ. Բրս. հց. Մագ. Թղ. 204, խաշոր Տիմոթ. կուզ, էջ 32 (ճանապարհի անհարթութեան համար ասուած)։—Գաւառականների և արդի գրական լեզուի մէջ խոշոր նշանակում է «մեծ, աւելի՝ կոպիտ կերպով մեծ»։ Բառիս հետ նոյն են խոժոռ (տե՛ս այս բառը առանձին), խշուր «փշրանք, մանրուք» ՀՀԲ. «փոքր, սակաւ, քիչ» Բառ. երեմ. էջ 142 և 146. «բոյսերի սէզ կամ ճիլ՝ որով փաթաթում են նոր պատուաստուած տունկերը» Վասկ. 130, 138 (երկուսն էլ գրծ. խշրով, որից էլ Վաստակոց գրոց հրատարակիչը՝ էջ 247 և ՀԲուս. § 998 դնում են ուղ. խշր! մինչդեռ խշուր ձևը գտնում ենք հենց գաւառականների մէջ). խշրել «փշրել, մանրել» ՀՀԲ. «կոխել, փշրել» Բառ. երեմ. էջ 146. թերևս նաև խեշերաճք «բեկորներ» ՅՀ. իմ. պաւլ։

=*Բառիս հետ նոյն են վրաց.* ხოშორი **խոշորի** *կամ* ხუშური **խուշուրի** «ոչ մեծ, ոչ փոքր, այլ միջակ մեծութեամբ. 2. բռնկցնելու նիւթ, տաշեղ, կպչան, 3. քարի մանր կտորներ, խիճ. 4. ո՛չ հասած ոլորած թել», ხვოშერი **խվիշերի** «կտոր կտոր կոտրտած», ხვოჟორი **խվիժիրի** «խոշոր ջարդած կտորներ, աղի կոտճ են (=պլ. խոշոր աղ)», დახვოჟრვა **դախվիժրվա** «քար կամ աղ կոտրատել», წახვოჟრა **ծախվիժրա** «ճանապարհի համար քար ջարդել», սվան. խոշա «խոշոր, մեծ, երէց», պրս. خشار xušāra «փշրանք, որ ի սեղանի ի կերակրոյ և ի հացէ թափի»,

արաբ. خشار xušār, خشارة xušāra «սեղանից աւելացած փշրանք, առհասարակ ուտելորդ և դէն դցելու բան» (Կամուս, Բրք. Բրգմ. Ա. 839). خوشاب xarāša «տաշեղի նման բաժիժուք», خوش xaraš «մանրուք իրեր» (Կամուս, Բրք. Բրգմ. Բ. 325). բայց յայտնի չէ թէ ի՞նչպէս պէտք է կապել այս բոլորը իրար հետ և ո՛րն է նրանց նախնական աղբիւրը։ Հիմնական նշանակութիւնն է անշուշտ «ջարդուած կտորներ», ինչ որ յարթաբերական գաղափար է և կարող է բմբրռնուել բուն տեղւոյն «մանր, փշուր, փշրանք» և կամ «խոշոր, մեծ կոճղներով». այս վերջինից էլ կրխի «կոպիտ, կոշտ կամ անհարթ (խոժոռ)» գաղափարը։—Աճ.

Հիւնք. խոշոր բառը հանում է խեւրևէշ «մանր փող» բառից։—Մառ, Новый Востокъ 1924, № 5, էջ 319 կցում է սվան. խոշա և վրաց. խոշոր(ի) բառերին։

ԳԻՒ.—Ախց. խրբ. կր. Ննխ. Պլ. Ռ. Աշ. խօշօր, Տիգ. խօշուր, Ակն. Հմշ. խօշէօր, Սեբ. խօշէր, Ասլ. խէօշօ՛ր, Զթ. խիւշիւյ, խիւշիւր, Հճ. խուշոյ, Տփ. խօժօր (տե՛ս և խոժոռ բառի տակ). այս բոլորը նշանակում են «մեծ, խիստ մեծ» և այս իմաստով էլ ընդունուած է արդի գրական լեզուի մէջ. որի համեմատ էլ կազմուած է խոշորացոյց բառը։ Շատ հետաքրքրական ձև է Ղրբ. խա՛շար «լայն ծակերով հիւսուած (շոր, քամիչ ևն)», որ ներկայացնում է հին հայերէնի խաշար գրչութիւնը։—Այս բառից կազմուած նոր ձևեր են խոշորիկ, խոշորկեկ, խոշրիլ, խոշրուկ, խոշրուկապուր, խոշորտաճիկ, խոշրտուկ, խոշրուճիկ, խոշրուճիկոտ ևն։—Նոյն արմատին յարակից ձևեր են նաև՝ խշուր Երև. Լ. Ղզ. Ղրբ. «ցախի՝ փայտի մանր կտորներ՝ որ կպչան են անում», Ղրբ. «պտուղ ուտելու ժամանակ՝ հաւաքուած կեղևները և կրճեպները», Ալշ. Մշ. «փշրանք», խշուր-մշուր, խշուր-փշուր «խոխ, փայտի կտորտանք». խշուր-փշուր լինել Ղզ. «փշրուիլ», խշրել Ալշ. Մշ. «մանր ջարդել», Ղզ. «փշրել, մանրել», Երև. «վատնել, փչացնել», խրշել Սվ. «մանրել», խշրիլ Եւդ. «մանրուիլ, փշրուիլ», խշրուիկ Ալշ. Եւդ. Մղ. «մանրուք, կտորտանք», խշրտուիլ Վն. «փշրուիլ, փշուր փշուր լինել», խժռել Երև. Լ. Ղրբ. Տփ. «ջարդել, բրդել. 2. կրծել, ծամել. 3. վատնել, փճացնել», խժռաճիկ Երև. «մեծ կտորներ (ապի ևն)»։

ՓՈՒ.—Կայ կիրգիզ. көзүр «խոշոր, վիթխարի (քար)». ունի Будаговъ 2, 412. Թուի թէ պատահական նմանութիւն ունի և կամ ուրիշ ճամբով յառաջացած։

ԽՈՇՏԱԿ «խորշակ, խիստ տաք» Ցալսմ. ուրիշ վկայութիւն չկայ։

ՆՀԲ համարում է խորշակ բառի ոամկականը։

ԽՈՇՏԱԼ «կաղալ» Կոչ. 13. Տիմոթ. կուզ, էջ 135 (երկու անգամ). որից խոշտացուցանել «խղճել, խարել, վախեննալ, զգուշանալ» Տիմոթ. կուզ, էջ 142։

Նախապէս միայն առաջին վկայութիւնը ծանօթ լինելով՝ բառիս թէ՛ ձևը և թէ նշանակութիւնը անստոյգ էր. ՆՀԲ, ՋԲ և ԱԲ դնում են խոշտալ կամ խոշտանալ և մեկնում են «կթոտիլ, կաղալ»։ Նորայր, Բառ. Ֆր. 1294 ա բոլորովին ջնջում է բառս և կարդում է խաշմանալ, իմա՛ հաշմանալ։ Տիմոթէոսի յայտնութեամբ վերի ձևով առուգեց Աճառ. Հայ. նոր բառեր Տիմոթ. Կուզի մէջ. էջ 78։—Բառ. հրեմ. էջ 144 ունի խոշտալ «աղալ կամ խաղալ». երկուսն էլ սխալ են և պէտք է ուղղել «կաղալ»։

ԽՈՇՏԱՆԳ «չարշարանք, տանջանք». Նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Ուռհայեցու մէջ, տպ. Վաղարշապատ, էջ 137. որից ունինք խոշտանգել «չարչարել, խիստ տանջել» ՍԳր. Ոսկ. հս. և հյ. բ. 14. խոշտանգանք Բ. մակ. է. 1. Ոսկ. յհ. բ. 12, 37. Փարպ. (գրուած ճոշտանգանք Անան. ժմնկ. 66). դիւրախոշտանք Փիլ. իմաստ. էջ 56. խոշտանգալից Պատմ. աղէքս. խոշտանգիչ Նխ. եւ. խոշտանգումն Ճառընտ. անխոշտանգ Պատմ. աղէքս. Իրեն. հերձ. 186. գրուած է նաև խոշտանկել, խոշտանկանք ևն։

ՆՀԲ խիստ տանջել։ Գ. Փառնակ, Անահիտ 1903, 102 և Տարազ 1903, էջ 262 զնդ. xrafštraγna «Ահրիմանի չար արարածները ջնջելու գործիք, որ ամէն

զրադաշտական պիտի գիտենար գործածել»։ Թիրեաքեան, Արիահայ բռ. 183 պրս. خستن xustan *«տանջել»։*

ԽՈՇՏԱՐ *տե՛ս Խոստակ։*

+**ԽՈՂ**, ո *հլ. (յեռնաբար նաև ի հլ.) «ոտքին զարնուելու քար, փայտ, ցից, աչքի փուշ, արգելք» ՍԳր. Ոսկ. ես. 419. «ոզնիի փուշ» Նպիտ. բարոյ.=Բար. 155. «մի սեսակ վէրք» Վստկ. 168, որից խոչընդոտական Դատ. ժա. 36. նաագր. խոչընդոտոն Կոչ. խոչոտան Բուզ. 144 (որ ըստ իս գրչագրի սխալ է և ուղղելի խոչընդոտան). անխոչ «անարգել» Ոսկ. ես. խոչտոր լինել «անասունների ոտքը բան մրտնելով կամ վնասուելով՝ կաղ ի կաղ թայլելը» Վստկ. 213։*

=Ծագմամբ նոյն է խէշ, խաչ բառերի հետ՝ որոնց բուն նշանակութիւնն է «փայտ, ցից». բոլորը իրար հետ կապւում են իրր ձայնդարձ։—Աճ.

Նշբ մեկնում է իրր խոցոտիչ: Տէրվիշ. Altarm. 27 անգսք. skaga, սնս. khač «դուրս ցատկել» բառերի հետ նոյն, Նախալ. 110 սանս. khać, յն. σκάζω ձևերի հետ հնխ. skak «դուրս՝ մէջտեղ՝ երևան գլխել» արմատից։—Հիւնք. խնց բառից։

Գիհ.—Խոջ. խոշ «անպէտ փոքր փայտի կտոր»։

ԽՈՂՔՈՐ *տե՛ս Խոճկոր։*

ԽՈՊ *տե՛ս Խոպոպ։*

ԽՈՊԱԼ *«խայտալ, կայտռել» Փիլ. յովն. 603 և լիտս. 155։—Հին բռ. իրրև հոմանիշ է դնում «խաղալ, խոպալ, խայտալ, խնդալ», իսկ Բառ. երեմ. էջ 144 խոպալ մեկնում է «խնդալ»։*

Նշբ լծ. Թրք. զրվանմագ։

ԽՈՊԱՆ *(սեռ. -ի) «չբանած՝ կոշտ ու կորդ երկիր, անմշակ տեղ» Ես. ե. 6, է. 25. Մանդ. «անպիտան, խոտան» Գէ. ես. Մարթին. Դիոն. որից խոպանանալ ՍԳր. Ոսկ. յհ. բ. 19. խոպանացումն Նար. խոպանիլ Ոսկ. գծ. 578. Մարթին. Երզն. խրատ. Մագ. խոպանումն 3Հ. կթ. խոպանութիւն Կիւրղ. գնձ. յեռնաբար գրուած ունինք նաև խուպան Մանդ. էջ 46, Արձ. 956 Թուից (Վիմ. տար. ծ). խուպանիլ, խուպանեալ, խուպանումն «խանգարուիլ, ապականիլ, խոպանանալ» Ոսկր. 165, Պղատ. օրին. 176. Մագ. Թղ. 21. Օրբ. Վրք. հց. Բ. 598։*

Նշբ լծ. Թրք. եապան «վայրի» և հյ. խափանեալ: Հիւնք. անխոփ կամ խափանեալ ձևից։ Պատահական նմանութիւն ունի ասոր. ܟܘܒܢܐ kubanā *«փշոտ»։*

Գիհ.—Ողմ. խոպան, Մկ. Վն. խօպան, Խրբ. Մշ. Սեբ. Տիգ. խօբան.—(Խրբ. նշանակում է նաև «պարապ, դատարկ». օր. Խոպան խոպան ոլորուիլ. 2. «տգէտ, բիրտ». օր. Խոպան տղաք)։

Փոխ.—Քրդ. خوپان xupān *«անապատ, անմշակ տեղ»* (Justi, Dict. Kurde, *էջ 162). կայ և խոպան ձևով. ինչ. Շառակի չէ տը պու, Մալազկէրէ խոպան լը տավէ աչէ «Մի կոիւ եղաւ խոպան Մանազկերտի ձորում՝ ջաղացքի բերան» (Ազդակ 1909 թ., էջ 429), Տէրսիմի բարբառով խոպան «խոպան արտ» (Հայաստան 1917 թ. № 90), Ս. Գրքի քրդ. թարգմանութեան մէջ՝ խօփան պու «աւերեցաւ» Յայտ. ժը. 19. Ջիրա լը եէք սաթատխօփան պու (Ջի ի միում ժամու աւերեցաւ)։*

ԽՈՊԱՅՈՒ *«ոխ, վեհ կամ ճոխ». ունի միայն Բառ. երեմ. էջ 144. (առաջին բառով պէտք է հասկանալ ֆրանս. riche «հարուստ»)։*

ԽՈՊՈՊ *«գանգուր՝ ոլորուած մազ» Լաստ. որից խոպոպիք «մազերի հիւսք» Նխ. ղևտ. Խոր. Վրդն. ղևտ. և Բուզ խոպոպել «մազերը ոլորել» Ճառընտ. իբրև ածական գործածուած է Կիւրղ. Թգ. «գանգրաւոր, ծայրը ոլոր ոլոր» նշանակութեամբ (կաղանչան բոյսի համար է ասուած)։ Գրուած է նաև հոպոպիք, ինչպէս երբեմն գործածւում է նաև արդի գրական լեզուի մէջ։ Աբ ունի խոպ «ոլրած մազ» ձևն էլ, որ գտնում եմ գործածուած Տաղ. հրատ. Զօպանեան, Հայ էջեր, էջ 71 «Խոպ խոպ խոպոպին վայր վայրե նի ջոկիցն». Եթէ ստոյգ է նշանակութիւնը, կարող է ներկայացնել բառի արմատական ձևը։*

Հիւնք. յոպոպ Թռչունի անունից։

Գիհ.—Շմ. խօպօպ «գոռուզ» (մազեր).

—*Մշ.* կայ խօրօրիհ «կախուած ծամեր». *ինչ.* «Հարսներ խօրօրիհ է կախեր»։

*խոռ «ծակ, փոս, ծերպ, պարիսպի վրայ բացուած խրամ» (չունի ՆՀԲ) Լաստ. ժզ. տպ. 1844, էջ 69. «պակասաւոր, թերի» Վրդն. առակ. էջ 199 (առամնների համար է ասում, որ իբր թէ հանուելով՝ ծակ, փոս մնացած լինի). Ոսկիփ. «փոս տեղ, ձորակ, fosse». այս վերջին իմաստը չունին բառարանները. բայց ահա նրա վկայութիւնները, բոլորն էլ Օրբելեանից.—«Հաս ի խոռն Անձնատու, որ է յարևմտից կոյս եկեղեցւոյն, իբրև ձայնըՆկէց մի» (էջ 31). «Իսկ շնաբարոյքն այն գաղտ պահել զճանապարհն, որ անցանէ ընդ խոռն Յուրայ, յարեան ի վերայ և սպանին զեպիսկոպոսն» (էջ 183). «Զսա կարծեմ սպանանել դաւաճանութեամբ Յուրացեաց, ի վերայ խոռոյն Յուրայ» (էջ 215). «Եւ այս իսկ են գաւառք վիճակեալք հօտի նոցա. Սիւնիք... Վայոց ձոր խաչերոյ խոռովն...» (էջ 227) «Հատանէ և զսահման Աղուանից Ըղըմբի խոռն...» (էջ 227). «Երկու գիւղ ...զԱղուերծ և զՅուրական խոռ» (էջ 196). «Ընձայեցի... զՅուրականխոռ, զոր գնեալ էի ի յԱրատաւազդայ» (էջ 196). «Սկսեալ ի մեծ գիտաւոր սարէդ Գաղբոյլայ ջրաթափովն մինչ ի խոռին ճանապարհն» (էջ 169). «Անցեալ ընդ գետն՝ փոքր ձորակովն որ ելանէ յԱւազեաց խոռ ի խոզաց բլուրակովն» (էջ 169). «Եւ այս են սահմանք... և անտի ջրթաթափաւն յՍտերջաց գաւակ և բնաւեռիւդ ի Վարդանայ մարգի խոռն... Հարժիք, որ ի ճանապարհէդ ի խոռդ ելանէ ձորովդ ի վայր ի Սևաջուրդ» (էջ 149—150). «Ջրաթաթափովն ի մեծ խոռն» (էջ 169)։ (Այս բառը Տաշեան ՀԱ 1926, 73 մեկնում է «կիրճ, կապան». տե՛ս նաև Այտնեան, Քննակ. քեր. էջ 143)։ Այս արմատից են խոռել «պատի վրայ ծակ՝ խրամ բանալ» Լաստ. «մարմնի վրայ վէրք՝ փոս բանալ» Վրք. հց. Ա. 266. Տաճև. ձմ. ժ. «յանցաւորին ի պատիժ՝ մարմինը խեղել» Սմբ. դատ. 105, 163. «խանգարել, ձևահան անել» Վստկ. 177. խոռեալ «վէրքի պատճառով տեղը փոս մնացած» Վրք. հց. Ա. 169. խոռոչ (կամ խոռոջ, խորոջ) «փոս, ծակ» Վեցօր. էջ 55, 69. Վրք. հց. խոռոչանալ Ադթ. անխոռ «անեղծ, ամբողջական» Սարգ. ա. պետր. է, էջ 293։ Այս արմատից է դարձեալ խոռոճոճիլ «մարմինը որևէ հարուածով վնասուիլ, խեղիլ» (մասնիկի համար հմմտ. բառուռ). այս բառը յիշում է միայն ՀՀԲ «սպանել, կտրատել, խողխողել» նշանակութեամբ՝ առանց վկայութեան. մէկ անգամ գտնում եմ գործածուած Յայսմ. յնվ. 18, Թէոդոս Թագաւորի պատմութեան մէջ. «15 հազար արք խոցեցան, 7000 մեռան և 8000 խոռնոքեցան և խեղեցան»։

=Արամ. חוֹרָא xōrā, ասոր. ܚܘܪܐ xurā «ծակ», ասուր. ḫurru «ծակ, խոռոչ», եբր. חוֹר xōr, xūr «ծակ», חֹר xōr «ծակ, բացուածք (աչքի, պատուհանի), խոռոչ, փապար, քարայր, որջ», חֻר xur «ծակ», ջրշունի որջը, աչքի փոսը», նոր եբր. חֲרָר xărār «ասեղի ծակ», արաբ. خُرّ xurr «ծակել»։—Աճ.

ՆՀԲ իրաւ է կցում խոռ, խոռեալ, խոռոչացեալ։ Վարդանեան ՀԱ 1912, 636 գտ. խոռ ձևի հետ միացնում է խորել։

Գիմ.—*Մշ.* խոռ «ամբողջութիւնից մի կտոր կտրած հանած», երև. խօռ «պատի մէջ բանդուածք, անցնելու համար շինուած բացուածք, մասնաւորապէս այգիների պատի վրայ բացուած մեծ ծակ, որից ջուր են ներս թողնում կամ մարդիկ անցուգարձ են անում», *Պլ.* Սեբ. խօռ «ձեռ, ձևահան եղած», Սեբ. «գիւղի կամ աւանի այն մուտքը՝ որ աւելի կիրճի բերան է», *Խոջ.* «լեռան մէջտեղից բացուած նեղ անցք». որից խոռատ *Խոջ.* *Մշ.* «կիսատ, կամ մէկ կողմը կոտրած», խոռել Ախք. երև. «պատի մէկ մասը քանդել, փլցնել», երև. «մէկի սիրտը կոտրել», Ասլ. Խրբ. Ալշ. Ննխ. *Պլ.* Սեբ. «ամբողջից մի մաս կտրել հանելով՝ եղծել, ձևահան անել», *Մն.* «պասը քանդել», խոռուածք երև. «պատի վրայ բացուածք», խոռուկ *Բլ.* «բերանը կոտրած (աման)», խոռուիլ երև. «փըճանալ, վնասուիլ», խոռճակ *Բլ.* (հնչւում է խօռչակ «քարերի հիւսուածքի միջև մնացած ծերպերը, արանքները», խոռսիրտ *Բլ.* «սիրտը կոտրած, սգահար», խոռճել *Մշ.* երզ. «փոս բանալ», խոռճիլ երզ. «փոս բացուիլ»,

խառնկել Վն. «թաղել» (իմաստի զարգացման համար հմմտ. ևորել «թաղել», ևոր բառից). նոյն բառն է դարձեալ խոռն, որ ՆՀԲ մեկնում է «զնստեալ մասն լերին ի մէջ գագաթան, և կողմնակաւ ափափայից և անդորգանաց», որից խոռնացնել Լ. «խորացնել (փոսը, հողը ևն)»:—Պէտք չէ շփոթել բառս թրք. (<պրս.) خور xor «անարգ, թշուառ, արհամարհ» բառի հետ, որ ազդել է բարբառների վրայ. այսպէս թրք. xor baqmaq «արհամարհել, վրան վատ աչքով նայիլ» և Ակն. Պլ. Ռ. Վն. խօռ նայիլ «խեթիւ նայիլ», Ակն. խօռն ի խօռը «աչքերը խոժոռելով, խեթիւ»:

ՓՈԽ.—Գւռ. խոռատ «կոտրած» ձևից՝ փոխառեալ եմ կարծում թրք. قورادا qurada «հին ու մին անպէտք բաներ», ռմկ. խուռատա, որ գտնւում է միայն տաճկերէնի մէջ (չունի Будаговъ):

ԽՈՌ. անստոյգ բառ, որ մէկ անգամ գրւոնում եմ գործածուած խոռ խառնել «հիւանդի մահուան դուռը հասնիլ» ոճի մէջ՝ Ոսկ. ա. պօղ. 316 «Քանզի ընդ բժիշկն յայնժամ զարմանամբ, յորժամ ամենևին յոյս ի մտացն մերժեալ իցէ և ոչ միում ինչ օգնականութեան ակն կայցէ, այլ երթեալ ի խոռ խառնեալ և ոչ ունիցի ակն ապրելոյ և ածիցէ զայնպիսին յառողջութիւն»:

ԽՈՌ «ժլատ». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Բրս. մրկ. 81 «Բազումք ո՛չ վասն Աստուծոյ, այլ յադգս ընչասիրութեանն և խոռ և ոխշտ բարուցն՝ յաղթեցին հնշտութեան մարմնոյ և փափուկ կենաց»:

ԽՈՌ կամ ԽՈՌՆ (գրուած նաև խուռ) «մի տեսակ բոյս է» Գաղիան. Բժշ. մեկնւում է ըստ ՆՀԲ և ՋԲ «յն. χαμαιπιτύς, լտ. humilin pinus», ըստ Ստ. Ոսկեբեան «լտ. chamaepitis կամ լերդախոռ», ըստ Բժշ. «գազձ կամ վայրի անանուխ», ըստ Բառ. երեմ. էջ 144 և 330 «ուրձ կամ քարդանձ» ըստ ԱԲ «ճանկխոռ»: Սրանից են կազմուած խոռիճ «անջրդի դաշտը» Բժշ. (ՀԲուս. § 1117), իշախոռն «Ononis procurrens Wallr». ըստ ՀԲուս. § 861 և Տիրացուեան, Contributo § 225, եզնախոռ «stachys silvatica L» Տիրացուեան, Contributo § 451:

ԳԻՒ.—Լ. Շշ. խօռ, Մժ. խօռն, Ղրբ. խօ՛ռը, Գնձ. խիռը «ծոթրին բոյսը»:

ԽՈՌԱՊԵՏ «կիւրապաղատ, իշխան յարքունիս». մէկ անգամ գործածում է Բ. թագ. ը. 18. սրանից է բարդուած շահխոռապետ «արքայական իշխան» Եղիշ. և. (այս վերջինը ՆՀԲ ուղղում է շահ ախոռապետ, մինչ Մոսկուայի տպագրութիւնը պահում է առաջին ընթերցուածը):

=Անշուշտ պարսկերէնից փոխառեալ բառ է, բայց մայր ձևը յայտնի չէ:—Հիւբշ. 160։ Թիրեաքեան, Արիահայ բռ. 183 պրս. خور xūr, خورا xūra «վհուրիին, վհմուրիին» բառից։ Վարդանեան ՀԱ 1924, 68 հասկանում է «ախոռապետ» և նրան է կցում խոռակալ հոմանիշը ինչպէս կարդում է Բուզանդի սոռակալ բառը, այսպէսով խոռ դառնում է ախոռ բառի մէկ ուրիշ ձևը. բայց այսպիսի ձև չկայ ո՛չ հայերէնի մէջ և ո՛չ էլ իրանեան որևէ լեզուի մէջ. Նահապետեան, Բազմ. 1924, 199 շահխոռապետ հասկանում է «արքունի դպրապետ»՝ կապելով խուրի բառին, որ տե՛ս։

*ԽՈՌՆՈՔԻԼ տե՛ս Խոռ։

*ԽՈՌՈՁ տե՛ս Խոռ։

ՆՀԲ խոռ բառից։ Հիւնք. խոռշ-ից է հանում։

ԽՈՍՈՌՈՍ տե՛ս Խոժոռ։

*ԽՈՍՍ «խոսատում, ուխտ» Վրդն. առ. էջ 94 (Չէ՛ պարտ վխոստան մոռանալ). ոճով աւսում է խոստ լինել «խօսք տալ, խոստանալ» Գոր. և շմ. 79. յետնաբար՝ ի խոստ ածել «խոստովանեցնել, մի բան խոստանալով գաղտնիքը ասել տալ» Մաղաք. ար. 28. ի խոստ գալ «խոստովանիլ, յայտնել» Ուռհ. էջ 320. Կոստ. երգն. 100. Մաղաք. ար. 18. Վրդն. առակ. որից խոստանալ «խօսք տալ» ՍԳր. Ագաթ. «խոստովանիլ» Սեբեր. «սպառնալ» Ագաթ. «հարս լինելու խօսք տալ» Մծբ. խոստումն Եսթ. դ. 7. Ագաթ. Սեբեր. ի խոստումն ածել «խոստովանեցնել» Կղնկտ. Հրտր. էմ. էջ 40. խոստուրիւն «խոստում» Տիմոթ. կուզ, էջ 237. աստուածախոստ Սկզ.

կթ. արմատ. խոստաբանութիւն Բուզ. Արծր. խոստուկ լինել «խոստովանիլ» Կղնկատ. խոստմնագրուժ, խոստմնագանց, խոստմնապահ, անխոստմնապահ (նոր բառեր). այստեղ է պատկանում նաև ոսկեզարեան գեղեցիկ բառս խոստաւոր «ուխտի նուէր», որ գործածուած է միայն նորագիւտ Ա. մնաց. իթ. 4 «եթէ իցէ որ յօժար խոստաւորս բերել»: Այս արմատի հետ նոյն է նաև **խոստովան**, որ տե՛ս առանձին:

=Իրանեան փոխառութիւն է. համմտ. պհլ. xustūk, xustavān, xvastūkīk «խոստովանող», պազենդ. xustuheδ «խոստովանեալ է», xvastuī «խոստովանող», պրս. خست xust «խոստովանութիւն», گشت xustu «խոստովանող», گشتا hastu կամ گشت xastū «խոստովանութիւն, խոստովանող», خشوان xustuvān «խոստովանողք» (Horn § 485): Այս բոլորի պարզական արմատը դրսում է stu «գովել, օրհնաբանել», որից ā մասնիկով ունինք զնդ. āšstav «օրհնաբանել. 2. հանդիսաւորապէս խոստանալ, 3. երդուել», āstavana «օրհնաբանեալ, գովաբանեալ, խոստովանեալ», apa- մասնիկով՝ զնդ. apastav «խոստմնագանց՝ երդմնադրուժ լինել» (Bartholomae 1593—4), պհլ. āšstuvān «հաստատուն, լիահաւատ», āstuvānīh «հաւատք», պրս. استوان ustuvān «հաստատուն. 2. հաւատք»: Նոյն արմատից xva- մասնիկով ձեւացած է xvast-, որից հյ. խոստ. սրանից -uk մասնիկով՝ պհլ. xvastūk, որից հյ. խոստուկ և պրս. xustū. և վերջապէս ana, an մասնիկով՝ զնդ. *xvastavana, պհլ. *xvastavān կամ *xvastuvān, պրս. xustuvan, որից հյ. խոստովան: (Պարզ stu արմատի քնիկ հայ համապատասխանութեանց վրայ տե՛ս բովել):—Հիւբշ. 161:

Առաջին ուղիղ մեկնիչն է ԳԴ, որ համեմատում է պրս. խիւսթու, խիւսթիւան ձևերի հետ: ՆՀԲ պրս. խուստու, որպէս թէ խօսք տալն: (Այսպէս են հասկացել նաև ոմանք գրականագէտներ, որոնք և գրում են ըստ այսմ խօստանալ՝ օ-ով): Spiegel, Comment. 1, 398 պհլ. خشوستوشتن և պրս. xastū, xustu= հյ. խոստակ: Նոյն, Huzw. Gram. 187 պհլ. xvastūk, պրս. xastū=հյ. խոստովանիլ: Lag. Beitr. baktr. Lex. 21 խոստովան=սանս. sva+stu, պրս. sutūdan «գովել», համմտ. պրս. xastū (մասնիկն համարելով vant): Տէրվ. Altarm. 97 և Նախալ. 72 սանս. çans, զնդ. sanh, հպրս. thā, հայ. խօսիլ, խօսք բառերի հետ՝ խոստանալ=հնխ. ças, çans արմատից,—Հիւնք. բոլորն էլ ուղիղ պրս. ձևերից:

ԳԻՒ.—Ողմ. Ջղ. Վն. խոստանալ, Կր. Ննխ. Շմ. Տփ. խօստանալ, Մշ. խօսդ'անալ, Ախց. Մշ. խօսդրնալ, Հճ. խօսդանօլ, Զթ. խրդանօլ, խադանոլ: Նոր բառեր են խոստ անել «խոստանալ», խոստիկ «վանքի կամ սուրբի ուխտ արած»:

ՓՈՒՆ.—Ուտ. խօսդօվան «խոստովանանք», խոստօվանքէսուն «խոստովանեցնել», խօսդօվանքրաֆսուն «խոստովանիլ»:

*ԽՈՍՏԱՆ «պայմանական հողատիրութիւն, աւատ, feod, Lehn». մէկ անգամ գործածուած է Ագուէնի ժողովի կանոնների մէջ. «Թէ ի վանացն գայթանք որ առնէ, ի տեղւոյն ի բաց արասցեն և զխոստանն յեկեղեցին կալցին»: Նոյնը արտագրում է Կղնկտ. «Վանաց երէց կամ վանական որ՝ եթէ ի վանացն գայթանք առնէ և ի վերայ յայտ լինի, անարգեսցեն զնա և ի տեղւոյն ի բաց արասցեն, և զխոստանն յեկեղեցին կալցին» (Հրտր. էմ. էջ 66—67, Շահն. Ա. էջ 185): Թւում է թէ նոյն բառն է՝ որ գրուած է նաև խոստար, խոշտար, խուշտար ընթերցուածներով. «Անառակն կորուստ խոշտարաց ի ծուլիցն լեալ խնամողաց». Պիտ. 344. (Բառ. երեմ. 144 խոշտուր մեկնում է «ժառանգորդ». համմտ. նաև խոստակդար):

=Պհլ. xvāstak, մանիք. خواستك xvāstag «հարստութիւն, կալուածք» (ИАН 1912, 41), պհլ. xvāstakdār «ժառանգորդ», պրս. خواسته xvāsta «ստացուածք, աղխամադխ, կարասի և հանդերձք տան» (ԳԴ, էջ 181 և 640): Սրանցից է նաև վրաց. ხვახტაგი խվաստագի, ხვაშტაკი խվաշտագի

«հարստութիւն, ինչք, գանձ, դրամ, տաւար»։ Իրանեան բառը ըստ Horn § 497 ծագում է պհլ. պրս. خواستن xvāstan «ուզել, խնդրել, հայցել, կամենալ» բայից, որի անցեալ դերբայն է։—Հիւբշ. 161։

Նշ Բ, ՋԲ և ԱԲ մեկնում են «մանուկ, տղայ, զաւակ, սան, համբակ, ժառանգ որբացեալ»։ Հիւբշ. Pers. Stud. էջ 56 և Arm. Gram. 161 տալիս է ուղիղ մեկնութիւնը և հասկանում է բառս «կալուածք, ստացուածք»։ Առանձին մի քննութիւն ունի բառիս վրայ Մանանդեան, Տեղեկ. Համալսարանի, № 4, ուր և հասկանում է «աւատ»։ Պատահակա՞ն նմանութիւն ունի հաթ. ḫaštar «ժառանգորդ» (Sommer, Hethitisches, 2, էջ 8) թէ նոյնպիսի իրանական փոխառութիւն է, ինչպէս հայը։

*ԽՈՍՏԱԿԴԱՐ (չհետևաբար ու հլ.) «պայմանական հողատէր, աւատառու, feudataire, Lehnsträger» Օրբել. Հրտր. էմ. էջ 150, 151, 160 և 170։

=Պհլ. xvāstakdār «ժառանգորդ». ծագում է xvastak բառից՝ dār «ունող, կրող» բառի բարդութեամբ, որով բուն նշանակում է «ունող ընչից և կալուածոց». հայը հին ձև է. պարսկերէնի մէջ պիտի ունենայինք *xvāstadār, որ սակայն չէ աւանդուած։ Տե՛ս նաև խոստակ արմատը։—Հիւբշ. 161։

Նշ Բ, ՋԲ և ԱԲ մեկնում են «զաւակ, թոռունք, ազգականք են»։ Ուղիղ համեմատութիւնը տուաւ Հիւբշ. Pers. Stud. էջ 56, 127։ Վերի իմաստը ճշտեց Մանանդեան, Տեղեկագիր Համալսարանի № 4։

*ԽՈՍՏՈՎԱՆ. արմատ առանձին անգործածական. ոճով ունինք խոստովան առնել, խոստովան լինել «դաւանիլ» ՍԳր. Ագաթ. Կոչ. որից խոստովանիլ «խօսք տալ» Ածաբ. «գոհանալ, բարեբանել, դաւանիլ, մեղքը ապաշխարել» ՍԳր. Կոչ. Ոսկ. երր. խոստովանութիւն ՍԳր. Եւս. պտմ. Բուզ. չխոստովանութիւն Կոչ. խոստովանող «որ ընդունում է ճշմարտութիւնը» Շար. «հաւատքի համար չարչարուած» Ագաթ. ևն։—Եփր. Թգ. 409 գտնում եմ խոստավան գրչութիւնը, որ թուի թէ տպագրական սխալ է, բայց վրիպակների ցանկի մէջ չէ նշանակուած։

=Պհլ. xustavān ձևից, որի վրայ ընդարձակ տե՛ս խոստ։—Հիւբշ. 161։

Ստուգաբանութեանց պատմութիւնը տե՛ս խոստ։

ԳԻՒՐ.—Ալշ. Ջղ. Վն. խօստօվանել, Կր. Շմ. խօստօվանիլ, Երև. խօստօվանէլ, Մկ. խօստօվմնիլ, Ոզմ. խոստավանիլ, Հմշ. խօսդօվանուշ, Ննխ. խօստրվանվէլ, Սլմ. խօստրվանվել, Ախց. Մշ. խօստրվանիլ, Խրբ. խօսդրվանանք, Գոր. Ղրբ. խօստրվա՛նվիլ, Ագլ. խրստրվա՛նիլ, Տփ. խօստօվանիլ, խօստօվնիլ, խօստօվնանէր, Սչ. խօսդ՛օվանել, Մրդ. խօստավանուրէլ, Ակն. Պլ. Ռ. Սեբ. Տիդ. խօսդրվանիլ, Ասլ. խէօսդրվանիլ, ՋԲ. խրսդրվանըլ, —կրճատ ձև է խոստովանիլ՝ փոխանակ խոստովանանիլ.—Էնկիւրիի Թրքախօս հայոց մէջ ունինք խօսդանանիլ «խոստովանանք», խօսդանանիլայր «խոստովանահայր» (Բիւրակն 1898, 789)։

ՓՈԽ.—Ասորոց Բար-Շուշան հայրապետի Հայոց կաթուղիկոսին ուղղած թղթի մէջ կայ հայ. խոստովանութիւն բառը՝ ասորատառ ܟܪܝܣܛܘܢܝܐ տառադարձութեամբ (տե՛ս ՀԱ 1913, 127)։ Կեսարիոյ Թուրքերը գործածում են xosdovanak «խոստովանանք». օր. heč xosdovanaɣən yok mu? «Բնաւ խոստովանած չե՞ս» (Բիւր. 1898, 712)։ Ագուլիսի Թուրքերն էլ ունին xösdövank' olsun «խոստովանք լինի, ուրիշին չասե՛ս» ասացուածք։

ԽՈՍՏՈՒԿ տե՛ս Խոստ և Խոց։

*ԽՈՍՐՈՎԱՅԻՆ «արքայական, թագաւորավայել», նորագիւտ բառ, որ երկու անգամ գտնում եմ գործածուած Յղ. մովս. և գաւթի անվաւերականում, էջ 47՝ և 49 «Կանգնեցին բուրգն խոսրովային և անահ ի մեքենայից. եւ բուրգն ամենայն խոսրովայինք»։

=Պրս. خسرو xusrav «թագաւոր», որից էլ خسروانی xusravāna «թագաւորական»։—Աճ.

ԽՈՎԻԿ տե՛ս Խոյլ։

*ԽՈՏ, ո հլ. «թաց կամ չոր խոտ» ՍԳր. Ագաթ. որից խոտաբուտ Բ. մակ. ե. 27. խոտալից Ոսկ. ես. խոտակեր Սղ. ճե. 20. եզն.

Ագաթ. խոտաճամբար *Ագաթ.* խոտաճարակ *Բ. մակ. ժ. 6. Ագաթ. Բուզ.* խոտեղէն *Ոսկ. ես. եզն.* խոտակ «*խոտիկ, մի քիչ խոտ*» *Մեծոր.* խոտաբոյս (*նոր բառ*), խոտչէք «*խոտի վրայ դրուած հարկ*» *Սմբ. դատ. 22.* մանրախոտ *Ագաթ.* կանաչեղխոտ *Բժշ.* մոլախոտել *Առակ. խդ. 31.* խոտալի (*նորագիւտ բառ*) *Յհ. կր. 38.* ծխախոտ, բրախոտ, ընչաքաղցախոտ (*նոր բառեր*).—*այստեղ է պատկանում նաև* խոտմուշ «*խոխե*» *Վստկ. էջ 178, որի երկրորդ մասը անյայտ է, բայց դրչութիւնն էլ կասկածելի. դրա համար աւելի լաւ եմ համարում* խոտոշ՝ *որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Տաթեւ. ձմ. ճծն. «Մի վառած մոմն զբազումս վառէ և ոչ պակասի և մին խոտոշն զմին այլն վառէ և ընդ աշխարհ տարածի». Համմտ. Գնձ.* խոտուշ «*չոր խո՞տ*» (*տե՛ս Մամիկոնեան, Հազարից մէկը, էջ 227*)։

Հներից Տաթեւ. ամ. 108 կապում է խոտան *բառի հետ*։ Klaproth, As. polygl. *102 օսս.* chos, *բենգալ.* gos *բառերի հետ*։ *ՆՀՔ յծ. Թրք.* ot «*խոտ*», otləq «*արօտատեղի*», *յն.* χόρτος «*խոտ*»։ Peterm. *259 յն.* χόρτον։— Lag. Btrg. baktr. Lex. *40 արաբ.* qut: *նոյն*, Arm. Stud. *§ 1011 մերժելով այս՝ ուզում է հանել Թրք.* ot *բառից? Մորթմանն* ZDMG *24, 80 Թրք.* ot «*խոտ*»։ *Տէրվ. Նախալ. 71 համարելով թէ բուն նշանակութիւնն է «կտրուածք», դնում է հնխ.* kud «*կտրել, կտրել*» *արմատից։ Հիւնք. պրս.* xōdrū «*ինքնաբոյս*» *բառից։* Canini, Et. étym. *56 Թրք.* ot, *սանս.* kutha, Tomaschek, Die alt. Thrak. *II. 30 Թրակ.* κοτίατα «*սէզ*», *լիթ.* kótas «*ցողուն*», *իռլ.* coth «*կերակուր*» *բառերի հետ*։ Bugge KZ *32, 69 կցում է յն.* χόρτος «*խոտ*», *լտ.* hortus «*պարտէզ*», *հիռլ.* gort «*ցանածք, ցանք*» *բառերի հետ, որով մեր բառի նախաձևը լինում է* *խորտ։ Srheftelowitz BB 28, 312 *նոյն է դնում հյ.* խածանել, խայծ *բառերի հետ, իբրև սանս.* khāda «*խոտ*»։ Pedersen. *Հայ. դր. լեզ. 196 համեմատում է հսլ.* sadŭ «*բոյս*», *սլովեն.* sad «*պտուղ*», *ռուս.* садъ «*պարտէզ*» *բառերի հետ, իբր հնխ.* sodo- *արմատից. Հայերէնի նախաձևն էր* *ճոտ։ Patrubány IF *14, 57 յուն.* σκεδάννυμι, *սանս.* skhádate «*ճեղքել*» *բայերի հետ. նոյն է և* խոտան։ *Սագըզեան ՀԱ 1909, 335 սումեր.* gud «*բոյս*» *և Թրք.* ot «*խոտ*»։ Karst, *Յուշարձան 401, 405 սումեր.* gud «*բոյս*», *408 սումեր,* u, gu «*բոյս*», *419, 427 հաբուս. Թրք.* ot «*խոտ*»։ Petersson KZ *47, 278 ռուս.* хвостъ «*պոչ*», *լեհ.* chwastъ «*անպէտք խոտ*», *սերբ.* höst «*շրուանդ, խաղողի չանչ*», *Թերևս նաև յն.* πόσθη «*առնի*»։ *Պատահական նմանութիւն ունի արաբ.* خيد xīd «*գլուխ չկապած հասկ*», *որ բստ Կամուս, Թրք. Թրգմ. Ա. 605 պրս.* خوید xavīd «*հասկ*» *բառից է փոխառեալ*։

Գիմ.—*Հճ. Զղ. Սլմ. վն.* խոտ, *Ալշ. Մշ.* խոդ, *Ախց. Գոր. Երև. Կր. Ղրբ. Շմ.* խօտ, *Խրբ. Ննխ. Պլ. Ռ. Սչ.* խօդ, *Ագլ. Մկ. Ոզմ. Տփ.* խուտ, *Տիգ.* խուդ, *Մրզ.* խուի̈տ, *Հմշ. Սեբ.* խէօդ, *Ասլ.* խէօ՝դ, խէօ՝*, *ՀԹ.* խիւդ։ *Նոր բառեր են* խոտալի, խոտածուռ, խոտաճար, խոտաճաճ, խոտաճարկ, խոտացայ, խոտաւել, խոտնոց, խոտել, խոտակալ, խոտկեռ, խոտկուռ, խոտճաստուկ, խոտճուճկ, խոտնձուռ, խոտկապ, խոտոտ *են*։

Փոխ.—*Հիւնք. Հայերէնից փոխառեալ է համարում Թրք.* اوت ot «*խոտ*» *բառը, որի չաղաթայերէն ձևը նոյնպէս* اوت ot *է*։ Pedersen *ևս (անդ) Հայերէնից է համարում օսմ. հաբուս.* ot «*խոտ*», *որից* otarmaq «*արածել, ճարակիլ, թունաւորել*», *մոնգոլ.* ota-či «*բժիշկ*» (*տ. դեղ բառի տակ*)։—*Այս բոլորը կասկածելի եմ համարում։—Կովկասեան լեզուների մէջ էլ կայ մի ամբողջ խումբ, որ մեր ձևին շատ մօտիկ է հնչում. այսպէս՝ արչ.* xotu, *անդ.* xordo «*խոտ*», xotte «*արմատ*», *ուտ.* xod, *ավար.* ġuet, *վրաց.* xe, *լազ.* xe «*ծառ*», *ռուտ.* xüt^{y}, *ցախ.* xüta «*գարի*». *Դժուար է սակայն այս ամբողջ խումբը՝ զանազանակերպ նշանակութիւններով՝ դնել հայերէնից փոխառեալ, մանաւանդ որ հայերէնը չունի հնդեւրոպական

ծագում. ուստի աւելի յարմար եմ կարծում մեր բառը փոխառեալ դնել հիւսիսային կովկասեան լեզուներից։—Աճ.

ԽՈՏԵԼ *«արհամարհել, երեսից գցել, մերժել» ՍԳր. Կանոն. էջ 64. Ագաթ. նգն. Կոչ. Ոսկ. որից* խոտան *«անպէտք, անպիտան» ՍԳր. նգն.* խոտանել *«խոտել» Ոսկ. յհ. բ. 33.* խոտիչ *Ոսկ. ես.* խոտացեալ *«խոտան պարձած» Մանդ. էջ 47.—Կիր. էջ 2 կայ* խոտանեաց *ձևը, որի ուղղականը կլինի* խոտանեի՝ *փոխանակ* խոտան. *նոյնպէս նորաստեղծ գրծ.* խոտանաւ *ձևն ունի Ոսկ. մ. բ. 3, իբր «թշուառաբար, անարգաբար, չարաչար»։*

ՆՀԲ հայ. խոտ *բառից կամ լծ. յն.* ὠθέω *«վանել», թրք. էօթ էրմէկ «մէկ կողմ հեռացնել»։ Տէրվ. Նախալ. 71* խոտ, կարել, կոտորել *և լա.* cudere *ձևերի հետ՝ հնխ.* kud *«կտրել, կոտրել» արմատից։ Հիւնք. ուխտ բառից։* Patrubány *տե՛ս* խոտ *բառի տակ։*

ԳԻՒ.—Կայ միայն Տփ. անխօթ՛լի *«պատուական», այսինքն* անխոտելի. *(Առածն անխօթելի է)։*

ԽՈՏՈՐ *«ծուռ, շեղած, թիւր» Կոչ. եփր. կոր. որից* խոտորել, խոտորեցուցանել *«շեղել, թիւրել, մոլորեցնել» ՍԳր.* խոտորութիւն *Բ. մակ. ե. 20. Ոսկ. յհ. ա. 8. Բուզ. Կոչ.* խոտորումն *ՍԳր. Եւս. պտմ. Ոսկ.* օրէնս-խոտոր *Եւս պտմ.* խոտորաւոր *(գրուած է նաև* խտրաւոր*) Բուզ. Գ. ժե.* խոտորկըտուրճ *«քղանցքի կտրուածքը» Բուզ. 271 (Ս. Վ. Պարոնեան, Արեւելք 1890 մայ՞ 19* խոտորկաուրճ *մեկնում է «զինուրական հանդերձից ձևն, որ եռևի քղանցքէն դէպ յառաջ մինչ ի ծունկն կտրուած էր, վազելու ազատութիւն տալու համար սրունից».—Նոյնը Հացունի, Պատմ. տարազի, էջ 148).—և ածականով աճած ձևեր են՝* խոտորեագոյն *Յոր. դ. 18,* խոտորեակ *ՍԳր. Ոսկ. ես. Մծբ. (նշանակում է նաև «ձողն որ զկտաւն պարզէ» Բառ. երեմ. էջ 144).* խոտորեակի *Եզեկ. ժզ. 34.* խոտորեակել *Ոսկ. յհ. ա. 1։*

ՆՀԲ «խեղաթիւր կամ խոտելով ի մի կողմն վարեալ»։ Մորթման ZDMG *26, 547 բևեռ.* khavadiri: *Հիւնք.* խտրել *բայից։* Pedersen, *Հայ. դր. լէզ. 226 հանում է* խոտել *բայից։*

ԳԻՒ.—Տփ. խօտորեակ *«հակառակ» (պահուած է միայն* խոտորեակին խոտորեակ *առածի մէջ). Մշ.* խօդորեագ *«հակառակ, դէշ բնաւորութեամբ».—այս երկուսն էլ գրական փոխառութիւն են։ Ջուտ գաւառական ձև է Ղրբ.* խուտո՛ւրու *«ծուռ, խոտոր բնաւորութեամբ. 2. զուր, ի զուր»։*

ԽՈՏՈՒԻՑ. *անսովոր նշանակութեամբ բառ, որ մէկ անգամ գործածել է Եփր. աւետ. հտ. Բ. էջ 317 «Կենդանի է բանն Աստուծոյ և առաւել հատու է քան զամեն սուր երկսայրի՝ հատանել անցանել հասանել մինչև յորոշումն ոգւոց և մարմնոց, մինչև յօդս և ի խոռուցս»։ Հատուածս առնուած է Պօղոսի Եբրայեցոց թղթից (Դ. 12), որ մեր ոսկեդարեան թարգմանութեան մէջ հետևեալ ձևով է. «...և անցանէ մինչև ցորոշումն շնչոյ և ոգւոյ և յօդից և ուղղոյ», որից երևում է՝ թէ* խոռուց *բառի նշանակութիւնն է «ուղեղ». բայց սա ո՛չ թէ գլխի ուղեղն է, այլ ոսկորների ծուծը, ինչպէս ցոյց է տալիս յոյն բնագիրը (μυελῶν) և ինչպէս պահանջում է նաև կողքի յօդից բառը։ Նոյնը հաստատում է նաև Եփրեմի մի ուրիշ հատուածը. «Ընդ մէջ անցուցանել զաղդողական սուրն, որ հատանէ անցուցանէ մինչև յորոշումն շընչոյ և մարմնոյ, յօդից և ուղղոց» (հտ. Դ. էջ 185)։ ՆՀԲ մտադիր չլինելով Եփրեմի վրկայութեան բուն աղբիւրին և վերոյիշեալ ակնարկութեան,* խոռուց *մեկնում է «յօդուած, մարմնի ներքին խաղերը»։—Նոյն բառը* խոռոց *ձևով ունի Կանոն. էջ 54 «Հասք ձեր եղիցին ի պատարագաց՝ կաշի և աջոյ երի անդամ և ճրագու և դմակ և սիրտ և լերդաբոյթ և երիկամունք և ճարպով ի կողիցն և ի խոռոցաց մատն, լեզուն և աջոյ ակն և ամենայն խորհրդական մասունքն». (այս վկայութիւնը չունի ՆՀԲ)։ Վերջապէս բառս պահուած է գաւառականների մէջ, ուր ունինք* խոռոց *ծրև. Ղզ. «դանակով կտրած ձկան մասն, կտոր»* խոռոցել *«ձուկը մաս մաս կտրել՝ աղը դնելու համար» (Ամատ. Հայոց բառ ու բան, էջ 289, Կոստանդնիկ, էջ 58)։ Նշանակութեան զարգացման համար*

համմտ. «Յօդ յօդ զմարմինն կոտորէին» Յայսմ. «Քակտեալ ցրուեցաւ մարմինն յօդ յօդ» Պիտառ։—խոտուց բառից կազմուած է երևում խոտցոց անստոյգ բառը՝ որ մէկ անգամ ունի Ագաթ. § 102 «Եւ ետ հրաման բերել կոճեղս փայտից և առնել ըստ ոլոքի խոտցոց ոտից նորա, և դնել և պնդել ուժգին առատկօք». (ձեռ. տարբ. խոտցաց, խոտոցոց, խոցաց, խոտցոյ, խոտոցացն, խոտուցաց, խոստաց, խոտցոյց, խոցոտի, խոցոտիցն, խոսցաց. կրկնագրում այս կտորը պակասում է)։ Այս բոլոր ընթերցուածներից նոր տպագրութիւնը ընտրել է խոտցաց, իսկ ՆՀԲ դնում է խոտցոց, որ մեկնում է «առաջակողմն ոլոքի, երեսք սրունից, ծունկն և ծալք նորա մինչև ցոտս, այն է գուճք, որ ի չոքիլն շօշափէ զգետինն»։ Ագաթանգեղոսի նոյն հատուածի ակնարկութեամբ են հետևեալները.—«Ոլոքացն խոտոցաց՝ մամուլք, ծնկացըն՝ յօշումն, կողիցն՝ քերանք, արտասուացըն ամանոց՝ բախմունք (Սարկ. լուս. 22). Զկոճեղս կազմեալս միոյ միոյ ոտին ոլոքի խոտցից ոտիցն (Ուխտ. Ա. 89). Հրամայէ (Տրդատ) կոճեղս դնել ըստ ոլոքաց խոցոց ոտիցն» (Տաթև. ձմ. ղղ.)։ Ըստ իս ուղիղ է ՆՀԲ-ի ընդունած խոտցոց ընթերցուածը, բայց սխալ է տրուած նշանակութիւնը։ Ձիշտ իմաստը կգտնենք, եթէ համեմատենք Ագաթ. § 69 հատուածը. «Եւ ետ կապել զնա ձեռս յետս և արկանել գայլ ի բերան նորա... և տալ գելոցս կրծից նորա և արկանել առաստանս ի կապս կրծից գելարանացն, կապել և համբառնալ»։ Այս վկայութիւնից երևում է որ մարմնի զանազան մասերի համար տանջանքի գործիքներ կային, ինչպէս բերանին գայլ, կուրծքին գելոց, որին կապելով չուանները՝ սկսան քաշել։ Այսպիսի մի գործիք էլ խոտցոց-ն էր, որ փայտից էր շինուած՝ ոտքի ոլոքի յարմարութեամբ։ Այս բանը ցոյց է տալիս նաև յունարէն Ագաթանգեղոսը (հրտր. Lagarde, Göttingen 1887, էջ 26), որ համապատասխան տեղում ունի σανίδας «մահապարտները կապելու ցից»։ Այս իմաստով շատ յարմար է ասել «բերել կոճեղս փայտից և առնել ըստ ոլոքի խոտցոց ոտից նորա»։ Այնուհետև ոտքերը դրին խոտցոցի մէջ և չուաններով պրկեցին, ճիշտ գելոցի նման։ Կազմութեամբ էլ խոտցոց նման է գելոցին. կազմուած է -ոց մասնիկով՝ խոտուց բառից։ Թէ յօդերը կտրատելու նման մի գործիք կար հների մօտ համմտ. Սարգ. ա. պետր. ժ (էջ 368) «Ո՛չ անիւք և ո՛չ քուրք, ո՛չ գինւորք առաջոյ կացեալք և ոչ յօդսբաւիք շուրջանակի, ո՛չ կախաղանք և ո՛չ քերանք»։ (Աւելի ընդարձակ տե՛ս Աճառ. Արարատ 1915, 223—4 և Հայ. նոր բառեր հին մատ. Բ. 271)։

ԽՈՐ, n հլ. «խոր, խորունկ (իբր ած). 2. խոր տեղ, փոս, վիհ. 3. խրթին, դժուարիմաց. 4. զօրեղ, սաստիկ» ՍԳր. Ագաթ. Վեցօր. որից խորել «փոսացնել» Ղկ. ղ. 48. Երեմ. խթ. 30. Մծբ. 110. Եփր. յոր. (Հրտր. ՀԱ 1912, 671), «թաղել, պահել» Ոսկ. յհ. բ. 8. «գողանալ, ամբողջից մի մաս վերցնել» Գծ. է. 2. Ոսկ. «իրեն չպատկանածը իրեն սեփականել» Ոսկ. մտթ. «խանգարել, եղծանել» Ոսկ. ղկ. «տիկ հանել, կաշին պլոկել» Փիլ. նխ. բ. 51. խորին ՍԳր. խորամիջոց «մէջտեղը փոս, գոգաւոր» Վեցօր. խոռաջուր Մծբ. խորագոյն Ղևտ. ժդ. 20, 21. Ոսկ. յհ. բ. 30. խորանոր Ես. ծէ. 5. Ոսկ. ես. խորէջ «սուզակ, ոմկ. տալղճ» Կղնկտ. Հրտր. էմ. էջ 267. Տաթև. ձմ. ճԺ. խորագէտ ՍԳր. Վեցօր. Ոսկ. յհ. ա. 38. խորամանկ ՍԳր. Ոսկ. յհ. բ. ծովախոր Ագաթ. յորձախոր Ագաթ. ողմախոր Մծբ. բանձրախոր Փարպ. երդմնախոր «երդումը խորող, սուղ» Կանոն. խորու «մուգ, թունդ (գոյն)» մհյ. բառ (տե՛ս Նորայր, Բառ. ֆր. 552 բ. համմտ. անգլ. deep «խոր» և «մուգ գոյն»). խորունդ «խոր» Հաւաք. 16 (ՀՀԲ մեկնում է «անդունդ»). խորոփիկ «խոր ու փոս տեղեր» Յհ. կթ. 224. Նոր բառեր են՝ խորագնիճ, խորաբափանց, խորաճմուռ, խորապէս, խորաքանդակ, խորիմաստ են. կրկնութեամբ են կազմուած՝ խորխորատ ՍԳր. Ոսկ. խորխորիլ «կողոպտուիլ, գողացուիլ» Ստ. ժմ.=Արրատ. 1916, 140 (նորագիւտ բառ), խորխոլիլ «ճաքճքիլ» Եզն։

ԳԴ պրս. խօրաէն «ուտել» բայի դէմ դնում է հյ. խորել «ուտել» ձևը? Justi, Dict. Kurde 348. քրդ. كور kur «խոր» և

Հեսիքիոսի աւանդած պրս. χῦρος ձևերի հետ (տե՛ս Lagarde, Gesam. Abhnd. *223, 17)։ Հիմնք.* խոր, հոր *և* խորել *հանում է* խոն-*ից, իսկ* երդմնախոր *բառի երկրորդ մասը՝ որ այս արմատից է, մեկնում է պրս.* xōrdan *«ուտել» բառով։ Դ. Սարգսեան, Բիւր. 1898, 484 դնում է մի* nr *արմատ, որից հանում է* խոր, հոր, որոգայթ, ձոր, ծորձոր։ Bugge KZ *32, 84 պատահական է գտնում չիչեն.* korgun, *թուշ.* xokru, *կազիկում.* kurt, *ավար.* goarid, *պրս.* kūr *հոմանիշները, որոնց վրայ կարող ենք աւելացնել նաև խունսագ.* gwoaride, *սամոյ.* kore, koreya, *օսթյաք.* kor, koret *«խոր տեղ»։* Patrubány IF *14 (թ. 1903), էջ 57 յն.* χείρω *«կտրել, ոչնչացնել», հրգ.* scëran, *գերմ.* scheren *ձևերի հետ։ Անդրիկեան, Բազմ. 1905, 512* հոր-*ից է հանում։* Patrubány *ՀԱ 1910, էջ 93 հնխ.* segā *«կտրել» արմատից։*—Karst, *Յուշարձան 400 ասուր.* ḫurru *«փապար, խոռոչ», 401 սումեր.* g'ar *«երկինք, անդունդ», 408 սումեր.* ur *«ոտքի գարշապար»,* urugal *«դժոխք, գերեզման»։ Ղափանցեան* ЗВО *23, 356 քրդ.* k'ur *«խորունկ»։ Պատահական նմանութիւն ունի վազ.* xir *«խորել, դողանալ»։* Justi. Kurd. Gram. *103 քրդ.* kura *«խոր» բառի հետ։* Nyberg *տե՛ս* խռնարհ *բառի տակ։*

Գիւռ.—Ալշ. Մշ. Զթ. Վն. խոր, *Ախց. Գոր. Երև. Ղրբ.* խօր, *Շմ.* խօն, *Լ.* խօոր, *Մղր. Ոզմ.* խուր, *Տփ.* խուր, խուրը, *Մրզ.* խուʰր, *Ագլ.* հուր.—*ածանցման մէջ ստանալով և յօդը՝* խոռնաճալ, խոռնացնել *Լ.—ունկ մասնիկով աճած ձևն ունին՝ Ախց. Կր.* խօռունկ, *Պլ. Սեբ.* խօռունգ, *Ննխ.* խօռունգ *(բայց գիւղերը՝* խօռունգ*), Խրբ.* խօռունգ, *Ասլ.* խէօռիւնգ, խէօրիւ*, *Ռ.* հօռունգ*—սրա տեղ* խոռուն *ձևն ունին՝ Ակն. Արբ. Զրս. (մասնիկիս համար հմմտ.* լեցուն, լեցուն*).—նոյնը ու մասնիկով դիտեն՝ Տիգ.* խօռնու *(այս բառը նշանակում է թէ՛ «խոր» և թէ «հեռու». ինչպէս որ մօտ բառն էլ նշանակում է նաև «ծանծաղ». հմմտ. հեռու). Զթ.* խուռռու, *Հճ.* խույու։—*Նոր բառեր են* խորանդր *Վն.,* խօրանթբ *Մկ.,* խօռունար *Ագլ. (նշանակում են «խոր» կամ «շատ խոր»).* խորանճ *«ձոր»,* խորացնել, խորել *«մի բան ծակելով՝ մէջը դուրս տալ» (այլ է* խորել *Վն. «թաղել», որ ծագում է* հորել *ձևից, ինչպէս ունին այլ բարբառներ),* խորխորանճ, խորխուփ, խորկրնալ, խորուսան, խորվնալ, *իսկ* խորուփիճ *ձևը գործածւում է Բդ. «խորուփոս տեղեր» նշանակութեամբ։—Նոյն բառն է Հմշ.* խէօր *«առու»։*

Փոխ.—Հայերէնից է փոխառեալ գերմանական գնչ. xoro, xod *«խոր» (տե՛ս* Rudolf v. Sowa, Wörterbuch des Dialects der deutschen Zigeuner*). Նոյնպէս է նաև տաճկական գնչ.* k'or *«խորունկ», որ* Paspati *կգում է հինդուստանի* guhra *«խոր», սանս.* khur *«ճեղքել» բառերին. այս համեմատութիւնները անյարմար են։*

**ԽՈՐԱԿ. մէկ անգամ գործածել է Ոսկ. փիլիպ. ժ. յորդ. էջ 469 «Զցորեանն եւ քեզ ամսուած միայն, և դու ազգս ազգս ինչ հնարիս հնարել անտի, զնաշիհն և զխորակն և զդերմակն և զծաղոն և զկտաւոնն»։ Բառիս իմաստը մօտաւորապէս յայտնի է. ԱԲ մեկնում է «շարմադուն, ալիւրի տեսակ մը», իսկ ՓԲ «տեսակ ինչ ազնիւ կերակրոյ». (միւս բառարանները չունին)։ Ուղիղ նշանակութիւնը կարծում եմ «ալիւրով շինուած մի կերակուր կամ խմորեղէն», ինչպէս ցոյց է տալիս՝*

*=պհլ. *xvarāk, որ թէև աւանդուած չէ, բայց կայ սրա յաջորդը՝ պրս.* خوراك xōrāk *կամ* xūrāk *«կերակուր». այժմ գործածական է յատկապէս Ատրպատականի բարբառում, որից՝ նոր փոխառութեամբ անցել է Կովկասահայ բարբառներին՝* խօրագ, խօ՛րոգ *«կերակուր» ձևով։ Նոյնը գիտէ Աբր. կրեա. 11, 65* խորակ *ձևով և «կերակուր մարդու կամ կեր ձիու» նշանակութեամբ։ Արմատն է* xvar- *«ուտել», որից զնդ.* xvaraiti, *պհլ.* xvartan, xurtan, *պրս.* خوردن xōrdan, *քրդ.* xurin, xvārin, *աֆղան.* xōral, *օսս.* xvärun, *բելուճ.* varag *ևն, «ուտել»*

նշանակութեամբ (Horn § 507). Համմտ. նաև խորտիկ:

Ուղիղ մեկնութիւնը մտածել է նախ փՔ, որ ուզում է համեմատել պրս. խորա, խորաf բառերի հետ:

ԳԻՒՐ.—Վն. խորկել «ուտելիքը տալ, կերակրել (ձին)». պատկերաւոր բացատրութիւն է Մշ. Իմ խորագ չէ «իմ գործը չէ» ևն:

ԽՈՐԱԿԱՐ «տարերք». ունի միայն Բառ. Երեմ. էջ 308:

ԽՈՐԱՆ, ի–ա Հլ. «վրան, տաղաւար» ՍԳր. Յոխաբերաբար ասուած է նաև երկնից կամարի, տաճարի սեղանի, Հրէից վկայութեան խորանի, արբունի դահլիճի, որևէ յարկի, տան, ինչպէս նաև աղիւսակի խորշերի համար: Այս բառից են խորանակար Գծ. ժը. 3. Ոսկ. մ. ա. 1, Հյ. ա. 30. խորանանման Ագաթ. խորանաշէն Ագաթ. խորանապան Բուզ. խորանաւարար Ոսկ. ես. խորանաւոր Յոր. լը. 38. Ագաթ. խորանափեղկ ՍԳր. այս բոլորը բխում են առաջին նշանակութիւնից և ոսկեդարեան են:—Յետին ժամանակից են խորանաձև «կամարաձև» Փարպ. բազմախորան «շատ խորշեր ունեցող (սաղաւարտ)» Նիւս. Թէոդ. խորանակցութիւն «քնակակցութիւն» Սկևռ. Երզն. ևն:

Lag. Btrg. baktr. Lex. 6 պրս. xvaran -gāh, որ է ᴐᴋᵣ xar-gāh «վրան»: Հիւնք. արաբ. ﻏﺮﻓﺔ gur'a «քուէ» բառից: Ալիշան, Հին հաւ. 434 խոր բառից: Patrubány SA 1, 312 պրս. xordan «ուտել» բայից: Karst, Յուշարձան 401 սումեր. g'ar «երկինք, անդունդ» բառի հետ: Թիրեաքեան, Արիահայ բռ. 185 պրս. ﺧﻮﺯﻧﻪ xavarna, ﺧﻮﺭﻧﮕﺎﻩ xavrangāh, ﺧﻮﺭﻥ xavran, արաբացեալ ﺧﻮﺭﻧﻖ xavarnaq «Վահրամ Գուրի պալատը»: Մառ Яф. сборн. 2, 163 յհ. վրան և խորան. յն. οὐρανός և χρόνος, լտ. templum և tempus իրար կցելով՝ համարում է յաբեթական:

ԳԻՒՐ.—Պահուած է միայն «եկեղեցու խորան» նշանակութեամբ. այսպէս՝ Մկ. Ջղ. Ոլմ. Վն. խորան, Ագլ. Ալշ. Ախց. Գոր. Երև. Խրբ. Կր. Ղրբ. Մշ. Ննխ. Շմ. Պլ. Ռ. Սեբ. Տփ. խօրան, Տիգ. խօռան, Ոզմ. խուրան, Մրղ. խուᵘրան, Հմշ. խօրօն, Ասլ. խէօրւո, Ջթ. խույօն, խուրոն, Հճ. խօյօն.—իսկ Մշ. խօրան նշանակում է «եկեղեցի», որից խորանդուռ «ժամի դուռը»:

ՓՈԽ.—Ուս. xoran «եկեղեցու խորան»:

[ԽՈՐԱՆԳ «գկռատց». մէկ անգամ գործածուած է Ածաբ. «Մի՛ բազմականս բարձրագոյնս կազմեսցուք՝ խորանգ (կամ խորանկն) առնելով՝ յորովայնի զժայթքելն»: Հները վերջի բառերից հետևցրել են թէ խորանգ առնել նշանակում է «գկռատալ, զդայրիլ». բայց ՆՀԲ յունարէնի համեմատութեամբ ցոյց է տալիս որ գրչագրական սխալ է և պէտք է ուղղել խորան կանգնել կամ առնել:]

*ԽՈՐԱՍԱՆԻ «մի տեսակ բոյս է. artemisia absinthium», որից էլ խորասանիկ «staphysaria բոյսը» Բժշ. երկուսն էլ ունի միայն ՀԲուս. § 1126—7.—Տիրացուեան, Contributo մեկնում է գանագան ձևերով. այսպէս § 364 «gentiana gelida M. B.», § 467 «ajuga chamaepitys», § 473 «teucrium polium latifolium»:

=Պրս. ﺧﺮﺍﺳﺎﻧﻰ xorāsānī, որ նշանակում է բուն «խորասանցի», ըստ որում բոյսը արտածւում էր այստեղից. արաբ. ևս կոչւում է ﺣﺮﻳﺴﺎﻧﻪ xarīsāna «semen contra vermes»:

Ուղիղ մեկնեց Seidel, Մխ. Հեր. § 393:

ԽՈՐԱՒԱՐԱՆ «պարսից սպարապետական մի աստիճան». նորագիւտ բառ, որ մէկ անգամ ունի Անան. գիտ. 26 «եկեալ առ սպայապետն, զոր խորաւարանն կոչեն» (այլ ձ. խորբարաւն):

=Անշուշտ պրս. է, բայց մայր ձևը անյայտ:

*ԽՈՐԲԱԼ «ցորեն». գործածուած է հեռևևալ տեղերում. «Յամենայն տանէ առնուլ չորս դրամ և երեք մոթ խորբալ և ձիատօպրակ մի». Սամ. անեց. էջ 82.—«Ջի տայցեն խարաճ ամենայն երդ՝ դրամս դ և երիս մոդ խորբալ և ձիատօպրակ մի և պարան և ձեռնարար մի». Մխ. անեց. էջ 47.—«Յամենայն տանէ առեալ չորս դրամ և երեք մոթ խորբալ, որ է ցորեան, և ձիատոպրակ մի».

կիր. էջ 34։—Կիրակոսի տուած մեկնութիւնից երևում է որ խորբալ նշանակում է «ցորեն», թէև այդ կարող է նաև յետին յաւելուած լինել։—Սիմ. ապար. էջ 118, որ նոյնպէս ունի յիշեալ հատուածը՝ սխալմամբ հասկանում է «գարի». «Յամէն տանէ դրամըս չորս, երեք մարզման առնուլ զգարին, մազեայ պարան ընդ տոպրակին և ձեռնաբար մի հետ սոցին»։—Բառիս հնագոյն գործածութիւնը ունի Սոկր. 274, թէև խորբար ձևով. «Զխորբարան չորս նաւովք ընդ գետ տանէին, այրեաց. վասն որոյ ի սով անկան զօրականքն».—յն. բնագիրն ունի σιτηγὸν τὰ «ցորենատար» (տե՛ս Σωκράτους Σχολαστικοῦ Ἐκκλ. Ἱστορ. Oxford 1893, էջ 164)։

=Վրաց ხორბალი խորբալի, ხვარბალი խվարբալի «ցորեն». բայց արգելօք բոլորի էլ մայրը չէ՞ պրս. خوربار xōrbār «կերակուր բստ չափու պիտոյից. 2. ասի ևս նշանակել զտեսակս կերակրոց՝ զորս տանին ի միոյ քաղաքէ յայլ քաղաք». ծագում է خوردن xordan «ուտել» բայից։—Աճ.

Նշբ ունենալով միայն առաջին վկայութիւնը, բառը մեկնում է «եթէ չիցէ գրելի խարբալ, որպէս մաղ, կամ մաղեալ ցորեան»։

*ԽՈՐԴ, ո հլ. «մազեղէն քուրձ (յատկապէս ապաշխարութեան համար հագուած)» ՍԳր. Մծբ. «քուրձէ պարկ, չուվալ» Վրք. հց. որից խորգաւանդեռն Բուզ. խորգազգաց Լաստ. խորգեղէն Յայսմ.—ՀՀբ խորգ բառին տալիս է նաև «մազէ չուանով հիւսուած խարազան» նշանակութիւնը, որ սակայն վկայութեամբ հաստատուած չէ։—Անյայտ իմաստով է գործածուած Ոսկ. պօղ. ա. 315 «զնոցանէ զխորգ ինչ ածիցես զմտաւ», որ հրատարակիչը առանց բացատրութեան ուղղում է «զնոցանէ զի՞նչ ածիցես զմտաւ»։

=Փոխառեալ բառ է. համմտ. ասոր. ܚܘܪܓܐ xurgā «մախաղ», արաբ. خرج xurj «մախաղ, պայուսակ», որից քրդ. خرج xurj «ճանապարհորդի մախաղ», خرجك xurǰek «պայուսակ», ինչպէս նաև սպան. alforja, պորտ. alforge: Սեմական բառերը թուում է թէ ծագում են պհլ. *xvarǰ հոմանիշից, որից փոխառեալ պիտի լինի նաև հայերէնը։—Հիւբշ. 161։

Ուղիղ մեկնութիւնը տուաւ նախ Հիւբշ. ZDMG 36(1882), էջ 130։—Հիւնք. գործ բառից է հանում ձորձ, խորխ, գորգ, խորգ ևն։

ԽՈՐԴ, ո հլ. (յետնաբար նաև ու հլ.) «կըռունկ թռչունը» Ագաթ. Եզն. Վեցօր. 163, 167—8. Բուզ. Եւագր. 201. «կռունկների բրամը» Երզն. քեր. որից խորդեան «կռունկներ» Վեցօր. 167 (չունի ՆՀԲ). խորդապար «եռանկիւնի ձևով՝ կռունկների պար բռնած» Մագ. (տե՛ս ՀԱ. 1911, 378)։ Գրուած է նաև խորբ, խորբապար։ Նոր գրականում շինուած բառ է խորդենի «geranium ծաղիկը, տճկ. բիբըր, սարսէնիա» (Տիրացուեան, Contributo § 310)։

Հիւնք. խորդալ «խոկալ» բայից կամ պրս. դուրթ «ձայն, գոչիւն» բառից Pictet, բ. տպ. Ա. 616 սանս. karaṭa «որի թռչունը»։

ԽՈՐԴԱԼ «քնելու ժամանակ խոկալ, խորհիլ» Յովն. ա. 5, 6. Ոսկ. ա. տիմ. էջ 124. Կոչ. 288. Մանդ. «ծովի ալիքների գոչելը» Մագ. որից խորդումն Փիլ. կրկնութեամբ՝ խորդխորդալ Գնձ. գրուած է խորբալ Կոչ. 288։

Նշբ խոր կամ խորդ ձևերից. («իբր ի խորոց ձայնել կամ հանել զձայն խորդոյ»)։ Հիւնք. դրնդիւն բառից։

Գիհ.—Հճ. խըրդ՛ադ՛ել «քնի մէջ խոկալ» (ծագում է *խորդադել ձևից).—Նոյն արմատից է և խորդխորդալ է. «խոզի խանչելը»։

ԽՈՐԹ (յետնաբար ո, ու, ի հլ.) «պոռնկորդի» Ելիր. ժբ. 8. Ոսկ. երբ. «անհարատաւ որդի» Նխ. Ղևտ. Նոնն. «խարդախեալ, կեղծ» Անյ. պորփ. Պղատ. տիմ. «կոշտ, անհարթ» Աբ. որից խառնախորթ Նար. խչ. 388. խորթանալ Անյ. վերլ. արիստ. Նար. խորթացուցանել Անյ. պորփ. Նանայ. խորթութիւն Մագ. օտարախորթ Եփր. վկ. արև. 51. Եղիշ. ե. էջ 84, 87. Սարգ. ա. յհ. գ. էջ 655։ –խորթ «կոշտ, անհարթ» ձևից է խորտաքորտ «առապար, անհարթ վայրեր» Խոր. գ. 55, որ է խորթուրթ։

Հիւնք. հանում է որդի բառից։

Գիմ.—Ջղ. Սլմ. վն. խորբ, *Ալշ.* խոռբ, *Ախց. Երև. Խրբ. Կր. Շմ. Պլ. Ռ.* խօրբ, *Գոր. Ղրբ.* խօրբ, խօռբ, *Մշ.* խորտ, *Մկ. Ոզմ. Տիգ. Տփ.* խուրբ, *Մրղ.* խուʰրբ, *Սեբ.* խէօրբ, *Ասլ.* խէօ՝րբ, խէօ՝ր*, *Ագլ.* խուռբ, *Զթ.* խէօ՝ռբ, *Հճ.* խոյղ՝, *Հմշ.* խէօշբ. —*Համմ. և Մրղ.* խուրբըրբʰրտ «*խորթուրորթ*»։

Փոխ.—Թրք. գւռ. S. xort «*խորթ դաւակ*» (*Բիւր. 1899, 798*)։

ԽՈՐԹՆՕՂ «*արթնասէր*». *ունի միայն Բառ. երեմ. էջ 145։*

[**ԽՈՐԻ**, *որ և* խուրի, խոր, խորին, խորն. *Սուրբ Եփրեմ ասորուն արուած մակդիրն է. համմտ.* «*Թարգմանութիւն Աւետարանի՝ զոր արարեալ է Տեառն Եփրեմի խորին Ասորւոյ*». *Եփր. հտ. Բ. էջ 261. նոյնպէս նաև Ճառընտ. Յայտմ. Տօնաց։*

= **խորին Ասորիք** «*խորագոյն Ասորիք, coelésyrie կամ* Syrie creuse» *տեղական յատուկ անունից, ինչպէս ունինք նաև Կիլիկիոյ համար ասուած «Մետրապոլիտ Կիլիկիոյ, զոր կոչեն խորին» Յայտմ. մայ. 12։ Այնուհետև բառս վերագրելով սխալմամբ Եփրեմին, կարծել են թէ նշանակում է «խորհմուտ, իմաստուն ևն»։*

Նշ Ր մեկնում է «բաջ վերծանօղ, ընթերցօղ և մեկնիչ գրոց» և միացնում է արաբ. fnɪrra, fwrra, գառի *(իմ՛* ﻗﺎﺭﻱ qarī) «*կարդացուր*» *բառերին։ Ուղիղ մեկնութիւնը տուաւ Նորայր, Կոր. վրդ. էջ 403։ Նոյնը յետոյ Վարդանեան, Բառաքնն. դիտ. Գ. 67։ Մառ,* Текст. и разыск. *հտ. I, էջ 35 հյ.* խորին «*խորհմուտ*» *բառից»։*]

ԽՈՐԻՍԽ, ո *հլ. (յեանաբար նաև ի հլ.) «մեղրահաց, մոմով մեղր» Ա. Թագ. ժդ. 27. Սղ. ժը. 11. Եփր. դտ. 341. Կոչ. 282. Ոսկ. յհ. ա. 1. «մեղրով և իւղով պատրաստուած խմորեղէն է» Եզ. ժզ. 31. Թուոց ժա. 8 (համմտ. Տաթև. ձմ. ճխե. «Ետուն նմա ձկան խորովեցելոյ մասն և խորխոխ մեղու. ո՛չ թէ ծաղ մեղր, այլ մեղու. այսինքն իւղով և մեղրով որձեալ հաց»), որից* մեղրախորխոխ *Սեբեր։*

Pictet 1, 440 *(սխալմամբ գրելով* խորին) kar «*անել, շինել*» *արմատից։ Հիւնք.* խարխխ *բառից։* Bugge KZ *32, 10 -խխ դնելով մասնիկ, խոր կցում է լիթ.* koris «*մեղրահաց*», *լիթթ.* kāri-tes «*մեղրահացերի խաւեր, պան*», *յն.* κηρός «*մեղրամոմ*», κηρίον «*խորիսխ*», *լտ.* cera «*մեղրամոմ*» *բառերին. հին ձևն է *կորիսխ. համմտ. նաև կապադովկ. յն.* κορόκκο «*մեղրահաց*»։ *Հիւրշ. 455 չի ընդունում այս մեկնութիւնը։* Patrubány *ՀՍ. 1903, 220* kar. $q^e/_or$ «*շինել*» *արմատից։*

Գիմ.—Ալշ. Խոջ. Համշ. Մշ. Նախ. Սեբ. Սչ. խօրխս, *Մկ.* խուրխս, *Ոզմ.* խուրխ՝ս, *Ախց. Երև. Տփ.* խօրխզ, *Պլ.* խօրխն, *Ջղ. Սլմ.* խորխնն, *Հճ.* խէյխզ, *Ագլ.* խռազ, *որոնք սովորաբար նշանակում են «գաթայի մէջ դնելու հաւս».—տարբեր նշանակութիւններ են տուած Համշ. «թզենիի, եղէգի են թոյլ միջուկը», Համշ. Տր. «ձուի դեղնուց». համմտ. նաև* խռոճ *Տր. «մեղրագդումով, սոխով և ուրիշ կանաչեղէններով պատրաստուած մի տեսակ հաւս»։*

ԽՈՐԽ *(ըստ Նշ Ր ի հլ. թայց ունինք միայն յետնաբար սեռ.* խորխի) «*օձի շապիկ*» *Փիլ. լին. 24. Եպիփ. բառոյ. Լծ. կոչ. Երզն. մաթ. 236. Ոսկիփ. «խոզի մորթ» Ագաթ. «պատուղի նման սերմի կճեպ» Ջռ. որից* խորխաճալ «*կաշի դառնալ*» *Ագաթ.* խորխաւոր «*փեճեկաւոր (պատուղի կամ սերմի համար ասուած)*» *Նիւս. կազմ. Ոսկիփ։*

Նշ Ր լծ. հյ. գրգնակ, *Թրք.* խըրխա *և* խուրխ «*մուշտակ*» *(իմ՛ արաբ.* ﺧﺮﻗﺔ xirqa «*վերարկու*», *Թրք.* کورک kürk «*մուշտակ*»)։ *Հիւնք. գործ բառից։* Bugge IF *1, 448 հսլ.* skora «*կաշի, մորթ*», *լեհ.* skorka «*հացի, պատուղների կեղև*» *բառերին է միացնում. հյ. բառը նախապէս *խորկ ձևն ունէր, ուր վերջաձայնը նախաձայնին վերածուելով՝ յառաջացել է* խորխ։ *Նոյնը կրկնում է* Walde 192՝ *կցելով լտ.* corium, *հիսլ.* hǫrundr, *սանս.* kṛtti- «*կաշի, մորթ*» *են բառերին։*

ԳԻՒ.—Ղրբ. խօրխ «ծառի կեղև, ծաղկախտի թեփանք, հարբուխից յետոյ քթի վրայ ձևացած թեփը, շերամի բոժոժի անպէտ մազմզուքները», Ագլ. խուրխ «օձի շապիկ. փոխաբերաբար՝ վատ մարդ», Սեբ. խէօրխ «օձի շապիկ», Երև. խրխի «օձի շապիկ»։ Նոր բառեր են խորխել, խորխաճան անել կամ լինել Շշ. «կաշին փոխել, բուն գոյնը դուրս տալ»։—Տե՛ս նաև խուխ բառի տակ։

ՓՈԽ.—Ջեչէն. խորխո «թաւիշ», կիւրին. xür «կաշի, մորթ», քրդ. خۆر xūr «մորթ, կաշի» (վերջինս Justi, Dict. Kurde 162 համեմատում է մեր բառի հետ՝ որ սխալմամբ գրում է խորֆ)։—Այս բառերի համեմատութիւնը սակայն այնպէս է, որ աւելի ենթադրել է տալիս թէ բոլորը միասին խալդեան կամ մի ուրիշ աղբիւրից են։

ԽՈՐԽՈՒԻԼ *տե՛ս* Խոր։

ԽՈՐԽՈՐԱՏ *տե՛ս* Խոր։

ԽՈՐՄԻԼ, ԽՈՐՄՈՒԻԼ *տե՛ս* Խաւարծի։

ԽՈՐՄՕՆՕ «թանձր արմատով մի բոյս է» *Բժշ. ունի միայն ՀԲուս. § 1131, առանց ի՛նչ լինելը կարենալ որոշելու։ Ըստ Նորայր ՀԱ 1924, 550 պէտք է լինի* «hermodactylus, *արաբ.* խամիրէ»։

ԳԻՒ.—Նոյն են խործաճայ Կիւր. «մի տեսակ վայրի խոտ, որի արմատը ուտելի է», Սեբ. «մի տեսակ արմատ ուտելի, բաղցր, սպիտակ և կաղինի մեծութեամբ. գիւղացի աղչիկները այս բոյսը կամարաձև հիւսելով՝ գաղանի նուէր են ուղարկում իրենց նշանածին կամ սիրահարին, որ մի ժամանակ պահելուց յետոյ՝ ուտում է», խորզոնէ Խն. «բոյսի մի արմատ՝ որ ուտելի է»։

ԽՈՐՉ *(յետնաբար* n, ի *հլ.) «խորհուրդ, մտածութիւն, միտք» Յճխ. Ոսկիփ. Վրդն. առ. 127. Տօնակ. որից* խորհիլ «մտածել» *ՍԳր. «Հոգ տանիլ» ՍԳր. «մտադրուիլ» ՍԳր. Մծբ. «մէկի հետ խորհուրդ անել» ՍԳր. «կարծել» Աթ.* խորհուրդ *ՍԳր. Վեցօր. Ագաթ. Եղն. Բուզ. (յգ.* խորհրդանի *Մագ. մեծ են. էջ 28, 43).* խորհրդաբար *Ոսկ. յհ. ա. 31, բ. 1.* խորհրդածութիւն *Ոսկ. յհ. ա. 27.* խորհրդակալ *Ագաթ.* խորհրդական *ՍԳր. Եղն. Ոսկ. Կոչ.* խորհրդակիր *Եւագր.* մտախորհ *ՍԳր. Ոսկ. Բուզ. Ագաթ.* համախորհ *Ոսկ. փիլ.* իրաւախորհ *Եղն.* բարեխորհել *Կորիւն.* բարեխորհուրդ *Բուզ.* երկխորհուրդ *Եւագր.* զրահխորհուրդ *Գ. մակ. ղ. 9.* լայնախորհուրդ *Մծբ. Նոր բառեր են՝* խորհրդաժողով, խորհրդակցական, խորհրդանշան, խորհրդարանական *են։ Արմատիս երկրորդ ձևն է* խոհ, *որ կազմուած է ր-ի անկումով. առանձին գործածուած կայ միայն* խոհ «դիտուն» *Հին բռ. որից* խոհիլ «մտածել» *Տիմոթ. կուզ, էջ 9, 35, 116.* իրաւախոհ *ՍԳր. Ոսկ. Ա. կոր.* անխոհ «անմիտ» *Տիմոթ. կուզ, էջ 314.* մտախոհ *Մն. ղ. 6. Բ. մակ. ժդ. 8. Ոսկ. մ. ա. 15.* ողջախոհ *Փարպ.* ողջախոհութիւն *Ոսկ. յհ. ա. 35.* բղջախոհ *Պիտ. Կղնկտ. գրուած նաև* խոխ՝ *ինչ.* համախոխ *Անան. ժմնկ. 51, 65. բառասկիզբը գտնուած օրինակները բոլոր յետոսկեդարեան շրջանին են պատկանում. այսպէս՝* խոհական, խոհականութիւն, խոհեմ, խոհուն *են՝ Փարպ. Խոր. Պիտ. են. (մէկ անգամ միայն կայ* խոհեմ «խորամանկ» *Կիւրղ. ծն.)։ Սրանից հետևում է՝ որ* խոհ *բառի մէջ* ր-ի անկումը սկսած է հազիւ ոսկեդարի վերջը և այն էլ նախապէս *բառավերջում, որից անցել է և բառասկիզբը։*

Justi, Zendsp. 79 *զնդ.* kar «մտածել, խորհիլ» *արմատից? Հիւնք. պրս.* խահիտէն *(իմա՛* خواهیدن xvāhīdan) «կամենալ, խնդրել»։ Pedersen, *Հայ. դր. լեզ. 57 առնս.* kratu, *զնդ.* xratu *և հյ. խրատ բառերի հետ՝ իբրև հնխ. շրջեալ* *qhortu *արմատից*։ Patrubány *ՀԱ 1910, 118* խոր *բառից*։ Քիւրքեան, *Բազմ. 1910, 153* խոկ *բառից*։ Karst, *Յուշարձան 428 թթր.* ot, oj, oi «միտք, խորհուրդ, խորհիլ»։

ԳԻՒ.—Ղզ. խորուրդ՝, *Ագլ. Մշ.* խօրուրդ՝, *Ախց. Երև. Կր. Ննխ.* խօրուրթ, *Տփ.* խօրուրթ, խօխուրթ, *Մրղ.* խօրխուրդ, *Սլմ.* խորխուրթ, *Ոզմ.* խորխուր «գաղտնի խորհրդակցութիւն»։ *Արևմտեան գրեթէ բոլոր Հայոց բարբառների մէջ կայ բառս՝ թաղական և այլ խորհուրդների համար. բայց բոլորն էլ գրականից փոխառնալ։ Համմտ. նաև Սեբ.* անխօրուրթ «չմըտածող»։ Բայական ձևով կայ միայն Ակն. խօյհրիլ, խօյհիլ։

ՓՈԽ.—Ուտ. խօռուրթ *«խորհուրդ»։*

ԽՈՐՁՈՒԻԼ *տե՛ս* Խաւարծիւ։

ԽՈՐՁՈՒՆՁ *տե՛ս* Ձունձ։

ԽՈՐՇ, ի *հլ. «փոս, ծակ, խորութիւն, ծովածոց, անկիւն, զգեստի ծալք, երեսի կընճիռ» ՍԳր. Եւս. քր. Ոսկ. Բուզ. Կոչ. Մծբ. «անհարթութիւն, թերութիւն» Ոսկ. եփես. 882—3. որից* խորշ առնուլ *(ի հողմոյ) ըբամուց ուռիլ (առագաստի)» Վեցօր. 129.* խորշանկեալ *«կնճռուած» Վեցօր. 97.* խորշահաղ *«հագուստի ծայրը վեր ծալած» Ոսկ. ա. տիմ. ը.* խորշխորշան *«հագուստի ծալքերը» Բուզ.* խորշեղէն *«վէտ ի վէտ» Մծբ.* անխորշ *«անծայրածիր» Վեցօր.* վեցախորշ *Առ որս.* ծովախորշ *(նոր բառ).—ում մասնիկով աճած է* խորշում *«երեսի կնճիռ» (յատուկ է արդի գրականին), որից* խորշումերես *Եփր. թգ. էջ 456 (գրուած է համաոօտագրութեամբ* խրշմերես. *տե՛ս ժմերես և ՀԱ 1913, 300).* խորշումիլ *«կնճռիլ» Օր. լդ. 7. Ոսկ. մրգր. բ. (գրուած* խորշմեալ*).* անխորշում *«առանց կնճիռներու» (նոր բառ).—բայական գործածութեամբ ունինք* խորշիլ *«վախենալով փախչիլ, կծկուիլ, զգուշանալ, զրզուիլ, քաշուիլ, ամաչել» ՍԳր. Սերբր. Ոսկ. յհ. ա. 12, որից* անխորշ *«համարձակ» Ագաթ.* խորշանք *Ոսկ. յհ. բ. 27.* խորշումն *Նիւս. Լմբ. ևն (իմաստի զարգացման համար հմմտ. աշխ.* խաշուիլ *«կնճռիլ և ամաչել», տճկ.* čekilmek *«քաշուիլ, կնճռիլ» և* čekinmek *«ամաչել, քաշուիլ»)։*

ՆՀՔ հանում է խոր *բառից?—Հիւնք.* խոժռոիլ *բառից* խորշիլ *և սրանից էլ* խորշ։ *Բ. Խալաթեանց ՀԱ 1902, 399 աասւր.* ḫuršu *«լեռ», հբր.* הרש xōreš *«լեռ, անտառ» բառերի հետ։*

ԽՈՐՇ *«փոքր երեխայ, մանուկ (առանց սեռի խտրութեան)». նորագիւտ բառ՝ որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Մագ. քեր. 242՝ հոմանիշների մի շարքի մէջ. «Տղայ, դիեցիկ, ստնդեայ, տարրա, խորշ. այս ոչ ունի նշանակութիւն թէ արականք են, թէ իգականք. և ահա են աննշանակք»։ Նոյն բառըն է նաև Բառ. երեմ. էջ 145* խորշ *«զաւակ կամ խնծոր», ուր* խնծոր *բառով պէտք է հասկանալ «արգանդ». հմմտ. գւռ.* խնծորիկ *«արգանդի բերանը»։ (Տե՛ս իմ Հայ. նոր բառեր հին մատ. Բ. 107, 298)։*

ԽՈՐՇ *«խոշոր կտոր, կտոճ». մէկ անգամ ունի կլիմաք. «Շարժումն աղօրեաց փոյթ՝ զցորեանն խորշ խորշ արտաքսէ»։*

ԽՈՐՇ *«խորշակ, տաք քամի». մէկ անգամ ունի Ոսկիփ. «Առաքեմ ի վերայ ձեր խորշ քամի, որ մինչ ի լերինս խարշէ և այրէ»։ Աւելի սովորական է* խորշակ, *ի—ա հլ. «տօթ, հարաւային տաք և վնասակար քամի, եբաշտ, չորութիւն» ՍԳր. Ագաթ. Ոսկ. յհ. ա. 17, Եզն. 17, 19. որից* խորշակաճար *ՍԳր.* խորշակաճարութիւն *Բ. մն. գ. 28.* խորշակոտ *Ոսկ. մ. գ. 8.* բազմախորշակ *Ոսկ. լուս.* խորշակայեղց *Պիտ. ևն։*

=Բառիս հետ նոյն է երևում եբրայեց. חרישי xarīšī, *որ միայն մէկ անգամ գործածուած է Ս. Գրքի մէջ՝ Յովն. դ. 8, հետևեալ ձևով.* רוּחַ קָדִים חֲרִישִׁית roxa qādīm xarīšīt, *որ թարգմանուած է յն.* πνεύματι καύσωνι συγκαίοντι *=հլ.* ճողմոյ խորշակի տապախառնի։ *Արդի մեկնիչները սոյն եբր. բառը մեկնում են «արեւկեան հեղձուցիչ քամի» և հանում են եբր.* חרש xrš *«կտրել, տաշել»=ասոր.* ܫܪܫ xraš *«սպանել»=արաբ.* حرث ḫarθ *«հերկել, մշակել» արմատից։ Արդեօք հայերէն բառը սեմական փոխառութի՞ւն է, թէ պատահական նմանութիւն ունի։—Աճ.*

ՀՀՔ խարշել *բայից։ ՆՀՔ* խորշելի *կամ* խարշող օդ, վրաց. խորշակի։ *Տէրվ. տե՛ս* խարել *բառի տակ։ Հիւնք. պրս.* խուրշաա *«արև»!*

ՓՈԽ.—Վրաց. ხორშა խորշա, ხორშაკი խորշակի, ხვარშაკი խվարշակի, ხუარშაკი խուարշակի *«հեղձուցիչ տաքութիւն»,* ხვარშაკოვანი խվարշակովանի *«սաստիկ՝ կիզիչ՝ հեղձուցիչ տաք», Թուշ.* ხორშა խորշա *«ջերմ, տենդ»։—*Justi, Dict. Kurde 154 *մեր բառի հետ է համեմատում քրդ.* خوشاك xuršag. *այս բառի նշանակութիւնը՝ առնելով* Klaproth-*ի* Mines de l'Orient *(հտ. IV, Vienne) աշխատութիւնից՝ դնում է «ծիածան», բայց կարծում է որ հեղինակը սխալ նշանակած պիտի լինի։*

ԽՈՐՇԱՓԵԼ *«քարոզել». ունի միայն Բառ. երեմ. էջ 144։*

ԽՈՐՈՊ. *անստոյգ բառ, որ նշանակում է ըստ ԼԽՀ. «կնիք կուսութեան, միգն կանացի» (իբր բժշկարանից առնուած) կամ ըստ ԱՒ «կուսութիւն, կոյս աղջիկ»։ Սրա հետ նոյն է խորոպճին «կանանոց, կանանց բնակարանը» Փիլ. լին. էջ 256, որ Բառ. երեմ. էջ 145 մեկնում է «իգի ծննդական մասն», իսկ էջ 58 բուսոց հոմանիշ բառի բացատրութեան մէջ դառնում է խորապանիկ։*

ՆՀԲ յիշում է յն. χόρη «կոյս աղջիկ»։

+ ԽՈՐՈՎ «կրակի վրայ այրելը». առանձին գործածուած է ի խորովս արկանել «ձի մէջ՝ Բուզ. դ. 6. որից խորովել ՍԳր. Ագաթ. խորովիլ Ոսկ. խորոված Շնորհ. խորովոյլ Մանդ. (որ և խորովու Մխ. ապար. խորովոյ Եղիշ. մատն. 245). խորովաճիճ «աղաչանք» Ոսկ. մ. բ. 27. բերխորով Մխ. բժշ. աղեխորով, սիսեռնախորով (նոր բառեր) ևն։

= Բնիկ հայ բառ՝ հնխ. qor- արմատից, որի վրայ ընդարձակ տես խար «այրել, դաղել»։

Petersson KZ *279* **խորովել** *և խարշել կցում է լիթ.* kársztas, *լեթթ.* ka'rsts *«տաք» բառերին և հանում է հնխ.* qhor-, *աճած* qhors- *արմատից։ Նոյն.* Ar. u. Arm. Stud. *43 միացնում է լիթ.* kùrti *«տաքացնել», գոթ.* haùri *«ածուխ», հնորվ.* hyrr *«կրակ» բառերին, որոնց հետ նոյն է գտնում ուգրո-ֆիննական լեզուներից՝ ֆիննն.* koru *«խանձի հոտ», լիվ.* korb *«այրել», հունգ.* harap *«հրդեհ»։*

Գիւմ.—Ջղ. խօրվել, *երև.* խրօվէլ, *Գոր. Շմ.* խրովիլ, *Ալշ. Մշ. Սչ.* խօրվել, *Ախց. Հւր. Ննխ. Սեբ.* խօրվէլ, *Տփ. Տիգ.* խօրվիլ, *Խրբ.* խօռվիլ, *Ղրբ.* խրա՛վէլ, *Ագլ.* խրա՛վիլ, *մնկ. Տփ.* խօ՛խօ։ *Թրքախօս Հայոց մէջ՝ Ատն. Խաւրէլ օլմագ «խօրովիլ» (Արևելք 1888 նոյ. 8—9).—Նոյն արմատից ունինք Մրդ.* խրոված, *վն.* խուռուղու, *երև. Մշ.* խօռօվու, *Ննխ.* խօռու, *Ախց.* խօռվին։

ԽՈՐՈՆ *«գեղեցիկ», որից փաղաքշական* խորոսիկ *«գեղեցիկ». հնից աւանդուած չէ և կայ միայն յետին հայերէնի մէջ. ինչ. Թղկր. 37 (Աչերդ է թուխ ու պէտ, դու խօրօտիկ ես), էջ 39 (Աչխարհս խօրօտիկ գէմ դու մէնակ չես)։ Կենդանի է այժմ էլ շատ գաւառականներում. ինչպէս՝ Ալշ. Ախց. Ագ. Բլ. Բզ. Բս. Լ. Խ. Խթ. Խլ. Խն. Կր. Մկ. Մշ. Նբ. Շիր. Շտ. Ջրս. Պլ. Սլմ. Սս. Սր. Վն. Տիգ։*

= Թուում է թէ թաթարական փոխառութիւն է. համմտ. նաքութ. kärätik *«գեղեցիկ, սիրուն»։—Աճ.*

Պատահական նմանութիւն ունի արաբ. خورد xurud *«համեստ, պարկեշտութիւնից՝ քիչ խօսող աղջիկ» (Կամուս, Թրք. Թրգմ. Ա. 603)։*

ԽՈՐՈՓԵԼ. *անստոյգ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Եւագր. էջ 97 «Մի՛ ի գիշերին առուփել գիւացն զողասջիր. գիտասջիր զի նոքա և ի վերայ խոզիցն անգամ անձամբ իշխանութիւն չկարացին գտանել». այստեղ մի ձեռագիր, որ յաճախ լաւագոյն ընթերցուածներն է ներկայացնում, ունի խորոփելոյ, որ աւելի ճիշտ է երևում։ Դժբախտաբար հրատարակիչը յոյն բնագրի համապատասխան բառը չէ դրած, որ կարելի լինէր նշանակութիւնը ստուգել։*

ԽՈՐՏԱՔՈՐՏ *տե՛ս խորթ։*

***ԽՈՐՏԱԿ** *«մանր, փոքր». գործածուած է յետին Բժշկարաններում՝ միայն խորտակ կակուլայ, խորտակ ծոթորուն «մանր կակուլայ, մանր հիլ» ձևերով (տե՛ս Նորայր ՀԱ 1924, 551). մէկ անգամ էլ գտնում եմ Գառն. 66, ուր սակայն իմաստը բոլորովին տարբեր է երևում. «Հեզուսիանք բևեռակալք, ի բարձանց գահավիժեալք, խորտակօք սուզեալք, նեռիւք հարեալք»։ Այս արմատից են խորտակել «կոտրատել, ջարդել, փշրել» ՍԳր. Ոսկ. խորտակումն ՍԳր. Եղն. էջ 18. խորտակիչ Նար. անխորտակելի Նար. դիւրախորտակ Ոսկ. յհ. ա. 42. բազմախորտակելի Նար. Նոր գրականի մէջ յարմարեալ ձև է խորտրճկեց։*

= Պհլ. xurtak *«մանր, փոքր», մանիք. պհլ.* xurdag *«փոքր» (Salemann ZAH 8, 92), պազենդ.* xurdak *«չնչին իկք», պրս.* xurda *«փոքր, մանր, կտորտուք,*

կտորտանք», خرد xurd *«մանր, փոքր»* (Horn § 507): *Սրանից է փոխառեալ նաև թրք.* xurdalamaq *«մանրել, կտրատել»,* xurdavat *«մանր մունր, հին ու մին բաներ»,* xurdavatjə *«հնոտիք ծախող»:—Հիւբշ. 161:*

Նշ՛ր պրս. խիւրտ *«մանր» բառից:* Spiegel, Litteratur 99 *հայ. բառը սրխալմամբ «դէզ» հասկանալով՝ կապում է պհլ.* aurtak *բառին, որ մեր ձևով է մեկնում:* Lag. Btrg. bktr. Lex. *39 պրս.* xurda:

*ԽՈՐՏԻԿ, ի–ա *հլ. «կերակուր, համադամ» ՍԳր. Կոչ. 62. Եփր. (Հրտբ. ՀԱ 1912, էջ 666—7), Վեցօր. 65. որից* խորտակարար *Ա. Թագ. ը. 13,* խորտակարարութիւն *Վրք. ոսկ. Երզն. ժ. խորան.* բազմախորտիկ *Ոսկ. Փարպ.* բերևախորտիկ *Ոսկ. յհ. ա. 21.* լիախորտիկ *Ոսկ. զկ.* խորտակերութիւն *Վրդն. սղ:*

=պհլ. ꜱꜱꜱ

«տախտակ» և սանս. skhadate «ճեղքել»։

ԳԻՒ.—Ալշ. Հճ. Մշ. Ջղ. Վն. խոց, երև. խրբ. Հմշ. Շմ. Պլ. խօց, Ախց. խօցօտ (հկայ խօց), Սեբ. խէօց, Ասլ. խէօ՝ց, խէօ՝ս, Մկ. Ոզմ. Տփ. խուց, Մրզ. խուի՝ց, Ջթ. խիւց.—իսկ Սչ. խօցել և Ննխ. խօցել «խօսքով վիրաւորել».—խոստել ձևից են Ակն. Պլ. խօսդել, Ջթ. խուստուկ «կծու ցաւ», խիսդգիլ «խոստել»,—նոր բառեր են խոցաւոր «սգաւոր», խոցոտիլ, խոստկոտիլ, խոստկաճար, նաև խոց «փոսուիման նշաններ պոռուղների վրայ»։—Այս վերջինի հետ կապ չունի խեց երև. «խաղողի և այլ պտուղների հասնելու նշան երևելը» (Ամատ. Հայոց բառ ու բան, էջ 275), որ պէտք է հասկանալ խեծ<խայծ (տե՛ս այս բառը)։ խրբ. խօսդուզ «փորի ևն ցաւ», բայական ձևով խրբ. խոսդալ, Սչ. խօսդ՚ել։

ՓՈՒՆ.—վրաց. ხოცა խոցա, აღმოხოცა ադմոխոցա «սպանել, խողխողել, անճիտել, ջնջել», ნახოცი նախոցի «սպանուած», აღხოცა աղխոցա «սպանել, ջնջել, անճիտել», დახოცა դախոցա «սպանել, մեռցնել», დახოცა ხიმშილით դախոցա սիմշիլիր «քաղցով սպանել», მოხოცა մխոցա «շարունակել բնաջնջել գաղաններին, продолжать истребление зверей»։

ԽՈՒՄԶԵԼ. նորագիւտ բառ՝ որ մէկ անգամ ունի Ներսէսովիչ, Բառ. լտ.-հյ. էջ 536ա լտ. tendo բառի դէմ. այսպէս՝ tendo «դիտեմ, մրցիմ, լարեմ, սփռեմ, խուազեմ». դժբախտաբար սոյն լտ. բառը ունի շատ առումներ. այսպէս՝ «տարածել, ձգտել, լարել. 2. մատուցանել, ընծայել. 3. շարունակել. 4. հակիլ, միտիլ. 5. ձգտիլ. 6. դիմադրել, մրցիլ. 7. կռուի համար ճակատ յարդարել». և յայտնի չէ թէ սրանցից որի՞ն է համապատասխանում խուազել։

ԽՈՒՄԿ տե՛ս խփիակ։

ԽՈՒՄԱՆԱԼ «սլանալ, արծուի յարձակիլը». անատոյգ բառ՝ որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Յասմ. դեկտ. 19 (էջ 337ա) «Որպէս արծիւ խըւացեալ ի բարձանց և գհոգին որ լինի ի ձեռն սատանայի՝ կորզէ»։ Անատոյգ եմ համարում բառս, որովհետև կարող է լինել սխալ ընթերցուած՝ փոխանակ սլացեալ կամ խոյացեալ։ Մի նոր վկայութիւն է պէտք ընթերցուածը ուղիղ համարելու համար։

ԽՈՒԻԵԼ «նեղել, չարչարել» Ա. Թագ. իե. 7, 15, 21. Ղուկ. գ. 14. Ոսկ. կող. 594. Եփր. Հռ. 14. Բ. կոր. 99։

ՆՀԲ «որպէս թէ իբրև զխոյ բախել կամ հարկանել»։ Տէրվ. Altarm. 30 յն. ξύω «քերել, քորել», թերևս նաև գնդ. skutara «նեղիչ» բառերի հետ։ Նոյն, Նախալ. 112 գնդ. սկու-տարա, յն. καύαξ «խծբծող», լտ. cavilla «խծբիծ» ձևերի հետ՝ հնխ. sku «նեղել» արմատից։ Հիւնք. գովել բայից։ Պատահական են Թուում կովկասեաններից վրաց. ხევა խեվա «պատառել, պատառոտել», ხევნა խվեվա «կապել, կապկպել», ამოხევა ամոխեվա «պատառել», გამოხევნა գամոխվեբա «դուրս քաշել, ծածկել, պահել, դողանալ», լազ. խվ «նետել, թափել, ծակել, բաղել», օկօխվ, օկօխու «ապականել, փճացնել»։

ԳԻՒ.—Նո՞յն է արդեօք խվալ Ախց. Ննխ. «խանգռտիլ». 2. Ննխ. «զզուիլ, գանիլ».—նկատելի է որ հյ. զզուիլ բայն էլ՝ որ նախապէս նշանակում էր «հարստահարել, չարչարել, նեղել», յետոյ դարձաւ «գանիլ»։

ԽՈՒՉ. արմատ առանձին անգործածական, որից կազմուած են խզել «պոկել, փրցնել, կտրել. 2. մազերը կտրել» ՍԳր. Ագաթ. Ոսկ. «ներքինացնել» Խոր. 36. կթ. խզումն Մխք. ա. 16. խզիւն «մազերը պոկելը» Մանդ. անխզելի Ոսկ. յհ. ա. 14. անխզութիւն Փիլ. խզօն Վրդն. սղ. դժուարախզելի Տօնակ. սաստկական մասնիկներով ունինք՝ խզտել Մագ. թղ. 137. խզրատել Յայսմ. ապր. 29, Առաք. պատ. 109. արմատը առանց սղման պահում են անխուզ «անխզելի, անտաշ» Փիլ. բագն. ծայրախուզ «ծայրից կտրուած» Եղիշ. այլակ. 237. կենախուզ Խոր։ Արմատը երեւան է գալիս նաև խոյզ ձևով, որից խուզել «կտրել, հնձել» Մեսր. եր. Նար. խուզումն «կտրելը» Մաշտ. սոռախուզել «տակից կտրել» Նար։

ՆՀԲ լծ. հյ. գզել, *ւեցել, կորզել, ճատաճել և յն.* σχίζω, *արաբ.* խէզ, խէզել, խէր, *թրք.* էյամէք: *Հիմնք.* խզել=յն. σχίζω, խուզել=*թրք.* qəsalatmaq «կարճացնել»: Karst, *Յուշարձան 401, 404 սումեր.* g'as «կտրել», *իսկ 419, 428 թթր.* üz, öz, ös, os, yüz «խորտակել ևն»: *Պատահական նմանութիւն ունին արաբ.* خذ xaḏ «ջարդել» (*Կամուս, թրք. թրգմ. Բ. 564*) և خز xaz' «կտրել» (*անդ, էջ 565*):

ԳԻՒ.—Ախց. Ննխ. խուզել, *Մրղ.* խուիզել, *Գոր. Ղրբ.* խո՛զիլ, *Ագ.* խէ՛զիլ «մազերը խուզել», *արմատական ձևն ունի լ.* խուզ «բուրդ կտրելը» *կամ «խուզուած բուրդ».— ածած* խզտել *ձևից են Ալշ. Մշ.* խզդել, *Տիգ.* խզդէլ, *Խրբ.* խզդիլ, *Զթ.* խը՛զդիլ «պատառել» (*Համմտ. Քուչ. 55՝ «Խզտեց գիւր կանանչ շապիկն, զկարմիր մի շուտով հագաւ»*):

ՓՈԽ.—Վրաց. გახუზვა գախուզվա «մազերը խուզել. 2. ճաղատ դառնալ. 3. կրօնաւորին կարգազուրկ անել (որ կլինի միրուսը խուզելով)», ხუზვა խուզվա «ճաղատ դառնալ» (*Ջուբինով², էջ 1758*), *արևել. թրք.* كزامك kuzamak «ձիու են մազերը խուզել» (Schaw, A sketch):

**ԽՈՒԶԱՄԻ «մի տեսակ բոյս.* lavanda spica» *Բժշ. ունի միայն ՀԲուս. § 1136:*

=Արաբ. خزامى xuzāmī «մի տեսակ անուշահոտ բոյս է». *սրա ընդարձակ նկարագրութիւնը տե՛ս Կամուս, թրք. թրգմ. Գ. 441. նոյն բառը Շթայնշնայդէրի մօտ* (WZKM *12, 16*) *ունի* لوخزامى xuzāmā *ձևն էլ և մեկնւում է լտ.* lavendula:—*Աճ.*

ԽՈՒԶԵԼ «փնտռել» *տե՛ս խոյզ:*

ԽՈՒՉԵԼ «կտրել» *տե՛ս խուզ:*

+**ԽՈՒԽ**, ո *հլ. (յեռնաբար ի հլ. ինչպէս ունինք Սարգ. ա. յհ. դ. էջ 535 գրծ.* խթիւ) «ոտքի տակ արգելք, խոչընդոտ» *Ես. ծէ. 14. Ադաթ. Ոսկ. փիլիպ. «ծովի մէջ ցցուած ժայռ» Ոսկ. մ. ա. 5, բ. 1, Երր. ժդ. «անհարթ (ոճ կամ լեզու)» Եւս. պտմ. 579. Արծր. որից* խրուտ *Ոսկ. Հռոմմ. էջ 166. Նոյն բառն է նաև* խոյտ «կոկորդիլոս» *Վրք. Հց. ժե. Նշանակութեան տարբերութեան համար տե՛ս* խիր *յառի տակ:*

=Նոյն է խայթ *արմատի հետ, որի հետ կապվում է իրրև ձայնդարձ (տե՛ս* խայթ*):*

ՆՀԲ խէր *բառի հետ: Տէրվ.* Altarm. 28—30 խոթել *են բառերի հետ՝ սանս.* skund «դուրս ցատկել», *անգլք.* skuta «դուրս ցատկել», skuti «ցցուած ժայռ» *են: Հիմնք.* խածանել *բայից: Այսպէս նաև Թիրնաքեան, Կարնամակ ծան. 88: Ղափանցեան, Տեղեկ. ինստիտ. 2, 95* խորթ *բառից:*

ԳԻՒ.—Ղրբ. խիւր «հարթ դեռևի վրայ բարձրացած բլուր», *որից* խուրճիվայր «բլուրն ի վայր», խուրճիվեր «բլրից վեր», խիւրուպիս «խորթուրդ»:

ՓՈԽ.—Վրաց. ხვოჭი խւրճի, ხვიოჭი խվիրճի «կոկորդիլոս. 2. մողէս», ხუთო խուրո «թռչուններից բուժող մի բար» (*ըստ Օրբելեանի*), «ժանդր չնջող բար» (*ըստ Ջուբինովի*), *մինգր.* ხვითო խվիրո «թանկագին բար՝ որ օձն է բերում» (Кипшидзе, Грам. мингр. СПет. *1914, էջ 403*):

**ԽՈՒԺ (յեռնաբար ի, ի–ա հլ.) «վայրենի, բարբարոս» ՍԳր. Ոսկ. մ. ա. 6. բ. 18. որից ժաբար Բ. մակ. ժե. 2. ժական Խոր. ՅՀ. կթ. ժդուժ Եւս. պտմ. ժդժագոյն Բ. մկ. և 22. ժարանել «չիմար ու խառնակ խօսիլ» Վրք. և վկ. Ա. 700. խռովախուժ Վրք. և վկ. Բ. 183. խառնախուժ Եւագր. արմատի ու ձայնաւորը կարող է մնալ անկորուստ, ինչպէս որ սեռականումն էլ ունինք* խուժի, խուժաց *կամ* խժի, խժաց. *այսպէս նաև* խուժադուժ *Բ. մակ. ժ. 4, դ. 40. Ոսկ. յհ. ա. 1, մ. բ. 1. Ագաթ. Կորիւն Կոչ. 176.* խուժական *Եզն.* խուժային *Նար.* խուժդուժ *Ոսկ. մ. ա. 5, 7, դ. 3 և ես.* խուժել «աւազակի պէս յարձակիլ» *Բ. մակ. ժդ. 43.* խուժան *(գրուած նաև* խունան*) «խաժամուժ ամբոխ» (բուն «բարբարոս». Համմտ. Ոսկ. մ. բ. 18. «Զխուժանն և զվայրենիս դարձոյց» յն. մէկ բառով՝ «բրբարբարոս»). Նոր բառեր են* խուժանային, խուժանավար, խուժանապետ:

=Պարսկաստանի խուժաստան *գաւառի անունից, որի ժողովուրդը վայրենիի համբաւ ունէր. Համմտ. պհլ.* Xužistān, *պրս.* خوزستان Xūzistān, *ասոր.* ܟܘܙ Xūz «խուժաստան», *պհլ.* *xužīk, *պրս.* خوزى

xūzī «խուժիկ, խուժաստանցի»։ Ջանազան ազգերի անուններ իրրև ածական գործածուած՝ տե՛ս դուժ բառի տակ։

Ուղիղ մեկնութիւնը տուաւ նախ Աւետիքեան, Մեկն. Թղթ. Պօղոսի, Ա. 957։ Նոյնը թերևս նաև ՆՀԲ։ Lag. Arm. Stud. § 1020 խուժիկ = պրս. xūžī «խուժաստանցի»։ Հիմնք. ուղիղ է մեկնում խուժ, բայց խուժել հանում է խուսափել բայից։ Սագրզեան ՀԱ 1909, 334 սումեր. guši «ժողովուրդ, բազմութիւն». Karst, Յուշարձան 405 սումեր. huši «խումբ, ժողովուրդ»։ Պատահական նմանութիւն ունի չին. 忍 苦 hu´-žán² «յանկարծ»։

Գիմ.—Արդի ժողովրդական լեզուում շատ սովորական դարձաւ խուժան ձևը։ Բառիս առաջին իմաստն էր «թալանչի ամբոխ՝ որ գնում էր ջարդարար խմբերի յետևից». յետոյ դարձաւ ընդհանրապէս «փողոցային մարդ կամ երախայ», և այժմ գործածական է իրրև նախատական ածական։ Մի քանի տարի առաջ՝ դրամական անկայունութեան միջոցին, այսպէս էին կոչւում նաև մանրադրժէք թղթադրամները։ Ոսկու կուրսի վերահաստատումով այս վերջին իմաստը վերացաւ։

Փոխ.—Վրաց. უფოკი ուժիկի, ჰუფოკი հուժիկի, ხუფოკი խուժիկի «խուժիկ, խուժաստանցի», უჟადუფი ուժադուժի «խուժդուժ, վայրենի» (տե՛ս Մառ ЗВО 13, 0137)։ Բառս անցել է նաև Երևանի թուրքերին xužan «փողոցային մարդ» ձևով, որից էլ xužanxaña «գռեհիկ մարդոց սեղ»։

Խոիժդն կամ **Խիժդն** «խստութիւն, յամառութիւն». բուն ձևը անյայտ է, որովհետև պահուած է միայն ներգ. ի խժդան ձևով. մէկ անգամ ունի Սերեր. 96 «ի խժդան և յոխորտի կայցեն»։ Սրանից ունինք խժդալ «յամառիլ», որ գիտէ միայն ՀՀԲ (չունին ՆՀԲ, ՋԲ և ԱԲ)։

ՆՀԲ հանում է խուժ բառից։

Խոխ, ի հլ. «ականջը չլսող, քառ» ՍԳր. Կոչ. «անխօս» Եփր. Համաբ. որից խլանալ Մխք. է. 16. Ագաթ. խլացուցանել Եղիշ. խըլխըլել «սուտ խուլ ձևանալ» Ովս. ժ. 13. խլութիւն Ոսկ. ես. խուլակոյր Կոչ. 148. անխուլ «ամայի, անբնակ» Ոսկ. մտթ. և եփես. «լատ դիպաց, պատահաբար» Ոսկ. եփես. զանխուլ «ծածկեալ, լռիկ, գաղտնի» Ոսկ. եփես. «ծածուկ տեղ» Ա. Թագ. իե. 20. «ծածուկ, լռիկ մնջիկ, անյայտաբար» եւս. քր. «անտեղեակ» ՅՀ. կՔ. Լմբ. Երզն. քեր. զանխլանալ «թաքչիլ, պահուիլ» Պիտ. ՅՀ. կՔ. զանխլաբար Խոր. Ջքր. կՔ. անխլաբար Լմբ. իմ. անխլանալ Դիոն. Թղթ։

ՆՀԲ խօլ բառից, իբր «խօլ լսելեօք»։ Justi, Zendsp. 79 զնգ. karapan «խուլ»? Հիմնք. լատջ բառից խուլ է դնում. իսկ զանխուլ հանում է պրս. zangūla «զանգակ» բառից։ Meillet MSL 10, 282 յն. χωλός «կաղ», χαλάω «թուլացնել», χαλαρός «թոյլ, մեղկ», χαλί-φρων «թեթեւամիտ» և թերևս նաև սանս. kharvás «խեղ, խեղանդամ» բառերին է կըցում։ Ընդունում է Հիւրշ. IF Anz. 10, 48: Patrubány SA 1, 194 լտ. oc-culo «ծածկել», գերմ. hehlen «պարակել», յն. κώλον «արտևանունք» բառերի հետ հնխ. khulos ձևից։ Սագրզեան ՀԱ 1909, 335 սումեր. gula «լսել», թրք. qulaq «ականջ»։ Petersson KZ 47, 286 հյ. խօլ, խօթ, յն. κωφός «բութ, խուլ, ապուշ, անհիմն», κηφήν «բոռ, անճարակ», հսլ. chabiti «փճացնել» են բառերի հետ հնխ. qhōbh- արմատից։

Գիմ.—Ախց. Ակն. ՋԲ. Կր. ՀմՀ. ՀՃ. Մկ. Մշ. Ննխ. Պլ. ՋՂ. Ռ. Սեբ. Սչ. Վն. Տիգ. Տփ. խուլ, Ոզմ. խօլ։ Նոր բառեր են խլուիլ «խրլանալ», խլականջ «խուլ»։

***Խոխլամ** «արար ամիրայ». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Օրբել. 255—6 «Նորա ծանուցեալ զդառն աղէտս ամիրային Հրասեկայ բերդոյ և զմիւս խուլամին, որ յԱնապատ բերդի։ Ընդ որ յոյժ ցասուցեալ... ըմբռնեալ զամիրային ընտանեօք իւր ի Հրասեկայ բերդ, քարաւէժ սատակէ... և զմիւսն որ յԱնապատի, հալածեալ...»։

= Պրս. غلام ġulām «ծառայ» բառն է, որ ստացել է նոր առում. իշխանները թագաւորի ծառաներն են. համմտ. լտ. minister «ծառայ» > ֆրանս. ministre «նախարար»։—Ա՛.

*խոխլինջ, որ և խոլինջ, կոլինջ, կուլինջ «մէջքի վրայ մի տեսակ ուռեցք»։ Ունին միայն, ՀՀԲ, ՋԲ, ԱԲ և ՓԲ՝ առանց վկայութեան։ Վկայութիւնը գտնում եմ մէկ անգամ Մոլուբ. 155 ա. «Որոց ունին կոլինջս, հրամայէ բժիշկն ի կիր առնուլ յոյժ ջերմագոյն թիրակէս ամպակ գինւով»։

=Արաբ. قولنج qūlinj, qūlanj, qavlinj, qavlanj «աղիքներին յառուկ մի հիւանդութիւն է կսկծացնող և ցաւացնող, որ արգելք է լինում փքալու և բնական պէտքի» (Կամուսի Թրք. Թրգմ. Ա. 433), որից փոխառեալ են նաև պրս. قولنج kūlanj «է անուն քամիական ախտի իրիք՝ որ լինի յորովայնի», Թրք. قولنج qulinj, քրդ. qulinj «ցրտառութիւն, խիթք», ն. ասոր. kulunj «թոքերի բորբոքում», վրաց. კოლიონჯი կոլինջի «աղիքների խիթ»։—Աճ.

Ինձնից անկախաբար Թիրեաքեան, Բազմ. 1913, 341 կցում է Թրք. ձևին։

Գիւր.—Ննխ. խուլինջ, Սլմ. ղ՛ուլինջ, Համշ. ծրբ. խուլուինջ, Ալշ. Մշ. խօլինջ, Տիգ. ղ՛օլինջ, Կր. ղօլինջ, Երև. կօլինջ, Ատն. Սեբ. ղուլուինջ, ՋԲ. խէօլէօ՛նջ. սրանցից շատերը նոր փոխառութիւն են։

խոխ, ո հլ. «թանձր թուք, մաղաս» Խոսր. էջ 251. Շնորհ. սրգ. 42. Վրք. և վկ. Բ. 294. որ և դրուած է խաւղ (խօղ) Ոսկ. ա. տիմ. 112, 114. Ոսկ. ճառք. էջ 60, 229, խոխ, խօխ Վրք. հց. Ա. 572, Բ. 510, 631. Մխ. բժշ. խիխ Վրդ. առ. 266. որից խօխաբերել Կանոն. խաւղամաղձական Պիտ. էջ 491։

Վերջին բառը ձեռագրի մէջ ունէր խաւղամաղձական ձևը. արմատը են-թադրելով խաւղ՝ լհհ. մեկնում էր «մաղաս», իսկ ՆՀԲ յն. χολή «մաղձ» կամ χαῦνος «թոյլ, մեղկ»։ Նորայր, Հայկ. բառաք. 76 ցոյց տուեց որ պէտք է ուղղել խօղամաղձական։—Հիւնք. խուխ հանում է պրս. خوک kūk «հազ» բառից։

Գիւր.—Երև. Ռ. Սեբ. խուխ, Ասլ. խիխ, Ղրբ. խօխ, Ջղ. խիխ, խեխ։ Նոր բառ է խխալ «միշտ մաղաս թքել»։—Խորխ «կեղեւանք» բառի հետ շփոթելով ձևացած են Ջղ. (գիւղերը) խորխ, Կր. Տփ. խօրխ, Ախց. խօռ՛խ. աւելի հնից ունինք խողխ ձևը՝ որ գտնում եմ գործածուած Վրք. և վկ. Ա. 566 (1204 թուից)։

*խոխան 3 (սեռ. -ի) «ամբոխ, խուժան, ազմուկ, յարձակում» Ուռհ. տպ. էջմ. էջ 216, 236, 262. Սմբ. դատ. էջ 4, 42։

=Արաբ. غوغاء γauγā «կռիւ, խռովութիւն», որից Թրք. غوغا qavγa «կռիւ»։—Աճ.

Գիւր.—Կարծեմ նոյն է Գնձ. խուխա, որ թուում է թէ նշանակում է «ժողովուրդ, հաւարակութիւն». համմտ. «Մեռելի ծնողները բառասունք դուրս եկան, ժամ արին, հաց տուին խուխային, վահանի հոգեհանգիստը կատարեցին». (տե՛ս Մամիկոնեան, Հազարից մէկը, էջ 146.—դրբի վերջում կայ բառարան, բայց այս բառը չէ յիշուած)։

+**խոխ** (սեռ. -ի, յետնարար n հլ.) «հիւղ, խրճիթ, խեղճ տնակ» Կոչ. Ոսկ. մ. ա. 6 (տես նաև ՀԱ 1913, 300). որից խղատեղի Ոսկ. մ. ա. 7. խղիկ Վրք. հց. յոգ. խղկուիմ Եղիշ. այլակ. 226։—Այս բառիս հետ նոյն է նաև ճիպ, որի վրայ տե՛ս առանձին։

=Բնիկ հայ բառ՝ հնխ. squ- «ծածկել» արմատի կրճատ qu- ձևի qul- աճականից. արմատի բուն ձևն է հնխ. sqeu-, կրճատ qeu-, որ ժառանգ լեզուների մէջ երևան է գալիս ա՛յս ձևերի տակ և կամ n, l, t, r, m աճականներով. համմտ. սանս. स्कुनाति skunāti, skunōti, skāuti «ծածկել», յն. κεύθω «ծածկել, պահել», κυτίς «արկղիկ» (որից Թրք. قوطی qutə>ռմկ. խուրի «տուփ»), κύτος «պատեան, մորթ, կաշի», σκῦτος «կաշի, փոկ» σκύλος «մորթ, կեղև, կճեպ», σκύλλω «պլոկել», σκῦρος «քարի կլեփ», լատ. cutis «մորթ», ob-scurus «խաւար, մութ», լիթ. skurà «կաշի», kutỹs «քսակ», kiaūtas «ցորենի կճեպ», kūtis «մարմն», լեթթ. kúts «մարմն», հպրուս. keuto «մորթ», հբգ. scora «մորթ», hūt «կաշի», scūr «քիւ», scūra «կալ», hūs «տուն», hutta «հիւղակ», մբգ. schiel «պոկուած՝ փրցուած կտոր, կլեփ», schote «պատեան», գոթ. hūs «տուն», գերմ. scheuer «կալ», Haus «տուն», Hütle «հիւղակ, խրճիթ» (որից ֆրանս. hutte),

անգսք. scūa «*աստուեր, մութ*», sceo «*երդիք*», hyð «*կաշի, մորթ*», *անգլ.* sky «*երկինք*», house «*տուն*», *հֆրիզ.* skol «*թաքըստոց*», *հիսլ.* skaunn «*վահան*», skume «*խաւար*», skiól «*ապաստարան*», *միջդ.* cūil (*kuli), *կիմր.* cil «*թաքստոց*» *են* (Walde 534, *218*, Trautm. 132, Boisacq 880, 881—2, 539, 540)։ *Այս բոլորի մէջ հայերէնի ամենամօտիկներն են՝ ձևով միջդ.* cūil (*kūli) *և նշանակութեամբ հբգ.* hutta = *գերմ.* Hütte «*հիւղ, խրճիթ*»։ *Միևնոյն արմատը այլ ձայնափոխութեամբ տալիս է նաև հյ.* ցիւ *և* բիւ, *որոնց վրայ տե՛ս առանձին։*

Այվազովսքի, Յղ. հնչման, էջ 15 պրս. բիխ, *տճկ.* qulibe, *յն.* καλύβη *հոմանիշների հետ։ Հինք. պրս.* ḫ ‌ُ ‌ک kox «*հիւղ*» *բառից։* Patrubány *ՀԱ 1903, 381 նոյն է դնում խուց բառի հետ, որ հանում է հնխ.* sku «*ծածկել*» *արմատից. քան այսմ առաջին ուղիղ մեկնիչը ինքն է։* Scheftelowitz BB *28 (1904), 302 սանս.* khala «*կալ*»։ *Այս մեղմելով* Petersson KZ 47, 282 *մեկնում է հնխ.* sku *արմատով՝ անկախ (և անտեղեակ)* Patrubány-*ից։*

ԳԻՒ.—Խրբ. խուղ «*խրճիթ*», *Խոջ.* խուղ «*քարաշէն փոքր շէնք, որի մէջ մածուն և այլ տեսակ կաթնեղէններ են պատրաստում*». (*Նոյնը Սս.* խղուուն). *Բղ.* խուղ «*զոմաններում շինուած խրճիթ*» (*որից* խուղուր *Բղ.*), *Հճ.* խուղ «*այգիներում շինուած տնակ*», *նոյնը նաև Թրքախօս հայերից՝ Ատն.* խուղ «*հիւղ*» (*Արևելք, թ. 1888, նոյ. 8—9*)։

ՓՈՒՆ.—Մեր բառից են վրաց. ხულა խուլա, ხუხულა խուխուլա «*հիւղ, խրճիթ, փոքրիկ խանութ*», *Առանայի Թուրքերի և Թրքախօս յոյների բարբառով՝* xuɣ «*հիւղ*» (*Արեւելք 1888 նոյ. 8—9*)։—*Ուրիշ են քրդ.* ‌ک‌ول kol *և* ‌ک‌ۆنك kulik «*խրճիթ, խղիկ*», *որոնց նախաձայն* k *չի թոյլ տալիս ենթադրելու՝ որ հայերէնից փոխառութիւն լինեն. այլ ունի հաւանաբար մեր բառին արմատակից բնիկ իրանեան ձևեր են։—Այս բոլորից ջոկ ունինք խոջ.* խուլագ *և Ախց.* խիլակ «*հիւղակ, տնակ, հովուի խրճիթ*», *որոնց լ ձայնը ենթադրել է տալիս, որ այդ բառերը նոր ժամանակ յետ առնուած փոխառութիւններ են։—Մնացեալների մասին տես* հիւղ *բառի տակ։*

ԽՈՒՂ. *արմատ անյայտ նշանակութեամբ. գործածուած է միայն մառախուղ բառի մէջ, որ տե՛ս առանձին։*

ԽՈՒՂԱԿ *տե՛ս Խողովակ։*

ԽՈՒՂԲ «*աւելած աղբը, աղտեղութիւն*». *մէկ անգամ գործածում է Ոսկ. ա. տիմ. ը. էջ 69 (այլ ձեռ. խաղր). որից* աղբախուղբ *Փիլ. նխ. էջ 115 և քհ. 199։*

ՆՀԲ դրած է խաղր «թակարդ, չուան» բառի տակ։ ՋԲ դնում է խաղր «ցնցոտի»։ Առաջին անգամ ԱԲ ուղղում է վերի ձևով։ Նոյնը նաև Նորայր, Հայկ. բառաբ. էջ 4։ Petersson 43 (1925), *էջ 77 խլէզ «մողէս» դնում է խլիճ բառի հետ. (Համմ. մողէս բառի ծագումը քան* Lidén). *սրանց արմատը խիլ՝ նոյն է խիղ «կեղտոտ» (չկայ այսպէս բառ) և խուղը «կեղտ» բառերի հետ, որոնց հետ համմ. սերբ.* häla «*կեղտ*», *սանս.* čikhalla «*ճահիճ*». *սրա հետ էլ նոյն է*

խուխ = *օսս.* xului, xulji «*գիջութիւն*», *որ Բերսս հայերէնից է փոխառեալ։*

ԽՈՒՃԱՊ, *ի հլ. (յետնաբար նաև ո հլ.) «տագնապալի շփոթութիւն, շտապում, իրարանցում, խռովութիւն» Փիլ. Պիտ. Եղիշ. յոգնակի խուճապք ձևով՝ «ճիւաղ, ուրուական տեսիլ» Իմ. ժէ. 3, որ և Նորայր, Բառ. ֆր. էջ 735 ա դնում է իբրև «ֆրանս.* larves, *ոգիք չարագործք, որ ըստ անոտի կարծեաց նախնեաց լկէին զկենդանիս կամ զոգիս». որից խուճապական Ագաթ. խուճապել Իմ. դ. 14. Ոսկ. խուճապիլ՝ Մգր. խուճապեցուցանել Ոսկ. ես. խուճապանք Ոսկ. ես. գրուած է նաև խոճապ «շփոթեա՞լ» Ուռհ. տպ. էջմ. էջ 205։*

ՆՀԲ լծ. ճապ, ճեպ, խուսափ, *Թրք.* ճի-ճապ *(իմա՛ արաբ.* hijāb «*ամաչել, պատկառիլ*»)։ *Հինք. պրս.* čāpuk «*շուտ*» *և Թթր.* čap-maq «*արշաւել*»։ *Բիրեաքեան, Արիահայ բռ. էջ 187 պրս.* ‌خ‌جاو xaǰāu «*գոչիւն, աղմուկ*»։

ԽՈՒՃԵԼ «*լլկել, նեղել, չարչարել*». *անըս-*

տոյգ բառ. ունի միայն ՓԲ յաւել. առանց վկայութեան։

խոխճիճ «խրտուիլակ». ունի միայն ՀՀԲ. մէկ անգամ գտնում եմ գործածուած նւագր. էջ 319 «Եւ եղիցի երկիրն Հրէից եգիպտացւոցն խուճիճ» (չկայ ձեռ. տարբերութիւն), այս հատուածը առնուած է Ես. ԺԹ. 17-ից. «Եւ եղիցի երկիրն Հրէաստանի ի խրտուիլ եգիպտացւոցն». որով «խրտուիլակ» նշանակութիւնը ստոյգ է։ Միևնոյն բառը այլուր կայ զանազան ձևերով. ինչպէս՝ խոճիճ «խրտուիլակ» Բառ. երեմ. էջ 143 և ՀՀԲ. խուճ «խրտուիլակ» ԱԲ (մէկ անգամ գտնում եմ գործածուած Ոսկ. Ճառք 138 «Պատկերք և այլ ամենայն խուճք բնութեամբ ոչ են աստուրք, այլ մանկանցն Թուի յաղագս տկար բնութեանն»). խուճջ, խնջակ «խրտուիլակ» Բառ. երեմ. էջ 147 և ՆՀԲ (յիշում են խրտուիլ բառի տակ՝ իբր ռամկական կամ գաւառական ձև). խուճչակ «scare-crow, խրտուիլակ» Riggs էջ 57։ խուճչակ ձևը ունի Ամատունի, Հայոց բառ ու բան, էջ 292, իբր վաղարշապատի բառ «Թռչուն վախեցնելու խրտուիլակ» նշանակութեամբ։

Սագրգեան ՀԱ 1909, 335 խուճ բառին է կցում սումեր. kiši «խրտուիլակ»։ Կապ չունի վերի խուճապիճ «ճիւաղ» բառի հետ, որովհետև գւո. ձևերը չեն Թոյլ տալիս համեմատել նրա հետ։

ԳԻՒՐ.—Սեբ. խօխօջ «երեխաները վախացնելու երևակայական էակ». նոյնը նաև Եւդ. այլուր խոխ. միւսները տե՛ս վերը։

խոխճռել «քարշել». ունի միայն Բառ. երեմ. էջ 146։

խոխմ «մի տեսակ երաժշտական խազ է, որ ունի ≈ ձևը» Ոսկիփ. (ըստ Schröder նշանակում է «unda, *ալիք*». տե՛ս Peterm. ZDMG. Թ. 1851, էջ 365—72)։

***խոխիմ** «խմորուիլ, ԹԹուիլը». տե՛ս խմոր բառի տակ։

***խոխիմ** «խմելը, կերուխում». արմատ՝ որ առանձին ձևով աւանդուած չէ հնից, բայց կայ նոր բարբառներում. որից խմել «ծծել, իրեն քաշել» (ինչպէս արևի ճառագայթները ջուրն են քաշում) Վեցօր. էջ 58. «ըմպել, խմել» Վրք. հց. Բ. 381. Տօնակ. խմումն «ծծելը» նոյնն. գինեխում «հարբեցութիւն» Շնորհ. առակ. գինեխմեալ «հարբած» Ուռհ. աճխում «արբեցութիւն չսիրող» Տօնակ. բազմախմութիւն «արբեցութիւն» Պղատ. օրին. զարթխում «գինուց նոր սթափուածն» Նիւս. կազմ. Լծ. եւագր. ջրխմիկ «ջուր խմելու ման» Առաք. պտմ. 371.—այս արմատի կրկնեալ ձևերն են՝ խոխոմ (տե՛ս առանձին) և խխում (իբր *խուխում<*խումխում). հին մատենագրութեան մէջ չէ աւանդուած, բայց կայ արդի գաւառականներում։

=Փոխառեալ է կովկասեան լեզուներից. համմտ. վրաց. ხმა խմա «առնել, ընդունել, վերցնել, առնել տանիլ», ხმევა խմեվս «ուտել, խմել», ამოხმა ամոխմա «քաշել», მახმა մախմա «ընդունիլ, ստանալ, իր վրայ առնել, հանել, վերցնել».—բառիս բուն հայերէնն է ըմպել։—Աճ.

Հինք. պրս. խամ «գինի», քրդ. խում «ըմպելի» (Justi, Dict. Kurde նշանակում է «փարչ»), պրս. خم xum «կարաս գինուց», արաբ. خمر xumr «գինի» բառերի հետ։ Յ. Արշէզ ՀԱ 1896, 270 օսս. սաճ «գինի», սանս. սօմա «սրբազան հեղուկ», յն. σαναπαι (?)։ Մատ Гр. др.-арм. яз. 265 վրաց. ամմ արմատի հետ. համմտ. սումա «խմել», որից ամամս «խմում է»։ Սագրգեան ՀԱ 1909, 335 և Karst, Յուշարձան 405 ըմպել բայի հետ՝ սումեր. ima «խմել, խմիչք», immeli «ըմպելիք»։ Պատահական նմանութիւն ունին լէզգիական ջար բարբառով xim «ջուր», արաբ. إقما iqmā' «խմել»՝ قما qama' «կոկորդ» արմատից (Կամուս, Թրք. Թրգմ. Բ. 657)։

ԳԻՒՐ.—Ջղ. Սլմ. Սչ. Ալղ. Մշ. վն. խմել, Հճ. խը՝մել, Ախց. Երև. Կր. Ղրբ. Ննխ. Պլ. Ր. Սեբ. Տիգ. խմէլ, Ասլ. խմէ՝լ, Մրղ. խըմըէլ, Ագլ. Գոր. Խրբ. Մկ. Շմ. Ոզմ. Տփ. խմիլ, Համշ. խմուղ, Զթ. խը՝միլ, խումիլ, Հւր. խումէլ, Երև. մնկ. ճիմէլ։ Նոր բառեր են՝ խում «հարբեցութիւն, հարբած, խմիչք, ըմպելիքի ճաշակ», խման, խմատուն, խմելիք, խմիչք, խմուցք, խմտում, խմիչճեղէն, խմուկ, աճխմել։—Կրկնական խխում «բոլորովին Թըր-

ջուած» ձևը գիտեն Ասլ. Արբ. Երզ. Մն. Ննխ. Պլ. Ռ. (—Պլ. Ննխ. արտասանւում է խուխում, ուր առաջին վանկի ը դարձել է ու՝ յաջորդի ազդեցութեամբ). որից խխմիլ Պլ. «բոլորովին թրջուիլ», խխմէլ Պլ. «բոլորովին թրջել», խխմել Մշկ. Ք. «ջրել, ոռոգել», Ռ. «քամել», խըխըմել Վն. «պատերը ջուր քաշելով վնասուիլ», խմխիլ Նբ. «ջուրը լաւ ծծելով կակղիլ», Եւդ. «վրան թուլութիւն գալ, թմրիլ», խմխացնել Նբ. «հողէ ամանը ջրով կակղացնել», խմխուկ Նբ. «բոլորովին թրջուած», խրմխրմվել «պատը կամ թումբը ջուր ծծելով կակղիլը», խխվիլ Ագ. Բլ. «խոնաւութիւնից կակղիլ», խխվուկ Բլ. «խոնաւութիւնից կակղած», խխվուշ Համշ. «ջրի մէջ ընկղմել»։

ԽՈՒՄԱՆԱԿ *տե՛ս Ումանակ։*

***ԽՈՒՄԱՐ** «զարթխում, արբեցութիւնից նոր սթափած» Ոսկիփ. Բլկր. 33. «խենթ, գիժ» (մարդու կամ ձիու համար ասուած) Մխ. դտ. 179, 418, 432 (այս նշանակութեան համար հմմտ. իմ Հայ. նոր բառեր Ա. 60—61, ուր յիշուած օրինակների վրայ աւելացնում եմ նաև հետևեալ նոր վկայութիւնը՝ Փահլ. 71 «Փառք Աստուծոյ կենդանւոյն՝ որ կայ և մնայ յաւիտեան, զի խումարն այնչափ խելօք կը խօսի՝ եւ ասաց թէ այս մարդս խելօք է, և վասն մեղաց զայն առնէ. զի թէ դա խումար էր՝ նա հանց բան չասէր». հմմտ. նոյն հատուածի տարբերակը, անդ՝ էջ 75 «Փառք Աստուծոյ կենդանւոյն և բարձրելոյն յաւիտեան, զի այս ցեղ խեա զարմանալի պատասխան առնէ. բայց թուի ինձ, թէ չէ դա խե, այլ խելօք է»). «անմտութիւն, յիմարութիւն» Անսիզք 69 (խումար այն է որ չքերէ ու առնու)։ Որից՝ խումարութիւն «հարբեցութեան թմրութիւնը», յայնաբար «գինեմոլութիւն, արբեցութիւն» Ոսկիփ. խումրիլ (իմա՛ խումարիլ) «հարբիլ» Սմբ. դատ. 180։

=Արաբ. خمار xumār «հարբեցութեան յաջորդող թմրութիւնը. 2. գարթխում, խումար», որ ծագում է خمر xamr «գինի» բառից։ Այս բառը բնիկ սեմական է. հմմտ. ասոր. ܚܡܪܐ xamrā, արամ. חמרא xamrā, եբր. חמר xemer «գինի», որոնց բուն արմատը տե՛ս վերը խմոր բառի տակ։ Սեմականից են փոխառեալ մանիք. պհլ. ḫwmr կամ ḫwmʾ xvamr «հարբեցութեան թմրութիւնը» (Salemann ЗАН 8, 92), վրաց. ხამრო սախամրո «գինետուն», արևել. Քրք. خومار xumar «խումարութիւն». حمر xumari (R. B. Schaw, A Sketch), Ասր. Քրք. xumar «թմրած աչքերով»։—Հիւբշ. 268։

ՀՀՔ խումար մեկնում է «գարթխում»։ ՆՀՔ սխալմամբ դնում է խումար «տըխուր, ընկղմեալ ի տրտմութիւն», խումարութիւն «խոր տրտմութիւն»։ ՋՔ ուղիղ է։ Ուղիղ է նաև ԱՔ, բայց դնում է խումարիլ «տխրիլ» ձևն էլ, որ անշուշտ պետք է ուղղել խումարիլ «հարբիլ», ինչպէս դրել եմ վերևում։ Ուղիղ մեկնեց նախ Հիւբշ. ZDMG 35 (1881), 660, որ թէև դնում է խումար «տխուր», բայց համեմատում է արաբ. xumār բառի հետ, որից փոխառեալ է համարում.

Գիհ.—Երև. խումար «գինարբ», Ալշ. Մշ. Վն. խումար «սառած՝ պաղած հայհացքով (աչքեր)», Սեբ. խումար «փոքր ինչ շիլ հայհացքով» (Պլ. նոյնը կոչում է աճուշ)։

ԽՈՒՄԲ, ի հլ. «հաւաքուած բազմութիւն (մարդոց, մանաւանդ գինւորների)» ՍԳր. որից խումբ գործել «զօրք հաւաքել» Եւս. քր. խմբել «ժողովել, հաւաքել» ՍԳր. Ագաթ. «տօնախմբութիւն անել» Ագաթ. Բուզ. աշխարհախումբ Բուզ. Ագաթ. ճամախումբ ՅԿ. կթ. միախումբ Եւս. քր. ամենախումբ Եւս. քր. ազգախումբ Բուզ. տօնախմբել Ագաթ. Կորիւն. մեծախումբ Բուզ. Մծբ. բազմախումբ Պիտ. երամախմբեալ ՍԿԿ. կթ. արմաւ. խմբագիր Յերոն. նոր բառեր են՝ խմբանկար, խմբապետ, խմբապետական, խմբագրութիւն, խմբագրական, խմբագրատուն, խմբագրապետ, խմբագրապետութիւն, խմբագրել, զօրախումբ, ճաւախումբ, խմբերգ են։—Տես նաև ճամբ?

ՆՀՔ լծ. Քրք. Ֆիւմէ, ճիւմճիւռ, հլ. գումար: Lag. Btrg. bktr. Lex. 44, 40 զնդ. xumba «հողէ աման», որ մերժում է ինքը Arm. St. § 1022: Հիւնք. պրս. xunb «կարաս դինւոյ»։ Patrubány SA

2, 13 և IF 14, 58 սանս. khumbha «պատուկ» և գերմ. Humpe «ըմպանակ», յն. κῦφος «կորութիւն», լտ. incumbo «պառկիլ, յենուիլ, թեքուիլ»։

Փոխ.—Կովկասեան գւռ. թրք. xump «հայդուկային խումբ». այս բառը հայ-թուրքական ընդհարումներու միջոցին մտաւ թուրքերէնի մէջ։

*ԽՈՒՄՐԱՅ «մի տեսակ ջերմ՝ այտուցով միասին» (ըստ հին բժշկութեան). նորագիւտ բառ՝ որ քանիցս անգամ գտնում եմ գործածուած Մխ. բժշ. էջ 72, 76, 94. ըստ Seidel «erysipelas bullosum»։

=Արաբ. o حمر humra «կարմրութիւն. 2. օձացաւ, օձիկ հիւանդութիւնը» (=պրս. بد سرخ bad-i surx «կարմիր քամի»). ծագում է hmr «կարմրիլ» արմատից, ինչպէս հյ. կարմրուկ բառը համմտ. Մխիթար բժշկի հետեւեալ վկայութիւնը. «խումբրայ, որ է կարմիր և տաք այտուց» (էջ 94)։—Աճ.

*Ուղիղ մեկնեց նախ Աճառ. (անտիպ), որից յետոյ Seidel, Մխ. հեր. § 206։

Գիմ.—Մշ. խումբա «մի տեսակ ուռեցք»։

+ԽՈՒՆ «սակաւիկ, քիչ» Ոսկ. մ. բ. 23. ա. տիմ. ժդ. Փարպ. որից խուն ինչ «մի քիչ» Փարպ. որ և խուն մի Սիր. խ. 6. խուներդմնական Բր. և Երզն. քեր. խունախոն «փանաքի մատուցմամբ» (չունի ԱԲ). խունարիւն «մի քիչ բարձր» Կղնկտ. հրտր. էմ. էջ 163=Շահն. Ա. 329 (տե՛ս իմ Հայ. նոր բառեր հին մատ. Ա. էջ 16)։ Բառիս դաւառական ձևն է սուն, սուն մի «քիչ, մի քիչ» Նար. մծբ. էջ 449. Հին բռ. (խ>ս ձայնափոխութեան համար համմտ. խարխախ>սարխախ, դրախտ>դրաստ)։

=Բնիկ հայ բառ՝ հնխ. qun- կամ qhun- ձևից, որից են նաև ալբան. un՛, hun՛ «ցածրացնել, սաորացնել, խոնարհեցնել», un՛em, hun՛em «իջնել, խոնարհիլ, կռանալ, սաորանալ», ún՛ets, hún՛ets «խոնարհ, ցած, փոքր, սաոր», գւռ. ul', ul'em նոյն. նշ. ռուս. գւռ. хи́нить «նախատել, յանդիմանել, կշտամբել», սերբ. hina «խաբէութիւն», hiniti «խաբել, կեղծաւորիլ», ռուս. хи́лый «թոյլ, ծոշնած», по-хи́лый «ծռած, խոնարհած», լեհ. chunąć «ծռել», pochyly «ծուռ, կոր, ցածր», սերբ. pri-hil «խոնարհ» են (Berneker 413), ռուս. хулйть «հայհոյել, պարսաւել, վատաբանել», չեխ. chúlostivý «փորձոտի, թոյլ» (անդ, էջ 406)։—Աճ.

*Տէրվ. Նախալ. 71 խոտ, խոնարհ, հբգ. hauen «կտրել, ջարդել», heu «խոտ», գոթ. huns «խոնարհ, խուն», հսլ. kovatĭ «կտրել» ձևերի հետ՝ հնխ. ku, kun, kud «կտրել, կոտրել» արմատներից։ Հիւնք. յն. γοῦν «գոնէ» ձևից։ Meillet, Et. slave 1, 174 հսլ. xudŭ «փոքր, խեղճ», գոթ. hauns «ցածր, խոնարհ», յն. κοῦφος «թեթեւ» բառերին ցեղակից է դնում։ (Հակառակ են Berneker 405 և Boisacq 504): Patrubány ՀՍ. 1903, 381 նոյն ընդ խուղ, խուց, որոնց վրայ տե՛ս Pedersen, Հայ. դր. լեզ. 79 մերժում է թէ՛ հսլ. xudŭ (իբր=սանս. kšudra «փոքրիկ») և թէ գոթ. hauns «սաորին» բառերի համեմատութիւնը և միացնում է խնամ, խնայ բառերի հետ, արմատը խուն՝ ըմբռնելով իբրև «ջանք, ճիգ»։ Karst, Յուշարձ. 404 սումեր. gina «փոքր, քիչ», 426 թիր. sön-mek «մարիլ, հանգիլ», էջ 428 թիր. չաղաթ. ini «փոքրիկ», ön «թեթեւ» բառերի հետ։

*ԽՈՒՆ «սեղան». արմատ առանձին անգործածական, որից ունինք միայն խունաւագուրիւն «սեղանապետութիւն» բառը, որ մէկ անգամ գործածել է Ոսկ. մ. բ. 24 «Ո՞ւր մեզ խունաւագութիւնն և խոհակերութիւնն պիտանացու է»։

=Պհլ. *xuān «սեղան»+հյ. աւագ բառից բարդուած, իբր «սեղանապետ, հացեղից». համմտ. պրս. خوانسالار xvānsālār «խոհարարապետ»։ Աւելի ընդարձակ տե՛ս խան «սեղան»։

Նշ. խունաւագուրիւն բառը մեկնում է «զանգումն ուտելեաց արեամբ ըստ աւագայ Լիպացւոց, համադամք, յօրինուած խորտկաց» և ըստ այսմ հանում է պրս. xūn «արիւն» կամ հյ. խոնաւ բառերից։ Գրեթէ նոյն մեկնութիւնն է տալիս նաև Ջբ. իսկ Աբ դնում է պար-

*զապէս «պէսպէս համեղ ուտելիքներ շինելու արուեստը»։ Ուղիղ մեկնութիւնը տուաւ վերի ձևով Հիւնք. էջ 217։

*ԽՈՒՆԿ, ո հլ. (բայց Երգ. դ. 14 հատուածի մէջ ունինք խնկօք՝ փխ. խնկովք. ինչպէս ունին Երգ. ե. 1 և 3Հ. ԺԲ. 40) «կնդրուկ» ՍԳր. Վեցօր. 126. որից խնկել «զմռսել» ՍԳր. «զոհել» Կիւրղ. եւ. «խնկարկել» Նար. «մեծարել, օրհնաբանել» Նար. խնկանոց Ագաթ. խնկարեր Երգ. բ. 17, բ. 14. խնկալից Գ. մակ. ե. 1, 5. խնկածու Բուզ. խնկակալ Ել. իհ. 17, լ. 1. խնկաղաց Ել. իհ. 29, Ա. մակ. ա. 23. Ոսկ. խնկիչ Վեցօր. խնկենի Նեեմ. բ. 15. խնկարկու Դ. Բաղ. իգ. 5. դեղախունկ Սևբեր. դեղճախունկ Կղնկտ. եղեգնախունկ Նար. ճայխունկ Վստկ. չամչախունկ Բժշ. զմռնախունկ Գաղիան. լիախնկայ! «խնկով լի» Նիւս. մն. 484 (չունի ՆՀԲ), խնկողկուզիկ Մխ. առ. խնկատեռև Գաղիան. (երկուսն էլ «հազնի, vitex agnus castus», քան Աբբինեան, Ածաշունչի տունկերը, էջ 10—11), խունկեղէգն (առանց ձայնաւորի սղման) Ել. լ. 23, Երգ. դ. 14, Ոսկ. հս. խնկաբոյր (նոր բառ) ևն։ Գրուած է նաև խունգ ևն։

=Պհլ. *xunk կամ xung ձևից, որ կորած է. բայց կայ պրս. خنث xunk կամ xung, որ յիշուած է միայն Gazophylacium, էջ 156 և ուրիշ տեղ չէ աւանդուած։—Հիւրշ. էջ 162։

ՆՀԲ Բրք. կէօնլիգ, Բիւնիւք «խունկ» բառից։ Bottich. Arica 77, 275 և Lag. Urgesch. 955 տուին ուղիղ մեկնութիւնը։ Հիւնք. պրս. խիւնկ «անկիւն» բառից։ Patrubány ՀԱ. 1906, 346 հնխ. qend «լուսաւորել» արմատից. ինչ. incenso «խունկ» լտ. incendo «այրել» և candeo «փայլիլ» բառերից է ծագում։

Գիւմ.—Ախց. Կր. խունկ, Ագլ. Ալշ. Երև. Ջղ. Երք. Հճ. Համշ. Մշ. Մրղ. Նախ. Շմ. Պլ. Ջղ. Ռ. Սեբ. Սլմ. Սչ. Տիգ. Տփ. խունգ, Մկ. Վն. խունգ՝, Ոզմ. խօւնկ՝ Գոր. Ղրբ. խօնգ, Աալ. խիւնգ, խի՝, Ալն. խունգ, ճունգ (Բիւր. 1900, էջ 671)։ Նոր բառեր են՝ խունկի, խընկագունիլ, խնկալոջ, խնկածխիչ, խնկածուխ, խնկիկ բոյր։

Փոխ.—Գնչ. խունգ, Բրք. գւռ. Կր. xunk (Բիւր. 1898, 627), քրդ. xung «խունկ» (Աճառ. MSL 16, 369)։ Բոլորն էլ նոյն նշանակութեամբ։—Patrubány ՀԱ. 1906, 346 հայերէնից է գնում Բրք. künnüg «խունկ»՝ իբր թէ -üg նուազականով կազմուած, բայց անշուշտ սխալ է։

*ԽՈՒՆՃ «գեղեցկուհու մեղմախանօք նայուածքը. agacerie» Տաղ. (վկայութիւնները ան՛ս Նորայր, Բառ. ֆր. agacerie բառի տակ). կայ և գրուած դունճ ձևով։

=Պրս. غنج γunj «նազանք», غنجیدن γunjīdan «նազիլ»։—Աճ.

Գիւմ.—Խունջիկ-մունջիկ, խնջիկ աճել «նազկոտիլ»։

ԽՈՒՆՃ կամ ԽՈՒՐՃ «երաժշտական մի խազ է, որ ունի ⌒ ձևը» Ոսկիփ. (ըստ Schröder նշանակում է «tripudium, պար», ան՛ս Peterm. ZDMG 1851, 365—72)։

ԽՈՒՆՋ տե՛ս Խունճիճ։

ԽՈՒՇԲՈՒՆԱԿ. մի տեսակ անծանօթ բոյս է Բժշ. որից առնելով ունի միայն ՀԲուս. § 1140։

*ԽՈՒՇԿԻ կամ ԽՈՒՇՔԻ «չոր Բրիք (ձիու)». ունի միայն ՓԲ յաւել. առանց վկայութեան։

=Պրս. خشکی xuškī «ձիու և ջորիի Բրիք»։—Աճ.

Գիւմ.—Ալշ. Ախց. Մշ. խուշկի «փշրուած Բրիք»։

ԽՈՒՋ «Բեր կամ փարչ». ունի միայն Բառ. երեմ. էջ 146. ինչ լինելը յայտնի չէ։

ԽՈՒՄ «վեր». ունի միայն Բառ. երեմ. 146։

*ԽՈՒՊԱՋ, որ և խուպայզ, խուպէզ, խուպուզիկ «մոլոշ բոյսը, փիփերդ, malva» Բժշ. Վստկ. 7. Մխ. Հեր. 95. որից իշխուպայզ «մեծ մոլոշ կամ տուզտ» Ամիրտ. Գաղիան. ունին միայն ՀԲուս. § 1141 և Բառ. երեմ. յաւել. էջ 574։

=Արաբ. خبّاز xubbāz, خبیز xubayz, خبّازة xubbāza, خبّازی xubbāzī «մոլոշ, malva» (Կամուս, Բրք. Բրգմ. Բ. 174. Շիայնշնայդէրի հաւաքածուն՝ WZKM 12, 15). այս բառերը ծագում են خبز xubz «հաց» բառից. համմտ. Հյ. գւռ. հացուպանիր հոմանիշը։—Աճ.

Ուղիղ մեկնեց նախ Աճառ. (անտիպ). նոյնը յետոյ Seidel, Մխ. Հեր. § 157։

ԽՈՒՊԱՆ *տե՛ս* Խոպան։

***ԽՈՒՐԱՄ** «շահոբրամ». *Ամիրտ. ունի միայն Հիւս. § 1142։*

=*Պրս.* خُرّم xurram «*Մաղիկ իմն կարմրըտգոյն որ գիկնի կորզելոյ իւրոյ մնալ գալար և անթարշամ*»։ *Բուն նշանակութիւնն է «ուրախ»։—Աճ.*

—**ԽՈՒՐՈՆ** *տե՛ս Խառն, որի ձայնդարձն է։* Justi, Kurd. Gram. 49 *քրդ.* ker «*հօտ*» *բառին է կցում գնդ.* xarəda *և հյ.* Խուռն։

ԽՈՒՍԱՓԵԼ, ԽՈՒՍԵԼ *տե՛ս Խոյս։*

***ԽՈՒՍ** «*հնդկական մի բոյս է՝ որ գործածւում էր հին բժշկութեան մէջ*» *Մխ. բժշ. 146 (յիշում է յատկապէս լեղի խուսա)։*

=*Արաբ.* قسط qust, *որի հետ նոյնն են յն.* κόστον, κόστος, *լտ.* costus *և յատկապէս* costus amarus «*լեղի խուսա*»։

Ուղիղ մեկնեց Seidel, *Մխ. բժշ. § 398։*

ԽՈՒՐԱՆՔ «*փրկանք*». *ունի միայն Բառ. հբեմ. էջ 102՝ հետեւեալ ձեւով. Ջխուրանս «ըզփրկանս չարչարանաց»։*

ԽՈՒՐԻ *տե՛ս Խորի։*

ԽՈՒՐՁՆ, ն *հյ.* (–ձան, –ձունք, –ձանց) «*խոտի, ցորենի կամ ուրիշ բոյսերի կապոց*» *Յհս. բ. 6. Մաթ. ժդ. 30. Բուզ. յեռնաբար* Խուրձ *վրք. հց. որից* Խրձացեալ «*խուրձ դարձած*» (*սիրամարգի տոունի համար է ասում*) *Ոսկ. փիլիպ. է.* Խրձնացուցանել «*քամմնեցնել, մազերը տնկել*» *կլիմաք.* Խրձադիզիլ «*խուրձ խուրձ դիզուիլ*» *ԱՒ։—Մեր բառարանները բառիս ուղղականը դնում են* Խուրձ, *բայց ն հոլովմունքը ցոյց է տալիս՝ որ պէտք է լինէր* Խուրձն, *ինչպէս ունին նաև Ագուլիսի և Ղարաբաղի բարբառները։*

Müller SWAW *41, 12 արամ.* חרוז xrūz «*շարք*» *բառից փոխառեալ է դնում։* Lag. Arm. St. § *1025 ասում է թէ այսպիսի բառ չկայ. պէտք է հասկանալ եբր.* חרוזה xərūzā (*յգ.* חרוזים xərūzīm), *որ նշանակում է «թել» և կցում է ասոր.* ܟܪܙ xraz «*շարել*» *և արաբ.* خرز xarz «*կարել*» *արմատներին.—նմանութիւնը մերժում է ու ձայնի պատճառաւ։ Հիւնք. խարձ բառից։ Պատահական նմանութիւն ունի արաբ.* خرص xurṣ «*ծառի ճիւղ*» (*Կամուս, Թրք. Թրգմ. Բ. 372*)։

Գիւմ.—Ախց. Երև. Խրբ. Կր. Հճ. Մկ. Տփ. Խուրց, *Սլմ. Վն.* Խուռց, *Ոզմ.* Խorց, *Շմ.* Խուրծ, *Մրղ.* Խուժրց, *Ալշ.* Խուռծ, *Գոր. Ղրբ.* Խօ՛րբնը, *Յղ.* Խօ՛րգնը, *Ագլ.* ՃԽօ՛ռգնը, *Ղրբ.* Խօ՛րսնը.—*Նոր բառ է* Խրձնաւոր «*խուրձերը կապող մշակ*»։

Փոխ.—Քրդ. گرز gurz «*խոտի խուրձ*» (*ըստ* Justi), gurs *նոյն նշ. (ըստ* R. S. Rhea).—Justi, Kurd. Gram. *52 բառս կըցում է հյ.* Խուրձ *և ասոր.* ܟܪܙܐ xārāzā, ܟܘܪܙܐ xūrzā *բառերի հետ, որոնց մասին տե՛ս վերը։*

ԽՈՒՐՃ *տե՛ս Խունճ։*

***ԽՈՒՑ** (*սեռ. -ի*) «*փոքր սեննակ*» *Վրք. հց. Սարգ. որից* Խցարգել *Կանոն.* Խցաւոր *Վրք. հց.* Խառնախուց *Ոսկ. մ. բ. 3.* Խցիկ *Բուզ. Ոսկ. Եղիշ. միանձ. էջ 159։—ՆՀՐ* Խուց *բառին տալիս է նաև «սեննեակ արքունի, տուն գանձուց, շտեմարան» նշանակութիւնը, որի համար իբր վկայութիւն է դնում Եղիշ. խաչել. «Շնորհեաց ո՛չ միայն զմասն պարգևին, այլ զամենայն զբուն հայրենի խցիւն յանմատոյց զօրութենէն». (Վենետ. 1859 տպագրութեան մէջ այս վկայութիւնը չկայ)։ Ոսկ. մաթ. Ա. էջ 112 «Ոչինչ պատուական տեսանէին անդ, այլ զմսուրն և զխուց» հատուածի մէջ* Խուց *ուղղելի է* Խուղ *(ըստ Վարդանեան ՀԱ. 1913, 300)։*

=*Ասուր.* xuṣṣu «*ցանկապատ. 2. շէնքի յաւելուածական մաս*». *սկզբնապէս նշանակում էր «մի տեսակ եղէգ», յետոյ «եղէգէ շինուած տնակ», յետոյ «խրճիթ, հիւղակ», որոնց վրայ տե՛ս* Muss-Arnolt, Ass. engl. Handwb. *էջ 331 բ. ստուգաբանօրէն կցում է արաբ.* خصّ xuṣṣ «*եղէգից և եղէգից շինուած տուն, որ թուրքմէններն ու քուրդերը* هوغ hūγ *(հյ. ճիւղ) են կոչում. 2. միայն ձեղունը տախտակէ, իսկ պատերը սէզէ շինուած տուն. 3. գիւղատուն, թէև սէզից շինուած չլինի» (Կամուս, Թրք. Թրգմ. Բ. 373), Խրբ.*

חוּץ xūṣ *«դուրսը. 2. փողոց. 3. քաղաքից դուրս գտնուած մասը* (Gesenius *17, 219*)։ —*Ա՛ճ.*

Նշ՛Ր արաբ. խուսս *(?) և Թրք.* խաս օտասը *«յատուկ սենեակ, առանձնասենեակ»։ Հիւնք.* խցանել *բայից է հանում։* Patrubány SA *1, 194 վեդ.* kákša *«առուի, թաքստոց» բառի հետ՝ իբր հնխ.* khōksos *կամ* khuksos *«փոս, խոռոչ»։ Նոյն, անդ, էջ 312 հմմտ. հունգ.* kuczkó *«անկիւն»։ Նոյն* LF *13, 163 դնելով հնխ.* qhusko- *ձևից՝ կցում է գոթ. հբգ.* hūs *(<հնխ.* qhūdh-so-*), գերմ.* Haus *«տուն», յն.* κεύθω *«ծածկել, պահել» բառերին։ Նոյնը վերջապէս ՀԱ. 1903, 151 հնխ.* sku *«ծածկել» արմատից. հմմտ. լտ.* cutis, *հբգ.* hut, *նրգ.* Haut *«մորթ», լտ.* cūria *«տուն, առեան», յն.* καλιά *«խղիկ», լտ.* cella *«մառան» են բառերը։* Petersson KZ *47, 282 ընդունում է* Patrubány*-ի երրորդ մեկնութիւնը, բայց գտնում է որ գոթ.* hūs *և յն.* κεύθω *ծագում են* qeu- *արմատից, մինչդեռ հյ. խուց, ինչպէս նաև խուփ՝ ծագում են հնխ.* qheu- *արմատից, որից է նաև զնդ.* xaoδa- *«սաղաւարտ, խոյր»։* Pictet, *բ. տպ. Բ. 315 քրդ.* košk, *պրս.* kūšk *«վիլլա», սանս.* kōša *«վաճառանոց», գոթ.* hus *«տուն» բառերի հետ։ Սոյն ստուգաբանութիւնս (դաշն բառի մեկնութեանս հետ միասին) իբր առանձին յօդուած ուղարկել եմ 1933 Բ. օգոստ. 14-ին Լենինգրադ՝ Գիտութեանց ակադեմիայի, Մառի յոբելեանի առթիւ հրատարակութիւնք ժողովածուի համար։*

Գ՛Ր.—Ախց. երև. Եւդ. Զթ. Խրբ. Հճ. Մշ. Ննխ. Զղ. Սեբ. Սչ. խուց, *Մկ. Ոզմ.* խօւճց, *Ակն.* խուրց*! նշանակում են «եկեղեցու կամ վանքի բակի մէջ կրօնաւորներին յատկացուած սենեակ». —Կր.* խուց *«առաջնորդարան», Հմշ.* խուճց *«դպրոց» (որ սկզբում եկեղեցիների բակի սենեակի մէջ էր լինում), Թրքախօս հայերից Ատն.* խուց *(իմա՛* խուս*) «ժամհարի սենեակը» (Արևելք 1888 նոյ. 8—9)։ Ըստ Ամատունի, Հայոց բառ ու բան, էջ 292 Սիփան* խուճց *«տան մի անկիւնում վարագոյրով բաժանուած տեղ՝ նորապսակների համար»։*

Փ՛Ոխ.—Սղերդի արաբախօս քրիստոնեաներն ունին խուճս *«խուց» (Բիւր. 1899, 116)։*

*—*ԽՈՒՓՆ *«կափարիչ» Բ. Թագ. ԺԷ. 19. Վեցօր. 80. որից* խփանել *«փակել» Նկ. խա. 33. Սեբեր. 136.* խփել *Սեբեր. 136.* խփեալ *«փակ» Թուոց ԺԲ. 16, Ղկ. դ. 20.* խիրճկեց *Ոսկիփ.* խփուցանել *Շնորհ. խոստ.* բացխրփիկ *կամ* բացխփնիկ *Ոսկ. եփես. և ա. տիմ. յեռնաբար* խուփ *«փակ» Վստկ. էջ 202.* խփնուլ *«փակել» Պտմ. ներս. Հյր. 46։*

=Կցւում է իբրև ձայնդարձ խափ *արմատին՝ որ տե՛ս։*

Մառ Яф. сборн. *2, 167 երբայեց.* כובע kōba‘ *«սաղաւարտ» բառի հետ։* Petersson KZ *47, 282* խուց *բառի հետ միասին հնխ.* qheu- *«փակել» արմատից. մասնիկի համար համեմատել* բուխ*։ Ղափանցեան, Տեղեկ. ինստիտ. 2, 91 վրաց.* ցոբա*։*

Գ՛Ր.—Ալշ. Ախց. երև. Զթ. Խրբ. Կր. Հճ. Հմշ. Մկ. Մշ. Մրղ. Ննխ. Սեբ. Սլմ. Վն. Տփ. խուփ, *Զղ.* խուփ, խփի, *Ոզմ.* խօւփ, *Ագլ.* խո՛ւփա, *Գոր.* խփի, *Ղրբ.* խփե *«խուփ, կափարիչ». որից Վն.* խփել, *Կր.* խփէլ, *Սչ.* խփել, *Տիգ.* խփէլ, *Զթ.* խը՛փիլ, *Հմշ.* խփուշ *«փակել, գոցել» (տարբեր են Գոր. Ղրբ.* խփէլ, *Տփ.* խփիլ *«ծեծել, զարնել»).—գուտ արմատը ներկայացնում են Խրբ. Վն.* խուփ *«փակ», Ղզ. Ղրբ.* խուփ աճիլ *«փակել», Ննխ.* խուփ–բէրան *«սակաւախօս».—նոր բառեր են՝* խփակ, խփիկ, խփկիկ, խփնիկ, խփնել, խըփուփլ, խփուկ*։*

Գ՛Ր.—Վրաց. ხუფი խուփի *«խուփ, կափարիչ»։*

*՛*ԽՈՓ, *ո հլ. «արօրի երկաթը» ՍԳր. Եզն «երկաթեայ ցից» Մխ. ասոր. որից* խոփակալ *«առաստամ» (միջին հյ. բառ). գրուած է նաև* խոբ *Իրեն. հերձ. 120։*

=Կովկասեան լեզուներից փոխառեալ բառ է. հմմտ. վրաց. ხოპი խոպի, ხოფი խոփի *«թի»,* მეხოფე մեխոփե *«թիավար», մինգր.* ხოპი խոպի, ხოპი խոբի, ხოფი խոփի *«թի, բահ», լազ.* xope *«թի, թիակ» (փորելու կամ*

նաւի), կուբ. hob «բահ, թի».—այս բոլորը աւելի նախնական մի նշանակութիւն ներկայացնելով, ենթադրելի է որ հայերէնն է փոխառեալ և ո՛չ թէ ընդհակառակը։—Աճ.

Տէրվ. Նախալ. 111 յն. σκάπτω, լտ. scabere, լիթ. scapoti, գերմ. schaben, հյ. չօշափել և շոպել բառերի հետ՝ հնխ. skap «քերել, փորել» արմատից։ Bugge IF 1, 447 յն. σκόλοψ «ցից» բառի հետ, իբր հնագոյն *խողփ ձևից անցնելով։ Հիւնք. խփել բայից։

ԳԻՒ.—Ալշ. Մշ. Սլմ. Վն. խուփ, Երև. Խրբ. Կր. Ղրբ. Սեբ. խօփ, Գոր. Մկ. Ոզմ. խուփ. Հմշ. խէօփ, Ասլ. խէօ՝փ, խէ՝օ*, Զթ. խիփ։—Նոր բառեր են խուփակալ, խուփառուն կամ խուփառուն, խուփխաշ։

ՓՈՒ.—Թրք. գւռ. Եւդ. خرپ xop «աղօրի խոփ» (Յուշարձան 330)։

ԽՋԼԻԿ «որթի ուռ՝ իր տերևներով և ողկոյզներով միասին». նորագիւտ բառ. մէկ անգամ ունի Վստկ. 132 «Բեր զբարուկակն նոյն բերովն և խշկերով, կախեա ի հորն»։

*ԽՊԻՊ «կղակի տակ կախուած միս կամ ուռեցք». ունի ԱՓ, իսկ ՆՀԲ յիշում է գաւառական բառերի շարքում։

=Արաբ. خبب γabab «սմորին ծնօտի տակ կախուած միսը», որ և غبغب γabγab (Կամուս, Թրք. Թրգմ. Ա. 216). արաբերէնից է փոխառեալ նաև վրց. ջաბაბი ղաբաբի «ցայտուած՝ դուրս եկած կզակ. 2. խսիպ»։ Հայերէնի մէջ նախաձայն ղ կարող է դառնալ խ ինչ. ղպճիլ>խպճիլ։—Աճ.

Պատահական նմանութիւն ունին արաբ. خبيبة xabība «մի շերտ միս» (Կամուս, Թրք. Թրգմ. Ա. 116), քրդ. خبب xebeb «ոսկոր», xebeba gerdeni «կզակոսկր»։

ԳԻՒ.—Մկ. խորիբ, Տփ. ղաբաբ (անշուշտ վրացերէնից), Մշ. խօրօբ, խօրօրիբ (օր. խօրորիբ իչեր է «կզակի միսը կախուել է». անշուշտ շփոթելով խոպոպ բառի հետ, որ տե՛ս), Ղզ. խախափ (ըստ Ամատունի, Հայոց բառ ու բան, էջ 282 ա՝ խխմիկ բառի տակ)։

ԽՊԼՏԱԼ «կայտռիլ». ունի միայն Բառ. Երեմ. էջ 146. որ և կայ արդի բարբառներում՝ խլպլտալ «շարժիլ, թռվռալ» ձևով (Երև Տփ.)։

ԽՊՆԻԼ տե՛ս Ղպնիլ։

ԽՊՍԻԼ «դուրս նետուիլ». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գործածուած եմ գտնում Շապհ. 247 «ճաշակելով, ըմպելով և պէսպէս զեռնովք որ ի ծովէ արտաքս խպսին, մինչև բազումք զժայթքումն հանգերձ այլովք աղտեղութեամբն գործեն»։

⊙ԽՌԱԼ «խորդալ». ունի միայն Բառ. Երեմ. էջ 146։

=Ինաձայն բառ. համմտ. արդի գաւառականներում խռ՝ խռ՝ կխռկայ և Թրք. خرلامق xərlamaq կամ خرلدامق xərəldamaq «խորդալ, խռկալ, խռմփալ»։—Աճ.

ԳԻՒ.—Նոյալ Արբ. Խ. Խրբ. Վն., խռել Վն., խռկալ Ակն. Եւդ. Նր. Պլ. բոլորն էլ «քնի մէջ խորդալ, խռմփալ»։

ԽՌԱՅ «վտիտ, նիհար». պիտեն միայն Բառ. Երեմ. էջ 319 (մեկնուած վիճ, որ է «հիւծեալ») և Ներսէսովիչ, Բառ. լտ.-հյ. էջ 117 բ (լտ. coriaginosus), 314 ա (macellus), որից խռաճալ «վտտիլ, նիհարիլ» Ներսէսովիչ, էջ 226 (լտ. gracilesco), 314 ա (լտ. macesco)։

ԳԻՒ.—Սեբ. խռա «չմեծացած, փոքր մնացած, թզուկ»։

ԽՌԱՆԱԼ, անստոյգ բառ, որի մասին տե՛ս վստկեալ. Թերևս նոյն է խռաճալ «վտտիլ, նիհարիլ», խռայ «վտիտ, նիհար» բառի հետ։

ԽՌԱՆՈՒԻԼ «վարժուիլ, սովորիլ». անստոյգ բառ. դիտէ միայն ՓԲ յաւել. առանց վկայութեան։

ԽՌԲՈՒ «մի տեսակ բոյս՝ որ արջը սիրում է ուտել» Մխ. առակ.—Նորայր, Բառ. Ֆր. 730 բ կասկածով համարում է lampsane, որ դեղին ծաղկով մի բոյս է, աճում է անտառներում, պարտէզներում և աւերակներում. օգտակար է կանանց տիճքի հիւանդութեանց. (նոյնը տե՛ս և ղեի)։ Նորայրից առնելով Քաջունի՝ առանց կասկածականի համարում է lampsane.—իսկ Տիրացուեան, Contributo § 264 դնում է lathyrus aphaca L, § 569 lapsana communis L։

ԳԻՒ.—Նո՞յն են Ագա խպռուկ «մի տեսակ վայրի բանջար, որ աղցան անելով ու-

տում են». Ագ. խրվուկ *«վարսակ», Ղզ.* *«վարսակի նման՝ անուտելի մի խոտ», Երև.* խրվուկախոտ:

ԽՒԹԻԿ *«ծիրան» Բժշ. ունին միայն Նոր.այր, Բառ. ֆր.* (abricot *բառի տակ) և ՀԲուս. § 1147։—Ուրիշ է Մշ.* խոտիկ *«դդումով քաղցրաւենիք»։*

ԽՒԻԿ *«ձկան ականջը,* branchies». *միջին Հյ. բառ. վկայութիւնները տե՛ս Նորայր, Բառ. ֆր. էջ 171 բ։*

ԽՒԻԻ, ո *հլ. «չոր ճիւղեր, վառելու համար չորացած փայտի կտորներ» ՄԳր. Վեցօր. 196. որից* խուռանալ *«խոխի պէս չորանալ, ցամաքիլ, կարծրանալ, թաղկիլ, վատանալ, ծերանալ» (բոյսի, մարդու, մազերի համար ասուած) Մանդ. Ոսկ. Ճառք 603. Նիւս. երգ. Պղատ. տիմ.* խուռական *«խոխի պէս» Նիւս. կազմ.* խուռատեսակ *Մխ. առ.* խուռեղէն *Մ Եկն. զևտ.* խուռեալ *«չորացած, զօսացած» Ածշ.* խառնախուռ *Նար. 138.* գիսախուռ *Նար.* բազմախուռ *Բրս. ապաշխ.* մանրախուռ *Ոսկ. գծ.* եղեգնախուռ *Նար. գրուած կայ նաև* խռուացեալ *Մագ։*

Bugge IF *1, 447 յն.* σκάριφος *«չորացած ճիւղ»,* κάρφος *«խոխ»,* καρφαλέος *«չոր, չորացրած» բառերի հետ ցեղակից է դնում։ Հիւնք. գրի բառից։ Պատահական նմանութիւն ունի արաբ.* غريف ġarīf *«սիղուտ, շամբուտ» (Կամուս, Թրք. Թրգմ. Բ. 819)։*

Գիմ.—Չգիտեմ թէ սրա՞ն պէտք է կցել Վն. խուխ *կամ* չոր–խուխ *«չոր խոխ»։*

***ԽՒԽՈՒԻՄՈՆ** *կամ* **ԽՒՆՊԻՍՕՆ** *«մի տեսակ ձիւթ կամ մաղտաթ». Նորագիւտ բառ, որ դործածում է Վստկ. 113, 145, 207, 210։*

=Անշուշտ տառադարձուած է Վաստակոց գրքի արաբերէն բնագրի մի բառից, որի մէջ տեսնում եմ պրս. قير qīr *«կուպր» և յն.* πίσσα *«ձիւթ, մարխ», իբր «կպրաձիւթ»։—Աճ.*

ԽՒԽՈՒԱԿ *«խոպոպ, կերկեր,* raucus». *ունի միայն Ներսէսովիչ, Բառ. լա.-Հյ. 450 բ։*

ԽՒԽՈՁՒԻԿ *«ստամոքս. անասնոց ստորին փոր». ունի միայն Գաբ. բառ։ Ունի նաև Քաջունի, Հտ. Գ. էջ 103, որից առել է անշուշտ Գբ։*

ԽՒԿԱԼ *«խորդալ» Վրդ. առ. 127։*

=Բնաձայն բառ. հմմտ. և տե՛ս վերը խըռալ *Համառիշը։—Աճ.*

Գիմ.—Ակն. Եւդ. Պլ. խոգալ։

ԽՒԿԵԼ *«դիզել, խառն ի խուռն կուտակել» Առակ. ժզ. 11. «աչքը շշկլեցնել» Պիսիդ.* խոկիլ *«շփոթուիլ» Ոսկ. բ. կոր. ժզ։*

ՆՀԲ խառն *կամ* խուռն *բառին է կցում։*

*Գիմ.—Նո՞յն են արդեօք գւռ.—*խոկել *Երև. Ղզ. «վարել, վտարել, քշել» (որ և* խոիկ տալ *Ղզ. Ղրբ.,* ճոիկ տալ *Ագլ.* խրի տալ *«հրել, լտ.* trudo*» Ներսէսովիչ, Բռ. լա.-Հյ. 556 ա),* խոկուիլ *Ղրբ. «ճխտուիլ, մի տեղ սեղմուիլ»։*

ԽՒՃՏԱՄՆ *«կակուղ (ոսկորների համար ասուած)» Մխ. Բժշ. էջ 4 «Կակուղ և խռճրատամն ոսկերքն, զերդ զրիճին գլուխն և կողերուն ծայրքն»։*

Seidel, *Մխ. հեր. էջ 117. ծան. 24 կցում է Հյ.* խոնուռիլ *«խորդալ» (?),* կոճիկ, կրճտումն, *Թրք.* qəǰərdamaq *և գերմ.* Knorpel! *«կռճիկ» բառերին։*

ԽՒՆԴԱՏ *(գրուած նաև* խռնտատ, խորնջատակ, խոջտատակ*) «մի տեսակ բոյս է. ձկան մահարար, եղնապի, փղոմոս, լտ.* verbascum, phlomis, *ֆր.* mole'ne, bouillon-blanc, *պրս.* mahīzahr*» Վստկ. Բժշ. նոյն բառը սբ–խալ գրչութիւններն են* խռնջատակ, խնդակ՝ *որոնք յիշում է ՀԲուս. § 609 և § 1071, իբր տարբեր բոյսեր (տե՛ս Նորայր, ՀԱ. 1923, 49).—որից* իգախռնդատ *«մի տեսակ բոյս» Վստկ. 206. Բժշ. ունի միայն ՀԲուս. § 850։ (Տիրացուեան,* Contributo *դնում է § 395* խռնդատ «verbascum thapsus L» *և § 464* խռնդուկ «phlomis lanceolata Boiss.—Hoh», *որոնք բոլորովին տարբեր ընտանիքի պատկանող բոյսեր են. կայ և* verbascum armenum Boiss.—Ky. *§ 396 և* phlomis armeniaca W. *§ 464, բայց սրանց հայերէն համազօրները չունի Տիրացուեան)։*

Գիմ.—Ալշ. Բլ. Մշ. խռնդադ, *Մկ. Վն.* խրոնդոտ, *Ոզմ.* խռնդոդ, *Երև.* խռնդատ *(կայ նաև* ֆռնդատ*).—Աղդ. Հանդ. ե 21 այս բոյսը դրուած է իբր «verbascum thapsus».—Նոյն բառը կայ նաև Սեբ։—Տարբեր է* խորնդուկ *Մշկ. «մի տեսակ սպիտակ խաղող»։*

ԽՌՆԵԼ *տե՛ս խառն։*

⊙ԽՌՆՉԵԼ *«խռխռալ, կոկորդից ձայներ հանել» Փիլ. տես. 16. Լաստ։*

=*Բնաձայն բառ. կազմուած է խռ ձայնից՝ ն, չ ածանցիչներով. համմտ* խառնչել, խռչել, *ինչպէս նաև* կռնչել, փռնչել, ճռնչել, դռնչել *են։—Աճ.*

Այս մեկնութիւնս հրատարակուած է նախ ՀԱ 1899, 204 ա։

*Գիմ.—*Երև. խռնչալ *«խռպի են խորդալը»,* Ղզ. *«էշի զռալ»,* Երև. խռնչօց *«խռպի խորդիւն»,* Ալշ. խռնճալ *«հարբուխի պատճառով խռխռալ»։*

ԽՌՆՋԱՅԼ *տե՛ս խղունջն։*

ԽՌՆՋԱՆՆ *«ոլորի ոսկորը». մէկ անգամ գտնում եմ գործածուած Վրք. և Վկ. Բ. 236, յոգնակի խռնջանուեմ ձևով.—այս հատուածը կրկնութիւնն է Եւս. պտմ. էջ 271 հատուածի, ուր սակայն յիշեալ բառի դէմ գտնում ենք յդ. խռչակուեմ ձևը։ Եւ որովհետև այլուստ գիտենք որ խռչակ նշանակում է «շնչափող», ուստի Եւս. պտմ. խռչակուեմ ձևը յետին ընդօրինակողի շփոթութեան արդիւնքն է։*

⊙ԽՌՆՏԱԼ *«մռմռալու կամ աւամնների տակ մի կարծր բան ծամելու ձայն» Ոսկիփ.=Վրդ. առ. 94 (այլ ձ. խռնթալ)։*

=*Բնաձայն բառ. կազմուած է խռ ձայնից՝ -նդ՝ ածանցականով. արմատի համար համեմատել* խռալ, խռկալ, խռնչել, *մասնիկի համար՝* շռինդ, դռնդել, դռնդիւն, ճորնդիւն, բռնդիւն *են։—Աճ.*

Այս մեկնութիւնս հրատարակուած է նախ ՀԱ 1899, 204 բ։

*Գիմ.—*Գնձ. խռնդալ *«խեղդուկ ու տկար ձայնով խօսիլ»? (Մամիկոնեան, Հազարից մէկը, էջ 175)։*

ԽՌՇՈՓ *«կծկում». արմատ առանձին անգործածական. որից* խռչոփել *«թառամեցնել, կծկել»* և խռչոփուիմ *«պտուղների կծկուիլը տաքից» Վստկ. 74։*

ԽՌՈՍՍԵՓԱՅԼ *տե՛ս* խռսուկեփայլ։

*ԽՌՈՎ *«շփոթութիւն, կռիւ, պատերազմ» ՍԳր. «խռռված, շփոթուած» Մծբ. որից* խռռով ճարկանել *«պատերազմի սկսիլ» Յուդթ. ժդ. 2.* խռռվել *«տակնուվրայ անել, յուզել, վրդովել» ՍԳր.* խռռվիլ *«շփոթիլ, այլայլիլ, յուզուիլ» ՍԳր.* խռռովութիւն *ՍԳր. Ագաթ.* խռռականաւ *Ոսկ յհ. բ. 15.* խռռվիչ *ՍԳր. Եւս. պտմ.* խռռուտ *Փիլ. իմ.* խռռարար *Յճխ.* անխռռութիւն *Ոսկ. յհ. ա. 36.* խռռայոյզ *Մծբ. են։*

=*Կովկասեան լեզուախմբից փոխառեալ բառ է. համմտ. վրաց* ხრო *խրո,* ხროვა *խռռովա,* ხროობა *խռռորա «խումբ, հօտ, երամ (անասուններուի կամ մարդոց)».—«խումբ, բազմութիւն» իմաստից «շփոթութիւն, կռիւ» իմաստին անցնելու համար օրինակներ շատ կան թէ՛ հայերէնում և թէ այլուր. ինչ.* գռոհ *«խումբ, բազմութիւն» և* գռոհել *«յարձակիլ»,* սմբոխ *«բազմութիւն. 2. խռռովութիւն, շփոթութիւն. 3. կռիւ, պատերազմ»,* խումբ *«բազմութիւն»,* որից խմբել *«հաւաքել զօրք»,* խմբիլ *«պատերազմի դուրս գալ» և յատկապէս ոճով՝* խմբիլ ի պատերազմ.—գումարիլ *«կռուի դուրս գալ. 2. կռուիլ. 3. շկըլուիլ, շփոթուիլ»,* վրաց. ջոգի *«ջոկ, երամակ»* և դաջոգեբա *«ամբոխիլ, խմբիլ, խուժել»,* լատ. tumultus *«խռռովութիւն, շփոթութիւն, խումբ, պատերազմ»։ Որովհետև նախնական նշանակութիւնը* (խումբ) *գտնում է միայն վրացերէնում, ուստի հայերէնն է փոխառեալ և ո՛չ ընդհակառակը։—Աճ.*

Նշմ. խեռ *կամ* հեռ *արմատից. «լծ. և* գռգիռ, *ռմկ.* խրոխրո. *կամ է տատանիլն որպէս զխռիւ»։* Peterm. *73. լծ.* կռուիլ։ Böttich. ZDMG. *Թ. 1850, էջ 356,* Arica *88, 444,* Lag. Urgesch. *954 զնդ.* xrui, *սանս.* krūra *«կատաղի», սասր.* حزق qrb *«կռիւ»։ Հինք.* խռի *բառից, պատահական նմանութիւն ունի թրք.* خير xər *«խռռովութիւն», որ Տ. Վ. Պալեան (Բիւր. 1898, 712) հայերէնից փոխառութիւն է համարում։* Meillet, Altarm. Elementarb. *էջ 187* խռուն *բառից է դնում։*

Գիմ.—Ալշ. Մշ. Ջղ. խռովել, *Մկ. Սեբ. Գոր. Շմ. Տիգ.* խռովիլ, *Տփ.* խռօվ, խռօվիլ, *Երև. Մրղ.* խռօվէլ, *Ղրբ.* խռաւէլ, *Նխ.* խռօվէլ, *Ագլ.* ճռօվ, ճռա՛վիլ, *ՋԹ.* խէռօէօ՛վ, *ՀՁ.* խէյէվ. *այս բոլորը նշանակում են «սրդոդիլ, մէկի դէմ նեղանալ, քեն պահել, ջո-*

րիլ». (իսկ Մկ. միայն հորթերի համար է ասում)։ Նոր բառեր են խոռվկան, խոռվկոտ, խոռվուկ, խոռվխոռ։

ԽՈՌԻՍՆԱԼ *են տե՛ս Խռիւ։*

⊙ԽՈՉԱԿ *«շնչափող» Բժշ. Ոսկիփ. գրուած խոճակ Անկ. գիրք հին կտ. 317. արմատն է խոիչ, խոչել (առանձին չէ գործածուած), որից նաև խոչափող «շնչափող» Նիւս. բն. Ոսկիփ. Վստկ. 163. խոչոտիլ «կուրծքը խոխըռալ» Մխ. բժշ. 50։*

=Բնաձայն բառ. կազմուած է խո ձայնից՝ չ ածանցականով. հմմտ. խռալ, խոկալ, խոճչել, գուռ. խոխռալ. իսկ ածանցման համար՝ կոչել, ճոչել, ճոչակ, շոիչ, սոիչ։—Աճ.

Այս մեկնութիւնս հրատարակուած է նախ ՀԱ 1899, 204 ա։

ԳԻՒՐ.—Ննխ. խոչագ «կոկորդ» (կայ միայն խոչակդ կայնի «կերածդ կոկորդիդ մնա՛յ» անէծքի մէջ), Հճ. խը՝յշօգ «կոկորդ» (կայ միայն խոչակը կայնիլ ոճի մէջ). նաև խոչակ ճաճել կամ խոչակ մեծցնել Սվ. «շարունակ ղկռտալ», խոչկուկ Վն. «կոկորդի ցաւ»։— Ըստ Ամատունի, Հայոց բառ ու բան, էջ 295 Երև. կայ խոչակ «շնչափողից դուրս ցցուած խոճիկը, ադամախնձոր»։

ԽՈՉԱԿՆ *«ոլորի ոսկոր» տե՛ս Խոնչանն։*

ԽՈՊՈՏ *«սոպո, անհեթեթ, կոշտ» (մարդու կամ ձայնի համար ասուած) Փիլ. լին. և նխ. բ. 77. նոյնը խոպող ձևով Փիլ. եր. 471. որից երևում է որ արմատն է խոպ-, իսկ -ոտ, -ող մասնիկ են։*

Թերևս բնաձայն բառ՝ ըստ Աճառ. ՀԱ 1899, 205 ա։

ԽՈՋՏԱԿ *տե՛ս Խոնդաւ։*

***ԽՈՍԱՖՈՒԿ** *«դանձապահ». Նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Սմբ. պտմ. էջ 36 «Գրեաց և ի պոօֆոսպաթարն և ի Տարօնոյ զօրավարն, զի տարցեն առ թագաւորն Հայոց Աշոտ զխոսաֆուկն և դեկան ոսկի 30,000 և ծառայս երկու հազար»։*

=Յն. χρυσοφύλαξ «դանձապահ». կազմուած է χρυσός «ոսկի»+ φύλαξ «պահապան» բառերից։—Աճ.

***ԽՈՍՈՒԿԵՓԱՂ** *«ոսկեգլուխ». Նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Թղթ. դաշ. 17 «Միղնայօք խոսուկեփաղօք և որոտընդոստ ահագնագոչ շեփորայօք»։—Բառս ձեռագիրների մէջ խանգարուած է. Շահնազարեանի տպագրութիւնն ունի խրոսուկեփազօք. ինքը կարդում է խոռսիփայլ (էջ 93), որի համեմատ ԱՒ դնում է խոռսեփայլ «ոսկեփայլ»։*

=Յն. χρυσοκέφαλος «ոսկեգլուխ», որ կազմուած է χρυσός «ոսկի» և κεφαλή «գլուխ» բառերից։—Աճ.

ԽՈՏԻՇ *«հոտոտ ամբուլ կամ ասարոն կոչուած բոյսը» Բժշ. ունին միայն ՀՔուս. § 1152 և Նորայր, Բառ. ֆր. 93 բ (asaret բառի տակ)։*

ԽՈՏՈՒՄ *«խոչափողի դուրս ցցուած մասը. ադամախնձոր». մէկ անգամ գտնում ենք գործածուած Մխ. հեր. 47 «Ըղունկն զերդ զայծու ծոին և փողիցն խռտումն ի դուրս ցցվի»։*

ԱՒ դնում է խռտումն «ուռեցք, ուռիլը»։ Ուղիղ է հասկանում Նորայր, Բռ. ֆր. 962 ա։ Seidel, Մխ. հեր. § 148 մեկնում է «Anschwellung, ուռչիլը»։

***ԽՍԱՐ** *«պաշարում (բերդի)» Վրդ. պտմ. էջ 114. Օրբել. հրտր. էմինի, էջ 258. «բերդ» Առաք պտմ. 438. որից խսարել «պաշարել» Օրբել. Վրդ. պտմ. Սամ անեց. շար. 168. ասւում է նաև խիսար Օրբել. էջ 282. հիսար Մաղաք. աբ. 13, հեսար Մաղաք. աբ. 7. սխար, սղար, հիսարել են. տե՛ս և սղար։*

=Արաբ. حصار ḥisār «պաշարել, պաշարում. 2. բերդ, պարիսպ» (վերջին իմաստը յատկապէս Թուրքերէնի մէջ)։—Հիւբշ. 269։

Ուղիղ մեկնեց նախ Պատկ. Истор. Монгол. 1871, էջ 8։

***ԽՍԻՐ** *«փսխաթ» Վրք. հց. Ա. 694. Վստկ. 137, 154, 184. Յայտմ. սեպ. 25. յունվ. 17, որ և հասիր Վրք. հց. Ա. 717, Բ. 143։*

=Արաբ. حصير ḥaṣīr «փսխաթ», որից փոխառեալ են նաև Թրք. hasər, xasər, քրդ. hasir, assira, xaztr, hasil «փսխաթ», ոմկ. խսիր։

Ուղիղ մեկնեց ՆՀՔ։

ԳԻՒՐ.—Պլ. խսիր, Ալշ. խսիլ, Երև. խասիլ են «փսխաթ», իսկ Ննխ. խսիր «10 պուդ, որ համապատասխանում է ռուսաց չէտվէրտ

բառին» (Համառ. Հայոց բառ ու բան, էջ 295 բ)։

+ԽՍՏՈՐ, ի հլ. *(յետնաբար ո հլ.) «սրխատոր» Թուոց ժա. 5, Մծբ. 240 (ուշ ժամանակ՝ ռամկաձև սխատոր Վստկ. Գաղիան). որից* խստորապրաս *«մի տեսակ բոյս. լտ.* scordoprasum» *Ամիրտ.* խստորակ *(գրուած նաև* խստորուկ, խոստորուկ) *«մի տեսակ բոյս» Գաղիան. «այս հիւանդութեան դեղ համարուած մի տեսակ բոյս. լտ.* dioscorea bulbifera» *Գաղիան։*

=Բնիկ հայ բառ՝ հնխ. skodoro- *ձևից, որ պահում են նաև յն.* σκόρδον, σκόρδον *և ալբան.* hudẽrə, hurdə, *երկուսն էլ «սխտոր» նշանակութեամբ* (Boisacq 878): *Տե՛ս և* Pokorny *2, 587, որ յոյն և ալբան ձևերը դնում է հնխ.* sk'er—*«կոկղանք» արմատից՝* d *աճականով։—Երևում է որ սրանց հետ կապ չունին պրս.* سیر sīr, *քրդ.* sir, ssir, sīrik, *բոհեմ.* ցիրի *համանիշները։ Հյ. խս շրջուած է սխ ձևից, ինչպէս որ նոյն խս ձևն էլ յետոյ դարձել է սխ։—Ա՛ճ.*

ՆշՀբ Թուի մեկնելի չն. բառին։ Հինք. դնում է յունարէնից փոխառեալ։ Վերի ձևով մեկնեց Աճառ. ՀԱ 1908, 123։

ԳԻՒ.—Գոր. Ղրբ. խստոր, սխտոր, *Ասլ.* խսդէօ՛ր, սխդէօ՛ր, *Ալշ. Մշ. Ջղ. Սլմ. Վն.* սխտոր, *Ախց. Երև. Կր. Շմ.* սխտօր, *Ննխ.* սխտօր, սուխտօր, *Խրբ. Պլ. Ռ.* սխդօր, *Սչ.* սխ՛դօր, *Տիգ.* սխթուր, *Մկ.* սդտուր, *Ոզմ.* սդտօուր, *Հմշ. Սեբ.* սխդէօր, *Մրզ.* սուխտիր, *ՋԹ.* սէօխդիւյ, սէօխդիւր, *Ագլ. Տփ.* սխտուր։ *Նոր բառեր են* սխտորաբեր, սխտորաձուռ, սխտորամաճ, սխտորել, սխտորբակի, սրխտորգուշ, սխտորճեզ, սխտորջուր, սխտորուկ, սխտործնծ։

ԽՏԱՐԵԼ *«կոխել կամ վհհերել», ունի միայն Բառ. երեմ. էջ 146։*

ԽՏԻՂ, ո հլ. *«մարմաջ, խոխտալը, ցանկութեան զրգիռ». ունի միայն ԱԲ. մէկ անգամ գտնում եմ գործածուած Եփր. եփես. 151 («Մերձեննայ առ մեզ և ի խաղով». հիմ չէ ուղղելի* խտտղով, *ինչպէս կայ անդ՝ մի քիչ յետոյ)։ Որից* ակնախտիղ *Պիտ. Արծր. Օրբել.* խտղել *Եփր. Թուոց, էջ 250.* խտղի *«ախորժելի, հեշտալի» Նար. տաղ. 465 (չունի ՆշՀբ. գիտէ միայն ԱԲ).—Նոյն արմատը տ աստղականով զօրացած՝* խտղտել *Միր. խգ. 20. Եղն. Եւս. պտմ. Ոսկ. փիլ.* խտղտանք *Տօնակ. Արծր. նար. Լաստ.* խտղտումն *Եւս. պտմ. Եփր. ծն. էջ 43, 44.* խտղտեցուցանել *Լմբ. առակ.* խտղտելի *«հեշտասէր, անառակ. 2. ախորժելի, հեշտալի» ԱԲ.—Երկրորդ աստղականով՝* խտղտկիլ *«զրգռուիլ» Մագ. Թղ. 140։ Սրանցից դուրս՝ կրկին՝ տ-ով ունինք* խտտիղ *Եփր. եփես. 151.* խտտղել *Մծբ. Ոսկ. ա. Թես. գ. էջ 439 և մ. ա. 23.* խտտղանք *ՅՀ. կԹ.* խտտղումն *Եղիշ. խաչել. աստղականով՝* խտտղտիլ *ԱԲ.* խտտղտել *Մծբ. Համմտ. Նաև* ակնախտիղ *Ճառընտ։*

ՆշՀբ Թուի ակնարկել խթել և խլտել բառերը. դնում է նաև Թրք. զրնըբմագ *և* զամաշտրմագ։ *Հինք. կատաղի բառից։* Karst, *Յուշարձ. 401 սումեր.* g'id *«փայլուն»։ Թիրեաքեան, Բազմ. 1913, 341 Թրք.* qəjəq, qədəjlamaq: *Պատմահական նմանութիւն ունին ավար.* gedize *«խոխոտացնել», Թրք.* غديقلامق gədəq-lamaq *և արեւել. Թրք.* قيتيقلاماق qətəqlamaq՝ *նոյն նշ։*

ԳԻՒ.—Երև. խտխտացնել, խուռուռ ածել, *Ննխ.* հուռուռ ածել, *Ախց.* խարտացնել, *Խրբ.* խրդխրդալ, *Պլ.* խրդխրդալ, գրդրգ ընել, գրդրգրդր՛ ընել, *Ասլ.* խրդրդիլ, *Սեբ.* ղրդրդիլ, *Մշ.* խտիգ, *Ագլ.* խդի, *Ննխ.* խդիգ, *Շմ.* ղրդրդ աճիլ, *Սլմ.* ղ՛դի ղ՛դի, *Տփ.* ղուռուռ աճիլ, *Ջղ.* խուռուկ ածել, *նոյն են նաև* խռռտել *Սչ.*, ղլդի *Ղրբ.*, ղլդիկ *Ագլ. Ղրբ.*, խրտխրտել *Հճ։*

ՓՈԽ.—Ուռ. խխտիղ *«խռուռ ածիլը»։*

*ԽՏԻՏ *«գիրկ». ունի միայն Բառ. երեմ. էջ 146. գտնում եմ գործածուած Օգոստ. բաջ. էջ 17 «Ամէն սիւն 3 մարդի խտիտ յօժարութեամբ վերայ կուգայ»։ Կենդանի է այժմ էլ Երև. Ագլ. Լ. Ղզ. Ղրբ. Ղրդ. Ջղ. Շմ. Տփ. նոյն ձևով և նշանակութեամբ. որից* խտտել *«գրկել»,* խտտակոխ *«ըմբշամարտութիւն»,* խստի-պտտի *«վալս»,* խտտոտել *«բոլորն էլ գրկել»։*

=Փոխառեալ է կովկասեան լեզուախմբից. Համմտ. վրաց. ხუტვა *խուտվա,* ხუტიალი *խու-*

տիլի «գրկել»։—Որովհետև հայերէն բառը հին ժամանակ չկար և այժմ էլ միայն կովկասեան բարբառներում գոյութիւն ունի, միևնոյն ժամանակ որովհետև ներկայացնում է կրկնաւոր ձև, մինչդեռ վրացին ունի պարզական արմատը (խառա), ուստի փոխառութիւնը կատարուած է մեր կողմից և ո՛չ թէ հակառակը։—Աճ.

ԽՏԻՐ, ո հլ. «տարբերութիւն, զանազանութիւն դնելը» ՍԳր. որից յգ. խտիրf «աւելորդապաշտութիւն» Ոսկ. մ. բ. 26. «մի տեսակ կախարդական հմայք» Մանդ. էջ 160, 190, 197 (գրեթէ իբրև հոմանիշ են յիշուած՝ «ի հմայս և յոուիթս և ի խտիրս և ի դիւթս. էջ 160. Առ ուռուիթս և առ խտիրս և առ հմայս. էջ 190. Խտրոց և հմայից. էջ 197). խտրել «զանազանութիւն դնել» ՍԳր. Սերեր. Կիւրղ. եպ. «չարագուշակ համարել» Բուզ. խտրաճի Եղն. էջ 92. Ոսկ. խտրոց եպ. բ. 23. Ոսկ. Ագաթ. խտրութիւն Եղն. Եւս. քր. Ոսկ. խրտրադիմայ Նար. խտրողադիւր Մանդ. անխրտիր ՍԳր. Կոչ. շարաբախտիր Կոչ. լուսնախրտիր, շեղջախտիր Մանդ. էջ 194, խտրողադիւր Մանդ. 197. դժուարախտրելի Բրս. Քղթ. անխտրականութիւն (նոր բառ) ևն։

ՆՀՒ լծ. արաբ. խարմ, խարէ, խարգ, տարf բառից։ Meillet MSL 8, 294 սանս. khidáti և յն. σχίζω «ճեղքել» բառերի հետ՝ իբր *խիտիր ձևից։ Pedersen, Հայ. դր. լեզ. 226 խտտոր, խտտել բառերի հետ՝ -իր մասնիկով։ Karst, Յուշարձ. 428 հատանել բայի հետ՝ թթր. at, aj «բաժանել»։

ԽՏՈՒՏ «մի տեսակ բոյս. scolopendium և կամ աւելի հաւանօրէն asplenium trichomanes» (ինչպէս ընդունում է և Տիրացուեան, Contributo § 7) Բժշ. ունի միայն ՀՌուս. § 1161։—Պահուած է ներկայ գաւառականներում նոյն ձևով (Ալշ. Բլ. Մշ. խդուդ, ունին նաև Խրբ. և Ք.) «փոքրիկ մի բոյս է՝ եղրդակի նման. աճում է քարոտ տեղեր. արմատի կաթը գործածում են աչքի ցաւի համար». (աւելի ընդարձակ նկարագրութիւնը տե՛ս իմ Գւռ. բռ. էջ 494բ).—ըստ Կոլլաւ, Բառ. գերմ. էջ 160 «taraxacum officinale»։

ԽՏՊՏԱԼ տե՛ս Հոպիտ։

—ԽՐԱԽ, ի հլ. «ուրախ» ՍԳր. Եւս. պտմ. 493. «ուրախութիւն, խնջոյք» Փարպ. Արծր. Բենիկ, որից խրախանալ Ոսկ. յհ. բ. 5. խրախամիտ ՍԳր. խրախանճ Ոսկ. երր. խրախուճ Գ. մակ. ե. 9. Եփր. գաղ. 131. խրախութիւն ՍԳր. խրախարար Փիլ. նար. յարախրախանալ (նորագիւտ բառ) էլ. արիսա. 144. նոյն արմատից -ճան մասնիկով կազմուած ունինք խրախճանճ «ուրախութիւն, խնջոյք» ՍԳր. «ուրախ» Ոսկ. ես. 345 (Բևերկրեալս, խրախճանս, ուրախալիցս)· խրախճանութիւն Բար. գ. 34. խրախճանականից Բ. պետ. բ. 13. խրախճանալ Ոսկ. յհ. բ. 42 ևն. ոտանաւորի յատուկ սղնալ ձևեր են՝ րախճան Նար. ժմ. 39. Տաղ. «Թուրանական խնդիր!» Վրդ. առ. 271—2. րախճանարար Մագ. րախճանիլ Շնորհ. տաղ. րախճական «խրախճանական» Շնորհ. ժմ։

=Ուրախ բառի սաստկականն է։Նախ այս ուրախ բառի վրայ աւելանալով և սաստկական մասնիկը՝ յառաջացել է *հուրախ. համմտ. համուտ, հզօր։—Հայերէնի մէջ ընդհանուր օրէնք է՝ որ և նախաձայնը իւ վերջաձայնի ազդեցութեամբ դառնայ իւ. այսպէս են կազմուած հարբուխ>խարբուխ և հրաւասխ>խրաւասխ. (և ձայնով սկսող և իւ ձայնով վերջացող ուրիշ բառ չկայ հայերէնի մէջ. սակայն կան իւ ձայնով սկսող և իւ ձայնով վերջացող շատ բառեր. օր. խարդախ, խիզախ, խարիսխ, խորիսխ, խորխ, խուխ, խոզոխ, խաղախ)։ Այս օրէնքի համաձայն ահա՝ *հուրախ դարձել է յետոյ *խուրախ. որից էլ ու ձայնաւորի յապաւմամբ՝ ձևացել է վերջապէս խրախ։—Աճ.

ՆՀՒ լծ. պրս. xurram «ուրախ» և յն. χαίρω «ուրախ լինել»։ Տէրվ. Նախալ. 70 արմատը ենթադրում է *խուր, որից ախ մասնիկով *խուրախ>խրախ, նախաձայնի անկմամբ ուրախ և տ բացասականով տ-խուր։ Հիւնք. հանում է ուրախ բառից։ Meillet MSL 8, 160 ամբողջական ձևը դնում է *խուրախ, որից ձևացել են ուրախ և խրախ։ Patrubány ՀԱ 1908, 154 խրախճան բառի մէջ ճ ձայնը մեկնում է ինչպէս զուարթ-զուարճ։ Սանտալճեան ՀԱ 1913, 401 լծ.

խալղ. ḫar և *յն.* χάρις «շնորհ, գեղ»։ *Մառ* ИАН *1914, 1239 իրար է միացնում վրաց.* **խարեբա**, *յն.* χαρά «ուրախութիւն» և *հյ.* **ա-խուր**։—*Թիրեաքեան, Արիահայ բռ. 188 պրս.* farrux «բարեբախտ» և farāx «ընդարձակ» *բառերից։ Վերի մեկնութեանս համաձայն է նաև* Meillet *(անձնական)։*

ԽՐԱԽՈՅՋ «*մրգաոյղ*». *այսպէս ունի Բռ. երեմ. էջ 146. արդեօք պտուղի օշարա՞կ է ուզում ասել։*

ԽՐԱԽՈՅՍ «*սիրտ տալը, քաջալերութիւն*» *ՍԳր. Ոսկ. Բուզ. որից* **խրախուսել** *ՍԳր. խրախուսաճ Ոսկ. փիլիպ. կենսախրախոյս Նար. խրախուսութիւն Կիր. պատմ։*

Նշ՛ր **խրախ** *յոյս։ Տէրվ.* Altarm. 97 *խօսիլ, խոստանալ բառերի հետ՝ սանս.* çans *արմատից։ Եաղրճեան, Արեւելք 1884 հոկտ. 17 բրա (=խրա) նախդիրով՝ սանս. ևվա կամ հու արմատից։ Հիւնք.* **խօսիլ** *բայից։*

ԽՐԱՄԱՆ «*վուշի յօղուն,* stipula lini». *ունի միայն Ներսէսովիչ, Բառ. վտ.-Հյ. 511 ա, առանց վկայութեան։*

ԽՐԱՄ *(բուռ Նշ՛ր ի, ո հլ. բայց վկայութեանց մէջ կայ միայն ներգ. ի* **խրամի**) «*պատի կամ պարսպի վրայ ծակ, փլուած մասը*» *ՍԳր. Կիւրղ. ծն. Ոսկ. յհ. ա. 5. Մծբ. որից* **խրամակարկատ** *Ես. ժբ. 12, Ա. մակ. Բ. 62. Մծբ. Եփր. եկ. 185.* **խրամապահ** *Գ. մակ. ե. 24.* **խրամատ** *Բ. Թագ. ե. 20. Եփր. գծ.* **խրամատել** *ՍԳր. Ագաթ. Լաբուր. էջ 10* **խրամատութիւն** *ՍԳր. Ագաթ.* **ֆարախրամ** *Միխ. առ. 528.* **խրամատայիւն** *(նոր բառ). սրանից է նաև* **խրամակատել** «*հետեւել, ըմբռնատանալ*» *Բրս. հց. (որ սխալմամբ գրուած է* **խրակամատել**)։

Նշ՛ր լծ. արաբ. **խարմ, խարէ, խարգ, խարէպ**։ *Հիւնք.* **տրամ** *բառից։*

ԳԻՒ.—երև. **խրամ** «*ձորի ժայռերի միջից բացուած գառիվայր, գառիվեր ճանապարհ*» *(Ամատ. Հայոց բառ ու բան, էջ 296)։*

ՓՈԽ.—Վրաց. ხრამი **խրամի** «*խոր, փոս, առապար, դար, գառիվեր*», შეხრამული **շեխրամուլի** «*դարուփոս*», *գւռ. Թրք. Ակն.* xram «*պատի կամ ցանկապատի վրայ բացուած ծակ՝ որից մարդ կարող է անցնել*». *օր.* xram açəlməš «*ծակ է բացուել*»։

ԽՐԱՆ *տե՛ս Խան։*

ԽՐԱՍԱՆ *տե՛ս Փարսախ։*

***ԽՐԱՏ**, ու *հլ. (ունինք նաև* **խրատոց** *Սեբեր. յետնաբար կայ ի հլ.)* «*յորդոր. 2. հրահանգ, կրթութիւն, դաստիարակութիւն, 3. խորհուրդ. 4 ծեծ, պատիժ*» *ՍԳր. Բուզ. Սեբեր. «ուսմունք» Փիլ. «կարգաւորութիւն, հրաման, օրէնք» Եղիշ. Փիլ. Պիտ. որից* **խրատել** *ՍԳր. եզն. Ոսկ. ա. տիմ.* **խրատիչ** *ՍԳր. եզն. Եփր. եկ. և ա կոր.* **բարեխրատ** *Տիտ. բ. 3.* **վատախրատ** *Փարպ.* **խրատագիր** *Կորիւն.* **խրատատու** *Եփր. Քուց և ա. կոր. Մծբ. կամ* **խրատատու** *ՍԳր. Ոսկ. ես. և մ. եզն.* **խրատատուական** *Բուզ. ևն։ Յատին գործածութեամբ կայ* **խրատել** «*քարը տաշել, յղկել*» *Առաք. պատմ. 269, 271։*

=*Պհլ.* 𐭧𐭫𐭬 xrat, *մանիք. պհլ.* 𐭧𐭫𐭣 xrad (Salemann, Man. Stud. ЗАН *8, էջ 92*) «*իմաստութիւն, հասկացողութիւն*», *հայերէնի ու բունը ցոյց է տալիս զնդ.* 𐬵𐬭𐬀𐬙𐬀𐬎𐬎 xratu- «*խելք, հանճար, իմաստութիւն*», *սանս.* क्रतु krátu- «*նպատակ, մտադրութիւն, խորհուրդ, հասկացողութիւն, յորդոր, խրատ*»։ *Բառիս նորագոյն ձևերն են պազենդ.* xrad, *պրս.* خرد xirad «*խելք, միտք, հասկացողութիւն, բանականութիւն*» (Horn § *476*)։—*Հիւբշ. 162։*

Առաջին անգամ ԳԴ համեմատեց պրս. **խիրէտ** *ձևի հետ։ Ուղիղ մեկնեցին նաև* Spiegel, Huzw. Gr. 187, Böttich. Arica 76, 257, Lag. Urgesch. 459, Müller SWAW 38, 582, *Տէրվ. Նախալ. 144 ևն։ Թօփուզեան, Արծիւ վասպ. էջ 43 իբր խոր առել։ Հիւնք. պրս.* **հիրատ** «*փայտ, գաւազան*»։

ԳԻՒ.—Ախց. Գոր. երև. Կր. Ղրբ. Մկ. Շմ. Ոզմ. Ջղ. Սլմ. Վն. Տփ. **խրատ**, *Ալշ. Խրբ. Հմշ. Մշ. Ննխ. Պլ. Ռ. Սեբ. Սչ.* **խրադ**, *Ասլ.* **խրադ, խրա***, *Տիգ.* **խրմդ**, *Մրզ.* **խռատ**, *Ցղ.* **խռօտ**, *Զթ.* **խօյօդ, խօրոդ**, *Հճ.* **խր՝յօդ**, *Ագլ.* **հռօտ** «*խրատ*», **հռա՛տիլ** «*խրատել*»։

ԽՐԱՑ, ի *հլ. (անեզաբար գործածուած) «կօշկի փոկէ կապ». ՍԳր. Եփր. ծն. էջ 59.*

Պղատ. օրին. Շնորհ. «բաճկոնի կապ» Մաշտ. սքեմ. որից խրացել «ոտքի կապերը կապել» Նեղոս. խրացատեսակ Պղատ. տիմ։

Հիւնք. խօսիլ բայից! Պատահական նմանութիւն ունի ասոր. ܟܪܝܩܬܐ xərāqta «կօշիկ, սօլեր»։

ԽՐԵԼ «մխել», կրաւ. խրիլ «մխուիլ, սուզուիլ» Գծ. իէ. 41, Ոսկ. Երր. իդ. Փարպ. որից խրուտ կամ խրուտ «աւազուտ՝ տրղմուտ տեղ, ուր ոտքը խրւում է» Պիտ. Բրս. մրկ. արմատը պիտի լինէր *խիր կամ *խուր. առաջինը հաստատում է աւազախիր ՅՀ. կթ., եթէ սակայն այս բառը սխալ ընթերցուած չէ, փխ. աւազախիտ. «Ջամենայն աւազախիր առապար դաշտավայրն ի գործ արկանէր»։

ՆՀԲ ըւում է հանել խոր բառից։

Հիւնք. խլել բառից։

ԳԻՒ.—Ջղ. խրել, Ախց. Գոր. Երև. Կր. Ղրբ. խրէլ, Շմ. խրիլ, Երև. Մկ. Տփ. խրվիլ, Մրղ. խրւրէլ, Համշ. խրուշ։

ՓՈԽ.—Վրաց. ցახორցა գախիրվա «պատեանի մէջ դնել, մխել, խրել», արմատը խիր.— պատահական նմանութիւն ունին ბრა խրա «ծռել, գլուխ շարժել, ճկել» შეხრა շեխրա «հակիլ, կախուիլ, մէջը ծռիլ»։

ԽՐԹԱՆ. անստոյգ բառ. մէկ անգամ ունի Միսայէլ խշ. «ի խրթան բոլորակի» ձեւով. ըստ ՆՀԲ՝ եթէ կարդալու չէ ի խոռուրեան, պէտք է հասկանալ *խիրբն և կամ *խուրբն «կենտրոն» ձեւով մի բառի ներդոյական հոլովը։

ԽՐԹԻՆ (ո հլ. ըստ ՆՀԲ, թէև առանց վրկայութեան) «մութ, անգարդ, տձև (շէնք)» ՅՀ. կթ. Օրբել. «դժուարիմաց, անհասկանալի» Լմբ. որից խրթին «արևմտեան կողմը» Միսայէլ խշ. խրթնանալ «անշքանալ» Խոր. Նար. Մագ. խրթնութիւն Մագ. խրթի «մութ» Փիլ. Արծր. Մագ. խրթնագգեստ Թէոդ. մյրգ. խրթնածածուկ Նար. խշ. ևն։ Բոլորն էլ յետին են. բուն նշանակութիւնն է «մութ»։

Տէրվ. Նախալ. 70 խրթիք, կարթ, որթ բառերի, ինչպէս նաև յն. κάρ-αλος «որթ, կողով», լատ. crates «հիւսկէն, գործուածք, վանդակ», գոթ. haurds «պատած տեղ, դուռ», սանս. kart ձևերի հետ՝ հնխ. kart «հիւսել» արմատից։—Հիւնք. խորթ բառից։ Նոյնը կրկնում է նաև Ղափանցեան, Տեղեկ. ինստիտ. 2, 95։

ԳԻՒ.—Երև. Հճ. Շմ. Պլ. Ջղ. Տիգ. խրթին, Ակն. Մկ. Ննխ. Վն. խոթին, Զթ. խր՝ոթին «դժուարիմաց»։

⊙ԽՐԽԻՆՋ «ձիու ձայնը» Ճառընտ. որից խրխնջել Վեցօր. խրխնջիւն Պատմ. աղէքս. խրխնջոց (նոր բառ). գրուած է նաև խրխրընճալ։

=Բնաձայն բառ. կազմուած է խ պարզ ձայնից՝ կրկնութեամբ և r, ն, ջ ածանցիչներով. արմատի համար հմմտ. հոմանիշ խխնջել, խխնջիւն և խնջխնջել բառերը. իսկ կազմութեան համար հմմտ. մրմնջել, շշընջել, շշուռնջ, դղրնջիւն, տռտռնջ.—տե՛ս նաև խխնջել։—Աճ.

Այս մեկնութիւնս հրատարակուած է նախ ՀԱ 1899, 205 ու Հիւնք. հանում է գոչել բայից։ Petersson, Ar. u. Arm. Stud. 75 ընդունելով -նջ- մասնիկ, արմատը դնում է հնխ. khr̥- և համեմատում է սնս. kharjati «ճչալ», հսլ. chrapati «խորդալ» ռուս. хрипеть «կռկռկռիլ»։ Ղափանցեան, Տեղեկ. ինստիտ. 2, 85 վրաց. խիրխիճի։

ԳԻՒ.—Ասլ. Երև. Մշ. Շմ. Ջղ. Սլմ. Տփ. խրխնջալ, Մկ. Ոզմ. խրխնջոլ, Ախց. Կր. խրխնճալ, Ալշ. Գոր. Ղրբ. Մրղ. խոխնջալ, Տիգ. խրխնշոլ, Սեբ. խոխնշալ, Ագլ. խրխրընջալ, Զթ. խօխօնջօլ, խօրխօնջօլ, խօլխօնջօլ, Հճ. խր՝յղր՝նջե՛լ.—Նոյն բառն է նաև Տփ. խրխնջալ «ուրախանալ, ուրախութիւնից ծիծաղիլ»։

ԽՐԽՆԵԼ «խրտնիլ». ունի միայն Բառ. երեմ. էջ 147՝ խրտել բառի բացատրութեան մէջ. ուրեմն այն ժամանակ կենդանի և հասկանալի բառ էր։

ԽՐԽՈՐ «փշուր, փոքրիկ կտոր» Փարպ. ն. սրա հետ նոյն է նաև խրխիր «մանր մունր չնչին բան» ԱՒ. մէկ անգամ գտնում եմ գործածուած Ոսկ. պօղ. ա. 255 «Ջմեզ ոչ կամի եթէ յայնպիսի ինչ ի խրխիրս անկանիցիմք», որից՝ խրխրել «ձեռքով փշրել»

նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ ւրծածուած Եւս. երուս. մեկն. ղևտ. (տե՛ս Զարբ. Թրգմ. էջ 433). «Յորժամ ի հասեալ հասկիցն առեալ խրխեսցէ ոք ձեռօք»։

Դիմ.—Սրանց հետ նոյն են Ալշ. Բլ. Վն. խրխիր «փխրուն», որից խրխրել Վն. «կակղացնել, փխրել», խրխրիլ Մշ. «կոտրատուիլ, նազ անել» (հմմտ. փշրուիլ՝ նոյն նշ.)։—Շիր. խրխուր?

ԽՐՃԻԹ *(յետնաբար հոլովուած է խրճթի, խրճթոց) «խցիկ, հիւղակ» Խոր. 3Հ. կԹ. Մագ. Վրք. հց.—գրուած է խրջիթ, խոճիթ Մագ. Թղ. էջ 158, 161։*

ՆՀԲ «որպէս թէ խրձամբ կազմեալ»։

Տէրվ. տե՛ս խրիճ բառի տակ։

ՓՈՒ.—Քրդ. (Տէրսիմի բարբառ) խրճիկ «խրճիթ» (տե՛ս Հայաստան 1917, № 90)։

ԽՐՈՒԱՏ *(ո հլ. բատ ԱԲ. բայց չկայ վկայութիւն) «հպարտութիւն, համարձակութիւն» Պիտ. Նիւս. կազմ. «զոռոզ, հպարտ, ամբարտաւան» Պիտ. Կղնկտ. որից խրոխտանալ Եւս. պատմ. գ. 8, էջ 5. խրոխտիլ Սերեր. Եւս. պատմ. 624. խրոխտումն Եւս. պատմ. դիւահրոխտ 3Հ. կԹ. ձիախրոխտ 3Հ. կԹ. խրոխտաձայն Նար. գրուած է նաև խռոխտ, խռոխտել Ոսկ. մ. ա. էջ 198։*

Justi, Zendsp. *92 ա գնդ.* xru *«սոսկալի, ահաւոր լինել» ձևից դնում է հյ. խռոխել, որ Թևրևս պէտք է կարդալ խռոխտել։ Հիւնք. հանում է յոխտրտալ բայից։* Markwardt *(նամակ 1926 յունվ.) իրան. fra-uxta- ձևից, որ կազմուած է fra- մասնիկով՝ uxta- (<vak «ասել, խօսել») արմատից, իբր Թէ «պարծեցող»։*

ԽՐՈՒԱԿ *կամ* **ԽՐՈՒԱՏ** *տե՛ս խարու։*

ԽՐՈՒԱՆԴԵԼ *«հինումին շորեր կարկատել». ունի միայն ԱԲ. որից խրուանդիչ «հնակարկատ» Ոսկ. պօղ. ա. 208. «Այր մի կարուակ, խրուանդիչ, կարկատիչ, աղբատ, անանկ».—նորագիւտ բառ։*

ԽՐՈՒԿ *«կինաբարիս. մի տեսակ կարմիր ներկ» Գաղիան. Հին բռ.—ըստ Նորայր ՀԱ 1926, 67 սխալ է այս մեկնութիւնը. խրուկ բանջարի անուն է։*

ԽՐՏԻԼ, **ԽՐՏՈՒԻԼԱԿ** *տե՛ս խիրտ։*

ԽՐՕՆԻԿՈՆ *տե՛ս Քրոնիկոն։*

ԽՕՋ *«ջրի մամուռ» Բժշ. Վստկ. 182 (յն. բնագիրն ունի φυκία, alga). որից* **խոզակեր** *«մամուռ ուտող (թռչունների համար ասուած է)» Փարպ. տպ. Տի. էջ 10 (Հ. Գ. Նահապետեան այս բառը ուղղում է լոռակեր, բայց ի զուր). ըստ Նորայր ՀԱ 1921, 234 սխալ է միայն խոզուկ «մի տեսակ բոյս, գորտնբուրդ, հաւանօրէն* alga» *Գաղիան. ինչպէս ունի ՀԲուս. § 1167.—գրուած է նաև ղօզ Բառ. երեմ. էջ 203։*

Ուղուրիկեան (տե՛ս Գաբ. բառ. էջ 651 և 1405) համեմատում է արաբ. հուզազ։

ՓՈՒ.—Վրաց **ხავხი** *խաւխի, მხავხი մըխաւխի «մամուռ»։*

+**ԽՕՓ** *(ի հլ. ըստ ՆՀԲ, Թէև առանց վկայութեան) «հիւանդ (մարմնով)» Ա. Թագ ժԹ. 14. Ոսկ. յհ. բ. 17. (աչքով) Նար. երգ. 318. (ականջով) Ղև. ժ. էջ 35 Ասող. «ծոյլ, հեղգ» Փիլ. լին. որից ունինք* **խօրանալ** *«հիւանդանալ» ՍԳր. Եւս. քր. ա. 345. Ոսկ. մ. ա. 14. «ցաւ կրել, սիրտը խոցուիլ» ԱԹ. Մեկն. ղևտ. Պրպմ. խօրամիտ Եփր. ե. 11. Ոսկ. յհ. ա. 24. խօրութիւն Եւս. քր. Ոսկ. յհ. բ. 34. խօրասիրտ ՍԳր. խօրապատճառս լինել «իրօք կամ ստո՛ւ հիւանդութիւնը պատճառ բռնել» Բուզ. 104. խօրակից Նիւս. բն. արմատը Հին բռ. գրում է նաև ճօղ, ճաւղ ձևով։*

=Ինիկ հայ բառ. խայր բառի ձայնդարձներից մեկն է. տե՛ս անդ։

ՆՀԲ լծ. խոց, խէր, խիր, ախտ։ Bugge. IF *1, 447 լիթ.* skaudeti *«ցաւիլ»,* skaudùs *«ցաւոտ»,* skaũdamas *«ցաւած, ցաւոտ» բառերին ցեղակից է դնում։* Petersson, Arch. f. slav. Phil. 35, 366 *և* KZ 47, 286 *իրար է կցում հյ. խուլ, խօլ, խօր, յն. κωφός «բութ, թոյլ, համր», հսլ.* chabiti *«փճացնել»,* po-chabr *«խօլ» բառերը՝ իբր հնխ.* qhēbh- *արմատից։*

Դիմ.—Ակն. Աբբ. խօրիզ «մի տեսակ խոց, վէրք»։

ԽՕԼ, *ի–ա հլ. «անմիտ, ւնխելք, յիմար»*

Փարպ. Խոր. Փիլ. «խեղճ, հէգ?» Իմաստ. ժե. 14. որից ընդ խօլ *«անխորհուրդ կերպով» Եւս. քր. ա. 230.* խօլանալ *Ոսկ. երր. ժե.* խօլեալ *«թշուառ» Ոսկ. մ. ա. 15.* խօլութիւն *Փիլ. այլաբ.* խօլառատ *«շատ առատ» Ոսկ. ես. 243 (ձեռագրում եղծեալ).* խօլաբանութիւն *Իրեն. հերձ. 134.* խօլաբար *(նոր բառ). սխալ գրչութիւն է* խուլութիւն *Բուզ. դ. 2՝ փխ.* խաւլութիւն.—*այս բառի՞ց է արդեօք նաև* խոլոմուկն *«մի տեսակ չղջիկ» վանակ. հց. որի դէմ գոնում ենք այժմ* խլմուկ *Ալշ. Ասպ. Մկ. «խլուրդ» (ըստ Ամատ. Հայոց բառ ու բան, էջ 280)։*

ՆՀԲ խեղ *կամ* խելայեղ *բառից է հանում. իսկ* ուրուական *բառի տակ՝ լծ. արաբ.* خيال xayal *«ցնորք»։ Հիւնք.* խելք *բառից։ 3. Արշէզ ՀԱ 1896, էջ 268 իբր երր.* יאל yāl *«խենթենալ» ձևից։* Petersson *տե՛ս* խօր։ *Պատահական նմանութիւն ունի պրս.* خل xul *«խենթ», որ գաւառական առում է միայն և յառաջացած է պրս.* xul *«ծուռ, թիւր» բառից։*

Գիհ.—Նո՞յն են արդեօք խօլ *Բիւթ. «տրդեղ», Ալշ. Բլ. Մշ. «անպոչ»,* խօլօ *Մշ. «անպոչ»,* խօլպոչ *Մշ. «անպոչ»,* խօլօ *Տիգ. և* ղօլ *Ալշ. «անկոթ (դդալ)»,* խօլ *Բլ. «շատ կարճահասակ»։—Բայց Ալշ.* ղօլ *ձևի գոյութիւնը ենթադրել է տալիս օտար ծագում։*

***ԽՕԼԸՋԱՆ *«մի տեսակ հնդիկ-չինական բոյս է.* galanga» *Բժշ. ունին միայն ՋՔ, ԱՔ և ՀՔուս. § 1121 և § 3351. վերջինը տալիս է նաև* խոռնջան, խօլջեան, խուլջեան, խօլճեան, հալիճեան *ընթերցուածները։*

=*Պրս.* خولنجان xavlinjān, *արաբ.* خلنجان xalanjan՝ *նոյն նշ. արաբերէնից են փոխառեալ սպան.* galanga, *պորտ.* galanga, garengal, *հֆրանս.* galanga, galangal, garingal, *ֆրանս.* **gal**anga, *անգլ.* galangale, *հբգ. մբգ.* galgan, *գերմ.* galgant (Klüge 162), *լհհ.* galgan, *նյն.* γαλάγγα, κολούτζια, κουλούτζια, χαυλιζών, *ռճկ.* havlijan, *վրաց.* ჯოლონჯანი კოլინჯანի, ჯოლონჯანი ղ'ոլինջանի, *ռուս.* -калганъ *են։ Այս բառի բուն ծագումը հնդկական է. համմ. սանս.* कुलञ्जन kulanja, कुलञ्जन kulanjana «alpinia galanga Sw.» (Bohtl. II, *էջ 351), մալայ.* لقكوا langkuas: *Այս սանսկրիտ ձևից ծագել է պարսիկը, որից արաբերէնը, որից էլ միւսները։ Մեր բառը ծագում է պարսկերէնից, իսկ հալիճեան ձևը թուրքերէնից յետնաբար։*

Այս մեկնութիւնը տուաւ Խ. Ուղուրլեան, Մասիս 1880 յունիս 24։ Սրան պատասխանելով Նորայր, Մասիս 1880 յուլ. 4՝ ընդունում է։

ԽՕԼՕՐԱ *«մի տեսակ բոյս է. լատ.* inula pulicaria *կամ* conyza inula». *յիշում է Վտակ. 31, իբր արաբերէն բառ. բայց չգըտայ Կամուս, Թրք. Թրգմ. Ա. էջ 844։*

***ԽՕՆ *«սեղան». յետնադարեան ռամիկ դրականութեան մէջ գործածուած ձև. (հինէն է խան). Համմ. «Զատիկ առնեն ու տօն, իրենց փռեն գեղեցիկ խօն». Կոստ. երզն. էջ 137. որից բարդուած պէտք է լինի* խօճասէր *«համեղ ուտելիք և խմելիք սիրող», որ ունի միայն ԱՔ (անստոյգ բա՞ո)։*

=*Պրս.* خوان xvān *(նոր հնչումով* xān *կամ* xōn) *«սեղան» բառից փոխառեալ, որի վրայ աւելի ընդարձակ տե՛ս* խան *«սեղան»։*

Ուղիղ մեկնեց Պատուրեան, հրտր. Կոստ. երզն. էջ 197։

⊙ԽՕՇԻԻՆ *(գրուած նաև* խաւշիւն, խուշիւն խոշիւն, խոռշիւն*) «տերևների խշրտոց, ոտքի թեթև ձայն, սողունների շշնկոց ևն» Եզն. Ոսկ. կողոս. 585. Փիլ. Պիտ. Լաստ. ժը. Արիստ. աշխ. «տխրութիւնից անբարբառ մնալը» Նիւս. բն. (Նեմեսիոս, էջ 97)։*

=*Բնաձայն բառ. համմ.* շշշիւն։

ՆՀԲ «որպէս թէ խշ՛շ խշ՛շ ձայն»։ Հիւնք. խօսել *բայից։ Թիրեաքեան, Բազմ. 1913, 341 Թրք.* խշլթը, խշլտումամ *բնաձայնների հետ։ Պատահական նմանութիւն ունի արաբ.* خشف xašf *«ձայն, շարժում, օձի խշլտոց ևն» (Կամուս, Թրք. Թրգմ. Բ. 748)։*

ԽՕՍ, ի *հլ. «խօսք, խօսած կամ ասած բանը» Եւս. պտմ. 467? (կասկածելի). Զքր. կՔ. Մագ. քեր. «աքլորի կանչը» Բրս. մրկ. սովորաբար անեզական ձևով* խօսք *ՍԳր. Սեբեր. Մծբ. Եւս. քր. որից* խօսիլ *«ասել, խօսիլ. 2. ճառել, պատմել. 3. աքլորի եր-*

գելը. 4. աղջիկ նշանել» ՍԳր. Ոսկ. խօսակից Առակ. գ. 22. խօսարան «լեզու» Ագաթ. խօսելի Գ. Քագ. ժ. 7, Ոսկ. յհ. ա. 10. Ագաթ. խօսնակից Բուզ. խօսնայր Մխ. դտ. խօսուն ՍԳր. Ագաթ. եզն. վեցօր. Ոսկ. եփր. ծն. խօսող «ճարտասան» ՍԳր. Կոչ. «աքլոր» Բրս. մրկ. «ԱՉ ձայնին պատկանող մի եղանակի անուն» Մանրուս. (Ամատունի, Հյ. բառ ու բան, էջ 297), անխօս ՍԳր. եզն. Կոչ. բարեխօս ՍԳր. Ոսկ. Կոչ. Ագաթ. բազմախօս Եւագր. Նար. պատմ. խօսումն «նշանադրութիւն» Ոսկ. Բ. կոր. Աբան. էջ 609. զարդախօս Մծբ. երկխօս ՍԳր. գրախօս Նա. գ. 19. Տիտ. ա. 11. ընդունայնախօս Կորիւն. ընդվայրախօս Ոսկ. նա. թոթովախօս Նա. իթ. 24. եփր. ծն. լաւախօս Սիր. գ. 5. խառնախօս Ոսկ. Ա. կոր. Նար. քր. խորախօս եզեկ. գ. 5. խօսացուէր «իշխանաւոր, մեծաւոր, որի խօսքը կանցնի» Աբր. կրետ. 41 են. նոր գրականի մէջ հայախօս, տաճկախօս, ռուսախօս, համախօսական, խօսակցական են։

Peterm. *22, 27, 41* սանս. ghuš: Canini, Et. étym. *175* սանս. caksh «խօսիլ» և küç արմատի հետ։ Տէրվ. տե՛ս խոստ բառի տակ։ Հինք. պրս. خسن suxan «խօսք» բառից։ Scheftelowitz BB *28, 282* գոթ. huqjan «խորհիլ», հբգ. hugn «միտք» բառերի հետ հնխ. khauk՛ արմատից։ Patrubány ՀԱ *1903, 381* յն. κοέω «նկատել», սանս. kávīyas «խոհեմ», լտ. cavere «զգուշանալ» բառերի հետ։ Pedersen KZ *39, 335*=Հայ. դր. լեզ. *4* յն. καυχάομαι «պարծենալ» բառի հետ, իբր հնխ. k՛auqh- արմատից, որ շրջմամբ տուել է qhauk՛>հյ. խաւս։ Այս համեմատութիւնը ընդունում է Lidén, Archiv. sl. Phil. *28(1906), 37* և աւելացնում է հհիւս. gaukr, հբգ. gouh «կկու», նրգ. gaukeln, լիթ. szaukiù «թղաւել, կոշել, գոշել»։ (Յիշում է Boisacq 423)։ Գաբրիէլեան ՀԱ *1909, 222* գւռ. խօրոնիմ ձևի համաձայն՝ հինը դնում է խօրուֆ կամ խօրնուֆ և այստեղից փոխառեալ թրք! խօրօզ «աքլոր»։ Karst, Յուշարձան *426* թթր. söz, եակուտ. ös, չաղաթ. öz՛e, ույղուր. ŭče «խօսք»։ Iljinskij A. *29, 167* (ըստ Berneker *406—7*) ռուս. хулить «թըշնամանել, անարգել», хвалить «գովել», որոնց երկուսն էլ մերժում է Berneker (անդ)։

Գիւմ.—Ագլ. Գոր. Ղրբ. Ռ. Սչ. վն. Տիգ. խօսք, Ալշ. Ախց. կր. Մկ. Մշ. Մրզ. Ննխ. Շմ. Ջղ. Սլմ. Տփ. խօսկ, Ակն. Խրբ. Պլ. Սեբ. խօսգ, Ոզմ. խոսք, Զթ. խէօ՛սք, Ասլ. խէօ՛սք, խէօ՛ս*:—Բայական ձևով Ալշ. Հճ. Ջղ. Սչ. խօսել, Շմ. Ոզմ. Պլ. Սեբ. Տփ. խօսիլ, Գոր. Երև. Ղրբ. խօ՛սէլ, Խրբ. Տփ. խօսալ, վն. խուսել, Մրզ. խուսսալ (վերջին երկուսը, ինչպէս նաև Ննխ., միայն աքլորի համար ասուած). Ագլ. խո՛ւսիլ, Ասլ. խէօսիլ են։ Էնկիւրիի Բրբախօս հայոց բարբառով՝ ճնամօս «խնամախօս» (Բիւր. 1898, էջ 865)։ Առն. մրխրսիր «մի՛ խօսիր, լուռ»։ Նոր բառեր են խօսացուկ, խօսխօսուիլ, խօսոց, խօսխօսոց, խօսուրաճ, խօսվրռտիլ, խօսմակոխ, խօսմաճ, չխոսմաճ, խօսլսուկ, խօսմրնկեր, խօսկապ, խօսմռուկ, խօսմառում, անխօսուկ են։

ԽՈՍԱԿ «անծանօթ մի բոյս է» Բժշ. ունի միայն ՀԲուս. § *1169*։

ԽՕՐԾԻ կամ **ԽՕՐՃԻ** «ժանգառագոյն շուշան. լտ. verbena» Գաղիան. ունի միայն ՀԲուս. § *1171*, առնելով Ռոշքեանից։

Ծ

ԾԱԳ, ի–ա *հլ.* «*ծայր սկզբի, բայց մանաւանդ վերջի ծայրը*» *ՍԳր. Ոսկ. յհ. ա. 3. որից* ծագել «*արևի դուրս գալը*» (*հմմտ.* ծայր տալ *ոճը կամ Ա. մակ. ղ. 39* «*Իբրև անտի արեգական ծայրս արձակէր*», *որ է յն.* «*ճառագայթէր*») *ՍԳր. Ագաթ. Ոսկ.* ծագեցուցանել *Ոսկ. ես.* ծագումն *ՍԳր.* արեգակնածագ «*արևի ծագած կողմը, արևելեան*» *Սիսիան. Անան. եկեղ.* (*սրա հետ հմմտ.* արևածայրք «*արևի ծագելու ժամանակը*» *եզն. 191. Վեցօր.*), լուսածագ *Ասող.* լուսածագիլ *Սարգ. Շար.* յանկարծածագ *Վեցօր.* բոցածագումն *Խոր. վրդվ.* երագածագ *Վեցօր.* երկնածագ *Անան. եկեղ.* իճիճածագ *Մամբր. Եղիշ. խաչիկ. չոբեֆածագեան 3հ. իմ. եկեղ. Զքր. կաթ.* կոածագ «*ծայրը կեռ*» *Նար. 177։*

Նշ՛ի ծագ *մեկնում է իբր* ծայրք, *իսկ* ծագել «*ցայտել կամ ձգել ի դուրս*»։ *Հիւնք. երկուսն էլ* ծախել *բայից։* Bugge KZ *32, 43* ծայր *բառի հետ՝ ցեղակից է դնում յն.* στάχυς «*հասկ, ծիլ*» *բառին։* Scheftelowitz BB *28 (թ. 1904), 157 և 29, 16 յն.* βουνός «*բլուր*» *բառի հետ՝ հնխ.* g^{w}əv- *արմատից. (մերժում է* Boisacq 129): Patrubány *ՀԱ 1906, 368 հնխ.* kə-gh *ձևից, իբր յն.* ἄκρον, *լտ.* acus «*ծայր*»։ Karst, *Յուշարձ. 407 սումեր.* sag «*գլուխ*», *408 սումեր.* zag «*եզերք, սահման*» *և* zag՝ «*արևածագ*», *425 թիր.* tok, tog «*ծնիլ, յառաջ գալ*»։ *Թիրեաքեան, Արիահայ բռ. 191 պհլ.* zāk «*ծնեալ*» *անստոյգ բառի հետ և պրս.* چاچ čāk «*արևածագ*»։ Petersson, Ar. und Arm. Stud. 110 *կցում է լիթ.* žāgaras «*չոր ոստ*», žaginiaĩ *յդ.* «*ճաղեր*», *նորվ.* kage «*ցած թուփ*», *հբգ.* kegil «*ցից*» *են բառերին, որոնց նախնական նշանակութիւնը դնում է* «*ծայր*»։

Գիւմ.—Ալշ. Մշ. ծաֆել, *Ախց. Գոր. Կր. Շմ.* ծաֆիլ, *Ղրբ.* ծա՛ֆ՛իլ, *Սչ.* ձաֆել (*նշանակում է նաև* «*բոյսի ծլիլ*»), *Ննխ.* ձաֆէլ, *Խրբ. Պլ. Ռ. Սեբ. Տիգ.* ձաֆիլ, *Մկ.* ծաղկիլ! *Սրև.* ծաֆէլ, ծէֆէլ, *Ոզմ.* ծէֆիլ, *Հմշ.* ձէֆուշ,—*վերջիններըբխում են* ծայգ արմատից, *որ առանձին էլ կայ Ախց. Սրև. Լ. Ղզ. Ղրբ. Տր. Տփ.* ծէ՛ ձևով և «*արևածագ, արշալոյս*» *իմաստով։—Միջին հայերէնի մէջ գտնում ենք գործածուած Մագ. Թղ. էջ 21* «*Ոչ տայ նուագութիւն արեգական ճառագայթից, զի եթէ բազումք ելով յոգունց տեսողաց, այլ նա զիւրն ծայգէ ծայրաբար ճախրելով*»։—*Նոր բառեր են* ծագկապ «*խաղողի հատիկների կոթերը*», ծեգոց «*արշալոյս*». ծեզարաց, ծեգելաճաճ, ծեգծեգելաճաճ, ծեգծեգուռալ *են։—Իսկ* ցաթել «*ծագել*» *ձևի վրայ տե՛ս* ցայտ։

ԾԱԹԻՐԱՅ. *նորագիւտ անստոյգ բառ, որ մէկ անգամ գտնում ենք գործածուած 1221 թուի մի արձանագրութեան մէջ՝ Վիմ. տար. էջ 64* «*Տուաք ի Սանահնիս ի ծաթիրայն Շաւարև 20 օրավար հող*»։

ԾԱԹՐԻՆ *տե՛ս* Ծոթոր։

ԾԱԼ «*ծալք, ոլորք*»։ *Նար. Նչ. եղեկ. որից են կազմուած՝* ծալ առնուլ «*վէտվէտիլ, աւիքը աւիքի վրայ բարձրանալ*» *Տաղ.* ծալ ի ծալ առնուլ «*ծալծլուիլ, ոլոր ոլոր լինել*» *Տաղ.* ծալել *Դ. Բաց. բ. 8. ՅՀ. ի. 7.* ծալած «*ոլորուն, փաթթուխնալ, ոլորածոյ*» *Կիւրղ. Թգ.* ծալածոյ *Նչ. եղեկ. Կղնկտ.* ծալումն *Փիլ. Պզատ. տիմ. Արիստ. աշխ.* աճծալ *Սկևռ. են։—Բառիս երկրորդ ձևն է* ծաղ, *որի վրայ տե՛ս առանձին։*

Նշ՛ի լծ. հյ. կոտ «*ծալք, ոլորք*» *և իբր.* կալ։ *Հիւնք.* ծաղիկ *բառից։* Scheftelowitz BB 28, 296 *սանս.* jāla «*ուռ-*

կան, ցանց»։ Karst, Յուշարձ. 425 Թաթար. tol, dol, Ղազաք. tol-amak, ալթայ. tol, Բրք. dol-ašmaq «շուռ գալ»։ Մատ ИАН 1916, էջ 235 վրաց. ցալի «զոյգ» բառին ցեղակից. Համմտ. հյ. կրկնել, որ նշանակում է նաև «ծալել»։ Պատահական նմանութիւն ունի սանս. jal «ծալել»։

ԳԻՒՒ.—Ալշ. Մշ. Ջղ. Սլմ. Վն. ծալել, Ախց. երև. Կր. Ղրբ. Մրզ. ծալէլ, Գոր. Մկ. Շմ. Ոզմ. Տփ. ծալիլ, Սչ. ձալել, Ննխ. Տիգ. ձալէլ, Խրբ. ձալիլ, Համշ. ձալուշ, Հճ. ձալլել, Ակն. Պլ. Ռ. Սեբ. ձալլէլ, Ասլ. ձալլէ՛լ, Զթ. ձալլիլ, Ագլ. ձա՛յլիլ «ծալել», ձօյլ՛, ձէօլ՛, ձօլ՛ «ծալք»։ Արևմտեան գրականի մէջ գործածուած ձևն է ծալլել, որ ռամիկ համաբերով՝ հնի համեմատ ուղղում է ծալել Մասեաց աղաւ. 1864, էջ 123։ Նոր բառեր են՝ ծալապատիկ, ծալպակաս, ծալծլել, ծալծլոտել, ծալմաշ, ծալուծալ, ծալուկ, ծալ՛, ծալքաւոր։

ՓՈԽ.—Վրաց. წალო ծալո «անկողինների ծալքաւոր»։

ԾԱԼԱՆ «որթի ուռ». ունի միայն Գաբամաճ. բառ՝ Ուղղել ծալամ, ինչպէս ունին Ղզլ. Ղզ. «արքատ» նշանակութեամբ (ըստ նկատողութեան Ստ. Մալխասեանի)։

ԾԱԽ, ի, ո հլ. (ըստ ՆՀԲ նաև ու հլ. բայց առանց վկայութեան. գործածւում է մանաւանդ անեզաբար) «ծախք, ծախսուած դրամ՝ գումար» ՍԳր. Ոսկ. ա. տիմ. ժդ. և մ. ա. 18. Եղիշ. «վատնում, սպառում, մի բանի գործածուելով վերջանալը» ՍԳր. Կորիւն. Ոսկ. յհ. ա. 3. ռամկական առումով «վաճառում, վաճառք» Նչ. եզեկ. Մխ. գռ. (իմաստի զարգացման համար հմմտ. վրաց. գասաղեբա «ծախսել. 2. վաճառել»). որից ծախել «դրամը մի բանի վրայ ծախսել» ՍԳր. եզն. Ոսկ. Ագաթ. «վատնել, սպառել, վերջացնել» ՍԳր. եզն. Ոսկ. ես. Կորիւն, «վաճառել» Ոսկ. յհ. ա. 22. բ. 14. Վրք. հց. Լմբ. իմ. ծախումն եզն. ծախիչ ՍԳր. եզն. մարդածախ Թուց ժգ. 33. մեծածախ Ասող. Տաղ. բազմածախ ՅՀ. կթ. Նար. գազանածախ Մագ. դիւրածախ Իմ. ժթ. 20. Ոսկ. յհ. ա. 20. եզնածախ «եզ ծախող» Մխ. ապարհացծախ «հացավաճառ» Վրդ. առ. 203 անծախ Ոսկ. մ. ա. 20 և Կողոս. անծախական Ոսկ. ես. անծախող «ժլատ, կծծի» Ածրիստ. առաք։ Արդի գրական լեզուում յատուկ զանազանութեամբ ձևացել են ծախել «վաճառել» և ծախսել «վատնել», որից էլ ծախսարար են։

ՆՀԲ լծ. Բրք. զայ (իմա՛ արաբ. ضائع ḍāʾiʿ «կորած»)։ Հիւնք. հանում է ծխել բայից։ Շահինեան, Բիւր. 1900, 341 ըստ ՆՀԲ։

ԳԻՒՒ.—Ալշ. Մշ. Ջղ. Սլմ. Վն. ծախել, Ախց. Գոր. երև. Կր. Ղրբ. Մրզ. ծախէլ, Մկ. Շմ. Ոզմ. Տփ. ծախիլ, Հճ. Սչ. ձախսել, Ննխ. Պլ. Ռ. Սեբ. ձախէլ, Ասլ. ձախէ՛լ, Զթ. Խրբ. ձախիլ, Համշ. ձախուշ, Տիգ. ձախէլ, Ագլ. ձա՛ճիլ, բոլորն էլ նշանակում են «վաճառել»։ Նոր բառեր են ծախու, ծախս անել, ծախուգին, ծախծխել, ծախծխոտել, ծախծխոռել, ծախլրխոռել, ծախոտել, ծախուռիլ։

ԾԱԾԱՆ. արմատ առանձին անգործածական. որից ծածանիլ «վէտվէտիլ, ծփծփալ, շարժիլ» Պիտ. Նիւս. կազմ. Ասող. ծածանումն «ալիքների շարժիլը» Վրդն. ծն. նոր գրականում ալեծածան, ճողմածածան, մրրատածածան, ինչպէս նաև ծածան «մի տեսակ ձուկ, տճկ. yayən»։

=Անշուշտ կրկնուած է *ծան- պարզական արմատից. հմմտ. տատանիլ, սասանիլ են։

ՆՀԲ լծ. սասանիլ և տատանիլ։ Ս. ք՚ն. Մ(անդինեան), Մեղու Հյսս. 1860, № 27, էջ 213—5 հայ բառին է կցում վրաց. ծանծալի «թափառիլ, ճօճիլ, երերալ, տնտնալ», դածանճալերա «վազել, փախչիլ», որոնք ա՛յն ժամանակ միայն կարող են հայերէնի հետ համեմատութեան դրուիլ, երբ հաստատուի որ կազմուած են *ծան արմատից, կըրկնութեամբ՝ *ծանճանի և տարանմանութեամբ ծանծալի։ Հիւնք. տատանիլ բայից։ Վերի ձևով մեկնեց Աճառ. ՀԱ 1899, 232։ Մատ տե՛ս տատան։

ԾԱՇԻ (-ծւոյ, -ծեաց). անստոյգ բառ. մէկ անգամ գործածում է Անյ. հց. իմ. «Իսկ

աարդիցդ և մեղուացդ և ծածեացդ ճարտարութիւն անդր ևս քան զամենայն ճարտարապետացն անցուցանէ կերտաս»։ ՆՀԲ մեկնում է կասկածով «ծիծառն». ՋԲ չունի։

ԾԱԾՈՒԿ *«գաղտնի, թաքուն» ՍԳր. «անիմանալի, խրթին» Ոսկ. յհ. ա. 33. աննեզաբար* ծածուկ *«գաղտնիք, գաղտնի խորհուրդ» Ոսկ. յհ. ա. 23. «թաքստոց, ծածուկ տեղ» ՍԳր. Խոր. «առականք, ամօթոյք» Պիտառ. Վրք. հց. այս արմատից են ծագում* ծածկել *ՍԳր.* ծածկոյթ *ՍԳր. Ոսկ. յհ. ա.* ծածկոց *«ծածկոյթ» Ոսկ. ա. Թես. «տան ծածք, յարկ» Եփր. աւետ.* ծածկութիւն *ՍԳր. Ագաթ. Եփր. ծն.* ծածկաբար *Ոսկ. յհ. ա. 27.* ծածկագէտ *Դան. ժգ. 42.* ծածկանիմ *Կորիւն.* ծածկապէս *Կոչ.* ծածկատես *ՍԳր.* ծածկելի *Եւ. իգ. 14.* ծածկիչ *Բուզ դ. 14. յարկածածուկ ՅՀ. կթ. հողածածուկ Նար. ամբածածուկ Վեցօր. 185. գետնածածկոյթ Նար. խշ. գլխածածկեալ Երզն. մաթ. բևածածուկ Պրոկղ. ներբ. ղկ. Տօնակ. Վրդն. ծն. խրճնածածուկ Նար. առաք.* ծածկախոց *«ծածուկ խոցող» Մծբ. (ըստ Վարդանեան ՀԱ. 1913, 300).* ծածկալեզու, ծածկագիր, ծածկագրութիւն, ծածկանուն *(նոր բառեր)։*

ՆՀԲ համարում է իբր ցածուկ։ Հիւնք. ծագել *բայից։ Աճառ. ՀԱ 1899, 232 բ համարում է անգործածական *ծակ «ծածկել, թաքցնել» արմատից կրկնուած, իբր *ծածակ, երկրորդ եզրի փոփոխութեամբ* ծածուկ։ Karst, *Յուշարձան 415 մոնգոլ.* toxom, tokum, *թունգուզ.* tokum, *մանչու* toxuma *«թամբի ծածկոց»։*

Գիւր.—Վն. ծածկել, *Ախց. երև. Կր.* ծածկէլ, *Ագլ. Մկ. Ոզմ. Տփ.* ծածկիլ, *Հճ. Մշ. Սչ.* ձածգել, *Ննխ.* ձածգէլ, *ՋԲ. Խրբ. Տիգ.* ձածգիլ, *Համշ.* ձածգուշ, *Գոր. Ղրբ.* ծասկէլ, *Պլ. Ռ. Սեբ.* ձազգէլ, *Ասլ.* ձազգէ՛լ, *Սլմ.* տասկել, *Դվ. Մրղ.* տասկէլ, *Շմ.* տասկիլ.—*արմատը պահում են Ղրբ. Պլ. Սչ.* ձածուգ, *Ոզմ.* ծածօկ՝. *կովկասեան բարբառներում չկայ։—Նոր բառեր են* ծածկերես, ծածկեբնակ, ծածկոտդ, ծածկուկ, ծածկ։ *Վերջինը ենթադրում է *ծած արմատ, որ սակայն գոյութիւն չունի. ուստի պէտք է կարծել՝ որ կազմուած է* ծածկ-ել *բայից. դրա համար էլ գրւում է նաև* ծածկ։

Փոխ.—Հայ բոշայ. ծասխը-կարիչ *«ծածկել, խնամել». աւելորդ վերջաւորութեանց համար համմտ.* կարել, ծամել, fսել *և* fարշել *բայերը։*

ԾԱԿ, ու *հլ. (յետնաբար ի–ա հլ. իսկ Եւս. պտմ. ղ. 38 կայ գրծ.* ծակօf*) «ծակ» ՍԳր. Վեցօր. Կոչ. Եւս. պտմ. «ծակածք» Առակ. իգ. 27. Ոսկ. մ. ա. 5. որից* ծակել *ՍԳր. Ոսկ. երր. Եփր. Թգ.* ծակախիք *Ագաթ. Կորիւն.* ծակամուտ *Երեմ. խթ. 16.* ծակոտ *Երեմ. բ. 13. Սիր. իա. 17.* ծակոտիք *(նոր բառ).* ծակոտել *Անգ. ա. 6. Ոսկ. ես. երր իգ. և. մ. բ. 3. Ագաթ. Եփր. բ. տիմ. էջ 252.* ծակոտկեան *Սեբեր. կամ* ծակոտկէն *Ոսկ. ես.* ծակտի *Վրդն. ել.* ոտմածակ *Ոսկ. ա. Թես. վիմածակ Կոչ. 265. կապծակ «խաղողի այն ծակը՝ ուր կպած է ողկոյզը» Վստկ. 83 (ՆՀԲ ունի կապծագ՝ որ սխալ է).* գազանածակիք *Վրդն. պտմ.* դռածակ *Վրդն. ծն.* անծակ *Պտմ. աղէքս. ևն։*

Հիւնք. ծագ *«ծայր» բառից։* Karst, *Յուշարձան 402, 403 սումեր.* dak *«փոս, խոռոչ»։ Բիւրեաքեան, Արիահայ բռ. 191 պրս.* چاچ čāk *«ճեղք» բառից (որ է գւռ.* ճաf*)։*

Գիւր.—Ախց. Գոր. Երև. Կր. Ղրբ. Մկ Մրղ. Շմ. Ոզմ. Զղ. Սլմ. Վն. Տփ. ծակ, *Ագլ. Մշ.* ծագ, *Ակն. Խրբ. Համշ. Ննխ. Պլ. Ռ. Սեբ. Սչ. Տիգ.* ձագ, *Ասլ.* ձագ, ձայ, *Ագլ.* ծօկ. *Հճ.* ձոգ, *ՋԲ.* ձօգ, ձոգ։—*Ժողովրդական գործածութեամբ ստացել է նաև «բանտ» նշանակութիւնը, որի աւելի հին վկայութիւնը ունի Ջքր. սարկ. Բ. 102 «Մուծին զնա ի ծակ և ոչ թողին զնա ելանել արտաքս»։—Նոր բառեր են* ծակակար, ծական, ծակաչէք, ծակիչ, ծակոց, ծակուլիկ, ծակուռ, ծակոտել, ծակծրկել *են։*

*Փոխ.—*Justi, Dict. Kurde *էջ 219 մեր բառին է կցում քրդ.* زاغ zaga *կամ* زیغا ziga *«քարայր». Հայերէնի մէջ* ծակ *«քարայր» իմաստով գործածուած է. համմտ.* ծակախիք *և* ծակամուտ ձևերը. *բայց վերի քրդ. բառերի նմանութիւնը պատահական պէտք է համարել. այսպէս նաև ուս.* ծակպեսուն

«կտրտել, զարնել, ճմրթել», ծակեսուն «զարնուիլ»։

—ԾԱՂ «մի տեսակ խմորեղէն». մէկ անգամ ունի Ոսկ. փիլ. ժ. յորդ. էջ 469 «Ձցորեանն եւ քեզ Աստուած միայն, և զու ազգս ազգս ինչ հնարիս հնարել անտի, ըզնաշիհն և զխորակն և զգերմակն և զծաղսն և զկտապսն»։ Այս բառից է ծաղարար «խմորեղէն շինող», որ նոյնպէս մէկ անգամ ունի Ոսկ. մ. գ. 17 «ի սեղանայօրինացն, ի պղակունտրագործացն և ծաղարարաց»։— Նաղ բառը նշանակում է նաև «մեղրահաց» և այս իմաստով գործածում է Անկ. գիրք հին կտ. էջ 178 և 180 ձեռագիրներից մէկը՝ ամէն անգամ երբ միւսներն ունին մաղ «մեղրահաց» (տե՛ս իմ Հայ. նոր բառեր հին մատ. Բ. 228). սակայն աւելի որոշ է Տաթև. ձմ. ճխե. «Ետուն նմա ձկան խորովեցելոյ մասն և խորիսխ մեղու. ո՛չ թէ ծաղ մեղր, այլ մեղու. այսինքն իւղով և մեղրբ դորձեալ հաց»։

=Նոյն է ծալ «ծալք» բառի հետ, որի հետ նոյն ձայնական յարաբերութիւնն ունի՝ ինչ որ այլ—այղ, բոյլ—բոյղ, նշոյլ—նշող են։ Արդէն ՋՔ և ԱՔ նշանակում են փոխադարձաբար ծաղ «ծածանումն ծովու» (այն է ծալ) և ծալ «ծաղ» խմորեղէնը, ծալարար «ծաղ շինող». գաւառականներն էլ գիտեն ծալ «խմորեղէն» նշանակութեամբ, ինչպէս որ արևմտեան գրական լեզուի մէջ էլ շինուած է ծալածոյ «տճկ. եուֆխա» կոչուած խմորեղէնը։ Նշանակութեան զարդացման համար համմտ. պրս. تو بدتو tōbar-tō «կարկանդակ», որի առուգարանական իմաստն է «տակ ի տակ, խաւ ի խաւ»։ Այսպէս է կոչուած ծաղը ծալ ի ծալ խաւ ի խաւ կազմուած թերթերի պատճառաւ։

ՆՀՔ և Հիւնք. հանում են ծալ բառից։

ԳԻՒ.—Նոյն արմատից են ծալծու Ննխ. «մի տեսակ խմորեղէն», ծալծուլ Բիւթ. Ջն. «ծալծալ մի խմորեղէն՝ որ պահոց օրերն են պատրաստում՝ ընկուզով, համեմներով, մեխակով և կինամոնով»։

ԾԱՂԻԿ, ե հլ. (-ղկան, կունք, կանց), ի–ա, ո հլ. «ծաղիկ» ՍԳր. Եփր. եկ. Ոսկ. ես. 255 (տես. ծաղկաց!) կոչ. «ծաղկախառ» Շիր. Յայսմ. յոլ. 6. Վրք. և վկ. Բ. 364. «գինիի մաթ» Վստկ. 116. «պղնձի ժանգառ» ԱԲ. որից ծաղկել ՍԳր. Եւս. պատմ. ծաղկաբեր Իմ. ժթ. 7. Վեցօր. Ագաթ. ծաղկաբուղխ, Ագաթ. ծաղկալից Ոսկ. մտթ. և փիլիպ. ծաղկածև Ագաթ. ծաղկաճաղ Վեցօր. ծաղկեայ Մն. լե. 3, 23. ծաղկոց Եսթ. է. 7, 8. Ոսկ. մ. բ. 12. ծաղկուտ Եւս. պատմ. Թ. 7. անծաղիկ Վեցօր. ոսկեծաղիկ Կոչ. 321. բարեծաղիկք Վանակ. յոբ. բազմածաղիկ Խոր. Հռիփս. գեղեկցածաղիկ Պրպմ. Ասող. դեռածաղիկ Պիտ. երկնածաղիկ Խոր. վրդվ. զուարթածաղիկ Բ. մկ. ղ. 23. խնկածաղիկ Մխ. ղս. Նոր բառեր են՝ աստղածաղիկ, ծաղկավաճառ, ցայգածաղիկ, ծաղկաճաճակ, ծաղկաճմաճ, ծաղկախտ, ծաղկաղարմաճ, ծաղկամաճ, ծաղկենկար, ծաղկաբոյր, ծաղկակաղամբ, ծաղկաճար, ծաղկեփունջ Ան։

Klaproth, Asia polygl. էջ 99 Թրք. čiček համանիշի հետ՝ ՆՀՔ «որպէս թէ ծիծաղիկ, որպէս վարդն յայլ լեզուս է իբր ծաղրիկ».—իսկ վարդ բառի տակ՝ լծ. է դնում պրս. կիլ։ Müller SWAW 88 (1877), էջ 14 յն. χλόη Karolides, Γλ. ασχρ. 90 կպդվկ. čandarik «յակինթ»? Հիւնք. ծիածան բառից։ Patrubány SA 1, 191 ծաղր և ծիծաղ բառերին է կրցում։ Նոյն ՀԱ 1908, 215 ածել բայից։ Petersson, KZ 47, 289 յն. γελεῖν «փայլիլ, ծաղկիլ», γλήνη «բիբ», γαλήνη «ծովի անդորրութիւն», γελάω «ծիծաղիլ» են բառերի հետ։ Պատահական նմանութիւն ունին արաբ. ضحك ḍaḥk «ծառի ծաղիկ» (Կամուսի Թրք. Թրգմ. Գ. 101) և չեչէն. ziezag «ծաղիկ»։

ԳԻՒ.—Ախց. Գոր. Երև. Կր. Մկ. Վն. Տփ. ծաղիկ, Ագլ. Սլմ. ծաղիկ¹, Ալշ. Մշ. ծաղիգ, Հմշ. Սեբ. Սչ. ձաղիգ, Ջղ. ծաղիք, Մրզ. ձաղիյ, Տիգ. ձաղիգ, Ոգմ. ծաղէ՛կ, Ղրբ. Շմ. ծաղիք¹, Խրբ. ձաղիք¹, Ասլ. ձաղիգ, ծաղէգ¹, Ննխ. Պլ. Ռ. ձաղէգ, ՋԹ. ձաղր՛գ. ՀՃ. ձաղգել «ծաղկիլ». Ակն. ձաղգուճաք «ծաղիկներ», Երև. ԴՆՃ. վն. մանկական բարբառով՝ ծածաղ.—Նոր նշանակութեամբ են ներկայանում՝ Մրզ. Սչ. «ծաղիկ հիւանդութիւնը», ՋԹ. ՀՃ. Ննխ. «մոխիր», Ղրբ.

«դեռ խակ՝ չհասած ցորեն», Շլ. «զաւակ», Ղրբ. «դաշտան» (այս իմաստի հին վկայութիւնը ունի Բառ. երեմ. էջ 310 տեռատես բառի բացատրութեան մէջ). Խոջ. «վիճակ բանալ»։—Ծաղկազարդ *բառը պահում է Մշ.* զաղգազարդ՛, *ուր նախաձայն ծ վերածուել է զ-ի՝ յաջորդ զ-ի նմանութեամբ, ճիշտ ինչպէս է* ծառզարդար>*գւռ.* զառզարբար *բառի մէջ։—Նոր բառեր են՝* ծաղկալի, ծաղկակոխ, ծաղկաւոր, ծաղկուն, ծաղկամայր, ծաղկեծուն, ծաղկեջուր, ծաղկոտ, ոչխարածաղիկ, ծաղկատար *են։*

ՓՈհ.—Վրաց. წალოკა ծալիկա *«մի բոյս է. վառվառուկ,* alysson», წალკოტი ծալկոտի *«բանջարանոց կամ պտղատու ծառերի պարտէզ»,* მეწალკოტე մեծալկոտե *«պարտիզպան»։—Վրացերէնից յետ փոխառեալ ձև է Արդուինի հայ բարբառով* ծալիկա *«ցինդ խոտը» (ՀԲուս. § 1173)։*

+ԾԱՂՐ, *սեռ.* -ղու *(յետնաբար նաև* -ղեր *ՄՀխ. էջ 248, Ոսկ. յհ. ա. 36, էջ 369, նաև* ծաղրու*)* «ծիծաղ, խնդալը, ուրախութիւն. 2. վրան խնդալը, ծանականք. 3. վրան խնդալու բան» *ՍԳր. Ոսկ. երր. և յհ. ոճով աւելում է* ծաղր առնել *«վրան խնդալ, ծաղրել» ՍԳր.* ծաղր լինել *կամ կալ «ծաղրելի դառնալ» ՍԳր. որից* ծաղրել *Փարպ. Խոր.* ծաղրալից *Իմ. ժէ. 8.* ծաղրախառն *Եւագր.* ծաղրածու *Ոսկ. մ. և Եփես.* ծաղրական *Ոսկ. յհ. ա. 19, 23.* ծաղրասէր *Սարգ.* ծաղրերես *«խընդումերես, ուրախ դէմքով» (չունի ՆՀԲ) Յայսմ. յնվ. 1 (այր մի... ծաղրերես և քրխամորթ). Յկ. կր. էջ 16.* ֆաղցրածաղր *«քաղցրաժպիտ» Տեսիլ դան. 134 (նորագիւտ բառ).—Նոր բառեր են* ծաղրաբանութիւն, ծաղրալի, ծաղրելի, ծաղրանկար, ծաղրանկարիչ, ծաղրաբերք, ծաղրաբանական *են։—Բառիս բուն արմատն է՝* ծաղ, *որի վրայ աւելացել է ր մասնիկը (համմտ.* մեղր*)։ Պարզական* ծաղ *ձևը պահում են* ծիծաղ, ծաղել *«ծաղրել» ՀՀԲ,* ծաղկու *«ծաղրածու» Ոսկ. ա. տիմ. ժդ.* ծաղբաստ *«ծաղրելի» ՔԲ (եթէ սակայն վստահելի են այս ձևերը)։ Պարզ արմատի կրկնաւորն է* ծիծաղ *(<*ծէծաղ) «ժպիտ, վրան խնդալը, ծաղր». գործածական է միայն գաւառականներում և արդի գրականում. որից* ծիծաղիլ *ՍԳր. Ագաթ. Կոչ. Վեցօր. Ոսկ. յհ. բ. 17. (բուն իմաստն է «ծաղրել». նշանակութիւնը ճշտելու համար համմտ. Վրք. հց. Բ. 150 «Ոչ ժպտեցայ, այլ ծիծաղեցայ ընդ անկարութիւն վաստութեան ձերոյ». որի դէմ միւս խմբագրութիւնն ունի «Ո՛չ ծիծաղեցայ, այլ այպն արարի»).* ծիծաղկոտ *Ոսկ. մ. ա. Ը.* ծիծաղեցուցանել *Վրք. հց.* ծիծաղական *Պորփ. Սահմ.* ծիծաղանք *Պզատ. օրին.* գեղածիծաղ *նար. առաք.* բազմածիծաղելի *Նիւս. բն.* ծիծաղուն, ծիծաղաշարժ *(նոր բառեր) են։*

=*Բնիկ հայ. բառ. հնխ. արմատն է* g'el-, *որ ունէր նաև* g'ol- *և* g'l- *ձայնդարձները. առաջինից են յագում յն.* γελάω *«ծիծաղիմ»,* γελασ-τός *«ծիծաղելի»,* γέλος, γέλως *«ծիծաղ, ծաղր»,* γελανίς *«ուրախ». վերջինից է յագում հյ.* ծաղ-ր, *ինչպէս և յն.* γαλήνη *«ծովի անդորրութիւնը»,* γαληνός *«պարզ, անդորր, հանդարտ»* (Boisacq *140, 143,* Walde 332, Pokorny 1, 623)։ *Հնդեւրոպական նախալեզուի սովորութեան համեմատ* g'el- *արմատի ձայնաւորը վերածելով* oi, *կազմուած է սաստկական կրկնաւոր* g'oi-g'el-, g'oi-g'l-, *որից հայ.* *ծէծաղ> ծիծաղ։ (Կրկնաւորի այս ձևի վրայ տես* Meillet MSL *12, 216—8. իսկ* ծիծաղ *ձևի կրկնութեան վրայ յատկապէս՝ տե՛ս* Meillet MSL *13, 375)։—Հիւբշ. 455։*

Brosset JAs. *1834, 383 են* ծաղել *ձևի դէմ դնում է յն.* γελάω *և վրաց.* ცინცხი։ *ՆՀԲ «ծաղր՝ արմատ բառիս* ծիծաղ *և* ծաղիկ. *լծ. ընդ* ձաղ, խաղ». *իսկ վարդ բառի տակ լծ. է դնում պրս.* կիլ *«վարդ»։* Peterm. 23 ծաղր=*երր.* צחק ṣḥq *«խնդալ, ծիծաղիլ»։* Windisch. *13, 18 յն.* γέλως։ Canini, Et. étym. *186 րրըտ.* khoarzin *«ծիծաղիլ»։ Տէրվ. Նախալ. 76 հայ.* կակաճ, կաճչել, կատակ, կողկողել, ծիծաղել, ծաղր, կարկաչել <կակրաչ-ել, կռնչել, կռունկ, կարդալ, կրճ-ել, կրճ-տել, ճար-ճատել <ճաճրատել *ձևերը դնում է հնխ.* ga, gan *«հնչել, գոչել» արմատից, որին*

է կցում նաև սանս. gā «երգել», gad խօսիլ», gar «գոչել», յն. γῆρυς «ձայն», γαργαρίς «աղմուկ, ժխոր», γελάω «ծաղրել», γέρανος «կռունկ», լատ. gingrire «կարկաչել», grus «կռունկ» են։ Հիմնք. ծիծաղ բառից հանում է ծաղր։ Մառ, Крит. и мелк. ст. (1903 թ.) էջ 26 ծաղր=սասր. שׂחק ṣ'ar «ծաղրուիլ, խայտառակուիլ» բառի հետ Autran, Sumer. et ind. էջ 84 համեմատում է յն. γελάω =սումեր. ḫûl «ուրախանալ»։

ԳԻՒՒ.—Ալշ. Ախց. երև. Մկ. Մշ Ոզմ. ծաղր.—Նոր բառեր են ծաղրատեղ, ծաղրիկ հաւ «martin-pêcheur»։

ՓՈԽ.—Ըստ Bugge IF 5, 168—180 (Հայ. Թրգմ. ՀԱ 1895, 228) հայերէնից է փոխառնուած գոթ. saldra «գիւղական կառոյց, խեղկատակութիւն» եփես. ե. 4. գոթացին չունենալով lr ձայնախումբը՝ ծաղր>*salra դարձրել է saldra:

ԾԱՂՔԻԼ «սիրտը խառնել կամ ներսը այրել՝ ուժեղ կամ թունաւոր դեղի ազդեցութեամբ»? անստոյգ բառ, որ մէկ անգամ ունի Կալիսթ. 175 «Եւս առաւել կարի յաղթեաց դեղն անապակագոյն ընդ մարմինն խառնեալ և բախեալ և ծաղքեալ ընդունայն ործալով Աղեքսանդրոս, հրաշալի ցաւով զգիշերն ամենայն» (Դեղը ուղղակի մարմնին անցնելով աւելի ևս ներգործեց...)։

Բառիս վրայ խօսում է Տաշեան, Ուսումն. ստոյն Կալիսթ. էջ 200, բայց որևէ նշանակութիւն չի դնում։

ԾԱՄ, ո հլ. (յետնաբար ի–ա հլ.) «հիւսած մազ» Ոսկ. կող. փիլ. մաթ. և եփես. որից ծամակալ «ծամկապ» ՍԳր. Ոսկ. յհ. ա. 17 և եփես. ոսկեծամ Ուռհ. 119։

ՆՀԲ ուզում է անշուշտ կցել ծամել բային, երբ մեկնում է «հերք երկայն... մինչև ի ծամելիս»։—Brosset JAs. 1834, 369 են վրաց. թմա «մազ» բառի հետ. (նոյնը Thomaschek, Deutsche Litteraturz. 1883, էջ 1254 վրաց. թմա և լազ. թոմա)։ Lag. Armen. St. § 1036 եբր. צמים ṣammim, צמה sammā «ծամ» բառերի հետ։ (Սակայն երկուսի էլ նշանակութիւնը անստոյգ է. ըստ Gesenius 1910, էջ 680—1 ṣammā աւելի հաւանաբար նշանակում է «քօղ», իսկ ṣammīm «թակարդ»)։ Տէրվ. տե՛ս ծամ, ծամել արմատի տակ։ Հիմնք. յն. κόμη «գէս» բառից։ Pedersen, Հայ. դր. լեզ. 47 ծամել բառի հետ։ Պատահական նմանութիւն ունի վրաց. წამი ծամի «թարթիչ» (իմա՛ կոպի մազերը)։

ԳԻՒՒ.—Ալշ. Գոր. երև. Ղրբ. Մշ. Մրզ. Շմ. Ոզմ. Ջղ. Սլմ. Վն. Տփ. ծամ, Ագլ. ծում, որոնք նշանակում են «մազ». իսկ Մկ. ծամ «մազերի կապ»։—Նոր բառեր են ծամակրատուր, ծամաւոր, ծամերլուայ, ծամբել, ծամկեր, ծամկոր, ծամմօղ, ծամուկ, ծամկապ, ծամբեռ։

ՓՈԽ.—Հայերէն բառից փոխառեալ է Բում կապադովկ. Շ'ւամաչ (ցա՛մէս) «կանանց և աղջկանց վարսերի հիւսքերը բռնող գեղեցիկ ժապաւէն՝ արծաթէ և ոսկէ դրամներով»։ Այս բառը Karolides, Γλ. σγχρ. 83 կցում է յն. ἰμάς «փոկ», իտլ. siaman «ժապաւէն», անգսք. sima «կապ», սկանդ. seyni «թել» բառերին, իսկ հյ. ծամ բառի հետ կապակցութիւնը մերժում է։—Մերժումը արդարացնելու համար առանձին պատճառներ չկան. որովհետև 1) ծամ բառը գոյութիւն ունի կը ճիւղի բարբառների մէջ (այսպէս՝ Ալշ. Ագ. Ակն. Բլ. Բղ. Խլ. Խոջ. Մշ. Նբ. Վն.).— 2) Մոկաց բարբառով նշանակում է արդէն «մազերի կապ, ծամկապ».—կասկածելի է միայն ծ>ց։

—ԾԱՄ «ծուռ». այս իմաստով առանձին չէ գործածուած, բայց սրանից ունինք ծամածուռ «ծուռ ու մուռ» Իրեն. 11, Պատմ. աղբս. Սարկ. Հանգ. Վանակ. յոբ. Վրդն. ել. ծամածռել «խեղաթիւրել, ծռմռել» ՅՀ. իմ. պաւլ. աճծամածուռ Փիլ. իմաստ։

=Թարմատար մասնիկ՝ կազմուած ծուռ բառի նախաձայնով և մ յաւելուածով, ճիշտ ինչպէս արդի բարբառներում ունինք ճեփ–ճերմակ, ճուփ–ճոր, կաս–կարմիր=թրք. düp-düz, düm-düz, հին հայերէնումն էլ կամակոր, սափաստուտ։

ՆՀԲ դնում է լծ. ւ նոյն ընդ կամա-

կոր, իբր կամարակոր: *Հիւնք. իբր կամակոր, պրս. խէմ «կոր»: Ուղիղ մեկնից նախ Այտընեան, Քննակ. քեր. էջ 310, որից անկախաբար Աճառ. (անտիպ): Հացունի, Պատմ. տարազի, էջ 10 ծամ բառից, իբր թէ «մազերի նման ծուռ»:*

ԾԱՄ. *արմատ առանձին անգործածական, որից* ծամել *Յոր. լ. 5, Յայտ. ժգ. 10. Ոսկ. յհ. ա. Եփր. աւետ. «մտքով որոճալ» Ոսկ. յհ. ա. 10.* ծամելի *կամ* ծամելիք *«ծնօտ» Դատ. դ. 21, 22, ե. 26. Նիւս. բն. Մագ.* ծամոն *«ծամելու մազտաք» ՋԲ.* անծամ *Յոր. ի. 18.* մեղմածամ *«մեղմ ծամելով, որոճալով» Վեցօր. 192 (ձեռ.* մեղմաժամ*). ծամու «այնչափ բանձր՝ որ կարելի է ծամել» (նորագիւտ բառ) Վրդն. սղ. կր. էջ 229 (ի ժամ խաչին ծարաւմանն վասն չարութեան՝ լեղեաւ բանձրացուցին զքացախն, մինչ ծամու էր).* անծամելի, դժուարածամ*—նոր գրականի մէջ գործածական բառեր:*

= Թուի բնիկ հայ բառ՝ հնխ. g'ṃbh- արմատից. հմմտ. սանս. जम्भ jāmbha- *«ներախ, ծնօտ, ատամ»* जम्भ्य jámbhya- *«կտրիչ ատամ կամ սեղանատամ»,* जभ् jabh, जम्भ् jāmbha *«հափռել»,* जम्भयति jambhayati *«մանրել, ջարդել», զնդ.* hamzəmbayati *«ջարդել»,* zəmbayndwəm *«ջարդում էք», գաւթաւ, գաւթիաւ «անասունի ծնօտ, թռչունի կտուց», յունարէն* γομφίος *«սեղանատամ», ալբան.* dęmb, dąmp *«ատամ»,* dęmp *«ցաւում է», հալ.* zą̆bŭ *«ատամ»,* zębą *«պատառել», լեհ.* ząb, *ռուս.* зубъ *«ատամ», լիթ.* žam̃bas *«գերանի եզր»,* žembiù *«կտրտել», լեթթ.* zùobs *«ատամ», հհիւս.* kambr *«ատամնաւոր գործիք, սանր», հբգ.* champ, chamb, kamb, *մբգ.* kamb, kamm, kam, *անգլ.* comb, *գերմ.* Kamm *«սանր»* (Boisacq 153, Trautmann 369, Walde 336, Kluge 238, Pokorny 1, 575): *Հնխ.* g'ṃbh *(ամբողջական արմատը* g'embh, g'ombh-*) հայերէնի մէջ տուել է նախ* *ծամբ, *յետոյ թերևս* *ծամմ- *և* ծամ-, *ճիշտ ինչպէս ունինք գերմանականում:*

Lag. Urgecch. *465 սանս.* jam *«ուտել, ծամել» արմատից, որ շատ անապահով է համարում նոյնը՝* Arm. Stud. *§ 1037: Տէրվ. Մասիս 1881 մայիս 11*

ծամել, ծասխել, ծանծաղել *դնում է ծա «ուտել» հասարակաց արմատից: Նոյն, Նախալ. 86 հյ.* ծամել, ծամ, տամալիք, տուն *դնում է հնխ.* da *«կապել, պնդել» արմատից, որից հանում է նաև սանս.* da, *յն.* δέω, δέμω *«կապել»,* δαμνάω *«նուաճել»,* δόμος *«տուն», լտ.* domare *«նուաճել»,* domus *«տուն», գոթ.* timrjan *«շինել»,* gatamjan *«նուաճել» ևն: Հիւնք.* ծամ *«մազ» բառից: Վերի մեկնութիւնը տուաւ* Bugge KZ 32, 11: *Հիւրշ.* IF Anz. *10, 48 յիշում է նոյնը, բայց սպասում է հայ.* ծամբ· Patrubány *ՀԱ 1906, 345 բաղաձայնի կորուստը բացատրելու համար ենթադրում է հյ.* *ծամբնեմ>*ծամնեմ>*ծամմեմ>ծամեմ: *Մաս* ЗВО *22, 44 վրաց.* ნამა *«ուտել» բային ցեղակից է դնում:* Bugge*-ի մեկնութիւնը ընդունում է* Boisacq, *իսկ* Walde *ևն չեն յիշում:—Պատահական նմանութիւն ունի ավար.* čamize *«որոճալ, ծամծմել»:*

Գիր.—Ալշ. Մշ. Զղ. Սլմ. Վն. ծամել, *Ախց. Գոր. Երև. Կր. Ղրբ.* ծամէլ, *Ագլ. Մկ. Շմ. Ոզմ. Տփ.* ծամիլ, *Հճ. Սչ.* ձամել, *Ննխ. Պլ. Ռ. Սեբ. Տիգ.* ձամէլ, *Մրղ.* ծամըլել, *ՋԲ. Խրբ.* ձամիլ, *Ասլ.* ձամէ՛լ, *Հմշ.* ձօմուշ:*—Թրքախօս հայոց մէջ թրք. -le -mek բայակերտ մասնիկով աճած՝* ծամէլլէմէք *«ծամել» Ատն. (Արևելք 1888, նոյ" 8—9):—Նոր բառեր են* անծամել, անծամելովի, ծամաւոր, ծամուն, ծամուկ, ծամոց, ծամծմել, ծամծմոտել, ծամծմռել, ծամլմռել, ծամծրմացնել, ծամառան:

Փոխ. — Հայ-բոշայերէն ծամխը-կարիչ *«մազտաք, ծամոն». խը, իչ յաւելուածների համար հմմտ.* ծածկել, ſեռել, ſարշել, կարել *բառերը.—իսկ գնչ.* čamkerava *«ծամել» ծագում է ուղղակի սանս.* čam *«ուտել» ձևից:*

ԾԱՄԱԿՈՒՏ. *անստոյգ բառ. մէկ անգամ ունի Մագ. լգ. «Ծպտեալ ծամակուտ ծուարեալ»: ՆՀՔ գրում է «թթէ չիցէ գրելի* ծակամուտ*, ուր իցէ նմանութիւն ծամաց յաճախելոց». ՋԲ չունի. իսկ ԱԲ դնում է պարզապէս «որ ծամի կը նմանի»:*

ՅԱՄԹԻ «մի տեսակ հալուէշ» Խոր. աշխ. 615 «Յամթի, է սև, մարախանման». ըստ այլ ձ. «ծամբիմարիայ, նման է ծանր», որ անշուշտ ազաւաղ գրչութիւն է:—Բառարանները չեն յիշում այս բառը:

ՅԱՄՐԵԼ «խարել». ունի միայն Բառ. հրեմ. էջ 148:

*ՅԱՅԹ, որ և ծայդ, ծաթ, ծադ. գործածուած է իբրև նախատական բառ, «հաւատքի մէջ թերի կամ ազատամիտ» նշանակութեամբ. համմտ. «Ծայդ կարդան և թերի ի հաւատս» Խոսր. էջ 199. «Ոմանք ի Յունաց և ոմանք ի Հայոց, որք կոչին կիսատ Յոյնք և ծաթ Հայք» Մխ. ապար. «Այսպանէին զնա բիրտ և սոպռ մարդիկք և համբաւէին զնա ծայթ» Յայսմ. փետր. 27.—իբրև ձեռագրական սխալ մտած կամ մոցրած է Վեցօր. էջ 30 ծայդանձինք ձևով. «եթէ Մարկիոնիստայք և եթէ ծայդանձինք (յն. Վաղենտինեանք) և եթէ պղտորեալ ուսմունք կողմանն Մանեայ...»:

=Ձևացած է ծաթ ազգի անունից: Այս ազգը գնչուների մի ցեղ էր, որ Հնդկաստանից գաղթելով՝ եկաւ Հայաստան: Յաթերը յետոյ մկրտուելով հայ դարձան և յետոյ էլ յունական եկեղեցուն յարելով՝ յոյն դարձան: Այսպէս ձևացան ծաթ-հայերն ու ծաթ-յոյները: Այս ազգը յիշում են Ուխտանէս (Ժ դար), Պօղոս Տարօնացի (ԺՌ դար.—համարում է հայհոռոմ՝ Բ. էջ 267), Մխիթար Այրիվանեցի (ԺԹ դար), յոյներից՝ Նիկոն Սեւլեռնցի (ԺԱ դար): Հայոց մէջ կոչուած են վերի ձևերով, յունաց մէջ τζάτος, արաբ. ﺟﺖ zutt (Կամուս, Բրք. Բրգմ. Բ. 476), Հնդ. jat:

Կ. Վ. Տէր-Մկրտչեան, Die Paulikaner, էջ 77 Ασπάσιοι հերձուածողների անունից: Ալիշան, Հայապատում ծրիլ բայից: Սմիռնով արաբ. زاهد zāhid «բաժանեալ», իսկ Մառ Виз. врем. 12, էջ 30—33 և 38 աստր. ﺻﺪﻳﻖ ṣadi «բաժանուիլ»: Ակինեան ՀԱ 1908, 113 յիշելով այս մեկնութիւնները, աւելացնում է նաև լազերի Τζάθος թագաւորի անունը: Ուղիղ մեկնեց Ն. Ադոնց, մի առանձին յօդուածի մէջ, որի թարգմանութիւնը տե՛ս ՀԱ 1912, 257—271:—Ծաթերի մասին տե՛ս նաև Պատկ. Цыганы (Боша и Карачи) 1887, էջ 21:

ԳԻՒՏ.—Հին բռ. և Բառ. հրեմ. էջ 148 մեկնում են ծայթ «մանր, նուազ», որից ունինք ծայթական «մանր» ՀՀԲ, ծայթիճասեր «մանր» Նար. տագ. 468 (չունի ՆՀԲ): Կայ նաև ծայդ «օրուայ երկրորդ ժամը»: Յայտնի չէ թէ այս բառերը նախորդի հետ նո՞յն են, թէ առանձին բառեր են, որոնց համապատասխանում են արդի բարբառներով՝ Մրզ. խ. ծեր, Ագա, վն. ծէտ «փոքր, մանր, մանրիկ», ծէտ-պէտ «մանր մունր», վն. ծերել «մանրել», խ. վն. ծերիկ, ծետիկ «մանրիկ», վն. ծերկիկ «մանրիկ», թերևս նաև խրբ. Պլ. ձեղուգ, Ետ. ձէրուգ, Դվ. ձէծուկ, Պլ. ձէձուգ «որդ ձգող ճանճ» (այսպէս է ստուգաբանում ՆՀԲ):

ՅԱՅՐ, ի հլ. «ծայր (սկզբի կամ վերջի)» ՍԳր. փոխաբերաբար գործածուած է «լեռների և բլուրների գագաթ, նորածագ արևի ճառագայթ, մի որևէ բանի ազնուագոյն մասը» նշանակութեամբ: Որից ծայրակարմիր Բ. մակ. ժ. 28, ծայրակոտոր Ոսկ. գաղ. ծայրակտուր Դատ. ա. 7. Ոսկ. ես. արևածայրք Եզն. 191. Վեցօր. լեզուածայր Ճառընտ. ծայրահաղ Բ. մակ. է. 4. Ագաթ. Եւս. պտմ. Կոչ. ծայրանալ «վերջին ծայրը հասնիլ, գերազանցել» Պիտ. Մագ. անծայր Ոսկ. յհ. բ. 16. այս արմատից եմ կարծում նաև Բառ. հրեմ. էջ 148 ծայրածօղ «ապականիչ», ծայրան «գլորումն», ծայրանացեալ «յայտնեալ»: Նոր բառեր են անծայրածիր, ծայրագաւառ, ծայրասահման, ծայրանուն, սրածայր, ծայրայեղութիւն են:

ՆՀԲ վրաց. ձիրի «ծայր» բառի հետ: Müller, Kuhns u. schleich. Btrg. 5, 383 սանս. dhārā: Canini, Et. étym. 200 սայր բառի հետ կցում է սնս. çira «գլուխ» բառին: Bugge տե՛ս ծագ բառի տակ: Հիւնք. հանում է ծեր բառից: Jensen, Hitt. u. Arm. 37, 79 են հաթ. sar, sr, sra, sara, sari=ծագ (Գամբաց դրամների վրայ), dsario «թագաւոր» բառի հետ: Scheftelowitz BB 28,

309 սանս. gaṇḍa «բարձունք»։ Մատ ЗДО 19, 158 վրաց. ծվերի համանիշի հետ յաբեթական ծյր արմատից։ Karst, Յուշարձան 402, 408 սումեր. tur «բարձրութիւն, ծայր»։ Թիրեաքեան ՀԱ 1912, 288 նոյն ընդ սայր, սար։ Petersson, Ar. u. Arm. Stud. էջ 110 ծագ «ծայր» բառի խաչաձևմամբ սայր բառի հետ։

ԳԻՒ.—Ախց. ծար, ծէր, Ալշ. երև. կր. Մկ. Մշ. Մրղ. Ոզմ. Ջղ. Սլմ. Վն. Տփ. ծէր, Համշ. ձէ՛ր, երր. ձmր, Աալ. Ննխ. Պլ. Ռ. Սեբ. ձար, Ջթ. ձmյ, ձmր, Հճ. ձmյ.—Նոր բառեր են ծայրիկ, ծայրկոռու, ծայրպոչ, ծայրծաղիկ, ծայրվայրիկ, ծայրք «ընտիր բուրդ»։

ՓՈՒ.—Վրաց. წვერი ծվերի «ծայր, գագաթ, վերջ, սպառուած», წვრილი ծվերիանի «սրածայր»։

+ԾԱՆ «ճանաչել». արմատ առանձին անգործածական, որից կազմուած են ծանուցանել «ճանաչել տալ, իմացնել, յայտարարել» ՍԳր. ծանուցիչ Ոսկ. ես. ծանօթ «ճանաչածը, մերձաւոր, ազգական» ՍԳր. «գիտակ, տեղեակ» ՍԳր. «յայտնի» Ոսկ ես. ծանօթս տալ «ճանաչել տալ» ՍԳր. Եւս. քր. Ոսկ. յհ. ա. 1. Սեբեր. ծանօթական Կորիւն. Ագաթ. Ոսկ. մ. բ. 16 և ես. Սեբեր. ծանօթաւոր Ոսկ. մ. ա. 1. ծանօթոյք Ոսկ. մ. ա. 4. ծանօթութիւն Ոսկ. յհ. բ. 12. անծանօթ ՍԳր. կանխածան (չունի ՆՀԲ) Ոսկ. բ. տիմ. 254. անծան Ջքր. կթ. մտթ. Ոսկ. յհ. յիշ. բարեծանոյց Պիտ. դիւրածան Փիլ. լին. նախածանօթ Ագաթ. Բուզ. դժուարածան Պզատ. մինուվս. հրեշտակածանօթ Ագաթ. լաւածանօթ Փարպ. կանխածանոթ Ոսկ. մ. բ. 8. նաև ճանաչեմ բայի այլևայլ ժամանակները (կտր. ծանեայ, հրմ. ծանի՛ր, դերբ. ծանուցեալ), ինչպէս և վեր-ծանել, վեր-ծանող, վեր-ծանութիւն են յետին բառերը, որոնք թարգմանուած են յն. ἀναγνώσκω համանիշից։ Նոր բառեր են ծանուցագիր, ծանօթագրութիւն, վաղածանօթ են։—Այս նոյն ծան արմատից է կազմուած՝ չ ածանցականով, ճանաչել. որի նախաւոր ձևն է *ծանաչել. նախաձայն ծ ազդեցով չ ձայնից՝ վերածուել է իր աստիճանի չ-ի. նման փոփոխութեանց օրինակներ են Աստուծոյ>գր. Աստուծու, ուսուցիչ>աղաւ. ուսուչիչ, աչից>վն. աչիչ, զոյժ>ժոյժ, աստուճ>աշտուճ, սոճի>շոճի, *հրաժեստ>հրաժեշտ են։

=Բնիկ հայ բառ՝ հնխ. gʰn̥- սղեալ արմատից. միւս ձևերն են հնխ. gʿenē-, gʿenō, gʿnē-, gʿnō-. համմտ. սանս. ज्ञा jñā (ներկ. जानाति jānāti) «ճանաչել, գիտել, ծանօթ լինել». ज्ञात jñātá-«ծանօթ», ज्ञाति jñāti-«խնամի», զնդ. ȝ𐬵𐬌 zan «ճանաչել, գիտենալ», zānənti «գիտեն», āzainti «գիտութիւն, ծանօթութիւն», znatar «ծանօթ, գիտակ», հինդուստ. जान jannā «գիտեննալ, ճանաչել, հասկանալ», գնչ. janava «գիտենալ, ճանաչել», հպրս. 𐎠𐎭𐎰𐎽𐎢 adānā «գիտաց», 𐎠𐎭𐎰𐎽𐎢𐏁 adānāsa «գիտացին», պհլ. šnāxtan, dānistan, պրս. دان dān-am «գիտեմ», شناسم šināsam «ճանաչեմ», քրդ. zānin, nāsin, աֆղան. pēžanam, օսս. zōnum, յն. γι-γνώ-σκω=եպիր. γνώσκω «ճանաչեմ», γνωτός «ծանօթ, խնամի, ազգական, եղբայր», γεγωνίσκω «ծանուցանել, յայտարարել», հլտ. gnō-sco=լտ. nōsco «ճանաչել, գիտել, սովորել», gnārus «ծանօթ, գիտակ», ignōro «անգիտանալ», nōtus «ծանօթ», գոթ. kann «գիտեմ», kunnum «գիտեմք», kunnan «գիտել, ճանաչել», հրգ. chnāan «գիտել», kunnan «գիտեննալ, կարենալ», kennan «ճանաչել», գերմ. kennen, անգսք. cnáwan, անգլ. know, հիւլ. gninim «ճանաչեմ», ad-gén-sa «ծաննայ», gnáth «ծանօթ, սովոր», լիթ. žinaũ, žinóti «գիտել», žénklas «նշան», լեթթ. zinu, žināt «գիտեննալ», հպրուս. ersinnat «ճանաչել», հսլ. znaja, znati «ճանաչել», znakŭ «նշան», ռուս. знать «գիտեննալ», знакъ «նշան», ալբան. n´oh «ճանաչեմ» են (Boisacq 142, 148, Walde 349, 523, Trautmann 370—1, Horn §534 և §793, Pokorny 1, 579, Ernout-Meillet 646):—Հիւբշ. 455։ [Տե՛ս նաև ԾԻՆ]։

Նշբ ճանաչել *լծ. թրք.* բանըմաք, *յն.* γινώσκω, *լտ.* cognosco: Peterm. *23* ծանև ճանաչ- *արմատներին է կցում սանս.* jñā, *յն.* γιγνώσκω: Windisch. *13 սանս.* jan: Gosche *64, 101* ծանուցանել = *սանս.* jñā: Böttich. ZDMG 1850, 357 *սնս.* jnā, *զնդ.* zišnānhəmanā: *Նոյն*, Arica *89, 446 սանս.* jñā, *զնդ.* žnā, *օսս.* zonün, *յն.* γιγνώσκω, *պրս.* jān «*հոգի*»: Spiegel, Huzw. Gram. *188 Հպրս.* xšnāsatiy, *պրս.* šināxtan: Müller SWAW *38, 579 դնում է վերջին երկու ձևերը*: Lag. Arm. Stud. § 1369 *շեշտում է* տիրա-ճան *ձևի վրայ, որի մէջ գտնում է արմատը անփոփոխ պահուած և պրս.* čanān «*ուսում*» *ձևը յիշելով միայն՝ հրաժարւում է նրանց վրայ որևէ մեկնութիւն տալուց: Տէրվ. Նախալ. 47, 77 յն. սանս. գոթ. լտ. ձևերի հետ՝ հնխ.* ga, gan *արմատից: Հիւնք.* ճանաչել = *պրս.* տանիսքէն, *երր.* տան, *թրք.* բանըմագ, *զնդ.* զինա, ձէնա! *հայը բարդուած է աչք բառով: Հիւբշ. 456* ճանաչել *ձևը* ծան-*ից տարբեր արմատից է համարում*: Meillet MSL *8, 296* ճանաչել *մեկնեց* *ծանաչել *ձևից*: Karst, *Յուշարձան 415 մոնգոլ.* tani, tanji, *կալմուկ.* tanil, tanjil, *օսմ.* tanəmaq «*ճանաչել*»:

Գիմ. և Փոխ.—տե՛ս Ճանաչել:

ՄԱՆԱԿ, ի–ա *հլ.* «*խաղք, խայտառակ, խայտառակութիւն*» *Ոսկ. ես. մ. ա. 19, երր. ժա. ժդ. Եփր. դտ. 332. որից* ծանակել «*խայտառակել*» *Ոսկ. մ. բ. 8.* ծանակութիւն *Ոսկ. յհ. ա. 1, 6.* ծանակագոյն *Ոսկ. յհ. ա. 6.* ծանականագոյն *Ոսկ. ես.* ծանականք «*խայտառակութիւն, ամօթոյք, առականք*» *Ովս. բ. 9. Ոսկ. ես. Փարպ.* անծանակ «*անհարստ, մաքուր*» Ճառընտ. ձաղածանակ *Ագաթ.* ծովածանակ *Անան. եկեղ. ևն:*

Նշբ հանում է ծան «*ճանաչել*» *արմատից, «իբր ամենայն մասամբք ծանուցեալ կամ որպէս ոմկ. մօրէ մերկ ծնածի պէս»*: Karolides, Γλ. συγχρ. 83 *կապադովկ.* ζ'ανός (*կարդա՛* ցանոս) «*յիմար*», ζ'ανίζω «*խենթենալ*» ζαναχεύω «*վրան ծիծաղիլ*» և *յն.* σάννας «*գիժ*», *լտ.* sanna «*հապտանք*», sannio «*ծաղրածու*», *սանս.* svan «*հնչել*» *բառերի հետ: Հիւնք. հանում է* ճանաչել *բայից:*

Գիմ.—Ալշ. ծաղր ու ծանագ:

ՄԱՆԱՐՏԱԿ, ի–ա *հլ.* «*համախոսական, բոլորի ստորագրութեամբ մատուցուած թուղթ կամ խնդիրք*» *Պատմ. ԺԲ դարից, Դիւան ժ. էջ 405, 408, 409 (նոյնը վրր համանիշ* մահնէր *բառի), 413, 420, 421, 423 ևն: Բառիս համար աւելի հին վկայութիւն ունի Ջուղ. 225 «Ոչ եղև իսկ նոցա հնար մատուցանել զծանարտակս իւրեանց առաջի արքային»:*

+ **ՄԱՆՆ**, ո *հլ.* «*ցորենի կճեպ և յարդ*». *ունի միայն ԱԲ. մէկ անգամ գործածուած եմ գտնում Ոսկ. պօղ. ա. 472 «Այժն իսկ ցորենոյն են կղկղանքն. զծանծոցն ասեմ...». սրա հետ նոյն են* ծնծոյ, ծնծոց «*պտղի դրսի կեղևը*» *Միս. խշ. (Բազմ. 1911, 259 ա 260 ա):*

=*Նոյն է ծեծ արմատի հետ, իբրև կալի ծեծած բան. այս երկուսի կապը հաստատում են* ծանծ *և* ծեծ *բառերի վրացերէն փոխառեալ ձևերը՝ որ տե՛ս:—Ա.ճ.*

Նշբ ուզում է հանել ձունձ, ջնջոց, ընչին *ձևերից:*

Գիմ.—Խրբ. ձ'անձ «*ցորենի ցօղուն*», *Ջղ.* ծ'ենձոն «*կտաւատը կալսելուց և հատիկները հանելուց յետոյ մնացած կոթերն ու ցողունները*». *Խտջ.* ձ'անձ'մաղ «*մի տեսակ մաղ՝ որ քարերն ու յարդը պահում է, իսկ ցորենը անց է կացնում*»: *Նոյն արմատից են նաև* ձանձառ «*սանդի մէջ ծեծած բան*» *և* ձանձառել «*սանդի մէջ ծեծել*» (*Կոյլաւ, Բառ. գերմ. 1632 ա*):

Փոխ.—Վրաց. ძენძა ბენბა «*վուշը ծեծել*», ძენძი ბენბի «*խծուծ*», ნაძენძი ნაბენბի *կամ* ნაწეწი ნაბეხի «*խծուծ, վուշի, կանեփի են մնացորդները*»:

ՄԱՆՄԱՂ (*սեռ. -ի. գրուած է նաև* ձանձաղ, ծանծախ) «*ոչ խոր, երեսկունկ (ջրի, հողի համար), վերիվերոյ, դիւրիմաց, հասարակ*» *Արշ. Միս. առակ. Լաստ. Շնորհ.*

«ծանծաղ տեղ» Պիտ. «դանդաղ» ԱԲ. որից ոճով՝ ի ծանծաղ նաեել կամ ելաեել «առատման մի ճար գտնել» Ոսկ. մ. ա. 20, գ. 4, 14. ծանծաղագոյն Ոսկ. ա. տիմ. ժդ. Սերբեր. ծանծաղամիտ Գ. մակ. բ. 15. ծանծաղուտ Վեցօր. ծանծաղապէս «առ երեսս» Միխ. աս. 595։

=Կրկնուած է ծան կամ ծաղ արմատից։

ՆՀԲ լծ. դանդաղ, ցած, սուղ և թրք. sɔ̈ɣ «ծանծաղաջուր»։ Հիւնք. Տաեուադոս յատուկ անունից։ Վերի ձևով են մեկնում Տէրվ. Մասիս 1881 մայ. 11 և Աճառ. ՀԱ. 1899, 233։

ԳԻՒ.—Ախց. կր. ծանծաղ, Մշ. ծանձաղ, երր. ձ'աենձաղ, Սեր. ցաենձախ «ծանծաղաջուր», Ոզմ. ծոեծող «ծանծաղամիտ», Ալշ. Մշ. ձ'աենձաղ «ցնդած», Տիգ. ցաեցախ «խեղկատակ, ծաղրածու», Ղրդ. ցաեցախ «ճահիճ».—նոր բառեր են Բլ. ձ'աենձղել=ծանծրդիլ, ծանծողիլ վն. «յիմարիլ, ցնորիլ, ցնդիլ, խոֆիլ», ծանծղտուիլ Տիգ. «խեղկատակութիւններ անել»։

ՓՈԽ.—Վրաց. წაწალა ծանծալա «փոսի կամ ջրի վրայից անցնելու համար դրուած տախտակ»։ Իմաստի զարդացման համար պէտք է նկատել՝ որ ծանծաղ տեղերը կտուերից անցնելու իրր միջոց են ծառայում։

ԾԱՆԾԱՔԵԼ «ծամել, ծամծմել, լղրճկել» (ըստ ՆՀԲ), «ուտել անյագ» (ըստ ՋԲ)։ Ունի միայն Սիրաք լգ. 19 «Կեր որպէս մարդ՝ որ ինչ կայն առաջի քո և մի՛ ծանծաքեր»=յն. φάγε ὡς ἄνθρωπος τὰ παραχειμενά σοι, καὶ μὴ διαμασῶ (մի ծամծմեր) μὴ μισηθῇς։

=Կրկնուած է թերևս *ծանճ արմատից։ Հիւնք. Տաեուադոս յատուկ անունից։ Վերի ձևով Աճառ. ՀԱ. 1899, էջ 233։

*ԾԱՆՐ (-նու, -նունք, -նունց) «կշիռով ծանր», փոխաբերաբար նաև «սաստիկ, շատ, հասուն, թաւ (ձայն), ծանրաշարժ, դժուարին, թանկագին, ժանտ, դաժան» ՍԳր. Եփր. եվ. Ոսկ. մ. բ. 13. «յղի» ԱԲ. որից ծանրանալ ՍԳր. Մծբ. ծանրել Եվ. ժէ. 12. Սերբեր. ծանրութիւն ՍԳր. Եզն. ծանրանաւել Գծ. իէ. 7. ծանրարբուն «ուշ արթնացող» Ոսկ. ա. տիմ. և ես. ծանրաբան Ոսկ. Բ կոր. ծանրաձայն Ես. լգ. 19. ծանրախօս Ես. լե. 6. ծանրանդամ Վեցօր. ծանրաբեկ Վեցօր. ծանրաբեռն Օր. լ. 11. Ոսկ. ծանրագին Մաթ. իգ. 7. Եզն. Վեցօր. գլխածանրիլ Պիտ. նոր բառեր են ծանրաբարոյ, ծանրակշիռ, ծանրաչափ են։

=Փոխառեալ է կովկասեան լեզուներից. համմտ. վրաց. წონა ծոնա «ծանրութիւն, կշռել», აწონა ածոնա «ծանր կշռել, ծանր լինել», ნაწონი սածոնի «ծանրութիւն, կշիռ, կշռելու գործիք», լազ. ծին «կշռել», ծիների «կշռուած»։—Աճ.

Peterm. 62 լծ. բանաւ: Müller SWAW 44, 552, 554, 557 սանս. guru հոմանիշի հետ։ Հիւբշ. KZ 23,23 օսս zün: Տէրվ. Նախալ. 78 սանս. garu, guru, յն. βαρύς, լտ. gravis, գոթ. kaurus բառերին ցեղակից. հայերէնը իրր *ծար-ր ձևից յառաջացած։ Հիւնք. աեուր բառից։ Patrubány SA 1, 197 յն. γέμω «լի եմ», լտ. gemo «հառաչել» բառերի հետ։ Pedersen, Նպաստ 48 նախաուր նշանակութիւնը դնում է «յղի» և համեմատում է հյ. ծին, ծնանիմ, յն. γίγνομαι, լտ. gigno:

ԳԻՒ.—Պլ. ձաեուր, ձաեուր, ձաեր, ՋԲ. ձօեուր, ձոեուր, Ալշ. Երև. Դրբ. Մկ. Մշ. Մրղ. Շմ. Ոզմ. Զթ. Վն. Տփ. ձա՛նդր, Գոր. ձա՛նդր, Ախց. կր. ձանար, Սլմ. ձա՛նդրո, Տիգ. ձանդր, Սչ. ձա՛նդրը, Ննխ. ձա՛նդրո, Ագլ. ձո՛ւնդր, Հմշ. ձօնդրը, Ռ. Սեր. ձա՛նյը, երր. ձայր, Պրտ. ձայրը, Ասլ. ձէօ՛րյը, Հճ. ձօր, ձօրը, Ակն. ձօյը: Գաւառականների մէջ գործածւում է նաև նոր իմաստներով. ինչպէս՝ «դժուար, լուրջ, խուլ, վիրաւորական, թանկ, յղի, մի քիչ նեխուած». որոնց համար համմտ. արաբ. ثَقِل ṯaql «ծանր. 2. յղի. 3. ականջը խուլ» (Կամուս, թրք. թրգմ. Գ. 154), թրք. اغر ağır «ծանր, լուրջ, մի քիչ հոտած, խուլ» են։ Նոր բառեր են ծանրաբան «ծանր գործ», ծանրագոգոր, ծանրած, ծանրոց, ծանրանց, ծանրապար, ծանրկեկ, ծանրհաշ, ծանրոտ «յղի» (համմտ. Առաք. պտմ. 356. Կանայք յղիք և ծանրոտք) են։

ԾԱՊԱՏՐԱԿԻԼ. *նորագիւտ բառ՝ որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Մագ. թղ. էջ 203 «Իբրու ի ծովի համատարածի ծրփեալք, անդրկաբար վարանեալք ի ծերունեաց ծառացելոց ալեացն ծփմանցն, ի ծերպ անկեանցն ծպտեալք նաւացն, ծապատրակեալք ի հոսիցն բլրամն կոհակացն, նաւապետին ակնարկեն»։ Նշանակում է կա՛մ «զարհուրիլ, սարսափիլ» և կամ «խրխում լինել, բոլորովին թրջուիլ» (Աճառ. Հայ. նոր բառեր հին մատ. Բ. 190)։*

+ԾԱՌ, ո հլ. *(երգ. դ. 14 կայ* ծառոք*) «ծառ» ՍԳր. որից* ծառանալ *«ծառի պէս բարձրանալ (ծուխը, շոգին, հուրը, ձին)» Բ. մակ. ե. 5. երգ. գ. 6. Եփր. աւետ.* ծառացուցանել *Ագաթ.* ծառատունկ *ՍԳր.* ծառատան *Մխ. դտ.* ծառզարդար *«ծաղկազարդի տօնը» Գնձ. Տօնաց.* ծառավերաց նոյն նշ. *Տօնակ.* մեծածառ *նոր. աշխ.* խաչածառ *Փիլ. խառածառ Արիստ. աշխ.* ծառուղի *(նոր բառ) ևն։*

=Բնիկ հայ բառ՝ հնխ. g'ṛso- ձևից, որ ստորին աստիճանի ձայնդարձն է g'ers *«ոլորել. 2. ճկուն ճիւղերից, թիթերից ու մացառներից բան հիւսել» արմատից։ Սրա ժառանգներն են կրետ. γάρρα «ցուպ, գաւազան», γάρσανα «մացառ», յն. γέρρον (<*γέρσεν) «ուռուց հիւսած բան, ցանկապատ, ցից, սլաք են», հհիւս.* kjarr (*ker-za-) *«թուփ, թաւուտ, մացառուտք», նորվ.* kjarr, kjerr *«ծառերի և թփերի ճիւղեր ու տերևներ», շշվեդ. գւս.* kars, karse *«ուռուց հիւսած կողով՝ յատկապէս ձկան համար» են* (Pokorny 1, 609, Boisacq 145)։

Հներից Տաթև. հրց. 214 մեկնում է զանազան ձևերով. նախ՝ իբր ծառայ, *«զի բոյսք և տունկք միշտ ծառայք են». երկրորդ՝* ծուռ, *«զի ծառն ծռեալ ունի զգլուխն ի վայր և զոստսն ի վեր. կամ թէ ծռեալ ունի* զոստս *(կարդա՛ զոստս) և զատեղունս յայսկոյս և յայնկոյս», երրորդ՝* ծեր, *որովհետև մարդկանցից առաջ են ստեղծուած։—Նորերից առաջին անգամ* Klaproth, Asia polygl. *(1823) համեմատեց բասկ.* zura *«փայտ» բառի հետ։* Brosset JAs. 1834, 383 *են վրաց.* ձեվի։ *Նշ.* սանս. pաnու։ *Եւրոպա 1850, էջ 15* սանս. taru *և պրս.* dār, *որ աւելի լաւ պահուած է* դարաստան *ձևի մէջ։* Pictet *1, 192 պրս.* dārr, սանս. dāru: Müller, Kuhns u. Schleich. Btrg. *5, 383 ղնդ.* dāuru, *պհլ.* dār, *պրս.* dār *«ծառ, փայտ»։* Fick BB *1, 173 պրուս.* garrian *«ծառ», լիթ.* girė *«անտառ», յն. գւս. βαρυες, βδαροί և սանս.* jarīa *«ծառ» համանիշների հետ։* Lag. Arm. St. *§ 1044 և էջ 174 ընդունում է այս մեկնութիւնը։ Տէրվ.* Altarm. *75 և Նախալ. 86 սանս.* taru, *յն. δόρυ «փայտ», δρῦς «կաղնի», մակեդ. δάρυλλος «կաղնի», գոթ.* triu *«փայտ, ծառ» ձևերի հետ՝ իբր հնխ.* dar *«պատառել» արմատից։ Նոյնպէս են նաև* Karolides, Γλ. συγκρ. *87 և* Bugge, Etr. u. Arm. *86, առաջինը աւելացնելով կպղվկ. (κάϱ) δόρυ «մի տեսակ թփանման գիհի ծառ» և երկրորդը՝ հիւս.* daur *«կաղնի»։* Müller, Armen. VI *լիթ.* girė *«անտառ»? Հիւնք.* ծառ *բառը հանում է* ծաղիկ–*ից, իսկ* ծառզարդար *կամ* զառզարդար՝ *պրս.* զարզարքէր *«ողրալի» բառից։* Patrubány SA *1, էջ 188* ծեր *բառի հետ՝ իբր սանս.* jarā *«ահիլ, ծերանալ»։ Սանուալճեան,* L'idiome *14 սանս.* daru *են, բևեռ.* zâri: *Բասմաջեան, Բանաս. 1901, էջ 39 ասում է թէ ո՛չ հնդեւրոպական է և ո՛չ էլ կապ ունի սեմ.* զարա *«տնկել, սերմանել» են բառի հետ. այլ գալիս է խալդ.* zari *«ծառ ինչ» բառից։* Pedersen, Նպաստ. *էջ 2, հ. նորվ.* kjarr *«թուփ», յն. γέρρον «սայլակողով», γάρρα «ցուպ» բառերին ցեղակից է դնում։* Jensen ՀԱ *1904, 184 հաթ.* sáriá: Scheftelowitz BB *28, 301 և 29, 16 յն.* βαρύες *«ծառ», լտ.* veru *«շամփուր», ումբ.* berus *«ծառ», պրուս.* garrian *«ծառ», լիթ.* gire *«անտառ» բառերի հետ՝ հնխ.* gᵛero- *ձևից։ Այս մեկնութիւնը մերժում է* Walde 825, *ինչպէս և* Boisacq 115: Patrubány *ՀԱ 1908, 215 կիմր.*

gyrru *«ածել, ուղարկել»* բառի հետ։ Սագրեան ՀԱ *1909, 335* և Karst, *Յուշարձան 402, 408* սումեր. tir, ter *«ծառ, փայտ»*, ṭar *«ճիւղ»*։ Մառ ЗВО *22, 86* վրաց. ձելի, ափխազ. աճլա, *մինգր.* ջալ(եփէ) *«ծառ»* բառերի հետ. իսկ ЗВО *1925, 667* ծառ, աճառ և աեր կ՚ուզում է ռուս. дерево *«ծառ»* բառին։ Klaproth, Asia polygl. *99* արաբ. šārā։ Վերի մեկնութիւնը տուաւ Pedersen KZ *33, 194*= Նպաստ., էջ *2*, որ յիշում է կասկածով Boisacq *145* և ընդունում է Pokorny *1, 609*։ Վերը՝ Արմ. բառ. հտ. Գ. էջ *743* չէի ընդունած այս մեկնութիւնը և էջ *1000* կցել էի կառ *«փուշ»* բառի հետ՝ նախաձևը դնելով g²ŗro-։ Այժմ հրաժարւում եմ այս մեկնութիւնից։ Ernout-Meillet *404* յն. γέŗρα բառի ծագումը անյայտ է համարում, չիմանալով բնաւ ծառ են համեմատութեանց վրայ։

ԳԻՒՂ.—Ալշ. Ախց. Գոր. Ակն. Երև. Կր. Ղրբ. Մկ. Մշ. Մրղ. Շմ. Ոզմ. Ջղ. Սլմ. Վն. ծառ, Տփ. ծար, Ասլ. Խրբ. Հմշ. Ննխ. Պլ. Ռ. Սեբ. Սչ. Տիգ. ձառ, Ագլ. ձօռ, Զթ. ձօռ, ձռռ, Հճ. ձօր։—Ղրբ. մնկ. ծա՛ծառ *«ուրի վրայ կանգնիլ»*։—Ծառզարդար *բառը (վրկայուած է 1221 թուի մի արձանագրութեան մէջ, տե՛ս Ամատ. Հայոց բառ ու բան, էջ 304)* դարձել է Ջղ. ծառազարդ՚ար, Մշ. ծառզարդ՚ար, Երև. ծառզարբար, Սեբ. ձառզարբար, Ոզմ. ծառզմրդ՚մր, Մրղ. Սլմ. ծառզմրբմր, Վն. ծառզմրռմր, Մկ. ծռոզմրռմր, Կր. ծառզադ՚ար, Շմ. ծառազմրբմֆ՝ *(<*ծառազարդարֆ ձևից)*, Ասլ. Պլ. Ռ. զարզարբար, Մժ. զմզմրբմր, Ղրբ. զրզմ՚ռբմռ *կամ պարզապէս* զմ՚րբմռ, Գոր. զրրզմ՚րբմռ, Առն. *(Թրքախօս Հայոց մէջ)* զարզաբբար *(Բիւր. 1900, 454)*, որոնց մէջ նախաձայն ծ վերածուած է զ-ի՝ յաջորդ զ ձայնի նմանութեամբ. Համմտ. զոյժ>ժոյժ, ծաղկազարդ>Սչ. զաղզազարդ՚. որի հակառակն է Ախց. ծարծաբար *(Վարդանեան, ժող. անգիր բնստ. էջ 9՝ ի-րենք անգամ)*. Մրշ. ծօռծառբօր *(կարդա՛ ծօռձառբօր. Գաբիկեան, Ամէն. տարեց. 1922, 325)*։—Նոր բառեր են ծառաբար. ծառծակուկ, ծառապտուղ, ծառել, ծառժառուռ, ծառկտուրուճ, ծառաձակ, ծառշուխ, ծառուտ, ծառնիվեր, ծառնոց, ծառնուկ, ծառնամէջ. *վերջիններէն մէջ արմատը դարձել է ծառ, ինչպէս որ այլուր ունինք* սեռ. ծառան, Ախց. յդ. ծառներ, հնից յգ. սեռ. ծառանց *խոսր. պտրգ*։—Սէօլէօզի մէջ *(Բիւթանիա)* ծառ յատկապէս նշանակում է *«ձիրենի, ձիթաստան»*։

ՓՈԽ.—Վրաց. ծարավի ჭარავი *«մացառուտ, թփերով և մացառներով լցուած տեղ»*, կամ ჭარაფი ծառափի *«ուռիների փոքր անտառ»*. *(=Հյ.* ծառափն*)*?—Bugge, Etr. u. arm. *էջ 86* հայերէնից փոխառեալ է դնում Կիւրին. tar *«ծառ»*, կազիկում. ṭar *«սռճի»*։ Ուտ. zäräzärt'är, *«ծաղկազարդի տօնը» (<*ծառազարդար *ձևից)*։

ԾԱՌԱՅ, ի Հլ. *«սպասաւոր, նաև գերի, դինուոր, արբանեակ»* ՍԳր. Եղն. Ոսկ. յհ. բ. *33* և փիլիմ. որից ծառայել ՍԳր. Ոսկ. մ. ա. *21* և յհ. բ. *25*. Սեբեր. Եփր. ծն. ծառայացեալ Եղն. Ոսկ. մ. ա. *21*. ծառայական Ագաթ. ծառայաբարոյ Ոսկ. մ. ա. *10*. ծառայագոյն Ոսկ. յհ. բ. *33*. ծառայազուիճ Սեբեր. Ոսկ. յհ. ա. *9*. ծառայակից ՍԳր. ծառայապատամբ Եփս. քր. բազմածառայ Փարպ. անծառայական Ոսկ. հս. Ագաթ. չարածառայ Կոչ. *109*. ծառայութուր Տաթև. ամ. *512* կամ ծառուբար *«ծառայութիւն առնող»* Սմբ. դատ. *101 (երկուսն էլ չունի ԱԲ)*. հետաքրքրական ձև է Պղատ. օրին. էջ *192* *«ընտանիք և ծառաւիճ և ծառայք»*, որի բացատրութեան համար դիմելով բնագրին (Platonis opera, Paris 1883, հտ. Բ. էջ *357*), գտայ որ կայ միայն οἰκέτης τε καὶ δούλους. որից հետևում է թէ ծառաւիճ և ծառայ հոմանիշ են և մին կամ միւսը յետոյ է աւելացուած իբրև բացատրութիւն։

ՆՀԲ չծ. պրս. غرّا garra *«ծառայ»*, արաբ. جارية ǰāriya *«աղախին»*, լտ. servus *«ծառայ»*։ Bugge, Etr. u. Arm. *85 (նոյնը* KZ *32, 39* և *47)* յն. δράω *«գործել, բանիլ»*, δραστήρ *«ծառայ» բառերի հետ՝ հնխ.* drātis ձևից. Հայերէնի հետ նոյն է նաև

նոր. etera «*ծառայ*»: *Հիւնք. լտ.* salarium «*վարձք*» *բառից:* Müller WZKM *7, 381 կցում է եբր.* צַר ṣar, ṣār «*հակառակորդ, թշնամի*» *բառին, որ փոխառութեամբ անցել է նախ պահլաւերէնի և այստեղից էլ հայերէնի: Հիւբշ. 305 մերժում է: Մէնէվիշեան ՀԱ 1897, 245 յիշում և մերժում է արաբ.* غرّ garra «*ծառայ, սորուկ*», *զնգ.* karāiti «*մանուկ, ծառայ*», *իբր հնխ.* karati: Jensen, Hitt. u. Arm. 37, 79, 97 *հաթ.* dsari, dzarayi *ձևի հետ, իսկ ՀԱ 1904, 182 հաթ.* s´ariá «*թագաւոր*»? Patrubány SA *1, 195 լտ.* grex, *յն.* ἀγορά, *հրգ.* chortar «*երամ, խումբ, հօտ*» *բառերի հետ, իսկ ՀԱ 1906, 377 արմատակից է դնում ծառ բառին, իբր «ծռուող, խոնարհուող» նշանակութեամբ:* Pedersen, *Հայ. դր. լեզ. 103 յն.* γέρων «*ծեր*», γραῦς «*պառաւ կին*» *բառերի հետ (մերժում է* Boisacq, *էջ 145):* Lidén, Arm. Stud. *51 հանգ.* cierran, cyrran, cerran, *մրգ.* kerran, *գերմ.* kehren «*դառնալ*», *կիմր.* gyrru «*վարել, ուղարկել*» *բառերի հետ, իբրև բնիկ հայ, հնխ.* g´ers- «*դառնալ*» *արմատից. իմաստի զարգացման համար հմմտ. յն.* πέλομαι «*շարժիլ*» *և* ἀμφίπολος «*ծառայ*»: Karst, *Յուշարձան 404 սումեր.* gara «*գերութիւն*» *բառի հետ: Բառիս վրայ խօսում է նաև* Martti Räsänen, Die tschuwassischen Lehnwörter im tscheremissen, Helsingfors *1920 (տե՛ս* BSL *23, № 71, էջ 151), բայց այս աշխատութիւնը ձեռքի տակ չունիմ: Մատ* ЗВО *1924, 188 արմատը ծառ, որ նոյն է* ծոր-ո *բառի հետ, իսկ* ծորտ = *ռուս.* чорт «*սատանայ*»:

Գիմ.—Ագլ. Ալշ. Երև. Ախց. Կր. Մշ. Ոզմ. Սլմ. Ջղ. ծառա, *Ննխ. Պլ. Ռ. Սեբ. Սչ.* ձառա:—*Քաղաքավարական ձևեր են* ծառայա-կաեն «*ես*», ծառայուրի՛ն *կամ* ծառայ եմ «*մնաք բարով, ցտեսութիւնն*» (>*Ջղ.* ծառամ): *Հետաքրքրական է* ծառակին «*ազախին*» (Rivola):—*Ննխ. բառս նշանակում է նաև «ռուս», որից* ծառանակ (*հնչում են* ձառանագ) «*ռուսերէն*», ծառայ ազգը «*ռուս ազգը*»: *Այս անունը դրուած է, որովհետև տեղացի ծառաները բոլորն էլ ռուս են եղել միշտ: Յայտնի է սակայն որ ռուս.* казакъ *բառն էլ նշանակում է բուն «բանուոր, վարձով աշխատող ծառայ»* (Berneker 496):

ԾԱՌԱՆ «*առնի անդամ*». *յիշում է միայն Լծ. փիլ. իբրև գաւառական բառ. «Ծառան՝ բառ է գաւառի. զպոյն ասէ»: Սակայն նոյն բառը Բառ. երեմ. էջ 149 մեկնում է «ուստրը»:*

ԾԱՌԴ? «*եղջիւրաւոր մի կենդանի*». *նորագիւտ անստոյգ բառ, որ մէկ անգամ գրտնում եմ գործածուած Յովսիմ. 27 «Գլուխ նորա որպէս եղին և եղջիւրն նորա որպէս ծառդուն» (ուղղականը անորոշ է. կարող է լինել* ծառգ, ծառիգ *կամ* ծառուգ):

ԾԱՍԿԵԼ *կամ* ԾԱՍՔԵԼ «*ծամել, ծամծմել*» *Փիլ. Եփր. մեռ. 157. Վրք. Հց. Լմբ. մատ. 116, 345. «բամբասել, զրպարտել» ՅՀ. կթ. «ի կոր կործանել, թշուառացնել» Մագ. գամագտ. ժգ (տե՛ս Մէնէվիշ. Գր. Մագ. էջ 57). որից* զաճիւն ծասկել «*գետին փռուիլ, մեռնիլ*» (*յուն. ոճից թարգմանաբար՝ բատ Մէնէվիշ. անդ, էջ 57*) *Մագ. գամագտ. բ.* ծասկեալ «*թշուառ, խեղճացած*» *Մագ.* ծասկողական *Սկևռ.* ծասկումն *Նար. կուս.* անծասկելի *Սկևռ. լմբ:*

Տէրվ. Նախալ. 75, 86 դնում է հնխ. daç «*խայթել, կծել*» *արմատից. համմտ. սանս.* das, *յն.* δάκνω «*խայթել, կծել*», *գոթ.* tahjan «*պատառել*»: Scheftelowitz BB *28, 301 վերդ.* ǰakṣ «*վայելել*» *արմատի հետ:*

ԾԱՐԱԿԱՑՊՏԵԼ, *անստոյգ նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Մագ. թղ. 48 «Տագնապ տոչորման Պռոմիթեայ հասեալ Հեփեստիւ պաշարեաց... և ափրոդիտականն նուաղեալ թառամի կարօտացեալ փարայի ի ծարակածպտել այս օգնականութեան». (տե՛ս իմ Հյ. նոր բառեր հին մատ. Բ. 190):*

ԾԱՐԱՆ «*ծիւ կամ սուգ*». *այսպէս ունի Բառ. երեմ. էջ 149. (տպուած է* ծուրան, *թէև բառաշարքը պահանջում է* ծարան. *բատ այ-*

սըմ էլ երկրորդ տպագրութեան մէջ եղել է ծարաճս):

ԾԱՐԱԻ, ո *հլ. (ՆՀԲ ունի նաև ու հլ. բայց առանց վկայութեան)* «պասուք, ջրի կարօտութիւն զգալը» *ՍԳր.* «ծարաւած» *Լմբ. ժող. և սղ. որից* ծարաւիլ *ՍԳր. Եւս. պատմ.* ծարաւի *ՍԳր. Մծբ.* ծարաւագոյն *Կոչ.* ծարաւուտ *ՍԳր.* ծարաւաճաճ *Մանդ.* պասխածարաւ *Թէոդ. կուս.* օգոտածարաւ *Ագաթ.* ծարաւկոտ «շատ ջուր խմող» *Բար. էջ 135.* ծարաւաճիւծ *Զքր. կթ.* ծարաւութիւն *Եփր. Համաբ. ևն*:—*ՋՔ* նշանակում է նաև ծարաւ «ազգ ինչ ժանտ օձի, որոյ խայթուած ծարաւեցուցանէ յոյժ» (այսպէս և *Նորայր, Բառ. ֆր. 404 ա*): Այս նշանակութիւնը հանում են անշուշտ *Օր. ը. 15* հատուածից. «Եւ ած զբեզ ընդ անապատն մեծ և ընդ ահագին, ուր օձն խածանէր և կարիճ և ծարաւ և ոչ գոյր ջուր»: Բնագիրը համապատասխան տեղում ունի צִמָּאוֹן ṣimmāon, որ նշանակում է «անջրդի անապատ», որ և *Թարգմանուած է յն.* διψα «ծարաւ»: Ոմանք բննիչներ բնագրի այս բառը հասկանում են «մի տեսակ կատաղի օձ». բայց մեր հայրերը անշուշտ մի՛միայն «ծարաւի» իմաստով էին հասկացել, ինչպէս յունարէնն է և ինչպէս ունի նաև հին սլաւոնական թարգմանութիւնը (жáжда «ծարաւ»): Բուն օձի համար աստուած է ծարաւական *Տոնակ.*, որ տե՛ս նաև տակը ծարբ:

Տէրվ. Նախալ. 57 կցում է բառամիլ, դառնովիլ *բառերին, որոնց վրայ տե՛ս: Հինք.* ծաւի *բառից:* Müller WZKM 10, 354 *սանս.* tarš «չորանալ», յն. τέρσομαι «չորանալ» են բառերին իբր ցեղակից: (Սրանց հյ. ներկայացուցիչն է բառամ, թարշամ, *ուստի չենք կարող* սպասել նաև ծարաւ ձևը): Petersson, Ar. u. Arm. Stud. 33 *սանս.* jvárati «ջերմել», jvalati «վառիլ, փայլիլ, լուսաւորել», jvala «բոց», պալի jaro «ջերմ» են բառերի հետ: Պատահական նմանութիւն ունի արաբ. صارّ ṣārra «ծարաւ» (*Կամուս, Թրք. Թրգմ. Ա. 934*):

ԳԻՒՒ.—Ագլ. Գոր. Երև. Կր. Ղրբ. Մկ. Մրղ. Շմ. Ոզմ. Ջղ. Սլմ. Վն. Տփ. ծարաւ, *Ասլ. Համշ. Սեբ. Սչ.* ձարաւ, *Ալշ. Ախց. Մշ.* ծառաւ, *Ակն. Խրբ. Ննխ. Պլ. Ռ.* ձառաւ, *Հւր.* ծրաւ, *ՋԹ.* ձէօրէօվ, *ՀՃ.* ձէյէվ.—*բայական ձևով՝ Վն.* ծարաւել, *Կր. Ոզմ.* ծարվիլ, *Ագլ.* ծրա՛վիլ, *Ղրբ.* ծրա՛վէլ, *Խրբ. Պլ.* ձառվիլ, *ՋԹ.* ձարվիլ, ձէրվիլ, *Տիգ.* ձառվէնալ, *Պլ. Ռ.* ձառվճալ:

ԾԱՐԲ «օձ որոյ խայթուած արկանէ ի տապ և ի ծարաւ անհնարին. ծարաւական բարբ. լտ. coluber dipsas, ֆր. dipsade» *Ստ. լեհ. (ըստ Նորայր, Բառ. ֆր. 404 ա)*:—*Տես նաև* ծարաւ *բառի տակ:*

***ԾԱՐԻՐ**, ո, ի–ա *հլ. (գրուած նաև* ծարիւր, ծարոյր, ծարուր) «աչքի քաշելու սև դեղ» *Եզնկ. իգ. 40. Երեմ. գ. 30. Ոսկ. ես. և մ. ա. 10, բ. 5.* որից ծարրաճար *կամ* ծարիր ճար «*Բուիթի*» *Բժշ. Գազիան.* ծարրել «աչքին ծարիր քսել» *Դ. Բագ. Բ. 30 (գրուած նաև* ծարուրել *Բանք իմ. 59,* ծարիւրել *Սասն. էջ 71)*: Սրանց հետ նոյն են նաև ծարուր, ծարուրիկ *բոյսերը՝ իբր Թրգմ. Բրբ.* թուրթիա *Համանիշի. (ունի միայն ՀԲուս. § 1178, առնելով Կամարկապցուց և Սալաձորցուց):*

=*Ասոր.* ʾiṯiʿ ṣəḏīḏā «ծարիր» (Brockelmann, Lex. syr. *299 բ*), որի հետ նոյն են *ասուր.* ṣadīdu (*ըստ* Zimmern) *և արաբ.* صدود ṣudūd «ծարիր» (*Կամուս, Բրբ. Թրգմ. Ա. 632*):—*Աճ.*

Canini, Et. étym. *46 սանս.* čhur «ներկել» *բառի հետ: Հինք. Հանում է* ծրար *բառից:* Seidel, *Մխիթ. հեր. § 215 արաբ.* ذرور ḏarūr «streupulver» *բառից է ննթադրում: (Այս բառը ըստ Կամուս, Բրբ. Թրգմ. Ա. էջ 866 նշանակում է «աչքի դեղ, Բուիթիա, աղտոր, ծարիր և նմաններ», որի բայական ձևն էլ է* ذرّ ḏarr «աչքին ծարիր քաշել, ծարրել». պատկանում է *արաբ.* ذرّ ḏarr «փոշիանալ, փշրել» *արմատին, որից ունինք նաև* ذرّة ḏarra «հիւղէ, շամանդաղ», ذرارة ḏarāra «ցանած՝ սփռած բան, թափթփուք ևն». *միւս սեմական ցեղակիցներն են ասուր.* zarū, *եբովպ.* zarav, *արամ.* דרא dara, *եբր.* זרר zrr *կամ* זרה zrh «սփռել, ցրուել, ցանել»: *Բայց ա-*

բաբ. ضرر ẓarur «ծարիր» կապ չունի աստր. ṣəðiða են ձևերի հետ, որոնք ճշտիւ համապատասխանում են մեր ծարիր բառին, ուստի նմանութիւնը բոլորովին պատահական է)։ Թիրեաքեան, Արիահայ բռ. 193 պրս. زرير zarīr «աստպարակ, մաղձ, դալուկ» բառից։

ԳԻՒՒ.—Խրբ. Տիգ. ȧmrḫir «ծարոյր»։ Նոյն բառն է նաև ծարուր Բն. «ձեծած կարմիր պղպեղ», Ղրբ. «ցորենի մուր, սևացած ու ածխացած հատիկ»։ Բայական գործածութեամբ՝ Ջղ. ծարրել, ինչպէս նաև ծարուրել Ակն. որից ծարրման Տիգ. «աչքերին ծարիր քսած»։

ԾԱՐՈՒԽ «տրեխ». իբր ռամկական բառ ունի միայն ՓԲ. սրան իբրև աղբիւր ծառայած պէտք է լինի Ռս. երեմ. էջ 148 ծայրուխայֆ «չարուխայք». բայց հմմտ. նաև անդ՝ էջ 149 ծառուխի «չարուհի», ծարուհաց «չարուհաց», որոնց ինչ լինելը յայտնի չէ։ ՓԲ մեկնելով ծարուխ «տրեխ», անշուշտ հասկանում է Թրք. چارق čarəq «տրեխ», որի գաւառական ձևերն են čarəx, čarux:

ԾԱՐՔ «չափք կամ կշիռք». ունի միայն Ռառ. երեմ. էջ 149։

ԾԱԻԱԼ, ի–ա հլ. «փոուիլ տարածուիլը, սփռում (ջրի, լոյսի, ձայնի են)» Փարպ. Տօնակ. Վրդն. եւ. որից ծաւալիլ Բ. մակ. ժ. 28. Նս. ծր. 8 (գրուած նաև ծովալիլ Ոսկ. փիլ. 493). ծաւալեցուցանել Փարպ. ծաւալումն Խոր. Պիտ. ծաւալաճալ Նար. տաղ. բոցածաւալ ՅՀ. գառն. լայնածաւալ Փարպ. խաղաղածաւալ Ոսկ. հմբ. լուսածաւալ Տօնակ. ծաղկածաւալ Տաղ. գեղեցկածաւալ Պրոկղ. յայտ. գերածաւալ Նար. առաք. ծովածաւալ Մանդ. Շեր. ընդարձակածաւալ, ծաւալուն (նոր բառեր)։

ՆՀՔ ծաւալ բառին լծ. է դնում ճապաղ և գեղումն, իսկ ծաւալել մեկնում է «որպէս թէ զծալսն բանալով»։ Հիւնք. ծալ բառից է հանում։ Karst, Յուշարձան 425 ծալել բառի հետ ԹԹր. tol, dol, չաղաթ. tol-amaq, օսմ. dol-anmaq «շարժիլ, շուռ գալ»։

ԳԻՒՒ.—Եւդ. ձավլիլ «հռչակուիլ, տարածայնուիլ»։

ԾԱԻԻ «անուշ կապոյտ աչքերով» Ոսկ. Կող. ժբ. Վեցօր. 119. Շիր։ (Առաջին վկայութեան մէջ այլ ձեռ. ծաւիր. ունինք նաև ծաւիկ ձևը՝ Ոսկ. պօղ. ա. 39 «Ո՞ր առաքինութիւն իցէ աշաց. յորժամ բոլորակք և լիք և ծաւիկք և ընդո՞ստաք իցեն, եթէ յորժամ սուրք և քաջատեսք»)։

ՆՀՔ ծով բառի՞ց։ Տէրվ. Նախալ. 77 հանում է ծով բառից, որի նախաձևը գնում է *ծաւ. հմմտ. արաբ. ماء ma «ջուր» և مائى māī «կապուտակ»։ Հիւնք. ըստ Տէրվ։ Մաո ИАН 1920, 133 և Яз. и лит. I. 227 վրաց. ցա և բասկ. sap «երկինք» բառերին ցեղակից։ Կապ՝ ունի՞ն արդեօք հիւս. կովկասեան լեզուներից ավար. zob, դարգվա dzubri, կիւրին. ccaw, թաբաս. dzav, ագուլ. zaw, լակ. ssau, որոնք բոլոր նշանակում են «երկինք» և ըստ Troubetzkoy BSL 29, 165 ցեղակից են իրար հետ։ Կարելի էր ընդունել ծափ իբր «երկնագոյն»։

⊙ԾԱՓ (հնագէս սեռ. -ի, յետնաբար նաև ո հլ.) «երկու ափերը իրար զարնելը» Նիւս. սբանչ. Նար. խչ. ոճով աւտում է ծափ զծափի ճարկանել, ծափ ծափի ճարկանել, ծափ կամ ծափս ճարկանել ՍԳր. որից ծափածայն Գնձ. ծափել ՅՀ. իմ. աս. վրք. հց. ծափոց «ծափահարութիւն» (նորագիւտ բառ) Անկ. դիրք առաք. 256, 258, ծափծափել «աստմանները իրար զարնել» Ոսկիփ. նոր բառեր են ծափահարել, ծափահարելի, ծափահարութիւն:

=Բնաձայն բառ. հմմտ. կափկափել, շօշափել, ասսափիւն. Թրք. čap «ծափ», որից Շմ. ճափ և խրիմի գաւ. չափ զարնել «ծափահարել»։—Ա՛ճ.

ՆՀՔ Թուի հանել ափ բառից։ Տէրվ. Նախալ. 77 յն. ζάφ «ծով», βάπτω «մը խորճիլ», հհիւս. kaf «ծով» և հայ. ծով, ծափ բառերի հետ՝ հնխ. gap «խորունկ լինել, վիհ բացուիլ» արմատից։ Հիւնք. ափ բառից։ Պատահական նմանութիւն ունի արաբ. صفق ṣiffiq «ծափահարել»։

ԳԻՒ.—Ալշ. Ախց. Գոր. երև. Կր. Ղրբ. Մկ. Մշ. Ոզմ. Զղ. Վն. Տփ. ծափ, *Խրբ.* ձ'ափ, *Հմշ. Պլ. Ր. Սեբ.* ձափ, *Ասլ.* ձափ, ձա*, *Տիգ.* ցափ, ցափիգ, *Ագլ.* ծօփ «*ծափ*», ծօփ տօլ «*ծափ տալ*», *ԶՓ.* ձօփ, ձուփ, *Հճ.* ձօփ: *Նոր բառեր են* ծափել (>*Մշ.* ծապել «*ծափահարել*»), ծափիկ, ծափուն տալ:

ՓՈԽ.—Ուս. câp' «*ծափ*», câp'desun «*ծափահարել*»:

ԾԱՓ. «*պտուկ, հողէ աման*». *միջին հյ. բառ, ըստ Նորայրի, Բառ. ֆր. 1207 բ, որ հնից վկայուած չէ. սրանից են* ծափ, ծափ-ծափ *Սալաձ.*, ծափկոտրուկ *Ամիրտ. Բժշ.* ծիլծափ *կամ* ծափծիլ *Սալաձ. բոլորն էլ բոյսի անուններ, որոնք այլուր կոչւում են* պըտուկկոտրուկ, ամաճկոտրուկ, *յիշում է միայն ՀԲուս. § 1180—1182 և § 1190:*

ԳԻՒ.—Ալշ. Ախց. Մկ. ծափ, *Մշ.* ծափկիկ *են:*

ԾԵՓԵՒԵՓԵԼ «*ցրիւը փրիւը՝ ցիցի փիցի խօսիլ*» *Ճառընտ:*

=*Կրկնական բառ (Թերևս բնաձայն), որ կազմուած է պարզական* *ծեր *արմատից. համմտ.* սեբևեբել:

+ԾԵՒ «*գան, հարուած, ծեծելը*» *ՅԿ. գառն. Տաթև. ձմ. ճլր. որից* ծեծել *ՄԳր. Ագաթ. Ոսկ. Եւս. պտմ. 90, 622.* ծեծած «*վուշի ձարձրուք, փիւրիւղ*» *Եւս. ա. 31. Ոսկ. Հռոմ. 303.* բրածեծ *Ագաթ. Բուզ. Ոսկ. գանաձեծ Զքր. կՓ.* բրածեծ *Յայտմ. կարկատաձեծ Վստկ. ձիւնաձեծ Պտմ. աղէքս. ոզորաձեծ Ագաթ. կասկածելի ձև է* ծեծածած *(իմա՝* ծեծած*) կանոն:*

=*Բնիկ հայ բառ՝ հնխ. g'eg'- արմատից. համմտ. սանս.* जय jaj, जयति jajati «*կռուիլ*», जय jaja «*կռուիլ*», *նոյնը ռնգականով՝* जञ्ज jañj, जञ्जति jañjati «*կռուիլ*»: *Ուրիշ լեզուի մէջ պահուած չէ բառս: Հյ. նոյն է և ծանձ, որ տե՛ս:*

Հիւնք. ծուծ բառից: Ուղիղ մեկնից Շէֆտէլովից BB 28, 295: Karst, *Յուշարձան 402, 403 սումեր.* dê, dêdê «*զարնել*», *414 մոնգոլ.* tokši «*զարնել*», *թունգուզ.* tokši «*բաղխել*», *թրք.* čökmek «*գճիլ*», čekij «*մուրճ*», *429 ՊՊր.* qaqmaq «*կոփել*» *բառերի հետ: Պատահական նմանութիւն ունի արաբ.* زز zazz «*ապտակ զարնել*» *(Կամուս, Թրք. Թրգմ. Բ. 180):*

ԳԻՒ.—Ախց. երև. Կր. Տփ. ձէձ, *Ալշ. Մշ.* ձեձ, *Սչ.* ձեձ, *Խրբ. Հմշ. Ննխ. Պլ. Սեբ. Ր. Տիգ.* ձէձ, *Ասլ.* ձէ՛ձ, ձէ՛ձ*գ, *Սլմ.* ձէձել, *Հճ.* ձիձել, *ԶՓ.* ձիձիլ:—*Գաւառականներում բառս նշանակում է նաև «կռիւ, պատերազմ». այսպէս ունին ի միջի այլոց՝ Արբ. Եւդ. Զրս. Պլ. այս նշանակութեան համար համմտ. վերը առնկրիտ ձևերը:—Նոր բառեր են* ծեծած «*կորկոտ*», ծեծան «*ծեծող*», ծեծիւ «*պատերազմ*», ծեծկուան «*կռուարար*», ծեծուն, ծեծիկ, ծեծկաճ, ծեծկուիլ, ծեծվրտիլ, ծեծկռփել, ծեծվռտել, ծեծֆիլ, ծեծփայտ, ծեծֆար *են:*

ՓՈԽ.—Վրաց. წეწა ծեծա *և գանագան նախամասնիկներով՝* აწეწა ածեծա, გაწეწა գածեծա, დაწეწა դածեծա, შეძეწძა չեծեծա «*ծեծել (կանեփը), ձաղկել (բուրդ են)*», დაძეძვა դաեծեվա «*լոսել, ջարդել*», შეძეძვა չեծեծվա «*ծեծել, ճմլել, ճնշել, սեղմել*», ძეწკვა ձեծկվա «*կամնել*», ძეძკა ձեծկա «*ցորենը ծեծելով կճեպից հանել*». *այս իմաստների համար համմտ.* Ծեծէր ցորեան ի կալ. Դատ. գ. 11. *եղիցի զօրութիւն նոցա իբրև զծեծած վշոյ. Եւս. ա. 31 են: Տե՛ս նաև* ծանձ *բառի տակ:*

ԾԵՆԵԿԵՓՆ *կամ* ԾԵՆԵԿԻՆ «*վանդակ*». *անստոյգ բառ. ունի միայն Բառ. երեմ. էջ 149:*

ԾԵՂ *տե՛ս* Ծիլ:

+ԾԵՐ, ո *հլ. «ալեւոր՝ պառաւած մարդ» ՄԳր. որից* ծերանալ *ՄԳր. Ագաթ. Եւս. պտմ.* ծերուկի *ՄՆ. խդ. 27. Բ. մակ. գ. 1. Եփր. Եւս քր.* ծերակոյտ *ՄԳր.* ծերոյք *Սիր. գ. 18.* ծերութիւն *ՄԳր.* ծերագոյն *Բուզ ժա. 16. Յոբ. լԲ. 4, 6.* ծերուկի «*պառաւ*» *Կիւրղ. ղկ.* դառնածեր *Ճառընտ. Վրք. հց.* չարածեր *նխ. դան. Ճառընտ. Վրք. հց.* միջածեր *Փիլ. լին.* յեռնածեր *Սիր. խբ. 8.* շնծեր *ԱԲ.* ծերուճազարդ, ծերակուտական *(նոր գրական լեզուի մէջ միայն գործածական):*

=*Ինիկ հայ բառ՝ հնխ.* g'er- «*ծերութիւն, ծերանալ*» *արմատից, որի միւս ժառանգներն են՝ սանս.* 𑀚𑀭 jr *կամ* 𑀚𑀭् jar «*հնանալ, փճանալ, ծերանալ*», 𑀚𑀭𑀦्𑀢 jarant «*ծերունի, անկար*», jīrna «*ծեր*», jīra- *կամ* jīrṇi «*ծերութիւն*». *վնդ.* 𐬵𐬀𐬎𐬭𐬌 zaurva «*ծեր*», 𐬵𐬀𐬎𐬭𐬎𐬁𐬭𐬀 zaurura «*ծերութիւնից թուլացած*», *օսս.* zärond, *պրս.* زر zar, *աֆղան.* zor «*ծեր*», *յն.* γέρων (γέροντ-) «*ծեր*». γέρας «*աւագութեան պատիւ*», γεραιός «*ծեր*», γερουσια «*ծերաժողով*», γήραια «*ծերութիւն*», γῆρας «*ծերութիւն*», γηράω «*ծերանալ*», γηράσκω «*ծերանալ, հասնիլ*». γεργέρι «*կաթսուկ, շատ հասնելով ինքնին քնկած պտուղ*», γραῦς «*պառաւ*», *հսլ.* zĭrěti «*հասնիլ (պտուղի)*», sŭ-zori «*հասուն*», *ռուս.* зреть «*հասունանալ*», зрелый «*հասուն*» *են* (Boisacq 145, Walde *352*, Trautmann *372*, *և* Horn § *655*, Pokorny *1*, *599*)։ *Այս արմատի գերմանական ժառանգներն են* I *մասնիկով՝ հհիւս.* Karl «*ծեր մարդ, ամուսնացած մարդ, ծառայ, սովորական մարդ, մարդ*», *անգսք.* ceorl «*հասարակ դասակարգի ազատ մարդ, ամուսին*», ceorlian «*ամուսնանալ*», *հբգ.* karol «*ամուսին, սիրական, նշանած*», *անգլ.* churl «*գիւղացի, անտաշ մարդ*», *գերմ.* Kerl «*տղամարդ, կարիճ*» (Pokorny *1*, *600*)։ *Այս բառը յետոյ դարձաւ յատուկ անուն* Karl (*ֆր.* Charle) *ձևով և* **Կարոլոս Մեծի** *(742—814) հռչակով՝ որ 789—806 թուերին Սլաւական ցեղերը նուաճել էր, «թագաւոր» իմաստով (շուրջ 800 թ.) անցավ սլաւական լեզուներին. այսպէս՝ հսլ.* kral'ъ, *ռուս.* koról', *բուլգ.* kral', *սերբ.* krâlj, *լեհ.* król «*թագաւոր*»։ *Սլաւական լեզուներից փոխառնել են հունգ.* király, *լիթ.* karãlius «*թագաւոր*», *յն.* κράλης «*թագաւոր Բուլգարիոյ, Սերբիոյ*», *ալբան.* kral', *ռում.* craĭū, *ճեկ.* kəral, kəraliča «*քրիստոնեայ պետութեանց թագաւոր*»։ *Այս սլաւ բառից կազմուեց չեխ.* králik, *ռուս.* кроликъ «*ճագար*» *են*։ *Բառիս պատմութիւնը շատ հետաքրքրական է.—լտ. կար* cuniculus «*ճագար*» *բառը, որ ապաներէնից էր փոխառեալ* (Ernout-Meillet 233). *լատին բառից ձևացաւ գերմ.* Küniglin «*ճագար*», *որ ժողովրդական ստուգաբանութեամբ* könig «*թագաւոր*» *բառից կարծուելով՝ ձևափոխուեց և դարձաւ ստատ.* kinigl·hās, *բաւար.* könig-hase *և սրանցից էլ թարգմանաբար ռուս.* кро́ликъ «*ճագար*» (Kluge *251*, *236*, Berneker *572—3*)։ *Այսպէսով «ծեր, լիակած պտուղ, Մեծն Կարոլոս, թագաւոր և ճագար» միևնոյն աղբիւրի ծնունդը դարձան։ —Հիւբշ. 456։*

Հներից Տաթև. ձմ. խա, ծդ, ճժ հանում է ծայր *բառից. «Վասն այն կոչի ծեր՝ որ է ծայր կենցաղոյս. ժամանեաց ի ծայր կենաց, վասն այն ծեր կոչի. Վասն այն կոչի մարդն ծեր՝ ի ծայր կենացն հասեալ»։ Նոյն հեղինակը (Տաթև. ամ. 122 բ)* ծիր *կամ* ծայր *բառից. «Եւ ծերն կոչի ծիւր, այսինքն ծիրեալ և մաշեալ. այլ և ծեր՝ ի ծայր կենաց ժամանակին իւր հասեալ. դարձեալ ծեր՝ ի ծայր փոփոխմանն ժամանեալ, որ յայնմ հետէ ի գերեզմանն փոխի»։* Klaproth, As. polygl, *էջ 99 պրս.* zar, *վնդ.* seorue, *օսս.* serind, *մորդվին.* syre. *իսկ* Mémoires *1*, *425 սանս. օսս. և պրս. ձևերը. ուստի և ինքն է առաջին ուղիղ մեկնողը։ ԳԴ պրս.* զէր: Brosset JAs. *1834*, *369 համեմատում է պրս.* zāl, *յն.* γέρων *և վրաց. մըջվելի ձևերի հետ։ ՆՀԲ պրս.* zar, *յն* γέρων *և սանս.* jarā: Peterm. *23*, *30*, *35 սանս.* 𑀚𑀭, jara, *յն.* γερουσία: Windisch. *13 սանս.* 𑀚𑀭 *և յն.* γέρων: Gosche *64*, *101 սանս.* jarat: Böttich ZDMG *1850*, *356 սանս.* jarat, *վնդ.* zaurva: *Այսպէս նաև* Müller SWAW *38*, *578 են։ Տէրվ. Նախալ. 78 յն. և սանս. ձևերի հետ՝ հնխ.* gar *արմատից։ Հիւնք. յն.* γέρων, *պրս.* zar, *վնդ.* զար, զաուրվա: Jensen, Hitt. u. Arm. *հաթ.* ziras «*ծեր*»։

Դիմ.—Ագլ. Մշ. Զղ. ծեր, *Սչ.* ձեր, *Ախց. երև. Կր. Շմ.* ձէր, *Խրբ. Ննխ. Պլ. Ռ. Սեբ. Տիգ.* ձէր, *Տփ.* ծիր, *Ասլ.* ձէ՛ր, *Ոզմ.* ձէրաճալ, *Զթ.* ձէյաճօլ, ձեյաճոլ: *Նոր բառեր են* ծերուր, ծերուց, ծերկեկ, ծերունուկ: *Այս-*

*ան՛ղ է պատկանում նաև գուռ. ծեռիլ կամ ծերիլ «թարշամիլ բուսոց յերեսաց տապոյ և փոթոյ» (ՆՀԲ).—այս իմաստը՝ որ գուտ հնդևրոպական է, պահում են նաև սանս. jīrṇá- «մաշած, փտած, փճացած, հնացած, ապականուած», յն. γηράσκω «հասնիլ (պտուղի)», γεργέρικος «կաթուկ արած» (թուզ կամ ձիթապտուղ), հսլ. zrěti «հասունանալ», sŭzori «հասուն» են. այս բոլորը պատկանում են նոյն հնխ. g՛er- «ծեր». արմատին։

ՄԵՐԻԼ «թանաքի պղպիջը՝ տարածուիլը թղթի վրայ», ունին միայն ՀՀԲ, ՋԲ և ԱԲ. նոյնը գիտէ նաև Rivola ծերել «latius serpere et diffundi»: Արմատական ձևն ունի Բառ. երեմ. էջ 149 ծերք «տարածք, ճապաղք, սփիւռք»։

ԳԻՒ.—Այս բառն են ներկայացնում ծրիլ Եզդ. «իւղը կամ թանաքը տարածուիլ, պրպղիլ», ծրճուիլ Վն. «տարածուիլ»։

ՄԵՐՊ, ի հլ. «ծակ, ճեղք, բացուածք, պատռուածք» ՍԳր. Եզն. կոչ. 215. որից ենդածերպ Ագաթ. Խարածերպ ՍԳր. Ագաթ. կոչ. 36. Եփր. երր. էջ 127. ՈՐմածերպ Եփր. աւետ. 324. ծերպել «կափարիչը կիսովին բանալ» Ոսկիփ. Վրդ. առ. 134։

ՆՀԲ (խրամատուրիւն բառի տակ) երր. ֆէրձ: Հիւբշ. KZ 23, 389 գնդ. zafra «երախ» բառի հետ՝ հնխ. g՛apra ձևից։ Հիւնք. ենրձուլ բայից։ Scheftelowitz BB 29, 41 գնդ. ǰafra «խոր», սանս. gabhīra «խոր», gabha «բունոց» բառերի հետ ցեղակից է դնում։

ԳԻՒ.—Մշ. Բլ. ծերբ, Խրբ. ձէր «ճեղք, բացուածք». Երև. ծէրպ աճել, Ղզ. ծելպ աճել, Սեբ. ձէրբ ընել, Բլ. Մշ. ծրբել «դուռը կիսովին բանալ. ֆր. entre-bâiller»։

ՄԵՐՔԵԼ. անստոյգ բառ. մէկ անգամ ունի Սարկ. տոմար. «ի չորիրն օր տարրացոյց զլոյսն... ծերքել զիրումն լուսնին իբեական պարածածկեալ ծագեալ յերկիր»։ ՆՀԲ համարում է «հերքել, փարատել, պարզել», որին հետևում է նաև ԱԲ։

ՄԵԻԼ «օրէ», ՄՈՒԼ «ուրէ». այսպէս ունի Բառ. երեմ. էջ 149 և 151. ինչ լինելը չէ յայտնի։

*ՄԵՓ, ո հլ. (կայ և գրծ. ծեփօք Վեցօր. ը) «ծեփելու գործողութիւնը կամ ծեփելու նիւթ» Յոր. լգ. 25. Եզեկ. ժգ. 12. Միք. է. 11. Սիր. լը. 34. Վեցօր. 166 (գրծ. ծեփօք). որից ծեփել ՍԳր. Ոսկ. յհ. ա. 45. մ. բ. 5. Ծեփած Եւս բր. ծեփկել Կոչ. ծեփուկ «ծեփ, ճարպ, թաղանթ, անդամի ծայրը պատող մաշկը. prépuce» Փիլ. լին. 219. ծեփելիք «դեղի համար շինուած խիւս» ԱԲ. բոածեփ Ոսկ. ղկ. կաւածեփ Եզիշ. խաչիկ. ծեփիչ «մալա» (նոր բառ)։

=Նոյն է վրաց. წება ծեբա, წობა ծորա «մխրճել», დაწება դածեբա «սուգել, մրխրճել», მწუბება մծուբերա «ցեխի մէջ թաւալիլ», წ_ებება ծեբերա «կպցնել, փակցընել»,წებო ծեբո «խէժ, սոսինձ», მეწებება մեծեբերա «իրար կպցնել», დაწებება դածեբերա «իրար կպցնել» բառերի հետ (վերջաձայն բ-ի համար համմտ. հյ. բեփ, սեռ. բեփոյ>վրաց. თებო բեբո): Բայց այս նշանակութիւնները այնպէս են, որ չեն կարող իրարից բխիլ. վրացին աւելի ընդհանուր իմաստ ունի, ուստի աւելի նախնական է. մինչդեռ հյ. «ծեփել» մի մասնաւոր առում է միայն, ուստի պիտի ասէինք թէ փոխառեալ է վրացականից. բայց ճիշտ այս իմաստը պահասում է վրացերէնում։ Ընդհակառակը «կպցնել» իմաստը գտնում ենք այնպիսի հայ բարբառների մէջ (Բուլանըխ, Մարաղա, Սալմաստ), որոնք ո՛չ մի կապ չունին վրաց հետ։ Այս բոլորից հետևում է այն՝ որ թէ՛ հայը և թէ վրացին փոխառեալ են մի երրորդ ընդհանուր աղբիւրից, որ Հայաստանի նախաբնիկների լեզուն է։ Խալդերէնը ունի ծ (s) ձայնը. համմտ. 𒌅𒄿 ṣi և 𒌅𒋾 ṣu վանկերը։—Աճ.

ՆՀԲ լծ. Թրք. səva «ծեփ» (բայց հին ձևն է səvaγ, որից փոխառեալ է արևվիլեան գրականում սուաղ «ծեփ», սուաղել «ծեփել»։ Հիւնք. ծափ բառից։ Bugge, Btrg. 21 յն. τυφόω «գաճով ծեփել», τύφος «գաճ» բառերի հետ՝ հնխ. g՛vepso- արմատից։ Karst, Յուշարձան 426 չաղաթայ. sip-alamaq «յղկել», siv-amaq, suv-amaq «ծեփել», ալթայ. syba «ցեխոտած», եա-

կուս. siba, sybak «*ձեփ*» *են։ Ղափանցեան, Տեղեկ. ինստ. 2, 92 վրաց. ծեր բառից փոխառնալ։*

ԳԻՒ.—Ալշ. Մշ. Ջղ. Վն. ծեփ, Ախց. Կր. Շմ. Սլմ. ձէփ, Ննխ. Պլ. Ռ. Սեբ. ձէփ, Սչ. ձեփ, Ասլ. ձէ՛փ, Մկ. ծիփ, Զթ. ձիփ, Ագլ. ձէօփ.—բայական ձևով՝ Ջղ. ծեփել, Սլմ. ձէփել, Ախց. Երև. Կր. Մրղ. ձէփէլ, Սչ. ձեփել, Ննխ. Պլ. Ռ. Սեբ. ձէփէլ, Ասլ. ձէփէ՛լ, Հմշ. ձէփուշ, Շմ. Ոզմ. Տփ. ձէփիլ, Ագլ. ծո՛փիլ, Վն. ծիփել, Հճ. ձիփել, Զթ. ձիփիլ։—Այս բառերը գաւառականներում ունին նաև ուրիշ իմաստներ. այսպէս՝ ծեփ Ալշ. Բլ. «աման կպցնելու կոծիկ», ծեփել Մրղ. Սլմ. «կոտրած ամանը կոծիկով կպցնել», Հմշ. «որևէ ծակ խցկել, թխմել», Երև. Ղզ. Ղրբ. Նր. Տփ. «տափակ ձեռքով զարնել, խփել»։ Նոր բառեր են՝ ծեփարար, ծեփկալ, ծեփան, ծեփուճ, ծեփծփել։

ՄԵՔ «*ծուռ, թիւր*». *արմատ առանձին անգործածական, որից ծեռել «ծռել, ծռմռկել, խօսքը խեղաթիւրել» Ոսկ. ես. և հռ. Կիւրղ. եր. «ցնդաբանել» Մագ. Թղ. 237. «ծածկել»? Մագ. դամագո. (ըստ Մէնէվիշ. ՀԱ. 1911, 378, որին հակառակ է Աճառեան ՀԱ 1923, 250). ծեռաբանել «կատակաբանել» Մագ. Թղ. 221. ծեռածուռ Ճառընտ.=Պոմ. սահ. 11. ծեռական Երզն. քեր. ծեռծեռել «խեղաթիւրել» ՓՒ. ծեռեռայ կամ ծեռռեռայ «ծռմռած՝ ցիւր ցիւր արտասանած բառ կամ վանկ» (յունարէն արտասանութեան համար ասուած, անշուշտ ճեգեռայ բառի նմանութեամբ) Ճառընտ.=Պոմ. սահ. 8։*

*Նշ*Ր թեռել *բայից? Պատկ.* Изследованіе, *էջ 14 կցում է* թեռել *բային։ Հիւնք.* ճեգել, ճեգեռայ *ձևերից։*

*ՄԷՍ (ի *հլ. ըստ Նշ*Ր, *բայց առանց վկայութեան*) «*արարողութիւն*» *Ոսկիփ. հընում ուրիշ ածանցներ չկան այս բառից. նոր գրականում են կազմուած՝* ծիսական, ծիսարան, ծիսակատարութիւն, ճայածէս, յուճածէս, լատինածէս *են։*

=*Փոխառնալ է վրացերէնից. համմտ. վրաց.* წეხი ծեսի «*կարգ, բնութեան օրէնք, կարգադրութիւն, կանոն, եկեղեցական ծէս, սովորութիւն, բնութիւն, բարք*», წესა ծեսա «*կոչել, անուանել, կարգել, հաստատել, կանոն դնել*», წესება ծեսեբա «*կարգադրել, կանոնաւորել, կարգաւորել*», გაწესება գաձեսեբա «*կանոն, հաստատութիւն, հրաման, կարգ*» *կամ բայական գործածութեամբ՝ «հաստատել, կարգել, կանոնաւորել»,* განწესება գանձեսեբա «*կարգադրութիւն, կարգադրել, կանոնաւորել*», მოწესე մոձեսե «*ընկերութեան անդամ, քահանայ, արեղայ, կրօնաւոր*», უწესო ուձեսո «*անկարգ, խառնակ, անկանոն*», უწესობა ուձեսոբա «*խառնակութիւն, անկարգութիւն*»։ *Հայերէն բառը չետին, ամիկ և գործածութեան մէջ չմտած մի ձև է. մինչդեռ վրացերէնը ցոյց է տալիս ճոխ ու կենդանի գործածութիւն։ Բացի սրանից վրացին ունի բառիս նախանշանակութիւնը. համմտ.* წესა ծեսա «*կոչել, անուանել, կարգել, հաստատել*»։ *Այս պատճառով չի կարող վրացին հայերէնից փոխառնալ լինել, այլ ընդհակառակը։—Աճ.*

*Նշ*Ր յն. Θεσμὸς «*ձէս*» *բառից փոխառնալ. նոյն է նաև վրաց.* ձէ՛սի։ Müller, Kuhns u. Schleich. Btrg. *5, 383 դնում է* diç *արմատից, որից և հանդէս։ Ալիշան, Հին հաւ. էջ 448 Ձևս դից անունից։ Զուբինով, Բռ. վրաց.-ռուս. էջ 1673 վրացին հայերէնից փոխառնալ է համարում։ Մառ* ИАН *1918. 347 իբր անեզական բառ՝ վրաց.* ձո՛վ «*կարգել, յօրինել*» *արմատի հետ։*

ԳԻՒ.—Ախց. Ջղ. Տփ. ձէս, *Սչ.* ձես։

ՄԻԱՅԱԿ «*խայտաուակ*». *ունի միայն Բառ. երեմ. էջ 149։*

ՄԻԱՅԱՆ, ի–ա *հլ.* «*ծիրանի գօտի, աղեղնակ*» *Կիւրղ. ծն. Յայտ. ժ. 1. Փարպ. Արծր.* «*լուսնի բակ*» *Հին բռ. որից* ծիաձաճաձաւալ *Յիշ. ոսկ. յհ. (գրուած է* ծիաճաճաւալ. *Թերևս ուղղել պէտք է այս ձևով).—Էփիմ. էջ 331—334 զանազանում է* ծիածան «*աղեղնակ*» *և* ծիաձաճ «*օդերևոյթ*». *վերջին բառը գործածում է 16 անգամ։*

ՀՀ ծիր ածան։ *Նշ*Ր «*ծիր ածեալ, ածօղ և այն՝ որպէս ծիրանազարդ*»։ *Հիւնք. յն* διάβημα «*ծամանակալ, թագ, պսակ*» *բառից։*

ՄԻՓՆԱՅ *«տաշտաթիաղ անելու ճիւղ»? անստոյգ նորագիւտ բառ, որ մէկ անգամ ունի Վստկ. 130 «Կապեա պինտ և աղէկ թաղեա զոսկորդ և զամէն ուտերդ՝ մինչև ի անկերն, որ զերդ ծիփնաց՝ որ քաշ կու առնեն». (ի-մամ՝ «տաշտաթիաղ են անում». տպուած է հաշկու առնեն, որ իմաստ չունի)։*

Վաստակոց գրոց հրատարակիչը, էջ 248 գրում է **ծիրճայ** *և էջ 130 մեկնում է «աճումն, երկարումն»?*

ՄԻՓՐԱՅ *կամ* **ՄԻՓՐԱՍԻՆ**. *անձանօթ բոյս է. Գազիանոս իբր հոմանիշ է դնում պիւրէս բառին. ՆՀԲ այս բառով հասկանում է յն. πυθίων, լտ.* pythion *և համարում է «մի տեսակ վայրի սոխ»։—Հիւս. § 1187 անորոշ է։*

ՄԻՎ *«ընձիւղ, բողբոջ, ծղօտ» Գնձ. Վստկ. Տագ. աւում է նաև* **ծիղ**, ո հլ. *(կամ սեռ. -ի) Ասող. Ոսկ. գծ. 51. Երզն. լս. 111. Ոսկիփ. Վստկ. 30. կայ նաև* **ծիւղ** *«խոխ», որ իբրև ձեռագրական տարբերակ գտնում ենք Նղիշ. բ. էջ 40 (տպ. Վենետիկ 1893, էջ 95)՝ բնագրի* **ծիւ** *«բակոր, աֆար» բառի դէմ (տե՛ս այս բառը)։ Որից* **ծլել**, **ծլիլ**, **ծլեցուցանել** *Վստկ. Մաշտ.* **ծլարձակութիւն** *Փիլ.* **ծլան** *Շնորհ. շատծլու «ուղտափուշ» Բժշ. նոբածիլ (արդի գրականում),* **գարեծեղ** *Վստկ. 133.* **ճաստածեղ** *Թէոփ. խ. մկ.* **ծղօտ**. **ի**, **ու** *հլ. Վրդն. սղ. Անյ. Բարձր. Շնորհ. Ճառընտ.—Արդեօք սրա հետ նո՞ր է նաև* **ճիւղ** (ճեղ, ճիղ), *որ տես առանձին։ Կապ ունի՞ ուտ.* **ցիլ** *«սերմ»։*

ՆՀԲ **ծղօտ** *մեկնում է «ծղյօղ, ծիղ յօդաւոր կամ ըստ Հին բռ.* **ծղոտն**, *որպէս թէ* **ոտն ծղի, ճղի»։** *Պատկ.* Изслед. *էջ 16 քրդ.* gili *կցում է մեր* **ծիլ** *ձևին։ Հիւնք. հանում է ձաղկ բառից։* Justi, Dict. Kurde, *էջ 122 քրդ.* جيل jil, *վրաց.* **ճիլի** *«սէզ» բառերի հետ։* Bugge KZ *32, 43* **ծեղ** *և* **ծիւղ** *կցում է յն.* στέλεχος *«ծառի բուն», անգսք.* stela, *գերմ.* Stiel *«ցօղուն» բառերին։* Tomaschek, Die alten Thraker II. *39 սլ.* zeliye *«կանաչութիւն» և փռիւգ. ζέλκια «բանջարեղէն» բառերի հետ.* Bugge, Lyk. Stud. *1, 14 կիլիկիոյ* Σελινδος *և Լիւդիոյ* Σιλανδος *տեղանունների հետ։* Scheftelowitz BB 28, 295 *հիւլ.* kiolr, *հբգ.* kil *«ծիլ», անգլ.* quill *«փետուրի ցօղունը»։* Pedersen, *Հայ. դր. լեզ. 110 յն.* νεο-γιλός *«նորածին», գոթ.* keinen *«ծլիլ», լիթ.* zýdėti *«ծաղկիլ» բառերին ցեղակից է դնում։*

Գիւտ.—Ագլ. Ալշ. Ախց. Երև. Կր. Մկ. Մշ. Շմ. Ջղ. Սլմ. Վն. **ծիլ**, *Ասլ. Խրբ. Հճ. Համշ. Ննխ. Ռ. Տիգ.* **ձիլ**, *Ոզմ.* **ձէլ**, *Զթ.* **ձալ**,—*միւս ձևերից՝ Ագլ. Գոր. Ոզմ.* **ձէղ**, *Ղրբ.* **ծրէղ** *«փայտի կտոր», Մշ.* **ձեղ** *«ցօղուն», Տփ.* **ծիղ**, *Ջղ.* **ծուղ** *«յարդի կտոր» (եզիշէի ծիւղ ձևն է).—բայական ձևով՝ Ջղ. Սլմ. Վն.* **ծլել**, *Ագլ. Կր. Մկ. Շմ. Տփ.* **ծլիլ**, *Ախց.* **ծլէլ**, *Ասլ. Խրբ. Ռ. Սեբ.* **ձլիլ**, *Հճ.* **ձը՛լել**, *Զթ.* **ձը՛լիլ**, *Ննխ.* **ձլէլ**, *Մրզ.* **ծիլէլ**, **ծը̄լէլ**, *Գոր. Ղրբ.* **ծիլի՛լ**, *Համշ.* **ձլուլ**։—*Նոր իմաստներ և նոր բառեր են ներկայացնում* **ծիլ** *Մրզ. «պնակի մէջ ծլեցրած ցորեն», Տիգ. «մազի թել», Ան. «մի տեսակ փուշ», Արբ. «շաքարակալած բաղցրեղէն»,* **ծեղ** *Համշ. Պրտ. Տր. «հիպատացորենի ցօղուն», Սեբ. «հասկը վրան ցօղուն ցորենի»,* **ծիլ** *բաշել Ղրբ. «շերամի բոժոժից թել քաշել»,* **ծլիկ** *«clitoris»,* **ծլիլ** *Արբ. Ջն. կամ* **ծլկիլ** *«շաքարակալել»,* **ծլուկ** *Եւդ. «ծիլ»,* **ծլծլոտիլ** *Ղրբ. «ծիլեր արձակել»,* **ծղան** *(«շերտ» իմաստով յիշած է Բառ. երեմ. էջ 245),* **ծղանել**, **ծղօն**, **ծղնօտատեղ** *ևն։*

Փոխ.—Վրաց. **წვილი** *ծվիլի «ցօղուն, ստեղն, ծառի վրայի փուշերը»,* **წვილიანი** *ծվելիանի «ցօղնաւոր», նաև վրաց.* **წილი** *ծիլի «մաս, բաժին, վիճակ դցել» (համմտ. գւռ. չօփ* **ɣցել**), **წილი** *ծիլի «ոչիլի ձու» (համմտ. գւռ. ոչիլը ծլիլ). քրդ.* ل zil «ցօղուն» *(որ Justi սխալմամբ համեմատում է մեր* **ճիւղ** *բառի հետ) կամ «ծիլ» (ըստ Աճառ. MSL 16, 370),* زلك zilik *կամ* zelkáie *«շիւղ».—ըստ իս մեր* **ծիղ** *ձևից է նաև կապադովկ. յն.* ζυγόκκο *«բողբոջ, ծիլ» (-okko նուազական մասնիկով կազմուած), որ* Karolides, Γλ. συγκρ. *82 մեր* **ցցուել** *բառի հետ է կցում։*

***ՄԻՄ** *տե՛ս* **Մուժ**։

Canini, Et. étym. *202* **ծիծ** *կցում է իտալ.* tetta, *ֆրանս.* teter, *յն.* τιτθός

համանիշներին։ Թիրեաքեան, Հայ-երան. ուսումն. 157 ցից, ցցել *բառերի հետ լծորդ է համարում։—Միւսները տե՛ս* ծուծ։

+ՃԻՃԱՂ *տե՛ս* Ճաղր։

ՆՀԲ ծաղիկ *բառից։* Canini, Et. étym. *186 բրբտ.* khoarzin «*ծիծաղիլ*» *բայի հետ։ Հիւնք.* ծիծառն *բառից։* Patrubány SA *1, 192 դնում է կրկնուած* ծաղ *արմատից։ Տե՛ս նաև* ծաղր *բառի տակ։ Պատահական նմանութիւն ունին վրաց.* գაծիცեբა, սիծիցի, սիծիլի, *ինգիլ.* գაծիცեբაյ, *մինգ.* ծիցա, *լազ.* օաիցիցու «*ծիծաղիլ*», *որոնց արմատն է* ծին, ծիլ, ծից։

ԳԻՒ.—Ախց. Երև. Տփ. ծիծաղ, *Շմ. Ջղ.* ծծաղ, *Ղրբ.* ծէ՛ծաղ, *Սչ.* ձձաղ, *Ննխ.* ձձաղ «*շէն, ուրախ (մարդոց համար է ասւում)*», *Հճ.* ծիձօղ, *Ագլ.* ծա՛յծաղ.—*բայական ձեւով՝ Տփ.* ծիծաղիլ, *Ախց.* ծիծաղէլ, *Հճ.* ծիձաղել, *Համշ.* ձիձաղուշ, *Ալշ. Մշ.* ձիձաղալ, *Շմ.* ծծաղիլ, *Ագլ.* ծծո՛ղիլ, *Ղրբ.* ծծո՛ղէլ, *Սեբ.* ձձաղիլ, *Սչ.* ձձաղել, *ԶՓ.* ձձաղրլ *կամ* ձղաղրլ, *Մկ. Ոզմ. Վն.* ծծղալ, *Խրբ.* ձձղալ, *Տիգ.* ձձղmլ, *Դվ. Մրզ. Նբ. Սլմ.* ծղզալ (< *ձզղալ<ծծղալ). *Հնաարբրբրական է Ալբս. Ախց.* Իրմբցբխտալ<Իմծիծաղ(ատ)իլ։ *Գաւառականների մեծ մասը ծագում է* ծծաղ *ձևից, որ յառաջացել է ի ձայնաւորի անկումով։ Նոր բառեր են* ծիծաղամաճ, ծիծաղատեղ, ծիծաղկտալ, ծիծաղկաուճ, ծիծաղոտել, ծիծղուտալ *(արտասանւում է Խրբ.* ձըծղրդ՛ալ «*եղանակը զուարթ ու պայծառ լինել*»)։

+ՃԻՃԱՒՆ և *հլ.* (-ռան, -ռուճ, -ռանց) «*ծիծեռնակ թռչունը*» *Ես. ԼԸ. 14. Երեմ. Ը. 7. Բարուք գ. 21. Փիլ. այլաբ.* «*սոխակ*» *Նիւս. երգ.* «*մի համասեղութեան անուն*» *ԱԲ. ասւում է նաև* ծիծեռն, և *հլ.* (-ծռան, -ծռուճ, -ծռանց) «*ծիծեռնակ*» *եգն. Եղիշ. Սարգ.* «*սոխակ*» *ԺՄ. յն. որից* ծիծառնուկ «*սոխակ*» *Փիլ. այլաբ. և լիւս.* «*ծիծեռնակ*» *Նիւս. երգ. Բժշ.—ԱԲ ունի նաև* ծիծեառն *ձևը։ Նոր գրականում ընդունուած է գլխաւորապէս* ծիծեռնակ, *բայց գործածական են նաև* ծիծեռ, ծիծառ *ձևերը։*

=*Բնիկ հայ բառ՝ կրկնուած հնխ.* g'ār- *արմատից։ (Կրկնութեան ձևի համար հմմտ.* ծաղր և ծիծաղ)։ *Հնխ.* g'ār- *արմատի միւս ժառանգորդներն են օսս.* zar «*երգ*», zarin, zarun «*երգել*», *յն.* γῆρυς, *դոր.* γᾶρυς «*ձայն, բարբառ, լեզու*»,, γηρύω «*հնչեցնել, երգել, փառաբանել, և յատկապէս՝ թռչունների երգելու մէջ մրցելը*», *լտ.* garriō «*թռչունների ճռուողելը, գորտի կռկռալը, մարդոց շաղփաղփելը, փսփսալ*», garrulus «*ճռուողող (թռչուն), կարկաչուն (գետ), բաղցրահնչիւն (քնար), շատախօս (մարդ)*», *հիռլ.* gairm, gāir, *կիմր.* garm, gawr «*ճիչ, աղաղակ*», *հբգ.* kara, *հսաքս.* karm «*գանգատ*», *գոթ.* kara, *անգսք.* cearu «*հոգս*», *նորվ. գ.ո.* karra «*հափ կչկչալը*» (Walde 334, Boisacq 146, Pokorny 1, 537, Ernout-Meillet 394)։

Տաթեացի, Հարց. 220, Ինճիճեան Հնախ. Գ. 21 և Capelletti, Armenia, *Բրգմ. Արշալ. արբտ. 1842, էջ 108 համարում են բնաձայն բառ։* Böttich. Arica 67, 98 *և* Lag. Urgesch. 775 *պրս.* zalū, zarū «*տզրուկ*» *բառի հետ՝ սխալմամբ լատ.* hirundo «*ծիծառն*» *նշանակութիւնը լտ.* hirudo «*տզրուկ*» *նշանակութեան հետ շփոթելով։* Müller SWAW 88 (1877), *էջ 14 յն.* χελιδών *և լտ.* hirundo *համանիշների հետ։ Նոյնպէս է նաև Տէրվ. Նախալ. էջ 82։ Հիւնք.* ծիաձան *բառից։* Tomaschek, Die alt. Thraker II. 25 *Թրակ.* χελιδόνη «*ծիծառնախոտ*» *բառի հետ։ Երիմեան, Բազմ. 1897, 123 ըստ աւանդութեան* ծիծ առնել *ձևից է հանում։* Patrubány *ՀԱ 1908, էջ 315 լտ.* garrio *ձևի հետ, որով ինքն է լինում բառիս առաջին ուղիղ մեկնիչը։ Նոյնը յետոյ աւելի մանրամասն* Petersson KZ *47, 287։ Պատահական նմանութիւն ունին Թուշ.* ծիծաօ «*ճպուռ*», *օսս.* ծիվ «*ճնճղուկ*»։

ԳԻՒ.—Ախց. Երև. Կր. Շմ. ծիծէռնակ, *ԶՓ.* ձիձէռնագ, *Մրզ.* ծի՛ծէռնակ, ծռնիկ՝, *Սլմ.* ծիծեռնիկ՝, *Մշ.* ծիձրռնագ, *Ալշ.* ծիձրռնեգ, *Տփ.* ծիծիրնակ, *Ջղ.* ծծեռնակ, *Ննխ.* ձձէռնիգ, *Գոր. Ղրբ.* ցցէ՛ռնակ, *Ագլ.* ցցո՛ռ-

նիկ՝, ցցմ՛ռնիւկ՝, *Տիգ.* ձձրռնագ, *Ողմ.* ծծռնէ՝կ, *Խրբ.* ձձրռիգ՝, *Ասլ.* ձձրռնիգ, ձձրռնիյ, *Վն.* նձրռնեկ.—*այս բոլորը (բացի վերջինից) նշանակում են* ծիծեռնակ, ծիծեռնիկ, ծիծառնիկ, ծիծառնուկ *և* ծիծեռիկ *ձևերը։ Գաւառականների մէջ նոր նշանակութիւն ունին* ծիծեռ *Ալշ. Բլ. Երև. Լ. «րոքի կարթաձև երկաթը»,* ծիծեռնիկ *«չուանը քաշելու փոքր ճախարակ կամ անուակ»։*

*ԾԻԿՆԱԻՊԱՐ *«դիւանադպիր, քարտուղար». Նորագիւտ բառ՝ որ երկու անգամ գտնում եմ գործածուած Օրբել. էջ 259 և 312 «Հրամայէ աւագ ծիկնաւպարին իւրոյ դիւանին՝ Աւնաւիրէ անուն. եւ գնացեալ ի Տփղիս... եւ բերել զծիկնաւպար աւագ դիւանադպրութեանն»։*

=*Վրաց.* მწიგნობარი *մծիգնորարի «քարտուղար, դիւանադպիր», որ ծագում է* წიგნი *ծիգնի «գիր, գրութիւն, գիրք» բառից։—Աճ.*

ԾԻՂ *տե՛ս* Ծիլ։

+ԾԻՆ. *ի Հլ. «ծնունդ, ծագում, բունը» Փիլ. լին. Խոր. «արգանդ» Ոսկիփ. «մարմնի վրայ բնական նիշ, խալ» Ախտարք. որից* ի ծնէ *«մօրից ծնած ժամանակից» ՅՀ. կԹ. 1. Եւս. պտմ.* բազմածին *ՍԳր. Վեցօր.* միածին *ՍԳր.* աճծին *Կոչ. Ոսկ. Սերբր.* ընդոծին *ՍԳր.* բնածին *Բ. պետ. բ. 12.* դժուարածին *Ծն. լհ. 17.* եօթնածին *Երեմ. ժե. 9.* երկրածին *Առակ. բ. 18. Թ. 18. Կորին. Եւս. քր.* իմաստնածին *Եւս. քր.* ծնանիլ *ՍԳր. Սերբր. Կոչ. Ոսկ.* ծնանելի *ՍԳր.* ծնուցանել *Եղ. ա. 16. Եփր. Ղևտ. Ոսկ. յհ. ա. 2. Եղն.* ծնուցիչ *ՍԳր.* ծնելութիւն *Ոսկ. յհ. ա. 24.* ծնելի *Սիրաք իբ. 4.* ծնելաւէր *Պետ.* ծնիչ *Կոչ. Սերբր. Եփր. Ոսկ.* ծնչութիւն *Եւս. պտմ. Եփր. Ա. կոր.* ծնօղ *ՍԳր.* ծնունդ *ՍԳր. Ագաթ. Եւս. պտմ.* ծննդական *«յղի» ՍԳր.* ծննդաբախտ *Վեցօր.* բազմածնունդ *Իմ. դ. 3.* հակառակածնոյց *Մծբ.* մարտածնոյց *Մծբ.* ծրնողաճարզու *Կանոն. 94։* Ծին *«ընկերք» բառի վկայութիւնն ունի Մոլութ. 68 ա. «Աղտեղի զգեստու ծնանի մարդն, այսինքն արիւնաշաղախ ծնովքն»։*

=*Բնիկ հայ բառ՝ հնխ.* g'en- *արմատից. ցեղակիցներից համմտ. սանս.* जन् jan(जनति jánati, जायते jāyatē) *«ծնիլ»,* जात jātá *«ծնեալ»,* जनस् jánas- *«ծնունդ, ցեղ, սերունդ»,* जनिमन् janiman- *«ծնունդ, ծագում, սերունդք, յաջորդք»,* գնչ. janao, žinao *«ծնիմ»,* գնդ. zi-zanāṭ *«ծնցի»,* zayeitē *«ծնցի (կրաւ.)»,* zāta *«ծնեալ»,* fra-zainti- *«սերունդ, որդիք»՝ հպրս.* zana- *«ժողովուրդ», պրս.* زادن zādan *(ներկ.* زایم zāyam) *«ծնիլ»,* زاد zāda *«ծնեալ», պհլ.* zātan ԱՒԱՐՏ *«ծնիլ»,* zāyišn *«ծնունդ», քրդ.* zāin *«ծնեալ», աֆղան.* zēž-ēdal *«ծնուիլ»,* zēž-avul, zovul *«ծնիլ». օսս.* zänäg *«աճիլ, բուսնիլ», քուչ.* cmel *«ծնունդ», յն.* γίγνομαι *«լինել, գոյանալ, ծնիլ»,* γέγονε *«ծնաւ»,* γένεσις *«ծագում, ծնունդ»,* γένος *«ցեղ, սերունդ»,* γεννάω, γίνομαι *«ծնանիլ»,* γέννημα *«զաւակ»,* γόνος *«սերունդ, տղայ»,* γονεύς *«հայր»,* γονεῖς *«ծնողք», լատ.* gi-gno *«ծնիմ»,* genus *«ծնունդ, սերունդ»,* gnatus, natus *«ծնեալ, որդի»,* nascor *«ծնիլ»,* genitor *«ծնօղ»,* natio *«ազգ, սերունդ, ժողովուրդ», գոթ.* kuni *«ցեղ», գերմ.* Kind *«որդի», հիւլ.* ro-génair *«ծնիլ»,* gein *«ծրնունդ»,* ingen *«աղջիկ», կիմր.* geni *«ծնիլ», անգսք.* cennan *«ծնիլ», լիթ.* žéntas, *լեթթ.* znuōts, *ռուս.* зять, *հսլ.* zętĭ *«փեսայ» ևն ևն* (Walde 341, 338, Boisacq 147, 663, Trautmann 370, Horn §645, Pokorny I, 576—8, Ernout-Meillet 400—401)։ *Այս բոլորի հնխ. արմատներն են* g'enē-, g'eno-, g'nē-, g'nō-, g'en-, g'on-, g'n̥ *ևն. Հայերէնը ծագում է* g'en- *ձևից։ Այս արմատը նոյն է հնխ. «ճանաչել» արմատի հետ։ Կան մի քանի ցեղեր, որոնց մէջ ծննդեան ժամանակ որդու օրինական հաստատումը լինում է ծնեալը նստեցնելով հօր ծնկների վրայ։ Այսպէս՝ հին Իսլանդիայում ծնեալին կարելի է մերժել և անտառը դցել, և կամ ընդունել՝ նստեցնելով ծնկների վրայ։ Հին իսլանդերէն և սոգդերէն որդին կոչւում է «ծնկան որդի». լտ.* genuīnus *«բնածին, իսկական» բառի մէջ երևում է «ծունկ» բառը։ Սրանցից հետևում է որ որդուն ծնկների*

վրայ նատեցնելով օրինականացնելը հին հնդևրոպական մի սովորութիւն էր և «ծնանիլ» արմատը իրապէս նոյն է «ճանաչել» արմատի հետ (տե՛ս Meillet BSL № 83. էջ XV, ինչպէս և BSL № 85, էջ XXXIII). —Հիւբշ. 456։

Նախ ՆՀԲ լծ. հյ. կին, սանս. jan, յն. γένεσις, γενετή՝ Peterm. 23 սնս. jan, գնդ. zan, յն. γένω, լտ. gigno: Gosche 64, 101 սանս. jan, գնդ. zan, պրս. zadan: Սրանց համեմատ են նաև՝ Böttich. Lag. Müller, Justi, Տէրվ. Պատկ. Bopp Համմտ. քերակ. 1, 403 եև։ Մորթման ZDMG 26, 612 սրանց է կցում նաև բևեռ. gunusini «տղայք»։ Jensen, Hitt. u. Arm. հաթ. s... «ծնանիլ», -znis «-ծին»։ Հիմնք. կին բառից։ Մ. Ս. Դաւիթ-Բէկ, Յուշարձան 397 Կորն. kin-ethel «ծնունդ», հիւլ. cenel «ծնիլ» են և հյ. կին: Karst, Յուշարձան 402 սումեր. din:

ԳԻՒՐ.—Ալշ. Մշ. Ջղ. Սլմ. Վն. ծնել, Երև. Ղրբ. Մրդ. ծնէլ, Ագլ. Ախց. Գոր. Կր. Մկ. Շմ. Ոզմ. Տփ. ծնիլ, Սչ. ձրնել, Ննխ. ձնէլ, Ասլ. Խրբ. Պլ. Ռ. Սեբ. Տիգ. ձնիլ, Հճ. ձր՝նել, Զթ. ձր՝նր՝լ, ձօնունդ, Հմշ. ձնուշ. (սրանց մէջ Ագլ. և Սչ. գործածւում են միայն անասուններին համար. իսկ մարդոց համար ասւում է Սչ. բնձայել)։—Միև արմատը ունին Բլ. Կր. Նբ. Վն. այսպէս է կոչւում կովի իւրաքանչիւր տարւայ ծնունդը՝ սկսած չորրորդից. 2. Կր. «չորս տարեկան եղ կամ կով». 3. Ղրբ. «կովի արգանդ». 4. Ալշ. Վն. «մարմնի վրայ խալ». 5. Վն. «մի տեսակ բծաւոր վէրք». 6. Ննխ. «կովի ծնելու ժամանակը». 7. Ղրբ. «տաւարի տարիքը»։ Նոր բառեր են ծնամառ, ծնաև, ծնեցնել, ծնոտիլ, ծնեղաբեր, ծնուկ, ծնեղաւոց, ծնեղկան (Տփ. ծլեղգան, ծլեղդան, Ագլ. ծրնրնբկուն, ծնբակուն, ծնբծկուն, ծնբսկուն)։ Անգորայի Բրբախօս հայերն ունին զրնրնբ «Ծննդեան տօնը» (Բիւր. 1898, էջ 789)։

ՓՈԽ.—Հայ բոշայ. աճծիճ «աղ» (Finck, Die sprache d. arm. Zig. ЗАН 1907, 106)։

*ՍԻՆԱՄՍՂՈՐ «վրացական պետական միատիճանաւոր կամ պաշտօնեայ, վարիչ»։ գրուած ծիրամձղօր Օրբել. 260 (Ձծիրամձղօրն Վարձէոյ և զծիրամ ժղօրն (այսպէ՛ս!) Պղնձահանիցն). առաջին ձևից է ծինամբձղաւորութիւն Արձ. 1245 թուից (ի ծինամբձղաւորութեան Պետրէի). Վիմ. տար. 89։

=Վրաց. წინაშძღოლი ծինամձղոլի «առաջնորդ, գօրագլուխ». կազմուած է წინა ծինա «առաջ» և ძღოლა ձղոլա «վարիչ, տանիլ» բառերից. ըստ Լ. Մելիքսեթբէկի (նամակ 1933 մայ. 12) ո՛չ թէ վրաց. წინაშძღოლი ծինամձղոլի «առաջնորդ, գօրագլուխ», այլ წინაშძღვარი ծինամձղվարի «վանահայր, առաջնորդ վանից»։

Ուղիղ մեկնեց նախ Շահնազարեան, հրատ. Օրբել. Բ. 303, որ համեմատում է վրաց. ծինամձղոլաւ «առաջնորդ, տեսուչ» ձևի հետ։

*ՍԻՏ, ի Հլ. «ճնճղուկ» Մագ. Քղ. 206. որ և չիտ Մխ. առ. ճի. Վրդ. առ. 59. կամ չիտ նոյն նշ. Ոսկիփ. ուրիշ վկայութիւն և սրանից ածանցուած բառեր չկան։

=Փոխառեալ է կովկասեան լեզուներից։ Համմտ. վրաց. ჩიტი չիտի «թռչնիկ, ճնճղուկ», ვარდის ჩიტი վարդիս չիտի «սխտակ» (իբր թէ «վարդի թռչուն»). մինգ. չիտի «թռչնիկ, ճնճղուկ», ինգ. չիտ «ծիտ, ճնճղուկ»։ Հայերէն բառը փոխառեալ է, որովհետև, նախ՝ չտեին է և քիչ գործածուած, և երկրորդ՝ որ այսօր էլ միայն կովկասահայ բարբառների մէջ գոյութիւն ունի։ Զարմանալի է սակայն՝ որ Զուբինով[2] 1579 վրացին հայերէնից փոխառեալ է դնում.—Աճ.

Ինճիճեան, Հնախ. Գ. 21 ծի՛ ձայնից։ ՆՀԲ ծի՛դ, չը՛դ ձայններից է հանում և կցում է սանս. չաթաֆա բառին։ Peterm. 23 և Böttich. Arica 89, 452 սանս. čaṭaka: Lag. Arm. Stud. § 1053 մերժելով վերջինը՝ ըստ ՆՀԲ համարում է բնաձայն։ Justi, Dict. Kurde 137 քրդ. ḫ̆ičit «հաւ» ձևի դէմ դնում է հյ. ծիտ և վրաց. չիտի, մինչդեռ պէտք էր կցել գւռ. ճուտ «վառեակ» բառին։

ԳԻՒՐ.—Ախց. Երև. Լ. Շմ. Տփ. ծիտ, Յղ. ծէտ, Գոր. Ղրբ. ծրէտ, Ագլ. ծայտ: (Սրանցից փոխառեալ եմ կարծում Վն. ծիտ «ճրն-

*ճըղուկի նման մի տեսակ փոքրիկ թռչուն»), ծծկ. Ղրղ. Մրղ. Ջղ. «պարսկական մէկ շահի՝ որ մի կոպէկից մի քիչ պակաս է»։ Նոր բառեր են ծառաբոյծ, ծառախաղող, ծառախընձոր, ծառաճիճի, ծառապաշար (որ և տարպաշար), ծառատաձ, ծառաչխ, ծառաճուտ, ծառճակ։

*ՄԻՐ, ո հլ. (Սեբեր. ունի ծրաւ, բայց այլ ձ. ծրով) «շրջագիծ» Ես. ե. 21. Յոր. իր. 14. Ոսկ. գաղ. Սեբեր. (իսկ ծիր «ցրուած, սփռուած» Վեցօր. պէտք է ուղղել ցիր)։ Այս արմատից են ծիր կաքին «յարդգող» Շիր. Փիլ. (նաև ծիրածաճ Ջրբ. կաթ. տե՛ս Հին հաւ. էջ 114). ծրագիր Ագաթ. Ոսկ. հռ. ծրագրել Փարպ. Կղնկտ. ափնածիր Ագաթ. լայնածիր Օրբել. բոլորածիր Փիլ. Շիր. բոլորակածիր Փիլ. Երզն. մաթ. ծրարոլոր Վրդն. պտմ. լիածիր ԱՓ. ծրանալ «չորս կողմը ծիր քաշել» Եզն. ծռափակել Փարպ. ծռվածիր Փարպ. ծրագրային, ծրագրական (նոր բառեր)։

=Նոյն են վրաց. წრე ծրե «շրջանակ, շրջագիծ», დაწერა դածերա «գրել, նկարել», წერა ծերա «գրել», ხაწერელი սածերելի «թանաքաման», թուշ. წერიღა ծերիլա «գիր, գրութիւն», წერაქდაბ ծերադար «գրել», լազ. jar «գրել», jareri, jarali «գրուած», jara «գիտութիւն», jaru «նամակ, գիր, գիտութիւն, ուսում», jaroni «գիտուն» (իմ՝ čar, čaru, čara են)։ Վերջիններիի նշանակութեան համար համմտ. հյ. ծրել «գծել, գրել» Յիշատ։ Կովկասեաններըը պարունակելով աւելի ընդհանուր և բազմազան իմաստներ, չենք կարող դնել հայերէնից փոխառեալ. այլ բոլորը միասին կուլտուրական խալդիներից։—Աճ.

ՆՀՔ լծ. յն. γῦρος, լտ. gyrus, թրք. çevre, արաբ. دور davr «շրջան»։ Պատկ. և Müller, Armen. VI յն. γῦρός, լատ. gyrys «ծիր, շրջան»։ Հիւբշ. 457 մերժում է այս համեմատութիւնը, որովհետև γῦρός համապատասխանում է մեր ծուռ բառին։ Հինք. ծրար բառից։—Scheftelowitz BB 28, 296 հբգ. kēran, մբգ. keren «դառնալ»։ Karst, Յուշարձան 404 սումեր. gir «երկնակամար», 414 մանդոլ. togorin «շուրջը», togori «դառնալ», թունգուզ-մանչ. toxoro «անիւ, շրջանակ», 420 ալթայ. kur «գօտի», 425 ույգուր. teker, tekir «բոլորակ», tekri «շուրջը», օսման. çevre «բոլորակ», çevir-mek «դարձնել», 426 թթր. sir, sür «գիծ»։ Մատ Яф. сборн. 2, 144 հայ. ծիր և վրաց. ծրե դնում է յաբեթական kam «երկինք» արմատից, որից նաև սվան. ճեր «առաստաղ»։

ԳԻՒՒ.—Այս արմատից են ծիր Գնձ. Ղրբ. «ակօս», ծիրը բերել Ղզ. «կարգի բերել», ծրէն դուրս Տփ. «չափից դուրս», ծիրումը մնալ Ղզ. «իր ասպիճանի մէջ մնալ», ծիր անել Շշ. կամ ծիր տալ Գնձ. «ակօսներ բացել», ծիրակ Շլ. «գութանի մեծ անիւը», ծրակոտոր անել Ղրբ. «արտը թէ՛ լայնքին և թէ երկայնքին վարել», ծրել Ղրբ. «երկու արտի իրր սահման մի ակօս քաշել», ծրծրտռել Ղրբ. «ծուռ ու մուռ վարել արտը»։

ՄԻՐԱՄՄՂՕՐ տե՛ս Մինամծղոր։

*ՄԻՐԱՆ (ըստ ՆՀՔ ո, ի–ա հլ. բայց առանց վկայութեան) «ծիրան պտուղը, միշմիշ, պարկուկ» Մ. առակ. Վստկ. Բժշ. (ուրիշ լեզուներով կոչում է «հայկական սալոր կամ խնձոր». այսպէս լտ. armeniacum, իտալ. armellino, արաբ. الارمنى تفّاح tuffāh-al-armanī «հայկական խնձոր». գիտական բուսաբանական անունն է prunus armeniaca «հայկական սալոր»)։ Թէև ծիրան բառի գործածութիւնը շատ նոր է, բայց անշուշտ ամենահին ժամանակն էլ կար. որովհետև ունինք նրանից ծիրանի «ծիրանեդոյն կարմիր. 2. ծիրանի ներկ տուող մի խեցեմորթ. 3. ծիրանեգոյն ընտիր զգեստ» ՍԳր. Վեցօր. Կոչ. ծիրանակիր Մծբ. ծիրանածին Ագաթ. ծիրանաներկ Ես. պտմ. ծիրանավաճառ Գծ. ժզ. 4. Ոսկ. մ. բ. 18. ծիրանացուցեալ Ոսկ. մաթ. ծիրանաւոր Ոսկ. մ. բ. 22. ծիրանաւոյտ Ագաթ. Կորիւն. ծիրանեզարդ Եւագր. ծիրանեկիր Կոչ. բոլորածիրան Պտմ. աղէքս. եզրածիրանի Ես. գ. 22. միջնածիրանի Ես. գ. 22. զուգածիրանի Նար. խշ. շուրջծիրանացեալ Բրս. Հց. և այլն։

=Եթէ այս պտուղը Հայաստանի բնիկ

արտադրութիւնն է, ուրեմն բառը փոխառեալ պէտք է լինի խալդերէնից։ Սրանից են նաև վրաց. ჭერაձი ճերամի, թուշ. ჭერაშ ճերամ, ափխազ. աճարամ «ծիրան», որոնց նախաձայնին համաձայն են գալիս մեր արդի գաւառականներից Ալշ. Մշ. ճիրան ձևը։ —Աճ.

ՆՀԲ (ծիրանի բառի տակ) լծ. թրք. զէր, զէրտալի և սարը (իմա՛ պրս. zar «ոսկի», zard-alu «ծիրան» և թրք. sarə «դեղին»)։ Müller SWAW 88 (1877), էջ 14=Armen. VI սանս. hiranya և զնդ. zaranya «ոսկի» բառի հետ։ Canini, Et. étym. 182 սանս. harina «դեղին»։ Հիւնք. ծիրան հանում է պրս. زرد zard «դեղին» բառից, իսկ ծիրանի՝ Ծուր «Տիւրոս» քաղաքի անունից։ Մառ ИАН 1915, 779 վրաց. ծիբելի և սվան. ծրճի, ծրաճի «կարմիր» բառերին ցեղակից է դնում։ Պատահական նմանութիւն ունին սանս. hiraṇa «ոսկի, դեղնագոյն», մինջ. čirf և նագդ. čirái «ծիրան» (JAs. 1916, 251), մոնգոլ. ձերէն, կիրգիզ. جيران jiran «շէկ»։

ԳԻՒՒ.—Ախց. երև. կր. Մկ. Մրղ. Ջղ. Սլմ. վն. Տփ. ծիրան, Գոր. ձէ՛րան, Ղրբ. ծրէ՛րան, Ոզմ. ձէ՛րան, Ագլ. ծմ՛րիւն, Ալշ. Մշ. ճիրան.—Ասլ. Ննխ. և Պլ. պահած են միայն ծիրանի-գօտի «ծիածան» բարդի մէջ։—Նոր բառեր են ծիրանաչիր, ծիրանեփայտ, ծիրանկտալ, ծիրանճաստուկ, ծիրանխաշիկ, ծիրանսալոր, ճիրընց «ծիրանի այգի» (վերջինս ըստ Rivola)։

ՓՈԽ.—Արաբ. տառադարձութեամբ ثيران Ṯīrān «ծիրան» իբր Հայաստանի պտուղ յիշում է Իբն Ֆակիհ արաբ աշխարհագիրը՝ իր كتاب البلدان Kitāb-al-buldān (Գիրք քաղաքաց) աշխատութեան մէջ, էջ ٢٩٨ (ըստ Թոփչեան, Mitteil. des Seminars f. orient. spr. Berlin 1904, էջ 149). —Նոր փոխառութիւն է վրաց. ჭიჭანი ծիրանի «քաղցրակորիզ ծիրան». (Ջուբինով[2] 1705 հայերէնից փոխառութիւն է համարում նաև վրաց. ჭერაձი ճերամի «ծիրան», բայց այս մասին տե՛ս վերը).—մտել է Ս. Գրքի բրդ. թարգմանութեան մէջ՝ ծիրանի ձևով. Ու ժը Թիւատիր պաժէրէ ծիրանի ֆոթոզ (Ծիրանավաճառ ի Թիւատիր քաղաքէ). Դծ. ժզ. 14։

ԾԻՐՏ (ի հլ. ըստ ՋՔ, բայց առանց վկայութեան) «Թռչունի կամ ճանճի աղբ» Մագ. Վստկ. 68. Տաթև. ձմ. ժե. որից ծրտել «աղբել (Թռչունի)» Տոր. բ. 18. Թղթ. բար. Փիլ. Մխ. առակ. (մեղուի) Վստկ. «ձկների ձու ածելը» Վեցօր. 142. գրուած է յետնաբար ծիռտ Առաք. պտմ. 233։

Müller, Kuhns u. Schleich. Btrg. 5, 383 կցում է դիրտ «մրուր» բառին, ընդունելով ծ և դ ձայնների լծորդութիւնը։ Հիւնք. բրծել բայից։ Justi, Dict. Kurde էջ 128 քրդ. čirt և վրկան. čärt ձիւերի հետ։ Karst, Յուշարձ. 425 ՔՔր. ter, tir, չուվաշ. tiris, օսմ. teres «անմաքուր»։ Պատահակա՞ն են արդեօք կովկասեան լեզուներից անդի, կարատա tcerti «ցեխ», ակուշա և խիրկ. čärt «ցեխ» բառերը։

ԳԻՒՒ.—Ախց. Կր. Տփ. ծիրտ, Ասլ. Խրբ. Պլ. Սեբ. Տիգ. ձիրդ, Ոզմ. ձէ՛րտ, Ղրբ. ծրէ՛րտ, Ագլ. Գոր. Երև. Մկ. ձէռտ, Ալշ. Մշ. ձեռդ, Ջղ. Սլմ. վն. ձեռտ, Մրղ. Շմ. ծրտռտ (այս վերջիններին համաձայն է գալիս Առաք. պտմ. ծիռտ ձևը). Հճ. Հմշ. ձիյդ, Զթ. ձայդ, ձր՝դ.—բայական ձևով ունինք՝ Ախց. Կր. ծռտել, Ղրբ. ծռտել, Ագլ. ծռտիլ, Տփ. ծռտիլ, Ասլ. ձռդէ՛լ, Պլ. ձռդէլ, ցռդէլ, Հմշ. ձրյդռւշ։ Նոր բառեր են ծռտռտ, ծռտռտել, ծռտաճամ, ծռտաճամիլ, ծռտաճռտ, ծրտռտռտած, ռռտռտոիկ։

ՓՈԽ.—Քրդ. چرت čirt «Թռչունի ծիրտ», چريك čirtik «հիւանդ աչքերից վազած թացութիւն. ճիպո». (այս իմաստն ունի նաև խրբ. ծիրտ)։

ԾԻՒ «կտոր, պատառ (մանաւանդ շորի»). արմատ առանձին անգործածական, գտնւում է միայն արդի բարբառների մէջ (տե՛ս տակը դուռ). որից ծուէն «շորի պատռած կտոր» Դ. Բագ. բ. 12։ Նար. «փայտից կըտրած կտոր» Մագ. Թղ. 219. ծիրանածուէն «ծիրանիից շինուած շոր» Նար։

Հիմնք. ծիւ *հանում է* ծուէն *բառից, իսկ* ծուէն՝ *նոպան-ից։*

Գիմ.—Արմատական ծիւ *ձևն ունին Խրբ. «կտոր» (օր. մսի ծիւ), ծիւ ծիւ Ղրբ. «պատառ պատառ», ծիւ ծիւ անել Ղրբ. «պատառոտել», ծիւ ծուար Առն. «կանանց՝ անտուկների մէջ պահած շորեղէններն ու զարդերը», ծիւ ծիւ Երև. «պատառ պատառ» (Ամատ. Հայոց բառ ու բան, 308). —Նոր բառեր են ծուիկ ծուիկ Երև. Լ. Պլ. Վն. Տփ. «բզիկ բզիկ», ծուատել Երև. Նբ. «կտրտել, բզկտել», ծուանգ ծուանգ? Ղրբ. «պատառ պատառ եղած, բզկտուած», ծվռտել Ալշ. ծվռթել Վն. ծվծվատել Ղրբ. «բզկտել»։*

**Ծիի «աթար, թրիք վառելու ցան». մէկ անգամ ունի Եղիշ. Բ. էջ 40 (տպ. Վենետ. 1893, էջ 95). «Ծիւք և քակորք ի կրակ մի՛ եկեսցեն կամ մի՛ այրեսցին»։—Այս բառը գիտէ նաև Բառ. երեմ. էջ 150 և մեկնում է ծիւ «ցան» (որ է աթար)։—Եղիշէի ուրիշ ձեռագիրներն գրում են ծիւղ «խռիւ», որից իմացւում է որ ծիւ «աթար» շատ անսովոր բառ էր։*

=Վրաց. ჭივა ծիվա «չորացրած թրիք՝ վառելու համար, աթար» (Ջուբինով[2] 1679)։

ՆՀԲ, ՋԲ և ԱԲ մեկնում են «ծիրա կամ քուրջի կտոր» (վերջին իմաստով նախորդի հետ նոյն են բմբռնում)։ Վրաց. բառի հետ ուղիղ համեմատեց նախ Մառ. Крит. и мелкія ст. *(1903), էջ 27։ Նոյնը անկախաբար նաև Հս. բայց ի նկատի ունենալով հայերէն բառի շատ անսովոր լինելը, դրել եմ փոխառնել վրացերէնից։ Մառ նոյնին է կցում նաև ասոր.* ṣāā *«կեղտոտ, անմաքուր»,* ṣāṯā *«կեղտ, աղբ»,* ṣāvūṯā *«անմաքրութիւն» են։ Եթէ այս բառերը իրօք կապ ունին, հայն ու վրացին պէտք է դնել փոխառեալ ասորերէնից։*

**Ծիիր «մարմինը հալիլ, մաշիլ». արմատ առանձին անգործածական. որից ծիւրել «անձը մաշեցնել» Վեցօր. ծիւրիլ «հիւծուիլ» Բ. Թագ. ժգ. 4. Վեցօր. 85. ծիւրեալ Երեմ. ժգ. 3. Ոսկ. Հս. ծիւրեցուցանել Վեցօր. ծիւրական Երեմ. ժդ. 15. Եւս. քր. ծիւրութիւն Ոսկ. մ. ա. 4. ծիւրախտ «հիւծախտ» (նոր բառ).—Բառ. երեմ. էջ 318 և ՀՀԲ ունին նաև* ցիւրանալ *«հիւծիլ, հիւանդանալ» ձևը։*

=Նոյն է թւում վրաց. წვრილი ծվրիլի, წვლილი ծվլիլի *«մանր, բարակ, քիչ, անդայտ, նօսր»,* წვრილება ծվրիլեբա *«մանրել, կոտորել»,* გაწვრილება գածվրիլեբա *«փշրել, մանրել, բարակացնել»,* გამჟვრალი գամ-ձվրալի *«ճմլած, տրորած» բառերի հետ։ (Հայերէն միաժամանակ ասում ենք ծիւրախտ և բարակցաւ, ծիւրիլ և բարակիլ)։ Բայց որովհետև ո՛չ հայերէնը կարող է յառաջանալ յիշեալ վրացական ձևերից և ոչ վրացերէնը հայերէնից, ուստի պէտք է փոխառեալ դնել խալդեան լեզուից։ —Ըստ այսմ վրացերէն բառերի արմատը պիտի լինի* წვრ- ծվր-, *իսկ* -ილი, -իլի, -ալի *մասնիկ են։—Ա.Մ.*

ՆՀԲ լծ. ծորել, սորել, բորել: Canini, Et. étym. *էջ 12 հյ.* ծեր *և չեխ.* zrati *բառերի հետ։ Տէրվ. Նախալ. 78 հայ.* կորնչիլ, կորուստ, ծեր *և սրա ցեղակից ձևերի հետ հնխ.* gar *«ծերանալ» արմատից։* Justi, Dict. Kurde, *էջ 220 մեր բառի հետ է դնում քրդ.* zebirin *«տկարանալ»։ Յակոբեան, Բիւր. 1899, էջ 600 պրս.* zar *«ծեր» բառից։* Petersson, Ar. u. Arm. Stud. *84 հյ.* ծարաւ, *սանս.* jvárati *«ջերմել», պալի* jaro *«ջերմ» են բառերի հետ հնխ.* g'eu-ro- *ձևից, իբրև «այրած, չորացած»։*

Ծլեր *«վաղամեռուկ խոտը» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 1202։*

Ծլիլ *«վախենալ». մէկ անգամ ունի Ոսկ. մ. բ. 8, էջ 511 «Տալ համարձակ պատասխանի և մի՛ ինչ ծլիլ». յն.* καταπλαγῆναι *«սարսափահար լինել, սաստիկ վախենալ»։ Արմատը պիտի լինի ծիլ կամ ծուլ։—Վերջինիս նման է, բայց կապ ունի՞ արդիօք գւռ.* ծուլ լինել, ծուլ ծուլ լինել *Երև. Լ. Ղզ. Շլ. «նստած տեղից վեր վեր ցատկել (ուրախութիւնից)», ծուլ անել Լ. Ղզ. «վեր բարձրանալ (ծուխը)», ծուլի գցել Երև. «մի բան դէպի վերև գցել»։*

Ծլիլ *«կոտրուիլ, ջարդուիլ». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գործածուած եմ գըտ-*

նում Ոսկ. պօղ. Ա. 376 «եթէ յադամանդուէն ինչ յօգնալ իցէ, թեպէտ և բազում անգամ մաշի, չէ հնար թէ ծլիցի երբեք», որից աճնլելի «անխախտելի կամ անխորտակելի». մէկ անգամ ունի Տիմոթ. կուզ. էջ 281 «Առ մեծագոյն մտահաճութիւն հիմնացելոցըն ի վերայ անծլելի վիմին ուղղափառի հաւատոյ և առ պատկառութիւն նախաստացելոց աղանդոցն» (Տե՛ս իմ Հայ. նոր բառեր Տիմոթ. Կուզի մէջ, էջ 80)։

Պատահական նմանութիւն ունի ասոր. səlā կամ ṣəlī «հակուիլ, թեքուիլ, ծռուիլ»։

ՍԼՈՒԿ «ծառա՞յ». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Ուռհ. էջ 427 «Ունելով ընդ իւր մարդս հազար, ընդ ձիաւոր, ընդ ծլուկ, ընդ խարուանգայ, ընդ հետևակ»։

Կայ արաբ. زلوق zuluq «արագընթաց երիվար» (Կամուս. Թրք. Թրգմ. Բ. էջ 921), բայց իմաստով անյարմար է։

ՍՀՈՂՆԻԼ տե՛ս Ծղխնի։

ՍՄԴԵԼ, անյայտ նշանակութեամբ բառ, որ մէկ անգամ ունի Բառ. երեմ. էջ 198 եղեմել բառի բացատրութեան մէջ. այսպէս՝ եղեմել «մտասուզել, ճշտել, ճգնիլ, ծածկիլ, ծծգիլ»։

ՍՄՈՒՄԲ, ո հլ. «քուքուրդ» ՍԳր. ՅՀ. կթ. գրուած է նաև ծծում Մեկն. ղկ. Իրեն. ցոյցք 33, վրք. և վկ. Ա. 650. Կնիք հաւ. էջ 9, ծրծում Ճառընտ. որից ծծմբաբեր (գրուած ծծմաբեր) Շնորհ. Եղես. ծծմբախառն նշ. եղեկ. (գրուած ծծմախառն Եփր. խոստ. Արծր.), ծծմբածին Յա. որպէ. ծծմբահամ Մխ. երեմ. ծծմբահար Վրդն. ծն. ծծմբեայ Մագ.—Նոր բառեր են ծծմբահոտ, ծծմբաջին, ծծմբափոշի, ծծմբաթթու, ծծմբատ ևն։—Երեք ձևերից հնագոյնը կարծում եմ ծծում, որի վրայ ետոյ աւելացել է բ, ինչպէս բեմբ, պատշգամբ բառերի մէջ։

Տէրվ. Նախալ. 89 սանս. dhu, յն. θύω, սանս. dhūma, լտ. fumus «ծուխ», յն. θύειον «ծծումբ» ձևերի հետ կըցում է հյ. ծուխ և ծծումբ. (վերջինը իբր կրկնուած ծում արմատից՝ բ յաւելուածով). բոլորը միասին հանում է հնխ. dhu «փչել, ծխել» արմատից։ Հիւնք. մեկնում է ծծ-ող և ըմպ-ող։ Երեմեան, Բազմ. 1900, 104 սանս. çulvari, լտ. sulphur «ծծումբ» բառերի հետ?

ՓՈԽ.—Վրաց. წუმწუმა ծումծումա, წუმწუბა ծումծուրա, წუნწუბა ծուռծուրա «ծծումբ. 2. լուցկի»։ (Այս ձևերը յիշում է նախ Brosset, JAs. 1834, էջ 369 ևն)։

ՍՍՏԵԼ. անյայտ նշանակութեամբ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Բառ. երեմ. էջ 247՝ շնկնել բառի բացատրութեան մէջ. այսպէս՝ շնկնել «ծծտել կամ ճնճղերել կամ երևել»։

ՍԿԻԿ, ՍԿՈՑԹ տե՛ս Ճկոյթ։

ՍԿՍԿԱԼ «ձայն հանել կամ խռովել». ունի միայն Բառ. երեմ. էջ 150, որից առնում է ՓԲ «աղաղակել, գոչել» նշանակութեամբ։

[ՍԿՈՒ «անծանօթ մի բոյս. պրռո՞ւ» Գաղիան. ունի միայն ՀԲուս. § 1206, որ սխալած է Գաղիանոսի մի ձեռագրում կարդալով «Դրեմիսին. ծկու» և այս բառով հասկանալով drimys, drymis, drymeia բոյսը։ Նորայր ՀԱ. 1921, էջ 235 ցոյց է տալիս որ Գաղիանոսի ուրիշ լաւագոյն ձեռագրերներ ունին «դրեմիսին, կծու», որ է յն. δριμύς «կծու, թթու, տաքութ»։]

ՍԿՐԱԼ «կերածը վեր տալ, գկռտալ, ձգրտալ». ունին միայն ՋՔ և ԱԲ, առանց վկայութեան։

ՍԿՐԱԻՈՐԻ «Հրատ մոլորակը». ձևով անաւոյգ բառ, որովհետև գրուած է ծկրաւորի, ծկաւորի Ջքր. կթ. Տոմար. ծպաւոր Մեկն. ծն.։

Հներից Մեկն. ծն. գրելով ծպաւոր՝ իմանում է ծոպ բառից. և բան այսմ էլ գրում է. «Ծպաւոր՝ զգեստն ասէ, որ է օձն»։ Բառ. երեմ. էջ 150 ծկաւորի «անուան է աւուր»! Ալիշան, Հին հաւ. էջ 109—110 գրում է. «Պէս պէս գրուած կայ. ինչպէս ծկաւոր, զոր մեր բանասիրաց մէկն՝ «յամառ» թարգմանէ, կամ ծպաւոր՝ զգեստուց փէշը կամ կախ մասն նշանակելով, որ է «ծոպ». սակայն թուի թէ ծկոր ուրիշ յատուկ բան մի նշանակէ։ Մոկաց և Ռշտունեաց մի-

ջոց՝ կարկառ վիճակի մէջ կայ այս անուամբ գիւղ մի. արեւելագէտք Ասորեստանեայց արձանագրութեանց մէջ կարդան ճրկուրաա, բոլորակ և պարուրաձև աշտարակի կամ դիտանոցի նշանակութեամբ»։

ՃՂԻ *(ծղւոյ, ծղեաց), մանուանդ անհգական* ծղիմ *(գրուած նաև* ծղիկ, ծղուկ, ծղիճ, ծղիկմ*) «ամբողջ դաստակը՝ ձեռքը և մատները միասին» Փիլ. Վրդն. ծն. Գնձ. Ոսկիփ. որից* ծղացի *Բրակ. Երզն. և Նչ. քեր.* ծղաճոց *«ֆեւի զարդ» Ա.Բ. սպիտակածղի Նոնն. ոսկեծղի Յայսմ.* ծղոսկր *(նոր գրականի մէջ)։*

ՆՀԲ ծիղ, ճիւղ *բառից։ Հիւնք. հանում է* ծղխնի-*ից։* Bugge KZ 32, 43 ծիղ *բառի հետ։ Պատահական նմանութիւն ունի արաբ.* ذِرَاع ḏirāʿ *«արմուկի ծայրից մինչև միջին մատի ծայրը եղած մասը» (Կամուս, Բրբ. Բրգմ. Բ. 574)։*

ՃՂԽՆԻ *կամ* ՃԽՆԻ *(-նւոյ, -նեաց) «դռան երկաթէ կրունկները» (տճկ. rեզէ) Գ. Քագ. զ. 33. Առակ. իզ. 14. Նորագիւտ Ա. մնաց. իբ. 3. Լմբ. առակ. գրուած է նաև* ծխանի *Լմբ. առակ.* ծխղնի *Տիմոթ. կուզ. էջ 75, ճխանի Նորագիւտ Ա. մնաց. իբ. 3 (մէկ ձեռագրի մէջ միայն),* ծղիճ *Բառ. երեմ. էջ 150. եղան Տաթև. ամ. 389։—Այս բառից պէտք է լինի* ծխողնիլ *«դառնալ», որ մէկ անգամ գործածում է Մագ. դամագտ. Բ (ըստ Նորայր, Բանաս. 1900, էջ 133). Համմ. «որպէս դուրք (որ) շրջին ի ծղխնւոջ, նոյնպէս վատ ի մահիճս իւր». Առակ. իզ. 14 «Ջվատն օրինակէ դրանն, որ միշտ ի շարժ է և ի ծղխնոջն». Լմբ. առակ. այսպէս են հասկանում նաև Հին բռ. և Բառ. երեմ. էջ 150.* ծղխնիլ, ծղխնել *«ետևութանալ կամ շրջապատիլ» (տե՛ս ՆՀԲ* ծղխնի, *որից Մէնեվիշ. Դամագտ. 24)։*

ՆՀԲ ադխ *բառից։ Հիւնք.* ծախ *բառից։*

ԳԻՒՒ.—Բլ. ճխան, *Ալշ. Մկ. Մշ. Սլմ.* ճբխան, *Հին Ջղ.* ճլխան, *Ոգմ.* ջխան.—*վերջիններիս հետ համմ. Նորագիւտ Մնացորդաց* ճխնի *ձևը և Տաթևացւոյն* ճղաճը։

ՓՈԽ.—Ջդիտեմ թէ կապ ունի՞ սրա հետ վրաց. ხაძალճი սաձալճի *«դռան փայտէ նիգ կամ սողնակ». (այս նշանակութեամբ է նաև մեր արդի գաւառականներից խն.* ճբխան.*)—վրացի բառը կարող է կազմուած լինել* սա-ձալճի, *բայց* ძალճი ձալճի *առանձին նշանակում է «ուժ» և ո՛չ «ծխնի կամ սողնակ»։*

ՃՂՆԻ *«ծիծառան նման թռչուն ծովային, ալկիոն,* alcyon*». ունի միայն Նորայր, Բառ. ֆր. էջ 41 ա, իբր մհյ. բառ։*

ՃՂՐԻԻ *կամ* ՃՂՐԻՒ *«աշնանային դիշերախոս ճպուռ» Բժշ. արդի գրականում գործածական է* ծղրիտ *ձևով (արեմ. գրական)։*

=Բուում է թէ բնաձայն բառ է. համմ. գռ. ծղրալ *«ճպուռի, ծղրիդի ձայն հանել»,* ծղրտալ *«ճչալ, բղաւել»,* ծղրտան *«ճչացող, բղաւող»,* ծղրտոց *«գոչիւն, բղաւոց»։ Այսպէս նաև Թրք.* čirγid, čərγət *«ծղրիդ», բուս.* jiliti *«ճնճղուկ, ճնճղուկ», չհչէն.* čiē̈γardig *«ծիծեռնակ», պաղա* čirtele *«ճպուռ»։*

Lag. Arm. Stud. § *1056 յիշում էասոր.* لِرْدٌ lrd *«մարախ, մորեխ»։ Հիւնք. Թրք.* ջիրդիք։ Pictet *բ. տպ. Ա. 666 առնս.* ǰhirī *հոմանիշի հետ, որ դնում է բնաձայն։*

ԳԻՒ.—Զթ. ձր՝յխր՝ր, ձր՝ւխր՝ր, *խրբ.* ձ՝բռխրդ՝իգ։

ՃՂՈՏ *տե՛ս Ծիլ։*

ՃՄԱԿ, ի–ա *հլ. «արև չտեսած՝ շուք տեղ ձորի մէջ» Եղն. Մամիկ. Վառք. 48. որից* ճմակային *«ձորային անարև տեղ» Շառրնտ. «հիւսիսային (կողմը)» Պտմ. վր.* ճմականիստ *Պիտ.* ճմակացեալ *Փիլ. Բհնիկ. Մագ. Թզ. 22.* ճմակին *«արեւելեան քամին փչած տեղը» Ա. մակ. ժբ. 37.* ճմակեցուցանել *«մթագնել» Փիլ. ժ. բան. 221 և լին. 125.* ճմակեցուցիչ *Լմբ. մատ. 187.* անճմակ *Փիլ. լին. և ժ. բան։*

Տէրվ. Altarm. *102 կցում է* ձմեռն *բառին.* ճմակ *բառի հետ ձայնապէս նման է դնում զնգ.* zəmaka *«ինչ որ ձմեռնային ոգու անուն»։ (Սրանից պէտք է լինի Ալիշան, Հին հաւ. 137)։ Հիւնք.* ցամաք *բառից։ Պատահական նմանութիւն ունի պրս.* چام čām *«ձո-*

բական տեղիք՝ որք լինին ի մերձակայ տեղիս գեղջ»։

Գիւր.—երև. Տփ. ծմակ, Մշ. ծմագ, Հմշ. ձմագ, Զթ. ձօմօգ, ձօմոգ, Ախց. կր. Մկ. ծմա, Սլմ. Վն. ծմm, Խրբ. ձմա. այս բոլորը նշանակում են «հիւսիսահայեաց անարև՝ ստուերոտ տեղ, յատկապէս անտառի մէջ». վերջին առումից ձեացել է Գոր. Ղրբ. ծմակ «անտառ»։ Նոր բառեր են ծմակբափաճ, ծրմակկող, ծմատեղ, ծմակամոշ։

*ՅՄՆԻ կամ ՅԻՄՒԼ «սպանախ կամ շոմին. 2. վայրի փրփրեմ» Բժշ. Մխ. բժշ. կայ նաև զիմել ձևը՝ ըստ ՀԲուս. էջ 170.— Seidel, հրոր. Մխ. հեր. § 41 այս բոյսը համարում է «amaranthus blitum L.» և ո՛չ թէ blitum virgatum L կամ chenopodium capitatum, ինչպէս ունին ՀԲուս. և Տիրացուեան, Contributo § 104.—այս բոյսերը ուրիշ լեզուների մէջ էլ խառնուած են իրար հետ. համմտ. ֆր. blette, épinard-fraise, գերմ. Erdbeerspinat:

=Փոխառեալ է կովկասեան լեզուներից. համմտ. վրաց. ժუმელა ձումելա «амарантъ, петушій гребень բոյսը». թևրևս նաև վրաց. წამალი ծամալի «դեղ, թոյն, դարման, նեղկ, թունաւոր խոտ» և թուշ. წამალ ծոմալ «բժշկութիւն, դեղ, փոշի» (նախապէս «խոտ»)։ Փոխառութեան ապացոյց է այն՝ որ բառը մեր մէջ միայն շատ ուշ է գործածուած և այժմ էլ գտնւում է միայն կովկասեան շրջաններում։—Աճ.

ՀԲուս. § 1195 դնում է վրաց. ցիմիլ, որ չգիտէ Զուբինովի բառարանը։

Գիւր.—Խաչ. ձ'իմէլ «մի տեսակ բոյս՝ որ խաշելով ուտում են», Հմշ. ձմէլ (?) «կանեփի արտերի մէջ բանող՝ մութ-կարմրադոյն մի բոյս է», երև. զի՛մէլ «անուտելի մի բանջար է», Ղզ. զի՛մբէլ «մոլոշի նման մի աղցան է»։—Հայբուսակ յիշում է գուռ. ծիմիլ ձևը, որ ըստ Տիրացուեան, Contributo § 337 նշանակում է «mercurialis annua L բոյսը»=կմշտրուկ, օղուլ օթը, եապան ֆէսլիյէնի։

ՅՄԻՆ «փոքրիկ շնչահան, տճկ. նէֆէսլիք». նորագիւտ բառ, որ մէկ անգամ ունի Վասակ. էջ 122 «Ծեփեա՛ գբերանն և փոքր ծմին (այլ ձ. ծակ մի) թող, որ շունչն ելանէ»։

ՅՄՐԻԼ «լքանիլ, վհատիլ, տխրիլ» Ոսկ. փիլիպ. գ. Մանդ. Պետ. Փիլ. իմաստ. 77. Պատմ. աղէքս. 111. որից ծմրաբարձ «ծանրութեան տակ ճղուած, սրունքները թուլացած» Զգօն 341 (գիտէ միայն ԱԲ. ըստ ասորի բնագրի «բարձող զլուած» ՀԱ 1914, էջ 322). ծմրդեալ «շատ թուլացած, ծիւրած» ՅՀ. իմ. պալ։

ՆՀԲ կցում է ճմրիլ, զմբրիլ, բմբրիլ ձևերին։ Պատահական նմանութիւն ունին վրաց. ձմարեբա «թթուեցնել, քացախեցնել», ձմարի «քացախ», ձմրիանի «քացախային», դաձմարեբա «թթուիլ, նեխիլ, ժանգոտիլ», թուշ. ձմար. լազ. jumori, jumari «քացախ»։

ՅՆԴՈՐՄ «խորշ». նորագիւտ բառ, որ ունի միայն Բառ. երեմ. էջ 150։ Բայց այս «խորշ» բառով պէտք է հասկանալ ո՛չ թէ «անկիւն, փոս, ծալք», այլ «արգանդ». համմտ. անդ՝ էջ 145 խառշ «զաւակ կամ խընծոր» (իմա՛ «արգանդ»)։ Ըստ այսմ ծնգործ դառնում է ծին և գործ բառերից բարդութիւն։

+ՅՆՆԲԵԿ (ըստ ՆՀԲ ի–ա հլ. բայց առանց վկայութեան) «ուտելի մի բոյս. asparagus» Խոր. աշխ. Վասակ. Բժշ. գրուած է նաև ծնէբեկ, ձնեվուկ (ՀԲուս. § 3353), ծնեվուկ (ՀԲուս. § 1210 յաւել.), ծնելբեկ Մխ. բժշ. 89։

=կազմուած է ծին +՝ բեկ արմատներից. այսպէս է կոչուած բոյսը այն պատճառով՝ որ ծիլը շատ մատղաշ ժամանակ են ուտում. «ընդ ծնանելն և բեկանի» (ըստ բացատրութեան ՆՀԲ-ի). համմտ. նաև յն. ἀσπάραγος «ծնեբեկ», որի բուն նշանակութիւնն է «մատղաշ, նորածին ծիլ, tige naissante» (Boisacq 891):

Ուղիղ մեկնեց նախ Գէորգ Դպիր (Բառգիրք երեմ. յաւել. 548) «զի դեռաբոյս ի ծնէ որ բեկանի»։ Նրանից յետոյ են ՀՀԲ և ՆՀԲ։ Թերևս այսպէս էր ստուգաբանում նաև Մխ. Հերացին, որ տալիս է մեզ ծնելբեկ գրութիւնը։

Գիմ.—*Ալշ.* ծնէբ՛եգ, *Ղրբ. Տփ.* ծնէփակ, *Ջղ.* ծնեփէկ, *Շմ.* ծնբփոգ՛, *Հին Ջղ.* ծնէ՛-փուկ, *Ղգ.* ծնի՛փակ, *Բլ.* ծինեփիկ, *Մշ.* ծի-նէպիկ. *վերջին երկուսը նշանակում են նաև «ծայրը եփելով ամրացրած ձու» (կոուակա-նի տալու համար), որ իրապէս *ծայր-եփիկ ձևից է և յետոյ շփոթուած է ծնեբեկ բառի հետ։*

Փոխ.—*Վրաց.* წინაბეგა ծինաբեգա «*սպի-տակ ծնեբեկ*, белая спаржа»։

ՄՆՄԱԼ «*ճննճներել կամ երևիլ*». *ունի մի-այն Բառ. երեմ. էջ 150։*

ՄՆՄԱՏ «*չալթուկ, դեռ կճեպից չհանուած բրինձ*». *նորագիւտ բառ, որ մէկ անգամ գոր-ծածել է Կիր. էջ 219 «Պահանջէին 100 լիտր ցորեան, 50 լիտր գինի, 2 լիտր բրինձ և ծնծաղ, 3 տոպրակ, 2 չուան»։*

Ալիշան, Հրտր. Կիր. (անդ) կարծում է «հասկախառն կամ յարդախառն գա-րի կամ ընդեղէն» (թերևս կապելով ծանծ «կալի մնացորդ» բառի հետ)։ Ա-ճառ. Հայ. նոր բառեր հին մատ. Ա. էջ 77 մեկնում է վերի ձևով՝ բրինձ բառի յարադրութեան պատճառով։

*ՄՆՄՂԱՅ, ի հլ. «*երաժշտական մի գործիք է. պիլ*» *ՍԳր. Նար. խչ. գրուած է* ձնդղայ *Անկ. գիրք նոր կտ. 291, 301.* ցնդղայ *Վեց-ցօր. 66.* ձնդղայ *Վրդ. առ 198.* ծեծեղայ *Բառ. երեմ. էջ 149. կայ և* ծիծեղայ *ձևը՝ ըստ ՓԲ. միջին հայերէնում ունինք* ծնդղեակ *Թլկր. 27։—Քննասէր, Միսեական բառարան, Օրաց. ազգ. հիւանդ. 1906, էջ 150 իրարից տարբեր է դնում ծրն-ծրղայ «տափակ երաժշտական գործիքը» և ծնդղակ «կիսագունդ զանգակաձև գործիք մը՝ որ պղնձէ թաթով մը բաղխելով՝ դուր-սէն՝ ձայները ճշտելու և կանոնաւորելու հա-մար կգործածեն»։—Ծնդղայ «եղանակի ա-նուն» Մանրուս. (Ամատ. 315)։*

=Ասոր. ṣeṣṣəlā, ṣiṣṣəlā *«ծնծղայ», որի միւս սեմական ձևերն են՝ եբր.* ṣelṣəlīm, *արամ.* ṣalṣəlā, *եթովպ.* ṣanāṣəl, ṣanaṣəlat *«ծնծղայ». բոլորի արմատն է եբր.* ṣll, *արաբ.* ṣall, *ասոր.* ṣal *«հնչել»,—Հիւրշ. 306։*

Նախ Schröder, Thesaur. *45 դրաւ եբր. ձևից։ Նոյնը յիշում է նաև ՆՀԲ։—* Lag. Arm. Stud. § 1059 *ասորականից։ Հիմնք. ցնցել բայից։*

Գիմ.—Ննխ. Ռ. ձնդղա, *Ջղ.* ձ՛նդրղա, *Մշ.* ձ՛նդղա, ձ՛նդղիգ, *Ալշ.* ցրնդղա, *Խրբ.* ցրնդր-ղա, ցրնդղախ, *Երև. Սլմ.* ծնդղակ, *Ախց.* ցրն-ծրղնէր *(միայն յոգնակի ձևով), Հճ.* ծրնդր-ղագ, *Մկ. Վն.* ցրնդղակ, *Սեբ.* ցրնդղախ, *Զթ.* ծինդղոմ՛, *Սչ.* ցնդղա.—*Անդորայի Թրքախօս հայերը ունին սնչակ ձևը (Բիւր. 1898, 865, որ տպագրական սխալ է երևում և պէտք է ուղղել* սնզակ, *որ է* ցնդղակ)։

Փոխ.—Վրաց. წინწილი ծինծիլի *կամ* წინწილა ծինծիլա *«ծնծղայ»,* მეწინწილ մեծինծիլե *«ծնծղահար»։*

ՄՆՄՂԱՐ «*մի տեսակ բոյս, գետնի աստղ, լատ.* asperula odorata» *Բժշ. ունի միայն ՀԲուս. § 1212։*

ՄՆՄՈՅ, ՄՆՄՈՑ *տե՛ս Ծանծ։*

ՄՆԿԱՍՏԻՐ «*պարկեշտ, ընտաննեսէր*». *մէկ անգամ ունի Գ. մակ. դ. 6 «Ամրածածուկ քօղաձիգ ծնկասէր հարսունք վարսս մեր-կացեալ»։*

ՀՀԲ հանում է ձնգիլ «*նեղուիլ, ծիւ-րիլ*» *բայից։ ՆՀԲ մեկնում է «որ սիրէ առանին նստել ի ծունկս»։ Հաւանա-կան է Հիւնքեարպէյէնտեանի մեկնու-թիւնը, որ կարծում է թէ յուն. φιλόγο-νος «*ծնեալասէր, երեխասէր, իր զա-ւակներին սիրող*» *բառից է թարգմա-նուած, շփոթելով γόνος «ծնունդ» բա-ռը* γόνυ «*ծունկ*» *բառի հետ։*

ՄՆԿԻԼ *կամ* ՄՆԴԻԼ. «*ծիւրիլ, մաշիլ, տա-ռապիլ*» *Վեցօր. 85. եզն. Ոսկ. մաթ. եփես. և ես. 205. որից* ձնկոտ «*թոյլ, ծոյլ*» *կանոն.* ձնկացեալ «*թուլացած*» *Ոսկ. ես.* ձնգռտիլ «*անդամները քաշուիլ, կարկամիլ*» *Ոսկ. կող. 574 (չունի ՆՀԲ). գրուած է նաև* ձնգիլ *Ոսկ. մ. ա. էջ 213։*

ՆՀԲ և Հիւնք. հանում են ծունկ բա-ռից. «լինել որպէս ծունկ կթուցեալ»։

ՄՆՔԵԼ «*դրոշմել կամ հաստատել*». *ունի*

միայն Բառ. երեմ. էջ 150 (եթէ չէ շփոթուած կնճել բառի հետ)։

+ՄՆՕՏ, ի *հլ. «կզակի ամբողջ ոսկորը» ՍԳր. Նւս. պտմ. նմանութեամբ նաև «մի բանի եղերքը. 2. եղերքի վրայ զարդեր» ՍԳր. (գրուած է ծնոտ՝ կրկնագիր Ագաթ. Յուշարձան, էջ 107բ). որից* ծնօտաբակ առնել *«ծնօտը պատռել» Զքր. կաթ. երկայնածնօտ «ծնօտը երկար» Ոսկ. կողոս. ևն։*

=*Բնիկ հայ բառ՝ հնխ. g'en- ձևից. հայերէնը ծագում է հնագոյն *ծին-աւտ ձևից, ինչպէս ծոտ ծագում է *ծիղ-աւտ ձևից։ Ցիզակիցներից ունինք յն. γένυς «ծնօտ», γένειον «կզակ», γενείας «մխրատք», γναθμός, γνάθος «ծնօտ, այտ, բերան», մակնդ. χάναδοι «երկու ծնօտները», լատ. gena «այտ», գոթ. kinnus «ծնօտ, այտ», հբգ. kinni, անգսք. cin, դերմ. Kinn, անգլ. chin, հհիւս. kinn «այտ», հիռլ. giun, gin «բերան», կիմր. gen «ծնօտ, այտ». genau «բերան», լիթ. žándas «ծնօտ», լեթթ. zuôds «կզակ», փռիւգ. ἀζήν, հյգ. ἀζένα «մխրուք» (ա մասնիկով), սնս. ჰნუ hánu- «ծնօտ», զնգ. ჯანუ ჯ-zanu «ծնօտ» (տե՛ս* Bartholomae 1689), *պրս.* زنخ zanax *«կզակ», աֆղան. zana, zanax, բելուճ. zanuk, zanīk «կզակ»* (Walde 337, Boisacq 144, Horn § 669, Trautmann 365, Kluge 255, Pokorny 1, 587, Ernout-Meillet 397): *Հիւբշ. 456։*

Նախ ՆՀԲ լծ. սանս. ganda, *յն.* γνάθος, *լտ.* gena: Windisch. *13 լտ.* gena, *յն.* γένυς: Böttich. ZDMG 1850, 356 *սանս.* hanu: *նոյն*, Arica 70, 145, Lag. Urgesch. 681, Müller SWAW 42, 254, *պատկ. են վերիններից պէս։ Հիւնք.* ծոտ *բառից։ Գազանճեան, Տարեց. Պապիկեան 1905, 126 լծ. թրք.* չենէ *«ծնօտ»։*

*ՄՈՓՈՐ, ո *հլ. (գրուած նաև* ծոբորիճ, ծոբորուճ, ծորբիճ, ծոբրուճ, ծաբրիճ, ծայբրիճ, ծերբոճ, *իսկ Բառ. երեմ. էջ 151 գրում է* ծոճբրոճ, ծոճբրաճ*) «մի տեսակ համեմային բոյս. լտ.* origanum vulgare L *ըստ* Saidel, *Հրտր. Մխ. հեր. § 316,* thymus serpyllum L *ըստ Տիրացուեան,* Contributo 419, satureja hortensis L § 421, satureja laxiflora K § 422, zizyphora clinopodioides M. B. § 426» *Վանակ. հց. Բրս. մրկ. 363. Վրդն. եւ. Վստկ. 173. Գաղիան. Բժշ.— կայ նաև սաղիր ձևը՝ Վստկ։*

=*Ասոր.* ܨܥܬܪ *ṣāʕrā, արաբ.* صعتر *ṣa'thar,* سعتر *sa'tar, որից է նաև հինդ. sáthra, sátar, լատ.* satureja. *բոլորն էլ նոյն նշանակութեամբ։ Վերջին ժամանակի փոխառութիւն է սաղիր, որ գալիս է ուղղակի արաբերէնից։—Հիւբշ. 306։*

Առաջին անգամ Lag. Urgesch. *847 կցեց արաբ. ձևին, որին յետոյ աւելացրեց* Prov. *26, 8 նաև ասոր. ձևը։ Նշանակութեան ճշտման համար տե՛ս Արթինեան, Տունկերը Ա 60 և Ամէնուն Տարեցոյցը, 1914, էջ 162։*

ԳԻՒ.—Ախց. ծէրօճ, *վն.* ծէրէճ, *Ալշ. Մշ.* ծիտրեճ, *Նախ.* ցէրոիճ, *Պլ.* ձաբրիճ, ջաբրիճ, *Ռ.* զաբրիճ, *Համշ.* ձէբրիճ, *Ասլ.* ձայիրիճ, ձաբիյիճ, *Պրտ.* զաճրիճ, *Ղզ.* ծրբէօ՛rmճ, *Գնձ.* ծրբի՛ւռաճ, *Ագլ.* ծճբա՛ռաճ, *Ղրբ.* ծճբէօ՛rmճ, *Ջղ.* ծաճբոռաճ, իծաճբոռաճ, *Ակն.* ձայճիճ, *Խրբ.* զոբիռէճ, *Տիգ. (նոր փոխառութ. արաբերէնից)* զա՛բար։ *Նոր բառեր են ծաբրիճաւել, ծէրճոց «ծաբրին շատ բուսած տեղ»* (Rivola)։

ՓՈԽ.—Թրք. زاتر zatir *(տե՛ս* Gustav Meyer, Türkische Studien SWAW 128, 1893) *և գուռ. թրք.* zatrin *հայերէնից են նախաձայն z-ի պատճառաւ. քրդ.* جاتری jatiri *«գութրակ»* (Justi, Dict. Kurde, *էջ 112). Կուբանի ռուսական բարբառով* цетрин *(որ բուն ռուս. կոչւում է* чебрецъ*)։*

ՄՈՄՈՐԱԿ *«գլխի կամ պարանոցի հետևի կողմը» Ագաթ. Ճառընտ. (Ագաթ. այլ ձեւ.* ծոծրակ, ծործորակ*). արդի գրականում ընդունուած է միայն* ծոծրակ *ձևը։*

ՆՀԲ մեկնում է «որպէս ծորակ՝ *երակ և անցք ուղղոյ կամ ծծոյ ընդ անբակն և իբրու* ծործոր *կամ* ծորամէջ*»։ Պատահական նմանութիւն ունին ասոր.* ܨܘܪܐ *ṣaurā, եբր.* צואר *ṣavvār «վիզ»։*

Գիհ.—Երև. ծօրծօրակ *(Ամատ. Հայոց բառ ու բան, էջ 317ա), Ախց. Կր.* ծօրծակ, *Ակն. Խրբ. Սեբ.* ձօրձագ, *Զթ.* ձիձիյօգ, ձիձիրոգ, *Հճ.* ձիրօգ, *Համշ.* ձօճձրագ *(ունիմ նաև Համշ.* ձօձր *ձևը. բայց աղբիւրը մոռացել եմ նշանակել)։*

ՇՈՄ *(յետնաբար n հլ. հմմտ. Կանոն. էջ 86 ծոմօցն) «օրական մէկ անգամ միայն ուտելով պահք» Ա. մակ. գ. 47. Մծբ. Եփր. Համար. որից* ծոմել *«ծոմ պահել» Եփր. դտ. 347. Թագ. 439. որ և* ծոմանալ *Զքր. կթ. Տօնակ. Ոսկիփ.* ծոմական *Յհ. իմ. առ.* ծոմապահ *Մծբ.* ծոմապահութիւն *Շնորհ. Թղթ.* ծոմաջան *Մանդ. Եփր. Սիւն. Գնձ.* ծոմացուցանել *Կանոն. Տօնակ։—Առհասարակ Ս. Գրքի մէջ թարգմանուած է պահ և միայն մէկ անգամ գործածուած է ծոմ ձևը։*

=*Ասոր.* ܨܘܡ ṣōm, ܨܰܘܡܳܐ ṣaumā *կամ* ṣomā, *Եբր.* צוֹם ṣōm, *արամ.* ṣōm, *արաբ.* صوم ṣaum *կամ* صيام ṣiyām, *եթովպ.* ጾመ ṣōma, *և. ասոր.* somä, *որոնք բոլոր նշանակում են «ծոմ»։—Հիւրշ. 306։*

Ամէնից առաջ Schröder, Thesaur. 45 *դրաւ Եբրայեցերէնից փոխառեալ։ Նշխ Եբր.* ձօմ, *ասոր.* սաւմ *և արաբ.* սէվմ *ձևերի հետ։ Եբր. ձևից են դնում նաև* Peterm. 23, 38, Lag. Prov. 26, 8, Müller SWAW 41, 12 *(կասկածով) և Հիւնք։*

Գիհ.—Ալշ. Մշ. վն. ծում, *Կր.* ծօմ, *Խրբ. Հճ. Պլ. Ր. Սեբ.* ձօմ, *Զթ.* ձօմ, ձում, *Ագլ. Ախց. Գոր. Երև. Ղրբ. Մկ. Մրղ. Շմ. Ոզմ. Ջղ. Սլմ. Տփ.* ծում, *Ննխ. Սչ. Համշ. Տիգ.* ձում, *Ասլ.* ձրմ.*—Անգորայի Բրքախօս Հայերն ունին զօմ ձևով (Բիւր. 1898, 789)։ Նոր բառեր են՝* ծոմբաց, ծոմչէք, ծոմապաս։

Փոխ.—Ուտ. ծում *«ծոմ»։*

ՇՈՅԼ *(յետնաբար ի, ի–ա հլ.) «անաշխատասէր» Սիրաք. ժա. 11. Յայտ. իա. 8. Պիտ. Խոր. որից* ծուլանալ *Ագաթ.* ծուլալ *Եզն. Ոսկ. մթ. և յհ.* ծուլամտութիւն *Մծբ.* ծուլալից *Մծբ.* ծուլաճի *Եւս. պտմ.* ծուլագոյն *Ոսկ. յհ. ա. 24 և Փիլիպ.* ծուլացուցանել *Եզն. Ոսկ. ես.* ծուլացուցիչ *Ոսկ. ես.* ծուլութիւն *Ոսկ. մ. բ. 18։ Գրուած է նաև* ծուղալ *Բուզ. Գ. ի. Պզատ. եւթ.* ծուղութիւն *Յհ. իմ. առ. Մաշտ։*

Պատկ. Изслед. *էջ 14 լծ.* բոյլ։ *Մատ* ЗВО *5, 317* ծաճր *բառից՝* աճ>ո *ձայնափոխութեամբ։ Հիւնք. յն.* ζήλος *«նախանձ» բառից։* Patrubány SA 1, 193 *յն.* ὀκνός *«կլոր աման» բառի հետ, իսկ ՀԱ 1906, 367 յն.* γεύομαι, *լտ.* gustare *«ճաշակել»։ Մ. Ս. Դաւիթեէկ, Յուշարձան 397 հյ. կեղ, կեղեճել, կողոպտել և իռլ.* col *«մեղք, յանցանք», գալլ.* cwl *«յանցանք» բառերին է կըցում։* Karst, *Յուշարձան 415 մոնգոլ.* sula, *բուրյաթ.* sula, hula, *Թունգուզ.* sul *«թոյլ»։* Petersson, Ar. u. Arm. Stud. *94 լեթթ.* ʃalaka *«անփոյթ երիտասարդ»,* ʃaltens *«ծոյլ, դատարկապորտ», սանս.* ǰālmá- *«անարգ, հասարակ» ևն բառերի հետ հնխ.* g'oljo- *ձևից։ Ղափանցեան, Տեղեկ. ինստ. 2, 89 վրաց.* զարեբա *«ծուլանալ»։*

Գիհ.—Ախց. Երև. Մշ. Տփ. ծուլ, *Սեբ.* ձուլ, *Ագլ.* ծիլ *«ծոյլ».—իսկ Ղրբ.* ծիլ *«տրկար, թոյլ, ոչ-բարկ (գործածւում է օղու և կրակի համար)»։*

ՇՈՆ. *անստոյգ բառ. ունի միայն Հրուս. § 1215, հետևեալ բացատրութեամբ. «բժշկարան մի ստէպ յիշէ զծոն բժշկաց, արաբ. այլ թայն ըլ-հօֆէօմայ կամ թայն-ըլ-հէօֆէմէն. գրուած է ևս* թայ ըլ-հէօֆէմէն. *բայց բոյս թէ այլ ինչ ըլլալն՝ ինձ անծանօթ է»։*

ՇՈՊ, ի *հլ. (յետնաբար նաև ի–ա հլ.) «զգեստի ծայրի վերջաւորները կամ փնջերը» Բուզ. ժե. 38, 39, Օր. եբ. 12. գրուած է նաև* ծուպ *Երզն. մթ.* ծոփ *Ոսկ. ա. տիմ. էջ 68.* ծուփ *Բառ. երեմ. էջ 151. արդի գրականում ընդունուած է միայն* ծուպ *ձևով և նշանակում է «իբր զարդ կախուած թելերի փունջ, տեմ. փիւսկիւլ», որից* ծուպաձև *Ա.Բ.* ծուպաւոր *(նոր բառ),* ծպել *«ժապաւել» (իմա՛ ժապաւէնով կամ ծուպերով զարդարել) Բառ. երեմ. էջ 151։*

Նշխ զուսպ բառից՝ «որ զուսպ պահէ զծագս հանդերձից»։ Հիւնք. ծփալ *բայից։*

Գիհ.—Ագլ. Ղրբ. Գոր. Շմ. ծուպ *«ծոպ»*

(Ղրբ. նշանակում է նաև «գուլպայի ծայրի թելը՝ որ ոտքին են կապում»), խրբ. ձօք *«աղջկանց ծամերը երկար ցոյց տալու համար՝ ծայրից կցած մազի հիւք», Հմշ.* ձուփ *«կանանց մէջքի նախշուն գօտի»։*

ՅՈՎ, ու *հլ. «ծով. 2. ջրի մեծ աւազան. 3. Արեմուտք (Միջերկրական ծովի պատճառաւ՝ որ Պաղեստինի արեմուտքն է գտնուում)» ՍԳր. որից* ծովագոյն *Դան. ժ. 6. Ոսկ. յհ. ա. 11.* ծովալին *Եւս. քր. Ոսկ. մ. բ. 12.* ծովախոր *Ագաթ.* ծովակ *ՍԳր. Եզն. Ոսկ.* ծովակալ *Եւս. քր.* ծովական *Սեբեր. Եզն.* ծովածածուկ *«ծովի տակ ծածկուած (քար)» Ոսկ. ք. տիմ. 264 (չունի ՆՀԲ).* ծովակոմն *ՍԳր.* ծովակուլ *Ոսկ. մ. ա. 20.* ծովացուլ *Եզն.* ծովափնեայ *Ես. ժԲ. 5.* ծովեզր *ՍԳր. Եւս. քր.* ծովեզերեայ *ՍԳր.* ծովընկեցիկ *Սեբեր.* երկծով *Գծ. իէ. 41.* լճածով *Սիր. ծն. էջ 5.* մեծածով *Փիլ։ Նոր բառեր են* ծովածոց, ծովախորշ, ծովաձէն, ծովամայր, ծովանկար, ծովանկարիչ, ծովանկարչութիւն, ծովակալութիւն, ծովասող, ծովախտ, ծովեզրաբնակ, ծովասպատակ, ծովափ, ծովափրփուր, ընդծովեայ *են։*

Klaproth, Asia pol. *էջ 103 և 117 վրաց.* sġwa *«ծով»։ ՆՀԲ վրաց.* զղվա, *հյ.* ժողով *բառերի հետ։* Böttich. ZDMG 1850, 367 *և* Arica *35, 27 փոխադ.* ζευμάν *«աղբիւր», սանս.* yavyā. Müller, Benfeys Orient u.Occ. 2, 580 *վրոհիգևրէն* ζευμάν, *նաև սանս.* ju, *յն.* ζέω *«եփիլ, եռալ»։* A. Fick BYS *7, 377 սրանց հետ նաև զնդ.* jaiwi *«խոր», սանս.* jabh *«բացուիլ, ճեղքուիլ» արմատից։ Հիւրշ.* KZ *23, 23 սանս.* jambha, jambhā *«ծնօտ, երախ», զնդ.* zafan *«բերան», աֆղան.* žāmah *«ծնօտ» են։ Տէրվ. Նախալ. 77 հայ.* ծաւի, ծաւի *բառերի հետ՝ կցում է յն.* ζάφ *«ծով», βάπτω «մխրճիլ», հհիւս.* kaf *«ծով» բառերին, բոլորը միասին հանելով հնխ.* gap *«խորունկ լինել, վիհ բացուիլ» արմատից։* Karolides, Γλ. συγ. *84 կպդվ.* ζ'ουβαΐδι *(կարդա՛ ցուվայդի) «վտակ», լիթ.* szaunús *«ուժգին», յն.* σεύω *«վարել, քշել» են։ Հիւնք.* ժոդով *բառից։* Patrubány SA 1, 4 *վեդ.* jáva *«շտապ, արագութիւն» ձևին է կցում. նշանակութեան տարբերութեան համար յիշում է զնդ.* zrayah, *հպրս.* draya *«ծով» և սանս.* jrayas *«ընթացք, վազք»։ Աոիլ, Բիւր. 1899, էջ 492 յիշում է Լէման բևեռագէտի կարծիքը՝ իբր խալդ.* ձույ *կամ* սույ *բառից. իր կողմից էլ հարց է տալիս թէ անգլ.* sea *«ծով» բառի հետ կապ ունի՞։* Stokes IF *12, 191 կցում է իռլ.* go *«ծով» բառին։* Scheftelowitz BB *29, 15 Տէրվիշեանի նման հիւլ.* kaf *«ծով»,* kvefja *«ծովանալ», յն.* βάπτω *«մխրճել»։ Այս մեկնութիւնը մերժում է* Pedersen KZ 40 (1906) 207 *և ընդունում է* Stokes-*ի մեկնութիւնը։* Patrubány *ՀԱ 1910, 93 հնխ.* ag'e *«ածել» արմատից. համմտ. հիւլ.* go *«ծով»։ Սագրգեան ՀԱ 1909, 336 և* Karst, *Յուշարձան 409 սումեր.* zuab *«ովկիանոս», 420, 426 քՔր.* su, sub, suv *«ջուր»։ Թիրեաքեան, Արիահայ բռ. 50 նոյն ընդ* ճով, զով *և* ճողմ։ *Թէև շատ մերձաւոր են հնչում, բայց երևի պատահական պէտք է համարել վրաց.* զղո̂ւա, զղվա, *մինդ.* զղվա, *լազ.* զուղա, զղվա, *սվան.* ձուղա *«ծով». նաև կայ.* զավ, ձավ, *ակու. խիւր.* ձավ *«անձրև», ինչպէս նկատում է* Bugge KZ *32, 84։ Պատահական է նաև արաբ.* زوب zaub *«հոսիլ»,* زاب Zāb *«մի քանի նշանաւոր գետերի անուններ» (Կամուս, Քրք. Քրդմ. Ա. էջ 156)։*

Գիւտ.—վն. ծով, *Ագլ. Ալշ. Ախց. Գոր. երև. կր. Ղրբ. Մկ. Մշ. Մրղ. Շմ. Ոզմ. Ջղ. Սլմ. Տփ.* ծօվ, *խրբ. Ննխ. Պլ. Ռ. Հմշ. Սեբ. Սչ. Տիգ.* ձօվ, *Ասլ.* ձէօ՝վ։ *Նոր բառեր են* ծովատակ, ծովջուր, ծովծվան, ծովառ, ծովեղէն, ծովիան, ծովինար *«փայլակ» (մեկնում է* ծով *բառից՝ Աբեղեան,* Arm. Volksglaube 85)։

ՅՈՐ *«կոծոխուր,* berberis vulgaris L.» *(Տիրացուեան,* Contrib. § 198, Seidel *Մխ. հեր. § 138) Բժշ. Գաղիան. Մխ. բժշ. 122. որից* ծորենի *«նոյն պտուղի թուփը» Բժշ. Վստկ. 208. Գաղիան. որ և* ծորի *«կոծո-*

խուր» Բժշ.—(ուրիշ է ծորենի «կուենի» Գաղիան. որ պէտք է դնել յաջորդ ծոր արմատից՝ իբր «խէժ ծորեցնող»)։

Գիւմ.—Սեբ. ձէor, *Բբ.* ձorձor։

Փոխ.—Վրաց. ՁՎორო *մծորո «սին պատուղը»,* ՎოროՁորո *«մի տեսակ ծառ է»։*

ԾՈՐ *«հոսած՝ վազած նիւթը» Շնորհ. առակ. որից* ծորել *«հոսիլ, վազել» ՍԳր. Մծբ. «պտուղների հասնելով թափուիլը» Վստկ. 75.* ծորալ *Մանդ. Մաղ.* ծորեցուցանել *Ա. Բագ. իա. 13.* ծորածոյ *«ինքնաքամ» (մեղրի համար ասուած) Ես. պտմ. 606.* ծորան *Կոչ. 147.* ծորումն *Ղեւտ. ժե. 2.* անծորելի *«ծառից չթափուող (պտուղ)» Տաթև. հարց. 223, ամ. 393.* ծորուն *Փիլ. երկնածորան Ոսկիփ. հրածորան Շար. շարաւածոր Մարաթ. բարախածոր Խոր. առ արծր. նաև* ծորենի *«կուենի» (քան Տիրացուեան,* Contributo *§ 371 կայ նաև* ծործորակ «symphytum asperrimum Sims.) *Գաղիան. (տե՛ս նախորդ* ծոր *բառի տակ).—կրկնաւոր ձևեր են՝* ծործոր *(դրուած նաև* ծոծոր*) «ձոր, հովիտ» ՍԳր.* ծործորակ *(դրուած նաև* ծոծորակ*) «ձորակ, փոքր հովիտ» Եփր. Թգ.* ծործորարդ *«գոգաւոր» Ոսկ. եփես. 871. վերջիններիս համար համմ. արաբ.* وَادٍ vād *«ձոր և գետ», Քրք.* دره dere *«ձոր և գետ» և հյ. խոխոմ «ձոր»՝ խուռ արմատից.—նոր բառեր են* ծորակ, ծորակաւոր, մեղրածորան *են։*

ՆՀԲ լծ. ջուր, uur, pur: Peterm. 62 *լծ.* uurիլ, purիլ: Pictet *1, 134 սանս.* dardara *և հյ.* ձոր *բառերին է կցում* ծործոր: *Տէրվ. Նախալ. 78 սանս.* gal *«ծորիլ, սորիլ»,* jala *«ջուր», գերմ.* Quelle *«աղբիւր», յն.* βάλλω *«արկանել» և հյ.* ծոր, ծորել, ծործոր *հանում է հնխ.* gar *«ծորիլ» արմատից։* Justi, Dict. Kurde *129 հյ.* ծորակ *բառին է կցում քրդ.* چریك čerik *«ծորակ, ճախարակ» (իմա՛ հյ.* ճոիկ*)։ Հիւնք.* պորել *կամ* uur *բառերից։ Դ. Սարգսեան, Բիւր. 1898, 484 դնում է* nr *ձևով մի արմատ, որից հանում է* խոր, հոր, որոգայթ, ձոր, ծործոր: Scheftelowitz BB *28, 296 սանս.* jrayati *«գնալ, շտապել», զնդ.* zrayo *և հպրս.* daraya *«ծով»։* Patrubány *ՀԱ 1910, 118 հնխ.* ag'ō *«քերել» արմատից։* Karst, *Յուշարձան 407 սումեր.* sur *«անձրևել», 420 ԲԲր.* sub, suv, su *«ջուր», իսկ 425* ծորիլ=*ԲԲր.* ter *«բրտինք, թացութիւն»,* ծործոր=*ԲԲր.* terin *«խոր»,* tere, dere *«ձոր»։ Մառ,* О полож. абх. *էջ 38—39 հյ.* ջուր, ձոր, *չերք.* աձր *«ջուր», վրաց.* ծղալի *«ջուր» բառերի հետ։ Թիրեաքեան, Արիահայ բռ. 194 պհլ.* sūrak, *պրս.* سوراخ sūrāx *«ծակ» բառերից։* Petersson, Ar. u. Arm. Stud. *90 յն.* γόργυρα *«աստրերկրեայ բանտ»,* γοργύρα *«ջրի փողրակ»։*

Գիւմ.—Ղրբ. ձո՛րէլ, *Ալշ. Ախց. Մշ. Սլմ.* ձորալ, *Ննխ.* ձորալ, *Մկ.* ծուրալ, *Շմ.* ձէորիլ, *Զթ.* ձիւյիլ, ձիւրիլ.—*Երև. Ղրբ.* ձոր *«մեղրից կաթած ու երկարած քելը», Ախց.* ձor մէրղ *«պարզ մաքուր մեղր».—նոր ձևեր են* ծոր աճել, ծոր գցել, ծոր ընկճել, ծոր կապել, ծոր տալ, ծորել *«խօսքի ծայրը երկարելով արտասանել»,* ծորեցնել *Հմշ. «զրահել, մաքրել»,* ծորփել *«հունձը փռել՝ որ չորանայ»,* ծորան *«յատակ (ջուր)»,* ծոռոդ, ծորուռ *«չորացնելու համար հունձքը փռող մշակ»,* ծործորուռ *Ղրբ. «գարուփոս տեղ»,* ծորուցք *«հունձը փռելով չորացնելը»։*

Փոխ.—Ուտ. cor *«ծոր»,* ծորեսուն *«հոսիլ, ծորիլ, վազել»,* ծորեբսուն, ծորոբեսուն *«թորիլ, մզիլ, ծորիլ»,* corodesun *«քամիլ»,* corcorkal *«ծործորող», վրաց.* წურვა ծուրվա *«սեղմել, քամել, մզելով թորել, սեղմելով վազեցնել (շոր ևն)»,* აწურვა ածուրվա, ბაწურვა զածուրվա *«մզել, թորել»,* წურვილ՝ ծուրվիլի *«քամիլ»,* მწურავი մծուրավի *«թորող, մզող»,* წურწურა ծուրծուրի *«թաց բանից կաթած կաթիլ»։*

ԾՈՑ, ո *հլ. «գիրկ, գոգ, խորշ» ՍԳր. Սեբեր. որից* ծոցածին *Պիտ. Շար.* ծոցածագեն *Նար. տաղ. նոր բառեր են* ծովածոց, ծոցաւեւոր, ծոցագրպան *են։*

Böttich. Arica *79, 315 սխալմամբ կարդալով* ծոյ՝ *կցում է սանս.* yōni *ձևին։* Karolides, Γλ. συγκρ. *82 կպդվի.*

záka «հագուստի ծալքեր», յն. σάκος «խորգ», σαγήνη «ուռկան», սանս. svaj «փաթաթել»։ Հիմնք. կոկ բառից· Patrubány ՀԱ 1904, 185 հնխ. gos արմատից. համմտ. լտ. gero «տանիլ, բերել»։

ԳԻՒ.—Ալշ. Մշ. Զթ. Սլմ. Վն. Ծոց. Ախց. Գոր. Երև. Կր. Ղրբ. Ծօց, Հճ. Ձոց, Խրբ. Ննխ. Պլ. Ռ. Սչ. Ձօց, Ագլ. Մկ. Ոզմ. Տփ. Ծուց, Տիգ. Ձուց, Մրզ. Ձուի, Զթ. Ձիւց, Համշ. Սեբ. Ձէօց, Ասլ. Ձէօ՝ց, Ձէօ՝ս, Շմ. ցօց.— նոր բառեր են՝ ծոցիկ, ծոցուռ (>Պլ. ձօսվօր), ծոցուռիկ, ծոցաբաց, ծոցխաղ տալ, ծոցաստէծ։

ՃՈՒԱՐԻԿ «ամփոփուիլ, կծկուիլ, հաւաքուելով պահվռիլ» Օրբել. լե. հրտր. էմ. էջ 119. նոյն նշանակութեամբ է նաև Մագ. Թղ. 121 «ծպտեալ ծակամուտ ծրւարեալ», ինչպէս երևում է ծակամուտ բառից (և ո՛չ թէ «մէջը փաթթուիլ, ամփոփուիլ», ինչպէս դնում են ՆՀԲ և ԱԲ)։

Պատահական նմանութիւն ունին եբր. צור ṣvr, արամ. ṣvr, ṣār «կապկպել, պնդել, ճիտել»։

ԳԻՒ.—Պահուած է թէ՛ պարզ արմատը և թէ նրանից ածանցուած ձևեր. այսպէս՝ ծուար «ծովախորշ՝ ուր հաւաքւում են ձկները ոօթ ժամանակ. couche» (Նորայր, Բառ. ֆր.). 2. Երև. «ձկների բոյն». 3. Բբ. «թխամայր հաւի՝ ձագերին թևերի տակ առնելը», ծուար առնել Երև. ծւարիլ Ալշ. Ախց. Երև. Մշ. Ննխ. Վն. «խումբը մի տեղ հաւաքուիլ, ամփոփուիլ, հաւաքուիլ նստիլ», Վն. «կուչ գալ, ամփոփուիլ, կծկուիլ», ծւարել Երև. Իգդ. Վն. «հաւաքել, մի տեղ ամփոփել, թռչունը իր ձագերին թևերի տակ հաւաքել պատսպարելը», ծուարատեղ Երև. «այն տեղը՝ ուր ձկները հաւաքւում խումբ են կազմում»։—Անշուշտ բառիս հին ձևը ծ նախաձայնով է, ինչպէս ցոյց են տալիս Մագիստրոսի և Օրբելեանի վկայութիւնները և Ալշ. Մշ. ծվարել, Ախց. ծվարիլ, Սեբ. ձվարիլ։ Սակայն մի քանի բարբառներ՝ կապելով «ձու» գաղափարի հետ՝ նախաձայնը վերածել են ձ. այսպէս Բբ. ձ'վար և Ս'լմ. ծվավռվել (իբր ձուաւորուել)։

ՃՈՒԻԼ «մաղելու մի առանձին ձև է». նորագիւտ բառ՝ որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Բանք աղ. 186։—Կենդանի է այժմ էլ Ակն. Ղրդ. Բլ. Պշ. Սեբ. Սլմ. նոյն ձևով և նշանակում է «հատեղէնները ափսէի մէջ լցրած՝ վեր վեր նետելով՝ աղբերն ու քարերը մէջտեղ հաւաքել ու մաքրել»։

ՃՈՒԻՆ տե՛ս Ծիւ։

*ՃՈՒԽ, ո հլ. «մուխ. 2. գոլորշի, շոգի» ՍԳր. Ոսկ. մ. ա. 2. Եզն. որից ծխել, ծխիլ ՍԳր. ծխալից Եփր. օրին. էջ 265. ծխախառն Ագաթ. ծխանաւք Սիր. ժդ. 24. ծխան վիպաս. (առ Մագ.). ծխճելոյզ Հին բռ. ծխոտիլ Եղիշ. ծխաշունչ Ոսկ. յհ. ա. 1. ծխանելիք «խունկ, կնդրուկ ևն» Պատմ. վր.—ծուխ նշանակում է նաև «տուն, երդ» (համմտ. պհլ. dūtak=պրս. օձȝɔ dūda «ծխնելոյզ. 2. գերդաստան», պրս. ձȝɔ dūd «ծուխ», dudmān «ընտանիք, ազգատոհմ» Horn § 597 և Բիրնաքեան, Կարնամակ, ծան. 20), որից ծխատէր կամ ծխակեր «ժողովրդապետ» Մաշտ. ջահկ.—հետաքրքրական ձև է ծխոյել «պատուհան» Բառ. երեմ. էջ 150 (իբր ծխոյ-ել՝ ծուխը դուրս ելնելու տեղ)։—Նոր բառեր են ծխախոտ, ծխածուկ, ծխամորճ, ծխափայտ, ծխաճարշ, ծխաբաժանութիւն, ծխահամար, ծխատուփ, ծխավաճառ, ծխափող, ծխական, անծուխ ևն։

=Փոխառեալ է կովկասեան *ծուխ արմատից, որ նշանակում է «մուր, ծուխ, մուխ»։ Նոյն արմատի ժառանգներն են վրաց. წუხვა ծուխվա «ցաւ, տրտմութիւն» (իբր սրտի ծուխ. համմտ. պրս. ձȝɔ dūd «ծուխ, տրտմութիւն»), მომწუხარება մոմծուխարեբա «տխրիլ, տրտմիլ», მომწუხრება մոմծուխարեբա «երեկոյանալ», მწუხრი մրծուխրի «աղջամուղջ, երեկոյ», შემწუხრება շեմծուխարեբա «երեկոյեան մուխը», წუხელის ծուխելիս «երէկ» (իմաստի զարգացման համար համմտ. հյ. երեկ և երէկ. ռուս. вечеръ «երեկոյ» և вчера «երեկ»)։—Բառիս բուն հայերէնն է մուխ, որ հնդեւրոպական ծագում ունի։—Աճ.

Klaproth, Asia pol. 104 արաբ. dächch, սլ. duch «ոգի»։ ՆՀԲ թուխ

բառի՞ց։ Müller, Kuhns u. Schleich. Btrg. 5, 383 արաբ. دخان duxān «ծուխ, ծխախոտ» ձևի հետ է համեմատում և կարծում է թէ արաբ. բառն էլ հնդեւրոպականից է փոխառեալ։ Տէրվ. Նախալ. 89 հնխ. dhu «փչել, ծխել» արմատից է դնում հյ. ծուխ, ծծումբ, յն. θύω, սանս. dhu, dhūma, լտ. fa-mus «ծուխ», յն. θεῖον «ծծումբ»։ Մատ ЗВО 7, 73 պրս. دود dūd «ծուխ» բառից։ Հիւնք. ածուխ բառից։ Գ. Փատնակ, Անահիտ 1903, 130 սանս. dhu, յն. θύω բառերի հետ։ Patrubány ՀՄ 1908, 247 հնխ. ag'e «բերել» արմատից։ Karst, Յուշարձան 425 թրք. թթր. tong «մթութիւն»։ Petersson, Ar. u. Arm. Stud. 83 հնխ. g'eu- արմատից, որից նաև սանս. jválati «բոցավառիլ, փայլիլ», jvala- «բոց», jvāla «լոյս, բոց, ջահ», պալի jaro «ջերմ», հյ. ջուրաւ ևն։ Պատահական նմանութիւն ունին արաբ. دخ daxx, duxx «ծխախոտ», دخان duxān «ծխախոտ», دخدخة daxdaxa «ծուխը վանել», دخ duxxax «ծխագոյն, թուխ գոյնով» (Կամուս, թրք. թրգմ. Ա. 540)։

ԳԻՒՒ.—Ալշ. երև. կր. Մշ. Մրղ. Շմ. Սլմ. Ծուխ, Սեբ. Տիգ. ձուխ, Գոր. Ղրբ. ծօխ, Ագլ. ծօն «մուխ». ծածկալեզուով՝ Պլ. ձուխ և Ոզմ. ծօխ «ծխախոտ».—բայական ձևով ունինք Ոզմ. ծխիլ, Տիգ. ձխխալ.—հետաքրքրական ձև է Ագլ. ծխա՛մած «ծխահամած».—բոլոր բարբառներում էլ կայ ծուխ «քահանայի երդ, հովուելիք տունը». այսպէս են՝ Ախց. Տփ. ծուխ, Ննխ. Պլ. Ռ. ձուխ ևն։—Նոր բառեր են ծխախեղդ, ծխահամ, ծխահամիլ, ծխահարիլ, ծխահարկ, ծխական, ծխերդիս, ծխոտալ ևն։

*ԾՈՒՒ, ո հլ. «ծծելու նիւթ» Գ. մակ. ե. 28. «մի տեսակ հա՞րկ» Ասք. 1041 Թուից (Վիմ. տար. էջ 22). որից ծուծիմ «քթի երկու ծակերը, ռնգունք» Եփր. Բ. կոր. 91. Անան. յովն. ծծել ՍԳր. Վեցօր. եզն. ծծումբն վրդն. սղ. ծծիեմ «ծծած տեղ» Ամ. բառախաւծուն 34. իմ. պալ. ուղղածուն Տօնակ. ուղղածուն առնել Թուղ. իդ. 8. Վրդն. սղ. կաթնածուն Եղիշ. հայր մեր. կուլածուն Նոնն. մեղրածուն Դաղիան. ծծան (նոր բառ)։ Արմատիս երկրորդ ձևն է ծիծ «ստինք» Ոսկիփ. Վստկ. 60. Տաթև. ձմ. ղր. որից ծծակ «ծծի պէս ուռեցք կոկորդում» Ստ. լեհ. ծծկեր, ծծմայր (նոր բառեր)։

=Փոխառեալ է կովկասեան լեզուներից. Հմմտ. վրաց. ძუძუ ծուծու «ծիծ, ստինքի պտուկ», ძუძუთა ծուծութա, ძუძუ-მწოვარი ծուծու-մծովարի, მძუძეობანი մծուծերիաների «դիեցիկ մանուկ», მამა-მძუძე մամամծուծ «հայր սնուցիչ, կառավարիչ, երախայի վերակացու», დედა-მძეძე դեդա-մծեծե «ստնտու, ծծմայր», ძიძა ձիձա «ստնտու», წოვა ծովա, წოვნა ծովնա «ծծել, ծծումն», წუწნა ծուծնա «ծծել», გა-წუწნა գամծուծվա «ծծելով դուրս քաշել», წუწნვა ծուծրնվա «ծծելով հանել», წუწვა ծուծվա «խոնաւացնել, թրջել», წოვება ծովեբա «ծիծ տալ», წუწი ծուծի «արատ», ძუძუ ձեწოვნ ծուծու հսծովս «ծիծ է ուտում», მეძუძურობა մեծուծուրի «դիեցիկ մանկիկ». წუა ծուա «հիւթ, հոյզ», լազ. ծու «ծծել», ծուծոնու «ծծել», ցիցի, ցիցիլի «ծիծ», ավար. ծօէգե «ծծել» ևն։ Նման հնչիւնով բառեր շատ կան պանպաան լեզուների մէջ. Հմմտ. նրգ. zitze, հիւս. գերմ. titte, հգերմ. tutta, tuta, անգրսք. tit, յգ. tittas, իտալ. tetta, zizza, zezzolo, լեհ. cyc, խրվաթ. czeczek, դալմատ. czicza, հունգ. tsets, օսթյաք. tʸutʸl, գնչ. ցիցա, ռում. ţîţă, օսս. ҷыҷы, ցիցի, քրդ. چیچك čičik (Աւետարանի թարգմանութեան մէջ ջըջրմ. ինչ. Ու ժը աւ. ջըջրբռա քօ ժը դառա շիր տան «եվ ստեանցն որ դիեցուցին զքեզ» Ղուկ. ժա. 27), ալբան. ցիցէ, յն. τιτθός, եբր. זִיר zīr, արաբ. زِيز zīẓa, ասուր. zizē «ծիծ, ծծել». ինչպէս նաև արաբ. دِيس days «կնոջ ստինք» (որի համար Կամուս, թրք. թրգմ. Բ. 242 ասում է թէ հարազատ արաբերէն չէ) ևն։ Այս բառերից ոմանք բնաձայն են, ոմանք պատահական նմանութիւն ունին և ոմանք էլ փոխառեալ (Berneker 129)։ Հայերէնը կովկասեան ընտանիքից փոխառեալ ենք դնում այն պատճառով, որ այստեղ ենք գտնում

պարզական արմատը (ծու) և նախնական նշանակութիւնը։—Աճ.

ՆՀԲ լծ. թրք. սիւզմէք, լտ. sugo, վրաց. ձուձու։ Justi, Kurd. Gram. 117 քրդ. čičik, պրս. چچّو čačū, օսս. ձիձի և հյ. ծոց (իմա՛ ծիծ) և ծծել իրար հետ է դնում։ Նոյն հեղինակը՝ Litt. Blatt. 1883, էջ 64 ծուծ=լիթ. zisti «ծծել», ռուս. жижа «հիւթ, արգանակ» բառերի հետ։ Տէրվ. Նախալ. 43, 88 ծիծ, ինչպէս նաև տիտ՝ կցում է դիել բային՝ իբր կրկնական. այսպէս է դնում նաև յն. τιτθός «ծիծ», τίτθη «սորնոտու», սանս. dadhan «կաթ»։ Հիւնք. ճծրծել բայից։ Bugge, Etrusk. u. Arm. 93 ծծել=հոռուսկ. sce. իսկ էջ 85 հյ. տիտ «ծիծ» բառի հետ է համեմատում անգսք. tit, յգ. tittas, գերմ. Zitze «ծիծ»։ Հիւբշ. 498 այս և վերի բոլոր ձևերը համարում է բնաձայն. իր կարծիքով ծիծ բառն էլ կապ չունի ծուծ, ծծել ձևերի հետ։ Գ. Փառնակ, Անահիտ 1906, էջ 233 հայերէնից փոխառեալ է դրնում ալբան. gjigj «ծիծ»։

ԳԻՒ.—Ջղ. Սլմ. Վն. ծծել, Ախց. Գոր. Երև. Կր. Ղրբ. Մրղ. ծծէլ, Ագլ. Մկ. Շմ. Ոզմ. Տփ. ծծիլ, Ալշ. Մշ. ծրծել, Սչ. ձձել Ննխ. Պլ. Ռ. Սեբ. ձձէլ, Ասլ. ձձէ՛լ, Խրբ. ձձիլ, Հճ. ձր՛ձել, Զթ. ձր՛ձիլ, Համշ. ձձուշ, ձձվալ, Տիգ. ձրձձէլ.—Ախց. Կր. Մրղ. Ջղ. Սլմ Վն. Տփ. ծիծ, Սչ. ձիձ՛, սեռ. ձձի, Խրբ. Հճ. Համշ. Ննխ. Պլ. Ռ. Տիգ. ձիձ, Ասլ. ձիձ, ձիզ, Ոզմ. ծէւծ, Ղրբ. ծրէծ, Գոր, ծէծ, Ագլ. ծայծ, Զթ. ձա՛ձ, ձր՛ձ.—Ալշ. Մշ. ծուծ, Սեբ. Տիգ. ձուձ, Ասլ. ձիւձ «ոսկորի ուղեղ»։—Նոր բառեր են ծիծիկ, ծիծիկ աճել, ծծագին, ծծկան, ծծկեր, ծծմայր, ծծուկ, ծծվռտալ, ծծֆել, ծուծապակաս «անխելք»։

ՓՈԽ.—Ուտ. ծիծիկ «ծիծ, սիներ», ծիծիկ տաղալ «ծծմայր», քրդ. (Տէրսիմի բարբառով) ծիծ «ծիծ» (տե՛ս Հայաստան 1917, թ. 90)։

ՄՈՒԿԱԼ. անստոյգ բառ, որ մէկ անգամ գործածուած է Գ. մակ. ա. 8 «նա ծուկայր ոչինչ թուլանայր» (var. նածուկայի, նա սակայն). յն. օրինակն ունի οὐδαμῶς ἠβούλετο πείθεσθαι. ՀՀԲ մեկնում է բառս «յամառիլ, պնդել, ձգտիլ, նկրտիլ ևն», ՋԲ «յամառիլ», ՆՀԲ ուղղում է «սակայն», ԱԲ բոլորովին ջնջել է։ Ուրիշներ առաջարկել են արբազրել տուկայր, տակայր (Գ. Տէր-Մկրտչեան, Ս. Տէրտէրեան), ժուժայր (?), սակայն (Հ. Ա. Տ.), ցանկայր (Թոռնեան, Համբնաիր Բ. 1910, էջ 300, բստ յն. բնագրից)։

ՄՈՒՂԱԿ, ի–ա հլ. «որոգայթ, թակարդ» Առակ. գ. 5, է. 23, ժող. թ. 12, Մծբ. Եփր. թգ. 394. գրուած է նաև ծողակ, ծողակ, ծաղուկ. բայց աւելի հետաքրքրական ձևեր են ծողղակ Մծբ. էջ 378, ծաղաղակ Տաթև. ամ. 452. իսկ Բառ. երեմ. էջ 147, 150 և 151 յիշում է ծալալակ, ծղուղակ, ծօղ և ծօղակ ձևերով։

Հիւնք. ծոյլ բառից է հանում։

ԳԻՒ.—Ղրբ. ծղա՛ղակ, ծղա՛րակ «մեծ թռչուններ բռնելու յատուկ մի տեսակ ծուղակ. 2. փոխբ. խեղճուկ տոմն, խրճիթ»։

+ՄՈՒՆԳ, ի–ա հլ. (գրուած է նաև ծունկ և գործածուած է անեզաբար) «ուտքի ծունկը» ՍԳր. «բոյսի մայրան» Վստկ. Պրոկղ. շղկպ. (այս իմաստով գրուած է նաև ծռունճ Նիւս. կազմ.). «չարականի խազ՝ որ ծ ձևն ունի և ծնկան գլխի ոսկորի ձևից է առնուած» ԱԲ։ Բառիս համար ՆՀԲ դնում է նաև ծունգրն կամ ծունկն ձևը և ծնգան, ծնգամբ հոլովները. բայց այս ձևերից ո՛չ մէկը չէ գործածուած. ՋԲ արդէն չի էլ յիշում դրանք. դաւառականների մէջ միայն գտնում ենք ծունգն, սեռ. ծնգան ձևը և մի քանի յետնադարեան բարդութեանց մէջ. ինչ. ծրնկնամէջ Ոսկիփ. ծնկներ կամ ծներ «հրաժըշտական խազ՝ ∞ ձևով, որ ներկայացնում է երկու ծունկ» Ոսկիփ. Շար։—Առաջին ծունգ կամ ծունկ ձևից են կազմուած՝ ծրնկակապ Վեցօր. 87, 88. ծնկել «խաղողի որթի ծունկ կապելը» Գնձ։—Արմատիս երկրորդ ձևն է ծուռ (գրուած է յետնաբար ծունդր), գործածւում է իբրև նախորդի եզակին, անհոլով է և առհասարակ ոճերի մէջ է գտնւում. այսպէս՝ ծուռ կրկնել, ծուռը դնել, ի ծուռ իջանել ՍԳր. Եւս. պատմ. ծուռ առնուլ «մեռնակ նստած լալ՝ հեծել»,

Ոսկ. փիլիպ. գ. ծուռ կապել «*բոյսերի ծունկ՝ յօդ կապելը*» *Ագաթ. Կոչ. 152. որից* ծուռդրութիւն *Եւագր. կամ* ծնրադրութիւն *Սարգ. Նար. Շար.* ծնրադրական *Նար.* ծրնրեալ «*ոլորած գանգուր մազ*» (?) *Նիւս. կազմ.—ԱՒ ունի նաև* ծնդիր, ծնդրադրութիւն, ծնդրդրութիւն *ձևերը, երեքն էլ «ծնրադրութիւն» նշանակութեամբ։*

=*Բնիկ հայ բառ. հնխ.* g'onwi *կամ աւելի* ǧonwi *ձևից. ցեղակից լեզուներից համեմատելի են սանս.* जानु jānu- «*ծունկ*», जानुबाध् jñu- bâdh «*ծնրաձալ*», *գնչ.* ćang, ćank «*սրունք*», *գնդ.* znūm «*գծունկս*», zānu-drājāo «*ծնկնաչափ?*», *պհլ.* zānuk, jānūk (*վերջինը գաւառական մի ձև կամ ուղղելի* zānuk). *պրս.* زانو zānū, *սոգդ.* zānuk, *քրդ.* zānē, ežnu, hežnu, žinu, *աֆղան.* zangun, cangūn, *բելուճ.* zān «*ծունկ*», *քուչ.* kenī «*ծունկ*», *կամիս.* genu, *յն.* γόνυ (*սեռ.* *γονϝατος) «*ծունկ*», *հոմեր.* γνύξ «*ի ծունր*», *լտ.* genu «*ծունկ*», *ֆրանս.* genou, *իտալ.* ginoechio, *ռում.* genunchi, *գոթ. հբգ.* kniu, *գերմ. հոլլ.* knie «*ծունկ*», knien «*ծնրադրել*», *անգսք.* cnéo, *անգլ.* knee *են* (Walde 339, Boisacq 153 *և 1103*, Kluge 266, Horn § 648 bis, Pokorny I, 586, Ernout-Meillet 402): *Այս բոլորը ենթադրում են հնխ.* g'enu, g'onu, g'nu (*և կամ համապատասխան երկար ձայնաւորներով*)։ *Հայերէնի եզ. ուղ. ձևն էր* *ծնու, *որ հին լեզուի մէջ չէ գործածուած. բայց հետևում է զուռ.* ծնուի, ծնվրներ *ձևերից։ Այս* *ծնու *ձևը համապատասխանում է սանս.* jānu *ձևին և հայերէնի բուն նախնական ձևն է (*Meillet ZAPh *1, 148)։ Բառիս երկակի թիւն էր* ծունգ, *որ գալիս է հնխ.* g'onwi *կամ* g'onwi *ձևից, ուր* i *չեզոք սեռի երկակի ուղ-հյց. մասնիկն է հնդևրոպականի մէջ։* Ծունգ *բառը յետոյ յոգնակիի վերածուելով՝ եղաւ* ծունկս (u-*ի պատճառով* գ *դարձած* կ), *որից էլ հետևեցաւ ուղ.* ծունկ *ձևը* (Meillet ZAPh *1, 147*)։—*Հիւբշ. 457։*

Klaproth, Asia pol. *102. աֆղան.* sinqun, *օսթյ.* čanč, šanš: *ԳԴ պրս.* զունի, զանու *ձևերի հետ։ ՆՀԲ գնում է պրս.* զանու, *լտ.* genu, *յն.* γόνυ։ Peterm. *23 սանս. յն. լտ. և գնդ. ձևերը։ Սրանց համեմատ են նաև* Windisch. 13, Gosche 64, 101 *են։* Müller SWAW *38, 578* ծուռ *գնում է* *jnūr *ձևից։ Հիւբշ.* KZ *23, 23* *ծեռուր *ձևից։* Bugge KZ *32, 12* ծունգ *բառի վերջածայն գ-ի համար համեմատում է լտ.* cornu= *սանս.* çṛnga «*եղջիւր*»։ Meillet MSL *9, 147 շեշտում է որ հյ. ու ձայնը ցոյց է տալիս ō. Համմտ. ā սանս.* jānu *ձևի մէջ։ Հիւնք.* ծունկ' *վերիններից պէս. իսկ* ծուռ *հանում է աւուռ բառից։* Scheftelowitz BB *29, 41 սանս.* jangha, *գնդ.* zanga, *աֆղան.* zangūn, *օսս.* zängâ «*ծնրադրել*», *դոթ.* gaggan, *հբգ.* gang «*գնալ*», *լիթ.* žengiù «*քայլել*» *բառերի հետ։* Karst, *Յուշարձան 402, 403 սումեր.* dug «*ծունկը*», *415 մոնգոլ.* toik. *կալմուկ և բուրեաթ.* toin, *մանչու-թունգուզ.* tobgiya, *օսմ.* diz «*ծունկ*»։

ԳՒՌ.—Ախց. ծուն, *Կր.* ծուն, ծուռաւ, *Երև. Մշ. Ջղ. Սեբ. Սլմ. Տփ.* ծուռգ, *Մկ. Վն.* ծուռգ¹, ծո'ւռդր, *Զթ. Խրբ. Ննխ. Պլ. Ռ. Սչ. Տիգ.* ձուռգ, *Համշ.* ձուռգ, ձո'ւռդր, *Ոզմ.* ծո'ռգ¹, *Ասլ.* ձիւռգ, ձիւյ, *Գոր.* ծո'ռգը, *Ղրբ.* ծո'ռգ¹ը, ծո'յնը, ծո'ռդր, *Մրզ.* ծրնգ, *Շմ.* ծրնգնը, *Ագլ.* ծէ'յնը, ծո'ւռդր, *Ակն. յգ.* ծրյվի։—*Նոր բառեր են* ծնկաչոմ, ծնկաչոր, ծնկացից, ծնկել, ծնկեկ, ծնկնակոտոր, ծրնկնաճաց, ծուռկբարև, *իսկ* ծուռ *(<Մրզ.* ծուռդո'ւր*) բառից կազմուած՝* ծնրաչոմ, ծնրիկ *կամ* ծնդրիկ զարնել «*ծնրադրել*», ծուռդրել «*երկրպագելով աղօթել*», *որ և* ծուռ աճել *(սրանից էլ* ծուռ *Համշ.* «*աղօթք*». *ինչ.* ծնրի կանգնիլ «*աղօթել*»)։

ՓՈԽ.—Ուտ. ծուռր լախսուն «*ծունր դրնել*»։

+ԾՈՒՐ, ո *հլ.* «*ո՛չ-ուղիղ, թիւր, կոր*» *Եւագր. Վեցօր. 144 (սեռ.* ծռոց), *Ոսկ. յհ. բ. 9. որից ունինք* ծռել *Սիր. իէ, 26. Կոչ. Ոսկ. մ. բ. 19 և յհ. բ. 8.* ծռութիւն *Առակ. ը. 8. Ոսկ. յհ. ա. 27.* ծամածռուն *Պատմ. աղէքս.* ծամածռել *ՅՀ. իմ. պալ.* ծեռածուռ *Ճառընտ.* ծուռիիր «*քիթը ծուռ*» *ԱԲ.* ծուվիզ «*վիզը ծուռ*» *Սմբ. պտմ. տպ. 1856, էջ 30 (չունի ՆՀԲ, բայց կայ* ծռավիզ *ԱԲ). ոճով աւտում*

է օձի համար ծուռ առնուլ «գալարիլ» Ոսկիփ. կրկնութեամբ՝ ծուռումուռ Տաթև. ձմ. իդ։

=Բնիկ հայ բառ՝ հնխ. g'uro- ձևից. համմտ. յն. γῦρός «կոլոր, կորացած», γῦρος «շրջանակ, բոլորակ, ծիր», γυρόω «ծռել, կորացնել»։ Հայերէնից և յունարէնից դուրս ուրիշ տեղ պահուած չէ։ Հայերենում n ձայնը յառաջ է եկել նախաւուռ ծուռն ձևի պատճառաւ, որ թէև հին մատենագրութեան մէջ աւանդուած չէ, բայց պահուած է նոր գաւառականներում (տե՛ս Pokorny 1, 557. համարում է հնխ. geu- «ծռել» պարզականից՝ r մասնիկով)։—Հիւբշ. 457։

ՆՀՔ լծ. սանս. dur, լտ. curvus «ծուռ»։ Brosset JAs. 1834, 389 և Peterm. 62 լծ. հյ. թիւր։ Հիւնք. ծիր բառից։ Յակոբեան, Բիւր. 1899, 600 արաբ. زر zar', zur'։ Ուղիղ մեկնութիւնը տուաւ Meillet MSL 7, 165 և Esquisse, էջ 34։ Müller, Armen. VI. 3 սրանց է կցում նաև հյ. ծիր, որ Հիւբշ. 457 չի ընդունում։ Patrubány ՀԱ 1906, 367 մերժելով ցրօ՞ ձևը, կցում է ծեր բառին։ Lidén, Arm. Stud. 121 նոյնպէս մերժում է համեմատել յն. γυρός ձևի հետ, որովհետև՝ հակառակ ուրիշ հնդեւրոպագէտների, այս յն. բառի նախաձայն γ համարում է <հնխ. g^w և ո՛չ թէ g՛. յն. γυρός ձևին կցում է հյ. կոր, կորի, կորիզ, կուռն, կռուկն են, իսկ ծուռ համեմատում է ծիր և կամ ծառայ բառի հետ, իբր հնխ. g՛ers- «դառնալ» արմատից։ (Այս երկու մեկնութեանց միջև տատանւում են Boisacq 159, Trautmann 80, Berneker 363.—Petersson, KZ 47, 257 ընդունելով Lidén-ի մեկնութիւնը, ծուռ դնում է հնխ. g՛orso-): Patrubány ՀԱ 1908, 215 հյ. ծառ և հանգ. cerran «դառնալ» բառերի հետ։ Karst, Յուշարձ. 425 թիր. ter, tir, օսմ. ters «հակառակ, հակադարձ»։ Պատահական նմանութիւն ունի արաբ. صور ṣavar «ծռիլ» (Կամուս, թրք. թրգմ. Ա. 941)։

Գիւմ.—Ջղ. ծուռն, Տփ. ծուրը, Երև. ծուռը, ծուռն (տե՛ս Աբովեանի երկերը, էջ 232, տող 2 և էջ 306, տող 5), Ալշ. Ախց. Կր. Մշ. Մրղ. Մկ. Շմ. Սլմ. Վն. ծուռ (որոնցից Ալշ. Մկ. Վն., ինչպէս նաև ուրիշ գաւառականներում, ծուռ «խեղճ, յիմար, գիժ». իմաստի զարգացման համար հմմտ. պրս. خل xul «թիւր, ծուռ», որ Թեհրանի արդի բարբառում դարձել է xol «խել, խեղճ, խօլ, յիմար»). Խրբ. Ակն. Զթ. Համշ. Ննխ. Պլ. Ռ. Սեբ. Սչ. Տիգ. ծուռ, Հճ. ծուր, Ագլ. Գոր. Ղրբ. Ոզմ. ծօռ, Ասլ. ծիւռ, նոր բառեր են՝ ծուռաչհանի, ծուռբեռան, ծռուկ, ծուռիկ, ծռազաւիկ, ծռանց, ծռատօն, ծռմռել, ծռոտիլ, ծռմոկել, ծռմռատել, ծռմշտկել, ծուռտիկ են։ Յատկապէս ծուռն ձևից են ծագում ծուռնումուռ Կր., ծուռնիծուռը Ակն., ծռնուբիւն Երև. Տփ., ծուռնի Ննխ., ծուռնիմուռնի Աժտ., ծռներես Երև։ Անդորայի Թրքախօս հայերն ունին zur «ծուռ», zradun «ծռանդամ, խեղանդամ» (Բիւր. 1898, էջ 789)։—Ննխ. Պլ. Ռ. զռազաղիգ<ծռազաւիկ (վկայուած լծ. պրպմ. 607, 612) յառաջացած է զ-ի ապդեցութեամբ նախաձայն ծ-ի վրայ. ինչպէս ծռոզարդար>զռոզարբար։

[ՇՈՒՐՔ «ծոպ». ունի միայն Բառ. երեմ. էջ 151 ծոպ բառին իբրև բացատրութիւն, որից երևում է՝ որ այն ժամանակ կենդանի բառ է։ Ըստ իս ծուփ բառն է (հմմտ. Համշ. ծուփ), որ վրիպակով այսպէս է տպուած։]

ՇՈՒՓ «ջրերի տատանիլ ալեկոծուիլը. 2. փոթ. հոգս, նեղքին շփոթութիւն, սրտի անհանգստութիւն. 3. խուզարկութիւն, քննութիւն» Առակ. իզ. 10. Ժող. ժ. 13. Եփր. ծն. և երբ. 194. Ոսկ. յհ. ա. 6. որից ծփիլ Սգր. ծփել Օր. ժա. 4. «մարմնին ջուր զարնելով լուալ» Վստկ. 206. ծփեցուցանել Ժող. է. 8. ծփալ «ջրերի տատանիլը» Երզն. մտթ. «մի բարձր տեղից ջրի մէջ ցատկել կամ նետուիլ» Յայսմ. սեպտ. 6. ծփանք «ծովի տատանիլը» Ագաթ. Եւս. քր. Ոսկ. յհ. «մտահոգութիւն» Ժող. է. 26. Բ. մակ. ժզ. 8. ի ծփանի կալ «ծփալ» Վեցօր. ծփալի Մանդ. ծփալից Ոսկ. զկ. ծփական 3հ. իմ. եկեղ. ծփին Կոչ. ծփումն Փարպ. ծփոց «խնոցի» Հին բռ. անծուփ Ոսկ. մ. ա. 11. բազմածուփ

Փարպ. գեղածփիլ *Բէտդ. կոյսն.* երկրածուփ *Նար. առաք.* ծովածուփ *Ոսկ. մ. բ. 25, Գ. 4,* յարածուփ *Ոսկ. Ա. կոր.* ճեղեղածուփ *Արծր.* ծովածփանմ *Ոսկ. Երբ.* գրուած է նաև ծուպ, որից ծուպ ի ծուպ «ալիք ալիք, վէտ ի վէտ» *Եփր. Թգ. էջ 432:*

. ՆՀԲ «ի ձայնէ ջուրց շարժելոց առեալ»: Հիւնք. ծով բառից: Karst, *Յուշարձան 425 ԹԹր.* tob «դէզ, կոյտ»: Պատահական նմանութիւն ունին եբր. צוּף ṣuf, *արամ.* טוּף tuf «հոսիլ, լողալ»:

ԳԻՒ.—ՋԹ. ձէօփ «ժփանք», Ոզմ. ծփալ, *Մրղ.* ծպպալ, *Խրբ.* ձփալ «ժփալ», ձփիլ «հարիլ» (այս իմաստից է գրբ. ծփոց «խնոցի»), Ակն. «զարնել», Ակն. Պլ. «խմել, կոնծել», Պլ. ձփալ «մի հեղուկի երեսին լողալ», որից փոթ. Պլ. «վխտալ», Արբ. Կր. Պլ. «մաքրութիւնից փայլիլ». այս իմաստով նաև Ռ. ձփալ.—իբրև բնաձայն և կրկնութեամբ՝ Պլ. ձը՛փ-ձը՛փ ձփալ «մաքրութիւնից փայլիլ», երև. Ղրբ. Սլմ. ծփծփալ = Ալշ. Մշ. ծփալ «ծուփ ի ծուփ, տատանիլ», Ախց. ծփծփալ «մաքրութիւնից փայլիլ»:—Համմտ. նաև Դրնդ. 184՝ «Իբրև զփաղչակն կու ծփայ կու փայլատակէ»:

ՄՈՓՈՐ «սեան թակաղաղի այն մասը՝ որ գտնուում է քովթարի և պսակի միջև. frise». իբրև նոր բառ ունի Նորայր, Բառ. ֆր. 573ա. կազմութիւնը անյայտ է: Կոչուած է նաև փռոյգ, որ է լտ. phrygium:

ՄՊԱՒՈՐ *տե՛ս* Շկրաւորի:

ՄՊԵՂ «հեծան տանեաց յորոյ վերայ հաստատին նեղ և նուրբ տախտակք և զնոքօք կղմինոր կամ հերձաքար ֆրանս. chevron». միջին հյ. բառ՝ ըստ Նորայր, Բառ. ֆր. էջ 236 բ: Սրա հետ նոյն են հարկաւ գւռ. ծիպղ «ցանկապատ» (Ամէն. տարեց. 1909, 322) և Ղրբ. ծիպլի «ճաղատ, գալար գաւազան»:

ՄՊՆԵԼ «լաւ կապել, կպցնել, վրան փակցընել». մէկ անգամ ունի Բ. Թագ. ի. 8 «Սուսեր ընդ մէջ ծպնեալ առ միջովն պատենիւք հանդերձ»:

ՆՀԲ յն. ζεύγνυμι «զուգել» բառից: Հիւնք. շպար բառից: Karst, *Յուշարձան 414* մոնգոլ. tobči, *բուրեաթ.* topši «կոճակ», արևել. մոնգոլ. tobčila «կոճկել» ևն:

ՄՊՏԻԼ «հագուստը՝ ձևը՝ կերպարանքը փոխել» Ա. Թագ. իբ. 8. «հարուածից կամ վտանգից զգուշանալու համար ծռիլ, փախչիլ» *Եփր. Թգ. 377.* «հեռից վազել, հալածել» Ջքր. սարկ. Բ. 110 (այս երկու նշանակութիւնները չունի ՆՀԲ). «ծածկել, մի ծածուկ տեղ պահել, թաքցնել, ծածկուիլ» *Խոսր. պարգ. 26, Մագ. Թղ. 203, 218.* «տարածուիլ» Բառ. երեմ. էջ 151 (այս վերջինը բնականաբար առանց վկայութեան և հետևաբար կասկածելի):— Թորոսեան, *Տեսր. հմտ. բառարանի, 1784, էջ 28* արմատը դընում է ծպէտ: Նոյն և ՓՒ:

ՆՀԲ լծ. Թրք. թպտիլ (իմա՛ արաբ. تبديل tabdīl, որ գալիս է bdl «փոխել, փոփոխել» արմատից):—Հիւնք. շպար բառից:

ԳԻՒ.—ծպտի Ղզ. «ծպտեալ, թագուն կերպով»:

ՄՈՒՏԵԼ *տե՛ս* Ջգեստ:

ՄՐԱՐ (ի հլ. ըստ ՆՀԲ և ՋԲ. բայց կայ միայն ի ծրարի Ա Թագ. իե. 29) «կապոց, կծիկ, քսակ» ՍԳր. որից ծրարել «կապոց շինել, մի բանի մէջ փաթաթել» ՍԳր. Ագաթ. կոչ. ծրարոց կիր. ծրարաւէր ԱԲ. ամպածրար (նոր բառ): Արդի գրականում ծրար նշանակում է «կապոց, բօխչա» (արևմտեան գրական), «նամակի փաթեթ, enveloppe» (արևելեան գրական):

=Փոխառեալ է ասոր. ܨܪܪ ṣərār կամ ܨܪܪܐ ṣərārā «քսակ» բառից. Համմտ. եբր. צְרוֹר ṣərōr «կապոց, տրցակ», արաբ. صُرَّة ṣurra «դրամածրար, միջին դրամ փաթաթած շորի կտոր». բոլորն էլ ծագում են ընդհանուր նեմական ṣrr կամ ṣōr «կապել, փաթաթել, կապոց շինել, քսակի մէջ դրամ կապել» արմատից:—Հիւրշ. էջ 306:

ՆՀԲ «որպէս թէ ծիր առաւեալ ընդ իրար... լծ. և եբր. ծէror»: Ուղիղ մեկնեց Lag. zu Prov. 26, 8: Հիւնք. արծաթ բառից: Karst, *Յուշարձան 407 սումեր.* sar «պատել», *425 ԹԹր.* tarter «նեղացնել», *ույղ.* termek «հաւա-

քել», 426 թրք. sarmak «փաթաթել»։

ԳԻՒ.—Մշ. Ոզմ. ծրար, Ախց. ծրարէլ, Ասլ. Ռ. Ննխ. Սեբ. ձրար, Խրբ. Տիգ. ձrmr. Ագլ. ծror, ծրա՛րիլ, Արբ. ձլար, Հճ. ձր՝յօյ. Զթ. ձօյօյ, ձornr: Համմտ. նաև ծրարիկ Արբ., ծրարուկ Մշ., ծրարոց Զթ., ծրարոցիկ Կր., ծրարնոց Ակն։

ՄՐԻ տե՛ս Յիրդ։

ՄՐԻԻ «աղտեղութեան մէջ թաթախուիլ, մալակոնուիլ» Երեմ. բ. 22. Մանդ. նար. էջ 3, Լմբ. սղ. որից ծրդեալ «կեղտոտ» Մագ. թղ. 237։

ՆՀՒ դնում է ծիրա բառից։

ԳԻՒ.—ՆՀՒ, ինչպէս նաև Մասեաց աղաւնի 1864, էջ 123 այս բառից են դնում Պլ. ձրոիլ, որ սակայն նշանակում է «իւղը հնանալով կծուիլ».—ՓՒ գրում է ձրոիլ, գրոիլ, Riggs էջ 61 ծրոիլ, ծրոնիլ։

ՄՐՈՐԻԼ «նեխիլ, հոտիլ, ապականիլ» Կեչառ. աղէքս. 190։

ՆՀՒ նոյն է համարում տրորիլ բառի հետ։

ՄՐՈՒՆՔ տե՛ս Մունդ։

*ՄՕ կամ ՄՕԼԱ «ա՛յ տղայ, ո՛վ դու» (արական կոչական ձայնարկութիւն). ունին Մագ. քեր. 242 և Երզն. քեր. (ծօլա՝ արական, քալա՝ իգական, զաւակ՝ չէզոք). իրր նախատական կոչական ունի Երզն. մաթ. 115 «Յորժամ սաստեմք ծառայից և կամ վաւթիար արանց, սոգոտանօք ասեմք թէ ա՛յ դու ծօլայ, քեզ ասեմ»։

=Վրաց. წულო ծուլի «տղայ, մանչ, որդի» բառից։ Հայերէնի մէջ ունինք մի քանի այսպիսի ձայնարկութիւններ, որոնք կրճատուած են գոյականներից. ինչ. ա՛ (որ յառաջանում է վրաց. ჭალი ալի, հինգ. ჭალ ալ, լազ. ալ, ալէ «աղջիկ» բառից), ա՛տա, ա՛րա (որ կրճատուած է ա՛յ տղայ ձևից), Խ. տօ՛լա «ա՛յ տղայ» (լաճ «տղայ» բառից), Զթ. լա, լը (կրճատուած լաւօ «տղայ» բառից)։ Նման համառօտութիւններ կան նաև մեր շրջակայ լեզուների մէջ. ինչ. վրաց. ჭა ա՛ «ա՛յ աղջիկ, քա՛», տճկ. o'lan, úlan «տօ՛, ծօ՛» (կրճատուած oγlan «մանչ, տղայ» բառից), արև. թրք. ädä «ա՛յ տղայ» (որ կրճատուած է ay gʸädä! ձևից)։

ՆՀՒ համեմատում է իտալ. fեօ՛, չեօ՛ և թրք. ուլան, օ՛ղլան բառերի հետ։ Տէրվ. Նախալ. 120 գրում է ծո՛ և համարում է թէ նախապէս նշանակում էր «դու». այսպէս նաև ֆա. երկուսն էլ կցում է սանս. tvam, զնդ. dū, dūm, պրս. tū, յն. τύ, σύ, հյ. դու են բառերին, իրր հնխ. tu ձևից։ Կրօնամոլ յոյների կարկատած առասպելն է դնել բառս յն. ζῶον «անասուն» բառից (տե՛ս Մրմրեան, Մասն. պտմ. հայ մեծատ. Պօլիս 1910, էջ 12)։ Ուղիղ մեկնեց Ադոնց, Արուեստ Դիոն. քեր. 242։ Պատահական նմանութիւն ունին վրաց. ձէ «որդի», զնչ. čavo, čo «տղայ», աֆղան. dzoe, dzai «տղայ, որդի»։

ԳԻՒ.—Ախց. Կր. ծօ, Արբ. Զթ. Համշ. Պլ. Սեբ. Սչ. Տիգ. ձօ, Զմ. Խրբ. ձա, Ռ. ձէ, Խր. Ննխ. ճաձէ՛ (այսինքն ճա՛ձէ, ինչպէս կայ ճամա՛<ճա՛մա. գիւղերում կայ նաև ձօ՛ ձևը). Ասլ. ձի՛ւ, ձէօ՛: Բոլորն էլ գործածւում են արական սեռի երախաներ կամ հասարակ մարդիկ կանչելու համար. իսկ Վն. աւելի այրն է իր կնոջ համար գործածում։ Իրր ձայնարկութիւն՝ չունի յոգնակի. բայց Ննխ. ասում է «հածէնե՛ր, արեցէք»։ Կայ նաև ծօլամա, մաուծօլա «որձ և էգ, hermaphrodite» ձևր՝ ըստ Խալաթեան, ծրագ. ազգագր. էջ 23։

ՓՈԽ.—Պօլսում հայ տղոց կանչելու համար թուրքերը գործածում են zo, իսկ յոյները յօ. բայց երկուսն էլ գրեթէ անարգաբար, ինչպէս է նաև հայոց մէջ ծո՛։

ՄՕՇ «փուշ». ունի միայն Բառ. երեմ. էջ 151։ Սրա հետ նոյն է ըստ Ս. Մովսիսեան (Նամակ 1929 օգոստ. 28) Բլ. գոնծօծ «մի տեսակ փուշ ռեհինէ գնդակի նման, որ գիւղացիք դաշտում աշխատելիս փարչի բերանն են դնում՝ իրր կափարիչ». թուի գոնգ «կլոր» +ծօծ։

ՄՖՈՒԼ «կրօնաւորի գլխանոց». նորագիւտ բառ, որ երկու անգամ գտնում եմ գործածուած Տաթև. ամ. 175 և 704 «Մոնոսոնն ունի... նախ քուսիթայն ի գլուխն, որ է ծըֆուլն»։

Կ

*ԿԱԲՈՍ (սեռ. -ի) «մի տեսակ չափ է, որ պարունակում է 11 քսեստ կամ 1/2 մոդ», ունի միայն Շիր, հրտր. Պատկ. էջ 31։

=Յն. κάβος, լատ. cabus «շոր բաների յատուկ մի տեսակ չափ». ծագում են եբր. קַב qab հոմանիշից, որի միւս սեմական ցեղակիցներն են արամ. קבא qaba, արաբ. قَبّ qabb, հպիպտ. qby, kabu «կուժ», խալտ. kabi, kebi: Այստեղ են պատկանում նաև արևել. Բրք. قاب qab «կոշտ պարկ, բուրձ», Բրք. և քրդ. قاپ qab «աման», ֆրանս. cab փոխառեալ ձևերը։ Միւս աւելի հեռաւոր լծորդների մասին տես M. Cohen BSL հտ. 27, № 81, էջ 93։ Մեր բառը ուղղակի յունարէնից։—Հիւբշ. 353։

Ուղիղ մեկնութիւնը տուաւ նախ Աւգերեան, Բցտր. չփ. և կշռ. էջ 108. նոյնը յետոյ ՆՀԲ։

ԿԱԳ, ո հ. (յետնաբար կայ նաև սեռ. -ի) «վէճ, կռիւ» Սիր. իէ. 15, 16. իը. 10 (բց. ի կագոյ). Ոսկ. ես. Եփր. ծն. էջ 57. որից կագաւէր «կռւարար» Եփր. յոբ. հրտր. ՀԱ 1912, 672 (նորագիւտ բառ). կագացող «կռւարար» Ոսկ. մ. ա. 17. կագագարթոյց Մծբ. կագիլ «կռուիլ» ՍԳր. Եղն. Ոսկ. ես. ևն։

ՆՀԲ. լծ. պրս. Բրք. դագ, դավդա, գագշմա, գավկա: Հիւնք. յն. κακκάω «սաստիկ, յանդիմանել», պրս. غاك γak «աղմուկ, շփոթութիւն» (այս բառը հայերէնի մէջ պիտի տար գակ): Bugge KZ 32, 55 յն. ἠχή, դոր. ὀχά «աղմուկ, ժխոր», լտ. vagio «պոռալ, ճչալ» բառերին ցեղակից։ Scheftelowitz BB 28, 303 լիթ. kovà «կռիւ», հբգ. houwan «զարնել»։ Մ. Ս. Դաւիթեէկ, Յուշարձ. 397 հիւլ. cath «կռիւ, պատերազմ», հբրըտ. cat-al-rid «կռիւ, վէճ», սանս. kadt ևն։

*ԿԱԴԱՄԱԴԵԿՈՎՔ «մի տեսակ աման կամ չափ». երկու անգամ գործածել է Շիր. հրտր. Պատկ. էջ 31՝ «ըմպելի» նշանակութեամբ (վկայութիւնները տե՛ս ամասարակովք բառ տակ)։ Ունի միայն Աւգերեան, Բցտր. չփ. և կշռ. էջ 98։

=Եբր. מנקיות mənaqqiyoṯ «գոհի բաժակներ» (հգ. mənaqqiṯ) բառից է, որ սխալ ընթերցուածով (ձայնանիշների տարբերութեամբ և נ n գրի տեղ դնելով ת ṯ) տառադարձուել է յն. μετεκώθ և այս էլ երկրորդ սխալով դարձել է հյ. կաղամադեկովք։

Ուղիղ մեկնեց նախ Աւգերեան, անդ։ Պատկ. Շիր. էջ 31 գնում է միայն յն. ձևը։

*ԿԱԴԵՍԻՄ, ի–ա հ. «իգացող». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Դ. Թագ. իգ. 7 «Եւ քակեաց զտուն կադեսիմացն, որ ի տան Տեառն»։ Նոյն բառը յիշում է նաև Ներսէսովիչ, Բառ. լտ.-հյ. 173 բ effeminatus:

=Եբր. קדשים qədešīm բառն է, որ קדש qādeš «իգացող» բառի յոգնակին է. այս բառը բուն նշանակում է «սուրբ» (տես կադէս բառը). իմաստի տարբերութիւնը յառաջանում է նրանից՝ որ կադեսիմները իրենց անձը նուիրում էին տաճարին և այնտեղ շնութեամբ էին պարապում։ Եբր. բառը ուրիշ անգամ թարգմանուած է «պոռնիկ» (այսպէս օր Օր. իգ. 18), բայց այստեղ տառադարձութեամբ պահուած է՝ համաձայն յունարէնի։ Յունարէնում հգ. qādēš ձևի ձայնանիշը պահելով՝ յգ. եղել է καδησία (Sophocles 610ա գնում է καδησεία), որից էլ հյ. տառադարձուել է կադեսիմ։—Աճ.

*ԿԱԴԷՍ «սուրբ». գործածուած է իբր յատուկ անուն՝ Սղ. իը. 8 «Զայն Տեառն շար-

ժէ զանապատն և խռովեցուցանէ Տէր զանապատն Կադէս»։ Իբր հասարակ անուն ունինք Սաան. 61 «կադէս սրբոց» (սուրբ սրբոց) և Վրդն. սղ. իբ, էջ 103 «Կադէս սուրբ ասի, որ է սուրբ սկեղեցի»։

=Եբր. קדש qādēš *«սուրբ» (=արաբ.* قدس quds *«սուրբ») բառն է, որ յն. հնդեվրոպական տառադարձութիւնից անցել է հայերէնի։—Աճ.*

**ԿԱՂ «կերպաս, դիպակ, մետաքս» Ոսկիփ. որից* կազագործութիւն *«ոստայնանկութիւն Վրդն. պտմ. էջ 16։*

=Արաբ. قزّ qazz *«հասարակ, ստորին տեսակի մետաքս», որ ըստ Կամուս, Բրք. Բրգմ. Բ. էջ 195 արաբացեալ է պրս.* کژ kaž *կամ* کج kaj *«ցածր տեսակի մետաքս» բառից։—Հիւբշ. 268։*

ՆՀԲ յիշում է ռմկ. կէզի, կէյիսի, գրզզ և ֆրանս. gaze *«շղարշ» բառերը։ Ուղիղ մեկնեց* Lag. Arm. Stud. *§ 1072։ Մառ,* Тексты и раз. по Кав. фил. *հտ. 1 (1925), էջ 115 վերիններին չ կցում նաև վրաց.* ցաჭ ղ'աճ։

ԳԻՒ.—Տփ. կազ *«ցածր տեսակի մետաքս» Մշ.* գ'ազի, *Ախց.* գ'ոզի *«մետաքսէ գործուածք»։*

ԿԱՋՈՒՅՐ. *արմատ առանձին անգործածական, որից կազմուած են՝* կազդուրել *«զօրացնել, ուժեղացնել» Մն. լգ. 14. Ես. խէ. 13. Ոսկ. յհ. բ. 29. «ուժեղանալ, քաջալերուիլ» Ոսկ. մ. Թ. 8.* կազդուրեցուցանել *Ա. պետ. ե. 10.* կազդուրումն *Ոսկ. յհ բ. 26.* կազդուրական *Շիր.* կազդուրեցուցիչ *Սկևռ. Լմբ.* կազդուրիչ *(նոր բառ). գրուած կայ նաև* կասդուրել, *որ յառաջացած է յետնաբար՝ ղ ձայնը իբր խուլ հնչուելու ժամանակ։*

ՆՀԲ յիշում է յն. στηρίζω *հոմանիշը և մեկնում է «կացուցանել ի հաստատութեան»։* Lag. Arm. Stud. *§ 1074 չի ուզում բաժանել* կազմ *բառից։ Ս. վ. Պարոնեան, Արև. մամուլ 1880, 552* հաստ, հաստոյր *բառերից։ Հիւնք. խիստ բառից։ Պատահական նմանութիւն ունի արաբ.* قسطرى qastarī *«մեծ և վիթխարի մարդ» (Կամուս, Բրք. Բրգմ. Բ. 80)։*

ԿԱՋՄ *«պատրաստ. 2. զինուած» Նեեմ. գ. 10, 14. ժգ. 30. Ագաթ. Ոսկ. յհ. ա. 33. մ. բ. 12 և Եբր. իգ. Ես. պտմ. իբրև գյ. ո հլ. «կազմած, հանդերձանք, սպաս, զարդ» Ոսկ. յհ. բ. 14. Պիտ. որից* կազմել *«յօրինել, կարգաւորել, պատրաստել, զրահաւորել» ՍԳր. Ոսկ. յհ. և մտթ. «պատերազմիլ» Վրդն. պտմ. էջ 56.* կազմիչ *Ագաթ. Վեցօր. Եզն. կազմած ՍԳր. Ես. քր. Եզն. Ագաթ. Ոսկ.* կազմակերպել *Ոսկ. յհ.* կազմութիւն *ՍԳր. Ագաթ.* կազմուած *Վեցօր. Մծբ.* գեղեցկակազմութիւն *Սկևռ. ես. Երկնակազմ Տօնակ. պեղակազմ Ա. մկ. գ. 17. Եփր. վկ. արև. Ոսկ. Մծբ.* բնդդիմակազմութիւն *Ա. ծաբ. կարկտ.* լուսակազմ *Լծ. ածաբ. Յս. որդի։ Նոր բառեր են* ամրակազմ, բուլակազմ, տկարակազմ, անկազմակերպ, կազմակերպիչ, կազմակերպչական, կազմարար, կազմաուն, կաշեկազմ, թղթակազմ, լաթակազմ, փառակազմ, կազմալուծել, կազմալուծութիւն, կազմախօսութիւն *են։*

ՆՀԲ *լծ. յն.* κόσμημα, κόσμησις *«զարդարանք», Բրք.* էսիմ *«կարուածք»,* բագըմ *«կազմած»,* թէտարիֆ *«պատրաստութիւն»։* Peterm. *22, 34 յն.* κόσμος *«կարգ»։* Windisch. *8 յն.* κάζω, κάδμος *«փայլիլ, գերազանցել»։* Diefenbach, Berl. Jahrb. *1843, էջ 449 յն.* κόσμος *և կիմր.* casmai *են։ Հիւնք. յն.* κόσμος։ *Միևնոյնը կրկնում է Ղափանցեան, Հարեթ. լեզվ. էջ 20։*

ԳԻՒ.—Մշ. կազմել, *Ախց.* կազմէլ, *Մրղ.* կազմըէլ, *Երև. Գոր. Մկ. Շմ. Ոզմ.* կազմիլ, *Համշ.* գազնէլ *«հանդերձել, պատրաստել», Ղրբ.* կո՛զմիլ *«փխբ. մէկին լաւ ծեծել», Սչ.* գազմել, *ՋԹ.* գազմիլ, *Տփ.* անկազմ *«տկար, նիհար»։ Ի՞նչ կապ ունի* կազմ *դառնալ Ղզ. «թուքը պապակելուց չորանալ բերանում»։*

ՓՈԽ.—Վրաց. კაზმა კազմա, კაზმვა კազմվա, აკაზმა ակազմա *«զարդարել, պատրաստել, յարդարել, ձին թամբել»,* დაკაზმა դակազմա *«ձին թամբել, նաւը յարդարել են»,* გამოკაზმება գամոկազմե-

բա *«ճանապարհ ընկնել»*, ՇՅՃՁՄՅԼՈ շեկազմուլի *«զարդարուած»*, ՃՇՃՁՄՅԼՈՑՃ աղկազմուլորա *«պճնանք, զարդարանք»*, ՑՁՅՈՀ ՃՇՃՁՄՅԼՈՑՃ ցխենիս ակազմուլորա *«ձիու զարդ, կազմած»*, տեղափոխութեամբ նաև ՇՅՃՁՅ կմազվա *«կազմել»*, ՇՅՇՅՃՁՅԼՈ շեկմազուլի *«պատրաստ՝ քամբած ձի»*։

ԿԱՉՄՈՐ *«ծաթրին, ուրց»* ԱԲ. *«մի տեսակ ցածր թուփ. acasos?»* ԼՀՀ. (ՀԲուս. § *1238 մեկնում է* ruscus). կազմոր, կազմորէ, կազմուրէ *«մրուանտակ խոտը, լտ.* asarum» *Բժշ. (ըստ ՀԲուս. § 1239), որից* կազմորենի *«ծաթրին» Գաղիան։*

ԿԱՔ *(սեռ. -ի, յետնաբար* ո *հլ. իսկ ՆՀԲ և ՋԲ դնում են* ի, ո *հլ). «շիթ, կայլակ, կաթիլ» Իմ. ժա. 23. Սիր. ժը. 8. Ոսկ. մ. ա. 9. Եփր. եկ. էջ 161. որից* կար մի *«մի քիչ, պուտ մը» Ոսկ. փիլիպ. ժե. էջ 518 (քնի համար ասուած).* կաթել *«կայլակել, ծորիլ» ՍԳր. Ոսկ. ես.* կաթեցուցանել *«ծորել» ՍԳր.* կաթոգի *կամ* կաթոգին *«սրտատակէզ, անձկայրեաց, որի հոգին է կաթում սիրով» ՍԳր. Ագաթ. Բուզ. Ոսկ. երր. և մ. ա. 9.* կաթոգնիլ *Մծբ. Եփր. մն.* խաճղակար *Երզ. բ. 5.* շողակար *Տօնաց. Շար.* կաթուած *«կաթկթիլը» Միք. բ. 11 (արդի գրականում «անդամալուծութիւն, իշուածք». համմտ. լտ.* gutta, *ֆրանս.* goutte, *թրք.* damla, *վրաց.* ՎՅՇՀՈ ծվերի, *գերմ.* Tropf, *սերբ.* käplja, *որոնք բոլոր նշանակում են «կաթիլ. 2. անդամալուծութիւն», համաձայն բժշկական մի կարծիքի, ըստ որում կաթուածը յառաջանում է ուղեղից մի կաթիլ արիւն սրտի վրայ կաթելուց* (Berneker *364). որից և* կաթուածահար). սրտակար *Սիր. լը. 20.* կաթոտ *«վաւաշ, սերմնակաթ» Խոր. Արծր. Մագ.* սերմնակար *ՍԳր.* մաղասկար *Ասող.* մեղրակար *Ոսկ. զոկ.* մըշտակար *Եփր. կողոս. 171. Ոսկ. տիտ. Մծբ.* -իլ *մասնիկով՝* կաթիլ, ո *հլ. «շիթ, կայլակ» Ես. խ. 15. Առակ. իէ. 15 (համմտ.* տես-իլ) *են. տե՛ս և* կայլակ։

Klaproth, Asia pol. *106 լտ.* gutta *և արաբ.* ٥ ـقَ gaṭra *«կաթիլ» բառերի հետ։ ՆՀԲ լծ. լտ.* gutta, stilla *«կաթիլ», նաև (*կաթել *բառի տակ) արաբ.* qaṭara, pɛqɛkpɔar *«կայլակել, կաթկթիլ» (արմատը* gaṭra *«կաթիլ»)։* Peterm. *20, 22 լծ. հյ.* շիթ *և լտ.* gutta: *Հիւնք.* կար *և* կաթիլ *հանում է լտ.* gutta *բառից, իսկ* կաթոտ, կաթոգին, սրտակար *են* կատաղի *բառից։ Հիւբշ.* ZDMG *35(1881), 660 և* Arm. Gram. 162 *պրս.* كات kāt *«կաթիլ» բառին է կցում, իբրև իրանական փոխառութիւն։ (Այս բառը թէև ո՛չ ԳԴ գիտէ և ոչ* Horn, *բայց կայ Բուրհանի մէջ «կաթիլ» նշանակութեամբ)։* Patrubány *ՀԱ 1908, 188* կաթն *«կաթ,* lac, γάλα» *բառից՝ -իլ նուազականով։ Մատ* ЗВО *XIX, 0157 յարեթական ոյր արմատից. համմտ. վրաց.* ծվերի *«կայլակ», ծթոլա «կայլակում», որի տուբալկ. ձևը պիտի լինէր* *ნվիբի>*ნիբ, *որից փոխառեալ է հյ.* շիթ։ *Պատահական նմանութիւն ունի սանս.* gaḍ *«մզիլ, կաթիլ կաթիլ վազել»։* Meillet BSL *21, 201 կարծում է որ նոյն է լտ.* gutta *բառի հետ. բայց այս մասին վճռական բան չի կարելի ասել, որովհետև լտ. բառի ստուգաբանութիւնը յայտնի չէ. տե՛ս* Walde 357: Petersson, Heteroklisie 62 *և* LUÅ *1922, 11 (չեմ տեսած) հնխ.* g²ēt- *արմատից է հանում հյ.* կար, կարն, *լիթ.* gintarās *«սաթ», յն.* δετή *«ջահ», սանս.* játu *«խէժ», լտ.* bitumen *«ձիւթ» են (տե՛ս* Pokorny *1, 672)։* Meillet, Dict. étym. lt. *էջ 420 կրկնում է իր մեկնութիւնը, լատին բառի նախաձևը դնելով* g²⁰t-, *որին կցում է հյ.* կար։

ԳԻՒ.—1. Ալշ. Ախց. Գոր. Երև. Ղրբ. Շմ. Ջղ. Տփ. կար, *Խրբ.* գ՝mր, *Ագլ.* կօր *«կաթիլ», մուն* կօր *«մի կաթիլ, մի քիչ».* կօր կօր *«կաթիլ կաթիլ», Հճ.* գօր, *Սվեդ.* գուր.— *2.* կաթիլ *«կայլակ» կամ* կաթիլf *«տան կտուրը կաթիլը» իմաստի համար ունինք՝ Կր. Մկ.* կաթիլ, *Ախց.* կաթիլf, *Ոզմ.* կաթիլf՝, *Սեբ. Սչ.* գաթիլ, *Տիգ.* գտրիլ, *Հմշ. Ռ. Սեբ* գաթիլf, *Զթ.* գաբրլ, գաբրլf, *Խրբ.* գ՝mբիլ. *Ալշ. Մշ.* կատիլf.—*3. բայական ձևով՝ վն.* կաթել, *Մրղ.* կաթէլ, *Ախց. Գոր. Երև. Մկ. Ոզմ. Տփ.* կաթիլ, *Հճ. Սչ.* գաթել, *Ասլ. Ննխ.*

Սեբ. գաբէլ, *Պլ.* գաբէլ, գաբիլ, *Հմշ.* գաբուշ, *Ղրբ.* կmրիլ, *Խրբ.* գ'mրիլ, *Մշ.* կատալ, *Ագլ.* կրրրօլ: *Նոր բառեր և նոր իմաստներ են՝* կաբիլ *«պտուղը հասունանալով ծառից ինքնին ընկնել. 2. վայր ընկնել, գետին, գլորուիլ»,* կաբուկ *«հասունանալով ինքնին ընկած պտուղ»,* կաբիճ, կաբուճ *«անձրևից կտուրի կաթիլը»,* կաբլաճ *«կայլակ»,* կրկնութեամբ՝ կաբկբիլ, կաբկբուռ, կաբկբեցնել: *Կրճատ ձևով է Ղրբ.* մի՛կա *«մի քիչ» (իմա՛* մի՛ կաբ*):*

Փոխ.—Ուս. կատ *«կաթիլ, կայլակ»,* կատիեսուն *«կաթիլ, կայլակել»:*

ԿԱՓ *«պղինձ». ունի միայն Բառ. երեմ. էջ 152.—արդեօք* կաբասայ բա՞ռն է*:*

ԿԱՓԱԼԻԿ *տե՛ս* Կաթողիկէ*:*

***ԿԱՓԱՐՈՍ, ի–ա** *հլ. «մաքուր» (այս անունն էին տալիս իրենց՝ Նաւատեան աղանդաւորները) Եւս. պտմ. էջ 505. Սեբեր. էջ 90. Ոսկ. եփես. էջ 822. իբրև հասարակ անուն՝ Թէոդ. մայրագ. էջ 147 («Որք կաթարոսք արտաքուստ երևին») և Բառ. երեմ. էջ 152 (*կաբարայ *«սուրբ» ձևով):*

=Յն. καθαρός *(արական),* καθαρά *(իգական) «մաքուր, անբիծ», որից փոխառեալ է նաև լտ.* catharus:—*Հիւբշ. 353:*

Ուղիղ մեկնեցին նախ ՀՀԲ և ՆՀԲ:

***ԿԱՓԵԴՐ, ի–ա** *հլ. «նստարան, աթոռ, գահ». մէկ անգամ Ագաթ. § 159. ուրիշ վերկայութիւն չկայ:*

=Յն. καθέδρα *«նստարան, աթոռ», որից փոխառեալ են նաև լտ.* cathedra *«աթոռ», ֆրանս.* cathédrale *«եպիսկոպոսանիստ եկեղեցի», ռուս.* кафедра *«եպիսկոպոսանիստ (աթոռ կամ եկեղեցի), ուսումնական ամբիոն (համալսարանում)» են: Կազմուած է* κατά *մասնիկով* ἕδρα *«նիստ, աթոռ» բառից:*

Ուղիղ մեկնեցին նախ ՀՀԲ և ՆՀԲ:

ԿԱՓԵԼ. *անստոյգ բառ. մէկ անգամ ունի Բուզ. դ. 24 «Ընդ այլ կաթել ասպատակ յաշխարհն Հայոց առնէին»: ՆՀԲ, ՋԲ և ԱԲ մեկնում են «կողմ». իսկ Նորայր, Հայկ. բառաք. էջ 60, Կոր. վրդ. էջ 352 և Բառ. ֆր. (տե՛ս* crochet *բառի տակ) ուղղում է* կարբեալ *«ճանապարհր ծռելով,* faisant un crochet*», ինչպէս նոյն հեղինակը քիչ յետոյ գրում է «ընդ այլ դիմեալ՝ ասպատակս կապէին». Հմմտ. նաև՝ «եւ անտի կարթեցին իբր քսան վտաւանաւ» Բ. մկ. ժբ. 10. «Յայլ կողմն կարթեալ» Փարպ:*

ՆՀԲ բառ պրս. գաթ, fէթ, fրթ, *այսինքն «կողմն», ուստի* կատապան *«կողմնապետ»:*

ԿԱՓԻԼ *տե՛ս* Կաթ*:*

ԿԱՓԼՈՒԿ *«սուղ ինչ առասպել». ունի միայն Բառ. երեմ. էջ 152. ի՛նչ լինելը յայտնի չէ:*

+ԿԱՓՆ, ն *հլ.* (–փին, –փամբ, –փանց) *«կաթ» Սիր. որից* կաբնաբեր *Ոսկ. մտթ.* կաբնակեր *Եզն. Յերոն. կամ* կաբնկեր *Բբր. ե. 13.* կաբնակերագոյն *Կոչ.* կաբնասուն *Նար. Շար.* կաբնաբոյծ *ՅՀ. իմ. երև.* կաբնածուծ *Նղիշ. Հայր մեր. իշկաբնուկ Առաք. լծ. սահմ. 540. Նոր բառեր են* կաբնավաճառ, կաբնավաճառուիի, կաբնամած, կաբրընտու, կաբնատամ, կաբնատնտեսուրիւն, կաբնեղեն, կաբնատուն, կաբնաճատուրիւն *են:*

=Բնիկ հայ բառ, որ ծագում է հնխ. g²alakt- *ձևից. սրա միակ ժառանգներն են յն.* γάλα *(սեռ.* γάλακτος*), հոմեր.* γλάγος*-կրետ.* κλάγος *և հլտ.* lacte, lacti, *լտ.* lac *(սեռ.* lactis*) «կաթ». լատինականից են փոխառեալ իռլ.* lacht, *կորն.* lait, *կիմր.* llaeth. *իսկ լատիներէնի ածանցներն են ֆրանս.* lait, *իտալ.* latte, *սպան.* leche *են: Հնխ.* g²alakt- *տուել է նախ յն.* *γάλακτ' *(որ պահուած է սեռականում) և սրանից՝ վերջաձայնի անկումով* *γάλακ->γάλα *(հմմտ.* Gauthiot, La fin de mot, *էջ 124. տե՛ս և* Boisacq 139, 1102*): Նոյնպիսի անկումով և առաջին ձայների կորուստով ձևացել է լտ.* *glact>lact>lac *(հմմտ.* Solmsen IF Anz. 19, 31 *և* Walde 403*): Հայերէնի մէջ հնխ.* g²alakt- *նման սղումներով տուել է նախ* g²alt> *կաղր, *որ աւելի կրճատուելով դարձաւ* կաթ *և –ն մասնիկով՝* կաթն*: Հնագոյն* *կաղր *ձևը պահում է դեռ Ագլ.* կախց, *որի մէջ վերջաձայն* թ *փոխուած է* ց*–ի (հմմտ.* խեղդ—ճեղճ, խայտ—խայծ, փոխինդ—փոխինճ, *Ղրբ.* կլոնդրակ, կլպընդ–

ւիկի=Գոր. կլոճնարակ, կլպճնարիկի, *երև.* լոդ—լոճ «դեղձի մի տեսակ» են), սրա մօտ միանգամայն թրթռուն ղ՝ գառնալով խուլ խ: Pokorny *1, 659 (նախաձևը դնում է* g²lag- *կամ* g²lak-, *չեզոք սեռի ուղղական հոլով՝* glak-t). *Հայերէնը չի կարող լինել այս ձևից, որովհետև այս ձևը պիտի տար* *լաքն, *այլ միայն* g²alakt-: *Նոյն բառի աւելի յետին ձևափոխութիւնն է Հւր.* կախս:—*Աճ.*

Klaproth, Asia pol. *103, լտ.* lac, *իտալ.* latte *բառերի հետ:* Müller SWAW *38, 572, 579 և 41, 11 լատ.* la-ct *բառի վերջի* ct *մասի հետ է միացնում* կաթ, *և համարելով մասնիկ:* Lag. Arm. Stud. § *1076 համարում է թէ* կոգի *և* կաթն *իրար վրայ ազդել են և թէ* կաթն *գալիս է* *գաթն *ձևից:* Canini, Et. étym. 150 *իտլ.* geat «կաթ» *բառի հետ:* Հիւնր. կատու-*ից:* Patrubány SA *1, 188 սանս.* ghr-ta «մաղրած և զտած կարագ» *և իտլ.* gert «կաթ» *բառերի հետ:* Վերի մեկնութիւնս տե՛ս Բանաս. *1901, էջ 79:* Մառ, Къ вопр. о полож. абхазского *էջ 39 և* ИАН *1919, 398 մինգր.* կաթ «սպիտակիլ», *վրաց.* կեթրի «բոր» *և լազ.* ակաթեն «ալևորիլ» *բառերի հետ:* Кипшидзе, Грам. мингр. яз. СП. *1914, էջ 250 դիտել է տալիս որ մինգր.* կաթ *նշանակում է «մի տեղ գտնուիլ» և ո՛չ թէ «սպիտակիլ». ուստի և Մառի վերոյիշեալ համեմատութիւնը վերանում է:* Oštir, Btrg. alarod. *110 հյս.* colostra, caseus «պանիր», *բասկ.* gaztai, *յն.* γάλακτ-, *լտ.* lact- *են ձևերի հետ:* Pictet, *բ. տպ. Բ. 40 հանում է կթել բայից և կցում է իտլ.* geat «կաթ» *բառին:*

Գիւմ.—Գոր. Ղրբ. Շմ. կա՛թը, *Տփ.* կա՛բը, *սեռ.* կա՛բի, *Սչ.* գաբը, *սեռ.* գաբ̈ի, *Ալշ. Ախց. երև. կր. Մկ. Մշ. Մրզ. Ոզմ. Ջղ. Սլմ. վն.* կաթ, *խրբ. Համշ. Ննխ. Պլ. Ռ. Սեբ.* գաբ, *Ասլ.* գաթ, գա*, *Տիգ.* գաթ, *Սվեդ.* գէթ, *Զթ.* գօթ, գոթ, *Հճ.* գօթ, *Ագլ.* կախց, *Հւր.* կախս: —*Ագլ.* կախց *ծագած է նախաւոր* *կաղց *ձևից և այս պատճառով էլ չէ վերածուած* *կօխց. *բառս սրում Ագուլիսի բարբառում ա դառնում է օ, բայց դ-ից առաջ մնում է անփոփոխ. համմտ.* աղ, դաղձ, բաղ, մաղ, մաղձ, կաղ, տաղ *(այս բոլորը անփոփոխ), բայց* վախ>վօխ:—*Նոր բառեր են՝* կաթնահուց, կաթնաձու, կաթնալի, կաթնոց, կաթնաւեր, կաթար, կաթնափկ, կաթնաեռևի, կաթնենի, կաթնագին *են են: Ագուլիսի բարբառով պահուած թանկագին ձևերն են՝* կըխցա՛ում *(նոր ձևով կթնա՛ում) «կաթնահամ», կխցա՛խուտ «կաթնախառտ» և կխցի՛րիս «սեր» (այն է կաթներես):*

ԿԱԹՈՂԻԿՔ, ի հլ. «ընդհանրական քրիստոնեական (եկեղեցի)» Եփր. աւետ. 330, 335. Նղիշ. գ. էջ 51. ՅՀ. իմ. երև. «մայր կամ աթոռանիստ (եկեղեցի)» Խոր. ՅՀ. կթ. Տօնակ. «առաքելական թղթեր» Եւս. պտմ. Տօնակ. որից կաթողիկեայ «ընդհանրական (առաքելական թղթերի համար ասուած)» Ագաթ. Շնորհ. Գնձ. կաթողիկեցի «մայր եկեղեցու աւագերէց» Վրդն. պտմ. կաթողիկէական «ընդհանրական» Նանայ. Մաթս. եկեղ: *Այս բառերը գրում են նաև* կաթուղիկէ, կաթողիկեայ *են. համմտ.* Բարթողիմէոս >Բարթուղիմէոս:—*Միջնադարեան բժշկութեան լեզուով՝* կաթուղիկէ *նշանակում է նաև «մեծ երակ». համմտ. Մխ. բժշ. էջ 124 «Ջերակն զոր կարես՝ զկաթուղիկէն առ կամ ի բասիլիկէն». բայց յատկապէս Տաթև. հրց. 244, ուր գրուած է* կաթալիկէ *և մեկնուած «լեարդի առորին մեծ երակը». համմտ. վրաց.* კათოლიკე ძარღვი კաթուլիկե ձարղվի *«մայր երակ, շահդամար» Ջուրինով², էջ 102: (Բառիս վրայ տե՛ս նաև* Seidel, *Մխ. հեր. § 341):*

=*Յն.* καθολική «ընդհանրական, տիեզերական (առաքելական թուղթ կամ եկեղեցի), մայր եկեղեցի». *կազմուած է* καθά «ըստ» *և* ὅλος «ամենայն» *բառերից. փոխառութեամբ անցել է բոլոր քրիստոնեայ ազգերի լեզուներին. ինչ. լտ.* catholicus, *ֆրանս.* catholique, *վրաց.* კათოლიკე კաթոլիկե *են. նոյն իսկ ոճկ. ասում է* كاتوليك qatolik «կաթոլիկ հայ»:—*Հիւբշ. 353:*

Հներից Տաթև. հարց. 532 «կաթողիկէն ընդհանրական լսի»: Ուղիղ մեկնեցին նախ ՀՀԲ և ՆՀԲ:

*ԿԱԹՈՂԻԿՈՍ, ի–ա հլ. (յգ. ուղ. նաև ունինք –ուեֆ) «հայրապետ կամ գլուխ եկեղեցւոյ. յատկապէս՝ Հայոց եկեղեցու հոգեւոր պետը» Ագաթ. Բուզ. Կորիւն. որից կաթողիկոսութիւն «հայրապետութիւն» Փարպ. 3հ. կթ. «արքունի հազարապետութիւն, համաբրակարութիւն, հարկահանի պաշտօնը» (յն. ոճով) Եւս. պտմ. էջ 642—3. կաթողիկոսական «հայրապետական» Խոր. Փարպ. կաթողիկոսարան «վեհարան, հայրապետանոց» 3հ. կթ. Կղնկտ. Պտմ. վր. անկաթողիկոս «առանց կաթողիկոսի» (չունի ՆՀԲ) Մխ. անեց. 11.—գրուած է նաև կաթաղիկոս Արձ. 867 թ. (Շողակաթ 177). կաթուղիկոս (ող>ուղ ձայնափոխութեան համար հմմտ. Բարթողիմէոս>Բարթուղիմէոս). Դարանաղցին, էջ 307 են բառախաղով գրում է կատողիկոս «չկաթողիկոս», իբր կատղիլ, կատաղիլ բայից։

=Յն. καθολικός «ընդհանրական, տիեզերական» ածականն է՝ գոյականաբար գործածուած. որից փոխառեալ են նաև լտ. catholicus, արաբ. جاثليق jāθalīq կամ جاتليق jatalīq, ասորի տառադարձութեամբ ܟܬܘܠܝܩܐ katūlīka (Մառ. Грам. др.-арм. էջ 18), վրաց. კათოლიკოზი կաթողիկոզի (Թերևս հայերէնի միջոցով)։ Տե՛ս նաև վերը՝ կաթողիկէ բառը։—Հիւրշ. 353։

Ուղիղ մեկնութիւնը դիտէ հներից Լմբ. մատ. 83 «ի սոյն աստիճան են կաթողիկոսք, որ Թարգմանին ընդհանրականք». նոյնպէս Տաթև. ամ. 52 «Ընդհանուր ասի կաթուղիկոսն»։ Նորերից ուղիղ մեկնեց նախ Schröder. Thesaur. էջ 47 և 382. յետոյ ՀՀԲ, ՆՀԲ են։ Նոր բայր, Կոր. վրդ. էջ 71 համարում է թէ յն. «ընդհանրական» իմաստը նախ Ասորիները դարձրին «հայրապետ», որոնցից էլ փոխ առին հայերը. սրան ապացոյց է համարում ու ձայնը, որ կայ նաև ասորու մէջ։ (Բայց այն ժամանակ ի՛նչպէս պէտք է բացատրել –ոս վերջաւորութիւնը՝ որ չունի ասորին)։

Գիւտ.—Ախց. Կր. կաթողիկոս, Ջղ. կաթուղիկոս, կաբրղկոս, Ագլ. կաթուղիկոս, Տիր. կաթուղիկուս, Մրդ. կաթողուկոս, Ալշ. կատողիգոս, Մշ. կաթիղիգոս, Պլ. գաթողիգոս, Սեբ. գաթողիգէոս, Ննխ. գաթողգոս, Սլմ. կաթաղակոս, կաբրղկոս, Շմ. կաթաղակոս, Ղրբ. կըբրղկո՛ս, Մկ. կmբխոկուս, Երև. կաթաղագոս, Զթ. գ՛mբէօղգիս, Սվեդ. գ՛աբիւղգիս, Այն. գաբաղոս (Բիւր. 1900, 671 բ)։

Փոխ.—Ոտ. կաթուղկոս՝ նոյն նշ.։

*ԿԱԹՍԱՅ կամ ԿԱՏՍԱՅ, ի հլ. «խալկին, պղինձ, մէջը բան եփելու կամ եռացնելու մեծ աման» ՍԳր. եփր. տես. 420—421, վեցօր. 79, 80. գրուած է կատսաանի Վկ. գէ. էջ 30. ստացել է «Հոնաց իշխան, թագաւոր» նշանակութիւնը Կղնկտ. «Դարձոյց զերեսս իւր կատսայն հիւսիսոյ յետս ընդդէմ որդւոցն իւրոց» (Շահն. Ա. 284. է-մին, էջ 133 կաբսայն.—Շահն. համարում է յատուկ անուն). այս նշանակութիւնը յառաջացած է երեմիա մարգարէի մի այլաբանական պատկերից ազդուելով (երեմ. Ա. 13). հմմտ. Լատտ. էջ 82՝ «Կաթսայն որ երեմիայի յետանդն ցուցաւ, որ ի հիւսիսոյ ի հարաւ ձգէր յայնժամ զընդուղս եռանդեանն, այժմ ի հարաւոյ ի հիւսիսի ահագին եռանդեամբ...» (տես Աճառ. Հյ. նոր բառեր հին մատ. Ա. 19, Բ. էջ 286)։

=Ասոր. ܩܨܐ qadsā բառից փոխառեալ. այս ասորի ձևը ծագում է յն. κάδος բառից, որ նշանակում է «դինու կամ ջրի մեծ աման, 32 լիտր պարունակութեամբ մի չափ». յոյն բառն էլ ծագած է փիւնիկերէնից (Boisacq 398). հմմտ. եբր. כַּד kaḏ «դոյլ, կուժ, ջրաման», բաբել. kandu, հդիպա. qd «պտուկ» (BSL հտ. 27, № 81, էջ 88), արամ. כַּדְנָא kaddānā, հր. כַּדָּא kaddā «փոքր կուժ»։ Նոյնից փոխառեալ են նաև լտ. cadus, հսլ. kaδĭ ռուս. кадь, кадка, кадочка, кадушка, кадушечка, ուկր. кадка, բուլգար. ка́да, ка́dos, kaca, սերբ. kârd, չեխ. kád', լեհ. kadz´ «կիսատակաւ, կոնք կամ նման ամաններ», ռուսերէնից էլ վերջապէս լիթ. kõdis «ջրի կուժ» (Berneker 467): Յունարէնից է դարձեալ արաբ. قدّ qadas «պղնձէ դոյլ, փարխաճ» (Կամուս, Թրք. Թրգմ. Բ. 274)։ Հայերէնի մէջ ասորի բառը

*տուել է նախ *կադսայ, ուր դ ձայնը ապդուելով յաչորդ u-ից՝ վերածուած է խուլի։—Հիւբշ. 306։*

Ուղիղ մեկնեց Lag. Arm. Stud. *§ 1077։ Հիմնք. յն. γάστρα «գոգաւոր աման»։*

ԿԱԹՓԵԼ *«չամիչը մաքրել». Նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Մխ. բժշ. 147 «Մ՛ո սպիտակ չամիչ կաթփած 10 դրամ»։*

Seidel, *հրտր. Մխ. հեր. § 413 ուղղում է* կուած *և էջ 104 թարգմանում է* «entkernt, *կուտերը հանած»։*

ԿԱԺ. *անծանօթ և անստոյգ բառ, որ գրտնւում է միայն նորագիւտ* գլխակաժ *բարդի մէջ. այս բառը մէկ անգամ գործածում է Պիսիդ. վեցօր. տող 481 «Այլ կենցաղոյս գլխակաժ վշտագնութիւնը»=յն. ἀλλ' αἱ πενιχραὶ τοῦ βίου περιστάσεις «կեանքի թշուառ հանգամանքները». ուր* գլխակաժ *բառի համապատասխանն է* πενιχρός «աղքատ, թշուառ»։

ԿԱԺ *տե՛ս Կասկած։*

ԿԱԼ, ո *հլ. (յետնաբար նաև սեռ. -ի) «գորեն կամնելու տեղ. 2. որանների բարդոց» ՍԳր. Մծբ. «լուսնի կամ արեւի շուրջը բակ» Արիստ. աշխ. (այս իմաստով թրգմ. յն. ἅλως բառից, որ ունի սոյն երկու նշանակութիւնները), որից* կալուայ *«կալեր» Ա. թագ. իգ. 1.* կալոսի *«կալ քաշող» ՍԳր.* կալատեղ *Վստկ.* կալապետ *Նար. յովէդ.—* կալոսի *բառի վերջի մասը տես տի «կապել» ձևի տակ։*

Նշիւ լծ. յն. ἅλων, ἅλως, *վրաց.* կալո: Pictet 2, *115 սանս.* khala *«կալ», պրս.* kālīdan *«ոտնակոխ անել. ցրուել, կոտրատել». (բայց այս բառը նշանակում է «պարտիլ ի մարտի»)։ Հիմնք. յն.* ἅλως *բառից։* Müller, Armen. VI, *էջ 3 կցում է նոյնպէս սանս.* khala *«կալ» բառին, որ մերժում է Հիւբշ. 457, որովհետև հյ. կ և սնս.* kh *իրար չեն համապատասխանում։* Scheftelowitz ZDMG 59, 707 *և* BB 28, 302 *յն.* καλία *«հիւղ, բոյն», սանս.* kulāya *«բոյն», հպրուս.* calene *«կալ» բառերի հետ։* Pedersen, *նպաստ 15 մերժելով յն.* καλία *և սանս.* khala *ձևերը, ուզում է կցել հյ.* կալճում, կալայ *բային։*

ԳԻՒ.—Ալշ. Ախց. Գոր. երև. Ղրբ. Կր. Մկ. Մշ. Մրղ. Շմ. Ոգմ. Սլմ. Վն. Տփ. կալ, *Ակն. Ասլ. Խրբ. Համշ. Ննխ. Սեբ.* գալ, *Տիգ.* գոլ, *Զթ.* գօլ, գոլ, *Հճ.* գօլ, *Ագլ.* կօյլ, *Սվեդ.* գուլ։ *Նոր բառեր են՝* կալաթի, կալահաց, կալանն, կալամաս *կամ* կալմաս *(Վն.* կալամաստ, *Մրղ.* կալամած*),* կալամօտ, կալամէջ, կալաշափ, կալապան, կալացեխ, կալաւել, կալաճաշ, կալաճաշել, կալմուխ, կալեկ, կալմաղ, կալոց, կալուկ, կալուկուտ, կալտր, կալաւուրդ, կալթակ, կալակորկոտ, կալատակ, կալատէր, կալճորդ, կալատիզ *(Հյց.* կալոտիս *ձևից). իսկ* կալսել *կազմուած է* կալ *և* կասուլ *ձևերի միութեամբ։*

ՓՈԽ.—Վրաց. კალო კალი *«կալ»,* კალოება კალոերա *«կամնել, կալսել»,* მეკალოე მեկալովե *«կամնող, կալսող»,* კალმახი կալմախի, კალმახობა կալմախորա *«յօգուտ վանքի ցորեն հաւաքելը» (Զուբինով[2] 590). վերջի երկու բառերը յառաջանում են հյ.* կալմաս *բառից և ըստ իր յառաջացած են վրաց. ხ խ և ს ս տառաձևերի չփոթմամբ. ըստ այսմ ուղղելի են* კალმ.ხი կալմասի, კალმახობა կալմասորա, *ինչպէս ցոյց է տալիս նաև* ხაკალმახოდ *սակալմասող «վանքի համար ցորեն և դինի հաւաքելու» (Զուբինով[2] 1076).—Թուշ.* კალო კալո *«կալ»։*

+**ԿԱԼ** *«բռնելու գործողութիւնը». արմատ առանձին անգործածական, որից ձևացած են* կալուլ *«բռնել, տիրել» Յուդթ. դ. 6. Ա. պաթ. յետնաբար* կալճուլ *կամ* կալլուլ *«բռնել» Վրք. հց. Մագ. (ածանցներում* կալել. *ինչ.* կուսակալել *Ես. քր.* ակնկալել *Օր. լր. 2 կն). ունիմ և ընդունիմ բայերի զանազան ձևերը (ինչ.* կա՛լ, կալայ, կալեալ, ընկա՛լ, ընկալայ, ընկալեալ*),* կալանք *«կապանք, բռնուիլ բանտարկուիլը» ՍԳր.* կալական *«բանտարկեալ» Ագաթ.* կալաճատր *ՍԳր. Կորիւն.* կալաճատրական *ՍԳր.* կալաճել *«ձերբակալել» Մծբ.* կալևկապ *Բուզ. դ. 5. Ոսկ. յհ. բ.* կալակառոյց *Ոսկ. յհ. ա. 6.* կալուած *ՍԳր. Ես. քր.* ակնակալութիւն

ՍԳր. Ագաթ. Եղն. նխակալ *Եղնկ. իև. 12. Եւագր.* ձերբակալ *ՍԳր. Ագաթ.* ձեռընկալու *ՍԳր.* ժուժկալ *ՍԳր. Բուզ. Սեբեր.* խնամակալ *Եսթ. գ. 10. Ա. տիմ. գ. 5. Եղն. Ագաթ. Ոսկ. ա. կոր.* խնկակալ *Ել. իե. 17, լ. 1.* լուսակալ *Ել. լէ. 17,* ժառանգակալ *Բ. Թագ. ժդ. 7. Մծբ.* բերդակալ *Բուզ.* րոճակալ *Եւս. քր.* երկրակալ *Ագաթ.* դիմակալ *Ա. մակ. ե. 40, ժդ. 29.* ժամակալ *Բ. մկ. ժբ. 7. Բուզ.* երախակալ *Դատ. գ. 22.* իճճնակալ *Ագաթ. Եւս. քր.* թագակալ *Ագաթ.* գործակալ *ՍԳր.* դարանակալ *ՍԳր.* դարգնակալ *Կոչ.* դիակալ *Ոսկ. մտթ.* դարշունակալ *Մծբ.* եռեղակալ *Ա. եղր. դ. 2. Երեմ. խր. 18. Եղն.* բնկալուչ *Ոսկ. ես. և մ. ա. 4.* ուշակալու *Ոսկ մ. բ. 28 են։ Այստեղ է պատկանում նաև կա՛ «ա՛ռ, ա՛ռ քեզ» Ղկ. ժգ. 6, 7՝ իբր համառօտութիւն կա՛լ բառի, որ մինչև այսօր էլ գործածական է Ղարաբաղի բարբառում։ Նոր բառեր են՝* ճերակալ, ճինեկալ, պատկերակալ, կալուածագիր, կալուածատէր, կալաճատրել, կալուածական, կալուածատիրութիւն, կալուածատիրական, ընկալագիր, բերթակալ *են։*

=*Ինիկ հայ բառ՝ հնխ.* g^{2}u̯-əl- *ձևից, որի հետ համմտ. յն.* ἐγ-γυαλίζω *«ձեռքի մէջ դրնել, յանձնել», լտ.* vola *«ափ, բուռ»։ Հնխ՝* g^{2}u̯el- *ամաձ է պարզական* g^{2}eu- *«կորանալ, կոր լինել» արմատից՝ l ածականով։ Պարզ արմատը ցոյց են տալիս զնդ.* gav-, gava- *«ձեռք»,* gū-naoiti *«հայթայթել»,* gaona- *«ձեռք բերուած շահը», յն.* ἐγγύη *«գրաւ, գրաւական»,* ἐγγυάω *«գրաւ տալ»,* ὑπο-γυος *«առձեռն պատրաստ», լիթ.* gáunu, gáuti *«ձեռք բերել», լեթթ.* gūju, gūt *«ձեռք գցել», իսկ «կորութեան» գաղափարով ունինք՝ յն.* γύαλον *«կորութիւն, խոռոչ», հիսլ.* kūla *«գլնդակ», մբգ.* kūle *«փոս», սանս.* gōla- *«գլնդակ» են* (Walde 853, Boisacq 157, 211, Pokorny, 1, 556, Ernout-Meillet 1085, *վերջինս վստահ չէ լատին բառի համեմատութեան վրա)։*

Böttich. ZDMG 1850, 356 կալաճ *համեմատում է սանս.* kāra *ձևի հետ։* Justi, Zendsp. *102 զնդ.* garafa *«բանտ»?* Müller, Kuhns u. Schleich. Btrg. *5, 140 սանս.* kāra: Bugge KZ *32, 56 յն.* ἀλίσκομαι *«բռնուիլ» բայի հետ, որ ծագում է* fαλ- *արմատից։* Müller WZKM *5, 267,* Meillet MSL 8, 290 *և* Pedersen KZ *38, 203 համեմատում են լիթ.* galiù *«կարողանալ» բառի հետ. իմաստի զարգացման համար հմմտ. յն.* ἔχω *և սանս.* sáhate, *գոթ.* haban *և լատ.* capio, *լատ.* habeō *և հին իռլ.* gabaim, *հսլ.* jīmami. *նաև հյ.* ձերբակալ, կալուած *և յն.* λαβεῖν *«ունել, բռնել», հիռլ.* flaith, *հսլ.* vlastĭ, *գոթ.* waldan: *Սրանց հակառակ են* Meillet, Esquisse 102 *և* Lidén, Arm. Stud. *էջ 125։ Հինք. պրս.* ֆլէնտէր *«կոճղ կամ կոճղք՝ յորս պնդեն զոտս բանտելոց» և տճկ.* ֆլէնկճէ։ Scheftelowitz BB *28, 302 և 29, 48 սանս.* kalatē *«վարել, բռնել» բառի ցեղակից։ Վերի մեկնութիւնը տուաւ նախ* Lidén, Arm. St. § 86: Karst, *Յուշարձան 404 սումեր.* gal *«ունենալ», 420 ՖՓր.* qar, qor, qol *«թև», չաղաթ.* qol *«թև, ձեռք»,* qollamaq *«բռնել», 429 ՖՓր. ույգուր. չաղաթ. օսմ.* al-maq *«առնել»։* Persson, Beitr. *1 538 (տե՛ս* Boisacq *1104) հյ.* կալ<*հնխ.* g^{20}lu *ձևից, պարզ արմատը* g^{2}ol, *որից և իռլ.* gil *«ձեռք», հրգ.* klāwa, klōa *«ճանկ»։ Մառ* ЗВО *22, 77 հյ.* կուռն *և* կարել *բառերի հետ՝ կցում է վրաց.* ճերայ, իկավա *«բռնել», ափխազ.* ակրա *«բռնել», երկրորդ սիւնակի* karpi *«ձե՞ռք» և վրաց.* խելի, *լազ.* խե *«ձեռք» բառերին՝ իբր յարեթթական արմատէ։ Նոյն* ИАН, *թ. 1911, էջ 469 վրաց.* խելի *«ձեռք»,* ИАН *1920, 134 և* Яз. и Лит. I *228 բասկ.* al *«ձեռք», լազ.* խա *«ճիւղ» են։ Նոյն* ЗВО *1924, 187* կալնում= *բասք.* hal *«ուժ»։*

ԳԻՒ.—Ակն. գալլէլ *«ունենալ, ձեռք բերել, ստանալ», Տփ.* կալնիլ *«առնել» (օր.* ճոտ կալնիլ), *Ագլ.* վիր կալիլ *«վերցնել, առնել». Հճ.* գալցճել *«վերցնել տանիլ», Արբ.* գալլալ *«ունենալ» (օր.* յորի՞ զաւակ չես կալլար), *Զթ.* գալճէլ *«հաւաքել, վերցնել».—բայց*

նաև ունինք «փակել, գոցել» իմաստով. այսպէս են՝ Ալշ. Մշ. կալել, Երև. կալնել, Մկ. Տփ. կալնիլ, Ախց. կաճլել, Սեբ. գալլել, որով և կալ Երև. Վն. «փակուած, գոցուած, խցուած»։ Նոր բառեր են կալիչ «խիչ, խցան», կալուկապ կամ կալկապս «կախարդանք», կալկլուիլ «փակուիլ. 2. ձայնը կտրուիլ», կալկպուիլ «պապանձուիլ», կալուկ «փակ, գոց», կալուկապուիլ «շփոթուիլ», կալցնել «գոցել, ծածկել»։

ՓՈԽ.—Հայ բոշայ. կալուած «անդամալոյծ».—Հյ. գւռ. կալաճ «պատեան» բառից է քրդ. kallan «պատեան»՝ ըստ Աճառ. MSL 16, 358. Ս. Գրքի քրդ. թարգմանութեան մէջ նոյն բառը գտնում ենք խալաճ ձևով. Համառ. Յովհ. ժը. 11. Շուրա խօ տիսա լը բալան տէյնm «Արկ զսուրդ անդրէն ի պատեան իւր».—գւռ. կալաճ ձևը գիտեն Ասլ. Արճ. Մշ. Շտ. ինչ. Թուրս կալաճէն խաշեցի։

ԿԱԼ «կենալ» տե՛ս Կայ։

ԿԱԼԱԱԴԱ. անստոյգ նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Սասն. 57. «կարգ, կանոնք, կէդամ, կալաադա յամենայն տեղիս նոցա և մեր».—լուսանցքի վրայ առաջինը մեկնուած է «նպատակ», երկրորդը (կալաադա) «նշան բարի»։

=Անշուշտ եբրայեցերէն բառ է։

ԿԱԼԱԼ «բոհինչ պտուղը, լոտուս, celtis australis, տճկ. չէֆլէմպիճ» Դաղիան. ունի միայն Բառ. երեմ. յաւել. 567 և ՀԲուս. § 387։

*ԿԱԼԱՄՈՆ «եղէգ». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Անկ. պիրք հին կտ. էջ 14 «Հրամայեաց տալ նմա չորք իրք, որ են այսոքիկ. կրաւկոն՝ որ է զափարան (-քրքում) և նարդոսն՝ որ է փայլասենի, կալամոն՝ որ է եղէգն, և կինամոն՝ որ է դարխեննի»։

=Յն. κάλαμος «եղէգ» բառի հյց. κάλαμον ձևից։—Աճ.

Այս մեկնութիւնս տե՛ս իմ Հայ. նոր բառեր հին մատ. Բ. 229։

ԿԱԼԱՆԴ կամ ԿԱՂԱՆԴ «կտրած անդամի կապ». մէկ անգամ ունի Լարուբ. 40 «Դնել կաղանդս բեկելոցն և պահել անաբատ զողջոն». որից կալաճդել կամ կաղանդել «կտրած մէկ անդամը կապել՝ դարմանել» Բրս. Հայեաց. Տաթև. ձմ. հե. Տօնակ. Նշ. եղեկ. յետնաբար կաղընդել Բժշ. (վկայութիւնը տե՛ս Նորայր, Բառ. ֆր. 125 բ)։

ՆՀԲ մեկնում է «իբրու տալ կալանդ կամ որպէս թէ զկաղացեալն դարմանել»։ Արմատական կալանդ ձևը երևան հանեց և ուղիղ մեկնեց նախ Նորայր, Բռ. ֆրանս. 126ա, որից անտեղեակ՝ Աճառ. Հայ. նոր բառեր հին մատ. Բ. էջ 117 մեկնում է «խնջոյք, հացկերոյթ?, իսկ էջ 298 ուղղում է ըստ Նորայրի։

ԿԱԼԱՇ. անստոյգ բառ. մէկ անգամ ունի Ոսկիփ. «Ի շուտ ածել՝ որ ճանաչեն թէ կալաշ ես»։

ՆՀԲ մեկնում է թերևս որպէս Բրբ. ֆելէշ, այսինքն «քաջ» և «բախած»։ ՋՔ չունի։ ԱՔ «բախուկ, խեննի», իբր արաբ. բառ։ Կայ արաբ. قَلَّاش qallaš (Պլ. ռմկ. խալլէշ) «նենգաւոր, խարեբայ»։

ԿԱԼԱՏՐԻՍ տե՛ս Քարադր։

*ԿԱԼԱՓՏԵԼ «տախտակների ճեղքերը խրծուծ ճխտելով փակել». մէկ անգամ ունի Վստկ. ծբ, էջ 41 «Եւ ապա զտախտակաց միջոցսն աղէկ կալափտէ կտաւով կամ բըրդով, և ապա ա՛ռ սև ձիւթ և կվենուոյ փայտի կամ մարխի սղոցուքով, եռացո՛ զձիւթն և զայն սղոցուքն ի ներք խառնէ, և զընտուկն աղէկ ծեփեա ի ներսէ»։

=Արաբ. قلف qalf, قلافة qalafat «նաւը վերի ձևով կարկատել». այս բառը փոխառութեամբ անցել է շատ ուրիշ լեզուների. ինչ. յն. καλαφατῶ, Բրբ. قالغات qalafat (որից ռմկ. խալաֆաթ), իտալ. calafatare, ֆրանս. calfater, հոլլ. kalefaten, գերմ. kalfatern (Kluge 237), ռուս. конопатить (конопля «կանեփ» բառի խաշտաձևմամբ՝ ըստ Berneker 470) ևն. բոլորն էլ «նաւի ճեղքերը խծուծով ու ձիւթով կարկատել». բոլորի աղբիւրը արաբերէնն է (Կամուս, Բրբ. Բրգմ. Բ. 829—830), որ յունարէնի միջոցով Միջերկրական ծովի շուրջը տարածուել է։

Վստակոց գրքի հրատարակիչը (էջ 41 և բառարանում՝ էջ 241) բառը բաժանելով դարձրել է կա՛լ ափտէ՛ և մեկ-

նում է ափտել «խնուլ, գոցել զծակտիս»։ Ուղիղ մեկնութիւնը վերի ձևով տուաւ Նորայր, Հայկ. բառաք. էջ 98։

*ԿԱԼԻ «բոյս ինչ, զորոյ զմոխիրն գործեն կամ շինեն ապակի և օճառ. ոմկ. թանբրոնիկ. տճկ. գալիյէ». ունի միայն ՓՒ. որ-ից կալաֆար կամ կալէֆար «աղ ալքալի, խոտի մը մոխիրը՝ աղի պէս քարացած, որ իբր օճառ կը գործածուի. լտ. alcali» Բժշ. կալաֆարային (նոր բառ)։

=Արաբ. قلي qalia «ծովային բոյս՝ որից սոդա են հանում». սրանից են նաև ֆր. alcali և նման ձևեր (արաբական al որոշիչ յօդով միացած)։—Ա՛ճ.

վերի ձևով նախ Աճառ. (անտիպ)։ Նոյնը Ուղուրիկեան (տե՛ս ԳՒ, էջ 680 և 1405)։

ԳԻՒ.—Մշ. խլէֆար «կալաբար», որի նախաձայն խ՝ արաբ ق q տառի մի ուրիշ տառադարձութիւնն է։

ՓՈԽ.—Վրաց. ქალაქვა կալաֆվա «կալաբար» թարգմանաբար կազմուած է հայերէնից. առաջին մասը պահուած է անփոփոխ, երկրորդն է վրաց. ქვა քվա «քար»։

ԿԱԼԿԱՏԱՐ տե՛ս Ղլկնդում։

ԿԱԼՀՄԱՐ տե՛ս Կաշհմար։

ԿԱԼՈՆ «սեղնխ, հոմանի». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Բառ. երեմ. էջ 285 սեղեխ բառի բացատրութեան մէջ. բայց նոյն բառը՝ էջ 283 գրում է սեղեխ «հոմանի կամ ալոն» (ա. տպ. ալոն, բ. տպ. ալոն). սրանով բառի ձևը անստոյգ է դառնում։

*ԿԱԼՕՓ, որից կալօփցնել «ձին քառամբակ վազեցնել» Բժշ. գրաբառ. (վկայութիւնը տե՛ս Նորայր, Բառ. ֆր. 585ա)։

=Ֆրանս. galop, galoper նոյն նշ. որից նաև. մբգ. galopieren, նրգ. galopp: ենթադրում է, որ ֆրանս. բառն էլ հին գերմ. *walhhlaup ձևից փոխառնալ լինի (Kluge 163)։

Ուղիղ մեկնեց Նորայր, անդ։

ԿԱԽ «կախուած». կայ միայն ի կախ Մագ. լմբ. եկեղ. Շնորհ. որից կախել ՍԳր. Վեցօր. Ագաթ. Եփր. Եբր. Եւս. պատմ. կախաղան Գ. Թագ. է. 17, 18. Ագաթ. Եւս. քր. կախաղանաբարուրաստան Եւս. քր. կախան Յայտմ. ստորակախեալ Մագ. նոր բառեր են անկախ, անկախութիւն, անկախական, առկախ, կախարան, կախօրան, կիսանկախ, անկախաբար, կախակայեալ են։

Հիւնք. յն. ἄγχω «սեղմել, խեղդել» բայից։ Müller, Armen. VI, էջ 23 գոթ. hahan, հրգ. hangēn, հիսլ. hanga, գերմ. hängen «կախել» ձևերի հետ։ (Այս բառերի աղբիւրը դրւում է հնխ. k'enq- կամ k'eng-, որ չի կարող տալ հյ. կախ, այլ *սիճ կամ *սինգ: Այս մասին տե՛ս նաև Trautmann, Germ. Lautges. 52 և Walde 210). Bugge KZ 32, 50 վերի ձևերին աւելացնում է նաև բուլգ. kačja «կախել»։ Karst, Յուշարձան 415 մոնգոլ. բուրեաթ. suige, suiku, sīxe, hīke, xīxe, կալմուկ. siike, թունգուզ. sekan, մանչու. suixm «գինդ», ճապոն. sage «կախել»։

ԳԻՒ.—Ալշ. Մշ. Սլմ. Վն. կախել, Ախց Կր. Մրղ. կախէլ, Մկ. Ոզմ. Տփ. կախիլ, Հճ. Սչ. գախել, Ննխ. Պլ. Ռ. Սեբ. գախէլ, Զթ. Խրբ. գախիլ, Աալ. գախէ՝լ, Սվեդ. գախիլ, Հմշ. գախուշ, Տիգ. գոխէլ, Երև. Ջղ. կախ տալ, Գոր. Ղրբ. Շմ. կախ տալ, կախ անէլ, Տփ. կախ անիլ, Յղ. կօխ, Ագլ. կօճ «կախ, կախուած»։ Նոր բառեր են կախանաճոց, կախանճատուն, կախանճատուր, կախանճել, կախգլուխ, կախելատեղ, կախկխել, կախկախոտել, կախդուռ, կախելչուան, կախերես, կախլիկ, կախլիճկ, կախկալ, կախովի, կախուկ են։

*ԿԱԽԱՐԴ, ի–ա հլ. «հմայող, վհուկ» ՍԳր. որից կախարդել Օր. ժը. 11. կախարդանճ Օր. ժը. 12. Նաւում. գ. 4. Եզն. կախարդինճ Եփր. վկ. արև. 150—3. Ագաթ. կախարդութիւն ՍԳր. Ոսկ. յհ. ա. 1. կախարդական Պիտ. դիւականարդ Կանոն. դիւթականարդ Կանոն. կախարդակից (նորագիւտ բառ) Անկ. գիրք առաք. 194. —կախարդ, վհուկ, դիւթ և նման հոմանիշների տարբերութեան վրայ տե՛ս Տաճև. Հարց. 388։

=Իրանեանից փոխառեալ բառ, որի պրս. ձևը աւանդուած չէ. համմտ. զնդ. kaxvarəδa- «կախարդ», իգ. kaxvarəiδī «վհուկ, կա-

խարդ կին»։ Բուն նշանակութիւնը համարւում է «սև գոյնով սոսկալի մարդ կամ ժողովուրդ՝ որ պարապում է կախարդութեամբ, գնչու, չինկանա» և այս իմաստով հմմտ. հբգ. swarz, գերմ. Schwarz, գոթ. swarts, հհիւս. svartr, անգսք. sweart, անգլ. swart, հոլլ. zwart «սև» բառերի հետ (Bartholomae, Altir. Wört. 462, Walde 726, Kluge 444, Pokorny, 2, 535):—*Հիւբշ. էջ 162։*

Նշիւ խարդախ բառի՞ց։ Ուղիղ մեկնութիւնը տուաւ նախ Lag. Beitr. Baktr. Lex. *40, 26։ Հիւնք. ախտարէ բառից. Մառ* ИАН *1920, 127 կազմուած է գնում կա մասնիկով խարդ արմատից, որ գտնում է նաև խարդ-ախ բառի մէջ։*

ԳԻՒ.—Մշ. կախարդ՝, *երև. կր. Մկ. Սլմ.* կախարթ, *Սչ.* գախարդ՝, *Պլ.* գախարթ, *խրր.* գախադդ՝. *Թրքախօս հայերից* կախարդ *Առն. (Արևելք, 1888 նոյ. 8—9). Պօլսում նշանակում է նաև «գլուխը առջևը կախած» (օր. Ի՞նչ կախարդ-կախարդ նստեր ես. Կախարդ երեսներ). Ռ.* գախարթ *«խարխեայ»։*

ԿԱԽԱՐԴԱՍԱՐ, *ի–ա հլ. «կախարդ» Գծ. բ. 19. Շիր. Երզն. մաթ. 468. «կախարդական» Ագաթ. § 203, Փարպ. ճշ. 204 ա։*

*=Իրանեանից փոխառեալ բառ, որ ո՛չ մի իրանական լեզուում աւանդուած չէ. ենթագրում է զնդ. *kaxvarəδasarah-, որ կազմուած է զնդ. *kaxvarəδa- «կախարդ» և* sarah- *=պհլ. պրս.* sar *«գլուխ» բառերից, իբրև «գլուխ կախարդաց». Համմտ հյ.* աղանդասար *«աղանդապետ, աղանդաւորների գլուխ»։—Հիւբշ. 236։*

Նշիւ «իբր կախարդանս արարող կամ կախարդասարաս և կամ գիտակ կախարդութեան սարօք իւրովք»։ Հիւնք. բարդուած պրս. sar *բառով՝ համեմատ պրս.* dīvsar *«խեղ, վատթար, ժանտ» ձևի։*

ԿԱԽՈՒ *«կարոտ կամ կապնդեղ բոյսը». ունի միայն Տիրոյեան, Հանրագրութ. 217 և 448 (տառասխալ չէ.) աղբիւրը անյայտ։*

ԿԱԽՐԱՀԱՆ. *անստոյգ բառ. մէկ անգամ ունի Վստկ. 221, որ խօսելով վայրահաջ շան մասին ասում է. «Ի կախրահան ձանձրացուցանէ զմարդն, որ ի ձեռն սուտ և ընդ վայր հաջելոյն աւերեալ լինի» (այլ ձգ. ի կահրա խանկարուացընէ, ի կահրախան խանկարուացնէ)։ Գէորգ Դպիր՝ Վստկ. 248 կախրահան մեկնում է «շան ընդ վայր և երկար հաջելն», իսկ Ալիշան, էջ 221 ի կաճրա «բռնի, ընդվայր»։*

+ԿԱՄԱՆ, *ի–ա հլ. «նեղ անցք» Օրբ. Հրտր. էմ. էջ 293, Վրդն. երգ. Տօնակ. Տաթև. ձմ. խդ. որից կածանել «մի նեղ անցքից ներս մտնել (լոյսի համար ասուած)» Վրդն. երգ. Ներսականան «նեղ ճանապարհ» Երզն. ոտ. երկն. էջ 57.—մհյ.* կածնել *«հողի մէջ խողովակաձև մի նեղ անցք բանալ» Վստկ. 29։*

=Բնիկ հայ բառ՝ հնխ. g²ā́g′- արմատից, որի ժառանգորդներն են նսլ. gåz *«ճամբայ, կածան, ձիւնի մէջ բացուած նեղ անցք», սերբ.* gȁz *«հուն, անցք», բայական գործածութեամբ* gaziti *«հունով անցնել, կոխոտել, տրորել (աղբը, խաղողը, ձիւնը ևն)», բուլգար.* gázъ *«կոխել անցնիլ», հսլ.* iz-gaziti *«ի՛ճացնել, ապականել», ռուս.* изгаженіе *«աղտեղում, ապականում»։ Հայերէնը ծագում է հնխ. g²ăg′- կամ g²āg′- ձևից, իսկ սլաւեաններն g²āg′- կամ g²ōg′- ձևից։ Հունգ.* gáz *«հետք» և* gázolni *«կոխել, անցնիլ» փոխառեալ են սլաւեաններից* (Berneker 293):

Նշիւ ոմկ. կաճ *«նուրբ» բառից։ Ուղիղ մեկնութիւնը տուաւ* Lidén, Arm. Stud. 73:

ԳԻՒ.—Ղրբ. կա՛ծան, կո՛ծո՛ն, *Գոր.* կէծան *«նեղ անցք, կիրճ լեռների կամ անտառների մէջ. 2. ձիւնի մէջ բացուած արահետ. 3. փխբ. թուրքերի գլխին ածիլուած նեղ շերտ, որ ճակատից մինչև ծոծրակն է գնում. 4. ծծկ. թուրք, որից համառօտեալ է Ղրբ.* ծա՛նի *«թուրք» (նաև Ղարադաղ, Թաւրիզ, Շամախի), միայն իբրև ծածկալեզու։*

ՓՈԽ.—Վրաց. კაწანი კածանի *«փշէ ցանկապատ»։*

ԿԱՄԱՆՔ *«զարդ կանանց», որից* կածնել *«զարդարուիլ». աղբիւրն է Քաջունի, ե. 112, որի աղբիւրը անյայտ է։*

ԿԱԾԻՆ *«գրիչ». ունի միայն Բառ. երեմ. էջ 152, որից առնելով նաև ՓԲ. այս բառից է կածճական «գրչագրական» Մագ. Թղ. 120. 237. նոյն է թւում նաև կածել կամ կայծել «դրոշմել, գծել, գրել» Բառ. երեմ. էջ 153—4։*

ԿԱԾՆԻՋԱՐ *«կարմիր կուռաս». այսպէս ունի Բառ. երեմ. էջ 153։*

ԿԱԿԱՋ *(ի կամ ի–ա հլ. ըստ ՆՀԲ, բայց առանց վկայութեան) «լեզուն ծանր, ծանրախօս, դժուարախօս» Սրճ. տապան. 397. Վրդն. հլ. Մարթին. որից կակազել Խոր. Վրդն. հլ. կակազոտ Եփր. հլ. էջ 139, 156. Իրեն. հերձ. 114. Վրդն. հլ. և Բուզ։*

=Կրկնուած է կազ պարզական արմատից, որ առանձին աւանդուած չէ։

ՆՀԲ Թրք. պրս. կէկէջ, էէրէչ։ Հիւնք. յն. κώκως «կարապ» բառից։ Դաւիթ-Բէկ, Բանաս. 1900, 28 կակաճ, կանչել *ևն ձևերի հետ՝ հնխ.* ga, gan *արմատից։ Վերի ձևով Աճառ. ՀԱ 1899, 232։ Պատահական նմանութիւն ունին Թրք.* keke, kekej, *գնչ.* kekes, *պրս.* kaǰ zabān *համանիշները։*

ԳԻՒ.—Երև. կր. Տփ. կակազ, *Ալշ. Մշ.* կագազ, *Ննխ.* գազազ, *բայական ձևով՝ Ախց.* կակազել, *Վն.* կակըզել, *Կր.* կակըզել, *Ոզմ.* կակըզիլ, *Մկ.* կmկmզիլ. *սաստկականը՝ Արբ. Սչ.* գագզալ, *Ննխ.* զագըզդըվիլ, *Սչ.* գըգըզդալ, *Դվ. Երև. Ղրբ.* կզկզալ, *Մշ.* կնգըզդալ, *Սվ.* գագուզ-գուգուզ *(անել), Տիգ.* գզգզmլ, *որից* կզկզաճ *«կակազ», կզկզացնել «կմկմալ»։—Հմշ. էէրէչ՝ փոխառեալ է տեղական թուրքերէնից, որ թւում է թէ իր հերթին ձևափոխուած է հյ. կակազ բառի ազդեցութեամբ։*

⊙ԿԱԿԱՆ *(ի–ա հլ. ըստ ՆՀԲ, թէև առանց վկայութեան) «ճիչ, լացի ձայն, ողբ» Բ. Թագ. ԺԹ. 4. որից* կականել *Ողբ. ե. 13.* կականաբարձ *Ագաթ. Մանդ.* կականումն *Խոր. Պիտ.* կականաւոր *Մամբր. մեծակական ծառընտ։*

=Բնաձայն բառ, կրկնուած կան արմատից, որ առանձին չէ՛ գործածուած. Համմտ. ռուս. гаганить, *սերբ.* gâgām, gágati, *նսլ.* gâgati, gágniti, *չեխ.* gagati, *լհհ.* gagać, *մբգ.* gägen, gägern, *գերմ.* gackern, *հոլլ.* gagelen, *լիթ.* gagėti, gagnóti, gagénti, *լեթթ.* gägât *ևն, որոնք նշանակում են «սադի նման ձայներ հանել»* (Berneker 290, *319 և* Trautmann *74). ուրիշ լեզուախմբերից վրաց. ղ'աղ'անի «աղմուկ»,* կականի, կականեբա *«դորտի կռկռոց, հաւի կարկաչ»,* շրակիկիենբա *«մէկ անգամ մայել» ևն։*

Տէրվ. նախալ. էջ 68 և 76 համարում է կրկնուած կան *արմատից, որ էջ 68 սանս.* kan *«հնչել», յն.* κανάζω *«շաչել», լտ.* canere *«հնչել, երգել» ձևերի հետ՝ հնխ.* kan *արմատից է հանում. իսկ էջ 76 հնխ.* gan *արմատից, որի վրայ տե՛ս ծաղր բառի տակ։ Հիւնք. յն.* κωκύω: *Մառ.* ЗВО XIX, *155 իբր յարեթթական ձև՝ կցում է վրաց. ղ'աղ'անի «աղմուկ» բառին։*

ԳԻՒ.—Կայ խոջ. գագանալ *«թխամայր հաւի կարկաչելը», գագանաճ «շատ կարկընչող (հաւ)», Տր.* գագանէս *«հաւի կարկաչ», որոնք նոյնպիսի բնաձայն բառեր են։*

ԿԱԿԱՆՆ *«անխօսնս». ունի միայն Բառ. երեմ. էջ 153. ի՛նչ լինելը յայտնի չէ։*

⊙ԿԱԿԱՋ *«ջրերի կարկաչահոս տեղ?» Սպիփ. բարոյ. (հրտր. Մառ, Физіологъ, էջ 29 «ի բարձու աւանդակի և ի կակաջս և ի քարանձաւս և ի կատարս լերանց»). որից* կակաչել *«աքլորի երգելը» Ոսկ. Եփես. 806.* կակաչիւն *«ճուալը, բղաւելը» Ոսկ. Եփես. 833.* կակաչուն *«ճուացող, լացող, բղաւող» Ոսկ. Եբր. 479։*

=Բնաձայն բառ, որ ծագում է պարզ կա *ձայնից կրկնութեամբ և չ ածանցականով. Համմտ.* բաչել, բաչել, ճաչել *և պապաչել, խախաչել։—Ա.Ճ.*

Այս մեկնութիւնս հրատարակուած է նախ ՀԱ 1899, 204 բ։

ԿԱԿԱՋ *կամ* **ԿԱԿԱՋ** *(սեռ. -ի) «մի տեսակ կարմիր ծաղիկ. լտ.* tulipa, *տճկ.* լալէ» *Մխ. առակ.*

Canini, Et. étym. *213 արմատը դնում է* կաչ, *որի հետ Համմտ. չեխ.* gacek *«յակինթ»։ Հիւնք. հանում է* կակազ *բառից։ ՀՌուս. § 1260* կարկաչել *բայի՞ց։*

ԳԻՒ.—*կր. Ոզմ. վն.* կակաչ, *Ախց. Մկ.* կակաճ, *Ալշ.* կագաչ, *Մշ.* կագաճ, *Ասլ.* գագաչ, գագաշ.—*բստ Արրտ. 1915, 585 Ալշ.* կարկաչա «կակաչ»։ *Ժողովրդական լեզուով* կակաչ նշանակում է նաև «խաշխաշ, papaver rhoeas L» *(Տիրացուեան,* Contributo *§ 170), Առ.* «պուտ, հարսնուկ, coquelicot», «հաւի կատար, crête» *(Նուպարեան, Բառ. ֆր. 237), Մշ.* կակաչ *կամ* կակաչին «*մի տեսակ ուտելի վայրի բանջար*» *(բոլորն էլ նմանութեամբ)*։

ՓՈԽ.—*Վրաց.* ყაყაჩო ղ'աղ'աչո «*վայրի խաշխաշ*», ყაყაჩოჭა ղ'աղ'աչոռա «*սպիտակ խաշխաշ*», მოკაკაჩობა մոկակաչոբա «*խաշխաշի պէս ծաղկիլ*» *(Աղայեան, Աղբիւր 1889, էջ 6 իբրև հայերէնից փոխառեալ դնում է և վրաց.* կակաչի, *բայց այս ձևը չգիտէ Ջուբինով*[2])։ *Հայերէնի գաւառական նշանակութիւնից է Թրք.* كككج kekeǰ «*մի տեսակ վայրի մանանեխ*», *որ չկայ բառարաններում, բայց գործածուած է Կամուսի Թրք. Թրգմ. Բ. 320, տող 27*։

ԿԱԿԱԻԻԿ «*խաշափայտ բոյսը. լտ.* paconia» *Բժշ. ունի միայն ՀԲուս. § 1258*։

ԳԻՒ.—*Նոյն է* **կակաւիկ** *Երզ.* «*մի տեսակ ուտելի վայրի բանջար*»։ *Սրա հետ նոյն է երևում՝*

ԿԱԿԱԻԻԿ «*մի տեսակ անծանօթ բոյս*» *Բժշ. ունի միայն ՀԲուս. § 1259*։

ԿԱԿԵԼ *կամ* **ԿԵԿԵԼ** «*կաթոգնիլ, կողկողիլ*», *ունի միայն Բառ. երեմ. էջ 153 և 160. (եթէ չէ վրիպակ գրչութիւն՝ փխ.* կղկղել. *տե՛ս* **կղել** *բառի տակ*)։

***ԿԱԿԱԺԻՐԱԿ** «*մի տեսակ ներկատու բոյս է. ասպուր, լտ.* carhtamus tinctorius L» *Բժշ. որ և գրուած է* **կակծիրակ, կակճիրակ, կաճկիրակ, ծակժիրակ, կաճկրակ, ճակժիրակ** *և* **ճաճկիրակ**։

=*Իրաննան փոխառութիւն է. ենթադրում է պհլ.* *kākžīrak *ձևը, որի ժառանգն է պրս.* کاژیره kāžira *կամ կրճատ* کاژ kāžra «*ասպուր*» *հոմանիշը։ Իրաննան բառը բարդուած պէտք է լինի* kak *և* žirak *բառերից. համմտ. պրս.* كك kak *(որից Թրք.* كيكك kekik) «*ծորիրին*», كاكونى kākūnī «*ծորիրին*», كليان kākiyān «*ասպուր*», جيره ǰīra «*ասպուր*», زيره zīra *կամ* ژيره žīra «*մի տեսակ չաման, տճկ. քիմյօն*»։ *Պարսկերէնի* ǰīra *և* žīra *ձևերի պատճառով է որ հայերէնի մէջ էլ գտնում ենք* **կակժիրակ, կակճիրակ** *ևն*։

Բառարանները մեկնած էին այս բառը շատ զանազան ձևերով. ինչպէս «կասիա, խաշափայտ, ասպուրի հունդ, խիարշամպա, սալիխա ևն»։ Առաջին անգամ Նորայր. Բազմ. 1905, 227 համեմատելով պրս. fbաժիյէ *ձևի հետ՝ դրաւ «ասպուր,* carthame», *որից յետոյ նոյնը Արթինեան, Տունկերը էջ 3—7 և Ածաշնչի տունկերը, էջ 75*։

ԳԻՒ.—*Վն.* կանճրակ, *Մկ.* կանճրոկ, *Մշ.* կանճարագ։

ԿԱԿԻԱ *տե՛ս Ախախիա*։

***ԿԱԿԻԿԱՅ** «*մի տեսակ դեղ է. աղի ծաղիկ*». *մէկ անգամ ունի Մխ. բժշ. 74, որ* Seidel *§ 208 ճշտիւ նոյնացնում է արաբ.* زهرة الملح zuhrat-al-milḥ, *յն.* ἄλὸς ἄνθος, *լտ.* flos salis *բառերին, որոնք նշանակում են «անմաքուր սոդա» (բառացի իմաստն է «աղի ծաղիկ»)*։

=*Արաբ.* قاقلى *բառն է, որի ընթերցումը չի նշանակում Կամուս, Թրք. Թրգմ. Գ. էջ 329 (իբր* qāqlyy, qaqlayy, qāqilayy *են) և մեկնում է օշնանի նման մի խոտ է աղի, որ ուղտը սիրում է ուտել. Թրք.* deve otə, «*ուղտի խոտ*», *բստ* Leclerc «bunias cakile L», *որ ստ. լտ. տառադարձուած է* chakile: *(Այս բոյսի մէկ ուրիշ տեսակը՝* bunias orientalis L, *կոչւում է հյ.* կծուկ, *բստ* Анненковъ-*ի Բուսաբանական բառարանի, էջ 73ա)։ Անշուշտ հայ ձևը աղճատուած է և պէտք է ուղղել* **կակիլայ**։

Ուղիղ մեկնեց Seidel *անդ*։

ԿԱԿՈՒԼ «*Հոռմցի ցորեան*» *Ամիրտ. ունի միայն ՀԲուս. § 1264*։

***ԿԱԿՈՒԼԱ** *կամ* **ՂԱՂՈՒԼԷ** «*մի տեսակ բոյս, լտ.* cardamomum» *Բժշ. ունի միայն ՀԲուս. § 1265*։

=*Արաբ.* قاقلّة qāqulla, *որից Թրք.* قاقله qaqula, qaqule. *աւելի հնից են ասոր.* ܩܩܘܠܐ qāgūlā, *ասուր.* gāqūlu. *բոլորն էլ նոյն*

նշանակութեամբ (Կամուս, Թրք. Թրգմ. Գ. 329)։

Ուղիղ մեկնեց ՀԲուս. անդ։

ԳԻՒ.—վն. կավկուլա՝ ըստ Ամատունի, Հայոց բառ ու բան, էջ 336։

ԿԱԿՈՒՊ, ո հլ. «փափուկ» ՍԳր. Ոսկ. ես. որից կակղել ես. իր. 25. Ոսկ. մաթ. կակղաճալ ՍԳր. Մծբ. Եփր. եկ. և Թգ. կակղագոյն Ոսկ. ա. կոր. կակղամիս ես. պատ. կակղոտ «փափուկ (հողի համար ասուած)» Եփր. աւետ. 302. կակղութիւն Ոսկ. յհ. ա. 11. կակղացուցանել Մանդ. ևն։

Հիմնք. Խակտել բայից է հանում։

ԳԻՒ.—Ագլ. Գոր. Կր. Զղ. վն. Տփ. կակուղ, Ղրբ. կա՛կուղ, կակօղ, Մկ. կոկուղ, Ախց. կակուխ, Ալշ. Մշ. կագուխ, Զթ. Խրբ. Հճ. Սեբ. Սչ. գագուղ, Սլմ. կակող, Երև. Շմ. Ոզմ. կակօղ, Ակն. Ննխ. Պլ. Ռ. գագօղ, Տփգ. գոգուղ, Համշ. գագէօղ, Ասլ. գագէօ՛ղ, Սվեդ. գ՛ագ՛էօղ, Մրղ. կակուէղ, կօկէղ,—բայական ձևերից հետադրբրական են Ագլ. կկղիլ և Ասլ. գայղընալ «կակղիլ, կակղանալ»։ Նոր բառեր են կակուղիկ, կակուղերես, կակղան, կակուղկարան ևն։

ԿԱԿՎՈՐԴԻԿ «չաման». լհհահայ մի բառգրքից առնելով գիտէ միայն ՀԲուս. § 1266։

ԿԱՀ, ի, ու հլ. «գործիք, կարասիք, ինչք» ՍԳր. ես. քր. որից կահ ունել «գործի բռնել» Ոսկ. բ. կոր. կահակալ «բանւոր» Կիւրղ. ծն. կահավար «բեռ տանող, սայլապան» Կղնկտ. հրտր. էմ. էջ 125. կահակիր էշ «բեռ կրող էշ, տճկ. Թաշճի էշէյի» Կղնկտ. էջ 133 (երկուան էլ չունի ՆՀԲ). կահաւորութիւն «պիտոյք, կարիք, պէտք» ես. քր. կահել «համարել, սեպել» Ոսկ. մ. ա. 15. «կարգաւորե՞լ» Համամ. քեր. 264, Թր. քեր. 25. Նոր բառեր են կահաւորել, կահաւորեալ, կահ-կարասիք, կահավաճառ, կահագործութիւն, կահոյք ևն։ Այստե՞ղ է պատկանում կահամուտ «եկամուտ», որ գիտէ միայն Բառ. երեմ. էջ 153։

ՆՀԲ ճահ բառի՞ց. լծ. Թրք. զապգաճագ, յն. σκεῦος, σκεῦη։ Lag. Gesam. Abhd. 297 և Btrg. baktr. Lex. 42 զնդ. *karəθra և սանս. kártra «կախարդական միջոցներ»։ Այս բառը ըստ Հիւբշ. 162 շատ յարմար է ըստ ձևի, որովհետև կարող է տալ *կարճ>կարճ, բայց իմաստով բոլորովին անհամապատասխան։ Հիմնք. ագաճ բառից։ Փորթուգալ փաշա, եղիշէ 210 գահ բառի հետ= պրս. ٥٤ gāh «արքայական աթոռ»։

ԿԱՀՈՅՔ «ջրի աման, սափոր» Բուզ. 170. ուրիշ վկայութիւն չկայ։

ԳՒ համեմատում է արաբ ճարա համանիշի հետ։

ԿԱՀՐԱՅ «բռնի, բռնութիւն». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գործածում է Անսիզք, էջ 63 (Դարպասն ի կահրա պատեհ է որ այնէ՝ որ զիր գինն ի չինք դարձնէ). նոյնը ունինք Սմբ. դատ. էջ 51, 191. որից կահրայութիւն «բռնութիւն» Անսիզք 27, 57, 71, Բրս. մրկ. 42. ի կահրայ բառ այնել «բռնաբարել» Սմբ. դատ. 122։

ԿԱՂ, ի-ա հլ. (ՆՀԲ դնում է նաև ի հլ., բայց առանց վկայութեան). նշանակում է «որևիցէ անդամով պակասաւոր, խեղ», այսպէս՝ «լեզուաւ կաղ» Ոսկ. մ. ա. 17. Եփր. արմաւ. 57. «կաղ բարբառ» Փիլ. լին. «կաղ խօսք» Ոսկիփ. բայց մասնաւորապէս «ոտքով պակասաւոր» ՍԳր. որից կաղ ի կաղ, կաղ ի կաղս, կաղս ի կաղս Ոսկ. մ. ա. 24. Փարպ. կաղալ ՍԳր. Ոսկ. մ. բ. 27 և ա. կոր. կաղագոյն Վեցօր. կաղանալ Մագ. Արծր. կաղիլ Ոսկ. երր. կաղացուցանել Ագաթ. Եփր. եկ. ճնակաղ Մխ. գտ. կաղակրկին «երկու ոտքով կաղ». գործածուած է փոխաբերաբար «անհարթ, անարուեստ ոճով» նշանակութեամբ. ինչ. «Եւ կամ կաղակրկին հիւսել զնորա զառաքինութիւնն» Վրք. ոսկ. էջ 5 «Զի ոչ կաղակրկին և կաղկաղս և տամտաբարբանս խօսեր ի պատմիչն... այլ անփոյթաբար ճառէր» Վրք. ոսկ. 195 (ՆՀԲ դնում է եւ կամ տարաբան)—Այս արմատի երկրորդ ձևն է կեղ «թիւր, ծուռ, թերի». գործածուած է միայն կեղակարծ «կասկածելի, խիթալի, երկբայական» ՅՀ. իմ. Նանայ. Շնորհ. կեղակարծիք Սեբեր. կեղակարծել Համբ. Նիւս. կեղակարծելի Փիլ. բառերի մէջ։ Թէ այս վերջիններէն արմատը կեղ՝ նոյն է կաղ բառի հետ. ցոյց են տալիս նոյնանիշ կաղակարծ Մծբ. 341, կաղակար-

ձելի *Ոսկ. ա. կոր. Թէոդ. խչ.* կաղակարծութիւն *Լմբ. առ.* ձևերը և վրաց. փոխառութիւնները, որոնք տե՛ս տակը։

=*Եթէ կարելի լինի նոյն դնել* խեղ «կուզ, հաշմանդամ, պակասաւոր» *բառի հետ, այն ժամանակ ծագում է հնխ.* sqel «ծռել, կորացնել» *արմատից, որ տե՛ս* խեղ *բառի տակ։*

Brosset JAs. 1834, 369 *են վրաց.* մկելոբելի *և խպտ.* jal, chal «կաղ» *բառերի հետ։ Նշբ լծ. յն.* χωλός, κυλλός, *լտ.* claudus *և հյ.* խեղ։ Justi, Dict. Kurde *էջ 351* և* Kurd. Gram. *233 քրդ.* kūlek «կաղ» *և* kūliyān «կաղալ» *բառերի դէմ դնում է հյ.* կաղ, *յն.* κολοβός *և* κυλλός։ Müller, Armen. VI *սանս.* kharwa «հաշմ» *բառի հետ։* Bugge KZ *32, 50 գոթ.* halts «կաղ» *բառին ցեղակից է դնում։ Հիւրշ. 457 սրա հետ միասին յիշում է նաև յն.* κυλλός «ծռած, կաղ», *սանս.* kuṇi «ձեռքը խեղ», *պրս.* kul «կոր, ծռած». *բայց բոլորն էլ կասկածով։ (Մերժում է նաև* Petersson KZ *47, 262)։—Հիմնք. յն.* χωλός «կաղ» *բառի հետ։* Pedersen *Նպաստ 14 մերժելով* Bugge-*ի մեկնութիւնը՝ ուզում է կցել կալում, կալայ բայի հետ?—Աճառ. ՀԱ 1909, 160 տալով խ և կ ձայնների լծորդութեան օրինակներ, իրար է կցում* կեղ, կաղ *և* խեղ։ Karst, *Յուշարձան 415 մոնդոլ.* dogolon, *բուրիաթ.* dogol, dokul, *թունդուզ.* dokolok, *մանչու.* doxolon «կաղ». *էջ 420 թրք.* golak, *էջ 426* խեղ *բառի հետ՝ թթր.* sol «ձախ», solok, čolak «ձախլիկ, կաղ»։

Գիմ.—Ագլ. երև. Մկ. Մշ. Մրղ. Ոզմ. Սլմ. կաղ. *Ակն. Ր. Սեբ. Սչ.* գաղ, *Տիգ.* գող, *Շմ.* կաղ, կաղլիգ՝, *Գոր.* կա՛ղլիկ, *Ղրբ.* կա՛ղլէ՛գ՝ *(վերջին ձևերը կազմուած են* -լիկ *մասնիկով. համմտ.* կուզալիկ, ձախօլիկ)։—*բայական ձևով՝ Ագլ.* կա՛ղի տօլ, *Ջթ.* գաղօլ, գաղոլ, *նաև Սեբ.* աղալ *(նախաձայնի կորուստով) «կաղալ»։ Նոր բառեր են* կաղակորել (կաղակուրտել, աղակորել, աղաղկուրել, աղակուրտել) *«կաղի կոյրի պէս խարխափել մութի մէջ»,* կաղուճ *«կաղնիկաղ երթալը»,* կաղալուճ *«հրեխայական մի տեսակ խաղ»։*

Փոխ.—Ուտ. կալա *«կաղ» (այս բառը յիշում է նաև* Bugge KZ *32, 50). վրաց.* ჯოლო կելի *«կաղ»,* ჯელობა̄ კელობა *«կաղալը»,* მჯელობელი მკելობելի *«կաղալ». այս բառերը թէև կեղ ձևն ունին, բայց նշանակում են «կաղ» և այսպէսով կաղ և կեղ արմատականների միջին օղակն են ձևացնում։*

*ԿԱՂԱ *«ջուր հանելու դոյլ», նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ Վրդն. սղ. ծթ, էջ 202, որ մեկնելով Սղ. ծթ. 10 «Մովաւ աւազան յուսոյ (երբ. լուացմանն) իմոյ» հատուածը, դրում է. «Մովաւ աւազան յուսոյ իմոյ. ասորին՝ կաղա ջրահանութեան իմոյ, ուր զոտան լուանան, որպէս այլ ոմն՝ Մովաւ աւազան լուալեաց ոտից իմոց»։*

=*Ասոր.* ܩܘܠܐ qūlē «urceus, lagena, ջրաման, կոնք» (Brock. Lex. syr. *321 բ*)։—*Աճ.*

ԿԱՂԱՐՈՅՍ *«կոճղէզաւոր բոյս, ծաղկի սոխ». ունին միայն ՀՀԲ, ՋԲ և ՀԲուս. § 1267, իբր նոր բառ։ Սրանցից աւելի հին է վարդան Յունանեանն։ Ձեռքածութիւն 1671, էջ 316։ Ենթադրել է տալիս *կաղ «կոճղէզ» ձևով մի բառ։*

+ԿԱՂԱՂ *(Ներգ. ի կաղաղի) «գաղանի որջ» Փիլ. նխ. բ. 113. Իրեն. ցոյցք 44. Խոր. Վրդն. ծն. որից* կաղաղաճ *«որջանոց» լաստ. ժգ. ժէ.* կաղաղացեալ *«որջացեալ, բունեալ» Փիլ. լիւս.* կաղաղոց *«ամբարոց» Բառ. երեմ. էջ 153. Թւում է թէ բուն նշանակում է «հանգիստ», ինչպէս ցոյց է տալիս* կաղաղանալ *«հանգստանալ, խաղաղիլ» նորագիւտ բառը, որ մէկ անգամ գործածուած եմ գտնում Տիմոթ. էջ 93 «եւ ի վերայ մկանանց ծովու ճեմեալ՝ ոտիցն ոչ գնացելոց, իսկ զկոհակացն այտմունս վերասաստելով մրրկին կաղաղանալ, աներկբայապէս է (գործ) Աստուծոյ»։ (Գիրք թղ. էջ 285 Սահակ վարդապետ առ Փոտ թղթի մէջ վկայութեան կոչելով Տիմոթէոսի յիշեալ խօսքը՝ դրում է «վերասաստելով մրրկին խաղաղացուցանել». այսպէսով* կաղաղանալ *«հան-*

գըստանալ» բառի գոյութիւնը կասկածելի է դառնում. սակայն շատ աւելի բնական էր կաղաղանալ հազուագիւտ բառը վերածել խաղաղանալ, քան ընդհակառակը: Բացի սրանից «որջ» և «հանգստանալ» համապատասխան գաղափարներ են. հմմտ. դադարել «հանդարտիլ» և դադարք «որջ»):

=Բնիկ հայ բառ՝ հնխ. g²el- արմատից. հմմտ. յն. γωλεός «որջ», լիթ. gūlis «անասունի որջ կամ մարդու պառկելու տեղ», guliù, gulti «պառկիլ», լեթթ. gûl'a «դադարք, բոյն», gûlta «անկողին», gul'u, gulu, gult «պառկիլ՝ քնելու համար, անկողին մանել», նորվ. hold, հշվէդ. kolder «մի անասունից մի անգամից ծնուած բոլոր ձագերը, մի բոյնի մէջ գտնուած բոլոր թռչուններն ու ձուերը» (Boisacq 159, Trautmann 94, Pokorny, 1, 639): Այս բոլորի մէջ հնխ. g²el- արմատը ներկայանում է զանազան ձայնդարձներով, որոնցից հայերէնը պահել է կրճատ g²l- ձևը: Ըստ այսմ մեր բառի արմատն է կաղ-, մասնիկ է -աղ. հմմտ. կենց-աղ, կախ-աղ-ան ևն:

ՆՀԲ լծ. է դնում խաղաղ և ղօղիլ: Հիմնք. էջ 21 կախաղան բառից: Ուղիղ մեկնութիւնը տուաւ Lidén, Arm. Stud. 48, որ ընդունում է նաև Petersson KZ 47, 280: Աճառ. ՀԱ 1909, 159 և Հայ նոր բառեր Տիմոթ. Կուզի մէջ, էջ 80 միացնում է խաղաղ բառին՝ խ և կ ձայնների լծորդութեամբ:

*ԿԱՂԱՄԱԽ «անտառային մի բարձր ծառ. populus tremula (ըստ Կէտիկեանի), populus alba (ըստ Արթինեան, Ածաշունչի տունկերը, էջ 34. իսկ Տիրացուեան, Contributo § 71—73 իբրև ընդհանուր անուն դնում է populus—կաղամախ) Ես. խա. 19. նորագիւտ Բ. մնաց. բ. 8 (սեռ. կաղամախի Մագ. մեծ են, էջ 67). աւելի սովորական ձևն է կաղամախի (սեռ. ւոյ, եաց) Ովս. դ. 13. Ագաթ. վեցօր. 92 (տպ. կաղամաղի). 93. կայ նաև կաղամահ ձևը՝ Գաղիան. (ըստ ՀԲուս. § 1269). յետնաբար կաղմխի Վստկ. 93:

=Փոխառեալ է խալդերէնից: Հայ. բառի հետ նոյն են մի կողմից Սալմաստի թուրք բարբառով k'älämbär կամ k'älämbur «կաղամախ», Թաւրիզի թուրք բարբառով قلامه qälämä «բարտի» և միւս կողմից լակ. կալախի, ռուտուլ. կալախ «կաղամախ»: Թէ ո՛րն է այս ծառի նախնական հայրենիքը՝ յայտնի չէ: Գիտենք միայն որ մեր երկրի շրջաններից նա տարածուել է դէպի աւելի արևելք: Այսպէս՝ Թեհրանի պրս. բարբառով նա կոչւում է täbrizī, որ նշանակում է բուն «Թաւրիզեցի». ինչ որ ցոյց է տալիս թէ Թեհրանը նոյն ծառը ստացել է Ատրպատականից: Կարող է որ բառը բնաւէս լինի մարերէն, այդ լեզուից անցած խալդերէնի, հայերէնի և միևնոյն ժամանակ կովկասեան լեզուներին: Բայց կարող է նաև ընդհակառակը՝ բառը լինի բնիկ խալդերէն, որից անցած մի կողմից Ատրպատական և միւս կողմից Կովկաս:—Աճ.

Բառիս նշանակութեան վրայ մի ընդարձակ վէճ Հ. Կետիկեանի և Բնապատումի (=Մէնէվիշեան) միջև՝ տե՛ս ՀԱ 1905, 51—53, 221—2, 285—6, 319—320 և 350—2: Բնապատումը համարում էր բառս «populus pyramidalis», մինչ բարտին դնում էր «populus tremula», հակառակ Հ. Կէտիկեանի: Բուսագէտ Արթինեան (Ածաշունչի տունկերը, էջ 37) սխալ է գտնում այս մեկնութիւնը:—Հիմնք. կաղամախ հանում է կաղամար «թանաքաման» և յն. καλαμίτης բառից, «ասի զբուսոց որք սիրեն զեղտիւրս և զծմակս, որպէս ասօսի, կաղամախ, եղեգն ևն»:

Գիւմ.—Մշ. կաղմխի, խոտջ. գախմխի:

*ԿԱՂԱՄԱՐ (ի-ա հլ. ըստ ՆՀԲ, բայց առանց վկայութեան) «թանաքաման» Մագ. և Երզն. քեր. Վանակ. հց. Վրք. հց. Ա. 156, Աթան. էջ 492, Յայսմ. յնվ. 19 և 27 (երկուսն էլ տպ. կաղմար. այսպէս նաև Յայսմ. յունիս 8, որ յետին հայերէնի ձևն է):—ՀՀԲ և ՋԲ դնում են և կաղամար «թանաքաձուկ», իբրև նոր բառ:—Արդի գրականի մէջ միայն արևմտեանն է, որ գործածում է կաղամար բառը, արևելեանը գիտէ միայն թանաքամանն:

= Յն. καλαμάριον, նկն. καλαμάριν «գըրչաման», որից փոխառեալ են նաև լտ. calamarium, իտալ. calamaio, հսլ. kalamari, ուկր. kalamar, չեխ. kalamař, լեհ. kalamarz, սերբ. kalàmār, հունգ. kalamáris, ռուս. գտ. калáмарь (Berneker 471), ռում. călămĕr, ասոր. ܩܠܡܪܐ qalamarā? հր. קלמר qalamar? Յոյն բառը ծագում է κάλαμος «եղէգ» բառից, որից փոխառեալ է նաև արաբ. قلم qalam (ոմկ. ղալամ, խալէմ) «գրիչ», բուն նշ. «եղէգ» (Կամուս, թրք. Թրգմ. Գ. 542)։ Նկատի պէտք է առնել որ հին ժամանակի գրչամանները միանգամայն թանաքաման էին (տճկ. միվիր-խալէմ):—Հիւրշ. 353։

Հներից Մագ. քեր. 228 և Երզն. քեր. մեկնում են արաբ. قلم qalam «գրիչ» և հյ. առ բառերից բարգուա՞ծ թէ յունարէնից փոխառեալ. «կաղամար, որ է կալամառ, այսինքն (է) աման գրչի (կամ մելանաո)»։ Ուղիղ մեկնեց նախ Աւետիքեան։ Քերակ. 1815, էջ 314, յետոյ ՆՀԲ են։

ԳԻՒ.—Սլմ. կաղամար «պարսկական դիվիթ», Մշ. կաղամար, Պլ. Սչ. գաղամար, Ախց. Կր. կաղամպար, Ջղ. ղամբար:

*ԿԱՂԱՄԲ (ի, ի–ա հլ. ըստ ՆՀԲ, բայց առանց վկայութեան)» «մի տեսակ բանջարեղէն, քալամ, լահանա, լտ. brassica oleracea» Կիր. (տպ. 1865, էջ 28), Եփր. երաշտ. 205. Կանոն. Մխ. առակ. Բժշ. Վրք. Հց. Վստկ. 66, 162, որից կաղամբավաճառ Բուզ. դ. 21. կաղամբակուռ «կաղամբի միջուկը» ԱԲ. կաղամբապուր, ծաղկակաղամբ (նոր բառեր)։

=Փոխառեալ է իրանեանից. սրա պհլ. ձևը աւանդուած չէ, բայց կայ պրս. كلم kalam «կաղամբ», որից փոխառեալ են նաև քրդ. և Աւտպտ. Թրք. kelem, kʸalam: Պրս. կայ դարձեալ كرن karan, كرنب karanb, كرنبا karanbā «կաղամբ»։ Այս բոլոր իրանական ձևերը ծագում են՝ ըստ Հիւրշ. Pers. Stud. էջ 256, յն. κράμβη «կաղամբ» բառից, որից փոխառեալ են դարձեալ լատ. crambe, արաբ. كرنب karnab, օսմ. karnabit, ասոր. kərabbā, kərabbē «կաղամբ»։ Յունարէն բառի ստուգաբանական իմաստն է «խորշոմած, կուշ կուշ եկած». հմմտ. κράμβος «չորացած, կռնծած», κραμβοῦν «խորովել», հրգ. hrimfan «ծռել, խորշոմել, կծկել, պռոտել», անգսք. hrympel «խորշում», լիթ. kremblỹs «սունկի մի տեսակ» (կծկուած), skrebiu «չորանալ», ռուս. коробить «ծռել, գկլուլ», скорблый «խիստ, կոշտ» են, հնխ. qremb, qereb, sqremb, sqereb արմատներից (Boisacq 507—508):—Հիւրշ. 162։

Ուղիղ մեկնեց նախ ԳԴ, յետոյ ՆՀԲ, Böttich. Arica 73, 190, Lag. Urgesch. 835, Պատկ. Изслед. են։

ՓՈԽ.—Վրաց. კალნაბი կալնաբի «կաղամբ» (տե՛ս Մառ, Тексты VII, էջ LXV):

*ԿԱՂԱՄԲԻ «մի տեսակ խունկ, որ ինչ որ ճճու կերուածքով՝ իբր խէժ ծորում է ծառերից» Խոր. աշխ. 602 (ըստ զանազան ձեռագիրների գրւում է՝ կաղամբի, կաղամբիա, կաղամիա, կաղամիտա):

=Յն. անծանօթ մի ձևից, որից փոխառեալ է նաև ֆրանս. calamite «մի տեսակ սաիւրարս կամ խիժային ռետին»։

ՆՀԲ «Թերևս հասկաձև, զի յն. καλαμίτης է գլուխ եղեգան ցորենոյ»։ Պատկ. Խոր. աշխ. 1877, էջ 32 կգում է արաբ. كرنب karnab «կաղամբ կամ հոտաւէտ եղէգ, calamus odoratus» բառին։ ՀՌուս. § 1461 գրելով կողամիտա՝ համարում է յն. καλαμίνθη, լտ. calamintha «մի տեսակ աղնիւ անանուխ, դաղձ»։ Վերի մեկնութիւնը տուաւ Նորայր, Բառ. ֆրանս. 189ա=ՀԱ 1923, 345, որից նաև Ուղուրլեան (ԳԲ էջ 183 և 1405)։

ԿԱՂԱՅԱԹ կամ ԿԱՋԱՅԹ «եկեղեցիք». ունի միայն Բառ. երեմ. էջ 15. երկու ձևերից մին կամ միւսը վրիպակ է։

*ԿԱՂԱՆԴ ի, ի–ա հլ. (յատկապէս գործածւում է յոգնակի ձևով) «ամսամուտ, ամսագլուխ, տարեգլուխ» Եւթաղ. հրտր. ՀԱ 1925, էջ 522, Իգնատ. Քղ. 95 (սեռ. -ից). Պրպմ. Յայսմ. Տոմար. (այժմ միայն «ա-

մանոր, տարեգլուխ» նշանակութեամբ է գործուածւում և այն էլ միայն արևմտեան գրականում). որից **կաղանդացոյց** *«օրացոյց» Տոմար։*

=Յն. καλένδαι «ամանոր» բառից փոխառեալ. այս բառն էլ փոխառեալ է լտ. calendae *«ամսամուտ» բառից, որ ծագում է* calo *«կոչել» բայից* (Walde 112). *անցել է նաև ուրիշ շատ լեզուների. ինչ. ֆրանս.* calendes, *անգլ.* calends, *վրաց.* **კალენდი კალենդի**, **კალენდობა კալենդობა** *«ամսամուտ»,* **კალანდა კալանդა** *«կաղանդ», հսլ.* kalandŭ, kolęda *«նոր տարի», ռուս.* **коляда** *«ծննդեան շաբաթը, Ալէլու ման գալը», բուլգար.* koleda *«ծննդեան տօն», ռում.* colindă, *ալբան.* kol'endrɛ, *լիթ.* kalẽdos *«ծննդեան տօն», այստեղից նաև* **календарь** *«օրացոյց» են* (Berneker 544):— *Հիւբշ. 354։*

Ուղիղ մեկնեցին նախ ՀՀՒ և ՆՀՒ։

ԳԻՒ.—Երև. Մկ. Սլմ. Վն. **կաղանդ**, *Խրբ. Ոզմ. Ռ. Սեբ.* **գաղանդ**, *Ասլ.* **գաղաբ, գաղա***, *Սչ.* **գաղանդ՛**, *Պլ.* **գաղբ՛նդ**, *Ախց. Կր.* **կաղբնտ**, *Ակն.* **գաղօնդ**, *Բլ.* **կախանդ**, *Մշ.* **կախնդօզ**, *Շիր.* **կաղինդ**, *ԶՓ.* **գաղունդ**, *Սվեդ.* **գաղունդ**, *ՀՃ.* **գաղընդէս**, *ՀմշՀ.* **գալօնդար**. *այս բոլորը նշանակում են «նոր տարի». իսկ Նխճ.* **գաղանդ, գաղընդ** *«կաղանդին պատրաստուած մի տեսակ քաղցրեղէն», ԶՓ.* **գաղընդաս** *«նոր տարւայ նուէր»։ Նոր բառեր են* **կաղանդել, կաղանդչէք**։

ԿԱՂԱՆԴԵԼ *տե՛ս* **Կալանդ**։

***ԿԱՂԱՆԴԻԿՈՆ** *«կաղանդ, ամանոր» Տոմար։*

*=Յն. *καλανδικόν «կաղանդական, լտ.* calendalis*» ածականանուանից, որ սակայն չունին ո՛չ* Bailly *և ո՛չ էլ* Sophocles:—*Աճ.*

ԿԱՂԱՆՋԱՆՆ *(սեռ. -չանան) «կաթնաբեր և թունաւոր մի բոյս.* tithymalis, *տճկ. սիւտլիյէն (ըստ այլոց* euphorbia herniariaefolia W, *որ տես Տիրացուեան,* Contributo *334)» Կիւրղ. Թգ. (չորս անգամ), սեռ.* **կաղանչանան** *Եզն. էջ 67. յեռնաբար գրուած է* **կաղնչան, կաղնչնան, կաղնճնան, կաղրնչան, կաղանչան, կաղնչան, կաղչնան, կաղրնչայ, կաղշնայ, կաղրնճանա** *Գաղիան. Բժշ. ունինք նաև* **կաղշնակ** *բոյսը «*acanthium *կամ* onopordum acanthium*» Բժշ. (ըստ ՀԲուս. § 1278, տե՛ս և Տիրացուեան,* Contributo *§ 474), որ նոյն բառն է՝ նշանակութեան շփոթմամբ։—Բառիս հարազատ ձևի մասին տե՛ս Վարդանեան ՀԱ 1921, 410։*

ԳԻՒ.—Մշկ. **գաղբշնա**, *Մկ.* **կալբնշրան**, *Խրբ.* **գաբշնա** *(Նաւասարդ 1914, էջ 162)՝ դանագան բոյսերի անուններ են.—փոխաբերական իմաստով է Ակն.* **գաղշնա** *«չոր, վախտ. 2. ժլատ, կծծի»։*

***ԿԱՂԱՊԱՐ** *(սեռ. -ի, ըստ ՆՀՒ ի–ա հլ.) «օրինակ (թէ՛ բարոյական և թէ նիւթական)» Ագաթ. § 687 (նոր տպ.* **գաղափար**). *Ասող. Սարկ. Վրդն. քրզ. սրա ոամիկ ձևն է* **կաղապար** *Ոսկիփ. Տաթև. Հարց. 387 (գրծ.* **կաղապարաւ**)։

=Յն. γαλεπόδιον «ոտքի փայտեայ կաղապար» բառից փոխառեալ. (Նուազականն է **καλόπους** *(սեռ.* **καλόποδος**) *բառի, որ կազմուած է* **κᾶλον** *«փայտ, փայտէ բան» և* **πούς** *«ոտք» բառերի բարդութեամբ)։ Յունարէնից փոխառեալ են նաև պհլ.* **وسلدص** kālpat, kālput, *պազ.* kālbuδ, *պրս.* **كالبد** kālbad, kālbud *«ձև, օրինակ, մարմին», ասոր.* **صلصي** qalbīd, *արաբ.* **قالب** qālib *«կաղապար», որից Թրք.* qalәb *(ամկ. խալիպ) և սրանից էլ բուլգ.* kalъp, *սերբ.* kálup, kàluf, *ռուս.* **калы́бъ**, *չեխ.* kadlub (Berneker 475) *են։ Յոյն բառի հայ տառադարձութիւնը պիտի լինէր *կաղոպոդ. ձայնաւորները կարող են առաջին ա ձայնի ազդեցութեամբ փոխուած լինել (հմմտ.* **դալապր, երախայ—երեխայ, երաշխաւոր—երեշխաւոր**), *բայց կարող են նաև յոյն գաւառական մի ձևից յառաջացած լինել, ինչպէս որ իրօք էլ ունինք* **καλάπους** *տարբերակը փխ.* **καλόπους**, *սակայն δ>r ձայնափոխութիւնը ցոյց է տալիս՝ որ աւելի լաւ է, ինչպէս* **կաղապար**, *նոյնպէս նաև սրա կրկնակ* **գաղափար** *ձևը ծագած համարել հիւս. պհլ. մի ձևից (հմմտ. լամբար)։—Հիւբշ. 163, 354։*

Այվազովսքի, Յղ. Հնչման 15 նոյն ընդ **գաղափար** *և տճկ.* **գալբպ**։ *Ուղիղ մեկնեց Հիւբշ.* ZDMG *36(1882), 130*

համեմատելով պրս. kālbud և յն. καλοπόδιον ձևերի հետ։

ԳԻՒ.—Ախց. Կր. Մկ. Տփ. կաղպար, Ալշ. Բլ. Մշ. կաղբար, Խրբ. գաղբար, Տիգ. գողբmr, ՀԹ. գաղբօյ, գաղբոր, ՀՃ. գաղբօյ։ Նոր բառեր են կաղպարել «ձուլել» (Ռ. գաղբրել «ֆէսը կազապարով արդուկել. 2. Ակն. Ռ. վարպետութեամբ մէկին խաբել),— կաղպարճաշ Ան. «հողէ ամանների կաղապար», կաղպրուկ Բլ. «կաղապարուած»։

+ԿԱՂԱԻԵԼ «ձմեռը օձի սառիլ՝ պաղիլ՝ թմրիլը» Անյ. Հց. իմ. «Կամ նոյն իսկ օձից ազգ, որ ի ջերին աւուրան յար ի գազանութիւն յանդգնի և արեգական ի հարաւ խոնարհեցելոյ՝ կաղաւէ»։ Այս բառից միջին ձայնաւորի սղմամբ ունինք կաղուիլ, որ գտնում եմ գործածուած մէկ անգամ Տարօն. էջ 287 «Օձ... ի ջերմանալ աւուրցն այրի գազանութեամբ և ի ցուրտ աւուրցն կազվի և լինի իբրև զմեռեալ»։ Նոյն բառը գրուած է և կղուիլ ձևով՝ Սիւն. առ անտիոք. «Օձն ի ջերանալ աւուրցն յար ի գազանութեան կայ և ի ցուրտ աւուրան կղուեալ՝ իբրև զմեռեալ լինի» (Գիրք Թղ. 330 ունի նոյն հատուածը և գրում է կաղուեալ)։

=Բնիկ հայ բառ, հնխ. gelā «սառչիլ» արմատի աստիճանի gl- ձայնդարձից. ժառանգներից համմտ. յն. γελανδρόν «ցուրտ, պաղ», լատ. gelu «սառնամանիք», gelidus «սառուցիկ ցուրտ, սառած», gelō «սառչիլ», glaciēs «սառույց», օսկ. γελαν «եղեամ», գոթ. kalds, հբգ. kalt «ցուրտ», kuoli «հով, զով», հհիւս. kala «սառչիլ», kulde «ցրտութիւն», անգլսք. calan «սառչիլ», cól «հով», անգլ. cold «ցուրտ», հոլլ. koud «ցուրտ», գերմ. kalt «ցուրտ», kühl «հով», լիթ. gélmenis, gelumà «կծու ցուրտ», gélti «կծել» ևն (Walde 335. Boisacq 142, Berneker 322, Kluge 237, Pokorny, 1, 622, Ernout-Meillet 395. դնում է նաև հսլ. golotъ «սառույց», որի կազմութիւնը պարզ չէ)։—Աճ.

Բառարանները նկատած չեն թէ՛ բառերի և թէ վկայութեանց նոյնութիւնը։ ՆՀԲ իբր անջատ բառեր մեկնում է կաղաւել «բառ անյայտ. իբր Թողուլ զկատաղութիւն կամ կաղանալ. Թուլանալ, դալարիլ և Թմրիլ», կղուիլ «իբր կուղ կուղ լինել, կծկիլ»։ ՋԲ չունի առաջինը, իսկ կղուիլ նոյն ընդ ՆՀԲ։ ԱԲ մեկնում է կաղաւել վերի ձևով, իսկ կղուիլ, ըստ ՆՀԲ։ Երկրորդ ձևը (կաղուիլ) անծանօթ է մնացած բոլոր բառագիրներին։ Վերի մեկնութիւնը բառի նշանակութեան մասին տուաւ Աճառ. Հայ. նոր բառեր հին մատ. Բ. 246, որ և գեղեցիկ կերպով հաստատում է՝

ԳԻՒ.—կաղուիլ Ակն. ՋՆ. «ցրտից սառչիլ, ընդարմանալ». օր. Ձեռքերը ցրտէն կաղուեր էր։ Կայ և կաղիլ «սառիլ», բայց տեղը և վկայութիւնը անյայտ է։—Հ. կղավարել։

+ԿԱՂԻՆ, ո հլ. «պնտուկ, ֆրնտրխ» Ես. ղ. 13. Ոսկ. յհ. ա. 1. Նոնն. Փիլ. «կաղնի ծառ» Բուզ. գ. 8. Տօնակ. որից կաղնի ՍԳր. արմայական կաղին կոչ. կամ արմակաղին «corylus avellana L» Գաղիան. խոզկաղին Բժշ. կաղնատունկ «կաղինով տնկուած (անտառ)» Բուզ. գ. 8 (ձեռ. կաղնատուն), կաղնապտուղ Փիլ. կաղնահաւ Փիլ. կաղնահաւասուն Փիլ։

=Բնիկ հայ բառ՝ հնխ. gᵛeleno- ձևից, որի պարզականն էր gᵛelē «կաղին». ժառանգ լեզուներից ունինք յն. βάλανος, լատ. glans, glandis, հսլ. želędĭ, լեհ. żołądz', ռուս. żóludъ (նախաձևը *geland-), լիթ. gile, լեթթ. dsile, հպրուս. gile, որոնց վրայ Karolides, Γλ. σσγκρ. 80 ուշադրութիւն է դարձրել. γουάνι. բոլորն էլ նշանակում են «կաղին, կաղնի» (Walde 344, Boisacq 113, Trautmann 82, Pokorny 1, 692, Ernout-Meillet 406):—Հիւրշ. 457։

Այվազովսքի, Յղ. հնչման 15 համեմատից նախ ճշտիւ յն. γάλανος, լտ. glans (բայց նաև Թրք. գայրն) բառերի հետ։ Պատկ. Изследъ. 10 յն. κάρυον «կաղին», նոյնը նաև Арм. reorp. էջ 45։ Ուղիղ են մեկնում Հիւրշ. ZDMG 1881, հտ. 35, էջ 655, Տէրվ. Նախալ. 80, Bugge, Btrg. 31, Bartholomae BB 17 (1891), 92: Հիւնք. լտ. glans բառից կաղնի, որից էլ կաղին. «կայ և յն. βάλανος և դորպպի հնչմամբ՝ γάλανος»։

Մ. Ս. Դաւիթ-Բէկ, Յուշարձան 397 նգալլ. coll, իռլ. coll, հբգ. hasala, կորն. colviden, հբրտն. coll: *Տես* ИАН *1920, 134 և* Яз. и лит. *I 236* յն. κάρυον, *վրաց.* կակալ, հյ. (ըն)կոյգ, կաղնի = *բասկ.* harič «*կաղնի*», *որ և* Հառիճ *յատուկ անունն է. այնպէս որ* կաղնի *և* Հառիճ *ճիշտ միևնոյն բառերն են: Ուղիղ է մեկնում* Pictet, *բ. տպ. Ա. 250:*

ԳԻՒՒ.—Ախց. Կր. Մկ. կաղիճ, *Ղրբ.* կաղին «*խոզկաղին*» *և տկօ՛ղէն «արքայակաղին» (որ և* կտօ՛ղէն), *Գոր. Մշ.* կաղնի, *Ղրբ.* կա՛ղնըէ, *Ոզմ.* կաղնէ՛, *Համշ. Ննխ. Սչ.* գաղին, *Սվեդ.* գաղէօճ, գաղնա, *ՋԹ.* գաղնը՛, *Հճ.* գաղը՛նի, *Ղրդ.* բա՛կուղնը: *Նոր բառեր են* կաղնուկ, կաղնուտ:

ԿԱՂԿ «*կապիճ կամ սառցուած*». *ունի միայն Բառ. երեմ. էջ 153. բայց անդ՝ էջ 158 գրւում է* կարկ «*կապիճ կամ ձգեաց Լամ Հայեաց*»:

ԿԱՂԿԱՂ «*խաղաղ կամ կաղի՛ կամ շալակ կամ վաշխ*». *ունի միայն Բառ. երեմ. էջ 153:*

ԿԱՂԿԱՆՁԵՆ «*շան ձագի վնկվնկալը, աղերսական ձայնով հաջելը*» *Հին բռ. որից* կաղկանձողական *Նար. նոյն են նաև* կզկըճրտալ *(իմա՛* կճկճձտալ «*գայլի ոռնալը*» *Ոսկիփ. =*կզկճձալ *Վրդ. առ 78.* կճկղալ *Վրդ. առ. 132.* կծկճձալ *ՀՀՒ.* կճձաձայն «*քծնող շան ձայնով*» *Մանդ: Վերջիններդ տալիս են* *կինձ *կամ* *կուճձ *արմատը, մինչդեռ առաջինը տալիս է* *կանձ *արմատը:*

=Կրկնուած է կանձ *պարզականից. առանձնացած ձևը գտնում ենք միայն* կճձաձայն *բարդի մէջ. տե՛ս նաև գուռ:*

Աճառ. ՀԱ 1899, էջ 205ա և 235բ այսպէս մեկնելով՝ կանձ *համարում է* ճճաձայն՝ կ *ձայնից կազմուած՝* -անձ *մասնիկով. համմտ.* ճճձկալ:

ԳԻՒՒ.—Առաջին ձևին համապատասխան են Ալշ. Մշ. կօղգրնձալ «*շան կաղկանձելը*», *և իմաստի փոփոխութեամբ* կղկճձալ *Դվ. «մրթմրթալ, բթի տակից մռմռալ»,* կաղկրնձել *Ակն. «մէկից մի բան խնդրելու ժամանակ՝ անհամարձակութիւնից կցկտուր խօսքեր ասել»:—Պարզ արմատն է ներկայացնում նաև.* կօճձալ, *որի կրկնականներն են նաև.* կօճձկօճձալ, *Ջղ.* կոճձկոճձալ, *Ղրբ.* կրճձկօճձալ, *Կր. Ջղ. Վն. Տփ.* կրճձկրճձալ, *Ախց.* գ'ճձ'գ'ճձ'ալ, *Շմ.* կճձկճձօց տալ, *Նբ.* կօճկստալ, *Սլմ.* կզգճձալ, *Վն.* կզմզտալ *(<*կճձմճձտալ ձևից), Ալշ.* կճգզտալ:

ԿԱՂԿԱՋ *տե՛ս Կարկաչ:*

ԿԱՂՃ «*վնասակար մի բոյս, որում*» *Գիրք Թղ. որից առնելով ունի միայն ՀԲուս. § 1272, յիշեցնելով միաժամանակ գաղձ բառի միջաւորութիւնը:*

[ԿԱՂՄԱՇՈՒՆ «tamaris». *ունի միայն Քաջունի, հտ. 2. էջ 113:*

=Սխալ ընթերցուած, որ պէտք է ուղղել գզմազ, գզմազու *(տե՛ս* գզմազ):]—*Ա՛ճ.*

ԿԱՂՄԻ *կամ* ԿՈՂՆԻ «*մախաղ*». *որից* կաղմինոս «*շալակաւոր*». *բոլորն էլ ունի միայն Բառ. երեմ. էջ 153, 166:*

ԿԱՂՆՈՒՏ «*մի տեսակ սէգ*». *ունի միայն ԱԲ: Իրրև գտ. բառ յիշում է Նորայր, Բռ. ֆրանս.* arrête boœuf «*խիստ խորարմատ մի բոյս, որ մինչև իսկ խոփին դէմ առնելով՝ արօրի ընթացքն է խանգարում*»: *Ջունի Ս. լիշանի Հայբուսակը:*

ԿԱՂՇՆԱԿ *տե՛ս Կաղանչան:*

ԿԱՂՋԻՆ, *գրուած նաև* կաղճին, կաղչին «*ցեխ, ծեփի ցեխ, մի տեսակ կաւոտ հող*» *Վասակ. էջ 46, 139, 159:*

ԳԻՒՒ.—Ալշ. Երև. Կր. Մշ. կաղջին, *Մկ. Վն.* կաղճին, *Ոզմ.* կաղճէ՛ն, *Խրբ.* գաղջի, *Սլմ.* կաւճին, *Նր.* կավճին *(զուգակցելով կաւ բառի հետ), Մրդ.* կաւճրնկավ, *իսկ Ակն.* գաղջին *և* գափջին՝ *հողի զանազան տեսակներ են:*

ՓՈԽ.—Քրդ. كاخچين kaxčin «*կաւ*» (Justi, Dict. Kurde, *էջ 321), Ակն. Բրք. գտ.* gapjin, gʸaɣjin—«*կաղջինի երկու տեսակները*»:

ԿԱՂՏԻ «*նաւակատեաց մի ուտելիք է*». *մէկ անգամ յիշուած է Մանդ. էջ 210 = Գիրք Թղ. էջ 239 = Մանդ. սիր. 13 նաւակատեաց ուտելիքների ճոխ մի ցանկի մէջ. «իւղ, ձու ձուկն, պանիր, կոգի, կաղտի, բածին, շճուկ, կաթն, խեր և ձկանմորէ»: Այս ցանկի մէջ* կաղտի *և* բածին *անծանօթ են. վերջինը Նորայր հասկանում է «մի տեսակ աղած*

ձուկ». իսկ կաղտի Հ. Գ. Նահապետեան, Բազմ. 1908, 399 կարդում է կազտի և կը-ցուցում գուռ. կզտի «քամած լոռ, ժաժիկ, խիժ» բառին, որ ինձ այլուստ անծանօթ է։

ԿԱՂՏԻԿ «լեզուն կապուիլ». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած ժէ դարից մի տաղի մէջ (Կարողութիւն մարմնոյս կորեաւ, արագ լեզուս իմ կաղտեցաւ.—Պալեան, Հայ աշուղներ, Ա. էջ 279. եթէ չէ վրիպակ, փոխանակ կապտեցաւ)։ Բառիս համար մի երկրորդ վկայութիւն ունի Հայսմաւուրքում, էջ 600 ա. (Կաղտեցաւ արաջ լեզուս). սրանից է կազմուած կաղտակիչ «լեզուն կապող». «Կաղտակիչ է ամէն լեզույ». Տաղ. հրտր. Հայսմաւուրքում, էջ 600 բ։ (Նկատողութիւն Ստ. Մալխասեանի)։

ԿԱՃ, ի հլ. (գրուած նաև կայճ) «թաղիք» Խոր. Անյ. պորփ. որից կաճակուռ «թաղիքէ շինուած» Վրդն. պտմ. (տպ. Վենետ. էջ 45 կճաակուռ, հրտր. էմ. էջ 64 կճակուռ). կաճեայ «թաղիքից շինուած» Խոր. (որ ՀՀՌ սխալմամբ մեկնում է «պատող»), կաճեղիպակ Մխ. դատ. (ՆՀՌ առանձին առանձին գրում է կաճ ղիպակ, իսկ ԱՌ իրր մէկ բառ). այծենական «այծի բրդից շինուած թաղիք» Անյ. պորփ։

ՆՀՌ (որից և Հիւնք.) համեմատում են թրք. ғeչe հոմանիշի հետ։ Թիրեաքեան, Արիահայ բռ. 195 դնում է պրս. چ, տառադարձութեամբ kaj (այսպէ՛ս և ո՛չ kač), առանց նշանակութիւնը որոշելու։ Բայց այսպիսի բառ չկայ. ԳԴ և Բուրհան գիտեն միայն چ kuč «թեփ ձկան»։

ՓՈԽ.—Հայերէնից փոխառեալ պէտք է համարել թրք. ژ keče «թաղիք», արև. թրք. ژی kiče «թաղիք», չաղաթ. ڇ kičā «գորգ». իսկ Թուրքերէնի միջոցով վրաց. ɸեճա, նյն. κετσές, լհհ. kiecza, հունգ. kecse, խրվաթ. սերբ. kéča, čéča, գնչ. kečas, բոլորն էլ «թաղիք» կամ «եափունջիի նման վերարկու» (Berneker 498)։ Թաղեգործութիւնը հայոց մէջ մշակուած արհեստ էր, ինչպէս որ է այժմ էլ. Համմտ. թաղիք, որ նոյնպէս անցած է զանազան օտար լեզուներիւ։

ԿԱՃ «նուրբ» Հին բռ.=Բառ. երեմ. էջ 153. յիշում է միայն ՆՀՌ, կաճ «թաղիք» բառի տակ։—Տե՛ս և կաճիա։

ԿԱՃԱՊ «նուիրակ խոտը» Բժշ. ունի միայն ՀՌառ. § 1279։

ԳԻՒՌ.—Ղրբ. կա՛ճապ «լեռնային մի բոյս է, որ չորացնելով՝ պահոց կերակուր են պատրաստում»։

ԿԱՃԱՌ, ի, ի-ա հլ. «հանդէս, ժողով, բազմութիւն, համախմբութիւն» Պիտ. Մամբր. Կղնկտ. որից կաճառանոց Ոսկ. եփես. 782. կաճառոյդ «խմբուած մարդիկ» Ոսկ. եբր. 552. կաճառիլ «միաբանիլ, կենակցիլ» Ոսկ. յաւետ. 636. «հետը խօսքի բռնուիլ» Ոսկ. գծ. և ի կոյսն. Պղատ. օրին. կաճառախիտ. Կղնկտ. կաճառական Մագ. բիւրակաճառ «բազմախումբ» Նար. խչ. երկնակաճառ Լաստ։ Գրուած կայ նաև կայճառ։ Արդի գրականի մէջ նշանակում է «գիտունների ժողով, ակադեմիա»։

ՆՀՌ «ուր կայցէ ճառ... որպէս թէ կաճ (թաղիք) առնալ, խիտ, հոծեալ»։ Karolides, Γλ. σσγκρ. 87 կապադովկ. kaǯurevo «գոզանալ»։ Հիմնք. ճառ կամ ճամարտակ բառից։

ԿԱՃԻՆ տե՛ս Կարճին։

ԿԱՃԻՏ կամ ԿԱՏԻՃ «սուրբ կամ նուրբ». ունի միայն Բառ. երեմ. էջ 153 և 157։

Յիշեցնում է եբր. קדש qādēš «սուրբ»։ Համմտ. նաև կաճ «նուրբ»։

ԿԱՃՈՒԿ «խանձարուր» Հին բռ. և Բառ. երեմ. էջ 154. ունի միայն ՀՀՌ. իսկ ՆՀՌ յիշում է կաճ «թաղիք» բառի տակ։ Կոյլաւ, Բառ. գերմ. 680 դնում է իրր «gamasche, սոնապան»։

ԿԱՃՈՒՏ տե՛ս Կնճիթն։

*ԿԱՄ, ի-ա հլ. (մանաւանդ անեզաբար գործածուած.—ո հլ. են ցոյց տալիս կամովմ Սղ. ճխդ. 16, կամով Ոսկ. ես. 419). «ուզելը, յօժարութիւն, ցանկութիւն» ՍԳր. Եփր. թգ. Ոսկ. ես. և փիլիպ. որից կամաւ ՍԳր. Ոսկ. ես. կամով Ոսկ. ես. կամովին Գնձ. Շնորհ. եգես. ըստ կամի Փարպ. ի կամաց Մն. խթ. 5. 34. ա. 13. Ոսկ. ես. յոշ

կամաց *Կոչ.* կամմ են «ուզում է» *ՍԳր. Եւս. քր.* յանկամս *Ոսկ. ա. Թես.* յուկամ *Եւս. քր.* կամիլ *ՍԳր. (յետնաբար նաև* կամենալ *ՅՀ. կԹ. Սարգ.)* կամեցող *Եղն.* կամող *Ոսկ. ա. կոր.* կամելի *Ոսկ. մ. գ. 27,* կամատոր *Ոսկ. մ. ա. 19.* կամագնաց *Ագաթ.* կամածին *Մծբ. Եղն.* կամակ «մեղմ» *Պատմ. աղէքս. 22.* կամական *Եղն.* կամականատար *Ագաթ. Եղն. Փարպ.* կամակցեալ *Սեբեր.* չկամութիւն *Բուզ.* իմիննական *ՍԳր. Ագաթ. Ոսկ. Կոչ.* բաւեկամ *ՍԳր.* լաւական *Խոր.* գլուական *Մծբ.* ջոխականութիւն *ՅՀ. իմ. ատ.* դիւական *Ագաթ.* բշնամանական *Խոր. Փիլ.* չարական *Առակ. ժհ. 11, 13, Եղն. Ոսկ. Ես.* են՝ Նոր բառեր են կամազուրկ, կամայականութիւն, չկամ են՝

=*Պհլ.* kām «կամք, կամեցողութիւն» բառից, որի հետ նոյն են *Հպրս. զնդ. սանս.* kāma, *պրս.* کام «կամք», *հինդ.* kām «փափագ, նպատակ», *գնչ.* kamáma «փափագիլ», *օսս.* k'om «կամք», *պազենդ.* kāmistan «կամիլ, ցանկալ», *պհլ.* kāmītan «կամիլ» են՝ Նոյն արմատին են պատկանում նաև կա՛մ, կամակ, կամակար, կամայ, ակամայ *բառերը, որոնք տե՛ս առանձին՝ Իրան.* kāma *համարւում է կազմուած* -mo- *մասնիկով՝ պարզական* qā- «դիւրը գալ, հաճիլ» *արմատից (ինչ. զնդ.* kā- «տենչալ, ցանկալ»), *որից* -ro- *մասնիկով էլ լտ.* carus «սիրելի», *գոթ.* hors, *հբգ.* huora, *գերմ.* Hure «բող», *լեթթ.* kārs «որ շատ է սիրում, ցանկութեամբ լի, որկրամոլ», *իռլ.* cara և *կիմր.* car «բարեկամ», *իռլ.* caraim «սիրել» են (Pokorny 1, 325, Ernout-Meillet 153)՝—Կամաց *բառի կազմութեան համար հմմտ. Հպրս.* vasaiy «շատ», *պհլ.* vas, *պրս.* bas «շատ, բաւական», *որոնք ծագում են «կամք» բառից և նշանակում են բուն «ըստ կամաց»՝—Հիւբշ. 163՝*

Կամք *բառի համար հետաքրքրական է հներից Երզն. մտթ. 144 «Կամք ասելն բազմաւորական է անուն... վասն թերութեան լեզուիս, զի չունիմք եզական անուն կամացն՝ որպէս բնութեանն. զի դտաք ի լատին բարբառ եզական լինել զբառս զայս և ոչ բազմաւորական. վասն որոյ հարկեալ թարգմանիչքն վասն ոչ ունելոյ եզակի անուն, բազմաւորական եդին»՝—Ուղիղ մեկնեց նախ ԳԴ, որ կցում է պրս.* kām *բառին՝ ՆՀԲ սրա հետ նաև սանս.* kāma՝ *Ուղիղ են մեկնում նաև* Peterm. 25, 30, 34, Windisch. 8, Gosche *24 (վերջինս աւելացնում է և փռիւգ.* κίμερος «հասկացողութիւն»), Böttich. Lagarde *են՝ Դաւիթ-Բէգ, Յուշարձան 397 ն. գալլ* cam, *արմոր.* cam, *ն. իռլ.* cam, *հիռլ.* camm, *Երբրտ.* cam «հակ, ծուռ, զիջում»՝ Karst, *Յուշարձան 404 սումեր.* gam, kam «ծռիլ», gam «հակում, միտք», gin-gan «փափագ»՝

ԳԻՒ.—Ալշ. Երև. Կր. Մրղ. Տփ. կամմ, *Մշ.* կամկ, *Ախն. Խրբ. Սչ.* գամմ, *Տիգ.* գոմմ, *ՋԹ.* գօմմ, գոմմ.—*Ալշ. Ախց. Երև. Կր. Սլմ. Տփ.* կամէնալ, *Մշ.* կամիլ, կամէնալ, *Մկ.* կոմէնալ, *Ոզմ.* կամունալ, *Ննխ. Ռ. Սչ.* գամէնալ, *Տիգ.* գոմէնալ, *ՋԹ.* գամինալ՝—*Հետաքրքրական ձև է Տփ.* կամարկա՛տար՝ *փխ. «կամակատար»՝—Այստեղ են պատկանում նաև* կամաց «յամր, մեղմ» (այս *բառի վրայ տե՛ս* գամ *բառի տակ. սրանից է էնկիւրիի Բրքախօս հայոց բարբառով* gamas «կամաց»), կամով *Ոզմ.* «կամաց», կամ գալ *Երև.* «համաձայնիլ», կամաւորուիլ *Երև. Տփ.* «հաւանիլ, համաձայնիլ, հաճիլ» կամմ տալ *Երև.* «հաճիլ, հաւանութիւն տալ», կամկրուկ «կամացուկ» (*տե՛ս* կամակար)՝ Առանձնապէս նկատողութեան արժանի են *Համշ.* գոմօո, *Ակն.* գըմէր քր «քիչ մնաց որ» (*օր.* կմէր քր պիտի առնէր, կօմօո գլէի պիտի). *երկուսն էլ ծագում են* կամէր *անկատար ձևից, որ այստեղ իբրև անցեալ ապառնիի մասնիկ է գործածուել (Ճանիկեան, Հնութ. Ակնայ, էջ 399)՝*

*ԿԱՄ.—*շաղկապ, որից* կա՛մ քէ, և կամ, և կամ քէ. *բոլորն էլ ոսկեդարեան հայերէն՝*

=Նոյն է նախորդ կամ «ուզել» *բառի հետ և նշանակում է բուն «ուզե՛ս», հմմտ. աշխ.* կուզես աս, կուզես ան *(իբր քէ «կա՛մ այս, կա՛մ այն»)՝ Այսպէս է նաև ուրիշ լեզուների մէջ, ուր կա՛մ շաղկապը ծագում է «ուզել» բայից. ինչ պրս.* خواه xāh «կա՛մ» (բուն

«ուզի՛ր», xāhānīdan «ուզել» բայից), լատ. vel «կա՛մ, կա՛մ թէ» (հմմտ. volo «ուզում եմ, կամիմ»), ումբր. heris... heris «կամ... և կամ» (հմմտ. heriest «ուզում է»), սանս. kam «կամք. 2. կա՛մ թէ»։

Ուղիղ մեկնեց նախ Peterm. 251։ *Նոյնը նաև* Böttich. ZDMG 1850, 356, Lag. Urgesch. 457, *Հիւբշ.* KZ 23, 39, *Տէրվ. Մասիս, թիւ 3192, մայ. 24, 1882 են։ Հինք. կալ բայից։* Karst, *Յուշարձան 420 ՔՔր.* kün, gün, kön, čûn «հարթ, ուղիղ», keñ, eñ «ընդարձակ», em, am «հանգիստ»։

Գիւր.—Ախց. Մշ. Ոզմ. Տփ. կամ, *Սչ.* գամ։

ԿԱՄ «տուգանք»? *տե՛ս Կոփար։*

ԿԱՄԱՔ «հաւասար, à part égale» *Անսիզք, էջ 49 (Եւ այս է սովորութեամբ անսիզն Անտաթոյ ընդ այրն և ընդ կինն, կամաքք, որպէս դրեցաք). «միօրինակ, հաւասարապէս» Սմբ. դատ. 120 (Կամատը քաւութիւն է դրել). «աստիճանով հաւասար» Սմբ. դատ. էջ 3, 29 (Վասն որ թէ երկու մարդ ղիրար ծեծեն, որ չլինան կամաքք. եթէ երկու մարդ յիրար անցնին ի ծեծ և կամաքք մարդիկ լինին)։ Նորագիւտ միջին հյ. բառ։*

Գիւր.—Խոջ. գամաք «ճիշտ դէմը, vis à vis». «հաւասար» և «դէմը» *իմաստների նոյնութեան համար հմմտ. իմ Գաւառ. բառ. էջ 650 բ տրուած օրինակը։*

ԿԱՄԱԽ, ի *հլ.* «պատարագ, ընծայ». *ունի միայն Բառ. երեմ. էջ 154, որից է ՀՀՔ. անատոյգ բառ. տե՛ս* կմախի։

***ԿԱՄԱԿ**, ի–ա *հլ.* «հաճոյք, ախորժելի բան» *Բուզ. Փիլ. ՅՀ. կՔ. «համով ուտելիք, մանաւանդ հիւանդի տանելու. հիւանդի արտուզելիք» Մանդ. սիր. 13, ՅՀ. կՔ. 229 (ըստ յաջող սրբագրութեան Նորայրի, Հայկ. բառաք. էջ 18՝ փխ.* կատակ), *Ոսկիփ. Կոստ. երզն. 117. «ախորժելի, հաճելի, հաճոյական» Փիլ. Պիտ. Նիւս. երգ. ՅՀ. կՔ. «ախորժելի կերպով» Փիլ. Մամբր. որից* կամակագոյն *Փիլ.* կամակութիւն *Փիլ.* անկամակութիւն *Ոսկ. յհ. բ. 36 (հմմտ. նաև* դժկամակ)։

=*Պհլ.* 𐭪𐭬𐭩𐭪 kāmak *բառից փոխառեալ, որի նոր ձևերն են պազենդ.* kāma, *պրս.* کام kāma «փափագ, ցանկութիւն, ուզածը». *Ծագում են նախորդ* kām->կամ *բառից։—Հիւբշ. 163։*

Նշ՚ր կամf *կամ* fիմf *բառից է հանում։* Müller SWAW *39, 406 պրս.* kām, *սանս.* kāma *ձևերի հետ։* Lag. Arm. Stud. § 1087 *համարում է հայերէնի մէջ կազմուած ածական՝* կամf *բառից։*

Գիւր.—Ախց. կամակ, *Մշ.* կամագ, *Սեբ.* գամագ «հիւանդի արտուզելիքը» (*նոյն բառն ունին նաև Ակն. Ախք. Շիր. Բ.*), *Ննխ.* գամագ «ուտելու փափագ, ախորժակ», *Տր.* գոմագ, «ուտելիք բան, ուտեստ, պարէն, մասնաւորապէս հարսանեաց կամ հիւանդանոսի նուէր», որից անկամակ *Ակն.* «չուտող չըխմող (հիւանդ)», 2. *Սեբ.* «առանց կամակի մնացած»։

***ԿԱՄԱԿԱՐ** «ինքնակամ, ազատ, ինքնիշխան» *ՄԳր. Եփր. եվ. Ոսկ. յհ. ա. 11. Եգն. Մծբ.* որից կամակարել «ուզածի պէս վարուիլ» *Բ. եզր. դ. 20.* ի կամակարուց *Կոչ.* կամակարագոյնս *Կորիւն.* կամակարաբար *Պիտ.* կամակարապէս *Պիտ.* կամակարութիւն *Յոր. լգ. 19. Ոսկ. յհ. ա. 9, 11. Կոչ. Եգն։*

=*Պհլ.* 𐭪𐭬𐭩𐭪𐭠𐭫 kāmkār «բացարձակ, ինքնակամ» *ձևից, որից նաև պհլ.* 𐭪𐭬𐭩𐭪𐭠𐭫𐭲𐭠𐭫𐭲 kāmkārtar «կամակարատոյն», kāmkārīh «բացարձակ իշխանութիւն»։ *Սրա հետ նոյն են պրս.* کامگار kāmgār «կամարար, ինքնակամ, երջանիկ, բարեբաստիկ», kāmgārī «երջանկութիւն, կարողութիւն», *սանս.* कामकार kāmakāra «ազատակամ, ազատակամութիւն», कामकारेण kāmakārēṇa «ազատակամ, ինքնակամ»։ *Այս բոլորը կազմուած են* kāma «կամք» և kār «անել, գործել» *բառերից ճիշտ այնպէս՝ ինչպէս հյ.* օգտակար և վնասակար *ձևերը։—Հիւբշ. 163։*

Ուղիղ մեկնեց նախ Lag. Btrg. baktr. Lex. *41, 12՝ կցելով պրս.* kāmgār *ձևին։ Նոյնը նաև Տէրվ. Նախալ. 69։*

Գիւր.—Իմաստի զարգացմամբ կամկար *Ալշ. Ակն. Բզ. Մշ. Ննխ. Զրս. «կամաց, դանդաղ», որից* կամկռուկ «կամացուկ» (*Մխիթար աբբա, Դուռն քերականութեան, էջ 84*),

բառիս ունելի հին գործածութիւնն ունին Փոնց. 137, Առաք. պտմ. 72 և 84 (Կամկար գնացիւք եհաս ի Թարվէզ. Կամկար և հանդարտ գնացիւք հասին մինչև յերկիրն Ղարաբաղու). Գր. Աղթամարցուց վկայութիւնները տե՛ս Ամատունի, Հայոց բառ ու բան, էջ 326 բ, ուր ունինք նաև կամկարագնաց «հանդարտաքայլ» Տաղ։

— ԿԱՄԱԿՈՐ, ի–ա հլ. «ծուռմուռ» ՍԳր. Ոսկ. ես. մաթ. դաղ. տիմ. եզն. որից կամակորս «թիւրութեամբ» Սիր. դ. 18. կամակորախօս Եփր. Գ. կոր. 117. կամակորել «ծռմռկել, խանգարել» ՍԳր. Ոսկ. ա. տիմ և ես. Կոչ. եզն. կամակորութիւն «ծռմռութիւն, թիւրութիւն» Երեմ. գ. 28. Ոսկ. ես։ (Յետին հեղինակները սխալմամբ բառս կարծելով կամ և կոր բառերից բարդուած՝ գործածում են «յամառ» իմաստով. և այս սխալ նշանակութիւնը անցել է նաև արդի ղրականին)։

=Կազմուած է կամ+կոր բառից. առաջինը թարմատար մասնիկ է, որ ձևացած է կոր «ծուռ» բառի նախաձայնով և մ յաւելուածով, և իբրև աստկացուցիչ ածել է կոր ածականի վրայ։ Այս ոճով են կազմուած հին հայերէնի մէջ սափաստուտ «շատ ուռած», ծամածուռ «բոլորովին ծուռ» և նոր գաւառականներում ճէպ–ճերմակ, կաս–կարմիր, նոփ–նոր, թրք. düm-düz կամ düp-düz, sip-sivri ևն։

ՆՀՔ դնում է կամ արմատը՝ որից հանում է հյ. կամակոր, կարկամ, կամար, կամուրջ, լծ. յն. գա՛մբի, գամբի՛լօս, պրս. էչման, թրք. գամպուր, եամփուրի, էմէր և հյ. ծամ, որից ծամածուռ։ Հինք. կամակոր=կորակոր, պրս. խէմ «ծուռ» բառից։ Bugge KZ 32, 51 կամ «ծուռ» արմատը գտնում է նաև կարկամ բառի մէջ և մեկնում է իբր հիւլ. camm «ծուռ», կիմր. cam «ծուռ, սուտ», յն. σκαμβός «ծուռ»։ Pedersen, Հայ. դր. լեզ. 75 մերժելով այս, կցում է յն. γαμψός «կոր» բառին։ Karst, Յուշարձան 404 սումեր. gam, kam «ծռել»։ —Ուղիղ մեկնութիւնը տուաւ նախ Այտընեան, Քննական քեր. էջ 310, որից անկախաբար նաև Աճառ. (անտիպ)։ ԳԻՒ.—Ալշ. Մշ. կամագոր «յամառ»։

ԿԱՄԱՀԱՐԵԼ «արտահարել». ունի միայն Բառ. Երեմ. էջ 154. ի՛նչ լինելը յայտնի չէ։

ԿՆԱՄԱՄ «ձիու տեսակ կամ անուն». Նոթագիտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Ուռհ. 143 «Եւ տեսեալ զայն Դաւաւտանոսն, ձայն տուեալ ձիոյ և ասէր թէ «զկամամն մատուցէք ինձ»։

*ԿԱՄԱՅ, ի հլ. (նաև յգ. սեռ. –այց) «կամաւոր, կամաւ, ազատ կամքով» Ա. մակ. ժգ. 29. Ոսկ. մ. ա. 6 և Կող. որից կամայական «կամաւոր» Ագաթ. կամայականք «կամաւոր նուէրներ» ՍԳր. կամայականութիւն (նոր բառ). Համմտ. նաև ակամայ, որ տե՛ս առանձին։

=Պհլ. գւռ. *kāma «կամաւ» ձևից, ինչպէս ակամայ գալիս է պհլ. գւռ. *akāma ձևից. համմտ. պազենդ. akam «ակամայ», սանս. kāma akāma «կամայ ակամայ»։ Գրական պահլաւերէնը գիտէ kāmak, akāmak ձևերը, որոնցից սակայն չեն կարող յառաջանալ հյ. կամայ, ակամայ։ Տե՛ս նաև կամք։—Ա՛ճ.

ՆՀՔ սանս. kāmam «կամաւ»։ Müller WZKM 10, 354 այ վերջաւորութիւնը համարում է սեռ.-բաց. հոլովի նշան, ինչպէս գտնում ենք շատ մակբայների վրայ։

*ԿԱՄԱՍ «մի տեսակ կապայ» Վրք. հց. Ա. 709. որից մազեկամաս «մազեղէն ըգեստ» Վրք. հց. Բ. էջ 289. ուրիշ վկայութիւն չկայ։

=Յն. κάμασον, καμάσιον «մի տեսակ դրսի զգեստ՝ մի կողմը միայն գործուած» (Sophocles 624 բ). Համմտ. Վրք. հց. τρίχινον καμάσιν λευκόν «սպիտակ մազեկամաս»։ Յն. բառի հետ նոյն է արաբ. قميص qamīṣ «բամբակեայ թելէ շապիկ» (Կամուս, Թրք. Թրգմ. Բ. 396), որ արամերէնից փոխառեալ պէտք է լինի։ Սրա հետ համմտ. նաև արաբ. قماش qumaš «կերպաս», որից փոխառեալ են արևել. թրք. قماش qumaš, قماج qumaǰ, թրք. և քրդ. قماش qumaš, բուլգար. kumaš, սերբ. kùmaš, ռում. camaș, ռուս. кумачъ, кумашь,

ալբան. kumáš, նյն. κουμάσι (Bern. 643):—
ՆՀԲ կցում է հյ. ճամուկ, արաբ. գամըս, իտալ. camicia, պրս. jām, jāma «զգեստ» բառերին։ Հիւբշ. ZDMG 36(1882), 131 արաբ. gumāš բառից փոխառեալ, իսկ Arm. Gram. 268 կասկածով արաբ. qamīṣ ձևից փոխառեալ։ Առաջին անգամ Մառ ЗВО 13, 31 համեմատեց յն. ձևի հետ, բայց հայերէնն բառը դնում է ասորական փոխառութիւն։

ՓՈԽ.—Վրաց. კამაսი կամասի «կապայ», որից თმისა კამასი թմիսա կամասի «մազէ կամաս» փոխառեալ է հայերէնից՝ ըստ Մառ (անդ)։

*ԿԱՄԱՐ, ի–ա հլ. «մէջքի գօտի» ՍԳր. Ոսկ. ես. 439. որից կամարածու «գօտի կապող» Ագաթ. կամարաւոր «գօտի կապած» Ոսկ. մ. ա. 23. Վրք. հց. լայնակամար Ոսկ. յհ. ա. 1. աստուածակամար «ծիածան» (ինչպէս գուռ. ծիրանի գօտի, կաճաշ-կարմիր գօտի՝ նոյն նշանակութեամբ) Շիր. էջ 45։

=ՊՀլ. ԿՃ ց kamar «գօտի» բառից, որի հետ նոյն են պրս. کمر kamar և գնդ. kamarā- «գօտի»։ Պրս. բառը փոխ են առել նաև քրդ. kemer, աֆղան. kamar, թրք. kemer, օսս. kamári, վրաց. კამარა կամարա, ჯამარი ջամարի, ասոր. ḥ ḥ gamrā, gəmārā «կամար», որից յետ դառնալով նորից պրս. | کمر kamrā «գօտի, մէջքի կամար»։— Հիւբշ. 164։

Այսպէս, բայց յաջորդի հետ միացնելով են մեկնում ԳԴ, ՆՀԲ, Տէրվ. Altarm. 31: Առանձին են դնում Lag. Urgesch. 936, Pictet II 213, 247 եւն։

ԳԻՒՒ.—Գործածական են թուրքերէնից և պարսկերէնից փոխառեալ նոր ձևեր. այսպէս օր. Ջղ. ջամար «գօտի», մինչդեռ կամար «շէնքի կամար»։

*ԿԱՄԱՐ, ի–ա հլ. «շէնքի կոր ճակատ, կամարակապ շինուածք» ՍԳր. որից կամարանի «կամարներ» Մագ. մեծ են, էջ 27, 72. կամարակապ ՍԳր. կամարաձև Ա. եզր. դ. 34. կամարակիցք Արծր. կամարապատ ե-ղեկ. խ. 22. կամարազարդ Անան. եկեղ. լուսակամար Գնձ. միջակամար ԱԲ. երկնակամար Անան. եկեղ. կամարաշէն (նոր բառ) են։

=Յն. καμάρα «կամար, կամարաձև ծածքով որևիցէ շէնք, կամարաւոր սեննեակ» բառից փոխառեալ։ Այս բառը շատ հին է. Հերոդոտոս Ա. 199 գործածում է καμάρη ձևով. փոխառութեամբ անցել է շատ բազմաթիւ լեզուների, ինչպէս լատ. camera, camara «կամարաւոր ծածք, կամար, սեննեակի կամար», իտալ. camera «սեննեակ», սպան. cámara, ֆրանս. chambre, հիւլ. camra, հբգ. chamara, գերմ. Kammer (բոլորովին ուրիշ բառ է և սրանց հետ կապ չունի Zimmer «սեննեակ» Kluge 544, Walde 242, որի հին ձևն է հհիւս. timbr, գոթ. timrjan «կառուցել»), հալ. komara, բուլգար. kemer (ուրիշ բազմաթիւ սլաւական ձևեր տե՛ս Berneker 556), լիթ. kamarà, ալբան. kamare, վրաց. კამარა կամարա և թրք. kemer «կամար»։ Վերջիններիս, ինչպէս նաև հայերէնի մէջ, ծագումով տարբեր երկու բառեր մէկ ձևի են յանգել պատահարար, այն է կամար «գօտի» և կամար «ազեղնաձև», որոնք պէտք չէ շփոթել իրար հետ։ Ցոյն բառը, որ այս բոլորի աղբիւրն է, ըստ վերջին դիտական բացատրութեան, հնդևրոպական ծագում ունի. ցեղակիցներն են լտ. camurus «կոր, կամարաձև», սանս. kmárati «կորանալ», հբգ. himil «սեննեակի կատուրը, երկինք», գերմ. Himmel «երկինք», հոլլ. hemel «կատուր» են (Walde 120, Boisacq 401—2, Kluge 238, Pokorny 1, 349՝ հնխ. qam-, qem- «կորացնել, ծռել» արմատի տակ)։—Հիւբշ. 164։

Առհասարակ խառնել են նախորդի հետ. այսպէս ԳԴ պրս. էմմէր, ՆՀԲ թրք. էմմէր, յն. գամա՛րա, լատ. գա՛մէրա, վրաց. կամարա։—Lag, Armen. Stud. § 1089 յն. καμάρα դնելով իրանեան փոխառութիւն, իրանեան է համարում նաև հայը։ Տէրվ. Altarm. 31 և Նախալ. 68 բոլորն էլ իրար է միացնում և հանում հնխ. kam «կորանալ» արմատից։ Հիւբշ. 164 դրաւ երկուսի տարբերութիւնը, առաջինը իբրև իրանեանից, երկ-

բորդը յունարէնից։ Karst, Յուշարձան 401, 402 տումեր. amar «երկնակամար», 404 gam, kam «ծռել»։ Մառ, Яф. сборн. 2, 141 յաբեթական kam «երկինք» արմատից, որից նաև վրաց. ցա «երկինք», հայ. կապոյտ, յն. κυάνεος ևն։

ԳԻՒ.—Ալշ. Ախց. երև. կր. Մկ. Մշ. Մրղ. Սլմ. Ջղ. Տփ. կամար, Նխ. գամար «կամար», Իգդ. կամար «օրօրոցի կամարը», Խրբ. գամար «երկնակամար», ՋՖ. գամօյ, գամոյ «վառարանի կամարը» նոր բառ և կամարծածուկ Սեբ. «օրօրոցի վրայի ծածկոցը»։

ԿԱՄԱՐՏԵԼ «սահման բաշխել». ունի միայն ՓՔ, որի հետ նոյն է կամարտայել «սահմանել» Բառ. երեմ. էջ 154։

ԿԱՄԲ, կամ կամբի, կամփի, կամբոս.— անստոյգ ընթերցուածներով և անորոշ նշանակութեամբ մի բառ. ունի միայն ՀԲուս. § 1282—3. հաւանաբար նշանակում է մի տեսակ բոյս։ Ըստ Նորայր ՀԱ 1923, 497 պէտք է ուղղել կաղամբոս, որ է «կաղամբ»։

ԿԱՄԲԱԿ «նախնի թագաւորաց կօշիկ կապուղ կաշիէ». ունի միայն ԳԲ, որի աղբիւրն է անշուշտ Քաջունի, հտ. Գ. էջ 113։

ԿԱՄԲԱՆՔ կամ **ԿՄԱԲԱՆ** «գիրք». ունի միայն Բառ. երեմ. էջ 154 և 164։

ԿԱՄԻԱՂ «շատինակ». ունի միայն Բառ. երեմ. էջ 154. (այս բառն էլ նշանակում է «մի տեսակ փայտէ աման». տե՛ս իմ Գաւառ. բառ. էջ 823 ա)։

ԿԱՄԻՏ «կօճող». ունի միայն Բառ. երեմ. էջ 154. ինչ լինելը յայտնի չէ։

ԿԱՄԼԵԼ «մէջքը կապել». մէկ անգամ ունի Ոսկիփ. «Զարկի պատառն, զոր Տէրն կամլեաց ի խաչին, որ արեամբ թացաւ»։

ՆշՔ դնում է իբր անստոյգ բառ. բայց բոլորովին ստոյգ է, ինչպէս հաստատում է՝

ԳԻՒ.—Գնձ. կամլել «մէջքին կապել». Հալաւի վրայ կամլած ունէր Թիրմանի գօտիկ. (Մամիկոնեան, Հազարից մէկը, էջ 40)։

ԿԱՄՆ, ն հլ. (-մին, -մունք, -մանց) «ցորեն կալսելու սայլ, ճառճառ» Ոսկ. մ. բ. 27. Գէ. ես. որ և կամ, ի-ա հլ. Բուզ. դ. 24՝ սեռ. կամացն ձևով. (Վարդանեան ՀԱ 1921, 410 ուղղում է կամաճց, որով ջնջւում է կամ ձևը և Բուզանդի օրինակն էլ անցնում է կամն ձևին), որից կամնասայլ ՍԳր. Ոսկ. մ. ա. 11։

Հիւնք. կամ բայից։—Մեր բառին շատ մօտ են հնչում հսլ. gumĭno, ռուս. гумно́, գւռ. гувно́, ուկր. humnó, պոլաբ. g'ä'umnö, լեհ. gumno «կալ» են։ Ըստ Pogodin (տե՛ս Berneker 362) այս բառերը ներկայացնում են *gumĭno- բարդութիւնը, ուր gu- <հնխ. gu̯ōus «կով, եզ», mĭnǫ męti=լիթ. minù, minti «կոխոտել»։ Հայերէնի հետ համեմատութիւնը առաջարկեցի Meillet-ին, որ մերժեց ընդունել (21 ապր. 1927)։

ԳԻՒ.—Գոր. Շմ. կա՛մնը, Ղրբ. կա՛մնը, կա՛վնը, Ալշ. Ախց. երև. կր. Մկ. Մշ. Ոզմ. վն. կամ, Խրբ. Սբ. գամ, Մծ. գ՚ոմ, Այն. գէմ (Բիւր. 1900, 671), ՋՖ. գօմ, գոմ, Սվեդ. գում։ Նոր բառեր են կամնել, կամնագլուխ, կամնակեռ, կամնաքար, կամնատայ։

ՓՈԽ.—Քրդ. ﻛﺎﻡ kam «կամ, ճառճառ» (Justi, Dict. Kurde, էջ 323)։

ԿԱՄՄ—արմատ առանձին անգործածական. գտնւում է կամշաճալ և կամշոտիլ անստոյգ բառերի մէջ, որոնք մի մի անգամ գործածուած են՝ առաջինը Տաղ., երկրորդը Փիլ. լին. 374 «Կուրացեալ Հրէիցն կամշացեալ սրտիւք, կամին սպանանել զկեանս ազգի մարդկան. Անուամունք ոգւովն աչօք կուրացեալք և կամշոտեալք... հայել ոչ կարեն առ ի տեսիլս իմանալեացն»։ ՆՀԲ այս երկու բառերն էլ մեկնում է «իբրու կաշխանալ, խստանալ կամ պակասիլ ի լուսոյ», ՓԲ «կարծրանալ, խստանալ», աւելացնելով նաև կամշոտ «կամապաշտ, յամառ», իսկ ԱԲ «կամապաշտութիւն ընել, խստանալ և կուրնալ սրտի»։

+**ԿԱՄՈՒՐՋ**, ի-ա հլ. «ջրի վրայ շինուած անցք» Ես. լէ. 25. Բ. թագ. իգ. 21. Ոսկ. մ. բ. 8. Եփր. պհ. որից կամրջախելք «կամուրջի գլուխը» Ճառընտ. կամրջել «կամուրջ

ձգել» Պտմ. աղէքս. նաւակամուրջ Խոր. Ղեւոնդ. Կամրջանոր (տեղական յատուկ անուն). գրուած է իբր ոմկ. կամուրճ, կարմուճջ և կարմունճ Բ1կր. 26, 55, կարմուջ Վկ. գէ. 58։

=Բնիկ հայ բառ. հմմտ. յն. γέφῡρα «պողոտայ, յատնաբար՝ կամուրջ», որ ուրիշ բարբառներում ժողովրդական ստուգաբանութեամբ ստացել է διφοῦρα, δίφουρα, δέφυρα, βέφυρα, βουφόρος, βλέφυραν ձևերը։ Ուրիշ լեզուների մէջ պահուած չէ սոյն հնդեւրոպական բառը, անշուշտ կրօնական նախապաշարմունքով, և փոխանակուած է դանազան նոր դարձուածներով. ինչ. սանս. «կապ», իրան. «անցք», լտ. «ճանապարհ» են։ Հայերէն ու յունարէն ձևերը ապահովապէս նոյն են իրար հետ, բայց իրար այնքան աննման, որ կարելի չէ վերականգնել հնդեւրոպական նախաձևը։ Jacobsohn (Wörter und Sachen, Kulturhistorische Zeitschrift, Հտ. II, էջ 198) յունարէն բառի հետ է միացնում լտ. vibia «գերան», այս վերջինը դնելով հնխ. g^{w}ebhia ձևից։ Արմատը ենթադրելով g^{w}ebh- կամ gebh-՝ հայերէնում սպասելի էր *կաւուրջ. մեր մ ձայնը կարող է մի անծանօթ ձայնական օրէնքի և կամ ժողովրդական ստուգաբանութեան արդիւնք լինել։ Ըստ Meillet նախաձայնը անշուշտ g^{w} է, ինչպէս երևում է կրետական δεφυρα, բէովտ. βέφυρα և յոն.-աւտտ. γέφῡρα ձևերի համեմատութիւնից. իսկ հյ. ա յառաջացել է նախաւտր e>ե-ից՝ ազդեցութեամբ յաջորդ վանկի ու ձայնաւորի. հմմտ. վեց և վաթսուն (փխ. *վերսուն)։

Նախ Klaproth, Asia polygl. էջ 99 պրս. كمر kamar «կամար» բառի հետ։ Նշ՚ կամար ջուրց։ Lag. Urgesch. 937 և Justi, Zendsp. 78 կամար բառից։ Յոյն ձևի հետ համեմատեց առաջին անգամ Müller SWAW 88(1877), 14 և Armen. VI (1890), էջ 5, նախաձևը դնելով ըստ Curtius՝ *gambhura։ Իրեն են հետևում Bugge, Btrg. էջ 22 և Bartholomae, Stud. II. 24։ Bugge հայ բառը դնում է հնխ. gambhurja <gṃbhṛja, իսկ յոյնը հնխ. gebhurja. սրանց է կցում նաև սանս. gámbhan-, ghambhara- «խորութիւն, հիմ», gabhīra-, gambhīra- «խոր», ըմբռնելով կամուրջը իբրև խորութեան վրայ ձգուած բան։ Հիւբշ. 457 անապահով է գտնում այս բոլորը։ Հինք. կամար ջուրց կամ պրս. kamarća «փոքր կամար»։ Bartholomae IF 2(1893), 269 հլ. kamene, գոթ. himinis ձևերի հետ։ Brugm. Grdr.^{2} 1, 546 լիթ. akmů, հլ. kamy «քար» բառերի հետ։ Hirt BB 24 (1899), 286 լիթ. akmů, հլ. kamy «քար» և փռիւգ. Ἀκμονία քաղաքի անուան հետ։ Patrubány ՀԱ 1906, 366 հաշտեցնելու համար γέφυρα և կամուրջ ձևերը՝ ենթադրում է արմատը հնխ. gembh- «ծռել», որից և յն. γαμφός «ծուռ»։ Fick KZ 43, 137 պրս. kamar «կամար» բառից։ Karst, Յուշարձան, էջ 420 ալթայ. qobrak, չաղաթ. köprük. թրք. köprü, աւտրպ. körpi «կամուրջ» բառերի հետ։ Վերջին անգամ վերի ձևով մեկնեց Meillet BSL 22, 17։ Տառ ИАН 1917, 331 ավար. ղամուրի ծո «կամարով կամուրջ»։ Autran, Sumérien et indo-europ. 1925, էջ 155 յն. բառը միացնում է սումեր. gušur «գերան, կամուրջ» և աւտր. גשר gəšur «կամուրջ» բառերի հետ։

Գիմ.—Ագլ. Ալշ. Գոր. Երև. Ղրբ. Մկ. Մշ. Շմ. Ջղ. Սլմ. Վն. Տփ. կարմունջ, Ախց. Կր. կարմունջ՛, Սեբ. զարմունջ, Ոզմ. կարմօնջ, Յղ. կոմիւնջ։ Նոր բառեր են կամրջակ, կամուրջտախտակ, կամուրջտուն, կամրջուկ։

Փոխ.—Patrubány SA 1, 311 Հունգ. Karmacs տեղական յատուկ անունը հայերէնից է դնում։—Беридзе, Груз. глосс. по имер. и рачин. говор. 1912, էջ 23 հայ բառին է միացնում վրաց. գուռ. կիպորճի «կամրջի տեղ ծառայող գերան», որ ըստ իս հայերէնից փոխառութիւն է և պահում է նախաւտր շրթնայինը (փոխանակ մ)։

*ԿԱՄՓՍԱԿ (ի–ա հլ. ըստ ՆՀԲ, բայց միայն կայ ներգ. ի կամփսակի Գ. Թագ. ժէ. 12) «իւղի կուժ» Գ. Թագ. ժէ. 12, 14, 16,

Ոսկ. փիլ. 357. և կափսակ «սրուակ, հեղուկների մի տեսակ չափ» Շիր. էջ 31. «ձէթի չիշ» Վրք. և վկ. Ա. 270. Վկ. գէ. 26. գրուած է և կամսակ Աթան. էջ 25։

=Յն. καψάκης, καψάκης «իւղի կուժ», սափոր», որից նաև լտ. capsaces. յունարէն բառը գործածուած է Ս. Գրքի վերոյիշեալ հատուածներում և Թարգմանութեան ժամանակ փոխ է առնուած պարզ տառադարձութեամբ։—Հիւբշ. 354։

Ուղիղ մեկնեց նախ Աւգերեան, Բացատր. չփ. և կշռ. էջ 99։ Նոյնը նաև ՆՀԲ։—Lag. Arm. Stud. § 1093 յունարէն բառը մի պարսկական բառի պարթեւական ձևն է համարում։

ԿԱՄՔ. մի տեսակ անստոյգ բա՞յս. գտնւում է միայն կամճաջուր բարդի մէջ, որ կիտէ միայն Ասար. ըստ ՀԲուս. § 3339։

ԿԱՅ ի հլ. (մանաւանդ աննեղաբար գործածուած) «կայան, կեցած տեղը, տեղ, վիճակ» ՍԳր. Եզն. Ոսկ. որից կայան «կենալիք տեղ» ՍԳր. «բնակարան, գտնուած տեղը» Վեցօր. «Հաստատուն» Ագաթ. կայացնել Փիլ. կայանացնել Շիր. կայանաւոր Ագաթ. կայարան Գնձ. կայեան Ոսկ. ես. Ագաթ. կայուն Փիլ. Պիտ. մշտակայ Շիր. յարակայ Փիլ. կայկայիլ Խոր.=կակայիլ Արծր. Հրատր. Պատկ. էջ 289. շկայ «անցաւոր» Ոսկ. փիլ. առկայ «արև եղած օր» Վեցօր. 187. լուսնակայ Եզն. պարզկայ Վստկ. ոտնկայ Նաւում. գ. 11. Բուզ. դ. 2. մերձակայ Ոսկ. յհ. բ. 35. մօտակայ Ոսկ. մ. գ. 12. Եփր. ծն. եաւակայք Նիւս. կազմ. ջրկայ Մծբ. բացակայ Նիւս. կազմ. ներկայ Ոսկ. եբր? ՅՀ. իմ առ. ենթակայ Փիլ. երևակայել Սահմ. գերակայ Պիտ. դիմակայ ՅՀ. կք. հետաքրքրական բառ է կայական՝ որ «կիսահեղուկ» իմաստով ունի Վրդն. սղ. ճր. էջ 370 (Յորդ իբրև զջուր և կայական իբրև զձէթ). ճեռակայ, կայարանապետ, կիսակայարան (նոր բառեր) ևն։ Բառիս երկրորդ արմատաձևն է կաց. որից կաց մնաց Ա. մակ. ե. 53 կամ կաց և մնաց «յետևը մնացածները» Եղիշ. կացուցանել ՍԳր. «Հաստատել, ապացուցանել» Ուխտ. բ. 100. կացուրդ «Հանդէս, ոտն», Սեբեր. 92. «մի տեսակ հոգևոր երգ» Գնձ. Տաղ. (ըստ Մ. Աբեղեան, Արրատ. 1912, 732 տարբեր է կցուրդից. կցուրդները հին ժամանակ Սաղմոսներից յետոյ և նրանց կից երգուող փոքրիկ հոգևոր երգեր էին, մեծ մասամբ շինուած Ս. Գրքի պատրաստ խօսքերով. իսկ կացուրդները սրանցից անկախ յօրինուած սմբողջ ոտնական երգեր էին). կացրդական «ոտնական» Պիտ. որ և կացարդական Մագ. (ըստ Մէնէվիշեան ՀԱ 1911, 668). կացրոիլ «հաւաքուիլ» Պիտ. պայծառակացուրդ «մեծահանդէս» Պիտ. կացարան Նար. կացոց ՅՀ. կք. կացուն Ագաթ. կամակացոյց Մծբ. ընդդիմակաց Թուղ ժ. 9, Եզն. Ոսկ. ես. վերակացու ՍԳր. Կոչ. մշտնջենակաց վեցօր. մօտակաց Ոսկ. ես. և մ. ա. 15. Կիւրղ. թգ. բազաւորակաց Կորիւն. իմճնակացութիւն Եզն. ևն. երկուսի գուտ արմատն է կա-, որից բայական ձևով կալ «կենալ, կանգնիլ. 2. երևան գալ. 3. լինել. 4. ապրիլ. 5. դադարիլ, վերջանալ. 6. սպասել» ՍԳր. Եզն. Կոչ. Ագաթ. կալ ի վերայ «հաստանալ, վերահասու լինել» Ոսկ. մ. ա. 6. «վերակացու լինել» ՍԳր. հակառակ կամ ընդդեմ կալ «դէմ կենալ» ՍԳր. դիմակալ ՍԳր. ներկալ Փիլ. այլաբ. ենթականալ Ճառընտ. ևն։ Զարմանալի ձև ունի յոտնկելեաց «ոտքի վրայ ուղիղ կանգնած» Ոսկ. Եփես. 927. Ա. Թագ. իբ. 20։

Նախ ԳԴ պրս. ᵒᵏ gāh բառի հետ համեմատում է հյ. կայ, կայանիմ: Justi, Zendsp. 300 սանս. sthā, զնդ. stā հոմանիշներին է կցում, որոնք ո՛չ մի նմանութիւն չունին։ Մորթման ZDMG 26, 543 բևեռ. kaiuk, 577 և 689 kiasdu, kaçidu ձևերի դէմ է դնում կալ. կացեալ: Meillet MSL 8, 279 յն. βέβαιος «հաստատուն» բառի հետ, որ կրկնաւոր է համարում։ Հիւնք. գալ բառից կալ, իբր Թրք. qalmaq «մնալ». կայ և կաց դնում է կամ շաղկապից և կացուրդ «հանդէս» կցել բայից։—Scheftelowitz BB 29, 15 սանս. gā «երթալ» և յն. βάσις «քայլք» ձևերի հետ։ Pedersen, Հայ. դր. լեզ. 227 սանս. agam, յն. ἔβην և հյ. եկն բայե-

րի հետ։ Գ. Փառնակ, Անահիտ 1906, 233 հայերէնից փոխառեալ է դնում ալբան. kam *«եմ, ունիմ» ապառնի կազմող օժանդակը։* Karst, *Յուշարձան 404 սումեր.* gar, gal *«կանգնիլ, կալ», 405* ik *«կանգնիլ, կալ»։ Թիրեաքեան, Աբրիահայ բռ. 196 պրս.* ﮔﺎﻩ gāh *«տեղի, տեղ», հմմտ.* ﺍﻳﺴﺘﮕﺎﻩ īstgāh *«կայարան»։*

Դիմ.—Բայական ձևով գոնւում է ամէն տեղ՝ կամ, կաս, կա (ինչպէս՝ Ալշ. Ախց. Մշ. Վն. Տփ. Երև. կամ, կաս, կա, *Խրբ. Ննխ. Պլ. Սեբ.* գամ, գաս, գա, *Ագլ.* կամ, կաս, կա, *Հճ. Զթ.* գամ, գաս, գա*). ունինք նաև* կենալ *«կալ, գոնուիլ կամ կանգնիլ» նշանակութեամբ, որ ծագում է* կայանալ *ձևից (ինչ. Տփ.* կէնալ, *Ասլ. Պլ. Ր.* գէնալ, *Սչ.* գենալ. *Տիգ.* գէնալ, *Զթ. Հճ.* գինալ, *Համշ.* գէնուշ*)։ Սրա անցողականն է* կեցնել *«կանգնեցնել», որի հետ նոյն է միջ. հյ.* կեցնել *«ապացուցանել», կեցուրիւն «ապացոյց» Անսիզք 35 ևն։ Նոր բառեր են* կայանք, կայենք *«ինչք, հարստութիւն, 2. որոշում, հզրակացութիւն», կեցուածք, կեցուկի ևն։ Ատանայի Բրքախօս հայերի բարբառով էլ ունինք* վերաղասու *«վերակացու»։*

ԿԱՅԹ, *ի հլ. «կողով. 60 լիտր պարունակութեամբ մի չափ է» Ա. Թագ. իե. 18 (կայթ մի չամիչ). Անան. գիտ. 26, 28 (գարիի համար ասուած). Մխ. առակ. (խստոր կայթիւ). Նիւս. բն.=Կնիք հաւ. էջ 270 (ցորենի կամ գարիի համար). կայ և եփր. փես. 426, բայց այստեղ պէտք է ուղղել* կար *մի։—Գ. Տ.- Մկրտչեան՝ Անան. գիտ. 19 Շիրակացու Թուաբանական խնդիրների ժողովածուի հիման վրայ գոնում է որ կայթը պարունակում է 60 լիտր. աւելացնում է նաև մի նոր վկայութիւն Խոսրովանոյշ Թագուհու արձանագրութիւնից. «Հաստատեալ եմ զՏեկորոյ շարչեաղն յեղն կայթ մի» (Նի=971 Թուից. տե՛ս Շիրակ, էջ 133 և վիմ. տար. 8)։ Մանանդեան (Տեղէկ. Համալս. № 4) գոնում է որ մի կայթը=60 լիտր=19½ կիլոգրամ։*

Ս. Գրքի վկայութիւնն է «Հինգ արդու փոխնդոյ և կաթ մի չամիչ». սրա դէմ յոյնն ունի «զոմոր մի չամիչ», իսկ եբրայականն ու միւս թարգմանութիւնները կայթի տեղ ունին «հարիւր ողկոյզ, հարիւր կապոց»։ Սրանից հետևցնելով Աւգերեան, Բցատր. չփ. և կշռ. էջ 100 կայթ մեկնում է «շար ողկուզաց չորացեալ խաղողոյ կամ չամչոյ»։ ՆՀԲ «իբրև արմատ կթելոյ՝ է կթոց, քթոց»։ Հինք. հանում է կաթն բառից։ Մանանդեան, Կշիռները յեվ չափերը, էջ 88 և 90 գոնում է որ Դիոնիսիոս Թելմահարցու ասորական ժամանակագրութեան մէջ «գինու մեծ չափը անվանված է kailtē. *չափի այս անունը... համապատասխան է հայերեն կայթին... կայլտեյի կշռորդը կստացվի՝ 408× ×25=10 կիլ. 200 գր.»։ Ասորի բառն է* kailtā *«չափ», որ իգականն է* kailā *«չափ» բառի։ Ըստ ձևի կարելի չէ համեմատել հայ բառի հետ, որովհետև պիտի տար հյ. *կայղթայ կամ *կեղթայ (միայն ղ նախաձայնով)։*

ԿԱՅԹ *«խաղալիկ զոր տան մանկանց ի ժամանակի հանելոյ զատամունսն առ ի դնել ի բերան. ֆրանս.* hochet*». բառս գիտէ միայն Նորայր, Բառ. ֆր. 643 բ և այն ո՛չ իբր նորակերտ կամ միջ. հյ. բառ։ Յայտնի չէ թէ ի՛նչ աղբիւրից է հանած։*

ԿԱՅԹ, *ի հլ. «գաւակոտելը, ոտքի թփրտոց, ուրախութեան՝ ցնծութեան պար» Ամովս. ղ. 5. որից* կայթել *«ուրախանալ, ցատկրտոտել, խաղալ» Առակ.ժէ. 18. Եզեկ. իա. 17, Ոսկ. մ. ա. 17. «2. ծափ զարնել» Եզեկ. իե. 6.* կայթս հարկանել *«բաժակին ուժգին խըփելով հնչեցնել, փխբ. մէկին փորձել» Ոսկ. մ. գ. 28 (յն.* διαχωνεύω*) =Բրս. մրկ. 270.* կայթիւն *Ոսկ. մ. ա. 17.* կայթումն *Փիլ. Խոր. Հոիփ. 34. կթ.* կայթոտ *«վազվրտուան» Նար. յովէդ.* կայթաճել *«վեր ցատկել» Եպիփ. սղ.* կայթիթ և պայթիթ *«խաղ ու պար» Ոսկ. Հռովմ. 251 (Հմմտ. խայտալ և կայտռել)։*

ՆՀԲ լծ. ճայթիւն, ցայտիւն, կայտռել, խայտալ։ *Հինք. կցում է* գայթել, խայթել *ևն բառերին։ Աճառ. ՀԱ 1909, 160 խ և կ ձայնների լծորդութեամբ միացնում է* խայտալ և կայտռել *բայե-*

բին։ Մ. Ս. Դաւիթ-Բէկ, Յուշարձան 397 կագ, կայտիո, կայտառ *են բառերի հետ՝ հիւղ.* cath, *հբրտ.* catalrid *«կռիւ, վէճ», լիթ.* katilin, *յն.* κατίλος; *են։ Հ. Յ. Աւգեր. Բազմ. 1912, 294 սանս.* gīta *«երգ» բառի հետ։*

—ԿԱՅԼԱԿ, ի–ա *հլ. «կաթիլ» Ղկ. իբ. 44. որից* կայլակել, կայլակաճալ, կայլակճաճալ *Եպիփ. սղ. Տօնակ. Մագ. Լմբ. սղ.* կայլակաճոս *Երզն. լուս.* կայլակումն *Անան. Եկեղ.* կայլակճացուցանել *Անան. եկեղ.* լայնակայլակ *Նար. խչ.* կենդանակայլակ *Տօնակ։—Բառ. երեմ. էջ 154 ունի* կայլակել *«կըսննել», որից երևում է որ կա՛մ* կսճել *մի նոր բառ է՝ «կաթկթիլ» նշանակութեամբ և կամ կայ* կայլակել *նորիմաստ մի բառ, որի համանիշն է* կրսճել։ *Նկատենք նաև որ Բառ. երեմ. անդ՝* կայլակ *մեկնում է «փիրուրն», որով* կայլակել *կամ* կսճել *կարող են լինել նաև «քրտնիլ»։*

=*Յառաջանում է* կաթիլ *բառի նուազական *կաթլակ ձևից՝ հնագոյն հայերէնի* թ>յ *ձայնափոխութեան օրէնքի համաձայն։ Նշ՛ր «որպէս թէ* կաթլակ»։ *Հիւնք.* գայլախազ *բառից։* Scheftelowitz BB 29, 14 *սանս.* galati *«կաթկթիլ», հբգ.* quellan *«ժայթքիլ», յն.* βλύω *«հոսիլ» բառերի հետ։ Մառ* ЗВО XIX, *0157* կաթ *արմատից, սրա նախնականը դրնելով յաբեթական* կայթ, *որից* կայդ>կայլ–ակ։ *Սագրզեան ՀԱ 1909, 334 սումներ.* gal *«լցնել»,* ğalğal *«պղպջալ. Տիգրիս գետը», թրք.* göl *«լիճ» են։*

+ԿԱՅՏ, ի *հլ. «կրակի պէծ» Բրս. մրկ. «կրակ, խարոյկ» ճառընտ. «կարկեհան, մի տեսակ հրագոյն թանկագին քար» Նչ. եղեկ. Գնձ. Մագ. որից* կայծակն *«կայծ. 2. խարոյկ, կրակ» ՍԳր. «շանթ, երկնային կայծակ» Եւս. քր. ա. «պալար, այտոյց» Եւս. պտմ. թ. 8, էջ 687 (նշանակութեանց զարգացման համար հմմտ. յն.* ἄνθραξ *«ածուխ, կարկեհան, այտոյցն»),* առկայծեալ *Ես. խբ. 3. Բարուք բ. 18.* կայծքար *Երզն. երկ.* կայծակել *Կոչ. Եռանդնակայծակ Թէոդ. խչ.* կայծակնապարուկ *Գիրք թղ. 157 (չունի Նշ՛ր).* կայծի *«կարկեհան» Մագ.* կայծոռիկ *կամ* կայծուռիկ *«բշտիկ, ուռեցք» Բժշ. (արդի գրականում և գաւառականներում «փոսուռայ, լուսաւտնիկ, մայիսեան հրավառ ճճի»),* կայծուկ *«մի տեսակ սուր փուշ» Ագաթ. § 649 (հին տպ.* կայծու*) են։—Սխալ գրչութիւն է* առկայբեալ *ՅԿ. կթ. էջ 346 փխ.* առկայծեալ։

=*Բնիկ հայ բառ՝ հնխ.* gaid- *արմատից։ Սրա հետ համմտ. լիթ.* gaidrùs, giẽdras *«պայծառ, գուարթ»,* gaidrá, giedrà *«գեղեցիկ եղանակ»,* gaĩsas *«երկնքում գիշերային լոյս»,* gaĩsras *«երկնքում լուսաւոր երևոյթ, հրդեհ, բարկութիւն»,* gaĩzdras *«լուսաւոր երևոյթ երկնքում», լեթթ.* dzīdrums *«պայծառութիւն»,* gàiss *«օդ, եղանակ»,* gàišs *«պայծառ, լուսաւոր»,* gàisma *«լոյս», հպրուս.* gaylis *«սպիտակ»։ Այս բառերը կարող են ներկայացնել թէ* g^w *և թէ* g^wh *նախաձևեր։ Լեզուաբանները այս բառերի հետ միացնում են յն.* φαιδρός *«փայլուն, պայծառ, գուարթ»,* φαίδιμος *«լուսաւոր, փայլուն, սքանչելի»,* φαιδρύνω *«փայլեցնել»,* φαιός *«գորշ, մթագոյն»,* φαικόν *«լուսաւոր»* (Boisacq 1010—1011, Trautmann 75, Pokorny, 1, 665), *որոնք մատնանշում են միայն նախաձայն* g^wh։ *Սրա համար էլ լեզուաբանները բոլորի նախաձևը դնում են* g^whaid-։ *Այժմ, որովհետև հյ. կ նախաձայնը պահանջում է միայն* g^w, *ուստի պէտք է ընդունիլ թէ հայ հնխ.* g^w *և* g^wh *ձայնների փոխանակութիւն՝ մի կամ միւս խմբի միջև։—Աճ.*

Klaproth, As. polyg. *101 գերմ.* heiss *«տաք» բառի հետ։—Նշ՛ր լծ.* կիզուլ, գազաղ, *թրք.* köz *«խարոյկ»։ Տէրվ.* Altarm. 88 *լտ.* candeo *«այրիլ, վառիլ»։* Karolides, Γλ. συγκρ. *էջ* 61 *յն.* καίω *«վառել» բայի հետ։ Հիւնք.* խածաճել *բառից։* Bugge KZ 32, 44 *հպրուս.* knaistio *«հրդեհ, խարոյկ», լիթ.* kaĩstu *«տաքանալ» բառերին ցեղակից։* Pedersen, *Հայ. դր. լեզ. 76 և* Scheftelowitz BB *29, 31 (որոնցից էլ* Walde 107 *և* Pokorny *2, 537) հնխ.* sqaid-, qaid- *արմատի տակ, որի ժառանգն է ըստ*

իս հյ. խայտ *(համեմատութիւնները տե՛ս անդ)։ Սանտալճեան,* L'idiome 13 *սանս.* kas «լոյս» *բառի հետ։ Թիրեաքեան, Բազմ. 1908, 504* կարծ *արմատից։ Մատ* ИАМ *1920, 106 նոյն է դրնում* կարծ *և պայծառ բառերի հետ։*

ԳԻՒ.—1. Ագլ. կայծ, *Մկ. Սլմ.* կէձ, *Ախց. Կր.* կած, *Համշ.* գէձ, *Ննխ. Պլ. Ռ. Սեբ. Սչ.* գած, *ՋԹ. Խրբ.* գ¹mձ, *Ասլ.* գած, գագ, *Սվէդ.* գուձ, *որոնք նշանակում են «կրակի կայծ», իսկ Ղրբ.* կmծ *«տաք, շատ տաք», Մղր.* կ¹mծ *«օդի տաքութիւն», Հճ.* գած, գօձ *«վառուած ածուխ», Ննխ.* գած գած *«բոլորովին նոր» (փուռից դուրս եկած որևէ բանի ակնարկութեամբ ընդհանուր իմաստ ստացած).—սրանց դէմ ունինք Երև.* պէձ, *Մշ.* պձեղ, *Սլղ.* պէձիլ *«կայծ»։—2. Ախց. Երև.* կայծակ, *Ագլ.* կա՛յծmկ, *Ռ.* գայծագ, *Կր.* կածակ, *Գոր. Մկ. Մրղ. Ոզմ. Ջղ. Վն. Տփ.* կէձակ, *Ղրբ.* կm՛ծmկ, *Ննխ. Պլ. Սչ.* գաձագ, *Ասլ.* գաձագ, գաձայ, *Սլղ. Մշ.* կէձագ, *Համշ.* գէձագ, *Բլ.* կիձագ, *Տիգ.* գէձmգ, *ՋԹ.* գէձօգ, գէձոգ, *Շմ.* կէցկէցի, *Սլմ.* կէրձակ, *բոլորն էլ «կայծակ, շանթ». իսկ Խրբ.* գ¹mձmգ *«Տէառնընդառաջի յաջորդ օրը»։ Համմտ. նաև Սչ.* գաձօոիգ *«բշտիկ»,* գաձfար *«կայծքար», Խրբ.* f¹mձօոագ *(նախաձայն* f¹ *և ոչ* գ¹*), Համշ.* գէ՛գդիչ, *Ղրբ. (շրջմամբ)* ծիկո՛տի *և պէձ հոմանիշով էլ՝ Ղզ.* պրծըվէոիկ *«կայծոռիկ, փոսուռայ» (բառիս կազմութեան մասին՝ իբրև* կայծ+oո+իկ՝ *տե՛ս* փոսուռայ*), Համշ.* գէ՛գդից *«փայլատակեց»։—Նոր բառեր են* կայծկլտուկ *Խրբ. «շանթ»,* կայծաճալ *«տաքանալ, զայրանալ, տուխիլ. սիրահարուիլ, շատ փափագիլ, կարմրիլ»,* կայծապողուն, կայծապտուկ *«բշտիկ»,* կայծաո *«ունելի»,* կայծացնել *«սաստիկ տաքացնել, արծարծել»,* կայծեփեաց, կայծխոտ, կայծկլտալ, կայծկծալի *«ատրաշէկ»,* կայծկոճած *«տաքութիւնից երեսը կարմրած»,* կայծկոտիլ *«փայլիլ, ցոլալ»,* կայծուքիւն *«տենդ»,* կայծուկոթիլ *«զայրանալ»,* կծդիլ *«հասկերը չորանալով այրիլ»։ Ատանայի Թրքախօս հայոց բարբառով կայ նաև* ու կէյծաճ *«հուր ու կայծակ»։*

ՓՈԽ.—Գ. Փառնակ, Անահիտ 1906, 233 հայերէնից փոխառեալ է դնում ալբան. gadz *«կայծ, կրակ»։—Գւո.* կայծաո *ձևից է կապադովկ. յն.* καϊζάρ *«երկաթագործի ունելի»* Karolides, Γλ. συγχρ. *էջ 61, 85 և 165 (ի զուր* Karolides *ստուգաբանում է այս բառը յն.* καίω *«վառել»+սնս.* dhar, *պրս.* dār *«կրել, ունել» բառերից)։ Հայերէնից է դարձեալ կապադովկ.* καϊκάρα *«կայծքար» (որի առաջին մասի մէջ* Karolides, *էջ 87 ուղում է տեսնել սանս.* kas *«փայլիլ», առանց մեկնութեան թողնելով երկրորդ մասը)։ Առաջին ձևի մէջ հյ. ծ տուել է շ. իսկ միւսի մէջ օ՝ յաջորդ ւ-ի պատճառաւ։*

ԿԱՅԿԱՅԻԼ *տե՛ս* Կայ։

ԿԱՅՄ *(ի հլ. ըստ ՆՀԲ, թէև առանց վկայութեան) «նաւի մէջ տնկուած սիւնը՝ որի վրայ առագաստ են պարզում» Ես. լգ. 53. Եզեկ. իէ. 5. «առագաստ» Ոսկ. մ. բ. 1 և ես .«ոստայնանկի եղէգ, ջուլհակի ճնճղուկ» (ըստ ԱԲ) Ոսկ. եփես. 806. (այս վերջին նշանակութիւնը թարգմանաբար յունարէնից, ուր* ἱστός *նշանակում է «կայմ նաւու. 2. ոստայնանկի առէղ»)։ Նոր բառեր են՝* Երկկայմ, եռակայմ, աճկայմ։

ՆՀԲ հանում է կալ «կենալ», կայ «կեցուածք» բառից, ճիշտ ինչպէս յն. ἱστός *հոմանիշը ծագում է* ἵστημι *«կալ, կանգնիլ» բայից։ Հիւնք. էջ 348 տճկ.* gemi *«նաւ» բառից։*

[**ԿԱՅՈ** *«կարգ, վիճակ, որպիսութիւն». ունի միայն ՓԲ. մէկ անգամ գործածում է Ոսկ. մ. ա. 18 «Որպիսի՞ք էին կամ յորպիսի՞ ինչ կայոի». ՆՀԲ (կայոին բառի տակ) ուղղում է ըստ յն.* καίη. *այնպես որ ՋԲ և ԱԲ չեն իսկ յիշում։*]

ԿԱՅՈ *«մի տեսակ խոտ,* cynomorium, orobanche, *շան թութ» Ռոշք. ունին միայն ՀԲուս. § 1287 և Նորայր ՀԱ. 1924, 72։*

ԿԱՅՈԻ *(մանաւանդ անեղաբար՝* կայոիf*) «ատամ, ակռայ». երկու անգամ գործածում է Օրբել. (Հրտր. էմ. էջ 31—32, Շահնազ. Ա. 86). «Եւ եղև ի միում յատուրց ետես ցանկալի և գեղեցկատեսիլ քուռակ էշ մի, և առաց ի մտի իւրում. «Երթայց անցից իշովն այնուիկ ընդ գետն»։ Եւ ելեալ յէշն և*

մտեալ ի գետն, և ի միջի գետոյն դարձեալ էշն առ նա՝ եղոյց փայլատակմամբք զերկաթի զկայոիսն իւր և ասէ. «Քո այսպէս իշոյ կայոիս տեսեա՞լ ես». և նորա հանեալ ի բափուցն զփոքրիկ դանակիկն իւր, եղոյց և ասէ. «Եւ քո այսպէս իշոյ մտրակ տեսեա՞լ ես. զիս ընդ գետս ի բաց անցո՛, եթէ ո՛չ՝ հարկանեմ և վիրաւորեմ զքեզ»։ (Շահնազ. Ա. 86 յիշեալ կայոիս ձևի տեղ ունի պայոիս, որ մեկնում է «նալ, պայտ»։ Այս բառը մէկ անգամ միայն գործածուած է Նիւս. երգ., բայց բոլորովին տարբեր նշանակութիւն ունի («նետին վարի ծայրը՝ ճեղքը՝ որ աղեղին լարին կը կոթնի») և ըստ այսմ այստեղ բոլորովին անյարմար է)։—Կայոիճ բառի գաւառական ձևերն են ներկայացնում կեոիճ, բց. իկեոեաց, գրծ. կեոեօճ, որոնք մի մի անգամ գործածուած են հին մատենագրութեան մէջ. «Ապա (առիւծն զճանճ) կոճեաց կեոեօքն կոփել». Մագ. Թղ. 132. «Այնքան արժանապէս նշանակեաց տալ զսակս արքունի, մինչ զի ի ծովն յղէ զՊետրոս և յանդնդազուրկ կայտառին կեոեաց կորզեալ զսատերն, զկամս հաճեաց խնդրողացն». Արծր. Հրտր. Պատկ. էջ 285 (տպ. Պօլսոյ՝ էջ 320՝ ունի—յանդնդազուրկ կայտառին կեռեաց)։ Այս արմատից է կեռատ «ժօռատ, առամները թափած», որ գիտէ միայն ՀՀԲ։

Կայոի(ճ) բառը չհայ բառարաններում։ ՆՀԲ ունի կայոին ձևը, որ մեկնում է «առնի անդամ» և իբրև աղբիւր յիշում է «Ուռպել. ժա առ լեհ»։ Անշուշտ այս վկայութիւնը վերոյիշեալ հատուածն է։ (Թէև վերի հատուածը Օրբելեանի ժ գլուխն է, բայց այդ միայն էմինի հրատարակութեան մէջ, իսկ Շահնազարեանի մօտ ԺԱ գլուխն է։ Շահնազարեանի բոլոր գլուխները մէկ թիւ աւելի են միշտ, սկսեալ Գ գլխից, որ կազմուած է Շահնազարեանի մօտ՝ Բ գլուխը երկուսի բաժանելով։ Այսպէս է նաև ՆՀԲ. համմտ. թափիճ բառը)։ ՆՀԲ-ի տուած նշանակութիւնը մենք բոլորովին անյարմար ենք գտնում։ Էշի «կայոինը» կարո՞ղ էր փայլատակել և էշը ի՞նչպէս կարող էր մինչև հեծեալը հասցընել, կամ սրանով ի՞նչ էր սպառնում սրբին։ Մեր կարծիքով բառն է կայոիճ և նշանակում է «առամներ», որոնց շատ լաւ յարմարւում են երկաթի ածականը և փայլատակիւնը։ [Ղարաբաղի բարբառում կայ երկաթակեռիճ «երկաթէ առամներ ունեցող» բառը. երբ առաջին անգամ որոտման ձայն են լսում, գիւղացիք երկաթ են կծում և բարով խփելով իրենց գլխին, ասում են «Քըրըգլօխ, ըրկըթըրկեռիք» (Ագգ. Հանդ. Բ. 220)։] Էշը կարող էր գլուխը մի կողմ թեքելով՝ բերանը բանալ, ցոյց տալ երկաթէ սուր ու փայլուն առամները և նրանցով սրբին կծել սպառնալ։—Այս բոլորից հետևում է որ կայոին «անդամ» ձևով բառ գոյութիւն ունեցած չէ. պէտք է ջնջել այն բառարաններից և նրա փոխարէն աւելացնել կայոիճ «կեռիք, առամ» նոր ձևը։ Ուշադրութեան արժանի մի հանգամանք էլ այն է, որ Նորայրի ֆրանսահայ բառգրքում verged'âne բառի դէմ չհայ կայոին։—Անգոյ բառիս առուգաբանութեան համար ՆՀԲ յիշում է պրս. کیر kīr «առնանդամ». նոյնը նաև Müller WZKM 7, 378: Սագրգեան ՀԱ 1909, 335 հայ. կոռն, կուռն, սումեր. egir «հետև, յետոյք», թրք. quyruq «պոչ», geri «հետև»։ Այս բոլորը ջնջւում են կայոին բառի հետ։—Իսկ կեռ, կեռիճ «առամ» բառը ՆՀԲ դնում է յդ. կեր (կերի, կերայ), ժայռ, ժեռ: Justi, Dict. Kurde, էջ 338 սրան է կցում քրդ. kil «վարազի՝ փղի առամ», պրս. کلک klk, ռուս. клыкъ «փղատամ»։ Patrubány SA 2, 12 կեր բառից։

ԳԻՒՂ.—Ջղ. կեռիճ, Շմ. կէռիճ, Գոր. կէ՛ռէճ, Ղրբ. կրէ՛ռէճ[1], Մծ. կռէճ[1], Ագլ. կա՛ռիճ[1]. այս բոլորը «առամ» նշանակութեամբ, ինչպէս ունին նաև Գնձ. Ղզ. Ղրդ. Պո. իսկ Խոջ. և Վն. «ներքին կամ առորին ծնօտ» նշանակութեամբ. փոխաբերաբար Սեբ. գոռիճ «ժանտադէմ կերպարանք»։ Բառիս տարբեր

մէկ ձևն եմ համարում գւռ. ակոայ «աստամ», *որի աւելի հին վկայութիւնն ունի Ագաթ. պատմ. 456. նոր ձևերն են՝ Տփ. յգ.* ակրէք, ակրբճիր, *Մրզ. Մկ. Ոզմ.* ակոա, *Հմշ. Մշ. Սչ. Տիգ.* ագոա, *Ալշ.* ջագոա, *ՋԹ. Սվեդ.* ագոօ, *Պլ.* աղոա, աղդա, *Ասլ. Ռ. Սեբ.* աղդա, *խրբ.* ադդա. *այս բոլորը նշանակում են «աստամ», իսկ Մրզ. Մկ. և Ոզմ. «իմաստութեան աստամ»։* Ակոայ *և* կեռիք *ձևերի միջին տեղն է բռնում Հւր.* ակաո *«ակոայ»։ (ՆՀԲ* աղօրի *բառի տակ, ինչպէս և Մխիթճեան, Պատկեր 1893, էջ 148* ակոայ *հանում են* աղօրիք *բառից)։—Նոր բառեր են՝* կեռաճաւմբարի, կեռաճացաւ, կեռեել, կեռիքարելի, կեռիպարելի, կեռակապ, կեռակապուիլ։

Փոխ.—Գւռ. Թրք. o kır äyrä *«սայլին ջամբին վրայ անցած ղոյղ աստամնաձև փայտեր, որոնց մէջէն կը դառնայ լիսեռը, և զոր Սերաստիոյ հայ դիւղացիք կը կոչեն* ակոայ» *(Գազանճեան, Յուշարձան, էջ 328բ)։*

ԿՈ.ՅՍ *«օդը պղտորող մի տեսակ քամի». մէկ անգամ ունի Պիտատ. «Օդըն ծածկեն զճառագայթսն. կայս անուն է հողմոյն. արդ ծածկի արեգակն յամպն»։ ՋԲ չունի այս բառը։*

Անշուշտ պատահական նմանութիւն ունի արաբ. قيض qoyṣ *«փորի մէջ քամի խաղալ» (Կամուս, Թրք. Թրգմ. Բ. էջ 397)։*

***ԿՈ.ՅՍՐ**, ր *հլ. (-սեր, -սերաց) «ինքնակալ թագաւոր Հռովմայեցոց» ՍԳր. Բուզ. որից* կայսերագիր *Կորիւն.* կայսերական *Ագաթ. Բուզ.* կայսերակերպ *Ագաթ.* կայսերալուր *Արծր.* կայսերազարմ *ԳՆՀ.* կայսրուճի *Իրեն. Հերմ. 100. յետնաբար* կայսրանալ *«կայսր դառնալ» Մին. Համդ. 127, 128.—տարբեր ձևերով ունինք նաև՝* կեսար *(սեռ. -ու) Եփր. բ. տիմ. Կոչ. Խոր. 3Հ. կթ.* կեսարութիւն *Ճառընտ.* կեսարոս *Ուռհ. էջ 402.* կիսարոս *Յայսմ. նոյ. 29։*

=Յն. καῖσαρ, *սեռ.* καίσαρος *«կայսր» բառից, որ ծագում է լտ.* Caesar, *սեռ.* Caesaris *յատուկ անունից։ Յուլիոս Կեսար հզաւ առաջին Հռովմայեցի մեծ ինքնակալը, որից այս անունը դարձաւ հասարակ անուն՝ «մեծ թագաւոր» նշանակութեամբ, ճիշտ ինչպէս* Charlemagne *յատուկ անունից կազմուեցաւ հլ.* kralĭ, *Թրք.* qraliča, *ռուս.* король, *լիթ.* karãlius *«թագաւոր» հասարակ անունը։ Լտ.* Caesar *ձևը զուտ հռովմէական չէ, այլ բարբառային. բուն լտ. ձևն է* Caesō (Meillet, Esquisse ə'une hist. de la lanque latine. *102), որ մակդիր է և բուն նշանակում է «վիրաբուժական գործողութեամբ ծնուած մօրից»։ Այնուհետև բառը փոխառութեամբ տարածուեցաւ ամէն տեղ. Համմտ. գոթ.* kaisar, *Հբգ.* keisur, *գերմ.* Kaiser, *հլ.* cēsarĭ, *ռուս.* царь, *լիթ.* cesorus, *հունգ.* császár, *արար.* قيصر qaiṣar, *արամ.* קיסר qaisar *են (Berneker 127, Kluge 236)։ Հայերէնի մէջ* կայսր *հին ժողովրդական փոխառութիւն է (Համմտ. նոյն իսկ Յուլիոս* կայսր *ձևը Ուս. քր. տպ. 1818, Ա. 9), իսկ միւս ձևերը գիտական ձևեր են։—Հիւրշ. 354։*

Ուղիղ մեկնեցին նախ ՀՀԲ և ՆՀԲ։

ԿՈ.ՅՏ *«մարմարիոնի վրայ գոնուած եբակներ կամ նշաններ». անստոյգ բառ. մէկ անգամ ունի Բրս. մրկ. 253 «Ալապաստրն է մարմարիոն սպիտակ, պարզ իբրև զապակի և ունի կայտեր բազում»։ Բառարանները դնում են* կայտեր՝ *իբր եզակի. Թւում է թէ յոգնակի է* կայտ *ձևից։*

ՆՀԲ կայծեր *բառի՞ց։*

ԿՈ.ՅՏ *«բարաւոր». ունի միայն Բառ. եբրեմ. էջ 155։*

ԿՈ.ՅՏԱՌ, ի–ա *հլ. «աշխոյժ, առոյգ, հանդուգն» ՍԳր. «ջրի և ցամաքի ամէն տեսակ կենդանի», բայց մանաւանդ «ջրային կենդանի» Դան. գ. 79. Շար. Նար. Արծր. (իմաստի զարգացման համար համմտ.* եռալ *և* զեռուն*). որից* կայտառական *«կայտացող» Ոսկ. յհ. ա. 31.* կայտառութիւն *Կորիւն։ Այս արմատի երկրորդ ձևն է* **կայտիռ**, ո–*հլ. (յետնաբար* ի–ա *հլ.) «ուրախութիւն, ուրախութիւնից խաղալ ցանկանելը» Ագաթ. Փիլ. յովն. 3Հ. կթ. «ծովային կամ ցամաքային անասուն» Սեբեր. 74. Ճառընտ., որից* կայտռալ *«ուրախ ուրախ*

վազվռտել, նռալ զեռալ» Ագաթ. § 239 (ձեռ. տարբ. կտռայիւ, կրտռայիւ, կրկրնագիրը ունի կտռայիւ՝ ՀԱ 1913, 18). Արծր. հրտր. Պատկ. էջ 161 Ագաթանգեղոսից փոխառեալ հատուածում ունի սրա տեղ կոտռայիւ. *համմ.* նաև Սարգ. յկ. է, էջ 106 *Իբրև զճճիս ի տղմի կապտռէի (առաջին տպագրութեան մէջ* կայտռայի). *կամ ա. պետրր. է. էջ 313 Զօրէն ճճեաց ի տղմի* կայտռիւն (*ա. տպ.* կայտռաւն). *որ և* կայտռել *Իմ. ժէ. 18. Ես. ծե. 12.* կայտռեցուցանել *Իսիւք.* կայտռական *Փիլ.* կայտռուճակ *Նար. խչ. 374.* կայտռիկստակ (*թերևս ուղղելի* կայտռիկատակ) «*աքացի, ոտքով հարուած*» *Վրք. հց. Ա. 73 (ըստ ԳՔ սխալ դրչութիւն որպէս կայտռիք ստահակ ջորիներու. լաւագոյն ձեռագրում ունի «կայտռիքն ստահակ ջորւոց» ընթերցուածը. տե՛ս Զարբ. Քրգմ. էջ 286 ըստ Երևակ ամսագրի, 1858 Բ. էջ 43=Աբեղան. 604)։*

ՆՀՔ կայբել *և* խայտալ *բառերից,* կայտիւ՝ *իբր* կայբ+եո: *Հիւնք.* խածանել *բայից։* Scheftelowitz BB 29, 31 *արմատակից է դնում* կայծ *բառի հետ։ Մառ* ЗВО *16, 151, Հյ. Քրգմ. Մկրտութիւն Հայոց 1911, էջ 88 փոխառնալ է դնում վրաց.* կոտվա «*շարժիլ, զեռալ*», կոտրիալի «*թաւալիլ, գլորուիլ*» *ձևերից։ Աճառ. ՀԱ 1909, 160 խ և կ ձայնների լծորդութեան օրէնքով նոյն է դնում* կայբել *և* խայտալ *բառերի հետ։ Մ. Ս. Դաւիթ-Բէկ, Յուշարձան 397 հիւլ.* cath, *նգալլ.* cad, cadol, *հբրտ.* catalrid «*կռիւ, վէճ*», *լիթ.* katilin, *յն.* κατίλος «*շաղակրատ, թովիչ*», *սանս.* kadt *բառերին ցեղակից։ Պատահական նմանութիւն ունի արաբ.* قطّ qaṭṭ «*արագ գնալ*» (*Կարմուս, Թրք. Քրգմ. Բ. 84*)։

ԿԱՅՏՈՒ «*նեղութիւն, տագնապալի վիճակ*»? *անստոյգ նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Ոսկ. պօղ. ա. 464 «Ձմեծատունս տեսանեմք բրտնեալս շատագունեալս և զաղքատսն ոչ ինչ յայսպիսի կայտռս»։*

ԿԱՆ «*ոլորք, շրջան, պտոյտ*». *արմատ առանձին անգործածական, որից յեռնաբար ունինք* կանել «*ոլորել, գալարել*» *Առաք. պատմ. 387 (Անցուցին փայտ ի մէջ պարանին և սկսան կանել զփայտն. և ի կանել փայտին՝ պարանն ևս ոլորեալ և մանեալ եղև սաստիկ պնդութեամբ)։ Պարզ արմատը ցոյց են տալիս կան վն. «թելի երկու ճիւղերի հիւսքը՝ որով կազմուած է թելը», կան գալ Մկ. Ողմ. վն. «պտտիլ, շրջիլ, շրջագայիլ»։ Իմաստի զարգացման համար համմ.* մանել *և* ման գալ, ոլորել *և* ոլորտիլ:

Ղափանցեան, Տեղեկ. ինստիտ. 2, 92 վրաց. ծնա «հիւսել» բառի հետ։

ԿԱՆ «*գիծ կամ նիշակ*». *ունի միայն Բառ. երեմ. էջ 152։*

***ԿԱՆԱԲՈՍ** «*մի մեծ ատաղ՝ հարաւային կիսագնդի Նաւ և Աղաւնի համաստեղութեանց մէջտեղը*» *Խոր. աշ. 586. ուրիշ տեղ չէ գործածուած։*

=*Յն.* κάνωβος, κάνωπος, *որից և լտ.* canopus *նոյն նշ. ըստ այժմ հայերէն բառ պէտք է հասկանալ* կանովրոս *կամ* կանոպոս:

Ուղիղ մեկնեց նախ ՆՀՔ։

ԿԱՆԱՅՔ «*տանիքի խողովակները՝ որով անձրևաջուրը հաւաքւում է ջրամբարում*». *նորագիւտ բառ, որ մէկ անգամ ունի Վստկ. էջ 5 «Կանայքօք ուղղեն ղջուրն ի յամանն ուրուք, իբր ի պրքէ»։*

ԿԱՆԱՉ (ի, ո *հլ. ըստ ՆՀՔ, թէև առանց վկայութեան*) «*կանաչ գոյնը*» *Ծն. խ. 10. Ղևտ. ժգ. 37. «դալարիք, կանաչեղէն» Ել. ժ. 15, Ես. ժթ. 7. որից* կանաչանալ *Ղևտ. ժգ. 49. Յոբ. ը. 11, Կոչ. 403.* կանաչիլ *Գնձ.* կանաչագեղ *Վեցօր.* կանաչագոյն *Կոչ.* կանաչազգեստ *Ագաթ.* կանաչածն *Ագաթ.* կանաչուրակ *Մագ.* կանաչութիւն *Սարգ. Երզն. մաթ. ևն։ Գրուած է նաև* կանաչ, կանանչագոյն, կանանչանալ *Կոչ. 403։*

Klaproth, Asia polygl. *էջ 101 արաբ.* g´in, g´ainâ: *Հիւնք. Թրք.* genǰ «*երիտասարդ*» *բառից։ Մառ* ЗВО XIX, *0155 նախնական նշանակութիւնը համարում «արօտ» և իբր յաբեթական արմատից՝ կցում է Հյ.* կանուխ. *վրաց.*

դանա, լազ. ղոնա, օնա «արտ» բառերի հետ։ Ղափանցեան, Տեղեկ. ինստիտ. 2, 93 վրաց. մծվանե, մինգր. ոծվանէ «կանաչ» բառերի հետ։

ԳԻՒ.—Մկ. Մշ. Ոզմ. Վն. կանաչ, Սվեդ. գանաչ, Ագլ. Ալշ. Ախց. Գոր. Երև. Կր. Ղրբ. Մշ. Մրդ. Շմ. Ջղ. Սլմ. Տփ. կանանչ, Խրբ. Ննխ. Պլ. Ռ. Սեբ. Սչ. Տիգ. գանանչ, Ասլ. գանպչ, գանպչ, Մղր. կա՛նէչ, Հճ. գանօչ, Ջթ. գէնոչ. բայական ձևով՝ Ագլ. Գոր. Ղրբ. կնանչիլ, Սչ. գանանչել, Պլ. գանանչնալ, գանչիլ, Ասլ. գանչրնալ, Խրբ. գանչիլ։ Նոր բառեր են՝ կանաչենի, կանաչի, կանաչիկ, կանաչկեկ, կանաչկենի, կանաչկոտ, կանաչկրտալ, կանաչուկ, կանաչուն։ Կրկնութեամբ ունինք կանաչ-կակաչ, կանաչ ու կակաչ, կանանչ-կականչ «գալարագեղ»։

ՓՈԽ.—Դւռ. ձևից է փոխառնալ ն. ասոր. kananči «կանաչի» (Калашевъ, Русско-Айсор. слов. էջ 60)։

ԿԱՆԱՏԻ. նորագիւտ բառ՝ անյայտ նշանակութեամբ. մէկ անգամ գտնում եմ գործածուած Մագ. թղ. 121 «Տաղմական զօրուն կանատի և արիփնու» (տե՛ս իմ Հայ. նոր բառեր հին մատ. Բ. 179)։

ԿԱՆԱՓՆԻՏՈՎ «Պարսկաստանի յատուկ մի ծառ՝ որ խնձորի նման պտուղ ունի». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Կալիսթ. 124 «Գտաք անտառ ծառոց որ կոչի կանափնիտով որ ունէր պտուղ նման խնձորոյ»։

ԿԱՆԳ. արմատ առանձին անգործածական. հին մատենագրութեան մէջ աւանդուած է միայն -ուն մասնիկով և սրանով ածանուցած ձևերով. այսպէս՝ կանգուն «ոտքի վրայ կանգնած» ՍԳր. «Հաստատ, որ փուլ չէ եկած» Մծբ. Նար. «ուղիղ, անթերի» Արծր. Խոր. «քայլելուց դադրած, կանգ առած» Տօնակ. որից կանգնել «ոտքի վրայ կանգնեցնել, շէնք կառուցանել» ՍԳր. «դադարիլ, զկայ առնուլ» Երզն. մտթ. Վրք. Հց. «ապացուցանել, փաստերով ասածը հաստատել» Ասոր. դատ. 46. կանգնական Ագաթ. կանգնաւոր Դատ. ժե. 5. Ոսկ. մբ. 24 Կոչ. կանգնուիլ Սեբեր. կանգնումն Ղկ. բ. 34. Վեցօր. եփր. ծն. դժուարականգնելի Ոսկ. յհ. բ. 24։ Այս բառի հետ նոյն է նաև կանգուն չափը (ի–ա կամ ո հլ.) ՍԳր. Փիլ. որից եռականգուն, երկկանգուն Արիստ. ստորոգ. կանգնաւոր Ել. իդ. 16, 24. լզ. 20. կանգնաչափ Վրդն. Ել. և Թուց. կանգնաչափութիւն Սարգ. կանգնեան Պատմ. աղէքս. հինգկանգնեան Ա. մնաց. ժա. 23. Եւս. քր. տասնկանգնեայ Գ. Թագ. է. 10 ևն։ Կանգունը հին ժամանակ ունէր արմուկից մինչև մատի ծայրի կամ մարդու հասակի քառորդ երկարութիւնը. Շիրակացին. արևի համար ասում է թէ «չափ կանգնոյ միոյ երևի» (Հրտր. Պատկ. էջ 59)։ Արդի կանգունը (արշին) սրա կրկինն է։ Բայց հին ժամանակ կային զանազան կանգուններ, որոնք անունով էլ իրարից տարբերւում էին. օր. հասարակ կանգուն, սրբազան կանգուն, հսկայից կանգուն, արքունի կանգուն, երկրաչափական կանգուն են, որոնց վրայ տե՛ս Աւգերեան, Բացատր. չփ. և կշռ. էջ 101—106։ Բուն հին հայկական կանգունը՝ ինչպէս անունից երևում է, պէտք էր որ ունենար կանգնած մի մարդու հասակի երկարութիւնը. այսինքն սովորական կանգունի քառապատիկը. (ըստ Որոգինէսի և Ս. Օգոստինոսի՝ նոյն գործածած կանգունը հաւասար էր հասարակ կանգունի վեց անգամին, կամ որ նոյն է՝ մեր հին հայկական կոչած կանգունի $1^1/_2$ անգամին)։

Աւգերեան, Բացատր. չփ. և կշռ. էջ 101 կանգուն «արշին» հանում է յն. ἄγκων «արմուկ» բառի՞ց։ ՆՀԲ կանգուն «կանգնած» հանում է կայուն բառի՞ց, որից տարբեր է կանգուն «արշին»։ Մորթմանն ZDMG 26, 598 բևեռ. ginukani = կանգնել։ Lag. Armen. Stud. § 1098 կանգուն «արշին» դնում է պրս. كنك kang «թև, բազուկ» (ըստ պարսիկ բառարանների՝ «ձեռքի մատների ծայրից մինչև կուրծքի մէջտեղը»)։ Հիւբշ. 165 չի ընդունում այս մեկնութիւնը։ Հիւնք. յն. κάννα «եղէգ» բառից կանգուն (չափը) և սրանից կանգուն (ածականը)։— Karst, Յուշարձան 429 թթր. eng, öng, eñ «բարձրանալ» բառի հետ։

ԳԻՒ.—Տփ. կանգնիլ, կաղնիլ, *Մկ.* կանգ՛նիլ, *Ալշ. Սլմ. Վն.* կայնել, *Մրղ.* կայնէլ, *Ագլ. Ախց. Կր. Ոզմ.* կայնիլ, *Ասլ. Խրբ. Պլ. Ռ. Սեբ. Տիգ.* գայնիլ, *Սվեդ.* գ՛այնիլ, *Ակն.* գօյնել, *Շմ.* կանինիլ, *Սչ.* գանինել, *ՀԴ.* գայնել, գանել, *Ննխ.* գայնէլ, *Երև. Ղրբ.* կա՛ղնել, *Հմշ.* կօղնուշ, *Մշ.* կանիլ, *Ջղ.* կանգրել: *Գաւառականները պահում են նաև պարզ արմատը՝* կանգ, *որ գրաբար մատենագրութեան մէջ պահուած չէ. այսպէս՝* կանգ առնել *Կր. Ննխ. (Ձալքը գիւղի մէջ սղմամբ* գան առնէլ) *Պլ. Ռ. «քայլելուց կամ գործելուց դադրիլ, հանգիստ առնել»,* կանգ ու նանգ առնել *Վն. «կանգնելով հանդչիլ, հանդըստանալ»: Նոր բառեր են՝* կանգնաւոր «սպասաւոր», կանգոիլ «արգելուիլ, կանգնիլ. 2. *կառքի թաթերը իրար անցնիլ. 3. յամառիլ, պնդել»,* կանգեղ, կանգիչ «բեռների կապը պնդելու երկճիւղ փայտ», կանգնոտիլ «շարքով կանգնիլ», կանգնատել «կանգնաչափ քայլերով երթալ», կայնման, կայնըմանց «կանգնած», կանուածք «կանգնելու ձևը», կայնուկ «կանգնած»:—*Ասլ.* գանգիւն նշ. «կանգուն չափը»:

ԿԱՆԴ (ի հլ. քան ՆՀԲ, թէև առանց վկայութեան) «արու արծիւ» *Մագ. քեր. 240 և երդն. քեր: Ուրիշ վկայութիւն չկայ:*

ԿԱՆԴԱԿԵԼԻ «դրդուելի կամ շարժումն կամ անթիռն փանդռնահարաց մրցմունք կամ մորմոքումն կամ մրմնջումն». *այսպէս ունի Բառ. երեմ. էջ 155:*

ԿԱՆԴԱՂ «հաստատ». *արմատ առանձին անգործածական. գտնւում է միայն կանգղեալ «հաստատեալ» բառի մէջ, որ մէկ անգամ գործածում է Իմաստ. դ. 4.—ՀՀԲ և ՓԲ ունին նաև կանգաղուն «հաստատուն» ձևը, որ միւս բառարանները չգիտեն:*

Հիւնք. հանում է fանգել *բայից: Թերևս բուն արմատն է կանդ, աճած աղ մասնիկով, որի համար համեմատել յապաղել, յաշաղել, կախաղան են. իսկ կանդ արմատի համար համմտ. Թերևս կաշ–կանդ–ել կրկնականը:*

***ԿԱՆԴԱՆԱՅ** «դամասկոսեան պրաս» *Ամիրտ. ունի միայն ՀՌուս. § 1295, որի տարբեր դրչութիւններն են* գուեդուենա *§ 529,* fանտան, fանտանա *§ 3135:*

=*Պրս.* گندنا gandāna «պրաս»:

Ուղիղ մեկնեց Աճառ. (անտիպ). նոյնը Նորայր ՀԱ 1923, 348:

***ԿԱՆԴԱՐԱՅ** «կամուրջ». *Նորագիւտ բառ, որ քանիցս անգամ գործածուած եմ գտնում յետին մատենագրութեան մէջ. ինչ. «Քակէ զկանդարայն նորա ի վերայ Դգղաթ գետոյ» Սմբ. պտմ. էջ 34. «էջ ի Բամբօլսոնի կանդարայն» անդ՝ էջ 128. «Աւերեաց Մսխայ կանդարայն ու գնաց մինչ ի Կոռիկոս» էջ 125 (տպ. Մոսկ. էջ 116 դրում է* զՄոսական դարայն). «Կապեաց ի վերայ նաւերով կանդարայնի ու անցաւ ընդ Գեհոն» էջ 120. «Քակեա՛ զկանդարայն՝ որ կայ ի վերայ Տըգլաթ գետոյ» Ուռհ. 19. «Եկեալ Թագաւորն սակաւ զօրօք ի Շնջրոյ կանդարան և անցեալ գետովն ի վեր» Ուռհ. 353:

=*Արաբ.* قنطرة qanṭara «քարէ կամ աղիւսէ կամարաւոր մեծ կամուրջ» (Կամուս, Բրբ. Բրգմ. Ա. 797, Բ. 89): *Չգիտեմ թէ այս արաբ. բառի հետ ի՛նչ կապ ունին պրս.* جندرا jandara «գլան», բելուճ. jantar «ջաղացք, երկանաքար, մեքենայ», սանս. yantrá- «մեքենայ, արուեստաւոր կազմած» (Horn § 427):—*Աճ:*

ԳԻՒ.—Ջղ. գէնդէրէ, *Հճ.* գ՛անդայօ «կամուրջ», *Բլ.* գանդարա «արտը ջրելու ակօս, ջրանցք» (Ագղ. հանդ. *ե. 55): Բլ.* կանդարա (և ո՛չ գանդարա «ջրանցք» բառի նշանակութեան համար *Ս. Մովսիսեան (նամակ 1933 մարտ)* տալիս է հետևեալ մանրամասնութիւնը. «երբ մի տեղ փոս է և ջուրը չի կարող հոսել դէպի առաջ, մի կամ երկու կողմի վրայ թումբեր են շինում, որոնց մէջ ջուրը ուռչելով սկսում է հոսել. սրանով մի փոքրիկ ջրանցք է ձևանում». *քրդ. ևս* kändal, *որ գրեթէ նոյն նշանակութիւնն ունի:*

ԿԱՆԴԻՒՆ «փանդռան ձայնը՝ հնչիւնը». *ունի միայն ՓԲ. անստոյգ բառ. Թերևս յարմարեցրած փանդիռն բառից:*

ԿԱՆԴՐԻՒ «միայտէ մեծ անուր» *Նչ. եզեկ. Մագ. Թղ. 138 «եգիպտացի ճգնաւորների մէջքի անուրը» Մաշտ. (ըստ Հայսմաւ-*

Պատմ. տարազի 426). նոյն բառն է կանդիւ *(այլ ձ.* կանդի*) «զանազան խոտերից հիւսուած պատկ՝ որ տակառի բերանն են անցկացնում, որպէսզի գինին հոսելու ժամանակ դուրս չթափուի» Վստկ. 94։*

ՆՀԲ լծ. անիւ։

ԳԻՒ.— Ալշ. Մշ. կանդրիվ, *Ախք.* կանռիվ *«կեչի կամ հացի ծառի փայտէ շինուած* ℒ *ձեւով օղակ՝ որ արօրի ծայրն են անցկացնում և նրա վրայից փոկով արօրը լուծին են միացնում». նոյնը նաև* կանդրև *Բբ. Ղրբ.* կանդրիկ *Վն.* կանդրիւ *Բլ. Խոջ.* կանրեղ *Բիւթ.* կռնդակ *Ղզ. Երև. Ղրբ.։*

*ԿԱՆԵՓ *(ի հլ. ըստ ՆՀԲ, բայց առանց վկայութեան) «կտաւի բոյսը». հնագոյն ձևն է բառիս, որ արդի գրականի էլ ընդունածն է. որից* կանեփի *«կանեփենայ հատ ծորձ» Յայսմ.* կանեփեայ *«կանեփի հունդ» ԱԲ.* կանեփուկ *«մի տեսակ բոյս» Եղն. (ըստ Խ. Ուղուրլեանի՝ Մասիս 1880 յունիս 24 և Արքինեան, Ածաշունչի տունկերը, էջ 10՝* vitex agnus castus L. *այսպէս կոչուած է, որովհետև տերևները նման են կանեփի տերևներին)։—Բառիս ուելի նոր ձևն է* կանապ *Մագ. թղ. 231. Վստկ. 139. Բժշ.։*

=Հնդեվրոպական և ոչ-հնդեվրոպական լեզուների մէջ տարածուած մի բառ է. առաջիններից ունինք պրս. كنب kanab, كنو kanav, *յն.* κάνναβις, κάννᾰβος *(գործածուած Հերոդոտոսի մէջ՝ Դ. 74), լտ.* cannabis *(>իտալ.* canapa, canape, *ռում.* kanabiu, konabiu, *ֆրանս.* chanvre), *անգլսք.* haenep, *հիսլ.* hampr, *անգլ.* hemp, *հբգ.* hanaf, *գերմ.* Hanf, *հոլլ.* hennep, *հպրուս.* knapios, *լիթ.* kanāpės, *հսլ.* konoplja, *ռուս.* конопля, конопо, *լեհ.* konop, *ալբան.* kanəp, kərp *ևն։ Ոչ-հնդեվրոպական լեզուներից ունինք մորդվին.* kane'f, kanjtf, *թրք.* kenevir, *հնգ.* kanaf, *ասոր.* ܩܢܦܐ qənapā, *արաբ.* قِنَّب qinnab, *ասուր.* qanapu, qanabu, qunupu *ևն։ Այս բոլորը ո՛չ թէ ցեղակցութեամբ, այլ փոխառութեամբ են ծագած արևելեան մի լեզուից։* Schrader, Reallex. *և* Hehn, Kulturpfl *էջ 188 մայր աղբիւրը ուզում են դնել ֆինական *kana-pis բարդութիւնը. համմտ. չերեմխս.* ken'e, kin'e *«կանեփ» և սիրյէն-վոտյաք* piš, puš *«կանեփ, եղիճ»։ Բառս Սկիւթացոց միջոցով և հարաւային Ռուսաստանի վրայով անցել է մի կողմից գերմաններին և միւս կողմից յոյներին. յոյներից անցել է լատիններին և գերմաններից էլ սլաւներին, որոնցից էլ լիթուանացոց։ Կանեփից պատրաստւում էր մի տեսակ ոդելից ըմպելիք, որ գինու նախակարապետն է եղած. այսպէսով սանս.* çaṇá- *«կանեփ» (որ միևնոյն կանեփ բառն է, փոխառութեամբ Հընդկաստան հասած) և օսս.* san *«գինի» իրար են միանում։ Թերևս նաև սանս.* bhaṅga- *«կանեփ», գնդ.* bânha- *«կանեփ և սրանից պատրաստուած թմրեցուցիչ ըմպելիքը», ռուս.* peníká, *լեհ.* pienka *«կանեփ» ծագած են շրջմամբ միևնոյն բառից* (Walde 123, Boisacq 407, Berneker 559, Kluge 202)։ *Ինչպէս վերիններին, նոյնպէս և հայերէն բառի բուն աղբիւրը յայտնի չէ. ամէնից աւելի մերձաւոր ձևն է պարսկերէնը, որ սակայն ամբողջապէս չի՛ յարմարւում հայերէն բառին. հայ բառի բուն աղբիւրը լինի թերևս պահլաւականը, բայց այս ձևն էլ անծանօթ է։*

Առաջին անգամ ԳԴ պրս. էնեփ *և* էնեվ *ձևերի հետ։ ՆՀԲ «նոյն անուն է և յայլ լեզուս»։* Müller SWAW *42, 253 լտ.* cannabis:—Lag. Arm. Stud *§ 1099 պարսիկ ձևերից։*

ԳԻՒ.—Երև. Կր. Տփ. կանէփ, *Ագլ.* կա՛նիփ, *Համշ.* գօնիփ, *Մկ. Ոզմ. Սլմ. Վն.* կանապ, *Ալշ.* կանամփ, *Խրբ.* գանամփ, *Մշ.* կանանպ, *Մրղ.* կամփ, *նոր փոխառութեամբ Տիգ.* դ'ենաբ, *Պլ.* խրնենաբ *(առաջինը արաբերէնից, երկրորդը Թուրքերէնի միջոցով)։ Նոր բառեր են* կանեփխոտ, կանապտու, կանապոց, կանապիկ, կանապտիկ, կանեփեղէն, կանեփնոց։

ՓՈՒ.—Գ. Փառնակ, Անահիտ 1906, 233 ալբան. kanep *(իմա՛* kanəp*) և Ղ. Ադայեան, Աղբիւր 1889, էջ 6 վրաց.* կանապի *հայերէնից փոխառեալ են դնում։ Առաջինի համար առանձին պատճառ չկայ, երկրորդը թերևս վերջաձայնի պատճառով։*

ԿԱՆԹ *«կոթ (որևէ ամանի)» Երզն. քեր. ուրիշ վկայութիւն չհայ հնից։*

Բագրեւանդ, Արեւելք 1884 նոյ" 16 սանս. vadta (վանթա) *ձևից։—* Bugge KZ *32, 84* կոթ *համանիշի հետ կապակցով ուս.* կոց *համանիշից փոխառեալ։* Scheftelowitz BB *28, 303 և 29, 23 գոթ.* hinþan *«բռնել»,* handus, *հիսլ.* hond, *գերմ.* Hand *«ձեռք», իբր հնխ.* kantu: Petersson KZ *47, 262 մերժելով այս՝ համեմատում է կա՛մ յն.* χέντο *«բռնել», ռուս.* žmeňa *«բուռ», իռլ.* gemeb, *կիմր.* gefyn *«շղթայ, կապանք» բառերի հետ, իբր հնխ.* gem- *կամ աճած* gembh- *արմատից՝* -ti- *մասնիկով, և կամ լիթ.* gémbė *«կոն, ճանկ», հբգ.* knebil *«կապանք», շվէդ.* knavel *«ցից», դան.* knap *«կոճակ» են բառերի հետ՝ հնխ.* genobh- *արմատի սղեալ* gembh- *ձևից։*

ԳԻՒ.—Ալշ. Երև. Մկ. Սլմ. Վն. կանթ, *Մշ.* կանտ, *Հմշ.* զօնթ *«ամանի կոթ». որից* կանթել *Ղրբ. «փոքրիկ օղակ կպցնել (օր. դրամին)», Խ. Հնխ. «թևերը ծալել կողքերի վրայ», կանթուկզիկ Վն. «հողէ ամաններ (ընդհանուր անուն)». կայ նաև* կնթա *Մրղ. «ունկ»։*

***ԿԱՆԹԵՂ**, *ի—ա հլ. «իւղի ճրագ, ջահ, վառած մոմ» Կորիւն. Ագաթ. Փարպ. որից* կանթեղաբարբոք *նար. խշ.* կանթեղակիր *Փիլ. լիւս.* կանթեղաւոր *ճառընտ.* կանթեղխոտ *«հողմափայտ բոյսը. լտ.* chelidonium» *Բժշ. (Համմտ. արաբ.* قنديل gandīl *և Թրք. թրգմ. Գ. 332). բառս յեռնաբար դարձել է նաև* կանթեղն, *որից սեռ.* կանթեղան *Մեկն. ղկ. և* կանթեղնաւոր *Պտմ. ազէքս։*

=Յն. κανθήλα *«կանթեղ, ջահ, կախուած ճրագ» բառից փոխառեալ, որ փոխառեալ է իր հերթին լտ.* candēla *«ջահ, մոմ» բառից. լատին բառը ծագած է* candere *«փայլիլ, ցոլալ» բայից և փոխառութեամբ տարածուած է շատ լեզուների մէջ. ինչ. իտալ.* candela, *ֆրանս.* chandelle, *անգլ.* candle, *ռում.* kandelĭ, *հսլ.* kanŭdilo, *ռուս.* кандило (Berneker 480), *ալբան.* kandilje, *ասոր.* قنديلا gandīlā, *արաբ.* قنديل gandīl, *Թրք. քրդ.* kandil, *վրաց.* կանդելի, *Թուշ.* կանդել *են, նոյն նշանակութեամբ։—Հիւբշ. 354։*

Աւետիքեան, Քերակ. 1815, էջ 313—4 տեսնելով հանդերձ լտ. candela *են բառերի նմանութիւնը, մերժում է սրանք և ըստ հին քերականների մեկնում է* կանթ-եղ *«կանթ ունեցող» կամ կայ անթեղ «կրակ ունեցող» և կամ կայ անդ եղ։ Աւգերեան, Բցտր. չփ. և կշռ. 107 դնում է պրս.* գանտիյլ։ *Աւելի ուղիղ Գ Դ արար.* գանտիյլ *(բառ յուն.)։ ՆՀԲ Թրք. և լտ. ձևերը։* Peterm. *20 լտ.* candela: *Մսերեան, Ճռաքաղ 1861, էջ 383 ոտանաւորով.*

Բան ասացաւ զկանթեղէ,
Թէ լայնափոր ու կանթեղ *է,*
Ասաց և ումն, թէ ուր կանթեղ
Առկախեալ կայ, կա՛յ անդ և եղ։

Սրանով հանում է կանթեղ *«կանթ ունեցող» կամ կայ անդ եղ ձևերից։* Lag. Arm. Stud. § 1100 *յն.* χανδήλα-*ից։ Հիւնք. լատինից։*

ԳԻՒ.—Ոզմ. Ջղ. Սլմ. Վն. կանթեղ, *Աղլ. Ախց. Երև. Մկ. Շմ.* կանթէղ, *Հճ. Սչ.* գանթեղ, *Ննխ. Սեբ.* գանթէղ, *Ասլ.* գանթէ՛ղ, *Տփ.* կա՛նթիղ, *Ալշ. Մշ.* կանտեղ։

ՓՈԽ.—Ուս. կանթեղ *«եկեղեցու կանթեղ»։*

ԿԱՆԹՈՂ *«կոճաւոր». ունի միայն Բառ. ևրեմ. էջ 155։*

***ԿԱՆԿԱԼ** *«կաւոտակ, խաղ». նորագիւտ բառ, որ երեք անգամ ունի Վրդ. առ. 172։*

=Պրս. كنكل gangal *«կաւոտակ, հանապ»։*

Ուղիղ մեկնեց Մառ, անդ I, 272։

ԿԱՆԿԱՏՈՒՆԿ *«կառափուշ, մի տեսակ փուշ». մէկ անգամ ունի Փիլ. նխ. Բ. 104 (Մոլաձիթենիք և կանկատունք և բսուկք)։ Սրա մեկնութիւնը տալիս է Լծ. փիլ. հետևեալ ձևով. «կանկատունկք կառափուշն է» (ըստ ՆՀԲ, հտ. Ա. էջ 1058 ա) կամ «գժնիկ է, կամ փուշ մի որ* կանկատ *ասեն» (ըստ ՀԲուս. § 1301)։ Հ. Ն. Հիւրմիւզ, Վրուրի Որմզդանայ Բուրաստանք, էջ 56 հետևում է «cactus»։ Անստոյգ բառ։ Թէև ուղիղ է*

կանկատունկ ձևը, բառի վերջին մասը ծանօթ տունկ բառն է, իսկ կանկ մնում է անծանօթ արմատ։ Իսկ եթէ ուղիղ է ըստ Հիւս. Լծ. փիլ. կանկատ, ուղղականն է *կանկատ, յգ. ուղ. կանկատուճ։ Համմտ. նաև յաջորդը։

ԿԱՆԿԱՐ, ո հլ. «փշոտ մի բոյս, որի ընտանին յարգի բանջարեղէն է. լտ. cinara, ֆրանս. artichaut» Վրք. և վկ. Բ. 326. Գաղիան. Բժշ. Ճառընտ. Վտակ. 174. որից կանկարի խէժ «կինապարին» Բժշ. գրուած է նաև կանգար, կանկառ, կանգառ. արդի գրականում ընդունած ձևն է կանկառ։

=Պրս. كنگر kangar հոմանիշից փոխառեալ. սրանից են նաև արաբ. قنغر qangar (Կամուս, Թրք. Թրգմ. Բ. 90), Թրք. kenger. ըստ այսմ հայ բառի ուղղագոյն ձևն է կանգար։ Պրս. բառից է ծագում kangaržad «կանկարի խէժ, gummi cynarac scolymi», որից փոխառեալ է ասոր. ܩܢܓܪܙܕ kangarzad նոյն նշ։—Հիւբշ. 268։

Ուղիղ մեկնեց նախ ԳԴ, որից յետոյ ՆՀԲ, Justi, Kurd. Gram. 85։

ԳԻՒ.—Մշ. կանգար, Ալշ. Ախց. Երև. Կր. կանգառ, Ագլ. կա՛նգառ, կա՛նգառներ, Ոզմ. Վն. կանգ՛առ, Մկ. կանգ՛առ, Խրբ. գ՛անգառ, Ակն. գանգար, ՋԹ. գանգօյ, գանգոր, Հճ. գ՛անգուր։ Նոր բառեր են կանկռուան, կանկռուկ, կանկառռուկ։

ՓՈՒ.—Հայերէնից է փոխառեալ կապադովկիական յն. καγκάρι «մի տեսակ բոյս, որի արմատից ծամոն են պատրաստում, իսկ պտուղը իբրև սուրճ գործածում» (Karolides, Γρ. συγκρ. 84). չի կարող բառս Թուրքերէնից լինել փոխառեալ, որովհետև ձայնաւորները համապատասխան չեն։

*ԿԱՆԿԵՂ կամ ԿԱՆԿԵՂՈՆ «վանդակապատ». երկու ձևն էլ մի մի անգամ գործածում է Կիւրղ. Թգ. «կինկղիս՝ կանկեղոն ծալածով է» (իմա՛ «կինկղիսը =յն. κιγκλίς ծալովի վանդակապատ է»). «Եւ էր կանկեղն յերկայնութիւն քսան կանգուն»։ Նոյնը սխալ դրչութեամբ ունինք նաև կանկեղան ձևով. «Ըստ երեսաց տաճարին էր լայնութիւն կանկեղանին» (ուղղել կանկեղոնին) Կիւրղ. Թգ.։

=Յն. κάγκελον, κάγκελος «վանդակապատ՝ որ եկեղեցու խորանը և դուռը բաժանում է ժողովուրդից». ծագում է լտ. cancelli ձևից. հայերէնի մէջ կանկեղ համապատասխանում է յն. κάγκελος -ին, իսկ կանկեղոն (որ և սխալագիր կանկեղան)՝ յն. κάγκελον ձևին։ Յունարէնից է փոխառեալ վրաց. კანკელი կանկելի «ճաղեր, վանդակապատ»։—Հիւբշ. 354։

ՆՀԲ կանկեղն և կանկեղան մեկնում է «վանդակապատ», իբր յն. κίγκλης, լտ. cancelli ձևից, իսկ կանկեղոն=կինկղիս «կարկինոս, կոնքեղ ծովային խեցեմորթը»։ Սակայն յունարէնի մէջ չկայ «խեցեմորթ» նշանակութեամբ այսպիսի բառ։ Միւս կողմից յն. κίγκλης չի համապատասխանում կանկեղրն, կանկեղան ձևին։ Ուղիղ մեկնեց բառս Brockelmann, Ուս. փոխ. բառից, էջ 109, իսկ կանկեղոն=կինկղիս «խեցեմորթ» սխալ միացումը վերի ձևով ուղղեց Հիւբշ. 354 ծան։

ԿԱՆՃՈՒ կամ ԿԱՆՋՈՒՒ, ո հլ. «գաւազան, ցուպ, ձող» Սահմ. ժր. ուրիշ վկայութիւն չունինք։

*ԿԱՆՈՆ, ի–ա հլ. (յետնաբար նաև ի հլ.) «ուղղալար ճարտարապետի, ուղիղ փայտ. ժամանակագրական աղիւսակ, կարգ, օրէնք, կրօնական կամ եկեղեցական օրէնք, օրինակ են» ՍԳր. Եւս. քր. Նղն. Ագաթ «կրօնական պատիժ» Տաթև. ամ. 191. որից կանոնել «օրէնք դնել» Ոսկ. փիլիպ. կանոնական Ագաթ. կանոնագրութիւն Փարպ. անկանոն ՅՀ. կթ. են։ Նոր բառեր են անբնականոն, անկանոնութիւն, կանոնաւոր, կանոնաւորապէս, կանոնաւորութիւն են։ Բառը գրուած է նաև կանովն, բանոն, բանուն. վերջին ձևի վրայ տե՛ս առանձին։

=Յն. κανών (κανόνος) բառից, որ նշանակում է «եղէգի ցօղուն» և հետզհետէ նոյն նախնական իմաստից բխելով՝ «որևէ ուղիղ փայտ կամ ձող, փայտէ քանոն, ուղիղ գիծ, վանդակի ճաղ, սահմանագիծ, օրինակ, ձև, օրէնք (և յատկապէս եկեղեցական օ-

բէնք), կանոն, ցուցակ»։ Ցոյն բառը ծագում է κάννα (< լտ. canna) *«եղէգ» բառից, իսկ սա էլ ասորաբաբելական* ḳanū *ձևի միջոցով սումեր-ակկադ.* gin *«եղէգ» բառից* (Boisacq, *էջ 406)։ *Փոխառութեամբ անցել է շատ լեզուների. ինչպէս՝ լտ.* canon, *հուլ.* kanonŭ, *արաբ.* قانون qānūn *«օրէնք», թրք.* qanun *«օրէնք, ոստիկան», վրաց.* კანონი *կանոնի «եկեղեցական կանոն, յանցաւորների վրայ դրուած ապաշխարանք» ևն։ Նշանակութեան կողմից շատ զարգացում է կրած սլաւական լեզուների մէջ. հմմտ. ռուս.* канóнъ *«առաւօտեան կամ երեկոյեան եկեղեցական արարողութեանց երգերը և աղօթքները»,* канýнъ *«երեկոյեան ժամերգութիւն, նախատօնակ, ընդհանրապէս նախորդ օրը (*наканýне*), մեռելոց հոգեհանդիստ, այս առթիւ պատրաստուած զանազան ուտելեղէններ, մեղրով գաթայ, ոտնական մեղրաջուր կամ գարեջուր ևն»* (Berneker 481)։—*Հիւբշ. 355։*

Հներից Տաթև. հարց. 538 գրում է. «Առուգաբանութեամբ կոչի կանոնն քանոն, այսինքն ուղղութիւն և կարգ և օրէնք»։ Ուղիղ մեկնեց նախ Schröder, Thesaur. 47: *Գ-ի դնում է արաբ. գանուն (բառ չն.)։ ՀՀԲ, Աւգերեան, Բյատր. չփ. և կշռ. 107 և ՆՀԲ չն. ձևից։ Հիւնք. չն.* κάννα *«եղէգ» բառից։*

Գ-ի.—Մշ. կանոն *(սազմոսի կանոն, 2. հեգարան), Ոզմ.* կանուն, *Մրղ.* կանուի ն, *Ախց.* ղmնօն *(յատկապէս* ղmյդm-ղmնօն <*արաբ.* qāida-qanūn), *Սեբ.* գանէօն, *իսկ կրկնութեամբ՝* դարmր-ղmնէօն (<*արաբ.* qarār-qānūn)։

Փոխ.—Ուտ. կանօն *«կանոն», որից և* կանօնճէ *«կանոնաւոր»,* կանօնչիչալ *«օրէնսգէտ» ևն։*

ԿԱՆՈՒԱՆ *կամ* **ԿԱՅՆՈՒՃ** *«շճուկ». ունի մէյնյ Բառ. երեմ. էջ 155։*

ԿԱՆՈՒԽ, ո, ի–ա *հլ. «ժամանակից առաջ, վաղ» Ագ. «հին, հին ժամանակի, վաղեմի» Եւս. քր. Վեցօր. «առաւօտը շուտ» Գ. մակ. ե. 12 (=միջ. հայ.* կանուխ *Անսիզք 17). որից* կանխաւ *«առաջուց» Ագ. Ա-գաթ. ամիս կանխոց «երրայական նիսան ամիսը, գարնան սկիզբը» Ագ. (հմմտ. գերմ.* Fruhling *«գարուն», բուն «կանուխ»).* կանխել *Ագ.* կանխի *Նանայ.* կանխագոյն *Մծբ. Եւս. քր.* կանխագէտ *Ագ. Եզն. Ագաթ.* կանխախօսութիւն *Ոսկ. Ես.* կանխածանօթ *Ոսկ. մ. բ. 8.* կանխակալ *Եզն. Ոսկ. Սեբեր.* կանխահաս *Երեմ. իդ. 2.* կանխասաց *Ագաթ. Ոսկ. Ես. Յուդ. 17.* կանխարկ *Մծբ. Նոր բառեր են* կանխավճար, կանխարգել, կանխամտածուած, կանխորոշել *ևն։*

Հներից Համամ. քեր. 268 հանում է կան(?) *նախդիրից, որ գոյութիւն չունի։ Յառաջացել է շփոթմամբ Բր. քեր. 30 նախադրութեանց ցանկի մէջ* կանուխ *բառը իբրև երկու բառ կարդալով (կան և ուխ)։ Հիւնք. նախ բառից։ Նազրճեան, Արեւելք 1884 նոյ" 16 սահմ.* vang *«կանխել» բառի հետ։ Մառ* ЗВО XIX, *0155 հին նշանակութիւնը գնում է «կանաչ, գարնանային» և համարում է յարեթեական ղեն արմատից, որից և հյ.* կանաչ, *վրաց.* ղանա, *լազ.* ղոնա, օնա *«արտ»։* Müller WZKM 8, 189 *պրս.* كهن kahun, kuhan *«հին» բառի հետ։*

Գ-ի.—Ախց. Կր. Հնդ. կանուխ *«շուտով», Վն.* կանուխ *«վաղորդայն», Ղրբ.* կա'նուխ, *Զթ. Խրբ. Հճ. Պլ. Ռ. Սեբ.* գանուխ, *Սչ.* գանուխ', *Սլմ.* կանօխ, *Տիգ.* գրնենուխ, *Ակն. Ննխ.* գանօխ, *Ասլ.* գնիխ։ *Իմաստի դոյզն փոփոխութեամբ՝ Խ. Տիգ. «առաւօտ», Խ. «վաղը, էգուց», Գնձ. «արագ, շուտ շուտ»։—Նոր բառեր են* կանուխկեկ, կանուխկմանց։

Փոխ.—Վրաց. კანოხი *կանոխի «եղնների առաջին լծումը՝ գարնանային աշխատանքների համար», ლანუხობა ղանուխորա «գարնան սկզբնաւորութիւնը». այս իմաստի հետ հմմտ. ամիս կանխոց «գարնան առաջին ամիսը», որից հետևում է* կանուխ *«գարուն կամ գարնան սկիզբը» (նախ Աճառ. Արրատ. 1898, 367, որից յետոյ Մառ* ЗВО *անդ)։*

ⵔԿԱՆՁ, ո, ի *հլ. «լացի բարձր ձայն» Մանդ. 34. կք. Լաստ. որից* կանչել *«բարձր գոչել, ճչել» Կոչ. Ագաթ.* կանչիւն *Նար. տաղ.* լալկանչ *Յայսմ.* կանչուկ *«անծանօթ մի*

թռչունի անուն» Տաղ. (Ամատ. Հայոց բառ ու բան, էջ 329ա)։

=Ինաձայն բառ. ծագում է պարզական կ ձայնից՝ և և չ ածանցիչներով. համմտ. կոչել, կնչել, խանչել, գանչել *են։—Ա.Ճ.*

Տէրվ. Նախալ. տե՛ս ծաղր բառի տակ։ Հիւնք. գանգակ բառից։ Վերի մեկնութիւնս տես ՀԱ. 1899, էջ 203բ։ Մ. Ս. Դաւիթ-Բէկ, Յուշարձ. 397 արմոր. centel *«դպրոցի դաս», հրէքտ.* centel *«երգել», սանս.* kan, *յն. καν άζω «հնչեցնել», լատ.* cano *«երգել»։*

ԳԻՒՐ.—Մշ. Զղ. Սլմ. Վն. կանչել, *Ախց. Երև. Կր. Մրղ.* կանչէլ, *Ագլ. Գոր. Ղրբ. Մկ. Շմ. Ոզմ. Տփ.* կանչիլ, *Մշ.* գանչել, *Ննխ. Պլ. Ռ. Սեբ. Տիգ.* գանչէլ, *Ասլ.* գանչէ՝լ, *Խրբ.* գանչիլ, *Ասպ.* դանչել, *Հճ.* գէնչել, *Ակն.* գօնչէլ, *Համշ.* գօնչուշ, *Սվէդ.* գինչիլ. *նշանակում են «կանչել, մօտը ձայն տալ. 2. դոչել, աղաղակել. 3. հրաւիրել. 4. ականջը խօսիլ. 5. աքլորի երգելը. 6. խաղ կանչել, երգ երգել» (իբրև Թրգմ. Թրք.* türki čağərmaq *հոմանիշի)։ Նոր բառեր ու ձևեր են կանչ «ցաւի աղաղակ, հարսանիքում դրամական հանդանակութիւն, հաւախօս», կանչ ուղարկել «հրաւիրել», կանչան, կանչի, կանչոց, կանչվրտել, կանչվոտոց, կանչվոտան, կանչվրտուիմ, կանչկան են։*

ԿԱՆԱԿԵՐ, *նորագիւտ բառ՝ անյայտ նշանակութեամբ. մէկ անգամ ունի Վստկ. 187 «Հան և լուա ի կթոց հով ջրով աղէկ և թող որ պաղի ամենովն ի կանակեր (միւս ձձ. չունին) օր մի և գիշեր մի»։ Թերևս նշանակէ «կամաց կամաց, հանդարտ»։*

***ԿԱՆՏԻՏԱՏ** *«յունական պալատական մի պաշտօնեայ». մէկ անգամ ունի Սեբ. Հրտր. Պատկ. էջ 114 «Առաջին սպաթար ի մէջ ամենայն սպաթարացն և կանտիտատ»։*

=Յն. κανδιδᾶτος (Sophocles 626) *հոմանիշից, որ փոխառեալ է լտ.* candidatus *բառից։ Այս բառը բուն նշանակում է «ճերմակաւոր, սպիտակազգեստ» և յետոյ անցել է նշանակելու զանազան պաշտօնեաներ (ծագումը և ցեղակիցները տե՛ս խանդ արմատի տակ)։—Սպաթար և կանտիտատ կոչուած պաշտօնեան է յատկապէս յն.* σπαθοφόρος κανδιδᾶτος (Sophocles 1002)։—*Հիւրշ. 380։*

ԿԱՆՏԻՏՕՐԱՅ *(կամ ուրիշ ձեռագիրների համեմատ՝* կանտիտոր, կանտիտայ, կանդիտորայ*) «թագաւորի զինակիրն ու կարապետը». մէկ անգամ ունի Մխ. դատ. էջ 263։ Նոյն բառը Մխ. այրիվ. 4 գրում է* կենդիտորայ*ք, Ամբ. դատ. 87* կանդիտարայ*։*

Բասմաճեան, Մխ. դատ. կցում է լտ. candidatus *բառին, որ նշանակում է «ծերակոյտի մէջ թագաւորական հրովարտակը կարդացող պաշտօնեան կամ այլ պաշտօնաւորներ»։* Karst, *Դատան. I 87 և II 76 նոյնից փոխառեալ յն.* κανδιδᾶτος *ձևի հետ։ Բայց սրանցից ո՛չ մէկը չի ծածկում հայերէն ձևը։ Շատ աւելի նման է լտ.* conditor *«հիմնադիր պետութեան, հեղինակ, պատմաբան, գրող», բայց սա էլ նշանակութեան կողմից անյարմար է։*

ԿԱՇԱՅԻԼ *«կափետել». ունի միայն Բառ. երեմ. էջ 155, որ և էջ 156 դառնում է* կաչիտէ *«կափետէ» (ներկ. եզ. գ դէմք)։ Երկուսը նոյն են. բայց ի՛նչ լինելը յայտնի չէ։*

ԿԱՇԱՌ, *ի–ա, ո հլ. «կողմնակցութեան համար տրուած վարձք» ՄԳր. որից* կաշառել *Սիր. Թգ.* կաշառաբեկ *Գ. մակ. դ. 15. Բուզ.* կաշառագնաց *Բ. մակ. ժ. 20.* կաշառակուռ *Բուզ. դ. 5.* կաշառառու *Առակ. ժե. 27. Յոր. ժէ. 34.* անկաշառ *Ոսկ. յհ. ա. 13. Բ. կոր.* կաշառաճաշ *«կաշառուիլ» Լմբ. ժբ. մարգ. էջ 138 (ամբակ. ա. 4).* կաշառակեր, կաշառակերութիւն *(նոր բառեր) են։*

Հներից Վրդն. եւ. առուգաբանում է «կայ շատ, որ է ամբոխ և շարաւանդ ոտից»։ ՆՀԲ «որպէս թէ կշռեալ առուրք, որպէս փրկանք»։ Սրանից նաև Հիւնք։

ԳԻՒՐ.—Զղ. կաշառ, *Ագլ. Երև. Կր. Մրղ. Ոզմ. Սլմ.* կաշառֆ, *Մշ.* կաշառկ, *Մկ.* կաշառֆ՝, *Խրբ.* գ՝մշմոֆ։

ԿԱՇԻ *(-շւոյ, -շեաց) «մորթ» Ղեւտ. ը. 17. Բ. 11. Կանոն, որից* կաշաճալ *«կաշի դառնալ» Ոսկ. մ. ա. 5.* կաշիլ *կամ* կաշեճալ *«կաշի դառնալ» Եւագր. 6. Մագ. Թղ. 133? 191.* կաշեայ *Խոր. ճաստակաշի Վեցօր. 193.* եօթնակաշեան *Պտմ. աղէքս. նոր*

բառեր են **կաշեղէն, կաշեգործ, կաշեգործութիւն, կաշեկազմ, կիսակաշի, կաշեպատ, կաշեգործարան** *են:*

=Թերևս ասորաբաբելական աշխարհից փոխառեալ մի բառ է. համմտ. սումեր. kuš *«կաշի, մորթ», արաբ.* قشّ qaš' *«հին մուշտակ. 2. կաշիէ վրան. 3. կաշիէ ակումբ, ակումբ մաշկեայ, կաշեայ անկողին կամ սփռոց. 4. չորացեալ տիկ ջրոյ. 5. չոր կաշի», ա.ասր.* قشّة qaš'a *«մուշտակի կտոր», ա.ասր.* قشّاة qašā'a *«մի կտոր չորացած կաշի», ա.ասր.* قشّة qaš'a *«չոր մորթ», որոնց արմատն է* قشّ qaš' *«մի բան չորանալ, չուի-չոր դառնալ» (Կամուս, Բրբ. Բրգմ. Բ. 647): Փոխառութեան հարցը կապուած է անշուշտ կաշեգործութեան պատմութեան հետ. համմտ. նաև հյ. մաշկ և մորթ բառերը:—Ա.Ճ.*

Klaproth, Asia polygl. 101 *և* ՆՀԲ *դնում են ռուս.* кожа *«կաշի, մորթ», Müller SWAW 42, 254 զնդ.* kaša-, *որ Justi մեկնում է «ուս»:* Karolides, Γλ. συγκρ. 87 *կապադովկ.* kašuni *«հին շոր կամ կօշիկ», սանս.* kaš *«մաշել», իսկ էջ 172 կապադովկ.* kaši *«պանիր», Բրբ.* qayəš *«փոկ», յն.* κάς *«կաշի» (Հեսիք.),* κασσύω *«կարկատել», κατπύς «կարկատանի կաշի» են: Հիւնք. պրս.* gāvmēš *«գոմէշ» բառից: Patrubány ՀԱ 1908, 313 յն.* γῦρος *«բոլորաձև» բառի հետ: Թիրեաքեան, Արիահայ բռ. 212 զնդ.* gaoš *«մորթ»: Պատահական են Բրբ.* قايش qayəš *«փոկ», ԲԲր.* قيش qayš, *կարագաս.* keš *«կաշի, կեղև», որոնց հետ համմտ. ընդհանուր ֆիննական* kesi *(բունը* kete*) «մի տեսակ բարակ կաշի, մաշկ», մորդվ.* ked, *վոտ.* ku, kud, *սիրյ.* ku: *Ըստ* A. Ahlquist, Die Kulturwörter der Westfinnischen Sprachen (Helsingfors 1875), *էջ 99 «Մուշտակաւոր անասունների մորթը պատրաստելու, նրանց պէտք եղած սպիտակութիւնը տալու կամ ներկելու արհեստը հին ժամանակներից ծանօթ է հիւսիսային բևեռային բնակիչներին և իրենց լեզուներն էլ շատ ճոխ են այս գործին վերաբերեալ այլևայլ բառերով և անուններով»:*

Գիր.—Ագլ. Ալշ. Ախց. Գոր. Երև. Կր. Ղրբ. Մշ. Շմ. Ջղ. Սլմ. Վն. Տփ. **կաշի**, *Ասլ. Խրբ. Համշ. Ննխ. Պլ. Ռ. Սեբ. Սչ.* **գաշի**, *Տիգ.* **գոշի**, *Ոզմ.* **կաշէ՛**, *Հճ. Ջթ.* **գէշի**, *Սվեդ.* **գիշա**: *Նոր բառեր են* **կաշեգին, կաշաթև, կաշեհան.—կովկասեան բարբառներում ածանցման ժամանակ դառնում է* **կաշվ-**, *ինչ. տես.* **կաշվի, կաշվեղէն, կաշվեհան, կաշվաման** *են:*

*Փոխ.—*Scheftelowitz BB 27. 70 *հայերէն* **կաշի** *«պղինձ» բառից փոխառեալ է համարում ասուր.* kimaš *«պղինձ» և աւելի հետու՝ սանս.* kaṁsa *«բրոնզ», պալի* kaṁso *«մետաղ, բրոնզ», հպրուս.* kassoje *«արոյր» և Յելբեհան Թերակղզու հր-արևմտեան* Bugier-*ների լեզուով՝* gessa *«մետաղ, բրոնզ»: —Դժբախտաբար չկայ հայ.* **կաշի** *«պղինձ» ձևով մի բառ և չգիտեմ թէ ի՛նչ Թիւրիմացութեան արդիւնք է:*

ԿԱՇԿԱՆԴԵԼ *«ամուր կերպով կապել» Իմ. ժէ. 2. Պիտ. 36. կԹ. որից* **աՇկաշկանդ** *(Նոր բառ):*

ՆՀԲ «պնդապէս կապել քարշելով, իբր կաշւով՝ փոկով պրկել»: Տէրվ. Նախալ. 77 կրկնուած կանդ= սանս. gadh, *հնխ.* gandh *«պնդել, կապել» արմատից. առաջին եղրում արմատի ձգ ձայնախումբը դարձել է շ: Հիւնք.* **կաշ=** *պրս.* kaš *«չուան»+***կանդ**, *որ հանում է* **ճանդել** *բայից: Ղափանցեան ՅՒՕ 23, 357 արմատը* **կանդ**, *կրկնուած* ***կարկանդ**, *որ յետոյ եղաւ* **կաշկանդ**, *ինչպէս* **կարկաո=կաշկաո**:

*—***ԿԱՇԿԱՌ** *«քարակոյտ» Մագ. որից* **կաշկառուտ** *«քարոտ տեղ» Օրբել. Հրտր. էմ. էջ 254,* **կաշկառիլ** *Մագ. Թղ. 229.* **ճարակաշկաո** *Անան. ակեղ. (=***ճարակարկաո** *Բուզ.):*

*=***Կարկաո** *բառի գաւառականն է. տես* **կաո** *արմատի տակ:*

ՆՀԲ միացնում է **կարկաո** *բառին: Նոյնը Ղափանցեան ՅՒՕ 23, էջ 357:*

Գիր.—Ղրբ. **կա՛շկաո** *«արտի կամ այգու մէջ աւելորդ քարերից կազմուած դէզ», Ագլ.* **կա՛շկաո** *«քարի կտորտանք, խիճեր»:*

*ԿԱՇՀՄԱՐ *«իշավարունգ» Գաղխան. ունի միայն ՀՌուս. § 1253, սխալագիր կալիմար ձևով, որ այսպէս պէտք է ուղղել ըստ՝*

=արաբ. قشّاالحمار qiššā-al-himār *«իշավարունգ»։—Աճ.*

ԿԱՇՄՐՈՒՆ *տե՛ս* Կարշն։

*ԿԱՋԱՂԱԿ *(ի–ա հլ. ըստ ՆՀԲ, թէև առանց վկայութեան) «անծեղ թռչունը» Բժշ. գրուած նաև* կեչեղակ *Առաք. լծ. սահմ. 161։—Այս բառից է յարմարեցրած* կաչաղել *«կռկռալ». «Ագռաւը եթէ կաչաղիցեն յառաւօտուց, է նշանակ լաւ և պարզ եղանակի». Էֆիմ. 172։*

*=Պհլ. *kačalak հոմանիշից, որ թէև աւանդուած չէ, բայց հաստատւում է հայերէնի հետ նաև պրս.* kaǰala *(որ և* kalāžā, kalažu, *ըստ Շիրազեցոց* kalānǰā), *քրդ.* kaǰele *և փոխառեալ ն. ասոր.* käǰälä *հոմանիշների միջոցով։ Հայերէնի* -ակ *վերջաւորութիւնը ցոյց է տալիս, որ մեր ձևը պահլաւերէնից է փոխառեալ։*

Ինճիճեան, Հնախ. Գ. 22 կաչ բնաձայնից. Մասր մագիստ., Խմբագիր չափածոյ, էջ 173 կանչ և աղաղակ բառերից։ Ուղիղ համեմատեց նախ Justi, Dict. Kurde, *էջ 326։—Յ. Արշէգ, Բազմ. 1897, էջ 51 լծ.* աճաղաղ։

ԳԻՒ.—Ախց. Տփ. կաչաղակ, *Շմ.* կչաղակ, *Երև.* կչէ՛ղակ, *Ագլ.* ճչա՛ղակ, *Գոր. Ղրբ.* ճչէ՛ղակ։

ԿԱՊ, ո *հլ. (յեռնաբար նաև ի, ի–ա հլ. սակայն կայ գրծ.* կապօ *Կորիւն. վեցօր) «կապ, կապանք», նմանութեամբ «սիրոյ կապ, դաշինք, գրի կապ, վանկ. հեգ» ՍԳր. Կորիւն. «կախարդանք, հմայութիւն» Ոսկիփ. «տուիլ, փոխուիլահամ» Ոսկիփ. որից* կապել *ՍԳր. Եզն. Ոսկ. Սերեր. Մծբ. Եփր.* կաապկցել *Ոսկ. յհ.* կապաճ *ՍԳր. Ագաթ.* կապեալ *ՍԳր.* կապարան *«բանտ» Ոսկ. տիմ.* կապանարան *«բանտ» 3հ. կթ.* կապան *«զարբանդ, լեռների մէջ կիրճ, կապարան» (իբրև Թրգմ. պրս.* band, darband *հոմանիշից) Խոր. Երզն. քեր. Մարթին. (ըստ Խոջ. կապանն է ծայռերի միջից կտրած ճամբայ).* կապակուր *Մծբ.* կապակոտոր *Բուզ.* կապանաւոր *Կորիւն. Ագաթ.* բազմակապ *վեցօր. երկաթակապ Գ. մակ. գ. 8.* թագակապ *Մծբ.* լեզուակապ *Մանդ.* ձիկակապ *վեցօր.* շաղկապել *Պզատ. օրին. Նիւս. բն.* շղթայակապ *Արծր.* գրակապ *եօթնագր. նշանակում է նաև «շէնք շինել, կառուցանել» կամ պարզապէս «շինել, գործել, հիւսել» և այս իմաստներից են կազմուած* կամարակապ *ՍԳր. երկաթակապ Խոր.* ճոյակապ *ՍԳր.* ականակապ *Եղ. լա. 5. Սրգ. գ. 10.* կատարակապութիւն *Մամբր. (*կապանջ *(*капанч*) «щипки, щепь» (Կ. Սարաֆեան, Բանալի գիտութ. Սանկտպետ. 1788, էջ 67) Թուի գաւառական կամ նորակերտ բառ)։*

Windisch. *8 լատ.* capio *«բռնել»,* captivus *«գերի» բառերի հետ է համեմատում։* Müller SWAW *38, 575 և 42, 329 լտ.* capio *«բռնել, գերել»։ Հիւրշ.* KZ *23, 19 նոյն բառի հետ։ Տէրվ.* Altarm. *53 գոթ.* habon *«ունենալ, կրել», լտ.* capio, *անգլ.* haft *«կապեակ» բառերի հետ։ Նոյն, Նախալ. 68 հնխ.* kap *«կապել, կապտել» արմատից դնում է լտ.* capere, capulum, *յն.* κώπη *«բռնատեղ, երախակալ», գոթ.* haban *«բռնել, ունենալ» և հյ.* կապ, կափ, կապել, կապուտ, կապտել, կափուլ, կափուցանել, կափարիչ։ *Յակոբեան, Արևելք 1884 նոյ" 16 առնս.* vap *արմատից։ Հիւրշ.* Arm. Stud. *էջ 12 մերժում է լտ.* capio *են ձևերը։* BB 5, 175 *հասքս.* kosp *«կապ, տրցակ» ձևի հետ։ Հիւնք. լտ.* capio: Bugge KZ 32, 51 *պաշտպանում է լտ.* capio *ձևի համեմատութիւնը, որի ցեղակիցներն են նրգ.* haft, *գոթ.* hafja, *լեթթ.* kampjus *«բռնել», ալբ.* kap *«ձեռք ձգել», հիւլ.* cacht *«ծառայ», յն.* κώπη *«երախակալ, կոթ»,* κάπτω *«կուլ տալ», սանս.* kapaṭī *«մի կուց, կիցք» են, բոլորն էլ հնխ.* qap *«բռնել» արմատից (տես և* Walde 126, Boisacq 410)։ *Հիւրշ. 457 և* Pedersen KZ *39, 379 մերժում են այս համեմատութիւնը, որովհետև թէ՛ նշանակութեամբ և թէ ձևով անյարմար է հայերէնի. հնխ.* qap- *պիտի տար հյ.* *խաւ։ Patrubány *ՀԱ 1903, 150 ձայ-*

նական անհամաձայնութիւնը բացատրելու համար ենթադրում է, որ հնխ. qap- ածած լինի -vo մասնիկով, qap-vo>qappo>կապ: Scheftelowitz BB 28, 305 և 29, 40 նորվ. hempa «կապ, կարթ», յն. κώμβος «կապ», լիթ. kabė̃ «կեռ», լեթթ. kimbù «բռնած մնալ» ձևերի հետ: Ջօրպաճեան, Բազմ. 1908, 359 թրք. ėlę baγ «կապ» բառից շրջուած: Karst, Յուշարձան 400 ասուր. kamu «գերի բռնել», 423 թթր. qap, kab, kam, kem «փակել, պատել», 428 թթր. bak, bag «կապել»: Թիրեաքեան ՀԱ 1912, 288 նոյն ընդ կափուցանել, խափուցանել, իսկ Արիահայ բռ. 196 կապան «կիրճ»=գնդ. jafnu, jafan «կիրճ»: Jespersen, Language 1925, էջ 403 հյ. կապ «I seize» իբր բնաձայն կցում է լտ. capio, յն. káptō, թրք. kapmak, ֆր. happer են բառերին: Pictet, բ. տպ. Բ. 255 կցում է իռլ. cab «սանձ», սանս. jambha «երախ» բառերին: Tucker, Notes of indo-our. etymologies (Melbourne-Halle 1930?), էջ 19 լտ. capillus «մազ» (իբր մանր թել), սանս. čāpa- «աղեղ», յն. κάπάνη, κάπάνη «սայլ», լտ. capsa «արկղ» բառերի հետ: Պատահական նմանութիւն ունի անշուշտ ասուր. kāpu «շուան» (Muss-Arnolt, Ass.-engl. Handwb. 420 բ):

ԳԻՒՒ.—Ախց. Գոր. Երև. Կր. Ղրբ. Մկ. Մրզ. Շմ. Ոզմ. Ջղ. Սլմ. Վն. Տփ. կապ, Ալշ. Մշ. կար, Խրբ. Համշ. Ննխ. Պլ. Ռ. Սեբ. Սչ. գար, Ասլ. գար, գա*, Տիգ. գmբ, Ագլ. կօպ (բայց կա՛պիլ), Հճ. գօբ, Զթ. գօբ, գոբ, Սվեդ. գուբ: Նոր բառեր են կապան «մազի, օրորոցի կապ, կապիչ», կապելանց, կապելուղ, կապաճոբ, կապամէջ, կապասեղ, կապլ «խուրձ», կապիչ, կապկայ, կապկպել, կապկրշտել, կապոտել, կապտռտել, կապկպոտել, կապոտել, կապկպտել, կապովի, կապոց, կապուկ, կապս, կապճ, կապօճ, կապռար, կապճար, փորկապ են: Կապել «շինել» նշանակութիւնը գտնում ենք յատկապէս Համշ. (փախաթ են հիւսել, գործել), Երև. (մատուռ, կամուրջ կապել):

ՓՈԽ.—Վրաց. კაბი კապի «փայտի կամ ծառի վրայ երկճիւղ բաժանմունք». ორ-კაბი ორ-կապի «երկժանի», კაბებიანი կապեբիանի «բազմաճիւղ (փայտ)», აკაბი ա-կապի, აკაფი ակափի «գայլ, բերանակապ»? კაბანი կապանի «քարոտ, ժայռոտ, անանցանելի տեղ», իմերխևի լեզուով՝ კაბანი կապանի «անդունդների վրայ վերտանգաւոր ուղի» (Մառ, Тексты VIII էջ 82), գուռ. Թրք. Կր. kaban (Բիւր. 1898, 627), Ակն. geban «քարոտ, նեղ անցք կամ համբայ» (հյ. կապան «լեռնանցք, կիրճ» բառից).—Հայ մազկապ ձևից է փոխառեալ Թրք. نزكب nezgeb «ծամկապ, մազերի կապ» (Կամուս, Թրք. Թրգմ. Գ. 325):—Հայերէն կապս բառին շատ նման է հնչում ն. ասուր. käps «փորկապութիւն», որի հետ նոյն է Թրք. gabz «փորկապութիւն» և որից փոխառեալ է նաև ռմկ. խապըզ «փորկապութիւն»: Այս բառը համարւում է արաբ. قبض qabz, որ նշանակում է «առնել, բռնել, տարածել, թուչիլ» և չունի «փորը կապուիլ» իմաստը, բան Կամուսի ընդարձակածաւալ բառարանի (հտ. Բ. 441): Միևնոյն ժամանակ արաբ. qabz նեղգործական է, իսկ Թրք. qabz գործածւում է իբրև չեզոք (qabz olmaq «փորկապ լինել»): Այս բոլորից հետևցնում եմ թէ Թրք. բառը պէտք է դնել ո՛չ թէ արաբ. qabz-ից, այլ հյ. գուռ. կապս ձևից: Հյ. կապոց բառից է փոխառեալ եթովպ. cabotz կամ cotz «tenia, երիզորդ. 2. kousso կոչուած բոյսը, վարդագգիների ընտանիքից, որ սքանչելի դեղ է երիզորդի դէմ»: Հապէշլի Կարապետ անունով մի Պօլսեցի հայ վաճառական, որ շրջունակ երթևեկում էր եթովպիա, ճանաչեց այնտեղ այս բոյսը 1757—62 թթ. և Պօլիս բերելով ծանօթացրեց A. Brayer անունով ֆրանսիացի բժշկին: Բժիշկը տարաւ բոյսը Պարիզ 1822 թ. և առաջարկեց նշանաւոր բուսաբան Kunth-ի քննութեան: Բոյսը հատանութեամբ «Բնական պատմութեան ընկե-

րութեան» կոշուեց Brayera antheminople· *Այս պատմութիւնը գրեց ինքը* Brayer, Neuf années à Constantinople (Paris 1836) *աշխատութեան մէջ, ուր էջ 430 ասում է թէ այս բառը ծագում է հյ. կապոց «ծրար» բառից, որովհետև այս բոյսի գործածութեամբ երիզորդը կծիկի պէս դուրս է գալիս։ Նոյնից քաղելով կրկնում է Վ. Թորգոմեան* REA *8(1928), էջ 33—38 և Կոչնակ Հայաստանի 1919, № 20, էջ 624—6։—Հայերէնից է նաև թրք. գւռ. Այն. կապ (Կոչնակ՝ անդ)։*

ԿԱՊ *«փորիքաց նափորտ կամ շուրջառ եկեղեցականաց». նորագիւտ բառ, որ ունի Ապարանեցին (1410 թուից). «Զկերպասեայ կապն, որ է փորիքաց նափորան, զոր Լուսաւորիչ կարգեաց ի յեկեղեցիս Հայաստանեաց». (Ըստ Հացունի, Պատմ. տարագի 369)։*

Հացունի դնում է լտ. cappa *բառից. բայց այս բառը նշանակում է «մի տեսակ գլխակապ» և ո՛չ թէ «հագուստեղէն»։*

***ԿԱՊԱԼ**, ո, ի–ա *հլ. «տուրք, վարձք, կաշառք» Բրս. մրկ. 310. Շնորհ. ընդհ. լմբ. մատ. 440, 536—7 (բառիս իմաստի մասին տե՛ս Աւգալբէգեան, Տեղեկ. ինստիտ. 1, 76). որից* կապալառու *Մխ. դտ.* կապալատու *Շնորհ.* կապալաւոր *Մխ. դտ. էջ 280=կապլվոր Անսիզք 41. գրուած է նաև* դապալ *Յայսմ. յնվ. 8. Ուռհ. խապալ Տաթև. ամ. 443. յօդով՝ բցո. դապալէն՝ առաջին անգամ յիշուած 901 թուի մի արձանագրութեան մէջ (Վիմ. տար. 5)։ Այժմ նշանակում է «որևէ գործի հայթայթումը կամ շէնքի շինութիւնը յանձնել մէկին՝ որոշ գումարի հատուցմամբ. փոդրաթ»։*

=Արաբ. قَبَالَة qabāla *«կապալով առնելու գործողութիւնը և կապալագիր», որից* تَقَبُّل taqabbul *«կառավարութեան կողմից տուրքի կամ հարկի հաւաքումը կապալով տրուիլը» (Կամուս, թրք. Թրգմ. Գ. 321), արմատը* قبل qabl *«առաջ, առջևը, դէմը». նաև «փոխարինել», համմտ.* muqābil *«փոխարէն»։ Արաբերէնից են փոխառեալ նաև թրք.* قبالة qabala *«սահմանեալ գործ», արև. թրք.* قبال qabal *«օրականով աշխատող բանուր» (Будаговъ 2, 36), ռուս.* кабала *(թուրքերէնի միջոցով) «խոստմնագիր, պարտք, հաստատեալ գիր ստրկութեան» (Berneker 464)։—Ա՛ճ.*

ՆՀԲ «կապեալ տուրք, իտալ. gabella *(ֆրանս.* gabelle*) «հարկ, տուրք», ի յն. κάπηλος, որ է մեհնավաճառ»։*

ԳԻՒ.—Երև. կապալ, *Մշ.* խաբալ, *Սեբ.* դարալ, *Մկ.* կmpmլ *(նշանակում է «տոկոս»), Ակն.* գարալ, *ԶՓ.* գաբօլ, գաբոլ։

***ԿԱՊԱՅ** *(ի հլ. բստ ՆՀԲ, թէև առանց վկայութեան) «մի տեսակ զգեստ» Յայսմ. յունիս 9, Մագ. և Երզն. քհր. Առաք. պտմ. 142. որից* կապակար *«զերձակ» Բառ. երեմ. էջ 76, յգ.* կապանի *նոր վկ. էջ 379 (նուազական՝* կապակ *Մխ. դտ. կամ* կապեկ *(միջին հյ. բառ՝ բստ Նորայր, Բառ. ֆր. 1164ա) տե՛ս առանձին)։*

=Արաբ. قبا qabā *«պարեգօտ, առջևը բաց զգեստ» բառից փոխառեալ (Կամուս, թրք. Թրգմ. Գ. 900). փոխառութեամբ տարածուած է բազմաթիւ լեզուների մէջ. այսպէս՝ պրս.* qabā *«պարեգօտ»,* qabānamad *«թաղիքէ վերարկու, բաճանակ»,* qabāča *«փոքր կապայ»։ Պարսկերէնի միջոցով են վրաց. և մինգ. ყაბა կարա, սվան. կար. չէրքէզ. ակարա «զգեստ, վերարկու», թրք.* كبه kebe *«կապերտ», քրդ.* kava, kova *«կապայ»,* kebe *«հասարակ չուխա», թուշ. կար «կապայ», բիւզանդական յն.* καβάδης, καβάδιον *«պարեգօտ»* (Sophocles 609), *նյն.* καβάδι։ *Յունարէնի միջոցով են ռուս.* кабáть *«աշխատանքի շապիկ, վերնաշապիկ», չեխ.* kabát, *լեհ.* kabat, kabaj, kaba, *բուլղ.* kaváda *«կանացի կամ դինւորական զգեստ» (Berneker 464)։ Սլաւականից են լիթ.* kóbotas *«կանացի բաճկոն», լեթթ.* kabata *«դրպան» (անդ)։* Miklosich *և* Marcel Devic *նոյն արաբ բառից են հանում նաև ֆրանս.* caban, *հֆրանս.* gaban, *սպան.* gaban, *պորտ.* gabbão, *իտալ.* gabbano, cappa, *լատ.* capa, cappa, *նյն.* κάππα, *հբգ.* chappa, *մբգ.* kappe, chappe, *լեհ. սերբ. ռուս.* kapa, *բուլգար.* kapŭ *են* (Berneker

483), որոնցից ոմանք «զգեստ», ոմանք էլ «զլխարկ» նշանակութիւնն ունին։ Հայերէնում հին տառադարձութեամբ պիտի ունենայինք կաբայ, ինչպէս գործածական է այժմ արևելեան գրականում, մինչ արևմտեանը ունի նոր տառադարձութեամբ կապայ։—Աճ.

ՆՀԲ լծ. Թրք. գապա «թանձր», գէպէ «կապերտ», գափուդ «վերարկու», իտալ. կապա՛ճօ «կապայ», գաբօ՛դդօ «վերարկու»։

ԳԻՒ.—Ագլ. Ախց. Երև. Մկ. Ջղ. Սլմ. կապա, Տփ. կա՛բա, Ննխ. Սեբ. գաբա։ Նոր բառեր են կապարել, կապարակելի, կապաշոր, կապացու, կապաւոր։ Նոր նշանակութեամբ ունինք կապայ Արր. «խորխ, օձի շապիկ. 2. գրքի երեսը անցուած հատ թուղթ», իսկ Ղրբ. գ'ɯ՛բɯ «գորգ» նոր փոխառութիւն է արևել. թուրքերէնից։

ՓՈԽ.—Մագ. քեր. 228 և երզն. քեր. գրում են թէ «Ոչ ունելով նոցա (խօսքը յոյների մասին է) սովորութիւն զգենուլ կապայ, ի մէնջ առեալ՝ ոչ ուղղախօսեն, այլ անուանեն զնա կովա (այլ ձ. կովատիճ կաւատիճ)»։ Սրանով ակնարկում են Բիւզ. յն. καβάδιον «պարեգօտ» բառը, որ յոյները պարսկերէնից փոխառեալ են համարում.—Գազանճեան, Յուշարձ. 329 բ մեզանից է դնում գւռ. Թրք. كبا käbä «կապայ», որ ուղղակի պարսկերէնից կամ արաբերէնից է։

*ԿԱՊԱԿ «կարճ պարեգօտ, մի տեսակ կապայ» Մխ. դտ. ուրիշ վկայութիւն չկայ. բայց Նորայր, Բառ. Ֆր. 1164 ա տալիս է նաև միջ. հյ. կապեկ ձևը։

=Թթր. kepek «կապայ, վերարկու», որ ծագում է վրոյիշեալ արաբ. պրս. قبا qaba ձևից։

ՆՀԲ կապայ բառի հե՞տ։ Ուղիղ մեկնեց Karst, Յուշարձ. 423։

ԳԻՒ.—Ակն. գաբէգ «կապայ» (փաղաքշական բառ). Հաստատում է միջ. հյ. կապեկ ձևը. սակայն կարող է անկախաբար կազմուած լինել և ո՛չ թէ կապակ ձևի շարունակութիւնը։

ԿԱՊԱՆ տե՛ս Կապ։

ԿԱՊԱՐ, ո հլ. (յեռնաբա՞ր նաև ի-ա հլ.) «արճիճ» ՍԳր. Ագաթ. «մատիտ, կապարեայ գրիչ» Շնորհ. մաթ. որից կապարեայ Ջաք. ե. 7, 8. Ոսկ յհ. բ. 34 և ես. կապարաճատ Բուզ. դ. 10. կապարայօդ Արծր. կապարակիր Թեոփ. կապարաձման Վրք. ոսկ. կապարագոյն (նոր բառ). սրանից է և կապարեալ «կապարի պէս ծանր» նորագիւտ բառը, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Սոկր. 279 «Բան կապարեալ և հատեալ ոգով» (քնագրում λόγος ἰστάμενος καὶ κοπτόμενος πνεύματι, ուր կապարեալ բառի համապատասխանն է ἰστάμενος «կանգուն, կանգնած», տե՛ս Σωκράτους σχολ. ἐκκλ. ἱστ. Oxford 1893, էջ 166)։

Klaproth, Asia polygl. 99 արաբ. և պրս. ابار ābār: ԳԴ պրս. ābār «հալած կապար»։ ՆՀԲ սրա հետ նաև եբր. օֆրէք, ափէրէք «կապար»։—Lag. Arm. Stud. § 1103 արաբ. abār, ibbār «կապար»։ Պատմաճեան, Մասիս 1893, 251 համարում է տուրանեան բառ՝ իբր ակկադ. abar: Հիւբշ. 306 յիշում է ասոր. արամ. אבר awārā, եբրայեց. עפרת ʿōferet, ասուր. abāru, արաբ. և պրս. ابار ābār «կապար», բայց մերժում է սրանց հետ կապել հայերէն բառը, որ եթէ ասորերէնից փոխառեալ լինէր, *աբար ձևը պիտի ունենար։ Jensen սրբանց յարաբերութիւնը մերի հետ բնդունում է և ազգեցութիւնը վերագրում է հաթեան շրջանին։ Հիւնք. հանում է կարապ թռչունից։ Karst, Յուշարձ. 401—2 դարձեալ սումեր. abar «կապար» բառի հետ։ Մեր բառին աւելի նման են հնչում լտ. cuprum, հբգ. cupfar, գերմ. Kupfer, անգլ. copper, ֆրանս. cuivre, սերբ. kupor են, որոնք բոլոր նշանակում են «պղինձ»։ Այս բոլորի հնագոյն ձևն է լտ. aes cyprium «մետաղ Կիպրոսի», որ փոխառեալ է յն. κύπριος «կիպրական, Կիպրոսի պղինձ» բառից. միւսները փոխառեալ են լատինից։ Ըստ այմ լտ. cuprum և ամբողջ ընտանիքը կապ չունին հայերէնի հետ։

*ԿԱՊԱՐ *«մի տեսակ բոյս է. լտ.* capparis spinosa L.» *(տե՛ս Տիրացուեան,* Contributo § 197, Seidel *Մխ. հեր. § 250) Ժող. ժբ. 5. Կոչ. Տօնակ. Ոսկիփ. Բժշ. յետնաբար ունինք նաև* **կապպար, կապրացախ, կապրցախ, ֆապրցախ, ֆապրխոտ, ֆապարա, ֆապրենի** *ձևերը։*

= Թերևս պհլ. *kapar *հոմանիշ ձևից փոխառնուած։ Այս բուսանունը գտնւում է բազմաթիւ լեզուների մէջ. ինչ. պրս.* كبر kabar, *արաբ.* قبّار qabbār, *ասոր.* ܩܦܪ qapār, *յն.* κάππαρις, *լտ.* capparis, *ֆրանս.* câprier, *գերմ.* Kapern, Kapernstrauch, *հունգ.* kaporna, *լհհ.* kapary, *սերբ.* kapara, *ռում.* kapre, *Թրք.* gebere, keber, kipri otə, *քրդ.* keber, *վրաց.* **կապարի** *ևն։ Յայտնի է, որ այս բոյսը Միջերկրականի արևելեան երկիրներից է տարածուած դէպի արևմուտք, բայց բառի բուն ծագումը և ստուգաբանութիւնը յայտնի չէ (*Boisacq 409)· *Ստոյգ չէ նոյնպէս հայերէն բառի մայրը. Հիւբշ. 165 դնում է ուղղակի յունարէնից, բայց որովհետև հայերէնը միայն մի պ-ով է, ուստի պէտք է դնել կա՛մ ասորերէնից և կամ աւելի հաւանաբար պահլաւերէնից, որ աւանդուած չէ։ Իսկ յետին* **կապպար** *փոխառնւել է արաբերէնից։*

ԳԴ դրաւ պարսկերէնի և այս էլ յունարէնի հետ։ ՆՀԲ յիշում է յն. լտ. Թրք. վրաց. ձևերը։ Lag. Arm. Stud. *էջ 175 պրս. և արաբ. ձևերը։* Brockelm. ZDMG *47, Հիւբշ. 165 և Հիւնք. դնում են յունարէնից։*

ԳԻՒ.—Շմ. Տփ. **կապար**, *Գոր. Ղրբ.* **կա՛պաո**, *Երև.* **ֆաբաո**, *Ննխ.* **գաբարա**։

ԿԱՊԱՐԱՍԻ *«հնդկական մի բոյս. costus» Բժշ. ունի միայն ՀՌուս. § 1310։*

ԿԱՊԱՐՃ *(յետնաբար ի, ի–ա հլ. գործածուած է աննեղաբար) «նետ դնելու ամանը» ՄԳր. Եւս. քր. որից* **կապարճակիր** *ՄԳր. Եփր. եվ. էջ 157. Ոսկ. մ. ա. 4.* **կապարճադարձոյց** *Մծբ.* **կապարճեալ** *Ոսկ. ես. Եփր. աւետ. 289.* **աղեղնակապարճ** *Ոսկ. մ. գ. 16. Բուզ.* **ոսկեկապարճ** *Կիւրղ. կուս.—ՀԲ ունի նաև* **կապարճ** *«կապիճ»?*

Lag. Gesam. Abhd. *80 և 117 ասոր.* ܩܛܪܓ qəṭērq *հոմանիշից փոխառնւալ է դնում։ Հիւբշ. 306 յիշում է ասոր.* ܩܛܪܓܐ qəṭērqā *«կապարճ» և դնելով պհլ.* kantīr *ձևից փոխառնւալ, մերժում է հայերէնի հետ որևէ յարաբերութիւն։ Հիւնք.* **կապիճ** *բառից։—*Karst, *Յուշարձ. 416 մոնգոլ.* xobdo, *բուրյատ.* xopto, xopta, kopte, *Թունգուզ.* kobdu, *մանչ.* kobdon, *Թրք.* qubur *«կապարճ»։*

ՓՈԽ.—Վրաց. **კაბარჭა կապարճա** *կամ* **კაბარჭი կապարճի** *«կապարճ»,* **კაბარჭინი կապարճինի** *«մի տեսակ ձուկ, իբր՝ կապարճաձուկն»,* **მეკაბარჭე մեկապարճեն** *«կապարճակիր»,* **ნაკაბარჭანი նակապարճանի** *(Ջուբ.[2]* **նակապարճի***) «կապարճ»։*

*ԿԱՊԵԼԱՅ *«Հանրատուն» Կանոն. 245 (Ներգ. ի կապելոջ). Մաշկ. Սարգ. ա. պետ. է. էջ 292. որ և* **կապեղայ** *Մխ. դտ.* **կապիլիոն** *Վրք. Հց.* **կապեղիոն, կապլիոն** *Վրք. Հց.* **կապեղէ** *ԱՔ.* **կապիղայ** *Սոկր. 446. որից* **կապեղաեոց, կապելաեոց** *Ոսկ. երր. 493. բ. տիմ. և ես. 419* **կապեղուի** *«պանդոկապետուհի» Վրք. Հց։*

= Ասոր. ܩܦܠܐ qapēlā *«գինեպան, պանդոկապետ» բառից, որ իր հերթին փոխառնւալ է յն.* καπηλεία, καπηλεῖον, καπήλιον *«մանրավաճառի կրպակ, գինետուն» բառից։ Յունարէնի արմատն է* κάπη *«մանր կտոր, մանրուք»* (Boisacq 408)։ *Հայերէնի մէջ* **կապելայ** *և* **կապեղայ** *ասորիերէնից են, իսկ միւսները յունարէնից։*

ՀՀԲ և ՆՀԲ դնում են յունարէն ձևից։ Հիւբշ. 355 նոյնպէս յունարէնից է դնում, երկրորդաբար միայն յիշելով ասորին՝ նշանակութեան տարբերութեան պատճառաւ։ Վերի ձևով դրաւ Վարդանեան ՀԱ 1920, 331։

ԿԱՊԵՌՆԵԱՅ *տե՛ս* **Տաքեռնի**։

ԿԱՊԵՐՏ, ի *հլ. (Համմտ. գրծ.* **կապերտիւ** *Եփր. Գ. կոր. 122) «շորի կտոր, քուրջ, լաթ, 2. Հագուստի փեղկերը. 3. քուրձ» ՄԳր. Եւս. պտմ. 697. Մծբ. էջ 312. Ոսկ. ես. և յհ. բ. 38. Ագաթ.* **կապերտակ** *կամ* **կապերտիկ** *«շորի կտոր» Ոսկ. ես. 292 և յհ. բ. 14. Շիր.*

կապերտոց «դրօշակ կամ դրօշակի շորը» (նորագիւտ բառ) Ուխտ. Ա. 83. կապերտավրան «թաղիքէ վրան, ալաչուխ» Զքր. սարկ. Բ. 105.—բառիս ռամկական ձևն է կարպետ Ոսկիփ. Վրդ. առ. 71։

ՆՀԲ «փերթ կապայի կամ քէպէի»։ Վ. Ա. Ա. (Ազգասէր Արարատեան, Կալկաթա 1848, էջ 96) հանում է կա, կայ, կաց, կայան «տեղ»+պերտ=փերթ «կտոր» բառերից. կափերթ է բնիկ հայ բառ, որ ցոյց է տալիս թէ այս արհեստը նախ ծաղկեցաւ Հայաստանում, որից նիւթն ու անունը փոխ առին օտարազգիները։ Հիւնք. կապարճ բառից։ Հացունի, Պատմ. տարազի, էջ 7 կապ բառից։

ԳԻՒ.—Սլմ. վն. կարպետ, Ախց. Գոր. Երև. Կր. Շմ. Տփ. կարպէտ, Ղրբ. կա՛րպըէտ, Ալշ. Մշ. կարբեղ, Խրբ. Սեբ. գարբէդ, Ասլ. գարբէ՛դ, գարբէ՛՝, Հմշ. գարբիդ, Տիգ. գɯրբիդ, Զթ. գայրիդ, գարբիդ. բոլորն էլ նշանակում են «անմազ գորգ»։

ՓՈԽ.—Հայերէն գաւառական ձևի հետ բոլորովին նոյն են անգլ. carpet «գորգ». հֆր. carpite, ֆրանս. carpette «սեղանակի բառանկիւնի գորգ», գերմ. Karpet, իտալ. carpita «մի տեսակ թաւ կերպաս», հունգ. kárpit «վարագոյր», սերբ. karpit «վարագոյր», krpèta «սեղանի վրայ փռելու գորգ» (Berneker 628), որոնք բոլոր հանում են եւրոպացիք ստ. լտ. carpita «բրդէ ձորձ» բառից, իսկ այս էլ ծագած լտ. carpo «բուրդ կամ թել մանել» բայից. բայց դեռ քննելի է թէ արդեօք նոյն իսկ այս ստ. լատ. բառը փոխառեալ չէ՞ յետին հայերէն կարպետ ձևից, նիւթի հետ վաճառականութեամբ անցած Եւրոպա։—Օրբէլի (տե՛ս Աաո, Тексты и раз. по Кав. фил. հտ. I (1925), էջ 111) հայերէնից փոխառեալ է համարում նաև ռուս. ковёръ «գորգ»։ Այս բառը՝ որի ցեղակիցներն են ուկր. kóver, kovérec՛, չեխ. koberec, լեհ. kobierzec, բուլգար. gúber և սերբ. gûber, դեռ բացատրուած չէ։ Ըստ Berneker 592 ոմանք փոխառեալ են գնում անգլ. cover «ծածկոց» բառից, ուրիշներ հիսլ. kǫgurr «գորգ» բառից, ուրիշներ էլ ֆրանս. couvrir, սպան. cobrir իտալ. coprire, ռում. cóper «ծածկիլ» բառից։ Սակայն բոլորն էլ անճիշտ են։

*ԿԱՊԻԷՆ, ի–ա հլ. (միայն անեզական կապէնք ձևով) «շնութեան վարձք» ՍԳր. Ոսկ. երր. 514. Պիտ. Լմբ. առակ. որից կրկնակապէն Նար. լգ. էջ 98։

=Պհլ. *kāpen ձևից, որ աւանդուած չէ, բայց որ հաստատում է պրս. کابین kābīn, کابن kābin, کاوین kāvīn «նշանակէ զայն ամենայն՝ որ տուեալ լինի հարսին նախապոյն, թէ դրամ իցէ և թէ այլ ինչ». սրանից փոխառեալ են թրգ. کابین kabin «նշանադրութեան, ժամանակ հարսին արուած նուէրը, տուայր», թրբ. kebin «մահմետականի պսակադրութիւն» և բառ. Marcel Devic ֆրանս. kabin «գաւառացի նաւաստիների ժամանակաւոր ամուսնութիւնը՝ Արշիպելագոսի յոյն կանանց հետ»։—Հիւրշ. 165։

ՆՀԲ կապեալ բառից։ Ուղիղ մեկնութիւնը տուաւ նախ Հիւրշ. ZDMG 36 (1882), 131, յետոյ Նորայր, Բառ. ֆրբանս. (kabin բառի տակ)։ Ուղիղ են նաև Թիրեաքեան, Պատկեր աշխ. գրակ. 195 և Հիւնք։

ԿԱԳԷՆԴԱՔՏԻՈՆ «մի տեսակ խոտ է» Բժշկ. ունի միայն ՀԲուս. § 1311։

ՀԲուս. համարում է յն. κάπνιος «օրթ» և δάκτυλον «մատ» բառերից, իբր հլ. այգու մատնի կոչուած բոյսը։ Բայց յն. κάπνιος նշանակում է «fumaria բոյսը» և ո՛չ «այգի»։

*ԿԱՊԻԼՈՍ «շահտարէ» (որ է «անձխոտ, fumaria»). ունի միայն Բառ. երեմ. յաւել. էջ 567։

=Յն. κάπνιος «անձխոտ» բառից ազաւաղ գրչութեամբ։—Ա՛ճ.

*ԿԱՊԻԿ, ի–ա հլ. «կապիկ անասունը, մայմուն» Գ. Թագ. ժ. 22. Բ. Մնաց. Թ. 21. Եզն. էջ 69. որից ձիակապիկ Անյ. պորփ. նոր բառեր են կապկամարդ, կապկաճման, կապկական, կապկութիւն են։—Վրդն. առ 120 գրում է. «Կապիկն, որ է ապուշնային, սովորութիւն ունի...» սրանից երևում է, որ Վարդանի ժամանակ կապիկ բառը ծանօթ

չէր այլ ևս և ժողովուրդը գործածում էր ապուզճայ:

=ՊՀլ. kapīk «կապիկ» բառից, որից և պրս. کبی kabī «կապիկ». պահլաւերէն բառն էլ հին ժամանակ փոխառեալ է սանս. कपि kapi- համանիշից, որից առնուած են նաև հ. եգիպտ. kephi, ասուր. uḳūpu?, եբր. קוֹף qōp, ասոր. ܩܘܦܐ qūpā և յն. κῆπος, κῆβος «մի տեսակ երկարապոչ կապիկ» (Boisacq 445): Հնդ. kapi- «կապիկ» համարւում է գոյնի անուն. հմմտ. kapila-, kapiça- «գորշագոյն, կարմրաւուն»:—Հիւբշ. 65:

Klaproth, Asia polygl. էջ 99 պրս. kabī ձևի հետ: Ինճիճեան, Հնախօս. Գ. 31 «իբր յինքն կապող»: ԳԴ դնում է պարսկերէնից: ՆՀԲ լծ. Թրք. չէպկէ, Էպպի, սանս. խափի, եբր. գօփ, յն. գի՛վօս: Սանս. ձևի հետ համեմատում են նաև Peterm. 17, 25, Windisch. 8, Böttich. ZDMG 1850, 356, Lag. Urgesch. 757, Müller SWAW 38, 572 եև: Պատկ. Арм. reorp. 80 ՊՀլ. kapīk ձևից: Lag. Arm. Stud. § 1107 դնում է փոխառեալ և -իկ վերջաւորութեան մէջ գտնում է ՊՀլ. -īk յանգը:

ԳԻՒ.—Ախց. կր. վն. կապիկ, Ռ. Սեբ. գաբիգ. միւսները գործածում են մայմուն, մէյմուն, մայմուդ ձևերը:

*ԿԱՊԻՃ, ի–ա Հլ. «հատեղէնների մի չափ է, որ առնում է $^1/_{10}$ գրիւ» ՍԳր. Եւս. պտմ. Փարպ. «գինիի չափ» Անյ. պորփ. «աչքի ամանը, փոսը» Ջաք. ժգ. 12. «սրունքները պատող զրահը կամ նման տանջական մի գործիք» Ագաթ. § 115 (յոյն Թրգմ. հրտր. Lagarde, էջ 28 περικνημῖδας «սրունքները պատող զրահ»). Գոր. և Շմ. հրտր. Միւռեան, էջ 71 և 77 (հինգ անգամ գործածուած). «մի տեսակ հարկ» Արծ. 1041 Թուից (տե՛ս Վիմ. տար. 22): Որից կապճաբիւ Եղիշ. կապճամար Արծր. կապճեան Կանոն. ակճակապիճ Յոբ. խ. 19. ատամնակապիճ (նոր բառ): Երկրորդական նշանակութիւնները յառաջացած են «ման» նշանակութիւնից փոխաբերաբար կամ լայնաբար:

=ՊՀլ. kapīč (սխալ գրուած kafīz), որ և հպրս. καπίθη, պրս. کویژ kavīž, کویز kavīz, کفیز kafīz, որոնց հետ նոյն են արաբ. قفیز qafīz «գրիւի մեկ տասներորդը», ասոր. ܩܦܝܙܐ qapīzā, մանդայ. qabīṣā, միջլ. cafisium, վրաց. ჯაბიწი կաբիծի կամ ჯაბიწი ֆաբիծի և լազ. կապիծի «ցորենի և ուրիշ չոր նիւթերի յատուկ մի չափ», սպան. cafiz կամ cahiz «ջորեբեռ. 2. մի ջորեբեռ ցորեն ցանելու չափ հող» (M. Cohen, BSL հտ. 27, № 81, էջ 109): Այս բառերի ստուգաբանութիւնը յայտնի չէ, բայց բոլորի աղբիւրը անշուշտ իրանականն է:—Հիւբշ. 165:

Աւգերեան, Բցտր. չփ. և կշռ. էջ 108 յն. κάβος բառից: ՆՀԲ վրաց. կարի՛ծի, եբր. և Թրք. գապ, որ և կարոս, յն. κάβος, լտ. cabus: Ուղիղ մեկնեց նախ Lag. Urgesch. 907 և Gesam. Abhd. 81. Պատկ. Истор. Моголовъ 1874, էջ 2 պրս. և արաբ. ձևերի հետ նաև յն. κάβος: Հիմնք. յունարէնից: Իլիա Ճղ՛ոնիա, Սիտղ՛վիս-Կոնա СПет. 1910, էջ 25 կապիճ բառին է կցում վրաց. ჯაბჯანა կապճանա «փորր կաթսայ»: Ղափանցեան, Տիզկ. ինստիտ. 2, 96 համնում է կապարճ բառից!

ԳԻՒ.—Կայ միայն կապճակ Հմշ. «ցորենի տասանորդ՝ որ տրւում է ջաղացպանին, իբրև վարձ ցորենը աղալու» (այս իմաստն ունի և արաբ. qafīz, ըստ BSL անդ). իսկ կապիճ Հմշ. «ընդեղէնների մի չափ, որ տասնում է տաճկական $1^1/_2$ օխա=2 kilo» փոխառեալ է լազերէնից կամ վրացերէնից:

*ԿԱՊԻՏՈՆ (գրուած նաև կապիտոյն, կապետոն) «սատեր, գլխահարկ» Շիր. (ըստ Հռոմմայեցւոց լեզուին): Յիշում է միայն Աւգերեան, Բացատր. չփ. և կշռ. էջ 108:

=Բիւզ. յն. κάπιτα (յգ. ուղ.), որ փոխառեալ է լտ. capitum exactio «գլխահարկ» բառից (Sophocles 628 ա): Մեր բառը ենթադրում է յն. եզ. հյց. *κάπιτον ձևը, որ չէ աւանդուած:—Հիւբշ. 355:

Ուղիղ մեկնեց նախ Աւգերեան, անդ էջ 44, յետոյ Պատկ. Շիր. էջ 27:

ԿԱՊՃԵԼ. տե՛ս Ընկապճել:

—ԿԱՊՆԴԵՂ *«մի տեսակ բոյս է. լտ.* ligusticum levisticum» *Բժշ.*

=*Բառիս վերջին մասն է* դեղ «խոտ». *Համմտ.* խաշնդեղ, ճակնդեղ. *առաջին մասն էլ համարում եմ* կապ, *իբրև «կապի դեղ կամ խոտ», ըստ որում այս բոյսի արմատն ու սերմերը միջակապութեան դեղ են: Ներմուծված և ձայնի համար համմտ. գւռ.* կապնուիլ *փիս.* կապուիլ: *Պատահաբար անշուշտ այս բառի գերմ. հոմանիշն էլ* (Bandblume), *նշանակում է բուն «կապի ծաղիկ» (տե՛ս* Анненковъ-ի *Բուս. բառարանը, էջ 193), ինչպէս և գիտական լտ.* trochiscanthes nodiflorus *(լտ.* nodus *«կապ» բառից), իսկ բուն լտ.* ligusticum *ձևը կապ չունի լտ.* ligo *«կապել» բառի հետ և ծագում է* Liguria *երկրանունից* (Ligusticum *բուն «Լիգուրիացի»):—Աճ.*

ԱԲ դնում է կապ *«տոհմ» բառից:*

*ԿԱՊՈՅՏ *(յետնաբար ո հլ.) «կապոյտ գոյնը» ՇՆ. լ. 35=40. Ագաթ. որից* կապուտագոյն *Ագաթ. աւելի սովորական է* կապուտակ *«կապոյտ» ՍԳր. «ասր ներկեալ կապուտակաւ և ակն պատուական, յակինթ» ՍԳր. Վեցօր. որից* կապուտակագոյն *Ագաթ.* կապուտակագործ *Ոսկ. ես.* կապուտակիլ *Ել. իմ. 5, լե. 7, 22.* կապուտակեայ *ՍԳր. ևն: Նոր գրականում արմատ ընդունելով* կապուտ *ձևը, շինուած են* կապտագոյն, կապտակաճաչ, կապտակարմիր, կապտաներկ, կապտերանգ *ևն: Հներից էլ ունինք առանց սղման* կապոյտերանգ *Տաղ:*

=*Պհլ.* kapōt *«կապոյտ», պազենդ.* kapōδ, *պրս.* کبود kabūd, *քրդ.* kew, *գիլանի* kebūd, *մազանդարանի* kāu, gāv, gāiu *«կապոյտ», նորագիւտ պարսկական բևեռագրերից հպրս.* kapautaka *«մի տեսակ կապոյտ ազնիւ քար», որից տառադարձուած է ևլամ.* qabau... *կիսատ գրուած բառը* (BSL, *հտ. 30, № 89, էջ 61):*—Կապուտակ *ծագում է պհլ.* *kapōtāk *«կապուտակ» բառից, որ հաստատում է պրս.* کبوده kabūda *«կապուտակ»: Այս բոլորի հետ համմտ. սանս.* kāpota- *կամ* kāpōta- *«դորշ, գորշակապոյտ, կապտագորշ, աղաւնեգոյն և աղաւնի թռչունը», որի համեմատ էլ պհլ.* kapōtar. *պրս.* کبوتر kabūtar *«աղաւնի»* (Horn § 842):—*Հիւբշ. 166:*

Ուղիղ մեկնեց նախ Klaproth, Asia pol. *99 որ դնում է պրս.* kabūd: *Նոյնը և ԳԴ ՆՀԲ լծ. թրք.* fէպուտ, fեապուտի: Gosche *36 պրս. և քրդ. ձևերը: Սբրանց պէս նաև միւսները: Մառ,* Яф. сбор. *2, 142 յաբեթական* kam *«երկինք» արմատից, որից նաև* կամար, *վրաց.* ցա *«երկինք» ևն:*

ԴԻՒ.—Ախց. Կր. Մկ. Մրղ. Ոզմ. Ջղ. Սլմ. Տփ. կապուտ, *Ալշ. Մշ.* կաբուդ, *Ակն. Նախ. Պլ. Ռ. Սեբ. Սչ.* գաբուդ, *Վն.* կապոտ, *Խրբ.* գաբօղ, *Ագլ. Գոր. Ղրբ.* կ՚ապիւտ, *Շմ.* կ՚ապիւտ, *Հւր.* կ՚ապիտ, *Երև.* կապիտ, *Տիգ.* գաբուդ, *Ասլ.* գաբիւդ, գաբիւ*, *Հճ.* գաբիդ, *Սվեդ.* գաբբէդ: *Նոր բառեր են* կապոյտկեկ, կապուտիկ, կապուտկենի, կապուտկիլ, կապուտուր, կապուտ՚ար *«դժոխաբար»,* կապտագլուխ, կապտաժեռ, կապտակոխ, կապտախոտ, կապտիլ:

ՓՈԽ.—Վրաց. კაბოეტი კապոետի *«մի տեսակ բար. 2. մի տեսակ բոյս. 3. մի տեսակ ձուկ. 4. միամեայ թռչուն»,* კაბიტო կապիտո *«մի տեսակ խաղողդ»,* კაბოეტობა կապոետոբա *«թռչունների փետրաւորումը»,* ჭვაკაბოეტი ქվա–կապոետի *«զմրուխտ». վրացին փոխառնել է հայերէնից, ինչպէս ցոյց է տալիս ե ձայնը՝ որ մեր յ ձայնն է փոխանակում: Նշանակութեանց կողմից էլ համմտ.* կապուտակ *«յակինթ», գւռ.* կապտաբար, կապոյտ *«մի տեսակ ձուկ»,* կապոյտ կոիկ *«ներկարար թռչունը»,* կապտախոտ, կապուտկենի *«մի տեսակ խաղողդ» ևն:*

ԿԱՊՈՒՏ *(ի հլ. ըստ ԱԲ) «աւար, կողոպուտ» ՍԳր. «կապտեալ, կողոպտուած» Բ. մակ. Բ. 16. Վեցօր. Եւս. քր. Եփր. ծն. որից* կապտել *«աւարել, կողոպտել» Ես. ը. 3. Պիտ. Խոսր. մեհենակապուտ Գծ. ժԲ. 37. տաճարակապուտ Բ. մակ. գ. 42. Ոսկ. ես դիակապուտ Կոչ. 402. Եղիշ. Խոր. աճկապուտ Առակ. իբ. 23. եկեղեցակապուտ Ճառընտ. սեղանակապուտ Ոսկ. ես. և յհ. բ. 25. հանդերձակապուտ Բրս. սղ:*

ՆՀԲ լծ. լտ. capio, capto *«բռնել», թրք.* qapmaq *«յափշտակել»* cəblaq

«մերկ»։ Մորթման ZDMG 26, 604 բևեռ. kabudi «աւար»։ Տէրվ. տե՛ս կապ բառի տակ։ Հիւնք. լտ. capto: Bugge KZ 32, 51 և 60 լտ. capio «բռնել», captura «բռնելը կամ բռնածը» բառերին ցեղակից (սրանց վրայ աւելի ընդարձակ տե՛ս կապ բառի տակ)։ Patrubány ՀՄ 1903, 151 հնխ. kapvód նախաձևից է հանում։ Pedersen, Հայ. դր. լեզ. 219 ա մասնիկով՝ կապել բայից։ Karst, Յուշարձան 420 թթր. qap, չաղաթ. kapmak, օսմ. qapmaq, ալթայ. qap «բռնի առնել, յափշտակել»։ Թիրեաքեան, Արիահայ բռ. 197 պրս. کپیدن kapīdan «կապտել, խլել, կորզել», որ թէ՛ իմաստով և թէ բառի առաջին բաղաձայններով շատ յարմար է մեր բառին, բայց արմատը լինելով kap, մեր բառի -ուտ մասը մնում է դուրս. ըստ այսմ նմանութիւնը պատահական և համեմատութիւնը մերժելի է։

ԳԻՒ.—Մշ. կարուդ-կօղօվուրդ՝ «մեռելի հանդերձեղէնը՝ որ քահանան է առնում» (իբրև կապուտ-կողոպուտ. այլուր ասում է միայն կողոպուտ)։

*ԿԱՊՊԱԹԱ «սալայատակ». իբր երբ. բառ մէկ անգամ դրուած է ՅՀ. ԺԹ. 13 «ի տեղւոջն որ կոչէր Քարայատակ, և երբայեցերէն Կապպաթա»։ Սրանից առնելով Մագ. մեծ ևն. էջ 53 կապպաթանի։

=Ս. Գրքի Թարգմանութեան ժամանակ տառադարձուած է յն. Γαββαθᾶ ձևից. (εἰς τόπον λεγόμενον Λιθόστρωτον, ἑβραϊστὶ δὲ Γαββαθᾶ)։—Յայտնի չէ միայն թէ ինչո՞ւ γ և β տառադարձուած են կ և պ. փոխանակ գ և բ։

ՀՀԲ և ՆՀԲ բառ երբ։

ԿԱՊՊԱՏ տե՛ս Կապար։

ԿԱՊՈՒԱՇ (որ և կապրաշ, կաւրաշ, կապոաշենի) «մի տեսակ բոյս, որից նարնջագոյն ներկ են պատրաստում» (haematoxylon campechianum ըստ Կոյլաւ, Բառ. գերմ. 328 բ, rhus cotinus L ըստ Տիրացուեան, Contributo § 306) վանակ. «նարնջագոյն» Ոսկիփ.=Անկ. գիրք նոր կտ. 207 (մէկ անգամ միայն գործածուած գոյների մի շարքի մէջ. «կանաչ, կապոյտ, կապոաշ, լուրջ»)։

ՆՀԲ վերջինը համարում է «անծանօթ գոյն մը», ԱԲ «կապուտ գոյն մը»։ Նորայր, Բառ. ֆր. 192 բ թերևս ֆրանս. campêche ծառի անունից, որ ծագում է Մեքսիկայի համանուն ծովախորշից։

ԳԻՒ.—Ըստ ՆՀԲ, հտ. Բ. էջ 1064 գւռ. կապոաշ (այն է խոջ. գարոաշ) «թուփ բազմաճղի ուղղաձիգ, յոստոցն կազմին սապատք, և կեղևն լինի կարմիր. զոր յորժամ քերծուն՝ միջին փայտն է դեղնագոյն. ուստի ջուր նորա ներկէ զիրս ի դեղին մօտ ի կանաչ». Զթ. գարոշէնի (<կապոաշենի) «մի տեսակ ծառ է»։

ԿԱՊՐԵՆԻ «մի տեսակ բոյս է» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 1321։

=Նոյն ընդ կապա՞ր։

ԿԱՊՐՈՒԿ «մի տեսակ բոյս, որ բացատրւում է յն. իբ՛ւս հոմանիշով» Գաղիան. ունի միայն ՀԲուս. § 1322։

ԿԱՌ «կանգնեցնել, շինել, հաստատել». արմատ, որ առանձին պահուած է միայն կառ եարկանել «աչքը՝ միտքը մի բանի վրայ անկել» (ըստ ԱԲ) Ոսկ. պօղ. ա. 330. բայական ձևով ունինք կար. կառեաւ «շինուեցաւ» Փիլ. նխ. բ. 108. որից եաւականել «նաւ շինել» Անյ. սաղոմ. բազմական «շքեղ և բարձր» Ճառընտ. արձանական «արձանի պէս հաստատուն կանգնած» Նար. մծբ. կառուած «մածուածք, պնդութիւն» Նիւս. կազմ. եաւականու Փիլ. նխ. ա. 34. ւռճականել վրք. հց.—Սրանից -ոյց մասնիկով՝ կառուցանել «կանգնել, տնկել, հաստատել, շինել» ՍԳր. «կպցնել, փակցնել» Փիլ. Նոննոս. ՅՀ. կթ. կառուցումն Պիտ կառոյց Վրդն. սղ. և քրզ. ակնկառոյց Բուզ. հաստակառոյց Սարգ. երկնակառոյց Անան. Թէոդոր. Վրդն. իմեռնակառոյց Գնձ. կալակառոյց Ոսկ. յհ. ա. 6. կանխակառոյց Նար. առաք. ևն։—Ջ ածանցիչով աճած՝ կառչիլ «մի տեղից բռնուած մնալ, հաստատուիլ» Բուզ. Ոսկ.—կրկնութեամբ՝ կարկառ «բարակոյտ» ՍԳր. կարկառել «ձեռքը տնկել, մէկին երկարել» և նմանութեամբ «ձեռք տալ, օգնել մի բան տալ, ջամբել» ՍԳր. Սե-

բեր. Ոսկ. Եփր. Եվ. «դիզել» Մատ. Լմբ. Արծր. կարկառիլ ՍԳր. Ֆարակարկառ Բուզ. Լեռնակարկառ Նար. Խեցգակարկառ Ագաթ. կարկառակոյտ Յես. գ. 13. Դևոնդ. սուսուրակարկառ Նար. էջ 268 (տպ. սուսուրակարկառ)։ —Վերջինիս իբրև գաւառական մի ձևը, r>ղ ձայնափոխութեամբ՝ կաշկառ «քարակոյտ», որի վրայ տե՛ս առանձին։

ՆՀԲ կառուցանել=լծ. Թրք. qurmaq «կառուցանել», կառչիլ=լծ. կուռ «փուշ» և կռուիլ «կառչիլ»։ Հիմնք. եր-կուսն էլ կառ բառից։ Scheftelowitz BB 28, 303 լիթ. kariù «կախել», լեթթ. pakars «կեռ, ճանկ»։ Pedersen, Հայ. դր. լեզ. 27 նոյն է դնում կարեւ բայի հետ. Համմ. ռուս. вязнуть «խրիլ մրնալ» և вязать «կապել», սանս. badhnāmi «կապել» և լտ. offendo «ընդհարկանիլ»։ Karst, Յուշարձան 420 կառուցանել, կառչիլ, կռուիլ, կռուաճ, կռիւ և կուռ կցում է Թրք. qur-maq «շինել, կառուցանել» բային. իսկ 425 կառչիլ կապում է հյ. սառն և Թրք. qar «ձիւն» բառերի հետ։ Տե՛ս նաև կարկառ։

ԳԻՒ.—Կայ կառչիլ լ. «մէկի օձիքից կըպչիլ, դադար չտալ». բայց մանաւանդ «այրիլ, վառիլ», այսպէս՝ կառչիլ լ. Ղզ. «վառուիլ», կառիլ Ղզ. «այրիլ, վառիլ, ծարաւից պապակիլ», կառ գցել Ղզ. «վառել, բռնկցնել», կառ տալ լ. «այրել», կառ ըռնկնել լ. Ղզ. Շլ. «կրակ առնել, այրուիլ». այս բոլորի մէջ նշանակութեան զարգացումը ճիշտ այնպէս է, ինչպէս՝ կպիլ, կպցնել «փակցնել. 2. վառել», բռնել և բռնկիլ, Թրք. tutmaq «բռնել» և tutušmaq «բորբոքուիլ»։

ԿԱՌ «ծառի մեծ ճիւղ». անստոյգ բառ. մէկ անգամ ունի Կղնկտ. «Անկանէր ի գետն մեծ Կուր. անդ ի միջոյ գետոյն դիպեալ կառ. մի ի կղզոջ, և ի լուղ անցանէր՝ ելեալ ի ծառն»։ Ըստ ՆՀԲ Թերևս սխալ գրչութիւն փխ. ծառ։

ԿԱՌ «փուշ» գտնում ենք միայն ածանցման մէջ. ինչ. կառափուշ «մի տեսակ փուշ» լծ. փիլ. առանձին գործածութեան մէջ ունինք կառն ձևով (տեղ. կառին) «փուշ» Երզն. քեր. Վրդն. ծն. սղ. էջ 278. Մխ. առակ. որից կառնուտ «փշոտ» Վստկ. 175։

ՆՀԲ լծ. պրս. xār «փուշ», լտ. carduus «ուղտափուշ», հյ. կառ, կառչիլ, կռուիլ։ Աճ. կցում է հնխ. gʷɾro- ձևին. Համմ. կրետ. γάρρα «ցուպ, գաւազան», γάρσανα «մացառ», յն. γέρρον «ուռուց հիւսուած բան, ցանկապատ, ցից, սլաք ևն», հհիւս. kjarr «թաւուտ, մացառուտք» (Boisacq 145)։

ԳԻՒ.—Ալղ. լ. Ղզ. Մկ. Վն. կառ, Ղրբ. կա՛ռնը «մի տեսակ փշոտ բոյս է. երկար ցօղունի գլխում կայ կանկառի նման մի գունդ, որ կեղեւելով ուտում են». որից կա՛ռնուտ Ղզ. «փշոտ»։

ԿԱՌ «գաւիթ» տե՛ս Ղար։

*ԿԱՌԱՐՈՍ «մի տեսակ խեցգետին» Նեմես. էջ 59, Վրդ. պտմ. էջ 4. Յայտմ. ձեռագիրներում սովորաբար սխալմամբ գրուած է կառաբոյս և ըստ այմ էլ տպուած ու մտած բառարանների մէջ. բայց ուղիղն է կառարոս, իբրև՝

=յն. κάραβος «խեցգետին, ֆր. langouste», որ գտնում ենք Նեմեսիոսի յոյն բնագրում. այստեղից տառադարձուած է հայը և յետոյ մտած ուրիշ գրքերի մէջ. Համմ. նաև կարբ։

Հին ժամանակներից սկսեալ գրուելով կառաբոյս, մեկնուած է կառ «փուշ»+ բոյս բառերից իբրև բարդութիւն. նոյն իսկ Առաքել Սիւնեցին Սահմանաց գրքի մեկնութեան մէջ գրում է. «Կենդանաբոյսն՝ այսինքն կառաբոյսն՝ որ ի ծովեզերքն լինի, որ բուսեալ է ի ծովն և արմատացեալ է ի նմա»։ Վերի ձևով ուղիղ մեկնեց Նորայր ՀԱ. 1921, 236։

ԿԱՌԱԴՈՅԺ «բերանակապ, գայլ». նորագիւտ բառ, որ երկու անգամ գտնում եմ գործածուած Վրք. և վկ. Բ. 448 «Հրամայեաց արկանել գայլ ի բերան նորա, զի արգելցէ զբանս ճշմարտութեան... և եդեալ գայլ ի բերան վկային և հրամայեաց տանել ի բանս։ Տեսանէր սուրբն յայմէ կողմանէ զհրեշտակ Աստուծոյ և ասէ. Մի՛ երկընչիր... զի՞նչ հաճոյ է քեզ. առնում ի քէն զկառագոյժդ և դնեմ եղբօրն քում... և ա-

ռեալ զկառագոյժն՝ հար ի բերան թագաւորին»։

ԿԱՌԱԺՈՒԿ *(կամ կառածուղ, կարածուղ) «մժեղ, մժղուկ». մէկ անգամ ունի Փիլ. նխ. բ. 75. ձևն անստոյգ է. Բառ. երեմ. էջ 156—7 գրում է* **կառածուխ** *և* **կարածուխ**։

Նշբ մեկնելով «փշաւոր կամ խայթոցաւոր մժեղ», ուղում է անշուշտ հանել **կառ** *«փուշ» բառից։*

ԿԱՌԱԼ. *անստոյգ բառ. մէկ անգամ ունի Ոսկիփ. «Մեղայ խաղալով, կառալով, շոշափելով». թերևս նշանակում է «գիջանալ, մարմնաշարժութիւն անել»։*

Նշբ հանում է անգոյ կայոին «արտական անդամ» բառից։

ԿԱՌԱՀԱՍ *«կապ շան». ունի միայն Բառ. երեմ. էջ 156։*

***ԿԱՌԱՆ** *(ի–ա հլ. բստ Նշբ, թէև առանց վկայութեան) «հաստ չուան, պարան» վրք. հց. Բ. էջ 150։*

=Արաբ. قَرَان qarān *կամ* قَرَن qaran *բառից, որ նշանակում է «մի տեսակ ծառի կեղևից շինուած չուան, որով լուծի եզների վզերը իրար են կապում, յետոյ էլ լուծը անց կացնելու համար. 2. երկու ուղտ մօտ մօտի իրար կապելու չուան». այս բառը բնիկ սեմական է և մեկնւում է արաբ.* قَرَن qarn *«կցել, միանալ» արմատով. համմտ.* قَرِين qarīn *«ընկեր, միրճաւոր, տարեկից. 2. լուծի մի զոյգ եզներից իւրաքանչիւրը»,* أَقْرَان aqran *«կցայօն, ունքախառն, յօնքերը իրար միացած»,* مِقْرَان miqran *«եզան լուծ»,* اِقْرَان iqrān *«երկու բանտարկեալ մէկ չուանով կապած տանիլ» են (տե՛ս Կամուս, Թրք. Թրգմ. Գ. 688)։—Աճ.*

Canini, Et. étym. *120 ունի հյ.* **կառ** *«չուան» բառը, որ կցում է հյ.* **ֆօղ, ֆուղ**, *գերմ.* garn *և հոլլ.* garen *«թել» բառերին։ Հիւնք. կարան բառից։* Scheftelowitz BB 28, 308 *յն.* γαῦρα *«ճրպատ», γαύρων «ճպոտներով հիւսուած» բառերին ցեղակից։ Աճառ. ՀԱ. 1909, 160 *խ և կ ձայների լծորդութեան օրէնքով հյ. խառան հոմանիշի հետ նոյն։*

ԿԱՌԱՆ *«վայրի փեգենայ.* ruta graveolens» *Բժշ. ունի միայն ՀԲուս. § 1326։*

⊙ԿԱՌԱՆՁ *(յետնաբար ո, ի հլ). «լացի, ճիչ» Եփր. վկ. արև. 8? (այլ* **ձ. կառաչ**), *Մանդ. 34. կթ. 205. որից* **կառաճչել** *«հառաչել» Մանդ. սրա հետ նոյն է՝*

⊙ԿԱՌԱՁ *«ողբի և լացի բարձր ձայն» Սիր. լբ. 18. Ոսկ. ես. 162. երր. և մտթ. Փարպ. որից* **կառաչել** *«ողբալ, ճչալ» Լաստ. լմբ. ազ.* **կառաչիւն** *«լացի ձայն» Մանդ. Ճառընտ.* **կառաչումն** *«կռունկների կամ վարազների ձայն» Մագ. մազակառաչ «մեռնելուն մաղ մնացած, հոգեվարք, մազկոխիչ» Լծ. կոչ։*

=Բնաձայն բառեր են. երկուսն էլ կազմուած են պարզական կ ձայնից՝ ո սաստկականով և ն, չ ածանցիչներով համմտ. **բաչել, բառաչել, բառաճչել**։—Աճ.

Նշբ լծ. յն. κράζω, թրք. Եայղառա «ճիչ»։ Հիւնք. կոճչել բայից։ Յ. վ. Յակոբեան, Ծաղիկ 1899, նոյ. 4 **կառաչ, կառաճչ, գոռոզ, գոչ, գոռալ, կոչել, կաճչել, խօսիլ, բառաչ, հառաչ, կոխիչ, ֆարոզ**, *բոլորն էլ կցում է պրս. խուրուս «աքլոր» են ձևերին։ Վերի մեկնութիւնս հրատարակուած է նախ ՀԱ. 1899, էջ 204։* Scheftelowitz BB 27, 307 *լիթ.* garsas *«աղմուկ»; հիւլ.* garm, *կիմր.* garm *«գոչիւն» բառերին ցեղակից։ Թիրեաքեան, Արիահայ բռ. 99 բաչ արմատից։*

ԿԱՌԱՓՆ, ն *հլ. (–փին, –փուեմ, –փանց) «գլուխ, գանկ» ՍԳր. Եւս. պտմ. Եփր. ծն. էջ 106. որից* **բեղ կառափն ճաճել** *«գլխատել» Սարգ.* **կառափնատել** *Մրկ. ժբ. 4. Եփր. Թգ. 441.* **կառափնատ** *Բ. մակ. դ. 42.* **կառափնել** *Բրս. մրկ.* **երբակառափն** *Ոսկ. պօղ. ա. 29 (չունի Նշբ). ունինք նաև* **կառափել** *Մտթ. իե. 33,* **կառափեցող** *Անյ. բարձր.* **կառափիչ** *Գոր. և շմ. էջ 86—89, որոնք ծագում են* **կառափ** *արմատաձևից։*

Windisch. *8 յն.* κάρα, *լտ.* cerebrum *«գանկ» բառերի հետ։* Böttich. ZDMG *1850, 356,* Arica *68, 125,* Lag. Urgesch. *666 սանս.* karpara *«գանկ» բառի հետ, որ ինքը* Arm. Stud. *§ 1113*

մերժում է։ Müller WZKM 5, 268 մերժում է յն. κάρα ձևը և փոխառեալ է դնում քաղդ. קרקף qrqp, ասոր. ܩܪܩܒ qrqb ձևից։ Bugge KZ 32, 48—49 սանս. karpara, հպրուս. kerpetis, հսլ. črĕpŭ, հբգ. scirbi, գերմ. Scherbe, ռուս. черепъ «գանկը» բառերի հետ, իբրև բնիկ հայ բառ։ Հիւբշ. 458 հնխ. նախաձևը դնելով *skerpo-, *kerpo-, անապահով է գտնում հայերէնի համեմատութիւնը, որովհետև բառիս բուն արմատն է կառ, իսկ -ափն մասնիկ է. համմտ. կլ-ափն։ Հիւնք. յն. κάραβος «նաւ» բառից։ Jensen ZA 1904, 275 ասուր. karpatu «պտուկ» և ասոր. qarqaftā «գագաթ» բառերից է հանում։ Scheftelowitz BB 28 (1904), 149 և 29, 69 կցում է սանս. karpara «գոգաւոր աման, գանկ». kharpara «պտուկ», յն. κάλπη «կուժ», լտ. calpar «աման» են բառերին և բոլորը միասին փոխառեալ է դնում ասուր. karpu, karpatu «պտուկ» բառից։ Pedersen, Հայ. դր. լեզ. 74 նոյն է Հիւբշմանի հետ, որոնց հետևում է նաև Pokorny II 580։

Գիւմ.—Ալբս. Ախք. կառափ, Ջն. գառափ, Մշ. կառապ «գլուխ». Քներևս նաև կառափել Ագաթ. «լեզուն քիմքին զարնելով շաչեցնել»։

ԿԱՌԵԼ «վառել կամ յամառիլ». ունի միայն Բառ. երեմ. էջ 156. առաջին իմաստով տե՛ս կառ արմատի տակ գւռ. կառ տալ, կառ գցել, կառ ընկնել են ձևերը. իսկ երկրորդ իմաստով՝ անյայտ է։

ԿԱՌԿՈՒՒՌ «ատեպ, յաճախ, շատ անգամ». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Վստկ. էջ 1 «Իւր տէրն ատէպ հայի ի յինքն և կառկուռ երթայ տեսանէ և պէտ առնէ»։

ԿԱՌՄՆԻ «փանդռնահարաց մրմունջ». ունի միայն Բառ. երեմ. էջ 157։

ԿԱՌՆ «թաղիք» Գաղիան։

ԿԱՌՆ «թարախ». արմատ առանձին անդործածական, որից կազմուած է կառնաջուր «վէրքից վազած թարախոտ և արիւնոտ ջուրը» Մարթին։

ՆՀՔ լծ. լտ. cruor «հոսող արիւն»։

ԿԱՌՆՈՒԻ «վախենալ». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած նոր վկ. 535 (ժէ դարու վերջից). «Խնդալով վազէր ի գնացս և ոչ կառնոյր ի մահուանէ»։

ԿԱՌՈՒՑԱՆԵԼ, **ԿԱՌՉԻԼ** } տե՛ս Կառ։

***ԿԱՌՔ**, ի-ա հլ. (անեզաբար միայն գործածուած) «կառք» ՍԳր. եզն. Ագաթ. (Տաթև. ձմ. ճծ. մի քանի անգամ գործ է ածում հգակի ձևով. ինչ. կառի, կառիւ). որից **կառավար** ՍԳր. եզն. Ոսկ. Փիլիպ. **կառավարել** «կառքը քշել, կառքով կռուիլ» Խոր. Նար. «վարել առաջնորդել ընդհանրապէս. երկիր են կառավարիլ» Նար. Լմբ. **կառաւէտ** Սերեր **կառամարտիկ** Ոսկ. Փիլիպ. **կառանշան** Ագաթ. **կառապետ** Գ. Թագ. իր. 31—34 **կառամուտ** Գ. Թագ. դ. 28. **կառապան** Նորագիւտ Բ. մնաց. ա. 14. **կառաւոր** «կառքով գնացող ճամբորդ» Կոչ. 323. **խաչակառ** Անյ. բարձր. **մարտակառ** Ներս. մոկ. **ոսկիակառ** ճառընտ. **սայլակառ** Պոմ. ագէքս. նոր բառեր են **դիակառ**, **շոգեկառ**, **ճանրակառ**, **կառախումբ**, **կառատուն**, **կառավարչական**, **կառավարչապետ** են։

=լտ. carrus «մի տեսակ քառանիւ կառք» բառից փոխառեալ է Հռովմայեցոց ժամանակ. իսկ այս լտ. բառն էլ փոխառեալ է Գալլերից. համմտ. գալլ. carros, հիռլ. կիմր. և հբրտ. carr «կառք»։ Գալլերը Իտալիա մտան Ն. Ք. 9—6 դարերին. 390 թուին նրանք հասան Հռովմ։ Նրանք անքաղաքակիրթ ժողովուրդ չէին. այլ իւրացրել էին իրենց նուաճած ազգերի կուլտուրան։ Աչքի էին ընկնում յատկապէս այն կառքերը, որոնցով նրանք արշաւում էին կամ իրենց իրերը փոխադրում դաղթականութեան միջոցին։ Լատինները վերցրին նրանցից կառքերի զանազան տեսակների անուններ. ինչպ. carrus «քառանիւ կառք՝ իրեր փոխադրելու», carpentum «երկանիւ կառք», petorritum «քառանիւ կառք» են (Meillet, Esq. d'une hist. de la langue latine, էջ 106)։ Հռովմայեցոց միջոցով բառը այնուհետև տարածուեց ամէն կողմ. ինչ. յն. κάρρον, հբգ. charro, charra, գերմ.

Karren, *շվեդ.* kärra, *ֆիննա.* kärrit, kärryt, *ֆրանս.* char, *իտալ.* carro, *ռում. անգլ.* car, *չեխ.* kára, *լհհ.* kary, gary, *սլ.* gare, *ռուս.* карета, *տաթ.* ܩܪܘܙܐ qarūxa, *թալմ.* קְרוֹכִין qərūxin *կամ* קְרִין qarōn «*կառք*» *են* (Walde 215, Berneker 488, Boisacq 266, Kluge 244): *լտ.* carrus <*գալլ.* carros. *այս գալլ. բառն էլ հնդեվրոպական է և պատկանում է* k'ers- «*վազել. 2. կառք*» *արմատին. համմտ. յն.* σάρσαι «*սայլ*», *լտ.* sarracum «*երկանիւ մեծ կառք*» (*որոնք ծագում են իլլիւր.* *sarsa *բառից*), *լտ.* curro «*վազել*», cursus «*ընթացք*», currus «*կառք*», *յն.* ἐπίκουρος «*օգնութիւնս վազող*» *են* (Pokorny I, 427—8):

Նախ Schröder, Thesaur. *էջ 58 կըցնց դնում.* Karren *բառին, վերջինը ըստնելով հայերէնից*; Klaproth, Asia polygl, *106 դնում.* Karre: *Նշ՚ լծ. լտ.* currus, *իտալ.* carro, carrozza, *պրս.* gardūn: Windisch. *8 լատ.* currus: Böttich. Arica *56, 14 համեմատում է սկիւթ.* καραβύες «*սայլ*» *և* καράμη «*սայլի ծածկոց*»: *Նոյն,* Rudim. *53, 225 տաթ.* qarūq (*իմա՚* qarūxā): Riggs *Քերական. 1856, էջ 61 անգլ.* car: *Տէրվ.* Altarm. *14 սանս.* car «*երթալ*» *լատ.* callis «*ճամբայ*» *բառերին է կըցնում* fայլ, կառք, *լտ.* currus, currere, *գալլ.* carrus: *Նոյն, Նախալ. 69 հնխ.* kar *արմատից լտ.* currere, currus, *հյ.* կառք, *որ «սակայն կարելի է որ Հռոմէ պարգև ղրկած բլլան Հայոց՝* carrus *դաղղիական-լատինական բառըն»*: Պասմաճեան, *Մասիս թ. 1893 էջ 251 իբր թուրանեան բառ կցում է ակկադ.* ſar «*սայլ*» *ձևին*: *Հիւնք. լտ.* carrum: *Հիւբշ. 458 կարծում է որ թերևս Դաղատացիներից է փոխառեալ՝ նոյն իսկ Փոքր-Ասիայում*: *Սրան համամիտ էր* Meillet MSL *10, 280, բայց* MSL *18, 349 հաստատեց, որ փոխառեալ է լատիներէնից՝ վերի ձևով*: Scheftelowitz BB *26, 68 տաթ.* qəruxa *ձևից է առնուած՝ սրա վերջաձայն* x *յոգնակիի նշան կարծելով*: Patrubány *ՀՄ 1908, 214 յն.* γέφυρον «*ծաղկահիւս*» *բառի հետ*: *Մ. Ս. Դաւիթ-Բէկ, Յուշարձ. 397 գալլ.* car, *իռլ.* carr, *սանս.* kar «*շարժիլ*», *լատ.* curro «*վազել*»: Karst, *Յուշարձ. 404 սումեր.* gar «*կառք*»: *Մառ,* ИАН *1912, 595 տաթ.* qarūxā *ձևից կամ յաբեթական* qwr *արմատից. համմտ. վրաց* գոգոռա «*անիւ*», գոռվա «*պտրուիլ*»: Pictet, *բ. տպ. Բ. 146 հյ.* կառք *կցում է պրս.* čarx «*անիւ*», *յն.* κύκλος «*շրջանակ*» *են բառերին*:

ԳԻՒՐ.—Գրականից փոխառութեամբ կայ շատ տեղ կառավարել ձևը (Մրղ. կառավըրէլ*). մինչև անգամ Անգորայի Թրքախօս հայոց մէջ* garavellemek «*կառավարել, ճարել*» *ձևով (Բիւր. 1898, 789)*:

ՓՈԽ.—Գ. Փառնակ, Անահիտ 1906, 233 հայերէնից փոխառեալ է դնում ալբ. karr «*կառք*», *որ անշուշտ զուտ լատինական փոխառութիւն է: Պէտք չէ հայերէնից կարծել նաև պրս.* گار gārī «*ձիասայլ, ֆուրգոն*» (*չունի ԳԴ. գործածական է այժմ Թեհրանի պրս. բարբառում և այլուր*), *որի հետ առ առաւելն կապ կարող է ունենալ սումեր.* gar «*սայլ*»:

ԿԱՍ «*չետ կանդնիլ, դադարիլ, լքանիլ*», *արմատ առանձին անգործածական, որից* կասիլ *կամ* կասել *ՍԳր. Ոսկ. մ. բ. 7 և եբր.* կասեցուցանել *Գաղ. ե. 7. Սիր. լդ. 40. Կիւրղ. ծն. Ոսկ. Թես.* կասեցուցիչ *Եզն. Սե. բեր.* կասումն *Փարպ.* անկասելի *Նար*:

Նշ՚ «պրս. kāstan, *որ է պակասել. ի մեզ արմատն է կամ,* կաս, կաց *կամ* կայ՛, կայր»: Lag. Urgesch. *522 զնդ.* kas «*նուազեցնել*», *սանս.* kṛç: *Նոյն,* Gesam. Abhd. *53 զնդ.* kasyāo, *որ կըցում է յն.* κακίων «*յոռեգոյն*» *բառին. իսկ* Arm. stud. *§ 114* կասուլ «*կամնել*» *և պրս.* kih «*փոքր*» *բառերի հետ նոյն է դնում: Հիւբշ.* Arm. Stud. *էջ 12* կասիլ *և* կասուլ *համաձայն չի գտնում զնդ.* kasu «*փոքր*» *բառին: ՀՄ 1895, 231 պա- վանկի անկումով պակաս բառից: Հիւնք.* պսակ *բառից: Հիւբշ. 458 մերժում է պրս.* kāstan, *ներկ.* kaham

«պակասիլ», զնդ. kasu-, պրս. kih «փոքր» և հյ. պակաս և կասուլ ձևերի համեմատութիւնը։ Karst, Յուշարձան 429 ՖՒր. as, aš, az, yaz «պակասիլ, թերանալ», ույգուր. as, չաղաթ. օսմ. az «քիչ» բառերի հետ։ Թիրեաքեան, Բազմ. 1913, 341 ՖՒրք. ϝաս–մաϝ «ներհանջիլ, կարճիլ» (? բառարանում գրանում եմ միայն قصاق qasmaq «սեղմիլ»)։ Պատահական նմանութիւն ունի հսլ. gašǫ, gasiti, ռուս. расить, յն. σβῶϛαι, լիթ. gestù «հանգցնել, շիջուցանել» ևն ընտանիքը (Berneker 295), որի արմատն է հնխ. gʷes- (պիտի տար հյ. կե–)։

ԿԱՍ «մանրիլ, ջարդիլ». արմատ առանձին անգործածական, որից կասուլ կամ կասել «ցորենը ծեծել, մանրել, կամնել» ՍԳր. կասող Մանդ. էջ 169. կասիչ «կամնող» Ոսկ. ա. տիմ. անկաս «անծամելի» Տօնակ. դիւրակաս Մխ. երեմ։

Lag. Arm. Stud. § 1114 կցում է նախորդին։ Հիւբշ. 458 մերժում է միացնել նրան։ Հիւնք. կալ բայից։ Petersen KZ 39, 427 և Kelt. Gram. II 618 հյ. սկսաւիմ, սկիզբն, հիռլ. fo-scann- «դցել, բաղխել, մաղել», to-ind-scann- «սկսիլ» բառերի հետ հնխ. (s)qen, (s)qan- «բաղխել, զարնել» արմատից, որ շատ կասկածական է համարում Pokorny II 564։ Պատահական նմանութիւն ունի արաբ. قصّ qaṣṣ «կասել, կալսել» (Կամուս, ՖՒրք. ՖՒրմ. Գ. 325)։

*Գիր.—Պահուած է միայն երև. կա՛սէլ, Գոր. Ղրբ. կա՛սիլ «ցորենը կամնել»։ Միւսների մէջ ազդուելով կալ գոյականից (ըստ որում կալի մէջ ցորենը կամնով են կալուում), գարձել է կալսել (օր. Ննխ. գալսէլ), որ և անցել է գրական լեզուին։

*Փոխ.—Յ. Գազանճեան, Յուշարձան 330 ա հայերէնից փոխառեալ է դնում գւռ. ՖՒրք. كس kes «մանրուած խոտ», որ սակայն ո՛չ ձևով է յարմարւում մեր բառին և ո՛չ նշանակութեամբ։ ՖՒրք. բառը անշուշտ ծագում է kes-mek «կտրել» բայից. համմտ. ՖՒրք. kes-mik «յարդի խոշոր կտորներ»։

*ԿԱՍՓ. մի տեսակ անծանօթ բոյս, որ Բժշկարանը վարդի հետ եփուած իբրև դեղ է առաջարկում փորացաւի. ունի միայն ՀԲուս. § 1328, որ և ϝասպ § 3150։

=Արաբ. قسب qasb «չոր արմատ» (Մաղրըբի բարբառով). տե՛ս Steinschneider-ի հաւաքածոյի մէջ՝ WZKM 12, 323։—Ա՛Ճ.

Ուղիղ մեկնեց նախ Աճառ. (անտիպ). Նոյնը Նորայր ՀԱ 1923, 496։

*ԿԱՍՊՐԻՈՍ կամ ԿԱՍՏՐԻՈՍ (սխալմամբ գրուած նաև կառոց, կոթոռս ևն) «կուղբ, ջրշուն» Եպիփ. բառոյ։ Ուրիշ վկայութիւն չկայ։

=Յն. κάστωρ, որ և լտ. castor «ջրշուն, կուղբ»։ Վերջաւորութիւնը չի յարմարում։

Ուղիղ մեկնեց ՆՀԲ։—ՋՔ և Հիւբշ. չեն յիշում այս բառը։

*ԿԱՍԻԱ (ի հյ. ըստ ՆՀԲ) «դարիճեննիկ, դարչին» Սղ. խդ. 9. Յոբ. խբ. 14. որ և կասիայ (սեռ. կասիայի) Նշ. եղեկ. Նար. խչ. 387. Վանակ. յոբ. կասիաս Նեղոս 700. կասի (-հայ, -հաւ) Եղեկ. իէ. 17. Ոսկ. ա. տիմ. իսկ ըստ Գաղիան. Բժշ. կասիա «կակաժիրակ, խիարշէմպէ»։

=Յն. κασία «դարիճեննիկ», որ աւելի հարազատ ձև է քան κασσία, որից նաև լատ. casia, cassia, իտալ. cassia, ֆրանս. casse. յոյն բառն էլ փոխառեալ է արևելքից. համմտ. եբր. קציעה qəṣī'ā, հր-արամ. כסיא kəsiya, ասուր. kasū (Gesenius[17], 721, Boisacq 419)։ Ըստ վերջինիս յոյն բառը նշանակում է «laurier-cassa, faux cannelier, կեղծ դարիճեննիկ, laurus cassia L», իսկ ըստ Анненковъ-ի բուսաբանական բառարանի՝ laurus cassia L=cinnamomum zeylanicum N. ab. E, որ բուն դարչինն է. Ս. Գրքի կասիան հաւանաբար է «cinnamomum aromaticum» (տե՛ս անդ. էջ 99 և էջ 188)։

Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ։

ԿԱՍԻՄՈՆ «մի տեսակ խունկ կամ կասիա» Նար. աշխ. 615, 616։

Պատկ. Арм. reorp. *81* մեկնում է իբր յն. κασσία;

ԿԱՍԼԱՅ (ի հլ. ըստ ՆՀԲ) «գափնի» Վստկ. *74, 137*. Լծ. փիլ. Մարթին. Բժշ. որից կասլապտուղ «գափնիի պտուղը». նմանութեամբ ասուած է նաև միջակ մեծութեամբ ձիթապտուղի համար, որ «կասլայի պտղոյն է նման և յայն ձևն է» ըստ Վստկ. *180* (տե՛ս և հապալաս). ունի միայն ՀԲուս. § *1333*:

Seidel Մխ. բժշ. § *55* չի մեկնում բառս, Steinschneider-ի հատուածոյի մէջ՝ WZKM *12, 331* կայ արաբ. كسيلة kasīla բուսանունը, որի իմաստը լաւ մեկնած չէ և որ ձևով էլ շատ չի յարմարում մեր բառին (արաբ. ك k=հյ. ք, իսկ ق=ղ q):

Գիւմ.—Ունինք կասլապտուղ ձևը Առաջնայում՝ փխ. կասլապտուղ, Սվեդ. գ'mսլօ «գափնի»:

ԿԱՍԼԻԿ «մի տեսակ բոյս, որի փայտը քսու նման արմատին խիճերով՝ նուրբ բաղդատացնում են» Վանակ. ունի միայն ՀԲուս. § *1334*:

ՀԲուս. կասլայ բառի նուազականն է կարծում:

***ԿԱՍԿ** (ի–ա հլ. ըստ ՆՀԲ, բայց առանց վկայութեան) «կեղևել՝ մանաւանդ եփուած գարի կամ հերիաւոյ» Եւագր. *7*=Վրք. հց. Ա. *322*. Լծ. եւագր. որից կասկաջուր «գարեջուր» Վրք. հց. Ա. *322*, Վրք. ոսկ. Եւագր. *7*. Մագ. Թղ. էջ *115*. Համմտ. նաև Բաջկէն:

=Պհլ. *kask «գարի» բառից փոխառեալ, որ թէև աւանդուած չէ, բայց մինչև այսօր էլ պահուած ենք գտնում մի քանի իրանական բարբառներում. ինչպէս՝ միջնյանի kåsk «գարի» (MSL *19, 147*). նագդուլամի kåsk «գարի» (JAs, *1916*, էջ *251*). Պհլ. ձևից է ածանցւում պրս. *kašk «գարի», որ թէև նախորդի նման չէ աւանդուած, բայց պահուած է պրս. մի քանի ածանցներում. ինչ. كشكاب kaškāb «կասկաջուր, գարեջուր», كشكين kaškēn «քաշկէն, գարեհաս», كشكو kaško «գարեջուր» և كشكك keškek «հերիաւոյ»: Իրանեանից է փոխառեալ նաև արաբ. كشك kašk «կասկաջուր, գարիի խաշու՝ որ գործածական է բժշկութեան մէջ» (Կամուս, Բրք Բրգմ. Գ. *110*):—(Թիրեաքեան, Կարնամակ ծան. *111* ունի պհլ. kazk «գարիի և ցորենի աղանձ» բառը, որ այլուստ անծանօթ է):—Հիւբշ. Arm. Gram. 515:

ՆՀԲ «լծ. պրս. ڤشكيف, ڤشكيف «հերիաւոյ», ի jav՝ որ է գարի»: Ուղիղ մեկնեց նախ Հիւբշ. Pers. Stud. էջ *219*: Թիրեաքեան, Կարնամակ ծան. *111* պհլ. kazk բառի հետ:

ԿԱՍԿ «շագանակ». գործածել է Թովմաս Վրդ. (ըստ ՀԲուս. § *1336*). գտնում ենք նաև մի հին ձեռագրի մէջ՝ հետևեալ ձևով. «Կասկըն պտուղ ինչ է բժշկական, անուն կաստանայ» (տե՛ս Եւագր. *7*)՝ որից կասկենի «շագանակենի» Մխ. առակ: Ուրիշ վկայութիւն չկայ:

=Արդեօք նախորդ բառը չէ՞ իմաստի շփոթութեամբ:

Lag. Arm. Stud. § *1115* սրանից փոխառեալ է համարում յն. κάστανος, իսկ Göttingen-ի Nachrichten թերթի մէջ՝ *1889* մայ" *29*՝ (հայ Բրգմ. ՀԱ. *1889, 159*) ընդհակառակը հայ. կասկ հանում է յն. κάστανέα «շագանակ» բառի՞ց: Հիւբշ. *166* նկատելով որ բառը գործածական չէ հայերէնի մէջ, մերժում է իբր մայր ընդունիլ յն. բառին, իսկ էջ *394* կասկածով հանում է յն. ձևից: Bugge, Lyk. Stud. *1, 13* Փոքր-Ասիոյ Κέσκιος և Հոոդոսի Keskinda քաղաքների անուան մէջ է տեսնում: Pedersen, Հայ. դր. լեզ. *217* կցում է կասկ–ար–այ բառին և հայերէնից փոխառեալ է դնում յն. κάστανέα (<հյ. *կասկեաձեա) և ասոր. kaskəra «կողով»: Հետևելով Lagarde-ի Walde *138* և Berneker 492 դեռ շարունակում են հայերէնը մայր համարել յունարէն κάστανον բառի, որից էլ փոխառեալ են բազմաթիւ ուրիշ լեզուներ (տե՛ս կաստանայ բառի տակ): Boisacq յոյն ձևը դնում է Արևելքից եկած և նրա հետ համեմատում է հյ. կասկենի (էջ *420*):

—**ԿԱՍԿԱՍ**, ո հլ. (յեռնաբար նաև ի հլ.) «տարակոյս, վտանգի երկիւղ» ՍԳր. Եզն.

Ոսկ. «կասկածոտ» Ագաթ. § 1. Մծբ. որից կասկածել *ՍԳր. Փարպ.* կասկածագոյն *Ոսկ. մաթ.* կասկածանք *Ես. իր. 13. լբ. 9. Ոսկ. յհ. բ. 12. Ագաթ.* կասկածօտ *Բ. մակ. դ. 34. Եզն.* անկասկած *Եզն. Ոսկ.* չարակասկած *Սարկ. քհ.* տարակասկած *Ոսկ. յհ. ա. 41. Նոր բառեր են* կասկածական, կասկածամիտ, կասկածամտութիւն *են։*

=*Կրկնուած է* կած *ձևից, որի վերջաձայնը կրկնութեան մէջ բաղաձայնի մօտ պահպանելով՝ վերածուած է ս. հմմտ.* կսկիծ< **կիծկիծ, -կած ձևն էլ կարծ «կարծիք» բառից պարզուելով է յառաջացած։*

Հիւնք. կսկիծ *բառից։ Վերի մեկնութիւնը տուաւ* Meillet *1897 թ. (անձնական)։ Կրկնութեան մասին խօսում է Աճառ. ՀԱ 1899, 233։ Թիրեաքեան, Բազմ. 1908, 504 կրկնուած կարծ արմատից։*

Գիւռ.—Ախց. կասկած, *Ալշ. Մշ.* կասկած, *Երև. Ղրբ.* կածկած. *որից* անկասկածի, անկրսկծի «յանկարծակի, չսպասած տեղը» *Մշ. Վն. Տփ. (վերջինը* անգրսկածի *ձևով)։*

ԿԱՍԿԱԾ *(գրուած նաև* կարկած, արկած, կած*) «մի տեսակ բոյս.* malabathrum, *արաբ.* սատէն» *Բժշ. ունի միայն ՀՌուս. § 216, § 1250 և § 1337, Նորայր ՀԱ 1921, 617 ուղղագոյն ձևը համարում է* կարկած *և այս էլ թերևս ուղղելի կասլայ։*

ԿԱՍԿԱՄ *«բուիճակ, մի տեսակ բոյս». Մխ. առակ. նոյն է* կասուկամ *Տաղ. (Կասուկամն կախուել բնդ ծառն ի վար, Յաչիցն արիւն կու կաթկթայր, Կու կանչէր հազար դինահար, Մէկ մի չերթայր առնոյր ի վար։ Ամատ. Հայ. բառ ու բան, էջ 322 ա)։ Ուրիշ վկայութիւն չկայ։*

Հներից Մխիթար Գօշ բառախաղով գրում է. «Բուիճակ աղաղակէ կաս և միւսն ասէ կամ. սակայն ոչ կայ, այլ թուցեալ այլուր երթայ»։ Նշր յիշում է պրս. fɛʌɛf *(իմա՛* كسك kasak*) «անծեղ»։*

Գիւռ.—Ակն գասգամ *«մի տեսակ բոյ? 2. թղթախաղի մի տեսակ է». Մշ.* կասկամ, *որ գործածական է միայն «Կասկամ հաւու պէս կկանչէ» դարձուածի մէջ. իմաստն է «կողբայ»։*

ԿԱՍԿԱՄՈՆ *տե՛ս Սակամոնի։*

**ԿԱՍԿԱՐԱՅ, ի հլ. «մխս խորովելու վանդակաձև գործիք. 2. կաթսայի եռոտանի» ՍԳր. Ոսկ. ա. թես. հնագոյն գործածուած է միայն աննշաբար, ներկայ գրականի մէջ երկու թուով էլ կարող է գործածուիլ։ Ըստ վրդ. և Տաթև. հրց. 357 «կասկար է պուտուկ պղնձի»։*

=*Ասորական փոխառութիւն է, ինչպէս ցոյց է տալիս -այ վերջաւորութիւնը. բայց ասորերէնում այս նշանակութեամբ գործածուած չէ. կայ միայն* ܩܣܟܪܐ kaskārā *«կողով», որ բնիկ սեմական բառ չէ և նոյնպէս փոխառեալ է մի ուրիշ լեզուից։ «Կասկարայ» և «կողով» իմաստները տարբեր չեն իրարից և երկուսն էլ բխում են «հիւսկէն» գաղափարից. (կասկարան իր առաջին ձևով այն երկաթի հիւսկէն ցանցն է, որ դրուում է կրակի վրայ). հմմտ. լտ.* craticula *«կասկարայ», որ ծագում է* cratis *«հիւսկէն» բառից. հյ. վանդակ, որ նշանակում է «ցանց, կասկարայ, կողով»։—Յայտնի չէ թէ ասորի բառը կապ ունի՞ յն.* ἐσχάρα *«վառարան, խարոյկ, կասկարայ» բառի հետ, որից փոխառեալ են թալմ.* אסקלא asqalā *և թրք.* o ,اسقرا əsqara *(ոմկ. բսխարա) «կասկարայ»։ (Յն. բառը բուս* Boisacq 290 *բնիկ հնդևրոպական է և կցւում է հսլ.* iskra, *ռուս.* искра, *լհհ.* skra *«կայծ» բառերին։* Berneker *433 չի ընդունում այս համեմատութիւնը)։—Հիւբշ. 306։*

ՆՀր թրք. խզարա *և յն.* էխա՛րա *ձևերին է կցում։* Lag. Arm. St. § 1116 *դրաւ ասորի բառի հետ։ Տէրվ.* Altarm. 106 *և Նախալ. 112 յն.* ἐσχάρα *բառի և ուրիշ ձևերի հետ՝ դնում է հնխ.* skar *«խարել» արմատից. իբր բնիկ հայ (սրա վրայ տե՛ս* խարել *բառի տակ)։* Pedersen, *Հայ. դր. լեզ. 225 ասորի բառը դնում է հայերէնից փոխառեալ, իսկ* կասկարայ *կցում է* կասկ *«շագանակ» բառին։*

Գիւռ.—Ախց. Կր. Մշ. Վն. կասկարա, *Տփ.* կասկարաճ, *Մշ.* կասկարէգ, *Խրբ.* գուսգարոգ, *Ղրբ.* fuկա՛րէճ։*.—Նոր բառեր են* կասկա-

ւայ՛ Ակն. ՋԹ. «մի ասողի անուն», կասկարեկ Առն. «միշտ սրտնեղութիւն պատճառող մարդ», կասկարէնիմ Դրբ. «մի տեսակ խաղ է»։

ԿԱՍԿԵԼ «ամուսնութեան օրէնքը պղծել». մէկ անգամ ունի Մանդ. էջ 150 «Զազիր և գարշելի անկողնեօք ամուսնութիւն կասկեւով զօրէն խոզի ընդ ցեխ և ընդ տիղմ թաւալեալ»։ (Բառ. երեմ. էջ 157 մեկնում է «կակղել, դադարել, պակասել»)։

***ԿԱՍՍԻՈՊԷ** կամ **ՔԱՍԻՈՓԷ** «Մեծ Արջին հանդիպակաց մի համաստեղութիւն է W տառի կամ ընկած աթոռի ձևով» Շիր. ուրիշ վկայութիւն չկայ։

=Յն. Κασσιόπη, որից լտ. Cassiope. առասպելական անձնաւորութիւն, որ յետոյ աստեղաստան փոխուեցաւ։

Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ։

ԿԱՍՏ «աքցան». մէկ անգամ ունի Ոսկիփ. բացատրութեամբ հանդերձ. «Զմի բևեռն (խաղի) և զկաստն, որ է աքցանք»։

Scheftelowitz BB 28, 300 պրս. gāz «աքցան», gazīdan «խածնել, կծել» բառերին ցեղակից է դնում։

***ԿԱՍՏԱՆԱՅ** «շագանակ» Վստկ. 4, 136. Բժշ. որ և կաստաճոն Խոր. աշխ. (այսպէս ունի մի ձեռ. փխ. մաշկամիրգ). որից կաստաճայի կամ կաստաճի «շագանակենի» Վստկ. դ. և միք. կաստաճենի «շագանակենի» Քաղ. կաստաճոց «շագանակենիների անտառ» Տաղ. (երկուսն էլ առ Ստ. Լեհ.)։

=Յն. κάστανέα կամ κάστανον «շագանակ» բառից, որ ծագում է Պոնտական Κάστανα քաղաքի անունից. փոխառութեամբ յոյներից անցել է շատ բազմաթիւ լեզուների. ինչ. լտ. castanea, հիւս. լատ. բարբառներում castenĕa, իտալ. castagna, ֆրանս. châtaigne, անգլ. chestnut, հրգ. chestinna, մրգ. kestene, գերմ. Kastanie, հունգ. gesztenye, ռում. agistinĕ, gistinĕ, tŭstanŭ, հսլ. kastanŭ, kostanĭ, ռուս. каштанъ, լեհ. kasztan, ալբան. kŭštenjĭ, թրք. kestane ևն, բոլորն էլ հոմանիշ (Walde 138, Berneker 492, Boisacq 420, Kluge 245, սրոնք ընդունում են այն կարծիքը թէ յն. κάστανέα ծագած է հայ. կասկենի ձևից. տե՛ս այս բառի տակ)։

Ուղիղ համեմատութիւնը տուաւ նախ Ստ. Լեհ., որի վրայ տե՛ս Նորայր, Հայկ. բառաք. էջ 119—122 և Բառ. Ֆրանս. 229 բ։

ԿԱՍՏԻՆ կամ **ԿՈՍՊՐԻՆ** «կառամարն է». այսպէս է մեկնում Բառ. երեմ. էջ 157. Թուի թէ ուզում է ասել կաղամար «թանաքամանն»։

Կաստորիոս, սեռ. կաստորի «կուղբ, յըրշուն» Բար. (Физіологъ, հրտր. Մառի, էջ 34). տե՛ս **կասդրիոս**։

ԿԱՍՔԵԼ. անստոյգ բառ. մէկ անգամ ունի Գնձ. «Զնոյն դեղ մահաձիր արբուցեալ, ի բարուրս՝ գերահայիդ լինել հաւասար՝ պատիր կասքելովն վրիպմամբ անբոյժ աշխարելի»։

ՆՀԲ «նոյն երևի ընդ կասկել «պղծել». թերևս իցէ լծորդ և ընդ ծասքել, որոճել ի միտս, և կամ ծասկել զկասկ, այսինքն զգարի՝ ըստ օրինակի գրաստուց»։ ԱՔ գրելով կասքել կամ կասկել «գարի ծամել անասնոց պէս»։ ՋՔ չունի։

ԿԱՏԱՔ «խոտակեր մի թռչուն է» Մխ. առակ ճխդ։

Կայ արաբ. غداف ɣudāf «մի տեսակ ագռաւ կամ մի ուրիշ թռչուն» (Կամուս, Թրք. Թրգմ. Բ. էջ 818)։ Զայնանիշի սխալով կարելի է կարդալ նաև ɣadāf: Տե՛ս նաև **կատակ** (թռչունը)։

ԿԱՏԱԴԱՀԵԼ «կազդուրել, քաջալերել», ունին միայն Բառ. երեմ. էջ 157 և ՀՀԲ. անստոյգ բառ։

ԿԱՏԱԿ «Ուտի գաւառին յատուկ մի տեսակ թռչուն» Խոր. աշխ. 610։

ՆՀԲ միացնելով կատաբ բառին, յիշում է «պրս. **էսէֆ** (իմա كسك kasak), որ է անծեղ, արաբ. **ագագ** և թրք. սաղսրղան»։ Ուղուրիկեան (տե՛ս ԳԲ, էջ 700 և 1405) արաբ. **գաբբա** «կարմիր կաքաւ»։

+**ԿԱՏԱԿ**, ի-ա հլ. «խաղ, ծաղր, այպանք» Բրս. մրկ. Պիտառ. «ծաղրածու, միմոս, խեղկատակ» Բուզ. գ. 19. որից **կատակել**

ՍԳր. կատակաճ *ՍԳր. Ոսկ. Եբր. և յհ.* կատակութիւն *ՍԳր. Մծբ. Եփր. Համաբ. 185—6.* խեղկատակութիւն *ՍԳր. Ոսկ.* խաղակատակ *Բուզ. ղ. 10.* այպնակատակ *Ոսկ. յհ. ա. 1.* այպնակատակ լինել *Բ. մակ. ժ. 34.* հացկատակ *Ոսկ. մ. ա. 4.* ծաղրակատակ *ԱԲ* են։ *Երևի նոյն բառն է* կատիկ *Կոստ. երզն. 93 (Ով խօսի բանք աղտեղի դէմ մի յարդարն կատիկով)։ Իսկ* կատակ կերակրոց *ՅՀ. կթ. 229* ուղղել կամակ կերակրոց՝ *ըստ Նորայր, Հայկ. բառաք. էջ 18։—Նոր բառեր են* կատակաբան, կատակախօս, կատակասէր, կատակերգու *են։*

=*Բնիկ հայ բառ՝ հնխ.* g°ad- *արմատից. համմտ. սանս.* गद gad, gadati «*ասել, խօսիլ, անուանել, հաշուել*», गद gada, gada «*խօսք, խօսակցութիւն*», गदगद gadgada «*կիսատ պռատ խօսիլ, թոթովել, կակազել*» *են։*

ՆՀԲ կատակ «*նման*» *բառից։ Տէրվիշ. տե՛ս* ծաղր *և* կատայղ *բառերի տակ։ Հիւնք.* կոտակ *բառից։ Վերի մեկնութիւնը տուաւ* Liden, Arm. Shud. *72։ Մ. Ս. Դաւիթ-Բէկ. Յուշարձան 397* կատու *և* կատաղի *բառերի հետ նոգալ.* cad, *արմոր.* kann, *հիւլ.* cath «*կռիւ, վէճ*» *են։ Ադոնց, Արուեստ Դիոն. քեր.* CLIII *պրս.* کدا kada «*տուն*» *բառի հետ՝ մեկնելու համար* կատակերգութիւն = *յն.* κωμῳδία *բառը, որ հանւում է* κώμη «*դիւղ*» *բառից։ Թիրեաքեան, Բազմ. 1913, 341 հյ. խոիղ և թրք.* qəjəq, qədəjlamaq *ձևերի հետ։—Պատահական նմանութիւն ունի սանս.* kautuka कौतुक «*խաղ, կատակ, երգ, զուարճութիւն*»։

ԳԻՒ.—Մշ. կաղագ։—*Զդիտեմ թէ նոյն բա՞ռն է կալամ «կատակ» (Ներսէսովիչ, Բռ. լա.-հյ. էջ 70 ա), որ հնչւում է Սչ.* գալլամ *և որից ունինք նաև Սչ.* գալամչի «*կատակող*»։

ԿԱՏԱՂ. *արմատ առանձին անգործածական, որից (ի ածականակերտ վերջաւորութեամբ)* կատաղի «*մոլեգնած*» *Ոսկ. յհ.* կատաղիլ *Սերբ.* կատաղուն «*կատաղած*» (*նորագիւտ բառ*) *Ագաթ. 185.* կատաղեցուցանել *Եղիշ. գտ. Նոնն.* կատաղեցնել *Անյ. հց. իմ.* կատաղած *Ոսկ. մրգր.* կատաղումն *Ոսկ. յհ. ա.* կատաղախօս *Բուզ.* կատաղաճիճ *Գէ. ես.* կատաղարարոյ (*նոր բառ.*). *ունինք նաև* կատաղի «*նշոշ բոյսը*» *ԱԲ.* կատաղենի «*վայրի թզենի*» *Վեցօր. 98։*

ՆՀԲ լծ. լտ. catulus «*շնիկ*», *թրգ.* quduz «*կատաղած*»։ Canini, Et. e'tym. *148 սանս.* gâtu: *Տէրվ. Նախալ. 68 հնխ.* kat *արմատից է հանում սանս.* katth «*աղմկել*», *յն.* κωτίλος «*շաղակրատ*», *լիթ.* kat-ilin-ti «*շաղփաղփել*» *և հյ. թևրևս* կատակ, կատակել, կատաղի։ Müller WZKM *8, 281 (ՀԱ 1894, 294) արամ.* קטלא qatlā, *արար.* قتل qatl, *ասոր.* ܩܛܠ qatl «*սպանել*» *արմատից փոխառեալ։ Մ. Ս. Դաւիթ-Բէկ, Յուշարձ. 397 հյ.* կատու, կատակ, *նգալլ.* cad, cadol, *արմոր.* kann< kadn, *հիւլ.* cath «*կռիւ, պատերազմ*» *և յն. լտ. սնս. այն ձևերը՝ որ յիշում է Տէրվ։*

ԳԻՒ.—Զղ. կատաղել, *երև.* կատաղել, *Շմ.* կատաղիլ, *Ագլ.* կատ՛ղիլ, *Գոր. Ղրբ.* կատ՛ղել, *Մրզ.* կաղըղել, *Սլմ. Վն.* կատղել, *Ախց.* կատղել, *Ախց. Մկ. Ոզմ. Տփ.* կատղիլ, *Ալշ Մշ.* կաղղել, *ՀՃ.* գաղղել, *Ննխ. Սեբ.* գաղղել, *Պլ. Ր. Սվեդ.* գաղղիլ, *ՋԹ.* գաղղր՛, *Տիգ.* գղդղիլ, *Ասլ.* գա՛ղիլ, *ՀմշՀ.* գաղղուշ, *Զրս.* գաղղիլ։ *Նոր բառեր են* կատղուկ, կատրղտիլ, կատղոբիլ։

ԿԱՏԱՂՈՒՆԻ *(միայն անեզաբար գործածուած) «եկեղեցու վերնատունը՝ որ կանանց է յատկացուած», այս իմաստով երկու անգամ գտնում եմ գործածուած Յայսմ. փետր. 11. (Յիշատակ վարուց Ս. Հօրն Եւագրեայ Հռնաւորին). «Ի ժամ սուրբ պատարագին նոքա զկին իշխանին ի կատաղունիսն... վասն է՞ր ակնարկեաց ի կատաղունիսն, այս է ի բարձր տեղին՝ որ կայր յեկեղեցին, ուր և կանայք իշխանաց և ազատացն աղօթէին»։ Նոյն բառը նշանակում է նաև «Կուսանաց անապատում այրերին յատկացուած տեղը». այս իմաստով էլ մէկ անգամ գտնում եմ գործածուած Աբր. կրետ. 76 «Այլ և ի կատաղունիսն ի վեր՝ յորում կանգնին այր*

մարդիկք, յորժամ հանդիպին ի յանապատն, էր քակեալ և աւերեալ»։

Այս բառը յիշում է միայն ՀՀԲ, իբրև «բառ այլազգական» և մեկնում է «ժամու վերնատուն»։ Աճառ. Հայ. նոր բառեր հին մատեն. Ա. էջ 130 մեկնում է ըստ Կրետացու, և նման է գտնում յն. καταγώγιον «իջևան, հիւրանոց, բնակարան»։ Աւելի յարմար է թերևս κατάγαιον ձևը, սակայն նշանակում է «ստորերկրեայ» և ո՛չ թէ «վերնատուն»։

***ԿԱՏԱՊԱՆ** (ի–ա հլ. ըստ ՆՀԲ, բայց առանց վկայութեան) «բաղաքապետ, կողմնապետ, կուսակալ» Վրդն. պատ. էջ 99. Շապհ. 52. Սամ. անեց. 108. Մամբ. պատ. հրատ. Շահնազ. էջ 64. Ուռհ. էջ 99. Արձ. ԺԱ դարից (Վիմ. տար. էջ 27)։ Աւելի ուշ ժամանակ ստացել է «այգեպան, այգու պահապան» իմաստը, և այս իմաստով գրւում է նաև կատեպան, կատպան. «էր նորա արջառ հազար, ոչխար երկուտասան հազար, ուղտ 700, ձի 600, էշ 400 և այգեգործս կատապանս 170» (Օրբել. 62). «Մատուռակել գինի յայգւոյն Յիսուսի, որոյ կատեպան Դաւիթ է» (Վրդն. սղ. ճԺԲ. էջ 421). «Երիտասարդն մեր հովիւ և կատպանի այլասեռից» (Յիշատ. 1248 Թ. տե՛ս ՀԱ. 1926, էջ 351). «Գտեալ զառողջութիւն և կատեպան մահալ՝ որ է այգի պահող» (Աբր. կրթատ. էջ 19)։*

=Բիւզ. յն. κατεπάνω «բաղաքապետ, զինուոր» բառից (Sophocles 651 բ). այս բառն էլ փոխառեալ է միջ. լտ. catapanus հոմանիշից, որ ծագում է լատ. capitaneus «զինուոր» բառից (արմատն է caput «գլուխ»). սրանից են նաև ֆրանս. catapan «կուսակալ Բիւզանդեան կայսերաց Իտալիա», իտալ. capitano, ֆրանս. capitaine «զնդապետ, նաւապետ, նաւահանգստի պետն», թրք. قپودان qapudan «ծովակալ, նաւապետ» (աղաւ. qapdan, ռմկ. խափտան). շրջումը ճիշտ նոյն է, ինչպէս հսլ. և սերբ. kotopani, հին ռուս. kotopanŭ (յունարէնի նման p-ի և t-ի տեղափոխութեամբ) «վարիչ, նախագահ» (Miklosich, Fremdwörter ind. slav. Spr. էջ 101 և Berneker 588):— Հիւբշ. 355։

ՆՀԲ պրս. գէդ, ֆաղ և հյ. կաթել «կողմ»։ Վարդան վարդապետի պատմութեան հրատարակիչը (Վենետիկ 1862, էջ 99, ծանօթ. 1) գնում է իբրև յն. κάθαπαξ «ամենապատ կամ համակար իշխան»։ Հիւբշ. ZDMG 35 (1881), 664 կարծում է կազմուած պան մասնիկով պրս. kada բառից? Ուղիղ մեկնութիւնը տուաւ. Mordtmann բանաւորապէս Հիւբշմանին, որ և ZDMG 38 (1884), 432 ընդունեց, մերժելով իր նախորդ մեկնութիւնը։ Թիրեաքեան, Աբրահայ բռ. 198 պհլ. kat «տուն» բառից՝ պան մասնիկով։

Գիմ.—երև. կատէպան «այգիի պահապան» (այս բառի երկրորդ ձայնաւորը ճիշտ համապատասխանն է յն. ε-ին, մինչդեռ կատապան ձևի մէջ՝ առաջին վանկի ազդեցութեամբ դարձել է ա)։

Փոխ.—Ասոր. ܩܛܦܢ qaṭāban «Մելիտինէի Հայոց կուսակալը» (Brockelmann, Lex. syr. *էջ 317). այս բառը փոխառեալ է հայերէնից՝ p>b ձայնափոխութիւնը կատարուելուց յետոյ։ Հայերէնից է նաև վրաց. კატაპანი կատարանի (տե՛ս Մառ. Физіологъ 1904, էջ XXIX), որ Ջուբինով[2] 597 սխալմամբ թարգմանում է «ստախօսութիւն»։*

ԿԱՏԱՐ (ի–ա, ո հլ?) «ծայր, մի գործի վերջը, լուան գլուխ» ՍԳր. Ագաթ. Ոսկ. (գաւառականներում և արդի գրականում նշանակում է նաև «աքլորի բրուկ»). որից կատարել «գործել, անել, վերջացնել» ՍԳր. «մկրտել, սրբազնագործել» ՍԳր. կատարումն «ամբողջացում, բովանդակութիւն» ՍԳր. «մահ, նահատակութիւն» Յհ. ե. 11. Կորիւն. «կատարելութիւն» Առակ. ժա. 3. Կող. գ. 14. «սրբազնագործութիւն» ՍԳր. կատարելիք «փակման հանդէս» Բ. մակ. բ. 9. կատարած «վերջ» ՍԳր. կատարեալ ՍԳր. կատարելապէս Ոսկ. յհ. ա. 17. Կոչ. կատարելամիտ Ագաթ. անկատար ՍԳր. լիակատար Եւագր. դժուարակատար Ոսկ. ես. երագակատար Ոսկ. ես. բերակատար իմ. գ. 16. գ. 5. Եզն. Ոսկ. հայրենակատար Կորիւն.

խորհրդակատար *Ագաթ.* կամակատար *Ագաթ. Եզն.* յանձնակատար, գործակատար *(նոր բառեր) ևն։*

Հներից Առաք. լծ. սահմ. 478 անկատար *բառը մեկնում է* անկայ, տա՞ր կամ ան-կայան, տա՛ր *ևն։ ՆՀԲ* կատար *լծ. հյ.* ծայր *և թրք.* qadar «չափ»։ *Բազրատունի, Քեր. գարգաց. 686 և 691, Տէրվ. Մասիս 1882 հոկտ. 5 և Հիզու էջ 121 արմատը համարում են* կատ, *որ ասելի լաւ է պահում նաւակատիք, իբր «նորոգ կառարումն».* Canini, Et. étym. *էջ 90* կատարել=*լտ.* cadaver «դիակ»։—*Հինդ. յն.* κατατόω «կարգադրել, ի կատար ածել»։ *Կուրտիկեան, Արեւելք 1899 յուլիս 22 պրս.* gah «տեղ» և tar «կառար» *բառերից բարդուած։ Յակոբեան, Մազիկ 1899 նոյ" 4 պրս.* Ֆիւրար «լեռան գլուխ» *(իմա՛* kūh-tār) և յն. κατάρτιζω։ Margoliuth, *Թրգմ. Բիւր. 1900, 335 եբր.* כתר ktr «շրջապատել», כתר keter «պսակ» *բառերի հետ։* Scheftelowitz BB 28, 303 *ալբան.* kodrɛ «բլուր, բարձունք» *բառի հետ։ (Այս մեկնութիւնը մերժում է* Pedersen KZ *40, 212, հաստատելով որ ալբան.* kodrɛ *փոխառեալ է ռում.* codru «անտառ» *բառից)։* Patrubány *ՀԱ 1910, 93 հնխ.* gad «նայիլ» *արմատից։ Մ. Ս. Դաւիթ-Բէկ, Յուշարձան 397 նգալլ.* cedor «արբունքի մազ», *արմոր.* kaezourek «արբունքի հասած», *նիոլ.* caith, *հբրտ.* caitoir «արբունքի հասած», *հիոլ.* catharac *նոյն նշ։* Karst, *Յուշարձ. 404 սումեր.* gatu «բարձրացնել», *428 ԹՔր.* bay, bat, bet «բարձր»։ *Պատահական նմանութիւն ունի արաբ.* قدر katr «փառք, արժանիք» *(Կամուս, Թրք. Թրգմ. Բ. 93)։*

ԳԻՒ.—երև. Մկ. Ոզմ. Ջղ. Սլմ. Վն. Տփ. կատար «աքլորի կառար», *Գոր. Ղրբ.* կա՛տար «աքլորի կառար. *փխբ. մարդու գլուխ», Ագլ.* կա՛տար «գագաթ», *Ալշ.* կադար, *Մշ.* կադարf, կադարկ, *Եւդ.* գադարf, *Ննխ.* գադոռf, *Հճ.* գադor (<*կատար) «աքլորի կառար».—*բայական ձևով՝ Ջղ. Սլմ.* կատարել, *Կր. Մրղ.* կատարէլ, *Ոզմ. Տփ.* կատարիլ, *Մշ.* կադարել, *Շմ.* կադարիլ, *Սչ.* գադարե, *Ննխ.* գադարէլ, *Զթ. Խրբ.* գադարիլ, *Տիգ.* գոդրիլ, *իսկ Պլ. մի՛միայն (կարգ)* գադարէլ, «եկեղեցական պաշտամունք կատարել»։

ՓՈԽ.—Վրաց. კატარი կատարի «ծառի կատարը՝ ծայրը», *քրդ.* katar «թռչունի բրուկ», katar-a mirižkan «հաւի կատար» *(տե՛ս* Justi, Dict. Kurde, *էջ 321)։—Կայ նաև ուտ.* կատաշ «գանկ, կատար», katar «պալի, կանացի գլխարկի մասերից մեկը» *լազ.* կոտուլա, կուտալա «գլխի գագաթ»։

ԿԱՏԱԻԱՆ «զուիրակ բոյսը, ուրց, origanum vulgare L» *(ըստ Տիրացուեան,* Contributo § 417) *Դաղիան։*

***ԿԱՏԻԳԻՍ** *(իմա՛* կատեգիս) «վերևից յանկարծակի բաղխող քամի, մրրիկ» *Արիստ. աշխ. (ՀՀԲ տալիս է* կատագիս *ձևը)։*

=*Յն.* κατατίς «փոթորիկ, ուրկան». *ծագում է* κατατίσσω «վերևից ցած խոյանալ» *բայից. հմմտ. հեղինակի տուած բացատրութիւնը. «Կատէդիս լինի ասացնալ, որ է մրրիկ, այն՝ որ ի վերուստ բախէ յանկարծակի»։—Հիւրշ. 355։*

ՀՀԲ համարում է բառ յն։ ՆՀԲ դնում κατηχέω *բառից, որ նշանակում է «հնչող». Հայ բառը մեկնում է «հնչողական, տուող արձագանգաց». բայց այս իմաստը բնաւ չի յարմարւում հեղինակի տուած բացատրութեան. անյարմար է նաև տառադարձութիւնը, որ ըստ օրինի պիտի տար* *կատեֆէս։

ԿԱՏԻԿ «մակալեզու, épiglotte», *որ և* գբիթիկ. *երկուսն էլ իբրև մհյ. բառ ունի Նորայր, Բառ.-ֆր. 481ա. կենդանի է արդի գաւառականներում նոյն ձևով. ինչ. Դվ. Երև. Կր. Ղզ. Ղրբ. (Ալշ. կադիգ ձևով)։*

ՓՈԽ.—Ուտ. կատիկ «մակալեզու»։

ԿԱՏԻՃԱԿԵԼ «կատակել». *այս բառը ունի միայն ՓՔ. չգիտէ Բառ. երեմ. սակայն վերչինս էլ՝ էջ 157 ունի* կատիճակօղ «կատառումն կամ ցիխ», *որ անտարակոյս նախորդի հետ նոյն է։—r և k տառերի տարբերութիւնը իմաստը բոլորովին փոխում է և մրնում է անստոյգ՝ թէ դրանցից ո՛րն է ուղիղ։*

***ԿԱՏԻՆԱՐ** «փականք». *նորագիւտ բառ,*

որ երկու անգամ գտնում եմ գործածուած վրք. սեղբ. 707 «Առցես կաթինար, այս է փակս... ձգեսցես առ քեզ ինքն զգրունսն և յօղամանեակսն մուծցես զշղթայս կաթինարին և փակեալ ասասցես...»։

=Յն. κατῆνα «շղթայ», որ փոխառեալ է լտ. catena «շղթայ» բառից։—Աճ.

Հրատարակիչը՝ Մեսրոպ եպս. Տ. Մովսէսեան յիշում է միայն թէ բնագիրն ունի κατιτανι բառ իս ուղղել վերի ձևով։

***ԿԱՏԻՇԻՏԻՏ** *«քրիստոնէական վարդապետութեան ուսուցիչ». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գործածուած է վրք. հց. Բ. 396 «էր ոմն քահանայ կատիշիտիտ, այսինքն մկրտութեան»։*

=Յն. κατηχητής նոյն նշ. որից փոխառեալ է նաև ֆրանս. catéchète. ծագում է յն. κατ-ηχέω «հնչեցնել» բայից։ Ըստ Նորայրի, Հայկ. բառաք. էջ 58 և Բառ. ֆր. 207 բ հայ ձևը պէտք է ուղղել **կատիշիտ**։

ԿԱՏՆԵԼ *«յոդնիլ, վաստակիլ». գիտէ միայն ՓԲ. նոյն բառն է որ Բառ. երեմ. էջ 157 դրում է* **կատճէի** *«օգնիւր»։—Անստոյգ բառ։*

***ԿԱՏՈՎՂԷՊՍ** *«աֆրիկեան մի կենդանի, որի համար ասում էին թէ իրեն տեսնողներին սպանում էր». մի անգամ ունի Պիսիդ. վեցօր. 932, որից առնում է նաև Վրդն. ծն։ Սխալ դրչութեամբ է* **կապովղնփոս** *Յայտմ. մրտ. 21. «Կապովղնփոսն՝ որ կոչի վայրահայեաց, զհուրն բերանովն յերկիր թափէ»։*

=Յն. κατῶβλεψ «մի տեսակ աֆրիկեան մեծ antilope*». բուն նշանակում է «վայրահայեաց» և ծագում է κάτω «վայր, ցածր» և βλέπω «նայիլ» բառերից։*

Գտաւ ու մեկնեց նախ Տաշեան, Մատեն. մանր ուսումն. հտ. Բ. էջ 355, որից յետոյ Հ. Ս. Երեմեան, Բազմ. 1902, էջ 344։

***ԿԱՏՈՒ**, *ո հլ. (ըստ ՆՀԲ և ՋԲ նաև ի–ա հլ. բայց առանց վկայութեան) «կատու» Փիլ. լիւս. Մխ. առակ. Վրդն. ծն. որից* **կատուապաշտութիւն** *ՅՀ. իմ. պաւլ. կատուակ խոտ,* **կատուականջ** *«բոյսի անուններ» Բժշ. (տե՛ս ՀԲուս. § 1345—6). նոր բառեր են* **կատուածուկ, կատուախոտ**։

=Աշխարհիս գրեթէ ամէն կողմը տարածուած մի բառ է. հմմտ. յն. κάττα, նյն. κάτα, γάτα, լատ. cattus, մլատ. catus, հֆրանս. cat, ֆրանս. chat, իտալ. gatto, սպան. gato, անգլ. cat, հբգ. chazzâ, գերմ. Katze, հոլլ. kat, katte, շվէդ. katt, katta. հսլ. kotŭka, բուլգ. kotka, ռուս. котъ, кошка, ուկր. kit, լիթ. katė, լեթթ. kak'e, հպրուս. catto են. այս բոլորը հնդևրոպական լեզուների մէջ։ Միւս լեզուաընտանիքներից ունինք՝ արաբ. قِطّ qiṭṭ, ասոր. ܩܛܘ qaṭṭu, ն. ասոր. katu, ֆինն. kissa, katti, էստն. kaš, kat, վօթ. katti, վեպս. kaši, լիվ. kaši, լապոն. katto, gatto, չերեմիս. koti, վոտյակ kotsis, սիրյ. kaš, վօգուլ. kadi, kiskä, օստյակ. kati, մորդվին. kata, թրք. kedi են։ Հին դասական աշխարհը ընտանի կատու չէր ճանաչում և չգիտենք թէ այս բոլորը ի՛նչ ճամբով յառաջացած ու տարածուած են (Meillet, Esq. latine 277)։ Նախապէս գիտունները կարծում էին թէ կատուի հայրենիքը եգիպտոսն է, որտեղից բերուել է Եւրոպա և այդտեղից էլ տարածուել ամէն կողմ. հմմտ. նուբիական kadis և արաբ. qiṭṭ (վերջինը ԺԴ դարից աւանդուած)։ Արդի լեզուաբաններից ոմանք այն կարծիքն ունին թէ **կատուն** *հնդևրոպական բառ է. բուն արմատն է հնխ. qat, որ նշանակում է «ցնկնել». հմմտ. ռուս. котиться «ցնկնել», գռ. котъка «գառնուկ», սերբ. kot «թուխս», kotiti «ցրնկնել», լտ. catulus «ձագուկ և յատկապէս շան լակոտ», հիսլ. hadna «ուլ», մրգ. hatele և միւլ. cadla, cadhle «այծ»։ Այս արմատից է ծագել հնխ. qatos, որ նախապէս նշանակում էր ընդհանրապէս «ընտանի կենդանիների ձագ», իսկ յետոյ զանազան լեզուների մէջ յատկացուեց մի որոշ անասունի ձագին։ Առաջին անգամ կելտական լեզուաճիւղում ստացաւ «կատու» նշանակութիւնը. հմմտ. գալլ. cattos, միւլ. catt, կիմր. cath, կորն. kat, բրբտ. kaz, մանդլ. kitte «կատու» են։ Այստեղից անցաւ նախ հարաւ. լատ. cattus աւանդուած է մեզ 3. Ք. 350 թուին, որից փոխ առնուեցաւ յն. κάττος 3. Ք. 600 թուին, այնուհետև անցաւ*

գերմաններին, Սլաւներին, մտաւ Արևելք և տարածուեցաւ ամէն կողմ: Այս կարծիքը սակայն ամէնքից ընդունուած չէ և կան տարբեր ենթադրութիւններ (Համմ Hehn, Kulturpflanzen[6] 452, 477, 589, Pictet I 381, A. Ahlquist, Die Kulturwörter der westfinn. Spr. *Տէրվ. երկրագունտ 1894, էջ 100*, Thurneysen, Keltoromanisches, էջ 62, Reallexicon 412, Walde 141, Berneker 590, Trautmann 120, Kluge *246*, Pokorny I, *էջ 338—9 ևն*): *Հայերէնի մէջ* կատու *բառը գործածուած է յետ-ոսկեդարեան շրջանին. (Ոսկեդարում ընտանի կատուն կոչւում էր* կուզ*). և յայտնի չէ թէ ո՞ր լեզուից է փոխառեալ: Մեր բառին ամենամօտիկ ձևերն են լատինը և ասորին. և հաւանական է որ հայ ձևը փոխառեալ է ասորերէնից և մեղնից էլ տարածուած է ամբողջ կովկասեան լեզուների մէջ:—Հիւբշ. էջ 307:*

Հներից Վրդն. ծն. բ. 19 մեկնում է «կատուն ի տանն կալոյն (անուանեալ է)»: Այսպէս նաև Տաթև. հրդ. 220: Klaproth, Asia pol. *էջ 102 կցում է գերմ.* Kater *և լտ.* catus *բառերին՝ նշելի իբր լծորդ է դնում իտալ. լտ. և ռուս. ձևերը:* Böttich. Arica *66, 81 սանս.* ōtu, *պրս.* gadī, qas, *օսս.* gäde, *լտ.* catus *ևն:* Lag. Urgesch. *745 լտ.* catus, *լիթ.* katas *ևն: Մ. Մսերեան, Ճռաքաղ 1861, էջ 55 ներշնչուելով Վրդն. ծն. մեկնութիւնից՝ ոտանաւորով սոսկ-պարանում է՝*

Ի կենդանիս յաւէտ կատուն
Ընտանի է, զի կայ ի տուն:—
Է կենդանի բնութեամբ կայթոտ կամ կայթու-.
Մկանց դժնեայ դահիճ, այն իսկ է կատու:

Müller SWAW *42, 250 և 48, 429 դնդ.* gaƀwa *որ «շուն» է թարգմանւում:* Lag. Gesam. Abhd. *80, 13 ասոր.* qaṭṭū *ձևի հետ: Հիւնք. լտ.* catus *և թրք.* ﻗﻄﻲ: *Հիւբշ. 307 փոխառեալ ասորերէնից, որովհետև հայերը «առհասարակ ավելի փոխառու են եղած (ասորիներից) քան թէ փոխառու»:* Patrubány *ՀԱ 1905, 253 ենթադրում է թէ հայերը գնե Եւրոպայում եղած ժամանակ փոխ առին այս բառը կելտերից և Ասիա անցնելուց յետոյ՝ նոյնը փոխ առին Ասորիները հայերից՝ Մ. Ս. Դաւիթ-Բէկի այլանդակ մեկնութիւնը (Յուշարձ. էջ 397) տե՛ս* կատաղ *բառի տակ:*

Գիր.—Ագլ. Ախց. Գոր. Երև. Կր. Ղրբ. Մկ. Մրղ. Ջղ. Սլմ. Վն. Տփ. կատու, *Ալշ. Մշ.* կադու, *Խրբ. Հճ. Համշ. Նախ. Պլ. Ռ. Սեբ.* գադու, *Աալ.* գադիւ, *Տիգ.* գոդու, *Ոզմ.* կատօ, *Սվեդ.* գ՚ադօ:—*Զարմանալի կերպով ջնջուած է Ջէյթունում. ուր գործածական է միայն փը՛սը՛գ ձևը, որ է փիսիկ (այլուր միայն փաղաքշական): Նոր բառեր են* արջակատու, կատուաչէֆ, կատուալուայ *(որ և* կատնլուայ*),* կատուախաղող, կատուակ, լատուակծկուճճ, կատուաճուռի, կատուաճուտ, կատուամորի, կատուանուաղ տալ. կատուասատակ տալ, կատուատէր, կատուափուճ, կատուբեճի, կատուկախ, կատուաբուր *ևն:—Միջին հյ. ունինք* կատու *«ԲՁ ձայնին պատկանող մի եղանակի անուն» Մանրուս. (տե՛ս Ամատ. Հայ. բառ ու բան, էջ 333ա):*

Փոխ.—Թուշ. մինգր. կատու, *լազ.* կատու, ղատու, *վրաց.* կատա, կատուճի, *ինգիլ.* կատայ, *ակուշ.* կատու, *աւար.* կետու, կետա, *անդի* gedu, *դիդ.* ketu, *կայ. խիւր.* gata, *կաբ.* gedu, *արագ.* կետուխ, կետուճճ, *շոտր, արչ.* gadu, *տաբաս.* gadu, khatu, *չերքէզ.* կիտատու, *չատու, բոլորն էլ նշանակում են «կատու» և վրացերէնի կամ մինգրելէնի միջոցով տարածուած են ամբողջ Կովկասեան սահմաններում:—*

ԿԱՏԱՃ *տե՛ս* Կաճառ:

***ԿԱՏՐԱՂԱՆ** «մի տեսակ նաւ կամ նաւակ»: Բառս ունի միայն ԱՔ. աղբիւրը անծանօթ է:* =*Թրք.* قادرغا qadərγa «ցոկանաւ, galère» *բառից, որ փոխառեալ է յն.* κάτεργον *բառից: Այս բառը հին յն. նշանակում է «գործ, աշխատանք» և ծագում է* κατά *մասնիկով* ἔργον «գործ» *բառից. բիւզանդական յունարէնում ստացաւ նաև «նաւի տարք» նշանակութիւնը (*Sophocles 652*), իսկ նոր յունարէնում ունի միայն «ցոկանաւ» նշանակութիւնը* (Legrand, Dict. gr. mod. fr. Paris, *էջ 432*): *Երևի նոր յն. յոգ-*

նակի *хáтерга* ձևից է փոխառեալ *թուրքերէնը, ինչպէս նաև վրաց.* კატარღა *կատարղա, բուլգար.* katrŭga, *սերբ.* katrīga, *հռուս.* катарга, катерга, *ուկրայն.* katórha «*ցռկանաւ*»։ *Այնուհետև բառը ստացաւ «պատիժ» նշանակութիւնը, քանի որում ի պատիժ ուղարկում էին նաւերի վրայ աշխատելու. Համմտ. Ֆրանս.* condamner aux galères; c'est une vraie galère! *գերմ.* auf die Galeeren schicken. *այստեղից էլ յառաջացած է ռուս.* кáторга, *ուկր.* katórha «*բռնի աշխատանք*» *նոր իմաստը* (Berneker 494)։—*Ա՛ճ.*

ԿԱՐ, ո, ի *հլ.* «*չուան, լար*» *ՍԳր. Ագաթ. § 218. Ոսկ. մ. բ. 27. Սոկր. 669 (սեռ.* կառուց*).* «*անդամների յօդը*» *Ոսկ. Ճառք 800.* «*կարելու գործողութիւնը կամ կարած բանը*» (*արդի լեզուի մէջ*). *որից կարել ՍԳր. Վեցօր.* կարաճ «*կարուածք, կար, մարմնի յօդ*» *ՅԿ. ժԲ. 23. Բուզ. ե. 43 (*«*կարանէ ի կարան Քաւիւ հանեալ զնեաւն ցամաք բնակենոյր զնա*»*) հասկացուած է իբր «մարմնի յօդ» (կար բառից)։ Մարքվարթ (նամակ 1926 յունվ.) հասկանում է իբր գնդ.* karana, *պհլ.* kanār, *պրս.* karān, kanār, *օսս.* käron, *սոգդ.* qārān, *բրդ. աֆղ.* kinār «*ծայր, վերջ*». (Horn § 846): «*Կապ*» *եղիշ. Դատ. էջ 192. Վրք. հց. Ա. 508.* կարկատել *ՍԳր. Եփր. մն. Նմանութեամբ «մի պատճառ կամ խօսք կցկցել՝ յերիւրել» Սեբեր. Եզն.* կարկատուն *Եզեկ. ժղ. 16. Ոսկ. մ. գ. 16. Կոչ. Վեցօր. Եզն.* կարուակ *կամ* կարուակ «*կօշկակար*» *Վեցօր. 197.* կարամուրճ «*անդամների կպած՝ կցած տեղերը*» *ԱԲ (գտնում եմ գործածուած Ոսկ. Ճառք. 800* կարամուտ *ձևով՝ որ աւելի ստոյգ է երևում. Համմտ. (Գլուխն)* կարս *բազումս ունի... իսկ ծխոյ արտաքուստ ստէպ մտելոյ դիւրաւ արտաքս քաղի). խոռանակար Գծ. ժբ. 3. Ոսկ. մ. ա. 1, յհ. ա. 30.* կօշկակար *Ոսկ. մ. բ. 24. յհ. ա. 16.* մաճառակարկատ *Ոսկ. յհ. ա. 4.* խրամակարկատ *Ես. ժբ. 12. Ա. մակ. Բ. 62. Մծբ.* էշակարկատ *Եզն.* հատակարկատ *Ոսկ. յհ. ա. 4.* կարոտել «*կարկտել*» *Սիւն. քեր. 213 (նորագիւտ բառ).* նճակարկատ *(նոր բառ) ևն։*

ՆՀԲ լծ. Քրք. ƒիրիշ «*լար*»*, նոյն ընդ* կառան*, խառան, այսինքն պարան։ Տէրվ. տե՛ս* կարկել *բառի տակ։ Հիւնք. պրս.* xar «*էշ*» *բառից։—Հիւբշ. 166 առում է թէ կապ չունի հյ.* կար «*ոյժ*» *և իրան.* kar «*գործել*» *արմատների հետ։* Scheftelowitz BB *28, 308 առնս.* gala «*չուան*»*,* guṇa «*լար*»*։* Karst, *Յուշարձան 404 առմամբ.* g'ar «*կապել, շղթայ, գօտի*»*, հյ. գերի, խառան։ Թիրեաքեան, Արիահայ բռ. 201 պրս.* کار kār «*գործ*» *բառից, իբր «գործել, բանիլ»։*

ԳԻՒ.—Ալշ. Ախց. Դոր. Երև. Կր. Ղրբ. Մկ. Մշ. Շմ. Ոզմ. Ջղ. Սլմ. Վն. Տփ. կար*, Ասլ. Խրբ. Հմշ. Ննխ. Պլ. Ռ. Սեբ. Սչ.* գար*, Տիգ.* գmր*, Մրղ.* կառ*, Ագլ.* կօր*, Զթ.* գօյ*,* գոր*, Հճ.* գոյ*, Սվեդ.* գուր*. այս բոլորը նշանակում են «կար». առանձնապէս կարևոր է* կար *Սեբ. «սայլի վրայի չուանը» (Դարձ 1917, № 4, էջ 84)։—Բայական ձևով ունինք Ջղ. Սլմ. Վն.* կարել*, Ախց. Դոր. Կր. Ղրբ.* կարէլ*, Ագլ. Շմ. Տփ.* կարիլ*, Սչ.* գարել*, Ռ. Ննխ. Պլ.* գարէլ*, Ասլ.* գարէ՛լ*, Խրբ.* գարիլ*, Հմշ.* գարուշ*, Մրղ.* կառէլ*, Տիգ.* գmրէլ*, Զթ.* գայիլ*,* գարիլ*, Հճ.* գայէլ*,—կրկնականն է՝ Ջղ.* կարկատել*, Դոր. Ղրբ.* կրկա՛տէլ*, Ագլ.* կրկա՛տիլ*, Ախց. Կր.* կարկատլ*, Սչ.* գարգըդել*, Ննխ. Պլ. Ռ.* գարգըդել*, Ասլ.* գարգըդէ՛լ*, Հմշ.* գարգըդուշ*, Զթ.* գայգըդիլ*,* գարգդիլ*, Վն.* կարկտնել*, Տփ.* կարկտնիլ*, Մշ.* կարգդնէլ*, Խրբ.* գարգըդնիլ*, Մրղ.* կառկըբնէլ*, Տիգ.* գmրգըբնէլ*, Հճ.* գայգը՛նել*, Սլմ.* կարկըբնել*։—Նոր բառեր են* կարկտաճ*,* կարամաճ*,* կարելչէֆ*,* կարողչէֆ*,* կարկատովի*,* կարկատորել*,* կարկատոտել*,* կարկտնուկ*,* կարկըտուճ*,* կարկրել*,* կարովի*,* կարուկ*,* կարուձև*,* ձևկար*,* կարփակ*,* դարձկար *ևն։*

ՓՈԽ.—Հաստատապէս հայերէնից են փոխառեալ բոշայերէն կարխր «*կար, կարկատան*»*,* կարխրկարիչ «*թել, մանած*» (*այս խր և իչ մասնիկների մասին տե՛ս նաև* ծածկել*,* ծամել*,* քարշել *և* ƒսել *բառերը*)։—*Հյ. գւռ.* կարափէտ *ձևից է գւռ. վրաց.* კარაბეტი *կարապետի «եռանկիւնի փայտէ պրիզմա, որի վրայ կօշկակարը կարելիք կօշիկն է ամրացնում» (տե՛ս* Ցերաւժէ*,* Նօ֊ծՅ-

ჯობ-კონა, Беридзе, Груз. глоссарій по имерскому и рач'инскому говорамъ. СП. 1912, *էջ 20*)։—*Հայերէնի հետ շատ նման են, բայց չենք կարող փոխառեալ համարել վրաց.* ჟერვა կերվա «*կարել, եզերքը երիզել, կարկըտել, միասին կարել, նորոգել*», ვაკერვა գակերվա «*կարել, նորոգել*», გადაკერება գադակերեբա «*միասին կարել*», ինգիլ. შეკერვაჲ շեկերվայ «*կար կարել*»։ *Բոլորի պարզ արմատն է կեր։ Արդեօք այս երկուսի մէջ նախնական կապակցութիւն կա՞յ։*

ԿԱՐ. այս արմատի առաջին իմաստն է «ուժ, կարողութիւն», որից յառաջանում են յետոյ «2. սաստկութիւն, շատութիւն» և «3. հնարաւորութիւն»։ Առաջին իմաստից են—* **կար «*ոյժ, զօրութիւն*» *ՍԳր. Ոսկ. մաթ. և յհ. Կոչ. (Ներպ. ի կարու Անկ. վիրք առաք. 52).* կարել «*կարողանալ*» *ՍԳր.* կարող *ՍԳր.* կարողութիւն *ՍԳր. Ագաթ. Ոսկ.* կարողագոյն *Ոսկ. յհ. բ. 46.* տկար *ՍԳր. Եղն.* տկարանալ *ՍԳր.* անկար «*տկար*» *Եփր. պհ. Պիտ. Փիլ.* ապիկար *Իմ. ժգ. 18. Բ. մակ. ժա. 12.* ապիկարել «*արհամարհել, կարևորութիւն չտալ, բանի տեղ չդնել*» *Շապհ. 27.* կարաւոր «*ուժեղ, զօրաւոր*» *Տիմոթ. կուզ, էջ 234.* կարաւորագոյն «*հզօրագոյն*» *Տիմոթ. կուզ, էջ 250.* կարաւորիլ «*ուժ առնել*» *Տիմոթ. կուզ, էջ 250.* կարութիւն «*զօրութիւն*» *Տիմոթ. կուզ, էջ 235, 236—7, 250, 258, 268—9, 292, 324,* տկարակազմ (*նոր բառ*)։ *երկրորդ իմաստից են՝* կարի «*շատ, սաստիկ, յոյժ*» *ՍԳր. Եղն. Ագաթ.* կարեպէտ «*շատ պիտանի*» *Եւագր.* կարեվէր «*ծանրավէր*» *Ագաթ. Փարպ.* կարեձմեռն, կարաձմեռն «*սաստիկ ցուրտ ձմեռ*» *Կոչ. 309, Ոսկ. մ. ա. 12. Վեցօր. 186։ երրորդ իմաստից են՝* անկար «*անհնարին*» *Մաթ. ժթ. 26. Ոսկ. յհ. բ. 27.* կարելի «*հնարաւոր*» *Պիտ.* անկարելի *Սահմ. Պիտ.* անկարելագոյն *Առ որս.* անկարելիութիւն (*նոր բառ*) *են։ Առաջին երկու իմաստները իրար է միացնում* կարևոր «*ուժեղ, զօրաւոր*» (*Կարևոր աղօթից պէտք են և բաղում արտասուաց. Ոսկ. եբր. թ.*) «*սաստիկ, շատ*» (*Կարևոր սիրէր զմանուկն. Ոսկ. կողոս. Ձձմերունս կարևորս. Եղն.*)։ *Իմաստի ոյսպիսի զարգացման համար համմտ. հյ.* ոյժ *և* յոյժ, *ֆրանս.* pouvoir «*կարենալ, զօրութիւն*», je peux «*կարող եմ*», puissant «*ուժեղ, զօրեղ, կարող*», puissamment «*յոյժ, կարի, չափազանց*» *են։*

=*Իրանեան փոխառութիւն է, որի մայր ձևը՝ իր ածանցներով միասին կորած է. մի՛միայն պահուած գտնուեցաւ նորագիւտ սոգդ.* kāδe, kāδī «*կարի, յոյժ,* très, sehr» *ձևի տակ։ Այս արմատից տարբեր են* կարիճ «*հարկ, պէտք*» *և* կարիճ «*ցաւ, վիշտ*»։

ՆՀՔ կար՝ *լծ.* ճար, *Քրք.* ջարկ (*իմաստը.* čāra), *յն.* κράτος «*ոյժ*» Peterm. 25, Justi, Zendsp. 79, Lag. Gesam. Abhd. 297, Beitr. baktr. Lex. *41 կըցում են սանս.* kr, kāra, *պրս.* kār «*գործել*» *արմատներին։* Justi, Kurd. Gram. *209 քրդ.* kārim «*կարող եմ. կրնամ*»։ *Տէրվ. Նախալ. 78 սանս.* garu, guru, *յն.* βαρύς, *լտ.* gravis, *գոթ.* kaurus «*ծանր*» *և թերևս հյ.* ծանր *բառերի հետ հանում է հնխ.* gar «*կարող լինել*» *արմատից։* Meillet MSL *8, 288 հայ.* կարի *համեմատում է յն.* βαρύς «*ծանր*» *բառի հետ։ Հիւնք.* կար «*կարկատան*» *բառի հետ հանում է պրս.* xar «*էշ*» *բառից, իսկ* կարաձմեռն=*Քրք.* qara qəš «*սև ձմեռ*» (*այն է «դաժան ձմեռ»*)։ *Հիւրշ. 166 ասում է թէ բնաւ կապ չունի հպրս.* kāra «*ժողովուրդ, խումբ, բանակ*», *սանս.* kara «*ձեռք, գործողութիւն, գործք*» *պրս.* kār «*գործ*» *են բառերի հետ։* Patrubány SA 1, 196 *լիթ.* giriù, girti «*հռչակել*», *սանս.* gūrti «*գովասանք*» *բառերին ցեղակից։ Ենսէն ՀՄ. 1904, 271 հաթ.* ka... *և* ūrl *արքայանունի հետ է համեմատում։* Scheftelowitz BB 29, *14 կցում է լտ.* gravis, *յն.* βαρύς *սանս.* gurú- «*ծանր*» *ընտանիքի հետ (նոյնից առնելով յիշում են* Walde 353 *և* Boisacq 115), *որ մերժում է* H. Petersson, Balt. u. Slav. *էջ 56 և* Ar. u. Arm. Stud. *էջ 120։ Մառ,* ЗВО *22, 77,* ИАН *1911, 470 և* ЗВО *1925, 810 նախնական նշանակութիւնը համարում է «ձեռք» և կցում է վրաց.* ხელი, *լազ.* ხე, *երկրորդ սիւ-*

նակի լեզուվ karpi «ձեռք», և հյ. կուռն, կալայ բառերին. համմտ. նաև ռուս կрат «անդամ»։ Պատահական նմանութիւն ունին կաբարդին karū «ուժ» և արաբ. كرى karī «շատ» (Կամուս, Թրք. Թրգմ. Գ. 913)։—Ուղիղ մեկնութիւնը տուաւ Meillet MSL 19 (1916), էջ 128։

ԳԻՒՒ.—Ղրբ. կա՛րէլ, Դոր. Շմ. կարիլ, Ագլ. գ'ա՛րիլ, Աժգ. կարաճալ, Երև. կարէճալ, Սչ. գարճալ, Ննխ. գարճալ, գրճալ, Տփ. կարամ, չիմ կաճա, կարէճալ, թէ կաճէճամ, Ակն. գըրամ, գրճամ, Սվեդ. գ'արճիլ, Ասլ. Պլ. Ռ. Սեբ. գրճալ, Տիգ. գրճալ, Ախց. կրճըլ, Ալշ. Մշ. կոճալ, Խրբ. գոճալ, Համշ. գայճամ, գայցի, Մկ. կոճալ, Վն. կաճամ (կոր. կացա, կարցա), Հճ. գաճօլ, Զթ. գաճըլ (կոր. գաճցի)։—Նոր բառեր են անկարաճալ, գկար «տկար». հետաքրքրական է Զգ. կարեվոր «կարելի», անկարեվոր «անհնար»։

ԿԱՐ «պէտք, հարկաւորութիւն». արմատ առանձին անգործածական, որից ունինք կարիք «պէտք, պիտոյք» Եսթ. ժդ. 16. Ոսկ. կարևոր «հարկաւոր, պէտքի, անհրաժեշտ» ՍԳր. (ի պէտս կարևորս. կարևոր համարել. կարևոր անդամք), որ և «սիրելի, մերձաւոր» Գծ. ժ. 24 (Զազգաւոհմն իւր և զկարևոր (բարեկամն). Եւս. քր. ա. (Ազգակաւօք և կարևոր բարեկամօք). նոյնը դարձեալ նշանակում է «ամորձիք» Բար. 150, 151 (այլ խմբ. երկուորի), 161 (ձ. լս. կօկլվին)։ Արմատական ձևը պահում է անկար «անկարօտ» Կիր. 172։ Կարծում ենք որ նոյն արմատից է նաև կարօտ «պետք ունեցող, չբաւոր» ՍԳր. Ոսկ. Եգն. կարօտիլ ՍԳր. կարօտաճալ ՍԳր. Եփր. նոր գրականում կարօտագին, կարօտակէզ, կարօտաւոր։

ՆՀԲ լծ. Թրք. gerek «պէտքի, պիտոյ, պէտք է»։ Հինք. լտ. careo «կարիք ունենալ, կարօտ լինել»։ Karst, Յուշարձան 420 ալթայ. ker, ger, հաքաս. kärin, ույղուր. kerek, չաղաթ. kirek, օսմ. gerek «հարկաւոր»։ Սովորաբար անբաժան է համարւում նախորդ և յաջորդ արմատներից։

ԳԻՒՒ.—Պահուած է միայն կարիք «պէտք» ձևով և միայն կովկասեան բարբառներում, որոնցից էլ անցել է արևելեան գրականին։ (Արևմտեանը չունի)։ Նոր բառեր են կարիաւոր «աղքատ, թշուառ», անկարիք «անկարօտ»։

ԿԱՐ «ցաւ, վիշտ». արմատ առանձին անգործածական, որից ունինք կարիք «ցաւ, վիշտ» ՍԳր. Եգն. կարեկից «ցաւակից, մխիթարիչ» Պիտ. Մանդ. կարեկցութիւն Պիտ. Խոր. անկարեկան Սեբեր. անկարեկից Պիտ. անկարեկիր 3Հ. կթ. ևն։ Ոճով ասում է կարի առնել «ցաւիլ, տրտմիլ» Բուզ. և խդ. Բ մկ. դ. 35. Ոսկ. երր. 479. Պատ. հր. եպիսկ. 252—3 (տե՛ս Նորայր, Կոր. վրդ. 374)։

Canini, Et. étym. էջ 12 արաբ. gâra «վէրք» բառի հետ։ Karst, Յուշարձ. 400 ասուր. kar-tu, kūru «տառապանք, ցաւ»։ Բառիս հետ շատ համապատասխան են գալիս հյ. gore, ռուս. rope, ուկր. hore «ցաւ, վիշտ», բայց այս բոլորը պատահական են, քանի որում ծագում են հյ. goréti, ռուս. гореть «վառուիլ» բայից. հնխ. արմատն է g^{w}herē, որ տալիս է հյ. ջեր, ջեր-մն են (Berneker 333)։ Պատահական նմանութիւն ունին նոյնպէս ասուր. kûru, ասոր. כריותא karyūta, արամ. כריותא kərīūtā «ցաւ, վիշտ»։

*ԿԱՐԱԳ «կոգի». իբր ոամիկ բառ՝ ունի միայն ԱԲ. հին մատենագրութեան մէջ չէ գործածուած և կայ միայն յետին հայերէնում. համմտ. Թլկր. 34 («է՞ մեղր ու կարագ և կեղևած նուշ»), Քուչ. 52 (ճերմակ է զէտ կարագ եղ)։

=ՆՆթագրում է պհլ. *karak հոմանիշը, որի ներկայացուցիչն է պրս. كرک kara «կարագ». սրանից են փոխառեալ նաև Թրք. tere yaγə (փխ. *kere yaγə) և քրդ. kereyaγi «կարագ»։ Մեր բառը ծագում է հին *կարակ ձևից։

Այտնեան, Քնն. քեր. էջ 72 տուգաբանում է հպրս. «կովու իւղ», որով հասկանում է հպրս. gau «կով»+զնդ. raoγna, պհլ. rokan, պրս. rūγan «իւղ»։ Եազըճեան, Արևելք 1884 նոյ" 16 տանս. varājya «կարագ» ձևից։ Հինք. կարագ բառից։ Թիրեաքեան, Պատկեր

աշխ. գրակ. էջ 195 պրս. fէրէ ձևի հետ։ Bittner WZKM 15, 410 պրս. kara բառից փոխառեալ։

Գիմ.—Հնագոյն *կարակ ձևը պահում է միայն Ագթ. կարա՛կէղ (իմա՛ կարագ+եղ). միւսները վերջաձայնի փոփոխութեամբ ունին կարաւ ձևը. այսպէս՝ Ալշ. Ախց. Գոր. Երև. Կր. Մշ. Մրղ. Շմ. Ջղ. Սլմ. Տփ. կարաւ. Խրբ. Համշ. Ննխ. Ռ. Սեբ. զարաւ, Մկ. Ոզմ. Վն. կարաւ՝, Զբր. կա՛rmւ՝, Տիգ. գmrmւ, Ավեդ. fmrիղ (իբր. կարագ-եղ)։

ՓՈՒ.—Կապադովկ. յն. karáki, karáɣi, որ Karolides, Γλ. σγκρ. 41, 167 այսպէս է բացատրում. «ὁ ἐν Καππαδοκίᾳ ἐξ ὀξυγάλακτος διακρινόμενος καθαρώτατος καὶ ἀρίστης ποιότητος βούτυρος». արեմն պատրաստութեամբ հիշնդերձ ճիշտ մեր կարագն է. ուստի ի դուր Karolides հանում է բառս առնս. ghr «մաքրել, āghara «կարագ», բրդ. ghert, իռլ. gert «կաթ» են բառերից, փոխանակ դնելու ուղղակի հայերէնից, ինչպէս են նաև վրաց. ჯარაჭი կարաճի «հացի վրայ քսելով ուտելու կարագ», սվան. կարաւ, ինգիլ. կարաղ, կայ. կարագսակ, բրդ. fune k'yärak «կարագեղ» (Աճառ. MSL 16, 365), ուս. karak «կարագ»։

ԿԱՐԱՃ «բաջ, նահատակ, բնաիր, կորովի». ունին միայն Բառ. երեմ. էջ 157 և ՓԲ. որից **կարաճել** «բաջանալ, զօրանալ», որ չգիտէ Բառ. երեմ., բայց ունի ՓԲ։

ԿԱՐԱԿԱՐԵԳԻԱՆ կամ **ԿՈՐԱՀԱՋԻԲԵԿԱՆ** «ինչք». ունի միայն Բառ. երեմ. էջ 158։

ԿԱՐԱԿԻ «յոյժ». ունի միայն Բառ. երեմ. էջ 158։ Գուցէ կազմուած կարի «յոյժ» բառից՝ -ակի մասնիկով. ինչ. կրկնակի ևն։

ԿԱՐԱԿԻՄ «փոսաւ». անսովոր բառ, որ մի քանի անգամ յիշուած է Բառ. երեմ. էջ 158, 161 (երկիցս) և 169՝ ամէն անգամ տարբեր ձևով. այսպէս՝ կարակիմ «փոսաւ», կերակրիմ «փոսաւմ», կերակրիմ «փոսմաւ», կրակիմ «փոսաւ»։ Ի՛նչ լինելը յայտնի չէ։

*ԿԱՐԱԿԻՆ, ի–ա հլ. «հիւանի մի գործիք է. մկրատ կամ աքցան և կամ եռանկիւնի քանոն» Փիլ. ժ. բան. «շրջանակ գծելու գործիք. տճկ. փէրկէլ» Եփր. ծն. էջ 4. «շէնքի համար» Արիստ. աշխ. Գէ. ես. որից կարակենալ «համարաձև պարզած» (սերմարգի տուռնի համար ասուած) Ոսկ. փիլիպ. է. կարակնաձաւ «կարծես կարկինով գծուած ձևուած, իբր կլոր» Շիր. էջ 52. Կնիք հաւ. էջ 17. կարակնաձև Խոր. Զքր. կթ. Գնձ. կարակնաձևնձակ «կորաքամակ» Շիր. կարակնապէս «կլոս-կլոր» ԱԲ. կարակնակերտ Մագ. Օրբել. կարակնակերտութիւն Մագ. որովհետև բառիս ուղ.-հյց. ձևը գործածուած չէ, ուստի յայտնի չէ թէ արմատը կարա՞կն ձևն ունէր, թէ՞ կարակին։ ՆՀԲ և ՋԲ դրած են կարակն. ԱԲ դրած է կարակին, ինչպէս ընդունում է նաև Բագր. Քեր. զրգ. էջ 60։ Ուղիղ է միայն վերջինը, ինչպէս ցոյց են տալիս վրացին, յունարէնը, ինչպէս նաև հայ բառի երկրորդ ձևը՝ կարկին, ի–ա հլ. Ոսկ. ես. 264. Գէ. ես. Տոմար. որից էլ կազմուած են կարկնաբոյոր Եղիշ. ծն. կարկնաձև Զքր. կթ.։

=ՅՆ. χαρκίνος «ունելի, դարբինի արցան. 2. շրջանակ քաշելու կարկին» (որ և κίρκινος «կարկին», լտ. circinus). որից χαρκινόω «ծռիլ, կորանալ»։—Բառի առաջին իմաստն է «խեցգետին» և այս իմաստով ունինք կարկինոս. միւս նշանակութիւնները («ունելի» են) բխում են առաջինից՝ խեցգետնի ճանկերի փոխաբերութեամբ։—Հիւբշ. 355։

Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ։ Պասմաճեան, Մասիս, 1893, 251 ակկադ. զարգինա «կարկին» բառի հետ՝ իբր Բուրանեան։ Հիւբշ. 355 թէև ընդունում է վերի մեկնութիւնը, բայց կասկածով, որովհետև՝ հետևելով բառարաններին, արմատը գնում է կարակն, որ ձևով չի յարմարում յունականին։ Karst, Յուշարձան 404 սումեր. gargina «քանոն»։ Բառիս ձևի մասին խօսում են Վարդանեան ՀԱ 1922, 585 և Տաշեան ՀԱ 1925, 62։

Գիմ.—Բլ. Վն. կարկին, Մշ. կարգին «ջաղացքի քարերի հատասարութիւնը որոշող միայրը» (տե՛ս իմ Գր. բառ. էջ 557 բ). որից կարկինը գտնել Տ. «կործանիլ, քայքայուիլ»։

Փոխ.—Վրաց. კარაკინი «կարակին» փոխառեալ է հայերէնից՝ ըստ Ղ. Ալդայեան, Աղբիւր 1889, էջ 6, յունարէնից՝ ըստ Ջուբինով[2] 594։ Ձևի նմանութիւնը միայն առաջինի կողմն է։

ԿԱՐԱԿՈՒՄ «տղմուտ» Ագաթ. «տիղմ, ցեխ» Նար. էջ 222. ուրիշ վկայութիւն չունինք։

Նշխ «լծ. հյ. գայո, գեռ, *Թրք.* չօրագ, *որպէս թէ «կարակուտ, տղմուտ» Թիրեաքեան, Բազմ. 1913, էջ 341 Թրք.* قره قوم qara qum «սև աւազ» ձևից։

ԿԱՐԱՄՈՒՏ *կամ* **ԿԱՐԱՄՈՒՐՔ** *տե՛ս* Կար։ *Մանրամասն բառիս քննութեան վրայ տե՛ս իմ Հայ. նոր բառեր հին մատ. Բ, էջ 214։*

ԿԱՐԱՆՈՆ «մակեդոնական կանացի մի զգեստ». *Նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Կալիսթ. 122 «Առաքեցի բերել ձեզ զկարանոն մակեդոնական»։*

ԿԱՐԱՊ *(ՆՀՌ և ՋՌ դրած են ո հլ. բայց հայ միայն սեռ.-ի) «պորթ թռչունը» Ղևտ. ժա. 17, Կոչ. 98. Նոնն. Ճառընտ. գրուած է նաև* կարափ *Մեկն. ղևտ. էլ. արիստ. 86, 138, 95. Առաք. լծ. սահմ. 468 (ըստ վերջինիս՝ ոչխարի մեծութեամբ ձիւնասպիտակ թռչուն է Սևանայ լճում)։*

Pott BVS 4, 90 *համեմատում է լիթ.* gulbẽ «կարապ» *բառի հետ։ Նոյնը նաև* Müller BB I, 163:—Tomaschek, Deutsche Liter. 1883, 1254 *համարում է կովկասեան բառ՝ կցելով վրաց.* ქარქაფი «կարապ» *բառին։ Հիւրշ. 458 իբր բնիկ հայ՝ կցում է լիթ.* gulbẽ *բառին կասկածով։ (Այս բառի հետ նոյն են լեթթ.* gùlbis, *հպրուս.* gulbis «կարապ». *բայց թէ ամբողջը ի՛նչ խմբի է պատկանում՝ յայտնի չէ։* Trautmann *101 կցում է կաշուբ.* kêlp, *ռուս.* kólpik, *սլովենց.* kẽ.ǫp *բառերի հետ՝ ընդհանուր սլաւական* *kŭlpĭ *նախաձևին։* Berneker *322 միացնում է հսլ.* golǫbĭ, *ռուս.* гóлубь «աղաւնի» *բառերին և ռուս.* голубой «կապոյտ» *բառի միջոցով կցում է հպրուս.* golimban «կապոյտ», *լատ.* fel, fellis «մաղձ», *լիթ.* geltas «դեղին» *են ընտանիքին։ Առաջարկուած են նաև այլ համեմատութիւններ (տե՛ս անդ), այնպէս որ բառի ծագումը դեռ որոշուած չէ)։ Հիւնք. յն.* χάραβος «նաւ» *բառից է համում։* M. Riabinin, MSL *10, 13 իրար է կցում ռուս.* корабль «նաւ», *յն.* χάραβος, *լտ.* carabus «խեցգետին» *և հյ.* կարապ *ձևերը։*

Փոխ.—Վրաց. კარაბი **կարապի** «կարապ» *(Ջուբինով[2] 594)։*

ԿԱՐԱՊԵՏ, ի–ա *հլ? «ռահվիրդ, առաջնորդ, առաջից գնալով ճանապարհ բաց անող» ՍԳր. Մծբ. Ոսկ. մ. բ. 9 (յատկապէս թագաւորների և կամ թագաւորական շքախմբի առաջնորդի համար ասուած). որից* **կարապետել** *Ոսկ. մ. ա. 10. Սերբր. Նա. քր.* **կարապետութիւն** *3Հ. կթ. Կանոն.* **կարապետական** *Մամբր. Գնձ.* **կարապետային** *Նար. նախակարապետ (նոր բառ)։*

Նշխ լծ. կառապետ *կամ* կարաւանապետ: Lag. Beitr. baktr. Lex. *41, 26 դնում է իբր հպրս. *kārapati- «գործապետ» (*kar *«գործել» և* pati *«պետ» բառերից բարդուած)։ Տէրվ.* Altarm. 14 *և Նախալ. 69 իբր* կառապետ՝ *համում է* կառ *բառից։ Հիւնքն. յն.* χαρυβδίζω. «մխել ի ջուր, մխրճել», *բային է կցում, իբր թէ* կարապետ *բառի բուն նշանակութիւնը լինէր «մկրտիչ»։ Մէնէվիշեան ՀԱ 1896 ապրիլ (կողի վրայ) պհլ.* karapati: *Հիւրշ. 166 մերժում է համեմատել վերջինիս հետ, որ* Lagarde-*ի հնթադրութիւնն է։* Jensen, Hitt. u. Armen. *էջ 122 դնում է հաթեան ինչ-որ* grəbətwsə *ձևի դէմ։ Մառ* ЗВО *1924, 192 վրաց.* tar-maθ, *սվան.* ğer-beθ «Աստուած» *բառերի հետ։*

Գիտ.—Պահուած է միայն իբր յատուկ անուն՝ **կարապետ, կարօ, կարապիս, կրպէ, կրպօ** *ձևերով. որից* **կարապետիկ** *Մշ. «ետրատից դուրս եկող մի ձուկ, որ և տաշեղ է կոչւում»։*

ԿԱՐԱՍ, ո հլ. (կայ նաև սեռ.-ի. երկուան էլ յետին) «գինու կամ ջրի մեծ աման» Առակ. իգ. 27. Նղիշ. հրց. 54, Նոնն. 36, Սարգ. յկ. է. (էջ 104), Բրս. մրկ. որից **կարասնագ** «փոքր կարաս» Վստկ. 114. **գինեկարաս** Վստկ. (տե՛ս նաև **կարասի**, որ այս արմատին է պատկանում)։

=Թերևս խալդեան կամ կովկասեան փոխառութիւն է, իբրև մնացորդ՝ Հայաստանի նախահայ քաղաքակրթութեան. համմտ. հիւս. Կովկասեան լեզուներից՝ ագ. խարացի, կուբ. խարացէ, լակ. խարազի «կարաս»։ —Աճ.

Աւգերեան, Բցտր. չփ. և կշռ. էջ 110 յն. κέραμος «բրուտի կաւ, պտուկ» բառի հետ։ Հիմնք. դնում է պրս. **ﻛﺮﺍﺯ** kurāz «նեղաբերան կուժ», որ Հիմնք. հայերէնին աւելի մօտեցնելու համար, ըստ իր սովորութեան, ուզած ձևին է վերածել։ Բայց այս բառը զուտ իրանե՞ն է արդեօք։ Սրա դէմ ունինք արաբ. **ﻛﺮﺍﺯ** kurāz կամ **ﻛﺮّﺍﺯ** kurrāz (յոգ. kirzān) «նեղաբերան կուժ», որ նոյն է պրս. բառիս հետ։ Թւում է թէ պրս. բառը փոխառեալ է արաբերէնից մանաւանդ եթէ սրա արմատը համարենք krz, որից արաբ. **ﻛﺮﻭﺯ** kirūz «պահվտիլ», **ﻣﻜﺮﺍﺯﺓ** mukāraza «վազելով մի տեղ երթալ պահվտիլ». Թերևս նաև **ﻛﺮﺯ** kurz «քուրձ» (տե՛ս Կամուս, Թրք. Բրգմ. Բ. էջ 197)։ Ըստ այսմ արաբ. և պրս. բառերը պատահական նմանութիւն ունին, ինչպէս նաև արաբերէնից փոխառեալ սպան. alcarraza, որից էլ ֆրանս. alcarraza «մի տեսակ արևելեան հողէ աման՝ ջուրը հով պահելու համար»։ Արաբերէնից ուշ ժամանակի փոխառութիւն է հյ. **ռազ** «գինու թակոյկ», որ իբրև գաւառական բառ յիշում է Նուպարեան, Բառ. ֆրանս. էջ 119 ա ֆր. broc բառի տակ։ Պատահական նմանութիւն ունին նոյնպէս արաբ. **ﻗﺮﺙ** qarθ, արևել. Թրք. **ﻗﻼﺯ** qalaz «կաշիէ ջրաման» (Կամուս, Թրք. Բրգմ. Ա. էջ 361), անգլ. cruise «շիշ», ֆրանս. cruche «կուժ», գերմ. Karausche): Bugge, KZ 32, 51 յն. κρωσσός «դոյլ, կուժ» բառի հետ, որ մերժում է Boisacq 523, ըստ Pedersen KZ 39, 378, Karst, Ցուշարձ. 400 ասուր. kirissu «կարասիք»։ Scheftelowitz BB 28, 282 իբր բնիկ հայ՝ սանս. kalaça «պտուկ, ամման» բառի հետ. բայց սրա էլ նախաձայնը համաձայն չէ։

ԳԻՒ.—Ագլ. Ալշ. Ախց. Գոր. Երև. Ղրբ. Մկ. Մշ. Շմ. Ոզմ. Ջղ. Սլմ. Վն. Տփ. **կարաս**, Սեբ. գարաս, Տիգ. գʊrʊա, Մրզ. կառաս, Խրբ. գառաս, Սվեդ. գ'արուս, Հճ. գայօս. բոլորն էլ «գինու մեծ թակոյկ»։ Նոր բառ է **կարասպագէֆ**։

ՓՈԽ.—Վրաց. **ჯახრი** **կասրի** «տակառ, մի փթանոց ման». **მეჯახრე** **մեկասրե** «տակառագործ», **მეჯახრეობა** **մեկասրեոբա** «տակառագործութիւն».—ռուս. карась, մորդվին. karašja, երկուան էլ «կարաս»։

— **ԿԱՐԱՍԻ** (-ւոյ, -հաւ, -հաց) «կահ, աղխ, տան մէջ հղած-չհղածը. 2. գոյք, ինչք, դրամ» ՍԳր. Ոսկ. մթթ. և փիլիպ. Կոչ. Սիր. Եւ. Եւագր. որից **կարասեակ** «խղճուկ կահկարասիք» Լմբ. ովս. **կարասեկիր** «բեռնակիր» Պտմ. աղէքս. **կարասապահ** «իրերը իբրև աւանդ պահող» (նորագիւտ բառ) Ոսկ. գծ. 152.—այստեղ է պատկանում անշուշտ նաև **կարաս** «իր, որևէ բան» (՞) անստոյգ բառը՝ որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Բարուք ղ. 23 «Չի եթէ ոչ ոք հանապազ զժանկն ի նոցանէ (ոսկուց և արծաթից) արու **կարասօք** կոկէ կորզէ և մաքրէ, և զփայլելն իսկ ոչ փայլեն»։ Հայերէնի ճոխութեան դէմ համապատասխան տեղում յոյնը շատ պարզ ձևով ունի միայն «ἐὰν μή τις ἐκμάξῃ τὸν ἰόν, οὐ μὴ στίλψωσιν» (այսինքն «եթէ ոչ ոք մաքրէ զժանկն, ո՛չ փայլեն»)։ Այսպէս նաև լատինը, որի հետևողութեամբ Ոսկանեան հրատարակութիւնն էլ ունի «եթէ ոչ այլ ոք մաքրեսցէ զժանգն, ո՛չ փայլեսցին» (տպ. Սանկտպետ. 1817 թ.)։ Բոլորի մէջ էլ պակասում է **արու**

կարասօf, *որ երևի նշանակում է «մի պինդ բանով» (եթէ ոսկին մի պինդ բանով չշփեն, չի փայլիլ)։*

=*Ծագում է նախորդ* կարաս *«աման» բառից. նշանակութեան զարգացման համար համմտ. հյ.* աւօթ *«աման, կահ-կարասիք, ինչք»,* կտ. vas, vasarium *«աման, ամանեղէն, կարասիք, դրամ»,* գերմ. Geräth, Geräthe *«կարասիք, աման-չաման, գործիքներ, ինչք»։*

Pictet II *226 հանում է զրաի բառի՛ց։*

Ուղիղ մեկնութիւնը տուաւ Հիւնք։

ԿԱՐԱՀ *«անիսոն» Գազիան. ունի միայն ՀԲուս. § 1357։*

***ԿԱՐԱԻԱՆ** *(ի–ա հլ. ըստ ՆՀԲ, բայց կայ միայն սեռ. -ի) «ճամբորդների խումբ, չուն, բանակ» Ղեղէ. Խոր. Փարպ. գրուած է նաև* կարևան *Բուզ. ե. 2. Մաղաք. աբ. 49. յատին ձևեր են* կարվան *Տաթև. ձմ. ձդ.* ևաւվրայն, կարուան *Վրդն. առ. 136. Նոր բառ է* կարաւանապետ։

=*Պհլ.* ԿՐՎՆ karavān, kārvān, *պրս.* کاروان karvan *«կրաւան». փոխառութեամբ տարածուած է ուրիշ շատ լեզուների մէջ. ինչ. արաբ.* قيروان qayravān *(Կամուս. Թրք. Թրգմ. Բ. 92), վրաց.* ქარავანი **ևարավանի**, *Թրք.* k arvan, kervan, kevran, *ռուս.* караванъ, *լհհ.* karawana (Berneker 501), *ֆրանս.* caravane, *գերմ.* Karavane (Kluge 243), *սպան.* caravana, *իտալ.* caravana, *անգլ.* caravan *են։ Իրանեան բառի ծագումը յայտնի չէ.* Müller WZKM *5, 354 նրա մէջ ուզում է տեսնել իրան.* kār *«կռիւ, պատերազմ» բառը. համմտ. հպրս.* kāra- *«բանակ», լիթ.* kāras, *հսլ.* kara *«կռիւ», գոթ.* harjis *«բանակ»* (Horn *§ 834)։—Հիւրշ. 167։*

Schröder, Thesaur. *էջ 344 ժողովրդական ստուգաբանութեամբ մեկնում է «կարող վանելոյ».—Կարաւան՝ որ Թուրքն քեարվան կասէ, Հայոց լեզու այ. ասելն սաքի՝ կարող վանելոյ, որ աշխարհօրէն կասեն ղարշու կենալոյ կարող (ակնարկելով այն ժամանակուայ վաճառականական կարաւանների կազմութիւնը, երբ զինուած՝ կռուելու պատրաստ ճամբորդում էին)։ Ուղիղ մեկնեց նախ ԳԴ, որից յետոյ* ՆՀԲ, Spiegel, Huzw. Gram. 187, 190, Müller *են։*

ԳԻՒ.—Ադլ. կրա՛վան, *Մկ.* կարվան. *միւսները նոր փոխառութեամբ* ևարվան, ֆէրվան *են։ Նոր բառեր են՝* կարաւանկոտուկ, կարաւանկորուստ *«լուսաստղ»։*

ԿԱՐԱԻԱՆԴ. *անստոյգ նշանակութեամբ բառ. մէկ անգամ գործածուած է Ա. Թագ. լա. 3 «վիրաւորեցաւ ընդ կարաւանդան ի ներքս». յն. ունի* εἰς τὰ ὑποχόνδρια *«ի անակուշտան». տարբեր է երբ. «վիրաւորեցաւ յաղեղնաւորացն»։—ՆՀԲ և ՋԲ մեկնում են կա՛մ «անակուշտ» (ըստ յն.) և կամ «զրահի վրայ կարած կամ զօդուած տեղերը». վերջին իմաստի համար համմտ. Բառ. երեմ. էջ 158* կարաւանդ *«զրահի կապ» և էջ 9* ակարաւանդք *«յօդք զրահից»։*

Հիւնք. հասկանում է «կուշտ, կող» և հանում է դարաւանդ *բառից։*

***ԿԱՐԲ** *«կաղամախի ծառը» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 1358։*

***ԿԱՐԲ** *«խեցգետին». մէկ անգամ ունի Վեցօր. է. «Ականատեսք կոչին ողորկապատեանք, այսինքն կարբ և խեցգետինք»։*

=*Յն.* κάραβος *«խեցգետին», որից փոխառեալ են նաև լտ.* carabus, *ֆրանս.* crabe *համանիշները։*

Նորագիւտ բառ է։ Տպագրում կապի ձևն ունենալով՝ բառս անծանօթ էր մնացած. առաջին անգամ Նորայր, Հայկ. բառաք. էջ 65, նաև ՀԱ, 1921, 236, Անտոնեանց օրինակի համեմատութեամբ՝ գտաւ ու մեկնեց վերի ձևով։

ԿԱՐԲԱՆՈՑ *«սատեր և քան տրամ ոսկի». մէկ անգամ ունի Պատմ. աղէքս. 150 «եւ անծակ զմրխատաց այլ կարբանոցս տասըն և գզրոցս և տուիս փղոսկրայս»։*

ԿԱՐԳ, ի–ա *հլ. «շարք, դասաւորութիւն, կարգ-կանոն, յաջորդների շարք, հրեշտակների խումբ են» ՍԳր. Ոսկ. Եւս. պտմ. որից* կարգ *ըստ* կարգէ *Վեցօր. Եւս. քր. Ոսկ. ես. և որ ի* կարգին *«և այլն» Ոսկ. յհ. ա. 22.* կարգաւ *ՍԳր. ի* կարգ առկանել *«շարել» Եւս. քր.* կարգել *«շարել, դասաւորել, սահմանել, որոշել» ՍԳր. «գրել, շարադրել» եզն. Փարպ.*

(ըստ այսմ կարգ «տող, համար» Փարպ. Երզն. մաթ. հմմտ. հյ. տող «շարք և դրուածքի տող»), «ամուսնացնել» Մխ. դտ. էջ 375, 379, 380, Անսիզք 39. կարգալից Ոսկ. ես. կարգաւոր «կանոնաւոր» Ոսկ. եբր. «կրօնաւոր» Երզն. մաթ. Ոսկիփ. կարգաւորութիւն Ագաթ. Ոսկ. մ. ա. 2. կարգիչ Դ. թագ. իե. 19. Եզն. Վեցօր. դասակարգ Ղկ. ա. 5. ծննդակարգ Եփր. ծն. երեփկարգեան Գ. թագ. զ. 36, է. 12. ճիմնակարգութիւն Ոսկ. յհ. ա. 10. մշտնջենակարգ Ագաթ. ժամակարգութիւն ՅՀ. իմ. ևկեղ. յառաջակարգ Ագաթ. Կորիւն. յարակարգել Եւս. քր. շնորհակարգութիւն Ագաթ. բարեկարգ Պիտ. գրիխակարգութիւն Գր. տղ. թղթ. զուցակարգութիւն Խոր. անկարգ ՍԳր. Կորիւն. Ագաթ. Բուզ. յետնաբար «չամուսնացած, ամուրի» Պատմ. կիլ. 211. Անսիզք 53. Մխ. դտ. 371.— նոր բառեր են՝ արտակարգ, անկարգանալ, անկարգապահ, կարգադրիչ, կարգազուրկ, կարգալոյծ, կարգախօս, կարգաբողութիւն, կարգապահ, կարպագահութիւն, կարգապահական են։

Müller, Kuhns u. Schleich. Btrg. 5, 141 սանս. varga «կարգ» բառի հետ։ (Սրա հետ է կցւում լտ. volgus, vulgus «ժողովուրդ», որով հայերէնի հետ համեմատութիւնը ձայնապէս բոլորովին հետանում է)։ Տագրճեան, Արևելք 1884 նոյ. 16 սանս. varga «կարգ»։ Հիւնք. կարճ բառից։ Արշէզ, ՀԱ 1896, 268 եբր. אוג aug «կարգ» բառից (որ Gesenius-ի բառարանի մէջ գոյութիւն չունի. հկայ նաև ארג arg ձևով)։ Patrubány ՀԱ 1908, 85 դնելով <*գարկ, կցւում է սանս. várgas բառին, որից բաժանում է լտ. vulgus:

ԳԻՒ.—Ագլ. Ալշ. Ախց. Կր. Երև. Ղրբ. Մրղ. Շմ. Տփ. կարճ, Մկ. կարճ¹, Մշ. կարկ, Ակն. Պլ. Սեբ. Սչ. գարճ, որոնք սովորաբար նշանակում են «եկեղեցական աստիճան, կրօնական արարողութիւն, թաղման կարգ», իսկ Սչ. «կարգ, օրէնք». որից Ախց. Կր. կարճէլ, Տփ. կա՛րճիլ, Ակն. Պլ. գարճէլ, Ասլ. գարճէ՛լ, Խրբ. գարճիլ, Մշ. կարկել, Սչ. գ՛արճել, Համշ. գարճուշ «ամուսնացնել»։ Նոր բառեր են կարգուիլ, կարգուկ, կարգմուն, կարգիճ «լաւ», կարգաւորցու «կրօնաւորացու»։

ՓՈՒ.—Վրաց. კარგი կարգի «կարգ, շարք. 2. դեղեցիկ, սիրուն, ընտիր», კარგი ღვინო կարգի դինո «կարգին (լաւ) դինի», კარგი კარაქი կարգի կարաճի «կարգին (լաւ) կարագ», კარგი ადამიანი կարգի ադամիանի «լաւ մարդ», კარგი ა կարգի ա «լա՛ւ, բաւական է». კარგვა կարգվա «կարգաւորութիւն, կարգադրութիւն», მკარგავი մկարգավի «կարգադրիչ». საკარგავი սակարգավի «վերակացու, հսկող», განკარგულება գանկարգուլեբա «կարգաւորութիւն, վարչութիւն», განკარგვა գանկարգվա «իշխել, ուղղել, կանոնաւորել, կարգադրել, կարգաւորել»։—Սղերդի արաբախօս քրիստոնէից բարբառով gark «սքեմ քահանայական» (Բիւր. 1899, 116), ուտ. կարճ «կարգ» (դպրոցի միջոցով մտած բառ)։

ԿԱՐԴ «մի տեսակ խոտ. sicelium, coccocypselum» Ստ. լհհ. ունի միայն ՀԲուս. § 1359։ Կարո՞ղ է արդեօք ազդուած լինել Եփր. մատ. Բ. 290 կարդաւոնկ բառից, որ մի սխալագիր գրչութիւն է և պէտք է ուղղել արդաւոնկ. հմմտ. J. Schäfers, Eine altsyr. antimark. Erklärung, ուր բառիս առաջին մասը համարուած է ասոր. قرضا qardā «ricinus communis» բոյսը (ՀԱ 1920, 381)։

ՀԲուս. համարում է պրս. խուրտ «cardamomum», որի դէմ տե՛ս Նորայր ՀԱ 1924, 551։

+ԿԱՐԴԱԼ «ձայնել, գոչել, աղաղակել, հրաւիրել, կանչել, անուանել, յորջորջել» ՍԳր. Ագաթ. Փարպ. «բարձրաձայն կարդալ» Եսթ. ը. 13 («եւ պատճէն հրովարտակացն ցուցեալ կարդացեալ լիցի առաջի ամենայն աշաց». որի դէմ յոյնն ունի ἐκτιθέσθωσαν ὀφθαλμοφανῶς «դիցեն ակնյայտ», եբր. «յայտ արարեալ»). աւելի յետոյ պարզապէս «կարդալ, ընթեռնուլ» Փարպ. (տե՛ս Այտընեան. Քնն. քերակ. էջ 69). որից կարդացողութիւն Նչ. քեր. կարդացութիւն Ոսկիփ. Սիւն. ևկեղ. կարդացումն Եղիշ. Փարպ. գրակարդաց Եղիշ. Լմբ. պտրգ.—նշանակութեան զարգաց-

ման բոլոր ասոիճանները ցոյց են տալիս եբր. ասոր. և արաբ. qra. *հմմտ. նաև պրս.* خواندن xᵛāndan *«կանչել, ընթեռնուլ, արտասանել, աղօթել»։*

=Բնիկ հայ բառ՝ հնխ. g²erdh- *«աղաղակել» արմատի ստորին ձայնդարձից (*g²ṛdh-*). հմմտ. լիթ.* gerdas *«գոչիւն, ճիչ, աղաղակ, լուր տալը»,* girdéti *«լսել»,* gārsas *«ձայն, հնչիւն, աղմուկ», լեթթ.* dzirdêt *«լսել», հպրուս.* gerdaut *«ասել»։ Հաւանական է թւում որ այս արմատը աճած լինի* dh *ածականով՝ պարզական* g²er- *«գոչել, գովել» արմատից, որի ժառանգներից յիշենք այստեղ սանս.* gṛnāti *«երդել, գովել, յայտարարել, ծանուցանել»,* guraté *«բարևել»,* gīr *«երգ, գովեստ», զնդ.* gar *«գովաբանել»,* garo *«գովասանք, գովասանական երգ», լտ.* grātus *«շնորհօք և բախտագիտութեամբ ընդունած, հաճելի, բախտաւոր», ալբան.* geršás *«հարսանիքի հրաւիրել», լիթ.* giriu, gìrt *«գովել, հրաշակել», լեթթ.* dzìrties *«պարծենալ», հպրուս.* giitwel *«գովել», հսլ.* žrŭti *«զոհել» և* b *ածականով՝ լիթ.* geřbti *«պատուել», հպրուս.* gerbt, gērbt *«խօսիլ» են* (Pokorny *1, 686—7,* Ernout-Meillet *414)։*

Diefenbach, Berl. Jahrb. 1843, 449 farnoq *բառի հետ սանս.* gṛ *արմատից։* Lag. Ges. Abhd. *102, 103 յն.* κράζειν *«կոչել»։* Müller, Kuhns u. Schleich. Btrg. *5, 141 սանս.* gard *«ցնծալ», զնդ.* gərəd- *«ոռնալ»։ Տէրվիշ. Նախալ. 55 հնխ.* gar *«գոչել» արմատից, իսկ էջ 76 տե՛ս ծաղր բառի տակ։* Bugge KZ *32, 55 լիթ.* waĩdas *«անուն», հպրուս.* wirds, *գոթ.* waurd, *գերմ.* Wort *«բառ» բառերի հետ է կցում։ (Այս մեկնութիւնը յիշում են* Walde 820 *և* Brugmann² I *303 կասկածով։ Ընդունելի չէ, որովհետև յիշեալ բառերը հանւում են հնխ.* uer-dh *արմատից, որ պիտի տար հյ.* *գերդ։ Այս պատճառով էլ՝* Meillet MSL *9, 150 կցում է հպրուս.* gerdaut *«ասել» բառին։ Հիւբշ. 458 սրա վրայ աւելացնում է նաև լիթ.* gìrsti *«ուսանիլ»,* girdéti *«լսել» և բոլորը առնապահով է գտնում։ Մէնէվիշեան ՀՄ. 1897, 248 բ հնխ.* kar *«գոչել, աղաղակել» արմատից. հմմտ. սանս.* kṛṭ, *զնդ.* karitunam *«կարդում»։ Հիւնք.* fարտէս, fարտ *և արաբ.* qirā'at *«ընթեռնուլ»։* Patrubány SA *2, 243 և ՀՄ. 1903, 221 դ յաւելականով* qar *արմատից. հմմտ. սանս.* kāru *«գովասանք», յն.* κῆρυξ *«քարոզ», լտ.* carmen *«բանաստեղծութիւն» են։ Թիրեաքեան, Արիա-հայ բռ. 205 պրս.* کرزیدن garzīdan *«ողբալ» բառից։* Pokorny *1, էջ 283 յիշում է* Bugge-*ի մեկնութիւնը, բայց աւելի հնխ.* gᵘerā- *«գոչել» արմատից է ուզում դնել։ Նախ* Meillet MSL *9, 150 կցել էր հպրուս.* gerdaut *«ասել» բառին, որին աւելացրել էր Հիւբշ. 458 լիթ.* gìrsti *«ուսանիլ»,* girdéti *«լսել» և ամբողջը միասին անապահով էր գրտնում։ Այժմ լիթ.* gérdas *«գոչիւն, աղաղակ» են ձևերի յաւելումով համեմատութիւնը ուժի մեջ է մնում։*

Դիմ.—Ոգմ. կարդոլ, *Ջղ.* կարդ'ալ, *Ախց. Երև. Կր. Մրդ. Տփ.* կարբալ, *Դոր. Ղրբ. Շմ.* կարբիլ, *Խրբ.* գարդ'ալ, *Հւր.* գոռդոլ, *Սվեդ.* գարդ'իլ, *Ալշ. Մշ.* կառոալ, *Մկ.* կառոալ, *Վն.* կոռոալ, *Ակն. Ասլ. Պլ. Ռ. Սեբ.* գարբալ, *Տիգ.* գոռբոլ, *ՋԹ.* գայդ'օլ, գարդ'ոլ, *Ննխ.* գարբալ, գաշբալ, *Համշ.* գաշբուշ, *Սլմ.* կ'առբալ, *Ագլ.* կ'ոռդիլ, *Սչ.* գ'արդ'ալ, *Հճ.* գ'այդ'օլ, *բոլորն էլ «ընթեռնուլ» և «ուսանիլ, սովորիլ», ինչպէս նաև «եկեղեցում տիրացութիւն անել». Ղրբ. նաև «երգել (թռչունի)»։ Նոր բառեր են* կարդացուր, կարդում, կարդմուճ, կարդան, կարդման։

ԿԱՐԴԻՆ *«նարդոս ծաղիկը». մէկ անգամ ունի Խոր. աշխ. (ըստ ձեռ.) չեն յիշում ՋԲ և Հբուս. ըստ որում տպուած է* նարդիս։

***ԿԱՐԴԻՆԱԼ,** *ի–ա հլ. «պապակական ծիրանաւոր եկեղեցական». ունին միայն ՀՀԲ և ՋԲ, իբրև նոր բառ. հնից ունինք* կարտինալ *Օրբ. հկճռ. ժա, էջ 159 (սեռ.* կարտինալացըն*),* կարտինար *Նղշ. լտ. 421 (սեռ.* կարտինարաց*). Յայսմ. մայ. 4 (ծկն ֆռանգ կարտինար մի, որ է վանաց հայր). Օգոստ. բաչ. 13։*

=լա. cardinalis «ծիրանաւոր», ֆրանս. cardinal, բիւզ. յն. καρδινάλιος, καρδινάλις. ծագում է լա. cardo «ծխնի» բառից, բուն նշանակում է «ծխնու վերաբերեալ», երկրորդաբար՝ «գլխաւոր», որից էլ անցել է «ծիրանաւոր» նշանակութեան։

ԿԱՐՆՂԱՅ կամ **ԿԱՆՆՂԱՅ** «աթոռ». ունի միայն Բառ. երեմ. էջ 158։

+**ԿԱՐԹ**, ի հլ. «ձուկ որսալու ճանկ» ՍԳր. «թռչունների ոտքի վրայի ճանկը, բիտ» Ղևտ. ժա. 21. «ոտքի ջղերը, ոտք, սրունք» նիւս. երգ. Ճառընտ. Եփր. աւետ. 318. «ոտք» Ոսկ. ա. կոր. «մեծ գամ» Մագ. թղ. 59. «փոխ. որոգայթ, մարդ խաբող հրապուրանք» Եփր. հռ. 30 (չունի ՆՀԲ). ոճով ասւում է կարթ արկանել Ոսկ. փիլ. 483. որից **կարթակոտոր** «ջղակոտոր, ջարդուփշուր» ՍԳր. **կարթաբար** «կարթի պէս» Փիլ. լիւս. **կարթահարեալ** «ոտքերը կոտրտած» ՍԳր. **կարթածուկն** Շիր. **կարթապան** «առնապան, պաճիճ» Մխ. դտ. էջ 264. **կարթել** «կարթով բռնել, թակարդը ձգել» Ոսկ. ղկ. Փիլ. Լաստ. «ճամբան շեղել, մէկ կողմ ծռիլ երթալ» Բ. մակ. ժբ. 10. Փարպ. (ըստ Նորայր, Հայկ. բառաք. էջ 60 այսպէս է ուղղել նաև Ռուզ. դ. 24 կարել բառը, որ ուրիշները «կողմ» էին թարգմանում). **կարթնկէց** «ձկնորս» Ես. ժթ. 8։ Արմատի առաջին և հիմնական իմաստն է «կեռ»։

=Բնիկ հայ բառ՝ հնխ. g^2ṛpti ձևից՝ p-ի անկումով և t-ի սովորական թաւացումով յառաջացած. հնխ. g^2ṛpti- <g^2ṛbti- յառաջացած է հնխ. g^2ṛb- «ծռել» արմատից՝ -ti մասնիկով. պարզ արմատը երևան է գալիս սլաւ և գերմանական լեզուների մէջ՝ g^2erb- (g^2reb-) ձևով. համմտ. հսլ. grŭbŭ «կռնակ», grŭbo-nosŭ «կորաքիթ», ռուս. горбить «ծռել», горбъ «կուզ, սապատ, ուռուցք, կռնակ», նսլ. grba «խորշում, ծալք, կնճիռ, կուզ», լիթ. gárbana, gárbina «գոուզ մազեր», իսլ. gerbach «խորշոմեալ», նիսլ. korpa «ծալք, կնճիռ», հրգ. chrāpfo «կարթ, կեռ, մագիլ, ճանկ» և թերևս նաև հիսլ. gairr «սրունքի ոսկորը»։ Նոյն արմատի ռնդային ձևից են հրգ. krampf «կորացած, կեռ, ջղաձգութիւն», նրգ. krampe «դռան կեռը», լեհ. grąba «բարձրութիւն, բլուր» են (Berneker 369, 355, Walde 332, Pokorny 1, 596):

Justi, Zendsp. 80 զնդ. karota «դանակ» բառի հետ կապակցով։ Տէրվ. Նախալ. 70 nrp, խրճիթ, լա. crates «հիւսուածք», յն. κάρταλος «որթ, կողով», սանս. kart- «հիւսել» ձևերի հետ՝ հնխ. kart «հիւսել» արմատից։ Հինք. պահլաւ. karđ բառից։ Scheftelowitz BB 28, 303 և 29, 29 լա. cardo «ծխնի» բառի հետ։ Սրա արմատն է հնխ. sqerād «դառնալով շարժիլ, ճօճիլ», որ չի կարող տալ հայ. կարթ. ուստի մերժելով՝ ուղիղ մեկնութիւնն է տալիս Lidén, Arm. Stud. էջ 36—37 (նոյնը կրկնում է Walde 131 և 332)։

ԳԻՒ.—Ոզմ. կարթ «ձկան կարթ»։

ՓՈԽ.—Վրաց. კარტი կարթի, კარხი կարսի «չիղ, երակ, սրունքի գէր մասը, ոտք», საკარტელი սակարթուլի «ծնկակապ»։

ԿԱՐԺ «թելի փաթոյթ». յիշում են միայն ՀՀԲ, ԱԲ և ՋԲ. որից **կարժան** «dévidoir». երկուսն էլ միջին հյ. բառ (տե՛ս Նորայր, Բռ. ֆր. 395 ա և 433 բ)։

Թիրեաքեան, Արիահայ բռ. էջ 205 պրս. گز gaž, որից արաբացեալ جز qaz «վաթ տեսակի մետաքս» (որ սակայն թէ՛ ձևով և թէ նշանակութեամբ տարբեր է մեր բառից)։

ԳԻՒ.—Աղշ. Ախց. երև. Մկ. Մշ. Մրղ. Ոզմ. վն. Տփ. Կր. Սլմ. կաժ, Ակն. Խրբ. Հմշ. Ննխ. Սեբ. Սվեդ. գաժ, Ջթ. գmժ, Տիգ. գոջ, որից **կարժան**, **կարժել**, **կաժպանիր** «թևլպանիր» (Ննխ. գաժ-բէնիր, դիւղերը՝ գար-բ'անիր, անկախ կաժ, կարժ բառի չգոյութեան պատճառաւ՝ շփոթուած կարճ ձևի հետ), **կաժման** Ղրբ. «վոհիտ, նիհար»։ Նոյն է նաև **կանխն**. «մանածի թելերը», որից **կանրար** «մանածի թելերը պատրաստելու գործիք»։

ՓՈԽ.—Կապադովկ. յն. kaši maza «մի տեսակ պանիր» Karolides, Γλ. συγκρ. 172. —Հեղինակը իր զուր է ճգնում մեկնել այս բառը լա. caseus «պանիր» և հյ. կաշի, թրք. qayəš «փոկ» են բառերով, պատճառաբանելով թէ հին ժամանակ այս պանիրը կաշիէ

ամանների մէջ էին պահում. ուստի և անունը անցել է նրանին։

ԿԱՐԻ *տե՛ս Կար։*

ԿԱՐԻԱՏՈՍ *«պաշտելի կամ երկրպագելի». ունի միայն Բառ. երեմ. էջ 152։*

ԿԱՐԻԿԱՐՍ. *անստոյգ բառ. մէկ անգամ գտնում եմ գործածուած Կաղանկատուացու մէջ. «ներբողվի սկայ զբոլորս հրապուրէր ազինս աշտարակաշէն առնել* **կարիկարս**։ *Այս հատուածը չկայ տպագրում. ունի միայն ՆՀՒ ըստ Վենետիկեան ձեռագրի (տե՛ս* **Ֆարուկիր** *բառի տակ), որ և սրբագրում է* **Ֆարուկիր**։

***ԿԱՐԻՃ**, *ի–ա հլ. «կարիճ միջատը,* scorpion» *ՍԳր. Վեցօր. 120, 196. Կոչ. «փիխր. կարիճի նման չար» Եզեկ. բ. 6. Եզն. «մի աստեղատուն» Վեցօր. 120, Եզն. «փշոտ կամ խայթոցաւոր գաւազան» (որ և* **Ճուկ**) *Բ. մնաց. ժ. 11, 14, Կիւրղ. թգ. որից* **կարճախայթոց** *Վրդն. եւ. կարճաճար Բժշ. ջրակարիճ Վանակ. հց. Թերևս նաև* **կարճրնդեաց** *(միջին ը-ով գրուած) կամ* **կճրնդեաց** *«մի համաստեղութեան անուն» ԱՒ (տես* **կճնդիաց**)։

=Փոխառեալ է Փոքր-Ասիական մի լեզուից, որից է նաև յն. καρῖς, καρῖδος, դոր. κωρίς, κουρίς «խեցգետին», երկու իմաստների նոյնութեան համար համմտ. հյ. **կարիճ** *<Ղրբ. «խեցգետին», արաբ.* عقرب ‘aqrab *«կարիճ» և* عقرب الماء ‘aqrab-al-ma *«խեցգետին (=ջրի կարիճ)», լտ.* nepa *«կարիճ. 2. խեցգետին»։—Աճ.*

Peterm. *25, 26 պրս.* خرچنك xarčang *«խեցգետին» բառի հետ, որ սակայն բարդուած է* xar *«էշ» և* čang *«ճանկ» բառերից։* Lag. Arm. Stud. *§ 1127 արմատը դնում է* **կար**, *իսկ* **իճ** *մասնիկ։ (Իրօք որ բառիս համանիշն է* **կոր** *(տե՛ս այս բառը), ուստի թերևս արմատն է* **կար**. *մասնիկի համար համմտ.* **ուտիճ**, **լուիճ**, **աղաւնիճ**)։ *Եազըճեան, Արևելք 1884 նոյ. 16 սանս.* vrçcika *բառից։ Հիւնք.* **կարճ** *բառից։ Սագրզեան ՀԱ 1909, 335 և* Karst, *Յուշարձ. 404 սումեր.* gir *«կարիճ»։ Յն.* καρῖς *բառը* Ehrlich KZ *39, 556 հանում է հնխ. k'er- «գլուխ» արմատից (ըստ որում այս խեցեմորթի գլուխը շատ ուժեղ է և մարմնի մեծագոյն մասն է կազմում)։* Boisacq *413 յիշում է այս մեկնութիւնը առանց դիտողութեան.* Pokorny 1, 404 *ձևական դժուարութիւններն ի նկատի ունենալով՝ շատ հաւանական, բայց ո՛չ վերջնական է համարում։ Իմ տուած մեկնութեամբ բառիս այսպիսի ծագումը եթէ չի ջրնջում, առնուազն Փոքր-Ասիա է փոխադրում։ Ըստ այսմ հյ.* **կարիճ** *բառի հետ կապ չունի* **կոր** *հոմանիշը, որ տե՛ս առանձին։ Իմ մեկնութիւնս ընդունում է նաև* Meillet *(նամակ 1930 դեկտ. 8)։*

Գիմ.—Ագլ. Ախց. Գոր. Երև. Կր. Մկ. Ջղ. Սլմ. Վն. Տփ. **կարիճ**, *Ղրբ.* **կա՛րիճ**, **կա՛րէճ**, *Ալշ. Մշ.* **կարիջ**, *Սեբ.* **գարիջ** *Ոզմ.* **կարէ՛ճ**։—*Ղրբ. նշանակում է նաև «խեցգետին», ինչպէս արաբ. էլ ունինք* عقرب الماء ‘aqrab-al-ma *«խեցգետին» (բուն «ջրի կարիճ»)։*

ՓՈԽ.—Վրաց. კარიჭი **կարիճի** *«կարիճ». ունի Գրիշաշվիլի, Ձվելի քալաքիս բոհեմա, էջ 242 (հաղորդեց Գ. Ասատուր)։*

ԿԱՐԻՃՆ *«նմանութիւն կամ կա՛ար». այսպէս ունի Բառ. երեմ. էջ 158 (բ. տպ. կամ այար). երկուսն էլ անհասկանալի։*

***ԿԱՐԻՏՈՍ** *«մի տեսակ փոքր խեցեմորթ. ւպինասպաս». մէկ անգամ ունի Վեցօր. է (էջ 152) «Ոչ զի քան զկարիտոս և զմենդոս մեծամեծք են»։ Ուրիշ վկայութիւն չկայ։*

=Յն. καρῖς, *սեռ.* καρῖδος *«մի տեսակ ծովային խեցեմորթ», որից նաև Թրք.* karides. *ըստ այսմ մեր բառը ուղղելի է* **կարիդոս**, *ինչպէս դնում է նաև Վեցօրէից Վենետիկեան հրատարակիչը։—Հիւբշ. 355։*

Ուղիղ մեկնեցին նախ ՀՀՒ և ՆՀՒ։

ԿԱՐԻՔ *տե՛ս Կար։*

ԿԱՐՈՒ *«կարծիք, ենթադրութիւն» Ոսկ. ա. տիմ. և ես. որից ի կարս «ենթադրութեամբ, կարծիքով» Ես. ժա. 3. Ոսկ. յհ. Եղիշ.* **կարծել** *«համարել, այնպէս ենթադրել» ՍԳր. «կասկածիլ» Տոբ. ը. 8. Սղ. ճԺը. 39.* **կարծեալ** *Գաղ. բ. 2—9. Ոսկ. մ. ա. 4.* **կարծեցեալ** *Ագաթ.* **կարծեցուցանել** *Ես. քր. Եզն.* **կարծական** *Ոսկ. ես.* **կարծեխօս** *Ես. պտմ.*

կարծիք *ՍԳր. Կիւրղ. Թգ. Ոսկ. մաթ.* յանկարծ *ՍԳր.* յանկարծակի *ՍԳր.* յանկարծուստ *ՍԳր.* յեղակարծ *ՍԳր. Ագաթ. Բուզ.* յայլակարծուց *Բուզ.* կաղակարծ *Մծբ. Ոսկ. ա. կոր.* որ և կեղակարծ *ՅՀ. իմ. երև. Մաշկ.* ընդունայնակարծ *Նար. քր. Վեցօր. եփր. գաղ.* յժուարակարծելի *Փիլ.* իմաստակարծ *Փիլ. նխ.* տարակարծ *Բուզ.* կարծուտ «*կասկածո՞տ*» (*չունի ԱԲ*) *Տաթև. հարց. 247* = կարծկոտութիւն *էֆիմ. էջ 189*։ *Նոր բառեր են* կարծեկից, կարծիքական, տարակարծիք *են*։

Հիմնք. կարծր *բառից։ Մառ (անձնական) արաբ.* قرض qarḍ «*ենթադրել*» *արմատի հետ։ Նևտոն-խան, Բազմ. 1908, 163 արաբ.* farḍ և xarṣ «*ենթադրել*»։ *Զօրպաճեան, Բազմ. 1908, 359 անգլ.* guess «*ենթադրութիւն*», *դան.* gissen, *արաբ.* خرص xarṣ, قياس qiyās, *պրս.* پيوس payūs «*կարծիք*», *էջ 360 նոյն է դնում* կեղծ *բառի հետ։ Մառ* ИАН *1920, 106 նոյն ընդ կայծ· Ղափանցեան, Տեղեկ. ինստիտ. 2, 95 կրկնում է նոյնը, աւելացնելով* «*ըստ իս*»։ Pedersen KZ *39, 379 յն.* γοργός «*ուժգին, սոսկալի, սաստիկ, վայրենի*» *են բառերի հետ, որոնց ցեղակիցն է հյ.* կարծր.—*մեկնում է* կարծել «*ենթադրել, վախենալ*» *առումից* (Pokorny 1, 537)։

Գիմ.—*Ջղ.* կարծել, *Ախց. Կր.* կարծէլ, *Տփ.* կարծիլ, *Ալշ. Մշ.* կարձել, *Շմ.* կարձիլ, *Երև.* կարծիճ, *Տիգ.* գmրձիf, *Պլ.* գարձիճ, *Խրբ.* գարձիճ[1]։

Փոխ.—*Կեսարիոյ Թուրք բարբառով* angərzəngər «*յանկարծակի*». *ինչ.* angərzəngəra gelesin «*յանկարծակիի գաս*», *որ Հայոց ընտանեկան լեզուում շատ գործածական մի անէծք է, փոխառութեամբ անցած Թուրքերին (Բիւր. 1898, 712). Համմտ. Լնկիւրիի Թրքախօս Հայոց մօտ՝* hangarzagi, *որից* hangarzagiye gedesiǰe «*յանկարծակիի երթաս*» (*Բիւր. 1898, էջ 865*)։

ԿԱՐԵՈՒՆ «*պիտանի*», *ունի միայն Բառ. երեմ. էջ 158*։

+ԿԱՐԵՐ (*յգ.* -ծուճ, *յետնաբար* =ծերf)

«*ամուր, պինդ, խիստ*» *Ոսկ. փիլիպ. ժ.* «*դրժուարին, խստամբեր*» *Պղատ. օրին. որից* կարծրանալ *Եզ. է. 13. 36ես. ժա. 20.* կարծրացուցանել *ՍԳր.* կարծրութիւն *Կոչ.* կարծրագոյն *Մագ. խոսր.* երկաթակարծր ճառընտ. *Բենիկ.* կարծրադաստ «*խստիւ դաստոզ*» *Նար.* նիւթակարծր *Անան. եկեղ.* վիմակարծր *Բենիկ.* կարծրամարմին (*նոր բառ*)։

=*Բենիկ հայ բառ՝ հնխ.* $g^{z}rg^{1}$- *արմատից, որի միւս ժառանգներն են յն.* γοργός «*ուժգին, զարհուրելի, սաստիկ, վայրենի*», *հիւս.* garg, gargg «*կոշտ, բիրտ, վայրենի*», *մրգ.* karc «*ուժեղ, բիրտ*», *որոնց հետ ոմանք միացնում են նաև հսլ.* groza, *լեհ* groza «*վախ, սարսափ, սոսկում*», *ռուս.* гроза «*երկիւղ, սարսափ, արհաւիրք, սպառնալիք, փոթորիկ*», грозно «*խստիւ, սպառնալեօք, յոխորտաբար*», грозный «*խիստ, սպառնալի, ահարկու, ահռելի*», *սլ.* grózno «*յոյժ*» *են* (Boisacq 154, 1103, Berneker 354—5. Pokorny I, 354): Pokorny I, 537, *համեմատութեանց մէջ աւելացնում է նաև լիթ.* gražóti «*սպառնալ*» (Trautmann 95). *արմատը դնում է հնխ.* garg'- *կամ* grag'- «*սարսափ, սարսափելի*» (*չի յիշում մրգ.* karc «*ուժեղ, բիրտ*» *ձևը*)։

Նշ Բ «իբրու fարացեալ»։ *Պատկ.* Изследов. *էջ 42 յն.* κάρτος և Bugge KZ *32, 49 և 69 յն.* κρατύς, κρατέρος «*զօրեղ, խիստ, կարծր, ամուր*», *գոթ.* hardus, *գերմ.* hart «*կարծր*» *բառերի հետ։ Հիւբշ. 459 մերժում է այս համեմատութիւնը։ Հիմնք.* արծաթ *բառից։ Ուղիղ մեկնութիւնը տուին* Scheftelowitz BB 28, *էջ 295 և* Pedersen, *Հայ. դր. լեզ. էջ 75*։ Karst, *Յուշարձան 429 ԹԹր.* qat, *ուղղուր.* katik, *չաղաթ.* katt, *օսմ.* qatə «*Թանձր*», *Մառ.* Сред. передвиж. *46* fար *բառի հետ։*

Գիմ.—*Ասլ.* գարձրենալ «*կարծրանալ*»։

ԿԱՐԿԱԺ «*դղում*». *նորագիւտ բառ, որ առանձին չէ գործածուած, այլ կայ միայն* կժակարկաժ «*մեծ դղում՝ որ իբրև գինու աման են գործածում*» *բարդի մէջ. այս վերջինն էլ մէկ անգամ գտնում եմ գործածուած Մագ.*

Թղ. 80 (տե՛ս իմ Հայ. նոր բառեր հին մատ. Բ. 191)։

Գիմ.—Պահուած է մինչև այժմ հետևեալ ձևերով. կարկած *Գնձ. Լ. Ղզ. Ղրբ. Շլ.,* կարկաճ *Երև.,* կիրկիժ *Ղրբ.—բուն նշ. «դրդում», բայց նաև նախատաբար «գլուխ, գագաթ, գանկ»։ Նոր բառեր են* կարկածաճամ, կարկածեճի, կարկածխորոված, կարկածրոռանի։

*ԿԱՐԿԱՀ *«այն կազմածը, որի վրայ գործ են բանում. յատկապէս ասեղնագործութեան կազմածը». Նոր գրական լեզուի մէջ յօրինուած բառ է։*

=*Պրս.* کارگاه kārgāh *բառն է՝ նոյն նշանակութեամբ. կազմուած է* kār *«գործ» և* gāh *«տեղ» բառերից և բուն նշանակում է «գործատեղի». Պօլսի ռամիկ բարբառում հնչւում է* էրկէֆ։—*Աճ.*

ԿԱՐԿԱՄ, *ի հլ. «խիստ ոլորուած, կորացած, կծկուած» Վրք. հց. Ա. 560. Նար. Տաղ. «ժլատ, կծծի» Սիր. դ. 36. Մխ. այրիվ. էջ 38. որից* կարկամել *«կծկել, կորացնել» Ոսկ. Ես.* կարկամեցուցանել *«ծռել, խոնարհեցնել (անձը)» Ես. ծր. 5.* կարկամիլ *«կծկուիլ, քաշուիլ, կռնծիլ» Ղկ. ժգ. 11. Ողբ. բ. 10.* կարկամութիւն *«մորթի վրայ կնճիռ» Ոսկ. Եբր.—արդի գրականում* կարկամիլ *նշանակում է «անդամները բռնուիլ, անդամալոյծ դառնալ»։*

ՆՀԲ (որից և ՓԲ) «կարի կամ, կամարեալ». (արմատը համարում է կամ «ծուռ», որ գտնում է նաև կամակոր, կամար, կամուրջ *բառերի մէջ)։—Տէրվ. տե՛ս* կարկել *բառի տակ։ Հիւնք.* կըրկին *բառից։* Bugge *տե՛ս* կամակոր *բառի տակ։* Karst, *Յուշարձան 404 սումեր.* gam, kam *«ծռիլ» բառի հետ։*

Գիմ.—Ղզ. կարկամիլ *(որ և* կարկափիլ*) «ծարաւից պապակիլ, շունչը կտրուիլ», Բլ.* կարկղմել *«մանուկի թուլանալ, ուշագնաց լինելը», Ալշ. Մշ.* կարգմել *«լացից կամ ծիծաղից ուշքը գնալ»։*

ԿԱՐԿԱՆԴԱԿ *(ի–ա հլ. ըստ ՆՀԲ, բայց առանց վկայութեան) «մի տեսակ խմորեղէն» Երեմ. է. 18, խդ. 19։*

Հիւնք. կարակն, կրկնեալ *բառերից է հանում։ Աճառ. ՀԱ. 1908, 121 հիմնուելով մի սխալ աղբիւրի վրայ, փոխառեալ է դնում պհլ. *karkandāk ձևից, որ թէև աւանդուած չէ, բայց նրա գոյութիւնը հաստատում է սանս.* karkandu *«կարկանդակ». Համմտ. նաև սանս.* karkarāra *նոյն նշ.։ Բայց* Böthlingk-*ի հոյակապ բառարանում, հտ. Բ. էջ 119 սանս.* कर्कन्धु karkandu *նշանակում է «zizyphus jujuba Lam. յունապ», իսկ* karkarāra *ձևը գոյութիւն չունի անդ։*

⊙ԿԱՐԿԱՋ *կամ* ԿԱՐԿԱՋ, *ի հլ. «թռչունների ճիւճիւը» Լաստ. «աստղերի պլպլալը» Տոմար. որից* կարկաչել *կամ* կարկաջել *«թռչունի ճվճվալ» Մանդ. «աքլորի երգելը» Վրդ. առ. 24. «բարձրաձայն ծիծաղիլ, քրքջալ» Խոսր. 67. Շնորհ. ընդհ. Բրս. հց. «ցրտից ատամների իրար բաղխելը» Փիլ. նխ. բ. 63, յն. πεσθῆναι (տե՛ս* կարկուտ *բառի տակ).* կարկաջումն *«ջրի ձայն» Տաղ. Ճառընտ. «ատամների կճրտոց» Տաղ.* կարկաջաիոս *Ոսկ. լս. Տաղ.* կարկաջասան *Խոր.* սահանակարկաջ *Արծր.* կարկաջեցուցանել *«մարմինը ճարճատեցնել» Եւագր. 264.* կարկաչուն *«ճչող, լացող» Ոսկ. եբր. դ.* կարկաչան *«խոխոջուն (առու)» Վստկ. 190.* ատամնակարկաջ *«ատամները իրար զարնուելով, ցրտից դոփալով» Տօնակ. «վախից դողալով» Եփր. գծ. էջ 20.* սիրակարկաչ *«սիրաձայն» Յհշ. ոսկ. յհ.* լուսակարկաջ *«լոյսով պլպլացող (աստղ)» Գնձ. սրանց հետ նոյն է նաև* կաղկաջաիոս *Մագ. մեծ են. էջ 6, թղ. 213։*

=*Բնաձայն բառ. կազմուած է կ պարզ ձայնից կրկնութեամբ և* r *(կամ ղ) ու չ (կամ ջ) յաւելուածներով. Համմտ.* գարգաչել, մարմաջել, frfjal, դրդչիւն, կրկջաձայն, բարբանչել։—*Աճ.*

ՆՀԲ «որպէս թէ ստէպ կանչ»։ Տէրվիշ. Նախալ. 43 հնխ. garg *արմատից, էջ 55* gark *արմատից, իսկ էջ 76 տե՛ս ծաղր բառի տակ։ Հիւնք.* կարկել *բառից։* Bugge KZ 32, 52 *կցում է լիթ.* karkiu, karkti *«բղաւել, կռկռալ» բա-*

յին (որի միւս ընկերներն են բաց Pokorny *I, 413 սնս.* kṛka-vaku- «աքլոր», զնգ. kahrka «ծուղրուղու», պրս. kark «հաւ», լտ. crōcio «կոկոալ» են են, բոլորը հնխ. ker- արմատից՝ q ածականով)։ Վերի մեկնութիւնս տե՛ս ՀԱ 1899, 204 բ։ Scheftelowitz BB *28, 307* սանս. gárjati, անգսք. cracian, հրգ. crahhōn «աղմկել» են բառերի հետ։ Մառ (ըստ Դասիանցեան, Հարեթ. լեզվ. *21*) արմատն է կար «ջուր», որ ճիշտ Ամերիկայի (sic!) karr «ջուր» բառն է։

Գիմ.—Ալշ. կրգրչալ, Մշ. կրգրճալ, Սեբ. գարգրչալ, Հճ. գ'այգրչել, Ախց. կչկչալ, բոլորն էլ «հաւի կոկոտալը». սրանց հետ նաև կարկնչել Բբ. Խրբ. Զրս. «թռչունների գեղգեղելը», Խրբ. Մն. «հաւի կոկոտալ», կարկրնչոց Խրբ. «կաքաւի ձայն», կարկնչան Պլ. կարկչան Ակն. Եւդ. Կս. Ք. կակկրճան Կիւր. «շատ կոկոտացող (հաւ)», կարկաչայ Ախց. Ախք. Կր. Մշ. «ճռ ճռ ձայներ հանելու մի տեսակ խաղալիք, ճռռան», Ասլ. գարգրնչել «հավի կոկոտալը»։

ԿԱՐԿԱՌ տե՛ս Կառ։

Նշբ «**kar** ի **karի** վերայ կուտեալ կամ կառոյցք **karանց**»։ Մորթմանն ZDMG *26, 527* (ինչպէս նաև Բևեռաձև արձանագր. Մորթմանայ, Թրգմ. Ապտուլլահեան, Պօլիս 1872, Աւիսպուրգի Ընդհանրական լրաթերթէն, 1871 դեկտ. *թ. 335*) համեմատում է յն. χαρκάριον, լտ. carcer, գերմ. Kerker, բևեռ. kharkharni կամ խորխոր «միջնաբերդ կամ ամրոց»։ Տէրվ. նախալ. տե՛ս կարկել բայի տակ։ Bugge KZ 32, 52 հիւլ. carric, կիմր. careg «քար, ժայռ» բառերի հետ։ Karst, Յուշարձան 405 սումեր. kar «թումբ, քարափ», gar «դէզ, եզերք» բառերի հետ։ Մառ ИАН *1911, 470* վրաց. խելի «ձեռք», *1918, էջ 2092* **kar** բառից, միջգր. կայի «կայծքար». աւելի ընդարձակ Сред. перед. *էջ 46.* իսկ Яз. и Лит. I *228* և *268* հյ. **kar**, բասկ. ari «քար», սվան. kaɣ «կայծքար», նաև հյ. կին, խին, կինճ։ Վերջապէս Մառ ЗВО *25 (1921), էջ 18* կրկնուած **kar** բառից։ Պատահական նմանութիւն ունի բառիս հետ արաբ. كركر karkara «դիզել» (Կամուս, Թրգ. Թրգմ. *Բ. 95*)։

Փոխ.—Հայերէնից է փոխառեալ ըստ Մառի վրաց. კარკარი կարկարի «բարձր ժայռ, վախք լեռան» (Физіологъ, *էջ 106*) կամ კარკალი կարկալի «քարերի կոյտ» (Яз. и Лит. I, *էջ 268 ծանօթ.*)։

ԿԱՐԿԱՌԻԿ «վանդակ». ունի միայն Բառ. երեմ. *էջ 159*։

ԿԱՐԿԱՏԵԼ տե՛ս Կար։

ԿԱՐԿԱՐԵԱՑ «զազեաց». այսպէս ունի Բռ. երեմ. *էջ 159*. ի՛նչ լինելը յայտնի չէ։

ԿԱՐԿԱՐԻՈՒՆ կամ ԿԱՐԿԱՐ «մի տեսակ բոյս. լտ. chamaeleon» Բժշ. ունի միայն ՀԲուս. *§ 1362*։

Բառիս -իուն վերջաւորութիւնը ցոյց է տալիս՝ որ արաբերէն է. բայց Կամուս, Թրգ. Թրգմ. قرقر qarqar արմատի տակ չունի այսպիսի մի ձև։ Կայ ասոր. ܓܪܓܘܪܝܢܐ gargurinā melilotus»։

ԿԱՐԿԱՓ. արմատ առանձին անգործածական. գտնւում է հետևեալ բառերի մէջ. կարկափացեալ «բերանը պապանձուած» Բենիկ. (տպ. Սոփերք ԻԱ *81*), կարկափել «բերանը փակ մոմոալ կամ մոմոալով վրան վազել, ապառնալ» Վրդն. աւետ. Մեսր. երէց. Սիմ. ապար. *94*. «պապանձիլ, բերանը բռնուիլ» Ադամ. *261*. կարկափեցուցանել «պապանձեցնել, լռեցնել» (նորագիւտ բառ) Կնիք հաւ. *326* (սաստեալ ալեացն և կարկափեցուցեալ)։

=Թերևս կրկնական բառ է. համմտ. խարխափ, սարսափ, շարշափ, բարբափ, գարգափ։—Ա.Ճ.

Նշբ կարկել և կափուցանել բառերից։ Վերի ձևով Ա.Ճառ. ՀԱ 1899, 235։

Գիմ.—Ղրբ. կո՛ւրկուփ «լուռ ու մունջ», որից կրկուփ աճել, կրկուփ գալ «բոլորովին լռել»։

ԿԱՐԿԵԼ «փակել, ամրացնել» (դուռ, սենեակ). այս նախնական իմաստով (որ չունին բառարանները) մէկ անգամ գտնում եմ գործածուած Բարուք գ. 17 «Եւ զոր օրի-

նակ առն միոջ չարագործի և մահապարտի՝ կապելոյ ի բանաս արքունի, այնպէս շուրջ զնոքօք զսրահսն փակեալս և կարկեալս ի ամրացուցեալս պահեն քուրմքն իւրեանց՝ նգօք և փակոցօք և գռնափակօք»։ Այս առաջին ընդհանուր իմաստից բխում է մասնաւոր և աւելի գործածական նշանակութիւնը՝ «բերանը փակել», այն է՝ «պապանձեցնել» Ես. ծր. 15. Ոսկ. մ. ա. 15, 16. Կոչ. որից կարկիլ «պապանձիլ» ՍԳր. Կոչ. 254. Եւս. պտմ. Եփր. ծն. «յաջորդութեան կարգը դադարիլ, սպառիլ» Եւս. պտմ. էջ 34 (տպ. կրկնցաւ). կարկեցուցանել «պապանձեցնել» Ոսկ. բ. կոր. «ալիքների յուղմունքը դադարեցնել» Մծբ. «արեան հոսումը կանգնեցնել» Եփր. համաբ. 78։

Տէրվ. Նախալ. 78 հնխ. gar «մօտեցնել, դիզել, ժողովել, ամփոփել, կուտել» արմատից է դնում սանս. jar «ժողովուիլ», grāma «ժողով», յն. ἀγείρω «ժողովել», ἀγορά «ժողով», հյ. կար, կառուցք, կարել, կարկել, կարկամ<*կակրամ, կարկառել, կարկառ, գուցէ նաև երկար <կեր-կար կամ կրար և երկայն <կրանի։—Հիւնք. կարկեհան բառից։

*ԿԱՐԿԵՀԱՆ (ի–ա հլ. ըստ ՆՀԲ, բայց կայ միայն սեռ.-ի) «հրագոյն պատուական մի քար է» ՍԳր. Նչ. եզեկ. Նար. որից կարկեհանեայ Ոսկ. ես։—Ուրիշ վկայութիւն չկայ։ =Արշակունեաց պհլ. *karkaδan ձևից փոխառեալ։ Այս բառը թէև չէ աւանդուած, բայց հաստատւում է մի կողմից հայերենի և միւս կողմից արար. كركند karkand «հրագոյն մի ակն», كركفن karkahan, كركفان karkahan «մեղեսիկ» բառերի միջոցով, որոնք նոյնպէս նրանից են փոխառեալ։ Ըստ Laufer, որ բառիս ծագման վրայ ունի մի առանձին յօդուած (MSL 22, 43—46), այս բարի հայրենիքն է Յեյլոն կղզին, որով և բոլորի աղբիւրն է սանս. 𑀓𑀭𑁆𑀓𑁄𑀝𑀦 karketana, որից յառաջացել են պրակրիտ kakkeraa, թիբեթ և մոնգոլ. kekeru: Շատ հին ժամանակ բառը անցել է Պարսկաստան և տուել արշակունեան *karkaδan ձևը։ Սրանից պէտք է բաժանել յն. χαλκηδών (գործածուած է Յայտ. իա. 19, որ մեր թարգմանութեան մէջ եղել է պղնձագոյն. ծագում է Քիլիքիոյ Քաղկեդոն քաղաքի անունից) և καρχηδόνιος, որ Կարթիգոնի անունից է ծագում։ Վերջին յոյն բառից է ծագում ասոր. ܟܪܟܕܘܢܐ qarkeδonā, թիրևս և հր. כרכדון karkdōn: Նոյն յունարէն ձևերից են ծագում նաև լտ. calchedonius և carchedonius: Կարկեհանը մեծ ընդունելութիւն չգտնելով՝ վաճառականութեան մէջ փնտռուած առարկայ չդարձաւ։ Այս քարը անծանօթ է Զինացոց. իբրև գրական փոխառութիւն է յիշւում թիբեթերէնի և մոնղոլերէնի մէջ, և միայն հայերէնն ու արաբերէնն են, որ նրա յիշատակը պահում են—Հիւրշ. 167, 512։

ՀՀԲ և ՆՀԲ (որից նաև Հիւնք.) մեկնում են կրակաճան, իբր համեմատութեամբ հոմանիշ կայծ և յն. ἄνθραξ ձևերի։ Առաջին անգամ ուղիղ մեկնութիւնը տուաւ Գէորգ Դպիր, Գիրք մեծագին և պատուական ականց, Պօլիս 1807, էջ 255, որ համեմատում է արաբ. կէրկէճէն ձևի հետ։ Նոյնը յետոյ Պատկ. Драгоцен. камни, էջ 72 և աւելի յետոյ Lag. Arm. Stud. § 1129։ Վերի ձևով Հիւրշ. Pers. Stud. էջ 199։

ԿԱՐԿԻԿԱՆ տե՛ս Կարկինոս։

ԿԱՐԿԻՆ տե՛ս Կարակին։

*ԿԱՐԿԻՆՈՍ (ի–ա հլ. ըստ ՆՀԲ, բայց առանց վկայութեան) «խեցգետին (անասունը)» Վեցօր. 143. Նեմես. բն. էջ 30. «խոլխեցգետնի, քաղցկեղ հիւանդութիւնը» Լմբ. Յայսմ.—վերջին իմաստով ունինք սխալ գրչութեամբ կարկիկան Յայսմ. դեկտ. 16 (Կին մի վիրաւորեալ ի ստինսն, զոր կարկիկան (այլ ձ. կարիկան) կոչեն)։

=Յն. καρκίνος «խեցգետին, խեչափառ. 2. քաղցկեղ հիւանդութիւնը», որից փոխառեալ են նաև ասոր. ܟܪܩܝܢܘܣ qarqīnūs (տ. Մառ ЗВО 13, 32), վրաց. კარკინო կարկինո։—Հիւրշ. 355։

Ուղիղ մեկնեցին նախ ՀՀԲ և ՆՀԲ։

+ԿԱՐԿՈՒՏ, ի հլ. «կարկուտ» ՍԳր. Մծբ. որից կարկտեայ Ոսկ. երր. կարկտաբեր Եփր. պհ. կարկտախառն Եղիշ. յես. Շիր. կարկտածեծ Վստկ. էջ 116. կարկտածու

խոր. կարկտաճար *Լծ. Կոչ.* կարկտաճոս *Արծր.* ֆարէկարկուտ *Նխ. յես։ (Անստոյգ բառեր են կարկտումն Վրդն. սղ. և կարկըտչել Փիլ. նխ. 63. այս բառերը ՋՔ չի յիշում. ՆՀՔ մեկնում է կարկտումն «փոխարկումն անձրևոյ ի կարկուտ կամ տեղատարափ կարկտի և կամ ուրսռումն», կարկաչել «տեղալ կարկտի, կարկտել, մանաւանդ դողալ ի ցրտոյ՝ որ յերեսաց կարկտի, կամ բաբախել ատամանց ընդ միմեանս»։ Առաջինը ըստ այլ ձեռ. կարդալու է կրկտմամբ, իսկ երկրորդը պէտք է ուղղել ըստ իս կարկաչել «ատամները իրար զարնել, զոփալ». համմտ. կարկաջումն, ատամնակարկաջ բառերը՝ կարկաչ արմատի տակ։ Տե՛ս նաև վ՛արը կրկիտ)։

=Բնիկ հայ բառ՝ հնխ. $g^2ag^2rōdo$- ձևից։ Սրա հետ համմտ. հսլ. gradŭ, ռուս. градъ, լհ. grad, չեխ. hrád, լտ. grando հոմանիշները և լիթ. gródas «սառած ցեխ»։ Այս բոլորի նախաձևն է $g^2rōd$-, որ հայերէնի մէջ կրկնուելով տուել է նախ *կակրուտ, յետոյ շրջմամբ կարկուտ: Թէև սրանց նման են հնչում, բայց սրանցից տարբեր խումբ են կազմում սանս. hrādúni- «կարկուտ», hrādate «աղմկել», յն. χάλαζα «կարկուտ» և դոր. κεχλάδειν «աղմկել» (Walde 351, Boisacq 1047, 1055, Berneker 344, Trautmann 99, Pokorny 1, 658, Ernout-Meillet 413):—*Հիւբշ.* IF Anz. 10, 48?:

Նախ Klaproth, Asia poly. 101 համեմատեց սլ. gradŭ, լտ. grando բառերի հետ։ ՀՀՔ և ՆՀՔ ֆարէ կուտ: Ուղիղ մեկնութիւնը վերի ձևով տուաւ նախ Տէրվ. Նախալ. 82, որից անկախաբար յետոյ Meillet MSL 10, 280: *Հիւնք.* կարկատել բայից։ Bittner WZKM 14 (1900). 161 պրս. تگرگ tagark հոմանիշի հետ։ Karst, *Յուշարձ. 420 ք՛ք.* kar «ձիւն, եղեամ, սառոյց» և հյ. սառն բառերի հետ։

Գիտ.—*Ագլ. Ախց. Գոր. Երև. Կր. Ղրբ. Մկ. Մրղ. Շմ. Սլմ. Վն. Տփ.* կարկուտ, *Ալշ. Մշ.* կարգուդ, *Ոզմ.* կարկօտ, *Խրբ. Հմշ. Պլ. Ռ. Սեբ. Սչ.* գարգուդ, *Տիգ.* գըրգուդ, *ՋՔ.* գայգուդ, գարգուդ, *ՀՁ.* գայգուդ, *Սվեդ.* գ՛արգ՛էօդ, *Ասլ.* գարգիւնդ *(վերջինիս մէջ ն ձայնը յիշեցնում է պատահաբար լտ. n, բայց կապ չունի նրա հետ և յառաջացած է ժողովրդական ստուգաբանութեամբ կապելով կունդ=գունդ բառին)։* Նոր բառեր են կարկտագիր, կարկտաբակ, կարկտատար. կարկտել «կարկուտի պէս տեղալ (արցունքը)», կարկտաճատ «կարկուտի հատիկ»։

ՓՈՒ.—Կարո՞ղ է հայերէնից լինել գնչ. kukkudi «կարկուտ».—Paspati այս բառը համեմատում է յն. κόκκος «որդան», κόκκινος «կարմիր» ևն բառերի հետ, որոնք ո՛չ մի յարաբերութիւն չունին գնչու ձևի հետ։

*ԿԱՐԿՈՒՐԱՅ, ի *Հլ.* «նաւակ» *Խուիք. յոր. 142,* որ և կարկուրեայ «նաւակ» *Ծիր. եղ. էջ 164 (դրուած է սեռ.* կարկուրէից ձևով, որից ՆՀՔ հետևցնում է ուղ. *կարկուրէ. բայց աւելի լաւ է անշուշտ դնել համաձայն նախորդին *կարկուրեայ):

=Ասոր. قرقورا qarqūrā «նաւակ» բառից փոխառեալ. սրա հետ նոյն են արաբ. قوقور qurqūr «նաւակ» և յն. κέρκουρος *(Հերոդոտոս 7, 97)* «կիպրացոց յատուկ մի տեսակ թեթև նաւ, երկար յետևով». *(վերջինս փոխառեալ է նոյնպէս սեմականից, բայց ձևափոխուած՝ յն. κέρκος «պոչ» և οὐρά «պոչ» բառերի նմանութեամբ* (Boisacq 441):—*Հիւբշ. 307։*

ՆՀՔ «լծ. յն. գարա՛վիոճ, որ և անուն խեցեմորթի, բրբ. գարավիտէս»։ Ուղիղ մեկնութիւնը տուաւ Հիւբշ. ZDMG *36 (1882), էջ 131։* Նորայր, Բառ. ֆր. *199ա* յիշում է մալայերէն forա-forա և ֆրանս. caracore հոմանիշները։

ԿԱՐՃ, ո *Հլ.* «ո՛չ-երկար, համառօտ» Ղկ. *ժթ. 3. Ոսկ. յհ. և մտթ. Կորիւն.* որից կարճոյ «կարճ» *Եզ. ժգ. 17. Ծիր. օրին. էջ 272.* կարճ ի կարճոյ *ՍԳր. Կոչ.* ի կարճոյ *Իմ. ժգ. 14.* կարճել *ՍԳր. Եւս. պտմ. Ոսկ. Ագաթ. Եզն.* կարճաբերձ *Վեցօր. (որ Ս. Վ. Նաղալէեան, Պատկեր 1893, էջ 39 ըստ մի ընտիր ձեռագրի ուղղում է* կարճամբարձ). կարճակեաց *Ծիր. Թգ. 361. Վեցօր.* կարճաճաս *Ագաթ.* կարճամիտ *Առակ. ժդ. 29. Ոսկ. «յուսահատ» Ես. լե. 4. Ա. Թես. ե. 14. «կծծի» Ոսկ. յհ. բ. 30.* կարճագգեաստ *Մծբ.*

կարճապատում *Ագաթ.* կարճապարանոց *Վեցօր.* կարճառօտ *Բ. մակ. բ. 29, 33. Եւս. քր. Սերբ.* կարճատել *Երեմ. գ. 4. Ոսկ. բ. կոր.* կարճուձ *Գաւ. իս. 17.* կարճատես *(նոր բառ) են։*

Klaproth, Asia pol. *102 գերմ.* kurz, *պրս.* chord, *լ.* curtus *հոմանիշների հետ։ ՆՀԲ պրս.* խօրտ, *լ.* curtus, *իտալ.* curto, scarzo, *ռուս.* краткій։ *Տէրվ.* Altarm. 30 *հյ.* կուրտ *բառի հետ նոյն է դնում։ Նոյն, Նախալ. 70 հնխ.* kart *«կտրել, կտրել» արմատի տակ դնում է նաև.* kart, *լիթ.* kirtau *«կըտրել», հյ.* կարճ, կրճատել, կուրտ, կրտսեր, *լ.* curtus: *Եաղըճեան, Արեւելք 1884 նոյ. 16 տես.* varjayami *ձևից։ Հիւնք.* Ւ*ետծուլ բայից է հանում։ Հիւրշ. 459 մերժում է կցել յն.* κολοβός, κολοβόω *«կարճ, կարճել» բառերին,* Pedersen, *Հայ. դր. լեզ. 76 կապ չունի լ.* curtus *«կարճ» բառի հետ։ (Այսպէս նաև* Walde 216, Pokorny II. *էջ 580)։* Patrubány *ՀԱ 1908, 187 դնում է* կարել *բայից, իբր* կար>կրտ>կարտ >կարճ։ *Թիրեաքեան, ՀԱ 1912, 288 նոյն ընդ* ճարճ։ *Մառ* ЗВО *1925, 799 և 801 ռուս.* korot *և գերմ.* kurz *ձևերի հետ։ Պատահական նմանութիւն ունի արաբ.* قرد qard *«կարճ» (Կամուս, Թրք. Թրգմ. Ա. 669)։ Պատահական են Թերևս նաև վրաց. դակարծախերա «տափատի վարի ծայրը նեղացնել», կրճա, գակրճա «խուզել, ածիլել, փոքրել զհերս»։*

Գիւտ.—Ախց. Գոր. Երև. Կր. Ղրբ. Շմ. Ոզմ. Սլմ. Տփ. կարճ, *Խրբ. Ննխ. Պլ. Ռ. Սեբ. Սչ.* գարջ, *Ասլ.* գարջ (գարժ, գարշ), *Սվեդ.* գարջ, *Տիգ.* գmրջ, *Մկ. Մրզ. Ջղ. Վն.* կառճ, *Ալշ. Մշ.* կառջ, *Հմշ.* գայջ, *Զթ.* գ՝mյջ, գ՝mրջ, *Ագլ.* կօռճ: *Նոր բառեր են* կարճակոթիկ, կարճակող, կարճաղագ, կարճաթաթիկ, կարճատոտիկ, կարճառև, կարճատուն, կարճիկ, կարճուկ, կարճճուկ, կարճլիկ:

ԿԱՐՃԵԱՆ *«բաւական մեծարժէք մի դրամի անուն». նորագիւտ բառ, որ մէկ անգամ դտնում եմ գործածուած Կանոն. 91 «Իսկ որք ի գազանս և յանասունս յանդգնին... քահանայն սեղեկացեալ՝ գանեսցէ առժամայն և 3 կարճեանս յաղքատս տացէ. և 300 ծնրադրութիւն»։ Յանցանքի մեծութեան համեմատութեամբ 3 թուանշանի փոքրութիւնից երևում է որ կարճեանը բաւական մեծարժէք մի դրամ էր։*

ԿԱՐՃԸՆԴԵԱՑ *տե՛ս Կարիճ։*

ԿԱՐՃԻՆ *«բոյսի արմատ». մէկ անգամ ունի Ագաթ. § 548 «Զարաթոյն օդոցն շընչմամբ խստութեան դառնութեան՝ խորշակահար ցամաքեցուցանէ զվարսաձև բոյսս դալարոյն, մօտ առ կարճինսն այրեցուցանէ»։ (Զեռ.* կաճիճսն, կարճիսն, կարճիսկսն. *ՆՀԲ դնում է* կաճիճ, *նոր տպագրութիւնը՝* կարճիճսն, *բայց ուղում է կարդալ «մօտ առ կարճ իսկ սնարեցուցանէ». կրկնագրում պակասում է. յն. և արաբ. թարգմանութիւնները յապաւած են այս մասերը)։ Թէ ուղիղն է* կարճիճ՝ *ցոյց է տալիս նրանից ածանցուած* կարճնովիճ *«արմատաթի, արմատով միասին» բառը, որ գործածուած է մէկ անգամ Սղմ. կէ. 22 «Փշրեսցէ զդլուխս թշնամեաց իւրոց և զհերսն կարճնովինն» (այլ ձեռ.* կարճովիճ*)։*

ՆՀԲ կարճիճ *հանում է* կաճ *«թաղիք» բառից, ասելով «Թերևս բազմաթել որպէս զկաճ»։—*Կարճնովիճ *բառը տեղի է տուել այլևայլ թիւր մեկնութեանց։ Յունարէնը թարգմանում է* κορυφὴν τριχὸς *«մազի գագաթը», որին նման են հյ.* верхъ власъ *և ֆրանս.* le sommet de la perruque. *Եբրայական բնագիրն ունի* קדקד שער qādqōd še'ār *«մազի գագաթը», որ բողոքականները թարգմանել են անգլ.* the hairy scalp *«մազոտ մաշկը (գլխի)», պրս.* کلّه مویدار kalla-i mūydār *«մազոտ գանկը» են։ Յունարէնից աղդուելով Եփր. աւետ. հասկանում է «գագաթն հերոյ, ոչ կատարեալ հեր», Լմբ. «կարճելով ի բաց», Վրդն. «զուղեղն կամ կարշովին՝ իբր արմատով», Հին բռ.* կարճնով *«կաշի» բառից է հանում, ՆՀԲ «կարշնովին, կաշիովին կամ գագաթովին, այսինքն հանդերձ մորթով գլխոյն՝ յոր տնկեալ*

են արմատք հերաց»։ Ուղիղ են մեկնում ՀՀԲ և ՋԲ, որոնց հետևում է նաև ԱԲ։

ԿԱՐՃՕՏԵԼ, *անստոյգ բառ. մէկ անգամ գործածուած է Լմբ. առ Լև. տպ. Վեննետ. 1865, էջ 227. «Անվրդով կալ ի գինըմպութիւնն և յորովայնապարարութիւնն և յայլ չարիսն. յորոց միջի ճախրեն և ընդ կարճօտելն մաղկատեալ, անտես արարին զաստուածահաստատ իշխողիդ գիր»։ Թերևս նշանակում է «զեղխիլ, շուայտիլ, արբեցութեամբ և կերուխումով ժամանակ անց կացնել» և կամ «կարճել, դադարեցնել» (տե՛ս իմ Հայ. նոր բառեր հին մատ. Ա. 49)։*

ԿԱՐՄԻ *«ուզաս». ունի միայն Բառ. երեմ. էջ 150 (բ. տպ. յուղաս). ի՛նչ լինելը չէ յայտնի։*

***ԿԱՐՄԻՐ**, *ո հլ. (յետնաբար նաև ի–ա հլ.) «կարմիր» ՍԳր. «կարմիր գոյնով բան, ծիրանի, որդան կարմիր» ՍԳր. «ոսկի դրբամ» Անսիզք 31, Վրդ. պտմ. էջ 162. Հայկ. 17.—որից* **կարմրաձալ** *ՍԳր. Եզն.* **կարմրացուցանել** *Իմ. ժգ. 14. Ոսկ. ա. կոր. Եզն.* **կարմրութիւն** *Ես. կգ. 1.* **կարմրագոյն** *Ղևտ. ժգ. 43.* **կարմրադեղն** *Ագաթ.* **կարմրախնձոր** *Ագաթ.* **կարմրայտ** *Ես. քր. ծայրակարմիր Բ. մակ. ժ. 28. շիկակարմիր Ել. իզ. 14. Բուզ. Նոր բառեր են դեղնակարմիր, կարմրաբշիկ, կարմրամորթ, կարմրերես, կարմըրուկ ևն։*

*=ՊՀլ. *karmir հոմանիշից, որ իրանեան դրականութեան մէջ աւանդուած չէր և վերջերս միայն երևան եկաւ (տե՛ս* Gauthiot, Gram. sogd. 143 *և* MSL 17, 247) *սոգդիական* krm'yr *(կարդա՛ karmīr) «կարմիր» ձևով։ (Բայց ըստ Մարքվարտ (անձնական) կայ պՀլ.* كرمير kalmīr *«կարմիր»)։ Նոյնից փոխառեալ է նաև եբր.* כרמיל karmīl *«որդանի կարմիր գոյնը և նրանով ներկուած բան». Համմ. նաև սանս.* kirmira: *Բոլորի արմատն է պրս.* كرم kirm, *զնդ.* kərəma (?), *սանս.* kṛmi *«որդ», որի ցեղակիցներն են ալբան.* krüm, krimp, *իռլ.* cruim, *լիթ.* kirmis, *հպրուս.* girmis *«որդ», ընդհանուր նախաձևը հնխ.* q"ṛmi-: *«Որդ> կարմիր» նշանակութեան զարգացման պատճառն այն է, որ հին ժամանակ ծիրանի կարմիր գոյնը պատրաստում էին մի տեսակ որդից* (coccus ilicis *կամ* coccus polonicus), *որ կաղնի ծառի վրայ աճող մի մակաբոյծ էր։ Համմ. ուրիշ լեզուներից՝ նշանակութեան նոյնպիսի զարգացմամբ՝ յն.* κόκκος *«որդ» և* κόκκινος *«կարմիր», հսլ.* čĭrmĭ *«որդ» և* črŭmĭnŭ *«կարմիր», լտ.* vermis *«որդ» և* vermiculus *«որդան»>իտալ.* vermiglio, *ֆրանս.* vermeil *«կարմիր», հսլ.* *vĭrmi *«որդ» և ուկր.* vermjanyj *«կարմիր», հպրուս.* wormyan *«կարմիր»։ Այնուհետև իրանեան բառը տարածուեց Արևելք և Արևմուտք (Եւրոպա մտաւ արաբների միջոցով). համմ. Թրք.* قرمیز qərməz *«որդան», qərməzə «կարմիր», քրդ.* kərməz, *արաբ.* kirmiz, kirmizī, *սպան.* alquermes, *ֆրանս.* kermès, *իտալ.* carmesino, *գերմ.* Karmesin, *լհհ.* kiermes, alkiermes, *բուլգար.* hrimiz, *սերբ.* grīmīs, *ռուս.* кармазинъ, *միջին հյ.* **խրմզի, ղրմզի** *«ծիրանի», գործածական յետին ռամիկ լեզուի մէջ, ինչ. Կոստ. երզն. էջ 114, 120 ևն* (Boisacq 245, 844, Berneker 169, 490):—*Հիւրշ. 167։*

Schröder, Thesaur. 45 *դրաւ եբրայեցերէնից փոխառեալ։* Klapr. As. pol. *104 Թրք.* qərməzə, *սլ.* čermno, *գերմ.* Karmin, *ֆրանս.* cramoisi *բառերի հետ։ Նշ Յիշում է եբր.* **գարմիլ**, *Թրք.* **գըրմըզը**, *ռուս.* **չէ՛рмѣнь**: Tychsen, *և սրան հետևելով* Hüllmann, Städtewesen des Mittelalters I. *էջ 249 կարմիր որդանը համարում են հայկական արտադրութիւն։ Սրանց հակառակ* Pott, Kurdische Studien ZKM 1842, *էջ 41 համարում է հնդկական, համեմատելով պրս.* kirm, *քրդ.* kermi, *բուխար.* girm, *սանս.* kṛmi, *գնչ.* kirmo, *նաև քրդ.* krmes, *պրս.* kirmiz *ևն ձևերի հետ։* Böttich. Rudim. *44, 143 սանս.* kṛmi, *եբր.* karmīl *ձևերի հետ։ Նոյն* ZDMG 1850, 356 *և* Lag. Urgesch. 774, Pictet I, 418 *սնս.* kṛmi: Müller WZKM 8 *(Թրգմ. ՀԱ 1894, 294) փոխառեալ հնդկերէնից։ Հիւնք. Թրք.* **գըրմըզը**, *եբր.*

արաբ. էլեմէզ, պրս. կէրմիր (որոնք գոյութիւն չունին)։ Հիւբշ. էջ 167 կասկածական է դրած, որովհետև այն ժամանակ սոգդիական ձևը երևան չէր եկած դեռ։ Սոգդիականի գիւտով կասկածը ջնջում է Meillet MSL 17, 247:

ԳԻՒ.—Ագլ. Ալշ. Ախց. Երև. Կր. Մկ. Մշ. Ջղ. Սլմ. Վն. Տփ. կարմիր, Ասլ. Խրբ. Հմշ. Ննխ. Պլ. Ռ. Սեբ. գարմիր, Տիգ. գɪրմիր, Ոզմ. կարմէ՛ր, Մրզ. կառմըի՛ր, Սչ. գարմեր, Սվեդ. գ՛արմէր, Ցղ. կմ՛րմիւր, Գոր. Ղրբ. Շմ. կ՛ɪրմիւր, Ղրբ. կ՛ɪմբիւր, Ջբ. գայմբ՛յ, գարմբ՛ր, Հճ. գայմիյ: Նոր բառեր են կարմիրկեկ, կարմրաւուն, կարմրաճոպ, կարմրաւաշ, կարմրենի, կարմրնախիլ, կարմրոշիկ, կարմրոտիլ, կարմրաչք, կարմրաժեռ, կարմրրակոլել են։

ՓՈԽ.—Վրաց. լազ. կալմախա «կարմրախայտ ձուկը» ըստ Մառ, Грам. ч'анскаго яз. էջ 151 փոխառեալ է Հյ. կարմրախայտ բառից։ (Այս բառը գործածած է արդէն Մագ. Թղ. Բ, ժա)։

ԿԱՐՇԱՆ «տնանկ, նուաստ, Թշուառ». ունին միայն Բառ. երևմ. էջ 159 և ՓՒ յաւել։

ԿԱՐՇՆ «ոյժ, զօրութիւն». առանձին չէ գործածուած. գտնւում է հետևեալ ածանցների մէջ. կարշնեղ «զօրեղ, ուժեղ» Պիտ. կարշնեղագոյն «ուժեղագոյն» Պիտ. կարշնեղութիւն «ուժեղութիւն» Պիտ. -ն յանգի անկումով՝ կարշապինդ «կարշնեղ» ԱՒ. -ր-ի անկումով (յաջորդ շ-ի պատճառաւ) կաշնել «զօրել» Բառ. երևմ. էջ 156 և ՋՒ. -ն վերածուած մ-ի (յաջորդ բ-ի պատճառաւ) կաշըմբուռն «զօրեղ, հուժկու» Եւս. քր. ա. 216։ Առանձին կարշն ձևը տալիս է Բռ. առեփ. լեհ. և մեկնում «ծայր բազկի ի մէջ ոսկերաց թիկան և արմկան»։ Սա անշուշտ պարզ ենթադրութիւն է. աւելի ուղիղ կլինէր դնել «ոյժ ջղաց կամ մկանանց» և կամ պարզապէս «ջիղ», ինչպէս ունին ոմանք։ Սխալ գրչութիւն է կարշև «ուժեղ» Բառ. երևմ. էջ 159։

ՆՀԲ լծ. կաշի, կարծր, կոճիկ, մանաւանդ Թրք. ғɪрɪш «լար»։ Lag. Urgesch. 688 սանս. karásna, իրրև kar արմատից։ Müller SWAW 42, 254 դնում է կաշն և համեմատում գնդ. kaša «ուս» բառի հետ։ Justi, Zendsp. 82 գնդ. kaša, սանս. kákša, պհլ. պրս. kaš «անութ»։

ԿԱՐՈԳԻՆ «չաման» Գաղիան. ունին միայն Բառ. երևմ. յաւել. 568 և ՀԲուս. § 2442։

Վերջինը մեկնում է յն. κάρρον «չաման» բառի նուազականով, որ սակայն չգիտեն Bailly և Sophocles:

*ԿԱՐՈՍ, որ և կարաւս, կարօս, ғարաւս, ғարոս, ғրաս, ғրէֆս, ғերաս, ғէրէֆս «լախուր, լտ. selinum, apium nodiflorum» (Տիրացուեան Contributo § 282) Բժշ. Վստկ. 108, 166. ғարոն, կարոն «ազատրեղ, ընտանի կամ մակեդոնական կարոս, Թրք. մայտանոս, ռուս. պետրուշկա» Բժշ. որից ғեղակարոս կամ ғեղաғարոս «վայրի կարոս» Բժշ։

=Պրս. کرفس karafs «apium petroselinum, graveolens», որից փոխառեալ են նաև արաբ. کرفس karafs (Կամուս, Թրք. Թրգմ. Բ. 284), քրդ. kerefs, Թրք. کرویز kereviz «լախուր»։ Հյ. բառի հնագոյն ձևն է կարաս, որից կարօս, սխալ ուղղագրութեամբ կարոս, որ արդի գրականի ընդունած ձևն է. միւսները յետին արտասանութեանց համեմատ տառադարձուած ձևեր են։—Հիւբշ. 167։

ՆՀԲ դնում է ոմկ. (իմա՛ Թրք.) ғէրէվիզ։ Lag. Urgesch. 841 և Gesam. Abhd. 61, 24 պրս. karafs ձևից։

ԳԻՒ.—Մկ. Վն. կարօս (ո՛չ թէ ո-վ. Վանայ բարբառը զանազանում է այս երկու ձայնները). Սվեդ. գ՛արաւս, Խրբ. (բարդութեամբ) առվիգարօս (իմա՛ առուի կարոս)։

*ԿԱՐՈՒՐԱՅ (սեռ.-ի) «միզաման» Մխ. բժշ.։

=Արաբ. قارورة qārūra «փարչ, միզաման», որի հետ նոյն է ասոր. ܩܪܘܪܐ qārūrā «շիշ, աման»։—Հիւբշ. 269։

Ուղիղ մեկնեց նախ Հիւբշ. ZDMG 36 (1882). 131, յետոյ Նորայր, Բառ. ֆրանս. էջ 1255 բ։

ԳԻՒ.—Բլ. Մշ. գ'ռուրիկ «հողէ փոքրիկ աման՝ մածնի համար են». այս ձևը չի կարող յառաջանալ կարուրայ բառից, այլ են-

թադրում է նրանից անկախ հին հյ. գրուրիկ ձևի գոյութիւնը։

ԿԱՐՊԱՍԵՆԱՅ *«անապակաև». ունի միայն Բառ. երեմ. էջ 159։*

ԿԱՐՍԱՆԿ *«անուշահոտ և լեղի կամ թթու համով հնդկական մի խոտ է» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 3341։*

***ԿԱՐՏԻՆԱՐ** *«կրունկ դրան (իմա՛ ծխնի)». ունի միայն Բառ. երեմ. էջ 159. աղբիւրն է Գիրք առաք. յաճախ գործ է ածում կարտինեարական «գլխաւոր» բառը՝ փոխանակ կարդինալական. այսպէս 194 բ, 291—2 ևն (էջ 413 բ կարտինալական). իսկ էջ 291—2 մեկնում է «Առաքինութիւնք այսորիկ կոչին կարտինարականք... վասն չորս պատճառի. նախ վասն հաստատութեան. զի ասին կարտինարականք՝ որ թարգմանի ծղնկանք, ի ծղնուոյն, զի թէպետ դուռն շրջի ի վերայ ծղնուոյն, սակայն ծղնիքն հաստատ մնան... նաև յայսմանէ անուանեցան կարտինարք, որք կարգաւորեն զբոլոր եկեղեցի, ի յորս շրջի պապն փակօղ և բացօղ»։*

=Լտ. cardinalis *«ծխնիների վերաբերեալ». ծագում է* cardo *«ծխնի» բառից. տես և կարդինալ բառի տակ։—Աճ.*

ԿԱՐՕՏ *տե՛ս Կար։*

Աւետիքեան, Քերակ. 1815, 231 և ՆՀԲ իբր կար-ոտ, կար-ուտ «պէտք ունեցող»։ Ուղիղ է նաև Էմին, Քերակ. 1846, էջ 47՝ որ դնում է -օտ մասնիկ։ Հիւնք. կարասի բառից։ Գաբրիէլեան ՀԱ 1909, 93 ծարաւ բառից է հանում։

ԳԻՒ.—Ախց. Կր. Ղրբ. Մկ. Շմ. Ոզմ. Ջղ. Սլմ. Վն. կարօտ, *Ալշ. Մշ.* կարօղ, *Խրբ. Ննխ. Պլ. Ռ. Սեբ. Սչ.* գարօղ, *Տիգ.* գըրօղ, *Ագլ. Գոր. Տփ.* կա՛րուտ, *Ակն.* գարէօղ *(որից* գարիւճնալ *«կարօտիլ»), Հմշ.* գարէօղ, գարօղ, *Մրղ.* կարուխ, *Ասլ.* գարէօ՛դ, գարէ՛օ*, *Զթ.* գույիւդ, գուրէօղ *(որից* գարբնօլ, գարբնոլ *«կարոտիլ»), Հճ.* գայօղ։

ԿԱՑԱՉԻ, *անստոյգ բառ. մէկ անգամ ունի Փարպ. տպ. 1904, էջ 171 «Որ և առ այժ կացաձի արանց լինէր անցանել դիւրաւ»։— ՆՀԲ մեկնում է «կա՛մ է ունօղ զձի կացեալ անշարժ և խրտուցեալ, և կամ որոյ ձին է կացի, առոյգ, նժոյգ և կամ համբակ, որ-մուղ».—ՋԲ «թուխ քաշաձի, ունօղ կացի այսինքն առոյգ կամ ուժեղ ձիոյ».—ԱԲ «որուն ձին կեցած է, կամ չքալող»։ Իսկ Հ. Գ. Նահապետեան, Բազմ. 1906, էջ 204, 317 յաջող սրբագրութեամբ կարդում է «որ և անոյժ կանացի արանց լինէր անցանել դիւրաւ»։*

***ԿԱՑԻ** *«տղայ, մանուկ, աշակերտ». մէկ անգամ ունի Պիտ. «Դիոգինէս երբեմն զան վայելուչ սովորական տեսանէ իմաստութեան կացի անազդակեալ ի քաղաքի, և դպաստիարակն չնեալ պատուհասէր»։ Նոյն բառը ունի Բառ. երեմ. էջ 159 կացի և էջ 152 կաբսի «տղայ» ձևով։*

=Վրաց. კაცი *կացի «մարդ, տղամարդ», որի հետ ցեղակից է լազ. կոչի, կոժի, կոջի «մարդ, ամուսին, կորիճ»։ Հայերէնը փոխառութիւն է, որովհետև շատ սահմանափակ գործածութիւն ունի։*

ՆՀԲ «լծ. Թրք. genj *կամ իբր յանդիմանակաց տեառն իւրում. վրաց. կացի». իսկ ճամբակ բառի տակ կալ, կացի ձևից՝ իբր «նոր ոտք եղած»։—* Scheftelowitz BB *28, 287 զնդ.* kasu *«փոքր» բառին ցեղակից։*

***ԿԱՑԻՆ**, *n հ. (յետնաբար նաև ի–ա հ). «տապար, փայտատ» Ա. Թագ. ժգ. 21. Եղիշ. Արծր. որից* կացնաւոր *Վրդն. ծն.* կացնակ *«փոքր կացին» (նորագիւտ բառ) Առաք. պտմ. 124. Աղթամ. 118.* կացնահարութիւն *(նոր բառ). կայ նաև գործիական* կացնեայ հոլովաձևը՝ *Բուզ. Գ. ժ, որ ենթադրում է *կացնի ուղղականը։*

=Ասոր. ܟܣܝܢܐ xaṣṣīnā *«բրիչ, կացին» բառից, որ բնիկ սեմական է. համմտ. արաբ.* خصين xaṣīn *«կացին»,ասուր.* ḫaṣṣīnu *«կացին», եթովպ.* xaṣṣin *«երկաթ»։ Այս բառը միակն է, ուր ասորի x-ի դէմ գտնում ենք հյ. կ՝ իբր լծորդ խ ձայնի (համմտ. իմ յօդուածը ՀԱ 1909, 160)։—Հիւբշ. 307։*

Klaproth, Asia pol. *99 արաբ.* kirsin: *ՆՀԲ լծ. յն.* ἀξίνη *(որից նաև Հիւնք.)։ Ուղիղ մեկնեց նախ* Lag. Reliqq. gr. Vorrede 47: Karolides, Γλ. συγκρ. 174 *լտ.* catus *«սուր»,* cos, cotis *«յհասան» բառերի հետ։* Jensen *համարում*

է հաթեան շրջանի միջոցին անցած հայերէնի։ Մառ, Яфет. сбор. 1, 125 յն. և ասոր. ձևերի հետ՝ յաբեթական բառ։ Նոյն, Сред. передвиж. 47 մեկնում է կա+ցին, ուր կա=fwr, ցին=վրաց. tin «քար»։

ԳԻՒՒ.—Ագլ. Ալշ. Ախց. Գոր. Երև. Կր. Մկ. Մշ. Սլմ. Տփ. կացին, Խրբ. Հմշ. Սեբ. Սչ. գացին, Ոզմ. կացէ՛ն, Ղրբ. կա՛ցրէն, Մշ. կածի, Ասլ. գա՛ձին. վերջինը ենթադրում է *կացցին նախաւոր ձևը, որի մէջ ց-ի կրկնութիւնը կապ չունի ասորի բառի կրկնակ ց-ի հետ։

ՓՈԽ.—Կապադովկ. յն. κάτζιν, որ Karolides, Γλ. συγκρ. 87 մեկնում է «դանակ», իսկ էջ 174 «կացին՝ գետնատիպ քարքարուտ տների մէջ անհարթութիւնները հարթելու համար»։

ԿԱՑՈՒՐԴ տե՛ս Կայ։

ԿԱՒ, ո հլ. (Ոսկ. յհ. բ. 9 ունի սեռ. կաու) «շաղուած հող, տիղմ. 2. մի տեսակ հող, բրուտի կաւ» ՍԳր. Եւս. քր. Ոսկ. յհ. բ. 9. որից կաւագործ «բրուտ, կամ աղիւս շինող» Իմ. ժե. 7. «աղիւսաշինութիւն» Կիւրղ. եւ. Ոսկ. մ. բ. 14. Եփր. Թագ. կաւագործութիւն Ագաթ. կաւակերտ Գ. մակ է. 23. կաւեայ Դան. ժդ. 6. կաւեղէն ՍԳր. Ոսկ. յհ. ա. 37. կաւարծաթ «մի տեսակ հանքային մարմին» Փարպ. կաւաճալ «ցամքիլ, կաւի պէս պնդանալ» Նիւս. բն. Անկ. դիրք հին կտ. Ա. էջ 166. հայկաւ «հայկական կաւ» Բժշ. (օտար լեզուներով էլ այսպէս է կոչւում. համմտ. յն. βῶλος ἀρμένια, լտ. bolus armeniaca, արաբ. طين ارمنى tīn armanī, թրք. kilermeni, որից փոխառեալ ռում. kilermene են). կաւաճող, կաւային (նոր բառեր) են։ Այստեղ է պատկանում նաև կաւիճ, որ տե՛ս առանձին։

ՆՀԲ պրս. ڪل gil, տճկ. kil): Neumann ZKM 1, 242 գերմ. gau «երկիր, գաւառ»։ Նոյնը յիշում է Gosche 6:— Պալասանեան, Պատմ. գրակ. 201 կով բառից, ինչպէս սանս. gô «կով և հող»։ Հիւնք. կու բառից։ Patrubány SA 2, 161 և ՀԱ 1908, 188 յն. βάπτω, βαπτίζω «մխրճել», անգսք. cvabbe «եղտիւր» են բառերին ցեղակից։ Պատահական նմանութիւն ունի սանս. ku «հող, երկիր»։

ԳԻՒՒ.—Ագլ. Ախց. Երև. Կր. Մկ. Մշ. Մրզ. Ոզմ. Սլմ. Վն. Տփ. կավ, Խրբ. Ննխ. Պլ. Ռ. Սեբ. գավ, ՋԲ. գօվ, գով, Սվեդ. գուվ.—Նոր բառեր են կաւամած, կաւկոխ, կաւաճաճ։

ՓՈԽ.—Հայերէնից է փոխառեալ Թրք. գւո. Կր. gav «կաւ» (Բիւր. 1898, 627)։—Justi, Dict. Kurde, էջ 304 մեր բառից է դնում բրդ. قاڤ qâfik «ծաղկամանի, խեցեղէն ամանի կտոր», որ ո՛չ միայն ձևով, այլ և նշանակութեամբ գւո. գաւ «փարչ» բառին միայն կարող է կցուիլ։

ԿԱՒԱԿԵՒԱՆՔ. անստոյգ բառ, որ դնում է Բառ. երեմ. էջ 156 կապարաւ բառի բացատրութեան մէջ, իբր հոմանիշ՝ կապաճ և կաճոճ ձևերի հետ։

ԿԱՒԱՌԵԼ «կարծել». ունի միայն Բառ. երեմ. էջ 159։

ԿԱՒԱՌՆ «ջրի նեղ առու» Պրպմ. 351. Հին բռ. լծ. պրպմ. 741։

ՀՀԲ «ի կաւոյ արարեալ»։ ՆՀԲ և ՋԲ հանում են կաւ բառից։ Հիւնք. գաւառ բառից։ Պատահական նմանութիւն ունի ճապոն. 川 kawa «առու»։

ԳԻՒՒ.—Երև. կա՛վառ «առուի ջրաբերանը», նոյն բառն ունին նաև Ակն. Արբ. Բբ Խրբ. Կիւր. Սեբ։

ԿԱՒԱՍ. իբր տիտղոս դրուած է Աշոտի համար՝ 1686 թ. մի արձանագրութեան մէջ. «Ես Շահանդուխտ դուստր մեծի արքային Աղուանից Թագաւորին և ամուսին Գրիգոր Թագաւորին, որ է որդի Աշոտի կաւասն» (Վիմ. տար. էջ 25)։ Այս Աշոտն է Աշոտ Սիւնեաց Վասակ Ա. Թագաւորի, սրա որդին Գրիգոր եղաւ իշխանաց իշխան և յիշուած է իբր վկայ՝ Տաթևի 1019 թուի կալուածագրում։

*ԿԱՒԱՍ, ի–ա հլ. «բոզի միջնորդ» Շնորհ. առ. 65, ընդհ. տպ. եմ. էջ 82. Լմբ. առակ. Յայտմ. որից կաւատութիւն «բոզի միջնոր-

դութիւն». (այս բառը մէկ անգամ գործածուած է Ոսկ. մ. բ. 12 «Եւ այնչափ կաւատութեան բանս և գործս անամօթութեան գործեն». յունարէն բնագիրն ունի՝ τοσαύτην μελέτην ἀναισχυντίας ποιούμενοι (այնչափ բանս անամօթութեան գործեն)։ Որովհետև կաւատութիւն բառը իբրև արաբական փոխառութիւն չէր կարող գտնուիլ Ոսկեդարում, և բնագրի մէջ էլ արդէն նրա համապատասխանը չկայ, ուստի հետևում է թէ Ոսկերերանի վերի հատուածի մէջ յետին յաւելուած է՝ ըստ Հիւբշման ZDMG 46, 261, Հյ. Քրդմ. Ուս. փոխառ. բառից. էջ 59)։ Յետնադարեան շրջանին ունինք գրուած դաւատ Կոստ. երգն. 158։

=Արաբ. قوّاد qavvād «կաւատ»։—Հիւբշ. 269։

Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ։

ԿԱԻԻԱ *տե՛ս Կօղա։*

—ԿԱԻԻՃ «մի տեսակ չոր կաւ» Բժշ. որից կաւճային (նոր բառ)։

=Կազմուած է կաւ բառից՝ իճ մասնիկով. Համմ. լուիճ, ուտիճ, աղաւնիճ։

ԳԻՒ.—Ախց. կր. Մկ. Վն. կավիճ, Ալշ. Մշ. կավիջ, Մրզ. կավրիճ։

ՓՈԽ.—Ուտ. kavič «կաւիճ» (դպրոցի միջոցով մտած բառ)։

ԿԱԻՈՆ «հարկ». ունի միայն Բառ. երեմ. էջ 159։

ԿԱՓ. այս արմատի առաջին նշանակութիւնն է «փակել, գոցել». որից յառաջացած էն «թակարթը ձգել, զարնել, կպցնել, յարել են» նշանակութիւնները. Համմ. խփել «գոցել, փակել» և գւռ. «զարնել»։ Այս արմատից են բխում կափ «թակ, ուռ, լախտ» ՋԲ. կափել «բաղխել, հարկանել» ՋԲ (իբր նոր բառ), կափառոր «ուռով զինեալ» Արծր. Հրտր. Պատկ. էջ 138. կափուցանել «խփել, գոցել, որոգայթի մէջ ձգել» ՍԳր. Ոսկ. յհ. անկափ «չգոցուած (բերան)» ԱԲ. կափուցումն Խոր. ՅՀ. կթ. Նար. կափչիլ «կպիլ, իրար փակչիլ» Շիր. 37. Երզն. երկն. գ. կափուցանիլ «կպիլ, փակչիլ» Անկ. դիրք հին կտ. 201. կափումն, կափիւն «գոցելը» Նար. Մագ. «փակչիլը» Եղիշ. «ատամների իրար դարնուիլը» Պիտ. կափառել «բզկտել, դիշատել» Մեկն. զևտ. կափուլ (մասնիկի համար Համմ. բար–ուլ) «որոգայթ, թակարթ» Ոսկ. ա. տիմ. էջ 122. տիտ. էջ 326. կրկնութեամբ կափկափել «ատամները ցրտից իրար զարնել» Ոսկ. երբ. կափկափիլ Մանդ. (գրուած է կոփկոփիլ Ադամ. 48, 50 Կոստ. երգն. 162. կափկափումն Բրս. խ. մկ. Տաղ. ինչպէս նաև առ մասնիկով՝ կափարիչ «խուփ» Մտթ. իէ. 6. Ոսկ. յհ. բ. 17 (Համմ. կափիչ գւռ. «կափարիչ թոնրի» ՋԲ)։

=Թերևս պէտք է միացնել խափ, խուփ Համանիշ արմատների հետ, որ տե՛ս։

ՀՀԲ կափուցանել ձևից է դնում կափարիչ, կափկափել, կափուլ։ ՆՀԲ կափարիչ «ի բայէս կափուցանել, յծ. և խուփ, Բրբ. գափագ», կափուլ «տեղի՝ ուր լինի կափուցանիլ ոյնամբ կամ փակիլ, խփանիլ, յծ. Բրբ. գափաճ, գափաճնա, լատ. capio «ըմբռնել»։ Տէրվ. տե՛ս կապ բառի տակ։ Հիւնք. կափուցանել դնում է ֆափուցանել բայից, իսկ կափարիչ<պրս. gapāra «քարայր»։ Bugge, Etr. u. Arm. 107 և KZ 32, 48 լտ. clāva «բիր, փայտ», clāvis «բանալի», յն. κλείς «նիպ, սողնակ», լիթ. kliūwū, kliūti «կառչիլ» բառերին ցեղակից է դնում։ Pedersen, Հյ. դր. լեզ. 147 կապել բայի անցողականն է համարում։ Trombetti, L'Unità d'Origine del linguaggio, էջ 148 Բրբ. kapa-, kapla-, դրավիդ. kappu, Թիբեթ. gab-pa, չին. ḥap, մոնք-քմեր. kap, մալայոպոլինես. kup, ամերիկեան kurpi, գրօէնլանդ. kepik և այլ բազմաթիւ ուրիշ լեզուների հետ, որոնց իմաստն է «փակել, ծածկել»։ Lidén, Arm. Stud. 30 հշվէդ. kafti «փարախ»? Աճառ. ՀԱ 1909, 159 խ և կ ձայնների լծորդութեան օրէնքով միացնում է խափ, խուփ արմատներին։ Թիրեաքեան ՀԱ 1912, 288 նոյն ընդ կապ, խափուցանել։ Պատահական նմանութիւն ունի արաբ. قبقاب qabqāb «ատամները կրճատացնել» (Համուս. Բրբ. Բրգմ. Ա. 224)։

Փոխ.—Pedersen, *Հայ. դր. լեզ. 198 հայերէնից է դնում օսմ.* qapu «դուռ», որ Օրխանեան արձանագրութեան մէջ kapəg ձևն ունի։

ԿԱՓԱԿ «աքլորի ձագ». ունի միայն Բառ. երեմ. էջ 160, որ բացատրում է «որսակն է»։ Այս բառով պէտք է հասկանալ որձակ և յատկապէս «աքլորի ձագ», ինչպէս հասկացել է հին և անծանօթ մի ստացող, որ նոյն բառի դէմ դրել է «փարսի խօրօզբէչայ» (իմա՛ պրս. աքլորի ձագ)—այսպէ՛ս իմ սեփական օրինակում, որ նուիրել է Տիգրան խան Դօրոյեան, Բաւրիզ 1920 թ.։

***ԿԱՓԱՅ** «ոտանաւորի յանգ». մէկ անգամ ունի Մագ. մեծ են. յոչ. «Տաղասացութիւնք Արաբացւոցն սովորաբար վարժաբանութեամբ մրցելք միայօդ աւարտեալ գծի, զոր գուք կափայ անուանէք»։ Նոյն բառը աւելի յետիններում եղել է կաֆայ «մի տեսակ ոտանաւոր» կնչառ.—Բառարանները չեն նշանակած։

=Արաբ. قافية qāfiya «ոտանաւորի յանգ»։

Ուղիղ մեկնեց Նորայր, Բառ. ֆրանս. էջ 1093 բ։ Նոյնը Թիրեաքեան ՀՄ 1910, 31։

ԿԱՓԱՐ. անստոյգ բառ. մէկ անգամ ունի Սարկ. հանգ. «Զատտինի այսինքն զԴիովնիւսայ կափարան (այլ ձ. կիրան) և գործս իրր օրինօք հաստատեալ ունին»։

ԿԱՓԱՐՈՒՄ «գերեզման». մէկ անգամ ունի Կորիւն. «Առ ի մէնջ հարքն ի կափարումս դարձան»։

*Ն*ՀԲ «արաբ. ղբֆր «քաւել», ղաֆիր «կափուցանել», եբր. էֆֆորիմ «քաւութիւն, քաւարան». *իսկ* բաղեմ *բայի տակ՝ լծ. եբր.* գապար։ *Պատահական նմանութիւն ունին սանս.* gabhira «խոռոչ, փոս» և պրս. gapāra «քարայր», արաբ. قبر qabr «գերեզման», ասոր. ܩܒܘܪܐ qəbūrā «գերեզման»։

ԿԱՓՈՒԼ տե՛ս Կափ։

ԿԱՓՈՒՆՔ կամ **ԿԱՓԱՆՔ** «հաջոց, շան հաջիւն». անստոյգ բառ, որ մէկ անգամ գործ է ածում Կանոն. 90 «Այնպիսիք մի՛ լիցին քահանայք, այլ աստուածախաբք. պատրաստ նոցա կափանք (ըստ *Ն*ՀԲ կափուճ) շանց, մկրտութիւնք նոցա որպէս թլփատութիւն հրէի, տունք նոցա որպէս մեհեանք դիւաց»։

*Ն*ՀԲ դնում է կափուճ կամ կափուղ (որ է «թակարթ») և աւելացնում է «թերևս դրելի է կառափուճ»։ Վերի ձևով Աճառ. Հայ. նոր բառեր հին մատ. Բ, էջ 163։

ԿԱՓՈՒՐ տե՛ս Քափուր։

ԿԱՓՈՒՐ կամ **ԿԱՓՈՐ** «մեծ». ունի միայն Բառ. երեմ. էջ 152, 160։

Գուցէ եբր. כביר ka bir «մեծ» =արաբ. كبير kabīr *բառն է*։

***ԿԱՓՈՍՈՍ** «մի տեսակ ջերմ». ունի միայն Մխ. բժշ. պլ. լդ։

=*Յն.* καῦσος «ուժեղ տենդ»։

Ուղիղ մեկնեց Seidel, Հրատ. Մխ. Հեր. § 260։

***ԿԱՔԱԻ**, ու հլ. (աւելի յետին են ի–ա, ո հլ.) «կաքաւ թռչունը» երեմ. ժե. 11. Վեցօր. 163. նմանութեամբ «մի տեսակ պար» Ոսկ. յհ. ա. տիմ. և եբր. այս վերջին նշանակութեամբ են բոլոր ածանցները. ինչ. կաքաւել «պարել, ոստոստել» ՍԳր. կաքաւեցուցանել Գ. մակ. բ. 14. կաքաւիչ ՍԳր. Ոսկ. եփես. կաքաւանի Փիլ. աչակաքաւ Սիսիան. կաքաւածն Եփր. Քգ. 393. Ոսկ. յհ. ա. 1. կաքաւարան Փիլ.—(իսկ շնակաքաւ Պոմ. աղէքս. 142 ձևի դէմ *Ն*ՀԲ ունի շնակաքիւ «շան ոտքեր ունեցող»)։

=*Բառիս հետ նոյն են ասոր.* قحقحا qaqqəwā, قحقحانا qaqqəwānā «կաքաւ», յն. κακκάβη «կաքաւ», κακκαβίζω, κακκάζω «կաքաւի կարկաչելը», լտ. cacabo «կաքաւի կարկաչելը»։ Ըստ հնդևրոպագէտների յն. և լտ. բառերը հնդևրոպական բնաձայն բառեր են և կցւում են լտ. cacillo «հաւի կարկաչել», հբգ. gackizōn, գերմ. gackern «ածող հաւի կարկաչելը», հսլ. kokotŭ «աքլոր», kokoš, kokoša «հաւ», ռուս. кокотать «հաւի կարկաչելը», ֆրանս. coq, դան. kok, շվէդ. kokk, հհիւս. kokr «աքլոր», սանս. kukkubha «փասեան» են ձևերին (Walde, էջ 104, Boisacq 395, Pokorny 1, 455, Ber-

neker 540): *Ասորի բառը բնիկ սեմական չէ, որովհետև չի՛ երևում ուրիշ սեմական լեզուներում։ Այս պարագային կարող ենք երկու մեկնութիւն տալ. կա՛մ ասորի բառը յունարէնից փոխառեալ և յետոյ էլ հայերէնին է անցած, և կամ ընդհակառակը հայ բառը բնիկ է, ցեղակից վերի հնդևրոպական ձևերին, իսկ ասորին փոխառեալ է հայերէնից։ Բնիկ լինելուն կողմնակից պիտի լինէին Հայաստանի մէջ պատուական կաքաւների առատութիւնը և Հայոց մէջ զարգացած կաքաւի որսորդութիւնը։ Բայց այս պարագային, յն. և լտ. ձևերի դէմ ունենալու էինք դոնէ հյ. *fաfաu. Հետևաբար աւելի ճիշտ է առաջին ենթադրութիւնը, այն է ասորին դնել փոխառեալ յունարէնից և հայերէնը փոխառեալ ասորերէնից։—(Վերի ձևերի հետ կապ չունին պրս.* كبك kabk, *քրդ.* کو kev *(կամ* kaw, *ըստ* Beidar, Gram. Kurde, *էջ 70), արաբ.* قبج qabj *(փոխառեալ պարսկերէնից. տե՛ս Կամուս, Թրք. Թրգմ. Ա. 433), աֆղան.* kabk, *բելուճ.* kabg *հոմանիշները, որոնք* Horn, *էջ 187 կցում է սանս.* kapiñjala- «gelinotte *Թռչունը» և բելուճ.* kapīñjar *«կաքաւ» բառերին։—Վրաց.* კაკაბი *կակարի և Թուշ.* კაკაბ *կակար «կաքաւ» փոխառեալ են յունարէնից)։—Հիւբշ. 307։*

ՆՀԲ **կաfաu** *Թռչունի դէմ դնում է պրս.* چکاو čakāv *«արտոյտ», Թրք.* keklik *և ևրբ.* qōre *«կաքաւ», որոնք մեր բառի հետ նմանութիւն չունին, իսկ* **կաfաu** *«պարտ» ձևի դէմ յիշում է պրս.* ՅՏՏ kākāv *«մի տեսակ երախայական խաղ», որ նշանակութեամբ չի յարմարում։ Մ. Մսերեան, Ճոռաքաղ Գ. էջ 104 մեկնում է «կագող հաւ»։—*Lag. Ges. Abhd. 50 *ասորի և յոյն ձևերի հետ է համեմատում։* Müller SWAW *78, 430 օսս.* **fաֆ, fաֆտոն** *«պարել», քրդ.* kev *«ցատկել» ձևերի հետ դնում է* **կաfաu** *«պարտ»։ Տէրվ.* Altarm. *33 պրս.* čakāv *և յն. κακκάβη։ Հինք.* **կաfաuել** *= պրս.* kākāv։ *Հիւբշ. 307 կցելով ասորի, յոյն և պրս. ձևերին, փոխառեալ է դնում ասորուց, առանց որևէ բացատրութեան։*

Patrubány *ՀԱ 1907, 16 հինը դնում է* **կաfաu** *<հնխ.* su̯obho- *«հիւսել» արմատից. համմտ. գերմ.* weben, *յն. ὑφάω. հայ բառը կրկնուած է և բուն նշանակում է «ասղին անդին շարժող»։* Karst, *Յուշարձան 405 իբր* **կաf+հաu** *«Թռչուն»՝ սումեր.* kak-kul *«կաքաւ» բառի հետ։* Pictet, *բ. տպ. Ա. 621 պրս.* kabk, *յն. κακκάβη են հոմանիշների հետ, որոնք բոլոր բնաձայն է համարում։*

ԳԻՒ.—Ագլ. Ախց. Երև. Կր. Ղրբ. Սլմ. **կաfավ**, *Մկ. Ոզմ. Վն.* **կաfաւ**, *Խրբ. Սեբ.* **գաfավ**, *Տիգ.* **գոfով**, *Գոր.* **կա՛fէվ**, *Տփ.* **կա՛fավ**, **կակար** *(վերջին ձևը վրացերէնից փոխառեալ), Հճ.* **գաfօվ**, *Ալշ. Մշ.* **կակավ**, *Զթ.* **կագ՛օվ**, **գ՛ագ՛ով**, *Սվեդ.* **գաfուվ**, *Ջղ.* **կաճfավ**։—*Նոր բառեր են* **կաfաւախաղող**, **կաfաւակուր**, **կաfաւակառուց**, **կաfաւախառ**, **կաfաւճակ**, **կաfույտ**, **կաfաւուկ** *են։*

ԿՊՆԻՀ. *անսովոր բառ. մէկ անգամ ունի Պիտ. 464 «(Տունկ որթոյ) առաւել ևս տարածեալ կրնի յիւրանման զնաւագոյն և յոյժ խորին վայրս երկրի»։ Այս բառն է որ Բառ. ևրեմ. դնում է* **կրնել** *«խափանել» էջ 160 և* **կծրնել** *«խարանել կամ ընդ երկիր քարշել» էջ 164։ ՆՀԲ մեկնում է «նոյն ընդ* **կափշիլ**, **կրշիլ**, **փակշիլ**». *իսկ ՋՔ «գետնատարած լինել անկոյ որթոյն, կամ կափշիլ և մածանիլ ի վերայ գետնոյն»։—Գուռ.* **կպնիլ** *բա՞ոն է։*

+ԿԵԱԼ *«ապրիլ». Ճոխապէս զարգացած մի արմատ է, որի ստացած ձևերը հետևեալներն են.* **կեա**—*բուն պարզական արմատն է, որից կազմւում են* **կեալ, կեամ, կէի** *(<*կեայի), կեայր, կեցի, եկեաց, կեաց ՍԳր. են.—***կեաց***. բայի երկրորդ արմատաձևն է, որից կազմւում են կատարեալը, հրամայականը և սրանց յարակից ժամանակները. սրանից են ածանցուած երկայնակեաց ՍԳր. Ոսկ. ես. խաղաղակեաց Սիր իր. 15. միայնակեաց Ագաթ. Եւագր. մենակեաց անապատակեաց Բուզ. կարճակեաց Եփր. Թգ. Վեցօր. լեռնակեաց Կորիւն. գազանակեաց Բ. մակ. ե. 27. խառնակեաց Եւագր. խաւարակեաց Վեցօր. բարեկեաց Ագաթ. Ոսկ. մտթ. և ա. Թես. անկեաց Գ.*

մակ. գ. 15. երկակեաց «երկակենցաղ» Ես. քր. Ա. 21 (տպ. երկեկից. այսպէս ուղղել ըստ լաւագոյն ձեռ. հմմտ. ՀԱ 1905, 17 և 1914, 122). առանձնակեաց (նոր բառ).— **կեց**—նախորդի անշեշտ ձևն է, որից կեցուցանել ՍԳր. Եզն. կեցուցիչ Ոսկ. Ագաթ. բարեկեցիկ ՍԳր. Ոսկ. մ. ա. 20. բարեկեցութիւն Սիր. ժա. 29. Ես. քր. Ոսկ. մտթ. խառնակեցիկ Ոսկ. մտթ. ա. 3. լեռնակեցութիւն Ագաթ. Կորիւն. երկայնակեցութիւն Պիտ. Եղիշ. Փիլ. ճոգեկեցոյց Ճառընտ. մենակեցութիւն Վեցօր. չկեցու Ոսկ. մ. ա. 15. միակեցնակ «ճգնաւորի պէս» (չունի ԱՔ) Սմբ. պատ. 114.—**կեաց**—. կազմուած -ան մասնիկով՝ կե(ա)—արմատից, որից կեանք-ի-ա հլ. (միայն անեղարար գործածուած) «կեանք. 2. վարք, կենցաղ. 3. աշխարհ կամ աշխարհային կեանք. 4. ինչք, ապրանք, հարստութիւն» ՍԳր. անկեանք Փիլ. սամփս. Ոսկիփ. դժուարակեաց Հց. աթ. Կիւրղ.— **կեն-**. նախորդի անշեշտ ձևն է, որ գործածուում է միայն բարդութեանց սկիզբը. ինչ. կենակից Ա. պետ. բ. 24. Սիր. ժգ. 6. Ոսկ. յհ. բ. 13. կենասէր Կոչ. էջ 247. կենասիրութիւն Կոչ. կենատու Ծիր. նբր. կենարար Սղ. կէ. 21. Ագաթ. Ես. քր. Եզն. կենեղուտ Ոսկ. ես. կենատ «ննետ» (իբր թէ կեանքը կտրող) Մագ. գամագտ. (տե՛ս ՀԱ 1911, 387). կենաց (նոր բառ). **կեաց**ս, որ նոյն կեանք բառի յգ. հայցականն է. սրանից են կազմուած յետնաբար կեանսարեր Նանայ. (ստէպ). կենսազգեաց Ճառընտ. կենսուսոյց ԱՔ. —**կենս-**. որ նախորդի անշեշտ ձևն է և գոնուում է միայն ածանցմանց սկիզբը. ինչ. կենսարեր Ագաթ. կենսատուր Ագաթ. Արիստիդ. էջ 10. Փարպ. կենսական Պիտ. կենսուսակ Սկևռ. ես. կենսուսոյց վրք. հց. կենսաոիք Նար. Գնձ. նոր բառեր են կենսաբան, կենսաբանութիւն, կենսաբանական, կենսագիր, կենսագրութիւն, կենսագրական, կենսաբոշակ, կենսաբրիո, կենսալից, կենսախօսական, կենսունակութիւն, կենսուրախ են. —**կեց-**. սղուած է նախաւոր *կեանց ձևից, որ կեանք բառի հնագոյն սեռ.-տր. հոլովաձևն է, որ և յետոյ կորել է՝ տեղի տալով կենաց ձևին. (երկու ձևերի համար հմմտ. աստեղաց և աստեղց, ոսկերաց և ոսկերց). գոնուում է միայն ածանցումների մէջ. ինչ. կենցական «ապրելիք» Ոսկ. ես. 232. և -աղ մասնիկով՝ կենցաղ Ոսկ. յհ. ա. 21. Մանդ. խոր. (հմմտ. յապաղել, յաչաղել, կախաղան, խանդաղատանք են), կենցաղական Ոսկ. յհ. ա. 21, 33. կենցաղասէր Եղիշ. կենցաղօգուտ Պիտ. Փիլ. խոր. անկենցաղ Փիլ. յին. Մագ. երկակենցաղ Փիլ. կենցաղավարական (նոր բառ) են.—**կենդ**—. կազմուած է կեն-<կեան- արմատականից՝ դ մասնիկով. գոնուում է միայն կենդակ «զոդիակոս» Փիլ. քհ. և ել. Պիտ. բառի մէջ. որից սակայն ածած է **կենդան**, որ նախորդի վրայ աւելացրել է նաև -ան մասնիկը. սրանից կենդանանալ ՍԳր. կենդանութիւն ՍԳր. Ես. քր. կենդանադիր Ագաթ. կենդանածին Ղեւտ. ժա. 47. Ես. քր. կենդանական Իմ. ժե. 22. կենդանապան Եզն. կենդանատու Ոսկ. ա. տիմ. կենդանարար Յհ. գ. 64. Ա. կոր. ժե. 45. Ագաթ. Ոսկ. ես. կենդանացու Կոչ. կենդանացուցանել ՍԳր. Ագաթ. Ոսկ. յհ. ա. 2. կենդանի ՍԳր. կենդանւոյն ՍԳր. անկենդան Անյ. բարձր. չկենդանի Ոսկ. մ. ա. 4. Եզն. երկակենդան Կոչ. բարեկենդան (տե՛ս առանձին). կենդանաբանութիւն (նոր բառ) են։

=Բնիկ հայ բառ՝ հնխ. g²iyā- ձևից։ Այս արմատը ցեղակիցների մէջ ներկայանում է երկու ձևով. պարզ g²yo-, g²yē- արմատականն ունին զնդ. jīti, jyotum (հյց.), jyātəuš (սեռ. հլ.) «կեանք», jyāiti- «կեանք», hu-jyāiti- «բարեկեցիկ», gaya- «կեանք, սնունդ», սանս. gáya- «տուն-տեղ, կահ-կարասիք, ընտանիք», յն. ζῆ «կեայ», ζή-σω «կեցից», βίομαι «կեամ», βίος «կեանք», βίοτος, βιοτή «կեանք, բարիք, կարողութիւն», διαιτα «կեանքի եղանակ, բնակարան», յոն. ζώω «կեամ», հսլ. žiti «կեանք», լիթ. gyti «ապրիլ», լեթթ. dzit «առողջանալ»։ Իսկ ա. ձած g²īv- արմատականն ունին սանս. jīvati «կեայ», jīvá- «կենդանի», jīvitá- jīvātu- «կեանք», բուչ. çaul «կեանք», զնդ. jvaiti «կեայ», հպրս. jīva «կենդանի», լտ.

vīvo «կեամ», vīvus «կենդանի», գոթ. qius «կենդանի», հսլ. živŭ «կենդանի», životŭ «կեանք», ռուս. живо «կենդանւոյն», животъ «կեանք», լիթ. gývas «կենդանի», gyvatà «կեանք», հպրուս. giwa «կեայ», հիռլ. bíu, béo «կենդանի», bethu, beothu «կեանք», biad «ուտելիք, սնունդ», կիմր. կորն. byw, բրբտ. beo «կենդանի», կամիս. xwi «ապրիլ»։ Երրորդ g-ով սկսած մի ձև էլ կայ, որ գտնում ենք գերմանական և բալթեան լեզուների մէջ. ինչ. հբգ. quëk, quëh «կենդանի», անգսք. cwicu «կենդանի», լեթթ. dsiga «կեանք» (տե՛ս Walde 846, Boisacq 120, Trautmann 75—76, Berneker 319 և յատկապէս Meillet BSL № 79, էջ 17, Pokorny 1, 668—70, Ernout-Meillet 1076):—Հիւբշ. 459։

ԳՒ կեաճ=պրս. jān «հոգի»։ ՆՀՔ «կեամ՝ հբր. խայ, խայա, յորմէ եւայ, ի մեզ կին, այսինքն կենդանին. և յն. ζάω, ζεῖν, պրս. zista, zanda, ռուս. ժի՛թի, թրք. սաղ օլմագ, եաշամագ», կեաճ՝ յծ. տճկ. ճան, գէնտէկեաճի: Peterm. 25, 42 հբր. חיה xay «կեալ», սանս. jīv, jīvana: Gosche 46 սանս. jiv, զնդ. zi, ju, պրս. zinda, բելուճ. zindaγ: Böttticher ZDMG 1850, 356 և Arica 83, 398 զնդ. gaya, յն. ζωή: Lag. Urgesch. 498 սանս. jīv, պրս. zīstan, արմատը zī: Müller SWAW 38, 571, 42, 329 և 89, 14 սանս. jīv: Justi, Zendsp. 105 զնդ. gi=ji «կեալ» պրմատի տակ: Bopp, Gram. comp. III 18 սանս. jivami: Տէրվ. Altárm. 37, Նախալ. 79 և Մասիս 1882 օգոստ. 31 հնխ. gi, giv արմատի տակ՝ սանս. jīv, լտ. vivere են ձևերի հետ: Հիւբշ. KZ 23, 21 սանս. և զնդ. jaya, լիթ. jyvas, հսլ. živŭ, յն. βίος, լտ. vivus: Նոյն, էջ 388, 401 կեաճ=*givana: Canini, Et. étym. 39 պրս. jān, սանս. jana «կենդանի» և յն. γινώσκω: Հիւնք. կեաճ հանում է կին բառից, կենդանի<պրս. zanda, կենցաղ <կեաճ աղցաւոր: Թիրեաքեան, Պատկեր աշխ. գրակ. 195 կենդանի=պրս. zīvistān: Karst, Յուշարձ. 404 սումեր. gan, gal «կանգնիլ, լինել, գոյանալ», gin «կանգնիլ, բնակիլ», 405 ik «կենալ, գոյանալ»։—Հայերէն բառի ձայնական բացատրութեան վրայ խօսած են Հիւբշ. Arm. St. էջ 35, Bartholomae Stud. II 275, Meillet MSL 16, էջ 243—4, Pedersen KZ 39, 395: Պատահական նմանութիւն ունի ճապոն. 元気 genki «կեանքի ուժ»։

ԳԻՒՐ.—Ալշ. Ախց. Ագլ. Կր. Ջղ. կ'աճ, Ագլ. երև. Մրղ. Շմ. Ննխ. Պլ. Սեբ. գ'աճ, Սլմ. կ'ոճ', Մշ. կենկ, կեճ, Տփ. կիճ,—Ախց. երև. Կր. Շմ. Տփ. կէնբաճի, Սչ. գենդ'աճի, Ոզմ. կենբաճէ', Մկ. կէնդոճը', Մրղ. կէնբաճը', Ալշ. Մշ. կէճտաճ, Տփ. կէ'նբաճ,—գրեթէ ամէն տեղ կայ կենդանութի՛ւն բառը, իբրև բարեմաղթական բացագանչութիւն՝ գինի, օղի խմելու ժամանակ: Բոլորն էլ գրականից փոխառեալ:

ՓՈԽ.—Այստեղ են պատկանում բարեկեցդաճ բառի փոխառեալ ձևերը, որոնց վրայ տե՛ս անդ։—Ըստ Մէնէվիշեան (Գամագտ. 67) և Robert A. Peter հյ. կենսատ բառից է փոխառեալ եթովպ. gĕnzat, որից machafa gĕnzat «կարգ մեռելոց»։

ԿԵԱՄ տե՛ս կեմ։

*ԿԵԴ ի, հլ. «ծեծելու փայտ, մահակ, գաւազան». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գործածում է Վրք. և վկ. Ա. 40 «Կեդիւ ջարդեցին զսրունսն» (յոյն բնագիրը դնում է «նիգ», որ է «երկաթեայ ձող»)։

=Վրաց. ჯოხი կետի «հատու գաւազան, մահակ, կոպալ»։—Աճ.

Նորագիւտ բառս երևան հանեց նախ Նորայր, Բառ. ֆր. 1098։

ԳԻՒՐ.—երև. Տփ. կէ'տի «մահակ, գաւազան», որ նոր փոխառութիւն է վրացերէնից։

*ԿԵԴԱՐ «խոյր» Դամասկ. որ և կինդար Յայսմ. դեկտ. 14. երկուսն էլ պէտք է ուղղել կիդար, ինչպէս ունի Ոսկ. Հռոմ. 399. (բառարանները յիշում են այս վերջին ձևը, բայց վկայութիւն չեն տալիս)։

=Յն. κίδαρις, որ և κίτταρις «խոյր». համարում է ինքն էլ ասիական փոխառութիւն.

սրանից է նաև լտ. cidaris *«խոյր»։—Հիւբշ. էջ 356։*

Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ։

ԿԵԴԻՈՆ *«մխիթարութիւն». ունի միայն Բառ. երեմ. էջ 160։*

ԿԵԴՐՈՆ *տե՛ս Կենդրոն։*

ԿԵՂԴԱՏ *«սուրբք». ունի միայն Բառ. երեմ էջ 160։*

ԿԵԼ *կամ* ԿԷԼ *«ննդութիւն, դաւ, խարդախութիւն» Առակք ողոմպ. ի. Ոսկիփ. որից* կելուրք *«գիւտ, հնարք, ճարտարութիւն» ԱԲ. մէկ անգամ գտնում եմ գործածուած Սարկ. աղ. 142 «Հնարից կելուրք վախճանեցաւ»։ (Իսկ ԱԲ* կելութիւն *«գոյութիւն, ըլլալը» բառը շինուած է կեամ, կեալ բայից)։*

ՆՀԲ որպէս Թրք. հիլէ, հիլլէ, *ալ «խարդախութիւն»։*

***ԿԵԿԻԱՍ** *«հիւսիս-արեւելեան քամի» Աբիւտ. աշխ. էջ 611. Առաք. կենդ. էջ 70, որ և կիկիաս Տաճև. Հարց. 205։*

=Յն. κεκίας *«հարաւային արեւելեան քամի», որից նաև լտ.* caecias*։—Հիւբշ. 356։*

Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ։

ԿԵԿՈՒ *«ծոյլ, անգործ». գտնում է միայն* կեկուրիւն *«անգործութիւն, ծուլութիւն» բառի մէջ, որ մէկ անգամ գործածել է Կիր. երզն. խրատ.—Արմատը կարող է լինել* կեկրս, կեկիս *կամ* կեկուս։

+**ԿԵՂ**, n *հլ. (յետնաբար կայ յգ. գրծ.* կեղոք*) «խոց, ուռեցք, վէրք, պալար» ՍԳր. Ոսկ. փիլիպ. Եւս. պտմ. 562. Եփր. բ. տիմ. 252. որից* կեղաճկ *«նստուկին կամ աճուկին վրայ տեսակ մը փտախտային վէրք» Եւս. պտմ. 663.* կեղցաւ *«խեցգետնի հիւանդութիւնը» Սարգ. յկ. գ. էջ 36, որ և* բաղցկեղ *Բ. տիմ. բ. 17. Ղևտ. իա. 20.* չարակեղ *Եւս. պտմ. Բուզ.* աճկեղ *Նիւս. կազմ.* սրտկեղ *Բուզ.* լերդակեղ *«սիրտը այրած, սիրտը կոտրած» ԱԲ.* կեղել *«նեղել, չարչարել, տանջել» Ել. ա. 14. Ոսկ. մ. ա. 15։ Այստեղ է պատկանում նաև* -եմ *մասնիկով* կեղեմել *«դիշատել, բզքտել, պատառոտել» Ովս. ժգ. 8. Եփր. պհ. Մանդ. էջ 176. «չարաչար տանջել» Սարգ. (արդի գրականում գործածւում է «հարստահարել» նշանակութեամբ).* կեղեմիչ *«պատառոտող» ՅՀ. իմ.* կեղեհուն *Մամբր.—* -եմ *մասնիկի համար հմմտ.* բաեմիկ, բաեմել, արմատաբի *ևն։ =Բնիկ հայ բառ՝ հնխ.* g²el- *արմատից. հմմտ. յն.* βέλος *«նետ, խայթոց»,* βελόνη *«ասեղ», լիթ.* gélti *«խթել, խայթել»,* gẽlia *«ցաւում է»,* gélà *«կսկծալի ցաւ»,* gelonis *«պալարի մէջ թանձրացած թարախ», լեթթ.* dzêlu *«օձի խայթելը», լիթ.* įgélti *«մեղուի խայթելը», հպրուս.* gallan, golis *«մահ»,* gulesnnin *«ցաւ», հսլ.* žali *«ցաւ», չեխ.* žel *«ցաւ, կարեկցութիւն», հռուս.* želja *«ցաւ», ռուս.* жаль *«կարեկցութիւն»,* жалеть *«ցաւիլ, խղճալ, ափսոսալ, խնայել»,* жалить *«խայթել»,* жало *«խայթոց, խայթ»,* жалкій *«ողորմելի, խղճալի, թշուառ», հբգ.* quëlan *«վէրքը ևն սաստիկ ցաւիլ»,* quellen *«կեղեքել»,* quāla *«չարչարանք», գերմ.* Qual *«ցաւ, չարչարանք, նեղութիւն»,* quālen *«կեղեքել, չարչարել, նեղել», հոլլ.* kwaal *«ցաւ», հիսլ.* kuelia *«կեղեքել», անգսք.* cwēlan *«մեռնիլ»,* cwellan *«սպաննել»,* cwalu *«մահ», հսաքս.* qualm *«մահ», հիոլ.* -balt *«մեռաւ», կիմր.* ballu *«մեռնիլ» ևն* (Trautmann 83, Boisacq 118, Kluge 381, Pokorny 1, 689—90)*։—Հիւբշ. 459։*

ՆՀԲ լծ. Թրք. էլ *«ճաղատ կամ գլուխը վէրքերով ծածկուած» Այվազովսքի. 3ղ. հնչման 15 յն.* ἕλκος, κήλη *և տճկ.* ſır *«կեղտ»։ Տէրվ.* Altarm. 7 *տանս.* kar *«սպաննել», յն.* κείρω *«քերել, քերթել», Պատկ.* Матер. *I. 2 յն.* κήλη *«ուռեցք» բառից փոխառեալ։ Ուղիղ մեկնութիւնը տուաւ* Meillet MSL *8, 165 և 283։ Գաբրիէլեան, Բազմ. 1908, 501 նոյն ընդ.* սեր, *լտ.* cera *«մոմ»։ Մ. Ս. Դաւիթ-Բէկ, Յուշարձ. 397 իսլ.* col *«մեղք, յանցանք», գալլ.* cwl *«յանցանք», հ. բրբտ.* caul *«յանցանք», Ղափանցեան, Տեղ. ինստ. 2, 92, վր.* ծալա *«թարախ»։*

ԳԻՒ.—Ղրբ. կըէղ *«վէրքի վրայի չոր կեղևը», որից* կըղրկա՛լէլ *«կեղևակալել, վէրքի վրայ չոր քոս կապել»։*

ՓՈԽ.—Վրաց. კელი *«աղբ»??*

ԿԵՂ, *անստոյգ բառ. մէկ անգամ ունի Մծբ. դ. «Մատոյց զայն Աբրահամ և յօշեաց*

դէմ դէմ և կեղ ի կեղ»։ ՆՀԲ դնում է կեղ ի կեղ *«քովէ քով կամ իրարմէ զատ»։ Տպ. Պօլսոյ, էջ 64 ունի «յօշեաց դէմ ընդդէմ միմեանց և եղ մի մի ի սեղան անդր». չկայ* կեղ ի կեղ։

կեղ *«ծուռ» տե՛ս* կաղ, *որ նոյն է այս բառի հետ։*

Կեղակարծ բառը հետևեալ ձևով են մեկնում.—ՀՀԲ կաղ *բառից։—ՆՀԲ* խեղ *կամ* կաղ *բառից։ Ս. վ. Պարոնեան, Արև. մամուլ 1880, 552* յեղակարծ *բառից։* Meillet MSL *10, 278 արմատը դնում է* կեղ, *որի ծ-ով աճած ձևը համարում է* կեղծ։ *Վերի ձևով մեկնեց Աճառ. ՀԱ 1909, 160։ Գաբրիէլեան, Բազմ. 1909, 109* կեղ- *համարում է նոյն ընդ* գելուլ, գլորել, գալարել, գայթա՛կղի՛լ։

***կեղԱՐ** *«մառան, քիլէր». իբր միջին հլ. բառ. յիշում է Նորայր, Բառ. ֆր. 212 ա. ունի նախ Բռ. երեմ. էջ 206՝ մառան բառի բացատրութեան մէջ, իբր իր ժամանակ կենդանի և գործածական բառ. սակայն ձևից երևում է որ շատ հին բառ է։*

=Բիւզ. յն. κελλάριον, *նյն.* κελλάρι, *որոնք փոխառեալ են լտ.* cellarium *բառից, իսկ սա էլ ծագում է լտ.* cella *բառից։ Նոյն լտ. (կամ յն.) ձևից են ծագած նաև հֆրանս.* celier, *ն. ֆրանս.* cellier, *հաթթս.* kĕlleri, *մրգ.* kĕlāri, *գերմ.* keller, *հոլլ.* kelder, *անգլ.* cellar, *հսլ.* kelarĭ, *ռուս.* келáрня, *օսմ.* kiler, *բուլգար.* kilér, tilér *ևն, որոնք բոլոր նշանակում են «մառան»* (Sophocles 657, Berneker 500, Kluge 250)։

Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ։

*ԳԻՒ.—*Կեղար *Եւդ. Կս. «տան մէջ գրանուած առանձին տեղ՝ փորր սենեակի պէս. ուր զանազան իրեր, ուտելիք են են պահում»։*

ԿԵՂՏԱՒՈՐՏԱԿԵԼ *«ցտել». ունի միայն Բառ. երեմ. էջ 160։—*Կեղ *«վերք» բառից?*

ԿԵՂԵՐՋ *«զանգատ, տրտունջ». արմատ առանձին անգործածական, որից ունինք* կեղերջական *«զանգատալի, տրտնջական, ցաւագին» Մագ. Թղ. 8, 91 (ստէպ)։*

***ԿԵՂԵԻ, ո** *հլ. «կճեպ» Մն. լ. 37. երգ. դ. 3. Իմ. ժգ. 11. Վեցօր. 97. որից* կեղևել *«կեղևը հանել» ՍԳր.* կեղևաճի *Գծ. թ. 18.* աճկեղև *Կոչ.* կարծրակեղև *Բժշ.* միակեղև *Վեցօր. 97.* ողորկակեղև *Վեցօր. 97։*

=Ասոր. ܩܠܦܐ qəlāfā *«գրքի թերթ»,* ܓܠܦ gəlaf *«մորթը՝ կեղևը հանել»,* ܩܠܦܬܐ qəlāfəθā *«կեղևանք, կեղև, կճեպ, թեփ», ն. ասոր.* kälp'ä *«կեղև, կճեպ»,* käläpt'ä *«ստկել, կեղևել»։ Ասորի բառը բնիկ սեմական է. հմմտ. արաբ.* قِلْف qilf *կամ* قِلَافَة qalāfat *«կեղև» (Կամուսի թրք. թրգմ. Բ. 829), եբր.* קְלִפָּה qəluf, qelef *«կեղև, կճեպ, թեփ», ասուր.* qalapu *«կլպել (օր. սոխը). 2. աւերել, կողոպտել»* (Muss-Arnolt, Ass. Handwb. 913 *բ*) *ևն։ (Սրանց հետ կապ չունի յն.* κέλυφος *«պատուղի կեղև, ձկան թեփ, ձուի կճեպ, միջատի պատեան», որ հնդևրոպական է. տե՛ս* Boisacq *432, բայց նաև* BSL № 81, *էջ 104)։—Հիւբշ. 307։*

Klaproth, Asia polygl. *104 Սիբիրի Թուրքական մի ցեղի լեզուով* kagaš, *մի ուրիշի՝* kagač: *ՆՀԲ* կեղ *բառի՞ց։ Ուղիղ մեկնութիւնը տուաւ նախ* Lag. Arm Stud. § 1139: Canini, Et. étym. *19 լիթ.* skurâ *«կեղև», սանս.* čarma *«մորթ» բառերի հետ։ Հիւնք. յն.* κέλυφος *և թրք.* qəlāf *«պատեան»։* Patrubany *ՀԱ 1906, 367 հնխ.* glebh *«շերտ-ջապատել, խորացնել» արմատից. հմմտ. յն.* βλέφαρον *«արտևանունք», γλάφω «խորացնել», լեթթ.* glabat *«պահպանել» ևն։ Նևառն-խան, Բազմավէպ 1908, 163 արաբ.* γilāf *«պատեան»։ Գաբրիէլեան, Բազմ. 1908, 501* կեղ *«վէրք» արմատից։* Karst, *Յուշարձան 415 մոնգոլ.* xalisun, *բուրեաթ.* xalyaso, xalyahan, *թունգուզ.* kalyasun *«մորթ», ճապոն* kara *«կճեպ»։*

ԳԻՒ.—Ներկայանում է 12 ձևով, որոնք կարելի է դասաւորել հետևեալ ձևով. 1. Ջթ. և Սվեդ. գիղիվ (<կեղև). 2. Սեբ. գէղէր *(<*կեղեր). 3. Ակն.* գէղօփ *(<*կեղոփ). 4. Մկ.* էէվուճ[1], *Տիգ.* էէվիխ՝ *որ շրջուած է *էէխիվ ձևից (<*էեղև*). 5. Ալշ.* էէղեր *(<*էեղեր) 6. Բլ. Մշ.* էէեփ, *Ոգմ.* էեղէփ *(<*էեղեփ). 7. Երև.* կլէպ *(<*կլեպ). 8. Շլ.*

ղլեպ (<*ղլեպ). 9. Ղրբ. ղլէվ (<*ղլև). 10. Արբ. Եւդ. Երզ. ղլէֆ (<*ղլեֆ). 11. Սեբ. ֆէ-ղլէֆ (<*ֆեղլեֆ). 12. Տր. ղալաբ:—*Այս բո-ղորը կարելի է վերածել 4 խումբի.—1.* կեղև, կեղեր, կեղոփ. *2.* ֆեղև, ֆեղեր, ֆեղեփ. *3.* կլեպ. *4.* ղլեպ, ղլև, ղլեֆ, ֆեղլեֆ, ղալար: *Երբեմն երկու ձևերն էլ գործածական են միևնոյն բարբառում, տարբեր առումներով. օր. Սեբ.* գեղէք «ընկուզի կամ ծառի կեղև», ֆեղլեֆ «ձուի կեղև»: *Բայական ձևով ունինք ի մէջ այլոց՝ Ակն.* գեղվիլ, *Պրս.* գեղրել, *Առ.* գէ՛ղրէ՛լ, *Սվ.* գեբեղել (*շրջուած* *գեղե-բել *ձևից*), *Ալշ.* ֆեղրել, *Մշ.* ֆեղփել «կեղե-ւել, սակել, կեղևը հանել»: *Նոր բառեր են* կեղուել, կեղևուիլ, կեղեւաճաճ, կեղվտուբ, կլպել, աճկլպել, կլպաճաճ, կլպռաել: *Նկա-տելի է որ բառիս հոմանիշ խեճեպ ձևն էլ ներկայ բարբառների մէջ այսքան զանազան կերպարանքներ ստացել է և տարակոյս չը-կայ՝ որ խեճեպ և կեղև իրար վրայ փոխա-դարձաբար ազդած և իրար կերպարանա-փոխած են: Այնուամենայնիւ կեղև և կլեպ այնպէս հեռու են իրարից և այնպէս ան-վերածելի, որ անհրաժեշտ է ընդունիլ թէ սրանք ասորի բառի զանազան տառադար-ձութիւններն են՝ տարբեր շրջաններում փո-խառնալ:*—Կլեպ ձևի վկայութիւնն *ունինք 1788 թուից, Կ. Սարաֆեան, Բանալի գի-տութ. Ս. Պետերբ. էջ 68:*

Փոխ.—Ըստ Գ. Փառնակ, Անահիտ 1906, 233 հայերէնից է փոխառնալ ալբան. kë-lëph, *որ նշանակում է «պատեան»: (Սա-կայն ըստ իս պարզապէս թրք.* qəlәf, *ոմկ.* խըլըֆ *«պատեան» բառն է. հայերէնի մէջ* կեղև *կամ* կլեպ՝ *«պատեան» նշանակու-թեամբ գոյութիւն չունի):—Հայերէն բառի հետ համեմատելի են սակայն լազ.* ղլեպա *«ընկոյզի կանաչ կեղև», վրաց.* ղ՛վլեփա *«կեղևը հանել, սակել, կլպել. 2. կողոպտել»* (խլիփա «футляръ для лука, *աղեղի պատեան» թրք.* qəlәf *բառից է), որոնք հա-ւանաբար հայերէնի միջոցով անցած են Կովկասեաններին:*

կեղեքել *տե՛ս կեղ:*

***կեղթ** (ի, ո *հլ. ըստ ՆՀԲ, բայց առանց վկայութեան*) «կողով, *ցամաքեղէնի մի չափ» էլ. արիստ. 64. Արիստ. ստոր. Արծր. հրտր. Պատկ. էջ 219: (Հին բռ. և Բռ. երեմ. էջ 152, 160 սխալմամբ գրում են* կեղր «չափ ցորենոյ կամ գինւոյ», կաղր «շալակ կամ վաշխ)»:

=Յն. κάλαθος «կողով», καλάθιον «կո-ղովիկ», *նյն.* καλάθι «կողով» *բառից, որից փոխառնալ է նաև լտ.* calathus «կողով»: *Նմանութիւնը աւելի պայծառ կերպով ցոյց են տալիս գաւառականները (ինչ.* կաղար *Ակն.,* կաղարբ *Սեբ.,* կալար *Արտ. Համշ. Տր.,* կղար *Ք.* «կողով»): *Սրանք յայտնապէս փո-խառնալ են յունարէնից, ինչպէս է նաև լազ.* կալաքի «կողով»: *Հին բռ.* կաղր *ձևը՝ որ իր-րև միջին եղր է ներկայացնում* կաղար *և* կեղր *հոմանիշների միջև, ցոյց է տալիս, որ այս վերջինն էլ նոյն յն. բառի մէկ ձևափո-խութիւնն է:—Յունարէնից փոխառնալ են դարձեալ ասոր.* ܩܠܬܐ qalәttā *և վրաց.* კალათა კალաթა «կողով»:

Նշ՝ Նոյն բնդ կայր: Bugge KZ 32, 50 *իբր բնիկ հայ կցում է յն.* κάλαθος *բառին, իսկ* կաղար *դնում է փոխա-ռնալ: Հիւրշ. 353* կաղար *դնում է փո-խառնալ, իսկ* կեղր *ձևի վրայ չի խօ-սում:* Scheftelowitz BB *28, 146, 303 և 29, 27 յն.* κάλαθος «բաժակ» *և սանս.* kaṭhina- «պուտուկ» *բառերի հետ՝ իբր բնիկ հայ:* Pedersen, *Հայ. դր. լեզ. 77 թէ՛* կեղր *և թէ* կաղար *դնում է յունարէնից փոխառնալ, որ ընդունում է նաև* Boisacq 396: Petersson KZ 47, 266 *մերժում է դնել* կեղր *փոխառու-թիւն (որովհետև միևնոյն բառից երկու ձև չի ընդունում ծագած) և կցում է լտ.* globus «գունդ», *գւտ. շվեդ.* kulp «հաստ մարդ» *են բառերին:*

կեղծ «շինծու, ձևացեալ, սուտ». *առան-ձին չէ գործածուած հին լեզուի մէջ, բայց արդի գրականում շատ է գործածական. ո-րից են* կեղծս ի կեղծս «պէսպէս սուտ կեր-պարանքներով» *եղն.* կեղծիք «կեղծաւորու-թիւն, պատրանք, խաբէութիւն» *եղն. Ոսկ. մ. ա. 6. և յհ. ա. 1.* կեղծաւոր *ՍԳր. Վեցօր.* կեղծաւորակից *Ոսկ. մտթ. և գաղ.* կեղծա-

ւորիլ ՍԳր. Ոսկ. մ. ա. 8. կեղծաւորութիւն ՍԳր. անկեղծաւոր Ա. տիմ. ա. 5. անկեղծիկ Ոսկ. ա. տիմ:—Նոր բառեր են կեղծամ (<*կեղծածամ), կեղծարար, կեղծմաշկ, անկեղծօրէն, կեղծել են:—Կեղծ բառի բուն նշանակութիւնն է «ձև», ինչպէս յայտնի երեւում է կեղծս ի կեղծս ասացուածի մէջ: Այս նախնական նշանակութիւնը պահած է նոյն բառի բացասականը՝ տկեղծ «տձև, անձև, անկազմակերպ» Ոսկ. երր. 492 (Վասն տկեղծ հասակի), մեկնուած «դժուարատեսակ կամ թերատեսակ» Բառ. երեմ. 312, սխալ գրչութեամբ էլ տգեղծ «անշնորհք, անվայելուչ» Առակ. իե. 26 (յն. ἄχοσμον «անկարգ, անպատշաճ»), վրք. հց. Ա. 4. կմբ. իմ. Ոսկ. բ. տիմ. 209, հռոմ. 360, վրք. և վկ. Ա. 139, որ և «վախկոտ, անարի» Մանդ. 217 (տգեղծ ի մարտի): —Արմատի երկրորդ ձևն է **խեղծ**, որ առանձին չէ գործածուած և կայ միայն ս բացասականով. այսպէս՝ տխեղծ «տձև, անկազմ, տգեղ» Ոսկ. ես. և երր. Փարպ. «անկատար տիօք, տհաս» Ոսկ. մ. բ. 2. տխեղծութիւն Ոսկ. մ. ա. 17. տխեղծանալ Պիտ. անտխեղծ կամ անտխիղծ երգ. ը. վերջ. Նար. սխալմամբ գրուած տեղծ լասու:—Սրանց հետ նոյն է նաև տկեղտ, որ մէկ անգամ գործածուած է Ոսկ. պօղ. Բ. 494 (Մարթի ի մանկութեանն զծերութեան միտս ունել, որպէս ծերք ի ծերութեան խակը իցեն և տկեղտ).—այս բառը Վարդանեան ՀԱ 1914, 742 սրբագրում է տկեղծ, բայց նթէ ճիշտ է տկեղտ ձևը, կարող է ներկայացնել աւելի նախնական մի ձև, *կեղտ փոխանակ կեղծ. Համմտ. պարծանք ևն:

ՆՀԲ «լծ. ընդ եղծ, զեղծ կամ գեղ եղծ, սուեղծ»: Ս. Վ. Պարոնեան, Արև. մամ. 1880, 552 եղծ բառից: Հիւնք. եղծանիլ բայից: Meillet MSL 10, 278 համարում է ծ յաւելուածով կազմուած կեղ արմատից, որ գտնում է կեղակարծ բառի մէջ (իբր կեղծակարծ): Bugge KZ 32, 51 հիւլ. celg «խորամանկութիւն», ն. գաէլ. cealg «կեղծաւորութիւն» բառերի հետ: (Այս մեկնութիւնը ընդունում են Berneker 166 և Pokorny 1, 447 աւելացնելով անգսք. hylc «կորութիւն, ծռութիւն» և լեհ. czołgai się «սողալ, սպրդիլ» (<հսլ. čilgati). Հնխ. արմատը qelg. «ծռիլ»:—Սակայն այս արմատը պիտի տար հյ. *ֆեղծ և ոչ կեղծ): Pedersen, Հայ. դր. լեզ. 75, 148 ըստ Meillet համաբելով արմատը կեղ, այս կեղ ձևը նոյն է դնում երկու բառի հետ, իբր=լտ. bellum, duellum, Անդրիկեան, Բազմ. 1907, 448 և 1908, 392—4 նոյն ընդ կարծ. համմտ. լտ. credo, creo «կարծել, անել»: Նեւոն-խան, Բազմ. 1908, 163 արաբ. vils, դան. valsch, գերմ. falsch, լտ. falsus հոմանիշների հետ: Զօրպաճեան, անդ՝ 359 պրս. ضش ղեյշ (?), արաբ. غش ġišša «կեղև», լտ. falsus, անգլ. false: Գաբրիէլեան, Բազմ. 1908, 501 կեղ «վէրք» արմատից: Թիրեաքեան, Բազմ. 1908, 504 կարծ արմատից: Կեղծ և տխեղծ բառերի յարաբերութիւնը վերի ձևով մեկնեց Աճառ. ՀԱ 1909, 160: Մ. Ս. Գաբրիէլեան, Բազմ. 1907, 543 դնում է կեղ արմատից, որից է նաև կեղեւ, իբր կեղև-ած:

ԳԻՒ.—Արմատը պահուած չէ. գրականից փոխառութեամբ ունինք միայն վն. կէղծավոր, Ջղ. կեղծավոր, Մկ. կէղծոտոր, Ախց. կէղծավօր, Ալշ. Մշ. կէղձավոր, Ննխ. Պլ. Սեբ. գէղձավօր, Սլմ. կեխծավոր, Ոզմ. կեղծավուր, Երև. կէխցավօր, Ղրբ. կէղծա՛վրէր, Գոր. կ՚ըղծավօր, Մրզ. կէխծավի՛ր, Տփ. կիխծավուր, Ջթ. գէղձոմվիւ, գէղձոմվիւր, Շմ. կէխծօօր:

ՓՈԽ.—Սղերդի արաբախօս քրիստոնեաները ունին gəγzavor «կեղծաւոր» (Բիւր. 1899, էջ 116):

կեղՏ, ո հլ. (յետնաբար նաև ի հլ.) «աղտ, կեղտ, անմաքրութիւն» Ոսկ. մ. բ. 12 և յհ. ա. 9. «աղտոտ, կեղտոտ, անմաքուր» Բ. մակ. զ. 25. Ոսկ. յհ. ա. 2. որից կեղտալից Շնորհ. յուդ. կեղտեալ Անան. զղջ. կեղտաճուն ԱԲ. կեղտաշոր ԱԲ. չարակեղտ ՅՀ. կթ:

ՆՀԲ «յն. κηλις, κηλίδος է կեղ և կեղտ»: Ս. Վ. Պարոնեան, Արև. մամ

1880, 552 եղած ձևից։ Bugge KZ 32, 50 յն. κελαινός «սև» բառին ցեղակից է դնում։ Scheftelowitz BB 28, 305 սանս. karda «կեղտ», լտ. -cerda «կղկղանք, ծիրան» բառերի ընտանիքին է կցում։ Գաբրիէլեան, Բազմ. 1908, էջ 501 կեղ «վէրք» արմատից։ Թիրեաքեան, Արիահայ բռ. 15 ախտ>աղտ բառից է հանում։ Trombetti, L'Unità d'Origine del linguaggio, էջ 166 իբր համաշխարհային բառ միացնում է խալտ. hōri, հնդ. kr-š-ná-, հպրուս. kir-s-na, հլս. črinu, յն. κηλίς, հյ. կուրկ, յն. σκώρ. լտ. sordeo, թրք. kara, մոնգոլ. xara, ճապոն. kurai, մաճառ. szar, չերեմիս. šor, թամիլ. karu, սիամ. k'ram, մալայ. kelam, աւստրալ. kūrūm ևն ևն բառերի հետ, որոնց նշանակութիւնն է «սև, մուր, կեղտ»։ Walde 504 յիշում և մերժում է լտ. -cerda ևն։ Pokorny I, 441 հնխ. qel- արմատի տակ դնում է սանս. kalana «բիծ», գւտ. գերմ. helm «տաւարի ճակտին ճերմակ նիշ» ևն բառերի հետ, բայց անճիշտ է գտնում, որովհետև նախաձայն սպասելի էր f-։

ԳԻՒ.—Մկ. կէղտ, Ալշ. Մշ. կեղդ, Երև. Սլմ. կեխտ, Մրզ. Շմ. կէխտ, Տփ. կիխտ, Տիգ. գիղդ։ Նոր բառեր են կեղտակոռոյս, կեղտոտել, կեղտակեր, կեղտակալել։—Մանկական բարբառի ձև է Տփ.կի՛տուտ՝ փոխանակ կի՛խտուտ «կեղտոտ»։

ԿԵՂՏԱՇՏ «կեղտանուն կամ վատանուն». ունի միայն Բառ. երեմ. էջ 160։

ԿԵՂՕՓ կամ **ԿԱՂՕՓ** «անտաշ». ունի միայն Բառ. երեմ. էջ 153, 160։

***ԿԵՄ**, ո հլ. «սիրայ, խոտէ չուան» Բուզ. գ. 8. Մագ. թղ. 231. Վանակ. հց. որից **կեմեղէն** Վրք. հց. Ա. 358. յեռնաբար ստացել է նաև **կեամ** և **ճիմ** ձևերը. առաջինը կայ միայն **կեամատարազ** «կեմի նման» Մագ. թղ. 204 բարդի մէջ, իսկ երկրորդը մէկ անգամ ունի Նիւս. երգ. գրծ. ճմաւ ձևով և «սանձ» նշանակութեամբ։ (Ճմաւ անշուշտ ենթադրում է *ճիմ կամ *ճուտ ուղղականը, ուստի գուր է ՆՀԲ-ի գրած ճեմ ձևը)։

=Յն. κημός բառից փոխառեալ. նշանակում է «հիւսուած բան, մասնաւորապէս՝ ցոկակապ կամ ցանց՝ որ ձիերի բերանն են կապում՝ կծելը արգիլելու համար, 2. ձկնորսի ցանց. 3. ուռուց հիւսուած կափարիչ՝ քուէտուփի բերանը ծածկելու համար»։ Բառս համարւում է բնիկ հնդեւրոպական և նրան ցեղակից են դրւում լիթ. kiĩnsztі «խցել», kamūti «ճնշել, խցել», kāmanos «կաշիէ սանձ», լեթթ. kamūt «չարչարել», հիսլ. hemia, hamda «սանձը քաշել, ստիպել», մրգ. hemmen «յետ պահել, արգիլել» (Boisacq 449, Berneker 167)։ Այս բառը բաւական տարածուած է Արևելքում. սրանից են փոխառեալ ասոր. ܩܡܐ qamā, մանդայ. קאנא gānā «ցոկակապ», թրք. گم gem «սանձ», քրդ. gem «սանձ»։ Հայ բառի նշանակութիւնները նոյն են յունականի հետ. «սանձ»ը «ցոկակապ»ի հետ նոյն է. «սիրայ» նոյնանում է «հիւսկէն» նշանակութեան հետ. համմտ. նոր գաւառականների մէջ կեմ «ոլորած խոտէ կապ, որով խուրձերն են կապում» և յատկապէս «արմտիքների ծղօտներով բանուած օղակաձև հիւսուածք՝ որ դնում են պտուկների տակ, որպէսզի ծանրութիւնից չկոտրին»։ Այս վերջին նշանակութիւնը գեղեցիկ կերպով միանում է յունականի երրորդ նշանակութեան հետ։—Աճ.

Bugge KZ 32, 55 իբր բնիկ հայ կրցում է սանս. váyati, լիթ. wyjù, wýti, հսլ. viją, viti «հիւսել» և լտ. vimen «ուռու ճիւղ» բառերին։ Scheftelowitz BB 28, 304 հսլ. kosmŭ «մազ», յն. κόμη «ծամ», լտ. carere «զգել» ևն, որին հակառակ է Boisacq 489։ Pedersen, Հայ. գր. լեզ. 199 օսմ. gem «սանձ» ուզում է դնել հյ. ճեմ բառից փոխառութիւն։ Թիրեաքեան, Բազմավ. 1913, 341 հյ. կեմ դնում է թրք. gem բառից։ Տաշեան, Ուս. դաս. հյ. էջ 142 նման է գտնում թրակ. κῆμος «մի տեսակ խոտ և ունդ»։ Հացունի, Պատմ. տարազի 314 լծ. յն. κημός «սակառ, ուռկան»։

Գիր.—Ալշ. Բլ. Մշ. կեմ, *Երև. Կր.* կէմ, *Ղրբ.* կըէմ, *Խն.* կիմ, *Ավեդ.* գիմ.—*նոյն բառն ունին նաև Ասպ. Ախք. Լ. Հմշ. Զրս.—փոխաբերաբար Ղզ.* «գօտի», *որին համաձայն է գալիս* Լմ կապել «շատ աղքատանալ, այնպէս որ գօտու տեղ կեմ կապելու աստիճանին հասնիլ» (*գրուած է Բաբերդի մի հին գերեզմանաքարի վրայ՝ ըստ Գարիկեան, Ամէն. տարեց. 1922, էջ 323*)։ *Նոր բառեր են* կեմակոր, կեմառ, կեմացու, կեմճել։

կեմԱՋԳԱՅ «*հանգէս*». *ունի միայն Բառ. երեմ. էջ 161։*

***կեմԵՏՐԻԱՅ** «նահատակի գեռնափոր գերեզման» *Եւս. պտմ. է. 11, էջ 543 (տպ. կենճեարիայ), որ և* կիմեարէր *Եւս. պտմ. է. 13, էջ 551, կումատրովն ճառընտ.* կիմեարիոն *ՆՀՌ.* կիմեարիոն *ՋՌ.* կիմեարիա «*մարտիրոսաց յիշատակ*» *Բառ. երեմ. 163։*

=*Յն.* κοιμητήριον «*գերեզմանատուն*», *որ ծագում է* κοιμάω «*պառկիլ, քնել*» *բայից. սրանից են փոխառեալ նաև լտ.* coemeterium *և ֆրանս.* cimetière *հոմանիշները։ Հայերէնի մէջ ուղիղ ձևն է* կիմեարէր, *միւսները յառաջացած են գանազան վրիպակներից։*

Ուղիղ մեկնեցին ՀՀՌ և ՆՀՌ։

կենԱՔ «*սուացուածք, կենդանագիր, կենդանոյ պատկեր*». *անստոյգ բառ. գիտէ միայն Բառ. երեմ. էջ 161 և Հին բռ. (ըստ ՀԱ. 1911, 387)։*

կենԱՌ «*սեղանապետ*» *Նիւս. բն. էջ 162* «*Եւ թագաւորական սեղանոյն կենառի*». *միևնոյն ձևով ունի Օրբել. Հրտր. էմ. էջ 98։*

Նորագիւտ բառիս վրայ խօսելով Տաշեան ՀԱ. 1892, 67 (արտատպ. Մատենագր. մանր ուսումն. Ա. էջ 8—9) մեկնում է իբր լտ. cellarius «*մառանապետ*» (>*յն.* κελλάριος Sophocles *657) և սրբագրում է* կելար (*իմա՛* կեղար)։ *Իսկ եթէ* կենառ *ընթերցուածը ստոյգ է, համեմատում է լտ.* cœna «*ճաշ, սեղան*», cœnatorius «*ճաշական*», cœnatorium «*ճաշարան*» *ձևերի հետ կասկածով։*

կենԴԱՆԻ *տե՛ս* Կեալ։

***կենՂԱՐ** «*մի չար դև*» *Աղթամարք. (ըստ Ալիշան, Հին հաւ. էջ 215)։*

=*Յն.* κένταυρος «*առասպելական հրեշ, որի կէսը մարդ էր, կէսը ձի*»։—*Աճ.*

***կենԴԻՂԻՈՆ** «*սեպուհ, նախարար, սպայ*». *ունի միայն ՆՀՌ, ըստ Յայսմ. մէկ անգամ գտնում եմ գործածուած Յայսմ. հոկտ. 6, հետևեալ ձևով. «էր սուրբն Սարգիս պատուեալ պատմիկուս դասուց կենդիլիոնաց»։*

=*Յն.* κεντυρίων *կամ* κεντουρίων «*հարիւրապետ*», *որ փոխառեալ է լտ.* centurio, *սեռ.* centurionis *հոմանիշից* (Sophocles 659). *Լատին բառն էլ ծագում է* centum «*հարիւր*» *բառից։ Հայ բառը անշուշտ աղաւաղ մի գրչութիւն է ներկայացնում և ըստ իս պէտք է ուղղել* կենդիրիոն (ո *փոխանակ* դ)։—*Աճ.*

Աւգերեան, Լիակ. վրք. սրբ. Գ. 162 մեկնում է իբր լտ. gentilis «*ազնուական*» *կամ* centenarius «*հարիւրապետ*»։

***կենԴԻՆԱՐ** (*ի–ա հլ. ըստ ՆՀՌ, բայց առանց վկայութեան*) «*հարիւր լիտրանոց կշիռ կամ հարիւրանոց ոսկի՝ արծաթ*» *Շիր. էջ 28, Վրդն. պտմ. Վրք. հց։ (Ըստ Մանանդեանի հաշուի, Տեղեկ. ինստիտ. 2, 30 կշռում էր 32 կիլ. 640 գրամ)։ Գրուած է նաև* կենտար։ *Արդի գրականում թէև արևելեան բարբառը չգիտէ, բայց արևմտեանը յատկացրել է տաճկական խանթարին, որ է 44 օխա=56 կիլօ։*

=*Յն.* κεντηνάριον, κεντηνάριν, *որ փոխառեալ է լտ.* centenarium *բառից. այս էլ ծագում է լտ.* centum «*հարիւր*» *բառից և նշանակում է բուն «հարիւրանոց»։ Լատին բառը տարածուել է շատ լեզուների մէջ. ինչ. գերմ.* Zentner, *մրդ.* zentenaere, *իրլ.* qantār, *արաբ.* قنطار qanṭār, قنشر qansar *(տե՛ս հյ.* խանթար, խանսար *բառերը), ռուս.* кендинарь, кентинарь, контáрь, *լհհ.* cętnar, cetnar *ևն* (Berneker 482, Kluge 542)—*Հիւրշ. 356։*

Ուղիղ մեկնութիւնը տուաւ հներից Շիր. էջ 28 «Կենդինարն 100 լիտր է և անուանեցաւ ըստ Հռովմայեցւոց լե-

զուին, զի կենտու (centum) հարիւր ըսի»։ Նորերից նախ Աւգերեան. Բցտր. չփ. և կշռ. էջ 110։

կենդինոն «հեղնափայտ». ունի միայն Բառ. երեմ. յաւել 568։

***կենդոնաւո** «ցնցոտիներով կարկատած զգեստ, հին շոր» Վրք. հց. Բ. 56 (ը. խմբագրութիւնն ունի պատառատուն հուրձ). ուրիշ վկայութիւն չկայ։

=Յն. κεντωνάριον «ցնցոտիներով կարկատած հագուստ», որ նուազականն է κεντών հոմանիշի. սրանից և լ. cento, centonarium «շորի կտոր»։—Հիւբշ. 356։

Նշ Բ լ. cento, յն. κεντών ձևից։

***կենդրովն կամ կենտրովն** «բոլորակի միջին կէտը» Եւկղիդ. ասւում է նաև կենդրոն, կենտրոն, կեդրոն. արդի գրականում՝ արևելեան բարբառը գրում է կենտրոն, արևմտեանը՝ կեդրոն. որից կեդրոնական, կեդրոնավայր, կեդրոնատեղի, կեդրոնաձիգ, կեդրոնախոյս, առաջակեդրոն, կեդրոնաձալ, կեդրոնացում, ապակեդրոնացում, ապակեդրոնացական են նոր բառերը (Նշ Բ և սրան հետևելով Աբ՝ նշանակում են նաև «խթան». բայց այս նշանակութիւնը յատուկ է միայն յունարէնին և չկայ հայերէնում ինչպէս որ ՃՐ էլ չի նշանակած)։

=Յն. κέντρον «կենտրոն, միջին կէտ». բուն նշանակում է «խայթոց» և ծագում է κεντέω «խայթել» բայից. փոխառութեամբ տարածուած է բոլոր եւրոպական լեզուների մէջ. ինչպէս՝ լ. centrum, գերմ. zentrum, ֆրանս. centre, ռուս. центръ, վր. ცენტრო կենտրո են։—Հիւբշ. 356։

Ուղիղ մեկնեցին նախ ՇՀ Բ, Նշ Բ։

կենէշ «նիգ», որ և կենդեշ կամ կշեռ «նիգ». սրանից կեշևոր «նիգ (իմա՛ նգաւոր)». բոլորն էլ ունի միայն Բառ. երեմ. էջ 161, 165։

կենոռոս «մարդակեր մի գազան». նորագիւտ բառ, որ մի անգամ գործածուած է Խոր. աշխ. հրատր. Սուքրեանի, էջ 19 «Ունի և քարայրս Լաւինիկացւոց, յորում են նորակերպ գազանք, որք են մարդակերք. կենոռոս, որոյ աջին թուշնոյ նման է, լինգնաս, ապուռինք, արջամկունք և այլ բազում սքանչելի գազանք»։ Սուքրեան համարում է կենդաւրոս «իշացուլ» (իմա՛ յն. κένταυρος «կէսը մարդ՝ կէսը ձի հրէշ, centaure»)։

***կենոն** «հարկ, տուրք». նորագիւտ բառ. մէկ անգամ ունի Տիմոթ. կուզ, էջ 289, որից օրինակում է Կնիք հաւ. էջ 175 .«Թագաւորք երկրիս յումէ՞ առնուն զհարկս կամ զկենսոն, յորմէ՞ իւրեանց, եթէ յօտարաց». (հմմտ. Մաթ. ժէ. 24)։ ՀՀՔ և Աւգերեան, Բացատր. չփ. և կշռ. էջ 45 գիտեն բառս կինսոն ձևով, բայց առանց վկայութեան։ Բառ. երեմ. ևս ունի կինսոն կամ կենսոն «հարկ» էջ 161, 162, որից և կենսունիլ «հարկատուրիլ»։

=Յն. κῆνσον «տուրք» բառից, որ հյց. հոլովն է κῆνσος ձևի. այս էլ փոխառնալ է լ. census բառից, որ ծագում է censere «գնահատել» բայից։ Լատին բառը անցել է նաև ուրիշ շատ լեզուների, ինչ. ֆրանս. cens, գերմ. Zins, հսլ. kinsŭ, հռուս. kinsonъ, սլ. činž, չեխ. činže, լհհ. czunsz ևն (Berneker 504, Kluge 545):

Ուղիղ մեկնեց նախ Աւգերեան, անդ. յետոյ Աճառ. Հայ. նոր բառեր Տիմոթ. էջ 81։

կեշկեշել «կարկատել» Հին. բռ.—Բառ. երեմ. էջ 161։ Նշ Բ գրում է կէշկէշել։

Նշ Բ «թերևս կցկցել կամ ի կէս բառնէն»։

***կեշտ** (ի հլ. ըստ Նշ Բ, բայց կայ միայն սեռ. ի) «կրօն, աղանդ» Եղիշ. դ. էջ 46, 63. ը. էջ 113. «գիրք վարդապետութեան, վարդապետարան» Եղիշ. ը. էջ 112. ունինք նաև էշ և էշտ ձևերով (տե՛ս այս բառերը), որոնցից էշակարկատ Եզն. էշտակարկատ Կանոն։

=Պհլ. 𐭪𐭩𐭱 kīš, kēš և պրս. کیش kēš, kīš «կրօն, աղանդ», որոնց հինն է զնդ. ϕkaēša- «կրօն, աղանդ, օրէնք, ուսուցիչ և վարդապետ». ծագում է զնդ. kaēš- «ուսուցանել, վարդապետել» արմատից։—Հիւբշ. 167։

Նշ Բ սրանից է դնում էշիշ «կրօնաւոր»։ Հիւնք. պրս. քիշք, քիշքէն «սպանել» բառից։ Բազմ. 1895, էջ 51 սա-

սանեան պհլ. češtak «վարդապետութիւն», զնդ. čista-, čisti-: Նոյնը Փորբուզալ փաշա, եղիշէ 277։

կեպռենալ «կապեալ, կալեալ, աղտեղացեալ». ունի միայն Բառ. երեմ. էջ 161։

կեռ տե՛ս Կայտի։

—**կեռ** «ծուռ, կոր» Շնորհ. առակ. «ճանկ, βրք. čengel» Կիր. էջ 221. Վստկ. 130. որից **կռածագ** «ծայրը կորացած (կտուց)» Նար. 177. **կռակտուց** Ոսկիփ. **կռաշուրթն** Դիոն. Շնորհ. Սահմ. **կռապոզ** «ծուռ եղջիւրներով» Մագ. βղ. 87 (չունի ՆՀԲ). **կեռկեռ** «ծայրը կորացած (կօշիկ)» Զրր. սարկ. Բ. 88. նաև **կռանալ** Լծ. փիլ. որ ՆՀԲ մեկնում է «կռնակը տալ, կռթնիլ, յենուիլ», բայց ուղղելու է համաձայն գաւառականների՝ «ծռիլ, մի բանի նայելու համար վրան հակիլ». յայտնապէս «ծռիլ, կորանալ» իմաստն ունի Կղնկտ. հրտր. Շահն. Ա. 322 (βուβակի կտուցի համար ասուած)։

=Նոյն է **կռ** բառի հետ, որ տե՛ս։

Scheftelowitz BB 28, 303 նոյն է դնում **կառչել** բայի հետ։

Գիւմ.—Ալշ. Զղ. Մշ. **կեռ**, *Ախց. Գոր. Երև. Կր. Շմ.* **կէռ**, *Ղրբ.* **կրէռ**, *Սեբ.* **գէ՝ռ**. *Տփ.* **կիռ**. *(միևնոյն բառը ունին նաև Արբ. Խոջ. Բբ. Համշ. Զն. Վն. զանազան նշանակութիւններով)։ Նոր բառեր են* **կռել**, **կռաճալ**, **կռացնել**, **կռան**, **կեռաճագի**, **կեռի**, **կեռիլ**, **կեռլիկ**, **կեռկտուց**, **կեռմայր**, **կեռման**, **կեռուկ**, **կեռումեռ**, **կեռչան**, **կռապատի**, **կեռոիկ**, **կռավար**, **կռաչիլ**, **կռակռ** «կորաքամակ պառաւ». վերջինը ցոյց է տալիս **կռռ** ձևն էլ, որի մասին տե՛ս **կռ** բառի տակ։

***կեռԱՍ** «կեռաս պտուղը, քիրազ, դիլաս» Մարβին. Վստկ. 156. Առաք. պատ. 418, որից* **կեռասենի** «կեռասի ծառը» Վստկ. 44, 143։

=Յն. κέρασος, նյն. κερασιά «կեռասենի», κεράσιον «կեռաս» բառից, որ Արևելք և Արևմուտք ընդհանուր տարածուած մի բառ է. համեմատել լտ. cerasus, սպան. cereza, իտալ. ciriegia, ֆրանս. cerise, անգլ. cherry, հգերմ. chirsa, մբգ. kërsc, գերմ. Kirsche, հունգ. cseresznye, հսլ. čeršĭn'a *ռուս.* черешня, *սերբ.* trĕšnja, *չեխ.* strešně, *լհհ.* trzes'nia, czeresznia, *լիթ.* čeresna, *ռում.* ceráșe, *գնչ.* čiras, *ալբան.* k'erší, *ֆինն.* kirsi, *էստն.* kirs, *βրբ.* kiraz, *արևել. βրբ.* gilas, *քրդ.* gilas *են։ Նախապէս կարծւում էր՝ որ այս բառը ծագած է Փոքր-Ասիոյ* Κεράσοῦς *(Կիրասոն) քաղաքի անունից, ուր Հռովմայեցիք առաջին անգամ Լուկուլլոսի ժամանակ ճանաչեցին այս պտուղը և իրենց հետ Եւրոպա տանելով՝ տարածեցին ամէն կողմ։ Այսօր ընդունում են՝ որ բառը Փոքր-Ասիական, βերևս Փռակոփուգական է, պատկանում է հնխ.* qer- *արմատին և ցեղակից է յն.* κράνος, *լտ.* cornus, *լիթ.* *kirnas *են բառերին։ Յունարէնից անցել է լատիներէնի և յետոյ ուրիշ լեզուների* (Berneker 149, Boisacq 439, Kluge 256, Pokorny 1, 411):—*Հիւբշ. 356։*

ՆՀԲ յիշում է միայն ռմկ. **Իրազ**։ *Ուղիղ մեկնութիւնը ունին Մսեր մագ. համբագիր չափածոյ 176,* Justi, Dict. Kurde 374, *Հիւնք. 331 են։*

Գիւմ.—Սչ. **գեռաս**, *Ասլ. Ննխ.* **գէռաս**, *Սեբ.* **գէ՝ռաս**, *Βլ.* **գեռյազ**, *Մշ.* **գըռյազ**, *Խրբ.* **գիյրազ**, *Զβ.* **գէռօս**, **գէռռս** *(ծառը կոչւում է* **գէռիսե**, **գէռիսիեն**, **գէռասիեն**), *Վն.* **գիլազ**, *Պլ.* **Իրազ**, *Ախց.* **Իրmզ**, *Սվեդ.* **Իռուզ** *են. վերջիններս նոր փոխառութիւն Թուրքերէնից կամ քրդերէնից։*

***կեռԵԱՅ** *(սեռ. հոլով)* «կայմ» *Խոր. աշխ. 586 (այլ ձև.* **կեռայ**, **կիւռիայ**). *Չունին բառարանները.* «Ունելով զտաւուռն միջերկնեայ և զպղպիդա ընդ մէջ կեռեայ»։

=*Յն. բնագրի* μέσην τὴν κεραίαν *ձևից տառադարձուած, որ Պատկ.* Арм. геогр. *էջ 4 Թարգմանում է* «надъ серединою райны, *միջին կայմի վրայ»։—Աճ.*

կեռԼԻԿ, ի–ա *հլ.* «հորից ջուր քաշելու դոյլ» *Բռ. առեփ. լհհ։ Ուրիշ տեղից ծանօթ չէ բառս։ ՋԲ չի յիշում։*

կեռՆԵԼ *(ի–ա հլ. ըստ ՆՀԲ, բայց առանց վկայութեան)* «ճարեկ, սարեկ βռչունը» *Փիլ. առ լիւս. 128, 171։*

Petersson, Ar. u. arm. Stud. 102 –ևխ *վերջաւորութիւնը դնում է մասնիկ (համմտ.* **գռեխ**, **մեղեխ**) *և արմատը*

կեռն- *կցում է հիալ.* kàrn «*մի տեսակ թռչուն*» *բառին, իբր հնխ.* ger-no-: *Այս բառը անշուշտ բնաձայն է և գոնըւում է նաև յն.* γέρανος, *լտ.* grūs, *լիթ.* gérvė *ևն բառերի մէջ։*

ԿԵՍԱՐ *տե՛ս Կայսր։*

ԿԵՍՈՒՐ *տե՛ս Սկեսուր։*

***ԿԵՍՏ** *կամ* **ԿԵՍՏՈՍ** *(սեռ.* կեստայ, *բցտ.* ի կեստէ*) «Աստղիկ աստուածուհու զարդերի արկղը» Նոնն. (Հրտր. Մանանդեան, էջ 59), Տօնակ. Մագ. գամագտ. (ՀԱ 1911, 388)։ Ուրիշ վկայութիւն չկայ։*

=Յն. κεστός «*Աստղական գօտին*», *լտ.* cestus «*փսխաթէ կողով, Աստղական գօտին, հարսանեկան գօտի*»—*Հիւբշ. 356։*

Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ։

[ԿԵՍՏՐՈՍ «*իշխան*». *արմատը առանձին չէ՛ գործածուած. սրանից ունինք* կեսարոսական «*իշխանական*», *որ մէկ անգամ գըտնում եմ գործածուած նոր վկ. էջ 31 (Մըխիթար Գօշի գրչից).* «*Յիշխանութեանն Հայոց Թորոսի՝ որ էր պատուհասլ կեսարոսական պատուով ի Թագաւորէն Յունաց*»։

=Կարդա՛ կեսարոս. շփոթուած են ա և ա՝ բոլորգրի նմանութեան պատճառով։]

ԿԵՏ, ԿԵՏՈՍ *տե՛ս Կէտ։*

+ԿԵՐ, ո *հլ. «կերակուր, ուտելիք» (մանաւանդ անասունների ուտելիք կամ ձկան խայծ) Ոսկ. յհ. ա. 1. Եփր. Թգ. և ծն. Մծբ. Ագաթ. որից* կերութիւն, *աւելի ճիշտ* այլոցկերութիւն «*ուրիշի ինչքը ուտելը*» *Բուզ.* կերեցութիւն «*որկրամոլութիւն*» *Եփր. Հռ. 24.* կերիչ *ՍԳր.* կերող *ՅՀ. գ. 13.* շաւակեր *Խոր.* մսակերութիւն *Եւագր. Եզն.* արմատակեր *Ոսկ. փիլիպ. Ագաթ. Բուզ.* կաթնկեր *Երր. ե. 13.* կաթնակերազոյն *Կոչ.* խոտակեր *Սղ. ճհ. 20. Ագաթ.* գիշակեր *Եզն. Վեցօր.* մարդակեր *Կոչ.* ընդակեր *Ստեփ. սեան.* ընթրեկերք *Դան. գ. 14.* ժանգակեր *Սիր. իթ. 13. Ագաթ.* անկերակուր *Եղիշ.* գաղտակեր *Ամբ. գ. 14.* գայլակեր *Ոսկ. լս.* դալարակեր *Փիլ. լիւս.* երդմնակեր *Մանդ.* կերևուրաց «*ապերախտ*» *Թղ. պրոկղ. ՀԱ 1921, 22, Գիրք Թղ. էջ 6.* գազանակեր *Ճառընտ.* կերդի «*կաշառք*» *Պատմ. ԺԲ դարից (Դիւան Ժ. էջ 399). այս արմատով են կազմւում նաև ուսեմ բայի պակասաւոր ժամանակները, ինչ.* կերայ, կերի, կերայց, կերեալ *ևն։—Տե՛ս նաև* ընկեր։—*Այս արմատի երկրորդ ձևն է* կուր «*անասունների ուտելիք*» *Գ. մակ. ե. 18. Եզն. «ապրուստ, շահ» Կոչ. 116.* որից կերակուր, ո *հլ. ՍԳր. Եփր. ծն.* կերակրել *ՍԳր.* կերակրիկ *Ոսկ. մտթ. և յհ. Եփր. պհ. 175.* կերակրիչ *Օր. լբ. 18. Բար. դ. 8. Վեցօր. Եփր. ծն.* կերակրչութիւն *Եւս. պատմ.* գազանակուր *Ծն. խդ. 28.* գետակուր *Խոսր.* գերեզմանակուր *Սերեր.* դեղակուր *Խոր.* ծովակուր *Ոսկ. մ. ա. 13. Պիտ. Ճառընտ.* սառանձայակուր *Ագաթ.* վաճառակուր *Սերեր. Ոսկ. մ. բ. 8, 24. Եփես. Եւս. քր.* ջրհեղեղակուր *Ոսկ. ես. 193 ևն։*

=Բնիկ հայ բառ՝ հնխ. g²er- *արմատից, որի միւս ժառանգներն են յն.* βερά «*կեր, ճարակ անասնոց*», βορός «*որկրամոլ*», βρῶμα «*կերակուր*», *կրկնութեամբ* βι-βρώ-σκω, βε-βρώ-θω «*ուտել, լափել, ճարակել*», *լտ.* voro «*կուլ տալ, լափել*»,- vorus «*ուտող*» *(ինչ.* carnivorus «*մսակեր*»), *հգ.* querka «*կոկորդ*», querdar «*խայծ ձկան ևն*», *լիթ.* geriù, gêrti «*խմել*», gerklẽ «*կոկորդ*», gurklỹs «*խածի*», *հսլ.* žirą, žrěti «*կուլ տալ*», grŭlo «*կոկորդ*», *ռուս.* горло *և լհհ.* gardło «*կոկորդ*», *ալբան.* ngranε «*կերեալ*», hε-ngra «*կերաւ*» *ևն։ Այստեղ են պատկանում նաև հյ. կոկորդ և նրա ընկերները, որոնց վրայ տե՛ս կոկորդ բառի տակ։—Վերի արմատից տարբեր է հնխ.* gel- «*կուլ տալ*», *որ մի քանի լեզուների մէջ շփոթուած է վերոյիշեալ* g²er- *արմատի հետ, այնպէս որ կարելի չէ որոշել թէ իրապէս ո՛ր արմատին են պատկանում. այսպէս են սանս.* giráti «*կուլ է տալիս*», gará «*ըմպելիք*», *զնդ.* gar «*կուլ տալ*», *հսլ.* glŭtati «*կուլ տալ*», glŭtŭ «*կոկորդ*»։ *Հայերէնը հարազատօրէն պահած է երկու արմատներն էլ մի քանի ձայնդարձներով. այսպէս* կեր, կուր, *կոր (կոկորդ *բառի մէջ*), կել, կուլ. *տե՛ս և այս վերջինը* (Walde 858, 356, Boisacq 127, Berneker 369, Trautmann 89—90, Pokorny 1, 682, Ernout-Meillet 1091)։—*Հիւբշ. 459։*

ՆշՒ լծ. **կեր, կուր, խար,** *պրս.* **խօր, խար, խօրիշ**: Peterm. 25, Böttich. ZDMG 1850, 356, Arica 89, 445, Pictet 1, 216, Lag. Urgesch. 253, Bopp Gram. comp. III. 205, *Տէրվ.* Altarm. 9, *Նախալ. 13, 78 սանս.* gar, gara, gṛ *ևն ձևերի հետ*; Bugge, Etr. u. Armen. 126 *հարուսկ.* krankru *բառի հետ*; Canini, Et. étym. 238 *յն.* γράω «*կրծել*» *բայի հետ*; *Հինք.* **կեր** *դնում է յն.* χείρω «*ծախել, սպառել*» *բայից*; Karst, *Յուշարձան 404, 405 սումեր.* gar «*ուտելիք*»=*հյ.* **կեր**, kur «*ուտել*»=*հյ.* **կուր**: Autran, Sumérien et ind. *էջ 82 սումեր.* 𒂵 gar «*փշրել, մանրել*», *որ դնելով* 𒂵𒆳 «*բերան*» *բառի մէջ՝ դառնում է* 𒂵𒆳 kur «*ուտել*», *որից և հետևում է սումեր.* gar «*անունդ, ուտելիք*»:

Գիր.—Բացի **կերայ** *են բայաձևերից, որոնք ամէն տեղ գործածական են, ունինք նաև* **կեր** «*ուտելիք*» (*յատկապէս ձիուն տրուած ուտելիքը*) *և* **կերակուր** *բառերը՝ հետևեալ ձևերով.—Ալշ. Մշ. Ջղ. Սլմ. Վն.* **կեր**, *Ախց. Երև. Ղրբ. Շմ.* **կէր**, *Ննխ. Ռ. Սեբ.* **գէր**, *Ասլ.* **գէ՛ր**, *Տփ.* **կիր**, *Հճ.* **գէյ**.—*Ագլ. Տփ.* **կէրակուր**, *Սչ.* **գերագուր**, *Ննխ. Պլ. Ռ.* **գէրագուր**, *Տիգ.* **գէրmգուր**, *Մրղ.* **կէրակուռ**, *Ախց. Երև. Կր. Ջղ.* **կիրակուր**, *Ակն. Սեբ.* **գիրագուր**, *Ասլ.* **գիրագիր**.—*վերջածայնի փոփոխութեամբ ունինք Սլմ.* **կերակուլ**, *Ալշ. Մշ.* **կէրագուլ**, *Ոզմ.* **կէրակօլ**, *Մկ.* **կիրmկուլ**. (*սրանց մէջ* **լ** *ձայնը կարող է յառաջացած լինել տարանմանութեան օրէնքով՝ նախորդ* **r**-*ի պատճառաւ, և կամ շփոթուելով կուլ արմատի հետ. վերջինը աւելի հաւանական է*):—*Նոր բառեր են* **աճկեր, կերուխում, կերկոխ, կերցաւ, կերմաշ, կերմէջնոցիկ, կերմուճմ, կերուածմ, կերուկ, կերուցմ, տրկեր** «*քիչ ուտող*»:

+**կեր** «*գաւառ, թեմ*», *որ և* **կերուածմ**, *նորագիւտ բառ, որ գործածուած է հետևեալ տեղերում. «Այս է թեմ և վիճակ՝ Արզրում նստող փաշային* **կերուածմն**, *զի ամենայն շրջակայ բերդորայքս և գաւառաքս, զոր կարգաւ պատմեցի, հուքմի և հրամանի ներքև սորա են» (Յկ. կր. էջ 24). «Եւ իշխող է սա մինչև ի Բալու՝ Համթայ փաշային* **կերն**, *դէպի արևմուտս մինչ ի Թոխաթ և ի Սեբաստիոյ փաշային* **կերուածմն**, *և ի հիւսիսոյ կողմն մինչ ի Տրապիզոն և Ախլցխոյ փաշայի* **կերուածն**» (*էջ 25*). «*Եւ թէ մեծ պատերազմ լինի, թագաւորի հրամանաւ իւր* **կերուածմովն** *ամենայն ճՌ թուրքի ձիաւոր ելանէ քաղաքէս*» (*էջ 26*). «*Եւ նորա բազում սիրով ընկալեալ զմեզ՝ եւ փոխան հայրենեացն իմոց՝ զՀրաշկարերդ իւր* **կերովն** (*տպ.* **կերովս**) *և այլ բազում գիւղս ի վայոց ձոր*» (*Օրբել. էջ 263*). «*Տայ փոխան հայրենեացն... զՀամասարի և այլ գեղօրէս բազում, ի Կայեն զԱղսաև իւր* **կերովն**» (*Օրբել. էջ 291*). «*Եւ տան նմա... զՈրոտն իւր երկրաւն... և զբերդն Բորոտնայ իւր* **կերովն**» (*Օրբել. էջ 301*):

=*Նոյն* **կեր** «*ուտելը*» *արմատն է, որ ստացել է յետնաբար այս նշանակութիւնը: Որոշ գիւղ կամ շրջան իշխանութեան կողմից տրւում էր աշխարհական կամ հոգևորական այս ինչ անձին կառավարելու և միևնոյն ժամանակ նրա տուրքերով ապրելու: Այսպէսով* **ուտել** *բայը ստացաւ «կառավարել, իշխել, հովուել» իմաստը և* **կեր, կերուածմ** «*թեմ, գաւառ*»: *Համմ. Օրբել. խդ. էջ 237 (տպ. Թիֆլիս 1911).—«Զգեօղս Արաստամուխ... հարքն* **կերեալ** *էին». «Զնոյն գիւղն Արաստամուխ ամենայն սահմանօքն նորա, զոր* **կերեալ** *էին մինչև ցայսօր ժամանակիս»: Անդ՝ ծդ, էջ 292. «Արդ սուրբ հայրապետք, որ յաթոռդ յաջորդեք, պարտական էք զայդ անխափան կատարել (=իմ թագաւորի հոգւոյն զվարդավառի քառասունն պատարագ առնել) և զչէնդ աղատ յամենայն հարկաց ուտել»: Նոյն ոճը կար և ռուսերէնի մէջ. համմ.* „Целые области отдавались въ *кормленіе* воеводамъ... Изъ новейшихъ историковъ Павловъ-Сильванский связываетъ *кормленіе* съ *кормить*, то есть „править“, Ключевскій съ *кормиться*, то есть „извлекать *корма*, пропитаніе“: *Այսպէս նաև Զագավանքի ե կանոնը (Կանոնգիրք, էջ 185. «Քահանայ, որ պատարա-*

դող չէ, ոչ կնքել կարէ և ոչ պսակել և ժողովուրդ չուսէ»:

Քննիչները զանազան ձևով են մեկնում բառս. Շահնազարեան՝ Օրբելեանի առաջին վկայութեան մէջ մեկնում է «եկամուտ», բայց միւսները առանց բացատրութեան է թողնում: Կոստանեան՝ Յակոբ Կարնեցու հրատարակութեան մէջ՝ **կեր-ուտել** բառից է հանում: Աճառ. Հյ. նոր բառեր հին մատեն. Բ. 96 մեկնում է «գաւառ, վիճակ, թեմ» և չի համարձակւում դնել պրս. گیر gīr «բռնիր» բառից, իբրև «կալ, կալուած»: Ուղիղ մեկնութիւնը վերի ձևով տուաւ Թ. Աւգալբէկեան (նամակ 1927 թ. ապրիլ 14): Այս **կեր** բառի հետ թնաւ կապ չունին **գեր, գերոյ տէր**, որ Աճառ. Հայ. նոր բառեր հին մատեն. Ա 74 մեկնում է «բորենիսկոպոս», իսկ Բ. 94—96 «կալւածքի տէր են»: Սրանց վրայ տե՛ս **գերի**:

***ԿԵՐԱՆ**, ի–ա հլ. «եղջիւրն կենդանւոյ կամ եղջիւրանման անօթն իւղոյ. իւղ մերթ ըմպանակ, բաժակ, սոսկան». ունին միայն Բառ. երեմ. էջ 161 և ՀՀԲ, իբր բառ յն:

=Յն. κέρας «եղջիւր, ջուր խմելու աման» (հյց. κέραν ձևից):

***ԿԵՐԱՍ** (ի–ա հլ. բառ ՆՀԲ, բայց կայ միայն սեռ.-ի) «փոքր մի կշիռ է. չորս գարեհատ, իբր այծեղջիւրի մէկ կորիզի ծանրութիւն» Շիր. էջ 27. նոյնը յետիններից մօտ դարձել է **ղերաս**: Աշխարհագրական առումով բառս յետոյ ստացել է «գօտի, երկրագնտի $^1/_{24}$ մասը» նշանակութիւնը. այս նորագիւտ առումով գտնում եմ գործածուած կրկին գրչութեամբ էլ հետևեալ վկայութեանց մէջ. «Քսան և չորս կերաս է աշխարհս և չորեքասանեորդն Լիբիա է». Մխ. այրիվ. էջ 42 «Քսան և չորս ղերաս է աշխարհս և զվեցասանն Քուշանքն ունին և Հնդիկք. Քսանևչորս ղերաս է աշխարհս և 16 ղերասն նոքա են». Մխ. ատ. էջ 248, 573:

=Յն. κεράτιον՝ նոյն կշիռը. նուազականն է κέρας «եղջիւր» բառի և բուն նշանակում է «եղջիւրիկ կամ այծեղջիւր պտուղը». (այծեղջիւր պտղի մի կորիզը իբր ունի նոյն քաշը). փոխառութեամբ անցած է շատ լեզուների. ինչ. լատ. ceratium, ֆրանս. անգլ. carat, իտալ. carato, գերմ. Karat, ռուս. карáтъ (Berneker 501), պորտ. quirate, սպան. quilate, արաբ. قِيرَاط qīrāṭ կամ قِرَّاط qirrāt (Կամուս, Բրք. Բրգմ. Բ. էջ 503), որի տառադարձութիւնն է յետին հայ. ղերաս: Նոր լեզուների մէջ գործածական է իբրև «20 սանտիգրամանոց փոքր կշիռ՝ ադամանդի կամ մարգարտի և զանազան դեղարների համար»:—Հիւբշ. 356:

Ուղիղ մեկնեց նախ Աւգերեան, Բացատր. չփ. և կշռ. էջ 111: Նոյնը յետոյ ՆՀԲ ևն:

ԿԵՐԿԵՐ «մի տեսակ թռչուն. անղուիթ. foulque». ունի միայն ԳԲ. անստոյգ բառ:

ԿԵՐԿԵՐԻԿ «կոկորդը չորանալ, ձայնը կտրուիլ» Սղ. կ. 4. ուրիշ տեղ չէ գործածուած:

=Կրկնուած է **կեր** անծանօթ արմատից:

ՀՀԲ իբր ժանդակեր եղած: ՆՀԲ «որպէս թէ բերելով քերիլ»: Tomaschek, Die alten Thraker II. 25 թրակ. չերչեր բոյսը! Հինք. գեղգեղել բայից է գնում: Bugge, Etr. u. Armen. 107 և KZ 32, 48 սանս. karkaras «կարծր», յն. κάρκαρος «կարծր», κάρχαρος «սուր, հատու», καρχαλέος «կարծր, բիրտ, կոշտ», նաև «ծարաւից չորացած»: (Այս մեկնութիւնը ընդունում է Brugmann Grdr. I² 580, մերժում է Boisacq 414): Pedersen, Հայ. դր. լեզ. 74 մերժելով այս՝ կցում է յն. γαργαρίζω «խախաչել» բային (նոյնը յիշում է Walde 356):

***ԿԵՐՄՈՍ** «դրամ, ստակ, փող» Վրք. Հց. Ա. 713 և Բ. 350:

=Յն. κέρμα «մանր դրամ»:—Հիւբշ. 356:

Ուղիղ մեկնեց նախ ՀՀԲ. յետոյ Աւգերեան, Բացատր. չփ. և կշռ. էջ 112 և ՆՀԲ:

***ԿԵՐՈՆ** «եկեղեցու մեծ մոմ». ունին միայն ՀՀԲ և ՋԲ (իբր նոր բառ). ՆՀԲ յիշում է իբրև գուռ. բառ՝ **կեռոն** կամ **կերոն** ձևով:

=Յն. κηρός (հյց. κηρόν) «մեղրամոմ,

կերոն», χηρίον «մեղրամոմ», որից նաև վրաց. կերէոնի. *համմտ. լտ.* cera, *ֆրանս.* cire «մոմ»։

Ուղիղ մեկնեց ՆՀՔ (տե՛ս մոմեղեն բառի տակ)։ Pictet 1, 410 խորիսխ *բառի հետ՝ դնում է* kar «գործել» *արմատից։ Ուղիղ է նաև* Lag. Armen. St. § *1145։*

ԳԻՒ.—Ախց. կէրօճ, *Սչ.* գերօճ, *Սլշ. Մշ.* գ'էրօճ։

**ԿԵՐՊ*, ի *հլ. «տարազ, հագանակ, ձև, որակ, արպիսութիւն» Արիստ. Նիւս. բն. Պորփ. «երես, դէմք, անձնաւորութիւն» Նար. «սեռ, տեսակ» Ոսկ. յհ. բ. 13. որից* կերպս ի կերպս *«այլևայլ ձևերով» Մծբ. Ագաթ. Եփր. բ. կոր. և եբր. Եւս. պտմ.* կերպակերպ *Կորիւն. Ագաթ.* կերպարան *(մանաւանդ անհզական) «դէմք, արտաքին տեսք» ՍԳր. Սեբեր. «երևակայական տեսիլ, աչքի երևացած բան» Եւս. պտմ. Ոսկ. յհ. ա. 13, 36.* կերպարանակից *ՍԳր.* կերպարանաւոր *Վեցօր. Եզն.* կերպարանափոխ *Ոսկ. մ. ա. 16.* կերպարանել *Ես. խ. 19.* լուսակերպ *Եւագր.* իգակերպ *Եզն.* գիշերակերպ *Կոչ.* գազանակերպ *Ոսկ. մ. բ. 24.* կայսերակերպ *Ագաթ.* սմանչելակերպ *Ագաթ.* կենդանակերպ *Շիր.* բշնամանակերպ *Փարպ.* բիւրակերպ *Ոսկ. յհ. ա. 28.* բազմակերպ *Կոչ.* անկերպարան *Իմ. ժա. 18. Եզն.* երկկերպի *Եւս. քր.* ձիւնակերպիկ *Շիր.* մեռաղակերպ, կերպարանափոխութիւն *(նոր բառեր) են։*

=*Պհլ.* 𐭪𐭥𐭯 kerp *«մարմին, ձև, կերպ» բառից սրա հետ նոյն է դնդ.* ⟨ʔ⟩ḫrp- *(եղ. ուղ.* kerefš*) «մարմին, երևոյթ, կերպարան», որի հնդևրոպական միւս ցեղակիցներն են* (Pokorny 1, 486), *լտ.* corpus *«մարմին», սանս.* kŕp- *«կերպարանք, գեղեցկութիւն», հրգ.* hrĕf, *անգսք.* hrif *«փոր, արգանդ» և հյ.* որովայն *(տե՛ս այս բառը)։—Հիւբշ. 168։*

Windisch. *8 լատ.* corpus *բառի հետ։* Böttich. ZDMG 1850, 356, 131 *սանս.* kalpa: *նոյն,* Arica *68, 114 վեդ.* kṛp, *դնդ.* kəhrp-: Lag. Urgesch. 200 *սնս.* kṛp, *դնդ.* kəhrp-: Müller, SWAW *38, 572, 574 և 44, 567 դնդ.* kerefš, kəhrpəm: Justi, Zendsp. 85 *դնդ.* kəhrp- *ձևի տակ՝ սանս.* kalpa, *պրս.* kalbūt *«կազապար» են ձևերի դէմ։ Հիւբշ.* KZ *23, 20 լտ.* corpus: *Տէրվ.* Altarm. 161 *դնդ.* kəhrpa: *Նոյնը նաև* Bopp, Gram. comp. *4, 358։ Ս. Վ. Պարոնեան, Արև. մամ. 1880, 552 երփն բառից։* Canini, Et. étym. 198 *անգլ.* garb, *իտալ.* garbo *«կերպ, ձև»։ Եազըճեան, Արեւելք 1884 հոկտ. 17 սանս.* կարպս *(?)։* Müller WZKM 5, 263 *պրս.* كالب kalib *«կազապար»! Հինք.* պատկեր *բառից։ Մառ* ЗВО XIX, 0159 *և* XX, 109, 150 *վրաց.* դմերբի, *սվան.* ղերբեր, *լազ.* ղորմոբի, *մինգր.* ղորոնբի *«աստուածք» բառերի հետ՝ յատկական դրպ արմատից, որին կցում է արաբ.* صنم ṣanam, *եբր.* צלם ṣelem, *ասոր.* صلما ṣalmā *«կուռք» և բրդ* չելէք *«Աստուածք», չելէքի «տէր»։*

ԳԻՒ.—Կերպ բառը գիտեն Ջղ. կերպ, *Կր.* կէրպ, *Սչ.* գերբ, *Տիգ.* գէրբ, *Ննխ.* գէրբ *«շէնք-շնորհք», որից* կերպին *Ջղ. «կանոնաւոր ձևով», կերպը մտնել Տ. «համոզել»։—Դրականից փոխառութեամբ՝ Ջղ. Սյմ.* կերպարանիմ, *Ախց. Երև. Կր. Շմ.* կէրպարանիմ, *Սչ.* գերբարանիմ, *Սլշ. Մշ.* կէրբարանիմ, *Խրբ. Պլ. Սեբ. Ննխ.* գերբարանիմ, *Տիգ.* գէրբմրմնիմ, *Մկ.* կիրպիրանիմ, *Զթ.* գէյրբայօնիմ, գէրբարոնիմ։

ՓՈԽ.—Վրաց. კერპი կերպի *«կուռք», Եաკერპო սակերպո «մեհեան»,* კერპული կերպուլի, Եաკერპი սակերպի *«կուռքի վերաբերեալ»,* ნაკერპავი նակերպավի *«կրոնապաշտական. 2. դոհ. 3. մեհենատեղի»։ (Այս համեմատութիւնները տուաւ նախ Ազայեան, Ազբիւր 1889, էջ 7, յետոյ Աճառ. Արարատ. 1898, 369, որից յետոյ Մառ՝ անդ)։—Չգիտեմ թէ ի՛նչպէս է յառաջացած վրացերէնում* კერპი կերպի «упрямый, ямаո» *նշանակութիւնը (Զուբինով² 604), որից փոխառութեամբ նաև Տփ.* կէրպ *«յամառ»։*

**ԿԵՐՊԱՍ*, ո, ու *հլ. (յետնաբար ի հլ.) «բարակաման կամ մետաքսեայ կտաւ»*

Եսթ. ա. 9. Վեցօր. 177. Բուզ. Ոսկ. Ես. որից կերպասաբեր *«մետաքս բերող (շերամ)» Վեցօր. 177.* կերպասագործ *Վեցօր. 177.* կերպասի *Եսթ.* ª *ա. 6.* կերպասեայ *Փրպ.* կերպասավաճառ *(նոր բառ) են։*

=*Իրանեանից փոխառեալ բառ է. համմ. սանս.* कर्पास karpāsa- *«բամբակենի, gossypium herbaceum H»,* कार्पास kārpāsa- *«բամբակ. 2. բամբակեայ. 3. բամբակեայ կերպաս, բամբակէ գործուածք», պրս.* کرپاس kirpās *կամ* کرباس kirbas *«բարակ հիւսուած շոր, սպիտակ մուսլին», բելուճ.* karpas kirpās, kurpās *«բամբակ», քրդ.* kirās *«շապիկ», գնչ.* kirpa, ekirpa *«քուրջ, ցնցոտի»։ Փոխառութեամբ անցել է դանագան լեզուների. ինչպէս՝ քուչ.* kalpāṣa *«զգեստ», ասոր.* ܟܪܒܣܐ karbasā, *եբր.* כַּרְפַּס karpas *«սպիտակ նուրբ բամբակեայ կտոր», արաբ.* كرباش kirbās *«բամբակեայ թելով հիւսուած շոր» (Կամուս. Թրք. Թրգմ. Բ. 283), յն.* χάρπασος *«նուրբ վուշ. 2. շղարշէ հագուստ»(Boisacq 415), լտ.* carbasus, carbasum *«սպանական շատ բարակ վուշ»։ Այս բոլորը ծագում են հնդկականից, բայց հնդկականն էլ փոխառեալ է աւստրոասիական լեզուախմբից. համմ. մալայերէն, ջավայերէն* karas, *չամ.* karaḥ, *բատակ.* hapas, *սեդանգ.* köpė, *քմեր.* amqas, *բոլորն էլ «բամբակ». որոնց արմատն է* pah, pas *«գգել»* (Przyluski BSL № 76 *էջ 70)։—Հիւբշ. 168։*

Նախ Schröder, Thesaur. *46 արար.* kirbās *ձևից։ ԳԴ պրս.* kirbās:—*ՆՀԲ գնում է յն. պրս. և արաբ. ձևերը։* Windisch. 8, Müller SWAW 38, 574 *են սանս.* karpāsa: Böttich. Rudimenta 45, 145 *սնս. եբր. պրս. ձևերը։ Հիւբշ.* KZ *23, 9 վերի ձևով։* Hehn² 155 *բառս համարում է փիւնիկեան ծագումից, իսկ* Justi, Dict. Kurde, *էջ 328 հնդկական է դնում։*

**կերՏ *«գործ, գործուածք, շինութիւն», նշ. եղկ. Մաշկ. Անյ. հց. իմ. որից* կերտել *«շինել, գործել» Շար.* կերտուրիւն *Մագ.* կերտաճաղ, կերտացուցանել *Մագ.* ձեռակերտիկ *Եղիշ. այլակ. 238 (չունին ՆՀԲ և ԱԲ), այլուր* ձեռակերտիկ *Եղիշ. խաչիկ. 280. այս բոլորը յետին ժամանակի ձևեր են. Ոսկեդարում երևան է գալիս միայն բարդութեանց ծայրին. ինչ.* աստուածակերտ *Ագաթ.* ձեռակերտ *ՍԳր. Ոսկ. Փիլիպ. դասատակերտ Առակ. իդ. 5, 27. Կոչ. Ագաթ.* նկարակերտ *Եւ. լբ. 35. Ոսկ. մ. բ. 24.* նկարակերտութիւն *Եւ. լբ. 23. Յոր. լբ. 36.* փայտակերտ *ՍԳր.* փայտակերտիկ *Ագաթ.* քարակերտ *Բուզ. դ. 55.* ըղձակերտ *Հոժ. 16.* ճնարակերտ *Եւագր.* մոմակերտ *Վեցօր.* խոճաւակերտ *Վեցօր.* զարմաճակերտ *Վեցօր. են։ Բազմաթիւ են նաև սրանով բարդուած տեղական յատուկ անունները. ինչպէս՝* Խոսրովակերտ, Վաղարշակերտ, Հնաբակերտ, Բակուրակերտ, Տիգրանակերտ, Դրասխանակերտ, Գագկակերտ, Սուանդակերտ, Մանակերտ, Զիւնկերտ, Շամիրամակերտ, Վարազկերտ *են։ Այս բոլորի մէջ էլ կերտ բառի հին և նախնական նշանակութիւնն է «շինել», իբր՝*

=*պհլ.* kert, *հպրս.* krta-, *գնդ.* kərəta-, *սանս.* कृत kṛta- *«արարեալ, գործեալ, կերտեալ». բոլորն էլ* kar, kṛ *«անել, շինել» արմատից անցեալ դերբայ. համմ. նաև պրս.* گرد gird *«կերտ»,* کردن kardan *«անել, շինել»,* کرده karda *«գործեալ», քրդ.* kirin *«անել, գործել», օսս.* k'änən *«գործել», պհլ.* 𐭪𐭥𐭫 kār *«գործ»,* ܟܪܬܢ kartan *«անել, գործել»,* ܟܪܬܐ kartār *«արարող», հպրս.* 𐎺𐎼𐎰𐎼𐎹 kartam *«եղեալ», գնչ.* kerava, gerava *«անել», kerdo «անում եմ», հինդուստ.* kurna *«անել, շինել», kurta «հեղինակ, ստեղծիչ», kurtub «գործ են (Horn § 847): Այստեղ են պատկանում նաև հյ. -կեար, -կեր, -կար մասնիկները. (համմ.* աղօրկեար, վճռակար, խոճակեր *են)։—Հիւբշ. 168—172։*

Հին յոյն հեղինակներից Սոեփաննոս Բիւզանդացին համարում է պարթևերէն, իսկ Հեսիքիոս՝ հայերէն, «բազար» նշանակութեամբ (κέρτα, πόλις, ὑπὸ Ἀρμενίων)։ Ուղիղ մեկնութիւնը տուաւ նախ ԳԴ, որ հյ. կերտ բառին կցում է

պրս. kard, gird, garvāda «կերտուած»։ Սրանից յետոյ ՆՀԲ՝ իբր պրս. kard:— Neumann ZKM I, 247 հաւանաբար սանս. kṛ «անել, շինել»։ Lassen ZKM 6, 79 յիշում է Հեսիքիոսի աւանդածը, բայց ինքը համարում է սեմ. qereṭ, qiryā «քաղաք»։ Gosche 37 սնս. karta և օսս. ƒarp «բակ»։ Böttich. ZDMG 1850, 356 սանս. kar, kṛtá: Justi, Zendsp. 80 զնդ. karet «կարել», 84 զնդ. kərəta, սանս. kṛta, իբր kar «շինել» արմատից, իսկ էջ 269 զնդ. varəd «յառաջացնել»։ Lag. Gesam. Abhd. 199, Arm. St. § 1151 Հեսիւքոսի ἀμαζακάραν ձևը ուղղելով ἀμαζακάρδαν՝ կցում է այստեղ։ Müller SWAW 38, 572—3 և 45, 538 են սանս. kṛt, օսս. awkardan, զնդ. aiwikərənt: Տէրվ. Նախալ. 69 հնխ. kar «շինել» արմատից է դնում, կցելով նաև հյս. cerus «արարիչ», լս. creare «առնել, ստեղծել»։—**Կերտ** բառի վրայ ընդարձակ մի վէճ ունին Հիւբշման և Մորթման։ Առաջինը ZDMG 30, 138—141 իր Iranisch-Armenische Namen auf **karta, kert, gird** վերնագրով նամակի մէջ հաստատում է թէ **կերտ** բառը զուտ իրանեան փոխառութիւն է, քանի որ հայերէնը չունի անցեալ դերբայի -ta մասնիկը և թէ **կերտ** նշանակում է ո՛չ թէ «քաղաք», ինչպէս աւանդում է Հեսիւքիոս, այլ «շինել»։ Սրան պատասխանեց Մորթման ZDMG 32, 724—8, ուր պնդում է թէ պրս. گرد նշանակում է «քաղաք» և ո՛չ թէ «շինել», որի համար իբրև ապացոյց մէջ է բերում Բուրհան-ի-Կաւտիի հետևեալ վկայութիւնը. «gird «քաղաք» նշանակութեամբ, ինչպես Dārābgird-ի և Siyāvušgird, որոնք Dārāb-ի և Siyāvuš-ի քաղաքն են նշանակում»։ Մորթման՝ պրս. gird զնում է girdidan «դառնալ» բայից. համմտ. յն. πόλις «քաղաք» և πολέω «դառնալ». իսկ պրս. girdidan միացնում է սանս. vṛt և հյ. **ուրտ** բառերին. վերջինը պահուած **ուրուր** և պարուրել ձևերի մէջ։ Նոյն խնդրի մասին գրում է նաև Nöldeke ZDMG 33, 143—156։ Անդրիկեան, Բազմ. 1903, 366 համարում է բնիկ հայ։ Մառ ЗВО 1925, 671 ռուս. город «քաղաք» բառի հետ։

*ԿԵՐՕՆՈՍ «բարկութիւն». ունի միայն Բառ. երեմ. էջ 162։ Տե՛ս և կիռոնոս։

=Յն. χεραυνός «շանթ, կայծակ». համմտ. Եւս. քր. ա. «Որ կերաւնոսն կոչէր, այսինքն է բարկութիւն»։—Աճ.

*ԿԵՓԱՉ «զուտ մաքուր ոսկի» Օրբել. ոզր. ժե. այս արմատական ձևով չէ՛ գործածուած հին լեզուի մէջ, ուր ունինք միայն ածականի վերջաւորութեամբ՝ **կեփազեայ** Երզ. ե. 11. Սկևռ. լմբ.—Նոյնպէս է նաև **կեփազեան** Շնորհ. եգես. (Երզ երգոցի նորագիւտ թրգմ. համապատասխան տեղում ունի **ոսկեայ**)։ Նո՞յն է նաև **կեփազէ** Սասն. էջ 59։

=Երր. פַּז ƒāz «մաքուր ոսկի» բառն է, որ ծագում է זָזַז ƒzz «զտել, ոսկին կամ արծաթը մաքրել» արմատից։ Յոյն Թարգմանութեան մէջ նախ գրուել է καὶ φάζ «և փազ» (և շաղկապով), յետոյ շաղկապը միանալով եղել է (իբրև մէ՛կ բառ) καιφάζ, յետոյ գրուած κέφαζ, κεφάζ, որից էլ տառադարձուել է հյ. **կեփազ**։ Նման թիւրիմացութեան արդիւնք է վրացականում **ოფაზი** ոփազի «մաքուր, զուտ»։

Ուղիղ մեկնութեան ծանօթ էր հներից Վրդն. դան. գ. էջ 269 «Յոսկւոյ կեփազեայ՝ որ ոսկի սուրբ ասի, յերրայեցւոցն ի յոյն շրջեալ»։ Նորերից ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ։

*ԿԵՓԱԼ «գլուխ». նորագիւտ բառ, որ հինգ անգամ իրար հետից գործ է ածում Մխ. Սկևռացի, յաղագս Համապատուհեան ժք առաքելոց. տպ. Երուսաղեմ 1865, էջ 43—45 «Յովհաննես յունարէն դրեալ զԱւետարանն, կեփալ ասաց, որ է գլուխ. Յաղագս որո՞ց պիտոյից ասաց զկեփալն՝ թէ թարգմանի Պետրոս. իսկ եթէ ասիցէք թէ կեփալ ի կեփալ ասաց թարգմանել, զի՞նչ առաւելութիւն ունի յունարէն կեփալն ի վերայ գլխոյն հայերէն»։ Համմտ. նաև տակը կեփալա և կեփաղ։

=Յն. κεφαλή «գլուխ»։—Աճ.

Առաջին ուղիղ մեկնիչը Սկևռացին է։

***ԿԵՓԱԼԱ** *«գլխաւոր». մէկ անգամ ունի Վրք. հց. Բ.*

=Յն. κεφαλαῖος «գլխաւոր»՝ κεφαλή, դոր. κεφαλά «գլուխ, գլխաւոր» բառից։

Ուղիղ մեկնեցին ՀՀԲ և ՆՀԲ։

***ԿԵՓԱՂ** *«մի տեսակ ձուկ» (չունի ՆՀԲ). մէկ անգամ գործածուած է Վեցօր. էջ 153 «Որ անուանեալ կոչի բսիւիէ, պրիոնէ և շնջրիք և կեփաղք»։*

=Յն. κέφαλος «մի տեսակ ձուկ է», որից նաև Քրք. كفال kefal «գլխան ձուկը, muge, mulet»։—Հիւրշ. 518։

ԿԵՔԱՐԱՅ *«կարճ (ճանապարհի համար ասուած)». գիտէ միայն ՀՀԲ. անստոյգ բառ։*

ԿԵՔԵԱԼ *«երկմտեալ». ունի միայն Բառ. երեմ. էջ 162։*

ԿՁԱԿ, ի–ա *հլ. «սաորին ծնօտը, դունչ» ՍԳր. Եւս. պտմ. Եփր. դտ. որից* **կզակակապ լինել** *«պապանձիլ» Գէ. ես։*

Հինք. գզել բայից։ Պատահական նմանութիւն ունի արաբ. زقن zaqan *«կզակ»։*

Գիւմ.—Ջղ. Տփ. Ոզմ. **կզակ**. *Համշ. Ննխ. Սեբ.* **գզագ**, *Ասլ.* **գզագ, գզայ**, *Ռ.* **գնագ**. *այս բոլորը նշանակում են «կզակ», միայն Ոզմ. «բմաց վարագոյր, կաւիկ». իսկ Զրբ. գիտէ միայն* **կզակին եշիլ** *ոճր. կայ նաև* **կզակակապ** *Մշկ. «չաջակ», առուձկզակ Սեբ. Պլ. Երև. (ըստ Ամատունի, Հյ. բառ ու բան, էջ 339),* **կզակը քիլ** *«շատախօս»,* **կզակը բողնել, բուլացնել** *կամ վէ բողնել «երկարաբանել»,* **կզակին մտիկ չանել** *«մարդու տեղ չդնել»։*

ԿՁԿՆԾՏԱԼ *կամ* **ԿՆԿՏԱԼ** *տե՛ս Կաղկանձել։*

ԿՁՈՒԿ *«սալորենի». գիտէ միայն Տիրոյեան, Հանրագր. էջ 214 և 458, որի աղբիւրն է Քաջունի, հտ. Գ, էջ 121։ Գաւառական բա՞ռ է։*

ԿԷՁ *«այրել». արմատ առանձին անգործածական. այս ձևով երևան է գալիս բարդութեանց ծայրին. օրինակ՝* **առեզակճակէզ** *Ագաթ. ճրկէզ Ես. գ. 14. Ա. եզր. ա. 55. Նեեմ. բ. 17.* **բոցակէզ** *Եզիշ. 34. կթ.* **ածխակէզ** *Արծր.* **առևակէզ** *Եզիշ. Պիտ.* **աճկէզ** *Շար.* **ժոխակէզ** *Անան. եկեղ.* **ցառակէզ** *վհ. ցօր. 90.* **երկնակէզ** *Վանակ. յոբ.* **կենդանակէզ** *ճառնտ.* **գինեկէզ** *Բրս. յուդիտ.* **դիւրակէզ** *Անյ. բարձր.* **ողջակէզ** *ՍԳր. ևն։ Շեշտից առաջ դառնում է* **կիզ**. *ինչ.* **կիզուլ** *«այրել» Սղ. ձբ. 15. Ա. մակ. ա. 59.* **կիզումն** *Ա. եզր. ա. 14. Ագաթ.* **կիզելի** *Սղ. ճգ. 4. Ագաթ. Ոսկ. յհ. բ. 15.* **կիզեցուցանել** *Ագաթ.* **կիզուց** *Փարպ.* **ճրկիզել** *ՍԳր.* **ողջակիզել** *Սեբեր. Եւագր. ևն։*

Տէրվ. Altarm. *88 կցում է կայծ բառին;* Canini, Et. étym. *էջ 135 պրս.* g'oš *«տաք»;* Justi, Dict. Kurde 333 *սրա հետ է գնում կասկածով քրդ.* kizik *«խորոված միս», որի վրայ տես* **կիզ**։ *Հինք.* **խածանել** *բայից։ Թիրեաբեան, Կարնամակ ծան. 41* **գզել, գիծ, կծել, կճել** *ձևերի հետ։ Սագրգեան ՀԱ 1909, 334 սումեր.* gis *«փայտ», Քրք.* qəz-maq *«տաքանալ»։* Karst, *Յուշարձան» 401, 405 սումեր.* iz, izi *«կրակ», 423 ՊՊր.* kis-, kiz- *«կրակ», օսմ. չադաթ.* kiz-mak *«կատաղիլ»։* Беридзе, Грузинск. глосс. по имер. и рач'ин. говор. *1912, էջ 22 գուռ. վրաց.* **կիզիճի** *«այրել» բառի հետ։ Պատահական է լազ.* gz *«այրել, վառել»։*

ԿԷՁՆ *«թեր, զառիվայր». նորագիւտ բառ. մէկ անգամ ունի Վասակ. 215 «Ոչ ի դուր տեղի (պէտք է շինել դոմը), որ աղբն և գոզըն ի տեղն դադարէ, այլ ի կէզն տեղի, որ ամէնն սահի և քամի»։ Սրանից են ածանցուած* **կեզնել** *«ամանը մէկ կողմի վրայ ծռել, պառկեցնել» Վասակ. 110 (Կեզնեա՛ զամանն ի մէկ դիհի վերայ),* **կեզիլ** *«հակիլ, մէկ կողմի վրայ ծռիլ» Վասակ. 160 (Գիտացիր որ հայել պիտի ի բանջարն և զայն քաղել՝ որ ի վերայ արեւելից դեհին լինի կեզնեալ)։*

Թէ՛ ձեռագիրը և թէ տպագիրը մէկ գնում են **կեղնել, մէկ կեզնել**. *իսկ էջ 249 ցանկի մէջ առնուած է վերի ձևերով։*

ԿԷԻԴԱՄ *տե՛ս Կալաադա։*

ԿԷՆԳՐԻՍ *«գարի». ունի միայն Բառ. երեմ. յաւել. 568։*

ԿԷՍ, ո *հլ. (յեռնաքար կայ սեռ.* **կիսից**)

«մի բանի կէսը, կէս մասը» ՍԳր. Եզն. «մասամբ, գրեթէ» Ոսկ. ես. և յհ. ա. 2. որից կէսմ *«ոմանք» ՍԳր. Եզն.* կէս ի կէս *«մասամբ միայն, թերի, ոչ-կատարելապէս» Կոչ.* կիսով *«թերի ձգած» Սիր. լդ. 25.* կիսաբաց *Ոսկ. մթ.* կիսադիմ *Եւս. քր.* կիսամահ *ՍԳր.* կիսամահեայ *Ոսկ. յհ. ա. 30.* կիսայրեաց *Ոսկ. ես.* կիսառաւ *Ոսկ. երր.* կիսեփեաց *Ես. ծա. 10.* կիսէշ *«չորի» Սահմ. Կանոն. Մագ.* կիսասարկաւագ *Լմբ. գրակէս Եփր. յղ. պող. Մանդ.* դրամակէս *Վրք. հց.* իշակէս *Վեցօր. ևն։ Նոր գրականում կազմուած բառեր են* կիսակօշիկ, կիսակատար, կիսակաշի, կիսափակ, կիսաշրջանակ, կիսել, կիսավանկ, կիսակազմ, կիսամեայ, կիսամսեայ, կիսամեակ, կիսամերկ, կիսաթօշակ, կիսախորովակաձև, կիսակայարան, կիսակիրթ, կիսագրագէտ, կիսաճղրի, կիսաշէն, կիսաշրջան, կիսաշրջանակաձև, կիսատուներ, կիսավայրենի, կիսափուլ, կիսարձան *են։*

ՆՀԲ լծ. պակաս, կտուր, *Թրք.* qusur *«պակաս, թերի»,* kes, kesik *«կտրել, կտրած»։* Lag. Prov. 7, 20, Symmicta 93 *երր.* בסא kese *«լիալուսին (որ ամսի կեսն է)», ասոր.* ܟܣܐ kās *«լրումն լուսնի, ամսի կէսը»։ Հինք. կրկէս բառից։* Pedersen, *Հայ. դր. լեզ. 104* կոյս, կից *ձևերի հետ՝* երկու, կրկին *բառից։ Մառ,* ЗВО XIX, 070 *յաբեթեական* krs *արմատից հայերէնը եղել է նախ* *կեռծո, *որից* *կեռս>*կեյս>կէս. *Համմ. վրաց.* կեռծոյ *«կողմ, կողմ, կէս», տե՛ս և* կոյս, կոռծաճ *(իսկ* ИАН *1920, 134 և* Яз. и Лит. *I. 228 աւելանում է բասկ.* erdi *«կէս»։* Karst, *Յուշարձան 404 սումեր.* gas, kas *«երկու»,* kasar *«կէսը», 418, 423 և 428 ԹԹր.* kes *«կտրել, բաժանել, կիսել»,* kesek *«կէսը», կամ* bič *«կտրել», օսմ.* bučuq *«կէս» ևն։ Պատահական նմանութիւն ունի եգիպտ.* gs *«կողք, կէսը»=ասոր.* gesā *«կողքը»։*

ԳԻՒ.—Ագլ. Ախց. Գոր. Երև. Ալշ. Կր. Մկ. Մշ. Մրզ. Շմ. Ջղ. Սլմ. Վն. Տփ. կէս, *ՋԹ. Խրբ. Հճ. Համշ. Ննխ. Պլ. Ռ. Սեբ. Սչ. Տիգ.* գէս, *Ղրբ.* կրէս, *Ոզմ.* կես, *Ասլ.* գէ՛ս, *Սվեդ.* գիս։ *Հետաքրքրական ձևեր են Հւր. Մրզ.* կօսօր *«կէսօր», Ննխ.* գէսմագէս, *Շմ.* կէսպակէս *«կէսուակէս»։ Նոր բառեր են* կիսագիճ, կիսագնի, կիսախեղդ, կիսաճամբայ, կիսակուշա, կիսացանել, կիսասիրտ, կիսաչոր, կիսաչեն, կիսամոբ, կիսամաշ, կիսաճար, կիսաճոգի, կիսուրդ, կիսատաճամ, կիսատուկ, կիսուար, կիսփակ *են։ Էնկիւրիի Թրքախօս հայոց բարբառով կայ.* կէս *«միջնորդչէք, գողութիւն» (շուկայական բառ. օր.* կէսիմի իսթէրիմ *«միջնորդչէքս կուզեմ»). Նաև տաճկէս՝ անարգական բառ (Համմ. Պլ.* տաճն, տաճնի կոթ, *որոնք նոյնպիսի անարգական դարձուածներ են)։*

ՓՈՒ.—Վրաց. კეხი კեխի *«կէս վայրկեան, ½ секунды» (Զուրինով² 605).* კიხაჲი կիսաւի *«կիսատ». ունի Գրիշաշվիլի, Զվելի քալաքիս բոհեմա, էջ 242 (հաղորդեց Գ. Ա. սաամուր)։*

[ԿԷՍ *«գերիսն, ազհամ բանջար է». գիտէ միայն Բառ. երեմ. էջ 162։ Յառաջացած է վանականի հետևեալ վկայութիւնից. «Զբխարշափունն այլը ազիմայ Թարգմանեցին և կէսք գերիսն. և է սա բանջար ազհամ». (տե՛ս մանրամասն տես* Ազիմայ)։ *Բայց այստեղ* կէսմ *նշանակում է «ոմանք» և դրուած է իբրև կրկնութիւն այլ հոմանիշի. (խարշափունը ոմանք ազիմայ Թարգմանեցին և ոմանք գերիս)։ Բառագիրը սխալմամբ գոյական է կարծել. իբր Թէ «Ուրիշներ խարշափունը ազիմայ Թարգմանեցին և կէսքը՝ գերիս» որով և յառաջացել է* կէս *անգոյ բուսանունը։]*

**ԿԷՏ, ի–ա հլ. (յետնաբար ի, ո հլ.) «ծովային մի մեծ գազան» ՍԳր. Վեցօր. 139, 141. Եզն. գրուած է նաև* կետ. *բացի սրանից ունինք նաև* կետոս *կամ* կէտոս *Փիլ. յովն. 587 ևն. Իրեն. հերձ. 162, Վրդն. ծն. Ոսկիփ.* կիտոս *Անան. Թրգ. 5, 6. Երզն. մաթ. 287. Պոմ. աղէքս. 139. Նար. որոնք ըստ Հիւբշ. ուսումնական ձևեր են, մինչ կէտր ժողովրդականն է։ Սրանցից են ծագում* կետոսաբար *Կանոն.* կիտակուլ *«կէտէն կլլուած» ԱՒ. մեծակիտեղ «մեծամեծ կէտերով լի» Սահմ. Նոր գրականում ընդունուած է միայն* կէտ գրչութիւնը, *և կամ*

կէտ նշանից (.) զանազանելու համար յատկապէս կետ ձևը՝ «կետ անասունը» նշանակութեամբ։

=Յն. κῆτος «ծովային մեծ գազան կամ հրէշ, վիշապ ձուկ, փոկ, կոկորդիլոս, գետաձի, կէտ անասունը». վերջին նշանակութեամբ տարածուած է շատ ուրիշ լեզուների մէջ. ինչ. լտ. cetus, cete, հպ. kitŭ, kitosŭ, ռուս. китъ, հունգ. czet, մրգ. cête ևն։ Ծոյն բառի ծագումը անյայտ է (Boisacq 451)։—Հիւբշ. 356։

Հներից Յայսմ. մրտ. 21 հանում է կէտ բառից. «կէտ ասեն վասն մեկնակութեան. քանզի յոր վայր և լինին՝ ըստ պատեն զայլսն ուտելով»։ Ուղիղ մեկնից նախ ՆՀՒ. յետոյ Peterm. 21, 35։

ԿԷՏ, ի հլ. (հոլովման ժամանակ դառնում է նաև կետ–) «նշանառութեան համար գրուած նպատակ» Պիտ. «նպատակ, դիտաւորութիւն, նպատակակէտ» Փիլիպ. գ. 14. Եւագր. Եւս. պտմ. «իբրև պայման գրուած ժամանակը» Ագաթ. Եղիշ. «քերականական կամ երկրաչափական նիշ» Քեր. Թրակ. Եւկղիդ. «երաժշտական խազ» Տաթև. ամ. 232 (եկեղեցւոյ մանկունք հզանակեն արուեստիւ կիտի՝ որ գրած է). «երկնքի բեւեռները» Արիստ. աշխ. «կշռի մէտ» Նար. «կենտրոն» Պղատ. տիմ. և օրին. «տոմարական եղր» Տոմար. որից կիտուած «կէտ կէտ յօրինուած նկար, գարդ» Երգ. ա. 10. կիտակ «որոշեալ կանոն» Անյ. վերլծ. կիտի «կռուի կամ մրցման նպատակը կամ տեղը»? Վեցօր. 67. կիտադրեալ Պիտ. Զքր. կթ. կիտասահման Անան. եկեղ. անկէտ «անեզր յաւիտենական» Ագաթ. ցամաքակէտ Ագաթ. ժամանակակէտ Գազ. դ. 2. Ոսկ. մտթ. միջակետ Նչ. քեր. ստորակետ Թր. քեր. կամ նաև կետ– ձևից՝ կետադրեալ Զքր. կթ. կետասահմանութիւն Պիտ։

Աւգերեան, Բացատր. չփ. և կշռ. էջ 113 արար. خَتّ xatt «գիծ»։ Müller, A. Kuhn's u. Schleich. Btrg. 5, 141 զնդ. kaeta «նկատելի», սանս. ketu «երևոյթ, կերպարանք»։ Հիւնք. կէտ անասունից։ Scheftelowitz տե՛ս կիծ։ Մառ ЗВО XIX 70, 157 յաբեթական kert արմատից հմմտ. վրաց. ձերտիլի «կէտ», ձերտա «ծակել», ձրտիալի «խթան»։

Գիւմ.—Զղ. կէտ «ժամանակ» (օր. չուր էս կէտս «ցարդ»), Ղրբ. կըէտ, Զթ. Սչ. գէդ։ Նոյն է նաև կէտ Ախն. «արգելք, դժուարութիւն». օր. կէտ եկաւ «խոչընդոտ ծագեցաւ»։ Բուլանըխի ենթաբարբառով կետ նշանակում է «մէկ հատ, անզոյգ, կոճատ» (Ազգ. հանդ. ե. 154). այս նշանակութիւնը կապում է բառս կենտ (Գնձ. երև. լ. Զգ. Ղրբ. Շլ. Տփ.) «անզոյգ, մէկ հատ» բառի հետ և սրանով էլ վրաց. კენტი կենտի «անզոյգ», Թուշ. კენტ կենտ «անզոյգ թիւ» բառերին։ Նոյնը գտնում եմ նաև գործածուած աւելի հին. «Դար և կոճատ, այսինքն չուխտ և կէտ». Առաք. յծ. սահմ. էջ 585։

Փոխ.—Վրաց. კიდე կիդե «ծայր, վերջ, անկիւն, հզերբ», ուս. ket «կէտ» (դպրոցի միջոցով մտած բառ)։

ԿԷՏ «մեղուի մեծութեամբ մի տեսակ ճանճ, որ էշերն ու տաւարներն է խայթում». մէկ անգամ ունի Մխ. առակ հթ։

Նորագիւտ բառս գտաւ ու բացատրեց
Աճառ. Հայ. նոր բառեր հին մատեան.
Ա. էջ 52—53։

Գիւմ.—Ղրբ. կէտ՝ նոյն նշ. որից Գնձ. Ղրբ. կէտ անել «հորթերի յանկարծ փախչելը», Ղրբ. կէ՛տիլ «արագ ու յանկարծ փախչիլ» (մարդոց համար է ասւում)։—Նո՞յն է արդեօք նաև Մշ. կենտ «խայթող .անճ», ինչպէս ունինք կէտ–կենտ։

ԿԹԻԼ «տկարանալ, թուլանալ». այս ձեւով չէ՛ գործածուած մատենագրութեան մէջ. բայց կայ սրանից կթուցեալ «տկար, թուլացած, անհաստատ» (ծնկների համար ասուած) Ես. լհ. 3. Յոբ. դ. 4. «ծարաւից նուաղած» Յհ. կթ. 220. կթոտ «անհաստատ, թոյլ (ծունկ)» Երբ. ժբ. 12. Եւս. պտմ. Եփր. Երբ. 229. կթոտեալ (երկու անգամ գրուած է կթատեալ) նոյն նշ. Խոհ. շփ. թուլով գթիլ, գայթիլ բայի հետ՝ գրուած է նաև գթոտ ԱՒ «կթոտ», գթոտիլ «կթոտիլ» Կեչառ. աղեքս. գթուել «կթուցեալ» Վրք. հց. գթուցանել «կթուցանել» Ոսկ. Հռովմ էջ 63։

ՆՀՔ գրել, գայթել բայից է հանում։ Հիւնք. հանում է կաթոտ բառից։

ԳԻՒ.—Մրզ. ֆիքել «յոգնիլ» (Այս համեմատութիւնը տուեց Մարաղայում Գարեգին քհ. Պետրոսեան. տե՛ս իմ Քննութ. Մարաղայի բարբառի, էջ 100)։

⊙ԿԹՂ–. գոնւում է միայն կրղաձայն «կոշաձայն» բառի մէջ, որ ունի միայն ԱՔ։ Արմատի ձայնաւորը անյայտ է։

=Բնաձայն բառ է։

ԳԻՒ.—Բայական ձևը պահում է կրղալ կր. «ածող հաւի կարկաչել, կոկոռալը»։

*ԿԹՂԱՅ կամ ԿԹԽԱՅ «բաժակ, գաւաթ» Վստկ. 119, 120. Պոմ. աղջ. 145. Փոնց. 66. Քուշ. 84. Տաթև. ամ. 266. որից կրղայրնկեր «նոյն բաժակից խմող» Լմբ. առ լև. տպ. Վենետ. 1865, էջ 241. կրխակ «փոքր բաժակ» Քուշ. էջ 59 (ԿՔխակ ի գինով լեցած, իմ հարին առջևն է դրած). միջին հյ. բժշկական լեզուով կրխայ նշանակում է նաև իբր դեղ ընդունելու բմպելիք, ինչպէս ունի Մխ. բժշ. 146։ Բառիս շրջեալ ձևն է ներկայացնում գխտա, գործածուած 1682 թուից առաջ գրուած մի տաղում. «Նա՛ փեսայ իմ հարն ալ ի հաց, գխտան ալ գինով լցած՝ իմ հարին առջև էր դրած». (Նոր ժող. Ջ. 51)։

=Ասոր. ܩܕܟܐ qədxā «բաժակ, գաւաթ», որ փոխառեալ է համարւում արաբ. قدح qadah «բաժակ» բառից (Brockelm. Lex. syr. 312)։ Նոյն արաբ. բառն է՝ որ դարձել է օսմ. qadeh, ամկ. խատեխ «բաժակ»։—Աճ.

ՆՀՔ (ճաշակ բառի տակ) լծ. յն. κοτύλη «փոքր աման, գուշ»։ Seidel, հրտր. Մխ. հերաց. § 404 արաբ. قدح qadaḥ և կամ թերևս անուղղակի կերպով յն. κοτύλη բառից։

ԳԻՒ.—Ալշ. երև. Մկ. Մշ. Վն. կրխա, Բլ. կողա, Հճ. գոբդօ, Զթ. գօբդօ, գօբդո։ Ընդհանրապէս նշանակում է «բաժակ», բայց յատկապէս «օղու կամ կոնեակի փոքրիկ բաժակ, բիմկա», որից և երև. մի կրխա «մի քիչ (հաց կամ ջուր)»։ Նոր բառ է կրդիկ Զթ. «փոքր կրղայ»։—Գաւառականներից մեծ մասի և ասորի մայր ձևի վկայութեամբ հարազատ ձևն է բառիս կրխայ, թէ ինչո՞ւ միւսներն ունին կրղայ, որ և ընդունուած է գրականում, յայտնի չէ։

ՓՈԽ.—Հայերէնի միջոցով փոխառեալ պէտք է լինի վրաց. ჯაოხა կաքխա «бокалъ деревянный, чаятвлиj чаша» (Ջուբին², էջ 589)։

ԿԹՈՒԻԹ. անսովոր բառ. մէկ անգամ ունի Վեցօր. ղ. էջ 121 «Յարեսցի ի տորգս սարդի ոստայնի բարակաման և կթուիթն առիջոյն»։ ՆՀՔ մեկնում է «կթոտ, տկար, անոյժ». նոյնպէս նաև ՋՔ և ԱՔ, միացնելով կթոտ բառին։ Իմ Գաւառական բառարանում, էջ 568 բ կայ կթուիթ երև. «շատ բարակ թելերով հիւսուածք», բայց իբրև կտսկածելի բառ. (ազբիւրը անծանօթ է)։

*ԿԻԲԻԿՈՆ «խորանարդ, վեցանիստ» Նչ. Եղեկ. Տօնակ. Վրդն. աշխ. 500. Տաթև. ամ 474. ուղղագոյն ձևն է կիւրիկոն Նմմես. էջ 64, 65։

=Յն. κυβικός, չեզ. κυβικόν, որից և լատ. cubicus, cubicum «խորանարդ». արմատն է κύβος «բուռայ»։—Հիւբշ. 357։

Ուղիղ մեկնեցին նախ ՀՀՔ և ՆՀՔ։

ԿԻԴԱՐ տե՛ս Կեդար։

ԿԻՋ «խորոված». անսովոր բառ. մէկ անգամ ունի Զքր. ծործոր. «Ոչ ուտի հաց առանց աղի և ո՛չ կիպ և ողջակէզ առանց հրոյ»։ Եթէ այս իմաստով սովոր է, կարելի է սրանից դնել՝

ՓՈԽ.—քրդ. kizik «խորոված միս». համմտ նաև kizik «հալած ճարպի մնացորդ, խարխընձի», kezixi «ապուծ բաներ, տհալ, պանիր» ևն։

ԿԻՋԱՐԵԱԼ «ճռաժած, նուաղած». ունի միայն Բառ. երեմ. էջ 199, որ յիշում է ճռաժեալ բառի բացատրութեան մէջ, ուրեմն իբրև իր ժամանակ կենդանի բառ։—Արդեօք վրիպակ չէ՞ փոխանակ նիզարեալ, որով արմատը լինում է նիզար<պրս. nizār «նիհար»։

ԿԻՋՆ «բուրդ, սար» Յայսմ. եղիշ. խաչել. 287. որից լուսակիզն «բուրդը լուսափայլ ճերմակ» Ագաթ. ծիրանակիզն կամ ծիրանեկիզն «ծիրանագոյն փայլող բրդով (ոչխար)» Ոսկ. գաք. ոսկեկիզն Վրդն. լուս. 55. սպիտակակիզն Փարպ։

ՆՀԲ յիշում է երր. կիզա, կէզ *(համ՛* ՝ն gēz) *«բուրդ», պրս.* gēs, gēsū *«գէս», կիյսեէ «թել», խէզզ «բուրդ ոչխարի ծովային կոշկելոյ»։*

ԳԻՒ.—Ննխ. (գիւղերը) գ՛իզ *«բուրդ, թաղիք, քէչա». այս բառը բուն քաղաքում պակասում է, իսկ գիւղական ձևը ենթադրում է նախաուր* գիզ *ձևը, որ անշուշտ* կիզն *բառն է՝ ազդուած* գզել *բայից՝ նախաձայնի համար. հմմտ. Ակն.* կազապր բօրուել *«մէկին իր բոլոր գաղտնիքները ասել տալ», որ յիշեցնում է* զգար *բառը, բայց ունի* կ *և ո՛չ* գ։

ԿԻԶՈՒԻ *տե՛ս* կէզ։

ԳԻՒ.—Վն. կլայեկ, Ախց. Կր. կլայէկ, Մշ. կլայեգ, Մկ. կլայիկ, Ակն. Եւդ. Սեբ. գլայէգ, Հճ. գիլայէգ, Զղ. կլեկ, Գոր. Երև. Ղրբ. Տփ. կլէկ, Արբ. գլէգ, Զթ. գիլիգ, Ալշ. խլայեգ, Սլմ. դ'ալայեկ', Տիգ. դ'ալայ, Խրբ. գլայ, Սվեդ. դ'ալա: (Վերջիններդ անշուշտ նոր փոխառութիւն): Նոր բառեր են կլայկել, կլեկել, կլայկուճ, անկլեկ:

ԿԼԱՆԵԼ տե՛ս Կուլ:

ԿԼԱՓ «հաւ ինչ ջրային՝ արծաթագոյն փետրովք. ֆրանս. grèbe». ունի միայն Նորայր, Բառ. ֆր. 614 բ, իբր նորակերտ բառ:—Յայտնի չէ թէ ի՛նչպէս է կազմուած:

ԿԼԱՓՆ, ն հլ. (գրծ. կլափամբ) «ատօրին ծնօտը» Ոսկ. ա. տիմ. բ. Կողոս. 660. Նիւս. Երգ. Անյ. պորփ. Յայսմ. նոյ. 23:

ՀՀԲ կլանելոյ ապ: Այսպէս է Թւում նաև ՆՀԲ: Pedersen, Հայ. դր. լեզ. 74 և Vergl. Gram. d. Kelt. Spr. I, 83 իբր բնիկ հայ դնում է կուլ արմատից՝ -ափն մասնիկով: Մառ, Тексти и раз. по Кв. фил. Հտ. 1, էջ 90 (1925 Թ.) կլափն և լափել դնում է յարեթական klp արմատից, որից և վրաց. ղ'լապվա «կլանել», ղ'լապի «ումպ, մի կուլտում», իսկ սրա երկտառ կլ արմատից՝ կլաճել: Պատահական նմանութիւն ունի անս. klap «խօսիլ, մռմռալ»:

ԳԻՒ.—Երև. Լ. Զղ. կլափ, որից կլափին անել, կլափին տալ «բերանը բացուխուփ անել (քաղցից կամ մանաւանդ մեռնելու ժամանակ)». նա Ղզ. կլտափ «կլափ, կզակ, կոկորդ»?—Թուի Թէ միևնոյն բառն է Երև. կլամ «կոկորդի բերանը» (ըստ Ամատունի, Հայոց բառ ու բան, էջ 343), որ և Երև. Բլ. «գուբանի և արօրի առաջամի բօղազը»:

*կլիմ «երկրի կամ երկնքի բաժանմունք, մաս» Վրդն. պտմ. էջ 3, Մխ. ասոր. էջ 9. Ոսկիփ. որ և կլեմ Տաթև. Հարց. 241. կլեմ Մխ. ապար. կլիմայ Խոր. ա. 14. գրուած նաև կղիմայ, կղեմ.—արդի գրականում ընդունուած է միայն կլիմայ «օդի բարեխառնութիւն», որից կլիմայական են։

=Յն. κλίμα «բաժանմունք, երկրամաս, աշխարհագրական գօտի», որից փոխառեալ են լատ. clima (սեռ. climatis) «մի տեսակ հողային չափ. 2. լայնութեան աստիճան», ֆրանս. climat «կլիմայ», գերմ. Klima, ասոր. ܩܠܝܡܐ qəlīmā, արաբ. إقليم iqlīm «աշխարհամաս» են։ Յունարէն բառը գալիս է κλίνω «ծռիլ, հակուիլ» բայից, նշանակում է նախ «թեքում, շեղում (հողի լեռան)», և անցնելով «երկրի հակումը հասարակածից դեպի բևեռները» իմաստից, դարձել է «աշխարհագրական գօտի» և յետոյ էլ «աշխարհաբաժին» (Boisacq 471):—Հիւբշ. էջ 358։

Ուղիղ մեկնեց նախ Schröder, Thesaur. 47, յետոյ ՀՀՔ և ՆՀԲ. վերջինը նաև լծ. է դնում հյ. կողմ, կողմն։

կլիր «առնի անդամ». միջին հյ. բառ. հնից չի աւանդուած. ունի միայն Նորայր, Բառ. ֆր. 797 ա։

Պատահական նմանութիւն ունի քրդ. ژن qəlir «աղտոտ, աղտոտութիւն», որ յիշել եմ իմ Դաւառ. բառարանում, էջ 573։

ԳԻՒ.—երև. կլիր, Պլ. գլիր, Ղրբ. կլէր, Ագլ. կըլլիր, Աժդ. կլղիր են։

⊙կկկեցնել «արագիլի կափկափելը կատուցով» Վրդ. առ. 198։

=Բնաձայն բառ, որի նմաններն են արդի գաւառականներում կկկալ, կկկացնել «ձայնի գեղգեղել», գգգալ «ջրի կարկաչել» և արևմտեան գրականում կկկակ «դալեան, նարկիլէ» նորակերտ բառը։—Աճ.

*կլՈՒՆՈՒՍ «մի տեսակ բոյս» Վստկ. էջ 209 «եւ թէ առնուս կլունուս և եփես դինեաւ... օգուչ». (յոյն բնագիրն ունի φλόμος «խոնդատատ»)։

=Յն. φλόμος բառի արաբ. տառադարձութիւնից սխալ կէտադրութեամբ յառաջացած մի ձև է. ուղիղ ձևը պիտի լինէր فلومس flūmūs, սխալներով դարձել է անշուշտ قلونس qlūnūs, որից էլ հյ. կլունուս։—Աճ.

ՀԲուս. § 1414 համարում է սխալ ընթերցուած փխ. փղոմոս։

կմանել «կործանել կամ յատակել». ունի միայն Բառ. երեմ. էջ 164։

կմել տե՛ս կիծ։

կմիճ «գող» Սեբեր. 219, Կանոն. Շնորհ. ընդհ. որից կծծի (ի մասնիկով՝ փխ. *կծիծի) «պիղծ, ամօթալի» Ոսկ. եփես. «գող» Մագ. Տօնակ. Խոր. «ժլատ» Նար. կծծանճ Մաշկ. կծծութիւն «ագահութիւն» Եզն. «գողութիւն» Ոսկ. պօղ. ա. 834 (յն. «գողանալ»), գաղտակծիծ «ծածուկ գողացող» Լմբ. ժբ մարգ. էջ 117 (արդ. ա. 5). մանրակծծի «մինչև անգամ մանր բաներ գողացող» Ոսկ. բ. տիմ։

ՆՀԲ կիծ արմատից է հանում, իբր «կծող և կծուօղ, այսինքն խածանօղ և շորթող»։ Պատկ. Изслед. էջ 15 լծ. կոխու։ Հիւնք. կծծի հանում է կցիր առաւիղ։ Մատ ЗВО XIX, 0158 կծծի, կծիծ, գծուծ, գծուձ գնում է յարեթթական ղծծ արմատից. հմմտ. վրաց. ղ՛ուճծի, ձուճծի «ժլատ»։

ԳԻՒ.—Պլ. Սեբ. գըծծի, Ռ. գըծցի, Ասլ. գը*ծի, Հճ. գmծծի, Ատն. գըղցի։

կմիկ (ՆՀԲ հոլովում է կծկի, կծկաւ, բայց երկուսն էլ առանց վկայութեան) «թեւի կծիկ» Ա. Բադ. ժթ. 13. Կիւրղ. Թգ. «կըծկուած, նուաճուած» Ոսկ. մ. ա. 20. որից կծկել «ամփոփել» և կրաւ. կծկիլ «ամփոփուիլ, քաշուիլ» ՍԳր. Բուզ. Եւագր. Եւս. քր. Ոսկ. մ. ա. 14. կծկեցուցանել Տօնակ. կծկութիւն «կարկամութիւն, կաշկանդում» Բուզ. կծկատարազ Շիր. կծկաբոռ «այն փայտի կամ թղթի կտորը՝ որի վրայ թելը փաթաթելով կծիկ է շինուած» (Նորագիւտ բառ) Վրդն. առ. 288. կծկում (արդի գրականի մէջ)։

ՀՀՔ հանում է կծել բայից, որ և մեկնում է «դալարել ղերկայն չուանս ի բազում օղաձև կրկնուածս, որպէս առ-

*նեն նաւավարքն զպարանս նաւուն». սրա համար իբր վկայութիւն է բերում Ագաթ. «Բերին կարս պարանաց երկայն ստուարս և կծեցին»: Նոր տպագրութեան մէջ այս հատուածը հետևեալ ձևով է. «Բերին կարս պարանաց երկայնս և ստուարս, և կցեցին իշուցին ի ներքս» (§ 218. ձեռ. տարբ. չկայ, ուրեմն բոլորն էլ ունին կցեցին). սրանով՝ ենթադրեալ *կծել բայը ինքնին ջնջւում է:—Հիւնք. հանում է կծծի բառից:*

ԳԻՒ.—Ախց. Երև. Կր. Ղզ. Տփ. կծիկ, *Վն.* կծիկ, կծիւ[1] *(սեռ.* կծկի, կծկաե*), Մրզ. Սլմ.* կծիկ[1], *Մկ.* կծիւ[1], *Նխ. Պլ. Համշ. Ռ. Սեբ. Սչ.* գծիգ, *Շմ.* կծիգ[1], *Ալշ. Մշ.* կրծիգ, *Ասլ.* գրծիգ, գծիյ, *Խրբ.* գծիգ[1], *Հճ.* գmծիգ, *Տիգ.* գրծծիգ, *Ոզմ.* կծէ՛կ, *Ղրբ.* կծրէգ[1], *Գոր.* կծէկ, *Ագլ.* կծայկ[1], *Սվեդ.* գրծծագ.—*բայական ձևով՝ Ղզ.* կրծրկել, *Ռ.* գգգել, *Ասլ.* գրգգէ՛լ, *Սլմ.* կակել, *իսկ Պլ. միայն* գրգգրդիլ *«կուշ գալ, կծկտիլ»: Նոր բառեր են* կծկափայտ, կծկոտիլ, կծկտուիլ, կծկտիկ, կծկրտուկ *ևն:*

ԿՇԼԻ *տե՛ս Կրծլի:*

ԿՇՄԻ *տե՛ս Կծիծ:*

ԿՇՈՒ *տե՛ս Կիծ:*

ԿՇՈՒԵԼ *տե՛ս Կիծ:*

ԿՇՏԱԼ *տե՛ս Ործ:*

ԿԿԵԼ *«ոստայնանկել, կտաւ գործել» Ոսկ. եփես. 806, Կղնկտ. հրտր. էմ. էջ 21, Նար. է. էջ 18. Մաշկ. որից* **ԿԿոց** *«մաքոք» Ոսկ. եփես. 806. Պրսկդ. Կանոն. Յայսմ. կամ* **ԿԿոցայ** *Երզն. մաթ. 118 (գրծ.* **ԿԿոցայիւ***).* **ԿԿոցեալ** *«աչքը տկարացած, կկոցի պէս փոսացած» Օր. իր. 32:*

Հիւնք. յն. κόκκος *«կարասպ» բառից:*

ԿԿՋԵԼ *«յօնքերը պռոտել». միջին հյ. բառ, որ ունի միայն Նորայր, Բառ. Ֆր. 575 ա. որից* **ԿԿզայօն** *«բարձրամիտ, հրպարտ» Վրդն. պտմ. 55=Ոսկիփ:*

ԿԿԹԱԼ *տե՛ս Կղել:*

ԿԿԻԹ *«մի տեսակ կենդանի». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Խոր. աշխ. հրտր. Սուքրեանի, էջ 30 (վկայութիւնը տե՛ս* **ԱՐԱԻԿ***):*

ԿԿՈՒ *(ի–ա հլ. բառ ՆՀԲ, բայց կայ միայն սեռ. -ի) «կկու թռչունը» Մխ. առակ. վանակ. հց:*

=Բնաձայն բառ է, ինչպէս են նաև իր համանիշ օտար ձևերը, օրինակ՝ **ԱՆՆ.** kō-kilá-, kōka-, *յն.* κόκκυξ, *լատ.* cuculus, *ֆրանս.* coucou, *անգլ.* cuckoc, *իռլ.* cuach, *կիմր.* cog, *գերմ.* Kuckuck, *լիթ.* kakŭti, *հսլ.* kukavica, *ռուս.* кукýшка, *պրս.* کو کو kūkū, *քրդ.* kiku, *նոյնպէս ոչ-հնդևրոպական լեզուների մէջ, ինչ. վրաց.* ᲙᲣᲙᲣᲚᲝ *գուգուլի, ուս.* կուխկուր, կուխֆուն, *օսոյակ.* kuku, kukuk, *մորդվին.* kuku, *Թրք.* قوقو ququ, *արևել. Թրք.* كاكك kakkuk, *ֆինն.* käkö *ևն (Համմտ.* Boisacq 483, Berneker 639, Walde 206 *և* Pokorny 1, 466, *որ հնդևրոպական նախաձևն է դնում* ququ*).—Հիւրշ. 172:*

ՀՀԲ դնում է բնաձայն: Նոյնպէս նաև ՆՀԲ, բայց միացնելով պրս. և Թրք. ձևերի հետ: Lag. Arm. Stud. *§ 1163 պրս. բառի հետ՝ բնաձայն: Տէրվ.* Altarm. 32 ffուել, fուֆալ *ձևերի հետ նոյն, Նախալ. 14, 71 հնխ.* ku *և կրճատ կրկնութեամբ* kuk *արմատից է դնում* ffուել, ffուաճf, կկու, *սանս.* ku, *յն.* κωκύω *«բուքալ», պրս.* kūk *«բուք»:* Bugge, Lyk. Stud. *1, 74 ուզում է գտնել Կապադովկիոյ* Κυκουσός *տեղանուան մէջ:*

ԳԻՒ.—Ախց. Գոր. Երև. Ղրբ. Ղզ. Սլմ. կուկու, *Ագլ.* կգու, *Համշ.* գուգու, *Կր.* կկուկ, *Ասլ.* գիւգիւգ, գիւգիւ*, *Հճ.* գ'ուգ'գ'ուգ', *Զթ.* կուգ'ում, գ'ուգ'ում.—*Թուրքերէնից նոր փոխառութիւն են Տիգ.* դ'ուդ'դ'ու *և անյայտ գաւառականով* խուխու՝ *որ տալիս է* Riggs, *էջ 57* գուգու *(կարդա* գ'ուգ'ու*) ձևի հետ միասին: Այս բոլորը նշանակում են «կկու», իսկ Ռ.* գուգուվաf *«բու»:*

ԿԿՈՒՉ *«ճկուելով ոտների վրայ նստիլը» Մխ. ապար. որից* **ԿԿզիլ** *Ոսկիփ. Վրդն. առ. 59. որ և* **կնկզիլ** *Վրդն. առ. 19:*

ՆՀԲ **կուզ** *բառից:*

ԳԻՒ.—Ղրբ. Շմ. Տփ. կուկուզ, *Նխ. Ռ. Սեբ.* գուգուզ, *Պլ.* գօգօզ, *Ակն.* գրգրզ. *բայական ձևով Ախց.* կկրզիլ, պպրզիլ, *Կր.*

կկըզիլ, *Մշ.* կըգզել, *Զթ.* գը՛գզը՛լ, *Ալշ.* պուրզել, *Հմշ.* գուգուզուշ «պպղիլ»։—Նոր բառեր են կկուզիկ, կոկոզիկ, կկզցնել։

ԿԿՉԵԼ «ծաղկի բացուիլը, փթթիլ» *Ոսկ. ես. 457* «Որպէս ծաղիկ գարնայնոյ, մինչդեռ կկչեն՝ ուրախ առնեն զտեսիլ երեսաց, իսկ յորժամ անցանիցեն, բառնան զբերկրութիւն յաչաց»։

ԿՂԱՉՄ «խռովութիւն», որից կղազմութիւն «հերկպառակութիւն, խռովութիւն». առաջին ձևը ունի միայն ՓՒ (բայց գրում է կղամ և ո՛չ թէ կղազմ). երկրորդն ունին *Բառ. երեմ. էջ 164* և ՓՒ։—Արդեօք խազմ բառից սխալ գրչութի՞ւն է։

ԿՂԱՐԹՔ «կախարդական դիր՝ որ քաակի մէջ կարելով վզից են կախում. համայնակ, նուսխա» Նչ. եղեկ. ուրիշ վկայութիւն չկայ։

ԿՂԵԼ «մզել, զտել, քամել». առանձին չէ գործածուած, այլ միայն անցողական ձևով կամ կրկնութեամբ. այսպէս՝ **կղեցուցանել** «մզել, զտել» *ՀՀՒ, ՋՒ* և *ԱՒ*. **կղկղել** «քամոցից անց կացնել, մզել, զտել» *Յոր. իր. 1. Երզն. մաթ. 157, 281.* **կղկղանի** «արտաթորութիւն, աղբ» *Փիլիպ. դ. 8. Եփր. փիլիպ. 160*։ Բառիս երկրորդ նշանակութիւնն է «սիրտը քամուիլ, կարօտիլ, կաթոգնիլ», որից **կղկղել** «իրեն քաշել, յանկուցանել» *Վրդն. ծն.* **կղկղումն** «իրեն քաշելը, յանկուցում» *Փիլ.* այլաբ. **կղկղալ** *Սերեր.* և **կղկաթել** *Ոսկ. յհ. ա. 1.* «կաթոգնիլ, կարօտով մէկի յետևից նայիլ, սիրտը հալիլ» և սրա յետին ռմկ. ձևը **կկբալ** (փոխանակ **կղկբալ**) «տեսնել ուզել, յետևից նայիլ» *Յայսմ. նոյ. 26, էջ 275 ա.* (Կրկթալով ջանային տեսանել զլոյս ճրագին... և ոչ կարէին) (չունի *ԱՒ*). **կղկղաթ** «կաթոգին, կարօտեալ, սիրակէզ» *Բուզ. ե. 44. Ոսկ. ես.*—Բոլորի պարզ արմատը պիտի լինի *կիղ կամ *կուղ ձևը։

ՆՀԲ **կուղ** «կապ» բառից։ Սագրզեան *ՀԱ 1909, 334* թրք. göl «լիճ», սումեր. gal «լցնել», ğalğal «պղպջալ. 2. Տիգրիս», հյ. կայլակ ևն։ Petersson, Ar. u. Arm. Stud. *էջ 109* **կղկղել**=յն. βόλβιτον «թրիք», βολεών «աղբահոր»։

ԳԻՒ.—Նոյն է թուում **կղկղել** *Երզ.* «սեղմուած մի բան բանալ փուչփուչացնել, *որ դիւրաւ չորանայ», Սվ.* «մէջտեղ դիզուած չամիչի, կաղինի, ընկոյզի և այլ նման պտուղների միջից լաւերը ջոկելով վերցնել»։

ԿՂԵՄ «մի տեսակ կնիւն» *Ստ. լեհ.* «ճիլ մանր և բոլոր» *Բժշ.* ունի միայն *ՀԲուս. § 1424.* դիտէ նաև *Բառ. երեմ. էջ 164* և *165* (երկու անգամ) **կղեմն** ձևով. բայց ըստ որում ունինք նաև հոմանիշ **ճղեմ** ձևը՝ որ մատենագրութեան մէջ աւանդուած է, ձևի կողմից բառս մնում է անստոյգ։ Նորայր *ՀԱ 1923, 497* ուղիղը համարում է միայն ճղեմ։

ԿՂԵՄԱՅ, ԿՂՂԵՄԱՅ կամ **ԿՐԵՏԱՅ** «ուղղութիւն». երեք տարբեր ձևերով ունի *Բառ. երեմ. էջ 160, 164* և *169*։

***ԿՂԵՍՈՒԻՐ** «լեռան կապան, կիրճ և այնտեղ շինուած բերդ». գործածուած է հետևեալ տեղերը. «Զլեառն Տաւրոս, և Սիմ, և զկղեսուրն ամենայն». *Խոր. բ. ը.* «Եւ խոստանայ տալ նմա զխաղաղոյաւիճ կղեսուրաւն». *Ասող. էջ 192.* Նոյն բառը դրուած է նաև կլեսուր *Սամ. անեց. 49*, լեսուր *Արծր. հրտր. Պատկ. էջ 75* (Խոյս տուեալ գնաց զկողմամբքն Մոկաց, ի խոխոմս Տորոսական լերինն, ի լեսուրս Ջերմաձորոյ և բնակէ յամրոցին)։

=Բիւզ. յն. κλεισοῦρα (Sophocles 667), նոր յն. κλεισοῦρα, κλεισούρεια «երկու լեռների միջև գտնուած նեղ անցք, կիրճ». այս յունարէն բառը փոխառեալ է լտ. clausura, clusura «փակելու տեղ, դուռ. 2. ամրոց» բառից, որի արմատն է claudo, clausus «փակել». բայց լատիներէն բառը ձևաւափոխուել է յոյների մօտ՝ ժողովրդական ստուգաբանութեամբ՝ համաձայն յն. κλείω «փակել» բայի, իբրև թէ κλείς «փականք» +ὄρος «լեռ» բառերից կազմուած լինէր։ Այնուհետև յոյն բառը փոխառութեամբ անցել է զանազան լեզուների. ինչ. հսլ. սերբ. klisura, *բուլգար.* klisúra «կիրճ» (Berneker 520), *ասոր.* ܩܠܝܣܘܪܐ qəlīsūrā «լեռների մէջ զարտուղի անցք կամ կիրճ» (Brockelmann, Lex. syr. 323)։

Մեր բանասէրները առհասարակ ընդունել են կղեսուր *իբրև յատուկ անուն,*

իբրև Cœlesyrio «Սուրին Ասորիք»։ ՆՀԲ լեսուրֆ մեկնում է «ալիքներից լոսուած մաշուած տեղեր» (ըստ քմաց սուուգաբանելով լոսել բայից)։ Առաջին անգամ վիստոնեանք (Բրդմ. Խոր. էջ 97) նկատեցին ուղիղ մեկնութիւնը՝ ըստ La Croze-ի, որին հետևեցան St Martin և Ալիշան, Բազմ. 1869, էջ 99։ Վերջին անգամ ուղիղ մեկնեց Նորայր, Հանդ. գրակ. Բ. էջ 324։

*ԿՂԵՐ, ի հլ. (իբր ր բուն՝ հոլովուած է կղերց 3Հ. կթ. 116, 129, 181, 214, 238, 279, 345) «եկեղեցական պաշտօնեայ, դպիր կամ փոքր աստիճանաւոր, կրօնաւոր» Բուզ. դ. 8, որ և կղերիկոս, ի–ա հլ. Ագաթ. Բուզ. դ. 3, 6 3Հ. կթ. Լմբ. պտրգ. գրուած է նաև կլէր Սասն. 67. գղեր, գղերիկոս, որից կղերական Կորիւն. կղերիկոսութիւն Ճառընտ. Մաշտ. Նոր գրականում կղեր առհասարակ նշանակում է «հոգևորական», որից և կղերամիտ, հակակղերական, կղերականութիւն։

=Յն. κλῆρος «եկեղեցականութիւն», κληρικός «եկեղեցական, կրօնաւոր». բուն նշանակում է «փայտի կտոր (չօփ)՝ որով վիճակ են քաշում, բուէ, վիճակահանութիւն», որից յետոյ «վիճակ ընկած բաժինը, ժառանգութիւն, եկեղեցուն բաժին ընկած ծուխը, եկեղեցական» (Boisacq 469):—Այս առումներից են յառաջանում հայերենի մէջ էլ վիճակաւոր, ժառանգաւոր հոմանիշները)։ —Յոյն բառը փոխառութեամբ տարածուած է շատ քրիստոնեայ ազգերի լեզուի մէջ. Համմ. լատ. clerus, clericus, ֆրանս. clerc, clergé, հսլ. klirosŭ, ռուս. клиръ, լհհ. kler են (Berneker 520):—Հիւրշ. 358։

Ուղիղ մեկնեցին նախ ՀՀԲ և ՆՀԲ։

*ԿՂՋԻ (-զւոյ, -զեաց) «ծովի մէջ ցամաք» ՍԳր. որից կղզային Պիտ. կղզեակ Վրք. հց. Յայսմ. Նոր բառեր են ցամաքակղզի, բերակղզի, կղզերեակ, կղզիանալ։

=Ասուրական հին փոխառութիւն, որի հետ Համմ. արաբ. جزر jazar, ο جزيرة jazīra, ասոր. ܓܙܪܬܐ gäzartā «կղզի». ըստ այսմ մեր բառը շրջուած է *կղզի ձևից, ինչպէս որ նոր շրջումով ունինք Մշ. կղզի։ Ասուր. g>հյ. կ հնագոյն ձայնափոխութեան համար Համմ. կիր և կոզոն։ Արաբերէնից փոխառեալ ձև է պրս. جز jaz «կղզի»։—Աճ.

Հիւնք. պրս. fپlژ «դուղձ, հողակոյտ» բառից։ Patrubány SA 1, 218 սանս. grah «տիրանալ, գրաւել» բայի հետ, իբր հնխ. k²lg´hio- ձևից։ Pedersen, Հայ. դր. լեզ. 146 և Patrubány ՀԱ 1906, 346 ըն–կղմեմ և ըն–կլնում ձևերի հետ, իբր «ջրի մէջ գտնուող երկիր». Համմ. լտ. insula<in salo «ծովի մէջ»։ Մառ, Основ. табл. էջ 9 վրաց. կունձուլի, արաբ. jazīra, ասոր. gzīrtā ձևերի հետ՝ սեմական gzr, յաբեթական kzr արմատից։ Karst, Յուշարձան 420 մեկնում է «ծովի երկիր», իբր թրք. göl «ծով», լեզգ. xul, hül, hil «ծով» և չէրքէզ. dĕi, šy «երկիր»։

Գիհ.—Ողմ. կրղզէ, Մկ. կղզր, Մշ. կզղի։

ԿՂԹԵԼ տե՛ս Կուղթ։

ԿՂՄԿԻԼ «տխրիլ, սիրտը լքանիլ, հալիլ մաշիլ». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Ոսկ. փիլ. 440 «Այնչափ ինչ տրտմիմբ կղմկիմբ» (յն. ἀλύω «տխրիլ, շփոթիլ»)։

ԿՂԿՂԱՆՔ տե՛ս Կղել։

*ԿՂՄԻՆՏՐ կամ ԿՂՄԻՆԴՐ (առաջինը արևմտեան գրականի ընդունած ձևն է և շատ գործածական, երկրորդը՝ արևելեան գրականի և քիչ գործածական), ո հլ. «աղիւս կամ կաւ թրծելով հրով, քառանկիւն կամ կիսախոզովակաձև» (որ և կղմիդր, կղմինդր, կղմինբր, կղիմիդր, կղիմիտր, կողոմիտր, կողոմինտր) 3Հ. կթ. 125. Վրք. հց. Բ. 146. Բրս. մրկ. 359, Վստկ. 30. Ոսկիփ. Յայսմ. օգ. 16 (սեռ. կղմնդրաց), Պատմ. ԺԲ դարից, հրտր. Դիւան Ժ. էջ 410 (գրծ. կղմտերբ). որից կղմնտրաշէն «կղմինտրով շինուած» Դիւան Ժ. էջ 9. կղմնդրել «կղմինդրով ծածկել» և կղմնդրաշէնք «կղմինդր շինելը» Rivola, Բառ. Հայոց² 200—201 (չունի ԱԲ), կղմինտրաձածկ (նոր բառ)։

=Յն. κεραμίς (սեռ. κεραμίδος) «տանիք ծածկելու կղմինդր». նուազականը κεραμίδιον. Նոր յն. κεραμίδι, ումկ. κεραμίδα.—Ծագում է κέραμος «կաւ, թրծեալ կաւ» բառից. յունարէնից են փոխառեալ նաև

ասոր. ܩܪܡܝܕܐ qarmīdā (Brockelm. Lex. syr. 339). *արաբ.* قرميد qirmid *(Կամուս, Թրք. Թրգմ. Ա. 670), ռում.* cărămidă, *սլաւ.* keramida, keremida, *հոռւս.* керамида, *սերբ.* c'eràmida (Berneker 500), *գնչ.* keramidini, *Թրք.* كرميد kiremid, *լազ.* **կերեմիդի, կերեմիճդի** *(երկրորդ ձևը ըստ* Кипшидзе, Дополнительныя свед. о чанск. яз, СП. 1911)։—*Հիւբշ. 358։*

Lag. Arm. St. § *1164 բառիս ուղիղ մեկնութիւնը վերագրում է ՆՀԲ-ի և ՋԲ-ի, որոնք այսպիսի բան չունին. ուստի և ինքն է առաջին մեկնիչը։ Հիւնք. հայերէնի հետ նաև յն.* κεραμίς *դնում է «ի հակառակն բառիս կաղամար»։*

ԳԻՒ.—ԼՀՀ. գողրմիճդր։ *Ուրիշ տեղ Թրք.* **Իրէմիա, Իրամիդ** *ձևով։*

***ԿՂՄՈՒԽ** *«մի տեսակ բոյս է.* inula helenium L *խոտը՝ ըստ Տիրացուեան,* Contributo § *520, որ և համանիշ է դնում* **աճառուզ, ախրիճաճ, բոգի, արաի ծաղիկ»** *Բժշ. Գաղիան. Վստկ. 207. որից* **կաղմխենի** *(փոխանակ՝ կղմխենի) ՀԲուս. § 3337։*

=Արաբ. خولنجان qalmūḫ *կամ* qulmuḫ *(չունի Կամուս Ա. 509 և 556, գիտէ միայն* Будаговъ *1, 101, առանց ձայնանիշների որով ընթերցումը ճիշտ յայտնի չէ)* **«անուռւղ խոտը»։** *Եթէ արաբ. բառի վրայ աւելացնենք մի կէտ՝ կգառնայ* خولنجان qulmux, *որից էլ հյ.* **կղմուխ**։—*Ա՛ճ.*

ՓՈԽ.—Հայերէնի միջնորդութեամբ է Թևրևս վրաց. **კულმუხი** *կուլմուխո «*inula helenium *(Զուբինով² 634 մեկնում է ռուս.* девясилъ, оманъ, *որ* Анненковъ *իր բուսաբանական բառարանում, էջ 176 դնում է իբր* inula helenium L, *ֆրանս.* aunée, énule, *գերմ.* Wahrer *ևն)։ Բայց յայտնի չէ Թէ նո՞յն են սրանց հետ վրաց.* **კალმახი կալմախի** *«մի տեսակ սունկ» և* **კალმახა ბალახი կալմախա բալախի** «медвежье ухо *խոտը»։*

ԿՂՈՒԱԹ *«ծով». ունի միայն Բառ. երեմ. էջ 164, որ և էջ 163 դնում է «կիւաթ. ծով» և սրա տակ՝ վրիպակով «կիւղածով. կափարիչ»։*

ԿՂՈՒԹ *տե՛ս Կուղթ։*

ԿՂՈՒԻԿ *տե՛ս Կաղաւել։*

Scheftelowitz BB *29, 49 լատ.* glus *«մածուցիկ նիւթ»։*

ԿՂՊՈՒԻՐ *«ծորբինի կամ բամոնի նման մի բոյս է» Կամրկպ. ունի միայն ՀԲուս. § 1427։*

ԿՃՍ *կամ* **ԿՃԿՍ.** *անաստղ ձևով և անյայտ նշանակութեամբ նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ դործածուած Վեցօր. էջ 176 «Եւ զայս զի՞նչ արասցուք, զի արդ Երկիր առ իւր կոչէ դմեզ. կճառ (լուսանցքի մէջ ուղղուած* **կճկառ**) *կատարեալ կայ պատրաստական, պատմել մեզ զճառս իւր զգաղանաց և զամենայն գեռնոց»։*

ԿՃԵՊ *տե՛ս Խեճեպ։*

ԿՃԻՃ *(ո հլ. ըստ ՆՀԲ, բայց առանց վկայութեան) «պտուկ» Վրք. հց. Բ. 324. Մխ. բժշ. էջ 147. Վստկ. 206. որ և* **կճուճ** *Վրդ. առ. 332.* **կճուկ** *(Թևրևս *կճճուկ) Վստկ. Բժշ։*

ՆՀԲ կուժ *բառից։ Հիւնք. կիճ, կուճ բառից։ Կապ ունի՞ Թէ պատահական է ըրդ.* čöč *«բղուղ» (Շուտ, Քրդերը Տաճկաց-Հայաստ. Ա. 101)։*

ԳԻՒ.—Ախց. երև. Ջղ. Տփ. **կճուճ, Մշ. կջուջ, Խրբ. գջուջ, Ղրբ. կճօճ, Ագլ. կի՛ւճիւճ,**—*իսկ Սեբ. գջիջ և գջիգ ձևերով (Արբ. ևս ունի կճիկ ձևով)։*

ԿՃՂԱԿ, ի–ա *հլ. «չորքոտանիների ոտքի եղունգը» ՍԳր. Եւս. քր. որից* **կճղակաբաշխ, կճղակաճեռ** *ՍԳր. Երկակճղակ Բրս. սղ.* **կճղակաբաժիճ** *Փարպ.* **կճղականալ** *Ագաթ.* **կճղակաւոր** *Ղևտ. ժա. 3.* **կճղակմէջ** *«կճղակի արանքը» Վրդն. առ. 23։—Այստեղ է պատկանում նաև* **զկճղանալ** *«չորանալ, կըճղակի պէս կարծրանալ», որ մէկ անգամ ունի Բուզ. գ. 19 «Գոտանէին զնոսա լոկ ցամաքեալ զկճղացեալ զոսկերս նոցա». (ՆՀԲ և ՋԲ այս բառը համարում են* **կճղանալ.** *բայց որովհետև հայցականի զ նախդիրը անյարմար է տեղին, ուստի Աճառ. Բանաս. 1903, 195 համարում է զ սաստկական, որով բառի բուն ձևն է զկճղանալ։ Հ. Գ. Նահապետեան Բազմ. 1906, 313 ուղղում է* **կճացեալ** *կամ* **կրացեալ,** *այսինքն «կուռ*

*կամ կիր դարձած», ումն *** Բազմ. 1908, 432 կեղակացեալ)։*

Հիմնք. կոճղ բառից։

Գիմ.—Մկ. կեղակ, **Գոր. Ղրբ.** կեէ՛ղակ, **Ագլ.** կեօ՛ղակ, **Զթ.** գօչղօգ, գօչղոգ.—**Ղրբ.** կեէ՛ղակ *թերևս պճեղ բառի ազդեցութեամբ յառաջացած (նորամուտ ե-ով)։*

Փոխ.—Վրաց. ჭლაკი ճլակի *«կճղակ» (բառիս վրայ հմմտ. Մառ,* Иппол. *էջ 60, 68), որ ըստ Ջուբինով[2] 1580* ჭლოკი ճլիկի, ჩლოჭი չլիճի, ჩლოჭი չլոճի *«կրճղակ»։*

Կաճնիուձ *«մի ասպղի անուն է» Շիր. 73. Նորագիւտ բառ. գրուած է ձեռագրում մարգոճ. կ ճնդիաց, որով կարելի է նաև կարդալ մարգոճ կամ ճնդիաց։ Այս դէպքում վերի կճնդիաց ձևը կշնչուի՝ փոխանակուելով ճնդիաց բառով։ ԱՔ ունի կճնդեաց և կաճրճղեաց ձևերը, որոնցից վերջինը յիշեցնում է կարիճ բառը (տե՛ս անդ)։*

Կաճուիթ *«մի տեսակ խոտ է.* polypodium vulgare L, *որ և շատոտուկ» (Տիրացուեան,* Contributo § 2) *Բժշ. ունի միայն Հայբուսակ § 1431։*

Կաճպել *«ամփոփել, սեղմել, զսպել» Ոսկ. երր. կճպետ «ամփոփ, զուսպ, սեղմած» Ոսկ. եփես. 935։*

Գիմ.—Ղրբ. կճպիլ *«պինդ կպիլ. 2. միաբ կճմբիլ. 3. զչիլ, կողոպտիլ». երրորդ նշանակութեամբ անշուշտ կճեպ «կեղև» արմատից։*

***Կմուխ** *(միայն անեղաբար գործածուած) «մեռելի ոսկորները» Նար. (սխալմամբ Հին բռ.= Բառ. երեմ. էջ 164 դնում են* կմախ *«ոսկերք կամ կոտորածք», կմախել «կարթահարել կամ ջլատել»)։ Այստեղ է պատկանում նաև* Կամախ *քաղաքի անունը, որ հայ թագաւորների դամբարանն էր։ Նոր ձև է կմախճացած (*ճ *իբր արմատական համարելով)։ Տե՛ս նաև* կմախ։

=Ասուր. kimaxxu *«դագաղ», սումեր.* ki-max *«գերեզման» (քաղաքավարական բացատրութիւն), արամ.* g m x *«մահարձան». այս իմաստներից «կմախք» նշանակութեան անցնելու համար նկատի պէտք է առնել ասորաբաբելական թաղման սովորութիւնը, երբ դիակը կաւով պինդ ծեփում և մարմնի պատկերը դուրս էին բերում։ Ասուր.* kimaxxu *բառը գրւում է թէ՛* k, *թէ՛* g *և թէ՛* q *նախաձայնով* (Muss-Arnolt, Ass. Handwb. *էջ 915 բ). վերջինը տալիս է ճիշտ հյ. կմախ։*

Նշբ. լծ. թրք. kemik *«ոսկոր» և* qəməq *«կոտոր ոսկեր»։ Հիմնք. հանում է կղմինար բառից։ Ալիշան, Հին հաւ. 417 իրան. դովմա, որ նրանց մեռելատեղին էր։ Ուղիղ մեկնութիւնը տուաւ* Brockelmann, Z. f. Ass. *13, 327 (տե՛ս և* Autran, Sumér. et Ind. *էջ 156)։ Նոյնը հաստատում է Աճառ. Հայ. նոր բառեր մնաց. գրոց մէջ, էջ 17—19՝ կմախ բառի հետ նոյն դնելով յաջորդ կմախի «ողբ» բառը՝ իբրև երկուսի միջին օղակը։ Վարդանեան ՀԱ 1911, 692 մերժում է ասուր.* kimaxxu, *և կմախի բառի հետ միասին՝ դնում է ասոր.* qūnaxā *«ահաւոր. 2. ողբ, լալիւն» բառից։ Մառ* ЗВО *20, 065 ասոր.* ܓܡܚܐ gmxā *«ոսկերք» բառից, որ պէտք չէ, ասում է, կցել ասուր.* kimaxxu *բառին։* (Brockelm. Lex. syr. *57 ունի* ܒܝܬ ܓܡܚܐ bēt gamāxā *կասկածական ձևը, որ համարում է «մահարձան, շիրիմ» և որ* Jensen *միացնում է ասուր.* kimaxxu *բառի հետ)։ Մառ* ИАН *1915, 850 վրաց.* გუამი *գուամի «մարմին» և արաբ.* جسم jism *«մարմին» բառերի հետ։*

***Կմուխի** *(գործածուած է անեղաբար) «մեռելի վրայ ողբ, կոծ, լալիք». նորագիւտ բառ, որ հայ մատենագրութեան մէջ գործածուած է միայն երկու անգամ. «Եւ մեռաւ նա յախտ չարշարանաց իւրոց. և ոչ արարին նմա այնուհետև ժողովուրդն լալիս և կմախիս» (var.* կամախիճ). *Նորագիւտ Բ մնաց. խա. 19 (Եօթանասնից թրգմ. ունի «յուղարկաւորութիւն»). «Ոռնան և ողբան և գուժեն իբրև կմախիս մեռելոց» Բառուք Զ. 31 (յն. ἐν περιδείπνῳ, որ է «ի ճաշ մեռելոյ,* au repas funéraire». *ըստ այսմ հայերէնն էլ ուղղելու է «իբրև ի կմախիս մեռելոց»)։ Այս համեմատութիւններից երե-*

ւում է, որ կմախ բուն նշանակում է «մեռելի սգահանդէս, ուր ազգականները հաւաքուելով ողբում ու կոծում են. այգողք»։

=Նոյն է նախորդ կմախ-f բառի հետ և սրա ու ասուրական ձևի միջին օղակն է կազմում։—Աճ.

Բառ. երեմ. 164 ունի կմախ, էջ 154 կամախ, որից և ՀՀԲ կամախ (ի հլ.) «պատարագ կամ ընծայ», որ ի հարկէ նոյն բառն է՝ նշանակութիւնը սխալ հասկացուած։ ՆՀԲ ունենալով միայն երկրորդ վկայութիւնը, կարծում է թէ թարգմանիչը յոյն բառը սխալմամբ կարդացել է περιδείδων «ահաբեկ», որով թարգմանել է կմախիմ «որպէս կմախ եղեալ ի խրտուիլակ»։ Աճառ. Նոր բառեր մնաց. դրոց մէջ, էջ 17 երևան հանելով այս նորագիւտ բառը՝ մեկնում է վերի ձևով։ Վարդանեան ՀԱ 1911, 692 առաջին վկայութեան մէջ մեկնում է «ողբ, կոծ», իսկ երկրորդի մէջ՝ շատ ճիշտ դնելով ՆՀԲ-ի մեկնութիւնը, հասկանում է «ահաբեկ». և այս երկու իմաստներով կմախի փոխառեալ է դնում ասոր. ܓܘܢܐܟܐ gūnaxā «ահռելի, սոսկալի. 2. ողբ, լալիւն» բառից։ (Սակայն ըստ իս՝ անտեղի է միևնոյն բառին երկու տարբեր իմաստ տալ. «ահաբեկ» բնաւ յարմար չէ վերի օրինակին. ասորի ձևը պիտի տար հյ. գունախայ, գնախայ կամ առառաւելն գրմախ)։

ԿՄԱՃԱՇԱԿ տե՛ս Կում։

ԿՄԱՅԵԱԿ, ի–ա հլ. «արատ, բիծ». մէկ անգամ ունի Փիլ. լին. 156 «Բարեբախտի և երջանկի վիճակի մասն ընկալաւ առանց կմայեկաց և տգեղութեանց»։

Լատինը ըստ Ամբրոսիոսի ունի «առանց արատոց», որին յարմար է նաև յաջորդ «տգեղութեանց» բառը։ Լծ. փիլ. մեկնում է «առանց պաճուճանաց»։ Հին բռ. դնում է «կմայեակք, հմայականք, խտրանք», ՓՔ «խորան» (անշուշտ խտրանք բառը կարդալով խորանք)։

ԿՄԲԵԱՅ տե՛ս Կումբ։

ԿՄԻԿ «վնասուիլ, փճանալ կամ կոտրիլ» անստոյգ բառ, որ առանձին չէ գործածուած և գտնում է միայն իճճնակմեալ «ինքնին փճացած, վնասուած կամ կոտրած» բարդի մէջ. մէկ անգամ գտնում եմ գործածուած վրք. և վկ. Բ. 80 «Եւ վաղվաղակի ինքնակմեալ անիւն և ել արդարն»։ Ունին միայն ՋՔ և ԱՔ։

***ԿՆԱՓ** «մի տեսակ փշոտ թուփ՝ որով նոր գործուած կապերտների բուրդն ու գոյնն են մաքրում» այս բառը գիտէ միայն Ստ. լհհ. և վկայութիւն է բերում Դան. փիլ. «Նաև կնափ առանց արուեստաւորի ո՛չ առնէ զիւր գործ»։

=Յն. κνάφος (որ և յետնաբար γνάφος) «մի տեսակ փուշ՝ որով լպուտները բուրդն էին ազեղնում»։—Արմատն է κνάπτω «ազեղնել, բուրդ գզել»։—Աճ.

Ստ. լհհ. դրած է լտ. gnaphus հոմանիշից։ ՀՔուս. § 1435 դնում է յն. γναφεύς «թափիչ» բառից։

***ԿՆԲԻԼ** (գրուած նաև **կմբիլ**, **կամբիլ**, **ղամպիլ**) «մի տեսակ բոյս. Թերևս mallotus philipensis կամ echinus» Ամիրտ. ունի միայն Ալիշան, Հայրուսակ § 1436։—

=Արաբ. قنبيل qanbīl՝ նոյն նշ. (տե՛ս Կամուս, Բրք. Բրգմ. Գ. 332, ուր տրուած բացատրութիւնը նոյն է Ամիրտովլաթինի հետ. Steinschneider-ի հատուածոյի մէջ՝ WZKM 12, 323)։

Ուղիղ մեկնեց ՀՔուս. անդ։

***ԿՆԳՈՒՂ**, ո կամ ի–ա հլ. «ճղնաւորի վեղար կամ մեծ գլխարկ» Լմբ. առ լև. տպ. 1865, էջ 218. Լմբ. պտրգ. Օրբել. Հրտր. էմ. էջ 76, 178. Վրք. հց. Բ. 476 (սեռ. կնգղաց). Մամիկ. էջ 50 (գրծ. կնկղով). Ճառընտ. որ և գրուած է կնկուղ Լմբ. մատ. 45, 48, 50 (սեռ. կնկղոյ), էջ 89, 91 (սեռ. կնկղի), կուկուղ Վրք. իլար. 132. որից կնկղատուր «կրնգուղ ունեցող» Մամիկ. կնկղակ «փոքր կրնգուղ» Շնորհ. առակ։

=Յն. κουκούλλιον «աբեղայի գլխարկ» բառից, որ ծագում է լտ. cucullus, cucullio, cuculla «գլխանոց» բառից, իսկ սա էլ համարւում է կելտական փոխառութիւն (Walde

206)։ *Յոյն բառը այնուհետև անցել է զանազան լեզուների. ինչ.* հբգ. cucula, *մբգ.* kugele, *հոլ.* kukoli, *ռուս.* куколь, *բուլղար.* gugla, *լեհ. չեխ.* kukla (Berneker *640*), *լապ.* kukula, *թրք.* kukuleta *են։ Լատիներէնից յետ են առնուած իռլ.* cochull, *կիմր.* cwcwll (Walde *անդ*)։ *Հայերէնի մէջ ուղիղ տառադարձութեամբ ծագած է նախ* կուկուլ, *յետոյ և յատկացուածով* կնկուղ. *և ն-ի մօտ կ կակղելով՝* կնգուղ։—*Հիւբշ. 358։*

Նախ ՆՀԲ լծ. լտ. cucullus *և թրք.* külah «գլխանոց»։ *Նոյնը յետոյ* Müller WZKM *8, 285 (Թրգմ. ՀԱ. 1894, 295)։ Մառ,* Тексты VII, *էջ* LXV *վրաց.* ჰუკული կուկուլի «клубокъ» *բառի հետ։*

Գիր.—Ագշ. Մշ. կնգուղ, *Վն.* կնգուխ «վնդար». *Նոր փոխառութիւն է կուկուլա Տր.* «լապի գլխանոց, բաշլուղ»։—*Նոյն են նաև Տփ.* կնգուղ «փետացուի կողմից հարսին արուած նուէր, որ կազմուած է լինում մի գլխարկից՝ շուրջը ոսկիներ ևն», *նոյնպէս Դվ.* կնգուղ, *Ջղ.* ճնգուղ, *Ղրբ.* կնգօղ, *Ննխ.* գնգօղ, *Զթ.* գօնգուղ «կնքուղ մանկան վրայ գցելու շոր կամ սաւան, գզակաւոր բուռնուզ», *որոնց բացատրութիւնը տե՛ս Գւռ. բառ։*

Փոխ.—Հայերէնից պետք է լինի վրաց. ჰუნკული կունկուլա «արեղայի գլխարկ», *միջին ռնգականի պատճառով, որից զուրկ են յոյնն ու լատինը։*

*ԿՆԳՈՒՄ «սպիտակ աքիս, որի մորթը տալիս է թանկագին մուշտակ». *առանձին գործածուած չէ հին մատենագրութեան մէջ, այլ կայ միայն նոր գրականում. սրանից ունինք սակայն* կնգմենի «կնգումի մորթ» *Բուզ. գ. 2 ածանցը։*

=*Փոխառեալ է անյայտ մի լեզուից. համմտ. պհլ.* kākum, *որից փոխառեալ են արաբ. պրս. թրք.* قاقم qaqum, *քրդ.* کاکن kakun, *վրաց.* ჭარჭუმი ƒարƒումի «սպիտակ աքիս», *և արաբերէնից էլ՝ յետնաբար հյ.* ƒաƒում։—*Այս անասունի եւրոպական անունները, ինչ. ֆրանս.* hermine, *գերմ.* Hermelin, *իտալ.* armellino, *անգլ.* ermine *են՝ համարւում են ծագած* Armenia «Հայաստան» *անունից, որտեղից առաջին անգամ արտահանուել է նոյն անասունի մորթը։*

ՆՀԲ «կնգմենի... գուցէ ƒաƒում»։ *Վերի ձևով Հիւբշ.* ZDMG *36(1882), էջ 134, որից յետոյ* Müller WZKM *8, 285 (Թրգմ. ՀԱ. 1894, 295)* qāqum *ձևի հետ։ Հիւբշ. 278 յիշում է հյ.* ƒաƒում *ձևի տակ՝ առանց ծագումը որոշելու։*

*ԿՆԴՐՈՒԿ, ի–ա *հլ.* «լիբանոս, մի տեսակ ազնիւ խունկ» *ՍԳր.* «մաղտաքէ» *Գաղիան. որից* կնդրուկ երևելի «թափանցիկ կնդրուկ» *Եզ. լ. 34.* կնդրկեայ *Եփր. մն. 481.* կնդրկախառն *Գ. մակ. ե. 25.* կնդրկաբեր *Վրդն. երգ.* Բոռնակնդրուկ *Նար. էջ 218։*

=*Պհլ.* *kunduruk «կնդրուկ» *բառից, որ Թէև աւանդուած չէ, բայց նրանից են ծագում կանոնաւորապէս պրս.* كندرو kundurū «մաղտաքէ», كندر kundur «կնդրուկ, boswellia thurifera», كندرك kundurak «խեժ». *բոլորի նախնական աղբիւրն է սանս.* कुन्दु kundu, कुन्दुर kundura, कुन्दुरु kunduru, कुन्दुरुक kunduruka «կնդրուկի խէժ, կնդրուկ, boswellia thurifera Roxb»։—*Հիւբշ. 172։*

ՆՀԲ վրաց. գունդուռո՛ւկի։ Böttich. ZDMG 1850, 357 *դրաւ սանս.* kunduru *բառի հետ, որին* Lag. Arm. St. § 1166 *աւելացնում է պրս. ձևերը։*

Գիր.—Ագլ. Երև. Տփ. կնդրուկ, *Ախց.* կնտրուկ։

Փոխ.—Վրաց. გუნდრუკი გունդրուկի, *բուլ.* გუნდრუკ გունդրուկ՛ *բուժ են հայերէնից, որովհետև պահլաւականից աւելի՝ նման են հայերէնին։ Այսպէս է ընդունում նաև Մառ,* Иппол. *63։ Հայերէնից չէ, այլ ուղղակի պարսկերենից՝ ուտ.* k'ündürük «կնդրուկ»։

ԿՆԵՂ «ջղերը զօրաւոր, ուժեղ» *ունի միայն ԱԲ. կազմուած է* –եղ *մասնիկով. արմատը պիտի լինէր* *կին *կամ* *կուն «ջիղ *կամ ուժ»։*

ԿՆԻ, ՉԿՆԻ *տե՛ս Կին-ք։*

ԿՆԻԻ «ձիու կամ շան ճանճ». *աւանդուած է սեռ.* կնուի *ձևով՝ Վստկ. 210, և սխալագիր* կնիւն *զրչութեամբ՝ Կեչառ. աղէքս. և Պիսիդ. վեցօր. տող 971։*


նշբ ունենալով միայն երկրորդ վկայութիւնը, գրում է կնիւն և դնում է յն. κυνάϊος «շնական» (իմա՛ κύνειος), որ իմաստով յարմար չէ մեր բառին։ Ալիշան՝ Վասակ. 249 դնում է կնի-կ՝ իբր թրք. gene «շանաճանճ»։ Նորայր, Բառ. ֆր. (oestre) ունի ուղիղ կնիւ ձևը։ Պատահական նմանութիւն ունին յն. κυνόμυια կամ κυνόμυια «շնաճանճ» և κνίψ, σκνίψ «փայտի որդ»։

կնիին, ո *հլ. «պրաստ, ճիլ,* juncus glaucus Ehrh. *և* butomus umbellatus L *(բատ Տիրացուեան,* Contributo *§ 44 և § 45)» Յոր ը. 11, խ. 16. որից* **կնիւնաբեր** *Ածար. մկրտ։*

Սագըղեան ՀԱ 1909, 335 և Karst, *Յուշարձան 404 սումեր* gin, gi *«եղէգ» և հյ. ջիճ «գաւազան» բառերի հետ։*

Գիւտ.—Ոզմ. կնուն։

***կնիք**, ո *հլ. (Տոբ. թ. 6 ունի* **կնիօք**, *որ ուղղելի է* **կնիովք**) *«կնիք, մոհր» ՍԳր. «դրոշմ, մկրտութիւն» Ա. Կոր. ա. 16. Կոչ. Եւս. պտմ. Ոսկ. բ. տիմ. բ. «խօսքի վերջը, վախճանը» Լմբ. Նար. որից* **կնիել** *«կնիք դնել, մոհրել» ՍԳր. «ամրափակել, կնքի տակ պահել» ՍԳր. Սևբեր. «հաստատել, վկայել» Յկ. գ. 33. գ. 27. Հռ. ժե. 28. «մկրտել, դրոշմել, խաչակնքել» Եփես. ա. 13. գ. 30.* դատակնիք *Եղիշ. Նար.* աճկնիք *Սևբեր. Ոսկ. յհ. ա. 6.* եօթնակնիքեան *ԱԲ.* նախակնիք *Սարկ. լուս.* խաչակնիք *Երզն. լուս.* խաչակնքել *Գնձ.* **կնիչ** *Եփր. Եփես.* **կնոց** *Պտմ. աղէքս.* **կնումն** *Նանայ, Պետ.* **կնիաձայր** *Շնորհ.* **կնիամայր** *Մարթին.* նորակնիք *«նոր մկրտուած» (նորագիւտ բառ) Ոսկ. տարկ. տող 57.* **կնիաւոր** *Սևբեր. Ադաթ.* **կնիաւոր** *«մկրտեալ» Եփր. հռ. 9. Ոսկ. Եփես. «կնքահայր» Կանոն.* **կնիամոմ**, **կրնիապատ** *(նոր գրականի մէջ). ռամկական ձևով են* **կնուիմ** *«դրոշմ, մի բանի վրայ դրոշմուած ձև կամ պատկեր» Սոկր. 268.* **կնուի**, **կնուիմ** *«մկրտութիւն» Երզն. խրատ. Ոսկիփ.* աճկնուիմ *Մանդ.* **կնիուիլ** *«մկրտուիլ» Վրդ. պտմ. էջ 161.* նորակնուիմ *Նիւս. Թաղմ. Վրք. Հց։*

=Ասուր.  ku-nu-uk-ku (kunukku) *«կնիք»,* kanīku *«կընքուած բան», ակկադ.* qanāqu *«կնքել»* (Strassmaier, Alphabetisches Verzeichniss der Assyrischen und Akkadischen Wörter, *էջ 566 և* Delitzsch, Assyrisches Handwörterbuch, *էջ 589)։ Այս բառը ասորիերէնի մէջ գոյութիւն չունենալով՝ ասուրական փոխառութեան ենթադրութիւնը հայերէնում՝ աւելի ևս է հաստատւում։ Նկատելի է նաև որ ասորեստանեցին ունի երկու ձև* (kunukku *և* kanīku), *առաջինը* u *ձայնաւորով և երկրորդը* ī *ձայնաւորով. և այդ երկուսն էլ պահուած են հայերէնի մէջ։—Հիւրշ. 308։*

Նշբ **կնի**, **գկնի** *բառից։* Reiff, Русско-франц. слов. СП. *1835, I. էջ 415 բ չին.* king *բառից (այն է չինական սրբազան մատեանը, որ ունի չորս մաս՝* I-king, Ši-king, Šu-king, Lu-king): Müller SWAW 42 *(1863), 250 և* WZKM *8 (1894), էջ 189 կգում է պրս.* نگین nigīn *«մատանու քար» ձևին։ Ուղիղ մեկնութիւնը տուաւ նախ* Lag. Arm. Stud. *§ 1167։ Հինք. պրս.* nigīn: Jensen, Hitt. u. Arm. 212 *փոխառութիւնը վերագրում է հաթեան շրջանին։ Տե՛ս նաև Հիւրշ. Ուս. փոխ. բառից, Բրգմ. Տաշեան, էջ 28։*

Գիւտ.—Շտ. կնուի, *Ալշ. Ախց. Երև. Կր. Մշ. Ջղ. Սլմ. Տփ.* կնուիմ, *Ագլ.* կնուիմ, կնօնիմ, *Մկ. Վն.* կնուիմ[1], *Հմշ. Սեբ. Սչ. Տիգ.* գնուիմ, *Մրզ. Շմ.* կունուիմ, *Ննխ. Պլ. Ռ.* գունուիմ, *Սվեդ.* գնէօնիմ, *Ասլ.* գնիւիմ, գնիւ*, *Հճ.* գոնուիմ, *Գոր. Ղրբ.* կնօնիմ, *Ոզմ.* կնօ[1], *Զթ.* գօնուիմ։—*2. Ջղ. Սլմ. Վն.* կնիել, *Ագլ. Շմ. Ոզմ. Տփ.* կնիլ, *Սչ.* գնիել, *Պլ.* գնիէլ, *Խրբ.* գնիլ, *Ասլ.* գնիէ՝լ։—*Այս բոլորը կրօնական բառեր են. այսպէս* կնուիմ *«երախայի մկրտութիւն», կնիել «երախան մկրտել» են. միայն Տփ.* կնիլ *նշանակում է նաև «կնիք զարնել, մոհրել»։—Համմտ. նաև* կնիաձայր>*Սեբ.* գնիաձար, *Ախց.* կնկրձար, *Ասլ. Ննխ. Պլ. Ռ.* գնգաձար, *Ակն. Սչ.* գնգրձար, *Հմշ.* գնիէր.—կնիամայր>*Ախց. Ասլ. Ննխ. Պլ. Ռ.* կնիամար, *Սչ.* գնիրմար, *Ակն.*

ինճամար, էնկիւրիի թրքախօս հայոց բարբառով՝ ինճ՝ամար (*Բիւր. 1898, 789*), Առն ընճամէր (*Արեւելք 1888, նոյ. 8—9*).—կընճաւռ>*Տփ.* կնճավռ, *Շմ.* կունճօօր, *Տիգ.* ինճ՝ոռ, *Մկ.* ճ՝աւռ, *Ալշ. Մշ. Զղ. Սլմ.* ճավռ, *Երև.* ճավօր, *Վն.* ճ՝ավռ, *Ոզմ.* ճ՝ավռ, *Մրզ.* ճավքիր.—կնճապապ>*Զթ.* գընճաբօր, *Հճ.* գնճաբօր, ընճաբօր, *Ակն.* ինճաբաբ, *Առն.* ընճաբաբ, *էնկիւրիի թրք.* հյ. ինճ՝ապաբ, *Ալշ. Մշ. Զրս.* ճաբաբ, *Սվեդ. բուր.*—կնճամամ>*Մշ.* ճամամ:—*Նոր բառեր են* կնունճճաշ, կնունճաճաց, կնճակիճ, կննճաառուն, կնճուաուէճ, կճառուկ:

Փոխ.—*Հայ բոշ.* կաւրաւ «*կնքահայր, սանահայր*» (*գւռ.* ճաւռ *ձևից*), *գնչ.* kirvó, kirivó, kivro «*կնքահայր*», որից *գնչուերէնի օրէնքով իգական՝* kirvi «*կնքամայր*». *բոլորն էլ մեր* ճաւռ *բառից են.* (A. Paspati *սրանց համար գրում է.* «*Որչափ ինձ ծանօթ է՝ չկայ նման մի բառ՝ որ կարենայ սրան ծագում տուած լինել*»: *Ի զուր ուրեմն համեմատում է սանս.* kurvat «*արարիալ*» *բառի հետ, որ այստեղ գործ չունի*):—Ճաւռ *ձևից են փոխառեալ նաև քրդ.* ճիւա, ճիւրա, ճիվա «*թլփատութեան ծէսի ժամանակ կնքահայր եղող անձը*». *այս բառով են կոչում հայերը քրդերին՝ բարեկամական լեզուով. այս սիտղոսը ծագում է նրանից, որ շատ քրդեր «Հայոց կնքահայր կը լինին խաչ բռնելով կամ այլոց բռնել տալով. այսուհետև այդ բուրդն փեսայի տան քրիվան է և անոր պաշտպանն նեղ վայրկեաններու մէջ»:* (*Այս քրդ. բառը չէ նշանակած* Justi. *ունին միայն Ճանիկեան, Հնութ. Ակնայ, էջ 71 և Միրաքեանեան, Նկարագրական ուղեւորութիւն 1885 Պօլիս, հտ. Գ. էջ 219*): *Իբր թրք. բառ յիշում է նաև* Будаговъ 2, 125 كرو kirve *ձևով և ասում է թէ գործածական է Անդրկովկասում ու մի քանի գաւառներում, ինչ. Ղարաբաղ, Շամախի, Նուխի. իսկ Աստրպատականում չի գործածւում. նշանակում է «կնքահայր», ինչպէս երևում է թուրք մոլլաների գրած չափաբերական մատեաններից և է այն անձը՝ որ թլփատութեան ժամանակ գրկում է մանուկին. այդ առթիւ մանկիկին նուիրում է ամբողջ մի հագուստ և իրաւունք ունի մինչև մանկիկի ծնողների հարեմը մտնելու:—Թուրքերէնի վրայով անցնելով հյ.* կնիք *բառը տուել է նաև հունգ.* könyv «*գիրք*», *մորդվին.* kon´ov «*թուղթ*», *հալ.* kŭn´iga, *ռուս.* книга, *ուկր.* knýha, *բուլգար.* kníga, *սերբ.* knjīga, *չեխ.* kniha, *լեհ.* księga «*գիրք, թուղթ, սաղմոս, խաղաթուղթ ևն*», *այս կարծիքը առաջարկել է նախ* Mikkola. Finn-ugr. Forschung. *2, 77 և 1, 113՝ մեկնելով ասուրական* kunukku *ձևից, որ հաստատում են թուրքերէնի միջոցով՝* Pedersen KZ *39, 464 և 40, 189,* Munkácsi. Keleti szemle *2, 312, որ և ընդունում է* Berneker 664՝ *իբրև ամենից աւելի հաւանականը՝ սլ.* kŭn´iga «*գիրք*» *բառի համար արուած բացատրութեանց մէջ:*

ԿՆՁԱՁԱՅՆ *տե՛ս* Կաղկանձել:

ԿՆՁՆԻ «*մի տեսակ յաղթանդամ ծառ է. լտ.* ulmus campestris L» (*ըստ Տիրացուեան,* Contributo § *81*) *Վեցօր. 93.—Հրուս. դնում է նաև* կնձենի *ձևը:*

Հիւնք. կինճ *բառից: Հրուս. § 1438 յիշում է իսլ.* oinsean, uinsean «*կնձնի*»: *Հյ. բառի նշանակութիւնը ճշտելու համար համմտ. Ղ. նպս. Դուրեան Հմ. 1914, 336:*

ԿՆՃԱԿ «*լուծի երկու ծայրերը*» *Շնորհ. առկ. 62* («*Լծած վեց եղն յերկու կնճակ*»). «*Ծառոյն հասաւ ճիւղն որ ի բունէն ելանէ*» *վստկ. 174* (*Զրնկուզի կամ զկաղնի թորխն կամ զչոր կնճակն ջրեա, նա մենակ սունկ հանէ*). *ուրիշ օրինակ չկայ:* (*Զունի ՆՀԲ*):

Դիմ.—*ՆԲ.* կնճակ, *Ալշ. Կր. Մշ.* կնջագ «*լուծի երկու ծայրերը*». *իսկ Վն.* կնճակ *են կոչում աշխատող լծակից եղները կամ լծան երկու տաւարները:*

ԿՆՃԱՓՈՂ «*դինի բաժանելու ամանի ծուռ քիթը*» *Բրս. արբեց:*

=*Բարդուած է* կի՞նճ *թէ* կնճիթ+փող *բառերից:*

ԿՆՃԻԹ, ի–ա *Հլ.* «*խոզի՝ վարազի քիթ*» *Ագաթ. Խոր. աշխ.* «*փղի պատիճ*» *Նիւս. կազմ. որից* կնճթեղ «*քիթը մեծ*» *Եղիշ. ծն. առ վրդ.* կնճթակերպ *Ագաթ.* կնճթացեալ *Ագաթ.* շնկնճիթ *Ոսկ. մ. ա. 4.* շանակնճիթ

խոր. աշխ. կնճռպդէմ *ճառընտ.* եղջերակրծ-ճիք *խոր. աշխ. գրուած է* կնճուք *(շան համար) Վստկ. 222,* կնճռուտ *(ձիու համար) Վստկ. 198։*

ՀՀԲ և ՆՀԲ կնճի *բիր։ Հինք. պրս.* kinǰ *«վիթխարի փիղ»։ Գաբրիէլեան ՀԱ 1911, 595* բիր<բիճ *արմատից։ Պատահական նմանութիւն ունի սանս.* कुञ्ज kuñja *«ծնօտ, աւռամ»։*

*կնճիթ *«շուշմայ, սուսամ» Եփր. Լ. Եւս. քր. ա. 18. յեռնաբար դարձել է* կնջիբ *Սանահն. Գաղխան. Հին բռ.* կնջիւր *Փիլ. Լ. 534.* կնճուր *Բժշ.* կնճիբն *(սեռ.* կնճրան*) Մխ. առակ. նաև* կանճուտ, կանճուտ *Բժշ.։*

=*Պհլ.* kunčit *կամ* kunǰīt *համանիշից, որի հետ նոյն է պրս.* كنج kunjiθ *կամ* كنجيد kunjīd *«սուսամ»։ Սրանցից փոխառեալ են նոյնպէս բհլուճ.* kunčiθ, *Թոխար.* kuñčit, *քուչ.* kuñč dh, *արևել. Թրք.* كونجيت kunjit, *չաղաթ.* كونجى künji, *ռուս.* кунжутъ, *քրդ.* kunji *են համանիշները։—Հիւբշ. 172։*

Ուղիղ մեկնեց նախ ԳԴ, որից յետոյ Հիւբշ. ZDMG 35 (1881), 660:

ԳԻՒ.—Մշ. կունջիա. *նոր փոխառութիւն են Գոր. Ղրբ.* բիւնջի՛ւր, *Երև.* բունջուր *են։*

կնճիռն, ն *հլ. (սեռ. -ճռան) «դժուարալոյծ հանգոյց. 2. դժուարութիւն. 3. գաւառանութիւն, խարդաւանք. 4. կապանք, շղթայ» ՍԳր. Եփր. Ծն. էջ 42. Հռ. էջ 29 և ա. տիմ. 235. Ոսկ. մ. գ 3. «կամք, խորհուրդ» Զգօն 45, 180, Եփր. Ա. 42, 140, 207, Բ. 255, Գ. 29, 235 (այս նշանակութիւնը առած բնագրի համեմատութեամբ երևան հանեց Վարդանեան ՀԱ 1914, 324), «դէմքի կամ մարմնի խորշոմ» Վրք. Հց. «խաղողի շիւ» Տարօն. էջ 277, Առաք. պտմ. 346, Ուռհ. 177, Տաթև. ձմ. ճծա. ամ. էջ 113 ա. գրուած է նաև* կնջիռն *Եփր. Համաբ. 61,* կնջիւռն, կնջիւռ։ *Որից չարակնճիռ «չարակամ, չարախորհուրդ» Զգօն 241 (հմմտ. ՀԱ՝ անդ). մհյ.* կոնջմիլ *«մորթը կնճռիլ, կուչ գալ» (Նոր բայր. Բառ. ֆր. 555 ա)։ Նոր գրականում ընդունուած է միայն կնճիռ ձևով, որից շինուած են* կնճռիլ, կնճռոտ, կնճռոտել, դժուարակնճիռ *ևն։*

Հինք. պրս. բիւնճ *«գանգուր հերաց, ոլորք չուանի, խորշոմ»։ Ղափանցեան, Տեղեկ. ինստիտ. 2, 97* կիրճ *բառից։*

ԳԻՒ.—Ջղ. կնջեռ *«խաղողի չանչ», Երև.* կնջէռ *«խաղողը ճմլելուց յետոյ մնացած մասերը, խաղողի թթուած շրուանդ», Ալշ-Մշ.* կոճնջ *և Խրբ.* գոճնջ *«կապի՝ թելի խառնուք, ոլորք», Պլ.* գոճնջ *«ճակատի կնճիռ»։ Նոր բառեր են* կնճռակալել *«երեսը խորշոմներով լցուիլ»,* կնճռնած, կնճռնոտ *«խորշոմներով ծածկուած»,* կնճռնոտացնել *«դէմքը թթուեցնել», Ոզմ.* կրոմջվիլ *«թելը՝ կապը խառնուիլ», նաև* կոճնիլ, կոճնմիլ, կըրճնմոտիլ *Խրբ.,* կոճնմաիլ *Ակն.,* կոճչմաիլ *Արբ. «կաշին կծկուիլ», Համշ.* գոճնջ *«թելի ոլորք»։ Էնկիւրիի Թրքախօս հայոց բարբառով՝ գըոճնջլի «կոճնճ ունեցող» (Բիւր. 1898, 790)։*

կնոկոն, կնիկոն *«կակաչիրակ, խիյարշէմպէ, որ է* cassia*» Գաղխան. ունի միայն ՀԲուս. § 1262, որ և Կոռկոռ Բառ. երեմ. յավել. 568։*

կնոինէք *տե՛ս* կնիք։

⊙**կնջել**, *«պոչել, ճչել (յատկապէս խոզի)» Ագաթ. Արծր. որից* կնշիւն *«ձայնի հնչիւն» Ոսկ. ա. տիմ։*

=*Բնաձայն բառ, որ կազմուած է կ պարզ ձայնից՝ և և շ ածանցիչների յաւելումով, հմմտ. ձևի համար՝* ճնշել, շնշել, բնշել, գրնշել, պնշել, փնշել, մնշել, խնշել, *իսկ արմատի համար՝* կոշել, կռնշել, կոռոշ *են։—Աճ.*

ՆՀԲ կինճ *բառից։ Վերի մեկնութիւնս տե՛ս ՀԱ 1899, 203 բ։*

կնջակ. *նորագիւտ բառ՝ անստոյգ նշանակութեամբ. մէկ անգամ գտնում եմ գործածուած Յայսմ. յունիս 29 (էջ 833 ա). «էր Ս. Պետրոս այր կնջակ, միջասահման, հեր պլխոյն գռուզ և սպիտակամարմին և երկայնաքիթ, թաւչօն և դարաճակատ, խստասիրտ և արագահաշտ, քաղցրահայեաց և սքանչելագործ»։ Նոյն ձևը գիտէ նաև Բառ. երեմ. էջ 224* յելուզակ *բառի բացատրութեան մէջ. այսպէս՝ «Յելուզակ. խոռվատար կամ կնջակ»։*

⊙ԿՆՏՆՏՈՑ *(գրուած նաև* կնտնդոց, կնդրնդոց, կրտնդոց, կտնդոց, կտնտոց, կրնդրնդոց*)* «նուագարանի թելերը զարնելու գործիք» *Փիլ. լին. էջ 399. Նիւս. կազմ. և բն. Անան. թրգ. 6. նոյն բառը* կրնդկրնտոց *ձեւով գիտէ Վրդն. սղ. ճէ. էջ 365. որից* կարճացուցաւար *34. կթ. արդի գրականում ընդունուած է միայն* կնտնտոց *ձևը՝ «չուիթակի ադեղ» իմաստով։*

=Կազմուած է կն *և* տն *բնաձայններից՝* -ոց *մասնիկով։—Աճ.*

ԿՇԱՅ, ի *հլ. «սև նաւթ, կպրաձիւթ» Վրդն. ծն. (երկու անգամ յիշուած)։*

ՀԲուս. § 1440 համարում է «խեժ կամ ոետին», որի դէմ տե՛ս Նորայր ՀԱ 1921, 237։

ԿՇԱՆ, ի–ա *հլ. «խոյր». ունին միայն Բառ. երեմ. էջ 165 և ՓԲ յաւել.—անստոյգ բառ։*

***ԿՇԻՒ**, ո *հլ. «կշռելու գործիք» ՍԳր. «կշռի քաթ կամ նժար» Պզատ. տիմ. «քաշ, ծանրութիւն» ՍԳր. «քննութիւն, համեմատութիւն, դատաստան» Սկբեր. Ոսկ. յհ. «ոտաձեռքի չափ» Երզն. քեր. «կենդանակերպի անուն» Վեցօր. Շիր. «հաւասար, համեմատ, զուգակշիռ, ուղիղ» Ղկ. գ. 34. Վեցօր. Ոսկ. ա. տիմ. ժե. Եւս. քր. «հաւասարապէս» Եւս. քր. Եզն. Վեցօր. «հաւասարութիւն, համեմատութիւն» Ոսկ. փիլիպ. և յհ. ա. 9. Սկբեր. որից* կշռել *ՍԳր. Կոչ. Եւս. պտմ. և քր. Եզն. կշռիչ Ագաթ.* կշռաւար *«իրաւարար» Սկբեր.* կշռաւոր *Եփր. եկ.* կշռող *ՍԳր. Սկբեր.* կշռոց *Մծբ.* կշռուած *Ագաթ.* կշռուիթիւն *ՍԳր. Ոսկ. յհ. ա. 1.* հաւասարակշիռ *Վեցօր.* հաւասարակշիռ *Վեցօր.* միակշիռ *Ագաթ. Վեցօր.* պայծառակշիռ *Ագաթ.* զուգակշռել *Փարպ.* բարեկշիռ *Պիտիղ.* դրամակշիռ *Ճառընտ. Շիր.* դատակշիռ *Լմբ. առակ.* դիւրակշիռ *Լաստ.* ծանրակշիռ, կշռադատութիւն *(նոր բառեր) են են։ Գրուած է նաև* կշեռ *Սկբեր. Մանդ. Եփր. կարկտ. Զքր. կթ. միջին հյ.* կշիռ *Անսիզք 79,* կշեռ REA 1, 243:

=Ասուր. gišrinnu *«լծակ, կշիռք»* (Muss-Arnolt, Ass. Handwb. 234), *սումեր.* gušur, gušra *«ձող, լծակ».—ասուր. բառը* Scheil, Zeitsch. für Assyr. 9, 218 *կցում է եբր.* גשר gšr *արմատին+*innu. *բայց այսպիսի բառ չունի* Gesenius[17]:

ՆՀԲ կասկածով ֆաշ, ֆաշել *բառից։ Հիւնք.* կայսր *բառից։* Justi, Dict. Kurde, *էջ 335 քրդ.* kiš *«կշիռ» ձևի դէմ է դնում։* Karst, *Յուշարձան 400 ասուր.* gišrinnu *«լծակ, կշիռք», 405 սումեր.* gušur, gušra *«ձող, լծակ»։ Պատահական նմանութիւն ունի կաբարդին* kišekk *«կշիռք»,* kišekkən *«կշռել»։ Ուղիղ մեկնեց* Karst, *Յուշարձան, 400։*

ԳԻՒՒ.—Տփ. կշիռ, *Ալշ. Մշ. Ոզմ.* կշեռ, *Վն.* կշեռ[1], *Ախց. Կր.* կշէռ, *Մկ.* կշէռ[1], *Ննխ. Սչ.* գշէռ, *Ակն. Զթ.* գիշէռ, *Սեբ.* գիշե՝ռ, *Հճ.* գիշէրֆ, *Սվեդ.* գիշիռ, *Զգ.* ֆշեռ, *Ագլ.* ֆշէրֆ, *Գոր. երև. Ղրբ. Շմ. Մրզ.* ֆշեռ, *Սլմ.* ֆիշեռ[1], *Ռ.* գշառ, *Պլ.* գիշառ, *Խրբ.* գիշռառ, *Ասլ.* գիշռռ, գիշռռ*, *Սվ.* շէռ։—*Բայական ձևով՝ Վն.* կշռել, *Տիգ.* գշռել, *Ախց.* կըշըռել, *Ռ.* գըշըռել, *Հմշ.* գըշըռուշ, *Զթ.* գը՝շը՝ռիլ, գը՝շռիլ, *Սչ.* գըշըռել, *Գոր. Ղրբ.* ֆշռել, *Մրզ.* ֆըշըռել, *Ագլ. Շմ.* ֆըշըռիլ, *Ոզմ.* կշռիլ, *Սլմ.* ֆիշըռել, *Ակն.* գիշէռէլ, *Ասլ.* գիշէռէ՝լ, *Սեբ.* գիշէ՝ռէլ, *Հճ.* գիշէրէլ, *Պլ.* գիշառէլ, *Խրբ.* գիշռռէլ, *Սվ.* շէռիլ։ *Այս բոլորը երևան են հանում բացի* կշիռ *ձևից, նաև* կշեռ, կիշառ։ *Նոր բառեր են* կշռաճ, կշռաֆար, կշռօֆ *են։*

ԿՇԿՈՒՒՌ *«հանգոյց, կապ». կայ միայն արդի գաւառականներում. բայց հին են* կշկռուտ, կշկռտուն *(այլ ձ.* կոշկռռտուճ*) «կապկպուած» Մագ. թղ. 137, 125 «Առաւանս ի խստագոյն ձարաձև այծից կշկռտունս կարկատելոյ. Տարակուսանս իմն սակաւ առաջի ձեր սիրեցաք, զի կաշկանդեալ կշկռուտ և ընդելուզեալ հիւսակս»։ Ուրիշ օրինակ չկայ։*

ՆՀԲ ուղղագոյն ձևը համարում է կոշկռռտուճ *և մեկնում է «իբր կնճռեալ կոշտիւք կամ մանուածոյ. կռնճմատած, կնճռած, կոշկռտած»։ Այս մեկնութիւնը ըստ իս ճիշտ չէ. բառը պէտք է մեկնել «կապկպուած», ինչպէս ցոյց են տալիս գաւառականները և վերի օրինակների մէջ խնդրական բառերին իբր*

համազօր դրուած կարկատեալ, կաշկանդեալ բառերը։

ԳԻՒ.—Երև. կշկուռ, Ղրբ. fշկօռ, Շմ. fրշկըռ «հանգոյց, դժուար քանդելու կապ», որից կշկռել Ագլ. Երև. Ղգ. Ղրբ. Ղրդ. «հանգուցել», կշկռռուել «կապկպել», կշկռուիլ «կապկպուիլ», կշկռռած բել «կապկպուած թել»։

ԿՇՈՇ «յօտոց, յատոց». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Վասկ. 71 «Կրկնակի կշոշով՝ որ սուր լինի՝ զհօտածն նոր քիչ մի այլ ի վայր կորեն»։ Բնագրի մէջ դրուած է «յօտոց կամ մանդաղ». առաջին իմաստը հաստատում է՝

ԳԻՒ.—ՋԹ. գիւշիւշ, Մշ. fշոշ, որ և ունին խն. կր. «յօտոց» իմաստով։

ԿՇՏԱՄԲ «յանդիմանութիւն, սաստ, պատիժ». արմատ առանձին անգործածական, որից կազմուած են կշտամբել «յանդիմանել, գէշ չախել» ՍԳր. Կոչ. 237. կշտամբաճ ՍԳր. կշտամբիչ Յուդ. 22. կշտամբութիւն ՍԳր. իճճնակշտամբելի Նար. ևն.

Տէրվ. Altarm. 10, Նախալ. 71 սանս. kud «սաել», յն. κοδάζω «նախատանել», հալ. kuditi «դատապարտել, թշնամանել» բառերին ցեղակից. հայը դնում է կշտ<կուտ-շ արմատից. համմ. սանս. kuts «նախատել, դատապարտել»։

***ԿՇՏԱՊԱՆԱԿ** (սեռ. -ի) «մի տեսակ զարդ» (դրուած է յն. περιδέξιον «ապրանջան» բառի դէմ. բայց, ինչպէս ստուգաբանութիւնը ցոյց է տալիս, պիտի լինի «կամարի նման մի զարդ՝ որ կուշտը կամ մէջքն է պատում») Ել. լե. 22. Թիւք վա. 50. Ես. գ. 21. Կոչ. 12. «Ձիու կուրծքի զարդ» Ջրբ. սարկ. Ա. 86. գրշագրական սխալ է կշտամբանակ Ոսկ. եբր. իր. 554 և ևս. 37։

=Պհլ. *kuštpānak ենթատրեալ ձևից, որ կազմուած է *kušt «կուշտ, սնակուշտ» (համմ. տակը կուշտ) և pānak (pān-ak) բառերից։ Իրանեան ձևից չի կարող զատուիլ վրաց. კუშტაბანი կուշտաբանի (նշ. «կոճակի ծակ, լամբակ» ըստ Ջուբինով[2] 638, բայց «կշտապանակ» ըստ Մառ, Физіологъ 123), որ միջին պարսկական ձևից փոխառեալ պէտք է լինի, ինչպէս ցոյց են տալիս պհլ. -ak վերջաւորութեան անկումը (սովորական՝ պարսկերէնում) և b ձայնը փոխանակ հնագոյն p-ի—Հիւբշ. 172։

Նշ. մեկնում է պահպանակ կշտի, իբրև գուտ հայ հողի վրայ կազմուած բարդութիւն։ Lag. Arm. Stud. § 1169 յիշում է արամ. גושפנק gušpnq անասոյզ բառը և պրս. anguštvāna (=զնդ. *angušta-pāna) «մատնոց, կնիք», բայց առանց կարենալու որոշել հայերէն բառի առնչութիւնը սրանց հետ։ Հիւբշ. Arm. Gram. 172 հետացնում է վերջին պրս. ձևը։ Հացունի, Պատմ. տարազի 125 հիմնուելով anguštapāna ձևի վրայ, կշտապանակ համարում է «զարդի մատանի» (համաձայն յունարէնի), իսկ մատանի «կնքելու մատանի»։

ԿՇՏԻԼ «հերքել». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Սոկր. 358 «Եւ զիմաստմունս նոցա բակտելով և զպարշելի և զնենգաւոր նոցա բանսն կշտելով»—բնագիրն ունի καὶ τὰ σοφίσματα ἀνελὼν αὐτῶν, καὶ τοὺς κιβδήλους καὶ δολεροὺς αὐτῶν λόγους ἐξελέγχων (տե՛ս Socrates, Ecclesiastical History, Oxford 1893, էջ 201), որ համապատասխան բառը՝ ἐξ-ελέγχω նշանակում է «հերքել»։ Նո՞ր է արդեօք՝

ԳԻՒ.—կշտել Շշ. «ճիւղը հարթել՝ վրայի աւելորդ կամ ուռած մասերը տաշելով», որ այլուր ունի fշտել «կտրել» Բառ. երեմ. էջ 166, «զարնել, հարու տալ, սոթտել, ուտել» ձևր։

+**ԿՈԳԻ** (-գւոյ, -ւով, -եաց, -ւովք) «կապարտ» ՍԳր։

=Բնիկ հայ բառ՝ հնխ. gʷovio- ձևից. համմ. սանս. गव्य gavya- «կովից դուրս եկած, կովից յատաջացած (այսպէս են կոչւում 5 նիւթ.—կաթ, պանիր, կարագ, մէզ և թրիք). 2. կովի կաթ. 3. կաթից պատրաստուած բան» (Böhtlingk II. 717), զնդ. gāvya- «կովից ստացուած (կաթ)», gaoya- «կովից բաղկացած». ըստ այսմ մեր բառը բուն նշանակում է «կովի, կովային» և ցեղակից է կով բառին (Walde 95, Boisacq

130, Pokorny 1, 697). *Ձայնական տարբերութեան համար հմմտ.* արև—արեգ։— *Հիւբշ. 461։*

ՆՀՔ կով *արմատից է հանում։* Lag. Arm. Stud. § *1170 յիշում է սակս.* gōghrta, gōrasa *ձևերը, որոնց առաջին վանկը մերինին համաձայն է դրսնում։ Հիւնք. յն.* κύκνος «կարապ» *բառից։ Ուղիղ մեկնութիւնը ըստ ՆՀՔ-ի տուաւ նախ Հիւբշ.* ZDMG *36(1882), 118 և* Arm. Stud. *էջ 36։ Պասմաճեան, Արեւելք 1890 յունիս 1 հնդ.* կիիչ *«զաեալ կարագ»։ Բառիս ձևի մասին խօսում է* Meillet, Les dial. indo-europ. *էջ 72։*

ԿԱՊԻՆ *«սունկ». անստոյգ բառ. ունի միայն ՀՔուս. § 1441։*

ԿՈՉԱԿ, ի–ա *հլ. «շէնքի պահանդ, կապ, բարաւորների վերնախարիսխը, վերևի շեմբը, շինուածքի դուրս կարկառուած մասը» ՍԳր. Եւս. քր. ա. 69. (բառիս իմաստը մանրամասն բացատրում է նշ. եղեկ։ Արդի հնդեցական լեզուով՝ «խորանի մեծ կամարի մէջտեղն է, ուր լինում է օծուած մի խաչ». Քննասէր, Օրաց. ազգ. Հիւանդ. 1906, էջ 154)։ Գրուած է նաև* խոզակ. *այսպէս՝ խոզակ բարանի Ուռհ. էջ 120, Սմբ. պտմ. էջ 70,* խոզակ բերդի *կամ բանտի՝ Ուռհ. էջ 338։*

ՆՀՔ հանում է կզակ *բառից. իսկ Հիւնք.* կռճակ-*ից։ Պատահական նմանութիւն ունին թրք.* o‌ز‌كو kuze «տաղաւար, վրան», արևել. թրք. كوزنك guzenk «վրանի ներսի պատերը» (P. de Court. Dict. Turc-orient.)

ԳԻՒ.—ՆՀՔ (հտ. Ա, էջ 1108 դ) և ՋՔ իբրև ոմկ. դնում են կոզճակ *«յետին կողմն շինուածոյն». Քաջունի գիտէ* կոզճակ *«նեղ անցք վանն անասնոց». ինձ յայտնի է միայն* կոզճակ *խոջ. «դոմի մէջ պատրաստուած յատուկ բաժին, ուր հաւաքում են կաթնկեր ուլերին, գառներին և հորթերին»։*

ԿՈՉԱԿ *տե՛ս* խոզակ։

***ԿՈՉԵՒ** *«անշափահաս մանուկ, երախայ, տղայ». նորագիւտ բառ, որ երկու անգամ դտնում եմ գործածուած հետևեալ վկայութեանց մէջ. «Ջաղմոսն... հայր ի բերան առեալ ասեն վայրապար, քահանայք և ռամիկք և մանկունք և կոզեռք և հաւատաւոր կանայք». (Վկայութիւն Յովհ. Գառնեցւոյ, Հրտր. Հայապատում, 460 բ). «Ոչ կարողանայր պարզ և ստոյգ ասել, որ տխմար և կոզեռ տղայքն ի բերան առեալ ասեն զՁ ապղմոսն» (Դրնդ. էջ 420)։ Նոյն բառն է անշուշտ Յովհաննէս Կոզեռն վարդապետին տրուած մակդիրը, ինչպէս ունինք Գրիգոր Տղայ, որից և մի եղանակի անուն (Ամատունի 351 ա)։*

=Ծագումը տե՛ս կոզոն։—*Աճ.*

[**ԿՈՉՈՒԿ** *«մի տեսակ բոյս է». ըստ Ռոշքեանի (լտ.* solanum, *մի տեսակ շնախաղող կամ պատինջանի նման թանձր մի բանջարեղէն», իսկ ըստ Հին բռ. «լտ.* strychnus, *ժանտընկոյզ կամ որթացուցիչ ընկոյզ»։ Ունի միայն ՀՔուս. § 1443։*

=Անդոյ բառ, արդիւնք սխալ ենթադրութեան, որ յառաջացել է հետևեալ ձևով։ Փաղիանոսի մէջ գրուած է «Սարկա. խոզուկ», որով պէտք է հասկանալ «յն. Σατρὺξ *մի տեսակ ոզնի». յոյն բառը սխալ գրչութեամբ եղել է* սարկա. *Ռոշքեանը իր օրինակում գտնելով* Սարկա. կոզուկ, *առաջինը կարծել է յն.* στρύχνος «շնախաղող», *այլուր լտ.* strychnus «ժանտընկոյզ», *որով եղել է* կոզուկ «շնախաղող կամ ժանտընկոյզ»։

Այս մեկնութիւնը տուաւ Նորայր, ՀՄ 1921, 234։]

ԿՈՉՊԱՏ, ի–ա *հլ. «լաջակ» Գէ. ես. «քրդանցք» Յայսմ. նոյ. 29, ապր. 20, յունիս 3. որից* կոզպատեալ *«լաջակով գլուխը և երեսը ծածկած» Մարթին։*

ՀՀՔ սխալմամբ գրում է կողպատ, *ինչպէս ունի նաև Յայսմ. և մեկնում է ըստ այսմ «կողը պատող»։ ՆՀՔ իբր «կզակապատ»։*

ԳԻՒ.—Երև. կոսպաճղ *«Հարսանիքի ժամանակ փեսայի վրին խաչաձև կապուած թաշկինակ, որ նշան է նորափեսայութեան. 2. լաջակ». նոյն բառն ունին նաև Ալշ. Նբ. Խ.—իսկ Խոջ.* գոզրաճղ *«մի տեսակ կանացի գլխակապ, որի ծայրը մէջքն ի վայր կախուած է»։*

ԿՈՁՌՆ, ն հլ. (գրծ. -ոամբ, -ոամբք) «ուղտի ձագը» Մն. լբ. 15. Ճառընտ. ուրիշ վկայութիւն չկայ։ Նոյնը գրուած է կոզեոն, գոզեոն (ուղ. հոլով) Վրդ. առ. էջ 20. կայ և կոզակ նոյն նշ։ Բառ. երեմ. էջ 165, որ հաստատւում է վրացական ձևով. ՀՀՒ և ՋՒ դնում են կոզոակ՝ որ գաւառական ձև է։

=Իբրև Հայաստանի ո՛չ քնիկ մի անասունի անուն՝ անշուշտ փոխառեալ է. մեր հարևան լեզուներից ո՛չ մէկի մէջ չկայ նման մի բառ. ունինք սակայն արաբ. جزور jazūr «ուղտ կամ ուղտի ձագ», յոգն. جزر juzur «ուղտեր»։ Այս բառը քնիկ սեմական է, որին ապացոյց են նոյն արմատից բխած բազմաթիւ ածանցները արաբերէնի մէջ. ինչ. جزير jazīr. «ուղտի միս ծախող», مجزر majzar «ուղտ մորթելու տեղ», جزارة juzara «մորթուած ուղտի չորս ոտքը և վիզը, ուղտ մորթող մսագործին տրուած վարձը»։ Սրանից է փոխառեալ նաև պրս. جزر jaẓr կամ جدر jadr «չորս տարեկան ուղտ»։ Բայց որովհետև արաբերէնից չէինք կարող փոխառութիւններ ունենալ ե դարում և ձևով էլ նման չէ արաբականին, ուստի իբրև աղբիւր պէտք է դնել մեզ հարևան մի ուրիշ սեմական լեզու։ Հաւանաբար, ինչպէս ուղտ, նոյնպէս և կոզոն փոխառութիւն է ասուրերէնից։ Ձայնական փոփոխութեանց համար համմտ. կոզի=արաբ. جزيرة jazīra:—Աճ.

ՆՀԲ յծ. Քրբ. էօշէր, էօշէր «ուղտի ձագ»։ Հինք. կորիւն բառից։

ԳԻՒ.—Ղրբ. գէօ՛զոակ «ուղտի ձագ». Rivola, Բառ. հայոց², էջ 194 ունի կոզոնիկ ձևը՝ «կոզոն, ուղտի ձագ» նշանակութեամբ։ Ղարաբաղի գէօ՛զոնակ<*կոզոակ ձևը ցոյց է տալիս՝ որ կոզոն բառի մէջ ն արմատական չէ, այլ վերջաւորութիւն, ինչ. ձեռ-ն։ Միևնոյն ժամանակ կոզեոն, գոզեոն (վերջինը նախաձայն գ-ով՝ ճիշտ ինչպէս Ղրբ.) ձևերի գոյութիւնը՝ «կոզոն» նշանակութեամբ, ցոյց է տալիս որ կոզեո «երախայ» բառն էլ նոյն է սրա հետ։ Երկուսի ընդհանուր գաղափարն է «ձագ». համմտ. Քրբ. բալա «ձագ. 2. զաւակ, երախայ»։

ՓՈԽ.—Վրաց. კოზაკი կոզակի «ուղտի ձագ». փոխառութեան ապացոյց է -ակի վերջաւորութիւնը՝ որ հայերէն -ակ նուազականով միայն կարող է մեկնուիլ։

ԿՈԹ «գործիքի բռնելատեղ, մեղեխ. 2. ծաղկի ցօղուն» Ոսկիփ. Բժշ. Բրս. մրկ. 106, Շնորհ. առ. Միխ. աս. էջ 322, որից շերեփակոր «մի տեսակ միջատ» Վանակ. հց.—այս բոլորը յետին և ոամիկ ձևեր են. բայց բառը անշուշտ հին է, որովհետև սրանից ունինք սուճակոր «տիգաբուն, նիզակի կոթ» եղեկ. լթ. 9. Երկայնակոր Ոսկ. ա. տիմ. էջ 114. խնդակոր «մոլախինդ» Ոսկ. հս. 424. կոբուճ «բոյսի ցօղուն, բուն, կոթ» Ոսկ. փիլիպ։—ՀՀՒ և ՋՒ ունին նաև կոթոլ ձևը՝ «կոթ» նշանակութեամբ։—Սրանց պէտք է կցել նաև ՀՀՒ-ի յիշած կոբաա «կրճատ, կարճ» բառը, որ ԱՒ մեկնում է «պակասաւոր» և որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Ոսկ. հռովմ. 295 «Ոչ գակնատն և ոչ գկոթատն և ոչ որ քոսոտն էր և կամ շրթնատն»։

Հինք. կորող բառից։ Bugge KZ 32, 84 կանք բառի հետ ուս. կոց համանիշից փոխառեալ է համարում կասկածով։ Մառ, Грам. др.-арм. էջ 29 կանք բառից կազմուած։ Scheftelowitz BB 28, 307 սանս. gadā «լախտ», ալբան. g'ede «ճիւղ» բառերին ցեղակից։

ԿՈՅՍ, ի *հլ. «չամուանացած աղջիկ» ՍԳր. «մաքուր, անփորձ ողջախոհ (իբր ած. աղջըկան և երիտասարդի համար), փակեալ, կնքեալ, խորհրդաւոր (իրերի համար)» Եփր. համաբ. Պղատ. օրին. ՍՀմ. «Կոյս կենդանակերպը» Տոմար. որից* կուսան *ՍԳր. Եզն.* կուսանաւանալ *Ոսկ. մ. գ. 9.* կուսանոց *Եսթ. բ. 3. Ոսկ. մ. գ. 14.* կուսածին *Ագաթ.* կուսաստան *ՍԳր. Բուզ.* կուսարար *Կոչ.* կուսորդի *Ոսկ.* կուսութիւն *ՍԳր. Եզն. մշտակոյս*

Պարապմ. յարակոյս *Փիլ.* յաւեժակոյս *Փիլ.* յաւեռակոյս *Փիլ. ևն։*

ՆՀԲ «որպէս թէ ի մի կողմն մեկուսացեալ. լծ. ոմկ. գոց և *Թրք.* qəz *«աղջիկ»։ Մորթման* ZDMG *26, 556 բևեռ.* gistiai, *649 բևեռ.* gis, *Թրք.* qez *«աղջիկ»։ Հիւնք. Թրք.* qəz: Pedersen KZ *40, 197—8 և Հայ. դր. լեզ. 234 հանում է* $g^{w}ou$ -$q^{w}i$-s *նախաձևից, «փոքրիկ հովուհի» նշանակութեամբ, հմմտ. յն.* Βουκίων *յատուկ անունը,* βουκόλος *«հովիւ» և իռլ.* buachaill, *բրբտ.* bugel *«տղայ, մանչ»։ (Այս մեկնութիւնը ընդունում է* Boisacq 1101): Karst, *Յուշարձան 423 Թրք.* qəz *«աղջիկ»։ Թիրեաքեան, Արիահայ բռ. 211 պհլ.* khūshak *«կոյս»? բառից։*

ԳԻՒ.—Շմ. կույս, *ԶՔ. Ննխ. Սեբ.* գույս, *Մրղ.* կուխս, *Ախց. Երև. Կր. Մկ. Ոզմ. Զղ. Սլմ. Մշ. Տփ.* կուս, *Ռ.* գուս, *բոլորն էլ փոխառեալ են գրականից և նշանակում են «միանձնուհի, կրօնաւորուհի». Տփ.* կուս ու կօկօմ *«կոյս, անարատ»։*

ՓՈԽ.—Վրաց. კუსი კուսի, ყუსი ղ'ուսի *«կոյս, միանձնուհի»,* ყუსებიs მონასტერი ղ'ուսերիս մոնաստերի *«կուսավանք»։—* Pedersen KZ *40, 197—8 և Հայ. դր. լեզ. 187 հայերէնից փոխառեալ է դնում օսմ.* qəz, *եակուտ.* kūs *«աղջիկ, կոյս»։*

ԿՈՅՍ, ի–ա *հլ. «կողմ» ՍԳր. Կոչ. Ագաթ. Ոսկ. մ. բ. տիմ. և ԵԹր. որից* յայսկոյս, յայնկոյս, յետ կոյս, յետս կոյս *ՍԳր.* կուսակալ *ՍԳր.* կուսակալել *Եւս. քր.* կուսակալութիւն *Ա. մակ. ժա. 28.* աստուածակոյս *ՍԳր. Ոսկ.* մեկուսի *ՍԳր. Սեբեր. Ագաթ. Եղն. Ոսկ.* մեկուսացնել *Սեբեր. (հմմտ. պրս.* یکسو شدن yak su šudan *«ի բաց կալ», բառացի «մի կողմ լինել»),* չորեքկուսի *ՍԳր.* քառակուսի *Եպիփ. ծն. Յայտ.* երեքկուսի *Սեբեր.* ծովակոյս *Ել. իզ. 22. Յես. ը. 11. Հետաքրքրական նորագիւտ բառ է* կուսանկաւ *(Թերևս ուղղելի* կուսանկատ*) «աչառու կուսակցական, կողմնապահութիւն անող» Բառ. երեմ. էջ 274.—Նոր բառեր են* կուսակալանիստ, կուսակից, կուսակցական, կուսակցականութիւն, կուսակցութիւն, անկուսակցական *ևն։*

ՆՀԲ լծ. կուշտ *և պրս.* kōša *«անկիւն»։* Müller SWAW *66, 271 գնդ.* *kaosa=kusra *«անկիւն»։ Թիրեաքեան, Կարնամակ ծան. 9 պհլ.* kusti *«կողմ» բառից։* Pedersen, *Հայ. դր. լեզ. 104* կէս *և կից ձևերի հետ՝ երկու բառից։ Ադոնց,* Арм. въ эп. Юст. *215 ուզում է տեսնել պհլ.* pātkōs>*հյ.* պատգոս, kostak *«երկիր» բառերի մէջ։ Մառ* ЗВО *XIX, 070 յաբեթական* krs *արմատից. հմմտ. վրաց.* կերձոյ *«կող, կողմ», տե՛ս նաև* կէս, կորճանել: Karst, *Յուշարձան 400 ասուր.* kīsū *«կողմ», 408 սումեր.* uš *«կողմ»։ Մարքվարտ (անձնական) պհլ.* *kōs *ձևից, որ գտնում է* pāt-kōs *բառի մէջ. հմմտ. հյ.* պատգոսապան *և սոգդ.* qoš *«կողմը»։ Շէֆթէլովից* KZ *54 (1927), 252 դնում է* կէս (½) *բառից։* Nyberg, Hilfsb. *2, 102 իրան.* *hausa- *ձևից. հմմտ. սոգդ.* qōš *«կողմ», պհլ.* kušt>*հյ.* կուշտ *և* kust-ak *«գաւառ, կողմ»։*

ԳԻՒ.—Զղ. կուս, *որից* նեսկուս *«ներսը» (հմմտ.* նեռս կոյս *«մէջը» Ադամ. 136),* Ղրբ. կիւս, *միայն* էսկիւս *«այս կողմ»,* էնգիւս *«յայնկոյս»,* մաշիւս *«մէջի կողմը» բառերի մէջ. Շմ.* գիւս, Զզլ. գուս *«կողմը», որից* մին գուս *«մէկդի, մի կողմ», Տփ. պահուած է միայն «Ասծու կույս կուզմանէ իմ խօսում» ասացուածքի մէջ։*

ԿՈՅՏ, ի հլ. «բարդ, խումբ, բազմութիւն» ՍԳր. «երամակ, խումբ, ջոկ՝ մանաւանդ ձիերի» նորագիւտ Բ. մնաց. Թ. 25. Փիլ. շն. 279. Խոր. բ. է. Պտմ. աղէքս. 16. «մարդոց բազմութիւն» Խոսր. պտրգ. որից կուտել *«դիզել, հաւաքել» ՍԳր. Ոսկ.* կուտոց *Եփր. Թգ. 457.* բազմակոյտ *ՍԳր. Ագաթ. Կոչ. 110. Վեցօր.* հայակոյտ *Ագաթ.* գաւառակոյտ *Ա. մակ. դ. 1.* դիակոյտ *ՅՀ. կթ.* լեռնակոյտ *Ա. Նահ. եկեղ.* խաղաղակոյտ *Մծբ. Կոչ.* խեցակոյտ *Ագաթ.* ծերակոյտ *ՍԳր. Մծբ.* նախարարակոյտ *Ագաթ. Բուզ.* կարկառակոյտ *Յես. դ. 13.* կուտակ *Մծբ. Կոչ.* կուտակել *ՍԳր. Ագաթ. Ոսկ. ես.* կուտակութիւն *Կոչ.*

կուտապան «ձիերի երամակի վերակացու» Երզն. քեր. (գրուած է կոյտապան), որ և կուտպան Սիւն. քեր. 209. Միխ. աս. էջ 619. կուտկէն «ուղտի սապատ» Կիր. տպ. վենետ. էջ 214 ևն։

=ՊՀլ. *kōt ձևից, որ աւանդուած չէ, բայց կայ պրս. كود kōd «ժողովեալ, 2. դէզ կալի և այլոց. 3. աղբ՝ զոր թափեն յարտորայն վասն զօրութիւն տալոյ»։ Սրանց հետ համմտ. սանս. कूट kūṭa «դէզ, բազմութիւն», գնչ. kidao «կուտել», ինչպէս նաև ասոր. ܩܛܥ qauṭṭi «կուտել, դիզել» (փոխառեալ իրանեանից?):—Հիւբշ. 173։

ՆՀՔ պրս. fիուտ, սանս. fուրթա, ռուս. куча «դէզ»։ Հիւնք. պրս. fիուտ: Bugge, Lyk. Stud. 1, 33 լիւկ. Μαστι-κυτος չեռան անունը մեկնում է Մասիս+կոյտ: Մառ. Физіологъ. 1904, էջ XXXVII և 88 վրաց. կոլտի «հօտ, նախիր» բառի հետ։ Patrubány ՀԱ. 1906, 367 հնխ. geu «կորացնել» արմատից. համմտ. յն. γυρός «բոլորակ». իսկ պրս. ձևը փոխառեալ է հայերէնից։ Karst, Յուշարձան 405 սումէր. kit «դիզել» ձևի հետ։ Պատահական նմանութիւն ունին արաբ. كتلة kutla «կոյտ, դէզ», كودة kauda «կոյտ» (Կամուս, Բրբ. Բրգմ. Գ. 335 և Ա. 684), եթէ սակայն վերջինը իրանեանից փոխառեալ չէ։

ԳԻՒ.—Ջղ. կիտել, Երև. կի՛տէլ, Տփ. կի՛տիլ, Գոր. Ղրբ. Շմ. կիւտիլ, Ագլ. կէ՛տիլ «կուտել, դիզել», Մշ. կուտոց, Խրբ. գդօց «կուտոց, կոյտ, դէզ», Մղր. կիւտ նիլ «հաւաքուիլ, կոյտ գալ»։ Նոր բառեր են կիտուկ, կիտուիլ, կոյտ աճել, կուտակ, կուտիչ, կուտոց, կուտոցել, կտոց, կտոցել, կտոցուիլ, fարկտոց («կոթող» իմաստով ունի Margoliuth, The Syro-Armenian dial. JRAS 1898, էջ 853)։

ՓՈԽ.—Ըստ Ղափանցեան, Տեղեկ. ինստիտ. 2, էջ 96 հայերէնից է փոխառեալ վրաց. კოლტი կոլտի «խոզերի, եղների և ուղտերի խումբ», որ գործածուած է միայն ՍԳր։

*ԿՈՅՐ, ի, ի–ա Հլ. «աչազուրկ» ՍԳր. Ոսկ. յհ. բ. 19. որից կուրանալ «տեսողութիւնը կորցնել» ՍԳր. «խափանուիլ, գործածութենից ընկնելով՝ եղծուիլ» Ոսկ. ես. 248 (Ձճանապարհն որ գրազում ժամանակս կուրացեալ իցէ և անհետ և աներևոյթ լեալ, փշալից, տատասկաբեր). կուրութիւն ՍԳր. Կոչ. կուրացուցանել ՍԳր. Ոսկ. ես. կուրամիտ Տօնակ. գիշերակոյր Մխ. գտ. մտակոյր Մաշկ. Ոսկիփ. ակնկոյր Ոսկ. մ. բ. էջ 600. խուլակոյր Կոչ. 148. կուրաճաշ «կոյրին առաջնորդող շուն» Վրդ. առ. էջ 280։

=ՊՀլ. kōr, «կոյր» բառից, որի հետ նոյն են պազենդ. kūr, սոգդ. kōr, պրս. كور kōr, բելուճ. kūr, k'ōr, աֆղան. kōr, քրդ. kor «կոյր»։ Իրանեանից են փոխառեալ նաև արաբ. قور qavar «միականի դառնալ» (Կամուս, Բրբ. Բրգմ. Բ. 91), Բրբ. kʸor, kʸór «կոյր», որի միջոցով էլ գնչ. koro, kori, բուլգար. k'or, ալբան. k'oŕ, ռում. chĭor «կոյր», սերբ. c'ör «միականի դառնալ» (Berneker 680):—Հիւբշ. 173։

Ուղիղ մեկնից նախ ԳԴ՝ համեմատելով պրս. ձևի հետ։ Klaproth, Mémoires 1, 426 սանս. kuritā, Բրբ. kor, kör, ռուս. kriwoe «ծուռ»։ ՆՀՔ Բրբ. fէor, fեon, Խրբ. ևon: Peterm. 25, 38 պրս. և Բրբ. kōr: Lag. Urgesch. 935 պրս. kōr, գնդ. kōya: Մորթման ZDMG 24 (1870), էջ 80 Բրբ. kör: Müller SWAW 38, 572 են պրս. kūr: Justi, Zendsp. 81 սրա հետ նաև գնդ. kavan «կոյր ի գիտութեան օրինաց»։ Մառ ЗВО XIX, 0156 դնում է յաբեթական ղուր արմատից. համմտ. տուրքալկ. 'վեր «կոյր», մինդր. դեե–'վերը «կուրացնել», իսկ պրս. kōr փոխառեալ է յաբեթականից։ Karst, Յուշարձան 420 ալթայ. soqor «կոյր», Բրբ. kʸor «կոյր», եակուտ. sokkor «միականի»։

ԳԻՒ.—Մրղ. կուʰր, Սլմ. Վն. կոր (սեռ. Վն. կուրու), Մկ. Մշ. Ոզմ. Ջղ. Տփ. կուր (Մշ. միայն fոռուկուր ձևի մէջ, որ կազմուած է Բրբ. fon և հյ. կուր ձևերի կրկնութեամբ), Ննխ. գուր, Ռ. գուրնալ «կուրանալ, Խրբ. գուրգուրալ «խարխափել», Պլ. «մի բան դանդաղօրէն կատարել», Զթ. գիյ, գիր, Սվեդ. գայր «կոյր», բարդութեամբ կամ

ածանցմամբ՝ Պլ. հավգուր «հաւկոյր», Ղրբ. կուրաբուխպ «թանձր մշուշ», Երև. ա-կաճակիր «ականակոյր մութ խաւար», Ղրբ. կո՛ւրուկ «հաւկոյր», Ակն. գուրվօր<կուրաւր «կոյր»։

*ԿՈՆ (որ և կովն, կոնոս, կոնոն) «բրգաձև» Նիւս. Կազմ. և բն. (Նեմես. էջ 72), որից կոնաձև (Նոր դրականի մէջ), կոնաձեվապէս Նիւս. կազմ. (բառարանները դնում են նաև կոն «պիտաակենու պտուղ» նշանակութիւնը. բայց այս նշանակութիւնը յոյնին միայն յատուկ է և չկայ հայերէնում)։

=Յն. κῶνος «կոնաձև. 2. պիտաակենու պտուղ». առաջին նշանակութեամբ փոխառեալ են նաև լտ. conus, ֆրանս. cône (որ և «շոճիի պտուղ») են։—Հիւբշ. 359։

Ուղիղ մեկնեցին նախ ՀՀԲ և ՆՀԲ։

ԿՈՆ տե՛ս Իկոն։

ԿՈՆ տե՛ս Ճոն։

ԿՈՆ, ԿՈՆՆԵՐ տե՛ս Մաղարիկոն։

ԿՈՆԱՔՕՂ «ամենակալ կամ պատկերահան». ունի միայն Բառ. երեմ. էջ 167. Հմմտ. կոն «պատկեր» (որ տե՛ս իկոն)։

ԿՈՆԳՈՄ «խաշխաշի, վարդի և նման դաղիկների կունդ գլուխը» Վստկ. էջ 107, Մխ. բժշ. էջ 21, 43. գրւում է նաև կոնկոմ, բց. կոնգմէն։ Ըստ ՀԲուս. § 1475 նշանակում է նաև «շոճիի խէժ» (քիմիական գիրք), ըստ Նորայր, Բառ. ֆր. 275ա «ձուակերպ գումարութիւն կարծր և խիտ կեղևոց, որպէս է տեսանել ի պտուղն շոճւոյ. ստրովբիլ, strobile»։

Վաստակոց գրոց բառարանում, էջ 250 կոնգոմ մեկնւում է «պղնձեայ սափոր, Թրք. gügüm (լտ. իտալ. cucuma)», որ ընդունած է նաև Քաջունի, Հտ. Գ. էջ 127։ Այս նշանակութիւնը մերժում է Նորայր, Հայկ. բառաք. էջ 96 և մեկնում է վերի ձևով՝ իբր հյ. կոկոն։

*ԿՈՆԴ «անդամալոյծ». Նորագիւտ բառ՝ որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Տաթև. ամ. 593. կենդանի է նոյն ձևով արդի գանազան բարբառների մէջ (Երև. Ղզ. Ղրբ. են)։

=Պրս. كند kund, ٥كند kunda (արդի հնչումով kond, kondä) «կոճղ. 2. բուն. գուլ». այս նշանակութիւնը՝ որ նախնականն է, պահուած է նաև մեր բարբառներում. Հմմտ. Ախց. Ախք. Բբ. Խոջ. «գերան, մարդակ»։ Այս իմաստից փոխաբերաբար յառաջացել է «անդամալոյծ» իմաստը. Հմմտ. լտ. truncus «ծառի կոճղ. 2. կտրած, ջարդուած, պակասաւոր, հաշմ (ճիւղերը կտրուած ծառի համար, այս ու այն անդամը կտրած մարմնի համար ևն)»։—Ա.Ճ.

Յիշեալ մեկնութիւնս տե՛ս Գաւառ, բռ. էջ 591։

*ԿՈՆԳ, ի հլ. «գերեզման». ունի միայն Բառ. երեմ. էջ 167, որից առնում է նաև ՓԲ յաւելու

=Յառաջացած է նախորդից փոխաբերաբար. կոճղը ըմբռնուելով կունտ ու կոշտ մի բան, անցել է «կոյտ» իմաստին, որից էլ «գլուխ. 2. բարձրութիւն. 3. թումբ, դար, բլուր» նշանակութեանց. վերջինը գտնում ենք այժմ էլ Երև. Կղզ., որ դնում է նաև Բառ. երեմ. էջ 55՝ բլուր բառի բացատրութեան մէջ, այսպէս՝ բլուր «կոնտ կամ փոքր լեռան կամ հողակոյտ»։ Այս վերջինը արդէն նոյն է «գերեզման» նշանակութեան հետ։—Ա.Ճ.

*ԿՈՆԴԱԿ (ի-ա հլ. ըստ ՆՀԲ, թէև կայ միայն սեռ. -ի) «համաւօտ երգ, յորդորակ, յիշատակագիր, հայրապետական թուղթ» Յայսմ. Շնորհ. Տօնակ. (արդի գրականում միայն վերջին իմաստով)։

=Յն. κοντάκιον (նյն. κοντάκι) բառից, որ նշանակում է «ոլորուած գլանաձև թուղթ գրելու, կարճ օրհներգ». ծագում է κόνταξ (=κοντός) բառից՝ որ նշանակում է «գաւազան, ձող, ճոկան կամ մականի, javelot» Sophocles 679). իմաստի զարգացման համար Հմմտ. հյ. գաւազան և գաւազանագիր։ Յունարէնից են փոխառեալ նաև վրաց. კონდაკი կոնդակի «մաղթանք յանուն սրբոց, պատարագամատոյց գիրք», ասոր. ܩܘܢ ܕܩ qōndaqā «volumen», հսլ. kondakŭ, լեհ. kondak, ռուս. кондакъ «Աստուածածնի վրայ եկեղեցական տաղ» (Berneker 558)։ Նոր յունարէնում «մականի» իմաստից ստա-

ցուել է «հրացանի կոթ» նշանակութիւնը, որից էլ փոխառութեամբ թրք. قوندق qundaq, qondaq, *ալբան.* kondák, *բուլգար.* kundák, *ռմկ.* ղօնդաղ *«հրացանի կոթ»* (Berneker՝ *անդ*)։—*Հիւբշ. 359։*

Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ։

ԳԻՒ.—Երև. Տփ. կօնդակ, *Ախց.* կօնտակ, *Ալշ. Մշ.* կօնդագ. *նշանակում է նաև «երկար նամակ կամ այլ գրութիւն» ՆՆխ։*

ՓՈխ.—Ուտ. kondak *նոյն նշանակութեամբ։*

ԿՈՆԴԱԿ, *ի հլ. «նիզակ». մէկ անգամ գործածում է Մագ. գամագու։ (Նորագիւտ բառ)։*

= Յն. κόνδαξ, κόνδακος կամ κόοταξ «շատ սրածայր մի նիզակ»։

Գտաւ ու մեկնեց Մէնէվիշեան ՀԱ, 1911, էջ 389։

ԿՈՆԴՈՐԱՏ *«պաշարակիր»? անստոյգ նշանակութեամբ նորագիւտ բառ, որ երկու անգամ գտնում եմ գործածուած Ուռհ. 63—64 «Թագաւորն Ռոմանոս խորհեցաւ շալկով հաց արկանել ի քաղաքն, և գայիին ի գիշերի վաթսուն հազար հոռոմ կոնդորածք (այսպէս)... կոտորեաց զվաթսուն հազար կոնդորատան»։*

ԿՈՆԻՈՆ *«մոլախինդ խոտը» Ես. քր. Բ. 218. Ոսկ. ես. 424 (կոնիոն, որ է խնդակոթ). Նոնն. 30. գրուած է նաև* կոնիովն *Վեցօր. 88, 89։*

= Յն. κώνειον «մոլեխինդ բոյսը և նրանով պատրաստուած մահաղեղ»։—Հիւբշ. 359։

Ուղիղ մեկնեցին նախ ՀՀԲ և ՆՀԲ։

ԿՈՆՉԵՂ «souchet, *հապպ-իւլ-լազիզ կոչուած պտուղը». իբր նոր բառ ունի Նորայր, Բառ. ֆր. 1156 բ. ծագումը անյայտ է։*

ԿՈՆՈՄ, ԿՈՆՈՄՈՍ *տե՛ս Իկոնոմոս։*

ԿՈՆՔ, *ի, ի–ա հլ. «գոգաւոր մեծ աման, լեկան» ՍԳր. Մծբ. 262. «կոնքաձև յենաբան, բազմոց» Երզ. գ. 1. «գոգաձև կամար» ՍԳր. Վեցօր. «սրսկապան, վարագոյր» Ա. մակ. դ. 38. «մի տեսակ խեցեմորթ» Վեցօր. 140. Եփր. մրգ. 351—2. որից* կոնքաձև *«գոգաւոր» Սարգ. Նշ. եղևկ. Նոր գրականում* կոնք *նշանակում է նաև «իրանի ծայրի ոսկրային մասը,* bassin»։

= Յն. κόγχη «խեցեմորթ, յատկապէս՝ ոսպրէի խեցի, խեցեմորթի պէս գոգաւոր աման, մի տեսակ հեղուկաչափ, արկղ, խղընջաձև կամարաւոր ծածկոց՝ քրիստոնէական եղեկեցիների խորանի վրայ». սրանից են փոխառեալ լտ. concha *«խեցեմորթ, խեցեմորթի կճեպից շինուած աման, չափ, կամար», վրաց.* კონქი კոնքի *«աղեղ, կամար. 2. լական, тазъ» (եթէ ուղղակի հայերէնից չէ՛ փոխառեալ)։—Հիւբշ. էջ 359։*

ՀՀԲ միայն «խեցեմորթ» նշանակութեամբ դնում է յն։ Աւգերեան, Բցտր. չփ. և կշռ. 116 «աման» նշանակութեամբ Թերևս յն. κόγχη։ ՆՀԲ լծ. հյ. գոգ, իբրև «ծոց խոր» և յն. κόγχη։ Տէրվ. Altarm. *69 և Հիւնք. յն. κόγχη։*

ԿՈՆՔԻՂ, *որ և* կոնքել, կոնքիլ, կոնքիլոս *(սեռ. -ի) «ծիրանի ներկը տուող խեցեմորթը» Նոնն. 49. Վրդն. եւ. գրուած է* կոնքիլոս *Տաթև. Հարց, էջ 342, Մտթ. Ներք. 167.* կոնքիլոս *Տաթև. ա.ժ. 384.—յդ. սեռ.* կոնքուլաց *Սիմ. ապար. 143։*

= Յն. κογχύλη, κογχύλιον նոյն նշ. որից փոխառեալ են լտ. conchylium *և վրաց.* კონქიოლა კոնքիլա *հոմանիշները։ Ծագում է* κόγχη *«խեցեմորթ» բառից, որից հյ.* կոնք։—*Հիւբշ. 359։*

Ուղիղ մեկնեցին ՀՀԲ և ՆՀԲ։

ԿՈՆՔԵՒ *«եկեղեցական մի զարդ՝ որ հայրապետը իր ձախ ազդրի վրայ է կրում» Պարգ. 521. Լմբ. մաս. 195. Մաշտ. Սմբ. պատմ. (շար.) էջ 134։ («Կոնքեւը քառակուսի զարդ մըն է ասեղնագործուած կամ ընտիր կերպասէ շինուած, որ երեք անկիւններէն փոքրիկ ծոպեր ունի և չորրորդ անկիւնէն երիզով կկախուի գօտիէն՝ հայրապետին ձախ կողմէն և ձախ ազդրին վրայ». Քննասէր, Ծիսական բառարան, Օրաց. ազգ. հիւանդ. 1906 թ. էջ 154)։*

ՆՀԲ յն. γόνυ «ծունկ» և χεῖρ «ձեռք» բառերից։ Ըստ Քննասէր (անդ) լծ. յն. κονχίβιον *կամ* κονβίβιον *(իմա՛ յն.* ἐγχείριον *«անձեռոց», որ տալիս է հյ.* ենեբր *«անձեռոց» (տե՛ս այս բառը) և*

վրաց. ენქენო ենխեի «քառակուսի դենջակ եպիսկոպոսի և վարդապետի»։ Հացունի, Պատմ. տարազի 384 յն. κογχάριον «խեցեակ»?

ԿՈՇ, ո հլ. «բռունցք». ունի միայն ՓԲ. անստույգ բառ։

ԿՈՇԵԼ. անստույգ բառ. մէկ անգամ ունի Մագ. խա. «Կէտ կարթիւ կորզեալ, կաշկանդեալ կոշեալ կոփեալ կոշկոճահոսն առասանեալ» (Մագ. թղ. 133)։

ՆՀԲ մեկնում է «կօշել, դոշել և կամ իբր կոշկոճել»։

—**ԿՈՇԿՈՃ** «ջարդել, ծեծել, զարնել». արմատ առանձին անգործածական, որից կոշկոճել «քարերով ծեծել, ջարդել, խոշտանդել, յօշոտել» Եր. ժա. 35. Ոսկ. եր. ես., յհ. ա. 43, ա. տիմ. ժե, բ. տիմ. ա. «փշրել, կոտրատել (մեռազեայ մի բան)» Բարուք. գ. 8. **կոշկոճամահ** «չարաչար սպանուած» ՅՀ. կԲ. **կոշկոճիչ** Մեսր. եր. **կոշկոճումն** ՅՀ. կԲ. **քարակոշկոճ** «քարերով ջարդելով սպանուած» Եփր. բ. տիմ. 255. Բուզ. **կոշկոճաճոս** Մագ. թղթ. 133. **բնդվայրակոշկոճ** Ագաթ. (այսպէս պէտք է ուղղել նաև Ոսկ. մ. բ. 22. **բնդվայր կոշկոճ**)։ Այստեղ է պատկանում նաև Պատմ. վր. **կոշկոճեալ** «կարկուտից զարնուած», որ պէտք է ուղղել կոշկոճեալ։

=Կրկնուած է **կոճ** արմատից, իբր *կոճ-կոճ, ուր ճ՝ յաջորդ բաղաձայնի մօտ առամնական մասը կորցնելով՝ դարձել է կոշկոճ. հմմտ. **կսկիծ** <*կիծկիծ՝ կրկնուած կիծ արմատից։ *Կոճել «զարնել, ջարդել, կտրել» պարզականը նոյն է **կոճ** «կոճղ, գերան» բառի հետ. նշանակութեանց զարգացման համար հմմտ. **ձաղկ** «գաւազան» և **ձաղկել** «ծեծել», **ջիճ** «գաւազան» և **ջճել** «ծեծել»։—Նոյն արմատին են կցւում նաև **կոճոտել**, **կոճոտաճալ**, **կոճոպել**, **կոճկցել** հոմանիշները՝ որոնք աճած են զանազան մասնիկներով։

ՆՀԲ «գանել կոճիւք փայտի»։ Այտընեան, Քնն. քերակ. էջ 309 և յետոյ Աճառ. ՀԱ 1899, 233 դնում են կրկնուած **կոճ** արմատից՝ ճ ձայնի տկարացմամբ։

ԿՈՇԿՈՒ «շաքարի կտոր» Մխ. բժշ. 147 «աղի խոշոր կտոր» Վստկ. 186 (Ասպա հանեն և կոշկոճն աղ ի ներք ձգեն. Տա՛ր կոշկոճ աղնձած և շող շող ի ներք ձգեա՛). չունի ՆՀԲ։—Ըստ Նորայր, Բառ. ֆր. nodosité բառի տակ) մհյ. **կոշկոճ** նշանակում է «այտումն կարծր», ինչ որ նախորդների մի նոր առումն է։

ԳԻՒ.—Կենդանի է Ալշ. Մշ. **կօշկոճ**, Պլ. Ր. **գօշգօճ** ևն ձևերով և զանազան առումներով. այսպէս՝ Ալշ. «հողի՝ ցեխի գունտեր», Վն. «հողի կարծր կոշտ», Ոզմ. «սառած՝ կարծրացած ցեխ», ՋԲ. «թանձր կեղտ մարմնի վրայ», Երզ. Կմշ. «վէրքի վրայ գոյացած փառ, բոս, չոր կեղև», Պլ. Ր. (վէրքի մատ մատ ուռեցքները», Բլ. «տաւարի անցած թաց տեղերը չորանալով խորտուփորտ դարձած», որից **կոշկոճիլ** Նոր. «մարմնի վրայ կոշտեր գոյանալ», **կոշկոճիլ** կամ **կոռկշճիլ** Բլ. «հողը խորտուփորտ դառնալ», իսկ Խրբ. **գօրգօշդ** «կոշկոճոտ, կոշկոճներ ունեցող, մատ մատ ուռած (վէրք)»։

ԿՈՇԿՈՌՈՏՈՒՆ տե՛ս Կշկուռ։

ԿՈՇԿՈՃԵԱԼ տե՛ս Կոշկոճ։

ԿՈՇՏ, ո հլ. «գուղձ, հողի կարծր կտոր» Յոբ. է. 5, Կոչ. «մի կունտ կտոր» Վրդն. առակ. 30 (կոշտ մի թարխանայ). «պինդ, կարծր» Սարգ. բ. պետր. գ. էջ 483, 484. Երզն. մտթ. «մարմնի վրայ կոշտ մասեր, բլիթներ, նասրը, մազօլ» ՀՀԲ. «անկիրթ, բիրտ» (վերջին երկուսը արդի գրականում). որից **ֆարակոշտ** Լմբ. մատ. 273. **սևակոշտեալ** (հող) Ագաթ. **կոշտացեալ** «բրտացած» Տաթև. ձմ. ճիթ. ճշ. 227 բ։

ՆՀԲ յիշում է եբր. גּוּשׁ gûš «հողի կոշտ»։ Հիւնք. կուշտ բառից։ Ղափանցեան, Տեղեկ. ինստիտ. 2, 85 և 97 կորդ բառից։ Հյ. կոշտ «բլիթներ» նշանակութեան հետ պատահական նմանութիւն ունին պրս. և քրդ. کوشت gōšt «միս», որից փոխառեալ է արևել. թրք. gōš «միս»։

ԳԻՒ.—Ալշ. Մշ. Ջղ. Սլմ. Վն. **կոշտ**, Ախց. Երև. Գոր. Կր. Ղրբ. Շմ. Տփ. **կօշտ**, Խրբ. Ր. Տիգ. **գօշդ**, Մրղ. **կուշտ**, Ագլ. Ոզմ. **կուշտ**, Սեբ. **գէօշտ**. սրանք գործածական են զանազան նշանակութիւններով. այսպէս՝ Ալշ. Ր. Ոզմ. «հողի գուղձ», Ակն. «հողի, թար-

խանայի ևն կտոր», Մրղ. «պանրի ևն մեծ կտոր», Կր. «սառած հողի հատ կտոր», Ախց. Խրբ. «մարմնի վրայ կոշտ, մազօլ, նասբր», Ագլ. Երև. Դոր. Ղրբ. Ախց. Սեբ. Տիգ. Տփ. «կարծր, անհարթ, կոպիտ»։ Նոր բառեր են կոշտ ու պլոշտ, կոշտ ու կոպիշտ, կոշտել, կոշտացած։

ՓՈԽ.—Վրաց. კუშტი կուշտի «դաժան, խիստ, բարկացած, կոպիտ, կոշտ», კოშტი կոշտի «կարծր մարմին», კოშტი կոշտի «մարմնի վրայ դուրս եկած կոշտ, մազոլ». ունի Գրիշաշվիլի, Զվելի թալաթիս բոհեմա, էջ 252 (հաղորդեց Գ. Ասատուր)։ Գնչ. goš-to «ոտքի վրայ բլիթեն, կոշտ, մազօլ»։

ԿՈՇՐԱՅԵԼ *«ձևացնել, յօրինել, կերպատրել». մէկ անգամ ունի Սեբեր. 134. (Անդրիագործն... յղկէ զունչս և չհուռուին, կոշրայէ զբերանն, այլ չիք բարբառ ի շրթունսըն)։*

Նշ Ր «կշռութեամբ յարմարել»։ Թոռնեան, Հաւընտ. 1891, էջ 281 ուղղում է կշռել «պատշաճել»։ Սագրգեան ՀԱ 1909, 335 և Karst, *Յուշարձան 405 սումեր.* gišur, gušra *«գերան, ատաղձ»։*

⊙ԿՈՉ *«կանչելը, հրաւեր» Ոսկ. երր. բ. Փարպ. որից* կոչել *«կանչել, հրաւիրել. 2. անունը տալ, անուանել» ՍԳր.* կոչելի *Մծբ.* կոչիւն *Մծբ.* կոչուիմ *«հանդէս, խնջոյք» ՍԳր. Ոսկ. յհ. ա. 9.* կոչօնիմ *3հ. կթ.* կոչումն *ՍԳր.* կոչնատէր *Ղկ. ժդ. 12. Ոսկ. յհ. ա. 9.* կոչնական *ՍԳր. Ոսկ. յհ. ա. 9. Ագաթ.* կոչեցեալ *ՍԳր.* կոչնակ *Վանակ. հց. Կանոն.* աճկոչ *Ոսկ. մ. բ. 9.* կոչարան *«եկեղեցի» Տիմոթ. կուզ, էջ 243. «կոչնակ» Նար.* գետնակոչ *Ես. ը. 19, ժթ. 3. Ոսկ. ես.* մեծակոչ *Ոսկ. յհ. ա. 16.* եկակոչ *Ոսկ. մ. բ. 8.* իճնակոչ *Ոսկ. յհ. ա. 34.* դժուարակոչ *Ածաբ. մկրտ.* դիւրակոչելի *Բրս. բարկ.* որովայնակոչ *Ես. ը. 19.* դիւակոչ *Կանոն.* խաոնակոչութիւն *Անյ. պերիարմ.* կոչնագիր *(նոր բառ) ևն։*

=Բնաձայն բառ՝ որ կազմուած է կ պարզ ձայնից, ո յօդակապով և շ ածանցականով. ձևի համար հմմտ. գոչել, *իսկ արմատի համար՝ հմմտ.* կանչել, կնչել, կոչել, կռնչել, կառաչել, կոռոչել, կակաչել *ևն։—Աճ.*

Նշ Ր սանս. կօշա *«ձայն, գոչիւն»։—Հիւբշ.* KZ 23, 29 *լտ.* vocare *«կոչել» բային ցեղակից։* Karolides, Γλ. σύγκρ. 87 *կապադովկ.* κατζεύω *«խօսակցիլ»։ Մառ* ЗВО *5, 317* կանչել *բառից՝ աճ>ո ձայնափոխութեամբ։ Հիւնք.* գոչել *բայից։ Հիւբշ.* Arm. St. *էջ 12 չի ընդունում սանս. գնդ.* vač, *լտ.* vocare *ևն ձևերի համեմատութիւնը, որ ինքն էր առաջարկել։* Bugge KZ 32, 55 *և* Brugm. Grdr². *I 303 շարունակում են ընդունել։ Հիւբշ.* Arm. Gram. *436 միւժում է երկրորդ անգամ։ վերի մեկնութիւնը տալիս է Աճառ. ՀԱ 1899, 203 բ։* Lidén, Arm. Stud. *68 կցում է գոթ.* qiþan *«ասել, խօսիլ, անուանել», հհիւս.* kueða, *հբգ.* quedan *«ասել, խօսիլ» (և լտ.* ar-biter *«վկայ, իրաւաբար»?) բառերին։ Նոյնը ընդունում է* Meillet, Dial. indo-eur, 110, BSL *61, 212՝ իբր* *gʷot-ye- *նախաձևից, ածելացնելով նաև սանս.* gádati *(փխ.* *gátati). վերջին անգամ* Esquisse d'une hist. de la langue latine, *էջ 101։ Նոյնը ընդունում են նաև* Walde, *էջ 55 և* Berneker *296՝ կցելով նաև հսլ.* gatati *«գուշակել»։* Karst, *Յուշարձան 406 սումեր.* kuš *«բղաւել», 428 թաթար.* bug, bugh, bog *«գոչել, բղաւել»։*

ԳԻՒ.—Անկախ ձևով պահուած չէ. կան միայն ածանցներ, ինչպէս՝ կոզնկան *Բղ. Մշ. «Հարսանեկան հրաւիրակ», կոչում Կս. «մեռելաճաշ»,* կոչնակ, ժամկոչ *(Պլ.* գօշնագ, ժամգօց, *Ռ.* գօշնագ, *Տիգ.* գօշնոգ, *Զթ.* գուշնօգ, գուշնոգ *կամ* կուշնօգ, գուշնոգ), *էնկիւրիի թրքախօս հայոց բարբառով՝* köšneg, jamgos *(Բիւր. 1898, էջ 865—866)։*

ԿՈՊ *(յետնաբար ի, ո հլ. գրուած նաև* կոփ*) «աչքի կափարիչը» Ոսկ. ա. կոր. Նիւս. կազմ. Բրս. մրկ. ևն.—*կոփ *գրչութեամբ են Ոսկ. ճառք. 601, 608, ա. տիմ. 110։*

Զուբինով (նաև Բ. տպ. էջ 624) վրաց. კოპი *կոպի «կաշի. 2. բշտիկ, ուռեցք» բառի դէմ է դնում։ Հիւնք.* կափուցանել

«փակել» բայից է հանում։ Bugge KZ 32, 51 կցում է սլ. klep- «փակել», հսլ. po-klopŭ «կափարիչ», բուլգար. klepka, klepač «կոպ», յն. κόλπος «ծիծ, փոր, ծոց, ծալք» բառերին։ Patrubány SA 2, 235 յն. σκέπτω, σκοπός «ծածկոց» բառերի հետ։ Lidén, Arm. Stud. 29 հին ձևը համարելով կոփ՝ գնում է իբրև ձայնդարձը կափ (կափուցանել) արմատի. նշանակութեան տարբերութեան համար հմմտ. լիթ. vókas, գերմ. Augenlied, թրք. qapaq, որոնք նշանակում են «կոպ», բայց ծագում են «ծածկել, փակել» արմատից։

ԳԻՒ.—Սլմ. վն. կոպ, Ագլ. Ախց. երև. կր. Ղրբ. Մրղ. Շմ. Տփ. կօպ, Ալշ. Մշ. կոբ, Ակն. Խրբ. Ննխ. Ռ. Սչ. գօբ, Մկ. Ոզմ. կուպ, Սվեդ. Տիգ. գուբ, Ասլ. գէօ՛բ, գէօ՛*, Սեբ. գէօբ, ինչպէս նաև յոգնակի գործածութեամբ՝ Ջղ. կոպկ և ՋԹ. գիբիյ՛ք, գիբիր՛ք. բոլորն էլ նշանակում են «աչքի կափարիչ». իսկ Պլ. գօբ նշանակում է «աչքի անկիւնները»։

ՓՈԽ.—Ուտ. kop «աչքի կոպ»։

ԿՈՊԱՂ. մէկ անգամ ունի Մխ. դտ. 262 «Պատակակալք արբային. զգեստ է նոցա գրատք դիպակք արծաթաթել և դաղտաղնք ի կոպաղս ոսկիս»։ Ձեռագրում բառիս իբրև բացատրութիւն դրուած է «որ է կիսապուր ներքև հալունին» (իմա՛ ճալաւնին «զգեստների»)։ ԱՒ մեկնում է «կոճակ», բայց թուի թէ աւելի յարմար է մեկնել «զենքը գօտուց կախելու կապը կամ շղթան», իբր =լտ. copula «կապ, շղթայ, չուան»։

Այսպէս է մեկնում Բաստամեան, անդ։

ԿՈՊԱՆԻ «զեգերիլ». գտնւում է միայն հետևեալ տեղերը. «Եւ այլք որ ոչ էին անդր մօտ, երանի ևս տան բազմամբոխ ժողովոցն, որ երթեալ կցորդեալ կոպանեալ (այսպէս Անտոնեան ձեռ. իսկ տպագիրն ունի կոպնեալ սխալ ձևը) կան առ վնասակարսն» Վեցօր. դ. 66. «Հիկէն գոս կոյր կոպանեալ Թափառական» (Կոյրի պէս Թափառական զեգերում ես) Մագ. թղ. 237. «Քանզի կոպանեալ ծխողնի» Մագ. թղ. 238։ Ուրիշ օրինակ չկայ։

Հին բռ. և Բառ. երեմ. էջ 167 մեկնում են «դեգերեալ կամ դան հարեալ». Ռոշքեան «իբրև զկոպ վեր ու վայր բերեալ». Նշխ «Թևրևս կոպճե կամ իբրև զկոպս փակեալ, խցեալ, զաշացու, կուրակերպ, կամ որպէս ոմկ. կպեալ, յարեալ, մածեալ». ՋԹ «որոյ կափուցեալ են կոպքն»։ Տէրվ. Altarm. 38 կոպնեալ «կցուած, յարեալ, միացած» կցում է ճոպան, գուսպ և սանս. gušphita «կապուած» բառերի հետ։ Վերի ձևով մեկնից Նորայր, Բանաս. 1900, էջ 134։ Մէնէվիշեան, Գամագռ. 24 Վեցօրէից կոպնեալը կարդում է կապեալ։

ԿՈՊԱՐ (ի–ա հլ. ըստ ՆՀԲ, բայց առանց վկայութեան) «սահման» Վրդն. պտմ. տպ. Վենետ. էջ 35, Տաթև. ձմ. ծ. և ամ. 657. որից կոպարական Մագ. թղ. 160. կոպարաւոր (նոր բառ)։

ՆՀԲ հանում է կոպ բառից։

ԳԻՒ.—Ղրբ. Ղ. կօ՛պար «ցեխի կամ ձիւնի վրայ բացուած նեղ ճամբայ, որ մարդոց շատ գնալ-գալուց ամրացած է լինում. 2. անտառում նոյնպիսի նեղ ճամբայ, որ շատ անցուդարձ անելուց է լինում ձևացած». սրանից կոպար անել «մէկի տունը շատ յաճախել»։ (Ամատունի, Հայոց բառ ու բան, էջ 358 տալիս է կոպաո, կուպար գաւառական ձևերը)։

ԿՈՊԵՂ «բագին, excelsum sive idolum». գիտէ միայն Ներսէսովիչ, Բառ. լտ.-հյ. 188 աւ։

ԿՈՊԻՃ, ո հլ. «խիճ, քարի կտորտանք» Առակ. ի. 17 (գրուած է կոճոպ Հմմ. առակ.), որից ունինք կոպճուտ «քարոտ, քարքարոտ» Փարպ։

ՓՈԽ.—Վրաց. კოპიჭი կոպիճի «мерзлая земля սառած հող»։

ԿՈՊԻՏ «կոշտ, անհարթ, բիրտ». գործածական է միջին հայերէնում, արդի գրականում և գաւառականներում. այսպէս՝ Անահիտ 15, Մեծոփ. յիշ. էջ 85, Ադամ. 122, Ջքր. սարկ. Գ. 41, Տաթև. հարց. էջ 722. որից կոպտանձ Վրդն. պտմ. կոպտաճալ,

կոպտութիւն *(նոր բառեր)*. Հնից ունինք կոպտաբարանձն *խոր. բ. 7, որի մէջ* -ար *կարող է մասնիկ լինել, եթէ արդիւնք չէ սխալ գրչութեան. (հին տպ. ունի սրա տեղ* կոպտատարազ*)*:

Տ՛ Պաղիլ, *Աւետաբեր 1914, էջ 135* կոպտար-աճձն *հանում է պրս.* kaftar *«հրեշ» բառից. (բայց սա մեր* fաւբար *բառն է)*:

ԳԻՒ.—*Սլմ.* կոպիտ, *Ախց. երև. Տփ.* կօպիտ, *Ալշ. Մշ.* կօբիդ, *Սեբ. Սչ. Տիգ.* գօբիդ, *Ասլ.* գէօբիդ, գէօբի*, *Ագլ.* ֆ՛էօ՛բիբ, *Ոզմ.* կուպէտ, *Թրքախօս հայերից էլ Աւն.* գօրիդ *«կոշտ, բիրտ»*:

ՓՈԽ.—*Թրք.* قوبا qubad *«կոշտ, կոպիտ», որի ռամկական ձևն էլ ունի* Riggs, *էջ 57* խուպաք «rustic, clownish, *ռամկական, անուսում» (իբրև Թրք. բառ). չունի* Будаговъ.—*վրաց.* კობიტი *կոպիտի կամ* ჭოფიტი *ֆոփիտի «կոպիտ շինուած, սև աշխատանքը»,* გაკობიტება *գակոպիտեբա,* გაჭოფიტება *գաֆոփիտեբա «անհարթ կոպիտ ձևով շինել»*:

ԿՈՊՈՐ. *անծանօթ բառ. որից կազմուած է* կոպորական *(այլ ձ.* կոպորակն*) անյայտ բառը՝ Մագ. Թղ. 77 «Կոպորական իմն սղևորեալ կասկածանօք կարծեաց պշնեալ»: (Տե՛ս իմ Հայ. նոր բառեր հին մատ. Բ. 192—3, ուր յիշուած է նաև գռ.* կոպար *«ցեխի կամ ձիւնի վրայ բացուած նեղ ճամբայ» բառը)*:

ԿՈՊՏՈՆ *«կտաւատի թեփը». մէկ անգամ գործածում է Լմբ. առակ. 328 «Լնու զնա կոպտոնով՝ երևելի փառօքս, որ ուրուական է և կոպտոն իմանալոյն. և մատնի վայելողն ի սոյն եղկութիւնն. վա՛յ, ձեզ մեծատանց»: Բառիս իմաստը հաստատում է Տաթև. ամ. 441 «Այս մարմնաւոր և երևելի փառքս և մեծութիւնս որպէս* կոպտունք *և թեփ և աւելորդ են հոգևոր և իմանալի փառացն»*:

ԳԻՒ.—Կոպտոն *Ախք. Բբ. Երզ. Կմշ. «ծեծած և իւղը հանած կտաւատի մնացորդ թեփ, որ տալիս են տաւարին ուտելու, կամ ջրով խառնելով՝ սայլերի առանցքին են քսում». (սրա աւելի հին յիշատակութիւնն ունի Բառ. երեմ. էջ 167. աւում է նաև* կռվտուն *ՀԲուս. § 1488). «2. Կմշ. Բբ. խիւսի նման թանձրացած. 3. Խոջ. բոլորովին չորացրած չամիչի և ընկոյզի ծեծած փոշին՝ որ իբր պտուղ կամ քաղցրեղէն ուտում են» (այս բառն է՝ որ Քաջունի, Դ. 127 դնում է* կոպտոն *«չամիչ»)*: Ոճով աւում է *Տփ.* կոպտոն *արած «կոպիտ ձևով հատաքած»*: Նոյն է նաև *Ախց.* կօպտօն *«ձէթի տականք»*:

Ուննալով միայն առաջին վկայութիւնը՝ բառարանները վարանում են բառիս մեկնութեան մէջ. այսպէս ՆՀԲ մեկնում է «շուք, պայծառութիւն» կամ «թեփ», ԱԲ «թեփ», ՋԲ չի յիշում, Հրաատարակիչը Max *կարծում է թէ «կոպիճ» բառի աղաւաղութիւնն է. իսկ Պիւէզիկճեան (անդ, ծան.)* կոպտոն *մեկնում է «*Pracht, Herrlichkeit, *փառաւորութիւն»: Ինձ յայտնի չէ թէ ո՛րտեղից է հանում* կոպտոն *«փառաւորութիւն» նշանակութիւնը, բայց իմ տուած համեմատութիւնը Տաթև. ամ. 441 կասկած չի թողնում «թեփ» նշանակութեան համար*:

ՓՈԽ.—Վրաց. კობტონი *կոպտոնի «իւղը հանելուց յետոյ պտուղի մնացորդ կեղև», Թրք.* köfton كوفتون *«կոպտոն, որ կովերուն կը կերցնեն» (Արիկեան, Ընդ. բառ. տեղ. Հայ. 1892, էջ 491. չունի* Будаговъ *Բ. 157)*:

ԿՈՌ. *անստոյգ նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Մամբր. բ. տպ. էջ 31 «Հրեշտակն զԱմբակում մարգարէ հացիւքն հիւելովք և բանիւքն հասելովք զբոլոր կերակուրն տարաւ Հասոյց Կոռին յերկիրն Բաբելացւոց»: Ակնարկում է Դան. ժգ. 32—37. Հրատարակիչը համարում է «նշանակիչ գբոյն» և դնում է գլխատառ. միւս խմբագրութեան մէջ, էջ 56, խնդրական բառը պակասում է և աւում է պարզապէս «տարաւ ի Բաբելոն»*:

ԿՈՌ, ո հլ. *«վէգի նման մի ոսկոր». ունի միայն ՀՀԲ, առանց վկայութեան. գտնւում է գաւառականներում. ինչպէս՝ Մկ.* կոռ, *Երև.* կոռան, *Շիր.* կոռա *«եզան, կովի, ցու-*

լի, արջառի և հորթի վէգ» (Ամատ. Հյ. բառ ու բան 359)։

ՓՈԽ.—Վրաց. კორნატი կորնատի «վէգ»։

ԿՈՌ «պարտադիր ձրի աշխատութիւն» Սրկ. 992 թուից (տե՛ս Վիմ. տար. 10), ԺԱ դարից (Վիմ. տար. 27), Մխ. դատ. էջ 412. Ջքր. սարկ. Ա. 46, Բ. 11. Առաք. պատ. 62. որից **կոռավար** «այն արտը՝ որ գիւղացիք ձրի վարում են կալուածատիրոջ համար»։ Արձ. 1237 և 1241 թ. (Վիմ. տար. 80, 83). Օրբել. (հրատ. Շահնազ. Ա. 335, էմ. էջ 157)։—Ըստ Մանանդեան, Տեղեկ. ինստիտ. 1, 39 հնագոյն վկայութիւնն ունի Դուինի կանոնը 645 թ., որ յետոյ աղաւաղուելով դարձել է կռուով։

Ադոնց, Арм. Юстин. 484 պրս. کار kār «գործ» բառից։ Սագրգեան ՀԱ 1909, 335 հյ. կուռ և սումեր. gar «արտ, դաշտային աշխատանք»։ Թիրեաքեան, Բազմ. 1913, 341 թրք. قورو qoru «անտառակ» բառից։ Բառիս շատ նման է հնչում ֆրանս. corvée համանիշը, բայց քան որում հայ բառը յիշուած է արդէն 992 թուից, ուստի չի կարող փոխառեալ լինել նրանից, ինչպէս նաև նրա աղբիւր՝ լտ. corrogata ձևից։

ԳԻՒՏ.—Երև. Ղրբ. կօռ, որից մոռեխակոռ «մորեխները ոչնչացնելու ձրի պարտադիր աշխատանք», կոռուր «կոռի վրայ աշխատող»։

***ԿՈՌԻԱՆԴՐՈՆ** «գինձ». ունի միայն Բառ. երևմ. յաւել. 568, սխալագիր կոդիաճդրոն ձևով։

= Յն. κορίανδρον, որ և κορίαννον, κολίανδρον «գինձ, coriandrum sativum L». ծագում է κόρις «մլուկ, փայտոջիլ» բառից. այսպէս է կոչուած բոյսը՝ իր մլուկանման կծու հոտի պատճառով. համմտ. ֆրանս. գւո. punaise mâle, mâle de la punaise «արու մլուկ»՝ որոնք նշանակում են «գինձ»։ Յունարէնից են փոխառեալ նոյնպէս լտ. coriandrum, ֆրանս. coriandre, գերմ. Koriander ևն (Boisacq 496)։—Աճ.

ԿՈՌՆ «սեխի, ձմերուկի, դդումի, վարունգի կոթ». մէկ անգամ գործածուած է յգ. հյց. կռռունս ձևով՝ Պիտառ. «Որպէս սեխից և նմանեացն ընդ կռռունսն առեալ զջուրն». միևնոյն վկայութիւնը գտնում եմ նաև Պետր. եպս. սիւն. էջ 27։—Իմաստի ճշտութեան համար համմտ. համապատասխան մի վկայութիւն՝ Վահր. երդ. «Որպէս սեխից և նորին նմանեաց ընդ կոթունսն առեալ զջուրն». ուր կոթունսն=կռռունսն։ Ձևի և իմաստի այս շատ մեծ նմանութիւնը կասկածելի պիտի դարձնեն անշուշտ կռռն բառի գոյութիւնը, եթէ չլինէր գւո. կուռ «խաղողի որթի գլխաւոր ճիւղերը՝ որոնց վրայ գտնւում են մի քանի շիւղեր»։

Սագրգեան ՀԱ 1909, 335 հյ. կուռն, կայոին, թրք. girû «ճառ», quyruq «պոչ», սումեր. eqir «յետոյք, ետև»։

ⵔԿՈՌՈՂ «գոչիւն» ԱԲ. որից դառնակոռոչ Գր. երէց. գրուած է նաև կռռոչ ԱԲ, դառնակռռոչ Փարպ։

=Բնաձայն բառ, որ կազմուած է կ պարզ ձայնից՝ ո սաստկականով և չ ածանցիչով. համմտ. կոիչ, կոչել, կռնչել, կառաչել, և բոլորովին նմանօրինակ կազմութեամբ՝ գոռոչել, պռռոչել։—Աճ.

Այս մեկնութիւնս հրատարակուած է նախ ՀԱ 1899, 204 բ։

***ԿՈՌՏԻԿ** «արեղայի վերարկու». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Թլկր. 32 «Հարիւր տարւոյ հաբեղանին՝ որ ճերմակն է դարձեր գեղին, կարէ զկօռտիկ պատարագին ու զքեզ ուզէ առջև խաչին»։ Նոյն բառը գիտէ Բառ. երեմ. էջ 135՝ **ռուռտիկ** ձևով։

=Պրս. کرتا kurta, որ և کرتک kurtak «կարճ զգեստ», որից նաև արաբ. قرطق qurṭaq՝ նոյն նշ. (Կամուս, թրք. թրգմ. Գ. 67), վրաց. ჭურთუკი ṭurṭuḳi՝ նոյն նշ։ Սրանց հետ նոյն են անշուշտ նաև լեհ. kurta, kurtka, ռուս. куртка, չեխ. kurtka, հունգ. kurtka, լիթ. kurta «կարճ զգեստ» համանիշները, որոնք Berneker 650 դնում է լտ. curtus, իգ. curta «կարճ» բառից և ո՛չ թէ թրք. kürte «կարճ զգեստ» բառից, որ նոյնպէս

փոխառեալ է համարում (անծանօթ է պրս. և արաբ. ձևերին)։—Աճ.

Գիմ.—Կենդանի է արդի գաւառականներում (Դվ. Սեբ. Սր. Վն.) կուրտիկ ձևով և «բրդեայ անթև ու կարճ վերնազգեստ» նշանակութեամբ։

ԿՈՍՊՐԻՆ *տե՛ս* Կասպրին։

***ԿՈՍՏ** «մի տեսակ բոյս, կապարասի, լտ. costus» *Բժշ. Վստկ. 100, 121. ունի միայն ՀԲուս. § 1480։*

=*Արաբ.* قسط qust, *որի հետ նոյն է լտ.* costus. *երկուսն էլ փոխառեալ են հնդ.* kušta *սրբազան բոյսի անունից։*

Ուղիղ մեկնեց ՀԲուս. § 1310։

ԿՈՍՏՂ *կամ* **ՈՍՏՂ** «վրան մածուցիկ նիւթ քսած ոստ՝ որով թռչուն են բռնում. *Բրբ.* էօխէ, *Ֆրանս.* gluau». *ունին միայն ՀՀԲ, ՋԲ (իբր նոր բառ) և ՓԲ. հնագոյն յիշատակութիւնը գտնում եմ Վարդան Յունանեանի Ջեռքածութեան մէջ, 1671, էջ 329* ոստղ ձևով։

=*Գաւառականներում ունինք* ոստղ «փայտի վրայի հանգոյցները» *իմաստով, իսկ թէ ի՛նչ է բառասկզբի կ յաւելուածը՝ յայտնի չէ։*

ԿՈՍՏՂԻ «սղոցի ծառը, լտ. ilex» *Ստ. ռոշք. ունի միայն ՀԲուս. § 1481։*

+**ԿՈՎ**, ու հլ. «կով». *որից* կովակեր «շատակեր» *Արծր.* կովկիր «կով կթող» *Կանոն.* կովադիաց «մոզէզ, քարաթռթռշ» *Ղևտ. ժա. 30 (աստում է նաև* կովիդիաց *Մեկն. ղևտ.* կովիդեայ *Արծր. ծագում են դիել, դիեցիկ բառից, ինչպէս որ ունինք հոմանիշ* կովածուծ նոնն. *կամ* կովծուծ *Գաղիան. ձևերը)։* կովաբաձ *(նոր բառ)։*

=*Բնիկ հայ բառ՝ հնխ.* g^{w}ov-*ձևից. համմտ. սանս.* gāus *(ներգ.* gávi), *զնդ.* ԅ𐬎𐬵𐬎 gəuš «եզ, կով», *պրս.* 𐭪𐭠𐭥 gāv «եզ», *պհլ.* gō, *քրդ.* gā «եզ», *աֆղան.* ɣvä, *օսս.* yog, qūg «կով», *բելուճ.* gōk «կով, եզ», *շիղն.* ǰáo (Horn § 888), *հինդուստ.* go «կով», gūrū «կով, եզ», *գնչ.* guri, guruv «եզ», guruvni, gurumni «կով», *յն.* βοῦς *(սեռ.* βοός) «կով, եզ», *դոր.* βῶς «եզ», *լատ.* būs *(սեռ.* bovis) «կով, եզ», *հբգ.* kuo, chuo, *հսաքս.* ko «կով», *հհխս.* kýr, *գերմ.* Kuh «կով», *հոլլ.* koe, *անգլսք.* cū, *անգլ.* cow «կով», *լիթթ.* gûws «կով», *հսլ.* govędo «եզ», *ռուս.* говядо «տաւար», говядина «տաւարի միս», *ուկր.* hov'ádyna «տաւար. 2. միս», *չեխ.* hovado «տաւար. 2. անասուն», *հիսլ.* bó, *կիմբ.* buw «կով» են (Walde 94, Berneker 338, Trautmann 94, Boisacq 130, Kluge, *էջ 284,* Pokorny 1, 696, Ernout-Meillet 111). *սկզբնապէս բառը անխտիր նշանակում էր «տաւար» (կով կամ եզ՝ առանց սեռի խտրութեան). յետոյ, ըստ որում նախիրը առաւելապէս բազկացած է լինում կովերից, սոացաւ «կով» նշանակութիւնը։ Համմտ. նաև* կոգի, գաւազան, գոմէշ։—*Հիւբշ. 461։*

Schröder, Thesaur. *58 գերմ.* Kuh «կով» *դրաւ հայերէնից փոխառեալ։* Klaproth, As. polygl. 102 *և* Mémoires *1, 436 միացրեց վերի հնդեւրոպական ձևերի հետ։ ԳԴ պրս.* gāv: *Ինճիճեան, Հնախ. Գ. 22 ո բնաձայնից։ Ուղիղ են՝* Peterm. 18, Windisch. 8 *են։* Karst, *Յուշարձան 405 սում.* gu «եզ»։ *Յ. Գ. Մ., Պատմ. դրակ. 16 ճապոն.* կայա։

Գիմ.—Ոզմ. վն. կով, *Ալշ. Ախց. Երև. Կր. Մկ. Մշ. Մրդ. Շմ. Ջղ. Սլմ. Տփ.* կօվ, *Ակն. Խրբ. Հմշ. Ննխ. Պլ. Ռ. Սեբ. Սչ. Տիգ.* գօվ, *Ագլ.* կուվ, *Սվեդ.* գուվ, *ՋԲ.* գէօվ, *Ասլ.* գէօ՛վ, *Հճ.* գէվ, *Ղրբ. Մժ.* կավ։ *Նոր բառեր են* աճկով, կովագիգիկ, կովատէր, կովացնծուկ, կովգլուխ, կովիկ, կովլակ, կովլիաճոս, կովծծուկ, կովկրիկ, կովնատ, կովուճակատիկ։

Փոխ.—Թրք. գւս. كولك külek «մէջը կաթ կթելու աման» *(Կամուս, Թրք. Թրգմ. Գ. 699),* բոշ. կովլաղ «մէջը կաթ կթելու դոյլ» (Finck, Die spr. der Arm. Zigeuner ЗАН *1907, 112),* երկուսն էլ փոխառեալ են գւս. կովլակ ձևից, ուս. kovlik «չիմար, տխմար»։

***ԿՈՎԱ.** *Նորագիւտ բառ, որ մէկ անգամ գործածել է Դրնդ. 541 «Մէկ կովա և մին իսպիտակ փակեղ ունելով ի ներքոյ անթին». այս բառը հրատարակիչ Մ. Վ. Նշանեան, էջ 624 յանկում մեկնում է* կեավէ «դեղնագոյն». *այսպիսի մի ձև չեմ գտած բառարաններում և կարծում էլ եմ որ կո-*

վա չունի այսպիսի նշանակութիւն, այլ նշանակում է պարզապէս «կապայ», ինչպէս որ մի քիչ ցածրում էլ գրում է «և հանեալ զկապայն և զգլխոյ գտին». այսպէսով կովա լինում է՝

=քրդ. kova «կապայ», որի մասին տե՛ս ընդարձակ տե՛ս կապայ բառի տակ։—Աճ.

*ԿՈՎՂՈՍ «մեծ արձան» Նոնն. 24 (այլ ձ. կողղոս). «Այլ յաղագս կովղոսի, որ յԵւրոպոնէ վերակայեալ՝ ասի թէ մեծագոյն է անդրիանդն և սքանչման արժանի»։

=Յն. κολοσσός «անհնթեթ հսկայ արձան», որից նաև ֆրանս. colosse ևն։

Ուղիղ մեկնեց Մանանդեան, անդ։

ԿՈՎՐՈՒՃ «հացի փայտ, մի տեսակ թուփ է» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 1489, որ և կաւվրուջ ՀԲուս. § 1377։

*ԿՈՏԱԿ «փոքր, կարճահասակ» Բուզ. ա. 5 (իբր մականուն գործածուած Մեծն Խոսրովի թոռան՝ Խոսրով Բ թագաւորին). ուրիշ վկայութիւն չունինք։ (Թովմա Արծրունին նոյն թագաւորին անուանում է Խոսրով Փոքր)։ Տե՛ս և կոտիկ։

=Պհլ. kōtak «մանուկ, երախայ, փոքր» բառից փոխառեալ. հմմտ. նաև գնդ. kutaka- «փոքրիկ, պստիկ», պրս. کودک kōdak «մանկիկ, փոքր տղայ», որոնցից փոխառեալ են նաև թրք. قودوق quduq «րուռակ», արաբ. کوتی kūtī «կարճահասակ մարդ» (Կամուս, թրք. թրգմ. Ա. 323) (Horn § 871)։—Հիւբշ. 173։

ՆՀՔ միացնում է ռմկ. fnpnա, fիpէկ, fէօչէկ բառերի հետ և սրանցից հեռացնելով՝ զուր տեղը մեկնում է «ձագ, կորիւն, լակոտ, կոզուն»։ Հիւնք. պրս. kōdak և թրք. küčük «փոքր», որով ինքն է առաջին ուղիղ մեկնիչը։ Müller WZKM 8, 97 պրս. کوتاه kūtāh «կարճ» բառի հետ։ Վերի ձևով Հիւբշ. Pers. Stud. էջ 89։ Գաբիկեան, Հոդդար 1910, թ. 1 թրք. քիչիք, հյ. fուշակ, զուռ. կէօտէկ, կուճուկ։

ԳԻՒ.—Սեբ. գէօղէ՝գ «կլորիկ կարճլիկ մարդ, պուչաս հաւ». վերջին իմաստը ցոյց է տալիս՝ որ այստեղ է պատկանում նաև կոտակ «կոթ խորտակեալ բիւոյ», որ գիտէ միայն Քաջունի, հմ. Գ. էջ 128։

*ԿՈՏԻԿ «անասունի ձագ». նորագիւտ բառ, որ մի անգամ գտնում եմ գործածուած Բար. էջ 133 (ձեռագրական ընթերցուածների համեմատ)։

=Նոյն է նախորդի հետ և փոխառեալ իրանականից. իմաստի տարբերութեան համար հմմտ. թրք. قودوق quduq «րուռակ»։—Աճ.

ԳԻՒ.—Նոյն է կոտիկ, կուտիկ «շան ձագ, լակոտ» Ախց. Ղրբ. ևն։

ԿՈՏԻԿ «անծանօթ մի բոյս, որ աւտամի ցաւին իբր դեղ է գործածւում» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 1495։

ԿՈՏԻՄՆ (սեռ. -ման) կամ կոտիմ, կոտեմ «կծու մի բանջար է. լտ. nasturtium» Բժշ. Գաղիան. Վստկ. 174. որից ջրկոտեմ «լտ. sisymbrium nasturtium» Բժշ. արդի գրականում ընդունուած ձևն է միայն կոտեմ։—Ըստ Տիրացուեան, Contributo § 148 կոտեմ=cardamine amara L., ջրկոտեմ=sisymbrium sophia L. § 151, շնկոտեմ =thlaspi arvense L. § 160:

Tomaschek, Die alten Thraker II 31—2 սանս. kardama, յն. κάρδαμον, Դակիացոց κάρδαμα բուսանունների հետ։

ԳԻՒ.—Ջղ. Սլմ. կոտեմ, Ախց. Կր. կօտէմ. Խրբ. Սվեդ. գօդէմ, Երև. Տփ. կօտիմ, Համշ. (ջր) գօդիմ, Շմ. կօտմմ, Ասլ. գէօդէմ, Գոր. Ղրբ. կո՛ւտէմ(ը), կի՛տէմ(ը), Ագլ. կ՚ո՛տիմ, Հճ. գիդիմ, Ալշ. Մշ. կօդմուգ.—Նոյնից է երևում նաև կոտմնաուկ «ջրկոտեմի նման մի բոյս»։

ՓՈԽ.—Արդի կապադովկացոց լեզուով kótimo «կոտեմ» (Karolides, Γλ. σγχρ. 89 և 178)։

ԿՈՏԻՆԴ. նշանակութիւնն անյայտ է. մէկ անգամ ունի Բուզ. ե. 24 «Դեղ մահու ընդ կոտինդն խառնեալ». (ըստ Նորայր ՀԱ 1921, 335 ճառընտրի մէջ նոյն բառը գրուած է կոճգիճ).—յայտնի երևում է որ կոտինդը անվնաս մի ուտելիք է, որի հետ խառնել է թոյնը։

ՆՀՔ ձայնական նմանութիւնից միայն հեռացնելով՝ դնում է «նոյն կար-

ծեցեալ ընդ յն. κότινος որ է հատ խաղողոյ կամ չամչի»։ Բայց այս բառը նշանակում է «վայրի ձիթենի». և սրա համար ՀԲուս. § 1496 համարում է «վայրի ձիթենւոյ կուտ», իսկ ԱՔ «խմելու աման, գաւաթ». Նորայր ՀԱ 1921, 335 կարդալով կոնդիճա՝ կցում է յն. κόνδυ «մեծ բաժակ» բառի հետ և դնում է պրս. իրև «բաժակ»։ Նոյնպէս և Հացունի, ճաշևր 104 համարում է «բաժակ»։ Այս մեկնութիւնը չի կարող լինել ուղիղ, որովհետև վկայութեան մէջ ասուած չէ ի կոտիճին, այլ ընդ կոտիճին։

ԿՈՏՐՏ «փականքի մասերից մէկն է». Նորադիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Ագամ. 146—7 «Հաւատաքն է նիւթ այն բանալեաց, իսկ յոյսն ձև որ զայն զուգեաց. սէրն կոտիտ որ զփակն եբաց»։

ԳԻՒ.—Կոտիտ կամ կոտոտ երև. «փայտէ փականքի մէջ շինուած մանր առարկաները»։

*ԿՈՏԻԻՂ «հեղանիւթի կամ ցամաքեղէնի մի չափ՝ որ առնում է կէս բսեան» Շիր. էջ 30։

=Յն. κοτύλη (որ և κότυλος) «կէս բսեանոց հեղուկաչափ, թաս, սկաւառակ» (բուն նշանակութիւնն է «փոս, խոռոչ»)։ Նոյնից են փոխառեալ նաև լտ. cotyla, cotula, cotylus, իտալ. ciotola, բուլգար. kutel, սերբ. kütao, որոնք նշանակում են «ցամաքեղէնի չափ կամ գինու բաժակ, շերեփ են» (Berneker 653):—Հիւբշ. 359։

Ուղիղ մեկնից նախ Աւգերեան, Բցտր. չփ. և կշռ. 117, յետոյ Պատկ. Շիր. էջ 30։

ՓՈԽ.—Հայերէն տառադարձութեան միջոցո՞վ է արդեօք վրաց. კოტ3ილი կոտվիլի «մի տեսակ չափ», ինչպէս ցոյց է տալիս վ, որ կարող է յառաջացած լինել հյ. ւ-ից։

ԿՈՏՄԿԵԱՆ, որ և կոտմնկէ, կոմնկէ «արծուաքիթ, արծուունդն» Եւս. քր. ա. 353, Ոսկ. գաղ։

*ԿՈՏՈՌ «հոտոմ սպանախ, թաղթ կամ թայլ, ֆր. arroche, լտ. atriplex» Բժշկ. ուին միայն ՀԲուս. § 1499 և Նորայր, Բառ. ֆր. 91 աւ։

=Արաբ. قطف qataf՝ նոյն նշ. (տե՛ս Կամուս, թրք. թրգմ. Բ. 827)։—Աճ.

*ԿՈՏՈՇ «եղջիւր» (չունի ՆՀԲ) Վստկ. 208, 212, 224 «Ընդ բերանն ի վայր ած կօտոշով. Ընդ բերանն ի վայր ածես կոտոշով՝ օգտէ. Կոտոշով ընդ փողքն ի վայր ած»։

=Անշուշտ փոխառեալ է յետնաբար, բայց բուն մայր ձևր յայտնի չէ. համմտ. պրս. گداش gadaš «եղջիւր» (ընթերցումը տարբեր է ԳԴ այս ձևով՝ բայց ըստ գրութեան՝ կարելի էր նաև կարդալ kudāš), վրաց. კოდოში կոտոշի «արիւն առնելու եղջիւր», թրք. قودوش qodoš «կաւատ» (Աբիխեան, Ընդ. բառ. տճկ.-հյ. 1892, էջ 459. չունի Будаговъ)։—Աճ.

Վրաց. բառի հետ համեմատեց Մառ, Крит. и мелкія ст. 1903 թ. էջ 26։ Պրս. թրք. (և քրդ. koloč) բառերի հետ համեմատ. և եմ Գաւառական բառ. էջ 597 բ։

ԳԻՒ.—Վն. կուտոշ, Մշ. գօդօշ, ՀՃ. գէդէշ. գտնում է նաև ուրիշ շատ բարբառներում՝ զանազան նշանակութիւններով (տե՛ս իմ Գաւառական բառ.)։

ԿՈՏՈՐ, ո հլ. «կտոր, պատառ» ՍԳր. Ոսկ. Ես. և մ. բ. 28. Եւս. քր. որից կոտորել «կտրատել, ջարդել, սպանել (բազմութիւնը)» ՍԳր. Եւս. պատ. «մասերի բաժանել» Եզն. Վեցօր. մեծամեծս կոտորել «մեծաբանել, մեծ մեծ ջարդել» Եզն. Սեբեր. կոտորատել Շիր. 47, Փիլ. կոտորատիլ Շիր. 44, կոտորոտել Նորագիւտ Բ. մնաց. ժե. 16. Նեմես. բն. էջ 45. կոտորած «ջարդ» ՍԳր. Ագաթ. Եւս. պատ. կոտորիչ ՍԳր. Սեբեր. կոտորուած Ոսկ. Ես. կոտորումն ՍԳր. կարթակոտոր ՍԳր. սանձակոտոր Եւս. պատ. կապակոտոր Բուզ. լատակոտոր Վեցօր. հատակոտոր Ոսկ. Ես. գաղ. մ. ա. 1. տղայակոտոր Իմ. ժա. 8. ծայրակոտոր Ոսկ. գաղ. ևն։ Նոյն արմատի զանազան ձայնդարձներըն են ներկայացնում **կտուր**, ո հլ. «խաշներից կտրուած բուրդ կամ նրանք կտրելու գործողութիւնը» (անեղական) ՍԳր. Վկ. արև. 154. «կտոր» Վկ. արև. 154 (Կտրեցին

արարին վեց մասն և եդին զկտուրսն ի վեց կողով. համմտ. իմ Հյ. նոր բառեր հին մատ. Բ. էջ 7). «ընդհատ ընդհատ, ընդմիջուած» Շիր. 34. կթ. «ճեղքուածք» Լմբ. սղ. որից կտրել «հատանել, կտրել» ՍԳր. «խաշների բուրդը կամ մարդու մազ կտրել, խուզել» ՍԳր. «ներքինացնել, այրուքիւնը ջնջել» Եգն. Կանոն. կտրոց «մկրատ, աքցան, զմեխի» Առակ. լ. 14, Եփր. Վկ. տրև. 29. կտրոցիկ «մկրատ» (նորագիւտ բառ) Տաթև. ամ. 175. կտրօն Յոբ. ժհ. 32. կտրիչ Ես. ժգ. 7. կտրած վկայր. կտրատել Ճառընտ. միջակտուր Խոր. Ասող. խոտորկուռ Բուզ. ծայրակտուր Դատ. ա. 7. Ոսկ. Ես. կիսակտուր Սահմ. Խոր. կտրճակտուր Փարպ. մօտակտուր Գղ. ի. 12. շրջակտուր Ոսկ. յհ. բ. 30. հատակտուր 34. կթ. բացակտուր Պատմ. ազէքս. երկակտուր Եւկղիդ. երկթակտուրիւն Խոր. աշխ. կտրակտճապէս, կտրակտճօրէն (նոր բառեր) են. **կտր** (կայ միայն գաւառականներում և նոր գրականում), որից մսակտր «յօշ յօշ պատառոտել» Ճառընտ. **կտր**, կայ գաւառականների մէջ, որից կտրտուն «չարդած» Վրդն. ծն.—կայ և **կտիր** ձևը, որ գտնւում է միայն հատուկ բառի մէջ, որ ունի Մծբ. բայց սրա դէմ Փիլ. մի քանի անգամ հանում է հատուկճիր. օր. Փիլ. եր. էջ 486, յովբն. 610 (երիցս) «իսկ որ հատուկճիր և յանդուգն է և խիստ է առ միանգամայն հատանել»։

Հներից Կիր. պատ. էջ 48 յիշում է Խոսրով Սիւնեաց եպիսկոպոսի տուգաբանութիւնը՝ իբր կտրիճ «մազերը կտրած» ինչպէս որ պատանի «մազերը պատած»։ Peterm. 21, 30 կտրել = սանս. kṛt «կտրել»։ Müller SWAW 42, 250 կտրել և կտրոց համեմատում է պրս. کارد kard «դանակ» բառի հետ։ Հիւբշ. ZDMG 30, 139 կտրել գնում է սանս. kṛt ձևի հետ, սակայն Arm. Stud. էջ 36, ինչպէս նաև Arm. Gram. 461 մերժում է թէ՛ սանս. գնդ. kart «կտրել», գնդ. karəta «դանակ» և թէ՛ յն. κείρω «կտրել», κουρά «կտուրք», գերմ. scheeren (արմատը sker)։ Տէրվ. Նախալ. 71 հնխ. kud «կտրել, կտտրել» արմատից է գնում Հյ. կտուր, կտտր, կտրել, կտտրել, խոտ, խոտել, խոտան, խուն, խոնարհ, լտ. cudere, հրգ. hauen «կտտրել, կտրել», heu «խոտ», գոթ. huns «խոնարհ», հսլ. kovati «կտրել». առաջին հայ ձևերի բուն արմատը գնում է *կուտ, միւսները սրա երկրորդական ku, kun ձևերից։ Bugge KZ 32, 49 հսլ. kotora «կռիւ», հրգ. hadara «ցընցոտի», գերմ. Hader «բուրջ, կռիւ» բառերի հետ ցեղակից։ Հիւնք. բոլորն էլ կատարել բայից։ Zupitza, Die Germ. guttur. 1896, էջ 103 հայերէնի միջոցով հսլ. kotora, հրգ. hadara, գերմ. Hader, հրգ. hadu «կռիւ», հիռլ. cath «կռիւ» են խմբին է ուզում միացնել նաև՝ լտ. cento «շորի կտոր», յն. κέντρον «ցնցոտի», սանս. kanthā «կարկատած շոր» բառախումբը, որ ծագում է հնխ. qentho- «ցնցոտի» ձևից։ Scheftelowitz BB 28, 304 կտտր = լիթ. kandu «կծել», յն. κνώδων «կլոր» են, իսկ կատուր՝ անդ, էջ 313 = սանս. kṣura, յն. ξυρόν «ածելի»։ Pedersen, Հայ. դր. լեզ. 76 մերժում է Bugge-ի համեմատութիւնը (որովհետև հնխ. k չէ՛ հյ. կ) և միացնում է սանս. gada «հիւանդութիւն», լիթ. gendù «ապականել» բառերի հետ։ Ակս հիման վրայ Zupitza-յի համեմատութիւնը մերժում են Walde 152, Boisacq 435, Berneker 588, Pokorny 1, 339 և 403։ Karst, Յուշարձան 405 սումեր. gur «ճեղքել», 414 մոնղոլ. kitu, թունգուզ. koto, ճապոն. katan «դանակ», 416 մոնղոլ. xadu «կտրել», թունգուզ. kadur «մանգաղ», թրք. xatir «գերանդի», նաև մոնղոլ. xagul, բուրեաթ. xogol, kukul «կտտրել», 429 թաթար. kir (տճկ. qər-maq) «կտտրել»։

Գիւմ.—1. Ալմ. կտտրել, Տփ. կտտ՛րիլ, Երև. Ղրբ. կտտ՛րէլ, Շմ. կտտրիլ, Ջղ. կատտրել, Ագլ. կո՛ւտտր «կտտր, կտտրը», կտա՛րիլ «կտրտել, կտտրել».—2. Ոզմ. կտտր «կտտր», իսկ բայական ձևով՝ Վն. կտրել, Գոր.

Կր. Ղրբ. կտրէլ, *Ագլ. Մկ. Շմ. Ոզմ. Տփ.* կտրիլ, *Ալշ. Մշ.* կդրեվ, *Երև.* կդրէլ, *Սչ.* գդրել, *Պլ. Տիգ.* գդրէլ, *Սվեդ.* գդրիլ (*նշանակում է թէ՛ «կտրել» և թէ՛ «կտրիլ»*), *ԶԹ.* գը՛դրիլ, *Համշ.* գդրուշ, *Ջղ.* կտռել, *Ախց.* կտռէլ, *Ննխ.* գդռել, *Կր.* կռռէլ, *Սլմ.* կռել, *Մրզ.* կռէլ, *Պրտ.* գըյրէլ, *Ռ.* գըրյէլ, *Ասլ.* գրյէ՛լ, *Սեբ.* գըյյէլ, *Ակն.* գըյէլ.—*3. Ջղ. Սլմ. Վն.* կտռր, *Ալշ. Մշ.* կդռր, *Ախց. Ագլ. Կր. Շմ.* կռօր, *Ակն. Խրբ. Պլ. Ռ. Սչ.* գդօր, *Ննխ.* գդօր, գռւդօր, *Մկ. Տփ.* կտռւր, *Տիգ.* գդռւր, *Սեբ.* գդէօր, *Ասլ.* գդէօ՛ր, *ԶԹ.* գէօղիյ, գէօղիւր, *Մրզ.* կռւռիր, *Հճ.* գռդոյ.—*4. Ջղ.* կտռէլ, *Գոր. Ղրբ.* կօ՛ռէլ, *Տփ.* կօ՛տրիլ, *Ալշ. Մշ.* կօդրել, *Սչ.* գօդրել, *Պլ.* գօդրէլ, *Մկ.* կռւռրիլ, *Ախց.* կօռռէլ, *Մրզ.* կօռէլ, *Պրտ.* գօյրէլ, *Խրբ.* գօյրիլ, *Ասլ.* գէօրյէլ, *Սեբ.* գօյյէլ, *Ակն.* գօյէլ. *մանաւանդ համմտ. Նբ.* կռտր «*սիրտր կտրած*», *Երև. Ղրբ.* կօռր (*ընկնել*), *Տփ.* կռւռր (*ննդնիլ*), *Ախց.* կօռռ (*ընկնիլ*) «*սնանկանալ*»։—*Հճ.* գռռրել *նշանակում է թէ՛ «կտրել» և թէ՛ «կտրիլ»*։—*Նոր բառեր են* կտռռաճճ, կտռռուիլ, կտռռաել, կտռռռուիլ, կտռռել, աճկտռռում, աճկտռռում, աճկտռռել, կտռռռուածճ, կտռռռուիս, կտռռակ, կտռռաճ, կտռռաճալ, կտռռաաել, կտռռաուիլ, կտռռացճել, կտռռիչճ, կտռռուբիւճ, կտռռումուբիւճ, կտռռուկ, կտռռուստ, կտռռռուճ, կտռռումաճ, կտռռիճ, կտռռիճ (*համմտ.* կտռռիճ «*երիտասարդ*» *Անսիգք 51, Սմբ. պատմ. 108, ԶԹ.* գը՛դռաջ), կտռռուաճճ, կտռռակաճ, կտռռօճ, կտռռեկտցաճճ, կտռռցիկ, կտռռուկ, կտռռուճի, կտռռուճ, կտռռուկ *են։ Բրքախօս հայոց մէջ ունինք Առն.* gədor «*կտոր*», gəddellemeq «*կտրիլ*» (*ոճով ասում են* aqləm gəddellémeyor «*խելքս չի կտրում*»), *Էնկ.* gədor «*դրամ*» (*այս փոխաբերութեան համար համմտ. Ֆրանս.* pièce «*կտոր*» *և* «*դրամ*», *պրս.* پارا pāra «*կտոր*» *և Թրք.* پارا para «*դրամ*»)։ *Կրճատ ձևով ունինք Ննխ.* մեդօմը «*մի քիչ*» (<*մէկ կտոր մը*)։

Փոխ.—Վրաց. ჯოტორი კოտորի «*հացի կտոր, բեկոր*» (*համմտ. Կոտորոյ միով հացի. Բարձին զնշխարս կոտորոցն. ՄԳր. Առ կոտորոյ հացի. Ոսկ.*), ჯუტრი კოտրի «*անանկութիւն*» (*համմտ. Երև. Ղրբ. Ախց. Տփ.* կոտր ընկնել «*սնանկանալ*»), *վրաց. գւռ.* ჯოტორი კოտորի «*փայտէ կլոր կարկատան*» (*ըստ* Беридзе, Груз. глосс. по имер, и рач'ин говор. 1912, *էջ* 24, *իմաստի համար համմտ. հյ.* կտոր գցել «*կարկատել*», *ֆրանս.* rapiécer, rapiéceter «*կարկատել*»՝ pièce «*կտոր*» *բառից*). *բաց.* kotor «*կտոր*» (*տե՛ս Մառ,* Тексты и раз. по Кавк. филол. *1(1925), էջ 116*), *թուշ.* ჯოტორ კოտոռ «*հաց, կարկանդակ*», *գնշ.* kotor «*կտոր. 2. մի քիչ ժամանակ*», *օր.* bešen kotor «*նստի՛ր մի քիչ*», kotor avghin «*մի կտոր մեղր*», činghias e. čores, kotór kotor «*գողին կտոր կտոր արեց*», čin yek baró kotor «*մի մեծկակ կտոր*».—*գնշուեբէնի «մի քիչ ժամանակ» նշանակութիւնն ունին նաև մեր բարբառները. այսպէս՝ Պլ.* նստէ՛ կտոռ մը, կտոռիկ մը նստէ՛։ (Müller SWAW *66, 278 գնշ. բառը դնում է հայերէնից, իսկ* Paspati *զուր է աշխատում հանել սանս.* krt «*կտրիլ*» *արմատից*)։—*Բոլորովին անճիշտ է* Patrubány *ՀԱ 1908, 277, որ հունգ.* gödör «*փոս, խորք*» *փոխառեալ է դնում հյ.* կտոռ *բառից։*

ԿՈՏՈՐ, *ի–ա հլ.* «*պալատական մի պաշտօնեայ*». *մէկ անգամ ունի Մխ. դաս. էջ 268* «*Իսկ ի կոտորացն լինին ակտարք, որ է նշանագիրք*»։

Բաստամեան (անդ) լտ. cautor «*պահապան, հսկող*» *բառից։*

ԿՈՏՈՐՈՍ «*կուղբ, ջրշուն*». *նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Բար. 161* «*Է էրե՛ ինչ, որ կոչի կոտորոս պէ, որ է կուղբ*»։

Համմտ. Թրք. قوندوز qunduz «*կուղբ*»։ *Անշուշտ որևէ յն. ձևից է, որին ապացոյց է -ոս մասնիկը։*

ԿՈՏՈՒԱԼ *տե՛ս Կայտիս։*

ԿՈՏՐԽԻ «*անծանօթ մի բոյս է*» *Բժշ. ունի միայն ՀԲուս. §§ 3343 և 2720։*

—**ԿՈՐ** «*կարիճ*» *Շիր. էջ 70, 72 (բայց այս մասերը յետին յաւելուած են թուում). Վստկ. 8, 78, 166. Բանք աղ. 188. որից կորահար «կարիճից խայթուած» Վստկ. 165։*

=Հյ. կոր «ծուռ» բառն է. այսպէս է կոչուած այս միջատը թարթուով՝ խուսափելով տալ բուն անունը. այսպէս են նաև Ղրբ. կըորնա՛ի «կեռագի, կեռպոչ» (կեռ+ագի բառերից) և պրս. کژدم každum «կարիճ», կազմուած ژ kaž «ծուռ» և دم dum «պոչ» բառերից. (Թարգմանի թիւրատուութ. և այս՝ վասն ծուռ ունելոյ նորա զտուութ իւր հանապազ ԳԴ).—բառիս պհլ. ձևն է. každum, որ Nyberg, Hilfsb 2, 80 մեկնում է պրս. gaz(īdan) «խայթել»+dum «պոչ» բառերով:—Աճ.

Սագրկեան ՀԱ 1909, 335 և Karst, Յուշարձան 404 կարիճ բառի հետ սումեր gir «կարիճ»:

ԳԻՒ.—խրբ. qor, ՀԹ. գիւղ, գիւր, ՀՃ. գոյ. նոյն «կոր» բառն ունին նաև Ակն. Արբ. Սալ. Մրզ. նկատելի է յատկապէս Զրս. գօրշ ձևը:

ԿՈՐ «ծուռ, ծռած» Գ. Թագ. ի. 11. Վեցօր. որից ի կոր «ամօթահար, կորագլուխ» Ոսկ. մ. ա. 5, 9 և ես. Մծբ. կոր ի գլուխ Ողբ. ա. 8. Ոսկ. յհ. բ. 20. կորագլուխ Ղևոնդ. կորակոր ՍԳր. կոր ի կոր Նար. Ոսկիփ. կորակրաուց Վեցօր. կորաճալ ՍԳր. Ոսկ. ես. կորաճի «ամօթահար մնալը» Բ. մակ. Թ. 1. ես. պամ. Մծբ. եփր. յոբ. (Հրտր. ՀԱ 1912, 670). կորացուցանել ՍԳր. կորնթարդ Սահմ. («գնիթ» իմաստով է գործածուած Տաթև. ձմ. ճլդ. և ամ. 335. Իմաստասէրքն սկիզբն աւուրն զկէսօրն եդին, յորում արեգակն ի կորնթարդն երկնից ելեալ թագաւորէ. Արտաքինքն զմէջ աւուրն ասեն սկիզբն, յորում ժամու արեգակն ի կորնթարդն երկնից էլանէ). ակնկոր Ոսկ. մ. բ. 15, էջ 600 (տպ. ակնկոյր), ակնկորել Գ. Թագ. իա. 29. Ոսկ. կամակոր ՍԳր. Ոսկ. եզն. գլխակորիլ Ոսկ յհ. ա. 16. կորամամակ (նոր բառ) են: Այս արմատի միւս ձևերն են կեռ «ծուռ, կոր. 2. ճանկ» (տե՛ս առանձին) և կռո «ծուռ, կոր», որ երկուսի միջին օղակըն է և գտնուում է միայն գաւառականների մէջ (տե՛ս տակը):

Klaproth, Asia polygl. 102 գերմ. quer: ՆՀԲ լծ. լտ. curvus, ռուս. кривой, յն. γυρός, κυρτός, Թրք. egri, eyri, ռմկ. կեռ: Տէրվ. Altarm. 31, ծան 1 կոր=լտ. curvus: Canini, Et. étym. 133 անգսք. kerr «կոր»: Հիւնք. յն. κορώνη, γυρῶ, լտ. curvus: 3. Արշէգ, Բազմ. 1897, 52 ոլ–որ, բոլ–որ, ճոլ–ոլ բառերի հետ հնխ. gal, gul «կլոր լինել» և սեմ. gal «շրջան առնուլ» արմատից. համմտ. յն. κύλλος «կոր», լտ. collis և հյ. գլել, գլան: Müller, WZKM 10, 354 յն. κυρτός, լտ. curvus խմբի հետ, որ Հիւբշ. 520 ընդունում է միայն այն պայմանով՝ որ հնխ. q ձայնը o-ի մոտ դարձած լինի կ: Յակոբեան, Բիւր. 1899, 600 պրաբ. ǯʸʒ zar', zur', հյ. ծուռ և բիւր: Scheftelowitz BB 28, 304 յն. κορωνός են բառերի ընտանիքին:—Այս ընտանիքի անդամներն են յն. κορώνη «ծայրը ծռած՝ կեռ մարմին», κορωνός «ծռած, կոր», κορωνίς «ծայրը կեռ», κορωνιάω «կռանալ, կորանալ», κυρτός «կոր, ծռած, կորացեալ», լտ. curvus «կոր, ծուռ», ալբան. kurús «ծռել, կորացնել», լիթ. kreĩvas «շեղ», հսլ. krivŭ «ծուռ», հիռլ. cruinȣ «կլոր» են, որոնք բխում են հնխ. qer-, qor- արմատից: Lidén, Arm. Stud. էջ 111 մերժելով սրանք, որ պիտի տային հյ. որ ձևը, կցում է յն. γυρός «ծուռ, կլոր» են բառերին (որ ընդունում է Walde 216): Սակայն ուրիշ հնդևրոպագէտներ սրա նախաձայն γ համարում են <gʲ և ո՛չ թէ gʷ, որով նրա համապատասխանը կլինի ծուռ: (Boisacq 159, 500 սոյն յն. ձևի դէմ դնում է թէ՛ ծուռ և թէ կոր, իսկ curvus=կոր մերժում է): Մ. Ս. Դաւիթ-Բէկ, Յուշարձան 398 ընդունում է curvus են ընտանիքի համեմատութիւնը: Karst, Յուշարձան 428 ԹՊր. չաղաթ. bur-maq «գալարել», bura «մրրիկ», ալթայ. pur «դարձնել», օսմ. böyrü «ծուռումուռ»: Պատահական նմանութիւն ունի Քերևս հսլ. gura, սերբ. güra, gurav «կուզ, կորացած», որի վրայ տե՛ս Berneker

363: Scheftelowitz KZ *53(1925), 249 և 54(1927), 229* դարձնալ դնում է յն. κορώνός «կոր», միջ. ceair «ծուռ», պամիր. kard «կորացեալ»։

Գիմ.—Կայ միայն կոռ ձևով՝ որից կոռ *Մկ. Ալմ. Վն.* «կոր, ծայրը ծռած, կեռ, կոր գլխով», *Մկ. Վն.* «կորացած ծայրով հովուական գաւազան», *Մշ. Վն.* «ծայրը կեռ ցուպ», կոռ-մոռ գալ *Վն.* «ծռմռկուիլ», կոռագլուխ *Վն.* «խարդախ, խաբեբայ», կոռակոռոշ *Վն.* «ծուռ եղջիւրներով», կոռացնել *երև.* «ծռել», կոռել *Մկ. Վն.* «որևէ բանի ծայրը կեռ շինել», կոռուիլ *Վն.* «ծռուիլ, կորանալ, կէս մէջքից կախուիլ, կզուիլ», կոռոր *Վն.* «դուրս ցցուած մեծ ժայռ», կռակռո *Ղրբ.* «կորաքամակ պառաւ»։

Փոխ.—*Ուռ.* կիրի, միրի, կորի, մորի, կիւիմիրի, կորիմորի «կոր, ծուռ, կորացնելը, ծռելը», կիրիբսուն «ծռիլ», կիրիբաֆսուն «ծռիլ, կորանալ», կորիբսուն «կորանալ, ծռիլ». *Համմտ.* հյ. կոռ-մոռ գալ *կրկնականը*։

ԿՈՐ «կորչիլ, անհետանալ, փճանալ». արմատ առանձին անգործածական, որից կազմուած են դանազան մասնիկներով՝ կորնչիլ «կորչիլ» *ՍԳր.* (ձևի համար *համմտ.* յար-նչել, երկ-նչ-իլ, մարտ-նչ-իլ), կոր-նչ-ումն *Շիր.* կորուսանել «կորցնել» *ՍԳր.* կորուստ *ՍԳր. Եփր. ա. Թես.* կորուսիչ *Ագաթ. Եզն.* կորստախառն *Եփր. գտ.* կորստական *ՍԳր. Ոսկ. յհ. ա. 11.* անկորուստ *Ագաթ.* երախտակորոյս *Վեցօր.* խորհրդակորոյս *Օր. լբ. 28.* համակորոյս *Ոսկ. մ. ա. 20.* հեռակորոյս *Վեցօր. Եւս. քր. Ոսկ. ես.* նշմարտակորոյս *Վեցօր.* մտակորոյս *Ոսկ. մ. ա. 3.* չնորհակորոյս *Եփր. Թգ.* ոգեկորոյս *Կոչ.* դեռնակորոյս *Զենոբ.* դաշնակորոյս *Մարաթ.* կանխակորուստ *Նար.* Բուն արմատական ձևը ուելի լաւ են երևան հանում *կտ.* կորեայ, *հրամ.* կորի՛ր, կորո՛։

Peterm. *62 լծ.* կործանել։ *Տէրվ. Նախալ. 78* ծիւրիլ *բառի հետ հնխ.* gvar ձևից իբր երկրորդ արմատական՝ *gar> ծեր արմատի։ Հինք. պրս.* gōr «գերեզման» *բառից։* Meillet MSL *9, 150* միացնում է *հոլ.* goryĭvĭ? ձևին, իսկ MSL *10, 278* միացնում է *լեթթ.* gurstu, gurt «յոգնիլ», qurdens «յոգնած, լքեալ», *հպրուս.* gurins «խեղճ, աշքաւ» բառերին, իբր *հնխ.* gor- այ-մատից։ Նոյնը յիշում է *Հիւբշ.* IF Anz. *10, 48։* Patrubány, *Բանաս. 1902, 121* մերժելով այս մեկնութիւնը՝ բաղդ համարում է նոյն ընդ կեր, կերակուր ևն։ Pedersen, *Հայ. դր. լեզ. 147 սանս.* gurú, *գոթ.* kaúrus «ծանր» բառերի հետ։ Scheftelowitz BB 28, 282 *և 304* կորուսանեմ=*լիթ.* kriuszù, kruszù «ջարդել, փշրել», իսկ կորնչիմ=*սանս.* čalati «տատանուիլ», *պրս.* čalīdan «երթալ»։

Գիմ.—*Ջղ.* կորնել, *Ալշ.* կօրել, *Մշ.* կորիլ, *երև.* կօրչել, *Գոր. Ղրբ. Շմ.* կօրչիլ, *Տփ.* կո՛րչիլ, կօրցրնիլ, *Սեբ.* գօրիլ, *կր.* կօրսըվիլ, կօրի՛, *Ննխ.* գօրցըվել, *Սչ.* գօրսրնել *կամ* գօրսրնցրնել, *Տիգ.* գօրսվիլ, *Հմշ.* գոյսըվուշ, *Մկ.* կուրուսիլ, *Մրղ.* կուրսուրէլ, *Սլմ.* կուրսըվել, *Վն.* կուրիս «կորած», *Ոզմ.* կուռսիլ «կորչիլ», *Ագլ.* կրօ՛նիլ «կորչիլ», կրցա՛նիլ «կորցնել», *Զթ.* գընըվը՝լ «կորչիլ», գրչնը՝լ «կորցնել»։ Նոր բառեր են կորու *Եւդ.* «կորած, ի զուր վատնուած», կորուկ, կորուսական։

ԿՈՐԱՂԻՈՆ *տե՛ս Կորողիովն։*

***ԿՈՐԱՆԴԱՍ** «ագռաւ». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած *Խոր. աշխ. Հրատր. Սուքրեանի, էջ 44.* «Եւ ի թռուածոցն անոցա լինի կորանգաս և պապկաս և աղջաղաս փետրամորուս»։—Սուքրեան, անդ *էջ 58* համեմատում է հատուածս Պապոմէոսի «ἐν τάυτῃ ἀϊεκτρύονες γέγονται εἶναι πωνωνίαι, καὶ κόρακες καὶ ψίττακοι, λεγόμενοι «ասեն թէ ևն ի նման աքաղաղք մօրանիք և ագռաւք և թութակք» ագիտակք» հատուածի հետ, որից հետևցնում է որ կորանգաս=յն. κόρακες «ագռաւներ»։

ԿՈՐԱՏՈՐ *տե՛ս Կուրատոր։*

***ԿՈՐԲԱՆ** (ի–ա *հլ. բառ նշՀ, բայց առանց վկայութեան. հոլովուած գտնում եմ միայն* կորբանից *Մագ. գամագր. 14)* «տաճարին արուած նւէր, ընծայ» *Մրկ. է. 11, Մթթ. իէ. 6, Ոսկ. մ. բ. 26. երզն. մտթ. 585.*

«տաճարի գանձանակը» Եւս. քր. Բ. 266, Աթ. ք. Նար. խչ. 391։

=Սրբ. קרבן qarbān «մատաղ, զոհ առ Աստուած՝ շնչաւոր կամ անշունչ բաներով, ձօն», որի հետ նոյն են արաբ. قربان qurban, արամ. קורבנא qūrbanā «մատաղ, զոհ»։ Սրբայական բառը Ս. Գրքի թարգմանութեամբ անցել է ուրիշ լեզուների. ինչ. յն. κορβᾶν «ընծայ, ձօն, նուիրաբերութիւն», κορβανᾶς «տաճարի գանձը» (Sophocles 681 բ), լտ. corban, հսլ. և հռուս. коръвана, корванъ, коръманъ, լեհ. karbona, չեխ. karban (Berneker 489) են, ուելի նիւթական կամ դրամական նուէրի իմաստով. յոյն բառից էլ տառագարձուած է հայերէնը։

Ուղիղ մեկնեց ՆՀԲ։

*ԿՈՐԲԱՆ «սաղաւարտ». մէկ անգամ ունի Մաշտ. «Որպէս զօրականացն սաղաւարտն, զոր ի հին արտաքնոյն կորբանն կոչեն»։

=Յն. κορυφαῖον «գլխանոց». բստ այսմ էլ մեր բառը լինելու էր գոնէ *կուրփան, որ նախորդի հետ շփոթուելով՝ գրուել է կորբան։

Ուղիղ մեկնեցին ՆՀԲ և ՋԲ։

ԿՈՐԴ «խոպան, անվար, անմշակ» Ովս. ժ. 4, ժբ. 11. Ոսկ. գաղ. և ա. տիմ. էջ 122. (յետնաբար ո հլ. այսպէս՝ բցո. ի կուրդոյ Օրբել. հրտր. էմ. էջ 213). որից կուրդանալ Նեղոս. կուրդացուցանել ժմ. յն.։

ՆՀԲ վրաց. կուրդի, լծ. հյ. չոր, յն. χέρσος, χέρρος, Թրք. qər «բաց դաշտ». quru «չոր»։ Տէրվ. Մասխ 1882 ապր. 3 յն. κράτος «կարող, հզօր», գոթ. hardu «բուռն, սաստիկ, կարծր», անգլ. harð, գերմ. hart «կարծր» բառերի հետ. սրանց է կցում նաև Քուրդ, Կուրդուիֆ, որոնց նախահայր համարում է ոմն Կուրդոն կամ Կարտու «բուռն, հզօր»։ Հիմնք. կուրտ բառից։ Սագրգեան ՀՄ 1909, 335 հյ. կոռ «տարտպարհակ», սումներ. gar «արտ»։ Karst, Յուշարձան 405. սումներ. kur «երկիր, աշխարհ, լեռ»։ Պատահական նմանութիւն ունին հսլ. gruda «հողի գուղձ», grudĭnŭ «կոշտ, կոպիտ», ռուս. гру́да «փողոցի սառած ցեխ», гру́дный, грудкій «կորդ, անհարթ ճանապարհ են, սառչելով բարացած ակօս», բուլգար. gruda «գուղձ», grudliv «կորդ, կոպիտ», հնաքս. griot, հբգ. gdioz «աւազ, խիճ», կիմր. gro «խիճ» են, որոնք բոլոր ծագում են հնխ. ghreu-, ghreu-d- արմատից (Walde 661, Berneker 357). այս արմատը հայերէնում պիտի տար գ նախաձայնը և ոչ բնաւ կ։

Գիմ.—Մշ. կոռտ, Ալշ. կոռթ, լ. կորբ, Սլմ. Վն. կոռբ, Մկ. Ոզմ. կուրբ. այս բոլորը աւում է հողի համար. (Ալշ. փոխաբերաբար նաև «պինդ մածուն»). իսկ Խրբ. զօրբ «կարծր, դահաւած, Թրք. խարթ», որից կուրդանալ Վն. «հողը կոշտանալ», Խրբ. «կարծրանալ, դահանալ, խարթանալ», կուրդել Վն. «խոպան հողը մշակելի դարձնել՝ վրայից աւելորդ խոտերը քաղհանելով և մարրելով», կուրդապատառութիւն Մշ. «պոռոտախօսութիւն», կուրդան Գնձ. «կոպիտ, անտաշ, անոպայ», կուրդալուցք Սիփ. «վարած խամ գետին»։

Փոխ.—Վրաց. კორდი կուրդի «մարդ, մարդագետին, դուրս գտնուած անմշակ տեղ», ნაკორდალი նակուրդալի «չմշակուած դաշտ», ნაკორდე նակուրդե «անմշակ և դատարկ բացավայր», քրդ. կուրդ «չվարած հող» (գործածւում է Բուլանըխի մօտ՝ Հասան-Գորանի քրդերի մէջ. տե՛ս Միրախորեան, Նկարագր. ուղևորութ. Գ. 96) և կամ կօրբ «կորդ գետին» (Վտակ 1908, № 141)։

ԿՈՐԴԱԿ «սաղաւարտ» Թղթ. դաշ. ուրիշ վկայութիւն չկայ։

ՆՀԲ յն. κόρυς, κόρυθος «սաղաւարտ» բառի հետ։ Նոյնը Bugge KZ 32, 49՝ համարելով հայ ձևը բնիկ բառ։

ԿՈՐԴԻՆ (որ և կուրդին) «թամբ, համեմ» Դ. եզր. ժե. 23. Յայսմ. փետր. 6. Տաթեւ. Ա. § 81 (սեռ. կուրդնաց). հնից ուրիշ օրինակ չկայ. նորերից Առաք. պատմ. 330 գործածում է երկու անգամ. «Զիշոյ միոյ կուրդինն, որ է պագանն... եդ ի մէջ իշոյ կուրդնին»։ Սրանից ունինք կուրդնակար «թամբագործ» (նշանագիտ բառ) Տաթեւ. Ա. § 82. էջ 116։

Գիմ.—Ոզմ. կուրդ՚է՚ն, *Մկ.* կուրթիճ՚, *Մշ.* կուռաիգ «*թամբ ձիու ևն*». *Նոյն է նաև* կոռաիճ *Ռշտ.* «*բեռնակիր մշակի համեստ*», *որ Ամատ. Հայոց բառ ու բան 360 բ թիւրիմացութեամբ կուռ բառից է հանում։ Նոր բառեր են* կուրդնկար «*թամբ շինող*», կուրդներկարնոց «*թամբագործների շուկայ*», կուրդնել «*ձին թամբել*», *երեքն էլ բստ* Rivola։

Փոխ.—Վրաց. ჯურტანი *կուռաանի* «*բեռնակիր անասունների համեստ*»։

ԿՈՐԴԻԻՆ (*գրուած նաև* կուրդոյն, կուրդին, կուրդիճ, կուրդոճ, կուրդում) «*մի տեսակ ծոթրին.* satureia hortensis L» (*ըստ Տիրացուեան,* Contributo § 421) *Բժշ. Գաղիան. Վրդն. Կլ։*

ՀՀԲ հանում է կուրդ *բառից՝ իբր կորդ տեղեր բուսած։ Սխալում է Արծինեան, Ամէնուն Տարեցոյցը 1914 թ. 163՝ համարելով բառս ծագրին ձևի աղաւաղութիւնը։*

Գիմ.—Երև. կո՚րթին «*ծաթրին*»։

ԿՈՐՆԱԿ, ն *հլ.* (*-րեկան, -րեկանէ*) «*մի տեսակ հացաբոյս, Բրբ.* տառր. *լտ.* milium» *Ես. իր. 25. Եզեկ. դ. 9. Եզն. Ոսկ. ա. Թես. նմանութեամբ «թուղի միջի հատիկները» Բրս. մրկ. 190, 232. յետնաբար* կորեկ, ո *հլ. (սեռ.* կորեկոյ) *Տօնակ. որից* կորեկաճառ *Եզն. ձիակորեակ Բժշ.* կորեկախառն *(շունի ԱԲ) Զքր. սարկ. Ա. 24.* կորեկաճաց, կորեկօղի *(նոր բառեր)։*

Տէրվ. Լեզու 1887, էջ 120 լտ. granum, *հբգ.* korn, *հսլ.* zrŭno, *աֆղան.* زړی zarāy, *որոնք բոլոր նշանակում են «ցորեն, հատիկ»։ Հինք. կորիւն բառից՝* Pictet *բ. տպ. հտ. Ա. 325 սանս.* gāritra «*հատիկ, ցորեն, բրինձ*», *բրդ.* garez «*կորեկ*» *բառերի հետ։*

Գիմ.—Վն. կոռեկ, *Զգ.* կորէկ, *Սլմ.* կորէկ՚, *Ալշ. Մշ.* կօռեգ, *Ախց. Գոր. Երև. Կր. Ղրբ.* կօռէկ, *Սչ.* գօռեգ, *Խրբ. Ննխ. Ռ. Սեբ.* գօռէգ, *Շմ.* կօռակ, *Ասլ.* գէօռէգ, գէօռէյ, *Տփ.* կո՚րիկ, *Տիգ.* գօրիգ, *Մկ. Ոզմ.* կուրիկ, *ՋԲ.* գիյիգ, գիրիգ, *Սվեդ.* գիրիգ, *ՀՃ.* գիյէգ. *Աղլ.* կա՚րակ. *բոլորն էլ նշանակում են «կորնկ», միայն ՀՃ. «եգիպտացորեն», լ. «կորնկի արտ», Սչ. «եգիպտացորենով պատրաստուած հաց, ճաթ», Նբ. «ձկնկիթ, ձկան հում խաւեար»։ Նոր բառեր են* կուրեկական, կուրեկխոտ, կուրեկհաց, կուրեկնաբ։

Փոխ.—Քրդ. ƒoրէկ «*կորեկ*». *Հանրածանօթ առած է՝ Տէ՚օվէ բրոշ, ևա՚ճէ* ƒoրէկ «*Թիֆու թան և կորեկ հաց*» (*Շեռա, Քրդերը Տաճկաց. Հայաստ. Ա. 183*)։

ԿՈՐՁ. *արմատ առանձին անդործածական. որից* կորզել «*քաշել հանել, խլել, փրցնել*» *ՍԳր. եզն. Ոսկ. ես. Նար. պտմ. որից* կորզական *Փիլ. իմաստ. Նիւս. կազմ.* կորզիչ *Արծր.* կորզումն *Նիւս. կազմ.* կորզան *ՅՀ. կթ.* մաճակորզ *Անան. խոստ. էջ 11 (նորագիւտ բառ).* դժուարակորզ *Փիլ. իմաստ։*

Հինք. կործանել *բայից՝* Bugge KZ 32, 56 *սանս.* varh, vṛháti «*խլել, պոկել, փրցնել*» *բառերին ցեղակից։*

ԿՈՐԷՍ «Դիմաորեայ աղչիկը, Պերսեփոնեայ աստուածուհին», իբրև յատուկ անուն գործածում է Պտմ. աղէքս. 74։

= Κόρη, Κόρης՝ *նոյն աստուածուհու անունն է, որ ծագում է* κόρη «*աղջիկ*» *բառից։*

Ուղիղ մեկնեց ՆՀԲ։

ԿՈՐԷՔ «*դժուարին և խիստ տեղի*». *ունի միայն ՀՀԲ. մէկ անգամ գործածուած է Բ. մակ. ժգ. 18 «հետօք միւսանգամ փորձ փորձեր ի կորէս ելանէր», որի համապատասխանն է յն.* κατεπείρασε δὲ μεθόδων τοὺς τόπους։

ՆՀԲ ջնջում է կորէք *բառը՝ հաստուածը կարդալով «բստ բնարելագոյն ձեռագրի» ի կոր ևս ելանէր «չարաշար յազթուիլ» (հտ. Բ. էջ 1119 գ)։ Հ. Ս. Կոգեան ՀՄ 1923, 235 դիտել է տալիս՝ որ բոլոր ձեռագիրներն էլ ունին ի կորէս, իսկ այդ բնարելագոյն ձեռագիրը կամ ձեռագիրներն էլ չկան Զոհրապեանի մօտ։ Կոդեան էլ որևէ բացատրութիւն չի տալիս այս «անհասկանալի» բառի համար։ Ըստ իս ՀՀԲ-ի տուած իմաստը մերժելու պատճառ չկայ. յոյն բնագրի միտքը այն է թէ Թագաւորը Հրեից քաջութիւնը տեսնելուց յետոյ՝ «վարպետութեամբ— δὲ μεθόδων» (տե՛ս* Sophocles *740 բ,*

որ ճիշտ այս իմաստն է տալիս) «փորձանց»— κατεπείγασε «այդ վայրերը»— τοὺς τόπους, նորից պատերազմի պատրաստուելու համար։

ԿՈՐԻ *«արտը ջրելու համար մեծ առուից բացուած երկրորդական և նեղ ջրի անցք» Սեբեր. 46. որից* **կոր**ի **մի գետին** *«մի քիչ տեղ» Բուզ. էջ 218։*

Bugge KZ *32, 56 սանս.* vār *«ջուր» կամ յն. οὖρος «ջրանցք» բառերին ցեղակից։* Scheftelowitz BB *28, 303 սանս.* kulyā *«փոս, ջրանցք» և յն. κόγχη «աղբիւր» բառերի հետ է միացնում։* Lidén, Arm. Stud. *111 մբգ.* kūle *«փոս, խորք», նորվ.* koyla *«ջրանցք», յն. γύαλον «խոռոչ, կիրճ, համարհ բառերի հետ, արմատակից* **կոր** *(=յն. γύρος),* **կորիզ** *բառերին։ (Նոյնը կրկնում է* Boisacq *159)։ Մատ* ЗВО *XIX, 0156 վրաց. ծղարո «աղբիւր», ծղալի= մինգ. ծղարի, լազ. ծկարի «ջուր» բառերի հետ՝ յարեթական շղթ արմատից։ Սագրգեան ՀԱ 1909, 335 սումեր.* kurê *«ջրանցք»։* Karst, *Յուշարձան 405 սումեր.* gur *«ջրի հոսանք», 406 սումեր.* kure *«ջրանցք»։*

Գիւմ.—Ալշ. կր. Մշ. **կոր**ի, *երև.* **զոր**ի, *Մշ.* **կոռ**ի, *Մկ.* **կուր**՛, *Ոզմ.* **կուր**է՝, *Համշ.* **զոր**ին *(Ճօշարա գիւղում՝* **զոր**իմ*), գործածւում են զանազան նշանակութիւններով. այսպէս՝ Ալշ. Բիւթ. երև. Նբ. Մզ. Մշ. Ոզմ. Մկ. «արտի ոռոգման համար բացուած նեղ առու», Ղրբ. «արտը վարելու ժամանակ՝ առաջին անգամ վերևից ներքև քաշուած ակօսը, որով արտը երկու մասի են բաժանում և յետոյ աջ ու ձախ նոր ակօսներ բանալով՝ վարը շարունակում են», Ակն. Կր. Մշկ. Շիր. «արտի ամէն մի ածուն կամ բաժանմունքը», Համշ. «երկու արտի սահմանը, միջավայրը», «արտի մի տեսակ չափ է, որ է մէկ քառորդ օրավար»։ Ոճով առում է Ռ.* **զոր**ին **հանել** *(<***կոր**ին **հանել***) «իրեն բաժին ընկած մասը կատարել»։ Նոր բառեր են* **կոր**ատ *«բամբակի արտի մէջ բացուած կորի»,* **կոր**ատել *«կորիններ բանալ»,* **կոր**ակատուր *«նախորդ վարի հակառակ ուղղութեամբ»։*

ԿՈՐԻԶ, ո հլ. *«սերմ կամ պտուղի փափուկ կուտ» Վկեցօր. 187. «պտուղների կարծրը կուտ» (ինչպէս հունի, արմաւի, դամոնի) Մագ. Ոսկիփ. Վրք. հց. Ա. 646. նմանութեամբ «ճակուկի, պարանոցի կամ անութի վրայ ելած ուռեցք» Գազիան.*

Հիմնք. պրս. խուրուս *«արլոր» բառից։* Lidén, Arm. Stud. *էջ 112* **կոր**ի *բառերի հետ միացնելով՝ հանում է հնխ.* gouro- *«կորանալ» արմատից. բառիս հետ է համեմատում յատկապէս հհիւս.* kula, *մբգ.* kūle *«խոյլ, ուռեցք». (բայց* **կոր**իզ *բառի այս նշանակութիւնները փոխաբերական են հայերէնում)։*

Գիւմ.—Գոր. երև. Տփ. **կո՛ր**իզ, *Շմ.* **կո**ռուզ, *Ղրբ.* **կո՛ր**ըզ, **կո՛ր**էնձ, *Ոզմ. Վն.* **կո**ղինձ. *Մկ.* **կուղ**ինձ, *Ջղ.* **կղէզ**, *Ագլ.* **կղազ**.— *այս վերջին ձևերի համեմատութիւնը ցոյց է տալիս՝ որ հայերէնի հնագոյն ձևն էր* **կո**րինձ, *որ յետոյ* **ձն**>**զ** *ձայնափոխութեան օրէնքով՝ դարձել է* **կոր**իզ. *(այս մասին տե՛ս Աճառ. ՀԱ 1905, 346. նման ձայնափոխութիւն է ցոյց տալիս Նբ. Վն.* **կոռ**ինձ=**գոռ**ուզ*)։ Նոր բառեր են* **կոր**իզոտ, **կոր**իզաւոր, **կոր**իզաձաձ *կամ* **կոր**իճնձաձ*։—Համշ.* **զոր**իզ*։*

ԿՈՐԻԶ *«դահիճ»? ունի միայն Բառ. երեմ. էջ 167. իսկապէս գրուած է* **կոր**իզ *«դահիճ կամ կուտ», որից հետևում է որ կա՛մ* **կոր**իզ *նշանակում է նաև «դահիճ» և կամ դաճիճ ունի և «կորիզ» նշանակութիւնը։*

***ԿՈՐԻԻԲԱՆՏ**, ի–ա հլ. *«փոխուգական կաքաւող թռչուն». նորագիւտ բառ, որ գործածուած է Նոնն. էջ 3—4, որի հետ նոյն են* **կոր**իբաձաւ *Պզատ. օրին. 227 և.* **կոր**իւբաճդեցիի *Եւս. քր. Բ. 102։*

=Յն. κορύβας, κορύβαντες՝ նոյն նշ.

Ուղիղ մեկնեց նախ Մանանդեան, Հրատ. Նոնն. էջ 4 ծան. (և յետոյ Մէնէվիշեան, Գամագր. 139)։

ԿՈՐԻՒՆ *(սեռ.* **-ր**եան, **-ր**եանց*) «ձագ (առիւծի, վիշապի, իժի, գայլի, շան, կէտի)» ՍԳր. Եգն. Ե՛ր. դտ. 341. Վեցօր. 190. փոխաբերաբար «ասօր, կնձնի և այլ ծառերի տերևների տակ ծածկուած պաղանման գրնդակներ» Վեցօր. էջ 93 (այս երկրորդ նշանակութիւնը երևան հանեց Ս. Վ. Նազարէ-*

թեան, Պատկեր 1893, էջ 56, մի ընտրելագոյն ձեռագրի ընթերցուածի համաձայն. «Կերպարանք ինչ իցեն սերման և պտղոյ, և զնոյն որ երևին ի ծառ կորիւն կոչեն... Ապա ուրեմն զօրութիւն իմն սերման է ի կորիւնան՝ որ երևին ընդ տերեւօք ծառոյն»). «դղումի, վարունդի և նման բոյսերի արձակած թևը» Եփր. Նիս. 121 (մէկ անգամ գործածուած. Ձկորիւն դղմենւոյն և զծաղիկն նորա պատուե՞ս բան զանմեղ տղայն). նշանակութեան զարգացման համար հմմտ. ոտք և երինջ)։ Այս արմատից են առիւծակորիւն Վեցօր. 192. գայլակորիւն Մամիկ. իժակորիւն Վեցօր. էջ 192. կորճակ «բորենու փորր ձագ» Վրք. հց. Բ. 433 (չունի ՆՀԲ)։

Schröder, Thesaur. *45 սասր.* גוריא gūriā *«կորիւն»։ ՆՀԲ երբ.* גור gūr *«ձագ»,* גור gōr *«առիւծի կորիւն»,* כפיר kəpīr *«կորիւն»։ Հիւնք. յն.* κόρος, κόρος *«պատանի, շառաւիղ»։* Bugge KZ *32, 85 թերևս փոխառեալ է կովկասեան լեզուներից. հմմտ. չիչէն.* kuornai *«ձագ»։* Müller, SWAW *136(1897), էջ 11=*Armen. VI, WZKM *5, 268 և 10, 180 սանս.* garbha, *զնդ.* garəwa *«սաղմ», յն.* βρέφος *«մանկիկ, ձագ» դոթ.* kalbo *«հորթ», հսլ.* žrěbę *«մանկիկ, ձագ» են բառերի հետ։ Հիւրշ. 461 սխալ է համարում այս վերջին մեկնութիւնը, որովհետև յոյն բառիս դէմ պիտի ունենայինք *կորր և ոչ կոր-։* Patrubány, *Բանաս. 1902, 121 հանում է* կոր *«կորչիլ» արմատից՝ -իւն մասնիկով, իբր «նա՝ որ կը կորսուի մօրէն, ա՛լ արդանդը չէ»։* Scheftelowitz BB *28, 15 և 29, 15 հնխ.* gʷer- *«ուտել, կուլ տալ» արմատից, որից են հյ.* կեր, կուր, կերակուր։ Osthoff, Et. Parerga I *312 միացնում է լտ.* galba *«կաղնու որդ», հրգ.* kilbur, chilburra *«էգ գառնուկ», դոթ.* kalbō *«հորթ»,* kilbei *«արգանդ», անգսք.* cild *«երախայ», սանս.* jartú- *«բունոց», յն.* βρέφος *«արգանդի պտուղը, սաղմ», ծելփչ «արգանդ» են բառերի հետ և ենթադրում է այս բոլորի համար հնխ.* ger-, gʷer-, gel-, gʻel- *են արմատների խառնուրդը։ (Յիշում են նոյնը* Walde *331 և* Boisacq *133 ծան.)։ Աճառ. ՀԱ 1909, 160 պարզ արմատը համարում է* կոր, *որ աւելի լաւ երևում է խոնկոր բառի մէջ։ Մառ,* Основ. Табл. *էջ 9 ասոր. և եբր. ձևերի հետ միացնում է վրաց.* bo-kueri *«կորիւն», բայց չի յիշում հյ.* կորիւն։ Charpentier IF *25, 245 հնխ.* gʷoṷero- *«հորթ» բառից. հմմտ. սանս.* gavala *«գոմէշ»։* Pedersen, *Հուշարձ. 288 քննելով յն. βρέφος, հսլ.* žrěbę *բառերի համեմատութիւնը, ենթադրում է որ հայերէնի հին ձևն էր *կորբ, որից բ ձայնի անկումով յառաջացաւ* կոռն *(արմատը* կոր. *մասնիկն է ն)=*կորիւն. *բոլորի հին հնխ. ձևը դնում է **gʷerebh-։ Petersson KZ *47, 240—244 սանս.* gṛṣṭi *«երինջ» են բառերի հետ հնխ.* gu̯er- *արմատից։ Ղափանցեան* ՅՒՕ 23, 355 *քրդ.* kur *«որդի, տղայ» բառի հետ+*իւն *նուազականով։*

ԿՈՐՄ *«գլխիվայր շրջուիլ, տապալուիլ». այս արմատական ձևով գործածական է միայն միջին հայերէնում. այսպէս՝ ի կոծ առնել կամ լինել «ամանը գլխիվայր շրջել կամ շրջուիլ» Կանոն. Գր. տղ.* կործել *նոյն նշ. Վստկ. 136, 172. Յայտմ. նոյ. 26, Նոր վկ. էջ 317։ Հին մատենագրութեան մէջ աւանդուած է միայն -ան մասնիկով աճած կործան ձևով. այսպէս՝ կործան «գլխիվայր տապալուած» Կոչ. Ոսկ. ես. Բուզ.* կործանել *«տապալել, փլցնել, քանդել, ջնջել» ՍԳր. Եւս. պտմ. «գլխիվայր շրջել, կործել» Դ. Բագ. իա. 13 (Որպէս շիշ մի ջնջեալ, որ կործանիցի ի վերայ երեսաց իւրոց. յն.* καθὼς ἀπαλείφεται ὁ ἀλάβαστρος ἀπαλειφόμενος καὶ καταστρέφεται ἐπὶ πρόσωπον αὐτοῦ. *երր. «զոր ջնջիցէ որ և դարձուցէ»).* կործանեցուցանել *Ոսկ. յհ. ա. 8.* կործանիչ *Մծբ. Եփր. ծն.* կործանումն *ՍԳր. Եւս. պտմ.* դիւակործան *Կղնկտ.* դիւրակործանելի *Անյ. պորփ.* բիւրակործան *Նար.* եգիպտակործան *Նար.* գնձ. երկրակործան *Նար.* իճճակոծան *Սկևռ.* կործանարար *(նոր բառ).* ոճով ասում է ի կոր կործանել *Ոսկ. մ. և*

ես. Մծբ. (համմ. ամօթալից կոր անկեալ նորագիւտ Բ. մն. լր. 21)։

Peterm. 62 լծ. հյ. կորուսանել։ Մէր 1861, 158 լծ. գործ։ Հինք. կարծել բայից։ Meillet MSL 10, 278 -ծ ածանցիչով կազմուած կոր «կորչիլ» արմատից. ծ-ի համար համմ. կեղծ և կեղ(ա-կարծ)։ Նոյնը նաև Pedersen, Հայ. դր. լեզ. 148։ Միաս ЗВО XIX, 070 յատկաբանական krs արմատից. համմ. վր. կերծոյ «կոզ, կողմ», գուերդի «կող, կողմ», մոզվերդի «ըմբշամարտիլ», գուր. մեգորդիա. հայերէն բառը նշանակում է բուն «կողին զարնել»։

Դիմ.—Երև. կօրծել, կօրծ անել «միւս կողմը շրջել (ամանը)» կօրծ լինել «շրջուիլ, տապալուիլ», Մլմ. կործել, Վն կոռծել, Ալշ. Մշ. կօռնձել, Պլ. Սեբ. գօրնձել, Խրբ. գօրնիլ, Ոզմ. կուրծիլ, Մկ. կուռծիլ «ամանը պլխիվայր շրջել», Չն. գօրնիլ «ցած պլորուիլ, տապալուիլ», Չրս. գօրզվիլ «տրնկած՝ կանգնեցրած մի բան գլխիվայր շրջուիլ, ցած տապալուիլ», Ախց. Կր. կօրծանիլ, Տփ. կօրծան բլիլ, կօրծանվիլ, Մշ. գօրծանել, Պլ. Ռ. Սեբ. Տիգ. գօրձանիլ, (Պլ. անցողական ձևը գործանցուցնել), ՀՄ. գույծանիլ, գուրձանիլ, Ննխ. գօրձանվել։

Փոխ.—Վրաց. კორწიალი կործիալի, კორწიალობა կործիալութա, კორწიალება կործիալեբա «տատանում, տապալում, գլխիվայր շրջուիլը»։

ԿՈՐԿ «կպած մնացած կեղտ». մէկ անգամ ունի Լմբ. մատ. էջ 490 «Ասէ երանելին եթէ հարկաւոր է այնոցիկ սրբկիկ լինել, այլ զի՞նչ կորկն և աղտն բան տարոյ կամ աւելի հոն կայ ի վերայ սկոյն, և մեք չլուանամք և չսրբեմք»։ Նոր գրականում ոմանք գործածում են «ծխախոտի դեղին կեղտը, թրք. զիֆիր» նշանակութեամբ։

Հինք. գորգ բառից։ Bugge KZ 32, 12 ասում է թէ գործ չունի բրգ. qur և կիւրին. qar, qurúš «կեղտ» բառերի հետ և համեմատում է յն. βόρβορος «կեղտ, աղբ» ձևի հետ. հայերէնի մէջ վերջավանկը ընկել է։ Scheftelowitz BB 28, 303 պրս. karī, հանդ. horh «աղտ», լիթ. kirnos «ճահիճ» բառերին կեղակից։ Brugmann, Grdr². I 619 դրնում է Bugge-ի մեկնութիւնը, Boisacq 127 յիշում է թէ՛ Bugge-ի և թէ Scheftelowitz-ի մեկնութիւնը։ Pokórny I 429 հնխ. qers արմատի տակ յիշում է վերջինը. (սխալ է, որովհետև հնխ. qers- պիտի տար հյ. *ֆեռ)։ Petersson, Zwei sprache Aufsätre 60, Heteroklisie 145—6, LUÅ 1922, № 7, 52—53 (չեմ տեսած) նորվ. korg, իսլ. korgr «դիրտ, մրուր», իսլ. krim «կեղտ» են բառերի հետ։ Չի բնդունում Pokorny 1, 645—50։

Դիմ.—Խաչ. գօրգ (<կորկ) նշանակում է «ոչխարի դմակի տակ հաւաքուած գնատակերպ աղբի փոքր կտորտանք», որից կորկոտ «աղբոտ», կորկոտիլ «աղբով ծածկուիլ»։ Ախց. կօկոօտ (իմա կորկ-ոտ) «շատ կեղտոտ»։

ԿՈՐԿՈՍ «թեփը հանած և կտորտած ցորեն, gruau», Գաղիան. (իբրև համանիշ է դնում յն. χόνδρος բառին, որ իրօք ի մէջ այլոց նշանակում է «կորկոտ, gruau», բստ Bailly, Dict. gr.-fr. 215ա). Հայկ. էջ 9 «կորկոտի չափ մանր ջարդած» Վստկ. 56, 113. որից գարեկորկօտ Վստկ. էջ 8. Մխ. բժշ. 50. կորկոտապուր «կորկոտով պատրաստուած մի տեսակ ապուր» (չունի ԱԲ) Առաք. պտմ. 130 (գտնւում է նաև արդի բարբառներում)։

=Իւրի բնիկ հայերէն բառ՝ հնխ. g²rod- արմատից, որ կրկնութեամբ տուել է նախ *կոկրոտ և տեղափոխութեամբ՝ կորկոտ, ինչպէս կարկուտ<*կակրուտ<հնխ. g²ag²rōdo-. համմ. լիթ. grúdžiu, grùdau, grústi «սանդի մէջ դարին ծեծել՝ կորկոտ պատրաստելու համար», grúdas «հատիկ», լիթթ. grûžu, grûdu «սանդում ծեծել», grouds «հատիկ», grūdenes «կորկոտ», graûds «հացահատիկ», հսլ. gruda «հողի կոշտ կտոր, գունդ», ռուս. груда «դէզ», անգսք. grút «խոշոր ալիւր», հհիւս. grautr «խաշած խիւս», հբգ. gruzzi, մբգ. grŭz «հատիկ (ցորենի, աւազի)», հբգ. grioz «աւազ,

խիճ», հիսլ. griōt *«քարեր», հանգլ.* grēot *«աւազ», կիմբ.* gro *«խիճ», նբգ.* grütze *«կորկոտ», հոլլ.* grut, gort *«կորկոտ», գերմանականից փոխառութեամբ՝ ֆրանս.* gruau *«կորկոտ», և վերջապէս գերմ.* gross, *հոլլ.* groot, *անգլ.* great, *անգսք.* gréat, *հբգ.* grôz *են, որոնք նշանակում են «մեծ, խոշոր»* (Kluge *191—2*, Berneker 357, Trautm. *99*)։ *Նշանակութեան կողմից այս բառերը բոլորովին համապատասխան են հայերէնին. ձևի կողմից բալթիկ-սլաւական խումբը տալիս է* grūd-, *որ նոյնպէս յարմար է հայերէնին։ Բայց* Walde *661 նոյն խմբին է կցում նաև լտ.* rudus(rōdus) *«քարի կտորտանք», և նախաձևը դնում է* *ghreu-, ghreu-d-, *որ պահանջում է հյ. գ։ Այս դէպքում կա՛մ պէտք է ջնջել լատիներէնի համեմատութիւնը (արդէն չէ՛ յիշում* Trautmann, *իսկ* Berneker *կասկածով) և կամ ընդունել նախաձայնի աստիճանի փոփոխութիւն։* Pokorny *1, 648—50 նոյնպէս համեմատած բառերի նախաձևը դնում է հնխ.* ghreu-d, *որ չի տալիս հյ. կ, այլ գ. գերմանական ձևերն էլ չեն ընդունում g. լտ.* rudus *թէև յիշում է* Pokorny 1, *649, բայց* Ernout-Meillet *834 բոլորովին առանց աստւգաբանութեան է թողնում։ Եթէ հնարաւոր է կցել հայերէնը այս բառերին, անհրաժեշտ է ենթադրել* g²rod- *նախաձևը։—Ա.Ճ.*

ՆՀԲ Գաղիանոսի ճիշտ մեկնութիւնը չէ հասկացած. **կորկոտ** *բառը հանում է* **կրկուտ, կարկուտ** *ձևերից։* Patrubány *ՀԱ. 1908, 313 իբր կրկնական կցում է յն.* χόνδρος, *գերմ.* gran⁽ⁱ⁾, *հսլ.* grin⁽ⁱ⁾an, *անգլ.* grin⁽ⁱ⁾ *«աղալ» բառերին։*

ԳԻՒՐ.—Սլմ. **կորկոտ**, *Ախց. Նրև. Կր. Տփ.* **կօրկօտ**, *Ալշ. Մշ.* **գօրգոդ**, *Խրբ. Ննխ. Ռ. Սչ.* **գօրգօդ**, *Վն.* **կուրկոտ**, *Շմ.* **կուրկօտ**, *Ագլ. Գոր. Ղրբ. Մկ. Ոզմ.* **կուրկուտ**, *Մեք.* **գօրգէդ**, *Հճ.* **գույգոդ**, *Ասլ.* **գէօրգէ՝օդ, գէօրգէ՝օ***, *ՋԲ.* **գիւգիւդ, գիւրգիւդ**, *Սվեդ.* **գըրգիւդ**, *Մրզ.* **կարկատ**, *Տիգ.* **գօրգդիգ**։ *Նոր նշանակութիւն են ստացած Ղրբ. «մսով ու կորկոտով եփուած մի կերակուր՝ որ նաւասարդին են պատրաստում», Մն. «ջրի մէջ մի բան հալեցրած ժամանակ՝ անհալ մնացած մանր փշուրները»։ Նոր բառեր են* **կորկոտալի, կորկոտխաշիլ, կորկոտծեծ**, *Թիֆլ. նաև* **կրկտուկ, կորկտիճկ** *կոշտուած բոյսերը։*

ՓՈԽ.—Վրաց. კოჴკოტი **կորկոտի** *«կաթով եփուած ձաւար, հերիսայ», Թրք.* غورغوت gorgot *«հացով ապուր,* Brotsuppe*», որից էլ ըստ* Miklosich՝ *նյն.* κουρκούτι *«հացաթան, խաշու,* bouillie, panade» (Karolides, Γλ. σύγκρ. *211 գործածում է «խոշոր աղած ալիւր, սմքր» նշանակութեամբ), ռուս.* куркутъ, *բուլգար.* kurkut, gurgut *«viaticum, ճամբի պաշար», ուս.* korkot *«կորկոտ»։*

ԿՈՐԿՈՏԻՃ *«մորթի վրայ դանուած խայտուց, խայծ, բիծ». մէկ անգամ ունի Տօնակ. «Անասուն շիդիրոն կոչեցեալ. ապի սորա փորրիկ գոլով՝ ունի սակաւ կորկոտիճս դեղնագոյն»։ Երկրորդ անգամ գտնում ենք բառս Փիլ. լին. 205 «Կադէս մեկնի սուրբ. իսկ փառան՝ կարկուտ կամ կորկոտիճ». այստեղ բառիս իմաստը անծանօթ է, որովհետև «կարկուտ» նշանակութեամբ նմանաձայն մի բառ չկայ հերայեցերէնում։ Հեղինակը ուզում է մեկնել հբր.* פארן Fārān *անապատի անունը՝ որի աստւգաբանութիւնը անծանօթ է։ Այս պարագային անշուշտ պատճառ չկայ* **կորկոտիճ** *բառին մի նոր իմաստ վերագրելու։*

ՆՀԲ առաջին իմաստով մեկնում է «որ ինչ նման է կորկոտի, մանր փշուրք, կիսուած, նիշ, սպի, կորկոտ, կորկոտի պէս պուտ պուտ». երկրորդ իմաստի համար դնում է «հբր. ֆառամ է փշրել, իսկ լտ. ֆառ՝ ցորեան կամ ըստ որում կեղևեալ՝ ձաւար և հերիսայ»։ Այսպէսով՝ վերջ ի վերջոյ **կորկոտիճ** *բառը դառնում է «կորկոտ», ինչպէս ունին ՋԲ և ԱԲ. վերջինը մեկնում է կորկոտիճ «մանրուք, նշան, կորկոտի պէս պուտ պուտ. 2. կարկուտ. 3. կորկոտ»։ Նորայր, Բառ. ֆրանս. էջ 615 ա դնում է «այսումն ի հիւսուածի կոպոց աշաց», նոյնը Կոյլաւ, Բառ. գերմ. 800 բ «աչքի կոպին վրայ ուռեցք»։*

ԿՈՐՃ *«ընկոյզի կեղև». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած* **Նոր**

վկ. էջ 317 «Պորեալ զընկոյզն, կոթծկին դկորճն ի վերայ նորա»։ Իբրև մականուն գործածուած ունինք Հաւաք. էջ 40 «Թամայ վարդապետին՝ մականուն կոռճով կոչեցեալ» (այն է «կեղևով»)։

Գիմ.—Վն. կոռճ «կեղև (սոխի, խնձորի, ընկոյզի, ձուի, ծառի)»։

ԿՈՐՃ «պատկուճ, կորակտուց գիշակեր մի թռչուն է» Օր. ժդ. 12։

ՆՀԲ «որպէս կորունչ, կոր բիթ»։— Հիւնք. կիրճ բառից։

ՓՈԽ.—Վրաց. ყორჭი ղ'ուրճի «մի տեսակ թռչուն է. ցին»։

*ԿՈՐՃ «ծուռ, թիւր, անհարթ». առանձին չէ գործածուած, այլ կայ միայն հետևեալ ածանցների մէջ.—կորճայ «խեցգիկ, աղաւաղ լեզու»։ Տօնակ. կորճալեզու երդն. բեր. կորճաբառ Հին բեր. նաև բենկորճ (Բ), է-կորճ (ⲙ), պեկորճ (ⲡ) և ձակորճ խազերի անուննները, որոնք բ, է, պ, ձ գրերի տեղ մի պատկերն են ներկայացնում։

=Հայաստանի Կորճայէ նահանգի անունից է կազմուած։ Այս նահանգի ժողովուրդը պատկանում էր մի օտար ազգութեան և խօսում էր մի առանձին լեզու։ Սովորելով չեզոյ հայերէն՝ բնականաբար խօսում էին ո՛չ-բոլորովին մաքուր լեզուով. ուստի և առնուեցին ծեքական լեզուի իրրև տիպար. Համմ. «Եւ պարտ է գիտել եթէ ըստ մերումըս բարբառոյ նախագաղափարաւդ վարին Կորճայքդ միայն» (Անանուն մեկնիչ, էջ 147). «Քայց յայլ վայրս, որպէս Կորճայքդ, վարին կրականին ո՛չ համաբար, այլ ըստ սովորութեան» (Դաւիթ մեկնիչ, էջ 112). «Զրովանդակ զբառսն գեղերականս, որպէս զԿորճայն և զՏայեցին». (Ստեփ. սիւն. քերակ. 187)։ Իմաստի զարգացման համար համմ. խաղտալուր, խաղտախուղտ։

Այսպէս է մեկնում նաև ՆՀԲ կոռճայ բառի տակ. իսկ գորդայէ բառի տակ՝ «Իբր ծուռ կամ խորթ, որպէս և յն. ղօրղո՛ս է թիւր և խոտոր»։

ԿՈՐՆԳԱՆ (կամ նաև գրուած կորնկան) «առուոյտի նման մի խոտ է. onobrychis sativa=ֆրանս. sainfoin (ըստ Արիինեան, Տունկերը, էջ 8), melilotus officinalis Lam. (ըստ Նորայր, որ և յիշում է Տիրացուեան, Contributo § 235)» Մխ. առակ. Նար. տող. 473, 474. որից իշկորնկան «hedysarum onobrychis կամ isopyrum, իսկ ըստ Տիրացուեան, Contributo § 417՝ origanum vulgare L» Բժշ։

ՆՀԲ կարծում է նաև որ Բերևս ուղղականը լինի *կորինկ, որից սեռ. կորընկան. (այս կասկածը փարատում են գաւառական ձևերը). Համեմատում է յն. ορίγανον «զուիրակ» բառի հետ։

Գիմ.—Ալշ. երև. Մշ. կօրընգան, Վն. կորընգ'ոն, Մկ. կօրընգ'ոն, Ոզմ. կօրընգ'ոն գուրընգ'ոն, Ագլ. կրորընգուն, Ջղ. կորընգալ, Սլմ. գօրընգ'ա (ըստ Ա. Աբեղեանի, Սալմաստ, էջ 19). վերջին ռնգականից զուրկ կորնկա ձևն ունի և կր. Ախց. կորընգա, որից՝

ՓՈԽ.—Ախալցխայի բրբ. բարբառով golang ar «կորնգան»։ Բրբ. գւռ. Թորթումի կորնգան (տե՛ս Շիրակ 1905, 425)։

ԿՈՐՆԹԱՐԴ տե՛ս Կոր։

ԿՈՐՇՈՒՄՆ «յորջորջումն կամ վշտալից». ունի միայն Բառ. երեմ. էջ 168։

*ԿՈՐՈՂԻՈՎՆ (իմա՛ կորաղիովճ կամ կորաղիոն) «բուսա, մարջան». մէկ անգամ գործածել է Վեցօր. էջ 152 «Զպատուական և զծանրագին ականն, որ անուանեալ կոչի կորաղիոն (ձեռ. կոռողիովճ, լուս. կորակրդիոն)»։

=Յն. κοράλλιον, որից փոխառեալ են նաև լտ. corallium, Ֆրանս. corail, իտալ. corallo, գերմ. Koralle, Հունգ. koláris, kláris, ռուս. коралки, լեհ. koral, kolar, goral են, բոլորն էլ «բուսա, մարջան» (Berneker 567)։—Կարծւում է թէ յն. բառն էլ փոխառեալ է սեմականից. համմ. եբր. gōrāl «բարի կտոր», արաբ. jaral «խիճ» (Boisacq 493):—Հիւբշ. 360։

Ուղիղ մեկնեցին նախ ՀՀԲ և ՆՀԲ։

ԿՈՐՈՁ տե՛ս Կռռոչ։

*ԿՈՐՈՍ «մի տեսակ չար ցամաքեղէնի. բոռ» Շիր. 31։

=Յն. κόρος, որ փոխառեալ է եբր. כֹּר kor հոմանիշից. համմ. արամ. כּוֹר kōr, արաբ. كُرّ kurr, բոլորն էլ նոյն նշանակու-

թեամբ (Boisacq 497, Sophocles 682, Gesenius 17 361):—*Հիւբշ. էջ 388։*

Շիրակացին թէ՛ յոյնը և թէ եբրայեցին հայերէնից փոխառեալ է համարում։ Ուղիղ մեկնեց Աւգերեան, Բացատր. չփ. և կշռ. էջ 117=189։

ԿՈՐՈՎ *«քաջութիւն, կարիճութիւն» Յուդթ. թ. 6, եփր. ծն. որից* **կորովի** *«քաջ» ՍԳր. Կոչ. Ոսկ. Եւս. պատ.* **կորովել** *«պինդ պահել» Ոսկ. մ. ա. 16.* **կորովութիւն** *ՍԳր. եփր. փիլիպ. Եւս. պատ.* **կորովախօս** *Եւս. պատ.* **կորովաբան** *Ոսկ. բ. կոր.* **կորովածիգ** *Փարպ.* **կորովամիտ** *Մծբ.* **առդարակորով** *Եղ. ժբ. 21. Նկն. ևն։*

Տէրվ. Նախալ. 78 **կար** *բառի հետ (տե՛ս անդ)։ Հինք. լտ.* vigor *հոմանիշի հետ։* Scheftelowitz BB 28, 308 *հրդ.* kraft, *հիսլ.* kraptr, *նիսլ.* krœfr. *«ուժեղ» բառերին ցեղակից է դնում։* Karst, *Յուշարձան 430 թաթար.* kar, kor, *չուվաշ.* kor *«որոնել, նայիլ, դիտել»։ Տատ,* Вступительныя и закл строфы ...Шоты, *էջ* XXXIV *նոյնպէս բառի հետ կցում է վրաց.* **ղ՛ռմածվիլի** *«պատանի, երիտասարդ» ձևին, որի սեմական ցեղակիցներն են արաբ.* غلام ɣulām, *եբր.* עלם ʿelem *«պատանի». բոլորի արմատը յաբեթական* kram:—*Հացունի, Դաստ. էջ 356* **կորովի** *«աղեղ» իմաստով է դնում Ագաթ. Հրտր. Վենետ. 1862, էջ 23 և Գիտ առ Կղնկտ. տպ. Մոսկ. 1860, էջ 18։*

ԿՈՐՈՒՐԱ. *նորագիւտ բառ՝ անյայտ նշանակութեամբ. մէկ անգամ գտնում եմ գործածուած Մխ. ատ. 15 «Սեմայ եւս զՊարսից աշխարհն և զԱսորոց և զՊաղեստինէ մինչև յՒրինոյ կորուրա, որ է Նեղոս»։*

ԿՈՐՏՔ *«աղաբ». ունի միայն Բառ. երեմ. էջ 168։—Ագրեօք* **կորկ** *«կեղտ» բա՞ռն է։*

ԿՈՑՈՒԿ *«մի տեսակ չերմահալած փշոտ բոյս է.* spina arabica» *Բժշ. ունի միայն ՀԲուս. § 3380։*

Գիւր.—Նո՞յն է ՀԲուս. § 1514 յիշուած **կոցուկ, կոձձուկ, կոձուկ** *«խոտեղէն բոյս,* heracleum» *բստ Պոնտացոց.—իմա՛* **կոցուկ** *խաչ. «Թերխաշ կամ քեղ կոշուած բոյսի անամէջ ղսխը՝ որով սամավարի կրակն են փչում արծարծում»։*

ԿՈՒ *տե՛ս Կոյ։*

ԿՈՒԳԵԼ *տե՛ս Գուգէլ։*

***ԿՈՒԶ,** *ի, ո հլ. «կատու» Բարուք ղ. 21. Կոչ. էջ 97, 270. Ոսկ. մ. ա. 8. «կատուի նման մի անասուն, որ նշանաւոր է հաւ խեղդելու մէջ. սամսար» Մամիկ. Վրդն. հլ. որից* **կզակն** *«կատուի աչք քարը» Պատկ.* Драгоцен. камни, *էջ 72.* **կզաքիս** *(նոր բառ)։*

*=Իրան. *kūz ձևից, որ չէ աւանդուած. բայց նոյնն են հաստատում իրանեանից փոխառեալ ասոր.* ḥaz quzā *«կատու, կուզ», ասուր.* kuzā, quṣā «martencat, lynx *կզաքիս, լուսան»* (Muss-Arnolt, Ass. Handwb *375 բ) և նրանից ածանցուած քրդ.* کوژ kuže *«կուզ, կզաքիս»,* kūžä, kuzik *«կուզ», զազա.* quze *«գորշուկ» ձևերը։—Հիւբշ. 308։*

Նախ ԳԴ կցում է պրս. **կիւզ** *հոմանիշ ձևին, որ սակայն իր բուն բառարանում չկայ։* Justi, Dict. Kurde *349 քրդ.* kuže *բառի դէմ յիշում է հյ.* **կուզ, կզնաքիս,** *սանս.* kaçika *«գորշուկ»։ Վերի ձևով է Հիւբշ.* ZDMG *36(1882), 131 և* Armen. Gram. 308:

ԳԻՒՐ.—Մկ. Մշ. Սլմ. Վն. **կուզ, ՋԲ. Խոչ. զուզ, Ոզմ. կօզ։**

***ԿՈՒԶ** *«սապատող». առանձին չէ գործածուած հին մատենագրութեան մէջ. կայ միայն յետնաբար Տաթև. Հարց. 370, գաւառականներում և արդի գրականում. որից կզուքիւն Գէ. հս։*

=Պրս. کوز kūz *«ծռած, կուզ, սապատող, ծերութիւնից կամ հիւանդութիւնից կքուած՝ երկուտակուած» բառից, որի հետ նոյն են պրս.* کوژ kūž, کوزه kūza, *սոգդ.* kūž, *աֆղան.* kōẓ *սանս.* kubja- *հոմանիշները. պարսկերէնից են նաև քրդ.* kuz *«կուզ (ածական)»,* kuzek *«կուզ (գոյական)»։—Հիւբշ. 269։*

Ուղիղ մեկնեց նախ ԳԴ, որ կցում է պրս. **կիւզփիւշք** *«սապատող» բառին։* Böttich. Rudimenta *43, 132 ասոր.*

qustā, պրս. kōž, իբրև kuč արմատից՝ նոյն, ZDMG 1850, 356 տես. kubja, որին Arica 36 աւելացնում է աֆղան. kōy, kōz: Lag. Urgesch. 938 դնում է տանս. ձևը՝ Müller SWAW 38, 593 կուզ<կովզ<տանս. kubja: Justi, Zendsp. 76 գնդ. kaožda «նզևրք, ծայր» բառի տակ։

ԳԻՒ.—Ալշ. Ախց. Երև. Կր. Մկ. Մշ. Շմ. Զղ. Սլմ. Վն. կուզ «կուզի սապատը», Տփ. կուզ «կուզի սապատ», իսկ կուզօ, «կուզ, սապատող», Զթ. Խրբ. գուզ (ած.), Ննխ. Պլ. Սեբ. գուզ «սապատ», Ոզմ. կօզ «կուզ մարդը», Գոր. կո՛զլիկ, Ննխ. գուզլիգ, Ղրբ. կո՛ւզլիգ՝, զո՛ւզլէգ՝ «կուզ մարդ»։ Նոր բառեր են կուզ «ծառերի վրայ ուռեցք», կուզ աճել, կուզն աճել «ծածկուիլ, պահուիլ», կուզէ կուզ, կուզիկուզ, կուզիկ, կուզուզ, կուզուզիկ, կուզիկ-մուզիկ, կուզլաճ, կուզաճ, կզաճ «կարճահասակ», կուզուզալ «ձերուբիւնից կամ ցաւից կուզ դառնալ, մէջքը ծռուիլ», կուզպարզ «մի գործ կատարելու համար բարձրանալ-իջնելը», կզիլ (Տիգ. զրզգիլ), կզուիլ, կզաճալ «կէս մէջքից երկուտակ լինել, հակիլ», կզուաճց «կռացած», կզուկ «ծռուած»։ Այս ընդարձակ գործածութիւնը, գանազան նորակերտ ածանցները և դրկի բոլոր բարբառներում գտնուելը ցոյց են տալիս՝ որ բառը հին և տարածուած մի ձև էր։

ՓՈՒԽ.—Վրաց. კუზი կուզի «սապատ», კუზიანი կուզիանի «կուզ», კუზება կուզեբա «ծռիլ», მოკუზვა մոկուզվա «ծռել, կամարաձև դարձնել», დაკუზვა դակուզվա «ծռուիլ, հակիլ»։ այս իմաստները չգտնուելով իրանեանի մէջ՝ բոլոր վրացի ձևերը հայերէնից պէտք է փոխառեալ լինին։ Այսպէս է նաև Բրք. գուռ. Կր. guzig «կուզիկ» (Բիւր. 1898, 627 և Foy, Mitteil. des seminars f. Orient. Spr. Berlin 1904, էջ 213)։

ԿՈՒԽ «գլխաւոր». ունի միայն Բառ. երեմ. էջ 168։

—**ԿՈՒԽԹ** աե՛ս կխթ։

ԿՈՒԽԹ «դինու տականք». մէկ անգամ ունի Ոսկ. յհ. ա. 21. «կուխթ ինչ մրրախառն (=յն. τρύξ «տականք գինու կամ ձէթի») ի ներքս ի թակոյկսն մնացեալ էին» (էջ 212)։

*ԿՈՒԽՓ (ո հլ. բառ ՆՀԲ, բայց առանց վկայութեան) «ջրի աւան (խեցեղէն կամ փայտէ, մեծ կամ փ[illegible]ր)» ՍԳր. որից կժաւոր Անյ. վերլ. արխ։ կխսակուժ Վստկ. 43. Եչխարհակուժ Կանոն. կժակարկած «մեծ դրումի՝ որ իբրև գինու աման են գործածում» (Նորագիւտ բառ) Մագ. թղ. 80։

=ՊՀլ. *küž «կուժ» ձևից, որ թէև չէ աւանդուած, բայց նոյնն են հաստատում պրս. کوز kūza «կուժ, սափոր», սոգդ. kūž⁰tīk «կուժ», և իրանեանից փոխառեալ հետևեալ ձևերը. ասոր. ܟܘܙܐ kūzā «մի տեսակ ջրաման, կուժ», արաբ. كوز kūz «փորր կուժ, փարչ», աֆղան. kūza «հողէ կաուցաւոր ջրաման», վրաց. ჭუზი ḥուզի, քրդ. kuz, kuzik «ջրաման, սափոր», չաղաթ. كوزه küze «կուժ», արևել. Քրբ. كوزا köza «կուժ»։ —Հիւրշ. 173։

Ուղիղ մեկնեց նախ Schröder, Thesaur. 17 դնելով պրս. kuz բառից՝ նոյնը լեռոյ Աւգերեան, Բցատր. չի. և կշռ. էջ 118 պրս. ḥուզ։ ԳԴ պրս. küza կամ نیگزه nigažda «կուժ, ըմպանակ»։ ՆՀԲ արաբ. գուզ, պրս. գուզէ։ Böttich. Arica 75, 224, Lag. Urgesch. 938 պրս. küza: Ջուբինով՝ վրաց. კოჭობა կոճոբա, კოჭობი կոճորի «կուժ»։ Lag. Ges. Abhd. 55 պրս. küzah և ասոր. արաբ. küz: Justi, Zendsp. 91 գնդ. xavza «աման», պրս. küzah, տանս. kubja: Հիւնք. պրս. ḥուժ, ḥուշէ=կուժ, աշխ. կուշ։

ԳԻՒ.—Ալշ. Ախց. Երև. Կր. Մկ. Մշ. Շմ. Զղ. Վն. Տփ. կուժ, Խրբ. Ռ. գուժ, Մրդ. Սլմ. կիւժ, Սվեդ. գէօժ, Ասլ. գիւժ, Գոր. Ղրբ. Մժ. կօժ, Ագլ. կէժ։ Նոր բառեր են կուժկոտրող, կուժկոտրիկ, կուժկոտրուկ, կիսկուժ, կրժտուն, կժփարշ. ունինք նաև կզիկ Վն. «հողէ աման՝ ջրի համար»։

+**ԿՈՒԿ** «կուլ տալու գործողութիւնը». առանձին գործածուած է միայն հրմ. կո՛ւլ ձևով՝ որ ոսկեդարեան է և ի կուլ տալ «կուլ տալ» ոճով՝ որ յետին է. (ունին Տաղ. Մխ.

ապար.). այս արմատից են կազմւում կլանել, կլեղուլ *«կուլ տալ» ՍԳր. Կոչ. Եփր. ծն. Եգն. Ոսկ.* կլուցանել *«կլլեցնել, կլանել տալ» ԱՔ.* աշխարհակուլ *Ագաթ.* ծովակուլ *Ոսկ. մ. ա. 20. և Եբր. իգ.* ջրակուլ *Նար.* ջրհեղեղակուլ *Ոսկ. ես. 332.* դժոխակուլ *Եւագր.* ամենակուլ *Կորիւն.* գիշերակուլ *Գիւտ.* դժուարակլանելի *Լմբ. առակ.* լեռնակուլ *Բրս. ապաշխ.* խաւարակուլ *Ագաթ.* ձկնկուլ *(նոր բառ)։—2.* **Ընկլնուլ** *«կուլ գնալ, ջրի տակ ընկղմիլ» ՍԳր. կազմուած է* կլնուլ *բայից ընդ մասնիկով (բաղաձայնի մօտ դարձած* ընկ-*). որից* ընկլումն *Խոսք. անցողականը՝* ընկլուզանել *«ընկղմել տալ» (Համմ.* վլուզանել, ելուզանել*) ՍԳր.* ընկլուզումն *Կիւրղ. Թգ.* ընկլուզիչ *Լմբ. սղ։—3.* **Ընկղմել** *«ջրի տակ երթալ» ՍԳր. Եգն. Եփր. ծն. կազմուած է նախորդի նման* ընկ(ղ) *մասնիկով և մ ածականով, որով և գանուելով բաղաձայնի մօտ՝ դարձել է ղ. որից* ընկղմելութիւն *Փարպ.* ընկղմիչ, *Փիլ.* ընկղմութիւն *Ոսկ. բ. կոր.* ընկղմեցուցանել *Մաշկ. (գրուած է* ընգղըմել *Անան. ժմնկ. 51)։*

=*Բնիկ հայ բառ. պատկանում է հնխ.* *gel- *«կուլ տալ» արմատին. սրա ժառանգներն են հիւս.* gelim *«ուտել լափել», միւլ.* gil, *կորն.* gel *«տգրուկ», սանս.* जलूका jalukā *«տգրուկ», հբգ.* këla, *հանգլ.* ceole *«կոկորդ, վիզ», հոլլ.* keel, *գերմ.* Kehle *«կոկորդ»։ Այս* *gel- *արմատից տարբեր էր հնխ.* g^{w}er- *«ուտել» (>հյ. կեր), որի վրայ ունենք բառի տակ։ Երկու արմատներ ազդելով իրար վրայ՝ ձևացաւ հնխ.* g^{w}el- *արմատը, որի ձայնդարձն է հնխ.* g^{w}ul-: *Առաջին* g^{w}el- *ձևից են գալիս յն.* βέλεαρ *«խայծ», լուս.* βλῆρ *«խայծ», յն.* βέλος, βέλετρον *«խայծ»,* βλωμός *«հացի պատառ» են։ Երկրորդ* *g^{w}ul- *ձևից են ծագում լս.* gula *«կոկորդ»,* glutio *«կուլ տալ»,* glutus *«կոկորդ», հսլ.* glŭtŭ *«կոկորդ»,* glŭtati *«լափել», ռուս.* глотать *«կուլ տալ»,* глотокъ *«մի ումպ, մի կում», սերբ.* gût *«կոկորդ», չեխ.* hlt *«կում», սանս.* gala *«վիզ, կոկորդ», հյ. կուլ «կուլ տալ», որի հետ նոյն է կուլ «կոկորդ» պահուած միայն մի քանի գաւառականների մէջ* (Walde 355, Boisacq 173, Berneker 309, Kluge 248, Brugmann I² *453, 604 են)։—Հիւբշ. 460։*

Klaproth, Asia polygl. *104* կուլ *«կոկորդ»=պրս.* gelu, *բննգալ.* gola, *լտ.* gula, *գերմ.* Kehle: *ՆշՓ լծ. լտ.* glutio: Böttich. ZDMG *1850, 357 և 139,* Arica *89, 445 սանս.* gar:—Müller SWAW *38, 571 են սանս.* gar, *լտ.* gula: Justi, Zendsp. 101 *զնդ. սանս.* gar, *պրս.* āẓardan, *հյ. կեր։ Հիւբշ.* KZ *23, 20, 33, 35* կլանել *և կեր միացնելով՝ լտ.* deglutire *են։ Տէրվ.* Altarm. *9 և Նախալ. 13, 78 իրար է կըցում կեր, կուր, կուլ, որկոր, կոկորդ։ Բոլորն էլ դնելով* gar *արմատից. Համմ. սանս.* gar, *յն.* βιβρώσκω, *լտ.* vorare, *լիթ.* gérti *«խմել» են։* Bugge, Etr. u. Arm. *էջ 31 նոր.* culsu *«մահուան աստուածուհին» մեկնում է հյ. կուլ-չուն «կլանող շուն»։ Հիւնք. լտ.* gula, glutio *են։* Meillet MSL *9, 150 և 22, 48 հյ.* ընկլնում *և* ընկղմել *ձևերի դէմ դնում է լիթ.* gilùs *«խոր»,* gelmẽ *«խորութիւն», որով դրանք համարում է տարբեր արմատից։ Աճառ.* MSL *15, 244 միացնում է գր.* κύλ *են, որոնց վրայ տե՛ս տակը։* Karst, Յուշարձան *415 մոնգոլ.* xogolai, *բուրեաթ.* xoloi, kõle, *Թունդուզ.* kongolo *«կոկորդ» բառերի հետ։ Մաս տե՛ս* կլափն *բառի տակ։*

Գիւ.—1. Ախց. Երև. Կր. Մկ. Մրղ. Շմ. Ջղ. Վն. Տփ. կուլ տալ, *Ննխ. Սեբ. Սչ.* գուլ դալ, *Համշ.* գուլ դվուշ, *Գոր. Ղրբ. Ոզմ.* կօլ տալ, *Սլմ.* ղ'ուլ տալ. *2. Զթ.* գօլճօլ, գօլճուլ, *Հճ.* գուլճուլ, *Ակն. Պլ. Ռ. Սեբ.* գըլլէլ, *Ասլ.* գըլլէ՛լ, *Տիգ.* գլլում, *Խրբ.* գըլլալ *(Բրքախօս հայերից՝ Առն. Բրբ.* -lemek *մասնիկով՝* կլլէլլէմէլ*), որոնք ծագում են կլանել բայից՝ անցնելով կլնել ձևից։ Չորրորդ լծորդութեան են պատկանում Սլշ. Մշ.* կլում, կկլում *«կլանեմ, կկլանեմ»։ Առանձնապէս հետաքրքրական ձևեր են Ագլ.* կէլ *«կոկորդ», կէլ տօլ «կուլ տալ», Ղգ.* կուլ, *Ղրբ.* կօլ *«կոկորդ, ադամախնձոր», որից Ղրբ.* կօլ

աճել «կոկորդը վերև անկել,» կօ՛լավ ըղճել «գրկախառնուիլ», կըլվըկօ՛լ աճել «իրար փաթաթուիլ», կուլա՛տակ «խոփիկ», կուլըկա՛տրէգ՝ «ծնօտ», կօլտան «ծնօտը կապելու թաշկինակ», Ղզ. կուլ կուլի տալ «գրկախառնուիլ», Շշ. կուլկապ «վզի թաշկինակ» են։ (Ագլ. կել ձևի մէջ է պէտք չէ դնել իբր հնխ. e՝ gel- արմատի մէջ, որովհետև հյ. *կել պիտի տար Ագլ. *կիլ. անշուշտ Ագլ. կել ծագում է կուլ ձևից, ինչպէս կէժ՝ ծագում է կուժ ձևից)։ Նոր բառեր են կլամ կլամ աճել, կլաբան «կոկորդ», կլան լինել «կորչիլ, անհետանալ», կլուցել «կուլ տալ», կլցնել, կուլտուր։

*ԿՈՒԼԱԿ «բունքի վրայ կախուած մազի փունջը» Քուչ. 45 (Բուխ աչք ու բուխ ունք ունիս, բուխ մազեր, կուլակդ ի հոգիս). «2. գլխի մազը» Առաք. պտմ. 274. կենդանի է արդի բարբառներում. այսպէս՝ Բք. Սեր. գուլագ, Ակն. գուլիգ (<կուլակ, կուլիկ)։ Նոյն բառն է անշուշտ կուլակ «կաթոլիկ կրօնաւորների գագաթի վրայ ածիլուած տեղը», որ ունին միայն ՀՀՔ և ՋՔ իբր գաւառական բառ, Նորայր Բառ. Ֆրանս 313 բ՝ իբր միջին հյ. բառ։

=Պրս. کلاه kila «հիւսուած մազ, ծամ»։—Աճ.

Պատահական նմանութիւն ունի պրս. کلاک kulāk «պարապ, գաւարկ», որ պաշտաճում է ՀՀՔ-ի և ՋՔ-ի տուած նշանակութեան։

Գիւմ.—Բացի վերոյիշեալներից նկատելի է Մշ. գուլագ «գլխին թողած փնջաձև մազ»։ (Նկատելի է գ փխ. կ)։ Բլ. գուլանգ «տղաների քունքերն ի վար թողած մազի փունջը» (Հաղորդեց Ս. Մովսիսեան, նամակ 1933 մարտ)։

*ԿՈՒԼԻԲԱՅ (գրուած նաև կոլիվայ, կուլիպայ, կուլիփայ, կոլիբայ, կոլըմբայ, բուլիպա, բուլըմբայ) «հատիկ, շաքարի փուշիով խառն խաշած ցորեն, որ յոյները բաժանում են հարևաններին իբրև հոգու հաց» Յայսմ. նոյ. 13 (Մեղրով կուլիփայ եկեր, այս է հատիկ). Երզն. մաթ. 447. Գնձ. «խաշած ցորեն» Յայսմ. փետ. 17. (Ասէ սուրբն. կուլիփա կերիցեն... Ջի՞նչ է կուլիփայն։ Ասէ սուրբն. եփած ցորեն, զի մեք յԵւխայիտայ՝ եփած ցորենոյն կուլիփա ասեմք)։

=Յն. κόλυβα, κόλβα, κόλβια, κόλλυβα նոյն նշ. (Sophocles 675, որ ասում է թէ Փոքր Ասիոյ մէջ Euchaita բարբառում գործածական էր κόλβα, κόλβια ձևով). բառս գործածական է մինչև այժմ նոր յունարէնում, որից էլ փոխառեալ են թրք. قولیو qoliva և Պօլսահայ ժողովրդական բարբառով՝ գօլիվա (goliva), երկուսն էլ միայն յոյների համար գործածուած։ Յունարէնից են փոխառեալ նաև հսլ. kolivo, ռուս. кóливо, բուլգար. kolivo՝ նոյն նշ. (Berneker 547)։—Հիւբշ. 360։

Ուղիղ մեկնեցին նախ ՀՀՔ և ՆՀՔ։

Գիւմ.—Նոյն բառերն են կուլիբա Մշկ. «թարխանա», կուվլա Կիւր. «խաշած ցորեն, հատիկ»։

*ԿՈՒԼՈՒԹԻԱՅ «աչքի գնդ» Յայսմ. (մէկ անգամ գործածուած)։

=Յն. κολλούριον (յգ. κολλούρια), κολλούριον, κολλούριον, Նյն. κολλούρι «մի տեսակ օծանելիք՝ որ աչքի ցաւի համար էին գործածում». որից փոխառեալ են լտ. collyrium, Ֆրանս. collyre են։—Հիւբշ. 360։

Ուղիղ մեկնեց նախ ՆՀՔ։

ԿՈՒՄԱԿ «մի տեսակ փշաքեղ, ասորի բահման բոյսը» Բժշ. ունի միայն ՀՔուս. § 1521։

=Նո՞յն է գւռ. կայծուկ «ուղտափուշ» (որ և կիծուկ)։

ԿՈՒՄՈՒՒԻ «երիցուկ ծաղիկը» Բժշ. ունին միայն Նորայր, Բառ. Ֆր. 192 ա և ՀՔուս. § 1453։

⊙ԿՈՒԿԼՈՒԼԵԼ «աքլորի երգելը» Վրդ. բար. էջ 101։

=Բնաձայն բառ. հմմտ. Ֆրանս. cocorico, ռուս. кукорéкать, լհհ. kokorykać՝ նոյն նշ.—Աճ.

Գիւմ.—Ալշ. կուկլուկու, Մշ. կուկլուլու, Պլ. գուգուլիգգու են։

*ԿՈՒԿՆԱՐ «մի տեսակ ծառ է. փիճի կամ սոնոպրի» Բժշ. ունի միայն ՀՔուս. § 1523։

=Թրք. کوکنار köknar «եղևին, sapin». —Աճ.

ԿՈՒԿՈՒԿ *տե՛ս* **Կնդուղ**:

ԿՈՒՂ *«ծալք, ոլորք, հիւսք»* Նար. *էջ 182. Լմբ. ժղ. «ձկնորսի կարթին անցկացրած մազի լարը»* Մխ. *ապար. որից* **երեկուղ** *«երեքը միասին ոլորուած (չուան)»* Լմբ. *որ և* **երեկղի** *ժողղ. դ. 12,* **չորեկուղի** *Աբ.* **Բառակըղեան** Նար. *խչ. 397*:

ՆՀԲ *(ծալ բառի տակ) լծ. երր.* **կալ**: *Տէրվ.* Altarm. *37* **կուղ** *և* **ֆուղ** *դնում է հնխ.* gu *արմատից՝ համեմատելով սանս.* guna *«չուանի մի ոլորքը, լար, առասան» բառի հետ*: Bugge, Btrg. *42 և* IF *1, 457 հանում է հնագոյն* *kuvλ, tvuvλ *ձևից, իբրև հնխ.* *dwoplo-. *Համմտ. լտ.* duplus, *լիւկ.* tbeplö, *յն.* διπλοῦς, *հբգ.* zwīfal. *որով* **կուղ** *նշանակում է բուն «երկիցս», ինչպէս ունինք* **երկու**, **կր-կին**՝ *հնխ.* dwō *ձևից*: *(Նոյնը ընդունում է* Brugmann, Grdr.² I 305): Scheftelowitz BB *28, 308 լտ.* gluo, *անգսք.* cleoven *«ամփոփուիլ, կծկուիլ», յն.* γλουτός *«յետոյք» ևն բառերի հետ*: *Նոյնը ընդունում են* Walde *348 և* Boisacq *151, բոլորը դնելով հնխ.* gleu- *արմատի տակ*: *Մ. Ս. Դաւիթ-Բէկ, Յուշարձան 398 նգալլ.* cul *«նեղ», կորն.* cul *«նիհար», իռլ.* cóil, *հբրտն.* culed *«նիհարութիւն» ձևերի հետ*:

Գիհ.—**Ղզ. կուղ** *«տրեխի եզերքին քաշուած փոկի երիզը». այլուր ունինք «սամիի փոկ» իմաստով. նոր բառեր են կղել Երև. Բլ. Խն. «չուանը ծալել», կղան Ղրբ. «կաշեայ հաստ փոկ՝ որով գութանը կամ սայլը լուծին են կապում», կղացու Ղզ. «կաշիի կտոր, որով տրեխի համար երիզ են շինում»*:

***ԿՈՒՂԲ** *(յետնաբար* **n**, **ու** *հլ.) «ջրշուն» Մխ. առակ. Բժշ. Գաղիան. Վրգ. առ. 225*:

= *Ասոր.* ܟܠܒܐ kulbā *«շուն» բառից, որից և* ܟܠܒ ܝܡܐ kəleb-yamā *«փոկ»* (Brock. Lex. syr. *էջ 158)*: *Բառը բնիկ սեմականէ, որի միւս ցեղակիցներն են ասուր.* kalbu, *արաբ.* كلب kalb *«շուն, նաև շնաձուկ», եբր.* כלב keleb, *եթովպ.* ካልብ kalb *«շուն»*: *Հայ բառը յառաջացած պիտի լինի ասորի մի այնպիսի դաւառական ձևից, որ ունէր* **ու** *ձայնաւորը*:—*Աճ.*

ՆՀԲ լծ. թրք. **ֆէլը** *«շուն»*: Müller SWAW *48, 429 և 84 (1877) 218,* WZKM *7, 281 սանս.* babhru, vabhru *«դորշ. 2. կուղբ», հսլ.* bobrŭ, *լիթ.* bebrus, *գերմ.* Biber, *պրս.* كربا kurba *«կատու»*: *Տէրվ. Նախալ. 173 հնխ.* bhabhru *«կուղբ» բառից*: *Հիւնք. արաբ.* **ֆէլպ** *«շուն»*: Karst, *Յուշարձան 415 մոնղոլ.* xali-gun, *կալմուկ.* xal-gun, *բուրեաթ.* kalyun, *Թունգուզ.* kalun, *մանչու.* xailun, xaixun *«կուղբ, ջրշուն»*:

ԿՈՒՂԲ *(կամ* **կղուբ**) *«մեծաղէ ամանի՝ մէջը կուպր կամ ձիւթ հալեցնելու համար». նորագիւտ բառ, որ երկու ձևերով մի մի անգամ գործածուած եմ գտնում Վրբ. և վկ. Ա. 508 «Հրամայեաց դատաւորն բերել ձէթ և ձիւթ և ծծումբ և կուպր, և խառնել ի միասին ի կուղբ երկաթի և ջեռուցանել քաջ և արկանել զգլխով նորա.... մատուցին զկղուբն մինչդեռ եռայր և հեղին զգլխովն նորա»*: *Նոյն վկայաբանութեան երկրորդ խմբագրութեան մէջ՝ բառը երկու անգամ էլ* **կուղբ** *ձևն ունի.—«Կուպր և ձիւթ և ծծումբ խառնեցէք և արկէք ի կուղբ երկաթի... և մատուցին զկուղբն մինչդեռ եռայր» (էջ 510)*:

Զարմանալի է որ Scheftelowitz. BB *28, 304 գիտէ* **կուղբ** *«պտուկ» և կցում է սանս.* kuṭa *«կուժ», պրս.* kuliča *«գուղձ», յն.* κυρτός *«կեռ» բառերին*:

ԿՈՒՂԲ *«հանգոյց, կապ». առանձին չկայ գործածուած. բայց ունինք* **կղբել** *«հանգոյց շինել, ամուր կապել» Զհնոբ. էջ 46 (հինգ ձեռագիրներից երեքը ունին* **կրբել**). *Յայսմ. մրտ. 2.* **կղբկապ** *«հանգոյց» ՀՀԲ. սրանց արմատը կարող է լինել* **կիղբ** *կամ* **կուղբ**:

ՆՀԲ **կղբել** *դնում է* **կուղ** *բառից*: Scheftelowitz BB *28, 307 և 29, 27 սանս.* grantha, *պհլ.* grēs, *պրս.* gireh *«հանգոյց», յն.* γρόνθος *«բռունցք»*:

Գիհ.—*Կայ միայն* **կղբկապ** *Ջն. «հանգոյց կապ» (ՆՀԲ ունի հոմանիշ* **կրբկապ** *ձևը)*:

ԿՈՒՂԽ «շատակեր, պորտաբոյծ, որովայնամոլ» Եւս. քր. Բ. 288 (մէկ անգամ միայն գործածուած)։

ՆՀԲ «որպէս թէ կուլմ» (կլանել բայից է հանում)։

ԿՈՒՂՊԱԿ տե՛ս Կրպակ։

ԿՈՒՃ տե՛ս Կիճ։

ԿՈՒՃՈՒՄ «մի տեսակ խնկեղէն՝ որ Իսաւրիայից է դուրս գալիս» Խոր. աշխ. հրտր. Սուքրեանի, էջ 23 «Իսաւրիա. լինի անդ խունգս սոխրակ, կուճում, բոգումբիթ, կադամիտա»։ Սուքրեան (էջ 32) բառս թարգմանում է «colophane», բայց Խոր. մատ. 1865, էջ 602 համապատասխան տեղն ունինք «լինի յաշխարհիս յայսմիկ խունկս դիւրակոճոպս, ոպոգոմփիտ, կաղամբիտ»։ Ունի միայն ՀԲուս. § 1524։

ԿՈՒՄ «մէկ ումպ» Մխ. բժշ. 44, 51. որից կմաճաշակ «թեթև խմն ճաշակել, մի քիչ համը նայիլ». մէկ անգամ ունի Մագ. Թղ. 50 «Երեկ զկաղնեացն իմաստասիրել քիզ մանաւորաբար ի մերոցն կարասեաց կմաճաշակ շատացեալ ընկալաք ի քէն գոհութիւն»։ Նոր երանգ ստացած մի ձև է կումմ «բերանի երկու թուշերը՝ ներսի կողմից, ուր ջուր են առնելով՝ կարելի է պահել». նորագիւտ բառ, որ երկու անգամ ունի վատկ. «Առ հոռոմ ձէթ ի կումքդ և ի կոյղն փչեա՛», էջ 133 «Եւ թէ ի կումքդ առնուս և ի բոյնն կամ ուր լինին՝ փչես, ամէնն փախչին», էջ 197։

ՆՀԲ (հտ. Բ, էջ 1064 բ) գիտէ գուռ. կում ձևը, որ լծորդ է դնում խում բառին. բայց չանդրադառնալով սրա վրայ՝ կմաճաշակ բառը մեկնում է «իբր խմաճաշակ և կամ կմկմալով կիսաբերան»։ Պատահական նմանութիւն ունին արաբ. قم qam‘, արամ. גמע gəma‘, եբր. גמא gmā «կում կում խմել»։

Գիւտ.—Երև. Ղրբ. Մկ. Շմ. Ջղ. Տփ. կում, Ննխ. գում, Սլմ. ղ'ում «մի ումպ. մի անգամից կուլ տալու չափով հեղուկ». որից կում աճել Երև. Ղրբ. «մի ումպ խմել, թուքը հաւաքել և կուլ տալ», կմել Խոջ. «բերանը ջուր առնել պահել»։

*ԿՈՒՄԱՇ «ընտիր կերպաս» Տաթև. ամ. 507, ձմ. է. որ և նշանակում է «զանազան ապրանք, իրեր, տան պիտոյք են» Սմբ. դատ. 162 (այլ ձ. գիւրն «իրերը»), 164, Անսիգք 19, 83 (գրուած նաև կումայշ). նոյն բառն է՝ որ սխալմամբ գրուած է կումազ Սմբ. պտմ. 98 «Աւերեցին զքաղաքս և ըզգեղօղս նոցա դաւարկ թողին ի կումազէ (տպ. Մոսկ. էջ 85 ունի՝ ի գոմշէ!)։

=Արաբ. قماش qumāš «կերպաս, կերպասեղէն», որ հիմայ էլ գործածական է ամկ. խումաշ, դումաշ ձևով և «կերպաս» նշանակութեամբ։ Աւելի ընդարձակ տե՛ս վերը կամաս։—Ա՛ճ.

ԿՈՒՄԱՏՐՈՆ տե՛ս Կեմեւորիայ։

+ԿՈՒՄՐ «ուռեցք, ուռած մաս». արմատ առանձին անգործածական, որից կազմուած են՝ կմբեայ «վահանի մէջտեղի ուռած մասը՝ պորտը, ombon» Ոսկ. մ. գ. էջ 66. Երր. 490 (տպ. կմբեթեայ). կմբռաւոր կամ կմբրբաւոր (ուղղելի կմբաւոր) «պորտաւոր» Մխ. դտ. էջ 264. Սմբ. դատ. 87. ոսկիկմբեայ (կամ ոսկեկմբեայ, ոսկիկմբէ, ոսկեկերեայ) «մէջտեղը ոսկեղէն մի պորտ ունեցող» Բուզ. ե. 32. Ոսկ. Եփես. 769 (տպ. ոսկի գմբէիւ). Հռոմ. 193 (տպ. ոսկի գմբէիցն) բոլորն էլ վահանին իբրև ածական։

=Բնիկ հայ բառ՝ հնխ. gumb- ձևից, որի ժառանգները գտնում են միայն բալթիկ-սլաւական ընտանիքում. համմտ. լեթթ. gumba «ուռեցք», լիթ. gu_bas «ածած ուռուցք կամ բարձրութիւն որևէ գործարանաւոր մարմնի կամ նաև քարի վրայ», հսլ. gǫba. ռուս. губа, ուկր. húba, բուլգար. gъ'ba, չեխ. houba, լհհ. gąbka, սերբ. güba, որոնք բոլոր նշանակում են «սպունգ, սունկ», վերջինը նաև «բոր, բորոտութիւն, քոս», որից gǫbav «բորոտ»։ Այս լոլորի նախահաձևն է gumba- (Berneker 340, Trautmann 101)—Pedersen ուղեցել է վերի ընտանիքին միացնել նաև յն. σφόγγος, հյ. սունկ, հբգ. swamb, գերմ. Schwamm, վերջինի նախաձևը դնելով sg (h)ombho-: Pokorny 1, 574 յիշած բառերս դնում է հնխ. պարզական gem- «բռնել» արմատի տակ, բայց կասկածով (իբր շրթնային աճակա-

նով)։ Այստեղ կարելի էր աւելացնել թերևս նաև նորվ. kump «գունդ, դուղձ», դան. kumpe «ալիւրի գունդ», նորվ. kamp «վրան ուռուցքներով կլորիկ քար, լեռան գագաթ», հհիւս. kǫppusteinn «կլորակ քար», անգլ. camp «գետնախնձորի կոյտ՝ յարդով ու հողով ծածկուած՝ ձմեռուայ համար իբր պաշար» ևն։—Աճ.

ՆՀՌ կումբ արմատին է կցում կմբեր, գմբեր։ Սխալւում է ՓՒ, որ գրում է կմբայ «վահան» և կմբեայ «գոգաւոր»։ Lag. Ges. Abhand. 54, 23 միացնում է կամար բառին։ Scheftelowitz BB 28, 308 անգամ. cumb «խոռոչ», մբգ. kumpf «աման», պրս. kumbed «գմբեթ» բառերի հետ։ Lidén, Arm. Stud. 42 ծան. հհիւս. kúf-óttr «կլոր, գնտաձև», նիսլ. kúfur «ծայրը կլորաձև» ևն։

ԴԻՒՒ.—Բլ. գըմբ «մարդու, մանաւանդ նորահաս եղան, գոմէշի պարանոցի վրայ եղած թմբաձև ուռած մասը» (հաղորդեց Ս. Մովսիսեան, նամակ 1933 մարտ)։

*ԿՈՒՆԴ «ծառի կամ փայտի կոճղ». հնից չէ՛ աւանդուած, բայց կայ նոր բարբառների մէջ՝ զանազան ձևերով. այսպէս՝ կոնդ Ախց. Ախք. «գերան», կոնդ Բբ. Խոջ. «տանիքի գերան», կոնդ, կենդ. Ղրբ. «խաղի կեռ գաւազան», կոնդ Կղզ. Մշկ. «ծառի ճիւղ», կոնդ Ղզ. «անտաշ, անհարթ», կոնձի Ղզ. «անտաշ, անհարթ», կոնձի Ղզ. «գերան». մի քիչ աւելի հնից ունինք կունդ «մահապարտի վիզը կամ ոտքը կապելու կոճղ» Ջբր. սարկ. Բ. 3, 4. «Եւ ապա բերեալ կունդ՝ եդ ի պարանոցն և կախեաց ի բարձր որմէ... և ջարդեաց զկունդն». Բ. 41. «Դնել կունդ ի պարանոցն» ևն։

=Պրս. كند kund կամ كندا kunda «կոճղ՝ յոր անցուցանեն գոտս յանցաւորաց». (Համմտ. նաև յն. κοντός «գաւազան, մահակ», որ անշուշտ պատահական նմանութիւն ունի մեր և պրս. բառի հետ)։—Աճ.

Այս մեկնութիւնս հրատարակուած է նախ Գաւ. բառ. էջ 591։

ԿՈՒՆԴ (որ և կուճտ) «մազերը թափած, ճաղատ, հերաթափ» Ղևտ. ժգ. 40. Յայտմ. որից կնդել «փետել, ծառի բոլոր տերևները փրցնել՝ վատկ. 139. «չարշարել, կեղեքել, հարստահարել» Մխ. դատ. կնդակ կամ կընտակ «ճաղատ», Դ. թագ. բ. 23. կնդաճալ կամ կնտաճալ «ճաղատ դառնալ, մազերը թափիլ» եզեկ. իթ. 18. կնդութիւն կամ կնտութիւն «ճաղատութիւն» ՍԳր. Եւս. գ. 24, ժե. 2։

Klaproth, Asia polygl. 102 պրս. jund (որ գոյութիւն չունի)։ ՆՀՌ լծ. յն. κινδυνεύω «վտանգի ենթարկուիլ»։ Հինք. պրս. kunja, ganja «պոչը կըտրած էշ»։ Bugge, Lyk. St. 1, 16 Κύνθος լեռան անուան մէջ է որոնում։ Թիրեաքեան, Արիահայ բռ. 124 գունդ «գնդաձև» բառից։ Petersson, Ar. u. Arm. Stud. 87 յն. γομφός «մերկ», սերբ. gúliti «կեղևել, ծառը կնտել», սլովէն. gúliti «մազերը՝ մորթը հանել»։

ԴԻՒՒ.—Ոզմ. կունդ «ճաղատ», Երև. կունդ աճել «պատուաստելիք ծառի ճիւղերը բոլոր կտրատել», որից Մշ. Սլմ. կնդել, Զղ. կնդել, կունդել, Շմ. կնդիլ, Պլ. գնդէլ «գլխի մազերը խոր կտրել» (նոյնն ունին նաև Ախց. Արբ. Եւդ. Մն. Խրբ. Սվ. Վն.), Սալ. Արբ. «այծերի և ոչխարների բուրդը խուզել», Աստ. «ածիլել», Երև. «թուխի կամ ծառի բնից վեր զանուած ճիւղերը բոլոր կտրատել», կնտոզ Մշ. «մերկ», կնտոռել Երև. «բոլորը կնտել», կնտուկ Տ. «մազերը խոր կտրած»։—Այս բառն է՛ որ շփոթուելով կամ նմանեցնելով գունդ բառի հետ՝ դարձել է գնդել «մազերը խուզել», ինչպէս ունինք ՀՃ. գ՛մնդել։

*ԿՈՒՆԴ «քաջ»? մէկ անգամ միայն գործածուած է իբր ածական Արամազդի. «Ոչ Արամազդ ոք, այլ ի կամեցողն լինել Արամազդ, չորից ևս այլոց անուանելոց Արամազդ. այսպէս և բազումք անուանեալ Տիգրանք, մի է և միայնակ ի Հայկազանցս». Խոր. Ա. 31։

=Պհլ. *kund, որ հաստատում է և պրս. كند kund «կորովի և քաջ» բառը, որից كندا kundā «կորովի և քաջ», كندگر kundāgar կամ كندور kundāvar «քաջ և կորովի» (Շահնամէում «հպարտ» նշանակութեամբ գոր-

ծածուած)։ Որովհետև պրս. բառը նշանակում է նաև «բութ, դուլ», ուստի Horn § 868 բառը կցում է սանս. कुण्ठ kuṇṭha- «բութ» բառին, որ սակայն «քաջ» նշանակութեան յարմար չէ։ (Պարսկերէնից փոխառեալ ձևերի մասին տես նաև գունդ բառի տակ)։ Վերի հատուածում Խորենացին ուզում է ասել թէ Արամազդ աստուած իրապէս չկայ. բայց կան այդ անունը իրենց վրայ կրող անձեր. որոնցից չորսը յայտնի են և որոնցից մէկն էլ Կունդ Արամազդն է. (հմմտ. Ագաթ. Մեծն արիւն Արամազդ)։ Խորենացին ակնարկում է Սասանեան Որմիզդ անունով թագաւորները, որոնք մինչև Զ դար չորս էին և որոնցից Որմիզդ Ա (Գ դար) կրում է «քաջ» տիտղոսը։

Խորենացու իտալական թարգմանիչը (Վեննա. 1850, էջ 84) մեկնում է պրս. kund «քաջ»։ Նոյնը նաև Լանգլուա։ Միւթան, Խոր. պատմ. ուսումն. էջ 4—7 մերժելով այս՝ բնագիրը համարում է կատար (իբր «գլուխ, գլխաւոր»), որ յետոյ ընդօրինակողները սրբագրել են կունդ «ճաղատ», իբր անարգական ածական Արամազդին։ Ուղիղ մեկնութիւնը վերի ձևով տուաւ Նումէն (Մառ), Արաքս Գ (գիրք Բ), էջ 59—62։ Պրս. kund ձևով ունի նաև Թիրեաքեան, Կարնամակ ծան. 63։ Սիօն վրդ., Հովիւ 1907, 567—9 մեկնում է «գնտլիկ՝ կլորիկ մարմնով»։ Աւդալբէգեան ՀԱ 1926, 391—6 գտ. կունդ, կոնդ «հաստ, մեծ, ծայր, կատար, գլուխ» բառով։

ԿՈՒՆԴ. անստոյգ բառ. մէկ անգամ գործածուած է Ոսկիփ. «Կին մի կախարդ և կունդ՝ չարագործացն բարի առնէր և բարեգործացն պատուհաս»։

Նշ՞ր համարում է սկունդ «շուն» բառի ռամկականը։ Ինչո՞ւ չհասկանալ պարզապէս «կնտակ, ճաղատ, քաչալ»։

ԿՈՒՆԴՆ տե՛ս Գունդ։

ԿՈՒՆԴՈՒՒ, ի–ա հլ. «սուրհանդակ». ունի միայն ԱԲ, իբր անստոյգ բառ. մէկ անգամ գտնում եմ գործածուած Մագ. թղ. 88 «Ի քաղաքս և ի դղեակս օգնեսցեն, տալով մեզ օգնականութիւն և ի ժամանակի ի ձեռն փութահասիկ կունդուաց» (այլ ձ. կուռուաց)։

ԿՈՒՆՁՆ տե՛ս Գուղձն։

ԿՈՒՇ «աղեղի լար». նորագիւտ բառ, որ մի անգամ գտնում եմ գործածուած Բ Կոր. 34 «Ունիս կամար ունքիր զերիվ աղեղան կուշ»։—Ամատ, Հայոց բառ ու բան, էջ 366 «աղեղի կորնթարդ փայտը»։

*ԿՈՒՇՏ, ի–ա հլ. «կող» Դտ. գ. 21. Երեմ. ծա. 34. Ոսկ. ես. Ագաթ. «փոր» Եւագր. (Հացիւ և ջրով լնուլ զկուշտս իւրեանց). որից սնակուշտ «մէջքի կակուղ անոսկոր մասը» ՍԳր. Եփր. Թգ. (նոյն է թուլակուշտ Առաք. պատմ. 420). կշտագող «դողացող զկողակից այլոց» Պատմ. աղէքս. (որով կուշտ առացած կլինի «կողակից, կին» նշանակութիւնը). կշտապիճղ «փորը լաւ պնդացրած՝ լցրած» Ես. կզ. 11. Ոսկ. եբր. կշտապճղիլ Ոսկիփ. կշտապճղութիւն Եւագր. կշտալիր «փորը լիքը, կուշտ» Եւագր. վերջիններից ենթադրուած է կուշտ «յագ, յագեցած» բառը՝ որ գործածական է միայն յետին հայերէնում (օր. Կոստ. երգն. էջ 93). փխբ. «լաւ, շատ, սաստիկ» Սմբ. դատ. էջ 123 (ծեծեն կուշտ). որից աճկուշտ «փորը պարապ, չյագեցող» Ոսկիփ. և գտ. կշտաճալ, կշտում, աճկըշտում, կուշտուկուռ, կուռուկուշտ, կուշտկռուշտ, կուշտիռոր, կշտաճամ, կշտափորիկ, կշտապատառ։ ԱԲ ունի նաև կուշտ «խոռոչ», որ նոր առում է միայն. հմմտ. սնակուշտ, գտ. Թրք. boš «պարապ» և «կուշտը, կողերը»։

=Փոխառեալ է պհլ. *kušt ձևից, որ հաստատում են պրս. کشت kušt կամ gušt, gišt «կուշտ, սնակուշտ», ղազ. kišt «կուշտը, կող»։—Նոյնից է կազմուած պրս. kuštī giriftan «ըմբշամարտիլ» ոճը, որից թարգմանաբար հլ. կշտի բռնել «ըմբշամարտիլ». (նորագիւտ բառ) Անկ. գիրք հին կտ. 316 և գտ. կող բռնել «ըմբշամարտիլ»։—Պրս. բառը ծագում է հնխ. qeu-s արմատից, որի ժառանգներից են սանս. koṣṭha «որովայն», kuṣṭhikā «փորոտիք», յն. κύστις «միզափամփուշտ», κύσθος «իգա-

կան անդամ», կիմր. cwthr *«յետոյք, ուղղաղիք», գոթ.* huzd, *հհիւս.* hodd, *գերմ.* Hort *«ապաստարան» ևն* (Pokorny *2, 550*)։ —*Հիւբշ. 173։*

Ուղիղ մեկնեց նախ ԳԴ։—ՆՀՔ լծ. պրս. խշդ, *լտ.* costa, *յն.* κοιλία։— Lag. Urgesch. *708 պրս.* kušt: *Նոյն,* Arm. Stud. *§ 1186 համմտ.* բուստի։— *Պատկ.* Арм. reorp. *57 պրս.* کوست kūst *«գաւառ»։ Հիւնք. պրս.* կիւշտ։

ԳԻՒ.—Ալշ. Ախց. Երև. Կր. Մկ. Մշ. Ջղ. Սլմ. Վն. Տփ. կուշտ, *Սչ.* գուշդ՝, *Խրբ. Հճ. Համշ. Պլ. Ռ. Սեբ. Տիգ.* գուշդ, *Ննխ.* գուշտ, *Ոզմ.* կօւշտ, *Շմ.* բուշտ, *Դոր. Ղրբ.* կօշտ, *Սվեդ.* գէօշդ, *Աալ.* գիւշդ, գիւշ՝, *Ագլ.* կէշտ, *Մրղ.* կըշտ, *որոնք նշանակում են «կուշտը, կողը կամ կողքին, բովը և յագեցած»։ Կարևոր է նկատել Մշ. յդ.* կշտներ, *Ջղ.* շտիս, շտիդ, շտին, *Ղրբ.* շտէս, շտէտ, շտէն *«մօտս, բովս, մօտդ, բովդ, մօտը, բովը». ածանցներից՝ Երև. Սլմ. Տփ.* կշտանալ, *Ագլ.* կշտա՛նիլ, *Ննխ.* գշտանալ *(գիւղերը՝* շտանալ*), Ակն. Պլ.* գիշդանալ, *Սչ.* գիշդ՝անալ, *Ջղ.* կուշտանալ, *Հճ.* գիշդանօլ, *Շմ.* բուշտանալ, *Հւր.* շտանալ *«յագենալ»։ Արմատը դարձել է Զթ.* գույդ՝, գուդ՝ <կուդ *«յագ» (այսպէս նաև Խոջ. համմտ.* տաշտ >տադ*)։*

ԿՈՒՊԱԿ *«բաստեռն». ունի միայն Բառ. Երևմ. էջ 49,* բաստեռն *բառի բացատրութեան մէջ։*

ԿՈՒՊԱՅ (գրուած նաև կուբայ, ղուպայ*) «Քրիստոսի գերեզմանի գմբեթը կամ մատուռը». գործածուած է միայն հետևեալ տեղերը. «Զգողգոթայ խաչելութեան տեղին և զսնարից կուպայի (ՇՀՆ.* ղուպայ*) գերեզմանին» Թղթ. դաշ. 28. «Զսնարից կուպային և կանթեղ մի ի վերայ գերեզմանին Քրիստոսի» Մխ. այրիվ. 60. «Որ զկուբայ սուրբ գերեզմանին պահէր՝ սիրէր զմեզ և փարէր զմեօք... պահապանն դուբային» Վրդն. պատմ. Վենետ. էջ 154 (Հրատր. էմ. էջ 202՝* կուպայ*). «Որ զկուպա գերեզմանին ծառայէր» Գիրք Թղ. 528.—յետնաբար դարձել է* գուբխայ *կամ* գուրդայ*. «Զամենայն ջահն գուբխայիցն գերեզմանին» Դրնդ. 243. «Վառեցաւ լոյսն ի գուբղային» Դրնդ. 365.—մէկ անգամ էլ գտնում եմ գործածուած «հեծանելի ուղտի վրայ շինուած գմբեթի» իմաստով. «Նստեալ ի յուղտ, նորակազմ զարդուք պաճուճեալ ականատուր թամբօք. և զուպայ ոսկի ընդելուզեալ ի շարս մարգարտաց գմբեթաձարդ ի վերայ նորա» Յայսմ. սեպտ. 23։*

=Արաբ. قبّة qubba *«գմբեթ», որից նաև Թրք.* qubbe, *ասկ.* խուպպէ *«գմբեթ»։*

ՆՀՔ որ առաջին վկայութիւնը միայն գիտէ՝ մեկնում է «որպէս յն. κύβη... *այսինքն գլուխ, կողմն գլխոյ և ընկոզմանումն, քնարան»։ Սրա համեմատ նաև ՋՔ և ԱԲ։ Ուղիղ մեկնեց Վարդանի հրատարակիչը (անդ)։*

ԿՈՒՊԳ *տե՛ս* Կողպել։

*ԿՈՒՊՊԱՅ *«կապայ, պարեգօտ, վերարկու» Վրք. հց. Բ. 411. որ և կուբայ «վերարկու» Մխ. առ. էջ 379։ Ուրիշ օրինակ չկայ։*

=Արաբ. جبّة jubba *(հգիպտական արտասանութեամբ* gubba*) «լայն վերարկու՝ որ գրեթէ մինչև ոտքերն է իջնում». սրանից է փոխառեալ նաև Թրք.* jübbe *հոմանիշը։— Հիւբշ. էջ 516։*

ՀՀԲ մեկնում է «բաժակ, ըմպանակ» (այլազգական բառ), որ վերինից բոլորովին տարբեր է. համմտ. գւռ. կուպպայ *Ջն. «ջուր խմելու յատուկ հողէ բաժակ»=իտալ.* coppa: *ՆՀԲ «կապայ, արաբ.* ճիւպպէ*, իտալ.* giubba*»։*

ԿՈՒՊՐ (յետնաբար ո հլ. միջին հայերէնում ր հլ. այսպէս՝ կպեր, կպերք *Պատմ. վր. էջ 80, Իրեն. ցոյցք 17) «ձիւթ, խաթրան» Ած. ժա. 3. Փիլ. Նոնն. Պատմ. վր. Վրդն. ծն. որից* կպրաշաղախ *Ագաթ.* կպրածիւք *Եղ. բ. 3.* կպրաձէք *Գնձ.* կպրապատ *Ոսկիփ.* կպրել *Փիլ. Վստկ 89.* կպրատեսակ *Ոսկիփ.* կպրեփեաց *«մէջը կուպր եփելու սան» Մխ. առ. 246.* կպրուբիւն *«կպչուտութիւն» Էփիմ. 220։*

=Ասոր. և արամ. קפרא kufrā*, արաբ.* كفر kufr *(փոխառեալ արամերէնից), եբր.* כפר kōfer*, ասուր.* kupru. *բոլորն էլ նշանակում են «կուպր, ձիւթ»։—Հիւբշ. 308։*

Նախապէս Schröder, Thesaur. *45 դրաւ եբր.* kōfer *ձևից փոխառեալ։* ԳԴ

արաբ. قِير qīr «կուպր»։ ՆՀԲ եբր. fo-ֆէր, foփր, խէմէր։—Müller SWAW 41, 12 փոխառեալ եբր. כֹּפֶר բառից (իմա՛ kōfer)։ Հինք. կարապ բառից։ Հիւբշ. 308 նկատում է որ ասորի ձևի դէմ հյ. սպասում էր fուփր կամ fուր (<fուվր)։ Այս պատճառով Jensen, Hitt. u. Arm. էջ 214 փոխառութիւնը դնում է ասուրերէնից և տեղի ունեցած հաթեան շրջանին։ Նոյնը նաև Scheftelowitz BB 29, 69։

ԳԻՒՌ.—Ախց. երև. Մկ. Շմ. Ջղ. Սլմ. Տփ. կուպր, Գոր. Ղրբ. կո՛ւպրը, Ալշ. Մշ. Վն. կուբր, Ոզմ. կօպր, Ագլ. կօպրր.—Նոր բառեր են անկպրել, կպրաճամ, կպրաճամիլ, կպրաճուռ, կպրամորթի, կպրեկարաս, կուպրուն կամ կպրուն։

ՓՈԽ.—Վրաց. კუპრი կուպրի «կուպր», კუპრიანი կուպրիանի «կպրեայ», მკუპრავი մկուպրավի «տիկ ձիւթող արհեստաւոր», թուշ. კუპრ կուպր «կուպր», ուտ. կուպրր «կուպր»։

ԿՈՒՌ «ծեծած, գործած, բանած (մետաղի համար)» ՍԳր. «կոխուած, բանուկ (ճամբայ)» Փիլ. այլաբ. ՅՀ. կՔ. «հոծ, սեղմ, խիտ» Ոսկ. ա. տիմ. ը. «խիտ» Նիւս. բն. «լաւ, բոլորովին, ի սպառ (զինուած)» Խոր. ղև. ՅՀ. կՔ. այս արմատից են կոել «ծեծել, կոփել, մետաղը ծեծելով բանիլ, գարբնել» Ես. խա. 7. Ոսկ. մ. բ. 25. Երգ վիպաս. (Խոր.), Ագաթ. Կոչ. «հաստատել, դնել (դաշինք)» ՍԳր. Ագաթ. «թխմել, ճխտել, մէջը խրել» Յաստ. ապր. 16 (Բանալին զբերանն և կեղտաշորս ի ներս կոէին.—այս իմաստը չունին բառարանները, բայց տե՛ս տակը գւռ). կուռ (ո հլ.) «կռեալ կոփեալ արձան աստուածների» ՍԳր. կռապաշտ կամ կռապարիշտ ՍԳր. կռատուն (նոր բառ). կռածոյ ՍԳր. կռած Ամբ. բ. 19. կռան «մուրճ (իբր գործիք կռելու)» Վեցօր. գ. էջ 48. Փարպ. կռանագործ Ագաթ. կռանակուռ Եղիշ. յես. 172. կռանել Պրպմ. անկուռ «անկոխ (ճամբայ)» Փիլ. լմբ. յայտ. էջ 11. երկաթակուռ Պիտ. ՅՀ. կՔ. երդմնակուռ Ժղ. հռոմկլ. բևակուռ Ագաթ. պատկերակուռ Ոսկ. մ. գ. 7. մարմարակուռ Ոսկ. մ. բ. 25. լուրեանցակուռ Բուզ. խաւարակուռ Զենոբ. կաճակուռ Վրդ. պտմ. կարծրակուռ Մագ. ոսկիակուռ Կոչ. 20. ֆարկուռ կամ ֆարակուռ Նորագիւտ Բ. մնաց. խդ. 12. Մծբ. որ և ֆարկոի Ա. մակ. ժգ. 27. կուռվիզ «ամուր՝ ուժեղ վիզ ունեցող» (չունի ԱԲ) Մխ. այրիվ. էջ 39։

=Խալդեան կամ կովկասեան փոխառութիւն է, ըստ որում գտնւում է բոլոր կովկասեան լեզուների մէջ՝ զանազան ձևերով և նշանակութիւններով. համմտ. վրաց. კრვა կրվա. კურა կուրա «զարնել, բաղխել, ծեծել, ծափ զարնել, կապել, կցել, կաշկանդել, կոճկել, կպցնել», გა-კურა գա-կ ւրա «ուժգին բաղխել, երթալ, փախչիլ», გარდა-კურა գարդա_կուրա «բաղխել, կրկնակի՝ ուժգնակի բաղխել, միասին կցել, կապել», და-კრვა դա-կրվա «կցել, փակցնել, մխացնել, ծեծել, գարնել», და-კრვა მათრახითა դա-կըրվա մաթրախխա «մտրակել», გამო-კვერვა գամո-կվերվա «մուրճով գարնել, ծեծել, դարբնել», კრული կրուլի «կապկապել, բանտարկեալ», კრულება կրուլեբա «շղթայ», კვერი կվերի «մուրճ, կռան», թուշ. კვერ կվեր, մինգր. კვეკრა կվեկրա, սվան. კვართხ կվարթխ, ավար. koart'a, kurt'a, արչ. k'urta, անդ. kurt'a, կայ. koarda, դիդ. kvandiru «կռան, մուրճ»։—Աճ.

Հներից Տաթև. ամ. 280 կուռ բառը մեկնում է «նախ զի կուրութիւն է մրոտաց, երկրորդ՝ զի կռեալ է և գործեալ»։ ՆՀԲ թրք. կիւռ «յորդ»։ Հինք. յն. κορμός «ծառը կնտել»։ Scheftelowitz BB 28, 304 հսլ. kruchŭ, հրգ. hrosā «կեղև», հիռլ. crúaid «կարծր, ամուր», յն. κρύος «սառոյց» են։ Karst, Յուշարձան 420 կռի, կառուցանել բառերի հետ՝ իբր թթր. qur-maq «լարել, կառուցանել, շինել», Մառ ЗВО 22, 78 երկրորդ սիւնակի kurpi «ձեռք կամ աստուած» (?) բառի հետ։

ԳԻՒՌ.—Խրբ. Ք. գուռ «կուռ, խիտ, ամուր՝ պինդ կպած (հագուստ)», երև. Վն. կռան «մեծ մուրճ», Ոզմ. կռան «ջաղացքի մասերից մէկն է», Պլ. Ռ. գուշդ ու գուռ, Սեբ.

գուռուգուշտ «բոլորովին յագեցած»,—շատ տեղ գործածական է կուռ (որ փոխառեալ է գրականից) և երկրորդաբար նշանակում է «անշարժ, արձանացեալ»։ Նոր բառեր են կոել Ասլ. Ննխ. Ջն. «ճխտել, թխմել, կուռ կերպով լցնել», Ակն. «չափից աւելի լցնել», Ննխ. «մերձաւորիլ», և Թերևս կռու Երև.=կռօ Ղրբ. «պինդ, չկտրուող (ընկոյզ ևն)»։

ՓՈԽ.—S. վրդ. Պալեան, Բիւր. 1898, 712 հյ. անկուռ ձևից է դնում Կեսարիոյ Բրբ. և Բրքախօս հայոց ու յունաց բարբառով engir «որթատունկերը յօտուելէն ետքը կոճղէն ծլած նոր, բայց տկար ծիլերը»։—Բայց այսպիսի հայերէն բառ ծանօթ չէ։

*ԿՈՒՐԱՔ «ագռաւ թռչունը». ունի միայն ԱՔ. մէկ անգամ գտնում եմ գործածուած Սիւն. քեր. 189, բնաձայն բառերի շարքում. «կուռաք, ագռաւ, կռունկ, հողմ, սիք և որք այսպիսիք»։

=Արաբ. غُرَاب ɣurāb «ագռաւ» (Կամուս, Բրբ. Բրգմ. Ա. 217)։—Աճ.

Հներից Սիւն. քեր. 189 համարում է բնաձայն. «Ի ձայնէ. որպէս կուռաք ագռաւ...»։ ԱՔ դնում է «թռչուն մը», իբրև անստոյգ բառ։ Քաջունի Գ. 129 համարում է «ագռաւ»։ Վերի մեկնութիւնս տե՛ս Հյ. նոր բառեր հին մատեն. Բ. 110, որ հաստատում է նաև՝

ԳԻՒ.—Սիփ. կռռափ «ագռաւ» (ըստ Ամատ. Հայոց բառ ու բան, էջ 359)։

*ԿՈՒՐԱՅ, ի հլ. «արաբ կարդացող, ղուրան կարդացող, հոգևորական» Ղև. իգ. էջ 115. Ասող. էջ 130. Ուռհ. 408. Վրդ. պտմ. (Վենետ.) էջ 74 և 140։ Գործածուած է միայն յգ. կուռայ f,կուռայից ձևով։

=Արաբ. قُرَّاء qurrā, որ անկանոն յոգնակին է եզ. قَارِئ qārī «ղուրան կարդացող» բառի. սրանից է փոխառեալ նաև քրդ. قُرِّ qurrê նոյն նշ։—Հիւբշ. 269։

Ուղիղ մեկնից նախ ՆՀՔ. նոյնը յետոյ Հիւբշ. ZDMG 35 (1881), 660։

ԿՈՒՐՁ «խստաբարոյ, դաժան» Առաք. պտմ. 100, 262 (այնքան կուռէՔ և դահիճք են քրիստոնէից. Այր գոռոզ և բռնագլուխ, այլ և կուռէճ ընդ քրիստոնէից). որից կուռկեցութիւն Առաք. պտմ. 8, 10, 262 (երկուսն էլ նորագիւտ բառ)։

ԳԻՒ.—Կռռէճ վն. «յամառ», Դվ. ԲԵՀ. «դաժան, հպարտ». իսկ Մրղ. (կօրէճ) նշանակում է «ընդհանրապէս մաքրասիրութեան մէջ շատ բծախնդիր» և յատկապէս մահմեդականների համար խօսելով՝ «նա՝ որ քրիստոնեաներից զգուում է և զգուշանում»։—Ամատ. Հայոց բառ ու բան, էջ 359 ունի գուռ. կռռէճ, կռռիշտ «բիրտ, սոպո, կռպիտ»։

ԿՈՒՐՆ, ն հլ. (սեռ. կռան) «կռնակ. մէջք, թիկունք» Կանոն. Մխ. դտ. էջ 182. Վրդն. սղ. ճլա, էջ 445. «Թևի և ուսի կպած տեղը» Տաթև. հրց. 241. «կողքը, Բրբ. եան» Տաթև. ամ. 118 (յիշում է հետևեալ առածը. Որ յամառն շրջի ի կռնէ ի կուռն, ի ձմեռն շրջի ի դռնէ ի դուռն). որից առ կռան լինել «ճիշտ մօտը՝ կողքին գտնուիլ» Ոսկ. մ. բ. 11. կռնակ Վրդ. առ. 23. Մագ. Թղ. 60, Վստկ. 48. կռնապանակ «Թևի զրահ» Ջքր. սարկ. Ա. 86. յետին ձև է կուռ, որից հյց. զկուռս Կրպտ. ոտ։

Հիւնք. կուռ, կռել բառերից։ Scheftelowitz BB 28, 304 և 29, 51 յառ. curvus, ալբան. kərús, kurús «կորութիւն, ծռութիւն», kərusem «ծռիլ», kurs «կռնակ»։ Lidén, Arm. Stud. էջ 115 յն. γῦρός «ծռած, կլոր», γυρός ἐν ὤμοισιν «ուսերը կլոր», γύαλον «փոս, խոռոչ, կամար» ևն, յատկապէս հիւլ. gúalu, նիւլ. գալլ. gúala «ուս»։ (Յիշում է Walde 216 այս երկու մեկնութիւններն էլ. իսկ Boisacq 159 Pokorny 1, 557 միայն վերջինը. սակայն հմմտ. ծուռ բառի տակ ասուածները)։ Սագրզեան ՀԱ 1909, 335 հյ. կռռն, կայոին, Բրք. girü «հտև», quyruq «պոչ», սումեր. egir «հտև, յետոյք» բառերի հետ։ Մառ ЗВО 22, 77 հյ. կարեմ, կալայ բառերի հետ՝ կցում է երկրորդ սիւնակի kurpi «ձեռք?, վրաց. խելի, լազ. խե «ձեռք» ձևերին։

ԳԻՒ.—Երև. Ջղ. կուռ «բազուկ», կուռը «քովը, կողմը», Ալշ. Մշ. կուռ (յգ. կռնէր) «երանք», վն. կուռ (սեռ. կռան) «թիկունք»,

Տփ. կուր «բազուկ», կուրը «կողմը», *Ագլ. Գոր. Ղրբ.* կո՛ռը «բազուկ», *Ոզմ.* կօւռ «կռնք, մէջքի մեծ ոսկորը», *Շմ.* կը՛ռը «թև», *Ախց.* կռնէր (չունի եզակի).—*Ախց.* կռնակ, *Խրբ. Պլ. Սեբ. Սչ.* գռնագ, *Ասլ.* գռնագ, գռնայ, *Սվեդ.* գռնօգ, *ՋԹ.* գօռնօգ, գօռնոգ, *ՀՃ.* գmrնօգ «թիկունք»։ Նոր բառեր են՝ կռնաբռնուկ *կամ* կուրբռնուկ, կրռնոլոր, կռնակախ, կռնամած, կռնասալակ, կռնատ, կռնատակ, տկուռ, կռնատել, կրռնատուր, կռնափաթաթ, կռնել, կռնիկախ, կռնալեղ։

ԿՈՒՍԱՆԱՎ «մաջուն, այն է գեղօրյաքով շինուած խմոր». *ունի միայն Բառ. երեմ. յաւել. Գէորգ Դպրէ, էջ 550, առանց վկայութեան։*

***ԿՈՒՍԴԱՐ** «նախաճաշիկ, collatio, jentaculum». *գիտէ միայն Ներսէսովիչ, Բառ. լտ.-Հյ. էջ 84 բ և 239 բ։*

=*Իտալ.* gustare «ճաշակել, համը նայիլ»։—*Աճ.*

ԿՈՒՍԹ «վուշ». *մէկ անգամ ունի Վրք. հց. Բ. 112 «Դէպ եղև ամենայն աշակերտացն նորա կուսթ լուսանալ ի գետն» (այլ խմբ. գվուշան. մի քիչ ցածրը՝ կտաւ, ցօղուն)։*

Նշ Բ մեկնում է «տեսակ ինչ բթանի կամ մերկ»։ Աբ միայն «բթան, կտաւ»։

ԿՈՒՏ, ո *հլ.* «սերմ, հունդ, հաւեղէններին տալու հատիկ» *Վեցօր. 162. Ետիր. Համար. 129.* «կորիզ (յատկապէս խաղողի)» *Ոսկիփ. բրս. մարկ. Յայսմ.* «մի փոքր չափ է». *Վստկ. 106. որից* կտիկ «հատիկ, փոքրիկ սերմ» *Եզն.* կտակեր *Վրդն. ծն.* կտեառք «խածի, թռչունների առաջին ստամոքսը» *ՀՀԲ.* կտաբոյս «կուռը տնկելով յառաջացած բոյս» *Վստկ. 142։*

Հիւնք. լտ. gutta «կաթիլ» *բառից է հանում։*

ԳԻՒ.—Ախց. երև. կր. Մկ. Մրզ. Շմ. Ջղ. Սլմ. Վն. Տփ. կուտ, *Ալշ. Մշ.* կուդ, *Ակն. ՋԹ. Խրբ. ՀՃ. Համշ. Ննխ. Պլ. Ռ. Սեբ. Սչ. Տիգ.* գուդ, *Ագլ. Գոր. Ղրբ. Ոզմ.* կօտ, *Սվեդ.* գէօդ, *Ասլ.* գիւդ, գիւ*.—*Նոր բառեր են* աճկուտ, աճկուտի, աճկտի, աճկուտլանկ, կրռնամբար, կտաճան, կտամած, կտիկ, կտիտ, կտճել, կտռտ, կտուտ, կտռմ, կտօֆ։

ՓՈՒԽ.—Ատանայի Թրքախօս հայերն ունին կտիկ «բամբակի կտորիկ մը՝ ուր մէկ կամ աւելի կուտեր կը պարունակուին», *Ֆիւթլիւ* «կորիզոտ բամբակ» (կուտ>*Ֆիւթ+Թրք.* -li «-աւոր»). *երկուքն էլ անցել են նոյն տեղի տաճկաց և տաճկախօս յունաց լեզուին (Արևելք 1888 նոյ. 9)։*

ԿՈՒՏ «սպի, մարմնի վրայ ցտած նշան, պատառուածք». *արմատ առանձին անգործածական, որից կազմուած են* կուտկուտիլ «մորթը պատառոտուիլ» (*մէկ անգամ ունի Վրք. հց. իզ.* «Կուտկուտեալ լինէր մորթ իմ ի չարաչար քարշելոյն և պատառ պատառ յերկիր անկանէր»), կտել «մարմինը ցտել, վրան ասեղով կէտ կէտ նշաններ անել» *Նար. էջ 229,* «զարնել, բաղխել»? *Նար. էջ 241. որից* գիր կտեալ «մահտեսիների ձեռքի վրայ բանուած պատկեր, հաջի արած» *Դևտ. ժԹ. 28. Կիւրղ. ղևտ.։*

Տե՛ս և Կտուտ։

ԳԻՒ.—Այստեղ են պատկանում կտել *Ննխ. Սչ.,* կտտել *Ակն.* «հրել, մշտել, մըխտել», կտկտել *Ննխ.* «հրմշտկել». *նշանակութեան զարգացման համար հմմտ.* խրել «ասեղով խայթել» և «հրել», բզել «հրել, մշտել» (*Թրք.* biz «խայթոց, հերիւն» *բառից*) և մխտել «հրել, մշտել» (*հյ. մախաթ բառից*)։

ԿՈՒՏԱՄԱՆ. *նորագիւտ բառ՝ անյայտ նըշանակութեամբ, որ մի անգամ գտնում եմ գործածուած Քուչակին վերագրուած մի տաղի մէջ, հրտր. Արեգ, 1924, էջ 195* «Վախեմ օր մի գիս տանի, Կուտաման խելկացըն որ ունի»։

ԿՈՒՏԱՏՈՒԿ «մոլոշ բոյսը, malva rotundifolia L» *(տե՛ս Տիրացուեան, Contributo § 331) Գաղիան. (գործածութեան տեղերն ու ձևերը տե՛ս եղիճ բառի տակ)։*

ՀԲուս. § 1528 համարում է «տուղտ, althea, guimauve», *որ մոլոշի (Ֆր.* mauve) *մի տեսակն է։ Ուղիղ մեկնեց Նորայր, Բառ. Ֆր. 574 բ, որին համապատասխան են գալիս՝*

ԳԻՒ.—Ագլ. կտա՛տի, *Մժ.* կտա՛տու «մոլոշ».—*կայ նաև զուռ.* կուտատուկ «բամիա» *ըստ Գաբամաճեան բառ. 1892, էջ 670։*

Փոխ?— Վրաց. კატაკტო **կատակիտո** *«ռուս.* блешка, портулакъ», *որոնք ըստ* Анненко́въ-*ի բուսաբանական բառարանի նշանակում են «փրփրեմ, դանդուռ,* portulaca oleracea L *» (տե՛ս անդ, էջ 268 բ)։*

ԿՈՒՏԵԼ *«կրկնել»? Նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Վրդն. առակ. էջ 51 «Եւ վաճառականն խաբբեցօ (=հարբեցաւ) և ինքն կուկուտէր զանունս նոցա»։*

ԿՈՒՐ, ի–ա *հլ. «տաշտ» Դան. ժդ. 32. Եփր. գտ. 336. Եղիշ. գտ. 180, 181. «նաւակ, մակոյկ» Գծ. իէ. 30, 32, Ոսկ. ի մեկիտ. Ագապ. 161. որից* մանրակուր *«մանր մակոյկ» Ոսկ. եփես. 780.—կուրը այն փոքրիկ նաւն է, որ մեծ նաւերը ունենում են իրենց հետ. համմտ. «Եւ կուր նաւին առաջի նոցա. և նստեալ ի կուր՝ գնացին ի նաւն». Վրք. Հց. Ա. 144։*

Աւգերեան, Բցտր. չփ. և կշռ. էջ 118 պրս. **ֆիւր**՝ *որ անծանօթ է։ Հիւնք.* **կորիւն** *բառից։* Bugge KZ *32, 51 հիւլ.* curach *«նաւակ» բառի հետ։* Scheftelowitz BB *28, 304 սանս.* kuṇḍá- *«կուժ, պտուկ» բառի հետ։* Pedersen, *Հայ. դր. լեզ. 78 յն.* γαυτός *«աղեղակալ»։ Գ. Փառնակ, Անահիտ 1906, 233 հայերէնից փոխառեալ է գնում ալբան.* koritë *«նաւակ»։* Lidén, Arm. Stud. *էջ 117 հնխ.* geu- *«ծռիլ, կորանալ» արմատից. համմտ. յն.* γυρός *«ծռած, կլոր»,* γῦρος *«կորութիւն». նոյն արմատից ուրիշ մասնիկով կազմուած ձևեր են՝ հբգ.* kiol *«նաւ», իռլ.* gûala *«կաթսայ», յն.* γαύλός *«կաթ կթելու աման, կուժ, փեթակ» ևն։* Boisacq *142 և 160,* Pokorny *1, 557 և 2, 575 գնում են* Lidén-*ի մեկնութիւնը՝ մերժելով* Bugge-*ի և* Pedersen-*ի մեկնութիւնները։*

*Գիւղ.—***Կուրիկ** *Համշ. «մի տեսակ աման է փայտեայ՝ որ իբր չափ է գործածւում».— կայ և Թրքախօս հայոց մէջ* **կուր** *«փայտեայ աման» Առն. (Արևելք 1888 նոյ. 8—9)։*

+**ԿՈՒՐ** *տե՛ս Կեր։*

ԿՈՒՐ *«մի տեսակ վնասակար միջատ է». դիտէ միայն Ալիշան, Հին հաւ. 155 (տարբեր է կար «կարիճ» բառից)։*

***ԿՈՒՐԱՆ**, *որ և* **ղուրան** *(ի–ա հլ. ըստ ՆՀԲ, բայց առանց վկայութեան) «մահմետականների Ս. Գիրքը» Յհ. կթ. Արծր. Մագ. թղ. 194, 195. Շնորհ. ևն։*

=Արաբ. قرآن qurān *նոյն նշ., որից նաև թրք. գւռ.* yuran, *ֆրանս.* coran, alcoran *ևն. արմատն է* قرا qara *«կարդալ» և բուն նշանակում է «ընթերցուածք»։— Հիւբշ. 278։*

Ուղիղ մեկնեց նախ ՆՀԲ։

***ԿՈՒՐԱՊԱՂԱՏ**, *որ և* **կիւրապաղատ, կիւռապաղատ, կուրապաղատ** *«յունական մի տիտղոս կամ մի բարձր պաշտօնեայ». (այսպէս էին կոչւում յատկապէս Հայաստանի այն կառավարիչները՝ որոնք նշանակուած էին Յունաց տէրութեան կողմից) Սեբ. Յհ. կթ. Ասող. Արծր. որից* **կուրապաղատութիւն** *Ղև. Յհ. կթ. Լաստ։*

=Յն. κουροπαλάτης *«յունաց կայսերական պալատի հազարապետը, ծառայապետը»* (Sophocles, *էջ 687), որ ծագում է լտ.* curator palatii *ձևից և նշանակում է բուն «հոգաբարձու պալատան»։ Նոյն յն. ձևից է փոխառեալ նաև վրաց.* კურატპალატი **կուրատպալատի**։*—Հիւբշ. 358։*

Ուղիղ մեկնեց նախ Ինճիճեան, Հնախօսութ. Բ. 226, յետոյ ՆՀԲ։

***ԿՈՒՐԱՏՈՐ** *«հոգաբարձու, մանաւանդ որբերի խնամակալ» Մխ. դտ. Օր. կայս. նոյն բառն է* **կուրատոր** *«յունական բարձր մի պաշտօնեայ» Սեբ. 79, որ և* **կորատոր** *Սեբ. էջ 50, 102. որից* **կուրատորութիւն** *«որբի խնամակալութիւն» Լմբ. օր. 40։*

=Յն. κουράτωρ. *«յունական մի բարձր պաշտօնեայ», որ է լտ.* curator *«հոգաբարձու, ջրմուղի վարիչ, ցորենը մթերելու և հողերը բաժանելու վրայ հսկող պաշտօնեայ, դիւղատնտես, քարտուղար ևն». ծագում է լտ.* cura *«հոգս, խնամք» բառից։—Հիւբշ. 360։*

ՆՀԲ դնում է լատինից։

ԿՈՒՐԲԻԿՈՂ *«բանտարկեալներին տեղից տեղ փոխադրելու ժամանակ իբր պահապան*

նշանակուած գինուոր». նորագիւտ բառ՝ որ մէկ անգամ գտնում եմ գործածուած վրք. և վկ. Ա. 490 «Առաքեաց զսուրբ վկայսն որ ի բանտին էին առ թագաւորն, պատուէր տուեալ կուրբիկոզ արանցն զգուշութեամբ պահել զնոսա ի ճանապարհի»։

Հրատարակիչը կցում է լտ. cruppellarii «սպառազէն սուսերամարտիկ» բառին, որ ծագմամբ կելտական է։

ԿՈՒՐԴ «ծոմ, պահք կամ սուգ». յիշում է Բառ. երեմ. էջ 151՝ ծոմ բառի բացատրութեան մէջ։

***ԿՈՒՐԷՏ** «կաքաւոզ քուրմ». նորագիւտ բառ, որ ունի նոնն. էջ 3, 4. նոյնը **կուրետացիւ** ձևով Ցւս. քր. Բ. 102։

=Յն. κουρῆτες, եզակին՝ κουρής նոյն նշանակութեամբ։

Ուղիղ մեկնեց Մանանդեան, անդ, ծան. էջ 4։

[**ԿՈՒՐԻՃ** «մուրճ, ուրագ կամ նման մի գործիք». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Բառ. երեմ. էջ 216՝ հետևեալ ձևով.—մուրճ «ուրագ, հօտոց, նաճախ, կուրիճ»։ Պէտք է կարդալ կուիիճ, որ է կուիիչ «ուրագ» (բոլորգիր փ շփոթուելով դարձած ւր)։ Սրանով այս անգոյ բառը ջնջւում է։]—Աճ.

+**ԿՈՒՐՄ** «կրծել, ատամներով պոկելը». այս արմատից են **կրծել** «ատամներով պոկել փրցնել» Ա. թագ. դ. 24. «կծել, յափշտակել, կորզել» Բուզ. **կրծուլ** «կրծել» Սիր. թգ. **կաշառակուրծ** Բուզ. **կաշառակրծութիւն** Ոսկ. յհ. **կրծլի** (կամ **կծլի**) «կծծի, ագահ» Խոր. գ. 68. Նոր վկ. էջ 24. **կրծլութիւն** Մաշկ.—Ունինք նաև **կուրծ** «կաղամբի հաստ և կարծր միջուկը, զոխ» վրք. հց.=**կաղամբակուրծ** վրք. հց. Ա. էջ 93, որ կարող է թէ՛ այս արմատից լինել (իբր կրծելու բան) և թէ յաջորդից (իբր կաղամբի կուրծքը՝ միջուկը)։ Անստոյգ է Կոչ. ղ. հատուածում. «ինքեանք անգործք և զգործոց զկուրծս և զվաստակս ուտեն». յն. «զգործողացն ուտեն». Թերևս ըստ այսմ հայ բառն էլ պէտք է հասկանալ «կաշառք». համեմատէ՛ գւռ. **կրծօն**։

=Բնիկ հայ բառ, հնխ. grug՛- արմատի շրջուած gurg՛- ձևից. ցեղակիցներն են հսլ. gryzą, grysti «կծել, խածնել», լիթ. gráužiu, gráužti «կրծել, ատամներով պոկել (ոսկորի վրայի միսը ևն)», gružinéti «կրծոտել», լեթթ. graûžu «կրծել», ռուս. грызть, սերբ. grīzēm, ուկր. hrýzty, լեհ. gryzę, չեխ. hryzu «կրծել, կրծոտել» (Trautmann 100, Berneker 359, Pokorny 1, 698)։— Հիւբշ. 462։

Եազրճեան, Արեւելք 1884 նոյ" 16 սանս. vraśc, vṛścāmi «կրծել»։—Հիւնք. **կուրծ** բառից։ Ուղիղ մեկնութիւնը տուաւ Müller, Armen. VI, էջ 4։ Pedersen, Հայ. դր. լեզ. 148 լտ. vorare? Թիրեաքեան, Արիահայ բռ. 209 պրս. گز gaz «խածնել, կծել» արմատից։ Meillet BSL № 80, էջ 213 (հմ. 26) համառակ է վերի մեկնութեան՝ հնխ. grձևի դէմ սպասելով հյ. երկ-։ Pictet, բ. տպ. Ա. 250 լտ. gula, հսլ. gorlo «կոկորդ» ևն բառերի հետ։

Գիւտ.—Տփ. **կրծիլ**, Սչ. **գրծել**, Սվեդ. **գրծիլ**, Սլմ. Վն. **կոծել**, Ախց. Երև. Կր. Մրղ. **կոծէլ**, Մկ. Ոզմ. Շմ. **կոծիլ**, Ալշ. Մշ. **կռնել**, Ջղ. **կոծել**, **կուռծել**, Զթ. **գրյնիլ**, **գրծիլ**, Ակն. Ննխ. Պլ. Ռ. Սեբ. Տիգ. **գռնէլ**, Ասլ. **գռնէ՛լ**, Հճ. **գռյնել**, Համշ. **գրյնուշ**, Ագլ. **կո՛ռծիլ**. Նոր բառեր են՝ **կրծաճ**, **կրծկրծել**, **կրծոտել**, **կրծօճ**, **կրծօճել**։—Առանձին **կործ** արմատաձևն է ներկայացնում Ագլ. **կոռծիլ**, որի հետ միանում է նաև Ղրբ.—սրա կրկնականն էլ է **կրծկո՛րծիլ** Ղրբ. «կրծոտել»։

Փոխ.—Վրաց. **კურწი** **կուրծի** «ցօղուն», Թրք. գւռ. Կր. gərǰon «կրծօն, կաշառք» (Բիւր. 1898, էջ 627)։

ԿՈՒՐՏ, ի հլ. (անեզաբար գործածուած) «յանջքը, լանջքի տախտակը. լայնաբար՝ սիրտ, ստինք, կուշտ, երբուծ» Ղկ. ժր. 15, իգ. 48. Ագաթ. Ոսկ. յհ. ա. 1, 3 և մտթ. որից **կրծացաւութիւն** Շիր. **կրծապան** Ուռհ. էջ 120. **կրծաճոց** Փիլ. Նխ. եվ. **կրծաբախ** Արծր. միջակուրծ Նիւս. բն. **կրծոսկր** (նոր գրականի մէջ)։

ՆՀԲ լծ. Թրք. **կէօֆիւս**, **կէօֆս** «կուրծք»։ Böttich. ZDMG 1850, 357 սանս. krōḍa «կուրծք» բառի հետ։ Հիւնք.

կորշել բայից է հանում։ Bugge KZ 32, 46 ցեղակից է դնում լիթ. krūtis, լեթթ. kruts, սանս. krōḍá հոմանիշներին։ (Մերժում է Pokorny 1, 489)։ Գազանճեան, Արև. մամուլ 1907, 934—5 թրք. կէօfu «կուրծք» բառի հետ։ Պատահական նմանութիւն ունին հսլ. grądĭ, ռուս. грудь, հիսլ. bruinne, հկիմր. bronn «կուրծք, ստինք», որոնք կցւում են լտ. grandis «մեծ», յն. βρένθος «հպարտ» են բառերին և բոլորը միատին հանւում են հնխ. gʷrendh- «ուռիլ» արմատից (Berneker 356, Walde 351)։

ԳԻՒ.—Ախց. կուրցf, Ռ. գուրձf, ՋԹ. գույձf, գուրձf, Ննխ. գուրցf, Հճ. գույձf, Հնգ. գրուցf, Սվեդ. գօրձf, Խրբ. գուրսf, Պլ. գուրսf, գուրսգ, Աալ. գիւրսf, գիւրս*, Մշ. կուտկ. այս բառերը նշանակում են «(մարդու) կուրծք», իսկ Ծրև. Շմ. կուրծ, Ղրբ. կօռծ «կովի ստինք»։ Նոր բառեր են կուրծպահ, կրծկալ (Պլ. Ռ. Սհք. գըզգալ, Ծւդ. գըսգալ), կրծլակ, կրծիկ։—Տարբեր է Սչ. գուխը էրթալ «կատիկին թռնել, մոլոր երթալ», որ ծագում է թրք. göks «կուրծք» բառից։

ԿՈՒՐՆԻՈՍ «լուսաւորամիտ». ունի միայն Բառ. երեմ. էջ 168։

ԿՈՒՐՏ, ի–ա Հլ. «ներքինի, ներքինացնալ» Ոսկ. ես. 244 (բացատրութեամբ միասին գրում է. Առնիցեն կո.րտս. իսկ այլքն ներքինիք ասեն). Հերձ. 137. (Վրդն. պտմ. հրտր. էմ. էջ 141 դրուած է Կուրտ՝ իբր յատուկ անուն, մինչդեռ պէտք է հասկանալ կուրտ, ինչպէս որ նոյնի Վենետկեան հրատարակութեան մէջ, էջ 106, սրա փոխարէն գտնում ենք հոմանիշ ներքինի ձևը)։ Այս արմատից է կրտել «ներքինացնել», որ միայն արդի գրականում և գաւառականների մէջ է գործածական։

Տերվ. Altarm. 30, 46, Նախալ. 70 կցում է կարճ բառին և սրանով լտ. curtus, սանս. kart, լիթ. kirtau, հյ. կտրել, կոտորել են ձևերի հետ՝ հնխ. kart արմատից է հանում։ Հիւնք. պրս. կիւրտէ «երիկամ», կիւրտկեան «անուշտ»։ Karst, Յուշարձան 405 կտրել բառի հետ սումեր. gur «ճեղքել»։

ԳԻՒ.—Շմ. կրտիլ, Սլմ. կռտել, Մկ. կըռտիլ, Ալշ. Մշ. կոդել, Հճ. գոռդել, Ղրբ. կօռտէլ «ամորձատել, ներքինացնել»։ Ղրբ. կօռտէլ նշանակում է նաև «ցորենի հասկի տակից ու վրայից կտրել, որով միջին մասը լաւ սերմացու է դառնում»։ Վերջին առումը ցոյց է տալիս, որ բառիս հետ նոյնարմատ են կռոց Ղրբ. «մանգաղաձև կեռ դանակ, որով գդալի մէջն են փորում», կռտիլ Ծւդ. «մարմնի կաշին փոթփոթիլ՝ տաք ջրի մէջ խաշուելուց», Արբ. «միսը լավ չեփուելով՝ վրան փոթ փոթ լինել», Նբ. «կաշին այրուելով կուչ կուչ գալ», Ակն. «այրիլ, խանձիլ», Արբ. Մն. Պլ. «ծաղկախտից չեչոտիլ», Դվ. Մն. Մշ. Պլ. «լորին են աղի ջրի մէջ եփուելուց կռնծիլ և այլ ևս չեփուիլ»։

ԿՈՒՐՏԱԿ «զինուորական մի տեսակ սաղաւարտ». մէկ անգամ գործածում է Թղթ. դաշ. 22. բառիս մասին տե՛ս վերը կորդակ. վկայութիւնը տես Վեղենդիար։

—ԿՈՒՑ տե՛ս Կից։

Scheftelowitz BB 28, 287 սանս. kāçi «բուռ», հսլ. koši, լիթ. kaszius «կողով» բառերին ցեղակից։ Այս մեկնութիւնը մերժում է Pedersen KZ 40, 211 և հաստատում է ՋՌ-ի մեկնութիւնը, իբր կից=կուց։ Petersson LUÅ 1916, 50 (չեմ տեսած) սանս. guccha- «թուփ, մացառ, տրցակ, կապոց» բառի հետ (տե՛ս Pokorny 1, 645)։

ԿՈՒՓՈՒԿ տե՛ս Կուփ։

ԿՈՒՔ «խոնարհք կամ կնիք». ունի միայն Բառ. երեմ. էջ 168։

ԿՈՓ տե՛ս Կոպ։

ԿՈՓ «փշատի նման մի տեսակ արմատ» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 1530 (նոյնը դնում է ՆՀԲ առմատ բառի տակ)։

ԿՈՓ «պաշարումն». ունի միայն Բառ. երեմ. էջ 168։

ԿՈՓ «տաշելով բան շինելու արհեստը. 2. բուռն հարուած» Ոսկիփ. Անկ. գիրք նոր կտ. 187, 190. որից կոփել «կռանով՝ մուրճով զարնել, ծեծել, փայտի՝ քարի՝ մետաղի վրայ աշխատիլ, կռել» ՍԳր. Ոսկ. ես. «ըմբշա-

մարտութեան մէջ իրար զարնելը» Վրք. Հց. *«սրով զարնել»* Վրք. Հց. Բ. *461. «սպանել»* Անկ. *գիրք հին կտ. Ա. էջ 137.* կոփած *Եփր. Ել.* կոփածոյ *ՍԳր. Կոչ.* կոփիչ *«թակ, ուրագ»* Մագ. Անկ. *գիրք նոր կտ. 96, 213.* աճկոփ *Ոսկ. կող. էջ 530.* կոփիւն *«զարնելու ձայն»* Ոսկ. *յհ. ա. 1.* կոփուածոյ *ՅՀ. կթ.* կոփոն *Մագ. թղ. 132.* Ֆարակոփ *Սգր. Եզն. կամ* Ֆարկոփ *Կոչ. 161.* կռանակոփ *Միխ. աս.* փայտակոփ *Եփր. թագ. 423.* դրամակոփ *Մխ. դտ.* բակակոփ *Վրդն. ծն.* կարծրակոփ *Նար. Մագ.* կոկորդակոփ *Մագ. թղ. 132.* մայրակոփ, մայրակոփեայ *«մայր փայտից շինուած»* Նորագիւտ Ա. *մնաց. ժէ. 1, 7.*—*նոյն արմատից է նաև* կուփուկ *«բարակ տաշեղ»*, *նորագիւտ բառ, որ մէկ անգամ գործածել է Ճառընտ. «Զկուփուկս տաշեղաց ուր և գտանէր կարկատունս գործէր մազեղինին»* (Նորայր, Բառ. Ֆր. *296 բ*, copeau *բառի տակ*)։

ՆՀԲ *յն.* πόπτω *«կոփել, ծեծել»*։ Ագդասէր Կալկաթայի, *1847, էջ 415 մեր* կոփ *բառից է դնում անգլ.* copy *«ընդօրինակութիւն»*։ Böttich. Arica *20, 52 յն.* κόπτειν, *պրս.* kuftan *«ծեծել, մանրել»*։ Lag. Urgesch. *447 հսլ.* kopiti *ձևի հետ՝* kup *արմատի տակ*։ Müller SWAW *42, 252 և 44, 232 պրս.* کوفتن kōftan *«ծեծել»*։ Lag. Arm. Stud. *§ 1190 չի ընդունում այս վերջինը, որովհետև բուն արմատն է* kōb, *ներկայ՝* kōbam: *Տէրվիշ. Մասիս 1881 մայիս 8 պրս.* kōftan: Bugge KZ *32, 50 յն.* κολάπτειν *«կտրտել, կոցահարել, փորագրել»*։ *Հիւնք. նոյն ընդ ՆՀԲ*։ Schefte lowitz BB *28, 303 հսլ.* kopati, *լիթ.* kapóti, *լեթթ.* kapāt *«փորել»*, *պրս.* kāfed, kāvad *«փորում է»*։ Karst, *Յուշարձան 430 թթր.* oq, ov, yuf *«շփել, տրորել»*։ *Մառ.* Тексты VII *էջ 77 վրաց.* կափս *«կտրել, հաննել»*, *որի հետ նոյն են նաև վրաց.* կափա, կափվա *«ծառ՝ փայտ կտրել, ջարդել»*, կեփա *«ջարդել, կտրել»*։

ԳԻՒ.—*Շմ.* կօփիլ *«զարնել, ընդհարկանել»* (*օր.* տափին կոփել *«գետին զարնել»*). *նոյն են նա կոփել Խն. «տաշել»*, կոփեցնել *«բռունցքով զարնել»*, *ձայնաւորի փոփոխութեամբ ունինք ՋԹ. Սվեդ.* գիփիլ *և ՀՆ.* գիփել *(նս Կիւր.) «տաշել»*, *որից* կեփիչ *ՋԹ. «լուացքը ծեծելու տուփան»*, կուպել *Մրզ. «ծեծել»*, կուփի կուփի աճել *Ղրբ. «հրել, ցնցել, շարժել»*, կուփի տալ *Ղրբ. «մի հարուած տալով տեղից հանել, հրել»*, կո՛ւփէն *Ղրբ. «ոստայնի թելերը նստեցնելու գործիք»*, կուփկուփել *Ղրբ. «կոփիչով զարնելով ոստայնի թելերը նստեցնել»*, կիփիճ *ՀՆ. «լուացքը ծեծելու փայտ»* (Բէրգհան, *Ամէն. տարեց. 1924, էջ 197)*։

ՓՈԽ.—Bugge IF *5, 274 (Բրգմ. ՀԱ. 1895, էջ 261)* գոթ. kaupatjan *«կոփել»* բառը հայերէնից փոխառեալ է կարծում։

ԿՈՓԱՐ. *անստոյգ բառ, որ Բառ. երեմ.* դրում և մեկնում է զանազան ձևերով. *այսպէս՝ էջ 154՝* Կամ և կոփար. *ասագ կամ տուգ և տուգանք. էջ 167՝* կոպար. *դոդոր. էջ 168* կոփար. *տոգար*։—*Այս բոլորից կարելի է թերևս հետևցնել* կոփար *«տուգանք» ձևով մի բառ*։

ԿՈՓԻ *«անծանօթ բուսական մի նիւթ» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 1531, որ համարում է «թերևս նոյն ընդ* կոփ *«արմատ»*։

*ԿՈՓՂԻ *«մի տեսակ խեցեմորթ, խխունջ». Վեցօր. 140 (մէկ անգամ). «Կոնքն և կտինքն և կոքղիք և սարոմք»*։

=*ՅՆ.* κοχλίας *«ոլորուն պատեանով մի խեցեմորթ է»*, *որից փոխառեալ է նաև լտ.* cochlea *«խխունջ»*։—*Հիւրշ. 360*։

Ուղիղ մեկնեցին նախ ՀՀԲ և ՆՀԲ։

ԿՊԱՏԵԼ *«լրբել». ունի միայն Բառ. երեմ. էջ 169*։

ԿՊՐԻԹ *«ճշնարօտ կամ խաչափայտ բոյսը, փենունա,* peonia, *Ֆր.* pivoine» *Բժշ. գիտէ միայն Նորայր, Բառ. Ֆր. 947ա, որից և ՀԲուս. § 1534, բայց չէ յիշած վկայութիւնը*։

ԿՌԱՀԵԼ *«մտքով նկատել, գուշակել». Նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Սմբ. դատ. 69 մէկ ձեռագրում։ Կենդանի է այժմ էլ մեր բարբառներում, ինչպէս՝ Բլ. Եւդ. Պլ. Մշ. Սեբ. Ննխ. կալ և արմատը* կռահ *«կռահելու գործողու-*

թիւնը, գուշակում», որ գիտէ միայն ՆՀԲ (յաւելուած գւո. բառերի)։

Դափանցեան, Տեղեկ. ինստիտ. 2, 101 դնում է պրս. ākāh «տեղեակ» բառից։

***ԿՈՒԱՆ** *(գրուած է նաև կո, որ անշուշտ թերի գրչութիւն միայն կարելի է համարել) «չում, հոյն պառուղը» Ամիրտ. ունի միայն ՀԲուս. § 1535։*

=Յն. κράνεια «հոյն»։

Ամիրտովլաթից առնելով ուղիղ մեկնեց ՀԲուս։ Նոյնը Նորայր ՀԱ 1926, էջ 68։

ԿՈՒԱՆ, *որից* կոաճի ծառ *«հացի, frêne» Ամիրտ. (ՀԲուս. § 1537). այս ծառից պատրաստում էին լաւ նիզակ, ուստի ունինք* բիր մի կոաճի *ՈւոՀ. տպ. ԵմՀ. էջ 400 (Նորայր ՀԱ 1923, 54)։*

Նորայր (անդ) նոյն է դնում նախորդի հետ. բայց տե՛ս տակը գւո։

ԳԻՒ.—Մշ. կոճի «փոքր՝ փշալից մի տեսակ ծառ է, վայրի տանձենու նման, բայց անպտուղ, փայտը պինդ»։

ԿՈՒԱՆ, *որ և* կոաճ բանջար, կոարաճջար, կուաբաճջար *(անշուշտ ո և ու տառաձևերի շփոթմամբ) «անտառոյդ մի բոյս է» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 1537. ըստ ոմանց* taraxacum, *ըստ Յակոբեան, Արևելք 1890, ապր. 27 «*dandalian, *հինտիպա չիչէյի», ըստ Տիրացուեան,* Contributo *§ 573* taraxacum officinale Wigg. *որ և կոչւում է հյ. գաղտիկուր, խպապի, կաքնուկ, բուրու ևն։*

Ըստ Բժշկարանի վկայութեան «յոյնք ակռաճեայ կամ կառկարի ասեն»։

ԳԻՒ.—Գործածական է Ղարաբաղում կորպէ՛ճmr *ձևով։*

ԿՈՒԱՊԱՒ, *որ և* կոապալայ, կրապուլա *«հաղարջ» Շնորհ. հանել. Բժշ. ունին միայն ՀԲուս. § 1538 և Նորայր ՀԱ 1923, 502։*

=Թուրքերէն բառ է, ըստ վկայութեան Բժշկարանի (տե՛ս Նորայր, անդ)։

ԳԻՒ.—Կոապոլայ Երզ. եւդ. «հունի նման մի ծառ է. պտուղները տեղացիք ուտում են և կամ թթու են դնում»։

ԿՈՒԱԻՆ *«տան կտուր, տանիք» Վստկ. 5. ժողովել (զանձրևաջուրն) որ լինի ի տներս կամ ի կռավնաց (այլ ձ. կուռաճաց. յոյնը մէկ բառով ունի «ի տանեաց»)։*

ԿՈՒԵԼ *տե՛ս Կուռ։*

ԿՈՒՁԻ *տե՛ս Գռզի։*

ԿՈՒԻՉ *«ծառի խէժ» Բժշ. Գազիան. Մխ. բժշ. 43. որ և* կոէժ *Գնձ. կոիզ Վրթ. քերթ. գրուած է* կոէզ *(անշուշտ վրիպակ) Բառ. հրեմ. էջ 185. որից կուոյ կոէզ «հում ծամոն» Բժշ. կոիժաքեր. Գնձ* կոզոտ *«կպչոտուն» էֆիմ. 221։*

ՆՀԲ լծ. շրէժ, թրք. չիրիչ։ Տե՛ս նաև Սանտալճեան, Բազմ. 1904, 499։ Դափանցեան, Տեղեկ. ինստիտ. 2. 100 նոյն ընդ խէժ։

ԳԻՒ.—Ագլ. կոազնը, Տփ. կոչն «ծառի խէժ», նո՞յն են նաև կոնգի վն. «թաւ՝ լայնատերև անպէտ մի բոյս», կոզնի Ղք., կոզնենի Ղրբ. «մի տեսակ լեռնային ծառ»։

ԿՈՒԹՈՒՆՔ *«կոնակ, թիկունք» Տօնակ. սեռ. կորանց ձևն ունի Շիր. եզակին պիտի լինի *կուորն կամ կիորն, որ գործածուած չէ։ Այս արմատից է գւո. կորնիլ Ակն. Պլ. «չեռուիլ», կորնցնել «չեռնել», որ դարձել է Երև. շրջմամբ կնորնիլ (Պոլշեան, Կռուածաղիկ, ա. տպ. էջ 13, բ. տպ. էջ 23)։*

Karst, *Յուշարձան 429 այթայ.* art *«կոնակ», նակուտ.* ord *«մնացորդ»։ Պատահական նմանութիւն ունի վրաց. ղ՛ուդնա «կոթնիլ»։*

ԿՈՒԻՆՉ *«ճիկ, փոքր ձայն». որից կազմուած են* անկոիճչ *«անձայն, անբարբառ» Նար. ժդ. էջ 31.* կոնչել *«մարդու, մանաւանդ վշտահար մարդու ճչալը» Յես. ժ. 21. «շան վնկվնկալը» Ել. ժա. 7. Փիլ. լիւս. «խոզի ծլծվալ» Արծր. «ագռաւի կռկռալ» Տօնակ. մազկոիճչ «հոգեվարք» Ոսկ. մ. բ. 1 (հմմտ. հոմանիշ մազակոիչ Երզն. մտթ. մազակառաչ լծ. կոչ. բոլորն էլ կոինչ, կրոիչ, կառաչել «ճիչ, ճչալ» բառերից)։— կոինչ բառը մէկ անգամ էլ անսովոր ձևով գործածուած է Ել. թ. 4. «Ոչ ծախսեցի յամենայն որդւոցն Իսրայելի կոինչն». յոյնը ունի ῥητός, որ թարգմանւում է «բան, իր, նիւթ». այսպէսով հայերէնումն էլ կոինչ նշանակում է ուրեմն «մի բան». ըստ իս*

այս իմաստը «ճիկ, ձայն» նշանակութեան մի նոր առումն է միայն, ճիշտ ինչպէս որ յն. ῥητός նշանակում է բուն «ասուած կամ ասելիք խօսք» և այստեղ միայն առնուած է «իր» իմաստով։ Աւելի ընդարձակ օրինակներ տե՛ս բան «խօսք, նիւթ, իր» բառի տակ։

=Բնաձայն բառ. կազմուած է կ պարզ ձայնից՝ ո սաստկականով և ն, չ ածանցիչներով. կազմութեան համար համմտ. փոնչել, ճոնչել, դոնչել, մոնչել, զոնչել, ճոնչիւն, շոնչաւ, սոնչաւ, խոնչել. իսկ արմատի համար համմտ. կնչել, կաճչել, կոչել, կոիչ, կրոշել, կառաչել, կոռոչել, կառաճչել։—Աճ.

ՆՀԲ կոնչել՝ լծ. հյ. ճոնչել, յն. γρύζω երբ. խառաճ.—իսկ կոիճ Ել. Թ. 4 բացատրում է «որպէս թէ դրեալ էր կոի ինչ. լծ. յն. γρῦ «խանչիւն խոզի». յն. «բան մի, ῥητόν». իսկ ῥητός իբր «կնճռոտուն, կնճիռն»։ Տէրվ. տե՛ս ծաղր բառի տակ։ Հիւնք. բառաչ բառից։ Վերի մեկնութիւնս տե՛ս ՀԱ 1899, էջ 204 ա։ Վարդանեան ՀԱ 1912, էջ 636 մազկըռինչ բառը բաժանելով վերիններից, ուզում է կցել կճիռն բառին։ Petersson, Ar. u. Arm. Stud. էջ 76 կոինչ բառի մէջ –նչ– համարում է մասնիկ և ստուգաբանութեան համար ուղարկում է իր Zwei sprachliche Aufsätze աշխատութ. էջ 11 (չունիմ ձեռքի տակ)։

ԳԻՒ.—Ալշ. Մշ. կոինչ «ագռաւի ձայն»։

ⓄԿՈՒՉ «թռչունի ձայն» Նխ. ղևտ. Գն. ևս. Մխ. երեմ. Մխ. առակ. որից կոչել «ագռաւի կռկռալ» Փիլ. լին. 115 և լծ. փիլ. կրոչաձայն «կռկռացող (կռունկ)» Ագաթ. հաւակոիչ «թռչունների ձայնից գուշակութիւն անող» Տօնակ. (որ և հաւկոիչ Տաթև. հարց. 536). գուժակոիչ «ձախորդ լուր բերող» ԱՔ. մազակոիչ «հոգեվարք» Երզն. մտթ. (համմտ. մազկոիճ՝ նախորդ կոիճ բառի տակ)։

=Բնաձայն բառ, կազմուած է կ պարզ ձայնից՝ ո սաստկականով և չ ածանցիչով. ձևի համար համմտ. ճոչել, ճոչակ, շոիչ, սոիճ, սոիչ, խոշափող, խոչակ, իսկ արմատի համար համմտ. կոիճ բառի տակ յիշուած ձևերը։—Աճ.

ՆՀԲ լծ. լտ. garrio «շաղփաղփել, բրդբրդալ ևն»։ Վերի մեկնութիւնս տե՛ս ՀԱ 1899, 204 ա։ Պատահական նմանութիւն ունի վրաց. կրիճի «ճիչ»։

ԳԻՒ.—Նման բնաձայն բառեր են կոչալ վն. «ոսկորի յօդերի, մէջքի, մատները քաշքշելով կոտրատելու, չոր մի բան ջարդելու ևն ձայն», կոչկոչալ Դրբ. «հաւի կարկաչելը. 2. քրքջալ», կռկռչալ Խզ. «մի չոր բանի կոտրատուելու ձայնը», Շմ. «ցեցի ուտելու ձայնը»։

ԿՈՒԻ, ո հլ. «վէճ, պատերազմ» ՍԳր. Ոսկ. ևս. որից կռուիլ «վիճիլ, կռիւ անել» ՍԳր. կռուական Ոսկ. ևս. կռուակից Եւագր. Եւս. քր. կռուանոց Ոսկ. մ. ա. 11. Եզն. կռուասէր Ոսկ. յհ. բ. 18. կռուարար Եւս. քր. Ոսկ. մ. բ. 10. կռուեցուցանել Ոսկ. ա. կոր. զազանակռիւ Ոսկ. զկ. գօտեկռիւ Ոսկ. ի կոյսն. բանակռիւ Բ. տիմ. բ. 14. Ոսկ. բ. տիմ. մենակռիւ Ագաթ. մերկակռիւ Եւս. քր. նաւակռուութիւն Պիտ. նաւակռիւ Լմբ. յայտ. խն. բռնակռիւ Բրս. ապաշխ. լծակռիւ Ոսկ. երբ. կապակռիւ Մծբ. բնդդիմակռուել ՅՀ. կթ. դիւրակռուելի Բրս. թղթ. անկռուելի Ոսկ. ա. կոր. անկռիւ Տիտ. գ. 2. Եփր. ծն. գրուած է բանակռռութիւն Կնիք հաւ. էջ 77։—Սրանց հետ նոյն է նաև **կռիւ** «ոտք դնելու՝ հաստատուելու տեղ» Ա. մակ. ժ. 72, որից կռուիլ «կառչիլ, կպիլ, փակչիլ» ՍԳր. Ոսկ. յհ. ա. 29. Եփր. համար. 86, 202 (ասուած է փոշու և կեղտի համար, որոնք շորերին կամ մորթին են կպել), Ոսկ. եփես. 804 (բոյսի սերմի համար, որ պատահմամբ մի տեղ ընկնելով արմատ է բրոնել). Նանայ 411 (զմռսուած մարմնի համար, որ կտաւին է կպել). կռուան «ոտքը դնելու տեղ» Ոսկ. բ. կոր և մ. 4, 87. «սրի շեղբի և կոթի միացման տեղը՝ որ մի քիչ դուրս ցցուած է լինում» Ոսկ. եփես. 822 (Երկիցս) և հռ. 314 (վկայութիւնները տե՛ս Նորայր, Բառ. ֆր. 587 ա). կռուեցուցանել «կպչիլ տալ, կառչեցնել» Շիր. անկռուելի Պիտ. ոռնկռիւ Ոսկ. ևս. և յհ. ա. 10. անկռիւ «անհաստատ» Ոսկ. պօղ. ա. 598։—

Բոլորի նախնական նշանակութիւնն է «կպիլ, կպչիլ, փակիլ, փակչիլ», որից՝ արևելեան ըմբշամարտութեան ձևից առնելով՝ յառաջացել է «կռուիլ» նշանակութիւնը. համմտ. գւռ. կպիլ, կպչիլ *«փակչիլ, յարիլ», որ նոյնպիսի զարգացմամբ դարձել է Ասպ. Խլ. Համշ. Տփ. «ըմբշամարտիլ», Արբ. «յարձակուիլ, զարնել», այսպէս նաև* կպցնել *«փակցնել», Ակն. Երև. ՋԲ. Խն. Համշ. Շմ. «ծեծել, զարնել»,* կպուր կպուրի գալ *(հրմ.* կպո՛ւր *«փակցրո՛ւ, կպցրո՛ւ» ձևից) «ծեծկուիլ, կռուիլ», Թրք.* yapəšmaq *«կպչիլ, փակչիլ»= կոմոզկ.* yabəšmak *«փակչիլ, կռուիլ, մարտնչիլ»։*

Klaproth, Asia polygl. *101 պրս.* griw, *ռուս.* krik *բառերի հետ։ ՆՀԲ* կռիւ *«մարտ» յծ. իտալ.* guerra, *պրս. և հյ.* գոռ, կռուռ *են, իսկ* կռիւ *ոտից՝ յծ.* կառչիլ։ Peterm. 73 *յծ.* խռովիլ։ Müller, Kuhns u. Schleich. Beitr. *5, 141 զնդ.* xru *«գոռ, սոսկալի»։ Հիւնք.* գռուան *բառից։* Bugge, Lyk. St. *1, 73 կարիացոց* Κρὼξ *քաղաքի անուան մէջ է ուզում տեսնել Բ. Խալաթեան, ՀԱ 1902, 309 դրաւ ասոր.* ܩܪܒ qārbā *«կռիւ» բառից։ Նոյնը յետոյ Մառ,* Грам. др-арм. яз. *14։ (Ասորի բառի ցեղակիցներն են երբ.* קרב qərāb, *արամ.* קרבא qərābā, *ասուր.* karābu *«կռիւ, պատերազմ», որոնց ընդհանուր սեմական արմատն է* qrb *«մօտենալ, մերձենալ, մի բան մատուցանել, կռուիլ»)։ Զօրպաճեան, Բազմ. 1908, 359 պրս.* ɣərîv, *անգլ.* fray, *լատ.* fricare: Karst, *Յուշարձան 399 ասուր.* karābu, *405 սումեր.* kur *«թշնամանալ», իսկ հյ.* կռուան *= էջ 420 ԹԹր.* qur-maq *«կռուցանել» և 425 ԹԹր.* qar *«ձիւն»։ Սանտալճեան ՀԱ 1913, 400 խալդ.* kuri *«մարտ» և հյ.* գոռալ։ *Պատահական նմանութիւն ունին գերմ.* Krig *«կռիւ» (առաջին և հիմնական նշանակութիւնն է «ջանք» ըստ* Kluge 280), *ռուս.* крикъ *«ճիչ», պրս.* غريو ɣərīv *«գոռում, գոչում», ինչպէս նաև արաբ.* غرو ɣariv *«կպչիլ, փակչիլ սոսնձով ևն» (Կամուս, Թրք. Թրգմ. Գ. 888)։*

Գիւմ.—Ալշ. Ախց. Երև. Կր. Մկ. Մշ. Ջղ. Սլմ. Վն. կռիվ, *Ասլ. Խրբ. Համշ. Պլ. Սեբ. Սչ. Տիգ.* գռիվ, *Տփ.* կրիվ, *Ոզմ.* Կռի՛վ, *Ղրբ.* կռըվ, *Գոր. Շմ.* կռվ, *Ննխ. Ռ.* գռվ, *Մրղ.* կըռըվ, *Ագլ.* կռայվ, *ՋԲ.* գր՛ռավ, *Հճ.* գmրիվ· *Նոր բառեր են* կռուազան, կռուածաղիկ, կռուականի տալ, կռուան, կռվըտան, կռվրռան, կռվռտան, կռուրնկեր։

ՓՈԽ.—Վրաց. კრიჳი კრիվի *«կռիւ». չունի Զուբինով. գործածում է Գրիշաշվիլի, Զվելի բալաթիս բոհեմա, էջ 256 (հաղորդեց Գ. Ասատուր)։* კრვა კրվա, კრჳა კრ᷄ւա *«բաղխում, հարուած, կռիւ, զարնել, հրացանով խփել, քնար հարկանել, նաև կպցնել, փակցրնել»,* მოკრვა մոկրվա, მოკრჳა մոկրւա *«զարնել, բռնել, հրել, կապել, կպնիլ, կըպչիլ»,* მიკრვა միկրվա *«հարուածել»,* ნაკრავი նակրավի *«կապ, հանգոյց»,* მოკრივე մոկրիվե *«ըմբիշ». այս բոլորը տալիս են հայ բառի բոլոր նշանակութիւնները, այն է «կպչիլ, փակչիլ, կռուիլ ևն»։*

ԿՌՃԵԼ *«զարնել», յատկապէս «գաւազանը բարկութեամբ գետին զարնել» Վրք. Հց. Ա. 8 (Զգուշն ի գետնի կճռեալ) Յայտմ. դեկ. 6 (եւ կռճեալ զգաւազանն իւր ի գետինն). այս իմաստից է բղխում «ջարդել, փշրել», որ մէկ անգամ ունի Մագ. ը. «Առիւծն զճանճն կռճեաց կեռօքն («ատամներով») կուխլ՝ կոկորդակուի կասեաց ընդ ժանեօքն». որից* կռճումն *«հարուած» Նար. ղբ. էջ 240 (Աւետիքեան, Նարեկի մեկն. էջ 482 դնում է «կոշնակի բախիւնը»)։*

ՆՀԲ չէ կարողացել որոշել բառիս իմաստը և վարանելով մեկնում է «ձայն հարկանելոյ. թերևս որպէս ի ձայն կռելոյ և կուխելոյ կրճելով զատամունս՝ կուխել և ընկճել»։ Բառիս ճիշտ նշանակութիւնը (որին համաձայն է գալիս նաև կասեաց) ցոյց է տալիս՝

*Գիւմ.—*կռճել *Ղրբ. «մեծ մեծ աղալ, մանր ջարդել, կոտճ շինել». արմատն է Ղրբ. Շմ.* կռօճ *«մանր կտոր (աղի, շաքարի, կաւիճի*

ջարդած կտոր)». և որովհետև Ղրբ. Շմ. ο ձայնը ծագում է ու ձևից, ուսոի բոլորի արմատն է կուն «կտոր», որից էլ կանոնաւորապէս յառաջանում է կռնել: Համմտ. նաև կռեամ, կռեիմ *ՀՆ. «խոշոր աղացուած ալիւր և ուրիշ բաներ»: Այստեղ է պատկանում նաև* կռեուսք, կռեօն *«անասնոց կերի խոշոր մնացորդները. 2. ուտելեաց մնացորդը» (տե՛ս Գւռ. բառ. էջ 614):*

+ԿՒՆՉԻԼ *«կուչ գալ, գալարիլ». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Վրդն. առ. էջ 200:*

=*Բնիկ հայ բառ՝ հնխ.* greng'h- *արմատից. սրա հետ համմտ. հսլ.* grĭčiti sę, sŭ-krŭčiti *«կծկուիլ», բուլգար.* gŭrčŭ se *«կըծկուիլ»,* gŭrča *«ծալք, փոթ, խորշում», z-gŭrčen «կծկուած, կուչ եկած»,* gŭrčej *«ջղաձգութիւն», սերբ.* gr̀č *«ջղաձգութիւն», ռուս.* коржавый *«կնճռուած, կարծրացած»,* скорчиться *«կծկուիլ»,* սլ. krčĭm *«ջղաձգօրէն կծկուիլ»,—հանգլ.* crincan *«կծկուիլ», մանգլ.* crinkelen *«կնճռէլ, խորշումել»,—շվէդ.* skrynka *և նորվ.* skrukke *«խորշում, ծալք», հիսլ.* skrukka *«խորշումած պառաւ կին»,* hrukka *«խորշումել», դան.* rynke *«խորշումել», որոնք ծագում են հնխ.* gerk, grek, qerq, *ռնգայնաւոր* qreng, krenk *և* skrenk *ձևերից: Համանք այս բառերի հետ միացնում են նաև մրգ.* krinc *«շրջանակ», հհիւս.* kringr *«շրջան», անգլ.* crank *«ոլոր մոլոր ճանապարհ»,* crankle *«ծամածռել, ոլորել»,* crinkle *«փոթ, ծալք, կծկել», լիթ.* grę̃žiù *«շուռ տալ, ծակել», լեթթ.* griežu *«դարձնել», և թերևս յն.* βρόχος *«շուան» («ոլորածոյ» իմաստից մեկնելով), որոնք տալիս են հնխ.* greng'h *արմատը* (Berneker 369 *և* 665—667, Kluge 280, Trautmann 97, Boisacq 135, Pokorny 1, 594 *և 2, 570): Հայերէնը կարող է իբրև կապ ծառայել այս երկու խմբի միացման համար: Հնխ.* greng'h- *պիտի տար հյ. *կրինձ-, որ ածանցմամբ պիտի դառնար* կռնձիլ. *և ճիշտ այս ձևը գտնում ենք արդի գաւառականների մէջ. համմտ.* կռնձիլ *Ակն. Մշկ. Պլ. «քաշոփիլ, կծկուիլ», Բլ. «ցորենի հասկը, մարդու մազերը այրուելով կծկուիլ, կծղիլ», Ջն. «չորանալ, զօսանալ», Մշ. «մի անկիւն քաշուիլ սթրուիլ»,* կռնձուկ *Բլ. «կծղած (ցորեն). կծկուած (մազ)»,* կռնձկտուիլ *Վն. «թևլի, մազի ևն խառնուիլը»: Սրանց հետ նոյն են՝ վերջաձայնի փոփոխութեամբ՝* կրոիճ *կամ* կոիճ, կռնճիլ, կռնճմիլ, *մհյ.* կրոնջմիլ *«մորթը կուչ գալ»,* կռնչիլ *«կուչ գալ, գալարիլ», գւռ.* կռնճիկ *Ալբս. Ախք. «ոլորուն (կոտոշներ)» ևն, որոնց շրջելալ ձևն է* կճիռն *(տե՛ս այս բառի տակ):—Աճ.*

Պատահական նմանութիւն ունի վրաց. კრუნჩხვა *կրունչխվա «ծռել, փոթփոթել, ճմռթիկել»:*

*ԿԱՌԱՊԵՏ *«արհեստապետ». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Եփր. վկ. արև. էջ 139 «Իսկ այր մի աւագ՝ անուն Պուսակ, որոյ աշտիճան իւր կոռապետ կոչէր, որ թարգմանի գլուխ արուեստագիտաց արքունի (այլ ձ.* կոզպետ*)»:*

=*Իրան. *karug-pat հոմանիշ ձևից, որ անշուշտ կազմուած է *karug «արհեստաւոր» և* pat *«պետ» բառերից. համմտ. նոյնի ասորի տառադարձութիւնը՝* مزوحر qārūgbed, *որ գործածուած է Արևելեան վկայից ասորի բնագրում և ըստ* Brockelemann, Lex. syr. *337 բ նշանակում է «*magister operarum, *արհեստապետ»:— Բառիս հետ թերևս նոյն է* զարիկպետ, *որ տես:—Աճ.*

Ուղիղ մեկնեցին Աճառ. Հայ. նոր բառեր հին մատ. էջ 6 և Վարդանեան ՀԱ 1922, 286: Brockelm. *անդ ասորի բառը կգրում է պրս.* قورچی qōrčī *ձևի հետ, որ սակայն իր* چی *-či մասնիկի պատճառով չի կարող այստեղ գործ ունենալ:*

*ԿՒՈՆՈՍ *«երևակ մոլորակը. 2. ժամանակի աստուածը (Յունաց մօտ)» Խոր. գրուած է նաև* կրօնոս *Նխ. ամովս.* կռիճիս *Շիր. 66,* կռովն, կռովնոս, կռօնոս. *սեռ.* կռոնայ, *գրբ.* կռոնաւ *եզն., սեռ.* կռօնեայ *Նխ. ամովս.* կռովնի *Ագաթ. քր. և* կռոնոսի *Սարգ:*

=*Յն.* Κρόνος *«երևակ. 2. ժամանակի աստուածը»:*

Ուղիղ մեկնեցին ՀՀԲ և ՆՀԲ:

ԿՒՒԻԿԵԼ *«կամիլ», ունի միայն Բառ. ե-բեմ. էջ 169։*

+**ԿՒՒԻՆԿ** *(բատ ՆՀԲ սեռ. կունկան, բատ ՋԲ նաև ուղ. կռուինկն, երկուսն էլ առանց վկայութեան) «խորդ կամ կռունկ թռչունը» (Բրբ. բուռնա, Ֆրանս. grue) Վեցօր. 163, Երզն. քեր։*

=*Բնիկ հայ բառ՝ հնխ. ger- «գոչել, կրակրալ» բնաձայն արմատից. համմտ. յն. γέρα-νος, լտ. grus, հբգ. chranuh, cranuh, գերմ. Kranich, Krahn, անգսք. cran, կորն. կիմբր. բրբտ. garan, լիթ. gérvė, լեթթ. dzeřve, հպրուս. gerwe, հսլ. žerawĭ, ռուս. жу-равль, սերբ. žěrāv, ždrâlj, լհհ. żóraw, բոլորն էլ «կռունկ»։ Սրանցից տարբեր են պրս. گلنگ gulang, բրդ. kulink, koleng, koling, kolink, զազա keriñg «կռունկ»։— Ըստ* Meillet BSL *57, 100 հայ բառի նախաձևն է հնխ.* gurŏng- (Boisacq 144, Trautmann 87, Walde 355, Pokorny 1, 592, Ernout-Meillet 417)։—*Հիւբշ. 461։*

ՀՀԲ հանում է կռնչել, կռկռալ բնաձայններից։ Ինճիճեան, Հնախ. Գ. 22 կռ բնաձայնից։ ԳԴ պրս. կիլէնկ բառի հետ։ ՆՀԲ լծ. լտ. յն. ռուս. ձևերի հետ նաև արաբ. պրս. գիւրգի *(իմ. արաբ.* كركى kurkī *Կամուս, Բրբ. Բրգմ. Գ. 110), դուռնուգ, կիլէնկ, Բրբ. բուռնա։* Böttich. Rudimenta *53, 218 ասոր.* q u r q l, *սանս.* karankara, *պրս.* kulank, *ռուս.* žuravlĭ: *Նոյն,* ZDMG *1850, 357,* Arica 67, 100, Lag. Urgesch. 764 *սանս. և պրս. ձևերը։ Մսերեան, Ճոպաքաղ. Գ. 104. «կռկռ ձայնող յուինկն»։ Հիւբշ.* KZ 23, 20, 22 *յն. և լիթ. ձևերը։ Տէրվ. տե՛ս ծագր բառի տակ։* Müller WZKM *8 (1894), 362 Հայերէնի արմատն է դնում կռռ=լտ.* grū, *որի վրայ աւելացել է կ մասնիկը. և աւելորդ ձայն է. Հայերէնից են փոխառեալ արամ.* כורכיא kurkiā, *արաբ.* كركى kurki *«կռունկ»։* Коршъ, *Հովիտ 1914, 470 չէրք.* krueo *հոմանիշի հետ։ Պատահական նմանութիւն ունին ասոր.* حەزەكەنا kūrkənā, *ասուր.* kurkū *և կաբարդին.* krū *«կռունկ»։*

Գիւտ.—Ախց. կռուինկ, *Ալշ. Մշ. Սլմ.* կըռուինգ, *Տփ.* կրուինգ, *Մկ. Վն.* կռուինգ[1], *Խրբ. Ննխ. Ռ.* գռուինգ *(բայց Ննխ. նշանակում է կռունկից տարբեր մի թռչուն), Ոզմ.* կռօնկ[1], *Երև.* կռլուինգ.—*Նոր բառ է կռունկի ճղայ>* կռնկուճղայ *կռշուած բոյսը (Մշ)։*

ԿՒՒԻՆՁ *«բոպիկ, ոտաբոպիկ». Նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Շնորհ. առակ. 75 «Մերկիկ պառկի՝ ոտքըն կռունձ»։*

ԿՒՒԻՓ, *ի–ա հլ. «բռունցք, բռունցքով հարուած» Ագաթ. Ոսկ. յհ. ա. 19 որից* կռփել *«կռուի զարնել, ծեծել, շարշարել, խոշտանգել» ՍԳր. Եւս. պտմ. Եփր. Թգ. 358.* կռփիչ *Ոսկ. ա. տիմ. (յետնաբար ունինք* կռփիչ *կամ* կռփող *«հանրային կարգի վրայ հսկող ոստիկան» Մխ. դտ. էջ 435, 439, բատ իմ Հայ. Նոր բառեր հին մատենագր. Ա. 62),* կռփաճմ *Սոփ. Ր. 8.* կռփաճարել *Ա. կոր. դ. 11.* կռփաճարութիւն *Ագաթ.* կռփամարտիկ *Եւս. բր. Ան։—Նոյն արմատից ունինք նաև* կռփակել *«ծեծել, կռփահարել», նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Յայսմ. մրտ. 31 «Եւ ամիրային ետ ընկենուլ գնշան սուրբ խաչին և կռփակեալ (այլ ձեռ. կռփաճօք) նեղէին զԴաւիթ կոխել զսուրբ խաչն»։*

Նշ. «որպէս կռեալ ափ», լծ. երբ. אגרף egərop' *«բռունցք», իտալ.* gruppo *«կծիկ», կռիլ՝ լծ. Բրբ. խորփալամագ:* Bugge, Etr. u. Arm. 125 *ետրուսկ.* kurpu *«մուրացիկ, հացկատակ» մեկնում է հյ. կռուի բառով։ Հիւնք. կառափն բառից է հանում։ Մ. Ս. Դաւիթ-Բէգ, Յուշարձան 398 ն. արմ.* crum *«կորացած», իռլ.* cromm, *նպալ.* crwm:— *(ՆՀԲ-ի յիշած եբրայական բառը շատ մօտիկ է թէև հնչում հայերէնին, բայց դժբախտաբար մի անստոյգ բառ է, որ բառագիրներից ոմանք միայն համարում են «բռունցք», իսկ ուրիշներ մեկնում են «գուղձ կամ բրիչ». տե՛ս* Gesenius, *1910, էջ 8 բ)։*

Գիւտ.—Երև. կռիել *«ցորենի կամ գարու*

որան ձեռքով պոկել, փրցնել»։ Նո՞յն է նաև Ղզ. կրփացնել, կրփցնել *«զարնել, կօշիկները գետին կամ քարերին խփել. 2. կոնակը ծեծել»։*

ԿՌՓԵԼ *«դնել կամ հաստատել». ունի միայն Բառ. երեմ. էջ 169։*

ԿՌՓԻԿՈՈ *«մի տեսակ փոքր թռչուն, որ թեթև քամուց շարժուում է». անստոյգ բառ, որ ունի Անան. գիտ. 8 հետևեալ ձևով. «Յորժամ պարզոյ* կռփիւք *ի մայրեաց թըռչին ընդդէմ իրերաց զարհուրելով նշանակեն գրուզմունս ամպոց և հողմոց. և փիւկոս այս հաւիկ մի խլիկ, որ ի փոքր ի շնչմանէ շարժի»։*

> *Գ. Տէր-Մկրտչեան, անդ՝ էջ 5 երկու ձևերը մէկ բառ է համարում և իրար միացնելով՝ ուղիղ ձևը դնում է* կռփիւկոս, *իբր անյայտ յունարէն փոխառեալ բառ։ (Ամատ. էջ 375* կռփիւք*)։*

ԿՌՓՈՒԿ *տե՛ս Կրփէ։*

ԿՌՕՃ. *անյայտ նշանակութեամբ նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Տաթև. ձմ. իդ. «Օճ որ արկանես ի կոօճ և փակես բազում ժամանակ, ինքն ընդ ինքեան սատակի. այսպէս չար խորհուրդն ի սրտին կապեալ և ոչ ի գործ ածեալ՝ ինքն ընդ ինքեան ոչնչանայ»։*

ԿՍԿԻՆ *տե՛ս Կիծ։*

> *ՆՀՔ մեկնում է «կծօղ և կիզօղ»։ Ուղիղ մեկնութիւնը տուաւ նախ Այտընեան, Քննակ. քեր. էջ 309 և աւելի լաւ՝* Meillet MSL 7, 164, *յետոյ Աճառ. ՀԱ 1899, 233։*

Գիւր.—Ախց. երև. Կր. Ջղ. Սլմ. կսկիծ, *Մկ. Վն.* կսկծալ, *Շմ.* կսկծիլ, *Ագլ.* կսկծօլ, *Տփ.* կսկիծ, կծկիծ, *Ալշ. Մշ.* կսկիծ, *Ննխ.* գսկիծ, գսկծալ, *Խրբ. Պլ. Ռ. Սեբ. Սչ.* գրսգիծ, *Զթ.* գըսգըծալ, *Ասլ.* գսգիծ, գսգիզ, *Հճ.* գոսգիծ, *Ղրբ.* կծկծալ *«կսկծալ» (նոր կրկնութեամբ կիծ արմատից).— Ախց. Խոջ. Կր. Նոյն* կսկիծ *բառը նշանակում է «ափսոս, աւա՛ղ, մե՛ղք» (իբրև բացագանչութիւն)։—Նոր բառեր են* կսկծոց, կսկծացնել, կսկծաչոր, կսկծաչորուիլ։—*Տե՛ս և յաջորդը։*

ԿՍԿԻԾ *«չոր, կարծր (հաց)» Կիւրղ. Թղ. ուրիշ վկայութիւն չկայ։*

*=Անշուշտ կրկնուած է *կուծ պարզական արմատից, իբր *կուծկուծ>*կծկուծ>կրսկուծ, ճիշտ ինչպէս* կսկիծ*<*կծկիծ<*կիծկիծ։—Աճ.*

Գիւր.—Ախց. Կր. կսկուծ, *Ալշ. Մշ.* կրսկուծ, *Ննխ.* գոսկուծ, *Ակն. Արբ. Խրբ. Սեբ.* գոգուծ, *Երև.* կծկուծ, *Ոգմ.* կսկօծ, *Մկ.* կսկծիկ.—*բացի «չոր (հաց)» նշանակութիւնից, նշանակում է նաև Եւդ. «ազդու, խիստ», Ակն. «տաք, կրքոտ» (խօսակցութիւն), Ախց. Կր. «ամուր, պինդ, ուժով» ևն։—Նոր բառ է* կսկծցնել *Ակն. «խորովելու ժամանակ բոլորովին չորացնել»։—Նախորդ* կսկիծ *բառի հետ խառնուելով Ագ. և Հմշ. առացել է «ցաւ» նշանակութիւնը. օր. Կսկուծը սիրտը առեց. Շատ կսկուծ՝ ցաւ ունիմ։*

ԿՍՆԵԼ *«կաթկթիլ» կամ ուրիշ անծանօթ նշանակութեամբ մի բառ, որի վրայ աւելի ընդարձակ տե՛ս Կայլակ։*

ԿՏԱԼ *տե՛ս Նկատել։*

ԿՏԱԿ *(ի–ա հլ. ըստ ՆՀՔ, բայց առանց վկայութեան) «կտակ, դաշինքի թուղթ, ուխտ Աստուծոյ» ՍԳր. Կոչ. Փարպ. որից* կտակագիր *ՍԳր. Ոսկ. յհ. ա. 15.* կտակառու *Ոսկ. երբ.* կտակարաև *ՍԳր.* կտակապահ *Վրդն. պատմ.* կտակակատար *(նոր բառ) ևն։*

> *ՆՀՔ մեկնում է* կիտադրեալ *կամ* կիտակ*։ Մատ ЗВО 5, 318 դնդ.* vid *«դիտել» արմատից։ Հինդ. լտ.* codex *«օրինագիրք»։ Պատահական նմանութիւն ունին բարել.* giftu, *որից աստր.* geta *«կտակ»։*

Գիւր.—Ագլ. Ախց. Գոր. Երև. Կր. Ղրբ. Շմ. Ջղ. Վն. Սլմ. Տփ. կտակ, *Մշ.* կտագ, *Ննխ. Պլ. Ռ. Սչ.* գդագ *(Սչ. նշանակում է «Աւագ եղ. գիշեր եկեղեցում կարդացուած Ջարշարանաց կտակը»)։*

Փոխ.—Ուտ. ktak *«կտակ»։*

***ԿՏԱՊ** *«մէջը չամիչ, ընկոյզ կամ ուրիշ բաներ դրած մի տեսակ խմորեղէն» Ովս. գ. 1. Նորագիւտ. Ա. մնաց. ժզ. 3. Ոսկ. Փիլիպ. ժ. յորդ. էջ 469. «Ձկան տապակայ կամ փորը լցրած ձուկ» Մագ. Թղ. 214։*

*=Պհլ. *kutāp ձևից, որ թէև չէ աւան-*

դուած, բայց նոյնն է հաստատում պրս. کوداب kūdāb կամ gūdāb «մի տեսակ կեռակուր, որ պատրաստում են մսով, բրընձով, սխտորով և ընկոյզով. վրան անց են կացնում քացախախառն ռուպ» (ըստ Burhān-i-Qāti), «տեսակ ինչ կերակրոյ. 2. ռուպ» (ըստ ԳԴ), «մի տեսակ փլաւ» (ըստ այլոց)։ Այս բառից է փոխառեալ նաև արաբ. جوذاب jūḏāb «շաքարով, մսով և բրնձով պատրաստուած մի տեսակ կերակուր» (Կամուս, Բրք. Բրգմ. Ա. էջ 90)։

Հիւնք. պրս. gūdāb «թանձրացեալ ռուփ»։

ԳԻՒ.—Մրզ. Սլմ. Վն. Երև. կուտապ, Ղրբ. կո՛տապ, Ագլ. կո՛տափ. սրանց նշանակութիւնը տեղից տեղ տարբերւում է. օր. Ղրբ.՝ մէջը կանաչեղէն կամ ձեծած ընկոյզ լցրած խմորեղէն է. Բրև.՝ փորը զանազան համեմունքներ, կանաչի և չամիչ լցրած ու փուռը դրուած ձուկ է (Մագիստրոսի կուապին նման) կամ մաշով ու լորիով լցրած պահոց հաց (տե՛ս Ամատունի, Հայոց բառ ու բան, էջ 368 բ)։ Այս բոլորը գալիս են կուտապ ձևից (և ո՛չ թէ կապ), որի առաջին ձայնաւորը համապատասխան է պրս. ū<o ձայնին։ Ցետին արաբ. ձևից է փոխառեալ լ. ջիւղար և արևելեան թուրքերէնից Շմ. դուբար, որին համապատասխան է գալիս Հճ. խուրապ (կարդա՛ խուրբար կամ աւելի խուրբօր) «փախլաւա» (ըստ Թէրզեան, Ամէն. տարեց. 1924, էջ 197)։—Գարամանճեան բառարանն էլ ունի ջուռապ «իւղով եփած ձաւար»։—Թուում է թէ նոյն բառն է նաև կոտակ (Քաջունի) «բրուած կաղինի և շաքարի խառնուրդով զանգուած ուտելիք», Ննխ. զօղագ (<կոտակ) «ալիւրով ու շաքարով շիտոթ, որից մի գդալ դնելով մի բարակ շորի մէջ՝ դնում են մանկիկի բերանը, որ ծծէ»։

ՓՈԽ.—Ուտ. ktab «ձէթով շինած գաթայ»։

ԿՏԱՊԻԿ «օձի գալարուիլ նստելը». Նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Վստկ. 97 «Թէ որ ի յայգեկիթոց ժամն տեսանէ յայգեսնկին որթ ուրուք օձ կատպեալ»։ Արմատը կապ «օձի գալար» գտնում եմ գործածուած Խոր. աշխ. հրտր. Սուքրեան, էջ 23 «եւ գխունկսն... զագնիւն ժողովեն օձք և դնեն ի բոյնս, ի կատպս իւրեանց, զոր սպանանել առնուն»։—Տե՛ս նաև կռուտել։

ԳԻՒ.—Երև. կուտապ գալ «օձի գալարիլը. 2. փխբ. ցաւի ազդեցութիւնից մարդոց գալարուիլը, կծկուիլը» (Ամատ. Հայոց բառ ու բան, 368)։

ԿՏԱՏԵՆԿ տե՛ս Կուտատուկ։

ԿՏԱՒԻ, ո հլ. (յետնաբար կայ կտաւուց նանայ) «վուշի բոյսը. linum nodiflorum L. (ըստ Տիրացուեան, Contributo § 320). 2. քթան, նոյն բոյսից գործած կտոր. 3. քթանից հագուստ. 4. մեռեալի պատան, սաւան. 5. կտաւեղէն» ՍԳր. Եփր. Եղ. էջ 150. որից կտավագործ Նս. ԺՔ. 9. կտաւավաճառ Լաբուս. 32 (նորագիւտ բառ), կտաւեայ Եղ. իր. 42. կտաւի ՍԳր. Եւս. պտմ. կտաւեղէն Փիլ. կտաւատ «կտաւի սերմը, կտաւահատ» Մխ. առակ. Բժշ. Վստկ. և հակառակ դիրքով՝ հատկտաւ Վրք. հց. Բ. 157. կտաւոտեալ «կտաւով պատած» Ճառընտ. կտաւոտեակ «կապերտ, ղենջակ, շոր» Կոչ. 202. Ոսկիփ. կտաւագործութիւն (նոր բառ)։

=Ծագումն անյայտ է. Հայերէնի հետ նմանութիւն ունեցող ձևերը մեզանից են փոխառեալ. այս իրողութեան հետ լաւ է պատշաճում այն հանդամանքը, որ կտաւի բոյսը դիտութեան մէջ համարւում է Կովկասեան ծագումից. հաւանաբար իր օրրանն է Հայաստանը, որտեղից տարածուել է Եւրոպա և Արևելք (տե՛ս Արթինեան, Ածաշունչի տունկերը, էջ 154 և 156)։ Այս իրողութեան վրայ հիմնուելով՝ կարելի՞ է արդեօք կտաւ բառը մեկնել իբրև գուտ հայերէն ածանց՝ կուտ բառից. (այսպէս կոչուած իր պարունակած բաղմաթիւ կուտերի պատճառով, որոնք ծանօթ են կտաւատ անունով և որոնցից պատրաստում են կտաւաձէթը)։ Նկատելի մի հանդամանք է որ այսօր էլ Նոր-Նախիջևանի բարբառում կտաւատը բացատրւում է հունդ բառով՝ որ հոմանիշ է կուտ բառին. ասում են սովորաբար հունդ ցանել «կտաւատ ցանել»։—Աճ.

ՆՀԲ Երր. և յն. էէթէն, խիթօն «հանդերձ կտաւի»։ Lag. Urgesch. 831 պրս. katān և երբ. kətōnet «շապիկ»։—Նոյն,

Arm. Stud. § 1193 *արաբ.* kattān, *պրս.* katan *և թերևս խալտ.* šentō, *որից ծագել է յն.* στενδών: — *Հիւնք.* կատու *բառից*: Bugge IF *1, 453 գնում է պրս.* katān *հոմանիշից՝ համարելով թէ և կարող է երբեմն գառնալ ւ, որին իբրև օրինակ յիշում է* առաւիր, աւարտ, գաւակ, աւեր, աւար: Müller WZKM *9, 83 փոխառնալ է ասոր.* qeṭtau=*ն. ասոր.* qeṭō *բառից, որի վրայ տե՛ս տակը*: Scheftelowitz BB *28, 313 սանս.* kṣauma *«կտաւ» բառի հետ*: Karst *Յուշարձ. 405 սումեր.* kud *«վուշ»*:

ԳԻՒ.—Ախց. Գոր. Երև. Կր. Ղրբ. Մկ. Մրղ. Շմ. Ոզմ. Ջղ. Սլմ. Վն. Տփ. կտավ, *Ալշ. Մշ.* կդավ, *Սչ.* գդաւ, *Ասլ. Խրբ. Պլ. Ռ. Սեբ.* գդավ, *Տիգ.* գդմվ, *Ագլ.* կտօվ, *Հճ.* գտդօվ, *Զթ.* զօդօվ, գօդով, *Սվեդ.* գդուվ.—*Նոր բառեր են* կտաւաձէր, կտաւայրածմ:

ՓՈՒԽ.—Հայերէնից են փոխառնալ (բատ Հիւրշ. Arm. Gram. *308) ասոր. (յետին բառ)* ܩܛܛܐ qəṭṭau *«բամբակ» և ն. ասոր* qeṭṭō *«բամբակի բոյսը»*:—*Սակայն այս բառը տարածուած է Առաջաւոր Ասիայից մինչև Եւրոպայի արևմտեան ծայրը խօսուած բազմաթիւ լեզուների մէջ*:—*Ամէնից կանուխ ունինք ակկադ.* kitū *և սումեր.* gada *«կտաւ», որից* n *աճականով ասուր.* kitinnū *«կտաւ»՝ փոխառութեամբ տարածուած բոլոր սեմական լեզուների մէջ. ինչ. ասոր.* ܟܬܢܐ kettānā *«կտաւ»,* ܟܘܬܝܢܐ kutīnā *«մսի վրայից հագած երկար շապիկ կամ վերարկու», ն. ասոր.* k'itt'än *«քթան»,* k'it'änä *«բամբակ», արամ.* כתנא kittānā, *եբր.* כתנת kutōnet *«մարմնի վրայից հագած երկար կտաւէ շապիկ», եթովպ.* ቀጠን kətan *«վուշ, կտաւ»,* ቀዳን kədān *«շոր, հագուստ», արաբ.* كتان kattān *(գւռ.* kittān*) «կտաւ, քթան»,* قطن quṭn, quṭun *«բամբակ»: Երբայականից են ծագում հոմեր. յն.* χιτών, *յոն.* κεθών *«կտաւէ վերարկու»* (Boisacq 1061): *Արաբերէնից են փոխառնալ մի կողմից պրս.* کتان katān *«վուշ» և միւս կողմից իտալ.* cotone, *ֆրանս.* coton, *անգլ.* cotton, *հոլլ.* katoen, *մրգ.* kottún, *նրգ.* kattun (Kluge *246), որից էլ լհհ.* katun, *չհխ.* kartoun *և ուրիշ սլաւական ձևեր* (Berneker *653)*: *Ա-րաբ.* قطنى qutnī *ձևից է փոխառնալ նոյնպէս թրք.* qutni *«բամբակախառն մետաքսեայ կտոր», որից էլ ռուս.* кутня́ (Berneker 653*) և հյ. գւռ.* լուրքի, խուրքի: *Պարսկերենի միջոցով են ստացուած թրք.* كتن keten, *քրդ.* ketan, *օսս.* ֆաթան, *վրաց.* ჭითანი ֆաթանի, *սերբ.* c'etan *և վերջապէս հայ.* բաճ *(տե՛ս այս բառը)*: *Եթէ Հայաստանը հայրենիքն է կտաւի, ուրեմն այս բոլոր բառերը ծագում են Հայաստանից, այն է Հայաստանի բնիկ խալդիների լեզուից, որից փոխառնալ է նախ ասուրերէնը և այստեղից էլ տարածուած ամէն կողմ*: (Scheftelowitz BB *29, 71 Հայերէնը գնում է խալդերէնից, իսկ ասուրականն էլ հայերէնից)*:

ԿՏԱԻԵԼ *տե՛ս* Կտուել, Կտաւ:

ԿՏԵԼ *տե՛ս* Կուտ:

ԿՏԵՒ *«ընկոյզի կամ նուռի կեղև». ունի միայն ԱԲ. որից* կտուել *«ընկոյզը տակել, կեղևել» Շնորհ. առ. «չամիչ, խնձոր և նման պտուղներ կուտերից մաքրել, ասպ, սիսեռ, բակլայ կճեպից հանել» Բժշ. «կեղևը հանել, փեճոկել». իբր մհյ. բառ յիշում է Նորայր, Բառ. ֆր.* monder, *«ծառի աւելորդ ճիւղերը կարատել, մաքրել, յօտել» Փիլ. Եփր. աւետ. 288, 289, 291. Մծբ. 311 (որ և* կտաւել *Մծբ. անշուշտ սխալագիր), կտուած «մաքրուած» ՀՀԲ. սրանց հետ նոյն է նաև* բուել *«ոջիլները մաքրել» Վրք. Հց. Բ 17, որից իբր նոր արմատ՝* բիւ աճել *«բրթուել» Զքր. սարկ. Բ. 142: Համմտ. տակը Գւռ:*

ԳԻՒ.—Սլմ. Վն. կտվել *«ոջիլները մաքրել» որի հետ նոյն են Ալշ.* բվել, *Գոր. Ղրբ. Պլ.* բվել, *Ագլ.* բրբվիլ, *Խրբ. Սվեդ.* բվիլ, *Տփ.* բրբվիլ, բվիլ, *Սչ.* բֆել, *Ասլ.* բ*վէ՛լ, *Ջղ* բֆտել, *Շմ.* բիբիվ աճել.—*Վանի և Սալմաստի ձևը բոնում է* կտուել *և* բուել *բառերի միջին տեղը, ձևի կողմից առաջինի և նշանակութեան կողմից երկրորդի հետ նոյն լինելով*:—*Արմատական ձևը պահում է միայն Համշ.* գդէփ *(<*կտեփ*) «ծառի կեղև»*

(ձայնական տարբերութեան համար հմմտ. կճեպ, էշև, կողով, կողոփ). բայց նաև կըտավօն Հմշ. «զանազան ծառերի, ինչպէս մանր ուռենու են կեղև»։

*ԿՏԻՆ «շերտաւոր պատեանով մի տեսակ խեցեմորթ» Վեցօր. 140. գործածուած է միմիայն մի անգամ՝ յղ. կտինք ձևով. «կոնքըն և կտինքն և կոքղիք և ստրոմք»։

=Յն. κτένες (յողնակի), որի եզակին է κτείς «սանտր. 2. սանտրաձև մի խեցեմորթ»։—Հիւրշ. 360։

Ուղիղ մեկնեցին նախ ՀՀՒ և ՆՀՒ։

ԿՏԻՏ «խուզարկութիւն, փնտռտուք». արմատ առանձին անգործածական, որից կազմուած են կտտել «մանրազնին կերպով քննել, պրպտել, խուզարկել» Նար. երգ. 308 Վստկ. մաներակտիտ առնել «մանրամասն քննել» Ագաթ. Կորիւն։—Տե՛ս և կտտտ։

ԿՏԻՏ (սեռ. կտտի) «անասունի աղբ» Կանոն։

Գիւր.—Շմ. կտիտ, Ղրբ. կտէտ «կաուտի, ոչխարի, մկան աղբ». որից -որ մասնիկով՝ կտտոր Ալշ. Ախց. Երև. Ղրբ., կտո՛ւտր Ագլ. կտտուր Դվ. Կր. Մժ. «այծի, ոչխարի, ուղտի աղբ». փոխաբերութեամբ ունինք Ղրբ. կտէտ «շատ մանր պտուղ»։ Նոր բառեր են՝ կտտաւոտ, կտտել, կտտորել, կտտեճի, կըտրտուրենի «մանր միրգ տուող ծառ»։

ԿՏԻՐ «հարսի օժիտ» Ոսկ. կողոս. ժբ. ուրիշ վկայութիւն չկայ։

Հիւնք. բնաիր բառից։

ԿՏԿՏԵԼ «ծաղրել, այպանել, յանդիմանել». նորագիւտ բառ՝ որ մէկ անգամ գըտնում են գործածուած Ոսկ. յհ. ա. 9, էջ 97 «Ամենեցունց բառդեալ կակաեալ նշաւակ երևեալ»։

ԿՏՂԻԼ «վառիլ ի ցանկութիւնս մարմնոյ, մոլեգնիլ վաւաշոտութեամբ» Ոսկ. կող. ժբ, ա. տիմ. բ., Երր. իդ, մ. գ. 4. որից կտղանճ Պլտ. կտղուցք Սերեր. 194. գրուած է նաև կղտմիլ. իսկ Ոսկ. պօղ. ա. 22 մի ձևս. կտտել փխ. կղիլ։

ՆՀՒ կատաղիլ և խտտղիլ բառերի հետ։ Հիւնք. կատաղի բառից։

—ԿՏՈՐ տե՛ս Կտտոր։

[ԿՏՈՒԱՆ. սխալագիր բառ. մէկ անգամ ունի Վեցօր. էջ 10 «Հարկանել բուռն ի գործս տախտակամած յատակաց նաւի, որ է սկիզբն կտուածոյ կազմութեան նաւին»։—ՆՀՒ, ՋՒ և ԱՒ մեկնում են «նաւ շինելու հիմ, ողնափայտ դնելը կամ ողնափայտ». Նորայր, Հայկ. բառաք. էջ 67 ուղում է ուղղել սկիզբն սկսուածոյ (ինչպէս ունի Վեցօր. էջ 10, 165, 177) կամ կարդալ սկիզբն կըցուածոյ, ինչպէս ունի Անտոնեանց բնտիր օրինակը։ Հ. Ա. Վարդանեան, ՀԱ 1911, 297 Վիեննայի երկու ձեռագիրներում էլ գտնելով կցուածոյ, այլ ևս ուսլորդ է համարում ծանրանալ կտուած ձևի վրայ։]

ԿՏՈՒԵԼ տե՛ս Կտել։

ՆՀՒ յիշում է կրկտել, կծուել և բրուել ձևերը։

ԿՏՈՒՏ «տանջանք, չարչարանք» Ոսկ. ա. Թես. ես. 159 և հբր. (գործածուած է անեզարար). որից կտտել «չարչարել, լկել» Յոբ. գ. 4. Ոսկ. յհ. ա. 9. Ագաթ. «նուազարանի վրայ ածել» Մաշտ. ջահկ. «գինին թթուելով բերանը տտպել» Վստկ. 88. կըտտումն Ճառընտ. կտտաճ Պիտ. 36. կթ. կտտամաճ Ագաթ. ճորակտուտ Խոր. շարակտուտ ԱՒ. վշտակտուտ Պտմ. ատ լեհ. բազմակտուտ «բազմատանջ» Վրդն. յս. 58.—կայ նաև կտիտ ձևով՝ որից շարակըտիտ Եփր. վկ. արև. 37։

ՆՀՒ կտուց, կտուել, կտել բառերին է կցում։ Պատկ. Изслед. էջ 15 յծ. կծիծ։ Հիւնք. կէտ բառից է հանում։ Scheftelowitz BB 28, 313 սանս. kšud «ջարդել», հսլ. chudŭ «փոքր» բառերին ցեղակից։ Պատահական նմանութիւն ունին վրաց. դուդուղի «կամիքից յառաջ եկած սևութիւն», դաղուդուղերա «կծել, այլևայլ տեղեր կծոտել», դուդուղերա «մարմինը կծել»։

Գիւր.—կուտտել Հմշ. «չարչարել» կուտուտ առնել Ղզ. «միջից մի բան թափելու համար տակից խփել», կուտուտիչ Աշտ. «ոտի թաթի ձևով երկաթէ գործիք, որով կապերտ են գործում»։

ԿՏՈՒՏԵԼ «օձի փաթաթուիլ նստիլը». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ

գործածուած Վրդ. առ. 91 «եբաց զհացն և նոցա օձ մի կոտոնեալ»։ Տե՛ս նաև կատպիլ։

ԳԻՒ.—Բլ. կոտվել, *արմատը կոտ (հաղորդեց Ս. Մովսիսեան, նամակ 1933 մարտ)։*

—ԿՏՈՒԻ *տե՛ս Կոտոր։*

ԿՏՈՒԻ *«հարթ տանիք». Հին գրականութեան մէջ չէ՛ աւանդուած. կայ արդի բարբառներում. բայց սրանից ունինք* Ֆարակոտուր *«բերդի քարեղէն տանիք» Ուռհ. էջ 320։*

ԿՏՈՒՑ, ի–ա *հլ. «թռչունի բիթ» Վրդն. ծն. Նար. (գրուած* կռնուց *Վրդ. առ. 81). որից* կտցատուր *Խոր.* կտցել *Փիլ. լիւս.* սրակտուց *Ոսկ. ա. տիմ.* կարմրակտուց *Երզն. ժ. Խորան.* կորակտուց *Վեցօր. ը. 171. որ և* կռակտուց *Ոսկիփ.* կտցար *«մի տեսակ երկարակտուց թռչուն» Բռ. սա. լեհ. (իբր Ֆրանս.* bécasse *«կտցար», որ ծագում է Ֆր.* bec *«կտուց» բառից).* կտցահարել *(նոր բառ)։*

ՆՀԲ կտել, կուտ կտտել *ձևերից։*

ԳԻՒ.—Ախց. Երև. Կր. Մկ. Զղ. Վն. Տփ. կտուց, *Համշ. Տիգ.* գդուց, *Ոզմ.* կռօց, *Ռ.* գուդուց, *Ննխ.* գուդուցֆ, *Ագլ. Գոր. Ղրբ.* կռօց, *Ալշ. Մշ.* կդուց, կդուծ, *Հճ.* գոդուց, *ՋԲ.* գօդուց, *Սվեդ.* գդեօց. —և *յատկացածն ունին՝ Սեբ.* գդուճց, գդնուց, *Խրբ.* գդուճց, գդնուց, *Ակն.* գըբնիւց, *Ասլ.* գը*նիւց, գը*նիւս.—*բայական ձևով ունինք՝ Ակն.* գըդցել, *ՋԲ.* գըդցիլ, գցիլ, *Ռ.* գրնցել, *Տիգ.* գըցցել, *Հճ.* գոցցել, *Պլ.* գրնձել, *Խրբ.* գցիլ, *Ասլ.* գը*նձալ *(իսկ* կցնել *Արբ.) «կտցել»։*

ԿՏՐԱՆ *«ծոթրին, Թրք.* kekik otə» *Ասար. ունի միայն ՀԲուս. § 1561։*

ՀԲուս. բժշկարանների նշանակած «քէքիկ» բառը չհասկանալով՝ վարանում է մեկնել այսէս։

*ԿՏՐԱՆ *«խայծդան, կուպր» Բժշ. ունին միայն Նորայր, Բառ. Ֆրանս. 606 ա և ՀԲուս. § 1561։ Աւելի յետին է* զաբրաճ *«ռետին», որից* զաբրաճի ծառ *«ռետինի ծառ. լտ.* resina» *Բժշ. ունի միայ ՀԲուս. § 1795։*

=Արաբ. قطران qatrān, *որից Թրք.* ʒatran, qatran *«կուպր», ռմկ.* խաբրան։

Ուղիղ մեկնեց Նորայր, Բառ. Ֆր. էջ 606 ա և ՀԱ 1925, 409։

ԿՏՐԿՈՅՏԱԿ *«աղուեսաձուք,* orchis, *սաղլէպի բոյսը». Մխ. բառ. ունի միայն Նորայր, Բառ. Ֆր. 877 բ։ Արմատը պիտի լինի կըտրուկ կամ կարիկ, որի բուն նշանակութիւնը անյայտ է։—Քաջունի, Գ. 130 դնում է թէև կարկոյ տակ վերի իմաստով. բայց Ա. 514 բ ունի նաև կարկի «colurie», «բոյս ինչ յազգէ վարդենեայց», որ սուգաբանում է իբր յն. κόλουρος «հատեալ», որով և հայ ձևը կարել, կարուկ ձևից։*

ԿՐԱՆ *(ի–ա հլ. ըստ ՆՀԲ, բայց կայ միայն սեռ. -ի) «հուր, կրակ» ՍԳր. Կոչ. Եւս. պտմ. որից* կրակարեր *Աբդ. ա. 18. Ագաթ.* կրակակալ *Նւագր.* կրակատեղաց *Ոսկ. մ. ա. 20 և ես.* կրակարան *ՍԳր.* կրակեղ *Յհ. ա. 9.* կրակատուն *Եղիշ.* կրակապաշտ *Փրպ.* կրականի *«կրակներ» Փարպ.* կրակոտ, կրակել *(նոր բառեր)։*

Հներից Սիւն. քեր. 189, 190=Մագ. և Երզն. քեր. մեկնում են իբր կերակ *«ուտող». «Կըրակն կերակ է ըստ գործոյն, փոխանակելով զեթն եչի. Ասացաք յաղագս կըրակի, թէ կերակ է»։ Ամսեփեան, Քերակ. 1815, 312* կուր *«կերակուր» բառից։* Klaproth, Asia polygl. *100 ա արաբ.* حرق ḥarq *«այրել» բայի հետ։ ՆՀԲ յիշում է* ճրակ, կերակ, ճրագ *և վրաց.* կէրակի *«կրակարան»։ Տէրվ. Նախալ. 79 դնում է հնխ.* gvar *«վառիլ» արմատից. համմտ. յն.* γρῦω *«վառիլ»,* γρυνός *«հրդեհ», հսլ.* goreti *«բորբոքիլ», հբգ.* kolo *«ածուխ»։ Հիւնք. ճառագայթ բառից։* Müller, Armen. VI և SWAW 136 *(1897), 20 դնելով* *կուրակ *նախաձևից, կգայ է գոթ.* haúri *«ածուխ», յգ.* haurja *«ածուխով կրակ», հիսլ.* hyrr *«կրակ», լիթ.* kùrti *«տաքացնել», հսլ.* kuriti *«ծխել», ուկր.* kuračyty *«ածուխ վառել», սանս.* kū·ḍayati *«խանձել»։ Այս մեկնութիւնը ընդունում են* Bugge KZ *32, 51, Հիւբշ. 462 (կասկածով) և* Scheftelowitz BB *28, 305։ (Սակայն չէ՛ ստոյգ, որովհետև վերի բառերի հնխ. արմատն է* ker, *որ պիտի տար հյ. **fեr–*): Bugge պատահական է համարում չէչէն.* kur *և*

թուշ. kur *«ծուխ»*։ Pedersen, *Հայ. դր. լեզ. 77* կուր *«նաւ» բառին է կցում, առաջին իմաստը համարելով «վառարան, կրակարան»*։ Lidén, Arm. Stud. *էջ 123 համեմատում է իռլ.* gúal, *հբգ.* kol, kolo, *հհիւս.* kol, *հանգլ.* col, *գերմ.* Kohle *«ածուխ» բառերի հետ, որոնք դնում է հնխ.* gu-lo- *ձևից. (արմատը* gu-, geu- *«վառիլ»). սրա մէջ* -lo- *փոխանակուելով* -ro- *մասնիկով՝ լինում է հնխ.* guro-, gura-, *որից էլ հյ.* կրակ։ Trautmann 145 *և* Berneker *652 ընդունում են* Müller-*ի մեկնութիւնը, իսկ* Walde 130, Boisacq *436 և* Pokorny *1, 418 և 563 մերժելով այն, ընդունում են* Lidén-*ի մեկնութիւնը։*

Գիմ.—Ախց. Գոր. Երև. Կր. Ղրբ. Մկ. Մրզ. Շմ. Ոզմ. Ջղ. Սլմ. Վն. Տփ. կրակ, *Ալշ. Մշ.* կրագ, *Խրբ. Համշ. Ննխ. Պլ. Ռ. Սեբ. Սչ.* գրագ, *Ասլ.* գրագ, գրայ, *Տիգ.* գրմգ, *Ագլ.* գրօգ, *Հճ.* գոյօգ, *Զթ.* գօյօֆ, գօռոֆ, *Սվեդ.* գրիւ։—*Նոր բառեր են* անկրակ, կրականաւն, կրակամայր, կրակաման, կրակաւր, կրակառնի, կրակացնել, կրակափայտ, կրակենի, կրակրափի, կրակրնկոց, կրակխառնի, կրակխոռով, կրակծուխ, կրակսէր, կրակոց, կրակտալ, կրակտաւոց, կրակցած, կրակփաշ, կրակփուշ, կրակփրփոց, կրամոխիր *(փխ.* կրակամոխիր)։

Փոխ.—Վրաց. կերա, կերակի, կերականի *«օջախ, վառարան», լազ.* կերա *«օջախի քարը» (տե՛ս Աճառ. Արարատ 1911 թ. էջ 417)*։—

ԿՐԱԿԱՏ *«չոր». ունի միայն Բառ. երեմ. էջ 169*։

—ԿՐԱՅ *(գրուած նաև* կրիայ, կիրիայ, կիրայ *վրդն. առակ. 28. արդի գրականում* կրեայ*)*, ի *հլ. «կրեայ անասունը, տճկ. βοσպαζή» Ոչխ. ժբ. 11. Վեցօր. 186. Փիլ. լիւս. Նիւս. քն. որից* կրայակիրք *«մի տեսակ խեցեմորթ» Մագ. Թղ. 214.* վաճակրեայ *և կամ* վաճաճակրիայ *եպիփ. բարոյ.= Բառ. 158*։

=Ծագում է կուր *«մակոյկ, նաւակ» (այսինքն «տաշտ») բառից և նշանակում է բուն «տաշտաւոր». ճիշտ նոյն ձևով են կազմուած պրս.* کرا lāk *«տաշտ. 2. կրեայ», որ և* لاکپشت lākpušt *«կրեայ» (բառացի «տաշտակռնակ»), լտ.* testudo *«կրեայ»՝ ծագած* testu *«պտուկ» բառից, գւռ.* տաշտիկռնակ, կրեաճկօտ *«կրեայ»։ Այս տուգաբանութիւնը ցոյց է տալիս, որ արմատը լինելով* կուր, *մասնիկ է այ. ուստի լաւագոյն գրչութիւնն է* կրեայ, *իբր «տաշտեայ, տաշտէ»։ Չևափոխութիւնը ճիշտ այնպէս է, ինչ.* կարկուրեայ *կամ* կարկուրայ *«նաւակ»,* կեռեայ, կեռայ, կիւռիայ *«կայմ», և կամ* կուճ *«մարմարիոն» բառից* կճեայ *ՄԳր. յետոյ* կճեայ *Ոսկ. Ճառք։ Այսպէս նաև* անդեղեայ–անդեղայ, արտորեայ–արտորայ, զրեայ–զրայ–զրեաւ, խաբերայ–խարերեայ, չափիւղայ–չափիւղեայ, ֆուռեայ–ֆուռայ–ֆուռ, *և մանաւանդ* միջերկրեայ *կամ* միջերկրայ։ *Ճիշտ այս վերջինի նմանն* կրեայ *դարձել է* կրայ։ *Հայերէնի մէջ չկայ* –իա, *իայ վերջաւորութեամբ բառ. բոլոր այդպիսի բառերը օտար են. այսպէս* ալելուիա, ալֆիմիա, ախախիա, բարբիայ, երիա, զմիւռնիա, լուբիա, մանդիա, էնկոմիա, բեւելիա, կասիա, կեմեւրիայ, կուլուռիայ, մեսիա, ոաֆիա, սկիտիա, պիւրիա, ֆիմիա. *կամ սխալ գրչութեան և կամ յունաբանութեան արդիւնք. այսպէս* աղիայ, բեռանիայ, թոռնիայ, ստեղիայ՝ *իմա* ստեղեայ։—*Ա.ճ.*

Նորայր, Բառ. ֆրանս. tortue *բառի տակ յիշում է մալայ.* fարաի *համանիշը։ Հիմնք.* գրաի *բառից։* Lidén, Arm. Stud. *էջ 118 հնխ.* gūrāti- *ձևից, որի արմատն է հնխ.* gūro- *«կոր, ծուռ». համմտ. յն.* γῦρός *«ծուռ, կոր, կլոր ևն». նշանակութեան նոյնպիսի ձևափոխութիւն են ցոյց տալիս սպան. պրով.* tortuga, *ֆրանս.* tortue, *իտալ. պորտ.* tartaruga *«կրեայ», որոնք ծագում են լտ.* tortus *«ծուռ» բառից։ (Այս մեկնութիւնը ընդունում են* Boisacq, *էջ 159,* Petersson KZ *47, 241 և* Pokorny *1, 557)։ Պատահական նմանութիւն ունի սանս.* guhya *«կրեայ». այսպէս նաև յն.* χέλυς, *հսլ.* želŭvĭ, *սերբ.* žĕlva, *չեխ.* želva, *ռուս.* žolvĭ *բառախումբը, որի նախաձևն է* gelū *«կրեայ»* (Trautmann

84)։ Պատահական նմանութիւն ունի լտ. բառացանկերի մէջ միայն գտնուած golaia «կրեայ», որի ինչ լեզուի բառ լինելը յայտնի չէ (Ernout-Meillet 410)։ Վերոյիշեալ -եայ, -իա, իայ յանդող բառերի ամբողջական վիճակագրութիւնը կատարեց մեր համալսարանի լեզուաբանութեան դասախօս Արարատ Ղարիբեանը։

ԳԻՒՒ.—Ախց. կրիա, Սեբ. գըրիյա, Մկ. կօա-կրյա, Երև. կուրյա, Շմ. կուրա, Ջղ. կուրայի, Գոր. կօ՛րա, Ղրբ. Կօ՛րէ, Ագլ. կօ՛-րան, Ասլ. բէօշէօվղիրյա՛ (այն է պաշովիրյա, որով կրեայ բառը սուացած կլինի միրյա ձևը), Սլմ. կրյանկօա, Վն. կըրբրա, Ոզմ. կրէրա, Մշ. կիրիրա, Խրբ. Պրա. գիրիրա, Սլղ. կօղկիրիրա, Հճ. գույէշ, Սվեդ. գուրյուշ։— Ամաս. Հայոց բառ ու բան, էջ 222 յիշում է նաև բսկուրի երև. կռնակօա (Ղուրդուղուլի) ձևերը։—ՋԲ. սուացել է գօյրո ձևը՝ «դռան մի տեսակ փականք» նշանակութեամբ։

ՓՈԽ.—Ն. ասոր. kra, kraya «կրեայ» (Калашевъ, Айсорско-Русс. слов. էջ 304), վրաց. ვაჭანაკრაჲ վաճառակրայ, որ բուն Մառ Физіологъ (1904), էջ XXXVI դրուած է հյ. վաճառակրայ բառի դէմ։—Վրացին ունի նաև რკუ რկու, რკუი° րկուվի, კუ կու, კუი° կուվի ձևերը, որոնք նշանակում են «կրեայ»։

ԿՐԱՒՈՅ. նորագիւտ անստոյգ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Բնլ. ճշմ. 40 «Չչարաբանես, զհայհոյիչս, զկրաւոյս, զիպացեալս...», անդլ. Քրգմ. էջ 103 դրուած է quarrelsome «կռուարար»։

⊙ԿՐԱՒ «ագռաւի ձայնը». մէկ անգամ ունի Վրք. հց. ժԲ. հետևեալ ձևով. «Ագռաւքն կրաս կրաս ասեն. իսկ կրաս յաւառնաց լեզուն զայս ասէ՝ թէ վաղիւն տեսցես զիւաս Աստուծոյ»։ Այս հատուածից երևում է թէ կրաս ագռաւի ձայնն է. իսկ ակնարկուած «աւառնաց» լեզուն պիտի լինի լտ. cras «վաղը»։

=Բնաձայն բառ է։—Ա՛Ճ.

ՀՀՔ և ՆՀԲ դնում են լտ. corax «ագռաւ» և cras «վաղը»։

ԿՐԵՓԻՆ «խոնարհ կամ կերպիւ խոնարհ». ունի միայն Բառ. երեմ. էջ 169. այս բառի աղաւաղ գրչութիւններն են կոփիւն և կոխիւն, որոնք նոյնպէս մեկնւում են «խոնարհ», անդ՝ էջ 165 և 169։

ԿՐԻՏ «իշամեղու». ունի միայն ՓԲ. տե՛ս վերը բոռ.—2. «ԴԿ ձայնին պատկանող մի եղանակի անուն» Մանրուս. (Ամաս. Հյ. բառ ու բան, էջ 378).—3. «Բէշկ մշկոյ ինչ, որոյ մորթ վարի ի մուշտակս. ֆրանս. genette». (իբր նորակերտ բառ ունի Նորայր, Բառ. ֆրանս. 594 բ)։

Ղափանցեան, Տեղեկ. ինստիտ. 2, էջ 111 անատուն ցոյց տուղ -էա մասնիկով, ինչ. առնէա, բրէա, օկռէա «սկիւռ» են։

ԳԻՒՒ.—երև. Լ. Տփ. կրէա «իշամեղու»։

*ԿՐԻԿՈՆ կամ ԿՐՈՆ «շուշան, զամպակ» (իմա՛ Բրբ. zambaq «շուշան»). ունի միայն Բառ. երեմ. յաւել. էջ 568։

=Յն. κρίνον «շուշան». ըստ այսմ երկուսն էլ խաթարեալ գրչութիւններ են և պետք է ուղղել կրինոն։—Ա՛Ճ.

*ԿՐԻՏ «Թագաւորի քարտուղարը» Մխ. դատ. էջ 268, իբր օտար բառ. «Կրիտք, որ են թղթագիրք արքայի»։

=Յն. κριτής «դատաւոր. 2. մեկնիչ»։

ՆՀԲ լտ. scriptor «քարտուղար, գրող»։ Բաստամեան, Մխ. դատ. էջ 268 լտ. scriptor կամ criticus: Սակայն այս ձևերը ձայնապէս չարմար չեն։ Վերի ձևով մեկնեց Karst, Դատաստ. II. 80։

*ԿՐԻՏ «մի տեսակ բժշկական խոտ է, որ ճաթուտած շրթունքների իբր դեղ է գործածւում» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 3345։

=Թրք. گريد اوت girid-otə, որ բուն նշանակում է «Կրեաէի խոտ». Հայերէն կոչւում է դեղուկ. տե՛ս և խաՆբեփար։

Ուղիղ մեկնեց ՀԲուս. անդ։

*ԿՐԻՏԻՒ «քննագատ, քննիչ դատաւոր» Վրք. հց. Ե. 85. ուրիշ վկայութիւն չկայ։

=Յն. κρικίς «գաւառուր». (տե՛ս և վերը կրիա)։—Հիւբշ. 360։

Ուղիղ մեկնեցին նախ ՀՀԲ և ՆՀԲ։

*ԿՐԿԷՍ (ի-ա հլ. ըստ ՆՀԲ, բայց կայ միայն սեռ. կրկիսի) «մարզական խաղերի հրապարակ» Բ. մակ. դ. 9. Ոսկ. յհ. ա. 1. դ. 10. Խոր. գրուած է կրկէսիոս Ասող. էջ 53։

=Յն. κίρκος «կրկէս» բառից. այս էլ գալիս է լտ. circus «կրկէս», circenses «կրկէսի խաղեր» ձևից. արմատն է լտ. circum «շուրջ, բոլորտիք, շրջան»։ Լատիներէնից են փոխառեալ նաև գերմ. circus, անգլ. circus, ֆրանս. cirque, ռուս. циркъ «կրկես» ևն։—Հիւբշ. 360։

Նախ ՆՀԲ դրաւ յծ. լտ. circus և յն. κίρκος։

+ԿՐԿԻՆ, ո հլ. «երկու անգամ, երկրորդ անգամ, դարձեալ» ՍԳր. Եւս. քր. Ոսկ. յհ. ևից կրկնել ՍԳր. Եւս. պտմ. Ոսկ. յհ. բ. 18. կրկնաբուղխ Եւագր. կրկնապարիսպ Եւագր. կրկնաւոր Սեբեր. կրկնաւուր Կորիւն. կրկնակի «կրկին անգամ, երկիցս» Յհս. ե. 2. Ոսկ. ես. «վերարկու» Կոչ. կրկնոց «վերարկու» ՍԳր. (համմտ. յն. ὑπανδύτης «manteau qu'on met en double»). կրկնոցակ «խեղճ վերարկու» Կոչ. 258. կրկնուած Ոսկ. ես. կրկնամեռ Յուդ. 12. բազմակրկին Ասող. չորեքկրկին Լմբ. պտրգ. կրկնակօշիկ, կրկնամկուտուրիւն, կրկնապակի, կրկնապատուաստ, կրկնաւոմար, կրկնեւոյթ (նոր բառեր)։

=Կազմուած է -կին «-պատիկ» մասնիկով կր- արմատից, որ գտնում ենք նաև շրջեալ երկ-ու ձևի մէջ. ըստ այսմ կրկին= երկկին (ուր ե յաւելուած է՝ ր-ի պատճառով). տե՛ս և երկու բառի տակ։

Peterm. 164 շրջեալ երկկին բառից։ Windisch. 29 համարում է երկու բառի երկրորդական ձևը, իսկ էջ 30 ազգական է գնում լտ. circum «շուրջ» բառի հետ՝ որ ցոյց է տալիս «երկբայութեան» գաղափարը։ Բագրատունի, Քերակ. գարգ. 1496 շրջեալ երկկին ձևից։ Տէրվ. Երկրագունտ Ա. 18—20, Լեզու 169 մեկնում է վերի ձևով։ Bugge, Beitr. 42 գնում է *կուր-կին «երկկին» նախաձևից, որ կազմուած է *ku (հնխ. dwó «երկու») բառից+-ro+ +կին մասնիկներով. համմտ. (եր)-կու։ —Նոյն, Etr. u. Arm. 121 և IF 1, 457 գնում է *կիր-կին. համմտ. եր-կիր «երկիցս»։ Հիւնք. կրկէս բառից։ Մ. Ս. Դաւիթ-Բէկ, Յուշարձան 398 գալլ. cylchen, ն. արմօր. kelch, հբրտ. circhinn «շուրջ, շրջան», լտ. circinus։

Գ՚Ի՚Ի.—Կրկին աճել Երև., կրկնել Ղրբ. «հիւանդութիւնը չետ դառնալ», կրկնել Խրբ. «շապիկի թևը կամ գգեստի բռանցքը վերև քաշել», Տփ. «շնչասպառ լինել, խեղդուիլ»։

ԿՐԿԻՏ «երէ վայրի կամ մի տեսակ երէ». մէկ անգամ ունի Մագ. քեր. 239 «երէ... շիկերէ։ Եվ այս թևպէտ և գառեաւ ի սոխէն, միայն նշանակեաց օդիս գոլ և ոչ եղունք կամ այծեմունք կամ կրկիտք կամ այլքն»։ Յիշում է միայն Բռ. առեփ. լեհ։

ԿՐԿԻՏ «պրպտում, որոնում, փնտռտուք». առանձին չէ գործածուած. որից ունինք կըրկըտել «խուզարկել, կողոպտելու նպատակով որոնել» Եւս. քր. ա. 7. եղն. Ոսկ. յհ. բ. 12. գերեզմանակրկիտ Ոսկ. յհ. և մտթ. Կոչ. 402. բանակրկիտ Մծբ. մանրակրկիտ Նար. երգ. ականջկրկիտ «ականջ խառնելու դործիք» Վստկ. 130 ևն։

ՆՀԲ յիշում է կրկուտ, կտել, կտտել բառերը։ Հիւնք. կրկուտ բառից։ Pedersen, Հայ. դր. լեզ. 219 կրկուտ բառի հետ։ Petersson, Ar. u. Arm. St. էջ 85 միացնում է կրկուտ «խոհ» բառին, որից կազմուել է նախ սովորական սղումով կրկտել, յետոյ արմատը կարծուել է կրկիտ, իբրև -իտ մասնիկով. համմտ. ձրձել—ձրձիտ. իմաստի գարգացման համար էլ համմտ. լտ. scruta «հնոտիք» և scrutor «պրպտել»։

ԿՐԿՈՎԻԼ «աչքը պայթիլ, դուրս ընկնիլ». երկու անգամ ունի Ոսկիփ. «Առիւծն եհար ապտակ ի ծնօտս գայլուն և կրկովեցան (այլ ձ. կոկովեցաւ) աչք նորա. Աչք գայլոյն ուսոյց զիս, որ արտաքս կրկովեցան»։

ՆՀԲ գնում է «շլանալ, վնասիլ աչաց կամ ի դուրս ցցուիլ». ԱՔ «աչքը դուրս

իննկնալ»։ Ուղիղ է միայն վերջինը, ինչպէս ցոյց է տալիս «արտասխ» բառը։

ԿՐԿՈՒՏ *«խոխ, փայտի կտորտանք»* Գ. *թագ. ժե. 12. Եփր. թագ. 433, Եփր. դծ. 40. Նար. էջ 179. որից* **կրկտակերտ** *«խոխներով շինուած»* Ագաթ. **կրկտախաղ** *«խոխ հաւաքող»* Ոսկ. բ. *կոր. Վրդն. Թուց։*

Հիմնք. **կարկուտ** *բառից։* Petersson, Ar. u. Arm. Stud. *էջ 85 համարում է կրկնուած և շրջուած հնխ.* grod- *արմատից, իբր* gē-grud-i *կամ* gi-grud-i> *կկրուտ>կրկուտ. *Համմտ. յն.* γρυνός *«չոր փայտ», գնդ.* grava- *«եղէգ»։*

Գիմ.—Բլ. **կրգուտ** *«խոխ, փայտի չոր կտորտանք». նոյն բառն ունին նաև Բիւթ. Ջն։*

⊙**ԿՐԿՋԱԼ** *«կարաւի հանած ձայները». առանձին չէ գործածուած, բայց սրանից ունինք* **կրկջանայն** *(կարաւի համար ասուած) Փարպ։*

=Բնաձայն բառ. կազմուած է կ ձայնից՝ կրկնութեամբ և r, ջ ածանցիչներով. Համմտ. **ճրճիչ**, **ճրճալ**, **դրդջիւն**, *և ա ձայնաւորով՝* **կարկաչել**, **մարմաջել**, **գարգաչել** *ևն։—Ա՛ճ.*

Սոյն մեկնութիւնս հրատարակուած է նախ ՀԱ. 1899, 204 բ։

Գիմ.—Երև. Ղզ. Ղրբ. Վն. **կրկչալ**, *Ագլ.* **կրկչօլ**, *Շմ.* **կրկչիլ**, *Ալշ. Մշ.* **կրզչալ**, *Սեբ.* **զրզչալ** *«հաւի, անծեղի, նաև ծիծաղելու բարձր ձայն», որից* **կրկչան** *Վն. «շատ կըտկըտացող (հաւ)»,* **կրկչոց** *Ղզ. «կաքաւի ձայն»։*

ԿՐԿՏԵԼ *«դողալ, սարսռալ». նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Փիլ. նխ. բ. էջ 62—63 «Հա՛րկ է իմաստնոյն, օդ հիւսիսոյ թէ չնչիցէ ցրտագոյն, սարսռուլ, կարկաչել (իմա՛ կարկաչել «զուիալ»), կրկտել և ցրտալ (յն.* ῥίγει, πεσθῇναι καὶ ψύχει)»։ *Սրա հետ նոյն, բայց տարբեր առումով է* **կրկտումն** *«մեղկութիւն», որ նոյնպէս մէկ անգամ գտնում եմ գործածուած Փիլ. տպ. Վենետ. 1892, էջ 69 «Ո՛չ միայն զմարմինն բեկտմամբ և կակղութեամբ և փափկութեամբ և կրկըտմամբ կնացուցնէին, այլ և զհոգիսն խեղեչս և անարիս գործէին»։*

ԿՐՃԱՏ *«ագաւ, պոչը կտրած» Ղևտ. իբ. 23. «թլփատուած, մահմետական» Գր. տղ. եմ. «համառօտուած, կարճ» (նոր զրականի մէջ). որից են* **կրճատել** *«թլփատել, ներքինացնել» Կանոն. «կտրել, յապաւել, ծայրատել, սպանել» ՍԳր. Կոչ. Մծբ.* **կրճատութիւն** *Փիլիպ. գ. 2.* **կրճատեալ** *Օր. իգ. 1. Կոչ.* **կրճատական** *Կոչ. 225. գրուած է* **կռճատեալ** *Տիմոթ. կուզ, էջ 88։*

=Արմատն է անշուշտ **կրճ-** *(կիրճ, կամ կուրճ) անծանօթ բառը, որի վրայ աւելացել է* **-ատ**(<*ճատ–անել*) *մասնիկը։*

ՆՀԲ «արմատն է կրճ», որպէս յն. κέρκος *«ձետ, պոչ»։ Տէրվ. Նախալ. էջ 70 գնում է* **կարճ** *բառից։ Հիմնք.* **կարճ**, **կարճատել** *ձևերից է հանում։*

*Գիմ.—***Կճատ** *Վն. «կարճ, փոքր. 2. կիսատ. 3. ծայրերը կտրած, խուզած», Առն. Սվ. Վն. «մոմը վառելուց յետոյ՝ տակը մնացած փոքրիկ կտորը», Սվ. «ծխած սիգարէտի մնացորդ ծայրը», Վն. «աւելի մաշուած ծայր» (այս իմաստով նաև ունինք Սլմ.* **կճատ**, **կէճատ**), **կճատ օր** *Սվ. «կիրակի և տօն օր»,* **կճատիկ** *Վն. «փոքրիկ»,* **կոճատ** *Ննխ. «մոմի կճատ», Տփ. «հողէ լարճիկ աման»,* **կուպրի կոճատ** *Տփ. (ծղր.) «կարճահասակ մարդ»։ Նախնական r ձայնը պահում է Բլ.* **կըրչըլատ**, *իսկ նոյն ձայնի հետքը ցոյց է տալիս Մրդ.* **գիյժօղ** (<*կիյժօտ*) *«գլանակի մնացորդ» (Գաբրիկեան, Ամէն. տարեց. 1922, 325)։*

Փոխ.—Վրաց. **კოჭატ** *կոճատի գործածուած է անյայտ նշանակութեամբ. այսպէս՝* **ნիշրիտա კოճատի** *«թիակի կոճատ» (Ջուբիանով[2] 626), պէտք է մեկնել «թիի կճատ, կտրած կոթով թի»։*

ԿՐՃԵԼ *(կամ* **կճճել***). անստոյգ բառ. մէկ անգամ ունի Նիւս. կազմ. «Զի մի՛ կրճեսցի (կամ կճճեսցի) մարդկային ոգւոցն բազմութիւն». ըստ յն. «կրճատեսցի»։ Սրա հետ նոյն պէտք է լինի* **կրճեալ** *«կրճատուած, կարճուած» նորագիւտ բառը, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Իրեն. 37 «Զայն որ ամենևին ի սպառ էր, ած ի վերայ զկորուստն, ի բաց կրճեալ ի նորա կենացն»։*

⊙ԿՐՃԵԼ *«ատամները կրճտել» ՍԳր. Ոսկ. մ. ա. 12. որից կրճիւն Բրս. մրկ.* **կրճումն** *Ոսկ. յհ. ա. 11. Եփր. յղ. դող.* **կրճտել** *«ատամները կրճատացնել» ՍԳր. «ծամել, ուտել» Եփր. աւետ. 293.* **կրճտումն** *ճառընտ. գրուած է կոճել Մագ. թղ. 132։*

=Բնաձայն բառ. ըստ այսմ պատահական նմանութիւն ունին չազաթ. قیرچیلداماق qirčildamaq, *արևել. թրք.* قیجیردامق qəǰərdamaq, *թրք.* qəǰərdamaq, *քրդ.* کرچن kərčin, *վրաց.* **ոբճճա, ոբաճուճի, դա-ոբրճճա, կրաճուճի, կրճճա,** *բոլորն էլ «կրճտացնել» նշանակութեամբ։ Համմ. նաև բուլդար.* kŭrcam *«ճարճատել», սերբ.* krčām *«բնկոյզը ատամի տակ ջարդել», ալ.* kr'cati *«կամաց զարնել», չնխ.* krcek *«փոքր բնկոյզ», ալբան.* kertsás *«ճարճատել», նյն* κρυτσαγίζω *«չոր մի ուտելիք ատամներով կոտրատելու ձայներ»։*

Նշ Ր դնում է բնաձայն բառ—Հիւբշ. ZDMG *35(1881), 655 և* Arm. Stud. *36 յն.* βρυχ-μός *համանիշ ձևի հետ (արմատը* βρυκ-*), Տաղրճեան, Արևելք 1884 նոյ" 16 առնս.* vrǰ *ձևից։ Տէրվ. Նախալ. 76 տե՛ս ծաղր բառի տակ։ Հիւնք.* **կրծել** *բայից։* Meillet MSL *7, 58 «չգիտեննալով, ասում է, հայ. ճ-ի ծագումը, չենք կարող գտնել յն.* βρυχμός *ձևը»։ Ըստ այսմ Հիւբշ. 462 առնպահով է գտնում յն.* βρύχω *«ատամներով կոտրատել»,* βρυχή *«ատամների կրճտիւն»,* βρυχετός *«ատրն տենդ»,* βρυγμός *«կրճտիւն», գոթ.* kriustan *«ատամները կրճտացնել»,* krusts *«կրճտիւն». արմատը* gru-s? *սրանցից պէտք է բաժանել լիթ.* grẽžiu, grẽszti *«կրճտել», հայերինը կարող էր գալ *կրուճել ձևից. հետևաբար* կրուճ*=յն.* βρυχ- *<հնխ.* g²rūk? *(Յիշում են* Boisacq *136 և* Berneker *359, երկուսըն էլ կասկածով)։ Աճառ. Արրտ. 1898, 367 հայերէնից է դնում վրաց.* **ոբճեճա**։ *Տառ* ЗВО *13, 0122 ցեղակից վրաց.* **կրճ, կրեճա, ոբճեճա** *ձևերին։ (Ըրկուսն էլ սխալ)։* Bittner WZKM *19(1900), 162 համարում է բնաձայն, ինչպէս նաև պրս.* گروچه garūča *և թրք.* qəǰərdamaq: *Գազանճեան, Արև. մամ. 1907, 935 թրք.* **ղերտամամ**։

ԳԻՒ.—Իբր բնաձայն բառ գրեթէ ամէն տեղ գոյութիւն ունի նորանոր ձևերով. այսպէս՝ Ոզմ. **կոճել,** *Համշ.* **գրյչել.** *Կր.* **կրճտել,** *Մրդ.* **կոճտել,** *Մկ.* **կոճտիլ,** *Գոր.* **կոճօ՛տել,** *Ղրբ.* **կոճօ՛տել, ղողոճցնել,** *Ախց.* **կոճտացնել,** *Շմ.* **կրճտացնիլ,** *Պլ.* **գչրդալ,** *Ռ.* **գրչըրդել,** *Ասլ.* **գչրդալ, գրչը*ցնել՝լ,** *Սեբ.* **գչրդացնել,** *Ագլ.* **ղրոճրցա՛նիլ,** *Տփ.* **ոբճտչցնիլ, ղրղնացնիլ,** *Ջղ.* **ղոճրկացնել,** *Մշ.* **խրոչրցրնել**։

ԿՐՃԵԼ *«ատել կամ նախանձիլ, չարանալ, չաշադիլ». Նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Մծբ. 350 «ի պատճառս ագահութեան կրճեցին չաշադեցին և եղեն նախանձաչողք՝ որք ունին զիշխանութիւն վարդապետութեան ի ժողովրդեան աստ մերում»։ Ատրի բնագիրը (հրատր.* Graffin *634) ըստ համեմատութեան վիենայի միաբան Պ. Էսապալեանի (անձնական) ունի «ի պատճառս ագահութեան ատեցին և նախանձեցան, որք զօրէնս ունին. և իշխեն ի ժողովրդեան մերում»։*

ԿՐՃԻՄ *կամ* **ԿՐՃԻՄՆ** *«խարոց, տարբերութիւն, արդելք, խափանիչ պատճառ» Ոսկ. մ. ա. 2,5, 18 և յհ. ա. 13 և Եբր. Եփր. հռ. 22, Եփես. էջ 143, Եւս. պտմ. 66. գրուած է կճրիմ Ոսկ. ա. տիմ. ժե. էջ 143 և Վեցօր. էջ 6, 15։*

Նշ Ր կիրճ իմն։

ԿՐՃՄՈՒՆՔ *«ափի վրայի գծերը, որոնց նայելով գուշակութիւններ են անում» մէկ անգամ գործածում է Նոնն 53 «Ձեռնագիտական է, յորժամ պարզելով զձեռս, վասն կրճմանցն (այլ ձ. կոճմանցն, կրճմանցն) որ ի նոսա, ասիցեմք, թէ այս ինչ նմա կայ և մնայ»։*

Նշ Ր «որպէս կճռումն, խորշոմիլն»։

ԿՐՄՈՒՂ *տե՛ս Տրմուղ։*

***ԿՐՈՄԻՆ** *«սոխ», ունի միայն Բառ. երեմ. յաւել. էջ 568։*

=Յն. χρῆμα «առիթ»։—Աճ.

ԿՐՈՊԱՆ, ի–ա հլ. «սրսկապան». ունի միայն ՀՀԲ, առանց վկայութեան. անստոյգ բառ։

*ԿՐՈՎԿՈՍ «բրբում» Նոնն. 59. գրուած է կրաւկոն „Անկ. գիրք հին կտ. 14, կնոկոս Բառ. հրեմ. յաւել. 568։

=Յն. κρόκος «բրբում», որից նաև լտ. crocus հոմանիշը, յոյն բառն էլ փոխառնալ է սեմականից (Boisacq 520). աւելի ընդարձակ տե՛ս Քրոմ։

Ուղիղ մեկնից ՆՀԲ։

ԿՐՈՒԿ կամ ԿՐՈՒԿՆ, ն հլ. (կրկան, կրկունք, կրկանց) «գարշապար, ներբան, ոտքի տակի կողմը» Երեմ. ժգ. 22, Ոսկ. ա. տիմ. ը. «ծխնիի ոտքը» Նորագիւտ Ա մնաց. իր. 3. որից բնդ կրուկն «յետ, դէպի յետ» ՍԳր. «անմիջապէս յետոյ» Եփր. Թագ. 396 (բնդ կրուկն բանին). բն(դ) մասնիկով՝ բնկրկել «յետ քաշուիլ» ՍԳր. բնկրկեցուցանել Խոհ. բնկրկիչ Մաշտ. ջահկ. էմբ. պարդ. յետնաբար գրուած է կրունկ կամ կռունկն. որից կրնկեակոխ (չունի ԱՒ) «յետևից հրթալով» Առաք. պատ. 29։

ՆՀԲ լծ. լտ. crus, յն. σκέλος հյ. սրունկ, արաբ. fiʾrā, Թրք. geri «յետ»։ Հիւնք. բնդգրկել բայից բնկրկել, որից էլ կրուկ։ Müller, Armen. VI լտ. calx «կրունկ» ձևի հետ։ Scheftelowitz BB 28, 304 և 29, 51 կցում է հյ. կռուն բառին։ Lidén, Arm. Stud. էջ 116 –կն մասնիկով կազմուած հնխ. gūro- «ծուռ» բառից. մասնիկի համար հմմտ. հյ. արմունկն, իսկ ձևի համար՝ հյ. կռուն «կռնակ», յն. γυρός «ծուռ, կոր, կլոր» ևն։ (Ընդունում են Boisacq 159 և Pokorny 1, 557)։ Պատահական նմանութիւն ունին բուլգար. krak «ոտք», լիթ. kárka «ոտք (կենդանիների առաջի ոտքերը)»։

Գիւտ.—Ագաթ. Կր. կրունկ, Ալշ. Երև. Մշ. Զղ. Սլմ. Տփ. կրունգ (որ և Տփ. «ծխնի»), Մկ. Վն. կրունգ՝, Շմ. կուրունգ, Խրբ. Սեբ. գրունգ, Ակն. յգ. գըրբյվի, Ննխ. գուրունգ, Ոզմ. կրօնգ՝, Ղրբ. կոօգ՝նը, կրօ՛յնը, կո՛ւրէնգ՝, Գոր. կրօնգնը, Սվեդ. գրէօնգ, Հճ. գիյունգ, Զթ. գօյունգ։ Նոր բառեր՝ են կրընկակից, կրնկահան, կրնկել։

Փոխ?—Լազ. ſուրի «ոտքի կրունկ, գարշապար» եթէ հայերէնից է փոխառեալ, ցոյց է տալիս որ մեր բառը կազմուած է –ուկ մասնիկով՝ *կուր արմատից։

*ԿՐՊԱԿ, ի–ա հլ. «խանութ. 2. գինետուն» Գծ. Իր. 15. Ոսկ. Երր. Վրք. հց.—որից կրպականոց Լմբ. մատ. 107. կրպակամուտ Կոչ. 72. կրպակապետ Վրք. հց. կրպակատէր Վրք. հց. Զքր. կթ. Ասող. կրպակատուրութիւն Մարգ. նոյնը նաև կուղպակ ձևով, որ առաջին անգամ յիշուած է 901 թուի մի արձանագրութեան մէջ (Վիմ. տար. 5) և աւելի յետոյ 994 և 1031 թուերից, ինչպէս նաև Մխ. ապար. Մխ. այրիվ. էջ 63. Օրբել. Հրտր. էմ. էջ 131, 289. յգ. կուղպականի կամ կղպականի Արձ. 1029, 1036, 1042 թուերից (տե՛ս Վիմ. տար.) և Յիշատ. կուղպայի Կիր. 91։ Բառախաղով գրուած է գողբակ (իբրև թէ գողերի բակ) Դրնդ. 468, 343։ Արդի գրականում գործածւում է միայն կրպակ ձևով և «խանութ», յատկապէս «փոքր խանութ» նշանակութեամբ։

=Պհլ. *kurpak «խանութ» բառից, որ թէև չէ գործածուած, բայց նոյնն է հաստատում պրս. کربه kurba «խանութ». ատում է նաև کلبه kulba. առաջինը տալիս է հայ. կրպակ, երկրորդը՝ հյ. կուղպակ, և շրջեալ՝ կուղպակ։ Պարսկականից են փոխառեալ նաև արաբ. قربج qurbaj, کربج kurbaj կամ قرباق qurbaq «խանութ» (Կամուս, Թրք. Թրգմ. Ա. 433, Գ. 47), վրաց. მეჯურბაქე մեխուրբաէ «խանութպան»։—Իրանեան բառը բուն նշանակում է «կերպաւո՛րուած, ձևաւորուած». հմմտ. գնդ. hu-kərəpta- «լաւ ձևաւորուած» (Bartholomae, Altir. Wörterb. 1818 և Walde 682)։—Հիւրշ. 173։

Տաթև. ամ. էջ 25, 36 և 139 առուգրանում է «գողի բակ». «Որ ի վաճառն տանի, գրկող է. դի որ քան զարժէնն ի վեր ծախէ և պակաս գնէ, գող է և գերկող, և որ զչափն կրկին գնէ՝ մեծ և փոքր, նոյնպէս զիարն, նոյնպէս զկանգունն, որ մեծովն առնու և փոքրովն

տայ, գող և գրկող է. վասն այն կոչի բնակութիւնն նոցա **կողբակ**, *որ է գողի բակ:—Այն որ ի վաճառն խարէ զմարդ՝ գող է. վասն այն կուղբակ կոչեն, որ է գողի բակ՝ նստեալ ի փողոցի:—Նըստեալ ի մէջ կրպակին, որ է կուղբակ, որ առուգաբանի գողի բակ»:—Ուղիղ մեկնեց նախ ԳԴ. նոյնը նաև Այտընեան, Քննակ. քեր. էջ 145 և յետոյ Հիւրշ.* ZDMG 35(1881), *էջ 661:*

ԿՐԳՆԻ *«ձգել». ունի միայն Բառ. երեմ. էջ 170:*

***ԿՐՏԻՄ** կամ **ԿՐՏՈՄ** «ասփուրի հունդ» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 1566:*

=Արաբ. قرطم qartam, qurtum «carthamus tinctorius L» *(Ըստ Արթինեան, Ածաշունչի տունկերը, էջ 75). արաբիէն ձևը տե՛ս Կամուս, Թրք. Թրգմ. Գ. էջ 537 և Շթայնշնայդէրի հատւածոյի մէջ՝* WZKM *12, 321:—Ա՛ճ.*

ՀԲուս. անգ. գնում է արաբ. قرشمن gršmn, *որի ի՛նչ լինելը յայտնի չէ:*

***ԿՐՏՄԱՆԻ** «վայրի չաման» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 1567. գրուած է նաև* **կրտմանա**, **կրտիմն**, **դրտիմա**, **խրտամա**, **խուրթում** *(տե՛ս ՀԲուս. § 3158):*

=Արաբ. قردمانى qardmānī «վայրի չաման» *(Կամուս, Թրք. Թրգմ. Գ. 538). սրա դէմ Շթայնշնայդէրի հատւածոյի մէջ՝* WZKM *12, 321 գտնում ենք* قرطمانا qartmānā, قردمانا qardmanā «վայրի չաման, հայ չամանն» *ձևերը: Աւելի մանրամասն՝ բառիս վրայ տե՛ս* Seidel, *Հրտր. Մխ. հեր. § 314:*

Ուղիղ մեկնեց նախ ՀԲուս. անդ:

ԿՐՏՈՒԵՐ *(խառն հոլովմամբ -ոյ, -աւ, -աց) «տարիքով կամ կարգով յետինը՝ փոքրը, նուաստը, տորին» ՍԳր. Եւս. քր. Ոսկ. մ. ա. 3 և յհ. ա. 3. որից* **կրտսերագոյն** *ՍԳր. Ոսկ. բ. կոր. յհ. ա. 4.* **կրտսերանալ** *Մեկն. ծն.* **կրտսերութիւն** *Ծն. խգ. 33. Եփր. Թգ. բաղաձայնների ձուլմամբ յառաջացել է* **կրցեր** *նմ. ծն. համմտ.* **արտասուք**>**արտասուք**>**արցունք**. *իսկ առամնականի անկումով՝* **կրսեր**, *որից* **կրսերադաս** *Երզն. քեր.* **կրսերարար** *Փիլ. իմաստն. ևն:*

=Թերևս բարդուած է **կրտ-** (կիրտի, կիրտաւ?) *անծանօթ բառից +***սերել** (**սերունդ**) *բայից:*

Müller SWAW 38, 573 *հալ.* kratûkû, *յն.* βραχύς «կարճ»: *Տէրվ.* Altarm. *46 և Նախալ. 70* ***կուրտսեր** ձևից, իբր լտ.* curtus *(տե՛ս* **կարճ** *բառի տակ): Հինբ.* **կրթատէր** *ձևից համառօտուած: Վերի ձևով մեկնեց* Meillet MSL *15, 353 և 18, 263, որ և* **կրտմասր** *ուզում է տեսնել* **կր-կին** *բառի մէջ, իբր* **կիր-**<*հնխ.* dwir- «երկու»:

***ԿՐՓԻԿ** կամ **ԿՐՓՈՒԿ** «դարչինի հունդ» Բժշ. ունի միայն ՀԲուս. § 1568, որ և § 1553 նշանակում է* **կրփուկ**, **կրփուղ** «սանդալ բոյսը, լտ.* santalum»:

=Արաբ. قرفة qarfa «դարչին, canelle» *(տե՛ս* Steinschneider WZKM *12, 321).—Ա՛ճ.*

—**ԿՐՕՆ**, *ի հլ. (սովորաբար անեզական) «կարգ, կանոն, վարք, օրէնք, սովորութիւն, վարդապետութիւն, հաւատք» ՍԳր. Ոսկ. պաղ. նխես. և ես. Բուզ. եղն. Կիրզ. Թգ. որից* **կրօնաւոր** *Յհ. ա. 26.* **կրօնազգեաց** *Բուզ.* **կրօնական** *Ոսկ. պաղ.* **անկրօն** *Կոչ.* **հոգեկրօն** *Ագաթ. Կորիւն.* **միակրօն** *Սգ. կէ. 7.* **նորակրօն** *Ոսկ. մ. բ. 8.* **երեշտակակրօն** *Ագաթ. Ոսկ. յհ. ա. 1.* **բարեկրօն** *Խոսր.* **կուսակրօն** *Ճառընտ.* **դիցակրօն** *Անան. եկեղ.* **երկնակրօն** *Նար.* **զուգակրօն** *Կղնկտ.* **կրօնաւորեալ**, **կրօնապետ**, **կրօնամոլ**, **կրօնամոլութիւն** *(նոր բառեր) ևն:*

*=***Կիր** *(կրել) արմատից՝ -օն մասնիկով Հներից Սարգիս Շնորհալի, Մեկնութ. Ղեվոն Յակոբայ, գլ. և, էջ 69 ա մեկնում է. «ի գիրս սուրբս գՀաւատն կրօնս անուանէ, և զի գայթաքն առաքինութեանցս ժուժկալութիւն հաւատովք կրեն մարդիկ»: ՆշՔ «որպէս թէ կրեալ և պահեալ, կամ կրելի օրինօք»: Ալիշան, Հին հաւ. էջ 8* **կիրճ** *բառից, իբր «ներքին զգացում»: Հինբ. գրաւական բառից:* Müller WZKM *5, 268 գնդ.* garəw=*սանս.* grbh, gṛh, *համմտ.*

զնդ. warəna «ընտրութիւն, հաւատք», WZKM 7(1893), 281 պրս. gīrevīdan «հաւատալ»։

ԳԻՒ.—Մշ. կրօճ, Ղզմ. կրօճի՛, Սեբ. գրէօճ ևն, փոխառեալ գրաբարէ։

—ԿՑԻՐ «կծծի, ժլատ» Ոսկ. մ. բ. 24, որից կցրել «կծծիութեամբ խնայել, պահել» Ոսկ. մ. ա. էջ 77 և ևս. էջ 415, «աւտմները սեղմել» Ոսկ. մ. բ. 23։

=Կից արմատից. հմմտ. Ոսկ. ես. 415 հատուածը. «Զառաջին վաստակոցն ասէ թէ ջանայիր, տառապէիր, ժողովէիր, ի վերայ կցրէիր և ևս չար նուազութիւնն լինէր. զի այնպէս իմն որ անօրէնութեամբ ինչ ժողովիցին ինչք, թէպէտ և շատ իցեն՝ սակաւք լինին»։ Սրանից երևում է որ ի վերայ կցրել նշանակում է «դիզել, հաւաքել». որով արմատը լինում է կից, կցել։—Աճ.

ՆՀՔ իբր կծկեալ։ Հիւնք. կշիո բառից։ Աճառեան, Բազմ. 1904, էջ 500 յծ. կծծի։

ԿՑԵԱՆԻ տե՛ս Կից։

ԿՔԵԼ «ծռիլ, գճիլ, խոնարհիլ» Եւս. պատմ. եփր. Թգ. 391. որից կրճցուցանել Ճառընտ. Պատ. ապէքս. կրեալ Վեցօր. 167. Փարպ. կռումն ՅՀ. կք. մէկ անգամ կայ կրեալ ձևով՝ Ոսկ. խ. 178 (բայց թերևս պէտք է կարդալ կրեալ). ՄՀյ. կռալ «աչքերը ծանրանալ, քնել ուզել» Մխ. բժշ. 39։—Արմատը ՀՀՔ դնում է կուռ, որի վրայ տե՛ս տակը Գւռ։

Տէրվ. Altarm. 13 կրիլ բայի հետ՝ ցեղակից է դնում սանս. kuč «ծռիլ, կորանալ», լտ. con-qui-nisco, con-quec-si «կկզիլ» բառերին։ Karolides, Γλ. συγχρ. 89 աւելացնում է կպղվկ. kučeri «ճանկ, կեռ, կարթ»։ Petersson LUA 1922, 2, 39 շար. (առ Pokorny 1, 546) հյ. կիֆ<հնխ. gisuo?? ձևից. հմմտ. գւռ. ռուս. žichatĭ zĭchatĭsja «թեքուիլ, տատանիլ», žichljatĭ «տատանեցնել»։

ԳԻՒ.—Նոյն բառն է նշանակութեան զարգացմամբ՝ կրիլ Վն. «ծռիլ, կորանալ», կբեել Խրբ. «կծկել, գալարել, ռմկ. խսխվրախ ընել», Ղզմ. Վն. «պրկել, ամրացնել, պինդ կապել», տեղը կիլ Վն. «բազմաթիւ դիմումներից յուսահատուած՝ քաշուիլ տեղը նստիլ», փորը կեել Վն. «կուշտ ու կուռ ուտել, յագենալ», կբուիլ Խրբ. «կծկուիլ»։ Սբրանց արմատը պահուած ունինք երկու ձևով. կուռ Խրբ. Զթս. «ամփոփ, կծկուած, ամուր, պինդ, հագուստը վրան պինդ կըպած», կիռ Վն. Խ. Սլմ. «ամուր, պինդ» (Ամատ. Հյ. բառ ու բան 343)։

ԿՔՐԻԼ «խրոխտալ, յանդգնիլ, յոխորտալ» կամ ըստ ՀՔ «դինիլ ընդդէմ, ջանալ վնասել» Եւագր. 28. Լմբ. սղ. և աւտ. տպ. 1865, էջ 157, 162։ (Բառ. երեմ. էջ 170 մեկնում է «ձևանալ»)։

ՆՀՔ կիլ բայի հակառակն է համարում։ Տէրվ. նոյն է դնում նախորդի հետ։ Հիւնք. krbrbl բայից։

*ԿՕՒԱՅ «վարունգի և դդումի միջև գըտնուող մի բոյս է» Մխ. բժշ. 51. որ և կաւդայ, կօղա, կօբայ Վստկ. 171—174, 206, Բժշ. կաւբայ Մխ. բժշ. 108 (Ըստ ՆՀՔ «մի տեսակ դդում է», ըստ ԳԴ՝ Վստկ. 250՝ «մի տեսակ խոշոր վարունգ, շնխիար», ըստ ՀՔուս. § 1570 վերի նշանակութեամբ, որ դնում է նաև Seidel, Հրտր. Մխ. Հեր. § 42, իբր՝

=արաբ. قِثَّاء qiṯṯā կամ quṯṯā՝ նոյն իմաստով. Բժշկարանում մեկնուած է արդէն «կօղա, մի տեսակ վարունգ, շինգղ») (տե՛ս այս բառը)։

ՆՀՔ պրս. كدو kadū «դդում»։ Ուղիղ մեկնեց Seidel՝ անդ։

ԿՕԿ «պատառ». նորագիւտ բառ. մէկ անգամ ունի Վստկ. 197 «Մ՛ո աղ և դաղձ և հալհաւիճէ և չաման և կօկ մի հաց» (դեղի համար է)։

ԿՕՃՕՂ «կամիս». ունի միայն Բառ. երեմ. էջ 154. ի՛նչ լինելը յայտնի չէ։

ԿՕՇԱՐԱՅ «մի տեսակ աման» (պտուկի և սափորի հետ յիշուած) Ոսկ. կողոս. 603. «խունկ դնելու աման»» Ոսկ. եփես. 781 (Սապատք հանդերձիցն և խնկոցն կաւշարայք). չունի ՆՀՔ. իսկ ԱՔ մեկնում է «անուշ հղի և նման բաներու շիշ՝ աման»։

ԿՕՇԵԼ «մռնչել (առիւծի)» Ես. լա. 4. ուրիշ վկայութիւն չկայ։

Սրա հետ համմտ. գօշել և fօշել։

***կՕՇԻԿ**, ի–ա *հլ. «ոտնամանի» ՍԳր. վԵցօր. 197. որից* կօշկակար *Ոսկ. մ. բ. 24. յհ. ա. 16.* կօշկագործութիւն *Ոսկ. բ. կոր.* պնդակօշիկ *(չունի ԱԲ) Զքր. սարկ. 17.* կօշկակարաց «կօշկակարների շուկայ» *Արձ. 1251 թ. (Վիմ. տար. 95). Նոր բառեր են* կիսակօշիկ, կրկնակօշիկ, կօշկակարանոց *են. սխալ դրչութիւն է* կոշիկ։

=*Պհլ.* *kafšīk *հոմանիշ ձևից, որ հատատաում են պհլ.* kafšak *և պրս.* کفش kafš «կօշիկ», *որից փոխառեալ են նաև բելուճ.* kauš, *քրդ.* کوش kevš, *արաբ.* قفش qafš «հողաթափ» *(Կամուս, Թրք. Թրգմ. Բ. 347), արևել. Թրք.* کوش kauš *կամ* کفش kafš, *Բուշ.* ჯოშ fօշ, *վԸրաց.* ჯოში fոշի «կօշիկ»։ *Պարսիկ բառից են ծագում* کفشگر kafšgar «կօշիկ շինող» *և* کفشدوز kafšdūz «կօշիկ կարող». *առաջինից փոխառեալ է Թրք.* kösğĕr «կօշկակար», *իսկ երկրորդից Թարգմանարար շինուած է Հյ.* կօշկակար։— *Հիւրշ. 174։*

Նախ ԳԴ դրաւ պրս. fէֆշ. *որից յետոյ նոյնը* Bottich. Arica 36, Lag. Urgesch. 842, Müller SWAW *45, էջ 274։—3. Գ. Մ., Պատմ. գրակ. էջ 16 յիշում է Ճապոն.* կուց։

ԳԻՒ.—Ննխ. Ռ. Սեբ. Սչ. գօշիգ, *Հճ.* գուշիգ, *Զթ.* գուշիմ, *իսկ Տփ.* fօշ, fօշի, *Ղրբ.* fօշ, *Ագլ.* fօ՛շար «կօշիկ» *նոր փոխառութիւններ են։ Բառս Ննխ. յատուկ է միայն «այր մարդկանց երկար կօշիկներին, այն է՝ մոյգ, չիզմէ», իսկ Հճ. ընդհակառակը «կանանց երկար կարմիր կօշիկն է»։—Հյ.* կօշկակար *ձևից սղուած է* կօշկար *Զթ. Լհհ. Սչ., որի հին վկայութիւններն են. «Զերդ կօշկարի չուան և այնպէս բարշեա՛» Վստկ. էջ 182. «Այր ոմն կօշկար. եւ էր արուեստիւ կօշկար» Նոր վկ. 437, 490 (Ժէ դար)։*

կՕՇԻԿ *«վարձք, վարձատրութիւն» (աննպատակ գործածուած) Ա. Թագ. ժբ. 3. Բուզ. Ե. լԸ և Զ. բ։*

=*Արդեօք վերի* կօշիկ *բառի՞ց է՝ նշանակութեան պարզացմամբ. Համմտ. ռուս.* на сапожки «վարձատրութիւն, նպաստ», *բուն «կօշկի համար»։—Ա՛ճ.*

Հիւնք. Բուզ. Զ. բ. հատուածի մէջ ուղղում է կաշառ, *կարծելով Թէ բառս ուրիշ տեղ գործածուած չէ։*

կՕՇՆԵԼ *«ձօնել, ընծայել», որից* կօշնօղ *կամ* կոշնօղ *«ձօնող, ընծայող». գիտէ միայն Բառ. հրեմ. էջ 167 և 170 (երկիցս)։*

ՀՐԱՉՅԱ ՀԱԿՈԲԻ
ՍՃԱՌՅԱՆ

ՀԱՅԵՐԵՆ
ԱՐՄԱՏԱԿԱՆ
ԲԱՌԱՐԱՆ

Բ
ՀԱՏՈՐ
ե—կ

Père Y. PANOSSIAN
6 Bd Ch. - Zeytountzian
[illegible] - MARSEILLE (13e)

Հրատարակչության խմբագիր՝ Լ. Լ. Աղայան
Նկարիչ՝ Հ. Ն. Գուրժակյան
Տեխնիկական խմբագիր՝ Մ. Ա. Կափլանյան
Վերատեսուչ սրբագրիչ՝ Լ. Հ. Գրիգորյան
Գրաշար-էջակազմ՝ Պ. Ե. Նալբանդյան
Լինոտիպիստ՝ Ռ. Հ. Հակոբյան
Տպագրիչներ՝ Դ. Գալստյան, Ն. Քոչարյան, Վ. Խաչատրյան

Պատվեր 324 *Տպաքանակ 20000*

Հանձնված է արտադրության 20/VI 1972 թ.
Ստորագրված է տպագրության 12/XII 1973 թ.
Թուղթ՝ 84×108 1/16։ Տպագր. 43=74,25 պայմ. մամուլ։
Հրատ. 75,2 մամուլ։
Գինը՝ 5 ռուբլի։
Երևանի Համալսարանի հրատարակչության։
Երևան, Աբովյան փող. № 52։

Երևանի Համալսարանի տպարան։ Երևան, Աբովյան փող. № 52։